

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՐՑԱԽԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՆՎԱՍԵՔԻՎԱԿԵՌՈՒԹՅՈՒՆԻ ՎԱԿՈՏՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Նվիրվում է ԱրՊՀ՝ Արցախյան պատերազմներում նահատակված
ուսանողների հիշատակին*

ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ բ.գ.թ., դրցենտ,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Ա. Յու. Մարգարյանի*

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
2022

ՀՏԴ 39
ԳՄԴ 63.5
Ա 948

*Տպագրվում է Արցախի պետական համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ - Սարգսյան Ա. Յու. (նախագահ), Առուստամյան Ն. Է.,
Հովհաննիսյան Լ. Լ., Մարգարյան Լ. Գ., Սադյան Շ.Պ.

Ա 948 Արցախի ազգագրությունը.- Ստեփանակերտ: Արցախի պետական համալսարան,
2021.- 820 էջ:

Սույն ժողովածուն ընդգրկում է Արցախի ազգագրությանը վերաբերող և առնչվող այն հիմնական ուսումնասիրությունները, աշխատությունները, հոդվածները, գիտական զեկուցումները, ճանապարհորդական ակնարկները և այլ նյութերը, որոնք կատարվել ու հրատարակվել են հայերենով տարբեր հեղինակների կողմից 19-րդ դարի կեսերից առ այսօր:

Ժողովածուն նախատեսվում է ազգագրագետների, պատմաբանների, ինչպես նաև Արցախի ազգագրությամբ հետաքրքրված ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 39
ԳՄԴ 63.5

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն ժողովածուն ընդգրկում է Արցախի ազգագրությանը վերաբերող և առնչվող այն հիմնական ուսումնասիրությունները, աշխատությունները, հոդվածները, գիտական զեկուցումները, ճանապարհորդական ակնարկները և այլ նյութերը, որոնք կատարվել ու հրատարակվել են հայերենով տարբեր հեղինակների կողմից 19-րդ դարի կեսերից առ այսօր:

Նյութերը ներկայացվում են որոշակի խմբագրությամբ և սրբագրությամբ՝ ընդհանուր առմամբ համապատասխանեցնելով ուղղագրության ու տառադարձության արդի սկզբունքներին:

Ընդարձակ առաջաբանում քննության է առնվում Արցախի ազգագրության ուսումնասիրության պատմությունը: Վերջում տրվում է նշված ժամանակաշրջանում գրառված ու կատարված ուսումնասիրությունների և այլ նյութերի ամբողջական մատենագիտությունը՝ ամփոփ նկարագրություններով:

Ժողովածուն ներառում է հետևյալ նյութերը.

1. Լալայան Ե., **Վարանդա. Նյութեր ապագա ուսումնասիրության համար**, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 5-244, **Վարանդա. Նշանավոր տոներ**, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, Գ գիրք, էջ 338-349: Ժողովածուն Ա. Նազինյանի խմբագրությամբ «**Վարանդա**» խորագրով վերահրատարակվել է 1988թ.՝ ընդգրկվելով Ե. Լալայանի «**Երկեր**» հինգհատորյակում /հատոր 2, Երևան, 1988, էջ 11-202/, որն էլ հիմք է հանդիսացել սույն հրատարակության համար:

2. Լիսիցյան Սո., **Լեռնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ)**, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, էջ 9-84:

3. Տեր-Գասպարյան Ռ., **Շուշի քաղաքը**, Երևան, 1993, 128 էջ

4. Կիսիբեկյան Ա., **Հուշեր**, հ.1, Երևան, 2011: Սույն հատորում ընդգրկված են միայն «Հայրենի տունը» (էջ 15-78), «Հայրենի գյուղը» (էջ 79-109) բաժինները:

5. Ղահրամանյան Կ., **Օջախի գիրք. Նշխարներ**, Երևան, 2002: Սույն հատորում ընդգրկված են միայն «Մեր ազգանունները» (էջ 115-133), «Ժողովրդական բժշկություն» (էջ 134-136), «Ավանդույթներ, սովորույթներ» (էջ 137-160), «Բերքահավաք՝ կլոր տարին» (էջ 161-162), «Ժողովրդական խոհանոց» (էջ 163-174), «Սրցումներ, խաղեր» (էջ 175-181) բաժինները:

6. Մելիք-Շահնազարյանց Կ., **Բուրդ գզելը և գորգ գործելը Ղարաբաղում**, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1928, թիւ 9-10, էջ 475-478:

7. Մելիք-Շահնազարեան Կ., **Նիւթեր Ղարաբաղի հայ ազգագրութեան համար**, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1931, թիւ 3-5, էջ 246-252, 1932, թիւ 5-6, էջ 331-337:

8. Տեր-Գասպարյան Ռ., **Շուշու բնակչությունը 18-րդ դարից մինչև մեր օրերը**, «Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, 1963, N 9, էջ 67-76:

9. Խաչատրյան Ժ., **Խաղաղամի (ղիվահարության) «բուժումը» պարով**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1980, N10, էջ 89-96:

10. Պողոսյան Ս., **Արցախի ավանդական տարազը և նրա էվոլյուցիան**, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», Երևան, 1988, N5-6, էջ 37-43:

11. Բալայան Վ., **Մետաքսագործությունը Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2000, N1, էջ 88-92:

12. Բալայան Վ., **Սոցիալ-տնտեսական իրավիճակը Արցախում 19-րդ դարում**, «ԱրՊՀ հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2011, էջ 94-104:



13. Սարգսյան Հ., Լեռնային Ղարաբաղի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժունքացր 19-րդ դարում, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողով. Ջեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 455-464:

13. Դաբադյան Ա., **Շուշիի հասարակական կյանքն ըստ «Կովկասյան տարեգրքի»**, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 330-334:

14. Թադևոսյան Ա., **Դարբնի ծիսական կերպարի իմաստաբանությունը արցախցիների հավատալիքների համատեքստում (19-20-րդ դդ.)**, «Լ.ՂՀ. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. զեկուցումների հիմնադրույթներ. հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 321-324:

15. Ալեքսանյան Հ., **Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916-1926թթ.**, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 115-124:

16. Բազեյան Կ., **Շուշիի ասեղնագործական դպրոցը**, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 244-251:

17. Մկրտչյան Ս., **Տոները ղարաբաղցիների ավանդական կենցաղում**, «Լ.ՂՀ. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. զեկուցումների հիմնադրույթներ. հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 395-401:

18. Սուջյան Ս., **Լեռնային Ղարաբաղի հանրապետության ժողովրդագրական իրավիճակը, «21-րդ դար»**, Երևան, 2009, թիվ 3, էջ 49-66:

19. Պողոսյան Ա., **Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների տարածման արեալների մասին**, «Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին», Ստեփանակերտ, 2009, պրակ 1, էջ 256-258:

20. Պողոսյան Ա., **Հարթակներով ասեղնագործական մշակույթի ավանդույթների մասին**, «Էջմիածին», Ս. Էջմիածին, Յուլիս, 2011, էջ 53-60:

21. Պողոսյան Ա., **«Ջրաբերդ» խմբի գորգերի ծագումնաբանական հարցերի մասին**, «Էջմիածին», Ս. Էջմիածին, փետրուար, 2011, էջ 38-49:

22. Պողոսյան Ա., **Շուշին՝ գորգագործական մշակույթի կենտրոն**, «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական հանդես, Ս. Էջմիածին, 2014, Բ, էջ 42-49:

23. Այվազյան Ա., **Ժողովրդագրական իրավիճակը Ղարաբաղում 1710-1720-ական թթ.**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2010, N 1-2, էջ 59-67:

24. Հովհաննիսյան Լ., **Արցախի բնակչությունն ըստ 1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալների**, «ԱրՊՀ. Հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2010, էջ 60-63:

25. Հովհաննիսյան Լ., **Բռնի մահմեդականացված հայության բեկորները Ղարաբաղում**, «ԱրՊՀ. Հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2010, էջ 187-192:

26. Աբրահամյան Հ., **Շուշիի համայնապատկերը (19-րդ դար)**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Ստեփանակերտ, 2013, էջ 4-15:

27. Ավագիմյան Ն., **Ժողովրդագրական իրավիճակը Շուշիում 1813-1917թթ.**, «Գիտական Արցախ», Երևան, 2018, N1, էջ 81-84:



28. Թաղիադյան Մ., *Ճանապարհորդություն ի Հայս, Կալկաթայ, 1847, հ. Ա, 382 էջ*: Տպագրվել է նաև հետագայում /Մ. Թաղիադյան, «*Ուղեգրություններ, հողվածներ, նամակներ, վավերագրեր*», *Երևան, 1975, էջ 23-264*/: Սույն հատորում ընդգրկված է միայն Արցախին վերաբերող մասը:

29. Սրուանձտեանց Գ., Սյունյաց աշխարհ և Շուշի քաղաք, «*Արծուի Վասպուրական*», *Վան, 1862-1863, թիւ 4, էջ 87-108*:

30. Բարախանյան Ա., *Ուխտավորի հիշատակարանը, Շուշի, 1885, Լեռ, Երկերի ժողովածու, 8-րդ հատոր, Երևան, 1985, էջ 7-31*:

31. Հայկունի Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց, *Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010, 104 էջ*:

32. Տիկին Բ. Շանտր, *Ռուսական Հայաստանի միջով, Փարիզ, 1893, 116 էջ*: Սույն հատորում ընդգրկված է միայն Արցախին վերաբերող մասը (*Ֆրանսերենից թարգմանությունը Ա. Բարայանի*):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ազգագրության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Արցախը, որի արմատները թաղված են հազարամյակների խորքում: Դժբախտաբար հարուստ այդ պատմության բուն ուսումնասիրության սկիզբը դրվեց ընդամենը 19-րդ դարի կեսերից: Ընդհանուր առմամբ Արցախի ազգագրության ուսումնասիրության պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջանի՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային: Առաջին շրջանն ամենից առաջ կապվում է 1822թ. Ղարաբաղի խանության վերացման և Ղարաբաղի պրովինցիայի ձևավորման հետ, որը 1840թ. մտնում է Կասպիական մարզի, իսկ 1868-1917թթ.՝ ներառվում Ելիզավետպոլի նահանգի կազմում: Ռուսական կայսրության կազմում հայտնվելուց անմիջապես հետո ուսումնասիրության նյութ են դառնում տարածաշրջանի բնակչության էթնոժողովրդագրական հիմնախնդիրները՝ կապված Անդրկովկասում Ռուսաստանի վարած քաղաքականության հետ: 1866թ. Թիֆլիսում հրատարակվում է «*Описание Карабахской провинции, составленное в 1823 г. действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-ым*» աշխատությունը, որն էլ դառնում է այս բնագավառում կատարվող ուսումնասիրությունների նախադեպը: Այստեղ հեղինակները ներկայացնում են 1822-1823թթ. կազմած ցուցակները, որոնցում ընդգրկված են Ղարաբաղի Շուշի քաղաքի ու գյուղերի բնակչության և եկամուտների տվյալները: Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունն ընդգրկում է 34 տեղեկագիր և մեկ ընդհանուր ամփոփող ցուցակ, ինչպես նաև Ջեբրայիլից Իրան տեղափոխված ընտանիքների թիվը ներկայացնող մեկ լրացուցիչ ցանկ: Հետագա տարիներին հատուկ ծրագրով տարբեր գիտնականների, հասարակական գործիչների, Շուշի քաղաքի ու որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների և տեսուչների կողմից Թիֆլիսում հրատարակվող «*Кавказский календарь*», «*Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края*», «*Сборник материалов для описания местностей и племен Кавказа*», «*Записки Кавказского отдела императорского русского географического общества*», «*Ազգագրական հանդես*» և այլ բազմահատորյակներում ու հանդեսներում, ինչպես նաև Թիֆլիսում, Վաղարշապատում, Շուշիում և այլուր լույս տեսնող տարբեր պարբերականներում տպագրվում են Արցախի ազգագրությանը վերաբերող և առնչվող տարբեր ուսումնասիրություններ, հոդվածներ, նյութեր, հաղորդումներ¹:

Դրանց շարքում առանձնահատուկ տեղ ունի 1881 թվականին Կովկասյան ուսումնական օկրուգի՝ Թիֆլիսում հիմնադրած «*Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК)*» հանդեսը: Լույս է տեսել հանդեսի ընդամենը 46 պրակ, որից 44-ը՝ Թիֆլիսում 1881-1915 թվականներին, իսկ 45-րդը և 46-րդը՝ Մախաչկալայում 1926 և 1929 թվականներին: Հանդես-

¹ Константинович, *Шуша, «Кавказский календарь на 1852г.»*, Тифлис, 1851, էջ 430-435, Уразов Г., *Медико-топографический очерк Джебраильского уезда Елисаветпольской губернии*, «Медицинский сборник», Тифлис, 1889, № 50, Зелиский С., *Материалы по народной медицине у армян Ахалкалакского уезда Тифлисской губернии и Шушинского и Зангезурского уездов Елисаветпольской губернии*, «Известия Кавказского отдела Императорского Русского географического общества», Тифлис, 1898, т. XII, вып. 1-й, с. 31-64, Скибицкий М., *Карабахские казенные летние пастбища*, «Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и для изучения скотоводства на Кавказе», Тифлис, т. IV, 1898, с. 1-203, Кара-Мурза Г., *Из сельскохозяйственной жизни Джеванширского уезда, «Кавказское сельское хозяйство»*, Тифлис, 1903, № 497, Кара-Мурза Г., *Производство арб и колес в Шушинском и Джеванширском уездах, «Кавказское сельское хозяйство»*, Тифлис, 1903, № 503, Мириманов Г., *Шелкомотальные заводы в Шушинском и Джебраильском уездах, «Труды Кавказской шелководственной станции»*, Тифлис, 1891, т. II, с.145-151, *Շուշի քաղաք*, «Հայկական աշխարհ», Շուշի, 1874, N1-2, էջ 34-39, Պլուզյան Ս., *Արցախի նահանգի Ջրարիղ գավառը*, «Արշրիտ», Վաղարշապատ, 1871, թիվ Ը, էջ 440-443, Атабеков Н., *Карабахские армяне*, «Кавказ», Тифлис, 1857, № 56, 58, Егоров П., *Мои поездки по Карабаху*, «Русский инвалид», 1857, № 217, 218, 221, 239, 241, 244, Никитин К., *Географическое описание Шушинского уезда*, «Кавказ», Тифлис, 1872, № 149; 1873, №1,2, *Состояние шелководства в Шушинском уезде*, «Кавказ», Тифлис, 1890. № 140 ևս



սում ռուսերեն տպագրվել են Կովկասի, այդ թվում Հայաստանի տարբեր շրջանների վերաբերյալ ազգագրական, բանահյուսական, լեզվաբանական, հնէաբանական, պատմագիտական բազմաթիվ նյութեր, որոնց հեղինակները հիմնականում տեղական դպրոցներում և գիմնազիաներում աշխատող ուսուցիչներն ու տեսուչներն էին: Ինչ խոսք, հեղինակները, չլինելով փորձառու գիտնականներ, աշխատանքները ներկայացրել են նկարագրական եղանակով՝ չկատարելով խոր վերլուծություններ, ինչը սակայն էապես չի ազդում դրանց կարևորության վրա, հատկապես եթե հաշվի առնենք, որ 19-րդ դարի կեսերին ժողովրդագիտությունը մեր տարածաշրջանում դեռևս սկզբնավորման շրջանում էր, և նման ուսումնասիրությունները հաճախ միակ հուսալի աղբյուրն են այդ ժամանակաշրջանի համապատասխան երևույթների հետազոտման մասին: «СМОЛІТК»-ը կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդագիտության ուսումնասիրության գործում՝ միաժամանակ նախատիպ հանդիսանալով 1896 թվականին Շուշիում հիմնադրված «Ազգագրական հանդեսի» ու ժողովրդագիտական տարբեր ուսումնասիրությունների համար: Հանդեսում տպագրված ուսումնասիրություններից անմասն չմնաց Արցախը: Դեռևս 1888 թվականին հրատարակված 6-րդ պրակում լույս է տեսել Ն. Գրիգորովի՝ Բեգում Սարով գյուղին նվիրված ուսումնասիրությունը¹, որի առաջին երկու հատվածներում անդրադառնալով բնակավայրի ընդհանուր բնութագրին, անվան ծագումնաբանությանը, աշխարհագրական դիրքին, բնակելի տների կառուցվածքին, կլիմային ու ռոտզման համակարգին, հիմնական զբաղմունքին (երկրագործություն, անասնապահություն)՝ հեղինակը հաջորդ բաժիններում առավել հանգամանորեն ներկայացնում է գյուղի բնակիչների կենսակերպը, սովորություններն ու կրոնական ծիսակատարությունները: Գրիգորովը ընդգծում է բնակիչների հյուրասիրությունը, առատաձեռնությունը, ինչպես նաև աղքատությունը՝ վերջինիս հիմնական պատճառ համարելով ծովությունը, ընտանիքների առանձնացվածությունը, ոչ կազմակերպված լինելն ու կատարվող անիմաստ ծախսերը, հարևան բնակավայրերի թաթարների հետ շփումները: Ըստ նկարագրության՝ այդ շփումներն այնքան մեծ են, որ գյուղացիները կատարել են մեծ թվով փոխառություններ, մյուս կողմից լայն տարածում են ստացել թաթարական հագուստի ձևերը և որոշ սովորություններ: Սակայն բեգումսարովցիները նաև ջերմեռանդ կրոնասերներ են և հարազատորեն պահպանում են ազգային սովորությունները: Առանձնակի նկարագրվում է Համբարձման տոնը, որի ժամանակ երիտասարդ աղջիկները երգում էին վիճակի երգեր, պահում Վարդավառի պասը: Բնակիչները հաճախ էին այցելում եկեղեցի, մոմ վառում: Հեղինակի հաղորդման համաձայն՝ վատթար վիճակում է առողջապահությունը. չկան բուժաշխատողներ, և հիվանդությունների դեպքում գյուղացիները դիմում են տեղի հեքիմին ու գուշակին կամ ապավինում սուրբ գրքերին և սրբավայրերին: Հաղորդումից տեղեկանում ենք նաև, որ 1885 թվականի հոկտեմբերի 17-ին բացված Բեգում Սարովի գյուղական ուսումնարանում սովորում էր 35 տղա երեխա, որից 34-ը՝ հայ, մեկը՝ ռուս:

Հանդեսի նույն պրակում է լույս տեսել Ի.Դավիդբեկովի՝ Հաղորթ գյուղին նվիրված ուսումնասիրությունը²՝ բաղկացած վեց մասից: Առաջին մասում ներկայացվում է գյուղի անվան ստուգաբանությունը՝ այն կապելով պարսկերեն *հա* (միջև), *դու* (երկու) և *րութ* (գետ) բառերի հետ (*երկու գետի մեջ*), ինչպես նաև բնակավայրի տեղագրությունը, տարածքի հնագիտական հուշարձանները (*Կռապաշտի հանգիստարան, Քոհնա հանգիստարան, Ղալին բանդ, Ծծախաչի դալա, Միպտակ խաչ, Վնեսա դալա, Աստղաբլուր, Օխտը դոնի, Մինա-Խորեն, Շաղախ*), սահմանները:

¹ Григоров Н., *Село Саров, Елисаветпольской губернии, Джеванширского уезда, выпуск шестой, 1888, отдел I, с. 123-132*

² Давидбеков И., *Село Гадрут, Елисаветпольской губернии, Джебраильского уезда, выпуск шестой, 1888, отдел I, с. 153-192*



Երկրորդ բաժնում հեղինակն անդրադառնում է գյուղի կառուցվածքին, աղբյուրներին (*Խոր աղբյուր, Շեն աղբյուր*), կլիմային, բուսական և կենդանական աշխարհին: Երրորդ մասում առանձին ենթաբաժիններով ներկայացվում են Հաղրութի և հարակից գյուղերի բնակչության թիվը (նաև աղյուսակներով), հողային բաժանումները, տուրքերը, ոռոգման համակարգը, բնակիչների զբաղմունքը (*այգեգործություն, երկրագործություն, բանջարաբուծություն, անասնապահություն, արհեստներ*)՝ առավել հանգամանորեն անդրադառնալով խաղողագործությանն ու գինեգործությանը, առևտրին ու մետաքսագործությանը, իսկ չորրորդ բաժնում տեղեկություններ են տրվում բնակավայրի ուսումնական հաստատությունների, կառավարական ու հասարակական կառույցների, դեռևս 1838 թվականին Վանք գյուղում հիմնադրված և 1847-ից Հաղրութում տեղակայված զինվորական շտաբի վերաբերյալ: Հինգերորդ բաժնում Դավիդբեկովը նկարագրում է բնակավայրի բնակելի կացարանը (*դարադահլ*), կարևոր տեղեկություններ հաղորդում բնակիչների սննդակարգի ու ճաշատեսակների, հագուստի, լեզվի և հավատի մասին՝ նշելով, որ գրեթե յուրաքանչյուր անգրագետ գյուղացի տիրապետում է ռուսերենին, ինչը ռուսական զինվորական շտաբի հետ շփումների արդյունք է: Առավել ծավալուն է վեցերորդ բաժինը, որտեղ նկարագրվում են հարսանիքը, ծնունդը և կնունքը, մահը և թաղումը, ժողովրդական տոներն ու դրանց հետ կապված տարբեր ծիսակատարություններ:

Հանդեսի 1892 թվականի 13-րդ պրակում հրատարակվել է Գ.Իզրայելովի «Село Касапет» ուսումնասիրությունը¹՝ բաղկացած 6 բաժնից: Առաջին բաժնում հեղինակն անդրադարձել է գյուղի անվան ստուգաբանությանը, պատմությանը, տեղադրությանն ու արտաքին տեսքին, երկրորդ բաժնում՝ ոռոգման համակարգին ու եղանակին, երրորդ բաժնում՝ գյուղի և հարակից տարածքներում գտնվող հնագիտական հուշարձաններին (*Եղին աղբյուր, Ղարիբ խաչ, Բննր մաս, Տրվրբախաչ, Իրեք մանկունք, Քրդրքատեղ, Ջրմոկին դալա, Եղիշե Առաքյալի վանք, Կաթողիկոսարան*), չորրորդ բաժնում՝ հանքային աղբյուրներին ու հանքավայրերին, հինգերորդ բաժնում՝ կուսապատգիների սովորույթներին, սովորություններին ու նախապաշարմունքներին: Գյուղացիների բնավորության գծերից հեղինակն առանձնացնում է խստությունը, կոպտությունը, հյուրասեր լինելը՝ միաժամանակ շեշտելով հարևան թաթարների բացասական ազդեցությունը, որի արդյունքում տարածվել են գողությունը, վրեժխնդրությունը, թաթարական տարազը, թաթարերեն բառերի հաճախակի գործածությունը, աղջիկ փախցնելու սովորույթը են: Նշվում է նաև, որ համատարած իշխում են հին սովորույթներն ու նախապաշարմունքները, հիվանդությունների դեպքում բնակիչները շարունակում են դիմել միայն հեքիմներին ու սրբավայրերին: Վեցերորդ բաժնում նկարագրվում է բնակիչների հիմնական զբաղմունքը (*անասնապահություն, հողագործություն, այգեգործություն, գինեգործություն*): Մեկ այլ նյութում² Իզրայելովը նկարագրել է Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի գավառում գտնվող *Իստի-սու* հանքային աղբյուրը՝ շեշտելով նրա բուժիչ նշանակությանը: Կարևոր նշանակություն ունի նաև նրա «*Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисаветпольской губернии*» ուսումնասիրությունը³, որտեղ հեղինակն անդրադարձել է Ջևանշիրի գավառում երեխաների դաստիարակության խնդիրներին, երեխաների ու նրանց ծնողների փոխհարաբերություններին:

¹ Израелов Г., *Село Касапет, Елисаветпольской губернии, Джеванширского уезда*, выпуск XIII, 1892, отдел I, с. 42-58

² Израелов Г., *Описание минерального источника Истису (теплый ключ), Елисаветпольской губернии, Джеванширского уезда*, выпуск седьмой, 1889, отдел II, с.84-85.

³ Израелов Г., *Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисаветпольской губернии*, выпуск седьмой, 1889, отдел II, с. 73-76



Ուշագրավ է Օ. Ջեյրանովի աշխատությունը¹, որտեղ հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Հյուսիսային Արցախի Գետաշեն գյուղի պատմությունը, տեղադրությունը, բնակարանը, եղանակն ու տարածված հիվանդությունները, այգիները, բանջարանոցներն ու անտառները, կենդանական աշխարհն ու որսորդությունը, բնակչության կազմը և զբաղմունքը, պետական տուրքերն ու գյուղական ծախսերը, խաղողագործությունն ու զինեգործությունը, մեղվաբուծությունը, շերամապահությունը, յուղի ստացումը, օձառագործությունը, հագուստը և սննդակարգը, ժողովրդական խաղատեսակները (*Կրրպըտյախտե, Ջրզըլախտե, Փանդի, Չիլինգյի, Պոզի-պոզի, Վեբյի, Հոթի, Չըխկըլդանե*), տեսարժան վայրերը, վանքերն ու սրբավայրերը (*Գոգ-գել, Չրադա ծոր, Նահատակ, Եղնասար, Ավագ Սուրբ նշան նն*), հավատալիքներն ու նախապաշարմունքները, տոները (*Մեծ պահք, Ծառագարդար, Վարդավառ, Նավասարդ, Սուրբ Սարգիս (Խաշի)*):

Նմանատիպ կառուցվածք ունի Գ. Օսիպովի՝ Քարին տակ գյուղին նվիրված ուսումնասիրությունը²: Այստեղ անդրադարձ է կատարվում բնակավայրի հիմնադրմանը, եղանակին, տների կառուցվածքին, բնակիչների զբաղմունքին՝ հատկապես երկրագործությանն ու կրի արտադրությանը, սննդակարգին, տարազին, հավատքին, ընտանեկան կյանքին ու կրթությանը, հասարակական դատին ու պատժամիջոցներին, շրջակայքի քարանձավներին, ժողովրդական տոներին, ամուսնության և հարսանիքի հետ կապված ծիսակատարություններին, սովորություններին, հավատալիքներին ու նախապաշարմունքներին:

Արցախի վերաբերյալ ազգագրական կարևոր նյութեր են ընդգրկված նաև հանդեսում հրատարակված համահավաք ժողովածուներում: 11-րդ պրակում լույս տեսած «*Промысловые занятия в некоторых населенных пунктах Закавказья*» աշխատության մեջ³ ներկայացվում են Շուշի քաղաքում (*գորգագործություն, կարպետագործություն, գուլպայագործություն, գլխարկագործություն, մոմագործություն, կոշկակարություն, օձառագործություն, կաշեգործություն, մորթագործություն, թամբագործություն*), Աղղամի համայնքում (*աղյուսագործություն, օձառագործություն, դերձակություն, երկաթագործություն, գորգագործություն*), Տոդ գյուղում (*բրդագործություն*), Մոխրենես գյուղում (*փայտանյութի հայթայթում*), Կուսապատ գյուղում (*երկաթագործություն, ատաղձագործություն, բրուտագործություն, տակառագործություն, բամբակագործություն, բրդագործություն*), Հադրութ գյուղում (*մանածագործություն, արծաթագործություն, երկաթագործություն, տակառագործություն, քարագործություն, աղյուսագործություն, կրագործություն, բրուտագործություն*) 19-րդ դարի վերջերին տարածված արհեստները: Հեղինակները հաճախ հանգամանորեն անդրադարձել են արտադրության եղանակներին ու միջոցներին, հումքի հայթայթմանը, արտադրանքի իրացմանն ու գներին: Նույն պրակի երկրորդ բաժնում լույս տեսած «*Описание кавказского шелководства*» աշխատության մեջ ընդգրկված են նաև Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի, Շուշու և Ջեբրայիլի գավառներում այդ ժամանակաշրջանի շերամապահության ու մետաքսագործության վիճակը ներկայացնող նկարագրությունները⁴:

¹ Джейранов О., *Селение Чайкенд, Елисаветпольского уезда, той же губернии*, выпуск двадцать пятый, 1898, отдел II, с. 59-100

² Осипов Г., *Селение Даш-Алты, Шушинского уезда, Елисаветпольской губернии*, выпуск двадцать пятый, 1898, отдел II, с. 101-136

³ *Промысловые занятия в некоторых населенных пунктах Закавказья*, выпуск одиннадцатый, 1891, отдел I, с. 1-79 (*Город Шуша*, Зедгенидзе Я., Захар-беков С., Тер-Егиазаров А.), с. 79-87 (*Шушинский уезд: Агдамское общество*. Б. Ибрагимбеков), с. 87-88 (*Шушинский уезд: Селение Тут*. Погосов М.), с. 88-89 (*Шушинский уезд. Селение Мухрене*. Погосов М.), с. 105-113 (*Джеванширский уезд. Селение Касапет*. Израелов Г.), с. 113-116 (*Джебраильский уезд. Село Гадрут*. Давидбеков И.)

⁴ *Описание кавказского шелководства*, выпуск одиннадцатый, 1891, отдел II, с. 87-90 (*Джеванширский уезд*), с. 90-95 (*Шушинский уезд*), с. 96-111 (*Джебраильский уезд*)



Հանդեսում է տպագրվել նաև Ե. Մելիք-Շահնազարովի՝ Շուշու գավառի Չանախչի գյուղի Կուսանաց անապատի ու հին գերեզմանոցի նկարագրությունը ներկայացնող նյութը¹:

18-րդ պրակում է ընդգրկված Ա. Կալաշնի նյութը², որտեղ նկարագրվում է Գետաշեն գյուղում տոնվող Վարդավառի տոնը, որին հետևում է հեղինակի գրառած՝ այդ տոնի ժամանակ երգվող 122 ջանգուլում՝ հայերենով (որոշները՝ թաթարերենով)՝ ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ:

Հայտնի է, որ դեռևս 19-րդ դարի վերջերին հայ իրականության մեջ բանահյուսական նյութերը հաճախ ներկայացվում էին ազգագրական ու ժողովրդագիտական այլ նյութերի հետ միասին: Նմանատիպ բազմաթիվ նմուշներ, հատկապես ավանդություններ են ներառված վերոհիշյալ ուսումնասիրություններում³:

Արցախի ազգագրության ուսումնասիրության պատմության մեջ կարևոր նշանակություն ունեն 1885-1887թթ. Թիֆլիսում հրատարակված «*Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края*» հատորաշարում ընդգրկված նյութերը: 4-րդ հատորում հրատարակված աշխատության մեջ⁴ Ա. Դեկոնսկին հանգամանորեն անդրադառնում է Ելիզավետպոլի նահանգի Շուշիի ու Ջեբրայիլի գավառների աշխարհագրական դիրքին ու սահմաններին, բնակչության թվին ու էթնիկ կազմին, հողային բավարարվածությանը, հանրային հողատարածքների մակերեսներին, ռոռզման միջոցներին, հողերի սեփականության ձևերին ու օգտագործման եղանակներին, վարելահողերին, արոտավայրերի տեսակներին և դրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքին, անտառահատմանը և անտառային նյութերի թողարկմանը, գյուղացիների բարեկեցության աղբյուրներին, երկրագործությանը (ցանքաշրջանառություն, հացահատիկի տեսակներ, ցանքսի ժամանակ, հացահատիկի մաքրում, սերմերի քանակ), այգեգործությանը, մետաքսագործությանը, անասնաբուծությանը, խոզաբուծությանը, մյուս եկամուտներին և այլ հարցերի: Կարևոր նշանակություն ունեն նաև ուսումնասիրության վերջում տեղադրված տեղեկագրերը, որոնցում արտացոլված են տեղեկություններ հետազոտված գյուղերի, գյուղերում հողի քանակի և ըստ ծխերի ու շնչերի տեղաբաշխման չափի, հարկերի ու տուրքերի, ըստ ծխերի ու շնչերի հողի տասնորդականի համար նախատեսված հարկերի չափի մասին նև:

6-րդ հատորում է ընդգրկված Ա. Խան-Ազովի ուսումնասիրությունը⁵, որտեղ հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի գավառի աշխարհագրական դիրքն ու բնական հարստությունները, բնակչությունն՝ ըստ էթնիկ կազմի, սեռերի, հավատի, բնակավայրերի, գրագիտության նև, հողատարածքները՝ ըստ բաշխվածության, տեսակների, օգտագործման նպատակների, ռոռզման համակարգը, անտառները, ամառային ու ձմեռային արոտավայրերը, նրանցից գյուղական համայնքների օգտվելու կարգը, բնակչության եկամուտի աղբյուրներն ու զբաղմունքը (երկրագործություն, խաղողագործություն, շերամապահություն, անասնապահություն, արհեստներ), հարկերն ու հարկատեսակները նև: Ուսումնասիրությանը

¹ Мелик-Шахназаров Е., *Из древностей селения Ченахчи* (Елисаветпольской губернии, Шушинского уезда), выпуск девятнадцатый, 1894, отдел I, с.78-83

² Калашев А., *Вардавар* (сел. Чайкенд, Елисаветпольской губернии), выпуск восемнадцатый, 1894, отдел второй, с.1-36

³ Давидбеков И., *Село Гадрут, Елисаветпольской губернии, Джебраильского уезда*, выпуск шестой, 1888, отдел I, с.156-158, Израелов Г., *Легенда и сказка*. (Из армянской словесности), выпуск седьмой, 1889, отдел II, с.86-89, Погосов М., *Тамерлан по рассказам джеванширских армян*, выпуск седьмой, отдел II, с. 64-68, Мелик-Шахназаров Е., *Из древностей селения Ченахчи* (Елисаветпольской губернии, Шушинского уезда), выпуск девятнадцатый, 1894, отдел I, с.79, Осипов Г., *Селение Даш-Алты, Шушинского уезда, Елисаветпольской губернии*, выпуск двадцать пятый, 1898, отдел II, с.101, 128-136 лн

⁴ Деконский А., *Экономический быт государственных крестьян Шушинского и Джебраильского уездов Елисаветпольской губернии*, 1886, т. IV, с. 1-157.

⁵ Хан-Агов А., *Экономический быт государственных крестьян Джеванширского уезда Елисаветпольской губернии*, Тифлис, 1887, т. VI, ч. 2-ая, с. 335-435



կցված են նաև նշված բնագավառների մասին հանգամանալից տեղեկություններ պարունակող ցանկեր:

Նմանատիպ կառուցվածք ունի Ն. Աբելովի՝ 7-րդ հատորում հրատարակված աշխատությունը¹: Այստեղ հեղինակը Ելիզավետպոլի նահանգի շրջանակում անդրադառնում է նաև Ղարաբաղի որոշ բնակավայրերի:

Հայ ու մասնավորապես Արցախի ազգագրության պատմության մեջ աննախադեպ երևույթ էր 1896 թվականին նշանավոր ազգագրագետ Ե. Լալայանի՝ Շուշի քաղաքում հիմնադրած «Ազգագրական հանդեսը», որով էլ «*հիմք դրվեց հետագա ժողովրդագիտական ուսումնասիրությունների համար*»²: Կարճ ժամանակում հանդեսի շուրջն են համախմբվում անվանի մտավորականներ Մ. Աբեղյանը, Լեոն, Ստ. Մալխասյանը, Հր. Աճառյանը, Թ. Թորամանյանը, Ե. Շահազիզը, Խ. Սամվելյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Վ. Փափագյանը, Գ. Լևոնյանը և շատ ուրիշներ, որոնք, նաև ակտիվ աշխատակցելով հանդեսին, տպագրում են ժողովրդագիտական մնայուն արժեքներ ներկայացնող իրենց ուսումնասիրություններն ու ժողովածուները: Հանդեսի խմբագրությունը շուտով տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ լույս են տեսնում երկրորդ և հաջորդ համարները: Ընդհանուր առմամբ, 1896-1916 թթ. տպագրվում է հանդեսի 26 գիրք, որտեղ լավագույնս ներկայացվում են հայ և առանձին ազգագրական շրջանների ազգագրական, բանահյուսական, բարբառագիտական, հնագիտական և տարաբնույթ այլ ուսումնասիրություններ, ժողովածուներ, նյութեր:

«Ազգագրական հանդեսի» հիմնադրումն ու նրա առաջին գրքի լույսընծայումը Շուշիի Մահտեսի Հակոբյանի տպարանում առանձնակի կարևորություն ունեցավ Արցախի և մասնավորապես Շուշիի հոգևոր կյանքում, որը 19-րդ դարի վերջին իր նշանակությամբ համարվում էր Անդրկովկասի երրորդ քաղաքը³, և որտեղ բուռն վերելք էին ապրում հասարակական կյանքը, մշակույթն ու կրթությունը: Պատահական չէ, որ հենց Շուշիում, իր շուրջը համախմբելով Արցախի մի խումբ մտավորականների, Ե. Լալայանը գավառի տարբեր բնակավայրերից կարճ ժամանակում հավաքում է ազգագրական հարուստ նյութ, որն էլ, խմբագրելով, լրացնելով և ամբողջացնելով Վարանդային վերաբերող՝ տարբեր լեզուներով հրատարակված և արխիվային ձեռագիր նյութերով ու պաշտոնական վիճակագրական տեղեկություններով կազմված մի շարք աղյուսակներով ու տախտակներով, «Վարանդա» ընդհանուր խորագրով հրատարակում է հանդեսի երկրորդ և երրորդ գրքերում⁴:

Բ գրքում տեղադրված ժողովածուի բաժինների մեծ մասի նյութերը հավաքել է Ե. Լալայանը: Որպես հեղինակներ են նշված նաև Լ. Աթաբեկյանը՝ «Ստատիստիկական տեղեկություններ (Շուշու ամբողջ գավառի մասին)», Ղ. Տեր-Ղազարյանը՝ «Տնտեսական դրություն», Վ. Յ.-ն՝ «Տղաբերք և կնունք», Բ. Ա.-ն՝ «Ընտանեկան կյանք», Յ. Տեր-Հովհաննիսյանը՝ «Հիվանդություն և բժշկություն»:

¹ Абелов Н., *Экономический быт государственных крестьян Елисаветпольского уезда*, 1887, т. VII, с.1-141

² Խեմչյան Է., *Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները)*, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 343

³ *Нагорный Карабах (историческая справка)*, Ереван, 1988, с. 83

⁴ Լալայան Ե., *Վարանդա. Նյութեր ապագա ուսումնասիրության համար*, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 5-244, *Վարանդա, նշանավոր տոներ*, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, Գ գիրք, էջ 338-349



Ժողովածուն սկսվում է «Մի երկու խոսք Վարանդայի պատմական անցյալի մասին» բաժնով¹, որտեղ տրվում է Վարանդա գավառի համառոտ պատմությունը, առանձին անդրադարձ է կատարվում Ամարաս վանքին:

«Վարանդայի տեղագրությունը»² բաժնում առանձին ենթաբաժիններով ներկայացվում են գավառի սահմանները, լեռները, դաշտերը, գետերը, լճերը, աղբյուրները, քարայրերը (*Հունտոի կարան, Շմանեք, Ավանա կարան, Որվան կարան, Ծծքարի կարան*), կլիման, բուսական և կենդանական աշխարհը, հանքերը, Շուշի քաղաքը և նշանավոր գյուղերը (*Ավետարանոց, Շոշու գյուղ, Կյունի Ճարտար, Մարուշեն, Վարազաբուն, Նոր Թաղլար*), նշանավոր վանքերը (*Ամարաս, Ս. Գրիգորիս, Կուսանաց անապատ, Ղևոնդյանց անապատ, Եղիշա կուսի անապատ, Բոի եղցե, Կարմիր եկեղեցի, Բողրխանի վանք, Մավասի վանք, Շոշկա վանք*), նշանավոր բերդերը (*Աղջկաբերդ, Ղալին խութ, Բրդահոնջին դալա*):

Շուշի քաղաքի և ամբողջ գավառի մասին վիճակագրական լուրջ տեղեկություններ են տրվում «Ստատիստիկական տեղեկություններ (Շուշու ամբողջ գավառի մասին)»³ բաժնում: Ուշագրավ են 1886 և 1895 թվականների բնակչության թիվն ու խտությունը, բնակչությունն ըստ ազգությունների և դավանությունների, ըստ բնակության տեղի (քաղաքում և գավառում), ինչպես նաև բնակչության շարժը՝ ամուսնությունները, ծնունդները, մահացությունը, հայ բնակչության աճը ներկայացնող աղյուսակներն ու համապատասխան վերլուծությունները:

Ծավալուն և բովանդակալից է «Տնտեսական դրություն»⁴ բաժինը, որտեղ հանգամանորեն ներկայացվում է Վարանդայի բնակչության տնտեսական զբաղմունքը՝ երկրագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը, ձկնորսությունը, որսորդությունը, արհեստները, գործարանային արդյունաբերությունը, առևտուրը՝ անհրաժեշտ աղյուսակներով:

Հաջորդ՝ «Լուսավորություն» բաժնում⁵ Լալայանն անդրադառնում է դպրոցներին, գրադարաններին, պարբերական հրատարակություններին, թատրոնին, տպարաններին, ոճրագործությանը, փոստին՝ քննության արդյունքները ներկայացնելով տարբեր աղյուսակներով:

«Ընտանեկան բարք» խորագրի տակ առանձին բաժիններով՝ «Ամուսնություն և հարսանյաց սովորություններ»⁶, «Տղաբերք և կնունք»⁷, «Ընտանեկան կյանք»⁸, «Հիվանդություն և բժշկություն»⁹, «Մահ, թաղումն և մեռելոց»¹⁰, «Հոգու և հանդերձյալ կյանքի մասին»¹¹, հանգամանորեն լուսաբանված են ընտանեկան բարքերն ու ծեսերը: Ամուսնությունը և հարսենական սովորությունները քննելիս հեղինակն առանձին ենթավերնագրերի տակ անդրադառնում է այնպիսի ծեսերի ու երևույթների, ինչպիսիք են՝ *օրորոցի նշանադրությունը, շալակի նշանադրությունը, ծաղկագարդի նշանադրությունը (բարգյահ), օջախի պսակը, թոնրի պսակը, առնանգամաբ ամուսնությունը, գնամաբ ամուսնությունը, լեվիրան, ծախսը, աղջիկ ուզելը, նշանդրեքը, խոնչա տանելը,*

¹ Բ գիրք, էջ 5-8

² Նույնը, էջ 9-53

³ Նույնը, էջ 54-76

⁴ Նույնը, էջ 77-101

⁵ Նույնը, էջ 102-112

⁶ Նույնը, էջ 113-144

⁷ Նույնը, էջ 144-150

⁸ Նույնը, էջ 151-172

⁹ Նույնը, էջ 173-178

¹⁰ Նույնը, էջ 178-184

¹¹ Նույնը, էջ 185-186



հղե կտրելը, տըշտըմաղը, քավորը, հանդերձօրհները, սափրելու ծեսը, հարսնառ գնալը, փրթեթօրհները, պսակ գնալը, հարսի օժիտը, հարս տանելը, մեծարքը, մկրկոչեքը:

Ընտանեկան կյանքը նկարագրելիս վերլուծության են ենթարկվում նահապետական ընտանիքի բարքերը, տրվում են ազգակցության աստիճանները, անդրադարձ է կատարվում նաև բարոյականությանը. նշվում են նահապետական բարքերի ու բարոյական ըմբռումների անկման պատճառները, որոնցից են պանդխտությունը, երկրի դիրքը, գործարանները, գորքը և այլն:

«Հիվանդություն և բժշկություն» բաժինը ներկայացնում է գավառում տարածված մի շարք հիվանդություններ՝ *ականջի վշշոց, աչքացավ, անքնություն, արյունահոսություն, այտուտուց, ատամնացավ, այրված մարմին, բարակացավ, բերանհարենք, գլխացավ, լուծ, խավարսն, խոլերա, իլություն, կատաղած շան կծած, կողքի ծակոց, կտրված մաշկ, կապույտ վերք, հագ, հարբուխ, միզակապություն, մատնաշունչ, մագոլ, մոլոքոր, ոսկրաբեկ, ոտների քրտինք, գնդակի վերք, տաքություն, ցավ տված մկանուք, փայծաղի մեծանալը, փորացավ, փորկապություն, օձի թույն*, և դրանց բուժման ժողովրդական միջոցներն ու հիվանդությունների տարածման հիմնական պատճառները:

Տրվում են նաև ծննդի և կնունքի, մահվան և թաղման հետ կապված ծեսերը, հոգու և հանդերձյալ կյանքի մասին ժողովրդի պատկերացումները:

Աշխատության մեջ ամենաընդարձակը «Հավատք» բաժինն է¹, որտեղ նշանավոր ազգագրագետն առանձին ենթաբաժիններով քննության է առնում լեռների, քարերի, կրակի, ջրի, ծառերի, կենդանիների, լուսավորների պաշտամունքի ձևերը, անդրադառնում նաև քաջքերին և սատանաներին, կախարհությանն ու սնոտիապաշտություններին:

Աշխատության երկրորդ մասի² հեղինակը նույնպես Ե. Լալայանն է, ով ուսումնասիրության համար, ինչպես նշում է, բացի իր հավաքած նյութերից, օգտագործել է Ալլահվերդյանի, Վարդապետյանի, Հովհաննիսյանի և ուրիշների՝ տարբեր գյուղերից հավաքած նյութերը³: «Նշանավոր տոներ» խորագիրը կրող այս բաժնում ամենայն մանրամասնությամբ քննության են առնված 19-րդ դարի վերջին Վարանդայում տարածված տոները՝ *Նոր տարի, Ծնունդ և ջրօրհներ, Սուրբ Սարգիս, Բարեկենդան, Տյառնընդառաջ, Մեծ պաս, Ծաղկազարդ, Չարչարանաց շաբաթ, Զատիկ, Համբարձում, Լուսավորչի պաս, Վարդավառ, Նավասարդ*, դրանց հետ կապված գանազան ծեսերը, կերակրատեսակները, խաղատեսակները և այլ հանգամանքներ:

Կարևոր նշանակություն ունեն աշխատության մեջ ընդգրկված լուսանկարները՝ «Շուշի», «Շուշեցի հայ կինն ու իր թոռը», «Շուշեցի այան ու հարսը», «Շուշեցի կինը փողոցում», «Մոլլան ազան տալիս», «Զենքեր», «Շուշու ջրկիր», «Վարանդեցի հայ գեղջկուհի», «Վարանդեցի հայ կին», որոնք այդ ժամանակաշրջանի եզակի նմուշներից են, ինչպես նաև բանահյուսական նյութերը⁴:

Արցախի ժողովրդագիտությանն առնչվող նյութեր են տպագրվել նաև «Ազգագրական հանդեսի» այլ համարներում:

Դեռևս Շուշիում 1896 թվականին հրատարակված Ա գրքում է հրատարակվել Լ. Բաբայանի «Խոջալլուի գերեզմանները» հաղորդումը⁵՝ նվիրված Պետերբուրգի հնագիտական ընկերության անդամ, Շուշիի ռեալական դպրոցի գերմաներենի ուսուցիչ Է. Ռոպերի՝ Ղարաբաղում, հատ-

¹ Նույնը, էջ 187-244

² Գ գիրք, էջ 338-349

³ Նույնը, էջ 349

⁴ Մանրամասն տե՛ս Վարդանյան Ս., **Վարանդայի բանավոր մշակույթը Ե. Լալայանի և նրա թղթակից բանահավաքների գրառումներում**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2015, N2, էջ 356-367

⁵ Բաբայան Լ., **Խոջալլուի գերեզմանները**, 1896, Ա գիրք, էջ 37-40



կապես Խոջալլու և Առաջածոր գյուղերում 19-րդ դարի վերջերին կատարած հնագիտական պեղումներին: Հաղորդումից տեղեկանում ենք, որ գերմանացի հնագետը պեղումների արդյունքում հայտնաբերել է շինությունների մնացորդներ, կուրգաններ, անոթներ, դրամներ, զենքեր, զարդարանքներ, գործիքներ, սափորներ, որոնց մի մասը պատված է գեղեցիկ զարդաքանդակներով, «որ ցույց են տալիս այդտեղի բնակիչների գեղարվեստական զարգացած ճաշակը»¹:

Մեկ այլ՝ Ջեբրայիլի գավառի Ղարաբուլաղ գյուղում կատարված պեղումների մասին հաղորդում է տպագրել Ե. Լալայանը²:

Հանդեսում են տպագրվել նաև Ե.Լալայանի՝ Արցախի հարևան ազգագրական շրջաններին նվիրված ուսումնասիրությունները³:

Ուշագրավ է 17-րդ, 18-րդ և 19-րդ գրքերում լույս տեսած՝ Ա. Դադյանի «Վարանդայի բանավոր գրականությունից» ժողովածուն⁴, որտեղ ընդգրկված են հեղինակի՝ 1903թ. և նրա եղբոր՝ նշանավոր ժողովրդագետ Խ. Դադյանի՝ 1885-1889թթ. Վարանդայի, մասամբ նաև Դիզակի և Խաչենի գյուղերից գրառած ժողովրդական վիճակի երգեր՝ ջանգյուլումներ:

Արցախի ազգագրության վերաբերյալ կարևոր տեղեկություններ են ընդգրկված հայ և օտարազգի մի շարք գործիչների՝ նախախորհրդային շրջանում Արցախում կատարած ճանապարհորդությունների արդյունքներն ամփոփող աշխատություններում ու ժողովածուներում⁵: Դրանցում հեղինակներն անդրադառնում են տարածաշրջանի և նրա տարբեր բնակավայրերի, սրբավայրերի, հնությունների, եկեղեցիների, վանքերի, լեռների, գետերի, բուսատեսակների և նկարագրությանը, աշխարհագրական դիրքին, կլիմային, բնակչության թվին, էթնիկ կազմին, տնտեսական զբաղմունքին, սովորություններին, հավատալիքներին, հաղորդում պատմական, վիմագրական, ազգագրական, բանահյուսական, վիճակագրական, կրթական կարևոր տեղեկություններ:

Այդ շարքում առանձնակի կարևորություն ունի Մ. Բարխուդարյանի «Արցախ» ժողովածուն⁶, որտեղ առանձին բաժիններով և ենթաբաժիններով նկարագրվում են Արցախ նահանգի սահմանները, լեռները, դաշտերը, դաշտակները, հովիտները, գետերն ու գետակները, մեծ աղբյուրները, հանքային սառն ու տաք ջրերը, լճակները, անտառները, բուսական ու կենդանական աշխարհը, հանքերը, գավառները, նրանց կազմում գտնվող բնակավայրերը, պատմաճարտարապետական հուշարձանները՝ վանքերը, եկեղեցիները, մատուռները, ապարանքները, սրբավայրերը, քարայրերը, բերդերը, հին բնակատեղիները ևն: Առանձնակի անդրադարձ է կատարվում

¹ Նույնը, էջ 39

² Լալայան Ե., *Ղարաբուլաղ գյուղի կուրգանները*, 1897, Բ գիրք, էջ 307-308

³ Լալայան Ե., *Միսիան. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար*, 1898, Գ գիրք, N1, էջ 105-207, *Չանգեզուր. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար*, 1898, Դ գիրք, N2, էջ 7-116, *Չանգեզուրի գավառ. Կասպան կամ Ղափան*, 1904, XII գիրք, էջ 175-202, *Գանձակի գավառ. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար*, 1899, Ե գիրք, էջ 213-360, 1900, Զ գիրք, էջ 231-382, 1901, VII-VIII գիրք, էջ 255-270

⁴ Դադյան Ա., *Վարանդայի բանավոր գրականությունից*, «Ազգագրական հանդես», XVII գիրք, Թիֆլիս, 1908, N1, էջ 37-48, XVIII գիրք, Թիֆլիս, 1908, N2, էջ 25-32, XIX գիրք, Թիֆլիս, 1910, N1, էջ 85-89

⁵ Ջալալյանց Ս., *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*, մասն Ա, Տիֆլիս, 1842, մասն Բ, Տիֆլիս, 1858, Թադիսայան Ս., *Ճանապարհորդություն ի Հայս, Կալկաթա*, 1847, Գակտաուզեն Ա., *Закавказский край. Заметки о семейной и общественной жизни и отношениях народов, обитающих между Черным и Каспийским морями*, Санкт-Петербург, 1857, часть I, 248с., часть II, 215с., (Верещагин В.), *Путешествие по Закавказью в 1864-1865 гг. Василия Верещагина*, «Всемирный путешественник», т.7, Санкт-Петербург, 1870, с.209-305, Բարխուդարյան Ա., *Ուխտավորի հիշատակարանը*, Շուշի, 1885, Բարխուդարյան Ա., *Իմ հիշատակարանը*, Շուշի, 1890, Հայկունի (Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց), *Ուղեգնացական ակնարկներ*, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1885թ. (հունիսի 16-ից դեկտեմբերի 5-ը լույս տեսած 46-95-րդ համարներում), Գաֆֆի, *Երկու ամիս Ադվանից և Մյունխաց աշխարհներում*, «Լուսմա», Թիֆլիս, 1896, Գիրք Ա., էջ 60-109, Գիրք Բ., էջ 193-228, Madame B. Chantre, *A travers Larménie Russe*, Paris, 1893, Շեգալ Կ., *Елисаветпольская губерния, впечатление и воспоминание*, Тифлис, 1902 ևն

⁶ Բարխուդարյանց Մ., *Արցախ*, Բարու, 1895



յուրաքանչյուր բնակավայրի աշխարհագրական դիրքին, բնակչության (արական և իգական) ու ծխերի թվին, կյանքի միջին տևողությանը, զբաղմունքին, հողատեսակներին, ստացվող բերքերին, եկեղեցիներում պահվող գրչագրերին ևն: Վերջում տրվում են ծանոթություններ, հատուկ անունների, ավերակ բնակատեղիների, բերդերի, վանքերի ու մատուռների, քարայրերի ցանկեր և առանձին գավառների ու քաղաքների բնակչության, ծնունդների, պսակների, ննջեցյալների, եկեղեցիների, քահանաների մասին տեղեկատվական ամփոփագիր:

Հիշատակության արժանի են «*Записки Кавказского отдела императорского русского географического общества*» հանդեսի 18-րդ հատորում ընդգրկված՝ Ելիսավետպոլի նահանգի, այդ թվում՝ Ջերբայիլի, Ջևանշիրի ու Շուշիի գավառներին վերաբերող երկու ուսումնասիրությունները¹, որոնցից առաջինում ներկայացվում են նշված գավառների տնտեսության վերաբերյալ 1894թ. վիճակագրական տվյալները, առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվում երկրագործությանը, բանջարաբուծությանը, ծխախոտագործությանը, բամբակագործությանը, գինեգործությանը, օղեգործությանը, անասնապահությանը, մետաքսագործությանը, հանքագործությանը, առևտրին, բնակչության կազմին ու շարժին ևն, իսկ երկրորդում առանձին աղյուսակներով ու պունակներով տվյալներ են հաղորդվում այդ գավառների ու նրանց որոշ բնակավայրերի վերաբերյալ՝ ըստ զբաղեցրած տարածքների (քառակուսի վերստերով, դեյաստիներով, միլերով, կիլոմետրերով), բնակավայրերի քանակի, բնակչության թվի (ըստ ընտանիքների, արական և իգական սեռերի, խտության, էթնիկ կազմի):

Կարևոր է Ս. Ջավարյանի ուսումնասիրությունը²: Այստեղ հեղինակը ներկայացնում է Բաքվում գործող Հայկական կուլտուրական միության ագրարային մասնաճյուղի առաջարկությամբ 1906թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արցախում, մասնավորապես՝ Շուշիում, Խաչենում և Վարանդայում կատարած իր շրջագայությունների ժամանակ տեղի բնակավայրերից, պատկան մարմիններից, պարբերական մամուլից հավաքած տեղեկատվությունը՝ որոշակի դասակարգումներով ու վերլուծություններով: Առանձին բաժիններով համառոտակի բնութագրվում են Արցախի տեղագրական առանձնահատկությունները, բնական պայմանները, կրթության և մշակույթի վիճակը և առանձնահատկությունները, հողատիրության պայմանները, ցանքատարածությունների ու բերքատվության չափերը, գյուղացիների տնտեսական վիճակն ու գյուղի շերտավորումը, կողմնակի եկամուտները, արդյունաբերությունը, տարազնացությունը, վաշխառությունը, տնտեսական կյանքի այլ կողմերը: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև նշված բնագավառների մասին տեղեկություններ պարունակող ցանկեր:

Հայ ազգագրության ուսումնասիրության պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի խորհրդային շրջանը, որի սկզբնավորումը ամենից առաջ կապվում է Ստեփան Լիսիցյանի անվան հետ: Նշանավոր գիտնականի ուշադրությունից անմասն չմնաց Արցախը, որի ազգագրական բազմակողմանի քննությունն է ներկայացված անհիմն պատճառներով տասնամյակներ շարու-

¹ *Краткая статистическая сведения о Елисаветпольской губернии за 1894 год, книжка XVIII, Тифлис, 1896, с. 423-439, Этнографические карты губерний и областей Закавказского края, составленная правителем дел Кавказского отдела Императорского русского географического общества Е. Кондратенко по своду статистических данных о населения Закавказья, извлеченных из посемейных списков 1886 года, изданному по распоряжению главноначальствующего Закавказским статистическим комитетом в 1893 г., книжка XVIII, Тифлис, 1896, Приложение, I, с. 1-46*

² Заварян С., *Экономическая условия Карабаха и голод 1906-1907 гг.*, Санкт-Петербург, 1907



նակ ձգձգվելուց հետո տպագրված¹ «*Լեռնային Ղարաբաղի հայերը*» հիմնարար աշխատության մեջ²:

Աշխատությունը սկսվում է «*Հեղինակի կողմից*»³ նախաբանով, որտեղ Լիսիցյանը տեղեկություններ է հաղորդում ազգագրական ակնարկի ստեղծման հանգամանքների մասին: Ըստ այդ հաղորդման՝ հեղինակը 1924 թվականի ամռանը Անդրկովկասի ԿԳԿ-ին առընթեր Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի կազմակերպած գիտարշավի շրջանակներում ազգագրական նյութեր հավաքելու նպատակով մեկնում է Լեռնային Ղարաբաղ: Ստեփանակերտում մարզի ղեկավարության հետ մշակված երթուղիների համաձայն՝ նա ուսումնասիրություններ է կատարում Ասկերանի շրջանի Ավետարանոց, Դաշուշեն, Մարտունու շրջանի Թաղավարդ, Մոս, Գյումե Ճարտար, Գիշի, Ննգի, Հաղրութի շրջանի Թաղլար, Տոդ, Հաղրութ, Ծամձոր, Ջրակուս, Մարտակերտի շրջանի Վանք, Վաղուհաս, Հաթերք, Մաղավուզ, Երից-Մանկունք, Մեծ Շեն, Կուսապատ, Մարտակերտ գյուղերում՝ «*հավաքելով բազմակողմանի հարուստ նյութ*»⁴: Այստեղ հեղինակը հիշատակում է նաև մինչ այդ Արցախի ազգագրության ուսումնասիրության բնագավառում հրատարակված որոշ աշխատանքներ՝ նշելով, որ իր շրջագայության ժամանակ այդ նյութերը ստուգել, տարածապես ընդլայնել և զգալիորեն լրացրել է:

Առաջաբանին հետևում է «*Աշխարհագրական ակնարկ*» բաժինը⁵, որտեղ առանձին ենթաբաժիններով համառոտ, բայց բովանդակալից ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանները, ռելիեֆը, գետերը, անտառները, բաժանումն ըստ շրջանների:

Բուն ուսումնասիրությունը բաղկացած է հինգ գլուխներից: Առաջին՝ «*Բնակչությունը*» գլխում⁶ հանգամանորեն քննության են առնվում էթնիկ կազմը և սոցիալական խմբավորումը: Լիսիցյանը հայտնում է, որ իր հետազոտության ժամանակ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը կազմում էր շուրջ 130 հազար մարդ, որից 120 հազարը հայեր էին, 10 հազարը՝ ադրբեջանցիներ, որից միայն 5 հազարը՝ Շուշիում, սակայն չնայած դրան՝ որոշ հանգամանքներ՝ երկարատև հարևանությունը, դարավոր քաղաքական ենթակայությունը պարսկական շահերի գերագույն իշխանությանը, տնտեսական հարաբերությունները մահմեդական ցեղային ավագանու հետ, հիմք են հանդիսացել հայ բնակչության մեջ ադրբեջանա-իրանական ազդեցությանը, ինչը դրսևորվում էր տարբեր ձևերով՝ ադրբեջաներենի իմացություն, արևելյան երաժշտության յուրացում, երեխաներին մահմեդական անուններ տալը և այլն:

Այս գլխում առավել խորությամբ են նկարագրվում սոցիալական խմբավորումները, հատկապես ռուսական գերիշխանության ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում դասային հարաբերությունների արմատական փոփոխությունները, որի արդյունքում պարսկական հասարակական դասային խմբավորումները, տնտեսական և քաղաքական նոր պայմաններում քայքայվելով, իրենց տեղը զիջեցին նոր ձևերին: Դասային քայքայումից անմասն չմնաց նաև հոգևորականությունը: Նոր պայմաններում գյուղական համայնքների սահմանները ընդարձակվեցին վանքապատկան հողերի հաշվին. արդյունքում հոգևորականության եկամուտները նվազեցին, սահմանափակվեցին բարեպաշտական նվիրատվությունները, ինչն էլ հանգեցրեց բազմաթիվ

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Կարդանյան Լ., *Степан Лисициан и истоки армянской этнографии*, Ереван, 2005, с. 287-292

² Լիսիցյան Ս., *Լեռնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ)*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, էջ 9-84

³ Նույնը, էջ 9-10

⁴ Նույնը, էջ 9

⁵ Նույնը, էջ 11-15

⁶ Նույնը, էջ 16-26



միաբանությունների վերացմանը: Հոգևորականների հեղինակությունը ավելի մեծ անկում ունեցավ խորհրդային կարգերի հաստատումից հետո. դրան զուգընթաց գյուղից հեռանում էին մեծ թվով արհեստավորներ՝ վաստակ փնտրելով Շուշի, Գյանջա, Նուխի, Շամխոր, Գրոզնի, Թիֆլիս և այլ քաղաքներում: Արդյունքում՝ հին սոցիալական խմբավորումների քայքայմանը զուգահեռ, ձևավորվում են մանր և խոշոր առևտրականների, ձեռնարկատերերի, գնորդների խավերը, զարկ է տրվում օլեթորմանն ու շերամապահությանը, հիմնվում են մետաքսագործական ֆաբրիկաներ:

Հեղինակը անդրադառնում է նաև ուսումնական հաստատությունների վիճակին՝ նշելով, որ քաղաքացիական պատերազմի նախօրեին դրանց թիվը Լեռնային Ղարաբաղում չէր հասնում 50-ի, որից միայն Շուշիում գործող թեմական դպրոցն ու ռեալական ուսումնարանն էին միջնակարգ, որոնց, ինչպես նաև այլ նմանատիպ և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտները, հայրենիքում աշխատանք չգտնելով, բնակություն էին հաստատում Անդրկովկասի, Անդրկասպիայի և Ռուսաստանի այլ մասերի տարբեր քաղաքներում՝ ներգրավվելով տեղի արդյունաբերական և մշակութային կյանքում:

Նշված գլխի «Հայերն ու հարևանները» բաժնում¹ ներկայացվում է հայերի և ադրբեջանցիների (որոնք մինչև հեղափոխությունը պաշտոնապես կոչվում էին *թաթարներ*) հարաբերությունները, որոնք ռուսական տիրապետության շրջանում էլ ավելի լարվեցին՝ հանգեցնելով արյունալի ընդհարումների: Հիշատակվում են Շուշու 1905 և 1920 թվականների, Շուշուց քիչ ներքև գտնվող հայկական Քայրալիքենո գյուղի 1919 թ. կոտորածները:

Աշխատության երկրորդ գլխում՝ «Քաղաքը և գյուղը»², հեղինակը տալիս է կարևոր տեղեկություններ Շուշի և Ստեփանակերտ քաղաքների, գյուղերի, սուների, ագարակների, արցախցիների արտաքինի ու հագուստի մասին:

Հեղինակը Շուշին ներկայացնում է որպես տնտեսական մեծ նշանակություն ունեցող կենտրոն, որտեղ զարգացած էին արհեստները, առևտուրը, արդյունաբերությունը, մշակույթը, տպագրական գործը, ուսումը: Այն նաև նշանավոր ամառանոց էր, հատկապես՝ այլ վայրերում ապրող շուշեցիների համար: Քաղաքը բաղկացած էր չորս հիմնական թաղերից՝ Ագուլեցոց, Ղազանչեցոց, Թավրիզեցոց և Մեղրեցոց, որոնց բնակիչները հիմնականում այստեղ էին տեղափոխվել համապատասխան վայրերից: Դրանցից յուրաքանչյուրը հայրենակցական սկզբունքով համախմբված էր իր եկեղեցու շուրջն ու մինչև ռուսական քաղաքային կարգի հաստատումը կառավարվում էր իր թաղային կազմակերպությամբ: Շուշիի բնակչությունը 1823թ. յոթ հազարից 1914թ. հասել էր 25 հազարի, և «այն Անդրկովկասյան Հայաստանում բացարձակապես գյուղատնտեսական զբաղմունքներից կտրված գուտ քաղաքային տիպի միակ բնակավայրն էր»³:

Սակայն, ինչպես նշում է Լիսիցյանը, Շուշու հրդեհից հետո նոր կենցաղի առաջացման համար քաղաքային տարրի նշանակությունը խիստ նվազում է: Վարչական կենտրոնը տեղափոխվում է Ստեփանակերտ, որը 1927թ. ուներ շուրջ երեք հազար բնակիչ, երևան են գալիս առևտրաարդյունաբերական նոր կենտրոններ, ինչպիսիք են՝ Մարտակերտը և Հոնաշենը, Լեռնային Ղարաբաղին սահմանակից Ադդամ և Կոբյագիտ գյուղերը: Այստեղ տեղեկություններ են տրվում նաև արտագնացության մասին, նշվում է, որ մեծ թվով գյուղացիներ գյուղատնտեսական անբարենպաստ պայմանների (հատկապես Դիզակում և Վարանդայում) պատճառով արտագնա աշխա-

¹ Նույնը, էջ 24-26
² Նույնը, էջ 27-37
³ Նույնը, էջ 29



տանքի էին մեկնում Դաշտային Ղարաբաղ և Մուղանի տափաստան (հերկի և բերքահավաքի ժամանակ), բայց հատկապես՝ Բաքու, Գրոզնի և այլ քաղաքներ, որտեղ աշխատանքի էին տեղավորվում գործարաններում, ֆաբրիկաներում, խանութներում, շինարարությունում և պետական ու մասնավոր այլ ծառայություններում: Արտագնաց գյուղացիները վերադառնալով քաղաքային տարբեր սովորություններ էին տարածում գյուղերում, ինչի ազդեցությամբ աստիճանաբար փոփոխվում է գյուղի պատկերը, հատկապես՝ հագուստը և կահկարասին:

Լեռնային Ղարաբաղում, ըստ Լիսիցյանի նկարագրության, գյուղերը տեղաբաշխված էին հովիտների ու կիրճերի բարձրաբերձ լանջերին, ուղղաձիգ ժայռերի (*քերծ*) մոտ, ինչի գլխավոր պատճառներն են պաշտպանական նպատակահարմարությունները և աղբյուրների մերձավորությունը: Տները ցրված էին անկանոն զանգվածներով, չունեին որևէ հստակ հատակագիծ, բայց կրում էին հին ազգատոհմային խմբավորումների հետքերը, չնայած նոր ընտանիքներն արդեն տուն կառուցելու համար ազատ հողամասեր էին ընտրում ազգատոհմային թաղամասերից հեռու՝ գյուղի ծայրամասում՝ այնքան էլ հաշվի չառնելով ազգակցական կապերը: Որպես ամենուր հանդես եկող հնաձև տուն՝ նկարագրվում է *ղարաղամբ (սև տուն)*, որն իր տեղը հետզհետե զիջում էր նոր, հաճախ երկհարկանի, թիթեղածածկ կամ կղմինդրածածկ տանիքներով և պատշգամբավոր տներին, որոնց ստորին հարկը ծառայում էր տնտեսական նպատակների, իսկ վերինը՝ բնակելի, թեև ամռանը բնակիչները գերադասում էին բնակվել ստորին հարկում, որտեղ ավելի զով էր: Մարագները, գոմերը և այլ կառույցներ շինվում էին տներից քիչ հեռու՝ ծածկվելով ծղոտով կամ եղեգով: Հաճախ գյուղացիները իրենց ժամանակի մեծ մասն անց էին կացնում տնից հեռու՝ դաշտերին կից սարքված կալերում կառուցված ժամանակավոր բնակատեղերում, որոնք ժամանակի ընթացքում վեր են ածվում մշտական բնակավայրերի: Ըստ հեղինակի՝ նման ազարակներ են առաջացել Գյումե ճարտար, Սոս, Թաղավարդ հին գյուղերի մոտ: Դրանցից շատերը դեռևս չունեին հատուկ անուններ և պարզապես կոչվում էին *կալեր*: Ազարակներ էին ստեղծվում նաև գյուղերից հեռու այն վայրերում, որտեղ գյուղացիները, գոմեր կառուցելով, ձմռանը պահում էին անասունները: Արդյունքում այդ ազարակները վեր էին ածվում առանձին գյուղերի: Լիսիցյանը նշում է, որ այդպես Վաղուհաս գյուղից առանձնացել է Հարությունագոմեր, Առաջածորից՝ Պողոսագոմեր և Վրբսրկյումեր, Կուսապատից՝ Դամրլու, Հորաթաղ և Մարտակերտ, Կալաղարասուց՝ Նոր Կալաղարասի, Խրխան, Կորագերք, Կանաչ թալա, Չորան-Գոնե գյուղերը, իսկ Ավետարանոց գյուղից Ալամանց կյումեր, Մրբգումանց կյումեր, Պլկանանց կյումեր և Հասանանց կյումեր գյուղերի անջատման պատճառն այն էր, որ մելիքները այդտեղ գտնվող գոմերում վերաբնակեցրել էին առավել բազմանդամ ընտանիքներին¹:

«*Տան կահավորումը*» խորագրի տակ ներկայացվում են տան կահավորումը, ամանեղենը, ուտեստը: Լիսիցյանը նշում է, որ 20-րդ դարի քսանական թվականներին դարադամ էին թափանցել ճենապակե ափսեներն ու արծաթազոծ գավաթները, դանակները, պատառաքաղները, վիեննական ճկաթոռը, իսկ նոր տներում հին կահավորումից ոչինչ չէր մնացել: Այդտեղ սենյակները տաքացնում էին բուխարիկներով կամ թիթեղե վառարաններով, մուտք էր գործել քաղաքային կահույքը: Նկարագրության համաձայն՝ կահավորման ամենագնահատելի մասը կրկին կազմում էին գորգերն ու անկողինը, խոհանոցային ամանեղենը մեծ մասամբ պղնձից էր, գերակշռում էին Անդրկովկասի հայ բնակչության մեջ լայնորեն տարածված կոնաձև կաթասները, երկար բռնակով խոր թավաները, ծանր քամիչները: Ուտեստից հիշատակվում են բանջարեղենը, փլավը, ձվածեղը,

¹ Նույնը, էջ 34



կոլլակը, քյուվթան, տոլման, քաղցրավենիքից՝ կաթնահունցը, գաթան, բարակ քաղցր բլիթները, հացի տեսակներից՝ պռոզը, որը, շնորհիվ փայտի առատության, թխվում էր երկու-երեք օրը մեկ անգամ և այլն: Հայտնվում է նաև, որ Բանջարեղենից կարտոֆիլը համեմատաբար նոր էր տարածվել, սմբուկ չէր հանդիպում, թռչուններից շատ էին հավերը, իսկ սագեր ու բադեր իսպառ չկային, կովերի փոխարեն շատերը գերադասում էին այծ պահել, որի պատճառով ամենուր զգացվում էր պանրի, կարագի, մածնի, մսի պակասը:

Հաջորդ՝ «Արտաքինն ու հագուստը» բաժնում¹ նշանավոր ազգագրագետը անդրադառնում է դարաբաղցի հայերի արտաքին տեսքին, սանրվածքին և հագուստի նկարագրությանը: Համեմատելով այլ վայրերի հայերի հետ՝ նշվում են արցախցիների արտաքինի առանձնահատկությունները՝ բարձր հասակը, ավելի սպիտակ մաշկը, բաց գույնի մազերը, ուղիղ կեցվածքը, դուրս ցցված փորի գրեթե բացակայությունը, թեթև ու արագ քայլվածքը, արագ խոսելաձևը և այլն: Հաղորդվում է, որ տնայնագործության մեջ որպես հիմնական հումք գործածվում էր բուրդը, աստիճանաբար տարածվում էր բամբակը, իսկ մետաքսը լայն գործածություն չունեց, քանի որ տեղի ջուլհակային տեխնիկան մետաքսե նուրբ գործվածքներ ստանալու հնարավորություն չէր տալիս: Տղամարդկանց հագուստից հիշատակվում է արխալուղը, չուխան, կուլբան (գուլպա), ոչխարի մորթուց կարված լայն կոնաձև փափախը, քուլքը, յափնջին (այծենակաձ), տրեխը, քոշը (երեսը բաց կրնկավոր կիսակոշիկ), կանացի հագուստից՝ երկար ներքնաշապիկը, խոնջանը, երեք քղանցք ունեցող արխալուղը, մետաքսե լայն գոտին, քուլքը, որոնք սակայն հետզհետե իրենց տեղը զիջում էին քաղաքներից մուսք գործած նոր ձևերին:

Ընտանեկան ու հասարակական հարաբերություններին, բարքերին ու ծեսերին է նվիրված աշխատության երրորդ՝ «Ընտանիքը» գլուխը², որի առաջին՝ «Բաժանք» բաժնում տրվում են ընտանիքի հոր մահից հետո, նույնիսկ նրա կենդանության օրոք ունեցվածքի բաժանման ձևերը, ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, դրանցից յուրաքանչյուրի տեղն ու դիրքը ընտանիքում: Բաժանքի ժամանակ սկզբում առանձնացվում էր չամուսնացած եղբայրների ու քույրերի բաժինը: Քույրերը ստանում էին այն, ինչ հասնում էր օժիտով՝ սպիտակեղեն, հագուստեղեն, անկողին՝ խարջ, իսկ եղբայրները՝ հիմնականում անկողնային սպիտակեղեն՝ ազապ հախը, և այն, ինչ նախատեսվում էր նրանց հարսանիքի ծախսերի համար: Այրի մայրը, ով ամուսնու մահից հետո հաճախ մնում էր ավագ, երբեմն էլ՝ կրտսեր որդու մոտ, նույնպես ստանում էր որոշակի գումար: Մնացած ունեցվածքը բաժանվում էր ամուսնացած եղբայրների միջև, իսկ եթե հայրը ողջ էր, նրա բաժինը չէր գերազանցում որդիների բաժինն: Տունը բաշխվում էր կա՛մ վիճակ գցելով, կա՛մ փոխադարձ համաձայնությամբ:

Ըստ հաղորդման՝ նախահեղափոխական Արցախում «նույնիսկ բաժանված անհատական ընտանիքում ներքին փոխհարաբերությունները որոշվում էին հոր և մոր հնավանդ հեղինակությամբ, կրտսեր անդամների անձի լրիվ ճնշմամբ, ինչպես նաև կնոջ ստորադրյալ վիճակով»³: Ընտանիքի գլխին էր կանգնած հայրը, ով բաշխում էր աշխատանքը՝ միաժամանակ ընտանիքի լիազոր ներկայացուցիչը հանդիսանալով հավաքույթներում, ժողովներում, հարսանիքներում, թաղման և այլ միջոցառումների դեպքում: Նրան ենթարկվում էին բոլորը, և միայն հոր ծերության ու տնտեսությունը վարելու անկարողության դեպքում իշխանությունը փոխանցվում էր որդուն: Սակայն տան լիիրավ իշխանությունը պատկանում էր մորը, ով «առանց վերահսկողության

¹ Նույնը, էջ 35-37

² Նույնը, էջ 38-52

³ Նույնը, էջ 39



տնօրհնում էր բոլոր պաշարները, կանանց մեջ բաշխում էր տնային բազմաթիվ աշխատանքները, հետևում ամեն մի անդամի վարք ու բարքին»¹: Հեղինակը շեշտում է այն համերաշխությունը, որ տիրում էր արցախյան ավանդական ընտանիքում և ընդհանրապես գերդաստանում, չնայած լինում էին նաև երիտասարդների ըմբոստության դեպքեր: Առավել ստորացված էր կնոջ վիճակը, ով սկեսրայրի և քավորի հետ չէր խոսում մինչև մահ, սկեսրոջ հետ՝ մինչև առաջին երեխայի ծնվելը, տեգրոջ հետ՝ տասը տարի և ընդհանրապես զրկված էր բազում ազատություններից ու դատապարտված լռության: Լիսիցյանը անդրադառնում է նաև հեղափոխությունից հետո նոր կարգերի հաստատման արդյունքում առաջացած ընտանեկան հարաբերությունների փոփոխություններին՝ նշելով, որ ընտանեկան տարաձայնությունները ավելի հաճախակի էին դառնում հատկապես վաղ ամուսնությունների արգելումից հետո: Փոխվում են նաև ընտանիքի ավագ և կրտսեր անդամների փոխհարաբերությունները. երիտասարդներն ավելի ու ավելի ակտիվորեն են միջամտում ընտանեկան և այլ հարցերի լուծմանը: Դրան գուցենթաց՝ ավելի հաճախակի են դառնում ամուսնական հավատարմության խախտման դեպքերն ու կողմնակի սիրային կապերը, որի հիմնական պատճառներից նշվում են արտագնաց ամուսինների բացակայությունները, ամուսնու երկարատև զինվորական ծառայությունը, բռնի ամուսնությունը, մետաքսամանման գործարաններում տղամարդկանց ու կանանց համատեղ աշխատանքը և այլն:

«*Հարևանները*» խորագրի տակ վեր են հանվում գյուղական նույն համայնքի մեջ ընդգրկված ընտանիքների և հատկապես հարևանների փոխհարաբերությունները: Որպես փոխօգնության կարևոր ձևեր նկարագրվում են *հրաքաշը* և *միջին*²:

Բարոյական պարտք էր համարվում նաև աղքատներին օգնելը:

«*Հարսանիք*» բաժնում մեծ ազգագրագետը հանգամանալից նկարագրում է ընտանիքի ստեղծման այդ կարևոր երևույթի ամբողջական գործընթացը: Համառոտակի անդրադառնալով հարսնախոսությանը՝ նա նշում է, որ հարսանիքի օրը և նյութական պայմանները պարզելու նպատակով աղջկա հոր տանը նշանդրեք էր նշանակվում՝ երկու կողմերի ամենամոտ ազգականների մասնակցությամբ ու գյուղի տանտիրոջ, հոգևորականի, քավորի ներկայությամբ, որը կոչվում էր *հրդե կըտրիլ*: Որոշվում էին փեսայի ընտանիքի կողմից հարսնացուի ընտանիքին տրվելիք նվերները և հարսանիքի ծախքերը հոգալու համար նախատեսված մթերքները, ինչպես նաև հարսնացուի օժիտի պարունակությունը, որի մեջ մտնում էին հագուստեղենը, անկողնու, խոհանոցային պարագաներ, գորգեր, սնդուկ, մափրաշ (գորգագործ պարկ անկողնու համար): Բուն հարսանիքը տեղի էր ունենում աշնանը կամ ձմռանը՝ դաշտային աշխատանքներն ավարտելուց հետո, հատկապես Բարեկենդանին, և սովորաբար տևում էր երեք, երբեմն՝ յոթ օր: Այնուհետև նկարագրվում են հարսանիքի նախապատրաստական աշխատանքներն ու ծեսերը, հյուրերին հրավիրելու ձևերը: Հատուկ հանդիսավորությամբ էին հրավիրում քավորին՝ մատուցելով նվերներ: Երեկոյան փեսայի տանը գունայի նվագի տակ սկսվում էր հարսանեկան սկզբնական խնջույքը՝ օդու և գինու առատությամբ. Այն ղեկավարում էր հարսանիքի տնօրենը՝ *թոյրաշին* կամ *թամադան*, ով սովորաբար լինում էր փեսացուի փեսան կամ հորեղբոր տղան: Դրան հետևում էին փեսայի ու նրա ընկերների՝ *մակարների* սափրման ու փեսայի հագուստի օժման արարողությունները, որից հետո մակարների խումբը՝ ղեկավարի՝ *մակարբաշու* գլխավորությամբ, դաշույններով, թրերով կամ հրագենով զինված, փեսայի և մյուս հարսանիքավորների հետ գնում էին հարսի տուն: Հարսնացուի հայրական տանը, ըստ հաղորդման,

¹ Նույնը, էջ 39

² Նույնը, էջ 43-44



խնջույքը շարունակվում էր մինչև առավոտ կամ ուշ գիշեր: Առավոտյան քահանայի կողմից տեղի էր ունենում հարսի պսակագգեստի օծումը՝ *քրթեթօրհնէքը*, որից հետո նրան հագցնելով՝ գնում էին եկեղեցի: Պսակադրությունը կատարվում էր եկեղեցում, իսկ էթե գյուղում եկեղեցի չկար՝ թոնրի մոտ: Եկեղեցուց հարսանեկան թափորը շարժվում էր դեպի սուրբ օջախները, որտեղ մոտ վառելով, խունկ ծխելով և սրբությունները համբուրելով՝ վերադառնում էին հարսի ծնողների տուն՝ ճանապարհին հյուրասիրվելով երիտասարդ գույզի բարեկամների կողմից: Հարսի հայրական տանը մասնակցելով կազմակերպված խնջույքին՝ խումբը վերջապես ուղևորվում էր փեսայի տուն, որտեղ առատ խնջույքը շարունակվում էր մինչև ուշ գիշեր, իսկ հաջորդ օրը տեղի էր ունենում մեծարման հանդեսը, որը կոչվում էր *մեծարք*, որին էլ հաջորդում էր *կանչք*¹: Վերջապես տերտերը քավորի ներկայությամբ փեսայի ու հարսի վրայից հանում էր եկեղեցում նրանց վրա կապած նարոտը՝ *կրնընչկնրմհուրը*, և նրանք իրավունք էին ստանում՝ ամուսնական մահիճ մտնելու: Ամուսնական գիշերը հարսին և փեսային թողնում էին մենակ: Հաջորդ օրը առավոտյան ընտանիքի կանայք և քավորը, ստուգելով հարսի անարատությունը, դրա ապացույցը հանդիսացող ամուսնական սավանը շնորհավորանքներով ուղարկում էին հարսի ծնողներին, իսկ հարսի մայրը մեկ շաբաթ անց գալիս էր դստերը լողացնելու՝ *կըլխըլվա*:

Հարսանեկան այս ամբողջ գործընթացը ներկայացնելիս Լիսիցյանը անդրադառնում է դրանում ընդգրկված մի շարք ծեսերի և մանրամասների: Նշվում է նաև, որ քառասուն օր երիտասարդ գույզը անմաքուր էր համարվում, կինը գրեթե տնից դուրս չէր գալիս, իսկ ամուսինն իրավունք չուներ հարսանիք գնալու, ծննդկանի տուն մտնելու, նույնիսկ կտուրով անցնելու, գոմ մտնելու: Այս շրջանը կոչվում էր *քրռասունք*:

Առանձին բաժիններ են կազմում ծննդյան և կնունքի, թաղման և հոգեհացի նկարագրությունները: Հեղինակը դարաբաղցի կնոջ ամենամեծ դժբախտությունը համարում է անպտուղ լինելը, որի վերաբերյալ կասկածներ առաջանալուն պես հարսը ապավինում էր հեքիմներին, կախարհներին, վիուկներին, աղոթքներին ու ուխտատեղիներին: Երկունքի ցավերը սկսվելու դեպքում տղամարդկանց տնից դուրս էին հանում, իսկ տատմոր հետ մնում էին պառավներն ու մերձավոր ազգականուհիները, ովքեր, հավատալով, որ ծննդի ժամանակ ծննդկանի շուրջբոլորը չար ոգիներ՝ *քաշկեր* են բնակվում, տարբեր ծեսերով ձգտում էին վնասազերծել դրանց, հատկապես, երբ ծնունդը ձգձգվում էր: Երեխայի ծնվելու մասին անմիջապես տեղեկացնում էին բարեկամներին ու մերձավորներին, առաջին հերթին՝ քավորին, որոնք իրենց ուրախությունն արտահայտում էին՝ տարբեր ուտեստներ ուղարկելով: Հատկապես մեծ ուրախություն էր, երբ արու զավակ էր ծնվում, որի դեպքում «*տատները աչքալուսանքով (մըշտըլըղ) հոր մոտ էր գնում ու կատակով գդակը նրա գլխից խլելով՝ գետնով էր տալիս և նվեր (դրամ, թաշկինակ, թել և այլն) պահանջում*»²:

Ծննդաբերությունից հետո կինն համարվում էր չարքերով համակված և մինչև երեխայի կնունքը իրավունք չուներ ընդհանուր սպասքից օգտվելու, կար ու ձև անելու, նույնիսկ երեխային կպչելու, որին այդ ընթացքում լողացնում էր տատները կամ տան պառավներից մեկը:

Կնունքը սովորաբար կատարվում էր եկեղեցում, երբեմն՝ տանը՝ թոնրի շուրջը, ծննդից մեկ շաբաթ անց: Տերտերը երեխային անուն էր տալիս, որը լինում էր կա՛մ ծնողների ընտրությամբ,

¹ Նույնը, էջ 49

² Նույնը, էջ 50



կա՛մ ըստ օրացույցի այդ օրը ծնված սրբի անունով, կա՛մ էլ որևէ հերոսի ու անվանի գործչի անունով՝:

Թաղման ու հոգեհացի արարողությունները նույնպես ուղեկցվում էին զանազան ծեսերով: Նկարագրվում է, որ մահվանից անմիջապես հետո հավաքվում էին բարեկամներն ու ազգականները, տերտերը օրհնում էր պատանն ու հանգուցյալին լողացնելու ջուրը: Հանգուցյալին լողացնելուց հետո ձեռքերը կրծքին խաչելով՝ փաթաթում էին կարպետի մեջ և, հյուսած պատգարակի՝ *նածի* վրա, իսկ նոր ժամանակներում դագաղի մեջ դնելով, տեղափոխում եկեղեցի: Հուղարկավորությունից առաջ բարեկամուհիները, հարևանուհիներն ու հատուկ հրավիրված եղերամայրերը նստում էին դիակի շուրջը և սկսում ողբը՝ թվարկելով հանգուցյալի արժանիքները, նրա վերաբերմունքն ընտանիքի անդամների և հարևանների հանդեպ, տարբեր դեպքեր ու խոսքեր հիշելով նրա կյանքից: Ննջեցյալին գերեզմանոց էին ուղեկցում միայն տղամարդիկ և գերեզման իջեցնում պատանած կամ դագաղի մեջ դրած: Մերձավոր բարեկամներից որևէ մեկն առաջինն էր, նախօրոք տերտերին խաչով օրհնել տալով, մի բուռ հող նետում փոսը, որից հետո մնացածները նույնն էին անում: Դրանից հետո տան ավագի հրավերով բոլորը մասնակցում էին կազմակերպված հոգեհացին՝ *ժրմահաց*, որտեղ ճաշակելով ոչխարի կամ տավարի մսով եփած *կնրկնր* (ցորենի ձավար) և գինի ու օղի՝ հանգուցյալի մասին տարբեր հիշողություններ էին պատմում, իսկ հաջորդ օրը հանգուցյալի գերեզմանին այցելում էին կանայք: Համառոտ նկարագրվում են նաև հանգուցյալի մահվան յոթերորդ օրը (*օխնը*) և տարին լրանալու կապակցությամբ կատարվող արարողություններն ու ծեսերը:

Ուսումնասիրության «Հավատալիքները» գլխի առաջաբանում² նշանավոր ազգագրագետը անդրադառնում է դարաբաղի հայի հավատալիքների բարդ համակցության ծագումնաբանությանը՝ փորձելով դրանց մի մասը կապել հեթանոսական, զրադաշտական, ինչպես նաև արևելքում և արևմուտքում տարածված մինչմագդեզական հավատալիքների հետ՝ միաժամանակ նշելով, որ «*առկա նյութերն առայժմ այնքան թերի են, որ համեմատական ազգագրության շատ հարցեր տակավին կարելի է միայն նշել, բայց ոչ ամեննին վերջնական լուծում տալ*»³:

«*Ուխտավայրերը*» բաժնում⁴ առանձին խորագրերի տակ ներկայացվում են սրբացված լեռնագագաթները, պուրակները, աղբյուրները, նահատակները, օջախները և կենդանիների պաշտամունքը:

Յուրահատուկ պաշտամունքի առարկաներ են *նահատակները*, որտեղ սովորաբար հանուն հավատի կամ կովի ժամանակ առանց հաղորդության գոհվել կամ էլ կայծակից խոցվել են առանձին անհատներ: Նման վայրերից հիշատակվում են Կըզըկալա գյուղի մոտ՝ Մեծ և Փոքր, Փիր-Ջամալ գյուղի մոտ՝ Կսբե, Նախիջևանի գյուղի մոտ՝ Ճգնավորուհու, Նոր Քյաթուկ գյուղի մոտ՝ Սպիտակ հծլ, Դըրնավազ գյուղի մոտ՝ Աղին նըհատակ, Շուշու հին գերեզմանոցում՝ Թիֆլիսեցի նըհատակ Անտոնը, Կուսապատի մոտ՝ Ղարիբ խաչ և այլ սրբավայրերը:

«*Պաշտամունքի ձևերը*» բաժնում⁵ Լիսիցյանը անդրադառնում է հասարակական ու մասնավոր մատաղներին և մոզական հնարներին: Նկարագրության համաձայն՝ հասարակական մատաղներն արվում էին գյուղի բնակիչների կողմից մեծ տոներին, սովորաբար՝ եկեղեցու մոտ, առանց եկեղեցական արարողության, ինչպես նաև երաշտի ու հասարակական այլ աղետների ժամա-

¹ Նույն տեղը

² Նույնը, էջ 53-55

³ Նույնը, էջ 55

⁴ Նույնը, էջ 55-60

⁵ Նույնը, էջ 60-63



նակ, իսկ մասնավոր մատաղները սովորաբար արվում էին աղոթատեղիների մոտ, որոշ դեպքերում էլ՝ գյուղում՝ ծանր հիվանդի առողջացման կամ ուխտի առիթով, ընդ որում՝ տերտերի ներկայությունը պարտադիր չէր:

Մոզական հնարներից հիշատակվում են սրբավայրի հող, ջուր կամ թեփ մարմնին քսելը, մեջը սուրբ հող ու փոշի լուծած ջուր խմելը, սուրբ ծառերի ճյուղերից զգեստի կտորներ կախելը, սուրբ ծառերին մեխեր խփելը, «կոխված» երեխայի գլխավերևը ձեռքով երեք անգամ շրջագիծ շարժում անելը, սրբավայրի շուրջը երեք անգամ ծնկաչոք պտտվելը, սուրբ քարերի ճեղքերով անցնելը, նորածին արու զավակի պորտալարի մի մասը երևացող տեղ, իսկ աղջկանը՝ հեռավոր մի անկյուն նետելը, թաղումից հետո ննջեցյալի սպիտակեղենը մաքուր լվանալը, գայլի երախը «կապելը», ուրիշներին իր ունեցվածքի մասին տեղեկություններ չհայտնելը, օրորոցներից, երեխաների ուսածապավեններից, անասունների վզից *աշկրհէղինքներ* կախելը և այլն:

Առանձին բաժիններով են ներկայացվում սատանաների՝ քաշկերի, սրբերի ծառաների նկարագրությունները, երդման ձևերը, տիեզերական հայացքները՝ երկնային լուսատուների, ինչպես նաև որոտի, կայծակի, ալեկոծության, ծիածանի, երկրաշարժի շուրջ եղած պատկերացումները:

«Տոները» խորագրի տակ¹ հանգամանալից նկարագրվում են ժամանակին տարածված նշանավոր տոները՝ Նավասարդը, Սուրբ Սարգիսը, Բարեկենդանը, Տեառնընդառաջը (*Դրոդոսանջ, Դոնդոսոնջ*), Ծաղկագարդը (*Զրրըզարթար*), Ավագ շաբաթը և Զատիկը, Համբարձումը, Պայծառակերպության օրը (*Վրրթեվծր, Վրրթեվնր*), անդրադարձ է կատարվում դրանց ընթացքում կատարվող ծեսերին, խաղատեսակներին, գործածվող կերակրատեսակներին:

Հարկ է նշել, որ «Հավատալիքները» գլխում ընդգրկված են բազմաթիվ ավանդություններ և ավանդագրույցներ, ինչպես նաև ասույթային բանաձևումներ, որոնք կարևոր նշանակություն ունեն Արցախի բանահյուսության ուսումնասիրության համար:

Աշխատության վերջին՝ «Լեզուն և արվեստը» գլուխը² նվիրված է Ղարաբաղի բարբառի, երաժշտության և պարերի համառոտ նկարագրությանը: Այստեղ հեղինակն անդրադառնում է արցախահայերի բարբառի քերականական և հնչյունական որոշ առանձնահատկությունների ու մինչև այդ հրատարակված աշխատանքներին:

Երաժիշտներից հիշատակվում են որոշ գուսանների անուններ՝ Ռուստամ, Սարգիս Ղզղալեցի, Գրիգոր Գալոյան և ուրիշներ, որոնց թիվը, սակայն, հետզհետե նվազում է: Նշվում է նաև, որ Ղարաբաղում համաժողովրդական զանգվածային ստեղծագործություններ, տեղական հերոսավեպ, տեղի հերոսների գովերգում չկա, թույլ է արտահայտված հայերեն գուստ քնարական ստեղծագործությունը, հատկապես բացակայում է կանանց երգը, մինչդեռ ժողովրդական արձակ խոսքը գունեղ է, իսկ շվին արդեն անհետանում է:

Հաղորդման համաձայն՝ բազմազան չեն պարերը, վերացել են երբեմնի շուրջպարերը, եղած պարերը դանդաղ են, չկան թռիչքներ ու բացականչություններ: Ընդգծվում է, որ Ղարաբաղում ընդհանրապես պարում է ոչ թե տղամարդը, այլ կինը, այն էլ՝ չամուսնացած երիտասարդ կինը, իսկ քաղաքից վերադարձած պատանիներն ու երիտասարդները հին պարերի փոխարեն արդեն նախապատվությունը տալիս են այնպիսի ժամանակակից պարերի, ինչպիսիք են պոլկան, վալսը և մազուրկան:

1930-ական թվականներին Լիսիցյանը նորից է շրջագայում Լեռնային Ղարաբաղում՝ ստացած տպավորությունները շարադրելով որպես «Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատության վեր-

¹ Նույնը, էջ 67-73

² Նույնը, էջ 75-77



ջաբան¹, որտեղ տրվում են 1920-ական թվականների կեսերից մինչև 1930-ական թվականների կեսերը երկրամասի հայերի կյանքում, կենցաղում, պատկերացումներում տեղի ունեցած մեծ փոփոխությունները՝ բնակչության թվի աճ, գյուղատնտեսության մեքենայացում, հիդրոէլեկտրակայանների, ջերմաէլեկտրակայանների, գործարանների կառուցում, ցանքատարածությունների ընդլայնում, անասունների գլխաքանակի ավելացում, շերամապահության, մետաքսագործության, գորգագործության զարգացում, հին տների՝ դարդամների փոխարեն երկհարկանի՝ կողային պատուհաններով տների կառուցում, կրթական և մշակութային ցանցի ընդլայնում, ընտանիքում ու հասարակության մեջ կնոջ դերի բարձրացում և այլն, որոնք, ըստ հեղինակի, արդյունք են խորհրդային կարգերի հաստատման:

«Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատության մեջ ներառված են հեղինակի անձնական արխիվից, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու Հայաստանի պատմության պետական թանգարանի ֆոնդերից ընտրված համապատասխան չափագրություններ, զարդանկարներ, լուսանկարներ, որոնց ընտրությունը, ինչպես նաև աշխատության հրատարակման հետ կապված գիտատեխնիկական աշխատանքները, կատարել է Ս. Լիսիցյանի թոռնուհին՝ ազգագրագետ Լիլյա Վարդանյանը, ով մեծ ավանդ ունի նշանավոր ազգագրագետի գիտական ժառանգության ուսումնասիրման գործում²: Հարկ է նշել, որ Լ. Վարդանյանի խմբագրությամբ է տպագրվել նաև աշխատության ռուսերեն հրատարակությունը³, որի «*Խմբագրի կողմից*» ներածականում բնութագրվում է նշանավոր ազգագրագետի գիտական կենսագրությունը: Աշխատությանը կցված են ազգագրական տերմինների բառարան և աշխարհագրական անունների, պատմական հուշարձանների ու տեղական սրբավայրերի ցանկեր՝ կազմված Լ. Վարդանյանի կողմից:

Լեռնային Ղարաբաղից գրառած նյութերը հիմք հանդիսացան Ս. Լիսիցյանի գիտական մեկ այլ կարևոր աշխատանքի, որտեղ տրված է արցախյան հնաձև ավանդական տան՝ *դարադամի* ուսումնասիրությունը⁴: Հողվածի սկզբում անդրադառնալով հայկական գյուղական կացարանների մասին եղած նկարագրություններին՝ հեղինակը կարևոր ու անհետաձգելի է համարում այդ բնագավառի ուսումնասիրությունը, հատկապես, որ մի կողմից՝ Արևմտյան Հայաստանի հայկական բնակավայրերը գրեթե ամբողջովին վերացված են, իսկ մյուս կողմից՝ համատարած գետնափոր հին կացարանները լայն թափով փոխարինվում են նոր՝ կողային պատուհաններ ու թիթեղածածկ կամ կղմինդրածածկ տանիքներ ունեցող տներով: Լիսիցյանը նշում է նաև, որ, այնուամենայնիվ, 1924թ. ամռանը իրեն հաջողվել է Լեռնային Ղարաբաղի ծայրամասային որոշ գյուղերում հանդիպել հնագույն կառուցվածքով տների, որոնք կոչվում են *դարադամ (սև տուն)*, որի նկարագրությունն էլ տալիս է սույն հոդվածում: Ըստ նկարագրության՝ դարադամները կառուցվում էին լեռան լանջին, այնպես, որ նրանց երեք պատերը գրեթե ամբողջությամբ թաղված էին հողի մեջ, և միայն առջևի մասը՝ դռնով և տանիքով, գտնվում էր բակից վերև: Այն հիմնականում ուներ քառանկյուն ձև՝ սովորաբար մինչև 12 արշին երկարությամբ կողմերով, իսկ պատերը, որոնցից միայն առաջինն էր կառուցվում հիմնավոր, ունեին 1,5 արշին հաստություն, ներսից պատված էին կավածեփով կամ գլաջով և ունեին խորշեր՝ *պատրիան*, որոնք ծառայում

¹ Նույնը, էջ 77-82

² Варданян Л., *Степан Лисициан и истоки армянской этнографии*, Ереван, 2005, *Из истории этнографического изучения Нагорного Карабаха (конец XIX- начало XX вв.)*, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006 թ.», Երևան, 2007, էջ 488-496, *Степан Лисициан и основные проблемы армянской этнографии*, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2015, N2, էջ 208-228 և այլն

³ Лисициан С., *Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк*, Ереван, 1992

⁴ Лисициан С., *К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам)*, «Известия Кавказского историко-археологического института», Тифлис, 1925, т. 3, с. 97-108



էին որպէս բաց պահարաններ: Այնուհետև մանրամասնորեն նկարագրվում են չորս հաստ կաղնե սյունների վրա հենված տանիքի կառուցվածքը, երդիկը, դուռը, թոնիքը, հետևի պատի տակ սարքված քարե հարթակը, որի վրա շարում էին ամանեղենը, այլուրի պարկերը, տարբեր իրեր և այլն: Պատկերվում է նաև դարադամի հատակագիծը: Լիսիցյանը նշում է, որ դարադամը հիմնականում ծառայում էր որպէս ձմեռային կացարան, իսկ վաղ գարնանից մինչև ուշ աշուն ամբողջ ընտանիքն անց էր կացնում դարադամի առջևի մասում՝ 5-7 սյունների վրա կառուցված պատշգամբում, որի տանիքը նույնպէս պատված էր հաստ կավացեխով, իսկ անասնագուները, որոնց նկարագրությունը նույնպէս տրվում է հոդվածում, կառուցվում էին դարադամից ավելի հեռու: Հեղինակը համառոտ նկարագրում է նաև նոր տիպի տները, որոնք 20-րդ դարի 20-ական թվականներին արդեն գրեթէ ամենուր փոխարինել էին հին կացարաններին: Միաժամանակ նա հանգում է այն եզրակացությանը, որ միայն դարաբաղյան դարադամի ուսումնասիրությունը հիմք է տալիս ասելու, որ դրանց և ժամատների հատակագծերը անմիջական կապ ունեն իրար հետ¹:

Արցախի ազգագրությանը անմիջականորեն առնչվում է Ս. Լիսիցյանի «*Ձանգեզուրի հայերը*» կոթողային աշխատությունը², որտեղ ազգագրական տարբեր երևույթներ ու հարցեր քննելիս ու նկարագրելիս նա հաճախ է համեմատում Արցախի հետ՝ ընդգծելով դրանց ընդհանրություններն ու յուրահատկությունները:

Թերևս այս ամենին հարկ է ավելացնել նշանավոր գիտնականի կազմած «*Ազգագրական հարցարանը*»³, որով տասնամյակներ շարունակ բազմաթիվ ազգագրագետներ, ինչպէս հայ ազգագրական մյուս շրջաններից, այնպէս էլ Արցախից հավաքել և ներկայումս էլ գրառում են կարևոր նյութեր:

1924 թվականի ամռանը Անդրկովկասի ԿԳԿ-ին առընթեր Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի կազմակերպած գիտարշավի շրջանակներում Լեոնային Ղարաբաղի տարբեր բնակավայրերից համապատասխան նյութեր է հավաքում տնտեսագետ Գ. Քոչարյանը՝ արդյունքում հրատարակելով «*Нагорный Карабах*» ուսումնասիրությունը⁴: Աշխատության մեջ Քոչարյանն առանձին բաժիններով ու ենթաբաժիններով ներկայացնում է երկրամասի աշխարհագրական բնութագիրը, վարչական բաժանումը, բնակչության թիվն ու կազմը, ժողովրդական կրթությունը, գյուղատնտեսությունը (հողագործություն, անասնապահություն), առևտուրը, արդյունաբերությունը, հարկատեսակները ևն: Վերջում տրվում են ամփոփում, ծանոթագրություններ, մարզի գյուղերի ցանկն՝ ըստ շրջանների և ենթաշրջանների, բնակիչների թիվն՝ ըստ սեռատարիքային խմբերի, անասունների քանակն՝ ըստ տեսակների, հողերի մակերեսներն՝ ըստ օգտագործման ձևերի, գութանների, ֆուրգոնների, սայլերի քանակը, տեղեկություններ Ստեփանակերտ քաղաքի մասին ևն: Հեղինակը հաճախ իր գրառած տվյալները համեմատում է Ադրբեջանի կենտրոնական վիճակագրական վարչության՝ 1921թ. կատարած՝ Լեոնային Ղարաբաղի գյուղատնտեսական հաշվառման տվյալների հետ՝ վեր հանելով վերջիններիս անճշտությունները:

1924թ. ամռանը Ստեփանակերտում Լիսիցյանը հանդիպում է տեղի գյուղատնտեսական տեխնիկումի ուսուցիչ Ա. Կիսիբեկյանին՝ առաջարկելով որպէս ականատեսի ու մասնակցի Լեոնային Ղարաբաղում տեղի ունեցած վերջին մի քանի տարիների անցուդարձերին՝ գրի առնել իր հիշողությունները: Անսալով նշանավոր գիտնականի խորհրդին՝ Կիսիբեկյանը հետագայում գրի է առնում

¹ Նույնը, էջ 108

² Լիսիցյան Ս., *Ձանգեզուրի հայերը*, Երևան, 1969

³ Լիսիցյան Ս., *Ազգագրական հարցարան*, Երևան, 1946

⁴ Кочарян Г., *Нагорный Карабах*, Баку, 1925



իր հուշերը՝ սկսելով մանկության տարիներից՝ 19-րդ դարի վերջերից, և հասցնելով մինչև 20-րդ դարի 60-ական թվականները, որը տպագրվում է հետմահու՝ 2011 թվականին¹: Այստեղ հեղինակը ներկայացնում է նշված ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած քաղաքական, հասարակական, ռազմական իրադարձությունները, որոնց ականատեսն ու մասնակիցն է եղել նաև ինքը, կարևոր տեղեկություններ հաղորդում մի շարք գյուղերի ու Շուշի քաղաքի պատմության, թեմական դպրոցի, նշանավոր մանկավարժների, ժողովրդագիտության, բնակիչների նիստ ու կացի, Բաքվում, Խանլարի ու Կասում-Իսմայիլովի շրջաններում, աքսորավայրում, Տաշքենդում, Երևանում իր ապրած տարիների մասին: Ազգագրական տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն առաջին հատորի «*Հայրենի տունը*» (էջ 15-78) ու «*Հայրենի գյուղը*» (էջ 79-109) բաժինները, որտեղ Ա. Կիսիբեկյանը հանգամանորեն նկարագրում է իր հայրական տունը, նահապետական ընտանիքը, տնտեսությունը, սովորությունները, հայրենի՝ Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղը, նրա նշանավոր վայրերը, բնակիչների զբաղմունքը, որոշակի տվյալներ հաղորդում հարևան Մավաս ու Բլբլաք գյուղերի մասին նև:

1926թ. Սանկտ-Պետերբուրգում լույս տեսնող «*Звезда*» ամսագրի 6-րդ համարում (էջ 136-156), այնուհետև առանձին գրքով² հրատարակվում է Մարիետա Շահինյանի ակնարկը, որտեղ խորհրդային նշանավոր գրողն ու հրապարակախոսը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում 1925թ. կատարած իր շրջագայությունների ընթացքում ստացած տպավորությունները՝ նկարագրելով ԼՂԻՄ տնտեսական կյանքը: Առանձին բաժիններով անդրադարձ է կատարվում մարզի պատմությանը, բնակչության զբաղմունքի որոշ ձևերին (օղեգործություն, շերամապահություն, գորգագործություն, հանքագործություն, անտառագործություն, ձիաբուծություն), նրանց զարգացման հեռանկարներին, աշխարհահռչակ Ղարաբաղի ձիուն, անասունների շրջանում տարածված համաճարակին ու դրանց կանխարգելման միջոցներին, Շուշի քաղաքին և 1920թ. այնտեղ կազմակերպված հայկական կոտորածներին նև:

Հարցի ուսումնասիրության տեսակետից կարևոր է Գ. Սեյրանի «*Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները*» ուսումնասիրությունը³: Այստեղ տարբեր աղբյուրներից հավաքած նյութերի հիմքի վրա հեղինակը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի Լեռնային Ղարաբաղի համառոտ պատմությունը, վարչական բաժանումը, տարածքը և ազգաբնակչությունը, հողաշինարարությունը, հողօգտագործությունը՝ ցանքատեղերի տարածությունը և բերքը (ցորեն, գարի, կորեկ, հաճար, կարտոֆիլ, լոբի, բամբակ ծխախոտ նև), ագարակային հողամասերը (մրգի, խաղողի, թթենու այգիներ, օդու արտադրություն), կենդանաբուծությունը (խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծում, խոզաբուծություն, ձիաբուծություն, ջորեբուծություն, էշաբուծություն, մեղվաբուծություն), շերամապահությունը և մետաքսի թելի արտադրությունը, արտատետղիները, անտառները, տարածված ծառատեսակներն ու փայտամշակությունը, տնայնագործությունը (թելագործություն, գորգագործություն, շալագործություն), դարբնագործությունը, բրուտագործությունը նև, լեռնային հարստությունները, հանքային աղբյուրները՝ դրանց զուգընթաց անդրադառնալով համապատասխան բնագավառների զարգացման հեռանկարներին:

Հիշատակության արժանի է Ա. Ախվերդովի և Ա. Դոլուխանովի ուսումնասիրությունը⁴: Այստեղ հեղինակները ներկայացնում են 1929թ. հուլիս-օգոստոս ամիսներին Լեռնային Ղարաբաղի

¹ Կիսիբեկյան Ա., *Հուշեր*, հ.1, 2, Երևան, 2011

² Шагинян М., *Нагорный Карабах. Очерк*, Москва-Ленинград, 1927

³ Սեյրան Գ., *Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները*, Թիֆլիս, 1928

⁴ Ахвердов А., Долуханов А., *Очерк растительности летних пастбищ Карабахского хребта, «Труды по геоботаническому обследованию пастбищ С. С. Р. Азербайджана», Серия В. Летние пастбища, Выпуск 3-й, Баку, 1930*



Ինքնավար Մարզում, ինչպես նաև Քուրդիստանում կատարած իրենց շրջագայությունների արդյունքները՝ նվիրված Ղարաբաղի լեռնաշղթայի ամառային արոտավայրերի բուսականության ուսումնասիրությանը: Առանձին գլուխներով տրվում են տարածքի բնապատմական բնութագիրը, բուսականության ընդհանուր բնութագիրը, բուսատեսակների նկարագրությունը (ենթալայան մարգագետիններ, ենթալայան տափաստան, ալայան բուսականություն, լեռնային քսերոֆիլ բուսականություն, ժայռային բուսականություն, անտառային գոտու վերին շերտերի բուսականություն, արոտավայրերի ընդհանուր վիճակ), տարածքից հավաքած բույսերի ցանկը: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև քարտեզ, լուսանկարներ և աղյուսակներ:

Այս շրջանում իրենց ժողովրդագիտական լայն գործունեությունն են շարունակում Խ.Դադյանը, Կ. Մելիք-Շահնազարյանը, Ս.Իսրայելյանը և ուրիշներ¹:

Բաքվում 1930թ. հրատարակվում է Ի. Պետրովիչի «*О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха*» ուսումնասիրությունը², որտեղ հեղինակը 1928թ. հուլիս-օգոստոս ամիսներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում և Զանգեզուրում կատարած իր շրջագայությունների ընթացքում հավաքած դաշտային նյութերի հիման վրա ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի գյուղացիների մոտ իշխող նախաքրիստոնեական հավատալիքները: Ըստ ուսումնասիրության՝ հետհեղափոխական շրջանում տեղի գյուղացիների մեջ ավելի մեծ է հավատը սրբացված քարերի, ծառերի, լեռների, աղբյուրների, քան եկեղեցիների հանդեպ: Առանձին ենթաբաժիններով նկարագրվում են Դիզակի շրջանի *Դիզակիայտ*, Առաքյուլ գյուղի մերձակայքում գտնվող *Քամու խաչ*, *Օձի օջախ*, *Աղ օղլան*, Շաղախ գյուղի մոտ գտնվող *Սուրբ Շաղախ*, Ստեփանակերտից 5կմ հեռավորությամբ գտնվող *Սուրբ Սարիբեկ* և այլ սրբավայրերը, անդրադարձ է կատարվում դրանց հետ կապված նախաքրիստոնեական հավատալիքներին: Վերջում հեղինակը հանգում է այն եզրակացության, որ նման հավատալիքները, սակայն, չունեն պատմական ապագա:

Հիշատակելի է Ա. Առաքելյանի ուսումնասիրությունը³, որտեղ նկարագրվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխարհագրական դիրքն ու կլիման, գյուղատնտեսության հիմնական ճյուղերը, շերամապահության և մետաքսագործության վիճակը մինչև խորհրդայնացումն ու դրանից հետո, զարգացման հեռանկարները, շերամի հունդը, որդերի զարգացման անհրաժեշտ պայմանները, հարսնյակը, բոժոժը, թիթեռը, որդերի կերակրման առանձնահատկությունները, հիվանդությունները, վնասատուներն ու նրանց դեմ պայքարելու միջոցները ևն: Աշխատության մեջ ընդգրկված են նաև որոշ աղյուսակներ, գծագրեր, նկարներ:

Ազգագրական կարևոր արժեք ունի Վ. Պետրովիչ՝ 1934-1937թթ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կատարած գիտարշավի ընթացքում հավաքած նյութերի ուսումնասիրության արդյունքներն ամփոփող ժողովածուն⁴: Ընդարձակ առաջաբանում (էջ 4-35) հանգամանորեն քննության են առնվում ղարաբաղցիների տնտեսության մեջ ու կենցաղում տարբեր բույսերի ունեցած կիրառությունն ու դերը, դրանց հետ կապված հավատալիքները ևն: Բուն ժողովածուի մեջ առանձին ենթաբաժիններով նկարագրվում են տասնյակ բույսեր, տրվում են յուրաքանչյուրի

¹ Մանրամասն տե՛ս Խեմվյան Է., *Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները)*, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 335-351

² Петрушевский И., *О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха*, «Известия АзГНИИ. Историко-этнографическое и археологическое отделение», том 1, выпуск 5, Баку, 1930

³ Առաքելյան Ա., *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի Ակտոնում Մարզում*, Ստեփանակերտ, 1939

⁴ Петров В., *Этноботаника Нагорного Карабаха*, Баку, 1940



լատիներեն, ռուսերեն, ադրբեջաներեն, Ղարաբաղի բարբառով անվանումները, տարածման վայրերը, ունեցած դերը կենցաղում, սննդակարգում, ժողովրդական բժշկության մեջ, լուսանկարը: Ժողովածուին կցված է նշված բույսերի անվանական ցանկ՝ այբբենական դասավորությամբ: Հարկ է նշել, որ ուսումնասիրության մասին Ս. Լիսիցյանը հանդես է եկել գրախոսականով՝ թվարկելով ուսումնասիրության արժանիքները և այն ընդգրկված նյութով ու այդ նյութի ուսումնասիրության համար գործածված մեթոդներով համարելով Ղարաբաղի գիտական պատմության համար կարևոր, միաժամանակ նշելով նրանում տեղ գտած որոշ թերություններ և բացթողումներ:

1963թ. հրատարակվում է Ս. Բարսեի ձեռնարկը²: Այստեղ հեղինակը տալիս է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը (աշխարհագրական դիրքն ու սահմանները, մակերևույթը, գետերը, հողակլիմայական գոտիները, օդերևութաբանական տվյալներ, հողերի տիպերը, բուսականությունը, անտառները, վայրի կենդանիներն ու թռչունները), նկարագրում ժողովրդական տնտեսությունը՝ արդյունաբերություն (մետաքսարդյունաբերություն, գինեգործություն, տեղական արդյունաբերություն, կոշիկի արտադրություն, փայտամշակություն, գորգագործություն, յուղագործություն և պանրագործություն), գյուղատնտեսություն (գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում, գյուղատնտեսական ճյուղերի տեղաբաշխում, բուսաբուծություն, անասնաբուծություն), բնակչությունը (Ղարաբաղի բարբառը, դարաբաղցու աշխատասիրությունն ու հայրենասիրությունը, բնակչության նիստն ու կացը և որոշ սովորություններ), մշակույթը, առողջապահությունը, հաղորդակցության ճանապարհները, Ստեփանակերտ քաղաքը, հնություններն ու մշակութային հուշարձանները: Աշխատության մեջ ընդգրկված են որոշ քարտեզներ, զծագրեր, լուսանկարներ:

Խորհրդային շրջանում հայ ազգագրության տարբեր բնագավառների և հարցերի նվիրված իրենց ուսումնասիրություններում Արցախին լուրջ ուշադրություն են դարձրել նաև Վ. Բոյանը³, Ն. Ավագյանը⁴, Վ. Թեմուրճյանը⁵, Ա. Պատրիկը⁶, Լ. Պետրոսյանը⁷, Յու. Մկրտումյանը⁸, Ա. Մարությունը⁹ և ուրիշներ:

Հիշատակության արժանի են 1960-70-ական թվականներին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրական արշավախմբի (ղեկավար՝ Դ. Վարդումյան) ու 1970-80-ական թվականներին ՍՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի հայկական խմբի (ղեկավար՝ Ա. Տեր-Սարգսյան) կողմից Լեռնային Ղարաբաղի տասնյակ բնակավայրերից գրաված ժողովրդագիտական հարուստ նյութերը:

Առանձնակի կարևորություն ունեն նաև այս շրջանում մի շարք հանդեսներում, պարբերականներում, գիտական ժողովածուներում հրատարակված տասնյակ հոդվածներն ու զեկուցումները¹⁰:

¹ Лисициан С., *О книге В. А. Петрова «Этноботаника Нагорного Карабаха»*, Изд. АЗФАН, Баку, 1940 г., «Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի», Երևան, 1942, N1-2, էջ 187-190

² Բարսե Ս., *Լեռնային Ղարաբաղ (երկրագիտական համառոտ ձեռնարկ)*, Բարու, 1963

³ Բոյան Վ., *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Երևան, 1972, *Հայ ժողովրդական խաղեր*, հհ. 1-3, Երևան, 1963-1983

⁴ Ավագյան Ն., *Հայկական ժողովրդական տարազը (XIX-XX դդ. սկիզբ)*, Երևան, 1983

⁵ Թեմուրճյան Վ., *Քորգագործությունը Հայաստանում*, Երևան, 1955

⁶ *Հայկական տարազ. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (ուսումնասիրությունը և նկարները Ա. Պատրիկի)*, Երևան, 1983

⁷ Պետրոսյան Լ., *Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1974, հ. 6, էջ 93-159

⁸ Мкртумян Ю., *Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX- начало XX в.)*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1974, հ. 6, էջ 5-90

⁹ Марутян А., *Интерьер армянского народного жилища (вторая половина XIX- начало XX в.)*, *Материалы к «Кавказскому историко-этнографическому атласу»*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1989, հ.17, էջ 63-142

¹⁰ Թաթևիկյան Վ., *Արցախի հատուկ խորհրդիմաստ արտահայտող ուղեգորգերը*, «1978-1979թթ. ազգագրական և բանահյուսական ռաշտային հետազոտությունների արդյունքները: Ձեկուցումների թեզիսներ, մայիսի 5-7, 1980», Երևան, 1980, էջ 13-14, Խաչատրյան Ծ., *Խաղաղացվի (դիվանարության) «բուժումը» պարով*, «Լրագրեր հասարակական գիտությունների», Երևան, 1980, N10, էջ 89-96, Խուրշուդյան Ծ., *Արցախ-Միջին Ասիա-Շուլավեր՝ համադրական ակնարկ*, «Հանրապետական գիտական նստաշրջան. 1986-1988թթ.



1988թ. սկիզբ առած Արցախյան ազգային-ազատագրական շարժումը, խորհրդային կարգերի փլուզումը և 1991թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը նոր դարաշրջան բացեցին երկրամասում հասարակական գիտությունների և մասնավորապես՝ ժողովրդագիտության ուսումնասիրության համար, որը կարելի է անվանել *հետխորհրդային կամ անկախության շրջան*: Չնայած տնտեսական ծանր պայմաններին ու պարտադրված պատերազմին՝ տասնամյակների կապանքներից և բռնատիրությունից ազատագրված Արցախում օրեցօր նոր թափ է ստանում ազգային կրթության, մշակույթի, գիտության զարգացումը: Արցախի, մայր Հայաստանի և արտերկրի տասնյակ գիտնականներ իրենց ուշադրությունն են սևեռում ազատագրված հայրենիքի ժողովրդագիտական նյութերի գրառման և ուսումնասիրության վրա:

1989 թ. հրատարակվում է Ա. Մարությանի, Գ. Մարգարյանի, Զ. Խառատյանի ծավալուն հոդվածը¹, որտեղ արխիվային, դաշտային և տպագիր նյութերի ուսումնասիրությամբ տրվում է արցախահայության 19-20-րդ դարերի ընդհանուր էթնոմշակութային բնութագիրը՝ անդրադառնալով էթնիկ կազմին և բնակչության թվին, երկրագործությանն ու անասնապահությանը, գյուղատնտեսական մթերքների մշակմանը, տարբեր արհեստներին, ժողովրդական փոխադրամիջոցներին, բնակավայրերի, կացարանների, գյուղական համայնքների, ընտանիքների կառուցվածքին, հարսանեկան ու թաղման ծեսերին և այլ երևույթների, ինչպես նաև՝ բանահյուսությանն ու բարբառին:

Լեռնային Ղարաբաղի հայերի 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբների հասարակական կենցաղի ուսումնասիրությանն է նվիրված ԼՂՀ Ազգային ժողովի առաջին նախագահ Ա. Մկրտչյանի թեկնածուական ատենախոսությունը (1988թ.), որը հետմահու առանձին գրքով հրատարակվեց 2010 թվականին²: Աշխատության առաջին գլխում հեղինակը տվել է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի Լեռնային Ղարաբաղի էթնիկական և սոցիալ-տնտեսական կենցաղի ընդհանուր բնութագիրը՝ հանգամանորեն անդրադառնալով ազգաբնակչության էթնիկական կազմին, տարաբնակեցման խնդիրներին ու պատճառներին, տնտեսության հիմնական բնագավառներին և միջէթնիկական հարաբերություններին: Երկրորդ գլուխը նվիրված է համայնքի կազմին և կառավարման մարմիններին, փոքր և մեծ ընտանիքներին, ընտանեկան-ազգակցական խմբերի կարևորությանը հասարակական կենցաղի համակարգում, ընտանեկան-դրացիական հարաբերություններին: Երրորդ գլխում քննության են առնվում բնակեցման սահմանները, բնակավայրերի ձևավորման որոշ առանձնահատկություններ, պաշտամունքային վայրերն ու կառույցները: Չորրորդ գլխում ուսումնասիրության են ենթարկվում սովորույթներն ու բարբերը, օրացուցային տոները, հյուրասիրությունը, միջէթնիկական հարաբերությունները: Արժեքավոր այս աշխատությունը, ինչպես նշում է Ս. Վարդանյանը, *«առաջին լուրջ փորձերից է՝ առանձին*

ազգաբնակչության և բնագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները: Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 5-7, 1990», Երևան, 1990, էջ 30-31, Մելիք-Շահնազարյանց Կ., «Բուրդ գգելը և գորգ գործելը Ղարաբաղում», «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1928, թիվ 9-10, էջ 475-478, Մելիք-Շահնազարյան Կ., «Երկրորդ Ղարաբաղի հայ ազգագրության համար», «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1931, թիվ 3-5, էջ 246-252, 1932, թիվ 5-6, էջ 331-337, Պողոսյան Ս., «Արցախի վանդակական տարագր և նրա էվոլյուցիան», «Փոլտուր-լուսավորական աշխատանք», Երևան, 1988, N5-6, էջ 37-43, Տեր-Գասպարյան Ռ., «Շուշու բնակչությունը 18-րդ դարից մինչև մեր օրերը», «Հայկական ՄՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, 1963, N9, էջ 67-76, Ավաքյան Կ., «Народная одежда армян Арцаха в XIX – начале XX в.», «Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX–XX вв. (Материалы к «Кавказскому историко-этнографическому атласу)», Вып. I, Москва, 1971, с. 209-222, Бабалян Ե., «О женской одежде Карабаха /Конец XIX- начало XX веков/, «Ученые записки АГУ. Серия истории и философии», Баку, 1966, №7, с. 85-91, Валесян Լ., Мурадян Կ., «О некоторых итогах и проблемах экономического развития Нагорного Карабаха», «Լրագրեր հասարակական գիտությունների», Երևան, 1989, N5, էջ 3-18, Карапетян Մ. «Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (По Сельскохозяйственной переписи Азербайджана 1912 г.)», Ереван, 1991

¹ Марутян А., Саркисян Г., Харатян З., «К этнокультурной характеристике Арцаха», «Լրագրեր հասարակական գիտությունների», Երևան, 1989, N6, էջ 3-18

² Мкртчян А., «Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX-начало XX в.)», Ереван, 2010



տարածաշրջանի հասարակական կենցաղի յուրահատկությունները գիտագործնական և գիտատեսական հիմնավորումներով լուսարանելու առումով»¹:

Հիշատակության արժանի է Ռ. Տեր-Գասպարյանի աշխատությունը²: Հեղինակը տարբեր աղբյուրների, հավաստի փաստերի ուսումնասիրությամբ և ականատեսի աչքերով է ներկայացնում իր հայրենի՝ պատմական Շուշի քաղաքի աշխարհագրական դիրքը, ջրամատակարարման համակարգը, համառոտ պատմությունը, բնակչության թիվն ու ազգային կազմը 18-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի կեսերը, մշակույթը՝ տպագրական գործը, կրթությունը, թատերական գործը, գրադարանները, պարբերական մամուլը ևն: Առանձին ենթաբաժիններով հանգամանորեն քննության է առնվում քաղաքի հասարակական և տնտեսական կյանքը մինչև Ղարաբաղի խանության կենտրոն դառնալը, Ղարաբաղի խանության կենտրոն դառնալուց հետո, 19-րդ դարի առաջին կեսին, 19-րդ դարի երկրորդ կեսին, 20-րդ դարի առաջին երկու տասնամյակում:

Արցախի ազգագրության ուսումնասիրության՝ անկախության շրջանի պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն Ալլա Տեր-Սարգսյանցի ուսումնասիրությունները: Դեռևս 1968թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կազմում առաջին անգամ լինելով Արցախում՝ ծագումով շուշեցի ազգագրագետը մեկընդմիջտ կապվեց հարազատ երկրամասին՝ դրանից հետո բազմիցս շրջելով տասնյակ բնակավայրերով, որի արդյունքում գրառված հարուստ նյութերը հիմք դարձան ավելի քան երկու տասնյակ գիտական հոդվածների ու զեկուցումների³, որոնք հիմնականում նվիրված են էթնոմշակութային գործընթացներին, մասնավորապես՝ արցախահայ ժամանակակից ընտանիքի բազմակողմանի ուսումնասիրությանը: 2015 թվականին Մոսկվայում լույս է տեսնում երախտավոր գիտնականի «*Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции*» ծավալուն աշխատությունը, որի 6-րդ և 7-րդ գլուխները (էջ 561-824) նվիրված են ազգագրությանը: Աշխատության վեցերորդ գլխում հեղինակը առանձին բաժիններով հանգամանորեն ներկայացնում է 19-րդ դարի-20-րդ դարի սկզբի Արցախի բնակչության էթնիկ կազմի դինամիկան, հողային և դասային հարաբերությունները, տնտեսական զբաղմունքը, ժողովրդական փոխադրամիջոցները, բնակեցումը և կացարանը, հագուստը, ուտեստը, ընտանիքը, ամուսնությունը և հարսանեկան ծեսերը, մանկածնության հետ կապված ծեսերը, թաղման ծեսերը, օրացուցային տոները և ծեսերը: Յոթերորդ գլուխը նվիրված է արցախահայության 20-րդ դարի երկրորդ կեսի և 21-րդ դարի սկզբի էթնոմշակութային զարգացումներին: Այստեղ առանձին բաժիններով քննվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում էթնիկական, սոցիալ-ժողովրդագրական և մշակութային իրավիճակը 20-րդ դարի 2-րդ կեսին, էթնոմշակութային փոփոխությունները նյութական բնագավառում, ընտանիքում, ամուսնական, ընտանեկան սովորություններում և ծեսերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական, մշակութային, էթնոմշակութային և ժողովրդագրական իրավիճակը 21-րդ դարի սկզբին: Աշխատության առաջաբանում ներկայացվում է Արցախի պատմության և ազգագրության համառոտ պատմությունը: Առանձին կարևորություն ունի մենագրությանը կցված մատենագիտական ընդարձակ ցանկը:

¹ Վարդանյան Ս., *Արդյր Մկրտչյան. Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX-начало XX вв.)*. Ереван, издательство «Гитутюн» НАН РА, 2010, 168 с., «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2010, N2, էջ 266

² Տեր-Չապարյան Ռ., *Շուշի քաղաքը*, Երևան, 1993

³ Тер-Саркисянц А., *Структура современной семьи у армян Нагорного Карабаха*, «Всесоюзный симпозиум по демографическим проблемам семьи», ч. II, Ереван, 1975, с. 176-183, *Изучение современной сельской семьи у армян Нагорного Карабаха*, «Итоги полевых работ института этнографии АН СССР в 1970 г.», Москва, 1972, с. 93-102, *Изучение современного и традиционного быта армян Нагорного Карабаха*, «Новое в этнографических и антропологических исследованиях. Итоги работ института этнографии АН СССР в 1972 г.», Москва, 1974, с.179-189, *Новое и традиционное в современном быту армян Нагорного Карабаха*, «Полевые исследования института этнографии АН СССР. 1975», Москва, 1977, с. 99-110, *Некоторые тенденции этнокультурного развития армян Нагорного Карабаха*, «Լրիւրէր հասարակական գիտությունների», Երևան, 1988, N8, էջ 14-23, *Этнографическая поездка в Нагорный Карабах*, «Вестник РГНФ», Москва, 2009, № 1. с. 163-171 ևն



Արցախի ազգագրության ուսումնասիրության գործում լուրջ խթան հանդիսացան հետխորհրդային շրջանում կազմակերպված մի շարք միջազգային և հանրապետական գիտաժողովներ: Հիշատակության արժանի են «*Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան*» խորագրով 2006թ. հունիսի 21-24-ը Ստեփանակերտում կազմակերպված միջազգային գիտաժողովում ներկայացված Ա. Բաղդասարյանի, Ա. Թաղևույանի, Ս. Մկրտչյանի, Ս. Պողոսյանի և Ա. Ստեփանյանի, Լ. Վարդանյանի, Ա. Տեր-Սարգսյանցի, Հ. Սարգսյանի¹, 2007թ. Շուշիում կայացած «*Շուշին հայոց քաղաքակրթության օրրան*» գիտաժողովում Ա. Բազեյանի, Մ. Գաբրիելյանի, Ա. Դաբաղյանի, Է. Խենյանի², ինչպես նաև տարաբնույթ այլ գիտաժողովներում³ տարբեր ժողովրդագետների կողմից ներկայացված՝ Արցախի ազգագրությանն առնչվող զեկուցումները:

Արցախի ազգագրության տարբեր բնագավառների վերաբերող և առնչվող գիտական հոդվածներ են տպագրվել նաև «*Պատմաբանասիրական հանդես*» (ք. Երևան)⁴, «*Լրաբեր հասարակական գիտությունների*» (ք. Երևան)⁵, «*ԱրՊՀ գիտական տեղեկագիր*» (ք. Ստեփանակերտ)⁶, «*ԱրՊՀ հայագիտական հանդես*» (ք. Ստեփանակերտ)⁷, «*Կրթությունը և գիտությունը Արցախում*» (ք. Երևան)⁸, «*Հանդես Ամսօրյա (ք. Վիեննա)*» և այլ հանդեսներում^{9,10}, ինչպես նաև գիտական հոդվածների ժողովածուներում¹¹:

¹Բաղդասարյան Ա., *Արցախի ժողովրդական նվագարանային երաժշտության հարցեր*, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006թ.», Երևան, 2007, էջ 282-294, Թաղևույան Ա., *Դարբնի ծխական կերպարի իմաստաբանությունը արցախցիների հավատալիքների համատեքստում (XIX-XX դդ.)*, նույնը, էջ 321-325, Մկրտչյան Ս., *Տոները դարաբաղիների ավանդական կենցաղում*, նույնը, էջ 395-402, Պողոսյան Ս., Ստեփանյան Ա., *Մյունխեն-Արցախի ավանդական տարագախումբը հայոց տարագի համակարգում*, նույնը, էջ 417-425, Варданян Л., *Из истории этнографического изучения Нагорного Карабаха (конец XIX- начало XX вв.)*, նույնը, էջ 488-496, Тер-Саркисянц А., *Тенденции развития сельской семьи у армян Нагорного Карабаха в постсоветский период*, նույնը, էջ 465-474, Սարգսյան Հ., *Լեռնային Ղարաբաղի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացը XIX դարում*, նույնը, էջ 455-464

² Բազեյան Վ., *Շուշիի ասեղնագործական դպրոցը*, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 244-251, Գաբրիելյան Ս., *Վերաբնակությունը որպես հասարակական-մշակութային գործընթաց. Շուշի քաղաքի օրինակով*, նույնը, էջ 360-367, Դաբաղյան Ա., *Շուշիի հասարակական կյանքը*, նույնը, էջ 330-335, Խենյան Է., *Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները)*, նույնը, էջ 335-351:

³ Պողոսյան Ա., *Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների տարածման արեալների մասին*, «*միջազգային գիտաժողովի նյութեր*», Ստեփանակերտ, 2009, պրակ 1, էջ 256-259, Тер-Саркисянц А., *Этнокультурное развитие карабахских армян в постсоветский период*, «*Лавровский сборник. Материалы XXXIII Среднеазиатско-Кавказских чтений*», Санкт-Петербург, 2009, ст. 407-408 և այլն

⁴ Վարդանյան Ս., *Պաշտամունքային տարրերը «Ալեքույալի» արցախյան տարբերակներում*, 2002, N2 էջ 148-156

⁵ Այվազյան Ա., *Ժողովրդագրական իրավիճակը Ղարաբաղում 1710-1920-ական թվականներին*, 2010, N1-2, էջ 59-67, Սարգսյան Ս., *Կապաղակաբեր*, 1990, N1, էջ 41-48

⁶ Բալայան Վ., *Մետաքազորությունը Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի 2-րդ կեսից մինչև մեր օրերը*, 2000, N1, էջ 88-92, Նանագույան Ս., Ավագյան Ք., Պետրոսյան Զ., *Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում լայնորեն տարածված ուսուցիչ բույսերն ու սնկերը*, 2005, N2, էջ 53-59, Սարգսյան Ա., *Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը «Ազգագրական հանդեսի» էջերում*, 2017, էջ 59-66

⁷ Բալայան Վ., *Սոցիալ-տնտեսական իրավիճակը Արցախում 19-րդ դարում*, 2011, էջ 94-103, Հովհաննիսյան Լ., *Արցախի բնակչությունն ըստ 1887թ. համառոտաստանյան առաջին մարդահամարի տվյալների*, 2010, էջ 60-63, Հովհաննիսյան Լ., *Բռնի մասնազանգված հայության բեկորները Ղարաբաղում*, 2011, էջ 187-192, Սարգսյան Ա., *Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը Ստեփան Լիսիցյանի ուսումնասիրություններում*, 2016, էջ 67-86

⁸ Մանասյան Ս., Սուլյան Ս., *Բնական գործոնների ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարաբնակեցման վրա*, 2011, N1-2, էջ 109-116, Հայրապետյան Թ., *Միաստասպելական տոները Ղարաբաղում կենցաղավարող հրաշապատում հեքիաթներում*, 2008, N3-4, էջ 31-39

⁹ Հայրապետյան Թ., *Գոնեստանդին Մելիք Շահնագարյանի (Տմբալի Խաչան) ժողովրդագիտական-բանահավաքական գործունեությունը*, 1999, N1-12, Ղազիսյան Ա., *Խաչիկ Ծ վարդապետ Դադյանի ժողովրդագիտական-բանահավաքական գործունեությունը*, 1999, N1-12, էջ 387-402

¹⁰ Գաբրիելյան Ս., Դաբաղյան Ա., Սարգսյան Հ., *Շուշիում վերաբնակված ընտանիքների կառուցվածքը 1996-2000 թթ.*, «*Հայ ժողովրդական մշակույթ*», Երևան, 2004, N12, էջ 25-31, Պողոսյան Ա., *Շուշին գորգագործական մշակույթի կենտրոն (ԺԺ դարի վերջ-Ի դարի առաջին քառորդ)*, «*Էջմիածին*», 2014, Բ, էջ 42-50, Պողոսյան Ա., *Արցախյան գորգագործական ավանդույթների արեալային տարածման ու Գովկասի հարավ-արևելյան գորգագործական կենտրոնների փոխանցությունների մասին*, «*Բանբեր հայագիտության*», Երևան, 2015, թիվ 2-3, էջ 78-104

¹¹ Պողոսյան Ա., *Արցախի գորգագործական ավանդույթները հյուսիս-արևելյան Այսրկովկասի գորգագործական կենտրոններում*, «*Գիտական հոդվածների ժողովածու. Գավառի պետական համալսարան*», Երևան, 2011, էջ 240-250, Հարությունյան Հ., *Ոսկերչությունն ու ակնագործությունը Շուշիում 18-19-րդ դարերում՝ ըստ նորահայտ վիճագրերի*, «*Պատմագիտական ուսումնասիրություններ. հոդվածների ժողովածու*», Ստեփանակերտ, 2006, մաս 2-րդ, էջ 55-57, Սարգսյան Ա., *Արցախի ազգագրության ուսումնասիրությունն անկախության տարիներին*, «*Արցախի պետական համալսարան. Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)*», Ստեփանակերտ, 2016, պրակ 1, էջ 255-260, Սարգսյան Ա., *Արցախի ժողովրդագիտությունը «СМОМПК (Сборник материалов для*



2009թ. լույս տեսավ «*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլասը*»¹, որի շուրջ յոթ տասնյակ քարտեզները, ինչպես նաև տեքստերն ու գծապատկերները ներկայացնում են կարևոր տեղեկություններ նորանկախ հանրապետության կազմավորման, աշխարհագրական դիրքի, բնական պայմանների ու պաշարների, կենդանական ու բուսական աշխարհի, բնակչության, տնտեսության, մշակույթի մասին: Խնդրո առարկա հարցի տեսակետից առանձին արժեք ունեն ժողովածուի՝ Լ. Հովհաննիսյանի կազմած N82 (*Երկրագործական և անասնապահական մշակույթ*), N83 (*Ուտեստներ և ըմպելիքներ*), N84 (*Տարագ*), N85 (*Տնայնագործական և արհեստագործական մշակույթ*), Ա. Պողոսյանի կազմած N86 (*Գորգագործական մշակույթ*) գունավոր քարտեզները, որոնք ներկայացնում են այդ բնագավառների 19-20-րդ դարերի վիճակը:

Արցախի գորգագործական մշակույթի ուսումնասիրությունն է տրված Ա. Պողոսյանի մի շարք գիտական զեկուցումներում ու հոդվածներում և հատկապես գերմաներենով հրատարակված հիմնարար աշխատության մեջ², որտեղ հեղինակը առանձին գլուխներով ներկայացրել է Արցախի գորգագործական մշակույթի պատմությունը, արցախյան գորգագործական ավանդույթների տարածման արեալները (Հյուսիսարևելյան Անդրկովկաս, Հյուսիսարևմտյան Իրան, Փոքր Ասիա), արցախյան գորգերի խմբերն ու տիպերը (պատկերային, բուսածաղկային, խաչազարդ հորինվածքով, բազմանիստ խոշոր հորինվածքով, աստղազարդ հորինվածքով, խորանավոր, շերտավոր, շեղանկյունազարդով, վիշապազորգեր, «Ջրաբերդ») և դրանց տարածման արեալները, որոնք ուղեկցվում են բազմաթիվ բարձրարժեք լուսանկարներով:

Թեմայի շրջանակներում է հրատարակվել նաև Վ. Թաթևյանի «*Արցախի տոհմագորգերը*» ժողովածուն³, որի առաջաբանում ներկայացվում է գորգագործության և գորգերի նախշազարդերի, զարդանկարների, խորհրդանշանների ծագումնաբանությունը, իսկ բուն ժողովածուում՝ Արցախում և հայ ազգագրական այլ շրջաններում գործված հարյուրավոր գորգերի և մի քանի կարպետների լուսանկարներ՝ անհրաժեշտ մեկնաբանություններով:

Արցախի պատմաերկրագիտական թանգարանի գորգերի, կարպետների, անկողնակալների, խորջինների հավաքածուն՝ լուսանկարներով ու տեղի, ժամանակի, չափերի մասին հայերեն, ռուսերեն, անգլերեն տեղեկություններով, ներկայացված է Մ. Բալայանի «*Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուն*» ժողովածուի մեջ⁴:

Ուշագրավ է Ս. Մարկոսյանի «*Արցախի ժողովրդական երաժիշտներ*» գիրքը⁵, որտեղ հեղինակը գիտահանրամատչելի և գեղարվեստական լեզվով ներկայացնում է երկրամասի՝ 19-20-րդ դարերի ժողովրդական շուրջ վեց տասնյակ երաժիշտների կյանքն ու գործունեությունը, ժամանակի երաժշտական արվեստի ավանդույթներն ու սովորույթները: Ս. Մարկոսյանը գրառել ու նուտագրել է նաև ժողովրդական նվագարանային երաժշտության ավելի քան 150 նմուշ:

«*Արցախի խոհանոց*» խորագիրն է կրում Ժ. Բաբայանի ժողովածուն⁶, չնայած պետք է նշել, որ գրքում ներկայացված է ընդհանուր հայկական խոհանոցը, և վեր չեն հանված արցախյան ուտեստի առանձնահատկությունները:

описания местностей и племен Кавказа» հանդեսի էջերում, «Գիտական ընթերցումներ. Հոդվածների ժողովածու. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2017, էջ 86-90

¹ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս (գլխավոր խմբագիր՝ Վարդանյան Մանուկ), Երևան, 2009

² Pogosyan A., *Rug weaving Culture of Artsakh, Historico-Ethnographic illustrated study*, Saarbrücken, 2015

³ Թաթևյան Վ., *Արցախի տոհմագորգերը*, Երևան, 2004

⁴ Բալայան Մ., *Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուն*, Երևան, 2012

⁵ Մարկոսյան Ս., *Արցախի ժողովրդական երաժիշտներ*, Երևան, 2004

⁶ Բաբայան Ժ., *Արցախի խոհանոց*, Երևան, 2007



Անկախության տարիներին ԼՂՀ տասնյակ բնակավայրերի մասին տպագրվել են ժողովածուներ և աշխատություններ¹, որոնցից յուրաքանչյուրում այս կամ այն կերպ հեղինակներն անդրադառնում են նաև ազգագրությանը: Դրանցից որոշները առավել կարևոր են խնդրո առարկա հարցի ուսումնասիրության համար:

Կ. Ղահրամանյանի ուսումնասիրությունը² հիմնականում նվիրված է Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի պատմությանը, պատմաերկրագիտական հուշարձաններին ու վիմագրական նյութերին, որոնց զուգընթաց մեծ տեղ է հատկացված ժողովրդական բժշկության, կերակրատեսակների, խաղատեսակների, տարբեր սովորությունների ու ծեսերի նկարագրությանը:

Ե. Աբրահամյանի՝ Հաղբուրթի շրջանի Մեծ Թաղեր գյուղին նվիրված գրքում³ կարևոր տեղեկություններ են տրվում բնակավայրի ուխտատեղիների, բուսական և կենդանական աշխարհի, տարբեր արհեստների, հողագործության, այգեգործության, անասնաբուծության մասին:

Ծավալուն աշխատանք է Մ. Աղաջանյանի՝ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղին նվիրված աշխատությունը⁴, որտեղ հեղինակը առանձին բաժիններով ներկայացրել է գյուղի բնակչության նիստն ու կացը, ամուսնության, ծննդի, ընտանիքի հետ կապված զանազան սովորություններ ու ծեսեր, մահվան հետ կապված արարողություններ, հավատալիքներ, ինչպես նաև բանահյուսական տարբեր ժանրերի նյութեր:

Ս. Ղուլյանը «*Բանաձոր*» գրքում⁵ անդրադարձել է նաև Հաղբուրթի շրջանի համանուն գյուղի սրբավայրերին, արհեստներին, տարազին, խաղատեսակներին, բնական ներկեր ստանալու եղանակներին, հեքիմությանը, շերամապահությանը, խաղողագործությանը:

Արցախի ազգագրության տարբեր բնագավառներ և երևույթներ լուրջ հետազոտության նյութ են դարձել հայ ազգագրությանը նվիրված մի շարք համահավաք ուսումնասիրություններում: Հիշատակության արժանի են Հ. Խառատյան-Առաքելյանի⁶, Գ. Շագոյանի⁷, Ս. Հոբոսյանի⁸, Մ.

¹ Աբրահամյան Ժ., *Դահրավ. Հայրենի հիշատակներ*, Ասկերան, 2005, Աբրահամյան Հ., *Քերթ (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)*, Երևան, 2010, Աղասարյան Գ., *Խնձրիստան գյուղի պատմությունը*, Ստեփանակերտ, 2002, Աղալյան Ա., *Քոլատակ. համառոտ պատմություններ գյուղի և նրա մարդկանց մասին*, Ստեփանակերտ, 2013, Ամիրջանյան Ս., *Դիզակ*, Երևան, 2006, Առաքելյան Մ., *Ասք Ղարաբաղի և Ննգի գյուղի մասին. ազգագրական պատմություն (16-րդ դարի սկզբներից մինչև 20-րդ դարի վերջերը)*, Ավետիսյան Ն., *Հաղբուրթի*, Ստեփանակերտ, 2009, Բալայան Գ., *Աջան - գյուղի ու մարդկանց մասին*, Ստեփանակերտ, 2006, Բալայան Վ., *Գիշի. պատմական անցյալն ու ներկան*, Երևան, 1997, Բաղդասարյան Ա., *Հայրենի եզերք: Պատմական ակնարկ (Ազոխ գյուղի մասին)*, Ստեփանակերտ, 2004, Բեզլարյան Մ., *Ղարաբաղի մեր Քարահունջը*, Ստեփանակերտ, 2004, Գալստյան Ա., *Հաղթանակ (Նորագյուղ գյուղի մասին)*, Ստեփանակերտ, 2000, Գրիգորյան Գ., *Մոխրաթաղ*, Ստեփանակերտ, 2004, Գրիգորյան Ժ., *Ուլուբաք*, Ստեփանակերտ, 2011, Թադևոսյան Հ., *Հին ու նոր Ավետարանաց*, Ստեփանակերտ, 2006, Հակոբյան Փ., *Դրմբոն գյուղի պատմությունը*, Ստեփանակերտ, 1999, Ղազարյան Խ., *Տումի: Պատմաաշխարհագրական ակնարկներ*, Երևան, 2003, Մելքումյան Ս., *Ճարտար*, Երևան, 2003, Մինասյան Ս., *Չափար (Հակառակաբերդ)*, Ստեփանակերտ, 2010, Պետրոսյան Վ., *Ներքին շեն. վավերագրված կարոտ*, Մոսկվա, 2008, Սարգսյան Ս., *Խնայատ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*, Երևան, 2006, Սամվելյան Է., *Գարտուի կանչ (Դահրավ գյուղի մասին)*, Երևան, 2004, Սարգսյան Ս., *Թալիշ*, Երևան, 2007, Սևյան Վ., *Շուշի*, Երևան, 1991, Վանյան Գ., *Կոճողոտ գյուղի պատմությունը*, Ստեփանակերտ, 2009, Քոչարյան Վ., *Սարգսաշեն*, Ստեփանակերտ, 2015, Օհանյան Ն., *Թալիշ*, «Արցախապատում», Գիրք 4, Ստեփանակերտ, 2015, էջ 3-144 նն

² Ղահրամանյան Կ., *Օջախի գիրք. նշխարներ*, Երևան, 2002

³ Աբրահամյան Ե., *Մեծ Թաղեր*, Ստեփանակերտ, 2009

⁴ Աղաջանյան Մ., *Հաթերք*, Ստեփանակերտ, 2012

⁵ Ղուլյան (Ղուլունց) Ս., *Բանաձոր*, Երևան, 2013

⁶ Խառատյան-Առաքելյան Հ., *Հայ ժողովրդական տոները*, Երևան, 2005

⁷ Շագոյան Գ., *«Յոթ օր, յոթ գիշեր» հայոց հարսանիքի համայնապատկեր*, Երևան, 2011

⁸ Հոբոսյան Ս., *Հայոց ձիթահանության մշակույթը (XIX դ.-XX դ. կես)*. պատմաազգագրական ուսումնասիրություն, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 2007, հ.23, էջ 7-98



Գալստյանի¹, Ֆ. Գրիգորյանի², Ա. Թադևոսյանի³, Ս. Մկրտչյանի⁴ աշխատությունները, ինչպես նաև բազմաթիվ գիտական հոդվածներ⁵:

Սրանով չեն սպառվում Արցախի ազգագրությանը վերաբերող և առնչվող ուսումնասիրությունները: Նման նյութեր են ընդգրկված նաև տարբեր ժամանակներում գրված և հրատարակված՝ Արցախի պատմությանը, բանահյուսությանը, բարբառին, այլ բնագավառներին նվիրված և առնչվող աշխատություններում, ժողովածուներում, հոդվածներում, պատկերագրքերում, գեղարվեստական ստեղծագործություններում, վիճակագրական տարաբնույթ տեղեկագրքերում, հարևան ազգագրական շրջաններին վերաբերող և այլ աշխատանքներում⁶:

**Արմեն Յուրիկի Սարգսյան,
բ.գ.թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ**

¹ Գալստյան Ս., *Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես-XX դարի 80-ական թթ.)*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 2009, հ. 26, էջ 7-88

² Գրիգորյան Ֆ., *Հայկական ազգային տարագ*, Երևան, 2011

³ Թադևոսյան Ա., *Դարբինը հայոց ծիսակարգում, պատմաազգագրական հետազոտություն*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 2007, հ.23, էջ 101-183

⁴ Մկրտչյան Ս., *Տոները հայոց արդի կենցաղում (Էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն)*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 2007, հ. 22, էջ 129-238

⁵ Հայրապետյան Թ., *Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ*, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2004, N3, էջ 217-227, Առաքելյան Գ., *Խաղողագործությունն ու ուղեղի խմիչքների արտադրությունը Երևանի մարզում (XIX դ.)*, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2006, N3, էջ 126-134, Առաքելյան Գ., *Բամբակագործությունը Երևանի մարզում (XIX դ. երկրորդ կես)*, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2007, N3, էջ 181-185, Առաքելյան Գ., *Շերամապահությունն ու մետաքսագործությունը Երևանի մարզում (XIX դ.)*, «Հայոց պատմության հարցեր. Գիտական հոդվածների ժողովածու», Երևան, 2007, թիվ 8, էջ 171-188, Պետրոսյան Ա., *Արջի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում*, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1995, N3, էջ 163-170, Ստյան Լ., *Երիզավետյուղի նահանգի հայ բնակչությունը XIX դ. վերջին (ըստ 1897թ. մարդահամարի տվյալների)*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2008, N1, էջ 241-246, Ստյան Լ., *Հայերի տեղաբաշխումը և աճը Անդրկովկասում՝ ըստ 1897թ. մարդահամարի տվյալների*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2003, N3, էջ 99-105, Պողոսյան Ա., *Վիշապագորգերի ծագումնաբանության և տարածման արևելքի հարցի շուրջ*, «Հանդես ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2004, թիվ 1-12, էջ 367-415 ևն

⁶ Կաղանկատվացի Ս., *Պատմություն Աղվանից աշխարհի*, Մոսկվա, 1860, *Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г.*, Елисаветпольская губерния, кн. 63, Санкт-Петербург, 1904, Ширакуни Н., *Зангезурский уезд Елисаветпольской губернии*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», выпуск тридцатьчетвертый, Тифлис, 1904, отд. I, с. 182-217, Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի (1838-1913)*, Թիֆլիս 1914, Авдеев М., *Миляско-Карабахская степь: Кочевое и оседлое хозяйство. Территория-население-экономика*, Баку, 1929, *Итоги всеобщей переписи населения. 1959, Азербайджанская ССР*, Москва, 1963, Ալիշան Ղ., *Արցախ*, Երևան, 1993, Ուլուբաբյան Բ., *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը*, Երևան, 1994, Баратов Б., *Разоренный рай: Путешествие в Карабах*, Москва, 1998, Մկրտչյան Շ., *Արցախի գանձերը*, Երևան, 2000, Կարապետյան Ս., *Հյուսիսային Արցախ*, Երևան, 2004, Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության*, Երևան, 1991, 2-5-րդ մաս, *Ստեփանակերտ, 2004-2011, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մարդահամարի տվյալները (Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ցուցանիշները)*, Ստեփանակերտ, 2006, Հովսեփյան Հ., *Ղարաբաղի հայերը I Ազգագրություն*, Երևան, 2009, Մինասյան Շ., *Ղարաբաղի բարբառի դարձվածները*, Ստեփանակերտ, 2007, Մարգարյան Լ., *Արցախի բանահյուսության լեզուն*, Ստեփանակերտ, 2011, Бахши К., *Духовные сокровища Арцаха*, Москва, 2012, Սարգսյան Ա., *Ղարաբաղի բարբառի բառարան*, Երևան, 2013, Սարգսյան Ա., *Արցախի բանահյուսությունը*, Երևան, 2015, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի մարդահամարի տվյալները (Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ցուցանիշները), Ստեփանակերտ, 2016, Մանուկյան Ս., *Լեոնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները, քաղաքները, գյուղերը. պատմամշակութային, ֆիզիկաաշխարհագրական, վարչատնտեսական նկարագրեր*, Երևան, 2016, Բալայան Վ., *Շուշի*, Երևան, 2017, *Արցախի վիճակագրական տարեգիրք*, Ստեփանակերտ, 2019, *Արցախի հանրապետության շրջանները թվերով*, Ստեփանակերտ, 2019 ևն:



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԱՆԴԱ

(ՆՅՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

ՎԱՐԱՆԴԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՄԱՍԻՆ

Վարանդան նախկին Մյուս Հաբանդ գավառն է, որ Քոչուս էլ է կոչվել: Սա ընկնում է Արցախ նահանգի մեջ և նրա հետ միասին մինչև Արշակունյաց անկումը պատկանելիս է եղել հայերին, այնուհետև ենթարկվել է Աղվանից պետության:

ԺԳ դարում հոներն ու մոնղոլ-թաթարներն իրենց ասպատակություններն ու ավերումները սփռել են այս գավառում ևս: Նույնանման ավերումներ գործել են այստեղ և պարսիկներն ու օսմանցիները՝ շարունակ միմյանց ձեռքից խլելով և այս գավառը:

Վերջապես 1692 թվականին Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Հուսեփինը և նրա եղբոր՝ Մելիք-Միրզա-բեկի որդի Մելիք-Բաղին Գեղամա լճի եզերքից գաղթում են իրենց ժողովրդի մի մասի հետ այս գավառը և բնակություն հաստատում Ավետարանոց գյուղում:

1721 թվականին այս Մելիք-Բաղին դուրս է եկել կովկասյան լեռնաբնակների առաջ և ազատել երկիրը նրանց ավերմունքից: Այս և մի քանի այսպիսի հաղթություններով Մելիք-Շահնազարյանները տարածել են իրենց իշխանությունն ամբողջ Վարանդայի վրա և որպես պարսից ավատական իշխաններ՝ կառավարել երկիրը¹:

Այս մելիքներից Մելիք-Շահնազար Բ-ն, սպանելով յուր եղբայր Մելիք-Հովսեփին, նրա փոխարեն մելիք է դարձել և այս ու յուր անբարոյականության պատճառով ասելի է եղել թե՛ յուր ժողովրդին և թե՛ Խամսայի մյուս մելիքներին, որոնք մի քանի հարձակումներով ավերել են սրա երկիրը: Ահա այս ժամանակ նա ձեռք է մեկնել ջիվանշիրցիների գլխավոր Փանահ խանին, որին և որպես դաշնակցի զիջել է յուր երկրից մի բարձր լեռնադաշտ: Փանահ խանը 1752 թվականին կառուցել է այդտեղ մի ամուր բերդ և կոչել Փանաբանդ², բայց հետո, երբ մոտակա Շոշի գյուղի բնակիչները տեղափոխվել են այստեղ, բերդը կոչվել է Շոշի կամ Շուշի³:

Փանահ խանը, ջլատելով հայ մելիքների ուժը և շարունակ պատերազմներ մղելով նրանց դեմ, կամաց-կամաց կարողացել է նրանց իրեն ստորադրել:

Փանահ խանի որդի և հաջորդ Իբրահիմ-խանի ժամանակ պարսից զորապետ Աղա-Մամադ խանը 1795 թ. գարնանը եկել պաշարել է Շուշին: Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջուլջուղը և Մելիք-Բեկլարյան Աբովը հայ զորքերով ամրացել են Շուշի բերդի մեջ և Իբրահիմ խանի հետ միասին պաշտպանել բերդը: Քառասուն օր ասպարդյուն պաշարումից հետո Աղա-Մամադ խանը վերցրել է պաշարումը և գնացել տիրելու Թիֆլիսին: Նա 1797 թ. կրկին անգամ արշավել է Շուշու վրա և գրավել բերդը, սակայն այս անգամ ինքը՝ շահը, սպանվել է յուր սենեկապետի ձեռքով, և պարսից զորքերը ետ են քաշվել իրենց երկիրը:

Երբ ռուսները իշխան Ցիցիանովի առաջնորդությամբ գրավել են Գանձակի բերդը, Իբրահիմ խանը Մելիք-Ջուլջուղի խորհրդով առանց պատերազմի ընդունել է ռուսաց հպատակությունը (1805): Բայց հետո (1806) դավաճանել է ռուսներին և հրավիրել պարսիկներին՝ Շուշին տիրելու:

¹ Գաֆֆի, *Խամսայի մելիքություններ*, 2-րդ տպ., Թիֆլիս, 1895, էջ 23-24

² M. Chantre, *A travers l'Arménie Russe*

³ Գաֆֆի, *Խամսայի մելիքություններ*, էջ 62



Եվ երբ ինքը շտապել է գիշերով գնալ միանալու Շուշի գյուղի մոտ բանակած պարսից արքայորդի Աբաս-Միրզին, Մելիք-Ջուլջուղն ու փոխգնդապետ Լիսաննիչը բռնել են նրան և սպանել: Այս պատերազմը, ահագին վնասներ տալով, տևել է մինչև 1813 թվականը, երբ Գյուլիստանի դաշնագրությամբ Ղարաբաղը հանձնվել է ռուսներին: Սակայն 1826 թ. Աբաս-Միրզան յուր մոտ փախած Իբրահիմ խանի որդի Մեհտի խանի գրգռմամբ և Ղարաբաղը կրկին վերադարձնելու հույսով 80000 զորքով նորից արշավել է Վարանդա և պաշարել Շուշին: Ռուսները Ավետարանոց գյուղացի Մադաթյան զորապետի առաջնորդությամբ մեծ ջարդ են տվել պարսից Գանձակի մոտ և հալածել մինչև իրենց երկիրը:

Այնուհետև Շուշին կառավարվել է ռուսներից նշանակված գավառապետերով:

Ամարաս. Մա հին ժամանակներում մի գյուղ է եղել, ուր ս. Գրիգոր Լուսավորիչը հիմնարկել, իսկ յուր թոռ Գրիգորիսը ավարտել և օծել է մի եկեղեցի: Երբ Մասքթաց Սանեսան թագավորը 348 թվականին Ս. Գրիգորիսին, որ Աղվանից և Վրաց կաթողիկոս էր, ձիու պոչից կապելով, Վատնյան դաշտում նահատակել է, Ս. Գրիգորիսի աշակերտները հավաքել են նրա նշխարները և բերել ամփոփել այս եկեղեցում: Այնուհետև այդ գյուղը դարձել է նախ եպիսկոպոսանիստ և ապա Աղվանից կաթողիկոսների աթոռանիստ¹:

Ե դարում Աղվանից թագավոր Վաչագան Գ-ն փնտրել և գտել է այստեղ Ս. Գրիգորիսի մատուները և նորից ամփոփելով՝ վերանորոգել տաճարը:

Մոտ 1293 թվականին թաթարաց Բաթու խանը կողոպտել է այս վանքը և տարել Ս. Գրիգորիսի գավազանն ու 36 ակներով զարդարված մի ոսկեձուլյ խաչ: Հունաց կայսեր Դեսպինա դուստրը խնդրել է այդ խաչն ու գավազանը և ուղարկել Կ. Պոլիս²:

1387 թվականին Ամարասն էլ Արցախի և ուրիշ նահանգների հետ ենթարկվել է Լենկ-Թեմուրի ավերումներին:

Ժողովուրդն այժմ էլ պատմում է, թե Լենկ-Թեմուրը յուր զորքերը շարել է Ամարասից մինչև Արաքսը և հրամայել Ամարասի վանքի քարերը, միմյանց տալով, թափել Արաքսը³:

Մելիք-Շահնազար Բ-ն վերանորոգել և պարսպել է վանքը, ինչպես և բազմաթիվ սենյակներ շինել ուխտավորների համար:

ԺԷ դարում այստեղի միաբանների համար որպես ամառանոց շինվել է Հիրհեր գյուղում մի գեղեցիկ եկեղեցի և միաբանության համար խցեր:

Կարծվում է, թե Ամարասի միաբանության ամառանոց եղել է և Վերին Թաղավարդից դեպի հարավ-արևմուտք 1,5 վերստ հեռավորությամբ գտնվող՝ գետնի մեջ թաղված եկեղեցին, որ այժմ Բարևաձառ անունով ուխտատեղի է: Եկեղեցում գտնված են հետևյալ արձանագրությունները.

«Մուրբ Պետրոս, կանգնեցի զխաչս ՚ի փրկութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց: Արդ, որք երկրպագանէք սուրբ նշանիս զիս աղօթս... ջիք և Աստուած զձեզ հիշեսցէ. թուին Ն.Խ.Զ. էր»:

«Մուրբ Պողոս: Յամս Աստուածապատիւ և հոգևոր Տեառն Յովհաննիսի Ամարասայ եպիսկոպոսի և պետութեան տեառն Գագիկա: Աղուանից իշխանաց իշխանի ես հայր Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս եղբոր որդի Կոկոնայ...»:

Թվականը նույնն է⁴. ի դեպ ասենք, որ այս Բարևաձառի մասին կա հետևյալ ավանդությունը: Մի ժամանակ այստեղ ապրում էր մի սուրբ եպիսկոպոս, և ամեն անգամ, երբ նա երկար

¹ Ինճիճյան Ղ., *Մտորոգություն հին Հայաստանյայց*, Վենետիկ, 1822, Եր., 307

² Ստեփաննոս Օրբելյան, *Պատմություն տանն Միսական*, Մոսկվա, 1861, գլ. 4

³ Բարախանյանց Ա. (Լեո), *Ուխտավորի հիշատակարանը*, Շուշի, 1885, էջ 9

⁴ Բարախանյանց Ա. (Լեո), *Ուխտավորի հիշատակարանը*, Շուշի, 1885, էջ 5



ծումապահությունից ու ճգնությունից հետո պատարագ էր մատուցանում, շրջակայքի ծառերը ողջույնի ժամանակ երեք անգամ խոնարհեցնում էին իրենց գագաթները և միմյանց կայցնելով՝ ողջույն տալիս: Մի օր էլ մի հեռավոր հայ մի ջորի ոսկով բարձում և գալիս է՝ այդ հրաշքը տեսնելու: Նա խոստանում է եպիսկոպոսին՝ նվիրել վանքին յուր հետ բերած ոսկին, եթե արժանանա տեսնելու հրաշքը: Եպիսկոպոսը խոստանում է, բայց պատարագի ժամանակ սկսում է երկմտել, թե արդյոք ոսկու հետ ջորին էլ պիտի նվիրե, թե ոչ: Այս երկմտությունն այն հետևանքն է ունենում, որ ողջույնի ժամանակ ծառերը չեն համբուրվում: Եպիսկոպոսը բացատրում է պատճառը, և ջերմեռանդ ուխտավորը խոստանում է ոչ միայն ջորին, այլև ուրիշ շատ թանկագին ընծաներ ուղարկել: Եպիսկոպոսը նորից պատարագ է մատուցանում, և այս անգամ կատարվում է հրաշքը: Հարուստ հայը գոհությամբ վերադառնում է յուր երկիրը և ուղարկում խոստացած նվերները¹:

Բայց դառնանք Ամարասին. դարուս սկզբում այս վանքը, անտեր մնալով, թուրքերի ձեռքն է ընկել, որին Ադ-Օղլան անունը տալով՝ իրենց սրբավայր էին դարձրել: Բազմաթիվ սենյակներն էլ ռուսները գործ էին ածում որպես մաքսատուն: Բաղդասար մետրոպոլիտի աշխատությամբ 1848թ. մաքսատունը տեղափոխվել է Երասխի ափի մոտ, իսկ վանքը յուր կալվածներով վերադարձվել Հայոց հոգևոր իշխանության:

Վերջապես 1858 թվականին գլխավորապես շուշեցիների օժանդակությամբ հիմնովին կառուցվել է վանքը:

ՎԱՐԱՆԴԱՅԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանները. Վարանդայի սահմաններն են. արևելյան կողմից՝ Արցախյան դաշտաբերանը (Միլինյուզ), հյուսիսից և արևմուտքից՝ Գարգար գետը, հարավից՝ Քիրս, Ղուրչու-չայ և Դիզափայտ լեռնաշղթայի գագաթնագիծը:

Այս գավառն ամբողջովին ընկնում է այժմյան Շուշվա գավառի մեջ (Գանձակի նահանգում):

Լեռներ. Վարանդան մի լեռնոտ երկիր է: Արցախյան լեռնաշղթան, մտնելով այս գավառը հյուսիս արևմուտքից, տարածվում է հարավ-արևելք մինչև Դիզակ գավառի Դիզափայտի լեռնաշղթան: Այս լեռնաշղթայի մեջ նշանավոր են Մեծ և Փոքր Քիրսերը, որ բարձրանում են Շուշու հարավային կողմում: Մեծ Քիրսի բարձրությունն է 9989 ոտնաչափ, որի վրա ձյունը միայն ամառվա տաք եղանակին է հալչում, իսկ փոքրինը՝ 7340: Այս լեռնաշղթան մեծ մասամբ պատած է անտառներով:

Մի ուրիշ փոքր լեռնաշղթա էլ, որ սկսվում է Ձորագետի և Խրամի խառնուրդի աջ կողմից և հասնում Երասխի ձախ կողմը², Վարանդայում տալիս է Բողրխան և Քյաթուկ գագաթները:

Բողրխանը գտնվում է Շուշուց արևելահյուսիս, ունի 5326 ոտ. բարձրություն: Այս գագաթից չորս գոտի է ճյուղավորվում: Առաջինը ձգվում է մինչև Վարազաբուն գյուղը. երկրորդը՝ դեպի Կղարծի, Ղզղալա, Աշան և այլ գյուղերը, երրորդը՝ դեպի Սարուշեն, Մավաս, Սխտորաշեն և Խազաս սարը, իսկ չորրորդը, անցնելով Շուշու գյուղի հարավարևելյան կողմից, միանում է Մեծ Քիրսին: Սրա մեջ նշանավոր է Խաչմաչ գագաթը: Երկրորդ լեռնագոտու մեջ նշանավոր են Խաչախուտ (5028 ոտ.) և Պտկսաբեկ (3829 ոտ.) գագաթները:

Դաշտեր. Վարանդայում ոչ մի մեծ դաշտ չկա, կան միայն փոքրիկ դաշտեր, որոնցից նշանավոր են.

¹ Անդ, էր. 10

² Բարխուդարյանց Մ., *Արցախ, Բաքու, 1895, էր. 3*



- 1) Ղըզղալա գյուղի առջև տարածված դաշտը:
- 2) Նոր-Շենի դաշտը, որ գտնվում է երկու լեռների միջև:
- 3) Գիշի, Պառավաթումբ և Աղբենդ գյուղերի միջև տարածված դաշտը:
- 4) Խունըշինակ գյուղի դաշտը, որ կազմում է Վարանդայի սահմանը:
- 5) Ճարտարցիների կալի մոտ եղած դաշտը:
- 6) Ամարասի դաշտը:
- 7) Նավատ-խանի դաշտը Շոշի գյուղի և Ավետարանոցի միջև:
- 8) Բեգիջանի դաշտը Խազաս-սարի և Ներքին Թաղավարդի միջև:

Գետերը. Վարանդայի ամենանշանավոր գետը Գարգարն է, որ կազմվում է հինգ գլխավոր վտակներից.

Ա վտակը՝ բուն Գարգար, որ բխում է Քիրս լեռնաշղթայի Զառիստ սարերի հյուսիսային և հարավային լանջերից և հոսում է Շուշի քաղաքի հարավարևելյան խոր ձորով: Սա յուր մեջ է ընդունում Թթու ջրի առվակը: Այս վտակը տեղացիները կոչել են Քարին-տակի գետ, որովհետև անցնում է Քարին տակ գյուղի մոտով:

Բ վտակը բխում է Քիրս լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջերից և հոսում է միննույն քաղաքի հյուսիսարևմտյան կողմով: Սրան տեղացիները կոչում են Ղայդալու գետ՝ Ղայդալի գյուղի անունով: Այս երկու վտակները միանում են Շուշուց 8 վերստ հեռավորությամբ՝ Մազի կամրջի տակ: Ահա իսկապես այստեղից սկսած՝ այս գետը կոչվում է Գարգար:

Գ, Դ և Ե վտակները բխում են Խաչեն գավառից, մինը՝ Խանաձախ գյուղի սարից, իսկ մյուսը՝ Բալլուջայի սարից, իսկ հինգերորդը՝ Պետրեցվոց սարից:

Բուն Գարգարը նախ հոսում է դեպի հյուսիս, ապա՝ արևելահյուսիս և կտրելով Արցախյան դաշտի կեսը՝ անհետանում ավազի տակ, ապա նորից երևում և հեղեղների ժամանակ թափվում Կուր գետի մեջ:

Երկրորդ նշանավոր գետակն է Քյոնդալան, որ միայն զարնանը հասնում և խառնվում է Արաքսին: Սա բաղկանում է երկու գլխավոր վտակներից, որոնցից մինը՝ Քիրսուչայ, սկիզբ է առնում Քիրս լեռնաշղթայից և հոսում Ավետարանոց գյուղի հարավային ստորոտով, մյուսը սկիզբ է առնում նույն լեռնաշղթայից, հոսում Ղևոնդյանց անապատի սարի հարավային ստորոտով և ընդունելով Սարգսաշենի Շորեն վտակը՝ միանում Քիրսաչային նույն անապատից բավական վար:

Սա, հեղեղների ժամանակ սաստիկ բարձրանալով, բավական վնասներ է պատճառում¹:

Գ գետակն է Ղուռուչայը, որ նույնպես Արաքսի վտակն է: Սա սկիզբ է առնում Մեծ և Փոքր Քիրսերի միջից: Սրան միանում է Իշխանագետը՝ Թաղլար և Տումի գյուղերի միջև:

Այս գետն այսպես կոչվելու պատճառն այն է, որ ամառը չորանում է (ղուռու թուրքերեն նշանակում է չոր):

Դ գետակն է Ամարասա գետակը, որ Չալուն գետ ևս կոչվում է:

Սա սկիզբ է առնում Սոս, Քերթ, Քարահունջ, Հիրիեր, Խերխան գյուղերի աղբյուրներից և անցնում Ամարասի մոտով:

ԼՃեր. Վարանդան զուրկ է մեծ լճերից. կան միայն փոքր լճեր, որոնք ամռանն ավելի ևս փոքրանում են: Սրանցից նշանավոր են.

- 1) Սյուլյուկնաձով՝ Նինգի գյուղի մոտ. այսպես է կոչվում, որովհետև մեջը տգրուկներ կան:

¹ Այս տարի քշել տարել էր վրանաբնակ 27 թուրք



2) Ծծքարին ծով՝ Ծովատեղ գյուղի մոտ. շատ փոքր լճակ է:

Աղբյուրներ. Վարանդան սաստիկ հարուստ է աղբյուրներով, որոնց ջուրը շատ հստակ և քաղցրահամ է: Մեծ աղբյուրներից նշանավոր է Ղարաբուլախ գյուղինը, որ մի քանի ջրաղաց է դարձնում:

Քարայրեր. Վարանդայում կան շատ բնական քարայրեր, որոնք պատերազմների ժամանակ ժողովրդին ապաստարան և երբեմն էլ ռազմական կետեր են ծառայել: Սրանցից նշանավոր են.

Հունտոի կարան: Այս քարայրը գտնվում է Շուշու արևելահյուսիսային կողմում՝ ձգված խոր ձորի մեջ՝ Հունտո գյուղի մոտ, որի անունով և կոչված է: Քարայրը բաղկացած է երեք աչքից, որոնցից առաջին երկուսը փոքր են, իսկ երրորդը՝ բավական ընդարձակ: Այստեղ կա և ջրի ավազան:

Ծծխաչ (Շմանեք): Թաղարից ներքև՝ Ղուռուչայ գետակի ձախ եզերքին, երկու ահագին քարայրեր են: Ներքևի քարայրի առաստաղի ժայռը ծծանման բարձրություններ ունի, որոնցից ջուր է կաթկթում¹:

Ավանա կարան: Քարին-տակը գյուղի հյուսիսային կողմում, Ավանա Քերծում, որ տարածվում է մինչև Շուշի քաղաքի Կոհար աղայի տան տակը: Քարայրի մեջ կա ջուր:

Որվան քարայր: Գտնվում է Ազոխ գյուղի արևելյան կողմում՝ ձորակի ձախ կողմի բարձրության վրա: Բավական խորն է, և մեջը կա մի երեխա գրկած կնոջ արձան: Կնոջ տարազը և գլխի հարդարանքը արցախական են:

Ծծքարի կարան: Ծովատեղ գյուղի արևմտահյուսիսային կողմում բարձրանում է Ծծաքար կոչված սարը, որի ժայռոտ զագաթին մոտիկ կա մի ահագին քարայր²:

Կան նաև Ալեքսանա դուղուն, Եղունիկի (աղավնու) և Ամարաթների քարայրերը Քարին տակի ձորակում:

ԿԼԻՄԱՆ

Վարանդայի կլիմայի վերաբերյալ մենք միայն Շուշու մասին տեղեկություններ գտանք ռեալական դպրոցի ուսուցիչ պ. Ալեքսանդրովսկու մոտ, որ նույն դպրոցին կից գոյություն ունեցող օդերևութաբանական կայանի կառավարիչն է: Պարոնը սիրով տվեց մեզ իր երեք տարվա դիտողությունները, որոնցից 1893-95-ը միջին թիվ հանելով՝ կազմեցինք հետևյալ աղյուսակը (*տե՛ս Աղյուսակ 1*):

Այս աղյուսակից հետևում է.

1. Օդի ճնշումը 0⁰ ջերմության միջոցին տարեկան միջին թվով հասնում է 647,9 միլիմետրի, օրորվելով 650,8-ի, որ բարձրանում է հոկտեմբերին, և 644-ի միջև, որ իջնում է մարտին:

2. Բարոմետրն այստեղ բարձրանում է յուր մաքսիմումին նոյեմբերին (656.8) և իջնում մինիմումին փետրվարին (636):

3. Տարեկան միջին ջերմությունն է 8,6: Ամենաշոգ ամիսը օգոստոսն է (միջին ջերմ. 20,0), երբ ջերմաչափը երբեմն բարձրանում է 27,5. այս աստիճանը բարձրանում է երբեմն և հուլիս ամսին, թեև այդ ամսին միջին ջերմությունը հավասար է 17,8⁰: Ամենացուրտ ամիսը հունվարն է (միջին ջերմ. -3,3⁰), երբ ջերմաչափը երբեմն իջնում է -12,4⁰:

4. Համեմատական խոնավությունը տարեկան միջին թվով հասնում է 76,7: Ամենախոնավ ամիսը հոկտեմբերն է՝ 82.3, իսկ ամենապակաս խոնավը՝ հուլիսը՝ 66:

¹ Տե՛ս *Հավաստքի բաժնում*

² Տե՛ս *Հավաստքի բաժնում*



Հետևյալ աղյուսակն էլ ցույց տալիս է տիրապետող քամիները և եղանակը (տե՛ս Աղյուսակ 2):

Շուշի քաղաքի կլիման Աղյուսակ 1

	Բարձրագույնը (միլիմ.ՕՔ ժամանակ)	Բարձրագույնը		Ջերմությունը ըստ թ.	Ջերմություն			Համեմատական խոնավություն	Ամպամած	Քամու արագությունը (մետր վրկ.)	Նստույցք (օսաձև)
		Մաքսիմում	Միջինում		Մաքսիմում	Միջինում	Մին. ըստ տեղան-գրագի				
Հունվար	647,5	653,6	640,0	3,3	8,5	11,3	12,4	80,5	4,6	1,0	22,1
Փետրվար	645,0	651,2	636,0	0,1	13,3	8,8	9,9	74,0	5,1	1,3	15,8
Մարտ	644,0	650,8	636,9	2,7	16,7	5,1	7,2	78,0	6,7	1,3	51,2
Ապրիլ	646,8	652,2	640,5	6,2	17,9	3,8	5,3	82,0	7,0	1,3	57,3
Մայիս	648,1	552,7	642,4	11,9	21,4	5,2	2,8	78,3	5,9	1,3	111,6
Հունիս	647,1	651,0	643,4	17,2	26,0	9,6	8,2	71,0	5,0	1,1	81,8
Հուլիս	648,1	651,8	644,2	17,8	27,5	12,5	9,6	66,0	4,5	1,1	44,0
Օգոստոս	648,5	653,6	644,2	20,0	27,5	12,9	10,3	66,3	3,4	1,1	22,0
Սեպտեմբեր	649,1	652,4	642,5	14,1	24,8	5,7	4,4	80,7	4,7	1,0	44,4
Հոկտեմբեր	650,8	656,3	644,8	9,9	19,2	2,7	0,6	82,3	8,9	0,9	61,2
Նոյեմբեր	650,2	656,8	641,8	4,7	16,3	3,9	5,1	78,0	5,6	1,1	43,4
Դեկտեմբեր	648,1	655,2	338,8	1,4	12,7	7,3	8,2	75,7	5,0	1,0	15,6
Ընդամենը	7772,6	7840,1	7695,3	103,4	232,1	6,8	12,3	912,8	66,4	13,5	570,3
Միջին	647,9	653,3	641,3	8,6	19,3	0,6	1,0	76,7	5,5	1,1	47,5

Շուշի քաղաքի կլիման

Աղյուսակ 2

	ՔԱՄԻՆԵՐ												Օրեր					Ջերմ.											
	Հանդարտ	N	NNE	NE	ENE	E	ESE	SE	SSE	S	SSW	SW	WSW	W	WNW	NN	WNN	Հարկազրկ	Հարկուտ	Բնօրհարակ (քրճ)	Մառիտու	Փոթորիկ	Արեգ. քամի	Պարզ	Անոպա	Max Օ	Min Օ		
Հունվար	51,6	12,3	5		7	1,6	12,6	0,3	1,6	2	1,0							8,6	8		13,0		1,6	13	9,3	16,6	27,0		
Փետրվար	48,6			1	1	3	11	7,3	1,3	0,6	4,6	1,0						5,6	6,6	0,6	7,0		3,3	6,3	6,6	7,0	22		
Մարտ	52,0			2	3	6	18	0,3	4,0	1,0	3,3	2,0	0,6	0,3	1,0	0,3		12,0	10,3	2,6	16,0	1,6	3,6	2,6	12,6	4,3	16,0		
Ապրիլ	42,3	4,0	3	4	5,6	3,3	15	4,3	4,3	1,3	4,3	1,3	1,0		1,0			16,6	8,6		19,0	1,6	2,0	2,0	13,3	2,0	5,6		
Մայիս	41,6	2,0	2	8	12	6,3	14	5,3	1,3	1,0			0,6	0,3		0,3		17,3	3,0	1,3	11,3	11,0	1,6	2,3	8				
Հունիս	33,6		2	7,5	13	6,3	25	5,0	0,3	0,3	0,3			0,3		0,3		11,0		0,3	2,6	4,6	1,6	7	7,6				
Հուլիս	45,6	1	1	10,3	15	15	3,3	1,0	1,6					0,3				7,0			1,6	1,0	2,3	9,3	11				
Օգոստոս	42,6	2		5	13,6	13	13,3	2,6	1,6	0,6	0,3							3,6			1,6	1,0	3,0	14,3	3,3				
Սեպտեմբեր	51,6	1	4	3	7	6,6	6,3	3,6	8,0	3,6	0,3	0,3						7,3	0,3	0,6	8,6	3,0	0,3	9,0	8,3				
Հոկտեմբեր	54,3			3,5	4,6	8,3	11,3	3,6	3,6	2,6	2,0							7,0	0,3	0,3	10,6	0,6		6,3	10				
Նոյեմբեր	48,6	4		5	2,3	3,3	14,0	5,6	0,6	1,3	2,6	5,0	0,3		1,3			7,9	4,0	0,3	11,3		2,3	5,3	9,3	2,0	6,6		
Դեկտեմբեր	49,6	5,5	13	9	4	5	6,6	5,3	1,6	1,3		0,6	0,3	0,3	0,6	1,0	2,0	5,6	5,3	0,3	11,0	0,3	2,3	7,3	8,3	6,6	21,6		
Տարեկան	562,0	31,8	30,0	49	83,4	77,7	162,1	46,5	29,2	16,2	15,7	13,2	2,8	1,5	3,9	5,2	3,6	88,6	46,4	6,6	113,6	24,7	23,9	77,7	107,6				

Այս աղյուսակից էլ հետևում է.

1. Քամիներն ամենից շատ փչում են արևելահարավարևելյան կողմից (162,1), ամենից շատ՝ հունիս (25) և ամենից քիչ՝ սեպտեմբեր ամսին (6,3):
2. Սրանից հետո ամենից շատ փչում է արևելախյուսիսարևելյան կողմից (83,3), ամենաշատը՝ օգոստոսին (13,6) և ամենաքիչը՝ փետրվարին (1):
3. Հետո արևելյան կողմից (77,7), ամենաշատը՝ հուլիսին (15) և ամենաքիչը՝ հունվարին (1,6):



4. Հետո արդեն հյուսիսարևելյան (49) և հյուսիսային (31,8) ու հյուսիս-հյուսիսարևելյան (30) կողմերից:

5. Շուշին տարվա ընթացքում միջին թվով 113,6 օր պատած է լինում մառախուղով, 107,6 օր էլ երկինքը ամպամած է լինում և միմիայն 77,7 օր պարզ է լինում: Ապրիլ, մանավանդ մայիս և հունիս ամիսները անձրևային են: Առաջին անգամ ձյուն է գալիս նոյեմբերին, թեև երբեմն պատահում է, որ սեպտեմբերին կամ հոկտեմբերին էլ մի անգամ գալիս է: Սակայն մինչև հունվարը հազիվ ինը անգամ ձյուն է գալիս և միայն հունվարին և մանավանդ մարտին, ինչպես և՛ ապրիլին, Շուշին ծածկվում է ձյունով: Սովորաբար մայիսին էլ 3 անգամ ձյուն է գալիս, այնպես որ մինչև այս ամսի վերջը վառում են վառարանները: Այս ամիսը նաև սաստիկ փոթորկալից է (11), և ամենից ավելի այս ամսին է կարկուտ գալիս (2,6):

Փավառի կլիման բավական տաք է Շուշու կլիմայից, այնպես որ խաղողը հեշտությամբ հասնում է: Անհամեմատ տաք է Ամարասի դաշտը:

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վարանդայի բուսականությունը սաստիկ հարուստ է, երկիրը ծածկված է խիտ անտառներով, արտերով, այգիներով, պարտեզներով և խոտավետ արոսներով: Անտառները բռնում են 19,280 դեյաստին տեղ, ուր աճում են հետևյալ ծառերը՝ բեխի, բոխի (Граб обыкновенный, Carpinus Betulus), բոշնի, թիքեռնի, թեղի (карагач, Ulmeus campestris), լորի (filia Rubra), կաղնի (Quercus Macranthera), կիչի, կեչի (береза, Betula), կոռեղի, կուզենի, հացի (Fraxinus, ясень), հաճարկի, հաճարի (бук, Fagus):

Պտղատու վայրի ծառեր, որ գտնվում են միևնույն անտառներում. ճրո-տանձի, ծտի-տանձի, ճրո-խնձորի, զկոի (զղեարի) (шишковник, Mespilus), սզնի (боярышник, Cratesegus), սալորի (дикая слива, Prunus divericata), հունի (кизил, cornus mascula), սկոռնի (лещина-лесной орех, corylus), ընկուզի (грецкий орех, inglans regia), իսկ հանդերում՝ միայն մոխրատանձի և լյրթնի:

Թփեր. Մացառներում և շամբերում՝ ցախավելի կամ հորմառկի-գերմասրի (земляная груша, Heliauthus tuberosus), բրլղի, տատասկ (чертово колючка, Paliurus aculeutus), ծմակամոշ (մալինա, малина), սևամոշ (հանդերի մոշ-ежевика), մոամոշ (2-3 թիզ ցողուն ունեցող-клубника), գետամոշ (գետերի ափի մոշ-земляника), մասուրի (шиповник, Rosa esuina), կծրխուրի (барбарис, Berberis vulgaris), ցրդի, շուշան, եղինջ (Urtica), ավելուկ, շեպ (Rhapanus Rusticus), բոխի:

Ջրերի մեջ կամ մոտերքում՝ ջրիկուտեն (sium, F. Cresson), դաղձ, ջրափափուկ, ճոճուկ (Erua sativa):

Դաշտերում՝ շոմին (վայրի սպանախ-spinacea), տոմբալան (գետնախնձորի նման է և միայն խորոված կարելի է ուտել, Tuber), սամիթ (anethum):

Ինքնաբուս ուտելի կանաչեղեն. Ծմակներում լինում են՝ խազագ, կոմրզուկ, սմնդուկ, ծմակ-թափան, սոկոն (սունկ): Հանդերում՝ ձներեկ (asparagus), փիփերտ, խնջլոզ, շրիշ, կնձմնձուկ, տրտրպաշար, ուտումտիտեն (постушья сумка, capsella), սիպեղ, թարթանջուկ, պառավապորտ, եզնաճակատ, գինազոխ:

Վայրի ծաղիկներ. Ջրավարդ (մասուրի վարդ), ծմակավարդ, մանուշակ, ձնծաղիկ, նովրուզ, ինձաղա, նարկիզ, մշտհամուկ (անթառամ ծաղիկ), նունուֆար, հարսնածաղիկ (Papaver Rhoeas), շուշան, մեխակ, ձյունածաղիկ, զամբաղ, լվածաղիկ, խնձործաղիկ, կոռթնը (Lappa), արջաթանթուկ,

¹ Օգտվել ենք Մ. Բարխուդարյանի «Արցախ»-ից



տխտրկոռնը, շնավարունկ, սուտ եղինճ, կածուկ, բիլիբիստի, ագռավի սողան, նրկարար, ալակիզ, բյանկի, պլանուկ (Conieum Maculatum)¹:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Վարանդայի կենդանիներից նշանավոր են.

Վայրի կենդանիներ. արջ, գայլ, աղվես, չաղալ, գիշերի, առնետ, սկյուռ, մուկն, եղջերու, նապաստակ:

Թռչուններ. կաքավ, հավփալ, աղավնի (աղունակ), տատրակ, լորամարգի, չարթ, մոշահավ կամ մշահավ, օրի (տուլաշ), արտուտ, Ս. Հակոբի թռչուն, ճնճղուկ, չլածիտ:

Գիշատիչ թռչուններ. արծիվ, անգղ, բազե 4 տեսակ, լելակ, ցին, ուրուր, չորթնագող, բու, հողմահար, գայլագռավ, ագռավ, կաչաղակ, ներկարար, ծառակուտկուտ (կտցհար), ճանճագող, չղջիկ, ձկնկուկ, ճայ, դույ:

Երգեցիկ թռչուններ. կու, կուկու, հոպոպ, լծի, բաբաճըզտ, չլածիտ, դեղձանիկ, զոզոան, ջրըպզտպզտ, չափարծակի, շիլոշիլոյ, մշահավ:

Չվող թռչուններ. կռունկ, արագիլ, սասարք, սարյակ, ծիծեռնակ:

Սողուն և զեռուն. օձ, լոկ, քարաթոթոշ, կանաչ մողես, կրիա, խեցգետին, ոզնի, գորտ, կարիճ, իշախառանջ:

Միջատներ. շանաճանճ, բոռ, ճախարակ, մշակ, փնթիռն, ճպուռն, մարախ, սևաճանճ, մեծ ճանճ, կանաչ ճանճ, ձիաճանճ, պիծակ, լուսատտիկ, կետ, աստծու կով, աստծու եզն, գատիկ, ականջմտուկ, ոթես, մոշաթսի, ոսկեպղոջ, սարդ, թիթեռնիկ, աղոթարար (ունի կանաչ գույն և երկար ոտեր):

Ընտանի կենդանիներ. կով, եզ, գոմեշ, ոչխար, այծ, խոզ, էշ, ձի, ջորի, ուղտ:

Ընտանի թռչուններ. հավ, բադ, սագ, հնդկահավ, աղավնի:

ՀԱՆՔԵՐ

Վարանդայում դեռևս չեն սկսել հանքերը մշակել, մի քանի տեղ նկատելի են պղնձի հանքեր, բայց ոչ ոք չի ձեռնարկում մշակելու: Այսպես, Թաղավարդ գյուղի մոտ կա մի բլրակ, որից բխում է Կարմիր ջուր անունով մի վտակ, որ յուր մեջ պարունակելով հանքային բաղադրություններ, խմելու համար վնասակար է: Սա անցնում է մի խոր ձորով, որ կոչվում է Չուրաթանին կապ: Անցյալներում մի շուշեցի հայ ձեռնարկել էր այդտեղի պղնձահանքերը մշակելու, բայց շուտով կիսակատար էր թողել:

Հանքային ջրեր. բուն Վարանդայում նշանավոր հանքային ջրեր չկան: Տեղացիներն առավելապես օգտվում են «Թթու ջրից», որ գտնվում է Զանգեզուրում:

ՔԱՂԱՔՆԵՐ

Շուշի. նախկին բերդ, իսկ այժմ քաղաք Շուշին տարածվում է 39°35´ հյուսիսային լայնության և 65°25´ արևելյան երկարության տակ գտնվող մի լեռան գագաթին, որ ծովի մակերևույթից 4373-5026 ոտ. բարձրություն ունի: Այս լեռը հարավ-արևմուտքից արևելահյուսիս տարածվելով՝ հետզհետե ցածրանում է և ներքին մասում բավական հարթ տարածություն կազմում, մինչդեռ հարավարևմտյան կողմում գտնվում է լեռան սեռը: Լեռան հարավային կողմում տարածվում է մի

¹ Բուսաբանական անուններն ու անվանումները ստուգել և ճշգրտել ենք ըստ բուսաբանական բառարանների (Մ. Գ.)



անդնդախոր ձոր, որի միջով հոսում է Քարին տակի գետակը: Այս մասում լեռը սաստիկ ժայռոտ և ուղղահայաց է: Նմանապես և հյուսիսային կողմը մի խոր ձոր է, որի միջով հոսում է Ղայբալու գետակը: Քաղաքը Փանահ խանի ժամանակ գլխավորապես հյուսիս և արևելյան կողմերից պարսպած է եղել, որի երկու՝ Գանձակի և Երևանյան (արևմտյան) դռները դեռևս մնում են, ինչպես և Գանձակի դռան վերև դրված մի քանի թնդանոթները: Ամբողջ քաղաքը բռնում է մոտավորապես 3-4 քառակուսի վերստ տարածություն, որը կտրատվում է մի քանի մանր և երեք մեծ, հարավից հյուսիս տարածվող ձորակներով, որոնց միջով հոսում է անձրևի ջուրը՝ տանելով իր հետ քաղաքի անմաքրությունները:

Քաղաքը բաժանված է երկու գլխավոր մասի՝ հայոց և թուրքերի թաղ: Հայոց թաղը գտնվում է քաղաքի վերին մասում, թուրքերինը՝ ներքևում: Այս երկու թաղերը միմյանց հետ համեմատելիս պարզ նկատվում է, որ հայկականն ավելի կանոնավոր փողոցներ ունի և, որ գլխավորն է, անհամեմատ մաքուր է: Տների կողմից ևս հայկական թաղում գեղեցիկ, երկհարկանի տներ շատ կան, թուրքերի թաղում դրանց թիվը շատ քիչ է:

Ասացինք, թե հայոց թաղը մաքուր է, սակայն այս միայն համեմատական էր: Թաղի բարեկարգ մասում միայն կան փոքրիշատե լայն փողոցներ, մյուս մասերում փողոցներ անգամ չկան, այլ ծուռ ու մուռ նեղ կաճաններ են: Գլխավոր փողոցների վրա թեև կան մայթեր, սակայն միայն մի արշին լայնության, իսկ փողոցի մեջտեղն, անկանոն քարերով շարած լինելով, սաստիկ խորդուբորդ է, այնպես որ, անվարժ այցելուն շատ դժվարանում է քայլել: Եվ այս է պատճառը, որ քաղաքում կառքեր չեն ման գալիս, որովհետև անիվները շատ շուտով փշրվում են:

Բացի դրանից, այս փողոցները սաստիկ կեղտոտ էլ են: Խանութպանն առանց ճնշվելու փողոց է շարտում ձմերուկի, սեխի կեղևները և այլն: Ամառը մայթերի առաջ դարսած է լինում ձմերուկ և սեխ, անգործ մարդիկ հավաքվում են սրանց շուրջը և միմյանց հետ գրագ գալիս՝ ձմերուկը կարմիր է, թե սպիտակ, որքան է կշռում, կամ կտրված կտորի միջի կորիզները գույգ են, թե կենտ, սեխը համեղ է, թե անհամ, հետո կտրում և ահագին աղմուկով արտահայտելով իրենց հաղթանակը՝ հենց տեղն ու տեղը ուտում և կեղևները շաղ են տալիս փողոցի մեջտեղը: Պարզ է, որ այս հավաքված խմբերը կտրում են ճանապարհը, և անցորդը ստիպված է տասնյակ անգամ իջնել մայթից և փողոցի միջով գնալ: Պատահում էլ է, որ գյուղացիները կանգնեցնում են սայլը փողոցի մեջ և եզներին կամ գոմեշներին մայթի վրա խոտ տալիս: Դեպի փոստատուն տանող փողոցի վրա, ասենք, որ փողոցները գրված անուն չունեն, երեսները դեպի մայթը դարձրած և շատ անգամ մայթն ամբողջությամբ բռնած՝ կանգնած են ջորիներ, էշեր՝ իրենց գլուխն անց կացրած պարկերի դարմանը ծամելով: Հազվագյուտ երևույթ չէ փողոցներում սատկած կենդանիների, հոտած թուռշու, մքլած պանրի պատահել:

Մի կողմից կեղտոտությունը, մյուս կողմից սաստիկ ցեխը ստիպում են բնակիչներին տարվա մեծ մասը կրկնակոշիկ հագնելու:

Սրա վրա ավելացնենք և գիշերային մթությունը, որովհետև միայն գլխավոր փողոցներում են լապտերներ վառվում (ընդամենը 172) և այն էլ միմյանցից այնքան հեռու, որ շատ դժվար է առանց լապտերի ման գալ: Եվ այս է պատճառը, որ ծառաները, լապտերը բռնած, միշտ առաջնորդում են իրենց «տերերին» և շատ անգամ անքուն հորանջում կլուբի բակում՝ սպասելով, որ «աղաները» թղթախաղի սեղանից վեր կենան, որպեսզի առաջնորդեն դեպի տուն:

Փողոցային տեսարաններից նշանավոր է և այն, որ քաղաքի ետին մասերում կանայք մի կարպետ են ձգում փողոցի պատերի տակ, վրան նստում և գուլպա գործելով, իլիկ, ճախարակ մանելով՝ զրույց անում ու անցուդարձ անողներին մտիկ տալիս:



Գլխավոր փողոցների վրա կան լայն պատուհաններով և ահագին դռներով մի քանի մեծ տներ, որոնց պատուհանները երկաթե խիտ ցանցով են պատած, և դռները ամուր կողպեքներ ունեն: Ետին մասերում կան պարսպավոր տներ, սակայն սրանց պատուհաններն էլ պատած են ցանցերով: Տներ էլ կան, որոնց՝ փողոցի վրայի պատերի մեջ դիտմամբ պատուհաններ չեն թողած: Այս բոլորը պարսկական բռնությունների ժամանակ տիրող անապահովության ազդեցությունն է, թեև այժմ էլ այնքան ապահովություն չի տիրում:

Ուրախալի է, որ տների առաջ փոքրիկ պարտեզներ կան, պտղատու ծառերով, և երբ մի բարձր տեղից նայում ես, այդ պարտեզները շատ լավ տպավորություն են թողնում:

Հայկական թաղի գրեթե կենտրոնում գտնվում է «Թոփխանա» կոչված հրապարակը, որ մոտավորապես 250 քմ. տարածություն է բռնում: Սրա մեջտեղում՝ մի գեղեցիկ քյոսքի մեջ, վագում է մի աղբյուր, որի ջուրն այլևս չի խմվում. սրա մոտ մի կողմում գտնվում է հասարակական կշեռքը, մյուս կողմում՝ մրգավաճառների շարժական վրանները: Այս հրապարակը շուշեցիների տնտեսական և մտավոր կյանքի կենտրոնն է, այստեղ է ծախվում գլխավորապես մթերքների ամենամեծ մասը: Այստեղ խառնված են միմյանց մարդիկ, ջրով կամ փայտով բարձած էշերը, ածուխ բարձած ջորիներն ու ուղտերը, փայտակիր ձիերը և այլն:

Այս փոքրիկ տարածության մեջ մինը մյուսի կողքին շարված են ամեն տեսակ մթերքներ և ամառը՝ ահագին քանակությամբ մրգեր և պտուղներ: Մարդիկ անդադար, ձեռով ու ոտով անատուններին հրելով, ճանապարհ են բաց անում, անցուդարձ անում և այս ու այն բանը գնում: Պետք է ներկա լինեք սակարկության, որ տեսնեք, թե որքան երկար է տևում: Քանի անգամ գնորդը հեռանում և վերադառնում է, միջնորդներ է ուղարկում, ձեռք ձեռքի խփում, սուտ-սուտ խոստումներ տալիս, ամոթալի կերպով գովում և պախարակում ապրանքը:

Հրապարակի նեղլիկ մայթերի վրա կանգնած քաղաքի բուրժուաները խոսում են վաճառականության և ընթացիկ գործերի մասին: Մի փոքր ինչ տարիքավորները նստած են խանութների սանդուղքների վրա և առավելապես անցյալի մասին են զրույց անում: Պետք է ասել, որ Շուշում ռենտա ունեցող անգործ մարդկանց թիվը փոքր չէ, և սրանք ամբողջ օրը այդտեղ են անց կացնում: Ղարաբաղի բազմաթիվ մշակները (համբալ) վխտում են նրանց շուրջը՝ նրանց գնածները տուն տանելու: Մակայն շատ անգամ հարուստ բուրժուան խնայում է մի երկու կոպեկը մշակին տալու, հանում է գրպանից ահագին գունավոր թաշկինակը, առածը լցնում մեջը և ծանր քայլերով ուղևորվում դեպի տուն: Կիրակի և տոն օրերին այստեղ է լինում և արհեստավորների դասակարգը: Ինտիլիգենտ դասակարգն էլ, ուրիշ տեղ չունենալով, փոքրիկ պտույտից ետ այստեղ է գալիս և խումբ-խումբ կանգնած՝ զանազան հարցերի մասին զրուցում, վիճում, բայց այնպես բարձր, որ բավական հեռու կանգնողներն էլ կարող են ազատ կերպով լսել:

Մինչդեռ տղամարդիկ այստեղ են համախմբվում և միմյանց հետ տեսնվում, խոսում, կանայք էլ եկեղեցի են գնում, ուր ամբողջ ժամասացության ժամանակ միմյանց հետ խոսում են, աղջիկ են ընտրում իրենց որդիների համար, զանազան բամբասանքներ անում և այլն: Իսկ սրանց չափա-հաս որդիները զբոսնում են եկեղեցու բակում՝ եկեղեցի եկող օրիորդներին դիտելով և քննադատելով:

Շուշում կա չորս եկեղեցի և մի կուսանաց մենաստան: Բոլորից գեղեցիկն է Ղազանչեցվոց Ս. Փրկիչ մայր եկեղեցին: Մա նշանավոր է և ճարտարապետական տեսակետից. սրա երկարությունն է 35, լայնությունը՝ 23, իսկ բարձրությունը՝ մոտ 35 մետր: Շինված է բյուզանդական ոճով, հատակագիծը խաչաձև է: Չորս քառանկյունի, յուրաքանչյուր կողմը մի-մի հատ լայն մասնեքով (canonelle) սյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ, որոնց վրա բարձրանում է կաթուղի-



կեն: Ունի 10 պատուհան, յուրաքանչյուրը մի մետր լայնության և հինգ մետր երկարության: Դռների բարձրում գտնվող պատուհանները խաչաձև են: Դռները երեքն են, որոնց առաջ շինված են գեղեցիկ, բոլորաձև գավիթներ՝ երեքական դռներով: Միջին դռների վերևում կան մի-մի սրբի ռելիեֆ պատկեր: Եկեղեցին ներքուստ բավական փառահեղ է. խաչկալը բավական գեղեցիկ, չորս ահագին ջահ ավելի ևս փայլ են տալիս: Խորանների վրա կա նաև ուրիշ երկու խորան:

Զանգակատունը գտնվում է եկեղեցու արևմտյան կողմում, փոքր-ինչ հեռու. սա մի եռահարկ շինություն է, որի ստորին հարկի չորս անկյուններում կանգնեցրած են մի-մի հրեշտակապետի քարե արձան, որ չափից դուրս կոպիտ են շինված: Գեղեցիկ է միայն միակտուր քարից շինված շղթան:

Եկեղեցին սկսված է 1868 թ. և ավարտված՝ 1887-ին:

Մյուս երեք եկեղեցիներն ու կուսանաց մենաստանը ճարտարապետական տեսակետից առանձին նշանակություն չունեն:

Բացի եկեղեցիներից, մինչդեռ ուրիշ գավառական հայ քաղաքների, ինչպես Ախալքալաքի, Ախալցխայի, Աղեքսանդրապոլի կանայք համախմբվում են բաղնիսներում, միմյանց հետ տեսնվում, ժամերով խոսում, աղջիկ ընտրում, շուշեցիները զրկված են այսպիսի մի հասարակական և առողջապահական տեսակետից անհրաժեշտ տեղից, որովհետև ջուր չլինելու պատճառով բաղնիքներ չկան: Միմիայն մի թուրքի բաղնիք կա, որ սաստիկ անմաքուր լինելու պատճառով հայերը չեն հաճախում: Խեղճ մայրերը ստիպված են ամեն շաբաթ օր տանը ջուր տաքացնել, փոքրերին լողացնել, իսկ մեծերի միայն գլուխները լվանալ:

Սակայն շուշեցի բուրժուա և ինտելիգենտ կինն ունի որպես հավաքատեղի քաղաքային կլուբն ու զբոսավայրը, իսկ արհեստավորի կինը՝ Նահատակի գերեզմանը և մոտակա ուխտատեղիները:

Քաղաքային կլուբը գտնվում է «Թոփխանի» կողքին՝ մի եռահարկ գեղեցիկ շինության մեջ: Այստեղ թեև կա գրադարան և ընթերցարան, սակայն ավելի թղթախաղն է ընդունված, քան թե ընթերցանությունը: Չմեռը գրեթե ամեն շաբաթ երեկո պարահանդես է լինում, որի ընթացքում հայ կանայք և օրիորդներն աթոռների վրա մեխված մնում են, և միայն մի քանի ռուսներ թռչկոտում են: Սակայն երբեմն էլ մի քանի հայուհիներ հրաշալի կաքավում են տեղական պարերը՝ սագանդարների ներդաշնակությամբ:

Քաղաքային զբոսավայրը գտնվում է արևմտահարավային կողմում՝ բլրի լանջին: Այստեղ արահետները տերրասներով բարձրանում են և գեղեցիկ տեսարան պարզում ճեմողների առջև: Ծառեր շատ քիչ կան: Երկու հովանոց և մի ամենատգեղ բուֆետ կազմում են զբոսավայրի միակ զարդարանքը: Սակայն ամառը շաբաթը երկու անգամ նվազում է զինվորական երաժշտական խումբը առավելապես տեղական եղանակներ և գրավում բազմաթիվ ամառանոց եկողներին այդտեղ:

Զբոսավայրի այդպես անշուք լինելու պատճառն այն է, որ քաղաքը զուրկ է ջրից, կա միայն երկու աղբյուր քաղաքի մեջ, մյուսները դուրս են և այն էլ բավական հեռու, այնպես որ ջրի մի իշաբեռն արժե 10-20 կոպեկ: Լվացքի և այլ գործածության համար կան ջրհոսներ, բայց առավելապես գործ է ածվում անձրևի ջուրը, որ խողովակներով հավաքվում-լցվում է հատկապես այդ նպատակով շինված ջրի շտեմարանները և կամ ուղղակի թափվում մեծ տակառների մեջ: Առաջիկայում միայն շնորհիվ տեղացի մի հարստի՝ պ. Թամիրյան, շուշեցիները կունենան մաքուր ջուր, որ գալիս է 18 վերստ հեռավորությունից:



Հասարակ դասակարգի զբոսավայր Նահատակի ուխտատեղին գտնվում է Հին հանգստարանի ներքևում: Սա Իբրահիմ խանի ժամանակ նահատակված Անտոն անունով մի թիֆլիսեցու գերեզման է: Թուրքաց թաղը շատ կեղտոտ է. բավական է ասել, որ հայոց թաղի կեղտոտությունները կոյուղիներով հոսում են մինչև այս թաղը, իսկ այնտեղից անցնում են բացօթյա արխերի միջով՝ տարածելով սարսափելի գարշահոտություն: Թուրքերը միշտ հրաժարվել են կոյուղիներ շինել տալուց, չնայած որ այդ արխերն անցնում են նույնիսկ նրանց տների առջևից:

Այս թաղում նշանավոր են գլխավոր մզկիթը, որ բավական գեղեցիկ շինություն է, Մեհտի խանի բնակարանը, ուր այժմ ապրում է նրա աղջիկը, շահգադեի և ուրիշ մի քանի հարուստ մարդկանց բնակարանները:

Այստեղ գտնվում է և ռուսաց միակ եկեղեցին, որ ճարտարապետական տեսակետից ոչ մի արժեք չունի:

Շուշու բնակիչները գլխավորապես հայեր և շիա մահմեդական պարսիկներ են: Հայերը գաղթել են Արցախի Շոշ և ուրիշ գյուղերից, Ղազանչից, Ագուլիսից և Մեղրիից: Ընդամենը 18796 ար., 14456 իգ., 33252՝ երկու սեռից: Հայերի թիվն է 11637 ար., 8947 իգ., 20584՝ երկու սեռից, թուրքերինը՝ 7159 ար. և 5509 իգ.:

Վարչականորեն Շուշին գավառական քաղաք է և պատկանում է Գանձակի նահանգին, ունի քաղաքագլուխ, դուման և գավառապետ: Կա նաև հաշտարար դատարան, ոստիկանատուն և այլն:

Այստեղ է և Ղարաբաղի Հայոց կոնսիստորիան՝ իր առաջնորդներով, որ բացված է 1830թ. Բաղդասար մետրոպոլիտի օրով:

ՆՇԱՆԱՎՈՐ ԳՅՈՒՂԵՐԸ

Չանախչի կամ Ավետարանոց. Մելիքանիստ Չանախչի կամ Ավետարանոց գյուղը գտնվում է Շուշուց դեպի արևելահարավ՝ մոտ 17 վերստ հեռավորությամբ: Սա տարածվում է մի փոքրիկ հարթության վրա, որ կտրվում է հարավային և արևելյան կողմում Քիրսա գետի ձորակով, հյուսիսարևելյան կողմից՝ Հռիփսիմեի ձորով: Իսկ արևմտյան կողմում ընդհարվում է մի ժայռի, որ լեզվաձև տարածվում է մինչև Կուսանաց անապատը, որ գտնվում է Քիրսա գետակի անմիջապես ափին բարձրացող բլրակի վրա: Այս ժայռը, պարսպի հարավարևմտյան դռան մոտ ճեղքճեղքվելով, կազմում է մի մթին քարանձավ, որ «Քաջքատուն» է կոչվում:

Կուսանաց անապատի արևմտյան կողմից ձգվում է մի հաստ պարիսպ, որ շրջապատելիս է եղել ամբողջ գյուղը, այժմ կանգուն է միայն մի մասը և մի քանի աշտարակներ:

Գյուղի հարավային կողմում՝ անապատին մոտ, գտնվում է Մելիք Բաղու ապարանքը, որ բաղկացած է եղել մի քանի **դարադամներից**՝ ամբողջովին քարից շինված: Այս սենյակները դեռևս կանգուն են, և նրանց մեջ բնակվողներ կան, մինչդեռ նրանց վերևը իշխան Մադաթյանի շինած հարկը բոլորովին քանդված է:

Արևմտյան կողմում՝ ժայռի անմիջապես ափին, երբեմնի կանգնած է եղել Մելիք-Հյուսեին Ա-ի ապարանքը, որի առաջ բացվում է մի հիանալի տեսարան, և որն այժմ բոլորովին ավերակ է:

Իսկ հյուսիսային կողմում՝ պարսպին կից, գտնվում է Մելիք-Շահնազար Բ-ի ապարանքը կամ ամառանոցը՝ բաղկացած մի քանի **դարադամներից** և կամարակապ սենյակներից: Գլխավոր դռան վրա կա հետևյալ արձանագրությունը. «**Այս ամարաթս Մելիք Շահնազարի (Գ) որդի Մեյիսբեկին, որ է այս շինութիւնս, որ շինել տված շէնքն է թ. ՌՄԼԷ:**»:

Մելիք-Բաղու ապարանքի մոտ գտնվում է Մելիք-Բաղու ՌՃ թվին շինած Ս. Աստվածածնի եկեղեցին: Չորս անպաճույճ սյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ և ռոմանական



կամարակապ ձեռնոց, որի վրա բարձրանում է մի փոքրիկ կաթուղիկ: Եկեղեցին ունի մի ավագ և մի փոքրիկ խորան, երկու էլ խորհրդարան, որոնց վերև կա մի-մի գաղտնի սենյակ, ուր պահվում են եկեղեցու թանկագին իրերը: Եկեղեցում կա. 1) Կենաց փայտի մի մասը՝ մի արծաթյա խաչի մեջ. 2) Թաղեռու և Բարդուղիմեոս առաքյալների մասունքները և 3) Պանդալիան բժշկի մասունքը:

Գյուղից դեպի արևմտահարավ գտնվում է հին գերեզմանատունը, ուր կան բազմաթիվ, ուշադրության արժանի տապանաքարեր՝ ռելիեֆ պատկերներով ծածկված:

Ներկայումս Չանախչին ավելի մի գյուղաքաղաքի է նման: Բազմաթիվ, գեղեցիկ և եվրոպական ճաշակով կահավորված տները, բավական վայելուչ խանութները բոլորովին կերպարանափոխում են գյուղի տեսքը: Գյուղում կան նաև մետաքսի երեք գործարաններ, որոնք ահագին ազդեցություն են ունեցել և ունեն գյուղի տնտեսական և բարոյական վիճակի վրա: Մա և շուշեցիների սիրելի ամառանոցն է:

Այժմյան բնակիչների թիվն է 265 տուն, 973 ար., 849 իգ., ընդամենը՝ 1822 հոգի:

Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ և առևտրով:

Շուշու գյուղ. գտնվում է Շուշի քաղաքից դեպի արևելահարավ՝ հազիվ 4 վերստ հեռավորությամբ մի բարձրավանդակի լանջի վրա: Գյուղի հյուսիսային կողմում ձգվում է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի փոքրիկ վտակ, որ թափվում է Գարգարի մեջ: Գյուղը բավական ընդարձակ տեղ է բռնում և Շուշուց դեպի հյուսիս գտնվող գրեթե բոլոր գյուղերի միակ ճանապարհն է դեպի քաղաքը: Գյուղում կա մի՝ երկու կամարների վրա հաստատված եկեղեցի՝ ՌՃԴ (1655) թվին շինված: Բնակիչների շատ քիչ մասն է բնիկ, շատերին Մելիք-Բաղին է Սոթից բերել և բնակեցրել այստեղ, մի քանի գերդաստան էլ Ջրաբերդից են եկել: Պարապում են երկրագործությամբ. հողն արքունի է, սակավ և անջրդի: Գյուղում կա մի բավական մեծ և գեղեցիկ մետաքսի գործարան, որ գործ է տալիս գյուղի կանանց և աղջիկներին:

Քաղաքի ազդեցությունը զգալիորեն նկատվում է այս գյուղի վրա: Տների մեծ մասն արդեն դարադամի վիճակից փոխարկվել է կանոնավոր, երկհարկանի բնակարանների: Կան մի քանի խանութ և մինչև անգամ մի իջևան:

Գյուղի հանդեպ՝ դեպի հյուսիս, ձորակի մյուս ափի բարձրության վրա, կա մի խարխուլ եկեղեցի, որի արևմտյան լուսամուտի մեջ՝ մի խաչքարի վրա, կա հետևյալ արձանագրությունը. **«ԹՎ. ՋԷ (1458) ԵՍ ՂՈՅ ԱՍՐԿԱՎԱԳ ԳՅԱՐԵՑԻ (ԿԱՆԳՆԵՑԻ[՞]) ԽԱՅՍ ԱԳԻԳԱ ՄԱՐԻ ԻՄ»:** Եկեղեցու շուրջը մի ընդարձակ հանգստարան կա, որի գերեզմանաքարերը ծածկված են շատ հետաքրքիր ռելիեֆ պատկերներով:

Կյունի ճարտար. Կյունի (Արեգոեմ) ճարտարի երեք կողմից բոլորում են լեռներ և միայն հարավարևելյան կողմն է բաց: Հյուսիսային սարը կոչվում է Ղալին խութ, ուր երբեմնի կառուցված է եղել մի ամրոց: Արևմտյան կողմինը Ս. Եղիշա կուսի անապատի սարն է: Գյուղի տները սփռված են Ղալին խութի լեռների լանջերին, իսկ գոմերն ու կալերը գտնվում են դեպի արևելահարավ՝ գյուղից մի վերստ հեռավորությամբ: Գրեթե բոլոր տների առաջ կան թթենու ծառեր, այնպես որ համարյա ամբողջ գյուղը ծածկված է ծառերի մեջ և շատ գեղեցիկ տեսարան է ներկայացնում: Կանոնավոր փողոցներ չկան: Տների մեծ մասը երկու մասից է բաղկացած՝ հին դարադամից և նոր, եվրոպական ճաշակով շինված սենյակներից: Կան և բավական թվով երկհարկանի մաքուր տներ: Այժմ այլևս հին դարադամի ձևով տներ չեն շինում:

Բուն գյուղում կա մի հասարակ եկեղեցի, մինն էլ նոր շինում են կալերի մասում: Դպրոցական շենք չկա, թեև գոյություն ունեն ս. Գրիգորյան անունով մի ծխական միդասյան ուսումնարան:

Օղը շատ առողջարար է, ջուրը, որ հայթայթում են երեք աղբյուր, համեղ է և մաքուր:



Գյուղի շուրջը տարածվում են այգիներ, ուր բուսնում են թթենիներ, խաղողի որթեր, տանձենիներ և խնձորենիներ:

Բնակիչները գաղթել են Խաչենու, Չարդախլու և Ագուլիս գյուղերից, ընդամենը՝ 243 տուն, 1046 արական, 896 իգական, 1942 երկու սեռի: Պարապում են երկրագործությամբ (ամբողջ Վարանդայում սրանց ցորենը ամենից լավն է համարվում), այգեպանությամբ (քաշում են օղի և գինի) և անասնապահությամբ:

Սարուշեն. համանուն լեռան հարավարևմտահայաց լանջի վրա, առանց կանոնավոր փողոցների: Բակերում տնկված են ծառեր, որ բավական գեղեցկություն են տալիս գյուղին: Տների մեծ մասը դարադամ է, թեև կան և մի քանի գեղեցիկ երկհարկանի տներ: Կա և մի՝ Ամենափրկիչ անունով, մի կամարի վրա հաստատուն, թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ գեղեցիկ եկեղեցի, որ ամբողջ Վարանդայի առաջնակարգ եկեղեցին է: Եկեղեցում գտնվում է ՈԼԱ թվին գրված մի մագաղաթյա ավետարան, որին ուխտ են գալիս գրեթե բոլոր գյուղերից:

Կլիման ցուրտ է, որովհետև արևմտյան կողմից բարձրացող Քիրս գագաթից շարունակ ցուրտ քամի է փչում, մանավանդ ձմեռը: Ամառն էլ շատ հով է: Բնակիչները բնիկ են՝ 74 տուն, բոլորն էլ հայ լուսավորչականներ, 348 ար., 261 իգ.: Պարապում են երկրագործությամբ, հողն արքունի է: Բացի գյուղի շրջակայքի հողերը, ունեն նաև Ամարասի մոտ հողեր: Այգիներ չունեն, որովհետև ընդամենը միայն երկու աղբյուր ունեն:

Գյուղում կա մի հայոց եկեղեցական ծխական երկսեռ միդասյան դպրոց, որի շենքը կառուցել է Գ. Այվազյանը յուր ծախքով, և որ բավական գեղեցիկ և հարմարավոր է:

Վարազարուն. այս գյուղը տարածվում է Բողր-Խանի սարից սկիզբ առնող լեռնագոտու Դավրախութի արևելյան և Մատաղախութի հյուսիսային լանջերի վրա: Առաջը տարածվում է մի փոքրիկ դաշտակ: Գյուղում կա մի քարաշեն, բավական գեղեցիկ եկեղեցի և Ս. Գրիգորյան եկեղեցու ծխական միդասյան դպրոցի բավական հարմարավոր շենք: Բնակիչները Ղարաղաղից են. ծերունիներն ասում են, թե Քոչար անունով մի հայ Ղարաղաղի Բաղր խանին նրա՝ ժողովրդին պատճառած նեղությունների պատճառով սպանում և փախչում, վերահաստատվում է այս գյուղում, ուր միայն Իբրահիմ խանի միրզաներն էին բնակվում:

Բնակիչներն այժմ 170 տուն են՝ 506 ար., 425 իգ.:

Պարապում են գլխավորապես այգեգործությամբ, գինեգործությամբ, երկրագործությամբ (հողը բեկական է) և անասնապահությամբ:

Թուրքերը և ռուսները այս գյուղին Արանգամին անունն են տալիս:

Նոր Թաղլար. այս գյուղը Վարանդայի ամենաբազմամարդ գյուղն է և գտնվում է Շուշուց դեպի արևելահարավ՝ Ղուռուչայ գետի ափին բարձրացող լեռնաշղթայի հարավահայաց լանջին: Ասել ենք, որ այս լեռնաշղթան տարածվում է մինչև Քիրս գագաթը: Գյուղը թեև զուրկ է կանոնավոր փողոցներից, սակայն տները բավական գեղեցիկ են, և դարադամների թիվն անհամեմատ փոքր: Կա նաև մի եկեղեցի՝ չորս քահանաներով: Սուրբ Սահակյան միդասյան եկեղեցական ծխական դպրոցը, որ ունի մի գեղեցիկ, գյուղացիների ծախքով շինված շենք, այժմ փակ է:

Կլիման ցուրտ է: Շատ անգամ մշուշը պատում է ամբողջ շրջակայքը և զրկում անցորդին գեղեցիկ շրջակայքը դիտելու բավականությունից:

Բնակիչները բոլորն էլ լուսավորչական հայեր են՝ 530 ծուխ, 1781 արական, 1459 իգական, տեղափոխված Հին Թաղլարից: Պարապում են գլխավորապես երկրագործությամբ, և որովհետև հողը մեծ մասով ավագոտ, շատ քիչ և պակաս արդյունաբեր է, ուստի և պարապում են նաև



ածխագործությամբ: Եվ պետք է ասել, որ շուշեցիների գործածած ածխի ամենամեծ մասը թաղ-լարցիներն են հայթայթում: Ամառը պարապում են և թթենիների մշակությամբ, և օղեհանությամբ:

Բեռնակիր կենդանիներից թաղլարցիները գլխավորապես ջորիներ են պահում՝ երկիրը լեռնոտ լինելու պատճառով: Զիեր շատ քիչ կան: Թաղլարի շուրջը կան նախկին գյուղերի ավերակներ, այսպես՝ արևելահայուսիս բարձրանում է Մար-Խաթունի (Մայր-Խաթուն) սարը (4199 ոտ. բարձ.), որի վրա գտնվում են համանուն գյուղի ավերակները: Այստեղ կա մի փոքրիկ մատուռ՝ ՌԺԲ թվին շինված, և մի հանգստարան:

Թաղլարի հարավային կողմում՝ Ղուռուչայի ձախ ափին, գտնվում է Իշխնեցեք, այսինքն՝ իշխանի գյուղատեղին, իսկ դեպի արևմուտք՝ Հանգած եղցե (եկեղեցի) անունով մի եկեղեցի, հանգստարան և գյուղատեղի:

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐԸ

Ամարաս. Ամարասը գտնվում է Շուշուց դեպի արևելահարավ 45 վերստ հեռավորությամբ՝ Մուղանի դաշտի մեջ, որ գալով ընդհարվում է Լուսավորչի և Խազազի սարերին և կազմում մի գեղեցիկ հովիտ, որի միջով հոսում է Ամարասու վտակը՝ սկիզբ առնելով շրջակա գյուղերի աղբյուրներից:

Վանքը գետեղված է մի 94 մետր երկարության և 56 մետր 50 սանտիմ լայնության և 5 մետր բարձրության պարսպի մեջ, որի չորս անկյուններում բարձրանում են մի-մի բուրգ, իսկ պարսպի մեջ կան հրացան արձակելու տեղեր:

Վանքը 23 մետր երկարություն, 12 մետր 50 սանտիմ լայնություն և 6 մետր բարձրություն ունի: Վերաշինված է վերջին անգամ 1858թ. սրբատաշ մաքուր քարից:

Չորս քառանկյունի անպատվանդան սյուների վրա բոլորում է ռոմանական կամարակապ ձեղունը: Արևմտյան կողմի առաջին կամարների միջև բացվում է մի մետր տրամագծով մի կլոր անցք, որի վրա շինված է մի փոքրիկ կաթուղիկե, որ ծառայում է որպես զանգակատուն: Ունի միայն մի դուռ ռոմանական կամարով արևմտյան պատի մեջ, որի բարձրում՝ նույնպես ռոմանական մի պատուհան: Հյուսիսային և հարավային պատերի մեջ ևս բացվում են մեծ և լայն նույն ձևի երեքական պատուհաններ, ինչպես եւ մինն՝ արևելյան պատում: Ունի միայն մի ավագ խորան և երկու խորհրդարան: Սեղանի առաջ կախված է մի գեղեցիկ ջահ:

Ասյանի հյուսիսային կողմից 18 ոտ. սանդուղով իջնում են մի ստորերկրյա 3 մետր 75 սանտիմետր երկարության, մի մետր 90 սմ լայնության և 3 1/2 մետր բարձրության մի փոքրիկ վիրապ, ուր ամփոփված են Ս. Գրիգորիս Աղվանից կաթողիկոսի նշխարները: Այս մատուռը բացի այժմյան դռներից ունեցել է և մի ուրիշ դուռ արևելյան կողմից, որ այժմ փակված է:

Վանքի մեջ, հյուսիսային դասի մոտ, պատին կից գտնվում է մի բավական գեղեցիկ գերեզմանաքար, որ ընկնում է մատուռի մեջ ամփոփված Ս. Գրիգորիսի նշխարների վրա: Գերեզմանաքարը մի պատվանդանի վրա դրված դազադաձև միաձույլ քար է, որի եզրերը գեղեցիկ, շղթայակապ նախշերով եզրափակված են: Քարի երեսին քանդակված է կաթողիկոսական թագ, գավազան և խաչ, իսկ ներքևում կա հետևյալ տապանագիրը:

«Տամբարան սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի թոռին սրբին Գրիգորի Լուսավորչի Պարթեի»:



Տապանաքարի երկու կողքին՝ «Մնեալ յամի ՉԻԲ (322). օծեալ ՅԻՄ (340) եւ նահատակեալ ՅԻՐ (348) ի Սանեսան թագաւորէն Մասգթաց ՚ի Դրբենդ. բերեալ յԱմարաս սուրբ նշխարս ի ձեռն ձեռնասուն սարկաւագաց նորին Արցախունի:

Արձանաքարս սրբոյն Գրիգորիսի աշխատութեամբ ճարտարապետ Միքայէլ Տեր Իսրայէլեանց Շուշեցոց ի յիշատակ կենդանեաց եւ ննջելոց իւրոց: ՚ի 1889 ամի 1 նոյեմբերի»:

Գերեզմանաքարի կողքից մի փոքրիկ անցք է բացված, որտեղից աղոթողները հող են վերցնում և ուտում կամ խառնում ջրի հետ, խմում:

Վանքի խորհրդարանում դրված է Ս. Գրիգորիսի մասունքը՝ արծաթե ձեռքի մեջ ամփոփված: Ժողովուրդը մատանիներ է անց կացրել մատները և մի սաթից պատրաստված ապարանջան դրել թևը:

Պարսպին կից գտնվում են 24 կամարակապ, բավական բարձր սենյակներ, որոնք կարող են մասնավոր վերանորոգության: Այժմ հարավային կողմում գտնվող երկրորդ հարկի երեք սենյակը վերանորոգում են վանահոր բնակության համար: Կան նաև երկու ընդարձակ գոմ և երկու սենյակ ձիապանների համար:

Վանքի կալվածներն են.

1) Վարելահող՝ մոտ 300 դես.: 2) Այգետեղի՝ մոտ 340 դես.: 3) Մի ջրաղաց: 4) 10 կով, մի ձի և մի ավանակ: Տարեկան եկամուտը հասնում է 700 ռ.:

Վանքն այժմ պահպանում է մի վարդապետ:

Հիրհեր. գտնվում է Ամարասից դեպի հարավ՝ համանուն լեռնագոտու հյուսիսային լանջի վրա:

Այս գյուղում նշանավոր է Ս. Գրիգորիսի հոյակապ, սրբատաշ քարերով շինված եկեղեցին, որի երկարությունն է 19, լայնությունը՝ 14, իսկ բարձրությունը՝ մոտ 8 մետր: Չորս սյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ և ռոմանական ձեղուն: Եկեղեցու ժողովրդյան կանգնած տեղից բարձրանում է մի փոքրիկ գմբեթ: Եկեղեցու մեջ կա մի սեղան և երկու խորան:

Եկեղեցու պատերի վրա կան հետևյալ արձանագրությունները:

Սեղանի ժողովրդահայաց երեսին.

«Կաման Աստուծոյ եւ Պետրոս Կաթողիկոս Աղուանից սուրբ աթոռոյ Գանձասարայ՝ նորոգեալ սուրբ աթոռս Ամարասայ արհի եպիսկոպոսութեան բոլոր նահանգի Վարանդու եւ Քոչիզու, քանգի փռեկտեալ եւ պատառեալ էին զվիճակ սորին արարեալ ըստ իւրաքանչիւր կամաց. իսկ մեք զցանկ հայրենի նորոգեալ ժողովեցաք, նորոգեցաք զսիրելի աշակերտս մեր զտէր Բարսեղ արհի եպիսկոպոսն, որ եւ հրամայեցաք սմա շինել զեկեղեցի իմ Հովարան Ամարասայ, զոր եւ շինեալ կատարեաց ըստ մերում հրամանի յաւուր տաւնի այլակերպութեանն Քրիստոսի. եւ աւրինեցաք զսուրբ տաճարս անուանելով զսա սուրբ Գրիգորիս՝ բերելով ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք երկիրս Վարանդու եւ Քոչիզու, զի եղիցի այս երկու աթոռս մի: Ով ոք զայս վիճակս բաժանել եւ զոք նստեցուցանել այլ տեղի, եթէ կաթողիկոս իցէ կամ եպիսկոպոս Տէր զայնալիսին՝ նզովեալ եղիցի ՅԾԸ հայրապետացն, ընդ խաչահանուացն դասեսցի. Յուդայի մասնակից եղիցի: Այս կտակ եւ արձանագիր յաւիտեան մնայ հաստատ»:

Հարավային դռան վրա.

«Շնորհօքն Քրիստոսի եւ Բարսեղ եպիսկոպոս աշակերտ Պետրոս Կաթողիկոսին են ծնողան իմ Աղայն եւ Գիւլագայն ՚ի գաւառէն Վարանդու, ի գեղջէ Գիլան՝ նորոգեալ պայծառացուցի զսուրբ աթոռս Ամարասայ, պարսպօք շրջապատեցաք հանդերձ յոգնաթիւ սենեկօք, զեկեղեցիս շքեղացուցաք զարդուք, սուաք շինել զեկեղեցիս անուամբ Սրբոյն Գրիգորիսի Հովարան սուրբ



աթոռոյն Ամարասայ, որ եւ մասն բերեալ 'ի նմանէ ամփոփեցաք աստ, իսկ հիմնարկեցաւ ՌՃԺԶ թվին, կատարեցաւ ՌՃԻԵ-ին»:

Հարավային խորանի դռան վրա.

«Մեք Հիրհերայ ճամիաթս տանուտէր Ղասումս, մեծ եւ փոքր ճանապարհի գլխի տափին սկիզբն վախմ էր սուրբ Աստուածածնին. մեք եւս վախմ արարաք Սուրբ Գրիգորիսին. ով քակէ, նզովեալ եղիցի յԱստուծոյ»:

Աջ խորանի մեջ կան երկու գերեզմանաքարեր, որոնցից մեծի վրա կա հետևյալ տապանագիրը.

«Այս է տապան Հայրապետի, սրբազան մեծ վեհապետին
Տեառն Իսրայէլ Դիտապետի, տանս Աղուանից հովուապետի.

Աջորդ սրբոյն Եղիշէի, աթոռակալ Գրիգորիսի.

Ժառանգ մեծին Սիմէոնի, և թոռն պետին Ներսիսի,

Զի էր որդի մեծասեռի, իշխանազնեայ այն Ապրէսի,

ՌՄՕԷ Հայոց թուի, յուլիսի երեքն վախճանի.

Յիշման անցէ սա արժանի, ով որ կարդալ հանդիպեսցի»:

Արևմտյան դռան վրա.

«Ես Պետրոս կաթուղիկոս՝ աշակերտ Ղուկաս վարդապետին ետու շինել կաթուղիկէս յիշատակ ինձ եւ աշակերտին իմոյ Բարսեղ եպիսկոպոսին. յիշեցէք ի Քրիստոս:

Աստուած արհնէ Քոչիգու ժողովուրդն այն արհնութեամբն, որ ոչ անցանէ. ձեռնտու եղեն կրին եւ քարին:

Զարութեամբն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս 'ի դառն եւ 'ի նեղ ժամանակիս, վասն ծովացեալ մեղաց մերոց եկն մարախ եկեր գերկիրս Աղուանից եւ անբեաց բազում տեղիս 'ի թագաւորութեան Շահ Սուլէմանին, պարոնութեան Միրզա Ղուլի բէկին եւ իշխանութեան երկրիս Վարանդու Մելիք Բաղու որդի Մելիք Շահնազարին եւ օժանդակութեան Ովանիսին եւ քահանայից եւ տանուտեարց, մեծամեծաց եւ փոքունց ամէն. թվին ՌՃԻԲ»:

Կուսանաց անապատ. «Կուսանաց անապատ» կոչված վանքը գտնվում է Չանախչի գյուղի հարավարևմտյան կողմում՝ մի փոքրիկ քրծի վրա, որի եզրերը լիզում է Քիրսա գետակը, և առջևում բարձրանում Քիրսի, Ղոնդիկի և Մավասի սարերը, այնպես որ անապատը յուր կուսերին միշտ նվիրել է մի գեղեցիկ տեսարան: Անապատի արևմտյան կողմից ձգվում է նախկին պարիսպը, որ գնում միանում է «Քաջքատուն» կոչված ժայռին:

Դռան ճակատակալ քարի վրայի արձանագրությունը՝ «Եկեղեցիս թվ ՌԿԵ», պարզում է եկեղեցու հիմնարկության ժամանակը: Իսկ Սարգիս եպիսկոպոս Զալալյանի՝ այս գյուղում տեսած մի գեղեցկագիր ավետարանի հիշատակարանը¹ հաստատում է, որ վանքը շինել են Գայանե և Հռիփսիմե քույրերը՝ Տեր Առաքելի աջակցությամբ: Այս ավետարանը եւ չգտա գյուղում, ո՞վ գիտե՝ ինչպես է անհետացել:

Բայց ավանդությունն այս վանքի հիմնարկությունը Աղվանից թագավոր Վաչագան Գ-ին է վերագրում, իբր թե սա քրիստոնեությունն ուրանալուց հետո զղջացել, առանձնացել է այստեղ և յուր կյանքի մնացած օրերը ավետարան կարդալով է անցկացրել, որի համար և գյուղը Ավետարանոց է կոչվել:

¹ Հասան-Զալալյան Ս., *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*, մասն Բ, Տիֆլիս, 1858, էր. 246-247



Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, թե Աղա-Մամադ շահի 1797թ. արշավանքի ժամանակ զինվորները մտնում են այս վանքն ավերելու: Բոլոր կույսերը փախչում են անտառը և թաք կենում, բացի մինից, որ մի փոքր ուշանում է՝ յուր կիսատ աղոթքը վերջացնելու:

Երբ նա դուրս է գալիս, նրա գլխին շողում է զինվորի սուրը, սակայն նա խույս է տալիս և Աստվածամոր օգնությունը հայցելով՝ քարափից ցած ընկնում և աներևույթ ուժի գործությամբ անվտանգ հասնում գետնին և թաք կենում անտառում: Այս արշավանքի ժամանակ շատ թանկագին իրեղենների հետ կենաց փայտի մի մասն ամփոփող մի արծաթապատ խաչ ևս գերի է տարվում, որ հետո, ավանդության ասելով, աղավնի դարձած՝ վերադառնում է վանքը ու նորից նախկին խաչի ձևն ստանում:

Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, թե ամեն տարի գատկին մի այծյամ աստծու հրամանով գալիս էր այստեղ և մեկնում յուր վիզը՝ գոհվելու, սակայն հետո մարդկանց մեղքի պատճառով աստված դադարեցրեց այդ գոհը:

Կուսանաց անապատը շինված է տեղական տաշած քարից: Հատակագիծը խաչաձև է՝ 12 արշին երկարության, 8 արշին լայնության և 7 արշին բարձրության: Երկու բոլորովին հասարակ սյունների վրա բոլորում են աղեղնաձև կամարներ և կամարակապ ձեղուն, որ արտաքուստ եռանկյունաձև է: Արևմտյան կողմում բացվում է մի փոքրիկ դուռ և վերևում՝ երկու պատուհան: Հարավային պատի մեջ ևս կա երկու, իսկ արևելյանի մեջ փոքրիկ պատուհան: Ունի մի սեղան, երկու խորան և մի ավազան: Անապատի արևմտյան կողմում կա մի աղեղնաձև կամարակապ ձեղունով անսյուն գավիթ՝ 6 մետր երկարության, 9 մետր լայնության, յուրաքանչյուր պատին մի փոքրիկ պատուհանով: Սա եղած է Մելիք-Շահնազարյանների իշխանական ցեղի դամբարանը: Այստեղ գտնվում են Մանուել վարդապետի, Մելիք-Միրզայի, Մելիք-Հյուսեինի, Մելիք-Հովսեփի, սրանց կանանց և մայրապետի գերեզմանները:

Անապատի շուրջը ամուր պարսպով պատած է եղել, որի միայն հետքերը կան, իսկ պարսպի ներսը եղել են շատ խցեր՝ կույսերի բնակության համար:

Այժմ վանքը բոլորովին անխնամ է թողնված:

Թե՛ կուսանաց անապատում և թե՛ դուրսը գտնված մելիքների գերեզմանների տապա- նագրերից նշանավոր են հետևյալները.

«Այս է տապան Մելիք Շահնազարին (Գ)

Որ է որդի Մելիք Յիսակինին,

Արցախ գաւառաց իշխանին,

Վարանդու տիրապետողին .

Սա էր հայր Մելիք Ջիււմշիւտին.

Ըստ ռուսաց պլկովնիկին,

Ազնիւ ոմն Հայոց ազգին

Արի եւ քաջ զօրավարին

Խնդրեմ առնել զայս արժանին

Միոյ բերան Հայր մեղային,

ՌՄԽ. Թվին (1792)

Այս է տապան Մելիք Ջիււմշիւտին

. . . . Սա էր

Թոռն մեծասեռին



Ազնիւ Մէլիք Յիսէյիսին (Բ)
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան հայր մեղային.
ԹՎ. ՌՄԿԱ. ապրիլի ԻԵ (1812)

Այս է տապան Մէլիք Ջհանբաշիին
Իշխող Վարանդայ գաւառին.
Ազնիւ որդոյ Մէլիք Շահնազարին
Վախճանեցաւ 1822.

Մէլիք Խուդաթ իշխող Վարանդայ
Թոռն ըստ մարմնոյ Մէլիք Ջիւմշիւտայ,
Այս նորա տապան յորում մարմնով կայ,
Կենդանի հոգւով միշտ եւ յարակայ,
Ամաց քառասունից ել սա յաշխարհէ
Զերծ արդ գտանի յամենայն չարէ.
Զայս վեմ ետ շինել առն իւրում 'ի ձօն,
Ի պատիւ սորա կին սորին զգօն,
ԹՎ. ՌՄՁԲ . էր (1833)»:

Ղևոնդյանց անապատ կամ Ղոնդիկ. սա մի փոքրիկ, անտաշ քարերով, առանց կամարի մի մատուռ է Ղևոնդյանց անունով՝ շինված այն բարձր սարի գագաթին, որ միայնակ բարձրանում է Ավետարանոց, Սարգսաշեն, Վերին Թաղավարդ և Մոշիսմատ գյուղերի կենտրոնում: Մատուռին կից է մի գավիթ: Անապատի դռան հյուսիսային շեմի վրա գրված է՝ «**ՌԷՃ.**, իսկ գավթի դռան վերև՝ **ՌՄԻԷ-ին հիշատակ է գալիթս Զաքարիա Յովսէփ և Մելքոն վարդապետացն»:**

Ծերունիներն ասել են գեր. Սարգիս եպ. Ջալալյանին, թե Ս. Ղևոնդ երիցի ազգականները, Վարանդայում պտտելով, նրա նշխարներից գտել են և բերել ամփոփել այդտեղ և կառուցել եկեղեցի: Եկեղեցում կա Ս. Ղևոնդի պատկերը, որ գեղարվեստական ոչ մի արժեք չունի:

Այս անապատում կան հետևյալ մասունքները.

- 1) Մասն Թաղեռսի առաքելոյն՝ մի արծաթափայլ փոքրիկ խաչում:
- 2) և 3) Մասն Հովհանու Մկրտչի՝ զետեղված մի արծաթյա փոքր և մի մեծ խաչում:
- 4) Ղևոնդյանց մասունք՝ մի արծաթի միջակ խաչում:

Անապատի շուրջը պարիսպ է քաշված, որի ներսում կան մի քանի հին սենյակներ, ուր այժմ կիսավեր են: Այժմ եղբայր Ժամհարյանները մի երկհարկանի գեղեցիկ բնակարան են շինում ուխտավորների համար:

Պարսպի մեջ կան բավական թվով գերեզմաններ:

Անապատում բնակվում է, իբրև պահապան, մի քահանա՝ յուր ընտանիքով:

Եղիշա կուսի անապատ. գտնվում է Շուշուց դեպի արևելք՝ Մոս գյուղի, Լուսավորչի սարի, Քերթ և Ղուզի ճարտար գյուղերի միջև բարձրացող բավական բարձր սարի վրա, ուր կան նաև թեղի և թխկի ծառեր:

Մենաստանը 16 մետր երկարություն, 9 մետր 75 սանտիմետր լայնություն և 5 մետր բարձրություն ունի: Երկու հասարակ սյունի վրա բոլորում են ռոմանական կամարներ և կամարակապ ձեղուն, որի մեջտեղից բարձրանում է մի փոքրիկ կաթուղիկե, որ ծառայելիս է եղել իբրև զանգակատուն: Մենաստանը շինված է անտաշ որձաքարով: Մենաստանի մեջ կա մի ավագ



սեղան, երկու խորհրդարան, ավագան, չորս լուսամուտ և մի դուռ արևմտյան կողմից: Ավագ խորանի տակ անփոփոխ էն Ս. Եղիշե կուսի նշխարները, և բեմի մեջ կա մի փոքրիկ խորանաձև բացվածք, որի մեջ կա մի փոքրիկ, բայց շատ խորը անցք, որ հավանականորեն հասնում է մինչև կուսի գերեզմանը: Հիվանդները աղոթելուց և մոմեր վառելուց հետո մի անմեղ երեխայի ձեռքը փաթաթում են շորերով և այդ խորանի մեջ են երկարացնել տալիս: Ասում են, թե մի քանի բույսերից հետո հիվանդի ցաված տեղին համապատասխանող մի ոսկոր թռչում կանգնում է երեխայի թևին: Անմիջապես վերցնում են այդ ոսկորը, ձգում ջրի մեջ և այդ ջրով լվանում հիվանդի ցավող մասը, որ իսկույն նեթ լավանում է:

Բեմի վրա կա մի քարե խաչկալ, որի հարավային դռան երկու սյունի վրա գրված է.

«Յիշատակ է Համասուտանց Միրզախանի որդի Մանուէլ վարդապետիս այս խաչկալս. եղբարքն իմ Պապան և Վանլալան, քորար իմ Գուլասմար, ենթաղիհ, ծնողքն իմ Մխանդիմ, կողակից իմ Նազլու, որդի իմ Հախնազար, Շահպատ, Միրուն, Վռամին, Մագրվանին և տատերն իմ Բաջուն, Դոստաշին թվ. ՌՃԴ»:

Դռան ճակատի քարի վրա՝ **«Կարողութեամբն ամենագորին Աստուծոյ ես նուսստ տեր Յոհան անձամբ տկար արեղայս և որդեգիր Փոքր տեր Յովանս շինեցաք սբ. զեկեղեցիս ըստ անուան Սրբուհոյ կուսին Եղիշէի՝ ի կաթողիկոսութեան տեառն Երեմիայի և տանս Աղուանից որ ի մայր աթոռոյն Գանձասարայ վասնորոյ յիշել աղաչեմք հանդերձ ծնողովք մերովք ՌՃԴԴ»:**

Արևմտյան պատի մեջ կան խաչքարեր, որոնցից լուսամուտից վերև գտնվողի վրա գրված է.

«Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ես անարժան ուստայ Կարբելս շինեցի այս եկեղեցիս ի ձեռամբ իմով, ով կարդա մեկ բերան ողորմի ասե. Խաչս յիշատակ է Գարբելիս և ծնողաց իմոց և դստերաց և որդոց իմոց»:

Բռի եղցե (եկեղեցի). Հացի գյուղից դեպի արևելք՝ փոքր-ինչ հեռու մի սարի լանջին, գտնվում են բազմաթիվ գերեզմաններ, երկու միմյանց մոտ գտնվող եկեղեցի, երկու մատուռ և երեք բեմ: Ժողովուրդն այս բոլորին Բռի եղցե անունն է տալիս:

Առաջին եկեղեցին գտնվում է լեռան գագաթին, մի հարթության վրա և ունի 7 մետր երկարություն, 7,5 մետր լայնություն և 8 մետր բարձրություն: Շինված է սպիտակ անտաշ քարով: Սյուներ չունի և կամարակապ է, առանց գմբեթի, ունի մի նեղ ավագ սեղան և երկու խորհրդարան, որոնց դռները գեղեցիկ նախշերով և խաչերով եզրափակված են: Ձախ խորանը կիսով չափ քանդված է: Սեղանի առաջ դրված է մի քար, որի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«ԹՎին ԶԺԹ: ի տերութեան Տր Ստեփանոսի յե... սիսի (եպիսկոպոսութեան Ներսիսի) ես Մխիթար որդի Խ... կանգնեցի զխաչս»:

Եկեղեցու մեջ կան բավական թվով գերեզմաններ, որոնցից մինն ունի հետևյալ տապանագիրը.

«Այս է տապան Տր Յոհանիսին որդի Տր Կարապետին. թվ. ՌՄԽԷ»:

Բ եկեղեցին առաջինի արևմտյան կողմում է՝ երեք մետր հեռավորությամբ. երկարությունն է 6 մետր 50 սանտիմետր, լայնությունը՝ 4 մետր 18 սանտիմետր և բարձրությունը՝ 7 մետր:

Արևմտյան պատը գրեթե ամբողջովին ծածկված է խաչերով, միակ դռան շուրջը կան գեղեցիկ քանդակներ և կողքերին մի-մի ռելիեֆ սիրամարգ, որոնց ձախի կողքում փորագրված է.

«Զխաչենիկ վարդապետ սուրբ եկեղեցոյս յաղաթս յիշեցեք ՚ի Քրիստոս»:

Բ մատուռը գտնվում է լանջի ստորոտում՝ արևմտյան պատի արտաքին երեսը խաչերով ծածկված: Արդեն կիսավեր է: Դռան հյուսիսային սեմի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«Զ. Շահեն վարդապետ եկեղեցոյս յիշեցեք ի Տէր»:

Դռան վերևում.



..... քահանայ եւ եղբայր իմ Վահրամ եւ վարհայք ...ունափա շինեցաք զեկեղեցիս բազում աշխատանաւք եպիսկոպոսութեան Տէր Յովանիսին եւ տէր Ներսիսի յիշատակ հոգոց ազգաց եւ ծնողաց մերոց, որք կարդայք յաղաթս յիշեցէք աշխատողք եկեղեցոյս:

Ա բեմը գտնվում է Բ մատուռից փոքր-ինչ վերև: Բարձրությունն է 3 մետր 60 սանտիմետր, լայնությունն է 3 մետր 25 սանտիմետր, հաստությունը՝ 1 մետր 83 սանտիմետր: Սրա արևմտյան երեսին զետեղված են խաչարձաններ՝ եզրափակված գեղեցիկ նախշերով:

Բ բեմը առաջինի հարավային կողմումն է, իսկ Գ բեմը՝ փոքր-ինչ ավելի հեռու երկրորդից:

Այս բեմերի վրա կան արձանագրություններ, բայց որովհետև բավական եղծված են, ամփոփ միտք չի դուրս գալիս: Միայն հայտնի է լինում, որ առաջինը շինված է ՆԱ, երկրորդը՝ ՉԺ թվին:

Կարմիր եկեղեցի. Ծովատեղ գյուղի մոտ՝ մի բլրակի վրա, գտնվում է Կարմիր եկեղեցին, որ Մելիք-Փաշայանների դամբարանն է եղած: Սա բաղկացած է մի փոքրիկ, անսյուն կամարակապ եկեղեցուց և երեք ստորերկրյա մատուռներից, որոնք միմյանց հետ հաղորդակցվում են փոքրիկ դռներով: Մատուռների, ինչպես և եկեղեցու մեջ կան գերեզմաններ, որոնց տապանաքարերը ահագին միապաղաղ քառանկյունի սև քարեր են, առանց մի որևիցե գրության կամ քանդակի, որոնց ներքին կողմում կանգնեցրած են միննույն լայնության և մի սաժեն բարձրության խաչարձաններ, հրաշալի նախշերով եզրափակված: Խաչերի ներքև կան տապանագրեր:

Ա մատուռի ճակատակալ քարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«ԹՎ. ՌՀ. Դաւիթ եպիսկոպոս՝ յիշատակ է եկեղեցի վանքս որ լինի սա դամբարան եւ շիրիմ մերոց նախնեաց»:

Ա մատուռի խորանի հարավային խաչի վրա.

«ԹՎ. ՌԼԵ. ՚ի հայրապետութեան Դաւիթ, առաջնորդի Մելիք Փաշիկ, Պետրոս եպիսկոպոս»:

Բեմի խաչի վրա.

«Դաւիթ արեղայ կանգնեցի զխաչս Առան վարդապետի Տարսունեց... եւ զիս իշա (հիշեա)»:

Խորանի հյուսիսային կողմի խաչքարի վրա.

«ԹՎ. ՌԻԵ. ի հայրապետութիւն Տէր Յովանիսի. առաջնորդութիւն Մելիք Փաշին. յանուն Աստուծոյ եւ Սահակ եպիսկոպոս կանգնեցի զխաչս ՚ի փրկութիւն եղբար իմոյ Ղազարին, աղաթս յիշեցէք»:

Բ. մատուռի մի մեծ խաչի վրա.

«Այս է Սահակ եպիսկոպոսն, որ փոխեցաւ. . .»

Մյուս կողմի վրա.

«Անուամբն Աստուծոյ եւ Պետրոս եպիսկոպոս, Դաւիթ խան այանս կանգնեցինք զխաչս ՚ի փրկութիւն Սահակ եպիսկոպոսին, աղաթեցէք»:

Դ. մատրան մեջ մի խաչքարի վրա.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ, եւ Մելիք Աւան կանգնեցի զխաչս ՚ի փրկութիւն հօր իմոյ Մելիք Պապին եւ մաւր իմոյ Խոնդի խաթունին, ով որ յիշեցէք ՚ի Տէր, յիշեսցիք առ Աստուած. թվ. ՌԺԵ. ին»:

Մի ուրիշ խաչի վրա.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ եւ Մելիք Աղամ որդի Մելիք Պապին որդոյ Նախիջանայ թոռանն որդոյն Թոմասին որդոյ մեծի իշխանի Աւանայ կանգնեցաք զխաչս ՚ի փրկութիւն նախնեաց մերոց, ով որ երկրպագէք, յիշեցէք ՚ի Տէր, Աստուած զձեզ յիշէ»:

Այլ խաչարձանի վրա.



«Իշխանութեան Թահմազին , հայրապետութեան տեառն Գրիգորիսի եւ առաջնորդութեան ուխտիս Սահակայ եպիսկոպոսի...».

Այս եկեղեցու շուրջը կան բազմաթիվ գերեզմաններ, որոնց մի քանիսի տապանաքարերը շատ գեղեցիկ են: Այստեղ կա և մի այր, ուր Սարգիս Ջալալյանի ասությանը անվան են սրից և սովից մեռածների դիակները:

Բողոքսանի վանք. գտնվում է համանուն սարի հարավարևելյան կողմում ձգվող մի փոքր ձորակի ձախ լանջին՝ փոքրիկ հարթակի վրա: Երկարությունն է 9 մետր, լայնությունը՝ 5 մետր 60 սանտիմետր: Շինված է մի կամարի վրա, անտաշ կաթնագույն քարով, որ ունի մի դուռ, երեք լուսամուտ և երկու խորհրդարան:

Վանքի շուրջը բոլորում է մի պարիսպ, որ ունի մի դուռ: Պարսպի հարավային և արևմտյան կողմերում ներքուստ շինված են բազմաթիվ խցեր միաբանների բնակության համար, որոնք այժմ բոլորն էլ, բացի վանահոր սենյակից, կիսավեր են:

Մավասի վանք. Մավաս գյուղի մոտ՝ մի բարձր բլրի վրա, որի արևելյան և հյուսիսային կողմում արձանանում են ահազին ժայռեր՝ միացած միմյանց հետ մի հաստ պարսպով, որի այժմ միայն հետքերն են մնում: Վանքը կառուցված է երկու սյուների վրա. խորանի տակ կա չորս գերեզմանաձև շիրիմ: Պարսպի մեջ եղած են խցեր միաբանների համար, բայց այժմ բոլորն էլ ավերակ են: Այս վանքը և յուր շիրիմները մեծ ուխտատեղի են համարվում:

Շոշկա վանք. Խաչմաչ և Մամնա գյուղերի միջև տարածվող լեռնագոտու գագաթին (4669 ոտ.) է գտնվում: Մի կամարի վրա հաստատված 9 մետր երկարության և 6 մետր լայնության վանք է, որ ունի մի սեղան, երեք լուսամուտ և մի դուռն արևմտյան կողմից: Գավթում կան մի քանի ծառեր, որ սուրբ են համարվում:

ՆՇԱՆԱՎՈՐ ԲԵՐԴԵՐԸ

Ղզղալա (Աղջկա բերդ). համանուն գյուղից դեպի հյուսիս բարձրանում է մի լեռ, որի արևելյան մասում տարածվում է մի ընդարձակ դաշտավայր, հյուսիսային կողմում հազիվ մի վերստ հեռավորությամբ զգվում է Քարին-Կտուր սարը, արևմտյան կողմում՝ Մեծ Նահատակի և Առաջաքար, իսկ հարավայինում՝ Փոքր Նահատակի և Փլեկի սարերը, որոնք փոքր-ինչ ավելի բարձր են սրանից:

Այս սարի հյուսիսային և արևմտյան կողմերն ուղղահայաց ժայռեր են, իսկ արևելյան և հարավային կողմերը՝ զառիվայրեր: Ահա այս սարի վրա է գտնվում Ղզղալան:

Նկատելի է, որ մի հաստ պարիսպ և մի խոր խրամ բոլորելիս են եղել այս սարի շուրջը: Լեռան գագաթին նույնպես նկատվում է մի պարիսպ, հետևապես և կարելի է ենթադրել, որ միջնաբերդ է եղել: Բերդի արևմտյան լանջին կա երեք ավազան. գտնված փողրանքները ցույց են տալիս, որ ջուրը բերված է եղել Փլեկի սարից: Միջնաբերդի մեջ նկատելի են ստորերկրյա շինություններ:

Մի գյուղացի ինձ ցույց տվեց մի բրոնզյա թուր, որ գտել է բերդի ստորոտում մի գերեզմանի միջից: Ցավալի է, որ գյուղացին, թուրը ոսկյա կարծելով, կտոր-կտոր է արել մաս-մաս ծախելու համար:

Ղալին-Խուրթ. այսպես կոչվում է այն սարը, որ բարձրանում է Կիշու, Մշկապատի և Կյունի ճարտարի միջև և որ ունի 3735 ոտ. բարձրություն: Մրա հարավային և արևմտյան կողմերն անմերձենալի քերձեր են, իսկ արևելյան և հյուսիսային կողմերում տարածված է եղել մի ամուր պարիսպ, թեև առանց աշտարակների, որի միայն հիմքերն են մնացել: Կան մի քանի ջրավազաններ և հյուսիսային պարսպի ստորոտում՝ անուշահամ աղբյուր:



Բրդահոնջին դալա. Ներքին Թաղավարդի արևելյան կողմում բոլորովին առանձնացած կանգնած է 3300 ոտնաչափ բարձրության մի սար, որի արևելյան, հարավային և արևմտյան կողմերին ահագին ժայռեր են, իսկ հյուսիսային կողմը սաստիկ գառիվայր: Այս կողմում ժայռից ժայռ ձգվում է կրկնապարիսպ, որի արտաքինն ունի և աշտարակներ: Ահա այս է Բրդահոնջին կամ Բրդաունջ դալան, որ միայն մի դուռն ունի արևելյան կողմից: Լեռան գագաթին գտնվում է և մի միջնաբերդ, ուր կան բնակարանների հետքեր: Կան մի քանի այրեր և ջրի ավազաններ: Բերդի մեջ ոչ մի աղբյուր չկա, միայն արևելյան ստորոտում բխում է մի աղբյուր, որ հավանականորեն ջուր է մատակարարելիս եղել բերդին: Այժմ բերդն ամբողջովին ծածկված է խիտ անտառի մեջ¹:

**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՇՈՒՇՈՒ ԱՄԲՈՂՁ ԳԱՎԱՌԻ ՄԱՍԻՆ)**

Ամենից առաջ մի քանի կարևոր բացատրություններ ուսումնասիրության վայրի, նյութերի և տեղեկությունների դասավորության մասին:

Ինչո՞ւ տեղեկությունները վերաբերում են Շուշու գավառին և ոչ բացառապես Վարանդային:

Վարանդան այն սահմաններում², որը նրան տեղական ժողովուրդն է տալիս, ինչպես հայտնի է, այժմ առանձին վարչական միավոր չի կազմում և ամբողջությամբ մտնում է Շուշու գավառի մեջ, իսկ որովհետև այն սակավաթիվ վիճակագրական նյութերը, որ մենք ունեինք մեր ձեռքի տակ, վերաբերում էին Շուշու ամբողջ գավառին, դրա համար էլ միայն Վարանդայի վիճակագրություն մենք չէինք կարող կազմել: Առաջարկելով ներողամիտ ընթերցողներին Շուշու գավառի (գլխավորապես հայ) բնակչության վիճակագրությունը՝ թույլ ենք տալիս մեզ կարծել, որ այն, ինչ բնորոշ է ամբողջ գավառի բնակչության, բնորոշ կլինի և Վարանդայի համար, որովհետև վերջինս թե կլիմայական և թե տնտեսական ու կուլտուրական տեսակետից շատ չի տարբերվում գավառի մյուս մասերից, գործրինակ Խաչենի հայ գավառից, որ Վարանդայից հետո ամենահայաբնակ տեղն է Շուշու գավառում:

Չունենալով ավելի ստույգ և արժանահավատ աղբյուրներ՝ մենք ստիպված էինք օգտվել այնպիսի հիմնարկությունների հավաքած նյութերից, որոնց ձեռնհասությունը վիճակագրական գործում չափազանց կասկածելի է: Չնայած այն բոլոր խստության և զգուշության, որը մենք գործ ենք դրել այդ նյութերի վերաբերմամբ՝ վերջիններիս վրա հիմնվող մեր տեղեկությունները բնականաբար միայն մոտավորապես ճիշտ են: Թե ինչու մենք վստահացանք նմանօրինակ «միայն մոտավորապես ճիշտ» թվեր տալ ընթերցողներին, դա այն պատճառով, որ այդ թվերը ևս ընդունակ են ընդհանուր գծերով ցույց տալ վիճակագրական մի քանի երևույթների զարգացումը Շուշու գավառում, որովհետև նույնատեսակ սխալները բոլոր տարիների թվերի մեջ փոփոխել չեն կարող այս կամ այն երևույթի զարգացման բնավորությունը տարիների ընթացքում: Իբրև նյութ՝ մեզ ծառայել են տեղական կոնսիստորիայի 1881-1895 թվականների «տարեկան ժամադրյալ հաշիվ»-ների տեղեկությունները պսակների, ծնունդների, ննջեցյալների մասին Շուշու գավառում, հետո՝ Շուշու գավառապետի 1895-ի «Отчет»-ը նահանգապետին գավառի դրության մասին և վերջապես Կովկասյան ոստիկանական կոմիտեի 1893թ. հրատարակած «Свод статистических данных о население Закавказского края, извлеченных из, посемейных списков 1886г.»:

¹ Իմ ճանապարհորդության ժամանակ ուղեցույց եմ ունեցել Գեր. Մակար եպ. Բարխուդարյանի «Արցախը», որ բավական նպաստել է ինձ, մանավանդ արձանագրությունները ընթրիինակելիս

² Տե՛ս «Տեղագրություն»



Նյութերի դասավորության մեջ մենք հետևել ենք G. Rümeline-ի «Die Bevölkerungslehre» հոդվածին՝ Schönberg-ի քաղաքատնտեսության հայտնի ձեռնարկի մեջ, և գերմանական կառավարության հրատարակած «Statistisches Jahrbuch für des Deutsche Reich» ժողովածուին. սրանցից էլ վերցրել ենք էվրոպական ժողովուրդներին վերաբերող թվերը:

	Տարածությունը քառ. կմ-ով	Բնակչությունը (հայ և թուրք) 1886-ի սկզբին			Բնակչությունը (հայ և թուրք) 1895-ի սկզբին			Մի քառա- կուսի կիլոմետրի վրա		Բնակչ. ածր 1886-95
		ար.	իգ.	միա- սին	ար.	իգ.	միա- սին	1886	1895	%
Գավառը քաղաքի հետ	5204,32	72664	583041	130968	80393	65527	145920	252	28,4	11,2
Միայն գավառը	5200,84	56890	46295	103185	61597	51071	112668	20	21,6	8,8
Քաղաքը	3,5	15774	12009	27783	18796	14456	33252	-	-	19,5



ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

1. Բնակչության թիվը և խտությունը 1886 և 1895 թթ. սկզբներին

	Ամբողջ գավառի (քաղաքի հետ) բնակչությունը			Միայն գավառի բնակչությունը			Քաղաքի բնակչությունը		
	միասին	հայ	թուրք	միասին	հայ	թուրք	միասին	հայ	թուրք
1886	130968	73081	57887	103485	57893	45292	27783	15188	12595
		56,2%	43,8%		56%	44%		54,5%	45,5%
1895	145920	84569	61351	112668	63985	48683	33252	20584	12668
		58%	42%		57%	43%		61,8	38,2

Այս աղյուսակի մեջ բերված 1886 թվականի իգական բնակչության թիվը

5000-ով ավելի է «Свод»-ի մեջ բերված թվից, ահա թե ինչի հիման վրա մենք ավելացրել ենք այդ 5000-ը: 1886 թվականին եղել են Շուշու գավառում թուրքեր ըստ «Свод»-ի՝ 32209 արական և 20678 իգական (1000 տղամարդու համեմատ միայն 646 կին), իսկ 1895թ. 34050 արական և 27301 իգական, ուրեմն 9 տարվա ընթացքում ավելացել է 1841 տղամարդ և 6623 կին, հետևապես կանայք համարյա թե չորս անգամ ավելի արագ են աճել, քան թե տղամարդիկ: Բայդ դա անկարելի է, քանի որ 1) դազիի տված տեղեկությունների հիման վրա թուրք տղաներ շատ են ծնվում, քան աղջիկներ (օրինակ՝ 1895թ. ծնվել են Շուշու գավառում 498 տղա և միայն 342 աղջիկ թուրք մանուկներ) և 2) որովհետև կանանց ինչ-որ իմիգրացիայի կամ տղամարդկանց էմիգրացիայի մասին խոսք անգամ չի կարող լինել: Թուրք կանայք իսկապես 9 տարվա ընթացքում 6623-ով չեն աճել, և այդ աննորմալ երևույթը պետք է բացատրել նրանով, որ 5000-ի չափ կանայք չեն մտել 1886-ի վիճակագրության մեջ, և դրա համար էլ ոստիկանության 1895թ. ավելի ճիշտ տեղեկությունների մեջ երևան են գալիս իբրև նոր ավելացածներ: Հօգուտ մեր ենթադրության խոսում է և այն, որ այդպիսով ստացած աճը (6623-ից հանած 5000) 1623 ավելի նորմալ է թուրք կին բնակչության համար և նույնպես ավելի նորմալ է մեր երկրի համար, այսպիսով ստացած սեռերի թվական հարաբերությունը՝ 1000 տղամարդու համեմատ 802 կին, համարյա թե նույնքան է, որքան և հայերի մեջ (1000-ի համեմատ 826):

Աղյուսակում 1895-ի բնակիչների թվի մեջ չեն մտցված 1329 (արական՝ 1036, իգական՝ 293) զինվորական և աստիճանավորների դասակարգերին պատկանող ռուսներ, լեհեր, հրեաներ, վրացիներ և այլն և 1913 օտարահպատակներ (1096 արական, 817 իգական): Նույնը և 1886-ի բնակիչների թվի մեջ:



**2. Բնակչությունն ըստ ազգությունների և դավանությունների
1886 և 1895 թթ.**

Թե՛ 1886-ին և թե՛ 1895-ին հայերը գավառում և քաղաքում բնակչության մեծամասնությունն են կազմում: Մի բան ևս արժանի է ուշադրության, որ հայ բնակչության համեմատական թիվը (%-ը) թե՛ գավառում, թե՛ քաղաքում (մանավանդ այստեղ) 9 տարվա ընթացքում բարձրացել է, իսկ թուրքերինը՝ ընկել:

Բոլոր հայերը, բացառյալ մի քանի տասնյակ (ճիշտ թիվը հայտնի չէ) բողոքականների, լուսավորչական են, իսկ թուրքերից 59204 (արական 32820, իգական 26384) շիաներ են և 2147 հոգի (1230 արական և 917 իգական) այուննիներ:

3. Բնակչությունն ըստ բնակության տեղի 1886 և 1895 թթ.

Տարի	Ամբողջ բնակչության որ տոկոսն է ապրում		Հայ բնակչության որ տոկոսն է ապրում		Թուրք բնակչության որ տոկոսն է ապրում	
	գավառում	քաղաքում	գավառում	քաղաքում	գավառում	քաղաքում
1886	78,6	21,4	79,2	20,8	78,2	21,8
1895	77,4	22,6	75,5	24,5	79,6	20,4

Մի երևույթ իսկույններ է աչքի է ընկնում այս աղյուսակի մեջ. դա քաղաքի հայ բնակչության տոկոսային աճումը և գյուղական բնակչության տոկոսային անկումն է:

Մեր նպատակից և ուժերից վեր է այստեղ բացատրել այդ երևույթի պատճառները:

Թուրք բնակչության մեջ նույնը չի նկատվում քաղաքի բնակչության սաստիկ դանդաղ աճման պատճառով:

4. Բնակչությունն ըստ սեռի

Սեռերի թվական հարաբերությունը 1895-ին:

1000 տղամարդու համեմատ ամբողջ գավառում (քաղաքի հետ) ընկնում է 812 կին:

1000 տղամարդու համեմատ միայն գավառում ընկնում է 836 կին:

1000 տղամարդու համեմատ քաղաքում ընկնում է 773 կին:

1000 հայ տղամարդու համեմատ ամբողջ գավառում ընկնում է 826 կին:

1000 հայ տղամարդու համեմատ միայն գավառում ընկնում է 853 կին:

1000 հայ տղամարդու համեմատ քաղաքում ընկնում է 769 կին:

1000 թուրք տղամարդու համեմատ ամբողջ գավառում ընկնում է 794 կին:

1000 թուրք տղամարդու համեմատ միայն գավառում ընկնում է 808 կին:

1000 թուրք տղամարդու համեմատ քաղաքում ընկնում է 786 կին:

Շուշու գավառում, ինչպես և բոլոր հարավային երկրներում, տղամարդկանց թիվը շատ է, քան թե կանանց¹: Բայց մեզ մոտ երկու սեռերի թվերի զանազանությունն ավելի մեծ է, քան թե որևէ ուրիշ՝ վիճակագրության ենթարկված հարավային երկրում: Դա մասամբ կարելի է բացատրել նրանով, որ բոլոր կանայք (մանավանդ թուրքերի մեջ) չեն մտել ուստիկանության հավաքած

¹ Իտալիայում 1000 տղամարդուն ընկնում է 995 կին
Հունաստանում՝ 906
Հնդկաստանում՝ 954



տեղեկությունների մեջ: Աղյուսակի մեջ հետաքրքիր է այն երևույթը, որ սեռերի թվական հարաբերությունը գավառում թե՛ հայերի և թե՛ թուրքերի համար ավելի նորմալ է, քան թե քաղաքում, երևի այն պատճառով, որ այստեղ աշխատանքի համար եկած ամուրի տղամարդկանց թիվը շատ մեծ է:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ամուսնություններ

1895թ. 1000 բնակչի համեմատ քաղաքում ավելի շատ պսակներ են ընկնում, քան թե գավառում (1000 հայ բնակչի համեմատ քաղաքում՝ 7,1, իսկ գավառում՝ 5,25), մյուս կողմից՝ 1000 թուրք բնակչի համեմատ ավելի շատ պսակներ են ընկնում, քան թե 1000 հայ բնակչին:

Ամուսնությունների թիվը և բնակչությունը (հայ և թուրք¹) 1895թ.

Բնակչության կազմը	Ամուսնությունների թիվը	Բնակչությունը 1000-ներով	1000 բնակչի վրա գալիս են ամուսնութ.
Ամբողջ գավառի հայ և թուրք բնակչությունը	808	144	5,65
Ամբողջ գավառի հայ բնակչությունը	473	85	5,63
Ամբողջ գավառի թուրք բնակչությունը	335	59	5,68
Միայն գավառի հայ և թուրք բնակչությունը	607	110	5,52
Միայն գավառի հայ բնակչությունը	331	64	5,25
Միայն գավառի թուրք բնակչությունը	276	46	5,87
Քաղաքի հայ և թուրք բնակչությունը	201	34	6,1
Քաղաքի հայ բնակչությունը	142	1	7,1
Քաղաքի թուրք բնակչությունը	59	13	4,5

Ամուսնությունները և հայ բնակչությունը (1881-1895թթ.)

Տարի	Գավառում (առանց քաղաքի)			Քաղաքում		
	Բնակչության մոտավոր թիվը 1000-ներով	Պսակների թիվը	1000 բնակչի վրա ընկնում են պսակներ	Բնակչության մոտավոր թիվը հազարներով	Պսակների թիվը	1000 բնակչի համեմատ ընկնում են պսակներ

¹ 2147 սյուննի թուրքեր չեն մտցված, որովհետև նրանց մասին տեղեկություններ պակասում են



1881-1885 ¹	56	372	6,6	14	158	11,3
1886--	59	340	5,9	16	141	8,8
1890 ¹ -1891	61	365	6	18	170	9,4
1892	62	433	7	19	170	9
1893	63	512	8,1	19	142	7,5
1894	63	552	8,7	20	139	7
1895	64	331	5,2	21	142	6,8
1881-1895 ¹	63	439	7	19	153	8

Այս աղյուսակի մեջ ևս նկատվում է նույն երևույթը, որին մենք վերևում ականատես եղանք. այն է, որ 1000 բնակչի համեմատ քաղաքում ավելի շատ պսակներ են ընկնում, քան թե գավառում: Լուրջ ուշադրության և ուսումնասիրության արժանի է մի փաստ ևս, որ քաղաքի պսակների թիվը թե՛ 1000-ի համեմատ (1881-85-ի համար՝ 11,3, 1886-90-ի համար՝ 8,8, 1891-95-ի համար՝ 8) և թե՛ բացարձակապես (158-142) տարեցտարի պակասում է: Գավառում, ընդհակառակը, նա անընդհատ աճում է, թեև ոչ այնպես արագ, ինչպես ընկնում է քաղաքում: Ամուսնացողների տոկոսը հայ ժողովրդի մեջ շատ չի տարբերվում եվրոպական ժողովուրդների ամուսնացողների տոկոսներից (1000 բնակչի համեմատ ընկնում են պսակներ՝ Գերմանիայում՝ 7,6, Անգլիայում՝ 7,4, Բելգիայում՝ 7, Շվեյցարիայում՝ 6,8, Շվեդիայում՝ 6,3):

¹ Միջին թվով մի տարվա համար

Հայ ամուսնացողների հասակը 1881-1890թթ. (Զինվորագրություն)

Տարի	Գավառում 100 ամուսնացող տղամարդկանցից եղել են						Քաղաքում 100 ամուսնացող տղամարդկանցից եղել են					
	Մինչև 21տ. հասակում	21-35	26-30	31-35	36-40	40-ից բարձր	Մինչև 21տ. հասակում	21-25	26-30	31-35	36-40	40-ից բարձր
1881	26	50	13	4	4	3	9	32	42	5	10	2
1882	34	48	10	4	2	2	6	38	24	6	5	3
1883	29	52	9	5	3	2	10	33	40	7	5	5
1884	22	48	17	6	4	5	15	32	45	2	5	1
1885	40	37	10	4	3	6	9	35	44	4	4	4
1886	49	34	9	3	3	2	7	50	29	8	3	3
1887	5	70	16	4	4	1	4	37	41	7	7	4
1888	-	-	-	-	-	-	0	23	52	15	8	2
1889	3	28	43	12	10	4	3	28	46	11	8	4
1890	9	40	35	7	6	3	4	37	41	7	7	4
Միջին թվով 1881-1886	34	45	11	4	3	3	9	38	40	5	5	3
Միջին թվով 1887-1890	6	46	31	8	6	3	3	31	45	10	7	4

Այս աղյուսակը բերում ենք այստեղ ցույց տալու համար այն ահագին սոցիալական ազդեցությունը, որ ունեցել է զինվորագրությունը Շուշու գավառում: Մինչև 1886թ., այսինքն՝ մինչև հայերից զինվոր վերցնելը, 100 ամուսնացած տղամարդկանցից 34-ը գտնվել է (գավառում) մինչև 21տ. հասակում, 1886թ. հետո 100 ամուսնացող տղամարդկանցից նույն հասակում գտնվելիս է եղել միայն 6 հոգի: Նույն թվականից հետո սաստիկ բարձրանում է 26-49 տարեկան հասակում ամուսնացողների թիվը (մինչև 1886թ. դրանք կազմել են ամուսնացողների 18 %-ը, իսկ 1886-ից հետո՝ 45%), իսկ 21-25 տ. հասակում ամուսնացողների տոկոսը համարյա թե նույնն է մնացել (մինչև 1886թ.՝ 45%, 1886-ից հետո՝ 46%): Նույն երևույթը նկատվում է և քաղաքում, այն տարբերությամբ, որ այստեղ պակասել է և 21-25 տարեկան հասակում ամուսնացող տղամարդկանց թիվը (մինչև 1886թ. 100-ից ամուսնացել են այդ հասակում 38 հոգի, 1886թ. հետո՝ միայն 31): Նույնպես սաստիկ բարձրացել է 25-30 տ. հասակում ամուսնացողների թիվը (մինչև 1886թ. բոլոր ամուսնացողների 45%, 1886-ից հետո՝ 55%): Առհասարակ նկատելիորեն բարձրանում է 1886թվականից տարիքավոր ամուսնացողների թիվը (մինչև 1886թ. գավառում 100 ամուսնացողներից 10 հոգի գտնվելիս են եղել 31-ից 40տ. և 40տ. բարձր հասակում, իսկ 1886թ. հետո 17 հոգի. քաղաքում մինչև 1886թ.՝ 17 հոգի. գավառում մինչև 1886թ.՝ 13 հոգի, 1886-ից հետո՝ 21): Զինվո-



րագրությունից հետո պասկվողների թիվը գավառում չի պակասել, այլ ընդհակառակը՝ նկատվում է անընդհատ, թեև դանդաղ աճ¹:

Ամուսնացողները (հայ) 1881-1890թթ.

Տարի	100 պասկներից եղել են գավառում				100 պասկներից եղել են քաղաքում			
	Ամուրի տղամարդն աղջկա հետ	Ամուրի տղամարդը այրի կնոջ հետ	Այրի տղամարդը աղջկա հետ	Այրի տղամարդը այրի կնոջ հետ	Ամուրի տղամարդն աղջկա հետ	Ամուրի տղամարդը այրի կնոջ հետ	Այրի տղամարդը աղջկա հետ	Այրի տղամարդը այրի կնոջ հետ
1881	82	-	11	7	73	1	16	10
1882	85	1	7	7	81	1	12	6
1883	84	-	9	7	79	-	10	11
1884	80	1	12	7	75	4	11	10
1885	79	-	16	5	78	-	11	11
1886	77	-	14	9	81	-	10	9
1887	91	-	9	-	78	2	11	9
1888	-	-	-	-	84	-	10	6
1889	79	2	13	6	77	1	10	12
1890	81	-	11	8	82	2	8	8
1881-1890	82	0,5	11,5	6	78,8	1,1	10,9	9,2

Ամուսնությունների մեծամասնությունը (գավառում՝ 82%, քաղաքում՝ 78,8%) կատարվում է ամուրի տղամարդու և աղջկա միջև: Այդ կարգի ամուսնություններից հետո երկրորդ տեղը բռնում են այրի տղամարդկանց ամուսնություններ՝ աղջիկների հետ, երրորդ տեղը բռնում են այրի տղամարդկանց ամուսնություններ՝ այրի կանանց հետ և չորրորդ ու ամենաչնչին տեղը բռնում են ամուրի տղամարդկանց ամուսնություններ՝ այրի կանանց հետ: Մի բան այժմ է ընկնում աղյուսակի մեջ. գավառում, ուր սեռերի թվական հարաբերությունն ավելի նորմալ է (1000:853), քան թե քաղաքում (1000:769), ավելի քիչ են ամուսնանում այրի կանանց հետ, քան թե քաղաքում (100 ամուսնացող կանանցից եղել են այրի՝ գավառում 6,5%, իսկ քաղաքում՝ 10,3%):

¹ Տե՛ս «Բնակչության շարժումը» աղյուսակը

Ամուսնություններն ըստ ամիսների (հայերի մեջ) 1886-1890թթ.

Ամիս	100 պսակներից գավառում կատարվել են							100 պսակներից քաղաքում կատարվել են						
	1885	1886	1887	1888 ¹	1889	1890	1885 մինչև 1890	1885	1886	1887	1888	1889	1890	1885 մինչև 1890
Հունվար	25	20	27	-	13	18	21	32	10	14	9	14	10	15
Փետրվար	2	14	16	-	13	16	12	3	23	12	23	27	17	18
Մարտ	-	-	-	-	-	-	-	-	-	-	6	-	-	1
Ապրիլ	*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Մայիս	4	2	-	-	-	1	1	4	-	-	-	-	2	1
Հունիս	2	3	3	-	2	4	3	7	9	5	4	3	5	5
Հուլիս	2	4	1	-	2	2	2	5	3	7	6	3	6	5
Օգոստոս	4	4	4	-	4	3	4	8	8	10	12	6	18	10
Սեպտեմբեր	9	8	1	-	2	5	5	11	12	9	10	7	12	11
Հոկտեմբեր	11	10	3	-	14	7	9	7	11	11	15	12	11	10
Նոյեմբեր	15	15	14	-	18	15	15	10	13	14	6	7	8	12
Դեկտեմբեր	26	20	31	-	32	29	28	13	11	18	9	11	11	12

Թե՛ քաղաքի և թե՛ գավառի համար բնորոշ է այն, որ մարտ և ապրիլ ամիսներին մեծ մասի պատճառով պսակներ չեն լինում: Պսակների մինիմումը գավառում ընկնում է ամառային և աշնանային առաջին ամիսներին, մայիսից մինչև հոկտեմբեր, գյուղական ժողովրդի արդյունավետ գործունեության ամենաեռուն ժամանակը, ամենաշատ ամուսնություններ կատարվում են նոյեմբերից մինչև փետրվար (մաքսիմում՝ դեկտեմբերին): Քաղաքում ամենից քիչ ամուսնություններ լինում են մայիս, հունիս, հուլիս ամիսներին, օգոստոսին արդեն պսակների թիվը բավականին մեծ է և կամաց-կամաց աճելով՝ փետրվարին հասնում է իր մաքսիմումին: Այս երկու աղյուսակները միմյանց հետ համեմատելիս մի բան աչքի է ընկնում. գյուղական հարսանիքների 76 տոկոսը կատարվում է նոյեմբերից մինչև փետրվար ամիսները և միայն 24 տոկոսը՝ մայիսից մինչև հոկտեմբեր, այսինքն՝ դաշտային աշխատանքների ժամանակ, իսկ քաղաքում նոյեմբերից մինչև փետրվար եղած հարսանիքների տոկոսը 57 է, իսկ մնացած ամիսներինը՝ 43: Քաղաքի բնակիչները (արհեստավորներ, վաճառականներ, բանվորներ, աստիճանավորներ և այլն), ունենալով այնպիսի պարապմունքներ, որոնք ամբողջ տարվա ընթացքում հավասար աշխատանք են պահանջում և տարվա այս կամ այն ժամանակից համարյա թե կախում չունեն (իբրև բացառություն պետք է հիշենք շրջիկ արհեստավորներին և բանվորներին՝ հյուսներին, որմնադիրներին, քարտաշներին և այլն, որոնք ամառը ավելի շատ են բանում, քան ձմեռը), իրենց կյանքում ավելի քիչ են ենթարկվում տարվա եղանակների ազդեցության, քան գյուղացիները:

¹Թվերը պակասում են



Ծնունդներ

Ծնունդները (օրինավոր և ապօրինի) և բնակչությունը (հայ և թուրք) 1895թ.

	Ծնունդների թիվը	Բնակչությունը 1000-ներով	1000 բնակչի համեմատ ծնունդներ
Ամբողջ գավառի հայ և թուրք բնակչությունը	3121	144	21,6
Ամբողջ գավառի հայ բնակչությունը	2097	85	25
Ամբողջ գավառի թուրք բնակչությունը	1024	59	17,3
Գավառի (առանց քաղաքի) հայ և թուրք բնակչությունը	2332	110	21,2
Գավառի հայ բնակչությունը	1492	64	23,3
Գավառի հայ թուրք բնակչությունը	840	46	18,2
Քաղաքի հայ և թուրք բնակչությունը	789	34	23,2
Քաղաքի հայ բնակչությունը	605	21	28,8
Քաղաքի թուրք բնակչությունը	184	13	14,2

Աղյուսակից երևում է, որ 1895թ. 1000 բնակչի համեմատ քաղաքում ավելի շատ ծնունդներ են եղել, քան թե գավառում, և որ 1000 հայ բնակչի համեմատ թե՛ գավառում և թե՛ քաղաքում ավելի շատ ծնունդներ են եղել, քան թե 1000 մահմեդական բնակչի համեմատ: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ երևույթները կարող են ճիշտ լինել, բայց տարբերությունը մի կողմից քաղաքի և գավառի, մյուս կողմից հայ և թուրք ծնունդների միջև մեր կարծիքով այնքան մեծ չպետք է լինի, ինչպես աղյուսակում, որովհետև բազմաթիվ երեխաներ գավառում առհասարակ և մանավանդ թուրքերի մեջ, որոնք մինչև ցուցակի մեջ մտցվելը (հայերի մոտ մինչև մկրտվելը) մեռնում են, չեն մտնում մեր բերած թվերի մեջ. նույնպես չի մտնում ցուցակի մեջ ապօրինի ծնունդների մեծ մասը: Մեռելածին մանուկների թիվը թե՛ գավառում և թե՛ քաղաքում բոլորովին ուշադրության չի առնվում, չնայած նրան, որ դրանք մի պատկանելի քանակ են կազմում բոլոր ծնվածների թվի մեջ:

Ծնունդները և հայ բնակչությունը 1881-1895թթ.

Տարի	Գավառում (առանց քաղաքի)							Քաղաքում						
	բնակչությունը 1000-ով	ծնունդների թիվը			1000 բնակչին ընկնում են ծնունդներ			բնակչությունը 1000-ով	ծնունդների թիվը			1000 բնակչին ընկնում են ծնունդներ		
		տղա	աղջիկ	միասին	տղա	աղջիկ	ամբաստան		տղա	աղջիկ	միասին	տղա	աղջիկ	ամբաստան
1881-1885	56	902	650	1552	16,1	11,6	27,7	14	303	291	594	21,6	20,8	42,4
1886-1890	59	943	701	1644	16	12	28	16	320	302	622	20	18,9	38,9
1891	61	1131	752	1883	18,5	12,3	30,8	18	345	280	625	19,1	15,5	34,6
1892	62	986	749	1735	15,1	12,1	28	19	323	303	626	17	16	33
1893	63	1162	892	2054	18,4	14,2	32,6	19	324	315	639	17	16,6	33,6
1894	63	1128	794	1922	17,9	12,6	30,5	20	294	311	605	14,7	15,6	30,3
1895	64	845	647	1492	13,2	10,1	23,3	21	326	279	605	15,5	13,3	28,8
1891-1895	63	1050	767	1817	16,7	12,2	28,9	19	322	298	620	17	15,6	32,6

Վերևում քաղաքի և գավառի ծնունդների վերաբերյալ նկատածը տեսնում ենք և այստեղ. առաջինում 1000 բնակչին անհամեմատ ավելի շատ ծնունդներ են ընկնում, քան թե վերջինում: Գավառի ծնունդները թե բացարձակապես (1881-85՝ 1552, 1886-90՝ 1644, 1881-95՝ 1817) և թե 1000-ի համեմատ (27,7, 28, 28,9) աճում են, իսկ քաղաքում (ինչպես և պակսների թիվը) թե՛ բացարձակապես (622 և 620) և թե՛ 1000-ի համեմատ պակասում են (42,4. 38,9 և 32,6): Քաղաքի ծնունդների պակասելը մենք մասամբ բացատրում ենք նրանով, որ այստեղ ամուրի տղա-մարդկանց (աշխատանքի համար եկած) տոկոսը աճում է, իսկ ամուսնացածներինը՝ ընկնում:

Եթե աղյուսակի մեջ դուրս բերված թվերը 1000-ի համեմատ բաղդատելու լինենք եվրոպական ժողովուրդների ծնունդների հետ¹, կտեսնենք, որ մեր թվերը շատ ցածր են. դա այն պատճառով, որ եվրոպական թվերը վերաբերում են բոլոր ծնունդներին (դրանց մեջ մտնում են բոլոր ապօրինի և մեռելածին երեխաները), իսկ մեզ մոտ միայն բոլոր մկրտված երեխաներին:

Աղյուսակից երևում է, որ ամեն տարի ավելի շատ տղաներ են ծնվում, քան թե աղջիկներ (գավառում 1881-1885 թթ. ծնվել են 902 տղա, 650 աղջիկ, 1886-90՝ 943 տղա և 701 աղջիկ, 1891-95՝ 1050 տղա և 767 աղջիկ, քաղաքում 1881-85՝ 303 տղա և 291 աղջիկ, 1886-90՝ 320 տղա և 302 աղջիկ, 1891-95՝ 322 տղա և 298 աղջիկ): Ինչպես կարելի է տեսնել այս թվերից, տարբերությունը տղա և աղջիկ ծնունդների մեջ գավառում ավելի մեծ է, քան թե քաղաքում, ուր մի քանի

¹ 1000 բնակչին ընկնում են ծնունդներ՝ Գերմանիայում՝ 38,18(1881-90), Բուլղարիայում՝ 38, Ֆրանսիայում՝ 26,6, Մեծ Բրիտանիայում՝ 35,4, Բելգիայում՝ 34,1, Նորվեգիայում՝ 32,1



տարիներում աղջիկ ծնունդների թիվը համարյա թե հավասար է ծնված տղաների թվին (1881-85 և 1893 թվին), իսկ 1894 թ. մինչև անգամ ավելի շատ աղջիկներ են ծնվել, քան թե տղաներ:

Ապօրինի ծնունդների համեմատական թիվը.

Գավառում

1881-85 1 ապօրինի ծնունդ ընկնում է 1108 ծնունդներին

1886-90 1 ապօրինի ծնունդ ընկնում է 822 ծնունդներին

1891-95 1 ապօրինի ծնունդ ընկնում է 324 ծնունդներին

Քաղաքում

1881-85 1 ապօրինի ծնունդ ընկնում է 208 ծնունդներին

1886-90 1 ապօրինի ծնունդ ընկնում է 346 ծնունդներին

1891-95 1 ապօրինի ծնունդ ընկնում է 387 ծնունդներին

Ապօրինի զավակների թիվը, եվրոպականի¹ հետ համեմատած, չափազանց քիչ է, երևի այն պատճառով, որ ապօրինի զավակներից շատ քչերն են մինչև մկրտվելը ապրում (եվրոպական ժողովուրդների համար արդեն ապացուցված է, որ մահացությունն ապօրինի զավակների մեջ ավելի մեծ է, քան թե օրինավորների մեջ. ապօրինի ծնունդների մեջ մեռելածինների տոկոսն ավելի մեծ է, քան թե օրինավոր ծնունդների մեջ): Ըստ աղյուսակի՝ ապօրինի ծնունդների թիվը քաղաքում տարեցտարի պակասում է (թեև հակառակը պիտի լիներ, քանի որ ամուրի տղամարդկանց թիվը հետզհետե ավելանում է), իսկ գավառում աճում է, և վերջին հնգամյակի ընթացքում ապօրինի ծնունդների համեմատական թիվը գավառում ավելի մեծ է, քան թե քաղաքում:

Ծնունդները և հղիությունը ըստ ամիսների (հայերի մեջ) 1885-1890թթ.

Ծննդյան ամիսները	Հղիության ամիսները	Գավառում 100 ծնունդներից եղել են							Քաղաքում 100 ծնունդներից եղել են					
		1885	1886	1887	1888	1889	1890	մինչև 1885 1890	1885	1886	1887	1888	1889	մինչև 1885 1890
հունվար	ապրիլ	12	12	13	10	12	11	11,6	12	8	11	10	9	9,9
փետրվար	մայիս	9	10	8	9	11	9	9,3	8	10	10	9	12	9,6
մարտ	հունիս	8	8	8	9	11	9	9	10	11	9	8	9	7,9
ապրիլ	հուլիս	7	7	9	7	7	6	7,2	6	8	9	9	8	7,8
մայիս	օգոստոս	9	8	8	6	7	8	7,6	8	7	7	6	9	6,2
հունիս	սեպտեմբեր	7	7	7	7	5	6	6,5	8	7	6	7	5	6,5
հուլիս	հոկտեմբեր	9	9	7	6	5	6	7	9	6	7	6	6	8,7
օգոստոս	նոյեմբեր	8	8	8	10	8	9	8,5	7	7	7	9	9	8,9
սեպտեմբեր	դեկտեմբեր	10	9	7	9	9	8	8,7	9	8	9	10	10	9,1
հոկտեմբեր	հունվար	6	7	8	9	8	8	7,6	9	10	9	12	7	12,9
նոյեմբեր	փետրվար	8	8	9	9	10	11	9,1	7	10	9	9	8	11,9
դեկտեմբեր	մարտ	7	7	8	9	7	9	7,9	7	8	7	5	7	8,1

¹ Գերմանիայում ապօրինի ծնունդները կազմում են բոլոր ծնունդների 8,8%, Ֆրանսիայում և Իտալիայում՝ 6,3, Անգլիայում և Ուելսում՝ 5,5, Բելգիայում՝ 7,1, Շվեյցարիայում՝ 4



Թե՛ գավառում և թե՛ քաղաքում ամենից քիչ ծնունդներ պատահում են հունիսին (մինիսում) և հուլիսին, ուրեմն ամենից քիչ հղիություններ լինում են աշնան սկզբի ամիսներին՝ սեպտեմբերին և հոկտեմբերին: Ամենից շատ ծնունդներ ընկնում են թե՛ գավառում, թե՛ քաղաքում հունվար (մաքսիմում), փետրվար, մարտ և սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին: Ուրեմն ամենից շատ հղիություններ լինում են գարնան տարվա այն ժամանակին, որին բանաստեղծը *«пора любви и страсти нежной»* է կոչում, և ձմեռվա երեք ամիսներին՝ հարսանիքների և տնային փակ կյանքի սեզոնում: Աղյուսակի մեջ հետաքրքիր է մի բան ևս, այն է, որ ծնունդների թիվը դեկտեմբերին (հղիությունը մարտին) թե՛ գավառում և թե՛ քաղաքում, համեմատելով նախընթաց և գալիք ամիսների թվի հետ, շատ ցածր է: Չլինի՞ թե այդ երևույթը պետք է վերագրել այն բանին, որ մարտը (մեծ պասք) ապաշխարության և ժուժկալության ամիսն է:

Մահացություն

Մահացությունը և բնակչությունը (հայ և թուրք) 1895թ.

	Ննջեցյալների թիվը			Բնակչությունը 1000-ներով			1000-ից վախճանվել են		
	տղամուրդ	կին	բոլորը	տղամուրդ	կին	միասին	Տղամարդկանցից	կանանցից	բնակից
Ամբողջ գավառի հայ և թուրք բնակչությունը	905	694	1599	79	65	144	11	11	11
Ամբողջ գավառի հայ բնակչությունը	511	418	929	47	38	85	11	11	11
Ամբողջ գավառի թուրք բնակչությունը	394	276	670	32	27	59	12	10	11
Գավառի (առանց քաղաքի) հայ և թուրք բնակչությունը	640	443	1083	60	50	110	10	9	9,8
Գավառի հայ բնակչությունը	318	237	555	35	29	64	9	8	9
Գավառի թուրք բնակչությունը	322	206	528	25	21	46	13	10	12
Քաղաքի հայ և թուրք բնակչությունը	265	251	516	19	15	34	14	17	15
Քաղաքի հայ բնակչությունը	193	181	374	12	9	21	16	20	18
Քաղաքի թուրք բնակչությունը	72	70	142	7	6	13	10	12	11

Մահացությունը հայերի մեջ 1881-1895թթ.

Տարի	ԳԱՎԱՌՈՒՄ			ՔԱՂԱՔՈՒՄ		
	Ննջեցյալներ	Բնակչությունը 1000-ներով	1000-ին ընկնում են ննջեցյալներ	Ննջեցյալներ	Բնակչությունը 1000-ներով	1000-ին ընկնում են ննջեցյալներ



	տղամարդ	կին	միասին	տղամարդ	կին	միասին	1000 տղամարդ-մասուն	1000 կնոջը	1000 ընտանիք	տղամարդ	կին	միասին	տղամարդ	կին	միասին	1000 տղամարդուն	1000 կնոջը	1000 բնակիչին
1881-85	262	196	458	30,5	25,5	56	8,6	7,7	8,2	149	153	302	7,8	6,2	14	19,1	24,7	21,6
1886-90	446	286	732	32,5	26,5	59	13,7	10,8	12,8	181	153	334	9,4	6,6	16	19,2	23,2	20,6
1891	659	426	1085	33	28	61	19,9	15,2	17,8	228	226	454	10	8	18	22,8	28,2	25,
1892	710	494	1214	34	28	62	20,9	17,6	18,6	235	218	453	11	8	19	21,3	27,2	242
1893	361	260	621	34	29	63	10,6	9	9,8	179	178	357	11	8	19	16,3	22,2	18,8
1894	474	373	847	34	29	63	14	13,1	13,4	207	205	412	11	9	20	18,8	22,8	20,6
1895	318	237	555	35	29	64	9	8,2	8,7	193	181	374	12	9	21	16,1	20	17,9
1891-95	504	360	864	34	29	63	14,8	12,4	13,7	208	202	410	11	8	19	18,9	25,2	21,6

Քաղաքի հայ բնակիչների մահացությունը ճիշտ երկու անգամ մեծ է, քան թե գավառինը (քաղաքում՝ 18%, գավառում՝ 9%): Քաղաքի թուրք բնակչության մահացությունը համարյա նույնքան է, որքան և գավառում: Մահացությունը գավառում թուրքերի մեջ ավելի մեծ է, քան թե հայերի մեջ, իսկ քաղաքում՝ ընդհակառակը: 1895թ. կին ննջեցյալների բացարձակ թիվը փոքր է տղամարդ ննջեցյալների թվից, իսկ 1000 կնոջ համեմատ ամբողջ գավառում նույնքան կին է մեռել, որքան 1000 տղամարդի համեմատ տղամարդ: Մի բան ևս արժանի է ուշադրության աղյուսակի մեջ. 1895 թ. կին ննջեցյալների %-ը գավառում ցածր է (1000 տղամարդուց մեռել է 10, 1000 կանանցից՝ 9), իսկ քաղաքում բարձր է տղամարդկանց %-ից (1000 տղամարդուց մեռել է 14, իսկ 1000 կանանցից՝ 17), և գավառի կին ննջեցյալների %-ը շատ ցածր է քաղաքի կին ննջեցյալների %-ից (1000 կանանցից գավառում մեռել է 9, իսկ քաղաքում՝ 17):

1895թ. հայերի մահացության մասին նկատածը տեսնում ենք և այստեղ. 15 տարի շարունակ գավառում մահացությունը (թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց) ավելի ցածր է, քան թե քաղաքում, գավառի կանանց մահացության %-ը ցածր է տղամարդկանց մահացության %-ից (1881-1895 թթ. գավառում 1000-ի համեմատ ավելի քիչ կին է մեռնում, քան տղամարդ), իսկ քաղաքում ընդհակառակը, կանանց մահացությունը շատ մեծ է տղամարդկանց մահացությունից:

Մահացությունը հայերի մեջ ըստ ամիսների 1885-1890թթ.

Ամիս	Գավառում 100-ից վախճանվել են							Քաղաքում 100-ից վախճանվել են						
	1885	1886	1887	1888 ¹	1889	1890	1885 մինչև 1890	1885	1886	1887	1888	1889	1890	1885 մինչև 1890
հունվար	11	10	5	-	9	14	9,8	14	15	18	11	6	16	11,6
փետրվար	9	8	3	-	4	8	6,4	10	14	13	9	6	11	10,5
մարտ	8	10	5	-	3	7	6,6	12	6	12	14	6	15	10,9
ապրիլ	9	8	5	-	3	7	6,4	6	8	8	5	6	6	6,5
մայիս	4	5	5	-	4	5	4,6	6	6	8	6	5	8	6,5
հունիս	8	8	7	-	4	5	6,4	3	8	9	8	5	5	6,3
հուլիս	8	8	11	-	8	5	8	4	9	10	8	7	4	7

¹ Թվերը պակասում են



Տարի	Պատկերների թիվը	Ծնվածների թիվը			Ննջեցյալների թիվը			Ավելացել են			Բնակիչները 1000-ներում	1000 բնակչին ընկնում են			
		արական	իգական	միասին	արական	իգական	միասին	արական	իգական	միասին		պատվեր	ծառայություն	ննջեցյալներ	ավելացածներ
1886	340	742	630	1372	165	95	260	577	535	1112	58	5,8	23,6	4,4	19,2
1887	395	987	671	1658	565	309	874	422	362	784	59	6,7	28,1	14,8	13,3
1888	-	1040	800	1840	337	238	575	703	562	1265	59	-	31,2	9,7	21,5
1889	244	1015	743	1758	546	333	879	469	410	879	60	4	29,3	14,6	14,7
1890	380	931	663	1594	616	456	1072	315	207	522	60	6,3	26,5	17,8	8,7
1891	365	1131	752	1883	659	426	1085	472	326	798	61	6	30,8	17,8	13
1892	433	986	749	1735	710	494	1204	276	255	531	62	7	28	18,6	9,4
1893	512	1162	892	2054	361	260	621	801	632	1433	63	8,1	32,6	9,8	22,8
1894	552	1128	794	1922	474	373	847	654	421	1075	63	8,7	30,5	13,4	17,1
1895	331	845	647	1492	318	237	555	527	410	937	64	5,2	23,3	8,7	14,6
1886-1895 ընթացքում	3552	9967	7341	17308	4751	3221	7972	5216	4120	9336	609	6,4	28,4	13,1	15,3
օգոստոս		5	7	9	-	13	9	8,6	9	7	7	11	9	6	8,2
սեպտեմբեր		7	7	12	-	12	10	9,6	9	8	7	7	11	7	8,2
հոկտեմբեր		11	9	11	-	13	8	10,4	7	4	4	6	14	6	6,8
նոյեմբեր		7	11	14	-	14	10	11,2	9	6	6	8	11	5	7,5
դեկտեմբեր		13	9	12	-	13	12	12	11	9	8	7	14	11	10

Եվրոպական երկրների մահացության համապատասխան թվերի¹ հետ համեմատած՝ Շուշու գավառի մահացության թվերը շատ ցածր են. այդ այն պատճառով, որ եվրոպական թվերի մեջ մտնում են և ծնվելուց հետո շուտով վախճանված մանուկները, իսկ մեզ մոտ դրանք, չմտնելով ծնվածների ցուցակի մեջ, վախճանվածների ցուցակի մեջ էլ չեն մտնում:

Թե՛ գավառում և թե՛ քաղաքում ամենից քիչ ննջեցյալներ լինում են ապրիլ, մայիս (մինիմում) և հունիս ամիսներին, ամենից շատ ննջեցյալներ լինում են գավառում՝ հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և հունվար ամիսներին, իսկ քաղաքում՝ դեկտեմբեր, հունվար (մաքսիմում), փետրվար և մարտ ամիսներին:

1886թ. սկզբից մինչև 1896թ. սկիզբը (տասը տարվա ընթացքում) գավառի հայ ծնվածների ավելը մեռածների համեմատ հավասար է 9336 (5216 արական, 4120 իգական), իսկ քաղաքում՝ 2491 (1269 արական, 1222 իգական): Ամեն տարի միջին թվով 1000-ի համեմատ ավելացել են գավառում 15,3, իսկ քաղաքում՝ 13,9: Այս երկու թվերն էլ շատ բարձր են² եվրոպական ժողովուրդների ավելա-

¹ Արևմտյան Ավստրիա՝ 29,3 (1000-ից մեռնում են), Գերմանիա՝ 26,8, Բուլղարիա՝ 30, Շվեյցարիա՝ 23,5, Ֆրանսիա՝ 22,4, Ֆինլանդիա՝ 22

² Ծնվածների ավելը մեռածների համեմատ Գերմանիայում (1000 բնակչի համեմատ) հավասար է 11,4, Ֆրանսիայում՝ 2,3, Մեծ Բրիտանիայում՝ 13,9, Բուլղարիայում՝ 9,2, Շվեյցարիայում՝ 7,3, Բելգիայում՝ 10, Շվեդիայում՝ 12,1, Ֆինլանդիայում՝ 7,1 (1881-90 թվականների համար)



ցածների %-ից: Ավելացածների տոկոսը քաղաքում, քանի գնում, պակասում է, իսկ գավառում՝ ավելանում:

**Հայ բնակչության աճը
Մուսուլմանների «ավելը» գավառում 1886-1895 թթ.
(բնակչության բնական աճը)**

Մուսուլմանների ավելը քաղաքում 1886-1895թթ.

Հայ

Տարի	Պատվերի թիվը	Ծնվածների թիվը			Նեղեցյալների թիվը			Ավելացել են			Բնակիչների 1000-ներով	1000 բնակչին ընկնում են			
		արական	իգական	առնասարակ	արական	իգական	առնասարակ	արական	իգական	առնասարակ		պատվեր	ծնունդներ	նեղեցյալներ	ավելացածներ
1886	170	325	281	606	118	109	227	207	172	379	15	11,3	40,4	14,4	26
1887	151	318	310	628	166	143	309	152	167	319	16	9,4	39,2	19,3	19,9
1888	136	336	291	627	195	125	320	141	166	307	16	8,5	39,2	20	19,2
1889	120	322	346	668	249	235	484	73	111	184	17	7,1	39,3	28,4	10,9
1890	130	299	280	579	173	154	327	126	126	252	17	7,6	34	19,2	14,8
1891	170	345	280	625	228	226	454	117	54	171	18	9,4	34,6	25,2	9,4
1892	170	323	303	626	235	218	453	88	85	173	19	9	33	24	9
1893	142	324	315	639	179	178	357	145	137	282	19	7,5	33,6	18,8	14,8
1894	139	294	311	605	207	205	412	87	106	193	20	7	30,2	20,6	9,6
1895	142	326	279	605	193	181	374	133	98	231	21	6,7	28,9	17,9	11
1886-1895	1470	3212	2996	6208	1943	1774	3717	1269	1222	2491	178	8,2	34,8	20,9	13,1

**բնակչության իսկական աճը 1886թ. սկզբից մինչև 1895թ. սկիզբը
(Էմիգրացիա և բնական աճ)**

	Բնակչությունը 1886-ի սկզբին	Բնակչությունը 1895-ի սկզբին	1868-1895 թթ. բնակչության իսկական աճը	1886-1895 թթ. բնակչության աճը (ծնունդների ավելը)	Իմիգրացիայով ավելացած (+) կամ էմիգրացիայով պակասած (-) բնակչության թիվը	Բնակչության իսկական աճը 1886-1895 թթ. տոկոսներով
Գավառ և քաղաք	73081	84569	11488	10659	+829	15,6%
Գավառ	57893	63985	6092	8399	-2307	10,4%
Քաղաք	15188	20584	5396	2260	+3136	35,5%



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր մարդու համար, մի մարդու, որ ցանկանում է ճանաչել յուր հայրենակիցներին և նրանց կյանքի զանազան երևույթները պարզել յուր և ուրիշների համար, գործը վերին աստիճան դժվար է: Որպեսզի տալ, օրինակ, Շուշու գավառի տնտեսական դրության լիակատար նկարագիրը, բավական չէ շրջել այդ գավառում իբրև տուրիստ, որին ժողովուրդը ցանկություն անգամ չունի անսխալ տեղեկություններ տալու: Եվ այդ որոշ չափով հասկանալի է. ծանր պայմանների մեջ ապրող գյուղացին կարծում է, թե յուրաքանչյուր ճշմարիտ տեղեկություն, որ նա տալիս է, պիտի ավելացնի մի նոր հոգս նրա չարատանջ կյանքի մեջ, պիտի ավելացնի մի քանի ժամ առանց այն էլ հոգնեցնող աշխատանքի վրա: Նկատի պետք է ունենալ և տուրիստի միանգամայն զարմացնող դերը գյուղերում, երբ նա առաջարկում է հարցեր գյուղացուն: Հիշում եմ, երբ ես հարցնում էի սրանոցի տիրոջը նրա այդ սեփականության մասին, նա այնքան թերահավատությամբ էր նայում ինձ, որ այդ բոլորին իսկապես կարելի էր խղճալ նրան:

Բայց այդ բոլորը դեռ կարելի է լրացնել: Այն, ինչ որ պատմում է գյուղացին յուր և յուր երկրի մասին, դեռ բավական չէ այդ երկրի տնտեսական դրության լիակատար պատկերը ներկայացնելու համար: Պետք է ունենալ թվեր: Միակ աղբյուրը, որից ես կարողացել եմ հանել թվեր, այդ *«Кавказский календарь»*-ի մի քանի տարվա հատորներն էին: Բայց որքան կարելի է հավատալ այդ հրատարակության, քանի որ յուրաքանչյուր քայլափոխում պատահում են նորանոր անակնկալներ: Անկարելի է այդտեղից արտագրել թվեր՝ անհոգ մնալով նրանց ճշտության նկատմամբ: Կարելի է երևակայել ուսումնասիրողի դրությունը, երբ նա հանում է *«Кавказский календарь»*-ից մի տարվա հացահատիկի ընդհանուր քանակությունը և հետո համեմատելով այդ գավառապետի տված նույն տարվա մասին տված տեղեկությունների հետ՝ տեսնում է, որ մեկի թվերը չեն համապատասխանում մյուսին, այլ մեկը մյուսից տարբերվում է 70000-ով:

Իմ այս աշխատության մեջ պակասում են թվեր շատ հարցերի մասին: Այսպես, ես չեմ կարող թվերով ապացուցել հողատիրության դրությունը մեր գավառում: Եթե դրա մասին ունենայի ստույգ տեղեկություններ, առանց վարանելու պիտի ասեի այն, ինչ որ տեսնում է ճանապարհորդը գավառում: Կարելի է կարծել, թե աշխատությանս մեջ բերված մի քանի թվերը ճիշտ են բոլոր բնակիչների համար: Եթե այդ այդպես լիներ, այն ժամանակ կասկած չէր մնա, որ Շուշու գավառի գյուղացին ապրում է բարօրության մեջ: Եթե յուրաքանչյուր հոգի ունենար 4 չետվերտ հացահատիկ, ինչպես այդ կտեսնի ընթերցողը իմ հոդվածում, եթե յուրաքանչյուր տուն ունենար ձի, ոչխար, եզ ու կով, այն ժամանակ նա կունենար առնվազն բարեկյաց երկրագործի վիճակը, բայց մի՞թե այդ ճիշտ է իրականության մեջ: Գավառում կան ծխեր, որոնք ունեն մի կամ երկու դեսյատին հող, մինչդեռ յուրաքանչյուր ընտանիքի անդամների թիվը 6-10 է: Չորեք գյուղացին ունի ավելի հող, քան նա, որ ճնշված է, նա, որ հասարակության մեջ դիրք չունի: Հացի սակավությունը բերում է պարտքեր, որոնք աներևակայելի տոկոսներ են բերում պարտատերերին: Ամեննին ստախոսություն չպետք է համարել, եթե գյուղացին հայտնում է 10 տուրլու 100 դառնալը կարճ ժամանակվա ընթացքում: Հետո, կան գյուղերում մարդիկ, որոնք պարապում են բացառապես վաշխատությամբ: Դրանք շրջում են գյուղերն ամբողջ տարին և ամենայն ջանք թափում են իրենց գործը օգտավետ դարձնելու հարկերի հավաքման ժամանակ: Մի գյուղացի, որին մտրակով ստիպում են շաքաթվա ընթացքում, որտեղից էլ լինի, փող ճարել և վճարել արքունի հարկը, անկասկած թեթևություն է զգում, երբ տեսնում է, որ վաշխատուն պատրաստ է անհրաժեշտ գումարը տալ իրեն: Բայց ինչքան թանկ է նստում այդ թեթևությունը գյուղացուն:



Ենթադրենք գյուղացին վերցրել է պարտք: Կալից հետո նա տալիս է տոկոսը ցորենով, որովհետև փող չունի: Ցորենը գնահատվում է ավելի ցածր, քան կարող էր վաճառվել: Դրամագլուխը հետզհետե մեծանում է՝ չնայելով որ գյուղացին վճարում է տոկոսը: Անպաշտպան գյուղացին գանգատվել այդ անիրավության դեմ չի կարող, որովհետև գյուղական դատարանը պաշտպան է վաշխառուին. տանուտերը հաճախ ինքը վաշխառու, իսկ բարձր դիստանցիաները մատչելի չեն ժողովրդին: Բացի դրանից, գյուղացին ունի տալու «չափարփուլի», «գյազմափուլի», «ղաչիփուլի», և պիտի տա փող՝ գանազան ոստիկանների և այլ պաշտոնյանների հյուրընկալելու համար: Վերջապես նա ունի ընտանիքի ծախքեր: Այն, ինչ որ կարելի է ասել գյուղական ժողովրդի ընտանեկան ծախքերի մասին 10 տարի առաջ, այժմ չի կարելի, որովհետև հետզհետե ավելանում են գյուղացու պահանջները: Այսպես, եթե տասը տարի առաջ գյուղացու խմելիքը միայն սառը ջուրն էր, այժմ նա գործ է ածում թեյ, եթե մինչև այժմ նա գաղափար չուներ թանկագին խմիչքների մասին, այժմ ունևոր դասակարգի հարսանիքում նա տեսնում է «կոնյակ»: Նույն տարբերությունը և զգեստների, ուտելիքի վերաբերմամբ:

Տնտեսական պայմանների ծանրությունը կարելի է պարզել մասամբ և գործարանային բանվորների երևույթով:

Մետաքսի գործարաններում աշխատում են 8 տարեկան աղջիկներ: Անկասկած, ընտանիքը չէր թողնի իր երեխային դեղնել, գունատվել և հիվանդանալ գործարանական կեղտոտ մթնոլորտի մեջ, եթե նա ապահովված լիներ: Այդ նշանակում է, որ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը հարկադրված է աշխատել՝ պահելու յուր գլուխը: Եթե գործարանը տար նշանավոր օրավարձ, ապա կարելի էր ասել, թե գյուղացուն գրավում է այդ, մանավանդ որ ժողովրդի մեջ փողը բացակայում է: Բայց չէ՞ որ երեխան ստանում է 7-10 կոպեկ օրավարձ: Գործարաններում աշխատում են նույնպես հասակավոր կանայք: Անշուշտ բարոյականության առաքյալները, տեսնելով հայ կնոջը գործարանի պատերի մեջ՝ ծախելիս յուր աշխատանքը և իրեն, պիտի պոռային ազգի կորստի մասին: Բայց հայ «բարձրակոչ» բարոյականությունն անգամ չդիմացավ գոյության պաշտպանության հարցում. իրականությունն այսպես է:

Գործարանների աճումը նույնիսկ ցույց է տալիս երկրի բնակիչների տրամադրությունը: Մի գյուղ, որ ունի փող, բացի բնական հարստություններից, ամեննին թույլ չի տա յուր որդիներին գործարանում աշխատելու: Այդ դիպվածում գործարանատերը կամ պիտի յուր հետ բանվորներ բերի, որ շատ թանկ կնստի նրան, կամ գործարան չբանա այդ գյուղում: Ընդհակառակը, մենք տեսնում ենք, որ նույնիսկ կան ձեռքեր, որոնք կառաջարկեին իրենց աշխատանքը, եթե նորանոր գործարաններ բացվեին: Մի փաստ էլ: Այն գյուղերը, որոնք ունեն մետաքսի գործարան, հարկերի հավաքման ժամանակ դժվարություն չեն զգում, փող ունեն: Այստեղից էլ այն եզրակացությունը կարելի է անել, թե գործարան ունեցող գյուղի ծխերի մեծ մասը տալիս են բանվորներ...

Բացի վերը հիշած «Кавказский календарь»-ներից, ես ունեցել եմ 1895 թ. գավառապետի տարեկան հաշիվը, հետո արհեստավորների և բանվորների մասին ինձ տեղեկություններ տվել է պր. Լ. Աթաբեգյան:



**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ**

Հացահատիկներ. Երկրագործությունը Շուշու գավառում ամենակարևոր պարապմունքն է: Գավառի դաշտային և լեռնային մասերում հողը մշակվում է արորով (ալաթ), իսկ գութանը, որը պահանջում է ավելի մեծ թվով բանվոր և անասուն, գրեթե վերացված է: Եթե չհաշվենք մի քանի ունևոր գյուղացիներին, գավառում ժողովուրդը երկրագործական եվրոպական տեսակի գործիքներ չունի: Տիրապետող սակավահողությունը չի ստիպում գյուղացիներին ունենալ կատարելագործված մեքենաներ, որովհետև նրանք չունեն փող, գավառում չկա համայնական վարկ և ժողովուրդը չունի տեխնիկական գիտելիքներ: Հայ երկրագործը բոլորովին չի պարարտացնում հողը. աղբը նա գործածում է իբրև վառելիք (եթե անտառներ չկան) և սակավ անգամ միայն կտրում է այգիները: Միակ միջոցը, որով գյուղացին ուժեղացնում է հողը, դա արտերի անցան թողնելն է (запущение): Եթե երկու-երեք տարի մի արտում ցանեն, երրորդ կամ չորրորդ տարին նույն արտը չեն մշակում, այլ թողնում են մի կամ երկու տարի, որից հետո ցանում են կամ դարձյալ առաջվա արմտիքը կամ մի այլը: Հազիվ է պատահում, որ միևնույն արտը երեք տարի իրար վրա ցանվի, սովորաբար երրորդ տարին ուրիշ հացահատիկ են սերմում: Ջրովի արտեր մեր երկրագործը չունի:

Սակավահողությունը, բանող անասունի պակասությունը հաճախ ստիպում են գյուղացիներին կամ բոլորովին չպարապել երկրագործությամբ, պանդխտել, կամ եթե պարապում են՝ միանալով իրենց համագյուղացիների հետ, ընկերովի: Այսպես, եթե գյուղացին չունի գոնե մի լուծ եզ, մինիմում երկու գույգ, նա ընկերանում է իր համագյուղացու հետ, և երկուսը միասին մշակում են ունեցած հողերը, կամ՝ համագյուղացիները միանալով վերցնում են մի երրորդից հող և, մշակ ու հոտաղ վարձելով, միասին տանում են գործը: Ստացած բերքի չորրորդ մասը տրվում է նրան, որից վերցվել է հողը, իսկ մնացածը կիսվում է:

Հացահատիկների ցանքով պարապող գյուղացիների թիվը հետզհետե ընկնում է: Թաղլարում այդ ավելի աչքի է ընկնում, որովհետև այդտեղ բնակիչների մոտ 2/3-ը միայն պարապում է այդ ցանքով:

Ցանվող հացահատիկները հետևյալներն են՝ աշնանացան և գարնանացան ցորեն, գարի և կորեկ: Ձեռքի տակ ունեցած նյութերից հանելով Շուշու գավառին վերաբերյալ թվերը՝ երևում է, որ ստացված հացահատիկների ընդհանուր քանակությունը հետևյալ ութ տարիներում եղել է.

		Տարիներ							
		1886	1889	1890	1891	1892	1893	1894	1895
Չեովերսներ	Ստացված է հացահատիկ գավառում	424,566	149,146	147,745	257,417	386,750	481,358	508,230	620,700
	Մի հոգուն ընկնում է	4,11	1,39	1,37	2,37	2,52	4,34	4,54	5,5

1886 թվականին Շուշու գավառի գյուղացին ունեցել է ավելի մեծ քանակությամբ հացահատիկ, քան հարկավոր էր նրան կերակրվելու և սերմահատիկ պահելու համար: Գալիս է 1889 թվականը,



երբ գյուղացին չունի հացի անհրաժեշտ քանակությունը, 1890թ.՝ նույնպես, նույնը կարելի է ասել 1891 և 1892 թվերի մասին, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ գյուղացին բացի անհրաժեշտ քանակությունից, պիտի շատ ավելի ունենար, որպեսզի կարողանար ծածկել նախորդ տարիների վնասները: Չմոռանանք, որ 1879, 1880 և 1881 թվականներն էլ գյուղացին անց է կացրել դժվարությամբ և անկասկած պարտքերի տակ է մնացել: Գյուղերում շատերից կարելի է լսել սովի տարու պարտքերի մասին: Այսպես ուրեմն, 1889թ. ցանքի անբերրիությունը և նրա հետևանքները մասամբ մոռացվում են միայն 1893-ին, որից սկսած մինչև 1895 թ. գյուղացին արդեն բավական հաց ունի, որը, սակայն, չի տալիս այն օգուտը, ինչ որ սպասում էր նա, որովհետև 1894 թվականից հացի գինը նկատելի կերպով ընկնում է:

Հիշելու է և այն հանգամանքը, որ գավառը գրեթե միայն տալիս է քաղաքին հաց: Իրավ, եթե Ջիբրայիլի և Ջիվանշիրի հացահատիկ բերեին Շուշու շուկաները, անկասկած պիտի չունենային այն օգուտը, ինչ որ ունենում է մեր գյուղացին: Այդ բավական պարզ է, որովհետև ճանապարհների հեռավորությունը, ժամանակի և աշխատանքի վատնումը Ջիբրայիլի կամ Ջիվանշիրի գավառի գյուղացիների համար ավելի մեծ է, քան Շուշու գավառի, մինչդեռ քաղաքի շուկաներում հացի տիրապետող գինը մնում է գավառի ամենամոտիկ և ամենահեռու, ամենալավ և ամենավատ հացերի գնի միջինը:

Այդպես ուրեմն, Ջիբրայիլի և Ջիվանշիրի գավառները, եթե վաճառում էլ են հաց Շուշու շուկաններում, այն էլ՝ աննշան քանակությամբ: Եթե այդպես է, նշանակում է մեր գավառի գյուղացին իր հացի մի մասը տալիս է քաղաքին: Հետո՝ վերը բերած աղյուսակի թվերի մեջ մտնում է և կարտոֆիլի քանակությունը, որը, սակայն, գյուղացին չի գործադրում իբրև հաց: Իսկ գարին բացառիկ դիպվածներում միայն հացի տեղ է գործադրվում:

Ցույց տալու համար առանձին-առանձին ցանվող հացահատիկները և նրանց քանակությունը, մեկից ստացածը և մի հոգու վրա եկող հացի քանակությունը միայն գավառում, դնում ենք համապատասխան աղյուսակ: Այդ չորս տարուց ընթերցողը կարող է տեսնել, որ հացահատիկների մեջ գերադաս տեղ բռնում է աշնանացան ցորենը, որից հետո գալիս է գարին և ապա՝ կորեկը: Այդ դասավորությունը բնորոշ է գավառի համար ոչ միայն այդ մի քանի տարիների վերաբերմամբ, այլև ընդհանրապես:

Հացահատիկի ցանքը և բերքը Շուշու գավառում

Տարիներ	ՑՈՐԵՆ							ԳԱՐԻ				ԿՈՐԵԿ				Գավառի բնակիչների մտավոր թվերը
	Աշնանացան			Գարնանացան				ցանված է	ստացված է	մեկից սա.	մի հոգուն գալիս է	ստացված է	ցանված է	մեկից սա.	մի հոգուն գալիս է	
	ցանված է չետվերտ	ստացված է չետվերտ	մեկից չետվ ստացվածը	ցանված է	ստացված է	մեկից 4 տ.	մի հոգուն գալիս է									
1886	58,419	292,905	5,0	5,509	23,060	4,18	3,06	17,696	95,450	5,5	0,92	1,409	12,681	9,0	0,12	103,185
1889	35,097	81,208	2,3	2,180	3,370	1,7	0,79	20,458	51,970	2,5	0,48	3,802	8,376	2,2	0,07	106,635
1891	52,335	117,630	2,5	5,600	10,400	2,0	1,7	23,893	66,227	2,77	0,6	21,059	46,260	2,1	0,4	108,942
1894	71,104	367,733	5,1	8,000	40,200	5,0	3,65	17,000	87,000	5,1	0,77	19,700	102,500	5,2	0,9	111,735



Բամբակ. Երկրագործական պարապմունքներից մեկն էլ, իբրև գյուղատնտեսական շահավետ մի ճյուղ, բամբակի մշակումն է: Երկար ժամանակ չէ, որ բամբակը տարածվել է Շուշու գավառում, հազիվ 10 տարի առաջ սկսված լինի տնտեսությունը: Սակայն կարճ ժամանակի ընթացքում նա բավական առաջ է գնացել: Հավանաբար բամբակի առաջադիմությունը բավական սերտ կապ ունի այն հանգամանքի հետ, որ տարվա որոշ ժամանակին ժողովուրդը կարող է փող ունենալ բամբակի վաճառումից, իսկ այդ փողը շատ կարևոր է գյուղացուն պետական հարկերի և գանա-գան ծախքերի համար, որոնք նա չի կարողանում ծածկել հացահատիկների ցանմամբ միայն: Ներքև բերված թվերը ցույց են տալիս մաքուր բամբակի այն քանակությունը, որ ստացված է 1890, 1893, 1894 և 1895 թվականներին.

1890թ.՝ 2,138 փ., 1893թ.՝ 4,3008 փ., 1894թ.՝ 4,474 փ., 1895թ.՝ 4342 փ.:

Կարտոֆիլ. Գանձակի նահանգում Շուշու գավառը գրեթե երկրորդ տեղն է, ուր մեծ քանակությամբ կարտոֆիլ է ցանվում: Հետևյալ վեց տարիներում ստացված է կարտոֆիլ (*տե՛ս աղյուսակը*):

Այս աղյուսակի թվերից պարզ երևում է, որ տաս տարի առաջ գավառում կարտոֆիլ ցանում էին աննշան քանակությամբ, այնինչ այժմ շատ մեծ ծավալ է ստացել այն, և ցանվում է ավելի մեծ քանակությամբ, քան օրինակ գարնանացան ցորենը:

Տարիներ	1886	1889	1890	1891	1893	1894
Ցանված է չետվերտ	94	530	4,950	3,070	16,830	13,753
Ստացված է չետվերտ	470	3,882	18,450	16,850	85,570	73,59

Երկրագործական բանվորներ. Սրանք պատկանում են գյուղական ժողովրդի այն մասին, որը չունի երկրագործության համար անհրաժեշտ բանող անասունը, գործիքները և բավականաչափ հող, բացի դրանից ունի բավականաչափ պարտքեր: Գյուղացիներն, այդ պայմաններից ստիպված, կա՛մ թողնում են իրենց ծննդավայրն ավելի երկար ժամանակով, կա՛մ պանդխտում են շրջակա թուրք գյուղերը՝ նրանց դաշտերում աշխատելու համար և կա՛մ վերջապես, եթե հնարավոր է, աշխատում են իրենց համագյուղացիների մոտ:

Հասակավոր գյուղացին չի ծառայում յուր համագյուղացուն ամբողջ տարով. քչերը միայն գարնանը կամ աշնանը աշխատում են ուրիշի արտերում և ստանում 7-10 ռուբլի ամսավարձ:

Վերն ասացի, թե աղքատ գյուղացին պանդխտում է շրջակա թուրք գյուղերը աշխատանք գտնելու համար. դրանք հետևյալներն են.

1. Վարող. Մա ցանում է մահմեդական գյուղացու արտերը՝ գործադրելով նրա անասունը, գործիքները և սերմնահատիկը: Գործատերը տալիս է վարողին մի օգնական, վարողն էլ պարտավորվում է մասնակցել հնձին և ստանում է բերքի 1/5-ը:

2. Հնձող. Ստանում է 20-ից 3-ը, ինչպես ասում է գյուղացին, կամ 15%: Եթե վարձը տրվում է փողով, հնձողը ստանում է յուրաքանչյուր փանջակի համար՝ 5 խուրձ, 20-25 կոպեկ և կարող է հնձել օրը 4 փանջակ, մինիմում՝ 2 փանջակ:



3. Հոտաղ. Սա տարիքով ավելի փոքր է, քան վարողն ու հնձողը, որովհետև յուր գործը համեմատաբար ավելի քիչ ֆիզիկական ուժ և փորձություն է պահանջում: 10-15 տարեկան գեղջուկը ծառայում է յուր պարտատիրոջ տանը. վարձվում է ամբողջ տարով, գործատերը նշանակում է նրան 10-20 ռուբլի տարեվարձ, ստանում է ուտելիքը, հագուստն ու տրեխը:

Հոտաղը վարձվում է ամսով. այս դիպվածում նա ստանում է 4 ռուբլի ամսավարձ, ուտելիքն ու տրեխը:

Կին բանվորներ. Հայ կինը յուր գյուղից դուրս, ուրիշ գյուղի դաշտերում չի աշխատում: Նրա զբաղմունքը, իբրև երկրագործ բանվորի, քաղհանն է: Քաղհան անող կինը ստանում է 15-20 կոպեկ օրավարձ:

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այգեգործությունը գավառում վաղուց տարածված պարապմունք է ժողովրդի համար, իսկ վերջերս այն նկատելի կերպով ծավալվում է և երկրագործությունից հետո առաջ է գալիս իբրև ամենակարևոր տնտեսություն: Չի կարելի ասել, թե գյուղացին մեծ օգուտներ ունի այգիներից, որովհետև նա առայժմ մեծ քանակությամբ օղի¹ կամ գինի չի արտահանում:

Այգեգործության արդյունաբերածը մեծ գումարներ է տալիս հարուստ գործարանատերերին, իսկ գյուղացին ինքը հաճախ ծախում է յուր այգին կամ ավելի լավ է ասել, որոշ վարձատրություն ստանալով, զիջում է մի որևէ հարուստ գործարանատերի՝ շահագործելու մի տարի, և այդպես՝ գրեթե յուրաքանչյուր տարի: Խաղողի այգիներից ստացած գինին հայ գյուղացին գործադրում է տանը և միայն քիչ քանակությամբ վաճառքի է հանում: Գավառում յուր գինով հայտնի է Ղզղալան. վերջինիս տված գինին վաճառվում է ավելի թանկ գնով, քան մնացած տեղերինը: Թուրք ազգաբնակչությունը խաղողի այգիները կամ ծախում է՝ (գրեթե յուրաքանչյուր տարի) շահագործելու հայերին, կամ ինքը խաղողը վաճառում իբրև պտուղ: Խաղողից թուրքերը պատրաստում են բեքմեզ:

Շուշու գավառի հայ գյուղացու պատրաստած գինին շուտով թթվում է: Այս վերջին երևույթը, բացի այն, որ գիտության բացակայության հետևանք է, ունի մի այլ պատճառ էլ. դա գավառի աշխարհագրական դիրքն է և սրա հետ կապված՝ վաղաժամ ցրտերն ու ձմեռը, որոնք ստիպում են գյուղացուն խաղողը քաղել դեռ չհասած: Գավառի դաշտային մասերում և ավելի տաք տեղերում միայն քիչ ուշ է սկսվում խաղողաքաղը:

Գինին պատրաստվում է շատ հասարակ կերպով: Խաղողը թափվում է հնձանի կամ «չըվիչի» մեջ և հետո տղամարդիկ մերկ ոտերով սկսում են կոխոտել խաղողը. գոյացած հեղուկը թափվում է հնձանից կարասների մեջ, այդքանով վերջանում է գինի պատրաստելու պրոցեսը:

Ներքև բերած վեց տարիներում գավառում պատրաստված է գինի՝ վեղորոներով (դույլ) հաշված. 1884թ.՝ 95,406, 1885թ.՝ 40,000, 1890թ.՝ 130,000, 1893թ.՝ 180,000, 1894թ.՝ 186,000, 1895թ.՝ 17,900:

1895 թվականին գավառում ստացված գինու փոքր քանակը պիտի բացատրել այն հանգամանքով, որ այդ տարի գավառում տիրում էր խաղողի հիվանդություն: Իսկ ընդհանրապես թվերից երևում է, որ խաղողի այգիները բավական նշանավոր տեղ են բռնում երկրում: 1895թ. տեղեկություններից երևում է, որ գավառում խաղողի և թթի այգիները բռնում են 7-8 հազար դեսյատին հող, որից 5 հազարը՝ միայն խաղողի, իսկ 2-3 հազար դեսյատինը՝ թթի այգիները:

¹ Այգեգործությունն այստեղ սահմանափակվում է խաղողի և թթի այգիների մշակմամբ, որովհետև գավառում պտղատու ծառերի այգիները շատ չեն



Թթի այգիների շահագործությունը հայ գյուղացուն տալիս է որոշ չափով օդի և կերակրում է նրա շերամին: Թուրք ազգաբնակությունը բոլորովին չի պատրաստում օդի. թթի այգիները նա նվիրում է որդերի կերակրելուն:

1895 թվականին գավառում պատրաստված է 300,000 վեդրո օդի. հաշվելով վեդրոյի գինը 4ռ. 50 կապ.՝ կտեսնենք, որ այգեգործությունը, միայն օդի արտադրելով, տվել է 1,300,000 ռուբլի. եթե ավելացնենք դրա վրա գինին՝ 17,900 վեդրո՝ 23,270 ռուբլու արժողությամբ, կունենանք 1,323,270 ռուբլի: Այդ միլիոնը միայն ցույց է տալիս գավառի այգեգործության ահագին նշանակությունը իբրև գյուղատնտեսական նշանավոր և օգտավետ ճյուղերից մեկի, բայց նա չի ցույց տալիս ժողովրդի տնտեսական դրության աստիճանը: Իսկապես Շուշու գավառը տալիս է եկամուտներ, որոնց ամենամեծ մասը մնում է հոգուտ հարուստ այգետերերի և գործարանատերերի, իսկ ժողովուրդն այդ բոլորից վերցնում է այնքան, որքան կարող է վերցնել անփող, արդյունաբերական ձեռնարկության անկարող գյուղացին: Արդյունաբերված գինին և օդին գրեթե ամբողջովին դուրս է եկել նրա այգիներից, և նրա աշխատանքի պտուղն է, սակայն այդ բոլորից նա շահել է այնքան, որ պիտի շահեր, եթե տասնապատիկ պակաս աշխատած և քրտինք թափած լիներ, որովհետև նա ստիպված է եղել անձեռնտու պայմաններով վաճառել յուր այգիների պտուղը:

Այգեգործական բանվորներ.

1. **Դարիջի.** սա ստանում է ամբողջ սեզոնի համար, որը տևում է 6 կամ 7 շաբաթ, 10-15 ռուբլի: Հասակով դարիջիները լինում են 12-15 տարեկան:

2. **Թուրք թափողներ.** ստանում են ամսական 20 ռուբլի, ամբողջ սեզոնի համար՝ 30-35 ռուբլի: Սեզոնը տևում է հունիսի 10-ից մինչև հուլիսի վերջը:

3. **Շալ բռնող կանայք.** ստանում են ամսական մաքսիմում 6 ռուբլի:

4. **Խաղող քաղող կանայք.** ստանում են 10-20 կոպեկ օրավարձ:

5. **Խաղող կրող (տղամարդ).** ստանում են 30-40 կոպեկ:

6. **Խաղող կոխող (տղամարդ).** ստանում են 40-60 կոպեկ:

Գարնանը խաղողի այգիների հողը փափկեցնում են. դրա համար վարձվում են բանվորներ, որոնք բահում են այգու հողը և ստանում են 30-50 կոպեկ օրավարձ:

Օրավարձ բանվորը գործատիրոջ դրամական վարձատրությունից բացի ստանում է նաև կերակուր:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անասնապահությունը հայ ազգաբնակության մեջ զարգացած չէ: Նա կապված է երկրագործության հետ: Հայ ազգաբնակությունը չի պահում ավելի մեծ քանակությամբ անասուն, քան որքան հարկավոր է երկրագործական պահանջներին մինիմալ կերպով բավարարություն տալու համար: Նրա ամենաաննշան մասը միայն ունի մեծ քանակությամբ տավար, ոչխար, այծ ու խոզ: Տավարը նիհար է, հասակով ցած ու վատուժ: Մի քանի հայ գյուղեր միայն՝ Տումի, Թաղոտ, Ավետարանց և Շոշի, պարապում են անասնապահությամբ, սակայն այստեղ էլ վերջինս երկրագործության չափ զարգացած չէ, իսկ մնացած գյուղերում ավելի հաճախ պատահում են ծխեր, որոնք տավար բոլորովին չունեն, ինչու և երկրագործությամբ չեն պարապում: Տավարն արածում է արոտատեղերում և ցլած արտերում: Արոտատեղերը ըստ մեծի մասի գտնվում են թուրք ելաչիների ձեռքին, որոնք գարնանը չվում են տափարակներից լեռները:



Պր. Ա. Քալանթարի աշխատությունից¹ տեսնում ենք, որ տավարի քաշը 5-7-8 փուլ է: Կովը տալիս է օրական 8-15 ֆունտ կաթ՝ մայիսին և հունիսին: Ամբողջ տարվա համար, միջին թվով, կովը տալիս է ոչ ավելի, քան 9,5 ֆունտ:

Շուշու գավառում թուրք ազգաբնակչության մեջ անասնապահությունը բռնում է գերադաս տեղ՝ համեմատելով գյուղատնտեսության մյուս ճյուղերի հետ: Գարնան սկզբներին գավառի թուրքերը, թողնելով իրենց բնակչության վայրերը, չվում են լեռները, որտեղ անասնապահության վերաբերյալ բոլոր գործերը կատարում են կանայք: Տղամարդիկ մասամբ մնում են տափարակներում՝ իրենց վար ու ցանքին նայելու և հունձը հավաքելու: Գարնանը և ամռանը ստացած արդյունքներից թուրքերը վաճառքի են հանում մի մասը: Բուրդը, յուղը և պանիրը նրանք ծախում են հայերին, փոխանակում են ցորենով և այլն:

Կովից ստանում են օրական 8-15 ֆունտ կաթ՝ մայիսին և հունիսին, հետո՝ 4-6 ֆունտ: Կարելի է ասել, թուրքերի կովը տալիս է 8,25 ֆունտ կաթ՝ միջին թվով: Գտնելով առաջին և վերջին թվերի (9,5 և 8,25) միջինը՝ ստանում ենք մոտ 8,9 ֆունտ: Այդքան, ուրեմն, կաթ է ստացվում մի կովից պր. Ա. Քալանթարի տեղեկությունների համաձայն:

Ներքևում դնում եմ 1891 և 1895 թվերում գավառի ունեցած անասունների աղյուսակը:

Անասուններ	1891թ.			1895թ.		
	քաղաք	գավառ	բոլորը	քաղաք	գավառ	բոլորը
Ձի	210	6,212	6,422	370	12,600	12,970
Էշ	85	13,000	13,085	320	13,200	13,520
Ջորի	145	800	945	160	840	1,000
Եզ-կով	550	59,161	59,711	580	64,400	64,980
Գոմեշ-մատակ	-	10,000	10,000	-	11,200	11,200
Ոչխար (հաս.)	650	139,221	139,871	220	155,000	155,200
Այծ	66	5,644	5,710	380	8,200	8,580
Խոզ	-	12,880	12,880	60	22,000	22,060
Ուղտ	-	219	219	-	256	256

Խոզապահությամբ պարապում են միայն հայերը, իսկ ուղտերը պատկանում են թուրքերին:

Բացարձակ թվերից էլ երևում է, որ 1891թ. մինչև 1895-ը անասուններն ընդհանրապես բազմացել են: Այժմ տեսնենք՝ ինչպես է արտահայտվում այդ զարգացումը գավառի ազգաբնակչության թվի վերաբերմամբ: Վերցվում է միայն գավառը:

Անասուններ ²			Միերի մոտ թիվը		Բնակիչն. մ. թիվը		Մի ծխին գալիս է		Մի հոգուն գալիս է			
	1891	1895	1891	1895	1891	1895	1891	1895	1891	1895		
Ձի	13716	20250	18157	18778	10894	2	11266	8	0,75	1,07	0,125	0,179
Եզ-կով	79161	86800							4,38	4,56	0,75	0,79

¹ Калантар А.А., *Состояние скотоводства на Кавказе, В книге «Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и исследование скотоводства на Кавказе»*. Вып. 11, Тифлис, 1890

² Այս աղյուսակի մեջ բոլոր ջորիներն ու էշերը դարձված են ձիեր, գոմեշներն ու մատակները՝ կովեր, ուղտերն ու այծերը՝ ոչխարներ, հաշվելով մի ձիին՝ հավասար 2 էշի և 4/5 ջորու, մի կովը կամ եզը՝ 1/2 գոմեշի կամ մատակի, իսկ մի այծը՝ 5/6 ոչխարի



Ոչխար	143926	161835					7,9	8,6	1,32	1,43
Խոզ	12880	22000					1,22	2,02	0,2	0,37

Վերը բերված թվերից երևում է, որ յուրաքանչյուր ծխին 1891թ. ընկնում է 0,75 ձի, ասել է թե՛ այդ թվին գավառում կային ծխեր, որոնք ամեննին ձի չունեին: Եթե թվերն էլ չլինեին, այդ կարելի էր ասել համարձակ կերպով գոնե հայերի համար: Նույն բանը կարելի է ասել 1895 թվականի մասին. կոտորակն աճել է մինչև մի ամբողջ և ավելի:

Այսպես թե այնպես, թվերը ցույց են տալիս գավառի վերացական բարեկեցությունը, միջին հարստությունը, բայց իրողությունը: Եթե լինեին թվեր տնտեսական դրության մասին, որոնք ցույց են տալիս ձի, եզ, ոչխար և այլն չունեցող ծխերի քանակությունը, մենք պիտի տեսնենք, որ այդպիսիները կազմում են նշանավոր կոնտինգենտ: Հետո այդ չորս տարվա ընթացքում կրկնապատկվել է գավառի ձիերի թիվը: Այդ կրկնապատկումը բացատրել ձիերի աճմամբ չի կարելի՝ ընթերցողը կարող է ենթադրել, թե ազգաբնակչությունը վերը հիշած ժամանակի ընթացքում հարստացել է որոշ չափով, բայց գուցե այդ երևույթը հետևանք է գյուղական ունևոր դասակարգի հարստության զարգացման և ոչ գավառի ժողովրդի ընդհանրապես, որն ավելի հավանական է:

Ինչ վերաբերում է խոզերին, վերջիններս պատկանում են հայերին, որովհետև թուրք ազգաբնակչությունը խոզապահությամբ չի պարապում, ուստի երկրորդ աղյուսակի վերջին չորս սյունակների թվերը վերաբերում են միայն հայերին:

1891 թվականից մինչև 1895թ. յուրաքանչյուր տարի մի հազար մարդու վրա գավառում ավելացել է մոտ 37 հոգի, յուրաքանչյուր հազար ձիուն՝ 102 հատ, հազար ոչխարին՝ 102 հատ, հազար եզ-կովին՝ 125 հատ¹: Թեև այս թվերից գավառի համար օրինաչափություն հանել չի կարելի, բայց նրանք գոնե ցույց են տալիս, որ անասուններն այդ չորս տարվա ընթացքում աճել են ավելի արագ, քան մարդիկ:

Համեմատության համար մենք այստեղ բերում ենք Ռուսաստանի մի քանի նահանգների² վերաբերյալ թվեր, որոնցից ընթերցողը կտեսնի, որ այդ նահանգում յուրաքանչյուր ծուխն ավելի քիչ տավար և այլ անասուններ ունի, քան մեր գավառում:

Անասուններ	Մի ծխին գալիս է ռուս. նահանգ.		Մի ծխին գալիս է Շուշու գավառ	
	1862	1893	1891	1895
Ձի	2,06	0,59	0,75	1,07
Տավար	2,47	0,84	4,38	4,56
Ոչխար	7,87	2,02	7,9	8,6
Խոզ	1,66	0,37	-	-

1895 թվականին գավառում ստացված է բուրդ՝ 10 230 փութ, որից ծախել են 8 300 փ. -3 ռ.20 կոպեկով փութը, ընդամենը՝ 26 560 ռուբլի:

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Շերամապահությունը մեր գավառում վաղուց տարածված է: Գավառի բոժոժը մի ժամանակ եղել է իտալական դեղին տեսակից: Շերամապահ գյուղացին յուր տանը ոտնաչարխով պատ-

¹ Հազար խոզին՝ ավելացել է 115 հատ

² Այդ թվերը վերաբերվում են Նովորոսիայի, Մարրոսիայի և Չերնոգոլմի մի քանի նահանգներին: Տե՛ս «Нов. Время» № 7312, 14, 17 և 20



րաստելիս է եղել թել, որը գնել են տեղական վաճառականները և արտահանել արտասահմանյան քաղաքները:

Յոթասանական թվականներին գալիս են մեր գավառը ֆրանսիացիներ, որոնք մեծ քանակությամբ սերմ են հանում տեղական բոժոժից, իսկ արտասահմանյան հիվանդոտ սերմը բերում են տարածում գավառում: Այսպիսով, հիվանդանում է սերմի գործադրվող տեսակը և տեղի է տալիս ուրիշ տեսակներին: Սակայն այդ թվականներին տեղական (շուշեցի) վաճառականները արտասահմանից օրինակում են մանարանը և մետաքս ոլորող մեքենան, և այնուհետև սրանց բոլոր ջանքերը լինում են բերել առողջ սերմ՝ Յելյուսի եղանակով պատրաստած: Այդպիսով, շերամապահությունը կրկին առաջ է գնում: Այժմ գյուղացին սերմ ստանում է կա՛մ գործարանատերերից, կա՛մ ուրիշ մարդկանցից, որոնք շրջում են գյուղերը և սերմ բաժանում որոշ պայմաններով:

1890 թվին գավառում ստացված է բոժոժ 2138 փուլ, 1893-ին՝ 4300 փուլ, 1894-ին՝ 17000 փուլ և 1895-ին՝ 9000 փուլ: 1895 թվին, գավառապետի տեղեկությունների համաձայն, 4300 փուլ բոժոժ ուղարկված է արտասահման:

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գավառում մեղվապահությամբ պարապում են քչերը միայն, և ստացած մեղրը գյուղացին մեծ մասամբ օգտագործում է տանը: Ժողովուրդը մեղու պահել չգիտե, այնպես որ հաճախ փեթակները լցվում են որդերով, որոնք ոչնչացնում են մեղուներին: Այդ է պատճառը, որ գյուղացիների մեջ մեղվաբուծությունը տարածված չէ:

Ես ունեմ թվեր, ստացված մեղրի և մոմի քանակության մասին միայն 1895թ. համար, որ և բերում եմ.

Մեղվապահությամբ պարապող ծխերի թիվը	Փեթակների թիվը	Ստացված է մեղր	Ստացված է մեղրամոմ	1000 ծխին ընկնում է մեղվապահ ծխեր	Մի փեթակից ստացվել է մեղր մոմ
		փուլ	փուլ		փուլ
46	283	75,6	9,8	2,44	0,3

ՉԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ

Վարանդայում մեծ լճեր և գետեր չլինելու պատճառով հատկապես ձկնորսությամբ պարապողներ չկան, միայն սիրողները, այն էլ ազատ ժամանակներում, որսում են մի քանի տեսակ ձկներ, որ գլխավորապես իրենք են գործածում և կամ շատ քիչ դեպքերում վաճառքի հանում: Բացի սովորական ուռկանից (թոռ), գործ են ածում և ճվարան: Սա կոնսաձև հյուսված մի կողով է, մեջը մտցրած մի երկրորդը, որ ավելի փոքր է և երկու ծայրից էլ բաց: Մեծի մեջ թափում են հացի փշրանքներ և առհասարակ այնպիսի բաներ, որ կարող են գրավել ձկներին:

Ճվարանը տեղավորում են մի այնպիսի անկյուն, ուր ջուրը թափվում է աննշան բարձրությունից: Ձկները մտնում են ճվարանի մեջ, և երբ վերջինս հանում են, նրանք մեջն են մնում: Ձուկ որսում են նաև ջրի ընթացքը փոխելով:

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Որսորդությամբ պարապում են նույնպես սիրողները՝ գործածելով առավելապես ամբողջ Կովկասում գործածական հին ձևի զենքերը: Սպանած որսը մեծ մասամբ իրենք են գործածում և կամ ծախում են սովորաբար իրենց գյուղում: Առավելապես Ավետարանոց, Թաղլար, Թաղավարդ



և այլ գյուղերի բնակիչներն իրենց շրջակա անտառներում որսում են եղջերու, այծյամ (քոշ), արջ, գայլ, վայրի կատու, չաղալ և այլն: Առհասարակ խմբով են գնում որսի և թռչուն որսալու համար տանում են իրենց հետ «դամլա», որ քառանկյունի մի շրջանակի վրա կպցրած գույնզգույն կտոր է: Սրա վրա կան երեք ծակ, երկուսը որսորդի աչքերի, իսկ երրորդը հրացանի համար: Թռչնորսը դամլան ձեռին առաջ է գնում՝ ծածկվելով նրա ետևում:

Թռչուններին «ծղարակով» էլ են որսում: Այգու մեջ կամ որևէ հարմար տեղ մի փոս են փորում և բերանը ծածկում երկու բարակ տախտակով՝ փեղկերի նման: Սրանք հենվում են չիլփիների վրա (թարմ ու ճկուն ոստիկներ), որոնք թվով չորսն են՝ յուրաքանչյուր փեղկի համար երկուսը և կատարում են զսպանակի դեր: Երբ թռչունը կանգնում է տախտակների վրա, չիլփիները նրա ծանրությունից կռանում են, փեղկերը բացվում են փոսի մեջ, և նա ընկնում է ծղարակը: Դրանից հետո չիլփիները կրկին ուղղվում են, փոսը ծածկվում է, և թռչունը մնում է փակված:

ԱՐՀԵՍՏՆԵՐ

Արհեստները մեր գավառում բավականին տարածված են, և նրանցով պարապում են բացառապես հայերը: Իհարկե, խոսքը գյուղերի մասին է, ոչ քաղաքի, ուր թուրքերն էլ զբաղվում են արհեստներով, բայց շատ սահմանափակ կերպով: Ամենից ավելի տարածված արհեստները քարտաշությունը, որմնադիրությունը և հյուսնությունն են: Չնայելով արհեստավորների թվի մեծության՝ նրանցից միայն քչերը մնում են գավառում, իսկ մեծ մասը պանդխտում է զանազան կենտրոններ՝ աշխատանք գտնելու համար: Դրանք պանդխտում են հաճախ կարճ ժամանակով և հետո վերադառնում, մնում են տանը որոշ ժամանակ և դարձյալ գնում են: Ինչ վերաբերում է գավառում մնացող արհեստավորներին, նրանք մեծ մասով երկրագործներ էլ են: Դրանք բոլորը ստանում են գործատերից կերակուրը, իսկ գործատերը աշխատությունների մեջ ակտիվ մասնակցություն է ունենում: Կան և այնպիսի արհեստավորներ, որոնք մի քանի արհեստ գիտեն:

Արհեստավորների բանվորական օրն սկսվում է գյուղում վաղ առավոտից և տևում է մինչև երեկոյան վերջալույսը՝ մի ժամի չափ դադար ունենալով:

Վարպետը գավառում յուր աշակերտի տերն է: Գործ մտնելու օրից աշակերտը յուր տան համար գրեթե չպիտի աշխատի: Նա մինչև քարգահ դառնալը բացի վարպետի հետ աշխատելուց, արհեստին վերաբերյալ գործերը կատարելուց, ծառայում է և նրա տանը:

Արհեստավորի բանվորական օրը քաղաքում սկսվում է գրեթե ժամը 5-ից և մինչև 6 կամ 7-ը: Կան արհեստավորներ, որոնք ավելի շուտ են վերջացնում օրվա աշխատանքները: Դադարը լինում է միայն կեսօրին՝ ճաշի համար, և տևում է այնքան ժամանակ, որքան հարկավոր է ճաշելու համար:

Ներքև դնում են ցուցակ գավառի այն արհեստավորների, որոնք պարապում են միայն իրենց արհեստով, ապա պիտի հիշեմ նրանց, որոնք զբաղվում են իրենց արհեստով միայն ձմեռը:

1. **Դերձակներ.** սրանք կատարում են ոչ միայն մի գյուղի պատվերները, այլև շրջակա հայ և թուրք գյուղերինը:

2. **Հյուսներ՝** նույնպես:

3. **Դարբիններ.** ձմեռը գնում են թուրք գյուղերը և այնտեղ աշխատում:

4. **Պայտառներ,** որոնք աշխատում են որևէ գյուղում և շրջակա թուրք գյուղացիների համար: Պայտառները չորեքշաբթի օրերն աշխատում են մալականների շուկայում: Նրանք պայտերը ստանում են Շուշուց:

5. **Տակառագործներ.**



6. Որմնադիրներ.

7. **Երաժիշտներ.** բոլոր գյուղերում երաժիշտներ չկան. եթե որևէ գյուղ ունի երաժիշտներ, շրջակա թուրք և հայ գյուղերն էլ հրավիրում են նրանց:

8. Անասնաբույժներ.

9. Մսագործներ:

Դերձակներ, կլեկչիներ, դարբիններ և տակառագործներ, որոնք ուրիշ արհեստներ էլ ունեն: Մափրիչներ. Թաղարում կա մի սափրիչ, որը և՛ որմնադիր է, և՛ հյուսն, և՛ ձեթ պատրաստող, և՛ օղեգործարանատեր:

Նույն գյուղում կա մի համեսագործ և մի դերձակ, որոնք աշխատում են պատվիրատուի տանը՝ գործադրելով նրա մատերիալը:

Արհեստավորների աշակերտներ. Բոլոր աշակերտները մինչև քարգահ դառնալը ստանում են իրենց վարպետներից հագուստ և կերակուր, իսկ վարձ չեն ստանում:

1. Դերձակի աշակերտը երկու տարի վարձ չի ստանում, հետո իբրև քարգահ, ստանում է 25-50 ռուբլի տարեվարձ:

2. Դարբնի աշակերտը երկու և կես կամ երեք տարի սովորում է. դարբնի քարգահն ստանում է եղած արդյունքի 1/4-ը:

3. Կլեկչու (կլայեկոդ) աշակերտը սովորում է արհեստը 6 ամսում, դրանից հետո, եթե ընկերանում է վարպետի հետ, ստանում է արդյունքի 1/3-ը: Կլեկչիները գյուղում իրենց վարձը ստանում են արմտիքով:

4. Տակառագործի աշակերտը սովորում է արհեստը 2,5 կամ 3 տարվա ընթացքում, հետո, իբրև քարգահ, ստանում է 40-50 ռուբլի տարեվարձ:

Կին արհեստավորներ.

1. **Հացթուխ.** բացառապես հացթուխությամբ պարապող կանայք գավառում շատ քիչ են, որովհետև յուրաքանչյուր տանտիկին գիտե հունցել և թխել: Երեք պատ հաց թխելուց հետո՝ մի ժումում նա ստանում է 3 հատ բռոզ:

2. **Բուրդ գզող.** ստանում են 10 կոպեկ օրավարձ:

3. **Թել մանող.** ստանում են 10 կոպեկ օրավարձ

4. **Կարպերտ գործող** կինը մի կազ երկարության և երկու կազ լայնության կարպետը գործելուց հետո ստանում է 2 ռ. 50 կ.-3 ռուբլի: Գործը տևում է մոտ մի ամիս: Օրավարձով կարպերտ գործողը ստանում է 10-20 կոպեկ: Պետք է ասել, որ Շուշու գավառում բավական զարգացած է գորգագործությունը: Թեև առանձին գործարաններ չկան, բայց շատ տներում գործում են գորգ, կարպերտ, ձիու չուլ և այլն:

1895թ. գավառի արհեստավոր վարպետների, աշակերտների և բանվորների թիվը ցույց է տալիս ներքև զետեղած աղյուսակը:

Արհեստավորներ	Շուշի քաղաք			Շուշու գավառ		
	վարպետ	մանր	աշակերտ	վարպետ	մանր	աշակերտ
1	2	3	4	5	6	7
Հացթուխ	13	9	3	6	4	-
Կանդիտեր	4	3	5	-	-	-



Մսագործ	12	11	-	9	-	-
Դերձակ	80	29	62	12	-	7
Կին դերձակ	1	1	-	-	-	-
Գլխարկ կարող	24	4	20	3	-	1
Կոշկակար և մաշկակար	85	2	60	3	-	2
Դարբին	18	-	5	10	-	-
Պողպատագործ	15	5	9	-	-	-
Պղնձագործ	3	2	1	-	-	-
Զինագործ	1	-	1	-	-	-
Վառարանագործ	3	1	-	-	-	-
Թիթեղագործ	11	3	6	-	-	-
Պայտար	12	-	-	9	-	-
Դանակ սրող	4	-	4	-	-	-
Կլայեկող	9	-	3	2	1	2
Հյուսներ	12	6	9	1	-	1
Ատաղձագործ	10	3	7	7	-	-
Ապակեգործ	3	-	-	1	-	-
Կառք շինող	1	-	1	1	-	1
Քարտաշ	13	-	6	8	-	-
Ժամագործ	4	-	4	-	-	-
Սափրիչ	34	8	29	2	2	-
Ներկարար (պոյաճի)	10	2	8	-	-	-
Ներկարար	2	-	-	-	-	-
Կաշեգործ	7	-	2	-	-	-
Թամբագործ	4	-	4	-	-	-
Սառած	16	8	-	-	-	-
Թաղիքագործ	4	1	2	-	-	-
Անասնաբույժ	2	-	-	3	-	-
Սափրիչ	15	-	9	19	-	4
Լուսանկարիչ	2	-	-	-	-	-
Տպարանատեր	2	-	10	-	-	-
Կառապան	-	-	-	15	-	-
Սապնագործ	6	2	3	-	-	-
<i>Ընդամենը</i>	<i>440</i>	<i>120</i>	<i>273</i>	<i>111</i>	<i>7</i>	<i>18</i>

Հազար հոգուն ընկնում է քաղաքում 22 արհեստավոր, իսկ գավառում՝ 1,27: Քաղաքում և գավառում հազար հոգու վրա գալիս է 8,6 արհեստավոր. քաղաքում և գավառում եղած արհեստավորների թվի 17,75 տոկոսը կազմում են կոշկակարները, դերձակները՝ 19,6 տոկոս, սափրիչ՝ 7,74 տոկոս: Հետո գալիս են գլխարկ կարողները, հյուսները, սառածները, քարտաշները և այլն:

Այս աղյուսակն առանց թերությունների չէ: Կան արհեստավորներ, որոնց թիվը շատ ավելի պակաս է, քան պետք է լինի, օրինակ՝ քարտաշները, հյուսները և այլն:

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերության այս տեսակը մեր գավառում օրըստօրե աճում, զարգանում է. 1893թ. տեղեկությունների համաձայն՝ նահանգի զինու և օդու գործարանների 2/3-ը գետեղված է Շուշու գավառում: 1895թ. պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ գավառում այդ տարի եղել են հետևյալ գործարանները.



Գործարանների տեսակը	Շուշի քաղաք				Շուշու գավառ	
	Գործարանների թիվը	Արդյունաբերության արժեքը	Բանվորների թիվը	Գործարանների թիվը	Արդյունաբերության արժեքը	Բանվորների թիվը
		ռուբլի			ռուբլի	
Մետաքս մանող	1	14100	80	12	210000	720
Մետաքս ոլորող	1	13000	90	4	87500	310
Գինու և օղու	-	-	-	7	360000	500
Կաշու	6	2500	9	-	-	-
Օճառի	4	2300	6	-	-	-
Պոլյաճու	10	3200	17	-	-	-
Աղյուսի	2	1200	6	-	-	-
<i>Բոլորը</i>	<i>24</i>	<i>36200</i>	<i>209</i>	<i>23</i>	<i>657500</i>	<i>1530</i>

Ինչպես տեսնում ենք, ըստ արդյունաբերած արժողության՝ գործարանների մեջ առաջին տեղը բռնում են մետաքսի, օղու և գինու գործարանները: Ինչ վերաբերում է գինու և օղու գործարաններին, սրանցից յոթը կատարելագործված են, իսկ մոտ հազարը տեղական ձևի են:

Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ 1895 թվականին գավառում եղել են 18 մետաքսի գործարաններ, իսկ այս տարի, մի ֆաբրիկանտի ասելով, ամբողջ գավառում կա 26 գործարան, որոնցից՝ 16 մանարան և 10 մետաքս ոլորող: Անկարելի է ենթադրել, որ մի տարվա ընթացքում գործարաններն ավելացել են 8-ով, հավանաբար պաշտոնական տեղեկությունն անսխալ չէ:

1895 թվականին պատրաստված է 1100 փուլ մետաքս և 280 փուլ ֆրիզոն: Մինչև 1883 թվականը գավառում պատրաստված թելն ուղարկվում էր Մարսել, բայց այդ թվից հետո մինչև այժմ մետաքսի թելն ուղարկվում է Մոսկվա, իսկ ֆրիզոնը՝ Ֆրանսիա:

Բանվորները մետաքսի գործարաններում երկու սեռի են: Դրանց մեջ փոքրահասակ երեխաներն ավելի շատ են, որովհետև ֆաբրիկանտներին ձեռնտու է ունենալ շուտ սովորող և աննշան վարձ ստացող բանվորներ: Մի քանի տարի առաջ այժմյան աղջիկ բանվորների տեղը բռնում էին տղաներ, բայց ֆաբրիկանտները վերջիններին այլևս չեն պահում, որովհետև աղջիկները թե՛ մաքուր աշխատող են, թե՛ կարգերին անպայման հնազանդվող, իրենց խոսքով՝ «լսող» են:

Բանվորների օրավարձը 7-40 կոպեկ է, մինիմալ վարձ ստանում են այն բանվոր երեխաները, որոնք հավաքում և դուրս են հանում գործարանում թափված որդերը:



Բանվորական վարձերի աղյուսակ (գավառի համար)

Աստիճաններ	Ամսավարձ բանվորներ					Օրավարձ բանվորներ										
	երկրագործ մշակ	հոտաղ	դժվանի	կտրված ծխախոտ	շաբաթակց կին	հնձող	քաղցրավուն կին	խառն թահար կին	խառն կտրված կանաչ	խառն կին	մշակ, այգիներում	հաստաղ	գործարարական բանվոր ¹	բարձր կին	թեղ մտաղ կին	կապերտ գործող կին
Մինիմում	7	1	5	6	3	45	15	30	40	30	7	-	-	10	10	
Մաքսիմում	10	4	8	7	6	90	20	40	60	50	40	10	10	20	20	

Աշխատանքը մետաքսի գործարաններում սկսվում է առավոտյան ժամը 6-ից և տևում է մինչև 8-ը ամառը, իսկ ձմեռը՝ 6-ից մինչև 6-ը մանարան գործարաններում: Ուղորդ գործարաններում բանվորները թե՛ ձմեռ և թե՛ ամառ աշխատում են 6-ից մինչև երեկոյան 8-ը: Դադարը լինում է կեսօրին, որը տևում է մոտ մի ժամ: Ուրեմն աշխատանքը տևում է 11-13 ժամ: Չպետք է մոռանալ, որ գործարաններում աշխատող բանվորների, մանավանդ կին բանվորների, մեծ մասը կազմում են 8-12 տարեկան երեխաներ:

Բոլոր գործարաններում գավառում և քաղաքում աշխատել են 1895 թվին 1739 բանվոր, որոնցից մեծ մասն ընկնում է մետաքսի, գինու և օղու գործարաններին, ուրեմն բանվորների մեծ մասը գավառում են:

Պետք է ասել, որ գործարանի շուրջը գտնված գյուղերից էլ (մոտիկ, իհարկե) բանվորներ են գալիս:

Հազար հոգու համեմատ քաղաքում և գավառում ընկնում է 11,9 գործարանական բանվոր, գավառում միայն հազարի համեմատ՝ 13,3, քաղաքում միայն՝ 6,2: Հազար հայ բնակչի համեմատ միայն գավառում ընկնում է 23,4 գործարանական բանվոր:

ԱՌԵՎՏՈՒՐԸ ԳԱՎԱՌՈՒՄ

Ժողովրդի աննշան մասը միայն պարապում է առևտրով: Վերջինս ոչնչով չի տարբերվում հասարակ մանրավաճառությունից: Գյուղերում պատահում են խանութպաններ, որոնք գյուղական ժողովրդի պահանջների համեմատ պահում են զանազան տեսակի ապրանքներ: Գյուղացիք իրենց հարկավոր առարկաները գնում են նույնպես քաղաքում և ավելի հաճախ՝ շուկաներից, որոնք երկուսն են ամբողջ գավառում: Այդ շուկաներում շաբաթվա որոշ օրերին վաճառքի են հանում հացահատիկներ, կերպասներ, մրգեր և այլն, և, անշուշտ, մեծ փող է շրջում այդտեղ:

Գավառը ներքերում են ցորեն և այլ հացահատիկներ, աղ, նավթ, պտուղներ և այլն: Հացահատիկները, բացի բրնձից, աղը, նավթը և պտուղները վաճառվում են փողով, իսկ մնացած իրերը փոխանակվում են ցորենով, գարով և կորեկով: Օրինակ, գյուղացին տալիս է երկու քաշ ցորեն և ստանում է մի քաշ բրնձ, կամ մի քաշ խաղողի համար տալիս է 2 քաշ գարի կամ 3 քաշ կորեկ:

¹ Մետաքսի գործարաններում աշխատող բանվորները միայն



Գավառից քաղաք արտահանում են ցորեն, ալյուր, գարի, գինի, պտուղներ և այլն, իսկ տնայնագործական հյուսվածքներից՝ գորգ և կապերտ: Գորգերը գյուղերումն էլ վաճառում են գորգ հավաքողները:

Հայ ժողովուրդը յուղի, պանրի և բրդի հարկավոր քանակությունը ձեռք է բերում թուրքերից: Ավետարանոցում և նրա շրջակա գյուղերում բնակիչները տալիս են սար չվող թուրքերին ցորեն, գարի՝ որոշելով դրանց գինը, և պայմանավորվում նրանց հետ՝ ստանալ տվածի փոխարեն բուրդ, յուղ և պանիր, որոնք նույնպես կանխորեն գնահատում են:

Քաղաքի բյուջեն. 1895 թվականին քաղաքն ունեցել է եկամուտ 39 296 ռուբլի 82 կոպեկ, ծախք՝ 33 956 ռ. 90 կ., դրամագլուխ՝ 33 887 ռ. 44 կոպ.:

Եկամուտը կազմում է 14 տոկոս, տուրքը՝ քաղաքի անշարժ կայքերից և ռեալական դպրոցի պահպանության համար ստացված 7500 ռուբլին:

1885 թվականին քաղաքն ունեցել է և մուտք 29 512 ռ.

ծախք 25 316 ռ.

Դրամագլուխ 19 002 ռ.

Չվճարված տուրքի փող 26 639 ռ.

**ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԴՊՐՈՑՆԵՐ**

Շուշի քաղաքում և Վարանդայում կան հետևյալ դպրոցները

	հիմնարկության տարին	դասարաններ	Ուսուցիչ		Սովորող										մուտք	ԵՔ
			համալսարան	միջն. կրթ. ստացած	հայ	ռուս	վրացի	թուրք	ազնվական	հոգևորական	քաղաքացի	գյուղացի	ընդամենը	մինչև այժմ սովորու.		
Հայոց թեմական	1843	6	4	12	550	-	-	-	39	45	322	183	550	547	14843	14843
Ռեալական	1881	7	7	16	252	12	5	47	121	8	136	51	316	161	35413	35413
Քաղաքային	1875	3	-	9	131	4	-	36	44	7	21	29	171	354	10399	8326
Թուրքերի դպրոց	1896	1	-	4	-	-	-	209	53	6	246	4	309	-	2510	2510
Հինգ մի-դասյան ռոյալոց մասնավոր ուսումնարան	-	-	-	5	276	2	-	13	7	9	275	-	291	-	10000	10000
Բոլորը	-	-	11	46	1209	18	5	305	264	75	1000	267	1637	1062	73165	71092
Օրիորդաց Մարիամյան արքունական ուսումնարան	1894	4	-	10	137	12	1	-	30	8	212	-	250	-	4610	4610
Ընդամենը	-	-	11	56	1346	30	6	305	294	83	1212	267	1887	1062	77775	75702
Նոր-Թաղլար, Մարուշեն և Վարագաբուն գյուղերում եկ. ծխ. ուսումնարան	1890	1	-	3	267	-	-	-	-	5	-	262	267	-	1800	1800

Այս աղյուսակից հետևում է.

ա. Այժմյան դպրոցների մեջ ամենահինը հայոց հոգևոր թեմական դպրոցն է:

բ. Ամենից շատ աշակերտներ ուսանում են հոգևոր դպրոցներում:

գ. Արհեստավոր, հոգևորական և գյուղական դասակարգերի որդիները առավելապես սովորում են հայոց թեմական դպրոցներում, իսկ ազնվական դասակարգերը՝ ռեալականում:

դ. Ռեալական դպրոցը յուր ամեն մի աշակերտի համար ծախսում է 112 ռ., քաղաքականը՝ 49 ռ., հայոց թեմականը՝ 27 ռ., ռուսաց օրիորդացը՝ 18 ռ., թուրքերինը՝ 12 ռուբլի:

ե. Որովհետև սովորողների շրջանում գտնվողների թիվը հայտնի չէ, ուստի չի կարելի հաշվել, թե սրանց որ տոկոսն է սովորում. միայն ընդունելով, որ մոտավորապես բնակչության 20 տոկոսը գտնվում է այդ հասակում, կարելի է ասել, որ հայերից 52, իսկ թուրքերից 22 տոկոսն է սովորում:



ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Շուշում Հայոց բարեգործական ընկերության տեղական ճյուղն ունի գրադարան-ընթերցարան, որ հիմնվել է 1889թ. մարտի 10-ին: Ունի կանոնադրություն՝ 14 պարագրաֆից բաղկացած, որը օրինավոր հաստատության է ենթարկված Հայոց բարեգործական ընկերության Թիֆլիսի խորհրդի կողմից:

Գրադարան-ընթերցարանից օգտվելու համար վճարում են. ունևորները՝ տարեկան 4 ռուբլի, ամսական 50 կոպ., օրական 5 կոպ., չունևորները՝ տարեկան 1 ռուբ. 50 կոպ., ամսական 20 կոպ, օրական 2 կոպ.: Գրքեր կամ ամսագրեր տուն տանելու համար գրավական է պահանջվում:

Գրադարան-ընթերցարանն առաջին տարին ունեցել է ընդամենը 587 կտոր գիրք: Հետզհետե ավելացնելով՝ այսօր գրադարանն ունի մոտ 4000 կտոր գիրք՝ 6000 ռուբ. արժողությամբ: Ընթերցարանն էլ շարունակ ստանում է պարբերական հրատարակություններ հայերեն և ռուսերեն լեզուներով: Առաջին տարում ստացել է 17 պարբ. հրատարակություն, իսկ այժմ ստանում է 30: Ունի կահկարասիք՝ մոտ 350 ռուբ. արժողությամբ:

Գրադարանը չունի ձեռագրերի բաժին: Գրքերն էլ միայն հայերեն և ռուսերեն լեզուներով են: 1889 թվականի մարտի 10-ից մինչև 1896թ. հունվարի 1-ը գրադարանից օգտվել են.

	1-ին տարի 1889	2-րդ տարի 1890	3-րդ տարի 1891	4-րդ տարի 1892	5-րդ տարի 1893	6-րդ տարի 1894	7-րդ տարի 1895	Ընդհանուր գումար
Տարեկան անդամներ	9	1	4	3	5	6	9	37
Ամսական	161	215	228	230	233	359	395	1822
Օրական	270	423	323	306	246	327	344	2239
Յոթ տարվա ընթացքում օգտվել են	-	-	-	-	-	-	-	4098 ¹
Գրքեր և ամսագրեր են տարվել կարդալու	1834	2631	3353	4202	3506	5371	6723	27620 ²

Յոթ տարվա ընթացքում ունեցած անդամների թվի՝ 4098-ի վրա եթե ավելացնելու լինենք և ընկերության հաճախորդ անդամների թիվը, հաշված միջին թվով տարեկան 50 հոգի, կստանանք 4448 թվանշանը, հետևապես և գրադարան-ընթերցարանից օգտվողների թիվը տարեկան եղել է միջին թվով մոտավորապես 635:

Գրադարան-ընթերցարանից օգտվողները բաժանվում են. ըստ ազգության՝ հայեր՝ 85 տոկոս, ռուսներ՝ 8 տոկոս, թուրքեր՝ 4 տոկոս և այլազգիներ՝ 3 տոկոս, ըստ դասակարգի՝ ուսումնառուներ (ուսանողներ, աշակերտներ և աշակերտուհիներ)՝ 55 տոկոս, առևտրականներ՝ 25 տոկոս, աստիճանավորներ՝ 10 տոկոս, ուսուցիչներ և վարժուհիներ՝ 7 տոկոս, արհեստավորներ՝ 3 տոկոս:

Կանանց բացակայությունը նկատելի է. դրանց հաճախորդների թիվը մի շատ աննշան մաս է կազմում, այն է՝ 2 տոկոս...

Ավելի շատ կարդացվել են հետևյալ հեղինակների աշխատությունները, որոնց դնում ենք այստեղ ըստ առավելության.

Հայերեն՝ Բաֆֆի, Պոռոշյան, Աբովյան, Շիրվանզադե, Օերենց, Աղայան, Շեքսպիր, Էժեն-Սյու, Դյումա, Ժյուլ-Վերն, Շիլլեր, Պարոնյան, Սունդուկյան, Խրիմյան, Մոլիեր, Շահազիզյան, Գամառ-

¹ Այդ գումարի մեջ չեն մտնում ընկերության անդամները, որոնցից հաճախորդների թիվը տարեկան մոտավորապես 40-60 է հասնում

² Այդ գումարի մեջ չեն մտնում ընթերցարանում կարդացված գրքերը և ամսագրերը



Քաթիպա և Լեո: Ռուսերեն՝ Տուրգենև, Տոլստոյ, Ժյուլ-Վերն, Գոգոլ, Լերմոնտով, Պուշկին, Դիկկենս, Դոստոևսկի, Շպիլգագեն, Գոնչարով, Գարշին, Զոլա, Օստրովսկի, Հյուգո, Դոդե, Բելինսկի, Բայրոն, Մոլիեր, Շեքսպիր, Շիլլեր, Գյոթե, Սենկևիչ և Չեխով:

Առաջ բերելով հեղինակների անունները՝ տեսնում ենք, որ ընթերցողների շրջանը մեծ մասով բելլետրիստ հեղինակների գրքեր է կարդացել՝ միանգամայն անուշադրության առնելով գրականության և այլ ճյուղերին պատկանող գրքերը: Վերջիններովս հետաքրքրվողները մի շատ աննշան կոնտինգենտ են կազմում:

Ի դեպ, գրադարանը, կարելի է ասել, բավական հարուստ է գիտական գրքերով:

Պարբերական հրատարակություններից (ամսագրերից) առավելապես կարդացվել են հայերեն՝ «Մուրճ», «Փորձ», «Արարք», «Տարագ», «Հանդ. գրակ. և պատմ.», ռուսերեն՝ «Вестник Европы», «Артист», «Сев. Вестник», «Русская мысль», «Книжки Недели», «Мир Божий», «Русское богатство»:

Եկամուտի կողմից գրադարան-ընթերցարանն այնքան էլ նախանձելի չէ: Յոթ տարվա ընթացքում մուտք է ունեցել ընդամենը 1151 ռուբ. 92 կոպ., մինչդեռ ծախք ունեցել է 6328 ռուբ. 64 կոպ.: Դեֆիցիտը, այն է՝ 5176 ռուբ. 72 կոպ., ծածկվել է ընկերության վարչության ունեցած եկամտի մյուս աղբյուրներից՝ անդամակցական վճարներից, նվերներից, ներկայացումներից և այլն:

Բացի ընկերության գրադարան-ընթերցարանից, Շուշու կլուբը (ակումբը) ևս ունի մի հարուստ գրադարան-ընթերցարան, որից նույնպես բավական օգտվում են թե՛ հայերը, թե՛ ռուսները և թե՛ թուրքերը:

Ի նկատի պետք է առնենք նույնպես հոգևոր թեմական և ռեալական դպրոցների գրադարանները, որոնցից օգտվում են այդ դպրոցների աշակերտները, ուսուցիչները և մասամբ՝ կողմնակի անձինք:

**ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Շուշի քաղաքում և գավառում ստացվել են.**

Թվական	Արձագանք	Մշակ	Մուրճ	Նոր-Դար	Տարագ	Բոլորը	Ռուսերեն	Ընդամենը
1894	25	58	7	82	16	188	412	600
1895	38	63	5	92	21	219	479	694
1896	33	59	6	66	18	149	523	672
Ընդամենը	96	180	18	240	55	536	1410	1966
Միջին թվով	32	60	6	80	18	179	470	655

Այս աղյուսակից հետևում է.

ա. Շուշում ամենից ավելի տարածված է «Նոր-Դար»-ը, սակայն հետզհետե պակասել է:

բ. «Նոր-Դար»-ից հետո ավելի տարածված է «Մշակ»-ը, որ հետզհետե ավելացել է:

գ. Ռուսաց թերթերն ավելի և ավելի տարածվում են և մինչև անգամ ավելի, քան հայկականը:

դ. Հազար հոգուց միայն 19 հոգի են թերթ ստանում:

ԹԱՏՐՈՆ

Շուշում առաջին ներկայացումը տեղի է ունեցել դեռ վաթսուհանգյակյան թվականներին, երբ հայրենիք վերադարձած ուսանողները ոչ միայն տղամարդու, այլև կանանց դեր են կատարել:



Այնուհետև թեմական դպրոցի ուսուցչական խումբը և շրջիկ դերասանները ներկայացումներ են տվել թեմական դպրոցի դահլիճում, որ բավական ընդարձակ է: Սակայն թատրոնն այստեղ կանոնավորվել և յուր կրթիչ ազդեցությունն օրավուր ավելացրել է, երբ 1891թ. կառուցվել է պ. Ն. Խանդամիրյանցի թատրոնական շենքը:

Սա թեև արտաքուստ և կամ ներքուստ ճարտարապետական կամ գեղարվեստական մի առանձին նշանակություն չունի, սակայն յուր ընդարձակ դահլիճով, բավական հարմարավոր բեմով ու երկար ֆոյեով (ճեմասրահ) միանգամայն բավականացուցիչ է Շուշվա պես մի գավառական քաղաքի համար: Ունի նաև բավական դեկորացիաներ, մի բավական ճաշակով նկարված վարագույր և այլն:

Թատրոնի բացման օրից մինչև այժմ եղել են.

1891 թվականին՝ 13 ներկայացում, 4030 ռ. մուտք

1892 թվականին՝	19 ներկայացում	5100 ռ. մուտք
1893 թվականին՝	20 ներկայացում	5694 ռ. մուտք
1894 թվականին՝	19 ներկայացում	4824 ռ. մուտք
1985 թվականին՝	24 ներկայացում	7014 ռ. մուտք
1896 թվականին՝	24 ներկայացում	6700 ռ. մուտք

Ընդամենը՝ 119 ներկայացում 33362 ռ. մուտք

Միջին թվով՝ 20 ներկայացում 5560 ռ. մուտք

Այսպես ուրեմն, տարեկան միջին թվով տրվում է 20 ներկայացում, յուրաքանչյուր ներկայացման տոմսակ է վաճառվում 278 ռ., որից դուրս գալով ծախսը՝ մոտավորապես 128 ռ., զուտ արդյունք մնում է 150 ռուբլի: Բոլոր տոմսակները ծախված դեպքում մուտք է լինում 325-350 ռուբլի:

ՏՊԱՐԱՆՆԵՐ

Քաղաքում կա երկու տպարան. մինը՝ Հայոց հոգևոր տեսչության, որ բացված է Բաղդասար մետրապոլիտի ջանքով 1830-ական թվականներին: Մամուլը բավական փոքր է և բազմատեսակ տառեր չունի: Այնքան անկանոն են պահվում գործերը, որ, հակառակ մեր բոլոր ջանքերին, չկարողացանք իմանալ, թե մինչև այժմ այդտեղ քանի գիրք են տպած:

Մյուսը Ա. Մահտեսի-Հակոբյանինն է: Սա բացված է 1877 թ. նոյեմբերին, ունի բավական լավ մամուլ և նոր ձևի տառեր: Մինչև ներկա թվականը տպված է 83 գիրք, հետևապես և՛ տարեկան միջին թվով 4 գիրք, որ շատ քիչ է:

ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե 6 տարվա ընթացքում որքան ոճրագործություններ են կատարվել Շուշում.

Թվական	Սպանություն		Ինքնասպանություն		Պատահական մահ	
	հայ	թուրք	հայ	թուրք	հայ	թուրք
1890	1	2	1	—	—	1
1891	1	3	1	—	2	2
1892	1	7	1	—	1	1
1893	1	3	1	—	2	2

1894	2	5	2	—	—	2
1895	1	4	1	—	2	4
<i>Ընդամենը</i>	<i>7</i>	<i>24</i>	<i>7</i>	<i>—</i>	<i>7</i>	<i>12</i>

Այս աղյուսակից հետևում է.

Հայերի և թուրքերի սպանության թվերը հարաբերում են միմյանց, ինչպես 1:3,5, մինչդեռ այդ երկու խմբերի թվական հարաբերությունը համարյա հավասար է 2:1:

Մյուս ոճրագործությունները, ինչպես՝ վիրավորել, ծեծել և այլն, նույնպես թուրքերի մեջ են ավելի պատահում:

Հետևյալ աղյուսակում բերված է Շուշու և Ջիբրայիլի¹ գավառների այդ երկու ժողովուրդներից բանտարկվածների թիվը.

Թվական	Հայեր		Թուրքեր	
	ար.	իգ.	ար.	իգ.
1890	92	1	524	2
1891	68	3	651	12
1892	52	2	459	-
1893	98	-	696	5
1894	62	1	369	2
1895	56	3	423	3
<i>Ընդամենը</i>	<i>428</i>	<i>10</i>	<i>3122</i>	<i>24</i>

«Кавказский календарь»-ի 1896թ. համաձայն՝ այս երկու գավառների հայերի ընդհանուր թիվն է 94750, թուրքերինը՝ 91916: Այսպես՝ մինչդեռ երկու ազգաբնակչություններն էլ համարյա հավասար են միմյանց, թուրք ոճրագործների թիվը համարյա 7 անգամ ավելի է հայ ոճրագործների թվից²:

ՓՈՍՏ

Պետք է ասել, որ արդեն քաղաքացիները մեծ կարիք են զգում փոխանակ շաքաթական երեք անգամի, ամենայն օր փոստ ունենալու և կանոնավորված տեսնելու նամակների ցրումը, որ շատ անկանոն կերպով է կատարվում: Ցրիչը մարդկանց, երեխաների, ծառաների մի ահագին խմբի հետևողությամբ հանդիսավոր կերպով իջնում է փոստատանից դեպի Թոփխանան և մտնելով քաղաքային ժողովարանի բակը՝ բարձրանում է պատշգամբը, իսկ հետևողները մնում են ներքևում: Հետո բարձր ձայնով կարդում է բոլոր լրագրերի և հասարակ նամակների հասցեները և շարտում որ կողմից որ «իմն» է հնչում: Այսպիսով, բացի այն, որ շատ նամակներ կորչում են, այլև բոլորը իմանում են, թե ովքեր նամակներ ունեն:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս փոստի գործունեությունը, որից հետևություններ հանելը թողնում ենք իրեն՝ ընթերցողին.

¹ Այդ գավառում առանձին բանտ չկա

² Այս տեղեկություններն ուրիշ մի քանի տեղեկությունների հետ միասին սովել է մեզ բժիշկ պ. Բահաթրյանը, որին խորին շնորհակալություն ենք հայտնում

ՓՈՍՏ

		Ծախք				10,316	
		Ընդամենը				10,060	
						25,739	
						29,616	
Մասք	1) փոստից, 2) ներքին հաղորդակ. հեռագր. 3) միջազգային հաղորդակ. հեռագր.	1) 18399	20527			2) 7340	8162
Հետազոտող	Սակագին հեռագիրների խոսքերի թիվը	-	-			99804	112240
	ընդամենը	-	-			-	-
	անցնող	-	-			21,208	37,640
	արքունական	-	-			2,871	13,544
	սակագին	-	-			7926	565
Անցնող թղթակց. ընդհանուր արժեքը		-	-			10204	986
Վերադարձված	Վերադարձված ծանրացման մեջ կային վերադարձված	Վերադարձված ընդհ. գում.	-	-		-	15162
		ուրիշներ	-	-		-	412
		ծանրաց	-	-			91
Շտաբային (ուսուցիչներ)	Մրժեքավոր	անարժեք	-	-		38	-
		արժեքը	-	-		89866	-
		քանակը	-	-		2148	89866
Դրամական և արժեքավոր ծրարներ	արժեքը	856	6275			4114557	4420971
	քանակը	8	102			5737	7476
Ապահովված թղթակ.		5	16			11861	13361
Պարբ. արժ. հրատար. (հատ)		-	-			-	-
Հասարակ փաթեթներ (բանդերոլ)		-	-			27	276
Հասարակ նամակներ	Բաց	անվճար (արքուն.)	36	-		1773	3412
		վճարված	53	65		21438	2476
		Փակ				1791	6014
Փոստ	Ստացված	-	-			4292	8227
	Ուղարկված	-	-			59893	68399
Միջազգային							
Ստացված							
Ուղարկված							
Ստացված							
Ուղարկված							
Ստացված							
Ուղարկված							

ՀԱՂՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շուշին փոստային ճանապարհներով կապված է Գորիսի և Անդրկովկասյան երկաթուղու Բաքու-Թիֆլիսյան գծի Եվլախ կայարանի հետ: Շաբաթական երեք անգամ օմնիբուս է գնում և գալիս Շուշիից Եվլախ, անցնելով ճանապարհը մոտ 11 ժամվա ընթացքում:

Քաղաքում կա «Նադեժդա» և «Ռոսսիյսկոյե» հաղորդակցության ընկերությունների գրասենյակները, որոնք կատարում են ապրանքների տեղափոխությունը:

Քաղաքի և գյուղերի, ինչպես և միմիայն գյուղերի միջև չկան կանոնավոր ճանապարհներ, և քիչ տեղեր են սայլեր բանում: Սովորական գործածական կենդանիներն են էշը, ջորին և ձին:



ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՍՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՄԱՆՅԱՑ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրորոցի նշանադրություն. Առաջները շատ հաճախ, իսկ այժմ շատ սակավ է պատահում օրորոցի նշանադրություն, որ տեղական բարբառով «օրորոցախազ» է կոչվում: Միմյանց համակրող գերդաստաններ և կամ մի ընտանիք, ցանկանալով միմյանց և կամ մի հալալ-ծիծ ունեցող օջախի հետ կարելվույն չափ շուտ բարեկամանալ, ուխտում են միմյանց տալ իրենց սպասելիք որդիները, եթե նրանք տարբեր սեռի լինեն և կամ, եթե մինը արդեն արու գավակ ունի, խոստանում է նշանադրել նրան մյուսի սպասած աղջկա հետ: Շատ անգամ պատահում է, որ այս ցանկությունը ծագում է ծնողների մեջ, երբ տղան արդեն մի քանի տարեկան, իսկ աղջիկը մի քանի օրական է լինում: Այս ժամանակ տղայի հայրը խազում է աղջկա օրորոցը և կամ եռագույն մի թել կապում օրորոցի լծից և այսպիսով արդեն նշանադրում այդ երկու փոքրիկներին:

Երբեմն էլ պատահում է, որ փոքրիկ տղաները համակրանք են ցույց տալիս դեպի փոքրիկ աղջիկները, և սրանց հայրերը խոստանում են պսակել նրանց, երբ մեծանան:

Այս խոստումից հետո այդ փոքրիկները նշանված են համարվում, և տղան պարտավորվում է յուր մրգից միշտ բաժին հանել յուր փոքրիկ նշանածին:

Անցյալներում և մասամբ այժմ էլ շատ հազիվ էր պատահում, որ փոքրիկ նշանածները հրաժարվեին իրենց ծնողների խոստումը կատարելուց: Եվ մինչև անգամ եթե ծնողներից մեկը կամենար ետ կենալ յուր խոստումից, մյուսը կարողացածին չափ կստիպեր և կնախատեր նրանց:

Երբ այդ փոքրիկ նշանած աղջիկը մեռնում էր, հաճախ պատահում էր, որ տղան նրա քրոջ հետ էր ամուսնանում, իսկ եթե տղան էր մեռնում, սրա եղբայրն էր ամուսնանում աղջկա հետ:

Շատ անգամ պատահել է, որ հիվանդության, ընտանիքի դժբախտության և այլ պատճառներով այսպիսի նշանադրությունները լուծվել են: Շատ անգամ էլ նշանվածները, միմյանց անհամապատասխան լինելով, փոխադարձաբար թշվառացրել են միմյանց:

Շալակի նշանադրություն. Երբ երիտասարդը սիրահարված է և ուզում է խնդրել աղջկա ձեռքը, բայց ամաչում է, լուռ ու մունջ և գաղտագողի «շալակ» է տանում: Վերցնում է մի քոնց թարմ պտուղներ՝ խաղող, տանձ, խնձոր, վարունգ, և կամ մի կապոց չոր միրգ և գիշերը տանում նշանածի դռանը կամ դրսում քնած տղամարդու գլխի վերևը դնում: Մի քանի անգամ այս կրկնելուց հետո աղջկա ազգականներից մինի միջոցով հայտնում է, թե շալակ տանողը ինքն է: Եթե աղջկա ծնողները համաձայնում են իրենց աղջիկը տալու, շալակի քոնցի մեջ դնում են «խոնչա»՝ մի եփած հավ, մի քանի ձու, մի քանի գաթա և մի գույզ գուլպա, և ուղարկում տղին՝ հանդը, ուր նա բանելիս է լինում: Այս լուռ ծիսակատարությունից հետո աղջիկն ու տղան նշանված են համարվում:

Բարգյահ կամ Ծաղկազարդին նշանադրություն. Ծաղկազարդին եկեղեցում, նախապես առնելով աղջկա ծնողների համաձայնությունը, տղայի մայրը կամ մի մոտիկ ազգական կին, Ծաղկազարդի ծառի վրա վառվող մոմերից վառելով մի խաչաձև մոմ, որի վրա երբեմն մի արծաթե մատանի է անցկացրած լինում, տանում է և լռելյայն տալիս է յուր ուզած աղջկա ձեռքը և կամ նրան մոտեցնելով ծառին՝ ձգում է գլխին մի կարմիր չարդաթ (մետաքսե գլխաշոր): Այնուհետև այդ աղջիկը նշանված է համարվում:

Օջախի պսակ. Գրեթե ամեն մի գյուղում կա մի կամ երկու օջախ, որ սրբատեղի է համարվում. եկեղեցի չեղած գյուղում պսակի խորհուրդը թոնրի և կամ այսպիսի օջախների վրա է կատարվում: Այսպես, մինչև 1882 թվականը Խերխան գյուղում պսակը Փարամազենց օջախի վրա է կատարվել, որովհետև գյուղում եկեղեցի չի եղել: Մխտորաշենում մինչև այժմ էլ պսակը Սահակ քոնխանց



(տանուտեր) և Շվեդրդունց օջախների վրա են կատարում, որովհետև այժմ միայն սկսել են եկեղեցի կառուցել: Բացի սրանից, միշտ և բոլոր գյուղերում նորապսակները եկեղեցուց դուրս գալուց հետո անպատճառ բոլոր հանդիսականների ուղեկցությամբ և դավուլ-գուռնի առաջնորդությամբ գնում են այդ օջախները համբուրում և ապա գնում իրենց տուն:

Կիրակի և տոն օրերին էլ շատ կանայք գնում ուխտ են անում այդ օջախների վրա: Սրանք սովորական «ղարադամի» օջախներից ոչնչով չեն տարբերվում, տնեցիները սովորական ձևով գործածում են և հետո մոտը մի մոմակալ և մի խնկաման դնում, որ ուխտավորը կարողանա յուր բերած մոմը վառել և խունկը ծխել:

Հավաքածու տեղեկություններից երևաց, որ այս օջախները պատկանում են գյուղի մեջ ահագին ազդեցություն ունեցող մարդկանց:

Հիշենք այս օջախներից մի քանիսը.

Չանախչի գյուղում՝ Մելիք Շահնագարենց օջախը. հայտնի է, որ Մելիք Շահնագարը գյուղի տերն է եղել:

Գ. Ճարտար գյուղում՝ Խոճանց և Միրզաբեկանց և Տողունց (Տող գյուղից գաղթածների) օջախները:

Հիրհերում՝ Չալունց օջախը: Ասում էին, թե Չալին է հիմնել այս գյուղը, և նրա տոհմից են մի քանի սերունդ շարունակ տանուտերեր եղել:

Ծովատեղ գյուղում՝ Բղերանց օջախը: Սա գյուղի մելիք՝ Մելիք-Փարսադանյաններից է:

Սարուշենում՝ Քյոխանց օջախը (Միրզաբեկյան Ղահրամանի):

Թոնրի պսակ. Սրանից մի 10-20 տարի առաջ դեռևս գործադրվում էր թոնրի պսակը. սա գլխավորապես տեղի էր ունենում. 1)երբ գյուղում եկեղեցի չէր լինում, 2)երբ եկեղեցում ննջեցյալ էր լինում¹:

3)երբ ամուսնացողներն այրիներ² էին, 4)երբ չհասություն կար և 5)երբ հարսնացուն բարոյական կյանք չէր ունեցել:

Ժողովուրդը սուրբ է համարում թոնիրը: Գրեթե բոլոր գյուղերում թոնիրը շինելիս կանչում են քահանային, որ օրհնում է թոնիրը և մի քանի տեղ մեռոն քսում:

Թոնրի պսակին թոնրի վրա շուրջանակի մոմեր են վառում: Հարս ու թագվոր գալիս երեք անգամ պտտում են թոնրի շուրջը և կանգնում նրա արևմտյան կողմը՝ երեսները դեպի արևելք դարձրած: Ապա չոքում և երեք անգամ համբուրում են թոնիրը: Այնուհետև քահանան կատարում է պսակադրությունը, և նորապսակները, կրկին համբուրելով թոնիրը, վերադառնում են՝ շատ անգամ մինչև թոնրատնից դուրս գալը ետ-ետ գնալով, որպեսզի մեջքերը չդարձնեն դեպի թոնիրը՝ մեղք համարելով այդ³:

Առնանգամբ ամուսնություն. Դեռ մինչև այսօր էլ հաճախ պատահում է, երբ մի երիտասարդի մերժում են տալ յուր սիրած աղջիկը, որի պատճառը սովորաբար երիտասարդի ստոր գերդաստանից կամ աղքատ լինելն է լինում, վերջինս, հավաքելով յուր մի քանի մտերիմ ընկերները, փախցնում է աղջկան: Շատ անգամ առնելով աղջկա համաձայնությունը և ժամադրվելով նրա հետ՝ երիտասարդը ձիու գավակն է առնում աղջկան, որը յուր հետ առած է լինում յուր բոլոր

¹ Շոշի գյուղում մեկին պսակել են թոնրի վրա, որովհետև եկեղեցում ննջեցյալ է եղել, հետո ծնողները դժգոհ լինելով՝ կրկին նույն օրը եկեղեցի են տարել և նորից պսակի ծեսը կատարել տվել: Երեք տարուց հետո այդ երիտասարդը մեռել է: Նրա վաղահաս մահի պատճառը պսակի միջոցին եկեղեցում եղած ննջեցյալը համարելով՝ հուսահատության մեջ են ընկել և թաղել երիտասարդին յուր հարսանյանց շորերով: Մի քանի օրից էլ նրա կինն է անձնասպանություն գործել և հարսանեկան շորերով թաղվել

² Դռնավարգ գյուղում Մարտիրոս անունով մի այրի կույր մարդ թոնրի վրա պսակվելիս ընկել է թոնիրը

³ Թոնրի վրա կնունք ևս կատարում են. տե՛ս **Տղաբերք**



զարդերը, և փախչում: Եթե աղջկա ծնողները շուտ են իմանում այս, իսկույն մի քանի ձիավորներ հետևում են նրանց, և եթե հասնում են, տեղի է ունենում մի կատաղի կռիվ, որի ընթացքում երբեմն մարդիկ էլ են սպանվում: Եթե չեն կարողանում աղջիկը ետ բերել, տղան տանում է նրան մի ուրիշ գյուղ՝ յուր մի բարեկամի տուն: Անմիջապես աղջկա հայրը հայտնում է մարմնավոր և հոգևոր իշխանություններին, որոնք աղջկան կանչում հարցաքննում են: Եթե աղջիկը խոստովանում է, որ յուր ազատ կամքով է փախել երիտասարդի հետ, նրանց թույլ են տալիս պսակվելու, իսկ եթե ոչ՝ բաժանում են նրանց, աղջկան վերադարձնում հորը, իսկ տղին պատժում պետական օրենքներով:

Երբեմն պատահում է, որ երիտասարդը փախցնում է աղջկան, առանց նրա համաձայնությունը առնելու. այսպիսի դեպքերում հազիվ է պատահում, որ աղջիկը չզիջեր երիտասարդի և նրա բարեկամների աղաչանքներին՝ հայտնելու թե յուր կամքովն է փախել: Փախցրած և վերադարձած աղջիկը, հասարակության մեջ հարգանք չվայելելով, թշվառ աղջիկները նույնիսկ ակամայից համաձայնվում են ամուսնանալու փախցնողի հետ:

Գնամար ամուսնություն. Գնամար ամուսնությունը դեռևս գոյություն ունի Վարանդայում, որ երևում է «հրդեհ կտրել» ծեսի մեջ: Այստեղ աղջկա և տղի հայրերն ու բարեկամները երկար սակարկելուց հետո որոշում են, թե տղի հայրը որքան փող պիտի տա աղջկա հորը՝ աղջիկը տանելու համար: Այդ գումարը տատանվում է 20-100 ռ. միջև: Եվ մինչև որ այդ փողը չհանձնվի աղջկա հորը, որ սովորաբար այդ օրն է տեղի ունենում, պսակը չի կարող կայանալ:

Լեվիրա. Այս սովորությունը մասամբ կա Վարանդայում՝ միայն փոքր-ինչ ձևափոխված: Եթե մինը նշանված ժամանակ մեռնում է, նրա եղբայրն է շատ անգամ ամուսնանում նրա հարսնացուի հետ: Եվ եթե հարսնացուն է մեռնում, փեսացուն է ամուսնանում սրա կրտսեր քրոջ հետ: Դեպքերը բազմաթիվ են. օրինակ, Գիշի գյուղի քահանան ամուսնացրել է յուր կրտսեր որդուն յուր մեռած որդու հարսնացուի հետ:

Ծախսը. Սովորաբար աղջկա կողմից շատ քիչ ծախս է լինում, իսկ տղի կողմից մոտավորապես լինում են հետևյալ անհրաժեշտ ծախսերը.

Նշանդրեքին.

Մի ոչխար	3-5 ռուբ.
Մի մատանի	3-5 ռ.
Օղի և գինի	3-8 ռ.
Մանր ծախսերը	10-15 ռ.
Ընդամենը՝	19-33 ռուբ.

«Խոնչա» և այլ մանր ծախսեր մինչև հարսանիքը՝ 10-10 ռ.

Հարսանիքին.

Մի ոչխար կամ մի եգ	3-15 ռ.	
Գինի և օղի	15-40 ռ.	
Հարսի զգեստը	30-60 ռ.	
Հարսի գլխի արծաթ կամ ոսկի փողը		8-72 ռ.
Քահանային	3-5 ռ.	
Աթոռահաս	5-7 ռ.	
Եկեղեցուն	1-2 ռ.	
Հարսնեղբորը	1-3 ռ.	
Բրինձ, շաքար, թեյ	5-10 ռ.	



Աղջիկ ուզել. Հարսնացուի ընտրության խնդրում երիտասարդը շատ փոքր ձայն ունի. այդ առավելապես պատկանում է մորը և հորը: Հազիվ է պատահում, որ մի երիտասարդ ամուսնանա յուր ծնողների չուզած աղջկա հետ, մինչդեռ աղջիկներն ավելի հաճախ փախչում են իրենց սիրելիների հետ, եթե իրենց ծնողները հակառակ են լինում իրենց միության: Մրա պատճառն այն է, որ երիտասարդներն, առանձին, ինքնուրույն կյանք չունեցելով և տնտեսապես կախված լինելով հորից, չեն համարձակվում նրա կամքին հակառակ գնալու: Աղջիկը առնել փախցնելուց հետո նրանք հազիվ կարողանում են մի ամիս անց կացնել այս կամ այն բարեկամի տանը, այնուհետև կամա-ակամա ստիպված են վերադառնալ իրենց տուն, որովհետև սեփական հող, դրամագլուխ չունեն և բանվորական կյանքն էլ, մանավանդ ձմռանը, գոյություն չունի Վարանդայում:

Այսպես ուրեմն, երբ ծնողներն ընտրում են մի աղջիկ՝ առավելապես նրա ընտանիքի և մանավանդ մոր բարոյական հատկությունները նկատի ունենալով, մի կնոջ ուղարկում են աղջկա մոր մոտ խնամախոսության: Այդ կինը, գովելով երիտասարդի ընտանիքը, օջախը և երիտասարդի աշխատությունն ու կտրիճությունը, «կտրիել (կատարյալ) ռաշիտ (քաջ) տղա ա», առաջարկում է տալ յուր աղջիկը նրան:

Աղջկա մայրը ժամանակ է խնդրում՝ ամուսնու և մանավանդ յուր եղբոր հետ խորհրդակցելու, միանգամայն խոստանալով աշխատել հաջողացնելու:

Մի քանի օրից աղջկա մայրը հայտնում է յուր համաձայնությունը և կամ մերժում: Համաձայնած դեպքում ամուսնացող երիտասարդը յուր եղբոր կնոջ հետ, առնելով մի հասարակ, 20-60 կոպեկանոց մատանի, գնում է աղջկա տունը: Փոքր-ինչ խոսակցությունից հետո աղջիկը, յուր երեսը քողով ծածկած, թեյ է բերում: Երիտասարդի հետ եկած կինը աշխատում է բանալ աղջկա երեսը և տեսնել նրա գեղեցկությունը, ապա համբուրում է ճակատից և բերած մատանին դնում մատը: Այս ծեսը տեղական բարբառով «բեհ (առհավատյա) տանել» է կոչվում: Հետո ընթրիք են տալիս ու մի-մի գույգ գուլպա նվիրում փեսացուին ու կնոջը, որոնք, որոշելով նշանադրության օրը, վերադառնում են տուն:

Նշանադրությունը գլխավորապես տեղի է ունենում մեծ պասին, իսկ հարսանիքը՝ Նավասարդից մինչև մեծ պաս և առավելապես՝ Բարեկենդանին: Հարսանիքի պատրաստությունը սկսվում է չորեքշաբթի՝ տղայի, իսկ հինգշաբթի՝ աղջկա տանը: Հարսանիքն իսկապես տևում է յոթը օր՝ չորեքշաբթի օրից մինչև երեքշաբթի, միայն բուն հարսանիքը կատարվում է երեք օրվա ընթացքում՝ ուրբաթ, շաբաթ և կիրակի: Այս օրերն անելու գլխավոր պատճառն այն է, որ նախ՝ ուրբաթ օրը, պասվա կերակրեր մատուցանելով, ավելի քիչ կծախսեն, և երկրորդ՝ «կանչը» կընկնի կիրակի օրը, երբ գյուղացիները, բոլորովին ազատ լինելով, ավելի մեծ թվով կհավաքվեն:

Նշանդրեք. Որոշված օրն առավոտյան փեսացուի տնից ուղարկում են աղջկա տունը մի ոչխար (եթե միայն հարուստ են)՝ ճակատը սպիտակ և կարմիր ներկած, պոզերից և վզից խնձորներ և ընկույզի շարուկ ձգված, մի շիշ օղի, մի թունգի գինի, մրգեղեն և շաքարեղեն: Մրանք տանողը ստանում է 40-80 կոպեկ նվեր և հյուրասիրվում:

Երեկոյան թե՛ տղի և թե՛ աղջկա ծնողները հրավիրում են իրենց տղամարդ բարեկամները: Տղի տանը հրավիրվում է նախ քահանան, քավորը և տանուտերը: Մի-մի բաժակ օղի խմելուց հետո առաջ են բերում մի խնձոր՝ մեջը արծաթյա կամ ոսկյա մատանի և տան կանանց կողմից մի քանի աբասի խրած: Քահանան առնում է խնձորը, շնորհավորում, մի աբասի էլ ինքը մեջը խրում և



տալիս յուր մոտ նստողին: Մա ևս մի արասի է խրում՝ նույն կերպ շնորհավորելով: Երբ խնձորը, պտույտ գործելով, արասիներով լցվում է, դնում են մի չարդաթի մեջ երկու զույգ կանաչ-կարմիր քոշերի հետ, որոնցից մի զույգը հարսնացուի, իսկ մյուսը նրա մոր համար է լինում, և կապում:

Այս ժամանակ աղջկա տանից մի տղա է գալիս և հրավիրում սրանց բոլորին աղջկա տունը: Անմիջապես բոլորը վեր են կենում, ծերունիները վերադառնում են իրենց տուն, իսկ մյուսները գնում են աղջկա տունը: Փեսացուն չի գնում հարսնացուի տունը, սակայն այժմ մի քանի գյուղերում սկսել են նրան ևս տանել: Երբ հասնում են հարսնացուի տանը, տնեցիները ընդառաջ են գալիս և սիրով ընդունում:

- Ձեր ոննը գալուքը բարի ինի,- ասում է հարսնացուի մայրը փեսացուի մորը, *- ուրախ բարեկամ ընիք:*

- Դեհ մըտալ ենք էս օճախեն մին հափուտ վեղ յոր օնինք,- պատասխանում է փեսացուի մայրը, *- աստված տա անփոշմենելի սովտա (առևտուր) ինի: Մեր ջհալների կապն էլ էրկան ինի:*

Հետո մտնում են դարադամը և նստում օջախի շուրջը: Անմիջապես թեյ են մատուցանում և հետո հաց փռում: Այս ժամանակ տղայի հայրը դառնում է քահանային և ասում. *«Ա՛դեր, կարգի, պատարագի ըլիս, բե մեր հարսնացուն՝ մի ուրախանանք, գիտյում ըմ, օր մեր խնամին կարմիր գինի շատ օնե, կօտինք, կըխմինք, քեփ կանինք»:*

Իսկույն մի կնոջ առաջնորդությամբ հարսնացուն, երեսը մինչև գոտին չարդաթով ծածկված, գալիս է և կանգնում քահանայի մոտ: Այս ժամանակ մի սկուտեղի մեջ մրգեղեն, մի քանի մոմ, մի քանի խնձոր և նշնի մատանին դրած՝ մոտեցնում են քահանային: Քահանան օրհնում է այս և վերցնում տալիս փեսացուին: Մա էլ անցկացնում է այն հարսնացուի մատանեմատը: Այս միջոցին ման են ածում սկուտեղը, և հյուրերը, շնորհավորելով ու բարեմաղթություններ անելով, մի-մի բաժակ գինի կամ օղի են խմում, շաքարեղենից ուտում և մի-մի արծաթյա քսան կամ տասննհինգ կոպեկանոց խրում խնձորի մեջ: Այս փողերը, որ տեղական բարբառով «հարսնացուին տված թաս» են կոչվում, պատկանում են հարսնացուին, և մոտավորապես 3-8 ռուբլու է հասնում, որից տալիս են քահանային՝ 50 կոպ.- մի ռուբլի, և 30-50 կոպ.՝ հարսը առաջ բերող կնոջը:

Սրանից հետո սկսում են հաց ուտել: Մատուցանում են խորոված, խաշու (մսով եփած ջրալի կերակուր) և ճեփած (փլավ)՝ եփած հավը վրան:

Մինչև առավոտ քեֆ են անում, ուտում, պարում, շատ անգամ էլ կովում և լուսաբացին ցրվում տները:

Մյուս օրը աղջկա տնից ուղարկում են տղի տունը մի շիշ օղի, մի թունգի գինի, մի եփած հավ, 3-5 զույգ էլ լավ գուլպա:

Այն դեպքերում, երբ փեսացուն նշանդրեքի երեկոյին աղջկա տունը չի գնում, աղջկան էլ առաջ չեն բերում, այլ աղջկա մայրը տանում ձգում է նրա գլխին օրհնած չարդաթը և մատանին անցկացնում մատը:

Պատահում էլ է, որ երիտասարդը գյուղից անգամ բացակա է լինում, և ծնողները մինչև անգամ առանց նրան հարցնելու նշանում են իրենց ընտրած աղջկա հետ: Երբեմն էլ երիտասարդի բացակայության ժամանակ նրա գտակը՝ փափախն են տանում և նրա հետ նշանադրում:

Ավելորդ է ասել, որ քահանաներն, անգամ մի առանձին նշանակություն չտալով նշանվողների փոխադարձ համաձայնության, չեն էլ հարցնում, թե նրանք համաձայն են:

Նշանադրության երկրորդ օրը փեսացուն հոր կարգադրությամբ պատրաստություն է տեսնում՝ գնալ հարսնացուին տեսնելու: Առնում է մի փոքրիկ հայելի, մի փոքրիկ դանակ, մի մատնոց, մի ասղաման և մի քանի ֆունտ մրգեղեն (չամիչ և տկողին): Մայրը կապում է այս բոլորը



մի թաշկինակում: Գիշերը ուշ, երբ բոլորը քնած են լինում, երիտասարդը վերցնում է այդ թաշկինակը և զգուշությամբ գնում աներանց տուն: Եթե փողոցում նրան տեսնեն, կրոնեն և կթակեն, մինչև որ նրանից մի ընծա չստանան: Այսպես գաղտագողի նա հասնում է յուր հարսնացուի տունը և կամացուկ մի փոքրիկ քար ձգում հերթիկից՝ այս նրա այցետունն է, որ ուղարկում է զոքանչին: Երբ այս միջոցը չի օգնում, նա մի հարևան կին է ուղարկում իմացնելու: Վերջապես զոքանչը կամացուկ բաց է անում դուռը և ընդունում փեսացուին: Այս ժամանակ բոլորը, եթե ոչ քնած, զոնե այդպես են ձևացնում: Անմիջապես մի հավ են մորթում և փլավ պատրաստում: Փեսան նստում է միայնակ ընթրելու, զոքանչն էլ մի քիչ հետո նստում է մոտը և սկսում գովել յուր աղջկան: Տղան աչքերը գետին ձգած պատասխանում է այս գովասանքներին. *«Դե վեր իմ ապեր հավան ա կացալ, ես հինչ ը՛մ ըսըլական, ես յա հավան էմ, հավան»:*

Հետո մայրը գնում բերում է աղջիկը: Տղան կամ մատանի է գնում մատը և կամ մի ռուբլի փող նվիրում: Մի քիչ հետո մի գույգ գուլպա նվեր է ստանում և վերադառնում տուն: Մյուս օրը տղի մայրը հարցնում է տղին, թե հավանե՞ց աղջկան, սա էլ կարմրելով պատասխանում է. *«Դե ես տեսե ոչ իրան, ամա մարը շատ թարիփ ըրավ, դե որ դու, ապերը հավան ըք կացալ, օգալ ըք՝ հինչ բի դի ասիմ»:*

Նշանադրությունից հետո տղի բարեկամները գնում շնորհավորում են աղջկա ծնողներին և մի մի ընծա տալիս հարսնացուին, որ բաղկացած է լինում մատանիներից, ասղամանից, հայելուց, սապոնից և այլն: Տնեցիները նրանց լավ հյուրասիրում և մի գույգ գուլպա նվեր են տալիս:

Պատահում է, որ մի քանի հոգի միասին են գնում: Այս դեպքերում մի բաժակի մեջ գինի են ածում և *«Աստված շնորհավոր անե»* ասելով՝ միմյանց տալիս ու մի-մի քսան կոպեկանոց ձգում մեջը: Հետո այս բաժակը ուղարկում են հարսնացուին, որ թափում է գինին, վերցնում դրամները, նորից գինի ածում և բաժակի վրա մի խնձոր դրած՝ վերադարձնում: Այսպիսով, նա հայտնում է յուր շնորհակալությունը:

Խոնչա տանել. Նշանադրությունից մինչև պսակը տևում է երեք ամսից մի տարի: Լինում են դեպքեր, որ մինչև 7 տարի էլ է տևում, երբ փեսացուն բացակա է լինում: Այս երկար միջոցում աղջկա և տղի տնեցիները շարունակում են միմյանց հետ երթ ու գալ ունենալ և նշանավոր տոներին (ազիզ օրերին) միմյանց ընծաներ ուղարկել, որ տեղական բարբառով «խոնչա» է կոչվում: Երիտասարդը թեև մի-մի անգամ տեսնում է հարսնացուին, սակայն երբեք միմյանց հետ խոսել չեն համարձակվում:

«Խոնչա» ուղարկվում է տղի տնից աղջկա տունը առավելապես զատկին, ջրօրհներին, բարեկենդանին, վարդավառին և նավասարդին: Սրանցից ամենանշանավորը զատկինն է, որ «ախար» էլ է կոչվում: «Խոնչան» տղի տնից տանում են մի աղջիկ կամ մի հարս, լավ հյուրասիրվում և ստանալով մի գույգ գուլպա՝ նույն օրը վերադառնում:

Աղջկա տնից ևս, «խոնչան» ստանալուց հետո փոխարեն նվերներ են ուղարկվում: Եվ ամեն անգամ ստացված գաթաներից մինը, մի լավաշի մեջ փաթաթված, վերադարձվում է:

Ահա նշանավոր խոնչաները և նրանց դարձվածքները.

Ա. Ծաղկազարդին փեսացուի տնից ուղարկվում է հարսնացուին հինա, որպեսզի նա յուր ընկերուհիների հետ միասին այդ գիշերը ձեռքերը հինա դնի: Ժամասացության ժամանակ էլ փեսացուի մայրը և կամ մի ազգական կին բերում եկեղեցում մի չարդաթ (քող) է գցում հարսնացուի գլխին:

Բ. Զատկին փեսացուի մայրն անձամբ է տանում «խոնչան», որ բաղկանում է հետևյալից. 20-100 հատ ներկած հավկիթ, որոնցից մի քանիսը գեղեցիկ կերպով նշխված են լինում, մի շալ



աղլուխ, մի թունգի գինի, մի շիշ օղի և մրգեղեն (ընդամենը 4 ռ. արժողությամբ): Նաև հինգ զույգ գաթա և մի խաշած «անդեմնը» (ոչխարի բուրդ):

Փեսացուի մորը մեծ պատվով ընդունում են, 3-5 օր¹ պահում, շարունակ ուրիշ բարեկամներ էլ հրավիրում, որպեսզի նա ուրախ ժամանակ անցկացնի, և երբ վերադառնում է, նվիրում են նրան մի շալ արխալուղացու (մոտ 5-8 ռ. արժողությամբ) կամ մետաքսե մի շապկացու (4-8 ռ. արժողությամբ): Բացի սրանից, տալիս են նաև մի քանի զույգ գուլպա, մի ներկած հավկիթ, գինի, օղի և այլն:

Գ. Վարդավառին տղի տնից մի աղջկա կամ մի հարսի ձեռքով ուղարկվում է աղջկա տունը մի չարդաթ, կամ մի զույգ չմոշկ (1-3 ռ. արժողությամբ) և մրգեր: Սրան իբրև դարձվածք նույն կամ հետևյալ օրը դարձյալ մի աղջկա կամ հարսի ձեռքով աղջկա տնից ուղարկվում է տղի անունը 5-8 զույգ գուլպա, մի քանի գաթա, մի աման սեր, մի աման ձվածեղ և մրգեղեն:

Դ. Նավասարդին տղի տնից ուղարկվում են աղջկա տունը մի շալ աղլուխ (1ռ.), մի թունգի գինի, մի շիշ օղի, մեխակ և մրգեղեն (ընդամենը 2ռ. 50 կոպ. արժողությամբ), մի քանի զույգ էլ գաթա: Մեխակն ուղարկվում է, որ հարսնացուն և յուր ընկերուհիներն իրենց համար «վզնոցներ»՝ մանյակներ շինեն:

Փեսացուն ևս ամեն անգամ յուր նշանածի տունը գնալիս նրա համար ընծաներ՝ շալակ է տանում, որ գլխավորապես մրգեղենից և պտուղներից է բաղկանում: Բացի սրանից նա պարտավոր է ամեն կերպ ծառայել աներոջը, օրինակ, օգնել նրան տուն շինելիս, փայտ կրել անտառից, աշխատել նրա այգում, օգնել դաշտային պարապմունքների մեջ և այլն:

Հղե կտրել. Հարսանիքից մի ամիս կամ մի քանի շաբաթ առաջ տղի հայրը կնքահոր և մի քանի ուրիշ բարեկամների հետ գնում է աղջկա տունը՝ տանելով յուր հետ մի թունգի գինի, մի շիշ օղի, մի քանի զույգ գաթա: Աղջկա հայրն անմիջապես կանչում է յուր եղբորը, մեծ փեսին և մի ուրիշ մարդու: Լինում են և քահանան ու տանուտերը: Մի կարճ խոսակցությունից հետո քահանան, և կամ, ինչպես շատ անգամ, տղի բարեկամներից մինն ասում է.

- Դե, խնամե, մունք եկալ ընք հրդե կտրելի, ըսե՛ ցեք, տեսնանք հինչ էք օգում մրզանա:

Խնամին պատասխանում է.

- Ես ոչինչ օգում չըմ ծրզանա. եկալ ըք՝ շատ լավ ըք ըրալ, կերեք, խմեցեք, քեֆ ըրեք. հիրը էլ ուզիս ըք, եկեք ձեր հարթնը եր կալիք տարիք:

Այս ժամանակ մեծ փեսան հանդիմանում է նրան՝ ասելով. «Մ'պեր, էրկուիրեսանե մի կենալ, հինչ օր ինձանա ինք կալալ, էն էլ ընտրանա պիտի ինք օնիս, ես 40 մանեթ նադդ փուլ ըմ տըրվալ, մին մսացուկ ըմ տըրվալ, 7 խալաթ ըմ տըրվալ, դրանք էլ պիտի տա»:

Աղջկա հայրը, իբր ստիպված, դառնում է տղի հորը. «Խնա՛մե, տեսնում ը՞ս, ես զատ չըմ օգում, համա փեսաս ինջիմիշ ա ընում, դե, դու ըս գյուտում, հինչ օգըմ ըս, տո ըլի՛ »:

Տղի հայրը պատասխանում է.

«Քե մատադ, իմ անըմըսուցորա հունց վեր սըզական ա, հունց վեր խալխեն մհար ատաթ ա, ես էլ տլական ըմ»:

Այսպես շարունակվում է խոսակցությունը մինչև որ երկար շողոքորթությունից ու սակարկությունից հետո, որ երբեմն մի քանի օր էլ է տևում, որոշվում է, որ տղի հայրը տա աղջկա հորը 5-50 ռ., փող, մի եզ, 7-5-3 խալաթ, որից մի ձեռք ավըշի շապկացուն՝ հարսնացուի, երկրորդը՝ սրա մոր, իսկ մյուսները՝ սրա բարեկամների համար է: Սրանից հետո էլ փեսացուի կողմն է ձայն

¹ Բնագրում օր բառը բացկայում է, հավանաբար վրիպակ է (ծ. կ.)



բարձրացնում և պահանջում, որ հարսնացուի հայրը որոշե, թե ինչ է տալու որպես օժիտ: Պետք է ասել, որ հետզհետե տղի տվածը փոքրանում և հարսի օժիտը մեծանում է, և մինչև անգամ պատահում են դեպքեր, երբ տղի հայրը ասում է, թե այսքան օժիտ կտաս՝ կառնեմ, չես տա՝ նշանը ետ կտամ: Սակայն այդպիսի դեպքերը դեռևս հազվագյուտ են:

Նույն միջոցին որոշում են և պսակի օրը: Այնուհետև փեսացուի հայրը սկսում է պատրաստվել պսակը կատարելու: Մի օր հրավիրում է քահանային յուր մոտ, լավ հյուրասիրում և նրանից ստանալով մի վկայական՝ դիմում գործակալին: Այստեղ իրեն աղքատ ձևացնելով և երկար սակարկելուց հետո վճարում է 5-7 ռ. և ստանում պսակի հրաման:

Սակայն շատ անգամ գործն այստեղ բավական քաշքշվում է: Երբեմն չհասությունը, երբեմն գործակալի ընչաքաղցությունը ուշացնում են հրամանը: Տարեկան առնվազն 50 չհասության խնդիրներ են պատահում, որոնք, եթե փողի միջոցով չեն լուծվում, ապօրինի կնապահությամբ են վերջանում:

Բայց հոգևոր իշխանության հրամանը դեռ բավական չէ, որ քահանան կատարե պսակադրության խորհուրդը, հարկավոր է նաև տանուտիրոջ «տեր-ողորմյան», ուստի և փեսացուի հայրը գնում է նրա մոտ, մի շիշ օղի, 30-40 կոպ. դրամ տալիս և ստանում այն:

Տըշտըմադ. Պսակի պատրաստվելով՝ աղջկա և տղի տնեցիները լավ մաքրում են տները և պոնների ճակատներն այլուրով խաչաձև նախշում: Ապա տղատերը չորեքշաբթի, իսկ աղջկա տերը հինգշաբթի պատրաստում է հարսանյաց հացը: Մի կին, շրջելով բոլոր բարեկամների մոտ, հրավիրում է գալ **տըշտըմադը** (տաշտ և մադ) շնորհավոր անելու: Ամեն մինը վերցնում է կա՛մ մի կտոր պանիր, կա՛մ յուղ, կա՛մ թել, կա՛մ մի քանի ձու և կա՛մ մի քանի կոպեկ և գալիս հրավիրողի տունը, շնորհավորում, օրհնում և բերածը տալիս այլուր մադողին:

Երբ մեծամասնությունը հավաքված է լինում, մի քանի գյուղերում մի պառավ կին սկսում է մադել այսպես. մի բուռ այլուր վերցնելով՝ ասում է մադի մեջ և ասում. *«Էս հորս փայր, էս մորս փայր, և այլն, էս մեռելների օրհնությունը ընի, էս խեթ պընատեղիս վերա»*: Նրանից հետո արդեն մադում է հացարարը: Իսկ մի քանի ուրիշ գյուղերում, օրինակ, Սզնեքում, սկզբում յոթը աղջիկ են մի-մի մադ մադում, ապա հացարարը, այն էլ՝ մի ռուբլի նվեր ստանալուց հետո: Նույն գերդաստանի ամենից պառավին էլ բերում են, որ նա առաջինը ջուր ածե: Այլուր մադելուց հետո բոլոր հյուրերին ընթրիք են տալիս, որից հետո հեռավոր բարեկամները գնում, իսկ մոտիկ բարեկամներից մի քանիսը մնում են օգնելու: Այդ գիշեր թխում են բավական թվով գաթա և հաց: Թխելուց հետո մի-մի գույզ հաց են բաժանում բոլոր բարեկամներին:

Առաջները համարյա միշտ, իսկ այժմ միայն մի քանի հարուստ գյուղերում նույն օրը, կամ ուրբաթ տղի տանից տանում են աղջկա տունը մի կենդանի եգ, մսացուք՝ վզովը մի շարք խնձոր կապած: Առաջից գնում են դավուլ-գուռնան, իսկ ետևից՝ եգ մորթողը, դանակը ձեռին պատրաստ: Աղջկա տան առաջ բավական ածելուց հետո եգ մորթողը վայր է ձգում եզը և դանակը դնելով վզին՝ սպասում, մինչև որ մի ռուբլի նվեր է ստանում, և ապա մորթում:

Այս եզի կեսը տալիս են աղջկա տնեցիներին, իսկ մյուս կեսը տանում տղի տունը:

Մորթելու ժամանակ փեսացուն և քավորը դնում են իրենց աջ ոտները եզի վրա, իսկ փեսացուի քույրը կամ մի ուրիշ մոտիկ ազգական բերում է մի կողպեք և արյան տակ բռնելով կողպում, որպեսզի քաջքերը ևս կողպված մնան և չկարողանան վնասել: Այս կողպեքը այդպես կողպված պահում են մինչև թագի վերացումը, երբ նորից հանդիսավոր կերպով բաց են անում:

Նույն օրը կանայք պատրաստում են մի կամ երկու հավ՝ փեսի առաջ տանելու: Հավը մորթելուց և փետրելուց հետո գլուխը նորից կարում են վզին, ապա թելի վրա քիշմիշ անցկացնելով՝



փաթաթում հավին, այնպես որ ամբողջ հավը պատած է լինում քիշմիշով, ապա մեջքին էլ նույն քիշմիշով մի թամք շինում, փորոտիքն էլ լցնում են թթվեղենով:

Աղջկա տանն էլ պատրաստում են ծառը, հատկապես փեսացուի առաջ բերելու համար:

Ծառը պատրաստում են աղջիկները. վերցնում են մի փայտ և ամրացնում գույնզգույն թելերով զարդարված մի կտոր տախտակի վրա: Հետո ուրիշ փայտեր են կապում այդ փայտից, և սրանց վրա կապում խնձոր, տանձ, նուռ և այլն: Ծառի ճյուղերը միացնում են միմյանց հետ՝ վրան քիշմիշ և սիսեռ անցկացրած թելերով: Ծառի ծայրին էլ ամրացնում են վերոհիշյալ կերպով պատրաստված մի հավ: Ծառի վրա սովորաբար լինում է մի ֆունտ քիշմիշ և 5-8 ֆունտ միրգ: Ծառը տանելիս տախտակի վրա վառում են 2 կամ 4 մոմ:

Քավոր. Գյուղերում քավորները մեծ նշանակություն ունեն: Նրանք ոչ միայն հարսանյաց, այլև ուրիշ հանդեսների ժամանակ միշտ հրավիրվում և լավ հյուրասիրվում են: Յուրաքանչյուր գերդաստանի քավոր է լինում մի ուրիշ գերդաստան, և մեծ անպատվություն է, որ մինի պսակի ժամանակ ցեղական քավորենց թողնեն և մի ուրիշ գերդաստանից քավոր հրավիրեն: Չի պահանջվում, որ միշտ միևնույն անձը լինի քավոր, այլ որ միշտ միևնույն գերդաստանի անդամներից մինը կատարե այդ պաշտոնը:

Հարսները երբեք չեն խոսում իրենց քավորների հետ և մինչև անգամ նրանց դռնով անցնելը մեղք են համարում, այնքան ակնածում են նրանից: Հարսանիքից մի քանի օր առաջ տղայի հայրը պատրաստել է տալիս մի «սեղան», որ բաղկանում է հետևյալ իրերից. մի լաստիկ արխալուղացու, մի թունգի գինի, մի շիշ օղի, 10 հատ գաթա, հինգ գրվանքա միրգ: Հետո կամ ինքը՝ տղայի հայրը, և կամ յուր եղբայրը տանում է քավորին ընծա և խնդրում նրան գալ որդու խաչը բռնելու: Քավորը սիրով ընդունում է խնդիրը և նրան լավ հյուրասիրում: Հետո պատրաստում է մի թունգի գինի, մի շիշ օղի, մետաքսի եռագույն թելերով ասեղնագործած մի գույգ քոշ և մի ուրիշ, մոտ 5 ռ. արժողության մի ընծա՝ հարսանիքի օրը հարսին նվեր տանելու:

Հանդերձօրհներ. Հարսանիքի օրը մոտենալիս հարսնացուի մոտիկ ազգականները հրավիրում են իրենց մոտ հարսնացուին, երբեմն միայնակ, երբեմն էլ ընկերուհիների հետ, լավ հյուրասիրում և վերադառնալիս էլ մի-մի ընծա տալիս: Այս օրերին հարսնացուին, ինչպես և փեսացուին հանդիսավոր կերպով լողացնելը այս կողմերում վերացել է: Սրանք իրենք իրենց սովորական եղանակով լողանում, մաքրվում են:

Ուրբաթ օրը դավուլ-գուռնան գնում է թե՛ փեսացուի և թե՛ հարսնացուի տների առաջ ածում է «սահարի» հատուկ հարսանեկան եղանակը, որով իմացնում է գյուղին, որ այդ օրվանից սկսվում է հարսանիքը: Նույն օրը փեսացուն գնում է և պատվավոր հյուրերին յուր հոր կողմից հրավիրում:

Երեկոյան մոտ հյուրերը հավաքվում են և ծալապատիկ նստում օջախի շուրջը՝ փափուկ գորգերի վրա: Փոքր-ինչ հետո մի մարդ, մի ձեռին կոնք, մյուսին՝ մի սափոր, ուսին էլ՝ մի անձեռոցիկ, շրջում է հյուրերի մեջ և ջուր ածում՝ լվանալու ձեռքերը: Այս նահապետական սովորությունից հետո անմիջապես սփռում են գետնին սփռոցներ: Գերդաստանի ամենաժլատ անդամներից մինը, որ մառանապետ է ընտրված լինում և տեղական բարբառով «մառանապետ» է կոչվում, բարձրանում է ալյուրի շտեմարանի վրա և այնտեղից սոխ նետում սփռոցի վրա: Ոչինչ, եթե սոխը փոխանակ սփռոցի վրա, մինի գլխին կամ երեսին ընկնի, մի բարձր քրքիջ կհաջորդե սրան, և սոխը կդրվի յուր տեղը: Մի ուրիշն էլ միևնույն մառանապետի կարգադրությամբ լոբի է շաղ տալիս սփռոցների վրա և հետո բերում ամեն մի մարդու առաջ երկու հաց դնում: Հետո մատուցանում են լոբախաշու՝ մեծ-մեծ քարդաններով, որոնց միջից խումբ-խումբ ուտում են: Ընթրիքի ժամանակ կառավարում է «թոյպաշին», որ սովորաբար թագվորի փեսան, հորեղբոր



որդին կամ մոտիկ ազգականն է լինում: Մա օգտվում է ընդարձակ իրավունքներից, սրանից է կախված հարսնությունների ուրախությունը: Մա է մի կողմից խմեցնում և մյուս կողմից հրամայում հարսնետիրոջը՝ կրկին լցնելու շշերը: Մա է որոշում թե ում պիտի հրավիրել, ինչ պիտի տալ քահանային, եկեղեցուն, սա է հսկում, որ հարսի օժիտը խոստացածի համեմատ լինի:

Ընթրիքից հետո թագվորը և քավորը, մի-մի վառած մոմ ձեռքերին, կանգնում են քահանայի առաջ: Բերում են թագվորի հանդերձը՝ չուխեն և գդակը, և քահանան օրհնում է այն: Հանդերձի հետ լինում է և երկու թաշկինակ, որոնցից մինը կապում են թագվորի, մյուսը՝ քավորի կողքից:

Մափրելու ծեսը. Հանդերձօրհնեքից հետո քավորը ընտրում է մի «մակարբաշի», որ կազմում է «մակարների» խումբը երիտասարդներից, և ամեն մեկին մի-մի մոմ տալիս: Մակարները, թվով 20-30, թագվորի անձնապահներն են համարվում և միշտ նրան շրջապատած պահպանում են:

Սրանից հետո կանչում են սափրիչին: Թագվորը նստում է մի աթոռի վրա, կողքին կանգնում է քավորը՝ ձեռին մի վառած մոմ, իսկ մակարները, ձեռներին վառած մոմեր, շրջապատում են նրանց: Սափրիչը սափրում է թագվորի մորուքը և երբ վերջացնում է, տալիս է յուր փոքրիկ հայելին թագվորի ձեռքը: Նախ քավորը և ապա բոլոր մակարները համբուրում են թագվորի ճակատը և 5-20 կ. դնում հայելու վրա: Սափրիչը, վերցնելով դրամը, սկսում է քավորին սափրել: Այս ժամանակն էլ թագվորն է, մոմը ձեռին, նրա կողքին կանգնում: Մի քանի գյուղերում առաջ քավորին են սափրում և ապա թագվորին:

Մինչև այդ ժամանակ թագվորի տանից մի կնոջ ձեռով ուղարկվում է հարսնացուի մորը հարսի զգեստը, որ բաղկացած է լինում մի թավշե մուշտակից (25-50 ռ. արժողությամբ), մի շալե կամ մետաքսե արխալուղից (5-10ռ.), մի չարդաթից (7 ռ.), մի գիլանի գոտիից (5 ռ.), գլխին կապելու արծաթ կամ ոսկի դրամներից (8-72 ռ.), մի գույգ չմշկներից (1 ռ. 20 կ.) և մի դրբայի (մետաքսի) շապկից (5-8 ռ.), ընդամենը՝ 54-172 ռ. արժողության: Բացի սրանից, ուղարկվում են նաև մի թունգի գինի և մի շիշ օղի: Իսկ արխալուղի գրպանները և չմշկները լցված են լինում տեսակ-տեսակ մրգերով: Այս հանդերձը տանողը չի հանձնում, մինչև որ մի ընծա չի ստանում:

Հարսնատո գնալ. Մինչդեռ տղի տանը հանդերձներ են օրհնում, հարսի տնից մի երիտասարդ, ձեռին մի կարմիր խնձոր բռնած, գալիս և բուրդին հրավիրում է: Անմիջապես մակարբաշու կարգադրությամբ մակարները գնում զինվում և գալիս են: Իսկույն ձեռներին մի-մի մոմ առած՝ շրջապատում են թագվորին ու քավորին և դավուլ-գուռնի առաջնորդությամբ ուղևորվում դեպի հարսնացուի տունը: Ճանապարհին մակարները պարում, երգում, բղավում և հրացաններ ու ատրճանակներ են արձակում:

Երբ հասնում են աղջկա տուն, հարսնացուի հայրը յուր հյուրերով դիմավորում է սրանց: Մինն էլ, մի երկար մաշալլա (ձողի ծայրին կուպրի մեջ թաթախած շոր կապած և վառած) ձեռին, առաջնորդում է նրանց: Այս տեսնելով՝ մակարները արձակում են իրենց հրացաններն այդ մաշալլայի վրա և «ուռա» բղավում:

Հարսնացուի մայրը մոտենում է թագվորին և համբուրում նրա և քավորի ճակատներն ու հրավիրում ներս: Սակայն թմբկահարը կտրած է լինում դուռը և թույլ չի տալիս ներս մտնելու, մինչև որ քավորից մի քանի կոպեկ նվեր չի ստանում: Մի քանի բոպետում բուրդը խուժում են ներս: Ղարադամի մի անկյունում մի վարագույրով (գյարդակ) կտրած է լինում, որ կոչվում է «պուճախ»: Այստեղ է լինում հարսնացուն յուր մի քանի ընկերուհիների հետ: Վարագույրի մոտ պատից կախված է լինում հարսի օժիտի գորգը կամ կապերտը:

Մակարները գնում նստում են վարագույրի մոտ, իսկ քավորը, թագվորը և փեսեղբայրը կանգնում են կախված գորգի առաջ՝ վառ մոմերը ձեռքներին: Տան ծերունին մոտենում է



թագվորին և նվիրելով նրան մի գոտի կամ մի ուրիշ բան՝ խնդրում է նստել: Թագվորը, եթե գոհ է մնում, նստում է, իսկ եթե ոչ՝ կանգնած է մնում: Այս ժամանակ թագվորի մոտիկ ազգականները մոտենում և համոզում են նրան, որ բավականանա տվածով և նստի: Վերջապես թագվորը քավորի հետ միասին նստում են:

Այս ժամանակ աղջկա ազգականները «լույս» են բերում՝ մի սկուտեղի շուրջ շարում են խնձորներ, որոնց վրա ամրացնում են վառած մոմեր: Սրանց մեջտեղը ածում են մրգեր, գաթա, հավ, ձու և այլն: Իսկ ամենամոտիկ ազգականները «ծառ» են բերում: Ամեն մի «լույս» կամ «ծառ» բերելիս մակարները «ուռա» են կոչում, ածում, պարում, գինի և օղի խմում, և հետո մակարբաշին առնում է այն և տալիս տնեցիներից մինին՝ պահելու: Այդ բոլորը մակարներին է պատկանում:

Քիչ հետո ընթրիք են տալիս և մատուցանում են պասվա կերակուրներ: Օղին և գինին առատությամբ մատուցանում են: Պարն ու «յայլին», ծաղրն ու հանաքը երկար շարունակվում են, մինչև որ հարբած ու հոգնած՝ կես գիշերին ամենքը ցրվում են տները. մնում են միայն քավորը, փեսան և մի քանի մակարներ: Այս ժամանակ տան հարսներն ու աղջիկները գալիս շրջապատում են թագվորին և սկսում խոսեցնել նրան: Ձոքանչն էլ բերում նրան և նրա հետ մնացողներին նորից հաց է տալիս, որ կոչվում է «շնթոկաճաշ» կամ «թաքուն պատառ»: Առաջինը նշանակում է, որ թագվորը կարող է այդ ժամանակ ազատ նստել և ճաշել, առանց հյուրերից նեղվելու, երկրորդը, որ գոքանչը յուր պահած լավ պատառը թաքուն տալիս է յուր փեսին:

Երբ հարսը ուրիշ գյուղից է լինում, հարսնառ գնալը տեղի է ունենում շաբաթ առավոտյան: Թե՛ մակարները և թե՛ թագվորը ձիով են լինում, թեև պատահում է, որ բոլորն էլ հետի են գնում: Այս գնացքի ժամանակ երիտասարդ մակարները, գլխները օդուց տաքացած, ահագին աղմուկ բարձրացնելով, իրենց բոլոր շնորհքները թափում են: Արշավելով առաջ ու ետ՝ նրանք կանգնում են ձիու վրա, քշած միջոցին ոտը խփում գետնին և կրկին թռչում ձիու մեջքին մտնում ձիու փորի տակ և ատրճանակ արձակում և այլն:

Փրթեթօրհներք. Շաբաթ առավոտյան վաղ մակարները նորից հավաքվում են աղջկա տունը: Այստեղ նրանց նախ մի-մի բաժակ օղի և ապա մի-մի թերխաշ (թընըխարավ) ձու են տալիս:

Ժամը 10-ին մոտ դավուլ-գուռնան, մի որոշ եղանակ ածելով, հրավիրում է բոլորին պատրաստվել պսակ գնալու: Գալիս է քահանան և օրհնում հարսի հանդերձը: Այս ծեսը տեղական բարբառով կոչվում է «փրթեթօրհներք»: Մի սկուտեղի վրա դնում են թագվորի տնից բերված հարսի հանդերձը և հարսի ծնողների կողմից թագվորին տալու ընծան՝ մի գոտի կամ մի շորեղեն: Թագվորը, մոմը ձեռին, կանգնում է հանդերձի մոտ, իսկ հարսնացուն պուճախումն է լինում:

Հանդերձն օրհնելուց հետո թագվորը վերցնում կապում է գոտին: Հարսի հանդերձներն էլ տանում են պուճախը, ուր մի հարս հագնում է նրան և գլուխը կապում, զարդարում: Այս միջոցին հրավիրում են քավորին՝ հարսի գոտին կապելու: Սա ուրախությունով գալիս կապում և թեթևությամբ խփելով մեջքին ասում. *«Աստված քեզ մին դոչ որդի տա»:*

Այս ժամանակ թոյպաշին շտապեցնում է. *«Հրրթնա՛ մար, պա հինչ տե՛ ռավ, ախեր շենըմը օրիշ հրրսանեք կա, կըզան մեր ըորչկնեն կտրին. առաջ մունք պիտի քրնինք»:*

Գյուղացիները հավատացած են, որ եթե պսակի գնալիս մի ուրիշ հարսանիք պատահի, թագվորը կոժժախտանա:

Պսակ գնալ. Վերջապես հարսը, կողքերին մի-մի հարսնաքույր (հրրսնաքույր), հանդերձ հագնող կնոջ առաջնորդությամբ դուրս է գալիս պուճախից և ծանր քայլերով գալիս թագվորի աջ կողմում կանգնում: Սրա ձախ կողմումն էլ քավորն է լինում: Իսկույն թոյպաշին, մի մետաքսե թաշկինակ կապած մի երկար ձողի ծայրին, առաջ է ընկնում: Դավուլ-գուռնան, ավելի ուժգնու-



թյամբ ածելով, առաջնորդում է դեպի եկեղեցին: Մակարները, շրջապատած հարս ու թագվորին, «ուռա» են բղավում, պարում, գինի, օղի խմում և ատրճանակ արձակում: Մի քանի մակարներ էլ, «ծառեր» ձեռքներին բռնած, պարելով առաջ են գնում: Երբ հասնում են եկեղեցուն, մի քանի մակարներ պահապան են կանգնում եկեղեցու շուրջը, որպեսզի թույլ չտան թշնամի մարդկանց եկեղեցու կտուրը քար ձգելու և այսպիսով ամուլ դարձնելու հարսին: Մյուսները մտնում են եկեղեցի: Իսկույն թոյաշին հանձնում է քահանային տանուտիրոջ համրիչը և խնդրում պսակել: Այստեղ էլ թագվորաքույրերն են հսկում, որ չարամիտ կանայք թել չհանգուստեն և այսպիսով ամուլ դարձնեն հարսին: Քահանան նախ խոստովանեցնում է հարս ու թագվորին և ապա երկուսին միասին չոքեցնելով սեղանի առաջ՝ յուր շուրջառը ձգում գլխին: Այս ժամանակ թագվորը հանում է յուր գրպանից մի խնձոր, որի մեջ արծաթ դրամներ են խրված լինում, և ծածկաբար տալիս հարսին: Երբեմն էլ բավարարվում է միայն մրգեղեն տալով:

Երբ քահանան, գինու բաժակն օրհնելով, տալիս է թագվորին, առաջ է գալիս հարսնեքույրը, առնում բաժակը և մնացած գինին խմեցնում հարսին:

Պսակի խորհուրդը կատարելուց հետո քահանան ասում է. *«Դե՛հ, թաքավերին, թագուհուն սիրողը կյա՛ տեսնա՛ս»*: Ամենքը մի առ մի մոտենում, համբուրում են թագվորի բռնած ավետարանը և խաչհամբույր ձգում: Եվ եթե մինը չի ձգում, քահանան բարկանում է վրան, գնում պյուների ետևից քարշ տալիս բերում, որ մի քանի կոպեկ էլ ձգի:

Երբ տեսնում են, որ այլևս ոչ ոք չի մոտենում, շարժվում են դեպի տուն: Մակայն այս անգամ թագվորն ու հարսը միննույն կերպով չեն գնում: Դեռ մինչև ամուսնանալը հարսը թագվորին հավասար էր համարվում, ուստի և նրա կողքից էր գնում, բայց այժմ, արդեն ամուսնացած լինելով, ժողովրդի կարծիքով, նրանից ստոր է, ստիպված է ամեն բանում նրան հետևելու, ուստի և թագվորը գնում է առջևից, աջ կողմում՝ քավորը, ձախում՝ փեսեղբայրը, իսկ հարսը՝ թագվորի ետևից, նրա գոտուց ամրացված թաշկինակը բռնած: Նրա կողքից էլ գնում են հարսնաքույրերը:

Եկեղեցուց դուրս գալիս քավորը հանում է յուր կողքից կապած թուրը և խրում դոնազլիսին, որ փեսան ու հարսը տակովն անցնեն, և սատանաները չկարողանան նրանց խփել:

Այժմ արդեն մակարների ուրախությունը յուր գագաթնակետին է հասնում, պարը, «ուռան», հրացանաձգությունը քանի գնում՝ սաստկանում են:

Ամենից առաջ գնացքն ուղղվում է դեպի «օճախները», ուր հարս ու փեսա երեքական անգամ չոքում և համբուրում են օճախից, խունկ ծխում, խաչհամբույր ձգում: Ճանապարհին հարսի կամ փեսի բարեկամները և քավորանք հրավիրում են հարս ու թագվորին իրենց դուռը, ուր սրանք կանգնում են, իսկ մակարները սրանց առջև պարում են: Հրավիրողը օղի կամ գինի է բաշխում մակարներին և մի նվեր տալիս թագվորին կամ հարսին, օրինակ, մի չարդաթ, մի լաչակ ձգում հարսի գլխին, մի թաշկինակ կամ մի օսկապ կապում¹ թագվորի վիզը: Հեռու բարեկամներն էլ մի-մի աման ձվածեղ, հալվա, կարմիր ձու, փլավ, ընկույզ, գինի, օղի և այլն են բերում, նախ մի-մի բաժակ տալիս թագվորին ու քավորին և մի-մի էլ պատրաստած պատառ ներկայացնում նրանց, և ապա մնացածը տալիս մակարներին:

Մի քանի բարեկամ կանայք էլ հարս ու թագվորն իրենց դոնով անցնելիս կտրից ընկույզ են շաղ տալիս վրաները: Պիտի երևակայել, թե ինչպիսի իրարանցում է տիրում մակարների մեջ, որ աշխատում են միմյանց ձեռքից խլիլել ընկույզները:

¹ Օսկապը (ուս-կապ) մի ծակ քսան կոպեկանոց է, որ կանաչ-կարմիր թելերով կապում են ուսովը



Վերջապես գնացքը մի երկու ժամից հասնում է «հարսնքատունը»՝ հարսի տունը: Մի քանի գյուղերում այս միջոցին մի հավ են բերում քավորի տանից: Մի մակար այդ հավը, իսկ ուրիշը, մի դաշույն ձեռներին բռնած, պարում են: Եվ երբ պարը վերջանում է, քավորն առնում է դաշույնը և հորիզոնական կերպով բռնում և հրավիրում թագվորին: Սա էլ վերցնում է հավը, գլխից և ոտներից բռնում, խփում դաշույնին, վիզը կտրում: Բոլոր մակարները «ուռա» են բղավում և գովում թագվորի քաջությունը: Հետո բոլորը խառնիխուռն խուժում են ներս և նստում գորգերի և ներքնակների վրա: Հարսին կրկին տանում են պուճախը, իսկ թագվորին կանգնեցնում են վարագույրի մոտ, նրանից ներքև՝ քավորը և փեսեղբայրը:

Դրսում գոռնան շարունակում է աձել «նվախք» եղանակը: Թոյպաշին գնում մի ընծա է տալիս և հրավիրում ներս:

Կեսօրին հաց են ձգում և մատուցանում են բոգբաշ, դոլմա և կորկոտ: Նախ ճաշում են տղամարդիկ: Սակայն այս ժամանակ էլ թագվորը ոչ նստում և ոչ էլ հաց է ուտում: Աներանք մի երկու գույգ գուլպա և մի գդակ են բերում և նվիրում, որ նստի հաց ուտի: Այս նվերը կոչվում է «բերանբացուկ»: Երբ ճաշը ավարտվում է, թագվորն ու քավորը 20-40 կոպեկ են ձգում ափսեի մեջ՝ խոհարարին նվեր: Հացի ժամանակ գյուղի զգիրը գալիս պահանջում է մի փոքրիկ աման հալվան, որ հատկապես պատրաստված է լինում, և բաժանում բոլոր հրավիրյալներին: Եթե մեկին չհասնի, նա աղմուկ կբարձրացնի և կպահանջե:

Տղամարդկանցից հետո կանայք են նստում հաց ուտում և վերջն էլ «կանչ անում»: Այս «կանչից», որին միայն կանայք են մասնակցում, գոյանում է մոտ 30 ռ., որ հանձնվում է հարսի մորը:

Սրանցից հետո հեռու բարեկամները ցրվում են, մնում են միայն մոտիկ ազգականները և մակարները: Իսկույն թոյպաշին խնդրում է բերել և ցույց տալ հարսի օժիտը: Անմիջապես բերում են և բաց անում: Թմբկահարը վերցնում մեկ-մեկ բարձրացնում է իրերը և բոլորին ցույց տալով՝ բղավում. *«Թագավորին մկրռնէ»:*

Մակարները ձայն են տալիս. *«Հրամմա»:*

Թմբկահարը՝ *«Հրամանքդ աստծու, խնամին տվալ յուրան ըղջկանը մի սիրուն կապերտ, որ եժի պակասը 20 մանեթ (մինչդեռ արժե 10 ռ.)»:*

Բոլորը միասին բղավում են. *«Շեն կենա, շեն»:*

Այսպես ցույց են տալիս ամբողջ օժիտը, որ բաղկացած է լինում հետևյալ իրերից.

Հարսի օժիտը. Մի ձեռք շոր՝ արխալուղի վրա մոտ տասը ռուբլու արծաթ դրամ սարմակոճակ կարած:

Երկու ձեռք սպիտակեղեն:

Մի ձեռք անկողին՝ բաղկացած մի ներքնակից, մի վերմակից, երկու բարձ և մի մութաքայից:

Մի կապերտ:

Մի փոքրիկ կապերտ (գլաբա):

Մի գորգ:

Երկու մաֆրաշ:

Մի բակեղաթ:

Մի հատ աղաքսակ՝ շորից կարած:

Մի կաթսա բռնելու շոր (թութաճախ):

Մի կուժ:

Մի կոնք:

Մի սափոր (ալթավա):



Մի սկուտեղ (մաժմահի):

Մի ասմալըդ՝ թելերից գործած գդալակալ.

Պղնձյա ափսեններ:

Մի սնդուկ:

Հարսը տանել. Երեկոյին պատրաստվում են գնալու թագվորի տունը:

Օժիտը բարձում են մի ձիու, հարսները որն էլ նստեցնում վրան: Դավուլ-գուռնան ուժգնությամբ ածում է: Հարսի հայրը բռնում է հարսի ձեռքից, առաջ բերում և ձեռը տալով թագվորի հորը՝ ասում. *«Ա՛ն ամանայթ, տար խերը տես»*: Հարսը խոնարհում և համբուրում է կեսրարի ձեռքը: Մա էլ շնորհակալ է լինում ինձամուց, օրհնում հարսին և մոտեցնում նրան թագվորին: Ապա թագվորն ու հարսը ծունր դնում, համբուրում են օձախը: Այս ժամանակ թագվորը մի քիչ մոխիր է վերցնում և լցնում գրպանը: Հետո թագվորն առաջ է անցնում և քավորի ու փեսեղբոր հետ գնում, իսկ հարսը հետևում է նրան՝ նրա գոտուց կապած թաշկինակից բռնած: Մակարները սրանց շրջապատած են լինում և պարելով, «ուռա» բղավելով առաջ գնում: Երբ մոտենում են տանը, թագվորի մայրը մի սկուտեղի մեջ երկու լավաշ հաց և մի փոքրիկ ափսեի մեջ կրակ, վրան խունկ դրած, պտտեցնում է տան չորս անկյունը, ապա դուրս գալիս և երեք անգամ պտտում թագվորի և թագուհու շուրջը: Հետո բարձրանում է մի բարձր տեղ և ընկույզ կամ կաղին շաղ տալիս հարսի գլխին¹: Ապա մոտենում և համբուրում է հարսի ճակատը: Մա էլ խոնարհում և համբուրում է նրա ձեռքը: Այս միջոցին տանեցիներից մինը յուղի կարասը բերում, ներկայացնում է թագուհուն, և սա, մի քանի կոպեկ ձգելով յուղի մեջ, մատը յուղոտելով քսում է դռնագլխին և սկեսրոջ մազին: Իսկ սկեսուրն ասում է. *«Ձեռնդ ընի եղի մաջին, քրմատաղ»*: Հետո հրավիրում է ներս, բայց սա չի գնում, մինչև որ կեսրարը գալիս և մի ընծա է խոստանում: Հարս ու թագվոր մտնում են ներս և չոքում, համբուրում օձախը: Այս ժամանակ հարսը գրպանից խունկ է հանում և ձգում օձախը: Իսկույն տան ծերունին մոտենում և հենց այդ օձախի մոտ օրհնում է նրանց²: Հետո հարսին տանում կրկին փակում են նույն կերպ պատրաստված պուճախում: Անմիջապես սկեսուրը մի տղա գրկում, տանում հարսի գիրկն է դնում՝ ասելով. *«Բարով դու էլ մին տղա բիրես, քրմատաղ»*: Հարսը, որ մինչ այդ ժամանակ կանգնած է լինում, գրկում է երեխային և նստում: Հետո գրպանից հանում է մի գույզ փոքրիկ գուլպա և տալիս երեխային:

Մի քանի գյուղերում էլ (օրինակ՝ Շոշում) պուճախում մի համետ են դնում և դիտում. եթե հարսը վրան նստի, դա նշանակում է, որ նա հիմար է, իսկ եթե մոտը կանգնի, դա ապացույց է, որ խելացի է:

Երեկոյին տեղի է ունենում հարսի տան նման ընթրիք, որի ընթացքում «ծառեր» են բերում: Գիշերը ուշ հյուրերը ցրվում են, և մնում է միայն փոքրիկ հարսները, որ քնում է հարսի մոտ և հսկում նրա վրա: Մա չի թույլ տալիս, որ հարսի քնած ժամանակ բանան երեսը՝ տեսնելու, թե նա որքան գեղեցիկ է:

Մեծարք. Կիրակի օրը գնում ամբողջ գյուղի տղամարդ մեծերին հրավիրում են, և այդ օրվա հրավերը **մեծարք է** կոչվում:

Կեսուրին մոտ ճաշ են տալիս, որի ընթացքում առատությամբ բաշխում են զինի և օղի, որ հրավիրյալների գլխները տաքանան, և գրպանները փոքր ինչ լայնանան:

Երբ հացկերույթը վերջանում է, թմբկահարը երեք անգամ խփում է թմբուկին և կանչում. *«Ա՛ջամհատ, մեր խնամին զինի շատ օնի. հալա քեփը ետնան ա ըննական. մինչի խոզը ծառը եր*

¹ Շոշու գյուղում կոպեկանոցներ էլ են շաղ տալիս
² Որքան նմանություն է տրուսկների սովորություններին



ըննելը քեփ ինք ըննական. մեկ մին պատատ տազ ըրեք մին թագա խաբար ա եկալ, ախիմ»:
Մեծամասնությունը լուում է: Սա իսկույն թմբուկը տանում դնում է տանտիրոջ առաջ: Այս ժամանակ առաջ է գալիս թագվորի հայրը կամ մայրը և բերում է մի կարմիր մետաքսե մեծ չարսավ և ձգում թմբուկի վրա:

Հյուրերը մեկ-մեկ ազգակցության և կամ հարստության կարգով դրամ են նվիրաբերում հոգուտ թագվորի: Թմբկահարը առնում է դրամը, ցույց տալիս բոլորին և բղավում. «Ա՛ թագավորեն ջամհատ»: Զուռնանչին պատասխանում է. «Հրամանա՛»: Թմբկահարը՝ «Աստուծեն հրամանքը քեզ, (այսինչը) մեր թագավորեն սերին բերալ ա մին հինգ մանեթ, շեն կենա, շեն՛ն»:

- Շեն կենա,- կրկնում են բոլորը: Սովորաբար ամեն մինը 20 կոպեկից մինչև 20 ռուբլի նվեր է տալիս: Եվ երբ մինը ավելի պակաս է տալիս, քան թագվորի տնեցիները նրա տնեցիների կանչին տվել են, կռիվ է ծագում: Թագվորի հայրը և կամ բարեկամները նախատում են նրան և ստիպում՝ եթե ոչ ավելի, գոնե այնքան տա: Այս կանչից գոյանում է 50-100 ռուբլի:

Կանչից հետո մի սկուտեղի վրա դրված երեք բաժակ են բերում և գինի ածելով՝ առաջարկում հյուրերին, որոնք երեք բաժակ էլ միմյանց ետևից խմում են՝ մեկը՝ թագվորի, մյուսը՝ հարսի և երրորդը՝ քավորի կենացը: Ով դժվարանում է կամ հրաժարվում է խմելուց, նրան որպես պատիժ չորրորդ բաժակն էլ են խմեցնում:

Մկրկոչեք. Կիրակի երեկոյան, բայց առավելապես երկուշաբթի առավոտ, միայն մակարները հավաքվում են թագվորի մոտ և քեֆ անում, «ծառի», «լույսերի» վրա եղած մրգեղենն ուտում, մնացածը իրենց մեջ բաժանում և ապա թագվորի և սրա ծնողաց հետ գնում այդ գերդաստանի ննջեցյալներն օրհնել տալիս և վերադառնում: Այս ժամանակ քահանան կատարում է թագի վերացման ծիսակատարությունը, որի ընթացքում քավորը յուր սուրը բռնում է թագվորի և հարսի գլխին, որպեսզի արգելե չարքերին սրանց խփելու:

Այդ օրը՝ գիշերը, թագվորն ու հարսը առագաստ են մտնում: Հարսնաքույրը պատրաստում է անկողինը, մոտը դնում գինի, միրգ և գինու բաժակով՝ փոքր-ինչ մեղր: Քավորը՝ կտրան և մի կին՝ դռան ետևը թաք կացած են լինում: Խստությամբ պահանջվում է կուսության ապացույց սավանը, որ հարսնաքույրը տանում հարսի մորը և սկեսուրին ցույց է տալիս: Եթե հարսը կույս չի լինում, որ սակավ է պատահում, շատ անախորժ դեպքեր են տեղի ունենում: Մի քանիսը բավարարվում են միայն մի լավ թակելով և բավական երկար ժամանակ արհամարհելով, ուրիշներն ուղղակի վերադարձնում են հորը և երկար խոսակցություններից հետո, զիջանելով հոր տված նվերներից, կրկին ընդունում:

Առավոտյան վաղ տղան վեր է կենում փախչում մի բարեկամի տուն՝ ամաչելով մինին երևալ: Մի քիչ հետո գալիս են մոտ ազգական կանայք «աչքի լույս», այսինքն՝ շնորհավորելու, որ հարսը կույս է եղել: Ճաշին մատուցանում են «քյալլա-փաչա» (ոտ ու գլուխ): Այս ժամանակ մի խնձոր են ման ածում, որի վրա ամեն մինը մի արծաթ դրամ է ցցում և ուղարկում հարսին: Սա սիրով ընդունում և մինի առաջնորդությամբ գալիս բոլորի ձեռքերը համբուրում է: Սրանք էլ համբուրում են նրա ճակատը և գովասանքներ թափում նրա գլխին: Երեկոյան մոտիկ ազգական տղամարդիկ դավուլ-գուռնի առաջնորդությամբ թագվորին բերում են տուն, որ ամաչելով մոտենում է ծնողներին և համբուրում ձեռքերը:

Երբ հյուրերն արդեն վերադարձած են լինում, հարսը ջուր է տաքացնում և բերում բոլորի ոտներն ավագության կարգով լվանում և փոքր-ինչ խոնարհելով՝ համբուրում է, թեև շատերը թույլ չեն տալիս և մի-մի քսան կոպեկանոց ձգում կոնքի մեջ՝ իբրև հարսին նվեր:



Ոտ լվանալիս հարսը զգուշանում է, որ ձախ ոտը առաջ չլվա, որպեսզի անհաջողությունը չպատի:

Մյուս օրն՝ առավոտյան շատ վաղ, հարսը վեր է կենում, ամբողջ տունը մաքրում, ավլում, աղբը դռան մոտ հավաքում և յուր քոշերն էլ վրան է դնում: Երբ սկեսուրը վեր է կենում, գովում է հարսի ջանասիրությունը, և մի քանի կոպեկ դնում քոշերի մեջ: Հարսը վերցնում է կոպեկները և նոր դեն ածում աղբը:

Մի քանի շաբաթից հետո հարսի մայրը կամ հորեղբոր կինը վերցնում է մի քանի գաթա, մի հավ, մի քանի ֆունտ սապոն, մի սանր, թել, ճաղեր, մի ձեռք հանդերձ և գնում թագվորի տունը՝ «գլխըլվա»: Սա լողացնում է հարսին, լվանում շորերը, այդ գիշեր էլ մոտը մնում և առավոտյան վերադառնում:

Երբ առաջին անգամ հարսը գնում է աղբյուր՝ ջուր բերելու, յուր հետ ցորեն է տանում և լցնում աղբյուրի ակը¹:

ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ

Մինչդեռ կնոջ արգասավորությունը մեծ ուրախություն է պատճառում ինչպես ամուսնուն, այնպես էլ ամբողջ գերդաստանին, նրա ամլությունը դժգոհությունների և երբեմն ապօրինի կնապահության տեղիք է տալիս: Սակայն դեռ այդ աստիճանին չհասած՝ ամուլ կինը դիմում է «փալճիների» միջնորդության և նրանց «գիր անել տալով»՝ հույս է տածում երեխա ունենալ: Երբ մարդկային միջոցներն անգոր են գտնվում, և հաճախ տեսնվող երագները տրամադրում են սրբերի օգնությունը հայցելու, վերցնում է մի սպիտակ խոյ և ոտաբոբիկ դիմում սրբի դուռը: Այս տեսակի սրբերից Վարանդայում նշանավոր են Սարիբեկը, Ամարասի ս. Գրիգորիսը, Սարուշենի Ավետարանը, Սզնեքի ս. Հովհաննեսը և այլն:

Մոտենալով սրբի դռանը՝ ամուլ կինը երեք անգամ չոքեչոք պտտում է նրա շուրջը և ապա համբուրելով սրբությունը, չոքած և ձեռքերը գետնին հենած՝ անշարժ մնում է: Այս ժամանակ մի անմեղ մանուկ վերցնում է մի կտոր քար և դնում նրա վզին: Քահանան անմիջապես ձգում է նրա վրա յուր շուրջառը և աղոթքներ կարդում: Մի կին էլ նրա մոտ հսկում է, որ ոչ ոք չդիպչի նրան և խանգարի նրա խնդրվածքը:

Կինը ջերմեռանդությամբ աղոթելուց հետո խոստանում է յոթը գյուղ ման գալ, «մատաղ հավաքել», ոչխար առնել և բերել «նրա ոտքի տակը», եթե յուր խնդիրը կատարի ու մի որդի տա:

Եթե այս միջոցը ևս չի օգնում, գնում երեք անգամ անցնում է տղա տվող Ծակ քարերից՝ նույն խնդիրը կրկնելով:

Միննույն ժամանակ լսելով կախարդ կանանց՝ ամուլ կինը փոխում է իր ննջարանը, կարծելով թե այդտեղ քաջքեր կան, որ թույլ չեն տալիս որդի ունենալու: Մութ ժամանակ տաք ջուր դուրս չի ածում, մութ տեղը ջուր չի խմում, որովհետև չար սատանան այդպիսի տեղերից պակաս չի լինում: Երբեմն էլ չբերությունը «կոխից» առաջացած է համարում: Այս պատահում է, երբ նոր պսակված ժամանակ հարսի մոտ չար և անմաքուր մարդիկ են գալիս: Կոխված կինը յոթը տարի ամուլ է մնում, և եթե սրանից հետո էլ որդի չի ունենում, այն ժամանակ նրան տանում, սպանված մարդու գերեզմանի վրա ջուր են խմեցնում, ննջեցյալի տակով անց կացնում կամ նոր պսակվածների տան կտրով ման ածում և այլն:

¹ Այս հոդվածը պատրաստելիս բացի այն, որ ես անձամբ ներկա եմ գտնվել մի քանի հարսանիքների, այլև իմ տված ծրագրով ինձ համար նյութեր են հավաքել տարբեր գյուղերից պ. պ. Տեր-Սարգսյան, Բալայան, Իշխանյան, Մելիք-Ալլահվերդյան, Ապրեսյան, Տերտեղյան և ուրիշներ, որոնց շնորհակալություն եմ հայտնում



Մինչդեռ քաղաքում հղի կնոջ դրությունը փոքր ինչ լավ է, գյուղում սաստիկ աննախանձելի է: Գյուղացի կինը հղիության նույնիսկ վերջին օրերում չի ազատվում տնային ծանր աշխատանքներից. պատահել են դեպքեր, երբ կինը տղա է ծնել կուժը ուսին, աղբյուրի ճանապարհին և կամ այգում, միայնակ աշխատելիս: Տատմոր օգնությունը բոլորին չի հասնում:

Երկունքը սկսված միջոցին հրավիրում են տատմորը և կնոջն առանձնացնում են մի սենյակում: Եթե երկունքը երկար է տևում, սկեսուրը, փեշը ջուր ածած, առաջարկում է ծննդկանին խմել, որով և ներվում են նրա՝ սկեսրոջ և կամ տան մյուս անդամների դեմ գործած հանցանքները:

Մոտիկ ազգական կանայք գալիս են օգնության և խփելով ծննդկանի մեջքին՝ բղավում. «Ղռռուն էկա՛՛վ, թալանեցի՛ն տարա՛ն»: Մեկն էլ հերթիկից մի ձու է վայր ձգում՝ ասելով. «Բերում ըս բեր, բերում չես՝ ես բերում ըմ»:

Երբեմն պատահում է, որ ծննդկանն ուշաթափվում է: Իսկույն նրա մոտի կանայք, հավատալով, որ արդեն քաջքերը տիրապետել են ծննդկանին, սարսափած փախչում են. մնում են միայն արիասիրտները, որոնք քանդում են նրա գլխի փաթեթները և դնում գլխին կնքահոր գլխարկը, որպեսզի քաջքերը կարծեն, թե նա տղամարդ է: Անմիջապես գալիս է կնքահայրը և սկսում ապտակել, խփել ծննդկանին, ամբողջ մարմինը հարել: Մյուսներն էլ հրացան են արձակում, վառող վառում քաջքերին հալածելու և ծննդկանին ուշքի բերելու նպատակով: Եթե երեխան արդեն աշխարհ է եկած լինում, նրան վերցնում, տանում դնում են երդիկը, որով նվիրում են նրան քաջքերին՝ խնդրելով ինայել մորը: Այս բոլոր ժամանակ սաստիկ զգուշանում են ծննդկանի անունը տալուց, որպեսզի քաջքերը նրան էլ իրենց «դասը չդասեն»: Բացի սրանից, ծննդկանի երեսին լեղակ են քսում և բարձի տակին էլ շամփուրներ, սանդերք, պողպատի կտորներ և համայիլներ դնում: Երբ ծննդկանը ուշքի է գալիս, նրան տալիս են մի կծիկ՝ կծկելու, և կամ մի ուրիշ գործ, որպեսզի նրանով զբաղվի և քաջքերին ուշք չդարձնի:

Երբ երեխան աշխարհ է գալիս, տատմայրը, երեսը երեք անգամ խաչակնքելով և «հայր մեր» շնջալով, կտրում է պորտը և բամբակի թելով կապում: Եթե երեխան տղա է լինում, պորտից ընկած կտորը տանում ձգում են մի ընդարձակ տեղ, որպեսզի երեխան մեծանալիս հասարակության մեջ մտնող-ելնող լինի, չամաչի, իսկ եթե աղջիկ է, ձգում են մի ետ ընկած անկյուն, որպեսզի համեստ և ամոթխած տանտիկին դառնա: Դանակն էլ պահում են, որ մկրտության ջրով սրբեն: Սրանից հետո տատմայրը ծննդկանին կանգնեցնում է տաշտի մեջ, Ս. Մարիամ Աստվածածնա աղոթքն ասելով, կիսից վայր լողացնում և պառկեցնում: Ապա երեխային է լողացնում, վրան աղ ցանում, փաթաթում շորերի մեջ և երեք անգամ խաչակնքելով՝ դնում ծննդկանի աջ կողմը:

Այդ ժամանակ տան «մշտուլուղչին» վազում ամենից առաջ ծննդկանի ծնողների և ապա կնքահոր տնեցիներին «աչքի լույս» է ասում՝ ավետելով նորածնի աշխարհ գալը, որի փոխարեն և մի բան նվեր է ստանում:

Մի քանի րոպեից հետո ազգականներն ու հարևանները տեսության են գալիս՝ իրենց հետ բերելով ձվածեղ, խավիժ, եփած ձու և այլն: Տատմայրը ծածկում է նորածնի երեսը և թույլ չի տալիս նորեկներին տեսնելու, մինչև որ նրանցից մի քանի կոպեկ և կամ մի «խալաթ» չի ստանում: Գալիս է նաև սանամայրը՝ բերելով յուր հետ մի սպիտակ և մի կարմիր կտոր, աղնաբաթ: Տնեցիները հյուրերին հյուրասիրում են թեյով և կամ դայնարով. սա պատրաստում են այսպես. մի ջրով լի կաթսայի մեջ գցում են զանճաֆիլ, կինամոն և հիլ ու երկար եփ տալիս:

Մի քիչ հետո հրավիրում են քահանային՝ տունը «փարատելու», որովհետև պիղծ և քաջքերով լի են համարում: Քահանան օրհնում է մի գավաթ ջուր, որը սրսկում են ծննդկանի սենյակում և ողողում տան ամանները: Թեև այսպիսով տունն ու ամանները սրբվում են, սակայն ծննդկանը



դարձյալ մնում է անսուրբ, նրան ոչ ոք ձեռք չի տալիս, նրան կերակրում են առանձին ամաններով, որ միմիայն տատմայրը կարող է մատուցանել և հետո էլ լվանալ: Ինքը՝ ծննդկանը, նույնպես ինքն իրեն անսուրբ զգալով, զգուշանում է որևէ բանի դիպչելու: Պատահել է, որ տատմայրը ամբողջ օրը բացակայել է, և խեղճ ծննդկանը քաղցած մնացել է՝ չհամարձակվելով հացատեղից յուր ձեռքով մի կտոր հաց վերցնելու: Մակայն այս տևում է մինչև մկրտությունը, որ սրբում է նրան: Մինչև այս ժամանակ, որ սովորաբար ութ օր է տևում, ծննդկանին ջրի փոխարեն գինի, պղպեղով պատրաստված տաք կերակուրներ և քաղցրեղեններ են տալիս: Տատմայրն էլ օրը մի անգամ լողացնում է նորածնին և լվանում շորերը:

Մկրտության նախընթաց երեկոյին ծննդկանի տնից «սեղան» են ուղարկում կնքահորը, որ բաղկացած է լինում գույգ թվով գաթայից, երկու գույգ հացից, մի եփած հավից, մի գավ գինուց, մի շիշ օղուց և մի գույգ գուլպայից: Տանողը միննույն ժամանակ հրավիրում է կնքահորը գալ մյուս օրը՝ երեխան կնքելու: Նույն երեկոյին ուղարկում են քահանային մի գույգ հաց, մի գույգ մում, մի գավ գինի կամ մի շիշ օղի և հրավիրում գալ երեխային մկրտելու: Մյուս օրը տատմայրը վաղ առավոտյան գալիս է և պատրաստում երեխային՝ եկեղեցի տանելու: Գալիս է և կնքահայրը՝ յուր հետ բերելով մի գույգ մում, նարոտը և մի գունավոր թաշկինակ: Գյուղերում սովորաբար եկեղեցումն են մկրտության խորհուրդը կատարում և միայն եկեղեցի չեղած դեպքում տանն են մկրտում և համարյա միշտ՝ թոնրի վրա:

Մինչդեռ եկեղեցում կատարում են մկրտության խորհուրդը, տատմայրը մի փոքրիկ շշի մեջ մեռնաջուր անձած, շտապով վերադառնում է տուն և լվանում ծննդկանի ձեռքերը, որպեսզի նրանք սրբված լինեն և կարողանան գրկել մեռնված մանկան: Լվացած ջուրն էլ անում է օձախը, իսկ շշի միջի ավելացրած ջուրը տալիս տնեցիներին պահելու, որպեսզի ապագային կարողանան «հարամտած» ամաններն ու իրերը սրբել: Նույն միջոցին գալիս են և սանամայրն ու ծննդկանի մայրը: Առաջինը բերում է «ծննդգեվաթ»՝ մեղրով ու շաքարով պատրաստված ծվածեղ ծննդկանի համար, իսկ երկրորդը՝ մի ձեռք հագուստ նորածնի համար:

Վերջապես քահանան, «Լոյս ի լուսոյ» շարականը երգելով, առաջնորդում է կնքահորը, որ, երեխան բազուկների վրա առած, բերում է տուն և տալիս ծննդկանին: Սա համբուրում է կնքահոր ձեռքը և ապա առնում երեխան: Քահանան յուր «Պահպանիչը» ավարտելուց հետո շնորհավորում է հետևյալ կերպով. «Շնորհավոր մկրտություն, աստված տվել է, ամուր ձեռքը պահե, հորով, մորով ու բախտավոր գավակ լինի. այն հացիցն ուտե, որ ո՛չ հատնե, ո՛չ պակասե»: Հետո, դառնալով ներկա եղողներին, ասում է. «Ես ձեզ համար մի մեռնաթաթախ երեխա բերի, որով ամենքդ էլ ուրախ եք. դե՛հ, եկեք տեսնեմ դուք ինձ ի՞նչ եք տալու, որ ես էլ ուրախանամ»: Նախ ծննդկանը և ապա կնքահայրն ու հանդիսականները համբուրում են խաչը և խաչհամբույր ձգում: Սրանից հետո բոլորը նստում են ճաշելու, օրվա որ ժամանակն էլ լինի, միննույն է, որից հետո արդեն ցրվում են:

Երեք օրից հետո տատմայրը նորից է գալիս և «երեխայի մեռնը վեր անում»: Քթի տակ աղոթքներ շնջալով՝ լվանում է երեխայի մեռն քսած տեղերը մի մաքուր ամանի մեջ, հետո լողացնում է նրան մաքուր ջրով՝ առանց սապոնի, և ջուրն անում թոնիրը: Սրանից հետո արդեն նա յուր վարձը ստանում և գնում է: Այնուհետև տնեցիներն են մինչև քառասունքը լրանալը երեխային օրը մի անգամ լողացնում:

Մի քանի օրից էլ ծննդկանն է վեր կենում: Առաջին անգամ ոտը գետնին դնելիս նա երեք անգամ խաչակնքում է երեսը և աղոթքներ շնջում: Մակայն մինչև քառասունքը լրանալը նա տանից դուրս չի գալիս, արեգակի երես չի տեսնում, ո՛չ լողանում է և ո՛չ էլ գլուխը լվանում, այլ ամբողջ



Ժամանակը զբաղված է նորածնի հոգսով. այսպես՝ երբ տան մոտով ննջեցյալ են անց կացնում, իսկույն ինքը կանգնում և երեխային էլ բարձրացնում է, երբ մի ուրիշ ծննդկան և կամ մի կասկածելի անձնավորություն է գալիս ծննդկանի ննջարանը, նա չի թույլ տալիս նրանց ներս մտնելու, մինչև որ նորածնին դուրս չի հանել տալիս և ապա ներս բերում: Եվ եթե նա այդպես չի վարվում, երեխան «կոխվում» է, այսինքն սաստիկ լղարում է և միշտ լալիս է: Այդպիսի հիվանդությունից բժշկելու համար նրան լողացնում են կատվի ձագի և կամ հոր գուլպաների վրա, և եթե սրանք չեն օգնում, տանում են, սպանված մարդու գերեզմանի վրա երեխայի ոտները լվանում են, հետո գերեզմանի քարերից մինը վերցնում են, երեխայի վրայով երեք անգամ պտտեցնում և վերջը մի ձու և մի մեխ թաղում գերեզմանի մոտ, որպեսզի հիվանդությունն այնտեղ մնա:

Քառասունքը լրանալիս ծննդկանը լողանում և գլուխը լվանում է ծղոտի վրա: Հետո այս ծղոտը վառում են, որպեսզի քաջքերի հետքերը կտրեն: Ապա նախ օրորոցը, հետո երեխային և վերջը ծննդկանին դուրս են հանում տնից և «արևի երես դուրս բերում»: Երեկոյին հավաքվում են բարեկամներն ու հարևանները և նրան ու երեխային եկեղեցի տանում, ուր քահանան կատարում է քառասունքի ծեսը: Այնուհետև արդեն ծննդկանը ազատորեն կարող է դուրս գալ տնից:

Երեխայի եղունգներն առաջին անգամ ոսկու կամ արծաթի վրա են կտրում, որպեսզի նրա մատները միշտ ոսկու և արծաթի մեջ լինեն:

Եվ երբ երեխայի առաջին ատամները երևում են, մայրը «կճեխաշ» է անում. եփում է ցորեն, լոբի, նոխուղ (սիսեռ), բակլա և հետը խառնում կաղին, քիշմիշ, լաբլաբու: Հետո նստեցնում է երեխային մի սփռոցի վրա և առաջը մի դանակ և մի հայելի դնում: Ուրիշ փոքրիկ երեխաներ էլ կանչում նստեցնում է այդ երեխայի շուրջը և պատրաստված կճեխաշը ածում ատամ հանող երեխայի գլխին: Մինչդեռ երեխաները խլխլելով կճեխաշը ուտում են, մայրը դիտում է, թե յուր որդին նախ դանակը, թե հայելին է վերցնում, որովհետև եթե առաջինը վերցնի, ապագայում մի եղբայր է ունենալու, իսկ եթե երկրորդը՝ մի քույր:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔ

Ընտանիքի մեջ ամենից հարգվածը մայրն է: Մոր անմիջական իրավասության տակ է գտնվում ընտանիքի ներքին կառավարությունը, ընտանիքի ղեկը: Նա վերին աստիճանի աշխատասեր է և գործունյա, յուր անձնական օրինակով ազդում է ընտանիքի մյուս անդամների վրա: Մայրը միաժամանակ հրամայում է հարսներին, աղջիկներին, թոռներին և թե հասակն առած, ամուսնացած որդիներին: Ընտանիքի մեջ ոչինչ ծածուկ չէ նրանից. նրա սուր աչքը տեսնում է ամեն ինչ, նա գիտե ամեն մի գաղտնիք, բայց և վերին աստիճանի գաղտնապահ է: Նա դեպի յուր ամուսինը շատ զգույշ է և միմիայն ամենակարևոր տեղեկություններն է հաղորդում կամ նրա հետ խորհրդակցում: Այդ պատճառով ընտանիքի անդամներն իրենց կարիքները կամ սրտի դարդերը համարձակ հայտնում են մորը՝ հաստատ հավատացած լինելով, որ տան մյուս անդամները չեն իմանա այդ:

Հայրն այստեղ համարվում է մի հյուր կամ, ավելի լավ է ասել, մի մշակ, որ աշխատում է դրսում, լցնում տունն ամեն տեսակ բարիքներով, այդ բոլորը հանձնում կնոջը և հաշիվ պահանջում ընտանիքում տեղի ունեցող ծախսերի մասին՝ հաստատ հավատացած լինելով, որ կինն ավելի ժլատ է, քան ինքը: Սակայն հայրը տան մեջ մի խորհրդավոր անձնավորություն է, նրա տան եղած ժամանակ ընտանիքում տիրում է սրբազան լռություն, հարսները ծածկում են երեսները, աղջիկ-



ները քաշվում են մի անկյուն և իրենց բանին կենում, ամուսնացած տղամարդիկ իսկույն հեռացնում են իրենց գավակներին, որպեսզի հայրը չտեսնի և նախատի¹:

Հոր ու մոր այս հարգանքը տևում է մինչև նրանց ծերությունը: Հետզհետե ծերանալով նրանք կորցնում են և իրենց դիրքը: Որդիներն այլևս չեն լսում ծնողներին, հարսները ջողաբ (խոսքին խոսք բերել) են տալիս, շատ անգամ ծաղրում, ծիծաղում: Նույնիսկ ամենաբռնակալ հայրը, ծերանալով և ուժից ընկնելով, խոնարհվում, մեղմանում է և ակնածում որդիներից ու հարսներից:

Հորն ու մորը քիչ ու շատ հարգում են այն ժամանակ, երբ երկուսն էլ կենդանի են: Նրանց կենդանության ժամանակ որդիներն ու հարսները ոչ մի դժգոհության նշան ցույց չեն տալիս: Իսկ մեկը կամ մյուսը դրանցից պակասելով՝ կարծես պակասում է և կենդանի մնացածի հարգանքն ու իրավունքը: Այս է պատճառը, որ ծերունիները հաճախ կրկնում են. *«Աստված, էնքան մեր խեղանք պահիս, չըքորանը ես մեռնիմ, հարսին նան տղի ումուղ չընգնիմ»:*

Կինն է ասում ամուսնուն. *«Քու շոքը ոչ պրկասի իմ գլխան, թա չէ տղերքդ նան հարսներդ ինձ սաղ-սաղ կոլ կտան»:*

Աշխատանքի անընդունակ մարդուն տան անդամները հավասարապես ատում են, նրա գոյությունը ձանձրույթ է պատճառում ամեն մի անդամին: Մանավանդ վերջինիս գոյությունն անտանելի է, երբ իրենց կենդանության ժամանակ ընտանիքի անդամներից մի ջահելը մեռնում է: Ամենքը կշտամբում են ծերունուն, ամենքն էլ վրան գոռում են. *«Քավթառ գրլխակեր, էնքան կըննական ը՛ս, որ լոխչիս գրլխըներն օտիս, ետավ գիորբագիոր ընիս»:* Խեղճ ծերունին ակամայից լռում է և ոչինչ չի ասում, կարծես ինքն էլ խոստովանում է, որ շատ է ապրել:

Սովորություն կա, երբ այդ տեսակ երկարակյաց ծերունին մեռնում է, և եթե նրա մահից հետո ընտանիքի անդամները մեկն ու մեկը հիվանդանում է, գնում են մեռած ծերունու գերեզմանը փորում, գլուխը մարմնից բաժանում և աչքի մեջ մի փայտ տնկում, որպեսզի հիվանդն էլ չմեռնի: Ասում են, իբրև թե աչքը տան վրա է գնացել, և մինչև ընտանիքի անդամներից մեկին չտանի, չի հանգստանա: Գլուխը մարմնից բաժանելով՝ իբրև թե ազատվում են այդ փորձանքից:

Հոր մահից հետո ընտանիքի կառավարության ղեկն անմիջապես անցնում է մեծ որդուն, եթե վերջինս չունի որևէ պակասություն և շատ փորձված է, իսկ եթե անընդունակ է և դիրք չունի թե՛ տանը և թե՛ հասարակության մեջ, այս դեպքում կառավարությունն անցնում է մյուս եղբայրներից ամենից ընդունակի ձեռքը:

Ընտանիքի գլուխը հոր մահից հետո համարվում է մեծ որդին, թեև չունի այն լայնածավալ իրավունքները, ինչ որ հայրն ուներ: Մեծ եղբայրը հարգված է ընտանիքի անդամներից հավասարապես: Նա միմիայն կատարում է թեթև աշխատանքներ և տարվա մեծ մասը տանն է լինում:

Այնուհետև նա համարվում է հասարակության մի պատվավոր անդամ (աղսախկալ) և միջամտում է հասարակական գործերին: Նա հագնվում է պատշաճավոր և մաքուր և, որ գլխավորն է, շինամեջ (շնամաչ) դուրս գալիս հագած պիտի լինի կոշիկներ (չմշկներ), որից զրկված են մյուս եղբայրները:

ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

Տատի մորը ասում են պապունց այան:

Տատին՝ տատի, այան, մեծագի, նանի:

Մորը՝ ազի, արքա, սիրուն նան կամ ուղղակի տալիս են անունը:

¹ Որդին կամ հարսը մեծ ամոթ են համարում հոր ներկայությամբ երեխային գրկել և զգվել, ուստի նրա ներս գալուն պես երեխային հանձնում են տան պառավին կամ աղջկան



Հորեղբորը՝ ամի, պիծ ամի, զիզ ամի:
 Հորեղբոր կնոջը՝ հարս, աքեր, հասի:
 Մորեղբոր կնոջը՝ քոակին:
 Մորեղբորը՝ դայի, քեռի:
 Հորաքրոջը՝ հաքուր, աքեր կամ տալիս են անունը:
 Մորաքրոջը՝ մաքուր, աքեր և անունը:
 Քրոջը՝ բաջի, աքուր կամ անունը:
 Եղբայրը եղբորը՝ բաբա, ապա, ապեր, օր.՝ Մակիչ բաբա, պիծ ապա, մեծ ապա:
 Կնքահորը՝ պելի, խըչաղբեր:
 Կնքամորը՝ պլակին, սընամար:

ԽՆԱՄՈՒՆՔ

Կնոջ հայրը կոչվում է՝ աներ, հաներ:
 Կնոջ մայրը՝ գոքանչ, զենքուջ:
 Ամուսնու հայրը՝ պատրոն:
 Ամուսնու մայրը՝ սկեսուր:
 Ամուսնու եղբայրը՝ տեգր, տագրը:
 Ամուսնու քույրը՝ տալ:
 Ամուսնու եղբոր կինը՝ տըգրակին:
 Կնոջ քույրը՝ քենի:
 Կնոջ եղբայրը՝ հընըրտղա:
 Կնոջ քրոջ մարդը՝ բաջանաղ:

Հարսի համար ամուսնու ազգականները կոչվում են պատրոններք, իսկ փեսայի համար հարսի բարեկամները՝ աներանք:

Կինը ամուսնու մասին խոսելիս սկեսրոջ առաջ կոչում է՝ տղադ, տալին՝ քու ախպեր, տեգրկնոջ՝ քու տագրը, իր ծնողների առաջ՝ փեսադ, ուրիշների առաջ՝ ինքը, մեր մարդը, մեր հայը, մեր տղամարդը, Առաքելին հարը (որդու անունով), Սընամանց տղան (ազգանունով), իմ տարը և այլն, իրեն կոչում է՝ ադա:

Ամուսինը կնոջը կոչում է. իր ծնողների առաջ՝ հարսը, կամ ծագումով, օրինակ՝ Բըղդեսարեն թոռնը, Գևուն աղջիկը, աներոջ մոտ՝ աղջիկդ, օտարների առաջ՝ մեր խիզանը, մեր տանըցին, կողակիցս, այսինչի թոռը կամ աղջիկը, կնոջը՝ ախչի:

Ընդհանրապես Վարանդայում գերդաստանները բազմանդամ չեն: Շատ հազվադեպ է պատահում, որ մի քանի եղբայրներ երկար ժամանակ միևնույն հարկի տակ ապրեն: Եղբայրներն ամուսնանալուց կարճ ժամանակ հետո բաժանվում, նոր գերդաստան են կազմում: Ծնողներն ապրում են կամ ամուրի կամ նոր ամուսնացած որդու մոտ: Բազմանդամ են լինում միմիայն երկրագործությամբ պարապող ընտանիքները, և սա էլ ունի յուր հարգելի պատճառը: Երկրագործությամբ պարապելու համար հարկավոր են շատ աշխատավոր ձեռքեր, ուստի եղբայրները ստիպված ապրում են անբաժան:

Բաժանվելու գլխավոր պատճառը տեգրկնիկներն են լինում: Վերջիններս ապրում են միմյանց հետ շատ անհաշտ, օր չի լինիլ, որ մի որևէ պատճառով երկու տեգրկնիկ միմյանց հետ չկովեն, մանավանդ վերջիններիս մեջ շատ զարգացած է նախանձը. այսպես, օրինակ, ասում են. «Տեգրակինը տեգրակնկան օձին ծակին կօզի», այսինքն՝ չի ուզենա, որ նա բախտավոր ապրի, այլ



միշտ նեղության և թշվառության մեջ: Բազմաթիվ օրինակներից առաջ բերենք ժողովրդական մի ասացվածք, որը շատ պարզ բնորոշում է ընտանիքի անդամների միմյանց հետ ունեցած հարաբերության չափը:

Պատմում են, իբրև թե մի հարս հիվանդ ժամանակ աղերսական ձայնով դիմում է ընտանիքի անդամներին և մի գդալ ջուր ուզում, ասելով.

Սկեսուր, սկեսուր՝ սկսրհան,

Սերտս էրեց, մի գդոլ ջուր.

Պատրոն, պատրոն պտրհան (պահարան),

Սերտս էրեց, մի գդոլ ջուր:

Տալիկ, տալիկ՝ սև սալիկ,

Սերտս էրեց, մի գդոլ ջուր:

Տեգրակին, տեգրակին՝ օձին ծակին,

Սերտս էրեց, մի գդոլ ջուր.

Նշանած, նշանած՝ ըստրծու խըզըհանած,

Սերտս էրեց, մի գդոլ ջուր:

Սակայն այնքան քարասիրտ են լինում, որ ոչ մեկը դրանցից ջուր չի տալիս իրեն, մինչև ամուսինը գալիս է, և հիվանդը դիմում է նրան ու ջուր խնդրում: Ամուսինը տալիս է ջուրը, և նա խմելուն պես մեռնում է: Այստեղից երևում է, որ ընտանիքի մեջ ամենասիրելին իր ամուսինն է:

Հաճախ սկեսրոջ և հարսների մեջ կռիվներ են պատահում, որ շատ անգամ տուրուղմփոցով է վերջանում:

Կովի պատճառները լինում են.

Ա. Երբ սկեսուրը մի հարսին ավելի է սիրում, հարգում և պաշտպանում, քան մյուսին:

Բ. Երբ մի թոռան սիրում է ավելի շատ, քան մյուսին, մայրական խնամք է տանում, լավ հագցնում և յուր «ազիզ բալա», այսինքն՝ միակ սիրելի որդի է կոչում: Մյուս մայրերը նախանձում և սկեսրոջ հետ կռվում են:

Գ. Երբ մի հարս շատ աղջիկ է բերում: Այս դեպքում ոչ թե միայն սկեսուրն է նրա հետ կռվում և սկսում ատել, այլև ընտանիքի մյուս անդամները, մինչև անգամ յուր ամուսինը սկսում է վատ աչքով նայել նրան և կծու խոսքերով սիրտը խոցոտել: Սկեսուրն անտանելի հայիոյանքներ, անեծք է թափում հարսի գլխին: «*Քու հոր տոնը պրիշակ մնա, խոխես տոնը քրնդըլական ը՞ս*»: Աչքալույս, կերուխում, կնունքի խնջույք տեղի չեն ունենում այս դեպքում: Բարեկամները աչքալույսի փոխարեն մխիթարում են ծնողներին. «*Աստոծ ձեզ պահի, վնաս չոնի, եկող տարի էլ մի դոչ տղա կը բերիս*»: Խեղճ կինը, կարծես մահվան ոճիր գործած, լսում է յուր դատավճիռը և լռությամբ տանում ընդհանուրի այդ նախատինքը:

Վարանդայում աղջիկ բերելը մեծ դժբախտություն է համարվում: Շատ դեպքեր են պատահել, որ մի քանի աղջիկ բերող կնոջ դուրս են արել տանից:

Աղջիկը ծնված օրից մինչև մահը ծնողների համար մի ծանր բեռ, մի մեծ հոգս է, մանավանդ աղքատ ընտանիքների համար. պատահում է, որ աղջիկները սնանկացնում և վերջին չքավորության մեջ են ձգում իրենց ծնողներին:

Ծնողները ստիպված են աղջիկներին լավ հագցնել և հագուստի վրայից կախել արծաթե կամ ոսկե դրամներ՝ ամենաքիչը 20-30 ռ. արժողությամբ, այդ դրամներն աղջիկը պսակվելիս տանում է յուր հետ: Վարանդայում աղջիկը շատ վաղ է նշանվում՝ համարյա 5-6 տարեկան հասակում,



շատերին նույնիսկ օրորոցում են նշան դնում (օրորոցը խազում): Նշանված մնում են 6-7, երբեմն ավել տարիներ: Այսքան երկար ժամանակամիջոցում երկու կողմի խնամիները միմյանց հետ բարեկամություն են անում՝ փոխադարձաբար միմյանց հյուրասիրելով և օգնելով: Բայց ծանրությունը ընկած է ավելի աղջկա ծնողների վրա:

Աղջկա ծնողները հաճախ հրավիրում և հյուրասիրում են փեսայի ծնողներին կամ բարեկամներին:

Ամեն նշանավոր տոն օր ստիպված «խոնչա» են ուղարկում խնամոնց տուն, որը բաղկացած է լինում գլխավորապես գաթայից, հավվայից, հավերից, մեղրից, գինուց, արաղից և այլն՝ արժողությամբ 1-3 տուրլի: Խնամոնց կողմի բարեկամներից էթե մեկը պսակվելու լինի, աղջկա տերը պետք է «խոնչա» տանի «խալաթ» տա և հարսանիքի ժամանակ «կանչ» (դրամական նպաստ) անի: Այս բոլորը մոտավորապես արժենում է 10-15 ռ.: Բացի դրանից, աղջկա տերն օգնում է յուր խնամուն վարելու, ցանելու, հնձելու, կալսելու և այլ ժամանակ, իսկ կանայք բուրդ գգելու, մանելու, գործելու կամ թե թուփ թափելու, արտը քաղհանելու ժամանակ առանց վարձատրության հավասար աշխատում են խնամոնց հետ: Այսքանը մինչև հարսանիքն է: Հարսանիքի ժամանակ աղջկա ծնողները բավական ծախք են անում, լավ բաժինք և փեսային արծաթե գոտի, խալաթ են տալիս, իսկ փոխարենը շատ չնչին «կանչ» են վերցնում:

Վերև հիշածներիցս պարզ երևում է, թե որքան ահագին ծախք են անում ծնողները, և այդ բոլորը դեռ մեկի համար, իսկ եթե ենթադրենք, թե մեկի փոխարեն մի քանիսն են, այն ժամանակ երևակայելի է ծնողների դրությունը: Պատահում է, որ միաժամանակ նշան են դնում մեկ, երկու և երբեմն երեք աղջկա, և ծնողները ստիպվում են երեք տան հետ բարեկամություն անել:

Այս է պատճառը, որ Վարանդայում աղջիկ բերելը տնաքանդություն է համարվում և հաճախ կռիվների պատճառ դառնում: Ընդհակառակը, երբ հարսը տղա է բերում, ամբողջ ընտանիքում ցնծություն և ուրախություն է կատարվում, տեղի են ունենում աչքալուսեք, խնջույք, կերուխում: Տղաբեր հարսին զանազան խալաթներ են տալիս: «Մեջքդ կանանչ կենա», – կրկնում է ամեն մի եկող: Սկեսուրը տղաբեր հարսին կերակրում է և լավ խնամում: Սկեսրոջ այդ վերաբերմունքը մյուս հարսերի նախանձը շարժում է և կռվի պատճառ դառնում:

Դ. Չբերության պատճառով ևս կռիվներ են ծագում հարսի և սկեսրոջ մեջ: Երբ հարսը չբեր է, սկեսուրը այս դեպքում ավելի չարանում և շարունակ անիծում է. «Ծոխդ կտրե, հունց վեր իմ խոխեն ծոխը կտրեցիր, այ՛ չոր տառեխ»: Անեծքը դեռ բավական չէ, երբեմն էլ հարսին դուրս են անում տանից՝ փոխարենն ուրիշ հարս կամ աղջիկ բերելով, կամ թե խղճում են և չեն ուզում տանից դուրս անել, միայն երկրորդ կին են բերում, որպեսզի երեխա բերի, և որդին անժառանգ չմնա¹: Երկրորդ կնոջ երևան գալը պատճառ է դառնում կռիվների ու տուրուղմիտքի, որ տեղի է ունենում ապօրինի և հարազատ կնոջ միջև կամ թե սկեսրոջ հետ: Վերջինս ավելի պատվում, մեծարում է ապօրինի հարսին և ընդհակառակը՝ հարազատ հարսից միշտ զանգատվում է որդուն: Այստեղից առաջանում են անվերջ կռիվներ և երկպառակություններ: Հարազատ կինն, այլևս չկարողանալով տանել այդքան զրկանք ու նախատինք, թողնում ու հեռանում է:

Ե. Հարսի ծածուկ մի տեղ գնալը կամ մի բան ուտելը, յուր պարտականության մեջ ճշտապահ չլինելը, վերջապես, օտար մարդու հետ խոսելը կռիվների պատճառ են դառնում:

¹ Պատահում է երբեմն մինչև չորս կին են պահում, միայն թե երեխա ունենան: Թաղլար գյուղում մի դարբին, որ ուներ մեծ հարստություն, պահում էր չորս կին, բայց ոչ մեկից երեխա չունեց. փորձում է բերել հինգերորդը: Այս վերջինը հղիանում է, բայց դարբնի բարեկամները, կամենալով դարբի հարստությանը տիրանալ, հղի կնոջը խեղդում են և խեղճ դարբնին թողնում անժառանգ



Սկեսուրը հարսի հետ կովելիս անտանելի հայհոյանքներ է թափում գլխավորապես ծնողների հասցեին, օրինակ՝ «Քու մոր մաղարը կտրե, որ քեզ նմանը ինձանու քցից», «Քու հար շուն դառնա», «Քու մոր մարդը մեռնի»: Հարսը լսում է այդ բոլորը և համբերում, նա ոչ մի դժգոհության նշան ցույց չի տալիս, մանավանդ երբ նորահարս է: Մի քանի տարվա հարսն այդ տեսակ դեպքերում կա՛մ քթի տակին փնթփնթում է և դրանով արտահայտում յուր դժգոհությունը, կա՛մ ուղղակի պատասխանը դարձնում է և սկեսրոջը հայհոյում:

Ընդհանրապես հարսները շատ ամոթխած և համբերատար են լինում: Սկեսրոջ անտանելի վարմունքը, գրկանքը, անեծքն ու ծեծը հարսը լռելյայն տանում է և ոչնչով չի փոխարինում, միայն, ինչպես ասում են, «դանակը ոսկորին հասնելուց հետո» այլևս չի համբերում և «ջողաք» է տալիս. պատճառ, որ Վարանդայում աղջիկը շատ շուտ են մարդու տալիս: 13 տարեկանում ամուսնանալը սովորական երևույթ է այստեղ: Մատաղ հասակում աղջիկը, գրկվելով ծնողների խնամակալությունից և ընկնելով իրեն բոլորովին անձանոթ մի ընտանիք, կորցնում է յուր ազատությունը և համարձակությունը: Նա դատապարտվում է լռության և անվերջ համբերության: Սկեսուրը հայհոյում է, մազերը քաշում, մինչև անգամ ծեծում, հարսը համբերում է և չի համարձակվում ամուսնուն գանգատվել, իսկ եթե փորձում է գանգատվել, փոխարենը կամ հայհոյանք և կամ ծեծ է ստանում: Մինչև անգամ երբ աղջիկը հուսահատված դիմում է ծնողներին և յուր վիճակի մասին գանգատվում, վերջիններս ոչ միայն չեն ուզում լսել նրա գանգատը, այլև նախատելով ետ են ուղարկում սկեսրանց տուն՝ առարկելով, թե հարսը պետք է համբերե: Հարսը, բացի տեգերկնիկների և տալերի հետ խոսելուց, ուրիշների հետ երկար ժամանակ անխոս է մնում:

Սկեսուրի հետ չի խոսում մինչև երեխա բերելը¹, կեսրարի հետ՝ մինչև մահը, իսկ եթե սա ցանկանում է, որ հարսը յուր հետ խոսի, մի ընծա է տալիս և հետը խոսեցնում, բայց դա լինում է այն ժամանակ, երբ հարսը տղային կամ աղջկան պսակում է:

Տեգրի հետ մնում է անխոս մինչև 10 տարի և խոսում է միմիայն տեգրի հաճությամբ, կնքահոր հետ՝ մինչև մահը, կնքահոր կողմի բարեկամներից ամենափոքր երեխայի հետ նույնիսկ անխոս է մնում:

Գերդաստանի մեջ ամենից շատ կովում են տեգերկնիկները:

Կռիվը ծագում է հետևյալ պատճառներից:

Երբ մեկը յուր երեխայի համար նոր հագուստ է կարում, մյուսը՝ ոչ, մանավանդ երբ հարսներից մեկը երեխա չի ունենում և պահանջում է, որ նոր կտորից իրեն ևս բաժին տան:

Երբ լվացքի ժամանակ մեկը շատ լվացք է անում, մյուսը՝ քիչ:

Երբ մեկին շատ են բանեցնում, մյուսին՝ քիչ:

Երբ մեկը ճակատին ոսկեդրամներ է շարում, մյուսը՝ ոչ:

Երբ տեգերկնիկը ծածուկ մի բան է կատարում, և մյուսները հայտնում են իրենց ծնողներին:

Երբ մեկի օժիտը շատ են բանեցնում, մյուսինը՝ քիչ:

Երբ մեկն ունենում է մի կամ մի քանի փեսա և նրանց ծածուկ ուտեցնում, խմեցնում է:

Երբ մեկի ամուսինը ծածուկ սիրում է տեգերկնիկներից մեկին և ինքն իմանում է:

Կովելու ժամանակ միմյանց հայհոյում են. «Պոչերդ կտորիմ», «Ծամերդ տըխտակին սանրիմ», «Աչքրդ հրրթըլուսին մնա, ետքդ՝ ճըլկըվորին փոսին», «Ծծերավդ չանգալ ընկնիս», «Քանց ջուր

¹ Պատմում են, թե Նոյի կինը հարցրել է յուր հարսներին, թե ինչու թոնիրը չեն վառել. սրանցից մինն էլ պատասխանել է, թե թոնրի միջից ջուր է դուրս գալիս: Աստծուն շատ անհաճո է եղել, որ հարսը համարձակվել է սկեսուրի հետ խոսել, ուստի և հրամայել է, որ տափից ջուրը բարձրանա և ջրհեղեղ լինի: Պատմող կինը սաստիկ հարձակվում էր շուշեցի հարսների վրա, որոնք խոսում են իրենց սկեսուրների հետ (Օան. խմբ.)



շատ քրքրաբար կյաս», «Մին ծրկիս, հրզեր փրքիս», «Հանց օրի կյաս, օրին ծննդականը թրմաշա կյա»:

Ամուսինների մեջ ևս կռիվներ են պատահում, բայց ոչ այնքան ստեպ, սակայն նույն ծեծը, նույն կռիվը, նույն հայեցողանքը տեղի է ունենում և այստեղ:

Առավելապես կռվում են.

Երբ կինը ծածուկ սիրած է ունենում, և ամուսինն իմանում է:

Երբ սկեսրոջ հետ «յուլա» չի գնում, և սա գանգատվում է որդուն:

Երբ աղջկա ծնողները խոստացած օժիտը չեն տալիս և ձգձգում են:

Երբ ամուսինն, օտարությունից դառնալով, իմանում է, որ կինն իրեն դավաճանել է:

Երբ մարդն ուզում է կնոջ բերած գորգը կամ կապերտը ծախել և պարտքը տալ, կինը հակառակվում է և թույլ չի տալիս:

Երբ ընտանիքի մյուս անդամները շատ են վիրավորում և վշտացնում կնոջը, վերջինս մի քանի անգամ գանգատվում է ամուսնուն և բավականություն չստանալով՝ թողնում գնում է հորանց տուն:

Ամուսինը գնում է մի կերպ համոզելու և տուն բերելու, կինը դիմադրություն է անում և չի համաձայնվում, այստեղ ամուսինը դիմում է ծեծի և բռնությամբ տուն բերում:

Աշխատանքն ընդհանրապես ընտանիքի անդամների մեջ չի բաժանված: Բուրդ գգել, մանել, գորգ ու կապերտ գործել, այս և սույնանման գործեր կատարում են միասին, և ոչ ոքի մասը որոշված չէ: Որոշված են միմիայն հետևյալ աշխատանքները.

Կերակուր եփելը և հաց թխելը սկեսրոջ պարտքն է, տուն ավելին ու ջուր բերելն աղջիկն է կատարում, տղամարդկանց գլուխն ու ոտքերը լվանում է հարսներից փոքրագույնը, իսկ կով կրթել, խնոցի հարել, խմոր հունցել և այլ նման գործեր կատարում են մյուս հարսները:

Բայց Վարանդացի կնոջ գործունեությունը դրանով չի վերջանում:

Բացի տնային գործեր կատարելուց, նա օգնում է նաև յուր տղամարդին դաշտում:

Գյուղացի կինը աշխատանքի տեսակետից ոչնչով ետ չի մնացել յուր ամուսնուց: Նա կատարյալ տնտես է տանը և ժրաջան մշակ՝ դաշտում:

Տան աշխատանքը վերջացնելուց հետո նա շտապում է դաշտ: Պետք է տեսնել, թե ինչպես նա, մանգաղը ձեռքին, հնձում է արտը և խուրձեր կապում, խուրձերը կրում կալը, աշան անում, կալը կալսում, թեղում, ցորենը շվատում, ջրաղաց տանում, այլուր պատրաստում, արտը քաղհանում, խոտը հարում, չորացնում և դիզում: Այդ դեռ բավական չէ, այգում ևս թուֆ թափելիս կամ խաղող քաղելիս հավասար աշխատում է յուր ամուսնու հետ: Մինչև անգամ անտատ է գնում, փայտ բերում, պտուղներ ժողովում, ահագին դագանակը ուսին՝ տավարը կամ ոչխարը պահում: Մի խոսքով, կինը գյուղացու համար յուր անբաժան ընկերը, յուր աջ կուռն է: Նա մինչև անգամ կովի ժամանակ, ահագին դագանակը ձեռին, պաշտպանում է յուր ամուսնուն: Դաշտային աշխատանքը երբեք չի խանգարում գյուղացի կնոջը յուր տնային գործերը կատարելու: Նա այդ բոլոր գործերի համար ժամանակ է գտնում: Ուշ գիշերը, մինչդեռ ամենքն, օրվա աշխատանքից հոգնած, հանգիստ են առնում, կինը, նստած ճրագի աղոտ լույսի տակ, կան տղամարդու պատռոտած շորերն է կարկատում, կան երեխաների համար գուլպա գործում, պատռածը կարում, կեղտոտ շորերը լվանում, մաքրում:

Եթե ժամերով որոշելու լինենք նրա աշխատության չափը, կարելի է ասել, որ նա ամառը բանում է օրական 18 ժամ և հանգստանում է միայն 6 ժամ: Գյուղացի կինը մինչև անգամ չի հանգստանում կիրակի և տոն օրերին: Սակայն այդ բոլոր աշխատանքը նա կատարում է առանց



հոգնելու, առանց մի փոքր տրտունջ հայտնելու: Նա գիտե, որ յուր ամուսինն այդքան աշխատանքը միայնակ չի կարող կատարել, ուստի օգնության է հասնում, և ո՞վ կարող է ասել, թե դա մի թույլ արարած, մի քնքուշ կին է: Ամառը մարդու չափ աշխատում է, ձմեռը գորգ ու կապերտ (որ շատ տարածված է գավառիս բնակիչների մեջ) է գործում, վաճառում, հարկ ու բեգառը վճարում, տան կարիքները հոգում: Այսքան մեծ է վարանդացի կնոջ կոչումը և աշխատանքը, բայց և այնպես ոչ մեկը չի գանգատվում, այլ կատարում են միասին և սիրով:

ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարոյական հասկացությունները հետզհետե փոխվում են այս գավառում: Այժմ շատ գյուղերում, համարյա առանց բացառության, նկատվում են վատառողջ երևույթներ, որոնք և տարածվում են շրջակա բնակիչների մեջ:

Վարանդան, որ սրանից տասնյակ տարի առաջ ներկայացնում էր մի կուսական երկիր, ուր թագավորում էին բարոյականությունն ու անարատ սերը, այժմ նահապետական այդ պարզ ժողովուրդն սկսել է արդեն տեղի տալ ու նահանջել բարոյական ավանդական կանոններից: Վարանդացի կինը, որ գիտեր հաշտվել ամեն տեսակ դառը պայմանների հետ և բացի յուր ամուսնուց, ուրիշին չէր ճանաչում, այժմ սիրում է պճնվել և ջահելներին դուր գալ: Բարոյական կանոնների խախտումներ նկատվում է գլխավորապես Թաղավարդ, Ավետարանոց (Չանախչի), Թաղար, Գիշի, Ճարտար, Քաթուկ և Նախիջևանիկ գյուղերում:

Բարքերի անկման գլխավոր պատճառները կարելի է համարել.

Ա. Պանդխտությունը, որ սաստիկ տարածված է գավառիս բնակչության մեջ: Գլխավորապես պանդխտում են Բաքու, Ղազախ, Պետրովսկ և Անդրկասպյան երկրները: Վարանդացուն տակավին նոր ծանոթ այդ երկրները, մանավանդ Բաքուն՝ յուր նավթահորերով, գրավել և գերել է: Օտար երկրների հարստությունից շլացած՝ վարանդացին ծախում է յուր եզն ու գոմեշը, այգին ու արտը և դիմում հարստության ու ախտերի այդ բույները: Տարիներով նա քաջքշվում է այդտեղ՝ երեսի վրա թողնելով ջահել կնոջն ու երեխաներին: Նա գրավվում է օտար աշխարհի թեթևաբարո կյանքով, ընկնում է այդ հոսանքի մեջ և վերջիվերջո կան կուլ է գնում, կան թե, չոր կմախք դարձած ու զանազան ախտերով վարակված, տուն դառնում: Խեղճ կինը տարիներով սպասում է յուր ամուսնու վերադարձին, համբերությամբ տանում է ամեն տեսակ զրկանք, քամում է դառնության բաժակը մինչև վերջին կաթիլը, միայն թե չի ուզում դավաճանել յուր ամուսնուն, նրան, որի հետ կապել է յուր բախտը, յուր պատիվն ու կյանքը:

Սակայն բնության այս թույլ արարածը երկար չի կարողանում դիմանալ: Շարունակ լուրեր է լսում, իբր թե յուր ամուսինն օտար կին է պահում, մտադիր չի տուն դառնալու կամ թե թղթախաղով և հարբեցողությամբ վատնում է յուր վերջին կոպեկը: Այդ տեսակ աննպաստ լուրերը, ամուսնու անտարբերությունը դեպի յուր ընտանիքը, կարիքը և վերջապես կրքերն ակամայից դուրս են հանում կնոջը յուր առագաստից և ձգում բախտի քմահաճույքին:

Բ. Երկրի դիրքը: Առհասարակ նկատված է, որ այգեշատ տեղերում շատ է տարածված անբարոյականությունը:

Գ. Գործարանները: Սա կարելի է համարել անբարոյականության բուն աղբյուրը: Վարանդայի շատ գյուղերում կան մետաքսի գործարաններ, ուր տղա և աղջիկ՝ թվով մոտ 100, բանում են միասին: Հսկողությունն այստեղ շատ թույլ է, մանավանդ որ գործակատարները նույնպես ջահել և ամուրի երիտասարդներ են լինում: Ծնողների հսկողությունից հեռու աղջիկներն ասում, խոսում և կատակներ են անում տղաների հետ, և հետզհետե այնպես է լինում, որ ճարպիկ տղաները շատ



հեշտությամբ կարողանում են մոլորեցնել աղջիկներին: Գործարանն ունի մի առանձին բաժանմունք, որտեղ բանում են միմիայն պառավ կանայք, այդ պառավները նույնպես մեծ դեր են խաղում աղջիկներին մոլորեցնելու գործում՝ միջնորդի դեր կատարելով:

Դ. Ներկարարները, որոնց խանութը կանայք ազատ մուտք են գործում:

Ե. Մանրավաճառները, որոնք շարունակ տնետուն շրջում են և առևտուր անում, գլխավորապես կանանց հետ:

Զ. Տատմայրերը, որոնք միջնորդի դեր են խաղում և շատ անգամ մոլորեցնում կանանց:

Է. Տեղային երաժիշտները:

Ը. Զորքը:

Վարանդայում գլխավորապես ջահել աղջիկներին ամուսնացնում են հասակն առած մարդու հետ, և երբ կինը հասնում է յուր արբունքին, մարդն արդեն ծերացած է լինում, և սա պատճառ է դառնում կնոջ՝ շեղվելու ճանապարհից և սիրելու ավելի ջահելներին:

Գյուղի ջահելները զանազան միջոցներով աշխատում են գեղեցիկ հարսներին ձեռք ձգել, մանավանդ երբ վերջիններիս ամուսինները բացակայում են գյուղից: Զահելները մի տեսակ պարծանք և քաջություն են համարում, որ կարողացան այսինչ կնոջը որսալ, նույնիսկ պարծանքով պատմում են իրենց շրջանում:

Եթե տղամարդն ուզում է մի հարսի ձեռք ձգել, մի առանձին տեղ հանդիպելիս աչքով է անում¹: Եթե կինը նույնպիսի նշանով պատասխանում է, նշանակում է համաձայն է, և այնուհետև որոշում են տեսակցության տեղը և ժամանակը:

Պատահում է, որ կինն է մոլորեցնում տղամարդուն. այդ դեպքում կինը նրան ծաղրում, զանազան ակնարկներ է անում, հայհոյում է կամ տեսնելիս ճմլկոտում է և կամ թվելով տղամարդի զանազան պակասությունները՝ նրան բարկացնում է: Այս տեսակ միջոցներով կինը հայտնում է յուր ցանկությունը, եթե տղամարդին դուր է գալիս՝ առիթ է տալիս շարունակելու և խոսակցությունը հետզհետե փոխվում է սիրային ակնարկների, ապա որոշում են տեսակցության տեղը: Իսկ եթե տղամարդուն դուր չեն գալիս կնոջ ակնարկները, մի սուր նկատողությամբ վերջ է տալիս խոսակցությանը և հեռանում:

Տեսակցության տեղերը լինում են գետերը, ուր կանայք գնում են լվացք անելու, և երկու սիրահարներ նշանակած տեղը միմյանց հետ տեսակցում են, անտառները, ուր տղամարդիկ և կանայք գնում են պտուղներ ժողովելու, ուխտատեղիները, ուր մի քանի ընտանիք գիշերում են մի վրանի տակ, արտերը, ուր գնում են քաղհանելու, ջրաղացները, տները: Այրի կամ ամուսինն օտարության գնացած կանայք սիրածի հետ շատ անգամ տեսակցություն են ունենում հենց իրենց տներում, երբ արգելք չկա:

Սիրահարական դեպքեր Վարանդայում հազիվ են պատահում:

Գլխավորապես սիրահարություններ տեղի են ունենում քիչ ու շատ հոգսերից ազատ երիտասարդների և հասակն առած աղջիկների միջև:

Երկու սիրահարներ իրենց սերը թաքցնում են ամենքից, նույնիսկ իրենց ծնողներից, որովհետև դեպի այդ տեսակները ժողովուրդը զզվանքով է վերաբերվում և երես առած են անվանում: Այդ է պատճառը, որ շատ անգամ այդ տեսակ սիրահարության վերջը եղերական է լինում: Պատճառ՝ ծնողները, բոլորովին անտեղյակ իրենց աղջկա կամ տղայի սիրահարությանը, նշանում են իրենց ցանկացած անձնավորության հետ: Որդիները չեն համարձակվում իրենց սիրտը բանալ ծնողների

¹ Աչքով անել՝ նշանակում է ձախ աչքի կոպերը միմյանց մոտեցնել և ապա բանալ, որով արտահայտում են իրենց սերը



առաջ և երբ տեսնում են՝ այլևս հնար չկա ազատվելու, կամ ինքնասպանություն են գործում, կամ թե ծածուկ փախչում են սիրածի հետ:

Սիրահարական դեպքերի հաճախ չկրկնվելու պատճառը կարելի է համարել նախ այն, որ Վարանդայում աղջիկներին ամուսնացնում են վաղ: Ամուսնացող աղջիկների ամենամեծ տոկոսը կազմում է, ինչպես վերը հիշեցի, 13 տարիքը, իսկ նշան դնում են ավելի վաղ՝ 6-7 տարեկանում: Պարզ է, որ 12 տարեկան աղջիկը տակավին տեղեկություն չունի կյանքից և չգիտի, թե ինչ է սերը, ուստի հեռու է նրա մտքից և սիրահարությունը:

Տղամարդիկ ևս, մանուկ հասակից ծանրաբեռնված լինելով ընտանեկան հոգսերով, ժամանակ չեն ունենում սիրահարության ետևից ընկնելու:

Երկրի դիրքն ու կլիման ևս անմիջական ազդեցություն են ունենում:

Ահագին, մինչև երկինք բարձրացող լեռները, թանձր և անմատչելի անտառները, շարունակ մշուշով պատած երկիրը, հաճախ տեղացող անձրևներն ազդել են վարանդացու բնավորության վրա. նա դարձել է սառը, մտախոհ, լուրջ և անտարբեր դեպի շրջապատող առարկաները: Մարդը դարձել է իշխող և հրամայող, իսկ կինը՝ հպատակվող և ենթարկվող:

Տղաները և աղջիկները միմյանց հետ քիչ հարակցություն ունեն: Աղջիկը, հասնելով ութ տարիքի, կտրվում է դրսի աշխարհից և փակվում տանը, իսկ դուրս ելնելուց, աչքերը գետին ձգած, շտապում է գործին, ճանապարհին տղամարդ պատահելիս կամ փոխում է ճանապարհը, կամ, երեսը դարձնելով դեպի հակառակ կողմը, քարացած կանգնում է մինչև տղամարդու անցնելը: Բայց և այնպես այդ չի խանգարում աղջիկներին՝ աշխատել երիտասարդներին դուր գալու:

Աղջիկները, սկսած ամենահարստից մինչև ամենաաղքատը, մաքուր են հագնվում, հագուստներից կախում են դրամներ, մեջքին կապում արծաթե քամար, գլխներին ձգում կարմիր դիպակ (չարդաթ), որպեսզի կարմրությունը տա երեսին և գեղեցիկ երևան, քայլում են սիգաճեմ, երկար ծամ են պահում և գեղեցիկ հյուսում, գոտին պինդ կապում են, որպեսզի կուրծքը դուրս զգված երևա: Աշխատում են անոթխած երևալ և երիտասարդներին տեսնելիս երեսները դարձնում են դեպի պատը ու աչքի տակով նայում:

Երիտասարդներն աղջիկներին դուր գալու համար իբրև միջոց գործ են դնում.

1. Երգելը: Լավ ձայն ունեցող և լավ երգող երիտասարդին աղջկերքը շատ սիրում են:

2. Քաջությունը, որ երիտասարդները ցույց են տալիս ջիրիդի, գոտեմարտի, մահակակովի և այլ խաղերի ժամանակ:

Լավ պարելը, ճաշակով հագնվելը, ուսումը ևս մեծ դեր են խաղում այդ դեպքում:

Ամենից շատ դուր են գալիս աղջիկներին օտարությունից դարձած և նոր ձևի հագնված երիտասարդները: Վերջիններս ոչ միայն աղջիկների ուշադրությունն են գրավում, այլև մայրերի նախանձն են շարժում, որոնք ամեն միջոց գործ են դնում՝ նրանց իրենց փեսայացնելու:

Տղա և աղջիկ միմյանց տեսակցում են.

1. Բինաներում, ուր աղջիկները գնում են կաթ կամ յուղ բերելու, այնտեղ հանդիպում են տավարածներին և միմյանց հետ խոսակցում:

2. Եկեղեցիներում: Վարանդայում ջահել հարսներն ու աղջկերքը տարեկան երկու անգամ են եկեղեցի գնում՝ Օաղկազարդին և ութի ուրբաթ գիշերը:

Սիրահարներն այդ գիշեր փոքրիկ երեխայի միջոցով որոշում են տեսակցության տեղը, և մինչդեռ շարունակվում է ժամերգությունը, աղջիկն աննկատելի կերպով դուրս է գնում եկեղեցուց և շտապում տեսակցության տեղը:

3. Արտերում՝ քաղհան անելիս:



4. Այգիներում՝ թուֆ թափելիս:

5. Անտառներում՝ պտուղներ ժողովելիս:

6. Միջատեղ, ուր հավաքվում են բավական թվով աղջկերք և բուրդ գգում: Մի առիթով գալիս է երիտասարդը և դեպի սիրած աղջիկը զանազան ակնարկներ անելով՝ հայտնում է յուր սերը:

7. Փողոցներում պատահելիս աղջիկը կանգ է առնում մինչև երիտասարդի անցնելը, իսկ վերջինս աղջկա մոտովն անցնելիս մի բան ասում և հեռանում է:

8. Աղբյուրներում, ուր աղջիկները գնում են ջուր բերելու, իսկ երիտասարդները տանում են կենդանիներին ջրելու, և այդ ժամանակ միմյանց հանդիպում են և սիրում:

Միրահարության ժամանակ երբեմն զանազան սիրահարական երգեր են հորինում և երգում¹: Այդպիսի երգեր լինում են և թուրքերեն:

Միրահար երիտասարդը ցանկանալով երկրորդ անգամ սիրած աղջկա հետ առանձին տեսնվել ու խոսել, յուր բարեկամ մի հարսի կամ աղջկա հայտնում է յուր ցանկությունը: Միջնորդ հարսը մի առիթով հայտնում է որոշված տեղը, ապա գալիս է տղան և, իրեն ձևացնելով գործին բոլորովին անտեղյակ, հարցնում է. «Ախչի՛, թորնրք քիս»: «Հրնչիդ ա՞, քիս ընք սեեր ընելու»,- պատասխանում է միջնորդը և ավելացնում. «Մի հարս էլ չըս պուհրում, թա մեզ նըհետ պերենք, էս չիմաններս շոռ ածինք»:

- Դե հորա, մին աղչիկ ճարի, օզիմ ըլի՛, բաս հինչիս բարեկամն ը՞ս:

- Յանի օզրմ ըս պսակվիս, ախչիկ չկա՞:

- Բա որ օզիմ վուչ, կասի՞մ:

- Դե օզրմ ըս, մեր Մընըշական լավ ախչիկ չըս ճըրըլական, եկ լիա օ՛գի,- ասում է միջնորդը և ցույց տալիս ընկերուհուն:

¹ Բերենք այդ երգերից մի նմուշ.

Տղան

Մարերը ձինը կոխալ ա,

Քարիա, էս հո՛ւնց կյամ,

Փողոց, փողոց պղնձի ա,

Քարիա էս հո՛ւնց կյամ:

Կտոր, կտոր, լուսնունկյա ա,

Քարիա, էս հո՛ւնց կյամ:

Ձեր պատավը մըրթմըրթում ա,

Քարիա, էս հո՛ւնց կյամ:

Ձեր շոնը հաչմաչում ա,

Քարիա, էս հո՛ւնց կյամ:

Ձեր որցակը ծկլթում ա,

Քարիա, էս հո՛ւնց կյամ:

Ձեր դիռոնը ճոճոում ա,

Քարիա, էս հո՛ւնց կյամ:

Աղջիկը պատասխանում է

«Մարերը ձինը կոխալ ա,

Կանանչ թըլավ եկ:

Փողոց, փողոց պղնձի ա,

Լեն կըրմնջավն եկ

Կտոր-կտոր լուսնըկյա ա,

Ծառեն շոքավը եկ:

Մեր պատավը մըրթմըրթում ա,

Ետնուց դըլվավն եկ:

Մեր շոնը հաչմաչում ա,

Պատառը քցի, եկ:

Մեր որցակը ծկլթում ա,

Կոտան քցի, եկ:

Մեր դոռնը ճըլվըլգտում ա,

Տափանը եղե, եկ»:



Աղջիկն ամաչելուց սաստիկ կարմրում է և կմշտում հարսի կուռը:

«Ախչի, յանի հինչ ըս կոռնըս կմշտում, մեր Գըսպարին անա լավ տղի ը՛ս քըննական, հազըր բոյավ, բուսաթավ տղա ա», - ասում է միջնորդը և դառնալով տղային՝ ավելացնում. *«Աղաթըն ա՛ նըշընծացու տղին ջուբումը բարեղան կինի, իը մին գատ չը՛ս տայի մեզ»:*

Տղան հանում է բերած մրգեղենը, որ գլխավորապես լինում է տանձ, խնձոր, չամիչ, կաղին և կոնֆետ, տալիս է յուր բարեկամ հարսին և խնդրում, որ ընկերուհու հետ բաժանի:

Միջնորդը մրգեղենի մի մասը տալիս է աղջկան և ավելացնում. *«Բնք առ, ախչի, տեսնըմ ը՛ս, որ քնաս մեր Գըսպարին, էզան ստի գատեր կօտիս»:* Եթե աղջիկը վերցնում է, արդեն համաձայնության նշան է, և տղան գոհ սրտով թողնում հեռանում է:

Աղջիկը փոխարենը նույն միջնորդի միջոցով ուղարկում է տղային մի դավլուխ (փողի քսակ)՝ մրգեղենով լցված, կամ յուր գործած մի գույզ գուլպա, իսկ գատկին՝ նախշած ձու:

Ժողովուրդն ընդհանրապես հարգում է աղջկա պատիվը և ոչ մի կերպ թույլ չի տալիս նրան անպատվել. նույնիսկ ամուրի տղաները կույս աղջիկների հասցեին ոչ մի խոսք չեն արտասանում, իսկ եթե պատահում է, որ տղաներից մեկը ետին մտքով մի որևիցե աղջկա մասին խոսում է, ընկերներն իսկույն նախատում և լռեցնում են:

Բայց եթե աղջիկն արդեն խախտել է յուր կուսությունը, այնուհետև դառնում է ծաղրի և խոսակցության առարկա: Հասարակությունը խիստ դատապարտում է այդպիսիներին, նրանցից խույս են տալիս նույնիսկ յուր ընկերուհիները և ոչ մի հարաբերություն չեն ունենում հետը: Նա դառնում է ընտանիքի նախատինք, և գյուղի տղաներից ոչ մեկը չի ուզում ամուսնանալ հետը: Ծնողները վերջապես ստիպված ամուսնացնում են կա՛մ այրի մարդու, կա՛մ երկու կին ունեցողի կամ օտար գյուղացու հետ և իրենցից հեռացնում: Այս բոլորը կատարվում է այն ժամանակ, երբ աղջկա վարմունքը հայտնվում է, իսկ երբ ծածուկ է մնում, անցնում է առանց հետևանքի:

Իսկ եթե տղան իմանում է, որ կինը նախքան յուր հետ ամուսնանալը ուրիշի հետ հարաբերություն է ունեցել, հետևանքը շատ վատ է լինում. կա՛մ ուղղակի խեղդում, սպանում է, կա՛մ ետ է դարձնում հորանց տուն, կա՛մ թե կանչում է ծնողներին և հայտնում աղջկա դրությունը, որից հետո տղան կա՛մ բոլորովին մերժում է այդ տեսակ կնոջ հետ ապրել, կա՛մ թե մեծ փող ստանալով՝ հաշտվում է:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Վարանդան յուր լեռնային մաքուր օդով, բարեխառն կլիմայով, բազմաթիվ հստակ աղբյուրներով և օդը մաքրող անտառներով բավական առողջարար երկիր է: Սակայն ժողովրդի տգիտության և բժշկության միջոցների բացակայության պատճառով մահացությունը հասնում է 11 տոկոսի:

Հիվանդությունների գլխավոր պատճառն է կեղտոտությունը: Թեև այստեղի գյուղերը՝ գոմերը գյուղից մի փոքր հեռու, առանձին տեղ լինելու պատճառով ավելի մաքուր են, քան թե Ախալքալակի, Ախալցխայի և Աղեքսանդրապոլի գյուղերը, սակայն և այնպես շատ հեռու են մաքուր կոչվելուց: Տեղի սղության պատճառով տները միմյանց կից շինված լինելով՝ մինի կտուրը ծառայում է մյուսին որպես բակ և աղբանոց, իսկ վերջինիս ծուխը առատությամբ լցվում է երկրորդի տունը, եթե միայն դուռը բաց է լինում: Ղարադամների սարսափելի ծուխը, լույսի սաստիկ պակասությունը, խոնավությունը և կեղտոտությունը քայքայում են վարանդացու երկաթի առողջությունը: Բարեբախտաբար այժմ այլևս չեն շինում այդպիսի բնակարաններ, և գյուղերը կամաց-կամաց ունենում են երկհարկանի, պատուհաններով տներ, որ տաքանում են թիթեղե վառարաններով:



Հիվանդությունների տարածվելու մի ուրիշ պատճառն էլ այն է, որ սուրբ պարտականություն է համարվում, անշուշտ, այցելել հիվանդին, այնպես որ անհնարին է լինում նրան առանձնացնել, որի պատճառով և տարափոխիկ հիվանդությունները սաստկությամբ տարածվում են:

Քանի որ քաղաքը գուրկ է հիվանդանոցից ու բժշկանոցից, ի՞նչ կարող ենք ասել գավառի մասին: Միայն կես տարի առաջ Ադդամում նշանակվեց մի գյուղական բժիշկ, և բացվեց գյուղական դեղատուն ու մի ապաստարան: Մակայն այս օգնությունը գլխավորապես տարածվում է Ադդամի շրջակա թուրք ազգաբնակչության վրա, իսկ Վարանդայի հայը դարձյալ մնում է առանց բժշկի և ստիպված դիմում է սափրիչներին, «անդժիներին» (хирьгр), տատմայրերին, կին «հյաքիմներին» և մանավանդ սուրբ աղբյուրներին, ծառերին, քարերին և «գիր անող» կախարդներին:

Վարանդացու ամենագործածական դեղը «խնոթունն» է՝ սրբի մոտից վերցրած հողը և կամ սուրբ ծառի փտած փոշին, որ ջրի մեջ խառնվելով՝ ընդունվում և կամ քսվում է ցաված տեղը:

Հիվանդությունների վերաբերյալ ոչ մի հավաստի թվեր չլինելով՝ կարելի է միայն ասել, որ երեխաների մեջ առավելապես տարածված է ծաղիկ և կարմրուկ հիվանդությունը: Ժողովուրդը դեռևս լավ չի ըմբռնել ծաղիկ կտրելու նշանակությունը, և թեև տարին մի քանի անգամ ծաղկահատներ շրջում են գյուղերը, սակայն և այնպես շատ երեխաներ մնում են առանց ծաղիկը կտրելու և զոհ են գնում ծնողների սգիտության, որոնք, սակայն, նրանց առողջացնելու նպատակով ամենայն երեկո մումեր են վառում, կիրակի պահում (անգործ նստում), միմյանցից հեռու մնում, միս ներս չեն բերում և այլն:

Երիտասարդությունն էլ վարակված է վեներական ախտերով, բացի Նոր-Շեն, Հացի և Կաղարծի գյուղերից, ինչպես վկայում է գավառական բժիշկը:

Չափահասների և մանավանդ հնձվորների մեջ տարածված են տենդ և ջրգոգություն հիվանդությունները:

Քաղաքում կան մի քաղաքի, մի գավառի, մի զինվորական և երկու մասնավոր բժիշկներ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ

Ականջի վշվոց. Ձվի դեղնուցը քսում են քեչի երեսը և դնում ականջի վրա:

Աչքացավ. Աղջկա մոր կաթը կաթեցնում են հիվանդի աչքի մեջ և կարմիր ներկ քսում կոպերը: Ձվի դեղնուցը խառնելով շիբի փոշու հետ՝ հարում են մինչև սպիտակելը և բամբակի վրա քսած՝ դնում աչքին:

Անքնություն. Խաշխաշի կեղևը եփում են և ջուրը խմեցնում հիվանդին:

Արյունահոսություն քթից. Շարհամի կոչված սանրը քերում են և փոշին քիթը քաշում:

Այտուռույց. Գինձ, գյուլխատնի, էմմանի գիլ ծեծում և դնում են երեսին:

Ատամնացավ. Մխտոր կամ խորոված ընկույզ են դնում ատամի վրա: Սև մեխակ են դնում ատամի տակ կամ մեխակի յուղի մեջ բամբակ թաթախելով՝ դնում են ատամի տակ: Շիբը այրում են հին բամբակի մեջ և փոշիացնելով բամբակով վերցնում և դնում ցավող ատամի տակ:

Այրված մարմին. Կարագը քսում են այրված տեղը և քաթան-հինդի մանրացնում, վրան են դնում: Մոլաբաշի կոչված բույսի յուղը քսում են այրված տեղը: Ձվի դեղնուցով խմոր են շինում, կրակի վրա չորացնում և ապա փոշիացնելով ցանում այրված տեղի վրա:

Բարակացավ. Մոշի արմատը քերում, ծեծում, օղի քաշում, խմեցնում են հիվանդին:

Բերանհարենք (բերանի մեջ լեզուն սպիտակում է և ծածկվում սպիտակ բշտիկներով). Շիբլեղի մի փոքր կտոր ձգում են բերանի մեջ և պտտեցնելով լեզվի օգնությամբ՝ թողնում են մի քանի ժամ. այդ միջոցին բերանի թուրքը չպետք է կուլ տալ: Շիբլեղը այրում և մանրացնելով խառնում են սարու



նաբաթիի փոշու հետ, մատով վերցնում և ածում լեզվի վիրավոր մասերի վրա: Քացախ են առնում բերանը: Տառեխ ձկան գլուխը այրում են և փոշին ցանում լեզվի վրա:

Գլխացավ. Քացախ և մանանեխ են քսում: Մեզի մեջ ձու են եփում, դնում հիվանդի գլխին: Տղուկներ են կպցնում ճակատից:

Լուծ. Լուծելու համար վերցնում են սինամաքի (?) կոչված տերևը, եփ ածում և ջուրը խմում:

Խավարսն. Մուկը այրում, կարագով շաղախում, դնում են խավարսնոտ մարմնի վրա:

Խոլերա. Ճարթում և կռան մեծ ջղից արյուն են տալիս:

Խլուրթուն. Նավթի անոթը տաքացնում, դնում են ականջին: Երբեմն էլ խոռն կոչված բույսն են խաշում, դնում ականջին:

Կատաղած շան կծած. Կարմիր լոբի և շան մազ են դնում խաճած տեղը:

Կողքի ծակոց. Աղը աղանձում կամ թեփը տաքացնում, դնում են կողքին:

Կտրված մաշկ. Սարդի ոստայնը ծեծում, դնում են կտրած մասի վրա: Շորը այրում, խանձիլը կապում են վրան: Օճառը և սև նավթը եփում, շորի վրա քսելով՝ դնում են կտրածի վրա: Մի քանի տեղերում կտրած մորթու վրա դնում են սև յոնջա:

Կապույտ վերք. Չամիչ, անախաթուն, լեղակ, աղբի ճիճու ծեծում, կապում են վերքի վրա, հետո վերքից սկսում է ժահր թափվել:

Հազ. Մանիշակի թեյ են խմում: Մերկևիլի կորիզը եփում և ջուրը խմում են: Սալապ կոչված արմատը չորացնում, աղում և թեյի հետ խառնում, խմում են:

Հարբուխ. Քթի տակ շոր են ծխում: Թթու թան են տալիս հիվանդին:

Միզակապություն. Թեփը խաշում, դնում են փորին: Թեփի տեղ գործ են ածում և անվա բուրդ: Քարավուզի արմատը եփում և ջուրը խմացնում են:

Մատնաշունչ. Մատնաշունչը հասցնելու համար խաշած սոխ կամ անալի խմոր են դնում:

Մագոլ. Շիբի և աղի խառնուրդի ջրով լվանում են: Տավարի լեղին հինայի հետ խառնում, քսում են:

Մոլոքոր. Մոլոքորից ազատվելու համար մերկանում են, մի ոսկե դրամ տրորում ջրի մեջ և ածելով մարմնի վրա՝ փաթաթվում կարմիր մետաքսե սավանի մեջ:

Ոսկրաբեկ. Կոտրած մասի վրա տախտակ են դնում, կապում մինչև կոտրած մասերի ձուլվիլը:

Ոտների քրտինք. Աղաջրով կամ շիբաջրով լվանում են:

Վերք գնդակի. Գնդակից ստացած վերքի վրա դեղնահող են տալիս:

Տաքություն. Կատվահոռի կոչված ծառի արմատի կեղևը մաքուր լվանում, քերում, թանձր եփում, հիվանդին խմացնում են:

Ցավ տված մկանունք. Ցավ տված մկանունքի վրա դնում են ծեծած միս: Տաք ջրով միշտ լվանում են:

Փայծաղի մեծանալը. Էշի կաշի են կապում: Սև կաչաղակը կապում են փայծաղին դրսից:

Փորացավ. Տաք աղյուսի վրա նավթ են ածում և դնում փորի վրա:

Փորկապություն. Փորկապության համար խմում են նռան ջուր: Հյուն (հոն) են ուտում:

Օձի թույն. Օձ պահողները կծած տեղը պինդ կապում են, թմրեցնում, հետո պատռում ածելիով վերքը և միջի թույնը ծծելով՝ բերանից թափում: Դրանից հետո կոթոն կոչված բույսը վրան են տալիս կամ մաճուն քսում, ժահրը հանում, և 8 օրից հետո հիվանդն առողջանում է: Մաճնաթանը ածում են կոնքի մեջ և կծած անդամը դնում մեջը:



ՄԱՀ, ԹԱՂՈՒՄ ԵՎ ՄԵՌԵԼՈՑ

Ժողովուրդը հավատում է, թե մարդու մահվան օրը նախապես որոշված և գրված է ճակատին, որ ոչ մի միջոց չի կարող հեռացնել և մոտեցնել այն: Այդ օրերի հաշիվը պահվում է երկնքում դարսված կճուճներով, որոնց մեջ յուրաքանչյուր տարի մի կաթիլ ջուր է կաթում: Երբ կճուճը լցվում է, օրը լրացած է լինում, և մարդը մեռնում է: Մինևույն ժամանակ ամեն մարդ մի աստղ ունի երկնքում, երբ օրը լրանում է, աստղը ընկնում է, և մարդն էլ մեռնում:

Երբ մարդու վախճանը հասնում է, եթե բարի է՝ բարի, իսկ եթե չար՝ չար հրեշտակը գալիս է հոգին առնելու: Բարի մարդը շատ հանգստությամբ, ասելով, ծիծաղելով հանձնում է հոգին հրեշտակին՝ ստանալով նրանից ծաղկի մի փունջ, իսկ չարը երկար տանջվում է չար հրեշտակի հարվածների տակ: Վերջինս, սուրը խրելով հիվանդի կողքը, ամուր սեղմում է բկից՝ այնպես, որ նա ոչ մի բան չի կարողանում ասել, և յուր «սրտինը սրտումն է մնում»: Մեռնելու բուպեին մեռնողը լսում է յուր ազգական ննջեցյալների ձայնը, որոնք կանչում են. *«Եկ, եկ, այստեղ լավ է»*: Ինքն էլ պատասխանում է. *«Գալիս եմ, գալիս»*:

Երբ մարդը հոգին ավանդում է, բոլոր տնեցիները սաստիկ լալիս են, իսկ փոքր-ինչ ավելի սրտոտները դարձնում են մեռելի երեսը դեպի արևելք, շորերը հանում են, կզակին մի թաշկինակ կապում, ոտների բթամատները բամբակի թելով կապկպում, աչքերը ծածկում, ձեռքերը կրծքին խաչաձև ծալում, վրան մի շոր ձգում և մի հաց դնում սրտին:

Իսկույն գալիս են ազգականները և ծանոթները, մխիթարական խոսքերով հանգստացնում սգավորներին: *«Աստված սրտներդ մխիթարի, դուրք ողջ լինիք: Բոլորս էլ մեռնելու ենք, աստված ննջեցյալի հոգին լուսավորի, համբերող եղեք»* և այլն: Գալիս է և քահանան ու օրհնում ջուրն ու պատանը: Տղամարդ ննջեցյալին լողացնում են գյուղերում՝ հարևանները, իսկ քաղաքում՝ ժամկոչները: Կին ննջեցյալներին՝ գյուղում հարևան կանայք, իսկ քաղաքում աղքատ կանայք և կամ, եթե հարուստ է եղել, կույսերը՝ աղոթքներ մրմնջալով: Լողացնելուց հետո ննջեցյալի ձեռքերին մի մի մոմ են դնում, որպեսզի մյուս աշխարհում յուր բարեկամ ննջեցյալներին ճրագի լույսով տեսնի: Հետո պատանում են սպիտակ կտավով, փաթաթում մի կապերտում և դնում մի **նաժի** մեջ և վրան ձգում դիպարդը:

Տասը տարեկանից բարձր ննջեցյալների համար ութ օր շարունակ մոմեր կամ կանթեղներ են վառում նրանց լողացած տեղերում, որպեսզի նրանց հոգիների ճանապարհը դեպի երկինք լուսավոր լինի:

Երբեմն պատահում է, որ հարուստ ննջեցյալների համար դագաղ են պատրաստել տալիս և հետևելով քաղաքի սովորություններին՝ ծերինն անում են սև, հասակավորինը՝ կապույտ, իսկ երիտասարդինը՝ կարմիր, գույնզգույն ծաղիկներով զարդարված:

Նույն օրը քահանան կատարում է տան կարգը և ննջեցյալը տանում է եկեղեցի: Ննջեցյալը վերցնելուց հետո անմիջապես նույն տեղը մի քար են դնում, որպեսզի ննջեցյալի հիշատակը հաստատ մնա այդ տան մեջ:

Մինչև թաղման օրը թե՛ սգավորները և թե՛ նրանց ազգականներն ու ծանոթները ժամերգությունների ժամանակ եկեղեցի են գնում, իսկ առաջին ժամերգությունից հետո բոլորը գալիս են ննջեցյալի տուն, քահանային հոգոց ասել տալիս, մխիթարում սգավորներին և մի-մի բաժակ օղի խմում, հեռանում:

Թե՛ գյուղերում և թե՛ նույնիսկ քաղաքում կան լալկան կանայք, որոնք հրավիրվում են ննջեցյալի վրա հատկապես լաց լինելու: Սովորաբար «մայր ողբոց» հանդիսանում է ննջեցյալի մայրը և կամ մեծ քույրը: Սա նստում է ննջեցյալի սնարի, իսկ մի ուրիշը՝ ոտների մոտ, մյուս կանայք



շրջապատում են ննջեցյալին: «Ողբոց մայրը» թվում է ննջեցյալի առաքինությունները երգի եղանակով, մյուսները կրկնում են վերջին խոսքերը և բարձրաձայն լալիս:

Երբ ննջեցյալը եկեղեցումն է դրված լինում, միևնույն երևույթը այնտեղ էլ է կրկնվում և շատ անգամ ավելի սաստկությամբ, որովհետև ավելի մեծ բազմություն է ներկա լինում: Սակայն սրանով էլ չի վերջանում և միշտ շարունակվում է տանը: Այստեղ առաջ են բերում ննջեցյալի շորերը և մեկ-մեկ բարձրացնելով, հոտոտելով, համբուրելով՝ գովում և լաց են լինում: Գյուղի ամենահեռավոր կետից էլ լսելի է լինում ննջեցյալի տան ողբն ու կոծը:

Եթե ննջեցյալը հարուստ է եղել, նրա համար պատարագ են մատուցում և հետո թաղում, իսկ եթե աղքատ, շուտով տանում թաղում են:

Թաղման ծեսը կատարելիս կանայք դարձյալ շրջապատում են ննջեցյալին եկեղեցում և ողբեր ասելով՝ լալիս: Եթե ննջեցյալը նոր նշանադրված է եղել, սգավորները, կարմիր խնձորի վրա սպիտակ դրամներ շարած, նշանի մատանին սև քողով պատած, դնում են ննջեցյալի վրա և լաց լինում:

Շատ անգամ լալկան կանայք ննջեցյալի կողմից մնաս բարև են ասում նշանածին և պատվերներ տալիս նրան: Սովորաբար քահանան էլ նպաստում է ողբ ու կոծին՝ գանձ ասելով, չնայելով որ այդ արգելված է:

Լացն ու կոծը գնալով սաստկանում են, և շատ անգամ ննջեցյալի մայրն ու քույրը պատառոտում են իրենց երեսները, քանդում, քաշում մազերը, թակում գլուխները, ուշագնաց լինում:

Վերջապես կանանց հեռացնում են և վերցնում դագաղը, տանում դեպի գերեզմանատուն: Կանայք, լաց լինելով և բարձրաձայն ողբեր ասելով, վերադառնում են տուն և շարունակում շորերի վրա կոծելը:

Տղամարդիկ քահանայի և խաչ ու խաչվառի առաջնորդությամբ տանում են ննջեցյալը գերեզմանատուն: Դիակառքեր գյուղերում բոլորովին չկան, իսկ քաղաքում կա մի շատ հասարակը: Չորս կամ վեց հոգի, բռնած նաժից կամ դագաղից, առաջ են գնում՝ շուտ-շուտ փոփոխվելով: Նոր բռնողն ասում է. *«Աստված ողորմի»*: Մյուսը, թողնելով դագաղը, պատասխանում է. *«Աստված ողորմի ծնողացդ»*:

Այս հուղարկավորության ժամանակ քահանան զգուշանում է ետ նայելուց, որովհետև եթե ետ նայի, նույն տնից մի ուրիշն էլ կմեռնի:

Վերջապես հուղարկավորությունը հասնում է գերեզմանատուն: Գերեզման փորողներից մինը առաջ է գալիս, դագաղից բռնում, տանում գերեզմանի աջ կողմը դնում: Սովորաբար գերեզմանները փորում են գյուղերում ննջեցյալի ազգականները և կամ հարևանները, իսկ քաղաքում՝ ժամհարները: Գերեզմանների խորությունը լինում է 2-3 արշին, իսկ լայնությունը՝ մի արշին: Ավարտելուց հետո թին ու բահը խաչաձև դնում են գերեզմանի վրա, որպեսզի սատանաները չմտնեն ներս:

Եթե գերեզմանը լավ փորված է լինում, և հողը՝ կակուղ, ասում են, թե ննջեցյալն արդար էր, իսկ եթե գերեզմանը վատ է փորված, և հողը քարքարոտ է լինում, շշնջում են, թե ննջեցյալը մեղավոր էր, աստված նրան հողի մեջ էլ մի հանգիստ տեղ չտվեց:

Նախքան ննջեցյալը գերեզման իջեցնելը մոտիկ ազգականները գրկախառնում են նաժը, համբուրում ննջեցյալին և լաց լինում: Հետո ննջեցյալին հանում են նաժից և իջեցնում գերեզման: Քահանան օրհնում է հողը մոտիկ ազգականի ձեռքում և ձգել տալիս գերեզմանի մեջ: Անմիջապես բոլոր հուղարկավորները և մի-մի բուռ հող են ձգում ննջեցյալի վրա՝ ասելով. *«Աստված ճանա-*



պարհոյ բարի անի, բարև տար մեր հին ննջեցյալներին»: Հետո արդեն գերեզման հատողները ածում են հողը գերեզմանի մեջ և վրան մի թումբ կազմում:

Թաղման ծիսակատարությունը կատարելուց հետո քահանան ննջեցյալների տնեցիների կողմից հրավիրում է հուղարկավորներին ննջեցյալի տունը՝ ճաշելու: Այս ճաշը տեղական բարբառով կոչվում է «ժըմահաց» կամ «պատարագ»: Սովորաբար եփում են շիլաճաշ, շատ անգամ մորթում են մի եգ և կամ մի քանի ոչխար, թխում են 10-15 փուխ հաց, գնում են մեծ քանակությամբ օղի և գինի: Ոչ միայն եկողներին, այլև բացակա անձանց և հիվանդներին կերակուրներ են ուղարկում, որպեսզի տեղի չտան ոչ մի չարախոսության: Ահագին բազմությունը լռելյայն և մեծ այտուցով ճաշելուց հետո լսում է քահանայի օրհնությունը նույն տան հին և նոր ննջեցյալների հոգու փրկության մասին և ապա, մխիթարություն բարեմաղթելով տնեցիներին, ցրվում:

Մյուս օրը՝ լուսաբացին, ննջեցյալի հայրը և կամ եղբայրը գնում են գերեզմանատուն, համբուրում ննջեցյալի գերեզմանը և երեք անգամ վայ կանչում, որպեսզի հոգին, որ մինչև այդ կանչը սավառնում է գերեզմանի շուրջը, անդորրությամբ ուղևորվի դեպի երկինք:

Նույն օրը՝ ժամը 10-ին, սգավորները գնում են գերեզմանատուն «իքնավողը» (այգ) կատարելու: Այնտեղ են հավաքվում և ննջեցյալի ազգականներն ու ծանոթները, մանավանդ կանայք՝ բերելով իրենց հետ օղի, գինի և խմորեղեն:

Քահանան օրհնում է գերեզմանը, իսկ սգավորները լաց են լինում՝ ողբեր ասելով: Վերջապես երբ այլևս արցունք չի մնում աչքերում, վեր են կենում, համբուրում գերեզմանը և խաչհամբույր տալիս: Մի կին ջուր է ածում գերեզմանի վրա, որից բոլոր սգավորները խմում են, կրծքերին քսում, երեսները վանում, որպեսզի եթե վախեցած են, վախն անցնի: Հետո գերեզմանի հողից վերցնում, սգավորների «սրտերին» են քսում, որպեսզի «սրտերը հովանան», և այլևս երկար չսգան:

Այս ամենից հետո բոլորը՝ թե՛ տղամարդ և թե՛ կին, մի-մի բաժակ օղի են խմում երկար բարեմաղթություններով, ուտում բերած խմորեղենը և ապա թողնելով մնացորդները գերեզմանի մոտ՝ վերադառնում սգավորի տունը՝ ճաշելու: Ճաշից հետո կրկին մի քիչ լաց են լինում, ննջեցյալի մասին խոսում և ապա ցրվում:

Հյուրերը հեռանալուց հետո տնեցիները ննջեցյալի շորերը մաքուր լվանում են, որպեսզի հոգին մաքուր և անարատ գնա հասնի յուր տեղը:

Գյուղերում ութ օր շարունակ սգավորները առավոտ երեկո եկեղեցի են գնում, ժամասացությունից հետո քահանային հոգոց ասել տալիս: Իսկ քաղաքում քառասուն օր շարունակ կանայք տնից դուրս չեն գալիս: Շատերը նույնիսկ մի տարի սուգ են պահում և տնից դուրս են գալիս միայն գերեզմանատուն գնալու:

Թաղման վեցերորդ օրը ննջեցյալի ազգական ու հարևան կանայք նորից հավաքվում են ննջեցյալի տունը և լվանում սգավորների գլուխները, որ մինչև այդ ժամանակ անվա են մնում: Նույն երեկոյին մոտ ազգականներից «սգահան» է ուղարկվում սգավորներին: **Սգահանը** բաղկացած է լինում զանազան տեսակ խմորեղենից՝ եփած հավից, օղուց, գինուց և մեծ սգավորի համար մի «խալաթից»:

Յոթերորդ օրը, այսինքն՝ «յոթին», ազգականներն ու հարևանները նորից հավաքվում են ննջեցյալի տունը և սգավորների հետ միասին գնում գերեզմանատուն, քահանային օրհնել տալիս գերեզմանը, երկար լաց լինում, ողբեր ասում և հետո վերադառնում տուն, ճաշում: Ճաշից հետո քահանան օրհնում է բոլոր հին ու նոր ննջեցյալների հոգին և ստանում 40 կ.- մի ռուբլի վարձատրություն:

Առաջ բերենք մի քանի նախապաշարումներ.



Եթե մի գյուղում ննջեցյալ լինի, ոչ ոք գլուխ չի լվանա, ոչ էլ լվացք կանի՝ վախենալով, թե միգուցե հրեշտակը, որ ննջեցյալի պատճառով գյուղումն է, «կուփե» (խփե):

Կնոջ գերեզմանը մի արշին ավելի խոր են փորում, որովհետև կինը խոսք ման ածող է, խոսվարար և սատանի հետ բարեկամ:

Եթե ննջեցյալից հետո տնեցիներից հիվանդանում են, կարծում են, թե ննջեցյալը իսկապես մեռած չէ և տնեցիներից յոթ հոգի տանելու է: Որոշելու համար, թե ննջեցյալը իսկապես մեռած է, թե ոչ, գերեզմանի վրա գարի են ածում և ձին տանում մտոր: Եթե կերավ, այդ ապացույց է, որ ննջեցյալն իսկապես մեռած է: Իսկ եթե չկերավ, դա նշան է, որ մեռած չէ: Այդ դեպքում բաց են անում գերեզմանը, ննջեցյալի գլուխը ջախջախում կամ մեխ խփում գլխին, մեկն էլ՝ սրտին: Մի քանիսն էլ մեռելի սրտից մի կտոր կտրում և հիվանդին են տալիս, որ ջրով ընդունեն և առողջանա:

Արևը մայր մտնելուց հետո ննջեցյալ չեն թաղում, ապա թե ոչ գիշակեր կենդանիները կհանեն գերեզմանից և կուտեն:

ՀՈԳՈՒ ԵՎ ՀԱՆԴԵՐՁՅԱԼ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մարդը տարբերվում է կենդանիներից նաև նրանով, որ սա հոգի, իսկ նրանք միայն շունչ ունեն: Մարդու հոգին մի լուսավոր բան է, որ բնակվում է մարդու ձախ կողմում: Մեռնելիս հոգին դուրս է գալիս բերանից, եթե արդար է՝ աղավնու, իսկ եթե մեղավոր՝ սև թռչունի նմանությամբ: Մի պառավ պատմում էր, թե մի ծառի տակ յուր հիվանդ թոռը խնամելիս ննջում է և տեսնում մի աղավնի, որ երեխայի բերանից դուրս է գալիս և կանգնում ծառի վրա: Արթնանալով նա գտնում է յուր թոռանը մեռած: Բոլոր երեխաների հոգիներն արդար են, իսկ չափահասներինը՝ մեծ մասով մեղավոր:

Հոգին բերանից դուրս գալուց հետո մինչև այգը կատարելը սավառնում է դիակի շուրջը, և երբ մյուս օրը վաղ առավոտյան տան մեծը գալիս երեք անգամ «վայ» է բղավում, ապահով սավառնում է դեպի երկինք: Այստեղ բոլորը թռչունների կերպարանքով մնում են՝ արդարները մի ծաղկալից, ծառազարդ այգում, մեղավորները՝ մի մթին տեղ, իսկ ոչ արդար, ոչ մեղավորները՝ արդարների ետևը: Այստեղից նրանք հսկում են իրենց գերեզմանների վրա, շատ անգամ այցելում են իրենց ազգականներին, երևում են նրանց երագների մեջ: Նավակատյաց, մեռելոց օրերին իջնում են իրենց գերեզմանների վրա և սպասում, որ իրենց ազգականները գան, գերեզմանները օրհնել տան: Եվ եթե օրհնել են տալիս, իրենք ուրախացած, օրհնում են օրհնել տվողներին և սավառնում երկինք, իսկ եթե չեն օրհնել, տխուր-տրտում, ազգականներին անիծելով, բարձրանում են:

Երբեմն էլ պատահում է, որ հոգին դեռ մարդու կենդանության ժամանակ թողնում է մարմինը և ինքը գնում: Այդ թափառման միջոցին մարմինը բոլորովին անզգա ընկած մնում է, մինչև որ հոգին նորից վերադառնում է: Այսպես, մի անգամ Քառասնի գյուղացի Աղաջանը գիշերը գնում է եկեղեցի և գրկելով որդու դագաղը՝ երկար ժամանակ լաց է լինում և անզգայացած ընկնում վայր: Երբ մի երկու օրից զգաստանում է, պատմում է, թե ինչպես յուր որդու հոգու հետ միասին ինքն էլ է բարձրացել երկինք, տեսել դրախտը, խոսել աստվածության հետ և այլն:

Այստեղ, այս երկնային կայանում հոգիներն անհամբերությամբ սպասում են վերջին դատաստանին, երբ Քրիստոսը կգա և Գաբրիել հրեշտակապետի փողով բոլոր ննջեցյալները հարություն կառնեն: Այն ժամանակ կկախեն արդարության կշեռքը, և բարի ու չար հրեշտակները, որոնք, մարդու կենդանության ժամանակ նստած բարին՝ աջ, չարը՝ ձախ ուսին, գրում էին նրա գործերը, կհանեն իրենց մատյանների միջից բարին՝ բարության, իսկ չարը՝ չարության գործերը և կդնեն կշեռքի նժարների մեջ: Եթե բարությունը կշռե, մարդը կանցնի Քրիստոսի աջ կողմը, իսկ եթե



չարությունը՝ ձախ: Հետո արդեն աջակողմյանները դրախտ, իսկ ձախակողմյանները դժոխք կերթան:

Դրախտը մի հրաշալի այգի է՝ լի մշտադալար ծառերով, անուշահոտ ծաղիկներով, քաղցրահամ աղբյուրներով և բյուրավոր գեղեցիկ թռչուններով:

Իսկ դժոխքը մի խոր անդունդ է, որ թոնիրներից, խարույկներից, կուպրի կարասներից ահագին հուր է բարձրանում և տանջում երկաթյա տրեխներ հազած մեղավոր մարդկանց:

ՀԱՎԱՏՔ

ԼԵՌՆԵՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ

Վարանդացին հեռու անցյալում և մեծ մասամբ այժմս էլ աստվածացրել է ամբողջ բնությունը և ծունր դրել նրա առաջ: Քիրս լեռը յուր սպիտակափառ գագաթով նվիրական է եղել նրա համար. շատերը ծունր չոքած աղոթել են նրա առաջ: Դեռ մինչև այժմս էլ Քիրսի աստվածացման վերաբերյալ ավանդություններ շրջում են ժողովրդի մեջ, և լեռան վրա գտնվող բազմաթիվ ուխտատեղիները խլել են նրանից նրա աստվածացումը: Խերխան գյուղի Ծծքարի ավանդության մեջ¹ թշվառ կինը Քիրսին է դիմում և խնդրում իրեն քար դարձնել, որ և կատարվում է:

Աշան գյուղի Ցից քարը² դարձյալ մի կին է եղել, որ ավագակներից հալածված խնդրել է Քիրսին և քար դարձել:

ՔԱՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ

Վարանդայում կան քարեր և ժայռեր, որ պաշտվում են, ժողովուրդը ուխտի է գնում նրանց, մոտ վառում, աղոթում և մատաղներ կտրում: Այսպես՝ Սղնախ գյուղի մոտ գտնվում է մի ահագին ժայռ քար, որ մի ժամանակ ժայռից պոկվելով, գլորվել, եկել է մինչև գյուղ և հենց գյուղի մոտ կանգ առել՝ առանց մի որևէ վնաս պատճառելու: Գյուղացիները, գոհ լինելով, որ այդ քարն ավելի առաջ չի գլորվել և վնասներ պատճառել, պաշտում են նրան: Այս քարը կոչվում էր Պուկ-քար, այսինքն՝ պոկ եկած քար: Ամուլ կանայք գալիս երեք անգամ թել են փաթաթում այս քարի շուրջը և ապա տանում, զուլպա գործում հագնում, որպեսզի երեխա ունենան:

Կաթ չտվող կովերին էլ տանում են երեք անգամ պտտեցնում նրա շուրջը:

Հանդիպակաց ժայռն էլ, որտեղից պոկ է եկել այդ ահագին ժայռ քարը, նույնպես պաշտվում է: Այնտեղ առավելապես երաշտ ժամանակ են մոմեր վառում, որ անձրև գա, և կամ կարկուտ չխփի:

Մի այսպիսի ժայռ էլ գտնվում է Հիրիեր գյուղում՝ լեռան լանջին, որ եթե գլորվի, գյուղը ավերակ կդարձնի: Վառված բազմաթիվ մոմերից ժայռի լանջը բոլորովին սևացել է:

Բայց ավելի հետաքրքիր է Գյունեյ Ճարտար գյուղի Շմանեքը, որ կարծեք դուրմեն լինի: Մի կանգնած ժայռ քարի վրա ընկնում են երկու մեծ ժայռ քարեր՝ մյուս կողմից հենված լինելով իսկական ժայռի վրա: Մրանց միջև կա երկու փոքրիկ խորշ: Կատաղած անասուններին, մանավանդ այն կովերին, որոնք կթելիս հանգիստ չեն մնում և կամ հորթին թույլ չեն տալիս ծծելու, բերում կոխում են այս խորշերի մեջ՝ նախապես մոմեր վառելով ժայռի առաջ, որ խելոքանան: Այս ժայռի առաջ մի ծառ կա՝ թիքեռնը՝ ծածկված բազմաթիվ շորերի կտորներով:

Մի մեծ ժայռ քար էլ Մխտորաշենի մոտ կա, որ կարծես մանհիր լինի: Մրա առաջ չորս սրբազան ծառեր էլ կան՝ ծածկված շորի կտորներով: Բացի սովորական ուխտ անելուց և մոմեր վառելուց,

¹ Տե՛ս էջ 192

² Տե՛ս էջ 195



ամեն մի անցորդ պարտավոր է սուրբ քարի մոտից մի փոքրիկ քար վերցնել, դնել սուրբ քարի վրա և մի ուրիշը վայր ձգել:

Մի այսպիսի քար էլ Քարին տակ գյուղում կա:

Սակայն առանձին ուշադրության արժանի են՝

Ծծաքարերը. Սրանք ծծի նմանությամբ պտուկներ են, որ գտնվում են ժայռ քարերի լանջին, երբեմն ահագին ժայռերի և երբեմն այրերի մեջ: Սրանցից կաթ-կաթ ջուր է հոսում, որ սակավակաթ կանանց կաթը ավելացնելու դեղ է համարվում: Կաթ չունեցող կինը, յուր երեխան գրկած, գալիս է այդ քարի առաջ չոքում, աղոթում, մի քանի մոմ վառում և ծծերը բռնում այդ կաթիլների տակ, և կամ վերցնում այդ ջրից, մի մասը խմում, մյուսն էլ ծծերին քսում: Ասում են, որ անմիջապես կաթն առատանում է:

Այսպիսի ծծաքարեր շատ կան, որոնցից նշանավոր է Խերխան գյուղի ներքև գտնվածը: Սա մի ժայռ է, որ հեռվից մի երեխային ծիծ տվող կնոջ նմանություն է տալիս: Ունի և պտուկներ, որոնցից ջուր է կաթկթում: Ասում են, որ մի դժբախտ մայր, այդ տեղում յուր օրորոցի մեջ պահած երեխային ծիծ տալով, խնդրել է Քիրս լեռից¹, որ իրեն քար դարձնե, որովհետև այլևս չի ուզում տուն վերադառնալ և յուր սկեսուրի ձեռին տանջվել: Քիրսը կատարել է նրա խնդիրը՝ միննույն ժամանակ նրան կաթ տալու շնորհքը պարգևելով:

Մի այդպիսի ծծաքար կա և Սարիբեկում, որ գտնվում է մի ժայռի մեջ, մինն էլ՝ Փյուրման գյուղում: Մի ուրիշն էլ Թաղլարի մոտ՝ Ղուրուչայի արևելյան կողմը գտնվող այրի մեջ, ինչպես և մինը Ծովատեղ գյուղի մոտ՝ լճի ափին, որի անունով և լիճը Ծծաքարի ծով է կոչվում:

Այստեղ կովեր էլ են բերում ուխտ անելու, որ շատ կաթ տան: Միայն բերելիս հորթը կապում են կովի մեջքին, և իրենք, առնելով ջուր, քսում նրա պտուկներին:

Կան քարեր ևս, որոնք պաշտվում են որպես մի որոշ հիվանդության բժշկություն տվող: Այդպիսիներից էլ հիշենք մի քանիսը:

Որպես հազ հիվանդության բժշկող սուրբ քարեր.

Ա. Սարիբեկի ուխտատեղից փոքր-ինչ բարձր գտնվող ժայռը, որի միջով մի անցք է բացվում: Հագողները, նախապես մոմեր վառելով այդ ժայռի առաջ, 3 կամ 7 անգամ անցնում են այդ անցքով՝ հուսալով որ հազը կանցնի:

Բ. Ալամանց գոմերում գտնվող «ըխտըլահազ» (խեղդող հազ) ուխտատեղին: Սա մի ծառի մոտ երկու ահագին քարեր են, որ միմյանց վրա ընկնելով՝ մի փոքրիկ անցք են թողել: Խեղդող հազ ունեցողները նույն կերպ բժշկվում են:

Գ. Բողրխանի լեռան վրա՝ վանքից մոտ կես վերստ հեռավորությամբ անտառի մեջ գտնվող մի սաժեն հեռավորության մեկուսի ընկած քարը, որի մեջ մի փոքրիկ անցք կա: Այստեղ նույն կերպ բժշկում են փոքրիկ երեխաներին:

Դ. Սարուշենի «ըխտըլահազը», որ նույնպես մի ծակ քար է և նույն կերպ բժշկում է հագողներին:

Հացի գյուղում կա Քոլեն (թփերի) խաչ, որ մի կաղնու տակ երկու սրածև քարեր են. թե՛ ծառը և թե՛ քարերը պաշտվում են և համարվում ծծի վերքերը դարմանող:

Շուշում՝ թուրքերի թաղում, գտնվում է «Քամու խաչ» անուն քարերի կույտը, որ պաշտվում է որպես «քամի»՝ ռևմատիզմ հիվանդության բժշկություն տվող:

¹ Հատկապես շատերին պատմել եմ տվել, և բոլորն էլ առանց բացառության ասել են, թե խնդրել են Քիրսից



Նույն հիվանդությունը բժշկող մի ժայռ քար էլ Դոնավարդ գյուղում կա, որ նույնպես «քամու խաչ» է կոչվում և պաշտվում է:

Կան նաև քարեր ու ժայռեր, որոնց միջով անցքեր են բացված. ամուլ կանայք երեք անգամ անցնում են այդ անցքերի միջով, որպեսզի որդի ունենան: Ասում են, թե անցքը մեծանում և թույլ է տալիս կնոջը անց կենալու, եթե որդի է տալու, և նեղանում ու արգելում անց կենալու, եթե որդի չի տալու: Այսպիսի քարերից նշանավոր են Պոկեսիբերքում և Մարիբեկում գտնվածները:

Ավդուռ գյուղում գտնվում է «Ավդալ օճախ» ուխտատեղին, որ հասարակ քարերի մի կույտ է: Այստեղ ուխտ են գալիս չբերք կանայք և կամ նրանք, որոնց որդիները, տարին լրացած, մեռնում են, որպեսզի առաջինները որդի ունենան, իսկ երկրորդների որդիները երկարակյաց լինին:

Դոնավարդ և Քառասնի գյուղերի միջև կա երկու քար, որոնք, միմյանց վրա ընկած լինելով, տակովը մի անցք են թողել: Այս անցքի տակ ևս մի փոքրիկ քար կա, ուր գտնվում է մի խորշ: Եթե տասներկու տարեկան ժամանակ այդ խորշը ջուր ածեն և խմեն, 17 տարեկան հասակում սաստիկ զորեղ կարող են լինել, որովհետև այդ քարերը նրան ուժ կտան:

Ալամենց գոմեր կամ Մատաթքենդ գյուղի մոտ մի մեծ քար կա, որի մասին ասում են, թե Մարիամ Աստվածածինը դրա վրա նստած է եղել, երբ հրեշտակը ավետիս է տվել նրան, թե որդի պիտի ունենա: Այժմ ամեն անցորդ մի քար է վերցնում և դնում դրա վրա՝ ի նշան յուր հարգանաց: Շատերն էլ պտուղներ են դնում և կամ մոմեր վառում:

Հին Քյաթուկի մոտ Գիզատ ուխտատեղում կա մի ծակ ժայռ քար. երաշտ ժամանակ կանայք գնում մոմեր են վառում ժայռի լանջին և ծակից ջուր վայր ածում: Ասում են, թե այդ սուրբն այնքան զորեղ է, որ անմիջապես անձրև է անում:

Մի այսպիսի քար էլ Ներքին Թաղավարդ գյուղում կա, միայն սա ծակ չէ: Երաշտ ժամանակ բերում ջուր են ածում վրան, կաթնաճաշ եփում, բաժանում, որ անձրև գա: Մի անգամ մի տղա ծաղրել է այդ քարը և վեր կացել կանգնել վրան, բայց անմիջապես ոտները կուչ են եկել:

Մի քար էլ Դոնավարդում կա, որ նույն կերպ անձրև է տալիս: Միայն այս քարը նրանով էլ է նշանավոր, որ երբ երկար ժամանակ անձրև է գալիս, բերում այս քարի տակ կրակ են վառում և, անմիջապես անձրևը կտրվում է:

Հացի գյուղից դեպի արևելք՝ մոտ երկու վերստ հեռավորությամբ, կա ժայռից պոկ եկած և առանձին ընկած մի ահագին ժայռ քար, որ մեջտեղից ճեղքված է: Այս քարը պաշտում են թե՛ հայերը և թե՛ թուրքերը: Վերջիններս ասում են, թե Ալին է թրով խփել և ճեղքել: Այս քարի մոտ մի աղբյուր կա, որ կոչվում է «Ալի բուլաղ» (Ալու աղբյուր):

Խաչմաչ, Հարավ և այլ գյուղերում կան քարեր, որոնք պաշտվում են միմիայն կայծակի հարված ստանալու պատճառով:

Քարեր էլ կան, որոնք թեև չեն պաշտվում, բայց որոնց մասին պատմվում են զանազան ավանդություններ:

Այսպիսիներից նշանավոր են.

Ուղտաքարեր. Մեծ Քիրս լեռան վրա կան ուղտանման և մարդակերպ քարեր, որոնցից փոքրինչ հեռու՝ մի ուրիշ քար, որ շատ նման է ասեղը թելող մի հարսի: Պատմում են, թե մի ժամանակ այդտեղով մի հարս են տարել: Պատահամբ սրա զգեստի ծայրը պատռվել է, և նա առանձնացել է կարելու: Այս միջոցին մի աղքատ պառավ կին մոտեցել է հարսին և ողորմություն խնդրել, իսկ սա բարկացել է վրան, որ այսպիսի նեղ ժամանակ եկել ողորմություն է ուզում: Պառավն էլ յուր կողմից բարկացել և անիծել է բոլորին, որ քար կտրեն: Եվ այդ օրվանից հարսն էլ, մակարներն էլ, ուղտերն էլ քար կտրած մնացել են այդտեղ:



Ցից քար. Աշան գյուղից փոքր-ինչ վերև գտնվում է «Ցից քարը»:

Սա մի ժայռ քար է, որ փոքր-ինչ նմանություն է տալիս երեխան գրկած կնոջ: Ասում են, թե մի ժամանակ մի հարս, երեխան գրկած, գնալիս է եղել, երբ ավազակները հարձակվել են վրան: Սա, չկամենալով նրանց ձեռքն ընկնել, խնդրել է Քիրսից և քար դառնել:

Հովվի քարեր. Ա. Խազազի լեռան վրա կան երկու մարդու, չորս ոչխարի և մի շան քարի արձաններ: Ավանդությունն ասում է, թե մի ժամանակ դրանք կենդանի էին: Աստված ուղարկել է դրանց մոտ յուր հրեշտակին աղքատի շորերով, որպեսզի փորձե դրանց ողորմածությունը: Հովիվները ոչ միայն բան չեն տվել խեղճ աղքատին, այլև քարկոծել են նրան: Այդ ժամանակ վերջինս անիծել է նրանց և քար դարձրել:

Բ. Գրիգոր անունով մի ճգնավոր, ավազակներից փախչելով, թաք է կենում, հետո սրա անվամբ կոչված Լուսավորչի քերձի մեջ: Մի հովիվ հայտնում է ավազակներին նրա տեղը, և սա նախքան նահատակվելը անիծում է հովիվին, որը յուր կնոջ և ոչխարների հետ քար է կտրում: Այժմ ցույց են տալիս հովիվին, նրա կնոջը և ոչխարներին նմանություն բերող քարերը:

ԿՐԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կրակի պաշտման վերաբերյալ դեռևս շատ մնացորդներ կան. այսպես. շատ սովորական է կրակով երդվիլը, միշտ ասում են՝ կրակը օրհնի, մեղք համարելով ասել՝ կրակը հանգցրու: Եվ գրեթե բոլոր պառավները նախքան կրակ հանգցնելը խաչակնքվում են և «Հիտուս ու Քրիստոս» ասում:

Կրակի վրա ջուր չեն ածում, որովհետև այդպիսի դեպքերում նա ասում է, թե ե՞րբ ես մեռել, որ շիլաճաշո չեմ եփել:

Կրակը չեն ծեծում և ոչ թքում վրան և կամ ոտը դնում՝ մեղք համարելով այդ, ինչպես և չեն անցնում վրայից:

Գիշերները կրակ փոխ չեն տալիս՝ հավատալով, որ տնեցիներից մինը կմեռնի:

Կաթի տակից ոչ մի կտոր կրակ չեն վերցնում, որ կաթը չշաղի (փսորի): Եթե ստիպված են վերցնելու, նախապես կաթի վրա մի տերև կամ մի կանաչ բան են դնում:

Եթե փայտը վառվելիս ձայն է հանում (վրթվրթում է), ասում են. «Աչքը դուրս գա, մեր մասին խոսող կա»: Հետո կամ մի քիչ մոխիր են ածում, որ դադարի, և կամ զանազան անուններ տալիս, որի ժամանակ որ դադարեց, այդ ապացույց է, որ նա է խոսում:

Երեկոյան լողանալիս մի կրակ են ձգում ջրի մեջ, որ չարերը չխփեն և թողնեն փախչեն:

Վառած փայտը աջ ու ձախ չեն շարժում, որ իրենց հայրը չմեռնի:

Կրակը հանգցնելիս չեն փչում՝ մեղք համարելով այդ, այլ մոխիր են ցանում վրան:

Կրակը կայծակից մնացել է կայծքարի մեջ, և հետո մարդիկ գայլախազով (չախամախ) խփել հանել են:

Կրակն ու ջուրը քույր ու եղբայր են: Մի անգամ նրանց մեջ վեճ է ծագել, թե որն է ուժեղ, և վճռել են փորձել: Քույր կրակը յուր ուժը ցույց տալու համար գնացել սարերի խոտը վառել է, իսկ եղբայր ջուրն էլ գնացել բոլորը հանգցրել է: Այն օրվանից նրանք միմյանցից բաժանվել են:

Կրակի պաշտման հետ կապված է **օճախի պաշտամունքը**: Հայտնի է, որ օճախ բառն ունի և գերդաստան իմաստը: «Մեծ օճախի տղա է», - սովորական գովասանքն է, որ տրվում է մեծատունների որդիներին: Մեծ օճախից աղջիկ ուզելը և կամ մեծ օճախին աղջիկ տալն ամեն մի ծնողի տենչանքն է կազմում: Երբ գնում են աղջիկ ուզելու, սովորաբար ասում են. «Մունք եկալ ընք մըն հափուռ մոխիր եր օնինք քու օճախես, տանինք մեր օճախին հետ խառնինք»:



Երբ մի ընտանիք գերդաստանից բաժանվում է, նոր շինած օճախը առաջին անգամ վառում է գերդաստանի մեծը նույն գերդաստանի օճախից բերած կրակով:

Երբ նոր հավեր են գնում, բռնում են օճախի վրա և ոտներին ջուր ածում, որպեսզի ընտանենան և չհեռանան այդ օճախից:

Գյուղի հիմնադրի կամ նշանավոր տան օճախը նվիրական է դառնում ոչ միայն այդ գերդաստանի, այլև ամբողջ գյուղի համար. հարսանյաց ժամանակ հարս և թագվոր եկեղեցուց դուրս գալով այդտեղ են գնում՝ համբուրելու: Եկեղեցի չեղած տեղում պսակը այդպիսի օճախի վրա է կատարվում¹:

Հարսը թե՛ յուր տնից դուրս գալիս և թե՛ սկեսրանց տուն մտնելիս համբուրում է օճախները²:

ՋՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ

Վարանդայում դեռևս մնացել է ջրի պաշտամունքը: Մեղք են համարում ջրի վրա թթել և կամ նախատինքով վերաբերվել: Նորահարսը, առաջին անգամ աղբյուրի մոտ գալով, զոհ է բերում նրան ցորեն: Կիրակի օրերը մոմեր են վառում սուրբ համարված աղբյուրների առաջ: Առողջություն հայցող հիվանդը մոմեր է վառում, աքաղաղներ զոհում, երկրպագում և աղոթում աղբյուրին:

Աղբյուրներից մի քանիսը ամենայն տեսակ, իսկ մյուսները որոշ հիվանդությունների բուժիչ սրբատեղիներ են համարվում: Առաջիններից նշանավոր են Շոշու գյուղում՝ ձորակի մեջ, գտնվողը, Վերին Սգնեքում՝ «Կանաչ խաչ» անուն աղբյուրը: Հղորդի գյուղում «Մոշ-աղբյուրը», որ յուր անունը ստացել է մոտի մոշի թփերից, և որի մոտ մի մեծ, պաշտվող կաղնի ծառ կա: Չանախչի գյուղում՝ «Մեծ աղբյուրը», որի վրա մի քանի անգամ լույս է իջել: Ներքին Թաղավարդում երկու թթենի ծառերի տակ պաղպաջող «Կարմիր աղբյուրը», որի մոտով անցնողը պարտավորված մի բան է դնում աղբյուրի քարի վրա և այնտեղից մի ուրիշ բան վերցնում:

Որպես մի որոշ հիվանդության բուժիչ՝ նշանավոր է Գյունեյ Ճարտարի «Դավաչիչակ» աղբյուրը: Ղալին խութի հսկայական ժայռերի գագաթից կաթիլ-կաթիլ ջուր է հոսում և հավաքվում ժայռի մեջ փորված մի նեղ և երկար փոսի մեջ: Մոլոքոր հիվանդություն ունեցողները գալիս այս ջրի առջև մի զույգ մոմ են վառում, երկու հավկիթ և երկու բևեռ (քոռամեխ) թաղում ջրի մոտ, աղոթում և այդ ջրով լողանում են: Եթե հիվանդը անձամբ չի կարող բարձրանալ այդտեղ, որովհետև սաստիկ զառիվայր է, գալիս են նրա համար ջուր տանելու: Սրանք էլ նույն կերպ վառում են մոմեր, թաղում հավկիթ և քոռամեխ, աղոթում և բացի դրանից, վերադառնալիս էլ բոլորովին ետ չեն նայում և ջրի ամանը երբեք գետնին չեն դնում:

Որպես բոր հիվանդության բուժիչ՝ նշանավոր է Հյունտո գյուղի ջրվեժը, որի տակ նստում լողանում են՝ նախապես մի զույգ մոմ վառելով ու աղոթելով:

Մյուս գրեթե բոլոր սուրբ համարված աղբյուրները բժշկում են ջերմ ու տենդ հիվանդությունը: Այդպիսիներից նշանավոր են. Հղորդի գյուղում՝ «Զրավոր» (Զորավոր) աղբյուրը, Փիրիճամալ գյուղում՝ «Ծարավաջուր» աղբյուրը, Շոշկա վանքի մոտ՝ կաթնանման աղբյուրը, Չանախչի գյուղում՝ «Հոռնաղբյուրը» և «Քոսին» աղբյուրը, Խաչմաչ գյուղում՝ «Թոխոպալ» աղբյուրը: Այս վերջինս բխում է մի ավերակ մատռան մեջ: Ավանդությունն ասում է, թե մի կին յուր երեխայի հետ եկած է եղել այս մատռուր՝ աղոթելու: Մոր աղոթքի ժամանակ երեխան շատ լաց է եղել և ջուր խնդրել: Մայրը աղոթքը չընդհատելու համար խնդրել է աստծուց, որ երեխայի ծարավը հագեցնե: Աստված լսել է նրա խնդիրը, և այդ աղբյուրը բխել է մատռան մեջ:

¹ Տե՛ս էջ 136-137

² Տե՛ս էջ 153



Առհասարակ գրեթե բոլոր սուրբ համարված աղբյուրների մոտ կան ծառեր, որոնք նվիրական են համարվում: Հիվանդները լողանալուց հետո իրենց վրայից մի կտոր են պատռում և փաթաթում ծառին՝ հուսալով իրենց հիվանդությունն այդ շորի հետ միասին թողնել այդ ծառի մոտ: Մի քանիսի մոտ էլ, ինչպես Փիրիճամալինը, ծառ չկա: Այդպիսի դեպքում հանդերձի մի կտոր կապում են մի փոքրիկ քարի վրա և դնում աղբյուրի գլխին:

Իսկ վերջին՝ Թաղավարդի «Շիշմա» (ընտիր) աղբյուրի մոտով անցնողը և կամ ջուր խմողը անպայման մի քար է ձգում աղբյուրի գլխին՝ հավատացած լինելով, որ եթե այդ չանե, ինքը կամ ազգականներից մինը կմեռնի:

ԾԱՌԵՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ

Վարանդայում սաստիկ տարածված է ծառերի մեծարանքը, համարյա բոլոր գյուղերում կան մի կամ մի քանի ծառեր, որ սուրբ են համարվում, որոնց առաջ մոմեր են վառում, աքաղաղ և կամ ոչխար մատաղում, նրանց տերևներից գուշակություններ անում: Շատ մեծ մեղք է համարվում այդ սրբազան ծառերը և կամ նրանց ճյուղերը կտորտելը, մեղանչողը անմիջապես պատժվում է: Այսպես, պատմում են, թե մի մարդ սրանից 40 տարի առաջ կտրել է Սարիբեկի ծառից մի ճյուղ, որի պատճառով և անմիջապես հիվանդացել, մեհիճ է ընկել: Նրա հիվանդությունը մինչև այժմ էլ տևում է. նա այժմ պառկած է մի ջախպի մեջ: Կինը միշտ հսկում է նրա վրա և ջախպի կողքից կապած մի գդալով շուտ-շուտ կերակուր ածում նրա բերանը: Այժմ ամեն տարի մի անգամ նրան ուխտ են տանում Սարիբեկ:

Այս ծառերի ճյուղերը ծածկված են բազմաթիվ գույնզգույն շորերի կտորներով, որ ուխտավորները կապում են իրենց հիվանդությունն էլ դրանց հետ միասին այստեղ թողնելու հույսով:

Երբ ուզում են գուշակություններ անել, առավելապես աղջիկները ճլորթի (ճինճի) են ձգում այդ սրբազան ծառերի վրա, ինչպես, օրինակ, շատ հաճախ անում են Նոր Շեն գյուղում Սաղունց կաղնու վրա և սկսում ճոճալ: Մի որոշ բան մտները դնելով՝ նրանք լարում են իրենց բոլոր ուժը և ճլորթիով բարձրանալով՝ աշխատում մի տերև կտրել և իրենց հետ բերել (պաշար բերել): Եթե հաջողում են, դա ապացույց է, որ իրենց մտադրած բանը կատարվելու է, լավ է և այլն, իսկ եթե չեն հաջողում, նշանակում է, թե չպիտի կատարվի, լավ չէ և այլն:

Այսպիսի ծառերից մի քանիսը պաշտվում են որպես ամենայն տեսակ հիվանդությունների բժշկող և ամեն տեսակ խնդիրներ կատարող, իսկ մյուսները՝ որպես մի որոշ հիվանդության բժշկող և կամ մի որոշ գորություն ունեցող:

Առաջին տեսակի ծառերից նշանավոր են.

Ա. Մխտորաշեն գյուղի այգիների մոտ գտնվող չինարի ծառը, որի շրջապատը 25 մետր է: Մրա բունը բոլորովին դատարկ է, և տասնյակ մարդիկ պաշտպանվում են դրա մեջ անձրևի և ուրիշ ժամանակ: Առավելապես Համբարձման օրը շրջակա գյուղերից մեծ բազմություն է գալիս այստեղ, մոմեր վառում և կաթով ճաշ (կաթնապուր) եփում, բաժանում իբրև մատաղ:

Բ. Վերին Թաղավարդ գյուղից արևմտահարավ անտառապատ բլրի վրա գտնվող «Պըրևաճառ» (բարևաճառ) ուխտատեղու ծառերը:

Գ. Սարիբեկի երեք հաստաբուն թեղի ծառերը:

Դ. Հին Դրախտիկից հյուսիս՝ մի բլրակի վրա, գտնվող «Կախան» ուխտատեղու ծառերը:

Ե. Գյունեյ ճարտար գյուղի «Կոհակ» կամ «Հակովիկ» ուխտատեղու ճապկի ծառերը:

Զ. Հին Քյաթուկ գյուղի Գիզավոր (գորավոր) ուխտատեղու երկու ահագին կաղնու ծառերը:

Է. Հարավ գյուղի «Զրավոր» (գորավոր) անունով հինավուրց կաղնին:



Ը. Նույն գյուղի հարավային կողմում մի վերստ հեռավորությամբ «Ջամալի խաչ» անունով թեղի, հացի, կաղնու ծառերը:

Թ. Ղավախան գյուղի թեղի և ընկույզի ահագին ծառերը:

Ժ. Սղնախ գյուղի «Խնձորախաչ» կաղնին: Սրա մասին պատմում են, թե մի ժամանակ խնձորենի է եղել: Մի օր մի թուրք ճիպոտով խփել է, որ խնձորները թափե, իսկույն նեթ կաղնու է փոխարկվել:

ԺԱ. Միրիշալու գյուղի տնճրի ծառը, որ մի բունի վրա բուսած չորս ահագին ծառեր են: Պատմում են, թե Սուսանենց տնից մինը կտրել է այս ճյուղերից մինը և անմիջապես մեռել: Նրա տունն էլ կամաց-կամաց քանդվել է, և սերունդը ոչնչացել: Եվ այժմ գյուղի կանայք անհծելիս ասում են. «Սուսանենց օճախի օյինը գա գլխուտ»:

ԺԲ. Ավդուր գյուղի արևմտահարավային կողմում՝ բլրակի վրա, «Մաթիկ բաբա» կոչված կաղնի և այլ ծառերը:

Այստեղ ամեն մի անցորդ դնում է յուր ձեռնափայտը մի խոռոչավոր կաղնու մեջ՝ հուսալով փայտի հետ յուր ցավն էլ այնտեղ թողնելու: Ջոհ մատուցողներն զործ են ածում այդ փայտերը մատաղներն եփելու:

ԺԳ. Նույն գյուղում՝ մի ուրիշ բլրակի վրա, գտնվող «Ծառեխ» անունով ուխտատեղու կաղնու, բոխու և այլ ծառերը:

ԺԴ. Նոր Շենի Սաղունց կաղնին:

ԺԵ. Գիշի գյուղի «Ոսկի խաչ» անուն ահագին կաղնին:

ԺԶ. Գյունեյ Ճարտարի Շմանեքի մոտի թիթեռնը ծառը: Ասում են, թե քահանան կտրել է դրա մոտ եղած մյուս ծառը, որի պատճառով և հիվանդացել և երեք օրից հետո մեռել է:

ԺԷ. Սզնեք գյուղի «Կաղնի խաչը»: Սա մի ահագին կաղնի է, որի մոտ մի խաչքար կա:

ԺԸ. Նույն գյուղի «Կանաչ խաչը»: Սա էլ մի քարակույտ է՝ շրջապատված ընկուզենի և ուռի ծառերով:

ԻԹ. Դոնավարգ գյուղի «Խաչին հարթ» անուն սզնի ծառը և այլն:

Միմիայն մի որոշ հիվանդության բժշկող և կամ մի որոշ շնորհք սովող սուրբ ծառերից նշանավոր են հետևյալները.

Սարիբեկում կա մի հարյուրամյա թեղի ծառ, որի բնի մեջ առիշեղ 1/2 մետր երկարության մի նեղ անցք է ձգվում: Մկնատամ ունեցողները, մոմեր վառելով ծառի առջև, մի ճյուղի վրա շոր են փաթաթում, անցկացնում անցքի մեջ և ապա հանում և հյուրը քսում մկնատամին: Ասում են, թե անմիջապես լավանում է:

Քերթ գյուղի մոտ կան չորս ահագին կաղնիներ, որոնց բնի հողից վերցնում քսում են երեսներին, որ մկնատամն անցնի: Սրա ուխտի օրը Ավագ չորեքշաբթի օրն է, երբ բազմաթիվ մոմեր են վառում և մատաղներ կտրում:

Սարգսաշենի մոտ մի քրլըվերդի ծառ կա, որ կոչվում է «Ըխտըլախագի Խաչ»: Հագողները գալիս են, այս ծառի առաջ մոմեր են վառում և բևեռներ գամում ծառին, շորի կտորներ կապում, որ այլևս չհազան:

Դոնավարգ գյուղում կա մի խաչքար՝ շրջապատված կաղնի ծառերով: Այս տեղը կոչվում է «Գյորդնուկախաչ» և այստեղից գալիս են ձեռների վրա «գորդնուկ» ունեցողները՝ բժշկություն հայցելու:

Խաչմաչ գյուղի հանդեպ մի բլրակի վրա գտնվում է «Հարևա եղցի» անունով մի փոքրիկ մատրան ավերակ, ուր կան վեց ընկույզի և թեղի ծառեր: Սա բժշկություն է տալիս հողացավի և մեջքացավի: Միևնույն ժամանակ ամեն մի անցորդ նախ ուխտ է անում այստեղ և ապա անցնում:



Մինը պատմում էր, թե մի անգամ հարբած լինելով՝ անցել է այդ տեղի մոտով և չի համբուրել, տուն հասնելուն պես վիզը ծռվել է, և միայն երկրորդ օրը, երբ մի աքաղաղ է գոհել այդ ուխտատեղուն, ուղղվել է:

Հացի գյուղում «Որդոտեն» (որդերի) խաչ» անունով մի ահագին կաղնի կա, որ բժշկություն է տալիս ջերմ ու տենդ հիվանդության:

Փիրիճամալ գյուղի «Զրավար» (գորավոր) անունով խոռոչավոր ծառը և Նախիջևանիկի «Քամու խաչ» անուն բարձր ծառերը ռևմատիզմի բժշկող են:

Գիշի գյուղի մոտ էլ կա Բըբըջամալ կոչված ուխտատեղին, որ մի մատրան հիմնահատակ ավերակ է՝ պատած թքեռն և թեղի ծառերով: Շատ լաց լինող երեխաներին տանում այդ ծառի տակ պառկեցնում և մի քար դնում են փորին ու մոմեր վառում ծառերի առաջ, որ երեխան այլևս շատ լաց չլինի:

Նոր Շենում մի պոչնի ծառ կա, որի բնի մեջ մի ծակ է գոյացած: Նախապես մոմեր վառելով՝ լղար երեխաներին անց են կացնում այդ ծակով, որ գիրանան:

Եմեջջան գյուղում գտնվում է «Ջյարկյա մարագ» անունով ուխտատեղին, որ մի շարք մտորների տեղեր են, մի քանի խաչքարեր: Մրանց մոտ կան շատ ծառեր, որոնց ուխտ են գալիս խուլ մարդիկ՝ բժշկություն հայցելու:

Նախիջևանիկում մի նահատակի գերեզման կա՝ խաչքարերով և ծառերով շրջապատված, ուր բերում են խելագարներին՝ բժշկություն հայցելու:

Դոնավարգ գյուղի հանդեպ՝ մի բլրակի վրա, գտնվում է մի փոքրիկ կաղնի, որ կոչվում է «Մատաղախուտ»: Այստեղ այս կաղնու գոհեր են մատուցանում, մանավանդ երբ մորեխ է գալիս: Ասում են, թե մորեխը գալիս այս կաղնու վրա հանգստանում է, և երբ մատաղ են կտրում, ուտում և անմիջապես հեռանում է: Մատաղախուտի մոտ կա մի հին ամրոցի ավերակ, որ տեղացիները «Կռապաշտի դալա» են կոչում: Ավանդաբար ասում են, թե այստեղ բնակվող կռապաշտներն էլ այդ մատաղախուտին գոհեր են մատուցելիս եղել:

Շոշկա վանքում կան հինավուրց ծառեր, ուր բերում են թե՛ հիվանդ և թե՛ առողջ անասուններ, երեք անգամ պտտեցնում ծառերի և վանքի շուրջը և մահակը կտտրում, որպեսզի հիվանդ անասունները առողջանան, իսկ առողջները պահպանվեն հիվանդանալուց:

Դոնավարգ գյուղի արևելյան կողմը կա մի ճապկի ծառ, որ շատ բարձր է: Հիվանդ անասուններին բերում երեք անգամ պտտեցնում են այս ծառի շուրջը և մահակը կտտրում ծառի տակ, որով և անասունի հիվանդությունը այդ կտտրված մահակի հետ մնում է այդտեղ, ու անասունը լավանում:

Նույն գյուղում կա և «Տըվըրախաչ» անուն ուխտատեղին, որ մի խաչքար է՝ շրջապատված բոխի ու տանձի ծառերով: Ամուլ կովերին տանում են այնտեղ, որ ծնեն:

Սուրբ համարված ծառերը չորանալուց հետո էլ ժողովրդի համար նվիրական են մնում: Ոչ ոք չի կտրտում, վառում և կամ ուրիշ տեղ տանում այդ փայտերը, այլ շարունակում են մոմեր վառել և աղոթել դրանց առաջ: Եվ երբ սկսում է փտել, փոշին ջրի մեջ են ածում և խմում կամ քսում գորտնուկի (ձեռի հիվանդություն) վրա, որ առողջանա: Այսպիսի փոշին «խնոթուն» է կոչվում:

Այսպիսի ծառերից նշանավոր են Սգնեք գյուղի կաղնին, Գյունեյ Ճարտարի օձխի մոտինը և այլն:

Մի քանի ծառեր էլ, ինչպես և մի քանի քարեր, պաշտվում են լոկ այն պատճառով, որ կայծակի հարված են ստացել: Ժողովուրդը հավատում է, որ անձրև կամ կարկուտ գալիս քաջքերը պաշտպանվում են ծառերի կամ քարերի տակ, իսկ հրեշտակներն իրենց ձեռքի գավազանով՝



կայծակով, խփում են նրանց և հալածում այնտեղից՝ միանգամայն սրբելով և ծառը կամ քարը: Այսպիսի ծառերից հիշենք օրինակ Հարավ գյուղի կենտրոնում՝ ձորակի մեջ, գտնվող կաղնին, Խաչմաչ գյուղում՝ Հարևան եղջու ընկուզենին և այլն:

Մի քանի բույսերի և ծաղիկների մասին էլ կան հետևյալ ավանդությունները.

Բամբակ. Աստված մարդուն կավից շինելուց հետո կավոտ ձեռքերն իրար է քսել և կավի մնացորդները երկիր թափել, որից բամբակ է բուսել:

Խաղող. Խաղողը առաջացել է Նոյ Նահապետի մատուցած գոհի ոսկորներից՝ գետնի մեջ թաղելուց հետո:

Վարդ և մանուշակ. Վարդն ու մանուշակը քույր ու եղբայր են, որ միմյանց միշտ կարոտ են մնում: Եթե մինը կարողանա պահել մանուշակին և ցույց տալ քրոջը, ինչ որ խնդրե, անմիջապես կկատարվի:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

ԹՈՂՈՒՆՆԵՐ

Ծիծեռնակ. Վարանդայում թռչուններից ամենից ավելի ծիծեռնակն է պաշտվում: Շատ մեծ մեղք է համարվում նրան սպանել և կամ նրա բունը քանդել: Ինձ գանգատվում էր մի մարդ, թե ուզում է տունը քանդել, նորոգել, բայց չի համարձակվում, որովհետև տան հետ միասին պիտի քանդվի և ծիծեռնակի բույնը: Գանգատվողը պնդում էր, թե յուր հարևանի տունը հրդեհ էր ընկել և բոլոր երեխաներին այրել, որովհետև տան երիտասարդներից մինը անխոհեմություն էր ունեցել ծիծեռնակի բույնը քանդելու:

Մի կին էլ գանգատվում էր, թե ծիծեռնակը բույնը շինել է օձախի անմիջապես գլխին, այնպես, որ շատ անգամ կեղտոտում է կերակուրները: Որքան և անախորժ էր այս բանը տնեցիներին, այնուամենայնիվ, նրանք չէին համարձակվում քանդելու բույնը:

Հավատացնում են, որ շուշեցի Սեյրանենց Սահակը, մեղք չհամարելով ծիծեռնակին վնաս հասցնել, մի անգամ բռնել է մի ծիծեռնակ և լեզուն կտրել: Եվ այս է եղել պատճառը, որ նրա հինգ որդին էլ համր են ծնվել:

Երբ առաջին անգամ գալիս են ծիծեռնակները, մարդիկ և կանայք, նրանց նայելով, երեսներին խաչ են հանում, և առհասարակ, երբ նրանք ճովողում են, ասում են, թե սաղմոս են քաղում, ժամ են ասում, օրհնում են մեզ և այլն:

Այսպես, պաշտելու մասին ասում են, թե մի անգամ խայթող սողունները հավաքվել են և խորհուրդ արել, թե որ կենդանու արյունն ամենից քաղցր է, որ առավելապես նրան խայթեն: Երկար վիճաբանությունից հետո մոծակին ուղարկում են, որ գնա բոլորի արյունն էլ փորձե և ապա իրենց տեղեկացնե: Մա գնում բոլորին խայթում և մարդու արյունն ամենից քաղցր է գտնում: Երբ վերադառնում է զեկուցումն անելու, ծիծեռնակն, իմանալով այդ, հարձակում է վրան և սպանում:

Մի ուրիշ ավանդություն էլ ասում է.

Մուկը, ապաստան գտնելով Նոյի տապանում, կրծեց և ծակեց տապանը: Ջուրը սկսվեց ներս լցվել: Նոյը, այս տեսնելով, բարկացավ մկան վրա, որը գնաց, մի անկյունում թաք կացավ: Հետո Նոյն առաջարկեց կենդանիներին, որ փակեն ծակը, սակայն ոչ ոք չկարողացավ: Վերջապես օձը ոլորվելով տարածվեց ծակի վրա և ծածկեց այն: Երբ ջրհեղեղը անցավ, Նոյն առաջարկեց օձին վարձատրություն խնդրել մատուցած ծառայության համար, և սա, հանելով յուր լեզուն, մարդու



արյունն ուզեց: Այդ ժամանակ ծիծեռնակը, որ Նոյի ոտի վրա նստած էր, հարձակվեց և օձի լեզուն կծեց: Եվ այս է պատճառը, որ դեռ այժմ էլ օձի լեզուն միջից կտրված է: Օձն էլ իսկույն հարձակվեց ծիծեռնակի վրա, սակայն կարողացավ միայն նրա պոչից կծել, ուստի և նրա պոչը երկու մասի բաժանվեց: Օձի խայթած տեղից երկու կաթ արյուն ընկավ. մինը՝ Նոյի վրա, որ անմիջապես ոջիլի փոխարկվեց, մյուսն էլ՝ գետնին, որ լու դարձավ և թռավ:

Աղավնի. Սա էլ ծիծեռնակի պես, բայց ոչ նրան հավասար, պաշտվում է: Սրան ևս չեն սպանում և կամ վնաս հասցնում: Միայն թե սրա մասին մի առանձին ավանդություն չի պատմվում, տարածված են միայն ս. գրքի մեջ պատմվածները:

Կաչաղակ. Պաշտվող թռչուններից է և կաչաղակը, որի մասին պատմում են, թե մի անգամ սա, մի պառավի տան գլխին նստած, ավետում է նրան, թե որդին օտարությունից գալիս է: Պառավն, առանց հասկանալու նրա ավետիքը, մի կտոր հաց է ձգում նրան: Նա իսկույն տանում է այդ հացը և տալիս որդուն, որ սաստիկ քաղցած է լինում: Հետո վերադառնալով՝ նույն բանն է ավետում և մի կտոր հաց ևս ստանալով՝ խեղճ որդուն տանում: Այս բանը մի քանի անգամ կրկնվում է, մինչև որ պառավը ձանձրանալով մի քար է ձգում դեպի կաչաղակը: Սա էլ վերցնում է այդ և տանում ձգում որդու գլխին: Որդին իսկույն ևեթ մեռնում է: Պառավը գալիս է մեռած որդու մոտ և ճանաչում յուր ձգած քարը: Այնուհետև այլևս քար չեն ձգում կաչաղակին, այլ միշտ հաց են տալիս ու խնդրում. *«Բարին մեզ, չարը թշնամուն»:*

Պատմում են, թե մի անգամ մի գյուղացի մի կաչաղակի ոտներից մի քիչ հարդ է կապել և կրակ տալով՝ բաց թողել: Խեղճ թռչունն իսկույն այրվել է: Ուղիղ մի տարուց հետո այդ միևնույն գյուղացու փոքրիկ աղջիկը յուր տատի տանը միայնակ եղած միջոցին շորերը վառվում են, և մինչդեռ նա վազում է տուն, կրակը լափում է նրան: Գյուղացին նոր զգում է յուր արած մեղքը և կրած պատիժը:

Թռչուններ էլ կան, որոնք թեև չեն պաշտվում, բայց որոնց մասին կան հետևյալ ավանդությունները.

Կուկու (կկու). Մի հարս ծառերից մի ճոճք է կապում, դնում յուր միակ երեխային մեջը և ինքը գնում քաղհան անում: Երբ մի քիչ հետո վերադառնում է, երեխային այլևս ճոճքի մեջ չի գտնում: Ցավից և սկեսուրի վախից թռչուն է դառնում և կուկու¹ կանչելով պտրում յուր երեխային:

Հուպուպ կամ Սանրակապ (Հոպ-հոպ). Սա մի հարս է եղել, որ մի անգամ թողել է խմորը կիսատ հունցած և սկսել է մագերը սանրել: Հանկարծ կեսուրը վրա է հասել, և սա ամոթից ու վախից թռչուն է դառել՝ սանրը գլխին, և թռել:

Կաքավ. Սա ժամանակով մի հարս է եղել: Մի օր, երբ սա խմոր է հունցել, սկեսուրը բարկացել է վրան, թե ինչու է պինդ հունցել. սա էլ դիմադարձություն է արել, ասելով՝ թե կակուղ է: Սկեսուրը բարկանալով անիծում է հարսին, որ իսկույն կաքավ է դառնում: Բայց մինչև այսօր էլ նա դիմադարձություն է անում սկեսրոջը՝ անդադար կրկնելով, թե *«Կակուղ ա, կակուղ ա»:*

Բուլբուլ. Աստված Ադամին ստեղծելուց հետո, երբ տեսավ, որ մենակ տխուր է, ասաց նրան, որ յուր համար մի զրուցընկեր ընտրի, և նա ընտրեց բուլբուլին: Սակայն այս անգամ էլ բուլբուլի ընկերը միայնակ մնաց և սկսեց տխրել, ուստի և աստված ստեղծեց Եվային և բլբուլին վերադարձրեց յուր ընկերոջը:

Պողողուս (բվեճ). Մի պառավ ունենում է Պողոս անունով մի հատիկ որդի: Մի անգամ եկեղեցուց վերադառնալով՝ պառավը երեխային մեռած է գտնում: Խփելով յուր գլխին՝ պառավը

¹ Կարանդայի գյուղերում երեխային կուկու են կանչում



խնդրում է աստծուց, որ իրեն թոչուն դարձնե, որ և կատարվում է: Եվ այդ օրվանից այդ խղճուկ պատավը կանչում է յուր որդուն՝ Պողոս, Պուղոս, այն էլ գիշերները, որովհետև ոչ հանգիստ և ոչ էլ քուն ունի:

Ագռավ. Երբ Կայենը սպանում է Աբելին, Ադամը սկզբում կարծում է, թե քնած է, բայց երբ հետո հաստատվում է, որ մեռած է, պատանում է նրան և թաղում: Աստված խղճում է Ադամին և ագռավին ուղարկում, որ ասե Աբելին, թե՝ պատանդ մաշիր, ե՛կ: Մա էլ գնում է և փոխանակ այդ ասում է, թե՝ տապանդ մաշիր, ե՛կ: Աստված բարկանում է ագռավի վրա և անիծում՝ ասելով, թե բերանդ դրած յոթը պատառից մինը միայն կուլ գնա: Եվ այդ է պատճառը, որ մարդիկ այդքան ատում են նրան, և որ ագռավը այդքան անկուշտ է, որովհետև յոթը պատառից միայն մեկն է կուլ գնում:

Անգղ. Անգղը ամենախմաստուն թոչունն է համարվում, որի համար և նրան չեն սպանում: Նա շատ երկար է ապրում և միայն 700 տարեկան ժամանակն է ձու ածում և ձագ հանում: Պատմում են, թե շատ հին ժամանակներում Հարուն-Ղարուն մի շատ հարուստ մարդ յուր ահագին հարստությունը բարձում է ոչխարների վրա և տանում մի սարի մեջ թաղում, ոչխարներին էլ մորթում: Սրա թոռը, իմանալով այդ հարստության մասին, կամենում է պտրել և գտնել, բայց միջոցները ի դերն են ելնում: Վերջապես մի իմաստուն մարդ խոստանում է անգղներից իմանալ տեղը և այս նպատակով շատ ոչխարներ մորթել տալիս ու տարածում մի դաշտի մեջ: Ինքն էլ մի քթոցի մեջ գումեշի ստամոքսով ծածկվելով՝ թաք է կենում: Իսկույն անգղներն ամեն կողմից հավաքվելով ուտում են ոչխարները, երբ կշտանում են, գնում իրենց պապին էլ են բերում, որ նա ևս կշտանա: Երբ սա ևս կշտանում է, թոռները հարցնում են նրան, թե ուրիշ անգամ էլ այդպես կշտացե՞լ էր:

Մեկ էլ, ասում է պապը, Հարուն-Ղարունի ժամանակն եմ կշտացել, երբ ոչխարներին բարձեց յուր ահագին հարստությունը և տարավ այ՛, այն սարի մեջ թաղեց և հետո էլ բոլոր ոչխարները կոտորեց:

Իմաստուն մարդն անմիջապես դուրս է գալիս քթոցից, գնում փորում ցույց տված սարը և գտնում անթիվ հարստությունը:

Հարուն-Ղարունի ժառանգն առաջարկում է իմաստունին՝ իբրև վարձատրություն, վերցնել հարստության մի մասը, սա էլ խնդրում է տալ այնքան, որքան կկշռի մի մարդու գանգ: Մակայն Հարուն-Ղարունի բոլոր հարստությունը չի կարողանում կշռել մի մեռելի գանգ: Այս ժամանակ իմաստունն ասում է, թե մի բուռ հող ածեք նժարի մյուս կողմը, և երբ ածում են, իսկույն կշռում է: *«Ահա, տեսնու՞մ եք,- ասում է իմաստունը,- մարդու աչքը միայն մի բուռ հողը կկշտացնի: Այդ անբավ հարստությունը բավական չեն նրան, ես էլ բացի այդ մի բուռն հողից, ուրիշ բան չեմ ուզում»:*

Չրչրթան կամ չափարծիտ. Մի անգամ աստված հրամայել է, թե ով շուտով ինձ մոտ գա, ես նրան թոչունների թագավոր կնշանակեմ: Արծիվը իսկույն սկսում է թռչել դեպի երկինք, բայց ճանապարհին հոգնում է և ուզում է հանգչել. այս ժամանակ չրչրթան կամ չափարծտին, որ նրա թևի տակ ապաստանած, հանգիստ բարձրանում էր, դուրս է թոչում և գնում աստծու մոտ:

- *Ինչո՞ւ ես եկել,-* հարցնում է աստված այս փոքրիկ թոչունին:
- *Եկել եմ, որ թոչունների թագավոր նշանակես ինձ,-* պատասխանում է չափարծտին:
- *Դեհ, որ այդպես է,-* ասում է աստված,- *գնա մի ճիպոտ բեր, որ ոչ կարճ լինի, ոչ երկար, ոչ ծուռ, ոչ ուղիղ:*

Այդ օրից սկսած՝ նա պտրում է չափարծների (ցանկապատ) տակ ճիպոտներ, և երբ գտնում է, ասում է. *«Չի՛, չի՛, ես չի՛, էն չի՛»:*



ՄԻՋԱՏՆԵՐ

Մեղու, շերամ և որդան կարմիր. Հոբ երանելին որդունքը վերցրել դրել է վերքերի վրա՝ ասելով. *«Կերեք, կերեք, աստված ձեզ կերակուր է տվել»*: Որդերն էլ իսկույն փոխարկվել են մեղվի, շերամի և որդան կարմիրի:

Աստծու կով. Աստծու կով կամ զատիկ կոչված միջատը (божья коровка) սուրբ են համարում և երբեք չեն սպանում:

Ձկներ. Ձկների մասին ընդհանրապես շատ քիչ ավանդություններ կան, երևի մեծ գետեր և լճեր, հետևապես և զանազան տեսակ ձկներ չլինելու պատճառով: Հայտնի են միայն մի քանիսը:

Օձաձուկը. Սա Գաբրիել հրեշտակի փողն է համարվում, որ հանկարծ ընկել է ջուրը: Ապացույց՝ որ նրա վրա կան 12 ծակի հետքեր: Այս ձկները խմբով են շրջում՝ սրնգի ձայն հանելով: Ձկնորսներն էլ ականջ են դնում, լսում սրնգի ձայնը և ուռկանը ձգում, որսում:

ՕՁԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Քյաթուկ լեռան վրա՝ «Միպտակ հյոլ» ուխտատեղում, և Մխտորաշենի ահագին չինարի ծառի մեջ կան մի-մի ահագին օձ: Ճանապարհորդները, անցնելով այդ ուխտատեղիների մոտով, գնում ուխտ են անում, մոմ վառում, աքաղաղներ գոհում, որպեսզի այդ օձերը պաշտպանեն իրենց, և ճանապարհորդության ժամանակ օձերը չխայթեն իրենց: Զոհաբերությունների ժամանակ այս օձերը դուրս են գալիս և հանգիստ կերպով շրջում՝ ոչ մի վնաս չպատճառելով ուխտավորներին:

Ուխտավորները վերցնում են այդ օձերի շապիկների (խորխի) կտորները և պահում գլխարկների մեջ: Երբ օձ է պատահում, հանում այդ շապիկի կտորը ցույց են տալիս: Հավատացնում են, թե օձը անմիջապես ետ է քաշվում և ոչ մի վնաս չի տալիս:

Ընդհանրապես հայերը ոչ մի վնաս չեն հասցնում լոկին (լորսոու), մինչդեռ օձերին աշխատում են սպանել:

Պատմում են, թե մի անգամ մի հայ մարդ մի կատաղած ուղտի վրա հրացան է արձակում, բայց հրացանը վրիպում է, և ուղտն ընկնում է հայի ետևից: Սա, շունչը կտրված, ցատկում է մի ցանկապատից և ընկնում է մի այգի: Այս միջոցին մի լոկ դուրս է պրծնում և խայթում, սպանում կատաղած ուղտին: Այնուհետև հայերը լոկին հայ են համարում և նրա արած լավության համար պաշտում:

Լոկը օձերի սափրիչն է համարվում, և երբ սկսում է սափրել մի օձի գլուխ, հանկարծ մի հարված է տալիս գլխին և անմիջապես սպանում:

Լոկին բարկացնելիս ասում է. *«Կհամբերեմ, չեմ կծի, բայց եթե կծեցի, միայն հավի պանիր պիտի քսեք, որ առողջանա»*: Եվ որովհետև հավի պանիր չկա, ուստի լոկը սրանով ուզում է ասել, թե յուր կծածը ոչնչով չի լավանա: Այս է պատճառը, որ վարանդացիները երբեք չեն չարչարում կամ սպանում լոկին, հաստատ գիտենալով, որ նա, իբրև հայ, իրենց չի կծի, այլ միայն թուրքին, իսկ իրենց կծում է օձը, որ թուրք է և թուրքերին չի կծում: Եվ այս է պատճառը, որ թովչիները (ովսունչի) միայն թուրքերն են լինում:

Քառասնի գյուղից փոքր-ինչ բարձր մի բարձր ժայռ կա, որ մի քիչ առիշտ կտրված է: Այդ կտրված, տափարակ տեղում՝ երկու թզենիների տակ, ապրում է մի ոսկեղջյուր օձ, որ երբեմն յուր լուսաճաճանդ գլուխը դուրս է ցցում ժայռից: Ասում են, որ եթե մինը կարողանա մի անդրավարտիք ձգել նրա գլխին, այն ժամանակ օձը կփախչի, բայց կթողնե յուր ոսկի եղջյուրները, որոնք իմաստություն կտան, ում մոտ էլ որ լինին:



Շատ տներ էլ օձեր կան, որ տան «դյովլաթ» համարվելով՝ ոչ մի հալածանքի չեն հանդիպում: Տնեցիները ամանով կաթ են տալիս նրանց, որ խմելուց հետո ոսկիներ են ձգում ամանի մեջ:

Պատմում են, թե մի մարդ միշտ կաթ է տվել յուր տան մի օձի և ամեն անգամ մի ոսկի ստացել: Մի անգամ այդ մարդը մի ուրիշ երկիր գնալու պատճառով որդուն է հանձնարարել օձին կաթ տալ: Որդին, տեսնելով օձի տված ոսկին, մտածում է սպանել նրան և միանգամից ստանալ նրա անթիվ ոսկիները: Հարվածը վրիպում է, օձի ազին կտրվում է, և սա խայթում է տղին, որ մի քիչ հետո մեռնում է:

Եվ երբ հայրը վերադառնում է, իմանում է ամեն ինչ և շատ ցավում: Մի ժամանակից հետո հայրը դուրս է հրավիրում օձին, դնում է նրա առաջ մի աման կաթ և առաջարկում հաշտվել և առաջվա պես շարունակել: Սակայն օձը մերժում է կաթը և ասում. *«Քանի որ ես տեսնում եմ իմ կտրված ազիս, և դու մտաբերում ես քո սպանված որդին, մենք չենք կարող բարեկամներ լինել»*: Այս ասելով՝ օձը բոլորովին հեռանում է, և կարճ միջոցում այս մարդը աղքատանում և թշվառանում:

ԿԱԹՆԱՍՈՒՆԵՐ

Այս կենդանիների պաշտամունքից բուն Վարանդայում մնացել են միայն կատվի վերաբերյալ մի քանի սնտոխապաշտություններ: Այսպես՝ կատուն սուրբ է համարվում, և նրան սպանողը յոթ եկեղեցի պիտի շինե, որ կարողանա այդ մեղքից ազատվել: Եվ եթե այդ չի կարող անել, մեղքից թեթևանալու համար գոնե մի խավար (ցորեն մաղելու մաղ) պիտի առնե, հատկապես դրկիցներին փոխ տալու:

Նրա մասին կան հետևյալ ավանդությունները.

Կատու. Ա. Քրիստոսին փշե պսակով չարչարելիս արցունքը հորդությամբ հոսում էր, և նա թաշկինակով սրբում էր: Մինը իլեց նրա ձեռքից թաշկինակը և գցեց աղբանոցը, ուր անմիջապես կատվի փոխարկվեց:

Բ. Մի անգամ Քրիստոս՝ իբր մի հասարակ մարդ, հյուր է լինում մի տան, մկները շատ նեղում են նրան և տնեցիներին: Այս ժամանակ նա ձգում է յուր թաշկինակը դեպի մկները, որ կատու դառնալով՝ բռնում է նրանց:

Վարանդացիները պատմում և ուխտ են գնում մի քանի կենդանիների պաշտման տեղեր, որոնք թեև Վարանդայում չեն գտնվում, սակայն նրան սահմանակից լինելով՝ այնքան էլ հեռու չեն:

Այսպիսի ուխտատեղիներից նշանավոր են.

Զանգեզուրի գավառում՝ Տաթև վանքի հանդիպակաց լեռնաշղթայի մեջ, գտնվում է Եզան ուխտատեղին, կամ ինչպես սովորաբար թուրքերեն կոչում են «Օկյուզ գիարատ»-ը: Սա քարերի մի ահագին կույտ է, որ օր ավուր ավելանում է, որովհետև ամեն մի անցորդ պարտավորված մի քար է բերում ձգում այդ կույտի վրա: Ավանդությունն ասում է, թե այդտեղ թաղված է մի եզ, որ ինքնակամ և առանց մարդու ճիպտոտի այդտեղի քարհանքից ահագին քանակությամբ քար է կրել՝ Տաթևի եկեղեցին շինելու:

Այս ուխտատեղին նվիրական է ինչպես հայերի, այնպես և թուրքերի համար:

Երբ կենդանիների մեջ տարափոխիկ հիվանդություններ են տարածվում, թե՛ հայերը և թե՛ թուրքերը բերում են կենդանիներ և այդ քարակույտի շուրջը երեք անգամ պտտեցնում: Եվ եթե հիվանդության սաստկության պատճառով կենդանիներին բերել չեն կարող, գալիս, այդ քարակույտի տակից մի բուռ հող են հանում և տանում, աղի հետ խառնում, տալիս հիվանդ կենդանուն: Շատ դեպքեր են պատմում, երբ կենդանիները անմիջապես լավացել են:



Խաչենի Պոկսաբերկ հինավուրց եկեղեցու մոտ թաղված է մի արջ: Ավանդությունն ասում է, թե այդ եկեղեցին շինելիս մի արջ շարունակ քար է կրել շրջակայքից: Երբ եկեղեցին ավարտել են, պակասել է միայն մի մեծ քար, և այս արջը երկար որոնելուց հետո շատ հեռվում գտել է և շալակած բերել: Երբ վայր է դրել քարը, վարպետը տեսել է, որ թռկը, կտրելով արջի ուսերը, սաստիկ արյունոտվել է, վերցնում է թռկը և խփում եկեղեցու պատին: Դեռ մինչև այժմ էլ ցույց են տալիս այդ արյան հետքերը:

Հետո արջը օգնել է վարպետին՝ քարը յուր տեղը դնելու, և երբ ամեն ինչ ավարտել են, շունչը փչել է: Վարպետը մեծ ցավակցությամբ ամփոփել է նրա մարմինը եկեղեցու մոտ և վրան քարեր դարսել: Ուխտավորները մոմ են վառում այդ քարակույտի վրա և մատաղներ անում:

Արջ. Սրա մասին կա հետևյալ ավանդությունը.

Արջը ժամանակով մարդ ջրաղցպան է եղել: Երբ շատ գողություններ է արել, աստված բարկացել է վրան և արջ դարձրել: Եվ ապացույց սրան՝ երբ սպանում են արջին, սա, առաջին թաթերը միմյանց վրա դնելով, խաչում է:

Բոլոր կենդանիները և բույսերը լեզու ունեն և կարող են խոսել: Որպեսզի մարդիկ կարողանան նրանց հասկանալ, պետք է, որ Շահմար օձը յուր լեզուն քաշե մարդու բերանը: Այս բախտին արժանացել են Օվչի (որսորդ) Փիրումը և Լոխմանին:

ԼՈՒՍԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ

Արև և լուսին. Վարանդայում դեռ մինչև այժմ էլ ծերունիներ և պառավներ կան, որոնք պաշտում են արեգակ և լուսին: Շատ անգամ պատահում է, որ սրանք ծունր են չոքում նոր ծագող արեգակի և նոր նորոգ լուսնյակի առաջ և աղոթում նրանց այսպես. *«Աստծո ցնծուղն տված ըրիզնակ, այ՛ մորա նոր ըլած լուսնինկյա, իմ երեսս քո ոտանդ տակը, դու իմ խոխեքս պահես»* և այլն: Լուսնի նորին գրեթե բոլոր գյուղացիներն առաջին անգամ լուսնին նայելիս, մի քանիսը բախտավոր համարված երեխայի կամ մարդկանց երեսին են նայում՝ հուսալով, որ այդ ամիս բախտավոր կերպով կանցնեն, ուրիշները, դրամի վրա հայացք ձգելով, համբուրում և ճակատին են դնում՝ հուսալով շատ դրամ շահել այդ ամսում:

Արևով երդվիլը շատ սովորական է. *«Իմ արևը վկա, քու կանաչ արևդ վկա»:*

Միևի աստծու պաշտման մնացորդ՝ խոտի կամ փայտի կույտեր վառելու սովորությունները դեռ մինչև այժմ էլ շարունակվում է Վարանդայի գյուղերում, թեև քաղաքում արդեն վերջացել է:

Տյառնընդառաջի երեկոյին նշանված երիտասարդները ցրտնի ծառի ճյուղեր են բերում և դարսում եկեղեցու գավթում: Հետո եկեղեցու ջահից բերած մոմով վառում են այդ կույտը, ծուխի ուղղությունից գուշակություններ անում, նորահարսին, ինչպես և նորածին երեխային երեք անգամ պտտեցնում շուրջը: Երիտասարդները թոչում են կույտի վրայով, ուրիշները՝ պար բռնում շուրջը:

Արևի և լուսնի մասին կան հետևյալ ավանդությունները.

Ա. Ժողովուրդը լուսինն ու արևը քույր ու եղբայր է համարում: Մի օր քույր արևը ասել է, թե ինքը վախենում է գիշերը ման գալուց և ցերեկն էլ ամաչում է, երբ իրեն են նայում: Այդ ժամանակ եղբայր լուսինը պատասխանել է նրան, թե ինքը գիշերը կշրջի, թող ցերեկը նա պտտվի, միայն վերցնի մի քանի թոփ ասեղ և խրի իրեն նայողի աչքերը: Եվ այդպես էլ եղել է: Արևը, նստած մի առյուծի մեջքին, սլանում է երկնակամարով և երեկոյան գնում հանգստանում մոր գրկում: Առյուծը յուր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից:



Բ. Մի օր լուսնի և արևի մայրը խմոր էր հունցում, որդին՝ լուսինը, գալիս և խնդրում է, որ իրեն համար էլ մի բլիթ շինի, մայրը բարկանում և խմորոտ ձեռքով խփում է երեսին: Դեռ մինչև այժմ էլ լուսնի վրա երևում են նրա խմորոտ մատների հետքերը:

Գ. Մի կին յուր որդու համար գուլպա էր գործում: Երբ քիչ էր մնացել վերջացնելու, արեգակը ուզում էր մայր մտնի, ուստի մայրը ասաց որդուն, թե՝ թող մնա, վաղը կվերջացնեմ: Որդին աղաչում էր մորը, որ այդ օրը վերջացնի: Այդ դեպքում, ասում է մայրը, աղաչիր արեգակին, որ մի քիչ սպասի: Երեխան դառնում է արեգակին և ասում. «Ձան արեգակ, մի քիչ սպասիր, մայրս վերջացնի զիզի գուլպան, հագնեմ»: Արեգակը սպասում է, և երբ երեկոյան ուշ մայր է մտնում, մայրը հարցնում է, թե ինչու այնքան ուշացավ:

Արեգակը պատասխանում է, թե մի երեխա խնդրեց իրեն սպասել, մինչև որ մայրը կվերջացնեմ նրա գուլպան: Արեգակի մայրը բարկանում է և անհծում է երեխային, որ ցերեկը մեռնի և գիշերը կենդանանա, նրա մայրն էլ երբեք չվերջացնի գուլպան: Եվ այնուհետև այս երեխան ցերեկները մեռած է լինում, իսկ գիշերները կենդանանում և գալիս է մոր մոտ, խնդրում յուր զիզի գուլպան: Մակայն մայրը երբեք վերջացրած չէ լինում, որովհետև գործածը ինքն իրեն քանդվում է, և խեղճ երեխան ոտաբոբիկ թափառում է:

Դ. Մի հարսնացու, ցանկանալով անշուշտ ավարտել յուր փեսացուի գուլպան, խնդրել է արեգակից մի քիչ էլ սպասել: Բարի արեգակը կատարել է հարսնացուի խնդիրը և ուշ մայր մտել: Մակայն արեգակի չար մայրը, հարցնելով նրա ուշանալու պատճառը, բարկացել է և անհծել հարսնացուին՝ ասելով. «Քար դառնա նա»: Իսկույն խեղճ հարսնացուն քար է դարձել: Եվ այսօր էլ Նինգի գյուղի մոտ ցույց են տալիս այդ քար դարձած հարսնացուն:

Խավարում. Արևի և լուսնի խավարումը բացատրում են այսպես. քաջքերը կամ սատանաները, կտրելով նրանց ճանապարհը, ուզում են վիրավորել նրանց, իսկ նրանք պաշտպանվում են և վերջ ի վերջո հաղթում:

Խավարման ժամանակ մեծ սուգ է տիրում գյուղերում, երիտասարդները հրացաններ են արձակում դեպի վեր՝ մտածելով, թե կարող են քաջքերին խփել, ուրիշները, պղնձյա ամաններ ծեծելով և զանգերը խփելով, ահագին աղմուկ են բարձրացնում դարձյալ քաջքերին փախցնելու նպատակով: Իսկ կանանցից շատերը լալիս են և՛ ցավից, և՛ երկյուղից:

Օր. Երկնքում կա երեք թռչուն: Երբ սրանցից առաջինը ձայն է հանում, բացվում է առավոտը, երկրորդի ձայնելիս դառնում է կեսօր, իսկ երբ երրորդ թռչունն է ձայնում, մութը պատում է աշխարհը:

Աստղեր. Սրանցից ամեն մեկը պատկանում է մի մարդու: Բարեգործ և առաքինի մարդունը պայծառ է լինում, չարագործ և անբարոյականինը՝ աղոտ: Երբ աստղը վայր է ընկնում և կամ փոխում է յուր ընթացքը, մարդը մեռնում է:

Գիսավոր աստղեր երևալիս ասում են, թե մեծ աղետներ են պատահելու, թագավոր է մեռնելու և այլն:

Հարդագողի ճանապարհի մասին պատմում են, թե մի մարդագայլ հարս, լվանալով իրենց հյուրի ոտները, շատ փափվիկ է գտել, և երբ բոլորը քնել են, գնացել է, որ ուտի, սակայն հյուրը դաշույնի մի հարված է տվել նրա ծծին: Իսկույն կաթը ցայտել է երկինք և մինչև այժմ էլ յուր հետքը թողել:

Ուրիշներն էլ հավատացնում են, թե դա աստծու արքայության ճանապարհն է: Շատերն էլ պատմում են, թե մինը (չգիտեն, թե ով) դարման է գողացել և ճանապարհին վայր թափել, որի հետքը մնացել է ու այժմ էլ կոչվում է «**դերմանհղի**»:



Ամպ. Սաստիկ սպիտակ և առանձին կանգնած ամպ տեսնելիս ասում են, թե դա Աստծու միրուքն է:

Իսկ եթե այս ամպը շատ փոքր է, ասում են՝ դարմանագող է, որովհետև դա նշան է, որ քամի պիտի լինի և կալերից դարման գողանա:

Որոտման մասին ասում են, իբր թե մի պառավ, մի պարկի մեջ քարեր ածած, քաշ է տալիս, որից և առաջանում է գոռգոռոց: Ոմանք էլ կարծում են, թե դա առաջանում է «ըլըկոծն» քամու սաստիկ շարժումից:

Առաջին որոտման ժամանակ գյուղացիները երկաթ են կծում և քարով իրենց գլխներին խփում, ասելով.

«Քըրըզլոխ, ըրկըթը կեռիկ», և այս այն նպատակով, որ այդ տարի կարկուտ չգա:

Որոտ. Մի բամբակե պառավ, նստած մի բամբակե ձիու վրա, ձեռին մի բամբակե մտրակ, քշում է երկնքով: Նրա ձիու ոտների տրոփունից առաջանում է որոտը:

Կայծակը հրեշտակների գավազանն է, որով խփում են սատանաներին: Ոմանք էլ կարծում են, թե երկու հրեշ կա, որ կռվում են միմյանց հետ սրերով, այս սրերի փայլից առաջանում է փայլակը, միմյանց ընդհարումից՝ կայծակն ու որոտը: Եվ կամ երկու վիթխարի գավազանները միմյանց հետ «դոչի են տալիս»՝ պոզերը միմյանց խփելով կռվում են, որոնց պոզերի ընդհարումից առաջանում է կայծակը:

Ուրիշներն էլ պնդում են, թե երկնքում մի պառավ մի թզուկ ծառա ունի, որ փայտ կոտրելիս կացինը քարին է դիպնում, որից և կայծակ է առաջանում:

Ծիածանը՝ տեղական բարբառով «կանաչ-կարմիրը», աստծու գոտին է համարվում: Նրանով գուշակություններ են անում, այսպես՝ եթե դեղին գույնը մյուսներից ավելի է, այդ նշան է, որ այդ տարին շատ հիվանդություններ պիտի լինի, երբ կանաչ գույնն է ավելի, դա ապացույց է, որ այդ տարի ցորենը առատ է լինելու:

Մի ավանդություն էլ ասում է, թե ծիածանն այն կանաչ-կարմիր թելն է, որ բերեց Գասպար թագավորը՝ իբրև կնքահայր Քրիստոսի պարանոցը կապելու:

Երկրաշարժի մասին հետևյալ կարծիքներն են տիրում.

Ա. Գետնի տակ ապրում է մի եղջերու, որի եղջյուրի վրա դրված է մի մեծ կաթսա՝ լի մի տեսակ հեղուկով: Երբ հեղուկը տաքանում է, կոտրում է կաթսան և կտորները խփում գետնին, որից և առաջանում է «ժածքը»:

Բ. Գետնի տակ կա մի եզ՝ պոչը դրած մեջքին, երբ շարժում է պոչը և խփում գետնին, երկրաշարժ է լինում:

Գ. Գետնի տակ մի ձուկ կա, երբ մեջքը քոր է գալիս, շարժվում է և յուր հետ շարժում երկիրը:

Դ. Մի հրեղեն քամի մտնում է երկրի մեջ և շարժում նրան:

Ե. «Ըլըկոծն» քամին մտնում է այն ջրի մեջ, որի վրա գտնվում է մեր աշխարհը, և ալեկոծում ջուրը: Ջրի ալեկոծությունից շարժվում է և մեր երկիրը:

ՔԱՋՔԵՐ ԵՎ ՄԱՏԱՆԱՆԵՐ

Դոնավարզի և Քառասնիի, ինչպես և Ագոխի և Թաղլարի միջև կան խոր ձորեր՝ սաղարթախիտ ծառերով ծածկված: Այս ձորերը կոչվում են «Քաջկաձոր» և լի են քաջքերով՝ սատանաներով:

Չանախչի գյուղում էլ՝ Կուսանաց անապատի մոտ, ահագին ժայռի մեջ, մի մեծ ճեղքվածք կա: Գյուղացիներն այդ ճեղքվածքը «Քաջքատուն» են կոչում և հավատում, թե քաջքերով լի է: Հազիվ է պատահում, որ գիշերները մարդիկ անց կենան այդ ժայռի մոտով:



Խոր համոզված լինելով, որ քաջքերը գույություն ունեն իրականապես, ժողովուրդը բազմաթիվ արկածներ է պատմում նրանց վերաբերությամբ, որոնցից առաջ ենք բերում միայն հետևյալները.

Ա. Դոնավարգ գյուղում Անանյանք նկատում են, որ երեկոները քաջքերը գալիս իրենց ձին հեծնում և սաստիկ այս ու այն կողմ են քշում, այնպես որ առավոտյան ձին սաստիկ հոգնած ու քրտնած է լինում: Միննույն ժամանակ հյուսում են ձիու մազերը և այնպես թողնում հեռանում: Մի երեկո կուպր են քսում ձիու վրա և առավոտ տեսնում են մի սև սատանա՝ կպած ձիուն: Իսկույն մի ասեղ են շուլալում նրա մարմնին և վայր առնում նրան: Յոթ տարի շարունակ աշխատեցնում են նրան, միայն միշտ իրեն ցանկացածի հակառակն են ասում, որովհետև քաջքերը միշտ մարդկանց հակառակ են գնում: Այսպես, օրինակ, երբ կամենում էին ասել, թե գնա ջուր բեր, ասում էին. «Մի գնա և ջուր մի բեր»: Իսկույն գնում և բերում էր: Յոթ տարին լրանալիս սատանան դառնում է դեպի Անանյանք և ասում. «Ինչ հիմար մարդիկ եք, յոթ տարի մնացի ձեզ մոտ, չհարցրիք, թե ինչու ջորին չի ծնում, որ ասեի»: Եվ իսկույն անհայտանում է:

Բ. Ղավախան գյուղի Ակոբջանը պատմում էր, թե մի օր մի սատանա խաբել է իրեն և տարել սատանաների տունը ցույց տվել: Այդտեղ, ասում է նա, եղել է մի գեղեցիկ մուշտակ, մի յաբա (երկժանի) և մի կույտ ածուխ: Երբ նա հետաքրքրվելով հարցրել է, թե ինչի համար են այդ բաները, սատանան պատասխանել է, թե մուշտակը նրա համար է, որ առավոտները ձգեն եկեղեցի գնացող ծերունիների վրա, որպեսզի տաքությունից թուլանան և եկեղեցի չգնան, յաբան՝ որ ձգեն չարը տեսնող և բարու ետևից գնացող երիտասարդների պարանոցը, իսկ ածուխը՝ քսեն իրենց ասածը ուրացողի երեսը:

Գ. Մի անգամ Քառասնի գյուղում մի «գուռնաչու» ձայն են տալիս, թե արի գնանք, հարսանիք կա: Սա վեր է կենում և առաջնորդի հետ գնում Քաջքաձորը: Մեկ էլ տեսնում է, որ մի հարսանիք եկավ, ինքն էլ սկսում է յուր գուռնան ածել: Քաջքերը երկար պարում են: Այս ժամանակ գուռնաչին նկատում է, որ կանանց հանդերձները յուր դրկից կանանց շորերին շատ նման են, կամացուկ մի քանիսից մի-մի կտոր կտրում է:

Երբ առավոտյան աքաղաղը կանչում է, բոլոր քաջքերն անհայտանում են, և ինքը մնում է այդ ձորում մեն մենակ: Գալիս է տուն, հանում կտորները և տանում դրացի կանանց շորերի հետ բռնեցնում, տեսնում է, որ իսկապես նրանցից է կտրված: Պատմում է դեպքը և խրատում, որ հանդերձների մեջ կամ նշխարք դնեն և կամ ասեղ շուլալեն, որ քաջքերը չկարողանան տանել հագնել:

Դ. Չանախչի գյուղում սրանից մոտ 50 տարի առաջ՝ մի գիշեր, մինը ձայն է տալիս Տեր-Հովհաննես քահանային, թե մինը հոգու հետ է, եկ ճար տուր: Նա էլ վեր է կենում և նրան հետևում: Սա տանում է Քաջքատան վերևը և այնտեղից վայր գլորելով՝ անհայտանում: Հավատացնում էին, թե դա Քաջքատան սատանաներից է եղել:

Ե. Մի մարդ, լսելով քահանայի քարոզներին, յուր հարստությունը բաժանել է աղքատներին՝ հուսալով մեկին հազար ստանալ: Երբ բոլորովին աղքատացել է, դիմել է նախ քահանային և ապա ասածուն՝ յուր բաժանածի հազարապատիկը խնդրելով, բայց երբ ոչինչ չի ստացել, ստրջացել և սատանային օգնության է կանչել: Սա իսկույն ներկայացել է նրան: Մարդը պատմել է եղելությունը և խնդրել նրան օգնել իրեն՝ քահանայից վրեժ առնելու: Սատանան ամենայն սիրով առաջարկում է մարդուն, թե ինքը ջորի կդառնա, թող տանի քահանային ծախս: Մարդը համաձայնում է, և սատանան իբրև ջորի ծախվում է քահանային: Սակայն մի երկու օրից հետո սատանա-ջորին մուկ է դառնում և ծակը մտնում: Քահանան ծախողից յուր դրամը ետ է պահանջում: Դիմում են դատավորին: Վերջինս, պատվելով քահանային, հրավիրում է յուր հետ ճաշելու: Այս միջոցին հանկարծ սատանա-ջորին երևում է քահանայի արգանակի մեջ, և



քահանան առանց այլապայության կոխում է ձեռքն արգանակի մեջ և աշխատում բռնել ջորու ականջից, ջորին փախչում մտնում է մյուսների պնակները, և քահանան, առանց տատանվելու, կոխում է ձեռքը այս պնակից այն պնակը: Երբ հարցնում են նրան այդպես անելու պատճառը, նա հանդիմանում է նրանց, թե չէ՞ն տեսնում ջորին, որ պնակից պնակ է վազում: Անմիջապես դատավորը հրամայում է կապկպել այդ քահանային և որպես խելագար՝ գժատուն ուղարկել:

Օրորոցագող. Երբեմնապես պատահում է, որ մայրերը երեխաներին ծիծ տալիս օրորոցի վրա ընկնում քնում են: Այսպիսի դեպքերում ծիծը ծածկում է երեխայի բերանն ու քիթը և խեղդում նրան:

Իրենց հանցանքը սատանաներին վերագրելով՝ մայրերը երևակայում են, թե օրորոցագող քաջքեր կան, որ գալիս երեխաներին տանում են: Եվ որպեսզի արգելեն նրանց երեխաներին մոտենալու, սրանց սնարի տակ նշխարք, պողպատ, հմայիլ են դնում, քնեցնելիս խաչակնքում և երեխայի վրա ասեղ շուլալում:

Սրանց մասին պատմում են, թե մի անգամ շոշեցի ջինդար (կախարդ) Ակոփին սատանաները տանում են սարը, ուր նա տեսնում է նրանց գլխավորին և մյուսներին՝ պար բռնած: Պարի տաքացած ժամանակ գլխավորը հրամայում է օրորոցագող քաջքին գնալ երեխա բերել: Սա գնում է և մի քիչ հետո, մի երեխա ձեռին, վերադառնում: «*Այս անգամ շատ պտրեցի,*» ասում է նա՝ տալով երեխան գլխավորին, - *մի երեխա խաչակնքված էր, մի ուրիշի բարձի տակ նշխարք կար, մի երրորդի վրա ասեղ էր շուլալված, միայն այս երեխան էր մեզ արժանի, որ վերցրի բերի*»: Այս ժամանակ գալիս են ուրիշ մի քանի քաջքեր էլ՝ բերելով իրենց հետ կանանց հանդերձներ: Իսկույն միմյանց ձեռքից խլիլելով՝ հագնում են այդ հանդերձները և շարունակում պարել: Պարի տաքացած միջոցին վերցնում են բերած երեխային և պարելով միմյանց ձգում: Վերջին ստացողը դժոխային ձայներ հանելով խփում է երեխային գետնին և սպանում: Այս իրարանցման ժամանակ կրակին դրված յուղը շուտ է գալիս և յուղոտում մի քանիսի հանդերձները:

Լուսաբացին, երբ սատանաները չքանում են, ջինդար Ակոփը գալիս է գյուղ և իմանում, որ յուր հարևանի հարսը «ծծով է արել» յուր երեխային և խեղդել, որի համար և նրան սաստիկ նախատում են: Անմիջապես գնում է նրանց մոտ, պատմում է երեկոյան անցքը, օրորոցագողի երեխային գողանալն ու սպանելը և յուր խոսքերին ապացույց բերում է այն, որ յուղը թափվել և յուղոտել է հանդերձները: Կանայք գնում նայում են իրենց հանդերձները և տեսնելով, որ հիրավի յուղոտվել են, հավատում են:

Ոչ միայն օրորոցագողերը տանում են երեխաներին, այլև պատահում է, որ «հյուրի-փերիները» իրենց երեխաները փոխում են սրանց հետ: Փոխվածներն սկսում են լղարիլ և շարունակ լաց են լինում: Այսպիսի դեպքերում տանում երեխային դնում են երկու գերեզմանի միջև և ասում. «*Իմը տար, քոնը բեր*»՝ հավատալով, որ «հյուրի-փերիները» կվերադարձնեն իրենց երեխային:

Ծաղիկ և Կարմրուկ. Ծաղիկն ու Կարմրուկը քույր ու եղբայր են, որոնց ման է ածում մի սպիտակահեր պառավ կին՝ աջ ձեռքով ծաղիկը, ձախով կարմրուկը (պտուկ) բռնած:

Երեխան ծաղկով կամ կարմրուկով հիվանդացած միջոցին մինչև առողջանալը ձեթի ճրագը վառ են պահում կամ մոմեր վառում, կիրակի պահում, առագաստ չեն մտնում, միս ներս չեն բերում և այլն:

Մարդագայլ. Առավելապես կանայք, բայց երբեմն էլ տղամարդիկ գիշերները գայլ են դառնում, գնում երեխաներ գողանում, ուտում և կամ նոր թաղած ննջեցյալները հանում, լափում: Սրանք ման են գալիս գայլերի հետ միասին, մարդ դառնում և տանում մորթին մի ապահով տեղ պահում՝ գիշերը նորից հագնելու և գայլ դառնալու:



Այս պատիժը նրանք ստանում են աստծուց՝ իրենց բազմաթիվ մեղքերի համար՝ ուտելով երկնքից թափված կարկտանման բանը, որ թափվում է հատկապես գայլերի համար: Ուտելուց հետո անմիջապես երկնքից մի գայլի մորթի է ընկնում ուտողի վրա, և սա իսկույն գայլ է դառնում:

Յոթ տարի գայլություն անելուց հետո գայլի մորթին ինքն իրեն անհայտանում է, և մարդը այլևս գայլ չի դառնում:

Պատմում են, թե երբ կարողացել են մորթին գտնել և կրակը ձգել, մարդը այլևս գայլ չի դարձել, սակայն միշտ մարդագայլերը ահագին խնամքով թաքցնում են իրենց մորթիները:

Առաջ բերենք սրանց մասին եղած ավանդություններից գոնե երկուսը.

Ա. Դռնավարգ գյուղում մի որսորդ գիշերը նկատում է, որ անտառի մեջ կրակ է արած, և մի կին միայնակ միս է խորովում: Կամացուկ առաջ գնալով՝ որսորդը բռնում է կնոջը ետևից, կապում ծառից և շուրջը պտրելով՝ գտնում է մի գայլի մորթի, որ անմիջապես կրակն է ձգում: Կինն ամեն ճիգ գործ է դնում մորթին ազատելու, բայց չի կարողանում: Առավոտյան որսորդը բերում է կնոջը Դռնավարգ, ուր նա խոստովանում է, թե ինքը նուխեցի է և իբրև մարդագայլ՝ եկել է այդ կողմերը: Անմիջապես իմացնում են ամուսնուն, որ գալիս և նվերներ տալով՝ տանում է կնոջը:

Բ. Մի չանախչեցի որսորդ անտառում գիշերած միջոցին տեսնում է, որ կարկտանման բան է թափվում երկնքից, և գայլերը հավաքում, ուտում են: Ինքն էլ վերցնում մինը ուտում է, երբ հանկարծ երկնքից մի գայլի մորթի է ընկնում վրան, և ինքն էլ գայլ դառնում ու գնում միանում գայլերին:

Այնուհետև յոթ տարի շարունակ գիշերները գայլ դառած թափառում է և լեշեր ուտում: Յոթը տարին լրացած օրը գայլերի հետ միասին գնում է Արաքսի ափը՝ մի ձիու լեշ ուտելու, բայց այս անգամ սաստիկ գարշում է, և մորթին ընկնում է վրայից: Այնուհետև այլևս գայլ չի դառնում:

ՄՐԲԵՐ

Սարիբեկ. Թուրք քույր և եղբայր, հյուրընկալելով Երուսաղեմից եկող մի վարդապետի, դռան բացվածքից տեսնում են, թե ինչպես նա օղի մեջ կանգնած աղոթում է: Այս հրաշքից հափշտակված՝ նրանք ընդունում են քրիստոնեություն և մի նորահավատ ծառայի հետ փախչում Վարանդա: Թուրքերը հետևում են նրանց և նահատակում Շուշուց մոտ 10 վերստ հեռավորությամբ՝ դեպի արևելահարավ, մի լեռան վրա, ուր այժմ գտնվում է նրա ուխտատեղին: Եղբոր անունը դրված է եղել Մարտիրոս, բայց սրով նահատակվելու պատճառով վերակոչվել է Սրաբեկ, իսկ ժողովուրդը աղավաղելով կոչել է Սարիբեկ:

Չորի մեջ՝ թփերի տակ, գտնվում է ծառայի նահատակված տեղին, որ նույնպես ուխտատեղի է:

Սարիբեկից ոչ քիչ բարձր գտնվում է քրոջ նահատակության տեղին, որտեղ դրված քարը նորերս տեղափոխել են Սարիբեկ:

Ս. Ղևոնդ և Աննա. Մի Ղևոնդ անունով քահանա յուր քույր Աննայի հետ գերի է ընկնում կռապաշտների ձեռքը: Մի անգամ, ծննդյան տոնին սրանք թույլություն են ստանում փոքր-ինչ հեռանալու: Անմիջապես Ղևոնդը, մի ժայռի միջից հանելով յուր թաքցրած քահանայական զգեստը, հագնում է և սկսում ժամ ասել և խաչը ջուրը ձգել Ծկոռիի մոտ՝ գետի մեջ: Կռապաշտներն իմանում և գալիս են սրանց նահատակելու: Սրանք փախչում են, սակայն Հմբրատեղում (համբուրելու տեղում) Ղևոնդ երեցի ձեռքը վիրավորվում է, և արյունը հոսում գետին: Այժմ որպեսզի այդ արյան հոսած տեղը ոտնակոխ չլինի, ամեն մի անցորդ մի քար է դնում վրան և համբուրում:

Քույր և եղբայր վազել են դեպի լեռը, սակայն քույրը կես ճանապարհին նահատակվել է, իսկ եղբայրը՝ բարձրացել լեռը, սակայն տեսնելով, որ քույրն արդեն նահատակված է, չոքում և աղո-



թում է, մինչև որ գալիս և իրեն էլ նահատակում են: Հետո սրա վրա մի մատուռ են կանգնեցնում, որ այժմ կոչվում է ս. Ղևոնդյան անապատ կամ Ղոնդիկ:

Ս. Էջմիածնի տնտեսք. Մի ժամանակ Էջմիածնում մի տնտես կին կար, որ թե՛ կաթողիկոսին և թե՛ վերջին աղքատին միևնույն և միաչափ կերակուրներ էր տալիս: Նրա աչքում բոլորն էլ հավասար էին, և ինքն էլ ոչ մի խտրություն չէր դնում: Այս բանն այնքան հաճելի էր հավասարություն քարոզող Քրիստոսին, որ նրան հրեշտակի ձեռքով մի խնձոր էր ուղարկել, որից հոտոտելով՝ զվարթանում, և գույնն ավելի կարմրում էր:

Մի անգամ կաթողիկոսն իմանում է, որ այդ տնտեսն իրեն էլ այնպես է կերակրում, ինչպես և վերջին աղքատին, բարկանում և կանչում է նրան յուր մոտ: Երբ կինը գալիս է, կաթողիկոսը, տեսնելով նրա այտերի կարմրությունը, ասում է. *«Ինչո՞ւ ես կերակրի ամենալավ մասը ինքդ ուտում, երեսդ կարմրեցնում, իսկ մեզ համար ամենավատն ուղարկում»:*

-Ո՛չ,- պատասխանում է տնտեսը, *- ես հրեշտակից մի խնձոր եմ ստացել, նա է ինձ ուժ և կարմրություն տալիս:* Այս ասելով՝ նա հանում է խնձորը և հոտոտելով ավելի գեղեցկանում ու թարմանում: Կաթողիկոսը, տեսնելով այդ ներողություն է խնդրում այդ արդար կնոջից և հրամայում տոնել նրա տոնը: Ահա այս Տնտեսի տոնն է, որ մենք մինչև հիմա էլ տոնում ենք:

Մարիամ աստվածածին. Հովսեփ, յուր կացինը տալով, ստանում է Մարիամ կույսին՝ որպես ամուսին: Միաժամանակից հետո, երբ ս. կույսը հղանում է, Հովսեփը և ծնողները հալածում են նրան՝ կասկածելով նրա բարոյականության վրա: Կույսը փախչում է մի այր, ուր և ծնում է Հիսուսին: Հովիվներն, այդ իմանալով, վերցնում են մի քիչ աղբ և տանում տալիս նրան՝ կամենալով այսպիսով նախատել նրան ապօրինի որդի ունենալու համար: Ս. կույսը խաչակնքում է այն, որ իսկույն ձվածեղ և հալվա է դառնում: Հովիվները զարմանում և սկսում են փառաբանել նրա աստծուն: Մի քիչ հետո հասնում են թագավորից ուղարկված մարդիկ՝ Հիսուսին սպանելու: Իսկույն ս. կույսը աղոթում է, և հանկարծ մոտի ժայռը երկուսի է բաժանվում և ծածկում Հիսուսին: Մայանիչները, չգտնելով մանկան, ետ են դառնում: Այնժամ ս. կույսը, նորից «փառք ի բարձունս» ասելով, հեռացնում է ժայռերը և հանում մանկան:

Խաչակնքվիլ. Հայր Հովսեփն, իմանալով, որ Մարիամը հղի է, սաստիկ բարկացավ և կանչեց յուր մոտ՝ նախատելու: Այս ժամանակ նա տեսավ կույսի մոտ մի հրեշտակ, որ խաչակնքվում էր՝ ասելով. *«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ ամէն»:* Հովսեփը զարմանալով հարցրեց հրեշտակին, թե այդ ինչ է նշանակում: Հրեշտակն ասաց. *«Այս աղոթքը ես Աստծու հրամանով սովորեցրի ս. կույսին, և այդ դրան է վերաբերում: Երբ «Յանուն հօր» ասելով ձեռք վերն է բարձրացնում՝ սրանով նա ասում է, թե այն գաղտնիքը, որ դու հիմա չգիտես, նախ հայր Աստվածը իմացավ, երբ տալիս է Որդու անունը և ձեռք արգանդին դնում, դրանով նա ասում է, թե հետո արգանդի զավակը իմացավ այդ: Երբ կրծքի երկու կողմերին է նշան անում, դա նշանակում է, թե հետո այդ իմացան աջ և ձախ ուսերի հրեշտակները, իսկ երբ կրծքի մեջտեղն է դնում ու «Ամէն» ասում, դրանով ուզում է ասել, թե շուտով կիմանա այդ գաղտնիքն ամբողջ աշխարհը»:*

ԿԱՆԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Վեցհազարյա. Ինչպես Վարանդայի գյուղերի, այնպես և քաղաքի գրեթե բոլոր բնակիչները, հայերը և մանավանդ թուրքերը դեռևս բավական հավատով են վերաբերվում դեպի կախարդությունն ու կախարդները: Դեռևս բավական թվով կախարդներ, շրջելով գյուղից գյուղ և նույնիսկ հաստատվելով քաղաքում, կարողանում են միայն այդ արվեստով իրենց ապրուստը հոգալ:



Այսպիսի կախարդներից Շուշում նշանավոր է Գրիգոր Տեր-Բաղդասարյանը, որ հայտնի է «Դեր (Տեր) Բալին (Բաղդասարի) տղան» անունով: Մա մի միջահասակ, խոժոռ դեմքով, սև և երեսի կոպիտ գծագրությամբ քառասնամյա մարդ է՝ սուր մտքով ու ճարպիկ ձևերով օժտված:

Սրան քսան տարուց ի վեր դիմում են տղամարդիկ և մանավանդ կանայք՝ մինը յուր կորուստը գտնելու, մյուսը որդի ունենալու համար գիր անել տալու, երրորդը յուր ապագան կամ ունենալիք երեխայի սեռը գուշակել տալու, չորրորդը մինի սերը գրավելու համար թալիսման գրել տալու, հինգերորդը դիվահար որդու դները հալածել տալու և այլն: Ամենայն, բայց մանավանդ չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերն ահագին բազմություն լցվում է սրա տունը, որ գտնվում է թուրքերի թաղի մոտ՝ ձորակի աջ լանջին: Մա բաղկացած է երկու սենյակից, որոնցից մինն ընդունարանն է, իսկ մյուսը՝ արհեստանոցը: Առաջին սենյակի չորս պատն էլ ամբողջովին ծածկված են պատկերազարդ հանդեսների թերթերով, այնպես որ՝ այցելուն որ կողմը նայե, անշուշտ պատկեր պիտի տեսնի: Մյուսը՝ արհեստանոցը, մի փոքրիկ սենյակ է՝ մի մեծ և մի փոքր պատուհանով: Այստեղ պատի մեջտեղից խփած է մի եղջերվի գլուխ, իսկ պատուհանների առջև՝ դրված մի մեծ փայտե մահճակալ՝ մի կապերտով ծածկված: Մահճակալի մի ծայրում ձգված է մի փոքրիկ ներքնակ, որի վրա ծալապատիկ բազմում է կախարդը աշխատելիս, իսկ այցելուները պագում են առջևը՝ հատակի վրա, և կամ կանգնած մնում: Կախարդի առջև դրված է մի մանղալ¹, որի կողքին խառնիխուռն ածված են բազմաթիվ իրեր: Այստեղ՝ մի թիթեղի մեջ, կա աղավնու արյուն, մի շշի մեջ՝ գայլի ուղեղ, մի ուրիշի մեջ՝ արջի ջիղ, թիթեղի կտորներ՝ վրան զանազան գծեր քաշած, ջոկ-ջոկ թղթերի մեջ փաթաթված զանազան փոշիներ, վարաղներ, ներկեր, թանաքներ, չորս-հինգ հատ գրիչ, գունավոր մատիտներ և այլն: Սրանցից էլ փոքր-ինչ հեռու թափված է թղթերի մի ահագին կույտ՝ վրան մի Վեցհազարյա, և ուրիշ մի քանի, սրանից արտագրված, կախարդական գրքեր և մի ձեռագիր բժշկարան դրված:

Մենք դիտավորություն չունենք նկարագրելու, թե սա ինչ «գրեր» է անում և կամ թե ինչպես է գործում, որովհետև ինչպես հաստատ իմացանք, սա վարվում է միանգամայն «Վեցհազարյա»-ի համեմատ, որը կարող է ձեռք բերել ուսումնասիրողը:

Պանակ քցել. Վարանդացիները հավատում են, թե երբ մի որևէ կերպով մեղանչեն մի սրբի դեմ, նա կպատժե իրենց՝ մի հիվանդություն տալով, որից ոչ մի կերպ չեն կարող ազատվիլ, եթե այդ նույն սրբին մատաղ չկտրեն ու չաղոթեն: Որպեսզի իմանան, թե հիվանդությունը որ սուրբն է տվել, որովհետև բացի նրանից մի ուրիշ սուրբ, ի պատիվ այդ սրբի, երբեք չի բժշկի նրա տված հիվանդությունը, դանակ են գցել տալիս: Յոթը տնից մի-մի դանակ են խնդրում, ապա բոլորը լավ մաքրելուց հետո դնում են մի աման ջրի մեջ և ամեն մինին մի սրբի անուն դնում: Ամանի շուրջը մոմեր կպցնելով՝ վառում են և ծունր դնում աղոթում, որ ժանգոտվի այն սրբի դանակը, որը տվել է այդ հիվանդությունը: Հետո այդ ամանը դնում են հիվանդի սնարի մոտ և մյուս առավոտ հանում դանակները նայում, թե որ դանակն է ժանգոտված, որից և իմանում են, թե որ սրբիցն է, որի դուռը և տանում են հիվանդին և կամ մի քանի ռուբլի դնում հիվանդի բարձի տակ՝ խոստանալով հիվանդի առողջանալիս այդ դրամով մատաղ կտրել այդ սրբին:

Կեղ չափել. Կեղ չափելու շնորհքը տալիս են սրբերը, երբ պասով, աղոթքով դիմում են իրենց. այսպես, Սարուշենի Ավետարանը տվել է այդպիսի շնորհք Սգնեք գյուղի Հավկշոռո (հավ կշոռո)² Մկրտիչանց Միրզիան կնոջը, Սարիբեկը՝ Մոսունց Մանդուխտին և այլն:

¹ Կրակարան, որի մեջ բոցավառված կրակ են ածում

² Եղբայրները բաժանվելիս հավերը կշռել և այնպես են բաժանել



Կեղ չափող կինը սոթքում է յուր ձախ ձեռքը և հետո աջ ձեռքով, ձախ ձեռի միջամատի ծայրից սկսած, երկու կեղ (թիգ) չափում, ապա ասում. եթե այսինչ մարդու խորհուրդը պիտի կատարվի, երկարի, թե ոչ՝ կարճանա. կամ, եթե կորուստը պիտի գտնվի, երկարի, իսկ եթե ոչ՝ կարճանա: Հետո բուֆ մատը պահում է վերջին կետում և նորից մի քանի անգամ միայն մի կեղ չափում: Նայելով դեպքին նա կամ կուչ է բերում մատները և կամ երկարեցնում:

Վախ վեր քաղել. Նինգի գյուղում ապրում է «վախ վեր քաղող» Տեր-Առաքել Տեր-Պետրոսյան անուն քահանան: Մա մի խուլ, սաստիկ հարբեցող և համարյա անգրագետ մի անձն է, որ ոչ միայն ամբողջ Վարանդայում, այլև հեռու շրջակայքում մեծ հռչակ ունի որպես վախեցած մարդկանց անմիջապես առողջացնող: Յուր և գյուղի ծերունիների ասելով՝ նրա տոհմը, պապ քահանան և նույնիսկ պապի պապը «վեր քաղող» են եղել և դեռ կլինեն, որովհետև նա սովորեցրել է այդ շահավետ արվեստը յուր որդուն, որ երբեմն փոխարինում է իրեն: Գլխավորապես ամառը, կիրակի օրերը Շուշուց և շրջակա գյուղերից հայ և թուրք դիմում են նրան: Եղել են օրեր, երբ մինչև հինգ հարյուր մարդ համախմբված են եղել նրա դռանը՝ խնդրելով իրենց վախը «վեր քաղել»:

Գործողությունը շատ պարզ է: Մի երկար կոթավոր փոքրիկ հալոցի մեջ արձիճ են հալում՝ հետը փոքր-ինչ մոտ խառնելով, և հետո մի ջրով լի թաս բռնելով վախեցողի նախ աջ, հետո ձախ ականջների և ապա մեջքի և կրծքի առաջ՝ արձիճը լցնում է ջրի մեջ: Միննույն ժամանակ «Հայր մեր» շնչում: Արձիճը ջրի մեջ թափվելիս որքան բարձր ձայն հանե, այնքան ավելի վախեցած է լինում:

Մում հալիլ. Վախեցածին գլխավորապես բժշկում է «մում հալողը»: Մա երեսը երեք անգամ խաչակնքելուց հետո վերցնում է մի ասեղ, որ սովորաբար յուր վրա է պահում և երբեք ուրիշի չի տալիս, և կոխում մեղրամումի մեջ: Հետո «Հայր մեր» շնչալով և սրբերի անուններ տալով՝ մեղրամումը դնում է տաքացրած ծհանի (թաթակիշի) կամ մի ունելիքի վրա, մումը հալչում և թափվում է տակը բռնած մի աման ջրի մեջ և մի որևէ ձև ստանում: «Մում հալողը» հանում է ջրից մումը և նրա ձևից և կամ վրայի գծերից գուշակում, թե ինչից է առաջացել վախը:

Այս գործողությունը երեք անգամ կրկնելուց և գուշակություններ անելուց հետո մումը փաթաթում է բամբակի մեջ, թելով կապում և տալիս հիվանդին, որ գիշերը դնի ոտի տակ և առավոտյան կոնքի տակը դրած լվացվի և ապա անխոս տանի մի ծառի տակ թաղի ու այդ լվացված ջուրն էլ վրան ածի:

Մի քանիսն էլ բամբակի մեջ մի մեխ են ցցում և թաղում կամ շենքում և կամ այն մեռելի գերեզմանում, որից իբր վախեցել են:

Այն ևս պետք է ասել, որ «մում հալիլ» կարող են միայն երագով սրբերից այդ շնորհն ստացողները:

Սրտմնա բռնել. Երբ մի որևէ բանից զզվելով՝ այլևս բան չեն կարողանում ուտել, սրտմնա են բռնել տալիս, որոնցից Շուշում ամենանշանավորներն են Մարիամ պաճին, Անթառանը և ուրիշներ: Սրտմնա ընկնողը մի ասեղ է խրում կրծքին՝ ուշք դարձնելով, որ ասեղը ծուռ կամ կոտրած չլինի, որպեսզի ծուռ կամ թերի կերպով չբռնվի սրտմնան: Հետո մի չորեքշաբթի, ուրբաթ կամ կիրակի օր՝ առավոտյան, անոթի գնում է սրտմնա բռնողի մոտ և խնդրում սրտմնան բռնել: Մա հանում է սրտմնա ընկնողի կրծքից նրա խրած ասեղը և ձգում յուր ձեռքին բռնած կապույտ պնակի մեջ:

Պետք է ասել, որ պնակն, անշուշտ, կապույտ պիտի լինի և կապտագույն շերտեր ունենա, որովհետև դրանք նման են սրտմնա ընկնողի կապույտ կապտա նյարդերին, որոնք կապտել են սատանաների ազդեցությամբ: Եվ այս սատանաներին միայն ասեղը կարող է հալածել:



Ապա երեք անգամ խաչակնքում է պնակը, ցուցամատը դնում ասեղի վրա և ստիպելով սրտմնա եղողին շարունակ նայել պնակին՝ աղոթում է.

*«Գնացի Երուսաղեմ, տեսա մին ծառնը,
 Էդ ծառիցը դուրս էկավ մին ճյռղնը,
 Ընդրանից դուրս էկավ մին ուրիշ ճյռղնը,
 Ընդրանից դուրս էկավ մին ուրիշ ճյռղնը:
 Ութնճի ճյռղնիցը կախվեց մին ոչխար,
 Մոտրկացի, բոնեցի.
 Անդենակ մորթեցի,
 Անկրակ եփեցի.
 Անջուր լվացի,
 Ես կերի՝ սրտմնա չըլի,
 Դու իսե՞ սրտմնա իս ըլալ:*

Հետո բարձրացնում է մատը, և եթե սրտմնա եղած են լինում, ասեղը կպած է լինում մատին: Շարժում է մատը և երեք անգամ թափ տալիս, որ ասեղը ընկնի ջրի մեջ: Ասեղը որչափ ամուր է կպած լինում մատին, այնքան սաստիկ են սրտմնա եղած:

Այս միևնույն գործողությունը երեք անգամ կրկնելուց հետո սրտմնա բռնողը ծածկաբար մի քիչ ջուր է ածում մի բուռը և պնակը տալիս սրտմնա եղողին՝ խմելու: Եվ մինչդեռ նա խմում է, սա հանկարծ ցնցում է նրա երեսին բոի ջուրը՝ ասելով. *«Էդ ա քու դեղը»*: Հետո արդեն սրտմնա եղողն այդ պնակը, առանց վայր դնելու, միջի ջուրը ածում է մի ամանի մեջ և տանում տուն, քիչ-քիչ խմում, մի քիչ էլ լցնում է սառը ջրի մեջ և լվանում ոտներն ու ձեռքերը:

Այդ ջուրը պարունակող ամանը երբեք գետնին չեն դնում, այլ միշտ կախում են և երբ առողջանում են, ավելացած ջուրն ածում են յոթը սև քարի վրա և կամ մի, սովորաբար տանձի ծառի տակ:

Եթե միանգամից չառողջանան, կրկնում են էլի մի կամ երկու անգամ:

Աչքին հատը վեր քաղել. «Աչքին հատ» կոչվում է այն հիվանդությունը, որ պատում է աչքի մի մասը սպիտակ թաղանթով: Այս հիվանդությունը բժշկելու համար դիմում են որոշ կանանց, որոնք հայտնի են որպես «աչքի հատը վեր քաղողներ»: Սա վերցնում է 7 ոսպ և 7 բրինձ, երեք անգամ խաչակնքում յուր երեսը, մի ամանի մեջ ջուր ածում, տալիս հատ ունեցողի ձեռքը և հետո «Հայր մեր» շնջալով ու սրբերի անուններ տալով՝ տրորում է այդ ոսպերն ու բրինձը հատ ունեցողի աչքերին՝ թողնելով, որ թափվին ամանի մեջ: Ապա մատները թաթախում նույն ջրի մեջ և երեք անգամ քսում աչքերին: Վերջը այդ ոսպերն ու բրինձը տալիս են հավերին:

Չոփչի. Սրբերի տված շնորհներից մինն էլ չոփչությունն է: Ստացողը սովորաբար ուշաթափվում է՝ «շտապում» է, և կամ մի քանի օր անզգա մնալուց հետո ուշքի գալիս և պատմում, թե այդ ինչ սուրբ երևեցավ իրեն և չոփչություն անելու շնորհք տվեց: Այսպես, Ներքին Թաղավարդ գյուղում մի տասներկու տարեկան ամուսնացած կին «շտապում» է, երեք օր «շտապած» մնում և ապա հայտնում, թե Սարուշենի Ավետարանը երևացել է իրեն և չոփչության շնորհ տվել: Այժմ դա գյուղի նշանավոր չոփչին է և տարին մի քանի անգամ էլ «շտապում» է:

Գրեթե ամեն մի գյուղ ունի յուր չոփչին: Քաղաքն էլ զրկված չէ դրանցից: Նա էլ ունի թաղլարեցի Հյուրին, Նանա-խանումը, Շոդերը, Սառան, Փահլվանին կիներ:



Ասում են, թե շատ անգամ կորիզներ և կամ ոսկորի կտորներ են մնում երեխաների կոկորդներում, որից և հիվանդանում են: Չոփչին նստեցնում է երեխային յուր ծնկների վրա և նախ բերանից և ապա քթից բուրբ ուժով փչում: Իսկույն կորիզը կամ ոսկորը դուրս է ընկնում բերանից:

Մկնատամի գիր. Մկնատամը բժշկելու համար թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում գիր են անել տալիս: Քաղաքում այդպիսի գիր անողներից նշանավոր է Տեր Գ. քահանան:

Գիր անողը թանաքով մի գիծ է քաշում վերքի շուրջը և մեջը գրում.

Ամ, Ամուն, Արամուն,

Պորպոյ (?), Երիպոյ (?)

Դուք չորացուցեք զմկնատամս:

Այս «գիրը» անել են տալիս առավելապես չորեքշաբթի օրերը, մանավանդ մեծ պասի վերջին «չիք» չորեքշաբթի օրը:

Գելկապ (Կյուկապ). Երբ գյուղացիների կենդանիները կորչում են, գայլի և առհասարակ բուրբ գազանների բերանները կապել են տալիս, որ չուտեն կորած անասունը: Գայլի բերան կապողը սովորաբար մի աղոթք է ասում՝ ամբողջը մի անգամ միայն շունչ առնելով, և հետո կան մի բաց դանակ փակում, կան կացինը մտցնում սանդեղի մեջ, կան մի թել առանձին և կան մի դաշույնի վրա երեք անգամ հանգուստում:

Ահա մինն այդ աղոթքներից.

«Եվ ի ծովուն խաչ մի կայր,

Եվ ի սուրբ լերինն այն խաչին

Յոթը թիվ երկաթի,

Ամեն թվի յոթ խորան.

Եվ ամեն խորանի յոթ նարդոս.

Ծածրն պղնձեղեն,

Եվ բանալին երկաթի.

Կապյալ եմ զգայլի բերանն

Եվ զգողի շարժումն.

Եվ գայլ գազանի բերանն,

Որ շրջի ի մեջ զիշերի.

Երեք բևեռ Քրիստոսի,

Մեկն ի սիրտ սև սատանի,

Մեկն ի բերան գել գազանի,

Մեկն ի շարժումն ավագակի»:

Այսպես կապելուց հետո գազանները յոթ օր շարունակ ոչինչ չեն կարող ուտել: Պատմում են բազմաթիվ դեպքեր, որոնցից հիշենք գոնե մինը: Խաչմաչ գյուղում գայլի բերանը քահանայի հորը դաշույնի վրա կապել տալուց հետո գնում են կորած կովը պտրելու և գտնում են հանդարտ կանգնած մի գայլի մոտ: Գայլը, բերանը կապած, նայելիս է եղել կովին: Կովի տերը դաշույնի վրայից ձգել է գայլկապի թելը, որպեսզի սպանե գայլին: Սակայն հենց որ թելն արձակում է, գայլը հարձակվում է կովի վրա և պատահում նրան:

Կորուստը գտնելու համար գայլի շրթունքները կամ ետին ոտի ճիլը կրակն են ձգում: Ասում են, թե գտնողը և կամ գողացողն անմիջապես կույ լեկած գալիս է և հանձնում իրը:

Մի աղջկա ձեռքը ստանալու համար չղջիկի թևը քսում են վրան: Կաքավի փետուրները ձգում են գետի մեջ, որ փետուրն որ ջրի ընթացքին հակառակ գնաց, վերցնում պահում են և նրանով



կախարդություն անում: Բավական է, որ այդ փետուրը մինին քսեն, նա սաստիկ կսիրահարվի քսողի վրա: Կկու թռչունի փետուրները և կամ 4 տերևանի առվույտ յուր մոտ ունեցողը կարող է աչքակապ կախարդների արածները տեսնել:

Հավահմայություն. Եթե կաչաղակը մինի տան վրա կչկչա, գուշակում են, որ հյուր և կամ տան պանդուխտներից մինը պիտի վերադառնա:

Եթե կաչաղակը, երեսը դեպի տունը դարձրած, կոկոս, գուշակում են, որ լավ համբավ պիտի ստանան, իսկ եթե պոչը դեպի տունը դարձրած լինի, վատ համբավ պիտի գա: Ուստի և ասում են. *«Թե խեր ա, տեղդ փոխ տուր, թե շառ ա, երեսդ շուռ տուր»:*

Եթե ծիտը լողանա, ագռավը կռավե, կանաչ գորտը (գորտնուկը) կոկոս, անձրև կգա:

Եթե բուն գիշերը մինի տան վրա բվա, այդ տնից մեկը կմեռնի:

Եթե հավը աքաղաղի պես կանչե, տնեցիներից մինը մեռնելու է. առաջն առնելու համար հավը դռան շեմքում մորթում են:

Եթե գիշերը հավը կամ աքաղաղը անժամանակ կանչեն, այդ նշան է, որ մի չարիք պիտի գա, իսկույն մի կրակ են շարտում դեպի հավաբունը, որ չարը հավերին գնա:

Եթե անցորդի գլխի վրայով ագռավը կոռա, սա մի վատ բան է գուշակում և բարձր ձայնով կանչում է. *«Ա՛քաշ, խեր ա, ա՛քաշ, խե՛ր»:*

Եթե շունը ոռնա, տնեցիներից մինը կմեռնի:

Եթե կատուն երեսը լվա կամ թաթը ականջի տակով անցկացնե, հյուր կգա:

Եթե կատուն ոտերով չանգոտե գետինը, անձրև կգա:

Եթե նապաստակ պատահի, անհաջողության նշան է, իսկ եթե աղվես՝ հաջողության:

ՄՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Աչքով տալ. Կան մարդիկ, որոնք չար աչք ունեն և կարող են աչքով տալ: Եթե նրանք հավանում են մի բանի և կամ նախանձում են, իսկույն աչքով են տալիս, և իրը իսկույն նեթ տրաքվում է:

Եվ որպեսզի աչք չտան, դիմում են հետևյալ միջոցների.

Ա. Բռնի ծառը տնկում են բակում, արտում, պարտեզում և այլն:

Բ. Բռնի փայտի մի փոքրիկ կտոր ուղտի բրդի և աչքահուլունքի հետ կտրում և կապում են օրորոցից, ձիու վզից և այլն:

Գ. Մի ամանով ջրի մեջ մի ձու են ձգում և դնում իրի մոտը. աչք տալիս ձուն տրաքվում է:

Դ. Եզի, եղջերվի կամ այծյամի գանգ ցցի վրա անց կացրած՝ խփում են տան, արտի, այգու մոտ:

Ե. Հայտնի աչք տվող մարդկանց պատահելիս մի քարի վրա թքնում են և շուռ տալիս:

Զ. Ոսկի բղուճի կաշին հանում, ուղտի մազով լցնում, կարում են երեխայի ուսին:

Է. Երեխայի օրորոցից և կամ շորերից կախում են աչքահուլունքներ: Պատմում էին, թե հայր ու որդի անցնում էին վար անողների կողքից: Հայրն ասում է. *«Բ՛նչ լավ եզ է»*, և սպասում է, որ եզը իսկույն տրաքվի: Մակայն ոչինչ չի պատահում: Զարմացած ուղարկում է որդուն, որ տեսնի, թե եզի սամին բռնո՞ւց է: Որդին գնում տեսնում է, որ հիրավի բռնուց է և հոր պատվերով փոխում է: Անմիջապես եզը տրաքվում է:

- *Տեսա՞ր, որդի, բռնին էր, որ արգելում էր*, - ասում է հայրը:

- *Բնչ լավ աչք ունիս, հայրիկ*, - ասում է որդին, և իսկույն հոր աչքն էլ տրաքվում է:

Մարմնախաղ. Եթե աջ ձեռքը քոր գա, փող կստանա, իսկ եթե ձախը քոր գա, փող կծախսե:

Եթե կզակը քոր գա, հյուր կգա:

Եթե մի անգամ փոնչտան, անհաջողության նշան է, իսկ եթե գույգ՝ հաջողության:



Եթե հորանջելիս չխաչակնքվին, սատանան կմտնի բերանը:

Եթե աջ ձեռքը խաղա, հաջողություն է գալու, իսկ եթե ձախը՝ ձախորդություն:

Եթե ականջը կանչե, մինը նրան հիշել է: Եվ որպեսզի իմանան, թե ով է հիշողը, տալիս են ծանոթների անունները, ում անվան ժամանակ որ ձայնը կտրվեց, նա է:

Եթե աջ ականջը քոր գա, մյուս օրը լավ եղանակ կանի, իսկ եթե ձախը՝ անձն կգա:

Եթե մինի ոտի տակը քոր գա, ճանապարհ կգնա:

Մեղան. Եթե թոնրից դուրս եկած առաջին հացը ուտեն, ամուսինը կմեռնի:

Եթե հացը գետից անց կացնեն, կքաղցրացնեն:

Եթե հաց կտրելիս մի կտոր թռչի ընկնի մյուս կողմը, հաջորդ տարին սով կլինի:

Եթե այրած հաց ուտեն, գայլից չեն վախենա:

Եթե մսի ճիլը ուտեն, մազերը կերկարեն:

Եթե ոչխարի ուղեղ ուտեն, խելքը կշատանա:

Եթե երիտասարդը կաթսայի տակը սրբե, հարսանիքի օրը ձյուն կգա:

Եթե ափսեն մաքուր սրբեն, կնոջ երեսը գեղեցիկ կլինի, իսկ եթե չսրբեն՝ չեչոտ կլինի:

Ով որ մանկության ժամանակ աղջկա հետ միասին մի ափսեի միջից ուտի, գող կլինի:

Եթե մթին տեղը ջուր խմեն, քաջքերը կկոփեն: Եվ եթե ստիպված են խմելու, կանգնում են շեմքի վրա և մի ձեռը դնելով պարանոցի ետևը՝ խմում:

Եթե երեկոյան սփռոցը թափ տան, տան բարաքաթը կկորչի:

Թռչուններ. Եթե գիշերը աքաղաղները կանչեն, մարդիկ կխաչակնքեն երեսները և կասեն. «Օրհնյալ է աստված», - որովհետև նախ երկնքի աքաղաղն է կանչում և ապա սրանք և կամ մարդկանց պահապան հրեշտակները, որ մարդկանց քնելուց հետո համբառնում են երկինք, նորից վերադառնում են, և միայն աքաղաղներն են տեսնում նրանց:

Եթե երեխան հավի գլուխ ուտի, ծնողներից մինը կվախճանվի:

Եթե հավի սիրտը հում-հում կուլ տան, սրտոտ կդառնան:

Եթե ձվի կեղևը այրեն, հավը ձվից կկտրվի:

Եթե հավի փետուրը այրեն, անձրև կգա:

Հավը թուխս դնելիս շարում են հավկիթները, մի ձեռքում բռնում հավը, մյուսում՝ մի հավկիթ: Հետո այս մի հավկիթը երեք անգամ պտտեցնում են բոլոր հավկիթների շուրջը և դնում մեջտեղը և հավը թուխս նստեցնում՝ ասելով.

*«Ոչխարը կյա սրերավը,
Տավարը կյա քուլերավը,
Էծերը կյա հյոլերավը,
Դու էլ կյաս քու ճտերավը»:*

Եվ կամ՝

*«Լոխ ծակ,
Մինը լակ»:*

Գորտ. Եթե գորտ տեսնեն և ձեռների ու ոտների վրա չթքեն, ձեռների վրա գորտնուկ կբուսնի:

Գայլ. Եթե արևով անձրև գա, գայլերը կծնին:

Օձ. Եթե սխտոր ցանեն բակում և կամ կախ տան դռնից կամ առաստաղից, օձերը չեն կարող մոտենալ:

Եթե սոխ դնեն գրպաններում և կամ սխտոր քսեն տրեխներին, օձերը կփախչեն:

Եթե սպանեն օձը, մինչև արուսյակի դուրս գալը չի սատկիլ:



Եթե սպանած օձը գլուխը դուրս հանած չթաղեն, կողջանա:

Բույսեր. Եթե սոխի կճեպը խնկի հետ կրակը ձգեն, արքայության հոտը կբուրե:

Եթե դալար բույսը այրեն, անձրև կգա:

Եթե մինը ընկուզենի տնկի, 7 տարուց հետո կմեռնի:

Եթե չիք-չորեքշաբթի պտուղ չբերող ծառերին երեք անգամ առանց խոսելու խփեն, պտուղ կտա:

Կարկուտ. Եթե մի պառավ և կամ մի ծեր սուրբ Սարգսի պասի երկուշաբթի օրը ցորեն աղանձե և կարկուտի ժամանակ շաղ տա, իսկույն կարկուտը կկտրի:

Եթե վառեն Տյառնընդառաջի մոմերը կամ շամփուրները խաչաձև դնեն, քսկարենքը (եռոտանին) հակառակ դարձնեն, գատկի ձվի կճեպը և կամ նույն օրվա մատաղի ոսկորները դռանը դնեն, կարկուտը կկտրի:

Եթե պղինձ կամ կավե ամանի կտորներ թակեն և կամ հրացաններ արձակեն, կարկուտն անձրևի կփոխվի:

Վախ. Վախեցողը բժշկվելու նպատակով դիմում է հետևյալ միջոցների.

1) Վախեցնողի բոց կամ փեշից ջուր է խմում:

2) Մի քանի, որոշ գերեզմանների վրա կան փոքրիկ փոսեր, ինչպես օրինակ Ծովատեղ գյուղի գերեզմանատնում մի փոքրիկ երեխայի և կամ Նինգի գյուղի վախ բռնող Տեր-Առաքելի հոր՝ նույնպես վախ բռնող քահանայի գերեզմանը և այլն: Վախեցողին բռնում կռացնում են այսպիսի մի փոսի վրա և ծոծրակին այնպես ջուր ածում, որ փոսի մեջ լցվի, հետո վախեցողը չորքում և խմում է այդ փոսի միջի ջրից:

3) Մի կավե ամանով ջուր դնում են մի կիրակմուտք օր մի որևէ առանց հաղորդության մեռած ննջեցյալի գերեզմանի վրա և հետևյալ օրը մի քանի ումպ խմում այդ ջրից և ամանը կոտրում:

4) Արջի լեղի են խմում:

5) Ննջեցյալից վախեցողին տանում են այն ննջեցյալի գերեզմանի մոտ, որից վախեցել է, վերցնում են գերեզմանաքարը, մի քիչ քանդում հողը, մի հավկիթ դնում և մի մեխով ծակում և նորից ծածկում: Ապա այդ գերեզմանաքարի վրա մի քիչ ջուր ածում և խմեցնում ու հանկարծ ջրի ամանը կոտրում:

6) Եթե ննջեցյալից են վախեցել, այգը կատարելիս հանկարծ հող են ածում վախեցածի պարանոցին:

ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՆԵՐ

Նոր տարի. Վարանդայի գյուղերում Նոր տարին գրեթե բոլորովին չի տոնվում: Բաքվից վերադարձածները միայն այցելում են միմյանց և իրենց բարեկամներին ու նրանց Նոր տարին շնորհավորում: Շուշում, ընդհակառակը, բոլոր քաղաքացիները միմյանց փոխադարձ այցելություններ են տալիս, խմբովին գնում են առաջնորդի և գավառապետի մոտ, նրանց նոր տարին շնորհավորելու:

Մնունդ և ջրօրհնեք. Խթման նախընթաց օրը՝ հունվարի 4-ին, ամեն տուն պատրաստում է «դովլաթ-կըրկենե»՝ ձիթով կամ բաքմազով պատրաստած մի մեծ կարկանդակ՝ մեջը մի դրամ կամ մի լոբի և կամ մի սիսեռ դրած: Այս նշանը կոչվում է «դովլաթ» (բախտ): Նույն երեկոյին՝ ընթրիքից հետո, տան բոլոր անդամները համախմբվում են, և տանտիկինը հանդիսավոր կերպով կտրում է կարկանդակը՝ բաժիններ հանելով բոլոր ներկա և բացակա անդամներին, օջախին, օտարին և կենդանիներին: Ուրախությունը շատ մեծ է լինում, երբ դովլաթը դուրս է գալիս օջախի



բաժնից, որովհետև դրանից գուշակում են, որ այդ տարի ամբողջ գերդաստանը, օջախը բախտավոր, «դովլըթվոր» պիտի լինի: Իսկ եթե օտարի բաժնի միջից է դուրս գալիս, տխրում են՝ համոզված լինելով, որ տան դովլաթը օտարին է անցնելու: Ուրախանում է նաև այն անդամը, որի բաժնի միջից դուրս գալով՝ դովլաթը ավետում է նրան ապագա բախտավորության մասին:

«Դովլաթ» կորիզը ձգում են տան մի անկյունում, որ միշտ մնա, իսկ եթե դրամ է, երբեք չեն ծախսում և քսակի մեջ խնամքով պահում են:

Հետևյալ օրը շատերը ծոմ են պահում: Երեկոյան «Դանիել» ասողը մեծ գովասանքի է արժանանում և յուր ծնողներից նվերներ ստանում: Ժամերգությունից հետո շատ շուտով ցրվում են տները և ընթրում՝ ուտելով ձուկ և փլավ, որը պատրաստում են անպատճառ կարագ յուղով: Ընթրիքից հետո գրագետ երեխաները շրջում են տները և «Ավետիս» ասելով՝ նվերներ ժողովում:

Գյուղացիները հավատում են, թե այս գիշերվա ընթացքում գետը մի քանի բոպե կանգ է առնում, ուստի և առավոտ շատ վաղ հարսներն ու աղջիկները գնում են գետից ջուր բերելու՝ հուսալով հանդիպել կանգնած միջոցին, երբ արված ամենայն տեսակ խնդիր անմիջապես կատարվում է:

Կեսօրին, երբ քահանան կատարում է Քրիստոսի մկրտության խորհուրդը, եկեղեցու մեջ հրապարակավ աճուրդի է դրվում քավորության պաշտոնը, և նա դառնում է քավոր, որն ամենից ավելի է վճարում:

Բազմությունը վրա է թափվում մկրտության կաթսայի վրա և սրվակներով ջուր վերցնում, խմում, ճակատին ու կրծքին քսում, ձեռները, ամանները լվանում և ջուրը լցնում օձախի կամ թոնրի մեջ:

Նույն օրը, ինչպես և նախընթաց երեկոյին, քահանան, շրջելով տները, օրհնում է և նշխարներ բաժանում՝ ստանալով 15-20 կոպեկ: Նշխարներից մի կտոր դնում են աղաքսակի մեջ, որ աղը «բարաքյաթով» լինի:

Սուրբ Սարգիս. Առաջավորաց պասին վարանդացիները «Խաշլին կամ սուրբ Սարգսին պասն» են կոչում: Այս միջոցին շատերը միաժամ են մնում, այսինքն՝ օրը միայն մի անգամ՝ կեսօրին են հաց ուտում: Շատ հաճախ եկեղեցի են գնում, մոմեր վառում և զգուշանում գլուխ լվանալուց և լվացք անելուց, որովհետև անողները կուռչին, կտրաքվին:

Ուրբաթ օրը փոխինդ են մաղում, հետո շաքարով կամ մեղրով և կամ բաքմագով շաղախում և փոքրիկ կոլորակ շինում և բաժանում տան անդամներին: Չափահաս տղաներն ու աղջիկներն առաջին կծած պատառը բերաններից հանում, կրկին կոլորում և պահում են իրենց մոտ, որպեսզի հետևյալ առավոտը վաղ, առանց մի որևէ մարդու հետ խոսելու, դնեն կտուրը և գուշակություններ անեն: Եթե թռչունը վերցնի և տանի մի որևէ կտորի վրա ուտի, այն տնից է լինելու հարսնացուն կամ փեսացուն: Իսկ եթե թռչունը, վերցնելով այդ պատառը, միննույն կտորի վրա ուտի, այդ նշան է, որ չպիտի ամուսնանա:

Նույն ուրբաթ գիշերը մի ափսեի մեջ փոխինդ են մաղում, վրան խաչ քաշում, դնում դռան ետևը, մաղը վրան կոնթիում և մի վառած մոմ մոտը դնում, որպեսզի ս. Սարգիսը իրենց այցելելիս ձիու պայտի հետքը մնա այդ փոխինդի վրա:

Հետևյալ շաբաթ օրը այդ փոխինդով խաշիլ են պատրաստում և ուտում:

Սուրբ Սարգսի մասին կան շատ ավանդություններ, որոնցից հիշենք մինը: Մի անգամ մի աղջիկ, յուր ծննդկան մոր մոտից հեռանալով, գնում է դրկցի մոտ՝ կրակ բերելու: Վերադարձին դուռը փակ է գտնում և ականջ դնելով՝ լսում է մի ձայն, որ ասում է, թե նորածին երեխան



մեծանալիս երբ կամենա ամուսնանալ, ձուկ դառնա և ջուրն ընկնի: Աղջիկն իսկույն հասկանում է, որ այս ձայնն այն հրեշտակինն էր, որ եկել էր երեխայի ճակատի գիրը գրելու:

Երբ երեխան մեծանում է, և հասնում են ամուսնության օրերը, այս քույրը պահում է ս. Սարգսի պասը և ջերմեռանդությամբ աղոթում նրան, որ փրկե յուր եղբորը և թույլ չտա ձուկ դառնալու: Ս. Սարգիսը լսում է նրա աղաչանքը և ինքը գալիս խաչեղբայր է դառնում այդ տղային: Երբ հարսը բերում են, մի գետից կամենում են անցնել. իսկույն ս. Սարգիսը հեծնում է փեսացուի գավակը և ամուր գրկում նրան, որ թույլ չտա ձուկ դառնալու, սակայն չի լինում, տղան, հենց որ գետի մեջտեղն են հասնում, ձուկ է դառնում և ընկնում ջուրը: Այսպես՝ ճակատի գիրը ոչ միայն մարդիկ, այլև սրբերը, հաստատում է ժողովուրդը, չեն կարող խափանել:

Բարեկենդան. Առաջավորաց պասից մինչև Մեծ պասը վարանդացիների համար բարեկենդան է համարվում, և քեֆն ու ուրախությունը գնալով սաստկանում են: Վերջին շաբաթը բուն բարեկենդան է, և այս օրերում ոչ միայն ուրախությունը, այլև կերակուրների թիվը գնալով աճում է. այսպես, պահանջվում է, որ երեքշաբթի օրը երեք, հինգշաբթի՝ հինգ, շաբաթ՝ յոթ և կիրակի՝ 12 տեսակ կերակուր լինի: Ամբողջ գյուղը, զանազան խմբեր կազմած, զվարճանում է. այստեղ երեխաների խմբերը վեգ են խաղում, այնտեղ աղջիկների խումբը ճլորթիի մեջ ճոճվում է, մի քիչ հեռուն երիտասարդները «լախտի», «տարատութ», «ատտուրմա» և այլ խաղեր են սարքում, գոտեմարտում, հրացան արձակում՝ աշխատելով նշանին դիպցնել և այլն: Մի ուրիշ տեղ մի խումբ նստած ուտում է և խմում, բղավում ու երգում: Գյուղի կենտրոնումն էլ դավուլ-գուռնան է ածում և շատերին պար ածում: Այսպես անցնում են այս օրերը, մինչև որ գալիս է կիրակի օրը. այս ժամանակ երիտասարդների խմբերը միանում են, մի ճարպիկի հագցնում ցնցոտիներ, վրայից ոսկորներ, հին սրեր կախում, մի հրացան ձգում ուսովը, գլխին մի հին գզգզված գլխարկ ծածկում, երեսը մրոտում, նստեցնում մի եզ վրա, և «բյակը կամ էշակ պարոնը գալիս է հա՛, ճամփա բացեք» բղավելով՝ դավուլ գուռնի առաջնորդությամբ ման ածում տնետուն, հազարավոր ծամածռություններ, սրախոսություններ անում, ամեն տնից գինի, կերակուր, դրամ հավաքում և ապա երեկոյան մոտ խմբով նստում և քեֆ անում:

Նույն երեկոյին մոտիկ բարեկամները միասին հավաքված են անց կացնում գիշերը՝ միասին ուրախանալով և ուտելով իրենց բերած ուտելիքենն ու կերակուրները: Երբ անչափ ուտում են ու խմում, «փակում են իրենց բերանները ձվով», այսինքն՝ ամենից վերջը ձու են ուտում, որպեսզի զատկին էլ ձվով բանան: Հետո երիտասարդները դուրս են գալիս և հրացաններ արձակում, որպեսզի մեծ պասը շուտով անցնի: Ապա հոգնած ու հարբած ընկնում են ու խոր քնում:

Տյառնընդառաջ. Այս տոնը տեղական բարբառով կոչվում է **դոդոռաջ**: Երեկոյան ժամերգության միջոցին նշանած տղաների բերած ցրտնու ճյուղերով խաչաձև խարույկ են պատրաստում: Քահանան ժամավորների հետ միասին դուրս է գալիս եկեղեցուց և մի քանի աղոթքներ կարդում: Այս միջոցին երիտասարդները վառված մոմերով վառում են խարույկը: Ծերունիներն ու պառավները ջերմեռանդությամբ շարունակում են աղոթել: Բազմությունը ամենայն հետաքրքրությամբ դիտում է ծուխը, որովհետև հավատում է, որ միայն այն կողմի արտերը լավ պիտի բուսնեն, որ կողմը որ ուղղվում է ծուխը:

Երբ խարույկը հանգչում է, խանձողները խլխլում են և տանում տները, որպեսզի նրանով վառեն ճրագն ու կրակը և հետո դնեն հավաքնում, որ հավերն ավելի հաճախ ձու ածեն:

Եվ երբ մեծերը քաշվում են, տղաներն ու աղջիկները վերցնում են մոխիրը և դեպի վեր շաղ տալիս ու դիտում, թե որ կողմն է ուղղվում՝ հուսալով, որ այն կողմից պիտի լինի սպասած հարսնացուն կամ փեսացուն:



Չբեր կանայք էլ աշխատում են երեք անգամ թռչել խարույկի վրայից, որպեսզի երեխա ունենան:

Մեծ պաս. Առավոտյան վաղ հարսներն ու աղջիկները վեր են կենում և անխոս վազում դեպի աղբյուրը, ջուր բերում, տղաներն էլ գնում են փայտ կամ քար բերում, որովհետև հավատում են, որ եթե բան բերեն տուն, տունը «բարաքյաթտու» կլինի:

Պառավ նանն էլ, մի սոխի վրա 7 փետուր ամրացնելով, կախում է հերթիկից, որ թե՛ երեխաներին վախեցնե պաս պահելու և թե՛ իբր մեծ պասի օրացույց ծառայի, որովհետև ամեն կիրակի երեխաները մի փետուրը պոկում են:

Մի քիչ հետո երեխաները, մի-մի խնձոր ձեռներին, գնում են իրենց մեծերի մեծ պասը շնորհավորելու և տալիս են նրանց խնձորները. սրանք էլ փոխադարձաբար մի որևէ միտք են ընծայում:

Եվ մինչդեռ կանայք զբաղվում են տան ուտիսավոր ամանները լվանալով՝ տղամարդիկ գնում են տանուտիրոջ, քահանայի և մոտիկ բարեկամների մեծ պասը շնորհավորելու:

Կեսօրին մոտ երիտասարդները, ձիեր նստած, դուրս են գալիս մի հարթ տեղ և մականախաղ (ջիլիթ) խաղում:

Երեկոյան մոտ միայն Խաչմաչ գյուղում մի էշ են թամբում, մի կին նստեցնում վրան, երեսին մուր քսում, դավուլ-գուռնի առաջնորդությամբ շրջեցնում տնետուն և դրամ հավաքում: Հետո այս դրամը պահ են տալիս, որ գատկին մատաղ անեն: Այս սևերես կինը ներկայացնում է մեծ պասը, և նրան պատվով շրջեցնում են, որպեսզի մեծ պասը առանց փորձանքի անցնի:

Մեծ պասի առաջին շաբաթը ապաշխարության օրեր համարելով՝ ծանր գործերով չեն զբաղվում. այսպես՝ կանայք ճախարակ չեն մանում, կար չեն անում, շալ չեն գործում և այլն: Երկրորդ շաբաթի առաջին երեք օրն էլ զգուշանում են ծանր աշխատանքներից՝ երկուշաբթին «գայլ կերածի և կատաղած շան», երեքշաբթին «սել (հեղեղ) տարածի» և չորեքշաբթին «կայծակ խփածի» օր համարելով: Այնպես որ՝ եթե չզգուշանան և երկուշաբթի օր ծանր գործ անեն, գայլը կուտե դրանց երեխաներին և կամ կատաղած շունը կկծե դրանց և այլն:

Ծաղկագարդ. Ծաղկագարդ բառը, գյուղացիների բերանում աղավաղվելով, դարձել է «Զըր-գարդար»: Սույն երեկոյին շատ գյուղերում աղջիկները ձեռքերին հինա են դնում, իսկ տղաները պատրաստում են ճոռան և չրխչրխկան¹: Պառավներն էլ իրենց հարսների և թոռների համար մոմեր են շինում՝ միննույն մոմի վրա ուրիշ բարակ մոմեր ամրացնելով:

Երբ այս բոլորը պատրաստում են, փոքր-ինչ քնում են: Կեսգիշերի մոտ երիտասարդները վեր են կենում, բահ ու թի վերցնում և գնում երկու ուռենի արմատից հանում և առանց մի ճյուղ կտրելու՝ տանում եկեղեցու բակը: Այս ժամանակ երեխաներն էլ հավաքվում են այդտեղ և սկսում իրենց ճոռանով ու չրխչրխկանով այնպիսի աղաղակ բարձրացնել, որ ամբողջ գյուղը զարթնում է և եկեղեցի շտապում: Երիտասարդները վազում են դեպի քահանայի տան հերթիկը և շտապեցնում, որ գա: Քահանան գալիս է, խփվում են զանգակները, և բազմությունը, միմյանց հրելով, թափվում է եկեղեցի: Ուռենիներից մինը տանում եկեղեցու մեջ մարդկանց, մյուսը կանանց կանգնելու տեղում կանգնեցնում են: Անմիջապես բոլոր ժամավորներն իրենց ձեռի երկու զույգ մոմերից մի զույգը ամրացնում են ծառերի ճյուղերին և վառում: Երեխաներն էլ, ծառերը շրջապատած, ճրոռանն են ածում: Եվ երբ քահանան օրհնում վերջացնում է ուռենին, անմիջապես բոլորը հարձակվում են այս ծառերի վրա, մի կողմից մոմերը հանգցնում, մի կողմից ճյուղերը կտրատում և միմյանցից խլխլում: Այս ճյուղերը տանում տնկում են, որ շուտով արմատ բռնեն:

¹ Մրանցից առաջինը նույն է, ինչ որ ջավախեցունը (Ազգ. հանդես բ., էր. 269), երկրորդը մի համեմատաբար երկար տախտակի երկու կողմերին հաստ թելով ամրացրած երկու փոքրիկ տախտակներ են, որոնք, խփվելով միջի փայտին, «չը՛ խկ, չը՛ խկ» ձայն են հանում



Մի ճյուղ էլ կանայք վերցնում են, որպեսզի խնոցի հարելիս նրա պոնք-ից (ծակից) կոխեն խնոցու մեջ և տեսնեն, թե կարագն արդեն եղե՞լ է, թե ոչ: Այս ճյուղը կոչվում է *«խնոցուսի»*:

Ժամասացությունն ավարտելուց հետո կանայք գնում են գերեզմանատուն, համբուրում իրենց ննջեցյալների գերեզմանները և մի-մի գույգ մում վառում: Այս ժամանակ նոր սկսում է արշալույսը բացվել, և այս բազմաթիվ մոմերը, մթության մեջ փայլելով, մի գեղեցիկ տեսարան են ընծայում:

Չարչարանաց շաբաթ. Չորեքշաբթի օրը, որ «չիք չորեքշաբթի» է կոչվում, շուշեցիները գնում են Շուշու Քամու խաչը ուխտ: Գյուղերում կանայք դնում են տան կտրին քար, մինը՝ որպես բարության, մյուսը՝ որպես չարության նշանակ: Հետևյալ օրը մի երեխայի ուղարկում են, որ գնա նրանցից մինը բերե: Եվ նայելով, թե որն է բերել, գուշակում են, թե տունը *«բարի՞ն է վերցնում, թե՞ չարը»*, այսինքն՝ թե գերդաստանը այդ տարին երջանի՞կ, թե թշվառ օրեր պիտի անց կացնի:

Նույն օրը աղջիկները խաշխաշ հարելու քարը քսում են գետնին և ասում.

«Չիք, չիք, մոկնը չիք.

Չիք, չիք, լուն չիք.

Չիք, չիք կարիճը չիք.

Չիք, չիք, չարակամը չիք.

Չիք, չիք, օձը չիք» և այլն:

Այս ասելով՝ նրանք կարծում են, որ այս բոլոր հիշածները պիտի չքանան:

Հինգշաբթի օրը կանայք խնոցի են հարում և կարագ պատրաստում. երեկոյին, երբ երեցփոխը զանգը խփում է, գալիս կանգնում է մի բարձր կտրի վրա և հրավեր կարդում տանտիկիներին, որ օրհնելու համար յուր բերեն: Կանայք էլ, մի-մի գունդ կարագ առած, գնում են եկեղեցի և տալիս երեցփոխին: Սրանից մի փոքր մասը օրհնում են, մնացածը ուղարկում քահանայի տունը: Ոտնվային քահանան լվանում է բոլոր ծերունիների ոտները և կանանց, չափահասների ու երեխաների աջ ձեռքերը և մի-մի քիչ կարագ քսում: Այս յուղը քսում են ճակատին, ձեռքին, կրծքին, աչքերին և այլն, մի քիչ էլ ձգում յուղի կարասի մեջ, որ յուղը «բարաքյաթով» լինի:

Գիշերը մեծ բազմություն է հավաքվում եկեղեցում, որ մոմերն անցկացնելիս բավական անկարգություններ են լինում: Չարաճճի երիտասարդները կարում են կնքվարտող կանանց զգեստները միմյանց, ասեղ են ցցում շորերին և այլն:

Նույն երեկոյին ոսկերիչներն անխոս շինում են երկաթե մատանիներ, որ կանայք գնում և դնում են մատները, որպեսզի մութ տեղերից անցնելիս սատանաները չխփեն:

Ուրբաթ օրը կանայք մի քիչ կար են անում, որպեսզի Հուդայի աչքերը ծակեն, ծունր չեն դնում, որովհետև Հուդան է գետնին, և Քրիստոս խաչին չեն խաչակնքում, որովհետև Քրիստոս ինքն է խաչված:

Շաբաթ օրը շատ վաղ լվացք են անում, կանայք իրենց և երեխաների գլուխները լվանում են և երեկոյան մոտ մաքուր շորեր հագնում: Տանտիկիները սկսում են պատրաստել ձուկ, փլավ և կարմիր ձվեր: Քահանան, տիրացուի ձեռք մի զամբյուղ տված, շրջում է տնետուն և օրհնում՝ ստանալով մի քանի կոպեկ և ձու: Երեկոյան նախատոնանքը շատ վաղ է սկսվում: Ժամվորներից շատերը ծոմ են լինում, մի քանիսն էլ գրպաններում մի քանի ձու են պահած լինում: Երբ քահանան *«սոնք կերեք»* է ասում, իսկույն, նույնիսկ եկեղեցու մեջ կճպում են ձվերը և ուտում: Հետո անմիջապես վերադառնում են տուն, ուր իրենց պասը ձվով ու զինով բանալով՝ ընթրում են: Սովորաբար ջրօրհները ճրագի լուսով (ճրագլուսավ), իսկ զատիկը արևի լուսով (ըրբվլուսավ) են լուծում:



Ընթրիքից հետո մյուս օրը շարունակ ոչ միայն երեխաները, այլև չափահասները ձու են կովեցնում:

Զատկի առավոտյան անում են հասարակաց մատաղ: Մի քանի նախաձեռնող մարդիկ գյուղացիներից հավաքած դրամով առնում են մի քանի ոչխարներ և մատողում: Մորթելուց առաջ ոչխարը երեք անգամ պտտեցնում են եկեղեցու շուրջը, աջ ականջը փոքր-ինչ կտրում, օրհնված աղ ուտեցնում և ապա մորթում ու արյունից էլ մի քիչ եկեղեցու պատին քսում: Երբ պատրաստ է լինում, բաժանում են բոլոր գյուղացիներին առանց խտրության, մինչդեռ Շուշիում տալիս են միայն նրանց, ովքեր որ, հատուկ այդ նպատակով նվեր տալով, տոմսակ են ստացել և ներկայացնում են:

Նշանաձև աղջիկների կեսրանքը բաժին են ուղարկում իրենց հարսնացուներին և հետո էլ իրենք գնում նրան տեսության: Ծանոթ և ազգական մարդիկ էլ գնում են միմյանց գատիկ շնորհավորելու:

Հետևյալ օրը՝ մեռելոցին, ամեն մի գերդաստան ուտելիքներ է տանում գերեզմանատուն, ուր իրենց ննջեցյալների գերեզմանների վրա լաց են լինում և գինի, օղի խմում՝ իբրև «օղորմաթաս», և հաց ուտում:

Երբ վերադառնում են, մնացորդները թողնում են գերեզմանների վրա՝ որպես հոգեբաժին:

Զատկից մինչև Համբարձում երեկոյան ժամասացությունից հետո այլևս չեն գործում, որպեսզի «հավկուր» չլինին, այսինքն՝ չգրկվեն գիշերները տեսնելու կարողությունից: Երկրագործներն էլ ուրբաթ օրը հերկ չեն անի, որպեսզի հասկը լավ բուսնի:

Համբարձում. Այս օրը բոլոր տներում կաթնապուր են եփում և բաժանում՝ որպես զոհաբերություն: Մի քանի տներ էլ տանում արտերի մոտ են եփում այս կաթնապուրը և մի քանի շերեփ շաղ տալիս արտի շուրջը, որպեսզի նախ հունձը լավ լինի և երկրորդ՝ կարկուտը չխփի, մորեխը չկտրի և այլն:

Վիճակ հանելու սովորությունը չկա:

Լուսավորչի պասը գալիս է ամառվա ամենատաք ժամանակ, երբ գյուղացիները սաստիկ զբաղված են հունձ անելով: Վարանդացիները այդ պասին «պատվի պաս» են կոչում և պատմում են, թե ժամանակով մի պառավ այդ շաբաթին պաս է պահել, որպեսզի աստված հով եղանակ տա, որ որդին հեշտությամբ կարողանա հունձ անել: Մի ուրիշ ավանդությունն էլ ասում է, թե այդ պասը պահվում է ի պատիվ այն պառավին, որն օրական մի հաց ձգելով Խոր Վիրապի մեջ, կերակրել է ս. Լուսավորչին:

Վարդավառ. Այս տոնը կոչում են «Վրդևոր»: Ժողովուրդը մեծ մասամբ ուխտ է գնում Սարուշենի Ավետարանը, Ամարաս, Նինգի գյուղի ս. Գրիգոր Լուսավորիչ, Սարիբեկ և այլն:

Ժողովրդի կարծիքով այս գիշեր բոլոր սրբերի վրա լույս է իջնում, և ով որ տեսնի այդ լույսը, ինչ որ խնդրե, կկատարվի:

Ոմանք էլ պատմում են, թե հոգեգալստյան բոլոր սրբերը բարձրանում են երկինք, իսկ վարդավառին կրկին իջնում իրենց տեղերը՝ ընդունելով լուսավոր աստղերի կերպարանք: Եվ ով որ տեսնի նրանց իջնելիս և մի բան խնդրե, անշուշտ, կկատարվի:

Նավասարդ. Վարանդացիները տոնում են այս տոնը՝ որպես արևամուտ, ինչպես մեր նախնիքը: Նախընթաց երեկոյին թխում են գաթաներ, կաթնահունց, «անկաճ» և այլ խմորեղեն: Պատրաստում են նաև «կորկոտ»¹՝ առավոտյան ուտելու:

¹ Կորկոտը այսպես են պատրաստում. մի կաթսայի մեջ դնում են ոչխարի յուղոտ միս, վրան կորկոտ (կճեպը հանած ջրեկ) ածում, ապա մի երկրորդ շաբթ յուղոտ միս դարձում, նորից կորկոտ ածում, և այսպես շարունակ, մինչև որ կաթսան բոլորովին լցվի: Հետո մի քիչ աղ են ցանում, ջուր լցնում և ծածկելով կաթսայի բերանը՝ դնում թոնրի մեջ, որ մարմանդ կրակով ամբողջ գիշերը եփվի



Նույն երեկոյին, երբ ամենքն, իրենց տները քաշված, ընթրում են, բարեկամ մարդիկ, մանավանդ խնամոնք, քավորանք, ընկույզ, տանձ, խնձոր կապելով թաշկինակների մեջ, տանում են, հարսնացուի և կամ բարեկամ մարդկանց երդիկից ցած ձգում և աննկատելի կերպով հեռանում:

Նավասարդի առավոտյան հանում են կորկոտները և ուտում: Հետո մի-մի շիշ գինի, մի քանի խնձոր առած՝ գնում են շնորհավորելու տանուտիրոջ և քահանայի նավասարդը, որոնցից և հյուրասիրվում են:

Շատերը, ի նշան ուրախության, ծառերի վրա կարմիր շորեր, կարմիր կտորներ են ձգում և կարմիր թելերով ճյուղերը կապկպում¹:

¹ Բացի իմ հավաքած նյութերից՝ ինձ համար տարբեր գյուղերից նյութեր հավաքեցին և պ. պ. Ալլահվերդյան, Վարդապետյան, Հովհաննիսյան և ուրիշներ, որոնց շնորհակալություն եմ հայտնում

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԵՐԸ

(ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

«Լեռնային Ղարաբաղի հայերը» սույն ազգագրական ակնարկը կազմված է իմ կողմից 1924թ. ամռանը՝ Անդրկովկասի ԿԳԿ-ին առընթեր Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի կազմակերպած գիտարշավի ժամանակ, որի նպատակն էր Լեռնային Ղարաբաղի, Լեռնային Քրդստանի (այժմյան Լաչինի և Քյալբաջարի շրջանները) և Զանգեզուրի տնտեսական, ազգագրական ու հնագիտական ուսումնասիրությունը: Բացի ինձնից, արշավախմբի մեջ մտնում էին ազգագրագետներ Գ.Ֆ.Չուրսինը, Լազոն, հնագետներ Ե.Գ.Պչեկինան, Ս.Վ. Տեր-Ավետիսյանը և տնտեսագետներ Գ.Ա. Քոչարյանն ու Թ.Ն. Աթաբեկովը: Արշավախումբը բաժանված էր երկու խմբի, որոնցից մեկը (Գ.Ա. Քոչարյանը, Ս.Վ. Տեր-Ավետիսյանն ու ես) պետք է զբաղվեր Լեռնային Ղարաբաղի, իսկ մյուսը (մնացած ընկերները, ինչպես նաև Ս.Վ. Տեր-Ավետիսյանը)՝ Լեռնային Քրդստանի և Զանգեզուրի ուսումնասիրությամբ:

Ստեփանակերտում մենք հանգամանորեն խորհրդակցեցինք մարզի ղեկավարության հետ, որի ընթացքում մանրամասն երթուղիներ մշակեցինք, ընդ որում, նաև հատուկ երթուղի ազգագրական ուսումնասիրության համար, որի նպատակն էր ընդգրկել բոլոր այն կետերը, ուր ամենից ավելի ցայտուն են արտահայտվում մարզի կենցաղային յուրահատկությունները: Այդ պլանին հետևելով՝ ես մարզային կենտրոն Ստեփանակերտից Ավետարանոց (Չանախչի), Թաղավարդ, Թաղլար և Տող գյուղերով ուղևորվեցի Հաղրութ գյուղը, որտեղից անցա ամենահարավային Առաքյուլի գավառակի Ծամձոր գյուղը: Վերադարձին վերստին այցելեցի Հաղրութ գյուղը, իսկ այնուհետև՝ Ջրակուս, Սոս, Գյունե Ճարտար, Գիշի, Ննգի (Զամխաթ) և Դաշուշեն գյուղերը: Այս ճանապարհն անցա մենակ: Հետագայում՝ Ստեփանակերտ վերադառնալուց հետո, իմ և Գ. Քոչարյանի վերադառնալուց հետո, իմ և Գ. Քոչարյանի երթուղիները համընկան, և ուղերթը շարունակեցինք երկուսով՝ անցնելով Վանք (Գանձասարի վանքի մոտ), Վաղուհաս, Հաթերք, Մաղավուզ, Երից-Մանկունք, Մեծ շեն, Կուսապատ և Մարտակերտ գյուղերով՝ այնտեղից ելնելով Աղդամ: Այսպիսով, ինձ հաջողվեց հատել ամբողջ Լեռնային Ղարաբաղը՝ սկզբում հարավային, այնուհետև հյուսիսային ուղղությամբ, և այցելել ինչպես կենտրոնական, այնպես էլ ամենահարավային և ամենահյուսիսային մասերը՝ հավաքելով բազմակողմանի հարուստ նյութ:

Երկրամասի պատմական շրջաններից միայն Վարանդան էր (այժմյան Մարտունու շրջանը և Ստեփանակերտի շրջանի մի մասը) մինչ այդ ազգագրորեն հետազոտված Ե.Լալայանի կողմից: Նրա երկասիրությունը հրատարակված է «Ազգագրական հանդես»-ում և այնուհետև լույս է ընծայվել առանձին գրքով՝ «Վարանդա» խորագրով¹: Լեռնային Ղարաբաղի առանձին վայրեր նկարագրվել են ուսուցիչների կողմից, նրանց աշխատանքները տարբեր ժամանակներում ստագրվել են Կովկասի ուսումնական օկրուգի հրատարակած «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК) -ի մեջ, այսպես՝ Հաղրութը՝ 6-րդ պրակում,

¹ Տե՛ս Ե. Լալայան, **Վարանդա**, «Ազգագրական հանդես», Բ գիրք, Թիֆլիս, 1898: Դրանից երեք տարի առաջ՝ 1895 թ., Բաքվում լույս է տեսել Մակար Բարխուդարյանի «Արցախ» տեղագրական և մասամբ աշխարհագրական բնույթի գիրքը. գրքի մեծ մասը նվիրված է Լեռնային Ղարաբաղին



Կուսապատը՝ 13-ում, Դաշ Ալթին՝ 15-ում, իսկ 11-րդ պրակը վերաբերում է Շուշու, Տոդի ու Մուխրենեսի արհեստագործական զբաղմունքներին:

Իմ շրջագայության ժամանակ այդ նյութերը ստուգվեցին, տարածապես ընդլայնվեցին և զգալիորեն լրացվեցին: Ես հատուկ ուշադրություն էի դարձնում առանձնապես հետհեղափոխական ժամանակաշրջանում (մինչև 1924թ.) տնտեսական և սոցիալական վերափոխումների հետևանքով ժողովրդի կենցաղում տեղի ունեցած փոփոխություններին:

Մեր ուսումնասիրությունից, առանձնապես զանգվածաբար տնտեսության կոլեկտիվ ձևերին անցնելուց հետո, այդ փոփոխություններն ավելի խորացան և առավել չափով շոշափեցին տեղական կյանքի բոլոր կողմերը: Թե՛ գիտական, թե՛ գործնական առումով վերին աստիճանի արժեքավոր կլինեք, անշուշտ, նշել նաև կենցաղի նոր առաջացող ձևերի բնորոշ գծերը:

Դրանց մի կողմի քննարկմանն է նվիրված Ի. Պետրուշևսկու *«Լեռնային Ղարաբաղի գյուղացիների մինչքրիստոնեական հավատալիքների մասին»* աշխատանքը², որը հիմնված է 1928թ., այսինքն՝ այն ժամանակվա նյութերի վրա, երբ դեռ ամբողջ թափով չէր ծավալվել կոլտնտեսային շարժումը: Բայց հին սովորույթները, որոնք մի քանի տասնամյակ առաջ տակավին պահպանվում էին ժողովրդի մեջ, արդեն այն ժամանակ՝ մեր ուղևորությունից չորս տարի անց, ավելի կցկտուր էին դարձել, շատ դեպքերում էլ լրիվ վերացել: Ներկայումս հետազոտողը հանդիպում է դատարկության այնտեղ, ուր 1924 և 1928թթ. մենք, համենայն դեպս, հանդիպում էինք ծերունիների հիշողության մեջ պահպանված և կորստից փրկված սովորույթների վերապրուկների, որոնք՝ որպես աղբյուր, այնքան կարևոր են հասարակական զարգացման վաղուց անցած փուլերի ըմբռնման համար:

² Տե՛ս И. Петрушевский, *О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха*, Баку, 1930



ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մահմանները: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որն այժմ մտնում է Ադրբեջանական Հանրապետության կազմի մեջ, ընդգրկում է նախկին Ելիզավետպոլի նահանգի Ջիվանշիրի, Շուշու և Կարյազինոյի գավառների լեռնային ու աննշան չափով՝ ցածրադիր շրջանները: Մի ժամանակ այդ ամբողջ երկրամասը մտնում էր Արցախի ավելի ընդարձակ հայ-աղվանական երկրամասի մեջ: Ռուսաստանի հետ միավորվելուց (սկզբում՝ 1805թ., իսկ վերջնականապես, Գյուլիստանի պայմանագրով՝ 1813թ.) ոչ շատ առաջ այն տրոհված էր չորս ավատատիրական իշխանությունների՝ Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի, որոնք «մելիքություն» էին կոչվում ու հարակից Գյուլիստանի մելիքության և Ջանգեզուրի հետ միասին XVIII դարում Մերձկուրյան իջվածքի մի մասի հետ միավորված էին մեկ՝ Ղարաբաղի խանության մեջ: Այսպիսով, այժմյան Լեռնային Ղարաբաղը կազմում է նախկին Ղարաբաղի խանության (որի սահմանները տարածվում էին հեռու՝ հյուսիսային, հարավային, մասամբ էլ արևելյան ուղղությամբ) միայն մի մասը:

Լեռնային Ղարաբաղը զբաղեցնում է Ղարաբաղի տարածքի ամբողջ հյուսիսարևելյան լանջը և Թարթառի (Տրտու) ձկահարթի (դեպրեսիա)¹ մի մասը, որոնք առաջացել են երկրաբանական երրորդական ժամանակաշրջանում երկրակեղևի ճեղքվածքների միջև, որոնք անցնում էին մի կողմից՝ Ղարաբաղի այժմյան լեռնաշղթայի գծով մինչև Արաքս գետի ճեղքվածքը, մյուս կողմից՝ այդ գծի երկու ծայրերով, նրան գրեթե ուղղահայաց և ուղղված դեպի Կուր գետը: Լեռնային Ղարաբաղի արևմտյան սահմանը հանդիսացող բուն Ղարաբաղի լեռնաշղթան ձևացնում է ծովի մակերևույթից 1800-2100մ. բարձ. մակաշերտի եզր, որի վրա պահպանվել են ավելի վաղ գոյացման ծալքեր, այդ լեռնաբեկորի հյուսիսարևելյան ծայրը իջնում է դեպի Կուր գետը: Այդ լեռնաշղթայի սրածայր կատարը, որի վրա շարված են Ալադայա (2597մ), Ղզղալա (2845մ), Մարի-Բարա (2311մ), Մեծ Քիրս (2742մ) և, վերջապես, Դիզափայտ (2497մ) գագաթները, Լեռնային Ղարաբաղը բաժանում է Լաչինի և Ղուբաթլիի շրջաններից:

Լեռնային Ղարաբաղն ընդգրկում է նաև Թարթառի ձկահարթի գերակշռող մասը՝ երկրակեղևի իջվածքներ Գյանջայի (Գանձակ, այժմ՝ Կիրովաբադ) և Ղարաբաղի բարձրացած լեռնային մասերի միջև: Այստեղ Լեռնային Ղարաբաղի արևմտյան սահմանը հատում է ձկահարթը մինչև Մոավ լեռնագագաթը (3633մ), որը գտնվում է լեռնաբեկորի Գյանջայի հատվածի հարավային ճեղքվածքի ելուստ Մոավի հրաբխային լեռնաշղթայի վրա: Մոավ լեռան բարձրագույն կետը Գյամիշ գագաթն է (3740մ):

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հյուսիսային սահմանն անցնում է Մոավ լեռան արևելյան մասով, այնուհետև թեքվում հյուսիս-արևելք: Մարզը Ղարաբաղի իջվածքից հատում է խիստ աննշան մի շերտ, քանի որ նրա արևելյան սահմանը մոտ է նախալեռների ստորոտին, որոնցից այն իջվածքում կամ դրա ծայրամասերում հեռանում է 3-10կմ՝ մի կողմ թողնելով Թարթառ, Ադդաշ, Կարյազինո, Ջեբրայիլ և այլ բնակավայրերը: Հարավային սահմանն անցնում է անտառազուրկ ու չոր դարավանդներից մեկով, որոնցով Ղարաբաղի լեռնաշղթան Դիզափայտից իջնում է դեպի Արաքս գետը:

Ռելիեֆը: Լեռնային Ղարաբաղի տարբեր կետեր ընկած են ծովի մակերևույթից 0-2000մ բարձրությամբ, ընդ որում, ռելիեֆը բնութագրվում է ոչ այնքան ցածրություններով, որքան նախա-

¹ Տե՛ս Օր. Օսվալդի կազմած երկրաբանական քարտեզը (նրա „К описанию тектонического развития Армянского нагорья“ (Թիֆլիս, 1916, I) գրքում



լեռներով ու լեռնային տեղամասերով: Երկրամասի բաժանումը շրջանների հնում, ինչպես և ներկայում որոշվել է հենց գլխավոր լեռնաշղթաների ուղղություններով: Այս տեսակետից երկրամասը կարելի է բաժանել երկու մասի. գրեթե լրիվ Թարթառի ձկահարթում ընկած հյուսիսային կեսում այդ շղթաներն ունեն կանոնավոր հյուսիսարևելյան ուղղություն, իսկ հարավային մասում գերակշռում է հարավարևելյան ուղղությունը: Հյուսիսային կեսում Թարթառ գետի հովիտը հարավից գոտևորում է մի բավականին բարձր լեռնաբազուկ, որն սկսվում է Չիլգյաս գագաթից, և որը հայերն անվանում են Արծաթահանքի գագաթ: Այն ձգվում է Մոսվի լեռնաշղթային գրեթե զուգահեռ, և դրա գագաթները զարմանալի օրինաչափությամբ ցածրանում են հյուսիս-արևմուտքից արևելք՝ Խոջա-Ուրթը՝ 2302մ, Հաքեգանը՝ 1759 մ, Սենգեռը՝ 1475մ, Կուսապատը՝ 1374մ: Լեռնագիծն ավարտվում է Թարթառ լեռից ոչ հեռու՝ 300մ մոտ բարձրություններով: Արծաթահանքի շղթայից քիչ ցած, նույն՝ հյուսիսարևելյան ուղղությամբ անցնում է Ղարաբաղի լեռնաշղթայի ճյուղավորություն կազմող երկրորդ լեռնապարը: Այն բաժանվում է Ղզղալա գագաթից (նրա առանձին գագաթներ բարձր են՝ Գաչաղայը՝ 1889մ, Սաքսագանը՝ 1721մ, Թեշղարասարան՝ 1303մ, Ճալի-դաղը՝ 905մ, և ավարտվում է Բաղեշլու գագաթով (706մ) Լեռնային Ղարաբաղի սահմանին մոտ՝ Շահբուլաղի հորդաբուխ աղբյուրից վեր:

Շատ ավելի բարդ է Մեծ Քիրսի երրորդ ճյուղավորության համակարգը, այն նույնպես Չախմախի ճյուղավորություն անվամբ անջատվում է Ղարաբաղի լեռնաշղթայից՝ Մեծ Քիրսից, և ձախ կողմում թողնելով Գարգառ գետի կիրճը՝ Փոքր Քիրս (2239մ), Չախմախ (1567մ), Բողուրխանի գանգված (1624մ), Խաչի-Խուրթ (1539մ) գագաթներով հասնում է Վարազաբուն (Արանգամին) գյուղը՝ Աղդամից վեր ավարտվելով Գուրջու-Խուրթ (472մ) գագաթով: Այս լեռնաճյուղից էլ հենց հարավային կեսում գնում են հարավարևելյան ուղղություն ունեցող ճյուղավորությունները: Դրանցից երեքը (որոնցից ամենահարավայինը կոչվում է Խազազի) հովհարածն բաժանվում են գանգվածային հանգույց Բողուրխանից, ընդ որում, մեջտեղինն իր հերթին տրոհվում է երկու ճյուղի: Ղարաբաղի լեռնաշղթայի ծայր հարավային վերջավորությունից՝ Դիզափայտ գագաթից, դեպի Արաքս է իջնում երեք ճյուղավորություն: Ինչպես Չախմախի, այնպես էլ Դիզափայտի ճյուղավորությունները տարածվում են Ղարաբաղի լեռնաբեկորի ընդարձակ սանդղավանդակով՝ գոյացնելով շատ թե քիչ լայն հովիտներ, որոնցով հոսում են Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս գտնվող տափաստաններն իջնող արագահոս գետակները:

Գետերը: Այնտեղ՝ Չախմախի լեռնաճյուղի Վարազաբնի շարունակության և եռանդամ Բողուրխանի համակարգի հյուսիսային ճյուղավորման միջև, աղբյուրներով հարուստ այդ շրջանից սկիզբ է առնում և դեպի Աղդամի մերձակայքը հոսում շուրջ չորս գետակ: Բողուրխանի հյուսիսային և միջին ճյուղավորությունների միջև հոսում է Հոնաշեն գետը: Միջին լեռնապարի ճեղքվածքից դեպի Մուղանի տափաստանն է հոսում Ղզլչայ գետը: Բողուրխանի համակարգի միջին և հարավային լեռնապարերի միջև գտնվող հովիտից այդ նույն տափաստանն է ելնում նաև Կորուս գետը, որը թափվում է հարավային Բողուրխան և Փոքր Քիրս ճյուղավորությունների միջև գտնվող հովտից իր ջրերը հավաքող Կենդիլան գետը: Ավելի հարավ՝ Փոքր Քիրսի լեռնաճյուղի ու Դիզափայտի միջև, այդ բոլոր ջրերը միավորվում են Ղուրու-սու («Ցամաք») գետում (Տողի հովիտ) և դուրս են գալիս դեպի Կարյագինո: Հաղրութի հովտում՝ Դիզափայտի համակարգի հյուսիսային և հարավային ճյուղավորումների միջև, գոյանում է Կոզլու («Ընկույզի») գետը, և, վերջապես, Արաքսյուլի հովտում, միջին և հարավային ճյուղավորումների միջև՝ Ջեբրայիլ հոսող Ծամձոր գետակը:



Չախմախի լեռնաճյուղից հարավ ընկած շրջաններից հոսող այս բոլոր գետակները չափերով, երկարությամբ և ջրառատությամբ զգալիորեն զիջում են հյուսիսային կեսի գետերին՝ Գարգառին, Խաչենին ու Թարթառին, որոնց հովիտները միաժամանակ հաղորդակցության կարևոր ուղիներ են Մերձկասպյան տափաստանների և Հայկական ՄՍՀ-ի միջև: Դա բացատրվում է ոչ միայն Թարթառի ճկահարթի մթնոլորտային տեղումների առատությամբ, որը, ի միջի այլոց, Մռավի լեռնաշղթայի կողմից Կասպից ծովի գոլորշիների շարժումը կասեցնելու արդյունք է, այլ նաև այն տարածությունների մեծ մակերեսով, որոնց հոսքն են այդ գետերը: Այդ գետերից ամենամեծը Թարթառն է, միակը, որ հասնում է Կուր գետին, մյուսները՝ Խաչենն ու Գարգառը, ցածրավայրի բնակիչների կողմից ջրանցքների են տրոհվում և հարավային կեսի գետերի նման չեն հասնում Կուր գետին: Միայն Խաչենն է, որ որոշ տարիներ, երբ շատ վարար է լինում, իր լայն հունով հասնում է Կուրին: Ընդհանրապես, որքան Արաքսին ավելի մոտ, այնքան մթնոլորտային տեղումները քանում են և ավելի շատ է զգացվում խոնավության ու հոսքային ջրերի պակասը, լեռների լանջերն այդ ուղղությամբ ավելի ու ավելի են մերկանում անտառածածկույթից¹:

Անտառները: Վերջին հարյուրամյակի ընթացքում հարավային մասի անտառները խիստ նոսրացել են: Տեղ-տեղ դարավոր անտառներից միայն հուշ է մնացել՝ առանձին ցցված ծառերի կամ մոշի ու գիհու թփուտների տեսքով:

Անտառածածկույթն այժմ լեռնաշխարհի ստորոտից բարձրացել է վեր՝ դեպի Ղարաբաղի լեռնաշղթայի գագաթային մասը: Այն դեռ պահպանում է իր փառահեղ-կուսական բնույթը ամենահյուսիսային մասում, լեռնահովիտների և Խաչեն ու հատկապես Թարթառ գետերի վերին հոսանքների կիրճերի լանջերին, որտեղից տնտեսական, հասարակական ու քաղաքական բուռն կյանքը XVIII դարում տարածվեց Գարգառի հովիտը, իսկ ավելի կոնկրետ, Ղարաբաղի խանության հաստատումից հետո՝ Շուշի մայրաքաղաք:

Գարգառ գետի ափերի երկայնքով լեռնալանջերն այժմ անտառներից զրեթե զրկված են: Ժամանակին լեռնալանջերը ծածկող խիտ անտառները կիրճերի հետ միասին տեղական բնակչության համար ռազմական վտանգի դեպքում լավագույն թաքստոցներ են եղել: Անտառները միաժամանակ լրացնում էին արոտավայրերի ու խոտհարքների պակասը, բնակչությունն ամռանն ու ձմռանը անասուններն արածեցնելիս օգտվել է դրանցից: Չնայած արգելիչ միջոցառումներին՝ բնակչությունը դժվարությամբ է հրաժարվում անասուններն ամռանը անտառ քշելու և անտառի խոտով, կանաչ տերևներով ու մատղաշ շյուղերով կերակրելու հին տնտեսական սովորությունից՝ դրանով իսկ հսկայական վնաս հասցնելով մատղաշ ծառերին ու հողի տակից նոր ելնող շիվերին: Անտառին մոտ լինելն անցյալում, ասես, թուլացնում էր անասունները բարձր լեռնային արոտավայրեր քշելու անհրաժեշտությունը: Ձմռանը, չոր խոտի պաշարների սահմանափակության հետևանքով, բնակիչները ջանում էին անասունները քշել անտառ, որտեղ տավարածը կտրտում էր ծառերի մատղաշ ճյուղերը և մի մասը տալիս սոված անասուններին, իսկ մյուս մասը, շալակած կամ գրաստներին բարձած, հասցնում գյուղ (այժմ ձմռանն անասունների կերը լրիվ ապահովելու միջոցներ են ձեռք առնված): Ղարաբաղի սարահարթի բարձրալպիական արոտավայրերից (Ղարաբաղի լեռնաշղթայից այն կողմ) Լեռնային Ղարաբաղի բնակչությունը համեմատաբար ավելի քիչ էր օգտվում, քան Մերձկասպյան տափաստանների կամ Զանգեզուրի ցածրավայրերի բնակիչները:

¹ Լեռնային Ղարաբաղում, ինչպես և Անդրկովկասի այլ վայրերում, ջրի պաշարների մեծացման հարցն ավելի ու ավելի սուր է դրվում: Հաղորդում էս մասնակցեցի խորը ենթահողային շերտերից ջրերի արհեստական դուրսբերմանը՝ քյահրիզների կառուցմանը նվիրված խորհրդակցությանը



Երկրի անտառային բնույթը լեռնային բնության հետ միասին ոչ միայն օգնում էր տափաստանի դեմ մղած պայքարին, այլև խոր կնիք էր դրել բնակչության ամբողջ տնտեսական գործունեության ու կենցաղային յուրահատկությունների, բնակավայրերի ու բնակարանների, ապրելակերպի, հավատալիքների ու արվեստի ձևերի վրա:

Բայց անտառային տնտեսությունն արագ անկում էր ապրում: Փայտե առարկաներ՝ տաշտեր, գդալներ, կժեր, թիեր և այլն շինելու արհեստը հեղափոխությունից առաջ արդեն դադարել էր համաժողովրդական գործ լինելուց և մեկուսացել առանձին գյուղերում (Տումի, Շիթումե, Սուխրենես): Երկրի տնտեսության մեջ մինչ այդ ամեննին էլ ոչ երկրորդական դեր խաղացած անասնապահությունը (բարձրադիր վայրերում) և հացամշակությունն ու այգեգործությունը (ցածրադիր գոտում) դարձան գերակշռող ձևեր: Հավանաբար, այգեգործությունն ավելի վաղ դարձավ այդ մարզին բնորոշ և տարբերեց նրան հարևան մարզերից՝ հանդիսանալով նրա «Ղարաբաղ» («Սև այգի») անվանվելու պատճառը: Այս անվանն իր նախասկզբնական՝ հայկական («Սև այգի») ձևով հանդիպում ենք XIII դ. պատմիչ Սամվել Անեցու մոտ, իսկ թուրքական «Ղարաբաղ» ձևն առաջին անգամ գրառված է 1388թ¹:

Այգիների համար հարմար են մարզի համեմատաբար ցածրադիր շրջանները, ավելի բարձրերում չեն հասունանում ո՛չ խաղողը, ո՛չ թուրթ: Ռուսական և արտասահմանյան շուկաներում հում մետաքսի պահանջարկի մեծացման հետևանքով թթի տնկարաններն սկսեցին ավելի ու ավելի դուրս մղել մրգատուներին, և, չնայած քաղաքացիական պատերազմի ժամանակ կատարված հատումներին, դրանց տարածությունը (1500հա) 1924թ. քիչ էր զիջում մրգատուների տարածությանը (1800հա): Դիզակում, Վարանդայում և Խաչենում թթի տնկարանները մասնատված են բազմաթիվ ցածրադիր բնակավայրերով, գյուղի ցանկապարսպին առընթեր՝ գետի կամ ոռոգիչ առվի մոտ, կանոնավոր շախմատաձև կարգով: Տեղական գինին և օղին հազիվ էր բավարարում տեղի պահանջը: Այդ մթերքները չնչին քանակությամբ էին հասնում Բաքվի շուկա, բայց Շուշու թթի սպիրտն ու մետաքսն արտածման հիմնական առարկաներն էին, որոնցով մինչև հեղափոխությունն ապահովվել է շատ գյուղերի բարեկեցությունը: Ընդհուպ մինչև օգոստոսի վերջը Ղարաբաղի նախալեռնային գյուղերում օդում կանգնած էր լինում թորվող թթի օդու հոտը: Օղին կենցաղում բացառիկ տեղ էր գրավում. դրանով էր գյուղացին սկսում իր աշխատանքային օրն ու դրանով առաջին հերթին պատվում տուն մտած հյուրին:

Բայց և այնպես առավել բարձրադիր շրջաններում ոչ թե թթի տնկարանները, այլ առավելապես հացահատիկների արտերն էին ձգտում անտառից հող խլել:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը անտառները ենթարկվում էին դաժան ոչնչացման և, ի հաշիվ դրանց՝ արագ թափով մեծացվում էին հերկվող տարածությունները, սակայն մերկացած հողն անձրևահոսքերով և ձյան հալոցքաջրերով մի քանի տարում արագ տեղատարվում էր: Արդյունքը եղավ այն, որ ամբողջ գավառներ, օրինակ՝ Հաղրութի գավառը, զրկվեցին փափուկ հողածածկույթից: Այդ պատճառով բնակչությունն ստիպված էր լինում վերակառուցել իր տնտեսական կյանքը, փոխել սովորույթներն ու յուրացնել նոր հմտություններ:

Բաժանումը շրջանների: Լեռնային Ղարաբաղը ամենախայտաբղետ ձևեր ունեցող շատ թե քիչ լայնահուն և բացազատ լեռնագոգերին ու հովիտներին հաջորդող անձուկ ու անդնդախոր

¹ Թովմա Մեծոփեցի, *Պատմություն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց*, Փարիզ, 1860, էջ 20: «Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս Գիւտի ժամանակաց մինչև ի ներկայիս ծայրաքաղ արարեալ», Վաղարշապատ, 1893, էջ 193

Սկադեմիկոս Գր. Ղափանցյանն իր „Хайаса-колыбель армян“, աշխատության մեջ Ղարա-Բաղ տերմինը կապում է արդի Չանգեզուր և Աղրբեջան հին բալիների շարժման, Bala-Karan ցեղի, այլ ոչ թե թուրքական դարա-սև, բաղ-այգի բառերի հետ (ծանոթ. խմբ.)



կիրճերի մեկուսի երկրամաս է: Շրջանների բաժանելիս այստեղ նշանակություն են ունեցել ոչ այնքան գետերի կիրճերը, որքան լեռնաշղթաները, որոնցում սովորաբար չկան անցուղիներ: Համբերատար ու դիմացկուն ավանակը կամ ջորին, ինչպես նաև դարաբաղյան ցեղի հաստատաքայլ ձին մարդուն կամ ծանր բեռը բարձրացնում էին գառիթափ ճանապարհներով, որոնք երբեմն անցնում էին լեռների ուղղաբերձ լանջերով կամ իջնում դրանց կատարներից ստորոտը՝ դեպի խոր կիրճում աղմկող վտակի հատակը:

Գետերի առանձին ավազաններ և հովիտներ ապրում էին գրեթե մեկուսի կյանքով՝ հնարավորություն տալով անմիջականորեն կենտրոնական շահական իշխանությանը ենթարկվող առանձին ավատատիրական իշխանություններին՝ մելիքություններին, առանձնանալու:

Պատմական Դիզակն ընդգրկում է Առաքյուլի, Հաղբուրթի և Կուրու-Չայ գետի հովիտները: Սա Փոքր Քիրսից ձգվող լեռնաձյուղով բաժանվում էր հարևան Վարանդայից, և այստեղ իշխում էր Տողի դոյակում նստած (XVIII դ. կեսին մի մասը մահմեդականություն ընդունած) Ավանյանների կամ Եգանյանների մելիքական տունը: Ավետարանոց (Չանախչի) գյուղում նստավայր ունեցող Շահնագարյան մելիքների տիրույթ Վարանդան ընդգրկում էր մնացած Կենդալան, Կըղզ-Չայ և Խոնաշեն գետերի հարավային հովիտներն ու մինչև Վարազաբնի լեռնաձյուղն ընկած մանր հովիտները: Ժամանակ առ ժամանակ դրա սահմանները տարածվում էին Չախմախի լեռնաձյուղի հյուսիսային կողմը՝ իջնելով դեպի Գարգառ գետը, որից դեպի հյուսիս՝ մինչև Արծաթահանքի լեռնաշղթան, Գարգառ ու Խաչեն գետերի ձախակողմյան վտակների ավազաններում տարածվում էր Խաչենի գավառը: Խաչենը պատկանում էր ամենահին մելիքական տոհմերից մեկին՝ Հասան-Ջալալյանների տանը, որոնց դոյակի ավերակներն առկա են Դարպասներ (Դըբսնի) վայրում, Վանք գյուղից ոչ հեռու, Գանձասարի վանքից ներքև: Ավելի հյուսիս՝ Արծաթահանքի լեռնաձյուղից այն կողմ՝ Թարթառի հովտում, իրենց տիրույթները մինչև Մոավի լեռնաշղթան էին ուզում ամբողջացնել Ջրաբերդի Իսրայելյան մելիքները, որոնց նստավայրը Ջրաբերդի անառիկ ամբոցի հովանու տակ գտնվող Սայրաքաղաք դոյակն էր կամ «Ինը-մաս» մենաստանի մոտի դոյակը:

XVIII դարի կեսերին դաշտային Ղարաբաղից՝ Ջիվանշիրից, գաղթած Փանահ խանը¹, օգտվելով մելիքների միջտոհմային գժտություններից, Վարանդայի մելիք Շահնագարի օգնությամբ հաջողացրեց անցնել մելիքների թիկունքը և պինդ նստել ամրացված Շուշիում՝ Գարգառ գետի վերին հոսանքում բարձրացող սարահարթում: Նա հարկադրեց Ղարաբաղի տիրողներին ընդունել իր իշխանությունն ու հրաժարվել Իրանական կենտրոնական կառավարությանն անմիջական ենթարկումից: Իր խանության սահմանները Փանահ խանը ընդարձակեց Ղարաբաղի լեռնաշղթայից այն կողմ՝ ընդհուպ մինչև Արաքս՝ իրեն ենթարկելով Զանգեզուրի և Մեղրու շրջանները: Շահի կառավարության նկատմամբ նա իրեն պահում էր բավականաչափ ինքնուրույն և անկախ: Սակայն նրա որդի Իբրահիմ խանը Վրաստանը Ռուսաստանի հետ միավորվելուց հետո՝ 1805թ., հարկադրված էր ներկայանալ Վրաստանի կառավարիչ իշխան Ցիցիանովի բանակատեղի, որը, զորքերով հանդերձ, գտնվում էր խանության սահմանի մոտ՝ Քյուրուկ-չայ գետի ափին, և խնդրել՝ Ղարաբաղի խանությունն ընդունելու Ռուսաստանի հովանավորության ներքո: Այստեղ կնքված պայմանագրի համաձայն՝ Իբրահիմ խանը, հրաժարվելով Իրանի վասալը լինելուց, պարտավորվում էր Ռուսաստանին վճարել ութ հազար ոսկի: Շուշի մտցվեց ռուսական կայազոր, խանին կցվեցին ռուս դիտորդներ ու խորհրդատուներ, խանին թողնվեց միայն ներքին գործերի կառա-

¹ Ջիվանշիրի ավազներից մեկը՝ Շահնագարը, որը թշնամի էր Արցախի մելիքներ Աղամին և Հովսեփին, դաշինքի մեջ մտավ Փանահ խանի հետ և նրան իրավունք տվեց իր տիրույթներում կառուցելու Շուշու ամուր բերդը (ծանոթ. խմբ.):



վարումը: Իբրահիմ խանի սպանությունից հետո, որը Ռուսաստանի գերագույն իշխանությունն ընդունելուց մեկ տարի անց ձգտում էր խախտել այդ դաշինքը և վերադառնալ շահի իշխանության տակ, ռուսական կայսեր անունից խանի հետնորդ հայտարարվեց նրա ավագ որդի Մեհտի-Ղուլի խանը, որի օրոք Ռուսաստանի կուսակիցներից սահմանված գավառային դատարանը վավերացրեց խանի կարգադրությունների մի մասը, հատկապես հողային հարցերին վերաբերող կարգադրությունները¹:

Իրանը միայն 1813թ. Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղի խանությունը պաշտոնապես հանձնեց Ռուսաստանին՝ առանձնացնելով, սակայն, Ոխչի (կամ Չավնդուր, կամ Ղափան) ու Արաքս գետերի միջև ընկած շրջանը, այսինքն՝ ամբողջ այժմյան Մեղրու շրջանը:

1822թ. Մեհտի-Ղուլի խանի և նրա մերձավորների՝ Պարսկաստան փախչելուց հետո Ղարաբաղի խանությունը վերակազմվեց «Ղարաբաղի մարզի», որն անմիջականորեն կառավարվում էր ռուսական կառավարչության կողմից: Թուրքմենչայի պայմանագրի (1828թ.) համաձայն, ըստ որի ռուս-իրանական սահման ճանաչվեց Արաքս գետը, այդ մարզի կազմի մեջ նոր հողեր մտան (Ոխչու և Արաքսի միջագետքից): «Մարզում» դեռ երկար ժամանակ պահպանվում էր հին բաժանումը մահալների: Հետագայում այն միացվեց Ելիզավետպոլի նահանգին և բաժանվեց գավառների, որոնց սահմանները շատ անգամներ վերաձևվեցին:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը կազմվել է Շուշու, Ջիվանշիրի, Կարյազինոյի գավառներից և Կուբաթլիի գավառի մի քանի գյուղերից:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, հիմնված պատմական բաժանման վրա, կազմվեց չորս շրջան՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի և Ջրաբերդի: Սակայն դրանց սահմաններն արդեն լիովին չէին համընկնում պատմական սահմաններին (որոնք, ի միջի այլոց, մելիքների ժամանակ փոփոխվում էին՝ կախված այս կամ այն իշխանական տան գորանալուց): Ավելի ուշ այդ սահմանները որոշ փոփոխության ենթարկվեցին շրջանների հին անվանումների պահպանմամբ²:

¹ „Обозрение российских владений за Кавказом,, , այսուհետև՝ ՕՐՅԿ, Կ. III, ՏԻ 6., էջ 304

² Ներկայումս ԼՂԲԸ-ի կազմված է հետևյալ վարչաբնատարածքային շրջաններից՝ Հաղրութի, Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի (մինչև 1978-ը՝ Ստեփանակերտի, որից հետո վերջինս ստացել է քաղաքային միավորի իրավասություն) և Շուշու՝ որպես հետևանք համապատասխան տեղավայրերի վերանվանման և շրջանների սահմանների ներքին որոշ փոփոխման (ծանոթ. խմբ.)



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Էթնիկ կազմը: Լեռնային Ղարաբաղը հայկական այն եզակի մարզերից է, որոնց բնակչությունը, առաջանալով պատմական վաղ ժամանակաշրջանում, հետագայում՝ շատ դարերի ընթացքում, զանգվածաբար պահպանել է իր էթնիկ կազմը, որը, սակայն, այստեղ արդեն չի կրում այն ամբողջական բնույթը, որը նրան հատուկ էր մինչև XVIIդ. և XVIIIդ. կեսերը: Այն դեպքում, երբ այլ մարզերի մեծ մասը կամ լրիվ գրկվել է իր բուն հայկական բնակչությունից (թուրքական պետության սահմաններում), կամ ուրիշ մարզերից այնքան օտար տարրեր է ընդգրկել իր մեջ (օրինակ՝ Արարատյան ու Շիրակի հարթավայրերում), որ բոլորովին կորցրել է նախասկզբնական թե՛ լեզվական և թե՛ կենցաղային կերպարանքը, Լեռնային Ղարաբաղը պահպանել է համեմատաբար ավելի շատ էթնիկ ժառանգություն:

Հայ բնակչությունը մինչև XVIIIդ. կեսերը Լեռնային Ղարաբաղում բավականին համախումբ էր, և չնայած հայկական գյուղերի կողքին հանդիպում էլ էին ադրբեջանական բնակավայրերի առանձին մանր օազիսներ, բայց և այնպես, մարզում դեռ երկար ժամանակ ամուր չէր հաստատվում մահմեդական ազնվականությունը, ու այդ բնակավայրերն էլ ենթարկվում էին տեղական իշխանների՝ մելիքների կառավարմանը: Մինչդեռ, ամռան չորային ամիսներին անասուններին բավականաչափ կեր չապահովող մերձկասպյան տափաստանների անասնապահության պայմանները հարթավայրերի անասնապահ բնակչությանն ավելի հրամայաբար էին մղում ամրացնելու իրենց դիրքերը Ղարաբաղի լեռնաշղթայից այն կողմ՝ մինչև Գորիս իջնող դարավանդները տարածվող Ղարաբաղի հրաբխային սարահարթի կանաչախիտ ալպիական մարզագետիններում: Միայն դրանով պետք է բացատրել ինչպես Շահբուլաղի աղբյուրների, այնպես էլ Գարգառի հովտի մուտք Ասկերանի՝ այդ ճանապարհների մատույցները գրավելու կիսավաշկատուն անասնապահական ցեղերից մեկի ներկայացուցիչ ջիվանշիրցի Փանահ խանի կրկնակի փորձերը: Նրան վերջապես հաջողվեց սողոսկել ավելի՝ բուն լեռնաշխարհի սիրտը, և ամրանալ Գարգառի ճանապարհի ոչ միայն սկզբի, այլ նաև գլխավոր կետի՝ գրեթե հենց Ղարաբաղի լեռնաշղթայի լեռնանցքի մոտ, բարձր լեռնային արոտավայրերում: Այստեղ նա հաստատվեց 1752թ. իր վերահիմնած և ամրացրած Շուշիում: Շրջակա տեղանքի վրա վերից իջնող և երեք կողմից Գարգառ գետի և նրա աջ վտակի վրա ուղղաբերձ անդունդներով ընդհատվող այս ելուստից Փանահ խանը, իսկ այնուհետև նաև նրա ժառանգորդ Իբրահիմ-խանը ոչ միայն տափաստաններից լեռնային ալպիական արոտավայրերը տանող գլխավոր ուղին էին հսկում, որից օգտվում էին Թավրիզից Շամախի (այն Կովկասյան լեռնաշղթայի վրայով կապված էր ռուսական շուկայի հետ) գնացող ապրանքներով բեռնված կարավանները, այլ նաև հնագանդության մեջ էին պահում ասես վասալներ դարձած տեղական իշխաններին: «Ղարաբաղի խանության» կազմավորման հետ ադրբեջանցի էթնիկ տարրերը սկսեցին հիմնվել ոչ միայն Ասկերանի մոտ (Խոջալիի հովիտ), այլ նաև Շուշիում և էլ ավելի վեր, ինչպես նաև այլ վայրերում, այն դեպքում, երբ որոշ մելիքական տոհմեր իրենց գյուղացիների մի մասի հետ միասին սկսեցին հեռանալ Շամախի, Շամշադին, Ղազախ, Բորչալու, դեպի այն մարզերը, որոնք Վրաստանի միջոցով ուղղակի կամ անուղղակի կերպով գտնվում էին Ռուսաստանի ազդեցության տակ: Նրանց գնալուն զուգընթաց՝ ազատված վայրերը մեծ մասամբ զբաղեցվում էին հարթավայրերից եկած ադրբեջանցիներով: Ռուսական իշխանության հաստատումից հետո հայ գաղթականներից ոմանք վերադարձան ետ և մասամբ վերադարձրին իրենց հին հողերը, մասամբ էլ հիմնադրեցին



նոր գյուղեր: Մակայն վերադարձողները քիչ էին, և ստորին գոտում հայ բնակչության նախկին խտությունն առանձնապես չվերականգնվեց: Այդ պատճառով, երբ 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով պարսկահայերը գրավված ռուսական հողերը տեղափոխվելու ազատ իրավունք ստացան, պարսկական Ղարադաղի մարզի հայերի մի մասը, Արաքսն անցնելով, կարող էր տեղավորվել ինչպես Զանգեզուրում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում: Այսպես, առանձին գյուղերում (օրինակ՝ Հաղրութի (Դիզակի) շրջանի Մելիքջանլու գյուղում) կամ ընդհանուր գյուղերում (օր.՝ Ծակուռի գյուղում) տեղաբնիկ հայ բնակչության կողքին հայտնվեցին եկվոր հայեր: Այնուամենայնիվ, այդ հանգամանքը տեղաբնիկների բարբառային և ազգագրական յուրահատկություններում նկատելի փոփոխություններ չառաջացրեց մասամբ այն պատճառով, որ, ըստ իմ հաշվումների, այդ տարրերը հազիվ ամբողջ բնակչության 10%-ն են կազմում, մասամբ էլ այն պատճառով, որ Ղարաբաղի ու Ղարադաղի միջև վաղուց ի վեր գոյություն ունեին կենցաղային տեսակետից նրանց մերձեցնող տնտեսական ու մշակութային կապեր:

Մեր հետազոտության ժամանակ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը կազմում էր շուրջ 130 հազար մարդ, որից 120 հազ. հայեր, 10 հազ. ադրբեջանցիներ, որից միայն 5 հազարը բաժին էր ընկնում Շուշիին:

Փանահ խանն ու նրա ժառանգորդ Իբրահիմ խանն ամեն կերպ աշխատում էին Լեռնային Ղարաբաղում ամրացնել ու ամրապնդել իրենց մերձավորների հողատիրությունը: Իրենց մերձավորներին հաճախ ձիապանի կամ սպասավորի աստիճանից բարձրացնում էին բեկի աստիճանի՝ նրանց որպես սեփականություն շոայլորեն նվիրելով ընդարձակ հողատարածություններ, որի հետևանքով Մեհտի-Ղուլի խանի ժամանակ արդեն ադրբեջանական հողատերերն այնտեղ քանակապես բավական ուժեղ էին ներկայացված, բայց նրանց հողերն առավելապես տեղադրված էին դաշտային Ղարաբաղում և ունեին հիմնականում ադրբեջանական բնակչություն, իսկ Լեռնային Ղարաբաղի նրանց կալվածքներում հայերը զգալիորեն գերակշռում էին ադրբեջանցիներին: Այնուամենայնիվ, երկարատև հարևանությունը դաշտավայրերի (Ղարաբաղի և Մուղանի) և սարահարթերի ադրբեջանցիների հետ, դարավոր քաղաքական ենթակայությունը պարսկական շահերի գերագույն իշխանությանը, տևական հարաբերությունները մահմեդական ցեղային ավագանու հետ (ընդ որում, հազվադեպ չէին ամուսնական միությունների հաստատումը նրանց և մելիքական տների միջև) առաջացնում էին ադրբեջանաիրանական ազդեցության լայն ներթափանցում ոչ միայն տեղի ավատատերերի, այլև Ղարաբաղի հայկական բնակչության այլ խավերի մեջ ադրբեջաններենի իմացության (առանձնապես տղամարդկանց կողմից), երեխաներին մահմեդական անուններ տալու, արևելյան երաժշտության յուրացման, կանանց անհաղորդ և ստորացված վիճակի, բազմակնության ձևերի (Շահնազարյան մելիքների ընտանիքում), առաջին՝ չբեր կնոջ դեպքում, երկրորդ՝ արտամուսնական կին պահելու և այլ ձևերով: Ցավոք, հայկական և ադրբեջանական մշակույթների փոխհարաբերության կարևոր հարցն ուսումնասիրված չէ և, ընդհանրապես, գիտականորեն քիչ է պարզաբանված:

Սոցիալական խմբավորումը: Ռուսական գերիշխանության ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում դասային հարաբերություններն արմատապես կերպարանափոխվեցին: Տնտեսական և քաղաքական կյանքի նոր պայմաններում պարսկական հասարակական դասային խմբավորումները բոլորովին անհարիր դուրս եկան և սկսեցին արագ քայքայվել՝ տեղը զիջելով նոր ձևերին: Այս պրոցեսն առաջին հերթին շոշափեց տիրող մելիքների անմիջական հետնորդներին՝ տեղի հողատեր կալվածատիրության արտոնյալ խավին: Ըստ ռուսական հիմնարկությունների տվյալների՝ ինչպես խաները, այնպես էլ մելիքները զրկվեցին իրենց հրապարակային-իրավական



արտոնություններից, որոնք անցան նոր աստիճանավորությանն ու զինվորական իշխանությա-
նը, և նրանք իջեցվեցին կալվածատերերի աստիճանի, ընդ որում, որպես մասնավոր սեփակա-
նություն նրանց ամրացվեցին ընդարձակ հողային տարածություններ, իսկ գյուղական բնակչու-
թյունը դրվեց նրանցից տնտեսական ավելի մեծ կախվածության մեջ, քան մինչ այդ էր, մի մասն
էլ ճորտ հայտարարվեց: Բայց ցարական իշխանությունը ճարպկորեն օգտագործեց այդ դասի
ժառանգած ձգտումը դեպի ռազմավարչական գործունեությունը և, հովանավորելով նրա փառա-
սիրությունը, սերունդ առ սերունդ նրանց ներքաշեց իր զորքերի շարքերը, բայց զգալիորեն ավելի
քիչ՝ կառավարության մեջ: Ազնվականական ռազմական ուսումնարանների ու կադետային
կորպուսի դռները լայնորեն բացված էին մելիքական ընտանիքների երեխաների առջև, որոնք
հաճախ այնտեղ էին ընկնում ամենապատանի տարիքում, այնուհետև ծառայելով հասնում էին
բանակի ամենաբարձր աստիճանների՝ մեծ մասամբ մնալով արտակովկասյան զորքերում, ուր
նրանց գերադասում էր ուղարկել ցարական քաղաքականությունը: Ավագ սերունդը, իրեն ապա-
հովելով թոշակներով և ուրիշ եկամուտներով, դեռևս վերադառնում էր իր կալվածքներն ու այն-
տեղ անցկացնում կյանքի մնացած օրերը: Սովորաբար նրանք իրենց գեներալական հարկա-
բաժինները կառուցում էին կտուրի անցքից լուսավորվող ընդարձակ բնակարաններ՝ գլխատներ
(«դարադամ») ներկայացնող հին պալատներին («ամարաթ») կից: Այդ հարկաբաժինները պահ-
պանվել են մինչև այժմ Ավետարանոց (Մելիք-Շահնագարյաններ) գյուղում և հին տեղական և
ներմուծված եվրոպական ձևերի խառնուրդ են, այն է՝ գորգերով ծածկված ավանդական հողե
հատակ, բարձր՝ առաստաղի տակ պատում բացված լուսամուտներ, պարսկական ոճով բուխա-
րիկ: Սովորության իրավունքի ամուր չափանիշներով կառուցված և ներքին տոհմային միաբա-
նությունը մինչուսական ժամանակներում երաշխավորող ազգակցական կապերի ամբողջ
համակարգն արագ խարխիվում էր: «Մելիքի»՝ տոհմային ավագի հեղինակությունն ընկնում էր
կրտսեր անդամների՝ «բեկերի» աչքում, առավել ևս, որ առաջնությունը նոր պայմաններում որոշ-
վում էր ոչ թե ծագմամբ, այլ առանձնապես ձեռք բերված ծառայողական փաստական դիրքով:
Դեպքեր էին լինում, երբ շատ հեռավոր ազգականներ (գեներալ Մադաթովը), որոնց արենակցա-
կան կապի աստիճանը տոհմում արժանի էր ավելի համեստ տեղի, շնորհիվ ձեռք բերած պաշ-
տոնի ու ծառայողական ազդեցության, գրավում էին տոհմական կալվածքների լավագույն
տեղամասերը՝ խուլ բողոք առաջացնելով տոհմակիցների մեջ: Գեներալ Մադաթովի մասին
Մելիք-Շահնագարյանների տոհմում, որոնցից նա, բնակվելով Ավետարանոց դոյակում, բռնի
ուժով խլեց ամենակամտաբեր գյուղերից 15-ը, դեռ մինչև հիմա էլ զայրույթով են հիշում:

Ազնվականական հողերի մասնատումը, որը ռուսական ժառանգորդության օրենքի արդյունք
էր, ավելի մեծ չափով էր հասցնում ներտոհմային իրավական չափանիշների խախտմանը:
Մելիքական տոհմերից, ինչպես նաև նրանց երբեմնի հպատակներից շատերը՝ արդեն սակա-
վահող ազնվականներ, այլևս չէին կարող գյուղում մնալ և լքում էին այն, քանի որ քաղա-
քացիական հաշտության հաստատմամբ մելիքական տոհմերի բազմացումը չէր չափավորվում
ավատատիրական դարաշրջանի արյունահեղ երկպառակությունների պարբերական կորուստ-
ներով: Անդաստաններն այնքան էին մանրատվել, որ ազնվականների մի մասը պետք է փնտրեր
եկամտի այլ տեսակ և իր փրկությունը տեսնում էր ռուսերեն լեզվի և ռուսական կրթության լավ
յուրացման մեջ, քանի որ այդ դեպքում կառավարչության մեջ, դատարանում, զորքում ծառայելու
մուտք էր բացվում: Գյուղերի լքման և քաղաքներ հեռանալու այս պրոցեսն արագացավ՝ գյուղա-
ցիներին ազատություն շնորհելով, որի պատճառով ազնվականության եկամուտները զգալիորեն



կրճատվեցին, և գյուղատնտեսությունը սեփական օգտագործման արտադրությունից շուկայականի վերածելով:

Նորելուկ բուրժուազիան ավելի հարմարված գտնվեց ապրանքային արտադրության այդ առավելություններից օգտվելու գործում, քան դարավոր տնտեսական ավանդույթներում կարծրացած ազնվականությունը: Երբ արդեն XIXդ. 70-ական թվականներից սկսվեց տեղական կառավարչության, դատարանի ու գործառնության մեկուսացումը տեղաբնիկ, հատկապես հայ տարրերի ներթափանցումից, ազնվականների հոսանքն ուղղվեց փաստաբանների, բժիշկների, ինժեներների, գյուղատնտեսների և այլ ազատ մասնագիտությունների կողմը և միայն XIXդ. վերջերին ներգրավվեց երկրամասի առևտրաարդյունաբերական կյանքի մեջ, որի աշխուժացումը սերտորեն կապված էր Բաքու և Թիֆլիս քաղաքների նշանակության մեծացման հետ:

Այսպիսով, Ղարաբաղի հայ ազնվականությունը գնաց քաղաք՝ լրացնելով սպայության, աստիճանավորների, ազատ մասնագիտության տեր անձանց ու արդյունաբերողների շարքերը, իր հողամասերը սովորության կիրավորման պայմաններով վարձակալությամբ փոխանցելով գյուղացիներին: Տեղում մնացած մեղիքական և ազնվականական այլ տոհմերի ժառանգները հողի ծայրահեղ մասնատման պայմաններում հաճախ ձուլվում էին արդեն կուլակային-գյուղացիական տարրերի հետ ու թե՛ իրենց կրթությամբ և թե՛ հասարակական միտումներով ոչնչով նրանցից չէին տարբերվում: Հեղափոխությունը Լեռնային Ղարաբաղի հարազատ գյուղերում նստած և իրենց լավ կարգավորված տնտեսությունները վարող խոշոր, տնտեսապես ուժեղ կալվածատերեր չգտավ, եթե 3-4 բացառությունները հաշվի չառնենք: Որպես դասակարգ՝ ազնվականության հասարակական դերն այստեղ շատ ավելի թույլ էր, քան Թիֆլիսի ու Քութայիսի նահանգներում, որտեղ այն ուներ իր դասային կազմակերպությունները՝ դպրոցներ, բանկեր և այլ հիմնարկներ: Այդ էր պատճառը, որ մասնավոր-տիրության կալվածատիրական հողերի ազգայնացումը Լեռնային Ղարաբաղում չուղեկցվեց գյուղի աշխատավոր տարրերի հակաազնվականական ցասման այնպիսի բռնկումներով, ինչպիսիք էին դաստակերտների հրդեհումները, կալվածքների ավերումները, կալվածատերերի սպանությունները, ինչպես, օրինակ, Վրաստանում: Եթե ինչ-որ տեղ առկա են եղել կալվածատիրական դաստակերտների ավերումներ (ինչպես բժիշկ Մովսես Աթաբեկյանի կալվածքները՝ Խանքենդ գյուղի մոտ կամ Ավան Յուզբաշունը՝ Մարագ գյուղի մոտ), ապա դրանք տեղի են ունեցել ոչ թե հեղափոխական բռնկումների, այլ բացառապես ազգամիջյան գժտությունների հետևանքով, որոնք Լեռնային Ղարաբաղում սոսկալի ավերածություններ են պատճառել:

Դասային քայքայմանը և գյուղից քաղաք տեղափոխվելուն զուգահեռ պրոցես էր տեղի ունենում նաև մի այլ՝ ռուսական գերիշխանության ժամանակաշրջանում շատ ուժեղ դասի՝ հոգևորականության մեջ, որն այստեղ ուներ որոշ չափով այլ ավանդույթներ, քան Հայաստանի մյուս մարզերում: Այստեղ կար սեփական «լուսավորիչը»՝ Հայաստանի Գրիգոր «լուսավորչի» թոռը, Գրիգորիսը, որը, ինչպես ավանդությունն է ասում, տանջանքների է ենթարկվել Վաթնի դաշտում: Կան նաև պատմական տեղեկություններ, որ Աղվանքի կառավարչի հրամանով նա կապվել է ձիու պոչից և քար շտրվել տափաստանով: «Աղվանքի առաջին կաթողիկոս» Գրիգորիսի գերեզմանը ղարաբաղցիները պաշտում էին Վարանդայի սարավանդից Քենդիլան գետով դեպի տափաստան տանող ելքի մոտ գտնվող Ամարասի վանքում:

Արցախը (Լեռնային Ղարաբաղը) ենթարկվել է աղվանական կաթողիկոսների իրավասությանը, որոնք ապրում էին պատմական Աղվանքի տարբեր վանքերում և հետագայում հաստատվեցին Գանձասարի վանքում՝ Խաչեն գետի հովտում, Խաչենի մելիքներ Հասան-



Ջալալյանների պաշտպանության ներքո, որոնց տոհմից էլ մեծ մասամբ ընտրվում էին կաթողիկոսները: 1829թ. Էջմիածնի համայն հայերի կաթողիկոսին հաջողվեց ցարական կառավարության օժանդակությամբ (որը արտասահմանյան հայերի կյանքը նրա միջոցով ղեկավարելու նպատակով ձգտում էր Էջմիածնի կաթողիկոսի հեղինակությունը բարձրացնել) հասնել ինքնուրույն «աղվանական» կաթողիկոսարանի վերացման և այն սովորական թեմ դարձնելուն՝ սկզբում մետրոպոլիտի, իսկ այնուհետև եպիսկոպոսի իշխանությամբ հոգևոր կառավարումը տեղափոխելով վարչական կենտրոն Շուշի:

Եկեղեցական ինքնավարության բազմադարյան գոյության (այն թույլ էր տալիս լիովին կենտրոնանալ միայն գուտ տեղական շահերի վրա) ընթացքում Լեոնային Ղարաբաղի հոգևորականությունը բազմիցս խառնվել է տեղի սոցիալական ու քաղաքական հարցերի լուծմանը: Այն մելիքների հետ մեկտեղ դիմադրություն է կազմակերպել կիսավաչկատուն տափաստանային տարրերի դեմ: Այսպես, XVIIIդ. երկրորդ կեսին մեկ անգամ չէ, որ Եղիշե ճգնավորի վանքի իր խուցը լքել ու իր պիսակավոր ձին հեծնելով՝ տափաստանցիների դեմ կռիվների ամենախորքն է նետվել Հայր Ավագը, որն իր խելահեղ քաջության պատճառով անվանվել է Դալի Մահրասա (խենթ վանական)¹: Երբ ծագեց Անդրկովկասում ռուսական իշխանությունը տարածելու միտքը, հոգևորականությունն առաջինը պաշտպանեց այն, Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան² կաթողիկոսը, որը Ռուսաստանի հետ բանակցությունների (Պետրոս I-ի հետ հարաբերությունների մեջ մտնելու) ներշնչողն էր, առաջինը միացավ Կովկասյան լեռնաշղթայից այս կողմ Պետրոս Մեծի հայտնվելուն Գանձակի (Գյանջա) մոտ 1722թ. վրացական զորքերի հետ սպասող մելիքական զորքերին:

Վանքերն իրենց ձեռքն էին կենտրոնացրել ընդարձակ բնակելի անդաստաններ, որոնցում, որոշ տվյալներից դատելով, նրանք գյուղացիների հետ ունեցած իրենց հարաբերություններում ղեկավարվում էին սովորութային իրավունքի այն չափանիշներով, որոնք ձևավորվել էին մելիքական հողերում: Տնտեսական այդ ընդհանրությունը դասակարգային շահերի միասնության հողի վրա հանգեցրեց ազդեցիկ սև, իսկ այնուհետև նաև սպիտակ հոգևորականության լիակատար մերձեցմանը հողատեր ազնվականության դասին:

Ռուսական իշխանությունը Լեոնային Ղարաբաղում գտավ բավականին թվով վանական միաբանություններ, որոնց վանքերին ամրացրեց նրանց հողային սեփականությունը: Սակայն ինչպես կալվածատերերը, այնպես էլ պետական գյուղացիների համայնքները սահմանները որոշելիս ամեն կերպ ջանում էին ընդարձակել իրենց հողերն ի հաշիվ վանքապատկան հողերի, և այդ իսկ պատճառով հոգևորականության հողատիրություններն զգալիորեն կրճատվեցին, ուստի և նվազեցին նրա եկամուտները:

Նոր պայմաններում տնտեսություն վարելու անճարակությունը ճորտատիրական հարաբերությունների վերացումից հետո, եկամուտների կրճատումը, բարեպաշտական նվիրատվությունների սահմանափակումն ու այլ պատճառներ անհնարին դարձրին բազմաթիվ միաբանությունների պահպանումը, որն արդյունք եղավ «աշխարհից մեկուսանալ» ցանկացողների թվի անհավանական արագ անկմանը, առավել ևս, որ նոր մշակութային պահանջները հարցախույզ մտքերը տանում էին արդեն ոչ թե վանական դպրոցներ, այլ բարձրահարգ ուսումնական հաստատություններ: Շատ վանքերում, բացի ավագ երեցից, XIX դարի վերջում արդեն չկար ոչ մի արեղա,

¹ Դաֆֆի, *Խամսայի մելիքությունները*, Թիֆլիս, 1822, էջ 88

² «Պատմություն... Աղուանից»-ի (Շուշի, 1839) հեղինակ Եսայի Հասան-Ջալալյանը, այն հասցնելով մինչև 1723 թիվը և լինելով Բարայել Օրու ծրագրի կողմնակիցը, լեզգիների արշավանքի դեմ կազմակերպել է տաս հազ. մարդուց բաղկացած հայկական բանակ ու պաշտպանել երկիրը (ծանոթ. խմբ.)



օրինակ՝ մի այնպիսի երբեմնի փառաբանված վանքում, ինչպիսին է Գտիչ վանքը Դիզափայտ լեռան լանջին: Քաղաքացիական պատերազմի նախօրեին մենաստանների մեծ մասում վանականներին փոխարինում էին կրոնավոր վանահայրերը, նույնիսկ աշխարհիկ մարդիկ, իսկ ամայացած պատերը հսկելու համար թողնվում էին ծերուկ սպասավորներ: Հեղափոխությունը միայն եզրափակեց այդ պրոցեսը: Մեր շրջագայության ժամանակ Ղարաբաղի կաթողիկոսների նստավայր Գանձասարի վանքը պահպանում էր մի այրի իր ընտանիքով, իսկ Ջրաբերդի շրջանի Երից Մանկունք մենաստանը՝ մի միայնակ պառավ:

Փոքր-ինչ դանդաղ էր ընթանում սպիտակ հոգևորականության թե՛ քանակական և թե՛ որակական քայքայումը: Ռուսական գերիշխանության հաստատմամբ հոգևորականներն արագորեն ազատագրվեցին ազնվականներից ունեցած կախվածությունից:

Արդեն XIX դ. քառասնական թվականներին, ինչպես ադրբեջանցի, այնպես էլ հայ կալվածատերերի դեմ գյուղացիական ելույթները հաճախ զլխավորում էին գյուղական հոգևորականները, որոնք «անկարգություններին» և «խռովություններին» ունեցած մասնակցության համար կալվածատերերին պաշտպանող և Անդրկովկասում Ռուսաստանի ճորտատիրական կարգերը³ տարածած ռուսական կառավարչության պնդմամբ թեմական ղեկավարության կողմից ենթարկվում էին կարգապահական տույժի:

Քանի որ հոգևորական դասին պատկանելն ազատում էր ճորտական վիճակի ենթարկվելուց, հոգևորականների զավակները դարձան այն շարժուն տարրը, որը հակված էր ազատվելու գյուղից ունեցած տնտեսական կախվածությունից: Նրանք ձգտում էին առավել եկամտաբեր և պատվաբեր զբաղմունքների, քան եկեղեցական արարողությունների կատարումն էր՝ իրենց համար պարտադիր չհամարելով այն հաստատված կարգը, ըստ որի՝ որդին ժառանգում էր հոր հոգևորական կոչումը: Մասամբ ընդունվելով մոտակա քաղաքների՝ Շուշու և Ելիզավետպոլի այն նույն կառավարական ուսումնական հաստատությունները, ուր ընդունվում էին և ազնվականների որդիներ, իսկ ամենից ավելի հաճախ լրացնելով 1838թ. հիմնված Շուշու հայ հոգևոր ձեմարանի ուսանողների շարքերը, ուր ազնվականությունը դժկամությամբ էր գնում, հոգևորականների զավակները հազվադեպ էին վերադառնում իրենց դասը և գերադասում էին ծառայությունը կառավարական հիմնարկներում, ավելի հազվադեպ՝ բանակում, իսկ առավել ընդունակները կամ էլ ապահովվածները ձգտում էին բարձրագույն կրթության և այնուհետև նվիրվում էին ազատ մասնագիտությունների: Հոգևորականի ընտանիքի (որը մինչ այդ մի շարք սերունդների ընթացքում տվել էր եկեղեցու իր ներկայացուցիչները) բոլոր զավակների՝ թե՛ տղաների և թե՛ աղջիկների նույնիսկ ոչ լրիվ միջնակարգ, առավել ևս բարձրագույն կրթություն ստանալուց հետո իրենց դասի հետ ամեն տեսակի կապերը խզելու այս երևույթը Լեոնային Ղարաբաղում բոլորովին էլ նոր չէր: Առավել ընդունակ ուժերի՝ քաղաքային մտավորականության շարքերն անցնելու և մասամբ նրանցով նոր ծնվող առևտրաարդյունաբերական բուրժուազիան համալրելու հետ միասին, սպիտակ հոգևորականության նոսրացած շարքերը սկսեցին սողոսկել պատահական, ավելի հաճախ՝ այլ ասպարեզներում անհաջողություն կրած տարրեր՝ ամեն տեսակ կիսագրագետ գործակատարներ, հեծելապահակներ, նպարավաճառներ կամ էլ սնանկացած վաճառականներ: Լավագույն դեպքում նրանք իրենց սուղ ապրուստը եկեղեցական պատարագների կատարումից ստացվող կողմնակի միջոցներով լրացնել ջանացող գյուղական ուսուցիչներ էին, որոնք, ի միջի այլոց, նույնպես անգոր էին կասեցնելու հոգևորականության հեղինակության անկումը, առավել ևս, որ հազվադեպ էր

³ Տե՛ս Լեոն, *Պատմություն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի*, Թիֆլիս, 1915, էջ 77–84



նրանցից որևէ մեկն իսկապես համակված լինում ճշմարիտ ու խոր կրոնական զգացումով: Այնինչ քաղաքներ վաստակի գնացած երիտասարդները գյուղ վերադառնալուց հետո եկեղեցական ավանդույթներին մոտենում էին թունտ քննադատությամբ, որին հոգևորականները պատասխան չէին գտնում: Սպիտակ հոգևորականության հեղինակությունն ընկել էր հեղափոխությունից դեռ շատ առաջ, և այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ խորհրդային կարգերի հաստատման հենց առաջին տարիներին շատերը շտապեցին հանել փարաջան (Գյունե-Ճարտար գ.) կամ, պաշտոնաթող լինելով, հրաժարվել պատարագ կատարելուց (Գիշի, Ջրակուս, Վանք, Հորաթաղ գյուղեր): Հարկ է նշել այն փաստը, որ Ղարաբաղի հոգևորականների զավակների միջավայրից կոմունիստական կուսակցության շատ նշանավոր գործիչներ են դուրս եկել: Նոր իրավակարգի կառուցման գործում նրանց մեծապես օգնում էր հայկական իրականության լավ իմացությունը, որի հետ իրենց ծագման բերումով ունեցած շատ սերտ կապը նրանք պահպանում էին տակավին դպրոցական և ուսանողական տարիներից:

Սպիտակ հոգևորականությունից էլ շուտ գյուղից սկսեցին հեռանալ գյուղացի տնայնագործ արհեստավորները, դարբինները, գրակակարները, թամբագործները և այլք:

1823թ. խանական իշխանության վերացումից անմիջապես հետո լույս տեսած «*Ղարաբաղի մարզի նկարագրության մեջ*» Շուշու բնակիչների թվում նշված են զանազան արհեստավորներ, որոնցից շատերը դեռ համարվում էին այս կամ այն մեղիքի, մանր խանի կամ բեկի⁴ «մարդիկ», սակայն արհեստը նրանց բավականաչափ անկախացրեց վերջիններից: Հետագայում արհեստավորների թիվը Շուշիում ավելի մեծացավ, նրանց բավականին ընդարձակ ցուցակը բերված է տասը տարի անց Ջուբարևի կողմից կազմված գրամատյանում⁵: Նրանցից շատերին ձգում էին Գյանջան, Նուխին, Շամախին և այլ քաղաքներ, ավելի ուշ՝ հաճախ նաև Բաքուն, իսկ Միջին Ասիան միավորելուց ի վեր՝ Մերձկասպյան մարզը: Պահպանելով վաղուց Դադստանով Ռուսաստանի հետ հաստատված հարաբերությունները՝ Շամախին զգալի դեր էր կատարում Արևելյան Անդրկովկասի տնտեսական կյանքում: Գյուղացիների ազատագրումից հետո արհեստավորներին հետևեցին նաև որակավորում չունեցող գյուղական տարրերը: Դուրսը վաստակ փնտրող ղարաբաղցիների մեծ խմբերի կարելի էր հանդիպել ավելի հեռու քաղաքներում՝ Բաքվում, Լենքորանում, Պետրովսկում, Գրոզնիում, համեմատաբար ուշ՝ նաև Թիֆլիսում:

Հին սոցիալական խմբավորումների քայքայմանը զուգահեռ սկսեց գոյանալ հասարակական նոր խավ՝ մանր և խոշոր առևտրականների, գնորդների, ձեռնարկատերերի խավը: Այդ ենթաշերտը Լեռնային Ղարաբաղում վերջին խանի փախուստի ժամանակներում դեռ թույլ էր: Առանձին բնակավայրերի բնակիչների գործունեության մասին տեղեկություններ տվող «*Ղարաբաղի մարզի նկարագրությունում*» (1823թ.) չեն հիշվում գյուղերում առևտրով զբաղվող անձնավորություններ, միայն Շուշիում է գրանցված մի քանի խոջայի, այսինքն վաճառականի առկայություն «սառաֆների»՝ դրամափոխների կողքին: Նրանց եկամտի աղբյուրն ու շուրջը համախմբված անձերի սոցիալական վիճակն ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ ամբողջ Անդրկովկասում ռուսական իշխանության հաստատումից հետո կրում էր ստեղծվածից բոլորովին այլ տնտեսական իրադրության դրոշմը, քան մինչ այդ էր⁶: Դրա մասին բնորոշ մանրամասնություն-

⁴ „Описание Карабахской провинции, , произведенное д.с.с. **Могилевским** и полковником **Ермоловым** 2-ым, Тифлис, 1823

⁵ Տե՛ս ՕՐԲԿ, հ. III, էջ 309: «Բուրդ ծեծող՝ 6, կաշեգործ՝ 9, բյազ գործող՝ 28, արծաթագործ՝ 12, դարբին՝ 25, պղնձագործ՝ 6, կլայեկչի՝ 44, ձեռնոցագործ՝ 4, ատաղձագործ՝ 4, համետագործ՝ 10, թաղքաղիր՝ 2, տապճագործ՝ 1, պարանագործ՝ 2, հրացանի փական սարքող՝ 6, հրացանի խզակոթ սարքող՝ 6, թրագործ-դաշունագործ՝ 10, վարսավիր՝ 3, հացթուխ՝ 6, բոկոտիկակար՝ 2 հոգի»

⁶ «Անդրկովկասյան մարզերը ոչ առանց հիմքի կարող են կոչվել մեր գաղութը, որը «հարավային կլիմաների» արտադրանքներով պետությանը պետք է տա հույժ կարևոր օգուտներ»՝ կրմս Կանկրիիի գրառումը 1827թ. ապրիլին: Տե՛ս ՕՐԲԿ, հ. I, էջ 12



ներ է հայտնում Էջմիածնի միաբանության կրտսեր անդամ Մեսրոպ Թաղիադյանը, որը 1821թ. Եփրեմ կաթողիկոսի հետ այցելել էր Շուշի: Իր «Ճանապարհորդություն ի Հայս»⁷ երկում նա երկու խոշոր առևտրական տուն է հիշատակում, որոնցից մեկը՝ Հախումյանների տունը, իր գործառնություններով կապված էր Պարսկաստանի, Ռուսաստանի, Սիբիրի և եվրոպական շուկաների հետ ու խոշոր դրամագլուխներ էր պահում ռուսական բանկերում, իսկ մյուսը՝ Թառումյանների տունը, օգտվում էր Կասպից ծովում ձկան որսի ու նավային տուրքի գանձման միանձնյա իրավունքից և կապալային եկամտի այլ աղբյուրներից: Գտնվելով Շուշիում՝ երկու տներն էլ Շամախու միջոցով կապ էին պահպանում Ռուսաստանի ու մերձկասպյան մարզերի հետ՝ մի կողմից, և Թավրիզի ու Հյուսիս-արևմտյան Իրանի հետ՝ մյուս կողմից, ինչպես նաև տոկոսներով վարկ էին տրամադրում տիրակալներին, հիմնարկություններին և առանձին մարդկանց (այսպես՝ Էջմիածնի վանքը Թառումյաններին մուրհակներով պարտք էր 4 հազ. ոսկի տասանոց): Իրենց գործառնությունների և առևտրի համար նրանք կազմակերպել էին գործակատարների ընդարձակ գործակալություն՝ միմյանց հետ մրցակցելով ոչ միայն թվով, այլ նաև այն ապահովվածությամբ ու արտաքին փայլով, որ նրանք տրամադրում էին իրենց գործակիցներին: Այդ գործակատարներից կամ «ճրագներից» (ինչպես մինչև վերջերս անվանում էին գործակատարներին Լեռնային Ղարաբաղում) շատերը միաժամանակ առևտրական տան բերովի ապրանքների տնօրինողները և տեղական արտադրության այն ապրանքները (մետաքս, դարաբաղյան ձիեր) հավաքողներ էին, որոնք, այն ժամանակվա ճանապարհների ու հաղորդակցության միջոցների պայմաններում հեշտությամբ կարելի էր հասցնել այլ երկրներ: «Ճրագները» ընտանիքներով սերտորեն համախմբված էին առևտրական տան շուրջը և նրա «պատիվն» էին պահում նույնիսկ այն ժամանակ, երբ որպես իրենց գործերն ինքնուրույն վարող միավորներ առանձնանում էին նրանից:

Թուրքմենչայի պայմանագրի կնքումից (1828թ.) շատ չանցած՝ պարսկական սահմանը փակվեց ռուսական տիրույթներով կատարվող տարանցիկ առևտրի համար, ընկավ Շամախի-Շուշի-Թավրիզ ուղու նշանակությունը, իսկ մինչ այդ արդեն վերացվել էր փրկագնային համակարգը: Շուշու այն առևտրական տները, որոնք չհասցրին իրենց դրամագլուխները տեղափոխել տեղական կամ ռուսական շուկաների այլ ձեռնարկություններ, սկսեցին հյուծվել: Նրանց ճրագները հեռանում էին իրենցից և ճանապարհների անվտանգ դառնալուց ի վեր իրենք էին գործարքի մեջ մտնում ռուսաստանյան ֆարրիկաների ու գործարանների հետ, իսկ տեղական հումքը հավաքողների ու գյուղերում մանուֆակտուրան տնօրինողների դերը սկսեցին կատարել գյուղական միջավայրից առանձնացող խոշոր տնտեսությունները: Շատ հազվադեպ այս դերում հանդես էին գալիս ազնվական ընտանիքների առանձին անդամներ, իսկ հիմնականում դրանք բացառապես իրենց հողով, բանող ու մթերատու անասուններով ապահովված և ազատ դրամամիջոցներ ունեցող գյուղացիներ էին: Գյուղատնտեսությունը վաղ սկսեց մասնագիտանալ մետաքսի, սպիրտի, բրդի ու գորգեղենի արտադրությունում և սպառողականից անցնել առավել շատ դրամամիջոցների կիրառում պահանջող ապրանքային արտադրության:

Տնտեսական վերելքին և գյուղական դրամատերերի խավի գատմանն օժանդակեց ագրոտեխնիկայի հին ձևերի պայմաններում բնակչության արագ աճի, ինչպես նաև տարիներ շարունակ միևնույն տեղամասում ցանք կատարելուց հողի ուժասպառվելու պատճառով առաջացած սակավահողության արդյունք հանդիսացող գյուղի բնակիչների գերակշռող մեծամասնության աղքատացումը, որը նաև խոշոր, բազմազույգ նահապետական ընտանիքների փոքրանալու, մեծ

⁷ Մեսրոպ Թաղիադյան, *Ճանապարհորդություն ի Հայս*, Գալկաթա, 1848, էջ 289-290



մասամբ միագույց դառնալու դեպքում կենդանի և անկենդան գույքի մասնատման, արհեստագործական իրերը գործարանային արտադրանքով փոխարինվելու, փոխատվական ծանր պայմանների և մի շարք այլ հանգամանքների արդյունք էր: Աղքատացած գյուղացիները ստիպված էին կամ մեծ քաղաքներում կողմնակի վաստակներով իրենց բյուջեն լրացնելու աղբյուրներ որոնել, կամ էլ իրենց տնտեսությունը կախման մեջ դնել տնտեսապես ավելի ուժեղներից, ինչպիսիք էին ոչ միայն հենց տեղում՝ գյուղում, ինչ-որ դրամագլուխ կուտակածները, այլ նաև արդյունաբերական կենտրոններում ազատ դրամամիջոցներ ձեռք բերած ու թթի տնկարաններն ընդարձակելու նպատակով նոր հողեր գնելու և հատկապես վաշխառության տրամադրելու համար հարազատ գյուղ փոխադրված համագյուղացիների ազգականները: Վաշխառուն ճանապարհ էր հարթում առևտրականի համար:

XIX դ. վերջին Ղարաբաղի գյուղերում միանգամայն հստակ ձևավորվել էր այդ նոր շերտավորումը, մի կողմից՝ զուտ գյուղատնտեսական աշխատանքից հեռացած և իրենց գյուղական տնտեսության մեջ բատրակների կամ պարտատերերի աշխատանքից օգտվող կուլակ-վաշխառուների, գնորդների և առևտրականների, մյուս կողմից՝ նրանցից կախման մեջ գտնվող հողագործ աշխատավոր զանգվածների խավը: 1924թ. մեր հետազոտության ժամանակ դժվար էր դատել նախահեղափոխական գյուղում եղած կախման տարբեր աստիճանների ու ձևերի մասին, քանի որ ազգամիջյան ընդհարումներն ու դրանց հաջորդած քաղաքացիական կռիվները քայքայել էին ոչ միայն չքավոր, այլ նաև կուլակային տնտեսությունները, իսկ խորհրդային իշխանության հաստատումից հետո հողային հավասարարական բարենորոգումն ավելի էր հարթել երկու շերտերի գույքային անհավասարությունը, առավել ևս, որ նոր կյանքի պայմաններում թե՛ ապրանքների բաշխումը տեղում, թե՛ արդյունաբերական ու սպառողական շուկայում իրացնելու համար գյուղացիական արտադրանքի ավելցուկի հավաքումը մասնավոր անձերից անցել էր պետական կազմակերպություններին:

Փակվել էին շահագործման բոլոր ուղիները: Սակայն հիմք կա պնդելու, որ վարելահողերի լավագույն տեղամասերը, թթի տնկարանների զգալի տարածությունները, ջրաղացները (որոնց թիվը 300-ի էր հասնում), առևտրական հիմնարկությունները (որոնք գործառնություններ էին վարում ինչպես իրենց գյուղում, այնպես էլ ոչ մեծ այլ բնակավայրերում, որոշ օրերի էլ՝ շրջանային շուկաներում), օղեթորումը, սպիրտի, բոժոժի, բրդի, գորգերի և այլնի հավաքումը նախկինում կենտրոնացած է եղել կուլակների, ավելի հազվադեպ՝ միջակների ձեռքում:

Օղեթորումն ու շերամապահությունը մեծ դրամագլխի ներդրում չէին պահանջում: Այդպիսի դրամագլխի կարիքը խիստ զգացվում էր մետաքսահանման ու բոժոժից թել քաշելու գործում, որոնք այդ իսկ պատճառով անցան ռուսական ֆաբրիկաների համար աշխատող խոշոր կապիտալիստների ձեռքը: Մետաքսաթելաքաշման և մետաքսամանման ոչ մեծ գործարանների այդ սեփականատերերը քաղաքային բուրժուազիայի մեջ հատուկ նկատելի խումբ չէին կազմում և իրենց շահերով սերտորեն հարում էին Շուշու միջնորդ ու առևտրական այն շրջաններին, որոնք գյուղերում տեղի առևտրականների ու գործակալների միջոցով հավաքած հումքի փոքր հակերից ավելի մեծերն էին կազմում ռուսական, որոշ դեպքերում՝ նաև արտասահմանյան արդյունաբերական կենտրոնները տեղափոխելու համար, և կամ էլ մեծածախ առևտուր էին անում՝ գյուղական խանութպաններին մատակարարելով կտորեղեն, նավթ, թեյ, ամանեղեն, գործարանային մետաղե և այլ արտադրանք:

Տեղական՝ ղարաբաղյան շուկայից խոշոր սպառողական կենտրոններ, ֆաբրիկաներ ու գործարաններ, դրանցից էլ դեպի ղարաբաղյան շուկա ապրանքային հոսքի առաջխաղացման



գործում քաղաքի արդյունաբերությունն ու առևտրական բուրժուազիան աշխատում էին գյուղականի հետ ձեռք-ձեռքի տված:

Երբ իր հարստությունը որոշակի չափի հասցրած գյուղական դրամատերն իր գյուղի սահմանները սեփական դրամակուտակման համար նեղ էր համարում, չվում էր քաղաք՝ ամենից առաջ իր կենտրոն՝ Շուշի, կամ էլ հարևան կենտրոն՝ Ելիզավետպոլ:

Բայց և քաղաքի կապիտալիստ-ձեռնարկատերն իր դրամակուտակման որոշակի աստիճանում արդեն չէր մնում՝ գավառային քաղաքում, գնում էր Բաքու և այլ նավթային կենտրոններ, Մոսկվա, Անդրկասպիա՝ ամբողջապես ձուլվելով տեղական բուրժուազիային, իր դրամագլխով հանդերձ բոլորովին կտրվելով հայրենիքից:

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելու նախօրեին քաղաքի և գյուղի միավորված բուրժուազիան, տեղական ազնվականությանն ու հոգևորականությանը վերջնականապես դուրս վանելով, դարձել էր մի ուժ, որը վճռականորեն խառնվում էր տեղական տնտեսական ու մշակութային հարցերին ուղղություն տալուն ու լուծմանը: Այդ միջնորդաառևտրական բուրժուազիայի կողքին տեղական ձեռնարկություններում այդ ժամանակ դեռ չէին կազմավորվել բանվորական կադրերը: Տեղական հանքային ու մետաղական հարստությունների (գերազանցապես պղնձի) և քարերի (երկանաքարերի) մշակումը դեռևս պահպանում էր արհեստավորական բնույթը: Միակ արդյունաբերական ձեռնարկություններն էին մետաքսաթելաքաշման և մետաքսամանման մանր գործարանները (դրանք շուրջ 5-6 տասնյակ էին): Երկրամասի գյուղատնտեսական ընդհանուր իրադրության մեջ տեղ-տեղ իբրև պիսակ մտած այդ գործարանների բանվորները, ձեռնարկությունները հաղորդակցության միջոցներով միմյանց միացած և ծայրաստիճան ցրված լինելու և մյուս կողմից՝ տարվա մեջ շուրջ երկու ամիս տևող և հիմնական՝ զուտ գյուղացիական զբաղմունքներից չկտրված աշխատանքի խիստ սեզոնային բնույթի պատճառով չէին հասցրել զատվել ու միաբանվել: Քանակապես էլ (որը լավագույն տարիներին հազիվ անցնում էր հազար մարդուց) ուժեղ չէին, առավել ևս, որ նրանց 90%-ը կանայք էին, որոնք հին դարաբաղյան կենցաղի պայմաններում շատ դժվար էին ենթարկվում նոր կյանքի պայմանների ազդեցությանը: Քաղաքացիական պատերազմի ու խորհրդային իշխանության հաստատման տարիներին հասարակական կյանքում դեր խաղացին ոչ այնքան տեղական գործարանների այդ բանվորները, որքան այն գյուղացիները, որոնց վաստակի որոնումները նետել էին Բաքու, Գրոզնի և այլ գործարանային կենտրոններ, որտեղից վերադառնում էին որոշակի հեղափոխական-պրոլետարական տրամադրություններով:

Ծայրաստիճան սահմանափակ էր ամեն տիպի ուսումնական հաստատությունների թիվը: Քաղաքացիական պատերազմի նախօրեին Լեռնային Ղարաբաղում այն չէր հասնում 50-ի⁸, ընդ որում, միջնակարգները միայն երկուսն էին ու գտնվում էին Շուշիում՝ հայկական ճեմարանը (1838 թվից) ու պետական ռեալական ուսումնարանը (1881 թվից): Դա չէր բավարարում երիտասարդության կարիքները, և նա դուրս էր գալիս Ղարաբաղի սահմաններից, գնում Ելիզավետպոլի ու Բաքվի ոչ միայն միջնակարգ, այլ նաև տարրական դպրոցները՝ հանգրվանելով ազգականների մոտ, որոնք մինչ այդ արդեն հասցրել էին մշտական աշխատանք գտնել ու հաստատվել այնտեղ: Եթե արհեստավորներից ու գյուղացիներից ոմանց տարրական դպրոց ավարտած զավակները վերադառնում էին ծնողների զբաղմունքին, ապա չի կարելի նույնն ասել միջնակարգ դպրոցն ավարտածների կամ էլ բարձր դասարաններից եկածների մասին: Նրանք գրեթե բոլորն էլ ջանում էին տեղավորվել պետական տարբեր հիմնարկություններում, քաղաքի մասնավոր ձեռնարկու-

⁸ 1833թ. Ղարաբաղի մարզում, ծխական մանր վարժարանները չհաշված, եղել է յոթ դպրոց (Տե՛ս ՕՐԲԿ, հ. III, էջ 280)



թյուններում կամ էլ ընտրում էին ազատ մասնագիտություն: Ինչպես ազնվականության ու հոգևորականության, այնպես էլ քաղաքային ու գյուղական բուրժուազիայի և արհեստավորության միջավայրերից շատերն էին բարձրագույն կրթություն ստանում: Հայկական որևէ այլ մարզ ռուսական ու արտասահմանյան համալսարաններին և այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հազիվ թե մատակարարել է սովորողների այդպիսի մեծ քանակակազմ, ինչպես Ղարաբաղը, և հազիվ թե մտավորական ուժերի վերարտադրությունը որևէ այլ հայկական մարզում դրսևորվել է այնքան վաղ, որքան այստեղ: Այդ բժիշկների, իրավաբանների, ճարտարապետների, ինժեներների, ուսուցիչների մեծ մասը, հայրենիքում աշխատանք չգտնելով, ցրվում էր Անդրկովկասի, Անդրկասպիայի և Ռուսաստանի այլ մասերի քաղաքներով մեկ՝ գրականության մեջ ստանալով տապան ետ չվերադարձողի «Նոյի ագռավ» մականունը: Այնտեղ նրանք ներգրավվում էին տեղի արդյունաբերական ու մշակութային կյանքում, բայց միմյանց և համերկրացի՝ դարաբաղի կապիտալիստների հետ սերտ կապ պահպանում և հաճախ նոր ապրելավայրում (օր.՝ Թիֆլիսում) իրենց սեփական «կուսակցությունը» կազմում: Նրանք արդեն գրեթե ոչ մի կերպ չէին մասնակցում հարազատ երկրամասի տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը: Հայրենիքում մնացած տարբեր սոցիալական ծագում ունեցող մտավորականության մի մասն ամբողջ հաջորդ դարի ընթացքում շատ մեծ դեր խաղաց երկրամասի կյանքում: Այն իր պատվավոր տեղն ուներ ընդհանրապես Անդրկովկասի, մասնավորապես հայերի մշակութային զարգացման գործում և աչքի էր ընկնում բացառիկ միաբանությամբ, ներքին համագործակցվածությամբ և բուրժուազիայի դեմ մղած պայքարում իր ունեցած ինքնուրույնությամբ: Շնորհիվ Բաքվի մոտիկ լինելուն, որտեղ զարգացած էր բանվորական շարժումը, Շուշու մտավորական երիտասարդության շրջանում շատ շուտ արձագանք գտան սոցիալիստական գաղափարները, և այդ էր պատճառը, որ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ Լեռնային Ղարաբաղում առկա էին մեծաքանակ մտավորական ուժեր, մի հանգամանք, որը հեշտացրեց խորհրդային շինարարության խնդիրների իրագործումը:

Այսպիսով, ռուսական գերիշխանություն հաստատվելուց ի վեր՝ մեկ հարյուրամյակի ընթացքում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցան արմատական փոփոխություններ ինչպես ամբողջ տնտեսական կառուցվածքում, այնպես էլ սոցիալական բոլոր փոխհարաբերություններում: Լիովին պարզ է, որ դրա հետ մեկտեղ տեղի բնակչության կենցաղում էլ արագ վերանում էին այն բնորոշ առանձնահատկությունները, որոնք մինչ այդ ավանդորեն ու սրբությամբ, դարեդար, սերնդեսերունդ պահպանվել էին որպես հասարակական զարգացման նախորդ աստիճանների ցայտուն մնացուկներ: Կերպարանափոխվում էին բնակավայրերի ու բնակարանների, հագուստի ու տնային կահույքի ձևերը, նյութական իրողության բոլոր մանրամասները, ընտանիքի և հասարակության անդամների փոխհարաբերությունները և վերջապես՝ ամբողջ աշխարհըմբռնումը:

Հայերն ու հարևանները: Ռուսական տիրապետության հարյուր տարվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության մեջ տեղի ունեցած հասարակական ուժերի տեղաշարժն անդրադարձավ նաև հայերի ու հարևան աղբբեջանցիների (որոնց մինչև հեղափոխությունը պաշտոնապես անվանում էին թաթարներ) փոխհարաբերությունների վրա: Անդրկովկասի բնատարածքում թուրք-մոնղոլական ցեղերի հաստատվելուց ի վեր այստեղ առաջացած պետություններում տարվում էր բնակչության հին՝ տեղաբնիկ, և նոր՝ եկվոր, միմյանցից ինչպես տնտեսական հմտություններով և հասարակական զարգացմամբ, այնպես էլ մշակութային հակումներով տարբերվող երկու մասերի մերձեցմանը քիչ նպաստող քաղաքականություն: Տնտեսական ու հասարակական կենցաղային երկպառակությունը խորանում էր այս կամ այն էթնիկ խմբի տարբեր՝ փոխադարձ թշնամի կրոնական համակարգերի պատկանելով: Նույնիսկ նոր պարսկական Սեֆյան պետու-



թյունում, որտեղ հին իրանական ավանդույթների որոշ վերածնունդ էր տեղի ունենում, բնակչության մահմեդական ու քրիստոնյա մասերի մեկուսացման և նրանց իրավական ու հասարակական անհավասարության վերացման համար պայմաններ չէին ստեղծված: Մեկի և մյուսի վիճակների տարբերությունը բավական սուր կերպով դրսևորվում էր նաև Ղարաբաղի խանությունում դրա վերացման նախօրեին:

Քաղաքական գործերում ու ներքին կառավարման մեջ ազդեցիկ էին բացառապես աղալարները, մանր խաները, բեկերը և տարբեր տիտղոսներ ունեցող այլ «թաթար» ազնվականները: Միայն նրանցից ոմանք, ինչպես և մելիքները առանձին մահալների և այլ բնատարածքային ստորաբաժանումների կառավարիչներ, իսկ նրանցից շատերը փաստորեն իրավական կամ ենթադրյալ ցեղային ազգակցությամբ խմբավորված շատ թե քիչ խոշոր կիսավաչկատուն անասնապահական ցեղային կառավարիչներ էին: Մոլլաներն ու մահմեդական հոգևորականության այլ բավական մեծաքանակ ներկայացուցիչները հենարան էին աղալարների ու բեկերի հեղինակությանը՝ ժողովրդին կույր հնազանդության մեջ պահելու համար: Դատարանը հոգևորակության մենաշնորհն էր և ղեկավարվում էր հոգևոր օրենսդրությամբ՝ շարիաթով: Ժամանակի գրավոր աղբյուրներում Ղազախի ու Շամշադինի վերաբերյալ վկայվող այն երևույթը, որ «թաթարները տիրում են լավագույն և ամենաընդարձակ հողերին, իսկ հայերը մեծ մասամբ ապրում են վարելատեղերով աղքատ լեռներում»⁹, բնորոշ է նաև Լեռնային Ղարաբաղին, ուր ամբողջ ցածր, հարթավայրային, ոռոգիչ միջոցներով հարուստ շրջանը բնակեցված էր աղբբեջանցիներով, իսկ հայերը հողեր էին պահպանել միայն այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը կազմող լեռնոտ մասում:

Ռուսական կառավարումը որոշ իրավահավասարում մտցրեց Անդրկովկասի տարբեր ազգությունների մեջ: Աղալարները, բեկերը, խաները և մելիքները բավական վաղ զրկվեցին հասարակական իրավունքներից ու ավատատիրական շատ արտոնություններից: Կրճատվեց մահմեդական հոգևորականության միջամտությունը դատական հարցերի լուծմանը: Անցկացվում էր անասունների հաշվառում, ճշգրտվում էին հերկովի ու ընդարձակ արոտային հանդամասերի սահմանները: Միջոցներ էին ձեռք առնվում, որպեսզի կանխվեին անասունները ցածրավայրերի ձմեռային արոտներից ամառային՝ լեռնային արոտներ և հակառակը քշելիս կատարվող ավերումները: Այս բոլոր միջոցառումները ոտնահարում էին ազնվականության ու հոգևորականության արտոնությունները և սահմանափակում կիսավաչկատուն անասնապահության ազատությունը: Թաթար ազնվականները, հոգևորականներն ու անասնապահները հեշտ չէին հաշտվում նոր կարգերի հետ, որոնց հաստատման «մեղքը» զցում էին հարևանների՝ այդ հողերը Ռուսաստանին միացնելը նախաձեռնող հայերի վրա:

Ղարաբաղի մելիքներն ու կաթողիկոսը դեռ Պետրոս I-ի օրոք ռազմական ուժեր էին նախապատրաստում ռուսական զորքերին բացահայտ միանալու համար, որոնց նրանք սպասում էին մերձկուրյան հարթավայրում Կասպից ծովի արևմտյան ծովափը նրա կողմից գրավվելուց հետո: Ռուսական կայսրի իշխանությունը ճանաչելու այդ փորձը կրկնվեց կես հարյուրամյակ անց՝ Եկատերինա II-ի օրոք, երբ Գանձասարի վանքում որոշ մելիքներ ստորագրեցին հավատարմության երդում կայսրուհուն: Այն ժամանակ խանությունը կառավարող Իբրահիմը՝ Փանահ խանի որդին, թունավորեց Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին (1787թ.) և թալանի մատնեց «դավաճանած» մելիքների տիրույթները: Բայց, հավանաբար հաշվի առնելով հայ կառավարիչների ու բարձրագույն հոգևորականության տրամադրությունները, Իբրահիմ խանն ինքը շտապեց 1805թ.

⁹ Տե՛ս ՍՊԲԿ, հ. III, էջ 225, 258



կնքել Քյուրաք-չայի հաշտությունը և իրեն ճանաչել Ռուսաստանին հարկատու: Շահի ժառանգորդ Աբաս-Միրզայի հրամանատարությամբ 1826թ. պարսկական զորքերի Ղարաբաղ ներխուժելու ժամանակ Շուշու հայերն ամեն կերպ օգնեցին տեղի սակավաթիվ ռուսական կայազորին՝ համառ դիմադրություն ցույց տալու: Քաղաքը դիմացավ և չգրավվեց¹⁰:

Հայերի նվիրվածությունը ռուսներին չէր կարող նրանց դեմ չգրգռել «թաթարական» համայնքի այն խավերին, որոնք խանական կառավարման ժամանակ իշխող էին: Սպառողականից առևտրական արտադրությանն անցնելու տնտեսական հարաբերությունների հետագա վերակառուցման ժամանակ ինչպես կենտրոնական (Թիֆլիս), այնպես էլ արևելյան Անդրկովկասում նոր կացության օգուտներից լայնորեն օգտվում էին հայ գնորդները, առևտրականներն ու արդյունաբերողները: Լեռնային Ղարաբաղի հայ հարուստները (ինչպես գյուղի, այնպես էլ քաղաքի) իրենց շահագործողական գործառնությունները ծավալում էին ոչ միայն հայ, այլև ադրբեջանցի բնակչության մեջ, ոչ միայն նախալեռներում, այլ նաև հեռու ցածրավայրերում, որտեղ երկրագործական ու անասնապահական տնտեսությունները շահատակելու գործում մրցակցության մեջ էին մտնում տեղի ադրբեջանական՝ նոր ծնունդ առնող բուրժուազիայի հետ: Այստեղ ու այնտեղ ադրբեջանցի բեկերի հողամասերը սկսեցին հայ դրամատեր բուրժուազիայի ձեռքն անցնել: Հետզհետե ավելի ու ավելի էր աճում Բաքվի նավթարդյունաբերության մեջ ծավալված ադրբեջանական ու հայկական դրամազուլուխների մրցակցությամբ էլ ավելի ուժեղացող ադրբեջանցի հողատերերի, իսկ նրանց հետ միասին՝ գյուղի կուլակների թշնամանքը հայ կապիտալիստների նկատմամբ: Արդեն XIXդ. երկրորդ կեսից Անդրկովկասի գերագույն իշխանությունը սկսեց օգտվել այդ տրամադրություններից, որպեսզի անդրկովկասյան ազգությունների աշխատավոր զանգվածներին շեղի ցարական ինքնակալության և երկրամասը ռուսականացնելու ու ռուսական կապիտալի հովանավորությանը ենթարկելու իր վարած քաղաքականության դեմ նրանց միացյալ ելույթից: Կենտրոնական կառավարության հովանավորությամբ և աջակցությամբ այդ ազգամիջյան թշնամական տրամադրությունները տեղական իշխանության կողմից ոչ միայն չէին կասեցվում, այլև ամեն կերպ բորբոքվում էին: Հայաստյաց քաղաքականությունը սանձարձակության ծայրագույն աստիճանի հասցվեց XXդ. սկզբին և 1905թ. հանգեցրեց հայ-ադրբեջանական արյունալի ընդհարումների: Ձինված ընդհարումներն ընդլայնվեցին նաև Ղարաբաղով մեկ, Շուշիում հրկիզվեցին և կործանվեցին հայկական ու ադրբեջանական մասերի միջև ընկած առևտրական ու արհեստավորական կրպակաշարքերը:

Առաջին պատերազմի ժամանակ Անդրկովկասի ազգությունների բոլոր խավերի ուշադրությունը շեղված էր ռազմաճակատի իրադարձություններով: Բայց, երբ Փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական զորքերը սկսեցին թողնել ռազմաճակատի գիծն ու հեռանալ Անդրկովկասից, բեկերն ու մուլաներն օգտվեցին դրանից՝ զինելով գյուղացիական զանգվածներին: Երկաթուղու շատ կետերում արագությամբ փորված խրամատներից հանկարծ երևում էին զինված մարդիկ ու պահանջում հանձնել զենքն ու զինվորական գնացքները: Այդ հողի վրա՝ Շամխոր կայարանի մոտ, որտեղ փոխադրագնացքները հրաժարվեցին կատարել իրենց շարժումը կասեցրած ամբոխի պահանջներն ու դիմեցին զինված դիմադրության, արյունալի ընդհարումներ բռնկվեցին: Թնդանոթների ու գնդացիների կրակով ավերվեցին գծի երկայնքի մի քանի գյուղական բնակավայրեր: Պարզ էր, որ իշխանությունն Անդրկովկասում սասանվում էր, և որ գլուխ էին

¹⁰ Ռուսական զորքերին հսկայական ծառայություններ մատուցեցին Հարություն Յուզբաշի (հարյուրապետ), Աթաբեկյանի որդիներ Մելիք Վանին ու Հակոբ Յուզբաշին: Տե՛ս В.Потто, *Первые добровольцы Карабах в эпоху водворения русского владычества*, Тифлис, 1922 (Վ. Պոտտո, *Ղարաբաղի առաջին կամավորները*, Երևան, 1974): Ծանոթ. խմբ.



բարձրացնում մութ ուժերը: Նման պայմաններում, ինչպես ամբողջ երկրամասում, այնպես էլ հատկապես Ղարաբաղում, ուր Շուշին բացարձակապես կտրվեց Եվլախ երկաթուղային կայարանից, սկսեցին վախենալ 1905թ. իրադարձությունները կրկնվելու հնարավորությունից: Շուշիում իշխանությունն անցավ հայկական ու ադրբեջանական բուրժուական ազգային կոմիտեներին, ավելին, միջազգային կոմիտեին: Հարևան կոմիտեներ առաջացան նաև գյուղական շրջաններում: Դրանց խնդիրն էր՝ միջոցներ ձեռք առնել կանխելու ամեն տեսակի ազգային տարածայնությունները: Եվ իսկապես, կոմիտեներին հաջողվեց կարգ ու կանոն և ազգամիջյան հաշտություն պահպանել մինչև 1918թ. վերջը, երբ թուրքերը, Բաքուն գրավելով ու այնտեղ մուսավաթականների իշխանությունն ամրապնդելով, թուրքական զորքերը քաղաք ներս թողնելու կտրուկ պահանջ ներկայացրին Շուշուն: Կարճատև տատանումներից հետո ղեկավարող հայկական խումբը թուրքական հրամանատարության հետ համաձայնության եկավ, և սեպտեմբերի 30-ին մի քանի թուրքական վաշտ մտավ Շուշի:

Թուրքերը պահանջեցին հանձնել զենքը, իսկ հայ մտավորականության զգալի մասը կալանավորվեց: Մեկ ամիս մնալուց հետո, Վերսալի պայմանագրի կնքման հետ կապված, թուրքական զորամասերը պետք է հեռանային Ղարաբաղից և ընդհանրապես Ադրբեջանից, Բաքու մտան անգլիական զորքերը: Մուսավաթական կառավարությունը, անգլիական զորքերի հետ համաձայնեցված, որպես գեներալ-նահանգապետ ուղարկեց դոկտոր Խոսրով-բեկ Սուլթանովին, բայց նրա իշխանությունն ընդունվեց միայն քաղաքի ադրբեջանական մասի կողմից, իսկ հայկական բնակչությունը հրաժարվեց նրան ենթարկվելուց: Հայկական բնակչությանը վախեցնելու համար 1919թ. հունիսի 8-10-ը նա անգլիացիների համաձայնությամբ և թողստությամբ կոտորած կազմակերպեց Շուշուց քիչ ներքև գտնվող հայկական Քայրալիքենդ գյուղում: Շատ չանցած՝ ադրբեջանական վաշտերի կողմից գրավվեցին հայկական մասի գորանցները:

Այդ ընթացքում գյուղերում տնօրինություն էին ծավալել դաշնակները: Երևանից՝ դաշնակցականների կառավարած Հայկական «Դեմոկրատական» Հանրապետությունից, մարդիկ և զինամթերք ստանալով՝ գյուղական կոմիտեներն ապստամբություն էին նախապատրաստում, որի նպատակն էր Ղարաբաղը միացնել Հայկական Հանրապետությանը: Դավադիրների զինված ջոկատը, առանց նախազգուշացնելու տեղի հասարակական աշխատողներին, թափանցեց Շուշի և 1920թ. մարտի 20-ի ուշ գիշերը հարձակվեց զորանոցների վրա, որպեսզի զինաթափի մուսավաթական վաշտը, որի կողմից համառ դիմադրության հանդիպեց: Քաղաքի ադրբեջանական մասի բնակիչները, կրակոցներից վրդովված, շտապեցին պաշարվածներին օգնության: Սկսվեց հայկական թաղամասերի հրկիզումն ու կոտորածը: Ովքեր կարող էին, թողնելով ամեն ինչ, ընտանիքներով փախչելով, փորձում էին փրկվել: Փախչում էին դեպի ժայռերը, որպեսզի զառիվայր արահետներով իջնեն խոր կիրճն ու այնտեղից անցնեն Վարանդա: Մառախուղը քողարկում էր նրանց փախուստը: Այդ ահավոր գիշերը կրակից ու զենքից զոհվեց ավելի քան հինգ հազար հայ: Նույն ժամանակ դավադիրները շրջապատել էին և Խանքենդի զորանոցները, բայց մուսավաթական վաշտին հաջողվեց ձեռքել նրանց օղակը՝ Գարգառի հովտով նահանջելիս ավերելով մի քանի հայկական գյուղ: Նմանօրինակ ընդհարումներ բռնկվեցին և Խաչեն գետի հովտում:

Մեկ ամիս անց՝ 1920թ. ապրիլի 28-ին, կարմիր բանակի օժանդակությամբ Բաքվի բանվորները Բաքվում խորհրդային իշխանություն հռչակեցին: Մայիսի 20-ին կարմիր բանակը մտավ Շուշի՝ վերջ դնելով բոլոր ազգամիջյան երկպառակություններին նաև Լեռնային Ղարաբաղում և բերելով խաղաղ գոյակցություն ու բոլոր ազգությունների աշխատավորների համագործակցություն:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՂԱՔԸ ԵՎ ԳՅՈՒՂԸ

Շուշի: Դեռ մինչև ռուսական տիրապետությունը Լեռնային Ղարաբաղում միայն մի բնակավայր էր վերածվել քաղաք-ամրոցի՝ Շուշին: Բայց այն հատուկ տիպի քաղաք էր: Միաժամանակ հարավային ծայրում սկսեց զարգանալ Հադրութ (Վանք) շտաբակայանը, որտեղ արդեն առաջացել էին բավական ընդարձակ առևտրական ու արհեստավորական կրպակաշարքեր, որոնք սպասարկում էին ոչ միայն այստեղ բնակավորված գորամասերին, այլ նաև Դիզակի ամբողջ խտաբնակ շրջանին¹: Սակայն հեղափոխության նախօրեին Հադրութը ոչ թե քաղաքային բնակավայր, այլ ավելի շուտ մեծ գյուղ էր, որի բնակիչների գլխավոր զբաղմունքն այգեգործությունն ու հացամշակությունն էր: Շուշին բնակիչների համար մինչև այժմ էլ, ինչպես հիմնադրման ժամանակ, մնում է բերդ՝ *ղալա*, իսկ շուշեցիներն էլ իրենց կոչում են ոչ այլ կերպ, քան *ղըլըցե*՝ բերդի բնակիչներ: Ռուսական իշխանությունը Լեռնային Ղարաբաղում հաստատվելիս այս բնակավայրն օգտագործել է ամենից առաջ որպես ստրատեգիական կետ և այն վերածել շտաբակայանի: Սակայն շտաբակայանը Խանքենդ գյուղ (ներկայումս՝ Ստեփանակերտ՝ Շուշուց ներքև) տեղափոխելու պատճառով, որտեղ կլիմայական պայմաններն ավելի բարենպաստ էին, Շուշու հետագա զարգացումը պայմանավորվել է այլ հանգամանքներով:

Որոշ ղարաբաղցի ծերունիներ, ոչ առանց հիմքի վկայակոչելով իրենց հայրերին, պնդում են, թե սարավանդի վրա, որտեղ ջիվանշիրցի Փանահ-խանը բերդակառույցներ է հիմնել, արդեն մինչ այդ գոյություն ունեւր բնակավայր՝ արհեստանոցներով և առևտրական կրպակներով: Այդ բնակավայրի համար տնտեսական բազա էր ծառայել մերձկասպյան ցածրավայրերից Ղարաբաղի ալպիական արոտավայրերը շարժվելիս անասնապահների գլխավոր ուղու վրա գտնվելը, այն վայրում, ուր վեր բարձրացող անասնապահներն, առանց որևէ դժվարության տեղափոխությունների վրա շատ ժամանակ չծախսելով, կարող էին անասնապահական մթերքները՝ պանիրը, կարագը, բուրդը, կաշին փոխանակել իրենց պետքական արհեստավորական արտադրանքով (օրորոցներ, սնդուկներ, բահեր, փափախներ, սանդերքներ, սանրեր, տեղական շալեր, պայտեր, գամեր և մետաղե այլ մանրուք, երբեմն բերովի շաքար և համեմունքներ), նորոգել իրենց սայլերը, թամբերը և այլն²: Շուշու այդ տնտեսական նշանակությունը պահպանվում է այսօր էլ՝ ազգամիջյան ընդհարումների ժամանակ քաղաքի հրկիզումից հետո՝ չնայած վարչական կենտրոնը Ստեփանակերտ տեղափոխելուն: Այստեղի կրպակներում ու արհեստանոցներում այսօր էլ տեղի է ունենում մանուֆակտուրայի ու մշակված իրերի և վաչկատունների տնտեսական արտադրության մթերքների ապրանքափոխանակություն: Կյանքն այժմյան Շուշիում մարում է, հենց որ վաչկատուններն իրենց հոտերով սարերից իջնում են ձմեռային տափաստանային արոտավայրերը:

Շուշիով է անցնում Ղարաբաղի լեռնաշղթան հատող Շամախի-Թավրիզ ամենակարճ ճանապարհը: Այդ ուղու մեջտեղը՝ Քաչալսարի (Լիսոգոր) ամենահարմար լեռնանցի մոտ ամրացված արթոռանիստ-կենտրոնում, հյուսիսում՝ մինչև Կուրի, հարավում՝ Արաքսի գետանցները հասնող սահմաններ ունեցող Ղարաբաղի խանության առաջացումը XVIIIդ. կեսին նշանակում էր Շամա-

¹ Տե՛ս Ս. Դավիդբեկով, *Գադրութ*, ՏՄՈՄՊԿ, պր. VI

² Թարթառ ու Խաչեն գետերի վերնահոսանքների արոտավայրերը բարձրացող անասնապահների համար մինչև վերջերս այդպիսի կետ էր ծառայում Գանձասար լեռան ստորոտում՝ Խաչենի ճանապարհին, գտնվող Վանք գյուղը: Այստեղ ամռանը վաչկատուններին սպասարկելու համար ճանապարհի երկու կողմում առևտրական կրպակներ ու արհեստանոցներ էին բացվում: Առաջ այդ կետը գտնվում էր ավելի ցած՝ Վաճառք (Բազարբենդ՝ անունն էլ ստացել է այստեղից) գյուղի մոտ, որտեղ շասան-Ջալալյանների օրոք առևտրական քաղաք է եղել



խու և Թավրիզի միջև առևտրական կարավանների շարժման անվտանգության ապահովում: Շամախին Ռուսաստանից բերվող ապրանքների ելակետ էր, իսկ Թավրիզը՝ պարսկական, եվրոպական (Տրապիզոնով, Էրզրումով, Երևանով ու Նախիջևանով եկող) և վերջապես՝ Պարսկական ծոցի նավահանգիստներով թափանցած հնդկական ապրանքների հիմնական պահեստ: Այստեղ Փանահ խանի հաստատվելու հետ մեկտեղ Շուշի՝ «Ղալ», գերադասեցին վերաբնակվել Ագուլիսի բնակիչները, որոնք Թավրիզի հետ կապված էին առևտրական շահերով, հիմնել էին իրենց թաղը, որը մինչև վերջերս հենց այդպես էլ կոչվում էր՝ «Ագուլեցոց»: «Ղարաբաղի մարզի նկարագրություն»-ում (1823թ.) այս թաղն անվանված է «Ագլիսի»:³ Նույն աղբյուրում հիշատակվում են նաև Ղազանչալու թաղը (ներկայիս Նախիջևանի հանրապետությունում՝ Ալինջի չայ գետի ակունքների մոտ գտնվող Ղազանչի գյուղից վերաբնակեցվածներ), որոնք պղնձե (ղազան) ամանեղենի պատրաստման (որից էլ գյուղը ստացել է անունը) հմուտ վարպետներ էին, բայց դրա հետ մեկտեղ՝ նաև Արաքսի Ջուլֆայի անցման³ ու ստորին կուրյան շրջանների միջև ապրանքներ (հատկապես՝ Նախիջևանի քարաղ, որը գերադասում էին անասնապահները) տեղափոխող համարձակ վաճառականներ: Ագուլիսցիներն ու ղազանչեցիները⁴ Շուշի բերեցին թե՛ իրենց արհեստավորական հմտությունները, թե՛ առևտրական փորձը՝ ակտիվորեն մասնակցելով տեղական ապրանքափոխանակությանն ու տարանցիկ առևտրին:

«Նկարագրություն»-ում նշվում է նաև Թավրիզից՝ որպես Շուշու թաղերից երրորդը՝ բացառապես մահմեդականներով բնակեցված թաղ, որի անունը ցույց է տալիս ինչպես բնակիչների ծագումը, այնպես էլ սերտ կապը Թավրիզի հետ⁵:

Մեհտի-Ղուլի խանի փախուստից և խանի տիրապետության վերացումից հետո Շուշին ռուսական տիրապետության օրոք վերածվեց ընդարձակ գավառի կենտրոնի՝ համապատասխան վարչական, դատական և այլ հիմնարկություններով: Այստեղ տեղափոխվեց և հայկական թեմի կենտրոնական վարչությունը: Դրա հետ մեկտեղ քսանական թվականներին արևելյան Անդրկովկասում դեռ այնքան մեծ էր քաղաքի տնտեսական նշանակությունը, որ Կովկասի հեթանոսների, մահմեդականների, հրեաների մեջ քրիստոնեություն, իսկ քրիստոնյաների մեջ՝ աստվածաշունչ տարածելու, Պետերբուրգում միջնորդությամբ թույլտվություն ստացած «Բագելի ավետարանական ընկերության» անդամներն իրենց գործունեության կենտրոն ընտրեցին հենց Շուշին, որտեղ 1823թ. ձեռնամուխ եղան տպարանի և դպրոցի շենքի շինարարությանը: Վերջինս 1827թ. բացելուց հետո ընդունվեցին 130 սովորող՝ համարյա բոլորն էլ ոչ ունևոր հայկական ընտանիքների զավակներ: Տպարանում գրքերը տպվում էին ոչ թե հին հայ գրական լեզվով, այլ նոր՝ կենդանի խոսվածքների վրա հիմնված, ուստի և հանրամատչելի, նոր ձևավորվող լեզվով: Քանի որ քարոզիչների աշխատանքը միայն ընդհանուր լուսավորչական բնագավառով չէր սահմանափակվում, այլ նաև նկատի ուներ բողոքական ուսմունքի արմատավորում և այն էլ ոչ միայն մահմեդականների, հրեաների ու հեթանոսների, այլ ամենից առաջ հայերի մեջ, ապա այն հարուցեց հայ հոգևորականության թշնամանքը, և Կովկասի բարձրագույն իշխանության օժանդակությունը վայելող Էջմիածնի կաթողիկոսի համառ միջնորդությամբ մինիստրների կոմիտեն արգելեց

³ Այս անցումի մոտ էր գտնվում 1603 թ. Շահ-Աբասի ավերած հայկական հարուստ Ջուղա քաղաքը, որի բնակիչները գաղթեցվեցին Սպահան, որտեղ գետի մյուս ափին առանձին քաղաք հիմնեցին՝ Նոր Ջուղան, որը շարունակեց պահպանել առևտրական հին կապերը Հնդկաստանի, Պարսկաստանի նավահանգիստների և եվրոպական շուկաների հետ
⁴ Այս թաղերից յուրաքանչյուրը հայրենակցական սկզբունքով համախմբված էր իր եկեղեցու շուրջը և, ըստ ամենայնի, մինչև ռուսական քաղաքային կարգի հաստատումը կառավարվում էր իր թաղային կազմակերպությամբ: Հարկ է նշել, որ XIX դ. սկզբին նրանք կորցրել էին իրենց հարազատ բարբառները և խոսում էին տեղական բարբառով
⁵ Հետագայում հանդես եկավ նաև չորրորդ՝ Մեղրեցոց թաղն իր հայրենակցական եկեղեցիով: Սրանք գաղթել էին Մեղրուց, որն Արաքսի աջ վտակ Դիզակի հովտի անցման տարանցիկ առևտրական ուղու ճյուղավորությունում գտնվող առևտրական կետ էր: Մեղրեցիները գաղթել էին 1822 թ. հետո



Անդրկովկասում Բազելի քարոզիչների ինչպես մանկավարժական գործունեությունը, այնպես էլ գրքերի տպագրությունը (1831)⁶: Սույն հարցի նկատմամբ Կովկասի իշխանությունների բռնած դիրքը պայմանավորված էր նրա այն հայեցակետով, թե Կովկասում քրիստոնեության արմատավորումն ու քրիստոնեական մեկ դավանանքից մյուսին անցնելը պետք է ուղղափառ հոգևորականության մենաշնորհը լինի: Քարոզիչները պետք է թողնեին Շուշին⁷, բայց նրանց սկսած դպրոցական գործն այստեղ կառավարական գավառական ուսումնարան, իսկ 1838 թ. Հայկական թեմական դպրոց՝ առաջին և միակ լրիվ միջնակարգ ուսումնական հաստատություն, հիմնելու խթան հանդիսացավ: Վերջինս իր տեսակի մեջ միակն էր Լեռնային Ղարաբաղում մինչև 1881թ., երբ բացվեց ռեալական ուսումնարանը: XIX դ. երկրորդ կեսին հանդես եկան կանանց ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ՝ մեկը հայ հոգևորականության գերատեսչական (1864թ), մյուսը՝ կառավարական: Այսպիսով, Շուշին վերածվում էր Անդրկովկասի հայերի նաև մշակութային նշանակալից կենտրոնի⁸: 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով Երևանի ու Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միավորելուց շատ չանցած՝ պարսկական սահմանը փակվեց տարանցիկ առևտրի համար: Դա մեծ հարված էր Շուշու առևտրին, բայց այն շուտով կարողացավ կարգի ընկնել՝ ընդլայնելով միջնորդի իր դերը ռուսական ֆաբրիկաների ու տեղական գյուղատնտեսական արտադրության միջև, որի շնորհիվ Շուշին չհասավ առևտրական շրջանառության այն ծայրահեղ սահմանափակմանը, որին շատ արագ մեկ տասնամյակի ընթացքում հասան Երևանն ու Նախիջևանը: Վերջիններում արդեն անցյալ դարի երեսնական թվականների վերջերին ճանապարհորդները դատարկ և խարխլված գտան ընդարձակ իջևանատներն ու պահեստները, որոնք մինչև ռուսական տիրապետությունը դրսից բերված ապրանքներ էին մատակարարում կենտրոնական ու արևելյան Անդրկովկասին:

1837թ. վերամիավորված մարզերը պաշտոնական գործերով այցելած Նեֆեդևը դժգոհում է, որ ռուսական արդյունաբերությունը չի հետաքրքրվում նոր շուկայով⁹:

Բոլորովին այլ էր Լեռնային Ղարաբաղում: 1833թ. գույքամատյան կազմողները հարկ են համարում նշել, որ Շուշու բնակիչներից շատերն առևտրով են զբաղված: Հենց միայն կարմիր ապրանքի առևտրականները 94-ն էին, դեղերինն ու ներկերինը՝ 30-ը: Այնժամ, երբ Երևանն ու Նախիջևանն ավելի ու ավելի էին վերածվում իրենց բարեկեցությունը այգեգործության ու խաղողագործության վրա խարսխած և անհետացող արհեստավորական արտադրություն ու աննշան առևտրական գործառնություններ ունեցող մեծ գյուղերի, Շուշիում արհեստներն ու առևտուրը շարունակում էին մնալ եկամտի միակ աղբյուրը: Նրա բնակիչները գրեթե չունեին այգիներ ու վարելահողեր: 1823թ. յոթ հազարից քաղաքի բնակչությունը աճել ու 1914 թ. հասել էր 25 հազարի¹⁰: Այն Անդրկովկասյան Հայաստանում բացարձակապես գյուղատնտեսական զբաղմունքներից կտրված զուտ քաղաքային տիպի միակ բնակավայրն էր:

⁶ Տե՛ս „Акты Кавказской археологической комиссии, (այսուհետև՝ АКАК), т. VII, №317, 1878, էջ 308:

⁷ Մակայն նրանց քարոզչությունն անհետ չմնաց՝ Շուշիում և Շամախիում բողոքական համայնքներ առաջացան: Շուշիում նրանք ապրում էին «Լենցի դարա», այսինքն՝ «Գերմանական ձոր» արվարձանում՝ իրենց աղոթատան մոտ

⁸ Լեռ, **Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի**, էջ 82-97

⁹ Н.Нефедьев, **Взгляд на Армянскую область**. СПб. 1839, էջ 50 և հաջորդները: Միայն 80-ական թվականներից սկսած՝ արտասահմանյան բամբակի մաքուր բարձրացնելուց հետո ռուսական ֆաբրիկան սկսեց օժանդակել բամբակի ցանքատարածությունների ընդարձակմանը Արարատյան դաշտում: Նույն ժամանակ էլ տեղում առաջացան կոնյակի և պահածոների գործարանները

¹⁰ Ըստ Մոզիլսկու և Երմոլով II-ի՝ 1592 ընտանիք: Ըստ նրանց՝ «Նկարագրության» (հ. III, էջ 308)՝ 1833թ.

կար 5079 շունչ արական սեռի, այսինքն՝ երկու սեռերի 10 հազար բնակիչ: Երևանում մինչև 1886թ. գրեթե բոլորովին չի նկատվում բնակչության աճ (1828թ.՝ 11.430, 1886թ.՝ 14.420 շունչ), չնայած որ այն վերածվել էր ընդարձակ նահանգի վարչական կենտրոնի: Միայն 1886թ. հետո, կապված բամբակի, կոնյակի և պահածոների արտադրման զարգացման հետ, բնակչությունը սկսեց աճել և 1914թ. հասավ 29,766 շնչի: Նույնը և Նախիջևանում, որտեղ 1828թ. կար 5470 մարդ, իսկ 1914 թ. հասավ 10,246-ի



Շուշիում մեծ թվով կառավարական հիմնարկների ու դպրոցների կենտրոնացումը նոր խթան դարձավ առևտրի և արդյունաբերության զարգացմանը: Մոսկվայի, Բաքվի և այլ կենտրոնների գործարանային պահեստներում ապառիկի մեծ իրավունք ունեցող Շուշու վաճառականները, առանց բանկային բորսայական գործիչների հետ ազգակցական և այլ կապերի օժանդակության, իրենց քաղաքում մեծածախ ու մանրածախ ընդարձակ առևտուր ծավալեցին՝ կապ հաստատելով ոչ միայն Շուշու և Զիվանշիրի, այլ նաև Զանգեզուրի և նույնիսկ Ելիզավետպոլի գավառների մանր մասնավոր առևտրական կետերի ցանցի հետ: Հենց Շուշիում կենտրոնացան տեղական հումքի գնման և ռուսական գործարանների ու ֆաբրիկաների առաքման գլխավոր գործակալությունները:

Մայրաքաղաքի և արդյունաբերական կենտրոնների հետ կապը պահպանվում էր նաև յուրա-հատուկ պայմանների բերումով: Շուշին իր առողջ, լեռնային կլիմայի շնորհիվ դարձել էր առան-ձին քաղաքներում ոչ շատ վաղ մշտական բնակություն հաստատած և փոքր-ինչ կարողություն ետ գցած բոլոր դարաբաղցիների ամառանոցը: Այդ արտագաղթածների մեջ, որոնց հայրենի երկրա-մասի հետ էին կապում մանկության հուշերն ու դեռևս թարմ ընտանեկան ավանդույթները, պահպանվում էր անհաղթահարելի ուժով դեպի հարազատ լեռնաշխարհը ձգող տեղական ուրույն գավառական հայրենասիրությունը: Նյութապես շատ թե քիչ ապահովված դարաբաղ-ցիների մեծ մասն իր պարտքն էր համարում գյուղում, իսկ ավելի հաճախ Շուշիում կառուցել հարմարավետ, որոշ դեպքերում բավական մեծ այգի ունեցող, լավ կահավորված առանձնատներ, որպեսզի ամռանը ընտանյոք հանդերձ կարողանային «ամառանոց» գնալ:

Անդրկովկասյան երկաթուղու Բաքվի տեղամասի անցկացման և Եվլախ կայարանից մինչև Շուշի խճուղի գցելու շնորհիվ ավելի ուժեղացավ հովեկների այցելությունը Շուշի՝ ամառային ամիսներին աշխուժացնելով քաղաքը, նույնիսկ ամբողջ Ղարաբաղը: Շուշի-Եվլախ փոստային ուղեմասն ուժեղ թափով նախապատրաստվում էր այդ «հավաքին»՝ մեծացնելով փոխադրամիջոց-ների քանակը: Թարթառից, Ելիզավետպոլից, նույնիսկ Բաքվից այստեղ էին տեղափոխվում բազմաթիվ մասնավոր ձիաբեռնասայլեր ու ձիակառքեր: Շուշիում կյանքը ստացել էր զանգվածա-յին զվարճության դրոշմը, բուռն ալիքով ծավալվելով ծառուղիներում, հասարակական այգում, ժայռերի ու քաղաքի վրա կախված ուղղաբերձ քարափների վրա՝ Պեխ-Աղպուրի (Քարին-տակ՝ Դաշալթիի մոտի աղբյուրները) ու Քաչալսարի աղբյուրների զբոսախնջույքների, Սարիբեկի սրբա-վայր ուխտագնացության, մոտակա գյուղեր հեծյալ զբոսանքների և այլ խմբական միջոցառումների ձևով տարածվում էր հեռավոր արվարձաններ: Զբոսնող ու զվարճացող-հանգստացողների այդ ամբողջ զանգվածը տեղում մեծացնում էր մթերքների ու մանուֆակտուրայի պահանջարկը: Ղարա-բաղցիների ամառային «հավաքը» Շուշիում և շրջակայքում տեղի տնտեսության վրա կենարարորեն ազդող բավական խոշոր դրամական միջոցներ էր թողնում, որոնք էլ, ի միջի այլոց, նեցուկ էին լինում տեղական կյանքի հուզող հարցերի նկատմամբ արտագաղթածների մեջ հետաքրքրություն պահե-լուն, որը պահպանվում էր նաև մշտական բնակավայրեր վերադառնալուց հետո¹¹:

Կենցաղային նոր մրցման առումով Լեռնային Ղարաբաղում բավական մեծ էր եկվոր հովեկ-ների ազդեցությունը երկրամասի մշակութային նկարագրի վրա: Բհարկե, երկհարկանի, երբեմն նաև եռահարկ քաղաքատիպ տները, հովեկների զգեստները, նրանց միջավայրում տղամարդ-կանց և կանանց անկաշկանդ փոխհարաբերությունները, երգն ու նվագը, ինչպես նաև գեղարվես-տական ճաշակն ու զվարճալի ժամանցները չէին կարող չհեղափոխել ոչ միայն «բերդի», այլ նաև

¹¹ Հովեկների այցելությունը Շուշի այժմ կրճատվել է: Այդ դերը զգալապես անցել է վարչական նոր կենտրոն Ստեփանակերտին, որն ունի ամառանոցավայրի, նույնիսկ ձմեռային առողջարանի վերածվելու նպաստավոր պայմաններ. տարվա բոլոր եղանակներին աչքի է ընկնում հիանալի բարեխառը կլիմայով և գերծ է Շուշին շատ հաճախ պարուրող թանձր մշուշից



շրջակա մոտիկ գյուղերի արտաքին կեցվածքն ու կենցաղը և, անտարակույս, օժանդակեցին տեղում բազմաթիվ հնավանդ սովորույթների և ավանդության հավատալիքների անհետանալուն: Մյուս կողմից ուսյալ, առանձնապես համալսարանական երիտասարդության մեծ հավաքը նոր գաղափարների ներհոսքով թարմացնում էր տեղի մտավորականությանը: Հովեկներն ամառային ամիսներին Շուշուն տալիս էին մեծ քաղաքի տեսք, որը չունեին հարավային Անդրկովկասի առավել մարդաշատ քաղաքները՝ Երևանը, Ալեքսանդրապոլը (Լենինական):

Գյուղը և արտագնացությունը: Ընդհանուր առմամբ, գյուղի կենցաղի վրա ազդում էր ոչ այնքան Շուշու, որքան Լեռնային Ղարաբաղից դուրս գտնվող քաղաքների՝ առաջին հերթին Բաքվի և Գրոզնու քաղաքային կյանքը: Այդ ազդեցության տարածողները մեծ քաղաքներ վաստակի մեկնած գյուղական աշխատավոր տարրերն էին, որոնց տեղաշարժերն ունեին բոլորովին այլ բնույթ, քան հովեկների խմբերի տեղաշարժերը: Վերջինների տունը, ընտանեկան օջախը դուրս էր Լեռնային Ղարաբաղի սահմաններից, իսկ նրանց քաղաքային տպավորությունները բուրժուական միջավայրի արդյունք էին՝ ի տարբերություն արտագնացների, որոնք դեռ կապված էին տեղի տնտեսական ու հասարակական կյանքին, իսկ նրանց քաղաքային տպավորությունները արդյունք էին գործարանային բնակչության աշխատավոր խավերի հետ ունեցած շփման: Մի շարք պատճառներ դարաբաղից գյուղացուն ստիպում էին շատ թե քիչ երկար ժամանակով հեռանալ գյուղից: Այդ պատճառներից առաջինը կարելի է համարել սակավահողությունը, որը հողի ուժասպառության պայմաններում պարարտացման և ոռոգման միջոցներն ավելացնելու համար մեծ կապիտալ ներդրումներ էր պահանջում: Այդ անբարենպաստ պայմաններն ավելի խիստ էին արտահայտված Լեռնային Ղարաբաղի հարավային մասում, որի բնակչությունը շատ քիչ տարիներ ստիպված չէր լինում դիմելու կողմնակի վաստակի: Արտագնացության հավանաբար շատ հին ծագում ունեցող ձևերից մեկը գյուղի աշխատավորների մեկնումն էր դաշտային Ղարաբաղ և Մուղանի տափաստան հերկի և բերքահավաքի ժամանակ, քանի որ մինչև ռուսական իշխանության հաստատվելն այդ ցածրույթների երկրագործական աշխատանքների մեծ մասը կատարում էին լեռնցիները, ընդ որում, բարձրադիր վայրերում գարնան ուշ գալը նրանց վաղուց ի վեր հնարավորություն էր տվել մինչև իրենց մոտ երկրագործական աշխատանքների սկսվելը վաստակի մեկնելու ցածրադիր վայրեր¹²:

Ռուսական տիրապետությունը, արագացնելով տափաստանի բնակիչների՝ անասնապահությունից երկրագործությանն անցնելու պրոցեսը, նպաստեց վարելահողերի տարածքի մեծացմանը ցածրույթներում՝ դրանով իսկ մեծացնելով աշխատավոր ձեռքերի պահանջը: Վերը նկարագրված պայմաններում սեզոնային-ժամկետային դաշտային աշխատանքի համար լեռնային դարաբաղիների տափաստան իջնելը մշտական բնույթ կրող երևույթի էր վերածվել: Մույն վիճակն առավել հրամայական պահանջ մնաց ոռոգման ցանցի ընդարձակմանը զուգընթաց, որով մեծ տարածություն հատկացվեց ինտենսիվ մշակույթներին:

Հայերի և ադրբեջանցիների այդ հարաբերություններն, իհարկե, նաև մշակութային փոխներգործություն էին առաջացնում՝ խթան հանդիսանալով հայ տղամարդկանց ադրբեջաներեն իմանալուն և արևելյան երգ-երաժշտության նկատմամբ ունեցած հակմանը:

Վճռական վերափոխիչ դերը, սակայն, հատկապես վերջին ժամանակներում, պատկանում էր մեծ քաղաքներում պանդիստության մեջ գտնվող և քաղաքային պրոլետարիատի կյանքի հետ անմիջականորեն շփվող ու ֆաբրիկագործարանային բանվորների միջավայրում շատ թե քիչ երկար ժամանակ մնացող արտագնացներին: Արտագնացությունը նոր պայմաններում վեր-

¹² Այդ աշխատանքների համար բնամթերքով վճարելու չափերը կայուն կերպով սահմանված էին սովորույթով և մինչև վերջերս պահպանվում էին



սկսվեց միայն խորհրդային իշխանության հաստատումից և մանավանդ Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմավորումից հետո, որը երկրամասը միավորեց որպես մեկ տնտեսամշակութային ամբողջություն: Այսպես, 1924թ. ամռան վերջին Սոս, Գյունե Ճարտար, Ննգի ու այլ գյուղերում առկա էր Բաքու և այլ քաղաքներ մեկնելու արտոնագրերի խիստ պահանջ: Սպասվում էր, որ, օրինակ, Ննգիում, որտեղ այդ տարի բերքը խիստ վատ էր, ձմռանը բոլոր տղամարդիկ կբացակայեն: Մեկնում էին ոչ թե անհատներ, այլ ամբողջ խմբեր, քանի որ սովորաբար ամեն գյուղ մի կարգի բանվոր էր մատակարարում, և տեղում էլ հեշտ էր լինում աշխատանք գտնելն ու համախումբ բնակատեղում ապրելը¹³:

Քաղաքներում մնալը միշտ չէ, որ տևում էր մեկ ձմեռ՝ մինչև դաշտային աշխատանքների նոր սեզոնը: Նրանք, ովքեր աշխատանքի էին տեղավորվում ոչ թե գործարաններում, ֆաբրիկաներում կամ շինարարությունում, այլ հիմնարկներում, գրասենյակներում, խանութներում կամ գտնվում էին մասնավոր ծառայության մեջ և ապահովված էին լինում լավ տեղով, երկար մնալով ու աստիճանաբար ընտելանալով նոր կյանքի պայմաններին՝ հաճախ ձգտում էին լրիվ հիմնավորվել այնտեղ, և եթե վերադառնում էլ էին, ապա միայն ամուսնանալու կամ էլ հարազատներին տեսակցելու նպատակով: Ամուսնությունը հաճախ ընտանիքից առանձնանալու և գյուղում մնալով՝ սեփական, ինքնուրույն տնտեսություն վարելու պատճառ էր դառնում: Սակայն արտագնացների մեծ մասը (հատկապես Բաքու և այլ մեծ քաղաքներ մեկնածները) գարնանը սովորաբար շտապում էին տուն՝ սկսելու դաշտային աշխատանքները, համենայն դեպս, ընդհանուր տնտեսություն վարող եղբայրներից որևէ մեկն անպայման վերադառնում էր: Դեպքեր էին լինում նաև, երբ արտագնացներն ավելի շահավետ էին համարում չթողնել քաղաքային աշխատանքը, իսկ գյուղի դաշտային աշխատանքները կատարել կիսրարային կամ վարձակալական այլ սկզբունքներով աշխատուժ վարձելով: Դժբախտաբար, հաշվառված չէ, թե ով որքան հաճախակի ու երկարատև էր արտագնացության մեկնում քաղաքներ, որտեղ ով և ինչպես էր տեղավորվում և որքան էր վաստակում: Դատելով հարցման տվյալներից՝ քաղաքում մնալն ընդհանուր առմամբ բավական տևական էր լինում և ընդգրկում էր առավել երիտասարդ այն տղամարդկանց, որոնք առանձնապես ընկալունակ էին արտաքին ներգործության հանդեպ:

Արտագնաց գյուղացիները քաղաքային սովորություններ էին մտցնում դարաբաղյան գյուղ: Փոփոխությունն ամենից առաջ արտաքին, կենցաղային էր: Արտագնացության ամենից ավելի տարածված շրջաններում՝ Դիզակում և Վարանդայում, մասամբ նաև ներքին Խաչենում գյուղերն արդեն փոխել էին իրենց պատկերը, հագուստի, կահ-կարասու մեջ նկատվում էին ռուսական նորամուծություններ, իսկ զվարճանքներում հստակորեն երևում էր քաղաքային ճաշակը՝ ավելի ցայտուն դարձնելով հին աշխարհընկալման քայքայումը: Սակայն տնտեսական կյանքում այդ ազդեցությունը գրեթե չէր արտահայտվում. ո՛չ հացամշակությունը, ո՛չ այգեգործությունը, ո՛չ անասնապահությունը և ո՛չ էլ կաթնատնտեսությունը նոր ձևեր չէին յուրացնում: Եվ դա լրիվ հասկանալի է. տարագնացները քաղաքում բացառապես տեղավորվում էին առևտրաարդյունաբերական կամ զուտ քաղաքային ձեռնարկություններում, ուստի և բոլորովին չէին հարստացնում իրենց գյուղատնտեսական փորձը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ՏԱՐԴԻ ԱՌԱՋ ԳԱԼԸ

Շուշու հրդեհից հետո նոր կենցաղի առաջացման համար տեղի քաղաքային տարրի նշանակությունը ծայրաստիճան նվազեց: Վարչական նոր կենտրոն Ստեփանակերտը (1927թ. հազիվ

¹³ Հաղորդ ընդ մի թաղարը տալիս էին որմնադիրներ, Նորաշենը՝ ձուլողներ, Տումին ու Մոխրենեսը՝ հյուսներ և այլն



3 հազարից ավել բնակչությամբ) նոր էր կառուցվում և ուներ բավական մեծ և մաքուր ավանի տեսք: Բայց այն առայժմ չունեի իր տնտեսական բազան, գոնե այնպիսին, ինչպիսին տակավին ուներ Շուշին: Այդ բազան կստեղծվեր միայն այն դեպքում, եթե ցածրույթները Ղարաբաղի արոտավայրերին միացնող գլխավոր ուղին Շուշու փոխարեն անցներ Ստեփանակերտով և դեպի վեր՝ Շուշի, տանող զառիվայր խճուղին փոխարինվեր Ստեփանակերտ տանող նոր, բարեկարգ ճանապարհով: Իսկ մինչ այդ գոյություն ունեցող հաղորդակցության ուղիների և ցածրադիր շրջաններում արտադրողական ուժերի բուռն զարգացման նոր պայմաններում Շուշու փոխարեն (որի բնակչությունը նվազել, 1902թ. 27 հազարից հասել էր 7 հազարի, ընդ որում՝ հետագա անկման միտումով) սկսեցին երևան գալ առևտրաարդյունաբերական նոր կենտրոններ: Նման կենտրոններ են երևան գալիս Ղարաբաղի լեռնաշղթայի ծայրագավառում՝ ցածրույթներ տանող գետահովիտների ելքերում: Դրանցից մի քանիսը գտնվում են Լեռնային Ղարաբաղի սահմաններում, մյուսները, որոնք ավելի նշանակալից դեր են կատարում, այդ սահմաններից դուրս, որոշ դեպքերում, մի քանի կիլոմետր հեռավորությամբ միայն: Առաջիններից են Թարթառ և Խաչեն գետերի ավազանները սահուն անցումներով միացնող Օհան-Յաթաղ գետակի՝ Ղարաբաղի ցածրավայրերի ելքին հարող Մարտակերտ գյուղը (Ջրաբերդի շրջան) և Հոնաշեն գետի՝ Մուղանի տափաստանի ելքին հարող Հոնաշեն գյուղը Վարանդայում: Այս երկուսն էլ արդեն շրջանային կենտրոններ էին դարձել: Երկրորդների թվին են պատկանում համանուն գետի տափաստան տանող ելքի մոտ ընկած Թարթառ, բայց հատկապես Աղդամ գյուղերը և վերջապես Թաղլարից արևելք գտնվող Կարյազինո գյուղը¹⁴: Աղդամն իր կողմն էր գրավում Շուշու ամբողջ առևտրաարդյունաբերական կյանքը, իսկ Կարյազինոն, որը վաղուց ետին պլան էր մղել Ջիբրայիլը՝ համանուն գավառի նախկին կենտրոնը, իր կողմն էր գրավում այն շրջանի ամբողջ առևտրաարդյունաբերական կյանքը, որտեղ Հաղրութն արդեն կորցրել էր գլխավոր շուկայի իր նշանակությունը: Նեպի տարիներին Աղդամից ու Կարյազինոյից լեռնաշխարհ էին դուրս բերվում գործվածքեղեն և այլ ապրանքներ, որոնց առևտրականներն իշխող էին ոչ միայն Լեռնային Ղարաբաղում այս ու այնտեղ որոշակի օրերի (օրինակ, Տոդում՝ ուրբաթ օրը) կազմակերպվող շաբաթական տոնավաճառներում, այլ նաև Շուշիում, որտեղ գլխավոր մասնավոր կրպակները պատկանում էին աղդամցիներին: Քաղաքների և քաղաքատիպ բնակավայրերի առաջացման խիստ բնորոշ պրոցեսը ծայրագավառում՝ այնտեղ, որտեղ լեռնաշխարհը սահմանակցվում է տափաստանին, բնականաբար, բացատրվում է հենց լեռների ու գետահովիտների ուղղությամբ, որտեղ հաղորդակցության բնական ճանապարհները հարում են գետերին: Հովիտները դուրսացնում են վերից վար և վարից վեր շարժվելը, իսկ դրանց միմյանցից բաժանող լեռնաշղթաներն իրենց շեշտակի լեռնանցներով դժվարացնում են լայնակի հաղորդակցությունը և անցումը մեկ գետահովտից մյուսը: Լեռնային Ղարաբաղում առկա հարմարավետ անվտուղիները Ստեփանակերտից Վարանդա, Դիզակ կամ Ջրաբերդ են տանում՝ սկզբում իջնելով ցած՝ դեպի Աղդամ, իսկ այնուհետև տափաստանների հենց եզրով ու լեռնաշղթայի ստորոտով հարավ՝ դեպի Հոնաշեն կամ Հաղրութ ու Թաղլար (Կարյազինոյով), և հյուսիս՝ դեպի Մարտակերտ: Տափաստանների տնտեսական աշխուժացման և բնակչության առավելապես տնտեսության նստակյաց ձևին անցնելուն զուգընթաց՝ նոր առևտրաարդյունաբերական կենտրոնները հսկայական ազդեցություն կունենան Լեռնային Ղարաբաղի ոչ միայն տնտեսական, այլև կենցաղային կյանքի վրա, և դրանցում ավելի բազմակողմանի ու խորը կկատարվի երկու՝ լեռնային ու տափաստանային մշակույթների խաչասերումը:

¹⁴ Անվանված է ի պատիվ Կովկասյան պատերազմի պատմության մեջ հայտնի ռուս զննապետ Պավել Միխայլովիչ Կարյազինի: Հետագայում այն վերանվանվեց Ֆիզուլի (ծանոթ. խմբ.)



ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՆ ՈՒ ՏՆԵՐԸ

Գյուղերը: Լեռնային Ղարաբաղում բնակավայրի գերակշռող տիպը գյուղն է (շեն)¹⁵: Այն սովորաբար փակչած է հովիտների ու կիրճերի բարձրաբերձ լանջերին, ուղղաձիգ ժայռերի մոտ և հենց լեռների գագաթների տակ, որոնք մի ժամանակ վտանգի դեպքում բնական ամրություններ են ծառայել: Ցցուն ու գառիթափ այդ ժայռերն այստեղ կրում են *քերծ* հաստուկ անունը: Բացի պաշտպանական նպատակահարմարությունից, այլ հանգամանքներ էլ էին բնակչությանը ստիպում բնակվել հենց ժայռերի տակ, օրինակ՝ քարերի տակից բխող աղբյուրների մերձավորությունը: Տները ցրված են անկանոն զանգվածներով, չունեն որևէ հատուկ հատակագիծ, բայց կրում են հին ազգատոհմային խմբավորումների հետքերը: Մի ժամանակ ամեն մեկն իրեն զգուշաբար պահում էր ազգատոհմային թաղի մոտ, բայց աճած ազգատոհմն արդեն, չտեղավորվելով թաղի անձուկ շրջանակներում, ազատ հողամաս էր որոնում մեծ մասամբ գյուղի ծայրամասերում՝ արդեն այնքան էլ հաշվի չառնելով ազգակցական կապերը, բայց, համենայն դեպս, այնքան էլ չէին հեռանում բուն բնակավայրից: Հատկանշական է, որ ունևոր գյուղացին հազվադեպ էր գյուղի սահմաններից դուրս գալիս և մեկուսանում, նախընտրում էր հիմնավորվել իր տոհմային թաղում՝ տան և բակի տարածությունն ընդարձակելով ի հաշիվ հարևանների, ձգտելով նրանց ամեն կերպ հարկադրել զիջելու իրենց հողակտորները: Այս վերջին հանգամանքը դյուրացնում էր նրա անմիջական ազդեցությունն ազգականների վրա, մյուս կողմից էլ հարուստ այլ ընտանիքների մրցակցությունում ապահովում էր նրանց օժանդակությունը¹⁶:

Լանջերով վեր մագլցող ծուռումուռ փողոցները հաճախ վերածվում են գրեթե անմշակ քարերով շարված սանդուղքների: Հաճախ մի տան կտուրը բակ է ծառայում մյուսին, որը գտնվում է փոքր-ինչ վեր: Ամբողջ աղբը, հաճախ նաև թրիքը փողոց է թափվում, ուր մեկուսի անկյունները բնական պետքերը հոգալու վայր են ծառայում: Այդ աղբն ու կեղտը լվացվում, տարվում էր հորդահոս անձրևաջրերի միջոցով, որոնցից հետո օդը մաքրվում էր գարշահոտությունից:

Այժմ գյուղերում հսկողություն է սահմանված փողոցներն ու բակերը մաքուր պահելու համար:

Տները: Որպես հնաձև տուն՝ ամենուր հանդես է գալիս ետին պատով գետնում ներփորված *դարադամը*՝ «սև տունը»: Սա քարե հիմքերի վրա ազատ կանգնած, չորս հաստ ուղղահայաց սյուներին հենված, հորիզոնական շարվածքի կաղնե հաստ գերաններով շինված տանիք ունեցող քառակուսի քարե շենք է: Տանիքի գերանները զցվում են հորիզոնական՝ ամենուր խիստ որոշակի կարգով, աստիճանաբար փոքրացող քառակուսիներով¹⁷ հասնելով առաստաղի նույնպես քառակուսի երդիկին: Միակ դուռը ծածկված պատշգամբ է ելնում, ուր ընտանիքն անցկացնում է ամբողջ ամառը: Ե՛վ տունը, և՛ պատշգամբը ծածկված են մեկ ընդհանուր հողե կտուրով: Տան նման տիպը տարածված էր նույնիսկ մելիքական պալատներում՝ «ամարաթներում»: Սենյակի մեջտեղը՝ երդիկի տակ (որը նաև որպես ծխնելույզ էր ծառայում), կրակի մրից սևացած հիշյալ կառույցները Խաչենում, Վարանդայում և Դիզակում արդեն լքվում են կամ էլ բնակարան են ծառայում աղքատների ու որբացած ընտանիքների համար միայն: Դրանք հաճախ օգտագործվում են որպես շտեմարան, զում կամ տնտեսական այլ նպատակներով, բայց շատ դեպքերում ուղղակի քանդվում

¹⁵ Լեռնային Ղարաբաղի գյուղերը մեծ մասամբ երկու անուն ունեն՝ հայկական և ադրբեջանական: Կովկասի ռազմական շտաբի քարտեզներում նախապատվությունը տրված է ադրբեջանական անվանումներին

¹⁶ Խորհրդային իշխանության հաստատումից և հատկապես կոլեկտիվ տնտեսավարման հաղթանակից հետո կոլտնտեսության անդամներ, արագ թափով ձեռնամուխ լինելով կառուցապատմանը, նոր տները շինում են հին գյուղի հին տարածքից դուրս

¹⁷ Տե՛ս իմ *„К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам)„* հոդվածը, զետեղված *„Известия Кавказского археологического института„* պարբերականի III հատորում (Թիֆլիս, 1925):

Այս տիպի տունը հայ ժողովրդական տան՝ **գլխատան** մի տարբերակն է, որը դարաբաղյոցները կոչում են նաև **կրքրկոճ**, որպիսի անվանումն ավելի հին է, քան դարադամը (ծանոթ. խմբ.)



են, որպեսզի իրենց տեղը զիջեն նոր, կողային պատերին լուսամուտներ ունեցող երկթեք կտուրով վերգետնյա կառույցներին:

Ղարադամներն առավելապես պահպանվել են հյուսիսային շրջաններում, հատկապես հեռավոր Հաթերք գավառում, որի Վաղուհաս գյուղում բոլոր տներն այդ տիպի գետնափորներ են: Նոր, հաճախ երկհարկ տները մեկ կողմից ունեն նաև ընդարձակ պատշգամբ: Ստորին հարկը սովորաբար տնտեսական նպատակների է ծառայում, իսկ վերինը բնակելի է: Ըստ որում, ամռանը բնակիչները գերադասում են ապրել ստորին հարկում, որտեղ ավելի զով է: Տանիքները ծածկված են այստեղ նախընտրելի կարմիր ներկված թիթեղով կամ էլ հարթ կղմինդրներով (այն վայրերում, ուր զարգացած է կղմինդրի արտադրությունը): Մարագը, գոմը և տնտեսական այլ կառույցներ շինվում էին քիչ հեռու և ծածկվում ծղոտով կամ եղեգով: Բակերը դեռ փոքր էին և անցանկապատ ու հաճախ ծառայում էին հարևանների ընդհանուր օգտագործմանը: Որոշ տեղերում, հատկապես այնտեղ, ուր տերն ամռանը հովեկ եկած դարաբաղցի էր, տներին կից այգիներ էին տնկված: Մակայն ամենուր զգացվում էր արձակ տարածք էլնելու ձգտումը, և որոշ բնակիչներ տներ էին կառուցում գյուղի սահմաններից դուրս, առավել ընդարձակ տեղամասերում՝ տները շրջապատելով համեմատաբար մեծ այգիներով:

Ագարակները: Անտառների հաշվին ցանքատարածքի ընդարձակման և վարելահողերը բնակավայրերից հեռացնելու հետ միասին առաջացավ բնակավայրի նոր տիպ: Գյուղացիներն իրենց աշխատածամանակի մեծ մասն անց էին կացնում տնից հեռու՝ դաշտում, և այդ է պատճառը, որ այնտեղ կալ էր սարքվում ու ժամանակավոր բնակատեղեր էին կառուցվում, որոնք հետագայում մշտականի էին վերածվում, քանի որ հեռավորությունը դժվարություններ էր ստեղծում մթերք դաշտ ուղարկելիս և հոգնեցուցիչ էր անասուններին գյուղ քշելը: Այսպես ագարակներ առաջացան Գյունե ճարտար, Սոս, Թաղավարդ հին գյուղերի մոտ: Դրանցից շատերը դեռ չունեին իրենց հատուկ անունները և հայտնի են **կալեր** ընդհանուր անվամբ: Սովորաբար կալերը գտնվում են նախնական բնակավայրերից զգալիորեն ներքև՝ առավել ընդարձակ վայրերում, հաճախ թթի տնկարանների ու այգիների մոտ: Ագարակներ գոյանում էին նաև քամիներից պաշտպանված այն վայրերում, ուր շինված գոմերում (**կնում**) վաղուց ի վեր նույնպես ձմռանն անասուն էր պահվում: Այսպես, Վաղուհասից անջատվեց Հարությունակնումերը, Առաջածորից՝ Պողոսակնումերն ու Վըրսըկնումերը: Համայնքային հողից համապատասխան հողաբաժին հատկացնելու միջոցով հին գյուղերի կազմից նոր գյուղակների անջատման պրոցեսը հատկապես ցայտուն է արտահայտված Հորաթաղի գավառակում, ուր Կուսապատ (Կասապետ) գյուղից անջատվել են Դամրլուն, Հորաթաղը և Մարտակերտը՝ դուրս մղելով իրենց մայր շենին, կամ Կալադարասու գավառակում, ուր Կալադարասուից անջատվել են Նոր Կալադարասին, Խրիսանը, Կորագերքը, Կանաչ Թալան և Չոբան Գունեն:

Դեռ մելիքների օրոք կիրառվում էր չափից ավելի բազմանդամ ընտանիքներին գոմերում վերաբնակեցնելը: Այսպես, Ավետարանոց (Չանախչի) գյուղից անջատվեցին Ալամանց-կնումերը, Մրգամանց-կնումերը, Պլկանանց կնումերը և Հասանանց կնումերը, որոնցից մի քանիսն այժմ էլ կան¹⁸: Ագարակները շատ դեպքերում կրում են կամ տոհմային, կամ էլ ընտանիքների գլխավորների անուններ:

Տեղանունների առաջացումը պարզելու համար նյութ կարող է ծառայել *թաղ* արմատի հաճախակի կրկնությունը գյուղերի անվանումներում¹⁹:

¹⁸ Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ցուցմունքը (Ավետարանոց գյուղում)

¹⁹ Թաղասեռ, Թաղուտ, Թաղլար, Ճանկաթաղ, Հոռաթաղ, Գյուլաթաղ, Մոխրաթաղ, Վարնկաթաղ և այլն

ՏԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

Տան կահավորումը: Քառասուն տարի առաջ Հաղորթի ուսումնարանի ուսուցիչ Դավիթ Բեկովը տվել է դարադամի ներքին կահավորման պատկերավոր նկարագիրը: «Ղարադամ մտնելիս առաջին հերթին աչքի է զարնում օջախը, ուր կրակ է բոցկլտում և որի շուրջը, սովորաբար, գորգերին կամ կարպետներին ծախսատիկ նստում են ընտանիքի բոլոր անդամները»: Հայրը, որպես ընտանիքի ավագագույն անդամ և տան գլխավոր, պատվավոր տեղ է գրավում հենց օջախի մոտ: Տնարար տանտիկնոջ բնակարանի անկյուններից մեկում տեղավորված են թթու կամ աղ դրած բանջարեղենով լի տարբեր չափի պուլիկներ: Այստեղ կարելի է գտնել կաղամբ, բոխի, վարունգ, լուլիկ, պղպեղ և այլն: Մի այլ անկյունում է գտնվում *պռոզ* կոչվող կլոր և տափակ թարմ թխված հացերով լի փայտե տաշտը: Երրորդ անկյունում գտնվում են ոչխարի բրդից գործված պարկերը կամ, ինչպես այստեղ կոչվում են, *ջվալները*՝ լի այլուրով և հացահատիկներով: Չորրորդ անկյունում հավանոցն է, վերևը կախված են երկրագործական գործիքները, մորթած կամ տարբեր հիվանդություններից սատկած ընտանի կենդանիների մորթիների ու կաշիների կտորները: Պատերից մեկի դիմաց՝ դրա երկայնքով, փայտե թախտ է սարքված, որն ունի մեկ արշին բարձրություն և 10 արշին երկարություն, որի վրա դարսվում են անկողինն ու այլ տնային իրեր, իսկ տակը պահվում է ամանեղենը: Մյուս պատին հենած՝ դրված են օղիով լի կարասները: Պատերից կախկախված են չորացած բանջարեղեն, պարաններ, ընկույզով և այլ չոր մրգերով լի փոքրիկ պարկեր: Բնակարանը լուսավորվում է սև նավթի մեկ կավե կանթեղով, որի պատրույզը պատրաստվում է հին, մաշված բամբակե գործվածքների մնացորդներից: Ամեն տեսակի տաք ուտեստները կանայք են պատրաստում կրականոցում, իսկ հացը շաբաթը երկու անգամ թխում են թոնրի մեջ»²⁰:

Ներկայիս նոր սովորություններն²¹ ու տեխնիկական հարմարությունները բացարձակապես կերպարանափոխել են այդ պատկերը: Ղարադամ են թափանցել ճենապակե ափսեներն ու արծնագոծ գավաթները, դանակներն ու պատառաքաղները և վիեննական ճկաթոռը, սակայն հին կահավորումը գերակշռում է: Այն չկա նոր տներում: Մենյակները տաքացվում են բուխարիկներով կամ թիթեղե վառարաններով, շատ գյուղերում կարելի է տեսնել եթե ոչ երկաթե մահճակալներ, ապա լայն փայտե թախտեր, աթոռակներ, նստարաններ ու աթոռներ, սեղաններ, կոմոդներ, պահարաններ, մի խոսքով, ամեն տեսակի քաղաքային կահույք: Պատերին կախված են Անդրկովկասի ու Ռուսաստանի քաղաքներում ցրված հեռու և մոտ ազգականների լուսանկարների մի ամբողջ հավաքածու, ինչպես նաև գրողների, կոմունիստական կուսակցության առաջնորդների դիմանկարներ, ամեն տեսակի պատկերազարդ պլակատներ, նաև կեղտոտ շրջանակներով զռեհկաճաշակ նկարներ: Անկյուններից մեկում վեր է խոյանում ներքնակների, բարձերի և վերմակների գորգածածկ կուտակը: Դեռ հեշտ չի արմատավորվում պատրաստի անկողին ունենալու սովորությունը, այն ամեն գիշեր գցվում է, ընդ որում, գերադասելի է հատակին: Պատերից մեկը և բոլոր թախտերը գորգերով են ծածկվում, որոնք մեծ մասամբ տնայնագործական են, և, ընդհանրապես, ամեն ինչից երևում է, որ կահավորման ամենագնահատելի մասը կրկին կազմում են գորգերն ու անկողինը:

Ամանեղենը: Խոհանոցային ամանեղենը մեծ մասամբ հաստ պղնձից է. գերակշռում են կոնաձև կաթսաները, երկար բռնակով խոր թավաները, տեղական ձև ունեցող ծանր քամիչները, որոնք Անդրկովկասի հայ բնակչության մեջ ամենուր շատ տարածված են:

²⁰ И. Давидбеков, *Гадрут, СМОМПК, вып. VI, էջ 181*

²¹ *Հեղինակը նկատի ունի 1924թ. և դրանից հետո (ծանոթ. խմբ.)*



Ուսուցար: Ուստեստի մեջ նույնպես առաջնակարգ տեղ են գրավում բանջարեղենով (լոբի, սիսեռ), դաշտային ու տնամերձում աճեցրած խոտերով պատրաստված հին ճաշատեսակները, ինչպես նաև փլավը, ձվածեղը, կոլոլակը կամ ծեծած մսի *քյուֆթան*, խաղողի, կաղամբի և բազուկի տերևներով փաթաթած տոլման: Կաղամբը Լեռնային Ղարաբաղում վաղուց է կլիմայավարժվել: Համեմատաբար վերջերս է հայտնվել կարտոֆիլը, իսկ շատ ավելի ուշ՝ լոլիկը, որի օգտագործումը, սակայն, հատկապես հարավային շրջաններում գրեթե համատարած է դարձել: Հսկայական քանակությամբ սոխ ու շաղգամ է ստացվում: Բնձ ոչ մի տեղ բախտ չվիճակվեց սմբուկ տեսնելու: Գյուղերում միս դժվար է ճարվում: Այն նախկինում առատ էր լինում մատաղի օրերին (ոչխարի միս), իսկ որպես կերակուր՝ օգտագործվում է եփած, խաշած կամ խորոված վիճակում: Միսը ընդունված է նաև տապակել յուղով: Շատ են հավերը, իսկ սագեր ու բադեր իսպառ չկան:

Խմորեղենի մեջ բացակայում է ռուսական կարկանդակը: Հյուրասիրում են կաթնահունց (առանց խորիզի կամ քաղցր ալրախորիզով), գաթա և բարակ քաղցր բլիթներ:

Նախկինում գերակշռում էր կաթնեղեն սնունդը, բայց մեր շրջագայության ժամանակ անասնապահության խիստ կրճատման հետևանքով արդեն ամենուր զգացվում էր պանրի, կարագի, մածնի պակասը: Կովերի փոխարեն շատերը միայն այժմ էին պահում:

Լեռնային Ղարաբաղում հացն այնպես չի թխվում, ինչպես Հայաստանի անտառագուրկ շրջաններում: Մի քանի ամսվա համար թխվող բարակ ու երկար լավաշների փոխարեն այստեղ թխվում են ավելի հաստ ու կլոր հացեր՝ *պոռոզներ*՝ երկու-երեք օրը մի անգամ (շնորհիվ փայտի առատության): Լավաշ սովորաբար թխվում է մատաղի ժամանակ, քանի որ նրանով հեշտ է եփած միս փաթաթելը և աղքատներին ու հարևաններին ուղարկելը:

ԱՐՏԱՔԻՆՆ ՈՒ ՀԱԳՈՒՍՏԸ

Արտաքինը: Խոսելով դարաբաղցի հայի արտաքինի մասին՝ ստիպված ենք հիմնվել ոչ թե ճշգրիտ մարդաչափական տվյալների, այլ դիտումներով ստուգված անձնական տպավորությունների վրա:

Ղարաբաղցի հայի կերպարը նշանակալիորեն տարբերվում է ստորին չորային շրջանների, հատկապես մերձարաքսյան, Հարքի, Մշո շրջանների հայերի կերպարից: Այստեղ գերակշռում են բարձր հասակը, համեմատաբար ավելի սպիտակ մաշկն²² ու բաց գույնի մազերը (մուգ սևից մինչև մուգ շիկահեր), բավական հաճախ են հանդիպում բաց գույնի աչքեր: Խարստյալ մազեր ու երկնագույն աչքեր առանձնապես հաճախ են հանդիպում մի այնպիսի մեկուսացած անկյունում, ինչպիսին է Հոնաշեն գետի ակունքների մոտ՝ Բողիբխանի զանգվածի լանջերի տակ, գտնվող Ննգի գյուղը, որտեղ կարող էին պահպանվել նաև մերձկասպյան տափաստաններից ելած էթնիկ ալիքի ֆիզիկական առանձնահատկությունները: Ղարաբաղցի կինն էլ, տղամարդն էլ կանգնում են ուղիղ՝ ուղղահայաց ձգված մեջքով: Կորացածությունն ու դուրս ցցված փորը խիստ հազվագյուտ երևույթներ են²³: Նույնիսկ ծերունիներն ու պառավներն ուղիղ են քայլում, առանց կռանալու: Ջրով լի մեծ սափորի ծանրությունն էլ չի խանգարում, որպեսզի աղջիկը վայելչակազմ ու լարի պես ձգված բարձրանա լեռնային արահետով: Այս սովորությունն արմատացել է սարերի լանջերով անընդհատ բարձրանալու ու իջնելու, քարից քար թոչելու և ձիավարության շնորհիվ: Լեռնային Ղարաբաղում մինչև այժմ էլ փոխադրամիջոց են ծառայում ձին կամ ջորին: Ղարա-

²² Այն գյուղերում, որոնց տղամարդիկ ցածրավայր են իջնում արտագնաց դաշտային աշխատանքների, հաճախ է հանդիպում դողերոցքոտ դեմքի դեղնավուն նրբերանգը

²³ Արարատյան դաշտի և Երևանի համար այնքան բնորոշ գիրակազմության ու յուղափայլ երեսների տոկոսն այստեղ խիստ աննշան է



բաղու շարժումներն արագ են ու վճռական, քայլվածքը՝ թեթև ու արագ, խոսքն արագ է՝ համեմատած սարահարթային (մերձարաքսյան, Էրզրումի, Ալաշկերտի և այլն) հայերի խոսքի հետ:

Մանրվածքը: Հնում ընդունված էր տղամարդկանց գլուխը սափրել՝ գագաթին թողնելով *քաքուկ*, իսկ երեխաների մազերը կարճ էին կտրում՝ ճակատի մեջտեղը թողնելով *թել*: Այս սովորությունը վաղուց է վերացել, իսկ կանանց սանրվածքն ավելի պահպանողական է: Աղջիկները մինչև հիմա էլ չորս հյուս են անում, որոնցից երկուսը ետ են գցում՝ մեջքին, իսկ երկուսը՝ կրծքին: Այսպիսի սանրվածք ունեն նաև ամուսնացած կանայք, միայն այս դեպքում գլխաշորի փոխարեն շատ բարդ պաճուճանք է պահանջվում, որի տակից պետք է երևան միայն առջևի հյուսերի ծայրերը:

Հագուստը: Լեռնային Ղարաբաղը պետք է դասել այն մանածագործական մարզերի կարգը, որը կարելի է կոչել *բրդի*՝ ի տարբերություն *վուշի* մարզի, որտեղ տեղական ավանդույթով վաղագույն դարերից ի վեր գործվածքները վուշի թելից են գործվում: Հնում Ղարաբաղում ինչպես տղամարդու, այնպես էլ կանացի հագուստների կտորները գործվում էին բրդից, իսկ վուշը մինչև այժմ էլ մշակվում է յուղ, այլ ոչ թե թել ստանալու նպատակով: Մինչև այժմ էլ պարանները բրդից են հյուսվում և կոչվում են *չվան*, իսկ հացահատիկի բրդե պարկերը՝ *ջվալ* ու *խարար*: Բրդից են նաև կարպետները, գորգերը, *մափրաշ*-ները (ճամփորդական պարկերը), խուրջինները, գուլպաները, շալերը, հագուստն ու սփռոցները²⁴: Բամբակե գործվածքներն ուշ են հանդես եկել, իսկ ավելի ուշ՝ մետաքսը: Բամբակն աստիճանաբար դուրս է մղում բրդին, ինչ վերաբերում է մետաքսին, ապա, չնայած տեղում շերամապահության արդյունաբերական նշանակությանը, գյուղացիությունը, այնուամենայնիվ, այն այնքան էլ հոժարակամ չի օգտագործում գործվածքներում, քանի որ տեղի ջուլհակային տեխնիկան մետաքսե նուրբ գործվածքներ չի տալիս: Մետաքսից մեծ մասամբ բարձի երես, վերմակի ու ներքնակի ծածկոց, ջեջիմ կամ շապիկի *ալըղըս* (կարմիր կտոր) են անում, իսկ ամենից հաճախ մետաքսի թելերը պահվում են տարբեր հագուստներ կարելու համար: Բամբակը ձեռք է բերվում ցածրավայրերի բնակիչներից, իսկ բուրդը՝ սար բարձրացող անասնապահներից: Մեփական անասնապահության անկմանը զուգընթաց՝ ղարաբաղցին ավելի ու ավելի սուր է գգում բրդի պակասը:

Քաղաքային մշակույթի ազդեցությամբ բնակչությունը հետզհետե հրաժարվում է հնաձև հագուստներից: Ավելի շուտ սկսեց նահանջել տղամարդու, ավելի ուշ՝ նաև կանանց տեղական տարազը: Առաջներում տղամարդիկ *արխալուղ* էին հագնում, իսկ վրայից՝ *չուխա*, քուղերով (խոնջան) կապվող տաբատ, որը նաև ետ ու առաջ կարելի էր հագնել: Ոտքերին թելակապ կարճ *կոլբա* ու կիսամշակ կաշվե տրեխ էին հագնում: Գլխին դնում էին ոչխարի մորթուց պատրաստված լայն կոնաձև փափախ: Ձմռանը հագնում էին երկար, դարձյալ ոչխարի մուշտակ *քուլք*: Այժմեակաձև (յափնջին) մուտք է գործել վերջերս՝ Դաղստանից²⁵: Տրեխների փոխարեն ծերունիները գերադասում էին ծայրը ծածկված ու վեր թեքված և ետևը բաց կրնկավոր կիսակոշիկներ՝ *քոշեր* հագնել: Նորամուծության ամենից ավելի ենթարկվել են գլխանոցն ու ոտնամանը. փափախին փոխարինել է փոքր հովարով կլոր գլխարկը, իսկ քոշերին՝ երբեմն շատ բարձր ճտքեր ունեցող երկարաճիտ կոշիկները: Տրեխները մինչև այժմ էլ պահպանվում են, սակայն հիմա էլ գյուղերում ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք ունեն բոկոտն քայլելու սովորություն: Տեղական չիխան սկզբում փոխարինվեց լեռնավիրական չուխալով, իսկ այնուհետև ուղղակի արխալուղի վրայից նեղ, կոճակներով կոճկվող տաբատի հետ հագնվող պիջակով, և վերջ ի վերջո

²⁴ *Ձուլհակագործության մասին տե՛ս և Промысловые занятия в некоторых населенных пунктах Закавказья, А.Елисаветпольская губ., СМОМПК, պր. XI, էջ 113-114*

²⁵ *Ծանձոր գյուղի ծերունիների ցուցումները*



այս ու այնտեղ արխալուղի փոխարեն երևան եկավ բաճկոնը: Այս կերպարանափոխությունն ավելի արագ տեղի ունեցավ նրանց հետ, ովքեր մեծ քաղաքում ծառայել էին որպես դոնապան, գրասենյակի պահակ կամ խանութի գործակատար ու գործարանի բանվոր, իսկ ավելի դանդաղ՝ այն անձանց, ովքեր շինարարությունում էին աշխատել: Որպես վերջին տարիների երևույթ՝ պետք է նշել, որ երիտասարդներից նրանք, ովքեր առանձնապես ուզում էին ցուցադրել իրենց կորովիությունը, սկսեցին ցածր՝ 10-12 սմ-անոց ուղիղ փափախներ դնել՝ կարված ոչխարի շիկավուն մորթուց, գազաթամասը՝ մուգ գույնի կտորից:

Կանացի գլխանոցի մի վիճակից մյուսին անցնելու պրոցեսն այլ կերպ է ընթացել: Հին զգեստը կազմված էր գրեթե մինչև կրունկները հասնող թևավոր երկար ներքնաշապկից, որը կարվում էր մուգ ու կարմիր մետաքսե կամ բամբակե կտորից և հագնվում մերկ մարմնին, նույնպես կարմիր գույն ունեցող ու *խոնջանով* ամրացվող վարտիքի վրա (որը նա էտ ու առաջ կարելի էր հագնել): Շապկի վրայից հագնվում էր մետաքսե կամ բամբակաթավշե, կողքերին երկար բացվածքներ ունեցող (որոնց պատճառով ծնկներից զգալիորեն ցած փեշերը երեք քղանցք ունեին) բաց կրծքով արխալուղը: Արխալուղը գոտևորվում էր լայն ու երկար (2,5-4 մ) մետաքսե լայն գոտիով: Տոն օրերին նաև մուշտակ՝ *քուլք* էին հագնում, որը սովորաբար վառ կարմիր գույնի թավշից էր լինում: Քուլքի կրծքի վրա լայն բացվող օձիքը, ինչպես նաև առջևի բացվածքը՝ վերից վար, ու քղանցքի ծայրերը եզերված էին լինում կզաքիսի կամ վայրի կատվի մորթու նեղ շերտով: Կուրծքն ու թևերը զարդարվում էին կոճակներով ու ամեն տեսակի գնդիկներով: Գլխի ծածկոցն ուղղակի ճնշում էր իր ծանրությամբ և բարդությամբ: Այն բազմաթիվ գլխաշորերով գլխին ամրացված կարճ ու կանգուն մի օղագոտ էր, իսկ գլխաշորերից մեկը ծածկում էր երեսի ներքևի մասը մինչև քիթը և լրացնում քառանկյան շրջանակը, որտեղ երևում էին կողքերից պինդ ձգված հյուսերի մի մասը, աչքերն ու ճակատի կեսը և քիթն ու այտերը: Ճակատին օղագոտից ոսկե կամ ոսկեջրած դրամներ էին կախված: Գլխի այս ծածկոցն ամեն օր հանել-դնելը դժվար էր, ուստի այն մի քանի օր չէր հանվում (նույնիսկ գիշերը): Տնից դուրս գալիս սև շալ էր զգվում գլխին, իսկ ոտքերին՝ նախշավոր գուլպաներ և *չմոշկ*-ներ կամ *քոշ*-եր (կանայք տրեխ չէին հագնում):

Նոր կյանքը կանանց սովորեցրեց գունավոր շապկի տակից հագնել ներքնաշապկի, իսկ գունավոր վարտիքը փոխարինել սպիտակով: Չմուշկները (քոշերը) փոխարինվեցին եվրոպական կրնկավոր ճտքակոշիկներով, բայց գլխանոցն ու դրա հետ նաև ամբողջ զգեստը համառորեն պահպանվում էին՝ փոխելով միայն կտորներն ու գույները, չնայած, այնուամենայնիվ, գերադասելի էր մնում կարմիր գույնը: Ղարաբաղյի կանացի զգեստի բոլոր մասերը ոճական տեսակետից սերտորեն կապված էին միմյանց և ամենից առաջ գլխանոցի հետ: Դժվար էր համարձակվել հանել գլխի կապերն ու ծամկալները, ազատել կզակն ու երևալ մարդկանց՝ դեմքի ամբողջ գեղեցկությամբ: Դա չէր համապատասխանում համեստությունն ու ամոթխածությունն հասկացություններին: Առաջին և ամենահամարձակ քայլը քաղաքներում (և այն էլ առաջինը Լեռնային Ղարաբաղում) այն էր, որ տեղի գլխանոցը փոխարինվեց *վրացնակով*²⁶, իսկ այնուհետև՝ արդեն եվրոպական բոլորագլխարկով: Իսկ գյուղերում կանայք նաև ամուսնանալուց հետո շարունակում էին օրիորդների նման հագնել նեղ գոտիով, գոտկատեղում քիչ ձգված ազատ շոր, իսկ գլխին զցում էին գունավոր գլխաշոր, միայն այն տարբերությամբ, որ գլխաշորն այնպես էր կապվում, որ ծածկեր երեսի ներքևի մասը՝ բերանն ու վերին շրթունքը, հյուսերն ազատ ընկած էին լինում կրծքին ու մեջքին: Նույնիսկ գյուղերում այժմ հազվադեպ են հին տարազը կրում, եթե հագնում էլ են, ապա միայն պատավներն ու հիսունն անց կանայք: Ավելի երիտասարդներն արդեն ազատվել են դրանցից:

²⁶ Փաստորեն, այսպես կոչված, վրացական գլխանոցն ու թիֆլիսյան կանանց ամբողջ զգեստը 1828թ. հայերին Անդրկովկաս վերաբնակեցնելիս հայուհիներն են բերել Պարսկաստանից (ծանոթ. խմբ.)



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԸՆՏԱՆԻՔԸ

Բաժանք: Լեռնային Ղարաբաղի շատ սովորույթներում մինչև վերջերս էլ պահպանվել էին տոհմային կենցաղի որոշ մնացուկներ, որոնք, սակայն, որևէ էական նշանակություն չունեին: Արդեն XIX դարից շատ առաջ հազվագյուտ էին երեք չափահաս սերունդներից կազմված բազմանդամ ընտանիքները: Հարյուրամյա ծերունիները պնդում են, որ չեն հիշում այդքան մեծ ընտանիքներ, նրանց երիտասարդ տարիներին շատ վաղ էին տեղի ունենում ընտանեկան բաժանքները: Թաղլար գյուղում, որպես բացառություն, հիշվում էր մի ընտանիք, որում հոր հետ ապրում էին ութ հասուն ամուսնացած որդիները:

Հոր մահից հետո, սովորաբար, ամուսնացած որդիները բաժանվում և իրենց տնտեսությունն են հիմնում, սակայն բաժանման դեպքեր լինում են նաև հոր կենդանության օրոք: Երբեմն նույնիսկ միակ որդին, չհաշտվելով հոր հետ, եթե մանավանդ վերջինս մայրացու (խորթ մայր) է տուն բերել, հեռանում է նրանից:

Բաժանքի ժամանակ նախ չամուսնացած եղբայրների ու քույրերի համար առանձնացվում է շարժական գույքի մի մասը: Քույրերը ստանում են այն ամբողջը, ինչ նրանց հասնում է օժիտով՝ սպիտակեղեն, հագուստեղեն, անկողին՝ *խարջ*, չամուսնացած եղբայրները՝ գերազանցապես անկողնային սպիտակեղեն՝ *ազապ հախք*, և այն, ինչ պետք է ծախսվի նրանց հարսանիքին, մոտավորապես այնքան, որքան ծախսվել է մյուս եղբայրների հարսանիքին: Որոշակի գումար է նախատեսվում նաև այրի մորը, որը հաճախ մնում է ավագ որդու մոտ, որի կնոջ հետ երկար ապրելով՝ ավելի է համակերպվել և որի առաջնեկ երեխաների հետ ավելի է կապված: Բայց նա երբեմն տեղափոխվում է նաև կրտսերի մոտ, որպեսզի օգնի նրա անփորձ կնոջը: Մնացած ամբողջ ունեցվածքը հավասար բաժանվում է եղբայրների միջև, ընդ որում, եթե հայրը ողջ է, նրա բաժինը չի գերազանցում որդիների բաժնին: Տունը բաշխվում է կա՛մ վիճակ գցելով, ընդ որում, վիճակը հանում է որևէ փոքր տղա, կա՛մ բոլորովին անձանոթ հասուն անձնավորություն, կա՛մ էլ, որ ավելի հաճախ է պատահում, ըստ փոխադարձ համաձայնության: Բաժանքին գործուն մասնակցություն են ունենում ազգականները, բարեկամներն ու հարևանները, իսկ տարաձայնությունների դեպքում՝ նաև գյուղի *քոխվան*, որը դիտվում է որպես ընտանիքին մոտ մարդ (հուշ հեռավոր անցյալից, երբ ամբողջ գյուղը ներկայացնում էր մի տոհմային համայնք, իսկ տոհմավագ էր նախահայրը):

Գերաճած ընտանիքի տրոհմանը նպաստեցին բնատնտեսությունից ապրանքայինի անցնելու հետ կապված նոր տնտեսական հարաբերությունները: Արտագնացության բուռն զարգացումը խիստ զատում էր որոշ անդամների մասնակցության բաժինը ընտանիքի ընդհանուր եկամտում: Ամենից հաճախ դժգոհության առիթ էին տալիս այն հաշիվները, որոնք վերաբերում էին անձամբ կողմնակի վաստակով ձեռք բերված և ընդհանուր ունեցվածքին միացրած բաժնին: Նույնիսկ կանայք հաշվում էին ոչ միայն իրենց բերած օժիտը, այլև անձնական եկամուտը, օրինակ՝ ստացված գորգագործությունից:

Չնայած այսպիսի տրոհմանն անհատական ընտանիքների՝ մի ամբողջ շարք սովորույթներով պահպանվում էր և այժմ էլ շարունակում է որոշ չափով պահպանվել ազգակցական կապն առանձին ընտանիքների միջև, որի շարունակումը խորհրդանշվում է նրանով, որ նոր բաժանված ընտանիքի օջախի կրակը վառվում է հայրական օջախից, որը բերում է կամ հայրը, կամ էլ ընտանիքի ավագ անդամներից որևէ մեկը: Ճիշտ է, տնտեսական գործունեության մեջ (դաշտային



և այլ աշխատանքների ժամանակ) պարտադիր չէր ազգականների փոխադարձ օգնությունը, սակայն դեռևս համատարած է այն երևույթը, ըստ որի՝ աղջիկ ամուսնացնելիս կամ հարսնացու ընտրելիս ընտանեկան խորհրդի էին հրավիրվում նաև ազգականները: Նրանք մասնակցում էին թե՛ հարսանեկան ծախքերին, թե՛ ամուսնացողներին նվերներ մատուցելուն: Ազգականներից որևէ մեկի մահվան դեպքում, մինչև հանգուցյալին հողին հանձնելը, նրանք պարտավոր էին խուսափել դաշտում, այգում կամ կալում որևէ աշխատանք կատարելուց և ներկա գտնվել թաղմանը, իսկ այնուհետև նաև հիշատակի բոլոր մեծարումներին տարվա ընթացքում: Մեռնողի զառանցանքը բացատրվում էր մեռած ազգականների հոգիների հետ գրույցի բռնվելով, որոնք սպասում են նրան այն աշխարհում, և որոնք պետք է մեծարեն նրան համապատասխան այն հարգանքի, որ մեռնողը մատուցել է նրանց հիշատակին երկրի վրա: Այս բոլորն անցած-գնացած տոհմային կարգերի և գաղափարախոսության վերապրուկներ էին:

Մինչև հեղափոխությունը նույնիսկ բաժանված անհատական ընտանիքում ներքին փոխհարաբերությունները որոշվում էին հոր և մոր հնավանդ հեղինակությամբ, կրտսեր անդամների անձի լրիվ ճնշմամբ, ինչպես նաև կնոջ ստորադրյալ վիճակով: Տնտեսաընտանեկան խմբի գլուխ էր կանգնած հայրը. նա իր հայեցողությամբ բոլոր աշխատանքները բաշխում էր խմբի ներսում՝ տնօրինելով ամբողջ ունեցվածքը (ինչքի փոխանակումը, վաճառքը, ժամանակավոր օգտագործման տալը և այլն): Նա լիազոր-ներկայացուցիչ էր հավաքություններում, ժողովներում, հարսանիքներում, թաղման և այլ միջոցառումներում: Հոր ներկայությամբ որդիներից, առավել ևս կանանցից ոչ մեկը չէր համարձակվի նստել առանց նրա թույլտվության, թեկուզ լինեի հիսունն անց: Նրա մոտենալուն պես երիտասարդները պարտավոր էին վեր կենալ: Ճիշտ է, տանը հոր իշխանությունն ինչ-որ չափով նսեմանում էր նրա տանտիրուհի կնոջ իշխանության հանդեպ, քանի որ տնային տնտեսությունը նա չէր տնօրինում՝ ստորացուցիչ էր կանացի գործերի մեջ խառնվելը: Բայց նրա տուն մտնելու պահից դադարում էին բարձրաձայն խոսակցությունները և ծիծաղը, բոլորն աշխատում էին անաղմուկ քայլել, տիրում էր համատարած անդորր: Միայն զառամյալությունն ու տնտեսություն վարելու բացարձակ անկարողությունն էին հորը զրկում իշխանությունից: Այնժամ նրան փոխարինում էր ավագ որդին, իսկ հայրը դառնում էր բացարձակապես ավելորդ անդամ, ընդ որում, բավական կոպտորեն զգացնել էին տալիս, որ նրանից ձանձրացել են:

Տանը լիիրավ իշխանությունը պատկանում էր տանտիրուհի մորը, որն առանց վերահսկողության տնօրինում էր բոլոր պաշարները, կանանց մեջ բաշխում էր տնային բազմաթիվ աշխատանքները, հետևում ընտանիքի ամեն մի անդամի վարք ու բարքին:

Մինչև հեղափոխությունը հոր և մոր երկակի կառավարման ներքո ընտանիքն իր ինքնուրույնությունն ու անկախությունը նախանձախնդրաբար պահպանող և ինչպես հարևանների, այնպես էլ ամբողջ համայնքի կողմից որևէ միջամտություն չհանդուրժող ինքնամփոփ տնտեսական միավոր էր:

Համերաշխությունն ընտանիքի բոլոր անդամների վրա եղբոր և հոր արյան վրեժի պատասխանատվություն էր դնում, չնայած որ այդ պատասխանատվությունը չէր տարածվում տվյալ ընտանիքի կողմից դուրս այլ ազգականների վրա: Հեղափոխության նախօրեին այդ հողի վրա մերթ այս, մերթ այն գյուղում արյունալի կռիվներ էին տեղի ունենում, որոնք, սակայն, գնալով ավելի ու ավելի հազվադեպ էին դառնում: Ընտանեկան միաբանության ուժն արտահայտվում էր, ի դեպ, այն աջակցությամբ, որ միմյանց ցույց էր տրվում ընտանիքի անդամներին նրանցից որևէ մեկի օտարության մեջ հաջող հաստատվելու դեպքում, քանի որ այդ մեկը հայրական օջախին աջակցություն ցույց տալուց բացի, նաև իր ետևից ձգում էր ընտանիքի կրտսեր անդամներին: Բավական է



մեկը բարձրագույն կրթություն ստանալու ու իր համար ինչ-որ տեղ ապահովել, նա արդեն իր ետևից էր տանում բոլոր քույրերին ու եղբայրներին՝ միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու հնարավորություն ստեղծելով նրանց համար: Հենց այս երևույթին էլ պետք է վերագրել մարզի մտավորական ուժերի արագ աճը:

Նույն երևույթն էր նկատվում նաև առևտրին ու արդյունաբերությանը նվիրված անձանց շրջանում: Հենց որ նրանցից որևէ մեկը բավականին ընդարձակում էր իր գործառնություններն ու կողմնակի օգնության կարիք էր զգում, լինէր դա հարազատ գյուղում կամ քաղաքում, թե օտարության մեջ, առաջին հերթին ներգրավում էր իր եղբայրներին, փեսաներին, եղբոր կամ քրոջ որդիներին:

Հասարակական գործերի, ընտրությունների, հարկերի բաշխման վրա և այլ դեպքերում ներգործուն պայքար մղելու համար խմբակցություններ կազմելիս դեռ երկար ժամանակ դրսևորվում էր ոչ միայն մոտ, այլ նաև հեռու ազգականների փոխադարձ օժանդակությունը: Այդ խմբավորումները հաճախ նույնիսկ տոհմերի անուններ էին կրում:

Տնտեսության պահպանողական ձևերով ուղեկցվող ընտանեկան համախմբվածությունը, բնական է, հանգեցնում էր երիտասարդության ազատության ու նախաձեռնության կաշկանդվածության: Սակայն, սկսած արդեն 1880-ական թվականներից, հասարակական կյանքում ավելի հաճախակի դարձան ավագների և ամենից առաջ սեփական տոհմի կուլակների հեղինակության դեմ երիտասարդ սերնդի ըմբոստանալու դեպքերը:

Հոր և մոր ամենակալ իշխանությունից բացի, Լեոնային Ղարաբաղի մինչհեղափոխական ընտանիքում խիստ ընդգծվում էր ընդհանրապես արկան սեռի գերազանցությունը: Տղայի ծնունդը դիմավորվում էր համընդհանուր շնորհավորանքներով, իսկ աղջկա ծնունդը գրեթե դժբախտություն էր համարվում: Միայն կամ մեծ մասամբ աղջիկներ ծնած կինն ընտանիքում հարգանք չէր վայելում, և ոչ միայն այն պատճառով, որ աղջկան ամուսնացնելիս ընտանիքը չափազանց մեծ ծախսեր էր կրում, այլև այն, որ ընտանիքի անդամների ավելացումը դիտվում էր սեփական հաստատուն աշխատուժի ավելացման կամ նվազման տեսանկյունից, իսկ աղջիկն այնպիսի աշխատուժ էր, որը հետագայում պետք է օգտագործվեր ոչ թե հարազատ, այլ օտար ընտանիքի կողմից, ուստի այդ աշխատուժի նախապատրաստման ու աճեցման բոլոր ծախսերը կորած էին համարվում:

Ընտանիքը ծայրաստիճան մտահոգված էր իր տնտեսությունը հետագայում աշխատավոր ձեռքերով ապահովելուն, և եթե կինը անպտուղ էր լինում, հասարակությունը չէր դատապարտում ամուսնուն, եթե նա ուրիշ կին էր տուն բերում, որպեսզի ժառանգներ ունենար նրանից: Ինքը՝ առաջին կինը, դա համարում էր ամուսնու բնական իրավունքը: Նույնիսկ հոգևորականներն էին այդպես վարվում: Կինն ամենից առաջ դիտվում էր որպես աշխատուժ վերարտադրող: Այնինչ տնային աշխատանքների ամբողջ ծանրությունն ընկած էր կնոջ վրա: Նա էր բերում ջուրը, ճաշ պատրաստում, տունը մաքուր պահում, կովերը և այծերը կթում, հացահատիկը մաքրում, մրգերը չորացնում, բրդե կտոր, շալ, բյազ և գորգ ու գուլպա գործում, տան անդամներին լողացնում: Նաև օգնում էր տղամարդկանց դաշտային աշխատանքների ժամանակ (բացի վարից), հատկապես կալը կալսելիս հաճախ հենց ինքն էր հացահատիկը էշով ջրաղաց տանում: Կլոր տարի կնոջ ամբողջ օրն աշխատանքին էր նվիրված, և ոչ միայն ամռանը, այլ նաև ձմռանը, երբ տղամարդը հանգստանում էր: Ժողովրդական առածն ասում է. «*Կինը ձի է, սանձը բերանը դնելով, միաժամանակ պետք է թամբն էլ մեջքին դնել*»:



Չնայած տնտեսավարման մեջ ունեցած կնոջ այդքան ակտիվ դերին՝ մինչև հեղափոխությունը սովորության կրավունքը կաշկանդում էր նրա անձը: Տղամարդկանց հետ ընդհանուր սեղանի մոտ նստող տանտիրուհի կնոջից բացի, մնացած բոլոր կանայք ճաշում էին առանձին՝ նրանցից հետո: Կանացի ամոթխածության և պատվի վերաբերյալ գոյություն ունեցող հասկացությունը՝ նամուսը, ամուսնացած կնոջը թույլ չէր տալիս բաց երեսով երևալ տղամարդկանց, հատկապես սկեսրայրի աչքին: Փողոցում կամ դաշտում տղամարդու հանդիպելիս կինը մի կողմ էր քաշվում, շրջվում էր և ավելի էր վեր բարձրացնում երեսին քաշած գլխի ծածկոցի ծայրերը: Քավորի և սկեսրայրի հետ նա չէր խոսում մինչև մահ, սկեսրոջ հետ՝ մինչև առաջին երեխայի ծնվելը, իսկ տեգրոջ հետ՝ տասը տարի: Մի ամբողջ շաբթ արգելքներ նրան լռության էին դատապարտում: Եթե հարկ էր լինում տնեցիներից որևէ մեկին մի բան ասել, նա իր ասելիքը փոխանցում էր երեխաների կամ չամուսնացած աղջկա միջոցով, իսկ եթե նրանք սենյակում չէին, ապա մի կողմ նայելով և ասես կողմնակի ինչ-որ մեկին դիմելով կիսաձայն ասում էր. «*Ասա՛ այսինչը կանչում է քեզ*» կամ՝ «*Այսինչն ասաց՝ այսօր արի մեզ մոտ*», կամ թե չէ խուլ «*ի, ի*»-ով իր վրա ուշադրություն հրավիրելով՝ միտքն արտահայտում էր իմաստավոր շարժումներով, որոնց լեզուն այստեղ մշակվել էր դարերով: Թե դեռևս որքան ամուր էին կանանց նկատմամբ նախապաշարմունքները, երևում է թեկուզ հետևյալ փաստից: Բաքվի գիմնազիայում մինչև IV դասարան սովորած աղջիկը Բաքվի ազգային ընդհարումների ժամանակ հայրական գյուղ՝ Գյունե ճարտար ընկնելով, ամուսնացել էր մի մարդու հետ, որը տևական ժամանակով տարբեր առիթներով ապրել էր քաղաքում: Երեխային օրորելով՝ նա մինչև ավագ տեգրոջ գալը ազատ խոսում էր ինձ հետ, բայց հենց որ լավեցին տեգրոջ քայլերը, նա, շտապով ավելի վեր քաշելով բերանակալը, ինձ նշաններով հասկացրեց, որ իրեն արգելվում է խոսեր: Մեկ այլ՝ Հացի գյուղում ծագմամբ լեռուհի և միջնակարգ կրթություն ունեցող կինը, որի ամուսինը հայ էր, ճաշում էր տղամարդկանցից առանձին՝ կանանց հետ և ենթարկվում էր չխոսկանության պահանջներին, առանձնապես աղբյուրը ջրի գնալիս: Նման իրադրության պայմաններում, բնական է, չէր կարող զարգանալ կանացի երգը: Մարդկանց ներկայությամբ նույնիսկ ամուսնու հետ կինը չէր կարող ազատ խոսել և նրան դիմել անունով: Ամուսնու հետ փողոցով կամ գյուղից գյուղ գնալիս նա փոքր-ինչ ետևից էր քայլում: Ջահել հարսն ու աղջիկը եկեղեցի էին գնում տարին միայն երկու անգամ՝ Ծաղկազարդի կիրակի և Ավագ Չարչարանաց ուրբաթ օրերին: Թաղման ժամանակ կանանց ներկայությունը գերեզմանոցում արգելվում էր: Լեռնային Ղարաբաղի գյուղերում այժմ էլ չէք լսի կանանց թաղեթաղ փոխկանչը, որ այնքան բնորոշ է օրինակ՝ վրացական գյուղին:

Կնոջ ընտանեկան կյանքը միշտ չէ, որ խաղաղ էր. սկեսուրը ոչ միայն նախատում էր, այլև դիմում էր բռունցքների, եթե հարսը կամ աղջիկը ճիշտ չէին կատարում նրա կարգադրությունները և կամ էլ համարձակվում էին հակաճառել: Ընտանեկան տարաձայնություններն ավելի ու ավելի հաճախակի էին դառնում հատկապես վաղ ամուսնությունների արգելումից հետո: Մինչև հեղափոխությունը սովորաբար աղջիկն ամուսնանում էր 12-14 տարեկան հասակում: Նոր ընտանիք ոտք դնելով՝ նա, դեռևս բոլորովին չկազմակերպված և չզարգացած էակ, հեշտությամբ համակերպվում էր նոր իրադրության և նոր մարդկանց հետ: 16 տարին որպես կանանց ամուսնական նվազագույն տարիք սահմանելուց ի վեր, շնորհիվ հայրական տանն աղջիկների համեմատաբար ավելի մեծ ազատության՝ մինչև ամուսնությունը նրանցում սկսում էր զարգանալ խառնվածքի և հակումների որոշակի ինքնուրույնություն: Ավելի ու ավելի էր դժվարանում հանդուրժել սկեսրոջ կամ տագերկանանց բռնակալությունը: Ընդհանրապես, ինչպես Հայաստանի այլ վայրերում, այն-



պես էլ Լեոնային Ղարաբաղում սկեսուրն ու հարսը հակադիր բևեռներ էին, ինչպես ռուսական ընտանիքում՝ զոքանչն ու փեսան:

Առաջներում շատ հազվադեպ էր հարսը համարձակվում թողնել ամուսնու տունը և գնալ ծնողների մոտ, եթե նրա կյանքը թեկուզև շատ ծանր էր լինում: Դա մեծ խայտառակություն էր համարվում, որին հասարակությունն այժմ բավական հանդուրժողաբար է վերաբերվում և որոշակի ճնշում է գործադրում այն ընտանիքի վրա, որից հարսը հեռացել է: Նման դեպքերը սովորաբար սկսել են ավարտվել նրանով, որ կնոջից հետո բաժանման պահանջ դնելով՝ ամուսինն էլ է հեռանում հայրական տնից: Ծեծն ընտանիքում հաճախակի էր. որդիները պատժվում էին հոր, աղջիկներն ու հարսները՝ մոր կողմից: Տղամարդը կնոջ վրա հազվադեպ էր ձեռք բարձրացնում, այն էլ միայն հայրն աղջկա կամ եղբայրը քրոջ, կամ էլ (շատ հազվադեպ) ամուսինը կնոջ վրա: Ընտանիքի ներքին կյանքին հարևանների միջամտությունն անթույլատրելի էր: Բայց այդտեղ էլ վերջին ժամանակներս հատկանշական վերափոխություններ են տեղի ունեցել: Մինչև հեղափոխությունը Սոս գյուղում իր կնոջ հետ համագյուղացու կոպիտ վարմունքից և նրա տնից մշտական ճիչեր լսվելուց վրդովված հարևաններն ամուսնուն պատասխանատվության էին ենթարկվել, և գյուղական դատարանը նրան մի քանի օրով կալանքի էր վերցրել, որի դեմ կինը խիստ բողոքել էր՝ պատճառաբանելով, որ ոչ-ոք իրավասու չէ իր ընտանեկան գործերին միջամտելու: Ներկայումս նույն Սոսում եղել են դեպքեր, երբ կինն ամուսնու ծեծին ծեծով է պատասխանել կամ էլ բողոքել է դատարանին, որ ամուսինն իր նկատմամբ կոպիտ է՝ պահանջելով պատժել նրան:

Մինչև հեղափոխությունը, երբ աղջկան ամուսնացնում էին 12-14 տարեկան հասակում¹, նա հաճախ ընդդիմանում էր ծնողների կամքին, երբեմն էլ, վերջիններիս անհամաձայնության դեպքում, ամեն ինչ ավարտվում էր նրանով, որ նրան փախցնում էին, և փաստը ձևակերպվում էր եկեղեցական պսակադրությամբ (եթե աղջիկը համաձայնություն էր հայտնում): 1913թ. տիրող կարգերի դեմ իր բողոքը յուրովի արտահայտեց վաղուհասցի մի աղջիկ: Միրած մարդու հետ տնից փախչելով՝ նա այնուհետև ոչ մի կերպ չցանկացավ պսակվել եկեղեցով և կնքել տալ իր երեխային: Հեղափոխությունն ազատորեն կյանքի ուղեկից ընտրելու հնարավորություն ստեղծեց աղջկա համար, որի հակումները բավականին որոշակիանում են արդեն 17-ին մոտ տարիքում, և ծնողներն ուղղակի ստիպված են դրանք հաշվի առնել:

Ավագներն ու կրտսերները: Նոր կարգերը փոխեցին ոչ միայն կնոջ վիճակը հոր և ամուսնու տանը, այլ նաև ավագների ու կրտսերների փոխհարաբերությունները, չնայած ներկայումս էլ, երբ փոքրը խառնվում է մեծերի խոսակցությանը, հայրը կամ ավագ եղբայրը նրան սաստում են: Մակայն երիտասարդներն ավելի ու ավելի ակտիվորեն են միջամտում ընտանեկան և այլ հարցերի լուծմանը հատկապես Լեոնային Ղարաբաղի այն շրջաններում, ուր լայնորեն աշխատանք են ծավալել կուսակցական և կոմերիտական բջիջները: 1924թ. կոմերիտական շարժումն արդեն խիստ ծավալվել էր Ստեփանակերտի շրջակա գյուղերում և Սոս-Ճարտար-Գիշի խիտ բնակեցված անկյունում: Այստեղ, ինչպես նաև Շուշիքենդ-Ավետարանոց-Թաղլար-Տող գծում հետազոտություններ կատարելիս կոմերիտականներն ինձ գործուն օժանդակություն էին ցույց տալիս, և տուն մտնելիս համոզվում էի, որ այստեղ նրանց հետ հաշվի են նստում: Հասարակության մեջ երիտասարդների տեսակարար կշռի բարձրացումն անդրադարձավ դեռևս մինչև հեղափոխությունն սկսված ընտանեկան շրջանակներում դարավոր ավանդույթների քայքայման պրոցեսի արագացման վրա: Մի կողմից՝ ընտանիքից երիտասարդ զույգերի անջատվելը՝ որպես ինքնու-

¹ Այդ սովորույթն այժմ էլ որոշ վայրերում պահպանվում է, և ծնողներն աղջկան նոր ընտանիքին են հանձնում դեռևս օրենքով սահմանված տարիքին չհասած, իսկ ԶԱԳՄ-ում ամուսնությունը գրանցում են արդեն 16 տարին լրանալուց հետո



րույն տնտեսական միավորների, մյուս կողմից՝ տարեցտարի սեփական ուժերի նկատմամբ երիտասարդ մարդկանց մեծացող հավատը ոչ միայն ընտանիքին, այլև ամբողջ գյուղին, իսկ դրա հետ միասին ամբողջ երկրին նոր բնույթ են տալիս՝ կյանքի նոր ձևերի որոնման ոլորտը հագեցնելով լավատեսությամբ:

Բարոյականությունը: Ղարաբաղյան գյուղում հին կենցաղային պայմանների օրոք խիստ հագվադեպ ամուսնական հավատարմության խախտման դեպքերն ու ընդհանրապես կողմնակի սիրային կապերը, տնտեսական համակարգի փոփոխմանը զուգընթաց, ավելի ու ավելի հաճախացան: Հիմնական պատճառներն էին (և են)՝ արտագնաց ամուսինների տնական բացակայությունները, անապահով վիճակ ստեղծող այրիությունը, ամուսնու երկարատև զինվորական ծառայությունը, վաղ, հաճախ բռնի ամուսնությունը (մինչև խորհրդային կարգերի հաստատումը): Նման դեպքերը բացահայտվելիս արժանանում էին հասարակության խիստ կշտամբանքին: Այն շրջաններում, որտեղ տղամարդիկ քաղաքներ էին մեկնում վաստակի, գաղտնի սիրային կապերն առավել հաճախակի երևույթ էին դառնում, որին քիչ չէին նպաստում նաև քաղաքում սեռական սանձարձակության վարժված տղամարդիկ: Մյուս կողմից, հենց այս շրջաններում էին կենտրոնացած բոժոժից թելքաշման և մետաքսամանման գործարանները, որոնցում համատեղ աշխատում էին տղամարդիկ ու կանայք: Սակայն սիրային կապերն այլասերված բնույթ չէին կրում, այլ միայն մտերմիկ կապ էին կնոջ և որոշակի տղամարդու միջև: Ընդհանրապես, ուրիշ ոչ մի բնագավառում հետազոտությունը չի հանդիպում այնպիսի խոչընդոտների, ինչպես սեռական բարոյականությունն ուսումնասիրելիս, երբ ավելի ես ենթակա հանգելու զուտ սուբյեկտիվ եզրակացությունների: Բայց հատկանշականն այն է, որ այն հարցին, թե ինչպես են նոր կարգերն անդրադարձել կնոջ բարոյականության վրա, թե՛ ծերունիները, թե՛ երիտասարդներն ամենուր պատասխանում էին՝ «Ի՞նչ, ո՞վ է այժմ հարկադրում չսիրած մարդու հետ ապրել: Բաժանվելը հեշտ է, և կարելի է բացահայտորեն գնալ նրա մոտ, ում սիրում ես»:

Հյուրասիրությունը: Օտարականին տուն ընդունելը, պատիվ տալն ու նրա ձիուն կերակրելը և հյուրասիրության դրսևորման այլ ձևերը, որոնք ամենուր հասուն են հասարակական զարգացման որոշակի փուլի և որոնք Լեռնային Ղարաբաղի տնտեսության հին, ներփակ ձևերի օրոք սրբազորված էին սովորույթով, նոր արտադրահարաբերությունների երևան գալու հետ պետք է կերպարանափոխվելին: Լեռնային Ղարաբաղում այժմ էլ ասում են. «Հյուրն աստծունն է»: Մինչև այժմ էլ հեռու և մոտիկ գյուղերի հայտնի ընտանիքներ շարունակում են մերձավորագույն կապեր պահպանել՝ հավատարիմ մնալով հաճախ մի քանի սերնդի վաղեմություն ունեցող փոխադարձ հյուրընկալական կապին: Սակայն երիտասարդ ընտանիքների միջև նման մնայուն կապեր շատ դժվարությամբ են հաստատվում, չնայած որ ճանապարհների վիճակը, տեղաշարժման պայմանները և գյուղերում հյուրանոցներ ու իջևանատներ չլինելը վերջնականապես չեն վերացրել մասնավոր անձանց մոտ ապաստան, սնունդ և ուղեկցող գտնելու անհրաժեշտությունը:

Եթե դուք պաշտոնական գործով եք ժամանել, գյուղխորհրդի նախագահն ինքը ձեզ կտեղավորի որևէ տան, իսկ եթե բախեք գյուղացու դուռն իբրև մասնավոր անձ՝ խնդրելով ապաստան, մերժում չէք ստանա: Սովորույթը պատվիրում է ընդունել հյուրին՝ ամենայն հոգատարություն ցուցաբերելով նրա նկատմամբ: Սակայն ամենուր չէ, որ տանտերն առաջվա սիրալիրությունն է ցուցաբերում, զգացվում է, որ նա ճնշված է զգում իրեն, կուզենար պատշաճ ձևով ընդունել ձեզ, եթե չխանգարեր տնտեսության քայքայվածությունը: Հնում հյուրի ժամանման դեպքում հաց, պանիր, կարագ, ձու կամ գարի չլինելիս ամոթ չէր հարևանին դիմելը: Այժմ արդեն այդ հնարավոր չէ, ամեն ինչի համար պետք է կամ վճարել, կամ էլ պարտքով վերցնել:



Եթե հյուրն ինքը փորձի իր համար մթերք գնել, դա խիստ կվիրավորի տանտիրոջը, ինչպես կվիրավորի և այն, եթե նրան դրամ առաջարկեք ապաստան տալու դիմաց: Տանտերն այժմ դրամ վերցնում է միայն ձեր ձիու համար գնած գարու դիմաց: Նվերներ ընդունում է հաճույքով, հետևաբար, նա, ով չի ցանկանում մնալ պարտքի տակ, պետք է իր հետ վերցնի շաքարի, թեյի, կոնֆետի, օճառի, գլխաշորերի, փոքրիկ սփռոցների և այլնի պաշար, որպեսզի վարձահատույց լինի հյուրընկալության դիմաց:

ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

Փոխօգնությունը: Գյուղական համայնքի կազմի մեջ մտնելով՝ ընտանիքը հարևանների և առհասարակ համագյուղացիների հետ հարաբերությունների որոշակի չափանիշներ էր մշակում, որոնք ելնում էին ոչ այնքան ազգակցական կապերից, որքան զուտ տնտեսական նախապայմաններից: Ստեղծվել էր բարիդրացիական ուրույն բարոյագիտություն, որը փոխադարձորեն պարտավորեցնում էր չմիջամտել միմյանց ներքին գործերին և, ըստ ամենայնի, օգնել մեկմեկու: Փոխ էին առնում ոչ միայն տնային ամանեղեն ու պաշարներ, այլև գործիքներ (նաև գյուղատնտեսական) և բանոդ անասուններ՝ աշխատելով պահպանել փոխօգնությունների հավասարաբեքությունը: Որոշ սնահավատություններ սահմանափակում էին հիշյալ փոխհարաբերությունները: Այսպես, մայրամուտից հետո կշեռք, մաղ, աղ և կրակ փոխ տալն արգելվում էր, իսկ երկուշաբթի ընդհանրապես հրաժարվում էին որևէ բան փոխ տալ («չարից», «դժբախտությունից», «կորստից» խուսափելով), և եթե տալիս էին, ապա հարևանը դրա փոխարեն պետք է տնից որևէ բան բերեր և ժամանակավորապես թողներ, թեկուզ մինչև հաջորդ օրը: Չէին տալիս կաթի տակի կրակը՝ վախենալով, որ կաթը կկտրվի, և որպեսզի դրա առաջն առնեին, կաթով լի կաթսայի կափարիչին կանաչ տերև էին դնում: Ընդհանրապես, դժկամությամբ էին միմյանց կաթ տալիս՝ չլինի թե կովը դրանից հիվանդանա կամ դադարի կաթ տալուց, իսկ եթե տալիս էին էլ, ապա նախօրոք մեջն ածխի կտոր զցելուց հետո միայն:

Անթույլատրելի էր համարվում գողունի հետևել, թե ինչ է կատարվում հարևանի տանը, և կամ տեղեկություններ տալ նրա, նրա անասունների թվի, հացի ու պտղի ստացած բերքի և, ընդհանրապես, կարողության վերաբերյալ, չնայած որ բոլորն էլ հրաշալի գիտեին այդ մասին: Կանայք սիրում են բամբասել, բայց բարիդրացիական հարաբերությունները պահանջում էին բարձր պահել հարևանների պատիվը: Մի շարք սովորություններ հավակնում էին ստեղծել ոչ միայն մոտ հարևանների, այլ նաև ընդհանրապես համագյուղացիների խաղաղ համաբնակություն (որն ինքնին անխուսափելի էր տների կուտակվածության պատճառով): Մեծ պասն սկսվելուն պես գծոված համագյուղացիներին հաշտեցնելու միջոցներ էին ձեռք առնվում: Մատաղ անողը պարտավոր էր մատաղի միս ուղարկել նաև իր թշնամուն, որն իր հերթին պարտավոր էր ընդունել այն: Դրանով վերջանում էր ամեն տեսակի թշնամանք, և վերականգնվում էր նախկին բարեկամությունը: Ընդհանրապես, հնում թույլ չէին տալիս, որ թշնամությունը շարունակվի մեկ տարուց ավելի: 1924թ. բոլոր գյուղերում հողաշինարարություն սկսվեց: Հողի բաշխումն առանձին տնտեսությունների միջև իրագործում էին գյուղերից ընտրված կոմիտեները, որոնք անհրաժեշտ տեղեկություններ ստանում էին ինչպես տանտերերից, այնպես էլ հարևաններից, որոնք, իհարկե, շահագրգռված էին, որ հողային ֆոնդը հավասարաչափ բաշխվի: Ծայրահեղ սակավահողությամբ էր առավելապես պայմանավորված բնական այն գրգռումը, որը հարուցում էր հողաբաժանումը: Դրա հետ մեկտեղ միասնական գյուղատնտեսական հարկի չափը որոշելու տվյալներ հայթայթելիս դարձյալ ստիպված էին դիմելու հարևանների օգնությանը: Շատ վայրերում (օրինակ՝ Թաղա-



վարդ գյուղում) նշված պայմաններում հարևանների միջև առկա էին բացահայտ թշնամական հարաբերություններ, առանձնապես չարացած էին առավել ունևոր՝ կուլակային տարրերը:

Սակայն, չնայած վերջին ժամանակներս բարիդրացիական հարաբերությունների որոշ սրմանը, երբեք այնքան խիստ չէր զգացվել գյուղի կենդանի արտադրողական ուժերի առավել համախմբման անհրաժեշտությունը, ինչպես հեղափոխությունից հետո: Դեռևս մինչև 1917թ. կրճատված բանող անասունների քանակությունն ավելի քչացավ՝ ավելի ստիպելով մենատնտես գյուղացիներին միավորվել հերկի ժամանակ: Հետագայում՝ մինչև կոոպերատիվ նոր ձևերի լրիվ յուրացումը, նրանք ավելի հաճախ էին դիմում դարերով ժառանգած ձևերի, որոնց մեջ *հրաքաշ*-ն առաջին տեղն էր գրավում:

Հրաքաշը գյուղատնտեսական աշխատանքներում կենդանի (եզների) և անկենդան (գութանի) գույքի և աշխատավոր ձեռքերի միավորումն է, ընդամենը, ամբողջ հաշիվն արվում է եզներն ընդունելով որպես միավոր: Աշխատողն ընդունվում է որպես մեկ եզ, գութանը՝ երկու (այն գյուղերում, որտեղ գութանները շատ կատարելագործված են՝ որպես մեկ): Որոշ դեպքերում միավորումը սահմանափակվում է մեկ հերկով, որից հետո միացյալ ուժերով մշակված ամբողջ տեղամասը՝ *հըրքըշվե ցիլը* (հրաքաշի ցեղը) *քանդիրի*՝ պարանի օգնությամբ, ըստ եզնահաշվի, բաժանվում է մասնակիցների միջև: Այնուհետև ամեն մեկը ցանում է իր դաշտն ու հավաքում բերքը: Հրաքաշի մեկ այլ հաշվարկի դեպքում եզնամիավորի հաշիվը փոխանցվում է օրերի հաշվի, և ամեն մասնակցի դաշտը վարվում է առանձին՝ նրան հասանելիք օրերի հաշվով: Եթե կողմերից մեկը լրիվ չէր օգտագործում իրեն հասանելիք օրերը, միացած ժամանակը կարող էր վաճառել մյուսին, իսկ եթե վարը նախատեսվածից ավելի շատ ժամանակ էր խլել, դրա դիմաց դրամ էր մուծում ամբողջ միավորմանը կամ էլ որևէ մեկից գնում էր նրա ավել օրերը: Սակայն նաև ավելի երկարատև միավորումներ էին լինում, որոնց դեպքում ամեն անգամ ցանքի համար սերմացու էր բերում իր եզների թվի հաշվով: Հերկված ընդհանուր դաշտի ցանքն ու բերքահավաքը կատարվում էր միացյալ ուժերով: Նույն կերպ էր կատարվում նաև կալսումը, իսկ այնուհետև ամբողջ բերքը բաժանվում էր համաձայն եզնամիավորի հաշվի:

Միջի: Փոխօգնության մեկ այլ՝ *միջի* ձևը ոչ թե կոոպերացիայի, այլ սովորական ծառայության բնույթ էր կրում և ոչ այլ ինչ էր, եթե ոչ դաշտային, այգեգործական կամ տնային գործերում միմյանց անձնական աշխատանքով կամ գործիքներով օգնելու ձև, որն առկա էր ինչպես հարևանների և բարեկամների, այնպես էլ համայնքի բոլոր անդամների միջև: Սովորաբար որևէ մեկը շրջում էր հարևանների, բարեկամների ու ազգականների մեջ՝ հայտարարելով, որ այսինչ ժամանակ, այսինչ տեղում, այսինչի միջին է, և ամեն ազատ տղամարդ (կամ կին) իր պարտքն էր համարում արձագանքել այդ կանչին: Բայց երբեմն էլ ամբողջ գյուղն էր հրավիրվում: *Գզիրը*՝ գյուղի մունետիկն ու ցրիչը, կանչում էր գյուղով մեկ. «*Էքուց էս հինչ մարթու բաղը կամ արտը միջի ա: Հուվ վէր սիրում ա, թող կա քծմազ անէ*»: Երբեմն այդ մասին գյուղում հայտնվում էր հարևանից հարևան: Ցանկացողները հավաքվում էին գերանդիներով, մանգաղներով, մկրատներով, զամբյուղներով ու այլնով և կատակելով ու սրամտելով համերաշխ գործի էին անցնում: Հրավիրողը պարտավոր էր օրվա ընթացքում (*միջին* մեկ օրից ավելի՝ երբեք չէր տևում) երեք անգամ նրանց կերակրել և առատորեն հյուրասիրել օղիով ու գինիով: Նման դեպքերում սովորաբար ոչխար էր մորթվում:

Ավատատիրական կարգերի օրոք այդ աշխարհիկ միջիները բեկերն էին կազմակերպում, ընդ որում ամեն ծխից մեկ մարդու ներկայությունը պարտադիր էր: Մինչև վերջին ժամանակներս ամեն ծխից մեկ մարդ էր ուղարկվում՝ գյուղի ավագանու բերքահավաքին մասնակցելու: Միջիին



մասնակցելը հրավիրվողներին պարտավորեցնում էր գնալ նրանց միջին, ուլքեր եկել են իրենցին: Միջինները ընդունված էին հատկապես տնային աշխատանքներում, մեծ մասամբ բուրդ գգելու ժամանակ. գալիս էին կանայք թակիչներով, իլիկներով, ճախարակներով, սկսվում էր երգերով ու նույնիսկ պարերով ուղեկցվող աղմկոտ աշխատանքը: Բողից տիկնիկ էր սարքվում և գլխիվայր կախվում: Բոլորը կանչում էին. «*Տա՛նտեր, քո սիրելի տղային կախել են, արագ քաղցրացրու մեր բերանները՝ պրորննէս հըմըղըրու*», և մինչև պտուղ, չոր միրգ, բլիթ կամ մի որևէ այլ քաղցրեղեն չէին մատուցում, աղմուկը չէր դադարում:

Վերջերս ավելի ու ավելի հազվադեպ էին այգեմիջինների ու դաշտամիջինների հրավիրվում, իսկ տնայինը՝ համեմատաբար հաճախ: Միջինները բազմազանություն և զվարճանք են մտցնում կանանց միալար ու լռակյաց կյանքում:

Օգնություն աղքատներին: Ընդհանրապես մինչև վերջերս էլ աղքատներին օգնելը բարոյական պարտք էր: Ժողովը նրանց ազատում էր ամեն տեսակ հարկերից, և ամեն մեկը պտուղների և խաղողի իր բերքից որոշ բան տալիս էր նրանց: Բերքահավաքից հետո դաշտում մնացած հասկերը աղքատներին էին պատկանում՝ *փօնջ ըն անրս*: Կալից նրանց համար հացահատիկ էր առանձնացվում (եթե խնդրում էին): Ամեն հաց թխելիս աղքատ հարևաններին բաժին էր ուղարկվում: Սովորաբար այրիներն ու աղքատ կանայք ամեն կերպ աշխատում էին տնտեսավարման մեջ օգնել ունևոր հարևաններին՝ դրա դիմաց ստանալով մթերք կամ հագուստ: Նախօրոք որոշված չափով դրամական պարզև գոյություն չունեք, այն երևան եկավ միայն մետաքսամանման և բոժոժից թելաքաշման գործարաններ հիմնվելուց հետո: Հողի նոր վերաբաժանումը և խորհրդային իշխանության քաղաքականությունը հենց սկզբից զգալիորեն բարելավեցին աղքատների տնտեսական վիճակը, բայց աշխատանքի գործիքների սակավությունն արգելակում էր տնտեսության վերականգնումը: Արտադրական կոոպերացիան և սիստեմատիկ փոխօգնությունն ավելի ու ավելի էին թափանցում գյուղ և ավելի խորն էին ընդգրկում գյուղական բնակչությանը դեռ մինչև կոլտնտեսային զանգվածային շարժման սկիզբը, սակայն կենցաղի վրա դրանց ազդեցությունն իմ հետազոտության տարին համեմատաբար թույլ էր արտահայտվում:

ՀԱՐՄԱՆԻՔ

Մինչև վերջերս էլ ամուսնությունների ժամանակ ծնողները շատ քիչ էին հաշվի նստում զավակների, հատկապես աղջիկների զգացմունքների հետ, որոնց վաղ հասակում էին ամուսնացնում (հաճախ մինչև 12-13 տարեկանը, 15-ամյա աղջիկն արդեն «պառաված» էր համարվում). լուրջ մտերմական կապի կամ համակրանքի մասին հազիվ թե խոսք կարող էր լինել: Ի միջի այլոց, որդիներն էլ շատ հազվադեպ էին համարձակվում հակաճառել ծնողների ընտրության դեմ, չնայած որ առավել հասուն տարիքում էին ամուսնանում (18-25 տարեկան): Հարսնացուին դեռ օրորոցում նշան դնելու հին սովորույթն անցյալ դարի վերջում էր դադարել գոյություն ունենալուց: *Նշանդրեքը* տեղի էր ունենում երկու կողմերի տղամարդ ազգականների ներկայությամբ և քահանայի մասնակցությամբ, ընդ որում, փեսացուն ինքն էր մատանին հարսնացուի մատին դնում, իսկ եթե նա բացակայում էր, աղջկա մայրը շալ էր գցում դստեր գլխին և դնում նշանի մատանին: Եթե փեսացուն գյուղից բացակայում էր, փոխարինում էր նրա «փափախը» (գլխարկ) կամ զենքը:

Նշանդրեքից հետո հարսի և փեսայի ընտանիքների միջև պարտադիր ազգակցաբարեկամական հարաբերություններ էին հաստատվում: Միմյանց օգնում էին տնտեսական գործերում (հատկապես՝ հարսի հարազատները) և մեծ տոներին նվերներ էին փոխանակում: Սովորույթային իրավունքը ճշգրիտ սահմանում էր այդ նվիրաբերումների չափն ու բնույթը, որոնք գլխավորապես



համընկնում էին Նավասարդի (հեթանոսական Ամանորի), Ջրօրհնեքի, Ջատկի և Վարդավառի օրերին:

Նշանդրեք: Հարսանիքից մի քանի օր առաջ աղջկա հոր տանը նշանդրեք էր նշանակվում, որի նպատակն էր պարզել ամուսնության նյութական պայմանները և հաստատ որոշել հարսանիքի օրը: Բանակցությունները վարվում էին երկու կողմերի ամենամոտ ազգականների մասնակցությամբ և գյուղի տանուտիրոջ, հոգևորականի ու քավորի ներկայությամբ: Դա կոչվում էր *հրղե կտրիլ*, այսինքն՝ ճամփա ընկնել: Ընդ որում, նախ որոշվում էր, թե փեսացուն որքան դրամ պետք է տա աղջկա հորը, որքան կտորեղեն՝ աղջկան, նրա մորն ու ազգականներին և որքան մթերք (եգ, ոչխար, գինի, օղի)՝ հարսանիքի ծախսերը հոգալու համար: Այնուհետև կազմվում էր այն իրերի մանրամասն ցուցակը, որոնք աղջկա հայրը պետք է տար որպես օժիտ: Օժիտի մեջ մտնում էին վերին և ներքին հագուստեղենը, անկողնու բոլոր պարագաները, գորգեր, խոհանոցային պարագաներ և, որպես վերադիր՝ սնդուկն ու *մափրաշը* (գորգագործ պարկ անկողնու համար): Վերջին ժամանակներս օժիտն աճել է ի հաշիվ հարսնացուի ընտանիքի օգտին կատարվող մուծումների: Շատ բուռն տեսարաններ առաջացնող բանակցությունները հաճախ ձգձգվում էին մի քանի օր:

Հարսանիք: Հարսանիքների շրջանն աշնանն ու ձմռանն էր, հատկապես Բարեկենդանի ժամանակ, երբ ավարտվում էին դաշտային աշխատանքները: Հանդիսությունները սովորաբար շարունակվում էին երեք օր, իսկ երբեմն փեսայի ընկերների կերուխումը ձգվում էր մինչև մեկ շաբաթ: Սկիզբը հարմարեցվում էր երկուշաբթի, չորեքշաբթի կամ ուրբաթ օրերին, երեկոյան, այն հաշվով, որ եկեղեցական արարողության կատարումն ընկներ երեքշաբթի, հինգշաբթի կամ շաբաթ: Գերադասվում էր սկսել ուրբաթ օրը, որպեսզի հարսանեկան ծախսերին հյուրերին հրավիրելու վերջին օրն ընկնի կիրակի, երբ գյուղացիներն ավելի ազատ են և առավել մեծ կազմով կարող են խնջույքին մասնակցել:

Հարսանիքի օրը հարսի և փեսի տներում իրարանցում էր սկսվում, որին ակտիվորեն մասնակցում էին ազգականները: Տղամարդիկ հակերով փայտ էին բերում, կանայք հաց և խորիզով գաթա էին թխում, պասուց և ուտիսվա ճաշեր էին եփում և այլն: Առաջներում ազգականները հավաքվում էին հարսի ու փեսայի ծիսական լոգանքի առիթով, իսկ այժմ այդ նախաամուսնական ծեսը կատարվում է առանց հատուկ հանդիսավորության՝ սովորական կարգով: Նախորդ կամ հենց ամուսնության օրը փեսան հարսի տուն էր ուղարկում եգ, ոչխար և այն բոլորը, ինչ նրա ծնողներին խոստացված էր հարսանիքի համար: Ըստ որում, անասունի եղջյուրները ներկում էին, վրան խնձոր շարած թելեր գցում և գուննադիոլի² ուղեկցությամբ տանում հարսի տուն՝ մորթելու: Փեսայի տանն էլ հարսանիքի անասունը մորթվում էր հատուկ արարողությամբ: Մարտակերտ գյուղում փեսան ոտքը դնում էր գետնին գցված եզան կամ ոչխարի վզին այնպես, որ դանակն անասունին էր մոտեցվում հենց նրա ոտքերի տակ: Դուրս հորդող արյան տակ էին պահում արորի խոփը և այնուհետև այն գցում կրակի մեջ, որով պետք է եփվեր հարսանիքի միսը: Արյուն էին քսում ծալովի դանակին և տան բանալիներին: Դանակը դնում էին փեսայի գրպանը, իսկ բանալիներն՝ ուղարկում հարսին: Նույն կերպ արնոտում էին նաև այն շորի մի ծայրը, որով գոտևորում էին փեսային կամ որը կապում էին նրա կրծքին (ուսի վրայով):

Հնում հենց սկսում էին գուննադիոլով նախ փեսայի, իսկ այնուհետև՝ հարսի տան մոտ հարսանեկան ծանոթ մեղեդիին նվագել, ամեն մի համագյուղացի (սովորաբար տան մեծը), չսպասելով հատուկ հրավերի, հարսանիքին «հյուր» էր գնում: Սակայն «ամբողջ համայնքի» հրավերը (որը ոչ

² Ծեսերը համապատասխան ծիսային մեղեդիներով ուղեկցելու սովորույթն իր արմատներով գնում է խոր հնություն և ունի պաշտամունքային բնույթ (ծանոթ. խմբ.)



այլ ինչ էր, եթե ոչ այն ժամանակների վերապրուկ, երբ ամբողջ համայնքը ներկայացնում էր մոտ ազգականների մի խումբ) աստիճանաբար տեղը զիջեց անվանական հրավերին: Հաղորւթ գյուղում հարսանիքի օրվա առավոտը փեսայի մերձավոր ազգականներից որևէ մեկը տնետուն բաժանում էր հարսանիքին հրավիրված հյուրերի անուններն ու ազգանունները կրող թղթերը: Նույն կերպ էին վարվում նաև հարսի ծնողները: Մյուս գյուղերում փեսան էր իր ընկերների հետ միասին տնետուն շրջում՝ հյուրերին հրավիրելու: Վերջին ժամանակներս սկսել են ավելի ու ավելի կրճատել հրավիրյալների թիվը և սահմանափակվել մերձավոր ազգականներով: Քավորին առանձնապես հանդիսավոր էին հրավիրում՝ փեսայի հոր կամ եղբոր միջոցով նրան մատուցելով նվերներ: Նա ընտրվում էր փեսայի տան հետ քավորության հին կապերով կապված որոշակի ընտանիքից: Երեկոյան փեսայի հրավիրյալները հավաքվում էին նրա տանը: Դռան մոտ նրանց դիմավորում էին թասով, պղնձե սափորով և սրբիչով պատանիներ, աղջնակներ՝ պատրաստ ջուրը լցնելու հյուրերի ձեռքին, որպեսզի լվացվեն: Որոշ գյուղերում այդ ձեռնալվան կատարվում էր հենց դարադամում, այն բանից հետո, երբ հյուրերը նստոտում էին օջախի շուրջը: Այստեղ գունայի նվազի տակ սկսվում էր հարսանեկան սկզբնական խնջույքը (ուրբաթ և չորեքշաբթի՝ պասուց կերակուրներ) գինու և օղու առատ գինարբուքով, որը ղեկավարում էր ամենամոտ ազգականներից ընտրվող հարսանիքի տնօրենը՝ *թօյրաշին* կամ *թամադան* (որը սովորաբար փեսացուի փեսան կամ հորեղբոր տղան էր լինում): Այնուհետև բոլոր տղամարդկանց ներկայությամբ տեղի էր ունենում հարսանիքի գլխավոր մասնակիցների՝ փեսայի ու նրա ընկերների սափորումը: Ամենուր չէ, որ սույն արարողությունն սկսում էին փեսայից: Սովորաբար սափորիչը սկզբում ընկերներին՝ «մակարների» շքախմբին, այնուհետև քավորին և վերջապես փեսային էր սափորում: Փեսային սափորելիս սափորիչը նրա մորուքի մի փոքր մասը (հաճախ՝ փոքրիկ խաչի ձևով) չէր սափորում և հրաժարվում էր շարունակել սափորումը, մինչև սափորվածներից ամեն մեկը և ներկա գտնվողներից շատերն իր օգտին մի քանի մետաղադրամ դնեին հատուկ այդ նպատակով պատրաստված թաշկինակի կամ փեսայի բռնած հայելու վրա: Նախքան փողը դնելն ամեն մեկը համբուրվում էր փեսայի հետ, որից ստանալով իր հասանելիքը՝ սափորիչն ավարտում էր սափորումը:

Այնուհետև ձեռնամուխ էին լինում փեսայի հագուստի օժմանը: Քահանան մաշտոցով օժում էր նրա «չոխան» և գոակը, ինչպես նաև մի գույգ գունավոր թաշկինակ: Փեսան ու քավորը կանգնում էին՝ ձեռքերին բռնած վառվող մումեր: Օժման ընթացքում թաշկինակի մի ծայրը կապում էին փեսայի գոտու կողքից, մյուսը՝ քավորի գոտուց:

Այդ ընթացքում փեսայի տնից պսակազգեստը հարսի տուն էր ուղարկված լինում, որտեղ նույնպես բարեկամներ և հյուրեր էին հավաքվում, հագցնում հարսին և սկսում խնջույքը: Փեսայի մերձավոր ընկերներից քավորի նշանակած *մակարբաշին* (մակարների գլխավորը) արդեն հասցրած էր լինում երիտասարդների իր ջոկատը՝ *մակարների* շքախումբը հավաքել, որի պարտականությունների մեջ էր մտնում հարսին և փեսային թշնամական հարձակումներից և ամեն տեսակի հոգեկան ու ֆիզիկական վտանգներից պաշտպանելը³, ինչպես նաև, որպես երդվյալ վկաներ, եկեղեցում կատարվող պսակադրությանը մասնակցելը: Ամեն մի մակար զինվում էր դաշույնով, թրով կամ հրազենով և մի մում էր ստանում: Հավատում էին, որ եկեղեցու ճանապարհին վառվող մումերի օղակով երիտասարդները կպաշտպանվեն չար ոգիների հարձակումից: Հարսի տնից խնձորը ձեռքին տղա էին ուղարկում՝ փեսային հրավիրելու: Տարեց հյուրերի մեծ մասը ցրվում էր, մնացածները ճամփա էին ընկնում հարսնառ՝ հարսին վերցնելու: Առջևից գնում

³ Լինում էին դեպքեր, երբ նույն աղջկա նկատմամբ հավակնություն էր ունենում նաև մեկ այլ տղա: Նա եկեղեցու ճանապարհին իր ընկերների հետ հարձակվում էր փեսայի վրա՝ ձգտելով խլել հարսնացուին



էր ճանապարհային պարեղանակներ նվագող գուռնաչիների խումբը, որոնց ետևից՝ քավորը՝ փեսայի ձեռքը բռնած, շրջապատված օդում կրակող, գոռգոռացող, պարող ու երգին ձայնակցող, վառվող մոմեր բռնած մակարներով: Թափորն ավարտվում էր հյուրերի և ազգականների աղմկոտ ամբոխով: Փեսայի ծնողները տանն էին մնում: Եթե հարսնացուն ուրիշ գյուղում էր ապրում, ավելի վաղ՝ նախորդ կամ պսակադրության օրը, արևածագին էին մեկնում նրան բերելու: Ճանապարհին՝ նորից նույն կրակոցները, բացականչություններն ու աղմուկը: Հաճախ փեսան ու քավորը գնում էին ձիով՝ հեծյալ կամ հետիոտն մակարների օղակում:

Հարսի հայրական տան դարադամի մուտքի մոտ թափորը դիմավորում էին հարսի հայրն ու մայրը: Մայրն առաջ էր գալիս, համբուրում փեսայի և քավորի ճակատներն ու հրավիրում տուն, որտեղ մի անկյունում՝ *պուճախում*, վարագույրի *գարդակի* ետևում, նստած էր լինում հարսը: Մակարները նստոտում էին վարագույրի դիմաց, իսկ նրանց կողքին կանգնում էին փեսան և քավորը⁴: Մոմերը շարունակում էին վառվել: Սկսվում էր նվերների հանձնում փեսային ու նրա ընկերներին: Հանդես էր գալիս տան ամենաավագն ու փեսային նվիրում գոտի կամ որևէ այլ բան՝ համոզելով նրան նստել: Բայց հենց որ հարսի ազգականներից որևէ մեկը շնորհավորանքով և նվերով մոտենում էր, փեսան տեղից ելնում ու համբուրում էր նրա ձեռքը, իսկ ազգականուհիները համբուրում էին փեսայի և քավորի երեսը: Ընդհանրապես փեսան իրեն շատ ամոթխած էր պահում, ուտում էր քիչ և չէր խոսում, միայն հարցերին էր պատասխանում: Հավաքվում էին նաև հարսի ընկերուհիներն ու սկսում մենապարերը: Կուլեկտիվ շուրջպարեր ընդհանրապես նախկինում էլ քիչ էին Լեռնային Ղարաբաղում, իսկ այժմ բոլորովին չկան: Մովորաբար կեսգիշերից հետո դուրս էին հանում *լիւ-ը*՝ մետաղե մեծ կլոր սկուտեղը՝ *մեժմահի-ն*, որը լի էր լինում տանձով, խնձորով և ամեն տեսակի քաղցրեղեններով, մեջտեղը շշով կամ սափորով օղի կամ գինի, իսկ եզրերին կամ շշի ու սափորի վրա՝ վառվող մոմեր: Դուրս էին հանում նաև տապակած կամ եփած հավերով, ձվերով, չամչե փլավով, գինիով ու օղիով և այլնով լի փայտե սկուտեղները՝ *խոնչաները*: Նման ուտեստներն ու սկուտեղները մի քանիսն էին՝ տարբեր ազգականներից, որոնցից ամենամերձավորները *ծառ* էին մատուցում՝ ճյուղանման սարքած շիվերից կախված խնձորներ, տանձեր, նոներ, կոնֆետներ, նաև՝ գունավոր լաթեր, սովորաբար կարմիր ու կանաչ թելեր, որոնց վրա քաղցր սիսեռահատեր ու չամիչ էր լինում շարած: *Ծառի* վրա էլ մի քանի մոմ էր վառվում: Ներս բերելով՝ ողջունում էին. *պարի լիւս: Մսձէն պարի*, պատասխանում էին մակարները, որոնց համար էլ նախատեսված էին բոլոր այդ նվերները: Սկզբում այդ ամենը շարում էին փեսայի դիմաց, այնուհետև, *մակարբաշու* հրամանով նրա օգնականներն ընդունում և տեսակավորում էին բոլոր ընծաները (գինին ու օղին լցնում էին մեծ ամանների մեջ), և այդ ամենը մասամբ հենց տեղում ծախսվում էր ընդհանուր հյուրասիրության ժամանակ, մասամբ էլ պահվում՝ հարսանիքից երեք օր անցնելուց հետո խնջույքը շարունակելու, կամ ուղղակի բաժանվում էր մակարներին: Խնջույքը շարունակվում էր մինչև առավոտ կամ էլ ուշ գիշեր, և ապա, բոլորը, բացի փեսայից, քավորից և մի քանի մակարից, ցրվում էին: Առավոտյան՝ գուռնայի առաջին իսկ ձայնը լսելուն պես, բոլորը կրկին հավաքվում էին հարսի պսակազգեստի օձմանը՝ *քրթէթ օրհնէքին*: Քահանան օծում էր փեսայի՝ հարսին ուղարկած պսակազգեստն ու դրա հետ մեկտեղ նաև աներոջ՝ փեսային մատուցած նվերը՝ գոտի կամ փեսացուի զգեստի որևէ մաս, որոնք դարսվում էին *սինու* մեջ: Հնում հարսը վարագույրի ետևը՝ *պուճախում* էր մնում, սակայն վերջին ժամանակներս նրան սկսել են դուրս բերել ու կանգնեցնել փեսայի կողքին: Նրանցից ամեն մեկին մեկ վառվող մոմ էին տալիս:

⁴ Երբեմն այն գորգի տակ, որի վրա պետք է կանգնեք փեսան, գետնին որևէ տեղ գարի էին շաղ տալիս. եթե փեսան կանգնեք գարու վրա, հիմար մարդ էր համարվում



Եթե նշանադրության ժամանակ հարսին մատանի չէին տվել, ապա տալիս էին հիմա: Այնուհետև հարսը նորից վարագույրի ետևն էր անցնում, ուր նրան հազցնում էին օծված պսակազգեստը և գլուխը կապում էին՝ *կըլօխը կապել*, այսինքն՝ հասարակ աղջկական գլխաշորը հանում և ամուսնացած կնոջ գլխաշոր էին կապում: Նրա գոտին քավորն էր կապում և մեջքին խփելով՝ բարեմաղթում էր, որ աստված նրան քաջ որդի պարգևի:

Այնուհետև հարսն ու փեսան ուղևորվում էին եկեղեցի: Թափորն առաջնորդում էին *գուռնաչիներն* ու *տեփչիները*, հետո, բարձր *ծածանելով դրոշակը* (երկար ճիպոտի ծայրին կապված գույնզգույն թաշկինակ), գալիս էր *թոյբաշին* (թամադա): *Թագավորն* ու *թագուհին* կողք-կողքի էին քայլում, առաջինը՝ ձախից, երկրորդը՝ աջից: Քավորը փեսայի կողքով էր քայլում, իսկ *հարսնաքիրը*՝ հարսի: Նրանք շրջապատված էին լինում մականների օղակով, որոնցից ոմանք վառվող մոմերով ծառեր էին տանում: Հյուրերն այդ օղակին էին հետևում: Շուրջը բացականչություններ էին, աղմուկ, կրակոցներ: Եկեղեցու մոտ մականների պահակախումբ էր կանգնեցվում, որպեսզի ոչ-ոք չհամարձակվեր կտուրը քար նետել և դրանով հարսին անպտուղ դարձնել: Եկեղեցում նույն նկատառումով հարսին կիպ շրջապատում էին *ընկերուհիները*, չլիներ թե կանանցից որևէ մեկը թել կարեր նրա զգեստին: Թոյբաշին քահանային էր հանձնում գյուղի տանուտիրոջ տերողորմյան, վկայությունն այն բանի, որ նա էլ է համաձայն պսակադրությանը: Եթե գյուղում մի քանի հարսանիք միաժամանակ էր կատարվում, ապա զույգերից ամեն մեկն աշխատում էր առաջինը հասնել եկեղեցի: Եթե երկու թափոր ճանապարհին հանդիպում էին, ձգտում էին գնալ կողք-կողքի և միասին մտնել եկեղեցի, այլապես առաջինը մտնող զույգը կյանքում «դժբախտ» կլիներ: Խուսափում էին պսակադրության արարողությունը եկեղեցում անելուց, եթե այնտեղ ննջեցյալ կար: Նման դեպքերում, ինչպես նաև այն դեպքում, երբ գյուղում եկեղեցի չկար, պսակադրությունը տանը՝ *թուէնդիրի* (*թծնդ՛ւր*, *թծրուն*, *թուրուն*) մոտ էր կատարվում: Թուրունի եզրերին ամրացնում էին վառվող մոմեր: Քահանան, պսակադրվողներին մի քանի անգամ թուրունի շուրջը պտտեցնելով, ծես էր կատարում, որի ժամանակ նարոտ կամ ինչպես տեղում են ասում՝ *կընընչկընընչկընընչ*⁵ էր կապում փեսայի վզին և հարսի աջ ձեռքի դաստակից քիչ վեր՝ քուղի ծայրերը միացնելով մոմով և խաչով դրոշմելով: Քուղը քահանան հանում էր միայն հաջորդ օրը՝ երեկոյան՝ սահմանված աղոթքը կարդալիս, որից հետո միայն նորապսակներին թույլատրվում էր ամուսնական մահիճ մտնել: Լեռնային Ղարաբաղի հյուսիսային շրջանում՝ Ջրաբերդում (Վաղուհաս, Մարտակերտ գյուղեր), հարսի և փեսայի գլխներին պսակներ՝ ցած իջնող մետաքսե ծոպերով, ծայրից արծաթե գինդեր կախված, նեղ, ոսկեկար մետաքսե ակնախույրեր էին դնում: Հարավում՝ Դիզակում, նման թագով պսակում էին միայն հարսին՝ դրանով ցանկանալով նրան տարբերել մյուս կանանցից, իսկ փեսային բոլորը ճանաչում էին կուրծքը խաչաձև գոտևորող գույնզգույն կտորով՝ *նարոտով*: Վարանդայում (Ճարտար գյուղ) պսակներ չկային, այստեղ *նարոտն* էր կամ *կընընչկընընչկընընչ*-ը: Եկեղեցական ծիսակատարությունից հետո՝ եկեղեցուց ելնելիս, քավորը դռան վերևը՝ դրսի կողմից, բռնած պահում էր մերկացրած թուրը: Երիտասարդներին անցկացնում էին թրի տակով, որպեսզի ոչ մի չար ուժ չհամարձակվեր մոտենալ նրանց: Այսպես էր Վարանդայում, իսկ այլ շրջաններում նույնն անում էր մականներից մեկը՝ եկեղեցուց հարսի հոր տուն վերադառնալիս մերկացրած թրով դարադամի մուտքի մոտ կանգնելով:

Եկեղեցուց ամբողջ թափորն ուղղություն էր վերցնում դեպի *սուրբ օջախները*, ուր երիտասարդները ծնկի գալով մոմ էին վառում, խունկ ծխում կամ սրբությունները համբուրում, որից հետո դանդաղ վերադառնում էին հարսի ծնողների տուն: Ճանապարհին *թըքնվերի*, *թըքուհու* ու

⁵ Հյուսիսային կանաչ և կարմիր թելեր՝ *կընընչկընընչկընընչ*, նաև ծիածան է կոչվում: Արտասանությունն ըստ շրջանների տարբեր է



քավորի բարեկամները ընդառաջ էին գնում քաղցրեղենով, չոր մրգերով, թխվածքաբլիթներով, տարբեր ուտեստներով (փլավ, ձվածեղ, տապակած հավ) լի սկուտեղներով և հյուրասիրում նորապսակներին, իսկ մակարներին ու հյուրերին՝ օղիով ու գինիով: Երգ ու պարով և ամեն տեսակի կատակներով ուղեկցվող կարճատև խնջույք էր սկսվում, հենց տեղում էլ հարսին *լաչակ* (գլխաշոր) կամ *չարդաթ* (գլխի շալ) էին նվիրում, իսկ փեսային՝ թաշկինակ կամ ուսագոտի (*կընընչ-կնքնհրին* հազգված ծակ արծաթադրամ): Ուշանում էին՝ նայած հյուրասիրության առատությանը և տանտերերի սիրավիճակները, որոնք երբեմն բոլորին հրավիրում էին տուն, որտեղ սեղաններ էին զգված լինում, և այդ դեպքում արդեն հնարավոր չէր շատ դուրս գալ:

Վերջապես ամբողջ խումբը հարսի տուն էր հասնում: Ծնողները, որոնք ներկա չէին լինում եկեղեցական պսակադրությանը, նրանց *տըխտաճաշ* կամ *թըխտաճաշ* էին հյուրասիրում (բառացի՝ թախտի ճաշ կամ գահաճաշ):

Թարուհին նորից վարագույրի ետևն էր անցնում, *թըքնվերը* կանգնում էր վարագույրի դիմաց, իսկ մի քիչ հեռու կանգնում էին քավորն ու փեսայի խաչեղբայրը:

Փեսան՝ *թըքնվերը*, սեղան չէր նստում և ոչինչ չէր ուտում մինչև հարսի ազգականները նրան չընծայեին գդակ և մի քանի գույգ գուլպա: Նախ տղամարդիկ էին ճաշում, ապա՝ կանայք: Հեռավոր բարեկամները երեկոյան ցրվում էին: Մինչև հարսին փեսայի տուն տանելը հայրը կամ տան ավագներից որևէ մեկը բերում էր օժիտն ու ցույց տալիս ամեն իր առանձին-առանձին, որի ժամանակ *տըմրլաչին*, գլխից վեր բարձրացնելով ամեն մի իր, համընդհանուր ուշադրությունը հրավիրում էր դրա վրա: *«Խնամը է այսինչը իր աղջկան տվել է այսինչ իրը (երկու փոխնորդ սպիտակեղեն), որն արժե ամենաքիչը ուրբի»*: Մակարներն ու ողջ ժողովուրդը գոռում էին. *«Շեն կենա, շեն»*, որից հետո բոլոր նվերները ձիուն էին բարձում, վրան մի տղա (սովորաբար հարսի եղբորը) նստեցնում և ուղարկում փեսային: Այստեղ տղան չէր իջնում ձիուց, մինչև նրան նվեր կամ դրամ չտային: Մինչև հայրական տունն ընդմիջտ թողնելը հարսն ու փեսան ծնկի էին գալիս և համբուրում հայրենի օջախն այնպես, որ երկուսի քթերն էլ մրտավեին (Մարտակերտ գյուղ): Իսկ Վարանդայի գյուղերում փեսան մի պտղունց մոխիր էր վերցնում իրեն: Հարսը փեսայի տուն էր գնում նույն կարգով, ինչպես եկեղեցուց գալիս. քայլում էր ոչ թե փեսայի կողքով, այլ նրանից քիչ ետ՝ բռնելով նրա գոտուն կապված թաշկինակի ծայրից: Վարագույրը՝ *գնքնակ*-ը, հապճեպորեն ուղարկվում էր փեսայի տուն, ուր նորից պուճախ էր առանձնացվում հարսի համար: Հնում մինչև նորապսակների բակ մտնելը աքլոր կամ ոչխար էին մորթում հարսի ոտքերի մոտ (Ծամձորում և Վաղուհասում՝ հավ): Նորապսակներին պարելով դիմավորում էին փեսայի ծնողները, գլխավորապես մայրը (հարսի ծնողներն աղջկան չէին ուղեկցում): Այնուհետև սկեսուրը, գլխից վեր բռնելով մի քանի հացի վրա ծխացող խնկով կլոր պղնձե սկուտեղը՝ *մեժմահին*, երեք անգամ պար գալով, աջից ձախ շրջանցում էր նորապսակներին ու քավորին⁶ և համբուրում հարսի ճակատը: Սկուտեղի հացը տեղնուտեղը բաժանվում էր երեխաներին և աղքատներին: Այդ նույն ժամանակ, հաճախ մինչև սկուտեղով արարողությունը, բարեկամներից որևէ մեկը կտուրից ընկույզի, շագանակի, խնձորի և մանր արծաթադրամների անձրև էր տեղում նորապսակների, առանձնապես հարսի վրա: Երեխաներն ու մակարներն աղմկելով նետվում էին՝ հավաքելու այդ ամենը: Տնից դուրս էին բերում *օշնակը*՝ կովի կարագով լի կճուճը, ու տալիս հարսին, որը կարագի մեջ մի քանի մետաղադրամ էր զցում և ապա կարագ քսում մուտքի դռան կշտանոցի վերևն ու սկեսրոջ մագերին և անցնում շեմից ներս: Ընդ որում, շեմին ոտքով ափսե էր

⁶ Ըստ ճարտարցիների բացատրության՝ *ասես իրենց գոհաբերում էին որդուն, ինչպես դա արվում է եկեղեցու մոտ ոչխար գոհաբերելիս, որին նախօրոք երեք անգամ պտտեցնում էին սրբավայրի շուրջը*



կոտրում, որից հետո փեսան նրան տանում էր օջախի մոտ: Հարսը խունկ էր գցում կրակը, և տան ավագն օրհնում էր երիտասարդ զույգին: Հարսն անմիջապես մեկուսանում էր վարագույրի ետևը՝ զգուշանալով, որ հանկարծ գորգի տակ թաքցրած էշի թամբին չնստի և չմատնի իր հիմարությունը (սույնը կիրառվում էր ոչ բոլոր գյուղերում): Եվ սկեսուրը, շտապ վերցնելով որևէ փոքրիկ տղայի, հարսի գիրկն էր տալիս՝ ասելով. «*Պու էլ, ի երջանկություն մեզ, տղա ծնես*»: Խնջույքը շարունակվում էր մինչև ուշ գիշեր: Հիմա արդեն փեսայի բարեկամներն էին լիև և ծառեր բերում (ոչ բոլոր գյուղերում, օրինակ՝ Ծամձորում այդպիսի սովորույթ չկար): Երբ հյուրերը ցրվում էին, հարսի հետ գիշերելու էր մնում կրտսեր եղբայրը կամ մանկահասակ բարեկամներից որևէ մեկը, որպեսզի փեսան հանկարծ գաղտագողի չմոտենա նրան: Գիշերը փեսայի հետ մնում էր մակարներից որևէ մեկը կամ էլ ինքը՝ քավորը:

Հաջորդ օրը տեղի էր ունենում մեծարման հանդեսը՝ մեծարքը (մեծարանք)⁷: Փեսայի տանը հավաքված բարեկամներին ու գյուղական համայնքի պատվավոր անդամներին, նախ տղամարդկանց, այնուհետև նաև կանանց ճաշ էին պատվում, և երբ օդու ու գինու առատ հեղումը առանձնապես խանդավառում էր բոլորին, սկսվում էր *կանչը*: Դեռ չէին տանուտիրոջ առջև էր դնում *տեփ*-ը՝ սեղանակերպ թմբուկը (մինչև վերջերս Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում ճաշում էին գորգերին նստած, իսկ սեղանները համեմատաբար նորերս են տարածում գտել), այն ծածկում էր մետաքսե կարմիր շալով և *թըքնավերի* օգտին բոլոր ներկաներից դրամի հանգանակություն էր տեղի ունենում: Ամեն մի մուծում ուղեկցվում էր տրմբաչու հայտարարությամբ: «*Այսինչը թըքնավերի սիրուն այսքան դրամ է բերել, աստված նրան ավելին տա*»: Ներկաները կրկնում էին. «*Աստված նրան ավելին տա*»: Ընդ որում, հետևում էին, որ ընծաներն ավելի պակաս չլինեն, քան *թըքնավերի* ծնողներն են սվել հրավիրյալների որդիների հարսանիքներին: Հիշյալ ձևով երբեմն ավելի մեծ գումար էր հավաքվում, քան հարսանեկան ծախսերն էին: *Մեծարքից* հետո, երբ բոլորը ցրվում էին, տերտերը քավորի ներկայությամբ փեսայի ու հարսի վրայից հանում էր *կրնրնչկամրմորը*: Երբեմն այդ արարողությունը մեծարքից կամ հաջորդ օրը տեղի ունեցող մակարների խնջույքից՝ *մըկըրկօշեքից* հետո էր կատարվում, որի ժամանակ ուտվում և խմվում էր այն ամենը, ինչ մակարները հավաքել էին հարսանիքի օրերին, մնացածը բաժանվում էր նրանց միջև: Եթե մակարների այդ խնջույքը տեղի էր ունենում ցերեկը, ապա ավարտվում էր նրանով, որ *թըքնավերն* իր ծնողների ու մակարների հետ գնում էր գերեզմանոց՝ հարազատների գերեզմաններն օրհնելու:

Ամուսնական մահիճը փեսայի ազգականուհիներն են պատրաստում: Տնեցիներից ոչ ոք այդ գիշեր չպետք է տանը մնար: Գիշերում էին բարեկամների ու հարևանների մոտ: Մահճի մոտ՝ պղնձե սկուտեղի վրա, գինի, մեղր և տարբեր քաղցրավենիքներ էին դրված լինում: Վաղ առավոտյան՝ աքլորի կանչելուն պես, երիտասարդ ամուսինը մերձավորներից որևէ մեկի տուն էր աճապարում, իսկ մինչ այդ ոչ ոք իրավունք չունեի տուն մտնելու: Ամուսնու ընտանիքի կանայք և քավորը ստուգում էին հարսի անարատությունը: Ապացույցը՝ ամուսնական սավանը, շնորհավորանքներով ուղարկվում էր հարսի ծնողներին: Բոլորը շնորհավորում էին հարսին և արծաթադրամներ ընծայում: Երեկոյան բարեկամները զուռնայի նվագով երիտասարդ ամուսնուն ուղեկցում էին տուն:

⁷ Պետք է հասկանալ որպես թըքնավերի մեծարում, այլ ոչ թե «մեծերի» պատվին կատարվող արարողություն (տե՛ս Վարանդա, էջ 141): Ոչ միայն տղամարդիկ էին հրավիրվում, այլև կանայք (տե՛ս Կ. Դաթիսյան, *Գաճրյո, ՇՄՄՄՄԿ, պր. VI, էջ 187*)



Մեկ շաբաթ անց հարսի մայրը՝ մենակ կամ մոտ բարեկամների հետ, գալիս էր դստերը լուղացնելու՝ *կըլիսըլվա* (գլխավա)՝ հետը բերելով օձառ, սանր, թելեր, հելուններ, փոխնորդ սպիտակեղեն և այլն:

Քառասունը: Քառասուն օր՝ *քրոասունը*, թե՛ ամուսինը, թե՛ կինը անմաքուր էին համարվում: Կինն արևի երես չէր տեսնում ու ջրի էր գնում գիշերը, այնպես որ ճանապարհին ոչ մեկի չհանդիպեր: Իսկ ամուսինն այդ ժամանակաընթացքում իրավունք չուներ հարսանիք գնալու, ծննդկանի տուն մտնելու և նույնիսկ՝ կտուրով անցնելու. չլինի թե հանկարծ դժբախտություն բերեր, չար ոգին «վրա տար»: Չէր կարող գոմ՝ անասունների մոտ գնալ: Եթե բակում կամ փողոցում անասունի հանդիպեր, պետք է ինքը գնար դեմ հանդիման, եթե անասունը նրա դեմ գնար, *կըկոխվեր*՝ չար ոգին նրան ոտնատակ կտար: *Քրոասունը* ընթացքում հարսը թաքնվում էր բուլոբից և ճաշում էր *պուճախում*, որտեղից դուրս էր գալիս միայն հատուկ հրավերով և այն էլ՝ մետաղադրամ ընծա ստանալուց հետո միայն: Երիտասարդ ամուսինն ամենուր տարեց մարդու հանդիպելիս պետք է մոտենար և հպվեր նրա ձեռքին: Մինչև մի տարի անցնելը կամ առաջին երեխայի ծնվելը հարսը պետք է ման գար ոչ այլ կերպ, քան երեսը ծածկած:

ԾՆՈՒՆԴՆ ՈՒ ԿՆՈՒՆՔԸ

Անպտուղ մնալը Ղարաբաղի հայուհու ամենամեծ դժբախտությունն էր, և այդ էր պատճառը, որ դրա վերաբերյալ կասկածներ առաջանալուն պես հարսը հեքիմներին, կախարհներին, վիուկներին և աղոթքներին ու հեռու և մոտ տեղերում գտնվող ուխտավայրերին էր ապավինում:

Մունդ: Հենց որ սկսվում էր ծնունդը, բոլոր տղամարդկանց տնից դուրս էին հանում: Տատմոր հետ մնում էին պառավներն ու մերձավոր ազգականուհիները: Ենթադրվում էր, որ ծննդի ժամանակ տանն ու տան շուրջը, ծննդկանի մոտ չար ոգիներ՝ *քաշկեր* են բնակվում, և տարբեր ծեսերով ձգտում էին վնասագերծել դրանց: Եթե ծնունդը ձգձգվում էր, ապա ազգականուհիներից որևէ մեկը բարձրանում էր կտուրը, հավի նման նստում երդիկին ու կանչում. «*Մում էս, ծնիր, թե չէ էս էս ծնում (ածում)*», ու երդիկից ցած էր գցում իբրև թե իր ածած ձու: Իսկ երբ ծննդկանը կորցնում էր գիտակցությունը, ի նշան այն բանի, որ չար ոգին է տիրել նրան, կանայք, սենյակից դուրս թափվելով, աղմուկ-աղաղակ էին բարձրացնում *քաշկերին* վախեցնելու համար և ծննդկանի գլխին քավորի գդակն էին դնում, որպեսզի չար ոգիները նրան տղամարդու տեղ դնեն: Վերջ ի վերջո հենց իրեն՝ քավորին էին կանչում, որը սատանաներին ծննդկանից դուրս վանելու համար հարհարում էր նրան: Նրա բարձի տակ սուսեր, դաշույն, իլիկ կամ որևէ այլ սուր պողպատե իր, ինչպես նաև հմայագիր կամ ավետարան, իսկ շեմքին ծանր երկաթե շղթա էին դնում:

Եթե տղա էր ծնվում, տատմերը աչքալուսանքով (*մըշտըլըղ*) հոր մոտ էր գնում ու կատակով գդակը նրա գլխից խլելով՝ գետնով էր տալիս և նվեր (դրամ, թաշկինակ, թել և այլն) պահանջում: Իսկ եթե աղջիկ էր ծնվում՝ տանը լռություն էր տիրում:

Որոշ գյուղերում (Թաղլար, Մարտակերտ) տատմերը ծննդից անմիջապես հետո երեխային լողացնում էր ու վրան աղ ցանում, ապա տանում կտուրն ու, երեսը արևելք դարձնելով, ասում. «*Աստծա, էս ըրեխան հորը-մորը բախշի*»:

Վաղուհասում (Ջրաբերդի շրջան) հոր՝ առաջին անգամ տուն մտնելուն պես տատմերը երեխային տնից դուրս էր բերում և հոր ետևից տուն մտնելով՝ տալիս հոր ձեռքը: Հայրը, երեխային վերցնելով, դրանով իրեն ծնող էր ճանաչում: Այլ վայրերում (Գյունե Ճարտար գյուղ) տատմերն այդ արարողությունը կատարում էր հորից նվեր ստանալու համար միայն: Ընտանիքի նոր անդամի ծնվելու մասին անմիջապես տեղեկացնում էին բարեկամներին ու մերձավորներին, ամենից առաջ՝ քավորին, որոնք իրենց ուրախությունն արտահայտում էին՝ ձվածեղ, փլավ և այլ



ուտեստներ ուղարկելով, իսկ կանայք անձնական շնորհավորանքներով էին ներկայանում. «Աչկըտ լիւս»: Շատ չանցած՝ նաև տերտեր էին հրավիրում՝ տնից ու ամբողջ ամանեղենից չարքերի հետքերը մաքրելու. ընդամին, ծննդկանն առայժմ համարվում էր չարքերով համակված և մինչև կնունքը հատուկ ամանով էր կերակրվում: Նա իրավունք չունէր կար ու ձև անելու և ընդհանրապես որևէ բանի, նույնիսկ իր երեխային կպչելու, որին այդ ընթացքում տատները կամ, նրա բացակայության դեպքում՝ տան պառավներից որևէ մեկն էր լողացնում: Հիշյալ ժամանակահատվածում ծննդկանին պղպեղով համեմված հատուկ ուտեստներով ու քաղցրեղենով էին կերակրում և ջրի փոխարեն հին գինի էին խմեցնում:

Կնունք: Կնունքը սովորաբար եկեղեցում, հազվադեպ դեպքերում տանը՝ թոնրի շուրջն էր կատարվում՝ ծննդից մեկ շաբաթ անց: Տատները, մինչև երեխային մորը կտար, շտապում էր ծննդկանի ձեռքերը լվանալու համար կնքավազանից օծված ջուր բերելու, որպեսզի նա կարողանար «մաքուր ձեռքերով» ընդունել երեխային: Մայրը նախ քավորի ձեռքն էր համբուրում, որի կինը նրան շաքարով ու մեղրով ձվածեղ էր տալիս: Տերտերը երեխային անուն էր տալիս, որն ընտրվում էր կա՛մ ծնողների ցանկությամբ կա՛մ էլ՝ ըստ օրացույցով այդ օրը ծնված սրբի անվամբ: Կենդանի պապի կամ տատի օրոք նրանց անունները երեխաներին չէին տրվում, իսկ եթե տրվում էին էլ, ապա չէին հորջորջվում, այլ փոխարինվում էին քնքշացնող, աղճատված, պայմանական ձևերով: Ընդունված էր որևէ հերոսի կամ անվանի գործչի անուն՝ այն հավատով, որ երեխան նրա անվան հետ նաև հատկությունները կյուրացնի:

Քառասունք: Նույնիսկ անկողնուց ելնելուց հետո էլ (սովորաբար 10-րդ օրը) ծննդկանն անմաքուր էր համարվում. նա չէր կարող կերակուր եփել ու խմոր հունցել, այլապես *կըհըրըմըցներ*, չպետք է բոբիկ ոտքերով (*վըննըպէպեց*) պղծեր հողը, եղունգները՝ *դէյները* կտրեր, լվացվեր ու լողանար, թե չէ մարմնից թափվող մասնիկներով կպղծեր շրջապատը: Իրավունք չունէր հայտնվելու բակում արևածագից հետո և արևամուտից առաջ, արևամուտից հետո իրավունք չունէր որևէ մեկին, նույնիսկ իր երեխային լողացնելու: Իսկ եթե այդ խիստ անհրաժեշտ էր, ապա նա պետք է ջրի մեջ գցեր պողպատե առարկա: Մայրամուտից հետո ծննդկանը չպետք է տաք ջուրը թափեր գետնին, կարող էր միայն մեկ այլ ամանի մեջ լցնել: Հիշյալ արգելքների մի մասը, անտարակույս, հիգիենիկ նշանակություն ուներ և կնոջն ազատում էր բազմաթիվ ծանր աշխատանքներից, որոնցով նա զբաղված էր լինում ընդհուպ մինչև ծննդաբերելը:

Քառասունքի ընթացքում երեխան ավելի էր ենթակա չար բժժանքների: Եթե տուն էր մտնում հայրը կամ նույնիսկ օտար տղամարդ (որի տանը քառասունքը չանցած ծննդկան կար), կամ եթե միս էին բերում տուն, ապա, նախ անհրաժեշտ էր երեխային շեմքից դուրս բերել, ներս թողնել հորը (կամ տղամարդու) կամ միսը բերողին և ապա նոր ներս բերել երեխային, եթե ոչ՝ չարքը «կըկոխեր» նրան: Համանման պատճառով քառասունքի մեջ գտնվող նորապսակներին արգելվում էր ծննդկանին այցելել: Եթե հանգուցյալ էին տանում, պետք է երեխային գրկեին:

Եթե երեխան սկսում էր տկարանալ ու հիվանդանալ, նշանակում է չարքը «կոխել» էր նրան, նման դեպքում այն մարդուն էին հրավիրում, որը դրա պատճառն էր եղել, ու երեխային նրա ոտքերի վրա լողացնում էին: Իսկ եթե դա երեխայի հայրն էր, ապա դրանից բացի, երեխային դուրս էին բերում կտուրը, մինչև որ հայրը տնից դուրս գար: Իսկ եթե պատճառը հնարավոր չէր լինում պարզել, ապա երեխային շան լակոտի վրա էին լողացնում (որն, ըստ Վաղուհասի ասացողների հավաստիացումների, սատկում էր) կամ էլ լողացնում էին դաշտում գտնված սատկած շան կամ մարդու գանգի վրա: Երբեմն երեխայի ոտքերը սպանված մարդու գերեզմանի վրա լվանալուց ու գլխի շուրջը նույն գերեզմանից վերցրած քարերով շրջափակելուց հետո նույն



գերեզմանի մոտ ձու և մեխ էին թաղում՝ վստահ լինելով, որ դրանով «թաղեցին» հիվանդությունը կամ կախարդանքը:

Ընդհանրապես նաև հետագայում՝ քառասուն օրն անցնելուց հետո, երեխան ենթակա էր նման արհավիրքների, և նրան աչքով տալուց պաշտպանելու համար սև գնդիկներ կամ սպիտակաչ խորանարդիկներ և աչքահուլունք (*ըշկըհիլունք*) էին օրորոցից կախում կամ շորին կարում: Որպեսզի ապահովագրված լինեին աչքով տալուց, երեխաները մինչև պատանի դառնալը փոքրիկ պողպատե հրահանից նշանաքուղ կամ նման այլ բան էին կրում:

Քառասունքն անց ծննդկանին լողացնում էին ծղոտի վրա և ծղոտն այրում: Այնուհետև օրորոցը, երեխային և վերջապես մորը արևին էին դուրս բերում: Երեկոյան հավաքվում էին բարեկամուհիները, որպեսզի մորն ու մանկանն ուղեկցեին եկեղեցի, ուր տերտերն աղոթքով կատարում էր վերջնական սրբագործումը:

ԹԱՂՈՒՄՆ ՈՒ ՀՈԳԵՀԱՑԸ

Վատ նշան էր համարվում, եթե որևէ մեկը երագում տեսնում էր հանգուցյալ բարեկամին, ասել է թե՛ նրա մահը մոտ է: Մահամերձի գառանցանքը գրույց էր հանգուցյալ բարեկամների հոգիների հետ: Հոգին մարմնից հեռանալիս ճիչ է արձակում, որը կարող են տեսնել միայն բարեպաշտները:

Մահվանից անմիջապես հետո բոլոր բարեկամներն ու ազգականները շտապում էին մխիթարելու հարազատներին ու հանգուցյալին՝ ցանկալու անդրշիրիմյան լուսավոր կյանք: Տերտեր էր հրավիրվում օրհնելու պատանն ու այն ջուրը, որով պետք է լողացնեին հանգուցյալին: Ընդ որում, լողացնում էին նույն սեռին պատկանող բարեկամները կամ հարևանները՝ տղամարդուն՝ տղամարդիկ, կնոջը՝ կանայք: Գերեզմանը նույնպես բարեկամները կամ մոտ հարևաններն էին փորում: Մինչև թաղումը հանգուցյալի բարեկամները լվացք չէին անում, երբեմն նաև դաշտում, այգում կամ կալում կատարվող աշխատանքներն էին դադարեցվում, քանի որ «հրեշտակը» դեռ գյուղում էր: Ընդ որում, միայն սրբակյաց հոգիների ետևից էր հրեշտակը գալիս, որոնք վարդի (*գիլի*) նման էին վախճանվում, իսկ մեղավորների ետևից գալիս էին չար ոգիները, որոնց հոգին դժվարությամբ էր հեռանում՝ այլակերպ գազանի տեսքով (Օամձոր գյուղ, Դիզակի շրջան):

Հանգուցյալին լողացնելուց հետո նրան պատանում էին, փաթաթում կարպետի մեջ և ապա դնում հյուսած պատգարակի՝ *նածի* վրա, որը եկեղեցում էր պահվում (դագաղները, որոնց մեջ հանգուցյալին դնում էին պատանում փաթաթված, միայն համեմատաբար վերջերս են տարածում գտել): Ձեռքերը կրծքին էին խաչում: Մանուկների ու վաղամեռիկների ձեռքը մոմ էին դնում, որ, երբ նրանց ծնողները մեռնեն, ընդառաջ գան և լուսավորեն վերջիններիս ճանապարհը:

Հնում լողացնելուն պես հանգուցյալին եկեղեցի էին տեղափոխում, իսկ այժմ հաճախ նույնիսկ մի քանի օր (նայած եղանակին) տանն են թողնում:

Հուղարկավորությունից առաջ բարեկամուհիները, հարևանուհիներն ու հատուկ հրավիրված եղերամայրերը նստում էին դիակի շուրջբոլորը և սկսում ողբը: Մայրը կամ ավագ քույրը կամ թե պառավներից որևէ մեկը՝ ամենաշնորհքովը, որն իր բառերին որոշակի ռիթմ էր կարողանում տալ, սգերգում, թվարկում էր հանգուցյալի բոլոր արժանիքները, մանավանդ դեպքեր ու խոսքեր հիշում նրա կյանքից, նշում նրա վերաբերմունքը ընտանիքի անդամների ու հարևանների նկատմամբ՝ գովաբանական ամեն նախադասություն ավարտելով բարձրաձայն ողբով, որը երկարաձիգ խմբերգով շարունակում էին մյուս կանայք:



Դագաղը տնից հանելիս Դիգակում և Ջրաբերդում սենյակի դուռը փակում էին պատգարակով կամ դագաղի ծայրով դռանը խփում երեք անգամ՝ ասես ցանկանալով այն ջարդել⁸: Վարանդայում այս սովորույթը չկար:

Եկեղեցական արարողությունից հետո կանայք պետք է տուն վերադառնային. ննջեցյալին գերեզմանոց էին ուղեկցում միայն տղամարդիկ: Նախքան հրաժեշտը եկեղեցում ողբ էր սկսվում, կանայք ինքնամոռացության մեջ երբեմն դեն էին գցում գլխների հարդարանքը, ծեծում գլուխներն ու ճանկոտում երեսները, մազերը փետում և նույնիսկ ուշագնաց լինում: Նույն լացն ու վայնատունն այնուհետև շարունակվում էր տանը՝ հանգուցյալի հագուստի վրա, ինչպես եկեղեցուց գալուց հետո, այնպես էլ մեկ շաբաթ շարունակ, ամեն անգամ, երբ բարեկամներն ու հարևանները հավաքվում էին մխիթարելու հանգուցյալի ընտանիքին:

Տերտերը փողոցում ննջեցյալի առջևից գնալիս պետք է այս ու այն կողմ նայեր, այլապես նույն ընտանիքից անպայման որևէ մեկը կմահանար:

Թաղման արարողությունը կատարվում էր համաձայն եկեղեցական ավանդույթի: Ննջեցյալը գերեզման էր իջեցվում պատանած կամ դագաղի մեջ դրված: Մերձավոր բարեկամներից որևէ մեկն առաջինն էր, նախօրոք տերտերին խաչով օրհնել տալով, մի բուռ հող նետում փոսը, որից հետո մնացյալները նույնն էին անում. «*Բարի ճանապարհ, բարևիք մեր ննջեցյալներին*»: Տան ավագը թաղման բոլոր մասնակիցներին *ժըմահացի* (եկեղեցական ճաշ) էր հրավիրում, ուր բոլորին ոչխարի կամ տավարի մսի հետ եփած *կուրկուտ*՝ ցորենի ձավար, և առատորեն զինի ու օղի էին տալիս: Ճաշկերույթին հանգուցյալի մասին հիշողություններ էին պատմում: Հաջորդ օրը կանայք էին գերեզմանին այցելում՝ հետները տանելով թխվածքեղեն, զինի և օղի: Հավաքվում էին նաև ամենամոտ տղամարդիկ: Տերտերն օրհնում էր գերեզմանը, իսկ կանայք կրկնում էին ողբը՝ գրկելով ու համբուրելով գերեզմանաթումբը, գեթ փոքր-ինչ մխիթարվելու համար կրծքներին («սրտին») քսելով գերեզմանի հողը, երբեմն այն ծոծրակից շապկի տակ լցնելով, որպեսզի գերծ մնան ամեն տեսակի վախից: Այնուհետև ուտում և խմում էին այն բոլորը, ինչ բերել էին՝ մի մասը գերեզմանի վրա թողնելով կամ բաժանելով աղքատներին: Տուն վերադառնալով՝ հոգեհացի էին նստում:

Յոթի (*օխնը*) նախօրեին բարեկամուհիներն ու հարևանուհիները ննջեցյալի տուն էին հավաքվում՝ կանանց *սզից հանելու*: Լվանում էին գլուխները, ընծա էին բերում բլիթներ, եփած հավ, զինի, օղի և այլն: Յոթին գերեզմանի վրա հոգեհանգիստ էր կատարվում, որի ժամանակ կրկնվում էր սուգ ու շիվանն, ու նորից արվում հիշատակման ծեսը:

Տարին նշելիս հոգեհանգստից հետո գյուղի ամբողջ բնակչությունը հրավիրվում էր գերեզմանոց՝ հիշատակման ծեսի: Ուտում և խմում էին հանգուցյալի և նրա բոլոր մեռած բարեկամների հոգու հանգստության կենացը: Ումանք սուգ պահում էին նաև «հանելուց» հետո ու մի ամբողջ տարի տնից դուրս չէին գալիս, հյուր չէին գնում և հաճախ այցելում էին գերեզմանոց: Միայն վերջերս է սև հագնելն ընդունվել որպես սզի նշան:

Եթե որևէ մեկի մահվանից հետո տնեցիներից մեկը հիվանդանում էր, հավատում էին, որ հանգուցյալը դեռ ողջ է և կարոտում է ողջերին: Նման դեպքերում գարի էին լցնում գերեզմանին ու ձի մոտեցնում: Եթե ձին սկսում էր հանգիստ ուտել, նշանակում է հանգուցյալն իսկապես մեռած էր, իսկ եթե չէր ուտում՝ կնշանակեր, թե հանգուցյալը ողջ է: Այդ դեպքում փոքրում էին գերեզմանը և երկար մեխ կամ թուր խրում հանգուցյալի սիրտը կամ էլ պատռում կուրծքը, հանում սիրտն ու

⁸ Ջրաղաշտականների մեջ գոյություն ունեցած սովորույթի վերապրուկն է, երբ ննջեցյալին ոչ թե դռնով, այլ պատի մեջ հանած անցրով էին դուրս բերում



երկու կես անելով՝ լվանում և նորից տեղը դնում: Երբեմն (Վարանդայում) սրտի մի կտոր էին բերում, լվանում ջրով և այդ ջուրը խմեցնում հիվանդին (Գյունե Ճարտար, Վաղուհաս, Ծամձոր գյուղեր): Պարսկական տիրապետության օրոք թաղման գիշերը գերեզմանի մոտ պահակ էին կանգնեցնում՝ չլինի թե մեկը (մահմեդական) գերեզմանը փորի և ննջեցյալի գլուխը կտրի, որպեսզի պարզ և ստանալու ակնկալիքով սպանված քրիստոնյայի գլխի փոխարեն խանին տանի:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ

Արդի գիտելիքների պայմաններում դարաբաղցի հայի հավատալիքների բարդ համակցությունը կարելի է ծագումնաբանական տարրերի բաժանել ամենաընդհանուր գծերով միայն: Բոլորովին պատահական չէր, որ հին Արցախը հարեց քրիստոնեությանը: Նաև չի կարող խոր արմատներ չունենալ այն հանգամանքը, որ Ղարաբաղի հայ գյուղացիական աշխատավոր զանգվածները դարեր շարունակ հետևել են իրենց հոգևորականությանն ու հողատեր մելիքներին՝ որպես օտար տիրապետողներին դիմագրավելու միջոց հանդես գալով ի պաշտպանություն քրիստոնեական դավանանքի: Քրիստոնեական եկեղեցին իր կրոնական աշխարհայեցողությամբ երանգավորել է դարաբաղցի հայի բոլոր հավատալիքները: Սակայն այստեղ զարմանալիորեն փոքր է զուտ քրիստոնեական սրբերի պաշտամունքի տարածումը: Ուխտատեղերի գերակշռող մեծամասնությունը կամ բոլորովին չունի որոշակի անձանց հետ առնչվող անուններ կամ էլ զուտ տեղական բնույթի սրբերի անուն է կրում՝ Ղոնդիկ (Ավետարանոց գյուղի մոտ), Սարիբեկ (Դաշուշեն գյուղի մոտ), Յեղիշա կուս (Մոս և Գյունե Ճարտար գյուղերի միջև) և այլն: Հայ սրբերի ընդհանուր պաշտամունքն առավել ակնառու հանդես է գալիս մարզի հյուսիսային մասում՝ Խաչեն և Թարթառ գետերի հովիտներում, ուր, շնորհիվ ներքին հայկական գավառների, հատկապես Սևանա լճի ավազանի ու Վայոց ձորի գոգահովտի հետ առավել մերձավոր հաղորդակցության, եկեղեցիների շինարարությունն ավելի ամբողջական է յուրացրել հայ ճարտարապետության առավել կատարյալ ձևերը: Հիշյալ հովիտներում են կառուցված մարզի լավագույն վանքերը՝ Գանձասարի, ս. Հակոբի (Քուլատակ գյուղից ոչ հեռու), ս. Գևորգ Փութքու (Ուլուբաբ-Ուլութափա գյուղի մոտ), Խաթրա-վանքը, Խաթա (կամ Դատի), Եղիշե առաքյալի վանքերը և այլն: Գյուղական եկեղեցիներից միայն մեկն է (Խերխան գյուղ) Գրիգոր Լուսավորչին նվիրված, մեկը՝ Հոփսիմեին (Կարմիր գյուղ) երկուսը՝ Մեսրոպի աշակերտներին՝ առաջին թարգմանիչներին (Կղարծի ու Արվի) և վերջապես մեկը՝ Գրիգոր Նարեկացուն (նոր Դրախտիկ): Այլ կերպ ասած, դատելով Լեռնային Ղարաբաղի ժամանակակից վանքերի անուններից, զուտ հայկական եկեղեցական գործիչների գործունեությունն այստեղ թույլ է արտահայտվել:

Մյուս կողմից, ուշագրավ է նաև այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի 104 վանքից 59-ը աստվածամոր անունն են կրում: Ակամայից հարց է ծագում՝ արդյո՞ք դա մինչքրիստոնեական ժամանակներից ժառանգած կանացի սկզբունքի երկրպագման հակում և սույն վայրում նախապատմական դարաշրջանում կնոջ պաշտամունքի տարածման ապացույց չէ, ինչպես հարավ-եվրոպական և միջերկրածովյան այն վայրերում, ուր մինչև այժմ էլ ամուր պահպանվում է Մադոննայի պաշտամունքը: Գերազանցապես տիրամորը երկրպագելուն զուգահեռ, դատելով Լեռնային Ղարաբաղի վանքերից, այլ գավառների հայ բնակչության մեջ հույժ տարածված և հայ ժողովրդին բնորոշ համարվող ս. Սարգսի երկրպագություն չի նկատվում, որի պատճառը հավանաբար այն է, որ սույն մարզում նախկինում տիրապետող հեթանոսական տրամադրություններում առկա չէին անհրաժեշտ նպաստավոր նախադրյալներ:



Համենայն դեպս, Լեոնային Ղարաբաղում քրիստոնեական թաղանթի ներքո ավելի ցցուն են աչքի զարնում պատմական զարգացման բոլոր փուլերի հեթանոսական կորիզի առանձին տարրեր: Իմ հետազոտության ընթացքում ես, ի դեպ, մտածելակերպում, սովորույթներում և նյութական երևույթներում փնտրում էի զրադաշտականության ազդեցության ժամանակների ազգագրական մնացուկներ, որին մեծ դեր է վերագրվում արևելահայ գավառների, Մեծ և Փոքր Սյունիքի (որի կազմում էր հնում նաև Լեոնային Ղարաբաղը) մշակույթի զարգացման մեջ:

«Ատրուշաններ», սուրբ կրակակիզման աշտարակներ և «դահմեր»՝ դիակների զետեղարաններ, գտնելու ակնկալիքով ես բարձրացել եմ այն բոլոր ժայռերը, որոնց վրա, ըստ տեղի բնակիչների հավաստիացումների, ինչ-որ տարօրինակ աշտարակներ ու շինություններ կան: Պարզվում էր, որ այդ բոլոր ավերակները բերդերի մասեր և առանձին առաջապահ ամրություններ՝ դիտակետեր են եղել: Տնային օջախին երկրպագելը, թոնրի մոտ հարսանեկան և մկրտության ծեսերի կատարումը, լեռնագագաթներ, առանձին ժայռեր, պուրակներ, ծառեր, աղբյուրներ ու գերեզմաններ և այլ բնույթի սրբավայրեր երկրպագելը, որոնցով այնքան հարուստ է Ղարաբաղյան գյուղերի շրջակայքը, հազիվ թե կարելի է ավեստային հավատալիքների վերապրուկների շարքը դասել: Դրանց ծագումն, ըստ երևույթին, առնչվում է այլ սկզբնաղբյուրների հետ:

Սակայն ննջեցյալին դուրս բերելիս դուռը ծածկելու և դագաղի կամ պատգարակի ծայրով ծեծելու սովորույթը¹, ինչպես նաև քառասունքի շրջանում ծննդկանի կողմից բուկոտն ու «անմաքուր մարմնի» մասերով (կտրված եղունգներով, մարմնից լվացված կեղտով) հողի պղծման արգելքը զրադաշտականին մոտ ավանդույթներից եկող կարելի է համարել: Չէր կարելի պղծել ջուրն ու կրակը, մեղք էր կրակի ու ջրի մեջ թքելը, կրակը փչելով հանգցնելը: Մումի կամ լամպի բոցը մատներով սեղմելով կամ մետաղե ասեղով էին հանգցնում, կամ կրակի վրա մոխիր էին լցնում: Այս ամենը շատ է հիշեցնում զրադաշտական մոզերի արգելքները: Նույն կերպ էլ մինչև քթի ծայրը բերանակալ կապելու ամուսնացած կանանց սովորույթը կարելի է համարել կրակապաշտ հոգևորականների սովորույթի հետ ընդհանուր աղբյուրից ծագած, որոնք ժամերգության ժամանակ հար և նման բերանակալով կրակը պաշտպանում էին իրենց անմաքուր շնչառությունից: Հիշենք, որ ամուսնացած կինը ժամանակի մեծ մասն անց է կացնում կրակի մոտ: Ընդհանրապես, կնոջ տարազի տեսակետից ամբողջ Հայաստանը (և Վրաստանը) կարելի է բաժանել երկու մարզի, ըստ որում, մեկում գերակշռում է կզակն ու բերանը բաց պահելու սովորույթը, իսկ մյուսում ընդունված է դրանք ծածկել բերանակալով: Վերջինիս էլ (որն ընդգրկում է գրեթե ամբողջ արևելյան Անդրկովկասը՝ մինչև Վանա լճի ավազանը և ավելի հարավ) հենց պատկանում է Լեոնային Ղարաբաղը: Հին Պարսկաստանի կրոնին մոտ լինելն են վկայում նաև մի ամբողջ շարք արտահայտություններ, որոնցում լույսը նույնացվում է բարու ու երջանկության հետ՝ «*Աշկրտ լիւս*» (լծս), «*Աստուած հօքին լիւսավորի*», «*Լիւս ինի նրա հօքին*»: Այս արտահայտություններն ընդունված են հայկական բոլոր գավառներում: Դեռ 40 տարի սրանից առաջ, երբ Ե. Լալայանը նյութեր էր հավաքում Վարանդայի ազգագրության վերաբերյալ² այստեղ կարելի էր հանդիպել լույսի աղբյուրները՝ Արենն ու Լուսինը, երկրպագող ծերունիների ու պառավների: Այժմ այդ արարողությունները վերացել են, իսկ այն ժամանակ հաճախ էին ծերունիները, ծնկի գալով ծագող արևի և դուրս եկող լուսնի առջև, ասում. «*Օ՛, փայլղ աստծուց ստացած արև*», կամ «*Օ՛, մոր ծոցից հենց նոր ծնված լուսին, երեսս ոտիդ տակ, պահպանիր երեխաներիս*» և նման բաներ: Սակայն վերապրուկները

¹ Ընդ որում, շատ ժողովուրդների մեջ տարածված այս սովորույթը բացատրվում է հանգուցյալի հոգու վերադարձից կամ մահից տունը պաշտպանելու ձգտումով և կարող էր առաջանալ նաև առանց զրադաշտականության ազդեցության

² Վարանդա, էջ 26



մնացել են: Մինչև այժմ էլ երդվում են՝ «*Էս ըրիքնակը, էս լնւսընկան, էս կըրակը, էս ճիրաքը*», ձևակերպումներ՝ կապված լույսի և նրա աղբյուրների պաշտամունքի հետ: Վաղուհաս գյուղից ոչ հեռու՝ Թարթառ գետի հովտում, Խոջա-Քուրդ (հին Գայլ) լեռան գագաթին, Վահի անունը կրող երկու զանգակատուն կա, որպիսի անվանումը հար և նման է ծագող արևի հայկական աստծու՝ Վահագնի անվանը (նույն ինքը ամպրոպի և կայծակի աստվածը): Ասում էին, որ եթե երաշտի ժամանակ նրանցից մեկը ջրեին, անձրև կգար, իսկ եթե մյուսի վրա անձրևի ժամանակ կրակ վառեին, կծագեր արևը: Կասկածից վեր է, որ այդ բարձունքը (2402 մ) նվիրված է եղել արևի պաշտամունքին³:

Լեռնային Ղարաբաղում արևին և լույսին երկրպագելու վերը նշված ձևերի կողքին ժողովրդի մեջ առավել կենսունակ էր վախը արևի մայր մտնելուց հետո վրա հասնող խավարի ու գիշերվա նկատմամբ, երբ ամեն տեղից դուրս էին սողոսկում *քաշկերը*՝ չար ոգիները: Այս վախն էր դրդել արգելելու մայրամուտից հետո կատարվող որոշ աշխատանքներ: Ինչպես է այս ամենը պարսկական մոգերի կրոնի հետ համադրվելու կարիք գգում: Մակայն անմիջական փոխառության մասին եզրակացություն անելը վաղ է, քանի դեռ չեն պարզված հենց իր՝ Ջրադաշտի ուսմունքի ծագման շատ հարցեր: Մագդեզականությունն ու Լեռնային Ղարաբաղում այժմ առկա հայեցակետերը նույն ակունքները կարող են ունենալ առավել հեռավոր տեղական և հեռու արևելքում ու արևմուտքում տարածված մինչմագդեզական հավատալիքներում:

Ընդհանուր առմամբ, բնորոշ հավատալիքներից շատերը և Լեռնային Ղարաբաղի՝ նրանց հետ կապված սովորույթները, մանրամասներով համընկնելով լեռնայինների հետ, այդուհանդերձ, նշմարվում է դրանց տեղական ծագումը, մյուսները՝ Վարթեվուրի (Պայծառակերպության) տոնը, տանում են դեպի իսթական, երրորդներն էլ՝ Միջերկրական ակունքները: Առկա նյութերն առայժմ այնքան թերի են, որ համեմատական ազգագրության շատ հարցեր տակավին կարելի է միայն նշել, բայց ոչ ամեննին վերջնական լուծում տալ:

ՈՒՆՏԱՎԱՅՐԵՐԸ

Լեռնագագաթներ: Լեռնային Ղարաբաղի նման մի երկրում, ուր լեռնային ռելիեֆը չի ընդմիջվում հարթավայրային բնույթի շատ թե քիչ նշանակալից տարածությամբ, և ամբողջ կյանքը ընթանում է լեռնակուտակումների մեջ, լեռնագագաթների երկրպագումը, բնականաբար, առաջնակարգ տեղ է գրավում: Չկա շատ թե քիչ բարձր մի լեռ, որի կատարին *սնրփի (սծրփի)* կամ *խաչ* (այս բառը Լեռնային Ղարաբաղում հազվադեպ է օգտագործվում) չլինի: *Սծրփի (սնրփի)* բառացի՝ մաքուր, փոխաբերական իմաստով՝ սուրբ: *Խաչ* չնայած եկեղեցական լեզվով նշանակում է հենց խաչ, բայց ժողովրդի պատկերացման մեջ ունի մի վայրի նշանակություն, ուր գերբնական ուժերն առանձնապես բարյացակամությամբ են լսում և կատարում մարդու խնդրանքը: Նման բարձունքներից են ամենից առաջ Մռավ լեռը՝ հյուսիսում, Դիզափայտը՝ հարավում և գույգ Քիրսերը (Մեծը և Փոքրը)՝ կենտրոնական մասում, որոնք աստվածապաշտներին դեպի իրենց էին ձգում Ղարաբաղի ամենահեռավոր մասերից: Մռավ լեռնագագաթը (3422 մ) բարձրանում է նույնանուն լեռնաշղթայի վրա՝ Ջրաբերդի և Գյուլիստանի միջև: Ձմռանը, ամբողջովին ծածկված լինելով սպիտակ սավանով, այն առանձնապես ցայտունորեն է ուրվագծվում տարբեր ուղղություններով ձգվող լեռնազանգվածների մեջ: Մռավից մի դյուրիչ տեսարան է բացվում հարավում՝ մինչև Արաքս և ավելի հեռու՝ Սավալան (Պարսկական Ադրբեջանում), հյուսիսում՝ Մեծ Կովկասի

³ Արցախ, էջ 193



վիթխարի պատին հենված տափաստանները, արևելքում՝ հարթ ցածրավայրերը, մինչև Կասպից ծով, և արևմուտքում՝ դեպի Կուր ձգվող Փոքր Կովկասի ճյուղավորությունները: Ուխտավորները երկու վտանգավոր ու զանազան գալարապտույտ արահետներով, հոտավետ խոտ ու ծաղկի միջով հասնում էին բարձունքում ցցված լերկ ժայռերին, որպեսզի հավեն ընկնելուց մարդկանց պաշտպանող մեծ քարերով ցանկապատված փոքր հարթակում դրված սպիտակ փոքր խաչքարին: Հարթակի ելքերից մեկի մոտ՝ ոչ խոր ջրհորում, ամռան ամենաշոգ օրն էլ նրանք սառը ջուր և ձյուն էին գտնում⁴:

Այսպես էլ հարավում շրջապատի գագաթներին իշխում է Դիզափայտ (Զիարաթ՝ 2496 մ) լեռը, որից էլ նույնպիսի վեհասքանչ տեսարան է բացվում: Այս գագաթը նույնպես պսակված է շեշտակի դուրս ցցված լերկ ժայռերով, որոնցից ամենաբարձրի վրայի հարթակին կանգնած է փոքրիկ գանգակատուն, ուր հեռավոր գյուղերից ամռանը՝ *Վըրթելըրի* (Վարդավառ) օրը ուխտի էին գալիս ոչ միայն հայերը, այլ նաև ադրբեջանցիները: Այստեղ ուխտի էին գալիս նաև ուշ աշնանն ու վաղ գարնանը: Պաշտամունքի առարկան համեմատաբար ոչ վաղուց կառուցված գանգակատունը չէր, այլ անհայտ ճգնավորների գերեզմանները կամ, ավելի ճիշտ, նրանց գերեզմանի մեծ քարը, որի տակից սնահավատ կանայք բռերով հող էին փորփորում, հանում և մեջը ցորենի կամ գարու հատիկներ փնտրում: Եթե ցորեն էին գտնում՝ ուրեմն տղա կունենային, եթե գարի՝ աղջիկ⁵: Տեղի Հայսմավուրքում գրանցված ավանդությունը վկայում է, որ երբ հոների առաջավոր ջուրհորներն Արցախը գրավեցին, գերեվարեցին հայ տառերի ստեղծող Մեսրոպի աշակերտներից շատերին, նրանց հետ նաև Թագուհի անվամբ անվանի տիկնոջը, որի գեղեցկությամբ շլացած՝ հոների առաջնորդն ուզեց նրան ուժով իր կինը դարձնել: Սակայն տիկինն ըմբոստացավ նրա տոփանքին և որպես պատիժ՝ բզկտվեց: Գիշերը նրա արյան հետքերն ու դաշտում ցրված մարմնի մասերը սկսեցին պայծառ լույս արձակել: Հրաշքով հմայված գորավարն իր երկու որդիների ու մարտիկների հետ միասին քրիստոնեություն ընդունեց: Այդ իմանալով՝ հոների արքան հրամայեց գլխատել նրանց, սակայն գորավարի որդիներին՝ Մովսեսին և Երանոսին, հաջողվեց փախչել: Արքայի զինվորները լեռան գագաթին հասան նրանց և, սրախողխող անելով, դիերը փայտերի նման ցորենի և գարու դեզերի վրա դրեցին ու այրեցին: Ահա այստեղից էլ գալիս են լեռան Դիզափայտ և գավառի Դիզակ անունները: Այնտեղ, ուր այրվել են Մովսեսն ու Երանոսը, հողում մինչ այժմ պահպանվում են ցորենի ու գարու հասկերից թափված հատիկները⁶:

Լեռան կատարին ջուր չլինելու պատճառով ուխտավորներն իջնում էին ստորոտի աղբյուրների մոտ⁷, ոչխարը մատաղ անում, եփում կամ խորովում և ուտում՝ հետը առատորեն զինի ու օղի խմելով: Խնջույքի ընթացքում երգում էին, պարում, զուռնա ու թմբա նվագում, խաղում և այլն: Ժողովրդի մեջ ամուր էր այն համոզմունքը, որ *սըրփի* մոտ պետք է ինքնամոռաց և անզուսպ խրախճանք սարքել: Մոավից ու Դիզափայտից բացի, աստվածացվում էին Քիրսի գագաթները, որոնց վրա էլ մի քանի ուխտավայր կա: Խերխան գյուղի մոտ հեռվից երևում է երեխային կուրծք տվող կնոջ նմանվող մի քար: Դա չար սկեսրոջ մոտ վերադառնալ չցանկացող տարաբախտ մայրն է, որի աղերսանքով Քիրսը նրան քար է դարձրել: Մեկ այլ անգամ Քիրսը քար է դարձնում ավազակների հարձակումից պաշտպանություն հայցող երեխամորը: Այս քարը մինչև այժմ էլ կանգնած է Աշան գյուղից ոչ հեռու⁸:

⁴ Հմմտ. *Արցախ*, էջ 233

⁵ Պարզվեց, որ սրբի միակ հետևողը՝ մողղուսին, տոնի նախօրյակին քարի տակի հողին ցորեն և գարի էր խառնում

⁶ Ա.Բարախանյան, *Ուխտավորի հիշատակարանը*, Շուշի, 1885, էջ 56: Մ. Давидбеков, *Гадрут*, СМОМПК, սյր. VI, էջ 157

⁷ Մատաղի տեղն ամենից ավելի է ցույց տալիս, որ լեռն է երկրպագվում

⁸ Վարանդա, էջ 139, 198



Պուրակներ: Ընդհանրապես Լեոնային Ղարաբաղում չկա մի գագաթ, ուր սուրբ չլինի: Այստեղ հազվադեպ կարելի է մատուռի հանդիպել, որոնք սովորաբար, երբեմն շատ թե քիչ զարդաքանդակված խաչքարեր ունեցող քարակույտեր են և ալպյան արոտավայրերի գոտուց ներքև գտնվելու պարագայում անպայման շրջապատված են տարբեր ծառատեսակներից կազմված պուրակով: Այդ պուրակները համարվում էին սուրբ և անձեռնմխելի: Ծառերի ճյուղերից կախված էին ուխտավորների շորերի կտորներ, որոնք հույս ունեին այդ կտորների հետ միասին սուրբի մոտ թողնել նաև իրենց հիվանդություններն ու դժբախտությունները⁹: Երբեմն ծառին *կընընչկնրմհր* էին փաթաթում: Այստեղ լեռնագագաթների և ծառերի երկրպագումը սերտորեն միահյուսվում էր միմյանց: Այժմ, երբ Լեոնային Ղարաբաղի լեռները հատկապես մեծ գյուղերի մոտ զրկված են նախկին ճոխ անտառածածկույթից, այս ու այնտեղ՝ բարձր լեռների գագաթներին, հստակորեն գծագրվում են դարավոր ծառերի պուրակների ուրվապատկերները, և դժվար չէ եզրակացնել, որ այնտեղ սուրբ կա: Նման բազմաթիվ մեկուսի պուրակներ առկա են նաև ցածրադիր վայրերում՝ դաշտերի միջի բլրակներին և աղբյուրների մոտ: Այսպես՝ Գյունե Ճարտար գյուղի արտերի միջև գտնվող բլուրներից մեկը պսակված է Կոհակ կոչվող պուրակով, ուր Համբարձման օրն ուղևորվում էին ուխտավորների բազմաթիվ խմբեր: Նրանք մոմեր էին վառում որևէ սրբի քարերի մոտ, իսկ երբեմն էլ ոչխար էին մատաղ անում: Այս պուրակը բերրիություն էր պարգևում շրջապատի դաշտերին, պաշտպանում երաշտից, կարկտահարությունից, հեղեղից, մորեխից և այլ արհավիրքներից: Ծառերի միջև զանգակատան ավերակ է երևում: Կոհակը չի հանդուրժում ո՛չ վանք, ո՛չ էլ եկեղեցի: Քանի ցանկացել են այստեղ վանք կառուցել, ամեն անգամ բլուրը ծանր պատերը նետել է իր վրայից: Սուրբ պուրակի մոտով անցնելիս դարաբաղցին բարեպաշտորեն հանում է գլխարկն ու խաչակնքում, իսկ որոշակի օրեր ժողովուրդն այստեղ ուխտի է գալիս: Առաջներում ոչ ոք չէր համարձակվում այստեղից տերև պոկել, ճյուղ կտրել կամ տանել ծառից թափված ոստերը: Հավատում էին, թե նման սրբապիղծը կա՛մ մարմնի որևէ մասի կաթված է ստանում, կա՛մ անհաջողակ դառնում ընտանեկան և այլ գործերում: Պատմում են, որ Սարիբեկի սրբավայրի (Շուշու մոտ՝ Դաշքենդ գյուղից ներքև) մոտի ծառերից ճյուղ պոկած ոմն հանդուգն քառասուն տարի գամված է եղել անկողնուն:

Պուրակներից բացի, կան նաև մեկուսի *սծրփ* ծառեր՝ հսկաներ. Հաղրուօ գյուղից ոչ հեռու, Խոր Աղբյուրի մոտ չորս սաժեն շրջագծով հսկա սուրբ չինարի կա, որից թափված ճյուղերն ու ոստերը տակն էին մնում, և ոչ ոք դրանց ձեռք չէր տալիս: Փտած ճյուղերի փոշին շատ հիվանդություններ էր «բուժում»: Քսան մետր շրջագիծ ունեցող մեկ այլ բազմադարյան չինարի էլ երկրպագվում էր Սխտորաշեն գյուղի մոտ, որի բնի վրա ու փչակում աղետների դեպքում մարդիկ մոմ էին վառում և աղոթում:

Աղբյուրներ: Ժողովրդական սնահավատության շնորհիվ շատ աղբյուրներ փրկվեցին չորանալուց, քանի որ սուրբ պուրակները շատ դեպքերում ստվերապատում էին այն վայրերը, ուր գետնի տակից ջուր էր բխում: Թքելով կամ այլ կերպ ջուրը պղծելն արգելելու մղող ջրի պաշտամունքը հիրավի վերածվեց նրա երկրպագման: Կային մի շարք աղբյուրներ, որոնց վերագրվում էր տարբեր ցավեր «բուժելու» հրաշագործ հատկություն, և որոնք ուխտավայրերի էին վերածվել: Դրանցից մի քանիսը «բուժում» էին քոսը (ձյունոտ գյուղի մոտ), մյուսները՝ դողերոցքն ու թրմորը (Ավետարանոց գյուղի մոտ, «Ոսկե խաչ» աղբյուրը Գիշի գյուղի մոտ), աչքացավը («Յեղին Ախպուրը» Կուսապատի մոտ), Գյունե Ճարտար գյուղից վեր՝ Ժայռի ճեղքից, արևի կիզիչ ճառագայթներից սաղարթախիտ ծառերով պաշտպանված մի աղբյուր է բխում, ուր կարմրախտից բուժվելու են

⁹ Վարանդա, էջ 198, 193



գալիս Շուշուց, Շամախուց, Նուխուց և հեռավոր այլ վայրերից: Այն կոչվում է Ուխտածաղիկ կամ Դավաչիչագ: Հարկ էր աղոթել աղբյուրի մոտ, մոմ վառել, հողում թաղել զույգ ձու և մեխ, այնուհետև ջրով լվանալ հիվանդ տեղը կամ լողանալ ավազանում: Կարելի էր նաև ջուր տանել հիվանդի համար, բայց չէր կարելի մինչև տեղ հասցնելը ամանը դնել գետնին և շուրջը նայել, հակառակ դեպքում ջուրը «կորցնում» էր բուժիչ ուժը:

Որոշ աղբյուրների հետ պատմություններ կան կապված նրանց հրաշքով առաջանալու մասին: Այսպես, Եղիշե Առաքյալի վանքի մոտ՝ Թարթառ գետի ձախ ափին, ըստ ավանդության, սուրբ աղբյուրը բխում է նույն այն տեղում, ուր թագավորությունից հեռացած Վաչագան արքայի որդին հանդիպեց վանք կառուցելու համար հեռվից ջուր կրող հորը: Որդին, ցանկանալով օգնել հորը, ուզեց նրա ձեռքից վերցնել մաղախը (թույուխը՝ ջուր կրելու կաշվե աման), սակայն հայրը թույլ չտվեց: Մաղախը պատռվեց, և ջրի թափված տեղում՝ հենց կառույցի մոտ, սկսեց աղբյուր բխել: Մեկ այլ վայրում՝ Խաչմաչ գյուղի մոտ, ըստ ավանդության, աղբյուր հորդեց զանգակատանը, որտեղ երեխան ջուր էր խնդրում՝ հանգիստ չտալով մորը, և նա, չցանկանալով ընդհատել ջերմ աղոթքը, աստծուն դիմեց՝ խնդրելով հագեցնել երեխայի ծարավը, և իսկույննեթ աղբյուր բխեց նույն տեղում:

Սովորաբար ուխտավորները կանգ էին առնում Դիզափայտ լեռան լանջին գտնվող Արջի ախպուրի մոտ, որի պատմությունը հետևյալն է: Իբրև թե շոգ օրերից մի օր արջը դուրս է եկել հարևան անտառից և ուժեղ ծարավից ուժասպառ՝ սկսել է բարձրանալ սարն ի վեր, բայց ուժաթափ լինելով՝ ընկել է գետնին ու շիկացած քարերը լիզելով՝ ոռնոցով օգնություն է հայցել երկնքից: Երկինքը խղճացել է նրան, և նույն տեղում շատրվանել է Արջախպուրը: Մակայն մինչև արջը հասել է սուրբ լեռանը, կայծակը խոցել է նրան: Արջի գերեզմանը, ըստ ուխտավորների, գտնվում է գագաթի ժայռի ներքևի քարայրի մոտ, և նրանք ուխտատեղից իջնելիս կանգնում ու աղոթք էին անում այնտեղ, կրակ վառում, ոչխար մորթում և մատաղի խնջույքն անում¹⁰:

Նահատակներ: Բոլոր այդ լեռնագագաթները, սուրբ քարերը (իսկ դրանք նույնպես Լեռնային Ղարաբաղում շատ են), պուրակները, մեկուսի ծառերը և աղբյուրները ժողովուրդը համանման ձևով *սծրփ*, *սնրփ*, ավելի հազվադեպ՝ *խաչ* էր կոչում: Այն հարցին, թե ինչով են նշանավոր հիշյալ վայրերը, մեծ մասամբ տրվում էր հետևյալ պատասխանը. «*Դեհ, սուրբ վայր է, էլի*», ընդ որում, պատասխանը երբեմն զուգորդվում էր որևէ կցկտուր ավանդությամբ, որոշ դեպքերում էլ ուղղակի ավելացնում էին. «*Նըհատակի տեղ ա*»: Օրինակ՝ Կըզըկալա գյուղի մոտ՝ *Մեծ և Փոքր*, Փիր-Ջամալ գյուղի մոտ՝ *Կսրե*, հարևան Նախիջևանի կ գյուղի մոտ՝ *Ճգնավորուհու* նըհատակները: Նախավերջին գյուղի մոտ հանուն հավատի նահատակվել են Փիր և Ջամալ եղբայրները, իսկ վերջին գյուղի մոտ՝ նրանց քույրը: Նոր Քյաթուկ գյուղի մոտ՝ *Սպիտակ հծլը* (սպիտակ ուլ) և *Զինավորը*, Դըրնավարզ գյուղի մոտ՝ *Աղին նըհատակը*, Շուշու հին գերեզմանոցում՝ *Թիֆլիսեցի նըհատակ Անտոնը*, իսկ աղբրեջանական մասում՝ հողացավի *Քամու խաչը*, Դահրավ գյուղի մոտ՝ *Բրչիք նըհատակը*, Պտրեցիկ (Բադարա) գյուղի մոտ՝ *Օերա նըհատակը*, Վանք գյուղի մոտ՝ *Հրկեչենը*, Հաթերքի մոտ՝ *Աստղաբլուրը*, Հորաթաղի մոտ՝ ուղղակի Նըհատակը և այլն:

Նըհատակը հանուն հավատի կամ կովի ժամանակ առանց հաղորդության զոհված (Կոհակում, Մեծջենում, այլ կերպ՝ *Հըրթըպըտծկը* Նախիջևանի կ գյուղում) կամ էլ կայծակից խոցված մարդն է: Այսպես՝ Հաղբուք գյուղի մոտ հանուն հավատի նահատակվել են քույր ու եղբայր՝ Մինան և Խորենը, Կուսափայտ (Կուսապատ) գյուղի մոտ՝ այնտեղ, ուր կաղնու տակ մեծ քարակույտ կա, և քարերից մեկի վրա պատկերված է անմշակ խաչ, թաղված է հետապնդումից փախչող ինչ-որ քրիստոնյա օտարական. դա կոչվում է *Պանդուխտի Խաչ* (*Ղարբի խաչ*): Լեռան կատարին՝ Ավե-

¹⁰ Ա.Բաբախանյան, *նշվ. աշխ.*, էջ 83



տարանոց, Սարգսաշեն և Վերին Թաղավարդ գյուղերի միջև գտնվող պուրակում, թաղված են հեթանոսների սպանած ճգնավորներ սուրբ Ղևոնդն ու նրա քույր Աննան: Այստեղից էլ հենց վայրի անունը՝ *Ղոնդիք*: Սոս, Քերթ և Գյունե ճարտար գյուղերի միջև գտնվող լեռան կատարի անտառում թաղված կույս Եղիշե ճգնավորուհու մասին էլ ժողովրդի մեջ ուրույն ավանդություն կա¹¹: Կայծակը հրեշտակների թուրն էր համարվում, որով խոցում էին չար ոգիներին, ուստի և այն վայրերը, ուր կայծակ էր խփում, լեռնագագաթները, բարձր ծառերը (Խաչմաչ և Արավ գյուղերի մոտ), նույնիսկ կայծակի խփած մարդը մաքրված էին լինում ամենայն պղծանքից:

Ղոնդիքի ու Կուս Եղիշեի մոտ փոքր մենաստաններ՝ *Անապատներ* են կառուցված, որտեղ մի ժամանակ ճգնավորներ են ապրել, սակայն սծրփերի և խաչերի մեծ մասը կամ բոլորովին չեն կրում քրիստոնեությանը պատկանելու նշաններ, կամ դա արտահայտվում է քարի վրա խաչի անողորկ պատկերմամբ, որոշ դեպքերում էլ՝ փոքր *բեմերի* առկայությամբ: Համեմատաբար վերջերս կառուցված, բայց ընդունված ճարտարապետական ոճին հավատարիմ նման մի բեմ է վեր խոյանում Յորի բերդից Հաղորութին մոտիկ Թաղ և Վանք գյուղերի մոտ՝ դեպի Վաղուհաս գետակն իջնող դարալանջի կարկառին, որը կոչվում է *Անգաճի խաչ*, քանի որ այստեղ աղոթելու էին գալիս ականջի հիվանդները: Այն 1,5 մ-1,75մ հիմք և 2,3մ բարձրություն ունեցող, ծայրը խաչակիր բրգով ավարտվող քառանկյուն հատվածակողմ է: Արևելյան կողմը՝ միջին բարձրությունում, 0,30մ խորությամբ, գրեթե քառակուսի որմնախորշ կա, որում ոչ սրբապատկեր, ոչ էլ նույնիսկ փոքր խաչքար կա: Հիվանդներն այստեղ մարդու կամ նրա մարմնի հիվանդացած մասերի երկաթե որևէ արձանիկ չէին թողնում (ինչպես այդ արվում էր Վրաստանում կամ Լոռիում): Պատարագ նույնպես չէր կատարվում, ուխտավորները մոմ վառելով և ոչխար մատաղ անելով էին գոհանում: Բեմի կողքին սուրբ ծառն է, որից այժմ էլ լաթեր և անպայման *կրնրնչկարմուր* են կախկխում: Լեռնային Ղարաբաղում շուրջ կես հարյուրակ նման բեմեր են հիշատակվում: Որոշ *նրհատակներին* կից բավական մեծ վանքեր են գոյացել, որոնց թվին կարելի է դասել, օրինակ, չորս ճգնավորների գերեզմանների վրա կառուցված Մավաս վանքը (համանուն գյուղի մոտ) կամ Կուսափայտ գյուղի մոտի բարձունքի կատարին կանգնած Ինը-մաս վանքը: Ըստ ավանդության՝ այստեղ են թաղված հեթանոսների սպանած ինը եղբայրները, ընդ որում, հավատացնում էին, որ նրանք երագում հայտնվում են աղոթող կանանց՝ բոլորը նույն զգեստը հագած և սպիտակ ձիեր հեծած: Նման վայրերից մեկի ճգնավորների գերեզմաններին է վերագրված բաբելոնցի երեք պատանիներին վերաբերող հնադարյան պատմությունը: Թարթառ գետի ձախակողմյան վտակ Թրգիի դժվարամատչելի կիրճերում՝ Ջրաբերդի ամրոցի ավերակներից քիչ վեր, Մռավի լեռնաշղթայից իջնող դարալանջի կատարի նեղ հարթակի վրա է գտնվում այն վանքը, ուր պահված են այդ պատանիների՝ Բաղդադից բերված աճյունները, որոնք բերող ուղտը, հասնելով այդ վայրերից քիչ ներքև, ծնկի է իջել, որը դիտվել է որպես ցուցում ի վերուստ, և այդտեղ սկսել են վանք կառուցել: Սակայն ծիծեռնակների երամը վրա է տվել կառուցման համար պատրաստված կրի շաղախին, տարել այն և բներ սարքել քիչ ավելի վերը: Սա արդեն դիտվել է որպես աստվածային նոր ցնցում՝ կառույցը տեղափոխել ծիծեռնակների մատնանշված վայրը, իսկ այն վայրում, ուր ուղտն է կանգնել, փոքրիկ եկեղեցի են կառուցել¹²: Ձատիկին և օգոստոսի վերջին ուխտավորների խմբերը Մռավի լեռնաշղթայի գույգ լանջերի անտառային թեք արահետներով դանդաղ շարժվում էին դեպի երեք պատանյակների վանքը:

¹¹ Միայն մեկ արձանագրության մեջ է Եղիշեն կուս (կույս) անվանված, իսկ ժողովուրդը նրան Առաքել (Առաքյալ) է կոչում

¹² Տե՛ս Բարայելովի հոդվածը Կուսափայտի մասին, Г.Израелов, *Село Кacanep, СМОМПК*, պր. XIII



Գերեզմաններ: Լեռնային Ղարաբաղում ամենուր տարածված է գերեզմանների պաշտամունքը: Հավատում էին, որ առանց հաղորդության հանկարծամահ եղածների (գնդակից, թրից, կայծակից) գերեզմաններն ունեն բուժիչ հատկություններ: Վախեցածներին կռացնում էին նման գերեզմանի վրա ու ծոծրակին ջուր լցնում կամ ստիպում ջուր խմել տապանաքարի վրայի թասաձև փոսիկից և կամ գերեզմանի հողից քսում էին ծոծրակին: Հավատում էին, որ նման գորություն ունեն նաև հերոսների և հրաշագործների գերեզմանները, ինչպիսին է օրիորդ Գայանեի գերեզմանը (Մելիք-Շահնազարյանների տոհմից): Նա սպանել էր 1733թ. Վարանդան իր հրոսակներով գրաված և իր ձեռքը պահանջող թուրք զորավար Մուլեյման բեկին: Գայանեն ձևացրել է, թե համաձայն է ամուսնանալու բեկի հետ և կանխամտածված կերպով տարբեր պատրվակներով հարսանիքը հետաձգել է մինչև այն օրը, երբ, ընդհանուր պայմանավորվածության համաձայն, ողջ Ղարաբաղի ժողովուրդը հարձակվել է թուրքական կայագորների վրա և սկսել թուրքերի ջարդը, որի ժամանակ Մելիք-Շահնազարյանների տանն ապաստան փնտրող Մուլեյման բեկն էլ հենց տան շեմին խոցվում է Գայանեի թրով: Այնուհետև Գայանեն մտել է կուսանոց: Տապանաքարին պատկերված է ինքը՝ Գայանեն, ոտքերի մոտ ընկած բեկի գլուխը սրախողխող անելիս, ընդ որում, թուրն էլ իբրև թե ծաղկել է: Տապանաքարի պատկերում նրա ոտքերի մոտ փոսիկ է արած, որից ջուր էին խմեցնում նրանց, ովքեր վախեցած էին լինում ինչ-որ բանից: Համանման թասիկ փորված է նաև 1864թ. 97-ամյա հասակում մեռած քահանա Կարապետ Տեր-Պետրոսյանի՝ Ննգի գյուղում գտնվող տապանաքարին: Հավատում էին, որ նրա տոհմը սերնդեսերունդ բուժում է թոմչանքն ու վախը: Նրա տապանը՝ Դերի գերեզման էին այցելում ոչ միայն մոտակա գյուղերից, այլև Շուշուց և Բաքվից¹³:

Կենդանիների պաշտամունք: Ոչ միայն մարդկանց, այլև որոշ կենդանիների գերեզմաններն էլ էին երկրպագվում: Վերը նշվեց այն վայրը սրբացնելը, ուր կայծակը շանթել էր Դիզափայտ լեռան գագաթը բարձրացող արջին: Հուզիչ ավանդություն է պահպանվել մեկ այլ արջի մասին, որի գերեզմանը մեծարում էին Պտղեսբերքում գտնվող սուրբ Գրիգորի վանքում: Վանքի հիմնադիրներից մեկն անտառում հանդիպում է մի արջի, որի թաթը փուշ էր մտել և ուռել: Կրոնավորը հանում է փուշը և լվանում ու փաթաթում թաթը, որից հետո արջը նրա ետևից գնում է վանք և մեջքով ծանր քարեր կրում քարհանքից՝ օգնելով իր փրկչին: Կառուցումն ավարտվելուց հետո նա մնում է վանքում ու տարբեր հանձնարարություններ կատարում: Մեկ անգամ էլ, վերադառնալով հեռավոր թափառումներից, արջն իր բարերարին մեռած է գտնում: Արջը վշտից սկսում է գլուխը խփել հանգուցյալի տապանաքարին և շուտով սատկում է: Նրան թաղում են վանքի արևելյան պատի մոտ, և նրա տապանաքարը վանք այցելած ուխտավորների ամենամեծ սրբությունն է դառնում¹⁴: Արջերի գերեզմանների երկրպագումը երբևիցե այստեղ գոյություն ունեցած կենդանիների պաշտամունքի թույլ հետքերից է: Կարելի է նշել այդ պաշտամունքի նաև այլ հետք: Աչքացավ ունեցողները բուժվելու էին գնում նշանավոր «*Եղին ախպուր*» (Կուսափայտ գյուղից արևելք): Պատմում են, որ ինչ-որ ժամանակ ամեն տարի եղնիկ էր հայտնվում այնտեղ, որը ջուր էր խմում և տեղնուտեղը պառկում՝ իրեն կամավոր զոհաբերելով մարդկանց: Մեկ անգամ էլ սովորականի նման եղնիկը հայտնվում է աղբյուրի մոտ, մարդիկ թույլ չեն տալիս, որ նա պառկի, և նետվում են նրա վրա: Կենդանին փախչում է անտառ, սակայն մարդիկ հետևից հասնում են և նետերով

¹³ Գերեզմանների հրաշագործ ուժի նկատմամբ տածած հավատը սերտորեն կապված է տեղական այլ սովորությունների հետ: Վախեցածին երեք անգամ անց էին կացնում ննջեցյալի դագաղի կամ պատգարակի տակով: Նույն կերպ էլ նորածնին էին երեք անգամ անցկացնում մահացած մոր դագաղի կամ պատգարակի տակով: Հավատում էին, որ դա նրան կյանքում կպաշտպանի ամեն տեսակ փորձանքից:

Նույն կարգի էր նաև չար ուժերի կողմից «կոխված» երեխային մարդու գանգի վրա լողացնելու սովորությունը

¹⁴ Տե՛ս «Արցախ», էջ 163, Լեո, **Հինգ օր**, «Մուրճ», 1889, N2, էջ 263: Խաչեն գետի աջ ափին Առջաձոր գյուղի մոտ (սխալ ձևով արտասանում են Առաջաձոր) է գտնվում Պտղեսբերք վանքը



սպանում, որից հետո, փոխանակ միսը որպես մատաղ համագյուղացիներին բաժանելու, յուրացնում են: Այն ժամանակից ի վեր աստված այլևս եղնիկ չի ուղարկում այդ վայրը, այդուհանդերձ, աղբյուրը պահպանում է իր բուժիչ ուժը: Այնտեղ մոմ էին վառում և ոչխար մատաղ անում:

Օջախները: Երկրպագվող վայրերի թվին են պատկանում նաև օջախները: Գրեթե ամեն գյուղում կար կիսավեր «սև տուն»՝ դարադամ, որի միայն պատերն էին պահպանված լինում, կամ էլ բնակելի դարադամ, որտեղ գտնվում էր ոչ միայն տվյալ գյուղի, այլև հարևան գյուղերի համար սրբազան օջախը: Երբեմն գյուղում մի քանի նման օջախ էր լինում: Ի տարբերություն *խաչերի* ու *սծրիների*՝ օջախները կրում են տոհմային անվանումներ. Կուսապատում՝ Էրիցանց ու Վեդանց օջախները, Գյունե ճարտարում՝ Միրզաբեկանցը, Տողոնցը և Խոջանցը, Վաղուհասում՝ Դըլկանցը, Ավետարանոցում՝ Մելիքանցը, Ծովատեղում՝ Բզերանցը, Խըրխերում՝ Չալունցը, Սարուշենում՝ Քոզանցը, Նընգիում՝ Դերանցը և այլն: Նշված բոլոր դեպքերում ազգատոհմային անուններն օգտագործված են սեռական հոլովով և հոգնակի թվով՝ Էրիցյանների, Վեդյանների և այլն: Դրանք գյուղերի հիմնադիրների ազգանուններ են (Էրիցանք և Վեդանք՝ Կուսապատ գյուղի հիմնադիր տասներկու տոհմերից երկուսը) կամ այստեղ հետագայում բնակված, սակայն իրենց բարեկեցությամբ և հարստությամբ աչքի ընկած տոհմանուններ (Մեղրով գյուղի Միրզաբեկյանները, Տող գյուղի Տողեցյանները, Գանձասարի Խոջանները), կամ էլ հին ծագմամբ ու երևելիությամբ գովված տոհմանուններ (Խոջանները՝ Հասան-Ջալալյան մելիքական տոհմից, Բդերյանները՝ Մելիք-Փարսադանյանների տոհմից, Մելիքյանները՝ Շահնազարյանների տոհմից), և կամ էլ սերնդեսերունդ տանուտերերի (Քոխյաններ) և հոգևորականների (Դերյաններ) ընտանիքներին տրված անվանումներ են: Ընդհանուր առմամբ, դրանք երբեմնի հզոր և կուռ տոհմերի օջախներ են, որոնց որոշ ժառանգներ հետագայում սնանկացել էին և մեծ հարգանք չէին վայելում, չնայած չէին էլ կորցրել իրենց պապենական օջախների բարեգութ համբավը:

Լեռնային Ղարաբաղում էլ, ինչպես շատ այլ վայրերում, օջախը համարվում էր ընտանեկան միաբանության խորհրդանիշ: Այստեղ էլ «Օջախդ հանգչի» արտահայտությունը տոհմն ընդհատման դատապարտող ծանրագույն անեծք էր, քանզի ամեն տան օջախն ընտանիքի կյանքի կենտրոնն էր: Պատվավոր հյուրը օջախի մոտ էր նստում: Հաճախ այստեղ էին տեղի ունենում կնունքի և նշանդրեքի արարողությունները: Օջախին և տան բարի ոգուն էր ընդմիջտ հրաժեշտ տալիս նորահարսը ամուսնու տուն գնալիս, որտեղ պետք է խոնարհվեր նոր օջախին: Օջախով էին երդվում. «Էն օջախը վկա» արտահայտությունը խոսքի հավաստիության երաշխիք էր: Ցանկանալով ընդգծել, որ այսինչ ընտանիքը բարի ավանդույթների պահպանող և բարոյապես կայուն է, ասում էին՝ «Օջախ ա, է», իսկ լավագույն գովասանքն աղջկա համար «Օջախի աղջիկ ա» բառերն էին: Դիրքը հասարակության մեջ, երևելիությունը և հարգանքն ու բարօրությունն օջախի կամ, ավելի ճիշտ, դրանում գտնվող բարի ոգու միջոցով էին ձեռք բերվում: Եվ, ինչպես կարելի էր նրա բարեհուսությունը հայրական սնից կրակի միջոցով տանել բաժանված որդու տուն, այնպես էլ կարելի էր գյուղի օջախի զորությունը տեղափոխել մեկ այլ գյուղ: Այսպես, Վաղուհասում Դիլականց ընտանեկան օջախի զորությունը ստացվել էր Պապի օջախից, իսկ այն Հաթերք էր անցել Գետաշենից (Չալքենդ՝ Գյանջայի շրջան):

Սուրբ օջախները ոչնչով չէին տարբերվում սովորական օջախներից, և վերջիններիս նման դրանցից նույնպես օգտվում էին տնային տնտեսության մեջ: Սակայն այնտեղ միշտ մոմակալներ էին դրած լինում՝ հարկավոր դեպքում մոմը վառելու համար: Հազվագյուտ դեպքերում «սուրբ օձախ»-ի մոտ նաև եկեղեցական իրեր՝ մետաղե խաչ, Ավետարան, արծաթե կամ ոսկեզօծ աջի



տեսքով նշխարների տուփիկ և այլ առարկաներ էին լինում դրված, որոնք, սակայն, գրեթե ամենուր չքացել են արդեն, դրանք, անկասկած, ավելի ուշ ծագած պիտույքներ էին:

Մոմերով և մատաղի աքլորով օջախ էին գալիս աղոթելու ինչպես հիվանդների հարազատները (կանայք), այնպես էլ հիվանդներն ու կոխվածները: Աքլորի գլուխը թողնվում էր մատաղի վայրում, իսկ միսը սովորաբար տանն էր եփվում և ուտվում: Սակայն Ննգիում Դերանց (Տերտերանց) *օջախից* ապաքինում հայցող *կոխված*-ները (որոնք հաճախ այնքան շատ էին լինում, որ հերթ էր գոյանում) դիմում էին հեքիմ-հոգևորականների օժանդակությանը, ուր մինչև վերջերս հմտություններն իր նախնիներից ժառանգած տերտեր Կարապետն էր: Հեքիմը ջրով լի բաժակ էր դնում հիվանդի ծոծրակին և աղոթք ասելով՝ մեջը լցնում էր *սուրբ կրակի* վրա հալեցված մոմախառն կապար: Եռալու ուժից իմացվում էր, թե հիվանդը որքան ուժեղ է *կոխված* չար ուժերի կողմից: Արարողությունը կրկնվում էր երեք անգամ: Բուն օջախը մինչև այժմ էլ գտնվում է բակում՝ բաց երկնքի տակ՝ փոքրիկ սենյակի ավերակներում, որն այժմ արդեն ազատված է փլվող կտուրից:

ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ՁԵՎԵՐԸ

Սծրփերի և նման այլ վայրերի հաճախումը, որոնց մարդկանց գործերի ընթացքի վրա ազդելու հատկություն էր վերագրվում, ուղեկցվում էր այդ վայրերում գերբնական ուժերի բարեհաճությունն ապահովելու միտում ունեցող ծեսերով: Առաջնակարգ տեղ էր գրավում երկրպագման ամենատարածված ձևը՝ մոմ վառելը, որն ուղեկցվում էր խունկ ծխելով (իհարկե, ոչ միշտ): Վերջինս առանձնապես ընդունված էր հարազատների գերեզմանների այցելության և հոգեհացի (քելեխ) ժամանակ: Սակայն ոգիների և երկնային ուժերի բարյացակամությանն արժանանալու ամենախիսկական միջոցն, այնուամենայնիվ, մատաղն ու հասարակական ճաշերն էին համարվում: Հոգեհացին գերեզմանոց բերված ուտելիքներից ննջեցյալների գերեզմաններին հոգեբաժին (*հծքեբաժին*) էր դրվում: Մեկ տարվա ընթացքում ննջեցյալի տանը տրվող ամեն տեսակի հոգեհացերը (*ժրմահաց*) նրա հոգու կերակրման քողարկված ձևերն էին, նվազ քողարկված էր ընկալվում մատաղների իսկական իմաստը, որոնք ուշ ժամանակներում ինչ-որ բարեգործության բնույթ էին կրում:

Մատաղի միսը հենց տեղում էլ լրիվ ուտվում էր և մատուցվում պատահական անցորդների կամ ուղարկվում հարևաններին, ընդ որում՝ աղքատներին: Չէր կարելի մատաղը ուխտատեղից տուն տանել:

Մատաղներ: Մատաղները՝ զոհաբերությունները, լինում էին հասարակական և մասնավոր: Առաջիններն արվում էին մեծ՝ Զատիկի, Վարդավառի, Վերափոխման, Խաչվերաց և այլ տոներին: Ընտրյալ անձանց մի խումբ գյուղի բնակիչներից դրամ էր հավաքում և գնում մի եգ, իսկ ավելի հաճախ՝ մի քանի ոչխար և լավաշ: Անասունը տոնի օրն էր մորթվում, սովորաբար եկեղեցու մոտ, առանց որևէ եկեղեցական ծիսակատարության, միսը եփվում էր մեծ կաթսաներում ու բաժանվում գյուղացիներին՝ լավաշի մեջ փաթաթված կտորներով: Մատաղ արվում էր նաև երաշտի և այլ հասարակական աղետների ժամանակ:

Մասնավոր մատաղները սովորաբար արվում էին աղոթատեղիի մոտ, որոշ դեպքերում էլ՝ գյուղում, օրինակ՝ ծանր հիվանդի առողջացման կամ ուխտի առիթով¹⁵:

Տերտերի ներկայությունը պարտադիր չէր: Շատ դեպքերում «սուրբ» աղ (որի պաշարը *դէրերը*՝ տերտերները, թողնում էին *սծրփերի* կամ եկեղեցիների մոտ) կամ *սծրփերի* հող էին վերցնում ու

¹⁵ Հիվանդի շուրջը ոչխար կամ աքլոր էին շուրջանակի պտտեցնում: Եթե հիվանդը լավանում էր, այդ ոչխարը կամ աքլորը զոհաբերվում էր



անասունին լիզել տալիս և հետո միայն մորթում՝ նախօրոք երեք անգամ պտտեցնելով սրբատեղիի շուրջը: Սորթին ու առջևի ազդրերից մեկը պատկանում էին *դերին*: Զոհաբերության համար միշտ արու անասուն էր ընտրվում՝ ցուլ, խոյ կամ աքլոր (վերջինս մեծ մասամբ գոհաբերվում էր *սուրբ օջախների* մոտ): Միսը հազվադեպ էր բաժանվում հում վիճակում: Սովորաբար մասնավոր մատաղն էլ էր եփվում և կտոր-կտոր փաթաթվում լավաշի մեջ: Նշանավոր տոներին ընդունված էր ավանդական կերակուրներ եփել (օրինակ, խաշիլ՝ սուրբ Սարգսի տոնին): Սրբի մեծարման նույնպիսի ցանկությամբ են բացատրում սրբավայրի պատերն ու քարերը համբուրելը, ծնրադրումը, ապաշխարումը, պասերը՝ ընդհուպ մինչև կերակուրից լրիվ հրաժարվելը):

Մոզական հնարներ: Ղարաբաղցին առավելապես հավատում էր մոզական հնարների ազդեցությանը: Նա սրբավայրի հող, ջուր կամ թեփ էր քսում կրծքին և հիվանդ տեղին կամ մեջը սուրբ հող ու փոշի լուծած ջուր խմում: Իր հիվանդությունը զգեստի կտորների հետ «կախում էր» կամ թելով «կապում» սուրբ ծառի ճյուղերից, աղբյուրի քարին, եթե ծառ չկար, կամ էլ հենց տաճարից: Անասունների համաճարակի ժամանակ Կուսապատ և շրջակա գյուղերի հովիվներն անասուններին քշում էին Տավարախաչ սրբավայրի մոտ ու երեք անգամ պտտեցնում «սուրբ ծառի» շուրջը: Հովիվներն այստեղ ջարդում էին իրենց ցուպերն ու կտորները կախում ծառից: Նախրապանները նույն կերպ վարվում էին նաև խոշոր անասունների հետ՝ Դըրնավազ գյուղի մոտ և Շոշքի եկեղեցում¹⁶:

Կարելի էր, սակայն, հիվանդությունը նաև գամել *սծրփին*: Սարգսաշենում հիվանդները մեխեր էին խփում «սուրբ ծառին» և այդպիսով, ըստ իրենց, բուժվում հազից: Շատ սուրբ ծառերի վրա կարելի էր տեսնել այդպիսի մեխերի գլխիկներ, ինչպես նաև պայտեր (Ծամձոր և Հանդուցբերք գյուղերի մոտ): Ծառին կամ փեսայի վզին ու հարսի թևին *կընընչկնրմոր* կապելով՝ կարծում էին, թե դրանով շրջանակի մեջ են առնում բոլոր չար ուժերին: Ծիածանը, որը ղարաբաղերեն կոչվում է *կընընչկնրմոր*, հավանաբար ուներ մոզական նշանակություն: Հավատում էին, թե ամպրոպից հետո (որը խորհրդանշում էր բարի և չար ուժերի գոտեմարտը *քաշքերի* հետ) վերջին երկուսը «կապվում» էին: Շրջանակը չպետք է անպայման նյութական լիներ, այլ կարող էր արվել գործողությամբ, ընդ որում՝ եռակի: Չար ուժերի կողմից «կոխված» երեխայի գլխավերևը ձեռքով երեք անգամ շրջագիծ շարժում էին անում՝ ձեռքին ունենալով ձու և մեխ, որոնք այնուհետև թաղում էին սպանվածի գերեզմանում: Թխսին ձվերի վրա նստեցնելիս մեկ ձու ձեռքում երեք անգամ շրջագիծ շարժում էին անում ձվերի զամբյուղի շուրջը, հետո այդ ձուն դնում մյուս ձվերի մեջտեղը և նոր միայն նստեցնում թխսին¹⁷:

Սծրփ այցելելիս նախ երեք անգամ աջից ձախ, հաճախ ծնկաչոք պտտվում էին դրա շուրջը: Նորապսակ զույգը տուն մտնելիս նույնպիսի եռաշրջան էր անում փեսայի մայրը, որով ասես գոհաբերում էր իրեն, ինչպես մատաղի ոչխարը կամ եզն են գոհաբերում՝ ստիպելով *սծրփի* շուրջը եռաշրջան անել: Այդպես էր մեկնաբանում ժողովուրդը: Պետք է ենթադրել, որ շրջան անելու ծեսի նպատակն էր զույգին ու քավորին ավելի ամուր կապել միմյանց, նրանց հարաբերությունները պահպանել չար ուժերի ներխուժումից¹⁸:

Հավատում էին, թե շրջանի մեջ առնելը «կապում» է, իսկ շրջանից ելնելը «արձակում», «ազատում»: Նման գործողություն էին վերագրում ճեղքով անցնելուն: Սարիբեկի *սծրփի* մոտ, Պտղե-

¹⁶ Տե՛ս Գ.Израелов, *Село Касапет, СМОМПК, սր. XIII, էջ 49, Վարանդա, էջ 202*

¹⁷ *Վարանդա, էջ 243*

¹⁸ Համանման ձևով Նովգորոդի նահանգում հովիվները գարնանը՝ մինչև հոտը դաշտ դուրս բերելը, երեք անգամ շրջանցում էին այն, որպեսզի համախմբեն և թույլ չտան ցրվելու, որ գազանները դաշտում չհարձակվեն նրա վրա: Տե՛ս և Феноменов, *Современная деревня, I, М., 1925, էջ 106*



սաբերք վանքում (Հավանտուքում) քարեր կան, որոնցում ճեղքեր են արված: Այդ ճեղքերով սողալով անցնում էին չբեր կանայք, որպեսզի ազատվեն անպտղությունից: Ծամձորում սուրբ ծառի հին արմատի ճեղքն էին խցկում բկացավով տառապող երեխաներին, Շմոնեքում (Գյունե ճարտար գյուղի մոտ) ժայռն ու երեք մեծ քար հորատանցման ինչ-որ բան են կազմում, որով անցկացնում էին այն կովերին, որոնք պահում էին կաթը՝ թույլ չտալով, որ հորթը ծծի, կամ կթեն: Գիզաթ ուխտատեղիի մոտ (Հին Քյաթուկից ոչ հեռու) երաշտի ժամանակ ժայռի ճեղքը ջուր էին լցնում: Իբր «երկնային ջրերն ազատվում» էին, և հորդ անձրև էր գալիս: Նորաշեն գյուղում տկար երեխաներին սուրբ ծառի փչակն էին խցկում: Ճեղքով անցնելը մարդուն ու անասունին ոչ միայն «մաքրում» էր ամեն չար կախարդանքից, այլև ընդհանրապես արմատապես «փոխում» էր մարդուն: Գուցե հենց դրանով է պայմանավորված դարաբաղցիների հավաստիացումը, թե ծիածանի տակով անցնողների սեռը փոխվում է. տղամարդը կին է դառնում, կինը՝ տղամարդ:

Լեռնային Ղարաբաղում լայնորեն տարածված էր համանման գործողությամբ ցանկալի գործողության դրդելը: Վերը նկարագրված է, թե ինչպես ծննդաբերությանն օգնելու համար առողջ կինը թխսի նման նստում էր երդիկի տակ՝ նմանակելով ձու անձելը՝ «*Ես արդեն անձեցի, դու էլ արագ ծնիր*»: Եթե տղա էր ծնվում, տատները պորտալարի մի մասը գցում էր երևացող տեղ, «որ մեծանալուց հետո տղան չամաչի մեծ հասարակությունից և որոշակի դեր խաղա այնտեղ»: Իսկ եթե աղջիկ էր ծնվում, պորտալարը գցում էին հեռավոր մի անկյուն: Հավատում էին, որ այդ դեպքում աղջիկը կլինի համեստ և ամոթխած տնակյաց տնտեսուհի: Թաղումից հետո կանայք մաքուր լվանում էին ննջեցյալի սպիտակեղենը, որպեսզի նրա հոգին մաքուր վիճակում ներկայանար այն աշխարհ: Շատ հնուց են գալիս այն սովորույթները, որոնք կապված են երաշտի ժամանակ անձրև և հակառակը՝ տնական հորդ անձրևների ժամանակ արև կանչելու հետ: Եզների (*կրռերի*) փոխարեն արորին լծվում էր մի քանի կին, իսկ մի քանիսն էլ քշում էին նրանց՝ շարունակ ջուր լցնելով գլխներին և հայհոյելով ամենավերջին փողոցային բառերով: *Կրռերը շորերով մտնում էին առուն կամ աղբյուրի նովրը և արորով մի քանի ակոս անում ջրում, իսկ կանանց խումբն աղերսում էր երկնքից՝ ի վերուստ անձրև առաքել: Այնուհետև՝ եկեղեցում աղոթելուց ու տանը պատրաստած լծյուերը՝ եռածայր մոմերը, վառելուց հետո, հասարակական մատաղ էին անում (Վաղուհաս, Հաթերք, Ծամձոր):*

Ցանքսերի ծելու համար վտանգավոր տնական և հորդ անձրևները դադարեցնելու նպատակով արև էին կանչում, որը, ըստ դարաբաղցիների, իգական սեռի էակ է: Կանայք հավաքվում էին եկեղեցու գավթում և փոքր (8-10 տարեկան) աղջիկներին օգնում խաչաձև կապված փայտիկներից տիկնիկ պատրաստել, որին կնոջ շորեր էին հագցնում: Այնուհետև աղջիկները տիկնիկը՝ *Չոլին*, տանում էին բակից բակ՝ երգելով՝ «*Չոլի, Չոլի, Չոլի չկա: Մենք խավիժ ենք ուզում սարքել, յուղ չկա: Չոլին ծովն է ընկեր հանող չկա, ձու տվեք՝ ձեռը դնենք, յուղ տվեք՝ մազերին քսենք*» և այլն¹⁹: Հավաքում էին յուղ, ձու, ալյուր, բրինձ, հաց և այդ ամենը տանում եկեղեցու գավիթ, որտեղ հատուկ խաշիլ էր եփվում և հենց տեղում տիկնիկի ներկայությամբ այն ուտում էին գյուղի կանայք:

Ինչպես անձրև, այնպես էլ արև «կանչելու» դեպքում տղամարդիկ միայն հանդիսատեսի դերում էին լինում, մասնակցում էին բացառապես կանայք՝ վերապրուկներ այն ժամանակների, երբ հողի մշակությունը բացառապես կնոջ գործ է եղել: Կարկուտը դադարեցնելու, եղանակը «շրջելու», չար ոգիներին քշելու համար ժողովուրդը, բացի բոլոր զանգերը տալուց և ամեն կերպ աղմուկ բարձրացնելուց, նաև շուռ էր տալիս՝ *պրանում էր քարեր*, կանայք եռոտանիները՝ *թաղանները*, շրջված դուրս էին գցում բակ՝ անձրևի տակ, իսկ որպեսզի խոշոր կարկուտը մանր դարձնեն,

¹⁹ Հմմտ. գետաշենցիների (չայքենդցիների) նույնպիսի սովորույթի հետ, Փ.Джейранов, *Село Чайкенд, СМОМПК, սր. XXV*
231



սկսում էին կարկտահատիկը դանակով կամ կացնով կիսել: Կինը, որպեսզի հղիանար՝ *ծընրանար*, ծոծրակին ծանր քար բռնած, ծնկաչոք եռաշրջան էր անում եկեղեցու շուրջը, որից հետո տերտերը (կամ վանականը), նրան իր փարաջայի *քեղի* (փեշի) տակ առնելով, աղոթք էր կարդում: Կինը քարը հետը տուն էր տանում:

Եթե անասուն էր կորչում, և չէին կարողանում գտնել, որպեսզի այն անտառում կամ դաշտում գայլի բաժին չդառնար, վերջինիս երախը հատուկ ձևով «կապում» էին, որը կոչվում էր *կնկկապ*: Քուղ կամ պարան էին վերցնում և դրանով իբր թե այն վայրի վերևում, որտեղ, ըստ ենթադրության, պետք է լիներ կորած անասունը, օդում երեք անգամ շրջան էին անում՝ ասելով. «*Գայլ եմ բռնում, գայլ եմ կապում*» և այլն: Այդպիսով՝ անասունին ասես վերցնում էին շրջանի մեջ, ուր չէր կարող սողոսկել գայլը, այնուհետև քուղը (կամ պարանը) եռահանգույց կապում էին դանակի կամ դաշույնի սայրին: Կար նաև մեկ այլ տարբերակ. կացնով օդում նույնանման շարժում անելով՝ այն խփում էին բրդի սանդերքի ատամների մեջ և այնպիսի տեղ թաքցնում, որ ոչ-ոք չկարողանար ձեռք տալ: Հավատացնում էին, որ իբր թե հովիվները հաճախ հաջորդ օրը կամ մի քանի օր անց գտնում էին անասունին անտառում կամ դաշտում հանգիստ արածելիս, իսկ նրա կողքին գայլ էր լինում, որն ի վիճակի չէր լինում բացելու երախը²⁰:

Ըստ ժողովրդական հավատալիքների՝ ոչ միայն գործողությունն ուներ մոգական ազդեցություն, այլ նաև բառում ամփոփված միտքը և նույնիսկ բառը: Հավատում էին, թե օրհնանքը կամ անեծքը մարդուն կարող է դարձնել երջանիկ կամ դժբախտ: Փորձված պառավները, հեքիմները և կախարհները՝ *չօփչիները*, աղոթքների, անեծքների, հմայությունների և այլնի մի ամբողջ պաշար ունեին, որոնց երբեմն արդեն իմաստը կորցրած (վաղուց մոռացված լեզուներից մեզ հասած) բառերի «հրաշագործ ուժով» միայն իբր թե ցանկացած արդյունքի էին հասնում: Սույն մոգական բանաձևումները չէին հայտնում կողմնակի մարդկանց՝ վախենալով, որ դրանք կկորցնեն իրենց ուժը (ավելի շուտ՝ վախենալով, որ կկորցնեն իրենց եկամուտը), և գաղտնի իրենց տոհմի ներսում փոխանցում էին սերնդեսերունդ: Հավատում էին, թե բառն այնժամ է պահպանում մոգական ուժը, երբ գրված է: Փորձված հեքիմները եռածալ թղթերի վրա գաղտնի աղոթքներ էին գրում, որոնք հիվանդի զգեստին էին կարվում, դրվում բարձի տակ կամ էլ թաղվում դռան շեմի հողի մեջ: Երբեմն այդ թղթերը 3-4 մետրանոց թղթազլանի տեսք ունեին. հավատում էին, որ նման թղթազլաններն ունեն մշտական ուժ, այն դեպքում, երբ եռածալ թղթերն իրենց ուժը պահպանում են միայն որոշակի դեպքում և որոշակի ժամանակ:

Կարծում էին, որ մարդ ամենից ավելի տուժում է չարակնումից (աչքով տալուց), ընդ որում, այդ վտանգին ենթակա է ոչ միայն մարդը, այլև ընտանի անասունն ու թռչունը և նույնիսկ մեղուն ու շերամի որդը: «Չարակնումից» ազատվում էին տարբեր հմայիլներով, ամենից առաջ՝ *աշկը հեղինքներով*, որոնք ճերմակապուտ աչիկների տեսքով սև խորանարդիկներ էին և կախվում էին օրորոցներից, երեխաների ուսածապավեններից, անասունների վզից: Կենդանացած շերամի սերմը չարակնումից պահպանում էին՝ կողքին ձու դնելով: Լեռնային Ղարաբաղում առանձնապես հավատում էին երկաթածառի՝ *բոշնու*, ինչպես և նրանից շինված ամեն տեսակի իրերի պահպանական ուժին: Վստահ էին, որ բոշնու լուծը եզներին անպայման փրկում է չարակնումից²¹: Վերջապես, կարելի էր չարակնումն էլ, ինչպես ամեն մի այլ հիվանդություն, «վերացնել», «մեխել», ինչպես այդ անում էին Ծամձորում՝ սուրբ ծառի բնին մեխեր խփելով և կրկնելով՝ «*Չար աշկ, չար*

²⁰ Հմմտ. օւերի համանման սովորույթի հետ: Տե՛ս Գ.Փ.Չուրսին, *Осетины. Этнографический очерк*, Тифлис, 1925 (Отд. отт. из „Трудов Закавказской Ассоциации“, , сер. 1, Юго-Осетия)

²¹ *Վարանդա*, էջ 240



մէխ»: Վախենալով չարակնումից՝ դարաբաղցին վախենում էր համրել իր ունեցածը: Նա, իհարկե, հիանալի գիտեր, թե քանի եգ, կով, ձի, էջ, ոչխար, հավ ունի կամ թե քանի ջվալ²² բերք է հավաքել: Սակայն նա երբեք բարձրաձայն չէր հաշվում և նույնիսկ երեխաներին հաճախ չէր հայտնում իր ունեցվածքի ու եկամտի չափը՝ ասես վախենալով, որ իր խոսքերը ծածուկ կլսեն չար ոգիները՝ *քաշկերը* (քաջք), որոնք, իհարկե, կաշխատեն ամեն կերպ «փչացնել» նրա ունեցվածքը: Համրանքի նկատմամբ այդ վախն է, որ այժմ էլ երբեմն հանդիսանում է այն բանի պատճառներից մեկը, որ դարաբաղցին մեծ դժվարությամբ է իր ունեցվածքի մասին պաշտոնական տեղեկություններ տալիս՝ դրանով դժվարացնելով նոր հետհեղափոխական կարգերում իր իսկ տնտեսական կյանքի ռացիոնալ կազմակերպման համար այնքան անհրաժեշտ վիճակագրական հետազոտությունները: Համրանքի «դժբախտ հետևանքից» դարաբաղցին իրեն պաշտպանում է նույն գործելաձևերով, ինչ որ չարակնումից:

ՄԱՍՆԱՆԵՐ՝ ՔԱՇԿԵՐ

Բնության խորհրդավոր թվացող երևույթների գիտական բացատրությունները դեռ այնքան քիչ են թափանցել Լեոնային Ղարաբաղի գյուղացիական զանգվածների միջավայրը, որ մինչև վերջերս էլ այնտեղ առկա էր վախն այդ երևույթներին իշխող ուժերի նկատմամբ: Այդ վախն առանձնապես ուժեղ էր քաղաքային նոր մշակույթի հետ քիչ առնչվող կին բնակչության շրջանում:

Ըստ դարաբաղցիների պատկերացման՝ բնությունը լի է չար ոգիներով՝ *քաշկերով*: Հավատում էին, թե նրանք են ուղարկում հիվանդությունները, բարոյական ծանր ապրումները, մահը, ընտանեկան դժբախտությունները և գործերի անհաջողությունը, որ նրանք ամենուր են՝ ջրում, օդում, ժայռերի մեջ, հատկապես մութ անձավներում ու ժայռածերպերում, լքված ջրաղացներում ու ավերակներում: Ավետարանոց գյուղում մեղիքական դարադամներից վեր բարձրացող մուտքը տանում է քարանձավ՝ *քաշկատձն*: Թաղլար և Ագոխ գյուղերի միջև գտնվող, ինչ-որ ժամանակ խիտ անտառներով ստվերամած անձավները մինչև այժմ էլ կոչվում են *Քաշկածձր*: Այդ վայրերում դարաբաղցին այժմ էլ վախենում է շրջել գիշերը: Ղարաբաղցիների երևակայական *քաշկերը* կարող էին լինել տղամարդ կամ կին, ծեր, երիտասարդ, երեխա: Ոմանց կարծիքով նրանք անմահ են (Մոս, Ճարտար, Հաթերք), իսկ ծամձորցիների կարծիքով՝ մահկանացու, ընդ որում, նրանց կայծակն է սպանում, որից նրանք աշխատում են պատսպարվել բարձր ծառերի վրա և քարերի տակ: Այդ է պատճառը, որ հրեշտակների թուրը՝ կայծակը, ամենից ավելի հաճախ հենց այդ վայրերին է խփում: *Քաշկերը* սիրում են զուռնով հարսանիքներ սարքել, որը, սակայն, անցորդին կատակով (*տնազ*) գրավելու միջոց է, որպես նրանց գործելաձևերից մեկը: Պատում էին, որ մի անգամ *քաշկերը* սուսեցի Ջհանգիրին հրապուրել են իրենց երաժշտությամբ, տարել հասցրել ժայռի կատարը և առաջարկել, որ ցած թռչի: Ջհանգիրը խաչակնքել է, երաժշտությունը դադարել է, բոլոր *քաշկերն* անհետացել են՝ նրան թողնելով մենակ: Ասում էին, որ իբր *քաշկերն* են ջուրը գցում ավին քնած մարդուն կամ դարիվայր գլորում լեռներում քնածին: Իբր *քաշկերը* սողոսկում են ախոռ, հեծնում ձիերին, բաշերը հյուսում և չարչարում մինչև քրտնեցնելը: Մի անգամ տերը ձյուր է քսում ձիու մեջքին, իսկ առավոտյան այդ ձյուրին կպած *քաշկ* է բռնում: *Քաշկերը* մոլություն ունեն՝ նոր զգեստներ գողանալ տներից, պճնվել և ամբողջ գիշերը պարել: Հաջորդ օրը տանտիրուհին գտնում է այդ զգեստներն իրենց տեղում, բայց ճմրթված և բծերով ծածկված:

²² Մեկ ջվալը կամ 10 լարը = 7,5 փթի, մեկ լարը՝ 30 ֆունտի



Գիշերը *քաշկերը* գյուղերն են սողոսկում և քնած երեխաներին խեղդում օրորոցներում: Լուսադեմին մայրը երեխային գտնում է մեռած: Ճիշտ է, նա չի ցանկանում խոստովանել, որ երեխային կերակրելիս քնել է և խեղդել իր կրծքով: Ամեն ինչում մեղավոր են *քաշկերը*:

Պատմում էին, որ *քաշկերը* կարող են ընդունել ցանկացած կերպարանք, օրինակ այժի ու նույնիսկ ճանճի, և վնասել, որ նրանք երբեմն կախարդում են մարդու (սովորաբար կանանց) ու գայլ՝ *մըրթակհուլ* դարձնում, որը գիշերը գայլի ոհմակների հետ է թափառում, իսկ ցերեկը մարդկային կերպարանք ընդունում և վերադառնում մարդկային հասարակություն, որ *մըրթակհուլն* է քնած մայրերից փախցնում օրորոցի երեխաներին, որոնց ոսկորները հետո գտնում են գյուղի ծայրամասում, որ այդ նա է քանդում թարմ գերեզմաններն ու դիերը խժռում: Բայց եթե գտնեին և այրեին *մըրթակհուլի* մորթին, կախարդանքը կանցներ ու մարդն էլ կդադարեր գիշերը *մըրթակհուլի* վերածվելուց:

Պատմում էին, որ *քաշկը* սիրում է մարդու բնակարանի մոտերքը, ամենից հաճախ շեմքի մոտ նստել՝ ի հակադրություն տան բարի ոգու, որը բազմում է օջախի մոտ: Ըստ դարաբաղիների հին հավատալիքների՝ հարսանիքի թե ծննդի դեպքում, կերակուր եփելիս կամ կաթ եռացնելիս քաշկը ներկա է լինում, ավելին՝ աշխատում է շուռ տալ՝ *թըրսըցնել*, չարով խափանել ամեն ինչ: Իզուր չէ, որ նրա ոտքի թաթերն էլ են շուռ տված՝ կրունկներն առաջ, մատները ետ: *Քաշկն* ամեն ինչ թարս ու հակառակ է անում: Մի անգամ Հակոբ ապորը (Գյունե Ճարտար) հաջողվում է մի *քաշկ* բռնել, որը չէր նկատել, թե ինչպես են իր զգեստի մեջ պողպատե ասեղ խրում: Մատանան ծառայում է Հակոբ ապորն այնքան, մինչև չի խոստանում, որ չի վնասի նրան: *Քաշկն* ամեն ինչ անում էր պահանջվածին հակառակ: Այսպես, եթե պետք էր նրան ջրի ուղարկել, ապա «*ջուր բեր*» ասելու փոխարեն պետք էր ասել՝ «*կուժը վերցրու ու ջարդի*»:

Պատմում էին, որ *քաշկերն* ամենուր հայտնվում են արևի մայր մտնելուց հետո՝ մուլթն ընկնելուն պես: Զգուշացնում էին, որ գիշերը ոչ ոք չկռանա և ջուր չխմի առվից կամ աղբյուրից՝ չլինի թե *քաշկը* քաշի, գցի ջուրը և խեղդի, այդ է պատճառը, որ կռանալուց առաջ պետք էր խաչակնքել (Սոս գյուղ): Չէր կարելի արևամուտից հետո փոխարինաբար մաղ, կշեռք, կրակ տալ, այլապես դրանց հետ կապ ունեցող առարկաներն ու պաշարները կկորցնեին իրենց բարիքը (*բարաքյաթը*) և արագ կսպառվեին, *քաշկը* դրանք կթոցներ տնից:

Զգուշացնում էին, որ մայրամուտից հետո չի կարելի տունն ավելել, թե չէ հանկարծ կդիպչեին աստանային: Եթե խիստ անհրաժեշտ էր ավելել, ապա պետք էր ավելից ծոցոտ կոտրել ու գցել կրակը: Նույն պատճառով չէր կարելի տաք ջուրը թափել գետնին, այլ պետք էր մեկ այլ ամանի մեջ լցնել (Թաղլար գյուղ): Չէր կարելի աղբը շեմքի մոտ թափել, քանի որ այնտեղ *քաշկերն* են նստած լինում:

Մթնշաղն ընկնելուն պես կանայք դադարում էին գործն ու կար ու ձևը և ընդհանրապես ամեն տեսակի ձեռագործ անելը: Սա առանաձնապես պարտադիր էր Խաչելիությունից և Զատկից հետո ութ օրվա ընթացքում՝ մինչև Համբարձում²³, թե չէ հավկուրություն՝ *հավթօր* կարելի էր ստանալ: Ըստ երևույթին, եթե ծննդկանին արգելվում էր արևի տակ ելնել կամ նորահարսին՝ քառասունքի ընթացքում ցերեկը ջրի գնալ (կարելի էր միայն մինչև արևածագը), ապա տրամաբանորեն դա բխում էր այն պատկերացումից, թե կինն այդ ժամանակ «անմաքուր» (պիղծ) է, ասես գտնվում է մուլթ ուժերի իշխանության ներքո և իր երևալով կարող էր «պղծել» արևի ճառագայթները:

²³ Զատկից հետո մինչև Համբարձում, ուրբաթ օրերը, գյուղացիները չէին շրջում՝ «տոնրոնը չըն տան» հողը, այսինքն՝ չէին վարում և կամ փորում այգին ու բանջարանոցը



Քաշկերի չար արարքները խափանելու նպատակով աղմուկ էին բարձրացնում: Նման իմաստ ունեին ծննդի ժամանակ տանը տիրող աղմուկը, հարսի ու փեսայի շուրջը փողոցում մակարների արձակած կրակոցներն ու ճիչերը, կարկուտի դեպքում՝ բոլոր զանգերի դողանջը, Նավասարդի գիշերվա կրակոցները: Սակայն սատանաներին քշել կարելի էր և խաչակնքելով ու Քրիստոսի, Աստվածամոր կամ ընդհանրապես սրբերի անունը շշնջալով: *Քաշկերն* ամենից ավելի վախենում էին պողպատե իրերից: Դա, հավանաբար, կապ ուներ այն համոզման հետ, թե պողպատը (հրահանը) ազգակից է կայծակին, քանի որ քարից կայծ է հանում ծննդի ժամանակ ծննդկանի բարձի տակ պողպատե և երկաթե իրեր՝ իլիկ, դանակ, մկրատ, դաշույն, կողպեք էին դնում, իսկ շեմքին, որտեղ *քաշկերն* էին նստած, շղթա էին գցում: Նույնպիսի պողպատե առարկաներ էին դնում և երեխայի բարձի տակ: Հարսանեկան արջառի (կամ ոչխարի) արյան մեջ թաթախված խոփը, դանակը և բանալին էլ համանման նշանակություն ունեին: Ավագ չարչարանաց շաբաթի ուրբաթ օրը դարբինները պողպատե օղեր էին կռում, որոնք աղջիկները դնում էին մատներին *քաշկերից* պաշտպանվելու համար (Հաղորութ, Թաղլար և այլ գյուղեր): Երեխաների ուսածապավեններին պողպատե փոքրիկ հրահան²⁴ էին կարում, որը նրանց պաշտպանում էր չար ոգուց ու կայծակից: Հավատում էին, որ հենց այդտեղ (թիկունքում) է թաքնվում սատանան:

Ընդհանրապես, հավատում էին, թե ոչ միայն շնչավոր, այլ նաև անշունչ առարկաները *քաշկերից* պաշտպանելու համար պետք է դրանց զգեստի գործվածքի մեջ ասեղ խրել կամ լայնագլուխ մեխեր և կամ պայտ խփել դռանը: Կարծում էին, որ չարակնման պատճառը սովորաբար *քաշկերն* են և որ նրանց չարագուշակ շունչը (*ննփնսք*) պատում է այն առարկաները, որոնք մեկին դուր են գալիս: Այդ է պատճառը, որ դրանց նկատմամբ էլ գործի են դրվում այն բոլոր հնարները, որոնք բացառում են չարակնումը: «*Աշկավ տնլ*», «*աշկը նի տալ*» արտահայտությունը հավասարազոր է «*ննփնս նի կնլ*»՝ շնչով ներթափանցելուն²⁵:

Ըստ ժողովրդական հավատալիքների՝ պետք էր վախենալ ոչ միայն չար ոգիներից՝ *քաշկերից*: Հավատացնում էին, որ իբր տարբեր սրբավայրերում բնակվող բարի ոգիներն էլ կարող են վնասել մարդուն, եթե նա պատշաճ մեծարանք չցուցաբերի իրենց նկատմամբ՝ գդակը չհանի, չխոնարհվի, ակնածանքով չհավի, մոմ չվառի և այլն: Ասում էին, որ նրանք իբր շատ ոխակալ են և որ ցասման պահին *քաշկերից* առավել վտանգավոր են: Այդ պատճառով էլ որևէ դժբախտության դեպքում նախ անհրաժեշտ էր իմանալ, թե դրանցից որն էր պատճառը, և ինչպես կարելի է սիրաշահել ու ցասումը ողորմաճությամբ փոխարինել: Ահա թե ինչու էր ժողովուրդը դիմում հեքիմներին, կախարդներին ու գուշակներին, որոնց թիվը շատ էր Լեոնային Ղարաբաղում:

ՄՐԲԵՐԻ ԾԱՌԱՆԵՐԸ

Լեոնային Ղարաբաղում, ինչպես նաև հայկական այլ գավառներում, մինչև վերջին ժամանակները եկեղեցական տոներին շատ սրբերի պատկերի մոտ կարելի էր ականատես լինել հետևյալ տեսարանին. տաճարի մուտքի մոտ, գետնատարած թավալվելով, ջղաձգումներից ցնցվում ու մոլուցքից գիտակցությունը կորցրած՝ անկապ բռռեր էր արտաբերում որևէ տղամարդ կամ կին (կամ մի քանի հոգի): Հավատում էին, թե նրանց հետ այդ պահին ինքը՝ սուրբն է խոսում²⁶: Այդ

²⁴ Այդ օղակաձև հրահանները դարբինները կռում էին Ավագ չարչարանաց ուրբաթ օրը, որը և կոչում էին ծրփաթարնոր: Այդպես էին կոչվում նաև այդ օրը ուսածապավեններին կապվող փոքրիկ խաչերը
²⁵ Ծննդի ժամանակ ծննդկանին անունով չէին դիմում՝ վախենալով, որ սատանան կարող է լսել և, օգտվելով դրանից, գլխահան անել ու հափշտակել նրան: Ահա թե ինչու մեծերն իրար հազվադեպ էին անունով դիմում՝ արտահայտվելով այսպես՝ իմ ամուսինը, քո տղան, ավագ հարսը, ամուսնու հայրը, այսինչի աղջիկը կամ տղան և այլն, իսկ երեխաների անունները աղավաղում էին
²⁶ Դիզակախոսի ուխտավայրի մոտ նման մի տեսարան է նկարագրել Ա.Բաբախանյանը: Տե՛ս նրա «Ուխտավորի հիշատակարանը», էջ 73



«սրբերի ծառաներին» (*«սծրփի ղուլ»* կամ ընկնավոր) ամբոխը բարեհաճությամբ էր ընդունում: Պատմելով իրենց տեսիլքների մասին՝ նրանք իբր թե հաղորդում էին սրբի կամքը, որը մեծ մասամբ հանգում էր հնազանդվելու, աղոթելու և սրբին առատաձեռն ընծաներ տալը չմոռանալու կոչին, որոնք, անշուշտ, հետագայում բաժին էին դառնում այդ նույն «սրբերի ծառաներին»: Ժողովրդական սնահավատության այդ կոպիտ շահագործմանը վերջ տրվեց միայն հեղափոխությունից հետո, համենայն դեպս, այն վայրերում, ուր ես եղա, այդ «սրբերի» մասին խոսում էին որպես բոլորովին անհետացած երևույթի:

ԵՐԴՈՒՄ

Իր խոսքի ճշմարտացիությունը հավաստելիս դարաբաղդին սովոր էր երդվել այն ամենով, ինչը սուրբ էր նրա համար: Սակայն տակավին վերջերս՝ դատական հետաքննության ժամանակ, ճշմարտությունը պարզելու համար դիմում էին յուրատեսակ «Աստծու դատաստանին», որի եղանակները կրում էին հինավուրցության հստակ հետքեր: Երբ չէին բավարարում ուղղակի հանցանշանները, և դատավորները չէին կարողանում կողմնորոշվել գործի մեջ, հարցը պարզվում էր հասարակական երդմամբ: Մեղադրյալին տանում էին եկեղեցի, ուր հոգևորականը նրան նախ ստիպում էր, խաչին և Ավետարանին խոնարհվելով, երդվել անմեղությունը, ապա բերում էին բեմում վատվող մոմերի մոտ: Եթե նրան հաջողվում էր մի փչելով հերթով մարել մոմերը, անմեղ էր ճանաչվում: Այլապես պատասխանատվության էր ենթարկվում:

Առավել պարզունակ միջոց էր երդվեցնելը ոչ թե եկեղեցում, այլ հեթանոսական դիցաբանության մնացուկի՝ սրբի մոտ: Այստեղ ևս մոմեր էին վառում, և նույնպես պահանջվում էր մի շնչով հերթով մարել դրանք: Բայց ներկաներից ամեն մեկը նախապես մի քար էր վերցնում և վեր շպրտում՝ ասելով. *«Աստուծ, մեղավորին քարը տու թող անիս»*, *«Աստուծ, դու մեղավորին պատժիս»* (Ծամձոր գյուղ): Այդ բանաձևում, ըստ երևույթին, պահպանվել էր վաղնջագույն ժամանակների՝ «աստծու դատարանով» մեղավոր ճանաչվածներին տեղնուտեղը քարկոծելու վերհուշը:

Լեռնային Ղարաբաղում այդ հասարակական երդումը շատ ճնշող տեսարան էր համարվում: Սովորաբար շատ քչերն էին իրենց ենթարկում նման երդման և գերադասում էին տուգանք վճարել և առհասարակ դրամական տույժ կրել, քան արժանանալ ստորացման: Հարկ է նշել, որ նույնիսկ այն դեպքում, երբ եկեղեցում կամ սրբի մոտ մոմեր մարելով՝ պարզվում էր մարդու անմեղությունը, այնուամենայնիվ, հասարակական կարծիքի մեջ միշտ կասկածանքի որոշ ստվեր էր մնում նրա վրա:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐ

Պատմում էին, թե մի ժամանակ երկինքն այնքան ցածր է եղել, որ քավել է երկրին, և Աստված շրջել է երկրում ու գրուցել մարդկանց հետ: Այն ժամանակ հացահատիկը երկար հասկերով, առանց ցողունի՝ երկրից ուղիղ երկնքին է հասել: Սակայն մի անգամ մի պառավ, երեխան գրկին, անցնելիս է լինում արտի միջով, երեխան արտում կեղտոտում է: Պատավը մի քանի հասկ է պոկում (այլ՝ Ծամձորի վարկածով՝ լավաշ է հանում) և սրբում երեխայի հետույքն ու կեղտոտված հասկերը անզգուշորեն այնպես է դեն նետում, որ խփում է երկնքին: Գոռում է ամպրոպը, և երկինքը ճայթյունով վեր է բարձրանում: Լսվում է աստծու զայրացկոտ ձայնը. *«Այսուհետ, բարեպաշտներից բացի, ոչ մի մարդ ինձ չի տեսնի»*:

Երկնքից էլ դենը վեր ձգվեցին նաև հասկերը, բայց շները սկսեցին խղճալի ոռնալ: Աստված խղճաց նրանց և մի-մի փոքրիկ հասկ թողեց՝ վեր ձգված ցողունների ծայրերին: Այդ օրվանից



աստծուն տեսնել կարող են սոսկ բարեպաշտները, այն էլ այն դեպքում միայն, երբ երկինքը բացվում է, իսկ երկինքը բացվում է մեծ տոների (օրինակ՝ Համբարձման տոնի) նախօրեին կամ ուժգին ամպրոպի ժամանակ, երբ որոտի խլացուցիչ դղրոյուններին հաջորդում են թուրկայծակները (Սոս)²⁷: Եվ եթե մեկի բախտը բերի ու կարողանա այդ բուրյունն նայել երկնքի ներսը ու որևէ ցանկություն հայտնի, այն անպայման կկատարվի:

Արևն ու լուսինը հարազատ քույր ու եղբայր են: Քույր-արևը տրտնջում էր, որ վախենում է գիշերը դուրս գնալ, իսկ ցերեկն էլ ամաչում է. բոլորն իրեն են նայում: Մայրն ասաց այնժամ. «*Լուսի՛ն, որդի՛ս, դու ման արի գիշերը, իսկ դու, Արևի՛կ, ման կգաս ցերեկը: Իսկ որպեսզի ոչ-ոք քեզ չնայի, ահա վերցրու այս մի ասեղը և ծակիր բոլոր նրանց աչքերը, ով քեզ կհամարձակվեն քեզ նայել*»: Եվ ահա քույր-արևը, առյուծին նստած, ցերեկը ճանապարհ է ընկնում երկնքով և իր ասեղ-ճառագայթներով ոչ ոքի չի թողնում նայելու իրեն, իսկ առյուծը նրան պահպանում է չար ոգիների՝ *քաշկերի* հարձակումներից (Սոս, Ծամձոր, Վանք):

Թե՛ արևը, թե՛ լուսինը հերթով գնում են մոր գիրկը և հերթով էլ այնտեղից ծագում: Արշալույսին ու վերջալույսին երկինքն այրվում է վառ կարմիր ու մանուշակագույն փայլով, քանի որ լուսատուներից մեկը՝ մայր մտնողը, վաղօրոք հրճվում է մոր փաղաքշանքի սպասումից, իսկ մյուսը՝ ծագողը, հենց նոր է դուրս եկել նրա ջերմ գրկից (Ծամձոր):

Երբ մարդ է ծնվում, երկնքում մի նոր աստղ է հայտնվում և լույս է տալիս նրան մինչև կյանքի վերջն ու ընկնում է, հենց որ նա մեռնում է: Խոշոր աստղերը պատկանում են հզոր, փոքրերը՝ հասարակ մարդկանց: Առավել պայծառ լույսով վառվում են առաքինի մարդկանց, փայլատ լույսով՝ արատավոր մարդկանց աստղերը:

Արևի ու լուսնի խավարումները տեղի են ունենում այն պատճառով, որ չար ոգիները՝ *քաշկերը*, ջանում են տիրանալ դրանց: Այդ ժամանակ երկրի վրա կանայք վայնասուն են բարձրացնում, տղամարդիկ հրացան արձակում, զանգ հնչեցնում, խփում են պղնձե ամաններին, որպեսզի վախեցնեն սատանաներին և ազատեն արևը կամ լուսինը (Սոս, Վաղահաս):

Հարդագողի ճանապարհը կոչվում է *Տերմանուկօղի ճընսպար*: Գյուղացու եզների (մեկ այլ՝ Մարտակերտի վարկածով՝ ուղտերի) հարդը վերջանում է, և ոչ ոք չի ցանկանում նրան պարտքով հարդ տալ: Գյուղացին գողանում է հարևանից, բայց երբ տուն տանելիս է լինում պարկերով, փոթորիկ է բարձրանում ու նրան երկինք քշում, հարդն էլ շաղ է տալիս ճանապարհին. այդ նրա հետքն է մինչև հիմա երևում երկնքում (Հաթերք)²⁸: Նման բացատրություն են տալիս Խաչենի ու Ջրաբերդի շրջաններում, իսկ Վարանդայի ու Դիզակի շրջաններում պատմությունները շատ կցկտուր են և թեպետ այստեղ Հարդագողի ճանապարհն անվանվում է *Տերմանի հրդի*, սակայն ինչ-որ մեկի հարդ գողանալու ու ճանապարհին շաղ տալու պատմության հետ մեկտեղ պատմվում է նաև Հերայի ու Հերակլի ավանդությունը հիշեցնող մի գրույց: Դարձվոր կինը, որը գիշերը գայլ էր դառնում, մի անգամ հյուրի ոտքերը լվանալիս նկատում է, որ դրանք շատ գեր են, գիշերը, երբ բոլորը քնում են, նա մտնում է հյուրի սենյակը, որ խժոռի նրան, բայց հյուրը պաշտպանվելով դաշույնով խփում է նրա կրծքին, կրծքից կաթ է ցայտում. հետքը մինչև այժմ երևում է երկնքում (Սոս)²⁹:

Որոտը՝ *ըրօուուց* լինում է այն պատճառով, որ մի պառավ քարով լի պարկը գլորում է երկնքով, իսկ կայծակը *կէծակ* աստծու (հրեշտակների) ձեռքի թուրն է (զավազանը), որով նրանք հետա-

²⁷ Հմմտ. դաշալթեցիների (Քարին-տակ) հավատալիքները, Գ.Осипов, *Село Даш-Алты, СМОМПК, պր. XXV, էջ 134*

²⁸ Հմմտ. Մովսես Խորենացու *Վահագնին վերաբերող ավանդությունը*

²⁹ Հմմտ. *Վարանդա*, էջ 219



պնդում են և ոչնչացնում *քաշկերին*: Այդ թրի հարվածներից դևերը աշխատում են թաքնվել գետնի կամ բարձր ժայռերի ու ծառերի տակ:

Մի այլ վարկածով (Ննգի գյուղ) կա յոթ երկինք: Յոթերորդ երկնքում գտնվում է աստվածը, նրա կողքին տարածված է ծովը: Երբ ծովը փոթորկվում է, ալեկոծությունից՝ *ըլըկոծնը*, լսվում է որոտ ու դղրդյուն (ամպրոպի որոտը): Կայծակը փոթորկի պահին այս ու այն կողմ նետվող ձկների փայլատակող շողն է: Երբ աստված փեշը ջուր է լցնում ու շաղ տալիս կամ խփում է ծովին ու պատում այն, անձրև է գալիս:

Առաջին ամպրոպի ժամանակ գյուղացիները երկաթ էին կրծում և քարերով խփում իրենց գլխին՝ ասելով՝ *կըրը կըլօխ, ըրկըթը-կէռիկ*: Այդպես էին անում, որ այդ տարի կարկուտ չլինի:

Ծիածանը՝ *կընընչկնրմնր*, աստծու գոտին է: Դրանով նա կաշկանդում է մարդկանց թշնամի ոգիներին (չարքերին): Ծիածանի յուրաքանչյուր գույնը նշանակում է այս կամ այն ժողովուրդը: Ամենավառ գույները հայերն են: Ծիածանի շերտերի լայնքով ու պայծառությամբ գուշակում են ապագան. եթե դեղին գույնը լայնաշերտ է, հիվանդություն կլինի, եթե կարմիրն է, գինին առատ կլինի, եթե կանաչն է, ցորենի բերքն առատ կլինի (Ծամձոր):

Երկրաշարժերը՝ *շարժ, ժաժք*, լինում են այն ժամանակ, երբ գետնի տակ ապրող ցուլը թափահարում է պոչը ու խփում մեջքին կամ ցնցում է ականջները (Ծամձոր, Հաթերք): Վարանդայում ավելացնում են, թե երկրաշարժ լինում է, երբ ալեկոծությունը թափանցում է ստորգետնյա օվկիանոս և փոթորկում նրա ալիքները:

ՏՈՆԵՐԸ

Ինչպես հայկական մյուս մարզերում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում հեթանոսական տոների ժառանգորդ քրիստոնեական տոները սերտորեն ձուլվել են հենց հեթանոսական ծեսերի հետ: Ժողովրդի գիտակցության մեջ վերջիններս հաճախ շատ ավելի ցայտուն ու ընդգծված են հանդես գալիս, քան եկեղեցական քրիստոնեական բարեպաշտության այս կամ այն կողմերը: Տարբեր տարիքի մարդկանց լայն մասնակցությունը տոներին արտահայտվում էր ոչ թե հոգևորականների մասնակցությամբ կատարվող եկեղեցական պատարագներով ու թափորներով, այլ ժողովրդական զվարճանքների ձևով: Թերևս բոլորովին պատահական չէ, որ քրիստոնեական խորհրդանիշ խաչն ու սրբապատկերը մասնավոր տներում չէին դրվում: Լեռնային Ղարաբաղում ոչ մի տեղ բնակելի տան մեջ դրանք չէիր գտնի, բացի սուրբ օջախներից, այն էլ շատ հազվադեպ: Այստեղ ոչ այնքան եկեղեցին էր ներխուժում համաժողովրդական անձնական կյանքի մեջ, որքան ավելի շուտ վերջինս՝ եկեղեցու մեջ: Նույնիսկ գոհակենդանու մորթելը միշտ չէ, որ պահանջում էր հոգևորականի ներկայություն: Կային տոներ, որոնք ամենևին չէին նշվում եկեղեցու կողմից: Այդպիսին էր *Նավասարդը*՝ հին հայկական նոր տարվա տոնը³⁰, որը դարեր առաջ հանդիսավոր ու շքեղ տոնում էին հայ թագավորները ողջ ժողովրդի մասնակցությամբ: Այն մինչև վերջին ժամանակներս կայունությամբ պահպանվում էր Լեռնային Ղարաբաղի բոլոր գյուղերում: Ճիշտ է, Շուշի քաղաքում այն մոռացության էր տրվել և փոխարինվել հունվարի 1-ի տոնակատարությամբ՝ փոխադարձ այցելություններով ու շնորհավորանքներով: Սակայն գյուղական բնակչության շրջանում Նավասարդի նախօրեին շարունակում էին թխել զանազան թխվածքներ (կաթնահունց, քաղցր, խորիզով ականջիկներ), եփում էին ոչխարի մսով ու ցորենի ձավարով կորկոտ (*կորկոտ, կուրկուտ, կարկատ, կորկուտ*), տան բոլոր անդամների, հատկապես երեխաների համար գնում

³⁰ Լեռնային Ղարաբաղում այն տոնվում էր ոչ թե օգոստոսի 11-ին, ինչպես նշվում է եկեղեցական օրացույցում, այլ նոյեմբերին, աշնանը, ինչպես եղել է հնում



էին նոր շոր ու կոշիկ, մայրը երեխաներին չիր ու քաղցրավենիք էր բաժանում, փեսան ու իր հարազատները հարսին նվերներ՝ գլխաշոր, գուլպա, զգեստի կտոր, միրգ ու քաղցրավենիք էին տանում: Երբեմն այդ նվերները նախորդ գիշերը, շորի մեջ փաթաթած, աննկատելիորեն տուն էին իջեցնում երդիկից: Այդպիսի նվերներ էին փոխանակում նաև հարևաններն ու բարեկամները: Հատկանշական է, որ այդ օրը տանտերերը հատուկ շնորհավորում էին գյուղի տանուտերին և քահանային ու նվերներ (խնձոր ու զինի) տանում նրանց: Այդ օրը բակում ծառերից կարմիր գույնի շոր ու զանազան կարմիր լաթի կտորներ էին կախում (Մոս)³¹:

Թեպետ գյուղ թափանցող քաղաքային սովորույթները բավականաչափ թուլացրել էին Նավասարդի տոնակատարությունը, սակայն դրա փոխարեն դեռևս կենցաղ չէր մտել հունվարի 1-ի տոնը, որը գյուղերում աննկատ էր անցնում:

Քաղաքացիական տարվա սկզբին համընկնում են Ծննդյան և Մկրտության տոները, որոնք, ըստ հայ եկեղեցու ավանդության, տոնվում են միաժամանակ՝ մեկը մյուսից հետո, հունվարի 5-ի երեկոյից մինչև հունվարի 6-ի երեկոն:

Այս տոնն ամենից քիչ է ենթարկվել հեթանոսության տեղական երանգավորումներին: Նախորդ օրը թխում էին անալի կարկանդակ՝ *կըրկէնի*՝ ձեթով, այլուրով ու ընկույզով, որի մեջ նախօրոք խառնում էին սիսեռ կամ լոբի, մանր արծաթադրամ՝ ի նշան *դովլաթի* (ունևորության): Այս կրկենին հանդիսավոր, ողջ ընտանիքի ներկայությամբ կտրում էին, ընդ որում, բաժին էին հանում նաև ոչ միայն ընտանիքի բացակա անդամներին, այլև կենդանիներին, նույնիսկ շանը, չէր մոռացվում նաև տան օջախը: Ում բաժին ընկներ *դովլաթը*, այդ տարվա ողջ ընթացքում նրա վրա էլ պետք է հիմնվեր ընտանիքի բարօրությունը: Հատկապես լավ նշան էր, եթե սիսեռահատիկը հայտնաբերեին տան օջախի պատառի մեջ: Ապագան կանխագուշակելու այս եղանակի կիրառությունը, սակայն, ոչ բոլոր գյուղերում էր արվում Ծննդյան տոնի նախօրեին: Ուրիշ վայրերում (Վաղուհաս) կրկենին կտրտում և բաժանում էին Նավասարդի նախօրյակին (շատ տրամաբանական է, քանի որ նոր տարին սկսվում էր Նավասարդին)³²:

Մեծ պասից երկու շաբաթ առաջ տոնում էին սուրբ Մարգսի օրը: Այս պաս օրերին արգելվում էր զուխը լվանալ և լվացք անել (այս պասը ընդունված չէր հայ եկեղեցու օրացույցով), իսկ աղջիկները հինգ օր հրաժարվում էին սովորական կերակրից՝ գոհանալով չոր հացով, որն ուտում էին արևմուտից հետո: Միայն նման ժուժկալությամբ կարելի էր արժանանալ սրբի բարեգթությանն ու աջակցությանը, որպեսզի հարսանիքին պարզ եղանակ լիներ և ոչ թե ամպ, ձյուն ու բուք: Ուրբաթ օրը բոված ցորենը երկանքով աղում էին, ստացվում էր փոխինձ, որը խառնելով շաքարաջրով, մեղրով կամ քաղցր խաղողի հյութով՝ գնդիկներ էին պատրաստում և բաժանում ընտանիքի բոլոր անդամներին: Մեծ տղաներն ու աղջիկները մի կտոր կծելով գնդիկից, մնացածը նորից փոքր գնդիկ էին դարձնում, որպեսզի հաջորդ օրը՝ առավոտյան, զցեն կտուրը և տեսնեն, թե թռչնակն ուր կտանի այն: Եթե տաներ ուրիշի կտուրը և սկսեր կտցել, ուրեմն այնտեղից էլ հարս կամ փեսա կլիներ, եթե սկսեր կտցել հենց իրենց կտուրին, ուրեմն այդ տարի հարսանիք չէր լինի³³:

Այդ նույն շաբաթ օրվա երեկոյան, երբ բոլորը քնում էին, տանտիրուհին դռան ետևը կամ կտուրին (Վաղուհաս) պղնձե սկուտեղով չոր փոխինձ (*փծխենձ*, *փնխինձ*, *փծխինձ*) էր դնում:

³¹ Հմմտ. *Վարանդա*, էջ 155, Г.Осипов, *Село Даш-Алты, СМОМПК*, սր. XXV, էջ 124

³² Հմմտ. *Չայրենի (Գյանջա)՝ Լեռնային Ղարաբաղից գաղթած բնակիչների սովորույթը*, Ф.Джейранов, *Село Чайкенд, СМОМПК*, սր. XXV, էջ 99: Կրկենի բառը Հր. Աճառյանի «Հայերեն գավառական բառարան»-ում («Էմինյան ազգագրական ժողովածու», հ. IX Թիֆլիս, 1913) համադրվում է կրակենի բառի հետ (կրակ բառից), որը *Խոյի բարբառում նշանակում է ջրաղացում թարմ այլուրից թխվող առաջին անալի հացը*

³³ *Վարանդա*, էջ 246



Գիշերը սուրբ Սարգիսը, սպիտակ ձին նստած շրջում էր բոլոր տները և այնտեղ, ուր գոհ էր տնեցիներից ու նրանց նվիրաբերումից, նրա ձին փոխինձի վրա թողնում էր ետին ուտքի սմբակի հետքը: Տանտիրուհին այդ փոխինձից *խաշիլ* էր եփում և լցնում ավսենները կամ թասերը, խաշիլի մեջտեղը գդալով փոսիկ էին անում, մեջը հալած յուղ, իսկ կողքերին շիճուկ էին լցնում: Գդալով մի քիչ խաշիլ վերցնելով՝ թաթախում էին յուղի ու շիճուկի մեջ և ուտում:

Հայ ժողովրդական հավատալիքների հետազոտող Ս. Աբեղյանը Հայաստանի տարբեր գավառներում սուրբ Սարգսի տոնակատարությանը վերաբերող նյութերի հիման վրա գալիս է այն եզրակացության, որ այստեղ առկա են քամու և ձյունաբքի աստվածության հեթանոսական պաշտամունքի վերապրուկներ: Սրբին փոխինձ նվիրաբերելը նա իրավամբ դիտում է որպես քամիների ոգու ողորմածությունը շարժելու հնագույն սովորույթի մնացուկ, սովորույթ, որը տարածված էր հնդեվրոպական շատ ժողովուրդների մեջ³⁴:

Բարեկենդանը գյուղի ամենաուրախ ժամանակն էր:

Չնայած ամենուր դեռ ձյուն էր նստած, տարբեր տարիքի մարդիկ անձնատուր էին լինում գվարձությունների՝ հատկապես հինգշաբթիից սկսած, երբ թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ դադարում էին աշխատելուց և երեխաների նման գվարձանում, զանազան խաղեր էին խաղում: Ծերունիները չէին քաշվում այս կամ այն խմբին՝ *դաստաին*, միանալու և *թօփ* (գնդակ) խաղալու: Գնդակը կարում էին լաթի կտորներից և մեջը բուրդ կամ մազ լցնում: Խաղացողների մի խումբը աշխատում էր փայտերի հարվածներով գնդակը զցել հեռու, մյուսը՝ դարձյալ փայտերով ետ բերել այն:

Մյուսները՝ *սուրմագիլի*, երիտասարդները մոլեգին *չիլինգի* կամ *կունդի* էին խաղում՝ 0,70-1,00մ երկարությամբ փայտով աշխուժորեն խփելով ու հեռու շպրտելով երկու ծայրը սրած 10-15 սմ փայտիկը, կամ երկու խմբի բաժանվելով և յուրաքանչյուրի համար *մէր* ընտրելով՝ սկսում էին *շքմփուր-շքմփուրի* խաղալ: Մի խմբի խաղացողներն, իրար բռնած և գլուխները խոնարհած, իշուկ էին կազմում, իսկ մյուսները հերթով վազքով թռչում էին այդ իշուկի վրայով: Եթե ներքևի խմբից որևէ մեկը չէր դիմանում ծանրությանը և կքվում էր, տարվում էր ներքևի խումբը, իսկ եթե թռչողներից մեկը սահեք ընկներ իշուկի վրայից, տարվում էր վերևի խումբը, և ինքն էր իշուկ դառնում: Աղջիկներն առանձին խումբ էին կազմում, *ճլորթի* ընկնում՝ *ճինջէխ ասել*, *ճինջի կըցել* (Սոս, Ճարտար): Այս բոլոր խաղերը զուգորդվում էին ինքնատիպ զբոսախնջույքների *փսօններով* (ավելցուկներով), քանի որ յուրաքանչյուր ընտանիք այդ օրերին աշխատում էր՝ որքան կարելի է, շատ ուտելիք պատրաստել, իսկ հասակակիցները խնջույքի էին գնում իրենց ուտելիքներով:

Առաջներում երիտասարդները կիրակի օրերին մի ամբողջ ներկայացում էին ցուցադրում: Ընկերներից մեկին հազցնում էին իրենց ձեռքով ոչխարենուց կարած զգեստ՝ բուրդը դեպի դուրս, վրան կախում էին ոսկորներ և զանազան հին գենքեր՝ թուր, դաշույն, ատրճանակ, հրացան, գլուխն էին խցկում մի քրքրված գլխարկ՝ ետևը դեպի առաջ, երեսին մուր էին քսում և նստեցնում մատակ էշին՝ դեմքը դեպի գավակը, ու էշի ազին ձեռքը դնելով՝ ողջ խմբով զուռնաչիների ու թմբկահարի առաջնորդությամբ բակից բակ էին գնում՝ գոռալով. «*Ճամփա իշի պարօնին*» կամ «*Անբեղն է գալիս, ճանապարհ*» («*քօսա գալիլի*»): Երիտասարդները սրամտում էին, ծաղրում, տնազ անում պարոնին ու բոլոր հանդիպողներին, ընծաներ պահանջում: Բոլոր տներից բերում էին ձու, յուղ, ալյուր, ցորեն, ուտելիք, դրամ: Երեկոյան ջահել տղաների ողջ խումբը խնջույք էր կազմակերպում (Սոս և Գյունե Ճարտար)³⁵:

³⁴ Manuk Abegian, *Der Armenische Volksglaube*, *Լայպցիգ, 1889*, էջ 96: (Մանուկ Աբեղյան, *Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, Երևան, 1975*, հ. է, էջ 81: (Մանուկ խմբ.))

³⁵ *Հմնտ. Վարանդա, էջ 248*



Լեոնային Ղարաբաղի որոշ շրջաններում պարոնների կողմից ընծաներ (հարկ) հավաքելու այս բեմականացումը կրում էր ավելի բարդ բնույթ՝ հիշեցնելով Թիֆլիսի *քեղենքան*: Տղաներից (ջահելներից) մեկը հագնում էր *խանի* շորեր՝ թարս մուշտակ ու շավար, մեջքին կապում գունավոր կտորից լայն գոտի, որից պարանով կախված էր անպատյան թուրը, գլխին դնում էր քրքրված գլխարկ, ներկում դեմքը, այծի մազից բեղեր էր կպցնում և ձեռքը վերցնելով փայտ-գայիսունը՝ նստում էր գահին՝ գլխիվայր շրջած կողովի վրա: Նրա կողքին կանգնում էր *վեզիրը* սովորական հագուստով, փայտը ձեռքին: Երրորդը՝ գրագետներից, կատարում էր միրզայի և քարտուղարի դերը: Հնաձ էր չորրորդի՝ *քյոսայի* զգեստը. նրան հագնում էին ոչխարի քուրք՝ թարս, նեղ շավար, որի փողքերը պինդ ձգում էին թաթերից մինչև սրունքները, որպեսզի ավելի նմանվեին այծի ոտքերի, գլխին դնում էին թաղիքե գդակ՝ այծեղջուրներով: Այն ծածկում էր դեմքն ու վիզը, այնպես որ ստացվում էր բերանի ու աչքերի տեղն անցքեր ունեցող յուրատեսակ դիմակ: Դիմակին կպցնում էին այծի միրուք: Որպես գոտի՝ ծառայում էր պարանը, որից կախում էին փայտե երկար սուրը: *Քյոսայի* մի ձեռին փայտե դաշույնն էր, մյուսին՝ մի կարճ փայտ: Գահից ոչ հեռու կախաղան էին պատրաստում՝ պարանե օղակով, որի տակ կանգնում էր երկու *ֆեռաշ*՝ դահիձ: Չուռնաթմբլան ժողովրդին հրավիրում էր ներկայացմանը:

Երբ ժողովուրդը հավաքվում էր, *խանը վեզիրի* ականջին ինչ-որ բան էր փսփսում: Վերջինս հրամայում էր իր մոտ քարշ տալ այսինչին (հավաքվածներից, նույնիսկ տնից): *Քյոսան* վազում էր հրամանը կատարելու: Սկսվում էր ձերբակալվածի հարցաքննությունը: Հարցաքննողը վեզիրն էր. «*Դու ինչպե՞ս էիր համարձակվում խանին հարկ չտալ*»: Հարցաքննվողը խոստանում էր վճարել, և սկսվում էր սակարկությունը, թե որքան պետք է վճարի, արդյոք ցորե՞ս պետք է տա, թե՞ դրամ: Ներկայացվում էր հին խանական ժամանակներում հարկ հավաքելու տեսարանը՝ մեղադրվողների հազար ու մի ներողություններով և խանի մարդկանց՝ կախաղան հանելու, խարազանելու և այլ սպառնալիքներով:

Եթե մեկը չէր կարողանում հարկն անմիջապես վճարել, *խանը* հրամայում էր *միրզային* գրել նրա անվան դիմաց, որպեսզի հաջորդ օրը ամբողջը հավաքեն, ցորենը վաճառեն և ստացված դրամով խնջույք սարքեն, մնացածն էլ բաժանեն իրենց մեջ:

Խանը, հարկերը հավաքելով, նստում էր էջին՝ դեմքով դեպի ետ և պոչը սանձի փոխարեն բռնած, իր շքախմբով ընկերների ու երեխաների ուրախ կատակների և զուռնա-թմբլայի հնչյունների ուղեկցությամբ գյուղով մեկ ճամփա էր ընկնում տուն: *Քյոսան*, տակտով պարելով ու թռչկոտելով, գնում էր բոլորի առջևից՝ ծամածռություններ անելով ու իր պոզերով վախեցնելով հանդիպողներին³⁶:

Մեծ պասի նախորդ երեկոն բարեկամներն ու հարազատները միասին էին անցկացնում, յուրաքանչյուրն իր հետ ուտելիք էր բերում, կուշտ ուտում էին և մի լավ խմում, քանի որ առջևում յոթ շաբաթյա Պասն էր: Ամենավերջում ուտում էին մի-մի ձու՝ բերանը «կողպելու» համար, որպեսզի Ջատիկին դարձյալ ձվով «բանան բերանը»: Ի դեպ, երիտասարդները խուսափում էին դա անել այդ գիշեր, քանի որ դեռ պետք է հաջորդ օրը՝ երկուշաբթի, ուտեին-վերջացնեին այն ամենը, ինչ մնացել էր Բարեկենդանի *ուտիսի* կերակուրներից: Բոլոր տներից անընդմեջ հրացանային համազարկեր էին լսվում:

Հաղորութ գյուղում երեխաներն ընթրիքից հետո սկուտեղով իրենց հորը մատուցում էին զանազան մրգեր, պարան ու մտրակ: Այս ընծայի դիմաց հայրը նրանց նվիրում էր մի քանի կոպեկ³⁷:

³⁶ Հմմտ. Փ.Джейранов, *Село Чайкенд, СМОМПК, ցր. XXV, էջ 48, 125*

³⁷ И.Давидбеков, *Гадрут, СМОМПК, ցր. VI, էջ 191*



Ժողովրդական մեկնաբանությամբ դա պետք է նշանակեր, որ եթե հայրը հրաժարվի վարձատրությունից, զավակները կըմբոստանան, կկապեն նրա ձեռքերն ու ոտքերը և մտրակով կծեծեն:

Մեծ պասի առաջին օրը համարվում էր ամենակարևոր տոներից մեկը: Դա հաշտություն ու համերաշխություն սահմանելու օր էր: Եթե կային գժտվածներ ու թշնամիներ, անպատճառ պետք է հաշտվեին, ընդ որում, իհարկե, միջնորդների օգնությամբ: Այս սովորույթից հրաժարվողները զրկվում էին սուրբ Խորհրդին հաղորդվելու իրավունքից: Բոլորն այցելում և շնորհավորում էին միմյանց: Առաջին հերթին հարևաններին ու բարեկամներին այցի էին գնում տղաները: Նրանք պետք է լուռ բացեին դուռը, մոտենային ընտանիքի ավագ, ապա կրտսեր անդամներին, համբուրեին նրանց ձեռքը և տային մեկական տանձ, խնձոր, սերկևիլ, նուռ: Մեծահասակները (տանտերերը) այցելում էին նաև գյուղի տանուտերին, քահանային և պատվավոր մարդկանց՝ որպես նվեր տանելով, մրգերից բացի, մի շիշ գինի կամ օղի:

Կեսօրին՝ խնջույքից հետո, ջահելները զուռնա-թմբալայի հնչյունների տակ սկսում էին ձիախաղերը կամ լախտին՝ *ջըջըլախտին*:

Բարեկենդանի այս բոլոր ներկայացումների, զվարճությունների ու խաղերի մեջ դժվար չէ նկատել այն բոլոր տարրերը, որոնցից Արևմուտքում, հատկապես Միջերկրականի շրջանում, կազմավորվել են հունափոքրասիական թատերական ներկայացումների միանգամայն նույն ձևերը՝ դիոնիսյան ամենաբազմազան դիմակահանդեսները և արդի կառնավալը: Հայաստանի մյուս զավառներում դիոնիսյան տոների այս տարրերը մինչև վերջերս պահպանվել էին ոչ նվազ չափով, տեղ-տեղ նույնիսկ առավել ցայտունորեն:

Հովի. Թումանյանը պատմում էր, թե ինչպես իրենց գյուղում (Դսեղ), բացի այն զվարճալիքներից, որտեղ գլխավոր դերն այժի կերպարանքով մարդն էր, կանայք լաթի կտորներից երկար ֆալտսներ էին պատրաստում՝ մեջը լցնելով բուրդ կամ մազ, դրանցով տարբեր խաղեր էին խաղում և միմյանց հարվածում:

Ակամայից հիշում ես հունական կատակերգության դերասաններին, որոնք ելույթ էին ունենում՝ առջևից՝ գոտու տակ, կախելով արհեստական ֆալտսներ:

Լեոնային Ղարաբաղի եթե ոչ Միջերկրականի, ապա, համենայն դեպս, նրա արևելյան մասի՝ Հունաստանի հետ ունեցած մշակութային ներքին ընդհանրությունն են վկայում պարբերակաւոր են օջախի կրակը նորոգելու վերապրուկները, որոնք պահպանվել են մարզի գյուղերում:

Տեառնընդառաջի նախօրեին՝ փետրվարի 13-ին, նորապսակները եկեղեցու գավիթն էին բերում մեկական խուրձ գիհի և մեծ խարույկ անում, ընդ որում, հիմքում ճյուղերը դրվում էին խաչաձև, իսկ վերևը՝ քառանկյունի: Երեկոյան ժամերգությունից հետո դուրս գալով եկեղեցուց՝ քահանան աղոթք էր կարդում, թեպետ պաշտոնապես հայ եկեղեցին չէր էլ ընդունում կրակի սրբագործման այդ ծեսը: Նորապսակները բոլոր կողմերից խարույկին էին մոտեցնում եկեղեցուց բերած մուրը և վառում խարույկը, ծերունիներն ու պառավները բարեպաշտորեն աղոթում էին, և բոլորը հետևում էին ծխի ուղղությանը. այն որ կողմ գնար, այնտեղ էլ առատ բերք կլիներ:

Սովորաբար խարույկի վրայով ոչ-ոք չէր թռչում, դա շատ սակավաթիվ գյուղերում միայն (Վաղուհաս) անում էին տղաները, ավելի հազվադեպ՝ աղջիկներն ու չբեր կանայք: Չսպասելով մինչև կրակը լրիվ հանգչեր՝ ներկաները մի-մի վառվող խանձող կամ խարույկից կպցրած այրվող մոմ էին տանում իրենց հետ: Կրակը ձեռքին՝ շտապով տուն էին գնում, որպեսզի վառեն օջախը և թարմ գարնանային կաթ եփեն, որպեսզի այն առատ լինի: Կրակի մոխիրը ցանում էին այգու ծառերի տակ, որպեսզի մրգի առատ բերք լինի:



Այս տոնը, ինչպես և հենց խարույկը Լեոնային Ղարաբաղի հարավային շրջաններում անվանում են *դրոնոնաճ*, իսկ հյուսիսայինում՝ *դոնոնոնճ*³⁸: Այս բառն ընդունված է համարել եկեղեցական Տեառնընդառաջ՝ «տիրոջն ընդառաջ» (ինչպես նշվում է եկեղեցական օրացույցում), տոնի անվանման աղավաղում: Այս կարծիքը, սակայն, պետք է վիճելի համարել: Ամենայն հավանականությամբ, այստեղ ևս գործ ունենք եկեղեցական անվանումը հին հեթանոսական ժողովրդական անվանմանը հարմարեցնելու հետ, ճիշտ այնպես, ինչպես հենց քրիստոնեական տոները զուգադիպեցնում էին հին հեթանոսական տոներին:

Ծաղկազարդի կիրակին կոչվում է *Ջրըրգարթար*, որ նույնպես տարբերվում է եկեղեցական անվանումից, որը նշանակում է «ճաղիկներով զարդարված»³⁹: Տոնը և դրա հետ առնչված հեթանոսական ծեսերը անկասկած վկայում են, որ դրանք ծագել են քրիստոնեության մուտքից առաջ:

Դարձյալ հարց է ծագում՝ արդյոք ժողովրդակա՞նն է օրացուցային անվանման աղավաղումը, թե՞ օրացուցայինն է հարմարվել հին հայկականին և հարմար բառը վերցրել ըստ եկեղեցական ավանդության: Լեոնային Ղարաբաղում մինչև վերջին ժամանակներս պահպանվում էին այս ծեսերը գիշերահավասարի հետ արթնացող բնության բուսաճական ուժի պաշտամունքի վերապրուկների ձևով արտահայտվող շատ բնորոշ մանրամասներով:

Ջրըրգարթարը դարձյալ նախ և առաջ երիտասարդների տոն է: Այդ օրն աղջիկներն ու տղաները հագնում էին իրենց ամենագեղեցիկ ու թանկարժեք զգեստները, իսկ աղջիկները նաև եղունգները հինա էին դնում: Հնում միայն նշանված տղաները (ավելի ուշ՝ նաև չնշանվածները) արմատախիլ էին անում մատղաշ ուռենին և ճյուղերը զարդարում գույնզգույն լաթի կտորներով, թելի վրա շարված չամչահատիկներով, մրգերով և եռասայր՝ *իրէք ճրղնանի* մումերով⁴⁰:

Մինչև կեսգիշեր փոքր-ինչ քնելուց հետո երիտասարդները շտապում էին եկեղեցի: Առաջինը տեղ հասնողը խփում էր զանգը, մյուսները գնում էին՝ քահանային արթնացնելու: Նշանված տղաները ծառերի հետ կանգնում էին իրենց հարսնացուների առաջ: Սկսվում էր մումերի վառումը: Մերձավոր կանանցից մեկը ծառի վրա մի եռասայր մում էր վառում և ընծաներ տալիս նշանվածներին: Նախ ընծաներ էր տալիս հարսի կամ փեսայի մայրը, ընդ որում, հարսի կողմը ընծայում էր փեսային, իսկ փեսայի կողմը՝ հարսին: Փեսայի մայրը կամ քույրը հարսի գլխին գլխաշոր էր գցում, իսկ ընկերուհիներին՝ քաղցրավենիք բաժանում⁴¹:

Ժամերգությունը ձգվում էր գրեթե մինչև լուսաբաց՝ խլանալով *ճրոճրոնանների* ու *չրխչրխկանների* աղմուկով, որ երեխաները պատրաստում էին հատկապես այդ օրվա համար: Առավոտյան կողմ՝ ծառերն օրհնելուց հետո, ժողովուրդը՝ գերազանցապես երիտասարդներ, ծառերից մեկական ճյուղ պոկելով, տուն էին տանում, որտեղ այն տնկում էին հողի մեջ, որ արմատ տա կամ կախում էին կավե կամ փայտե *խնոցուց*, ճյուղով ստուգում էին, թե կարագը հարվել է խնոցում: Վերջապես այն զցվում էր կրակը, որի վրա կաթ էին եռացնում, որպեսզի կաթը չմակարդվեր (Ավետարանոց): Որոշ գյուղերում կանայք մումերով գնում էին գերեզմանատուն և այրվող մումերն ամրացնում իրենց հանգուցյալների գերեզմանաքարերին: Ողջ գերեզմանոցը կրակներից փայլփլում էր⁴²:

³⁸ Հայկական այլ գավառներում՝ դրըրնդեզ, տանդառեջ

³⁹ Այլաշկերտցիների մեջ ծառզարթար՝ ծառի զարդարում

⁴⁰ Ընտանիքի երիտասարդ անդամների համար դա պատրաստում էին պտավները՝ մի բարակ մում խաչաձև ամրացնելով ավելի հաստին և ծայրերը վեր թեքելով

⁴¹ Այդ գիշեր հաճախ նախնական համաձայնությամբ նոր գույզերի նշանադրություն էր կատարվում: Տղայի մայրը կամ մոտ ազգականուհին ընտրած աղջկա մատին մատանի էր դնում ու գլխին գլխաշոր գցում

⁴² Հմմտ. Վարանդա, էջ 251



Ավագ շաբաթը և Զատիկը անց էին կացվում եկեղեցական ավանդույթների ուժեղ ազդեցության տակ⁴³:

Զատիկի օրը երբեմն հասարակական մատաղ էր արվում, իսկ հաջորդ օրը՝ երկուշաբթի, բոլոր ընտանիքները գնում էին գերեզմանոց՝ հարազատների գերեզմաններն օրհնել տալու: Մոմ էին վառում, խունկ ծխում, հանգուցյալների հիշատակին օղի ու գինի խմում, ուտում տնից բերած ուտելիքները, ինչ մնում էր, դնում էին գերեզմանի մոտ՝ որպես *հոքեբաժին*:

Համբարձման օրը բոլոր տներում կաթով կերակուր էին եփում և բաժանում որպես մատաղ: Շատերը կաթնապուրը եփում էին ոչ թե տանը, այլ իրենց արտերի միջնակներում և դրանով ցայում էին ցանած հողամասերի շուրջը, որպեսզի նպաստեն բերքի աճմանը՝ «կերակրեն բերքը մանկան նման», և ցանքերը պահպանեն մորեխից, կարկուտից, երաշտից ու այլ աղետներից: Այդ օրը գուշակություններ չէին արվում, ինչպես Հայաստանի այլ գավառներում, և առհասարակ տոնը բավական անգույն էր անցնում:

Գուշակություններ չկային և մյուս տոնի՝ Պայծառակերպության օրը, որը Լեոնային Ղարաբաղում կոչվում է *վըրթեվժր* կամ *վըրթեվճիր*: Հայաստանի կենտրոնական շրջաններում այդ օրը, որը նվիրված է ջրի ու ծաղիկների պաշտամունքին, աղջիկները յոթն աղբյուրից գաղտնի բերած ջրով լիքը սափորից վիճակ էին հանում և աշխատում էին այդ ընթացքում, երգվող երգերի բովանդակությունից ելնելով, թափանցել ապագայի խորքն ու իմանալ, թե ով է իրենց փեսացուն, և արդյոք երջանիկ կլինեն իրենք:

Վարդևորը ընկնում է հուլիսին՝ կիրակի օր (շաբաթական տոն է) և մոտավորապես համընկնում է ամառային արևադարձին: Լեոնային Ղարաբաղում որքան ավելի հարավ՝ դեպի Դիզակ ենք գնում, այնքան պարզեցվում են Վարդևորի տոնակատարության ձևերը:

Այս տաք, չոր օրերին բնակչությունը գերադասում էր ուխտ գնալ ամենանվիրական սրբավայրերը, երբեմն շատ հեռու: Սայլերով, ձիերով, հաճախ էլ հետիոտն կատարվող այդ ուխտագնացություններն իրենց բազմազանությամբ գրավում էին մեծ թվով մարդկանց: Գյուղերում շատ քիչ ջահելներ էին մնում, և տեղում տոն չէր արվում: Վարդևորն առհասարակ բացառապես չամուսնացածների, առավելապես աղջիկների և մասնակիորեն նաև տղաների տոն էր: Դեռ նախորդ շաբաթ օրը, աղջիկները գնում էին ծաղիկ քաղելու: Լեոնային Ղարաբաղում գրեթե ամենուրեք քաղում էին դաշտի կարմիր մեխակ, որը Ավետարանոց գյուղում այդպես էլ կոչվում է՝ *վըրթեվուր*, իսկ մյուս գյուղերում՝ *գուլումհայ*: Մեծ փնջեր կապած՝ աղջիկները հավաքվում էին որևէ տեղ՝ այգում, բացատում, ծառերի տակ կամ եկեղեցու գավթում և շրջան կազմած՝ նստում: Նրանց օրինակին էին հետևում ամուրի տղաները, որոնք մի փոքր հեռու նույնպես նստում էին շրջանաձև: Սկսվում էր երգի մրցում: Երգում էին բացառապես յոթավանկ տողերից կազմված քառյակներ, որի յուրաքանչյուր կենտ տողից հետո երգվում էր կրկներգը. «*Ձան գուլում, ջան, ջան*», իսկ զույգ տողից հետո՝ «*Ձան ծաղիկ, ջան, ջան*»: Քառյակների բովանդակությունը բացառապես սիրային է⁴⁴:

Խմբերից յուրաքանչյուրն աշխատում էր որքան կարելի է շատ քառյակ հիշել, դրանց մի մասը երգվում էր աղբբեջաներեն, չնայած աղբբեջանցիներն այդ տոնը չունեն: Քառյակներում փոխադարձ սրամտությունները միահյուսվում էին միմյանց: Պարտված էր համարվում այն խումբը, որի երգի պաշարը վերջանում էր: Այդ մրցությունը երբեմն շարունակվում էր մինչև առավոտ: Հաղթողները ստանում էին ծաղկեփունջ: Իսկ պարտվող կողմը պարտավոր էր հաջորդ օրվա

⁴³ Տե՛ս *Վարանդա*, էջ 251-254

⁴⁴ Հայ գրականության մեջ շատ են հրատարակվել նման երգեր: Ղարաբաղից գաղթած Չայթենդ գյուղից հավաքված է շուրջ 122 քառյակ, որոնք տպագրված են. А.Калашев, *Вардавар (Село Чайкенд Елисаветпольской губ.)*, СМОМПК, պր. XVIII, էջ 1-36



խնջույքի համար ուտելիք բերել: Աղջիկներին ուղարկում էին քաղցրավենիք, իսկ տղաներին՝ ակրատ ու գինի:

Բայց հաճախ վեճն այլ կերպ էր լուծվում: Աղջիկները խմբով գնում էին հեռավոր մի աղբյուրի մոտ, որպեսզի ծաղկեփունջը թրջեն ու միմյանց վրա ջուր ցայեն: Ճանապարհին թաքնվում էին տղաները, և եթե վերադարձին նրանց հաջողվում էր ծաղկեփունջը խլել աղջիկներից, հաղթանակն իրենցն էր. նրանք էին ստանում հյուրասիրությունը, այլապես իրենք էին հյուրասիրում աղջիկներին⁴⁵:

Կիրակի առավոտյան (գիշերն աղջիկները ոչինչ չէին ուտում՝ *ձուլ* կամ *ձուլ* պահել) աղջիկներն ընտրում էին ամենակրտսեր և լավ հագնված աղջնակներին, որոնք, մեջները ծաղիկ (*գյուլումհայ*) խրած թարմ մրգերով լի փայտե կամ պղնձե սկուտեղները բռնած, բակից բակ էին գնում ու քայակներ երգում, ծաղիկներով մրգերը կամ ծաղկեփնջերը նվիրում տանտերերին՝ փոխարենը հավաքելով բազմազան մթերքներ՝ այլուր, յուղ, ձու, մրգեր, երբեմն նաև գինի: Այս ամենը հավաքելով՝ ինչ որ պակասում էր՝ տնից բերելով, երբեմն իրենց մեջ հավաքած դրամով բրինձ, կոնֆետներ գնելով, նրանք բացօթյա՝ ծառերի ստվերում, բացատում կամ այգում, խնջույք էին սարքում (Սոս գյուղում աղջիկներն առանձնանում էին որևէ դարադամում):

Տղաներն իրենց հերթին մի փոքր այն կողմ նույնպես խնջույք էին անում: Դարձյալ հերթով *գյուլումհայ* էին երգում: Տղաների սեղանից աղջիկների սեղանին տղեկների միջոցով ուտելիք ու քաղցրավենիք էին ուղարկում հատուկ հասցեով՝ որոշակի անձնավորության, որը և կիսում էր դրանք ընկերների հետ: Այս սիրո ինքնատիպ բացատություն էր: Զբոսանքը վերջանում էր *ճլորթի* (ճոճ) ընկնելով: Բարձր ծառից ճոճ էին կապում, և աղջիկները հերթով ճոճվում էին, ընդ որում, ընկերուհիներն աշխատում էին որքան կարելի է բարձր գցել ճլորթին, խփում էին ճոճվողի ոտքերին ու պահանջում ասել մտքինի անունը: Տղաները հեռվից դիտում էին, թե ով է ավելի ճարպիկ ու բարձր ճոճվում:

Ընդ որում, ճլորթիով ճոճվելը ընդունված էր միայն Լեռնային Ղարաբաղի հյուսիսային շրջաններում: Իսկ հարավում՝ Վարանդայում և Դիզակում, այդ բանը չկար: Այստեղ այդ զվարճությունը կազմակերպվում էր Բարեկենդանին, իսկ Վարդևորի կիրակնօրյա զբոսանքին տղաները չէին մասնակցում: Սա պատահական տարբերություն չէ. հյուսիսում՝ Թարթար և Խաչեն գետերի հովտում, ավելի ուժեղ էին ներքին Հայաստանի հետ եղած անմիջական կապերը, որտեղ արևադարձի օրերին ջրի կենսատու ուժի երկրպագության հետքերը և ծաղկի տոնը սիրո դիցուհու պաշտամունքի հետ մեկտեղ առավել հնագույն ձևով են պահպանվել: Դեռևս չի հաջողվում պարզել, թե այս վերապրուկներն ինչ հարաբերության մեջ են գտնվում այն խեթական հավատալիքների հետ, որոնք արտացոլված են ծաղիկների տոնը ներկայացնող նշանավոր Բողազքոյի բարձրաքանդակներում, ինչպես նաև Փոքր Ասիայում տարածված Մեծ Մոր պաշտամունքի հետ: Կարելի է հուսալ, որ խեթական մշակույթի տարածման բնատարածքում վերջին ժամանակներս հավաքած բոլոր նյութերի հրատարակությունը հնարավորություն կտա վերջնականապես որոշելու այդ հարաբերության բնույթը:

Իսկ առայժմ միայն կարելի է ասել, որ ինչքան մոտենում ենք «հայերեն խոսքի» արևելյան եզրին, այնքան ավելի անպաճույճ է Վարդևորի տոնակատարությունը:

⁴⁵ Այդպես էր Ավետարանոց գյուղում, որտեղ այս նկարագրության համար նյութ են տվել ծերունի Գալուստ Հայրապետյանը և տեղացի ուսուցչուհի Մարո Բաղդասարյանը: Սոս գյուղում աղբյուրի մոտ տանում էին ոչ թե ծաղկեփունջ, այլ խնձոր, տանձ, վարունգ, ուրիշ թարմ մրգեր, որոնց մեջ ծաղիկներ էին խրում, աղբյուրում դրանք թրջում էին և իրար ջրում



Օգոստոսի կեսերին՝ 15-ին կամ 16-ին, Վերափոխման օրը, կատարվում էր խաղողի (երբեմն նաև այլ մրգերի) ու ցորենի օրհնումը եկեղեցում: Հենց տեղում խաղողը բաժանում էին ժողովրդին, իսկ ցորենը բերում էին տուն և շտեմարանում խառնում նոր բերքի այն մասին, որն առանձնացված էր՝ որպես սերմացու: Դա, ըստ ժողովրդական հավատալիքի, խիստ բարձրացնում էր բերքատվությունը (Վաղուհաս):

Ես գիտակցորեն փոքր-ինչ հանգամանալից կանգ առա տոների նկարագրության վրա: Դրանցում ավելի ցայտունորեն է դրսևորվում ժողովրդական հավատալիքների հանուր ամբողջությունը, և ավելի հստակ են ուրվագծվում դրանց վերապրուկների հիմնական տարրերը:

ՀԻՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Լեռնային Ղարաբաղում դեռ խորհրդային շինարարությունն սկսվելուց շատ առաջ, կապված տնտեսական ու մշակութային պայմանների փոփոխության հետ, սկսել էին մոռացվել և այլափոխվել հին, նախնիներից ժառանգած հավատալիքները: Սոցիալական հին փոխհարաբերությունների քայքայմանը զուգընթաց, որոշ դեպքերում նաև ավելի վաղ, քայքայվում էր կրոնական հայացքների աշխարհը: Տակավին 30 տարի առաջ, երբ Ե. Լալայանը հավաքում էր Վարանդային վերաբերող նյութեր, ինչպես ծերունիների, այնպես էլ երիտասարդների մեծ մասի հիշողության մեջ բավական կենդանի էին այս հայացքներից ու սովորույթներից շատերը: Իսկ մեր հետազոտության ժամանակ ստիպված էինք լինում դիմել գրեթե բացառապես ծերունիներին, քանի որ երիտասարդությունը չգիտեր տեղի անցյալի շատ սովորույթներ կամ էլ գիտեր կցկտուր՝ միայն լսածի հիման վրա:

XX դ. սկզբի իրադարձություններն արագացրին սև հոգևորականության վերացման և սպիտակ հոգևորականության մտավոր ու բարոյական այլասերման պրոցեսը, ինչպես նաև ուժեղացրին քաղաքային մշակույթի ազդեցությունն ինչպես Շուշիի տնտեսական ու մշակութային դերի բարձրացման, այնպես էլ գյուղացիական զանգվածների ակտիվ տարրերի՝ Բաքվի և այլ արդյունաբերական ու առևտրական կենտրոնների կյանքին շփվելու միջոցով: Կազմավորվեցին նոր սոցիալական խավեր՝ որակապես նոր մտավորականությամբ: Նոր ազդեցությունն արտահայտվեց նախ և առաջ արտաքին պարագաներում՝ բնակարանի, կահ-կարասու, տարազի մեջ: Դրա հետ, ճիշտ է, ոչ այդչափ արագ, վերափոխվում էին դասային ու դասակարգային պատկերացումները և կրոնական հայացքները:

Հոկտեմբերյան հեղափոխության ծնած նոր գաղափարների ալիքը վճռական նշանակություն ունեցավ ավանդության աշխարհայեցողության քայքայման համար: Այն ներգրավեց եթե ոչ ողջ երիտասարդությանը, ապա, համենայն դեպս, նրա առավել ընդունակ և գործունյա մասը, որն առանձին դեպքերում շատ աշխուժորեն էր հանդես գալիս հնի վերապրուկների դեմ⁴⁶, բայց որը, անկասկած, այդ ճնշման ուժի շնորհիվ անմիջապես ողջ սրությամբ դրեց հին սովորույթների, եկեղեցական ավանդույթների ու ծեսերի կապանքներից շուտափույթ ազատվելու անհետաձգելի պահանջի հարցը: Դրան նախորդած տնտեսական քայքայումը մինչ այդ արդեն պարզեցրել էր ոչ միայն կանացի բարդ տարազը, այլև թաղման և բոլոր տեսակի թանկ նստող ծեսերը: Նոր հոսանքը ոչ միայն առաջ տարավ այդ արտաքին պարզեցումը՝ շատ դեպքերում հրաժարվելով եկեղեցու միջամտությանը դիմելու անհրաժեշտությունից, այլ նաև նպաստեց ողջ կրոնական աշխարհայեցողության ավելի խորը քայքայմանը: Շատ գյուղերում եկեղեցական ժամերգությունները բոլորովին

⁴⁶ Այսպես, Գանձասարի վանքի բարձունքին խարույկ էին վառել պաշտամունքի առարկա հանդիսացող խաչքարի տակ, որից այն ճաքել ու փլվել էր: Վանք գյուղից Վաղուհաս տանող ճանապարհին ցրել ու ջարդել էին արվեստի հոյակապ գործ խաչքարերի խումբը



դադարեցվեցին, մյուսներում եկեղեցին դարձավ սոսկ ծերերի այցելության վայրը: Քանի որ վերջին տարիներին չէր կատարվել եկեղեցական պսակի, կնունքի ու թաղման ճշգրիտ հաշվառում, ստիպված էինք տվյալներ հավաքել հարցումների միջոցով: Շատ գյուղերում 1924 թ. արդեն եղել էր երկուսից-հինգ (Սոս, Վանք, Հաղրութ), ամենաշատը 10 կնունք: ԶԱԳՍ-ում գրանցելուց հետո բնակչությունը կնունքը հետաձգում էր երկար ժամանակով, հետո էլ բոլորովին չէր կատարում: Ամուսնություններն ավելի հաճախ էին կատարվում առանց քահանայի մասնակցության: Սովորաբար եկեղեցական արարողություն պահանջողը հարսնացուն էր: Այդ տարի դեռևս շատ հազվադեպ էին թաղումը կատարում առանց քահանայի: Նույնիսկ կոմերիտիության անդամներին ծնողների պահանջով թաղում էին եկեղեցական ծիսակատարությամբ: Բայց եկեղեցական ծեսերի հետ կապված ծախսերը բոլոր դեպքերում հասցվել էին նվազագույնի⁴⁷:

Անշուշտ, գիտարշավային շտապ հետազոտման պայմաններում դժվար է թափանցել ժողովրդի հոգեբանության մեջ կատարվող փոփոխությունների էության խորքերը: Դրա համար անհրաժեշտ է երկար ժամանակ մնալ բնակչության տարբեր խավերի շրջանում: Այնուամենայնիվ, պարզորոշ զգացվում էր կրոնական բոլոր հայացքների հիմքերի լրիվ քայքայում: Քրիստոսի և սրբերի մասին եղած պատմություններն արդեն առասպել ու առակ են դարձել ոչ միայն երիտասարդության, այլև տարեց բնակչության շրջանում: Նրանց համար Ծննդյան, Զատկի, Համբարձման տոնակատարությունը կորցրել է կրոնական իմաստն ու բնույթը: Դա ավելի ուժգնորեն է դրսևորվում այն գյուղերում, որտեղ դարադամները փոխարինվել են վերգետնյա տներով, և որտեղ արդեն հասցրել են բույն դնել քաղաքային մշակույթի սովորությունների նոր պայմաններում ծնված նոր հայացքները:

Սակայն ժողովրդական հավատալիքներում տեղի ունեցող բեկումը բնութագրելու համար ավելորդ չէր լինի մեջ բերել այն հարցը, որ հարցազրույցի ընթացքում մեզ (ինձ և Գ. Ա. Քոչարյանին) տվեց 60-70 տարեկան միջակ տնտեսատեր մի գյուղացի.

« Այժմ ես կուզենայի ձեզ մի կարևոր հարց տալ: Բհարկե, եթե մեր կնանիք վազում են հեքիմների ու գրբացների մոտ կամ գնում են սուրփերի ու նահատակների մոտ, հիմարություն է: Հիվանդին ոչ մտմը կօգնի, ոչ ոչխարը: Տերտերի մի քանի աղոթք մրմնջալուց եկեղեցական պսակը ոչ ոքի երջանիկ չի դարձրել, իսկ եկեղեցական թաղումն էլ՝ բարեպաշտ: Եվ ինչու պետք է այն աշխարհում ներվեն այն մարդու մեղքերը, ում համար մենք տերտերի հետ այստեղ աղոթում կամ ժրմահաց ենք ուտում: Տերտերի աղոթքով ու խունկ ծխելով էլ հացը միս չի դառնա, ոչ էլ գինին՝ արյուն: Ո՞վ է հիմա հավատում այն ամենին, ինչ անում է դերը (տերտեր): Բայց ահա թե ինչ կուզենայի, որ ինձ ասեիք: Այժմ ամեն մեկն իր հողն ունի, և հաստատ գիտես, որ ոչ ոք այն չի խլի քեզնից: Խուլ անտառով գնում ես քեզ համար, ոչ ոք քեզ չի նեղացնում: Ձին դաշտում թողնում ես, ոչ ոք չի փախցնում, ոչ ոք թամբը չի թոցնում: Ամենուր կարգ ու կանոն է, օրենք: Իսկ ինչո՞ւ: Որովհետև կա խորհրդային իշխանություն: Նա էլ պահպանում է այդ կարգ ու կանոնը: Բայց ահա տեսեք՝ հիմա ամառ է, ու գիտես, որ ամռանը կհաջորդի աշունը, հետո էլ կգա ձմեռը: Հիմա արևը բարձրում կանգնած է, գիտես որ երեկոյան մայր կմտնի, առավոտյան նորից դուրս կգա և պայծառ կլուսավորի, որ հետո նորից մայր մտնի: Մերմ ես ցանում, ջրում, արևը տաքացնում է, գիտես, որ այն կծլի ու ծառ կդառնա, պտուղ կտա, որից դարձյալ ծառեր կաճեն, իսկ ինքը կմեռնի, տեղը կտա նոր սերնդին, ինչպես մենք ենք ապրել, երեխաներ ու թոռներ ունեցել, իսկ ինքներս կզնանք, նրանք էլ

⁴⁷1937 թ. արդեն եկեղեցական տոնակատարությունները, եկեղեցու մասնակցությունն ամուսնությանը կամ թաղմանը Լեռնային Ղարաբաղում գրեթե լիովին և ամենուր վերացել էր



կգնան՝ թողնելով իրենց երեխաներին: Կարո՞ղ եք ասել, այս կարգը մի՞թե իր իշխանությունը չունի: Մի՞թե այս կարգի թիկունքում չի կանգնած իր խորհրդային իշխանությունը»:

Նման հարց տվել էր դրանից երկու շաբաթ առաջ Գյունե Ճարտար ուղեկցող, Բաքվի գործարանում աշխատող 35-ամյա փականագործը:

Պատահում էր, իհարկե, խոսում էինք բնության կյանքի, այն ղեկավարող օրենքների մասին, ողջ շրջապատող բնության գաղտնիքներն ավելի ու ավելի բացահայտող գիտության ուժի և այլնի մասին, մեզ ուղղված հարցն ինքին, սակայն, ցույց էր տալիս որոշակի տանջալից որոնումների առկայությունը, որոնց շտապ կերպով պետք է ընդառաջ գնալ գիտական գիտելիքների լայն տարածման միջոցով:

Այս որոնումների և ավելի ու ավելի աճող կրոնական սկեպտիցիզմի, աթեիզմի հետ մեկտեղ շարունակում են իրենց գոյությունը պահպանել հեթանոսական բնույթի ամենագեղեցիկ սովորույթները: Ես տեսել եմ, թե ինչպես ուխտավորները սայլերով, ձիով ու ոտքով ձգվում էին դեպի սուրբ Շահախ՝ Ծամձոր ու Սարգինշեն գյուղերի միջև: Այստեղ կային ամեն տարիքի մարդիկ: Երիտասարդ միլիցիոներները հաջորդ օրն ինձ պատմում էին, թե որքան հետաքրքիր ժամանակ էին անց կացրել այնտեղ: Ինձ պատմեցին, թե Ղոնդիկի մոտ *Վարթեղվժրիի* օրը որքան ժողովուրդ կար: Ամենուր *սծրի* ու *նրհատակներում* տեսա նոր վառած մոմեր: Տարբեր շրջաններում ու գյուղերում ճամփորդելիս ավելի ու ավելի էի համոզվում, որ այն տարրերից, որոնք դարերի ընթացքում կարծես օրգանապես միաձուլվել են, Լեոնային Ղարաբաղի հայերի նահանջող կրոնական գիտակցության մեջ քրիստոնեական տարրը եղավ նվազ կայունը սոցիալիստական հեղաշրջող հարձակման հետ բախվելիս, քան ավելի հնագույնը՝ հեթանոսականը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԼԵՁՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Լեզու: Չնայած Ղարաբաղի հայերի բարբառով հրատարակվել են մի շարք ժողովրդական հեքիաթներ ու արձակ պատմվածքներ, սակայն մինչև այժմ դեռևս չի հավաքված ողջ լեզվական նյութը, և փորձեր չեն արված որոշելու բարբառի լեզվակազմը՝ դրանում պահպանված էթնիկական շերտավորումների բացահայտման նպատակով¹: Այս բարբառի բավական մեծ թվով բառեր տեղ են գտել Հր. Աճառյանի «*Հայերեն գավառական բառարան*»-ում: Նա էլ կազմել է այս բարբառի համառոտ քերականությունը, որը լույս է տեսել առանձին գրքույկով: Հեղինակը մտադիր էր արմատապես վերանայել վերջին հետազոտությունը: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ աշխատանքում, սակայն, չեն զբաղվել այն տարրերի հետազոտության հարցով, որոնցից կազմվել է այդ բարբառը:

Համենայն դեպս, կասկածից վեր է, որ այն պետք է դասել հայ բարբառների արևելյան խմբին, որը ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում է ներկա դերբայի և օժանդակ բայի համապատասխան ձևերի օգնությամբ: Այդ դերբայը Դիզակի շրջանի Առաքյուլի տեղամասում ունի *իս, աս* (կրիմ իս), իսկ բոլոր հյուսիսային շրջաններում՝ *-ըմ* (տըսնաս ըմ) վերջավորությունը, սակայն, ի տարբերություն այդ խմբի բարբառների մեծ մասի, Ղարաբաղի բարբառում բացառական հոլովը կազմվում է ոչ թե *ից*, այլ *ան* (հօրան, մօրան, փոխանակ՝ հօրից, մօրից) վերջավորությամբ:

¹ Այս բացը մասամբ լրացվել է Կ. Ս. Դավթյանի «Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» (Երևան, 1966) աշխատության, ինչպես նաև Լեոնային Ղարաբաղի հեքիաթների (տե՛ս *Հայ ժողովրդական հեքիաթներ*, V-VII, Երևան, 1966-1979) և «Լեոնային Ղարաբաղի բանահյուսությունը» ((կազմող՝ Մ. Գրիգորյան), Երևան, 1971) աշխատության հրատարակությամբ (ծանոթ. խմբ.):



Կարևոր հնչյունային առանձնահատկություններից նշենք բառասկզբի հնչեղ բաղաձայնների իլլացումը՝ կրբել, կինի, կրլծի, տո՛ւ, ծի, փոխանակ՝ գրել, գինի, գլուխ, դու, ձի, ինչպես նաև ու ձայնավորը օ-ով փոխարինելու միտումը՝ օնի, փոխանակ՝ ունի, թօր, փոխանակ՝ թուր, շօր, փոխանակ՝ շուր, տօն, փոխանակ՝ տուն: Չի կարելի չնշել, վերջապես, բաց ձայնավորը լարված արտաբերելու ընդհանուր միտումը, որը հիշեցնում է գերմաներեն Սmlaut-ը: Այսպես, ա, ու, օ, ո ն ձայնավորները հաճախ հնչվում են Սmlaut-ով՝ ււ, ու, օ: Օրինակ՝ կււս, լււկ, հօլ, փոխանակ՝ գաս, լավ, ուլ, կամ էլ դրանք իլլացնելու միտումը, որը հանգեցնում է ը հնչյունի՝ սախարւ, ըս, ընք, հրտանալ²: Ղարաբաղի բարբառի հնչյունական որոշ երևույթներ երբեմն վերագրվում են թուրքական լեզուների ազդեցությանը, սակայն մեծաթիվ արձանագրություններում պահպանված տեղական բարբառի հին ձևերի մնացորդները հետազոտված չլինելու պատճառով դեռևս դժվար է լիակատար վճռականությամբ խոսել այդ ազդեցության մասին, առավել ևս, որ այդ բարբառը ներթափանցել են զգալիորեն ավելի քիչ թվով բառեր ու դարձվածքներ, քան, ասենք, Երևանի խմբի Քանաքեռի բարբառը, ինչպես այն ներկայացված է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում, որտեղ թուրքերենից փոխառյալ բառերի այդ առատությունն ամենևին հաշվի չի նստում հայերեն բառերի հնչյունային առանձնահատկությունների փոփոխման հետ: Կան բազմաթիվ տվյալներ, որոնք վկայում են, որ տակավին V-VI դդ. Հայաստանի արևելյան գավառներում խոսել են գրական գրաբարից զգալիորեն տարբերվող տեղական բարբառներով³:

Երածշտույթուն: Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդական պոեզիան աչքի չի ընկնում հարստությամբ: Գյուղերում կան շատ գուսաններ (աշուղներ), որոնք համախմբված են գործում և կազմում են արհեստավորական միություններ հիշեցնող խմբավորումներ, որոնք ունեն միմյանց շահերը (այրիներին, որբերին) պաշտպանելու բարոյական պարտականություններ: Այսպես, Թաղլար գյուղում գուսան Ռուստամը, Սարգիս Ղզղալեցին, Գրիգոր Գալոյանը, Գլանցը և ուրիշները կարծես մի ընտանիք էին կազմում, նրանք «եղբայրներ» էին միմյանց համար, միասին էին ոտանավորներ հորինում և միմյանց օգնում էին ոչ միայն բարոյապես, այլև նյութապես: Գուսանների թիվը հետզհետե նվազում է: Մահացածների փոխարեն նորերը հանդես չեն գալիս: Լեռնային Ղարաբաղ երգիչներ են գալիս հարևան Չանգեզուրից, հատկապես Խնձորեսկ գյուղից, որը գուսաններ է մատակարարում ոչ միայն Ղարաբաղին, այլև Գյանջային, Նոր Բայազետին և նույնիսկ Երևանին:

Կատարվում է նաև որակական ձևափոխություն: Ավելի ու ավելի քիչ են հանդիպում վարպետ-գուսաններ, որոնք տոն օրերին գյուղերում հրապարակային ելույթներ էին ունենում, առավելապես դաշտային աշխատանքներից առաջ և հետո: Երբեմն այստեղ անց է կացվում երկու գուսանների մրցություն, որոնք պետք է ցուցադրեն հանպատրաստից ստեղծագործելու՝ երգելու և նվագելու հմտություն: Ներկայումս գերակշռում են «աղբատ» գուսանները, որոնք, գյուղից գյուղ շրջելով, երգում են բակերում, իսկ կալոցի ժամանակ՝ նաև կալերում: Ամռանը նրանք նաև սար են գնում՝ յուղ ու պանիր հավաքելու: Ընդհանրապես գուսանները վարձատրվում են մթերքներով՝ ցորեն, ալյուր, պանիր, յուղ:

Նրանք մինչև այժմ շարունակում են երգել առավելապես աղբեջաններեն: Բացի փոքր քառյակներից, չորս լարանի սազի նվագակցությամբ հեքիաթներ են պատմում և պոեմներ երգում Քյոռսուղլու, Քյարամի, Աշուղ Ղարիբի մասին՝ պատմությունն ընդմիջարկելով պարեղանակներով

² Առաքյուլի խոսվածքում անձնական դերանվան հոգնակի թվի առաջին դեմքն է՝ մուք, իսկ հյուսիսային շրջաններում՝ մունք: Առաքյուլի խոսվածքն ավելի մոտ է Չանգեզուրի բարբառին

³ Տե՛ս T. Marquart, *Eransahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci*, Berlin, 1901, էջ 121



ու պարերով: Առաջներում ունկնդիրների հետաքրքրությունը շարժում էին Աստվածաշնչի ավանդագրույցները, որոնք հաճախ երգվում էին հայերեն, սակայն այժմ դրանց սիրահարները գրեթե վերացել են: Մինչդեռ Շիրակում (Լենինական) անցյալ դարի կեսերին գուսաններն անցել են հայերենի, Լեռնային Ղարաբաղում այդ անցումը նոր է կատարվում: Բնորոշ է նաև մեկ այլ տարբերություն: Շիրակում լայն բանաստեղծական ստեղծագործություն գոյություն ունի գուսաններից անկախ, հենց ժողովրդի մեջ: Այստեղ հորինողները հաճախ անհայտ մարդիկ են: Համաժողովրդական զանգվածային ստեղծագործության նման դրսևորում Լեռնային Ղարաբաղում գրեթե չկա: Ապշեցուցիչ փաստ է, որ չկա տեղական հերոսավեպ, չկա տեղի հերոսների գովերգում, թեպետ դարաբաղու կյանքն անց է կացել մշտական համառ, կազմակերպված պայքարի պայմաններում, որը հերոսներ է ծնել ոչ միայն մելիքների, այլև ժողովրդական զանգվածների միջավայրից: «*Զինված հայրենասիրության*» վերջին տասնամյակների իրադարձությունները, որոնք մյուս գավառներում երգերի հոսք առաջացրին Անդրանիկի, խանասորցիների, սասունցիների, զեյթունցիների և ուրիշների մասին (այս երգերը հայտնի են «*Արյան երգեր*» անվանմամբ), նույնպես չեն արտացոլվել Ղարաբաղի երգում:

Այստեղ թույլ է արտահայտված եղել նաև հայերեն գուտ քնարական ստեղծագործությունը՝ սիրահարական և ընտանեկան բնույթի երգերի տեսքով: Երկար ու ձիգ երեկոներին ու գիշերները Ղարաբաղի գյուղը լուռ է: Ոչ մի տեղ, ոչ մի բակից, այգուց կամ փողոցից չի լսվում ոչ միայնակ, ոչ խմբական երգ: «*Կնոջ ձայնը չպետք է լսվի*» նահապետական այս սկզբունքը պինդ փականք է դրել դարաբաղցի կնոջ բերանին:

Նա չի երգել ոչ սիրելիս, ոչ օրորոցի, ոչ ճախարակի մոտ, ավելի շուտ ինչ-որ եղանակ է մոռնացել՝ առանց բառերի: Ամուսնու՝ քաղաք գնալուց հետո երբեմն, երկար ժամանակ մնալով մենակ, նա իր թախիծն ու տրտունջը երգով չի արտահայտել: Ընտանիքում ճնշված՝ իր վշտի մասին նա չի երգել ո՛չ տանը, ո՛չ ընկերուհու, ո՛չ էլ աղբյուրի մոտ: Ոչ մի տեղ չես հանդիպի դաշտից երգով տուն դարձող տղաների ու աղջիկների խմբերի:

Լեռնային Ղարաբաղում երգում է ոչ թե կինը, այլ տղամարդը, այն էլ ոչ թե գյուղում, այլ գյուղից դուրս՝ դաշտում կամ որևէ բլրի վրա, ընդ որում, ոչ թե հայկական, այլ թուրքական երգ՝ բայաթի, որը թուրքերը փոխ են առել պարսիկներից ու արաբներից (բեյթ):

Նրան հայերեն երգելիս կտեսնես արորի հետևից գնալիս կամ շատ սակավ՝ կալում: Հարսանիքներում նույնպես իշխում է դարձյալ հաճախ պարսկական կամ արաբական ծագում ունեցող թուրքերեն մեներգը: Խմբերգ չկա (չկա նաև ոչ մի ժողովրդական սեղանի երգ)⁴: Հայոց լեզվով հայկական ժողովրդական երգի այս բացակայությամբ չպետք է արդյոք բացատրել այն, որ անցյալում Լեռնային Ղարաբաղը չի տվել ոչ մի նշանավոր երգչի, ինչպիսին Մայաթ Նովան է⁵:

Ղարաբաղի ժողովրդական արձակ խոսքն աչքի է ընկնում գունեղությամբ, դիպուկությամբ, պայծառությամբ: Իգուր չէ, որ այնտեղ զարգացել է անեկդոտը, որի ծաղկումը կապվում է հայտնի գվարճախոս Պրլը-Պուղու անվան հետ:

Դրա փոխարեն դարաբաղցին կարծես ամբողջովին գտնվում է սազի, իսկ այժմ էլ բազմադիր թառի իշխանության ներքո, որը գրեթե վերջնականապես դուրս է մղել սազին: Ղարաբաղցու տանը միշտ զենքի կողքին կախված է եղել սազը կամ թառը: Որոշ ընտանիքներ (Նոր Շենում՝ Մայի բեկի

⁴ Դպրոցի միջոցով և դրսից սկսել են տարածվել հայկական նոր երգեր, բայց դրանք դեռևս թույլ են թափանցում ժողովրդի մեջ
⁵ Հեղինակի գրեթե ժխտողական վերաբերմունքը դարաբաղցիների ժողովրդական բանաստեղծության նկատմամբ այնքան էլ արդարացի չէ: Վերջին տասնամյակներում բանագիտական մանրագնին պրպտումներով հայտնաբերվել են բավականաչափ քնարական, աշխատանքային և այլ բնույթի երգեր, որոնց մի մասն արդեն հրապարակվել է բանահյուսական ժողովածուներում (ծանոթ. խմբ.)



ընտանիքը) հայտնի են նրանով, որ սերնդից սերունդ փոխանցում են սազ նվագելու վարպետությունը: Նվագն այստեղ սրբագործություն է: Գերակշռում են պարսկական մեղեդիները, երաժշտության գիտակները հավաստում են, որ Ղարաբաղի մեկնաբանությունն ունի բնորոշ առանձնահատկություններ, որոնք որոշակիորեն տարբերվում են պարսկականից ու թուրքականից: Լեռնային Ղարաբաղում երիտասարդության ռիթմի զգացումը զարգանում է ոչ այնքան բանաստեղծական երգի, մասնավորապես հայկականի, չափի, որքան երաժշտության տակտի բարդ ամանակի հիման վրա:

Ներկայումս Բաքվում, Թիֆլիսում, Երևանում և ողջ Անդրկովկասում տեղական կովկասյան երաժշտության և հատկապես թառի հանդեպ հետաքրքրությունն ուժեղանալու հետ մեկտեղ Լեռնային Ղարաբաղում ևս ավելի ու ավելի են հրապուրվում թառով: Բայց նոր հոսանքը ստիպված է պայքարել Արևելքի հետևողական-դասական երաժշտության մեջ ներխուժող օպերետային ու փողոցային մեղեդիների գոեհիկ ազդեցության դեմ:

Ջութնա-թմբլա-թմբուկը հիրավի կատարյալ ժողովրդական նվագախումբ է. հարսանիքներում, խնջույքներում, ժողովրդական զվարճություններին, սրբավայրում, ամենուր տարածվում են նրա հնչյունները: Բայց գութնայի մեղեդիներն ու թմբլայի երկու փայտիկների հարվածների ռիթմը մինչև օրս քիչ են ուսումնասիրված, և չի պարզված մի կողմից՝ թե ինչ հարաբերության մեջ են գտնվում Հայաստանի տարբեր շրջանների գութնայի մեղեդիների և, մյուս կողմից՝ թե ինչպիսին է Հայաստանի գութնա-թմբլայի և հարևան երկրների համանման գործիքների ու մեղեդիների փոխհարաբերությունը: Սակայն գութնա-թմբլան ևս գայթակղվում է եվրոպական պոլկաներով, վալսերով, մագուրկաներով, հեռանում են դարերով ժառանգաբար անցած ավանդույթներից:

Ծերերը պատմում են, որ երիտասարդ տարիքում վայելել են իրենց ընկերներից շատերի հմուտ շվի նվագելու հաճույքը: Շվին արդեն անհետանում է:

Պարերը: Մինչդեռ մյուս հայկական շրջաններում ու վրացական գյուղերում մշտապես կարելի է տեսնել կտուրներին, բակերում և այլուր պարող երեխաների, տղաների ու աղջիկների խմբեր, Լեռնային Ղարաբաղում նման բան չի եղել: Այստեղ պարում են միայն իրենց բակում, կարծես գաղտնի, երեխաները մեծանալով ավելի գուսպ են դառնում և պարում են միայն հարսանիքներին ու ընտանեկան տոներին, սրբավայրում, հատկապես Վարդևորի տոնի ժամանակ:

Ծամձորի բնակիչների վկայությամբ՝ հնում իրենք ունեցել են խմբական շուրջպարեր՝ առանց երգի, գործիքային երաժշտության նվագակցությամբ: Այժմ դրանք համատարած կերպով վերացել են, պարում են մենակ կամ երկուսով, վերջին դեպքում կինը պարում է իրեն քիչ թե շատ մոտ մարդու հետ: Պարերը դանդաղ են՝ ձեռքերի, ուսերի, գլխի ու մարմնի այլ մասերի բարդ շարժումներով: Տղամարդիկ պագուկի չեն պարում, չկան թռիչքներ ու բացականչություններ: Ընդհանրապես ընդունված է, որ պարի կինը, ոչ թե տղամարդը, ընդ որում, համեմատաբար երիտասարդ, չամուսնացած կինը. 30-35 տարեկան կինն ամաչում է պարելուց:

Քաղաքի ազդեցությունը զգալի է նաև այստեղ. քաղաքից վերադարձող աշակերտն ու աշակերտուհին, ուսանողն ու ուսանողուհին, երիտասարդ բանվորներն ու արհեստավորները գութնա-թմբլայի հնչյունների տակ պարում են պոլկա, վալս կամ մագուրկա: Իսկ տեղի գեղջկուհին հավատարիմ է մնում իր հին պարերին:

Լեռնային Ղարաբաղում մեր գիտարշավի կատարած հետազոտությունից անցել է տասնամյակից մի փոքր ավելի: Այն ժամանակ դեռ թարմ էին մարզի տնտեսական ու մշակութային կյանքին ազգամիջյան թշնամանքի հասցրած վերքերը, թշնամանք, որ վերջին հարյուրամյակի ընթացքում



հրահրում էր ցարական իշխանությունը ցարիզմի դեմ հայ ու ադրբեջանցի աշխատավորների միացյալ ելույթները կանխելու նպատակով: Այն դաժանորեն օգտագործվեց համաշխարհային պատերազմի ժամանակ ու փետրվարյան հեղափոխությունից հետո կալվածատիրական ու կապիտալիստական խավերի կողմից հայ դաշնակցական ու ադրբեջանցի մուսավաթական կուսակցությունների միջոցով՝ ժողովրդական զանգվածներին շահագործելու նրանց մրցակցության մեջ: 1920-ական թվականների կեսերին ամեն գյուղում կային քանդված կտուրներով, դուրս ընկած դռներով ու պատուհաններով տներ, իսկ նախկին վարչական կենտրոն Շուշի քաղաքում, որտեղ առաջվա 25 հազարանոց բնակչության փոխարեն փոխադարձ ջարդից հետո մնացել էր հազիվ մի հինգ հազար մարդ, անցորդի քայլերն արձագանք էին տալիս ամայի փողոցներում ու կմախք-տների հրդեհից սևացած պատերի մեջ, որոնց պատուհան-աչքերից ներս էին սահում մայր մտնող արևի շեղակի ճառագայթները: Ամեն ընտանիքում, լինել ադրբեջանցու, թե հայի, տակավին կենդանի էր որևէ անդամի՝ եղբայրական երկու ժողովուրդների զինված ընդհարումների զոհերի կորստի վիշտը: Բնակչության մեկ հինգերորդից ավելին զոհվել էր գնդակներից, հրդեհներից, քաղցից ու հիվանդություններից: Գյուղերի մոտերքի անմատչելի լեռնային կարկառներում դեռ պահպանվել են դիրքերն ամրացնելու համար այստեղ հապճեպ փորված խրամատներն ու քարակույտերը: Երկրամասի գյուղատնտեսության, արդյունաբերության, մշակույթի բոլոր բնագավառներում խորհրդային շինարարության ֆոնի վրա դեռ ցայտուն հակադրություն էին կազմում այդ տարիների ավերածությունների հետքերը:

Առաջինը, ինչով նշանավորվեց 1920թ. մայիսին կարմիր բանակի մուտքը Լեռնային Ղարաբաղ, եղավ տեղի բոլոր ազգությունների միջև եղբայրական փոխհարաբերությունների և ընդհանուր անվտանգության ու խաղաղության հաստատումը: Կարճ ժամանակում հաղթահարվեցին ազգամիջյան երկպառակության ծանր ապրումները, և աշխատավոր հայերն ու ադրբեջանցիները միահամուռ ջանքերով, բարձր ոգևորությամբ ձեռնամուխ եղան նոր կյանքի կառուցմանը: Վերջ տրվեցին ոչ միայն ազգային թշնամանքի առանձին արտահայտություններին, այլև ելուզակության այն հաճախակի դեպքերին, որոնց դեմ ցարական կառավարչությունն անօգուտ պայքարում էր ռուսական իշխանության հաստատման օրից՝ ի վիճակի չլինելով ելուզակների հրոսակախմբերի հարձակումներից պաշտպանելու նույնիսկ ամենակարևոր՝ Շուշի-Եվլախ մայրուղին:

Երկրամասի բոլոր անկյուններում մեր գիտարշավի ժամանակ արդեն բնակչությունը հպարտությամբ և գոհունակությամբ էր խոսում մինչ այդ երբեք չտեսնված խաղաղ օրերի և լիակատար անվտանգության վերջնական հաստատման մասին:

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ խորհուրդները ներգրավվեցին Հոկտեմբերյան հեղափոխության մեծագույն սկզբունքների ակտիվ իրագործման մեջ: Այս աշխատանքը ծավալվում էր տեղի բնական ռեսուրսների ուսումնասիրության հետ սերտ կապի պայմաններում:

Մարզի բնակչության թիվը 1937թ. կեսերին արդեն կազմում էր ավելի քան 149 հազար մարդ (89% հայեր, 10,1% ադրբեջանցիներ, 0,9% ռուսներ, հույներ և այլք): Բնակչությունը տեղաբնակված էր հինգ շրջանում՝ Ստեփանակերտի, Շուշիի, Մարտակերտի (նախկին Ջրաբերդի), Մարտունու (նախկին Վարանդայի) և Հաղրութի (նախկին Դիզակի): Գյուղական բնակչության խտությամբ (մեկ քառ. կմ. ավելի քան 36 մարդ) Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանում պետք է առաջին տեղը հատկացնել: Մակայն հողով ապահովված լինելու առումով մարզը հանրապետությունում գրավում է վերջին տեղերից մեկը, քանի որ 4456 քառ. կմ ընդհանուր տարածությունից վարելահողերը կազմում են հազիվ 1/4 մասը: Իսկ տարածության մնացած 3/4-ը պատված է սարերով ու անտառներով: «Մակավահողությամբ կաշկանդված գյուղացին օգտագործում է հողի յուրաքանչյուր կտո-



որը՝ հերկած դաշտերն այստեղ կուչ են գալիս լեռների լանջին, սահում բլուրներն ի վար, թաքնվում քարաշարքերում, որտեղ գեթ մի փոքր հող կա և այլն»⁶: Նման պայմաններում հողի մշակումը շատ ավելի մեծ աշխատանք է պահանջում՝ որոշ դժվարամատչելի վայրերում ստիպված են հողը փորել ոչ թե ծանր արորով, այլ պարզապես բահով: Խորհրդային իշխանության տարիներին, հատկապես կոլտնտեսային շարժման ծավալումից ու մանր տնտեսությունները խոշորների մեջ միավորելուց հետո գյուղացուն օգնության հասավ գյուղատնտեսական մեքենան: Մեքենայացումն ընդգրկել էր գյուղացիական աշխատանքի 20 տոկոսը, իսկ երրորդ հնգամյակի վերջին այդ ընդգրկումը կհասցվի 60 տոկոսի: Միաժամանակ քայլեր են արվում ջրովի հողերի մակերեսի մեծացման ուղղությամբ, որոնք 1924թ. 11000 հեկտարից հասցվել են 14000-ի: Կառուցվող Թարթարգետի և մյուս գետերի ջրերի էներգիայի օգտագործման միջոցով այդ մակերեսը կրկնակի կմեծանա: 1913թ. 36 հազ. հեկտարից այժմ ողջ ցանքատարածությունը հասել է 79,9 հազարի, իսկ երրորդ հնգամյակի վերջին այն կհասցվի 85000 հեկտարի: Ներդրվում է գիտական ագրոտեխնիկա, բարելավվում է սերմացու ցորենի որակը և հողի մշակման տեխնիկան, որի հետևանքով բերքատվությունը բարձրացել է մեկուկես-երկու անգամ: Ցածրադիր վայրերում ընդլայնվել է բամբակի դաշտերի մակերեսը (Մարտակերտի շրջան, որտեղ կան և կաուչուկատու բույսեր), կերային մշակույթներինը՝ բարձրադիր գոտում: Բարենպաստ կերային բազա է ստեղծվել անասնապահության զարգացման համար, որը լայնատարած արոտավայրերի առկայության շնորհիվ համարվում է մարզի գյուղատնտեսության զարգացման առաջատար ճյուղը: Արգելվում է ձմռանը և վաղ գարնանն անասունների արածեցումն անտառում շիվերով ու մատողաշ ճյուղերով: Անասուններն արդեն գրեթե լիովին ապահովվում են տեղական կերի պաշարով: Անասունների ընդհանուր գլխաքանակն ավելացել է երկու, իսկ որոշ տեսակներինը (ձիեր)՝ երեք և նույնիսկ 12 անգամ (խոզեր): Նոր գոմերի շինարարության շնորհիվ բարելավվել է մուրային խնամքը: Լավանում է անասունների ցեղատեսակը: Կա յուղի ու պանրի արտադրության մոտ տասը ոչ մեծ գործարան: Այժմ մարզում կա 157 կաթնապրանքային, 97 խոզաբուծական, 94 ոչխարաբուծական, 54 ձիաբուծական և 2 ջորեբուծական ֆերմա:

Քաղաքական ավերածության շրջանում գործարանային կենտրոններից կտրված լինելու և մետաքսի ու սպիրտի արտահանումը գրեթե լիովին դադարեցնելու հետևանքով պտղատու և խաղողի այգիներն ու թթաստանները հիմնականում թողնվել էին անխնամ, երբեմն դրանք կտրում էին ու հատկացնում հացահատիկային մշակույթների ու բանջարանոցների: Դրանց վերականգնումը, որը խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին համեմատաբար դանդաղ էր ընթանում, վերջին տարիներին կուսակցության ու կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ զգալիորեն արագացել է: 1937թ. փետրվարին հրավիրված առաջավոր այգեգործների խորհրդակցությունն ամփոփեց այդ ուղղությամբ տարվող բոլոր աշխատանքները և նշեց հետագա զարգացման ուղիները: Այսպիսով, ամրապնդվում է տեղական արդյունաբերության արդեն գոյություն ունեցող կարևոր ճյուղերի՝ օղեթորման և մետաքսի հումքի բազան, որոնք առավել կարևոր են մարզի համար, քանի որ տարածված են խիստ սակավահող շրջաններում և նեցուկ են երկրագործությանը: Թե՛ մեկ, թե՛ մյուս բնագավառը հսկայական վնաս է կրել համաշխարհային և հատկապես քաղաքացիական պատերազմի տարիներին: Օղեթորումը, որը գրեթե բացառապես կատարվում էր թիֆի և ոչ մեծ քանակությամբ՝ խաղողահյութը հեռացնելուց

⁶ Գ. Ա. Քոչարյան, *Լեռնային Ղարաբաղ, Բաքու, 1925*

⁷ Կոլտնտեսությունների մեջ ընդգրկվել է գյուղացիական տնտեսությունների 88 տոկոսը: Շատ գյուղերում կատարվել է համատարած կոլեկտիվացում



հետո գոյացած խաղողի կնճեռից, այժմ էլ հիմնականում տնայնագործական բնույթ է կրում՝ թթաստան կամ այգի ունեցող յուրաքանչյուր տնտեսատեր (որոնց թիվը 1924թ. հասնում էր 300-500) այժմ էլ երբեմն իր թույթը և կնճեռն ինքն է թորում: Կոլտնտեսություններում արդեն կատարվում է համատեղ օղեթորում, և ստեղծվել է երկու կրկնագուման և մեկ գինե-օղե-լիմոնադի գործարան, որոնք միավորված են Ղարաբաղի սովխոտրեստի ցանցում, որը նպատակ ունի բարձրացնելու ինչպես արտադրանքի որակն ու ավելացնելու քանակը, այնպես էլ վերացնելու այս արտադրաձյուղում աշխատավորների վաստակն իջեցնող բոլոր պայմանները⁸:

1936թ. մարգում, բացի 590 հազ. լիտր գինուց, 900 հազ. լիտր մաքուր օղուց, 55 հազ. լիտր կոնյակից, արտադրվել է 210,6 հազ. լիտր բացարձակ աստիճանի կոնյակի սպիրտ, 3607 հազ. լիտր բացարձակ աստիճանի թթի կրկնաթոր սպիրտ⁹՝ 1924 թվականի երեք միլ. լիտր աստիճանի ընդհանուր օղու դիմաց:

Մեծ նվաճումներ կան նաև շերամապահության և մետաքսի արտադրության բնագավառներում: Շերամապահներն ապահովվում են լավագույն շերամի սերմով: Բարելավվել է որդերի խնամքն ու կերակրումը: Շարք են մտնում շերամի խեղդման հատուկ կայաններ ու հարմարանքներ: Այս ուղղությամբ ևս շատ բան արվում է կոլտնտեսությունների միջոցով: Ստացվում է թե՛ քանակով, թե՛ որակով զգալիորեն ավելի բարձր արտադրանք: Մեկ տուփ շերամի սերմից ստացվող բոժոժի քանակը հասցվել է 46,6 կգ՝ նախապատերազմյան 18կգ փոխարեն, 1936թ. ստացվել է մեկ միլ. 113 հազ. ռուբլու արժողությամբ 128 հազ. կգ բոժոժ: 1936թ. փետրվարին տեղի ունեցած համագումարում շերամապահները մրցության հրավիրեցին հարևան Ադդամի շրջանին: Վերականգնվել են նախապատերազմյան շրջանի մետաքսամշակման և մետաքսամանման լավագույն ֆաբրիկաները, որոնց թիվն այն ժամանակ հասնում էր 30-ի, ինչպես և մանր, վատ կահավորվածները: Վերջիններիս սարքավորումը նորոգված է: Ներկայումս կա վեց մետաքսամշակման (դրանցից Ստեփանակերտինը, որը կառուցվել է խորհրդային իշխանության հաստատումից հետո, ունի օրինակելի սարքավորում), մեկ մետաքսամանման և մեկ մանածագործական ֆաբրիկա:

Մեծացվում են ռոռզման և էներգետիկ ռեսուրսները: Արդեն ավարտվում է 140 հազ. ձիաուժ ունեցող Թարթարգետի շինարարությունը: Կայանը հնարավորություն կտա ռոռզելու 9000 հա նոր հողեր: Ընդլայնվում է նաև մյուս գետերի ջրային հարստությունների շահագործումը ինչպես ռոռզման, այնպես էլ էներգետիկ նպատակներով¹⁰: Նախագծվել է խոշոր ջրամբարտակի կառուցումը Շուշիին մոտ Քարին տակ գետի վրա, որտեղ պետք է ստեղծվի խոշոր ջրամբար՝ դաշտերի ռոռզման և էներգիա ստանալու համար: Մաքրված են հին, թվով 80 քյահրիզներ (լեռնային խոր շերտերից ջրի արտաբերման խորշեր): Առաջիկա եռամսյակում նախագծված է տասը նոր քյահրիզի շինարարություն:

Անտառային զանգվածների զբաղեցրած տարածությունը և ծառատեսակների բնույթը ճշտորեն որոշելուց հետո ուժեղացվել է անտառահանդակների պահպանությունը, որոնք գրավում են մարզի ողջ տարածքի մեկ երրորդը, սկսվել է դրանց ռացիոնալ օգտագործումը: Դրան, անկասկած, խանգարում է անտառային ճանապարհների վատ վիճակը, իսկ երբեմն էլ՝ նույնիսկ լիակատար

⁸ Պատերազմից առաջ բնակչությունն օղու մեծ մասը ծանր պայմաններով վաճառում էր գնորդներին: Ղարաբաղի սովխոտրեստը գինու և սպիրտի արդյունաբերության կայուն հումքի բազա ստեղծելու նպատակով միավորում է երկու խաղողագործական, մեկ մեղվաբուծական և երեք կրմիրնացված սովխոտ 5898 հա ընդհանուր տարածությամբ

⁹ Арт. Аракелян, *Нагорный Карабах, „Советское краеведение„*, 1936, N10

¹⁰ Կարկար (Փարգար) գետը սնում է Ստեփանակերտի հիդրոէլեկտրակայանը: Յուրաքանչյուր շրջկենտրոնում կա ջերմաէլեկտրակայան



բացակայությունը: Անհրաժեշտ փայտանյութի մի զգալի մասը դեռևս ներմուծվում է դրսից՝ Միության հյուսիսային շրջաններից: Փայտամշակման արդյունագործությունը և հյուսածո իրերի արտադրությունը (տնային կահ-կարասի, թիեր, եղաններ, կամեր, սայլեր և այլն, զամբյուղներ, հացի ամբարներ, քթոցներ) կրում է դեռևս տնայնագործական բնույթ և շատ քիչ չափերով է շուկա հանվում՝ այն էլ տեղում կամ ցածրադիր անտառագուրկ վայրերում իրացվելու համար:

Չնայած Լեռնային Ղարաբաղում երկրաբանական-հետազոտական աշխատանքների համեմատաբար թույլ ծավալմանը՝ խորհրդային իշխանության հաստատումից առաջ և հետո այստեղ գրանցված է ավելի քան 850 հանքավայր, որոնցից շատերն ունեն պղնձի պարունակության բարձր տոկոս (դրանցից պետք է նշել Հասանրիսի հանքերը): Դրանց մի մասը գյուղացիները մշակել ու մշակում են տնայնագործական եղանակով: Դրանցից ոչ մեկը, նույնիսկ ամենախոշոր պոլիմետաղային խումբը՝ Մեհմանայի հանքավայրը, մինչև օրս ցույց չի տվել խոշոր արդյունաբերության կազմակերպմանը բավարարող պաշարներ: Հնարավոր է, որ ավելի մանրակրկիտ հետազոտությունն ի հայտ բերի այնպիսի հանքավայրեր, որոնց շահագործումը կարող է շահավետ լինել:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո ստեղծվել է կրի, աղյուսի, կղմինդրի, անտառանյութերի (Բաղարի փայտասղոցարան) և այլնի արտադրությամբ զբաղվող մանր գործարանների մի ամբողջ ցանց:

Մեծաքանակ հումքով հարուստ (բրդի, մետաքսի, կավի, փայտի, ծղոտի և այլն) Լեռնային Ղարաբաղում հնուց ի վեր զարգացած են եղել տնայնագործության զանազան ճյուղեր, որոնք շատ կենսունակ են մարզը խոշոր արդյունաբերական կենտրոններից հեռու գտնվելու և հաղորդակցման ուղիների բացակայության պատճառով: Գեղեցկությամբ ու դիմացկունությամբ հայտնի են առավելապես Ղարաբաղի գորգերը, ջեջիմները, խուրջիները, մափրաշները (անկողնակ) և այլն: XIX դարի երկրորդ կեսից այս արտադրանքը դարձավ լայն արտահանման առարկա: Խորհրդային իշխանության հաստատումից հետո ինչպես գորգագործության, այնպես էլ բրուտության, ատաղձագործության և տնայնագործության մյուս ճյուղերում տնայնագործ-մենատնտեսները սկսեցին միավորվել արդյունագործական արտելների մեջ, որոնք ընդգրկում են շուրջ 600 մարդ:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի ողջ տնտեսական կյանքում խորհրդային իշխանության հաստատումից հետո ընկած ժամանակաշրջանում արմատական տեղաշարժեր են կատարվել ոչ միայն արտադրության տեխնիկական կողմի, այլ նաև կազմակերպական կառուցվածքի մեջ, որը դրվել է սոցիալիստական հիմքերի վրա: Ընդ որում, խորհրդային շինարարությունը կենարար ներգործություն է ունեցել մարզի կյանքի ամենից ետ մնացող բնագավառներից մեկի՝ ճանապարհաշինության բարելավման վրա: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը մարզի միակ խճուղին Եվլախ-Շուշի-Գորիս ճանապարհն էր: Այն ժամանակ դեռ ավարտված չէր Ջրաբերդի շրջանից Կիրովաբադ տանող խճուղին: Գյուղերը միմյանց հետ կապված էին սայլուղիներով, լեռնային արահետներով, որոնցով դժվարությամբ էին անցնում ձիերն ու ջորիները: Գյուղխորհուրդների և հատկապես կոլտնտեսությունների միջոցով բնակչությանը ցույց տրվող աշխատանքային օգնության շնորհիվ համեմատաբար սահմանափակ բյուջետային հատկացումներով կառուցվում են շրջաններն ու գյուղերը միմյանց կապող հարմար ճանապարհներ: Սակայն մարզի խիստ լեռնային ռելիեֆը դյուրությամբ չի ենթարկվում ճանապարհաշինության վրա թափած ջանքերին: Մինչև օրս մարզային կենտրոնի՝ Ստեփանակերտի հաղորդակցումը շրջանների հետ դեռևս կատարվում է շրջանցիկ ուղիով՝ Աղդամի ցածրավայրի խճուղով: Այս հանգամանքն ազդում է հենց կենտրոնի զարգացման տեմպերի վրա: Ստեփանակերտն ավելի շատ վարչական



ու մշակութային կենտրոն է և դժվարությամբ է դառնում առևտրական ու արդյունաբերական կենտրոն: Բնակչությունը, Ադդամի հետ համեմատած, դանդաղ է աճում. 19 տարվա ընթացքում այն հասել է միայն 7,5 հազ. մարդու: Ուղիղ Ստեփանակերտ տանող կարճ ու հարմար ճանապարհների բացակայության պատճառով շրջանները ձգտում են դեպի Ադդամ, քանի որ դեպի այնտեղ են ձգվում նրանց գետահովիտները:

Վերափոխվել է մարզի ողջ մշակութային դեմքը: Ստեփանակերտը հոյակապ պլանավորված, ասֆալտապատ, կանաչապատ, էլեկտրիֆիկացված քաղաք է: Գյուղերում բնակչությունը շտապում է դուրս գալ ազատ, ընդարձակ տարածություն, և առաջվա ծխից սևացած, լույսի ու ծխի համար առաստաղում բացած անցքերով գետնափորի ու *դարադամների* փոխարեն տենդորեն կառուցում են երկհարկանի տներ՝ կողային պատերում բացված պատուհաններով (Խանաբադում, օրինակ, մի տարվա ընթացքում կոլտնտեսականները կառուցել են 11 տուն):

Գյուղխորհրդի բաժինները տարեցտարի հասնում են այն բանին, որ փողոցները պլանավորվեն ուղիղ և պահվեն մաքուր վիճակում: Գյուղերից դուրս է բերված դարավոր աղբը: Կառուցվել են բաղնիքներ: Ոչ միայն հիմնական կենտրոնները, այլև շատ գյուղեր ունեն հեռախոսային կապ: Շրջկենտրոնից շատ հեռու տեղադրված գյուղերում մարդիկ լսում են ռադիոհաղորդումներ: 35 գյուղում արդեն վառվում են «Իլիչի լամպերը»: Ստեփանակերտում գործում են Մ. Գորկու անվան դրամատիկական թատրոնն ու երկու կինոթատրոն: Բոլոր շրջկենտրոններում կան կինոներ, թատրոն, տարբեր վայրեր սպասարկվում են շրջիկ կինոխցիկով, որոնցից երկուսը հնչյունային են: Փոստային ցանցը ընդգրկել է ամենահեռավոր անկյունները: Կազմակերպվել է 24 ակումբ, 26 ընթերցարան, 10 մասսայական գրադարան: Այժեցուցիչ են դպրոցական գործի հաջողությունները. 49 մանր վարժարանի փոխարեն, որոնցից 1914թ. միայն երկուսն էր միջնակարգ, 1937թ. կար 186 դպրոց, որից 17-ը՝ լրիվ միջնակարգ, 106-ը՝ թերի միջնակարգ: 1914թ. սովորողների թիվը հասնում էր 3010-ի, ուսուցիչներինը՝ 79-ի, իսկ 1937թ. կար 34599 սովորող և 1223 ուսուցիչ և, բացի այդ, մեծահասակների, անգրագետների ու կիսագրագետների դպրոցներում ընդգրկված էր 16191 մարդ: Ցարական իշխանության օրոք գրագետները կազմում էին բնակչության չորս տոկոսը, իսկ 1937թ. անգրագետները վեց տոկոս էին, ընդ որում, համառ պայքար էր մղվում անգրագիտության լիակատար վերացման համար: Կուսակցության մարզկոմի և մարզգործկոմի տպագիր օրգան «*Նորհրդային Ղարաբաղ*» թերթը հատուկ բաժին էր բացել անգրագիտության վերացմանը վերաբերող ինֆորմացիայի ու հոդվածների համար և աշակուրջ հսկում էր կենտրոնում ու շրջաններում այդ պայքարի ընթացքին: Երրորդ հնգամյակի պլանը կազմված էր այնպես, որ ապահովվեր ոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտողների 80 տոկոսի անցումը լրիվ միջնակարգի: Գոյություն ունեւ հինգ տեխնիկում, 69 մանկապարտեզում ընդգրկված էր 25.692 նախադպրոցական երեխա: Կար մեկ մանկատուն: Բարեկրթական նպատակների համար 1923-24թթ. 138 հազ. դիմաց այս տարի բաց է թողնված 14.357 հազ. ռուբլի, այսինքն՝ երկրամասի ողջ բյուջեի 57,7 տոկոսը:

Բնակչության բոլոր խավերի շրջանում մեծացել է հետաքրքրությունը գիտության ու գրականության նկատմամբ: Ամենուր ընտանիքներում ստեղծվել են սիրած գրքերի գրադարաններ: Տեղում հիմնադրվել է գրական բջիջ: Աճում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթը:

Կուսակցության անդամներն ու կոմերիտականները կատարում են քաղլուսաշխատանքներ, տանում են հակակրոնական պրոպագանդա (օրինակ, փոքր Սարդարաշենում աշխատում է 40 հոգուց բաղկացած անասովածների խումբ): Գյուղերի ողջ ակտիվը մոբիլիզացվեց հոգևորակա-



նության մնացուկների որոշ մասի ելույթները խափանելու համար, որը փորձում էր նոր Սահմանադրությունն օգտագործել բնակչության վրա իր ազդեցությունը վերականգնելու համար: Դեռ որոշ տեղերում զգացվում է հին, հեթանոսական տրամադրությունների ուժը. պատահում են տենդով երեխաներին լարախաղացի լարի տակով անցկացնելու (Քերթ և Քարահունջ գյուղեր), երեխա ունենալու նպատակով գիշերը կնոջը խուլ, կախարդված քարայրում թողնելու (Մեծ Թաղլար գյուղ) կամ էլ ծեր հեքիմի, գրբացի, *չոփչի* աղոթքին դիմելու (Եմիշճան գյուղ) դեպքեր: Այս ամենը, սակայն, կրոնական թմբիկի վերջին առկայծումներն են: Դպրոցի, կոմերիտմիության, կարմիր բանակի լայն պրոպագանդայի միջոցով, կենդանի և տպագիր խոսքով գիտական աշխարհայեցողությունն ավելի ու ավելի խորն է թափանցում բնակչության մեջ: Դա արտահայտվում է ամենուր՝ ինչպես տնտեսության, այնպես էլ կենցաղի մեջ:

Վերափոխվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ սեռերի միջև եղած բոլոր հարաբերությունները: Ոչ հեռավոր անցյալում մի քանի սերնդից բաղկացած մեծ, խոշոր գերդաստանները գրեթե ամենուր մասնատվում են փոքր զուգարնտանիքների, որոնք անմիջականորեն մտնում են սոցիալ-տնտեսական նոր խոշոր միավորումների՝ կոլտնտեսությունների մեջ: Կինը՝ արդեն գրագետ, իր սեփական աշխօրերի բաժինն ունեցող անձնավորություն, իրեն զգում է ընտանիքի ինքնուրույն և հավասար անդամ: Վերացել է նրա նախկին ինքնամփոփությունն ու ընկճվածությունը: Նա գնալով ավելի հաճախակի է հանդես գալիս ամուսնու վարքի ազատ քննադատությամբ և որպես ղեկավար՝ տեղի կյանքի որևէ բնագավառում: Նա ազատվել է տատնոր ծառայություններից և լիակատար վստահությամբ դիմում է մանկաբարձի օգնությանը: Հեշտացել է մանկան ինամբը. օգնության են եկել կոնսուլտացիաները, մշտական ու սեզոնային մանկամսուրները, մանկապարտեզները: Սանիտարաբուժական գործի կազմակերպումը զգալիորեն նվազեցրել է ընդհանուր հիվանդություններն ու մահացությունը: Աշխատանքի արտադրողականությունն ու կենցաղային պայմանների բարելավումը զգալիորեն բարելավել են բնակչության կենսամակարդակը և առողջական վիճակը:

Տնտեսապես և կուլտուրապես հետամնաց, ցարական իշխանության օրոք աչքաթող արված, դաշնակցականների ու մուսավաթականների տիրապետության օրոք ազգամիջյան երկպառակություններից քայքայված ծայրամասը բարգավաճող մարզ դարձնելու համար պահանջվեց նյութական խոշոր միջոցների ներդրում: Այդ ծախսերը դեռևս լրիվ չեն ծածկվում տեղի արագ աճող եկամուտներով, որոնք 1936թ. կազմեցին 4400 հազ., իսկ 1937թ.՝ 7.648 հազ. ռուբլի. աճը 180 տոկոս է: Զգալիորեն ավելի արագ են աճում ծախսումները, որոնք 1925-26թթ. 198,4 հազարից 1936թ. հասել են 19.263 հազ., 1937թ.՝ 24577 հազ. ռուբլու: Մշակված պլանի կենսագործման համար բյուջեի անհրաժեշտ լրացումը կատարվում է Ադրբեջանի հանրապետական միջոցների հատկացումների հաշվին: 1936թ. դրոսացիան կազմել է 12285 հազ., իսկ ընթացիկ՝ 1937թ., հասել է 16.930 հազ. ռուբլու:

Փոխվել է գյուղացու և քաղաքացու կյանքի ողջ պատկերը: Փոխվել են թե՛ աշխատաժամանակի բաշխման, թե՛ ժամանցի ձևերը: Անցյալի գիրկն անցնող հին Լեռնային Ղարաբաղի ավերակների վրա կառուցվում է նոր սոցիալիստական Լեռնային Ղարաբաղը, որտեղ բոլոր ազգերի աշխատավորները կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության ղեկավարությամբ կառուցում են երջանիկ ու ունևոր կյանք:

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ¹

Վաղուց ի վեր ինձ հանգիստ չէր տալիս այն միտքը, որ ես պարտավոր եմ որևէ աշխատություն գրել այն քաղաքի մասին, որտեղ ծնվել ու անց եմ կացրել մանկությունս, պատանեկությունս և երիտասարդությունս, որտեղ ստացել եմ տարրական և միջնակարգ կրթություն, ուր հինգ տարի շարունակ դասավանդել եմ միջնակարգ ուսումնական հաստատություններում և ապրել բազում ուրախ ու վշտալի օրեր մինչև 1920 թվականը, երբ իմ քաղաքի հայկական մասը ենթարկվեց ավերման, հետո քայքայիչ անկում ապրեց նաև քաղաքի մյուս՝ ադրբեջանական մասը: 1920 թվականից հետո ես բազմիցս այցելել եմ այդ ավերված քաղաքը, որը մի ժամանակ եղել է Անդրկովկասի նշանավոր քաղաքներից ու մշակութային կենտրոններից մեկը, իր գեղեցկությամբ հռչակված նրա բնակավայրը:

Չնայած նրա ավերակների՝ ինձ վրա թողած ծանր ու ճնշող տպավորությանը և դառն հիշողությանը՝ այդ քաղաքը միշտ էլ գրավել է ինձ և միշտ էլ խորը տպավորություն է թողել ինձ վրա իր անմոռանալի բնության հիասքանչ ու դյուրական տեսարաններով: Մանկության ու պատանեկության տարիների հիշողությունները և իմ գիտակցական կյանքի առաջին տարիներն այդ քաղաքում մնացել են անջինջ հիշողությանս մեջ... Չեմ հիշում, որ երբևիցե երազում անգամ տեսած լինեմ մի այլ բան, բացի իմ սիրելի հայրենի տան ու քաղաքի հիասքանչ պատկերները:

Ես ինձ պարտավորված էի զգում որևէ բանով արդարացնել իմ զգացմունքներն այդ քաղաքի հանդեպ, գրել նրա մասին և ասել իմ սրտի խոսքը: Դեպի այդ միտքն են հղել նաև իմ ընկերներից շատերը, մանավանդ իմ սրտակից ընկեր Խորեն Սարգսյանը, որը շարունակ համոզում էր գրել Շուշու մասին՝ պատճառաբանելով, որ բոլոր այն սերնդի մարդիկ, որոնք գիտեն այդ քաղաքը, հետզհետե հրաժեշտ են տալիս այս աշխարհին, և քանի գնա, այնքան դժվար կլինի որևէ արժեքավոր բան գրել այդ քաղաքի մասին, որն արժանի է, որ չմոռացվի ու մնա գալիք սերնդի հիշողության մեջ:

¹ Շուշու մասին այս աշխատությունը սկսել եմ գրել, երբ դեռևս աշխատում էի Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրական ֆակուլտետում՝ որպես դասախոս: Աշխատանքը սկսել եմ 1959 թվականից՝ արխիվային նյութերի և փաստաթղթերի ժողովումով, որքան հաջողվել է այն կատարել, և հավաքած նյութերն ու փաստերը շարադրել մաս-մաս՝ առաջնորդվելով աշխատության ընդհանուր ծրագրով



ԳԼՈՒԽ I

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՂԱՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Շուշին տեղադրված է հյուսիսային լայնությամբ 39° 46 և արևելյան երկարությամբ 46° 45 վրա: Գտնվելով Փոքր Կովկասի լեռների շրջանում՝ նա փոկված է Շուշու սարահարթի համեմատաբար դժվար մատչելի վայրում՝ ծովի մակերևույթից 1300-1500 մետր բարձրության վրա¹:

Շուշին գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի նախալեռներում՝ շրջապատված բարձրադիր լեռներով, որոնք հասնում են ծովի մակերևույթից ավելի քան 2500 մետր բարձրության և պաշտպանում են քաղաքն ուժեղ քամիներից:

Քաղաքից 18 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք գտնվում է Թթու ջրի լեռնանցքը (Лысогорский перевал՝ 2100մ), որի վրայով անցնում է Զանգեզուր (Գորիս) տանող խճուղին:

Լեռնանցքը մի քանի հարյուր մետր Շուշուց ավելի բարձր է: Շուշուց դեպի հարավ-արևմուտք գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի հարավային մասի ամենաբարձր լեռնագագաթը՝ Մեծ Քիրսը (2746 մետր): Քաղաքին արևմուտքից, հարավից և արևելքից երևացող լեռնային մասիվները և շղթաները նույնպես Շուշուց ավելի բարձր են, և միայն դեպի հյուսիս տեղանքը կտրուկ կերպով ցածրանում է, և Շուշի-Եվլախ խճուղուց բազմաթիվ զիզգագներով իջնում է դեպի Ստեփանակերտ ու Կարկառ գետը, որը գոյանում է Շուշուց մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա՝ Քարին տակ և Խայֆալու (Ղայբալու) գետերի միախառնումից: Այս գետերից առաջինը հոսում է խորը ձորում՝ Շուշուց դեպի հարավ-արևելք, իսկ երկրորդը առաջացնում է ավելի պակաս խորության ձոր, որն ընկած է Շուշուց արևմուտք:

Թթու ջրի բարձր լեռներից պարզ երևում է, թե ինչպես քաղաքը օղակված է քարե գոտիով, որը կտրուկ կերպով ցած է իջնում դեպի այդ գետերի հովիտները՝ մի քանի հարյուր մետր ուղղահայաց գիծ կազմելով դեպի հիշյալ ձորերը: Քարին տակ գետի հովիտն առանձնապես անդնդախոր է, և գետի հոսանքի ուղղությամբ գնալով՝ ձորն ավելի խորանում է Հնոտո գյուղի ջրաղացների մոտ: Այսպիսով՝ ուղղահայաց ժայռերի «քարե գոտին» երեք կողմից (հյուսիսից, արևմուտքից և հարավից), իսկ ամրոցի (Շուշու բերդի) հզոր պատերը (արևելքից և հարավ-արևմուտքից) քաղաքը պաշտպանում էին արտաքին հարձակումներից և նրան դարձնում անառիկ միջնադարյան բերդ:

Այն բարձրավանդակը, որի վրա կառուցված է Շուշի քաղաքը, այնպիսին է, որ թեքված է հարավից և արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Քաղաքի տեղն ընդհանրապես անհարթ է, մակերեսը՝ կտրտված ձորակներով, փողոցները, որ XVIII-XIX դարերում են կառուցված, խիստ նեղ են: Գլխավոր Երևանյան փողոցը, որի վրայով անցնում է «Ներքևի դարբասից» դեպի «Վերին դարբաս» (նախկին Երևանյան) և ապա դեպի Զանգեզուր տանող ճանապարհը, այնքան նեղ է, որ նրա վրայով միաժամանակ երկու սայլ հազիվ կարողանային անցնել: Այդ փողոցը բավականին զառիվայր է, ինչպես նաև շատ այլ փողոցներ: Բերդի քարե հաստ պատերի մնացորդներն այժմ էլ կարելի է նկատել քաղաքի հյուսիսարևելյան մասում, որը բնականից ավելի թույլ է պաշտպանված, նաև արևմտյան մասում, որտեղ քաղաքը բացվում է դեպի Զանգեզուր: Բերդի պատերի մեջ քաղաքից դեպի հյուսիս և արևելք գտնվում է Ադ-օղլանի (Ամարասի) դարբասը, իսկ Արևելք՝ Գանձակի դարբասը՝ սայլերի համար: Սա բերդի ստորին դարբասն է:

¹ Շուշու բարձրության մասին տարբեր աղբյուրներում եղած որոշ հակասական տվյալները բխում են նրանից, որ հաշվի չեն առնում քաղաքի վերին և ստորին մասերի բարձրությունների տարբերությունը



Անցյալում, երբ քոչվորները սար էին բարձրանում կամ լեռներից իջնում քաղաքի միջով, Երևանյան փողոցը **Էլի** (քոչվորների) ճանապարհն էր հանդիսանում¹:

Շուշի քաղաքի բնակելի տարածությունը խիստ սահմանափակ է: Հյուսիսում և հյուսիս-արևելքում նրան սահմանափակում են բերդի պաշտպանության համար կառուցված պատերը, որոնցից հետո սկսվում է զառիվայր իջնել ձորը: Բնակարաններ կառուցելու համար խիստ սահմանափակ են նաև քաղաքից դեպի արևմուտք և հարավ ընկած տարածությունները (այստեղ խանգարում են տեղանքը և պլատոյի ծայրը): Դեռևս 1852 թվականին հաշվված է եղել, որ Շուշի քաղաքում շենքեր կարելի է կառուցել 369 դեպյատին տարածության վրա, որից շենքերով արդեն զբաղված էր 200 դեպյատին տարածություն: *«Շենքեր չեն կառուցված զառիվայր բարձրության վրա՝ քաղաքի հարավային մասում, որն ընկած է նեղ շերտով արևմուտքից դեպի արևելք, որտեղ կառուցումներ կատարելուց հետո քաղաքը տեղ չունի մեծանալու»²:*

Քաղաքի հարավային մասի թեք լանջերը հետագայում զգալի չափով կառուցապատվում և բնակեցվում են: Քաղաքի աճի տեսակետից բնակելի տարածության խիստ սահմանափակ լինելը հետագայում (1923թ.) հանդիսացավ պատճառներից մեկը, որ Լեռնային Ղարաբաղի վարչական կենտրոն դարձավ Ստեփանակերտը և ոչ թե Շուշու ավերումներից զերծ մնացած քաղաքամասը (թեև այդ հիմնական պատճառը չէր):

Պետք է նկատել, որ Շուշու բարձրավանդակը, որի վրա առաջացել, զարգացել և այժմ էլ գոյություն ունի Շուշի քաղաքը, իր երկրաբանական կառուցվածքով ներկայացնում է մեզոզոյան շրջանի կրաքարային պլատո: Շուշու կրաքարային բարձրավանդակը դարեր շարունակ տվել է քաղաքին հրաշալի շինանյութ բնակարաններ կառուցելու, փողոցները քարահատակելու, բերդի պատերը կանգնեցնելու և արժեքավոր ճարտարապետական հուշարձաններ, եկեղեցիներ ու մեչիդներ կառուցելու համար: Կրաքարը ծառայել է նաև կիր արտադրելու համար: Շուշու շրջակայքում եղած բազմաթիվ քարայրերը վկայում են ուժեղ զարգացած կարստային երևույթների մասին: Կրաքարի հարուստ շերտերը ուժեղ լուծման են ենթարկվել ստորերկրյա և երկրի երեսին առատ հոսող ջրերի ներգործության տակ:

ՇՈՒՇՈՒ ԿԼԻՄԱՆ

Շուշի քաղաքի կլիմայական պայմանների մասին կարելի է դատել նրա օդերևութաբանական կայանի տվյալների հիման վրա: Ինչպես երևում է 1915թ. *«Кавказский календарь»*-ի ցուցմունքից³՝ Շուշու օդերևութաբանական կայանն աշխատել է 1848-1851 թվականներին, այնուհետև 1872 թվականից մինչև 1874թ., իսկ 1888 թվականից սկսած՝ նա անդադար աշխատել է մինչև 1920թ., այսինքն՝ մինչև քաղաքի հայկական մասի ավերումը: Մինչև 1920թ.՝ վերջին առնվազն 15 տարվա ընթացքում, օդերևութաբանական կայանը գտնվում էր Շուշու ռեալական դպրոցին կից: Օդերևութաբանական կայանը սպասարկում էին Շուշու ռեալականի ուսուցիչները դպրոցի բարձր դասարանի աշակերտների հետ: Նրանք ամեն օր ամփոփագիր էին հաղորդում Թիֆլիսում գտնվող կենտրոնական օդերևութաբանական վարչությանը⁴: 1920 թվականից հետո կայանը տե-

¹ Սակայն XX դարի սկզբից քաղաքից ներքև՝ դեպի Ղայբալուշեն տանող սարի լանջով քոչվորների համար կառուցված է այլ ճանապարհ (քաղաքը **Էլից** ազատ պահելու նպատակով), որը հիմա էլ գոյություն ունի և հարմար ճանապարհ է Թթու ջուր, Գորիս և Բոխի աղբյուրը գնալու համար: Այդ ճանապարհը քաղաքի հայկական մասի ավերվելուց հետո դառնում է աղբբեռանական մասից դեպի Զանգեզուր տանող հիմնական ուղին

² *Кавказский календарь на 1852 г., стр. 430-435*

³ *«Ընդհանուր մաս», էջ 57-89*

⁴ Շուշու ռեալական դպրոցի նոր շենքը կառուցվել է XX դարի սկզբներին՝ Առափնյանի աջակցությամբ: Դպրոցը 1907-1908թթ. սեպտեմբերից տեղափոխվում է այդ նորակառույց շենքը



դափռվում է աղբբեջանական մաս՝ ռուսական եկեղեցու մոտ՝ քաղաքի ստորին դարբասից ոչ հեռու, որտեղ գտնվում է առայժմ:

Ինչպես երևում է բերված տվյալներից՝ Շուշու օդերևութաբանական կայանը պատկանում է Անդրկովկասում վաղուց աշխատող փոքրաքանակ կայանների թվին, որը մի քանի տասնամյակների ընթացքում վստահելի տվյալներ է տվել Շուշու օդերևութաբանական պայմանների մասին: Կովկասի նշանավոր կլիմայաբան պրոֆեսոր Ի. Ֆիգուրովսկին իր արժեքավոր աշխատության մեջ բարձր գնահատական է տվել Շուշու օդերևութաբանական տվյալներին¹: Շուշին գտնվում է վերին գոտու անտառային շրջանում, որը համեմատաբար լավ պահպանվել է քաղաքի մոտակա շրջակայքում, լեռների լանջերին և ունի չափավոր խոնավ և համեմատաբար մեղմ կլիմա: Ըստ պրոֆ. Ֆիգուրովսկու հաշվառման, որը կատարված է օդերևութաբանական բազմամյա տվյալների հիման վրա, Շուշու միջին տարեկան ջերմաստիճանը հավասար է +8,5, միջին հունվարյան (ամենացուրտ ամսվա) ջերմաստիճանը հավասար է -2,2, իսկ միջին հուլիսյանը (ամենատաք ամսվա)՝ +19,3:

Այսպիսով՝ ջերմաստիճանների միջին տարեկան տարբերությունը (ամպլիտուդը) հավասար է 21,5, որը կարելի է համարել ցամաքային երկրների համար խիստ չափավոր: Սա բացատրվում է ինչպես ամառվա, այնպես էլ ձմեռվա ընթացքում քաղաքը շրջապատող անտառային շրջանի չափավորող ազդեցությամբ:

Շուշում, ըստ տարվա եղանակների, միջին ջերմաստիճանները հավասար են՝ ձմռանը՝ -9,8, գարնանը՝ +7,4, ամռանը՝ +18,2, աշնանը՝ +9,5: Բացասական ջերմաստիճանները Շուշում լինում են միայն հունվարին և փետրվարին, թեև սառնամանիքներ և ձյուն Շուշում կարող են լինել և հունվարից առաջ, բայց այս քաղաքում մինչև 1926թ. սեպտեմբերը նշվում է միայն մի ցուրտ օր (0-ից ցածր ջերմաստիճանով) ամբողջ 30 տարվա ընթացքում, բայց նոյեմբերից սկսած՝ նրանք հաճախ են լինում մինչև մարտ ամիսը ներառյալ, ապրիլ ամսում սառնամանիքները հազվադեպ են, իսկ մայիսին նրանք հանդիպում են բացառիկ տարիներում:

Ձմեռվա մեղմության պատճառով Շուշում հնարավոր է զբաղվել այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և գյուղատնտեսական այլ կուլտուրաների աճեցմամբ:

Առհասարակ, Շուշու ջերմային պայմանները չափազանց նպաստավոր են, որպեսզի նա դառնա Անդրկովկասի խոշոր առողջարան: Քաղաքի սքանչելի թեթև և մաքուր լեռնային օդը, չափավոր տաք ամառը, ձմեռային սառնամանիքների բացակայությունը, ջերմաստիճանի չափավոր տատանումները ըստ ամիսների, հրաշալի աշնան առաջին ամիսները, որոնք զգալի չափով ավելի տաք են, քան գարնան ամիսները, դարձնում են Շուշին մեր երկրի բնական առողջարանը: Խոսելով Փոքր Կովկասի լեռնային շրջանի բնական զոնայի մասին, որտեղ տեղադրված է Շուշին, պրոֆեսոր Ի. Ֆիգուրովսկին գրում է. «Չափավոր տաք, նույնիսկ հով ամառը, որը միաժամանակ համեմատաբար պարզ է և չոր, դարձնում է այդ զոնան առհասարակ Անդրկովկասի ամենալավ կլիմայական կայաններից մեկը և ամենալավը ամբողջ Արևելյան Անդրկովկասում: Շուշին և Թթու ջուրը այս տեսակետից վաղուց ի վեր հայտնի են, ինչպես և Դիլիջանը, ամառը այստեղ իր ջերմաստիճանով նմանվում է Յուրիխին, Բերնին, ժննին և այլ շվեյցարական և Տիրոլյան վայրերին»²:

Ստորև ներկայացնում ենք Շուշու առողջարանի առավելությունները այլ նշանավոր առողջարանների համեմատությամբ, աշխարհագրական դիրքի բարձրությունը (հաշված ծովի

¹ Շուշու կլիմայական պայմանների բնութագրման համար մենք տվյալները վերցրել ենք՝ *И. Ц. Фигуровский, Материалы по районированию Азерб. ССР, т. 1, вып. 1, часть 1 и 2, Баку, 1926, որոնք թեև վերաբերում են մինչև 1925 թվականին, բայց հետագա տարիների տվյալներից շատ քիչ են տարբերվում*

² *И. Ц. Фигуровский, Материалы по районированию Азерб. ССР, т. 1, вып. 1, часть 2, стр. 135, Баку, 1926*



մակերևույթից), աշխարհագրական լայնության աստիճանի և ջերմաստիճանի բարձրությունը ձմռան ամիսներին (նոյեմբեր-մարտ)։

Աղյուսակ 1¹

Ամփոփված (ընդհանրացրած)

Առողջարանների անունները	Բարձրությունը ծովի մակերևույթից	Աշխարհագրական լայնության աստիճանը	Միջին ամսական ջերմաստիճանները ձմռան ամիսներին				
			նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ
Կիսլովոդսկ	800-1000	41-45	2,1	-1,5	-4,5	-2,8	2,0
Աբասթուման	1260	43-54	2,1	-2,6	-6,3	-3,9	2,0
Դիլիջան	1258	43-26	3,7	-0,7	-2,5	-2,8	3,5
Տերեքդա	1300	40-44	1,5	-1,5	-3,3	-1,6	1,2
Դավոս	1454-1560	46-47	-1,2	+5,5	-7,3	-4,2	-1,0
Շուշի	1400-1600	39-46	4,4	0,6	-2,4	-1,0	2,9

Եզրակացություն. - Շուշին թվարկած բոլոր առողջարաններից ավելի հարավ է, առանձնապես Դավոսից, և զգալի չափով ավելի տաք է ձմռան ամիսներին։ Ձմռանը արեգակը ավելի բարձր է և կեսօրին ավելի ինտենսիվ է տաքացնում։ Ցերեկն ավելի երկար է, ջերմաստիճանը 0°-ից ցածր է Շուշում միայն երկու ամիս, ավելի պակաս, քան մյուս թվարկած առողջարաններում, մանավանդ Դավոսում, որտեղ տևում է հինգ ամիս։ Ինչպես պարզ երևում է բերված տվյալներից և մեր ուսումնասիրություններից, աշունը Շուշում զգալի չափով ավելի տաք է, քան գարունը։

Ինչ վերաբերում է օդի խոնավության աստիճանին և տեղումների քանակին, Շուշում օդի միջին տարեկան բացարձակ խոնավությունը հավասար է 7մմ, մինիմումը՝ հունվարին (3 մմ), մաքսիմումը՝ հունիսին, հուլիսին և օգոստոսին (11մմ)։ Միջին տարեկան հարաբերական խոնավությունը հավասար է 67%, ընդ որում, մաքսիմումն ընկնում է ապրիլ (73%) և մայիս (74%) ամիսներին, նաև աշնանային ամիսներին (10-71%, 10-73%, 10-70%), իսկ մինիմումը՝ ամառային և ձմեռային ամիսներին (7-54%, 8-59%, 12-63%, 1-63%, 2-65%)։

Մաքսիմալ ամպամածությունը Շուշում նույնպես լինում է գարնանը (երկինքը 50%-ով ծածկվում է ամպերով) և աշնանը (ամպերը ծածկում են երկնքի 54%-ը), իսկ մինիմալ ամպամածությունը լինում է ամռանը (45%) և ձմռանը (50%)։ Ըստ ամիսների ամպամածության՝ մաքսիմումը լինում է մայիսին (62%) և մարտին (59%), մինիմումը՝ օգոստոսին (42%)։ Միջին տարեկան ամպամածությունը հավասար է 53%։ Շուշում մթնոլորտային տեղումների տարեկան քանակը հավասար է 639մմ, ընդ որում՝ ըստ ամիսների տեղումների մաքսիմումը ընկնում է գարնան ամիսներին և հունիսին, երկրորդ մաքսիմումը՝ աշնան առաջին ամիսներին, մինիմումը՝ հուլիս և օգոստոս ամիսներին և ձմեռվա ամիսներին։

¹ Эйвазов Б. А., *Курорт Шуша, Баку, 1956*. Фигуровский И., «*Зимние климатические курорты Азерб.*», Азерб., мед. журнал N 1, 1930г., Сагиян Г. М., *Дилижан, 1934*



Ըստ ամիսների՝ տեղումների մաքսիմումը լինում է մայիսին (127մմ), մինիմումը՝ դեկտեմբերին (20մմ): Տեղումների գումարը Շուշում գարնան ամիսներին (մարտ, ապրիլ, մայիս), հունիսի ընթացքում և աշնան առաջին երկու ամիսների ընթացքում (սեպտեմբեր, հոկտեմբեր) հավասար է 468մմ, իսկ տարվա մնացած 6 ամսվա ընթացքում (հուլիս, օգոստոս, նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար, փետրվար), այսինքն՝ գլխավորապես ձմեռվա և ամառվա ամիսների ընթացքում հավասար է 171մմ¹:

Տարվա եղանակների՝ տեղումներ տվող օրերի թիվը Շուշում հավասար է՝ ձմռանը 20 օր, գարնանը՝ 41, ամռանը՝ 25, աշնանը՝ 26: Տարվա տեղումներով աղքատ եղանակը (թե՛ օրերի թվով և թե՛ տեղումների քանակով) ձմեռն է, որ շատ նպաստավոր է Շուշին նաև ձմեռային առողջարան դարձնելու համար:

Այսպիսով, Շուշու կլիման միջին տարեկան տեղումների գումարով և նրա բաշխումով, ըստ տարվա եղանակների, կարելի է համարել չափավոր խոնավ և բարենպաստ մարդու առողջության համար: Շուշու համար բնորոշ է նաև այն, որ նա տարվա ընթացքում չունի ոչ մի չոր ամիս, այսինքն՝ այնպիսի ամիս, երբ տեղումներ բերող օրերի թիվը ամսվա ընթացքում 6 օրից պակաս է: Չոր ամիսների առկայությունը հատուկ է անապատային վայրերին: Նրանց բացակայությունը Շուշում նույնպես պետք է համարել բարենպաստ կլիմայական գործոն:

Շուշում հաճախ են մառախուղները. այստեղ տարվա ընթացքում մառախլապատ օրերի թիվը հավասար է 70-ի: Մառախուղներն ամենից հաճախ լինում են հոկտեմբերին (10 օր), մարտին (9 օր), ապրիլին և նոյեմբերին (8-ական օր), այսինքն՝ գարնանը և աշնանը, իսկ ամենից քիչ՝ հուլիսին (1 օր) և օգոստոսին (2 օր): Ըստ տարվա եղանակների՝ մառախլապատ օրերի թիվը հավասար է՝ ամռանը 7 օրվա, գարնանը՝ 21, աշնանը՝ 25, ձմռանը՝ 17: Մառախլապատ օրերի թիվը Շուշում ավելի է, քան Աբասթումանում, բայց այստեղ մառախուղները երկարատև չեն, և նրանք չեն նսեմացնում Շուշու առողջարանային-կլիմայական նշանակությունը²:

Շուշում գարնանը հաճախ տեղատարափ անձրևներ են լինում: Ըստ պրոֆեսոր Ֆիզուրովսկու՝ Շուշում 32 տարվա դիտումների ընթացքում տեղատարափ անձրևների թիվը (երբ օրական տեղումների գումարը 40մմ-ից ավելի է) հավասար է 21 օրվա, որը զգալի չափով ավելի է, քան Փոքր Կովկասի օդերևութաբանական դիտումների այլ կետերում, ընդ որում՝ դիտված տեղատարափ անձրևներից ամենաուժեղը տեղի է ունեցել 1906թ. մայիսին, երբ տեղումների քանակը հավասար է եղել 90մմ (սա ամենաշատն է՝ համեմատած Փոքր Կովկասի բոլոր կայաններում եղած դիտումներից):

Շուշու համար խիստ բնորոշ են նաև ամպրոպները: Ամպրոպային օրերի քանակը միջին հաշվով հավասար է տարվա ընթացքում 25 օրվա, և ամբողջ Ադրբեջանական ԽՍՀ միայն մի քանի

¹ Շուշում տեղումների քանակը աշնանացան մշակույթների վեգետացիայի ժամանակաշրջանում (սեպտեմբերից մինչև հունիս) հավասար է 568մմ, իսկ գարնանացան մշակույթների վեգետացիայի ժամանակաշրջանում (ապրիլից մինչև սեպտեմբեր) հավասար է 445մմ

Տեղումներ տվող օրերի թիվը Շուշում համարյա հավասար է Կիսլովոդսկի օրերի քանակին և ավելի պակաս է, քան Աբասթումանում, Эйвазов В. А. *Кавказ Шума*, Баку, 1956.

Ըստ պրոֆ. Ֆիզուրովսկու՝ նման օրերի թիվը Շուշում ներկայացված է հետևյալ կերպ.

Դեկտեմբերին՝ 6 օր,	Հունիսին՝ 13 օր,
Հունվարին՝ 7 օր,	Հուլիսին՝ 6 օր,
Փետրվարին՝ 7 օր,	Օգոստոսին՝ 6 օր,
Մարտին՝ 10 օր,	Սեպտեմբերին՝ 9 օր,
Ապրիլին՝ 14 օր,	Հոկտեմբերին՝ 10 օր,
Մայիսին՝ 17 օր,	Նոյեմբերին՝ 7 օր

² Մառախլապատ օրերի թիվով «Շուշին համարյա նույն մակարդակի վրա է կանգնած, ինչ շվեյցարական հայտնի առողջարան Արոզան» (68 օր տարվա ընթացքում, տե՛ս Էյվազով, **նշվ. աշխ.**, էջ 20)



կայաններ ավելի ամպրոպային օրեր ունենին, քան Շուշին (Զուռնաբաժը՝ 34, Զաքաթալան՝ 29, Ալիաբադը՝ 26)¹:

Չմեռը Շուշում մթնոլորտային տեղումները սովորաբար ձյան ձևով են լինում: Առաջին ձյունը Շուշում կարող է լինել նույնիսկ սեպտեմբերին (բազմամյա դիտումներով՝ ամենավաղ ձյունը տեղացել է սեպտեմբերի 19-ին, ամենաուշը՝ մայիսի 30-ին), բայց սրանք բացառիկ դեպքեր են, իսկ սովորաբար ձյունը տեղում է նոյեմբերից մինչև մարտ ամիսներին, այն էլ ոչ անընդհատ:

Սառնամանիքային օրերի թիվը Շուշում միջին հաշվով հավասար է 143-ի, ընդ որում՝ ձյան ծածկը միանգամից չի հաստատվում հենց առաջին եկած ձյան օրից և անհետանում է վերջին տեղացած ձյունից առաջ: Ձյան տեղման օրերի մաքսիմումը հոկտեմբերին հավասար է 7-ի, նոյեմբերին՝ 12-ի, դեկտեմբերին՝ 12-ի, հունվարին՝ 11-ի, փետրվարին՝ 13-ի, մարտին՝ 17-ի, ապրիլին՝ 10-ի, մայիսին՝ 2-ի, սեպտեմբերին՝ 1-ի, բայց դա մաքսիմումն է:

Ձյան ծածկույթի հաստությունը Շուշում միջին հաշվով հավասար է 20-30սմ, բայց կան տարիներ, երբ այն զգալի չափով ավելի է լինում:

Շուշու կլիմայի առանձնահատկությունների պատճառներից մեկն էլ այն է, որ քաղաքի բնակեցված մասը պատված է բարձր լեռներով: Բոլոր կողմերից լավ պաշտպանված է քամիներից, և քաղաքում սովորաբար տիրում է խաղաղ եղանակ:

Հրաշալի է ձյան օրերին, երբ եղանակը խաղաղ է, պարզ ու արևոտ: Այսպիսի օրերին հաճելի է փայլուն և փափուկ ձյան միջով բարձրանալ «քերձի գլուխը»՝ դեպի Քարին տակ տանող ճանապարհը:

Մոտակա լեռների և բլուրների բարձր լանջերին, որոնք մտնում են Շուշու պլատոյի մեջ, օրինակ, նախկին զբոսայգուց այն կողմ բարձրացող բարձր ժայռերի վրա՝ այսպես կոչված «քերձի գլխին», կամ Ջրղրը Դյուզիում շատ հաճախ լինում են ուժեղ քամիներ:

Շուշում տիրապետող քամու ուղղությունը տարվա բոլոր եղանակներին հարավարևելյանն է, հազվագյուտ դեպքում՝ արևելյանը, երբեմն էլ՝ հարավային ուղղությունը: Քամու ուժը տարվա բոլոր ամիսներին խիստ չափավոր է և հավասար է մի վայրկյանում մեկ մետրից (հոկտեմբեր) մինչև 1,5 մետր (փետրվար): Քամու միջին արագությունը մի վայրկյանում ոչ մի ամիս 1,5 մետրից չի գերազանցում, որ հազվագյուտ երևույթ է Ադրբեջանի օդերևութաբանական կայանների մեջ²:

Ավելորդ չի լինի նշել, որ Շուշին Անդրկովկասի այն քաղաքներից է, որտեղ ձմռան ընթացքում շատ հաճախ են ֆյոները: Շուշում նոյեմբերից մինչև ապրիլ ամիսները այստեղ միջին հաշվով ամսական 7 օր փչում են ֆյոն տիպի քամիներ: Այդ օրերին օդի ջերմաստիճանը բարձրանում է 4,6°-ից (դեկտեմբեր) մինչև 6,6°-ը (հունվար) նորմայից ավելի, և օդի խոնավությունը խիստ ցածրանում է: *«Ֆյոները խիստ ցածրացնում են ձմռան դաժանությունը, խանգարում են ցրտերի սկսվելուն և արագացնում են զարնան ընթացքը»*³:

¹ Առեղի պատկեր էին ներկայացնում ամպրոպները, կարկտահարումը և տեղատարափ անձրևները Շուշում, որ ինձ վիճակված է եղել դիտել իմ մանկության, պատանեկության և երիտասարդության տարիներին: Երևանյան փողոցը, որի 71 տանը ես ապրել եմ տարիներ շարունակ, ծայրից ծայր լցվում էր կատաղի արագությամբ հոսող ջրերով, որոնք զլորվում էին քաղաքի հարավային և հարավարևմտյան մոտակա բարձրություններից (գլխավորապես այսպես կոչված Ուղին բախչայից, գորանոցի շրջանից և ցած պլանում սարսափելի արագությամբ) փողոցի գառիվայր թեքությամբ՝ պատրաստ լինելով ամեն ինչ սրբել իրենց ճանապարհին: Հետիոտնի համար անհնար էր անցնել այդպիսի ջրի հոսանքի վրայով փողոցի մյուս կողմը: Այդպիսի կատաղի հոսող ջրերի աղմուկը, տեղացող կարկտի հասիկների դղրոցը երկաթե թիթեղներով պատած տանիքներին, միացած որոտի և կայծակի առեղի աղմուկին, կենդանական սարսափ էին ազդում մարդու վրա: Միաժամանակ այս դժոխային աղմուկը հիասքանչ տպավորություն էր թողնում մեր մատաղ «փոթորիկ փնտրող սրտերում»

² Այդ չի խանգարում, որ երբեմն (ձիշտ է՝ հազվագյուտ դեպքերում) քաղաքի վրայով անցնեն արտակարգ ուժի քամիներ
³ Фигуровский И. В., *Матер. по району. Азерб. ССР.*, том 1, вып. 1, часть 2, стр. 154. Խոսելով Ադրբեջանում Փոքր Կովկասի լեռնային շրջանի արևելյան լանջերում ֆյոնանման քամիների տարածման մասին՝ պրոֆ. Ֆիգուրովսկին ավելացնում է. «Մրանք տեղական



Ամփոփելով մեր խոսքը Շուշու կլիմայական առանձնահատկությունների մասին՝ նշենք, որ քաղաքի թե՛ ջերմային պայմանները (համեմատաբար հով ամառը, մեղմ ձմեռը, տարվա ընթացքում ջերմաստիճանների խիստ տատանումների բացակայությունը), թե՛ օդի խոնավության առանձնահատկությունները (օդի հարաբերական խոնավության ոչ բարձր աստիճանը, ցածր ամպամածությունը, մանավանդ ձմռան ամիսներին, տարվա ընթացքում տեղումների չափավոր քանակը, մանավանդ նոյեմբերից մինչև փետրվարը, արևոտ օրերի մեծ քանակը նույն ամիսների ընթացքում), ինչպես նաև մեղմ, ոչ քամոտ եղանակի գերակշռությունը կամ թույլ ամիսների գերակշռությունը քաղաքին պոտենցիալ հնարավորություն են տալիս ամբողջ Անդրկովկասում դառնալու հրաշալի առողջարան, որը շատ տեսակետներից գերազանցում է ԽՍՀՄ և Արևմտյան Եվրոպայի հռչակված լեռնային առողջարաններին: Եթե Շուշու քաղաքի հիշյալ կլիմայական առանձնահատկություններին ավելացնենք և այն, որ նա ավելի հարավային աշխարհագրական դիրք ունի և այդ պատճառով զգալի չափով ավելի տաք է, քան Եվրոպայի համապատասխան լեռնակլիմայական առողջարանները, որ նա ծովի մակերևույթի համեմատությամբ բարձր աշխարհագրական դիրք է զբաղում, նրա օդը թեթև է, մաքուր ու պարզ, նա աննման լեռնային տեսարան ունի՝ հարուստ անտառային և լեռնամարգագետնային բուսականությամբ, քաղաքի շրջապատը իր օդով ու բուսականությամբ բարենպաստ ազդեցություն են թողնում թե՛ հիվանդների, թե՛ առողջ մարդկանց հոգեկան վիճակի վրա, նաև ի նկատի ունենանք, որ Շուշուց ոչ հեռու գտնվում են մի շարք բուժիչ հանքային աղբյուրներ (Թթու ջուրը՝ Շուշուց 18կմ հեռավորության վրա, Շիրլանի հանքային աղբյուրը՝ 20կմ հեռավորության վրա, մի շարք աննման սովորական, ոչ հանքային լեռնային աղբյուրներ, որոնք հայտնի են իրենց համեղ ու մաքուր ջրով (Բոխի աղբյուր-Ղարաբուլաղ, Ցեխի աղբյուր, Շոշուան և այլն). այս բոլորը միասին վերցրած՝ ավելի են բարձրացնում Շուշու քաղաքի առողջարանային հնարավորությունները:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՇՈՒՇՈՒՄ

Շուշու քաղաքի համար հետաքրքիր և կարևոր հարց է բնակչությանը և քաղաքին ջուր մատակարարելը, որը սերտորեն կապված է քաղաքի կլիմայական պայմանների, ինչպես նաև առողջարանային շինարարության հետ:

Ներկայումս (ինչպես նաև մինչև 1920թ.) քաղաքը ջուր ստանում է թե՛ քաղաքում փորած ջրհորներից¹, թե՛ ջրատար խողովակների միջոցով, որոնցով ջուր են բերում քաղաքից դուրս գտնվող տեղերից: Անտարակույս, 1752 թվականից հետո քաղաքը հիմնականում կարող էր սնվել միայն ջրհորների ջրով, որովհետև այնքան էլ հեշտ բան չէր քաղաքին ջուր հասցնել հարևան գետերից կամ քաղաքից դուրս գտնվող աղբյուրներից ջրատար խողովակների միջոցով, որովհետև այդ գետերը և աղբյուրները քաղաքի գծից դուրս էին գտնվում և տեղադրված էին ձորերում: Շուշուց ոչ հեռու գտնվող գետերը հոսում են խորը ձորերում, որտեղից ջուրը քաղաք

*կլիմայի չափազանց բնորոշ առանձնահատկությունն են կազմում, որը մոտավորապես նույնպիսի չափերով դիտվում է Շվեյցարիայում, Տիրոլում, Արևմտյան Վրաստանում և Աջարիայում» (Ֆիզիոլոգիկ, **նույն տեղում**, էջ 153)*

¹ *Քաղաքում փորած ջրհորների մասին մանրամասն պատմում է XIX դարի Միրզա Ջամալ Ջիվանշիրը, որը իր գրքում (Միրզա Ժամալ Ժիվանշիր Կարաբախսկի, «Карабах наме» (История Карабаха), изд. Института истории АН Азерб. ССР, Баку, 1959, стр. 72) նշում է, որ Փանահ-խանը 1750թ. նախքան Շուշու բերդի հիմնադրումը, իր մերձավորներից մի քանի փորձված ու տեղյակ մարդ է ուղարկում տեղում հարցը քննելու, որոնք հաստատում են, որ այդ բերդի ներսում «երեք փորքիկ աղբյուրներից բացի ուրիշ հոսող ջրեր չկան, որոնք չեն կարող ապահովել մեծ քանակությամբ հավաքվող ժողովրդի և բերդի բնակիչների կարիքը»: Այդ պատճառով խանի ուղարկված մարդիկ մի քանի տեղ ջրհորներ են փորել և հաստատել, որ շատ ուրիշ տեղերում նույնպես կարելի է հորեր փորել և ջուր ստանալ: Հետաքրքիր է պարզել, թե Շուշում որտեղ կարելի է գտնել այդ երկու-երեք աղբյուրները: Մոտ 100 տարուց հետո՝ 1852թ., «Կովկասի օրացույցում» Շուշուն նվիրված իր ժողովածուում Կոնստանտինովիչը գրում է, որ Շուշում պակասում է լավ ջուրը, քաղաքում միայն հազվագյուտ տներ են, որոնք ջրհորներ չունեն, բայց այդ ջրհորներում ջուրը դառն է, խմելու համար ոչ պիտանի: «Լավ ջուրը քաղաք են բերում բեռներով, փայտի տակառների մեջ, այն աղբյուրներից, որոնք գտնվում են ձորերում»*



բարձրացնելը XVIII և նույնիսկ XIX դարի սկզբի տեխնիկական պայմաններում անհնարին էր, իսկ քաղաքի մոտ գտնվող աղբյուրները այնքան սակավաջուր էին, որ դրանցից քաղաքին ջուր մատակարարելը իմաստ չուներ: Քաղաքի գծից ներս աղբյուրի ջուր, ըստ երևույթին, չի եղել, համենայն դեպս մենք ոչ մի տեղ նրանց հետքերին չենք հանդիպել և գրականության մեջ նրանց գոյության մասին ոչինչ չենք գտել (եթե հաշվենք Միրզա-Ջամալ Ջիվանշիրի վերը բերած հիշատակումը):

Ինչ վերաբերում է ջրհորներին, ապա նրանց թիվը Շուշում չափազանց շատ էր և այժմ էլ քիչ չէ¹: Մենք ենթադրում ենք, որ քաղաքը հիմնադրվելուց հետո բավական երկար ժամանակ բնակիչներին խմելու ջուր էին մատակարարում ջրհորներից, բայց XIX դարի վերջերին Շուշում կառուցվում է ջրատար խողովակ Քարին տակ գետի վերին մասից, որը սկսվում է քաղաքից մոտ 20 կիլոմետրից բարձր: Այնուհետև քաղաքը սկսում է կանոնավոր ջուր ստանալ: Այդ ջրատարը կառուցված է եղել Թադևոս Թամիրյանի միջոցներով²:

Քաղաքում XIX դարում կար ևս մի ուրիշ ջրատար՝ խանի կամ խանի աղջկա ջրմուղը, որը ջուր էր մատակարարում քաղաքի ներքևի (աղբբեջանական) մասին: Նրանով աղբյուրի մաքուր ջուր էր գալիս (և ոչ թե գետի պղտոր ջուր, ինչպես Քարին տակ գետից) Բոխի աղբյուրի անտառների շրջանից: Մենք բազմիցս Բոխի աղբյուրի ճանապարհին ականջ էինք դնում գետնի տակից հոսող ջրի քչքչոցին, որը կավաշեն խողովակների միջով հոսում էր դեպի քաղաք: Տեսել ենք նաև այդ խողովակները և ջուրը: Թամիրյանների ջրատար երկաթե և հզոր ջրմուղու համեմատությամբ խանի աղջկա ջրանցքը աննշան քանակությամբ ջուր էր տալիս քաղաքի երկու-երեք աղբյուրներին, քաղաքի աղբբեջանական մասում: Աղբյուրներից մեկը գտնվում էր Շեյթան բազարում, մյուսը՝ քաղաքի Ներքևի դարբասի մոտ, գուցե և, ինչպես ասում էին, հանգստյան տան մի ծորակով նույնպես հոսում էր Խանի աղբյուրի ջուրը:

Վերջին տասնամյակների ընթացքում ջրհորների ջուրը Շուշում այլևս խմելու պիտանի չէր, այն գործածվում էր ծառերը, այգիները, բոստանները ջրելու համար: Ջրհորները լցվում էին ստորերկրյա ջրերով և նրանց ջրի մակարդակն առանձնապես բարձրանում էր այն ամիսների ընթացքում, երբ ամենից շատ մթնոլորտային տեղումներ էին լինում: Մայիս ամսվա ընթացքում նրանց մակարդակը համարյա հասնում էր հողի երեսին: Ամառվա վերջին և ձմռան ընթացքում այն խիստ իջնում էր: Ջրհորների խորությունը տարբեր էր և հասնում էր 10-15 մետրի, նույնիսկ ավելին:

Բացի սովորական ջրհորներից, Շուշում մի քանի տներում կառուցված էին ցեմենտապատ ջրամբարներ, որոնք սնվում էին ոչ թե ստորերկրյա ջրերով, այլ նրանց մեջ անձրևաջուրը խողովակների միջոցով հավաքվում էր թիթեղյա տանիքներից: Այս ջուրն արդեն մեծ մասամբ գործ էր անվում լվացքի և գլուխ լվանալու համար: Հիշյալ ջրամբարները շինվում էին ավելի փոքր

¹ Քաղաքի նախկին հայկական մասում 1920թ. համարյա բոլոր ջրհորները քանդված են եղել, հողով լցված և կեղտոտված (նրանց մեջ լցված են եղել մարդկանց դիակները), իսկ քաղաքի աղբբեջանական մասում նրանք պահպանվել են

² Թամիրյանները կառուցել են մի քանի բաժին ունեցող ջրամբար, որտեղից մաքրված ջուրը բաշխվում էր քաղաքի թե՛ հայկական, թե՛ աղբբեջանական մասում: Այսպես, օրինակ, հայկական մասում կառուցված աղբյուրներ կային Երևանյան փողոցում՝ գորանոցի մոտ, կար Վանքի աղբյուրը (Գուսանոցի եկեղեցու մոտ), Մելրանենց աղբյուրը՝ թեմականի մոտ, Ռեպակյանի մոտ գտնվող աղբյուրը և ուրիշներ: Մի քանի աղբյուրներ կային աղբբեջանական մասում: Հիշատակենք և այն, որ նախքան գորանոցի ջրամբարը և Երևանյան փողոցի վերին մեծ՝ 4 ծորականոց աղբյուրը կառուցելը՝ նախ կառուցված է եղել մի փոքր աղբյուր գորանոցի դիմաց՝ Երևանյան փողոցի վերին մասում, նրա ձախ կողմում, որտեղից մենք դեռևս իմ մանկության տարիներին ջուր էինք բերում: Հավանականորեն դա նախապատրաստական աշխատանք էր Թամիրյանների ջրամբարը և աղբյուրները կառուցելուց առաջ: Հետո այդ աղբյուրը փոխադրվել է փողոցի աջ կողմը: Թամիրյան Թադևոսի մարմարե հուշարձանը 1920թ. հետո երկար տարիներ գտնվում էր Ղազանչեցոց եկեղեցու բակում



խորությամբ (մինչև 4-5մ խորությամբ), բայց ավելի լայն էին լինում, նրանց մեջ հավաքվում էր ջրի կեղտը, տիղմը (կտուրների և խողովակների փոշուց), որը ժամանակ առ ժամանակ մաքրում էին:

Քաղաքի խմելու ջուրը, որը ստացվում էր Քարին տակ գետից սկիզբ առնող ջրմուղով (Թամիրյանների կառուցած ջրմուղով), հորդ անձրևների օրերին այնքան պղտորվում էր, որ նրանցից ջուր խմելը անդուրեկան էր դառնում: Այդպիսի օրերին ունևոր քաղաքացիները ջուրը գնում էին ջրկիրներից (սուչիներից), որոնք ավանակներին բարձած տափակ փայտե տակառներով աղբյուրի ջուր էին բերում Ղարաբուլաղից, Ցեխի աղբյուրից, Ռուսի աղբյուրից (սպանդանոցի մոտից)¹ վաճառելով քաղաքացիներին բեռը (երկու տակառը) 5 կոպեկով¹:

Այն քաղաքացիները, որոնք միջոց կամ ցանկություն չունեին հորդ անձրևների օրերին ջրկիրներից մաքուր աղբյուրի ջուր գնելու, նրանք պղտոր ջուրը լցնում էին կավե մեծ կարասների մեջ, նրանց մեջ գցում էին շիբ կամ մի քանի կտոր ածուխ, որոնք օգնում էին ջուրը մաքրելու:

ՀՈՂԸ, ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Շատ դժվար է որոշակի խոսք ասել Շուշու բնական լանդշաֆտի և նրա հողաբուսական ծածկույթի մասին: Այստեղ գործ ունենք մի քաղաքի հետ, որի բնական լանդշաֆտը և մասնավորապես նրա հողաբուսական ծածկույթը մի քանի դարերի ընթացքում խիստ կերպով փոխվել են մարդու գործունեության ազդեցության ներքո: Փոխվել է տեղի բուսական ծածկույթը, և բնական բուսականության տեղ առաջ են եկել այգիներ, բանջարանոցներ, զբոսայգիներ, բնական ծառերի փոխարեն աճել են այգիներ ու պտղատու ծառեր, թթենիներ, ակացիաներ, լորենիներ, թփեր (վարդեր, հաղարջ, մարդու կամքին հակառակ տարածվել են մոշուտները, որոնք ծածկում էին 1920թ. քաղաքի ավերված մասը), եղնջուտներ և մուլախոտեր: Բնական բուսական ծածկույթի փոփոխման և այգիների ու բանջարանոցների առաջացմանը զուգահեռ (իսկ այդ այգիները և բանջարանոցները գտնվում էին շուշեցիների համարյա ամեն մի տան մոտ)¹ փոխվել է քաղաքի հողի ծածկույթը, իսկ հողի մանրակրկիտ վերլուծության բացակայությունը հնարավորություն չի տալիս դատելու Շուշու սարահարթի թե՛ հողային և թե՛ բուսական ծածկույթի մասին մինչև այստեղ քաղաք հիմնելը:

Առավել ևս արմատական փոփոխության է ենթարկվել քաղաքի կենդանական աշխարհը, որովհետև անհետացել են վայրի կենդանիները, և բազմացել են ընտանի կենդանիները: Այդ պատճառով Շուշու անցյալի բնական հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի մասին մենք ստիպված ենք դատել կողմնակի տվյալների հիման վրա (քաղաքը շրջապատող վայրերի, տեղանքի հողերի, բուսականության և կենդանական աշխարհի հիման վրա կամ հարցի պատասխանը փնտրել անցյալի պատմական աղբյուրների մեջ):

Դժբախտաբար, քաղաքի շրջակայքի տվյալները բոլորովին նույնը չեն, ինչ վերաբերում է Շուշու սարահարթին, և հաճախ, շրջակայք ասելով, վերցնում են ավելի լայն ուղղահայաց տարածքներ, իսկ Շուշու անցյալին վերաբերող հողաբուսական ծածկույթի մասին պատմական աղբյուրները չափազանց քիչ են: Եթե դատելու լինենք Շուշու բարձրության մասին ծովի մակերևույթի համեմատությամբ, մանավանդ, որ այն գտնվում է 1300-ից մինչև 1500մ բարձրության

¹ Ռուսի աղբյուրի ջուրը ջրկիրները վաճառում էին՝ խաբելով քաղաքացիներին, որ այդ ջուրը բերել են ձորերում գտնվող ուրիշ մաքուր աղբյուրներից: Ջրկիրներին ձեռնտու էր ջուրը բերել Ռուսի աղբյուրից, որը քաղաքի Վերին (Երևանյան) դարբասին շատ մոտ էր և հարմար ճանապարհ ուներ (գտնվում էր հենց քաղաքից դուրս տանող խճուղու վրա), իսկ մնացած աղբյուրները ձորերում էին և անհարմար ճանապարհների վրա: Ռուսի աղբյուրը սպանդանոցի մոտ էր գտնվում՝ քաղաքի հայկական մասի Վերին գերեզմանատան տակ, նրա ջուրը մաքուր չէր համարվում, հավաքվում էր գերեզմանատան շրջանից: Ռուսի աղբյուր էր կոչվում, որովհետև գորանոցում բնակվող ռուս զինվորները ջուրը այնտեղից էին վերցնում



վրա, և հաշվի առնենք, որ Փոքր Կովկասի սահմաններում անտառային գոտին տարածվում է մինչև 1800-1900մ բարձրությունը, և միաժամանակ նկատի ունենանք, որ Շուշու շրջակայքում շատ կան համատարած խառն անտառներ, այդ դեպքում պետք է համարել, որ Շուշին ամբողջապես ընկած է խառն անտառների գոտում և չի բարձրանում մինչև մերձալպյան մարգագետինների գոտին: Բայց այդ դեպքում ինչո՞վ կարելի է բացատրել, որ քաղաքի բնակեցված մասից ավելի բարձր ընկած լեռների լանջերը այժմ բոլորովին անտառազուրկ են¹:

Մի շարք ցուցմունքների համաձայն (որոնց ճշտության մեջ ես վստահ չեմ)՝ այն տեղը, որտեղ իբր թե 1752թ. հիմնադրվել է Շուշի քաղաքը, մինչև այդ եղել է Շոշ (Շուշիքենդ) գյուղի արտատեղին, ուրեմն նա անտառազուրկ է եղել դարեր շարունակ՝ քաղաքի հիմնադրումից առաջ ևս²:

Բայց ինչո՞ւ Շուշու բարձրության վրա այժմ չկան և դարեր առաջ չեն եղել անտառներ, մինչդեռ Շուշու դիմաց ընկած լեռների լանջերին (Քարին տակ գյուղից վեր) անտառներ կան՝ նույնիսկ ավելի բարձր ընկած լեռների լանջերին: Արդյո՞ք դա լեռների տարբեր տեղադրման հետևանք չէ: Կամ գուցե դա բացատրվում է Շուշու պլատոյի երկրաբանական կազմվածքով, այն հանգամանքով, որ նա կրաքարի շերտերից է, որոնք մեծ խորությամբ ներս են ծծում հողի վերին շերտերի մակերեսային ջրերը, ջրազուրկ անում այդ շերտերը և նրանց անպետք դարձնում անտառների աճման համար, իսկ խոտի ծածկույթն այնտեղ առկա է: Գուցե այստեղ ծառերի աճին խանգարում են չափազանց աննշան բուսահողի շերտը և նրա տակ գտնվող ժայռոտ բնահողը: Կամ գուցե Շուշու սարահարթի լանջերին մինչև բերդի հիմնադրումը (կամ նրանից հետո), այնուամենայնիվ, անտառներ են եղել, իսկ հետո են կտրտել³: Այդ կարող էր լինել նույնիսկ քաղաքի հիմնադրումից առաջ՝ խաշնարածների ձեռքով:

Մեր՝ այստեղ առաջադրած հարցերը պահանջում են քննել և պարզաբանել, որը կարելի է անել մանրակրկիտ հետազոտության միջոցով, մասնավորապես Շուշու պլատոյի անտառազուրկ լանջերին հողային ծածկույթի մանրամասն հետազոտության միջոցով: Գործին կօգնի նաև երկրաբանական, հողային և բուսական անալիզը Կլոբ թմբի շրջանում («Պյուլուր թումբ»)՝ քաղաքից վերև գտնվող ուղեկալի մոտ, դեպի Բոխի աղբյուր տանող ճանապարհին, նաև քաղաքից ցածր գտնվող ժայռերի վրա, որոնք նույնպես անտառազուրկ են (Շուշուց ցած իջնող խճուղու զիզգագների վրա):

¹ Նկատի ունեմ և՛ քաղաքի նախկին հայկական մասը՝ մինչև 1920թ. զբոսայգուց վերև ընկած տարածությունը, որտեղով անցնում է դեպի Քարին տակ գյուղը տանող լեռնային ճանապարհը («Քերծի գյուղ»), և՛ այն բարձրությունները, որոնք ընկած են 1400-1600մ բարձրությամբ, օրինակ՝ Ջըղըր դուզի մոտակայքը

² Мирза Дживаншир Карабахский, **Карабах-наме (История Карабаха)**, Баку, 1959, стр. 73

³ 1902-21թթ. օրինակը ցույց է տալիս, որ վառելիք ձեռք բերելու դժվարությունները ստիպեցին ավերումից ողջ մնացած տների տերերին (հայերին) քանդելու իրենց տները և շալակով փայտը կրելու աղբբեջանական մասը՝ այնտեղ որպես վառելիք վաճառելու համար. 1920թ. քաղաքի ավերման ժամանակ կտրտված էին հայկական մասի բոլոր ծառերը և այն վառելանյութի վերածած

ԳԼՈՒԽ II

ՇՈՒՇԻՆ ԱՆՑՑԱԼՈՒՄ, ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Շուշին հին քաղաք չէ: Համաձայն աղբյուրների¹ նա հիմնադրվել է XVIII դարի կեսերին Փանահ խանի կողմից՝ որպես բերդաքաղաք, Շուշու բարձրավանդակի վրա: Շուշու բարձրավանդակը անմատչելի դիրք ուներ, որը հարևան հայկական Շոշու (Շուշիքենդ) գյուղի վարելատեղն ու արտավայրերն էր ներկայացնում: Վարանդայի հայ Մելիք-Շահնազարն այն նվիրել էր իր դաշնակից Փանահ Ալի խանին՝ այնտեղ բերդ հիմնելու համար: Նոր կառուցած բերդաքաղաքը կոչվում էր սկզբում Փանահաբադ, իսկ հետո վերանվանվեց Շուշի կամ ավելի ճիշտ՝ տեղական ժողովրդական լեզվով՝ «Շոշվա դալա»:

Շուշու բերդաքաղաքի հիմնադրման և բնակեցման ճշգրիտ տարեթվի մասին մեր պատմության մեջ սկզբում փոքր տարածայնություն կար, բայց ընդհանրապես Շուշու հիմնադրումը համարում էին XVIII դարի հիսունական թվականները²:

Դեռևս Լեոն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի 75-ամյակի նվիրված իր աշխատության մեջ գրում է. «Անհավանական է, որ քաղաքը Շուշի անունը՝ «Շոշվա-դալա», ստացել է Շուշու հայաբնակ փոքր գյուղի անունից, այլ, ընդհակառակը, հավանականորեն գյուղը բերդից պիտի ստացած լինի իր անունը, իսկ բերդը, հավանականորեն, գոյություն է ունեցել հին ժամանակներում»³:

Կ. Ա. Էզովի հրատարակած փաստաթղթերի ժողովածուում, որ քաղված են արտաքին գործերի մինիստրության Մոսկվայի, Պետերբուրգի և մի շարք այլ արխիվներից, գտնվում է մի փաստաթուղթ (կազմված 1725թ. դեկտեմբերի 17-ին, N 281), որտեղ խոսվում է այն մասին, որ քյոխվա Չելեբին նախորդ տարին ուղարկված է եղել հանձնելու ռուսաց կառավարության պատասխանը հայ մելիքներին և յուզբաշիններին: Չելեբին հաղորդում է, որ կատարել է այդ հանձնարարությունը՝ հանդիպելով Ավան յուզբաշու հետ Շոշ գյուղի մոտ, որը «շրջապատված է քարե լեռներով»⁴: Իր մի այլ աշխատության մեջ Լեոն նորից անդամ է իր՝ 1914թ. Ղարաբաղի թեմական դպրոցի պատմության մեջ ասածները. «Անհավանական է թվում,- ասում է նա,- որ (Շուշի) բերդի տեղն ամայի և անբնակ էր մինչև Փանահ խանի երևան գալը: Բնչպես գիտենք, այս կողմերում էր գտնվում հայոց Փոքր Սղնախը, և հայ զինվորությունն, անշուշտ, չէր կարող անուշաղիթ թողնել այդ ամուր բարձրությունները»⁵:

Հենվելով Էզովից մեր բերած փաստաթղթերի վրա, Լեոն ավելացնում է. «Այս ցուցումը կասկած չի թողնում, որ Շուշին Ավան յուզբաշու ժամանակ գտնվում էր այն ժայռապատ բարձրության վրա, որ հետո դարձավ «Շոշվա դալա», հետևաբար այժմյան Շուշու գյուղն իր անունը բերդից է ստացել, քան թե անուն է տվել նրան»:

¹ Мирза Джамал Дживаншир Карабахский, *История Карабаха*, Баку, 1959, стр. 73

² Այսպես, ըստ պատմաբան Լեոնի (Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914)՝ Շուշին հիմնվել է 1750-1752թթ., ըստ նրա մյուս աշխատության՝ (Պատմություն հայոց, հատոր 3, Երևան, 1946՝ 1752-1754թթ. ըստ Միրզա Ջալալ Ջիվանշիրի (Ղարաբաղի պատմություն, Բաքու, 1959) և Միրզա Ադիգյոզալ Բեկի (Мирза Адигезалибек Карабахский, История Карабаха, Баку, 1950՝ 1756-1757թթ.՝ մուսուլմանական՝ 1170), ըստ Աղբյուրների պատմության I հատորի («История Азербайджана», I том, Баку, 1958)՝ Փանահաբաղի (Շուշու) բերդի կառուցումը սկսված է 1750թ., ավարտված՝ 1756-1757թթ.

³ Լեոն, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1838-1913թթ. Հրատարակություն նույն դպրոցի հոգաբարձության*, Թիֆլիս, 1912, էջ 60

⁴ Эзов К. А., *Сношения Петра Великого с армянским народом*, 1898, Санкт-Петербург, с. 429

⁵ Լեոն, *Պատմություն հայոց*, հատոր 3-րդ, Երևան, 1946, էջ 758



Լեոյից հետո այդ հարցին է անդրադառնում ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, որը մի շարք նոր փաստաթղթերի հիման վրա հաստատում է, որ Շուշին, անշուշտ, գոյություն է ունեցել Փանահ խանից առաջ: 1959թ. լույս տեսած իր երկհատորանոց աշխատության մեջ Ա. Հովհաննիսյանը գրում է հետևյալը. «*Հին մի ժամանակագիր հաղորդում է, թե Ավան յուզբաշին եկավ «Շոշվա քարն մտավ սահր խուրուշ իլավ ՌՃԿԶ թ. (1717 թ.)»*¹: Խոսքն այն մասին է, որ այդ տարում, ամրանալով Շոշվա դալայում, որ սկզբնապես «Քարի գլուխ» էր կոչվում, Ավան յուզբաշին խուրուշի (հոչակի) տեր դարձավ: Անշուշտ, Ավան յուզբաշին կարող էր Շիրվանից Ղարաբաղ անցած լինել այդ թվականից ավելի առաջ²: Այստեղից հետևում է, որ Շուշին (Քարի գլուխ), որպես բնակավայր, գոյություն ունի 1717 թվականից, եթե ոչ ավելի առաջ:

Ավան յուզբաշին ամրացնում է այդ բնակավայրը՝ հարձակումներից պաշտպանվելու համար: Եվ հիրավի, 1726թ. Քարի գլխի (հետագայի Շուշու) վրա հարձակում են գործում տաճիկները և, ներխուժելով այդ բերդը, դուրս են բշում այնտեղից Ավան յուզբաշու ջոկատները, իսկ Ավան յուզբաշին քաշվում է իր եղբոր՝ Թարխան յուզբաշու սղնախը:

Այսպիսով, Ա. Հովհաննիսյանի վկայակոչած փաստաթղթերը հաստատում են Լեոյի այն ենթադրությունը, որ Շուշին, որպես բնակավայր ու բերդ, չէր կարող գոյություն չունենալ մինչև Փանահ խանի՝ այդ քաղաքում հաստատվելը, այլ եղել է Փանահ խանի հանդես գալուց առնվազն մի քանի տասնյակ տարի առաջ: Անհավանական չի լինի ենթադրել, որ Շուշին գոյություն է ունեցել նույնիսկ 1717 թվականից ավելի առաջ:

Խիստ ուշագրավ է նաև մի ցուցում, որ կապված է Շուշու հիմնադրման ժամանակը որոշելու հարցի հետ:

«*Աղբրեջանի ճարտարապետական հուշարձաններ*»³ գրքի երկրորդ հատորում, որ կազմված է հատուկ արշավախմբի նյութերի հիման վրա, ճարտարապետներ Ալիգադեի և Սարգսյանի զեկուցման մեջ կա մի էջ, որտեղ ասված է, որ Շուշին պաշտպանող պարիսպներից ներս՝ «*քաղաքի հարավ-արևելյան մասում, գտնվում են երկու կառուցվածք, որոնք իրենց պլանով որոշ նմանություն ունեն. դա Իբրահիմ խանի ամրոցն է և նրա աղջկա՝ Կարա Բոյուք խանումի ամրոցը: Իբրահիմ խանի ամրոցը չորս կողմից փակված է բերդի պատերով ու աշտարակներով: Բոյուք խանումի ամրոցի պատերում եղել են հրակնատներ: Գլխավոր մուտքի միացման կամարի վրա տրված է ամրոցի կառուցման թվականը՝ հիջրիի 1121թ., այսինքն՝ մեր թվականության 1709-1710թթ.*»: «*Կարա Բոյուք խանումի և Իբրահիմ խանի ամրոցները կառուցված են եղել քաղաքի բերդից առաջ*»:

Թե ինչպես կարող է այդ պատահել, շատ տարօրինակ է ու մեզ անհասկանալի: Չէ՞ որ Շուշի բերդի հիմնադիրը համարվող Ղարաբաղի Փանահ խանը առաջին անգամ մտել է Շուշի XVIII դարի 50-ական թվականներին, իսկ Իբրահիմ խանը նրա որդին է, որի խանությունը սկսվել է միայն 1759թ. և շարունակվել մինչև 1806թ.:

Իբրահիմ Խալիլ խանի և նրա դուստր Կարա Բոյուք խանումի ամրոցների հիմնադրմանը վերաբերող տարօրինակ թվականության արձանագրության մասին գրված է նաև «*Աղբրեջան (պատմական և տեսարժան վայրեր)*» գրքույկում, որտեղ նույնպես ասված է, որ Իբրահիմ Խալիլ խանի և նրա դուստր Կարա Բոյուք խանումի ամրոցները «*կառուցված են XVIII դարի սկզբներին,*

¹ Ա. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, Երևան, 1959, գիրք երկրորդ, էջ 609

² Հմմտ. Խաչիկ Վարդապետ Դադյան, *Ցուցակ հայերեն ձեռագրաց*

³ «*Памятники архитектуры Азербайджана*», том 2, Баку, 1950, Ализаде А. М. и Саркисов А. В., *О некоторых архитектурных памятниках Шуши (по материалам экспедиций, проведенных Управлением по делам архитектуры при Совете Министров Аз. ССР и АН Азерб. ССР, стр. 120-129*



այսինքն՝ 1709/1710 թվականին», ինչպես երևում է մուսքի միացման կամարի վրա մնացած արձանագրությունից¹: Նույն բանը կրկնվում է նաև Սովետական մեծ հանրագիտարանի երկրորդ հրատարակության 48-րդ հատորում (1957թ.), որտեղ գրված է, որ Շուշի քաղաքի հարավարևելյան մասում գտնվում են երկու որոշ չափով իրար նմանվող ամրոցներ, որոնք կառուցված են XVIII դարի սկզբներին²:

Մեր բերած վկայություններից երկու վերջինները, ըստ երևույթին, բխում են առաջին վկայությունից («Աղբրեջանի ճարտարապետական հուշարձանները» գրքից), հետևապես կարիք կա ստուգելու Շուշու հարավարևելյան մասում գտնվող երկու ամրոցների կառուցմանը վերաբերող արձանագրության տարեթիվը, եթե միայն նա պահպանվել է:

Շուշին Ղարաբաղի խանության կենտրոն դարձնելը, ինչպես և Շուշում խանական ամրոցներ կառուցելը չէին կարող XVIII դարի 50-ական թվականներից առաջ կատարված լինել, քանի որ դա հակասում է պատմական բազմաթիվ աղբյուրների տվյալներին, սակայն Շուշու անցյալի պատմությունը լուսաբանելու դեռևս շատ խնդիրներ կան, որոնցով պետք է զբաղվեն մեր պատմաբանները: Մի բան պարզ է, որ Շուշին գոյություն է ունեցել Փանահ խանից առաջ՝ սկզբում որպես գյուղական բնակավայր, իսկ Ավան յուզբաշու ժամանակ՝ որպես բերդ կամ բերդաքաղաք: Իր գոյության այս առաջին շրջանում նա եղել է համեստ բնակավայր և ունեցել է աննշան քանակությամբ բնակչություն³, ունեցել իր զինվորությունը: Հավանական է, որ այդ ժամանակ Շուշու բնակիչները զբաղվել են նաև երկրագործությամբ և խաշնարածությամբ: Շուշու բերդը Փանահ խանի ձեռքն անցնելուց հետո (XVIII դարի 50-ական թթ.) սկսվում է նրա պատմական զարգացման երկրորդ շրջանը: Պարիսպներով և բուրգերով ամրացված Փանահ խանի նոր ամրոցը արագորեն բնակեցվում է Շահբուլաղից և խանական այլ նախկին բերդերից Շուշի տեղափոխված ռայաթներով և բեկերի, զինվորականների, ծառայողների, մելիքների, տանուտերերի ընտանիքներով: Շուշին միանգամից դառնում է Ղարաբաղի խաների՝ Փանահ խանի (մինչև 1758-59թ.), Իբրահիմ խանի (մինչև 1806թ.) և Մեհթի Կուլի խանի (մինչև 1823թ.) աթոռանիստ քաղաքը:

Շուշին զարգանում է նաև որպես Ղարաբաղի վարչական, առևտրական և արհեստավորական կենտրոն: XVIII դարի երկրորդ կեսին ընդլայնվում է Ղարաբաղի խանությունը, աճում է նրա հզորությունը և վերածվում միջնադարյան ֆեոդալական միավորի: Այդ շարունակվում է մինչև 1806թ. (այսինքն՝ մինչև Իբրահիմ խանի սպանվելը, որից հետո փաստորեն հաստատվում է ռուսական տիրապետությունը)⁴:

Շուշու պատմության երկրորդ շրջանում դանդաղորեն զարգանում էին տնայնագործությունը, արհեստները, առևտուրը, թեև Ղարաբաղի խանության գլխավոր հոգսերը պատերազմական գործողություններն էին, խանության ամրապնդումը:

1806 թվականից հետո Շուշին մտնում է իր զարգացման երրորդ շրջանի մեջ, երբ Ղարաբաղում և Արևելյան Անդրկովկասում հաստատվում է ռուսական իշխանությունը, և շուտով խաղաղ զարգացման կյանք է ստեղծվում Անդրկովկասում: Քաղաքում զարգացում են ստանում առևտրական հարաբերությունները թե՛ երկրի ներսում, թե՛ օտար պետությունների հետ, զարգանում են արհեստները, տնայնագործական արտադրությունը: Դրան նպաստում է Շուշի քաղաքի հաղորդակցության ուղիների և կենտրոնների նկատմամբ հարմար տեղադրությունը. քաղաքն աստի-

¹ *Азербайджан (исторические и достопримечательные места)*, Под редакцией М. А. Казиева, Баку, 1960.

² *Большая Советская Энциклопедия*, 1957, том 48, статья о Шуше

³ Եթե Շուշին մեծ բնակավայր լիներ և շատ բնակչություն ունենար, նրա գոյության մասին մենք ավելի շատ տեղեկություն կունենայինք

⁴ Մեհթի Կուլի խանի իշխանությունը ձևական բնույթ էր կրում 1806 թվականից հետո մինչև 1823թ., երբ նա վերջնականապես ընկնում է



ճանաբար զգալի առևտրական հարաբերություններ է սկսում անդրկովկասյան, ռուսական և արտասահմանյան շուկաների հետ: Շուշին, որպես քաղաք, աստիճանաբար բարեփոխվում է, տարածվում և աճում՝ գրավելով բավականին պատկառելի դիրք Անդրկովկասի այլ քաղաքների շարքում:

Այս շրջանում Շուշին հիմնականում ոչ թե բերդ է կամ խանության նստոց, նրա հիմնական ֆունկցիան ոչ թե պատերազմներ մղելն է, թեև պատերազմական գործողություններ դեռևս տեղի են ունենում, այլ Շուշին առևտրական և արհեստների կենտրոն է, լայն կապերով կապված է այլ քաղաքների հետ, նա դեռևս չի ավարտել իր միջնադարը, բայց տնտեսական զարգացման լայն ուղի է դուրս եկել: Զգալի չափերի է հասել և նրա բնակչության քանակը, փոխվել է ազգային կազմը, ավելացել է քաղաքի բնակչության մեջ հայերի տոկոսը, թեև դեռ գերակշռում են մահմեդականները:

XIX դարի երկրորդ կեսը ներկայացնում է Շուշի քաղաքի զարգացման չորրորդ շրջանը, որը նախախորհրդային Շուշու տնտեսական և կուլտուրական աճի բարձրագույն աստիճանն է, երբ քաղաքի բնակչության քանակը հասնում է իր բարձրակետին: Քաղաքի տնտեսությունը նույնպես խիստ աճում է, բայց այդ աճն արտահայտվում է հիմնականում առևտրի և տնայնագործության, բայց ոչ արդյունաբերական արտադրության մեջ:

Անդրկովկասում սկսում են զարգանալ ուրիշ հզոր տնտեսական, մասնավոր արդյունաբերական կենտրոններ, ինչպես օրինակ՝ Բաքուն (մասնավորապես 70-ական թթ), Թիֆլիսը և ուրիշներ, որով Շուշի քաղաքի տեսակարար կշիռը Անդրկովկասի քաղաքների մեջ սկսում է ընկնել: Միաժամանակ սկսում են նշմարվել առևտրական այլ ուղիներ, նոր հաղորդակցության միջոցներ, որոնք Շուշուց հեռու են մղում նախկին բեռնաշրջանառությունը թե՛ դեպի հեռավոր, թե՛ դեպի մոտավոր կենտրոնները:

XX դարի առաջին երկու տասնամյակներին Շուշի քաղաքը, զգալի չափով կորցնելով իր տեսակարար կշիռը Անդրկովկասում և Ղարաբաղում, հասնում է լիակատար անկման: 1905-1906թթ. հայ-ադրբեջանական ազգամիջյան ընդհարումներն ու 1918-1920թթ. արյունոտ դեպքերը հասցնում են Շուշի քաղաքի հայկական մասի լիակատար ավերմանը. Շուշին դատարկվում, քայքայվում և անճանաչելի է դառնում:

ՇՈՒՇՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Շուշու բնակչության հարցը և նրա զարգացման դինամիկան ըստ պատմական էտապների քննելուց հետո անցնենք այն խնդրին, թե ինչպիսի քաղաքական և տնտեսական զարգացման շրջաններ է ունեցել Շուշի քաղաքն իր ծագման սկզբից մինչև մեր օրերը՝ պահպանելով քաղաքի պատմության նույն ժամանակագրությունը, որ մենք նշել ենք նախորդ էջերում:

ա) Շուշին մինչև Ղարաբաղի խանության կենտրոն դառնալը

Շուշին մինչև Ղարաբաղի ադրբեջանական խանության կենտրոն դառնալը գոյություն է ունեցել լինելով ավելի շատ որպես բերդ. այդ մենք կասկածից դուրս ենք համարում, որովհետև այդ բնակավայրի գոյության մասին ունենք մի շարք պատմական վկայություններ, որոնց մասին արդեն խոսել ենք նախորդ գլուխներում: Շուշին անցյալում հավանականորեն Ղարաբաղի փոքր բերդերից մեկն է եղել մինչև նրա՝ Փանահ խանի խանության կենտրոն դարձնելը: Պետք է ենթադրել, որ նա ունեցել է զինվորական կազմակերպություն, այնտեղի բնակչությունը, անշուշտ, խաղաղ տարիներին ունեցել է իր տնտեսական զբաղմունքները, որոնք ամենայն հավանականությամբ ավելի մոտ պետք է լինեին գյուղացիական զբաղմունքներին:



բ) Քաղաքի հասարակական և տնտեսական կյանքը Ղարաբաղի խանության քաղաքական կենտրոն դառնալուց հետո

XVIII դարի հիսունական թվականներին Շուշին դառնում է ուժեղ բերդաքաղաք՝ շրջապատված ամուր պարիսպներով ու բուրգերով, և պատրաստվում է հենց առաջին հարկ եղած դեպքում դեմ առնել Ղարաբաղի նոր հիմնադրված, ավելի ճիշտ իր վարչական կենտրոնը Բայաթից, ապա Շահբուլաղից Շուշի փոխադրած խանության բազմաթիվ թշնամիներին: Պաշտպանության համար հարմար և անառիկ բնական դիրք ունենալով՝ ամրություններով ու պարիսպներով շրջապատված քաղաքը դառնում է Ղարաբաղի խանության վարչական կենտրոնը, որը համառ պայքար է մղում իր տարածքն ընդլայնելու և հզորությունն ամրապնդելու համար:

Քաղաքներն այն ժամանակ տիպիկ միջնադարյան քաղաք-ամրոցներ էին, որոնք ծառայում էին պաշտպանությանը, իսկ հաջողության դեպքում՝ հիմք դառնում հարձակողական գործողություններ սկսելու համար: Ուստի բնական է, որ այն ժամանակ կամ նրանից առաջ ծագած համարյա բոլոր քաղաքները բերդաքաղաքներ էին՝ ամբողջապես շրջապատված պարիսպներով, խանդակներով և պաշտպանողական այլ կառույցներով, կամ ունեին իրենց միջնաբերդը քաղաքի ներսում: Այդպիսի քաղաքներ էին Նուխին, Շամախին, Բաքուն, Գանձակը, Երևանը, Գյումրին (Ալեքսանդրապոլը), Թիֆլիսը, Գորին, Ախալցխան, Քութայիսը և շատ ուրիշներ:

Շուշին բազմաթիվ այլ բերդաքաղաքների մեջ ավելի ուշ է սկիզբ առել, բայց, շնորհիվ իր բնական ամրության ու Ղարաբաղի խաների առաջին պատերազմական հաջողությունների, խիստ բարձրանում է հարևան խանությունների մեջ և առաջնակարգ դիրք գրավում նրանց համեմատությամբ: Շուշին, որպես բերդաքաղաք, Լեռնային Ղարաբաղի հայ մելիքների դեմ մղված պայքարում առանձնապես մեծ ծառայություն է մատուցել Ղարաբաղի առաջին խաներին՝ Փանահ խանին, Իբրահիմ Խալիլ խանին:

Բերդաքաղաք Շուշին պետք է ունենար միջնադարյան քաղաքի և այլ տիպիկ հատակագծեր: Խաների տիրապետության ժամանակ Շուշին ավելի շուտ պիտի նմանվեր գյուղի, որն ուներ որոշ տարածությամբ ցանքեր, այգիներ և արոտավայրեր: Ճիշտ է, այդպիսի գյուղատնտեսական հողահանդակները Շուշի քաղաքում չէին կարող մեծ տարածություն գրավել, որովհետև քաղաքի տարածքը, որը տեղադրված էր ծովի մակերևույթից 1300-1500մ բարձրության վրա և խիստ սահմանափակ տարածություն էր գրավում լեռնային պլատոյի գագաթին, գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար շատ քիչ հարմարություններ ուներ, այնուամենայնիվ, այն ժամանակ՝ բերդաքաղաքի գոյության առաջին շրջանում, երբ նրա մշտական բնակչությունը դեռ սահմանափակ էր և ազատ ու չբնակեցված տարածությունները՝ համեմատաբար շատ, քաղաքի բնակչության մի մասի՝ գյուղատնտեսությամբ զբաղվելը կասկածից դուրս պետք է համարենք, բայց, անտարակույս, սահմանափակ չափերով:

Սակայն Շուշու բնակչության հիմնական զբաղմունքն արհեստն էր, իսկ հետագայում՝ նաև առևտուրը: Նախ և առաջ Շուշին, որպես բերդաքաղաք, պահանջում էր մեծ քանակությամբ կառուցող բանվորական ուժեր՝ քարտաշներ, որմնադիրներ, աստղձագործներ և այլ արհեստավորներ, որոնք աշխատում էին բերդի շրջապատը, բուրգերը, պալատները, բնակելի տները, բաղնիքները, եկեղեցիները, մեչիդները և այլ շենքեր կառուցելու համար: Միրզա Ջամալ Ջիվանշիրը իր «Ղարաբաղի պատմություն» գրքի վերջում հատուկ գլուխների մեջ, որ կոչվում են «Հանգուցյալ Փանահ խանի և Իբրահիմ խանի կառուցած հուշարձանների և շենքերի մասին»,



թվում է նաև այն հուշարձանները, որոնք կառուցվել են այդ խաների ժամանակ¹, ընդ որում՝ նա Փանահ-խանին վերագրում է *«Բայաթ ամրոցի կառուցումը իր շուկայով, պարիսպներով և շենքերով, որ շինված է թրձած աղյուսից, և Շահբուլաղ ամրոցի կառուցումը՝ աղբյուրի մոտ շինված մեչիդով, բաղնիքով, քաղաքի շենքերով և շուկայով, որոնք շինված են քարով ու կրով»*:

Միրզա Ջամալ Ջիվանշիրը վերը նշած գրքում հաղորդում է, որ Փանահ խանը կառուցել է նաև *«նախկին Շուշու բերդի պատերը և այն շենքերը, որ այժմ օգտագործվում են որպես հացահատիկների պահեստ «գորքերի համար»*, իսկ *«Իբրահիմ խանը 1182 մուսուլմանական թվականին (մ.թ. 1768-69թթ.) կառուցել է Շուշու մեչիդը, և երբ վերջինս հնացել է, Իբրահիմ խանի դուստր Գյուլար խանումն այն վերականգնել է, և առաջվանից ավելի գեղեցիկ է դարձել»*: Այնուհետև Միրզա Ջամալը հաղորդում է, որ Իբրահիմ խանը կառուցել է Շուշի բերդաքաղաքի պատերը (1783-1784թթ.), իսկ Շուշի քաղաքից դուրս էլ՝ մի շարք պարիսպներ (Ասկերանում, խանի դաշում՝ Խանաբադում, Աղդամում, Խազնա կոչված վայրում և այլն): Բացի Միրզա Ջամալ Ջիվանշիրի վկայությունից՝ մենք այժմ էլ Շուշում գտնում ենք այդ բերդաքաղաքի կիսաավերված փլատակների մնացորդները, որոնք մի ժամանակ շրջապատում էին քաղաքը, նաև Շուշին պաշտպանող բուրգերն ու դարբասները: Քաղաքի շրջապատի պարիսպների բարձրությունը հասնում էր 6-8 մետրի: Պահպանվել են նաև Իբրահիմ խանի և նրա դուստր Կարա Բոյուք խանումի ամրոցների մնացորդները, նաև մի շարք այլ հուշարձաններ, որոնք վերաբերում են Ղարաբաղի առաջին խաների ժամանակներին:

Կանգ չառնելով XVIII դարի երկրորդ կեսում Շուշի քաղաքի կառուցողական արվեստի գնահատության խնդրի վրա՝ անցնենք մեր անմիջական հարցին՝ բնակչության պրոֆեսիոնալ կազմին և զբաղմունքին:

Չունենալով անմիջական ստույգ տվյալներ Շուշու բնակչության պրոֆեսիոնալ կազմի քանակի մասին Ղարաբաղի խանության օրերին՝ մենք, այնուամենայնիվ, մի քանի հանրաձայնորեն փաստերի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ քաղաքի բնակչությունը պետք է կազմված լիներ հետևյալ հիմնական խմբերից.

1. Առաջին խմբի մեջ մտնում են խանն ու նրա մերձավորները, խանական վարչության ծառայողները, զինվորականները, բեկերն ու աղալարները, նոքյարները և այլն: Այս խումբը չէր կարող կազմել Շուշի քաղաքի մշտական բնակչության զգալի մասը, թեև երբեմն նա կարող էր աճել զգալի քանակությամբ (պատերազմական գործողությունների, արշավանքների օրերին և այլն):

2. Պաշտամունքի սպասավորները (մահմեդական, քրիստոնյա) կազմում էին անաշխատ բնակչության երկրորդ խումբը, որ նույնպես ինքնըստինքյան բազմամարդ լինել չէր կարող:

3. Ղարաբաղի խանության ժամանակաշրջանում Շուշու բնակչության մեծ մասը կազմում էին արհեստավորները, որոնց վրա ծանրանում էին հիմնական աշխատանքները: Նրանք պետք է կառուցեին բերդի պարիսպներն ու բուրգերը, պալատներն ու սովորական շենքերը թե՛ տիրող դասակարգի և արտոնյալների, թե՛ հասարակ զինվորականների ու բերդում բնակվողների համար, նրանք պետք է ճանապարհներ շինեին գորքի փոխադրության համար, պետք է զենք մատակարարեին, ծառայեին գյուղական բնակչության կարիքներին: Նոր քաղաք կառուցելը, նրա համար նորանոր կապեր հաստատելը խանության մոտավոր ու հեռավոր շրջանների հետ Ղարաբաղի խանության նոր կենտրոնի առաջ դնում էին նորանոր խնդիրներ: Այս բոլորը պետք է կատարվեր արհեստավորների ձեռքերով: Քաղաքում բնակչություն հաստատած արհեստավորու-

¹ Мирза Джалал Дживаншир Карабахский, *Карабах-наме* (История Карабаха), Баку, 1959, стр. 101-102



թյունը Շուշում գտավ աշխատանքի մեծ պահանջ և անհրաժեշտ շինանյութեր՝ բերդերը կառուցելու, պարիսպներով շրջապատելու և հոյակապ պատեր բարձրացնելու՝ շնորհիվ այն կրաքարի, որից կազմված էր Շուշու սարահարթը, որը հիմք էր ծառայում կիր ստանալու համար, իսկ անհրաժեշտ փայտանյութերը կարելի էր ստանալ շրջակա անտառներից:

Շուշու հիմնադրման սկզբնական շրջանում բնակչության արհեստավորական մասսան գլխավորապես պետք է զբաղված լիներ կառուցողական աշխատանքներով, այսինքն՝ պետք է կազմված լիներ քարտաշներից, որմնադիրներից, ատաղձագործներից, փականագործներից, դարբիններից և այլն, իսկ ժամանակի ընթացքում, երբ ավելանում էր քաղաքի բնակչությունը և բազմանում էին նրա պահանջները, արհեստները պետք է բազմազան դառնային, և առաջանային նորանոր մասնագիտացումներ, օրինակ՝ կաշեգործներ, գլխարկագործներ, դերձակներ, պղնձագործներ, կլայեկչիներ, թամբագործներ, ոսկերիչներ և այլն:

Պատկերացնել, թե ինչպիսի արհեստներով է զբաղվել Շուշու բնակչությունն այդ ժամանակաշրջանում, մեզ օժանդակում է XIX դարի հիսունական թվականների՝ մեր ձեռքի տակ գտնվող արհեստավորների պրոֆեսիոնալ կազմի ցուցակը և արհեստներով զբաղվողների քանակը: Ցուցակի մեջ դժվար է մատնանշել մի արհեստ, որը գոյություն չունենար XVIII դարի երկրորդ կեսին¹:

Սակայն դրանցից բացի, անշուշտ, մենք ուղղակի տվյալներ ունենք, որ վերաբերում են XVIII դարի երկրորդ կեսին և վկայում են Շուշու արհեստավորների կազմի մասին:

Բաֆֆու «*Խամսայի մեղիքությունները*»² աշխատության մեջ մենք հանդիպում ենք մի պատմության՝ ոսկերիչ Մելքումի մասին, որը առասպելական պայքար է մղում Ղարաբաղի խաների տիրապետության դեմ, և որի մասին ասված է, որ նա շուշեցի էր (էջ 252): Մեզ համար այդ փաստը նշանակալից էր այն տեսակետից, որ Իբրահիմ խանի ժամանակ Շուշում եղել են ոսկերիչներ:

Ղարաբաղի խաները դրամահատման իրավունք ունեին, և իրենք հատում էին արծաթե և պղնձե դրամներ (ոսկե դրամների հատման իրավունքը վերապահվում էր միայն շահին):

Թե ինչպիսի ներքին կազմակերպություն է ունեցել Շուշու արհեստավորությունը Ղարաբաղի խաների տիրապետության ժամանակ, դժվար է հաստատ ասել, բայց պետք է ենթադրել, որ արհեստավորների այն համքարական կազմակերպությունը, որ եղել է Շուշում ցարական կառավարության ժամանակ, մոտավորապես նույն պատկերն է ունեցել, ինչ որ եղել է Ղարաբաղի խանության օրերին:

Ինչպես պարզ երևում է հայկական աղբյուրներից, որոնք հաղորդում են Շուշում բնակչություն հաստատած հայերի կազմի ու զբաղմունքների մասին, դրանք գլխավորապես արհեստներով ու վաճառականությամբ զբաղվողներ էին, դազանչիներ, այսինքն՝ կաթսաներ պատրաստող պղնձագործներ, որ եկել էին Շահկերտ գյուղից և, ինչպես Լեոն է ասում, «*նշանավոր էին իրենց ընդունակություններով*»³, կային ագուլխեցիներ, այսինքն՝ Ագուլխից գաղթածներ, այն վայրից,

¹ «Кавказский календарь на 1852г.», Чтисутанстինովիչի հոդվածը Շուշու մասին, էջ 430-435

² Բաֆֆի, **Երկեր**, հ. 10, Հայպետհրատ, Երևան, էջ 240, 248, 252

³ Ղարաբաղի խաները ահագին կարողության տեր էին և մեծ եկամուտ էին ստանում իրենց ունեցվածքից: Միրզա Ջամալ Ջիվանշիրը «Ղարաբաղի պատմության» մեջ Իբրահիմ խանի եկամուտների մասին գրում է հետևյալը. «Հիշում եմ, մի անգամ հաշիվ տեսնելուց պարզվեց, որ խանը այնքան անասուն ու գութաններ ունի, որքան Ղարաբաղի ամբողջ բնակչությունը միասին վերցրած և նույնիսկ երկու գույզով ավելի, քան նա» (էջ 103): Իբրահիմ խանի մոտ «կային 3-4 հազար զլուխ մատակ ձի և համապատասխան քանակությամբ գտարյուն արտադրողներ, իսկ ոչխարների, կովերի և էգ գոմեշների քանակը այնքան մեծ էր, որ հաշվի չէր ենթարկվում» (էջ 104): Լեոն, **Պատմություն հայոց**, հ. 3, էջ 762



որը «Հին Ջուղայից (Ջուլֆայից) հետո ամենախոշոր առևտրական համայնքն է ներկայացնում»¹, և մեղրեցիներ, որոնք նույնպես հայտնի էին արհեստներով և վաճառականությամբ:

Եվ ահա տեղափոխված հայերը զբաղվում էին արհեստներով և առևտրով, և թեև առևտուրը Ղարաբաղի խանության օրերին չէր կարող հասնել մեծ չափերի, բայց և այնպես նա սկսում է աստիճանաբար ծավալվել, իսկ ռուսական տիրապետության ժամանակ նա այնպիսի չափերի է հասնում, որ ապահովում է առևտրականների գերակշռությունը մնացած հասարակական խավերի նկատմամբ, և Շուշին արդարացի կերպով ստանում է առևտրական կենտրոնի հռչակ²:

Այն, ինչ որ մենք ասացինք Ղարաբաղի խանության ժամանակ Շուշում հաստատված առաջին հայ բնակչության մասին, նույնը մասամբ արդարացի է նաև Շուշու մահմեդական բնակչության նկատմամբ: Անշուշտ, արհեստներն ու առևտուրը XVIII դարի երկրորդ կեսին պետք է սկսեին զարգանալ նաև քաղաքի մահմեդական բնակչության մեջ, թեև XVIII դարի վերջերին նրանք մահմեդականների մոտ չէին հասել այնպիսի չափերի, ինչպես հայերի:

Այսպես թե այնպես, Շուշին խանության տիրապետության շրջանում ներկայացնում էր տիպիկ միջնադարյան քաղաք, որտեղ բնակչությունը բաժանվում էր համապատասխան դասերի, որտեղ իշխող էր խաների, բեկերի, աղալարների տիրապետող դասը, այնուհետև հետևում էր հոգևորականների դասը և վերջապես, արհեստավորների և վաճառականների, այսպես կոչված, երրորդ դասը, որն աստիճանաբար կազմակերպվում էր և գորեղանում³:

XIX դարի ընթացքում արդեն ռուսական տիրապետության ներքո առանձնապես ուժեղանում էին առևտրականները, որոնք իրենց ձեռքն են հավաքում գերիշխանության սանձը, որքան դա հնարավոր էր ցարական ինքնակալության պայմաններում:

Այսպիսով՝ XIX դարի սկզբում Շուշին իրենից ներկայացնում էր միջնադարյան քաղաքի յուրահատուկ արևելյան առանձնատեսակը, որտեղ պահպանվում էին հին դասերի իրավունքներն ու արտոնությունները, բայց միաժամանակ ծնվում և ուժեղանում էին հասարակական նոր խավեր, իսկ քաղաքն աստիճանաբար դառնում էր արհեստի և առևտրի կենտրոն, որը սկսում էր կարևոր դեր խաղալ նույնիսկ Ղարաբաղի խանության սահմաններից դուրս:

գ) Հասարակական կյանքը և տնտեսությունը XIX դարի առաջին կեսին

Երբ XIX դարի սկզբում Արևելյան Անդրկովկասը և դրա հետ նաև Շուշի քաղաքն անցան ռուսական կառավարության կազմի մեջ, այդ հանգամանքը նշանակալից եղավ այն տեսակետից, որ Անդրկովկասում շուտով դադարեցին անվերջ պատերազմական գործողությունները: Ռուսական հզոր իշխանության ներքո Ղարաբաղում ևս հաստատվեց խաղաղ կյանք, որը բարենպաստ էր երկրի տնտեսական զարգացման համար⁴:

Շուշում ռուսական գերիշխանության հաստատումից հետո (1805թ.) միայն մի քանի տարի էր անցել, և մենք տեսնում ենք, որ առևտրական կապիտալը Շուշում այնպիսի խոշոր ուժ է ներկայացնում, որ հայ հասարակական գործիչ և պատմագիր Մեսրոպը Թաղիադյանը նրա մասին հիացմունքով է խոսում: Թաղիադյանը, 1821թ. Եփրեմ կաթողիկոսի հետ գտնվելով Շուշի քաղաքում, պատմում է, որ Շուշում այն ժամանակ բնակվում էին երկու վաճառաշահ տներ, որոնք

¹ Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի*, Թիֆլիս, 1914, գլ. 3 (Շուշվա դալա):
² «1826թ. ռուս-պարսկական պատերազմից առաջ Շուշին ստացել էր վաճառականական քաղաքի հռչակ», -գրում է Լեոն իր նույն աշխատության մեջ (*Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի*, գլուխ 3 («Շուշվա դալա»))
³ Այստեղ չենք խոսում գյուղացիական աշխատանքներով (հողագործությամբ, անասնապահությամբ և այլն) զբաղվող սակավաթիվ բնակիչների մասին, որոնց հիշատակել ենք վերը, և որոնք Շուշում քաղաքային պայմաններում բազմամարդ լինել չէին կարող
⁴ Ճիշտ է, 1826-1828թթ. նորից վերսկսվեցին ռուս-պարսկական և ռուս-տաճկական պատերազմները, բայց նրանք ավելի ամրապնդեցին ռուսական գեներալ հզորությունը



խոշոր կապիտալների տեր էին և ահագին գործարքներ էին կատարում: Այդ առևտրական տներից մեկը Հախումյանների տունն էր, որը ռուսական կայսրության գանձարանում մոտ մեկ միլիոն ռուբլի փող ուներ և առևտուր էր անում Իրանի, Սիբիրի և Եվրոպայի քաղաքների հետ, ուներ մեծ քանակությամբ գործակատարներ: Երկրորդ վաճառաշահ տունը եղբայրք Զոհրապ և Մեսրոպ Թառումյանների տունն էր, որն արտոնություններ ուներ Կասպից ծովի ձկնորսության և նավագնացության մեջ և ոչ պակաս առևտրական գործեր էր վարում, քան Հախումյանների տունը: Եղբայրք Թառումյաններն իրենց հաշվին Շուշում կառուցել են Ագուլյաց եկեղեցին, թեև իրենք Ղազանչեցվոց ծխին էին պատկանում¹:

Թառումյանի մահից հետո նրան թաղում են «մեծ պատվով, ինչպես Արտաշես Արշակունի թագավորին,- գրում է Թաղիադյանը,- հայոց կաթողիկոսի, եպիսկոպոսների և ժողովրդի ահագին բազմության ներկայությամբ»:

Այս ամենը վկայում է, որ վաճառական խավը արդեն իսկ 1821թ. Շուշում այնքան էր ուժեղացել, որ միլիոնավոր կարողությունների տեր էր համարվում, վայելում մեծ պատիվ ու հարգանք և իր գաղափարախոսությունը պատվաստում բնակչության որոշ խավերին: Բնակչության վաճառական խավը, գոնե հայերի մեջ, այնքան էր աճել, որ նրա համար արդեն նեղ էին դարձել ոչ միայն սեփական քաղաքի, այլ նույնիսկ Անդրկովկասի սահմանները, և Շուշու դրամատերերն իրենց առևտրական գործարքներով արդեն անցել էին Սիբիրի, Իրանի և Եվրոպայի շուկաները²: Շուշու վաճառականների առևտրական կապիտալը ներդրումներ էր կատարում նորանոր ձեռնարկությունների մեջ՝ ձկնորսական, նավագնացության գործում և այլն:

Հետագայում Շուշու ձեռներեց վաճառականության համար պահանջվում են գործունեության ավելի լայն ասպարեզներ, և նրանցից շատերն իրենց ձեռնարկները տեղափոխում են Անդրկովկասի, Ռուսաստանի և արտասահմանի նորանոր վայրեր, այդ նոր վայրերն են տեղափոխվում և իրենք ու միայն ժամանակ առ ժամանակ, մեծ մասամբ ծերության հասակում, վերադառնում են իրենց հայրենի քաղաքը՝ *«ասյրելու իրենց վերջին օրերը՝ որպես քաղաքի հայրեր ու իշխաններ»*:

Ժամանակի ընթացքում խոշոր առևտրականներն իրենց ընտանիքներով վերջնականապես հեռանում են Շուշուց, բնակություն հաստատում այդ քաղաքից դուրս: Նրանց տեղը բռնում են նոր եկվորները, որոնք գալիս են գյուղերից, արհեստներ սովորում ու գործ սկսում և գնում նույն ճանապարհով, ինչպես և առաջինները: Շուշին յուրահատուկ իջևան էր, որտեղ պատրաստվում էին այն տարրերը, որոնք այնուհետև ցրվում էին Ռուսաստանի և այլ երկրների տարբեր կողմերը: *«Առևտրական դասակարգը Ղարաբաղի ազգաբնակչությանը հաղորդակից էր անում շահի և հարստանալու գաղափարին»*, իսկ առևտրական և արդյունաբերական կենտրոնները դառնում էին հարստանալու ասպարեզ: *«Շարժումը տարերային դարձավ»* և *«միմյանց հետևից սկսեցին գնալ և՛ արհեստավորը, և՛ երկրագործը, և՛ մտավորականը»*: *«Որտեղ հաց, այնտեղ կաց»* այս վաճառականական սկզբունքը ամենից մեծ չափով կատարվեց Ղարաբաղում³: Այս բառերով է նկարագրում պատմաբան Լեոն վաճառական դասակարգի զարգացման և տարաբաշխման

¹ Մ. Թաղիադյան, *Ճանապարհորդություն ի Հայս*, Գալկաթա, 1847: Մեսրոպը Թաղիադյանը նկարագրում է Մարկոս Թառումյանի մահը: Մա մահվան մահճի վրա կարգադրում է բերել գանազան մարդկանց պարտամուրհակները, դրանց թվում նաև Էջմիածնի պարտամուրհակը, որը 4000 ռուբլու մուրհակ էր ոսկով, բերել է տալիս նաև երկու քսակ ոսկի, դնում է այդի ուռած ոտի վրա և ասում. *«Ով դու մոլորության չաստված, եթե ույժ ունիս, բժշկիր»*, և այնուհետև պարտամուրհակները վերադարձնում է պարտապաններին, իսկ ոսկին հրամայում է բաժանել աղքատներին

² Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի*, էջ 66 և հետևյալները

³ Նույն տեղում



պրոցեսը և դրա հետ միասին՝ Շուշու բնակչության այլ հասարակական խմբերի նոր տեղաշարժերը¹:

Չճանրանալով Ղարաբաղի հայ բնակչության՝ զանազան երկրներում տարաբաշխման բարդ խնդիրների վրա՝ մատնանշենք, որ այստեղ միանգամայն ճիշտ է նկատվում առևտրական դասակարգի արագ զարգացումը Շուշու հայ բնակչության մեջ և բուրժուական գաղափարախոսության ուժեղ ազդեցությունը բնակչության լայն խավերի վրա:

XIX դարում, անշուշտ, կատարվում է Շուշու բնակչության և նրա տնտեսության արագ աճը: XIX դարի երկրորդ կեսին Շուշին դառնում է Անդրկովկասի խոշոր քաղաքներից մեկը:

Շուշի քաղաքը, որը դեռևս 1846թ. կոչվում էր Կասպիական մարզի Ղարաբաղի գավառի քաղաք (*«уездный город Карабахского уезда Каспийской области»*), արդեն 1852թ. Կովկասի օրացույցում² կոչվում էր Շամախի նահանգի գավառական քաղաք: Իր բնակչության քանակով Շուշին 1852թ. Անդրկովկասի քաղաքների շարքում չորրորդ տեղն էր գրավում՝ զիջելով միայն Թիֆլիսին, Շամախուն և Նուխուն: Շուշին ուներ 12774 բնակիչ, որից 6356-ը՝ տղամարդ, 6418-ը՝ կին: Քաղաքում կային 1846 քարաշեն տուն, 576 խանութ, սալուղիներով իրար հետ կապված 11 փողոց, 6 հրապարակ, 4 քարե և 2 փայտե կամուրջ:

Բնակիչներն իրենց կազմով ներկայացնում էին՝
 ուղղափառ կրոնի հոգևորականներ՝ 1 հոգի,
 հայ-լուսավորչական՝ 37 հոգի, կին՝ 38 հոգի,
 եկեղեցական ծառայողներ՝ 19 հոգի, » 33 հոգի,
 մուսուլման հոգևորականներ՝ 26 հոգի, » 40 հոգի,
 ազնվականներ խանական ընտանիքից՝ 16 հոգի, » 22 հոգի,
 ազնվականներ, բեկեր, չինովնիկներ՝ 10 հոգի, » 8 հոգի,
 » մելիքներ՝ 10 հոգի » 8 հոգի
 քաղաքացիական չինովնիկներ՝ 742 հոգի, » 780 հոգի,
 արքունական գյուղացիներ՝ 3076 հոգի, » 3035 հոգի,
 կավվածատիրական գյուղացիներ՝ 2381 հոգի, » 2452 հոգի³:

Այսպիսով՝ Շուշու բնակչության հիմնական զանգվածը պատկանում էր գյուղացիական դասին, բայց այստեղ խոսքը ծագման մասին է: Կոնստանտինովիչը Շուշու մասին գրած հոդվածում ուղղակի նշում է, որ *«Շուշու բնակիչները, հնարավորություն չունենալով զբաղվելու ո՛չ վարուցանքով, ո՛չ այգեգործությամբ, բացառապես նվիրված են արհեստներին ու առևտրին»* (էջ 434):

Արհեստների տարածումը Շուշուում 1852թ. հետևյալ պատկերն էր ներկայացնում՝
 ասաղձագործներ՝ 7 հոգի,
 հյուսներ՝ 42 »,
 որմնադիրներ՝ 38 »,
 դարբիններ՝ 27 »,
 կաշեգործներ՝ 27 »,

¹ Նույն տեղում

² *Кавказский календарь на 1853г. стр. 430-435 (Կոնստանտինովիչի հոդվածը)*

³³ Կոնստանտինովիչի՝ Շուշու բնակչության քանակի մասին բերած թվերի հանրագումարը իր մանրամասնությունների մեջ չի համընկնում: Ստացվում է մի քանի տասնյակ հոգու տարբերություն, որը չի կարող ազդել մեր եզրակացությունների վրա Շուշու էկոնոմիկայի բնույթի նկատմամբ և բացատրվում է նրանով, որ XIX դարի 50-ական թթ. վիճակագրությունը ստույգ վիճակում չէ: Այսպես, ըստ դասերի, Շուշու բնակիչների թիվը ստացվում է 6318 տղամարդ, 6426 կին, ընդամենը՝ 12774 հոգի, ըստ կրոնի ստացվում է 6310 տղամարդ, 6421 կին, ընդամենը՝ 12731 հոգի, բացի դրանից՝ մի այլ տեղ Շուշու բնակչության մշտական քանակը հաշվված է՝ տղամարդիկ՝ 6356 հոգի, կանայք՝ 6418 հոգի, ընդամենը՝ 12774 շունչ



դերձակներ՝ 52 »,
 գդակագործներ՝ 28 »,
 թամբատակ պատրաստողներ՝ 7 »,
 փականագործներ՝ 20 »,
 պայտառներ՝ 19 »,
 պղնձագործներ և կլայեկներ՝ 13 »,
 արծաթագործներ՝ 24 »,
 ժամագործներ՝ 2 »,
 թամբագործներ՝ 44 »,
 մաշկակարներ՝ 40 »,
 թաղեգործներ՝ 12 »,
 սափրիչներ՝ 25 »,
 ներկարարներ՝ 15 »,
 հացթուխներ՝ 21 »,
 շուկաների խոհարարներ՝ 12 »,
 տեղական հրուշակագործներ՝ 6 »:

Արհեստների և արհեստավորների ամփոփագրից պարզ երևում է, որ արհեստները Շուշի քաղաքում 1852թ. շատ կարևոր տեղ էին գրավում, իսկ արհեստավորների քանակը հասնում էր 481 հոգու: Ահա, այստեղից է պարզվում միջնադարյան Շուշի քաղաքի տիպը:

Շուշում լայնորեն զարգացած էին արհեստները, մինչդեռ քաղաքը գուրկ էր խոշոր արդյունաբերական արտադրությունից: *«Շուշին չի կարող պարծենալ իր ֆաբրիկաներով: Շուշու ֆաբրիկաները տարեկան արտադրում են հազար հատից ավելի մետաքսի և կիսամետաքսի կտորներ, որոնք կոչվում են «դարայի» և «կասաբի» և վաճառվում են տեղում»:* *«Շուշում կա 4 հատ կաշվեգործական դաբաղխանա, 2 աղյուսի գործարան, 3 ներկարան, ֆաբրիկաների և գործարանների համար նյութեր ձեռք են բերում գավառում, իսկ արտադրանքը վաճառում են տեղական բնակիչներին»¹:*

Մինչդեռ արդյունաբերական արտադրանքը Շուշում աննշան չափեր է ունեցել: Բնորոշ է, որ Ղարաբաղի ներսում հաղորդակցության ուղիների թույլ զարգացման պատճառով առևտուրն ընթանում էր արտաքին առևտրի ուղիներով: *«Թավրիզից Շուշի են ներմուծում բամբակամանվածքային հյուսվածքներ, մետաքսի կտորեղեն, մահուղ, թավշյա շալեր, դիպակ, (պարչա) Բաղդադից և Բուխարայից սմուշկաներ (նորածին գառան մորթի), ծխախոտ և այլն: Նիժնի Նովգորոդից ներմուծում են մահուղներ, բամբակե և մետաքսե կտորեղեն, փոքր քանակությամբ ճենապակե և ապակե ամանեղեն, երկաթ, երկաթե և պղնձե շինվածքներ, սկյուռի մորթեղեն, ստեորինի մուկեր, թուղթ և այլն: Թիֆլիսից ներմուծում են շաքար: Իրան արտահանում են հնչեղ դրամ, Ռուսաստան՝ քիչ քանակությամբ մետաքս, աղվեսի և կզաքիսի մորթեղեն: Շուշու բնակիչները, բացառությամբ արհեստավորների և ազնվական բեկերի, զբաղվում են տարբեր տեսակի առևտրով: Կան հարուստ վաճառականներ, -գրում է Կոնստանտինովիչը,- որոնք շրջանառության մեջ ունեն 100-200 հազար և ավելի ռուբլի արծաթե դրամ: Նրանք տրանզիտային առևտուր են վարում Լայպցիգի, Կոնստանդնուպոլսի և Թավրիզի միջև, և շատերը մետաքսի առևտուր են անում Մոսկվայի հետ»:*

¹ Տե՛ս Կոնստանտինովիչի նույն հոդվածը Շուշու մասին



Շուշի քաղաքի բնակչության զբաղմունքների և նրա տնտեսության պատկերը 1852թ., ինչպես տեսնում ենք, շատ ցայտուն է ստացվում: Շուշին XIX դարի կեսերին ներկայանում է մեզ որպես տիպիկ միջնադարյան քաղաք, որտեղ հին արտոնյալ դասակարգերի՝ խաների, բեկերի, ազնվականների և հոգևորականների կողքին լայն զարգացում է ստացել արհեստավորական, տնայնագործական արտադրությունը խոշոր արդյունաբերական ֆաբրիկա-գործարանային արտադրության համարյա լրիվ բացակայության պայմաններում և առևտուրը, որ ստեղծել է հարուստ վաճառականների ուժեղ խումբ և մեծ քանակությամբ մանր առևտրականներ: Խոշոր առևտուրը ստացել է արտաքին առևտրի բնույթ Ռուսաստանի (Մոսկվա, Նիժնի Նովգորոդ և այլ քաղաքներ), Անդրկովկասի (Թիֆլիս) և արտասահմանյան շուկաների (Թավրիզ, Պոլիս, Լայպցիգ) հետ:

Շուշու վաճառականները, որոնք լայն առևտուր էին անում արտաքին շուկաներում, ընդհանրապես շատ քիչ էին արտահանում այն նյութերից, ինչ արտադրում էր Շուշի քաղաքը կամ Ղարաբաղը, այլ առևտրի մեջ միջնորդի դեր էին խաղում՝ կուտակելով ավելի ու ավելի միջոցներ, որոնք շատ չնչին չափով էին հատկացվում քաղաքի կամ գավառի արտադրության լայնացման գործին:

1852թ. վերաբերյալ տվյալները միանգամայն հաստատում են Ս. Թադիադյանի ասածները Շուշում առևտրական կապիտալի զարգացման մասին, որ վերաբերում են XIX դարի 20-ական թվականներին, թեև Թադիադյանը գուցե և քիչ չափազանցնում է Շուշու խոշոր հայ վաճառականների կապիտալի գումարները՝ հաշվելով այն միլիոններով: Շուշու վաճառականների կուտակած կապիտալը XIX դարի 20-ական թվականներից մինչև նույն դարի հիսունական թվականները հազիվ պակասած լինի և միլիոններից հասած մի քանի հարյուր հազարների, այսինքն՝ այն թվերի, որ բերում է Կոնստանտինովիչը, այլ, ընդհակառակը, պետք է ավելացած լինի և, որ գլխավորն է, խոշոր առևտրականների քանակը, անշուշտ, մինչև XIX դարի կեսերը պետք է ավելացած լինի շնորհիվ այն բարենպաստ պայմանների, որ ստեղծված էին չունևոր բնակչության շահագործման համար ցարական ինքնակալության լծի տակ: Ազգաբնակչության առևտրական և արհեստավորական խավերի մեջ սոցիալական հակասությունները նույնպես աճել էին, մինչդեռ քաղաքի արհեստավորները, ինչպես և մանր վաճառականներն ավելի ու ավելի քայքայվում էին, խոշոր առևտրականները գնալով ավելի էին ուժեղանում՝ իրենց ձեռքը հավաքելով քաղաքը կառավարելու սանձերը և նրա կուլտուրական հիմնարկները:

դ) Շուշու տնտեսությունը և հասարակական կյանքը

XIX դարի երկրորդ կեսին

XIX դարի երկրորդ կեսին Շուշին շարունակում էր մնալ Անդրկովկասի ամենախոշոր քաղաքներից մեկը՝ 80-ական թվականներին իր բնակչությամբ զիջելով միայն Թիֆլիսին և Բաքվին: Շուշին նույնիսկ ավելի բնակիչներ ուներ, քան իր նահանգական կենտրոնը՝ Գանձակը (Ելիզավետպոլը):

Շուշու բնակչության զգալի աճին զուգահեռ՝ XIX դարի երկրորդ կեսին անկասկած տեղի է ունենում նաև նրա տնտեսության աճը: Ծավալվում են շինարարական աշխատանքներ, կառուցվում են նոր ու բարեկեցիկ բնակելի շենքեր, աճում է քաղաքային տնտեսությունը, անց է կացվում կոյուղի: Գնալով ընդարձակվում են քաղաքի առևտրական կապերը: Շուշուց խճուղի է անցկացվում մինչև Եվլախ երկաթուղային կայարանը, հաղորդակցության նոր ճանապարհներով կապվում է Զանգեզուրի, Նախիջևանի և Ղափանի հետ: Շուշու վրայով քարավանային ճանա-



պարհ է անցնում, որով քաղաք են տեղափոխվում Նախիջևանի աղը և Ղափանի պղինձը, քաղաքում ստեղծվում են բազմաթիվ խանութներ և առևտրական տներ:

Ինչպես երևում է Բաքվի արքունական պալատի գործից, քաղաքի առևտրի ընդհանուր ստուգման մատյանի համաձայն (սկսված է 1877թ. դեկտեմբերի 3-ից և վերջացրած 1880թ. ապրիլի 12-ին) Շուշիի առաջին մասում (հայկական թաղամասում) կա 371 առևտրական և արդյունաբերական ձեռնարկություն, իսկ երկրորդ մասում (մահմեդական)՝ 581 ձեռնարկություն, միասին վերցրած՝ 952 առևտրական և արդյունաբերական ձեռնարկություններ¹:

Բացի դրանից՝ Շուշի գավառի Ջրաբերդ (Челябюрт) տեղամասի համար (Челябюртский участок Шушинского уезда) բերված են գործատերերի 28 անուն-ազգանուններ և նրանց ձեռնարկությունների բնույթը:

Այս գործը, ինչպես և Բաքվի արքունական պալատի մի այլ գործ, որ վերաբերում է Շուշու գավառին և սկսված է 1876թ. դեկտեմբերի 15-ին ու վերջացված 1877թ. հունվարի 24-ին՝ ուղղված Շուշու գավառապետի կողմից Բաքվի արքունական պալատին², որոշ պատկերացում է տալիս այն մասին, թե Շուշի քաղաքում որքան առևտրական և արդյունաբերական (ավելի շատ արհեստավորական) ձեռնարկություններ կան՝ մատնանշելով նրանց տերերի անուն-ազգանունները և ձեռնարկությունների բնույթը: Քաղաքի ձեռնարկությունների ցուցակը քիչ թե շատ լրիվ է, ինչ վերաբերում է քաղաքից դուրս գտնվող ձեռնարկություններին, ապա նրանց ցուցակը թերի է: 1877-1880թթ. վերաբերող ցուցակներում խոսվում է միայն Շուշի գավառի Ջրաբերդ տեղամասի վերաբերյալ, իսկ մյուս տեղամասի նկատմամբ ոչինչ չի ասվում:

Համենայն դեպս՝ մի բան պարզ է, որ 1880թ. Շուշի քաղաքում կային մոտ 950 առևտրական և արդյունաբերական ձեռնարկություններ, իսկ 1876-77թթ.՝ դրանցից մի քիչ ավելի: Ճիշտ է, այս ձեռնարկությունները արհեստավորական-տնայնագործական էին, իսկ առևտրական ձեռնարկությունների մեջ շատերը՝ մանր խանութներ, բայց առևտրական ձեռնարկությունների տերերի մեջ կային նաև խոշոր մանուֆակտուրիստներ, գալանտերիայի առևտրականներ, այլևս չեմ խոսում այն մասին, որ կային նաև գործարանատերեր և ֆաբրիկանտներ:

Շուշին XIX դարում առևտրական բազմաթիվ կապերով կապված էր Ռուսաստանի և արտասահմանյան շուկաների հետ: Առևտրական և արհեստավորական ձեռնարկությունների շարքերը ձգված էին Շուշու հիմնական մագիստրալ գծով՝ Երևանյան փողոցով, դեպի ցած՝ սկսած Վերին դարբասից (գորանցից), փոստի մոտով դեպի Չերքեզենց խանութները, Թոփխանան, Ղափանը, Ղազանչեցոց և Ագուլյաց եկեղեցիները, այնուհետև դեպի քաղաքի մահմեդական մասը՝ Շեյթանբազարը, իսկ այդ շարքերի առանձին ճյուղերն անցնում էին դեպի հայկական թեմական դպրոցը, գնում ցած, անցնում Շուշու քաղաքային դպրոցի մոտով և նորից մտնում մահմեդական թաղամասը: Առևտրական և արհեստավորական 952 ձեռնարկությունները Շուշի քաղաքի համար, անշուշտ, մեծ թիվ է, նույնիսկ եթե նրանց մեջ գերակշռում էին մանր ձեռնարկությունները: Դրանք աշխատում էին ոչ միայն քաղաքի համար, ապրանքները և արհեստավորների արտադրանքը գնում էին Լեռնային և Դաշտային Ղարաբաղի գյուղացիները՝ ներառյալ և Ղարաբաղի քոչվոր անասնապահները, որովհետև ամբողջ Ղարաբաղում չկար մի այլ քաղաք, որն

¹ Архив Министерства внутренних дел, отдел исторический, фонд 43, опись 43-1, единица хранения 309 Մահմեդական (երկրորդ) թաղամասում ձեռնարկությունների թիվը ավելի է ստացվում, որովհետև հայկական թաղամասում մենք հանդիպում ենք միայն մի մահմեդական ազգանունի (հ. 336, բաղնիքի տեր), իսկ քաղաքի երկրորդ մասում ձեռնարկատերերի մեջ կան բազմաթիվ հայկական ազգանուններ (հհ. 514, 520, 523, 524, 533, 576, 578, 579, 580 և ուրիշներ)

² См. Архив Министерства внутренних дел Азерб. ССР, отдел исторический, фонд 43, отдел I, N 273. Գործում Շուշու 970 ձեռնարկության անուն է բերված, տրված են ձեռնարկությունների տերերի անուն-ազգանունները, համարյա բոլոր անունների մոտ գրված է «շուշեցի» և «Շուշու բնակիչ»: Բայց հարց է ծագում, թե արդյոք բոլոր ձեռնարկությունները գտնվում են քաղաքում, թե նաև Շուշու գավառում



ավելի մեծ արտադրություն կամ վաճառելու ապրանքներ ունենար և կարողանար բավարարել Ղարաբաղի բնակչության սպառողական պահանջները, քան Շուշին: Բացի դրանից՝ հաշվի առնենք և այն հանգամանքը, որ Շուշու ձեռնարկությունների ապրանքները վաճառվում էին նաև Ղարաբաղի սահմաններից դուրս (Ջանգեզուրում, Ղափանում և այլուր) և նույնիսկ արտասահմանյան շուկաներում: Ղարաբաղի գյուղերում նույնպես բացվում էին մանուֆակտուրա վաճառող խանութներ, մանավանդ կենտրոնական գյուղերում, որտեղով անցնում էին քոչի ճանապարհները (Աղդամում, Բարդայում, Խաչենում (Առաջաձորում), Աղջաբաղիում և շատ այլ կետերում): Այդ վաճառական ձեռնարկություններ բացողը կամ նրանց ապրանքներ մատակարարողը հաճախ շուշեցի առևտրականներ էին:

Միաժամանակ Շուշին դառնում է համեմատաբար խոշոր արդյունաբերական արտադրության, մանավանդ մետաքսագործության կենտրոն: Ճիշտ է, մետաքսի թել քաշող և ոլորող գործարանները մեծ մասամբ տեղավորվում էին ոչ թե բուն Շուշի քաղաքում, այլ Լեռնային Ղարաբաղի հայկական գյուղերում (Խնձրիստանում, Կրկժանում, Քարին տակ գյուղում, Դաշբուլաղում, Մղնախում, Չանախչիում, Ղշլաղում և այլ գյուղերում)¹: Մետաքսագործական արդյունաբերական ձեռնարկությունների տերերը մեծ մասամբ շուշեցի կապիտալիստներն էին (Հարունովները, Ներսեսովները, Տեր-Գրիգորյանները, Տեր-Սկրտչյանները և այլն), ձեռնարկությունների վարչության կենտրոնները գտնվում էին Շուշում: Մեզ հաջողվել է ձեռք բերել 1915թ. Շուշու գավառում եղած մետաքսի թել մանող և թել ոլորող գործարանների պաշտոնական ցուցակը, որ կազմված և ստորագրված է այդ գործարանների ավագ տեսուչների կողմից, որտեղ կան մանրամասն տեղեկություններ 22 այդպիսի գործարանների մասին՝ սկսած 1915թ. հունվարի 1-ից մինչև 1916թ. հունվարի 1-ը²: Նրանց արտադրանքն ուղարկվում էր Շուշի, Մոսկվա, Վարշավա, Մարսել:

Մեր հիշատակած փաստաթղթի տվյալները վերաբերում են 1915թ. Լեռնային Ղարաբաղի մետաքսամանվածքային և մետաքսակարժային գործարաններին, բայց երբ ի նկատի ենք առնում, թե երբ են հիմնվել այդ գործարանները, պարզվում է, որ նրանցից մոտավորապես կեսը հիմնադրված է XIX դարի 80-ական թվականներին, հետևապես այդ մասին տված տեղեկություններն իրավունք են տալիս դատելու, որ սխալ չի լինի այդ տվյալները վերագրել XIX դարի վերջին տարիներին, այսինքն՝ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին, և համարել, որ մետաքսի գործարանները Լեռնային Ղարաբաղում արդեն ամուր հիմքերի վրա էին դրված:

Մեր ասածները հաստատվում են 1893թ. «*Կովկասյան օրացույցում*» տպագրված լրացուցիչ տվյալների շնորհիվ և անմիջապես վերաբերում են բնութագրվող ժամանակաշրջանին³: Աղյուսակ 2-ը տեղեկություն է տալիս, թե որքան ֆաբրիկա և գործարան կա Գանձակում, Նուխում, Շուշում ու Շուշու գավառում, որքան բանվորներ են այնտեղ աշխատում և ինչ գումարի արտադրանք են տալիս:

¹ Հայ գյուղացիության թշվառ վիճակը, բանվորական ուժի էժան, համարյա ձրի օգտագործումը, բանվորական ուժի շահագործման նկատմամբ պետական վերահսկողության բացակայությունը, գյուղերում վառելափայտի ավելի էժան լինելը, քան թե Շուշի քաղաքում, և ջրի առատությունը գավառում, որ անհրաժեշտ էր մետաքսամանվածքային արդյունաբերության համար, այս բոլորը մետաքսի արդյունաբերությունը քաշում էր դեպի գյուղերը և ոչ թե Շուշի քաղաքը

² Архив министерства внутр. дел Азерб. ССР, отдел исторический, фонд 875, опис 1, един. хранение 1, сведения о шелкоматериальных и шелкокрутильных заводах в Шушинском уезде в 1915г. (с 1 янв. 1915г. по 1 янв. 1916г.) по данным старшего фабричного инспектора Елисаветпольской губернии

³ Кавказский календарь на 1883г.

Քաղաքներ	Ֆաբրիկաների և գործարանների քանակը	Բանվորների քանակը	Արտադրանքի գումարը
Գանձակում	102	220	40960 ռ.
Նուխիում	230	1839	526314 ռ.
Շուշում	11	32	10000 ռ.
Շուշու գավառում	74	862	330115 ռ.

Իհարկե, շատ դժվար է երաշխավորել այս թվերի ճիշտ լինելը: Սակայն այստեղ հաստատվում է մի բան. Շուշին XIX դարի վերջին հեռու էր ֆաբրիկա-գործարանային կենտրոն լինելուց, փաստորեն նա առևտրական և արհեստավորական արտադրության կենտրոն էր: Բերված փաստերի հիման վրա դժվար է ասել, թե ինչպիսի ձեռնարկություններ են Շուշու գավառի 74 ֆաբրիկա-գործարանները, բայց կասկածից դուրս է, որ նրանց զգալի քանակը մետաքս մանելու և ոլորելու գործարաններ են: Այդ մասին վկայում է նաև Նուխու գերակշռող տեղը աղյուսակում ձեռնարկությունների, բանվորների քանակի և արտադրանքի գումարի նկատմամբ: Չէ որ Անդրկովկասում XIX դարի երկրորդ կեսին մետաքսագործությունը նշանավոր տեղ էր գրավում, իսկ Նուխին այդ ժամանակ նրա արտադրության ամենանշանավոր կենտրոններից մեկն էր համարվում:

Շուշում նշանավոր էր նաև գորգերի արտադրությունը: Բրոկհաուզի և Եֆրոնի հանրագիտական բառարանում Շուշու մասին մենք կարդում ենք. «Շուշին Կովկասում գորգագործության ամենախոշոր կենտրոնն է, որի արտադրությունը սպառվում է նահանգի սահմաններից դուրս՝ շատ հեռու, և հասնում է Մոսկվա և Պետերբուրգ: Գորգերի արտադրությունը տնայնագործական է: Գորգագործությամբ զբաղվում են հայերը և մանավանդ՝ թաթարները (կանայք): Կան մի քանի մետաքս մանող գործարաններ: Մետաքսի և գորգերի աշխույժ առևտուր է գնում, որը համարյա բացառապես գտնվում է տեղի հայերի ձեռքին»¹:

Եթե Բրոկհաուզի և Եֆրոնի հանրագիտական բառարանի ասածները որոշ վերապահությամբ վերագրենք XIX դարի վերջին, մենք այն ժամանակվա Շուշին կարող ենք համարել Անդրկովկասի խոշոր առևտրական կենտրոններից մեկը, որտեղ համեմատաբար թույլ էր զարգացած ֆաբրիկա-գործարանային արտադրությունը: Նույնիսկ գորգագործությունը, որով, ըստ Բրոկհաուզի և Եֆրոնի բառարանի, Շուշին համարվում է Անդրկովկասի ամենախոշոր կենտրոնը, նույնպես տնայնագործական բնույթ էր կրում:

Առհասարակ XIX դարի վերջին Շուշին չի կորցրել միջնադարյան քաղաքի իր բնույթը: Բնակչության արհեստավորական խավերը դեռևս շարունակում էին պահպանել համքարային կազմակերպության գծերը: Քաղաքից դուրս կազմակերպվող համքարական տոներն ու զբոսանքները դեռևս շարունակվում էին, գոյատևում էր արհեստավորների բաժանումն ըստ համքարությունների, մնում էին միսկյարների, աստղազործների, կոշկակարների և այլ համքարությունները: Համքարության ներսում մնում էին վարպետները, ենթավարպետները և աշակերտները, բայց այս հին կազմակերպությունն աստիճանաբար գնում էր դեպի անկում, և զարգացող կապիտալիզմը քաղաքի «հայրեր» էր դարձրել առևտրականներին, որոնք գերակշռություն էին

¹ Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, 1904, книга 79, том 40, стр. 25



ստացել քաղաքային վարչության մեջ: Արդեն կապիտալիստական մրցությունը հնձում էր թուլագոր արհեստավորներին և մանր խանութպաններին և ուժեղացնում խոշոր առևտրականների գորությունը: Խոշոր առևտրականների համար քանի գնում, այնքան ավելի նեղ էին թվում հարազատ քաղաքի շրջանակները, և նրանք շարունակում էին գործադրել իրենց ունակությունները և միջոցները նոր ավելի խոշոր ձեռնարկությունների մեջ:

XIX դարի վերջը Շուշի քաղաքի բնակչության և նրա տնտեսության ամենամեծ աճի ժամանակն է, բայց և միաժամանակ դառնում է նրա անկման շրջանի սկիզբը: Քաղաքի բնակչության քանակը XIX դարի վերջից համարյա բոլորովին դադարում է աճել: Չունենալով տնտեսական նախադրյալներ՝ քաղաքը չի դառնում արդյունաբերական կենտրոն: Առևտրական զարգացման ուղիները քաղաքի համար նեղանում են, առևտրական կապերի նոր ուղիներ են հայտնվում, որոնք Շուշին թեքում են իր կենտրոնական դիրքերից, իսկ վրա հասնող ազգամիջյան ընդհարումներն արագացնում են քաղաքի անկումը՝ հասցնելով նրան աննշան քաղաքի կացության:

ե) Շուշու տնտեսական կյանքը և հասարակական վիճակը

XX դարի առաջին երկու տասնամյակում

XX դարի առաջին տասնամյակները Շուշի քաղաքի տնտեսության աստիճանական անկման պատկեր են ներկայացնում: Եթե այդ տարիները Անդրկովկասի քաղաքների, մանավանդ Բաքվի և Թիֆլիսի արագ աճման տարիներ են, ապա Շուշին, ընդհակառակը, աստիճանաբար կորցնում է իր բնակչությունը և Անդրկովկասի մի շարք փոքր քաղաքները՝ Երևանը, Թիֆլիսը, Բաթումը և այլ քաղաքներ, իրենց բնակչությամբ Շուշուց առաջ են անցնում: Հայ-ադրբեջանական արյունոտ ընդհարումները 1905 և 1906 թվականներին, իսկ ավելի ուշ՝ 1914թ., սկսած առաջին համաշխարհային պատերազմը, այնուհետև քաղաքացիական պատերազմը, մուսավաթականների պրովոկացիոն քաղաքականությունը, տաճիկների և իմպերիալիստական պետությունների ինտերվենցիան Ղարաբաղ և հայ բնակչության արյունոտ կոտորածը Շուշի քաղաքում և նրա շրջակայքում չէին կարող քաղաքը չհասցնել լիակատար անկման:

Ակամայից հարց է ծագում՝ ո՞րն է այն հիմնական պատճառը, որ Շուշի քաղաքը հասցրեց անկում ապրող քաղաքների շարքը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին: Արդյո՞ք դրա պատճառը քսաներորդ դարի միայն քաղաքական դեպքերն են և ազգամիջյան կոտորածները, որոնք ոչնչացրին քաղաքի բնակչության զգալի մասը:

Մեր կարծիքով՝ XX դարի սկզբի քաղաքական դեպքերը և ազգային կոտորածները, անշուշտ, խիստ արագացրին Շուշի քաղաքի անկման պրոցեսը, սակայն քաղաքի աստիճանական ու դանդաղ տնտեսական անկման պրոցեսը, համեմատած Անդրկովկասի այլ քաղաքների հետ, կախված էր նաև զուտ տնտեսական պատճառներից:

Իրոք, ի՞նչ ուղղությամբ պետք է ընթանար Շուշու տնտեսական զարգացումը XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Կարո՞ղ էր արդյոք Շուշին ընթանալ խոշոր արդյունաբերության զարգացման ուղիով. իհարկե, ո՛չ: Դրա համար նա չունեի համապատասխան նախադրյալներ: Նրա աշխարհագրական դիրքը (տարածությամբ խիստ սահմանափակ լեռնային պլատոյի վրա), որտեղ տեղ չկար ընդարձակվելու ոչ միայն խոշոր արդյունաբերական արտադրության համար, այլև նույնիսկ սովորական բնակարանային շինարարության համար, նրա բարձրությունը ծովի մակերևույթից, որտեղ դժվար է երկաթուղի անցկացնել, որտեղ ջրային ռեսուրսները խիստ սահմանափակ են, այսպիսի պայմաններում Շուշին հազիվ թե կարողանար արդյունաբերական քաղաք դառնալ: Մինչդեռ Անդրկովկասի այլ քաղաքներում արդյունաբերությունը սկսել էր զարգանալ, իսկ նրանցից մի քանիստ (Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում)՝ նույնիսկ շատ արագ: Անդրկովկասի շատ



քաղաքներին մոտենում էին երկաթուղիները, և նրանց համար ստեղծվում էին ինդուստրացման պայմաններ. XIX դարի 80-ական թթ. կառուցվում է Անդրկովկասի երկաթգիծը, որը միացնում է Բաքուն, Եվլախը, Գանձակը, Թիֆլիսը, Քութայիսը, Բաթումը, իսկ XX դարի սկզբներին երկաթուղին Թիֆլիսը միացնում է նաև Ալեքսանդրապոլի, Երևանի, Նախիջևանի և Ջուլֆայի հետ:

Շուշին մնում է երկաթգծերից հեռու: Ամենից մոտ տեղադրված երկաթուղային կայանը՝ Եվլախը, գտնվում էր ավելի քան 100 կմ հեռավորության վրա, իսկ ապրանքները խճուղով Շուշի տեղափոխելը կարելի էր միայն ֆուրգոններով կամ գոմշի սայլերով: Ճիշտ է, Եվլախ երկաթուղային կայանը Շուշու համար մեծ նշանակություն ուներ որպես փոխաբեռնման կետ, որի միջոցով քաղաքը կապվում էր Անդրկովկասի և Ռուսաստանի երկաթուղային այլ կայանների հետ, բայց և այնպես Շուշու տնտեսաաշխարհագրական դիրքը իր հարմարության տեսակետից չէր կարող համեմատվել Անդրկովկասի խոշոր քաղաքների հետ, որոնք անմիջապես գտնվում էին երկաթուղիների վրա:

Այսպիսով՝ Շուշին XIX դարի վերջին և XX դարի սկզբին չէր կարող դառնալ արդյունաբերական քաղաք: Նրա տնտեսաաշխարհագրական դիրքի բոլոր պայմաններն աննպաստ էին դրա համար, նույնիսկ արդյունաբերական ձեռնարկությունները, այսինքն՝ մետաքս մանող և մետաքսի թել ոլորող ֆաբրիկաները (ինչպես այն ժամանակ էին անվանում՝ գործարանները) տեղադրված էին, ինչպես մենք տեսանք, ոչ թե Շուշի քաղաքում, այլ մեծ մասամբ քաղաքից դուրս՝ Լեռնային Ղարաբաղի գյուղերում:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին քաղաքի հետագա զարգացումը չէր կարող ընթանալ հին ճանապարհով, այսինքն՝ առևտրի և արհեստների զարգացման ուղղությամբ, որովհետև այդ հնարավորությունը ևս Շուշի քաղաքի առաջ խիստ սահմանափակված էր: Նախ արհեստավորական արտադրությունն ապրում էր իր անկման վիճակը, այն դեպքում, երբ Ռուսաստանում սկսել էր զարգանալ ֆաբրիկա-գործարանային խոշոր արտադրությունը: Մյուս կողմից Շուշու, որպես առևտրական կենտրոնի, նշանակությունը, անշուշտ, նույնպես պետք է թուլանար: Չէ՞ որ Շուշին, որ առաջ գտնվում էր հաղորդակցության և առևտրական հիմնական ուղիների վրա, Ղարաբաղում, Ջանգեզուրում, Ղափանում, Նախիջևանում և նշված տարածքի սահմաններում միակ խոշոր առևտրական կենտրոնն էր, այժմ նա աստիճանաբար կորցնում էր իր այդ նշանակությունը: Սկսում էին զարգանալ Դաշտային Ղարաբաղի բնակավայրերը՝ Ադդամը, Բարդան, Կարյազինը, կառուցվեցին նոր խճուղիներ և սայլուղիներ, որոնք իրար հետ կապեցին Դաշտային Ղարաբաղի գյուղերն ու բնակավայրերը, իսկ այդ հանգամանքը չէր կարող բացասական ազդեցություն չունենալ Շուշու առևտրի զարգացման վրա: Մյուս կողմից, շնորհիվ XX դարի երկաթուղային նոր կառուցումների, Նախիջևանը, Ջուլֆան և Արաքսի հովտի այլ կետերը նոր առևտրական կապեր ստացան և ելք ստեղծեցին դեպի Անդրկովկասի կենտրոնները:

Պարզ է, որ քաղաքի հետագա զարգացման ու աճի հնարավորությունը, նրա կարևոր տնտեսական նշանակության պահպանման ճանապարհը Անդրկովկասում XIX դարի վերջում արդեն զգալի չափով փակված էր: Բայց, իհարկե, Շուշի քաղաքի կատաստրոֆիկ անկումն, անշուշտ, կապված է այն քաղաքական դեպքերի և ազգային կոտորածների հետ, որոնք տեղի ունեցան 1905 և 1906թթ. ամռանը, իսկ հետո՝ 1918-1920թթ.:

Շուշի քաղաքն առաջին ուժեղ հարվածը ստացավ 1905թ. ամռանը (օգոստոսին) հայ-ադրբեջանական ազգային կոտորածների հետևանքով, երբ հրդեհի ենթարկվեց հայկական թաղամասի ստորին հատվածը, որը գտնվում էր Ղազանչեցոց եկեղեցուց և Թոփխանայից ցածր, այրվեցին նաև մի շարք տներ քաղաքի մյուս մասերում: Այս տեղամասում էին գտնվում ամենալավ տներն ու խանութները՝ Թոփխանայից և քաղաքի Ղանթարից սկսած մինչև Ագուլյաց եկեղեցին և ավելի ցած, հրդեհի էր մատնված նաև ադրբեջանական թաղի մի հատված քաղաքի ստորին մասում և մի



փոքր ադրբեջանական թաղ քաղաքի վերին, ռուսական գորանոցի մոտ, որտեղ գտնվում էին կաթնավաճառ Նասիրի տունը և մի քանի այլ տներ: Այրվել էր և Խանդամիրյանի թատերական դահլիճը: Քաղաքի այրված մասը հետագայում չի վերակառուցվել, մինչև որ այդ ավերված ու այրված մասին 1920թ. միանում է համարյա ամբողջ ավերված հայկական քաղաքամասը:

1905թ. ազգամիջյան կոտորածներին, 1906թ. ամռանը հետևում են նոր արյունահեղ դեպքեր: Այս կոտորածների հետևանքով Շուշու բնակչության քանակը զգալի չափով պակասում է: Տեղական բուրժուազիան հեռանում է Շուշի քաղաքից և հաստատվում այլ վայրերում, հեռանում է նաև չքավոր բնակչության մի մասը՝ աշխատանք և ապրուստ փնտրելու: Այնուամենայնիվ, Շուշին շարունակում էր մնալ արհեստավորների և վաճառականների քաղաք, բայց վաճառականները դարձել էին մանր վաճառականներ, արհեստավորներն աղքատացել էին, մի խոսքով՝ քաղաքը աղքատիկ էր դարձել, մինչև որ նա ստացավ իր վերջին հարվածը խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին՝ 1920թ. մարտի 22-ին:

Շուշի քաղաքի և Լեռնային Ղարաբաղի տնտեսական կացության մասին որոշ պատկերացում են տալիս այն տվյալները, որ վերաբերում են մետաքսի թել մանող և ոլորող գործարաններին, որ 1915թ. գտնվում էին Լեռնային Ղարաբաղի գյուղերում: Մետաքսի թել մանող և ոլորող ֆաբրիկաների («գործարանների») մասին Շուշու գավառում կազմել ենք հետևյալ ընդհանրացված և որոշ չափով կրճատած աղյուսակը, որի հիմքում դրել ենք Գանձակի նահանգի ավագ տեսչի զեկուցագիրն այդ գործարանների մասին¹.

¹ *Архив Министерства Внутренних дел Аз. ССР, исторический отдел, фонд 975, опись 1, единица хранения 1 "сведения о шелкомотальных и шелкокрутильных заводах в Шушинском уезде с 1-го января 1915г. по 1 января 1916г., составленные старшим фабричным инспектором Елисаветпольской губернии"*

Ըստ կարգի	Գործարանատերերի անուն, ազգանուններ	Որտեղ է գտնվում ձեռնարկը	Հիմնադրման տարեթիվը	Բանվորների քանակը								Վերածված աշխատավարձի	Որտեղ է արտահանվում արտադրանքը	Ծանոթություն
				12-15 տարեկանից պակաս		Դեռահասներ 15-17տ.		Չափահաս (ընդամենը)						
				աղջիկ	կին	աղջիկ	կին	տղամ.	կին	տղամ.	կին			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Համբարձում Գաբրիելի Հարունյան ժառանգների հետ (մետաքս մանեղու գործարան)	Քոլաթաղ	1907	-	-	2	26	9	62	11	88	7240 ուր.	Մոսկվա Մարսել (Եվլախով)	մեկ շոգեկաթասա
2	Գրիգոր Հովհաննեսի Ալավերդյան (մետաքս մանեղու գործարան)	Խնձրիստան	1911	-	12	-	16	2	6	2	34	3000	Մոսկվա Մարսել չի արտադրվ. պատ. պատճ.	»
3	Դանիել Գաբրիելի Հարունյան (մանեղու և ոլորելու գործարան)	Կրկժան	1873	-	-	-	-	31	45	31	45	5411	Մոսկվա Մարսել (Եվլախով)	»
4	Նույնը (մետաքս մանեղու և ոլորելու գործ.)	Խանքենդ	1900	-	-	-	-	8	40	8	40	5097 26 կ.	Մոսկ. Մարսել (Եվլախով)	»
5	Նույնը (մետաքսաթել մանեղու և ոլոր. գործարան)	Քարին տակ	1880	-	-	-	-	17	60	17	60	2624. 66 կ.	Մոսկվա Մարսել (Եվլախով)	»
6	Նույնը (մետաքսաթել մանեղու և ոլորելու գործարան)	Ղաբուլաղ	1880	-	-	-	-	6	20	6	20	1722 93 կ.	Մոսկվա Մարսել (Եվլախով)	»
7	Նույնը (մետաքսաթել մանեղու և ոլորելու գործ.)	Սղնախ	1882	-	-	-	-	6	15	6	15	399 02 կ.	Մոսկ. Մարսել (Եվլախով)	»
8	Նույնը (մետաքսաթել մանեղու և ոլորելու գործարան)	Չանախչի	1882	-	-	-	-	8	60	8	60	3356 ն. 95 կ.	Մոսկ. Մարսել (Եվլախով)	»
9	Բաբաջան Մկրտչի Ղազարյան	Դաշբուլաղ	1905	-	22	-	12	3	11	3	45	2620 ն.	Մոսկ. արտասահ. Շուշի	»
10	Դավիթ Մերգելի Ներսեսով (մետաքս մանեղու գործարան)	Խնձրիստան	1900	-	12	-	12	2	24	2	48	3200 ն.	Մոսկվա Վարշավա Շուշի	»
11	Նույնը (մետաքս մանեղու գործարան)	Կիշլա	1890	-	12	-	20	2	24	2	56	3480 ն.	Մոսկվա Շուշի	»

12	Դանիել Սերգեյի Ներսեսով - Դավիթ Սերգեյի Ներսեսովին պատկանող մետաքս մանող գործ. վարիչ	Ղայ-բալի-քենդ	1900 երկ. անգ. հրդ. հ. 1912	-	10	-	15	4	12	4	87	2700 ն.	Մոսկվա Վարշավա	»
13	Դանիել Սերգեյի Ներսեսով - մետաքս մանող գործարանի վարիչ	Շուշի-քենդ	1885	-	5	-	12	2	22	2	39	3280 ն.	Մոսկվա Վարշավա Շուշի	»
14	Տեր-Կրիկորով Բեգյար Հակոբի (մետաքս մանող գործարան)	Կայա-րալի	1901	-	15	-	15	4	10	4	40	1231 ն.	Մոսկվա	»
15	Ն. և Ա. Տեր-Սկրտիչևներ (մետաքս մանող գործարան)	Զար-դա-նաշեն	1905	-	-	-	-	7	30	7	30	1048 ն. 23 կ.	Մոսկվա Մարսել	»
16	Նույնը (մետաքսաթել մանելու գործարան)	Տող կապ. Շուշու միջոցով	-	-	-	-	8	8	30	8	38	3479	Մոսկվա Մարսել	»
17	Նույնը (մետաքսաթել մանելու գործարան)	Թաղ-լար	-	-	-	-	-	8	50	8	50	4341 ն.	Մոսկվա Մարսել	»
18	Համբարձում Գաբրիելի Հարունյան (մետաքսաթել մանող գործ.)	Խնա-ծախ	1892	-	-	2	30	10	76	12	106	16810	Մոսկվա Մարսել	երկու շոգե կաթսա
19	Համբարձում Գաբրիելի Հարունյանի ժառանգները	Բալ-լուջա	1888	-	-	3	48	17	91	20	139	21960	Մոսկվա Մարսել	մեկ շոգե կաթսա
20	Բաբաջան Սկրտչի Ղազարյան (մետաքսաթել մանող գործ.)	Կա-րաքե-թուկ	Հայտ նի չէ գն. է	-	16	-	16	2	8	2	40	2500	Մոսկվա արտա-սահ. Շուշի	»
21	Կոնստանդին Ավետիսի Հովակիմյան (թել մանող գործարան)	Սեյդի-շեն	1899	-	15	1	22	2	15	3	52	3700	Մոսկվա և տեղում	»
22	Ալեքսանդր Շամիլի Տեր-Իսրայելյան (վարձակալ. Հ. Հարունյանի ժառ. կողմից (մանվածքային գործարան)	Բա-դարա	1901	-	-	2	25	8	70	10	95	15020	Մոսկվա Մարսել	»

1915թ. մետաքսի արդյունաբերության նկատմամբ մեր ներկայացրած այս տվյալներից, որ տալիս է գործարանների տեսուչը Շուշու գավառի մասին, պարզ երևում է, որ մետաքսի արդյունաբերությունը Լեռնային Ղարաբաղում դեռևս խոշոր տեղ է գրավում: Նա ներկայացնում է 22 մետաքսի թել մանող գործարան, որից 6-ն ունեին նաև մետաքսի թել ոլորելու ձեռնարկու-թյուններ:



Գործարաններում աշխատող բոլոր բանվորների քանակը հասնում էր 1341 հոգու, որոնցից 1177 հոգի կանայք էին, 164 հոգի՝ տղամարդ: Կանանց աշխատանքն այս գործարաններում պարզապես գերակշռում է, որովհետև նրանց աշխատանքը գործարանատերերի կողմից անհամեմատ ավելի ցածր էր գնահատվում: Բոլորովին աննշան էր անչափահաս և դեռահաս կանանց աշխատանքի վարձատրությունը, ուրեմն և բանվորուհիների թիվն այդ հասակում բավական մեծ քանակ էր կազմում: Գործարաններում աշխատող անչափահաս (12-ին մինչև 15 տարեկանից պակաս հասակ ունեցող) աղջիկների թիվը հավասար էր 119 հոգու, իսկ դեռահաս (15-17 տարեկան) բանվորուհիների թիվը՝ 295 հոգու:

Բոլոր գործարանները, բացառությամբ մեկի (ցուցակում 18), օգտվում էին մեկական շոգեկաթսայով:

Լեոնային Ղարաբաղի 22 գործարաններում աշխատող բանվորների տարեկան աշխատավարձը հասնում էր 112,268 ռուբլու (չհաշված կոպեկները): Շուշու գավառի գործարաններն իրենց արտադրանքը բացառապես արտահանում էին Մոսկվա, Մարսել, Վարշավա կամ արտասահմանյան այլ քաղաքներ, սպառվում էր նաև Շուշիում: Արտասահման ուղարկվող արտադրանքը մեծ մասամբ անցնում էր Եվլախով:

1915թ. վերաբերող մեջբերած տվյալները մնացին Շուշու անցյալ փառքի և գալիքի անկման կենդանի վկայություններ: Վրա էին հասնում Շուշու վերջնական անկման տարիները:

1918-1920թթ. իմպերիալիստական պետությունների և Ադրբեջանի ազգայնական կուսակցությունների դրդումով ու անմիջական մասնակցությամբ արյունալի կոտորածներ են սկսվում Լեոնային Ղարաբաղի առանձին շրջաններում, որոնք վերջանում են 1920թ. մարտի 22-ին Շուշի քաղաքի հայկական մասի լիակատար ավերումով ու հրդեհումով: Դրան հետևում է այն, որ քաղաքը դատարկվում է իր բնակչությունից: Նախ քաղաքից փախչում է հայ բնակչությունը, ապա սկսում են հեռանալ նաև ադրբեջանցիները:

Շուշին դադարում է լինել Ղարաբաղի խոշոր առևտրական և արհեստավորական կենտրոնը, նա շուտով կորցնում է նաև Ղարաբաղի վարչական կենտրոն լինելու իր իրավունքը: Նրա տեղը գրավում է Ստեփանակերտը, որը, շնորհիվ իր մի շարք առավելությունների, 1923թ. դառնում է Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վարչական կենտրոնը:



ԳԼՈՒԽ III

ՇՈՒՇՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻՑ

ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Յուրաքանչյուր քաղաքի տնտեսական, քաղաքական ու մշակութային աճի, մասնավորապես նրա զարգացման էտապների և բեկումնային պահերի մասին հաճախ կարելի է դատել նրա բնակչության թվի փոփոխությամբ: Բնակչության դինամիկան, քաղաքի ծագման օրերից սկսած, կարող է միաժամանակ նրա պատմական զարգացման ճիշտ պարբերացման չափանիշ հանդիսանալ:

Դառնալով Շուշի քաղաքին՝ նկատենք, որ միշտ չէ, որ մենք բավարար տվյալներ ունենք այդ քաղաքի բնակչության թվի ու կազմի մասին նրա զարգացման բոլոր էտապներում: Դա առավելապես վերաբերում է Շուշու զարգացման սկզբնական էտապներին, թեև հետագա շրջաններում էլ բնակչության թվին վերաբերող տվյալները հաճախ ստույգ չեն:

Շուշու բնակչության թիվը որոշելու հարցում մեզ համար աղբյուրներ են հանդիսացել.

1) հին նշանավոր ճանապարհորդների ցուցումները.

2) Շուշում ըստ ընտանիքների կազմած կամերալ ցուցակները, որտեղ նշված են ընտանիքների բոլոր անդամները (посемейные списки).

3) 1897թ. համառուսական, 1921, 1926 և 1959թթ. համամիութենական մարդահամարների տվյալները,

4) *"Кавказский календарь"* պաշտոնական օրացույցի տվյալները¹,

5) առանձին ուսումնասիրություններում հանդիպած թվերը:

Վերոհիշյալ աղբյուրները համարժեք չեն. նրանցում բերվում են հակասական տվյալներ, որոնք ճշգրտման կարիք ունեն: Համենայն դեպս, մեզ հայտնի աղբյուրները որոշ քննադատական մոտեցումով հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու Շուշու բնակչության թվի և ազգային կազմի մասին²:

Թե որքան բնակչություն է ունեցել Շուշին մինչև Փանահ խանին ենթարկվելը և Ղարաբաղի խանության կենտրոն դառնալը, մեզ հայտնի չէ: Միայն կարելի է ենթադրել, որ նա շատ բնակչություն ունենալ չէր կարող, այլապես այդ մասին այս կամ այն կերպ հայտնի կլիներ:

Փանահ խանի ժամանակ՝ XVIII դարի 50-ական թվականներին, Շուշին դառնում է բերդաքաղաք և խանի բնակության վայրը: Որպես Ղարաբաղի խանության կենտրոն՝ Շուշին արագորեն սկսում է աճել, գնալով ավելանում է նրա բնակչությունը:

Երբ բերդի կառուցումն ավարտելուց մի տարի հետո Իրանի Մահմեդ Հասան խան Ղաջարը (Աղա Մահմեդ շահ Ղաջարի հայրը) հարձակվում է Շուշու վրա, նրա դեմ ընդհանուր ուժերով դուրս են գալիս մահմեդականներն ու հայերը և մեծ վնաս հասցնում նրա բանակին: Մահմեդ

¹ Այդ օրացույցները հրատարակվել են Թիֆլիսում՝ սկսած XIX դարի 40-ական թթ. մինչև 1916 թվականը, և մեծ մասամբ տալիս են Շուշում կազմված ընտանեկան ցուցակների թվերը

² Այս տեսակետից բնորոշ է «Ազգագրական հանդեսի» առաջին համարում (Թիֆլիս, 1897թ.) լույս տեսած Երվանդ Լալայանի «Վարանդա» աշխատության և Լ. Աթարբեկյանի «Վիճակագրական տեղեկություններ» վերնագիրը կրող հոդվածի այն ցուցումը, որտեղ հեղինակը, նշելով իր աղբյուրները, մասնավորապես 1886թ. ընտանեկան ցուցակների հիման վրա կազմած *"Свод статистических данных о населения Закавказья"* աղբյուրը, գրում է. «Այս հիմնարկությունների հավաքած նյութերի ձեռնահատությունը վիճակագրության գործում չափազանց կասկածելի է». «նրանց նյութերի վրա հիմնվող մեր տեղեկությունները բնականաբար միայն մոտավորապես ճիշտ են», բայց «այդ թվերը ևս ընդունակ են ընդհանուր գծերով ցույց տալ» վիճակագրական մի քանի երևույթների զարգացումը Շուշու գավառում: Նույն համարում Ղազար Տեր-Ղազարյանը, «Տնտեսական դրությունը Վարանդայում» հոդվածում (էջ 77-100), խոսելով *"Кавказский календарь"*-ի մասին (որի մի քանի համարների վրա նա հենվում է), նույնպես պահանջում է նրանց նկատմամբ քննադատական մոտեցում, ասում է. «Անկարելի է այնտեղից արտագրել թվեր՝ անհոգ մնալով նրանց ճշտության նկատմամբ»



Հասան խանը չի էլ կարողանում մոտենալ քաղաքի պարիսպներին և հետ է նահանջում: Պարզ է, որ Շուշին իր կառուցման հենց առաջին օրերից դարձել էր հզոր բերդաքաղաք և չէր կարող առանց զգալի պաշտպանողական ուժերի լինել: Այդ մասին Ջամալ Ջիվանշիրը գրում է, որ Փանահ խանը, հիմնելով Շուշի բերդը, «այնտեղ է տեղափոխել Շահբուլաղում բնակվող բոլոր ռայաթներին, նաև ազնվական մարդկանց ընտանիքներին, մելիքներին, ծառայողներին և քեղխուղաներին (գյուղական տանուտերերին) և նրանց տեղ է հատկացրել բերդի մեջ բնակվելու համար»¹:

Ղարաբաղի խաները քաղաքի պաշտպանության համար չէին կարող վստահել միայն բերդի անառիկությանը և նորակառույց ամուր պարիսպներին, ուստի ամեն կերպ աշխատում էին ավելացնել քաղաքի բնակչությունը: Ըստ երևույթին, Շուշու հայ բնակչությունը սկզբում կազմում էր պարիսպներ ու շենքեր կառուցող բանվորների և արհեստավորների հիմնական մասը, որոնց շուտով միանում են նաև առևտրով զբաղվողները²:

Մեզ հայտնի է, որ Շուշու նորակառույց բերդի առաջին բնակիչներից էին խանի բարեկամ և հավատարիմ դաշնակից Մելիք-Շահնազարը և նրա մարդիկ: Շուտով Շուշի են տեղափոխվում զգալի թվով հայեր նաև Արաքսի շրջանի գյուղերից՝ Նախիջևանի խանության սահմաններից: Դեռևս մինչև Ղարաբաղը ռուսական տիրապետության տակ անցնելը, այսինքն՝ Ղարաբաղի խանության ժամանակշրջանում, Շուշու հայերը բաժանվում էին դազանչեցոց (Շահկերտից եկած), ագուլեաց (Ագուլիսից եկած) և դարաբաղցոց (հետագայում Թագա ժամի) եկեղեցական ծխերի: Ըստ Լեոյի՝ այս հայերը Շուշի էին տեղափոխվել՝ բնակվելու բերդի հիմնադրման հենց առաջին տարիներից³: Մի քանի տասնյակ տարի հետո Շուշում բնակչություն են հաստատում նաև մեղրեցիները՝ կազմելով առանձին եկեղեցական համայնք⁴:

Բացի Շահկերտի, Ագուլիսի և Մեղրու՝ Շուշի գաղթած հայերից՝ քաղաքի բնակչության մեջ հետզհետե աճում էր նաև Ղարաբաղի գյուղերից քաղաք տեղափոխված հայերի թիվը, մանավանդ XIX դարի ընթացքում, երբ Ղարաբաղում հաստատվում է Ռուսաստանի տիրապետությունը: Սակայն որքա՞ն էր Շուշու բնակչությունը XVIII դարի վերջերին, երբ գոյություն ուներ Ղարաբաղի խանությունը, և այդ բնակչության քանի՞ տոկոսն էին կազմում հայերը: Այդ հարցին ճիշտ պատասխանելու համար մենք թեև անմիջական սկզբնաղբյուրներ չունենք, բայց XIX դարի 20-ական թվականներին Շուշում եղած ճանապարհորդների ցուցումները և մի շարք այլ տվյալներ հիմք են տալիս պնդելու, որ Ղարաբաղի խաների տիրապետության օրերին, այսինքն՝ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Շուշու մշտական բնակչությունը հասնում էր մի քանի հազարի: Ադրբեջանում կան պատմաբաններ, որոնք հակված են չափազանցնելու Շուշու բնակչության թիվը՝ համարելով 10 հազարից շատ ավելի, համեմատելով այն 16-րդ դարի Շամախի քաղաքի բնակչության հետ⁵: Սակայն այս պնդումը մենք անհիմն ենք համարում: Խանական տիրապետության տարիներին Շուշու մշտական բնակչության թիվը հազիվ թե հասներ 10 հազարի: Ճիշտ է, պատերազմական իրադարձությունների ժամանակ քաղաքում կարող էր հավաքվել համեմատաբար մեծ բազմություն՝ պաշտպանություն փնտրելով բերդի ամուր պարիսպների մեջ, բայց մեզ հետաքրքրում է քաղաքի մշտական բնակչությունը:

¹ Տե՛ս Мирза Джемал Дживаншир, *"История Карабаха"*, Баку, 1959, стр. 72 и след.

² Մանևերական բնակչության մեջ գերակշռում էին ռայաթները, քոչվորությամբ զբաղվողները, նոքարները, բեկերը, զինվորական դարը

³ Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, Թիֆլիս, 1914, էջ 61-63

⁴ Այս ծխերի մասին խոսում է XIX դարի 20-ական թթ. նշանավոր պատմագիր Մ. Թաղիադյանը իր «Ճանապարհորդություն ի Հայս» գրքի մեջ՝ չհիշատակելով մեղրեցոց եկեղեցին: Ըստ երևույթին՝ մեղրեցիները Թաղիադյանի այցելությունից հետո են տեղափոխվել Շուշի

⁵ Տե՛ս Ф. Алиев, *Города Северного Азербайджана во второй половине 19-го века (диссертационн. работа)*, Баку, 1957, см. Архив института истории АН Азерб. ССР, инв. N 510



Պրոֆեսոր Ի. Պետրուշևսկին իր «Աղբրեջանի խանությունները XVIII դարի երկրորդ կեսին» հոդվածում գրում է, որ միայն հինգ քաղաքներ՝ Դերբենդը, Ղուբան, Բաքուն, Գանձակը և Շուշին, ունեին յուրաքանչյուրը 5 հազարից մի քիչ ավելի բնակիչ¹: «Աղբրեջանի պատմության» մեջ² ասված է, թե Շուշին պաշտպանելու համար հավաքվել էր 15 հազար հոգի, սակայն այս թիվը ևս քաղաքի մշտական բնակչության վկայությունը չէ, մանավանդ, որ նույն գրքի 380-րդ էջում պարզորոշ գրված է, որ «XVIII դարի վերջին Հյուսիսային Աղբրեջանի և ոչ մի քաղաք 6 հազարից ավելի բնակիչ չունեի»:

XIX դարի 20-ական թվականներին Շուշու բնակչության մասին որոշ տեղեկություններ են տալիս հայտնի ճանապարհորդներ Մետրովը Թաղիադյանը և անգլիացի Գևորգ Կեպպելը: Առաջինը Շուշում եղել է 1821թ. Եփրեմ կաթողիկոսի հետ, այն ժամանակ, երբ Ղարաբաղը փաստորեն արդեն գտնվում էր ռուսական տիրապետության տակ, իսկ Մեհտի խանն էլ դեռ պահպանում էր խանության որոշ արտոնություններ: Թաղիադյանը գրում է, որ Շուշում բնակվում են հայեր և թուրքեր: «Հայերը Շուշում ունեն երեք եկեղեցի՝ Ագուլեցվոց, Ղարաբաղցվոց և Ղազանչվոց և կազմում են 500 տուն (ծուխ)³»: Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր ծուխ բաղկացած էր մոտավորապես հինգ հոգուց, քաղաքի հայ բնակչության թիվը կկազմեր մոտ 2500 հոգի:

Երկրորդ նշանավոր ճանապարհորդը՝ անգլիացի Գևորգ Կեպպելը, իր գրքում⁴ պնդում է, որ 1824թ., երբ նա եղել է Շուշում, այդ քաղաքում բնակվում էին 2 հազար տուն (այսինքն՝ մոտավորապես 10 հազար հոգի), որոնց 3/4-ը կազմում էին թաթարները: Այսպիսով, Շուշու բնակչությունը XVIII դարի վերջի համեմատությամբ զգալի չափով աճել էր, որ միանգամայն հավանական է ռուսական տիրապետության օրերին, երբ երկրում խաղաղություն էր տիրում:

Մի այլ պատմական աղբյուրում⁵, որ վերաբերում է XIX դարի 30-ական թվականներին և պաշտոնական հրատարակություն է, մենք գտնում ենք Անդրկովկասի մի քանի քաղաքների բնակչությանը վերաբերող հետևյալ թվերը, որոնց համաձայն՝ կարելի է որոշել Շուշու բնակչության թիվը և նրա տեղը Անդրկովկասի այլ խոշոր քաղաքների շարքում.

Աղյուսակ N 4

N	Քաղաքներ	Տների (ծխերի) քանակը	Շնչերի քանակը				
			Հայեր	Վրացիներ	Թուրքեր	Այլ ազգ	Ընդամենը
1	Թիֆլիս	4936	9447	1947	187	-	11581
2	Նուխի	2791	827	-	6558	-	7385
3	Երևան	2750	2148	-	3752	-	5900
4	Շամախի	2233	566	-	5000	-	5566
5	Շուշի	1698	2392	-	2667	-	5059
6	Բաքու (ֆորշտատի հետ)	1358	184	-	3709	-	3893

¹ Տե՛ս և Архив института истории Академии наук Азерб. ССР, Баку, 1958

² Տե՛ս և История Азербайджана, т. 1, Баку, 1958

³ Տե՛ս և Մետրովը Թաղիադյան, Ճանապարհորդություն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 286

⁴ Кеппел Г., Личный рассказ о поездке из Индии в Англию в 1824г. Շուշի քաղաքին վերաբերող հատվածի անգլիական բնագրից կատարած ռուսերեն թարգմանությունը տե՛ս Աղբրեջանական ՍՄՇ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի արխիվում, հ. 878

⁵ Обзорение Российский владений Закавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, т. 4, Санкт-Петербург, 1836, стр. 361-370

7	Նախիջևան	1330	988	-	1882	-	2870
8	Ղուբա	645	-	-	1984	-	1984
9	Օրդուբադ	804	84	-	1684	-	1768

Մեր բերած աղյուսակի թվերը բացարձակ ճիշտ համարել չի կարելի, քանի որ կազմված են առանց ստույգ մարդահամարի, վերաբերում են միայն քաղաքաբնակ գլխավոր ազգություններին և այլն, սակայն այս մոտավոր թվերի հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

1. XIX դարի 30-ական թթ. Շուշին իր բնակչության թվով Անդրկովկասի խոշոր քաղաքներից մեկն էր, գրավում էր 5-րդ տեղը Թիֆլիսից, Նուխուց, Երևանից, Շամախուց հետո և զգալի չափով գերազանցում էր Անդրկովկասի մյուս քաղաքներին: Այդ բանը հաստատվում է նաև մյուս աղբյուրներով:

2. Շուշու բնակիչների թիվը պետք է հաշվել ոչ թե 5059 շունչ, այլ դրա կրկնակին, այսինքն՝ մոտավորապես 10 հազար շունչ, որովհետև աղյուսակում նշված են միայն արական սեռին պատկանողները, ինչպես այդ արվում էր այն ժամանակ: Մեր բերած թիվը (10 հազար բնակիչ) համապատասխանում է Շուշու բնակչության մասին Կեպպելի վերոհիշյալ տեղեկանքին:

3. Հայերն այդ շրջանում Շուշու բնակչության փոքրամասնությունն էին կազմում, սակայն մահմեդականների թիվը հայերից այնքան էլ մեծ չէր:

Շուշում բնակվող հայերի թվի մասին տվյալներ է բերում Լեոն իր «Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի պատմության» մեջ՝ Ղարաբաղի կոնսիստորիայի N15 գործի հիման վրա: Ըստ այդ փաստաթղթի՝ Շուշու հայերը ըստ եկեղեցական ծխերի կազմում էին¹.

Աղյուսակ N 5

N	Եկեղեցական ծխեր	Ծխերի թիվը	Շունչ		
			արական	իգական	միասին
1	Ագուլյաց եկեղեցի	447	1304	1174	2478
2	Ղազանչեցոց եկեղեցի	367	1221	1014	2237
3	Մեղրեցոց եկեղեցի	102	241	217	458
	Ընդամենը՝	916	2766	2405	5171

Աղյուսակից երևում է, որ Շուշու հայերը 1840թ. կազմում էին 5171 շունչ: Քաղաքաբնակ մահմեդականների հետ միասին 1840թ. Շուշու բնակչության ընդհանուր թիվը 10 հազարից ավելի պետք է լիներ, որովհետև մահմեդականները դեռևս մեծամասնություն էին կազմում:

1852թ. «Кавказский календарь»-ում բերվում են Անդրկովկասի քաղաքների բնակչության թվին վերաբերող մի շարք տվյալներ, որոնք օգնում են՝ որոշելու Շուշու բնակչության ազգային կազմը և նրա տեղը Անդրկովկասի քաղաքների շարքում².

¹ Տե՛ս Լեոն, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, էջ 64: Այս ցուցակի թվերի հանրագումարը մեր կազմածն է

² Տե՛ս «Кавказский календарь» на 1852г., статья Константинович, "Шуша", стр. 430-435. Շուշու բնակչության թիվը «Кавказский календарь»-ի 1851թ. տված ցուցակում աննշան չափով տարբերվում է նույն թվականի համարում տպագրված Կոնստանտինովիչի բերած թվերից, որը չի խանգարում ընդհանուր առումով որոշելու Շուշու տեղը մնացած քաղաքների շարքում

N	Ըստ ազգային կազմի ու կրոնի	Բնակիչների թիվը		
		տղամարդ	կին	ընդամենը
1	Հայեր	3133	3232	6355
2	Մահմեդականներ	3175	3196	6371
3	Ուղղափառներ (ռուսներ)	2	3	5
	Ընդամենը՝	6310	6421	12731

Այս թվերից պարզ երևում է, որ Շուշու բնակչությունը 1840 թվականից հետո աճել է՝ հասնելով 12731-ի, իսկ քաղաքում բնակվող հայերի ու մահմեդականների թիվը 1852թ. համարյա հավասարվել էր:

Հետաքրքիր է իր բնակիչների թվով Շուշու գրաված տեղն Անդրկովկասի այլ քաղաքների շարքում, որ երևում է *"Кавказский календарь"*-ի 1852թ. տվյալների հիման վրա մեր կազմած հետևյալ աղյուսակից.

Քաղաքներ	Բնակչության թիվը
Թիֆլիս	34,888
Շամախի	19,558
Նուխի (1854թ.)	17,943
Շուշի	12,774
Երևան	12,603
Ախալցխա	12,374
Դերբենդ	12,216
Ալեքսանդրապոլ	11,280
Գանձակ (1854թ.)	10,938
Ղուբա	9,143
Բաքու	7,431
Նախիջևան	4,889
Քութայիս	2,723

Ինչպես երևում է աղյուսակից, Շուշին 1852թ. եղել է Անդրկովկասի ամենամեծ քաղաքներից մեկը՝ իր բնակչությամբ գրավելով 4-րդ տեղը: Շուշուց ավելի բնակչություն ունեին միայն Թիֆլիսը՝ Անդրկովկասի ամենախոշոր քաղաքը, Շամախին և Նուխին: Շուշին երկու անգամ ավելի բնակիչ ուներ, քան Բաքուն, ավելի մեծ էր, քան Գանձակը, Երևանը, Ախալցխան, Դերբենդը, Ալեքսանդրապոլը, երեք անգամ ավելի, քան Նախիջևանը, իսկ Քութայիսը Շուշու համեմատությամբ աննշան բնակավայր էր:

Երկու տարի անց Շուշու բնակչության թիվը հասնում էր արդեն 15194 հոգու¹, իսկ 1860թ., համաձայն Շուշում կազմած ընտանեկան ցուցակների, քաղաքում բնակվում էր 17,484 մարդ, որ

¹ Տե՛ս «Кавказский календарь» на 1954г.



կազմում էր 2966 ընտանիք (ծուխ): Առաջին (հայկական) քաղաքամասում բնակվում էր 9533 շունչ, իսկ երկրորդում (մահմեդականների)՝ 7951 շունչ, այսինքն՝ առաջինից 1582 հոգով պակաս: Այսպիսով, Շուշու բնակչությունը 6 տարվա ընթացքում ավելացել էր ավելի քան 2 հազար շնչով, իսկ հայերն արդեն կազմում էին քաղաքի բնակչության մեծամասնությունը¹:

1873թ. Շուշում կազմած ընտանեկան ցուցակների համաձայն²՝ Շուշու բնակչության թիվը հասել էր 22,086-ի, այսինքն՝ 1860թ. համեմատությամբ աճել էր համարյա 5 հազարով: Աննշան չափով տարբերվում է նույն թվականի համարում տպագրված Կոնստանտինովիչի բերած թվերից, որ չի խանգարում ընդհանուր առումով որոշելու Շուշու տեղը մնացած քաղաքների շարքում:

Աղյուսակ N 8

Ըստ ազգությունների	Ծուխ	Տղամարդ	Կին	Ընդամենը
Հայեր	2,288	6,996	5,480	12,476
Մահմեդականներ	1,483	5,192	4,418	9,610
Ընդամենը	3,771	12,188	9,898	22,086

Այսպիսով՝ 70-ական թվականներին ևս Շուշու բնակչությունն ուժեղ թափով շարունակում էր աճել, և Շուշին մնում էր Անդրկովկասի մեծ քաղաքների շարքում: Բնակչության ազգային կազմի մեջ ավելի ևս հաստատվում է հայերի մեծամասնությունը:

XIX դարի վերջին տասնամյակներում Շուշում բնակվողների թվի մասին քիչ թե շատ վստահելի տվյալներ մեզ տալիս են 1886թ. կազմված ընտանեկան ցուցակները, որոնց համաձայն՝ քաղաքում բնակվում էր 26,806 հոգի (տղամարդ՝ 15,786, կին՝ 11,020):

Այս թվերը հանդիպում են նաև *"Кавказский календарь"*-ի 1893, 1897, 1896, 1900 թվականների համարներում, հետևապես նաև 1897թ. համառուսական մարդահամարից հետո, ըստ որի՝ Շուշու բնակիչների թիվը հասնում էր 25,656-ի (13,282 տղամարդ, 12,374 կին)³: Այսպիսով՝ *"Кавказский календарь"*-ը շատ հաճախ էր անդրադառնում 1886թ. ընտանեկան ցուցակների թվերին՝ հաճախ նույն համարներում բերելով նաև 1897թ. համառուսական մարդահամարի թվերը:

Համեմատելով 1886թ. ընտանեկան ցուցակների թվերը Շուշու բնակիչների քանակի մասին 1873թ. ցուցակների հետ՝ նկատում ենք, որ քաղաքի բնակչության աճի տեմպերը զգալի չափով նվազել է. բնակչությունը 13 տարում ավելացել է միայն 4,5 հազարով, իսկ 1897թ. մարդահամարի համեմատությամբ՝ 24 տարում միայն 3,5 հազարով: Սակայն Շուշին XIX դարի վերջերին դեռևս մնում է տարածաշրջանի ամենամեծ քաղաքների շարքում՝ գրավելով երրորդ տեղը Բաքվից ու Գանձակից հետո:

1897թ. համառուսական մարդահամարի համաձայն՝ տարածաշրջանի քաղաքների բնակիչների թվի մասին հետևյալ տվյալներն ունենք.

¹ Տե՛ս *«Камеральное описание города Шуша за 1860г.»*, Архив министерств. внут. дел. Азерб. ССР, фонд 10, ед. хран. 48, лист 1-1025, ուր տրված են առաջին և երկրորդ քաղաքամասերում բնակվող ընտանիքների անվանական ցուցակները՝ կազմված 1860թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին: Այս ցուցակները վավերացված են բազմաթիվ ստորագրություններով: Գրքի մեջ կանանց անունները բերված չեն, ցույց է տրված միայն նրանց թիվը

² Տե՛ս *«Камеральное описание г. Шуши за 1873г.»*, Архив министерств. внутр. дел Азерб. ССР, фонд 43, опись 1, 9, 13. Այս ընտանեկան ցուցակները կազմված են Շուշում 1873թ., սակայն գրքի մեջ 557 թերթից մինչև 565 թերթը և 939 թերթից մինչև 997 թերթը ավելացված են նոր ընտանիքներ, որոնք բնակություն են հաստատել քաղաքում 1873թ. ցուցակները կազմելուց հետո: Հավելումն ի նկատի առնելով քաղաքի բնակիչների թիվը հասնում էր 24,014 հոգու: Մեր կազմած աղյուսակում հաշվի են առնված միայն 1873թ. հիմնական ցուցակները

³ Նույն թվերն են բերվում *"Брокгауз-Ефрон"* հանրագիտարանի 79-րդ գրքում: Բնակչության 56,5 տոկոսը կազմում են հայերը, 43,2 տոկոսը՝ մահմեդականները

Աղյուսակ N 9

Բաքու	112,253 բնակիչ
Փանձակ	32,090 »
Շուշի	25,646 »
Նուխի	24,811 »
Շամախի	20,000 »

Այստեղ պարզ երևում է, որ XIX դարի վերջին առանձնապես ուժեղ չափով աճել է Բաքուն՝ որպես բուռն զարգացող արդյունաբերական կենտրոն: Շուշուց առաջ է անցել Փանձակը, սակայն Շուշին մնացած քաղաքներից ավելի բնակչություն ունի:

1897թ. համառուսական մարդահամարի տվյալները, ըստ երևույթին, ավելի վստահելի են, և եթե 1886թ. Շուշում կազմած ընտանեկան ցուցակները ստույգ են, ապա դուրս է գալիս, որ Շուշու բնակչությունը 1897թ. 1886-ի համեմատությամբ արդեն պակասել է: Մենք կարծում ենք, որ XIX դարի 90-ական թվականներին Շուշու բնակչությունը կամ պակասել է, կամ նրա աճը դանդաղել է: Հավանական է, որ Շուշու բնակչության թիվը XIX դարի վերջին կամ XX դարի սկզբին 33 հազարից շատ չի ավելացել: Հենվելով Շուշու գավառապետի հաշվետվության վրա, որ ներկայացված է եղել Փանձակի նահանգապետին 1895թ., Երվանդ Լալայանը և Լևոն Աթարբեկյանը «Ազգագրական հանդեսի»¹ Բ գրքում՝ Շուշու բնակիչների թիվը համարում են 33,252 հոգի²: «Кавказский календарь»-ի վերջին համարներում Շուշու բնակչության թվի մասին տվյալները մենք համարում ենք անհիմն ու անհավանական³: Թե ինչ տվյալների վրա են հիմնված այդ չափազանցված թվերը, մեզ հայտնի չէ, բայց ակնհայտ է, որ XIX դարի վերջերից և մանավանդ XX դարի սկզբից քաղաքի բնակչությունը պետք է հետզհետե պակասեր, որովհետև այդ շրջանում Անդրկովկասում արագորեն աճում էին Բաքուն և Թիֆլիսը, որոնք դեպի իրենց էին քաշում մասնավորապես Շուշու և Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության զգալի մասը: Շուշին կորցնում էր իր դիրքը Անդրկովկասի առևտրական ուղիների կենտրոնում, թուլանում էր նրա կապը նաև արտասահմանյան շուկաների հետ: Առաջ էին գալիս նոր երկաթուղիներ, որոնք դեպի իրենց էին ձգում Անդրկովկասի առևտուրը և արդյունաբերական բեռները, սակայն չէին անցնում Շուշու տարածքով: Ղարաբաղի ներսում, Շուշի-Եվլախ խճուղային գծից բացի, կառուցվում էին նոր ճանապարհներ, որոնք անցնում էին Ղարաբաղի դաշտային մասով: Առաջ են գալիս տնտեսական և առևտրական կենտրոններ (Ադրամը և ուրիշներ), գնալով Շուշին աստիճանաբար կորցնում էր իր գերակշռող տնտեսաաշխարհագրական դիրքը:

Այս բոլորին 1905-1906թթ. ավելանում են հայ-թուրքական արյունալի ընդհարումները, որոնց հետևանքով Շուշում ոչնչացման ու կրակի է մատնվել հայկական ու թուրքական թաղամասերի զգալի մասը, ավերվել են հարյուրավոր տներ ու խանութներ, սպանվել հարյուրավոր մարդիկ⁴:

Այսպիսով՝ տնտեսական ու քաղաքական պայմաններում Շուշու բնակչությունը երբեք չէր կարող ավելանալ և հասնել 39-42 հազարի, ինչպես անհիմն կերպով վկայում են «Кавказский

¹ Տե՛ս Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1897, էջ 31 և 56

² Մոտավորապես նույն թիվն է տալիս նաև Ա-Դոն իր «Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում» գրքում (Երևան, 1907), այն է, որ Շուշում բնակվում էր 33 հազար մարդ, որից հայեր՝ 18 հազար, թուրքեր՝ 14 հազար, այլ ազգություններ՝ հազար

³ Այսպես՝ 1898թ. համարում Շուշու բնակիչների թիվը նշվում է 34.118 մարդ, 1915թ. համարում՝ 39.950, նույն և հաջորդ տարվա համարներում՝ նույնիսկ 42.586

⁴ Տե՛ս Ա. Դոն, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում, Երևան, 1907



календарь”-ի վերը նշված համարներից մի քանիսը, այլ քաղաքը աստիճանաբար պետք է դատարկվեր:

Վերջին հարվածը քաղաքին հասցնում են 1918-1920թթ. դեպքերը՝ թուրքերի մուտքը քաղաք (1918թ.), մուսավաթականների կործանարար քաղաքականությունը, որի հետևանքով երբեմնի ծաղկած և Անդրկովկասի նշանավոր քաղաքներից մեկը վերածվեց կիսաավերակ ու աննշան մի բնակավայրի:

1920թ. ավերումից հետո՝ 1921թ., երբ Ղարաբաղում խորհրդային կարգեր էին հաստատվել, Շուշին ուներ միայն 9223 բնակիչ, իսկ այնուհետև ավելի նվազեց՝ 1923թ.՝ 6965, 1926թ.՝ 5104, 1939թ.՝ 5428, իսկ 1959թ. մարդահամարի համաձայն՝ միայն 6,1 հազար բնակիչ¹:

Այսպիսով՝ Շուշու բնակիչների թիվն անընդհատ պակասում էր նույնիսկ խորհրդային իշխանության առաջին տարիների ընթացքում՝ մինչև 1926թ., իսկ այնուհետև՝ մինչև 1959թ., ավելանում է ընդամենը մեկ հազարով: Կոտորածների հետևանքով փոխվում է նաև քաղաքի բնակչության ազգային կազմը. 1926թ. բնակիչների 96 տոկոսը կազմում էին ադրբեջանցիները (4900 հոգի), 1,8 տոկոսը՝ հայերը:

Շուշու բնակչության արագ վերականգնելուն խանգարում էր մի հանգամանք ևս: 1920թ. ավերումից հետո Շուշին դադարում է մնալ որպես գավառական կենտրոն: Ադրբեջանում կազմակերպվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, որի կենտրոնը 1923թ. հուլիսի 7-ին հաստատվում է Խանքենդին, որը նույն թվի նոյեմբերի 23-ին ստանում է Ստեփանակերտ անունը:

Ստեփանակերտը շատ առավելություններ ուներ՝ նորակազմ ինքնավար մարզի կենտրոնը դառնալու, քան Շուշին: Նա ծովի մակերևույթի համեմատությամբ ավելի ցածր է տեղադրված (նրա միջին բարձրությունը հավասար է 837 մետրի, իսկ Շուշու բարձրությունը հասնում էր 1300-1500 մետրի), Ստեփանակերտը ինքնավար մարզում ավելի կենտրոնական դիրք էր գրավում, նրա հաղորդակցության ուղիներն ավելի հարմար էին, քան բարձրավանդակի գագաթին ընկած Շուշին: Ստեփանակերտը Եվլախ երկաթուղային կայարանին ավելի մոտ էր, և հետագայում այդ քաղաքը երկաթուղի անցկացնելու համար ավելի նպատակահարմար էր: Բացի այս բոլորից, Շուշին, որ մի ժամանակ գտնվում էր հաղորդակցության գլխավոր ուղիների կենտրոնում և կապում էր Ղարաբաղը Ջանգեզուրի, Ղափանի, Նախիջևանի և Իրանի հետ, ինչպես ասացինք, XIX դարի վերջերից կորցրել էր իր տնտեսաաշխարհագրական դիրքի այդ առավելությունները: Այս բոլորին պետք է ավելացնել նաև այն, որ Ստեփանակերտը ընդարձակվելու ավելի հարմարություններ ուներ, քան Շուշին, որի տեղանքն անհարթ էր, իսկ տարածությունը՝ սահմանափակ: Այս պատճառներով Ստեփանակերտն արդարացիորեն հաղթահարեց Շուշուն՝ որպես Լեռնային Ղարաբաղի կենտրոն, և իբրև բնակավայր՝ արագորեն զարգացավ՝ դառնալով Ղարաբաղի ամենամեծ քաղաքը՝ իսիստ ետ թողնելով Շուշուն: Այդ երևում է հետևյալ թվերից².

Աղյուսակ N 10

- 1855թ. Խանքենդում բնակվում էին 95 հոգի,
- 1897թ.՝ 1494 հոգի,
- 1917թ.՝ 1524 հոգի,
- 1923թ.՝ 2300 հոգի,
- 1924թ.՝ Ստեփանակերտում բնակվում էր 2465 հոգի,

¹ Տե՛ս «*Бакинский рабочий*» օրաթերթի 1959թ. սեպտեմբերի 24-ի համարը

² Թվերը վերցված են «*Кавказский календарь*»-ից, 1854թ. համառոտական մարդահամարի տվյալներից (1897թ.), խորհրդային վիճակագրական աղյուսակներից և այլն



1926թ.՝ 3189 հոգի,
 1933թ.՝ 5463 հոգի,
 1939թ.՝ 10548 հոգի,
 1956թ.՝ 17430 հոգի,
 1959թ.՝ 19600 հոգի:

Այսպիսով, Ստեփանակերտը դառնում է Լեռնային Ղարաբաղի արդյունաբերության, առևտրի, տրանսպորտի ու մշակույթի գլխավոր կենտրոնը: Իսկ Շուշին նախատեսվում էր դարձնել առողջարանային քաղաք:

ԳԼՈՒԽ IV

ՄՇԱԿՈՒՅԹԸ

Եթե Շուշին անցյալում, մասնավորապես՝ XVIII և XIX դարերի ընթացքում հանդիսացել է Անդրկովկասի խոշոր քաղաքներից մեկը նրա քաղաքական ու տնտեսական կյանքում, ապա փոքր չի եղել նրա խաղացած դերը XIX դարի հայկական մշակույթի զարգացման մեջ: Դեռևս XIX դարի 20-ական թվականներին Շուշում հիմք է դրվում հայկական տպագրության գործին, որը շարունակվում է մինչև քաղաքի հայկական մասի կործանումը: Շուշում XIX դարում բացվում են մի շարք ուսումնարաններ՝ ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն, որոնք վերածվում են խոշոր մշակութային կենտրոնների՝ անդրկովկասյան չափանիշով:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Հայկական տպագրությունը սկիզբ է առել դեռևս 1512թ. Վենետիկում, և առաջին մեկուկես տասնյակ տպարանները հիմնվում ու աշխատում էին արտասահմանում:

Անդրկովկասի առաջին հայկական տպարանը հիմնվում է Էջմիածնում՝ 1771թ., այնուհետև հայկական տպարան հիմնում են Ռուսաստանում՝ Անդրկովկասից դուրս (Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, Աստրախանում, Մոսկվայում), վերջապես 1823թ. հայկական տպարան հիմնվում է նաև Թիֆլիսում, որից հետո 1828թ.՝ Շուշում: Այսպիսով՝ Շուշում հիմնած տպարանն Անդրկովկասի հայկական տպարաններից երրորդն է՝ Էջմիածնի և Թիֆլիսի տպարաններից հետո:

1822թ. մի խումբ բողոքական միսիոներներ (այսպես կոչված՝ «Բազելի քարոզչական ընկերությունը») Պետերբուրգում ռուսական կառավարությունից թույլատրություն են ստանում՝ Շուշում տարածելու իրենց քարոզչական գործունեությունը: Այս ընկերությունն Ավգուստ Դիտրիխսի և Ֆելիցիան Չամբեգայի ղեկավարությամբ ժամանում է Շուշի 1823թ. և այստեղ սկսում ոչ միայն իրենց կրթական-դաստիարակչական, այլև դավանաբանական եռանդուն աշխատանքները: 1827թ. միսիոներները հայ աշակերտների համար բացում են դպրոց, ապա, Մոսկվայից բերել տալով հայերեն նորաձույլ տառեր և տպագրիչ, հիմնում են տպարան, որը սկսում է աշխատել 1828թ.՝ 7-8 տարվա ընթացքում հրատարակելով հայերեն մի շարք գրքեր ու գրքույկներ: Զբավականանալով Շուշում կատարած հրատարակչություններով՝ Բազելի քարոզչական ընկերությունը գրքերի մի մասը տպագրել է տալիս Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանի տպարանում¹:

¹ Տե՛ս Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, Թիֆլիս, 1914, էջ 84 և հետ. Գարեգին Լևոնյան, *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Երևան, 1946, էջ 231-233



Բազելի միսիոներական ընկերության գործունեությունը Շուշում սկզբում խանդավառությամբ և խրախուսանքով է ընդունվում Եփրեմ կաթողիկոսի կողմից, բայց Հովհաննես Կարբեցու ժամանակ այդ ընկերության գործունեության դեմ դիմադրություն է կազմակերպվում Էջմիածնում, որը տեղիք է տալիս խլրտումների, և հարցը վերջանում է նրանով, որ Կովկասի գլխավոր կառավարիչ Ռոզենի դիմումով և Ռուսաստանի ներքին գործերի մինիստրի գրությամբ միսիոներների գործունեությանը Շուշում վերջ է տրվում: Միսիոներները Շուշում (1836թ.) վաճառում են իրենց ձեռնարկությունները, գույքն ու հեռանում, տպարանն էլ անցնում է Ղարաբաղի թեմի վարչությանը:

Բազելի քարոզչական ընկերությունն իր ուշադրությունը կենտրոնացրել էր համարյա միայն հայերի վրա: Այս ընկերությունը Շուշում և Մոսկվայում տպագրել է 11,679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, 147 օրինակ թուրքերեն և 100 օրինակ եբրայերեն գրքեր:

Ինչ վերաբերում է Շուշում հրատարակված հայերեն գրքերին, որոնց օրինակների հետ մենք ծանոթացել ենք Երևանի հանրային և Մատենադարանի գրադարաններում, ստորև տալիս ենք նրանց համառոտ ցանկը: Այս հրատարակությունները մեծ մասամբ կրոնական-քարոզչական բնույթ են կրում, բայց կան նաև աշխարհիկ բովանդակությամբ գրքեր, բառարաններ, քերականական ձեռնարկներ:

1. *Պատմություն Սուրբ Գրոց (թարգմանություն ռուսերենից)*, 44 էջ, Շուշի, 1828թ.:
2. *Ընթերցուածք ի Ս. Գրոց հին կտակարանի (ի պիտոյ վարժարանաց)*, 28 էջ, Շուշի, 1829թ.:
3. *Հավաքումն Աստուածային վկայութեանց*, 184 էջ, Շուշի, 1829թ.:
4. Պողոս Ներսիսեանց Ղարաբաղցի, *Համառոտ հայկական քերականութիւն*, 30 էջ, Շուշի, 1829թ.:
5. Հովսեփ Արցախեցի, *Համառոտ բառագիրք ի գրաբարէ յաշխարհաբարն (ի պիտոյ համբակաց)*, 398 էջ, Շուշի, 1830թ.:
6. *Ժամանակի վերջն (թարգմանություն)*, 46 էջ, Շուշի, 1832թ.:
7. *Աւետարանի ճշմարտութեան և գորութեան համար (թարգմանություն)*, Շուշի, 1833թ.:
8. Կիրեղ Երուսաղեմցի, *Ճառ վասն տասն հրամանաց հավատոց*, 46 էջ, Շուշի, 1833թ.:
9. *Ճանապարհորդութիւն առ բարեպաշտ կեանս (թարգմանություն)*, 150 էջ, Շուշի, 1833թ.:
10. *Քարոզ ավագ ուրբաթ օրին համար*, Շուշի, 1833թ.:
11. *Մեղքը խաղ անելու բան չէ (թարգմանություն)*, 14 էջ, Շուշի, 1833թ.:
12. Չամչեան Միքայել, *Քերականութիւն հայկազեան լեզուի*, 328 էջ, Շուշի, 1833թ.:
13. *Վարդապետութիւն Քրիստոսի խաչին համար*, 77 էջ, Շուշի, 1833թ.:

Ինչպես երևում է մեր ներկայացրած ցուցակից, վերջիններիս մի մասը փոքրիկ գրքուկներ են, բայց նրանց մեջ կան և այնպիսիները, որոնք 150-ից մինչև 400 էջի են հասնում: Գրքերի մի մասը թարգմանություն է, բայց կան և ինքնուրույն աշխատություններ: Մի շարք հրատարակություններ կատարված են դասավանդմանը ծառայեցնելու նպատակով (ցուցակում՝ N2, 4, 5, 12): Արժեքավոր աշխատություն է Հովսեփ Արցախեցու՝ գրաբարից աշխարհաբար կազմած բառարանը:

Չափազանց բնորոշ է այն հանգամանքը, որ Բազելի քարոզչական ընկերությունն առաջին անգամ գործածության է հանում աշխարհաբար լեզուն. 1834թ. այդ ընկերությունը Մոսկվայում լույս է ընծայում աշխարհաբար լեզվով իրենց թարգմանած ավետարանը:

Ինչպես ասացինք, Բազելի քարոզչական ընկերության գործունեությունը և հրատարակչական աշխատանքները Շուշում սկզբնական շրջանում ոչ միայն թույլատրվում են, այլ նույնիսկ խրախուսվում լուսավորչական եկեղեցու ներկայացուցիչների կողմից: Այսպես՝ նրա հրատարա-



կած 2-րդ գրքի («Ընթերցուածք ի Սուրբ Գրոց») առաջին էջում տպագրված է՝ «Հրատարկութիւն տեառն Եփրեմի կաթողիկոսի ասենայն հայոց», իսկ N6 և N12 գրքերի վերնագրերի տակ ասված է, որ այս գրքերը հրատարակված են «հրամանաւ տեառն Բաղդասարայ Իշխանի Ջալալեանց»:

Ինչպես վերը նշեցինք, 1837թ. Բազելի քարոզչական ընկերության գործունեությանը ռուսական կառավարության կարգադրությամբ վերջ է տրվում Շուշում, և նրանց գույքը վաճառքի հանվում: Ընկերության Շուշու տպարանը գնում է Բաղդասար Միտրոպոլիտը, որը 1836թ.՝ «Պոլոժենիայից» հետո հետևյալ տարին, նշանակվել էր Ղարաբաղի առաջնորդ և կոնսիստորիայի նախագահ: Ղարաբաղի այս հոգևոր վարչության տպարանում տպագրական գործը Շուշում շարունակվում է հետևյալ տարիներին՝ որոշ ընդմիջումներով¹: Այս տպարանի առաջին գործն է Բայրոնի «Շիլիոնյան կալանավորի» տպագրությունը (Շուշի, 1837)՝ Սովսես Զոհրապյանի թարգմանությամբ: Այնուհետև այստեղ տպագրվում են Եսայի կաթողիկոս Հասան Ջալալյանի «Պատմություն կամ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհն Աղվանից» (Շուշի, 1839), Դերժավինի «Աստվածը» (թարգմանություն), Սալլանթյանց Միքայել (ծայրագույն վարդապետ Կոստանդնուպոլսեցոյ) «Համառոտութիւն փոքր քերականութեան գրաբար լեզուի հայոց» (առաջին մասն), 86 էջ, Շուշի, 1839թ., Հովսեփ Արցախեցի՝ «Առաջին մաս փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն, Համառոտեալ ի բուն տրամաբանութենէ վարդապետին Կորդոնյի», 246 էջ, Շուշի, 1840թ., «Մաշտոց», «Տետր այբբենարան», «Կրոնագիտություն» և այլն:

Լեոն իր «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» գրքում նշում է, որ Բազելի քարոզչական ընկերությունից Ղարաբաղի թեմական առաջնորդի և կոնսիստորիայի իրավասությանն անցած տպարանում Շուշիում հայերեն լեզվով տպվել են հետևյալ գրքերը.

1. «Խորհրդատետր».
2. «Սաղմոս» (սինոդի հավանությամբ):
3. «Եփրեմ Խորին»:
4. «Ժամագիրք» (սինոդի հավանությամբ), 1837թ.:
5. Բայրոն, «Շիլիոնյան կալանավորը», 1837թ., Շուշու այդ տպագրությունը չկա, բայց անշուշտ, դա այն է, որ տպագրվել է Զոհրապյանի ուսանավորների մեջ, որ կոչվում է «Պարապոյ ժամբ»: Տպագրված է Շամախում 1856թ.:
6. Վարդապետ Հովսեփ Տեր-Ավագյան, «Տրամաբանութիւն», 1840թ.:
7. Նույն հեղինակը, «Վահան ուղղափառաց»:
8. Ավագ սարկավագ Գրիգոր Տեր-Ավագյան, «Կրոնագիտություն կամ հոգեվարժություն քրիստոնեական», 1849թ.:
9. Գրիգոր Տեր-Ավագյան, Դերժավին - «Աստված» (թարգմանված հրաշալի գրաբարով):
10. Եսայի կաթողիկոս Հասան Ջալալյան, «Պատմություն կամ հիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհն Աղվանից», 1839թ.:
11. «Մաշտոց», 1840թ.:
12. Սալլանթյանց Միքայել (ծայրագույն վարդապետ Կոստանդնուպոլսեցի), «Համառոտութիւն փոքր քերականութեան գրաբար լեզուի հայոց» (առաջին մասն), 86 էջ, 1839-1840թթ.:
13. «Տետր այբբենական»:

Բազելի քարոզչական ընկերությունից Ղարաբաղի թեմական առաջնորդի և կոնսիստորիայի իրավասությանն անցած տպարանը Բաղդասար միտրոպոլիտի կյանքի վերջին տարիներին

¹ Տպարանը դադարելով, երբեմն վերանորոգվելով՝ աշխատում է մինչև XX դարի 10-ական թթ. (Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 122)



դադարեցրել էր իր աշխատանքը: Բաղդասար միտրոպոլիտի մահից հետո (1854թ.) Վեհապետյանը փորձում է միջոցներ ժողովել Շուշու ունևորներից Ս. Չամչյանի ընդարձակ քերականությունը տպագրել տալու համար, բայց դա նրան չի հաջողվում, և ինքը ստիպված է լինում այդ կատարել իր հաշվին (1859թ.): Այնուհետև նա դիմում է Մոսկվայում բնակվող հարուստ Հովհաննես Հովնանյանին՝ խնդրելով նվիրել Շուշու տպարանին մի ձեռքի մամուլ և հայերեն տառեր, որ և ստանում է: Տպարանը սկսում է կոչվել «Տպարան Սրբոյ Էջմիածնի» և գտնվում է կոնսիստորիայի հսկողության տակ: Այս տպարանում հրատարակվում է Մաթևոս կաթողիկոսի «Ներածութիւն աստուծաբանական դիտելաց» գիրքը (200 էջ, Շուշի, 1863թ.), բայց հետևյալ տարին թեմական դպրոցի հոգաբարձության (հոգաբարձու Համբարձում-բեկ Սարուխանյան) դիմումով Հովհ. Հովնանյանը հաստատում է, որ տպարանը նվիրել է ոչ թե Էջմիածնին, այլ Ղարաբաղի հոգևոր թեմական դպրոցին, և այնուհետև այստեղ 1864թ. հրատարակված գիրքը լույս է տեսնում թեմական դպրոցի տպարանում: Այդ գիրքը գիտության մագիստրոս Կ. Էզյանցի «Ներքինն կեանք հին Հայաստանի» նշանավոր աշխատությունն է, որը լույս է տեսել Շուշում 1864թ.: Այն թարգմանված է ռուսերենից Պերճ Պոռչյանի ձեռքով (որն այն ժամանակ աշխատում էր Շուշու թեմական դպրոցում) և կազմում է 200 էջ: Թարգմանական լեզուն աշխարհաբար է:

1864թ. հետո Շուշում հոգևոր թեմական դպրոցի տպարանը հետզհետե հասնում է քայքայման: Այս տպարանում 1874թ. մեծ դժվարությամբ հաջողվում է տպագրել Խորեն Ստեփանի «Հայկական աշխարհ» ամսագրի մի քանի համարները և միայն 80-ական թվականներին, երբ Շուշում նոր հիմնվում են բողոքական Միրզազան Մահտեսի Յակոբյանցի և Բագրատ Տեր-Սահակյանի տպարանները, նրանց դեմ մրցելու նպատակով թեմական դպրոցի հատկացրած միջոցներով և հանգանակած գումարներով 1885թ. նորից բացվում է «Հոգևոր տեսչություն» տպարանը, որը նշանավոր արտադրանք չի տալիս: Այստեղ տպագրված քիչ թե շատ նշանավոր աշխատություններից մեզ հայտնի են Մանուկ Աբեղյանի «Նմուշները» (բանաստեղծությունների ժողովածու), որի առաջին էջում հանդիպում ենք. «Տպարան հայոց հոգևոր տեսչության», Շուշի, 1888թ., որը 108 էջ է կազմում:

1881թ. Շուշում սկսում է աշխատել Միրզազան Մահտեսի Յակոբյանցի տպարանը, որը XIX դարի վերջում տալիս է բավական եռանդուն տպագրական արտադրություն: Այս տպարանում լույս է տեսնում Բաֆֆու «Խենթ»-ի առաջին հրատարակությունը («Արկածներ վերջին ռուս-թուրքական պատերազմից»), հրատարակիչ՝ Աբել Դավթյան Ապրեսյանց, տպարան Միրզազան Մահտեսի Յակոբյանց, առաջին հրատարակություն, Շուշի, 1881թ., 400 մեծադիր էջ:

Այս տպարանում նույն թվականին տպագրվել են Նիկոլայոս Տեր-Ավետիքյանի ոտանավորները «Քնար խոսնակ» վերնագրով (Շուշի, 1881թ., 36 մեծադիր էջ), որը մասամբ թարգմանություններ են Հայնեից, Պուշկինից, Լերմոնտովից, Գյոթեից, Շիլլերից, Դոբրոյուբովից, իսկ մասամբ ինքնուրույն են (օրինակ՝ «Շուշեցու Հայաստանը», «Շուշեցու իդեալը» (խանութպան դառնալու մասին) և այլն):

1882թ. մայիս ամսին Շուշում լույս է տեսնում «Գործ» գրական, քաղաքական ու ազգային ամսագրի առաջին համարը, որի խմբագիր- հրատարակիչը Սիմեոն Հախումյանն էր: Այնուհետև «Գործի» մնացած համարների հրատարակությունը, 1883թ. սկսած, տեղափոխվում է Թիֆլիս¹,

¹ «Գործ» ամսագրի 2-րդ գիրքը, լույս է տեսել Թիֆլիսում 1883թ. ապրիլ ամսին՝ 1 վերնագրի տակ, և բաղկացած է ընդամենը 16 էջից: Այդ համարի ծանոթության մեջ նշված է, որ «Գործի» գրաքննությունը կառավարության հրամանով տեղափոխված է Թիֆլիս, ուստի մենք ամսագիրը հրատարակում ենք Թիֆլիսում, բայց խմբագրությունը մնում է Շուշում «Գործի» 3-րդ գրքի (1884թ. հ. 1) խմբագրումն ու հրատարակությունը տեղի են ունենում Թիֆլիսում: Սա «Գործի» երրորդ և վերջին համարն էր, որ բաղկացած էր 96 էջից



սակայն խմբագրությունը 1883թ. դեռևս մնում է Շուշում, իսկ 1884 թվականին նա էլ է տեղափոխվում Թիֆլիս:

1886թ. Շուշում՝ Մ. Մահտեսի Յակոբյանցի տպարանում, լույս է տեսնում Սկայորդու (Լեոյի) «Նոր ցավ» գրվածքը (202 էջ):

1894թ. նույն տպարանը լույս է ընծայում Ֆիրդուսու չափածո գրվածքը, որը կոչվում էր «Ֆիրդուսի՝ Չոհակ-Բյուրասայի Աժդահակ» (ամբողջ վեպը Շահնամեից), թարգմանեց բնագիր պարսկերենից Սամուել Գյուրգադեանցը (44-22 էջ և ցանկ):

1896թ. Շուշու նույն տպարանում Երվանդ Լալայանի հրատարակությամբ լույս է տեսնում մեր նշանավոր «Ազգագրական հանդեսի» Ա գիրքը, որի ազգագրական բաժինը կազմում է 380 մեծադիր էջ, և ուր տրված է Ե. Լալայանի ընդարձակ հոդվածը՝ նվիրված հայ ազգագրության տեսությանը, Լ. Բաբայանի հոդվածը Խոջալուի գերեզմանների մասին, Ռ. Վիրխովի հոդվածը «Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ» (Լ. Բաբայանի թարգմանությամբ), Ե. Լալայանի ընդարձակ աշխատությունը Ջավախքի մասին (էջ 216-371) և մի շարք այլ հոդվածներ: Որպես այդ համարի հավելված՝ գրքին կցված է մարդակազմությանը նվիրված ևս մեկ բաժին (130 էջ): «Հանդեսին» կցված են քարտեզներ, ժողովրդական եղանակների ձայնագրության (ԿարաՄուրզայի) և այլն: «Ազգագրական հանդեսի» հաջորդ համարների հրատարակությունը Շուշուց տեղափոխվում է Թիֆլիս: Հանդեսի երկրորդ (Բ) գրքում (1897թ.) հրատարակվում է «Վարանդա» ընդարձակ աշխատությունը (Ե. Լալայանի խմբագրությամբ և մասնակցությամբ Լ. Աթարբեկյանի, Ղազար Տեր-Ղազարյանի), որը հարուստ ազգագրական նյութ է տալիս Շուշու, նրա գավառի և մասնավորապես՝ Վարանդայի մասին: Այնուհետև «Ազգագրական հանդեսը» շարունակում է տպագրվել Թիֆլիսում նույն ծավալով, մոտ մեկուկես տասնյակ տարի, որոնց ընթացքում հրատարակվում են 20-ից ավելի համարներ¹:

Ինչպես երևում է բերած նյութերից, XIX դարի վերջին տասնամյակներում տպագրական գործը Շուշում լայնորեն ծավալվում է: Շուշում աշխատում էին երեք տպարան (հոգևոր վարչության, Մ. Հակոբյանի և Բ. Մահակյանի), որոնք հնարավորություն ունեին տպագրելու բավական խոշոր ու արժեքավոր գրքեր և ամսագրեր: Այստեղ լույս էին տեսնում մեր նշանավոր գրողների և ամսագրերի անդրանիկ հրատարակությունները:

XIX դարի 90-ական թթ. սկսած՝ հոգևոր վարչության տպարանը փաստորեն դադարեցնում է իր գոյությունը, բայց XX դարում հիմնում է մի նոր տպարան՝ Բաբաջանյանի տպարանը: Հրատարակության գործը Շուշում հայերեն շարունակվում է մինչև 1920թ.: Այդ մասին վկայում է ստորև բերած Շուշում հրատարակված թերթերի ցուցակը.

1. «Գործ» ամսագիր - խմբագիր-հրատարակիչ՝ Միմեոն Հախումյան, 1882թ. (1-ին հատոր):
2. «Ազգագրական հանդես» - խմբագիր-հրատարակիչ՝ Ե. Լալայան, 1896թ. (1-ին հատոր):
3. «Ղարաբաղ» - եռօրյա գրական-հասարակական թերթ, խմբագիր-հրատարակիչ՝ Ն. Յարամիշյան, (1911թ. 13 համար, 1912թ. 6 համար. «Ղարաբաղի» խմբագիրը 1911-1912թթ. եղել է Միմ. Տեր-Մինասյանը, որի մահից հետո խմբագիր եղել է Ն. Յարամիշյանը):
4. «Պայքար» - քաղաքական թերթ, 1914-1917թթ.:

«Գործի» 1884թ. հ. 1-ը խմբագրականի մեջ կոչվում է «Գործի» երրորդ հատոր, նշանակում է, որ «Գործի» խմբագրությունը յուրաքանչյուր տարի լույս է ընծայել մեկական գիրք: Պարզ է, որ «Գործը» առանձին հաջողություն չի ունեցել: Վերջին գրքում խմբագիրը գանգատվում է, որ «բաժանորդների թիվը հասնում է 70-ի, դրանցից մեծ մասը՝ անվճար», խմբագրությունը միջոցներ չի ունեցել լրիվ չափով հրատարակելու ամսագիրը, այլ բաց է թողել 1883թ. բարակ հատորներ «Գործի» շարունակության իրավունքը օրենքի առաջ պահպանելու համար: Նույնն էլ արել է 1884թ. հույս ունենալով հետագայում կանոնավոր ամսագրի հրատարակության գործը

¹ Տե՛ս տեսք 13, էջ 21 և տեսք 14, էջ 8



5. «Փայլակ» - քաղաքական-հասարակական, սոցիալ-դեմոկրատական շաբաթաթերթ, հրատարակիչ՝ Լ. Վարդապետյան, խմբագիր՝ Խաչիկ Սամվելյան, 1915թ.:

6. «Միաձայն» - գրական-գեղարվեստական և քննադատական ամսագիր: Խմբագիր-հրատարակիչ՝ Մ. Պետրոսյան, 1919թ., տպարան Բաբաջանյանի:

7. «Ապաստած» - քաղաքական-հասարակական և գրական երկշաբաթաթերթ, օրգան հայ հեղափոխական դաշնակցության Շուշվա կոմիտեի, խմբագիր՝ Հայր. Մուսայելյան, 1917-1919թթ., տպարան Բաբաջանյանի:

8. «Աշխատանք» - քաղաքական-հասարակական, սոց.-հեղափոխական լրագիր, 1917թ.:

9. «Ասպարեզ» - օրգան հայ հեղափոխական դաշնակցության, խմբագիր՝ Հ. Մուսայելյան, 1917թ. (1-9 համար), տպարան Բաբաջանյանի:

10. «Նեցուկ» - հասարակական-քաղաքական լրագիր, հրատարակությունն ՌՄԴԲԿ Շուշվա կոմիտեի: Խմբագիր՝ Ա. Հովհաննիսյան, 1917թ. (լույս է տեսել ընդամենը 8 համար):

11. «Արցախ» - քաղաքական-հասարակական և գրական շաբաթաթերթ: Ազգային խորհրդի օրգան: Խմբագրական կոլեգիա, 1919թ.:

12. «Ղարաբաղի սուրհանդակ» - լրագիր, կոալիցիոն կառավարության պաշտոնական հրատարակչություն, միայն 1919թ.:

13. «Նոր կյանք» - հասարակական-քաղաքական օրգան, հրատարակություն սոց.-դեմոկրատական խմբակի, միայն 1919թ.: Տպարան Բաբաջանյանի:

14. «Գյուղացիական կոմունա» - օրգան Ղարաբաղի և Զանգեզուրի գյուղացիական առաջին ինտերնացիոնալ համագումարի (հայերեն, ռուսերեն և թուրքերեն), 1921թ. (մեկ կամ երկու համար):

15. «Եռանդ» - հրատարակության թվականն անհայտ է:

1920թ. Շուշու հայկական մասի ավերումից և Ղարաբաղի Ինքնավար Մարզի վարչական կենտրոնը Ստեփանակերտ տեղափոխվելուց հետո հայերեն հրատարակչության գործը Շուշում համարյա բոլորովին դադարում է:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՇՈՒՇՈՒՄ (ԴՊՐՈՑՆԵՐ)

Շուշին, XVIII դարից սկսած, եղել է Անդրկովկասի խոշոր կրթական լուսավորչական կենտրոններից մեկը: Նա ունեցել է բազմաթիվ դպրոցներ և մշակութային այլ հաստատություններ, որոնց կատարած դերն անժխտելի է:

Դեռևս Ղարաբաղի խանության ժամանակաշրջանում Շուշում մեչիդներին կից գոյություն ունեին մահմեդական տարրական դպրոցներ: Այդպիսի մի դպրոցում, օրինակ, 1795թ. սովորել է խանական Ղարաբաղի պատմության հեղինակ Միրզա Աղիգյոզալ բեկ Ղարաբաղցին¹:

Նման կրոնական ծխական դպրոցներ ունեին և հայերը, բայց սկզբում ոչ թե Շուշի քաղաքում, այլ Ղարաբաղի նշանավոր վանքերին կից: Այսպիսի դպրոցներ կային Գանձասարի և Սուրբ Հակոբի, ինչպես նաև Ղարաբաղից դուրս գտնվող Տաթևի և մի շարք այլ վանքերում²:

XIX դարի առաջին տասնամյակների ընթացքում Գանձասարի և Ս. Հակոբի վանքերում որպես վանական ապրում էր Հովսեփ վարդապետ Տեր-Ավագյանը (*Արցախեցի* մականունով), որը հմուտ էր աստվածաբանության, տրամաբանության, ճարտասանության, քերականության մեջ, թողել է մի շարք աշխատություններ, որոնց թվում՝ գրաբարից աշխարհաբար հայերեն բառարանը: Նրա

¹ Мирза Адигезал бек Карабахский, *Карабах наме*. Баку, 1950

² Լեն, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, Թիֆլիս, 1914, էջ 84 և հետևյալները



աշակերտներից էր Տաթևի միաբան Պողոս վարդապետ Ղարաբաղցին, որի մոտ էջմիածնում սովորել է Մեսրոպ Թաղիադյանը, իսկ Թիֆլիսում նրան աշակերտել է Ստեփանոս Նազարյանը:

Մ. Թաղիադյանը պատմում է, որ իր՝ Շուշի եղած ժամանակ (1821-22թթ.) «խմաստասեր», «գիտնական», վարդապետ Հովսեփ վարդապետ Արցախեցուն և Պողոս վարդապետ Ղարաբաղցուն Շուշու հարուստները բերել էին սովել իրենց տղաներին և աղջիկներին ուսում տալու համար¹:

Բայց Շուշում ուսումնարանների բացման, ինչպես նաև կուլտուր-լուսավորչական ու տպագրական գործը մասնավորապես մեծ թափ է ստանում, երբ Շուշի է գալիս Բագելի քարոզչական ընկերությունը (1823թ.): Պակաս եռանդուն չէր այս ընկերության գործունեությունն ուսումնական գործում: 1827թ. հիմնում են ուսումնարան (հայկական մասում՝ մահմեդական թաղամասի սահմանի մոտ), որտեղ ընդունում են գլխավորապես ղարաբաղցի 10-18 տարեկան հայ պատանիներին զանազան դասակարգերից՝ աշխատելով, որ ընդունվողները չքավոր լինեն: Այս ուսումնարանը (*Լեմսի շկոլը*) սկզբում մեծ հաջողություն է ունենում, և նրա հիմնադրման երկրորդ տարում աշակերտների թիվը հասնում է 130 հոգու: Դպրոցում սովորում էին հայերեն գրել ու կարդալ, ուսումնասիրում էին Հին և Նոր կտակարանը, թարգմանում գրաբարից աշխարհաբար և ընդհակառակը, սովորեցնում էին նաև թվաբանություն և աշխարհագրություն: «Լեմսի շկոլում» դասավանդում էին նաև Հովսեփ վարդապետ Արցախեցին և Պողոս վարդապետ Ղարաբաղցին: Դպրոցը ժողովրդական բնույթ էր կրում: Բացի կրոնական գրքերից՝ միսիոներների հիմնած տպարանում հրատարակում են հայերեն դասագրքեր, այբբենարան, կազմում են աղյուսակներ, քերականական ձեռնարկներ: Ուսումնարանի սաներից ոմանք սովորում էին նաև ռուսերեն, հունարեն, լատիներեն: Առանձնապես կարևոր է շեշտել, որ միսիոներների դպրոցում և նրանց տպագրած հրատարակություններում գործածության մեջ է մտնում աշխարհաբար ժողովրդական լեզուն, Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում հրատարակում են Ավետարանը աշխարհաբար լեզվով, իսկ Շուշում՝ Արցախեցու գրաբարից աշխարհաբար բառարանը:

Միսիոներների ուսումնարանում սովորածները, մասամբ միսիոներների օժանդակությամբ, իրենց հերթին Ղարաբաղում բացում էին փոքրիկ դպրոցներ, որտեղ շարունակում էին իրենց ուսուցիչների գործը:

Սակայն միսիոներների դպրոցական գործունեությունը Շուշում երկար չի շարունակվում²: Նրանք 1837թ. թողնում են Շուշին և հեռանում: Սակայն Բագելի քարոզչական ընկերության դպրոցական ութ տարվա գործունեությունը Շուշում բավականին խոր արմատներ է թողնում և ուժեղ չափով նպաստում նրա կուլտուր-կրթական առաջադիմությանը: Միսիոներների սկսած դպրոցական գործունեությունը իր շարունակությունն է գտնում գավառական ռուսական և Շուշու թեմական հայկական ուսումնարանների հիմնադրումով:

Ժամանակագրական կարգով այս երկու դպրոցներից նախ բացվում է Շուշու գավառական դպրոցը: Այն բացվում է XIX դարի 30-ական թվականների սկզբին՝ հավանականորեն 1830 կամ 1831 թվականներին³: Այս դպրոցը պետական էր, որտեղ Անդրկովկասի մնացած գավառական դպրոցների նման դասավանդումը հիմնականում տարվում էր ռուսերենով: Նրա նպատակն էր տարածել ռուսաց լեզուն տեղական բնակչության մեջ: Մեր ձեռքի տակ է գտնվում 1850թ. Շուշու

¹ Մ. Թաղիադյանց, *Ճանապարհորդութիւն ի Հայս*, Կալկաթա, 1847, էջ 292
² Մասնավորապես նրանց արգելվում է հայ երիտասարդներին ընդունել իրենց դպրոցը (Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, Թիֆլիս, 1914, էջ 95)
³ Գավառական անվանյալ պետական դպրոցները 1831թ. սկսեցին բացվել Անդրկովկասի զանազան քաղաքներում, դրանց թվում և Շուշում 1. (Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, էջ 91-92), իսկ ըստ «История Азербайджана», Баку, 1960, հատ. 2, էջ 90-100, 1830թ.



գավառական ուսումնարանի վարիչի (смотритель) հաշվետվությունն ըստ ամիսների (սկսած 1850թ. հունվարից)՝ ուղղված Կովկասի ուսումնական շրջանի (округ) արքունական դպրոցների տեսուչին (Շամախի-Դերբենդյան դպրոցների կառավարիչին)¹, որից երևում է, որ այդ ուսումնարանն իր հիմնադրումից մոտ 20 տարի հետո իրենից ներկայացնում էր ավելի շուտ տարրական կամ ոչ լրիվ միջնակարգ դպրոց, կազմված էր երեք դասարաններից, որոնցում 1850թ. հունվարին սովորում են առաջին դասարանում 71 հոգի, երկրորդ դասարանում՝ 33 հոգի, երրորդում՝ 10: Աշակերտների քանակը ամսեամիս 1850թ. մի քանի հոգով ավելանում կամ պակասում է դասարաններում, իսկ նրանց ընդհանուր թիվը հունվարին հավասար էր 114 հոգու, ապրիլին՝ 117, սեպտեմբերին՝ 100, իսկ նոյեմբերին՝ 106 հոգու: Ուսումնարանի մանկավարժական կազմը բաղկացած էր վարիչից, երկու ուսուցչից (Կուզանով և Բոյարդին) և երկու կրոնուսուցչից (Մելքոնյան Ար. և Ալավերդի օղլի), որոնք միաժամանակ ավանդում էին հայերեն և թաթարերեն (татарский):

Աշակերտները, ըստ ազգությունների, կազմում են՝ հայեր՝ 92-82 հոգի (ըստ ամիսների), մուսուլմաններ՝ 17-20 հոգի: Ըստ ծագման (դասերի)՝

Բեկական ծագումով – 34-43 հոգի (ըստ ամիսների)

Հոգևորական – 8-14 » »,

Օբեր-օֆիցերական – 4-7 » »,

Ազատ (մսաֆ) մելիքական – 5-13 » »,

Քաղաքացիների դաս – 42-50 » »,

Չինովնիկ. և անհատներ – 4 » »,

Դպրոցին անհայտ ծագման – 3-5 » »:

Հաշվետվության մեջ ասված է նաև, թե ինչ առարկաներ են անցնում Շուշու գավառական դպրոցում՝ ըստ դասարանների:

1-ին դասարանում անցնում են՝

1. Կրոն (աղոթքներ),
2. Ռուսաց լեզու (ընթերցանություն քրեստոմատիայից և Կոնիլովի առակներից),
3. Թվաբանություն,
4. Հայերեն և թաթարերեն,
5. Գեղագրություն:

2-րդ դասարանում անցնում են՝

1. Կրոն (Հանգանակ հավատո և մահմեդական կրոնի ներածություն (իմամաթի մասին),
2. Ռուսաց լեզու (բացատրականում՝ ընթերցանություն, պատմվածքներ և թարգմանություններ, գոյական անուններ),
3. Թվաբանություն (ամենափոքրերը-կրտսերները՝ անվան թվերի բաժանում, մեծերը՝ կոտորակներ),
4. Աշխարհագրություն (փոքրահասակները՝ ներածություն, մեծերը՝ Ռուսաստանի քաղաքները, գետային գլխավոր սիստեմները),
5. Հայոց լեզու (մինչև գոյական անունների հոլովումը),
6. Թաթարերեն (ընթերցանություն և բացատրական թելադրություն),
7. Գեղագրություն (մաքրագրություն):

¹ Архив Министерства Внутренних дел Азерб. ССР, фонд 845, опись 1, дело 13, "Дело о ведомостях Шушинского уездного училища в успехах и поведении учеников за 1850"



3-րդ դասարանում անցնում են՝

1. Կրոն (Հավատո հանգանակ), մահմեդականները՝ նույնը, ինչ որ 2-րդ դասարանում),
2. Ռուսաց լեզու (քերականությունից – տրական հոլով՝ առանց նախդիրի), ընթերցանություն, օրինակներ ըստ կանոնների, պատմվածքներ, գրավոր աշխատանքներ),
3. Թվաբանություն (до перемещения членов краткой пропорции и задачи тройного правила),
4. Աշխարհագրություն (մաթեմատիկական – մեծ շրջանների և երկրագնդի կառուցվածքի մասին),
5. Ընդհանուր պատմություն (ներածություն, Եվրոպա, եգիպտացիներ և պարսիկներ),
6. Ռուսաց պատմություն (առաջին շրջան),
7. Երկրաչափություն (հունվարին չկա),
8. Հայոց լեզու (մինչև գոյականների համաձայնությունը),
9. Թաթարական լեզու (ընթերցանություն թարգմանությամբ, բացատրական թելադրություն),
10. Գեղագրություն¹:

Դատելով ըստ ավանդվող առարկաների՝ պետական գավառական դպրոցներն ունեն յուրահատուկ ծրագրեր, որտեղ հիմնականը լեզուն և թվաբանությունն են, բայց նշանակալի տեղ է բռնում նաև կրոնը: Դպրոցում անցնում են նաև պատմություն և աշխարհագրություն: Ավանդման հիմնական լեզուն ռուսերենն է, բայց այդ դպրոցներում ավանդվում են հայոց և թաթարերեն լեզուներ (հայ և մահմեդական երեխաների համար առանձին-առանձին): Այս տեղական լեզուներով ավանդվում է նաև կրոնը (կրոնուսույցը միաժամանակ և լեզվի դասատու է):

Շուշու մեր նշած գավառական դպրոցը գոյություն է ունեցել մի քանի տասնյակ տարի և զգալի դեր է խաղացել ռուսաց լեզվի տարածման մեջ: Այդ դպրոցի ուսուցիչները թեմական դպրոցի բացման առաջին տարիներին մասամբ լրացրել են թեմական մանկավարժական կազմը: Այսպես, օրինակ, գավառական ուսումնարանի վարիչ հայազգի Մելքոն Խիտրովը XIX դարի 40-ական թվականներին միաժամանակ նշանակվում է թեմականի տեսուչ և, ըստ Լեոյի, թեմականում նոր մանկավարժական կարգեր է մտցնում²:

Շուշու պետական գավառական դպրոցը 70-ական թվականներից վերափոխվում է և դառնում Շուշու պետական քաղաքային դպրոց³, որը պահպանում է իր գոյությունը մինչև 1920թ.՝ որպես ոչ լրիվ միջնակարգ դպրոց, և բավականին մեծ դեր է խաղում Շուշում՝ տալով բավական ստվար թվով մտավորական կադրեր: Այս դպրոցում սովորել են գլխավորապես հայեր, որոնք կազմել են աշակերտների մեծամասնությունը⁴:

Հայկական կուլտուրայի զարգացման տեսակետից Շուշու գավառական (հետագայում քաղաքային) պետական ուսումնարանից անհամեմատ ավելի մեծ դեր է խաղացել Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցը, որը բացվել է Շուշում 1838թ. հունիսի 22-ին և պահպանել է իր գոյությունը մինչև 1920թ. (մինչև Շուշու հայկական թաղամասի ավերումը): Այս դպրոցի գոյության 75-ամյա հոբելյանին է նվիրված մեր նշանավոր պատմաբան Լեոյի 692 էջ կազմող խոշոր

¹ Այստեղ տալիս ենք հունվար ամսին անցնելիք առարկաների ծրագրերը: Հետևյալ ամիսներին անցնում են նույն առարկաների ծրագրերի շարունակությունը

² Տե՛ս *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, Թիֆլիս, 1914, էջ 189-203

³ Քաղաքային դպրոցի հիմնադրման տարին համարվում է 1875թ., «Ազգագրական հանդես», 1897, էջ 106, տետր 14, էջ 19

⁴ 1897թ. հայ աշակերտների թիվը դպրոցում հասնում էր 131 հոգու, թաթարներինը՝ 36, ռուսներինը՝ 4: Հայերը մնացած տարիներին նույնպես մեծամասնություն են կազմել: Շուշու քաղաքային դպրոցը, հանձնիս իր ուսուցիչների (Յակով Չեդգենիձե, Սալահ բեկ Չահրաբ բեկով և Համբարձում Տեր-Եղիազարով), 1891թ. տպագրության է տվել մի շարք հետաքրքիր աշխատություններ Շուշի քաղաքի և նրա տնայնագործության, նաև շերամապահության մասին): Տե՛ս *Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. II, Тифлис, 1891, стр. 1-79, "Гор. Шуша" վերնագրի տակ: Տե՛ս նաև նույն գրքի երկրորդ բաժնում, էջ 90-95 "Шелководство в Шушинской уезде"*



աշխատությունը, որը կոչվում է «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» (1838-1913)՝ հրատարակություն նույն դպրոցի հոգաբարձության (Թիֆլիս, 1914), որը բովանդակալից աշխատություն է՝ կազմված դպրոցի և Ղարաբաղի կոնսիստորիայի արխիվային նյութերի հիման վրա:

Ղարաբաղի թեմական դպրոցը XIX դարում և XX դարի առաջին երկու տասնամյակներում ռուսահայերի 4 հայկական թեմական միջնակարգ դպրոցներից մեկն է: Այդ 4 հայկական միջնակարգ դպրոցներն էին՝ Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում, Երևանի թեմական դպրոցը, Նոր Նախիջևանի դպրոցը (Դոնի Ռոստովում) և Շուշու թեմականը¹:

Իր գոյության առաջին տարիներին Շուշու թեմական դպրոցը շատ խղճուկ պատկեր էր ներկայացնում: Նա չունեւր միջոցներ, մշտական բյուջե, ուսուցիչները մեծ մասամբ կրոնականներ էին, աշխատում էին առանց վարձատրության: Սակավ էր աշակերտների քանակը, դասարանների թիվը, խղճուկ էր ուսման ծրագիրը: Բացման առաջին տարին աշակերտների թիվը քսանից ավելի էր, գոյություն ուներ միայն մի դասարան: Ժամանակի ընթացքում աշակերտների և դասարանների թիվն աստիճանաբար ավելանում է: Ուսուցիչների մի մասին սկսում են աշխատավարձ նշանակել, բայց դպրոցի բյուջեն երկար տարիներ դեռևս անկանոն էր մնում: Աստիճանաբար դպրոցի բյուջեն էլ ավելանում էր²: 1832թ. դպրոցն արդեն ուներ 65 աշակերտ և 4 ուսուցիչ: 1840թ. դպրոցում ավանդում էին հետևյալ առարկաները՝ 1)աստվածային օրենք, 2)սրբազան պատմություն, 3)հայոց քերականություն, 4)ռուսաց լեզու (ընթերցանություն և քերականություն), 5)պարսկերեն, 6)թվաբանություն և 7)երգեցողություն:

Թեմական դպրոցը 1838թ. մինչև 1860թ. ենթարկվում էր կոնսիստորական կառավարությանը և ուներ երկդասարանյան կազմ, իսկ 1860թ. սկսած՝ նա ստանում է ժողովրդական կառավարություն (կառավարվում է ժողովրդի ընտրած հոգաբարձուների կողմից) և ժողովրդական կառավարության առաջին շրջանում (1860-1889թթ.) ուներ 3-4 դասարանյան կազմ, իսկ 1889թ. հետո ստանում է վեցդասարանյան կազմ, որը և պահպանում է մինչև նրա վերջնական փակումը՝ 1920թ.: Ճիշտ է, «ժողովրդական կառավարության» օրոք էլ շատ հաճախ համառ պայքար էր մղվում հոգևորականների և աշխարհիկ հոգաբարձուների մեջ, հաճախ թեմականի տեսուչներ էին նշանակվում հոգևորական անձինք, թեմական դպրոցի կառավարման գործում հաճախ խառնվում էր Էջմիածինը, բայց ժողովրդական աշխարհիկ կառավարությունն ընտրած հոգաբարձուների միջոցով, որ հաստատվել էր Էջմիածնի կանոնադրությամբ, հիմնականում պահպանվում է՝ սկսած 1860թ.:

1860թ. սկսած՝ թեմական դպրոցի բյուջեն աստիճանաբար կանոնավորվում է, դպրոցը դառնում է միջնակարգ, ավելանում է սովորողների և դասարանների թիվը, թեև ըստ տարիների տեղի էին ունենում որոշ տատանումներ, ինչպես երևում է Լեռյի աշխատության հիման վրա կազմած մեր աղյուսակից³.

¹ Բացի այս թեմական դպրոցներից՝ ռուսահայերն ունեն նաև Էջմիածնի ճեմարանը, որ համարվում էր բարձրագույն կարգի դպրոց, Թիֆլիսի Հովնանյան և Գայանյան օրհորդաց միջնակարգ դպրոցները, Բաքվի Հովնանյան օրհորդաց դպրոցը, որոնց XX դարում միացել է Շուշու Ղուկասյան օրհորդաց միջնակարգ դպրոցը

² Թեմի հատկացրած առանձին եկամուտները, կալվածքներից ստացված տարբեր միջոցները դպրոցը չէին ապահովում նույնիսկ հետագա տարիներին, երբ ուսուցիչները երբեք կանոնավոր և ժամանակին աշխատավարձ չէին ստանում, ինչպես որ գոյություն ուներ պետական դպրոցներում

³ Տե՛ս Լեռյի հիշյալ աշխատությունը, էջ 181 և հետևյալները

	Աշակերտների քանակը			Դասարանների քանակը	
	Ընդամենը	Նախապատրաստական	Հիմնական դասարան	Նախապատրաստական	Հիմնական
1863	245	131	114	3	2
1871	313	-	-	3	3
1879	334	-	-	1880թ. Մանդինյանի տեսչ. օրով բացվում է 5-րդ մանկավարժ. դասարան	
1888	492			Բացվում է 6-րդ դասարան 1892թ.	
1898	492	-	-	Կային 3 նախապատ., 6 հիմնական, 2 գուգահեռ	
1896	563	-	-	Դպրոցն ուներ ընդամենը 13 դաս.	
1898-99	506	-	-	Դպրոցն ուներ ընդամենը 13 դաս.	

Աղյուսակից երևում է, որ աշակերտների ընդհանուր քանակը զգալի չափով պակասում է եկեղեցական կալվածքների՝ պետության կողմից խլված տարիներին, երբ թեմականը նույնիսկ ժամանակավորապես փակվում է: Համեմատաբար քիչ էր աշակերտության քանակը և դպրոցի գոյության վերջին տարիներին:

Դպրոցի բյուջեն համեմատաբար ապահովվում էր դպրոցի 75-ամյա հոբելյանական տարիներին, երբ նա ստանում էր խոշոր նվիրաբերումներ¹:

Ինչպես ասացինք, մեծ է եղել Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի² կատարած դերն Անդրկովկասի և մանավանդ Շուշու հայկական մշակույթի զարգացման գործում: Իր 82-ամյա գործունեության ընթացքում նա սովել էր հազարավոր շրջանավարտներ, որոնք չնչին բացառությամբ են միայն հոգևորական պաշտոններ ստանձնել և կրոնավորներ դարձել, այլ իրենց սովոր մեծամասնությամբ դարձել են գավառական դպրոցների դասատուներ և լրացրել հայ մտավորականության շարքերը: Նրանցից շատերը շարունակել են իրենց կրթությունն արտասահմանյան բարձրագույն հաստատություններում³, ինչպես նաև Ռուսաստանում, դարձել են նշանավոր բժիշկներ, լեզվաբաններ, հասարակագետներ, շատերն ավարտել են Էջմիածնի ճեմարանը և հետագայում նշանավոր դեր են խաղացել հայկական լեզվագիտության և գրականության մեջ, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դարձել են Հայաստանի Հանրապետության ակադեմի-

¹ Տե՛ս և Լեռնի հիշյալ աշխատությունը, էջ 629 և հետևյալները

² Շուշու թեմականը կոչվում էր նաև «սեմինարիա», «ճեմարան», իսկ Շանշյանի ժամանակ՝ «Եղիշյան ազգային հոգևոր դպրոց», սակայն հիմնականում «Ղարաբաղի հայոց թեմական դպրոց»: Ուշագրավ է նշել, որ Շուշու թեմականում սովորողների թվում հանդիպում ենք և Անդրկովկասի թաթարների 1868-1869թթ. ցուցակների մեջ՝ Հաջին (արձանագրված է Հաջիյանց) և Կնյազ Ումցին (Շուշու խանի աղջկա որդին): Տե՛ս և Լեռ, վերը նշված աշխատությունը, էջ 354

³ Ուշագրավ է, որ XIX և XX դարերում թեմականցիներին Ռուսաստանի բարձրագույն հաստատություններում չէին ընդունում սովորելու (բացառությամբ՝ պսիխոնեյրոլոգիական և առևտրական բուհերի, որտեղ թեմականցիներն ընդունվում էին), և այդ պատճառով թեմականցիները իրենց բարձրագույն կրթությունը ստանում էին արտասահմանում (մեծ մասամբ՝ Գերմանիայում, Շվեյցարիայում)



կոսներ, պրոֆեսորներ և որակյալ մասնագետներ: Հայագետ-գրականագետ Մաղաքյա Պուլուգյանի վերատեսչության ժամանակ (1870-1874թթ.) նրա աշակերտներից հետագայում նշանավոր դարձան Լեոն, Սեմիոն Հախումյանը, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը, Մուրացյանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան), Արսեն Տերտերյանը, քիմիկոս Հակովբ Հովհաննիսյանը:

Առանձնապես նշանավոր մանկավարժական և ուսուցչական կադրեր է ունեցել Շուշու թեմական դպրոցն իր ավելի քան 80-ամյա գոյության ընթացքում: Բավական է նշել այնպիսի անուններ, ինչպիսիք են Պետրոս Շանշյանը, որը թեմական դպրոցի վերատեսուչ է եղել 1863-1864թթ. և եղել է Շուշու ժամանակի դեմոկրատական շարժման ներշնչողն ու գործիչը և 1864թ. կղերականության ջանքերով ամբողջ ուսուցչական կազմի հետ արձակվել է դպրոցից¹:

Շանշյանից և Պ. Պոռոջյանից հետո (70-ական և 80-ական թթ.) մենք թեմականի ուսուցչական կազմի մեջ հանդիպում ենք Ղազարոս Աղայանին, Ս. Մանդինյանին (տեսուչ, 1889), Լ. Աթաբեկյանին, Մակար վարդ. Բարխուդարյանին, Մանուկ Աբեղյանին (որի գրչին է պատկանում Շուշու հրատարակված «Նմուշներ» վերնագրով բանաստեղծությունների ժողովածուն, 1888: 90-ական թվականներին այս դպրոցում տեսչություն էին անում Լևոն Սարգսյանը (1892-94), երգեցողության նշանավոր ուսուցիչ Ստեփան Դեմուրյանը, որ երկար տարիներ՝ մինչև XX դարի առաջին տասնամյակները, դասավանդել է Շուշու թեմականում, հայտնի ազգագրագետ Եր. Լալայանը, գրաբարի դասատու Ասլան Շահնազարյանը, որը երկար տարիներ՝ սկսած 1897թ., դասավանդել է թեմականում, իսկ խորհրդային իշխանության ժամանակ պրոֆեսորի կոչումով աշխատել Երևանում, և ուրիշներ:

XX դարի սկզբներին թեմականն ունեցել է ոչ պակաս ականավոր դասատուներ, ինչպիսին է հայտնի հրապարակախոս, պատմության դասատու Գարեգին Խաժակյանը (սպանվել է տաճիկների ձեռքով Սիամանթոյի, Վարուժանի, Զարգարյանի և ուրիշների հետ 1915թ.), հայտնի լեզվաբան, հետագայում ՀԽՍՀ ակադեմիկոս Հրայր Աճառյանը, Արշակ Զիլինգարյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը (տեսուչ 1908-10թթ.), Լևոն Թախտաճյանը (բնագետ-գյուղատնտես), Նիկոլ Աղբալյանը, Սպիրիդոն Մելիքյանը (երաժիշտ-դասատու), Հայրապետ Մուսայելյանը, Անուշավան Տեր-Միքայելյանը, Արշակ Տոնյանը և ուրիշներ: 1910-13թթ. տեսչության պաշտոն է վարում բժիշկ Յարամիշյանը, որի ժամանակ թեմականում մտցնում են գյուղատնտեսական գիտելիքների ավանդումը (այն հանձնվում է մասնագետ ուսուցիչ Լևոն Թախտաճյանին):

Խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին՝ թեմական դպրոցի գոյության վերջին տարիներին, ուսուցչական կազմի մեջ մենք հանդիպում ենք այնպիսի տեսուչների և ուսուցիչների, ինչպիսիք են Խաչիկ Սամվելյանը (1915-16թթ.), Ալեքսանդր Ծատուրյանը (1916-20թթ.)՝ հայտնի բոլշևիկ, որը սպանվեց 1920թ. գարնանը մուսավաթականների ձեռքով, Արմենակ Ղարազյոզյանը (բոլշևիկ, Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի առաջին քարտուղար), Արշավիր Քամալյանը և տողերիս հեղինակը (ռուսաց լեզվի և պատմության դասատու թեմականում՝ 1915-20թթ.):

Շուշու թեմական դպրոցն ունեցել է արխիվ, ունեցել է (որոշ տարիների ընթացքում) իր տպարանը, գրադարանը, որը կազմակերպվել էր 1869թ.: Դպրոցական շենքը սկզբում վերցվում էր

¹ Պետրոս Շանշյանի վերատեսչության օրոք Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցը ստանում է «Եղիշյան հոգևոր ազգային դպրոց» անունը, բայց նրան պաշտոնից ազատելուց հետո հին անունը նորից վերականգնվում է: Ուշագրավ է նաև Շուշու արհեստավորության, ավելի ճիշտ՝ «Հայագգի բնակչաց Շուշի քաղաքի» 47 ստորագրությամբ հոգաբարձությանն ուղղված բողոքը Շանշյանի և մանկավարժական կազմի դպրոցից ազատելու դեմ (Լեո, նշվ. աշխատ., էջ 340): Պետրոս Շանշյանի ժամանակ Շուշու բացվում է Մարիամյան օրհորդաց դպրոցը (1864թ.)՝ Մարիամ Հախումյանի ջանքերով: Այդ գործին մեծ չափով նպաստում է Պ. Շանշյանը, և նոր բացված Մարիամյան դպրոցի ուսումնական մասը, ըստ կանոնադրության, գտնվում էր Եղիշյան ազգային դպրոցի տեսչի հսկողության տակ (Լեո, նշվ. աշխատ., էջ 293-295): Այս դեպքին է նվիրված Պ. Պոռոջյանի բրոշյուրը՝ «Տիրամոր Ս. Մարիամի օրհորդաց ուսումնարանի բացվելը» (Շուշի, 1864թ.):



վարձով, 1871թ. սեպտեմբերի 17-ին դպրոցը տեղափոխվեց Բաղդասար միտրոպոլիտի կառուցած շենքը (առաջնորդարանը), իսկ 1898թ. թեմականը տեղափոխվում է իր նոր շենքը¹, կառուցված Անդրեաս Խանդամիրյանի՝ օրիորդաց դպրոցի օգտին կտակած փողերով, ուր մնաց մինչև 1920թ., սակայն օրիորդաց (Մարիամյան) դպրոցը տեղափոխվում է առաջնորդարանի (այսինքն՝ թեմականի) շենքը, իսկ թեմականը՝ նոր կառուցված շենքը (*Լեն, նշվ. աշխ., 555*): Թեմական դպրոցի նոր շենքն ուներ ընդարձակ դահլիճ, այն նույնքան մեծ էր, ինչպես և ռեալականի նոր շենքի (Առափեյանի միջոցներով կառուցված) դահլիճը (սրանք ամենամեծ դահլիճներն էին Շուշի քաղաքում, եթե չհաշվենք Խանդամիրյանի դահլիճը, որտեղ թատերական ներկայացումներ էին տրվում մինչև նրա այրվելը 1905 թվականի հայ-թուրքական կոտորածների ժամանակ): Թեմականի դահլիճում հաճախ տեղի էին ունենում դպրոցական հանդեսներ, ներկայացումներ:

Թեմական միջնակարգ դպրոցը, որ Շուշու բոլոր դպրոցների մեջ ամենից հինն էր (եթե չհաշվենք միսիոներների դպրոցը) և ամենից երկարակյացը, մի քանի տարով փակվում է իր գոյության առաջին տարիներին, և ապա 2 տարով եկեղեցական կալվածքների՝ ցարական կառավարության կողմից բռնագրավման ենթարկված տարիներին (1903-1905 թթ.) և նորից վերաբացվում է 1905 թվականի հեղափոխության ժամանակ: Այս դպրոցն ընդհանրապես ծառայել է քաղաքի դեմոկրատական խավերի կրթության գործին, որտեղ սովորողները մեծ մասամբ Շուշու արհեստավորական դասի զավակներն էին, քիչ թվով՝ հոգևորականների զավակները, և աշակերտության կազմով նա խիստ տարբերվում էր Շուշու ռեալականից, որտեղ սովորողներն իրենց սովոր մեծամասնությամբ բեկերի, ազնվականների և վաճառականների զավակներ էին:

Թեմականի աշակերտությունն ակտիվ մասնակցություն է ցույց տվել Ռուսաստանի հեղափոխական շարժմանը, դպրոցական ցույցեր կազմակերպել և 1906 թվականին մի շարք պահանջներ ներկայացրել:

Շուշում աշխատող դպրոցների թվում տեղին է նշել ժամանակագրական կարգով Մարիամյան օրիորդաց դպրոցը, որն ըստ էության ծխական դպրոց էր և իր բազմամյա գոյության ընթացքում կրթել ու դաստիարակել է բազմաթիվ հայ աղջիկների: Նա բացվում է Շուշում, ինչպես վերը նշեցինք, Մարիամ Հախումյանի (հոգաբարձու Համբարձում Հախումյանի կնոջ) նախաձեռնությամբ 1864 թվականի հուլիսի 7-ին: Այս դպրոցը պահպանվել է մինչև 1920թ. և հայ օրիորդների կրթության գործում խաղացել է իր զգալի դերը: Հայկական միջնակարգ օրիորդաց Ղուկասյան դպրոցը բացվում է Շուշում XX դարի 20-ական թվականներին և հազիվ գոյություն է ունենում մի քանի տարի:

1881 թվականին Շուշում բացվում է մի նոր տիպի դպրոց ևս՝ Շուշու ռեալական դպրոցը, որը մոտ 40-ամյա գոյության ընթացքում պակաս դեր չի խաղացել Շուշու մատաղ սերնդի կրթության գործում, քան Ղարաբաղի թեմականը, թեև թեմականի նման երկարամյա կյանք չի ունեցել: Այս դպրոցը պետական դպրոց էր, որտեղ ուսումը տարվում էր ռուսերեն, և սովորում էին հայեր, թաթարներ ու ռուսներ, սակայն սովորողների սովոր մեծամասնությունը կազմում էին հայերը: Ի տարբերություն ռուսական գիմնազիաների, որտեղ ուսման գործում գլխավոր դեր էին խաղում դասական և նոր լեզուները (լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն), ռեալական դպրոցը գլխավորապես ուշադրություն էր դարձնում բնագիտական ու ֆիզիկամաթեմատիկական գիտությունների վրա: Այս դպրոցն ավարտողներն իրենց ուսումը մեծ մասամբ շարունակում էին Ռուսաստանի տեխնիկական բուհերում և դառնում ճարտարապետներ, հաղորդակցության ուղիների ինժեներներ և նման տեխնիկական գծով աշխատող մասնագետներ: Ռեալական դպրոցի

¹ Սկզբում 3 դասարան, հետո մնացածները



բացումը Շուշում որոշ վտանգ է սպառնում թեմական դպրոցին, քանի որ նա պետք է դեպի իրեն քաշեր քաղաքում սովորել ցանկացողներին, մանավանդ, որ նա միանգամայն ապահովված էր պետական միջոցներով (կայուն բյուջեով) և ավելի ապահով ու լայն ասպարեզ էր խոստանում այդ դպրոցն ավարտողներին հետագայում ուսումը շարունակելու և լավ պաշտոններ գրավելու համար (նա ապահովում էր ռուսերենին տիրապետելը): Եվ, հիրավի, Շուշու այդ դպրոցում սովորելու ցանկությունը խիստ մեծ էր, մանավանդ ունևոր դասակարգերի կողմից, որոնք ամեն կերպ աշխատում էին իրենց զավակներին մտցնել այդ դպրոցը:

Առհասարակ Կովկասում կային մի քանի պետական գիմնազիաներ ու ռեալական դպրոցներ: Այսպես, 1893թ. Կովկասի ուսումնական օկրուգում կար 8 ռեալական դպրոց¹, իսկ 1898թ., Կովկասի ուսումնական օկրուգի հոգեբարձության հաշվետվության համաձայն, օկրուգում կար 9 ռեալական դպրոց՝ 3494 աշակերտներով, որոնցից Թիֆլիսի ռեալականում՝ 632 աշակերտ, Բաքվի ռեալականում՝ 607 աշակերտ, Շուշու ռեալականում՝ 334 աշակերտ, Քուբայիսի՝ 241 աշակերտ և այլն²: Շուշու ռեալականն իր աշակերտների թվով 3-րդ տեղն էր գրավում Կովկասում:

Շուշու ռեալականն ուներ 2 նախապատրաստական և հիմնական դասարան: Աշակերտները 6-րդ դասարանն ավարտելուց հետո ստանում էին հասունության վկայական, իսկ 7-րդ դասարանն ավարտելուց հետո՝ ավարտական վկայական:

Հետաքրքիր է Շուշու ռեալականի աշակերտության ազգային կազմը 1893 և 1898 թթ.³:

Աղյուսակ N 12

	Հայեր	Անդրկովկ. թաթարներ	Ռուսներ	Վրացիներ	Այլք	Ընդամենը
1893	223	38	12	--	--	273
1898	262	50	13	3	6	334

Այսպիսով՝ հայերը ռեալականի աշակերտության թվում կազմում են 80 տոկոսից ավելին, թաթարները՝ մոտ 15 տոկոս, և ավելի չնչին է ռուս և վրացի աշակերտների քանակը:

Շուշու ռեալական դպրոցն ուներ վերատեսուչ (директор), տեսուչ (инспектор), կրոնուսույցներ (3 լեզվով) և ուսուցիչներ, որոնք ավանդում էին հետևյալ առարկաները՝ ռուսաց լեզու, մաթեմատիկա, պատմություն, բնագիտություն, աշխարհագրություն, ֆրանսերեն և գերմաներեն, գծագրություն և գեղագրություն, երաժշտություն, երգեցողություն, աղբրեջաներեն, ուներ իր դպրոցական բժիշկը և դաստիարակների օգնականը (помощник классных поставников):

1905թ. հեղափոխությունից հետո հայերի (գույցե և թաթարների) համար մտցված էր մայրենի լեզվի դասավանդում, որը կատարում էր կրոնուսույցը (Եղ. Թարխանյան) հայոց պատմության հետ միասին (եկեղեցական պատմության անվան տակ):

Ռեալական դպրոցն ունեցել է նշանավոր ուսուցիչներ (դիրեկտոր և մաթեմատիկոս Ա. Ն. Բվանով, հնագետ Գումմել⁴, Միքայել Ղարաբեկյան՝ գերմաներեն, Հարութ Մելիքյան՝ ֆիզիկա, ֆրանսերեն և այլն), ոչ պակաս նշանավոր աշակերտներ, որոնք դպրոցն ավարտելուց հետո, հետագայում դարձել են ականավոր հասարակական գործիչներ (Բոգդան Միրզաջան Կնունյանց, Լևոն Աթարբեկյան,

¹ Кавказский календарь на 1893 год

² Кавказский календарь на 1900 год

³ Кавказский календарь на указанные годы

⁴ “Известия Азерб. филиала Ак. Наук за 1938г.”, стр. 77. “Тумель”-ի հրավածը – Раскопки в НКАО в 1938г. և “М. А. Казиев”-ի գիրքը *Азербайджан. – Исторические и достопримечательные места. Баку, 1960*



Աշոտ Հովհաննիսյան, Հայկ Գյուլիքնիսյան, Սաքո Սահակյան, Սլավա Կասպարյան): 1905թ. հեղափոխության օրերին ռեալականի աշակերտությունը կազմակերպել է բուռն աշակերտական ցույցեր և այդ տեսակետից առաջատար դեր խաղացել Շուշու ամբողջ աշակերտության կյանքում, ունեցել է իր ընդհատակյա աշակերտական մամուլը: Մեծ է եղել նաև նրա ակտիվ մասնակցությունը 1917թ. հեղափոխությանը:

Ռեալական դպրոցն ունեցել է համեմատաբար ավելի ընդարձակ բյուջե, համեմատաբար բարեկարգ ֆիզիկայի ու քիմիայի կաբինետներ, ընդարձակ ընդհանուր ու ֆունդամենտալ գրադարան (գլխավորապես ռուսերեն), որտեղ ես՝ գրքի հեղինակս, գրադարանապետի պաշտոն եմ վարել 1918-20 թվականներին: Ընդարձակ դպրոցական դահլիճ կար նոր շենքում (Առափելյանի ծախսով կառուցված), ուր դպրոցը տեղափոխվել էր 1908 թվականին (Մովսես բեկի տնից):

XIX դարի վերջերին Շուշուում բացվում է ևս մի դպրոց, որը մեծ դեր է կատարում Շուշու աղջիկների կրթության գործում: Դա ռուսական օրիորդաց Մարինսկու դպրոցն էր, որի բացումը հավանակա՛նորեն կատարվել է XIX դարի 90-ական թվականներին: Այս դպրոցը գտնվում էր «Նոր ժամի» («Կանաչ ժամի») թաղամասում՝ թեմական դպրոցի փողոցի վրա, թեմականից քիչ բարձր: Իրենից ներկայացնում էր, իմ կարծիքով, *ПРОГИМНАЗИЕ*-ի տիպի դպրոց և իր գոյությունը պահպանել է մինչև 1920 թվականը՝ ունենալով միջին հաշվով 200-300 աշակերտուհի, որոնց մեծ մասը հայուհիներ էին (1898 թվականին 257 աշակերտուհիներից՝ 240 հոգի), և չնչին էր թաթարների թիվը՝ 257-ից՝ 2 հոգի: Կային նաև ռուս աղջիկներ (14 հոգի) և այլք (1 հոգի)¹:

Մենք այստեղ չթվեցինք Շուշուում մինչև 1917 թվականը եղած բոլոր դպրոցների անունները, այլ կանգ առանք միայն հայկական և ռուսական գլխավոր դպրոցների վրա: Բացի դրանից՝ Շուշին ունեցել է նաև մի քանի ծխական (տարրական) հայկական դպրոցներ, XX դարի երկրորդ տասնամյակում ունեցել է հայկական միջնակարգ օրիորդաց դպրոցը (Մարիամ-Ղուկասյան դպրոց), որի շենքը ռեալական դպրոցի փողոցի վրա է գտնվում: Դպրոցը հիմնվել է շուշեցի եղբայրք Ղուկասյանների խոշոր նվիրատվության գումարներով² Շուշու հայկական մասի ավերումից մի քանի տարի առաջ և ընդամենը մի քանի տարվա կյանք է ունեցել: Այս դպրոցի առաջին տեսուչը Հայրապետ Մուսայելյանն էր, իսկ 1916թ. հետո՝ Ասլան Շահնազարյանը³:

Նախահեղափոխական Շուշին ունեցել է մի շարք այլ դպրոցներ, որոնցից նշանավոր է ռուս-թաթարական դպրոցը: XIX դարի սկզբին ունեցել է նաև երաժշտական դպրոց:

Մեր այստեղ տված տեղեկությունները XIX դարում և XX-րդ դարի սկզբին Շուշուում գոյություն ունեցող դպրոցների մասին բավական են՝ գալու այն եզրակացության, որ Շուշին այդ ժամանակաշրջանում եղել է հայկական խոշոր (նաև՝ ռուսական) կրթական-կուլտուրական կենտրոն:

Աղյուսակ N13-ը, որը մենք վերցրել ենք Եր. Լալայանի խմբագրած «Ազգագրական հանդեսի» (1897թ. էջ 102-113) «Վարանդա» վերնագիրը կրող աշխատությունից, որոշ չափով ամփոփ հասկացողություն է տալիս Շուշուում այդ թվականին գոյություն ունեցող դպրոցների, ուսուցիչների, աշակերտության սոցիալական ծագման և մի շարք այլ խնդիրների մասին (տալիս ենք աղյուսակը ամբողջովին, բայց առանց գյուղական դպրոցներին վերաբերող տվյալների): Աղյուսակի մեջ կան որոշ սխալներ, օրինակ՝ թեմականի հիմնադրումը տված է 1843 թվականը, իսկ մենք աղյուսակը տալիս ենք առանց փոփոխելու:

¹ *Кавказский календарь на 1900 год*

² Տե՛ս Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, էջ 633, Թիֆլիս, 1914

³ Տե՛ս Հովհաննես Պետրոսյան, *Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, կենսամատենագիտական ծանոթագրություններով*, Երևան, 1960

	Հիմնադրման տարին	Ուսուցիչ			Սովորողներ				Սովորողներ				Ընդամենը	Մինչև այժմ	Դպր. բյուջեն	
		Դասարաններ	Համակարանավարտածներ	Միջնակարգ կրթությամբ	Հայ	Ռուս	Վրացի	Թուրք	Ազնվական	Հոգևորական	Քաղաքացի	Գյուղացի			Մուտք	Ելք
Հայոց թեմական	1843	6	4	12	550	—	—	—	39	45	322	183	550	547	14843	14843
Ռեալական	1881	7	7	16	252	12	5	47	121 ¹	8	136	51	316	161	35413	35413
Քաղաքային	1875	3	-	9	131	4	—	36	44	7	21	29	171	354	10399	8326
Թուրքերի	1896	1	—	4	—	—	—	209	53	6	246	4	309	—	2510	2510
Հինգ միդասյան տղայոց. (մասնավոր)	—	—	—	5	276	2	—	13	7	9	275	—	291	—	10000	10000
Բոլորը	—	—	11	46	1209	18	5	305	264	75	1000	267	1637	1062	73165	71092
Օրիորդաց Մարիամյան արքունական ուս.	1894	4	-	10	137	12	1	—	30	8	212	—	250	—	4610	4610
ԸՆ-ԴԱ-ՄԵ-ՆԸ	—	—	11	56	1346	30	6	305	294	83	1212	267	1887	1062	77775	75702



ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՇՈՒՇՈՒՄ

Ըստ երևույթին, հայկական թատրոնը Շուշում սկիզբ է առնում XIX դարի վաթսունական թվականներին: Այդ մասին վկայում է հայ նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը, որը գրում է. *«Շուշում առաջին հայկական ներկայացումը տեղի է ունեցել դեռ վաթսունական թվականներին, երբ հայրենիք վերադարձած ուսանողները ոչ միայն տղամարդու, այլև կանանց դեր են կատարել: Այնուհետև թեմական դպրոցի ուսուցչական խումբը և շրջիկ դերասանները ներկայացումներ են տվել թեմական դպրոցի դահլիճում»¹:*

Երվանդ Լալայանի վկայությունը հաստատում է հայ թատերական արվեստի ներկայացուցիչներից մեկը՝ Գևորգ Չմշկյանը², որը 1865 թվականի հունիս ամսին Սեդրակ Մանդինյանի և Միհրդատ Ամերիկյանի հետ եղել է Շուշում ու տվել մի քանի ներկայացումներ: Գ. Չմշկյանն իր հիշողություններում բավական մանրամասնորեն նկարագրում է այդ ճանապարհորդությունը Թիֆլիսից Գանձակի վրայով Շուշի:

Առանձնապես ուշագրավ է Գ. Չմշկյանի մանրամասն նկարագրությունը Շուշու դիրքի, հաղորդակցության ուղիների (սայլերով, ձիերով, ջորիներով), ճանապարհների վտանգավորության, արտիստներին շուշեցիների կողմից քյանդրբազների կամ ջամբազների տեղ ընդունելու, Շուշու հյուրանոցում (կլուբում, որտեղ սենյակներ էին վարձով տալիս թուրթ խաղալու կամ քեֆ անելու համար) հանդիպման մասին: Չմշկյանի նկարագրությամբ Շուշում տված ներկայացումների մեծ հաջողությանը խիստ նպաստում է Խանքենդից (այժմյան Ստեփանակերտ) ներկայացումների համար զինվորական երաժշտախումբ հրավիրելը, որը ժողովրդի մեջ առաջ է բերում մեծ խանդավառություն: Նշանավոր է և այն հանգամանքը, որ այդ ներկայացումներին հաճախում էին նաև կանայք, որոնց համար հատկացված էին հատուկ նստարաններ: Չմշկյանի՝ երեք հոգուց բաղկացած թատերական խումբը տեղացի երիտասարդների և հանդիսականների եռանդուն մասնակցությամբ 1865թ. ներկայացնում է Սրապիոն Հեքիմյանի *«Մամվելը»*, *«Վարդան Մամիկոնյան»* ողբերգությունը և տեսարաններ *«Շկոլի վարժապետից»*: Չմշկյանի խմբի ներկայացումներն ունենում են անսպասելի հաջողություն շնորհիվ Շուշվա երիտասարդության՝ արտահայտված մեծ համակրանքի³:

Չմշկյանի գրքում ուշադրության արժանի են այն տողերը, որտեղ նա գրում է. *«Մենք Ղարաբաղում գտանք համակրություն, միաբան համակրություն, որ այդ համակրության սկզբունքների մեջ կար երկպառակություն: Կային երկու կուսակցություններ՝ շանշիական և սարգսական: Մեկին պատկանում էր հայ պատանեկության ուժը, մյուսին՝ մարդկության հարուստ դասը՝ փառասեր և շահասիրական նպատակին հետևող մարդիկ: Մենք գտանք համակրություն պատանեկության կողմից: Մեզ բավական էր այդ պատանիների համակրությունը, սկսեցինք գործը»:*

Չմշկյանը ճիշտ գնահատական է տալիս այդ կուսակցություններին, և ինքը համակրություն է փնտրում երիտասարդության մեջ: Շուշվա ներկայացումներով Գ. Չմշկյանը, Ամերիկյանը և Սեդրակ Մանդինյանը սկիզբ դրին այնտեղի թատերական կյանքին և պատճառ դարձան, որ Շուշում 1868թ. հատուկ թատերական բեմ շինվի:

Թատերական կյանքը Շուշում սկսվում է Գ. Չմշկյանի ներկայացումներով: Մական չի կարելի հաստատորեն պնդել, որ մինչև 1865թ. Գ. Չմշկյանի՝ Շուշում ներկայացումներ տալը Շուշում չեն եղել: Այդ մասին ներկայացումներ ենթադրության հիմք են տալիս ինչպես Երվանդ Լալայանի

¹ Տե՛ս նրա խմբագրությամբ *«Ազգագրական հանդես»*, Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 106

² Գևորգ Չմշկյան, *Իմ հիշատակարանը*, Երևան, 1953, էջ 47-57, որի տեքստը պատրաստել և ծանոթագրել է Ս. Ա. Մելիքսեյանը

³ Գ. Չմշկյան, *Իմ հիշատակարանը*, էջ 51-52



բերած նկատողությունը, այնպես և Գ. Չմշկյանի հիշողությունները այն մասին, որտեղ Ս. Մանդինյանի երբեմնի ուսանող ընկեր շուշեցի Տեր-Հակոբյանը Չմշկյանին և նրա ընկերներին տանում է հեռու՝ քաղաքից դուրս, և կանգնեցնում մի ահագին քարաշեն շինության առաջ՝ ասելով. *«Ահա մեր թատրոնը»*: Այնուհետև Չմշկյանը նկարագրում է այդ շենքը. *«Մտանք և ի նչ տեսանք՝ չորս պատ՝ մեջը փայտյա սյուներ, մի քանի տեղ բաժանված տախտակյա պատերով, առանց հատակի և առանց առաստաղի»*: Ահա այս շենքում էլ Չմշկյանը և իր ընկերները կազմակերպեցին և տվին իրենց առաջին ներկայացումները: Իհարկե, դա կանոնավոր թատերական շենք չէր, բայց արդյո՞ք այստեղ տեղացիները մինչև Չմշկյանի ներկայացումներ տալը չեն տվել ներկայացումներ՝ հաստատապես պնդել չենք կարող, սակայն հավանական ենք համարում, այլապես ինչու Տեր-Հակոբյանն այդ *«թատրոն»* է անվանում:

Այսպես թե այնպես, XIX դարի 60-ական թվականներին Շուշում հայերի մեջ արդեն հիմք էր դրվել թատերական գործին, և այնուհետև ներկայացումներ են բեմադրվել թե՛ մասնավոր տներում, թե՛ Ղարաբաղի հայոց թեմական դպրոցում, թե՛ Ն. Խանդամիրյանի հատուկ թատերական շենքում:

1882 թվականի հուլիսի 23-ին Շուշի է գալիս հայ բեմի հռչակավոր արտիստ Պետրոս Ադամյանը և մեծ հաջողությամբ բեմադրում իր ներկայացումները: Նա Շուշի է գալիս Թիֆլիսից *«Տարազի»* ապագա խմբագիր Տիգրան Նազարյանի խորհրդով՝ Նոր Նախիջևան գնալուց առաջ անցնել Շուշի և այնտեղ հանդես գալ իր երեկոյաներով: Տիգրան Նազարյանը, որի հետ Ադամյանը Թիֆլիսում բարեկամական հարաբերության մեջ էր գտնվում, 1881 թվականին հատուկ հանձնարարական նամակ է գրում իր ծնողներին և խնդրում նպաստել Ադամյանին:

Ադամյանը Շուշի գալուց առաջ կանգ է առնում Գանձակում և այնտեղ տալիս է երկու երեկույթ, որտեղ հատվածներ է արտասանում Շեքսպիրի *«Համլետից»*, Շիլլերի *«Ավագակներից»* և մի քանի ոտանավոր Ռաֆայել Պատկանյանից, բայց Գանձակում նա հաջողություն չի ունենում:

«Այդ ներկայացումներին տեղի հայությունը փայլել է իր բացակայությամբ», - գրում է Ադամյանը: Սակայն Շուշում Ադամյանի նույն երեկույթներն անցնում են մեծ հաջողությամբ: Իմանալով հռչակավոր դերասանի գալուստը՝ Շուշուց 27 «գիմնազիստ»², ձի հեծած, գնում են՝ նրան դիմավորելու: Երկյուղ կրելով, որ Շուշում էլ Գանձակի նման հասարակությունը չի հաճախի իր երեկույթները, Ադամյանը մի նամակում գրում է, որ *«ավելի լավ է ավանակների վրա նստած թատրոն գան, միայն թե գան, քան թե իրեն ձիերով դիմավորեն»*: Բայց Ադամյանին Շուշում շատ լավ են ընդունում և ցույց են տալիս, որ շուշեցիները ոչ միայն հյուրասեր են, այլև թատերասեր: Ադամյանի տված չորս ներկայացումները մեծ հաջողություն են ունենում:

Ադամյանն իր ներկայացումները բեմադրում է Տիգրան Նազարյանի մորեղբայր Համբարձում աղա Հախումյանի տանը, որտեղ հին, մեծ տան վերին հարկում հարմարեցրած էր մի թատերական աղքատիկ բեմ, որը դեռ մնում էր և կառուցված էր Տիգրան Նազարյանի ձեռքով: Ներկայացումները բեմադրում էր նաև կլուբի դահլիճում: Ադամյանի՝ Շուշում տված երեկույթների մասին (հատվածներ *«Համլետից»*, *«Ավագակներից»* և ոտանավորներ Գամառ-Քաթիպայից) պարբերական մամուլում և առանձին հիշողություններում լույս են տեսնում մի շարք հոդվածներ: Առանձին ոգևորությամբ Ադամյանի ներկայացումների մասին խոսում է Լեոն, որն այն ժամանակ պատանի էր և գտնվում էր հանդիսատեսների մեջ: Նա իր հիշողությունների մեջ պատմում է այն մասին, թե

¹ Տե՛ս Ռուբեն Զարյանի՝ *Ադամյանին նվիրված մենագրությունը (Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 171-178)*

² Շուշում այդ ժամանակ գիմնազիա չկար, այլ կար թեմական դպրոց, իսկ 1881թ. բացված էր ռեալական դպրոցը



Շուշում ինչպիսի մտավոր շարժում է կենդանացրել Ադամյանը, որը երկու դյուրիչ ուժ ուներ՝ բեմական արվեստ և հայոց լեզու: «Մինչև այժմ էլ թվում է,- գրում է Լեոն,- թե պահել են ահանջներիս մեջ մեծ արվեստագետի շեշտերն ու հնչյունները»¹:

1916թ. «Հորիզոն»-ի №109-ում Լեոն գրում է. «Այսօր էլ դեռ հիշողությանս մեջ են այն գավառական դեմքերը, որոնց վրա շեքսպիրյան հանճարի հրճվանքն էր դրոշմվել: Ի՛նչ սքանչելի օրեր էին»:

Ադամյանից հետո Շուշում հայկական ներկայացումներ հաճախակի էին տրվում թե՛ տեղական ուժերով, և թե՛ շրջիկ դերասանական խմբերի կողմից, որոնք հանդես էին գալիս իրենց ներկայացումներով գլխավորապես ամառային ամիսներին, երբ Շուշում հավաքվում էին բազմաթիվ «դաչնիկներ»: Թատրոնն այստեղ (Շուշում) կանոնավորվել և իր կրթիչ ազդեցությունն օրավուր ավելացրել է, երբ 1891 թվականին շինվել է Պ. Ն. Խանդամիրյանի թատերական շենքը: «Մա թեև արտաքուստ և կամ ներքուստ ճարտարապետական կամ գեղարվեստական մի առանձին նշանակություն չունի,- գրում է Երվանդ Լալայանը,- սակայն յուր ընդարձակ դահլիճով, բավական հարմարավոր բեմով և երկար ֆոյեներով միանգամայն բավականացուցիչ է Շուշվա պես մի գավառական քաղաքի համար: Ունի նա բավական դեկորացիաներ, մի բավական ճաշակով նկարված վարագույր և այլն»²:

Որքան մեզ հայտնի է, Խանդամիրյանի թատրոնն ունեցել է նաև էլեկտրական լուսավորություն, որ այն ժամանակ Շուշվա նման քաղաքի համար հազվագյուտ երևույթ էր Անդրկովկասում: Այս շենքը շարունակել է իր գոյությունը մինչև 1905թ. հայ-թուրքական ընդհարումները, երբ այն հրի է մատնվել:

Այս թատերական շենքում տեղի էին ունենում ժամանակի նշանավոր մի շարք դերասանական խմբերի ներկայացումներ: 1891թ. մինչև 1896թ. այս թատերական շենքում տրվում էր 119 ներկայացում՝ տարեկան միջին թվով 20 ներկայացում: Թատրոնն այդ տարիներին ունենում էր միջին հաշվով տարեկան 4 հազարից մինչև 7 հազար ռուբլի մուտք (ընդամենը 6 տարվա ընթացքում՝ 33.362 ռուբլի): Անշլագի դեպքում թատրոնն ունենում էր 325-350 ռուբլի մուտք³:

1896 թվականից հետո այս ներկայացումները շարունակվում էին Խանդամիրյանների դահլիճում, իսկ նրա այրվելուց հետո՝ Շուշու թեմական դպրոցի դահլիճում, Շուշվա կլուբի ձմեռային, ապա նաև ամառային շենքում, երբեմն Շուշու ռեալական դպրոցի դահլիճում⁴, մասնավոր՝ տներում (օրինակ՝ Փիփերթանց տանը), որտեղ հաճախ լինում էին աշակերտական կամ ընդհատակյա երեկույթներ և այլն:

Շուշու հայկական մասի ավերումից մի երկու տարի առաջ դասախոսությունների, երեկույթների և ներկայացումների համար օգտագործվում էր Ղուկասյան օրիորդաց դպրոցի դահլիճը, մանավանդ, երբ 1917թ. փետրվարյան հեղափոխությունից առաջ այստեղ բացվում է ժողովրդական համալսարան:

1896 թվականից հետո Շուշում ներկայացումներ են տվել հայ բեմի հռչակավոր արտիստներ Միրանուշը, Հովհաննես Աբելյանը, Պետրոսյանը, Հովհաննես Զարիֆյանը, Գրիգոր Ավետյանը, Արուս Ոսկանյանը, Օլգա Գուլագյանը և ուրիշներ, որոնք իրենց փայլուն խաղով հիացրել են Շուշու հանդիսատեսներին և կրթել նրանց մտավոր, բարոյական և գեղարվեստական ճաշակը: Շուշի քաղաքում են ծնվել կոմիկական դերերի աննման արտիստ Գրիգոր Ավետյանը,

¹ Լեոն, «Անցյալից», 1925, էջ 33

² «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 106

³ Նույն տեղում

⁴ Ռեալական դպրոցի՝ 1908թ. կառուցված շենքը (Առաֆեյանի նվիրաբերած միջոցներով) թեև ուներ շատ լավ ընդարձակ դահլիճ, բայց դպրոցը հազվագյուտ դեպքերում էր այն վարձով տալիս ներկայացումների համար, որովհետև նյութական կարիք չէր զգում, ինչպես թեմական դպրոցը



ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը: Շուշին տվել է նաև Ադրբեջանի թատրոնի երաժշտության մի շարք նշանավոր ներկայացուցիչներ, որոնց մասին հարկ է առանձին խոսել:

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ, ԸՆԹԵՐԳԱՐԱՆՆԵՐ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

XIX դարի ընթացքում Շուշին ունեցել է գրադարաններ, ընթերցարաններ, ակումբներ: Դեռևս 1859 թվականին Շուշում հիմնվում է այսպես կոչված *հասարակ գրադարան*, որը գոյություն է ունենում մինչև 1867 թվականը, երբ նա փակվում է: Վարչությունը գրադարանի գույքը նվիրում է Շուշու թեմական դպրոցին: Թեմական դպրոցը ստանում է բավական մեծ թվով հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով գրքեր ու պարբերական հրատարակություններ: 1869թ. նոյեմբերի 1-ին Շուշու թեմականում գրադարանի հիմք է դրվում¹: Այս գրադարանը շարունակում է իր գոյությունը մինչև 1920թ. դպրոցական շենքի ավերումը՝ կատարելով իր որոշակի դերը Շուշու ընթերցող հասարակության (գլխավորապես թեմականի աշակերտության և ուսուցչական կազմի) համար:

1889 թվականի մարտի 10-ին բարեգործական ընկերության Շուշու ճյուղը քաղաքում հիմնում է առանձին գրադարան, որն ուներ և ընթերցարան: Այս գրադարան-ընթերցարանը նույնպես աշխատում է տասնյակ տարիներ²:

Բարեգործական ընկերության Շուշու մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը ենթարկված էր հայ բարեգործական ընկերության Թիֆլիսի խորհրդին, ուներ 14 կետից բաղկացած կանոնադրություն և 1895թ. ուներ 4000 հայերեն և ռուսերեն գիրք (6000 ռուբլի արժողությամբ): 1889թ. մարտի 10-ից մինչև 1896թ. հունվարի 1-ը (7 տարվա ընթացքում) նրա տարեկան, ամսական և օրական անդամներն օգտվել են 27,620 անգամ (4098 անդամ): Նույն տարվա ընթացքում օգտվողների 85 տոկոսը կազմել են հայեր, 8 տոկոսը՝ ռուսներ, 4 տոկոսը՝ թուրքեր, 3 տոկոսը՝ այլ ազգություններ: Սովորողները կազմում էին հաճախորդների 55 տոկոսը, առևտրականները՝ 25 տոկոսը, աստիճանավորները՝ 10 տոկոսը, ուսուցիչներն ու վարժապետները՝ 7 տոկոսը, արհեստավորները՝ 3 տոկոսը: Կանայք կազմել են հաճախորդների 2 տոկոսը: Ավելի շատ կարդացվել են հայերեն՝ Բաֆֆի, Պոռոշյան, Աբովյան, Շիրվանզադե, Ծերենց, Աղայան, Շեքսպիր, Էոժեն Սյու, Դյումա, Ժյուլ Վեռն, Շիլլեր, Պարոնյան, Սունդուկյան, Խրիմյան, Մովսիս, Շահազիզյան, Գամառ-Քաթիպա և Լեո, ռուսերեն՝ Տուրգենև, Տոլստոյ, Ժյուլ Վեռն, Գոգոլ, Լերմոնտով, Պուշկին, Դիկկենս, Դոստոևսկի, Շպիլգազեն, Գոնչարով, Հյուգո, Գարշին, Զոլա, Օստրովսկի, Դոդե, Բելինսկի, Բայրոն, Մովսիս, Շեքսպիր, Շիլլեր, Գյոթե, Սենկևիչ, Չեխով և այլն³:

Պարբերական հրատարակություններից (ամսագրերից) առավելապես կարդացվել են՝ Հայերեն՝ *«Մորձ»*, *«Փորձ»*, *«Արաքս»*, *«Տարագ»*, *«Հանդես գրական և պատմական»*:

Ռուսերեն՝ *„Вестник Европы“*, *„Артист“*, *„Северный Вестник“*, *„Русская мысль“*, *„Книжки недели“*, *„Мир Божий“*, *„Русское богатство“*.

1896-97 թվականներից հետո բարեգործական ընկերության Շուշու մասնաճյուղի գրադարան-ընթերցարանն ավելի է ծավալում իր աշխատանքը՝ ավելացնելով իր գրքաքանակը, ստացվող հանդեսների և օրաթերթերի թիվն ու ընթերցանությունների քանակը, շարունակելով իր գոյությունը մինչև 1920 թվականը:

Բացի թեմականի և բարեգործական ընկերության գրադարան-ընթերցարաններից՝ XIX դարի վերջից Շուշում գոյություն ուներին ևս մի քանի այլ գրադարան-ընթերցարաններ.

¹ Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, Թիֆլիս, 1914, էջ 353
² Տե՛ս *«Ազգագրական հանդես»*, 1897, Բ գիրք, 2-րդ տարի, էջ 103-104: Այս գրադարան-ընթերցարանում երկար տարիներ գրադարանապետի պաշտոն է վարել համեստ և անխոնջ աշխատող Պողոս Չաքարյանը, որի ավագ եղբայրը Շուշու մասին իր հիշողություններն է թողել *Աշոտ Հովհաննիսյանին*
³ *«Ազգագրական հանդես»*, 1897, էջ 105. Թումյանի ստորագրությամբ գրած հոդվածը գրադարանների մասին



1. *Կլուբի գրադարան-ընթերցարանը* Շուշու քաղաքային վարչության նախ ձևեռային, ապա ամառային (ծաղկանոցի) շենքում, որը բավականին հարուստ էր և որից օգտվում էին թե՛ հայերը, թե՛ ռուսներն ու ադրբեջանցիները:

2. *Շուշու ռեալական դպրոցը*, որը XX դարի սկզբներին ուներ բազմաթիվ գրքեր ռուսերեն և մանավանդ՝ շատ հարուստ ֆունդամենտալ գրադարան:

3. *Շուշու աշակերտական միության գրադարանը*, որ ընդհատակյա գրադարան էր և ստեղծվել էր 1905 թվականի հեղափոխությունից հետո¹:

Շուշում գրադարաններ ունեին նաև Շուշու քաղաքային դպրոցը, Մարինսկի դպրոցը, Մարիամյան օրիորդաց դպրոցը, Ղուկասյան օրիորդաց միջնակարգ դպրոցը և այլն: Կային և մի շարք մասնավոր գրադարաններ, որոնք պատկանում էին առանձին անձանց, գլխավորապես՝ տեղական ուսուցիչներին:

Այստեղ տեղին է մի քանի խոսք ասել այն մասին, թե որ պարբերական հրատարակություններից էին օգտվում Շուշու բնակիչները մասնավոր կարգով, որ ամսաթերթերին և օրաթերթերին էին նրանք բաժանորդագրվում XIX դարում և ինչ քանակությամբ: Այս հարցին հաստատ պատասխան տալու համար մենք չունենք քիչ թե շատ ճշգրիտ տեղեկություններ, մանավանդ որ ընթերցասեր շուշեցիների համոզմունքները, տրամադրությունները և այս կամ այն թերթերին առաջնություն տալու հակումները տարբեր են եղել և փոփոխական տարբեր ժամանակների և հասարակական տարբեր շարժումների գերակշռության շրջաններում:

Ռուսահայերի առաջին պարբերական հայերեն հրատարակություններն էին՝ 1847-48թթ.՝ «*Кавказ*» ռուսերեն պաշտոնական թերթի հայերեն թարգմանությունները, 1850թ.՝ «*Արարատ*» շաբաթաթերթը (աշխարհաբար և գրաբար), 1858թ.՝ «*Հյուսիսափայլը*» Մոսկվայում, 1858թ.՝ «*Ճռաքաղը*», 1858թ.՝ «*Մեղու Հայաստանին*» Թիֆլիսում, 1860թ.՝ «*Կռունկ Հայաստանի*» Թիֆլիսում, 1960թ.՝ «*Մասյաց Աղավնի*» Թեոդոսիայում, 1860թ.՝ «*Ծիածան Հայաստանյաց*», 1861-62թթ.՝ «*Համբավաբեր Ռուսիոյ*», 1863-64թթ.՝ «*Հյուսիս*», 1866-67թթ.՝ «*Վաճառական*», «*Գարուն*», «*Հայկական աշխարհ*»:

«*Հյուսիսափայլը*» 1858թ. ուներ 262 բաժանորդ (Թիֆլիսում՝ 48, Շամախում՝ 12, Շուշում՝ 1): 1859թ. նա ուներ 350 բաժանորդ (Թիֆլիսում՝ 60, Շամախում՝ 30, Շուշում՝ 24, Երևանում՝ 17): «*Ճռաքաղը*» 1859թ. ուներ 372 բաժանորդ (Թիֆլիսում՝ 68, Էջմիածնում՝ 22, Շուշում՝ 19, Երևանում՝ 18, Շամախում՝ 16):

«*Մեղու Հայաստանին*» 1861թ. ուներ տպագրական 350 օրինակ, 1866թ.՝ 450 օրինակ, «*Կռունկ Հայոց աշխարհին*» 1862թ.՝ 800 օրինակ, 1865թ.՝ 400 օրինակ, «*Վաճառականը*» 1866թ.՝ 450 օրինակ:

Ովքե՛ր էին «*Հյուսիսափայլի*» բաժանորդները. մեծ մասամբ հայ վաճառականները: Նա հոգևորական բաժանորդ համարյա չունեին, նկատելի չափով գուրկ էր նաև ազնվական և աստիճանավոր բաժանորդներից: «*Բայց հայ վաճառականությունը նույն եռանդով և նույնպես գերազանց ջերմությամբ նաև հակառակորդ բանակի սպառնողն է*»²:

«*Ազգագրական հանդես*»-ը (1897թ., Բ գիրք, էջ 106) XIX դարի ինստունական թվականների Շուշու բաժանորդների մասին տալիս է հետևյալ թվերը. Շուշում 1894, 1895 և 1896 թվականներին՝ 3 տարվա ընթացքում, միջին հաշվով բաժանորդագրված էին տարեկան «*Նոր դարին*»՝ 80 հոգի,

¹ Այս գրադարանում ես աշխատել եմ որպես գրադարանապետ 1907-08թթ.: Աշխատանքն առանց վարձատրության էր՝ հասարակական հիմունքներով: Ես այս գրադարանում (ռեալականի վերնահարկում՝ կտրի տակ) գտա շատ հարուստ գրականություն, մասնավորապես՝ պատմությունից Լավրիս և Ռամբոյի բազմահատոր գրքերը, Պավլով-Սիրվանսկու գիրքը՝ ֆեոդալական շրջանին վերաբերող և շատ ուրիշներ

² Դ. Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում*, հատոր առաջին, էջ 313 և հետևյալները



«Մշակին»՝ 60 հոգի, «Արձագանքին»՝ 32 հոգին, «Տարագին»՝ 18 հոգի, «Մուրճին»՝ 6 հոգի, բոլոր հայերեն հանդեսներին և օրաթերթերին՝ 179 հոգի¹, իսկ բոլոր ռուսերեն թերթերին ու հանդեսներին՝ 470 հոգի:

Այս թվերից հետևում է, որ Շուշում ամենից շատ 1894-96թթ. բաժանորդագրված էին «Նոր դար» օրաթերթին, ապա՝ «Մշակ»-ին:

XX դարի սկզբներից՝ մանավանդ 1905թ. և 1907թ. հեղափոխությունից հետո, շուշեցիների բաժանորդագրման պատկերը, իհարկե, բոլորովին փոխվում է: Առաջ են գալիս առաջադիմական և հեղափոխական նոր թերթեր և հանդեսներ, որոնց բաժանորդների թիվը խիստ ավելանում է:

¹ Տե՛ս «Ազգագրական հանդեսի» 1897թ. 106-րդ էջի աղյուսակը: Այստեղ հայերեն թերթերի հանրագումարը ճիշտ է բերված



ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆԸ

Տալով «Հայրենի տան» ամբողջ նկարագիրը՝ նպատակս է նախ ցույց տալ մեր հաջորդ սերնդին իր նախնիների ամբողջ կյանքը, նրա աշխատանքը, կենցաղավարությունն ու սովորությունները և, ապա, որ սա մի տիպական նկարագիր է՝ փոքր կամ մեծ չափով, ինչպես մեր գյուղի (Մարտունու շրջան, գ. Մխտորաշեն) յուրաքանչյուր ընտանիքի համար, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի այն ժամանակվա բոլոր գյուղերի համար:

1.ԲՆԱԿԱՐԱՆԸ

Այն տունը, որի մեջ ապրում էին ծնողներս ու մյուս հարազատներս, և որի մեջ ծնվել, սնվել ու մեծացել եմ ես, մի փառահեղ, հսկայական շենք էր: Նրա զանազան մասերը բաղկացած էին 2-3 հարկերից ու ընդգրկում էին բազմաթիվ մատաններ, գոմեր, ապակեծածկ գալերեաներ, պատշգամբներ ու լուսավոր, ընդարձակ սենյակներ:

Նա ուներ լայն, ազատ ու ընդարձակ հորիզոն, և երբ մենք նայելու լինեինք այդ հորիզոնի ամենահեռավոր կետից, տունը մեր աչքին կերևար գյուղի կենտրոնում՝ գլխավոր փողոցի վրա, և կնմանվեր մի հիասքանչ ու գեղատեսիլ դրյակի:

Տան արևմտյան կողմից՝ 14-15մ երկարությամբ պարսպի կենտրոնից, բացված է գլխավոր մուտքը՝ դարպասը: Տան հարավային կողմից 40-45մ երկարությամբ կանգնած էր եռահարկ շենքը: Նրա առաջին հարկում, իրար կպած, գտնվում էր վեց սենյակ, որից մեկը արհեստանոցն էր, երկուսը՝ կրպակ, և երկուսն էլ՝ շտեմարան:

Տան երկրորդ և երրորդ հարկերում գտնվում էին մի շարք սենյակներ՝ թվով 10, և մի քանի պատշգամբներ՝ թվով 4: Երրորդ հարկում գտնվող սենյակները բավական բարեկարգ վիճակում էին. հատակներն ու առաստաղները՝ տախտակամած, դռներն ու պատուհանները՝ մեծ-մեծ, սենյակները՝ արևոտ ու լուսավոր, և բոլոր մասերը՝ ներկված: Երրորդ հարկում գտնվում էին երկու ապակեպատ գալերեաներ՝ մոտ 70ք.մ մակերեսով: Երրորդ հարկի սենյակների հյուսիսային կողմից երկայնքով ձգվում էր մի պատշգամբ՝ 15մ երկարությամբ և 3մ լայնությամբ:

Տան արևմտյան կողմից կանգնած էր 25մ երկարությամբ երկհարկանի մի շենք, որը կազմում էր առաջին շենքի անբաժան մասը: Այս ընդհանուր շենքի երկրորդ մասի առաջին հարկում գտնվում էր 1 գոմ, 2 թաղ («դաշան»), 1 մառան և 2 սենյակ, ընդամենը՝ 6 հատ: Այս բաժնի երկրորդ հարկում կար 2 պատշգամբ՝ ընդամենը 15 մ երկարությամբ, և 3 սենյակ:

Տան հյուսիսային կողմից շինված էր 1 թաղ (սենյակ)՝ մոտ 25մ երկարությամբ: Այդ թաղին զուգահեռ կառուցված էր երկրորդ թաղը՝ 20մ երկարությամբ, որի վրա կառուցված էր 2 սենյակ՝ 15մ երկարությամբ:

Բոլոր հարկերում գտնվող մառանների, գոմերի, պահեստների և սենյակների թիվը, բացի պատշգամբներից, հավասար էր 34-ի: Պատշգամբների ընդհանուր երկարությունը կազմում էր 25մ:

Այս հսկայական շենքը, որը բռնում էր հսկայական տարածություն, որպես մի անքակտելի ամբողջություն, ծածկված էր երկաթե թիթեղով՝ ներկված կարմիր ներկով:

Այս 34 մասից բաղկացած շենքը բաժանվում էր երեք խմբի՝

1. մառան, ամբար, մթերապահեստներ, ընդամենը՝ 13,



2. գումեր՝ 6,

3. բնակելի սենյակներ, որոնք գտնվում էին երկրորդ և երրորդ հարկերում, ընդամենը՝ 15:

Տան շրջագիծը հավասար էր մոտ 200 մետրի:

Մեր փառահեղ շենքի երկհարկանի մասն ավելի հին ժամանակվա կառուցվածք էր, իսկ շենքի եռահարկ մասը կառուցված էր իմ օրոք, որին ես մանկությանս ժամանակ ականատես եմ եղել: Այս հսկայական շենքը կառուցված չէր նախօրոք մտածված ու պլանավորված հատակագծով: Նա կառուցվել էր տասնամյակների ընթացքում, և որ ցավալին է, ինչքան որ կառուցվել, մեծ չափով քանդվել էր նախկին կառուցվածքը, և նորից այլ ձև ու տեսք տրվել շենքին:

Մեր հին շենքին կից կար հինավուրց մի պատ, որը խիստ սևացած էր անընդհատ ու երկար ժամանակ մոմ վառելուց: Դա մեր տոհմային՝ Քյոխվանց հին օջախն էր, որը շատ երկար տարիներ ժողովրդի համար ծառայում էր որպես սրբատեղի, և ամեն օր հասարակությունից գալիս էին, գոհ մատուցում, մոմ վառում, աղոթում:

Համաժողովրդական սովորություն էր՝ նախապապերից ու պապերից մնացած, որ յուրաքանչ-յուր նորապսակ գույզ, երբ եկեղեցուց դուրս էր գալիս, նվագելով, պարելով ու գոռում-գոչյուններով գալիս էր այդ սրբավայրը, ծունկ չոքում, մոմ վառում, համբուրում ու նորից խմբովին գնում հարսանքատուն: Ընդարձակ բակի անկյունում էր գտնվում թոնրատունը:

Քյոխվանց տունը՝ գյուղի տասնմեկ տոհմերից ամենահինը, ամենահարգված ու սիրված ընտանիքն է եղել, որին կարող էր ապացույց ծառայել Քյոխվանց օջախը՝ ժողովրդի ուխտատեղին:

Իհարկե, այժմ այդ սովորությունը մի քանի տասնյակ տարի է, ինչ վերացել է:

2. ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Իմ պապենական տոհմը և նրանից առաջացած մեր բազմանդամ ընտանիքը մեր գյուղի ամենահինն էր, ամենաառաջինը և բոլորից բազմանդամը:

Ես իմ պապին չեմ տեսել, միայն մեր մեծերի վկայությամբ ու գյուղամիջում գտնվող աղբյուրի ակունքի գլխաքարի արձանագրությունից երևում է, որ ես մի տարեկան եմ եղել, երբ նա մեռել է՝ թողնելով Ամառնան տատիկիս ինը զավակի հետ՝ վեց տղա և երեք աղջիկ: Նա մեռել է միջին տարիքում, 1863 թ-ին:

Ժամանակակից ծեր գյուղացիներն ու մեր մեծերն այսպես են նրան բնութագրում. պարզ, համեստ, աշխույժ ու կենսուրախ, կիսագրագետ մի քահանա էր՝ բարձր հասակով ու պարթև մորուքով: Նա լավ նվագել գիտեր սազի վրա:

Ասում են, որ մի օր գյուղացիներից մեկը նրան կանչում է՝ երեխային մկրտելու: Մի քանի ժամից հետո վերադառնալով՝ ընկնում է անկողին ու մի օրվա ընթացքում մեռնում: Ասում են նաև, որ իբր թե նրան թունավորել են:

Այսպես թե այնպես, Ամառնան տատը մնում է իր որբուկների հետ շատ ողբալի ու ծանր վիճակում: Սակայն նա չի հուսահատվում. նահապետական գեղջուկ կնոջը հատուկ սովորություններ, համբերատարությամբ ու ժրջանությամբ կարողանում է հաղթահարել բոլոր դժվարություններն ու խոչընդոտները և վառ պահել իր որբացած բազմանդամ ընտանիքի օջախը:

Այդ որբ ընտանիքն ընդամենը մի տասնամյակի ընթացքում կարողանում է ոտքի կանգնել և հետագայում դառնալ ոչ միայն մեր գյուղի, այլև շրջակա բազմաթիվ գյուղերի բացառիկ բարեկեցիկ ու նախանձելի ընտանիքներից մեկը:

Բոլորից մեծ հորեղբայրս գրել-կարդալ սովորել էր դեռ իր հոր կենդանության ժամանակ: Նա գրագետ էր և քանիցս անգամ Էջմիածնի պատվերով ժողովում էր զանազան հնություններ՝ կավե



ամաններ, անոթներ, հին գրքեր ու այլ իրեր, և տանում ու հանձնում էր թանգարանին:

Երկրորդ հորեղբայրս, ավարտելով Շուշվա Թեմական դպրոցի իր ժամանակակից լրիվ դասընթացը, ձեռնադրվում է քահանա: Նա հետագայում դարձավ Ղարաբաղի աչքի ընկնող առաջադեմ հոգևորականներից մեկը:

Ամառնան տատիկի երրորդ որդին իմ հայրն էր՝ Իսրայելը, որն իր տոկուն ու համատ աշխատանքով և աշխատասիրությամբ միանգամայն տարբերվում էր իր մյուս եղբայրներից:

Բնությունն ունի իր բազմաթիվ անարդարություններն ու հակասությունները: Մի կողմից դաժանորեն պատժել էր այս անգուգական մարդուն՝ զրկելով նրան խոսելու և լսելու կարողությունից, մյուս կողմից էլ առատորեն պարգևատրել բազմաթիվ բարեմասնություններով՝ հոգեկան ու բարոյական ընդունակություններով, բազմաթիվ դրական հատկություններով:

Նա ի ծնե խուլուհամր էր: Ճիշտ է, նա խոսել չգիտեր, լսել չէր կարող, սակայն բնականից օժտված էր խոր դատողությամբ, արագ ըմբռնողությամբ, սուր դիտողությամբ. վերին աստիճանի ընդունակ, հնարագետ, առաքինի ու աշխատանքի մարմնացում: Մեր ընտանիքի բոլոր անդամները կարողանում էին շատ հեշտությամբ, ձեռքերի արագ շարժումներով խոսել ու բացատրվել նրա հետ: Բոլորիս մեջ խիստ զարգացած էր այդ ունակությունը:

Իմ երեք հորաքույրերից մեկը ևս խուլ ու համր էր ի ծնե: Նա նույնպես օժտված էր մեծ ու հարուստ ընդունակություններով:

Չորրորդ հորեղբայրս մի նախանձոտ ու վերին աստիճանի ժլատ, անգութ մարդ էր: Նա, ճիշտ է, ընտանիքի մեջ առանձին աշխատանք չէր կատարում, բայց և չէր քայքայում ընտանիքը:

Հինգերորդ հորեղբայրս, որին ես չեմ տեսել, ասում են՝ սովորում էր Ամարասի վանքում՝ վանահոր մոտ, որը և մեռնում է այնտեղ երիտասարդ տարիքում:

Վեցերորդ հորեղբայրս ամենից փոքրն էր, որը մի արբեցող ու կատարյալ պատուհաս էր մեր ընտանիքի համար:

Չարմանալի են բնության երևույթները, ինչպես ժողովրդական խոսքն է ասում. *«Մի ծառը հարյուր տեսակ պտուղ ունի»*:

Մեր այս ընտանիքը, որ իմ մանկության օրոք հասնում էր 35-40 հոգու, մի կատարյալ մեղվանոց էր, որին ղեկավարում էր ու նրա կարիքները հոգում մայր մեղուն՝ Ամառնան տատը:

Այսպիսով, մեր այս բազմանդամ ընտանիքին շունչ ու հոգի տվողը իմ աննման Ամառնան տատն էր: Սա փոքրիկ մարմնով, գրավիչ դեմքով, սպիտակ մազերով, բարի աչքերով, փոքր-ինչ կորացած մեջքով մի կին էր:

Իմ բոլոր հորեղբայրներն ամուսնացած էին, ինչպես նաև հորաքույրերս: Մեր բնակարանում յուրաքանչյուր եղբայր այն ժամանակ ուներ իր առանձին ննջարանը: Մեր սենյակներից մեկը շատ մեծ էր, որտեղ ժողովվում էին բոլորն ու միասին ճաշում, թեյում, զրուցում իրենց առօրյաի մասին:

Մեր ընտանիքի բազմանդամ լինելը լավ էր աչքի զարնվում ձմեռվա իրիկունները, երբ հավաքվում էին այդ մեծ սենյակը, նստոտում երեք, չորս շարքերով:

Այդ սենյակում տեղ բռնելը կատարվում էր որոշ կարգով: Նախ սենյակի վերջին մասում՝ պատի երկարությամբ, փռվում էր մի մեծ կարպետ: Նրա վրայով ձգվում էր երկար գորգը (*«յան գյաբա»*), իսկ գորգի վրայով՝ մի նեղ, բայց երկար ներքնակ (*«յան դոշակ»*):

Բոլորից վերն նստում էր Ամառնան տատը: Նրանից ներքև շարքով, ըստ տարիքի, ծալապատիկ նստում էին նրա որդիները: Սենյակի մյուս կողմում նստում էին հարսներն ու աղջիկները, իսկ վերջիններիս մոտ՝ երեխաները: Բոլորից շուտ ընթրում ու թեյում էին երեխաները ու ցրվում իրենց ննջասենյակները, որից հետո՝ տղամարդիկ, իսկ բոլորից վերջում՝ կանայք:



Ընթրիքն ու թելը վերջացնելուց հետո սկսում էին խոսել իրենց օրվա կատարած և վաղվա կատարելիք աշխատանքների մասին, որից հետո Ամառնան տատիկից և քահանա հորեղբորիցս որոշ ցուցումներ ստանալուց հետո ցրվում դեպի ննջարանները: Սովորական երևույթ էր այս ընտանիքում երեք-չորս օրորոց լինելը, անպակաս էր տարեկան մեկ-երկու հարսանիքը. մեր աղջիկներից մեկին ճանապարհ էին դնում կամ մի տղայի ամուսնացնում: Բացի դրանից՝ յուրաքանչյուր տարի էլ մեկ-երկու հոգի մեռնում էին:

Ահա Քյոխվանց տոհմի շարունակությունը կազմող Դերունց բազմանդամ ընտանիքը:

3.ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մեր բազմանդամ ընտանիքն ուներ բազմաճյուղ մի խոշոր տնտեսություն, որի յուրաքանչյուր ճյուղն ուներ իր կազմակերպիչն ու ղեկավարը: Բոլոր ճյուղերից ստացված եկամուտները մտնում էին մի ընդհանուր շտեմարան, որի պատասխանատու ղեկավարը մեր ամենից սիրելի Ամառնան տատն էր իր քահանա որդու հետ, որոնց յուրաքանչյուր խոսքն օրենք էր, իսկ կարգադրությունը՝ պարտադիր բոլորի համար:

Այդ տնտեսության ճյուղերն էին՝ տնայնագործություն, շերամապահություն, բանջարաբուծություն, ոչխարաբուծություն, ջրաղացներ, օղեգործություն, խոզաբուծություն, մեղվաբուծություն, շինարարություն, երկրագործություն և այգեգործություն:

Տնայնագործություն

Ամառնան տատն էր այս ճյուղին շունչ ու ոգի տվողը: Նա օրվա մեծ մասը յուր փայտյա մահճակալի վրա էր իր անբաժան ընկեր ճախարակի հետ և շարունակ թել էր մանում: Նրա ղեկավարությամբ ու հսկողությամբ աշխատում էր երկու ուստայն. գործում էին նրա հարսներն ու աղջիկ թոռները: Նրանք գործում էին գորգեր, կարպետներ, ջվալներ եւ այլ իրեր:

Գետնի վրայով՝ բավական երկար տարածությամբ, հենում էին թելերը եւ գործում զանազան գործվածքներ հագուստի համար: Այդ գործվածքներից պատրաստում էին մեծ մասամբ տղամարդկանց համար զանազան հագուստներ, օրինակ՝ չուխա, անդրավարտիք, փթավա և այլ իրեր:

Մեր ոչխարի հոտից ստանում էինք մեծ քանակությամբ բուրդ: Ահա Ամառնան տատը տարվա մեջ մեկ կամ երկու անգամ գյուղի կանանցից «միջի» (շաբաթօրյակ) էր անում և զգել տալիս այդ բուրդը: Նրանց բոլոր պատրաստած *մալաչները* դարձնում էին պտուտակներ, որոնք կոչվում էին *բուրմա* և դրանցից մեն-մենակ, մեծ հմտությամբ շատ ընտիր թել էր պատրաստում Ամառնան տատը: Այդ ժամանակ շատ դժվար էր գտնվում ներկը, ուստի նա ինքը մեծ վարպետությամբ ու հմտությամբ զանազան բույսերից պատրաստում էր բազմաթիվ տեսակ ներկեր: Օրինակ՝ ընկուզենու կանաչ տերևից և նրա կեղևից ու նոր, դեռ չհասունացած ընկուզի կաղաղից ստանում էր սև գույն: Ճապկի թփի կանաչ ճյուղերից՝ «*զաղի*» հետ, նոսն կեղևից նույնպես ստացվում էր սև գույն: Դեղին ծաղկից (*դեղնածաղիկ*) ստանում էր դեղին գույն: Սոխի չոր կեղևից ստանում էր մի տեսակ մուգ կարմրավուն գույն:

Թելը ներկելու գործողությունը կատարում էր հետևյալ կերպ. նա, եթե ցանկանում էր՝ իր թելը սև կամ կարմիր գույն ունենա, վերցնում էր այն բույսերը, որոնցից կարելի էր ստանալ այդ գույները, լցնում էր մեծ կաթսայի մեջ ու եփում կրակի վրա այնքան, մինչև որ դուրս էր գցում գույնը, որից հետո կաթսայից հանում էր բույսը՝ թողնելով ջուրը: Ջրի հետ խառնելով աղ, շիբ՝ թելը գցում էր մեջը ու դնում կրակի վրա և շարունակում եփելը, որից հետո կաթսան իջեցնելով կրակից՝ սպասում էր մինչև նրա սառչելը, հետո հանում էր թելը և թեժ արևի տակ չորացնելուց հետո լվա-



նում: Այդ գործողությունից հետո ստանում էր ցանկացած գույնի թել:

Ամառնան տատը նուրբ, սքանչելի ճաշակ ուներ: Չնայած, որ նա մի հասարակ գեղջկուհի էր, բայց օժտված էր բնական մեծ ընդունակություններով: Նա, արհեստական կերպով ստանալով զանազան գույներ և թելը ներկելով բազմատեսակ գույներով ու այդ զանազան գույնի թելերը միահյուսելով, ստանում էր հրաշալի, գունագեղ ու ակնապարար գործվածքներ:

Մեր տնտեսության հարստության մի զգալի մասն էին կազմում բազմաթիվ գործվածքների գորգեր, կարպետներ և այլ տեսակի գործվածքներ, որոնք մեր համեստ ու ժրաջան տատի աշխատանքի արդյունքն էին:

Շերամապահություն

Մի հողե հատակով սենյակ ունեինք, որտեղ Ամառնան տատը շերամի որդեր էր պահում և ստանում մեծ քանակությամբ բոժոժ: Այդ բոժոժից պատրաստում էր մետաքսի թել, որը գործադրվում էր մեր տնտեսության մեջ: Նա մետաքսի թելը նույնպես ներկում էր զանազան գույներով ու գործում զանազան կտորներ, որոնցից պատրաստում էր չուխա, անդրավարտիք, ջեջիմ և այլ իրեր:

Գյուղի մոտ գտնվող մեր այգու մի զգալի մասը հատկացված էր *թոխլչարի*, որի թթենու տերևներով կերակրում էին շերամի որդը: Մեծ հանցագործություն էր համարվում շահ թթենու տերևներով շերամի որդի կերակրելը:

Բանջարաբուծություն

Մեր տնտեսության կարևոր ճյուղերից մեկն էր բանջարաբուծությունը:

Տղամարդիկ միայն հերկում էին հողը, իսկ մնացած աշխատանքները կատարում էին կանայք ու աղջիկները, օրինակ՝ սերմը ցանելը, խնամելը, ջրելը, մուլխոտերից ազատ պահելը, բերքը ժողովելը և այլ աշխատանքներ: Այս բոլորը կատարվում էր Ամառնան տատի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ:

Բանջարաբուծությունից ստացվում էին տնտեսության մեջ ամբողջ տարին գործածվող բանջարեղենը, արմատապտուղները և լոբազգի այլ տեսակներ:

Ոչխարաբուծություն

Մեր տնտեսությունն ուներ 120-150 ոչխար, որը գտնվում էր մեծ հորեղբորս՝ Եգոր ապու հսկողության ու խնամքի տակ: Մեծ հովիվը ենթարկվում էր նրան և նրա ցուցմունքով էր շարժվում՝ ուր քշել հոտը, որտեղ արածեցնել, որ աղբյուրից ջուր տալ և կեսօրվա տոթին որտեղ մակաղ անել... Գյուղացիները նրան կոչում էին «Չորան Գրիգոր»:

Գյուղական երեխաների ամենասիրելի ու գրավիչ զբաղմունքներից մեկն էր գառների հետ խաղալը, նրանց ետևից վազվզելը և նրանց կերակրելը:

Գարնան անուշ օրերին մեծ հորեղբորս կինը՝ Ղումաշ աճին, իրիկնադեմին իր աղջիկների հետ կավե կճուճները վերցրած, մենք էլ մի փոքր խումբ երեխաներ, նրանց հետևից, գնում էինք գյուղից հեռու, որտեղ նախօրոք բերել էին մեր ոչխարի հոտը, կթելու: Կիթը վերջացնելուց ու կաթը պանրի համար մակարդելուց հետո մոտիկ թմբի վրա գտնվող գառնարածին հորեղբայրս իմաց էր տալիս, որ գառները բաց թողնի: Նրանք, վազելով ու ցատկոտելով դեպի իրենց մայրերը, հրճվանք էին առաջացնում: Գառների մայունը, ոչխարների բառաչր միախառնվելով դառնում էին կատարյալ համերգ:



Մեր երեխաներից յուրաքանչյուրն ուներ իր գառը: Երբ գնում էինք կթելու, մենք ծածուկ մի-մի կտոր հաց էինք դնում մեր գրպաններում՝ այնտեղ մեր գառներին կերակրելու:

Հորեղբայրս գիտեր ոչխարների զանազան հիվանդություններ բուժելը՝ արյուն կտրել, վերքերը բուժել եւ այլն: Նա նույնպես գիտեր խոյերին *կրսեղ* (ամորձատել) և այլն, և այլն: Նա տարեկան երկու անգամ խուզում էր ոչխարի բուրդը: Նախքան խուզը նա քշում էր հոտը դեպի գետը, լողացնում, մաքրում նրա բուրդը:

Նա ոչխարի կաթից պատրաստում էր երկու տեսակ պանիր՝ աղ դնելու համար և *«մոթալ»* պատրաստելու:

Զրադացներ

Մեծ հորեղբայրս միեւնոյն ժամանակ աշխատում էր մեր ջրադացում: Մավաս գյուղացի Սանջանբեկ Դանիելբեկյանից հորեղբայրս գնել էր Քյոնդալան գետի վրա գտնվող նրա երկու ջրադացը, որը մեր գյուղից գտնվում էր 2-3կմ հեռավորության վրա: Ահա մեծ հորեղբայրս մեր տան շենքից նստում էր էշը և ճանապարհվում դեպի ջրադաց: Նա, ստուգելով ջրադացների դրությունը, պահանջված դեպքում կատարելով որոշ չափով նորոգումներ, թողնում էր այնտեղ ջրադացպանին մենակ ու նորից նստելով իր էշը՝ ճանապարհվում էր դեպի ոչխարի հոտը:

Նա ջրադացի լեզուն շատ լավ էր հասկանում և առանց որևէ մեկի օգնության կարողանում էր նորոգել նրա բոլոր թերությունները:

Այդ անդնդախոր ձորում՝ ժայռի մեջ, երկու փոքրիկ պահեստ ուներ, որտեղ թաղված կարասներում պահում էր *«շնաղը»* ու զանազան խմիչքներ և ուտելիքներ՝ չորացրած ձուկ, օղի, գինի, որ բերում էին ջրադաց հաճախորդները:

Մեր բազմանդամ ընտանիքին շաբաթական 10-15 փութ ալյուրը հազիվ էր բավարարում եւ ամբողջ ալյուրը պատրաստում էր հորեղբայրս՝ Եգոր ապին: Իմ բոլոր հորեղբայրներիցս ամենաբազմազավակ ընտանիքը նրանն էր:

Բացի ոչխարի հոտից և ջրադացից՝ ուրիշ ոչ մի աշխատանքի նա չէր մասնակցում և ամեն առավոտ մի հաց դնելով իր պարկի մեջ՝ նստում էր իր էշը և հեռանում տնից: Ամբողջ օրը թե ինչ էր անում դրսում, ոչ ոք նրանով չէր հետաքրքրվում, և թե մեր տնտեսության մյուս ճյուղերում ինչ էր կատարվում, նրա համար ոչ մի նշանակություն չուներ: Հորեղբայրս, բացի իր անմիջական աշխատանքից, կատարեց մի շատ հրաշալի ու գեղեցիկ գործ, որը նրան անմահացրեց ամբողջ գյուղում: Նա մեր գյուղի ձորերում, որտեղով հոսում են առուները, տնկեց տասնյակներով ընկուզենիներ, և այսօր կարելի է տեսնել բազմաթիվ հսկա ընկուզենիներ, որոնք նրա անունով կոչվում են *«Եգոր ապու տնկած ընկուզենիներ»*:

Օղեգործություն

Չորրորդ հորեղբայրս՝ Արշակը, ղեկավարում էր օղեգործությունը: Տարին աշխատում էր միայն չորս ամիս՝ մայիսի սկզբից մինչև սեպտեմբերի 10-ը: Նա այդ չորս ամիսը զբաղված էր թուրթափելով, օղի քաշելով և օղու տակառները պաշտպանելով: Դրա համար էլ նրան գյուղում կոչում էին *«Չավոդջի Արշակ»*:

Նա տարվա մնացած ամիսներին փակվում էր առանձնասենյակում, թառ էր պատրաստում ու նվագում նրա վրա: Մնացած ամբողջ տնտեսության մեջ նա ոչ մի մասնակցություն չէր ունենում:

Երբ թուրթ սկսում էր սպիտակել, կենդանանում էր *«Տնջրուն տակը»*, որտեղ գտնվում էին թթենու այգիները: Գյուղացիներից ոմանք իրենց ամբողջ ընտանիքը, ոմանք էլ իրենց ընտանիքի միմիայն մի մասը փոխադրում էին *Տնջրուն տակը*, որտեղ գտնվում էին նրանց կալերն ու



մարագները:

Հայրս էլ լծում էր սայլը և մեր տակառներն ու բոլոր պարագաները փոխադրում մեր «Նոսրադը»:

Գյուղը կամաց-կամաց ամայանում էր: Տներում մնում էին միայն պառավ կանայք:

Սկսվում էր թթի շրջանը («սեզոնը»): «Զավոռչի» հորեղբայրս պատրաստում էր սպիտակ կտավից երկու վրան («չաղիք»), որոնցից մեկի տակ գտնվում էին օղի թորելու պարագաները, օղու տակառները, իսկ մյուսի տակ անձրևից ու արևից պաշտպանվում էին աշխատավորները, և այնտեղ էլ քնում էր հորեղբայրս:

Այս աշխատանքում մասնակցում էին մեր բազմանդամ ընտանիքի անդամների մեծ մասը՝ կանայք, աղջկերք, երեխաներն ու տղամարդիկ, բայց դարձյալ աշխատող ձեռքերի կարիք էր զգացվում, ուստի վարձվում էին նաև մի քանի հոգի՝ որպես «սեզոնային» աշխատողներ: Ահա տարվա այդ 3-4 ամսում ետում էր կյանքը *Տնջրուն տակի* այգիներում:

Այդտեղ աշխատանքները վերջացնելուց հետո մարդիկ չվում էին գյուղը: Այստեղ կյանքը նորից իր հունի մեջ էր մտնում: Կենդանանում էր գյուղը, իսկ այգիներում, ընդհակառակը, նորից տիրում էր լռությունը:

Խոզաբուծություն

Մեր տնտեսության ճյուղերից մեկն էր խոզաբուծությունը: Մեր գյուղում Միմոն անունով մի հաղթանդամ, քաջ մարդ կար: Սա ահագին քանակությամբ խոզ ուներ, և երկար տարիների փորձը նրան բավականին վարպետ էր դարձրել այդ աշխատանքում: Գյուղում նրան կոչում էին «*խոզարած Միմոն*»:

Մի օր Միմոնը եկավ մեր տուն և հորեղբորս հետ պայմանավորվեց, որ իր ունեցած խոզերի կես արժեքը հորեղբայրս վճարի, և այսպիսով միասին կպահեն խոզը: Այսպիսով, մեր տնտեսության մեջ ավելացավ ևս մի ճյուղ՝ խոզաբուծությունը:

Միմոնը՝ որպես հմուտ խոզարած, տարվա երեք եղանակին գիտեր, թե որտեղ պետք է պահեր: Նա ամռանը պահում էր մեր թթի այգիներում և շարունակ կերակրում էր թթով, իսկ աշնան ժամանակ քշում էր անտառը և կերակրում կաղինով: Ձմռանը գարին, կորեկը այլուր էին դարձնում և «*չակ*» պատրաստելով՝ կերակրում-գիրացնում ու մեծ մասը մորթոտում՝ թողնելով մի քանի մերի («*մարուն*»): Միսը վաճառում էին, մի մասն էլ կարասները լցնում իրենց համար, իսկ ճարպն էլ՝ դարձյալ մի մասը վերցնում էին իրենց, մնացածը հանում շուկա՝ վաճառքի:

Հայրս չէր սիրում ո՛չ խոզին և ո՛չ էլ խոզարածին:

Մեղվաբուծություն

Ես իմ մանկության հասակից տեսել եմ մեր տնտեսության մեջ ճիպոտից գործած 250-300 փեթակ («*քթոց*») մեղուներով: Մեր ընտանիքում մեղվաբուծությամբ զբաղվողն Ամառնան տատն էր՝ իր հարսներով ու թոռներով: Սա չափազանց հետաքրքիր աշխատանք էր, որը, սակայն, այն ժամանակ տարվում էր ոչ գիտական հիմունքներով:

Այժմ այն մասին, թե ինչպես է առաջացել մեղվաբուծությունը մեր տնտեսության մեջ: Դա չափազանց հետաքրքրական պատմություն ունի, որը և բերում եմ ստորև:

Մեղվաբուծությունը մեր ընտանիքում շատ վաղուց գոյություն ուներ, դեռ այն ժամանակից, երբ իմ հայրը 15-16 տարեկան երեխա էր և տավարած էր: Հայրս և իր հասակակից մեր ազգական Սողոմոն ամին միշտ միասին հանդ էին գնում ու արածեցնում իրենց անասունները: Մի անգամ էլ, երբ դեռ գարունը նոր էր սկսել, նրանք իրենց անասունները քշում են «*Քարին տակ*» կոչված



պետական անտառը: Նրանք այնտեղ նկատում են, թե ինչպես մի հաստաբուն ծառի շուրջը մեղուները դժվժում են: Նրանք, գննելով ծառը, նկատում են, որ մի փոքրիկ անցքով մեղուները մտնում են բունը և բնից էլ դուրս գալիս: Այդ մասին, երեկոյան վերադառնալով տուն, իմաց են տալիս իրենց ծնողներին:

Իմ պապը՝ տեր Հարությունը, և Սողոմոն ամու մեծ եղբայրը՝ Սահակ ամին, հետևյալ օրը գալիս են՝ ծառը տեսնելու: Նրանք սպասում են մինչև երեկո, երբ մեղուները ժողովվում են բնի մեջ, ծածկում են արկանոցը, ամրացնում բոլոր անցքերը և գիշերը գալիս ու գաղտագողի կտրում են ծառը, կտրտում նրա բոլոր ավելորդ մասերը և հաստ բունը (*«քիթակը»*) տեղափոխում գյուղի մոտ գտնվող մեր այգին:

Ահա այդ կոճղը հանդիսանում է մեր մեղվանոցի հիմքը: Մեղուները, ձագ տալով, բազմանում են մի քանի հարյուրի ընդամենը մի քանի տարվա ընթացքում: Տղամարդիկ գործում են ճիպտից բազմաթիվ քթոցներ, իսկ կանայք, մոխիրը խառնելով անասունների աղբի հետ, հունցում են ու քում, ծեփում փեթակները և այդ ձևով պատրաստում մեղուների համար բնակարաններ:

Ամեն օր երկու հոգի՝ մեկը մեր ընտանիքից, մյուսը՝ մեր ազգականի, հսկում էին ու խնամում մեղուներին: Մեղուներն այգում մնում էին գարնան սկզբից մինչև ուշ աշուն, որից հետո տեղափոխում էին մեր առաջին հարկի սենյակներից մեկը՝ ձմեռելու համար:

Ձմեռ է ցուրտ, ձյուն է գալիս: Մարդիկ գործ չունեն անելու, ազատ են աշխատանքից: Ահա կարծես հիշում են մեղուներին: Մեծ հորեղբայրս և Սահակ ամին սկսում են մեղրը հանել (*«կտրել»*) փեթակներից և կլոր-կլոր սպիտակ մեղրահացերը (*«խորիսխները»*) դարսել հատուկ պատրաստած արկղներում՝ մի մասը քաղաք տանելու և վաճառելու համար, իսկ մյուս մասը՝ գործադրելու ընտանիքում:

Մեր և Սահակ ամու երեխաները, շարված սենյակում, պատերին մեջքներս դեմ արած, մի-մի հաց ձեռքներիս, սպասում էինք: Սահակ ամին մեր բոլորի հացի կտորի վրա դնում էր մի-մի կտոր մեղր և ասում.

- *Կե՛րեք, ով որ վերջացնի, թող հազի:*

10-12 երեխաներ ուտում էինք և սկսում կոկորդներս մաքրել, որով ուզում էինք ամուն իմաց տալ, որ արդեն վերջացրինք ուտելը: Սահակ ամին նորից մի-մի կտոր մեղր էր դնում մեր մնացած հացի կտորի վրա ու ասում.

- *Վերջացնողը թող նորից հազի:*

Այդ օրը մեզ համար հարսանիք էր. ուտում էինք ու հազում, մինչև որ ինքներս էինք հրաժարվում ուտելուց:

Մեղուները սենյակում ձմեռում էին մինչև գարնան բացվելը: Գարունը բացվելուց մեղուները նորից տեղափոխում էին մեր մոտիկ այգում գտնվող մեղվանոցը, որը հատուկ պատրաստված էր մեղուների համար: Դարձյալ մեր ընտանիքի և Սահակ ամու ընտանիքի կանանց գործն էր մեղուներին հսկելն ու խնամելը: Մեր երկու ընտանիքների փոքրիկ երեխաները համարյա ամբողջ օրն անց էին կացնում այգում՝ մեղուների բզբոցների տակ թավալվելով կանաչ խոտերում:

Շինարարություն

Աշխատանքները այգիներում, կալերում ու բանջարանոցներում համարյա վերջացնում էին: Աշնանացանը որոշ չափով թեթևացել էր: Հորեղբայրներս սկսում էին աշխատել շինարարության վրա: Հայրս, վերջացնելով աշնանացանը, սկսում էր իր եղբայրների հետ զբաղվել բնակարանային կառուցումներով:

Այդ բազմանդամ ընտանիքը և նրա բազմաքանակ անասունները պաշտպանելու ու պատսպա-



րելու համար ամեն տարի կառուցվում էին մեր բնակարանին կից նոր սենյակներ ու գոմեր: Ամեն օր աշխատում էին մի քանի որմնադիրներ և սևագործ բանվորներ:

Մեր ընտանիքից մի քանի հոգի անտառում կիր էին պատրաստում, ումանք էլ ավագ ու քար էին կրում և, այսպիսով, ամեն տարի ավելանում էր մեր սենյակների, գոմերի թիվը: Մեր բնակարանը լիովին ընդունում էր ավելի փառահեղ ու հսկայական տեսք:

Երկրագործություն և այգեգործություն

Հայրս էր կազմակերպում ու ղեկավարում այս աշխատանքները: Ընդհանրապես նրա վրա էր ծանրացած մեր ընտանիքի աշխատանքի մեծագույն մասը: Նա էր վար ու ցանքս անողը, այգիները տնկողն ու մշակողը, անասուններին խնամողն ու պաշտպանողը և մեր ընտանիքի վառելիքն ու սննդամթերքները հայթայթողը: Մի խոսքով, առանց նրան մեր ընտանիքը գուցե այն չլիներ, ինչ որ կար:

Անցնում է ձմեռը, վրա է հասնում գարունը: Դաշտերն ու անտառները, այգիներն ու բանջարանոցները կամաց-կամաց ծածկվում են կանաչով ու գույնզգույն ծաղիկներով: Ամենուրեք սկսում է եռալ աշխատանքը: Մեծերը, փոքրերը, կանայք ու տղամարդիկ բոլորն էլ աշխատանք ունեն: Ինչպես գյուղացին է ասում. *«Չոփով փալասին են տալիս ու բանացնում»:*

Ահա այդ ժամանակ մեր տանը մնում էին Ամառնան տատը և մեծ հորեղբորս կինը՝ Ղումաշ աճին, որոնք խնամում էին փոքրիկ երեխաներին, հավերին ու ճտերին, հաց էին թխում, աշխատավորների համար կերակուր էին պատրաստում, որ թե՛ ցերեկը և թե՛ աշխատանքից հոգնած, բեզարած վերադառնալուց հետո կերակրեն նրանց:

Սկսվում էր աշխատանքի եռուն շրջանը: Դաշտային աշխատանքները՝ գարնանացանը և բանջարանոցներում ու այգիներում կատարվող աշխատանքները, տեղի էին ունենում հորս անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ: Այդ օրերին հայրս նմանվում էր մի եռանդուն հրամանատարի, որն անդուլ ու անդադար շարունակում էր աշխատանքը բոլոր տեղամասերում. մի օր, բոլորին ժողոված, գնում էր այգիները՝ ծառերի չոր ու անպետք մասերը մաքրելու, մի քանի օր աշխատում էր խաղողի այգիներում, մի քանի օր էլ բանջարանոցներում և այդպես շարունակ՝ առանց հանգստի ու դադարի:

Ուշ գարնանը սկսում էր զբաղվել աշնանային ցանքսերով՝ արտերը մաքրել մոլախոտերից և սկսել գարնանացանը:

Ավելորդ չէմ համարում հիշատակելու իմ մանկության օրերից մնացած մի հիշողություն՝ կապված գարնանային աշխատանքների հետ:

Մայիսյան տաք օրերից մեկն էր: Հայրս մեր ընտանիքի կանանց ու աղջկերանց հետ գնացել էր՝ մեր *«Մարդարին տափ»* կոչված տեղամասի աշնանացանը մոլախոտերից մաքրելու կամ, ինչպես ասում են, քաղհան անելու: 10-15 կանայք, աղջկերք ու տղաներ շարունակեցին քաղհանը մինչև կեսօր: Արևը խիստ այրում էր:

Հայրս, ետ դառնալով աշխատանքից, սկսեց ժողովել արտի միջից ջոկած մոլախոտերը և պատրաստել մի պատսպարան: Արևը, ճիշտ է, այրում էր, բայց կապույտ երկնակամարը միանգամայն հստակ էր, և ոչ մի կտոր ամպ չէր երևում:

Ղումաշ աճին, որ ղեկավարում էր աշխատանքը, դարձավ դեպի հորս և ձեռքերի շարժումներով հարցրեց.

- *Էդ ի՞նչ էս անում:*

Հայրս ձեռքերի նույնպիսի շարժումներով պատասխանեց՝ ձեռքը մեկնելով դեպի հյուսիս.



- Շուտով խիստ անձրև կլինի կամ կարկուտ, ուստի հարկավոր է պատսպարվելու տեղ ունենալ:

- *Ի՛սա ապա, բա երկնքումը ամպի կտոր չկա, անձրևը որտեղի՞ց կլինի:*

Բոլորը ծիծաղեցին, որ հայրս ավելորդ նեղություն է քաշում:

Շարունակեցին աշխատանքը, որը տևեց մոտ երկու ժամ, երբ հյուսիսային կողմը գտնվող բարձր սարի ուղղությամբ լավեցին որոտի ձայներ, և մի քիչ հետո այդ կողմից երևացին ամպի մոխրագույն բլուրներ, փայլատակեցին կայծակները, ու սկսեց տեղալ հորդ անձրև, որը գալով փոխվեց հեղեղի: Բոլորն իսկույն տեղավորվեցին պատսպարանում, իսկ մենք՝ երեխաներս, կուչ էինք եկել մեր մայրերի փեշերի տակ: Հայրս երկար ծիծաղեց ու ասաց.

- *Տեսա՞ք, որ անձրև եկավ... Բայց ոչինչ, շուտով կդադարի:*

Եվ ճիշտ որ, հազիվ շարունակվեց կես ժամ: Նորից արեգակը դուրս եկավ ամպերից ու սկսեց տաքացնել, բայց հայրս թույլ չտվեց այլևս արտը մտնել ու առաջարկեց բոլորին տուն գնալ:

Հայրս դեռ բոլորովին չէր վերջացրել իր ասելիքը, երբ հանկարծ նրա հայացքը գամվեց մի կետի: Նա մեզ ցույց տվեց մեզնից 150-200 քայլ հեռավորության վրա, թե ինչպես օդի մեջ մի ուրուր պտույտներ էր գործում և հանկարծ շեշտակի իջնում ցած և իսկույն նորից բարձրանում: Ուրուրի այդ գործողությունը կրկնվեց երեք անգամ: Հայրս իսկույն ոտքի կանգնեց, վերցրեց երկմատինը («յաբա») և վազեց դեպի այն կողմը: Ես նույնպես վազեցի նրա ետևից: Հասանք արտի մոտով անցնող ճանապարհին: Ուրուրը նորից շեշտակի ցած իջավ և իսկույն բարձրացավ: Ի՛նչ տեսանք մենք:

Անձրևից հետո ուղիղ ճանապարհի մեջտեղը մի սոսկալի մեծությամբ նախշուն օձ կծկվել էր և իր գլուխը իր մարմնի կծիկի միջից բարձր ցցած՝ պաշտպանվում էր ուրուրից: Հայրս զգուշությամբ մի մեծ, տափակ քար վերցրեց և երկու ձեռքով բարձրացնելով գլխից վերև՝ մեծ թափով ու շեշտակի հարվածեց օձին, որը, շարժվել չկարողանալով, մնաց տափակած: Նա երկմատինի ծայրով մի փոս փորեց և թաղեց:

Մենք վերադարձանք նորից պատսպարանը:

Ղումաշ աճին հարցրեց.

- *Ի՛սա ապա, բա դու իմաստո՞ւն էիր, ինչպե՞ս իմացար, որ այնտեղ օձ կա:*

Հայրս ծիծաղեց և ձեռքի շարժումներով պատասխանեց.

- *Ուրուրը օձերի թշնամին է: Նա որ ցածրանում ու բարձրանում էր, ցանկանում էր իր սուր կտուցով նրան սպանել, իսկ սա պաշտպանվելով միննույն ժամանակ ուզում էր խայթել թռչունին: Ես այդ իսկույն հասկացա:*

- *Ի՛սա, դու կատարյալ իմաստուն ես,- ասաց նա ու դարձավ դեպի կանայք,- ա՛խ, Աստված, յանի ին՞ էդքան անարդար ես, Իսուն նման իմաստուն, ռաշիդ մարդուն զրկել ես...*

Գարնան եղանակին հորս գլխավոր աշխատանքներից էին գարնանացանն ու գարնանացիլը: Հայրս սկզբում կատարում էր գարնանացանը, որը բավականին երկար էր տևում: Գարնան վերջերից սկսվում էր գարնանացիլը, որը տևում էր համարյա մինչև ամառվա կեսը:

Չնայած որ մենք մի գութանի լծկան ունեինք, բայց հայրս մենակ գութան չէր լծում ու ցիլ չէր անում, որովհետև այն ժամանակ Ղարաբաղում գոյություն չունեին երկաթե թեթև գութանը, որպեսզի փոխարինեն Ղարաբաղի փայտե խիստ ծանր գութանին, որը պահանջում էր ուրից տասը գույգ եզ ու գոմեշ, մանավանդ՝ գարնանացանից հետո, որը բավական երկար էր տևում, լծկանները նիհարած, ուժագուրկ էին դարձած: Այս հանգամանքը ստիպում էր գյուղացուն խնամքով ու զգույշ վերաբերմունք ունենալ դեպի լծկանները: Այդ իսկ պատճառով նա, ինչպես ասում են, «հրակաշ» է



դառնում որևէ գյուղացու հետ և աշխատանքը կատարում միացյալ ուժերով:

Ի՞նչ ձևով և ի՞նչ նորմաներով էր կատարվում այդ *«հրակաշռությունը»*:

Նահապետական գյուղի ամենալավ, ամենակարևոր սովորություններից մեկն էր *«հրակաշռությունը»*: Դա սովորական, միևնույն ժամանակ հրամայական պահանջ էր նրանց համար: Միացյալ աշխատանքի այս ձևը հնարավորություն էր տալիս գյուղական չքավոր տնտեսություններին միահամուռ ուժերով հաղթահարել դժվարություններն ու խոչընդոտները, կատարել իրենց անհրաժեշտ ու հրամայական աշխատանքները և, այսպիսով, բավարարել իրենց տնտեսական կարիքները:

Նահապետական հայ գյուղը, շատ հին ժամանակներից սկսած, կատարում էր նման աշխատանքներ: Այսպիսի աշխատանքները շարունակվեցին նույն ձևով մինչև վերջին ժամանակներս: Նա ուներ իր որոշակի կարգն ու կանոնը, որը և շարունակվեց մինչև մեր օրերը: Հրակաշռության մեջ ընդունված էին որոշ չափանիշներ, որոնք ցույց էին տալիս, թե այդ աշխատանքի յուրաքանչյուր մասնակից ինչ աշխատանք պիտի կատարի և ինչ պիտի ստանա իր կատարած աշխատանքի համար:

Օրինակ՝ մի եզ ունեցող գյուղացին հնարավորություն չունեի մենակ վարուցանք անելու, ուստի նա միանում էր մի եզ ունեցող մի համագյուղացու հետ, և միասին կատարում էին աշխատանքները, որոնք տևում էին ամբողջ տարին, մինչև բերքը կժողովեին և յուրաքանչյուրը կստանար իր բաժինը:

Սակայն լինում էր և այլ ձևի «հրակաշռություն», որն ավելի բազմանդամ էր լինում և տևում էր կարճ ժամանակամիջոց: Այդպիսի «հրակաշռությունը» գլխավորապես տեղի էր ունենում գարնանը, երբ պետք էր ցիլ անել: Այդ աշխատանքը գյուղացու համար խիստ կարևոր էր ու անհրաժեշտ, ինչպես նա է ասում՝ *«Հացը ցիլի մեջն է»*, իսկ նրա ամբողջ աշխատանքը կատարվում էր հաց ստանալու համար:

Ահա գարնանացանի ժամանակ «հրակաշռության» մասնակցում էին ոչ թե 2-3 տնտեսություններ, այլ ութ, տաս... *«Հրակաշռության»* յուրաքանչյուր մասնակից պետք է ունենար աշխատող ձեռքեր, լծկաններ և հողամաս, այլապես այդ երեք տվյալները չէին կարող մասնակցել այդ աշխատանքին:

«Հրակաշռության» յուրաքանչյուր անդամի աշխատողների քանակը և նրա բաժին ստանալիք ցիլի չափը որոշելու համար ընդունված էր, որպես օրենք, չափի միավոր, որը հավասար էր *«մեկ եզան»*:

Եվ այսպիսով, այդ *«հրակաշռության»* մասնակցող բոլոր աշխատավորները, եզները, գոմեշները և անշունչ իրերը՝ գութան, շղթա և այլն, հաշվում էին իբրև *«եզներ»*: Օրինակ՝ մեկ գոմեշը հաշվում էին մեկ ու կես *«եզ»*, մեկ եզը՝ մեկ *«եզ»*, մեկ մշակը՝ մեկ ու կես *«եզ»*, մեկ հոտաղը՝ կես *«եզ»*, գութանը՝ մեկ *«եզ»*, նրա յոթ լծատան շղթան՝ կես *«եզ»* և այլն: Այսպիսով, հաշվելով այդ *«հրակաշռության»* մեջ մասնակցող բոլոր *«եզների»* միավորը, ստացվում էր 25, 30, 35 և այլն *«եզներ»*՝ միավորներ:

Ենթադրենք *«հրակաշռության»* մեկի ներդրումը 8 *«եզ»* է, մյուսինը՝ 10, մի երրորդինը՝ 15 և այլն. ահա այս բոլոր անդամները ստանում են իրենց աշխատանքին մասնակցած *«եզների»* քանակի համաձայն ցիլ, որը կատարվում էր նրանց սեփական հողամասում: Գութանն ամբողջ կազմով աշխատում էր բոլոր անդամների սեփական հողամասերում, այսպիսով՝ յուրաքանչյուրը ստանում էր իր աշխատանքի փոխարենը:

Ահա ամեն գարնան իմ հայրն էլ մասնակցում էր այդպիսի *«հրակաշռության»* ու ստանում 4-5 հա ցիլ:



Վրա է հասնում խոտհարքը

Ինչպես տեսանք, մեր տնտեսությունը մեծ քանակությամբ անասուններ ուներ՝ ոչխարի հոտ, տասնյակներով լծկաններ, կովեր, ձիեր և այլ կենդանիներ: Այդ բոլորին հարկավոր էր կերակրել ամբողջ տարին: Մանավանդ ապահովել ձմեռը, որը մեզ մոտ տևում է 3-4 ամիս, բայց անասունների պետք էր ապահովել առնվազն վեց ամսով: Այդ ամբողջ ժամանակաշրջանում նրանք մնում են գոմերում և հնարավորություն չի լինում՝ դաշտ դուրս բերելու: Ահա դրանց կերի գլխավոր ու անհրաժեշտ մասն է կազմում խոտը, որը պետք էր անպատճառ պատրաստել: Այդ աշխատանքը ամբողջապես ծանրացած էր հորս վրա:

Ամենից առաջ նա կարգի էր բերում զնդանն ու մուրճը, որը տարբերվում էր սովորական մուրճերից: Պատրաստում էր գերանդիները և երկմատիները: Մեր ընտանիքի տղամարդկանցից, կանանցից և երեխաներից մոտ 10-12 հոգի դուրս էին գալիս թթենու և այլ այգիները: Նախ մաքրում էին ծառերի տակը խոտից, որ շուտով թուփը պիտի հասունանա, և պիտի սկսեն թափը: Այդտեղից հետո անցնում էին դաշտերը: Տղամարդիկ հարում էին խոտը, իսկ կանայք ու երեխաները հարած խոտը արևի կիզիչ ճառագայթների տակ չորացնելուց հետո, մի-մի երկմատին ձեռներին, շուտ տալիս և բոլորովին չորացնելուց հետո «լաստիր» դնում:

Երկու օրից հետո այդ լաստիրը ժողովելով, իրար վրա դարսելով՝ կազմում էին փոքրիկ դեզեր, որոնք կոչվում էին «դոթմա»: Այդ դոթմաները միառժամանակ մնում էին դաշտում, մինչև որ ազատ ժամանակ կլինի, կտեղափոխեն կալը և այդտեղ կդիզեն, դիզ կդնեն:

Հայրս տեսնելով, որ այդ աշխատանքը, կատարելով մեր ընտանիքի ուժերով, շատ երկար կարող էր տևել, խոտը կարող էր արևի տակ երկար մնալուց փչանալ և, միևնույն ժամանակ շուտով պիտի վրա հասնի հունձը, ստիպված էր լինում շաբաթօրյակ («միջի») հրավիրել:

Ավելորդ չեմ համարում մի քանի խոսք ասել միջու հասարակական-տնտեսական նշանակության մասին: Միջին նահապետական գյուղի ամենահին և ընդհանրացած հասարակական աշխատանքային ձև էր, որը շարունակվում էր մինչև վերջին ժամանակներս:

Միջին կոլեկտիվ աշխատանք էր, որ կատարվում էր այս կամ այն տնտեսության մեջ գյուղի բազմաթիվ տնտեսությունների մասնակցությամբ: Դա կազմակերպված մի օժանդակություն էր որևէ տնտեսության համար: Միջին փոխադարձաբար էր բոլորի համար: Այսօրվա միջի հրավիրողը կարող է գնալ մի ուրիշ հարևանի համար եղած միջին մասնակցելու: Դա հասարակական աշխատանք էր, որին մեծ սիրով և ուրախությամբ մասնակցում էր ամբողջ հասարակությունը:

Ահա միջի հրավիրված օրը՝ վաղ առավոտյան, մտնում էին մեր տունը, որտեղ մի-մի բաժակ օղի խմելուց և մի-մի հաց ստանալուց հետո, գերանդիներն ուսերին, ճանապարհվում էին խոտհարքի վայրը:

Սկսվում էր աշխատանքը: Բոլորից առաջ, գերանդին ձեռքին, սահում էր հայրս, իսկ նրա ետևից շարքերով գնում էին մյուսները, սակայն նրանցից շատ քչերն էին կարողանում հասնել նրան: 1-2 ժամ աշխատելուց հետո նրանք հորս խնդրում էին, որ նա ետ դառնա և բթացած գերանդիները սրի: Հայրս հետ էր դառնում, նստում ու զնդանն առաջը դնում և մուրճով սկսում ձեծել (նորոգել-սրել) բթացած գերանդիները:

Այս աշխատանքը պահանջում էր մեծ հմտություն, դա ամեն մարդու գործ չէր: Բավական է մի սխալ հարված, որ փչացնի («քամի գցի») գերանդին: Եվ այսպիսով, հայրս, համարյա ամբողջ օրը մեջքից կոացած, մեկ-մեկ սրում էր բոլորի գերանդիները և հանձնում իրենց տերերին:

Դեռ կեսօր չհասած՝ Ամառնան տատը պատրաստում էր ճաշը: Նա մեծ խուրջինը լցնում էր նոր թխած («թածա») հացով, գցում էշին, երեխաներից մեկին էլ նստեցնում վրեն և մեծ կաթասն էլ,



կերակուրով լցրած, տալիս հարսներից մեկին ու ճամփում աշխատանքի վայր:

Միջվորները կեսօրին ճաշելուց հետո հանգստանում էին, որից հետո դարձյալ սկսում էին աշխատանքը:

Երեկոյան դեմ դադարում էր աշխատանքը, հայրս բոլորին նորից առաջնորդում էր տուն, որտեղ ընթրում ու հետո թեյում էին և ցրվում իրենց տները:

Հարած խոտը չորացնելու և դոթմաներ դնելու աշխատանքը կատարում էին կանայք ու երեխաները՝ դարձյալ հորս մասնակցությամբ և անմիջական ղեկավարությամբ: Ահա այսպես վերջացնում էին խոտհարքը՝ պատրաստելով մեր ընտանիքի բազմաթիվ անասունների կերը, որոնց համար ձմեռն այլևս սոսկալի չէր:

Գարնան վերջերից ու ամռան սկզբներից սկսվում էր գյուղական աշխատանքների եռուն շրջանը:

Կարծես աշխատանքները միանգամից էին սկսվում, և մարդիկ չէին իմանում, թե որ մեկն սկսեն և որը թողնեն: Խոտհարքից հետո սկսում էին թուրթ թափել, բայց և միևնույն ժամանակ հասունանում էին արտերը, առաջին հերթին՝ գարու արտերը: Հայրս վարձում էր 10-15 հնձվոր, որոնք սկսում էին հնձել գարու արտերը: Նա կամաց-կամաց պատրաստում էր կալը, մաքրում, շվաքարանը («չարդախը») պատրաստում, խոտը դիզում վրան, իսկ տակը կարգի բերում իբրև բնակարան ու իր անկողինը տեղափոխում այդտեղ, որ նշանակում էր՝ մինչև կալի վերջը նա այդտեղ պետք է լինի: Այստեղ էին տեղափոխվում նաև 4-5 հոգի, որոնք հորս հետ միասին ու նրա ղեկավարությամբ պետք է աշխատեին կալում:

Հայրս մի օր գնում էր անտառ և բերում մի տեսակ ցախ ու նրանից պատրաստում տասնյակներով ցախավել, որ կալում գործածական ու անհրաժեշտ իրերից մեկն էր:

Կալը պատրաստում էր հետևյալ կարգով. նա մեկ-երկու հոգու հետ սուր քերիչով քերում, մաքրում էր կալը բոլոր տեսակի խոտերից՝ թողնելով միայն սև հողը: Այնուհետև ուղղում, հարթում էր փոքրիկ խորդուբորդությունները: Այդ բոլորից հետո ջուրը բարակ հոսանքով կապում են կալի մեջ, իսկ իրենք, ցախավելները վերցրած, ջուրը հավասար կերպով տարածում են կալի բոլոր մասերում՝ թողնելով, որ հողը ծծի, կշտանա ջրից, որից հետո փռում են դարման և դարմանի վրայով «հաշան անում» խուրձը ու սկսում կալսել: Այս բոլոր գործողություններից հետո գետինը դառնում է հղկած, պինդ, մաքուր տարածություն, որտեղից և ստանում են մաքուր ցորենը:

Հնձողները հնձում էին արտերը, իսկ դրանց ետևից երկու սայլով խուրձը կրում էին կալը, որտեղ միևնույն ժամանակ կալսում էին:

Ինչպես տեսանք, մեր հսկայական տնտեսության մեջ՝ թթի գործում, կալում, հնձվորները և այլ աշխատողները միասին, կազմում էին աշխատավորների մի մեծ, հսկայական բանակ՝ մոտ 50-60 հոգի. ահա այս բոլորին պետք էր կերակրել: Այդ ծանր ու դժվարին աշխատանքը կատարում էր Ամառնան տատը Ղումաշ աճու հետ, իսկ ընտանիքի մնացած անդամները նույնպես աշխատում էին զանազան տեղամասերում: Տատս ամեն օր մի քանի փուրձ հաց էր թխում, որի այլուրը հասցնում էր մեծ հորեղբայրս՝ Եգոր ապան, մի ջրաղացից, որը գտնվում էր Քյոնդալան գետի վրա, իսկ թոնրի ցախը և օջախի փայտը հայրս աշնանն էր պատրաստում:

Հունձը շարունակվում էր բավական երկար: Գարու արտերը վերջացնելուց հետո սկսում էին ցորենի արտերը, իսկ կորեկի հունձը կատարվում էր բոլորից հետո՝ ամռան վերջին:

Հայրս ամեն կերպ աշխատում էր իսկույն հնձածը տեղափոխել կալը, որպեսզի չգողանան, անասունները չփչացնեն, կամ անձրևները չզան վրան:

Այսպիսով, ամբողջ խուրձը ժողովելով կալը՝ դիզում էր նրա շուրջը և ծածկում խոտով:



Վերջացնելով հունձը՝ խուրձն ամբողջապես կալը տեղափոխելուց հետո այստեղ սկսվում էր եռուն աշխատանք: Չորս-հինգ հոգով, մի քանի զույգ եզներով ու ձիաներով սկսում էին խուրձը ծեծել-կալսել: Խուրձը կալսում էին կամներով, որոնք պատրաստվում էին փայտից: Նրա երկարությունը մոտ 1 կամ 1,5մ էր, իսկ ընդհանուր միջին լայնությունը՝ 60-70սմ: Կամնի առաջին մասը, որտեղից պետք է կապեն եզների լծից կախված շղթայի ծայրը, նեղ էր՝ հազիվ 20-25սմ լայնությամբ, և այդ ծայրը կիսաշրջանաձև կերպով գետնից բարձր էր մոտ 15-20սմ, որը սապատավոր էր, իսկ նրա մեջ՝ տակից, կային անցքեր, որոնց միջով անց էր կացված մի կլոր, բարակ փայտ, որի երկու ծայրերից կապում էին լծկանի հետ միացնող շղթան կամ պարանը: Կամնի շարունակությունը, մինչև վերջ գնալով, աստիճանաբար լայնանում էր, որի լայնությունը հասնում էր մոտավորապես 1մետրի:

Յուրաքանչյուր կամնի հակառակ երեսը շարքերով փորված է 2-3սմ խորությամբ, 3-4սմ շրջագծերով փոսիկներ, որոնց մեջ ամրացնում էին որձաքարի՝ սուր-սուր ծայրերով կտորներ, որոնց ծայրերը 1սմ չափ մնում էին փայտից դուրս:

Ահա այդ կամնից մի զույգ միացնելով, սապատի միջով անցկացրած փայտից կապելով պարանը կամ շղթան՝ միացնում էին եզների լծան հետ, ու նրա վրա կանգնում էր եզները քշողը: Եթե կարիք էր զգացվում, կամնի վրա ավելացնում էին զանազան ծանրություններ, որպեսզի ավելի լավ փշրի ծղոտն ու հասկերը:

Հայրս խիստ ուշադրություն էր դարձնում դարմանի վրա, որը պետք էր շատ մանրացնել, որպեսզի անասունները ձմռանը լավ ուտեն ու *«կրճանք»* չանեն: Այդ տեսակետից կամնով կալսելը չափազանց նպատակահարմար էր:

Կալում աշխատողները վաղ առավոտյան խուրձը (մոտ 10-12 փնջանք, որ հավասար է 100-120 խուրձի) թափում էին նախօրոք սրբած-մաքրած կալի մեջ: Ցրիվ էին տալիս կամ *«հաշան անում»* խուրձը, որից հետո լծում էին եզներն ու ձիերն ու սկսում կալսել հաշանը: Ամբողջ օրը հայրս դուրս չէր գալիս հաշանի միջից: Գլուխը կապած մի սպիտակ թաշկինակով, հագին մի սպիտակ կտավից կարած շապիկ, տանը գործած կոշտ տապակից պատրաստած մի անդրավարտիք հագին, ոտքերն առանց գուլպաների, տրեխները զցած, երկմատիներ, քամելին կամ թիակը ձեռքին՝ արևի տոթակեզ ճառագայթների տակ շարունակում էր իր աշխատանքը՝ հորդորելով, որ եզներն արագ քշեն ու թույլ չտան ուտելու, որովհետև կարող էին հիվանդանալ, կամ կալի ծայրերով փռված հասկերը ներս ժողովել ու հաշանի խորդուբորդությունները շտկել:

Երբ ծղնոտը բավականին մանրացել է, նա հաշանը *«եղում էր»* (ցվցվում էր) երկմատիներով, որը կոչվում էր *«յողի»*: Նորից ավելի մանրացնելով ծղնոտը՝ նա եղում էր *«քամիչով»*, որը փայտից պատրաստած մի գործիք էր՝ բաղկացած կոթից ու թաթից: Կոթի երկարությունն էր մեկ կամ քիչ ավելի մետր, իսկ թաթը նման էր մարդու ձեռքի դաստակի, որը վերջանում էր հինգ մատներով: Մատների երկարությունն էր 7-8սմ, լայնությունը՝ 2-3սմ: Մատների միջին տարածությունը 1,5-ից 2սմ էր: Ահա այս առարկան կոչվում էր *«քրմելի»*, որով դարմանը քամում էին, գատում ցորենը: Մա այն առավելությունն ունի, որ հաշանի մանրացրած դարմանը հնարավորություն ունի ամբողջովին տակնուվրա անելու: Երբ դարմանն այնքան է մանրացել, որ այլևս քամելու միջոցով չէր կարելի շուռ տալ, այդ դեպքում գործադրվում էր փայտե թիակը: Թիակով դարմանն ամբողջապես շուռ տալով՝ բոլոր մնացած հասկերն ու խոշոր ծղնոտները ընկնում էին դարմանի երեսը, որից հետո կամն իր սուր քարերով, յուր վրա գտնվող ահագին ծանրությամբ, գետնի խիստ ամրությամբ, կարողանում էր ջարդուփշուր անել ու բոլորովին մանրացնել հասկերը և ծղոտը:

Երբ հաշանը դուրս էր գալիս, այսինքն ծղոտն ու հասկերը բոլորովին մանրանում էին, և ցորենը



միանգամից զատվում էր հասկերից, արձակում էին եզներն ու ձիերը և կալից դուրս տանում կամներն ու մյուս պարագաները:

Այժմ բոլորը մասնակցում էին աշխատանքին: «Մաղանով» կալի մի կողմն են հավաքում հաշանը և դիզում կալի երկարությամբ՝ քամու հոսանքի հանդեպ: Կանայք ու աղջիկները, մի-մի ցախավել ձեռքներին, սրբում էին կալը, իսկ հայրս, քամիլին ձեռքին, ուղղում էր հաշանի «դիզը», որ հավասար ու միատեսակ լինի «խյանը», որից հետո երկու հոգով քամում էին դարմանը՝ զատելով ցորենը նրանից: Կանայք ցախավելներով սրբում էին ցորենի շեղջը՝ մաքրելով այն:

Երբ վերջանում էր «խյանը», հայրս վերցնում էր փայտե թին ու սկսում «թե տալ», այսինքն՝ ցորենը բոլորովին մաքրել: Այդ գործողությունը կատարում էր հայրս մենակ. նա չէր վստահում մյուսներին, որովհետև նրանք կարող էին անզգուշությամբ ցորենը ուժեղ քամու պատճառով խառնել դարմանի հետ: Կանայք հորս հետ, ցախավելը ձեռքներին, անընդհատ մաքրում էին հասկերից ու դարմանի մնացորդներից:

Երբ վերջանում էր «թե տալը», հայրս միմիայն այդ ժամանակն էր անցնում դեզի տակը և պառկում գորգի վրա՝ հանգստանալու: Կանայք ու աղջիկները սկսում էին «շտարարել»՝ ցորենը և այսպիսով բոլորովին մաքրելով՝ լցնել ջվալները ու սայլերով տեղափոխել տուն:

Քահանա հորեղբայրս, որ կարգի էր բերել շտեմարանը, ընդունում էր բերքը և լցնում տակառներն ու փայտից պատրաստած հսկայական ամբարները: Այդպիսի երկու ամբար ունեինք, որոնցից մեկը տեղավորում էր 160 փութ, իսկ մյուսը՝ 75 փութ: Քահանա հորեղբայրս, մի թամբած ձիու վրա նստած, միշտ շրջում էր. նրան կտեսնեիր թթի այգում, օդու գործարանի մոտ, ջրաղացում, հնձողների մոտ, կալում կամ ոչխարի հոտը ստուգելիս: Նա լինում էր ամեն տեղ, օրվա մեծ մասն անց էր կացնում հասարակության մեջ: Բազմաթիվ գյուղացիներ բազմաթիվ հարցերով դիմում էին նրան, խորհրդակցում և խնդրում տալ ցուցումներ:

Մեր հասարակությունը նրան շատ էր հարգում, և նա էլ հասարակությունից ոչինչ չէր խնայում: Նա տխրության, դժբախտության, ուրախության բոլոր ժամանակներին նրանց հետ էր, նրանցից անբաժան: Ահա այդ էր պատճառը, որ նա մեծ անուն էր հանել ոչ միայն մեր գյուղում, այլև շրջակա բոլոր գյուղերում, գյուղացիները նրան ճանաչում էին և հարգում, նրա ջանքերով կազմակերպված ընտանիքն էլ օրինակ էր հանդիսանում շրջակա բոլոր գյուղացիների համար:

Դարավոր տանձենին

Մեր կալին կից կար մի հինավուրց տանձենի: Նա մեր երեխաների սիրելին էր, մեր կալի զարդն էր, մեր աշխատավորները նրա հով ու գովում էին հանգստանում: Սա կատարյալ մի հսկա էր և երբ ծաղկում էր, նմանվում էր պճնագարդված մի գեղեցկուհու:

Մեր երեխաներին դեպի կալը գրավողը մեծ մասամբ այս տանձենին էր: Շատ անգամ մենք մնում էինք գիշերներն այստեղ: Քնում էինք կալի մեջտեղը բացօթյա, և դեռ արեգակը դուրս չեկած՝ հայրս արթնացնում էր մեզ, որ գնանք, տանձի «կաթուկը» հավաքենք: Երեխաներս վազում էինք և իրար հրելով հավաքում տանձը, որը խիստ հասունացել էր, և լցնում ջվալը. մի մասը ուտում, մի մասը բաժանում հարևաններին եւ մի մասն էլ՝ չիր կտրում ձմեռվա համար: Այս ծառի պտուղը հետաքրքիր հատկություն ուներ: Այս տանձը ծառից կտրել և ուտել չէր կարելի, որովհետև խիստ դառն էր, իսկ երբ կաթուկ էր տալիս, այնքան քաղցր ու դուրեկան էր լինում, որ չէր կարելի չկշտանալ: Սրա «կաթուկ տալը» կատարվում էր շատ դանդաղ և շարունակվում էր հուլիսի մեկից մինչև օգոստոսի վերջը:

¹ Շտարար՝ մի մաղ էր, այն տարբերությամբ, որ սրա ծակոտիներով ընկնում էին ցորենի հատիկները (ծան. հեղ.)



Մեր կալի մոտ մի պտղատու այգի ունեինք, որի ամբողջ պտուղը սպառվում էր կալում: Կալին կից կես հեկտար տարածություն հայրս ցանկապատել էր և տնկել ու պատվաստել ազնիվ տեսակի պտղատու ծառերի մատներով, որոնք արդեն պտուղ էին տալիս: Այստեղ կար նաև մի բավական ընդարձակ բանջարանոց, որտեղից ստանում էինք լոբի, սոխ, վարունգ, պոմիդոր և այլ բանջարեղեն:

Կալից 200-300 քայլ հեռավորության վրա էր գտնվում մի պտղատու այգի ու մի բանջարանոց: Ահա այս բոլոր պտուղներն ու բանջարեղենը սպառում էին կալում աշխատողներն ու հնձվորները:

Տնջրուն տակին նույնպես ունեինք մի պտղատու այգի ու մի բանջարանոց: Այստեղի պտուղներն ու բանջարեղենը օգտագործում էին թթի վրա աշխատանք կատարողները: Բացի այս բոլորից՝ անպակաս էին թանը, մածունը և պանիրը: Մանավանդ թանը, որ օգտագործում էին ջրի տեղ, իսկ մածունը՝ ցուրտ ջրով բրդուճ շինում և այսպիսով գովացնում իրենց տոթակեզ մարմինները:

Բրդուճը պատրաստում էին հետևյալ կերպ: Մի կավե մեծ գավաթ լցնում էին կիսով չափ պաղ, թարմ, սառը, աղբյուրից նոր բերված ջրով: Ջրի մեջ էին բրդում փոքր-ինչ չորացած, թոնրով թխած հացը (*«պոռոզ»*), վրան ավելացնում են մածուն և տրորում այնքան, մինչև որ ջուրը, հացը և մածունը խառնվում էին բոլորովին: Եթե մածունը քիչ էր լինում, նորից էին ավելացնում: Այդ գործողությունը շարունակվում էր այնքան, մինչև որ ստացվում էր մի թանձր խառնուրդ: Եթե շատ էր թանձրանում, ավելացնում էին ջուր: Շատ անգամ բրդուճի մեջ կտրում էին կանաչ վարունգ կամ սոխ, որից հետո պատրաստ էր բրդուճը:

Հուլիսի վերջերից սկսվում էր սեխի ու ձմերուկի վաճառքը. դաշտային մասերից սայլերով բերում էին սեխ ու ձմերուկ և փոխանակում հացահատիկներով: Հայրս վերցնում էր սայլով ձմերուկ աշխատողների համար և փոխարենը տալիս ցորեն կամ գարի: Բոլոր աշխատողները, մանավանդ երեխաներս, լիովին օգտվում էինք ամեն ինչից:

Մեր կալը ուներ մեր հիասքանչ դարավոր տանձենու տակ մի հսկայական մարագ, որտեղ տեղավորվում էր հազարավոր խուրձերի դարմանը և կերակրում հարյուրավոր անասուններ: Մարագը երբ քիչ էր մնում, որ լցվի, հայրս քշում էր գովեշները մարագի մեջ, որոնց ծանրության տակ ճգնվում էր դարմանը և ազատվում մարագի համարյա կեսը, որից հետո դարձյալ շարունակում էին դարմանով լցնել: Դարմանը չտեղավորվելով մարագում՝ ավելցուկի մի մասը սայլերով տեղափոխում էին գյուղը և լցնում ազատ մնացած գովեշն ու ամբարները: Իսկ ավելցուկի մի մասն էլ կիտում էին կալում՝ մարագին կից, կազմելով մի մեծ կույտ (*«քոլ»*), որը բռնում էր կալի մոտավորապես մի չորրորդական մասը: *«Քոլն»* արվում էր միմիայն այն ժամանակ, երբ ամբողջ խուրձը ծեծել են, վերջացրել: Ահա մեր խուրձն ամբողջովին վերջացել էր և սպասում էին կորեկի հնձելուն, որի հունձը տեղի պիտի ունենար մի քանի օրից հետո: Հայրս, կատարելով նաև այդ աշխատանքը, կորեկն ուղարկում էր տուն, իսկ նրա դարմանը (*«բալունը»*) փռում էր մարագի առաջ կուտակած դարմանի *«քոլի»* վրա: Այսպիսով, վերջացնում էր կալ-կալսիչը: Այնուհետև նա բերում էր երկու սայլ փուշ (*«ցաք»*) և ցանկապատում ամբողջ մարագն ու նրա առաջ կուտակված դարմանի քոլը:

Աշխատանքը վերջանում էր կալում, բայց հայրս այժմ էլ սկսում էր այլ աշխատանք կատարելը. դաշտերում ու այգիներում թողած խոտի դոթմանները կրում էր կալը: Այլևս չէր կարելի թողնել, որովհետև հնձված էին բոլոր արտերն ու խոտհարքները, և գյուղի անասունները ազատ էին թողնված: Նա խոտի մի մասը դիզում էր գետնի վրա և դեզից մոտ 2 մ հեռավորությամբ քաշում ցանկապատ, որ աշնանը՝ վար ու ցանքսի ժամանակ, գիշերները լծկաններն այդտեղ մնան ու



առատորեն կերակրվեն, իսկ մեծ մասը դնում էր չարդախների վրա՝ ձմեռն անասուններին կերակրելու համար:

Այդ աշխատանքը վերջացնելուց հետո լծում էր սայլը և դնում Տնջրու տակը, որտեղ էին գտնվում դատարկ տակառները՝ թափված ծառերի տակ, ու տեղափոխում տուն: Թթի աշխատանքը վաղուց էր վերջացել: Այստեղ էր գտնվում միակ «գավողչին»՝ հորեղբայրս, որ պաշտպանում էր օղիով լիքը տակառները, որ շուտով պիտի գան ու տանեն:

Այս բոլոր աշխատանքներից հետո պետք էր լծկան եզներին ու գոմեշներին հանգիստ տալ, որ շուտով պետք է սկսեին աշնանացանը, որպեսզի կարողանային կատարել այդ դժվարին աշխատանքը:

Մեր գյուղից 1,5-2 կմ-ի վրա էր գտնվում պետական անտառը: Հայրս բոլոր եզներն ու գոմեշները քշում էր անտառ ու այնտեղ թողնում թե՛ ցերեկ, թե՛ գիշեր՝ ամբողջ մի ամիս: Միայն նա ամեն առավոտ և իրիկուն գնում էր ստուգելու՝ արդյո՞ք բոլորն են այնտեղ և ոչինչ չի՞ պատահել նրանց հետ: Այդպես էին վարվում նաև մեր մյուս գյուղացիները:

Ահա հասնում էր տարվա այն ժամանակը, երբ պտուղները սկսում էին հասունանալ, և հորս աշխատանքի վայրը փոխադրվում էր այգիներ:

Աշխատանքն այգիներում

Հայրս այլևս գործ չունեի կատարելու կալում, իսկ նա պարապ նստել չէր սիրում: Նա տեղափոխվում էր Տնջրուն տակը, որտեղ գտնվում էին խաղողի մեր այգիները: Նա այստեղ մնում էր գիշեր-ցերեկ և հսկում, պաշտպանում խաղողը գողերից ու կենդանիներից:

Մեզ՝ երեխաներիս, հետաքրքրող վայրն այլևս կալը չէր. այդտեղ այլևս չկային մեր փառահեղ տանձենու անուշ կաթուկը, զանազան պտուղներն ու բանջարեղենը, սեխն ու ձմերուկը: Այժմ մեզ գրավողը խաղողի այգին էր, որտեղ ուտում էինք խաղող, թուզ, դեղձ և այլն:

Ամեն օր մենք խմբովին գնում էինք հորս մոտ, նստում էինք այգու ծայրին, որովհետև նա մեզ թույլ չէր տալիս այգին մտնել, բայց միննույն ժամանակ մեզնից ոչինչ չէր խնայում: Նա մենակ ինքը գիտեր, թե որ տեսակ խաղողը պիտի ուտել, որ տեսակը թողնել գինու համար, որ տեսակը կարելի է պահել կախանի («բանդաղի») համար: Նա խաղողը բերում էր ու թափում կանաչ խոտի վրա՝ առաջներս, ու ասում.

- Կերեք, որքան կարող եք:

Այդպես կատարում էր օրական 2-3 անգամ և երեկոյան էլ լցնում փոքրիկ կողովներն ու ձեռքներս տալով՝ ճամփու դնում դեպի տուն:

Նա ցերեկները հանգիստ չէր նստում և կատարում էր զանազան աշխատանքներ, օրինակ՝ մեր այգու ցանկապատի մոտ բուսած ուռենու ծառերից քաղում էր բարակ և ճկուն ճիպոտներ ու գործում զամբյուղ, փոքրիկ կողովներ, ցաքհան էր անում, պատրաստվում էր այգեքաղին, նորոգում հնձանը, փոքրիկ տակառները և կավե ամանները (կարաս, պուլիկ և այլն):

Մեր խաղողի այգու մեջ քար ու կրից պատրաստած մի հնձան կար: Նրա վրա կանգնած էր խոտի դեզը, իսկ ներքևում 2մ լայնությամբ ու երկարությամբ մի տափակ սալաքար կար դրված՝ փոքր-ինչ թեք դիրքով: Այդ քարի վրա դրված էր ճիպոտից գործած մի սալակն («թարիջա»), որը ծածկում էր այդ սալաքարի ամբողջ մակերևույթը: Ահա խաղողը թափում էին այդ ճիպոտից գործվածքի վրա, որտեղ և ճզմում էին: Հնձանի մի պատից բացած էր մի փոքրիկ անցք, որտեղով մաճառը, դուրս թափվելով, լցվում էր այնտեղ գտնվող կարասը:

Հայրս քաղի նախօրյակին իմաց էր տալիս մեր բոլոր բարեկամներին ու հարևաններին, որ գան մասնակցեն: Այդ օրը գյուղացու ամենաքաղցր օրերից մեկն էր: Գալիս էին գլխավորապես կանայք



ու երեխաներ՝ յուրաքանչյուրը մի-մի փոքրիկ կողով և մի կապոց ձեռքներին:

Սկսվում էր այգեքաղը. նրանք, սուր-սուր դանակներն ու մկրատները ձեռքներին, անխնայ մերկացնում էին որթերը խաղողի ողկույզներից, իսկ կրողները, մեծ-մեծ քթոցները մեջքներին, անընդհատ կրում էին հնձանը:

Հայրս՝ ոտները բոբիկ, անդրավարտիքը բարձրացրած մինչև ծնկները, թները վեր քաշած մինչև արմունկները, ոտքերով ճգնում էր խաղողը և կարասներն ու տակառները լցնում մաճառով:

Այգեքաղը վերջացնելուց հետո բոլորը նստում էին, ընդհանուր սեղան բացում, իրենց բերած կապոցներում եղածը շարում սփռոցի վրա, ինչպես նաև օղու շշերը, և թափում զանազան ուտելիքներ և միասին ուրախ ու զվարթ ճաշում:

Երեկոյան դեմ լցնում էին իրենց շշերը մաճառով, կողովները՝ խաղողով, և օրհնելով ու շնորհակալություն հայտնելով հորս՝ վերադառնում իրենց տները:

Երեկոյան հայրս մի քանի բեռ խաղող էր ուղարկում տուն՝ բաժանելու մեր այն հարևաններին ու բարեկամներին, որոնք հնարավորություն չէին ունեցել մասնակցելու այգեքաղին:

Երկու-երեք ձիաներով հատուկ այդ նպատակով պատրաստած փոքրիկ տափակ տակառներով մաճառը տեղափոխում էին գյուղը, իսկ վերջում մի փոքրիկ կարաս լցնելով՝ թաղում այգում, որի տեղը միայն հայրս գիտեր, որպեսզի գարնանը այգում աշխատողները խմեն:

Այգեքաղը վերջացնելուց հետո նա բերում էր 3-4 սայլ փուշ («*ցաք*») և ցանկապատում այգին ու ինքն էլ տեղափոխվում գյուղը:

Տեղափոխվելով գյուղ՝ նա սկսում էր ցախի ու փայտի հոգս քաշել: Վառելիքով ապահովելու համար 3-4 հոգի գնում էին անտառ և մի քանի օրվա ընթացքում պատրաստում թե՛ թոնրի ցախը և թե՛ վառարանի փայտը ու սայլերով տեղափոխում գյուղ:

Աշուն և աշնանացան

Աշուն էր: Ղարաբաղի գեղեցիկ բնությունն այլ տեսք էր ընդունել: Ծառերն ու թփերը մի կողմից մերկանում էին, մյուս կողմից նրանց վրա մնացած տերևները բազմատեսակ գույներ էին ստանում: Կանաչ խոտը պատել էր այգիները, իսկ նրա երեսով փոփում էին ծառերից թափված գույնզգույն տերևները: Գառներն ու հորթերն ազատ էին թողնվել, որոնք արածում էին այգիներում ու բանջարանոցներում: Դաշտերը կամաց-կամաց մերկանում էին: Աշխատանքը միառժամանակ դադարում էր այգիներում ու դաշտերում:

Եզներն ու գոմեշները, մոտ մի ամիս մնալով անտառում, բավականին հանգստացել, թարմացել, առույգացել, գիրացել ու գեղեցկացել էին:

Հայրս սկսում էր այժմ պատրաստվել աշնանացանի համար: Նա դարբնին սրել էր տվել արորի խոփը, նորոգել շղթան և պատրաստում էր արորն ու լծասարքը: Նրա արորը բաղկացած էր հետևյալ մասերից.

1. «Մաճ» (դեկ), որտեղից բռնում է մաճկալը և ղեկավարում արորը:
2. «Կոտրակ». սա արորի հիմնական մասն է, որի ծայրին զցում էին երկաթե սուր խոփը: Կոտրակն ունի երկու պոչ, որտեղ մաճկալը դնում է իր ոտքը և ճնշելով խոփը խրում է հողի մեջ: Կոտրակի կենտրոնական մասից բացած է մի անցք, որի մեջ ամրացված են մաճի և համնի ծայրերը:
3. Երրորդ մասն է «*համնը*»: Սա մի փայտ է՝ բավական հաստ և ամուր, որի մի ծայրը, ամրանալով կոտրակի անցքի միջև և մոտ կես մետր բարձրանալով կիսաշրջանաձև կերպով, թեքվում է և ընդունում հորիզոնական դիրք, որի երկարությունը հասնում է 1,4 մետրի:
4. Չորրորդ մասը կոչվում է «*մասան*», որի մի ծայրն ամրացված է համնին և մոտ 1,4 մ երկա-



բությամբ շարունակվելով՝ մյուս ծայրը միացվում է արորի առաջին գույգ լծկանի լծանը: Մասանը ունի անրակի ձև:

Հայրս այս բոլոր մասերից ուներ պատրաստած մեկական, երկուական՝ իբրև պահեստի մասեր, որ երբ աշխատանքի ընթացքում դրանցից որևէ մեկը կոտրվի կամ փչանա, կարողանա իսկույն փոխարինել, և աշխատանքը չտուժի: Նույն ձևով նա պատրաստում էր լծերն ու սամիները և այլն:

Նա գիտեր, թե որքան սերմ պիտի ցանի և ինչպիսի ցորեններ ու գարի:

Ղարաբաղը շատ վաղուց հայտնի էր իր հացահատիկի տեսակներով՝ թե՛ աշնանացանի և թե՛ գարնանացանի:

Աշնանը ցանում էին ամենից առաջ գարի: Ցանում էին ցորեն, որի տեսակներն էին **«գարդա», «դարալչրդ», «սպիտակ ցորեն», «Ղարաբաղ»** (սև ցորեն) և **«տըղնըգարդա»**: Գարնանացանի ժամանակ ցանում էին գարնան դարի («կըռնըկարի»), գարունքվա ցորեն (**«կըռնանե»**), հաճար և կորեկ:

Ահա այս բոլորի սերմերը հայրս պատրաստում էր մեծ մասամբ ամռանը, երբ խուրձը դեռ կալում էր գտնվում: Նա սերմերը պատրաստում էր երեք ձևով:

1. Նա, երբ խուրձը կրում էր կալը, իր ընտիր արտերի ընտիր խուրձից ջոկում էր ընտիր հասկերը և փնջեր կազմում: Այնուհետև փռում էր կարպետներ, կտրտում էր յուրաքանչյուր հասկի ծայրից և կոթունի ծայրից՝ թողնելով հասկի միայն կենտրոնական մասը: Այդ մասը ծեծելով և մաքրելով՝ ցորենը պահում էր իբրև սերմ:

2. Այդ սերմն աշնանը ցանում էր գարնանացիլում, և երբ բուսնում, հասունանում էր, հնձում էր և առանձին ծեծելով, կալսելով՝ ամբողջովին պահում էր իբրև սերմ:

3. Նա լավ ծանոթ էր մեր դաշտերին և երբ տեսնում էր մի լավ արտ, տանում էր իր ցորենից մի քանի փութ ու փոխանակում արտատիրոջ հետ և դարձյալ ցանում որպես սերմ:

Հայրս լծկաններով, ցելով, գործիքներով ու վարուցանքի զանազան պարագաներով, սերմերով կազմ ու պատրաստ սպասում էր անձրևի, որ գետինը փափկի: Մեզ մոտ ցանքսն առհասարակ կատարվում էր առանց ոռոգման, ուստի բոլորն էլ սպասում էին ցանկալի անձրևին:

Վերջապես գալիս էր անձրևը, հողը փափկում էր և սրտատրոփ սպասում սերմին:

Իմ հիշողության մեջ անջնջելի է մնացել, և այսօր էլ ինձ թվում է, որ դա երեկ էր՝ այն գիշերը, որին հաջորդող առավոտյան առաջին անգամ պետք է դուրս գային դաշտ՝ աշնանացանն սկսելու:

Ամառնան տատն ամբողջ օրը չէր հանգստացել: Նա իր հարսների հետ նոր հաց էր թխել, գաթա ու կաթնահունց պատրաստել: Նա պատրաստել էր և սերմը: Հայրս այդ գիշեր առաջին անգամ լծկաններին երկու անգամ կերակրեց՝ ախտոները լցնելով խոտով ու դարմանով: Մեծ հորեղբայրս մի ոչխար մորթեց և երեկոյան մի մեծ դազան լցնելով՝ կորկոտ գցեց ու կաթսան դրեց թոնրի մեջ:

Երկրորդ աքլորականչին՝ գիշերվա քնի ամենաքաղցր ժամանակը, Ամառնան տատը զարթնեցրեց թե՛ մեծերին և թե՛ փոքրերին: Հայրս նորից գնաց ախտոը՝ լծկան անասուններին նորից կերակրելու, որից հետո կորկոտի կաթսան թոնրից հանեց ու սենյակ բերեց: Բոլորը նստեցին շարքերով, փռեցին սփռոցները, գաթաներն ու կաթնահունցները շարեցին սփռոցների վրա: Գինու և օդու շշերը սեղանի վրա բռնեցին իրենց պատվավոր տեղերը: Ամառնան տատը, ափսեները լցնելով կորկոտով, բաժանեց սեղանակիցներին:

Մեծ հորեղբայրս՝ Եգոր ապան, կարգադրեց բաժակները լցնել, որից հետո ասաց.

- *Բոլորից մեծը տարիքով ես եմ, իսկ պաշտոնով՝ աղերն ա, բայց խնդրում եմ, որ աղերը հիշի, մենք էլ խմենք և ուտենք:*

Աղերը, վերցնելով բաժակն, ասաց.

- *Առաջին բաժակը տանք մեր մորը, որ նա հիշի:*



Ամառնան տատը վերցրեց բաժակը ու ասաց.

- *Սպրեք, որ դուք իմ պատիվը պահում եք, Աստված էլ ձեր պատիվը պահի: Ձեր հայրը մեռնելիս բռնեց ձեռքս ու հազիվհազ ասաց. «Ամա՛ռնան, Աստված ռազի չկացավ, որ ես քեզ հետ շարունակեմ իմ ճանապարհը, և ես քեզ մենակ եմ թողնում՝ թողնելով ինքը երեխաներ: Նամուսով եղիր, իմ օջախը շեն ու վարքար պահիր,- վերջումն էլ ավելացրեց, «Ամա՛ռնան, իմ երեխաների մեջ ամենից խեղճը, որին Աստված գրկել է, Իսրայելն է, նրան ձեր աչքի լույսի պես պահպանեցեք,- ու ձեռքիցս բռնելով ասաց,- իմ մեղքը քո վիզը, էթե ասածներս մոռանաս»: Այն սև օրվանից անցել են տարիներ: Նամուս ու դեյրաթ եմ արել, գիշերը ցերեկ եմ արել, հազար նեղություններ եմ քաշել... Փառք Աստծո, մեր գյուղում իմ տնից մեծ տուն չկա, իմ երեխաներից շատ երեխաներ չկան... Ասես դոշուն լինի... Օրհնում եմ ձեզ, որդիք, նամուս ու դեյրաթ արեք, որ դուշմանի ոտքի տակ չընկնեք:*

Վերջում առաջարկեց.

- *Խմեցե՛ք ադորը կենացը, որ խելոք կառավարիչ լինի. այսքանին կառավարողը մի գութանի ուժ պիտի ունենա և բոլորիդ մտքովն ու սրտովը լինի...*

Բոլորը խմեցին ադորը կենացը:

Տերտերն առաջարկեց խմել իրենց սիրելի մոր կենացը: Կատարվեց առաջարկը:

Տերտերը վերցրեց բաժակը և սկսեց.

- *Վաղը վար ենք սկսում. բարի սհաթին, բարի աստղին լինի... Մինը հազար դառնա:*

Այնուհետև մեկ-մեկ խմեցին բոլոր եղբայրների կենացը՝ նրանց ընտանիքներով:

Վերջացավ ճաշը: Ամառնան տատը կարգադրեց, որ երեխաները նորից պառկեն քնելու, իսկ մեծերը պատրաստվեցին աշխատանքի դուրս գալու:

Սկսվեց աշնանացանը:

Ամեն օր՝ վաղ առավոտյան, սերմով լիքը մեծ խուրջինը ձգում էին էշի վրա, երկու արորի եզ ու գոմեշ լծկաններ առաջներն արած՝ հայրս իր փոքրիկ եղբոր ու երկու հոտաղների հետ միասին գնում էր դաշտը: Հաճախ էր լինում, որ ես էլ, նստելով էշի վրա, նրանց հետ գնում էի վարատեղ: Իմ պարտականությունն էր, որ մոտիկ առվակից փոքրիկ կուլայով նրանց համար ջուր բերեի, ավելորդ լծկաններին հետևեի, կաչաղակներին ու ագռավներին քշեի, որ «կորեհից»՝ սերմը չհավաքեն: Մի խոսքով՝ անեի այն ամենը, ինչ որ փոքրիկ ուժերս թույլ կտային: Շատ էի ցանկանում, որ արորի վերջին գույգ լծկան եզները ես քշեմ կամ «հոտաղ կենամ», բայց հայրս թույլ չէր տալիս՝ պատասխանելով, որ ես դեռ փոքր եմ և լծանի վրա նստել չեմ կարող վայր կընկնեմ, և եզներն ինձ կկոխտան, սակայն ես համառում էի ու շարունակում խնդրել, որ թույլ տա: Վերջապես նա զիջեց իմ թախանձանքներին:

Հոտաղից ստանալով նրա ճիպոտը՝ բարձրացա լուծը, սակայն երբ եզները շարժվեցին, իսկույն գլուխկոնձի տվեցի ակոսի մեջ: Ես, իսկույն վեր կենալով, նորից բարձրացա լուծը, բայց կրկին գլորվեցի: Այնուհետև ինչքան աշխատում էի վայր չընկնել, չէր հաջողվում:

Հայրս, տեսնելով իմ չարչարանքը, մոտեցավ ինձ և սիրալիք կերպով ինձ հասկացրեց, որ ես դեռ փոքր եմ, բայց նա այնպես կանի, որ վաղը ես կնստեմ լծանը և վայր չեմ ընկնի:

Շառագունել էր ամբողջ դեմքս: Ես ինձ բոլորի առաջ խայտառակված էի զգում: Արեգակը դեռ մայր չմտած՝ դադարեց աշխատանքը: Եզներն արձակեցին, արորն ու լծերը թողին հերկի մեջ, իսկ խոփերն ու շղթաները թաքցրին ակոսների մեջ, սերմի դատարկ խուրջինը գցեցին էշի վրա, և ես

¹ Կորեն՝ այն հողամասն է, որ մշակը հողը հերկելու ժամանակ ծրում՝ առանձնացնում է ընդհանուր հողամասից և սերմում: Այդ սերմած հողամասը երբ հերկում վերջացնում է, նորից է «կորե գալիս», այսինքն՝ էլի գատում ընդհանուր հողամասից և դարձյալ սերմում (ծան. հեղ.)



նստեցի: Հայրս թողեց լծկանները ցանկապատած խոտի դեզի վրա, փակեց նրա մուտքը, ու տուն գնացինք:

Մայրս թույլ չտվեց այլևս հորս հետ վարատեղ գնամ. ինչպես երևում էր, լսել էր այդ օրվա իմ չարչարանքի մասին:

Մոտ մի շաբաթից հետո ես նորից գնացի վարատեղ: Սկսվեց աշխատանքը: Կեսօրին մոտ հայրս տարավ ինձ դեպի առաջնաքարշ եզները: Նա լծից մոտիկ շղթայի մի օղակից կախել էր ճիպոտից պատրաստած մի օղակ, իսկ լծան հարթ մակերևույթը ծակել ու նրա վրա ամրացրել էր իրարից մի նստատեղի հեռավորության վրա երկու փոքրիկ, 15-20 սմ երկարությամբ փայտեր: Նա ինձ բարձրացրեց և նստեցրեց լծան վրա՝ այդ երկու փայտի մեջտեղը, ոտքիս մեկը դրավ ճիպոտից պատրաստած շղթայի վրա գտնվող օղակի մեջ՝ մի ձեռքս տալով ճիպոտը, իսկ մյուս ձեռքով բռնել տվավ լծան վրա ամրացրած փայտիկը:

Այդ բոլորից հետո հայրս բռնեց արորի մաճը, եւ եզներն առաջ շարժվեցին: Ես վայր չընկա. օհ, ի՛նչ ուրախություն: Այդ ձևով շարունակեցի մի քանի օր հոտաղ կենալ, որից հետո ես սովորեցի ազատ կերպով նստել լծան վրա ու քշել եզները:

Ղարաբաղում սովորական երևույթ էր վարատեղը տանել խաղող, տանձ, խնձոր, զկեռ և զանազան այլ պտուղներ ու փոխանակել ցորենով կամ գարիով:

Երկու-երեք անգամ մեր վարատեղը եկան մարդիկ՝ կողովները ձիու վրա դրած՝ լիքը խաղող ու պտուղներ: Հայրս ամեն անգամ հանում էր արորի խոփը և, դնելով կշեռքի մի նժարում, իսկ մյուս նժարը լցնելով խաղողով, տանձ ու խնձորով՝ կշռում: Տալիս էր մի կշիռ ցորեն, փոխարենն ստանում երկու կշիռ խաղող:

Հինգ-վեց հոգով նստում էինք, ուտում, իսկ մի մասն էլ երեկոյան տանում տուն: Երբ վարատեղը գյուղից հեռացավ, հայրս այլևս թույլ չտվեց ինձ իրենց հետ գնալ դաշտ:

Սովորաբար մեզ մոտ վարը սկսվում էր սեպտեմբերի 10-15-ը և շարունակվում մինչև նոյեմբերի 10-15-ը: Այդ ժամանակամիջոցում հայրս երկու արորով կարողանում էր վերջացնել ամբողջ աշնանացանը:

Արդեն ուշ աշուն էր, վրա էին հասնում ցրտերը, դադարում աշխատանքներն ամենուրեք: Հայրս պատրաստում էր գոմերը. նորոգում կովերի, հորթերի, լծկանների, ձիաների ու մնացած կենդանիների տեղերը՝ զատելով իրարից: Պատրաստում էր անասունների կապերը և նրանց ախոռները:

Ձմեռ էր: Բոլոր անասունները մտնում էին գոմերը: Օրական 2 անգամ հայրս մարագից անասունների համար կեր էր բերում՝ հարդ ու խոտ, և երկու անգամ էլ անասունները քշում աղբյուրը՝ ջրելու:



4. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Ձմեռային հանգիստ

Ծանր, դժվարին ու եռուն աշխատանքներին հաջորդում էին հանգստյան և ուրախության օրերը: Իսկական հանգստյան օրեր թե՛ մարդկանց համար և թե՛ անասունների: Իսկ իմ անզուգական հոր համար չկար կամ բռնորոշվի աննշան էր այդ հանգստությունը:

Այո՛, ձմեռը մեծ ցնծության ու անսպառ ուրախության օրեր էին միայն այն տնտեսությունների համար, որոնք կարողացել էին ժամանակին իրենց ու իրենց անասուններին ապահովել բնակարանով, սննդով, գոմերով ու կերով, մի խոսքով՝ ամեն ինչով: Սակայն այդպիսիների թիվը մեր գյուղում չափազանց սակավ էր, և մեր տնտեսությունն այդ բախտավոր սակավներիցն էր, որ առաջնակարգ տեղ էր բռնում գյուղում՝ շնորհիվ իմ ժրաջան, քրտնաջան ու իսկական աշխատանքի հերոս հորը:

Այսպիսով՝ սկսվում է գյուղացու հանգստյան, ուրախությունների և հարսանիքների շրջանը: Յուրաքանչյուր տնտեսություն, իր կարողության համաձայն, պատրաստել էր ձմռան համար պաշար՝ թթվեղեն, քաղցրեղեն, խմիչքներ և այլ ուտելիքներ: Ահա ձմռան այս ազատ օրերին նրանք սկսում էին վայելել իրենց նախօրոք պատրաստած բարիքները:

Ես, երբ դեռ փոքր էի, հորս մեր տանը շատ քիչ էի տեսնում: Երեկոները, երբ նա հանդից տուն էր վերադառնում, ես արդեն քնած էի լինում, իսկ առավոտները, երբ նա տնից դուրս էր գնում, ես դարձյալ քնած էի լինում և նրան չէի տեսնում: Շատ անգամ ես մորս հարցնում էի.

- Ա՛ճի, բա Իսա ապան ո՞ր է:

Մայրս պատասխանում էր.

- *Գնացել է մարազը՝ անասունների համար դարման բերելու կամ գնացել է անտառը փայտ բերելու:*

Ձմռանը՝ առավոտները, ես դեռ անկողնումս շատ անգամ տեսնում էի՝ հայրս դաշտից վերադարձավ՝ ամբողջովին ձյունով ծածկված, բեխերից ու հոնքերից սառցե կտորներ կախված, մեջքին մի շալակ չոր փայտ կամ ուսին մի մեծ չոր ճյուղ: Նա շատ անգամ էլ գալիս էր՝ իր շալակին մի նապաստակ կամ աղվես և կամ մի քանի սպանված թռչուն ձեռքին բռնած:

Նա հմուտ որսկան էր և շատ լավ գիտեր, թե նապաստակներն ու աղվեսները մեր այգիների կամ դաշտերի ո՞ր նեղ անցքերով ու ցանկապատերով են ելումուտ անում, և հենց այդ անցքերումն էլ լարում էր թակարդները:

Սովորական բան էր նրա համար շաբաթական մեկ-երկու աղվես կամ նապաստակ որսալը: Նրանից անբաժան էր իր երկփողանի որսորդական հրացանը, և շատ դիպուկ էլ կրակում էր:

Հայրս ձմեռվա իր ազատ ժամերին մի բռնցքաչափ փայտի կտորից, որի երկարությունը մոտ 10-12 սմ էր, իսկ հաստությունը՝ 5-6, պատրաստում էր ծիտ որսալու համար մի տեսակ թակարդ, որը Ղարաբաղի բարբառում կոչվում է «չարթման», որը ձմեռվա ամբողջ եղանակին մեր գյուղի բոլոր երեխաների սիրելի ու գրավիչ խաղալիքն էր: Այդ փոքրիկ փայտի կտոր-թակարդը այն հմայիչ ուժն ուներ, որ երեխաները, անուշադրության մատնելով իրենց սառած մատներն ու ոտները, ամբողջ օրը կույզ եկած իրենց կալերի ու մարագների պատասպարաններում, սրտատրոփ սպասում էին, որ ահա շուտով իրենց «չարթման» ծիտ պիտի որսա:

Մեր բոլոր հարևանները, մի-մի կտոր փայտ ձեռքներին, գալիս էին հորս մոտ ու խնդրում.

- Ի՛սա, մեր երեխի համար մի չարթմա շինիր քո պատրաստած ըլլերով:

Հայրս շատ հմտորեն ոչխարի աղիքներից պատրաստում էր չափազանց բարակ ու նուրբ թել,



որը կոչվում էր «ըլլեր»: Հայրս ոչ ոքի չէր մերժում ու մեծ բավականություն էր զգում, որ կարողանում էր կատարել իր հարևանների ու բարեկամների խնդիրը:

Այսպիսով, նա երեխաների համար պատրաստում էր զանազան խաղալիքներ՝ «չարթմա», «բուլդի», «ճոռան», «դոռան» և այլ խաղալիքներ:

Մեր և մեր շրջակա գյուղերում գտնվող թմբկահարները գալիս էին ու խնդրում հորս.

- Իսա, մեր նաղարայի (թմբուկի) համար կոպալներ պատրաստի:

Նա ոչ ոքի չէր մերժում և հոնի փայտից կեռ-կեռ ու նախշուն քթերով «կոպալներ» էր պատրաստում:

Գյուղի պառավ կանայք խնդրում էին և ձեռքի շարժումներով հասկացնում.

- Ի՛սա, քեզ մատաղ, մեզ համար շերեփ, գդալ, կլոլակի թակ պատրաստիր: Իսկ նա էլ այդ կանանց նույնպես ձեռքի շարժումներով հասկացնում էր, որ գնան տանձենու փայտ բերեն, որից միայն կարելի էր պատրաստել այդ իրերը՝ ըստ իմ հոր հասկացողության:

Շատ եմ տեսել, որ ջահել տղաները գալիս էին հորս մոտ ու խնդրում.

- Ի՛սա ապա, առ էս գոմեշի աշ տված կաշին ու քթերը կըռ-կըռ տրեխ արա:

Հայրս, քթի տակ ծիծաղելով, ասում էր.

- Կգաս երեք օրից հետո և կրերես քթերը գույնզգույն թելերով նախշած, կարմիր ներկած տրխատաններ, որ հագնես ու գնաս նշանածիդ մոտ և ցույց տաս տրեխները:

Այս և նման աշխատանքներ հայրս մեծ մասամբ կատարում էր ձմռանը, երբ նա ազատ էր լինում:

Նա վերին աստիճանի հյուրասեր ու ընկերասեր մարդ էր: Մեր տունը միշտ լիքն էր լինում հյուրերով, և հայրս, չնայած որ նա ընդհանրապես չէր սիրում խմելը, հյուրերի համար միշտ ունենում էր առատ զինի և օղի, որոնցից չէր խնայում:

Առաջին անգամ հորս հետ

Ես հազիվ վեց տարեկան էի: Իմ մանկական հիշողության մեջ մինչև օրս էլ վառ ու պայծառ է մնացել այդ օրը, և ես ցանկանում եմ նկարագրել, թե ինչպես առաջին անգամ հորս հետ վաղ առավոտյան ճանապարհվեցի դեպի մեր այգիներն ու դաշտերը:

Հայրս ամեն օր վաղ առավոտյան կամ ուշ երեկոյան շրջում էր այգիներն ու ցանքսերը, ստուգում՝ տավարածները հո չէ՞ն վնասել:

Մի գարնանային պայծառ ու տաք առավոտ էր: Հայրս, իր սովորության համաձայն, պատրաստվել էր տնից դուրս գալու, երբ ես զարթնելով սկսեցի լաց լինել: Նա մոտեցավ անկողնիս ու ձեռքի շարժումներով հարցրեց իմ լացի պատճառը: Ես նույնպես ձեռքի շարժումներով հասկացրի նրան, որ ես էլ եմ ուզում իր հետ գնալ: Նա ցանկացավ ինձ համոզել, որ մնամ տանը, որովհետև դեռ մութ է, ինքը հեռու տեղ է գնալու, որ ես փոքր եմ և կհոգնեմ, բայց ես համառում էի և շարունակում լացս:

Ամառնան տատը, որ մահճակալի վրա՝ իր անկողնում, պառկած էր, միջամտելով ասաց.

- Ի՛սա, երեխեն տար քեզ հետ, խաթրը մի՛ կոտրիր:

Հայրս հրացանը ցած դրեց, նստեց իր մոր մահճակալի ծայրին և ասաց.

- Դե, շուտ վեր կաց, շորերդ հագիր, արդեն ուշ է:

Ընդհատելով լացս՝ իսկույն անկողնից դուրս ցատկեցի, մորս օգնությամբ շորերս հագա, գոմեշի կաշվից պատրաստած, աշ տված, կեռ-կեռ քթերով, կարմիր տրխատաններով տրեխներս, որ հորս պատրաստածն էին, հագա, նախշուն կոպալով մահակս, որ դարձյալ հայրս էր պատրաստել,



ձեռքս առա, գառան մորթուց կարած (հայրս էր կարել) փափախը գլխիս դրի, գույնզգույն ուլունքներով ու բազմերանգ թելերով զարդարված փոքրիկ «չանթաս» ձգեցի վիզս, Ամառնան տատը մի կտոր հաց ու պանիր դրեց չանթիս մեջ, և հորս հետ միասին դուրս եկանք մեր տնից:

Արևելքը շառագունել էր, շուտով սարի ետևից արեգակը դուրս պիտի գար, երբ մենք ցածրացանք դեպի գյուղից քիչ ներքև գտնվող մեր այգին:

Նոր էինք մտել այգին և անցնում էինք ծառուղիների միջով, հայրս՝ առջևից, իսկ ես՝ նրա հետևից, երբ նա, հանկարծ կանգ առնելով, ձեռքի նշանով հասկացրեց ինձ, որ կանգնեմ: Ես կանգ առա, իսկ ինքը, մի քանի քայլ առաջ գնալով, կանգնեց և հրացանի փողն ուղղեց դեպի վերև: Հրացանը պայթեց, և ծառի ճյուղից դեղնականաչ կրծքով մի նախշուն թռչուն ցած ընկավ: Հայրս վերցրեց և ինձ տվեց... Օ՛հ, ի՛նչ ուրախություն...

Հայրս շարունակեց իր ճանապարհը, և ես նրան հետևեցի:

Բավական հեռացել էինք գյուղից և շուտով այգուց դուրս պիտի գայինք, երբ նա հրացանի ծայրով շարժեց հողը, և նրա տակից պայթելով դուրս ցատկեց մի թակարդ: Նա վերցրեց թակարդը և դրեց մի թփի մեջ, ու մենք դուրս եկանք այգուց և մտանք մի քանի քայլի վրա գտնվող երիտասարդ թփուտներով հարուստ մի փոքրիկ անտառակ:

Հայրս գնում էր՝ մի ձեռքին բռնած հրացանը, իսկ մյուս ձեռքին ցաքատը, իսկ ես հետևում էի նրան՝ սպանված թռչունը ձեռքիս: Թփուտների միջով անցնելիս կարծես հայրս գնում էր վաղուց պատրաստած մի արահետով, որի երկու կողմից բացազատ անցքերը ծածկված էին ցախով: Հայրս գնալիս այքերը գետնից չէր վերցնում. կարծես կորստի էր ման գալիս: Մոտ 10-15 քայլ անցնելուց հետո նա կանգ առավ մի բարձր թփի առջև: Ձեռքի հրացանն ու ցաքատը մի կողմ դնելով՝ չոքեց այդ թփի տակ՝ գետնի վրա: Ես միայն տեսա, որ հայրս թեքվեց, և նրա թևը համարյա մինչև ուսը կորավ հողի մեջ, ու մի երկու բույսից հետո նա նորից բարձրացավ՝ հանելով գետնի տակից... Օ՛հ, ի՛նչ տեսա... Նա ձեռքին բռնած ուներ մի կենդանի նախշուն կաքավ... Իմ զարմանքն ու ուրախությունը սահման չունեին: Նա պինդ կապեց ոտները և տվեց ինձ:

Որտեղի՞ց և ինչպե՞ս ընկավ իմ հոր ձեռքը այդ գեղեցիկ թռչունը:

Մենք վերադարձանք տուն: Հայրս դարձյալ գնում էր առջևից, իսկ ես՝ նրա հետևից՝ երկու ձեռքիս բռնած երկու թռչուն՝ մեկը սպանված, իսկ մյուսը՝ կենդանի:

Մեր երեխաները որքա՛ն ուրախացան, իսկ ես այդ օրվա հերոսն էի:

Մի քանի տարի հետո մի անգամ ես հիշեցրի հորս եւ խնդրեցի բացատրել, թե որտեղից և ինչպես գետնի տակից հանեց այդ կաքավը, և նա ինձ բացատրեց.

- *Կաքավը հանգիստ վիճակում սովորաբար չի թռչում, այլ ման է գալիս ուստոստելով: Այն թփերի մեջի արահետը ես էի պատրաստել՝ կտրտելով զանազան ճյուղեր ու թփեր, և փակել արահետի միջի անցքերը ու նրա երկարությամբ թափել հացահատիկներ ու հացի փշրանքներ, իսկ արահետի վերջում՝ թփի տակ, փորել 45-50 սմ երկարությամբ մի փոս: Փոսի բերանին ամրացրել էի մի փոքրիկ փայտյա շրջանակ («չարչվա»), որի վրա ձիու պոչի մազերով իբրև «պետլա» ամրացրել չափազանց բարակ, տախտակյա երկու դոնակ: Դոնակների կառուցվածքն այնպես էր, որ չնչին ծանրությունից նրանք իսկույն բացվում են դեպի փոսի ներսը, իսկ նրանցից ծանրությունն ընկնելուց անմիջապես դոնակները, նորից բարձրանալով, ընդունում են իրենց նախկին դիրքը: Փակվելով դոնակները ծածկում են փոսի բերանը: Դոնակները դեպի վերև չեն բացվում:*

Կաքավը, ուստոստելով ու ժողովելով հատիկներն ու հացի փշրանքները, կամաց-կամաց մոտենում է փոսին, որը վարպետորեն քողարկված է տերևներով, և վրան թափված են առատ հատիկներ: Կաքավը, հասնելով փոսին և տեսնելով թափված հատիկները, ցատկում է երկու ոտքով



նրա վրա՝ հատիկները ժողովելու նպատակով, բայց նրա ծանրությունից բացվում են դռները դեպի փոսի ներսը, կաքավը գլորվում է փոսի մեջ: Ծանրությունն ընկնելով դռնակներից՝ նրանք նորից բարձրանալով բռնում են իրենց նախկին դիրքը: Կաքավը ցատկում է դեպի վերև՝ խփվելով դռնակներին, սակայն դռնակները դեպի վերև չեն բացվում, և կաքավը մնում է փոսի մեջ բանտարկված:

Ահա վերոհիշյալ կազմությունն ու ձևն ուներ մեր նկարագրած թակարդը, որը ոչ մի տեղ գործածական չէր, և ոչ ոք գաղափար չուներ այդ մասին, իսկ իմ հայրն այդպիսի թակարդներ մի քանի տեղ ուներ: Ահա այդ ձևի թակարդը կոչվում է «*ծղաղակ*»:

Իմ կարծիքով Ղարաբաղի բարբառով կոչվող «ծղաղակը» «ծուղակ» բառն է: «Ծղաղակ» բառը Ղարաբաղում գործ է ածվում և հետևյալ իմաստով: Օրինակ, երբ մի մարդ մի անմտածված ու խախտուտ գործ է բռնում կամ անպետք մի բան պատրաստում, նրան ասում են. «*Ա՛րա, ծղաղակ ես սարել*», այսինքն՝ դա բան չէ, որ դու սարել ես կամ շինել ես...

Տուն հասնելով՝ հայրս տանիքից ցած բերեց իր ձեռքով պատրաստած վանդակը («*դափաշա*»), որի մեջ երեք հատ կաքավ կար, և այնտեղ բաց թողեց չորրորդ կաքավը:

Տարվա մեջ երկու անգամ՝ Նոր տարվա և Զատիկի թաթախման երեկոները, հայրս բռնած կաքավներից մեկը մորթում էր և կրակի վրա աղաջով խորովում՝ առանց կտրտելու: Նա մի գավաթ աղաջուր էր դնում մոտը, կաքավն ամբողջությամբ անց էր կացնում շամփուրի վրա և բռնում կրակի վրա: Երբ սկսում էր խորովել, նա աղաջուր էր ցանում կաքավի վրա և նորից բռնում կրակի վրա... Այդպես շարունակում էր այնքան, մինչև ամբողջ կաքավը կարմրում էր: Նոր տարվա կամ Զատիկի երեկոյան, երբ մեր բազմանդամ ընտանիքը, բոլորած սեղանի շուրջը, պետք է սկսեին ուտել, հայրս բերում էր շամփուրը և դնում իր մոտ ձեռքին, իսկ վերջինս տալիս էր յուր քահանա որդուն, որը մեր ընտանիքի ընդհանուր ղեկավարն էր: Հորեղբայրս, ստանալով մոր ձեռքից կաքավը, մի մեծ ափսեի մեջ կտրտում էր մանր մասերի և բաժանում մեր ընտանիքի բոլոր անդամներին:

Մի առավոտ մեր բակում լսեցի հրացանի պայթյուն: Բոլորս դուրս վազեցինք: Մեր մեծ բրդոտ շունը թավալվում էր գետնին: Նա բարձրացել էր կտուրը և ջարդելով վանդակը՝ կերել մի կաքավ, իսկ մնացածներն էլ թռել էին:

Աղայի չորանոցը և իմ հայրը

Մենք «*Մաշի խուրթ*» կոչված դաշտում 3-4 հա տարածությամբ մի կորեկի արտ ունեինք, որը մեր կալից երևում էր և գտնվում էր 1 կմ հեռավորության վրա: Մի անգամ՝ իր սովորական աշխատանքի ժամանակ, հայրս, հանկարծ կանգ առնելով, ձեռքը դրավ ճակատին և սկսեց նայել դեպի կորեկի արտը և միևնույն ժամանակ խիստ ջղայնացած՝ բարձր ձայն հանել: Մենք նույնպես նայեցինք դեպի կորեկի արտը և ի՞նչ տեսանք՝ մեր բեկի ոչխարի հոտն ամբողջովին գտնվում էր կորեկի մեջ, իսկ հովիվը չէր երևում:

Հայրս ինչքան ձայնը բարձրացրեց, ինչքան բղավեց, չերևաց հովիվը, իսկ ոչխարները շարունակում էին իրենց ավերածությունը:

Աղայի հովվի անունն էր Ասադ: Նրան ճանաչում էր ամբողջ գյուղը՝ որպես մի քաջ ու անվեհեր երիտասարդ. ո՞վ կհամարձակվեր մոտենալ այդ աժդահային, մանավանդ, որ աղայի հովիվն էր: Օր չէր պատահում, որ նա որևէ գյուղացու չձեռեր և նրա խոտհարքը, այգին կամ արտը չփչացներ: Նա մեր գյուղի պատուհասն էր:

Հայրս, առանց գուլպաների, տրեխներով, երկմատինը ձեռքն առնելով, համարյա վազելով ցածրացավ դեպի կորեկի արտը: Ես նույնպես վազեցի նրա ետևից: Ճիշտ է, վազում էի հորս ետևից, բայց սաստիկ վախենում էի, որ Ասադը կարող է ձեռել հորս:



Մինչև մի քանի թույլ մենք կանգ առանք *«Մաշի խութի»* սահմանակից փոքրիկ սարի գլխին, որտեղից մոտ հարյուր քայլի վրա էր գտնվում կորեկի արտը, և ամբողջապես հասունացած դեղին արտը փոված էր մեր աչքի առջև, ու աղայի ամբողջ հոտը, ցրված արտի մեջ, ավերում էր: Ասադը կանգնել էր մի բավական բարձր քարի վրա, իր դագանակի ծայրը դեմ էր տվել թևի տակը, մի ոտը ձգել էր մյուս ոտքով, սրինգը դրել բերնին, կարծես կատարյալ արձան լիներ, ու նվագում էր, իսկ իրենից մի քանի քայլ հեռավորության վրա ոչխարներն իրենց գործն էին տեսնում: Նրա աջ կողմում ետևի ոտների վրա պայգել էր նրա կատաղի գամփոը:

Հայրս ձեռքով նշան տվավ, որ ես տեղիցս չշարժվեմ: Ես գամվեցի տեղս դողդողալով: Ավելի սարսափեցի, երբ զգացի, որ կարող է հորս նա սպանել՝ մանավանդ տեսնելով նրա մեծ, բրդոտ, ահարկու գամփոին, որ իմ աչքում մի վիշապ էր երևում:

Հայրս զգույշ քայլերով մոտեցավ նրան, կռացավ, գետնից մի մեծ քար վերցրեց. երբ նա հանգիստ շարունակում էր նվագելը, հարվածեց հետևից նրա երկու թիակների մեջտեղին այնպիսի ուժգնությամբ, որ Ասադը ցած գլորվեց իր բարձրությունից գոռալով. *«Վա, լալա, օղոր...»*:

Սակայն նա իսկույն ցատկեց տեղից, դագանակը վերցնելով՝ խոյացավ դեպի հայրս: Երբ Ասադը գլորվեց, նրա գամփոը կատաղի ուստյունով ցատկեց դեպի հայրս, բայց, երկմատինը կպչելով շան գլխին, կաղկանձելով փախավ: Շան ողբալի կաղկանձն ավելի կատաղեցրեց Ասադին: Նա հորս վրա բերեց իր դագանակը, բայց հայրս պաշտպանվեց և երկմատինով հարվածեց նրա ձեռքին: Ձեռքից վայր ընկավ դագանակը, որից հետո նա սկսեց փախչել իր շան ետևից:

Կորեկից դուրս քշեցինք ոչխարի հոտը և բերինք մեր կալը:

Դեռ նոր էինք հոտը կալը հասցրել, բայց արդեն աղայի հովվին ծեծելու, հոտը քշելու լուրը հասել էր գյուղը և աղային:

Աղան իսկույն իր ծառա Անտոնին ուղարկեց և պահանջեց բաց թողնել հոտը: Հայրս, որ դեռ նոր էր նստել կալի շվաքարանում, և դեռ քրտինքը չէր ցամաքել, տեսնելով Անտոնին՝ իսկույն վեր կացավ տեղից, վերցնելով երկմատինը և օդում շարժելով հասկացրեց նրան, որ անմիջապես հեռանա:

Անտոնը հեռվից ձեռքի շարժումներով իմաց տվեց հորս, որ տերտերը գտնվում է աղայի մոտ, և իրեն նա է ուղարկել: Հայրս պատասխանեց, որ *«Տերտերի միրուքը ես կքանդեմ, իոկ դու իսկույն հեռացիր այստեղից»*:

Անտոնը լուռ ու մունջ ետ դարձավ ու գնաց: Հազիվ էր անցել մի ժամ, որ ծերունի գնդապետադան զինվորական խունացած հագուստով, լայն կարմիր երիզով անդրավարտիքով ու զինվորական, կարմիր երիզով հին գլխարկով, խոշոր հատիկներով տերողորմյան ձեռքին, տեր հոր հետ գրուցելով՝ եկավ մեր կալը:

Նրանց հետևում էր ստրկական, խոնարհ քայլերով Անտոնը: Աղան մոտեցավ հորս, ձեռքը մեկնեց ու բռնեց հորս ձեռքը: Նա շատ սիրալիր ձեռքի շարժումներով հարցրեց հորս առողջության մասին, որից հետո ոչխարների հասցրած վնասի մասին: Հայրս, գլուխը խոնարհեցնելով՝ ի նշան շնորհակալության, միննույն ժամանակ իր բողոքը հայտնեց աղային՝ նրան հասկացնելով, որ՝ *«Կոներս կտրատելով վարել եմ, քրտինք եմ թափել, որ այսօր բերքը հավաքեմ, իսկ քո հովիվը փչացնում է իմ աշխատանքը...»*: Նա վերջում ձեռքը մեկնեց դեպի կորեկի արտը ու հետո ցույց տվավ իր մեջքը, որով ուզում էր ասել՝ *«մեջքս կոտրել եմ նրա համար...»*:

Աղան լուռ կանգնել էր ու մին նայում էր հորս զայրացած դեմքին, մին տեր հոր երեսին, և վերջապես թափահարելով հորս ձեռքը և ձեռքը դնելով նրա ուսին, որ միայն սպիտակ կտավից կարած շապիկով էր, այն էլ քրտինքով պատած՝ ասաց.



- *Ես կպատժեմ նրան և նման բան այլևս չի կրկնվի:*

Տերտերն ամբողջ ժամանակ լուռ էր:

Աղայի այդպիսի վերաբերմունքը հորս մեղմացրեց, և նա Անտոնին ասաց.

- *Հոտը քշի՛ր:*

Եվ ինքն էլ սկսեց մի կողմից օգնել Անտոնին:

Ադան ու տերտերը նորից հետ դառան ու զրուցելով կամաց-կամաց գնացին դեպի մեր թթի այգին:

Ոսկի

Ոսկին մեր փոքրիկ երեխաների սիրելին էր, մեր ընտանիքից անբաժան. գաղթական, անտուն, անտեր ու որբ Ոսկին մեր ծնողների հարազատն էր՝ Ամառնան տատիկի սիրելի աղջիկը:

Միբելի Ոսկի, իմ մանկական հոգում դու այնքան ուժեղ ես տպավորվել, որ չնայած անցել է մոտ հիսուն տարի, քո բրոնզե առնական դեմքը, քո ուժեղ ու զիլ ձայնը, քո անկեղծ ու հարազատ փայփայանքներն իմ հիշողության մեջ մինչև օրս էլ մնացել են վառ ու պայծառ, անջնջելի, կարծես ես քեզ երեկ եմ տեսել...

Դու «*հերիք որդյակ*»-ներով, «*բամբ որոտան*»-ներով ու քո անուշ փայփայանքներով իմ մեջ ազնվագույն զգացմունքներ պատվաստեցիր... Ես երախտապարտ եմ քեզ և հետևապես լուրջամբ անցնել մոտովդ անկարող եմ:

Ո՞վ էր Ոսկին:

Ես հազիվ 7-8 տարեկան էի, երբ մեր գյուղն էին գալիս համարյա խմբերով, ոտաբոբիկ ու մերկ, երեխաների կոներից բռնած, ցնցոտիների մեջ փաթաթված կանայք, մի-մի պարկ ուսներին ձգած տղամարդիկ ու շրջում տները, ողորմություն խնդրում: Ամեն օր մի քանի մուրացկաններ էին մտնում մեր բակը ու «բաժին» խնդրում:

Ամառնան տատը, լսելով նրանց ձայնը, իսկույն վեր էր կենում ճախարակի տակից, վերցնում պղնձի մեր մեծ բաղյան և լցնելով այլուրով կամ ցորենով՝ դատարկում նրանց քսակներում՝ ասելով. «*Տարեք, այ դադարգյուն ընկած դժբախտ մարդիկ... Թող Աստված էլ նրանց դադարգյուն զգի... Տարեք, ո՞վ է իմանում, բայքամ մի օր էլ մենք ենք ձեր օրն ընկնում...*»:

Շատ էր պատահում, որ մուրը վրա հասնելով՝ նրանք գիշերում էին մեր տանը: Պատահում էին և այնպիսիները, որոնք ողորմություն չէին խնդրում, այլ գալիս էին և օրերով մնում մեր տանը՝ որպես պատվավոր հյուրեր: Մեր տան դռները բոլոր օտարականների, հալածվածների, հյուրերի առաջ միշտ բաց էին: Շատ քիչ էր պատահում, որ մի օր մեր տանը մի որևէ կողմնակի մարդ չգիշերեր:

Ո՞վ կհամարձակվեր նրանց չընդունել... Դա մեր օջախի համար խիստ անպատվություն կլիներ...

Եթե մեր ընտանիքի անդամներից մեկը թույլ կտար վատ վերաբերմունք դեպի հյուրերից որևէ մեկը, Ամառնան տատն իսկույն տեղից վեր կկենար և սուր հայացք ձգելով նրա վրա՝ կասեր. «*Ղոնաղն Աստծունն է, իմ տունն էլ Աստծու տունն է...*»:

Ահա այդ ժամանակներն էր, երբ մի օր էլ մեր տունը եկավ բրոնզե դեմքով, արծվային հայացքով, սև շորերով միջին տարիքի մի կին՝ հագին տրեխներ, ձեռքին մի փայտ (շներից պաշտպանվելու համար): Նա, կանգ առնելով մեր մեծ դարպասի առջև, խրոխտ ու համարձակ ձայնով հարցրեց բակում խաղացող երեխաներիս.

- *Տեր Հովհաննեսի տունն ա՞յս է...*

Մեր պատասխանը ստանալուց հետո նա ներս մտավ, իսկ մենք մեր շներին պահեցինք, մինչև



նա բարձրացավ սանդուղքներով երրորդ հարկի պատշգամբը:

Հորեղբայրս, դուրս գալով իր առանձնասենյակից, հարգանքով ընդունեց այդ կ ն ո ջ ը: Նա գիշերեց մեր տանը:

Երեկոյան մեր ընտանիքի բոլոր անդամները նստել էին իրենց սովորության համաձայն մեծ սենյակում: Սենյակի վերևում՝ աթոռի վրա, սեղանի առաջ, նստած էր հորեղբայրս նորեկ հյուրի հետ, և երկար զրուցում էին: Նրա պատմածից այնքանը հասկացա ես, որ նա փախել է կոտորածից: Բոլորը լուռ լսում էին նրան, միայն Ամառնան տատը մեկ-մեկ ընդհատում էր նրան՝ տալով զանազան հարցեր:

Նրա տված պատասխաններից միայն այսքանն եմ հիշում.

- Բա... Ձեր տանը պես ես էլ եմ ունեցել տուն... Քրդերը սպանեցին ամուսնուս, տունս թալանեցին, իսկ ես փախա... Մայրիկ ջան, իմ դարդը շատ է...

Խեղճ կինը չկարողացավ շարունակել՝ փղձկաց... Ամառնան տատը, կարծես փոշմանելով իր սոված հարցից, սկսեց նրան մխիթարել.

- Ո՛սկի, աղջիկս, սիրտդ մի նեղացրու. հես է, էս տունը քո տունն է, մնա մեզ մոտ, այստեղ ապրիր մեզ հետ, դու կլինես իմ որդիներից մեկը:

Հորեղբայրներս ամեն մեկն էլ մի կողմից սկսեցին մխիթարել այդ թշվառ կնոջը և նորից շարունակել իրենց զրույցը:

Ոսկին այդ օրվանից դարձավ մեր ընտանիքի անբաժան անդամներից մեկը, մեր սիրելին ու հարազատը: Նա օրերով մնում էր մեր տանը, դարձյալ գնում ու մի քանի օրից հետո կրկին գալիս:

Իսկ թե ուր էր գնում և ինչի, ես ոչինչ չէի հասկանում: Նա այդ տարին մեզ սովորեցրեց «*Հերիք, որդյա՛կ*» ազգային երգը:

Ոսկին Ամառասա վանքում

Վարդավառի տոնն էր: Ամառնան տատը պատրաստություն էր տեսնում: Թե՛ կովերից եւ թե՛ ոչխարներից ստացված մի քանի օրվա կաթը քամում, մածուն էր դարձնում Ամառասա տանելու համար, որտեղ խիստ տոթ է լինում: Պատրաստում էին թարմ պանիր և թխում հաց, գաթա ու կաթնահունց: Հայրս պատրաստում էր սայլերի վրա շվաքարան ճիպոտներից, որպեսզի ճամփին տոթը երեխաներին չնեղի:

Վարդավառի տոնը Ղարաբաղի հայ ազգաբնակչության ամենասիրած տոներից մեկն էր: Մեր ամբողջ շրջանը գնում էր այնտեղ՝ տոնելու իր համաժողովրդական տոնը: Այդ օրը՝ կեսօրից քիչ անց, հայրս լծեց եզները, սայլերի հատակները ծածկեց գորգերով ու ներքնակներով: Հացով ու այլ ուտելիքներով լցրած խուրջիները տեղավորեց մի սայլում՝ այդտեղ դնելով նաև մի փոքրիկ տակաո՝ գինով լիքը, ու մի ոչխար:

Ամառնան տատը երեխաների հետ միասին տեղավորվեցին մի սայլում, իսկ մնացածները՝ մյուս սայլում:

Ինչպիսի՛ հրճվանք էր երեխաներիս համար: Ճանապարհի ամբողջ երկարությամբ փոշին բարձրացել էր. ամբողջ ճանապարհը բռնված էր ուխտավորներով, որոնք նույնպես սայլերով, գրաստներով ու իրենց մատաղացու ոչխարներով առաջ էին շարժվում: Գլխավոր ճանապարհին էին լցվում գետի վտակների պես զանազան շրջաններից եկող ուխտավորների խմբերը իրենց պատրաստությամբ:

Մեր ընտանիքը երեկոյան դեմ կանգ առավ վանքի մուտքի մոտ: Քահանա հորեղբայրս վաղուց էր եկել և տեղ բռնել վանքի պարսպի ներսում թե՛ մեզ համար և թե՛ անասունների: Վանքի



պարսպի ներսը բաժանված էր երկու մասի. մի փոքր մասը անասունների համար, որ առանձնացված է, իսկ մնացած տարածությունում, որի կենտրոնում կառուցված է վանքը՝ պարսպի մեջ գտնվող բազմաթիվ խուցերով, տեղավորվեցին ուխտավորները, և որովհետև գիշերը խիստ տոթ էր, ուխտավորներն անցկացրին բացօթյա:

Մեր ընտանիքը տեղավորվեց պարսպի ներսում՝ վանքի արևմտյան պատի մոտ:

Ուխտավորների հոսանքը շարունակվում էր, իսկ վանքի պարսպի ներսի տարածությունն արդեն լցվել էր. շատերը ստիպված էին տեղ բռնել վանքից դուրս՝ թթենիների տակ:

Փռեցին գորգերն ու ներքնակները և նստեցին հանգստանալու: Վանքի բակում 3-4 տեղ նվազում էին հայ ու թուրք նվազողները և ամբոխը, խոնված նվազախմբերի շուրջը, պարում էր ու զվարճանում: Վառվեցին բազմաթիվ ճրագներ ու խարույկներ: Ուխտ էին եկել նաև բազմաթիվ թուրք ընտանիքներ:

Մուրն արդեն վրա էր հասել. Ամառնան տատը կարգադրեց երեխաներին կերակրել ու քնեցնել: Երեխաներիս բաժանեցին գաթա, կաթնահունց, և ուտելուց հետո պառկեցինք քնելու, որպեսզի առավոտյան կարողանանք շուտ վեր կենալ:

Թե որքան քնեցի, շատն ու քիչը չգիտեմ, միայն մի ուժեղ ձայնից ես արթնացա: Մեր ընտանիքի մոտով անցնում էին մի խումբ երիտասարդներ՝ բարձր ու բամբ, ուժեղ ձայնով երգելով: Խմբի առջևից գնում էր մի կին՝ չափ տալով: Նա հանել էր իր կարճ վերնաշորը (*«ժակետ»*), փաթաթել ու տվել խողովակի ձև և բռնած ձեռքին՝ կատարում էր զանազան շարժումներ, կարծես երաժշտական խմբի ղեկավար լիներ: Երգողներն ունեին երկար մազեր, գլուխները բաց, պսպղուն կոճակներով, կոկարդներով ու փայլուն ուսադիրներով, և երգում էին *«Հերիք, որոյակը»*:

Ես իսկույն ոտքի թռա ու միացա նրանց խմբին, որոնք պտտվում էին վանքի շուրջը: Ես նույնպես սկսեցի երգել:

Ես անգիտակցաբար մոտեցա այդ կնոջը, որն իսկույն բռնեց ձեռքիցս և կարծես քաշ տվավ իր ետևից: Խումբը որքան լավ էր երգում, որքան ղյուրթիչ, երբ հասնում էր այն տեղը, որ ասում է՝ *«մեր բահերն էլ կանեն անոնց շան սատակ»*, այդ կինը բարձրացնում էր իր ձեռքին բռնած շորը, ուժգնությամբ թափահարում օդի մեջ և զիլ-ուժեղ ձայնով շարունակում երգը: Մի քանի անգամ վանքի շուրջը երգելով՝ պտտվելուց հետո խումբը ցրվեց:

Այդ հերոսուհին մեր ընտանիքի սիրելի Ոսկին էր: Նա ինձ մայրական քնքշանքով համբուրեց և ասաց.

- *Ո՞ւր են ձերոնք:*

Նա ինձ հետ եկավ, մերոնք ընդունեցին նրան որպես հարազատի: Նա փաթաթվեց Ամառնան տատիկին ու գիշերը մնաց մեզ մոտ:

Մենք՝ երեխաներս, որքան ուրախ էինք, որ նա մեզ մոտ էր և մեզ հետ... Մեզնից քիչ չէին ուրախ նաև մեր ընտանիքի մյուս անդամները, իսկ Ամառնան տատը հրճվում էր նրան տեսնելուց, և նա էլ ավելի շատ սիրում էր Ամառնան տատիկին:

Հետևյալ օրը՝ վաղ առավոտյան, վանքի բակից դուրս եկանք և տեղ բռնեցինք մի թթենու տակ: Հայրս, առաջն ընկած, ես էլ, մի փոքրիկ ճիպոտ ձեռքիս, ոչխարը երեք անգամ պտտեցրինք վանքի շուրջը: Ամառնան տատը, վանքից վերադառնալով, յուր գոտկից հանեց մի փոքրիկ փաթեթ և բաց անելով՝ միջի օրհնած աղը թափեց մի տափակ քարի վրա. ոչխարն սկսեց լիզել աղը, որից հետո հայրս մորթեց և մորթազերծ արավ:

Մի քանի տեղ կրակ վառեցին, կաթսաները դրին կրակին և սկսեցին կերակուրներ եփել:

Պատարագը վերջացել էր, այգիներում՝ ծառերի տակ, հազարավոր ընտանիքներ ճաշի պատ-



րաստություններ էին տեսնում, մորթոսվում էին հարյուրավոր ոչխարներ ու աքաղաղներ: Աքաղաղները բերել էին նրանք, ովքեր միջոցներ չունեին ոչխար գնելու:

Վանքի վանահոր կողմից նշանակված մի քանի հոգի շրջում էին ուխտավորների մեջ և ժողովում մորթոսված ոչխարների մորթիներն ու հերիները: Վանահորը մորթիներ ու հերիներ տալը ընդհանուր սահմանված կարգ էր, որից ոչ ոք խուսափել չէր կարող, և պարտադիր էր բոլորի համար:

Այժմ նվագողները դուրս էին եկել վանքի բակից և տեղ բռնել թթենիների տակ՝ հասարակության մեջ: Ձուռնա-դիռլի ձայնից թնդում էր վանքի շրջակայքը: Պարում էին բոլորը: Պարերին մասնակցում էին թե՛ փոքրահասակները և թե՛ մեծահասակները, թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք, ջահել տղաներն ու աղջիկները: Պարում էին մեկ-մեկ, պարում էին շարքերով, խմբերով: Կյանքը եռում էր: Ձգել էին երկար սփռոցներ և բոլորել սփռոցների շուրջը: Խմում էին, ուտում, ուտում էին և խմում: Այդ օրը դրանց միակ գործն էր պարել, ուտել-խմել և մոռանալ թեկուզ մի քանի ժամով իրենց չարքաշ վիճակը, իրենց դառն ու տանջալի կյանքը:

Շատերն արդեն հարբել էին:

Այդտեղ էր գտնվում նաև ոստիկանապետը՝ 3-4 «ստրածնիկներով»: Դրանք եկել էին իբր թե կարգ պաշտպանելու, սակայն ժամանակակից մեր հասարակությունը դրանց կարիքը չէր զգում: Դրանք նույնպես մասնակցում էին այդ օրվա տոնի ուրախությանը:

Այդ ընդհանուր ուրախությունը շարունակվում է համարյա ամբողջ օրը:

Իրիկնադեմին, երբ անցնում է տոթը, և փչում մեղմ զեփյուռը, կամաց-կամաց ժողովում են իրենց իրերը, լծում են սայլերն ու ճանապարհվում դեպի իրենց գյուղերը:

Այդ ամբողջ օրը մեր սիրելի Ոսկին նույնպես մեզ հետ էր և մասնակից մեր ընտանիքի ուրախությանը:

Երբ մենք տեղավորվեցինք մեր սայլերում և ցանկանում էինք ճանապարհվել դեպի գյուղը, Ոսկին համբուրեց փոքրիկներին, փարվեց Ամառնան տատիկի պարանոցին, և համբուրվեցին: Բոլորին «մնաք բարյավ» ասելով՝ բաժանվեց մեզանից: Նա մեզ հետ չեկավ, բայց թե ուր գնաց, չգիտենք:

Սեպտեմբերից մենք երեքով սկսեցինք սովորել քաղաքում: Ձմեռային արձակուրդներին եկանք գյուղը: Երբ մտանք մեր սենյակը, տեսանք թիթեղյա վառարանը խիստ կարմրած, իսկ սեղանի շուրջը նստած էին հորեղբայրս և մեր բոլորիս սիրելի Ոսկին: Նա բոլորից շուտ բարձրացավ տեղից, մեզ գրկելով մայրական քնքշությամբ, համբուրելով ասաց.

-Բալաներս եկել են, բալաներս եկել են:

Նա մի քանի օր մնաց մեզ մոտ: Նա այս անգամ էլ մեզ սովորեցրեց «Բամբ որոտանք»: Նորից գնաց. նա գնաց այս անգամ ընդմիջտ...

Տարիներ շարունակ ինձ զբաղեցրել է այն միտքը, թե այդ հերոսուհին ինչ եղավ և ուր գնաց:

Նա սովորական գաղթական կանանցից չէր, որոնք շրջում էին գյուղերը և մի կտոր հաց խնդրում: Որտե՞ղ էր լինում նա, ինչո՞վ էր զբաղվում նա, ո՞վ էր նա և ի՞նչ էր ներկայացնում իրենից... Ի՞նչ գործ ուներ ուսանողական խմբի հետ Ամարասում... Ո՞ւր գնաց, ի՞նչ եղավ... Ահա հարցեր, որոնք տարիներ շարունակ հանդիսացել են իմ մտքի զբաղմունքի նյութ, սակայն ոչ մի եզրակացության գալ չեմ կարողացել:

Եվ իմ ծերության հասակում էլ նա մնում է ինձ համար որպես մի առեղծված, առասպելական



դյուցագնուհի, որը ներշնչել է ինձ ամենաազնիվ, վառ ու պայծառ զգացմունքներ, զգացմունքներ, որոնք մնացել են իմ դառն ու տառապանքներով հարուստ կյանքի մեջ մխիթարական և իբրև լուսատու աստղ, որը հանդիսացել է իմ չարքաշ ու տանջանքներով լի կյանքի ուղեցույցը:

Միրելի Ոսկի, ես համոզված եմ, որ դու այլևս չկաս... կենդանի չես... Հանգիստ քո նշխարքներին, ո՛վ իմ հեքիաթային հերոսուհի:

Մեր մեծերի վերաբերմունքը դեպի փոքրերը

Աշխատանքը եռում էր ամենուրեք: Մեր ընտանիքի բոլոր անդամներն աշխատում էին այգիներում, բանջարանոցներում, դաշտերում և այլ տեղամասերում: Տանը մնում էին փոքրիկ երեխաները և Ամառնան տատը իր մեծ հարսի՝ Ղումաշ աճու հետ: Նրանք խնամում էին երեխաներին և հաց թխում, կերակուր պատրաստում բոլոր աշխատողների համար:

Հաց թխելիս ամեն անգամ փոքրիկ երեխաներս հավաքվում էինք մեր սիրելի տատիկի շուրջը և կախվելով նրա արխալուղի փեշերից՝ խնդրում. *«Մե՛ծ այս, մըզ համար բլիթ թխե... Բիշի (գաթա) ենք ուզում»:*

Մեծ այան (Ամառնան տատը) իսկույն կարգադրում էր իր հարս Ղումաշ աճուն, որ պուլիկից յուղ հանի ու *«հասը»* պատրաստի, իսկ ինքը, գոտկից կախած բանալին ձեռքն առնելով և մոտենալով իր պահարանին, դուռը բանալով, հանում էր մի քանի կտոր շաքար ու տալիս Ղումաշ աճուն՝ ասելով. *«Ա՛ն, զցիր հասի մեջ, որ քաղցր լինի»:* Մենք էլ տեսնելով, որ տատիկը կատարեց մեր խնդիրը, նրան հանգիստ թողնելով՝ գնում էինք խաղալու: Մի-երկու ժամից հետո նա կանչում էր մեզ և յուրաքանչյուրիս տալիս մի-մի բլիթ:

Հետևյալ անգամ, երբ դարձյալ հաց էին թխում, մենք նորից խմբվում էինք Ամառնան տատիկի շուրջը ու նորից խնդրում, որ մեզ համար էլի բլիթ թխի, բայց նա պատասխանում էր, որ այս անգամ մեզ *«եղածու»* (ձվածեղ) է տալու, բլիթն անցյալ անգամն է տվել:

Նա ամեն անգամ ամենայն բարեխղճությամբ կատարում էր խոստումը միայն տղա թոռնիկների նկատմամբ: Նա ուներ նաև 5-6 թոռնիկ աղջիկներ, որոնց համար ոչինչ չէր անում: Եվ երբ տղաները, բլիթները ձեռքներին, վազվզում էինք սենյակներում, աղջիկ թոռնիկները, քաշված մի-մի անկյուն, մեր ձեռքի բլիթներին էին նայում: Նա անարդար վերաբերմունք էր ցույց տալիս դեպի աղջիկ թոռնիկները, իսկ տղաներիս ամեն մի ցանկություն կատարում էր:

Ղումաշ աճին, նեղացած Ամառնան տատիկից, ասում էր. *«Ա՛ճի, բա նրանք էլ երեխաներ են, չէ՞, իսկ է՞դ պես ես անում»:* Տատիկը պատասխանում էր. *«Աղջկերանց ճակատը պինդ է լինում, նրանց հարկավոր չէ: Աղջիկ է, նրանցից ոչինչ չի պակասի: Համ էլ բա չե՞ս լսել Աթաքն (տատիկի սկեսուրը) ինչ է ասել՝ տղա-տղա, ոսկե ջուղա, աղջիկ-աղջիկ, շան քարճիկ»:*

Մեր տան բակում մի մեծ թթենի կար, որի ճյուղերը փովել էին մեր պատշգամբի առաջ: Հազարավոր ծտեր թափվում էին թթենու ճյուղերին և հասած թթերը կտցահարում: Երեխաներս նորից շրջապատում էինք Ամառնան տատիկին ու խնդրում, որ մեզ համար ծիտ որսա:

Ամառնան տատը մի քանի բուռ կորեկ էր թափում պատշգամբին կից սենյակում՝ թողնելով սենյակի դուռը բաց: Ծտերը խմբերով թափվում էին սենյակը և կտցահարում հատակի վրա փոված կորեկը: Նա իսկույն փակում էր սենյակի դուռը, որսում բոլոր ծտերին, փետրահան անում ու մաքրում: Մի մասը մեզ էր տալիս, իսկ մնացածն ուղարկում կալն ու «զավողը»: Ամեն շաբաթ կրկնվում էր այս գործողությունը: Ծտերից աղջկերքը դարձյալ բաժին չէին ստանում:

Առհասարակ, մեր ընտանիքի բոլոր մեծերը դեպի աղջիկները միշտ անարդար վերաբերմունք էին ցուցաբերում:



Մեծ հորեղբայրս՝ Եգոր ապան, որն ուներ հինգ աղջիկ և երեք տղա, մեծ խտրություն էր դնում նրանց մեջ: Շատ խիստ ու կոպիտ էր վարվում աղջկերանց հետ: Նրանք չէին կարող քիչ բարձր խոսել, համարձակ ու ազատ շարժվել, իսկ տղաները կարող էին ամեն ինչ անել՝ ծեծել աղջկերանց, խաղալ, վազվզել և այլն: Նա, առանց հաշվի նստելու նրանց ցանկությունների հետ, փոքր հասակում ամուսնացրեց իր բոլոր աղջկերանց: Եգոր ապան աղջկերանց վերաբերմամբ մի չափազանց բնորոշ արտահայտություն ուներ. *«Եթե աղջիկը ճանապարհ գնալիս հանկարծ նրա մեջքին խփես փափախդ, և նա վայր չընկնի, նշանակում է նրա ամուսնանալու ժամանակն է»:*

Տեղն էմ համարում հիշատակելու մի հետաքրքիր դեպք:

Մենք՝ երեք հոգի տղաներ, սովորում էինք քահանա հորեղբորս մոտ: Մի ձմեռային օր մենք երեքով՝ մի-մի ռուսերեն գիրք ձեռքներին, տաք վառարանից քիչ հեռու՝ սենյակի մի անկյունում, դաս էինք սովորում, իսկ մեզ մոտ կանգնած հորեղբորս աղջիկը՝ մեծ-մեծ աչքերով, լայն երեսով, թմբիկ Անուշը, լսում էր մեզ: Նա այնքան ընդունակ էր, որ իսկույն անգիր էր ասում մեր կարդացածը: Մեր դասագրքում տպված էր *«наши?»*, *«видели?»* և այլն, իսկ մենք առանց հասկանալու այդ բառերի իմաստը, թութակորեն կրկնում էինք՝ *«նաշի, վիդիլի, վիդիլի, վիդիլի...»:*

Անուշը, կրկնելով՝ *«վիդիլի, վիդիլի, վիդիլի»*, մոտեցավ վառարանի մոտ նստած հորը՝ Եգոր ապան, և հարցրեց.

- *Ե՛գոր ապա, ի՞նչ է նշանակում նաշի, վիդիլի, վիդիլի, վիդիլի:*

Եգոր ապան, խիստ վրդովվելով, բայց արտաքուստ ձևացնելով հանգիստ, ասաց իր աղջկան.

- *Նորից ասա, մի տեսնես,-* և նայելով աղջկա երեսին՝ միևնույն ժամանակ գաղտագողի իր ձեռքը մեկնեց դեպի վառարանի տակը և բռնեց այնտեղ գտնվող երկաթե ունեղիքը (*«մաշան»*):

Անուշը նորից կրկնեց՝ *նաշի, վիդիլի, վիդիլի, վիդիլի...*

Անուշը դեռ չէր վերջացրել, երբ Եգոր ապան իսկույն դուրս հանեց ձեռքը վառարանի տակից ու երկաթե ունեղիքով շրմփացրեց Անուշի կրծքին, ասելով.

- *«Նաշի, վիդիլի»* էլ է նշանակում:

Խեղճ երեխան կծկվեց, արցունքներն սկսեցին հոսել, սակայն առանց ձայն հանելու:

- *Հիմա դու էնքան ես համարձակ դարձել, որ ուզում ես ռուսերեն սովորե՞լ,-* ու մի քանի հայիոյանք տվեց ռուսերեն սովորող աղջկերանց հասցեին:

Ահա նման գռեհիկ ու անարդար վերաբերմունք, որ բխում էր ժամանակի հետամնաց ու տգետ հասկացողությունից: Նման վերաբերմունքը դեպի աղջիկ երեխաները այդ ժամանակ համատարած էր ողջ հասարակության բոլոր ընտանիքներում:

Ուսման դրությունը մեր ընտանիքում

Մեր ընտանիքն ամբողջ գյուղում միակն էր, որ ուներ գրագետ մարդիկ: Չորս հորեղբայրներս գրել-կարդալ գիտեին, իսկ իմ հայրը գրել գիտեր միայն երեք տառ՝ Ի-Ս-Ա, այսինքն՝ իր անունը՝ Իսա:

Ամբողջ գյուղը խարխափում էր խավարի մեջ: Երբ մենք դարձանք 8-9 տարեկան, մեզ համար բոլորովին այլ կյանք սկսվեց:

Քահանա հորեղբայրս հատուկ ուշադրություն էր դարձնում երեք եղբայրների իրար հասակակից երեխաների վրա, որոնցից մեկն իրենն էր, մյուսը՝ մեծ հորեղբորս և երրորդը ես էի: Նա մեզ երեքիս էլ հագցնում էր միատեսակ՝ միևնույն կտորից, միատեսակ ոտնամաններ ու զլխարկներ և այլն: Նա մեզ իրարից չէր ջոկում և ոչ մի խտրություն չէր դնում իր որդու և մյուսների մեջ:

Բոլորիս հագուստները ձևում էր ինքը, և կարում էր նրա կինը՝ մեր Ագուլին, կարծես երեքս էլ



նրա հարազատ երեխաները լինեինք:

Մեր գյուղում դպրոց չկար: Տեր հոր մոտ երկու հոգի՝ 16-18 տարեկաններ, սովորում էին և նրա հետ էլ գնում էին եկեղեցի ու *«փռի»* ասում: Նրանց դասագրքերը ժամագիրքն էր:

Մի երեկո հորեղբայրս, վերադառնալով քաղաքից, մի մեծ խուրջին դրեց Ամառնան տատիկի առաջ: Ամառնան տատիկը խուրջինից մի կապոց հանեց և ասաց.

- Ահա թե ինչ է բերել ձեզ համար:

Օ՛հ, ի՛նչ ուրախություն... Նա մեզ համար բերել էր պատկերազարդ գրքեր, գրիչներ, գրչամաններ, թանաքամաններ, մատիտներ, ռետիններ և տետրեր՝ յուրաքանչյուր տեսակից երեքական օրինակ: Հորեղբայրս, այդ բոլորը բաժանելով մեզ, ասաց.

- Բավական է որքան պարապ ման էք եկել, այժմ էլ պետք է սովորեք:

Մայրենի լեզվի մեր դասագիրքն ուներ հրաշալի նկարներ, ու որքան էինք ուրախանում, երբ թերթում էինք նրա էջերը: Այնտեղ մենք տեսնում էինք զանազան կենդանիների նկարներ... Գյուղի երեխա և գիրք, տետր ու այլ պարագաներ: Ոչինչ չտեսած և հանկարծ նկարազարդ գիրք՝ նրա ձեռքին... Մանկական հոգին ինչպիսի հրճվանք կզգա... Դա կհասկանան միայն այն երեխաները, որոնք առաջին անգամ են տեսնում նման իրեր: Հորեղբայրս սկսեց պարապել մեզ հետ:

Մինչև օրս հիշողությանս մեջ թարմ է մնացել այն դեպքը, երբ առաջին անգամ գրիչը վերցրի ձեռքս և ցանկացա գրել: Կարծես այսօր լինի: Հորեղբայրս տվել էր մի-մի գծանի տետր, առաջին էջում՝ յուրաքանչյուր տողի սկզբին, տվել էր մի օրինակ *Աս, Բք, Գգ, Դդ*, և ահա ամբողջ էջը մենք պետք է ընդօրինակելով լրացնեինք: Ես չկարողացա ընդօրինակել և սկսեցի խազմզել, մանավանդ, որ չէի կարողանում գրիչը բռնել: Դեռ այդ բավական չէր, երբ թանաքը կաթեց թղթի վրա, ցանկացա մաքրել՝ ծողակաճը դնելով վրան: Թափված թանաքը թեկուզ ծծվեց, բայց ավելի մեծ տարածություն բռնեց բիծը, և ցանկանալով բոլորովին մաքրել՝ թրջեցի մատս ու քսեցի բծին: Մի քանի անգամ մատով տրորելուց հետո թերթը ծակվեց, և այսպիսով կատարյալ դարձավ իմ անշնորհքությունը:

Հետևյալ օրը հորեղբայրս պահանջեց կատարած աշխատանքները: Մեծ հորեղբորս տղան շատ լավ էր կատարել այդ աշխատանքը: Տերտերը գովեց նրան: Հերթը հասավ ինձ: Նա, տեսնելով իմ կատարած աշխատանքը, իսկույն պատռեց թերթիկը, շարտեց տետրը և զայրանալով ինձ վրա՝ հրամայեց *«աչքի առաջից կորչել»*, որ ինձ չտեսնի:

Ես լաց եղա: Ամառնան տատը, տեսնելով իր որդու վերաբերմունքը, բարկացավ նրա վրա և սկսեց ինձ փայփայել ու սիրտ տալ.

- Դու բոլորիցն էլ լավ ես սովորելու, լաց մի լինի:

Երկու-երեք օրից հետո ինձ հետ պատահեց երկրորդ դժբախտությունը: Մեր տան մոտ գտնվող այգում մի գոմ ունեինք, գոմի առաջ մի փոքրիկ աղբյուր կար, իսկ աղբյուրի մոտ՝ մի ջրավազան: Ջրավազանի չորս կողմը պատած էր վարդի թփերով: Գարնան ժամանակ այդ թփերը ծածկվում էին կարմիր ու սպիտակ վարդերով: Ջրավազանի մոտ էր գտնվում նաև մեր մեղվանոցը:

Մի օր այդ աղբյուրից ջուր խմեցի և, մոռանալով մայրենի լեզվի դասագիրքս թողեցի այդտեղ, իսկ ես մտա գոմը՝ մորս մոտ, որը կթում էր կովը: Մի քիչ անցնելուց հետո հիշեցի, որ գիրքս թողել եմ աղբյուրի մոտ, ու դուրս վազեցի գոմից: Մեր կովի մեծ հորթը ծամում էր գրքիս թերթերը: Մնացի առանց գրքի: Ես խիստ վախենում էի հորեղբորիցս և չգիտեի, թե ինչ պատասխան պիտի տամ: Ամառնան տատն այս անգամ ևս ինձ ազատեց այդ դրությունից: Չգիտեմ՝ նա որտեղից տվավ մի գիրք: Շատ հետո իմացա, որ դա իր փոքր տղայի դասագիրքն էր, որը փախել էր դպրոցից և այլևս չէր սովորում:



Ամբողջ գյուղը տեսնում էր, որ մենք գրել-կարդալ ենք սովորում: Գալիս էին հորեղբորս խնդրում, որ իրենց երեխաներին էլ գրաճանաչություն սովորեցնի: Մինչև անգամ գալիս էին հարևան Հերիեր, Բլբլաք և Մավաս գյուղերից: Հորեղբայրս սիրով ընդունում էր և առաջարկում, որ գնեն դասագրքեր ու գրենական պիտույքներ:

Հորեղբայրս երեք գյուղի (Բլբլաք, Մավաս և Մխտորաշեն) քահանա էր և չէր կարողանում միշտ օրվա միևնույն ժամին պարապել մեզ հետ, ուստի մեր պարապմունքը նա հարմարեցնում էր իր ազատ ժամերի հետ, և շատ էր պատահում, որ 1-2 օրով պարապմունք չէինք անում: Ժողովվել էին թվով 10-12 երեխաներ: Մենք խաղում էինք մինչև նրա գալը: Երբ ստուգում էր, և մենք մեր դասերը չէինք իմանում, նա մեզ երեքիս փակում էր իր առանձնասենյակում և բանալին վերցնում՝ մեզ թողնելով առանց ճաշի (*«без обеда»*): Այդ դեպքում մենք այնտեղ ևս շարունակում էինք մեր կիսատ թողած խաղը: Նա, մի քանի ժամից հետո վերադառնալով, ստուգում էր նորից, բայց ե՞րբ ենք սովորել... Խիստ բարկանում էր, մի լավ ծեծում ու նորից բանտարկում:

Պատահում էր, որ մեզնից մեկն ազատվում էր. այդ դեպքում ազատված ընկերը հետևում էր տերտերին, և հենց որ նա մի քիչ հեռանում էր, իսկույն տաշտից ծածուկ վերցնում էր հացը և բերում պատուհանի երկաթե ցանցի (*«փանջարա»*) միջով կտոր- կտոր տալիս *«բանտարկյալներին»*:

Նա բոլորովին ի նկատի չէր առնում, որ երեխաները կարող են բնական պահանջ ունենալ: Շատ էր պատահում, որ մենք բաց էինք անում պատուհանը և երկաթե ցանցի միջով, առանց մտածելու ու քաշվելու, բավարարություն տալիս մեր բնական պահանջին: Այս ձևով շարունակեցինք մեր գրաճանաչությունը երեք տարի, որից հետո հորեղբայրս մեզ տարավ Շուշի և մտցրեց Թեմական դպրոցը:

Երկպառակտություն և քայքայում

Մեր կիսանահապետական ընտանիքը շարունակում էր իր սովորական, միապաղաղ առօրյան: Երկու-երեք սերունդ միասին, հաշտ ու համերաշխ շարունակում էին իրենց կյանքը: Այդ դրությունը տևեց մի քանի տասնյակ տարիներ: Սակայն, ըստ բնական օրենքի, այդ տնտեսաձևը շարունակել ընդմիշտ անհնար ու անկարելի բան էր:

Մեր ընտանիքը հասել էր իր զարգացման գագաթնակետին, որտեղից և սկսեց կամաց-կամաց գլորվել:

Իմ *«գավոռչի»* հորեղբայրը հանդիսացավ մեր ընտանիքի քայքայման սաղմը:

Սա նույնպես ամուսնացել էր, բայց դեռ երեխա չունեւր, և տեսնելով մյուս եղբայրների բազմանդամ ընտանիքները, որոնց վրա արվում էին խոշոր ծախսեր, չէր կարողանում հաշտվել այդ մտքի հետ, որ ոչ մի խտրություն չպետք է դնել, և բոլոր անդամներն էլ պետք է օգտվեն իրենց կարիքի համաձայն: Նրա համար անտանելի էր մանավանդ այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տարի ինքը՝ *«գավոռչի»* հորեղբայրը, *«գավոռից»* մի քանի հազար ռուբլի իր ձեռքով հանձնում էր իր քահանա եղբորը և *«նայում նրա ձեռքին»*:

Նա առաջին անգամ առաջ քաշեց մեր ընտանիքում բոլորովին գոյություն չունեցած *«հավասար իրավունքի»* սկզբունքը: Նա ասում էր իր քահանա եղբորը, որ ոչ մի դեպքում չի համաձայնի, որ իր և իր կնոջ հագուստները քահանան հոգա, ինչպես նա անում է մյուս եղբայրների նկատմամբ:

- *Ես պետք է իմանամ,*- ասում է նա,- *թե մեր ընտանիքը որքան «մուտք ու ելք» է ունենում, այլապես ես ձեզ հետ ապրել չեմ կարող:*

Քահանա հորեղբայրս պատասխանում է, որ ընտանիքի ղեկավարը մեկը կլինի, ընտանիքի



կարիքների մասին մտածողն ու բավարարողը դարձյալ մեկը կլինի.

- *Ես քեզ երբեք հաշիվ չեմ տա և քեզնից ոչինչ չեմ հարցնի: Մինչև այսօր ինչպես կառավարել եմ, այնպես էլ պիտի շարունակեմ, իսկ եթե դու համաձայն չես և չես ուզում մեզ հետ հաշտ ու համերաշխ ապրել, փառք Աստծո, ա՛յ շենքի մյուս ծայրի երկրորդ հարկում երկու սենյակը քեզ իր խոհանոցով, պատշգամբով և տակը գտնվող գոմով ու ամբարով, կարող ես առանձնանալ:*

Մյուս եղբայրները ոչինչ չէին խոսում և նույնիսկ չէին էլ ուզում լսել այդ մասին: Այսպիսով, առանձնացավ «զավոդչի» հորեղբայրս, բայց այդ երկուսի մեջ չդադարեց պայքարը, որը գնալով ավելի այլանդակ ձևեր էր ստանում:

«*Չավոդչի*» հորեղբայրս ամեն միջոցի դիմեց՝ համոզելու իմ հորը, որ նա միանա իր հետ և բաժանվի մյուսներից, սակայն հայրս մերժեց նրան՝ ասելով.

- *Ես չեմ բաժանվի, գուցե հետագայում իմ որդին բաժանվի: Այդպիսով, մյուս չորս եղբայրները սկսեցին միասին ապրել, իսկ բոլորից փոքր հորեղբայրս շարունակում էր իր ավերածությունը ընտանիքի մեջ:*

1907թ. մահացավ մեր ամբողջ ընտանիքի հիմքը, նրա փառավոր զարդը՝ մեր բոլորիս սիրելի Ամառնան տատիկը՝ թողնելով ամբողջ ընտանիքը սգի մեջ: Մի քանի տարի հետո մեռավ նաև մեր սիրելի և հարգելի, աննման Ագուլին (Նանագյուլը)՝ քահանա հորեղբորս կինը: Խարխալվեց մեր ընտանիքի հսկա շենքը: Հորեղբայրներս միառժամանակ շարունակեցին ապրել միասին, սակայն այլևս նախկին սիրալիր ու համերաշխ կյանքը բացակայում էր: Մի կողմից էլ նոր սերունդը չենթարկվեց նախկին տրադիցիաներին, և վերջն էլ բոլորը բաժանվեցին իրարից դժգոհ:

Հորս, որպես բոլորից թույլի ու խեղճի, իր հարազատ եղբայրները գրկեցին:

Ահա այսպես տխուր ու անմխիթար վախճան ունեցավ նախկին հպարտ ու բախտավոր ընտանիքը: Բոլորն էլ բաժանվեցին իրարից դժգոհ: Նախկին նահապետական բազմանդամ ընտանիքը՝ իր վարքով ու բարքով, հին կենցաղով ու սովորություններով, տեղի տվավ հասարակական նոր ձևով, նոր նիստ ու կացով կենցաղավարության առաջ: Իմ հորեղբայրները, իմ սիրելի հայրը, որի նմանը հազվագյուտ էր մեր կյանքում, բոլորն էլ մեռան:

Եթե որևէ մեկը այսօր այցելի մեր գյուղի հինավուրց գերեզմանոցը, որը 2-3 տասնամյակներ առաջ պճնազարդված մի այգեստան էր, որտեղ յուրաքանչյուր գյուղացի փայփայում էր իր անցյալների սրբազան շիրիմներն ու նրանց հուշարձանները՝ ծառազարդելով նրանց չորս կողմը, այսօր՝ այս տողերը գրելու ժամանակ, այդ անցյալի դրախտավայրն իրենից ներկայացնում է մի մացառներով պատած ապառաժ, ամայի անապատ, որտեղ դարավոր հուշարձաններից շատերը չկան, շատերը ջարդված են և շատերն էլ գլորած: Չկան նաև այն բազմաթիվ սաղարթախիտ ծառերը, որոնց շվաքում մեր նախնիների դամբարաններն այցելողները հանգստացել են իրենց սիրելիների գերեզմանների մոտ: Մի ոճրագործ ձեռք ոչնչացրել է ամեն ինչ՝ չխնայելով մինչև անգամ անշունչ հուշարձանները: Կատարվել է իսկական բարբարոսություն:

Ես դողդոջուն քայլերով մոտեցա այդ սոսկալի անապատում գտնվող իմ նախնիների դամբարաններին, որտեղ տեսա, որպես մենավոր սգվորներ, իմ պապի և քահանա հորեղբորս գերեզմանաքարերը:

«*Սորա տակ գտանին մասունք տեր Հարություն քահանա Կիսիբեկյանի և տիրուհու Ամառնանի՝ 1893 ամի*»:

Միանգամայն ճիշտ է, որ իմ պապը վախճանվել է 1893թ., բայց իմ լավ տատիկը վախճանվել է 1907թ., թեկուզ հուշարձանի վրա քանդակված է երկուսի համար միևնույն թվականը:

Անցնում եմ երկրորդ հուշարձանին. «*Սա է շիրիմ տեր Հովհաննես քահանա Կիսիբեկյանցին և*



տիրուհի Նանագուլին. վախճանվեցավ 1910 ամի»:

Այստեղ ես պետք է հիշեմ, որ, ճիշտ է, տիրուհին վախճանվել է 1910 թ. Շուշիում, որտեղ մեզ խնամում էր, և մենք սովորում էինք: Դիակը տեղափոխելով գյուղը՝ թաղեցին այստեղ: Նրա գերեզմանը քար ու կրով թաղ տված մի փոքրիկ բնակարան է, որտեղ դրվեց նրա դագաղը:

Քահանա հորեղբայրս մեռավ 1927թ., և մենք բացինք թաղից մի անցք և դագաղը դրինք իր կնոջ դագաղի կողքին և փակեցինք անցքը:

Մեծ հորեղբայրս, իմ հայրը ու «գավոռչի» հորեղբայրս թաղված են գյուղի մոտ գտնվող նոր կառուցված գերեզմանոցում՝ իրար կողքի, մեծ տանձենուց 6-7 քայլ դեպի արևմուտք՝ առանց հուշարձանի: Նրանք բոլորը կարծես գոյություն չեն ունեցել: Նրանք այլևս չկան: Կան միայն նրանց անշուք դամբարանները:

Իմ հոր մահը

Ցանկանալով եզրափակել «Հայրենի տունը», մի քանի խոսք ևս իմ հոր մահվան մասին:

1917թ. սեպտեմբերի 1-ից ես պաշտոնավարել սկսեցի Շուշի՝ Մեղրեցոց ծխական դպրոցում՝ որպես ավագ ուսուցիչ: Ժամանակ առ ժամանակ գնում էի գյուղը՝ ծնողներիս տեսության: Նոյեմբերին հայրս եկավ: Նա բավական մաշված էր: Բժշկական քննությունը ցույց տվեց, որ նա լուրջ հիվանդ է, և ընդունեցին հիվանդանոցում, որտեղ նա մնաց վեց ամիս: Հիվանդանոցից դուրս գրելիս բժիշկը խստիվ պատվիրեց «պաշտպանել դիետա»:

- *Նրան պետք է կերակրեք կաթնամթերքներով, կանաչեղենով,* - ասաց բժիշկը և արգելեց նույնիսկ թթվեղենն ու միսը:

Հիվանդանոցն ուներ հրաշալի պարտեզ՝ եվրոպական ընտիր տունկերով: Հայրս ինձ ասաց.

- *Բժշկից իրավունք ստաց, մի քանի «մատ» վերցնեմ՝ իմ պարտեզում պատվաստելու համար:*

Ավագ բժշկից թույլտվություն ստանալով՝ նա կտրեց մի քանի տեսակ տանձենու և խնձորենու մատներ:

Ես հորս շատ խնդրեցի՝ մնա ինձ մոտ գոնե մեկ ամիս ևս, և մենք միասին ամբողջ ընտանիքով կտեղափոխվենք գյուղը՝ ամառն այնտեղ անցկացնելու: Նա ինձ մերժեց՝ ասելով, որ ինքը այժմ կգնա, իսկ մենք՝ հետո:

Մայիսի վերջին տեղափոխվեցի գյուղը: Հայրս ահագին աշխատանք էր կատարել. մի երկու տեղ բանջարանոց արել, խնամել էր ցանքսերը, սակայն այդ բոլորի փոխարեն ինքը բոլորովին ուժագուրկ էր դարձել, և խախտելով դիետան՝ նորից բորբոքվել էր հիվանդությունը: Խոր ցավ ու կսկիծ զգացի, բայց արդեն ուշ էր... Ամեն ինչ վերջացել էր:

Ես նրան խնդրեցի, որ գնանք քաղաք՝ բժշկի մոտ: Բայց նա կտրուկ մերժեց՝ ասելով. «*Ես ընդամենը երեք օր եմ ապրելու, իզուր ո՛չ քեզ տանջիր, ո՛չ ինձ*»:

Ես ուշադրություն չդարձրի, և երկար խնդրելուց ու աղաչելուց հետո նա համաձայնվեց ինձ հետ: Մենք ճանապարհվեցինք քաղաք: Նրան նորից ընդունեցին հիվանդանոցում: Երբ ցանկանում էի վերադառնալ գյուղ, բժիշկն ինձ ասաց, թե՝ «*Այսօր գյուղ գնալդ հետաձգիր, կարող ես վաղը գնալ*»: Ես ստիպված եղա կատարելու բժշկի կարգադրությունը: Այդ նույն երեկոյան հիվանդանոցի ծառան, գալով բնակարանս, ինձ հայտնեց, որ բժիշկը կանչում է: Ես իսկույն ներկայացա նրան, որն ինձ ասաց.

- *Հայրդ հոգեվարքի մեջ է, գնա և տես:*

Ես մինչ այդ չէի կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ ես կարող եմ գրկվել այդպիսի մի ազնիվ հարազատից, այն էլ այդ հասակում, սակայն լսելով բժշկի խոսքը՝ «*հայրդ հոգեվարքի մեջ*



է», կարծես մի ռուբ պայթեց ու տակնուվրա արավ իմ ամբողջ հոգեկան աշխարհը: Դեռ հորս չտեսած՝ սկսեցին հոսել արցունքներս:

Նա, բացած իր մթազնած աչքերը, կարծես որոնում էր մեկին և տեսնելով ինձ՝ հայացքը գամեց դեմքիս: Արցունքները ցայտեցին նրա աչքերից եւ սառեցին չորացած դեմքին:

Ես մոտեցա նրան, բռնեցի ձեռքը. սառն էր, ինչպես ձյունը... Ես ինձ զսպել չկարողացա, դառն արցունք էի թափում, համբուրում ձեռքերն ու դեմքը:

Հետևիցս մեկն ինձ ետ քաշեց և ասաց.

- *Տո, գժվե՞լ ես, ինչ է, չէ՞ս տեսնում, թե նա ինչպես է տանջվում, եւ մի կողմից էլ դու ես կրկնապատկում նրա տանջանքը:*

Դա իմ ընկերներից մեկն էր, որ հիվանդանոցում էր գտնվում:

Հայրս ավանդեց իր հոգին: Ես խղճի խայթ էի զգում. ինչո՞ւ ես նրան չլսեցի, չէ՞ որ նա շատ էր խնդրում իրեն հանգիստ թողնել և իզուր չտանջել... Կարծես թե նա գիտեր՝ ինչ պետք է պատահի իր հետ. գոնե նա շրջապատված կլիներ իր հարազատներով, իր հարկի տակ...

Ընկերս ինձ սիրտ էր տալիս եւ ասում.

- *Արդեն ժամը հինգն է, շուտով մութը վրա կհասնի, ի՞նչ ես մտածում, ե՞րբ պիտի թաղես և որտե՞ղ...*

- *Պետք է տեղափոխեմ գյուղը, - պատասխանեցի ես:*

- *Հեռո՞ւ է գյուղը, - հարցրեց նա:*

- *25-30 կիլոմետր, - պատասխանեցի ես:*

- *Բա գիշերը մենակ ո՞նց պիտի տեղափոխես: Օգնող ընկեր, բարեկամ ունե՞ս:*

- *Ոչ ոք չունեմ... Ես մենակ եմ, - պատասխանեցի:*

- *Գիտես՝ ամառ է, ինչ անելու ես, գիշերը պետք է անես, - ասաց նա քիչ լռելուց հետո: - Մի բան ասեմ, ինձ լսիր՝ արի վաղը թաղենք այստեղ:*

- *Այդ չի կարող լինել... Ինչ ուզում է լինի, գիշերս կտեղափոխեմ գյուղը:*

Նա, տեսնելով իմ հաստատ որոշումը, այլևս չխոսեց: Եկեղեցիների զանգերը դողանջում էին. ուշացնել չէր կարելի: Ես պետք է գնեի դագաղ եւ տեսնեի այլ պատրաստություններ, բայց այդ բոլորի համար հարկավոր էր փող, բայց ես միանգամայն զուրկ էի:

Ես որոշեցի դիմել մեր հոգաբարձության նախագահին (Նիկ. Զուրաբյանին), որը քաղաքի ամենահարուստ վաճառականն էր: Ես դեռ չէի ստացել մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսների աշխատավարձը եւ հույս ունեի գոնե ստանալ այնքան, որ կբավարարի իմ կարիքը:

Այդ տակառածև, ուռած փորով, կլոր դեմքով ու կարմիր երեսով մարդը, լսելով իմ խնդիրքը, սառն ու դանդաղ չրխկացնելով տերողորմյալի խոշոր հատիկները, պատասխանեց.

- *Աստված հոգին լուսավորի, բաց կոպեկ չունենք... Կաստումը կոպեկ չկա...*

Լուռ ու մունջ դուրս եկա: Ես, խորասուզված դառն մտքերի մեջ, բարձրանում էի շուկայից դեպի իմ բնակարանը և երբ հասել էի շուկայի ծայրին, լսեցի հետևյալ խոսքերը.

- *Էս ի՞նչ է պատահել, «բարի իրիկուն» էլ չի ասում...*

Գլուխս բարձրացրի և տեսա մանրավաճառ Ներսեսին, որի հետ Թեմական դպրոցի տարրական դասարաններում սովորել էի:

- *Հը, ինչո՞ւ ես այդպես տխուր:*

Ես պատմեցի եղելությունը և միևնույն ժամանակ հայտնեցի՝ որտեղից եմ գալիս:

Նա խիստ զայրացավ՝ ասելով.

- *Էն սրիկան դեռ ձեր փողերով պետք է առնտուր անի... Թո՛ւհ, գազա՛ն, գազանի ծնունդ...*



Այնուհետև նա դարձավ դեպի ինձ և հարցրեց, թե ինչքան է հարկավոր: Ես լուռ էի, ոչինչ չէի ասում:

Նա հանեց իր արկղից հարյուր ռուբլի եւ համարյա ուժով կոխեց գրպանս:

Որքա՛ն նվաստացում... Ինչպիսի՛ սոսկալի դրություն... Բայց ի՞նչ պիտի անեի...

Գնելով մի քանի անհրաժեշտ իրեր և դագաղը, տալով մի մշակի՝ ճանապարհվեցի դեպի հիվանդանոցը: Ճանապարհին ինձ պատահեց իմ սիրելի ընկեր Գրիգոր Ներսեսյանի փոքր եղբայրը՝ Եղիշեն, որն իմանալով եղելությունը՝ ասաց.

- Ես քեզ մենակ չեմ թողնի, գիշերս միասին կտեղափոխենք գյուղը:

Սա հազիվ 16-17 տարեկան լինեք: Խնդրեցի, որ չգա, բայց նա անդրդվելի մնաց: Դագաղը թողնելով հիվանդանոցում՝ միասին վերադարձանք շուկա: Մեր կողմից շատ ձիաներ կային, բոլորն էլ հրաժարվում էին: Ղարաբաղում մի հավատ կար, որ դիակը տեղափոխող ձին ինքը պիտի սատկի... Էլ ո՞ր գյուղացին կարող էր համաձայնել:

Շատ-շատերից մերժում ստանալով՝ վերջում հանդիպեցի Ներքին Թաղավարդ գյուղացի մի պատանու, որը համաձայնեց ձին տալու, միայն այն պայմանով, որ ինքը ձիուն չի մոտենալու: Ես համաձայնեցի, և երեքովս միասին եկանք հիվանդանոց:

Հիվանդանոցում միայն հերթապահ բժիշկն էր, որ կարգադրեց հորս դիակն ինձ հանձնել:

Մութ էր արդեն: Բարեբախտաբար լուսնյակ գիշեր էր. սա միակ մխիթարականն էր, որ անդնդախոր ձորերում չէի կորցնի ճանապարհը, և որոշ չափով հեշտ կլինեք գնալը:

Ես այդ ժամանակ քսան և հինգ տարեկան էի՝ միանգամայն անփորձ ու տհաս: Ես կյանքումս ոչ մի անգամ նման դրության մեջ չէի եղել, սակայն իմ ուղեղովն անգամ չէր անցնում ոչ դժգոհել և ոչ էլ ուժերս թերագնահատել: Ես համոզված էի՝ առավոտյան, դեռ արեգակը դուրս չեկած, տանը պիտի լինեմ:

Այդ ժամանակ Ղարաբաղում խիստ լարված էին հայ-թուրքական հարաբերությունները: Քաղաքի ներքևի գլխավոր մուտքը՝ դարպասը, հայերի առաջ փակ էր: Հայերը քաղաք էին գալիս կամ քաղաքից դուրս գնում վերին դարպասով: Գիշերները երկու կողմից՝ թե՛ հայերի և թե՛ թուրքերի, դիրքեր էին պահում:

Ուրեմն մենք պետք է քաղաքից դուրս գայինք վերին դարպասով, ցածրանայինք Քարին տակը, այստեղից էլ բարձրանայինք Սղնախը և այդտեղից շարունակեինք մեր ճանապարհը՝ այսպիսով կրկնապատկելով մեր ճանապարհը: Այս ճանապարհով ճանապարհորդել գիշերը և այն էլ դիակ տեղափոխել՝ նշանակում է բարձրանալ Գողգոթա:

Դագաղը ամրացնելով ձիու մեջքին՝ ճանապարհ ընկանք:

Ձիապանս մոտ չէր գալիս: Եղիշեն, բռնած ձիու կապը, գնում էր առջևից, իսկ ես, բռնած դագաղից, քայլում էի ձիու հետ: Մինչև *Պուլուր թումբը* հասնելը կռներս արդեն խիստ հոգնել էին. դագաղը ձիու մեջքին չէր մնում, նա ընկնում էր այս կա՛մ այն կողմը, կա՛մ դեպի առաջ, կա՛մ դեպի ետ, և այդ ծանրությունը ես պահում էի համարյա կոնքերիս վրա:

Հասնելով *«Չաստավը»* կանգնեցրի ձին: Առաջարկեցի, որ Եղիշեն և ձիապանը հեռու կանգնեն, իսկ ես գրկեցի դագաղը, ցած բերի ձիուց և սկսեցի դիակը կանոնավորել դագաղի մեջ, որպեսզի չշարժվի, և նորից կափարիչը ամրացնելով՝ ուզում էի գրկել ու դնել ձիու վրա, երբ հանկարծ *Պուլուր թումբի* դիրքապահակները ձայն տվին.

- Ուլքե՛ր էք դուք և ի՞նչ էք անում այդտեղ:

Լսելով իմ ձայնը՝ հրացանը ձեռին դեպի մեզ վազեց մի երիտասարդ: Դուրս եկավ իմ լավ ընկերներից մեկը՝ Իվան Հասրաթյանը: Նա օգնեց, և դիակը ամրացրինք ձիու մեջքին, բայց գուր



ջանքեր էին:

- *Բա էղբան անփորձ բան կանե՞ն, ինչո՞ւ երկու ջվալ դարման չես բեռնել և դագաղը ձգել մեջը, բա սա ո՞նց պիտի տանես:*

- *Խելքս չի կտրել*, - պատասխանեցի ես:

Ձառիվայրն ու զառիվերը հոգիս հանեցին. էլ ջուր չէի ասում, քար, քոլ, ցեխ, մի խոսքով, որտեղ ձին էր կոխում, այնտեղ էլ ես: Սոսկալի տանջանք էր, և այդպես շարունակվեց մինչև լույս: Երբ արեգակը յուր ճառագայթները սփռեց հասուն արտերի վրա, և հնձվորները, վերցրած իրենց մանգաղները, գյուղից դուրս էին գալիս, մենք մտանք գյուղը: Անցել էինք մոտ 35-40 կմ ճամփա:

Հորս թաղեցինք մեր պարտեզում: Նրա գերեզմանի չորս կողմը զարդարեցի վարդով, մանուշակով, մեխակով և այլ ծաղիկներով: Գարնան ժամանակ բուրում էր հոտը: Հետագայում հորս գերեզմանի չորս կողմը շարվեցին մի քանի տասնյակ «*Դադան բլատի*» գույնզգույն փեթակներ: Այդ գերեզմանի մոտ կառուցվեց մի բնակարան:

Հորս գերեզմանը մնաց այդտեղ 1918թ. հունիսի 18-ից մինչև 1936թ. հուլիսի 18-ը: Ուղիղ 18 տարի:

Որոշ հանգամանքներից ստիպված՝ 1936թ. հուլիսի 18-ին բացի հորս գերեզմանը և նրա աճյունը ժողովելով մի փոքրիկ դագաղի մեջ՝ տեղափոխեցի ժողովրդական գերեզմանոցը: Մեծ հորեղբայրս, որ այդ ժամանակ 92 տարեկան ծերունի էր, երբ հորս նոր դագաղը իջեցնում էինք իր նոր դամբարանը, գլխարկը վերցրած՝ բարձր ձայնով կանչեց.

-*Ա՛յ ախպեր, ա՛յ բախտավոր ախպեր, 18 տարուց հետո նորից լույս աշխարհ դուրս եկար: Ես որ մեռնեմ, այսուհետև էլ դարդ չունեմ, որ իմ գերեզմանը պիտի լինի քո գերեզմանի կողքին... Ա՛յ բախտավոր ախպեր...*

Այսօր էլ այդ գերեզմանոցը այցելողը կտեսնի մեծ տանձենուց 6-7 քայլ հեռավորության վրա երեք դամբարան, երեքի գլխավերևը՝ մի-մի թուփ: Ներքին դամբարանի վրա մի մեծ սալ քար կա զցված՝ առանց որևէ արձանագրության (ժամանակավոր). դա իմ հոր՝ Բսրայելի գերեզմանն է, նրանից 2-3 քայլ վերև մեծ հորեղբորս՝ Եգոր ապու գերեզմանն է, իսկ 1-2 քայլ հեռավորության վրա հորեղբայր Արշակի գերեզմանն է:

Ծանոթություն

1949թ. հունիսի 14-ին՝ զիջերվա ժամը երեքին, ես, կինս և 80 տարեկան զառամյալ մայրս աքսորվեցինք Ալթայ: Այդ տարին հայության մասսայական աքսորի տարին էր, երբ Հայաստանից, Վրաստանից ու Ադրբեջանից և այլ վայրերից 120-130 հազար հայություն Ալթայ շարվեց:

Մենք այնտեղ տառապեցինք յոթ տարի, որտեղ և իր մահկանացուն կնքեց 83 տարեկանում մայրս, և դիակը մնաց այնտեղ: Ալթայից վերադառնալով Երևան, որոշ չափով շունչ քաշելով՝ խղճիս վրա ծանրացած բեռը որոշեցի թոթափել և իմ ծնողների հիշատակը կորստից փրկել: Ահա գնալով Մխտորաշեն (Լեռնային Ղարաբաղ)՝ հորս դամբարանի վրա կանգնեցրի մի հուշարձան, որի վրա արձանագրվեց.

«*Այս է հուշարձան Բսրայել Տեր-Հարությունի (1862-1918) և յուր կողակից Անուշ Բեգլարի Կիսիբեկյանների (1870-1953)*»:

Հուշարձանն ունի 1մ 22սմ երկարություն, 80սմ բարձրություն և 42սմ լայնություն:

Հուշարձանը ձևավորված է գեղարվեստորեն:

Մորս մարմինը մնաց Ալթայի Շիպունովո կայարանի գերեզմանատանը: Մայրս մեռավ 1953թ. օգոստոսի 4-ին:



ՎԵՐՋԱԲԱՆ

Վերջացնելով «Հայրենի տան» կյանքի ամբողջ նկարագիրը՝ եզրափակում եմ մի քանի տողով: Անցել է մոտ հիսուն տարի: Այժմ ցանկալի է իմանալ, թե նա այսօր ինչ է ներկայացնում իրենից: Մենք գիտենք, որ եղբայրները բաժանվեցին իրարից, և դրանց անշարժ գույքը քիչ հետո անցավ կոլխոզին:

Այսպիսով, մեր հայրական տունը կոլխոզին հանձնեց.

1. Մի տուն՝ բաղկացած 36 բնակարաններից, երկու-երեք հարկանի:
2. Չորս խաղողի այգի՝ ընդամենը 8 հա տարածությամբ:
3. Թթենու այգիներ՝ թվով 1000-1100 տունկով:
4. Ձանազան տեսակ պտղատու ծառեր՝ թվով 250 - 300 հատ:
5. Երկու ջրաղաց:

Այժմ տեսնենք, թե այդ ամենից ինչ է մնացել:

1. Նախկին հիասքանչ, գեղեցիկ շենքից մնացել են միմիայն ավերակների կույտեր:
2. Հազարավոր թթենիներից այսօր կանգուն են մի քանի տասնյակ կիսաչոր ու անխնամ թթենիներ:

Թթենիներ:

3. Հարյուրավոր պտղատու ծառերից այժմ ոչ մեկը չկա:
4. Խաղողի այգիներից նույնպես ոչինչ չի մնացել:
5. Ջրաղացների ավերակներն են միայն մնում:

Եվ այսպես, աշխատասեր ու ազնիվ ձգտումների տեր, անսպառ եռանդով, ստեղծագործական ընդունակություններով ու ձեռներեցությամբ օժտված աշխատավորների՝ տասնյակ տարիների քրտնաջան աշխատանքով ձեռք բերված բարիքները՝ բոլորն ի չիք են դարձել:

Չափազանց կարևոր է իմանալ այդ ընտանիքի բնակիչների դրությունը: Մի քանի խոսք ևս այդ մասին:

Ինչպես գիտենք, իմ հայրական ընտանիքը բաղկացած էր 35-40 հոգուց, որի անդամներն ապրում էին ու աշխատում միասին, ինչպես ասում են՝ «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի», և այդպես շարունակել են իրենց կյանքը մի քանի սերունդներ, որոնց աշխատանքի պտուղներն են վերոհիշյալ բարիքները:

Բարեբախտաբար, այդ ժրաջան ընտանիքն ավելի աճեց ու բազմացավ:

Ամուսնացան 15 աղջիկները և 13 տղաները: Այսպիսով, սկզբում եղած 28 ընտանիքը մի քանի տարուց հետո կրկնապատկվեց:

Այժմ այդ բոլոր ընտանիքները ցրված են Սովետական Միության զանազան տեղերում՝ Երևանում, Բաքվում, Ստեփանակերտում, Մոսկվայում, Անդրկասպյան երկրներում, և մի քանի ընտանիք էլ՝ հայրենի գյուղում:

Դրանք բոլորն էլ ապահովված են թե՛ աշխատանքով և թե՛ սեփական կամ պետական բնակարաններով:

Դրանց բոլոր չափահաս անդամները կատարում են պետական-հասարակական օգտակար աշխատանքներ ու հանդիսանում մեր հայրենիքի արժանավոր ու պիտանի քաղաքացիներ, որոնց կյանքի գլխավոր նպատակն է աշխատանքն ու աշխատասիրությունը:

Փա՛ռք ստեղծարար ու շինարար, քրտնաջան ու ազնիվ աշխատավորին:

Հազար փա՛ռք աշխատավորին ու նրա աշխատանքի ազնիվ պաշտպանին:

Անե՛ծք ու արգահատա՛նք բոլոր նրանց, որոնք թունավորում են աշխատավորների կյանքն ու ոտնահարում նրանց ազնիվ աշխատանքը:

ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂԸ

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ¹

Այժմյան Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանը պատմական Վարանդա գավառի մի մասն է: Նրա արևելյան կողմն է գտնվում Մավաս կոչված սարը, որի Հարավային ալիքաձև ստորոտների վրա տարածվում է իմ հայրենի գյուղը՝ Մխտորաշենը:

Նրա դիրքը խիստ խորդուբորդ է. արևմտյան, հյուսիսային և արևելյան կողմերից շրջապատված է բարձր սարերով, իսկ հարավային կողմից՝ ցածրադիր դաշտերով ու ձորերով:

Հին գյուղի դիրքն այս նոր գյուղի դիրքից 200-300մ ցածր է:

Արևմտյան սահմանով՝ հյուսիսից հարավ-արևմուտք, ընկած է մի հսկայական քարանձավ, որի երկարությունն ուղիղ գծով 190մ է, լայնությունը՝ 30մ, իսկ բարձրությունը՝ 40մ, և ունի միմիայն երկու անցք՝ երկու ծայրերից²: Գյուղի կենտրոնական մասում՝ հյուսիսից հարավ, ընկած է մի խոր ու լայն ձոր, որը կոչվում է «Չիրծակեն ձոր», իսկ գյուղի արևելյան կողմից՝ դարձյալ հյուսիսից հարավ, ընկած է մի ձորակ, որը կոչվում է «Գիտեն ձոր»:

Անձրևների ժամանակ բարձր սարերից հոսում են մեծ քանակությամբ ջրեր և լցվում այս ձորակը՝ որոշ դեպքերում գյուղացիներին վնասներ պատճառելով:

Գյուղի դիրքը գառնավայր է և բնակչության համար չափազանց անհարմար:

Ժամանակի անապահով դրությունը մարդկանց ստիպել է բնակվելու այնպիսի վայրերում, որոնք պաշտպանված լինեն բնական ամրություններով:

Գյուղն ունի լեռնային առողջարար կլիմա: Այստեղ ձմեռը լինում է մեղմ, ամառը՝ հով ու զով, գարունը՝ աննման գեղեցիկ, իսկ աշունը՝ թեկուզ որոշ չափով անձրևային ու մառախլապատ, սակայն խիստ դուրեկան:

Գյուղի ամբողջ տարածքը բաղկացած է դաշտավայրերից, լեռնային արոտատեղերից ու ձորերից, որոնց լանջերը պատած են խիտ թփերով ու ծառերով: Նա հարուստ է բուսականությամբ, և մեծ տարածություններ պատած են այգիներով:

Մխտորաշենը բաղկացած էր 260-280 տնից, և 1915թ. մարդահամարի տվյալներով գյուղն ուներ մոտ 900 շունչ: Բնակիչները բացառապես հայեր են, դրանք զբաղվում են երկրագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

Այստեղ հարկ կա նշելու, որ Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության մի զգալի մասը զբաղվում է արհեստներով: Համարյա բոլոր ընտանիքներից 1-2 հոգի աշխատում են օտարության մեջ՝ Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս, որովհետև երկիրը չի կարողանում բավարարել բոլորին սակավահողության պատճառով:

¹ ա) Այս «Հուշերը» շարունակվում են առայժմ մինչև 1920թ.

բ) Այստեղ, բացի «Հուշերից», տրվում են մի շարք տեղեկություններ, որոնք վերաբերում են հայրենի գյուղի պատմական անցյալին, տնտեսական դրությանը և բնական ու աշխարհագրական պայմաններին:

գ) Գրվածքի վերջում, որպես հավելված, տրվում են որոշ տեղեկություններ Մավաս և Բլբլաք հարևան գյուղերի մասին, որոնք շողկապված են իրենց հասարակական ու տնտեսական կյանքով հայրենի գյուղի հետ (ծան. հեղ.)

² Մեր գյուղացիներն այդ քարանձավից շատ անգամ են գտել պղնձե զանազան առարկաներ, որպիսի հանգամանքը մեզ բերում է այն եզրակացության, որ հին ժամանակներում այդ քարանձավը ծառայել է որպես թաքստոց կամ պատսպարան

Իմ հիշողության մեջ դեռ թարմ է հետևյալ դեպքը՝ կապված այդ քարանձավի հետ: 1905թ., երբ ես դեռ փոքր էի, թուրքերը հարձակվել էին մեր հարևան Սոս գյուղի վրա, և ամբողջ օրը շարունակվում էր կռիվը: Մեր հասարակությունն իր ունեցվածքով պատսպարվել էր այդ քարանձավում: Մի քանի մարդիկ պաշտպանում էին քարանձավի երկու մուտքերը, իսկ մնացած զինվորությունը գնացել էր օգնության: Վաղ առավոտյան կանայք դուրս էին գալիս քարանձավից, ցածրանում գյուղը, հաց թխում, կերակուր եփում և նորից բարձրանում քարանձավը: Գիշերները խստիվ արգելվում էր ճրագ կամ կրակ վառելը: Ամբողջ գիշերը մնում էին կծկված, ականջները՝ ձայնի, սրտերն ահ ու դողի մեջ (ծան. հեղ.)



Գյուղացիների մի մասն էլ, ապրելով գյուղում, գյուղատնտեսական աշխատանքները վերջանալուց հետո՝ ուշ աշնանը և ձմռանը, զբաղվում են արհեստներով՝ որպես օժանդակ եկամուտի աղբյուր:

Շնորհիվ Բեջանի արգավանդ հովտի՝ ցորենի և գարու մշակությունն առաջնակարգ տեղ է գրավում: Յորենիցը նշանավոր են «*Զարդա*» և «*Ղարաղլչղ*» կոչվող տեսակները:

Մխտորաշենի հասարակության ապրուստի հիմնական աղբյուրներից մեկը օղեգործությունն էր: Թթենու մշակությունը խիստ կարևոր աշխատանք էր համարվում այստեղ: Գյուղն ուներ հարյուրավոր հեկտար թթենու այգիներ:

Ցարական իշխանության օրոք յուրաքանչյուր տարի պետությանն էր հանձնվում հազարավոր դուլլերով օղի, այդքան էլ գործադրում էին իրենց կարիքների համար: Թթից ամեն մի տնտեսություն պատրաստում էր դոշաբ և չորացնում բազմաթիվ փութերով թուրթ:

Գյուղի յուրաքանչյուր տնտեսություն՝ փոքր թե մեծ, տարածությամբ ունեին իրենց թթենու այգիները, շատ տնտեսություններ իրենց թթենու այգիներին կից ունեին խաղողի այգիներ, որտեղ կային, բացի խաղողից, նաև պտղատու զանազան տեսակի ծառեր՝ այսպիսով ապահովելով նաև իրենց պտղի պահանջմունքը:

Գյուղացիներից շատերը, թեկուզ չափազանց հասարակ ձևով, զբաղվում էին նաև շերամապահությամբ: Նրանք իրենց տան թթենու այգուն կից տնկած ունեին «*ճշռ*» թթենիներ, որոնց տերևներով կերակրում էին շերամի որդը: «*Շահ*» թթենու տերևի գործադրումն այդ նպատակով հանցագործություն էին համարում: Մխտորաշենի հասարակությունը զբաղվում էր նաև բանջարաբուծությամբ: Բանջարեղեններից առաջնակարգ տեղ էին գրավում լոբազգիները և սոխը: Այդտեղ գետնախնձոր չէին ցանում:

1905թ. Հայոց բարեգործական ընկերությունը մեր գյուղ ուղարկեց մեծ քանակությամբ գետնախնձորի սերմացու, որը բաժանվեց գյուղացիներին՝ ցանելու համար: Այդ ժամանակից սկսած՝ գետնախնձոր ցանելը սովորություն դարձավ և առաջնակարգ տեղ գրավեց մեր բանջարանոցում:

Գյուղը, հարուստ լինելով արոտատեղերով, զբաղվում էր նաև անասնապահությամբ: Գյուղացիներից շատերն ունեին ձի և կով: Կային շատ տնտեսություններ, որոնք ունեին մի քանի կով:

Այն գյուղացիները, որոնք հնարավորություն չունեին կով ունենալու, պահում էին մի քանի ոչխար կամ մի քանի այծ և այս ձևով լուծում իրենց «*թացանի*» հարցը:

Մխտորաշենը, համեմատած իր հարևան Մավաս, Բլբլաք, Խերխան, Ծովատեղ, Հերհեր, Սարուշեն գյուղերի հետ, առատ ջուր ունի: Նա ունի մի գետ և մի շարք աղբյուրներ:

Գետը կոչվում է *Քյոնդալան*, որի վրա աշխատում են մի քանի ջրաղացներ: Նա հոսում է *Բեջանի* արգավանդ հովտով, որը տնտեսական խոշոր նշանակություն ունի: Թեկուզ այստեղ ցանքսերն անջրդի են, սակայն կան հարյուրավոր հեկտար այգիներ ու բանջարանոցային հողամասեր, որոնք ոռոգվում են այս գետի ջրով: Գետն ունի մի տեսակ ձուկ՝ թեկուզ մանր, բայց խիստ դուրեկան ու համով:

Գյուղի նշանավոր աղբյուրներն են՝ «*Գյուղամիջի*», «*Ղորբուլախի*», «*Տնջրուն*», «*Տիկան*», «*Հոռուն*», «*Նաղարա*», «*Քոսուն*», «*Կարմիր*», «*Հաչա*» եւ այլն:

Գյուղամիջի աղբյուրը բավական հորդառատ ջուր ունի, որով ոռոգվում են տասնյակ հեկտար այգիներ ու բանջարանոցներ: Սակայն աղբյուրի ջուրը բավական պակասել է, որովհետեւ նախկին խիտ անտառներով հարուստ սարերը, որոնք աղբյուրի համար հանդիսացել էին որպես ջրային ավազաններ, այժմ լերկ տարածություններ են:



Գյուղամիջի աղբյուրը կառուցված է սրբատաշ քարերից: Նա բաղկացած է ակունքից և երկու նավից:

Ակունքը մի ամբողջական քարից է, որի կենտրոնում շրջանաձև կերպով փորված է մոտ 3-4 սմ խորությամբ, և այդտեղից կիսախողովակաձև անցքով ջուրը թափվում է նավը, որը ակունքից ցածր է 65 սմ:

Երկու նավի երկարությունը միասին 4մ 40սմ է. նավերի խորությունը՝ 50 սմ, իսկ լայնությունը՝ 75 սմ. ակունքի կից նավը միացած է մոտ 8-10 սմ լայնությամբ մի անցքով՝ երկրորդ նավին: Մարդիկ ջուր են խմում կամ վերցնում ակունքից, անասունները ջուր են խմում ակունքի կից նավից, իսկ շորեր ու զանազան իրեր լվանում են երկրորդ նավում: Ջուրը նավերից դուրս է թափվում մի ընդհանուր անցքով:

Ակունքի գլխավերևը կանգնած մեծ ճակատաքարի վրա, որի երկարությունն ու լայնությունը մոտավորապես 1մ է, արձանագրված է.

«1893 ԱԻ - ՌՅԽԲ»

Կառուցի Աղբյուրի յիշտկ հոգո իմոյ Տեր Յարություն Կեսիբեկյանց»

Վերոհիշյալ թվականը և արձանագրությունը, ավելի պարզ արտահայտված այսպես կլինի.

«1893 ամի-ՌՅԽԲ»՝ 1000 + 300 + 40 + 2 = 1342 թ., դրան ավելացրած՝ 551 = 1893 ամի:

«Կառուցի աղբյուրս ի հիշատակ հոգո իմո Տեր Հարություն Կեսիբեկյանց»:

Տնջրուն աղբյուրը, որը համանուն պատմական, հինավուրց Տնջրի ծառից 17մ հեռավորության վրա է գտնվում, կառուցված է սրբատաշ, խոշոր քարերից և ունի երեք ակունք ու մի ընդհանուր նավ: Նավի երկարությունը 10մ է, խորությունը՝ 65սմ, իսկ լայնությունը՝ 1մ: Երեք ակունքի մեջտեղը՝ մի խոշոր քարի վրա, արձանագրված է. *«Կառուցաք աղբյուրս Տեր Հովհաննես Կեսիբեկյան, Ներսես Մուսայանց, Մանաս Գասպարյան»*, բայց չի հիշատակված կառուցման թվականը:

Ըստ ծերունիների վկայության՝ աղբյուրը կառուցվել է 1898թ.:

Տասնյակ տարիներ առաջ աղբյուրի երեք ակունքներն էլ գործում էին, իսկ այժմ գործում է միայն մեկը:

Ջրի պակասելու գլխավոր պատճառը աղբյուրից բարձր գտնվող տարածությունների մերկացումն է, որոնք մի ժամանակ պատված էին խիտ ծառերով ու առատ բուսականությամբ:

Այդ հիասքանչ աղբյուրից ներքև, որ գառիվայր տարածություններ են՝ պատած թթենու ու այլ տեսակի այգիներով ու բանջարանոցային հողամասերով, բոլորը ոռոգվում են Տնջրուն աղբյուրի ջրով: Նա է բոլորին շունչ ու կենդանություն տվողը:

Աղբյուրի մոտ գտնվող հինավուրց տնջրու բազմամյա գոյությունը նույնպես պայմանավորված է այդ ջրով:

Գյուղն ունի նաև մի շարք աղբյուրներ, որոնք արդեն հիշատակված են և գտնվում են Մխտորաշենի տերիտորիայի զանազան մասերում:

2. ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՅՐԵՐԸ

Այժմյան Մխտորաշենի բնակիչների նախնիների բնակավայրը գտնվում է այժմյան գյուղից մոտ 2 կմ հեռավորության վրա՝ դեպի արևելք:

Այդ բնակավայրը, ըստ պատմական տվյալների, մոտ երեք դար է, որ հիմնադրվել է:

Այժմ չափազանց հետաքրքիր է իմանալ, թե նրանք ինչու թողին իրենց բնակավայրը, որտեղ բավական երկար ժամանակ ապրել էին, հարմարություններ էին ստեղծել, և նրանց նոր բնա-



կավայրը ինչու կոչվեց Սխտորաշեն:

Ինչպես Լեոնային Ղարաբաղի համարյա բոլոր գյուղերի անուններն ու ծագումը չեն ստուգաբանված, այնպես էլ չի ուսումնասիրված ու պարզաբանված *«Սխտորաշեն»* բառի ծագումը:

Եթե տվյալ բառի իմաստից ելնելով՝ կռահենք, որ այդտեղ սխտորի առատ մշակություն է եղել, որի պատճառով էլ կոչվել է Սխտորաշեն, դա ճիշտ չի լինի, քանի որ սխտորի ցանը այդտեղ չնչին է լինում՝ համեմատած հարեւան գյուղերի հետ:

Այդ ուղղությամբ որոնումներ կատարելով, բազմաթիվ ծերունիների հարցնելով՝ հանդիպեցի մի ավանդության, որի մասին շատերն էին պատմում:

Ավելորդ չեմ համարում արձանագրելու այդ ավանդությունը նույնությամբ:

Այժմյան Սխտորաշենի հասարակության նախնիները, իրենց բնակավայրում ապահով չզգալով եւ միշտ ենթարկվելով ավազակների հարձակումներին, որոնում են մի ավելի ապահով վայր: Այդ ցանկալի վայրը գտնում են իրենց բնակավայրից դեպի հյուսիս-արևմուտք՝ մոտ 2 կմ հեռավորության վրա: Այս վայրն իր դիրքով ավելի բարձր է, ավելի անառիկ, անտառածածկ ու ապահովված սառնորակ ջրով, սակայն այդ վայրում ապրում էր մի շեյխ (թուրք հոգևորական), որը մեծ կարողության տեր էր ու մեծ հարմարություններ էր ստեղծել իր ապրուստի համար: Բացի դրանից՝ նրա շրջակայքում ապրում էին թուրքեր՝ իրենց առաջնորդ սարդարով:

Սարդարը, այդ տեղամասը վաճառելով նրանց, հրամայում է շեյխին ազատել այդ տարածությունը, քոչել այդտեղից: Նա հրամայում է՝ *«Շեյխ դուրսըն»*, որ նշանակում է՝ *Շեյխը ոտքի կանգնի՝ հեռանա:*

Ավանդությունն ասում է. շեյխը տեղափոխվում է Սխտորաշենից 5-6 կմ հեռավորության վրա գտնվող անտառածածկ սարը և նրա լանջին հաստատում իր բնակավայրը, որտեղ և կոչվեց Շեյխեր:

Շեյխերը Լեոնային Ղարաբաղի Վարանդայի այժմյան Մարտունու շրջանի գյուղերից մեկն է:

Ըստ ավանդության՝ ահա այդ «Շեյխ դուրսն» բառն է, որ ժամանակի ընթացքում աղավաղվելով՝ դարձել է Սխտորաշեն:

Թե որքանով է ճիշտ նման բացատրությունը, դժվար է որևէ բան ասել, միայն ճշմարտություն է այն հանգամանքը, որ այդ վայրում ապրում էին թուրքեր: Այդ կարելի է ապացուցել այդտեղ գտնվող հողամասերի պատմական հին անուններով, որոնք այսօր էլ գործածական են. օրինակ՝ *Ղարադաղլու, Չառչան տափ, Գյուլաջեղեր, Յուրդ, Սարդարեն տափ* և այլն: Ճշմարտություն է նաև այն, որ թուրքը երբեք Սխտորաշեն չի ասում, այլ *«Շեյխդուրսըն»*: Եթե մի հայ հարցնի մի թուրքի, թե այս ինչ գյուղ է, նա կպատասխանի՝ *Շեյխդուրսըն* և ոչ թե *Սխտորաշեն*, կամ նրան հարցնի, թե *«Ո՞ւր ես գնում»*, նա կպատասխանի՝ *«Ես գնում եմ Շեյխդուրսըն»*, կամ մի թուրք հարցնի մի սխտորաշենցու՝ *«Ո՞ր տեղացի ես»*, նա կպատասխանի՝ *«Շեյխդուրսընլիան»*, և ոչ թե սխտորաշենացի եմ: Ահա թե ինչպիսի բացատրություն է տրվում *«Սխտորաշեն»* բառի ծագման ու այդ գյուղի հիմնադրման մասին:

Նոր բնակավայրում հաստատվելով՝ իրենց հին բնակավայրը դառնում է նրանց բինաները, որտեղ, բացի բինաներից, գտնվում էին նաև նրանց այգիները: Այդ այգիներում այսօր էլ կիսավերակ վիճակում գտնվում է մի եկեղեցի, որի մուտքի սրբատաշ, նկարազարդ հսկայական քարի վրա արձանագրված է եկեղեցու կառուցման թվականը՝ ՌՃՁ, այսինքն՝ 1180, և եթե ավելացնելու լինենք դրա վրա 551 հայկական թվականը, ներկա ժամանակով կստացվի 1731թ., որը ցույց կտա՝ եկեղեցու կառուցումից մինչև այժմ անցել է 213 տարի: Պետք է նկատի ունենալ և այն, որ եկեղեցին կառուցվել է գյուղի հիմնադրումից բավական ուշ:



Այդ ապացուցելու համար բերենք հետևյալ ավանդությունը, որի մասին նույնպես վկայում են շատ ծերունիներ:

Հնում Վարանդայի գյուղերից շատ քչերը եկեղեցի ունեին: Կիրակի և տոն օրերին մարդիկ գյուղերից խմբերով գնում էին Ամարասի վանքը՝ աղոթելու, և երեկոները նորից վերադառնում իրենց գյուղերը:

Այդ ժամանակ Ամարասի վանքի տերն ու տնօրենն էր Ավետարանոց կամ Չանախչի գյուղացի Մելիք-Շահնազարյան տոհմից Սարի բաբա անունով մեկը, որը մեծ հեղինակություն էր վայելում շրջակա գյուղերի հասարակությունների մեջ: Նա նախատում է Գեսի բեկին, որ նա, այդքան տարածությունն անցնելով, գնում է Ամարաս՝ աղոթելու, այնինչ նա կարող է իր գյուղում եկեղեցի կառուցել: Գեսիբեկը, վերադառնալով գյուղ, հենց իր միջոցներով սկսում է կառուցել եկեղեցին: Եկեղեցու ներսում՝ ձախակողմյան խորանի պատի վրա, կա հետևյալ արձանագրությունը.

«ՅԻՇԱՏԱԿ Է ՄԲ ԵԳԵՂԵՅԻՍ ԳԻՍՈՒՆԵԻ ԻԻՐ ԾՆՈՂԱՅՆ ՀԱՅՐԻՍ ՈՀԱՆԵՆ, ՄԱՅՐԻՍ ԱՂԻԲԱՆԵՆ, ԿՈՂԱԿԻՅՆ ԻՄ ՄԱՐՈՒՆ ՏԵՐ ԲՈՂՈՍԻՆ: ՕՎ ՈՐ ԿԱՐԴԱՅ ՄԵՎ ԲԵՐԱՆ ՈՂՈՐՄԵԱՅ ԱՍԻ»:

Դռան գլխաքարի վրա գտնվող արձանագրությունից երևում է, որ եկեղեցին կառուցվել է 1731 թվին, իսկ եկեղեցու ներսը գտնվող արձանագրությունից պարզվում է, որ կառուցողն է Գիսունին՝ իր ծնողների ու իր կնոջ հիշատակը հավերժացնելու նպատակով: Սխտորաշենի հին գերեզմանատանը, որն այդ տեղից մոտ է, կա մամռածածկ մի փոքրիկ գերեզմանաքար, որի վրա արձանագրված է՝ *«Վարանդու քլիդ Գեսիբեկ»:* Գեսիբեկը հավանական է, որ Գիսունեն է, որն իր ժամանակին հայտնի է եղել իր հարստությամբ ու բազմանդամ ընտանիքով: Այսօր էլ *«Վարանդու քլիդ Գիսեբեկ»* դարձվածքը մեծահասակ գյուղացիների բերնում հոլովվում է:

Եկեղեցու դռանը կից՝ պատի մոտ, կա մի գերեզման, որտեղ թաղված է մի վանական՝ Կոստանդին վարդապետը: Ժողովուրդը կոչում է *«Քոթան վարդապետ»:* Այս գերեզմանի հետ կապված է մի սնտոխապաշտություն, որը կարևոր են համարում հիշատակել:

Երբ երկար ժամանակ անձրև չի լինում, լինում է խիստ երաշտ, այդ գերեզմանի վրա ջուր են ածում, իսկ երբ երկար ժամանակ անձրև է լինում, գերեզմանի վրա կրակ են վառում:

Մի քանի անգամ պատահել է, որ հայրս, թողնելով վարը, լծկան եզները ինձ հանձնելով, ջրի կուլան վերցրած, գնացել է՝ ջուր ածելու վարդապետի գերեզմանի վրա, որ անձրև գա:

Այս եկեղեցու շրջակայքում հսկայական տարածություններ բռնված են թթենու բազմաթիվ այգիներով, որոնց գոյությունը պայմանավորված է Տնջրուն աղբյուրով:

Տնջրին մի հազվագյուտ զարդ է այդ տարածության մեջ: Նա ունի 5 խոշոր և 3 փոքր ճյուղեր, որոնք հսկայական տարածություն են բռնում: Սրանց հովանու տակ ամառվա շոգին ու տոթին զովանում են թե՛ մարդիկ և թե՛ գյուղի ամբողջ նախիրը:

Այդ ծառի բունը (փչակը) մի մեծ բնակարան է:

- Դրսից 1) շրջագիծը՝ գետնի երեսով = 25մ,
- 2) շրջագիծը՝ հաշված գետնից 1մ բարձրությամբ = 20մ,
- 3) բնի շրջագիծը՝ հաշված ամենավերին մասով = 13մ:
- Ներսից 1) բնի կամ փչակի շրջագիծը = 23մ,
- 2) փչակի լայնությունը՝ հաշված մուտքից դեպի հակադիր կողմը = $5^{1/2}$ մ,
- 3) հակադիր կողմից լայնությունը չափած = $4^{1/2}$ մ (փչակի ներսի ամբողջ մակարդակը = 22 քառ. մ),
- 4) բարձրությունը հատակից մինչև ճյուղավորման կետն ուղիղ գծով = $4^{1/2}$ մ:



Ճյուղերի հաստությունը կամ շրջագծերը.

1) երկու ճյուղ՝ յուրաքանչյուրի շրջագիծը = 2 մ,

2) մի ճյուղ՝ շրջագիծը = 3 մ,

3) մի ճյուղ՝ շրջագիծը = 5 մ,

4) 1մ 60սմ լայնությամբ փչակի վրա մի խոշոր ճյուղ կտրված է մի բարբարոսի ձեռքով:

Փչակի մուտքը հավասար է 1մ 70 սմ:

Պատանեկական տարիքում բազմաթիվ անգամ, նստած ձիու վրա, մտել եմ Տնջրու բնի մեջ ու դուրս եկել:

1911թ. Ղարաբաղի թեմի առաջնորդ Զավեն եպիսկոպոսը, հայտնի նկարիչ Արշակ Ֆետվաճյանը և ականավոր գրող Վրթանես Փափագյանը Վարդավառի տոնին Ամարասի վանքից վերադառնալիս մի խումբ մարդկանց հետ նկարվել են՝ նստած այդ հիասքանչ ծառի հոյակապ բնի վրա:

Նկարողն էր ինքը՝ Վրթանես Փափագյանը:

Այդ ժամանակ ես Ղարաբաղի թեմական դպրոցի V (VII) դասարանի աշակերտ էի, իսկ Փափագյանն իմ ուսուցիչն էր: Այդ խմբի հետ ես էլ նկարվեցի, որի նկարից մի օրինակ էլ գտնվում է ինձ մոտ:

Այդ պատմական, հինավուրց ծառի հետ կապված են մի քանի սնտոխապաշտություններ:

Նախ՝ ծառը հասարակության կողմից ընդունված էր որպես «սուրբ»: Գյուղում սովորություն էր այդ ծառի վրա երդվելը, օրինակ՝ *«Էն Տնջրին վկա է, որ ես սուտ չեմ խոսում»*, կամ՝ *«Էն Տնջրին թող իմ տունը քանդի, եթե ես եմ արել կամ խաբում եմ»*:

Այդ ծառի տակ կարելի էր տեսնել թափված չոր ճյուղեր, եւ ոչ ոք չէր մոտենա հավաքելու, որովհետև դրանով սրբապղծություն կատարած կլինէր: Ահա նման հանգամանքի շնորհիվ ծառը մնացել է անձեռնմխելի, թե չէ վաղուց ոչնչացած կլինէր, ինչպես ոչնչացել են նրա մոտ գտնվող շատ հինավուրց ծառեր, ու այդ գեղատեսիլ վայրը փոխվել է կատարյալ անապատի:

Փորձելով ոչնչացնել նաև այդ հսկային՝ գյուղի կոլխոզի նախագահը, որը բարոյագուրկ, այլասերված, անգրագետ ու տգետ մի անձնավորություն էր, ցանկացավ ցույց տալ, որ «Սուրբը» ոչ մի գորություն չունի. հրամայեց վերջ տալ այդ հիասքանչ, բնական ու պատմական հսկայի կյանքին: Բարեբախտաբար, գտնվեցին մարդիկ, որոնք կարողացան սանձահարել սանձազերծ եղած ճիվաղ տականքին: Դժբախտաբար, բնից արդեն կտրել էին 1մ 60 սմ լայնությամբ՝ վրան էլ մի մեծ ճյուղ:

Տնջրու շուրջը կային նույնպես դարավոր մի քանի ընկուզենիներ և այլ ծառեր, որոնք կարծես շուրջպար էին բռնած՝ գովաբանելու հսկային: Դա մի սքանչելի տեսարան էր: Ահա այդ բոլոր ծառերը ոչնչացան, և Տնջրին մնաց մեն-մենակ, կարծես սգավոր:

Հասարակությունը ծառի փչակում մոմ էր վառում ու շատ անգամ էլ զոհ մատուցում: Տարեկան մի անգամ՝ գարնանը, գյուղի ծերունիներն ու պառավ կանայք գյուղից ժողովում էին կաթ, կորկոտ, բրինձ և այլ մթերքներ և Տնջրու ակնապարար ու սաղարթախիտ հովանու տակ հսկայական կաթսայի մեջ կերակուր (կաթնով ճաշ) եփում ու այդտեղով անցնող ժողովրդական ճանապարհով անց ու դարձ անող ճանապարհորդներին բաժանում:

1912թ. Պետերբուրգից (Լենինգրադից) Ղարաբաղ էին եկել մի քանի հնախույզներ՝ ուսումնասիրելու տեղի հնությունները: Նրանք մեր գյուղն էլ եկան և տեսան այդ ծառը, չափեցին, գրեցին ու գնացին: Մի որոշ ժամանակից հետո տեղեկություն ստացվեց, որ որոշել են պաշտպանել ծառը՝ ճյուղերը շղթայակապ անել, որպեսզի քամիները ճղակտոր չանեն, փչակը լցնել հողով և շուրջը պատ քաշել: Սակայն այդ գեղեցիկ որոշումը մնաց թղթի վրա: Ինչպես երևում է, պատերազմը



խանգարեց:

Տասնյակ տարիներ առաջ այդ ծառի մասին գրվել է Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսում»:

Այդ հազվագյուտ ծառի ուսումնասիրությամբ մինչև օրս ոչ ոք չի զբաղվել, չնայած որ շատ ականավոր մարդիկ տեսել են ու լուռ ու մունջ հեռացել:

Ես շատ եմ լսել թե՛ մեր և թե՛ շրջակա գյուղերի ծերունիներից, որ իրենք այդ ծառը տեսել են նույն դրությամբ, ինչպես որ այսօր է: Այդ բոլորից պարզ երևում է, որ նա գոյություն է ունեցել մեր գյուղի հիմնադրումից շատ ու շատ առաջ:

Չափազանց կարևոր է գիտականորեն ուսումնասիրել, որոշել նրա տարիքը, խնամել ու աչքի լույսի պես պահպանել այդ հրաշալի գանձը և փրկել նրան ընդմիջտ կորուստից՝ պաշտպանելով զանազան պատահարներից ու բարոյագուրկ բախտախնդիրների ստոր քմահաճույքներից. հակառակ պարագայում՝ բավական չէ, որ մենք կզրկվենք նման սքանչելի հարստությունից, ամենայն իրավամբ կարծանանանք նաև մեծ նախատինքի:

Տնջրուց 50-60 քայլ դեպի արևմուտք՝ դեպի գյուղը տանող ճանապարհի վրա, գտնվում է մի ժայռի բեկոր՝ փոքր-ինչ սեղանաձև, որը կոչվում է «Կաճակ տված խաչ»:

Մի քանի տասնյակ տարիներ առաջ այդ «Խաչի» շուրջը մի գեղատեսիլ վայր էր՝ զարդարված բազմամյա ծառերով: Ծառերը չկան այժմ, իսկ տեղը դարձել է մի անհյուրընկալ վայր: Այս «Խաչը» գտնվում է մեծ ճանապարհի վրա: Ճանապարհորդները կանգ էին առնում այդ հինավուրց ծառերի հովանու տակ և հանգիստ տալիս թե՛ իրենց խոնջացած մարմիններին և թե՛ բեռնած գրաստներին:

Յուրաքանչյուր անցորդ, առանց սեռի ու տարիքի խտրության, կանգ էր առնում այդ սեղանաձև ժայռի կտորի առջև, որը ծածկված է բուռնցքաչափ քարերով, քարերից մի հաստ ձգում գետնին ու գետնից մի ուրիշ քարի կտոր վերցնում ու դնում սեղանի վրա, որից հետո համբուրում քարը, մոմ վառում և շատ անգամ էլ աքաղաղ գոհում ու ոտները և գլուխը կախում մոտիկ գտնվող թփից:

Թե այս արարողությունը ինչ երևույթի հետ է կապված, այդ մասին ես անգոր եմ որևէ կերպ բացատրություն տալու:

3. ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Այժմ հետաքրքիր է իմանալ, թե ինչպես է առաջացել այժմյան Սխտորաշենի նախկին գյուղը, ովքեր են եղել նրա բնակիչները և որտեղից են եկել:

Այս հարցերին պատասխանելու համար դարձյալ դիմենք ավանդությանը:

Սխտորաշենի բնակիչների նախնիների բնակավայրում ապրում էր միմիայն մի ընտանիք. դա Գիսունեի կամ Գեսիբեկի նախապապի ընտանիքն է եղել, որն այստեղ ապրում էր մենակ, իսկ թե նա որտեղից էր եկել, այդ մասին ավանդությունը ոչինչ չի ասում:

Ահա Գեսիբեկի նախապապի հրավերով զանազան վայրերից գալիս է ինն ընտանիք ու բնակություն հաստատում այստեղ, որից ժամանակի ընթացքում առաջանում է ամբողջ գյուղը:

Այդ ինն ընտանիքից առաջանում է 9 տոհմ, հետագայում՝ 9 ազգ:

Ահա դրանք.

1. Գեսունք կամ Քյոխվանք
2. Պողոսանք կամ Սազկապանք
3. Սահականք
4. Շահվերդանք
5. Բախտամանք



- 6. Դադունք
- 7. Մականք
- 8. Դավիթանք
- 9. Դալլաքանք

Ըստ ծերունիների վկայության՝ դրանք եկել են Զանգեզուրի Տեղ գյուղից, Նուխուց, Շիրվանից, Չանախչուց, Տողից, Օխճիից և այլ տեղերից:

Հետագայում Ղարադաղից մեր գյուղն էր գաղթել մի ընտանիք, որը բազմանալով դարձել էր չորս ընտանիք: Այս ընտանիքներից յուրաքանչյուրը կապվել էր գյուղի որևէ ընտանիքի հետ և օգտվում էր նրա տնտեսությունից՝ հիմնականում մնալով որպես ընչազուրկ, սևագործ բանվոր:

Վերոհիշյալ 9 ազգերի նախնիները, ապրելով միասին մի բնակավայրում, որը պատած է եղել խիտ անտառներով, սկսել են կտրտել (*«խմահար տալ»*) և ազատ տարածություններն օգտագործել:

Սրանց մեջ Գեսանու հայր Օհանը՝ բոլորից ուժեղ ցեղի ավագը՝ բազմանդամ ընտանիքի տեր, բազմաթիվ աշխատող ձեռքերով, կարողացել է տիրապետել ավելի մեծ տարածությունների և ձեռք բերել որոշ հեղինակություն: Այդ հեղինակությունն աճում է առավել ևս նրա որդի Գեսունիի օրոք, որը հետագայում հավանական է՝ կոչվեց Գեսիբեկ, իսկ այդ բառը հետագայում աղավաղվելով դարձավ Կիսիբեկ: Հետագայում նրանք, նոր բնակավայր ընտրելով այժմյա գյուղի տեղը, իրենց նախկին բնակավայրերը դառնում են բինաներ, որտեղ մնում են վար ու ցանքի հետ կապված մարդիկ, իսկ ընտանիքների մնացած անդամները տեղափոխվում են գյուղը:

Ամռան ու աշնան ամիսներին կենդանանում են բինաները: Երբ վերջանում են թուրթը, խաղողը, բանջարանոցներն ու բերքը, տեղափոխվում է գյուղը, կյանքը մեռնում է այդտեղ, իսկ ձմռանը բինաների փոխարեն կյանքը եռում է գյուղում:

4. ԱԶԱՏ ՄԽՏՈՐԱՇԵՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԲԵԿԱԿԱՆ

Ցարական կառավարությունը, տիրապետելով Անդրկովկասին, ամեն կերպ աշխատում է ամրացնել իր դիրքերը: Նա իր բարձրաստիճան զինվորականներին ու հավատարիմ մարդկանց շնորհում է *«ազնվական»*, *«բեկական»* կոչումներ: Նվիրում է նրանց ազարակներ, անտառներ, ամբողջ գյուղեր ու շրջաններ, որոնք դառնում են որդուց-որդի նրանց սեփականությունը. նախկին, նահապետական կյանքով ապրող, ոչ ոքից կախում չունեցող ազատ Սխտորաշենը դառնում է Ավետարանոց կամ Չանախչի գյուղացի Մելիք-Շահնազարյանների շառավիղից մեկի՝ Ջումշուղ աղայի սեփականությունը:

Նա՝ որպես տեր ու տնօրեն, քանդում է գյուղին կից գտնվող գյուղացիների կալերն ու մարագները ու նրանց տեղը կառուցել տալիս ռուս կալվածատերերի ոճով ու ճաշակով իր ժամանակի հոյակապ շենքերից մեկը:

Տուժած գյուղացիները դիմում են դատարան, դատը տեղի է ունենում Գյանջայում (այժմյան Կիրովաբադում): Դատարանը մեղադրում է բեկին եւ առաջարկում կա՛մ համաձայնության գալ նրանց հետ, կա՛մ բռնագրաված հողամասերը վերադարձնել իրենց տերերին:

Բեկն ու բողոքող գյուղացիները համաձայնության են գալիս: Նա գյուղի տերիտորիայի արևմտյան մասից մոտ 80հա հողամաս տալիս է նրանց՝ որպես նրանց սեփականություն, և սրանք այլևս չեն ճանաչում բեկերի գոյությունը:

Այսպիսով, գյուղացիների մի փոքրիկ մասը դառնում է կայսրական՝ տուրքերը մտցնելով պետական գանձարանը, իսկ գյուղի մեծագույն մասը, զրկվելով սեփական հողից, դառնում է բեկական՝ իր տուրքերը վճարելով բեկին: Նա տալիս է իր վար ու ցանքից, այգիներից, բանջա-



րանոցներից «*բահրա*»՝ եկամուտի մեկ հինգերորդական մասը, և ձրիաբար ու հարկադրաբար կատարում զանազան աշխատանքներ, որոնք կոչվում են «*բեգաւ*»:

Ջումշուդ աղայի որդի գնդապետ Գրիգոր աղան շարունակում է իր հոր կիսատ թողած գործը: Նա բնակարանի լայնարձակ բակում կառուցում է ջրավազան և մոտ 400-500մ հեռավորությունից կավե խողովակներով («*թունգու*») ջուր է բերում բակը, որը լցվում է ջրավազանը, որտեղ լողում են աղայի սագերն ու բադերը:

Բնակարանի հարավային կողմից՝ պատշգամբի երկարությամբ, իրար գուգահեռ ընկած են 2-3 ածուներ՝ վարդի թփերով լցված:

Բնակարանին կից՝ աջ կողմից, 35-40մ երկարությամբ կառուցում է պահեստներ, իսկ դրա հանդիպակաց կողմից՝ բնակարանին կից, կառուցում է 35-40մ երկարությամբ գոմեր:

Նա իր բնակարանը շրջապատում է ընտիր տեսակի պտղատու տունկերով, խաղողի որթերով և բազմատեսակ վարդի թփերով: Պարտեզի ցանկապատն այնքան էր բարձր, որ դրսից չէր երևում պարտեզը: Բնակարանի մոտ գտնվող ազատ տարածությունը թույլ չէր տրվում գյուղացիներին օգտագործելու: Այնտեղ արածում էին միմիայն աղայի գառները, հորթերը և ձիաները:

Աղայի տանը կից մոտ 5հա հողամասը գատված էր ցանկապատով. այն հրաշալի պտղատու այգի էր՝ կազմված ընտիր ու ազնիվ տեսակի տունկերից:

Ամռան տոթին, երբ երեխաներս բերում էինք մեր գառները՝ Ղըրբուլախի աղբյուրից ջուր տալու և նրա ընկուզենիների հովանու տակ զովացնելու («*մազաշ*»), մենք գնում էինք այդ պարտեզի ցանկապատի մոտ կանգնում և դրսից կանչում.

- *Սարգիս ապեր, մեզ գյուլ (վարդ) տուր...*

Սարգիս ապերը աղայի կառավարիչն էր («*դարդան*»)՝ մոտ 55-60 տարեկան, բամբ ձայնով մի հաղթանդամ մարդ:

Նա, լսելով մեր ձայնը, քաղում էր վարդը և ցանկապատի վրայով շարտում դեպի մեզ՝ ասելով՝ «*Լակոտներ, հավաքեցեք և փախեք, աղան գալիս ա*»:

Մենք, ժողովելով վարդը, իսկույն վազում էինք և մերկանալով լողանում սառը ջրում:

Գրիգոր աղան չբավականացավ այդքանով: Նա Քյոնդալան գետի վրա կառուցել տվեց երկու ջրաղաց և ջրաղացների կից ընդարձակ հարթությունից մի քանի հեկտար տարածության վրա տնկել տվեց թթենիներ: Հետագայում այդ այգին տարեկան մի քանի հազար դույլ օղի էր տալիս:

Այսօր Ինքնավար Լեռնային Ղարաբաղի առաջին սպիրտի գործարանը կառուցված է այդ այգում, և նրա թթի պաշարի մեծագույն մասը տալիս է այդ այգին, որին կից է գտնվում Լեռնային Ղարաբաղի երկրորդ ավանը՝ Կարմիր շուկան, որ հիմնադրված է սովետական իշխանության օրոք և ունի մի քանի հազար հայ բնակիչ:

Գրիգոր աղան, չբավականանալով այդքանով, կազմակերպեց բազմաճյուղ մի տնտեսություն:

1. Նա ուներ ոչխարի հոտ՝ 150-200 հատ. հոտը պահում ու խնամում էր մի երիտասարդ՝ 28-30 տարեկան թուրք հովիվ, որի անունն էր Ասադ:

Ասադն ուներ մի գամփռ, որը նրա հավատարիմ ու անբաժան ընկերն էր: Ասադը ոչ ոքից չէր քաշվում, որտեղ լավ այգի, ցանքս կամ խոտառատ տեղ կար, նրա հոտն այնտեղ էր: Այդ ապօրինի քայլերը նա կատարում էր՝ նախ օգտագործելով աղայի հովանավորությունը և ապա՝ իր ֆիզիկական ուժը:

Ասադը բնակվում էր աղայի տանը:

2. Աղան ուներ մի քանի ձի, որոնց խնամողն էր մի լեհ երիտասարդ, որի անունն էր Անտոն: Անտոնը գնդապետի հետ եկել էր Վարշավայից, որտեղ եղել էր գնդապետի անձնական ծառայողը



(«*դենչիկը*»): Անտոնը հագնում էր «*չերքեզկա*»՝ գոտկից կախած սուրը, և աղայից միշտ անբաժան էր: Նա մեր գյուղում ամուսնացավ մի հայ աղջկա հետ և ունեցավ որդիներ:

Սա ևս իր ընտանիքով ապրում էր աղայի տանը:

3. Աղան ուներ կովեր. խնամում էին մեր գյուղացիները:

4. Նա ուներ մի թուրք խոհարար, որի անունն էր Ալլահվերան: Սրա կինը՝ Բահարը, և երկու որդիները՝ Ասկինդարն ու Վալին, մեր հասարակության անբաժան անդամներն էին, և ոչ ոք խտրություն չէր դնում, ու ապրում էին որպես հարազատներ:

Բահարին շատ էին սիրում մեր գյուղի կանայք, իսկ երեխաները միշտ մեզ հետ էին. միասին զբոսնում էինք այգիներում ու դաշտերում և խաղում գյուղամիջում: Ալլահվերանն իր ընտանիքով նույնպես ապրում էր աղայի տանը:

Ահա աղայի այս հսկայական տնտեսության մեջ աշխատում ու ապրում էին 25-30 հոգի՝ հովիվ, գառնարած, նախրապան, ձիապան, կթողներ և այլն:

Գրիգոր աղան ուներ մի ընդհանուր կառավարիչ, որը կոչվում էր «*դարդա*»: Ընդհանրապես դարդան լինում էր աչքաբաց ու խորամանկ գյուղացիներից մեկը: Աղայից հետո դարդան էր, որ օգտվում էր աղայի բոլոր իրավունքներից: Նրա կարգադրությունը պարտադիր էր բոլորի համար: Ճիշտն ասած, իսկական աղան դարդան էր, որից և կախված էր հենց և նույն աղան:

Ահա նախկին ազատ գյուղացին, որ իր սեփական հողն ուներ, ոչ ոքից կախում չուներ, այժմ դառնում է հողագուրկ և ստիպված բեկից բահրայով վերցնում է հողը՝ վճարելով իր եկամուտի մեկ հինգերորդական մասը:

Բեկի կառավարիչը՝ դարդան, ղեկավարում էր նրա շարժական և անշարժ ունեցվածքը: Նրա իրավունքի տակ էին գտնվում անասունները, ջրաղացներն ու այգիները և աղայի սեփական ամբողջ հողամասերը: Նա էր գյուղացիներին բաժանում հողը, նա էր ժողովում գանազան տուրքեր ու ղեկավարում պարտադիր աշխատանքները, որ գյուղացիները կատարում էին ձրիաբար:

Գյուղացին առանց դարդայի թույլտվության չէր կարող որևէ հողամաս ցանել, մշակել, իսկ հողամաս ստանալու համար «*ճրագլույտով*» պետք էր դարդային տեսնել, որպեսզի իր ցանկացած հողամասն ստանա, հակառակ դեպքում «բանը գլուխ չէր գա»:

Լավ ու արգավանդ հողամասերը ստանում էին այն գյուղացիները, որոնք գյուղում կշիռ ունեին, ազդեցիկ էին և կարողանում էին դարդային լավ «վարձատրել»՝ նրան տալով «*չաղ պատառ*»:

Գալիս է ամառը: Արտերը սկսում են հնձել: Դաշտերը լցվում են խուրձով: Գյուղացիներն իրավունք չունեին այդ խուրձերը տեղափոխելու, մինչև որ դարդայից թույլտվություն չստանային, մինչև որ նա չհաշվեր խուրձերը, չվերցներ իր բաժին բահրան և այդ բաժինը չտեղափոխեր գյուղը, որտեղ գտնվում էր աղայի կալը:

Բեկի բաժին խուրձը տեղափոխելուց հետո գյուղացիները պարտավոր էին իրենց անասուններով ծեծել այդ խուրձը, ցորենը տեղափոխել աղայի շտեմարանը, իսկ հարդը՝ մարագը: Այս բոլոր աշխատանքները կատարվում էին դարդայի անմիջական ղեկավարությամբ ու ձրիաբար:

Գյուղի շուրջը տարածված մի քանի տասնյակ հեկտար բանջարանոցներն ու այգիները ամռան շոգերին ոռոգվում են գյուղի մեջ գտնվող միակ աղբյուրով:

Ահա գարնան վերջերից սկսած՝ այդ ջրի օգտագործումը կանոնավորելու նպատակով ջուրը «*սրա են գցում*», այսինքն հերթ են գցում, և բոլոր տնտեսություններն օգտվում են այդ ջրից՝ հերթով ոռոգելով իրենց բանջարանոցները: Ահա շաբաթվա յոթ օրից հինգ օրը ջուրը գտնվում էր 300 տնտեսության իրավունքին, երկու օրը գտնվում էր մենակ բեկի բանջարանոցում ու պարտեզում: Աղայի տնտեսության ոռոգման աշխատանքը ևս գտնվում էր դարդայի անմիջական հսկողության



տակ:

Աղան իր ընտանիքով ապրում էր քաղաքում: Մայիսի 20-25-ին նա իր ամբողջ ընտանիքով քաղաքից տեղափոխվում էր գյուղը: Նախօրոք դարդան կարգի էր բերում աղայի բնակարանը՝ սպիտակեցնում, մաքրում սենյակները: Այժմ աղայի բնակարանն այլ տեսք ու կյանք էր ստանում: Աղան ժամանակ չունեի զբաղվելու իր տնտեսության գործերով:

Բարձրաստիճան ու պատվարժան հյուրերի շարանները շատ կանոնավոր կերպով հաջորդում էին իրար: Աղան նրանց հետ հունիսի սկզբից մինչև սեպտեմբերի 20-25-ը խիստ զբաղված էր «քեփերով» ու զվարճություններով, իսկ աղայի պառավ աղջիկ-պարոնը զբաղված էր բոլորովին այլ գործերով:

Նրա աշխատանքը կատարվում էր երկու ուղղությամբ՝ գյուղացիներից ժողովել այն ամենը, ինչ որ պետք էին այդ օրը թե՛ հյուրերին կերակրելու և թե՛ իրենց, և ապա ձմեռվա համար կամաց-կամաց պաշար պատրաստել: Աղջիկ-պարոնն այդ նպատակով իր շուրջն էր խմբում գյուղացիներից իրեն հավատարիմ կանանց ու նրանց միջոցով կատարում այն ամենը, ինչ որ հաճելի էր իրեն:

Նրանք պատրաստում էին ձմեռվա պաշար՝ թթվեղեն, չորացնում անուշահոտ ու անուշահամ բանջարեղեններ, զանազան տեսակի քաղցրավենիք՝ հոնի, մոշի, կեռասի, բալի և այլն: Չորացնում էին ընտիր տեսակի պտուղներից, պատրաստում կորկոտ, այլուր և այլ մթերքներ:

Աղջիկ-պարոնը շատ լավ գիտեր, որ գյուղացիներն իրենից կախված են և ստիպված են ենթարկվել իր քմահաճույքներին, ուստի նա, առանց քաշվելու, օգտագործում էր այդ հանգամանքը:

Աղջիկ-պարոնը գյուղացիների չքավորության ու չարքաշության պատճառը համարում էր հենց իրենց՝ գյուղացիներին: Նա միշտ գործ էր ածում հետևյալ արտահայտությունը. *«Մի օր ութ-ութ էր անում, ութ օր էլ փաթուր»*, այսինքն՝ որ նրանք ինայտղություն չեն անում ու տնտեսվարություն չգիտեն:

Իհարկե, աղջիկ-պարոնի այդ արտահայտությունը ոչ մի ճշմարտություն չէր պարունակում իր մեջ. նա մեղքն իրենից ձգում էր: Գյուղի այդ կացությունը արդյունք էր ժամանակի հասարակական անիրավ ու անարդար կարգերի: Պետական տուրքերը, կոռն ու բեգարը, հողագրկությունը, վաշխառությունը, բազմաթիվ ձրիակերների կերակրելը, ահա այս ամենը քայքայել էին գյուղը. նրա հաշվին ապրում էին բազմաթիվ ձրիակերներ, իսկ ինքը մնում էր մերկ ու քաղցած:

Անցնում է ամառը, վրա է հասնում աշունը, գյուղը կամաց-կամաց կորցնում է իր հրապուրիչ պատկերը. սկսվում են անձրևային ու թուխպ օրերը, մերկանում է բնությունը: Աղան 3-4 ամիս գյուղում մնալուց հետո իր ամբողջ ընտանիքով, ամբողջ տարվա պաշարով չվում է նորից քաղաք՝ ամեն ինչ հանձնելով իր հավատարիմ դարդային՝ իսկական բեկին:

Գրիգոր աղայի դարդան՝ Դավլաքանց Սարգիսը, կարողացավ կարճ ժամանակամիջոցում կառուցել երկհարկանի տուն՝ բաղկացած 3-4 սենյակից՝ պատշգամբներով, և տանիքն էլ ծածկեց թիթեղով՝ կարմիր ներկած: Կովերը, ձիաները, գութանն իր լծկաններով՝ բոլորը կանգնեցին դարդայի դռանը:

Այդ բոլորը տեսնում էին թե՛ գյուղացիներ եւ թե՛ աղան: Աղան, իհարկե, համոզված էր, որ իր կառավարիչն այդ ամենն իր միջոցներից է տնտեսել, ինչպես ասում են՝ *«գողը գողից գողացավ»*, բայց նա նույնիսկ մի հասարակ ակնարկ անգամ չէր անում Սարգսին այդ մասին:

Գյուղացիներից շատերը գնում էին աղայի մոտ և չարախոսում դարդայի մասին: Աղան բոլորին էլ ուշադիր լսում էր և ոչ ոքի ոչինչ չէր պատասխանում: Մեր գյուղի գորբաներից մեկն էր Կյուքունց Նիկոլայը, որն ամեն կերպ աշխատում էր աղայի աչքում վարկաբեկ անել Սարգսին:

Սա անվերջ բամբասում էր Սարգսին, վերջապես աղան մի օր հարցնում է.



- Նիկո լայ, հր՛, ո՞նց անեմ, որ լավ լինի:

Նիկոլայը մի քիչ լեզուն ծամծմելուց հետո հայտնում է այն միտքը, որ եթե աղայի դարդան ինքը լիներ, այդպես անագնիվ չէր վարվի: Աղան, իր քթի տակ ժպտալով, պատասխանում է.

- *Գիտե՞ս ինչ կա, Նիկո լայ, ես շատ լավ գիտեմ, որ Մարգիսն իր հարստությունը ինձնից է գողացել, որ նա երկհարկանի տուն չէր կարող կառուցել, եթե իմ դարդան չլիներ: Այդ ամենը ես շատ լավ գիտեմ, և եթե ես նրան հեռացնեմ ու փոխարենը նշանակեմ քեզ, նույնպես և քեզ համար պետք է երկհարկանի տուն կառուցեմ, կովեր առնեմ, հարստացնեմ, իսկ այդ բոլորն ինձ համար շատ ծանր կլինի: Մարգիսն արդեն կշտացել է, նա այսուհետև քիչ կուտի, քիչ կգողանա, իսկ դու դեռ սոված ես, սովածին կշտացնելն ավելի դժվար է, քան կուշտին կերակրելը:*

Նիկոլայն այլևս ասելիք չունեի:

Չնայած Գրիգոր աղան և նրա հայրը կարողացան գյուղացիներից զավթել, բացի ցանքսային տարածություններից, նաև այգիները, տնամերձ հողամասերը, սակայն գյուղացիության և աղայի հետնորդների միջև դարձյալ շարունակվեց խուլ պայքար:

Բեկը գյուղացիների մեջ տանում էր «*բաժանիր, որ տիրես*» քաղաքականությունը: Նա, գյուղացիության մի մասին գրավելով իր կողմը, լարում էր մյուս մասի դեմ: Սրանք կարիք եղած դեպքում հանդես էին գալիս սուտ վկայություններով, զրպարտություններով և ամեն կերպ աշխատում ապացուցել իրենց նվիրվածությունն ու հավատարմությունն աղային, սակայն հենց նույն գյուղացիների կողմից այդպիսիներն անպատիժ չէին մնում:

Կարևոր էր համարում նման մի դեպք նկարագրել:

Գյուղից մի խումբ մարդիկ դիմում են դատարան՝ բողոքելով բեկի դեմ, որ բեկը զրկել է նրանց: Դատավարության ժամանակ մի քանի գյուղացիներ կեղծ վկայություն են տալիս հոգուտ բեկի: Դրանց առաջնորդն է լինում գյուղի նշանավոր տոհմերից մեկի ավագը՝ Բախտամը, որի անունով էլ կոչվում է այդ տոհմը Բախտամանք:

Դատավարությունից մի քանի օր հետո Գեսիբեկի հաջորդներից մեկի տատը իր հարազատների օգնությամբ Բախտամին կենդանի ձգում են օդու կաթսայի տակը՝ քուլաշի մեջ: Ինչպես ժողովուրդն է ասում՝ «*Բախտամը կոճի է դառնում*»:

Երկար կանգ առնելով բեկի և գյուղացիների փոխհարաբերության վրա և ցույց տալով այդ ժամանակվա գյուղացիների իրավական ու տնտեսական ծանր վիճակը՝ նպատակս էր նաև տալ այդ աշխատավոր գյուղացու հաշվին ապրող ու նրանով իր գոյությունը պաշտպանող բեկերի ամբողջ պատկերը:

Գրիգոր աղայի ամբողջ կյանքը գյուղում պատկերելուց հետո տալիս եմ նաև Կոստանդին աղայի կյանքը, որը նույնպես մեր գյուղի բեկն էր: Այս երկու անձնավորություններն իրար հակապատկեր էին իրենց ամբողջ էության: Կոստանդին աղան՝ Մելիք-Շահնազարյան տոհմից, Գրիգոր աղայի ազգակից էր: Ժողովուրդը սրան անվանում էր «*Կոստան աղա*»: Մխտորաշենի հողերի մի մասը պատկանում էր սրան: Սա ևս ուներ իր դարդան, որը Մխտորաշենի «հայտնի» մարդկանցից մեկն էր՝ Արզուման քոխվան, մի հաղթանդամ, թավ ու երկար բեխերով, բամբ ձայնով մի աժդահա, որի ձեռքին խաղալիք էր հենց ինքը՝ բեկը:

Գրիգոր աղան որքան ձեռներեց էր, ինքնուրույն, ստեղծագործական մեծ ուժի տեր, Կոստան աղան, ընդհակառակը, ամեն ինչից զուրկ ու թուլամորթ մի անձնավորություն էր: Նրա թուլամորթությունը հասնում էր այն աստիճանի, որ իր կնոջը զսպելու համար օգնության էր կանչում



Արգուման քյոխվային: Քանիցս մենք՝ երեխաներս, ականատես ենք եղել, թե ինչպես օրը ցերեկով, մարդկանց աչքի առջև աղայի կնոջը քաշ էր տալիս բակը և ճիպոտով ծեծում նրան, իսկ աղան, կանգնած պատշգամբի վրա, այնտեղից վրացերեն պատասխանում էր կնոջ վրացերեն հայեցողականներին ու Արգուման քյոխվային կարգադրում, որ «լավ ծեծի», իսկ Արգուման քյոխվան, լսելով աղայի կարգադրությունը, մի ձեռքով բռնած խեղճ կնոջ վզից, իսկ մյուս ձեռքով՝ երկար ճիպոտը, անդադար հարվածում էր նրա մեջքին ու մարմնի այլ մասերին:

Սա իր ընտանիքով ապրում էր Թբիլիսում: Յուրաքանչյուր տարի՝ մայիսի վերջին, գալիս էր գյուղը: Նա սեփական բնակարան չուներ, ապրում էր մեր շենքի երկրորդ հարկում և ամեն տարի միշտ իջնում էր այդտեղ: Սա նույնպես ուներ իր մշտական խոհարարն ու աղախինը: Կոստան աղան, իր ընտանիքով 3-4 ամիս ապրելով գյուղում, այդ ժամանակամիջոցում պատրաստում էր իր ամբողջ տարվա պաշարը: Սա ոչ մի տնտեսություն չկազմակերպեց Գրիգոր աղայի պես: Սա ինչ որ ստացավ հասարակությունից, վատնեց Թբիլիսիում և ոչինչ չթողեց գյուղում, իսկ Գրիգոր աղայից մնաց խոշոր ժառանգություն, որը Մխտորաշենի այսօրվա հասարակության սեփականությունն է:

Բեկերի տարած քաղաքականությունը գյուղում առաջ բերեց գյուղացիության մեջ չափազանց խոշոր բացասական երևույթներ՝ փոխադարձ ատելություն, թայփայականություն, կաշառակերություն, ռխակալություն և այլն:

Այդ դրությունը շարունակվեց մինչև 1905թ.: Վրա հասավ հեղափոխությունը. թեկուզ նա բոլորովին չսրբեց, չտարավ կալվածատիրական կարգերը, բայց խիստ խարխուլեց նրա հիմքերն ու հասցրեց մահաբեր հարված:

1905 թվից՝ հեղափոխությունից հետո, Մխտորաշենը միանգամայն փոխեց իր դեմքը: Նա ստացավ թարմ հոսանք՝ նոր գաղափարներով ու հասկացողություններով. գյուղը թափ տվեց իրենից դարավոր փոշին, թարմացավ ու աշխուժացավ: Գյուղից չված երիտասարդության մեծամասնությունը նորից վերադարձավ գյուղ:

Խավար էր ու տգետ գյուղը: Բոլորը խաբում էին նրան ու կողոպտում. ծեծում էին նրան վաշխառուն ու տանուտերը, պրիստավն ու ստրաժնիկը, աղան ու դարդան, և այդ բոլորի ոտնահարումները նա տանում էր լուռ ու մունջ:

Սակայն 1905թ. հեղափոխությունը բացեց նրա աչքերը, ցնցեց նրան, և նա խոր, դարավոր քնից զարթնեց ու գոտեպնդվեց և ելավ նոր ու հզոր պայքարի:

Նախկին հլու-հնազանդ գյուղացու հոգեբանությունը միանգամայն փոխվեց: Նրա համար հանդուրժելի չէին այլևս նախկին վայրագ արարքները: Չկային այլևս Գրիգոր ու Կոստան աղաները՝ իրենց կարգ ու կանոնով, անդառնալիորեն չքացել էին: Միայն պետք է հիշել, որ Գրիգոր աղայի հակապատկերը ներկայացնող որդին բարձրագույն կրթությամբ մի գյուղատնտես էր, մեր շրջանում նշանավոր հասարակական գործիչ, իր ժամանակի լուսավոր ու առաջադեմ գաղափարների ջատագով: Նա նույնիսկ ընտրված էր Ղարաբաղի թեմի հայկական միջնակարգ դպրոցի հոգաբարձության անդամ:

Գրիգոր աղայի որդին՝ Ջումշուղ բեկ Մելիք-Շահնազարյանը, լիկվիդացիայի ենթարկեց իր հոր բազմաճյուղ տնտեսությունը և հրաժարվեց իր ժառանգական իրավունքներից և ընդմիշտ թողնելով գյուղը՝ տեղափոխվեց քաղաք ու սկսեց այնտեղ աշխատել ու ապրել սեփական աշխատանքով:



5. ՀԱՅՏՐԵՆԻ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

1910 թ. հոկտեմբերի 1-ին իմ հայրենի գյուղն առաջին անգամ դպրոց տեսավ: Այդ համատարած խավարում վառվեց մի վտիտ մոմ, որն սկսեց իր աղոտ լույսը սփռել այդ աղքատ ու տղետ միջավայրում:

Համատարած էր անգրագիտությունը:

1910թ. հուլիս ամսում մեր գյուղը եկավ Ղարաբաղի թեմի հայկական եկեղեցական ծխական դպրոցների տեսուչ Ստեփան Տեր-Ավետիքյանը: Նա Գյանջայի (այժմյան՝ Կիրովաբադ) շրջանի Բանանց գյուղացի էր՝ մեծ պատրաստականության տեր, Պետական դումայի պատգամավոր, եռանդուն ու ազդեցիկ մի անձնավորություն:

Նա գյուղական ընդհանուր ժողովում կանգ առավ դպրոցի նշանակության մասին ու կոչ արավ բացել դպրոց, երեխաներին կրթել ու դաստիարակել և պաշտպանել մայրենի լեզուն ու մայրենի գրականությունը:

Այդ այն ժամանակ էր, երբ հայ ժողովրդի առաջավոր մտավորականության առաջնորդությամբ ամբողջ հայ ժողովուրդը ոտքի էր կանգնել՝ պաշտպանելու իր մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը ցարական միահեծանության հալածանքներից ու ասիմիլատորական նկրտումներից:

Ժողովականները սիրով ընդունեցին տեսչի առաջարկը և հենց այդ ժողովում էլ ընտրեցին նոր բացվելիք դպրոցի հոգաբարձական կազմը՝ բաղկացած հինգ հոգուց.

1. Գյուղի քահանա թեմականավարտ Տեր Հովհաննես Կիսիբեկյան,
2. Գյուղատնտեսական բարձրագույն կրթությամբ Ջումշուդ բեկ Մելիք-Շահնազարյան,
3. Առաքել Բաբայան՝ արհեստավոր,
4. Սամսոն Ղախրամյան՝ գյուղացի,
5. Արզուման Գասպարյան՝ գյուղացի:

Հովհաննես քահանա Կիսիբեկյանն ընտրվեց հոգաբարձության նախագահ:

Հոգաբարձուներից առաջին երկուսը ժամանակի առաջադեմ հայացքների տեր անձնավորություններ էին:

Համագյուղացի Միմեոն Գասպարյանը, որը մի արհեստավոր էր և ուներ Շուշիում սեփական բնակարան, ժողովում հանդես գալով՝ հայտարարեց, որ գյուղում գտնվող իր տունը ձրիաբար հատկացնում է հասարակությանը՝ օգտագործելու որպես դպրոցական շենք:

Նրա տունը գյուղի նշանավոր շենքերից մեկն էր՝ երկհարկանի, վերին հարկը բաղկացած էր երկու լուսավոր սենյակներից, մի միջանցքից և մի լայն պատշգամբից: Սենյակների հատակներն ու առաստաղները տախտակամած էին, ունեին մեծ-մեծ դռներ ու լուսամուտներ: Տան կտուրը ծածկված էր թիթեղով: Նա խոնավ չէր ու շատ հարմար էր դպրոցի համար:

Նույն գյուղացիներ Հարություն Մելքոնյանը և Առաքել Բաբայանը, որ շնորհալի վարպետներ էին, ժողովում հանդես գալով՝ հանձն առան դպրոցի նստարանները ձրիաբար պատրաստել: Ժողովականները բավական երկար կանգ առան դպրոցի նյութական միջոցների վրա: Նրանք որոշեցին ուսուցչին տալ տարեկան 350-400ռ. աշխատավարձ, բնակարան ու վառելիք:

Աշակերտները պետք է վճարեին թոշակ:

Այդ ժամանակ բոլոր դպրոցների համար ընդհանուր կարգ էր սահմանված: Աշակերտությունը բաժանվում էր երեք մասի.

1. Լիաթոշակներ՝ տարեկան 6 ռուբլի,
2. Կիսաթոշակներ՝ տարեկան 3 ռուբլի,
3. Ձրիավարձներ:



1910թ. ես և իմ ընկերները սովորում էինք Շուշիի Թեմական դպրոցում և ապրում Ղազարյան Ավագի բնակարանում:

Ավագի որդիներից մեկը՝ Գրիգոր Ղազարյանն, այդ տարին ավարտել էր Ղարաբաղի Թեմական դպրոցը, որին մենք լավ ճանաչում էինք: Մենք գրեցինք մեր հորեղբորը, որը մեր գյուղի դպրոցի հոգաբարձության նախագահն էր, խնդրելով Գրիգորին հրավիրել որպես մեր նորաբաց դպրոցի ուսուցիչ: Հորեղբայրս դիմեց Թեմական դպրոցների տեսչին՝ խնդրելով Գրիգոր Ղազարյանին նշանակել ուսուցիչ մեր դպրոցում:

Ահա 1910 թ. հոկտեմբերի 1-ին Գրիգոր Ղազարյանը եկավ մեր գյուղը իբրև ուսուցիչ:

Տեսուչը գրում էր.

- Մխտորաշենի դպրոցի հոգաբարձության նախագահ Տեր Հովհաննես Կիսիբեկյանին

Գրիգոր Ավագի Ղազարյանը նշանակվում է Ձեր խնամքին հանձնված դպրոցի դասատու 1910/11 ուսումնական տարում՝ տարեկան երեք հարյուր հիսուն (350ռ.) ռուբլի ռոճիկով:

Պուք պարտավոր եք ուսուցչին ապահովել բնակարանով և վառելիքով:

Ղար. Թեմ. դպր. տեսուչ՝ Ստեփան Տեր-Ավետիքյան

1910թ. օգոստոսի 20-ին, Շուշի:

Դպրոցն արդեն պատրաստ ուներ աշակերտական քսան նստարան: Հոգաբարձությունը Շուշի պատվիրել էր մի գրատախտակ, որն իր հետ բերել էր ուսուցիչը:

Առաջին տարին դպրոցն ընդգրկեց երեսուն և վեց երկսեռ երեխաներ:

Երիտասարդ, նորավարտ Գրիգոր Ղազարյանը դուրս եկավ վերին աստիճանի բարեխիղճ, պատրաստված, եռանդուն ու իր գործին նվիրված մի անձնավորություն: Նա երեք ուսումնական տարի պաշտոնավարեց այդ դպրոցում և երեք տարին էլ ապրեց միևնույն ընտանիքում՝ որպես այդ բազմանդամ ընտանիքի հարազատ զավակներից մեկը:

Գրիգոր Ղազարյանը գյուղում հսկայական աշխատանք կատարեց և հասարակության մեջ մեծ հարգանք ու հեղինակություն վաստակեց:

1910թ. Թեմական դպրոցի աշակերտ էի: Ես սկսեցի գրքեր ժողովել մեր դպրոցի գրադարանը կազմակերպելու նպատակով: Վրթանես Փափագյանը, որ ուսուցիչ էր Թեմական դպրոցում, տվավ ինձ 210 հատ մեծ մասամբ մանկական գրքեր:

Գրիգոր Ղազարյանը իր և հոգաբարձության կողմից թերթի միջոցով շնորհակալություն հայտնեց Փափագյանին:

Այդ երեք տարվա ընթացքում մեծ գործ կատարվեց: Գյուղում զնգում էր հայկական ժողովրդական երգը, գրագիտությունը բավական տարածվել էր, գյուղում սովորական երևույթներից էին ներկայացումներն ու տոնական հանդեսները:

Այդ տարիների ընթացքում բազմաթիվ երեխաներ սովորեցին ու դաստիարակվեցին բարեխիղճ ուսուցչի մոտ: Այդ երեխաներից շատ-շատերը, շնորհիվ իրենց առանձնահատուկ ընդունակությունների, կարճ ժամանակում գրաճանաչ դարձան:

Տգիտության ու խավարի ճանկերից հասարակության ազատագրման գործում պատվավոր ու շնորհալի գործ կատարեց ժողովրդական դպրոցի ուսուցիչը:

Խիստ ծանր էր նրա աշխատանքը. նրա գործը մենակ երեխաներին գրաճանաչ դարձնելը չէր: Նա պետք է դաստիարակեր, սովորեցներ նաև ամբողջ հասարակությանը, որովհետև այդ ժամանակները ուսուցիչը, մանավանդ գյուղական միջավայրում, միակ գրագետ ու բանիմաց անձնավորությունն էր, որին ամեն մի խնդրով դիմում էին: Ահա այսպիսի պայմաններում ուսուցիչը խիստ պատասխանատու ու միևնույն ժամանակ պատվավոր գործ պետք է կատարեր,



եթե նա իր կոչման բարձրության վրա էր գտնվում: Այս բոլորից պարզ է, որ ուսուցչական կադրերը կանգնած էին մեծ ու պատասխանատու պարտականությունների առջև:

Այժմ մի քանի խոսք այդ ժամանակվա ուսուցչական կադրերի մասին:

Հայկական դպրոցների ուսուցչական կադրերի խնդիրը ժամանակի ամենադժվարին ու կարևորագույն խնդիրներից մեկն էր: Այդ ժամանակվա մեր մի քանի միջնակարգ դպրոցները բարձրագույն կրթությամբ ուսուցիչներով ապահովելը նույնիսկ հնարավոր չէր: Միջնակարգ կրթությամբ բազմաթիվ ուսուցիչներ աշխատում էին միջնակարգ դպրոցներում, ո՞ր մնաց, որ ծխական տարրական դպրոցները կարողանային ապահովել պատրաստված կանոնավոր կադրերով:

Ծխական տարրական (I-IV) և յոթնամյա (V-VII) հայկական դպրոցների ուսուցիչների մեծագույն մասը չունեին նույնիսկ լրիվ միջնակարգ կրթություն, իսկ եղած միջնակարգ կրթության տեր ուսուցիչների մեծագույն մասը թեմականավարտներ էին: Այսպիսով, մեր լուսավորության աղբյուրները թեմական դպրոցներն էին, որտեղից դուրս էր գալիս մեր ժողովրդական դպրոցների ուսուցիչների մեծ մասը:

Հայկական ամենօրյա թերթերում այն ժամանակ դուք միշտ կհանդիպեիք հայտարարությունների դպրոցների հոգաբարձությունից, որով հրավիրում էին թեմականավարտ ուսուցիչների, իսկ նույն դպրոցների ավագ ուսուցիչների՝ թեմականավարտներ՝ առնվազն երեք տարվա փորձառությամբ:

Ահա այսպիսի պայմաններում մեր դպրոցը բախտ ունեցավ հենց առաջին տարին ունենալու թեմականավարտ ուսուցիչ, այն էլ Գր. Ղազարյանի պես գործին նվիրված ու բարեխիղճ մի անձնավորություն:

Հայրենի գյուղը, որը բաղկացած էր մոտ երեք հարյուր տնտեսությունից, համարյա զուրկ էր գրագետ մարդկանցից:

Միակ մարդը, որ ուներ միջնակարգ կրթություն, գյուղի քահանան էր. այդ ևս պետք է համարել մխիթարական երևույթ, որովհետև մեր շրջակա գյուղերի համարյա բոլոր քահանաները կիսագրագետ մարդիկ էին և տարված քելեխով ու կրոնական մոլեռանդությամբ, այնինչ մեր քահանան դեմ էր այդ բոլոր տեսակի անօգուտ պաշտամունքներին և մինչևի մեր գյուղում դպրոց բանալը տարիներ շարունակ գրաճանաչություն էր սովորեցնում երեխաներին առանց որևէ վարձի:

Հայրենի գյուղը բռնեց ուսման ու առաջադիմության ուղին: Նա այլևս չէր խարխափում խավարի մեջ: Նրա կյանքի ուղին արդեն պարզ ու որոշ էր:

Գրիգոր աղայի և Կոստան աղայի Մխտորաշենն անդառնալիորեն անցել էր պատմության գիրկը: Չկային այլևս Գրիգոր աղան ու Կոստան աղան, աղջիկ-պարոնն ու դարդան, պրիստավն ու ստրաժնիկը, քոխվեն ու գզիրը:

Անեացել էին Խոսին ու Մոսին, Ճատին ու Խաչին, որոնք միշտ, պարկերը կոնատակներին, վիզները ճկած, կանգնած աղայի դռան՝ որպես մուրացիկներ, վախվիխելով ցորեն կամ գարի էին խնդրում իրենց քաղցած երեխաների ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար: Անցել էին նաև այն տխուր ու թշվառ ժամանակները:

Մխտորաշենի հասարակությունն իր հոգեբանությամբ ու աշխարհայացողությամբ էլ նախկինը չէր: Նրա առաջ ծառացել էին բոլորովին նոր գաղափարներ ու նոր խնդիրներ, որոնց նվաճումների համար նա գոտեպնդվել էր և ամբողջ Լեռնային Ղարաբաղի աշխատավորության հետ ելել պայքարի՝ ընդդեմ խավարի ու սգիտության, ընդդեմ իրեն շահագործողների, հանուն բարեկեցիկ, կուլտուրական ու ազատ կյանքի:



Ինչպես հիշատակել եմ հուշերիս սկզբում, հայրենի գյուղի մասին գրում եմ մինչև 1920թ. մայիս ամիսը և սրանով վերջացնում առաջին մասը:

Որպես հավելված՝ հայրենի գյուղի մասին գրած այս հուշերի վերջում տալիս եմ նրա կյանքի էջերից մի թշվառ դեպք:

ՍՈՎԸ ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ

Այս մասին ես մանրամասն կանգ եմ առել 1918 թ. մասին իմ գրած հուշերում՝ «Սովը Լեոնային Ղարաբաղում» վերտառությամբ:

1918թ. գարնանն էր: Դաժան սովն իր ճանկերի մեջ էր առել ամբողջ Լեոնային Ղարաբաղը: Հաց չկար: Մարդիկ դարձել էին մսակեր ու խոտաճարակ: Այդ սոսկալի թշվառության մեծ բաժինն ընկել էր իմ հայրենի գյուղին՝ Սխտորաշենին: Նա շատ տառապեց: Ընդամենը 2-3 ամսվա ընթացքում հողին հանձնվեց երկու հարյուր քսան և վեց հոգի: Տիֆը, համաճարակ դարձած, հնձում էր անխնա, կային այնպիսի ընտանիքներ, որոնցից մեռան 3-4 հոգի: Ո՛չ բժիշկ կար, ո՛չ էլ դեղ և ոչ մի օգնություն որևէ տեղից: Մարդիկ հանձնված էին դաժան ճակատագրին: Օրը ցերեկով տասնյակներով, բաց-բաց աչքերով մեռնում էին, իսկ կենդանի մնացածների մեծագույն մասը՝ ուռած մարմնով, ընկած էր իրենց պատերի տակ՝ տաքացնելով իրենց խղճուկ մարմիններն արևի թույլ ճառագայթներով: Կենդանի մնացածները չէին հասցնում ժամանակին մեռածներին թաղել:

Գյուղի գերեզմանատունը գյուղից 2 կմ-ից ավելի հեռավորության վրա էր գտնվում: Մարդիկ ուժ չունեին մեռածներին տեղափոխելու այնտեղ ու հարկադրված եղան թողնել իրենց պապերից մնացած հինավուրց գերեզմանատունը և հիմք դնել նոր գերեզմանոցի՝ հենց գյուղին կից:

Այդ ժամանակ ես շրջում էի գյուղերը և տեղերում տեղական միջոցներով կազմակերպում օգնություն սովյալներին: Այդ խնդրում բավական պատվավոր դեր կատարեցին իմ հայրենի գյուղի ունևորները՝ իրենց վերջին պատառը կիսելով չունևորների հետ:

Ես Ղարաբաղի «Այստաժ» թերթում մի ընդարձակ հոդված գրեցի՝ նկարագրելով հայրենի գյուղի թշվառ վիճակը, կոչ անելով օտարության մեջ գտնվող հայրենակիցներին՝ օգնության հասնելու իրենց թշվառ եղբայրներին:

Վրա հասավ ամառը:

Սոսկալի տառապանքներից ու զրկանքներից հետո հայրենի գյուղն առատ բերք ստացավ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Մավաս և Բլբլաք

Մավասն ու Բլբլաքը, որպես Սխտորաշենի հարևան գյուղեր, իրենց անցյալով ու առօրյայով ոչնչով չեն տարբերվում նրանից:

Մավասը մոտ մի կիլոմետր դեպի հյուսիս է գտնվում Սխտորաշենից: Նա իր դիրքով ուղիղ գծով մոտ 400-500մ բարձր է նրանից: Բլբլաքը գտնվում է Սխտորաշենի այգիներին կից և նրանից իր դիրքով ցածր է մոտ 200-250մ:

Մավասն ավելի վաղ է հիմնադրվել, քան Բլբլաքը:

Մավասն ունի 40 տնտեսություն, իսկ Բլբլաքը՝ 25: Նա իր աշխարհագրական դիրքով չի զիջում Շուշվա դիրքի բարձրությանը:

Մավասն անցյալում եղել է նրանից 10-15կմ հեռավորության վրա գտնվող Ամարասի հինավուրց պատմական վանքի միաբանության ամառանոցը: Վանքի դիրքը լինելով շատ ցածր և ամառվա եղանակին խիստ տաք՝ նրա միաբանությունը փոխադրվել է Մավաս ու այնտեղ



անցկացրել ամառը:

Մավաս սարի ամենաբարձր գագաթին գտնվում է Երից մանկանց հինավուրց ու ավերակ վանքը: Այդ բարձրության դեմ հանդիման՝ մոտ 200մ հեռավորության վրա է գտնվում Մավաս սարի երկրորդ գագաթը, որն ավելի բարձր է:

Ղարաբաղի մի ականավոր բժիշկ պատմեց, որ մի հայտնի հարուստ, նույնպես ղարաբաղի, ծրագրել էր այդ սարի գագաթին սանատորիա կառուցել թոքախտավորների համար, սակայն վաղահաս մահը խանգարել էր նրան կատարելու իր ցանկությունը:

Բլբլաքը, համարյա կից լինելով Բեջանի հովտին, նպաստավոր պայմանների շնորհիվ զբաղվում է երկրագործությամբ, իսկ Մավասը գուրկ է միանգամայն նման հարմարությունից:

Մավասը 3-4կմ դեպի հարավ՝ Քյոնդալան գետի մոտ, Թասկիտ կոչված վայրում, ունի որոշ քանակությամբ հողամասեր, որտեղ գյուղացիները զբաղվում են վար ու ցանքով, այգեգործությամբ ու բանջարաբուծությամբ:

Թե՛ Մավասը և թե՛ Բլբլաքը միանգամայն գուրկ են ջրից, հասարակ խմելու ջուր անգամ բավարար քանակությամբ չունեն:

Մավաս գյուղի հիմնական բնակիչները Դանիելբեկյաններն էին, և Մավասի հողամասերի մեծագույն մասը պատկանում էր նրանց: Նրանք ունեին խոշոր տնտեսություններ ու բարեկարգ բնակարաններ: Քյոնդալան գետի վրա կառուցել էին 6-8 ջրաղացներ, և շրջակա բազմաթիվ գյուղերի բնակիչներն այնտեղ էին իրենց ցորենը կամ գարին այլուր դարձնում: Դանիելբեկյաններն այժմ գյուղում գոյություն չունեն, իսկ նրանց երբեմնի հոյակապ տների ավերակների ու փլատակների կույտերն են միայն մնացել:

Բլբլաք գյուղի բնակիչները համարյա Ջաբարյաններն են (*Չորանք*), որոնք հողի, վարուցանքսի հետ կապված մարդիկ են:

Բլբլաքը ոչ մի պատմական հուշարձան չունի, սակայն Մավասը որոշ բան ունի: Մավասում գտնվող Երից մանկանց վանքը, որ տեղական ժողովրդի բարբառում կոչվում է *«Իրիք մանկունք»*, այսօր ավերակ է, որը մի ժամանակ որոշ չափով պատմական արժեք ներկայացնող վայր էր:

Նույնիսկ Մավասի հասարակության խոսակցական լեզուն խիստ տարբերվում է Սխտորաշենի, Բլբլաքի և դրանց մոտ գտնվող այլ գյուղերի ժողովուրդների լեզուներից և ավելի բարձր կուլտուրա ունի ու մոտ է մեր գրական լեզվին, քան մյուս գյուղերի խոսակցական լեզուն: Գլխավորն ու զարմանալին այն է, որ այդքան իրար մոտ գտնվող գյուղերից խիստ տարբերվում է նա: Իմ կարծիքով, դա պետք է բացատրել գլխավորապես այն հանգամանքով, որ ամեն տարի 2-4 ամիս այդտեղ ապրել են գրագետ մարդիկ՝ Ամարասի միաբանության ներկայացուցիչները:

1903-1905թթ., երբ էս դեռ 11-12 տարեկան երեխա էի և սովորում էի Շուշիի՝ Ղարաբաղի Թեմական դպրոցում, բազմաթիվ անգամ տեսել եմ Մավաս գյուղացի Սանջանբեկ Դանիելբեկյանին, որը գալիս էր Շուշի՝ իր հետ բերելով եկեղեցական գրքեր՝ գրված հաստ, կոշտ ու կոպիտ թղթի վրա, գլխագրերով, և Ներքին Թաղավարդ գյուղացի բողոքական, վաճառական Բալասան Ղարաբեկյանի միջոցով վաճառում ինչ-որ օտար մարդկանց: Ես շատ եմ թերթել այդ գրքերը, սակայն ոչինչ չեմ հասկացել, որովհետև ես այդ ժամանակ դեռ 2-րդ, 3-րդ բաժանմունքի երեխա էի, միայն տեսնում էի, թե ինչպես շատ մեծատառեր իրենցից ներկայացնում էին մի-մի նկար կենդանիների կամ բույսերի և սովորական թղթի վրա չէին գրված:

Հետագայում ես հասկացա, որ դրանք ձեռագրեր էին՝ մագաղաթի վրա գրված, և վաճառում էին օտարերկրյա միսիոներներին, որոնք հսկայական գումարներ էին ծախսում այդ նպատակով: Ահա թե ինչպես այստեղից բավական թանկարժեք պատմական հիշատակարաններ են չքացել



զանազան մարդկանց միջոցով:

Ես նորից բարձրացա Մավաս սարի գագաթը, որտեղ գտնվում էր Երից մանկանց հին մատուռը:

Ես այդ բարձրության վրա եղել էի ուղիղ քսան և հինգ տարի առաջ և նրա ավերակ պատի վրա թողել էի մի փոքրիկ արձանագրություն, որը նույնությամբ մնում էր:

Փլատակ վանքի կամարներից մեկը դեռ կանգուն էր:

Ես շատ որոնեցի՝ գտնելու որևէ գրվածք վանքի բեկորների վրա, սակայն իզուր անցան իմ որոնումները:

Ավերակ մատուռի մուտքի առաջ՝ կիսով չափ հողածածկ, կար երկու գերեզման՝ արձանագրված միևնույն թվականով:

Այդ գերեզմանների վրա արձանագրված է.

«Այս է տապան ՄՄԷՕԼ ՀԱԲԵՂԱԶՆԻ, որ է որդի ԱՆՏՕՆԻՆ ՌՄԾԴ թվին:

ԱԼՏ ԱՍՈՅ Բ-ին»:

Թվականը կարելի է արտահայտել հետևյալ կերպ, որը կստացվի նրա իսկական թվականը.

$\Omega = 1000, \Upsilon = 200, \Theta = 50, \Gamma = 4, 1000 + 200 + 50 + 4 = 1254$ թվին, $+551 = 1805$ թ., մարտ ամսի 2-ին:

Այդ մատուռից մի քանի քայլ ներքև է գտնվում Մավաս գյուղի գերեզմանատունը, որտեղ կան պատմական արժեք ներկայացնող մի քանի դամբարաններ, համարյա բոլորի հուշարձանները ջարդված են:

Ես այստեղ տեսա մի հետաքրքիր գերեզման ու մոտեցա նրան:

Սրա հողաթումբը դեռ թարմ էր՝ վրան կանգնեցված մի հոյակապ արձան, չորս կողմն էլ ճիպոտով ցանկապատած:

Հուշարձանը բաղկացած էր երկու մասից՝ երկու տարբեր ու հին գերեզմանաքարերի կտորներից՝ իրար վրա հարմարեցնելով կազմած մի ամբողջություն: Նրանց՝ իրար հակադիր երեսների վրա կան իրար հետ ոչ մի առնչություն չունեցող արձանագրություններ՝ անկապ ու անիմաստ, որոնք նույնպես չեն վերաբերում տվյալ ննջեցյալին:

Հետագայում կառուցվել է գյուղի կենտրոնում մի փոքրիկ եկեղեցի՝ անվանվելով Երից մանկանց: Այս եկեղեցին երկար տարիներ շարունակ փոխարինել է Երից մանկանց հին վանքին:

Դռան գլխաքարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«ԿԱՄՍՎՆ ԱՅ Ի ՈՂՈՐ ՆՈՐԻՆ ԵՍ ՔԱԼՕ ԿԻՆ ՅՈՎՍԵՓ ԲԵԿԻ ՄԵԼԻՔ ՇԱՀՐԵՅ ԿԱՌՈՒՅԻ ԶՍՈՒՐԲ ՅԵՐԻՅ ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՅԻՍ ՄԻ ԱՍԳԵՂՅ՝ ՅԱՐԴԱՐԻ ՎԱՍՍԱԿՈՅ ԻՄՈՅ:

Ուստի խնդրեմ զընթերցողացդ յիշել միով ԱԾ ողորմեսցի իւ ի 1856 ՄԻ»:

Այդ եկեղեցին կանգուն էր:

Սա կառուցված է սրբատաշ քարերից՝ երկու հոյակապ կամարներով:

Բավական երկար ժամանակից հետո ես նորից բարձրացա այդ գյուղը. եկեղեցին դեռ կանգուն էր՝ բացի սեղանի հետևի պատի մի մասից:

Իմ հարցին, թե ինչու պատի մի մասը քանդված է, պատասխանեցին՝ 1932թ. փորձել են քանդել, բայց հանդիպել են մեծ դժվարության չափազանց ամուր լինելու պատճառով և ստիպված գործադրել են դիմաժիտ ու պայթեցրել միմիայն այդ մասը ու թողել իրենց մտադրությունը:

Մարդ այս ամենը տեսնելուց կամա թե ակամա խորասուզվում է դառն մտածությունների մեջ: Ինչո՞ւ անուշադրության պետք է մատնվեն մեր պատմական հուշարձանները, և ինչո՞ւ չպետք է սանձահարվեն զանազան բախտախնդիրներ, որոնց ձեռքով ոչնչանում են:

Չափազանց ցավալի է, որ այս ուղղությամբ ոչ ոք չի մտածում՝ փրկելու այդ ամենը կորստից:



ՇՈՒՇԻ

Ես ցանկանում եմ այս փոքրիկ ակնարկով ընթերցողին իրագեկ դարձնել, թե մինչև փետրվարյան հեղափոխությունն իրենից ինչ էր ներկայացնում Լեոնային Ղարաբաղը՝ իր կենտրոն Շուշի քաղաքով:

Շուշին, ինչպես դարաբաղցին է անվանում՝ «Շուշվա դալան», բազմաթիվ տարիների փառահեղ, կուլտուրական կյանք ունեցող այդ դրախտավայրը հանդիսացել է Լեոնային Ղարաբաղի կենտրոն-մայրաքաղաքը, նրա գլխավոր զարկերակը, նրա վարչական, մտավոր ու կուլտուրական կենտրոնը, նրա հրաշալի ու անզուգական զարդը:

Այդ վայրը մոտ գտնվելով Շոշու գյուղին, անցյալում ծառայել է նրան որպես արոտատեղի, ու այնտեղ են գտնվել նրա բինաները:

Պատմական տվյալները վկայում են, որ Վարանդայի Մելիք Շահնազարյանը, դավաճանելով Ղարաբաղի հայ ժողովրդին՝ Փանահ խանի պես ոխերիմ թշնամու հետ դաշնակցելով ու աջակցելով նրան, տեղ տվավ այդ բարձունքի վրա՝ կառուցելու Շուշվա բերդը:

Մելիք Շահնազարն իր այդ քայլով Ղարաբաղի հայ ժողովրդի հանդեպ կատարեց սուկալի ոճրագործություն, որի համար պատմությունը նրա սև ճակատին դավաճանի անուն դրոշմեց, և մեր սերունդները, նրան հիշելով, միշտ անհիծում են և կանհիծեն որպես հայրենիքի դավաճանի, որի պատճառով օձը բուն դրեց Ղարաբաղի սրտում:

Շուշին ամրության տեսակետից խոցելի էր միայն արևելյան կողմից: Նրանք այդտեղ էլ կառուցեցին բերդը՝ շրջապատելով թե՛ բերդը և թե՛ քաղաքը պարիսպներով ու բուրգերով: Թե՛ բերդը և թե՛ պարիսպները կառուցել են Մելիք Շահնազարն ու Փանահ խանը միասին՝ հայ վարպետների ու բանվորների ձեռքով:

Շուշին գտնվում է խորդուբորդ մի լանջի վրա, որը արևելյան ստորին ծայրամասից՝ ներքին դարպասից, աստիճանաբար բարձրանալով՝ հասնում է նրա արևմտյան ծայրամասի բարձրագույն գագաթին՝ Քերծին գլխին, որը ներքին դարպասից բարձր է մոտ 300-350մ:

Քաղաքի հարավային, արևմտյան և հյուսիս-արևելյան կողմերը շրջապատված են լեռներով և անդնդախոր ձորերով և անխոցելի են:

Հարավ-արևելյան (Սանգարի) կողմից շրջապատված պարիսպները և բուրգերը, որոնք այսօր ծվատված հսկայի տեսք ունեն, հանդիսանում են որպես վաղուց անցած տխուր օրերի դժբախտ հուշարձաններ:

Փանահ խանը, իր ձեռքով հիմք դնելով բերդին, իր հրամանով բերդը կոչեց «Փանահաբաղ», սակայն շուտով կորավ այդ տեղանունը և կոչվեց «Շուշվա դալա»¹:

Բերդի հիմնադրումը կատարվեց 1752-1754թթ.: Այսպիսով՝ Շուշին դարձավ Ղարաբաղում մելիքական կազմակերպության գերեզման²:

Բաֆֆին «Ղարաբաղի աստղագետ» իր վիպակում ասում է. «Շուշին պտուղ էր հայ մելիքների անմիաբանության և կործանեց առաջ ու առաջ հայ մելիքներին»³:

Այսպես թե այնպես, Շուշվա բերդը և նրա պարիսպները Լեոնային Ղարաբաղի հայ ժողովրդի դարավոր տառապանքների ու հերոսական սխրանքների և նրա գլխով անցած հինավուրց փոթորիկների լուռ ու համր վկաներն են, որոնք նրա պատմական անցյալն ավելի են հետաքրքրական դարձնում:

¹ Լեո, *Հայոց պատմություն*, 3-րդ մաս, էջ 758 (ծան. հեղ.)

² Լեո, էջ 959 (ծան. հեղ.)

³ Պլատոն Զուբով, *Ղարաբաղի աստղագետը*, Թիֆլիս, 1882, թարգմ. ուսերենից՝ տե՛ս Բաֆֆի, 1964, էջ 622 (ծան. հեղ.)



Շուշին գտնվում է այն գլխավոր ճանապարհի վրա, որով պատմական Սյունիքը կապվում է պատմական Արցախի հետ: Այդ կետն իր բնական դիրքով բարձր է ծովի մակերևույթից 1500մ:

Նրա կլիման մեղմ է և առողջարար. ամառը՝ հով ու զով, աշունն ու գարունն՝ անման, իսկ ձմեռը՝ համեմատաբար ցուրտ ու երկար: Ձմռանը փողոցները պատվում էին սառույցով, մարդիկ սահնակներով զբոսնում էին, իսկ ջահել տղաներն էլ սղղում էին սառույցների վրայով:

Քաղաքը խորասուզված էր պտղատու այգիների ու պարտեզների մեջ, որտեղ աճում էր փարթամ բուսականություն, որը հարուստ էր անուշահոտ ու անուշահամ պտուղներով: Այդտեղ աճում էին բոլոր տեսակի պտուղները, բացի խաղողից: Այստեղի պտուղներից հայտնի էին ձմեռային տանձր, սերկևիլը, խնձորը, սալորը և այլն:

Շուշին իր սկզբնական շրջանում շատ նեղություն էր կրում ջրի սակավության պատճառով: Քաղաքի հայկական մասում կար ընդամենը երեք աղբյուր, այն էլ սակավաջուր. աղբյուրներից մեկը գտնվում էր վերին դարպասի մոտ՝ զորանոցին կից, երկրորդ աղբյուրը գտնվում էր քաղաքի կենտրոնական մասում, որը կոչվում էր «Մեյրանանց աղբյուր»: Երրորդը գտնվում էր թուրքական սահմանում և կոչվում էր «Խանին աղջկա աղբյուր»:

Ձմեռվա ցուրտ օրերին այդ աղբյուրները սառչում էին և հասարակությունն ստիպված էր լինում գործածել հորերի ջուրը, որով Շուշին հարուստ էր, կամ գործածել ձյունի ջուր:

Շուշվա բնակիչ, ամբողջ հասարակությանը հայտնի ու նրա կողմից հարգված Թամիրանց Թաթոսը, որը մեծ հարստության տեր էր, քաղաքից դուրս կառուցել է տալիս կավե խողովակներ՝ «թունգա», պատրաստող մի գործարան և այդ թունգաներով քաղաքից մոտ 15-17 կմ հեռավորության վրա գտնվող առողջարար ու սառնորակ ջուրը բերում քաղաք: Այդ ջուրը մինչև քաղաք բերելը խմելու ջուր էին մատակարարում հատուկ մարդիկ, որոնք կոչվում էին «ջրկիրներ» կամ «սուչիներ»: Նրանք ջուր էին բերում քաղաքից դուրս գտնվող սառնորակ, քաղցրահամ աղբյուրներից՝ Ղարաբուլաղից, իսկ լվացքի ու կենցաղային զանազան կարիքների համար՝ իրենց բակերում գտնվող ջրհորներից: Հասարակությունը լվացքի ու գլուխ լվանալու ջուրը գործ էր անում բացառապես այդ ջրերից:

Ջրկիրները կամ «սուչիները» ունեին 1-2 էշ, որոնց վրա էին բարձում երկու փոքրիկ, կլոր և տափակ տակառներ, որոնք տեղավորում էին 1-2 կուժ ջուր: Այդ տակառների կլոր կողմերի վրա ամրացրած են մի փոքրիկ շղթայի երկու ծայրերը, իսկ շղթայի կենտրոնից՝ մի օղակ: Տակառները ջրով լցնելով և բարձելով էշին՝ կեռը ձգում են օղակը և, այդպիսով, առանց որևէ պարանի քշում էշը:

Այդ ջրկիրներից նշանավոր էր Գյանջում անունով մի մարդ, որն ուներ սեփական 3-4 էշ, որոնցով ամբողջ ժամանակ ջուր էր բերում գլխավորապես քաղաքի մեծամեծ ընտանիքների համար:

Քաղաքը լուսավորելու խնդիրը մեծ չափով զբաղեցրել է նրա առաջավոր մարդկանց: Տներում վառում էին նավթի ճրագներ. իսկ փողոցները լուսավորում էին լապտերներով, մի քանի տեղ գործ էին անում նաև գազի լապտերներ: Կային հատուկ վարձու մարդիկ, որոնք, փայտե փոքրիկ սանդուղքները վերցրած, շրջում էին փողոցները և ամեն օր լապտերները լցնում նավթով ու մաքրում ապակիները:

Մինչև 1905թ. հայ-թրքական ընդհարումները Շուշի քաղաքացի Յուզբաշյան Մոսես-բեկը բերում է Քարինտակ գյուղում գտնվող Հարունանց Դանիելի մետաքսի գործարանից էլեկտրական լույս և իր ու իր մի քանի հարուստ հարևանների տներն ու Ագուլյաց եկեղեցու թաղում թուրքաց



սահմանակից մի քանի փողոցներ լուսավորում: 1905թ. հայ-թրքական կռիվների պատճառով այրվում է քաղաքի բարեկարգ այդ թաղամասը, և փչանում է նաև էլեկտրական լույսը:

Վերջին ժամանակները քաղաքային ինքնավարությունը պատրաստվում էր էլեկտրական լույս անցկացնելու, սակայն այդ գեղեցիկ նախաձեռնությունը մնաց անկատար քաղաքի ավերման պատճառով:

Շուշին շատ վաղուց ուներ իր կոյուղին, երբ այն ժամանակ Անդրկովկասի քաղաքացիներից շատերը չունեին:

1.ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՄՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ

Քաղաքն իր շրջակայքի հետ հարաբերության մեջ էր գտնվում երեք ճանապարհներով:

ա) Միակ խճուղին, որ թուրքական մասից սկիզբ է առնում և անցնում հայկական հին գերեզմանատան միջով և այդ բարձրությունից ոլորապտույտ կերպով իջնում մոտ 7-8 կմ, հասնում է «Մազի կամուրջին», որտեղից շարունակելով՝ Խաչենի և Ասկերանի բերդի միջով հասնում է Աղղամ: Շուշին այս խճուղու միջոցով էր կապվում Եվլախ կայարանի հետ, որը կոչվում էր Շուշի-Եվլախ խճուղի:

բ) Երկրորդ ճանապարհն սկիզբ է առնում քաղաքի ներքին դարպասից և աստիճանաբար ցածրանալով մոտ 7-8 կմ հասնում գետին և մտնում պատմական Վարանդայի շրջանը:

գ) Երրորդ ճանապարհն էլ սկիզբ է առնում քաղաքի վերին դարպասից և կամուրջի նման անցնում դեպի արևմուտք՝ Թթու ջուրը, Ղարաղջլաղ հայկական գյուղը և այնտեղից էլ՝ դեպի Գորիս և կոչվում էր Շուշի-Գորիս խճուղի:

1900-ական թթ. սկսած՝ Շուշվա առաջավոր մարդիկ աշխատել են Շուշին կապել Եվլախ կայարանի հետ երկաթուղագծով:

1907-1908 թթ. Շուշի քաղաքի հայտնի հարուստ Սարուխանյանն սկսեց կառուցել այդ գիծը: Նա վերջացրեց հողային աշխատանքները: Կառուցեց կամուրջները և որ պետք է անցկացնեք երկաթազիծը, սկսեցին երկրում տեղի ունենալ այնպիսի դեպքեր, որոնք հնարավորություն չտվին վերջացնելու կառուցումը ու, այսպիսով, չհաջողվեց քաղաքը կապելի երկաթուղագծով կայարանի հետ:

Ղարաբաղը, բավական հեռու գտնվելով Եվլախ կայարանից և չունենալով կազմակերպված, կանոնավոր փոխադրական միջոցներ, մեծ դժվարություններ էր կրում:

Շուշուց կամ շրջաններից կայարան, կամ կայարաններից Շուշի ծանրություններ փոխադրելը կատարվում էր եզների ու գոմեշների սայլերով կամ փուրգոններով, իսկ մարդկանց տեղափոխելը կատարվում էր գլխավորապես փուրգոններով և դիլիջաններով, իսկ փոխադրվողների մի չնչին մասը միայն հնարավորություն ուներ ֆայտոնով փոխադրվելու, որովհետև մեծ գումարներ էին պահանջվում: Տրանսպորտը գլխավորապես մասնավոր մարդկանց սեփականությունն էր:

Բացի դրանից՝ կային երկու ակցիոներական տրանսպորտային ընկերություններ.

1.С.П.Б. страхован. общество «Надежда»,

2.Страхован. общество «Россия»:

Այս ընկերությունները ստանում էին բեռներ ու հանձնում իրենց տերերին:

Այս ընկերությունները Շուշուց տեղափոխում էին ծանրություններ, իրեր, մարդկանց՝ Եվլախ կայարանը:



Եվլախից Շուշի տեղափոխությունը կատարվում էր Ներսես Մարգարի Մելիք-Փաշայանի տրանսպորտային հիմնարկի միջոցով, որը գտնվում էր Եվլախ կայարանում, սակայն այս փոխադրական բոլոր միջոցներն անբավարար ու անկանոն էին:

2. ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Շուշվա հայոց եկեղեցիների անուններով բնորոշվում է նրա բնակիչների զանազան վայրերից գաղթած լինելը Շուշի:

Նրանք գաղթել են Հին Նախիջևան գավառի Ղազանչի գյուղից, Ագուլխից և Մեղրու շրջաններից: Գալով Շուշի՝ կազմում են իրենց թաղերը ու կառուցում իրենց եկեղեցիները:

Ագուլխից մի մեծ հատված, ազատվելով կոտորածից, գաղթում է Շուշի:

Ագուլխեցիներն ու դազանչեցիները կազմել են Շուշվա նախնական ազգաբնակչությունը:

Հետագայում Ղարաբաղի զանազան շրջաններից էլ գալիս են և այդ թաղերում բնակություն հաստատում: Բացի դրանից, շատերը կազմում են առանձին թաղ, որը կոչվում էր «Ներքին թաղ»: Նրանք նույնպես կառուցել են եկեղեցի, որը կոչվել է «Աստվածածնա եկեղեցի»: Նա ունեցել է նաև ուխտատեղի, որը կոչվել է «Քամու խաչ»:

Ներքին թաղի բնակիչները, խիստ նեղվելով իրենց հարևան թուրքերից, 1840թ. թողնում են իրենց ամբողջ թաղը, եկեղեցին, Քամու խաչ սրբավայրը և գերեզմանատունը ու տեղափոխվում, քաղաքի հյուսիսային կողմը գտնվող բարձունքի վրա բնակություն հաստատում, շինում նոր եկեղեցի, որը կոչում են «Թագա ժամ», իսկ թաղը՝ «Վարին թաղ»:

Բացի այդ թաղերից, քաղաքն ուներ ևս մի թաղ, որը կոչվում էր «Մեղրեցոց թաղ»: Սա ուներ եկեղեցի՝ կառուցված փայտից, բայց հետագայում կառուցեցին քարից ու կրից:

Պատմական տվյալների համաձայն՝ Ագուլյաց եկեղեցին ուներ 447 ծուխ, Ղազանչեցոցը՝ 367 ծուխ, իսկ Մեղրեցոց եկեղեցին՝ 102 ծուխ:

Վերոհիշյալ թվերը վերաբերվում են միայն դրսից գաղթածներին:

Գաղթածները, ապրելով Ղարաբաղում տեղական բնակիչների հետ, ենթարկվում են նրանց ազդեցությանը, կորցնում իրենց բարբառները և կենցաղային առանձնահատկությունները:

Բացի վերոհիշյալ պատմական տվյալներից, ժողովուրդը մեզ պատմում է մի ավանդություն, որ իբր թե Փանահ խանը, ցանկանալով քաղաքում ունենալ առևտրական և արհեստավորական բնակիչներ, դիմում է Նախիջևանի խանին՝ խնդրելով տեղի հայ բնակիչներին առաջարկել և աջակցել Շուշի տեղափոխվելու: Նախիջևանի խանը իբր թե ընդառաջելով Փանահ խանին, առաջարկում է հայերին, որ ովքեր ցանկանում են, կարող են տեղափոխվել Շուշի:

Շուշվա հիմնական բնակիչներն են հայերը և թուրքերը, բացի դրանից ապրում էին նաև ռուսներ, քրդեր, թաթարներ, պարսիկներ և այլն:

Շուշին, ըստ «Կավկասյան կալենդարի» 1914թ. տվյալների, ունեցել է ընդամենը 42 568 շունչ, որը, ըստ ազգությունների, արտահայտվել է հետևյալ կերպ.

1. Հայեր՝ 22416 շունչ
 2. Թուրքեր՝ 18865 շունչ
 3. Ռուսներ՝ 1188 շունչ
 4. Այլք՝ 99 շունչ
- Ընդամենը՝ 42568 շունչ



Չնայած ամբողջ քաղաքը գտնվում էր միննույն բնության ծոցում, սակայն իրենց արտաքին տեսքով, կուլտուրականությամբ, շինարարությամբ ու հոյակապությամբ խիստ տարբերվում էին իրարից:

Բազմաթիվ տասնամյակների ընթացքում այդ երկու հարևան ժողովուրդները հանդես են եկել իրենց ստեղծագործական ընդունակություններով՝ կուտակելով խոշոր հարստություն՝ թողնելով իրենց հետագա սերունդներին որպես անգնահատելի ժառանգություն:

Հայերը բնակվում էին քաղաքի արևմտյան, հյուսիսային և հյուսիս-արևելյան մասերում, իսկ թուրքերը՝ արևելյան և հարավային մասում:

Այդ երկու քաղաքամասերը սահմանագատված էին:

3. ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Շուշվա հայ բնակչությունն զբաղվում էր տնայնագործությամբ, արհեստներով, առևտրով՝ վաճառականությամբ, և հիմնարկներում աշխատելով: Արհեստավորներն զբաղվում էին կոշկակարությամբ, դերձակությամբ (ասիական և եվրոպական), ժամագործությամբ, աստղձագործությամբ, թիթեղագործությամբ, ոսկերչությամբ, հյուսնությամբ և այլն:

Կային բազմաթիվ կոշկարարներ, որոնք մեծ մասամբ կարում էին չմուշկներ՝ թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց համար:

Այստեղ առաջնակարգ տեղ էր բռնում առևտուրը: Խոշոր առևտրականներին կից՝ կային նաև բազմաթիվ մանրավաճառներ, որոնք հասարակությանը մատակարարում էին արդյունաբերական ապրանքներ ու կենսական անհրաժեշտ զանազան մթերքներ. սրանց էր թողնված ասպարեզն ամբողջապես:

Շուշում առևտուրն ամբողջովին գտնվում էր հայերի ձեռքին: Խոշոր առևտրականներն ստանում էին արդյունաբերական ապրանքները Ռուսաստանից և Լեհաստանի կենտրոնական քաղաքների ֆաբրիկաներից, օրինակ՝ Մոսկվա և Լոձ: Շուշվա թուրք վաճառականները, ինչպես և առանց բացառության Զանգեզուրի և Ղափանի վաճառականները, բոլորն էլ Շուշվա հայ խոշոր վաճառականների կլիենտներն էին. նրանցից ստանում էին մանուֆակտուրա և վաճառում իրենց շրջաններում:

Շուշվա խոշոր վաճառականներից հայտնի էին «Սյունիք» և «Պատիվ» ընկերությունները, Մկրտչյան և Բաբայան եղբայրները, Մելքում Խաչատրյանը, Զախար Մասկյանը, Իսախանյանը, եղբայր Եսայանները, Վարանցովը, եղբայր Ղազարյանները և այլք, կարելի է տասնյակներով թվել:

Այստեղ էր գտնվում «Զինգերի» գործակալությունը, որը հասարակությանը տալիս էր «Զինգեր» կոչված կարի մեքենաներ:

Այսպիսով, Շուշին խոշոր առևտրական կենտրոն էր:

Շուշվա, ընդհանրապես Ղարաբաղի արհեստավորությունը, շատ հայտնի էր իր շինարարական աշխատանքներով: Անդրկովկասի և Անդրկասպյան երկրների շինարարության մեծ մասը կատարվում էր Ղարաբաղի արհեստավորների ձեռքով: Քաղաքի ծայրամասերում պահում էին մեծ քանակությամբ անասուններ ու թռչուններ և այսպես, քաղաքի բնակչությանը մատակարարում որոշ չափով կենսամթերքներ:

4. ՇՈՒՇՎԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ

Կային շատ քաղաքացիներ, որոնք ապրում էին ռենտայով՝ անաշխատ եկամուտով: Նրանք իրենց դրամագլուխները տալիս էին տոկոսներով, բնակարանները վարձով և այլն:



Դրանք նախկին խոշոր, մեծաքանակ առևտրով զբաղվող մարդիկ էին, որոնք կապ ունեին պարսկական, ռուսական և եվրոպական շուկաների հետ: Մրանք, դիզելով մեծ կարողություն, իրենց ծերության հասակում ապրում էին Շուշիում:

Երկրորդ կարգի մարդիկ էին մեծաքանակ (оптови́й) առևտրականները, որոնք, կապ ունենալով ֆիրմաների հետ, ապրանքներ էին ստանում և մատակարարում թե՛ քաղաքում և թե՛ Շուշվա, Զանգեզուրի, Խաչենի, Զիվանշիրի շրջաններում՝ ունենալով, միևնույն ժամանակ, իրենց մանրածախ խանութները: Կային մանրածախս առևտրականներ, որոնք դարձյալ, կապ ունենալով Մոսկվայի և Լոձի գործարանների հետ, ստանում էին ապրանքներ և վաճառում իրենց խանութներում:

Կային մեծ քանակությամբ մրգավաճառներ, որոնք վաճառում էին թե՛ տեղական և թե՛ Պարսկաստանից ստացած չոր մրգեր: Քաղաքն ուներ մեծ քանակությամբ արհեստավորներ, որոնք ունեին իրենց համաքարությունները, որոնցից յուրաքանչյուրը ուներ, ըստ իր արհեստի, իր դրոշակը, ներքին կանոնադրությունը և այլն:

Առանձնապես աչքի էր ընկնում պղնձագործների համաքարությունը:

Կային ջրկիրներ, մշակներ և սևագործ բանվորներ:

Քաղաքի թոփխանայում կային բազմաթիվ բեռնակիրներ («համբալներ»), որոնք սպասում էին քաղաքացիների ծանրոցները տեղափոխելու համար և ստանում իրենց վարձը: Մրանք մեծ մասամբ պարսկահպատակներ էին Ղարադաղից՝ հայեր և պարսիկներ:

5. ՇՈՒՇՎԱ ՇՈՒԿԱՆ

Շուշին ուներ ճոխ ու հարուստ շուկա, որը ողողվում էր հեռու ու մոտիկ, հայ ու թուրք գյուղացիության բերած գյուղատնտեսական և այլ տեսակի մթերքներով:

Քաղաք էին բերում հացահատիկներ, ալյուր, միս, կաթնամթերքներ, խմիչքներ, թռչուններ, կենդանիներ, վառելիք, բանջարեղեն, պտուղներ, բուրդ, բամբակ և այլն:

Շուշվա բնակչությունն իր նիստ ու կացով, իր կենցաղավարությամբ հայաշատ քաղաքների շարքում ուրույն ու բացառիկ տեղ էր գրավում: Շուշեցի հայ ընտանիքը, համաձայն նրա նախնիների սովորության, ունևոր թե չքավոր, յուրաքանչյուրն իր միջոցների համաձայն, օգոստոսից մինչև հոկտեմբեր աշխատում էր ամբողջ տարվա իր պաշարը պատրաստել: Նա իր տանը պետք է ունենար այն ամենը, ինչ գործադրվում էր իր տնտեսության մեջ:

Նա յուրաքանչյուր տարվա սկզբին պատրաստում էր ամբողջ տարվա համար ա) վառելիք, բ) սննդամթերքներ և գ) հագուստ: Այժմ կանգ առնենք դրանց վրա առանձին-առանձին:

6. ՎԱՌԵԼԻՔ, ՄՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐ ԵՎ ՀԱԳՈՒՍՏ

Վառելիք

Շուշվա բնակիչ հայր պետք է պատրաստեր երկու տեսակ փայտ՝ վառարանի և օջախի:

ա) Վառարանի փայտը գնվում էր սայլերով, որ քաղաք էին բերում Զրաբերդի ու Խաչենի անտառներից և կտրտելով դարսում պահեստում: Կային շատ տանտիրուհիներ, որոնք հաշվում էին փայտի կտորները և հաշվում ձմեռվա օրերը՝ հոկտեմբերի 15-ից մինչև ապրիլի 15-ը և այդ ձևով իմանում մոտավորապես, թե քանի կտոր փայտ կգործադրվի այդ ժամանակամիջոցում և ըստ այնմ էլ՝ ձմեռվա պաշարը հոգում:

Կային մարդիկ, որոնք գույգ-գույգ շրջում էին տները՝ վերցրած իրենց հետ փայտ կտրտելու համար հատուկ պատրաստած հաստոց: Նրանք իրենց աշխատանքի վարձն ստանում էին փողով:



բ) Օջախի համար գործադրվելիք փայտը լինում էր բարակ, և գնում էին բեռներով, որ քաղաք էին բերում մեծ մասամբ Շուշվա մոտ գտնվող Ղայբալու, Քարինտակ, Մղնախ և այլ գյուղերից: Բացի օջախի փայտից, գնում էին նաև ածուխ, որ բերում էին գլխավորապես Թաղլար և Տումի գյուղերից:

Մանրամասեր

1) Հաց

Շուշեցի հայի հացը լավաշն էր: Նա գործադրում էր միշտ ամենօրյա ճաշին և ընթրիքին, իսկ առավոտները՝ նախաճաշին, ուտում էր թարմ մատնաքաշը, որ առավոտյան գնում էր հացի փուտերից:

Կարևոր էր համարում ավելացնել, որ Ղարաբաղի ժողովրդի գործածական հացը լավաշը չէր, այլ թոնրով թխած կլոր հացը:

Շուշվա բնակչության մեծ մասը՝ որպես դրսից եկածներ, որոնց գործածական հացը լավաշն է եղել, այստեղ էլ պահպանել են լավաշի գործածությունը:

Շուշվա հայ բնակչության մեծագույն մասը տարեկան երկու անգամ լավաշ էր թխում՝ մոտավորապես հոկտեմբերին և փետրվարին, յուրաքանչյուր անգամ 10, 15, 20 փութ՝ նայած նրա ընտանիքի մեծությանն ու կարողությանը:

Ղարաբաղի այլուրի հետ խառնում էին Ռուսաստանի այլուր և թխում լավաշ: Լավաշը, տեղն ու տեղը չորացնելով, դարսում էին տանիքում՝ հատուկ պաստրաստած տեղ և ծածկում շորով, որ կոչվում էր «ջեջիմ» կամ «մեզար»: Յուրաքանչյուր օր տանտիկինը երեկոյան վերցնում էր լավաշից, թրջում գոլ ջրում և փաթաթում շորի մեջ, հետո մկրատով կտրտելով՝ դարսում «ղազանի» (պղնձի) մեջ, որտեղ նա կարծես թարմանում էր:

2) Յուղ և պանիր

Շուշեցի հայը երկու տեսակ յուղ պետք է ունենար՝ կովի և ոչխարի հալած դմակը, իսկ հմուտ տանտիկինը գիտեր, թե երբ և որ տեսակ կերակրի մեջ պետք է գործադրվի դրանցից յուրաքանչյուրը: Նա պետք է որոշ չափով ունենար նաև ձեթ: Այդ ժամանակ, բացի կտվիհատի ձեթից, Ղարաբաղի ժողովուրդը ոչ մի գաղափար չունեին մյուս տեսակների մասին:

Նա պատրաստում էր նաև երկու տեսակ պանիր՝ մոթալի և կտորներով աղ դրած:

Քաղաքի կենտրոնական մասում՝ Ղազանչեցոց եկեղեցուն կից փոքրիկ հրապարակում էր գտնվում քաղաքի միակ «ղափանը», որտեղ գյուղացիք բերում էին այլուր, ցորեն, գարի ու կշռելով վաճառում քաղաքացիներին, շան անգամ էլ գնում էին ընտիր ցորեն և աղում քաղաքի արաղացում ու այսպիսով թխում լավաշ հաց:

3) Որպես պաշար ձմեռվա համար պատրաստում էին կորկոտ (ձավար) երկու տեսակ՝ ծեծած և աղած: Ծեծած կորկոտը պատրաստում էին հետևյալ կերպ. նախ ընտիր ու մաքուր ցորենից վերցնում էր յուրաքանչյուր ընտանիք իր կարիքի չափով: Յուրաքանչյուր եկեղեցու գավթի կից փոքրիկ սենյակում հարմարանք էր ստեղծված՝ ցորենը ծեծելու և կորկոտ պատրաստելու համար: Այդ հարմարանքը Ղարաբաղի բարբառով կոչվում էր «դինգ». յուրաքանչյուր քաղաքացի կորկոտ աղալու համար տանում էր իր ցորենը և «դինգով քաշել տալիս»:

Յուրաքանչյուր ընտանիք, նայած նրա մեծությանը, կարողության ու պահանջին, գնում էր և բրինձ: Շուշեցու ընտանիքում ավելի հարգի էր «Ալքուլա» կոչված բրինձը:

Աշնանը նա գնում էր մեծ քանակությամբ սոխ, գետնախնձոր («կարտոշկա»), ճակնդեղ, գազար և այլն:



4) Պտուղներ

Ղարաբաղը հարուստ է բազմատեսակ պտուղներով: Աշնանը գնում են մեծ քանակությամբ տանձ, խնձոր, նուռ, սերկևիլ, խաղող և այլն, մառանում պատրաստում կախաններ և մաս-մաս գործածում տարվա ընթացքում:

Դուք հաճախ կհանդիպեիք Ղարաբաղի երեք փեշանի այսներին, որոնք հիվանդներին այցելելիս կհանեին իրենց արխալուղի գրպաններից զանազան պտուղներ և տալով նրան՝ ասում. «Առ, քեզ մատաղ, տղապետ ա, առ կեր, վեր սըրտդ հվանա...»:

5) Թթվեղեն և կանաչեղեն

Շուշեցու սննդի կարևոր մասն էին կազմում թթվեղենն ու կանաչեղենը: Հոնը, մոշը, սալորը եփում էին (խաշ են տալիս) և ապա չորացնում կամ դրանցից պատրաստում լավաշա ու տարվա ընթացքում գործածում կերակուրների մեջ որպես համեմունք:

Կերակուրների մեջ կամ ճաշի ժամանակ գործածում էին նաև բազմատեսակ կանաչեղեն՝ զանազան ձևերով: Այսպես՝ օրինակ.

ա) Կանաչեղեն կամ բանջարեղեն, որ թթու էին դնում, օրինակ՝ կաղամբ, պոմիդոր, բիբար, վարունգ, սոխ, սխտոր, կնազոխ, սիբեխ և այլն:

բ) Կանաչեղեն, որ գործադրում էին չորացրած վիճակում իբրև համեմ, օրինակ՝ կինձ, նանա, ռեհան, սամիթ, բիբար, թարխուն և այլն:

գ) Բույսեր, որ կանաչ վիճակում հյուսում էին, չորացնելով թողնում ձմռանը գործածելու իբրև կերակուր, օրինակ՝ շեպ, ավելուկ, կոմզուկ, բանջար և այլն:

դ) Մի քանի տեսակ կանաչեղեն, որ գործածում էին թարմ վիճակում՝ եփած կամ տապակած, օրինակ՝ փիփերթ, աղցան, տակ, ավելուկ, շեպ, ծնեփուկ, խնջլոզ, դանդուր, սպանաղ և այլն:

ե) Կանաչեղեն, որ գործածում էին ամեն օր՝ ճաշի ժամանակ, թարմ վիճակում, օրինակ՝ կինձ, կոտեմ, թարխուն, նանա, բողկ, սոխ, ռեհան, քյարավուզ, բանջար, բիբար և այլն:

զ) Գարնանը քաղում են ճոճոռկ, թալ, տակ, սավզի, եղինջ, նանա, թրթնջուկ, կզդոփու, պառավի պորտ, շրեշ և այլն, մանր կտրտում, ապա խառնում մանր կտրտած սոխ, բիբար, ձեթ, մաս-մաս դնում պատրաստված խմորի գնդի մեջ, թխում սաջի վրա: Այն կոչվում է «ժընգալով» հաց կամ «կոտոպ»:

Շուշին տարվա բոլոր եղանակներին ունենում էր թարմ կանաչեղեն, որը մատակարարում էր քաղաքին մոտ գտնվող Դաշուշենը, որին ժողովուրդն անվանում էր «մատաղ ուտող» դաշուշենացիք: Մակայն հետագայում միանգամայն փոխվում է դրությունը:

Այս գյուղացիները կառուցում են ջերմոցներ և զարկ տալիս կանաչեղենի մշակությանը: Քաղաքի բնակչությանը կանաչեղեն մատակարարելով՝ մեծ հարստություն են ձեռք բերում և կառուցում գեղեցիկ բնակարաններ ու փոխում իրենց կենցաղը: Կաղամբ, թարխուն և վարունգ՝ մեծ քանակությամբ, նույնպես մատակարարում էին Ղալբալու և Քարինտակ գյուղերը, բացի կանաչեղենից մատակարարում էին նաև կաթ, մածուն, թուֆ՝ քթոցներով (ճվարաններով):

Քաղաքին մոտ է գտնվում նաև Շուշու գյուղը, որը քաղաքին տալիս է դարման, ցաք (փուշ)՝ ցանկապատների համար: Համարյա ամեն օր շուշեցիներին շուկայում կարելի էր տեսնել էշերը բարձած դարմանով և ցաքով: Ի միջի այլոց, այս գյուղը տվել է մի շարք անվանի մարդկանց, օրինակ՝ անվանի հայ գրականագետ Արսեն Տերտերյանին, երաժշտագետ Ալեքսանդր Միրզոյանին և այլն:

6) Քաղցրավենիք և մուրաբաներ



Շուշեցի հայի սեղանի մի պատվավոր մասն էլ կազմում էին քաղցրավենիքներն ու մուրաբաները: Հմուտ տանտիկիները ժամանակին պատրաստում էին հոնի, սերկևիլի, ընկույզի, մոշի, բալի և այլ տեսակի պտուղներից քաղցրավենիքներ և մուրաբաներ, որ գործածում էին տոն ու նշանավոր օրերին, ուրախ ժամանցներին, մոտիկ բարեկամ ու պատվավոր հյուրերին հյուրասիրելիս:

7) Կերակուրները

Մասնավորապես Շուշին հայտնի էր իր բազմատեսակ անուշահամ, անուշահոտ ու սննդարար կերակուրներով: Հայտնի էին նրա կորկոտը, դոլման, քյուֆթան, կլոլակը, բոզբաշն ու հարիսան կամ բանջարը, խաշիլն ու քըլընգոշը, Ղարաբաղի խորովածը, և Ղարաբաղի երեք փեշանի այանները կամ տանտիկիները կերակուրներն ավելի դուրալի ու ախորժելի դարձնելու համար նրանց մեջ ավելացնում էին զանազան համեմներ, պտուղներ և թթվեղեն:

Հագուստ

Այն, ինչ որ ասացինք վառելիքի և սննդամթերքի պատրաստություններ տեսնելու մասին, նույնը չենք կարող ասել հագուստի վերաբերյալ:

Քաղաքի բարձր և միջին խավերը հագնում էին մեծ մասամբ եվրոպական տարազով և ունեին հագուստներ՝ տոն, կիրակի, հասարակական վայրերում գտնվելու ժամանակ հագնելու հատուկ հագուստ, իսկ սովորական, առանձին կյանքում և աշխատանքի ժամանակ՝ այլ հագուստ, իսկ ստորին և չքավոր խավերը միայն մի հագուստ ունեին, այն էլ շատերի մոտ հին ու կարկատած:

Քաղաքում ընդհանրապես հագնում էին եվրոպական տարազ, իսկ մի զգալի մասը դեռ շարունակում էր գործածել տեղական տարազ:

7. ՊԵՏԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԳՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական-վարչական ու հասարակական հիմնարկություններ

Քաղաքի գլխավոր ու ավելի կարևոր հիմնարկները հայկական մասում էին գտնվում:

Այստեղ էին գտնվում փոստն ու հեռագրատունը, գանձարանն ու դատարանը, զորանոցն ու զինվորական հիվանդանոցը (госпиталь), քաղաքի բաղնիքը, որը փոստից 50-60 քայլ դեպի ցածր էր գտնվում և պատկանում էր քաղաքացի Ղահրամանյանին: Այն բաղկացած էր ընդհանուր լողաբանից և առանձին համարներից:

Ամեն օր՝ ժամը 12-ին, սուլում էր բաղնիքի շչակը՝ ազդարարելով հասարակությանը, որ նա գործում է:

Ընդհանրապես օրվա ժամերի և ժամանակի մասին միշտ՝ զիշեր թե ցերեկ, Ագուլյաց և Ռուսաց եկեղեցիների զանգերով հաղորդում էին հասարակությանը:

Այստեղ էին գտնվում ոստիկանատունը, քաղաքային խորհուրդն ու գավառական հիմնարկությունները, Ղարաբաղի հայոց թեմի առաջնորդարանը, ձմեռային ու ամառային ակումբները, հոյակառույց ու վերասլաց եկեղեցիները, մինչև անգամ նշանավոր փողոցները, օրինակ՝ Լոռիս-Մելիքյան, Տեր-Ղուկասյան, Ղափան-Մեյդան, զորանոցի, առաջնորդարանի և այլն: Քաղաքի միակ գեղեցիկ, ընդարձակ զբոսավայրն էլ էր այստեղ գտնվում:

Լոռիս-Մելիքյան փողոցի վրա էր գտնվում քաղաքի միակ հյուրանոցը, որը նույնպես մասնավոր սեփականություն էր:



Հայկական մասում էր գտնվում ամբողջ Ղարաբաղի միակ հիվանդանոցը, որը զետեղված էր եղբայր Ժամհարյանների երեք հարկանի փառահեղ շենքում: Հիվանդանոցը պահպանվում էր նույն Ժամհարյանների միջոցներով: Շենքին կից գտնվում էր հիասքանչ ու ընդարձակ այգին:

Հիվանդանոցի կազմը բաղկացած էր 5-6 բժշկից և 10-12 բուժքույրերից ու այլ ծառայողներից: Հիվանդանոցին կից էր գտնվում բուժկետը (амбулатория), որը մշտական, ձրիաբար ցույց էր տալիս հասարակությանը բուժօգնություն: Հիվանդանոցում բուժումը կատարվում էր նույնպես ձրիաբար:

Հիվանդանոցն ուներ 100-150 մահճակալ: Ղարաբաղի բոլոր շրջաններից հիվանդներին բերում էին այստեղ, որտեղ թեթև հիվանդները, ստանալով բժշկական օգնություն, վերադառնում էին իրենց բնակավայրերը, իսկ ծանր հիվանդները տեղավորվում էին հիվանդանոցում: Այստեղ կար երեք դեղատուն:

Շուշվա բնակչության ամենամեծ բժիշկը նրա առողջարար կլիման էր, սառնորակ ջուրը, մաքուր ու հարուստ բնությունը և առողջարար օդը:

Մեծահասակ բնակչության 70-80% իր կյանքում չէր տեսել ո՛չ բժիշկ, ո՛չ հիվանդանոց և ո՛չ էլ գործածել որևէ դեղ: Այդ բոլորին փոխարինել են Շուշվա հիասքանչ ու չքեղագարդ բնությունն ու առողջարար կլիման:

Չնայած այդ բոլորին՝ չգիտեմ ինչով բացատրել, որ Շուշին զգալի թվով ուներ հոգեկան հիվանդներ, որոնք թափառում էին քաղաքի փողոցներում՝ ոտաբոբիկ, գլխաբաց, համարյա մերկ, և չկար որևէ պետական կամ հասարակական կազմակերպություն, որ կարողանար ամոքել այդ թշվառների վիճակը: Սա Շուշվա խոշոր բացն էր:

Հոգեկան հիվանդներն օրը ցերեկով շրջում էին փողոցներով, նրանց հետքից խմբված տասնյակներով երեխաներ, «այ... հույ» կանչելով, վազում էին՝ քարեր շարտելով:

Հոգեկան հիվանդների մեջ կային այնպիսի կատաղիները, որոնցից երեխաները սարսափում էին ու նրանց հանդիպելիս իսկույն փախչում, իսկ նրանք, տասնյակներով քարեր գրկած, հարձակվում էին՝ սարսափահար անելով նույնիսկ մեծահասակներին: Կային այնպիսի հոգեկան հիվանդներ, որոնց հարազատները թույլ չէին տալիս փողոց դուրս գալ, նրանք մնում էին տանը՝ առանձնացված մի սենյակում՝ կապած ոտքերով ու ձեռքերով:

Շուշվա հոգեկան հիվանդներից մի քանիսին ճանաչում էր հասարակության մեծ մասը, օրինակ՝ Հարությունը, որը հայտնի էր «Ատան» անունով, Ամին, պարոն Իվանը կամ Միլիոնչունց Իվանը, Պըլ Ստեփանը և ուրիշներ: Ատանը կամ Հարությունն արհեստով դերձակ էր, նա ամուսնացած չէր և ապրում էր իր մոր հետ: Սա լուռ ու մունջ շրջում էր փողոցները և քարերը ժողովելով՝ կիտում փողոցի անկյուններում:

Ասում էին, որ նրա հիվանդությունը ժառանգական էր. նրա այդ հիվանդագին վիճակը շարունակվում էր ամիսներ, և փողոցներից տուն չէր դառնում, իսկ երբ ուշքի էր գալիս, ողբալով ասում էր. «Տեսնես աշխարհումս ինձնից դժբախտ մարդ կա՞, թե՞ միայն ես եմ»:

Հիվանդագին դրությամբ, գիշեր թե ցերեկ ոտաբոբիկ ու գլխաբաց, շրջում էր փողոցները, և լուսնյակ գիշերներին լսվում էր նրա մելամաղձոտ ու ողբացող «բայաթիները». նրա ձայնը լսողներից շատերն արցունք էին թափում:

Կուլտուրական հիմնարկություններ

Շուշին ուներ երկու ակումբ՝ ձմեռային, որը գտնվում էր քաղաքի կենտրոնում, և ամառային, որը գտնվում էր քաղաքի արևմտյան մասում գտնվող զբոսավայրի մի անկյունում: Ակումբն ուներ



իր հրաշագեղ ծաղկանոցը: Այստեղ մի քանի ամիս կյանքը եռում էր: Դժբախտաբար քաղաքի աշխատավորությունը շատ քիչ էր օգտվում:

Ամռանն Անդրկովկասի զանազան քաղաքներից գալիս էին դերասանական խմբեր, որոնք սքանչելի քաղաքն ավելի էին գրավիչ դարձնում:

Նրա հով ու զով, առողջարար կլիմայի, գեղեցիկ բնության ու զովարար ջրի շնորհիվ քաղաքն ամռան ամիսներին բոլորովին այլ տեսք ու կյանք էր ստանում:

Մայիսի սկզբներին կռունկների շարանների պես Անդրկովկասի և Միջին Ասիայի զանազան վայրերից այստեղ էր գալիս մեծ բազմություն, որի շնորհիվ քաղաքի եռն ու զեռը ավելի էր բազմապատկվում:

Չնայած որ Շուշին երկաթուղու կայարանից 100 կմ-ից ավելի հեռու էր գտնվում, որ միանգամայն զուրկ էր կանոնավոր փոխադրական միջոցներից և կայարանից տեղափոխվելը կապված էր մեծ դժվարությունների ու անախորժությունների հետ, այնուամենայնիվ մարդիկ հանձն էին առնում այդ ամենը, միայն թե իրենց հանգիստն անցկացնեն նրա սքանչելի ծոցում:

Քաղաքի միակ զբոսավայրը, որը գտնվում էր նրա արևմտյան՝ ամենաբարձր վայրում, ամռան ամիսներին նրա գեղատեսիլ լանջի վրա բազմաթիվ սեղաններ էին բացվում՝ ինքնաեռներով ու զանազան ըմպելիքներով, որտեղ քաղաքացիները հանգստանում էին և ուրախ ժամանցներ ունենում:

Նախկինում անդրկովկասյան քաղաքներից Շուշին միակն է եղել, որ ունեցել է հատուկ թատրոնական շենք՝ Խանդամիրյանի թատրոնը: Նրա բեմի վրա խաղացել են մեր ժողովրդի լավագույն դերասաններ Ադամյանը, Սիրանույշը, Գալֆայանը, Ռշտունին, Ավետյանը և ուրիշները:

Շուշիում եղել է Հայոց բարեգործական ընկերության գրադարան՝ 100 հազարից ավելի ընտիր գրքերով: Գրադարանին կից կար նաև ընթերցարան, որը հասարակության ամենալայն շրջաններից մեծ քանակով հաճախորդներ ուներ:

Բացի դրանից, միջնակարգ դպրոցներին կից և քաղաքային խորհրդում կային նույնպես գրադարաններ: Շուշիում կար երկու տպարան (Տեր-Սահակյանի և Բաբաջանյանի), որտեղ տպագրվում էին թերթեր և լույս ընծայվում գրքեր:

Նախկինում Թեմական դպրոցը նույնպես ուներ տպարան, որը վերջին ժամանակներում անգործության էր մատնված՝ շատ մասեր փչացած լինելու պատճառով:

Քաղաքն ուներ մի քանի գրախանութներ:

Ղարաբաղի միակ մանկատունը, որտեղ պատսպարվել էին մոտ 100 երեխաներ, որոնցից 70 հոգի տաճկահայ երեխաներ էին, գտնվում էր քաղաքի հայկական մասում:

Այստեղ գտնվում էր երկու մանկապարտեզ՝ ուսուցիչ Քրիստափոր Փիրիջանյանի՝ ռուսաց լեզվով, որտեղից երեխաները փոխադրվում էին ռուսական դպրոցները, և Գրիգոր Գյուրջյանի՝ հայոց լեզվով, որտեղից երեխաները գնում էին հայկական դպրոցները:

Այստեղ կար նաև կար ու ձևի երկու դպրոց՝ Նվարդ Փիրումյանի և Գայանե Աթաբեկյանի: Այդտեղ դասատուներ էին Նվարդն ու Գայանեն:

Թեկուզ ոչ մասսայական բնույթ կրող, Լոռիս-Մելիքյան փողոցում՝ Աթաբեկյանի շենքում էր գտնվում կինոն, որը նույնպես մասնավոր սեփականություն էր:



Դպրոցներ

Շուշվա հայկական մասուն կային մի շարք դպրոցներ՝ տարրական, յոթնամյա և միջնակարգ: Այդ դպրոցները բաժանվում էին երկու խմբի. ա) պետական դպրոցներ, որտեղ դասավանդումը տարվում էր ռուսաց լեզվով, և բ) հայկական դպրոցները, որոնք պաշտպանվում էին ժողովրդի միջոցներով, դասավանդումը կատարվում մայրենի լեզվով, և ղեկավարությունը, թեկուզ անվանական կերպով, գտնվում էր հոգևորականության ձեռքին:

ա) Պետական դպրոցներ

1. Քաղաքային դպրոց (городское училище). սա ուներ երեք բաժանմունք և չորս դասարան, ընդամենը յոթ տարվա դասընթացը: Այստեղ սովորում էր մոտավորապես 300-350 աշակերտ: Սա գուտ տղայոց դպրոց էր:

2. Ռուսական Մարիամյան դպրոց կամ պրոգիմնազիա. բաղկացած էր 3 բաժանմունքից և 3 դասարանից՝ ընդամենը 6 տարվա դասընթացը: Այստեղ սովորում էին միմիայն աղջիկները՝ մոտ 230-250 հոգի:

3. Ռուսական ռեալական դպրոց, որը բաղկացած էր 2 բաժանմունքից և 7 դասարանից՝ 9 տարվա դասընթացով: Այստեղ սովորում էին մոտավորապես 600-700 աշակերտ: Մինչև 1907թ. դպրոցը սեփական շենք չուներ և գետեղված էր Լոռիս-Մելիքյան փողոցի վրա՝ «Մարդուն» հյուրանոցի դեմ ու դեմ գտնվող Աթաբեկյանների տանը: 1908թ. դպրոցը տեղափոխվեց իր նորակառույց, հոյակապ շենքը, որը գտնվում է քաղաքի արևմտյան մասում՝ զբոսավայրին կից:

Այս շենքը կառուցեցին եղբայրներ Առաֆելյանները, որոնք շուշեցի էին և նավթարդյունաբերող: Քաղաքն ավերվելուց շենքը մնացել է անվնաս: Բացի այդ դպրոցներից, կային նաև 3 տարրական դպրոցներ, որտեղ սովորում էին տղաներն ու աղջիկները միասին, մոտավորապես 200 աշակերտ-աշակերտուհիներ և 2 ուսուցիչ: Տարրական դպրոցում անցնում էին կրոն՝ հայոց լեզվով:

Ռուսական դպրոցներում սովորում էին բոլոր ազգությունների երեխաները: Այդ դպրոցների աշակերտության 85-90%-ը հայ երեխաներ էին: Այդ դպրոցներում տրվում էին հատուկ ժամեր՝ անցնելու հայ երեխաների հետ կրոն. ժամերն օգտագործում էին սովորելու նաև մայրենի լեզուն:

Կրոնի ավանդումը պարտադիր էր բոլոր հայ երեխաների համար, և ժամերը մտցված էին դպրոցի ընդհանուր դասացուցակի մեջ և հրավիրված մայրենի լեզուն տիրապետող մարդկանց. օրինակ՝ Ռեալական դպրոցում ուսուցիչ էր ճեմարանավարտ Եղիշե քահանա Թարխանյանը, իսկ քաղաքային դպրոցում՝ Տեր-Մուշեղ Վարդապետյանը՝ թեմականավարտ:

բ) Հայկական դպրոցներ

1. Մարիամյան օրիորդաց դպրոց. սա բաղկացած էր 3 բաժանմունքից և 4 դասարանից, ընդամենը 7 տարվա դասընթացը, որտեղ սովորում էին 350-400 աշակերտ-աշակերտուհիներ:

Այստեղ առաջին, երկրորդ և երրորդ բաժանմունքներում սովորում էին և տղաները, իսկ չորրորդ բաժանմունքից կամ առաջին դասարանից տղաները տեղափոխվում էին Թեմական դպրոցը:

Մարիամյան օրիորդաց հայոց դպրոցը գետեղված էր Ղարաբաղի թեմի առաջնորդարանին կից գտնվող եռահարկ շենքում:

2. Ղարաբաղի հայոց Թեմական՝ պատմական միջնակարգ դպրոցը: Սա բաղկացած էր 1 բաժանմունքից և 7 դասարանից, որտեղ սովորում էին միմիայն տղաները՝ 400-500 հոգի: Այդ դպրոցը գտնվում էր Լոռիս-Մելիքյան փողոցի վրա, որտեղ գտնվում էին իրար շատ մոտ Ղարաբաղի թեմի կոնսիստորիան, առաջնորդարանը և Մարիամյան օրիորդաց դպրոցը:



3. Մարիամ Ղուկասյան օրհորդաց գիմնազիան բաղկացած էր 8 դասարանից, որտեղ սովորում էին 450-500 աշակերտներ: Այդ դպրոցը գետեղված էր նույն Ղուկասյանների կամ Քարհանանց տան մի մաս՝ նորակառույց շենքում, որի առաջ տարածված էր ընդարձակ, պտղատու մի այգի:

Թե՛ Ղուկասյան օրհորդաց գիմնազիան և թե՛ Թեմական դպրոցն ունեին մանկավարժական թեքում, որոնց նպատակն էր Ղարաբաղի տարրական դպրոցների համար պատրաստել մանկավարժական կադրեր:

Բացի այդ դպրոցներից՝ կային նաև տարրական երկսեռ ծխական դպրոցներ:

ա) Ագուլյաց եկեղեցական ծխական դպրոց. սա բաղկացած էր 2 բաժանմունքից՝ 2 ուսուցչով, որտեղ սովորում էին 150-200 երեխաներ: Դպրոցը գտնվում էր Ագուլյաց եկեղեցու բակում:

բ) Կանաչ ժամի կամ Վերին թաղի եկեղեցական ծխական դպրոցը, որը նույն եկեղեցու բակում ուներ սեփական շենք: 1903-1910թթ. այս շենքում կար ռուսական տարրական դպրոց, որը փակվեց, և տեղը բացվեց հայկական դպրոց:

Այս դպրոցն ուներ 3 բաժանմունք՝ 7 ուսուցչով, որտեղ սովորում էին 250-280 աշակերտ-աշակերտուհիներ:

գ) Մեղրեցոց եկեղեցական ծխական երկսեռ դպրոց, որը Մեղրեցոց եկեղեցու բակում ուներ դպրոցական երկհարկանի մի գեղեցիկ շենք և ուներ երեք բաժանմունք՝ չորս ուսուցչով, որտեղ սովորում էին 280-300 երկսեռ երեխաներ: Հայկական դպրոցները, թեկուզ ձևականորեն կոչվում էին «եկեղեցական», «հոգևոր», ոչնչով չէին փոխում նրանց բովանդակությունը: Այդ դպրոցները հայ ժողովրդի ազգային դպրոցներն էին, որոնց ղեկավարությունը գտնվում էր ժողովրդի ձեռքին և պահպանվում նրանց ժողոված գումարներով ու զանազան եկամուտներով:

Ահա պետական և հայկական բոլոր այն դպրոցները, որոնք գտնվում էին հայկական քաղաքամասում:

Մի քանի խոսք Շուշվա և ամբողջ Ղարաբաղի ինտելիգենցիայի մասին:

Ղարաբաղն ինտելիգենցիայի մի հսկայական բանակ ուներ, որը թե՛ քանակով և թե՛ որակով շատ բարձր էր շատ քաղաքների ինտելիգենցիայից:

Ղարաբաղի երիտասարդներից (թե՛ արական և թե՛ իգական) մեծ քանակությամբ բարձրագույն կրթություն էին ստանում ոչ միայն Ռուսաստանի բարձրագույն հիմնարկներում, այլև արտասահմանյան երկրներում՝ Գերմանիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում և այլն:

Կուլտուրայի տեսակետից Շուշին բացառիկ ու ինքնուրույն տեղ էր գրավում մյուս քաղաքների համեմատությամբ:

Ինչ մնում է Շուշվա ադրբեջանական քաղաքի մասին ընդհանրապես և մասնավորապես՝ նրա պետական և ազգային դպրոցների, կուլտուր-կրթական կազմակերպությունների և հիմնարկների մասին, ոչինչ ասել չեմ կարող, որովհետև ծանոթ չեմ և չունեմ բազմակողմանի տեղեկություններ:

Միայն ընդհանուր գծերով կարելի է նշել, որ հայկական քաղաքամասն անհամեմատ ավելի բարեկարգ վիճակում էր գտնվում ու կուլտուրապես ավելի բարձր մակարդակի վրա էր, քան Շուշվա ադրբեջանական քաղաքամասը:

8. ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարևոր են համարում թվելու մի շարք սովորություններ, որոնք տեղ են գտել այդ ժողովրդի կենցաղում:



Շուշվա ամբողջ հայ բնակչությունը բաժանված էր Ագուլյաց, Ղազանչեցոց, Կանաչ ժամի, Մեղրեցոց եկեղեցիներ և Կուսանաց անապատի (վանքի) վրա: Յուրաքանչյուր եկեղեցի ուներ 4-5 քահանա, իսկ Կուսանաց անապատում կար միայն մի քահանա և 6-7 կին (կույսեր):

Կիրակի և տոն օրերին ժողովուրդը գնում էր եկեղեցի, աղոթում ու մոմ վառում: Քաղաքի ուխտատեղիներից ամենանշանավորն էր «Սուրբ Սարիբեկը», որը գտնվում էր քաղաքի մոտ գտնվող Դաշուշենում: Զատկին, Վարդավառին ու այլ նշանավոր տոներին քաղաքի հայ բնակչությունը խմբերով գնում էր այդտեղ ու զոհեր մատուցում, որոնցից լի ու լի օգտվում էր այդ գյուղի բնակչությունը, որի համար էլ Ղարաբաղի բնակիչները ասում են «Մատաղ ուտող դաշուշենացիք»:

Քաղաքի բնակիչները, բացի անհատական կերպով զոհ մատուցելուց, մատուցում էին նաև ամբողջ թաղերով: Նշանավոր տոներին, տարվա մեջ մի անգամ, զոհ էին մատուցում. թաղերով փող էին ժողովում իրենց ծխերից, գնում էին ոչխարներ, թխում էին լավաշ հաց և եկեղեցիների բակերում մորթոտում ոչխարներ, կրակ վառում, եփում միսը, և մեծ-մեծ գնդերով փաթաթում լավաշների մեջ ու բաժանում իրենց ծխերին:

Կային բնակչության կենցաղի մեջ մտած սովորություններ, օրինակ՝ երբ պետք է տեղի ունենար որևէ ամուսնություն, ամուսնացողների ծնողները դիմում էին զանազան տղամարդկանց կամ կանանց՝ խնդրելով աջակցել, որոնք լավ էին ճանաչում թե՛ աղջկերանց և թե՛ տղաներին:

Այսպես, օրինակ, կար մի մրգավաճառ, որի խանութը գտնվում էր ձմեռային ակումբի առաջին հարկում, բանուկ փողոցի վրա գտնվող մի փոքրիկ սենյակում, որի անունն էր «Ուզուն Գրիգոր», որը միջին տարիքի և շատ երկար հասակի տեր մարդ էր:

Ուզուն Գրիգորը քաղաքի հայտնի տների հետ մոտիկ ծանոթություն ուներ և ճանաչում էր նրանց աղջիկներին:

Նրա խանութի առջևով՝ բանուկ փողոցով անց ու դարձ անող աղջիկները չէին վրիպում նրա աչքից, և նա ամեն անգամ կավիճով նշանակում էր դրան վրա աղջկա ազգանունը և նրա առաջ ուղղահայաց նշանակում մի գիծ՝ այնքան անգամ, որքան նա կանցներ խանութի առջևով: Այս նշանակումները նա կատարում էր բոլոր այն աղջիկների վերաբերյալ, որոնք ամուրի էին ու անցնում էին նրա խանութի առջևով:

Ուզուն Գրիգորը մեծ համբավ ուներ քաղաքացիների շրջանում «որպես լավ աղջիկ ճանաչող», ուստի միշտ դիմում էին նրա կարծիքն իմանալու որևէ աղջկա մասին: Նա իսկույն նայում էր դրան վրա կատարած իր նշումներին՝ հաշվելով, թե տվյալ աղջիկը քանի անգամ է անցել այդտեղով և ըստ այնմ հայտնում իր «հեղինակավոր» կարծիքն աղ աղջկա մասին՝ դրական կամ բացասական:

Հարսանիքների ժամանակ ընդունված երևույթ էր «կանչը»: Հարսանիքը տևում էր 3-4 օր: Վերջին օրը ճաշելուց հետո թմբկահարը, իր թմբուկը վերցրած, մոտենում էր թամաղային և թմբուկը դնելով սփռոցի վրա՝ նրա առաջ, և ինքը չոքելով թմբուկի մոտ՝ իր փայտե կոպալներով դռնացնում է, որ նշանակում էր, թե սեղանակիցների ուշադրությունն է հրավիրում, որից հետո նա բարձր ձայնով դիմում էր բոլորին:

-Ա՛յ ժողովուրդ, էս ա 3-4 օր ա, մենք այստեղ քե՛ք ենք անում, մեր հարսանքատերը շեն կենա, նրա օջախը վարքար լինի, նրա տունը լիքը մնա և մենք էլ միշտ էլ ուրախության գանք այս տունը: Ա՛յ ժողովուրդ, խոսքն առաջ պատկանում է այս տանը մոտիկ ու հարազատ բարեկամներին. թող նրանք մոտենան և մեր թագավորին ու թագուհուն շնորհավորեն:

Այս հայտարարությունց հետո մեկ-մեկ մոտենում են և յուրաքանչյուրը թմբուկի վրա է դնում որոշ գումար: Լինում են և այնպիսիները, որոնք, բացի փողից, տալիս են որևէ նվեր՝ խալաթ,



օրինակ՝ թաշկինակ, շորացու և այլն: Երբ մեկը դրամը դնում էր թմբուկի վրա, թմբկահարը բարձր ձայնով հայտարարում էր.

- Ա՛յ ժողովուրդ, եկավ մեր փեսայի հորեղբայրը և տվավ Նիկոլայի մի ոսկի հինգանոց, շեն կենա, շեն կենա...

Սեղանակիցները ձայնակցում են թմբկահարին՝ շատ շեն կենա...

Մոտենում է մի ուրիշը:

- Ա՛յ ժողովուրդ, եկավ խաչեղբայրը և տվավ Նիկոլայի ոսկե մի տասանոց, շատ շեն կենա, իրան օջախն էլ վարքար մնա,- հայտարարում է թմբկահարը, որին ձայնակցում են սեղանակիցները՝ շեն կենա, տոնը վարքար լինի...

Եվ այդպես բոլոր սեղանակիցները՝ սկսած ամենամոտիկից, գալիս են բոլորը և որոշ գումար տալիս, իսկ թմբկահարը շարունակում է իր հայտարարությունները:

Երբ վերջանում է նվիրատվությունը, թամադան նրա մոտ նստած, գյուղում հարգված մի քանիսի հետ հաշվում է փողերը և հանձնում հարսանքատիրոջը, իսկ թմբկահարը հայտարարում է ժողոված դրամի գումարը:

Այս գործողությունը կոչվում էր «կանչ»:

Առաջին հայացքից այնպես է թվում, թե հարսանիքատերը իր հյուրերից վերցնում է նրանց վրա ծախսած իր գումարը, սակայն եթե խորը քննենք, մենք կգանք այն եզրակացության, որ «կանչը» հասարակական և տնտեսական հսկայական նշանակություն ունեցող երևույթ էր: Այս ձևով հասարակությունն օգնության էր հասնում հարսանքատիրոջը: Այս օգնությունը կատարվում էր փոխարինաբար, և այդ ժողովված գումարը համարվում էր փոխարինաբար տրված, որը նույնպես նրանց հարսանիքներին պետք է ներկայանար և մասնակցեր «կանչին»՝ վճարելով իրեն տրված գումարը: Այս սովորությունը կատարվում էր նրանց հարսանիքներին: Չնայած Ղարաբաղի գյուղերում շարունակվում էր այս սովորությունը, սակայն քաղաքում վերջին տարիներում մոռացության էր տրվել:

Այժմ էլ մի այլ սովորության մասին, որ տեղի էր ունենում նրանց դժբախտության ժամանակ: Կային հատուկ լավկան կանայք, որոնք հրավիրվում էին մահվան դեպքերում՝ երգելու: Մեր թաղում կար մի միջին տարիքի, բավական գեղեցիկ, հայկական տարազով, ճակատին երկու շարք ոսկի դրամներ շարած մի կին, որին կոչում էին Եվա բաջի: Եվա բաջին միշտ մահվան դեպքերում հրավիրվում էր զանազան տեղերից. գալով ննջեցյալի վրա բարձր ձայնով սուգ էր ասում, իսկ մնացած կանայք ձայնակցում էին նրան:

Համարյա ամեն օր Եվա բաջին հրավիրվում էր քաղաքի զանազան մասերից:

Կային բազմաթիվ սովորություններ, որոնք տեղի էին ունենում հասարակության կենցաղում՝ իրենց առօրյա կյանքում: Բավականանանք այս մի քանի օրինակներով:

9. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐԳ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑՅԱԼՈՒՄ

Ղարաբաղի երկու հիմնական բնակիչները՝ հայերը և թուրքերը, իրենց կենցաղավարությամբ շատ դեպքերում նմանվում էին իրար ու շատ դեպքերում էլ տարբերվում իրարից:

Անառարկելի է այն փաստը, որ նրանք իրենց կենցաղային բնագավառում շատ բան ունեն իրարից ընդօրինակած:

Դրանց փոխհարաբերություններն անցյալում եղել են խիստ մտերմական և մինչև անգամ բարեկամական: Այսպես, օրինակ, յուրաքանչյուր մի աղբրեջանցի ունեցել է մի հայ «քիրվա» կամ



«աշնա» և յուրաքանչյուր մի հայ ունեցել է իր աղբրեջանցի «քիրվան» կամ «աշնան», որոնք փոխադարձաբար պաշտպանել են սերտ, համերաշխ ու մտերմական հարաբերություններ:

Աղբրեջանցի «քիրվան» առանց քաշվելու միշտ գնում էր իր հայ «քիրվայի» տունը, մանավանդ ամռան ու աշնան ամիսներին, և նրանից ստանում թարմ բանջարեղեն, պտուղներ և այլ մթերքներ, որոնցից նա միանգամայն զուրկ էր, և առհասարակ բաժին ստանում այն ամենից, ինչ որ ուներ իր հայ «քիրվան»: Յուր հերթին էլ հայ «քիրվան» էր գնում իր թուրք «քիրվայի» տունը և նրանից ստանում յուղ, պանիր, բուրդ և այլն: Սրանք միշտ իրար մոտ էին լինում թե՛ տխրության և թե՛ ուրախության օրերին ու հարազատների նման ցավակցում, օգնում իրար, կամ ուրախանում իրար հետ միասին:

Դրանք հարսանիքներին կամ մկրտության ժամանակ շատ անգամ կնքահոր դեր էին կատարում՝ կանգնելով որպես խաչեղբայր, գրկելով նորածին երեխաներին որպես կնքահայր: Մինչև այժմ էլ արմատացած սովորություն է մեզ մոտ, երբ մի որևէ մարդու երեխաներ շարունակ մեռնում են, նա իր նոր ծնված երեխայի անունը դնում է աղբրեջանցու անուն, օրինակ՝ Ալավերդի, Ասադ, Հասան, Բահար, Գյուլարա, Հաշիմ և այլն...

Այսպես շատ երկար տարիներ շարունակել են նրանք իրենց խաղաղ ու համերաշխ կյանքը կողք կողքի: Սակայն անցան այդ երանելի ու բաղձալի օրերը, և հաջորդեցին դժբախտաբար դառն ու վշտալի օրեր: Անիրավ ու բռնակալ ցարական կառավարությունը 1905թ. թունավորեց այս երկու բարեկամների խաղաղ կյանքը, և ատելության կրքերն այն աստիճանին բորբոքվեցին, որ մի քանի անգամ քաղաքի լավագույն մասերը և շատ գյուղեր հրի ու սրի ճարակ դարձան:

1920թ. Աղբրեջանում բուն դրած տաճկական ազենտուրայի գործակալների պատճառով՝ Շուշվա հայկական մասը մոխրակույտերի վերածվեց, և բազմաթիվ տասնամյակների ընթացքում դառն զրկանքներով կուտակված աշխատանքների անզուգական արդյունքները հողս ցնդեցին:

Չկան այլևս այն հսկայական հարստությունը և այն բազմաթիվ խոշորագույն կուլտուրական նվաճումները, որոնք ձեռք էին բերվել հայ ժողովրդի լավագույն զավակների տոկուն, համառ ու քրտնաջան աշխատանքով:

Այդ անցյալի փառավոր ստեղծագործության արդյունքների փոխարեն այսօր մնացել են միմիայն ծվեն-ծվեն եղած սարսափեցուցիչ ավերակների ու փլատակների զարհուրելի կույտեր, որոնք այժմ հանդիսանում են որպես նրա փառավոր, սքանչելի անցյալի տխուր ու վշտալի հուշարձաններ...

Շուշի՛, որդիներիդ մի խոշոր մասը սրախողխող եղավ ավերակներիդ մեջ, մի մասն էլ, պանդխտության ցուպը ձեռն առած, չվեց դեպի օտար երկրներ:

Ճմլում ու տակն ու վրա է լինում քո անցյալ կյանքով սնուցած ու մեծացած մարդու հոգեկան աշխարհը... Շուշի...

Ղարաբաղ... Բազմաթիվ որդիներիդ են ոգևորվել քո դյուրիչ բնությամբ, քո պանծալի հերոսների անմոռաց սխրագործություններով և քո ժրաջան որդիների քրտնաթոր աշխատանքով կառուցված հեքիաթային քաղաք Շուշիով:

Իմ մանկության, պատանեկության ու երիտասարդության օրրան, որքան հարազատ ես և որքան դյուրիչ... երախտապարտ եմ քեզ... ուր էլ լինեմ, ինչպիսի դառնացած վիճակում, և քանի կբաբախի սիրտս, դու միշտ կմնաս իմ հոգում վառ ու պայծառ, և մինչև կյանքիս վերջը կմնամ որպես քո հավատարիմ զավակ, իմ անէացած Շուշի, իմ վշտացած Ղարաբաղ:



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

1. ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն 1915թ. «Кавказский календарь»-ի 1914թ. տվյալների՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության կազմը հետևյալ պատկերն էր ներկայացնում.

Շրջաններ	Հայեր	Թուրքեր	Ռուսներ	Այլ ազգի	Ընդամենը
Դիզակ	19237	567	-	-	19804
Զրաբերդ	23286	1402	268	48	24997
Խաչեն և Վարանդա	78821	11823	3464	-	94107
Գյուլիստան	39093	13708	8674	2337 (քրդ.)	63812
Շուշի	22416	18865	1188	99	42568
Ընդամենը	182853	46364	13587	2337	245288
%	74,5	18,9	5,6	1,0	100%

Ահա թե ինչպիսի պատկեր էր ներկայացնում Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչությունը 1914թ.:

2. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղի աշխարհագրական պայմանները, կլիման և նրա մակերևույթի ռելիեֆը բազմազան են: Նա ունի բարձրաբերձ լեռներ, անդնդախոր ձորեր, մարգագետիններ, սարահարթեր, բարձրավանդակներ, հովիտներ և այլն:

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն այս պայմանների համապատասխան կազմակերպել է իր տնտեսությունը: Նա զբաղվում էր անասնապահությամբ, երկրագործությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ, շերամապահությամբ: Առաջնակարգ տեղ էր գրավում թթենու մշակությունը: Ղարաբաղի հայ ժողովրդի տնտեսության մեջ մեծ տեղ էր բռնում թուրք: Նրանից պատրաստում էին օղի, սպիրտ, դոշաբ («բաքմազ») և չորացնում էին: Յուրաքանչյուր տարի հարյուր հազարավոր դույլեր օղի էր ստացվում թթից:

Լեռնային Ղարաբաղի բարձր շրջաններից սկիզբ են առնում մի քանի գետեր, որոնք հասնում են Ադրբեջանի դաշտերը և ոռոգում այդտեղ գտնվող ցանքերն ու այգիները:

Ղարաբաղը հայտնի էր իր ցորենի «Զարդա», «Ղարաղըլչըղ» տեսակներով ու նրա հացը, ինչպես օրինակ՝ Ճարտարի և Մարտակերտի, հայտնի էին նույնիսկ Ղարաբաղից դուրս:

Առաջնակարգ տեղ էր գրավում շերամապահությունը: Շերամի որդը կերակրում էին «ճրտ» թթենու տերևներով: Շահ թթենու տերևներով կերակրելը անթույլատրելի էր համարվում:



Բոժոժը մշակելու համար կային մի շարք մետաքսագործարաններ: Այդ գործարանները երկու տեսակ էին. ա) մետաքսաթել պատրաստելու գործարան (шелкомотальный) և բ) մետաքսանման գործարան (шелккляпядильный):

Այժմ մոտավորապես թվենք այդ գործարանները, թե որ գյուղերում էին գտնվում և ովքեր էին դրանց տերերը.

ա) Մետաքսաթել պատրաստող գործարաններ

Ահարոնյան Դանիել (Հարունանց Դանիելը). ուներ հետևյալ գործարանները Քարինտակ, Սղնախ, Չանախչի, Ղարաբուլաղ, Կարկաժան, Խանքենդի գյուղերում:

Եղբայրք Տեր-Մկրտչյաններ. Տոդ, Թաղլար գյուղերում:

Ահարոնյան Համբարձում. Խանաձախ, Քոլատակ, Բալլուջա գյուղերում:

Ղազարյան Բաբաջան. Բադարա գյուղում, Դաշբուլաղ, Հիլիս գյուղերում:

Շահնազարյան Գրիգոր. Ծակոռի գյուղում:

Ներսիսյան Դավիթ. Շոշու գյուղում:

Հովակիմյան Կոստանդ. Սեյդիշեն գյուղում:

Բաբայան և Քամալյան. Գիշի գյուղում:

Ընդամենը՝ 18 գործարան:

բ) Մետաքսանման գործարաններ ունեին.

Ահարոնյան Դանիել (Հարունանց Դանիել). Քարին տակ, Սղնախ, Չանախչի, Ղարաբուլաղ, Կարկաժան, Խանքենդի գյուղերում:

Ահարոնյան Համբարձում. Բալլուջա, Խնաձախ, Քոլատակ գյուղերում:

Դավիթ Ներսիսյան. Ղայբալու, Խնձորեստան, Ղշլաղ գյուղերում:

Սարուխանյան Եղիշե. Վանք գյուղում:

Ալեքսան Հովակիմյան. Վանք գյուղում:

Եղբայրք Հայրապետյաններ և Իվան Զախարյան. Առաքյուլ գյուղում:

Շահնազարյան Գրիգոր. Շուշի:

Ընդամենը՝ 17 գործարան:

Այսպիսով, Ղարաբաղն ունեցել է այդ 2 տեսակ գործարաններից 35 հատ, սակայն այս թիվը և վերոհիշյալ տվյալները մոտավոր են, ուստի և ոչ լրիվ: Այս գործարանների հումքի (բոժոժի) մի մասը մատակարարել են թուրքական շրջանները:

Յուրաքանչյուր գործարանում աշխատել են 60-70 հազար բանվորներ, ուրեմն այդ գործարաններն ունեցել են 3-4 հազար բանվորներ:

Այժմ մի քանի խոսք նրա ջրաղացների մասին: Փոքր ի շատե աչքի ընկնող գետերի վրա կառուցված են բազմաթիվ ջրաղացներ:

Շատ գյուղերում կային ալրաղացներ, որոնք գործում էին նավթով:

Օրինակ՝ այդպիսի ալրաղացներ կային Գյունե Ճարտար գյուղում՝ 2-ը, Գիշի գյուղում՝ նույնպես 2-ը:

Այդ բոլոր ալրաղացներն ու ջրաղացները պատկանում էին մասնավոր մարդկանց:



3. ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՎ ՆՐԱՆՑ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդն ունի մի շարք կրոնական, հասարակական, կուլտուրական հիմնարկություններ ու կազմակերպություններ, որոնց ղեկավարման գործն, ըստ ցարական օրենսդրության («Պոլոժենիե»), վերապահվում էր հայ ժողովրդին և նրա հոգևոր իշխանության: Ղարաբաղի թեմի մեջ մտնում էին, բացի Վարանդայի, Դիզակի, Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի շրջաններից, նաև Նուխու, Շամախու և Գեոկչայի շրջանները:

Ղարաբաղի աշխատավորությունն իր թեմի ազգային բոլոր տեսակի հաստատությունների, նրանց շարժական ու անշարժ կայք ու գույքի պահպանման ու ղեկավարման համար ընտրում էր թեմական խորհուրդ: Խորհրդի պատգամավորների ընտրությունները կատարվում էին ըստ շրջանների, որոնք ուղարկվում էին թեմի կենտրոնը՝ Շուշի: Այդտեղ պատգամավորների ընդհանուր ժողովում ընտրվում էր թեմական խորհուրդ՝ 3 տարի ժամկետով:

Թեմական խորհրդի նախագահը, համաձայն օրենքի, լինում էր հոգևոր իշխանության ներկայացուցիչը՝ թեմի հոգևոր առաջնորդը՝ նշանակված Էջմիածնի հոգևոր իշխանության կողմից: Թեմի առաջնորդը միննույն ժամանակ կոնսիստորիայի ղեկավարն էր:

Թեմական խորհուրդը միակ իրավագոր մարմինն էր, որին էլ հանձնվում է թեմի եկեղեցիների, վանքերի ազգային, շարժական թե անշարժ ունեցվածքը, դպրոցների գույքերի և այգիների անտառների պահպանման ու ղեկավարման ամբողջ գործը:

Թեմական խորհուրդն այդ նպատակով ընտրում էր մի քանի մարմիններ: Նա ընտրում էր թեմական, միջնակարգ դպրոցի հոգաբարձական կազմը՝ նրան հանձնելով դպրոցի պահպանման գործը, որի համար նա պատասխանատու էր թեմական խորհրդի առաջ:

Հոգաբարձությունը նշանակում էր դպրոցի տեսչին, որը պետք է ունենար բարձրագույն կրթություն և երեք տարվա մանկավարժական փորձություն ու նրան հանձնում դպրոցի կրթական-ուսումնական-դաստիարակչական միջոցների հայթայթման ու բարեկարգման խնդիրները: Տեսչին էր վերապահվում ուսուցչական կազմը հրավիրելու իրավունքը:

Ուսուցչական կազմն իր աշխատանքների համար պատասխանատու էր միմիայն տեսչին, իսկ վերջինս դպրոցի ամբողջ աշխատանքների համար՝ հոգաբարձությանը:

Ղարաբաղի թեմի եկեղեցական-ծխական դպրոցների կրթական, ուսումնա-դաստիարակչական մեթոդական աշխատանքները ղեկավարելու համար նշանակվում էր թեմական դպրոցների տեսուչ: Բոլոր ուսուցիչների նշանակումներն ու նրանց աշխատանքներին հետևողն ու ղեկավարողը այդ դպրոցների տեսուչն էր:

Թեմի հոգևոր առաջնորդի՝ որպես թեմական խորհրդի նախագահի, կարգադրությամբ տեղի էին ունենում եկեղեցիների երիցփոխների ու ծխական դպրոցների հոգաբարձական մարմինների ընտրությունները:

Ընդհանրապես երիցփոխները, գյուղերում և թե քաղաքում, ընտրվում էին փոքրիշատե գրագետ ու բանիմաց անձնավորություններ, որոնց խնամքին էր հանձնվում եկեղեցու ամբողջ ունեցվածքը, նրա բարեկարգման գործն ու նյութական միջոցների պահպանումը: Երիցփոխների ընտրությունների ժամանակ շահագրգռվածություն երևան չէր գալիս, սակայն այլ պատկեր էին ներկայացնում հոգաբարձական ընտրությունները, մանավանդ քաղաքում, շրջանների կենտրոններում ու խոշոր գյուղերում: Այդ վայրերում ընտրություններն անցնում էին պայքարի բովով:

Գյուղերում հոգաբարձուներ էին ընտրվում սովորաբար քահանաներն ու գյուղի ազդեցիկները: Այլ էր քաղաքում: Այստեղ պաշտպանվում էին ընտրության բոլոր ձևական կողմերը:



Թեմի առաջնորդի գիտությամբ ու համաձայնությամբ նշանակվում էին ընտրությունների ժամկետները, և հաճախ ընտրությունների ժամանակ ներկա էր լինում նրա ներկայացուցիչը: Այդ ընտրությունների ժամանակ հանդես էին գալիս քաղաքական հոսանքներն ու զանազան խմբակցությունները:

Նման ձևով տեղի էին ունենում Շուշվա և ամբողջ Լեռնային Ղարաբաղի հայկական տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցների հոգաբարձական ընտրությունները: Գլխավորապես ընտրվում էին ժողովրդի առաջավոր մարդիկ:

Այդ ժամանակ ցարական իշխանությունն ամեն կերպ աշխատում էր, դիմելով զանազան զարտուղի միջոցների, ոչնչացնել հայկական կուլտուրայի ու լուսավորության օջախները:

Նա բաց էր անում Ղարաբաղի բոլոր շրջաններում պետական դպրոցներ և աշխատում փակել հայկական դպրոցները: Մակայն այնքան էլ հեշտությամբ չէր իրագործվում, որովհետև հայ ժողովրդի առաջավոր ինտելիգենցիան՝ միացած գյուղացիության հետ, հակահարված տալով, ամենուրեք բացում էր իր ազգային դպրոցներն ու կուլտուրական հիմնարկները:

Լեռնային Ղարաբաղի բոլոր շրջաններում գործում էին բազմաթիվ դպրոցներ, որոնք մայրենի գիրն ու գրականությունն էին սովորեցնում հայ երեխաներին, նրանց սրտերում վառ պահում հայրենիքի սերը:

Լեռնային Ղարաբաղն ու նրա կենտրոն Շուշին ունեին դպրոցական, կուլտուր-կրթական հիմնարկների մի խոշոր ցանց, դրանց մի մասը՝ սեփական շենքերով, ինտելիգենցիայի մի հսկայական բանակ, որը, միևնույն ժամանակ, ղեկավարում ու տոն էր տալիս ազգային, քաղաքական, կուլտուրական ու հասարակական բոլոր տեսակի աշխատանքներին:

4. ԵԶՐԱՓՄԱԿՈՒՄ

Վերոհիշյալ համառոտ ակնարկով ես վերջացնում եմ Լեռնային Ղարաբաղի և նրա կենտրոն Շուշուն վերաբերող սովյալները, որոնք վերաբերում են փետրվարյան հեղափոխությանը նախորդող ժամանակաշրջանին:

Թե որքանով է ինձ հաջողվել տալ այդ ժամանակաշրջանի Ղարաբաղի հայ ժողովրդի կյանքը՝ նրա կենցաղը, հասարակական ու քաղաքական գործունեությունը, ժողովրդի տնտեսական վիճակը, կուլտուր-կրթական հիմնարկների պատկերն ու գործունեությունը, թողնում եմ ընթերցողի գնահատականին:

Պետք է ասել, որ Ղարաբաղի և Շուշու կյանքի վերաբերյալ մեր այս հիշողություններով մենք երբեք հավակնություն չենք ունեցել տալու այդ չափազանց բազմակողմանի հարուստ կյանքի լիակատար պատկերը, այլ հնարավորություն տալու այդ շրջանի ու քաղաքի անցյալ կյանքին անձանոթ ընթերցողին՝ որոշ չափով գաղափար կազմելու, թե Լեռնային Ղարաբաղում ապրող հայ ժողովուրդն ինչ էր ներկայացնում իրենից:

Ահա թե Լեռնային Ղարաբաղն ու նրա կենտրոն Շուշին ինչպիսի վիճակում էին գտնվում, երբ տեղի ունեցան 1917-1920 թթ. ծանր ժամանակների իրադարձությունները, որոնք ճակատագրական վախճան ունեցան ոչ միայն Շուշվա հայ բնակչության, այլև ընդհանրապես Ղարաբաղի ողջ հայության համար:

ՕՋԱԽԻ ԳԻՐՔ

ՄԵՐ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ

Այսօրվա իմաստով ազգանունը, որ անպայման պետք է կրի պետության յուրաքանչյուր քաղաքացի, հայերիս մոտ ձևավորվել է 19-րդ դարում, զանգվածային ձևով՝ դարի վերջերից: Մկրբում ազնվական բարձր խավի, խոշոր բուժուազիայի, առևտրավաճառականական դասի ներկայացուցիչները, մշակույթի գործիչները, հետո աստիճանաբար հասարակության մյուս խավերն են «ձեռք բերել» ազգանուն: Եվրոպական երկրներում այդ պրոցեսն ընթացել է դրանից քիչ ավելի վաղ, մյուս ժողովուրդների մոտ՝ շատ ավելի ուշ՝ ընդհուպ մինչև վերջին տասնամյակները: Ասենք, որ որոշ ժողովուրդներ հնում նույնիսկ հստակ անվանում չունեին. դազախները, օրինակ, խորհրդային կարգերից առաջ կիրգիզներ էին կոչվում¹: «Աղբբեջանցի» բառը հորինվել է 1930 թվականից հետո, իսկ դրանից առաջ այդ տարածքի մահմեդական բնակչությունը, կազմված էթնիկական տարբեր զանգվածներից, անվանվում էր թաթ, թաթար, պարսկական թուրք և այլ ձևերով, որովհետև չէր ներկայացնում մեկ էթնոս: Աստիճանաբար նրանց մեջ իշխող դարձավ թուրքալեզու տարրը, և հանրապետության անունով բոլորն սկսեցին կոչվել աղբբեջանցիներ: Այդ ժողովուրդն ինքն իրեն ուղղակի «մուսուլման» է ասում մինչև հիմա:

Ազգանվան հասարակական բովանդակությունը շատ ավելի ծավալուն է, քան անվանը: Նորածնին անվանակոչելը կապված է միայն նրա ծնողների (երբեմն նաև մերձավորների) հետ: Ընդ որում չափահաս դառնալուց հետո անհատը կարող է փոխել իր անունը, պաշտոնապես ընդունել այլ, ավելի բարեհունչ կամ պարզապես իրեն դուր եկած անուն: Ազգանունն այդպես չի կարող ընտրվել, նրանում արտահայտվում է տվյալ անհատի արյունակցական կապն իր տոհմակիցների ու նախնիների հետ: Նույնիսկ այն բացառիկ դեպքերում, երբ այլևայլ պատճառներով միևնույն տոհմից ճյուղավորվում է նոր ազգանուն հոր, պապի կամ մեկ ուրիշ հարազատի (նախնու) անունով, անպայման հաշվի է առնվում տվյալ անհատի հասարակական դիրքը, ճանաչումը: Այդ է պատճառը, որ նույնիսկ բացահայտ անբարեհունչ ազգանունը եզակի դեպքերում է փոխվում:

Մեր ժողովրդի մոտ հնում ընդունված է եղել անվան հետ նշել տոհմանունը՝ այն էլ միայն բարձր իշխանավորներինը: Անվան հետ հաճախ նշվել է, թե ում որդին է, նաև՝ հոր հայրը, տիտղոսը, արհեստը, զբաղմունքը՝ նայած, թե տվյալ մարդը ինչ դիրք էր գրավում հասարակության մեջ: Ցածր խավի համար նշվում էր միայն անունը, հաճախ աղճատված ձևով, նույնիսկ միայն մականունը: Կանանց համար այդ էլ չէր լինում: Մեզանում ամուսինն էլ չէր կնոջ անունը տալիս, այլ ասում էր *մեր կնեկը, էն հարսը* կամ կանչում էր՝ *ախճի, Շտվերանց աղջիկ* կամ՝ *Մայիլին աղջիկ* և այլն (դա կապված էր նաև նահապետական սովորությունների, նույնիսկ որոշ հավատալիքների հետ): Խորհրդային կարգերի ժամանակ, երբ կինն սկսել է մասնակցել հասարակական կյանքին, դպրոցը, աշխատանքը, ընտրությունը և այլն ստիպել են, որ պաշտոնապես գործածվի անուն-ազգանուն-հայրանունը, բայց կենցաղում այն դեռ չէր ամրացել: Ի դեպ, *հարս* բառը մեր բարբառում դարձել է *ազի*: Նույն տան հարսներին իրարից ջոկելու համար ասել են՝ *մեծ ազի, կուճուր ազի*, չնայած այդ *կուճուր ազին* կարող էր 70-80 տարեկան լինել:

¹ В.А. Никинов, *Имя и общество*, Москва, 1974, с. 93



Ուշագրավ է, որ հնում իրենցից ավելի բարձր դասի ներկայացուցչին, մանավանդ թագավորին կամ կայսրին դիմելիս չէր նշվում դիմողի տոհմանունը, անունն էլ հաճախ նվաստ ձևով էր գրվում: Ռուսաստանում խոշոր բոյարը, որից հպատակները սարսափում էին, ցարին դիմում էր, օրինակ, *«քո խոլոպ Վասկա»* ողորմելի ձևով: Գյուլիստանի փառավոր մելիք Եսային 1723 թ. Պետրոս Առաջինին գրած նամակում իր մասին նշում է՝ *«Ես ծառայից ծառա Եսայիս»*: Իսկ նույն մելիքի հեռավոր շտաբվիդի մասին հայրենի գյուղում, ընդհակառակը, փառավոր ձևով գրվել է. *«Այս է տապան Բեգլար բեգին, որ է որդի մելիք Փրիդոնին, թոռն քաջ մելիք Բեգլարին, հայոց իշխան Ղարաբաղին, տիրապետող Գուլուստանին»*:

Անհատի անվանման ձևերը հնում միջոց են եղել՝ ցույց տալու նրա դիրքը հասարակության մեջ, նրա արմատները, ուժը և այլն: Իսկ այժմ ազգանունը պարտադիր է յուրաքանչյուր կոնկրետ անհատին ճանաչելու, հասարակության կյանքը լիարժեք կազմակերպելու համար: Պետության մեջ յուրաքանչյուրը կրում է պաշտոնապես ճանաչված ազգանուն, անուն և հայրանուն: Այնուամենայնիվ, առօրյայում որոշ մարդկանց միայն անունով են դիմում, ոմանց՝ ազգանունով, ոմանց էլ՝ անուն-հայրանունով՝ նայած, թե շրջապատն ինչպես է ընդունում, գնահատում նրան: Նույն այդ պատճառով որոշ մարդկանց նույնիսկ անունով չեն դիմում, այլ ընդունված մակա- նունով կամ անվան աղճատված (կրճատված) ձևով:

Քաղաքացու անվանման եռաստիճան ձևը (ազգանուն, անուն, հայրանուն), որ ընդունված է Հայաստանում, ներկայումս բնորոշ է աշխարհի երկրների թերևս մեծ մասին: Առանձին երկրներում, որտեղ պաշտոնապես ճանաչված է բազմակնությունը, հայրանունից բացի փաստաթղթերի մեջ նշվում է նաև մոր անունը: Որոշ ժողովուրդների մոտ էլ, որտեղ հնում տոհմական գաղափար չի եղել, այլ ճանաչվել է միայն հոր անունը, զանգվածային անձնագրավորման ընթացքում հայրանունը դարձվել է ազգանվան հիմք, և մարդիկ կրում էին միայն ազգանուն և անուն (միջին-ասիական ժողովուրդները): Հայաստանի Հանրապետությունում նոր անձնագիր ընդունելու ժամանակ փորձ արվեց հրաժարվել հայրանունը նշելուց, բայց դա լայն դժգոհություն առաջ բերեց, և հայրանունը շարունակվեց նշվել:

Արժե հիշել, որ զանգվածային անձնագրավորման ժամանակ երբեմն նույն գերդաստանի եղբայրների անունները հիմք են դարձել իրենց զավակների ազգանունների համար: Այդ ձևով նույն գերդաստանի ճյուղերն իրարից որոշ իմաստով հեռացել են, բայց համագյուղացիները շարունակել են բոլորին կոչել նախկին տոհմանունով: Այսպես, Մանաշիդում Իրիցանք դարձել են Գալստյաններ և Առստամյաններ: Որպես կանոն՝ ազգանվան հիմք է դառնում տղամարդու անունը: Միայն եզակի դեպքերում է կնոջ անունը ազգանվան հիմք դարձել. երբ այդ կինը աչքի է ընկել իր բարձր արժանիքներով կամ վաղուց գրկված է եղել ամուսնուց, զավակները նրա անունով են ճանաչվել: Օրինակ՝ Մարյանյաններ, Հասմիկյաններ, Թարմինյաններ և այլն:

Արժե նշել նաև այսպիսի հանգամանք: Հոռեկում, օրինակ, Գյուլիստանի մելիքների 19-րդ դարի տոհմական գերեզմանոցում կարելի է կարդալ՝ *«գնդապետ Շամիրխան Փրիդոնեան մելիք Բեգլարեան ի ցեղէն տիրապետող մելիքաց Գյուլիստանի»*: Տվյալ դեպքում ո՛չ Փրիդոնեանը, ո՛չ էլ Բեգլարեանը ազգանուն չեն, գրվածը սուկ նշանակում է, որ Շամիրխանը Փրիդոնի որդին էր, նա էլ՝ Բեգլարի որդին: Հնում հայրանունը նշվում էր «յան» վերջավորությամբ կամ պարզապես *«որդի Փրիդոնի»* ձևով: Իսկ անհա 20-րդ դարի սկզբներից պահպանված մի արձանագրության մեջ նշված *Սոլոմոն-բեգ Մելիք-Բեգլարեան որդի մելիք Հովսեփի թոռն մելիք Փրիդոնի...* անվանման մեջ Մելիք-Բեգլարեանն ազգանուն է:



Մեր լեռնաշխարհի կյանքի մասին ուշագրավ նյութ են տալիս Շահումյանի գյուղերում տարածված ազգանունները: Որպես կանոն՝ ազգանվան համար հիմք է ծառայում նախնիներից մեկի անունը՝ վերջից ավելացնելով *յան* (*ենց, ունց, անց*) մասնիկը. աչքի ընկած մեկի անունով կոչում են նրա ժառանգներին՝ Սաքի (Սարգիս)՝ Սաքունց, Պողոս՝ Պողոսանց և այլն: Մեզանում տարածված են հին հայկական ու ավետարանական անունները և դրանցից կազմված ազգանունները՝ Առաքելյան, Վարդանյան, Մնացականյան, Աբրահամյան, Պետրոսյան, Հարությունյան, Սարգսյան, Պողոսյան, Սիմոնյան, Մովսիսյան և այլն:

Շատ հաճախ ազգանունը կազմվում է որևէ արհեստի անվանումից, որը բնորոշ է լինում տոհմի համար: Արհեստը սովորաբար անցել է հորից որդի, և այդ տոհմն էլ համագյուղացիների կողմից անվանվել է այդպես՝ *Նալբանդանք, Տերունք, Ղլեչունք, Պրուտանք* (բրուտ բառից), *Զարգարանք* և այլն: Մեր գյուղերի գերեզմանոցներում կան բազմաթիվ հուշարձաններ՝ տարբեր արհեստների հիշատակումով: Ներքին Շենի հին գերեզմանոցում կարելի է կարդալ այսպիսի արձանագրություններ՝

ա) «Այս է տապան դալլաք Հարությունի որդի Ղազարին թվ. ՌՄՂ (1848)»:

բ) «Այս է տապան ուստա Սարքիսին, որ է որդի Ներսեսանք Սահակին վ. 1873թ.» (այս «ուստա Սարքիսը» Ներքին Շենում և շրջակա գյուղերում հայտնի բրուտ է եղել):

գ) «Այս է տապան Աբրահամին, որ է որդի Նալբանդանք Մուսաելին...»:

դ) Հին Պարիսի գերեզմանոցում՝ «Այս է տապան տերզիկ (դերձակ)... -ի» և այլն:

Տարբեր գյուղերում կան *Նալբանդյաններ* (նալբանդը պայտագործն է), *Դալլաքյաններ* (դալլաքը վարսավիրն է, որը հնում նաև որոշ բժշկություն է արել), *Ղլեչյաններ* (ղլեչի՝ կաթսաներ կլայեկող), *Գոռոյաններ* (բուրդ գգելու արհեստը), *Մեղրյաններ* (ինքնին հասկանալի է, որ մեղվաբուծության հետ է կապված), *Զարգարյաններ* (զարգարը արծաթագործ, ոսկերիչ վարպետն էր), *Բաղմանյաններ* (այգեգործության հետ է կապված), *Սառաջյաններ* (սառաջ անվանում էին անասունների առուվաճառքով զբաղվողներին), *Բոյախյաններ* (*Բոյախչունք*) (որը կապված է ներկարարի արհեստի հետ): Մեզ մոտ կա սակավ հանդիպող ազգանուն՝ *Չախմասագյան* (ճիշտ ձևը կլիներ *Չախմախսագյան*): 16-18-րդ դարերում մեր լեռնաշխարհում ամենակարևոր արհեստներից է եղել *չախմախով* (կայծքարով) հրացան սարքելը («սազ անելը»), որովհետև ընդերքը հարուստ էր զանազան մետաղներով: Առատ էր նաև վառողը, իսկ զենքի պահանջը մեծ է եղել: Նույնիսկ կան տեղեկություններ այն մասին, որ Պետրոս Առաջինի ժամանակներից սկսած՝ մեր մեծքները որոշ չափով զենք են մատակարարել ռուսական բանակին: Բայց հետագայում *չախմախով* հրացանները գործածությունից դուրս են եկել, արհեստը վերացել է, դրա համար էլ այդ ազգանունը հազվագյուտ է դարձել:

Ազգանունների մի խումբ կապված է տիտղոսի, պաշտոնի հետ: Դրանցից են՝ *Բեզունց* (*Բեզյան, Բայունց*) (այսպես կոչում են բեկական տոհմի շառավիղներին), *Քոխյան* (քոխաս գյուղապետն էր), *Գզիրյան* (զզիր, կատարածու), Վերին Շենում կա նաև *Կզրիսաքունց*, կա *Դիվանյան* (դիվանը դատարան, վերադաս մարմին էր նշանակում): Ղարաչինարում կա *Վեքիլյան* (վեքիլը որևէ բարձրաստիճան իշխանավորի պատվիրակն էր կամ վստահված անձը): Ներքին Շենում կա *Բարուրյան* (բարուրը գյուղերում հողաչափություն կատարողն էր):

Տարածված են հատկապես եկեղեցական պաշտոնների հետ կապված ազգանունները՝ *Եպիսկոպոսյան, Տերունք* կամ *Տերյան* (սովորաբար այդպես էր կոչվում տերտերի տոհմը), *Երիցյան* կամ *Իրիցանք*: Կա նաև *Ժամհարանք* (ժամհարը եկեղեցու զանգերի խփողն է): Պաշտոնից է ծագել նաև *Յուզբաշյան* ազգանունը (յուզբաշի՝ հարյուրապետ): Իսկ ահա *Մելիքյան*



ազգանունը ոչ թե պաշտոնից, այլ հատուկ անունից է ստեղծվել, որն իր հերթին մեկիքի պաշտոնի (տիտղոսի) հետ է կապված: Մեկիքական տոհմի ժառանգները գրվում են այս ձևով՝ *Մեկիք-Բեզլարյան, Մեկիք-Օհանջանյան, Մեկիք-Եզանյան* և այլն:

Ազգանունների մի մասը պարզապես մականուն է եղել: Օրինակ՝ *Ճաղարյան* (կապույտ աչքեր ունեցողին *Ճաղար* են ասում), *Խաթայաններ* (*խաթա* անվանում են վտանգ, փորձանք բերող *մարդուն*): Կան *Ղարազաղյաններ* (ղարա (սև) գյաղա անվանումից, որը հավանաբար եղել է մականուն):

Մեզանում հանդիպում են *Բաղայան, Հայրյան*, (նաև՝ *Հայրիկյան*), *Պապիկյան*: Դրանք կարող են կազմված լինել հետևյալ ճանապարհով: Ավանդաբար հոր (երբեմն նաև այլ հարազատի) մահից հետո, երբ ծնվում է զավակ, նրան անվանում են *Բաղալ* (*բեղալ, փոխարեն*), այսինքն՝ հանգուցյալին փոխարինող: Նույն ձևով՝ հոր մահից հետո ծնվածին՝ *Հայրիկ*: Բայց դա կարող է լինել նաև անուն, երբ, ասենք, *Պապիկ* անունով մեկի տղան հոր պատվին իր նորածնին անվանակոչում է *Պապիկ*:

Մեր շրջանում տարածված են *Սիմյան, Վեյյան, Խիդիրյան, Քլանանք, Չիրքինյան* և այլ ազգանուններ, որոնք չեն հանդիպում այլ շրջաններում: Բոլորի ստույգ բացատրությունը դժվար է գտնել: *Սիմ*-ը կարող է *Գերասիմ* կամ նման այլ անձնանունի վերջին մասից կազմված լինել (մեր բարբառում *սիմ*-ը *բարակ լար է նշանակում*, բայց դժվարանում ենք որևէ կապ տեսնել այդ իմաստի հետ): Բոլոր դեպքերում եղել է *Սիմի* անուն, որով կոչվել են *Սիմյաններ*: *Վեյյան* ազգանունը կարող է կապվել Առավելյան հին հայկական նախարարական տոհմի անվան հետ: Ինչպես հայտնի է, որոշ բարդ անձնանուններ երբեմն կիսվում են, առանձին-առանձին գործածվում, օրինակ, *Աստվածատուր* անվան վերջին մասն առանձնացվել, դարձել է առանձին անուն՝ *Ծատուր* (այդտեղից էլ՝ *Ծատուրյաններ*), *Հովսեփր*՝ *Սեփի* (այստեղից՝ *Սեփյաններ*), նույն ձևով *Մնացական* անունից՝ *Ցական, Խաչատուր* անունից՝ *Չատուր* և այլն: Նույն ճանապարհով *Առավելյան* տոհմանունից կարող էր առաջանալ *Վեյյան*, քանի որ *դ*-ն մեր լեզվում հնչյունափոխվում, դառնում է *լ*:

Հետաքրքիր պատմություն ունի *Քլանանք* տոհմանունը: Ինչպես հայտնի է, ուշ միջնադարում մեր լեռնաշխարհը մտնում էր Պարտավ-Բարդայի պարսկական բեկլերբեկության կազմի մեջ: Այդ պատճառով Գյուլիստանի մեկիքության տարածքը կոչվել է նաև Պարտավի երկիր, որը շատ ավելի լայն սահմաններ է ունեցել, քան հետագայի Շահումյանի շրջանը: Այն ունեցել է և՛ դաշտավայրային, և՛ անտառածածկ լեռնային տարածքներ: Այս վերջին մասը կոչվել է նաև *Բարդա-քոլանի*, որովհետև *քոլր* մեր բարբառում անտառ է նշանակում, ուրեմն՝ *անտառային Բարդա*: (Հետաքրքիր է, որ խորհրդային տարիներին էլ Շահումյանը կոչվում էր՝ Շահումյանի գյուղական շրջան՝ Բաքվի համանուն շրջանից տարբերելու համար, մի կարճ ժամանակ էլ կոչվեց Շահումյանի լեռնային շրջան): Քանի որ լեռնային տարածքի կենտրոնը, իշխանավորների նստավայրը Գյուլիստանն էր, վերջինիս ներկայացուցիչները կարող էին կոչվել *Քոլանի, Քլանանք* (այս անունով տոհմ հենց միայն Գյուլիստանում կա): Այս տոհմանունը կարող է կապված լինել նաև *քլան/քլան* (կողպեք, փական) պատրաստելու արհեստի հետ: Կարծում ենք, այսպիսի ծագումը տարօրինակ չպետք է թվա, որովհետև ազգանունները երբեմն նույնիսկ շատ զավեշտական ճանապարհով են գոյացել բնակչության զանգվածային անձնագրավորման ժամանակ: Քանի որ մարդիկ չեն ունեցել ազգանվան գաղափար, երբ փորձել են պարզել մարդու ով լինելը՝ ազգանուն գրելու համար, ճանաչված մեկը կողքից ասել է՝ *մեր յանից է* (մեր կողմից), գրել են *Մրյան*: Նույն *Մրյաններից* մեկի զավակին անձնագիր տալու ժամանակ *ր*-ի պոչը կարճ է գրվել, դարձել է



Մոյան: Այդպես անհեթեթ ձևով առաջացել են *Մոյան* և *Մոյան* ազգանունները: Այսօր *Վեյլանների*, *Խիդիրյանների*, *Միսյանների*, *Քլանանք* և այլ և այլ զավակներ ապաստան են գտել աշխարհի տարբեր կողմերում՝ ԼՂՀ-ի գյուղերից մինչև Սիբիրի խորքերը և հեռավոր Ամերիկա՝ իրենց հետ աշխարհով մեկ սփռելով մեր անցյալի թանկ վկայությունները:

Աբովյան՝ *Աբով անունից, որն Աստվածապով անվան կրճատված ձևն է՝ Աստծո հույսով, Աստծուն ապավինած:*

Աբրահամյան՝ *Աբրահամ անունից, որը եբրայերեն (հին հրեական լեզվով) նշանակում է հայր բազմություն:*

Ադամյան՝ *Ադամ անունից, եբրայերեն մարդ, տղամարդ, նաև՝ հող, կարմիր:*

Ազատյան՝ *Ազատ անունից, հայերեն ազատ բառից:*

Ազարյան՝ *Ազարիա անունը եբրայերեն նշանակում է աստվածային օգնություն (իսկ ազար բառը վիշտ, նեղություն, վիրավորանք է նշանակում պարսկերեն, որով, կարծում ենք, անձնանուն չի կարող ստեղծված լինել):*

Ազիզյան՝ *Ազիզ անունից, որ արաբերեն նշանակում է փառավոր, վեհաշուր:*

Ազրյան՝ *Ազարյան ազգանվան աղճատված ձևն է (Ազրունց):*

Աթաբեկյան՝ *Աթաբեկ անունից, միջնադարում թագավորի հայր, թագավորի խնամակալ պաշտոնից:*

Աթանասյան՝ *Աթանես անունից, հունարեն՝ Աֆանասի (անմահ):*

Աթանեսյան՝ տե՛ս **Աթանասյան:**

Ալավերդյան (Ալլահվերդյան)՝ *Ալավերդի անունից (Աստվածատուր):*

Ալեքսանյան (Ալեքյան, Ալեքսանդրյան)՝ *Ալեքսանդր անունից, հունարեն՝ պաշտպան, խիզախ, մարդկանց օգնող:*

Ալեքամյան (Ալքամյան)՝ *Ալեք (Ալեքսանդր) անունից՝ Ալե ամի (հորեղբայր):* Այս տոհմից են ճյուղավորվել Բուզլուխի Ղազարյանները, Հովսեփյանները, Մկրտումյանները, Խաչատրյանները:

Ախպերջանանք՝ *տոհմանուն Ախպերջան անունից, պարսկերեն՝ եղբոր հոգի:*

Ահարոնյան՝ *Ահարոն անունից, եբրայերեն՝ լեռնաբնակ:*

Ադիբեկանք՝ *տոհմանուն, Ահիբեկ (Ադիբեկ) անունից, պարսկերեն՝ բեկի ուխտ:*

Ադաբաբյան՝ *Ադաբաբ անունից, ադա՝ մեծատուն, բաբա՝ հայր (պրսկ.):*

Ադաբեկյան՝ *Ադաբեկ անունից (ադա և բեկ բառերից):*

Ադալովանք (Ադալոյանք)՝ *տոհմանուն Ադալո անունից, որն Ադալար անվան կրճատված ձևն է (ադա բառի հոգնակի):*

Ադամալյան՝ *Ադամալի անունից, ադայի ունեցվածք:*

Ադայան՝ *Ադունց տոհմանունից (ադա բառից):*

Ադաջանյան՝ *Ադաջան անունից, ադայի հոգյակ (պրսկ.):*

Ամիրջանանք՝ *տոհմանուն, ամիր՝ իշխան, հրամայող (արաբ.):*

Այդինյան՝ *Այդին անունից, լուսավոր (թրք.):*

Այվազյան՝ *Այվազ անունից, սպասարկող (արաբ.), խոհանոցի ծառա (թրք.):*

Անդրեասյան՝ *Անդրեաս, Անդրիաս (Անդրեյ) անունից, արձական, խիզախ (հուն.):*



Անդրանիկանք՝ տոհմանուն, *Անդրանիկ կոչում են ավագ որդուն, նշանակում է առաջնեկ, մեծ երեք, չպետք է շփոթել Անդրոնիկ անվան հետ՝ տղամարդկանց հաղթող (հուն.)*:

Անտոնյան՝ *Անտոն* (նաև՝ *Անդոն*) անունից, *մարտի մեջ մտնող, առաջնորդ, գլխավոր (լատ.)*:

Աշրաֆանք՝ տոհմանուն, *Աշրաֆ անունից, ամենափառավոր (արաբ.)*:

Աչիկզոզյան¹՝ *աչքարաց (թրք.)*:

Առաքելյան՝ *Առաքել (Ռաքել) անունից, որ նշանակում է ուղարկել:*

Առուշանյան *Առուշան անունից, լուսավոր, փայլուն (պրսկ.)*:

Առուստամյան (Առստամյան)՝ *Առուստամ (Առստամ, Ռուստամ, Ռոստոմ) անունից (գետ, հեղեղ, ուժգին (պիլ.))*:

Ասատրյան՝ *Ասատուր (Աստվածատուր) անունից:*

Ասլունց՝ *տոհմական Ասլի անունից, ազնիվ (արաբ.)*:

Ասկարյան՝ *Ասկյար անունից, զինվոր (արաբ.)*:

Ասրյան՝ *Ասրի անունից:*

Ավագյան՝ *Ավագ անունից: Հրաչյա Աճառյանը բացատրում է, որ քրիստոնեության ընդունումից հետո եբրայերեն և հունարեն եկեղեցական անուններն սկսեցին թարգմանվել և գործածվել զուգահեռաբար. հունական Անաստասը թարգմանվեց Հարություն, Ապոստոլը՝ Առաքել, Թեոդորոսը՝ Աստվածատուր, Ստավրը՝ Խաչիկ, եբրայերեն Մեթը՝ Մխիթար և այլն: Ստեղծվեցին նաև նոր անուններ՝ կապված քրիստոնեական կյանքի բացատրությունների հետ՝ Համբարձում, Գալուստ, Խաչատուր, Մարգար, Կարապետ, Մկրտիչ, Ավետիս, Ավագ, Սրբուհի և այլն:*

Ավագիմյան՝ *Ավագիմ, Հովակիմ անունից, Աստված հաստատեց, Եհովան (Աստված) հարյավ (եբր.)*:

Ավանեսյան (Հովհաննիսյան)՝ *Ավանես (Հովհաննես) անունից, տիրոջ շնորհը, աստվածաշնորհ (հին հր.)*:

Ավետիսյան (Ավետիքյան)՝ *Ավետիս (Ավետիք) անունից, բարի լուր:*

Արդուխանյան՝ տե՛ս **Օրդուխանյան:**

Արզումանյան՝ *Արզուման անունից, փափագող, կարոտ (պրսկ.)*:

Արշակյան՝ *Արշակ անունից, ավագ ձիապան (հուն.), արջի փաղաքշական անվանումը (պրսկ.)*:

Արտաշեսանք, Արտաշանք՝ տոհմանուն *Արտաշես անունից, արդարությամբ իշխող (հին պրսկ.)*:

Բաբայան՝ *ծագել է համապատասխան տոհմանունից, բաբայի՝ հայր ունեցող (թրք.)*:

Բաբայան՝ *համապատասխան տոհմանունից, բաբա՝ հայր, նաև՝ հարգելի, ազնիվ, պատվական (թրք.)*:

Բաբաջանյան՝ *Բաբաջան անունից, հոր հոգյակ, սիրելի (թրք.)*:

Բաբաքոխյան՝ *համապատասխան տոհմանունից, բաբա՝ հայր, հարգելի, պատվական և քոխա (գյուղապետ) բառերից, կարելի է հասկանալ իբրև պատվական գյուղապետ, գյուղապետների հայր:*

Բաբուռյան՝ *համապատասխան տոհմանունից, բաբուռչի՝ համայնքի կողմից ընտրված մեկը, որը համայնքի անդամների միջև բաժանում էր հողն ըստ խղճի:*

Բյազունք՝ տոհմանուն *բյազ (բեզ, բեկ) բառից:*

¹ Մեր հողի համար իր կյանքը զոհած Միսոն Աչիկզոզյանին չենք ուզում առանձնացնել այս ցուցակից. այդ ազգանունից մեր շրջանում չկար



Բադայան՝ *Բադայ* անունից, *փոխարեն (արաբ.)*, *որդին*, որը փոխարինում է հորը, ծնվում է նրա (կամ այլ հարազատի) մահից հետո:

Բալաբեկյան՝ *Բալաբեկ* անունից, փոքր իշխան (**թրք.**):

Բալադունց՝ *տոհմանուն Բալադա* անունից, *փոքր աղա (թրք.)*:

Բալասանյան՝ *Բալասան* անունից, *անուշահոտ ծաղիկ, ինչպես և այդ ծաղկից ստացված յուղը (արաբ.)*:

Բալայան՝ *Բալա* անունից, *մանուկ, որդի (թրք.)*: Շրջանում Բալայաններ կային Գյուլիստանում: Այդպես գրվել են *Բալա նախապապի* անունով: *Այն տոհմերից մեկն է, որոնք XVIII դ. վերջերին մեկիքի հետ չգաղթեցին, մնացին, պահեցին գյուղը, մինչև որ գաղթածներն էլ վերադարձան:*

Բալլուվանք՝ *տոհմանուն Բալլու* անունից, *նշանավոր, հայտնի, նաև՝ մեղր ունեցող (թրք.)*:

Բալյան՝ *համապատասխան տոհմանունից (բալ՝ մեղր)*, կապված մեղվապահության հետ:

Բախշունք՝ *տոհմանուն Բախշի* անունից, *կրճատված Խուդաբախշից, աստվածատուր (պրսկ.)*:

Բադդասարյան՝ *Բադդասար* անունից, *պահիր արքայի կյանքը (ասոր.)*:

Բադունց՝ *տոհմանուն, բաղ ունեցող*, գուցե նաև՝ *Բադի* անունից:

Բադյան՝ *Բադունց տոհմանունից, թերևս՝ Բադի* անունից:

Բալունց՝ *համապատասխան տոհմանունից, բայ (բեկ, բեյ) բառերից:*

Բաշրաթանք՝ *տոհմանուն, բաշարաթ՝ ավետիս (արաբ.)*:

Բաշրաթյան՝ տե՛ս **Բաշրաթանք**:

Բարխուդարանք՝ *տոհմանուն Բարխուդար* անունից, *բախտավոր (պրսկ.)*:

Բարսեղյան՝ *Բարսեղ (Պարսեղ) անունից, արքա, թագավոր (հուն.)*:

Բեգիյան (Բեգյան, Բեկյան)՝ *Բեգի անունից, իշխան (թրք.)*:

Բոզյան՝ *Բոզունք* տոհմանունից, որը կապված է այդ տոհմի մարդկանց բնորոշ գույնի հետ (*գունատվածության նման*): Կար Մնասին Շենում: Բարեհնչուն դարձնելու նպատակով ումանք գրվում են *Բազյան*:

Բոյախչունք՝ *տոհմանուն արհեստի անունից, ներկարար (թրք.)*:

Բուդաղյան՝ *Բուդաղ* անունից, *բարունակ (թրք.)*:

Բուդղանանք՝ *տոհմանուն Բուդղան (Բոզղան) անունից, աստվածատուր (ռուս.)*:

Բուշունք՝ *տոհմանուն բոշա բառից:*

Գալստյան՝ *Գալուստ (Կյալուստ) անունից, ակնարկվում է փրկչի գալը:*

Գասպարյան (Կասպարյան, Կասպարով)՝ *Գասպար անունից:*

Գարունք՝ *տոհմանուն Գարի (Գարեգին) անունից:*

Գզիրյան՝ *Կիզիրանք տոհմանունից, որը ծագում է համապատասխան պաշտոնի անունից, նույն տոհմի որոշ ճյուղեր գրվում են Կիզիրյան, իսկ մի ճյուղը՝ Գիզիրյան:*

Գզողյան (Կիզողանք)՝ *համապատասխան տոհմանունից, արհեստի անունից (բուրդ գզող):*

Գյանջունք՝ *տոհմանուն, Գանձակից՝ Գյանջայից եկած:*

Գյոժգյան՝ *Գյոժգի անունից: Վերին Շենում աչքի ընկած Գյոժգի պապ է եղել, որի հետ է կապված Ղարագյոլի մոտ գտնվող «Գյոժգին քար» տեղանունը:*

Գյորգյան՝ *Գյորգի (Գեորգի) անունից:*

Գյորգունք՝ *տոհմանուն Գեորգի անունից, տե՛ս Գևորգյան:*

Գյուլումյան՝ *տոհմանուն (ծաղկի անունից):*

Գյուրջունք՝ *տոհմանուն, Վրաստանից՝ Գյուրջստանից եկած:* Ակնարկվում է XVIII դ. վերջերին մեր տեղահանված բնակչության վերադարձը XIX դ. սկզբներին:



Գրիգորյան՝ Գրիգոր անունից, առույգ, զգոն (**հուն.**):

Գուդովիչանք՝ տոհմանուն, գրվում են Բաղմանյան (Ներքին Շենում):

Գուդունք՝ տոհմանուն, գրվում են Ավանեսյաններ:

Գուրդունք՝ տոհմանուն, գրվում են Հարությունյան (Գյուլիստան):

Գևորգյան՝ Գևորգ անունից, երկրագործ, հողագործ (**հուն.**):

Դադյան, Դադո, Դադի՝ Թադևոս անունից, կար միայն Էրքեջում: Տե՛ս **Թնուսյան:**

Դավաթյան՝ արհեստի անունից, վարսավիր, սովորաբար նաև որոշ բժշկություն էր կատարում:

Դանիելյան՝ Դանիել անունից, աստվածային դատավոր (**եբր., սսոր.**):

Դավթյան՝ Դավիթ անունից, սիրեցյալ (**եբր.**):

Դիվանյան՝ համապատասխան տոհմանունից, դատարան, վերին ատյան:

Եդիգարյան՝ Եդիգար անունից, հիշատակ (**պրսկ.**):

Եթարանք (Յթարանք)՝ տոհմանուն իգական անունից, հերիք, բավական (**թրք.**):

Եդիագարյան՝ Եդիագար անունից, կազմված է Աստված և օգնություն բառերից (**եբր.**):

Եդյան՝ Եդիա անունից, Աստված (**եբր.**):

Եսայան՝ Եսայի անունից, ազատել, փրկել (**եբր.**):

Երիցյան (Երիցանք)՝ երեց բառից, ավագ, անդրանիկ որդի, բայց ազգանվան հիմքում ընկած է հոգևոր պաշտոնը՝ քահանա: Երիցանք տոհմանուն հայտնի է տարբեր գյուղերում, որոնք գրվում են տարբեր ազգանուններով, Գյուլիստանում՝ Մովսիսյան, Մանաշիդում՝ Առստամյան և այլն:

Զարգարյան՝ զարգար (ոսկերիչ) արհեստի անունից:

Զաքարյան (Զախարյան)՝ Զաքար անունից, աստվածային հիշատակ (**եբր.**):

Զինավորյան՝ Զինավոր անունից, սուրբ Մարգսի վերադիրն է՝ զենք կրող:

Զիլփունք՝ տոհմանուն Զիլփի անունից, խոպոպիք (**պրսկ.**), ունի վարսենիկ իմաստը:

Զոհրաբյան՝ Զոհրաբ անունից, կարմրափայլ (**պրսկ.**):

Թնուսյան՝ Թնու (Թադևոս) անունից, գովք (**հին հր.**):

Թալիշանք՝ Թալիշ հատուկ անունից, նշանակում է անհավատ, կռապաշտ: Կա նաև Թալիշ գյուղից ծագած լինելը մատնանշող տոհմանուն՝ անսովոր հնչյունափոխումով՝ Թրշեցունց:

Թաթունց՝ տոհմանուն, ձեռքի թաթ, որից կան նաև Թաթիկ, Թաթուլ անուններ:

Թամանյան՝ Թամամ անունից, ամբողջական, կատարյալ (**արաբ.**):

Թամրագանց՝ տոհմանուն Գյուլիստանում՝ մեկիք Թամրագի անունից:

Թարխանյան՝ Թարխան անունից, թարխաններ՝ ազատ գյուղացիներ, որոնք պարտավոր էին զենք կրել, զինվոր լինել մեկիքի, խանի մոտ Վրաստանին ենթակա շրջաններում: Կարծում ենք, այս անունը ծագում է պաշտոն մատնանշող բառից, թարխան՝ բարձր աստիճանավոր Պարսկաստանում, արաբների մոտ՝ վեզիրից բարձր պաշտոնյա:

Թուրանք՝ տոհմանուն՝ կապված թուր բառի հետ (քաջ, կտիճ իմաստով), նախնիները ժառանգաբար եղել են դարդա (նուսրիկանապետ): Հետագայում պարսկերենի ազդեցության տակ տարածում է ստացել Ղահրաման (կտիճ, քաջ (**պրսկ.**)) անունը, և այս նույն տոհմը կոչվել է Ղահրամանանք:

Թումասանք՝ տոհմանուն Թումաս անունից, երկվորյակ (**հին հր.**):

Ժամհարանք՝ տոհմանուն ժամհար բառից: Այդպիսի միայն մեկ տոհմ կար Ներքին Շենում: Եկվոր մի միայնակ երիտասարդ գյուղի եկեղեցու ժանհարն էր՝ զանգերը խփողը: Ում տանը նա ապրում էր, նրանց կոչեցին Ժմհարանք, բայց գրվում են Մանթրոսյան:



Ժեշտունք՝ տոհմանուն ժեշտ (թիթեղ) բառից, կապված թիթեղագործության հետ, գրվում են Աբրահամյան (գուցե նաև այլ ազգանունով):

Իբրիզանց՝ տոհմանուն թերևս իբրիս (աստանա, չար ոգի) մականունից:

Իսրայելյան՝ Իսրայել անունից (Աստված և կովել բառերից՝ աստվածամարտ (եբր.)):

Լալայան՝ Լալա անունից, խնամակալ, դաստիարակ (պրսկ.): Կարծում ենք՝ կապ չունի Լալա (կակաչ) կանացի անվան հետ:

Լաչինանք՝ տոհմանուն Լաչին անունից, բազե (թաթար.):

Խալափյան՝ Խալափ (Խալաֆ) անունից, անուշահոտ ուռենի (արաբ.):

Խալիլանք՝ տոհմանուն Խալիլ անունից, բարեկամ (արաբ.):

Խանլարյան՝ Խանլար անունից, խան բառի հոգնակին, ինչպես որ կա Բեզլար, Աղալար:

Խաչատրյան՝ Խաչատուր անունից (տե՛ս **Ավագյան** ազգանվան բացատրությունը):

Խիդիրյան՝ Խիդր (Խտրր) անունից, արաբական մի մարգարեի անունից:

Խոյունք՝ տոհմանուն: Շրջանում այդպիսի միայն 1 տոհմ կար, Գյուլիստանում, գրվում էին Եսայան:

Խուդանանք՝ տոհմանուն Խուդի (Խուդան) անունից, աստվածային (պրսկ.):

Ծատուրյան՝ Ծատուր անունից, Աստվածատուր անվան կրճատ ձևը: Այս տոհմը Ներքին Շենում ճյուղավորվել է Ղահրամանյաններից: Վերջիններիս նահապետներից մեկը Թիֆլիսից իր հետ բերել է մի որբ, անօթևան տղայի՝ Ծատուրին, որդեգրել, իր երեք որդիների հետ հավասար բաժին տվել, նրա սերունդներին էլ Ծատուրյաններ են կոչել, որպեսզի այդ անունը անհետ չկորչի:

Կարապետյան՝ Կարապետ անունից, առաջնորդող, ճանապարհ բացող, տե՛ս **Ավագյան** ազգանվան բացատրությունը:

Կիզիրանք՝ տոհմանուն գզիր բառից, գյուղական տանուտերի մոտ աշխատող պաշտոնյա:

Կիզիրյան՝ համապատասխան տոհմանունից.

Կիզոդանք՝ տոհմանուն բուրդ գզելու արհեստից. տե՛ս **Գզողյան**:

Կիզրիսաբունք՝ տոհմանուն, գզիր Սաբի՝ Սարգիս:

Կոսյան՝ Կոսունց տոհմանունից, որն էլ իր հերթին թերևս Կոսի անունից է ծագել, Կիրակոս անվան երկրորդ մասից, ինչպես որ մեր կողմերում կատարվում էր. Խաչատուր անունից՝ Զատուր, Սստվածատուր անունից՝ Ծատուր, Մնացական անունից՝ Ցական, Ալավերդի անունից՝ Վերդի, Ալեքսանդր անունից՝ Սանթրի և այլն: Շրջանում Կոսյաններ կային միայն Գյուլիստանում:

Կրպեյան՝ Կարապետ (Կրպե) անունից. տե՛ս **Ավագյան**:

Հախյան՝ Հախունց տոհմանունից, հախ՝ վճար, գին, նաև՝ արդարություն, իրավունք (արաբ.):

Հախվերմազանց՝ տոհմանուն, վճարը չտվող, հայտնի էր միայն Ներքին Շենում: Գրվում են Վեյյան: Այդպես կոչել են դաշտում վարձով աշխատողների «հախկը» չտանելու պատճառով:

Հակոբյան՝ Հակոբ անունից, խաբեբա (եբր.):

Համբարձումյան՝ Համբարձում անունից, կապված Քրիստոսի համբարձվելու հետ:

Համզունք՝ տոհմանուն Համզա անունից, ախորժակ, վավաշոտություն (արաբ.):

Հայրապետյան՝ Հայրապետ անունից, կաթողիկոս, վարդապետ:

Հայրյան՝ Հայրունց տոհմանունից, որը Հայր, Հայրի, Հայրիկ կամ Հայրանուն անունից է: Ծահույնյանում տարածված է Հայրիկ ձևը, որից կարող էր այն ծագել: Երեխային հոր անունով

¹ Այս ազգանունից Ծահույնյանում չկար, սակայն չենք ուզում այդ հոդի համար իր կյանքը զոհած Թաթուլ Կրպեյանին առանձնացնել շահույնացիներից



կոչելուց բացի երբեմն կոչել են նաև ուղղակի Հայրանուն, որի կրճատված ձևերից են Հայրան, Հերան, Խերան անունները և դրանցից կազմված ազգանունները: Ներքին Շենի Հայրյանների մի ճյուղը կոչվում է Պետրոսյան: Տե՛ս նաև **Միսյան**:

Հարությունյան՝ Հարություն անունից, ակնարկվում է Քրիստոսի հարություն առնելը:

Հմայակյան՝ Հմայակ անունից, օրհնյալ (**հին պրսկ.**):

Հովակիմյան՝ Հովակիմ անունից: Շահումյանում տարածված է հիմնականում Ավագիմ (Ավագիմյան) ձևով: Տե՛ս **Ավագիմյան**:

Հովասափյան՝ Հովասափ անունից, տեր դատավոր (**եբր.**): Գյուլիստանի հնագույն տոհմերից է, հնում կոչվել են Սաղաթելյաններ, հետագայում, երբ գյուղի ծխական քահանան գրվում էր Կորյուն քահանա Հովասափյան, այսինքն՝ Հովասափի որդի, համատարած ազգանուններ մտցնելու ընթացքում այդ հայրանունը դարձել է ազգանուն:

Հովհաննիսյան՝ Հովհաննես անունից, տիրոջ շնորհ, աստվածաշնորհ (**եբր.**), որը Շահումյանում տարածված է Հանես, Ավանես, Վանես, նաև Օհան ձևերով, սակայն որպես ազգանվան հիմք վերցրվել է ուղիղ (գրական) ձևը:

Հովսեփյան՝ Հովսեփ անունից, ավելանալ, աճել արմատից, նաև՝ աստվածաբնակ (**եբր.**): Շահումյանում տարածված են Օսեփ, Սեփի ձևերը, որից՝ Օսեփյան, Օսիպյան, Սեփյան:

Ղաբուլյան՝ Ղաբուլանց տոհմանունից, ընդունել, համաձայնել (**արաբ.**):

Ղազարյան՝ Ղազար անունից, փրկիչ Աստված (**եբր.**):

Ղահրամանյան՝ Ղահրաման անունից, քաջ, կտրիճ (**պրսկ.**): Այս տոհմի մի ճյուղը, Հակոբ քահանայից սկսած, գրվել է Խաչատրյան Հակոբի հոր՝ դպիր Խաչատուրի անունով: Նա գրվում էր Հակոբ քահանա դպիր Խաչատրյան Ղահրամանյանց. Խաչատրյանը հայրանունն էր, Ղահրամանյանց՝ տոհմի անունը: Երբ սկսեցին համատարած բոլորին ազգանուններով նշել, հայրանունը դարձրին ազգանուն, իսկ տոհմանունը մի կողմ թողնվեց:

Ղարախանանց՝ Ղարախան անունից, մեծ (սև) խան:

Ղարադադյան՝ Ղարադադա մականունից՝ սև տղա, մեծ խան (**պրսկ.**):

Ղարիբյան՝ Ղարիբանք տոհմանունից, Ղարիբ հատուկ անունից՝ պանդուխտ, աստանդատական (**արաբ.**):

Ղարսունք՝ տոհմանուն, անձնագրավորման ժամանակ դարձել են Վարդանյաններ: Այդ անունով տոհմ հայտնի է Մանաշիդում:

Ղաշանգանք՝ տոհմանուն, դաշանգ (գեղեցիկ) բառից: Այդպես կոչել են Հակոբ պապին (Ղաշանգ Ակուփ):

Ղլեչյան՝ Ղլեչունց տոհմանունից, կապված կլայեկելու արհեստի հետ (ղլեչի):

Ղուլյան՝ Ղուլունց տոհմանունից: Նույն ազգանունը կրող երկու տարբեր տոհմեր կան՝ Դալլաք Ղուլունց և Միրման Ղուլունց, որոնց նախապապերը եղել են եղբայրներ: Կարծում ենք, Ղուլի անունը Ալլահդուլի անվան կրճատ ձևն է՝ Աստծու ծառա (**պրսկ.**):

Ղուկասյան՝ Ղուկաս անունից, հարություն կամ լուսավոր (**հուն.**):

Ղևոնդյան՝ Ղևոնդ (Ղևանդ) անունից, առյուծ (**լատ.**):

Ճիվիկանք՝ տոհմանուն Ջահավիր (Ջավիկ, Ճիվիկ) անունից, գոհար բառից:

Ճղսպանանք՝ տոհմանուն, ջրադացպան (ճղասպան) բառից:

Մադաթանք՝ տոհմանուն Մադաթ անունից, օգնություն, նաև՝ Աստվածային պարզն (**եբր.**):

Մաթևոսյան՝ Մաթևոս անունից, աստվածատուր պարզն (**հուն.**), որը Շահումյանում տարածված է Մաթոս ձևով:



Մակարյան (Մակառայան)՝ Մկառանք տոհմանունից, Մակար անունից՝ երջանիկ (**հուն.**):

Մակյան՝ դժվարանում ենք ծագումն ստույգ նշել, շրջանում կար Մակի անուն, որը թերևս Մակար անվան կրճատ ձևն է: Շրջանում Մակյաններ կային միայն Գյուլիստանում:

Մաղաքեղունց՝ տոհմանուն Մաղաքիա (Մաղաքել) անունից՝ հրեշտակ (**եբր.**):

Մամիկոնյան՝ Մամիկոն անունից, հին ձևը՝ Մամգուն, որին չինական ծագում է վերագրվում, ըստ Հր.Աճառյանի՝ մաների իշխան:

Մայիլանք՝ տոհմանուն Մայիլ անունից՝ հիացած, սիրահարված (**արաբ.**):

Մանվելյան՝ Մանվել (Էմանուիլ) անունից՝ Աստված մեզ հետ է (**հին հր.**):

Մարգարյան՝ Մարգար անունից, մարգարե բառից:

Մարյանյան՝ Մարիանանք տոհմանունից, Մարիամ (Մարիան) անունից:

Մարտիրոսյան՝ Մարտիրոս (Մարդիրոս) անունից, հայերեն բառից, ռուսական միջավայրում ոմանք դարձել են Մարտիրոսով, Մոսկվայում նույնիսկ Մարտյասով:

Մարության՝ Մարութա անձնանունից՝ տերություն (**ասոր.**):

Մեժումյան՝ Մեժում անունից՝ խենթ (**արաբ.**): Կա նաև այդ անվան կրճատ ձևը՝ Մեժի, որից՝ Մեժունց ազգանունը:

Մեժունց՝ տե՛ս **Մեժումյան**:

Մելիքյան՝ Մելիք անունից՝ թագավոր (**արաբ.**), հայերենում՝ իշխան, տանուտեր: Նախախորհրդային շրջանում մելիքական տոհմերի զավակները կրում էին Մելիք մասնիկով տոհմանուն՝ Մելիք-Բեգլարյան, Մելիք-Աբովյան և այլն: Խորհրդային տարիներից այդ մասնիկից հրաժարվեցին շատերը, որովհետև մելիքները համարվում էին շահագործողներ և այդ կարգերի թշնամի: Դրան հակառակ՝ ձևավորվեցին խորհրդային կարգերին բնորոշ ազգանուններ, օրինակ՝ ռանչպար մասնիկով կազմված. Հայտնի է Ռանչպար-Զաքարյան ազգանունը:

Մելյան՝ Մելիք անվան կրճատ ձևից՝ Մելի անունից: Այս ազգանունը հանդիպում է նաև Շամշադինի, Դիլիջանի, Կարմիրի կողմերում, որտեղ կան XVIII դ. վերջերին Գյուլիստանի մելիքությունից արտագաղթած բնակիչներ:

Մելքունյան՝ տե՛ս **Մելքումյան** (երկու ձևն էլ հանդիպում է նույն տոհմի մեջ):

Մելքումյան՝ Մելքում (Մելքոն) անունից՝ թագավոր (**եբր.**):

Մեխակյան՝ Մեխակ (ծաղիկ) անունից:

Մեհրաբյան՝ Մեհրաբ անունից, արեգակ և ջուր բառերից՝ արևափայլ (**պրսկ.**):

Մեղրյան՝ Մեղրի անունից, որը կապվում է մեզ մոտ տարածված մեղվաբուծության հետ: Շրջանում Մեղրյաններ կային միայն Գյուլիստանում: Այդպես գրվել են Մեղրի նախապապի՝ հայտնի Միրոք Մեղրիի անունով: Գյուղի այն տոհմերից է, որոնք XVIII դ. վերջերին չգաղթեցին մելիքի հետ, մնացին, պահեցին գյուղը, մինչև որ գաղթածներն էլ վերադարձան:

Մեջումյան՝ տե՛ս **Մեժումյան**:

Մինասյան՝ Մինաս անունից, որը, ըստ Հր.Աճառյանի, եգիպտական ծագում ունի (կապ չունի հունարեն կամ լատիներեն լուսին բառի հետ):

Միրաբյան՝ Միրաբանք տոհմանունից, ջրաբաշխի պաշտոնից:

Միրզաբեկյան՝ Միրզաբեկ անունից, միրզա՝ ազնվական, իշխանագն, և բեկ բառերից (**պրսկ.**):

Միրզաջանյան՝ Միրզաջան անունից՝ Միրզայի հոգի (**պրսկ.**):

Միրքայելյան՝ Միրքայել անունից, նշանակում է՝ ով է որպես Աստված (**եբր.**):

Մխիթարյան՝ Մխիթար անունից, հայերեն՝ սփոփանք:



Մկրտչյան՝ Մկրտիչ անունից, ակնարկվում է Հովհաննես Մկրտիչը, որի անվան այդ վերադիրը հետագայում դարձել է առանձին անուն: Հայտնի է նաև Միկիչ, Մակիչ ձևերով:

Մկրտումյան՝ Մակրտում (մկրտել) հազվադեպ անունից:

Մնացականյան՝ Մնացական անունից՝ երկար կյանք ունենալ, որը տարածված է հատկապես Յական կրճատ ձևով:

Մոսյան՝ Մոսունց տոհմանունից, որն էլ իր հերթին Մոսի, Մովսես անունից է՝ ջրից հանված (հին հր.):

Մովսեսյան՝ Մովսես անունից՝ ջրից հանված (հին հր.):

Մոավյան՝ Մոավ անձնանունից, որը Մոավ սարի անունից է. ըստ Հր. Աճառյանի՝ մառ (մշուշ, մթություն) բառից է ծագել: Այս բացատրությունը համոզիչ է թվում, որովհետև այդ բարձր լեռը հաճախ է մառով (ըստ մեր խոսվածքի՝ մառավ, մոավ) պատած, մշուշապատ լինում:

Մուրադյան՝ Մուրադ անունից՝ փափագ, ցանկություն (արար.):

Նարբայան՝ նարբա՝ սառնաշաքար, բյուրեղաշաքար: Հավանաբար կապված է այդպիսի շաքար պատրաստելու արհեստի հետ: Հնարավոր է նաև, որ առաջացած լինի Նարբա հատուկ անունից:

Նազարյան՝ Նազար անունից, նայվածք, հայացք (արար.), նաև՝ Աստծոն նվիրված, հին հրեերեն նաև պահպանել. կարծում ենք, ծագած կարող է լինել արաբերեն արմատից, քանի որ ավելի վաղ շրջանից հայտնի չէ այդպիսի անուն:

Նարանդյան՝ Նարանդ, պայտար (պրսկ.) արհեստի անունից:

Նահապետյան՝ Նահապետ անունից, հայերեն նահապետ բառից:

Նասիբյան՝ Նասիբ անունից՝ բախտ, վիճակ (արար.):

Նավասարդյան՝ Նավասարդ անունից, որն էլ հայկական Նավասարդ ամսվա անունից է (Նոր տարի):

Նարգիզանք՝ տոհմանուն ծաղկի անունից (հուն.), գուցե նաև Նարգիզ կանացի անունից:

Նարիմանյան՝ Նարիման անունից՝ սառը միտք ունեցող, նաև քաջասիրտ (պրսկ.):

Ներսեսյան, Ներսիսյան՝ Ներսես անունից, պահլավերեն՝ Ներսեհ, լատիներեն ձևը՝ Ներսես, արու, արական և խոսք, պատգամ բառերից: Կա նաև Նեսունց՝ նույն անունից:

Նիզարյան՝ Նիզարանք տոհմանունից, որն էլ իր հերթին Նիզար բառից է՝ նկար, պատկեր (պրսկ.). այդպիսի անուն մեր կողմերում չի հանդիպում, հնարավոր է՝ ծագել է նկարելու արհեստից:

Շախյան, Շախիյան՝ Շախի, շահ, արքա (պրսկ.) անունից:

Շահումյան՝ Շահում անունից՝ իմ շահ, իմ արքա:

Շամիրանք՝ տոհմանուն Շամիր (Շահամիր) անունից, որը կազմված է շահ (պրսկ.) և ամիր, իշխան (արար.) բառերից:

Շատվերյան՝ տոհմանուն հայերեն շատվոր (շատոնք) բառից. այդպես կոչվում էին բազմանդամ, խոշոր գերդաստանները: Այլ վայրերում գործածվում է նաև Շատվորյան ձևը:

Շելունց (նաև՝ Շելլունց)՝ դժվարանում ենք բացատրել:

Շիրինյան՝ Շիրին անունից՝ քաղցր, անուշ (պրսկ.):

Շմավոնյան՝ Շմավոն անունից, Միմեոն, Միմոն (եբր.) անվան ասորական ձևը, նշանակում է Աստված լսել:



Շուրուց՝ տոհմանուն, Շողակաթ (Շուղի, Շողո, Շողիկ) անունից՝ շողից կաթած, այսինքն արևի շողից ծնված: Տարածում է ստացել հատկապես Վաղարշապատում (Էջմիածնում) կառուցված համանուն տաճարի կապակցությամբ:

Ոսկանյան՝ Ոսկան անունից, հայերեն ոսկի բառից. այլ տեղերում՝ Օսկի, Օսկան, Օսկանյան:

Չալյան՝ Չալունք տոհմանունից, որն էլ ծագել է թերևս Չալ մականունից՝ խաժ աչքեր ունեցող:

Չախկալյանք՝ տոհմանուն, այդպես կոչվել են չախկալ (կապտավուն) աչքեր ունենալու պատճառով (Չախկալ Թյունի պապից սկսած):

Չախմասագյան՝ համապատասխան տոհմանունից՝ չախմախ սագ անող (չախմախով հրացան պատրաստող):

Չանգլունք՝ դժվարանում ենք բացատրել:

Չփլաղանք՝ տոհմանուն Չփլաղ (մերկ, լրիվ ունեգուրկ) մականունից. հայտնի են այս մականունից ծագած Չփլախյան, Չալաղյան, Չիպլախյան և այլ ձևեր: Ծագումով Էրզրումից այդ տոհմի մի ճյուղը Մոսկվայում գրվում է Գոլիկով (նույն մականվան բույսեր են թարգմանությունից):

Չիլինգարյան՝ արհեստի անունից՝ փականագործ, նաև՝ զինագործ:

Չիրքինյան՝ Չիրքին մականունից՝ տգեղ (թրք.):

Չուբանանք՝ տոհմանուն չոբան բառից՝ հովիվ (թրք.):

Պապիկյան՝ Պապիկ անունից, պապ բառի փաղաքշական ձևը:

Պառագյան՝ տե՛ս Պռագյան:

Պատվականյան՝ Պատվական անունից, պատվական բառից:

Պետրոսյան՝ Պետրոս անունից՝ քար (հուն.), Ներքին Շենի Պետրոսյանները նախկինում կոչվել են Տեր-Հովհաննիսյաններ, գյուղի ծխական քահանա տեր Պետրոսից հետո սկսել են կոչվել Տեր-Պետրոսյաններ: Տեր մասնիկը վերացվել է խորհրդային տարիներին:

Պիլունք՝ հազվադեպ տոհմանուն, դժվարանում ենք բացատրել. հազիվ թե պէլ (կնքահայր) կամ պրել (խենթ), կամ պյուլ (խմորագունդ) բառերից մեկի հետ կապվի:

Պղնձեբեղանք՝ տոհմանուն, այդպես կոչվել են պղնձագույն մազեր ունենալու պատճառով (Վերին Շենում):

Պողոսյան՝ Պողոս անունից, լատիներենից փոխառյալ հունական անուն՝ փոքր, սակավ:

Պռագյան՝ դժվարանում ենք բացատրել: Շրջանում կար միայն Բուզլուխում: Ասում են Փեռեզ տեղանունից է, որտեղից եկել են նախնիները (Արևմտյան Հայաստան): Ռուսերեն տառադարձությամբ Փեռեզը գրվել է Պառագ, նույնությամբ անցել հայերենին: Կարծում ենք, կարող է ծագած լինել նաև արհեստի անունից. փառագ է կոչվում ոչխար խուզելու մկրատը, էտելու, պայտելու գործիքը:

Պռավանք՝ տոհմանուն պառավ բառից:

Ջալավանք (Ջլալանք)՝ տոհմանուն Ջալալ անունից՝ փառք, վեհություն (արաբ.):

Ջահանգիրանք՝ Ջահանգիր անունից, աշխարհակալ (պրսկ.): Նույն արմատից նաև Ջհան, Ջհանյան:

Ջաղացպանյան՝ տե՛ս Ըղսպանանք:

Ջամալյան՝ Ջամալ անունից՝ գեղեցկություն (արաբ.):

Ջանունց՝ Ջանիկ, Ջանո անունից՝ հոգի, հոգյակ, նաև մարմին, ուժ, կյանք (պրսկ.):

Ջավաղյան՝ Ջավաղ անունից՝ ազնվական, առատաձեռն (արաբ.):

Ջիվանշիրանք՝ տոհմանուն Ջիվանշիր անունից՝ երիտասարդ առյուծ (պրսկ.):

Ջհանյան՝ տե՛ս Ջահանգիրյան:



Ռաշիդյան՝ Ռաշիդ անունից՝ չափահաս, խելահաս (արար.), Կովկասում ստացել է քաջ իմաստը:

Ռաֆայելյան՝ Ռաֆայել անունից՝ Աստծու բժշկություն (եբբ.):

Սալահյան Սալահ անունից՝ բարեպաշտություն, խաղաղություն, բարելավում (արար.): Հանդիպում է նաև Սալախյան ձևով՝ ռուսերենի ազդեցությամբ: Շրջանում այս ազգանունը կա Հայ Պարիսում:

Սահակյան՝ Սահակ անունից:

Սադաթեյան՝ Սադաթել անունից՝ խնդրել, աղերսել (եբբ.):

Սադունք՝ տոհմանուն սադի բառից (գուցե և Սադի անունից)՝ մատովակ (արար.):

Սանամյան՝ Սանամ կանացի անունից՝ պաշտամունք, ամենասիրած բանը, կուռք, տիրուհի (արար.):

Սանդրոսյան, Սանթրոսյան՝ Սանդրոս, Սանթրի անունից, Ալեքսանդր անվան երկրորդ մասից:

Սառաջյան՝ սառաջ արհեստի անունից, մեր կողմերում՝ անասունների վաճառքով զբաղվող:

Սարգսյան՝ Սարգիս անունից (աադր.). լատիներեն՝ Սերգիոս, հռոմեական հատուկ անունից, որը նշանակում է թերևս բարձր, գերապատիվ:

Սաքամարունք՝ տոհմանուն Սաքան (Սաքի, Սարգիս) և Մարի անուններից: Սաքանը խոզապահ է եղել, իսկ Մարի անունով կինը նրա հետ միասին խոզ էր պահում, որը շատ անսովոր էր, դրա համար էլ մնացել է որպես տոհմանուն: Մի մասը գրվում է Չիրքինյան ազգանունով, մյուսները դժվարանում ենք ասել:

Սաքանանք (Սքանանք)՝ տոհմանուն Սաքան (Սաքի, Սարգիս) անունից. գրվում են հիմնականում Աբրահամյան:

Սաքունց՝ Սաքի (Սարգիս) անունից. տե՛ս՝ Սարգսյան:

Սաֆարյան՝ դժվարանում ենք բացատրել. Սաֆար անուն մեզ չի հանդիպել, իսկ այդ բառը նշանակում է ճամփորդ (արար.), ինչպես նաև՝ զինվորական: Հնարավոր է, որ հենց այս վերջին իմասից էլ տոհմանուն և ազգանուն է առաջացել:

Սեդրակյան՝ Սեդրակ անունից. եբրայական Սեթ (ժառանգ տալ) անվան հունարեն տառադարձված ձևն է:

Սեյրանյան՝ Սեյրան անունից՝ զբոսանք, պտույտ (պրսկ., արար.):

Սեփունք՝ տոհմանուն, կրում են Սեփյան ազգանունը, Սեփի (Հովսեփ) անունից, Գյուլիստանի հանրահայտ Մելիք Հովսեփի շառավիղներն են՝ Հաթամ յուզբաշու տոհմից, տոհմի մի մասը Հիթամանք է կոչվում:

Միսյան՝ հնարավոր է՝ Գերասիմ անվան երկրորդ մասից ծագած լինի, ինչպես որ հաճախ է կատարվում մեր կողմերում, տե՛ս՝ Կոսյան: XVIII դ. վերջերին Գյուլիստանի մելիքի հետ արտագաղթած բնակիչների հիմնական մասը վերադարձավ XIX դ. սկզբներին: Միմի, Հայրի, Տանիել եղբայրները հաստատվեցին Ներքին Շենում, որոնց անունով հետագայում կոչվեցին գյուղի Միսյանները, Հայրյանները, Դանիելյանները:

Միսունյան՝ Միսուն անունից, տե՛ս՝ Շմավունյան:

Սողոմոնյան՝ Սողոմոն (Սուղի) անունից՝ կատարյալ, ամբողջական (եբբ.):

Սվենյան՝ այս ազգանունից կար միայն Վերին Շենում: Մի ճյուղը Երևան տեղափոխվելուց հետո դարձել է Սևանյան: Հնարավոր է, որ հենց Սևան անունից էլ ծագել է Սվենյան ազգանունը: Մեր գյուղերից հենց միայն Վերին Շենում է գործածական եղել Սևան անունը:



Ստեփանյան՝ Ստեփան անունից՝ **պսակ (հուն.)**:

Սուլումանք՝ կար միայն Մանասին Շենում:

Սուդյան՝ տե՛ս **Սողոմոնյան**:

Վահանյան՝ Վահան անունից, Վահագն անվան կրճատ ձևից կամ հայերեն վահան բառից:

Վանեսյան՝ Վանես (Հովհաննես) անունից, տե՛ս **Հովհաննիսյան**:

Վաչագանանք (Վաճառականանք)՝ տոհմանուն Վաչագան անունից՝ ձագուկ, տղա, **(պահլ.)**: Ուշագրավ է, որ այս անունը մեր կողմերում հնչում է **կ-ով**, ինչպես որ պահպանվել է հենց մեր կողմերում ստեղծված V-VI դդ. գրավոր աղբյուրներում: Այս կարգի փաստերը ևս մի անգամ վկայում են, որ մեր բնակչությունը բազում դարեր արմատահան չի եղել, տեղաբնիկ է:

Վարդգեսանք՝ Վարդգես անունից՝ վարդագույն մազեր ունեցող, ոսկեհեր, հայերեն:

Վելիխանյան՝ Վելիխան անունից, կազմված վելի, վալի, տեր **(արաբ.)** և խան **(պրսկ.)** բառերից:

Վելյան՝ հնարավոր է՝ Առավելյան հին հայկական տոհմանվան 2-րդ մասն է **(ղ-ն դառնում է չ)**. գուցե նաև կազմված է Վելի, Վալի անունից՝ տեր **(արաբ.)**, սակայն այդպիսի անձնանուն մեր կողմերում չի հանդիպում:

Վերդյան՝ Վերդի անունից, Ալլահվերդի անվան երկրորդ մասն է: Տե՛ս **Վոսյան**:

Տարայան՝ կար **Բուզուխում**: Դժվարանում ենք բացատրել:

Տեր-Պետրոսյան՝ Տեր մասնիկով ազգանունները կրում էին հոգևորականներն ու նրանց ընտանիքի անդամները, սակայն խորհրդային իշխանության օրոք դրանք համարյա իսպառ վերացան մեր կողմերում: Ներքին Շենի Տեր-Կարապետյանները դարձան Կարապետյաններ, Տեր-Պետրոսյանները՝ Պետրոսյաններ, Վերին Շենի Տեր-Մարտիրոսյանները՝ Մարտիրոսյաններ, Էրքեջի Տեր-Դանիելյանները՝ Դանիելյաններ, Տեր-Սարգսյանները՝ Սարգսյաններ և այլն:

Տափրունց՝ տոհմանուն, կրում են Առուշանյան ազգանունը: Կարծում ենք, որ տափեր (հողամասեր, դաշտեր) բառից է, կնշանակե՛ շատ տափեր (հողեր) ունեցող:

Տերունց՝ տոհմանուն, կրում են հիմնականում Անանյան ազգանունը:

Տիհարանց՝ տոհմանուն տիհար բառից, որը դժվարանում ենք ստույգ բացատրել (գուցե տեր հայր բառերից): Այդ բառով մի քանի տեղանուններ են հայտնի շրջանում, օրինակ, Տինգի տիհար:

Տիտերանց (Տերտերանց)՝ տոհմանուն, հիմնականում կրում են Նալբանդյան ազգանունը:

Տոնյան՝ Տոնի (Անտոն) անունից՝ մարտի մեջ մտնող **(լատ.)**: Հանդիպում է նաև Տոնոյան ձևով (Էրքեջում):

Քամայան՝ Քամալ անունից՝ գիտակցություն, կամք, կատարելություն **(արաբ.)**:

Քարամյան՝ Քարամ անունից՝ վեհանձնություն, շնորհ, զուրթ **(արաբ.)**:

Քոխյան՝ հանդիպում է նաև Քոխյան, Քեոխյան, Քիխոյան ձևերով՝ Քյուխանք տոհմանունից, քյոխա, գյուղապետ բառից:

Քոչունք՝ տոհմանուն, կար Վերին Շենում, Ներքին Շենում և այլուր: Կարծում ենք՝ ծագել է դոչ՝ խոյ բառից, թուրքական հնչողությամբ՝ քոչ: Դոչ մականուն տրվում էր անվախ, քաջ մարդուն: Մեր գյուղերում երիտասարդ մայրերին օրհնում էին՝ դոչ տղաներ ունենալ (Գանձակում երկար տարիներ ճանաչված էր Դոչ Արամը, որը թուրքական թաղամասի սարսափն էր): Նույն բառը, սակայն, թուրքական հնչողությամբ՝ քոչ, դոչ-ի հակառակ իմաստն ունի մեր խոսվածքի մեջ (ինչպես որ թուրքերեն այլևայլ բառեր):

Քոչարյան՝ կարծում ենք՝ ծագել է Քոչունց տոհմանունից:

Օհանյան՝ Օհան (Հովհաննես) անունից: Տե՛ս **Հովհաննիսյան**:

Օհանջանյան՝ Օհանջան անունից, կազմված Օհան և ջան, հոգի **(պրսկ.)** բառերից:



Օրդուխանյան՝ նույն տոհմի մի մասը գրվում է Արդուխանյան, Օրդուխան (Արդուխան) անունից՝ կազմված օրդու, բանակ (թրք.) և խան բառերից:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Դեղաբույսերով հարուստ մեր գյուղերում կային շնորհաշատ մարդիկ, որոնք բույսերով ու ծաղիկներով զանազան հիվանդություններ էին բուժում: Շատ գյուղերում կային *սնխչիներ*, այսպես կոչված «չոփ հանողներ», «վախ հավաքողներ» և այլն: Մի շարք հիվանդություններ բուժվում էին տարբեր աղբյուրների ջրերով: Բուժիչ էին Էրքեջի մոտ գտնվող *Չիքի աղբյուրի*, ինչպես նաև Հին Խրխափորի ձորում գտնվող *Չիքի աղբյուրի* ջուրը և ցեխը: Բազումիսի մոտ կար *Սյուկնածով* անունով լճակ, որտեղ տղրուկներ էին աճում (*սյուկնը*), որոնցով բուժում էր կատարվում: Թերևս բոլոր տեղերում, հատկապես երեխաների համար, մի յուրատեսակ չարիք էր գորտնուկը: Չնայած ցավ չէր պատճառում, բայց տհաճ տեսքի պատճառով ուզում էին արագ ազատվել գորտնուկից. ամուր կապում էին, խոր կտրում էին, ինչ-որ դեղեր քսում: Նույնիսկ փորձում էին վառել, բայց ոչինչ այնպիսի արդյունք չէր տալիս, ինչպես որ մի շարք հնարամիտ այաների «դեղամիջոցները»:

Իշիկլավ կոչվող բույսի վրա շան կղկղանք էին դնում, բույսը վառում: Սպիտակ, թանձր ծուխ էր բարձրանում: Այդ ծխի վրա պահում էին գորտնուկը մի քանի րոպե, մինչև որ ծխի դարչնագույն հետքը գորտնուկի վրա մնա: Դրանից հետո 2-3 օրվա ընթացքում գորտնուկն ինքնիրեն «փշրվում», անհետանում էր:

Գյուղերում կային «չոփ հանողներ», որոնք հեռացնում էին երեխաների շնչափողում կամ քթանցքում մնացած «չոփը»: Այդպիսի շնորհքով օժտված էին Ներքին Շենում Շուղի նանն ու Խորիշ (Խորիշահ) բիբը, Մնասին Շենում՝ Շուղան Ղազարյանը, Գյուլիստանում՝ Գյուլի Մակյանը և ուրիշներ: Գյուլիստանցի Հովսեփի Բալայանը բուժում-կարգավորում էր ջարդվածքներն ու հողախախտումները:

Հայտնի են բուժման շատ արտասովոր, բայց արդյունավետ եղանակներ: Մնասինշենացի Մուխանը, օրինակ, որը ճանաչված էր որպես աստամ հեռացնող, կարողանում էր նաև բուժել «բողմա» կոչվող ծանր հիվանդությունը, որը կապված էր արյան շրջանառության խանգարման հետ: Հիվանդի ճակատին նա երեք տեղից ածելիով կտրվածք էր բացում: Հետո վերցնում էր «հարան» ձուտը (հավի շատ փոքր ձուտը), մեջտեղից ճղում երկու մասի, բացվածքով դնում կտրվածքների վրա: «Կեղտոտ» արյունը դրա միջոցով դուրս էր հանվում, արյան շրջանառությունը կարգավորվում էր, հիվանդն ապաքինվում էր:

Բուզլուխեցի Մովսես Ղազարյանը պատմում է, որ *լվածադիկ* կոչվող բույսից ավել էին պատրաստում, տունը դրանով ավլում, և լուն վերանում էր: Իսկ *ցրթնի* կոչվող մշտադալար թփի ճյուղերը եթե դնում էին տանը կամ մատանում, մկներն էին վերանում: Այսպիսի բազմաթիվ օրինակներ կան, որոնք բոլորը շարադրել անհնարին է:

Ուշադրության արժանի են ոչ միայն ժողովրդական բժշկությունը, այլև շրջանի հին բժիշկների աշխատանքի մեթոդներն ու հնարամտությունը: Մնասինշենացի Թևոս Եսայանը պատմում է ուշագրավ մի դեպք 20-րդ դարի առաջին տասնամյակներում մեծ հռչակ ձեռք բերած բժիշկ Ստեփանի մասին, որին ժողովուրդը *Բոզունց դոխտուր* էին ասում (նրանց տոհմանունով): Մի անգամ նրա մոտ պատվիրակներ են գալիս Եվլախից մի բեկի կողմից, հայտնում, որ բեկի կինը ձիուց ընկել է, երկու ոտքն էլ կոնքերից տեղից դուրս են ընկել, չի կարողանում շարժվել: Հարցնում են՝ կարո՞ղ է բժիշկը տեղը գցել ոտքերը, բայց այնպես, որ բեկի կնոջը ձեռքով նույնիսկ չդիպչի: Բժիշկը



համաձայնում է: *Ղարաղը* (ձին) կապում է ախոռում, երեք օր օրական մեկ դույլ գարի ուտեցնում, բայց ջուր չի տալիս: Հետո բերում են բեկի կնոջը: Ձին հանում է գումից, բեկի կնոջը նստեցնել տալիս ձիու վրա: Նրան ուղեկցողներն այդպես էլ կատարում են: Հետո բժիշկը կարգադրում է, որ այդ կնոջ ոտքերը ամուր սավանով կապեն, ձիու փորի տակով: Դրանից հետո պատվիրում է, որ ձին տանեն առվի մոտ: Մոտենալով առվին՝ ձին սկսում է անհագորեն ջուր խմել, փորն սկսում է նկատելիորեն ուռչել՝ աստիճանաբար ձգելով վրան նստած կնոջ ոտքերը: Քիչ հետո չրթչրթոց է լսվում: Ոտքերն իրենք-իրենց տեղն են ընկնում: Բժիշկը կապերն արձակել է տալիս, կինն առանց օգնության ձիուց ցած է իջնում:

ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Հայ ժողովրդի ազգային ավանդույթները, աշխատանքի, հանգստի, կենցաղի կազմակերպման, կյանքի էական զանազան խնդիրների իրականացման ձևերը, եղանակները մեր լեռնաշխարհում ձեռք են բերել որոշակի նրբերանգներ ու առանձնահատկություններ, փոխանցվել սերնդեսերունդ, շարունակվել երկար դարեր: Դրանք միջոց են հանդիսացել ազգային լավագույն հատկանիշների պահպանման ու զարգացման, նպաստել են ներքին կապերի ամրապնդմանը, մարդկանց համախմբմանն ու համագործակցությանը, փոխադարձ օգնությանը, բարոյական անաղարտության, հայրենասիրության, աշխատասիրության, բարության ու ազնվության արմատավորմանը աճող սերնդի հոգում: Մինչխորհրդային շրջանում այդ ամենը կազմակերպվում ու կարգավորվում էր եկեղեցու կողմից: Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերից բացահայտ պայքար սկսվեց եկեղեցու դեմ:

Շրջանի ու գյուղերի բոլշևիկ ղեկավարներից շատերը ժողովրդին արգելում էին կատարել իրենց դարավոր ծիսական արարողությունները եկեղեցում կամ տերտերի միջոցով, վճարել եկեղեցու տուրքերը, նվիրատվություն անել եկեղեցուն կամ հոգևորականներին: Վերջիններիս համար այնպիսի պայմաններ էին ստեղծում, որ նրանք չկարողանան կամ չհամարձակվեն կատարել իրենց պարտականությունները: Այս ամենի պատճառով ազգային հին ավանդույթների ու սովորույթների մի մասը վերացավ, մյուսները ձևափոխվեցին, փոխեցին դրսևորման ու իրականացման եղանակները, ինչպես նաև բնույթը: Դրանց զուգահեռ ձևավորվեցին նաև միանգամայն նոր սովորույթներ: Մեր հնարավորության սահմաններում ներկայացնում ենք դրանցից ամենահիմնականներն ու էականները:

Սկսենք ամուսնության հարցից: Մինչխորհրդային ժամանակներում (մինչև 1920-ական թվականների սկիզբը) հարսի համար հորանց տնից վարագույր էին տանում, փեսայի տան մի անկյունում կապում, այդ անկյունն առանձնացնում հարսի համար: Դա լինում էր սպիտակ, ժանեկազարդ գործվածք, որը տանողին հատուկ նվերներ էին տրվում փեսայի տանը: Վարագույրի հետևում թախտ էր լինում կամ աթոռ՝ հարսի համար, երբեմն պարզապես գետնին կարպետ էին փռում, վրան նստում: Հարսանիքին մասնակցող հասունացած աղջիկները հարսի հետ միասին վարագույրի հետևից էին դիտում հանդիսությունը: Ընդ որում դեռևս հորանց տանը զգուշացնում էին հարսին, որ նստելու ժամանակ ուշադիր լինի, որովհետև երբեմն կատակի համար մազե պարան էին դնում հարսի համար նախատեսված տեղում, որպեսզի պարզեն՝ արդյոք նա նստելուց առաջ տակը կստուգի, թե կընկնի ծիծաղելի վիճակի մեջ՝ նստելով կոշտ պարանի վրա:

Հարսանիքի հաջորդ օրը կեսուրը իլիկ էր տալիս հարսին, որ մանի, և բացատրում էր. «*Լայ մանիր՝ թելը շուտ-շուտ չկտրվի, ումբող էլ (կյանքդ) այդ թելի նման երկար ձգվի*»: Դրա համար աղջիկներն ամուսնանալուց առաջ պետք է սովորեին մանել ու գործել: Դժվար էր հատկապես *կազ*



(մետաքսաթել) մանելը, որը սովորաբար շուտ-շուտ կտրվում էր մանելու ժամանակ: Հարսը յոթ շաբաթ պետք է դուրս չգար վարագույրի հետևից: Այնտեղ նա ամբողջ օրը մանում էր, գործում կամ պահում տան փոքր երեխային (եթե, իհարկե, լինում էր): Վարագույրի հետևից այդ յոթ շաբաթվա ընթացքում դուրս էր գալիս միայն վաղ առավոտյան, այնքան շուտ, որ ո՛չ տնեցիները, ո՛չ հարևանները չտեսնեն. ավլում էր բակը, ջուր բերում աղբյուրից (կամ գետից), նորից առանձնանում վարագույրի հետևում:

Երբ տունը պատվարժան հյուր էր գալիս, հարսին ասում էին՝ *գնա՛, ներկայացիր հյուրին*: Նա գնում էր (իհարկե, երեսը ծածկած), ձեռքով բարևում և աջը համբուրում: Նորահարսը պետք է նաև լվանար հյուրի ոտքերը: Ընդունված կարգի համաձայն՝ պետք է լվանար նախ ձախ ոտքը, հետո աջը, վերջում էլ համբուրեր ոտքերը, նախ՝ աջը, հետո՝ ձախը:

Մինչև 1940-1950-ական, նույնիսկ 1960-ական թվականները հիմնականում ծնողներն էին ընտրություն անում զավակների համար, ինչպես որ ընդունված է եղել ավանդաբար: 1920-ական թվականներից սկսած՝ խորհրդային իշխանությունները ամուսնաընտանեկան հարցերը եկեղեցուց վերցրին իրենց ձեռքը՝ դրանք կարգավորելով քաղաքացիական օրենքով: Արգելվեց վաղ ամուսնությունը: Ըստ սահմանված կարգի ամուսնությունները, ինչպես նաև նորածինները եկեղեցու փոխարեն պետք է գրանցվեին նորաստեղծ խորհրդային մարմիններում: Դա երկար ժամանակ դժվար էր արմատավորվում: Երբեմն անչափահաս աղջիկներին ամուսնացնում էին՝ հանելով դպրոցից, որի հետ կապված էին տհաճ շատ միջադեպներ: Շատ հաճախ մարդիկ իրենց նորածիններին չէին գրանցում, որովհետև դեռևս այդպիսի ավանդույթ չէր ձևավորվել: Եկեղեցիները փակված էին, կնունք չէր կատարվում: Իսկ ծնունդը գրանցելու գործնական անհրաժեշտություն չէր լինում: Շատերը երկար ուշացումով էին գրանցում երեխաներին, որի պատճառով երբեմն փաստաթղթերի մեջ խառնում էին մեծ ու փոքր երեխաների անունները: Անունների հարցում էլ շփոթ առաջացավ: Քանի որ այդ հարցը հանվել էր եկեղեցու իրավասությունից, խորհրդային նորաստեղծ մարմիններն ըստ էության հեռացան նաև հայկական, ավանդական, ավետարանական անուններից: Լայնորեն տարածվեցին ռուսական ու հորինված նոր անունները: Գործածությունից դուրս եկան հին, գեղեցիկ ու բարեհունչ շատ անուններ (Մարնագ, Մագաղաթ, Զարդարիկ և այլն), մոռացվեցին անվանակոչության ու կնունքի հետ կապված սովորույթները:

Եվ այսպես, հնում ծնողներն էին հարսնացու ընտրում տղայի համար: Կար այսպես կոչված «*օրորոցը խազելու*» սովորույթ: Դեռևս օրորոցում գտնվող աղջկա ծնողներին որևէ մեկը կարող էր ասել, որ այդ աղջկան հարս է տանելու իր այսինչ տղայի համար, որը նույնպես դեռ շատ փոքր էր լինում: Դա կարող էր ասվել աղջկա կամ տղայի տանը, ոչ պաշտոնական հայտարարությամբ, նույնիսկ կիսակատակ: Եթե այդ մտադրությունը հետո էլ խորացվում, կրկնվում էր և համաձայնությամբ էր ընդունվում աղջկա ծնողների կողմից, համարվում էր «*օրորոցը խազած*», այսինքն՝ նշան արած: Կողմերի միջև ջերմ, բարիդրացիական հարաբերություններ էին սկիզբ առնում այդ հողի վրա, շարունակվում տարիներ, մինչև որ երեխաները կմեծանային, և նշանի ու հարսանիքի արարողություններ կլինեին: Պատահում էին նաև, որ տարիների ընթացքում այդ հարաբերություններն աստիճանաբար մարում էին, մոռացվում էր «*օրորոցը խազելու*» մասին: Նայած, թե ինչից էր ծագում դա և ինչպես էր ընթանում, կարող էր կողմերի միջև թշնամանք առաջանալ այդ հողի վրա, կարող էր նաև աննկատ անցնել:

Չափաահաս տղայի համար ընտրություն կատարում էին ծնողները՝ մասնակից դարձնելով նաև այդ ընտանիքի ամենամոտ ու շատ հարգված մարդուն: Սովորաբար հենց վերջինս էր գնում՝



աղջկա ծնողներին առաջարկ անելու: Որպես կանոն՝ իրենց հետ տանում էին քաղցրավենիք և ուլունքներով զարդարված շշով օղի: Պատահում էր նաև, որ հասունացած տղան հավանում էր որևէ աղջկա և այս կամ այն ձևով արտահայտում էր իր զգացմունքները, բայց այնպես, որ ուրիշները չնկատեն, որովհետև դա բացասաբար կազդեր աղջկա (նաև ծնողների) հեղինակության վրա: Հետո արդեն ծնողները գնում էին (կամ հարազատներ էին ուղարկում)՝ տղայի հավանած աղջկան ուզելու: Տարածված ձևերից մեկն այն էր, որ տղան աղջկա տան երդիկից թաքուն ներս էր գցում քաղցրավենիք կամ չիր: Տարբեր գյուղերում մեր կողմից գրի առնված գրույցների մեջ պահպանվել է այսպիսի հետաքրքրական փաստ. Փիշիկանց Մայիլի աղջիկը՝ Մարալը, խոր ծերության տարիքում հիշում էր, թե ինչպես մի անգամ, երբ ինքը, հազիվ 10 տարեկան, հեռու այգուց տուն էր վերադառնում, զգաց, որ չափարի մյուս կողմից մեկը քայլում է իրեն գուգահեռ: Անհանգստությունից քայլերն արագացրեց, բայց զգաց, որ նա էլ է արագացնում: Մկսեց վազել, զգաց, որ նա էլ է վազում: Հետո չափարի հակառակ կողմից մի փունջ մանուշակ նետվեց իր ոտքերի տակ: Չհամարձակվեց վերցնել: Շիկնեց, արագացրեց վազքը: Հետո երկրորդ, երրորդ փնջերը նետվեցին: Հետո էլ տարբեր առիթներով երբ նկատեց իրեն ուղղված սևեռուն հայացքը, ճանաչեց, հասկացավ, թե ով է եղել մանուշակներ «նվիրողը»՝ Սերգին: Անմոռանալի դեպք է կատարվում նաև նրանց հարսանիքից հետո: Սովորաբար նորապսակների համար առաջին օրերին վարագույրով առանձնացնում էին տան մի անկյունը: Նորապսակներին ժամանակավոր տեղ էին հատկացնում թոնրատանը, հարդանոցում, տանը կից որևէ շինության մեջ՝ նայած իրենց հնարավորությանը և տարվա եղանակին: Սերգիի ու Մարալի համար տեղ էին առանձնացրել խոշոր անասնաշենքի ընդարձակ ախոռում: Գիշերվա կեսին նրանք զգացին, որ գոմեշներից մեկը վատ վիճակում է, գետնին փռված փնջացնում է: Կանչեցին տնեցիներին: Հավաքվեցին ճրագներով, տեսան, որ գոմեշն ուռել, փքվել է: Մինչև լույս տանջվեց անասունը, չգիտեին՝ ինչ անել: Առավոտյան շուտ եկավ նաև Մարալի հայրը՝ Մայիլը: Նա անընդհատ կրկնում էր. «Տե՛ր Աստված, այս գոմեշը չաստկի, որ չասեն, թե երեխայիս ոտքը խերով չէր»:

Եվ այսպես, հավատալիք կար, որ եթե հարսի գալուց հետո ընտանիքի գործերը լավ էին գնում, ուրեմն՝ հարսի ոտքը խերով է: Դա որոշակի ջերմ մթնոլորտ էր ստեղծում հարսի շուրջը: Հիշյալ դեպքը բարեբախտաբար լավ ավարտ է ունենում: Երբ ճարահատյալ փորձում են մորթել փքված, տանջվող գոմեշը, հենց ծակում են կոկորդը, ուժգին փշշոցով գոլորշի է դուրս գալիս, կենդանին ցատկում, տեղից վեր է կենում: Հետո վերքը լավանում է, բայց կոկորդի անցքը չի փակվում: Երբ ջուր էր խմում, մի մասը կոկորդից դուրս էր թափվում: Այդ ձևով գոմեշն ապրեց մի քանի տարի, բայց արդեն ծանր բեռի տակ չէին գցում, մի տեսակ սիրում ու հատուկ խնամք էին տածում այդ կենդանու նկատմամբ: Իսկ նորապսակները երկար ու խաղաղ կյանք ապրեցին՝ մեծացնելով 5 տղա և 4 աղջիկ:

Հարսանիքներին հատուկ շուք էին տալիս *մակառները*, որոնք ընտվում էին տղայի բարեկամների կողմից՝ նախօրոք պայմանավորված քանակով երիտասարդ տղամարդիկ: Որպես կանոն՝ *մակառները* ձիով էին գնում՝ հրացաններով զինված, մանավանդ եթե հարսը պետք է բերվեր ուրիշ գյուղից: Ճանապարհին բազմիցս կազմակերպված ձևով հրացանաձգություն էր լինում, մանավանդ հարսի տանը մոտենալիս: Ցավոք, թեկուզ եզակի, բայց եղել է նաև այդպիսի անզգույշ կրակոցի գոհ: *Մակառներին* գլխավորում էր *մակառբաշին*, որը հարգված և ազդեցիկ տղամարդ պիտի լիներ, կարողանար հետևել, որ անզգույշ ու անտեղի հրացանաձգություն չլինի, որևէ մեկը կարգ չխախտի, շատ չխամի, կռիվ կամ իրարանցում չառաջանա:



Սեղանի շուրջը խոսում էր միայն *թամադան*, որը կարողանում էր բոլորի մտքերն արտահայտել, խոսքը համեմել խրատական ու չափավոր զվարճալի գրույցներով: Նա պիտի և՛ բարեմադթանք հղեր նորապսակներին, և՛ հիշեր երկու կողմի ծնողներին, նախնիներին, հիմնական բարեկամներին՝ ճյուղ առ ճյուղ, ըստ արժանիքների, և հատկապես այդ հողի համար գոհվածներին: Թամադան ունենում էր տեղակալներ՝ երգի գծով, պարի գծով, ուռայի գծով: Մի տեղակալ լինում էր խնամիների կողմից, որպեսզի ներկայացնի, ծանոթացնի իրենց կողմի խնամիներին: *Թամադայի* ամեն ելույթից հետո *մակառքաշին*, տեղից բարձրանալով, հրահանգում էր՝ *ն՛ւռ-ն՛ւռ*, անմիջապես բոլոր *մակառները*, նաև մյուս հարսանքավորները, միաբերան գոչում էին երեք անգամ՝ *ն՛ւռ-ռա՛, ն՛ւռ-ռա՛, ն՛ւռ-ռա՛*: Դա մի յուրահատուկ հմայք էր տալիս հարսանիքին, որի հետ չի կարող համեմատվել ոչ մի նվագ, ոչ մի երգ կամ պար, որովհետև դա կարծես համընդհանուր ուրախության միասնական արտահայտություն էր: Գոչյունի հետ *մակառքաշին* ձեռքով մի տեսակ չափ էր տալիս ու ոգևորում:

Իսկ ի՛նչ անկրկնելի գեղեցկություն էին տալիս *փումփուխները*: Տղայի բարեկամները փայտե հատուկ հարմարանքի վրա ամրացնում էին ընտիր մրգեր, քաղցրավենիք, իսկ ամենաբարձր մասում՝ խաշած հավ, երբեմն էլ կտուցին՝ սիգարետ կամ կոնֆետ: Մակառները մի-մի հատ փումփուխ էին տանում աղջկա տուն: Ճանապարհին փորձ էր արվում նրանց ձեռքից խլելու փումփուխը կամ աննկատ թոցնելու (գողանալու) վրայի հավը կամ գոնե մի խնձոր կամ տանձ պոկել: Մակառների պարտականությունն էր անխաթար տեսքով տեղ հասցնել փումփուխները և շարել աղջկա տանը (կամ բակում) բացված սեղանի երկայնքով:

Հարսանիքի թափորն ունենում էր իր մատովակը: Երիտասարդներից մեկը, գինիով լի խոշոր սափորը (կամ կուլա, կամ «*չեթվեռ*»՝ 3 լիտրանոց շիշ) և բաժակը ձեռքին, գնում էր հարսանքավորների հետ մինչև աղջկա տուն: Ճանապարհին նրան մոտենում էին հանդիսականներ կամ անցորդներ, ասում. «*Աստված շնորհավոր անի*»: Մատովակը շնորհակալություն էր հայտնում, մի բաժակ գինի հյուրասիրում, ինքն էլ հետը խմում: Նա պետք է իրեն այնպես պահեր, որ շնորհավորողները գոհ մնային, բայց ինքը չհարբեր:

Հարսանիքի հետ կապված բազմաթիվ արարողություններ կային, որոնց հետ որոշակի սովորույթներ էին պահպանվում, որոնց իմաստն այն էր, որ հարևանները, բարեկամները մասնակից դառնան, կիսեն ուրախությունը, թերևս որոշ չափով նաև նյութական հոգսերը: Հիշենք մի քանի օրինակ: Հարսնացուի համար երբ հագուստ կամ գործվածք պետք է գնեին, կին բարեկամների մասնակցությամբ էր կատարվում: Կար «*ձոթը ձևելու*» արարողություն: Երբ դերձակը տուն էր հրավիրվում, որպեսզի հարսնացուի համար հագուստ ձևի, հավաքվում էին հարևաններն ու մերձավորները և շնորհավորում՝ փող կամ նվեր դնելով սեղանին: Նրանց համար թեթև սեղան էր գցվում: Եթե նույնիսկ հագուստ չէին կարում, այլ բոլորը պատրաստի էին գնում, միննույն է. «*ձոթը ձևելու*» արարողությունը կատարվում էր. հավաքվում էին, տեսնում գնումները և շնորհավորում:

Կատարվում էր «*հացը խաշ անելու*» արարողությունը: Հարսանիքի հացը թխելու համար երբ պետք է այլուրը մաղեին, հացը «*խաշ դնեին*»՝ խմորը թթվելու համար, հավաքվում էին հարևանուհիներն ու բարեկամուհիները, տաշտի լայնոտ եզրին փող կամ նվեր էին դնում: Հետո էլ թեթև սեղան էին բացում, շնորհավորում, մինչև որ խմորը կթթվեր, որից հետո օգնում էին՝ հացը թխելու: Նույն ձևով, բայց տղամարդկանց մասնակցությամբ, կատարվում էր «*միսը մորթելու*» արարողությունը: Երեկոյան կողմ հավաքվում էին, հնչում էր գուռնան, ոտքի վրա թեթև սեղանի շուրջը շնորհավորում էին, պարում, հետո մորթում մսացու անասունը: Խնամիների միջև նախնական



պայմանավորվածության համաձայն՝ մի մի մասը կամ որևէ անասուն՝ խոյ, *դանա* (մեծ հորթ) և այլն, կարմիր ժապավեններով զարդարված, տարվում էր աղջկա տուն, որտեղ այն ընդունվում էր հանդիսավորությամբ, և բերողներին նվերներ էին տրվում:

Երկու կողմերի բակերում և ամբողջ գյուղամիջյան ճանապարհի տարբեր տեղերում հարսանքավորները կանգ էին առնում, նվազը հնչում էր, պարում, ուրախանում էին, խմբված երեխաների համար որևէ բարձր տեղից բռնելով ընկույզ ու կոնֆետներ էին նետվում, *«Չորոջ էին տալիս»*: Աշխույժ հրմշտոց էր սկսվում հավաքելու համար. ամեն երեխայի համար հպարտություն էր, եթե նա կարողանում էր շատ ընկույզ կամ կոնֆետ ձեռք գցել, մանավանդ՝ օղի մեջ բռնել:

Աղջկա տնից սովորաբար վերադառնում էին երեկոյան և հանդեսը շարունակում տղայի տանն ամբողջ գիշերը: Հարսանքավորների ճանապարհը և հարսանքատան բակը լուսավորվում էր *մաշալլաներով*. ձյութով, մագուրով, նավթով կամ ձեթով թաթախված ու փաթաթված լաթերը ամրացվում էին երկար ձողի ծայրին ու վառում: Վառվելու ժամանակ հաճախ կրակ էր թափվում մաշալլայից, ուստի այդ գործը վստահվում էր շատ պատասխանատու երիտասարդներին: Որպեսզի կրակը երկար վառվի, վառելանյութով թաթախված լաթերն ամրացնում էին խոշոր անասունի գանգոսկրի մեջ ու նրա շուրջը: Մաշալլա պատրաստելն ու բռնելը մի յուրահատուկ շնորհք էր պահանջում:

Հարսանքատերը, որպես կանոն, ուսուցիչներից բաժին էր ուղարկում գյուղի կամ թաղամասի կարիքավոր ընտանիքներին: Բաժին էր ուղարկվում նաև (հատկապես որևէ ընտիր կամ հագվագյուտ միրգ, քաղցրավենիք, ուսուցիչք) հարգանք վայելող կամ անկողնային հիվանդ, կամ շատ ծեր համազուգուցուն:

1950-ական թվականներից հարսանիքների հետ կապված ավանդույթները որոշ փոփոխության ենթարկվեցին՝ կապված կյանքի նոր պայմանների հետ: Չափահաս տղա ունեցող ծնողները, ինչպես նաև հարազատները միշտ «աչքի տակով» հետևում էին գյուղի հասունացած աղջիկներին: Քննում էին, թե ինչ ընտանիքից է տվյալ աղջիկը: Ծնողների հեղինակությունը, պայմանները և այլ հանգամանքներ նկատի ունենալով, եթե դրականորեն էին տրամադրվում, այդ մասին տեղյակ էին պահում տղային: Վերջինիս համաձայնությունն ստանալուց հետո գնում էին առաջարկ անելու՝ *«աղջիկ ուզելու»*: Եթե աղջկա ծնողները համաձայնում էին, ապա շնորհավորում էին հյուրերի բերած խմիչքով: Եթե պատահում էր, որ աղջկա ծնողները միայն հարգանքի համար սեղանին հաց էին դնում, հյուրերը չէին օգտվում սեղանից, մինչև դրական պատասխան չստանան: Բացասական պատասխանի դեպքում ոչինչ չէին ուտում, չէին խմում:

Խոսք առնելուց, այսինքն՝ աղջկա ծնողների համաձայնությունն ստանալուց հետո կողմերը պայմանավորվում էին նշանդրեքի մասին, որոշում օրը, հյուրերի քանակը և այլն: Նշանդրեքի ժամանակ՝ սեղան նստելուց հետո, փեսացուն, ապա ծնողները, հետո մյուս հյուրերը հարսին նվիրում էին ոսկեդեղն: Այնուհետև մեկը սկուտեղով անցնում էր շարքերի մոտով կամ սկուտեղն էին փոխանցում սեղանի վրայով, և յուրաքանչյուրը դրամ կամ այլ նվեր էր դնում սկուտեղի մեջ: Հյուրերից շատերը նվերի *խոնջաներ* են բերում: Նշանդրեքի սեղանի գեղեցկությունը աղջկա բարեկամների բերած խոնջաներն էին լինում, որոնք շարվում էին սեղանին՝ ընտիր մրգերով, քաղցրավենիքով ու խմիչքով: Խնջույքի վերջում տանտերերը հյուրերից յուրաքանչյուրին նվեր էին տալիս, հնում դա լինում էր մեկական գույզ գուլպա, հետո նաև վերնաշապիկ էին նվիրում՝ որոշ չափով հաշվի առնելով նաև հյուրի տված նվերի արժեքը: Նշանդրեքի հաջորդ օրը աղջկա ծնողները հյուր էին կանչում տղայի հարազատներին, խոնջաները հանդիսավոր բացում, մեկամեկ ցույց տալիս ստացված նվերները, համապատասխան նվերներ տալիս այդ խոնջաները



պատրաստողներին, ուղարկողներին: Հյուրերին (սովորաբար լինում էին ընտանիքի մեծերը, որոնք չեն մասնակցել նշանդրեքին) տրվում էին նվերներ, որպես կանոն, տղամարդկանց՝ գուլպա, կանանց՝ գոգնոց կամ գլխաշոր: Տղայի հարազատներն իրենց հերթին պետք է հերթով հյուր կանչեին նոր նշանվածներին և նվերներ տային:

Աշնանամուտին սկսվում էր այսպես կոչված «*հղի կտրելու*» շրջանը: Տղայի հարազատները գնում են հարսնացուի ծնողների մոտ, պայմանավորվում հարսանիքի օրվա, հրավիրվելիք հյուրերի քանակի, տղայի կողմից տրվելիք մսի և գինու չափի մասին: Որպես կանոն՝ տղայի կողմը քանի հյուր (*մակառ*) որ պիտի ուղարկեր, ամեն մեկի հաշվով մեկ լիտր գինի, կես կիլոգրամ միս և, ըստ հայեցողության, օղի պիտի ուղարկեր աղջկա տուն: «*Հղի կտրելուց*» հետո պետք է դադարեր փեսայի այցելությունն աղջկա տուն: Երկու կողմը միմյանց հաց էին ուղարկում. տղայի կողմից կենտ քանակությամբ էր հաց տարվում, իսկ աղջկա կողմից՝ գույգ: Մասցուն տանում էին մոտ տասնինգ տարեկան պատանիներ, իսկ հացը՝ դեռահաս աղջիկներ. որպես կանոն՝ դրանք լինում էին երկու կողմի հարգված բարեկամների երեխաներ, որոնց նվերներով հետ էին ճանապարհում:

Հարսանիքի ժամանակ աղջկա տանը բացված սեղանին առաջինը ճաշ էին մատուցում *մակառքաշուն*՝ փակ ափսեներով: Նա պետք է փող դներ ափսեի վրա, հետո բացեր ճաշը: Միայն դրանից հետո մյուս հյուրերը կարող էին սկսել իրենց ճաշն ուտել: Սկզբում բերվում էր 3 խոնչա՝ փեսային, քավորին (*պելի*) և մակառքաշուն: Նրանք պետք է փող տային, հետո վերցնեին խոնչան: Հարսը տնից դուրս հանելու ժամանակ դուռը փակում էին՝ երբեմն դռան դիմաց կանգնելով: Երբեմն էլ դռան երկու կողմից երկու երիտասարդներ էին կանգնում՝ թրերով խաչաձև փակելով ելքը: Փեսան ու քավորը պետք է փող տային, որ թույլ տրվեր հարսին տանել: Փող էր տրվում նաև հարսի շորը հագցնողին: Տղայի տուն հասնելուն պես նրա ոտքերի մոտ ոչխար էր մորթվում, իսկ հարսնացուն տուն մտնելուց առաջ նրա ոտքի առաջ շրջված ափսե էր դրվում. նա պետք է ոտքով խփեր, ջարդեր, մտներ ներս:

«*Օսկապ կապելու*» արարողությունը երկու կողմում էլ կատարվում էր: Երբ հարսանքավորները հասնում էին աղջկա տան բակը, փեսային և քավորին եռանկյունաձև ծավված թանկարժեք թաշկինակ էին նվիրում, դա համարվում էր «*օսկապ կապել*»: Առաջինն «*օսկապ էր կապում*» աղջկա տան ազապ աղջիկը (եթե մի քանիսն էին՝ մեծը)՝ ծավված թաշկինակները դնելով փեսայի և քավորի գրպանը: Հաջորդներն արդեն թաշկինակը կարող էին դնել պարզապես նրանց թևին: Նույնը կատարվում էր նաև վերադառնալուց հետո տղայի տան բակում, որտեղ «*օսկապ էր կապվում*» նաև հարսին՝ նրա թևի վրա դնելով «*ճոթ*»՝ զգեստացու կտոր (գործվածք): «*Օսկապ կապելուց*» հետո տրվում էին նաև այլ նվերներ:

1970-1980-ական թվականներին, երբ ժողովրդի նյութական պայմանները բավական բարելավվել էին, հարսանիքներին մի քանի հարյուր հոգի էին մասնակցում: Շարքերով երկար սեղաններ էին դրվում բակերում: Ամեն գյուղ, նույնիսկ խոշոր գյուղերի ամեն թաղամաս, իր համար սպասք էր ձեռք բերել և պատրաստել մեծ թվով սեղաններ ու նստարաններ՝ մեծ միջոցառումների համար: Այդպիսի մեծ հարսանիքին թամադան միկրոֆոնով հայտարարում էր, թե ով ինչ նվեր տվեց նորապսակներին: Մի առանձին աշխուժություն էր մտցնում «*շոբոշ*»՝ պարողներին տրվող փողը: Թղթադրամը դրվում էր պարողի մատների արանքում, որը հետո տրվում էր երաժիշտներին: Հնում «*շոբոշ*» թղթադրամը մտցվում էր նվագողի գլխարկի տակ՝ ճակատամասում, որ լավ երևա: Հետագայում, երբ սկսել էին շատ փող «*շոբոշ*» տալ, թղթադրամը



մտցվում էր դիտյու գրպանը: Հետո էլ սովորություն դարձավ պարողներին տալը, նրանք էլ հանձնում էին երաժիշտներին:

Կար հավատալիք, որ հարսանիքները (եթե գյուղում նույն օրը երկուսն էր), պետք է ճանապարհին չհանդիպեին միմյանց: Եթե հանդիպում էին, և, բնականաբար, մեկը զիջում էր ճանապարհը, որ մյուսն անցնի, զիջողը իբր բախտավոր չէր լինում: Դրա համար կողմերն իրար հետ նախապես պայմանավորվում էին, որ հանդիպում չլինի: Կարծում ենք, բուն պատճառը կարող էր այն լինել, որ հարսանքավորների երկու մեծ խմբերի հանդիպումը, որտեղ շատերը զինովցած էին լինում, անախորժ միջադեպերի վտանգ էր պարունակում:

Հարսանիքին հաջորդում էր «հալվան», որը տանում էին աղջկա հարազատներն ու բարեկամները: Հարսանիքի հաջորդ օրը մեծ ավսեների մեջ պատրաստված հալվայի երեսին շարում էին մետաղադրամներ: Հալվայի հետ տանում էին չիր ու չամիչ, խմորեղեն, խաշած հավ կամ սագ, մրգեր, խմիչք: Աղջկա մոր ուղարկած հալվայի ավսեն մնում էր որպես նվեր, իսկ մյուսներինը վերադարձվում էին: Որոշ գյուղերում հալվա տանում էր միայն աղջկա մայրը:

Խորհրդային իշխանության վերջին տասնամյակներում, թերևս 1960-ական թվականներից, երբ համարյա բոլոր գյուղերում հուշարձաններ կային՝ նվիրված Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին, աստիճանաբար ավանդույթ դարձավ հարսանքավորների ուղեկցությամբ նորապսակների այցը հուշարձաններ:

Չնայած վերացված էր կնունքը, չէր լինում անվանակոչության արարողություն, այնուամենայնիվ յուրաքանչյուր երեխայի, մանավանդ առաջնեկի ծննդյան առիթով մեծ կամ փոքր հանդիսություն կազմակերպվում էր: Ծննդատանը գտնվելու օրերին ընկերուհիները, բարեկամուհիները անպայման համապատասխան ուտելիքներով ու նվերներով այցի էին գնում ծննդկանին, հաճախ նույնիսկ «խոնչա» (ուտելիքներով ու խմիչքով սկուտեղ) էին տանում բուժանձնակազմի համար: Երեխա ծնվելու առիթով սովորաբար նրա պատվին ծառ էին տնկում այգում: Հաճախ էլ, երբ երեխայի հետ գնում էին որևէ բարեկամի կամ ընկերոջ տուն, տանտերը երեխային մատնացույց էր անում որևէ ծառ և ասում՝ *այս ծառը քոնն է*: սովորաբար երկար տարիներ, այդ երեխային վերցրած, գալիս էին այդ ծառի բերքը քաղելու, կամ երեխան ինքն էր գալիս, քաղում, երբեմն էլ, հատկապես եթե դա նույն գյուղում չէր, բերքը քաղում, ուղարկում էին: Երիտասարդ ընտանիքին (հայրական տնից նոր առանձնացված) ամեն երեխա ծնվելու կամ այլ առիթով բարեկամները հաճախ նվիրում էին «դսգլիացու» (ցեղը շարունակելու, բազմացնելու համար)՝ եգ ոչխար կամ գառ, հորթ և այլն:

Աթեիզմի տիրապետության պայմաններում, հասկանալի է, վերացված էր խաղողօրհները, սակայն խաղողաքաղը դարձյալ հանդիսավոր ձևով էր կատարվում: Քանի որ գյուղերում համարյա բոլորը խաղողի այգիներ ունեին, բերքն էլ համարյա միաժամանակ էր հասունանում, բարեկամները համաձայնեցնում էին իրար հետ, թե ով երբ պիտի խաղողը քաղի: Այգու տերը, որպես կանոն, նախօրյակին «բղաքաղի»՝ խաղողաքաղի հրավեր էր ուղարկում բարեկամներին: Բղաքաղի գնում էին սովորաբար կանայք ու երեխաները՝ նվերներով. որպես կանոն՝ տանում էին զինի, խաշած հավ, այլ ուտելիքներ: Ոչ մեծ, բայց գեղեցիկ և ուրախ արարողություն էր «խաղողը կոխ տալը» (ձգմելը) բոբիկ ոտքերով, ինչպես նաև գինին քամելը: Տարվա այդ շրջանում բակերում, մոտակա գետափին շարվում էին խոշոր տակառներ ու հնձաններ, լցվում ջրով, այդպես պահվում մի քանի օր, որպեսզի «տոզեն», այսինքն՝ խոնավությունից ընդլայնվեն, բոլոր ձեղքերը փակվեն:

Բազմաթիվ բարի սովորույթներ էին կապված նոր տուն կառուցելու հետ: Նախ՝ տեղը որոշելուց, հիմքերի տեղը նշելուց հետո այնտեղ նստում, բաժակ էին բարձրացնում, հիմնվելիք



շենքն օրհնում: Շենքի հիմքում, որպես կանոն, դրամ էր դրվում, որ բարեկեցություն լինի: Ըստ ընդունված կարգի՝ թե՛ հարևանները, թե՛ բարեկամները հերթով պետք է գային, օգնեին շինարարությանը: Տանտերը, նախօրոք տեղեկանալով, թե ովքեր են ուզում գալ, օգնել, որոշակի հերթ էր սահմանում: Օգնելուց բացի՝ կար «պատը շնորհավոր անելու» սովորույթ. թե՛ եկողները, թե՛ նույնիսկ պատահական անցորդները պետք է պատի վրա դրամ դնեին՝ ասելով. «Աստված շնորհավոր անի»: Դրամի փոխարեն բարեկամները երբեմն վարպետի համար գուլպա էին որպես նվեր դնում պատի վրա:

Հատուկ սովորույթներ կային՝ կապված անասուն մորթելու հետ: Բհարկե, դա միայն տղամարդկանց գործն էր, նույնիսկ հավ մորթելն արգելված էր կնոջը: Գյուղում համարյա բոլորն անասուններ ունեին, հատկապես խոզեր, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ: Մորթել և միսը մշակել կարող էր թերևս ամեն տղամարդ՝ ցածր տարիքից սկսած, սակայն դա կատարվում էր հիմնականում տվյալ գյուղում, թաղամասում կամ տոհմում ճանաչված մեկի կողմից: Որպես կանոն՝ հավաքվում էին մերձավորները, մորթողը մորթում ու միսը մշակում էր, մյուսները, նրա շուրջը հավաքված, զրուցում կամ օգնում էին, հետո միասին սեղան նստում: Մսից անպայման բաժին էր ուղարկվում կարիքավոր հարևանին ու բարեկամին:

Հատուկ արարողություն էր կապված խոզ մորթելու հետ: Մեծ քանակությամբ խոզ էին պահում: Աշնանն սկսում էին մորթել՝ հիմնականում մինչև Նոր տարին: Մսի վաճառքի մեծ մասը կատարվում էր ապառիկ, կամ փոխ էին տանում, որպեսզի իրենք էլ մորթեն, փոխը վերադարձնեն: Մեկը միսը կտրտում ու կշռում էր, մյուսը, թուղը ու գրիչ վերցրած, գրում էր, թե ում ինչքան տրվեց և ինչ պայմանով: Հաճախ տանտերը նույնիսկ չէր խառնվում, նա միայն սեղան պատրաստելով էր զբաղվում, որպեսզի վերջում միասին սեղան նստեն: Հետաքրքիր գործողություն էր մանավանդ խոզ խանձելը: Բակում կրակ էին վառում, խոշոր քարեր շարում շուրջը, մորթած խոզը դնում վրան, մի քիչ խանձում, հետո մաքրում, եռացած ջրով լվանում, շրջում մյուս կողմի վրա, նորից խանձում, քերում, մաքրում, լվանում: Կանայք անընդհատ եռացրած ջուր էին հասցնում, տղամարդիկ «խանձում» էին, մինչև որ կաշին լավ մաքրվի ու փափկի: Հետո նեղ ու երկար շերտերով կտրտում էին կաշին ու վայելում սովորաբար հենց կրակի շուրջը՝ օղիով կամ գինիով: Նոր ժամանակներով խոզը «խանձելը» հեշտացել էր բենզինով կրակվառիչների միջոցով, բայց դարձյալ պահպանում էր գրավչությունը թե՛ մեծերի, թե՛ փոքրերի համար:

Խոզը մորթելու օրը բարեկամները մինչև գիշերվա կեսը քեֆ էին անում, իսկ կրակի վրա եփվում էր կորկոտը՝ խոզի ճարպոտ մսերից: Այն պատրաստ էր լինում առավոտյան, դարձյալ հավաքվում ու վայելում էին մերձավորներով: Խոզի գլխամսերից *սաղիքսոն* էին պատրաստում ձմեռվա համար, որը բավական աշխատատար ու մեծ հմտություն պահանջող գործ էր, կատարվում էր դարձյալ բարեկամների համատեղ ջանքերով: Մեծ արարողություն էր կապված «յուղը հալելու»՝ ճարպը հալելու հետ: Խոզը մաշկելուց անմիջապես հետո երկար ու նեղ շերտերով առանձնացվում էր ճարպը: Ընդ որում հաճախ, դեռ միսը մշակելը չավարտված, հենց տեղում մեկը կրակի վրա խորովում էր ճարպի նեղ շերտեր, ինչպես նաև փայծաղը, և վայելում էին հենց ոտքի վրա: Հաջորդ օրը տղամարդիկ տաշտի մեջ մանր կտրտում էին ճարպը, կանայք հալում էին: Չհալված մանր կտորները՝ «խուզուզունը», առանձնացվում էր. նրանով որոշ ճաշատեսակներ և հասարակ խմորեղեն էին պատրաստում: Պետք է ասել, որ հատուկ նշանակություն էր տրվում փորամասի ճարպին, որը բուժիչ էր համարվում. գործածվում էր սովորաբար դոշաբի հետ խառնած:



Քանի որ աշնանն էին սկսում խոզերը մորթոտել, գինին էլ առատ էր լինում, իսկ դրսի գյուղատնտեսական աշխատանքները՝ ավարտված, մինչև գարուն խնջույքներ ու հավաքույթներ էին լինում: Կար այսպիսի գեղեցիկ սովորույթ. երբ մի քանի ընկերներ հանդիպում էին փողոցում, ում տունն ավելի մոտ է, թեքվում էին այնտեղ: Մտնելուն պես հյուրերից մեկը ներսից դռանը փականը ծածկում էր (*«չանգալը գցում էր»*): Այդ նշանակում էր, որ հյուրերը բավարարվելու են տանը եղածով, լրացուցիչ նեղություն չպիտի կրեն տանտերերը: Դրա համար էլ, որպես կանոն, ճաշելուց հետո տանտիկիները օդու շիշն ու գինու սափորը, հաց, պանիր, թթու և այլն դնում էին սեղանին, մաքուր սփռոցով ծածկում, որպեսզի եթե տան տղամարդը հյուրերի հետ գա, մի բան պատրաստ լինի սեղանի վրա: Հետո արդեն կարող էին սեղանը հարստացնել ըստ հնարավորության և ըստ հանգամանքների:

Եկեղեցիների փակումից հետո կրոնական ծիսակատարությունները վերացել էին, բայց գատիկը միշտ նշվում էր. հավաքվում էին ուխտավայրերում, նախշած ձու, այլ ուտելիքներ ու գինի տանում, խնջույք կազմակերպում, սակայն՝ միայն երեխաներն ու պատանիները: Խորհրդային տարիներին բնակչության մի մասը անհավատ դարձավ, իսկ հավատացյալներն էլ խուսափում էին բացահայտորեն ուխտավայր գնալուց՝ բացի մեծահասակ կանանցից: Կարող է տարօրինակ թվալ գատիկն երեխաների՝ գինի օգտագործելը, սակայն շահումյանցիների համար անսովոր ոչինչ չկար, երեխաները փոքր տարիքից գինի էին խմում, իհարկե, քիչ քանակությամբ: Բոլորը գինի էին ունենում ամբողջ տարին և միշտ օգտագործում էին ճաշին՝ մասնակից դարձնելով նաև երեխաներին, բայց հարբեցող, ներկայիս ըմբռնմամբ՝ ակոհուղիկ, ոչ մի գյուղում չկար: Ամեն գյուղում, իհարկե, կային մեկ-երկու հոգի, որոնք համեմատաբար մի քիչ ավելի հակում ունեին գինու նկատմամբ, սակայն նրանք բոլորն էլ լավ աշխատող մարդիկ էին և երբեք հակահասարակական որևէ արարք թույլ չէին տալիս: Ներքինշենացի հանրահայտ խմող Մթովանց Կոլին, օրինակ, առավոտից երեկո Լիտրի ժայռերից քար էր քանդում. գյուղի տների մեծ մասը նրա քանդած քարով էր շարվել: Մյուս հայտնի խմողը՝ Առստամանց Նազարը, և՛ բարեխիղճ հողագործ էր, և՛ կոշկակար: Ընդ որում բրեզենտից էծանագին, բայց դիմացկուն կոշիկ էր կարում և միշտ գնորդի խաթրով էր վճարը վերցնում: Նույնը կարելի է ասել մյուս գյուղերի ճանաչված խմողների մասին: Մնում է միայն ավելացնել, որ մեր շրջանի գյուղերում հիմնականում *մուշկեթի* գինի էին խմում, որը սեղանի թույլ գինի էր, իսկ օղի խմում էին միայն առավոտյան՝ նախաճաշից առաջ, մեկ բաժակ՝ այն էլ միջին տարիքից սկսած:

Եկեղեցական միայն մեկ արարողություն խորհրդային իշխանությունները չկարողացան արմատախիլ անել: Հունվարի 6-ին, իհարկե, գաղտնի, բայց միշտ մարդաշատ, կատարվում էր *«խաչը ջուրը գցելու»* արարողությունը: Դժվարանում ենք մանրամասն նկարագրել, բայց հայտնի է, որ գիշերը որոշակի տեղում հավաքվում էին մեծ թվով հավատացյալներ: Հիմնական արարողությունը կատարվում էր գետում լուսադեմին:

Բազմաթիվ սովորույթներ կային՝ կապված ծանր *աշխատանքները* համատեղ կատարելու հետ: Այդպես էր կատարվում հերկը, ձմեռվա համար ցախի ու վառելափայտի կուտակումը: Խաղողը քաղելու նախօրյակին կամ այդ օրվա առավոտյան մի քանի մերձավորներով զբաղվում էին *«բանդաղ* (կախան) *անելով»*. Խաղողի ընտիր ողկույզները ուռենու ճյուղերով կապում, երկար շարանի ձևով կախում էին մառանում: Նույն ձևով հավաքում, խնձորը, տանձը *«խախալ էին անում»*, այսինքն՝ կապում էին թելերով, պահում ձմեռվա համար: Միասին էր կատարվում նաև լոբու *«չորուկը պճղելը»*՝ սովորաբար մասնակից դարձնելով հարևանների ու բարեկամների երեխաներին:



Ուշագրավ սովորույթ էր բանակ ճանապարհելու արարողությունը: Մեր լեռնաշխարհի բնակչությունը հարգանք էր տաճում հայրենիքի զինվորի նկատմամբ: Պատահական չէ, որ երբ տղա էր ծնվում, մեր գյուղերում այսպես էին օրհնում՝ «Մեծանա, բանակ գնա...»: Ավաղ, շատերը բանակից չէին վերադառնում, իրենց կյանքը զոհում էին հանուն հայրենիքի: Նրանց անունը սրբորեն հիշվում էր, նշվում էր բոլոր հանդիսությունների ժամանակ, նրանց պատվին հուշարձաններ էին կառուցվում, որոնք ուխտավայր էին դառնում: Հնագույն ժամանակների զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարերով սրբավայրեր կան թերևս բոլոր գյուղերում, որոնց ժողովուրդը «նահատակ» էր ասում: Հայրենական պատերազմի զոհերի հուշարձաններ կային բոլոր գյուղերում, որտեղ ամփոփվեցին նաև Արցախյան պատերազմի զոհերի աճյունները: Չնայած կորուստներին՝ մարդիկ միշտ հպարտությամբ էին որդի ճանապարհում բանակ, և հանդիսություններ էին լինում այդ առիթով: Եթե նույն գյուղից միաժամանակ մի քանի հոգի էին զորակոչվում, ծնողները հերթ էին սահմանում, թե ում տանը երբ պիտի հավաքվեն, հանդիսություն կազմակերպեն: Հավաքվում էին երբեմն 2-3 հարյուր մարդ՝ նվերներով (որպես կանոն՝ ուտելիք և խմիչք, իսկ նոր ժամանակներում՝ փող, որի համար հատուկ ցուցակ էր կազմվում): Մեղանների շուքը այս դեպքում էլ լինում էր **խոնչան**, որ բերում էին բարեկամները, հարևանները, տղայի ընկերների ծնողները: Ուղեկցվում էր երաժշտությամբ, երգով, պարով:

Մեծ իրադարձություն էին ավարտական քննությունները: 1920-ական թվականներից, երբ բացվեցին միջնակարգ դպրոցներ, գյուղերի կյանքում մեծ իրադարձություն էին դպրոցի ավարտական քննությունները: Շրջանավարտների ծնողներն ու բարեկամները քննության օրը ուսուցիչների համար խոնչա էին տանում՝ տվյալ գյուղին բնորոշ ուտելիքներով ու խմիչքներով: Տվյալ օրվա քննությունից հետո ուսուցչական կոլեկտիվը դպրոցի ղեկավարների գլխավորությամբ սեղան էր նստում, վայելում խոնչաները: Դրա հետ կապված՝ մի զվարճալի դեպք է հայտնի: Հիմնականում 1930-ական թվականներից սկսած՝ տարածում ստացավ որևէ մեկի հասցեին շրջկոմին անստորագիր բողոքագիր՝ չարախոսություն, «կյսաուզա», «մատերիալ» գրելը: Ղարաչինարի միջնակարգ դպրոցից մեկը «մատերիալ» է գրում շրջանի ղեկավարությանը, թե՛ տնօրեն Օհան Աղաջանյանը «խոնչալիզացիայով է զբաղվում»: Ընկեր Օհանին կանչում են շրջկոմ, հայտնում այդ մասին, զգուշացնում, որ շատ չտարվեն խնջույքներով, բայց այդ հորինված բառի վրա բոլորը մի լավ ծիծաղում են: Ընկեր Օհանը վերադառնում է Ղարաչինար, հենց գյուղամիջում հանդիպում այդ «կյսաուզնիկին», մի լավ «նախշում» ասելով. «Մ՛շան տղա, էտ խոնչալիզացիայի թամադան տյու չէ՞ս ինում»:

ԲԵՐՔԱՀԱՎԱՔ՝ ԿԼՈՐ ՏԱՐԻՆ

Լեռնաշխարհի հարուստ բնությունը, դաշտերն ու անտառները, գետերը ապրուստի անսպառ աղբյուր էին բնակչության համար: Վաղ զարնանից սկսվում էր զանազան օգտակար բույսերի հավաքումը՝ սիբոդ, շուշան, կյուրմյուզուկ, պեքի, ծինեփակ և այլն: Այդ բույսերը քաղելու էին գնում թաղամասերով՝ կանայք, երեխաները, պատանիները: Պեքի, կյուրմյուզուկ, ծինեփակ քաղելու գնում էին ավելի հաճախ տղամարդիկ, որովհետև դրանք աճում էին հաճախ դժվար մատչելի (անտառոտ) և վտանգավոր (օձաշատ) տեղերում: Մի աննկարագրելի արարողություն էր դա: Երեկոյան պայմանավորվում և վաղ առավոտյան իրար ձեն տալով հավաքվում, մեծ խմբերով գնում, մինչև կեսօր, երբեմն մինչև երեկո քաղում էին, բնության գրկում բոլորը միասին ճաշի նստում: Վերադառնալուց հետո էլ ամբողջ գիշեր, տնեցիներով հավաքված, մաքրում (հնդրում) էին բերածը, տեսակավորում, թթու դնելունը՝ թթու դնում, չորացնելունը՝ փռում չորանալու, եփելունը՝ եփում:



Ամռան ամենահաճելի խմբային զբաղմունքներից էր ձուկ որսալը: Ընկերներով հավաքվում, գնում էին գետերի ձկնառատ տեղերը: Խմբի մեջ աշխատանքի բաժանում էր լինում՝ ումանք «խորխոր» էին տալիս՝ քարերի տակերից ձկները դուրս քշում, մյուսները բռնում էին: Հետաքրքիր էր նաև «քոռոց սարելը»։ ուռենու և այլ մատղաշ շիվերից հատուկ կողովներ էին գործում, տեղավորում ձկնառատ տեղերում. ձուկը դրանց մեջ հավաքվում էր, դուրս գալու տեղ չէր գտնում: Բռնած ձուկը, շատ լիներ, թե քիչ, առիթ էր դառնում ընկերների ու բարեկամների մեծ խնջույքի՝ չհաշված, որ հենց գետափին վայելելն ինքը մեծագույն հաճույք էր:

Օգոստոսից սկսվում էր անտառների հոնի, շլորի, տանձի ու խնձորի բերքահավաքը, որը կատարվում էր դարձյալ մեծ խմբերով: Հոնը չորացնում էին (նաև շլորը) ձմեռվա համար, տանձն ու խնձորը լցնում էին խոտի կամ ծղոտի վրա, պահում ձմեռվա համար և անընդհատ տնտղում, հասածները ջոկում էին, ուտում: Տանձը նաև թթու էին դնում: Հաճարի բերքը հավաքում էին ընտանիքներով: Հայրը կամ չափահաս տղաներից մեկը բարձրանում էր, հաճարի ծառի ճյուղերը թափահարում, իսկ փոքրերը ծառի տակ փռած պահում էին թթի շալը, հաճարը հավաքում: Ամբողջ ձմռանը դա երեխաների համար հաճելի և սննդարար ուտելիք էր, իսկ տատիկները որոշ թխվածքներ էին թխում հաճարով, չքավոր ընտանիքներում նույնիսկ ճաշ էին պատրաստում՝ յուղի փոխարեն հաճար օգտագործելով: Կային անտառային հատվածներ, որտեղ մեծ չափով ընկույզ էր լինում: Դրանք համեմատաբար հեռու էին լինում բնակավայրերից, և ընկույզ հավաքելու գնում էին հիմնականում տղամարդիկ՝ ձիերով կամ էշերով:

Խոր ձմռանը, երբ անտառում ձյուն էր նստած լինում, գնում էին՝ զկեռ հավաքելու: Ծառերի վրա տերև չէր լինում, այլ միայն հասած զկեռ, թափ էին տալիս ու հավաքում ձյունի վրայից:

Անտառները լիքն էին որսով՝ նապաստակ, աղվես, արջ, եղնիկ, քարայծ, կզաքիս: Գայլի որս չէր լինում, այլ պարզապես ոչնչացնում էին գայլերին՝ որպես վնասատուների, մաշկում, կաշին հանձնում պետությանը, ստանում որոշակի վճար: Իսկ «ձմեռնապինդ» տարիներին, երբ գյուղերի ու ֆերմաների շրջակայքում սկսում էին հաճախակի հայտնվել գայլեր, կազմակերպվում էր նրանց ոչնչացումը:

Որսի գնում էին խմբերով: Ամեն գյուղում կային ճանաչված որսորդներ: Որսը, որպես կանոն, հավասար բաժանում էին խմբի անդամների միջև, անկախ նրանից, թե ով ինչ կամ քանի հատ է սպանել: Տուն բերելուց հետո էլ որսի մսից բաժին էր տրվում հարևաններին ու բարեկամներին: Որսի մյուս տեսակը, որ թակարդներով էր կատարվում, անհատական բնույթ ուներ: Սակայն այս դեպքում էլ, ինչպես որ խմբային որսի ժամանակ, երբ դաշտում կամ անտառում որսի միսը մշակելու ժամանակ որևէ մեկը պատահաբար գալիս, հանդիպում էր, նրան նույնպես հավասար բաժին էր տրվում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ

Հայկական խոհանոցի բոլոր հիմնական ճաշատեսակներն ու ուտեստները տարածված են եղել նաև Շահումյանի շրջանի գյուղերում, բայց ունեցել են պատրաստման որոշ առանձնահատկություններ: Որոշ ճաշատեսակներ էլ տարածված են եղել առավելապես մեր գյուղերում: Դժվար է ստույգ որոշել, թե ինչն է հատուկ միայն մեր գյուղերին, կարծում ենք, դա այնքան էլ էական չէ: Ստորև կներկայացնենք մեր գյուղերի ազգագրական պատկերն արտացոլող և քիչ տարածված մի շարք ճաշատեսակներ ու ուտեստներ, որոնք կա՛մ արդեն մոռացվել են, կա՛մ մոռացման վտանգի տակ են:

ԿՈՆԶՈՒ: Քիչ չորացած թոնրի հացը մանր կտրտվում է: Հետո պատրաստվում է տխառած, ավելացվում ջուր և աղ, եփելու ժամանակ ավելացվում է համեմունք, տաքդեղ և այլուրից պատ-



րաստած խոյու: Մի քիչ եռացվում է, որպեսզի այրահամը անցնի, հետո ավելացվում է նախօրոք մանր կտրտված հացը: Հինգ րոպե եռալուց հետո ավելացվում է մեկ կամ երկու հարած ձու: Ուտելու ժամանակ ավսեի մեջ կարելի է ավելացնել մեկ ճաշի գդալ գինու քացախ՝ յուղայնությունը թեթևացնելու, հաճելի թթվաշություն տալու նպատակով:

Որոշ տներում կոնչոլը պատրաստում էին կամ կտենի դարձած, կամ հնացած հացից:

ՇՓՈԹ: Այլուրը պետք է աստիճանաբար լուծել սառը ջրի մեջ՝ նախօրոք լցնելով աղ, հետո անընդհատ խառնել, որպեսզի կոլոլակներ չառաջանան և չկպչեն կաթսայի պատերին: Որոշ ժամանակ եփելուց հետո ստացված մածուցիկ (ոչ պինդ) զանգվածը տաք վիճակում լցվում է ավսենների մեջ: Հետո ավսեի կենտրոնական մասում խմորազանգվածի մեջ փոս է արվում, մեջը լցվում դոշաբ կամ մեղր: Գդալով քիչ-քիչ վերցնում են խմորազանգվածից, թաթախում դոշաբի կամ մեղրի մեջ և ուտում: Որոշ գյուղերում շփոթը պատրաստում են նաև խաղողի հյութից կամ մաճառից՝ ջրի փոխարեն: Այդպիսի շփոթի մեջ արդեն դոշաբ կամ մեղր չի լցվում: Այդպիսի խմորազանգվածին խառնվում է մանր կտրտած ընկույզի միջուկ:

ԽԱՇԻԼ ՓՈԽԻՆՁՈՎ: Բոված և երկանքով աղացած ցորենի այլուրը՝ փոխինձը, մաղում են, առանձնացնում մանրը և խոշորը: Խոշորն աստիճանաբար լցվում է սառը ջրի մեջ (որի մեջ նախապես աղ է լուծված լինում), խառնվում, եռացվում է 15-20 րոպե: Դրանից հետո ավելացվում է մաղվածքի մանր, այրանման մասը ու խառնվում, նորից մի քանի րոպե եռացվում և տաք վիճակում լցվում ավսենները: Ուտելուց առաջ խաշիլի կենտրոնում գդալով փոս է արվում, մեջը լցվում հալած յուղ: Խաշիլի շուրջը (ջրջանագծով) լցվում է թան կամ թանձր մաճնաջուր: Ուտելու կարգն այսպես է. պետք է գդալով վերցնել խաշիլը, թաթախել յուղի մեջ, հետո թաթախել թանի կամ մաճնաջրի մեջ և ուտել:

Խաշիլի ուտելու բարեկիրթ ձևն այն է, որ յուղը, թանը և խմորազանգվածը միասին վերջանան, այսինքն՝ պետք է համաչափ ուտել: Հնում երբեմն նույն ամանից միաժամանակ մի քանի հոգի էին ուտում, որի պատճառով ուտելու բարեկիրթ ձևը պահպանել միշտ չէր հաջողվում: Հայտնի են դրա հետ կապված զվարճալի պատմություններ:

Ասում են, մի անգամ նորափեսան հյուր է եկած լինում: Տանտիկինն ամուսնու և փեսայի համար նույն ամանում խաշիլ է լցնում, և աներ ու փեսա սկսում են ուտել: Փեսան մի քիչ երկչոտ է լինում, իսկ գոքանչն ուզում է, որ հալած յուղը հոսի դեպի նրա կողմը. գդալով յուղի փոսիկից հետք է բացում դեպի փեսայի կողմը և ասում. «Փեսա ջան, շուտ-շուտ արի, որ ճանապարհդ այ էսպես բացվի»: Աները նկատում է, որ յուղն ամբողջությամբ հոսեց փեսայի կողմը, ինքն էլ գդալով խառնում է թանը, խաշիլն ու յուղը (որպեսզի երկուսին հավասար հասնի) և ասում. «Է՛, այ կնիկ, դժվար ա, է՛, դժվար, խառնիխաթիշ տարի ա»:

ԽԱՇԻԼ ԿՈՐԿՈՏՈՎ: Սառը ջրի մեջ լուծվում է աղը, լցվում խոշոր կորկոտ, եռացվում մոտ 20-25 րոպե: Կորկոտը լավ եփվելուց հետո քիչ չափով ավելացվում է մաղով անցկացված այրանման փոշուց: Հետո պատրաստվում է սոխառած: Կորկոտով խաշիլը տաք վիճակում լցվում է ավսեի մեջ, մեջտեղը գդալով փոս արվում, սոխառածը լցվում մեջը: Գդալով վերցնում են խաշիլից, թաթախում սոխառածի մեջ, ուտում:

ՀՅՈՒՆՈՒԹԹՈՆ (ՏՄԲԼԱԹԹՈՆ): Հոնի (կամ թթու դամբուլի) չիրը եփում են այնքան, որ փափկի: Հետո ձեռքով տրորում են, կորիզներն առանձնացնում: Ստացված հեղուկ զանգվածին ավելացնում են մի քիչ այլուր՝ անընդհատ խառնելով, որպեսզի խմորազանգիկներ չառաջանան, ավելացնում այլուր կամ մանր ձավար և եռացնում: Ուտելու ժամանակ ավսեի մեջ ըստ ճաշակի ավելաց-



վում է դոշար (կամ շաքարաջուր), որպեսզի շատ թթու չլինի: Որպես կանոն՝ ուտելու ժամանակ ավսեի մեջ առատորեն հաց են բրդում. դա և՛ կշտացնում է, և՛ մեղմացնում է թթվությունը:

Հյունություն մրսածի դեղ է, քրտնելու լավ միջոց:

ԿԱՐԿԱԺ (ԴԴՈՒՄ): Կարկաժը սովորաբար եփում են հաց թխելու օրը՝ ուշ աշնանն ու ձմռանը: Դոշումի կոթի մասը կլոր կտրում, վերցնում են, ներսը մաքրում գդալով, հանում սերմերն ու փափուկ մասը: Ներսը շերտ առ շերտ լցնում են ընկույզի միջուկ, սև սալորի չիր (առանց կորիզի), կտրտած սոխ և չոր հոն: Հետո ծածկում են իր իսկ «կափարիչով» (կտրված պոչամասով): Հացը թխելուց հետո թոնրի մեջ առատ շեղջ է մնում (շիկացած ածուխների մեծ կույտ): Լցունված դոշումը դրվում է այդ շեղջի մեջ, թոնրի բերանը փակվում: Առավոտյան արդեն ընտիր ուտելիքը պատրաստ է լինում: Ավելի լավ է լինում, եթե դոշումը շեղջի մեջ է դրվում թուջե թավայով: Կարկաժ հաճախակի չեն եփում, ուստի եփելու դեպքում սովորաբար հյուր են կանչում մոտիկ բարեկամներին կամ հարևաններին, միասին ճաշակում:

ԿԱՐԿԱԺԻ ՇԻԼԱ: Դոշումը դնում են տաք վառարանի վրա, շուտ-շուտ շրջում, շուռումուռ տալիս, որպեսզի բոլոր կողմերը դառնան կիսախորտված: Հետո կտրտում են, հեռացնում կեղևը և ներսի մաճուցիկ մասն ու կորիզները: Կաթսայի մեջ մեկ բաժակ ջրին ավելացնում են մաքրած և մանրացրած ընկույզ և սոխ: Սոխը փափկելուն պես ավելացնում են սև սալորի (ալբուխարի) չիր ու չորացրած հոն, հետո ավելացնում մանր կտրտած դոշումը: 10-20 րոպե եռացնելուց հետո շիլան պատրաստ է լինում: Երբ դոշումը քաղցրահամ չի լինում, շիլան եփելու ժամանակ ավելացնում են մի քանի կտոր շաքար: Ուտում են՝ երկու ձեռքով երկու կտոր հաց բռնած, շիլան մեկով մյուսի վրա քսելով:

ԿԻՃԱՆԱՇ: Եզիպտացորենի հատիկները ջրի մեջ մի քանի ժամ թրջոց դնելուց հետո եփում են այնքան, որ դառնա կիսաեփ, որից հետո ավելացնում են նախօրոք թրջոց դրված լոբու հատիկ և կորկոտ (տինգով ձեծած ցորեն): Երբ այդ խառնուրդը որոշ ժամանակ եփում է, ավելացվում է մանր կտրտած ընկույզի միջուկ: Դրա շնորհիվ կիճախաշը դառնում է յուղալի և հաճելի կարմրավուն, ուտելու ժամանակ էլ դուրեկան խորթխորթոց է լինում: Որովհետև կիճախաշը եփելը երկար է տևում, սովորաբար երեկոյան սկսում են, մինչև ուշ գիշեր պատրաստում, առավոտյան ճաշակում:

ԼՈՒՐՈՎ ՃԱՇ ԵՎ ՅԱՆՆԻ: Հատիկ լոբին եփում են, ջուրը քամում, հատիկների մի մասն առանձնացնում: Առանձնացված հատիկներին սոխ է կտրտվում և օգտագործվում որպես խորտիկ՝ յախնի: Լոբու մյուս մասին ավելացվում է մանր կորկոտ և ընկույզի կտրտված միջուկ, եփվում ինչպես ջրալի ճաշ: Այն կոչվում է նաև չալ ճաշ, որովհետև սովորաբար պատրաստում են չալ լոբուց:

ՓԹԴՈՎ: Պատերազմական ու հետպատերազմյան ծանր տարիներին տարածված ճաշատեսակ էր փթթուկը: Կթան ունեցողները պատրաստում էին ջրի հետ խառնած կաթով (1:1 հարաբերությամբ), չունևորները՝ ջրով: Եռացվում էր ջրով խառնած կաթը կամ միայն ջուրը, այնուհետև լցվում էր սոխառածի վրա: Առանձին թասի մեջ լցված այլուրի վրա կաթիլներով մի քիչ ջուր են ցողում, բուրբ մատով ու ցուցամատով վերցնում կիսախմոր այրագնդիկը, մանր փաթիլների նման լցնում եռացող հեղուկի մեջ, ավելացնում համեմունք, եփում 15-20 րոպե: Ոհտելու ժամանակ կարելի է ավսեի մեջ ավելացնել (ըստ ճաշակի) մեկ թեյի գդալ գինու քացախ:

ՔԻԼԻՆՎՅՈՇ: Չորաթանր թրջոց են դնում տաք ջրի մեջ 4-5 ժամ: Հետո քամում են, սկսում ձեռքի ավով հարել՝ քիչ-քիչ ավելացնելով տաք ջուր, մինչև որ գնդիկները լրիվ հալվեն: Ստացված թանր



եռացնում են, մեջը մանր կտրտում թոնրի չոր հաց, եռացնում 5-10 րոպե: Ուտելուց առաջ ավսենների մեջ ըստ ճաշակի (և ըստ հնարավորության) ավելացվում է յուղ և մի քիչ սխտոր:

ՉՈՐԱԹԱՆ: Գյուղերում տանտիրուհիները հաճախ չորաթան էին պատրաստում, պահում որպես պաշար, օգտագործում թան (կաթ) չունեցած ժամանակ: Չորաթանը պատրաստվում է այսպես. խնոցու թանը լցնում են տոպրակի (քսակի, ավելի ստույգ՝ թնքսակի) մեջ, կախում, որ ջրաքամվի: Հետո մի քիչ այրուր են ավելացնում, խառնում, տրորում այնքան, որ ստացվի համասեռ խմորաձև զանգված: Այդ զանգվածից ձեռքով վերցնում են մեկ ճաշի գդալի չափով, մի քանի անգամ մի ձեռքից մյուսն անցկացնելով՝ դարձնում բրգաձև գնդիկ, շարում հացի խոնչայի (կամ սինու՝ սկուտեղի) վրա, չորացնում սովերում, որպեսզի հետո դրանից թան ստանան:

ԽՈՒՒՈՓ: Խոզի կամ բադի, սագի, ինչպես նաև հավի միսը կտրտելուց և լվանալուց հետո լրիվ չքամած, մի քիչ ջրով լցնել կաթսայի մեջ, եփել: Կիսակի վիճակում ավելացնել սև սալորի (ալբուխարի) չիր (առանց կորիզի), 5 րոպե եփելուց հետո ավելացնել մեծ քանակությամբ կտրտած սոխ, եփել 10-15 րոպե: Կրակից վերցնելուց 2-3 րոպե առաջ լցնել համեմունք և մաքրած նոսն հատիկներ:

ԿՈՐԿՈՏ: Խոզի մսի յուղոտ կտորները, հիմնականում գլխամասից, լցնել սառը ջրի մեջ, ավելացնել կորկոտ՝ տինգով ձեծած ցորեն: Եփել ամբողջ գիշերը: Լուսադեմին պատրաստ է լինում: Ճաշակում են առավոտյան, սովորաբար բարեկամներով ու հարևաններով: Կորկոտը եփում են և՛ վառարանի վրա, և՛ թոնրի մեջ: Թոնրի մեջ եփելու համար կաթսայի ու կափարիչի արանքը խմորում են, հերմետիկորեն փակում, երեկոյան իջեցնում թոնրի մեջ, դնում շեղջի վրա, թոնրի բերանը փակում, թողնում մինչև առավոտ:

ՓԼԱՎ: Եռացրած ջրի (իսկ ով կարող է՝ կաթի) մեջ լցնել բրինձ այնքան, որ հատիկներն ազատ լողան հեղուկի մեջ: Եփել թերի (կիսակեփ), քամել փլավքամիչով, վրան լցնել սառը ջուր: Կաթսայի մեջ յուղ դնել, վրան լցնել հարած ձու: Լավ տաքացած յուղի վրա աստիճանաբար լցնել բրնձի զանգվածը և յուղի մեջ տակացրած չամիչ (շերտ առ շերտ): Վերջում վրան ավելացնել յուղ կամ վրան շարել կարագի բարակ շերտեր, կաթսան դնել թույլ օջախի վրա: Սովորաբար կաթսայի բերանը փակում են սրբիչով, հետո ծածկում կափարիչով (խոնավությունը կլանելու համար): Մատուցելու ժամանակ սկզբից լցվում է բրինձը, հետո տակի ձվաձեղով ծածկվում ավսեն:

ԽԱՇԼԱՄԱ: Գառան կամ ուլի կտրտած միսը լվանալուց հետո քիչ ջրով լցվում է կաթսայի մեջ, ավելացվում մեկ բաժակ սպիտակ գինի կամ գարեջուր, համապատասխան չափով աղ, պղպեղ, փակվում է կափարիչով, եփվում թույլ կրակի վրա: Ամռանը խաշլամա պատրաստվում է այլ ձևով. տափակ շերտերով կտրտվում է պոմիդոր, շարվում կաթսայի մեջ, աղ ցանվում, հետո վրան շարվում է կտրտած միս, աղ ցանվում, հետո՝ մաքրած, բարակ շերտերով կտրտած կարտոֆիլ, նորից աղ ցանվում: Սովորաբար ամեն շերտի հետ մի քանի կտոր դմակ է դրվում: Յուրաքանչյուր շերտի վրա կարելի է շաղ տալ մանր կտրտած համեմ: Այդ ձևով երեքական շերտ կարելի է ավելացնել՝ նայած պահանջին: Կաթսան փակվում է, դրվում թույլ կրակի վրա, շուրջ մեկ ժամ եփվում: Ո՛չ հաճախակի կափարիչը բարձրացնել է պետք, ո՛չ խառնել:

Փորձված խոհարարն արդեն իսկ հոտից զգում է, որ խաշլաման պատրաստ է: Երբ կափարիչը բարձրացնելուց հետո նկատում են, որ վերնի կարտոֆիլը եփած է, կարելի է կաթսան վերցնել կրակից: Ինչպես որ շերտ-շերտ, համաչափ լցված է կաթսայի մեջ, այդպես էլ համաչափ, այսինքն՝ ամեն ինչից հավասարապես, լցվում է ավսենների մեջ: Կաթսայի մեջ գոյացած յուղալի ու հաճելի թթվաշություն ունեցող հեղուկը սովորաբար խմում են բաժակով, տաք վիճակում, հետո վայելում խաշլաման:



ՎՅՈՒԼՈՒԿԻ (ԱՎԵԼՈՒԿԻ) ՃԱՇ: Աղեստամոքսային տրակտի խանգարումների ժամանակ անփոխարինելի միջոց է վյուլուկի (ավելուկի) ճաշը: Չորացած ավելուկը թրջում են տաք ջրում, լվանում, լցնում եռացող ջրի մեջ, եփում, մինչև որ փափկի տերևների պոչը: Հետո եփվածը հանում են, ծեծելով կտրտում, մանրացնում: Սովորաբար կտրտում են տշտքիրով՝ խմորի տաշտը քերելու մետաղե քերիչով, փայտե խոնչայի վրա: Օգտագործում են երկու ձևով: Առաջին՝ սոխառածին ավելացվում է կտրտած ավելուկը, խառնվում, մի քանի րոպե եփվում, մատուցվում որպես կանոն, սխտորով: Երկրորդ՝ պատրաստվում է ապուր: Եփած ավելուկի հեղուկը եռացվում է, ավելացվում մանր կտրտած ընկույզի միջուկ, կիսաեփ չոր հոն, սև սալորի չիր, և բոլորը միասին եփվում է 5-10 րոպե: Հետո ավելացվում է ալյուրի թույլ խյուս, եռացվում, ավելացվում կտրտած ավելուկը և մանր կտրտած թոնրի հաց, եփվում է 5-10 րոպե: Ապուրը պատրաստ է:

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՃԱՇ (ԿՐՏՈՂԱՅԱՇՈՒ): Սոխառածին ավելացվում է մանր կտրտած կարտոֆիլ, մի քիչ տապակվում շոգու մեջ, հետո ավելացվում է ջուր և աղ, կծու սիրողները՝ նաև պղպեղ: Եփելու ժամանակ ավելացվում է ալյուրից պատրաստած թույլ խյուս, համեմունք, վերջում՝ հարած ձու: Եփել թույլ կրակի վրա: Ուտելու ժամանակ ըստ ճաշակի ավելացնել գինու քացախ:

ԵՂԻՆՁ (ԿԾՈՏՈՂ ՊԵՆՁԱՐ): Օգտագործվում է մատղաշ ժամանակ: Սոխառածին ավելացվում է մեկ բաժակ ջուր, եռման ժամանակ ավելացվում է աղ (որպեսզի կանաչ գույնը պահպանվի) և լվացված եղինջը (կծոտող պենջարը): Վերջում ավելացվում է ալյուրի խյուսը, իսկ եփելուց հետո՝ կրակի վրայից վերցնելուց 2-3 րոպե առաջ, տրորած ձու: Ուտում են մատներով ու մանր հացի կտորներով:

ՍՈՒՈՒՍ: Հացի խմորից մի գունդ պահում են, լավ թթվացնում, տրորում ջրի մեջ, լցնում պուլիկի մեջ: Հետո ավելացնում են առանձին-առանձին եփած ցորեն ու չոր հոն: Փակ պահում են մի քանի օր, մինչև որ հեղուկի մակերեսին փրփուր առաջանա: Հեղուկից վերցնում են, եռացնում, մեջը լցնում կտրտած հաց: Ստացվում է շատ թթու և դառը ճաշ: Բսկ պուլիկի մեջ ավելացնում են եռացրած ջուր (նորից պատրաստելու համար):

ՊՅԱՂԱՐՃ (ԿԱԹՆԱՀՈՒՆՑ): Մայիսմեկյան տոնական սեղանին բոլոր գյուղերում պյաղարճ (բաղարջ) էին դնում: Կաթի հետ խառնում են կարագ, ձու, սոդա, դարչին, վանիլին և լավ խառնում, խմորը հունցում այդ հեղուկով: Հետո խմորը բացում են կլոր հացի ձևով: Մեծ ջանասիրությամբ է նախշվում պյաղարճի երեսը: Սովորաբար քառաձյուղ պատառաքաղով տրամագծով համաչափ գծեր են քաշվում, հետո դրանք միացվում են հատվող զիգզագներով, հետո, պատառաքաղի ծայրով ծակոտելով, որոշակի տեսք տալիս: Թխելուց առաջ երեսին հարած ձու է քսվում: Որպես կանոն՝ տան յուրաքանչյուր անդամի համար առանձին պյաղարճ է թխվում, իսկ տան ու բարեկամների երեխաների համար՝ ըստ տարիքի չափսերը փոքրացնելով, երբեմն նաև երեխայի անվան առաջին տառը վրան գծած:

ԿՐԿԵՆԻ: Ձմեռվա աղունն աղալու ժամանակ ջրաղացում անպայման պետք է կրկենի թխվեր (ընդ որում ասում էին՝ «կրկենի անել», ոչ թե թխել): Նոր աղացված ալյուրից շտապ խմոր էին անում, ընկույզը ջարդում, մեջը շարում: Թխում էին մոխիրի մեջ, մեղմ կրակով: Ամանորի տոնական սեղանի համար կրկենին տանն էր պատրաստվում՝ վառարանի վրա, և մեջը մի չոր հոն կամ մետաղադրամ էր դրվում: Տան գլխավորը հավաքում էր բոլոր սնեցիներին և սկսում կրկենին կտրտել՝ յուրաքանչյուրի համար անվանական մեկական կտոր, այդ թվում ունեցած ամբողջ անասունների, ինչպես նաև մեղունների անունով: Ըստ հավատալիքի՝ ում որ բաժին հասներ չոր հոնը (կամ մետաղադրամը)՝ «դովլաթը», այդ տարին նրա համար հաջողակ



(եկամտարեր) էր լինելու: Թխվածքը բաժանողը կտրելուց առաջ հայտարարում էր, թե հերթական կտորն ում անունով է լինելու: Եթե կտրելու ժամանակ դանակը դիպչեր «դովլաթին», ուրեմն հաջողությունն ամբողջ ընտանիքի համար էր լինելու: Ասում էին՝ «դովլաթն այսինչի գլխումը դուրս եկավ», այսինքն՝ նրան բաժին հասավ:

ՓՈՒՆՉԱԿԼՈՒԱԿ: Աշնանը ձմեռվա համար պաշար պատրաստելու ժամանակ փոխինձ են պատրաստում՝ բոված ցորենն աղալով: Մաղված փոխինձի ալրանման մասից պատրաստվում է փոխնձակլոլակ: Դոշաբը (բաքմազ) լուծվում է գոլ ջրի մեջ, լցվում մաղած փոխինձի վրա, գդալով լավ խառնվում, մինչև որ լրիվ շաղախվի: Տան տատը կամ մայրը այդ զանգվածից վերցնում, ձեռքով գնդիկներ է պատրաստում բոլի մեջ, տեղնուտեղը բաժանում երեխաներին: Դոշաբի փոխարեն կարող են օգտագործել նաև մեղրաջուր, մուրաբայի հյութ, շաքարաջուր:

Փոխնձակլոլակը լավ միջոց է փորահարինքի դեմ (և ընդհանրապես փոխինձը):

ՍԱԼԴԻՍՈՆ: Խոզի գլուխը եփում են ոչ շատ: Առանձին եփում են նաև տավարի փափուկ միս: Դրանք կտրտում են մանր մասերի, ավելացնում տրորած սխտոր, պղպեղ, աղ: Լավ խառնելուց հետո զանգվածը լցվում է անլվա կտավից կարված տոպրակի մեջ, դրվում մի հարթ քարի վրա, և վրան դրվում է մի ծանր, հարթ քար: Տոպրակը մի քանի տեղից բիզով ծակում են: Ավելի հաճախ տոպրակի փոխարեն օգտագործվում է քորթիկ: Քորթիկը անասունի ստամոքսն է՝ հատուկ մաքրված, մշակված՝ սալդիսոն պատրաստելու համար: Մոտ երկու շաբաթ հետո սալդիսոնը պատրաստ է լինում: Այն կարող է երկար պահվել ուտելու համար: Ուտելու ժամանակ մի փոքր մաս կտրում են բարակ շերտերով՝ մոտավորապես երջիկի նման, մնացածը փաթաթում, նորից պահում:

ՓԻՓԵՐՏ (ՓԻՐՓԵՏ): Կաթսայի մեջ լցվում է 0,5-1 լիտր ջուր, ավելացվում է կտրտած սոխ: Մի քիչ եռալուց հետո ավելացվում է մաքրած և մանր կտրտած կարտոֆիլ: Կարտոֆիլը կիսաեփ դառնալուց հետո ավելացվում է մաքուր լվացված փիփերտը: Եթե կոթերը երկար են լինում, նախապես մի քիչ կտրտվում, մանրացվում է: Եփում են այնքան, մինչև որ կոթերը լավ փափկեն: Ուտելուց առաջ ավելացվում է քացախ և սխտոր՝ ըստ ճաշակի: Ի տարբերություն այլ շրջանների՝ Շահումյանի գյուղերում փիփերտը եփում են առանց յուղի:

ՀՈՒԾԱԾ (ԹԱՆԱՎ, ՍՊԱՍ): Վերցնում են խնոցու թան կամ տրորած ու ջրի մեջ լուծված քամած մածուն, կամ սովորական մածուն: Ավելացնում են 1-2 գդալ այլուր: Նախօրոք եփում են բրինձը կամ կորկոտը (մանր ձավար), թողնում, որ մի քիչ հովանա, որից հետո վրան լցնում են թանը, մի քանի կտոր հաց, ինչպես նաև ուրց (խոռը) և դադձ՝ ըստ ճաշակի, բայց ոչ շատ և անընդհատ խառնում մինչև եռալը, որպեսզի չշաղի: 5-10 րոպե եռալուց հետո այն պատրաստ է լինում: Աղը լցվում է ըստ ճաշակի: Նախօրոք պատրաստած հացի փրթուշը (բրդուձ) լցնում են ափսեները, վրան լցնում հոածածը:

ԹԼԱՇԱԾ ԿՐՏՈՊԼԻ (ԿԱՐՏՈՖԻԼ) ԵՎ ՆՄԱՆ ԲԱՆԵՐ: Շահումյանի շրջանի գյուղերում ամենատարածված և ամենահասարակ, բայց սիրված ուտելիքներից էր թլաշած կրտոպլին (կարտոֆիլը)՝ հիմնականում աշնանն ու ձմռանը, երբ երեկոները վառարանն անընդհատ տաք է լինում: Թլաշելու համար ընտրում են խոշոր կարտոֆիլներ, կտրտում բարակ շերտերով, աղ ցանում, շարում լավ տաքացած վառարանի երեսին, տնեցիներով հավաքվում շուրջը: Մի երեսը 2-3 րոպե խորովվելուց հետո շրջում են մյուս երեսը, 1-2 րոպեից այն էլ է խորովվում: Սովորաբար կարտոֆիլի հետ միասին շարվում և խորովվում էր նաև մեջտեղից կիսված միջին չափի գլուխ սոխ, որը լավ միջոց էր հազի դեմ: Հավաքում են վառարանից, շարում նորերը: Մի կողմից ուտում են, մյուս կողմից նորը պատրաստում: Սովորաբար հետը նաև մուշկեթի գինի են խմում: Այդ



ամենն ընթանում է աշխույժ գրույցներով ու կատակներով, մանավանդ փոքր երեխաներ ունեցող բազմանդամ ընտանիքներում: Ավարտելուց հետո, երբ արդեն բոլորը հազեցած և աշխույժ կատակներից հոգնած են լինում, որպես կանոն, տատիկը կամ պապիկը տեղավորվում է թախտի (կամ բազմոցի) վրա, շուրջը հավաքում փոքրիկներին և հանգիստ սկսում որևէ հեքիաթ կամ հին պատմություն:

Կարտոֆիլը նաև խորովում էին, մանավանդ ջրադացում և օղի թորելու ժամանակ շեղջի մի անկյունում՝ տաք մոխիրի մեջ, և վայելում մուշկեթի գինով, ինչպես նաև թարմ օղին համտեսելիս: Կարտոֆիլի պատրաստման ամենահասարակ, բայց թերևս ամենագրավիչ եղանակն այն էր, որ բերքահավաքի ժամանակ թարմ կարտոֆիլը հենց դաշտում եփվում էր մետաղե դուլլի մեջ, որը վայելում էին տաք-տաք աշխատողների մեծ խմբերով: Որպես կանոն՝ այդպիսի «ճաշից» առաջ մի-մի բաժակ օղի էին խմում, հաճախ ոչ թե բաժակներով, այլ մեջը փորված կարտոֆիլով: Նույն տեսակի «բաժակով» նաև գինի էին խմում, որը սովորաբար ձեռք էր բերվում փոխանակությամբ՝ նոր հանված կարտոֆիլից մի քանի դուլլ ուղարկելով մոտակա գյուղը:

ԿՈՐԿՈՏ (ՁԱՎԱՐ): Կորկոտի մի տեսակը կոչվում է **հումի կորկոտ**: Այն ստացվում է ցորենը երկանքով աղալուց հետո: Աղացածը խախալով (խոշոր անցքերով մաղ) մաղում են, ավելի ճիշտ խխալում են: Խոշոր կորկոտն օգտագործում են խաշիլ եփելու համար, մանրը՝ ապուրի համար: Մյուս տեսակը **թակած կորկոտն է**: Մաքրած ցորենը թրջում են տաք ջրով, որպեսզի թեփը շուտ հանվի, որից հետո այն ձեռնում (թակում) են հատուկ գործիքով՝ տինգով, որից լինում էր ամեն գյուղում, երբեմն՝ մի քանի հատ: Վերին Շենում, օրինակ, հայտնի էին Դալունց տինգը, Սուրունց, Բիլլիվանց, Սոսին Սուլթանին տինգերը: Ինչպես որ ջրադացներում, նույն ձևով էլ տինգ ունեցողների մոտ մարդիկ աշնանամուտին հերթագրվում էին՝ իրենց կորկոտը ձեծելու (թակելու) համար, որի դիմաց տիրոջը մի աման (ջամ) կորկոտ էր տրվում, ի դեպ, այդ ամանը մետաղե ջամ էր, որը պահվում էր հենց տինգի մոտ: Կորկոտ ձեծողներն իրենց գործն ավարտելուց հետո այդ ամանը լցնում, շորով ծածկում, թողնում էին տինգի մոտ՝ պտրհանում (որմնախորշ):

Շեծած կորկոտը փռում էին բակում, արևի տակ չորացնում, իսկ երեկոյան հավաքելուց հետո «քամի տալիս», որպեսզի թեփը հեռացվի: Նրա մի մասը կորկոտ եփելու համար, իսկ մնացած մասն աղում էին այլ ճաշատեսակների համար:

ՁՍԵՌՎԱ ԱՂՈՒՆ (ՕԻՄԻՌՆԱՂՈՒՄ): Լեռնային գյուղերի ցորենը հիմնականում կարմրավուն էր և մրոտ, այն կոչվում էր սարի ցորեն, և լավ լվանալուց, մաքրելուց հետո էին օգտագործում: Նախալեռնային գյուղերում կար ցորենի լավ տեսակ՝ զարդա: Լեռնային գյուղերի տղամարդկանցից շատերը գնում էին ցարծրադիր գյուղերում «հնձավարձի», այսինքն՝ հունձ անելու, որի դիմաց, որպես վարձ, լավորակ ցորեն էին բերում: Կորկոտն ու փոխինձը միայն այդպիսի ցորենից էին պատրաստում: Ձմեռվա աղունն աղալուց առաջ ցորենը լվանում էին, փռում, չորացնում, հետո տանում ջրադաց: Եթե լավ չէր չորացված լինում, ջրադացը «խմորակալում» էր. ջրադացպանն ստիպված պիտի վերևի քարը մի կողմ քաշեր, քարերի աստամները մաքրեր: Ցորենը չափվում էր գլանաձև փայտե մեծ ամանով (մեջը դուրս տված կոճղ), որը կոթ էր կոչվում և չափի միավոր էր, ասում էին՝ այսքան կոթ ցորեն: Մեկ կոթը հավասար էր կես խոնի, որը նույնպես չափի միավոր էր:

Այլուրը ջրադացից տեղափոխում էին պարկերով, որոնք հնում պատրաստվում էին լավ մշակված նուրբ կաշվից: Ցորենի (նաև կարտոֆիլի) տեղափոխությունը կատարվում էր ջվալներով, այն գործում էին կարպետի նման, ծալում, երկու եզրերն ամուր կարում, պարկի ձև տալիս: Բերանին մի քանի կանթ էր պատրաստվում, որոնց միջով անց էր կացվում սմբեսան՝



բարակ, նուրբ պարան, որը ձգելով ամրացնում, փակում էին ջվալի բերանը: Համարյա նույն ձևով էին պատրաստում նաև խուրջինը, որը երկու իրար միացված փոքրիկ ջվալներ էր հիշեցնում՝ ուսին գցելու, զանազան բաներ տեղափոխելու համար: Լինում էր փոքր, նուրբ խուրջին, լինում էր նաև ավելի մեծը՝ իշխուրջին՝ էշով կամ ձիով որևէ բան տեղափոխելու համար: Լավ ծրագրված (ձիրք, շնորհք) ունեցող կանայք, ինչպես ասում էին՝ «ծրքերավ կնանիքը» ջվալի, խուրջինի, ինչպես նաև նույն ձևով գործված մափռաշի (օժիտի տեղաշորը պահելու մեծ պարկ) կողքերը շրեշում էին, որպեսզի շուտ չմաշվեն:

Ընդունված ճաշատեսակներից որոշ չափով տարբերվում էին դաշտում կամ անտառում, որսի կամ ձկնորսության տեղում պատրաստածները: Ոչ տնային պայմանները թելադրում էին ճաշերի պատրաստման նոր եղանակներ, մարդկանց դարձնում հնարամիտ: Ուշագրավ է, օրինակ, ծներեկի (ծնեփակ) պատրաստումը դաշտում: Ուռենու մատղաշ ճյուղերը «մաշկում» են, այսինքն՝ կեղևը հանում, այդ կեղևի մեջ փաթաթում մաքրած, աղ ցանած ծներեկը, շիկացած ածուխներով (պողերով) ու տաք մոխիրով ծածկում, խորովում: Ուռենում էր անկրկնելի համ:

ՁԵԹ: Որոշ ուտելիքներ (ճաշատեսակ, խմորեղեն և այլն) պատրաստում էին տեղի սրանոցում՝ ձիթահանքում ստացած ձեթով: Այդ հարմարանքը սրանոց էր կոչվում, որովհետև հիմնականում սորեկից էին ձեթ ստանում (ինչպես նաև ձիթատու այլ բույսերից՝ քունջութից, չիզիթից՝ բամբակի սերմից): Սրանոց ոչ բոլոր գյուղերն ունեին, որովհետև այն սարքերը շատ ավելի դժվար էր, քան ջրաղացը, քանի որ շատ ավելի խոշոր քար էր պահանջվում:

Սրանոցի (ինչպես նաև ջրաղացի) քարը բերում էին Քարվաճառից, որից էլ ծագել էր արցախյան այդ բնակավայրի անունը (խորհրդային տարիներին աղավաղվելով դարձել էր Քելբաջար): Ծառեր էին կտրում, իրար միացնում, «սուրան» (քարշակ) պատրաստում, վիթխարի քարե անիվը դնում վրան, գոմեշներ, եզներ լծում, քարշ տալով բերում (երբեմն դա տևում էր մի քանի շաբաթ):

Գյուլիստանում սրանոց էր սարքել Ավագ Հովասափյանը, Վերին Շենում՝ Պղնձեբեղանց (Հակոբյան) Հակոբը և ուրիշներ: Սրանոցներից օգտվում էին ոչ միայն համագյուղացիները, այլև հարևան, նույնիսկ Ղարաբաղի հեռավոր գյուղերի բնակիչները: Հետագայում սրանոցները կոլտնտեսություններին զգալի եկամուտ էին բերում՝ մշակելով ոչ միայն իրենց, այլև այլ գյուղերի հումքը: Կոլտնտեսությունները աշխօրին նույնիսկ ձեթ էին բաժանում: Սրանոցները գործել են մինչև 1950-ական թվականները:

Առանձին ճաշեր, ինչպես նաև խմորեղեն, երբեմն պատրաստում էին ոչ թե ձեթով, այլ հաճարի կամ ընկույզի ձեթած միջուկով, որի շնորհիվ ուտելիքն ավելի համեղ էր լինում (շրջանի գյուղերն ու անտառները հարուստ էին հաճարի ծառերով, կային նաև ընկուզենիներ):

ՄՐՑՈՒՄՆԵՐ, ԽԱՂԵՐ

Լեռնաշխարհի գյուղերում թե՛ մրցումների, թե՛ խաղերի՝ մեծ մասը ռազմական բնույթ ունեին, այս կամ այն ձևով ծառայում էին ինքնապաշտպանության հմտությունների զարգացմանը: Ամենաառնականն ու գրավիչը թերևս հրաձգության մրցումներն էին, հեծելավազքը, ձիավար-ժությունները: Դրանք կազմակերպվում էին ժողովրդական զանազան հանդիսությունների ժամանակ: Հրաձգության ժամանակ մրցողները ժողովրդից մի քիչ առանձնանում էին անվտանգության համար: Որոշակի հեռավորության վրա ձող էր ցցվում գետնի մեջ, ծայրին ամրացվում

¹ Մեզ չի հաջողվել նկարագրել բոլոր խաղերը և խաղերի բոլոր կանոնները, ընդ որում տարբեր գյուղերում դրանք ունեին առանձնահատկություններ: Միրով կրնդունենք լրացուցիչ տեղեկությունները



սովորաբար խաշած ձու: Նշանակվում էր նաև մրցանակ հաղթողի համար՝ ուլ կամ գառ, խոյ (դոչ), արջառ, նայած թե ովքեր էին մասնակցում մրցմանը՝ պատանինե՞ր, կանա՞յք, թե՞ տղամարդիկ: Որպես կանոն՝ մրցանակը «վայելում» էին բոլորը միասին, հաղթողին մնում էր միայն հարգանքն ու պատիվը: Հաղթող պատանուն, մանավանդ կանանց մրցումներում հաղթող նորահարսին նաև լրացուցիչ պարզևներ էին տրվում ծնողների ու հարազատների կողմից:

Բոլոր ընտանիքները պետք է անպայման հրացան ունենային, տղամարդկանցից շատերը՝ նաև ատրճանակ (*մասուզեր*, «*տաստրաքիչ*»): Ատրճանակ էին ունենում նաև կանայք՝ «*հինգտրաքիչ*»: Ձին նույնպես յուրաքանչյուր ընտանիքի համար պարտադիր էր. շատերը մի քանի, անցյալում ոմանք նույնիսկ տասնյակ ձիեր էին պահում: Հեծելավազքից բացի կազմակերպվում էին նաև գրավիչ խաղեր. շատերը ցուցադրում էին իրենց հմտությունը՝ ձին քշելու ժամանակ պտտվելով, անցնելով փոքի տակով կամ բարձրանալով, կանգնելով թամբի վրա:

Ըստ էության՝ մարտական բնույթ ունեւր նաև *լախտի* խաղը, որը հիշեցնում էր ամրոցի պաշարում: Խաղացողները բաժանվում էին 2 խմբի, վիճակ գցում, թե ով է լինելու հարձակվողը, որը գտնվում էր գետնի վրա գծված մեծ շրջանագծից դուրս, զինված կաշվե գոտիներով: Ներսում գտնվում էր հակառակորդ խումբը՝ անգէն: Հարձակվողները գոտիներով հարվածում էին ներսում գտնվողներին կամ ցատկում և ոտքով հարվածում նրանց, սակայն այնպես, որ հակառակորդը չկարողանար շրջանագծի ներսում՝ գտնվելու պահին կոխել նրանց ոտքը կամ խլել գոտին: Օրինական էր համարվում նաև այն, որ մի ոտքը պահելով շրջանագծի ներսում, մյուսով կոխէին դրսում գտնվող հակառակորդի ոտքը: Երբեմն էլ ներսում գտնվողներից մի համարձակը դուրս էր վազում, հարվածների ենթարկվելով՝ ինքն իր հերթին ոտքով հարվածներ էր հասցնում հակառակորդին, խուճապ ստեղծում, որից օգտվելով՝ ընկերներից մեկը կարողանում էր կոխել հակառակորդի ոտքը, հաղթել: Եթէ ներսում գտնվողները կարողանում էին գոտի խլել հարձակվողներից, ապա այդ գոտիով հարվածում էին դրսում գտնվողներին: Ներսում գտնվողները՝ պաշարվածները, շրջանագծի կենտրոնական մասում մեջք մեջքի արած էին կանգնում լավ պաշտպանվելու համար, բայց կարող էին նաև ոտքով հարվածել դրսում գտնվողներին, սակայն մյուս ոտքը չպետք է դուրս գար շրջանագծից: Պաշարվածները ում ոտքը կոխէին, նա պարտվում, խաղից դուրս էր գալիս: Երբ հարձակվող թիմի անդամները բոլորը հերթով պարտվում էին, թիմերը փոխում էին իրենց տեղերը:

Լախտի խաղում էին պատանիներն ու երիտասարդները սովորաբար ձմռան արևոտ օրերին ու գարնանամուտին բակերում: Շատերը կրակի վրա թեթևակի խանձում էին գոտու ծայրը, որպեսզի հարվածն ուժգին լինէր: Արգելվում էր հարվածել ճարմանդի կողմով: Լախտու թիմերը կազմվում էին նաև ըստ թաղամասերի՝ հավասար թվով:

Մարտական խաղերից թերևս ամենամարտականը *նետ ու աղեղով* խաղ-մրցումներն էին: Տղաների այդ խաղը շատ վտանգավոր էր, որովհետև համարյա իսկական մարտական բնույթ ունեւր, և հաճախ արգելվում էր մեծերի կողմից: Սակայն հնամյա այդ խաղը վերացնել հնարավոր չէր նույնիսկ խորհրդային տարիներին, երբ տարածում էին ստացել բազմաթիվ նոր ու անվտանգ խաղեր (ֆուտբոլ, վոլեյբոլ և այլն): Եթէ *լախտի* խաղը ֆիզիկական ուժի, դիմացկունության ու ճկունության մրցում էր, ապա *նետ ու աղեղը* կապված էր դիպուկ նշանառության և համարձակության հետ: Աղեղը պատրաստում էին հոնի, ճապկի և այլ ամուր փայտերից: Նույն փայտից, բայց ավելի բարակ և ուղիղ ճյուղերից նետն էին պատրաստում, որի ծայրը կրակի վրա մի քիչ խանձում էին ամրության համար (երբեմն էլ մեխ կամ այլ սուր մետաղ էին ամրացնում՝ թռչուն որսալու համար): Որպես աղեղը ձգող լար՝ սովորաբար օգտագործում էին *փուկ*՝ կաշվից պատ-



րաստած թել: Խաղացողները բաժանվում էին երկու խմբի, որոշակի տարածության վրա դիրքեր զբաղեցնում և սկսում միմյանց նետահարել: Ում որ դիպչում էր նետը, նա խաղից դուրս էր գալիս, հաճախ վազվզում, իրար հետապնդում էին գյուղամիջյան ճանապարհներով ու այգիների միջով: Հաղթում էր այն թիմը, որը կարողանում էր հակառակորդի բոլոր զինվորներին «ոչնչացնել» կամ հալածել այնպես, որ խաղից դուրս գան, դիմադրություն ցույց չտան:

Մարտական խաղեր էին **լրտես բռնելը**, **դարանդութին: Ըշկհովին** (*պահմտոցին*) և **դարանդութին** որոշ չափով նման էին իրար, բայց առաջինը խաղում էին ցերեկը կամ երեկոյան ժամերին, իսկ դարանդութին՝ գիշերը: Դարան էին մտնում ամենավտանգավոր ու դժվարամատչելի տեղերում (գերեզմանոց և այլն): Հակառակորդը պետք է որոներ դարան մտածներին, փնտրեր ամենամույթ ու սարսափազդու տեղերում, բայց ինքը չբռնվեր դարանակալողների կողմից՝ ծուղակը չընկներ:

Չիլինգի խաղը խաղում են հիմնականում գարնանն ու ամռանը: Խաղում էին մահակով ու համարյա նույն մահակի հաստությունն ունեցող 5-10 սանտիմետրանոց փայտիկով, որը կոչվում էր *չիլինգ*: Մահակը պատրաստում էին հոնի, ճապկի, հացի ծառերի ճյուղերից կամ այլ ամուր փայտից: Չիլինգը նույնպես ամուր փայտից էր լինում. գերադասելի էր, որ այն լինի հնարավորին չափ կարճ, հաստոտ, նույնիսկ ոստոտ, որպեսզի շատ դիմացկուն լինի. այդպիսի չիլինգը, որ կոչվում էր *դոզան*, ավելի ուժեղ էր թռչում և բռնելը դժվար էր լինում: Կարող էին խաղալ երկու հոգով, ինչպես նաև երկու խմբերով՝ երկու-կամ երեքական ընկերներով: Մի կողմը հարձակողական, մյուսը պաշտպանական դիրք էր գրավում: Փոքրիկ փոս էր փորվում թասի ձևով (մի բռաչափ), որը կոչվում էր *հյոբան*: Հարձակվողները կանգնում էին այդտեղ և սկսում:

Խաղը երկու փուլ ուներ՝ *թոխմախ* և *գարկը*: Սկզբում թոխմախ հարվածն էր կատարվում: Մահակի ծայրը բռնում էին՝ ծայրը միայն աննշան չափով դուրս պահած բռից: Հենց այդ մասում դնում էին չիլինգը, կտրուկ օդ նետում ու մահակով հարվածում, հետո մահակը դնում փոսի վրա: Հակառակորդը այդ չիլինգը պիտի վերցնե, դրանով հարվածեր մահակին: Եթե չէր կարողանում, մյուսը հարվածը կրկնում էր, որից հետո կանգնում էին հյոբանի մոտ՝ մահակը ձեռքին: Պաշտպանվողը վերցնում, նետում էր չիլինգը դեպի հյոբանը: Եթե չէր կարողանում ներսը գցել, խաղը նորից շարունակվում էր: Հետո արդեն մի ձեռքով օդ են նետում չիլինգը, մյուսով մահակով ուժգին հարվածում: Այդպիսի հարվածը կոչվում էր գարկը, որն ավելի ուժգին էր ստացվում: Հակառակորդը պիտի չիլինգը վերցնե, դեպի հյոբանը նետեր: Եթե այն ընկնում է հյոբանի մեջ կամ մոտիկ է ընկնում, մեկ մահակի հետավորությամբ, ուրեմն հաղթել է: Հարվածողը կարող է մահակով պաշտպանել հյոբանը, որպեսզի չիլինգը մոտիկ չընկնի, բայց գետնին ընկնելուց հետո իրավունք չունի ձեռք տալու: Եթե պաշտպանվողը կարողանում է օդի մեջ բռնել չիլինգը ձեռքով կամ գլխարկով, կամ իր մահակով օդի մեջ հարվածել թռչող չիլինգին, ուրեմն հաղթել է, խաղացողները փոխում են իրենց տեղերը: Եթե 2 կամ 3-ական հոգուց բաղկացած խմբեր են մրցում, ուրեմն պետք է 2-3-ն էլ հերթով խաղից դուրս գան:

Եթե հարվածելու ժամանակ հարձակվողի մահակը չի կպչում չիլինգին (վրիպում է), նա համարվում է պարտված: Եթե գարկը շատ երկար է տևում, և պաշտպանվողները չեն կարողանում հաղթել, ձանձրանում են չիլինգի հետևից վազելուց, նրանց մասին ասում են՝ «լպռել» են (այսինքն՝ ճապաղել, թուլացել, թռչնել են): Իսկ եթե ձանձրույթից թողնում, հեռանում են խաղադաշտից, հարձակվող (հարվածող) կողմը նրանց ծաղրում է, հետևներից գոռում՝ «լպռե՛լ են, լպռո՞ո...»: Եթե խմբերից մեկը մի խաղացող պակաս ունի, ասում են՝ «մի փորու ճյուր օնի», այսինքն՝ մեկ լրացուցիչ հարվածի իրավունք ունի, որը կարող է շարունակվել մինչև «կտրվելը»



վրիպելը: Եթե հարվածողը կարողանում է օդի մեջ մահակով հետ մղել պաշտպանվողի ձեռքով նետված չիլինգը, ստանում է մեկ լրացուցիչ հարվածի իրավունք՝ «*փորու ճյուր*»: Կարելի է շահել մի քանի «փորու ճյուր» և ավելի շատ հարվածներ կատարել: Ընդ որում, «փորու ճյուր» ընդունված էր նաև այլ խաղերի ժամանակ՝ որպես լրացուցիչ խաղի իրավունք:

Վաղ գարնանը, երբ օրերն սկսում էին տաքանալ, ձյունից ազատված, չոր ու արևկող տեղերում պատանիներն ու երիտասարդները խաղում էին ***բարադայուշումի***: Խաղացողներն այս դեպքում նույնպես երկու խմբի են բաժանվում, վիճակ գցում, թե ով պետք է «հարձակվող» կողմը լինի: «Պաշտպանվող» խմբից ամենադիմացկունը մեջքը հենում է որևէ ծառի, սյունի կամ պատի, ուղիղ կանգնում: Սյունները շարվում են մեջքից կռացած, հորիզոնական դիրք ընդունած, իրար կպած, ուղիղ շարք կազմած, որը միացած է լինում կանգնած ընկերոջը: Ստացվում է մի կենդանի ու բարձր, երկար «նստարան»: Հակառակորդի խմբի անդամները վազքով գալիս, ցատկում են հերթով, նստում այս «նստարանին»: Պետք է այնպես ճարպկորեն ցատկեն ու ամուր իրար կառչեն, որ բոլորը տեղավորվեն: Եթե մեկն ընկնում է վրայից կամ կախվում մյուսներից, բայց ոտքը կաշում է գետնին, համարվում են պարտված, և դերերը փոխվում են:

Տարածված խաղ էր նաև ***մոզի-մոզին***: Այս խաղի համար մի քիչ երկար, ընդարձակ տեղ է պահանջվում: Խաղացողներից մի քանիսը իրարից 2-3 քայլ հեռավորությամբ մեջքից կռացած դիրք են ընդունում, մյուսները հերթով ցատկում են նրանց բոլորի մեջքի վրայով, շարքի վերջում էլ իրենք կռանում: Հետո կռացածները հերթով արագ ուղղվում, միանում են ցատկողների շարքին, ու այդպես անվերջ շարունակվում է խաղը: Կար նաև այս խաղի մեկ այլ տարատեսակ, որը խաղում էին գլխարկներով: Խաղացողներից մեկը մեջքից կռանում է հորիզոնական դիրքով, մյուսները հերթով վազում, ցատկում, գլխարկը դնում են կռացած ընկերոջ մեջքին ու վրայով թռչում՝ ասելով. «*Ա՛յ հավալա-հավալա, մեկ փափախ դրեցի ու թռա*»: Երկրորդը նույն ձևով թռչում է՝ իր գլխարկը դնելով մյուսի գլխարկի վրա, ու ասում. «*Ա՛յ հավալա-հավալա, երկու փափախ դրեցի ու թռա*»: Ու այդպես երրորդը, չորրորդը և այլն: Ով որ գլխարկը (կամ գլխարկները) գցում է գետնին, պարտվում, հիմա էլ ինքն է կռացած դիրք ընդունում: Այս խաղերի մեկ այլ տարատեսակը՝ «*փամիկեր*», խաղում էին՝ չափածո գվարձալի մտքեր ասելով: Ընդունված սյուժե կար, ամեն թռչողը մեկ «բանաստեղծական» տող էր ասում՝ երբեմն էլ իր կողմից հորինելով նոր բառեր, տողեր:

Աշխույժ էին անցնում մանավանդ ձմեռային խաղերը, որոնցից մեկը ***ձնագնդին*** էր՝ ***ճյունուկուլուլակի***: Որպես կանոն՝ ձնագնդի խաղում էին տարբեր թաղամասերի կամ տարբեր դասարանների երեխաները միմյանց հետ: Հակառակ դիրքեր գրավելով միմյանց դեմառդեմ որոշ հեռավորության վրա, կողմերը սկսում էին միմյանց հարվածներ տեղալ ձնագնդերով, մինչև որ մի կողմի ճնշման տակ մյուսը նահանջեր ու փախչեր՝ չհասցնելով անհրաժեշտ քանակով ու պինդ սեղմած ձնագնդեր պատրաստել: Փախչողին մի քիչ հետապնդում էին, հետո սկսում հետևներից «*դի անել*»՝ ծաղրական գոռոց հանել: Արգելվում էր ձնագնդի մեջ սառույցի կտոր կամ քար դնել՝ ուժգին հարվածելու նպատակով: Այդպես վարվողին խաղից դուրս էին անում, երբեմն դրանից հետո էլ ոչ ոք չէր ուզում նրա հետ խաղալ:

Գյուղական բոլոր երեխաներն ու պատանիները ***սահնակներ*** էին ունենում, շատերը հենց իրենց ձեռքով, ոմանք՝ հմուտ վարպետների կողմից պատրաստված: Սահնակի վրա գառան մորթի էին ամրացնում՝ փափուկ լինելու համար, կողքերից փայտե «արգելակներ» էին ամրացնում՝ սահնակի ընթացքը կարգավորելու համար: Սահնակի «կողերի» տակից երկաթե ձողեր էին ամրացնում լավ սահելու համար: Հատուկ «երթուղիներ» կային, որտեղով անցնում էին սահնա-



կավորները: Երբեմն տարբեր թաղամասերից սահողների շարքը գալիս, միանում էր մի ընդհանուր ճանապարհի, միասին շարունակվում: Երբ մասնակիցների թիվը շատ մեծ էր լինում, երբեմն տարբեր թաղամասերից ձգվող շարքերը գալիս, բախվում էին միմյանց, թափվում իրար գլխի:

Սահնակով սղալը զանգվածային բնույթ էր ստանում երեկոյան, երբ փողոցների հիմնական անցուղարձը դադարում էր: Ուշ ժամերին մանուկներին ու պատանիներին փոխարինելու էին գալիս երիտասարդներն ու միջին տարիքի տղամարդիկ՝ *քոխշաներով*: Դա խոշոր սահնակ էր, որով ձմռանը ցախ, վառելափայտ և այլ ծանրություններ էին տեղափոխում: Գյուղամիջում և խաչմերուկների մոտ հավաքվում էին տարեցները, հետևում այդ խաղերին, որի շնորհիվ, գտնվելով մեծերի հսկողության ներքո, թուրիմացություններն ու բախումները կռվի չէին վերածվում: Տարեց հանդիսականներն իրենք էլ հաճախ վարակվում էին սահողների ոգևորությունից, մոտիկ բակերից բերում էին փայտե աստիճաններ, տեղավորվում վրան մեծ խմբերով և սահում:

Տարածված էին նաև *չմուշկները*, որոնք պատրաստվում էին ամուր փայտից, թելերով ամրացվում ոտքերին: Փայտե չմուշկների տակից սովորաբար թիթեղյա նեղ ժապավեն կամ հաստ մետաղալար էին ամրացնում՝ լավ սահելու համար:



ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԲՈՒՐԴ ԳԶԵԼԸ ԵՒ ԳՈՐԳ ԳՈՐԾԵԼԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Ղարաբաղի գիւղերում եւ թէ Շուշի քաղաքում սովորութիւն կար եւ այժմ էլ ընդհանրացած է, որ հարեւանները իրենց գործը շուտ առաջ տանելու համար որոշ օր հաւաքում են իրենց հարեւանների աղջկերանց, հարսներին եւ միասին աշխատում են թէ՛ տանը եւ թէ՛ դրսում՝ դաշտում: Այդ ասում է *միջի անել*-այն է հաւաքական ուժով փոխադարձ միմեանց օգնել:

Միջին գլխաւորապէս լինում է բուրդ գգելուց. նշանակուած օրը ամէն մին, իր *սանդերքը* (բուրդ գգելու պողպատե ճաղերով գործիքը) վերցրած, գնում է հարեւանի տունը, ծալապատիկ նստում են շարքով, տանտիկինը բուրդը բերում բաժանում է, եւ նրանք, կտոր վերցնելով, առաջ երկու ձեռով *քծծում են՝* բաց են անում խճճուած մազերը եւ սանդերքի ճաղերից անցնելով, փափկացնում, աղբից մաքրում, շատ մանր մազերը թողնում սանդերքի վրայ, երկայներին կիսալուսնաձեւ տալով, ծնկների տակ դնում:

Այդ կիսալուսնաձեւ բուրդը ասում է *մալանչ*, իսկ ճաղերի վրայ մնացած տականքը՝ *քոլք*, որը գործադրում են «դռակներ» լցնելու:

Մալանչները իրար հետ միացնելով հաստ պարանի պէս քիչ ոլորում են, կծկում ձմերուկի մեծութեամբ եւ *պատատուկ* շինում: Այդ պատատուկները քանդելով, նորից գգում են, աւելի մաքուր մալանչներ շինում եւ դրանցից *ճախարակով* թել մանում:

Ճախարակը ունի հետեւեալ մասերը՝ *թուփը* (անիւր), որի վրայ ամրացրուած է *կոռնը* (թելը), թելի վրայ *շրտըվիկը*, որ ձեռով պտտցնում են: Ճախարակը ունի ոտներ, ոտների վրայ հագցրած է պողպատե *իլիկը*. *իլիկի* մասերն են կոլոր *լիսեռը* եւ *կաշուի ականջը*, որը ծառայում է իլիկը բարձրացնելու կամ ցածացնելու համար: Իլիկի ծայրին ձախ ձեռով բռնած մալանչը մօտեցնելով, իսկ աջ ձեռով շրտվիկը պտտցնելով՝ թելը փաթաթում է վրան. այդպէս շարունակում են, մինչեւ որ թելը լիսեռի ամբողջ երեսը ծածկում է եւ դէպի իլիկի ծայրը գնալով՝ կոնաձեւ է ստանում: Այդ կոնաձեւ հաւաքուած կծիկը, որին *վեստ* են ասում, հանում են իլիկից, եթէ թելը բարակ է, ու ուզում են հաստ լինի, երկու վեստերի թելերը անցնում են ճախարակի իլիկին (ասեղին) եւ նորից մանում, վեստեր շինում: Թելը ներկելու համար նախ վեստերի ծայրերը բաց են անում՝ ծալապատիկ նստած աջ ու ձախ ծնկների վրայ. այդ բացարածը ասում է *վեզիր*:

Թելը ներկելուց առաջ մաքուր կրաջուր են պատրաստում, վեզիրները մէջը թրջում, որ պրկանան եւ թէ լաւ գոյն առնեն: Ներկը պատրաստում են տեղական ծաղիկներից ու բոյսերից եւ թէ շուկայում գնած այս ու այն պատրաստի նիւթերից: Ներկը որոշ քանակութեամբ ջրի հետ խառն մեծ կաթսաների մէջ եփ են տալիս, վեզիրները մէջը ձգելով մի քանի բոպէ պահելով՝ հանում եւ կախելով փայտերի կամ պարանի վրայ՝ չորացնում:

Չորանալուց յետոյ վեզիրների թելի մի ծայրը բանալով սկսում են կծկել, գնդակներ շինել: Այդ կծիկները գործադրելուց առաջ, եթէ ուզում են միահաւասար հաստութեամբ թել ունենալ, աւելորդ մազեր չմնան կպած, *քրթեչով* (քերթիչ) քրթում են, այն է՝ թելը ձախ ոտի երկու մատների միջից անցնելով եւ ձախ ձեռքի երկու մատներով առնելով, իսկ աջ ձեռքում բռնած պողպատե ճաղը այդ թելի կոլոր միջանցքից տանել-բերելով՝ մաքրում են: Գետնի վրայ թափուած մազերը ասում են *քրթածք*, իսկ ձախ ձեռի երկու մատներին փաթաթած թելը՝ *թայթուկ*:

Գորգեր եւ կապերտներ գործելու համար հետեւեալ գործիքները կան. ա) *վեստանը* (ոստայնը), որը երկու դիք դրած եւ ներքեւից ու վերեւից նրանց ծայրերին անցրած շարժական կոլոր փայտերն



են, ոստայնը կանգնեցելուց յետոյ *հինում* են, այն է գորգի կամ կապերտի աստառի թելերն են անցնում կոլոր փայտերի վրայից. այդ թելերի միջից գետնից $1\frac{1}{2}$ արշին բարձր *ասպն* են անցկացնում, որը ոստայնի վրայ անցրած առաջի կողմի թելերը յետ ու առաջ է տանում, եւ այդ թելերի վրայ հորիզոնական կերպով սկսում են գորգի գոյնգոյն թելերը անցնել եւ *կոփիչ*, թելատու ասուած գործիքներով պնդացնել:

Երբ գորգի կամ կապերտի գործուածքը $\frac{1}{4}$ կամ աւելի արշին բարձրանում է, թուլացնում են կոլոր փայտին խփած սեպերը եւ *կապերտը* ներքեւի կողմով բարձրացնում, *սար հանում*:

Նայած գորգի կամ կապերտի երկայնութեան եւ լայնութեան՝ ոստայնի տակ նստում են 2-4 հոգի եւ իրենց առջեւը դրած գորգի օրինակին նայելով՝ ճշտութեամբ թելերը անցնում:

Երբ վերջացնում են գործուածքը, եւ մնում է մօտ մի արշին չգործած աւելի տեղ, խնջոյք են կազմում, հարեւաններին ու բարեկամներին կանչում գորգը կտրելու օրը:

Չբերք, ամուլի կամ յի կանայք այդ օրը գալիս են իրենց բախտը փորձելու, տղայ կամ աղջիկ կ'ունենան թէ ոչ. դրա համար ոստայնի վրայ չգործուած թելերի մէջ տեղից կտրում, ծակ են բաց անում, ամուլի կինը անց է կենում երեք անգամ այդ ծակով եւ ոստայնի տակ ոտները մեկնում: Գորգը կտրելուց ընկնում է նրա վրայ: Հանում են ասպը, տալիս մի տղայի, որը ձի շինած դուրս է վազում, եթէ փողոցում առաջին անգամը տղայի է պատահում, ասել է՝ այդ կինը տղայ կը ծնի, եթէ աղջկայ է պատահում՝ աղջիկ:

Գորգը կարող կինը, եթէ տնեցի չէ, կտրելուց առաջ մկրատը քսքսում է թելերին ու կանչում. «Կտրըմ չի, խալաթ բերեք, վեր կտրի, ընձայ բերեք»: Ընձան ստանալուց յետոյ կտրում է:

Միջի հրաւիրուած անձանց լաւ ճաշ են տալիս, եւ երեկոյեան պտուղ բաժանելով, տան մեծը նրանց օրհնելով՝ ճանապարհ է դնում:

ՆԻԻԹԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

ա. Աչքացաւի համար

1. Ձուն կոտրում են, սպիտակուցը միջից հանում, իսկ դեղնուցը մեջը թողնելով՝ բամբակով ծածկում եւ այնքան հարում, որ նրա իւղը պատում է բամբակին, որը դնում են աչքի վրայ:
2. Նոր մորթած ոչխարի սպիտակ թոքի (փափաշ) մի կտոր դնում են աչքին եւ պահում, որ արինը քաշի:
3. Աղջկամօր կաթը կաթեցնում են աչքի մէջ կամ թէյի ջուր:
4. Աչքի ջուրը եթէ գնում է, ձմերուկի կեղեւը այրի, աչքին քաշի նրա փոշին:
5. Աչքի ջուրը եթէ գնա, ամրավն գուլապով հարի, եօթն օր աչքին քաշի. ջուրը կը կտրի:
6. Աչքը եթէ ծովի, նապաստակի լեղին բամբակով թրջի, մի քանի անգամ աչքի վրայ դիր:
7. Աչքը ցաւելուց նշադիրը մեղրի մէջ հալեցուր, պարզեցուր երեկոյեան եւ առաւօտեան քսիր:
8. Աչքի կոպին մազ դուրս գալուց կոպը շուռ տուր, տեղը մաքրիր, կանաչ գորտի արինն քսիր կամ շանաճանճի արինն կաթեցուր, էլ մազ չի բռնիլ:
9. Աչքի լոյսը պակասելուց վայրի դեղձը չորացրու, ծեծիր, քաթանով աչքին քաշիր, կը պայծառանայ:
10. Աչքի ջուրը գնալուց կաքաւի լեղին աչքին կաթեցրու:
11. Աչքի հին ցաւի համար մանուկ տղայի շեռը ամանում եփում են, մինչեւ թանձրանում է, յետոյ վերցնում չորացնում են, հարելով մանրացնում այրափոշու պէս, քիչ զափռան, մի քիչ էլ մուշկ հետը խառնում, աչքին քաշում:
12. Աչքի լոյսը պակասելուց ճերմակ արլորի լեղին աղջկամօր կաթով միաչափ խառնում են, բամբակով դնում աչքերին:
13. Աչքի կոպի մազերը վեր գալուց մեղր են քսում, մազը գալիս է:
14. Աչքի արինի դէմ զափռանի ծաղիկը, վարդի իւղը, ձուի դեղնուցը իրար խառնում են, թղթի վրայ քսում, աչքերին դնում:
15. Աչքը ցաւելուց շաքարը կաթով շաղախի, բամբակով վրան դիր:
16. Եթէ աչքը սպիտակ լինի, նապաստակի լեղին տրորի, աչքին քաշիր:
17. Աչքի արինն լինի եւ ցաւի, ոչխարի անդամի միսը դիր աչքին 3-4 օր, կը քաշի:
18. Աչքը ցաւելուց, ցուրտ ջրով չլուանալ, միայն տաք ջրով, վերցնել ձուի սպիտակուց հարել մինչեւ նրա իւղը դուրս կուգայ, յետոյ քարի վրայ շիբի հետ խառնած հարել եւ բամբակի վրայ դրած աչքին՝ կապել, եւ այս կրկնել մինչեւ կը լաւանայ:
19. Աչքացաւի դէմ խտուտի արմատը կտրում են, միջի կաթը հանում, աչքին կաթեցնում:

բ. Ականջացաւի համար

1. Խորոված սոխի միջի գուլակը հանել, ականջը կոխել:
2. Ակնամուրը (փեթակին կպած մուրը) կակղացնում են, սրածայր շինում, կոխում ականջը:
3. Ականջահիւլով ջուր են կաթեցնում ականջի մէջ:
4. Ճերմակ սոխի ջուրը ականջի մէջ կաթեցրու:
5. Սոռուկի սերմը ձուածեղ արա, գլխին դիր:
6. Աղուէսի իւղ կաթեցրու:



7. Ծտի իւղ դիր, ցաւը, կը կտրի:

8. Խոստուկի ձուի դեղնուցի իւղը ականջի մէջ կաթեցրու, տաք տեղ պահիր ցաւը կը կտրի:

9. Ականջը չլսելուց ճերմակ նաւթ կաթեցնել մէջը:

10. Ականջից եթէ դեղին ջուր գնա, սոխը ծեծիր, ականջի մէջ կաթեցուր:

11. Ականջը խլանալուց նուռը խորովի, ջուրը տաք տաք մէջը կաթեցուր:

12. Ականջը չլսելուց քացախը ածիր մի փոքր ամանի մէջ, եփ տուր եւ ականջը նրա գոլորշու վրայ պահիր:

13. Եթէ ականջը վաղուց խլացած է, մրջիւնի ձուերը հաւաքել բոխը, ծեծել, ջուրը քամել, մրջիւնի ձուն խառնել, բամբակով ականջի վրայ դնել, կապել:

գ. Ատամնացաւի համար

1. Խորոված չամիչը դնել վրան եւ երկու բոպէից հանել, ուրիշը դնել:

2. Մարմարիոնը փշրել, քացախի հետ խառնել եւ բերանը ողողել:

3. Ցուրտ ջրով օրեկան մի քանի անգամ բերանը ողողել:

4. Ընկուզի միջուկը անցկացնել քորոցի ծայրին, կրակի վրայ պահել, մինչեւ իւղը դուրս կը ձգի, եւ դնել ատամի վրայ:

5. Կովի ոսկրը այրել, մեղրի հետ խառնել փոշիացրած, շարժած ատամին քսել, կը պնդանայ:

6. Ատամը ժանգոտելուց գարին այրել, աղով խառնել, ատամներին քսել, կը սպիտակի:

7. Զանջափիլը ատամի տակ դնես, ցաւը կը կտրի:

8. Թէ լնդերքից արիւն գնա, եւ ատամը վայր ընկնի, լոշտակի ջուրը մեղրով խառնի, բերան առնի, մի ժամ պահի եւ վայր թափի:

9. Չիթով լոշտակը միլամ արա, դրսից վրան կապիր:

10. Թէ ատամն ցաւի, առ սեւ թթի մացառի կեղեւը, 5 դրախմա եփիր, երբ կէսը կը մնայ, խառնիր լոշտակի սերմին, ջուրը տուր՝ բերանն առնի, մի ժամ պահի եւ թափի, ցաւը կ'անցնի:

11. Ատամը ցաւելուց ձիթորենը քացախով եփի, բերանը առ, որդները կը կոտորի:

12. Եթէ ատամը ժած գայ, դաղձը գինով եփիր, բերանը առ պահիր կամ թթենու արմատի կեղեւը ծեծիր, տրորիր եւ վրան դիր:

13. Աւելուկի տակը թեժ քացախով եփիր, բերանը առ:

14. Բողկի տերեւը չորացրու քսիր, ցաւը կը կտրի:

դ. Գլխացաւի համար

1. Սեւ բողկը տափակ-տափակ կտրել, դնել ճակատի վրայ, տաքութիւնը կը քաշի:

2. Քացախ քսել, եթէ սառուց լինի, քացախը սառցնել լաւ կամ խունկ խառնել:

3. Քացախը հոտոտել տալ կամ քթախոտ քաշել:

4. Չուածեղ անել, գլխին դնել:

5. Ճակատը տրորել:

6. Թառ հալվա (իւղում բաց արած ալիւր) դնել գլխին:

7. Եթէ աչքը կարմրի, երեսը տաքանայ, երակից արիւն առնել:

8. Առ շիրիկ ու բարկ քացախ, հարիր, մրաւորուի, գլուխը, քունքը, ճակատը քսիր, բամբակով զագաթին դիր եւ ժամանակ ժամանակ փոխիր մինչեւ հովանալը:

9. Վերցրու շնախաղողը կամ ջղախոտը 20 գրամ եւ վազի տերեւ ծեծած, 10 գրամ խիար մանր ծեծած, 2 գրամ մանիշակ աղած եւ 4 գրամ տուղտի տերեւ, գարու ալիւր 10 գրամ, ամենը խառնել քացախի մէջ, կտաւով գլխին դնել:



10. Աղինջը ծեծիր, մածնով շաղախիր գլխին դիր:

11. Մամիթը եփիր եւ նրա ջրով գլուխը, քունքը, ճակատը օծիր եւ բամբակը թրջած՝ դիր գլխին եւ փոփոխիր:

12. Եթէ գլուխը ցրտից է ցաւում, մանանիխը, սխտորը, պղպեղը կամ զանջափիլը իրար հետ խառնիր եւ գինու մէջ հարած գլուխը քսիր:

13. Կտավատը ծեծիր, մաղից անցրու, մեղր խառնած թող 3 օր խմի մասրով:

14. Բակլայի ալիւրը քացախի հետ խառնել, գլխին կապել:

ե. Արին գալուց

1. Քթից արին գալուց, գաճը այրել, դնել վրան, կապել:

2. Շրեշն եւ գխտորը թակել, քթին քաշել, կը կտրի:

3. Եթէ բերանից արին է գնում, սալորի տերեւը գինու մէջ եռացնել, քիչ-քիչ խմել: Թերխորով ձուն էլ օգնում է:

4. Բերանից եթէ արին գնա, բողկը եփիր, ուտեցրու:

5. Քթի արինը կանգնեցնելու համար քափուրը թեժ քացախով փիլթա արա, դիր քթի մէջ, կամ գեոգրաշը (պղնձարջասալը) ծեծել, դամիշի միջոցով քթի մէջ սրսկել:

6. Եթէ դամարը կտրած լինի, կամ մի տեղից արին գա, ոչխարի թափանը դանակով լաւ քերի, չորացրու, ծեծիր, բոնոթու պէս քթին քաշիր, կամ որ տեղից արին է գալիս, վրան կապիր:

7. Արին փոխելու դէմ խոզի աղբը խառնել հիւանդի թքած արեան հետ, թարմ կարագ խառնել, տապակել, ուտացնել:

8. Տուրտ ջուրը քթով վեր քաշել քթից արին գալուց: Շամայի սանրը փոշիացնել, քթի մէջ քաշել:

9. Կտրած տեղի վրայ անձամ մաստաք կպցնել:

զ. Հազելուց

1. Ուտեցնել խորոված խնձոր կամ սերկելիլ եւ նրանց միջի կուտը:

2. Ունաբը խաշել, ուտացնել:

3. Խորոված սոխ ուտացնել:

4. Խորոված նուռ ուտացնել:

5. Բիանի արմատը խաշել, նրա ջուրը խմացնել:

6. Տուղտի ծաղիկը խաշել, ջուրը խմացնել:

7. Մանիշակը եփել, ջուրը խմացնել:

8. Մասուրի ապուր ուտացնել:

9. Չուի դեղնուցը հարել թէյի հետ կամ տաք ջրի, խմացնել:

10. Շնրփիրփետի ծաղիկը եփել, ալիւր շաղ տալ վրան, դնել որկորին:

11. Վերցնել կէս մսխալ զափռան, երեք ֆինջան ջրի մէջ եփել, ինչպէս չայ շաքարով կամ մեղրով, անօթի կամ երեկոյեան խմել:

12. Ըխտիկազի (կոկլիւշի դէմ սահլամ բոյսի արմատը (սպիտակ սոխի պէս) կաթի մէջ եփում են, խմացնում:

է. Փորացաւի համար

1. Օղի կամ կոնեակ, ռոմ խմացնել:

2. Թրծած աղիւր տաքացնել, շորի մէջ փաթաթած՝ դնել փորի վրայ:



3. Գօտի կապել մի փայտի, անցնել գօտու մէջ, ոլորի այնքան որ փորը սեղմուի, եւ այդ դրութեամբ մի քանի բոպէ պահել:

4. Գինու մէջ ծեծած սեւ պղպեղ խառնել եւ տաքացրած խմեցնել:

5. Մէջքին ցուրտ ջուր ածել:

6. Լկերթնը խաշել, քամել, ջուրը խմացնել երեխաների փորացաւի ժամանակ:

7. Փորացաւի դէմ փշատի կճեպը եփել չայի պէս, մեղրով կամ շաքարով ինչքան կարենայ խմել. տաք լինի թէ ցուրտ, վնաս չունի:

8. Փորի քամու դէմ չամանը եփել գինու մէջ, խմել:

ը. Թարախակալ ուռեցի կամ չուբանի դէմ

1. Գաղտիկուր բոյսը վերցնել, թքնել վրան եւ դնել ուռեցքին, նա թարախը դուրս է բերում:

2. Ոչխարի ոսկրի միջի ծուծը (իլիկը) ծեծել, դնել վրան:

3. Ալիւրը խմոր անել, վրան շաքարի փոշի ցանել, դնել ուռեցքի վրայ:

4. Խորոված սոխ դնել կամ սոխը մանր կտրատել, ընտիր սապոնի հետ խառնած՝ ամանի մէջ կրակի վրայ այնքան տրորել, որ միանան, յետոյ դնել ուռեցքի վրայ:

5. Օրտուբադի չիրը պատռել, միջից կիսել, դնել վրան:

6. Կտաւատի խմորը դնել:

7. Խինդեղնի տակոնին թակել, ջրովը շփոթ անել, դնել ուռած տեղի վրայ, քանի որ թարախահալած չէ:

8. Ուռեցքը նստեցնելու համար ցորենը ծամում են, լորձունքի հետ խառն քսում:

9. Ձեռը ուռչելուց բողկի ջուրը, կզբու ձուն զէյթունի իւղով խառնիր, քսիր:

թ. Թունաւորուելու դէմ

1. Թունաւորուելուց կաթը եփ տուր, խմիր:

2. Մխտորը ծեծիր քամած մածնի հետ, խառն տուր՝ անօթի ուտի:

3. Ուտեցուր մածուն, թան, մեղր, բեքմեզ:

4. Հալի իւղը գինով տրորել, խմացնել:

5. Օձահարի եւ կարիճի կծելուց նռան կլէպը եփ տուր, դիր վրան:

6. Օձահարին անխոն 10 դրախմա եւ ճռելանդ մի դրախմա կամ աւելի մեղրի հետ խառն ուտեցնել:

7. Եթէ օձ կամ կարիճ կծի, լոշտակի տակը եւ ընկոյզը քացախով խառնած եփել, վրան կապել 10 օր, կամ լոշտակը ծեծել, օրեկան մի գրամ ճերմակ գինին հետ խմել:

8. Խնձորի տերեւը ծեծիր, ջուրը քամիր, խմեցուր:

9. Կատաղած շունը կծելուց թթենու տերեւը ծեծիր, դիր վրան:

10. Կատաղած շան կծածին հին պանիրը քացախով եփիր, խմացուր:

11. Սաղափը ծեծիր, ձեթով, թեփով եւ թէ քացախով շաղախիր, դիր կծած տեղի վրայ:

ժ. Որկոր-ուռեցի դէմ

1. Անալի խմորը իւղի մէջ եռանցնում են, տափակ բաց արած՝ շինքին դնում:

2. Փերփետ բոյսը կամ շեպը խաշում են եւ դնում ուռած տեղի վրայ, շուտով ուռեցքը քաշում է:

3. Շնրփերփետը (տուղտը) խաշում են, ջրի հետ ալիւր խառնած շփոթ շինում, դնում ուռեցքի վրայ:



4. Ծիծեռնակի բոյնը եփում են ճերմակ գինու մեջ, կոկորդի վրայ դնում: Մեղրով խառնածը տաքութիւնը քսացնում է, երբ ներս է ընդունում կամ դրսից քսում:

Ժա. Մէջքը ցաւելուց

1. Մէջքը ձեռով կամ ոտով տրորել:
2. Մէջքի վրայ պոյտ կամ բաժակներ դնել:
3. Պաղ ջրով կամ քացախով տրորել:
4. Խարդալ դնել:
5. Մէջքը ցաւելուց կամ քամոտ լինելուց լոշտակի ջուրը խմել:
6. Կոնատակը եթէ ցաւի, գնա բաղնիս, ճերմակ նաւթ քսիր:
7. Եթէ բեւմատիզմից կոնատակը տաք քամի ունենայ, ցաւի, ճերմակ հողը սառը ջրով շաղախիր, դիր վրան եւ շուտ շուտ փոխիր:
8. Կոնատակը եթէ քամի լինի, թուրը ծեծիր, պախրի իւղը խառնիր հետը, լից մի աման, բերանը ծեփիր, դիր թոնդրի մէջ եփի լաւ, յետոյ հանիր, քսիր, քրտինքը դուրս կու գայ:
9. Քամուց (բեւմատիզմից) եթէ մէջքը կոտցել է, գազարի սերմը, ծիրանի սերմը, ձուի դեղնուցը խառնիր, 3 օր կեր:
10. Կարմիր քամի ընկնելուց գինձի սերմը թակում են, շլորթթու եփ տալիս, ճմուռ, սերմին խառնում, քսում եւ յետոյ ածելիով մէջքը խազխզում:

Ժբ. Փոր-ուռուցի դէմ կամոտի

1. Գոմէշի թրիքը սեւ նաւթի մէջ եփում են, տաք-տաք փորի վրայ դնում:
2. Զիու թրիքը տաք-տաք դնում են փորին:
3. Դդումը կամ ջրկոտեմը խաշում են, դնում փորին:
4. Ոտի կամ ծնկան ուռուցի դէմ խինդեղնի տակոնին լուանում են, թակում, եփում ջրի մէջ, ալիւր խառնած շփոթ շինում, դնում վրան, որից բշտիկներ են գոյանում եւ բացւում:
5. Փորկապութեան համար հոնի թթու ուտեցնել:
6. Սեւ միզուկը (բոյս) անլուայ բրնձի հետ եփել, ուտեցնել:
7. Զկեռ կամ քոլատանձ ուտեցնել:

Ժգ. Բեւմատիզմի դէմ (սանջու տալը, ծակուցները)

1. Սպիտակ սանդալը օղու մէջ հարում են, քսում ցաւած տեղին:
2. Խնձորձաղիկը եփում են եւ նրա զոլորշիների վրայ ցաւած տեղը պահում եւ տաւարի ճարպ քսում կամ ուղեղը:
3. Խոզի կաշին մորթելուց իսկոյն տաք-տաք ձգել վրան:
4. Թափած թուրը լցնում են բաց տակառը, երբ սկսում է եփ գալ (խմորվել), հիւանդը մտնում է մէջը, մինչեւ վիզը մի ժամ մնում:
5. Գանձակի մօտ կայ Նաւթալան ասված տեղը, որտեղ կան սեւ նաւթի հորեր, այդ նաւթը հանում են, թափում առուի մէջ, ամառ ժամանակ ծակոցներ ունեցողները նստում են այդ նաւթի առուի մէջ, մի ժամ եւ աւելի մնում եւ դուրս գալով՝ արեւի տակ պալըզած մնում, մինչեւ քրտնելով մարմնի վրայի սեւ նաւթը քերում-թափում է: Մի քանի օր օգտուելով այդ նաւթից՝ առողջացած վերադառնում են հիւանդները:



6. Ծակուցի առաջը առնելու համար ջինդարները հիւանդին նստեցնում են, կուրծքի վրայ բռնել տալիս մի պղնձի սինի, իրենք հեռանում դռնից, կանչում՝ նետ ու աղեղ բռնած.

Գեալդրմ հա գեալդրմ,
 հարցնում են. Հարդա՞ն գեալըրսան,
 պատասխ. Մանջու դաղըննան,
 հարց. Նետյա գեալըրսան,
 պատ. Մանջու վուրմադա:

Այս ասելուց նետը բաց է թողնում, խփում սինիին, որից վախեցած՝ հիւանդը իբրեւ թէ մոռանում է ցաւերը:

Ժդ. Ջերմ ու տենդի (մալարիա) դէմ

1. Տիլֆիլը ծեծիր, շարբաթ արա, տուր՝ խմի:
2. Անդախտտը քանդել, եփել, նրա ջրովը լողացնել:
3. Սարդը եթէ ծեծուի եւ լաթի մէջ ճակատի կամ քունքի վրայ դրուի, ջերմը կը բժշկուի:
4. Սարդի ոստայնը նոյնպէս տաքութեան առաջը առնում է, ինչպէս եւ վերքից արիւն գալուց:
5. Լորձունքը ջիւայի հետ խառնել, գէշ ախտերու տաքութիւնը կ'իջեցնէ:
6. Արեւ դիպածին կամ տաքութիւն ունեցողին դանդուրը եփիր, տաք- տաք ճակատին դիր:
7. Ջերմի դէմ վերցրու երեք կտոր ուռննու փայտ, վրան գրի՝ աբլաշ, բաբլաշ, դալբաշ, ջերմողի քթի տակ կրակի վրայ ձգիր, մուխը դէպի նրան գնայ:

Ժե. Մազ բացնելու եւ ներկելու մասին

1. Մազ բսնելու համար օձի խորիւր այրել, ձէթով շաղախել, քսել:
2. Կանեփի կեղերը եփել եւ նրա ջրովը լուանալ:
3. Թէ ուզենայ մարդ, որ մազը երկարի, ձիու սմբակը այրել, ջրով շաղախել եւ քսել:
4. Թթենու կեղերը այրել, մանուշակի իւղով օծել:
5. Թէ մազը թափուի, մկան ծիրտը գլխի վրայ տրորել:
6. Մազը թափվելու դէմ ընկուզի կեղերը այրել, փոշի դարձնել, գինու եւ ձէթի հետ խառնած՝ գլխին քսել:
7. Մկան աղբը մեղրով խառնել, մազ չբսած տեղին քսել, մազ կը բսնի:
8. Մազը սեւացնելու համար խակ ու թթու նուշը վերցնում են, մախաթով ծակում, մէջը գէլթունի իւղ ածում եւ արեւում թողում, լաւ եփում եւ այն իւղը պահում մազին քսելու համար:
9. Լալայի ծաղիկը շուաքում չորացնում են, ծեծում, գաջ խառնում եւ շիրբախտ իւղ մէկ նուկի (?) լալային քիչ սպիտակ գաջ խառնած՝ դնում են արեւում, քամում, պահում, մորուքին քսում. սեւացնում է եւ փայլ տալիս:

Ժզ. Չանազան հիւանդութիւնների դէմ

1. Եթէ աղիքը ցաւի, լոշտակի արմատը ծեծիր, ջրով 7 օր խմիր, կը լաւանայ:
2. Եթէ մարդի փայծաղը (դալաղ) տուբամ լինի, լոշտակը ու չոր թուրը միաշափ կշոիր, ծեծիր, փայծաղի վրայ 10 օր դիր, օրեկան մի գրամ էլ խմիր, ուռուցը կը քաշվի:
3. Եթէ որ մաղձ լինի, լոշտակը եփիր, շատ խմիր. եփել այնքան, որ կէսը մնայ:
4. Եթէ մարդ դվաթից ընկել է, լոշտակի պտուղը ծեծիր, տուր՝ խմի, զօրութիւնը կ'աւելցնի:



5. Եթե ձեռքի մի տեղը կոտրվում է, լոշտակի ջուրը ճերմակ գինով խառնում են, քսում, լաւանում է:
6. Եթե մարդ սովորի օրական մի բակլայի չափ լոշտակ ուտել, ցաւ չի տեսնել մինչեւ մահը:
7. Եթե եղունգը ընկնի եւ թարախ գնայ, լոշտակը ծեծիր, ճերմակ մեղամ շինիր, վրան դիր, 10 օր մի գրամ խմիր:
8. Լոշտակը ճերմակ գինով, վարդի իւղով ձեռքը օծի 5 անգամ. եթե քոր տայ եւ կսկծայ, լոշտակի ջուրն խմի ճերմակ գինով 5 օր, կամ վրան կապիր քոր եկած տեղը:
9. Մարդի ոտը կամ ձեռքը եթե փուշ մտնի կամ երկաթ, սումբուլի քոքը ծեծիր, վրան դիր, յետոյ քաշիր հանիր:
10. Բերանից ջուր գալուց մի գլուխ սխտոր ծեծիր, քացախով խմիր, ճիճուին կը սպանի:
11. Դոմամի սերմը կլեպել, ուտել, անգլխական աղ խմել եւ հում սոխ ուտել. ջուր չխմել ու հաց չուտել այդ օրը. երիզորդը կ'ընկնի:
12. Բերանի հոտի դէմ վերցնել անիսոնը, բիբարը, զանջափիլը, ծեծել, քացախում եփել, բերանը առնել, 3-4 օր շարունակել կամ գլխի զագաթից արին առնել:
13. Բերանից ջուր գալուց իշու թրիքը տրորի, քթի մէջ կաթեցրու:
14. Մէզը կապուելուց գարին շատ եփի, մինչեւ մեղամ դառնայ, ծածուկ անդամի վրայ դիր կամ քսիր:
15. Եթե կինը կաթ չունենայ, բողկը եփիր, տրորիր, ջուրը քամիր, մեղրով խմիր, կաթ կը բերէ:
16. Եթե սիրտը ցաւի, աղաջուրը լաւ եփիր, ոտները մէջը դիր:
17. Մարդ թէ մրսած լինի, աղաջուրը եփիր եւ մի բուռ թեփ աղաջրի մէջ ձգիր, ոտները մէջը դիր. ջուրը հովանալուց կրկին տաքացնել եւ ոտը մէջը պահել 3 անգամ:
18. Թէ սրտումը թիքա եւ այլ բան լինի, ջուրը եփ տուր, մէջքի վրայ պառկեցուր, մի շոր ձգիր կրծքին եւ տաք ջրով դազանը դիր վրան. գլխատեղը բարձր լինի, փորը ցած:
19. Երեխայի քունը եթէ չտանի, խաշխաշի ձէթը քունքը քսի, կը քնի:
20. Ճիճուի դէմ սխտորը աղով ծեծել, քացախ խառնել եւ խմել: -Օթորանը, կոտեմի սերմը եւ չամանը եփել եւ խմացնել:
21. Այրուածքի համար տուղտի տերեւը ձէթով ծեծել, վրան դնել: Սոսինձը հալել եւ ձեռով քսել: Ընկուզի իւղ են քսում. լեղակ կամ մեղր են քսում:
22. Կովի իւղով օծել: Հաւի ծիրտը, իւղի հետ խառնած, այրուած տեղին քսելուց կակծոցը մեղմացնում, բժշկում է: Լեղակ, ձէթ, հինա, ծամօն եփում են, դնում վրան:
23. Որ շողիքը չկարենայ կուլ տալ, աղ ու մեղր խառնել, ուտել:
24. Եթէ լեզուն կապ է ընկնում, չէր կարողանում խօսել, աղբաղբուկը կամ նրա սերմը աղալ եւ մեղրի հետ խառնած՝ բերանը ձգել:
25. Լոշտակի տերեւը ծեծել, ջրի մէջ գինի խառնած խմել, երեսի գոյնը կլաւանայ:
26. Մաղասի դէմ բողկը խորովի եւ կեր: -Սոխի ջուրը հանիր, մեղր խառնած՝ քիթը ածիր: -Դաղձը հացի հետ ուտել:
27. Շեռը կապուելուց վերցնում են 50 դրամ կտաւատ, աղում եւ ըռեզանի ջրի հետ խմացնում. իւղը թանի հետ ուտելն էլ օգնում է:
28. Ծաղկացաւից չվնասուելու համար անալի կարագ քսել:
29. Հիւանդին թթու, կծու կամ աղի բան չուտացնել:
30. Քրտնեցնելու համար մալինայի (մորի) թէյ խմացնել:
31. Ոտները տաք ջրի մէջ դնել:



32. Շիշերը տաք ջրով լցնել, դնել ոտքերի տակ՝ անկողնի մէջ:
33. Ծննդկանի ցաւը մեղմացնելու համար ընկուզը իր կեղեւով այրում են, փոշի դարձնում, գինու եւ ձեթի հետ խառն քսում գլխին:
34. Յուրտ տարած տեղի վրայ հին բամբակը օդու մէջ եփել, դնել վրան:
35. Քոսի դէմ մարգամիւշը եւ քացախը եփել, սառեցնել, քսել մարմնին եւ երեկոյեան լողանալ, տաք, տեղ կամ թոնրի մէջ նստել:
36. Ոջիլի դէմ ջուան ջուր անել, խինայով քսել մարմինը կամ շապիկը:
37. Մկնատամի համար բրինձը այրել երկաթի վրայ ու իւղը քսել:
38. Մատնաշունչ (թարախակալելուց) լինելուց սոխը խորովել եւ դնել վրան: - Ոչխարի դմակը ծեծել, մածնի ու սոխի հետ խառնել, եփել, դնել վրան:
39. Զիու վերքի վրայ դնում են տրիսամաշը այրած, մանր կրճած եւ վրայից բրդով ծածկում:
40. Ոտը կտրուելուց տորոնը եփում են, վրան բրինձ ածում եւ դնում վերքի վրայ:
41. Լուի դէմ եզան լեղին ու քակորը (աթարը), քացախի մէջ խառնելով, սրսկում են դոշակին:
42. Լուի դէմ վերցնում են սադափը, մատակ ձիւ կաթի մէջ եփում, սրսկում շորեղէնին:
43. Օձերը փախչում են չելիկի տերեւների հոտից, երբ դնում են շորեղէնի մէջ:
44. Վիժեցնելու համար բարձր տեղից թռչում են ցած:
45. - Փորի վրայ երկանք են դնում, աղում:
46. - Ծանր բան են դնում փորին:
47. - Ալաքլունգ միջատը չորացնում են, ծեծում, ջրով կամ գինիով խմացնում:
48. Ծննդկանի մէջքի վրայ մի հաց են ձեռով կիսում, աղքատին տալիս:
49. Տղամարդի գլխարկ են ծածկում, որ չարը խափանի, կարծի՝ տղամարդ է, նրանից հեռանալ:
50. Ծննդկան կնոջ ամուսնու տրեխի կրունկի մէջ ջուր են լցնում, շաղ տալիս կրծքին, որ արգանդը բացուի:

ՇՈՒՇՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 18-ՐԴ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Յուրաքանչյուր քաղաքի տնտեսական, քաղաքական և կուլտուրական աճի, մասնավորապես նրա զարգացման էտապների և բեկումնային մոմենտների մասին հաճախ կարելի է դատել նրա բնակչության թվի փոփոխությամբ: Բնակչության դինամիկան, քաղաքի ծագման օրերից սկսած, կարող է միաժամանակ նրա պատմական զարգացման ճիշտ պերիոդիզացիայի չափանիշ հանդիսանալ:

Դառնալով Շուշի քաղաքին, որն Անդրկովկասում նշանավոր քաղաքական, տնտեսական ու կուլտուրական դեր է խաղացել վերջին երկու դարերի ընթացքում, նկատենք, որ միշտ չէ, որ մենք բավարար տվյալներ ունենք քաղաքի բնակչության թվի ու կազմի մասին նրա զարգացման բոլոր էտապներում: Դա առավելապես վերաբերում է Շուշու զարգացման սկզբնական էտապներին, թեև նրա զարգացման հետագա շրջաններում էլ բնակչության թվին վերաբերող տվյալները հաճախ ստույգ չեն:

Շուշու բնակչության թիվը որոշելու հարցում մեզ համար աղբյուրներ են հանդիսացել.

1) Հին նշանավոր ճանապարհորդների ցուցումները.

2) Շուշում ըստ ընտանիքների կազմած կամերալ ցուցակները, որտեղ թված են ընտանիքների բոլոր անդամները (посемейные списки).

3) 1897 թվականի համառոտական և 1921, 1926 և 1959թ. համամիութենական մարդահամարները.

4) «Кавказский календарь» պաշտոնական օրացույցի տվյալները (այդ «օրացույցները» հրատարակվել են Թիֆլիսում՝ սկսած XIX դարի քառասնական թվականներից մինչև 1916 թվականը, և մեծ մասամբ տալիս են Շուշում կազմած ընտանեկան ցուցակների թվերը).

5) Առանձին ուսումնասիրություններում հանդիպած թվերը:

Վերոհիշյալ աղբյուրները համարժեք չեն. նրանցում բերվում են հակասական թվեր, որոնք ճշգրտման կարիք ունեն:

Համենայն դեպս մեզ հայտնի աղբյուրները որոշ քննադատական մոտեցումով հնարավորություն են տալիս մոտավոր պատկերացում կազմել Շուշու բնակչության թվի և ազգային կազմի մասին¹:

Թե որքան բնակչություն է ունեցել Շուշին մինչև Փանահ խանին ենթարկվելը և Ղարաբաղի խանության կենտրոն դառնալը, մեզ հայտնի չէ: Միայն կարելի է ենթադրել, որ եթե Շուշին որպես բնակավայր Փանահ խանից առաջ էլ գոյություն է ունեցել, այնուամենայնիվ, նա շատ բնակչություն ունենալ չէր կարող, այլապես այդ մասին այս կամ այն կերպ հայտնի կլիներ:

¹ Այս տեսակետից բնորոշ է «Ազգագրական հանդեսի» առաջին համարում (Թիֆլիս, 1897 թ.) լույս տեսած Երվանդ Լալայանի և ուրիշների «Վարանդա» աշխատության մեջ Լ. Աթաբեկյանի «Ստատիստիկական տեղեկություններ» վերնագիրը կրող հոդվածի այն ցուցումը, որտեղ հեղինակը, նշելով իր աղբյուրները, մասնավորապես 1886 թվականի ընտանեկան ցուցակների հիման վրա կազմած «Свод статистических данных о населении Закавказья» աղբյուրը, գրում է. «Այս հիմնարկությունների հավաքած նյութերի ձեռնհասությունը ստատիստիկական գործում չափազանց կասկածելի է». «նրանց նյութերի վրա հիմնվող մեր տեղեկությունները բնականաբար միայն մոտավորապես ճիշտ են», բայց «այդ թվերը ևս ընդունակ են ընդհանուր գծերով ցույց տալ ստատիստիկական մի քանի երևույթների զարգացումը Շուշու գավառում»: Նույն համարում Ղազար Տեր-Ղազարյանը «Տնտեսական դրությունը Վարանդայում» հոդվածում (էջ 77-101), խոսելով «Кавказский календарь»-ի մասին, որի մի քանի հատորների վրա նա հենվում է, նույնպես պահանջելով նրանց նկատմամբ քննադատական մոտեցում, ասում է. «Անկարելի է այնտեղից արտագրել թվեր՝ անհոգ մնալով նրանց ճշտության նկատմամբ»:



Փանահ խանի ժամանակ, ըստ աղբրեջանական պատմագիրների, 1756-57 թթ.¹ Շուշին դառնում է բերդաքաղաք և խանի բնակության վայրը: Որպես Ղարաբաղի խանության կենտրոն, Շուշին արագորեն սկսում է աճել, քանի որ XVIII դարի երկրորդ կեսին աճում ու զորեղանում է Ղարաբաղի խանությունը, որը Փանահ խանի և նրա որդի Իբրահիմ Խալիլ խանի ժամանակ դառնում է Աղբրեջանի խոշորագույն խանություններից մեկը: Շուշու հիմնադրման հենց առաջին օրերից սկսած, հենվելով այս անառիկ բերդի վրա, Ղարաբաղի խաները իրենց տիրապետությունը տարածում են հարևան երկրների վրա և ընդարձակ տերիտորիայի տեր դառնում: Շուշին Փանահ խանի երրորդ ամրոցն էր՝ Բայաթից և Շահբուլաղից հետո և նրանցից ամենահզորը:

Բերդի կառուցումն ընթանում էր արագ թափով: Երբ բերդի կառուցումն ավարտվելուց մի քանի տարի հետո Իրանի Մահմեդ Հասան խան Ղաջարը (Աղա Մահմեդ շահ Ղաջարի հայրը), հարձակվում է Շուշու վրա, նրա դեմ ընդհանուր ուժերով դուրս են գալիս աղբրեջանցիներն ու հայերը և մեծ վնաս հասցնում նրա բանակին: Մահմեդ հասան խանը չի էլ կարողանում մոտենալ քաղաքի պարիսպներին և հետ է նահանջում: Պարզ է, որ Շուշին իր կառուցման հենց առաջին օրերից դարձել էր հզոր բերդաքաղաք, և չէր կարող առանց զգալի պաշտպանական ուժերի լինել: Այդ մասին կան ուղղակի ցուցումներ: Այսպես, Ղարաբաղի խանության պատմագետ Միրզա Ջամալ Ջիվանշիրը գրում է, որ Փանահ խանը, հիմնելով Շուշի բերդը, «այնտեղ է տեղափոխել Շահբուլաղում բնակվող բոլոր ռահաթներին, նաև ազնվական մարդկանց ընտանիքները, մելիքներին, ծառայողներին և քեղխուղաներին (գյուղական տանուտերերին) և նրանց տեղ է հատկացրել բերդի մեջ բնակվելու համար»²: Դեռևս Շուշի բերդը հիմնելուց առաջ Փանահ խանը հոգ է տարել քաղաքում մեծ թվով հավաքված ժողովրդի և բերդի բնակիչների ջրի կարիքն ապահովելու և իր մերձավորներից տեղյակ մարդիկ է ուղարկել ջրհորներ փորելու համար, ապա ինքն անձամբ եկել է Շուշի քաղաքի դիրքը դիտելու, որից հետո սկսել է կառուցել բերդը:

Ղարաբաղի խանության կենտրոն դարձած Շուշու բնակչությունը օրեցօր աճում էր: Ղարաբաղի առաջին խաները քաղաքի պաշտպանության համար չէին կարող վստահել միայն բերդի անառիկությանը և նորակառույց ամուր պարիսպներին, ուստի ամեն կերպ աշխատում են ավելացնել քաղաքի աղբրեջանական բնակչությունը՝ ի հաշիվ քոչվորական ցեղերի: Մակայն Շուշում սկզբից նեթ սկսում են կուտակվել և հայեր, որոնք նվաղ դեր չեն խաղացել բերդը արտաքին թշնամիներից պաշտպանելու գործում: Ըստ երևույթին, Շուշու հայ բնակչությունը սկզբում կազմում էր պարիսպներ ու շենքեր կառուցող բանվորների և արհեստավորների հիմնական մասը, որոնց շուտով միանում են նաև առևտրով զբաղվողները³:

Մեզ հայտնի է, որ Շուշու նորակառույց բերդի առաջին բնակիչների մեջ արդեն կային հայեր: Դրանք Մելիք Շահնազարը և նրա մարդիկ էին: Մա գարմանալի չէ, որովհետև, ինչպես հաղորդում են պատմական աղբյուրները, Շուշու սարահարթը, մինչև բերդի կառուցելը, հանդիսանում էր Շոշ (Շոշու) գյուղի արտավայրը, իսկ այդ գյուղը գտնվում էր Վարանդայում՝ Փանահ խանի բարեկամ և նրա հավատարիմ դաշնակից Մելիք Շահնազարի մելիքության մեջ: Շուտով Շուշի են տեղափոխվում բնակվելու զգալի թվով հայեր նաև Արաքսի շրջանի գյուղերից՝ Նախիջևանի խանության սահմաններից: Դեռևս մինչև Ղարաբաղը ռուսական տիրապետության տակ

¹ Ըստ Միրզա Ջամալ Ջիվանշիրի «История Карабаха» (издание Академии наук Азерб. ССР, Баку, 1950г.) և Միրզա Աղիգորգալ բեկ Ղարաբաղցու (История Карабаха, Баку, 1950)՝ Շուշին հիմնվել է հիջրիի 1170թ., որ համապատասխանում է մեր թվականության 1756-57 տարրին: Ըստ այլ աղբյուրների՝ Շուշու հիմնադրումը սկսվում է մի երկու տարի առաջ, իսկ բերդի կառուցումը ավարտվում է 1756-57 թթ.: Սկզբում այս նոր բերդը կոչվում է Փանահարաթ, բայց շուտով վերանվանվում Շուշի

² Տե՛ս Мирза Джамал Дживаншир, *История Карабаха*. Изд. АН Азерб. ССР. Баку, 1959, стр. 72 и сл.

³ Աղբրեջանական բնակչության մեջ գերակշռում էին ռահաթները, քոչվորությամբ զբաղվողները, նոքարները, բեկերը, զինվորական դասը



անցնելը, այսինքն Ղարաբաղի խանության ժամանակաշրջանում Շուշու հայերը բաժանվում էին դազանչեչոց (Շահկերտից եկած), ագուլեաց (Ագուլիսից եկած) և դարաբաղոց (հետագայում թագա Շամի) եկեղեցական ծխերի: Ըստ Լեոյի՝ այս հայերը Շուշի էին տեղափոխվել բնակվելու բերդի հիմնադրման հենց առաջին տարիներից¹: Մի քանի տասնյակ տարի հետո Շուշում բնակություն են հաստատում նաև մեղրեցիները, կազմելով առանձին եկեղեցական համայնք²:

Բացի Շահկերտից, Ագուլիսից և Մեղրուց Շուշի գաղթած հայերից, քաղաքի բնակչության մեջ հետզհետե աճում էր նաև Ղարաբաղի գյուղերից քաղաք տեղափոխված հայերի թիվը, մանավանդ XIX դարի ընթացքում, երբ Ղարաբաղում հաստատվում է Ռուսաստանի տիրապետությունը:

Սակայն որքա՞ն էր Շուշու բնակչությունը XVIII դարի վերջերին, երբ գոյություն ուներ Ղարաբաղի խանությունը, և այդ բնակչության քանի՞ տոկոսն էին կազմում հայերը: Այդ հարցին ճիշտ պատասխան տալու համար մենք անմիջական աղբյուրներ չունենք, բայց XIX դարի քսանական թվականներին Շուշում եղած ճանապարհորդների ցուցումները և մի շարք այլ տվյալներ հիմք են տալիս պնդելու, որ Ղարաբաղի խաների տիրապետության օրերին, այսինքն՝ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Շուշու մշտական բնակչությունը հասնում էր մի քանի հազարի: Աղբրեջանում կան պատմաբաններ, որոնք հակված են չափազանցնելու Շուշու բնակչության թիվը՝ համարելով այն 10 հազարից շատ ավելի, համեմատելով այն XVI դարի Շամախի քաղաքի բնակչության հետ³, սակայն այդ պնդումը մենք անհիմն ենք համարում: Խանական տիրապետության տարիներին Շուշու մշտական բնակչության թիվը հազիվ թե հասներ 10 հազարի, թեև քաղաքը խանության կենտրոն դառնալուց հետո արագորեն աճում էր: Ճիշտ է, պատերազմական իրադարձությունների ժամանակ քաղաքում կարող էր հավաքվել համեմատաբար մեծ բազմություն՝ պաշտպանություն փնտրելով բերդի ամուր պարիսպների հետևում, բայց մեզ հետաքրքրում է քաղաքի մշտական բնակչությունը:

Աղբրեջանի պատմության մասնագետ պրոֆեսոր Ի. Պետրուշևսկին իր «Աղբրեջանի խանությունները XVIII դարի երկրորդ կեսին» հոդվածում գրում է, որ Աղբրեջանի միայն հինգ քաղաքները՝ Դերբենդը, Ղուբան, Բաքուն, Գանձակը և Շուշին ունեին յուրաքանչյուրը 5 հազարից քիչ ավելի բնակիչ⁴: «Աղբրեջանի պատմության» մեջ⁵ ասված է, որ Շուշին պաշտպանելու համար հավաքվել էին 15 հազար հոգի, սակայն այս թիվը ևս քաղաքի մշտական բնակչության վկայագիրը չէ, մանավանդ, որ նույն գրքի 380-րդ էջում պարզորոշ գրված է, որ «XVIII դարի վերջին Հյուսիսային Աղբրեջանի և ոչ մի քաղաք 6 հազարից ավելի բնակիչ չունեին»:

XIX դարի 20-ական թվականներին Շուշու բնակչության մասին որոշ տեղեկություններ են տալիս հայտնի ճանապարհորդներ Մեսրոպը Թաղիադյանը և անգլիացի Գեորգ Կեպպելը: Առաջինը Շուշիում եղել է 1821թ. Եփրեմ կաթողիկոսի հետ, այն ժամանակ, երբ Ղարաբաղը փաստորեն արդեն գտնվում էր ռուսական տիրապետության տակ, իսկ Մեհտի խանը դեռ պահպանում էր խանության որոշ արտոնություններ: Թաղիադյանը գրում է, որ Շուշում բնակվում են հայեր և թուրքեր:

¹ Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, Թիֆլիս, 1914, էջ 61-63

² *Այս ծխերի մասին խոսում է XIX դարի քսանական թվականների նշանավոր պատմագիր Մ. Թաղիադյանը իր «Ճանապարհորդություն ի Հայս» գրքի մեջ, չանվանելով մեղրեցոց եկեղեցին: Ըստ երևութի մեղրեցիները Թաղիադյանի այցելությունից հետո են Շուշի տեղափոխվել*

³ *Տե՛ս, օրինակ*, Փ. Ալև, *Города Северного Азербайджана во второй половине 18 века* (диссертационная работа). Баку, 1957, г. См. Архив Института Истории Академии наук Азерб. ССР, инв. ¹ 510

⁴ *Տե՛ս* և *Архив Института истории Академии наук Азерб. ССР, инв. ¹ 779*

⁵ *Տե՛ս* և *История Азербайджана, т. I, Изд. Акад. наук Азерб. ССР, Баку, 1958 г.*



Հայերը Շուշում ունեն երեք եկեղեցի՝ «ազուլեցվոց, դարաբաղցվոց և դազանչվոց» և կազմում են 500 տուն (ծուխ)¹: Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր ծուխ բաղկացած էր մոտավորապես հինգ հոգուց, քաղաքի հայ բնակչության թիվը կկազմեր մոտ 2500 հոգի: Պետք է ենթադրել, որ XIX դարի քսանական թվականներին, ինչպես Փանահ խանի և Իբրահիմ խանի տիրապետության ժամանակ հայերը Շուշի քաղաքի բնակչության փոքրամասնությունն էին կազմում:

Երկրորդ նշանավոր ճանապարհորդը՝ անգլիացի Գեորգ Կեպպելը իր գրքում² պնդում է, որ 1824 թվականին, երբ նա եղել է Շուշում, այդ քաղաքում բնակվում էին 2 հազար տուն (այսինքն մոտավորապես 10 հազար հոգի), որոնց ³/₄-ը կազմում էին թուրքերը («татары»), հետևապես բնակչության մեծամասնությունը: Այսպիսով Շուշու բնակչությունը XVIII դարի վերջի համեմատությամբ զգալի չափով աճել էր, որ միանգամայն հավանական է ռուսական տիրապետության օրերին, երբ երկրում խաղաղություն էր տիրում:

Մի այլ պատմական աղբյուրի վկայությամբ³, որ վերաբերում է XIX դարի 30-ական թվականներին և պաշտոնական հրատարակություն է հանդիսանում, մենք գտնում ենք Անդրկովկասի մի քանի քաղաքների բնակչության վերաբերող հետևյալ թվերը, որոնց համաձայն կարելի է որոշել Շուշու բնակչության թիվը և նրա տեղը Անդրկովկասի այլ խոշոր քաղաքների շարքում:

Քաղաքներ	Տների (ծխերի) քանակը	Շնչերի քանակը				
		հայեր	վրացիներ	թուրքեր	այլ ազգութ.	ընդամենը
Թիֆլիս	4936	9447	1947	187	--	1158
Նուխի	2791	827	--	6558	--	1
Երևան	2750	2148	--	3752	--	7385
Շամախի	2233	566	--	5000	--	5900
Շուշի	1698	2392	--	2667	--	5566
Բաքու (Ֆորշտատի հետ)	1358	184	--	3709	--	5059
	1330	988	--	1882	--	3893
Նախիջևան	645	--	--	1984	--	2870
Ղուբա	804	84	--	1684	--	1984
Օրդուբադ						1768

Մեր բերած աղյուսակի թվերը բացարձակ ճիշտ համարել չի կարելի, իհարկե (կազմված են առանց ստույգ մարդահամարի, վերաբերում են միայն քաղաքաբնակ գլխավոր ազգություններին և այլն), սակայն այս մոտավոր թվերի հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

1. XIX դարի 30-ական թվականներին Շուշին իր բնակչության թվով Անդրկովկասի խոշոր քաղաքներից մեկն էր և գրավում էր 5-րդ տեղը Թիֆլիսից, Նուխուց, Երևանից և Շամախուց հետո՝ զգալի չափով գերազանցելով Անդրկովկասի մյուս քաղաքները: Այդ բանը հաստատվում է մեր տրամադրության տակ եղած մյուս աղբյուրներից ևս:

¹ Տե՛ս Մեարովի Թաղիադյան, *Ճանապարհորդություն ի հայս, Կակաթա, 1847, էջ 286*

² Г. Кеппель, *Личный рассказ о поездке из Индии в Англию в 1894 году. Шуши и другие города Кавказа* Շուշի քաղաքին վերաբերող հատվածի անգլիական բնագրից կատարած ռուսերեն թարգմանությունը տե՛ս Աղբյուրների և ակադեմիայի պատմության ինստիտուտի արխիվում, ինվենտ. N878

³ «Обозрение Российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях», т. IV, Санкт-Петербург, 1836, стр. 361, 370



2. Շուշու բնակիչների թիվը պետք է հաշվել ոչ թե 5059 շունչ, այլ դրա կրկնակին, այսինքն մոտավորապես 10 հազար շունչ, որովհետև աղյուսակում նշված են միայն արական սեռին պատկանողները, ինչպես այդ արվում էր այն ժամանակ: Մեր բերած թիվը (10 հազար բնակիչ) համապատասխանում է Շուշու բնակչության մասին Կեպպելի վերոհիշյալ տեղեկանքին:

3. Հայերն այդ շրջանում Շուշու բնակչության փոքրամասնությունն էին կազմում, սակայն աղբյուրների թիվը հայերից այնքան էլ մեծ չէր:

Շուշում բնակվող հայերի թվի մասին տվյալներ է բերում Լեոն իր «Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի պատմության» մեջ՝ Ղարաբաղի կոնսիստորիայի համար 15 գործի հիման վրա: Ըստ այդ փաստաթղթերի՝ Շուշու հայերը ըստ եկեղեցական ծխերի կազմում էին¹.

Եկեղեցական ծխեր	Ծխերի թիվը	Շունչ		
		արական	իգական	միասին
Ագուլյաց եկեղեցի	447	1304	1174	2478
Ղազանչեցոց Մեդրեցոց	367	1221	1014	2237
	102	241	217	458
Ընդամենը	916	2766	2405	5171

Այս աղյուսակից երևում է, որ Շուշու հայերը 1840 թվականին կազմում էին 5171 շունչ: Քաղաքաբնակ աղբյուրների հետ միասին 1840 թ. Շուշու բնակչության ընդհանուր թիվը 10 հազարից ավելի պետք է լիներ, որովհետև աղբյուրները դեռևս մեծամասնություն էին կազմում:

1852 թվականի «Кавказский календарь»-ում բերվում են Անդրկովկասի քաղաքների բնակչության թվին վերաբերող մի շարք տվյալներ, որոնք օգնում են որոշելու Շուշու բնակչության ազգային կազմը և նրա տեղը Անդրկովկասի քաղաքների շարքում²:

Ըստ ազգային կազմի և կրոնի	Բնակիչների թիվը		
	տղամարդ	կին	ընդամենը
Հայեր	3133	3222	6355
Մուսուլմաններ (աղբյուրներից)	3175	3196	6371
Ուղղափառներ (ռուսներ)	2	3	5
Ընդամենը	6310	6421	12731

Այս թվերից պարզ երևում է, որ Շուշու բնակչությունը 1840 թվականից հետո բավական աճել է, հասնելով 12731-ի, իսկ քաղաքում բնակվող հայերի և աղբյուրների թիվը 1852 թ. համարյա հավասարվել է:

Հետաքրքիր է, իր բնակիչների թվով, Շուշու գրաված տեղն Անդրկովկասի այլ քաղաքների շարքում, որ երևում է «Кавказский календарь»-ի 1852թ. տվյալների հիման վրա մեր կազմած հետևյալ աղյուսակից.

Քաղաքներ	Բնակչության թիվը
Թիֆլիս	34.888

¹ Տե՛ս Լեոն, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, էջ 64: Այս ցուցակի թվերի հանրագումարը մեր կազմածն է:

² Տե՛ս «Кавказский календарь» на 1852 год. Статья Конторовича «Шуша», стр. 430-435

Շամախի	19.558
Նուխի (1854 թ.)	17.943
Շուշի՝	12.774
Երևան	12.603
Ախալցխա	12.374
Դերբենդ	12.216
Ալեքսանդրապոլ	11.280
Գանձակ (1854թ.)	10.938
Ղուբա	9.143
Բաքու	7.431
Նախիջևան	4.889
Քութայիս	2.723

Ինչպես երևում է աղյուսակից, Շուշին 1852 թ. եղել է Անդրկովկասի ամենամեծ քաղաքներից մեկը՝ իր բնակչությամբ գրավելով 4-րդ տեղը: Շուշուց ավելի բնակչություն ունեին միայն Թիֆլիսը՝ Անդրկովկասի ամենախոշոր քաղաքը, Շամախին, և վերջապես Նուխին: Անդրկովկասի մյուս բոլոր քաղաքները Շուշուց ետ էին մնում: Շուշին երկու անգամ ավելի բնակիչ ուներ, քան Բաքուն, ավելի մեծ էր քան Գանձակը, Երևանը, Ախալցխան, Դերբենդը, Ալեքսանդրապոլը, երեք անգամ ավելի՝ քան Նախիջևանը, իսկ Քութայիսը Շուշու համեմատությամբ աննշան բնակավայր էր: Պարզ է, որ Ղարաբաղի խանության նախկին կենտրոն Շուշի քաղաքը ռուսական տիրապետության ընթացքում խիստ աճել էր, դառնալով խոշոր առևտրական և արհեստավորական կենտրոն ամբողջ Անդրկովկասում, որն առևտրական մեծ կապեր ուներ ոչ միայն Անդրկովկասի առանձին քաղաքների և շրջանների, այլև Ռուսաստանի ու արտասահմանյան շուկաների հետ:

Երկու տարի անց Շուշու բնակչության թիվը հասնում է արդեն 15194 հոգու¹, իսկ 1860 թվականին, համաձայն Շուշում կազմած ընտանեկան ցուցակների, քաղաքում բնակվում էին 17.484 մարդ, որ կազմում էին 2966 ընտանիք (ծուխ): Առաջին (հայկական) քաղաքամասում բնակվում էին 9533 շունչ, իսկ երկրորդում (ադրբեջանական)-7951 շունչ, այսինքն առաջինից 1582 հոգով պակաս: Այսպիսով Շուշու բնակչությունը 6 տարվա ընթացքում ավելացել էր ավելի քան 2 հազար շնչով, իսկ հայերն արդեն կազմում էին քաղաքի բնակչության մեծամասնությունը²:

1873թ. Շուշում կազմած ընտանեկան ցուցակների համաձայն³, Շուշու բնակչության թիվը հասել էր 22.086-ի, այսինքն 1860 թվականի համեմատությամբ աճել էր համարյա 5 հազարով:

* Շուշու բնակչության թիվը «Кавказский календарь»-ի 1852 թվականի տված ցուցակում աննշան չափով տարբերվում է նույն թվականի համարում տպագրված Կոնտորովիչի բերած թվերից, որ չի խանգարում ընդհանուր առումով որոշելու Շուշու տեղը մնացած քաղաքների շարքում

¹ Տե՛ս Кавказский календарь за 1854 год

² Տե՛ս «Камеральное описание города Шуши за 1860 год» Архив Министерства внутренних дел Азерб. ССР, фонд 10, опис. 1, ед. хр. 48, лист 1-1025, որտեղ տրված են առաջին և երկրորդ քաղաքամասերում բնակվող ընտանիքների անվանական ցուցակները՝ կազմված 1860 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին: Այս ցուցակները վավերացված են բազմաթիվ ստորագրություններով: Գրքի մեջ կանանց անունները չեն բերված, ցույց է տրված միայն նրանց թիվը

³ Տե՛ս Камеральное описание гор. Шуши в 1873 г. Архив Министерства внутренних дел Азерб. ССР, ф. 43, оп. 1, д. 13
Այս ընտանեկան ցուցակները կազմված են Շուշում 1873 թվականին, սակայն գրքի մեջ 547 թերթից մինչև 565 թերթը և 339 թերթից մինչև 997 թերթը ավելացված են նոր ընտանիքներ, որոնք բնակություն են հաստատել քաղաքում 1873 թ. ցուցակները կազմելուց հետո: Հավելումն ի նկատի առնելով, քաղաքի բնակիչների թիվը հասնում էր 24.014 հոգու: Մեր կազմած աղյուսակում հաշվի են առնված միայն 1873 թ. հիմնական ցուցակները

Ըստ ազգությունների	Ծուխ	Տղամարդ	Կին	Ընդամենը
Հայեր	2.288	6.996	5.480	12.476
Մուսուլմաններ (ադրբեջանցիներ)	1.483	5.192	4.818	9.610
Ընդամենը	3.771	12.188	9.896	22.086

Այսպիսով, 70-ական թվականներին ևս Շուշու բնակչությունը ուժեղ թափով շարունակում էր աճել, և Շուշին մնում էր Անդրկովկասի մեծ քաղաքների շարքում: Բնակչության ազգային կազմի մեջ ավելի ևս հաստատվում է հայերի մեծամասնությունը:

XIX դարի վերջին տասնամյակներում Շուշում բնակվողների թվի մասին քիչ թե շատ վստահելի տվյալներ մեզ տալիս են 1886 թվականին կազմած ընտանեկան ցուցակները, որոնց համաձայն քաղաքում բնակվում էին 26.806 հոգի (տղամարդ 15.786, կին՝ 11.020):

Այս թվերը հանդիպում են նաև «Кавказский календарь»-ի 1893, 1897, 1898, 1900 տարիների համարներում, հետևապես նաև 1897թ. համառուսական մարդահամարից հետո, ըստ որի՝ Շուշու բնակիչների թիվը հասնում էր 25.656-ի (13.282 տղամարդ, 12.374 կին)¹: Այսպիսով, «Кавказский календарь»-ը շատ հաճախ է դառնում 1886 թ. ընտանեկան ցուցակների թվերին, հաճախ նույն համարներում բերելով նաև 1897թ. համառուսական մարդահամարի թվերը:

Համեմատելով 1886թ. ընտանեկան ցուցակների թվերը Շուշու բնակիչների թվի մասին 1873թ. ցուցակների թվերի հետ, նկատում ենք, որ քաղաքի բնակչության աճի տեմպերը զգալի չափով նվազել են. բնակչությունը 13 տարում ավելացել է միայն 4,5 հազարով, իսկ 1897թ. մարդահամարի համեմատությամբ՝ 24 տարում միայն 3,5 հազարով: Սակայն Շուշին XIX դարի վերջերին դեռևս մնում է այժմյան Ադրբեջանի ամենամեծ քաղաքների շարքում, գրավելով երրորդ տեղը Բաքվից ու Գանձակից հետո: 1897թ. համառուսական մարդահամարի համաձայն, մենք Ադրբեջանի քաղաքների բնակիչների թվի մասին հետևյալ տվյալներն ունենք.

Բաքուն.....	112.253	բնակիչ
Գանձակը.....	32.090	-
Շուշին.....	25.646	-
Նուխին.....	24.811	-
Շամախին.....	20.008	-

Այստեղ պարզ երևում է, որ XIX դարի վերջին առանձնապես ուժեղ չափով աճել է Բաքուն որպես բուռն զարգացող արդյունաբերական կենտրոն, Շուշուց առաջ է անցել Գանձակը, բայց Շուշին Ադրբեջանի մնացած բոլոր քաղաքներից ավելի բնակչություն ունի:

1897 թվի համառուսական մարդահամարի տվյալներն ըստ երևույթին ավելի վստահելի են, և եթե 1886 թվականին Շուշում կազմած ընտանեկան ցուցակները ստույգ են, դուրս է գալիս, որ Շուշու բնակչությունը 1897թ. 1886 թվականի համեմատությամբ արդեն պակասել է: Մենք կարծում ենք, որ XIX դարի 90-ական թվականներին Շուշու բնակչությունը կամ պակասել է կամ նրա աճը առնվազն դանդաղել է: Ըստ երևույթին Շուշու բնակչության թիվը XIX դարի վերջերին կամ XX դարի սկզբին 33 հազարից շատ չի ավելացել: Հենվելով Շուշու գավառապետի հաշվետվության վրա, որ ներկայացված է եղել Գանձակի նահանգապետին 1895թ., Երվանդ Լալայանը և Լևոն

¹ Նույն թվերն են բերվում «Брокгауз и Ефрон» էնցիկլոպեդիայի 79-րդ գրքում: Բնակչության 56,5 տոկոսը կազմում են հայերը, 43,2 տոկոսը՝ ադրբեջանցիները



Աթաբեկյանը «Ազգագրական հանդեսի»¹ Գրքում¹ Շուշու բնակիչների թիվը համարում են 33.252 հոգի²: «Кавказский календарь»-ի վերջին համարներում Շուշու բնակիչների թվի մասին տվյալները մենք համարում ենք անհիմն ու անհավանական³: Թե ինչ տվյալների վրա են հիմնված այդ չափազանցված թվերը, մեզ հայտնի չէ, բայց ակնհայտ է, որ XIX դարի վերջերից և մանավանդ XX դարի սկզբից քաղաքի բնակչությունը պետք է հետզհետե պակասեր, որովհետև այդ շրջանում Անդրկովկասում արագորեն աճում են Բաքուն և Թիֆլիսը, որոնք դեպի իրենց են քաշում մասնավորապես Շուշու և Լեռնային Ղարաբաղի զգալի մասը: Շուշին կորցնում էր իր դիրքը Անդրկովկասի առևտրական ուղիների կենտրոնում, թուլանում էր նրա կապը նաև արտասահմանյան շուկաների հետ: Առաջ են գալիս նոր երթուղիներ, որոնք դեպի իրենց են ձգում Անդրկովկասի առևտուրը և արդյունաբերական բեռները, սակայն չեն անցնում Շուշու վրայով: Ղարաբաղի ներսում Շուշի-Եվլախ խճուղային տրակտից բացի կառուցվում են նոր ճանապարհներ, որոնք անցնում են Ղարաբաղի դաշտային մասով, առաջ են գալիս տնտեսական և առևտրային կենտրոններ (Ադդամը և ուրիշներ), և Շուշին աստիճանաբար կորցնում է իր գերակշռող տնտեսաաշխարհագրական դիրքը:

Այս բոլորին 1905-1906 թվականներին ավելանում են հայ-ադրբեջանական արյունալի ընդհարումները, որոնց հետևանքով Շուշում ոչնչացման ու կրակի է մատնվել հայկական ու ադրբեջանական թաղամասերի զգալի մասը, ավերվել են հարյուրավոր տներ ու խանութներ, սպանվել հարյուրավոր մարդիկ⁴:

Այսպիսի տնտեսական և քաղաքական պայմաններում Շուշու բնակչությունը երբեք չէր կարող ավելանալ և հասնել 39-42 հազարի, ինչպես անհիմն կերպով վկայում են «Кавказский календарь»-ի վերը նշված համարներից մի քանիսը, այլ քաղաքը աստիճանաբար պետք է դատարկվեր:

Վերջին հարվածը քաղաքին հասցնում են 1918-20 թվականի դեպքերը՝ թուրքերի մուտքը քաղաք (1918թ.), մուսավաթականների ու դաշնակների կործանարար քաղաքականությունը, որի հետևանքով երբեմնի ծաղկած և Անդրկովկասի նշանավոր տնտեսական ու կուլտուրական կենտրոն դարձած քաղաքը վերածվեց կիսավերակ ու աննշան մի բնակավայրի:

1920թ. ավերումից հետո՝ 1921 թվականին, երբ Ղարաբաղում սովետական կարգեր էին հաստատվել, Շուշին ուներ միայն 9223 բնակիչ, իսկ այնուհետև ավելի նվազեց՝ 1923թ. 6965 բնակիչ, 1926 թվականին՝ 5104 բնակիչ, 1939թ. 5428, իսկ 1959թ. մարդահամարի համաձայն միայն 6,1 հազար բնակիչ⁵:

Այսպիսով, Շուշու բնակիչների թիվն անընդհատ պակասում էր նույնիսկ սովետական իշխանության առաջին տարիների ընթացքում՝ մինչև 1926 թ. և միայն մինչև 1959 թվականը ավելանում է մեկ հազարով: Փոխվում է նաև քաղաքի բնակչության ազգային կազմը՝ 1926թ. բնակիչների 96 տոկոսը կազմում էին ադրբեջանցիները (4900 հոգի), 1,8 տոկոսը՝ հայերը:

Շուշու բնակչության արագ վերականգնելուն խանգարում է մի հանգամանք ևս: 1920 թվականի ավերումից հետո Շուշին դադարում է մնալ որպես գավառական կենտրոն: Ադրբեջանում կազմակերպվում է Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզ, որի կենտրոնը 1923թ. հուլիսի 7-ին հաստատվում է Խանքենդին, որը նույն թվի նոյեմբերի 23-ին ստանում է Ստեփանակերտ անունը:

¹ Տե՛ս «Ազգագրական հանդես», 1897, էջ 31 և 56

² Մոտավերապես նույն թիվն է տալիս նաև Ա. Դո-ն իր «Հայ-թրքական ընդհարումները Կովկասում» գրքում (Երևան, 1907), այն է, որ Շուշում բնակվում էր 33 հազար մարդ, որոնցից հայեր՝ 18 հազար, թուրքեր՝ 14 հազար, այլ ազգություններ՝ 1 հազար

³ Այսպես, 1898 թվականի համարում Շուշու բնակիչների թիվը նշվում է 34.118 մարդ, 1915 թ. համարում՝ 39.950, նույն և հաջորդ տարվա համարներում նույնիսկ 42.586

⁴ Տե՛ս Ա. Դո, **Հայ-թրքական ընդհարումները Կովկասում**, Երևան, 1907

⁵ Տե՛ս «Бакинский рабочий» օրաթերթի 1959 թ. սեպտեմբերի 24-ի համարը



Ստեփանակերտը շատ ավելի առավելություններ ուներ նորակազմ ավտոնոմ մարզի կենտրոնը դառնալու, քան Շուշին: Նա ծովի մակերևույթի համեմատությամբ ավելի ցածր էր տեղադրված (նրա միջին բարձրությունը հավասար էր 837 մետրի, իսկ Շուշու բարձրությունը հասնում էր 1300-1500 մետրի): Ստեփանակերտը ավտոնոմ մարզում ավելի կենտրոնական դիրք էր գրավում, քան Շուշին, նրա հաղորդակցության ուղիներն ավելի հարմար էին, քան բարձրավանդակի զագաթին ընկած Շուշին: Ստեփանակերտը Եվլախ երկաթուղային կայարանին ավելի մոտ էր և հետագայում այդ քաղաքը երկաթուղի անցնելու համար ավելի հարմար: Բացի այս բոլորից, Շուշին, որ մի ժամանակ գտնվում էր հաղորդակցության գլխավոր ուղիների կենտրոնում և կապում էր Ղարաբաղը Զանգեզուրի, Ղափանի, Նախիջևանի և Իրանի հետ, ինչպես ասացինք, XIX դարի վերջերից կորցրել էր տնտեսաաշխարհագրական դիրքի այդ առավելությունները: Այս բոլորին պետք է ավելացնել նաև այն, որ Ստեփանակերտը ընդարձակվելու ավելի հարմարություններ ուներ, քան Շուշին, որի ռելիեֆը անհարթ էր, իսկ տարածությունը՝ սահմանափակ: Այս պատճառներով Ստեփանակերտը արդարացիորեն հաղթահարեց Շուշուն որպես Լեռնային Ղարաբաղի կենտրոն և բնականաբար արագորեն զարգացավ, դառնալով Ղարաբաղի ամենամեծ քաղաքը, խիստ ետ թողնելով Շուշուն: Այդ երևում է հետևյալ թվերից¹.

1854 թ.	Խանքենդում բնակվում էին	95 հոգի
1897 թ.	-	1494 -
1917 թ.	-	1524 -
1923 թ.	-	300 -
1924 թ.	Ստեփանակերտում բնակվում էին	2465 հոգի
1926 թ.	-	3189 - (մարդահամար)
1933 թ.	-	5463 - (մարդահամար)
1939 թ.	-	10458 - (մարդահամար)
1956 թ.	-	17430 - (մարդահամար)
1959 թ.	-	19600 - (մարդահամար)

Ստեփանակերտը, այսպիսով, դառնում է Լեռնային Ղարաբաղի արդյունաբերության, առևտրի, տրանսպորտի ու կուլտուրայի գլխավոր կենտրոնը: Շուշին, որը խիստ ետ է մնացել, Սովետական Ադրբեջանի կառավարությունը նախատեսում է դարձնել խոշոր կուրորտային կենտրոն: Այս վերջին ուղղությամբ Շուշին դեռևս շատ դանդաղ է առաջ ընթանում և հետագայում հազիվ թե կարողանա Ստեփանակերտի լուրջ մրցակիցը դառնալ:

¹ Թվերը վերցված են «Кавказский календарь»-ից (1854թ.), համառուսական մարդահամարի տվյալներից (1897 թ.), սովետական վիճակագրական աղյուսակներից և այլն

ԽԱՂԼԱՑԱՎԻ (ԴԻՎԱԶԱՐՈՒԹՅԱՆ) «ԲՈՒԺՈՒՄԸ» ՊԱՐՈՎ

Գորիսի, Միսիանի, Ղափանի, Մեղրիի և Լեռնային Ղարաբաղի հայերին հայտնի է *խաղաացավ* կոչվող մի հիվանդություն, որի բուժման միակ միջոցը եղել է պարը: Հիվանդությունը համարվել է «դիվահարություն»¹ և հայ իրականության մեջ ընդունվել ու գիտակցվել է որպես ոգեպաշտություն՝ անհիմաստական հասկացողությունների մնացորդներ, ավելի ուշ՝ վերապրուկներ:

Հայերի² և շատ ժողովուրդների մեջ հիվանդություններ հարուցող ոգիների գոյության տեսությունը³ հավատալիքներում կարևոր և հաստատուն տեղ է ունեցել: Անսահմանափակ թվով ոգիների ընդունումը, դրանցով բռնվածությունը՝ դիվահարությունը, ժողովրդական փիլիսոփայության մեջ պարզություն բերող մի տեսություն է, որը բացատրել է, մի կողմից, հիվանդությունների կատարած ավերածությունները, մյուս կողմից՝ բնության մեջ գոյություն ունեցող բազմաթիվ անհասկանալի երևույթներ: Մարդու մարմինը որպես ոգիների բնակատեղ հայտնագործմամբ⁴ ոգեպաշտությունը հասել է իր գագաթնակետին, նոր ճանապարհներ են բացվել նաև հիվանդություններ հարուցող ոգիների առջև: Մարդը սկսել է այնպես հավատալ իր իսկ ստեղծած ոգուն, որ նրան տվել է անուն, անհատականություն, արտաքին կերպարանք, և ենթարկվել նրա կամքին⁵: Նրանց անունից գուշակություններ է արել, ցանկություններ հայտնել և այդ ամենը վերածվել է թատերականացված գործողությունների: Մինչև հիմա էլ Ցեյլոնում *Յակու Նատանալա* կոչվող ծիսական արարողության ժամանակ երթի գլխավոր մասնակիցներից մեկը տասնութ հիվանդության դիմանկարը կրող դերակատարն է, որը պարելու և ներկայացնելու հատուկ պարտականություններ ունի⁶:

Հնագույն ժամանակներից բազմաթիվ տեղեկություններ կան հիվանդություններ հարուցող ոգիների, նրանցով բռնվածության, այսինքն՝ դիվահարության մասին: Առաջին տեղեկությունները պատկանում են ասորա-բաբելական նշանագրերին: Հումերոսը վկայում է, որ Հին Հունաստանում գոյություն են ունեցել դիվահարությունից առաջացած հիվանդություններ, որոնք ընդհանուր անունով կոչվել են *էպիլեպսիա*: Սոկրատեսը դների ժխտումը հենց դիտել է իբրև դիվահարություն, իսկ հռոմեացիք խելագարներին համարել են «ոգիներով լցվածներ»⁷:

Քրիստոնեության ընդունման վաղ շրջանում դիվահարության գաղափարն ավելի է խորացել⁸: Հոգևոր հնագույն գրքերում դիվահարների մասին բազմաթիվ տեղեկություններ կան, որոնց համաձայն նրանք պետք է արժանանային հատուկ վերաբերմունքի և եկեղեցական հսկողության: Հիվանդությունը համարվել է սուրբ կամ հրաշալի⁹: Քրիստոնեության տարածման հետ հոգեկան հիվանդությունները որպես դիվահարություն հիմնավորապես ընդունվել ու տարածվել են Եվրո-

¹ Մ. Աբեղյան, *Երկեր, Ա*, Երևան, 1966, էջ 29: Մ. Աբեղյանը հիվանդությունն անվանում է *հանդեպք, քաջքակալ, քաջքակոխ, որոնք, ըստ էության, համապատասխանում են դիվահարության բովանդակությանը*: Հայտնի են նաև այսահարություն, չարոց, ընկնավորություն տերմինները (Սևաստունի, *Բար ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 540*)

² Մ. Աբեղյան, *նշվ. աշխ.*, էջ 29

³ Э. Тейлор, *Первобытная культура, М., 1939, с. 352*

⁴ Л. Штернберг, *Первобытная религия, Л., 1936, с. 233-234*

⁵ Э. Тейлор, *նշվ. աշխ.*, էջ 353

⁶ А. Авдеев, *Происхождение театра, М.—Л., 1959, с. 146*. Հայերը ևս հիվանդություններ հարուցող ոգիներին պատկերացրել են որպես *երաժշտության, երգ ու պարի մեծ . սիրահարներ* (Մ. Աբեղյան, *նշվ. աշխ.*, էջ 155)

⁷ Э. Тейлор, *նշվ. աշխ.*, էջ 359

⁸ Նույն տեղում, էջ 359-360

⁹ Լ. Հովհաննիսյան, *Կրոնք և բժշկությունը, Երևան, 1954, էջ 22*



պայում¹: Հոգևոր գրքերում և Աստվածաշնչում հաճախ կարելի է հանդիպել չարքերով և քաջքերով բռնվածների բուժման նկարագրության և նկարների: Արևելքում այն կարծիքն էր տիրում, որ այդպիսի հիվանդներին պետք է սիրաշահել ու հարգել², որովհետև նրանց մեջ դևեր են նստած³: Հնդկաստանում⁴, Յեյլոնում, Մալայան կղզիներում⁵, Նոր Զելանդիայում⁶, Աֆրիկայում, Ավստրալիայում և Ամերիկայում⁷ վաղուց ընդունվել է դիվահարության տեսությունը: Դիվահարությունը բուժելու ամենաուժեղ միջոցներից մեկը ժողովուրդը համարել է պարը: Գաղափարն առաջացել է այն մտածողությունից, թե պարել ոգու կերպարանքով՝ նշանակում է նրան ենթարկել իր ազդեցությանը⁸:

Եվրոպայի պատմությանը հայտնի են դիվահարությունը պարով բուժելու փաստեր. առաջինը վերաբերում է 1237թ.: 1374-1410 թվականների Եվրոպայում մոլեզնոդ ժանտախտի ժամանակները հայտնի են որպես խելագար պարերի համաճարակի շրջան⁹: Ժանտախտից փրկված մարդկանց ներվային համակարգի խախտման պատճառով հիստերիայի և էպիլեպսիկ հիվանդությունների մեծ ալիք էր բռնկվել, որի վերացմանը ինչ-որ չափով կարող էին օգնել հուզական ուժեղ ցնցումները: Այդպիսի ցնցումներ առաջացնում էին խելահեղ պարերը: Այդ էր պատճառը, որ միջնադարում հիստերիկները, էպիլեպսիկները, դիվահարվածները մեծ ամբոխով, փրփուրը բերանների, աչքերն արնակալած, երաժիշտների ուղեկցությամբ, խելագար պարով անցնում էին քաղաքից քաղաք, թավալվում գետնին, պահանջում իրենց ծեծել շղթաներով, զարկվում էին պատերին մինչև ուժասպառ լինելը¹⁰: Նմանօրինակ մի համատարած դեպք գրանցվել է նաև Շվեյցարիայում 1861թ.: XIV դ. սկսած Եվրոպայում տարածված այս հիվանդությունը ստացել է «պարացվածություն» կամ «պարային խելագարություն» անունը: Իտալիայում այն կոչվել է «մորմացավ»¹¹: Մինչև օրս էլ շատ երկրներում հայտնի է պարով բուժումը (էկզորցիզմը)¹²:

Պարով, երաժշտությամբ և նման միջոցներով դիվահարության դարմանումը գտնվել է քրմերի, ավելի ուշ հոգևոր դասի հատուկ ներկայացուցիչների իշխանության տակ: Նրանք եղել են ներվային ուժեղ համակարգի և հոգեկան կառուցվածքի տեր մարդիկ, որոնք, թմրեցնող դեղերի օգնությամբ գրգռվելով, «բանակցությունների և փոխհարաբերությունների» մեջ են մտել հիվանդության դևերի հետ և խնդրելու, համոզելու, չար հմայության ու բանադրանքի օգնությամբ¹³ «դուրս են քաշել» նրանց մարդկանց միջից¹⁴: Ազգագրագետներից շատերի կարծիքով այդ անհատների հիմնական պարտականությունը հենց դևերին ու չարքերին մարդկանց միջից հանելն էր¹⁵, որը կատարվում էր բեմական արվեստի մեծ տաղանդով¹⁶:

¹ В. Баншиков, Т. Незорова, *Психиатрия*, М., 1969, с. 9

² Նույն տեղում

³ Э. Тейлор, *նշվ. աշխ.*, էջ 355-356

⁴ Նույն տեղում

⁵ Նույն տեղում, էջ 354

⁶ С. Токарев, *Религия в истории народов мира*, М., 1963, с. 32

⁷ Э. Тейлор, *նշվ. աշխ.*, էջ 355-356

⁸ А. Авдеев., *նշվ. աշխ.*, էջ 144

⁹ С. Худеков, *История танцев*, т. II, СПб., 1914, с. 58

¹⁰ Նույն տեղում, էջ 68

¹¹ Նույն տեղում

¹² А. Вельская, *Изгоняют злых духов* («Литературная газета», 18.VI, 1975)

¹³ *Այս միջոցը հայտնի է նաև հայերին (Ս. Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 121)*

¹⁴ В. Богораз-Тан, *Чукчи*, т. II, Л., с. 83, 121

¹⁵ С. Ратгер-Штернберг, *Музейные материалы по тлингитскому шаманству* («Сборник Музея антропологии и этнографии», Л., 1927, с. 85)

¹⁶ В. Харузнна, *Примитивные формы драматического искусства* («Этнография», 1928, №1, с. 36-41, 486)



Դեռևս V դ. դիվահարություն հիվանդության մասին վկայել է Եզնիկ Կողբացին: Միջնադարյան բժշկարաններում¹, եկեղեցական գրքերում ու համայնիներում² կան նկարներ ու վկայություններ դների, տարբեր անուններ կրող չար ու բարի ոգիների (շեղարք, ճիվաղք, շվոդք, այք, թպղա, քաջք, չարք և այլն), նրանց պատճառած վնասների ու կոնկրետ հիվանդությունների մասին: Քիչ չեն նրանցից զանազան միջոցներով ազատվելու, պաշտպանվելու և բուժվելու առաջարկները: XIII դ. Կիրակոս Գանձակեցին նկարագրում է դիվահարվածի պարով բուժումը ուն Դավթի կողմից՝ Ամբերդի մոտերքում³:

Հայ ազգագրության մեջ ծիսական պարերը պահպանակներ են դարձել հարսանեկան և այլ արարողությունների ժամանակ⁴, իսկ պարով ու երաժշտությամբ դիվահարությունը դարմանելու գաղափարը⁵ հայ ժողովրդական մտածողությամբ հնուց համարվել է բնական ու կենցաղային երևույթ: Ազգագրության⁶ և գեղարվեստական⁷ գրականության մեջ դիվահարությունը բնութագրվում է քրշկուտված, ցավաքյար, քրջքոտված, խաղլացավոտ, խրզլացավոտ տերմիններով: Ըստ Ստ. Մալխասյանի՝ խաղլացավ նշանակում է պարելու, խաղալու ցավ՝ մի հիվանդություն, որով բռնվածը ուզում է անընդհատ պարել⁸:

Մեր իրականության մեջ, հատկապես Ջանգեզուրում⁹ ու Ղարաբաղում, խաղլացավի արմատներն այնքան խորն են եղել, որ պահպանվել են մինչև XX դ. առաջին կեսերը¹⁰: Ըստ եղած տեղեկությունների՝ հիվանդությունը և նրա՝ պարով բուժելու մտածողությունը նորոգվել ու տարածվել է հատկապես քառասնական թվականներին, Հայրենական պատերազմից առաջ, պատերազմի տարիներին և ետպատերազմյան ժամանակաշրջանում: Հիմա էլ այն շրջաններում պարել շատ սիրողներին կատակով անվանում են «խաղլացավոտ»¹¹ կամ «քրշկուտված»¹²: Մարդկանց դիտողություն անելիս ասում են. «Ի՞նչ է, խաղլացավ ե՞ս ընկել»¹³: Խաղլացավը համարվել է անպատվաբեր ու վիրավորական, որի պատճառով էլ հիվանդությունը գաղտնի է պահվել բարեկամներից ու ծանոթներից:

Խաղլացավի հարուցիչը համարվել է մի անանուն որդ, որը մարդու «մարմինն ընկնելով» անվերջ շարժվել է, մեկ մտել ծնկան մեջ, մեկ էլ բարձրացել դեպի վեր՝ «սրտի տակ»¹⁴: Հիվանդը գանգատվել է մարմնի ցավերից, ոսկորների կոտրատվելուց¹⁵: Խաղլացավոտը ծափ տալու, երգելու (բայաթի կանչելու), պարելու, լաց լինելու և ողբալու ցանկություն է ունեցել¹⁶: Հիվան-

¹ Ա. Կծոյան, *Բժշկագիտությունը Հայաստանում XI-XIV դարերում*, Երևան, 1968, էջ 396: Մատենադարանի 18382 ձեռագրի 69ր էջում նկարագրվում է ընկնավորի, ուխտավորի հիվանդության ընթացքը

² Մատենադարանում պահվող ¹24, 36, 42, 58, 67, 79, 86, 116, 127, 262 և այլ համայնիներում

³ Կ. Գանձակեցի, *Պատմություն հայոց, աշխատասիրությանը Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի*, Երևան, 1961, էջ 322, 324

⁴ С. Лисициан, *Старинные пляски и театральны е представления армянского Народа*, Т. I, Ереван, 1958, с. 130, Ժ. Կ. Խաչատրյան, *Ջավախքի հայ ժողովրդական պարերը* («Նյութեր հայ ազգագրության և բանահյուսության», Հ. 7, Երևան, 1975, էջ 47, 73), «Традиционные свадебные пляски армян» («Советская этнография». 1975, № 2, с. 87), Э. Х. Петросян, Ж. К. Хачатрян, *Собрание произведений армянского танцевально-го фольклора* («Советская этнография», 1965, № 1, с. 155)

⁵ Գ. Գասպարյան, *Ժողովրդական բժշկությունը հայ բանահյուսության և դիցաբանության մեջ* (ՀՄՍՀ ԳԱ «Լրաբեր, 1978, № 1, էջ 86»)

⁶ Տ. Նավասարդյան, *Հայ ժողովրդական հեքիաթներ*, գիրք 7, Թիֆլիս, 1891, էջ 27

⁷ Ա. Բակունց, *Երկեր*, հ. I, Երևան, 1976, էջ 107-112

⁸ Ստ. Մալխասյան, *Հայերեն բացատրական բառարան*, Երևան, 1944, հ. II, էջ 232, խաղլացավ

⁹ Ստ. Լիսիցյան, *Ջանգեզուրի հայերը*, Երևան, 1969, էջ 289

¹⁰ Նույն տեղում, էջ 288-289

¹¹ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվ, պարարվեստի ֆոնդ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ ՊՖ): Տե՛ս՝ *Սիսիանի շրջանի Ախլարյան գյուղի բնակիչ՝ Թամո Գալուստի Խաչատրյանի վկայությունը*

¹² ՀԱԻԲԱ ՊՖ, Մարդակերտի շրջան, Հաթերք գյուղից Մաշի Պետրոսյանի վկայությունը

¹³ Նույն տեղում, տե՛ս՝ *Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի բնակիչ՝ Գուրգեն Օրոյանի վկայությունը*

¹⁴ Ա. Բակունց, *Երկեր*, հ. I, էջ 85, Գ. Գասպարյան, *նշվ. հոդվ.*, էջ 86

¹⁵ ՀԱԻԲԱ ՊՖ, Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղի բնակիչ Մանուշարյան Արևհատի և Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի բնակիչ՝ Գ. Օրոյանի վկայությունները

¹⁶ Ստ. Լիսիցյան, *նշվ. աշխ.*, էջ 289



դությունն առաջացել է վախից, գիշերով ճանապարհ կամ մթնով ջրի գնալուց¹, մրսելուց, վշտից, հոգեկան ծանր ապրումներից ու ցնցումներից²: Ումանք խաղլացավը հեշտությամբ տարբերել են այլ հիվանդություններից, իսկ եթե դժվարացել են, ապա ստուգել են ավելի բացահայտ միջոցներով: Նախ հետևել են՝ եթե երաժշտություն լսելիս հիվանդն ինքնակամ պարել է, ապա նրան համարել են խաղլացավոտ: Բայց պատահել է, որ հիվանդը դարձել է մելանխոլիկ, ինքն իր հետ խոսել է, մարդկանցից խուսափել, էպիլեպսիայի նոպաներ ունեցել: Այդպիսի դեպքերում որսացել են մի կաշաղակ և տաք վիճակում կապել հիվանդի թևին, եթե թևը սևացել է, ապա հիվանդությունը հաստատվել է³: Խաղլացավը հիմնականում համարվել է կանանց հիվանդություն, բայց եղել են նաև տղամարդկանց ու երեխաների հիվանդանալու դեպքեր: Դիվահարվածին բուժելու՝ պարեցնելու ընթացքում, տան դռան առաջ, շենքի լայնությամբ մետաղյա օղակավոր հաստ շղթա են գցել, որպեսզի պատահաբար ներս մտնողը «չբռնվի» հեռացող չարքերով կամ դրսից ներս եկողի հիվանդությունները չփոխանցվեն մյուսներին⁴: Շղթան հիվանդության և չար ոգիներին բռնելու ժողովրդական մտածելակերպի արտահայտություն է, որը լայնորեն գործածվել է կենցաղում, ապա և ցանցի, շրջանագծերի, օղակների ու վանդակների ձևով տեղ գտել համայնիներում:

Դիվահարության բուժումը կատարել են աշնանը, ասելով, թե «ցուրտն ընկնելիս որդն սկսում է շարժվել»: Տարեց կանայք, հիվանդի հարազատները հավաքվել են ու սկսել պատրաստությունները, մորթել են կով, եզ կամ մի քանի ոչխար, հաց թխել: Ապա պատգամավոր են ուղարկել երաժիշտների, հատկապես գուռնաչիների⁵ մոտ՝ խաղլացավի բուժման համար նվազելու առաջարկով: Բոլորին չէ, որ հրավիրել են, և բոլորը չէ, որ համաձայնվել են գալ: Եղել են հատուկ համբավավոր գուռնաչիներ, որոնց նվագը միայն կարող էր բուժիչ լինել: Այդպիսի գուռնաչիները հազվադեպ են հրաժարվել, որովհետև դա համարվել է պատվավոր ու բարի գործ: Սովորաբար հրավիրել են երաժիշտների առնվազն երկու խումբ, որպեսզի հոգնելիս փոխարինեն իրար: Խաղլացավի բուժման համար նվազելը վճարովի չի եղել, բայց բարձր է գնահատվել (թանկարժեք նվերներ են տվել): Հրավիրել են նաև լալկան՝ ողբասաց կանանց, երկու կամ երեք լավ պարող, ուժեղ տղամարդ, հարևաններին ու մոտ ազգականներին: Կահույքից ազատված տան դռներն ու օղանցքներն ամուր փակել են և գուռնաչին սկսել է դանդաղ ու տխուր պարեղանակներ նվագել: Տան մի անկյունում անկողնու մեջ պառկած հիվանդն անհանգստացել է: Լալկան կանայք սկսել են իրենց ողբը: Պարող տղամարդիկ օգնել են հիվանդին վեր կենալու և պարելու: Ըստ ականատես ասացողների, հիվանդն աստիճանաբար տրամադրվելով պարի՝ դանդաղ տեմպն արագացրել է, ռիթմը փոխել և անընդմեջ պարել: Խաղլացավի բուժման հատուկ պարեր ու պարեղանակներ չեն եղել. պարը կազմվել է սովորական պարաքայլերի էլեմենտներից: Պարելու ժամանակ հիվանդին թույլ չեն տվել ո՛չ թռչկոտել, ո՛չ էլ նստել⁶ (չաթմա զարկել): Եղել են պարեղանակներ, որոնց ռիթ-

¹ А. Одабашян, *Народны е верования армян* («Кавказский этнографический сборник»), Т. IV, 1976, с. 117). Ժողովրդական հավատալիքների համաձայն ոգիներն ապրում են ջրերի հատակում, փերին, տան անկյուններում, դռների ետևում և գուռերում

² ՀԱԻԲՄ ՊՖ, Մեղրիի շրջան, Լեհվազ գյուղի Հովսեփյան Պետրոսի վկայությամբ մարդիկ զգուշանում են, որ «կարողը քար չգցեն», թե չէ խաղլացավով կհիվանդանան

³ Նույն տեղում, Գորիսի շրջանի Վերիշեն գյուղից Գուրգեն Օրդյանի և Մեղրիի շրջանի Ազարակ գյուղից Աղավելոց Համբարձումի պատմածները

⁴ ՀԱԻԲՄ ՊՖ, Մեղրիի շրջանի Լեհվազ գյուղից Գոհար Ասլանի Գաբրիելյանի վկայությունը: Մ. Արեգյան, նշվ. աշխ., էջ 37, 154, Մնատունի, նշվ. աշխ., էջ 540: Մետաղն ու շղթան պահպանակ են համարվել շատ ժողովուրդների մոտ, իսկ դիվահարվածին ճիշտ նույն ձևով բուժելը ընդունված է եղել նաև ույգուրների, բաշկիրների ու չերքեզների մոտ, И. И. Лепехин, *Продолжение записок путешествия по разным провинциям Российского государства в 1770 г.*, СПб., 1802, с. 73-76; Л. И. Нагаева, *Башкирские народные танцы* (автореферат кандидатской диссертации, М., 1977, էջ 78), Մուսա լեռան ժողովրդական հեքիաթներ, Բելրոյթ, 1973, էջ 682-683

⁵ Ստ. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 289

⁶ ՀԱԻԲՄ ՊՖ, Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղից Մեղրակ Սահակյանի (գուռնաչի բախշու հետ զարկող նաղարաչի) նյութերը



մը փոխելով, նվագել են խաղաղացավի բուժման ժամանակ: Խաղաղացավի պարեղանակները տարբերվել են հարվածային գործիքների վրա զարկվող յուրահատուկ ռիթմով:

Խաղաղացավի բուժման ժամանակ թե՛ նվագողները, թե՛ պարողները, թե՛ ողբացող կանայք ժամանակ առ ժամանակ հանգստացել են, իսկ հիվանդին թույլ չեն տվել հանգստանալու, որովհետև ժողովրդի կարծիքով, հոգնեցնելով հիվանդին՝ հոգնեցրել են և հիվանդության հարուցիչին, որը բնակվել էր մարդու մեջ՝ որպես կենդանի էակ¹: Միայն երբեմն (օրը երեք անգամից ոչ ավելի) կարճ ժամանակով պառկեցրել են և թեթև կերակրել: Եթե հիվանդն ուժասպառ է եղել, ապա նրան պառկեցրել են կարպետի մեջ² և օրորել երաժշտության ռիթմով: Եթե դա էլ չի օգնել, կիրառել են ավելի «ուժեղ» միջոցներ: Նախ ստիպել են ավելի արագ և խելահեղ պարել, հետո՝ ուժասպառ լինելիս, գցել են գետնին, խփել պատերին, երակներից, ջլերից, փափուկ մսերից քաշել, մատները, ոսկորները կոտրատել: Զուռնաչիները գուռնան դրել են հիվանդի ականջներին, իսկ դիուր գլխին և ամբողջ ուժով զարկել են ու փչել: Միաժամանակ լալկան կանայք բարձրաձայն ողբացել են, գոռացել, երեսները չանգոռոտել³: Բոլորը համոզված են եղել, որ ծեծում, չարչարում ու տանջում են ոչ թե հիվանդին, այլ նրա մեջ բուն դրած որդին՝ չար ոգիներին կամ դևերին: Հնում, այս ամենի հետ միասին, օդանցքները փակած բնակարանում այթար են ծխեցրել՝ վրան դառնահոտ, կծու յուղեր լցնելով: Նպատակն այն էր, որ հիվանդը շատ արցունք թափեր, փռշտար ու հազար, որպեսզի հիվանդությունը «թափվեր», դուրս գար: Առողջանալու նախանշան համարվել է այն, որ հիվանդը սկսել է գանգատվել ձեռքերի, ոտքերի, գլխի ցավից ու մրսելուց: Բուժման արարողությունը տևել է երկուսից յոթ օր ու գիշեր. եթե հիվանդը չի առողջացել, ապա նույնը կրկնել են տարին մեկ անգամ:

Ամբողջ գործողության ընթացքում կարևոր է համարվել գուռնաչու, հիվանդին պարել օգնող տղամարդկանց ու ողբասաց կանանց դերը, որոնք հավանաբար, հին քրմերի վերափոխված ժառանգներն են, որոնց ֆունկցիաները սահմանափակվել են արարողությունը ղեկավարելու, գործողությանը տոն տալու և օգնելու պարտականությունների մեջ:

Բժշկությանը հայտնի է, որ հոգեկան որոշ խանգարումներ ուժեղ ցնցումների արդյունք են, և երբեմն դրանք կարգավորվում են նոր, ավելի ուժեղ ցնցման միջոցով: Տվյալ դեպքում երկար ու համառորեն պարելը կարող էր նոր ավելի ուժեղ ցնցում առաջացնել և վերականգնել նյարդային համակարգում տեղի ունեցած խանգարումները: Այս մեթոդը նյարդային և հոգեկան հիվանդությունների բուժման շատ հին ձև է և իր մեջ պարունակում է մյուզոթերապիային անհրաժեշտ մի գործոն, այն է՝ հիվանդին պասիվ վիճակից դնել խիստ ակտիվ ու հուզական հոգեվիճակի մեջ, ապա տրամադրության բարձրացման ու ներշնչման օգնությամբ վերականգնել հավասարակշռությունը⁴:

Եղած բազմաթիվ տեղեկություններից կարելի է ենթադրել, որ խաղաղացավ հիվանդության մի տեսակ են համարվել նաև ռևմատիկ, ոսկրային հիվանդությունները⁵: Պարից մարդու հողերը տաքացել են, դրան գումարվել է ներքին հավատքը և հիվանդին թվացել է, թե տեղի է ունենում ցավերի մեղմացում:

¹ Ստ. Լիսիցյան, *նշվ. աշխ.*, էջ 289

² ՀԱԻԲԱ, Ս. *Վարդանյանի նյութեր*

³ Չար ուժերին հեռացրել են սպառնալիքների, ճիչերի և աղմուկի միջոցով: Բուժման մեթոդ է համարվել նաև մասածր, կտրումներն ու արյան առումը (Լ. Ա. Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, էջ 13): Ղարաբաղում կամթում են դալաղը՝ թիկունքի երկու շիլերը: Այս մասին վկայում է հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ լաբորանտ Շաննա Բոգդանի *Խուրշուռյանը*

⁴ Գ. Գասպարյան, *նշվ. հոդվ.*, էջ 86

⁵ Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի բնակիչ Գուրգեն Անդրեյի Օրդյանի վկայությամբ հիվանդությունը նման էր ռևմատիզմի



Հայ իրականության մեջ ներկայումս չարքերով բռնվածությունը դիտվում է որպես սահմանափակ մտածողություն, որն աստիճանաբար նահանջել է և բժշկության զարգացման ու կիրառության շնորհիվ իր տեղը զիջել գիտությանը: Թեև դեռևս բուժումը հիշողության ձևով պատմվում է, ու նույնիսկ երբեմն առաջարկվում է մեթոդի կիրառությունը, սակայն շրջապատի կողմից այն չի ընդունվում:

ԱՐՑԱԽԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ ԵՎ ՆՐԱ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Ժողովրդական տարազը ավանդական նյութական մշակույթի կարևորագույն տարրերից է, որը լավագույնս կարող է կատարել էթնիկական ցուցիչի դեր: Հայկական ավանդական տարազն իր բոլոր տարազախմբերով հանդերձ, ինչպես մեր բազմաբարբառ լեզուն, անցել է զարգացման երկարատև ուղի՝ սերտորեն կապված լինելով մեր ժողովրդի պատմության ու մշակույթի, ազգային ինքնատիպ խառնվածքի, գեղագիտական նախասիրությունների ու ընկալումների հետ:

Հայկական տարազի համալիրում առանձնացվում են մի շարք յուրօրինակ խմբեր, որոնք տեղական առանձնահատկություններով ու տարբերակներով հանդերձ, բնութագրվում են իրենց էթնիկական, կենցաղամշակութային պատմականորեն ձևավորված ընդհանրությունը վկայող ընդհանուր-համահայկական գծերով, հատկանիշներով:

Արցախի հայերի տարազը նույնպես կազմում է հայկական բազմախումբ տարազի անբաժանելի մասը, որն անքակտելի օրգանական կապերով շաղկապված լինելով հայկական մի քանի տարազային համալիրներին, մեզ է ներկայանում համահայկական բնութագրի ունեցող բազմաթիվ ընդհանրական գծերով, ինչպես տարազի կառուցվածքի, առանձին տարրերի ձևվածքի ընդհանրության, այնպես էլ դրանց պատրաստման ու կրելու եղանակների դեպքում:

Նշենք, որ Արցախի տարազի հարուստ հավաքածուներ կան մեր հանրապետության (Հայաստանի պատմության թանգարանի «Ազգագրության» և Հայաստանի ազգագրության թանգարանի «Գեղարվեստական գործվածք» զետեղարաններում) և Միության այլ (Լենինգրադում գտնվող ՄՍՀՄ ժողովուրդների ազգագրության թանգարանի «Կովկասի» և Ադրբեջանի պատմության թանգարանի «Ազգագրության» պահոցներում) թանգարաններում: Հենց սկզբից նշենք նաև, որ Արցախի հայերի տարազի ազգագրական ուսումնասիրությունը հեռու է կատարյալ լինելուց, դեռ չի կատարվել դրա պատմահամեմատական ուսումնասիրությունը, դիտարկված չեն տոնածիսական (օրացուցային տոների ժամանակ գործածված, հարսանեկան, թաղման, սգո, ծննդյան) համալիրները և դրանց սեռատարիքային, սոցիալական տարբերակները: Դրանով հանդերձ, արխիվային, ազգագրական և գրական այլ աղբյուրներ հնարավորություն են տալիս ընդհանուր գծերով վերականգնել արցախահայության ժողովրդական տարազի պատկերը՝ որոշելու դրա տեղը համահայկական տարազային համալիրում, բնութագրելով նրա զարգացման հիմնական միտումները: Մասնավորապես, Արցախի պատմաազգագրական շրջանի տարազախմբի, ինչպես և մշակութային ավանդական այլ երևույթների վերաբերյալ անցյալ դարի վերջերին ազգագրական նյութեր է գրառել ազգագրագետ Երվանդ Լալայանը, որոնք տպագրվել են «Ազգագրական հանդեսի» (1895-1916թթ.) էջերում «Վարանդա» և «Գանձակի գավառ» խորագրերով՝ «Նյութեր ապագա ուսումնասիրության համար» ընդհանուր վերտառությամբ¹: Արցախի տարազին անդրադարձել է նաև վաստակաշատ ազգագրագետ Ստեփան Լիսիցյանը իր «Լեռնային Ղարաբաղի հայերը» ազգագրական ակնարկում²: Արցախի տարազի վերաբերյալ մի շարք ուշագրավ լուսանկարներ կան «Տարազ» (1890-1919թթ.) հանդեսի էջերում³:

¹ Լալայան Ե., *Երկեր*, հ 2, Եր., 1988

² Լիսիցյան Ստ., *Լեռնային Ղարաբաղի հայերը*. ՀԱԲ, հ. 12, Եր., 1981

³ «Տարազ», *Թիֆլիս*, 1891, էջ 320 1. Շուշեցի այան և մեծ հարսը ճախարակ մանելիս, էջ 321. 2. Շուշեցի կինը փողոցում. 3. Շուշեցի գեղջկուհի, 1892, էջ 457. 4. Շուշեցի կին, 1990, էջ 13. 5. Շուշեցու ընտանիքը Բաքու գաղթելու նախօրյակին, 1901, էջ 7. 6. Խաչենցի տղամարդ, 1904, էջ 80. 7. Կանանց ճաշկերույթը Ղարաբաղում, 1905, էջ 124. 8. Շուշեցի այան թոռան հետ



Համաձայն առկա ազգագրական նյութերի, անցյալ դարի վերջերին Արցախում կենցաղավարում էր տարազի երկու համալիր՝ «հալավարի» և «քաղքավարի» տարբերակները: Ն. Ավագյանն իրավամբ առաջինը դիտում է «Արցախին հատուկ ավանդական տարազ»¹, երկրորդը՝ «քաղքավարին», որը նաև վրացական էր կոչվում², հիշեցնում էր Երևանի և Թիֆլիսի հայ կանանց (Այրարատյան տարագախումբ) տարազը: Ուշագրավ է, որ այսպես կոչվող «քաղքավարի» համալիրը, լինելով փոխառնված, ժամանակի քննությունը չբռնելով, արդեն ներկա դարի սկզբներին դուրս է գալիս կենցաղավարությունից, մինչդեռ բնիկ ավանդականն իր կենսունակությունը պահպանել է ցարդ, և պատմական Արցախի ու Ջանգեզուրի գյուղերում մեր օրերում էլ կարելի է հանդիպել ծեր հայուհիների, որոնք մի առանձին արժանապատիվ հպարտությամբ շարունակում են կրել իրենց նախնյաց հնամենի հագուստ-կապուստը: Մեր համոզմամբ, դա ոչ միայն և ոչ այնքան լեռնաշխարհի մեկուսացածության արդյունք է, այլև լեռնուհիներին հատուկ ազգային ոգու անխաթարության և բնիկ հայկականին, մայրենիին և զուտ ազգայինին հավատարիմ մնալու անմար տենչի արգասիք:

Արցախի տարազն ունի տարածման լայն արեալ. մի կողմից այդ համալիրը բացահայտ նմանություն է ցուցաբերում, գրեթե ամբողջությամբ համընկնում է Ջանգեզուրի պատմա-ազգագրական շրջանի (Գորիս, Միսիան, Ղափան) ավանդական տարազին (այդ իսկ պատճառով տարազախումբը կոչվում է Սյունիք-արցախյան), բացի այդ, ակնհայտ զուգահեռներ կան Գողթնի և Մեղրիի տարազի հետ, մյուս կողմից՝ արցախցիների՝ Հայաստանի հյուսիս-արևելք, Տավուշի պատմաազգագրական շրջան (ներկայիս Նոյեմբերյանի, Իջևանի, Կրասնոսելսկի շրջաններ) կատարած տեղաշարժերի հետևանքով արցախյան տարազի տարբերակը տարածվում է այդտեղ և լուրջ ազդեցություն է գործում տեղական տարազի վրա³:

Արցախի տարազի կանանց համալիրն առանձնանում է ձևվածքի կատարելությամբ և գունային ներդաշն լուծումներով: Հաճախ է հագուստում դիտվում կարմիր և կանաչ, կարմիր և կապույտ կամ մանիշակագույն երանգների զուգորդում: Ըստ Գ. Օսիպովի, Շուշիի գավառի Քարինտակ (Դաշ-ալտի) գյուղում հայուհիների հագուստն ամբողջովին կարմիր գույն ուներ⁴: Գույների նմանօրինակ ընտրությունը պատահական չէ. նախ՝ կարմիր, կապույտի, կանաչի ներդաշն համադրումները բնորոշ են մեր ավանդական զարդարվեստին և գունարվեստին. դա են հավաստում մեր թանգարաններում պահպանվող և ցուցադրվող հայկական գեղարվեստական գործվածքի՝ գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության հրաշալի նմուշները: Բացի այդ, հայտնի է, որ վաղ անցյալում յուրաքանչյուր գույն ունեցել է որոշակի իմաստ ու ծիսական խորհուրդ: Կարմիր գույնին վերագրվել է մաքրագործող, չարխափան մոզական գորություն⁵, կանաչ-կարմիրը դիտվել է որպես կյանքի, կենսունակության, արգասավորության խորհրդանիշ (հայոց մեջ, ինչպես հայտնի է, որդուն ամուսնացնելիս հաճախ ասել են. «Կանաչ-կարմիր պիտի կապենք»: Ժողովրդական երգերում ևս հաճախ գովերգվում են այդ գույները. «Կանաչ ու կարմիր հագնիս, Ջինչ նոան հատրն նմանիս...»⁶:

¹ Ավագյան Ն., *Հայկական ժողովրդական տարազը 19-րդ դ.-20-րդ դ. սկզբին*, Եր., 1983, էջ 43

Աვაքյան Ն., *Народная одежда армян Арцаха в 19-20 вв., Хозяйство и материальная культура народов Кавказа в 19-20 вв.*, М., 1971, с. 209-222

² Мелик-Шахназаров Е., *Селение Арцваник Зангезурского уезда Елизаветпольской губернии*. СМОМПК, Тифлис, 1898, вып. 25, с. 19

³ Պոլոսյան Ս., *Դաշուալի ազգագրական նյութեր: ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի արխիվ*, Եր., 1981-1983

⁴ Осипов Г., *Селение Даш-алты Шушинского уезда Елизаветпольской губернии*. СМОМПК, Тифлис

⁵ Гаген-Торн Н., *Женская одежда народов Поволжья*, Чебоксары. 1960. С. 204-206

⁶ Աբեղյան Ս., *Չուսանական ժողովրդական տարազը*, Եր., 1940, էջ 106



Կարմիր գույնի կտավե կամ սատինե շապիկի և կարմրագույն վարտիքի վրայից կանայք հագնում էին պճղնավոր պարեգոտ՝¹ «իրեքփշկանի», «խըլըղ», «ղաբան» (վերջինս միջնադարյան հայրեններում հաճախ հանդիպող կապան է²) տարանուններով, որոնցից առավել բնութագրականը «իրեքփշկանի» (երեք փեշկանի) տարբերակն է, քանզի զգեստն իսկապես ունի երեք փեշ՝ կողքերից արված կտրվածքների շնորհիվ: Պարեգոտի թևերը գեղազարդվում էին արծաթյա զարդակախիկներով: Շուշիում գործածվում էր կրկնակի զարդաթևերով զգեստ, որը թևերի ձևվածքով հիշեցնում էր Գողթնի կանանց արխալուղը, ինչպես և համակովկասյան տարածում ունեցող տղամարդկանց վերնագգեստ-չուխան:

Լեոնային Ղարաբաղում բնակվող աղբբեջանցիների տարազի մասնագետը³, խոսելով կնոջ վերնագգեստ-արխալուղի մասին, մեջբերելով Ն.Գրիգորովի տեղեկությունն այն մասին, որ Սարով գյուղի հայուհիները, թողնելով իրենց ազգային հագուստը, սկսել են հագնվել իրենց հարևան թաթարուհիների նման, անմիջապես շարունակում է իր միտքն ու ասելիքը հետևյալ կերպ. «Կարճ վերնագգեստ հագնում էին նաև Հաղրութի և Արծվանիկի հայուհիները»: Հեղինակը նկատի ունի աղբբեջանական արխալուղը և կարծես իր տեսակետը հիմնավորելու համար հղում է երկու այլ հեղինակների աշխատությունները: Ծանոթանալով և մանրամասն վերլուծելով այդ երկու հեղինակների՝ Ի. Դավիթբեկովի⁴ և Ե. Մելիք-Շահնագարովի⁵ հայկական տարազին վերաբերող հատվածները, մենք մեզ թույլ ենք տալիս չբաժանել Ե. Բաբայանի այն տեսակետը, որ Հաղրութում և Արծվանիկում հագնում էին աղբբեջանական տարբերակի արխալուղ, հետևյալ հիմնավորումներով: Առաջին հեղինակը՝ Ի. Դավիթբեկովը, հղված աշխատության մեջ բացարձակապես ոչինչ չի ասում կնոջ կարճ վերնագգեստ-արխալուղի մասին, այլ խոսելով կնոջ հանդերձների մասին, նշում է միայն Սյունիք-արցախյան տարբերակի բաղկացուցիչ մասերը կազմող հետևյալ տարրերը. 1. շապիկ, 2. վարտիք, 3. արխալուղ, 4. թավշյա վերնագգեստ-մուշտակ, 5. մետաքսյա կամ բամբակյա գոտի (կոտի)⁶: Ինչ վերաբերում է երկրորդ հեղինակին՝ Մելիք-Շահնագարովին, ապա վերջինս տալով Արծվանիկի հագուստի ընդհանուր բնութագիրը, նշում է, որ «տեղաբնիկների հագուստը գրեթե չի տարբերվում Զանգեզուրի գավառի մնացած գյուղերում գործածվող հագուստից»⁷ և շարունակելով կնոջ հագուստի մասին գրում է, որ «երիտասարդները հագնում էին կարճ, իսկ տարեցները՝ մի քիչ երկար արխալուղ»: Այստեղ փաստորեն ոչինչ չի ասված աղբբեջանական կարճ արխալուղի մասին, որն էապես տարբերվում է հայկականից: Խոսքը սուսկ զգեստի տարիքային տարբերությունների մասին է՝ աղջիկների զգեստը ավելի կարճ էր մեծերի արխալուղից, մի հանգամանք, որ շատ բնական է և կապված նրանց ընտանեկան, սոցիալական, տարիքային տարբերություններից բխող առանձնահատկությունների հետ: Անդրադառնալով Ն. Գրիգորովի վերոհիշյալ տեղեկությանը, նշենք, որ հեղինակը (Ն. Գրիգորովը) մասնավորապես գրում է. «Թաթարների հետ հարևանությունը վշտալի ազդեցություն ունի սարովցիների (տեղացի հայերի- Մ. Պողոսյան) վրա»: Այնուհետև. «Թաթարների ազդեցությունը դրսևորվում է և թաթարական կնոջ հագուստի նմանակման մեջ»⁸: Իսկ հետո, ավարտելով իր միտքը, հեղինակը գրում է. «Սարովում կանայք առանձնանում են գեղեցկությամբ և կառուցվածքի

¹ Լալայան Ե., *նշվ. աշխ.*, էջ 336: Լիսիցյան Ստ., *նշվ. աշխ.*, էջ 34-36, *նույնի Ջանգեզուրի հայերը*, էջ 115-125

² Աբեղյան Մ., *նույն տեղում*

³ Բաբայան Ե., *О женской одежде Карабаха (конец 19- начало 20 веков)*, «Ученые записи», 1966, с. 88

⁴ Դավիթբեկով Ի., *Селение Гадрут - Джебрайльского уезда Елизаветпольской губернии*. СМОМПК, вып. 6, Тифлис, 1898, с. 184-185

⁵ Մելիք-Շահնագարով Ե., *նույն տեղում*, էջ 18-19

⁶ Դավիթբեկով Ի., *նույն տեղում*, էջ 185

⁷ Մելիք-Շահնագարով Ե., *նույն տեղում*, էջ 18

⁸ Григоров Н., *Село Саров Джеванширского уезда Елизаветпольской губернии*. СМОМПК, вып. VI, Тифлис, 1888, с. 129-130



նրբագեղությամբ, սակայն թաթարական հագուստը, որը փոքր-ինչ ձևափոխվելով, հարմարեցվելով հայկական լադին, նրանց տալիս է անբնական տեսք... Ներկայումս երիտասարդ աղջիկները իրենց հագուստով սկսում են նմանակել քաղաքացի հայուհիներին»¹: Այստեղից պարզ է մի բան, որ նույնիսկ ժամանակավոր փոփոխության ժամանակ էլ ժողովուրդը կուրորեն չի ընդօրինակել օտարինը և անպայման այն հարմարեցրել է ազգային համակարգին:

Դառնալով Սյունիք-արցախյան տարազային համալիրի բնութագրմանը, նշենք, որ վերնազգեստի վրայից երիտասարդ կանայք կապում էին արծաթե, տարեցները՝ հիմնականում կտորե գոտիներ: Ձմռանը հագուստը համալրվում էր մուգ կարմիր թավշյա կամ բրդյա կտորից տաք վերնազգեստ մուշտակ-քուլքով, որը կրկնում էր պարեգոտի ձևվածքի ավանդական տարբերակները, այն տարբերությամբ, որ նախորդից բավականաչափ կարճ էր թե՛ փեշերի և թե՛ թևերի հատվածում: Այն եզրագարդվում էր կանաչ գույնի մետաքսե երիզով և աղվեսի մորթուց եզրաշերտով:

Կանանց գլխի հարդարանքը բարդ էր ու բազմատարր, որը տարբերվում էր աղջիկների հարդարանքից և արտացոլում էր կնոջ կյանքում կատարված սոցիալական, ընտանեկան փոփոխությունները: Գլխի հարդարանքը կոշտ հիմնամաս ուներ և հիշեցնում էր Արարատյան ու Տավուշյան տարբերակները: Գործածվում էր դրամաշարաններով ճակտնոցը, որն ի տարբերություն Բարձր Հայքի կնոջ գլխի հարդարանքի դրամաշարանի, միաշարք էր: Վասպուրականի, Բարձր Հայքի կանանց գլխի հարդարանքի բաղկացուցիչ տարրը հանդիսացող երեսնոց-մարգարտաշար քունքակախիկների դերն այստեղ կատարում էին արծաթե գնդաձև կախիկների շարանները, որոնք ամրացվում էին եռանկյունաձև ականջակալի վրա: Հայաստանի արևմտյան գավառների ճոխ ասեղնագործությունների փոխարեն Սյունիք-արցախյան տիպի գլխի հարդարանքում գործածվում էին զուգաթեք, հատիկաշար տեխնիկայով արված արծաթե կեռաձև գլխագարդերը:

Այս պատմաազգագրական շրջանում, ինչպես և Այրարատում ու Վասպուրականում, առկա էր բերանը ծածկելու սովորույթը: Այս պարագան դեռ առանձին խոր ուսումնասիրության կարոտ է, այնուհանդերձ, մեր կարծիքով, այն օտարածին ու օտարամուտ երևույթ է, խորթ ու անհարիր մեր կենցաղամշակութային համալիրին: Գուցե թե դա նաև կապված է չխոսկանության սովորույթի հետ:

Ուշագրավ է Ադրբեջանի տարազագետների այն վկայությունը, որ Ղարաբաղում բնակվող ադրբեջանցի կնոջ գլխի հարդարանքում, ի տարբերություն ադրբեջանական շրջանների, բացակայում էր չադրան՝ փոխարինվելով «դեմքի ներքևի մասը ծածկող բերանկապի-յաշմաղով»²: Մեր կարծիքով, այստեղ ակնհայտ է միջերևիկական փոխառության և հայերի էթնոմշակութային ազդեցության դրսևորման օրինակը (տվյալ դեպքում տարազի ասպարեգում), քանզի, ինչպես հայտնի է, մուսուլմանական օրենքներն արգելում էին կնոջն առանց չադրայի դուրս գալ:

Սյունիք-արցախյան տարազախմբում գոգնոցը տոնածիսական համալիրից բացակայում էր, սակայն կանայք այն կրում էին աշխատանքի պահին: Այդ մասին Մ. Թաղիադյանը մասնավորապես վկայում է. «Կանայք գնոցա ունին զգոգնոց յառաջոյ իւրեանց ի պահպանութիւն զգեստոցն ի կեղտոյ: Պառավունք զգենեն և զմխաշապիկ ի վերայ ամենայն»³:

Արցախի տղամարդկանց հագուստը արևելահայ մյուս տարազաձևերի հետ մեկտեղ ուներ համահայկական, ավելին՝ ընդհանուր կովկասյան զծեր, բայց համակովկասյան ընդհանրու-

¹ Նույն տեղում, էջ 130

² Բабаян Е., *Изменение в народной одежде азербайджанцев Карабаха в конце 19- начале 20 вв.* «Ученые записки», Баку, 1967, с. 86

³ Թաղիադյան Մ., *Ճանապարհորդություն ի Հայս*, Եր., 1979, էջ 157-158



թյուններին զուգահեռ, անշուշտ, դրսևորում էր իր տեղական առանձնահատկությունները՝ նյութի ընտրության, գունային համակարգի, գլխի հարդարանքի և հագուստի առանձին տարրերը կրելու եղանակի դեպքում:

Տղամարդու «կովկասյան» կոչված տարագաձևի մասին ազգագրագետ Ստ. Լիսիցյանը մասնավորապես գրում է. «Իր հիմնական մասերով և ձևով տղամարդու զգեստը շատ քիչ է տարբերվում Արևելյան կովկասի ժողովուրդների արական զգեստից, որն առաջնորդում տարածված էր սկսած Հյուսիսային Կովկասից և Դաղստանից գրեթե մինչև Ղարադաղ և Արաքսի աջեզրյան շրջանները, մինչև Ուրմիո ավազանը»¹: Տարածման նմանօրինակ մեծ արեալ ընդգրկող տարագաձևի բաղկացուցիչ տարրերն էին՝ շապիկ-վարտիքը, լայնափողք շալվարն ու կարճ վերնագգեստ-արխալուղը և վերարկու-չուխան (մուգ-շագանակագույն, կապույտ, սև գույների):

Զմռանը տղամարդիկ, հատկապես հովիվները, գործածում էին թաղիքե այծենակաձր՝ յափունջին, որի մասին Ֆրեդերիկ Դյուբուա դե Մոնպերեն Կովկասի շուրջը կատարած իր ճամփորդական ուղեգրության մեջ, այն համեմատելով հին այրերի քղամիդի հետ և համարելով թաղիքե թիկնոց, գրում է. «Այդ թիկնոցը գործածվում էր նաև կովկասյան մյուս ցեղերի, ինչպես նաև հայկական միջավայրում»²:

Արցախի այրերի գլխի հարդարանքը՝ գառան մորթուց կոնաձև գլխարկը, հար և նման էր Արևելյան Հայաստանի մյուս պատմաազգագրական շրջանների տղամարդկանց գլխի հարդարանքին: Հարուստների գլխարկն ավելի բարձր էր և կարվում էր Շուշիում, Բուխարայի, Շիրազի, ինչպես նաև տեղական ոչխարների մորթուց: Տարեց տղամարդիկ կրում էին կոնաձև երկար գլխարկ, երիտասարդներինը շրջանաձև գագաթով էր և կոչվում էր «ղարաբադյան»:

Հին տեղական ոտնամանի օրինակ էին տնայնագործ երեքքթանի տրեխ-չարոխները: Տղամարդ թե կին հագնում էին սրածայր ոտնաման-չմոշկներ (կանանցը՝ կարմիր, կանաչ, տղամարդկանցը՝ սև գույնի): Նախշազարդ գուլպաներն ու սոնապանները (տոլադ) ամբողջացնում էին տղամարդու ազանելիքը: (Ի դեպ, 20-րդ դ. սկզբին չմոշկը փոխարինվեց սև կամ շագանակագույն չստերով):

Ս. Զավարյանը, անդրադառնալով ներկա դարի սկզբների Լեոնային Ղարաբաղի մշակութային առանձնահատկություններին, նշում է. «Ճշմարիտ է, որ գոյություն ունի հայտնի ներդաշնակություն տղամարդու և կնոջ հագուստների միջև, պահպանվում է հայտնի ինքնատիպ մոդան, սակայն դա նկատվում է ոչ ամեն տեղ, այլ լոկ մի քանի «հետամնաց» գյուղերում, ավելի «զարգացած» գյուղերում տրեխները հարմարեցվում էին բաճկոնների, երկարափեշ չուխան՝ ֆուրաշկայի հետ»³: Ի տարբերություն տղամարդու հագուստում նկատված նման փոփոխությունների՝ արցախուհու ավանդական տարազը, ինչպես ասացինք, ցարդ պահպանվում և կենցաղավարում է ձեր կանանց միջավայրում:

Ընդհանրացնենք, հրապարակի վրա եղած նյութերի ու փաստարկների ազգագրական դիտարկումը թույլ է տալիս եզրակացնելու, որ Արցախի տարազը ձևավորվել է իր էթնիկ հայրենիքում, հայկական միջավայրում, այդ իսկ պատճառով ցուցաբերում է նման ակնհայտ ընդհանրության հայկական տարազի մյուս խմբերի հետ ինչպես ձևվածքի, նյութի ու գույնի ընտրության, գեղազարդման միջոցների, այնպես էլ տարազի առանձին տարրերի առումով: Կարծում ենք, ժամանակն է, որ Արցախի կենցաղն ու մշակույթը համակողմանիորեն ուսումնասիրվեն նաև

¹ Լիսիցյան Ստ., *Զանգեզուրի հայերը*. Եր., 1969, էջ 121

² Де Монпере Д. Ф., *Путешествие вокруг Кавказа*. Сухуми, 1937, с. 46

³ Заварян С., *Экономические условия Карабаха и голод 1906-1907 гг.* Сиб, 1907, с. 6



ազգագրական տեսանկյունով, պսակելով այդ աշխատանքները Արցախի պատմաազգագրական ուսումնասիրության վերաբերյալ ամփոփ աշխատությամբ:

Ու էլի, մեր կարծիքով, մի կարևոր առաջարկ. ցանկալի կլիներ, որ մեր թանգարաններն ու գեղարվեստական սրահները նախաձեռնություն ցուցաբերելով՝ սերտ կապեր հաստատեին Արցախի ժողովրդական վարպետների հետ ու կազմակերպեին նրանց ավանդականի օրինակով պատրաստած մշակութային արժեքների, այդ թվում և տարազի առանձին մասունքների պատվիրման և ցուցահանդես-վաճառքների հետ կապված աշխատանքները:

ՄԵՏՔԱՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 19-ՐԴ ՂԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Լեռնային Ղարաբաղում շերամապահության և մետաքսագործության զարգացման մասին վերջին հարյուրամյակում կատարվել են որոշ ուսումնասիրություններ: 19-րդ դարի 80-ական թվականներին Ղարաբաղում մետաքսամշակման «գործարանների» մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Ա. Արասխանյանի աշխատության մեջ¹:

Լեռնային Ղարաբաղում շերամապահության զարգացման առանձին դրվագներ քննարկվել են Գ. Սեյրանի, Ար. Առաքելյանի և Ա. Զաքարյանի ուսումնասիրություններում²:

Առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում Ա. Պետրոսյանի մենագրությունը³: Հեղինակը անդրադարձել է Լեռնային Ղարաբաղում շերամապահության տնտեսական օգտավետությանը, որդերի կերակրման նոր մեթոդների կիրառմանը, դրանց հետ կապված ազգագրական բնույթի բազմաթիվ հարցերի: Ա. Պետրոսյանը Լեռնային Ղարաբաղում շերամապահության և մետաքսագործության հետ կապված հարցերը հասցրել է մինչև 1914թ. իրողությունները:

Սույն հոդվածի նպատակն է հրապարակի վրա եղած, մանավանդ ԼՂՀ պետական արխիվում և պատմաերկրագիտական թանգարանում պահպանված և չիրատարակված նյութերի հիման վրա բացահայտել Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը մետաքսագործության զարգացման փուլերը, դրանց առանձնահատկությունները, վեր հանել Լեռնային Ղարաբաղի մետաքսագործության տեսակարար կշիռը, ինչպես ռուսական կայսրության, այնպես էլ ԽՍՀՄ տարածքում, ցույց տալ նրա տեղն ու դերը Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսության մեջ, հանգամանորեն քննարկել մետաքսի մեծ ճանապարհի հետ Արցախի ունեցած կապերը և դրա վերականգնման, մետաքսագործության հետագա զարգացման անհրաժեշտությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսական կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների ձևավորման և տնտեսության բուռն վերելքի պայմաններում հայկական գյուղը իր նահապետական սովորություններով հանդերձ, ներքաշվեց ընդհանուր համառուսական շուկայի մեջ: Անձրևից հետո աճող սնկերի նման Արցախի բնակավայրերում մեկը մյուսի հետևից երևան էին գալիս առաջին մասնավոր ձեռնարկությունները, որոնք երբեմն աղբյուրներում հիշատակվում են «ֆաբրիկաներ», «գործարաններ» անուններով: Դրանք հիմնվում էին գլխավորապես առավել մարդաշատ բնակավայրերում: Այդ գործարանների զգալի մասը զբաղվում էր մետաքսի արտադրությամբ: Մետաքսի մեծ ճանապարհին մոտ լինելով՝ Ղարաբաղի հայությունը հնուց ի վեր զբաղվում էր շերամապահությամբ: Այն նոր ընթացք ու թափ ստացավ 19-րդ դարի 80-90-ական թվականներին: Հունդը Ղարաբաղ է հասել մի շարք երկրներից՝ տարբեր ճանապարհներով: Այսպես, օրինակ, խորասան (դեղին ցեղի), խանջան (սպիտակ ցեղի) հունդը բերվել է Կոստանդնուպոլսից, գառիֆյան սպիտակ և դեղին ցեղի հունդը Թբիլիսիից, պասխալդի սպիտակ և դեղին ցեղի հունդերը Կոստանդնուպոլսից և Իտալիայից: Մինչև 1890 թվականը Ղարաբաղում

¹ А. Арасханян, *Закавказские шелкоматальные заводы, Тифлис, 1883*

² Գ. Սեյրանի, *Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները*, Թիֆլիս, 1928, Ար. Առաքելյան, *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում*, *Ստեփ.*, 1939, А. Захарян, *Шелковая промышленность Нагорного Карабаха, Баку, 1970*

³ Ա. Պետրոսյան, *Հայոց շերամապահության մշակույթը*, Եր., 1987



լայն տարածված էր ճապոնական դեղին ցեղի մանր բոժոժ ունեցող հունդը, որին տեղացիները յապոն էին անվանում: Այն ծովային ճանապարհով Չինաստանից տեղափոխվել է Հունաստան, իսկ այնտեղից Ղարաբաղ¹: Հարկ է նշել, որ 1870-ական թվականներին Ղարաբաղում շերամի հունդը հիմնականում տարածում էին ֆրանսիացիները²: Ներմուծվող հունդի քանակը չէր բավարարում տեղական պահանջները: Դրա հետևանքով շերամապահները տեղում սկսեցին հունդ աճեցնել: 19-րդ դարի վերջերին Անդրկովկասում հունդի աճեցման և տարածման գործը կենտրոնացված էր երեք ընտանիքների ձեռքում, որոնցից մեկը՝ Տեր-Գրիգորյանները, դարաբաղցի էին:

Սկզբնական շրջանում շերամապահ գյուղացիները ոչ միայն բոժոժ էին արտադրում, այլև տանը պարզունակ եղանակով ոտնաչարխով մանում էին թելը: Տեղացի վաճառականները արտադրանքը արտահանում էին արտասահմանյան քաղաքներ:

Արցախի բնական մետաքսը բարձր է գնահատվել միջազգային մի շարք տոնավաճառներում: 1882թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հոնաշեն-Հաղրուլի մետաքսն արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ 1883թ., ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջերին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները³:

19-րդ դարի 50-ական թվականներին Արցախում գտնվող մետաքսագործարանները տնայնագործական տիպի մանր ձեռնարկություններ էին՝ խարսխված բացառապես ձեռքի աշխատանքի վրա: Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձերը Ղարաբաղում կատարել են 19-րդ դարի կեսերին դարաբաղցի Աղաբաբա և Գրիգոր Խաչատրյաններն ու Կարապետ Շահմուրադյանը:

1856-1857 թվականներին Ստեփանակերտում հիմնադրեցին մետաքսի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Նուխուց եկած 25-30 հայ բանվորներ: Այդ կիսատնայնագործական բնույթի ֆաբրիկայի բոլոր հաստոցները պատրաստել էին դարաբաղցի հմուտ վարպետները: Նույն դարի 60-ական թվականներին շուշեցի վաճառականները, լինելով Մարսել, Լիոն, Միլան, Վենետիկ, Ջենովա քաղաքներում, արտասահմանից օրինակում են մանարանը, մետաքս ոլորող մեքենան և միաժամանակ «ցելլիվսի» եղանակով սկսում են ստանալ առողջ սերմ: Առաջին անգամ Ղարաբաղի մետաքսագործի կիսանահապետական աշխատանքին փոխարինելու եկավ շոգու աշխատանքը: Այս հանգամանքը նպաստում է, որպեսզի երկրամասում զարգանա շերամապահությունը: Այսպես, եթե Վարանդայի գավառում 1890թ. արտադրվում էր 2,138 փութ բոժոժ, ապա 1895թ. այն հասցվեց 9000 փութի, որից 4300 փութը արտահանվել է եվրոպական երկրներ⁴:

Նման պայմաններում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկվեցին Ղարաբաղում նոր մետաքսագործարանների կառուցման ուղղությամբ: Ժամանակակցի վկայությամբ 1888թ. Արցախում կար 18 մետաքսագործարան, որոնք բոլորը պատկանում էին հայերին: Դրանք տեղակայված էին Շուշի քաղաքում, Ստեփանակերտում, Կրկժան, Քարին-տակ, Սղնախ, Չանախչի, Ղարաբուլաղ, Ղշլաղ, Թաղուտ, Տոդ, Հաղրուլ, Շուշիքենդ, Բալլուջա, Խանաձախ, Գիշի գյուղերում:

Արդեն 1896թ. Լեռնային Ղարաբաղում 26 մետաքսակարծական ֆաբրիկա կար⁵, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին դրանց թիվը հասավ 36-ի՝ 1590 հաստոցներով,

¹ Ար. Առաքելյան, *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում*, Ստեփ., 1939, էջ 12

² Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1987, էջ 91

³ Շ. Մկրտչյան, *Արցախ*, Երևան, 1991, էջ 46

⁴ Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1987, էջ 91-92

⁵ Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1987, էջ 99



միաժամանակ կառուցվեցին թեև ոլորող 10 նոր գործարաններ¹, որտեղ տարեկան արտադրվում էր մինչև 8000 փուխ մետաքս²: Միայն Վարանդայի գավառում 1895թ. արտադրվում էր 1100 փուխ մետաքս և 280 փուխ ֆրիզոն³: Շուշին հանդիսանում էր բոժոժի խոշոր շուկա Անդրկովկասում: 1894թ. Շուշիում հիմնադրվեց կովկասյան մետաքսագործական կայան: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի 85 բնակավայրերում շերամապահությամբ զբաղվում էր մոտ 12000 տնտեսություն, որը կազմում էր բոլոր տնտեսությունների 45 տոկոսը: Բոժոժի արտադրության համար անբարենպաստ տարիների դեպքում գործարանների համար հումք Լեռնային Ղարաբաղ է ներմուծվել ներկայիս Ադրբեջանի շրջաններից, Վրաստանից, հատկապես Քուֆախի գավառից, ինչպես նաև Միջին Ասիայից և Պարսկաստանից:

Վերոհիշյալ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղում բնական մետաքսի արտադրության բուն վերելքը պայմանավորված է մի շարք բարենպաստ գործոնների առկայությամբ.

1. Տարանցիկ առևտրական ճանապարհների հանգուցակետում գտնվելը:
2. Լեռնային Ղարաբաղի վաճառականների և գործարանատների սերտ կապերը Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի երկրների գործարար շրջանների հետ:
3. Այս բնագավառում հնուց եկած ավանդույթները, որին գումարվեց նաև դարաբաղիների աշխատասիրությունը և հակումը դեպի արհեստը:
4. Էժան և որակյալ աշխատուժի գոյությունը:
5. Վառելանյութի՝ անտառների մոտ լինելու հանգամանքը:

Լեռնային Ղարաբաղի մետաքսաթելը մեծ համարում ուներ Եվրոպայի և Ասիայի երկրներում: Մինչև 1883 թիվը երկրամասում արտադրված թելը ուղարկվում էր Մարսել, հետագա տարիներին առավել շատ՝ Մոսկվա, իսկ ֆրիզոնը՝ Ֆրանսիա⁴:

Մետաքսի արտադրությամբ Ռուսաստանի երկրամասերի մեջ Ղարաբաղը բռնում էր 2-րդ տեղը և տալիս էր Անդրկովկասի մետաքսի արտադրության 35 տոկոսը⁵:

Ժամանակի ընթացքում Լեռնային Ղարաբաղի մի շարք ֆաբրիկաներ հազեցվեցին նոր տեխնիկայով: Ռուսաստանում առաջին անգամ Շուշիում գտնվող Գ. Հարությունյանցի ֆաբրիկայում կիրառվեց բոժոժը չորացնելու հատուկ մեխանիկական սարքավորում:

20-րդ դարի սկզբին ստեղծվեց Գ. Հարությունյանցի՝ Կովկասի մետաքսագործական և մետաքսատլորման արդյունաբերական ընկերությունը, որը միավորեց 6 մետաքսագործարան, 2 մետաքսատլորման և 3 բոժոժաչորացման ֆաբրիկաներ:

Քաղաքական գործընթացները, սակայն, շուտով ընդհատեցին շերամապահության և մետաքսագործության զարգացման բնականոն ընթացքը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ազգամիջյան ընդհարումների հետևանքով ավերվեցին Լեռնային Ղարաբաղի մետաքսագործարանները: Խաթարվեցին եվրոպական և ասիական երկրների հետ տնտեսական կապերը: Ճանապարհների անապահովությունը դժվարացրին գործարանների արտադրած թելի սպառումը: Անտառներից փայտ բերելու խնդիրը կապված էր կյանքի վտանգի հետ, և, որպես վառելափայտ օգտագործում էին թոխմաչարի տունկը:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատումը ինչ-որ չափով համընկավ խորհրդային Ռուսաստանում վարվող ՆԵՊ-ի ժամանակաշրջանին: Երկրամասի արդյունաբե-

¹ Ար. Առաքելյան, *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում*, Ատեփ., 1939, էջ 15

² *ԼՂՀ պետական արխիվ*, ֆ. 401, ց. 1, գ. 23, թ. 3

³ *Ազգագրական հանդես*, էջ 99

⁴ «Մշակ», 1888, N 100

⁵ *Заря Востока*, 1927, N 1527



րությունը, հատկապես մետքասի արտադրությունը վերջնական կործանումից փրկելու նպատակով ազգայնացված ձեռնարկությունները վարձակալման կարգով հանձնվեցին մասնավոր մարդկանց:

Անցումը ՆԷՊ-ի նպաստեց, որպեսզի Լեռնային Ղարաբաղի մետաքսագործությունը նոր թափ ու զարգացում ունենա: Համառ աշխատանքի շնորհիվ արդեն 1922թ. գործի դրվեցին հինգ ֆաբրիկաներ, որոնցից մեկը պետական էր, չորսը՝ վարձակալված¹: Մեկական մանածագործարան գտնվում էր Սեյդիշեն, Խնձրիստան, Բադարա, Ղշլաղ գյուղերում, իսկ Քարին-տակ գյուղում գործում էր թել ոլորող մեկ գործարան, որը ժամանակի ընթացքում կառուցվել էր Ֆրանսիայի մասնագետների կողմից²: Գործարանների պարապուրդը կանխելու նպատակով բոժոժը ներմուծվում էր Ադրբեջանի և Վրաստանի շրջաններից³: Ֆաբրիկաները որակյալ բոժոժով ապահովելու նպատակով 1924թ. Հաղորթում հիմնադրվեց իտալական Չիչե հունդային ընկերությունը⁴:

1925թ. շերամապահության զարգացումը մարզի գյուղացիական տնտեսությունների ավելի քան 45 տոկոսին հնարավորություն էր տալիս ստանալու մեծ քանակությամբ շահույթ:

ԼՂԻՄ մետաքսակարծական ֆաբրիկաների պետական տրեստը՝ Ղարմետաքսաարդյունաբերությունը, ստեղծվեց 1925թ. օգոստոսին: Այն նոր հնարավորություններ ստեղծեց մարզի մետաքսաարդյունաբերության հետագա զարգացման համար: Նորաստեղծ տրեստը նյութական մեծ օժանդակություն ստացավ մետաքսի միութենական տրեստից: Մարզային ժողտնտխորհի 1925-1926 թթ. տնտեսական տարվա զեկուցագրերից մեկում ասված է, որ այդ տարի, շնորհիվ Մոսկվայի մետաքսատրեստի ֆինանսական օգնության, հաջողվեց գործի զցել երեք ֆաբրիկա ևս⁵: Ղարմետաքստրեստը ամեն կերպ ձգտում էր վերացնել աշխատանքի պրոցեսում գոյություն ունեցող տնայնագործությունը, արմատավորել աշխատանքի առաջավոր ձևերը, պլանավորել արտադրանքի իրացումը և Ստեփանակերտում կառուցել նոր ֆաբրիկա:

Տարեցտարի ավելանում էին մետաքսաարդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները: Եթե 1926թ. այն կազմում էր 296 հազար ռուբլի, ապա 1928թ. հասավ 500 հազար ռուբլու: 1927թ. օգոստոսի 11-ին Ստեփանակերտում սկսվեցին մետաքսագործական նոր ֆաբրիկայի աշխատանքները, որի համար նոր սարքավորումներ պատվիրվեցին իտալական «Բատալիա» ֆիրմային: Ֆաբրիկայի առաջին մասնաշենքը շահագործման հանձնվեց 1929թ. սեպտեմբերի 20-ին: Շերամապահության զարգացման նպատակով նախատեսվում էր ունենալ 4000 հեկտար թոխմաշար: Դրա համար դեռևս 1926թ. մարզում ստեղծվել էր փորձնական տնտեսություն, որի ջերմոցներում աճում էր 600 հազար թթենի⁶: Այստեղ աճեցվել էին հունգարական, իտալական և ֆրանսիական տեսակի թթենու սերմեր:

Լեռնային Ղարաբաղի մետաքսագործները սերտ կապեր ունեին Վրաստանի Սամտրեդի և Ադրբեջանի Նուխու մետաքսագործների հետ: Բավականաչափ բարելավվեց մետաքսագործարանների բանվորների սոցիալական վիճակը: Նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ 1931թ. բանվորների աշխատավարձն աճեց 17 անգամ⁷: Ստեփանակերտի ֆաբրիկային կից գործում էր մուր-մանկապարտեզ, 5 լիկկայան⁸:

¹ Г. Кочарян, *Нагорный Карабах, Баку, 1925, с. 92*

² Ար. Առաքելյան, *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, Ստեփ., 1939, էջ 32*:

³ *Մոմունիստ, 1967, N 126*

⁴ *ԼՂՀ պետարխիվ, ֆ. 23, ց. 1, գ. 68, թ. 20-21*

⁵ *ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 18, թ. 6*

⁶ *Заря Востока, 1927, N 1407*

⁷ *ԼՂՀ պետարխիվ, ֆ. 3, ց. 1, գ. 62, թ. 47*

⁸ *Նույն տեղում*



Ղարմետաքսկոմբինատը որակյալ կադրերով ապահովելու նպատակով տասնյակ երիտասարդներ ուղարկվեցին Խորհրդային Միության տարբեր ֆաբրիկաներ՝ մասնագիտական կարողությունները կատարելագործելու: Երկրի տարբեր վայրերից՝ Մոսկվայից, Թբիլիսիից, Լեոնային Ղարաբաղ եկան բարձր որակի ինժեներներ:

Լեոնային Ղարաբաղում գտնվող մետաքսի ֆաբրիկաների աշխատանքի արդյունաբերության բարձրացման և նրանց ինքնուրույնությունը մեծացնելու նպատակով 1934թ. ապրիլին Ղարաբաղի մետաքսի տրեստը վերակազմվեց Ղարաբաղի մետաքսի արդյունաբերության վարչության:

Լուրջ ուշադրություն էր դարձվում շերամապահ մասնագետների պատրաստման գործին: Եթե 1934թ. կար 3 խմբակ, որտեղ սովորում էին 220 աշակերտներ, ապա 1936թ. դրանց թիվը համապատասխանաբար հասավ 47-ի և 1870-ի¹: Շերամի բերքի բարձրացման նպատակով կիրառվում էին ագրոմիջոցառումներ:

Լեոնային Ղարաբաղում շերամապահությունն ու մետաքսի արտադրությունը նոր թափ ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Եթե 1940թ. մարզում արտադրվել է 98 տոննա մետաքսի հումք և 120 հազար գծամետր մետաքսի գործվածք, ապա 1973թ.՝ համապատասխանաբար 135 տոննա և 11508 հազար գծամետր²: 1987թ. Ղարմետաքսկոմբինատը՝ Խորհրդային Միությունում բնական մետաքս արտադրող երեք խոշորագույն ձեռնարկություններից մեկը, արտադրում էր տարեկան շուրջ 16 մլն. մետր մետքասեղեն: Սակայն ստացված եկամուտը լրիվ չէր մնում մարզում, որովհետև մետաքսաթելի ներկումը կատարվում էր Շաքիի մետաքսագործարանում, և հիմնական շահույթը մնում էր Ադրբեջանում:

ԽՍՀՄ փլուզման, Ադրբեջանի կողմից ԼՂՀ շրջափակման հետևանքով ինչպես տնտեսական մի շարք ոլորտներ, այնպես էլ բնական մետաքսի արտադրությունը անկում ապրեց: Սակայն մետաքսի մեծ ճանապարհը կյանքի կոչելը ոչ միայն կնպաստի ԼՂՀ-ում մետքասագործության զարգացմանը, այլև նոր թափ կհաղորդի աշխարհի մի շարք երկրների հետ տնտեսական, մշակութային և քաղաքական բազմապիսի կապերի ստեղծմանը: Լիարյուն կգործեն համագործակցության նախկին ձևերը:

¹ Ա. Առաքելյան, *նույն տեղում*, էջ 42

² ԼՂԽՄ-ը 50 տարում, *Ստեփանակերտ*, 1974, էջ 28

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐՑԱԽՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Այսրկովկասը Ռուսաստանին միացնելուց հետո ցարիզմը ձեռնամուխ եղավ նաև նրա տնտեսական յուրացմանը: Ցարական կառավարությունը ձգտում էր Այսրկովկասը դարձնել իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների իրացման շուկա:

Դրան հասնելու համար ցարական կառավարությունն իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք շատ թե քիչ սկսեցին աշխուժացնել տնտեսական կյանքը: Առաջին հերթին անհրաժեշտ եղավ պարզել և ճշտել, թե ինչ եկամուտներ էր ստանում խանը Ղարաբաղից, որոնք հետագայում պետք է մտնեին պետական գանձարան: Այդ նպատակով 1822-23թթ. երկրամասում անցկացվեց աշխարհագիր, ցուցակագրվեցին բոլոր բնակավայրերը, ընտանիքի անդամները, հավաքվելիք հնարավոր տուրքերի չափը¹:

Նոր գրավված տարածքների տնտեսական հնարավորությունները օգտագործելու համար 1836թ. ստեղծվեց «Կովկասյան արդյունաբերական ընկերությունը»²:

1861թ. փետրվարի 19-ի կանոնադրությամբ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումից հետո՝ 19-րդ դարի 60-70-ական թվականներին, ցարական կառավարությունը կայսրության ծայրամասերում անցկացրեց նաև գյուղացիական բարեփոխումներ:

Արևելյան Հայաստանում, այդ թվում նաև Ղարաբաղում, գյուղացիական բարեփոխումը անցկացվեցին 1870թ. մայիսի 14-ի օրենքով: Նոր օրենքով վերացվեց հողերի օգտագործման համայնական եղանակը և այն փոխարինվեց անհատական եղանակով: Հստակեցվեց յուրաքանչյուրի հողաբաժինը, իրավունք տրվեց գյուղացիներին վաճառելու, նվիրելու կամ գրավ դնելու իրենց հողակտորներն ու այգիները: Որոշ բնատուրքեր վերածվեցին դրամականի: Այս ամենը նպաստեց ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը: Ապրանքային դարձավ առաջին հերթին հողագործությունը: Ղարաբաղը մնում էր որպես հետամնաց ագրարային երկիր, որտեղ արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Տարեցտարի ընդարձակվում են մշակովի հողատարածությունները: Երկրագործության մեջ գերակշիռ տեղ ուներ հացաբույսերի մշակությունը: 1883 թվականից մինչև 1896 թվականը Ելիզավետպոլի նահանգում հացազգիների ցանքատարածություններն ու բերքատվությունը ավելացավ 2-ից մինչև 2,5 անգամ³: Եթե Շուշու գավառում հացահատիկի մշակաբույսերից 1886 թ. ստացել են 424,566 քառորդ բերք, ապա 1895 թ. դա հասցվել է 620,700 քառորդի⁴, որի մեծ մասը սպառվել է քաղաքի շուկաներում:

Ներքին շուկայի ընդլայնումը և Ռուսաստանում արդյունաբերության զարգացումը խթանում էր Այսրկովկասի տարբեր գավառների գյուղատնտեսական ապրանքների արտադրության մասնագիտացմանը: Եթե Շուշու գավառում ավելի շատ զարգացած էր շերամապահությունը, ապա Ջիվանշիրի գավառում՝ բամբակագործությունը և խաղողագործությունը:

¹ Լիսիցյան Ստ., *Ջանգեզուրի հայերը*, Երևան, 1969, էջ 50

² *Обозрение Российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях*, Москва, 1836, ч.1, стр. 63

³ *История Азербайджана*, т.2, Баку, 1960, с. 164

⁴ «Ազգաբնակչության հանդես», գիրք Բ, 1897, էջ 81



Շուշու գավառում 1890թ. ստացվել է 2, 138 փութ բոժոժ, իսկ 1894թ.՝ 17,000 փութ, որից 4, 300 փութը ուղարկվել է արտասահման¹:

Երկրագործական մշակաբույսերի համար կարևորություն էր ներկայացնում ոչ միայն ցանքատարածությունների ընդարձակումը, այլև հումքի որակի բարձրացումը և հողագործության կատարելագործումը: Ուստի երկրամասում մեծ ուշադրություն դարձվեց ոռոգման ցանցի կատարելագործմանը, առանձնապես քյահրիզների կառուցմանը: Համարյա Ղարաբաղի բոլոր գյուղերում նման ջրագծեր կառուցվեցին, որոնք առայսօր օգտագործվում են:

Հանդես եկան կազմակերպություններ, որոնք արտասահմանից ներ էին մուծում բարձրորակ սերմեր՝ իսաղողի և բամբակի՝ Բրազիլիայից, Հյուսիսային Ամերիկայից, Եգիպտոսից, Հնդկաստանից, տեխնիկական մշակաբույսերի վերամշակման համար մեքենաներ՝ Հյուսիսային Ամերիկայից, Ֆրանսիայից:

Անասնապահությունը ևս շարունակում էր մնալ բնակչության զբաղմունքի հիմնական տեսակներից մեկը:

1891թ. Շուշիի գավառում եթե պահում էին 69 161 գլուխ խոշոր և 144 865 գլուխ մանր եղջյուրավոր անասուն, ապա 1895թ. համապատասխանաբար՝ 76 180 և 164 080 գլուխ²:

Առաջընթաց կատարվեց նաև գյուղատնտեսական արտադրանքի մշակման գործում: Դեռևս 60-ական թթ. վերջերից սկսեց զարգանալ օղու և գինու արտադրությունը: Շուշու գավառում գինեգործական կենտրոններ էին համարվում Գիշի և Ղզղալա գյուղերը: Գավառում 1884-1894 թվականներին գինու արտադրությունը 95 406 դույլից հասավ 186000 դույլի³:

Ղարաբաղի թթի այգիներից ստացվում էր մեծ քանակությամբ օղի:

1872թ. տվյալներով Ելիզավետպոլի նահանգում գործում էր 3624 օղու թորման գործարան, որտեղ տարեկան արտադրվում էր 75000 դույլ օղի⁴: Այս բնագավառում Ելիզավետպոլի նահանգը ամբողջ Անդրկովկասում առաջին տեղն էր գրավում: Միայն Շուշու գավառում 1895թ. թորվել է 300000 դույլ օղի: Գինու և օղու արտադրանքից Շուշու գավառում ստացվել է 1323270 ռուբլու եկամուտ⁵, որը բավականին մեծ գումար էր:

Հայ դրամատերերից շատերը սկսեցին իրենց միջոցները տեղափոխել արտադրության առավել շահավետ ոլորտներ՝ ստեղծելով զանազան գործարաններ ու ֆաբրիկաներ: 1880-ական թթ. Ադդամում մեծահարուստներ Խուրլարյաններն ու Սողոմոնյանները հիմնում են սպիրտի գործարաններ: Դրա հիմքերի վրա Ադդամում ստեղծվում է նաև կոնյակի փոքր գործարան⁶:

19-րդ դարի վերջին տասնամյակներում ռուսական կայսրությունում շուկայական հարաբերությունների զարգացման և տնտեսության բուռն վերելքի պայմաններում հայկական գյուղը իր նահապետական սովորություններով հանդերձ, ներքաշվեց ընդհանուր համառուսական շուկայի մեջ: Անձրևից հետո աճող սնկերի նման Ղարաբաղի բնակավայրերում մեկը մյուսի ետևից երևան էին գալիս մասնավոր նոր ձեռնարկություններ: Այդ գործարանների զգալի մասը զբաղվում էր մետաքսի արտադրությամբ: Մետաքսի մեծ ճանապարհին մոտ լինելով, Ղարաբաղի հայությունը հնուց ի վեր զբաղվում էր շերամապահությամբ: Այն նոր ընթացք ու թափ ստացավ 19-րդ դարի 80-

¹ «Ազգագրական հանդես», էջ 91-92

² Նույն տեղում, էջ 89

³ «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 86

⁴ *История Азербайджана*, т. 2, с. 227

⁵ «Ազգագրական հանդես», 1897, էջ 87

⁶ *История Азербайджана*, т. 2, с. 227



90-ական թվականներին: Շերամի հունդը Ղարաբաղ է հասել մի շարք երկրներից, տարբեր ճանապարհներով:

Մինչև 1890թ. Ղարաբաղում լայն տարածված էր ճապոնական դեղին ցեղի մանր բոժոժ ունեցող հունդը, որին տեղացիները յապոն էին անվանում: Այն ծովային ճանապարհով Չինաստանից տեղափոխվել է Հունաստան, իսկ այնտեղից Ղարաբաղ¹: 19-րդ դարի վերջերին Անդրկովկասում հունդի աճեցման և տարածման գործը կենտրոնացված էր 3 ընտանիքների ձեռքում, որոնցից մեկը՝ Տեր-Գրիգորյանները, դարաբաղցիներ էին:

Սկզբնական շրջանում շերամապահ գյուղացիները ոչ միայն բոժոժ էին արտադրում, այլև տանը պարզունակ եղանակով ոտնաչարխով մանում էին թելը: Տեղացի վաճառականները արտադրանքը արտահանում էին արտասահմանյան քաղաքներ: Ղարաբաղի բնական մետաքսը բարձր է գնահատվել միջազգային մի շարք տոնավաճառներում: 1882թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հոնաշեն-Հադրութի մետաքսն արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջերին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները²:

19-րդ դարի 50-ական թվականներին Ղարաբաղում գտնվող մետաքս սագործարանները տնայնագործական տիպի մանր ձեռնարկություններ էին՝ խարսխված բացառապես ձեռքի աշխատանքի վրա: Միայն 1868թ. Շուշու գավառում կար 490 մետաքսակարժական արհեստանոց, որտեղ թողարկվում էր 76 000 ռուբլու արտադրանք³:

Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձերը Ղարաբաղում կատարվել են 19-րդ դարի կեսերին: Ղարաբաղի Աղաբաբա և Գրիգոր Խաչատրյաններն ու Կարապետ Շահմուրադյանը 1856-1857թթ. Ստեփանակերտում հիմնադրեցին մետաքսի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Նուխուց եկած 25-30 հայ բանվորներ: Նույն դարի 60-ական թվականներին շուշեցի վաճառականները, լինելով Մարսել, Լիոն, Միլան, Վենետիկ, Ջենովա քաղաքներում, արտասահմանից օրինակում են մանարանը, մետաքս ոլորող մեքենան և միաժամանակ «ցելլիվսի» եղանակով սկսում են ստանալ առողջ սերմ: Առաջին անգամ Ղարաբաղի մետաքսագործի կիսանահապետական աշխատանքին փոխարինելու եկավ շոգու աշխատանքը: Այս հանգամանքը նպաստում է, որպեսզի երկրամասում զարգանա շերամապահությունը:

1873 թ. Շուշեցի առևտրական Գ. Հարությունյանցը քաղաքում հիմնեց մետաքսառլորման առաջին ֆաբրիկան, որտեղ Ռուսաստանում առաջին անգամ կիրառվեց բոժոժ չորացնելու հատուկ մեխանիկական սարքավորում:

Գ.Հարությունյանցի ֆաբրիկան սերտորեն կապված էր «Ա և Վ. Սապոժնիկովներ», «Ա. Իլին որդիների հետ և Կ.», «Ե. Ա. Սոկոլիկովա» մետաքսի առևտրով զբաղվող խոշորագույն ընկերությունների հետ⁴:

Վարանդայի գավառում 1890թ. արտադրվող 2138 փուլ բոժոժից, 1895թ. հասցվեց 9000 փթի, որից 4300 փուլը արտահանվել է եվրոպական երկրներ⁵: Նման պայմաններում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկվեց Ղարաբաղում նոր մետաքսագործարանների կառուցման ուղղությամբ: Ժամանակակցի վկայությամբ 1888թ. Արցախում կար 18 մետաքսագործարան, որոնք պատկանում էին հայերին: Դրանք տեղակայված էին Շուշի քաղաքում, Ստեփանակերտում,

¹Սուբելյան Ա., *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում*, Ստեփանակերտ, 1939, էջ 12

²Մկրտչյան Շ., *Արցախ*, Երևան, 1991, էջ 46

³ *История Азербайджана*, т.2, с. 237.

⁴ Նույն տեղում, էջ 224

⁵ «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 91-92



Կրկժան, Քարին տակ, Սղնախ, Չանախչի, Ղարաբուլախ, Ղշլաղ, Թաղուտ, Տոդ, Հաղրութ, Շոշ, Բալուջա, Խանաձախ, Գիշի գյուղերում¹: Դրանց տերերը հիմնականում տեղացի կապիտալիստներ էին՝ Հարունովներ, Ներսեսովներ, Տեր-Գրիգորյաններ, Տեր-Մկրտչյաններ, Քամայաններ:

Արդեն 1896թ. Լեռնային Ղարաբաղում 26 մետաքսագործական ֆաբրիկա կար², իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին դրանց թիվը հասավ 36-ի³: Շուշին հանդիսանում էր բոժոժի խոշոր շուկա Այսրկովկասում: 1894թ. Շուշիում հիմնադրվեց Կովկասյան մետաքսագործական կայանի մասնաճյուղը: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի 85 բնակավայրերում շերամապահությամբ զբաղվում էին մոտ 12000 տնտեսություններ, որը կազմում էր բոլոր տնտեսությունների 45 տոկոսը: Վերոհիշյալ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղում բնական մետաքսի արտադրության բուռն վերելքը պայմանավորված էր մի շարք բարենպաստ գործոնների առկայությամբ. տարանցիկ առևտրական ճանապարհների հանգուցակետում գտնվելը, Լեռնային Ղարաբաղի վաճառականների գործարանատերերի սերտ կապերը Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի երկրների գործարար շրջանների հետ, այս բնագավառում հնուց եկած ավանդույթները, որին գումարվեց նաև դարաբաղցիների աշխատասիրությունը և հակումը դեպի արհեստը, էժան և որակյալ աշխատուժի գոյությունը, վառելանյութի՝ անտառների մոտ լինելու հանգամանքը:

Լեռնային Ղարաբաղի մետաքսաթելը մեծ համարում ուներ Եվրոպայի և Ասիայի երկրներում: Մինչև 1888թ. երկրամասում արտադրված թելը ուղարկվում էր Մարսել, հետագա տարիներին առավել շատ Մոսկվա, իսկ ֆրիզոնը՝ Ֆրանսիա⁴:

Մետաքսի արտադրությամբ Ռուսաստանի երկրամասերի մեջ Ղարաբաղը բռնում էր 2-րդ տեղը և տալիս էր Այսրկովկասի մետաքսի արտադրության 35 տոկոսը⁵: 20-րդ դարի սկզբին ստեղծվեց Գ. Հարությունյանցի Կովկասի մետաքսագործական և մետաքսառլորման արդյունաբերական ընկերությունը, որը միավորեց 6 մետաքսագործարան, 2 մետաքսառլորման և 3 բոժոժ չորացման ֆաբրիկաներ:

Քաղաքական գործընթացները սակայն շուտով ընդհատեցին շերամապահության և մետաքսագործության զարգացման բնականոն ընթացքը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ ազգամիջյան ընդհարումների հետևանքով ավերվեցին Լեռնային Ղարաբաղի մետաքսագործարանները: Խաթարվեցին Եվրոպական և Ասիական երկրների հետ տնտեսական կապերը: Ճանապարհների անապահովությունը դժվարացրին գործարանների արտադրած թելի սպառումը: Անտառներից փայտ բերելու խնդիրը կապված էր կյանքի վտանգի հետ և որպես վառելավայտ օգտագործում էին թոխմաչարի տունկը:

Այս ամենից բացի Շուշի քաղաքում 1895 թ. կենտրոնացված էր 6 կաշվի, 4 օձառի, 10 ներկարարական և 2 աղյուսի գործարաններ⁶:

Շուշին առավել շատ հայտնի էր, որպես արհեստավորական կենտրոն: Այս ժամանակահատվածում էլ արհեստավորները կազմակերպված էին համքարությունների մեջ և ղեկավարվում էին նախկին ավանդույթներով:

¹ Гулишамбаров Ст., *Обзор фабрик и завод Закавказского края*, Тифлис, 1894, с. 320

² «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 99

³ Առաքելյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 15

⁴ «Մշակ», 1888, հիվ. 100

⁵ „Заря востока“, N 1527, 1927

⁶ «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 98



Առանձնապես հայտնի էին Շուշեցի գորգագործները, ոսկերիչները, արծաթագործները, պղնձագործները, բրուտագործները, դարբինները, հյուսները, քարտաշներն ու կոշկակարները: Նրանց արտադրած ապրանքները մեծ համարում ունեին Եվրոպայում, Ռուսաստանում և Արևելքի երկրներում:

Բրոկհաուզի և Եֆրոնի հանրագիտական բառարանում կարդում ենք. «Շուշին Կովկասում գորգագործության ամենախոշոր կենտրոնն է, որի արտադրությունը սպառվում է նահանգի սահմաններից դուրս շատ հեռու և հասնում է Մոսկվա ու Պետերբուրգ: Մետաքսի գորգերի աշխույժ առևտուր է գնում, որը համարյա բացառապես գտնվում է տեղի հայերի ձեռքին»¹:

1895թ. տվյալներով Շուշիում 1000 բնակչի վրա հաշվում էր 22 արհեստավոր²: Նույն ժամանակահատվածում քաղաքում կար 500 տեսակ արհեստ³:

Ցարական կառավարությունը Այսրկովկասը տնտեսապես ու քաղաքականապես Ռուսաստանին ենթարկելու, իր ազդեցությունը հարևան երկրների վրա տարածելու նպատակով հովանավորում էր առևտրականներին: Եվ պատահական չէր, որ բազմաբնույթ միջոցառումներով խրախուսում էր առևտրական դասին ու նրա գործունեությունը:

1821թ. հոկտեմբերի 8-ի օրենքով Այսրկովկաս ներմուծվող ապրանքներից գանձվում էր 5 % մաքս, իսկ Պարսկաստան առաքվող ապրանքների համար հաստատվում էր անմաքս տրանզիտ: Պատահական չէ, որ Այսրկովկասում արտաքին առևտրի ծավալները 1822-1870 թթ. ընթացքում 1289108 հասավ 15399969 ռուբլու⁴:

Մաքսային նման քաղաքականությունը խթան հանդիսացավ նաև Շուշիի առևտրականների աշխույժ գործունեության համար: Արդեն 30-ական թթ. ցարական պաշտոնական աղբյուրները հաստատում էին այն իրողությունը, որ հայ առևտրականներն իրենց ձեռքն են առել «Թիֆլիսի և ամբողջ Անդրկովկասի առևտուրը»⁵:

Մինչև 250000 տարեկան շրջանառություն ունեցող առևտրականները հիմնականում հայեր էին: Դրանցից հայտնի էին Շուշեցի Թառումյանների և Հախումյանների ընտանիքները:

1808թ. Բաքվի տուրքերը 4 տարով տրվել էին Բաբա Թառումյանին⁶: Նրա ձեռքին էր գտնվում նաև Կասպից ծովի նավթի, ձկան, աղի արտադրության կապալը:

Չոհրապ և Մարկոս Թառումյանները իրենց միջոցներով կառուցեցին Ագուլեցոց եկեղեցին: Մարկոս Թառումյանը մահվանից առաջ Էջմիածնին և մնացածներին վերադարձնում է պարտամուրհակները և երկու քսակ ոսկի բաժանում աղքատներին:

Թառումյանի մահվանից հետո նրան թաղում են մեծ պատվով, ինչպես Արտաշես Արշակունի թագավորին, գրում է Մեսրոբ Թաղիադյանը⁷:

Երեք վաճառական հայ ընտանիքներ Շուշիի սարահարթից հսկում էին մի մեծ առևտուր, որի միջոցով իրար էին կապվում աշխարհի չորս ծայրերը Չինաստանից մինչև Արևմտյան Եվրոպա, Հնդկաստանից մինչև Ռուսաստան և Սկանդինավյան երկրներ: Գերմանական «Ալգեմայն ցայտունգ» թերթը 1846թ. նոյեմբերի 15-ի համարում գրում է. «Ղարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին առանց չափազանցության կարելի է համարել Կովկասյան Ջիբրալթարը»⁸:

¹ Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, 1909, книга 79, т. 40, с. 25

² «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 98

³ Սլյան Վ., **Շուշի**, Երևան, 1991, էջ 54

⁴ „Документы и материалы по истории Армянского народа, социально-политическое и экономическое положение восточной Армении после присоединения к России (1830-1870)“, Ер., 1993, с. 34

⁵ Российских владений за Кавказом ”, ч. 1, СПб., 1836, с. 199

⁶ ՀԺՊ, հ.5, էջ 268

⁷ Թաղիադյան Ս., **Ճանապարհորդություն ի Հայս**, Կալկաթա, 1847, էջ 324-326

⁸ „Algemeine Zeitung ” 15 november, 1846



1880թ. տվյալներով Շուշիում կային 952 առևտրական և արդյունաբերական ձեռնարկություններ¹:

Շուշին 19-րդ դարում առևտրական բազմաթիվ թելերով կապված էր արտասահմանյան երկրների հետ: Ղարաբաղի և Այսրկովկասի սահմանները նեղ էին շուշեցի առևտրականների համար: Նրանք առևտրական գործառնություն ծավալեցին Ռուսաստանում, Իրանում, Եվրոպական երկրներում:

Շուշեցի մեծահարուստներ Հախումյանները նշված երկրներում ունեին իրենց գործատները և Ռուսական կայսրության բանկերում ունեին մոտ մեկ միլիոն ռուբլի²:

Առևտրի զարգացմանը խթանում է նոր ճանապարհների կառուցումն ու փոխադրական միջոցների կատարելագործումը: Կառուցվեցին և խճապատվեցին Շուշի-Եվլախ, Շուշի-Գորիս-Նախիջևան-Երևան ճանապարհները: Շուշիում գործում էին «Նադեժդա» և «Ռոսիյսկոյե» ընկերությունների գրասենյակները, որոնք կազմակերպում էին ապրանքների փոխադրումը³:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբներին ներկայիս Ադրբեջանի, հատկապես Բաքվի առևտրական և արդյունաբերական կապիտալի գերակշիռ մասը գտնվում էր ղարաբաղցի, ինչպես նաև արևելահայ մեծահարուստների ձեռքին: Բաքվում հրատարակված ռուսերեն լեզվով Ադրբեջանի պատմության մեջ հետաքրքիր տեղեկություններ կան վերոհիշյալի մասին: Այսպես, օրինակ Բաքվի խոշորագույն նավթահորերը գտնվում էին Մանթաշյանի, Լիանոզովի, Ղուկասյանի, Փիրոնի, Մախլյանի, Արամյանցի, Թադևոսյանի, Ծատրյանի, Միրզոյանի մետաքսի արտադրության գործարանները՝ Մեսրոպյանի, Գյանջումյանցի, Հարությունյանցի, Քամալյանի, Ներսիսյանի, Զուրաբյանի ձկնաարդյունաբերությունը՝ Լեանոզովի, Ղուկասյանի, Մախլյանի, Փիրալյանի առևտուրը՝ Արամյանցի, Անանյանի, Մախլյանի, Հովհաննիսյանի, Առաֆեյանի (Արաֆելով), Դովլաթյանի, Զանփոլադյանի, Աֆրիկյանի ձեռքում:

Հայերն էին տնօրինում գինեգործական, ծխախոտագործական արդյունաբերությունը: Նրանց ձեռքին էր կենտրոնացված Ադրբեջանի քիմիական արդյունաբերության 10 տոկոսը, մեխանիկական արտադրության 22 տոկոսը: Ոչ լրիվ տվյալներով 1900թ. Բաքվի նահանգի արդյունաբերական ձեռնարկությունների 29 տոկոսը պատկանում էր հայերին, 27 տոկոսը՝ ռուսներին, 18 տոկոսը՝ ադրբեջանցիներին և 13 տոկոսը՝ օտարերկրացիներին⁴:

Առևտրաարդյունաբերական կապիտալի հայ ներկայացուցիչները իրենց գործունեությամբ դարձան հասարակության առաջնորդ ուժը: Լեոն իրավաբանը գրել է. «Այն ժամանակվա մեր կյանքում այդ դասակարգն էր, որ հոգևորականությունից հետո կատարում էր խոշոր հասարակական դեր»⁵:

19-րդ դարի 2-րդ կեսին սոցիալ-տնտեսական տեղաշարժերը որոշակի պայմաններ էին ստեղծում կրթամշակութային կյանքի զարգացման համար: Նոր տնտեսական հարաբերությունները պահանջ են դնում ունենալ ուսյալ մասնագետներ: Հայ մեծահարուստները միջոցներ չէին խնայում իրենց զավակներին և, ինչու չէ, նաև տաղանդաշատ հայրենակիցներին ուսում տալու հայրենի երկրում և արտասահմանում:

¹ Տեր-Գասպարյան Լ., *Շուշի*, Երևան, 1993, էջ 54

² Լեոն, *Պատմություն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցի*, Թիֆլիզ, 1914, էջ 68

³ «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 112

⁴ *История Азербайджана*, т. 2, стр. 256-257

⁵ Լեոն, *հ.3*, էջ 523



Քննարկվող ժամանակահատվածում Շուշիում գործող դպրոցների մեծ մասը պահվում էր մեկենասների միջոցներով:

1898թ. թեմական դպրոցի նոր շենքը կառուցվել է հանգանակությունների միջոցով հավաքված փողերի միջոցով: 1908թ. ռեալական դպրոցը Մովսես Բեկի տնից տեղափոխվեց առևտրական բարերար Արաֆելյանի կառուցած հիասքանչ շենքը:

Մարիամյան օրիորդաց դպրոցը գործում էր նրա ամուսնու՝ Համբարձում Հախումյանի նվիրած սեփական տան մեջ: Շուշեցի մեծահարուստ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյան եղբայրները, իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով, Ամենայն հայոց կաթողիկոսի տրամադրության տակ են դնում երկու հարյուր հազար ռուբլի և Շուշիում գտնվող իրենց սեփական տունը «Մարիամ Ղուկասյան» անունով օրիորդաց դպրոց հիմնելու համար:

Շուշիի թեմականի 75-ամյա տարեդարձի կապակցությամբ մոսկվայաբնակ մեծահարուստ Բաղդասար Արզումանյանը դպրոցին նվիրեց 200 000 ռուբլի, որից ստացված տոկոսներով պետք է հոգային դպրոցի կարիքները: Միաժամանակ դպրոցին տրվեց Պոկրովկա, Չիստրե պրուդը քաղաքում գտնվող սեփական պալատը, միայն մի պայմանով, որ ամեն տարի մեկենասի ծննդավայրից՝ Զարդանաշենից չքավոր մանուկներից երկու հոգու ձրիաբար սովորեցնեն դպրոցում: Նույն տարեդարձի կապակցությամբ Միքայել Արամյանը Շուշիում գտնվող 30 000 արժողությամբ իր տունը նույնպես նվիրեց դպրոցին: Այս ցուցակը կարելի է շարունակել:

Այսպիսով, 19-րդ դարում ցարական կառավարությունը նպատակաուղղված քաղաքականությամբ փորձում էր Այսրկովկասը, այդ թվում Արցախը տնտեսապես յուրացնել՝ տարածաշրջանը դարձնելով իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների իրացման շուկա:

Այդ ամենով հանդերձ՝ ձեռնարկված միջոցառումները նպաստեցին երկրամասում ապրանքադրամական հարաբերությունների ձևավորմանն ու տնտեսական զարգացմանը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ԵՎ ԷԹՆԻԿ ԿԱԶՄԻ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ XIX ԴԱՐՈՒՄ

Պատմական Արցախի աշխարհը գտնվում էր Հայկական լեռնաշխարհի ծայր հյուսիսարևելյան մասում և ունեցել է միատարր հայ բնակչություն: Արաբների, սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների տիրապետության ժամանակաշրջանում էապես չփոխվեց Արցախ-Ղարաբաղի բնակչության էթնիկ պատկերը: XV դ. աղ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքմենական քոչվոր ցեղերի անընդմեջ ասպատակություններից խաթարվեց Ղարաբաղի տնտեսական ու մշակութային կյանքը¹: XVI դ. սկզբներից Հայաստանին և հարևան երկրներին տիրելու համար Օսմանյան Թուրքիայի և նորաստեղծ Սեֆյան Պարսկաստանի միջև սկսված պատերազմական գործողությունները նոր ավերածությունների ու բնակչության տեղահանումների պատճառ դարձան²: Այսուհանդերձ, XVIII դ. սկզբներին բնակչության էթնիկ կազմը մեծ փոփոխություններ չկրեց: Հայ բնակչության գերակշռության մասին է խոսում Ղարաբաղի հոգևոր առաջնորդների ու մելիքների 1725թ. Եկատերինա Առաջինին հղված ուղերձում, համաձայն որի՝ Ղարաբաղի վեց մահալներից յուրաքանչյուրում հաշվվում էր 30, 40, 50 գյուղ, իսկ ամեն գյուղում՝ 600, 500, 400, 200, 100, 50 տնտեսություն³: Հետագայում Ղարաբաղի հարթավայրային մասերում այլազգի էթնիկ տարրերի, առանձնապես թուրքալեզու քոչվոր ցեղերի քանակն աստիճանաբար ավելանում էր: Այս ցեղերի մեջ առանձնանում էին 24 քրդական քոչվոր ցեղեր, ինչպես նաև «օթուզ իքի» կոչված թյուրքալեզու ցեղային միությունը, որոնց գլխավորում էր ջնանշիր ցեղը: Սրանց մի մասը ժամանակի ընթացքում, թափանցում ու հաստատվում է այնտեղ որպես տեղական իշխաններ (խաներ)⁴, միշտ մնալով փոքրամասնություն:

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև երկարատև պատերազմներից հետո, 1555 թ., այնուհետև 1639 թ. հաշտության պայմանագրերի արդյունքում Հայաստանը երկու մասի բաժանվեց, Արևմտյան Հայաստանն անցավ Թուրքիային, իսկ Արևելյանը՝ Պարսկաստանին: Արևելյան Հայաստանի մաս կազմող Ղարաբաղը ևս անցավ Պարսկաստանին, կատարվեցին վարչական փոփոխություններ, ձևավորվեցին խանությունների սահմանները⁵: XVI դ. վերջին – XVII դ. սկզբին ստեղծվեցին Ղարաբաղի և Սյունիքի մելիքությունները, որոնք զգալի դեր խաղացին հայ ժողովրդի ազգապահպանման գործում: Սակայն XVIII դ. վերջերին ջնանշիր (որոշ աղբյուրներում՝ Սարիջալու) քոչվոր ցեղի առաջնորդ Փանահ-Ալին, օգտվելով Ղարաբաղի մելիքների ներքին երկպառակություններից ու Վարանդայի մելիք Շահնազար Բ-ի օժանդակությունից, տիրացավ Շոշ գյուղի բերդին: Որոշ ժամանակ անց նա իրեն հռչակեց Ղարաբաղի խան և դաժան միջոցներով փորձեց տիրել ոչ միայն դաշտային, այլև Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաև հարևան հայկական իշխանությունների տարածքներին⁶: Իր դիրքերն ամրապնդելու նպատակով Փանահ խանը Վրաստանից ու հարևան խանություններից Ղարաբաղ էր տեղափոխում կարաչորլի, պուսիան, ջինլի, դեմուրչի-հասանլի, դըզըլ-հալաջիլի, սոֆի-քյուրդ, բոյ-ահմեդլի, սաօթլի, կենգերլի և այլ քոչվոր ցեղերին: Միայն Ղազախի տարածքից Ահմեդ աղան Ղարաբաղ է տեղա-

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 56-57

² Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972, էջ 278

³ Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник документов, т. II, ч. II, Ереван, 1967, с. 249

⁴ Нагорный Карабах, Ер., 1988, с. 13-14; Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, с. X

⁵ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 85, 107

⁶ Е. Пахомов, Краткий курс истории Азербайджана, Баку, 1923, с. 24



փոխում իր ցեղակից 1500 ընտանիք¹: Փանահի և նրա հաջորդ` Իբրահիմի օրոք նոր թափ ստացավ թյուրքալեզու էթնիկ խմբերի ներթափանցումը լեռնային շրջաններ, ընդ որում, դաշտային Ղարաբաղն աստիճանաբար հայաթափվում էր, ավելին` հայ բնակչության մի մասը բռնի մահմեդականացվում էր: Այս կապակցությամբ ահա թե XIX դ. կեսերին Հաքստիաուզենը գրել է, որ սկսած XVIII դ. այս գեղեցիկ երկիրը (Ղարաբաղը – Չ. Ս.) կրում է խորն անկման հետքեր և չի կարող արագ վերականգնվել, մասնավորապես, բազմաթիվ էթնոգավանական հանրությունների առկայության պատճառով: Գերի տարված հայերի փոխարեն այսեղ են բերվել ծույլ թաթարներ ու թուրքեր, որոնք աստիճանաբար ավելանալով թվային գերակշռություն են ստանում տեղաբնիկների նկատմամբ²:

Թյուրքալեզու զավթիչները հաստատվելով հայկական միջավայրում, իրենց ձեռքն էին վերցնում իշխանությունը և յուրովի տնօրինում կյանքի բոլոր բնագավառները, որի արդյունքում, փոփոխման էր ենթարկվում ոչ միայն բնակչության թիվն ու էթնիկ կազմը, այլև խեղաթյուրվում էր դարերով պահպանված էթնիկական, քաղաքական, պատմամշակութային արժեքներն ու դավանական տարբերությունները, որոնք վերջին հաշվով հանգեցրին ազգային յուրահատկությունների կորստին և բնիկ բնակչության զգալի մասի ձուլմանը:

Քաղաքական բարդ իրավիճակը ստիպում էր Ղարաբաղի մելիքներին լրջորեն մտահոգվելու հպատակ ժողովրդի մասին և նրանք խնդրագրեր էին ուղարկում ռուսական իշխանություններին` Ղարաբաղի հայ բնակչությանը Վրաստանի տարածքի ազատ հողերում տեղ հասկացնելու համար: Հիշեցնենք, որ դեռևս 1783 թվականից Գեորգիևսկում ստորագրված «Բարեկամության տրակտատով» Քարթլիի և Կախեթի թագավորությունն անցավ ռուսական հովանավորության տակ: Նամանավանդ, որ Աղա-Մուհամմեդ-խանի 1795թ. արշավանքի հետևանքով բնաջնջվեցին նաև բազմաթիվ հայեր, հրի մատնվեցին նրանց տները, կանայք ու աղջիկները ենթարկվեցին բռնությունների, տղամարդկանց կոտորեցին, իսկ անասունները քջեցին տարան: Կենդանի մնացածները թաքնվեցին լեռներում, անտառներում և այլ անվտանգ վայրերում³: Այս առումով հիշարժան է Ղարաբաղի մելիքների XVIII դ. վերջերին Եկատերինա Երկրորդին ու իշխաններ Գ. Պոտյոմկինին և Գուրդովիչին ուղղված նամակները, որոնցում ներկայացվել են հայ բնակչության ծանր վիճակը, մասնավորապես նշելով, որ Ղարաբաղի հայերը հուսահատ վիճակում են ու հեռանում են երկրից⁴: 1797թ., Աղա-Մուհամմեդ-խանի արշավանքից հետո, Ղարաբաղում սով բռնկվեց, ժողովուրդն անասելի զրկանքներ կրեց, բնակչությունը սկսեց հեռանալ երկրից, նրանց զգալի մասը գաղթեց Վրաստան, մյուսները` Շամախու կողմերը, կամ Ռուսաստան, Թուրքիա ու Պարսկաստան: 1798թ. սովին ավելացավ մահաբեր ժանտախտը, համաճարակի զոհ դարձան մեծ թվով մարդիկ, հիվանդությունը շատ կյանքեր խլեց հատկապես Սյունիքում, բնակչությունը հուսահատ փախչում էր, թողնելով տուն ու տեղ` լքում էր հայրենի եզերքը:

Դեռևս 1788թ. հունվարի 29-ին մելիքներ Մեջլումի և Աբովի Եկատերինա Երկրորդին ուղարկված նամակում նրանք հայտնում են, որ Ղարաբաղում այդ ժամանակ կար մելիքներին հպատակ 12 հազ. հայ ընտանիք կամ շուրջ 70 հազ. մարդ⁵: Այս նամակների արդյունքում, 1797թ. հոկտեմբերի 7-ին, Պավել Առաջինի հրամանով Ղարաբաղի մելիքներին` իրենց ժողովրդի հետ տրվեց

¹ Միրզա Յուսուֆ Ներսիսով, *Ճշմարտացի պատմություն*, Եր., 2000, էջ 46-56; *Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800 гг. Сборник документов*, т. IV, Ер., 1990, с. 354; Н. Жуковская, *Судьба кочевой культуры*, М., 1990, с. 54

² А. Такстгаузен, *Закавказский край*, СПб, 1857, ч. 1, с. 208, 213

³ *Обзор Елисаветпольской губернии за 1908 г., Елисаветполь, 1909, с. 3*

⁴ *Армяно-русские отношения...*, т. IV, сс. 373-375, 378, 459-461

⁵ Նույն տեղում, էջ 375



ռուսական հպատակություն: 1799-1800 թթ. Մելիք Ֆրիդոնը և Մելիք Ջուսուզունը իրենց հպատակ հայերով նախ հաստատվեցին Ղազախի հողերում, որտեղ հնուց ի վեր հայկական բնակավայրեր են եղել, սակայն Աղա-Մուհամմեդ-խանի ասպատակություններից հետո մեծ մասամբ դատարկվել էին, ապա նրանց մի մասն անցավ Լոռի ու Բորչալու: Մելիք Աբովը դեռևս 1797թ. իր 400 ընտանիք հայ հպատակներով ապրում էր Բոլնիսում և հարակից գյուղերում, իսկ Մելիք Մեջլումի որդի Մելիք Հաթամը բազմաթիվ հայ ընտանիքներով հաստատվել էր Գանձակում: Նույն տարիներին, Ղարաբաղի հայերի մի հոծ զանգված, սովից ու համաճարակից փրկվելու համար գաղթեց Շաքիի և Շիրվանի տարածքներ, որտեղ ընդհանուր առմամբ, ապրում էր շուրջ 20 հազար հայ ընտանիք¹: Հետագայում՝ 1799թ. Մելիք Աբովը արշավեց դեպի Ղարաբաղ, որտեղից Բոլնիս տեղափոխեց ևս 300 տուն հայեր: Այս տարիներին, ըստ ռուսական աղբյուրների, Ղարաբաղից արտագաղթել էր շուրջ 11 հազ. հայ ընտանիք: 1801թ. Վրաստանը Ռուսաստանի կազմի մեջ, որով էլ սկիզբ դրվեց Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու գործընթացին:

1805թ. Ղարաբաղը ընդունեց ռուսական հպատակություն, որը հաստատվեց 1813թ. ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո՝ Գյուլիստանի հաշտության պայմանագրով: 1822թ. վերացավ Ղարաբաղի կամ Շուշիի խանությունը, և երկրամասը բաժանվեց ռուսական վարչական միավորների: Որպես կանոն, ռուսական վարչակարգն իր տիրապետությանն անցած շրջաններում, առանց հապաղելու անց էր կացնում վարչական փոփոխություններ ու բնակչության հաշվառումներ: Ըստ ռուսական աղբյուրների, 1805թ. Ղարաբաղում կար մոտավոր ապես 10 հազ., իսկ 1808թ. հաշվառումների արդյունքում՝ գրեթե 7,5 հազ. ընտանիք: Հետագայում ևս, ըստ այդ հաշվառումների, բնակչության թվի նվազում է արձանագրվել, այսպես, միայն 1806-1812թթ., այսինքն ռուս-պարսկական պատերազմի տարիներին, գերի է տարվել ավելի քան 2.2 հազ. մարդ, իսկ 2.6 հազարը փախուստի էր դիմել: Հետևաբար, ինչպես նշվում է աղբյուրներում, 1810-1815թթ. Ղարաբաղում ապրում էր շուրջ 5 հազ. հայ ընտանիք²:

Սովորաբար, քաղաքական և տնտեսական նման բարդ պայմաններում, երբ բնակչությունը գտնվում է ակտիվ տեղաշարժերի մեջ, յուրաքանչյուր հաշվառում դատապարտված է անկատարությանը, իսկ երբ խոսքը վերաբերում է մի տարածքի, որի սահմաններն անգամ հստակ չեն և որտեղ ընդհանրապես որևէ հաշվառում չի իրականացվել, բավարար արդյունքներ չենք կարող ակնկալել: Այսօր դժվար է գեթ մոտավոր պատկերացում կազմել XVIII դ. վերջերի – XIX դ. սկզբների Ղարաբաղի բնակչության իրական թվի, էթնիկ կազմի, տեղաշարժերի ծավալների և ուղղությունների վերաբերյալ, քանի որ բնակչության ոչ մի հաշվառում չի կատարվել, ուստի մնում է եղած կցկտուր թվերի հիմամբ ինչ-ինչ եզրահանգումներ անել:

Հայտնի է, որ երբ Ղարաբաղը միացվեց Ռուսաստանին, Վրաստանի տարածք գաղթած շատ ղարաբաղցիներ ցանկացան վերադառնալ հայրենիք, սակայն ցարական իշխանություններն ամեն կերպ արգելեցին այդ նախաձեռնությունը և շատ քչերին հաջողվեց վերադառնալ հայրենի շեները:

Ղարաբաղի նորաստեղծ պրովինցիայում բնակչության առաջին հաշվառումն իրականացվեց 1823թ. ռուս պետական խորհրդական Մոգիլյովսկու և գնդապետ Երմոլով երկրորդի ջանքերով: Վերջիններս Վրաստանի գլխավոր կառավարիչ Ա. Երմոլովին հղած զեկուցագրում գրում են, որ Ղարաբաղում բնակչության ճիշտ հաշվառումներ կատարելու ցանկությունը շատ մեծ էր, որ իրենք փորձելու են տվյալներ քաղել հարցումների միջոցով, այս գործում ներգրավելով մահալ-

¹ Նույն տեղում, էջ 463, 505-507, 527, 533-535

² Акты собранные Кавказскою Археологическою комиссиею, Тифлис, 1873, т. V, ч. II, с. 579



ների բեկերին, գյուղերի քեթխուղաներին կամ ավագանիներին ու անգամ կալվածատերերին: Սակայն հարցումների արդյունքում պարզվեց, որ հարկատու ընտանիքների (հատկապես՝ քոչվոր) մի մասը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դուրս էր մնացել հաշվառումներից: Ուստի, նշում են նրանք, նպատակահարմար է մյուս խանությունների օրինակով, Ղարաբաղի բոլոր գյուղերում ու քոչատեղերում ևս ստուգումներ կատարել «Կամերալ ցուցակագրումների» միջոցով: Մինևույն ժամանակ նրանք վստահեցնում էին, որ նման մանրակրկիտ հաշվառումների արդյունքում ի հայտ կգան զգալի բացթողումներ ընտանիքների ու բնակչության սեռատարիքային կազմերի վերաբերյալ և որ իրենց կարծիքով, բնակչության իրական թիվը մեկ երրորդով ավելի էր¹: Այս փաստաթուղթը վկայում է, որ նմանատիպ հաշվառումները հեշտ չեն իրականացվել, իսկ արդյունքներն ամբողջական չեն ու կարող են միայն ընդհանուր պատկերացում տալ: Հիմք ընդունելով այս տվյալները և մեր հաշվարկները, որոնք բնականաբար շատ մոտավոր են, պարզվեց, որ ԼՂԻՄ-ի սահմաններում ապրում էր շուրջ 36,5 հազար մարդ, այդ թվում հայ՝ 84,6%, թյուրքալեզու էթնիկ խմբեր կամ թաթարներ՝ 14,7%, քուրդ՝ 0,7%: Գյուղական բնակչության 97,5%-ը հայեր էին, իսկ քաղաքայինի (Շուշի – 8,3 հազար մարդ)՝ 41%-ը:

Համեմատության համար նշենք, որ Ղարաբաղի պրովինցիայում 1823 թ. կար 17520 ընտանիք, որի գրեթե 30%-ը՝ հայկական էր, 22%-ը՝ թաթարական, 2%-ը՝ քրդական, իսկ քոչվորական կյանք էր վարում մահադական բնակչության շուրջ 46%-ը:

Հարկ է նշել, որ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով, Պարսկաստանի հայ բնակչությանը հնարավորություն տրվեց տեղափոխվելու Ռուսաստանին միացված հայկական հողեր: Գաղթականների մի փոքր մաս՝ շուրջ 300 ընտանիք հաստատվեց Ղարաբաղում, մեր կարծիքով, սրանց մեջ էին նաև այն ընտանիքները կամ սերունդները, որոնք, ինչպես նշվեց վերևում, երեսուն տարի առաջ գաղթել էին Պարսկաստան²:

1832-1833թթ. ցարական իշխանությունները «Կամերալ ցուցակագրումներ» կատարեցին Ղարաբաղի պրովինցիայում, այն արձանագրեց բնակչության թվի նվազում՝ 28,5%-ով, որը, մեր կարծիքով, պայմանավորված էր և քաղաքական անկայուն իրավիճակով, և հատկապես քոչվոր բնակչության արտագաղթով, ինչպես նաև անբավարար հաշվառումներով: Հետազոտվող տարածքում կար 26,1 հազ. բնակիչ, որից հայեր՝ 21,9 հազ. կամ 84%, թաթարներ՝ 4,2 հազ. կամ 16%: Շուշի քաղաքում ապրում էր 7,9 հազ. մարդ, որից հայեր՝ 54%: Այս նույն ժամանակ Ղարաբաղի պրովինցիայում ապրում էր ավելի քան 100 հազ. մարդ³:

1840թ. Անդրկովկասը բաժանվեց երկու վարչամիավորի՝ Վիրա-Իմերեթական նահանգի և Կասպիական մարզի, վերջինիս կազմում էր գտնվում Ղարաբաղի պրովինցիան: 1846թ. վարչական նոր բաժանման արդյունքում կազմավորվեց չորս նահանգ, հետազոտվող տարածքը մտավ Շամախու նահանգի մեջ⁴:

XIX դ. կեսերին Անդրկովկասում բնակչության ամբողջական հաշվառումներ չեն իրականացվել, առանձին վարչամիավորների մասին եղած տվյալների հիման վրա արված հաշվարկները ցույց տվեցին, որ Ղարաբաղի լեռնային մասում ապրում էր մոտ 43,5 հազար մարդ, որից ավելի քան 83%-ը հայեր էին, իսկ 16,7%-ը՝ թաթարներ⁵:

¹ Национальный архив Армении (НАА), Фонд 93, опись 1, дело 163, Камеральное описание (КО) Карабахской провинции в 1823 г. Действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-ым, Тифлис, 1866

² С. Глинка, *Описание переселения армян азербайджанских в пределы России*, М., 1831, с. 103

³ НАА, Фонд 93, оп. 1, д. 49, КО казенных крестьян Карабахской провинции на 1832-1833 гг., ч. 1; նույն տեղում, д. 50, ч. 2; д. 51, КО крестьян ханской фамилии

⁴ А. Шахатунян, *Административный передел Закавказского края*, Тифлис, 1918, с. 84-85

⁵ Кавказский календарь (КК) на 1852 г., Тифлис, 1851, с. 430-433; КК на 1856 г., Тифлис, 1855, с. 358-359, 376-441



Շուշի քաղաքի բնակչության թիվը հասել էր 12,7 հազարի, հայերը կազմում էին ամբողջ բնակչության կեսից ավելին: Հաճախակի կատարվող վարչատարածքային փոփոխությունները հաջորդում էին միմյանց: Ղարաբաղի պրովինցիայի և հարակից որոշ տարածքների հաշվին 1868թ. սկզբին կազմավորվեց Ելիզավետպոլի նահանգը, որը սկզբնական շրջանում բաժանվեց 5, իսկ 1873թ.՝ 8 գավառների: Հետագոտվող տարածքը մասնատվեց Ջիվանշիրի, Շուշիի և Ջաբրաիլի գավառների միջև:

1873-1875թթ. «Կամերալ ցուցակագրումների» հիմամբ արված հաշվարկների համաձայն Ղարաբաղում ապրում էր 93,1 հազ. մարդ, հայերը կազմել են ամբողջ բնակչության 84,7%-ը, իսկ թյուրքալեզու խմբերը՝ 15%-ը, Շուշիում կար 24,5 հազ. բնակիչ, այստեղ գերակշռող էր հայ բնակչությունը՝ 55%: 1850-ականների համեմատ նկատելի է բնակչության աճը՝ ավելի քան 53%¹:

1886 թ. կազմված «Ընտանեկան ցուցակների» վերլուծումից պարզվեց, որ Ղարաբաղի լեռնային հատվածում ապրում էր 116,8 հազ. մարդ, որից 84,8%-ը՝ հայ (99,1 հազ.), 14,9%-ը՝ թաթար (17,4 հազ.), այլք՝ 0,3%: Նախորդ հաշվառումից հետո անցած 11 տարում, եթե ամբողջ բնակչությունն աճել էր 20,3%-ով, ապա հայերի թիվը՝ 20,5%-ով, որը կատարվել է շուրջ 1,5% տարեկան միջին աճի պայմաններում: Գյուղական բնակչության մեջ դարձյալ գերակշռող էին հայերը՝ 93,2%: Շուշիի բնակչության թիվը հասավ 26,8 հազարի, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում՝ 56,6%²:

XIX դ. երկրորդ կեսերից Ռուսաստանի կառավարությունը պատրաստվում էր համառուսաստանյան առաջին մարդահամարի անցկացմանը: Երկար աշխատանքներից հետո այն իրականություն դարձավ միայն 1897թ.:

1897թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարն իր տեսակի մեջ եզակի էր, իսկ արդյունքները՝ հավաստի: Ըստ այդ մարդահամարի՝ Ղարաբաղում ապրում էր 128,6 հազ. մարդ, որից 82,7%-ը կամ 106,4 հազ.՝ հայ, 15,9%-ը կամ 20,4 հազ.՝ թաթարներ, ինչպես նաև 1,5 հազ. ռուս և 300-ը՝ փոքրաթիվ խմբեր: Գյուղական բնակչությունը կազմում էր 79,8%: Շուշիի բնակչության 55,8%-ը հայեր էին³: 1886 թ. տվյալների համեմատ 1897 թ. աճը կազմել էր ընդամենը 9%, ընդ որում, եթե հայերի թիվը ավելացել էր 7%-ով, ապա թյուրքալեզու խմբերինը՝ 14,7%: Նշենք, որ նման ցածր ցուցանիշները պայմանավորված էին ինչպես նախորդ հաշվառումների անկատարությունով, այնպես էլ հայ բնակչության ակտիվ տեղաշարժերով:

Լեռնային Ղարաբաղի ուսումնասիրվող ժամանակաշրջանի բնակչության էթնոժողովրդագրական նկարագրում կարելի է առանձնացնել մի քանի փուլ.

- XIX դ. սկզբից մինչև 1830 թ., երբ Անդրկովկասի ամբողջ տարածքն՝ այդ թվում Ղարաբաղը, աստիճանաբար միացվեց Ռուսաստանին: Այս շրջանին հատուկ էր ռազմաքաղաքական բարդ իրավիճակը, որի պայմաններում ակտիվանում են բնակչության տեղաշարժերը, նվազում է բնական աճը և բնակչության ընդհանուր թիվը:

- 1830-1850 թթ., բնակչության ժողովրդագրական գործընթացներում նկատվեցին որոշակի դրական տեղաշարժեր, սակայն քաղաքական ու տնտեսական անկայուն իրավիճակը պահպանվում էր:

¹ Сборник сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880, с. XXII-XXV

² Свод статистических данных о населении Закавказского края извлеченных из посемейных списков 1886 года, Елисаветпольская губерния, Тифлис, 1893, сс. 438-463, 510-527

³ Исторический архив России, Фонд 1290, опись 11, дело 636, 638, 695, Елисавет-польская губерния; Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., Елисаветпольская губерния, кн. 63, СПб, 1904



- 1850-1900 թթ. բնութագրվում են որպես բնակչության թվի աստիճանական կայունացման, տեղաշարժերի ակտիվության նվազման, բնական աճի համեմատաբար բարձր ցուցանիշն երի առկայության շրջան:

Այժմ տեսնենք, թե ինչ փոփոխությունների է ենթարկվել Լեռնային Ղարաբաղի բնակչության թիվն ու էթնիկ կազմը XIX դ. իրականացված հաշվառումների արդյունքում:

Այսպիսով, 1823թ. Ղարաբաղի տարածքում անցկացված պաշտոնական առաջին հաշվառումներից մինչև 1897թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարն ընկած 74 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի բնակչությունն աճել էր 3,5 անգամ կամ 71,6%-ով: Ինչպես XXդ., այնպես էլ նշված ժամանակահատվածում, թյուրքալեզու էթնիկ խմբերի աճի տեմպերն ավելի բարձր էին քան հայերինը, ասել է թե ժողովրդագրական քաղաքականությունը նախորդ երկու դարաշրջաններում գրեթե նույնն էր, այսպես, եթե երկրամասի հայ բնակչությունն աճել էր 3,4 անգամ կամ 71,0%-ով, ապա թյուրքալեզու էթնիկ խմբերը կամ այսպես կոչված թաթարները՝ 3,8 անգամ կամ 73,7%-ով, իսկ փոքրաթիվ էթնիկ հանրությունները՝ 6 անգամ:

ՇՈՒՇԻԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ԸՍՏ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԵԳՐՔԻ»

«Կովկասյան տարեգրքի» համարները, հրատարակված երկրամասի փոխարքայի գրասենյակի կողմից 1849 թվականից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը, հետաքրքրական մանրամասներ են պարունակում Կովկասի քաղաքների բնակչության տնտեսական զբաղմունքների, հասարակական կառուցվածքի, գավառական կառավարչության, պետական և զինվորական հաստատությունների մասին: Շուշի քաղաքին վերաբերող տեղեկություններ տարեգրքում առկա են առաջին համարից սկսած, որի 3-րդ բաժնի հատվածներից մեկում, նվիրված Անդրկովկասի քաղաքներին, ներկայացվում է Շուշիի պատմությունը և որոշ վիճակագրական տվյալներ. ծխերի քանակը՝ 2407, գործող 5 եկեղեցիների, 1 վանքի և 9 մզկիթների քանակը և այլն¹:

Տարեգրքն արդի հետազոտողին հնարավորություն է ընձեռում վերականգնել ռուսական կայսրության կազմում Շուշիի զարգացման հիմնական փուլերը, թեև քաղաքի պատմության որոշ կարևոր հարցեր, ինչպես օրինակ՝ 1905թ. ազգամիջյան բախումները, պետական այս հրատարակության էջերում գրեթե արծարծված չեն: Կան մի շարք այլ թերություններ և սահմանափակումներ՝ կապված վիճակագրական տվյալների անճշտությունների, հաճախակի կրկնությունների և միօրինակության հետ, ինչը վաղուց հայտնի է հետազոտողներին²: Դրա հետ մեկտեղ «Կովկասյան տարեգրքի» առավելություններից պետք է նշել այս հրատարակության շարունակականությունը, վարչական և այլ տեղեկատվության համակարգված շարադրանքը, որոնց մանրամասնության աստիճանը թույլ է տալիս համեմատության մեջ դիտել կայսերական Կովկասի բնակչության կյանքի տարբեր հանգամանքներ և պայմաններ:

Հարավային Կովկասի հարակից ընդարձակ հատվածում Շուշին XIX դ. երկրորդ կեսի միակ քաղաքային կենտրոնն էր և տարաբնույթ տնտեսական և վարչական գործառույթներ էր իրականացնում Ելիզավետպոլի նահանգի ողջ հարավի նկատմամբ՝ հարյուրավոր գյուղական բնակավայրերով և ավելի քան 400.000 բնակչությամբ: Տարեգրքի առաջին իսկ համարներից պարզ է դառնում, որ նախորդ դարակեսի համեմատությամբ Շուշին ռուս-պարսկական սահմանին իր առաջատար ռազմական նշանակությունը զիջել էր Նախիջևան, Սալյան և Լենքորան ավելի փոքր քաղաքներին, փոխարենն ստանձնելով տնտեսական, վարչական և, ինչպես հայտնի է հատկապես այլ աղբյուրների հաղորդմամբ, կրոնական ու մշակութային գործառույթներ: Շուշիի ապառազմականացման մասին է վկայում այն փաստը, որ քաղաքում չկար ռազմական հոսպիտալ, միակ գործող կիսահոսպիտալը գտնվում էր Վանք գյուղում, որտեղ տեղակայված էր նաև Արաքսի սահմանի պարեկային բրիգադի շտաբը³: Ուշագրավ է, որ արդեն 1852 թ. տարեգիրքը որպես գորամասի համար մեծածախ գնումների վայր էր նշում նույն Վանք գյուղի և Խանքենդիի (սպագա Ստեփանակերտի) կիրակնօրյա շուկաները⁴:

¹ Кавказский календарь (КК) на 1850г. от канцелярии наместника Кавказского, Тифлис, 1849, Отд. 3-е, С. 96

² Տե՛ս, օրինակ, տարեգրքի վերջին համարներում Շուշիի բնակչության անհավասարի բարձր թվերի մասին. Ն. Սարգսյան, **Շուշի քաղաքի բնակչության էթնիկ կազմը և նրա շարժունթացը** (XIX դ.-XX դ. սկիզբ), 1986-1988 թթ. ազգաբնակչության և բնագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքներին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Ե., 1990, էջ 56-57; М. Саркисян, **Из истории градостроительства Шуши**, Ер., 1996, С. 29

³ КК на 1901 г. Отд. 3-е, С. 48

⁴ КК на 1852 г. Отд. 3-е, С. 186. Խանքենդում էր տեղակայված նաև տարածքը վերահսկող խոշորագույն զորամասի՝ Մինգրեթական եզերական գնդի կենտրոնակայանը՝ տե՛ս Կոնստանտինովիչի հոդվածը Շուշիի մասին նույն համարի 430-435 էջերում



Տարեգրքի տվյալները հասկապես կարևոր են Շուշիի տնտեսական կյանքի առանձնահատկությունները հասկանալու համար, քանի որ մինչ այժմ հստակ չէ, թե ինչպես որպես ամբողջ և խանի ամառային նստավայր ձևավորված բնակավայրը ռուսական տիրապետության հաստատումով ձեռք բերեց առևտրական, արհեստագործական և արդյունաբերական կենտրոնի նկարագիր: Տարեգրքի արդեն առաջին համարը ներկայացնում է մի քանի ուշագրավ տեղեկություն, որոնք առաջին հերթին առնչվում են դարակեսին Շուշիում առևտրի վիճակին՝ կար 16 «գործարան», քաղաքի բյուջեի համալրումներից հիմնականը երկուսն էին՝ անասունների մորթի համար և իջևանատներից գանձվող գումարները (յուրաքանչյուր հողվածով տարեկան 1200 ռ.)¹: Տարեգրքի հաջորդ տարվա համարի հողվածագիրներից մեկը վերլուծում է Պարսկաստանի հետ առևտրական հարաբերությունների փոփոխված բնույթը, ընդ որում՝ նկատում է ինչպես պարսկական ապրանքի (հիմնականում բամբակ և մետաքսաթել) ներկրման ծավալների բազմապատիկ աճ (1832թ. 598 ռուբլու դիմաց 4 մլն ռուբլի 1849 թ.) այնպես էլ ներկրման գների նվազում, ինչը նպաստավոր պայմաններ էր ստեղծում Պարսկաստան-Ռուսաստան (Եվրոպա) առևտրի մեծագույն մասն իրականացնող հայազգի, այդ թվում՝ շուշեցի առևտրականների համար²: Շուշին դիրքեր էր ձեռք բերել այս առևտրում դեռևս 1750-ականներին քաղաք վերաբնակված ազուլեցի վաճառականների կապերի միջոցով: Առևտրի ծավալների մասին պատկերացում են տալիս տարեգրքի տեղեկությունները Խուդափերիինի կամրջից հյուսիս գտնվող Ջեբրայիլի մաքսային անցակետի տարեկան շրջանառության մասին, որը 1878թ. (մուտք՝ 269.806 ռ., ելք՝ 105.299 ռ.) կայուն երկրորդ տեղն էր զբաղեցնում Պարսկաստանի հետ կարավանային առևտրում՝ զիջելով միայն Նախիջևանի հիմնական ուղղությանը (Նախիջևանի և Շարուրի անցակետերի շրջանառությունը միասին կազմում էին մուտքը՝ 2.194.601 ռ., ելքը՝ 729.372)³: Կարելի է ենթադրել, որ հենց Պարսկաստանի հետ առևտրի բնույթը պայմանավորեց Արցախի նախալեռնային գոտում մետաքսի մշակության տարածումը, որպես սեփական հումքով Եվրոպա դուրս գալու նախաձեռնություն: Ինչպես հայտնի է, 1890-ականներից անդրկովկասյան երկաթուղու (սկզբում Բաքու-Թիֆլիս, այնուհետև՝ 1900-ական թթ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուղա հատվածների) գործարկմամբ Շուշին մեկուսացավ միջազգային առևտրի հիմնական ուղիներից⁴:

Քաղաքի տնտեսական նշանակությունը նպաստեց կրթության և մշակույթի հաստատությունների զարգացմանը, որոնց մասին նույնպես մանրամասնություններ կան տարեգրքի գրեթե բոլոր համարներում: Անդրկովկասի կրթական մյուս հաստատությունների շարքում տարեգիրքը հիշատակում է նաև Շուշիի վարժարանների և դպրոցների ուսուցիչների անունները, նրանց կողմից դասավանդվող առարկաների ցուցակը, ուսման վարձը և այլն: Այսպես՝ հայտնի է դառնում, որ 1894 թ. բացված Մարիամյան օրիորդաց ուսումնարանի ուսուցչուհիների մեծ մասը ռուսներ էին, իսկ Խանքենդիում 1897թ. այս ուսումնարանը բացել էր նախապատրաստական դասարան 9 սաների համար⁵:

Տարեգրքի աղբյուրագիտական նշանակությունը Շուշիի, ինչպես նաև Անդրկովկասի մյուս քաղաքների հասարակական կյանքի ուսումնասիրության առումով կարևորվում է դրա շարունակական համարներում հարյուրավոր անձնանունների և հասցեների հիշատակումը: Այստեղ

¹ Նույն տեղում՝ էջ 432

² *KK* *на 1853 г. С. 415-439*

³ *KK* *на 1881 г. С. 51*

⁴ Ռ. Տեր-Գասպարյան, *Շուշի քաղաքը*, Ե., 1993, էջ 59-64: *Ըստ տարեգրքի՝ Շուշիում մետաքսի բռնաժողովի իջել է նվազագույնի 1908թ. 12-14ր. փթի դիմաց (KK* *на 1910 г.)*

⁵ *KK* *на 1901 г. Отд. 3-е, С. 358*



ներկայացված են Շուշիի կայսերական հաստատությունների պետական ծառայողների անունները, որոնց կրողներից շատերը Շուշիի հայտնի հայ և մահմեդական ընտանիքների ներկայացուցիչներ են: Ակնհայտ է դառնում, թե ինչպես քաղաքային և գավառական վարչության առանձին պաշտոններ փաստացի ամրագրվում են հայկական համայնքի ներկայացուցիչներին: Վերջինների կազմում գերակշռում են հայ ազնվականական (մելիքական) և քաղքենիական-առևտրական դասերին պատկանող ընտանիքների անդամները: Նման աղբյուրի գոյությունը հատկապես կարևոր է մեր օրերում, երբ Շուշի վերադարձած հայ բնակչությունը շարունակում է քաղաքի բազմաշերտ պատմության վերակառուցման՝ դեռևս 1990-ականների սկզբին վերսկսած գործը: Տարեգրքի էջերից հայտնի հարյուրավոր շուշեցի հայերի մասին թեկուզ խիստ համառոտ տեղեկությունները կարող են համապատասխան աշխատանքի դեպքում լրացնել այլ աղբյուրներից, այդ թվում՝ Շուշիի հայկական ընդարձակ գերեզմանատներից հայտնաբերված վիմագրերի կցկտուր տեղեկությունները քաղաքի բնակչության մասին¹:

¹Զ. Հարությունյան, *Շուշի, նորահայտ նյութեր քաղաքի պատմության մասին, Սեփանակերտ, 2002*

ԴԱՐՔՆԻ ԾԻՍԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (XIX-XX ԴԴ.)

Արցախի մի շարք գյուղերում մինչև XX դարի սկիզբ պահպանվել էր Նավասարդի տոնակատարությունների հետ կապված մի հետաքրքիր ավանդույթ, որի գուգահեռները կարելի է հանդիպել Հայաստանի այլ գավառներում նույնպես: Ըստ այդմ, Նավասարդի նախօրեին գյուղացիները չար ուժերին քշելու և նոր տարի նրանց մուտքը կանխարգելելու նպատակով հնարավոր բոլոր միջոցներով աղմուկ են բարձրացրել: Այս արարողությունների մասն է կազմել նաև դարբնի կողմից դարբնոցում գնդանին հարվածներ հասցնելը: Մեկ այլ դեպքում նշվում է, որ դարբինները շաբաթ երեկոյան են կատարել գնդանին կռանահարման ծեսը: Հանդիպում է նաև կռանահարման ծեսը Ջատկի Ավագ հինգշաբթի գիշերը իրականացնելու տարբերակը: Հատկանշական է, որ Ջատկի Ավագ հինգշաբթի դարբնի կողմից իրականացվող ծիսական գործողությունների շարքում հանդիպում է նաև հղի հարսներին «ուրբաթարուր» մատանիներ պատրաստելու արարողությունը: Այդ մատանիները կրելու դեպքում հարսները պաշտպանվում էին չար ուժերից և չար աչքից:

Առաջին հայացքից ծիսական այս փոքրիկ դրվագը, որտեղ դարբինը կռանահարման միջոցով մասնակցում էր չար ուժերին քշելու արարողությանը, սերտ գուգահեռներ ունի ինչպես միջնադարյան պատմիչների կողմից նկարագրվող Արտավազդի շղթայման ծեսի հետ, այնպես էլ Հայաստանի այլ շրջանների գյուղերից գրանցված այն ծեսի հետ, որ դարբինը Ջատկի Ավագ հինգշաբթի նախօրեին մտնում էր դարբնոց, երեք խորհրդանշական հարված հասցնում գնդանին և դուրս գալիս, բացատրելով, որ դրանով ամրացնում է ժայռում գամված Արտավազդի շղթաները: Հիշեցնենք, որ նա այստեղ հանդես է գալիս որպես դրական հերոս, որը շղթայված է պահում աշխարհը փոխել (այսինքն գործող կարգը խափանել) ցանկացող Արտավազդին, որոշ տարբերակներում դիվահար Շիդարին: Հետաքրքիրն այստեղ այն է, որ դարբինները մի կողմից հանդես են գալիս, որպես չար ուժերի հակառակորդներ, մյուս կողմից գոյություն ունեցող կարգի, կամ ավանդույթի (Արտավազդի դեպքում խոսքը վերաբերում է թաղման ավանդույթի դեմ բողոքելուն): Նմանատիպ հերոս է նաև ժայռում փակված Փոքր Մհերը: Հատկանշական է, որ Մհերի դուռը կոչվող վայրի հետ կապված պահպանվել է Դարբնաց քարի ավանդույթը, համաձայն որի դարբինները օր ու գիշեր կռիվ են մղում վիշապների ու աշխարհակործան չար ուժերի հետ: Այսինքն, կարելի է ենթադրել, որ դարբնի կողմից իրականացվող կռանահարման ծեսը կապված է հնի ու նորի, տիեզերապահպան և տիեզերակործան ուժերի պայքարի մասին պատկերացումներին: Հատկապես, այդ պայքարն ուժեղանում է ժամանակային պարբերաշրջանների փոփոխման պատճառով առաջացող կրիտիկական ժամանակամիջոցներին: Դարբնի ծիսական կերպարում հստակ նկատվում են տիեզերապահպան հերոսի հատկանիշներ: Մակայն հարց է ծագում, թե հատկապես ինչպիսի գծերով է օժտված ծիսական նման գործառույթ ստացող հերոսը:

XIX դարի վերջում և XX դարի սկզբներին Արցախում տարածում ունեին դարբնի կողմից պատրաստվող երկաթյա կամ պողպատյա իրերի հետ կապված որոշ հավատալիքներ, որոնք թույլ են տալիս ավելի լիարժեք դարձնել դարբնի ծիսական կերպարին վերաբերող մանրամասները: Մասնավորապես, դարբնի պատրաստած պողպատյա մեխերը կամ կայծքարի պողպատը՝ հրահանը համարվում էին չարխափան ինչպես չար ուժերից պաշտպանվելու, այնպես էլ



հիվանդություններից ու վախից բուժվելու նպատակով: Այսպես, ինչպես բուժական, այնպես էլ չարխափան նպատակներով, բավական տարածված էր սուրբ ծառերի բներին մեխեր մեխելը: Հաճախ նույն նպատակով մեխ են մեխել նաև դռան շեմին, որը նույնպես չարի ու բարու պայքարի սահմանագծային տարածք է համարվել:

Մեկ այլ սովորության համաձայն, արգելվել է արևը մայր մտնելուց հետո երեխաներին լողացնել: Խիստ անհրաժեշտության դեպքում դա թույլ է տրվել՝ պայմանով, որ ջրի մեջ անպայման պողպատյա իր գցեն: Հաճախ այդ իրի դերում հանդես է եկել նաև կայծքարի պողպատը: Վերջինս նաև երեխաներին չար աչքից պահպանելու նպատակով յոթ գույնի թելերով կարել են նրա ձախ ուսին:

Այսինքն, հստակ նկատելի է մի ընդհանրություն, որը ցուցում է, որ դարբնի պատրաստած երկաթե կամ պողպատե առարկաները կրում են չար ուժերին վնասագերծելու հատկանիշ: Հետաքրքիր է, որ պողպատի չարխափանության հատկությունը հաճախ բացատրել են պողպատի և կայծակի ընդհանրությամբ: Ի դեպ, այս հավատալիքը համահունչ է համահայկական և նույնիսկ հնդեվրոպական տարածում ունեցող այն հավատալիքի հետ, որ կայծակի ժամանակ երկնքից պողպատ է ընկնում: Արցախում, ըստ ավանդական պատկերացումների ընդունված է եղել նաև այն հավատալիքը, որ կայծակը դա հրեշտակների ձեռքի սուրն է, որով նրանք քշում են չար ուժերին: Այդ պատճառով էլ կայծակ խփած ամեն բան համարվում էր մաքրագործված: Այսինքն, կարելի է ասել, որ արցախյան ժողովրդական հավատալիքներում նկատվում են պողպատ-կայծակի, որպես սրբազան զենքի մասին ավանդական պատկերացումները: Ավելորդ չէ նշել, որ այս պատկերացման դրսևորմանն ենք հանդիպում նաև հայկական ժողովրդական էպոսի հերոսների զենքի՝ Թուր Կեծակիի անվանման մեջ:

Հատկանշական է, որ Արցախում տարածված է եղել նաև կայծակ խփած քարերի ու ծառերի պաշտամունքը:

Այսինքն, եթե ընդունենք, որ չարխափան համարվող պողպատե առարկաներ պատրաստողը դարբինն էր, որին փաստորեն նույնպես կարևոր տեղ էր տրվում՝ Նոր տարվա կամ Զատիկի չարխափանության ծեսերում և նկատի ունենանք այն, որ ծիսա-առասպելական մտածողությունը նույնականացնում է պողպատն ու կայծակը, ապա կարելի է ասել, որ ծիսական մտածողության հարթությունում դարբնին վերագրվում են *պողպատ-կայծակ* սրբազան զենքին տիրապետող հերոսի հատկանիշներ:

Դարբնի մասնակցությամբ վերը բերված կռանահարության ծեսում, որը պատմական աղբյուրներում և Հայաստանի որոշ շրջանների ավանդույթներում բացատրվում է որպես Արտավազդի շղթայման ծես, կարելի է տեսնել ամպրոպի ու կայծակների միջոցով վիշապներին հալածող դարբին-ամպրոպամարտիկի կերպարի աղերսներ: Ի դեպ, ամպրոպամարտիկ դարբինը բավական տարածված կերպար էր ինչպես հնդեվրոպական, այնպես էլ հարևան կովկասյան ժողովուրդների առասպելներում և հատկապես դրա գուգահեռները հայոց ավանդական ծիսական կյանքում պետք է դիտել որպես բնականոն երևույթ:

Մյուս կողմից, ինչպես վերը նշեցինք, այս ծեսն ընդհանրություններ ունի նաև համահայկական տարածում ունեցող Արտավազդի կամ Շիդարի շղթայման ծեսի հետ, քանի որ ծիսական գործողության առումով, (այսինքն կռանահարության) այս ծեսերը կրկնում են իրար: Մեկ այլ վերլուծությունում մենք հանգամանորեն ներկայացրել ենք վիշապ Արտավազդ-դարբին հակադրության իմաստաբանությունը և ցույց տվել, որ Արտավազդի շղթայման ծեսի հիմքում նույնպես ընկած է վիշապ Արտավազդին շղթայելու միջոցով աշխարհի կարգը կործանումից



պահպանելուն ուղղված վիշապամարտի առասպելաբանական թեման, որում դարբինը կրում է վիշապամարտիկ հերոսի ծիսական գործառույթը:

Նկատի ունենալով վերը բերվածը՝ կարելի է ենթադրել, որ Արցախում դարբնի մասնակցությամբ նավասարդյան այս ծեսի ենթատեքստում նույնպես հանդիպում է հին և նոր ժամանակների փոփոխման միջոցին աշխարհի կարգը խափանել ցանկացող և նրա դեմ պայքարող ամպրոպամարտիկ-դարբնի պայքարի իմաստաբանությունը, որի ակունքները թաքնված են երկաթի մշակույթի վաղ շրջանի հետ կապված հնդեվրոպական վիշապամարտի առասպելային մետաղագործական առումի հետ:

Բերված վերլուծությունը ցույց է տալիս, որ Արցախում նավասարդյան ծիսակարգում դարբնի կողմից իրականացվող կռանահարման չարխափան ծեսը սերտ գուգահեռներ ունի համահայկական տարածում գտած նմանտիպ մեկ այլ՝ նույնպես ծիսական կռանահարությամբ, դարբինների կողմից Արտավազդի շղթաների ամրացման ծեսի հետ և իմաստաբանորեն նրա հիմքում ընկած է հին ու նոր ժամանակների սահմանագծին ընթացող տիեզերակործան և տիեզերապահպան ուժերի պայքարը ներկայացնող վիշապամարտի թեման: Այսպիսով, բերված մասնավոր օրինակը և դրա վերլուծությունը ցույց են տալիս, որ արցախյան ժողովրդական հավատալիքները մասն են կազմում համահայկական հավատալիքների, և դրանցում արտահայտված տարբերակները սերտորեն կապված են հայկական այլ շրջանների տարբերակներին, ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարաժամանակյա առումներով:

ՇՈՒՇԻԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1916-1926 ԹԹ.

Առաջին աշխարհամարտը, 1917թ. ռուսական հեղափոխությունն ու դրան հաջորդած տարիները բեկումնային ժամանակաշրջան դարձան ցարական Ռուսաստանի տարածքում և մասնավորապես Անդրկովկասում բնակվող հայության համար: Անդրկովկասում ծայրահեղ սրվեց երկրամասի վարչատարածքային վերաբաժանման խնդիրը՝ ազգային-էթնիկական սկզբունքի հիման վրա: Ցարիզմի իրականացրած վարչատարածքային բաժանումն Անդրկովկասում չէր բխել ո՛չ էթնիկ, ո՛չ աշխարհագրական-տեղագրական և ո՛չ էլ տնտեսական նկատառումներից, ինչի արդյունքում էլ խնդիրը կարգավորելու փորձերը բախվում էին երկրամասի 3 տիտղոսակիր ազգությունների՝ հայերի, վրացիների և թաթարների հակադիր դիրքորոշմանը՝ բացառելով համաձայնության գալու որևէ հնարավորություն: Էթնիկ և տնտեսական առանցքի շուրջ Անդրկովկասի վարչական տարածքների սահմանների փոփոխության նախագծերն ու առաջարկները 1917-1918 թթ. լուրջ առարկությունների հիմք դարձան հայկական և շատ դրվագներում միասնաբար հանդես եկող վրաց-թաթարական կողմերի միջև:

1918թ. մայիսին՝ անդրկովկասյան հանրապետությունների հռչակումից հետո, Հայաստանի տարածքի անբաժան և պատմական մասը կազմող Ղարաբաղի հարցը դարձավ հայ-ադրբեջանական խնդիրների առանցքը: Ադրբեջանի նորաստեղծ պետության ձգտումները և հարուցած վեճերը ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև Նախիջևանի ու Զանգեզուրի պատկանելիության շուրջ չունեն որևէ նախահիմք:

Շուշիի գավառի և ընդհանրապես Լեռնային Ղարաբաղի բնակչության մեջ հայերի՝ մեծամասնություն լինելու փաստը առարկության ենթակա լինել չի կարող: Ղարաբաղի բնակչության ազգային կազմի մասին հավաստի տեղեկություններ կարող ենք քաղել ցարական Ռուսաստանի վիճակագրությունից, ըստ որի 1916թ. Շուշի քաղաքի 43.869 բնակիչներից 23.396-ը հայեր էին, 19121-ը՝ մահմեդականներ (ըստ անգլ. տվյալների՝ 19091), 1249-ը՝ ռուսներ, մյուսները՝ վրացիներ, լեռնականներ, եվրոպացիներ: Քաղաքի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը (53.33%):

Անդրկովկասի հայ բնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան բրիտանական արխիվներում: Համաձայն 1917թ. տվյալների՝ Ղարաբաղն ընդգրկում էր մոտ 13.850 քառ. կմ տարածք՝ Ղազախ, Ելիզավետպոլ, Շուշի, Ջևանշիր և Կարյազինո գավառների մի մասով և 255.000 հայ բնակչությամբ: Այս տարածքներում բնակվում էին 72.500 մահմեդականներ, իսկ հայերը կազմել են ամբողջ բնակչության 75.46%-ը¹: Նույն թվականին տպագրված «Кавказский календарь»-ում հայ բնակչության վերաբերյալ տվյալներն ունեն հետևյալ տեսքը.

1. Ղազախում՝ 61000 հայ,
2. Ելիզավետպոլում՝ 52000 հայ,
3. Ջևանշիրում՝ 22000 հայ,
4. Շուշիում՝ 98000 հայ,
5. Կարյազինոյում՝ 22000 հայ²:

¹ Armenia, Political and Ethnic Boundaries 1878-1948, London, 1998, p. 477

² Նույն տեղում, էջ 479, Кавказский календарь на 1916 г., Тифлис, 1917, с. 194-195



Ցարական Ռուսաստանի վիճակագրության մեջ Ղարաբաղին վերաբերող տվյալները ամբողջովին չեն ներառել երկրամասի մի շարք պատմական մասեր (Գյուլիստան, Վարանդա, Խաչեն, Դիզակ, Ջրաբերդ), իսկ այդ պատճառով դժվար է պատկերացում կազմել բնակչության ամբողջական թվի մասին: Արցախահայության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են պարունակում Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի տվյալները (1914թ. Ղարաբաղի Հայոց թեմն իր մեջ ընդգրկում էր 206.768 լուսավորչական հայ)¹: Ղարաբաղի հայ բնակչության մասին առավել հավաստի տվյալներ, ըստ որոշ ուսումնասիրողների, պարունակում են Թիֆլիսում գտնվող անգլիական գործերի հրամանատարությանը տրամադրված հայկական տվյալները, որոնք վերաբերում են 1917 թվականին, և ուր ներկայացված է հայ բնակչությունն ըստ գյուղերի²: Ըստ վերոհիշյալ տվյալների՝ Ղարաբաղի լեռնային մասի բնակչությունը կազմել է մոտ 240.000 մարդ, ընդ որում հայերը մեծամասնություն են կազմել Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Շուշիի, Կարյազինոյի շրջաններում, ուր նրանց թիվը 194 հազար էր: Նույն տվյալների համաձայն՝ Շուշի քաղաքի հայ բնակչությունը կազմել է 21.151 մարդ:

1918թ. ընթացքում Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ ցեղասպան քաղաքականությունը շարունակեց թուրքական գորահրամանատարությունը՝ կոտորածներ կազմակերպելով մասնավորապես Ելիզավետպոլի նահանգի հայության շրջանում, ապա նաև սեպտեմբերին ջարդի ենթարկելով Բաքվի հայությանը: Թուրք-ադրբեջանական հայաջինջ քաղաքականության գազաթնակետը հանդիսացավ Շուշիի հայության կոտորածը 1920թ. մարտի 10-23-ը, որի արդյունքում Շուշին հայաթափվեց:

1920-ական թթ. Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ թվական և այլ տվյալներ արձանագրվել են 1923թ. ԽՍՀՄ մարդահամարով: Այսպես, 1923թ. մարդահամարով Ադրբեջանական ԽՍՀ քաղաքաբնակ հայության թիվը կազմում էր 77.002 մարդ: Անշուշտ, Ադրբեջանական ԽՍՀ քաղաքային հայ բնակչության գերակշիռ մասը բնակվում էր հենց Բաքվում, որի վերաբերյալ վիճակագրական տվյալներն ավելի ամփոփ են հաջորդ մարդահամարների ժամանակ: Ավելի ընդգրկուն վիճակագրական արդյունքներ են վեր հանված 1926 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ Համամիութենական առաջին մարդահամարով: Այս մարդահամարով վերջնականապես ճշգրտվում են 1920-ական թթ. Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը, տեղաբաշխումն ու այլ գործընթացներ, ուր ընդգրկված էր թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչությունը:

¹Վ. Բալայան, *Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը*, Ե., 2002, էջ 293

²Ա. Ղարիբյան, *Արցախի բնակչության ազգային կազմի շուրջ* (ըստ 1917 թ. տվյալների), *Արևելագիտական ժողովածու*, հ. 4, Ե., 2004, էջ 104-109

Հայերն Ադրբեջանական ԽՍՀ-ում՝ ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի

	ամբողջը	արական	իգական	Մայրենի լեզու				գրագետ	գրագետ ազգ. լեզվ.
				հայ	ռուս	ժևուժ	լիւ		
Ադրբեջանական ԽՍՀ ¹ , որից՝	282.004	144.877	137.127	276.223	4039	239	1503	93.739	84.312
1.ԼՂԻՄ	111.694	56.225	55.469	111.624	55	8	7	25.792	25.703
2.Նախիջևանի ԽՍՀ	11.276	5643	5633	11223	16	15	22	3757	3705
3. ք. Բաքու	76.656	36.904	36.752	72.569	3806	37	244	40.408	32.318
4.ք. Գանձակ	16.148	8.218	7.930	15.930	83	11	124	7067	6721

Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչությունը 1926թ. մարդահամարով կազմում էր հանրապետության ամբողջ բնակչության 12,4%-ը: Ադրբեջանական ԽՍՀ քաղաքային հայ բնակչությունը կազմում էր 103.280 մարդ: Բաքվում (արդյունաբերական-գործարանային շրջանի հետ) էր կենտրոնացած ադրբեջանահայության 27,1%-ը, իսկ Գանձակում՝ 5,7%-ը: Բաքվի գավառում (առանց Բաքու քաղաքի) ևս մեծաթիվ հայ ազգաբնակչություն կար, որոնց թիվը հասնում էր 7541 մարդու: Գյուղական շրջաններում բնակվում էր ընդամենը 429 հայ: Գավառի հայ ազգաբնակչությունը գլխավորապես կենտրոնացած էր արդյունագործական գործարանային շրջանում (7112 մարդ): Արդյունագործական գործարանային շրջանում բնակվող հայությունը կենտրոնացած էր Լենին-Սուրխաթական շրջանում՝ 4792 մարդ, Բիբի Էյբաթում՝ 1928 մարդ, Բինիգադում՝ 392 մարդ:²

Բավականին բարձր էր ադրբեջանահայության մեջ հայերենին տիրապետողների թիվը, որոնք այն համարում էին իրենց մայրենի լեզուն, նրանց տոկոսային կշիռը կազմում էր 97,9%-ը, իսկ 1,4%-ի համար մայրենի լեզուն ռուսերենն էր: Գրագետ էր հանրապետությունում բնակվող հայության 33,2%-ը: Ադրբեջանական ԽՍՀ հայության գերակշիռ մասը՝ 63,4%-ը, գյուղաբնակ էր և ցրված հանրապետության բոլոր գավառներում անխտիր: Առանձին դիտարկենք ԼՂԻՄ-ը և ԼՂԻՄ-ի մեջ չմտած, բայց պատմական Արցախի լեռնային կամ դաշտային մաս կազմող գավառների հայ բնակչությանը վերաբերող տվյալները ևս: Այսպես.

1. Գանձակի (առանց քաղաքի) գավառի հայ ազգաբնակչությունն իր թվաքանակով ամենամեծն էր Ադրբեջանական ԽՍՀ գավառների մեջ, ուր բնակվում էր 41.861 հայ, որոնցից 40.895-ը գյուղաբնակներն էին: Գավառի մյուս 2 քաղաքները՝ Ելենենդորֆն ու Շամխորը, նույնպես հայաբնակ էին, ընդ որում նրանց հայ բնակչությունը մի քանի անգամ գերազանցում էր տեղի թուրք (ադրբեջանցի) ազգաբնակչության թիվը: Գավառի գյուղական շրջաններից (Դայրա) Աղջաքենդիում (8.975 հայ կամ 91,8%), Բանանցում (Բայանում՝ 12.409 հայ կամ 99,7%), Սլավյանովկայում (8396 հայ կամ 75,5%), Չայքենդում (6413 հայ կամ 76,5%) հայ ազգաբնակչությունը գերակշռում էր իր թվաքանակով, զգալի թիվ էր կազմում Ելենենդորֆում՝ 3017 մարդ կամ շրջանի

¹Всесоюзная Перепись населения 1926 года, т. XIV. Закавказская Социалистическая Федеративная Советская Республика. Азербайджанская ССР. М., 1929, с. 12

²Итоги всесоюзной Переписи населения 1926 года по г. Баку и Промыслово-Заводскому Району, т. 1, Издание Баксовета, 1929, с. 42



բնակչության 43,4%-ը: Գանձակի գավառի մյուս գյուղական շրջաններում ևս առկա էր հայ ազգաբնակչություն, որոնց թիվը մի քանի տասնյակից մի քանի հարյուր մարդ էր կազմում:

2. Ղազախի գավառի հայ ազգաբնակչության թիվը 3632 մարդ էր, որոնցից 2020-ը բնակվում էր Ձնգամի գյուղական շրջանում: Հայաբնակ էին նաև գավառի քաղաքային բնակավայրերը՝ Ղազախում՝ 414 հայ, Թովուզում՝ 404 հայ, Աղստուն (Աղստաֆա)՝ 171 հայ:

3. Աղդամի գավառում բնակվող 2525 հայից 1917 մարդ բնակվում էր Թարթառ (Տերտեր) քաղաքում և համանուն շրջանի գյուղական վայրերում: Հայաբնակ էին նաև Եվլախ, Աղդամ քաղաքներն ու Բարդայի գյուղական շրջանը (250 հայ):

4. Ջեբրայիլի գավառի 625 հայ բնակիչների կեսից ավելին՝ 383 մարդ, բնակվում էր Կարյագինո (Սարդար) քաղաքում և համանուն գյուղական շրջանում: Հայաբնակ էին նաև գավառի Հորադիզ, Ջեբրայիլ, Ջանգելան և Խանլիխ գյուղական շրջանները:

5. Քուրդիստան գավառի 373 հայ բնակիչների հիմնական մասը բնակվում էր Մուրադխանլի և Ղուբաթլու գյուղական շրջաններում, իսկ Լաչինում հայերի թիվը 66 մարդ էր (քաղաքի բնակչությունը 435 մարդ էր):

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (ԼՂԻՄ)

1923թ. կազմավորված ԼՂԻՄ-ն ուներ 2 քաղաք և 5 գյուղական շրջաններ, ընդամենը 125.159 բնակիչներով, որոնց 89,2%-ը (111.694 մարդ) հայեր էին, 10%-ը՝ թուրքեր (12.592 մարդ): ԼՂԻՄ քաղաքներում բնակվում էին 2817 հայեր, որից Ստեփանակերտում՝ 2724, իսկ Շուշիում՝ ընդամենը 93 հայ: Ղարաբաղի և Հարավային Կովկասի խոշոր հայկական կենտրոն Շուշիում Ադրբեջանի մուսավաթական կառավարության իրականացրած ջարդերի և հայաթափության արդյունքում վերացվել էր քաղաքի գերակշիռ մասը կազմող հայ բնակչությունը, իսկ Շուշիի շրջանի գյուղերում ևս իրավիճակը նույնն էր. ամբողջ շրջանում բնակվում էին ընդամենը 8 հայեր: Շուշի քաղաքն ու համանուն շրջանը բնակեցված էր 9220 թուրքերով (ԼՂԻՄ թուրք բնակչության 73,2%-ը), որոնք արհեստականորեն ձևավորված ադրբեջանական Քուրդիստանի հետ մեկտեղ նպատակ ունեին թուլացնել Ղարաբաղի կապը հայկական ԽՍՀ-ի հետ: Լեռնային Ղարաբաղի ԻՄ գյուղական շրջաններում բնակվում էին 108.877 հայ և ընդամենը 7349 թուրք բնակիչներ: Այսպես.

1. Վարանդայի շրջ.՝ 28.190 հայ, 650 թուրք,
2. Ջրաբերդի շրջ.՝ 29.292 հայ, 1914 թուրք,
3. Խաչենի շրջ.՝ 26.702 հայ, 22 թուրք,
4. Դիզակի շրջ.՝ 24.685 հայ, 443 թուրք,
5. Շուշիի շրջ.՝ 8 հայ, 4320 թուրք:

Լեռնային Ղարաբաղի ԻՄ հայ ազգաբնակչության 99,9%-ի համար մայրենի լեզու էր ազգային լեզուն՝ հայերենը: Գրագետ էր ԼՂԻՄ հայ բնակչության 23%-ը:

Նախիջևանի ԻԽՍՀ

Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ գտնվող Նախիջևանի ԻԽՍՀ-ում բնակվում էր 11.276 հայ: 1926թ. Նախիջևանի ԻԽՍՀ-ն ուներ 3 քաղաք, բաժանված էր 8 գյուղական շրջանների, որոնցում անխտիր առկա էր հայ ազգաբնակչություն: Նախիջևան քաղաքում բնակվում էր 1065 հայ, որը կազմում էր քաղաքի բնակչության 10,3%-ը, իսկ Օրդուբադում՝ 77 հայ: Ջուղա (Ջուլֆա) քաղաքի հայ ազգաբնակչությունը (293 մարդ) իր թվաքանակով գերազանցում էր տեղի թուրք բնակչությանը: Նախիջևանի ԻԽՍՀ Փառակա գյուղական շրջանում հայ ազգաբնակչության թիվը հասնում



էր 2789 մարդու և կազմում էր ամբողջ շրջանի բնակչության 60,8%-ը: Հայ բնակչության թվաքանակով երկրորդը Նարիմանովկայի շրջանն էր, ուր բնակվում էին 2004 հայեր, ապա Տումբուլի շրջանը՝ 1529 հայով: Կիվրախի գյուղական շրջանում բնակվում էին 1079 հայեր, Ապրակունիսում՝ 876, Ջուղայում՝ 848, Բաշ-Նորաշենում՝ 455 և Օրդուբադում 261: Նախիջևանի ԻԽՍՀ գյուղական շրջանների հայության ընդհանուր թիվը 9841 մարդ էր, իսկ քաղաքային բնակչության թիվը՝ 1435: Նախիջևանի ԻԽՍՀ հայ բնակչության 99,5%-ի համար հայերենը մայրենի լեզու էր:

1930-ական թվականներին Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը շարունակական աճ է դրսևորել, ինչն ակնհայտ երևում է 1939թ. Համամիութենական մարդահամարով վեր հանված վիճակագրական տվյալներից:

Հայերն Ադրբեջանական ԽՍՀ-ում՝ ըստ 1939 թ. մարդահամարի

	ամբողջը	բնակչության մեջ %-ներով	քաղաքային	գյուղային
Ադրբեջանական ԽՍՀ ¹ որից՝	388.025	12.1	171.101	216.924
1. ԼՂԻՄ	132.800	88	10.555	122.245
2. Նախիջևանի ԻԽՍՀ	13.350	10.5	3016	10.334
3. ք. Բաքու	118.703	14.7	118.703	-

Արդեն 1939թ. մարդահամարով Ադրբեջանական ԽՍՀ քաղաքային հայության տոկոսային կշիռն աճել էր և կազմում էր 44%: Միայն Բաքու քաղաքում բնակվում էր ադրբեջանահայության 30,5%-ը: Քաղաքային հայ բնակչության շրջանում աճ է առկա թե՛ ԼՂԻՄ-ում, թե՛ Նախիջևանի ԻԽՍՀ-ում: 1926 թ. արդյունքների համեմատ՝ 21,3%-ով (38.200 մարդով) աճել է նաև գյուղական հայ բնակչության թիվը: ԼՂԻՄ-ի հայ ազգաբնակչության թիվը աճել էր 18,8%-ով (21.106 մարդով), որն այնքան էլ բարձր ցուցանիշ չէր, եթե նկատի ենք առնում, որ Բաքվի հայության թիվը նույն ժամանակահատվածում աճել էր 42.047 մարդով (54,8%-ով): Բաքվի հայ ազգաբնակչության թվի կտրուկ աճը մեծ մասամբ պայմանավորված էր գյուղական շրջաններից հայության արտահոսքով:

Այսպիսով, Ադրբեջանական ԽՍՀ-ին նվիրաբերված մի շարք հայկական և հայաբնակ գավառներ (Ղարաբաղ, Նախիջևան) և նրանց բնակչությունը հայկական էին, որոնք, դառնալով քաղաքական, կուսակցական պետական շահերի գոհ, բռնակցվել և հայտնվել էին ՀԽՍՀ հարևան հանրապետության կազմում: Դեռևս ցարական Ռուսաստանի կազմում գտնված ժամանակ Անդրկովկասի խոշոր տնտեսական և քաղաքական կենտրոններում հայ ազգաբնակչությունը գերակշռում էր ոչ միայն իր թվաքանակով, այլև զբաղեցնում էր ամուր դիրքեր քաղաքական, տնտեսական, առևտրական, կրթական-գիտական և այլ ոլորտներում: Պատահական չէ, որ անգամ մուսավաթականների՝ 1918թ. Բաքվում իրականացրած հայկական ահավոր սպանդից հետո տեղի հայ բնակչությունը դեռևս 1920-ական թվականներին իր թվաքանակով գերազանցում էր Երևանի հայությանը:

Այսպիսով, ընդամենը 10 տարվա ընթացքում՝ 1916-1926 թթ., փոփոխվեց հայկական պատմական Արցախի երկրամասի թե՛ բնակչության էթնիկ կազմի տեսակարար կշիռը, թե՛ սահման-

¹ Всесоюзная Перепись населения 1939 год, Основные итоги, с. 71.



ները: Այդպիսին էր երկրամասի հայ մեծամասնության նկատմամբ վարած ադրբեջանական քաղաքականության արդյունքները: Պատմական Արցախի երկրամասի լեռնային և ցածրադիր կամ դաշտային շրջաններում միասին 1926 թ. դեկտ. 17-ի մարդահամարով բնակվում էր 176.458 հայ (Ադրբ. ԽՍՀ-ում՝ 282.004 հայ):

ա. 1916թ. համեմատ Ղարաբաղի հայության թվաքանակը մեկ տասնամյակ անց նվազել է մոտ 80.000-ով (համեմատելով 1917թ. անգլ. տվյալների հետ՝ 78.542 մարդով):

բ. Ղարաբաղի հայության ընդհանուր թվի նվազմանը գուցենթաց՝ ամբողջությամբ հայաթափվեց Շուշի քաղաքը և շրջանը, ավելին՝ այն բնակեցվեց մահմեդական բնակչությամբ:

գ. 1916-1926թթ. դարձան այն բեկումնային ժամանակաշրջանը, երբ հայաթափվեցին Շուշին, գանձակը և բազմաթիվ այլ հայկական բնակավայրեր, սեպ խրվեց մայր հայաստանի և Արցախի միջև արհեստաձին Կարմիր Քուրդիստանի միջոցով:

դ. Ադրբեջանի կառավարող շրջանակների նպատակաուղղված հակահայ գործելակերպի արդյունքում Ղարաբաղից հայության արտահոսքը շարունակվեց նաև հետագա տարիներին:

ՇՈՒՇԻԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Ասեղնագործական դպրոցը Արցախում հնագույն պատմություն ունի: Միջնադարյան հայ պատմագրության մեջ ասեղնագործության մասին առաջին ամբողջական տեղեկությունը վերաբերում է Արցախ աշխարհին: Կիրակոս Գանձակեցին հիացմունքով է պատմում Հաթերքի իշխանուհի Արգու խաթունի և նրա դուստրերի ձեռքի աշխատանքների մասին՝ որակելով դրանք որպես. «...իմաստութիւն ոստայնանկութեան եւ հանձար նկարակերտութեան»: Գետքի եկեղեցու համար նրանց պատրաստած վարագույրը պատմիչը նկարագրում է այսպես. «Ձարմանալի տեսողաց, ի մագոյ այծիցն կակղագունից, ներկեալ պէսպէս եւ զանազան, գործ քանդակակերպ եւ նկարեալ պատկերօք, ճշտագոյն հանուածովք, տնօրինականօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցաներ զտեսնողսն»¹: Գանձակեցին հիշատակում է մեկ այլ իշխանուհու՝ Ներքին Խաչենի տեր Վախթանկի տիկնոջ՝ Խորիշահի մասին ևս, որը, ամուսնու մահից հետո, 1216-ին «...չոգաւ յԵրուսաղեմ երկրորդ անգամ, բոլոր ունեցածը կարօտելոց բաշխեց, և ինք իւր ձեռագործով ապրեցաւ միշտ...»²:

Հայ ազնվական տիկնանց բնորոշ գեղարվեստի ավանդույթները մինչև XIX դ. պահպանվեցին Արցախի մելիքական դասի կանանց շնորհիվ, որոնց մասին Ե. Լալայանը գրում է. «Սրանք (*մելիքների կանայք-Կ.Բ.*) մի քանի աղախին և ծծմայր ունեին և տան կառավարությամբ չէին զբաղվում, միայն մետաքսից թեշիկով թել էին մանում, ասեղնագործում, քսակ և այլ ձեռագործեր շինում»³: Մելիքական դասի կանանց ձեռագործերը մեծ մասամբ կատարվում էին ոսկեթելով, փայլուններով, մարգարտանման ուլունքներով՝ թանկարժեք կտորների վրա: Սրանք հաճախ ունենում էին անվանատառեր և վենզելներ, որոնք ներկայացնում էին նրանց ազնվականական ծագումը:

Ասեղնագործության՝ որպես արցախցի կանանց սիրված զբաղմունքի մասին են վկայում բարբառում պահպանված մի քանի հատկանշական բառեր, որոնք ներկայացրել են Սահակ վարդապետ Ամատունին և Հ. Աճառյանը: Իրենց բառարաններում նրանք ներկայացրել են Ղարաբաղում գործածվող *անուլի* (որ բացատրվում է՝ ասեղնագործ, ասեղով գործած), *ասղակար* (ասեղով գործած, ձեռագործ), *ծաղկավոր* (վրան ծաղիկներ բանած կամ նախշած) բառերը: Հատկանշական է, որ Աճառյանը որպես ղարաբաղյան երևույթ է ներկայացնում նաև Արևելյան Հայաստանում XIX դ. լայն տարածում ունեցող այն սովորույթը, որի համաձայն «Ավագ ուրբաթ առաւօտ՝ լուսածագին 7 հատիկ կար ասեղով կը կարեն իրարու զգեստի վրայ, իբրև չարէ պահպանուելու միջոց», և որը հայտնի էր *ուրբաթարօր*, կամ *ուրբաթառու* և այլ անվանումներով⁴:

Հայկական ձեռնարվեստի հմուտ գիտակ Ս. Դավթյանն իր «Հայկական ասեղնագործություն» աշխատության մեջ Արցախի ասեղնագործությունը միացնում է Սյունիքին և շատ քիչ է անդրադառնում դրան⁵: Ընդունելով դրանց ընդհանրությունը՝ միաժամանակ անհրաժեշտ ենք համարում խոսել զուտ արցախյան և հատկապես Շուշիի քաղաքային ձեռնարվեստի առանձնահատկությունների մասին, ինչին էլ ուղղված է սույն աշխատանքը: Ցավոք մեր ձեռքի տակ չունենք դաշտային ազգագրական նյութեր, որոնք հնարավորություն կտային առավել մանրամասն

¹Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի*, Ե., 1961, էջ 215-216

²Նույն տեղում

³Ե. Լալայան, *Գանձակի գավառ*, Երկեր, հ. 2, Ե, 1988, էջ 249

⁴Սահակ վրդ. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912: Հ. Աճառյան, *Հայերեն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913

⁵Ս. Դավթյան, *Հայկական ասեղնագործություն*, Ե., 1972



վերլուծություններ կատարել, ուստի կփորձենք այն ներկայացնել գրականության մեջ սփռված փոքրաթիվ տեղեկությունների և թանգարանային հավաքածուների օգնությամբ:

Արցախում ասեղնագործական արվեստի զարգացումն ու լայն տարածումը XIX դ. վերջերին կապված է Շուշիի՝ որպես քաղաքի ձևավորման հետ: Շուշիում, որը շատ կարճ ժամանակում դարձավ Արևելյան Հայաստանի ամենահայտնի «ամառանոցային» քաղաքը, մեծ էր ծագումով արցախցի թիֆլիսաբնակների մշակութային ազդեցությունը: Ինչպես վկայում է Ստ. Լիսիցյանը. «...երկհարկանի, երբեմն նաև՝ եռահարկ քաղաքատիպ տները, հովեկների զգեստները...ինչպես նաև՝ գեղարվեստական ճաշակն ու զվարճալի ժամանցները չէին կարող չհեղափոխել ոչ միայն «բերդի», այլ նաև շրջակա մոտիկ գյուղերի արտաքին կեցվածքն ու կենցաղը»¹: Այդպիսով, XIX դ. վերջից քաղաքային նոր տիպի բնակարանների ներսույթը, ի տարբերություն ավանդական-գյուղականի, առաջ բերեց ասեղնագործ և ժանյակե զանազան իրերի պահանջ՝ որպես ժամանակի նորաձևության արտահայտություն: Բնակարան մուտք գործած եվրոպական տիպի կահույքի հետ սենյակների գեղազարդմանն էին ուղղված բազմաթիվ ծածկոցներն ու տակդիրները, վարագույրներն ու սփռոցները, բարձերն ու թիկնաբարձերը և շատ ու շատ այլ իրեր, որոնք արտահայտում էին նաև տանտիրուհու կամ ընտանիքի կանանց ու աղջիկների ճաշակը, վարպետությունն ու, որ պակաս կարևոր չէ, նաև սոցիալական դրությունը:

Շուշիի ասեղնագործության զարգացմանն ու լայն տարածմանը նպաստող գործոն էր նաև օժիտի ինստիտուտը, գործոնը, որն, ընդհանուր առմամբ, բնորոշ էր ողջ Հայաստանին: Հայոց մեծ հատուկ վերաբերմունք կար կանանց ձեռնարվեստի նկատմամբ. հայ կինը պարտավոր էր տիրապետել կարուձևին, հյուսելուն, ասեղնագործելուն, քանի որ «Կնոջ գործն է գլխավորապես տնային հիմնական առարկաների և առօրեայ սպառող պիտույքների պատրաստութիւնը»²: Հայ կնոջ, աղջկա պատիվն էր սեփական ձեռքերով օժիտի պատրաստումը, ուստի դեռ մանուկ հասակից հայ օրիորդը սկսում էր սովորել ձեռագործի տարբեր տեսակներն ու դրանց նրբությունները: Գյուղերում աղջիկները վարպետության դասեր էին առնում կամ հարազատներից, կամ այլ հմուտ կանանցից: Քաղաքներում այդ բացը լրացվում էր դպրոցական կրթության միջոցով:

Շուշիում ասեղնագործության զարգացումը խթանեցին 1864թ. քաղաքում բացված սբ. Մարիամ իգական և Ղարաբաղի թեմական դպրոցները: Այդ գործում ուշագրավ է շուշեցի Մարիամ Հախումյանի կատարած աշխատանքը, որի կազմած ծրագրով և գործադրած ջանքերի շնորհիվ բացվեց «Սուրբ տիրամայր Մարիամու» օրիորդաց դպրոցը, որտեղ հատուկ ուշադրություն էր դարձվում նաև աղջիկներին ձեռագործի դասավանդմանը: Ասեղնագործության ուսուցման բարձր մակարդակի վկայությունն է այն փաստը, որ հիշյալ ուսումնական հաստատությունների բյուջեի համալրման աղբյուրներից մեկը սովորողների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառքից հավաքված գումարն էր: Այս մասին մանրամասն և խիստ արժեքավոր տեղեկություններ են տալիս «Տարագ» ամսագիրը³ և «Գործ» հանդեսը⁴: Հանդեսում մասնավորապես ներկայացվել են օրիորդաց դպրոցի հաջողությունները, որ 1880-1881 թթ. աշակերտների թիվը հասել է 149-ի: «Գործն» անդրադարձել է ոչ միայն ուսուցման ձևերին ու մեթոդներին, ուսուցանվող առարկաներին, որոնց թվում հատուկ տեղ է գրավել «ձեռագործի արվեստը, որ ուսուցանում էր նրանց Զառի Արզումանյանը», այլև աշակերտուհիներին խրախուսելու միջոցներին, որոնց թվում

¹Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը (*ազգագրական ակնարկ*), Հայ ազգագրություն և բանահյուսություն, սյր. 12, Ե., 1981, էջ 30

²Ա. Թառաեան, Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, *Ազգագրական հանդես, գիրք 9, Թիֆլիս, 1898, էջ 50*

³Ղարաբաղի թեմական դպրոցի հաշիւը, *Տարագ, Թիֆլիս, 1981, էջ 63*

⁴Ավագյան Ա., *Ղարաբաղի մանուկ պատմություն*, Ե., 1989, էջ 96-97



հիշատակության արժանի են «շնորհալի աղջիկների ձեռագործների ցուցահանդեսները», ինչպես նաև հատուկ մրցանակագրերի և վարժապետական կոչումների հանձնումը: Հանդեսում թվարկված են այն առաջադեմ աշակերտուհիների անունները, որոնք օրինակելի վարք են ցուցաբերել և հետագայում զբաղվել մանկավարժությամբ, դրանց թվում են Վարսենիկ Գյանջեցյանը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Բալխանում Առաքելյանը, Կատարինե Դուլխանյանը և ուրիշներ:

Շուշիում ասեղնագործության զարգացմանը նպաստում էր նաև տեղի կուսանոցը, որի միանձնուհիների ձեռքի աշխատանքներն իրենց կարատեսակներով և գեղարվեստական վարպետությամբ մեծապես ազդում էին շրջապատի վրա: Միանձնուհիները միաժամանակ ասեղնագործություն էին դասավանդում տներում, որի մասին վկայում է Լեոն¹: Նրանց ջանքերով Շուշիի ասեղնագործ բանվածքներն աչքի են ընկնում բարձր որակով ու արտահայտչականությամբ:

Ինչպես Հայաստանի մյուս քաղաքների, այնպես էլ Շուշիի ասեղնագործական արվեստի աշխուժացումը նպաստեց նաև կանանց ուղղորդված հանդեսների («Ծաղիկ կանանց հատուկ», Կ. Պոլիս, «Տարագ», Թիֆլիս և այլն), ինչպես նաև ասեղնագործ կանանց, աղջիկներին ու վարպետներին ուղղված ձեռնարկների տպագրությունը², որոնցում առաջարկվող զարդանախշերն ու տառաձևերն օգտագործվում էին իրենց աշխատանքներում: Այդ է պատճառը, որ հիշյալ ժամանակահատվածում քաղաքային ասեղնագործությունը հայկական բոլոր քաղաքներում մեծ ընդհանրություններ է դրսևորում:

Շուշիի ասեղնագործական դպրոցում առավել տարածում ունեցող կարատեսակներն էին հարթակարն իր տարատեսակներով (լիցք, համրովի), շղթայակարը, ցողունակարն ու թելքաշը: XX դ. սկզբներից գործածվում է նաև օղակար-պատկարը, որը օտար՝ եվրոպական նորաձևության արդյունք էր և նման էր մյուս քաղաքների նույնատիպ բանվածքներին: Ասեղնագործության համար կիրառվում էին հիմնականում մետաքսյա և բամբակյա բազմագույն և սպիտակ թելեր: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, համեմատաբար հարուստ խավի աշխատանքներում գերակշռում են թանկարժեք ոսկեթել-արծաթաթել, մետաքսաթել, ուլունքազարդ և այլ նյութերի կիրառմամբ հարուստ ասեղնագործությունները: Եթե մինչև XIX դ. վերջերը կիրառական էին տեղական արտադրության մետաքսաթելերը, որոնք պատրաստվում էին տնայնագործական եղանակներով և նույն ձևով էլ ներկվում, ապա XX դարից լայն տարածում ստացան պատրաստի, ներմուծված նոր տիպի թելեր՝ «իրիս», «գարոզ», «մուլինե» և այլն, որոնք մեծ քանակությամբ վաճառվում էին խանութներում: Ջարդանախշերը գերազանցապես բուսական և կենդանական են:

Ինչպես արդեն նշվեց, Շուշիի ասեղնագործությունները գերազանցապես բնակարանի ներսույթը զարդարելուն ուղղված բազմազան իրեր են (ծածկոցներ, վարագույրներ, բարձեր, թիկնաբարձեր, սփռոցներ, սրբիչներ և այլն):

Շուշիի ասեղնագործության զարդահամալիրն աչքի է ընկնում բուսական զարդանախշերի գերակայությամբ, որոնք ներկայացված են ինչպես ոճավորված, այնպես էլ ճշգրիտ վերարտադրված: Հատկապես հետաքրքիր են ծիսական սրբիչների ասեղնագործ նախշերը, որոնք արված են համրովի հարթակարով և թելքաշի տարբեր եղանակներով ու զարդարված են երկրաչափականացված ծառերի շարքով, որոնց ճյուղերի վրա նստած են զույգ թռչուններ: Սրբիչների

¹ Լեոն, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի*, Շուշի, 1914

² Ա. Բրիլյանչիկյան, *Հայկական մոնոգրամներ եւ ծաղկագրեր ձեռագործի համար*, Մ. Պետերբուրգ, 1892, Եղ. Պատկանեան, *Հայկական նշանագրեր հարթակարի համար*, Թիֆլիս, 1990, *Տեոր ասեղնագործության, գծագրեց և վիմագրեց Մ. Ոսկինար*, Տրապիզոն, 1907 և այլն



այս տեսակը բնորոշ է միայն Սյունիք-Արցախյան դպրոցին և իր մեջ կրում է հայկական ասեղնագործության հնագույն ավանդույթները:

Այլ խումբ են կազմում քաղաքային տիպի ասեղնագործությունները, որոնց զարդահամալիրներում, բացի զուտ արցախյան բնորոշ զարդանախշերից, լայնորեն ներկայացված են համահայկական նախշեր և հորինվածքներ, որոնք կարելի է հանդիպել նաև նույն ժամանակաշրջանի այլ քաղաքների ասեղնագործության մեջ: Դրանք իրենց վրա կրում են ռուսական, եվրոպական ազդեցություն, քանի որ արվում էին վերը հիշատակված հանդեսներում և ամսագրերում տպագրված նախշերի հիման վրա: Նման ասեղնագործությունների զարդանախշերը խիստ ռեալիստական են՝ սիրամարգ, աղավնի, ծիծեռնակ, որոնք հանդես են գալիս որպես հիմնական կերպար և ուղեկցվում են տարբեր առարկաների հետ (գավաթ, գիրք, նամակ և այլն):

Քաղաքային կենցաղում նոր երևույթ էին նաև զուտ դեկորատիվ բնույթ ունեցող սյուժետային ու դիմանկարային ասեղնագործությունները, որոնք գործածվում էին պատերը զարդարելու համար: Դրանք, որպես գեղանկարչական տիպի աշխատանքներ, ներկայացնում էին ինչպես ազգային նշանավոր դեմքերին (Վարդան Մամիկոնյան, Խրիմյան Հայրիկ), այնպես էլ ուղղակի որևէ արատրակտ հերոս կամ հերոսուհի, որոնք պատկերվում էին որոշակի միջավայրում:

ՏՈՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԿԵՆՏԱՂՈՒՄ

Մինչև XX դ. սկզբները դարաբաղցիների ավանդական տոնաձևական համալիրն ուներ այն նույն կառուցվածքը, ինչպիսին՝ հայ էթնոսի մյուս բոլոր հատվածներինը:

Հայ էթնոսի այդ խմբի ավանդական կենցաղում առավել տարածված տոներն էին՝ **Նոր Տարին, Քրիստոսի Ծնունդը, Սուրբ Սարգիսը, Վարդանանցը, Տեառնընդառաջը (Դրոդոտունջ, Դողոռաջ, Դօնդոտունջ), Բարեկենդանը, Մեծ Պասը, Ծաղկագարդը (Զրգարդար, Զրրըզարթար, Զրըզարդար), Զատիկը, Համբարձումը, Վարդավառը (Վարդեվոր, Վրդեվոր, Վրրթեվոր, Վրրթեվոր), Սուրբ Աստվածածնի Վերափոխումը, Խաչվերացը** և մասնավորապես՝ **Նավասարդը**¹:

Հայոց քրիստոնեական տոնացույցի հենքը կազմող հիշյալ տոները ծագումնաբանորեն ունեն հեթանոսական արմատներ, որոնք առանձնանում են տնտեսության, ընտանիքի և անձի բախտն ու ճակատագիրը կանխագուշակող հմայական բնույթի ծեսերով, սովորույթներով ու հավատալիքներով: Դրանցում հիմնականում արտացոլվել է երկրագործական-ժողովրդական տոնացույցը², որը համահայկական համատեքստում բնորոշ էր նաև դարաբաղցիների ավանդական տոնաձևական համալիրին:

Տոների այս շարքում ուշագրավ է ավանդական Նավասարդի կենցաղավարումը, որն առավելություն ուներ հունվարյան Ամանորի (հունվարի 1) նկատմամբ: Վերջինս հիմնականում տարածված էր Ղարաբաղի քաղաքային բնակավայրերում: Թեպետ գյուղ ներթափանցող քաղաքային սովորույթները թուլացրել էին ավանդական Նավասարդը, սակայն վերջինիս փոխարեն դեռևս կենցաղ չէր մտել հունվարյան Նոր Տարին (հունվարի 1), որը, ի տարբերություն Շուշի

¹ Ե. Լալայան, **Վարանդա**, ԱՀ, Թիֆլիս, 1898, գիրք 9, 1, էջ 338-349
Ե. Լալայան, **Գանձակի գավառ**, ԱՀ, Թիֆլիս, 1900, գիրք 2, էջ 232-382
Ստ. Լիսիցյան, **Լեռնային Ղարաբաղի հայերը** (ազգագրական ակնարկ), ՀԱԲ, 112, Երևան, 1981, էջ 67-73
Դադյան, **Ջան-գիլուններ. Վարանդայի բանավոր գրականությունից**, ԱՀ, Թիֆլիս, 1908, գիրք XVIII, էջ 25-32
Ս. Իսրայելյան, **Լեռնային Ղարաբաղի Փիրջամալ**, Նախիջևանիկ և Շուշի քաղաքի ազգագրական նյութեր, 1970, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս I և II (1 355- 356), 48
Գ. Գրիգորյան, **Ղարաբաղի ազգագրական նյութեր (գ. Սպանդարյան)**, 1970-1971, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 19, մասեր՝ I և II, տետրեր՝ I, II, III, IV
Ս. Վարդանյան, **Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Շուշիի շրջան, 1970 թ. հունիս-հուլիս**, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, տետր 11 FF VII, էջ 6189
Բ. Ղազիյան, **Ղարաբաղ**, տարբեր ժամանակներ, 1973-ից սկսած, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, տետր 1
Մ. Բեգյան., **Լեռնային Ջազիր գյուղի ավանդական սովորույթներ, արհեստներ և ծեսեր**, Երևան, 1985, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս III, IV, 11/150
Ն. Ղազարյան, **Գանձակի գավառի (Ելիզավետպոլի) հայկական բնակավայրերը և պատմական ճարտարապետական հուշարձանները**. Գյուլումներ (Բարսում, Ջազիր, Խաչակապ), Երևան, 1984, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 5/116, թղթ. 4: Նաև՝ Գանձակի գավառ, Երևան, 1985 թ., 2/124, թղթ. 1
Թ. Հայրապետյան, **Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ**, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2004, 3, (167), էջ 217-227
² Որոշ հետազոտողներ՝ այս տեսանկյունով տիպաբանորեն դասակարգելով քրիստոնեական տոնացույցի հենքը հանդիսացող ավանդության տոները, փորձել են դրանցում պահպանված մինչքրիստոնեական տարրերի միջոցով բացահայտել առանձին տոների կամ տոնախմբերի կապը տնտեսական գործունեության ավանդական փուլերի հետ (ցանքի նախապատրաստում, ցանք, խնամք, բերքահավաք և այլն): Այս առումով ուշագրավ է Վարդ Բոդյանի աշխատությունն (տե՛ս՝ Վ. Բոդյան, «Երկրագործական մշակույթը Հայաստանում», Երևան, 1972, էջ 433-501), որտեղ ավանդության տոները դասակարգվել են ըստ երկրագործական աշխատանքային փուլերի: Ավանդության տոները այստեղ ներկայացվել են հետևյալ դասակարգմամբ. 1. Տոներ, որոնք կապված են գարնանացանի նախապատրաստական աշխատանքների հետ (Նոր Տարի-Ամանոր, Քրիստոսի Ծնունդ-Զրորհներ, Սուրբ Սարգիս, Տեառնընդառաջ, Բարեկենդան, Մեծ Պաս, Ծաղկագարդ, Զատիկ և Համբարձում): 2. Տոներ, որոնք կապված են դաշտերի խնամքի և բերքահավաքի հետ (Վարդավառ, Նավասարդ, Ս. Աստվածածին): Երկրագործական տոնացույցի գրեթե նմանատիպ տիպաբանություն է տվել նաև Ասյա Օղաբաշյանը (տե՛ս՝ Ա. Օղաբաշյան, Հայոց ժողովրդական հավատալիքները» (դոկտորական հայցման ատենախոսության սեղմագիր), Երևան, 1995, էջ 10-11)



քաղաքի՝ գյուղերում աննկատ էր անցնում¹: Ղարաբաղում Նավասարդը նշվում էր ոչ թե օգոստոս ամսին, այլ՝ նոյեմբերին², որը խորհրդանշում էր տնտեսական տարվա ավարտը*:

Քաղաքային միջավայրը, որպես օրինաչափություն, հիմնային գործոն է՝ ավանդական ծեսերի ձևափոխման կամ համալրման տեսակետից: Այս առումով հատկանշական են այնպիսի նորությամբ երևույթներ, ինչպիսիք են՝ Նոր Տարվա առիթով շնորհավորական բացիկները կամ այցետոմսերը³ և զատկական Ախառ-մատաղին՝ մասնակցության հրավիրատոմսային ձևերը⁴, որոնք եվրոպական ազդեցության արդյունք էին և աստիճանաբար տարածվում էին նաև Ղարաբաղի քաղաքատիպ բնակավայրերում:

Ուշագրավ էր նաև եվրոպական ծագում ունեցող **Ապրիլի 1-ի** կամ **խաբելու տոնի**⁵ տարածվածությունը XIX դ. վերջերին՝ Գանձակ քաղաքում և շրջակա գյուղերում, որն այդ ժամանակի հայ իրականության մեջ եզակի երևույթ էր:

Առանձնահատուկ երևույթ էր նաև Վարդավառ տոնի ծիսահամալիրում **Համբարձման-վիճակի** և մասամբ՝ **Նուրինի** առկայությունը, չնայած դրանցից յուրաքանչյուրը կենցաղում դեռևս պահպանում էր ժամկետային և արարողակարգային ինքնուրույն դիմագիծը*⁶: Նշենք նաև, որ ղարաբաղյան ծիսական **Նուրինը** («Գողի», «Ճուլի»), կատարում էր ինչպես անձրևաբեր, այնպես էլ վնասաբեր տեղումները կանխարգելող կամ անձրևախափան գործառույթ⁶:

Տարածված էին առանձին տոներին և սրբերին նվիրված ուխտագնացությունները: Ղարաբաղյան ուխտավայրերից մասնավորապես իրենց մասսայականությամբ և հատուկ նշանակությամբ կարելի է առանձնացնել Շուշիի՝ **Քամու խաչը**⁷, Գանձակի՝ **Մկնատամի խաչը**⁸, **Ամարասը**,

¹ Ստ. Լիսիցյան, *նշվ. աշխ.*, էջ 67

² Անդ

* Հայոց ավանդական այդ տոնը, ընդհուպ մինչև XX դ. սկզբները, ձևափոխումներով հանդերձ, Գանձակի և Վարանդայի բնակավայրերի հետ միասին առավելապես պահպանվել էին նաև Սյունիքում, Գողթնում և Պարսկահայքում, ուր Նավասարդի ժամկետները տատանվում էին ամռան վերջերից մինչև ուշ աշուն: Չնայած մասնակի առանձնահատկություններին, նավասարդյան ծիսաշարն ուներ ընդհանրական գծեր: Դրանք հիմնականում նշվում էին աշնանը՝ համընկնելով բերքահավաքին, այգեկութին, նախաթողին, և միննույն դեպքում, իրենցից ներկայացնում էին գյուղատնտեսական աշխատանքային պայմանադրությունների յուրօրինակ ծիսական սահմանագիծ: Վերջինս հատկապես նկատվում էր Տավուշի և Արմավիրի գյուղական բնակավայրերում, ուր արդեն գրեթե մոռացվել էր Նավասարդի՝ տոն լինելու հանգամանքը

Նշենք նաև, որ ղարաբաղցիների տոնածիսական վարքագծային նմանությունները, մասնավորապես՝ Լոռու, Տավուշի, Սյունիքի ու Գողթնի հետ, հիմնականում պայմանավորված էր աշխարհագրական դիրքով և միգրացիոն ինտենսիվ գործընթացներով, որի արդյունքում ձևավորվեցին գրեթե նմանատիպ կենցաղամշակութային համալիրներ

³ Ե. Լալայան., *Գանձակի գավառ*, էջ 363

⁴ Ե. Լալայան., *Վարանդա*, էջ 347

⁵ Ե. Լալայան., *Գանձակի գավառ*, էջ 370

** Հայաստանում կային այլ բնակավայրեր ևս, ուր Վարդավառին գրեթե կրկնվում էին Համբարձման վիճակախաղերը: Տավուշում, Համշենում, Պոնտոսում և շատ այլ տեղերում, Վարդավառը ևս համարվում էր վիճակ բացելու օր, որը երբեմն ավելի հանդիսավորությամբ էր կատարվում, քան՝ Համբարձման տոնին: Հայաստանի առանձին գավառներում Վարդավառին նաև խարոյկներ էին վառում, որոնց շուրջը կատարվող արարողությունները նման էին Տերընդեզի կրակավառության հանդիսություններին (տե՛ս՝ Բ. Թոռլաքյան, Ազգագրական նյութեր հավելենահայերի և պոնտահայերի սոցիալական հարաբերությունների մասին, Երևան, ՀԱԻ ԱԲԱ, մաս 6-րդ, 230, տետր 3/30, էջ 438: Նաև՝ Գ. Հալաջյան, *Դերսիմի ազգագրական նյութերը*, 1960, Երևան, ՀԱԻ ԱԲԱ, մաս 5, 399, 1 5 բ, էջ 1525)

⁶ Բ. Ղազիյան, *նշվ. աշխ.*, էջ 73-74: Նաև՝ Ս. Վարդանյան, *նշվ. աշխ.*, էջ 6189: Նաև՝ Թ. Հայրապետյան, *նշվ. աշխ.*, էջ 220

⁷ Այդ սրբավայրում զանգվածային ուխտագնացություններ էին կազմակերպվում մասնավորապես՝ Մեծ Պատի Չարչարանաց շաբաթի Ավագ Չորեքշաբթի (Չիք Չորեքշաբթի) օրը (տե՛ս՝ Ե. Լալայան, Վարանդա, էջ 345)

⁸ «Ուխտավորները մոմեր էին վառում, աղոթում և այդ սրբավայրի հողից ջրով մի փոքր շաղախելուց հետո քսում մկնատամ ունեցողների վերքերին, որ շուտ ապաքինվեն: Վերադարձի պահին քարեր էին զլորում կամ նետում, որպեսզի իրենց հիվանդություններն էլ այդ քարերի հետ հեռանան: Ուխտավայրերում գտնվող ծառերից շորեր էին կապում, որպեսզի հիվանդություններն այնտեղ կապված մնան: Սրբավայրերից բերված հողը լուծում էին ջրի մեջ և խմեցնում աղջիկներին՝ շուտ ամուսնանալու ակնկալիքով» (տե՛ս՝ Ե. Լալայան, Գանձակի գավառ, էջ 368)



Ննգիի՝ Ս. Լուսավորիչը, Սարիբեկը, Սարուշենի՝ Ավետարանը¹, Նախիջևանիկի՝ Նահատակը², Պարկեսա-Պերքը³***ն այլն:

Ավանդական կենցաղում տոների մասնակիցները սոցիալական գրեթե բոլոր խավերն էին՝ իգական սեռի որոշակի գերակայությամբ: «Հայ կինը,- գրում է Լեոն,- ընտանեկան կյանքի մեջ ներկայացնում է ինչպես մի առանձին մարմին, որը պահպանում է նախնական սովորություններն ամենայն սրբությամբ և միշտ հարազատ է մնացել հայության լեզվին և բոլորովին պահպանել է հայ կնոջ պատմական առանձնահատկությունները՝ չենթարկվելով ոչ մի տեսակ արտաքին ազդեցության: Այդ խոստովանում են տղամարդիկ: Եթե մեր ժամանակ մնացել է սիրտ, հոգի, բարեպաշտություն, դա միայն կանանց մեջ է,- ասում են նրանք: Մեզ հայտնի է, որ ուսման ազդեցությունն անգամ չի կարող ացել առայժմ իսկևս հայ կնոջից նրա պապական սովորությունները, ուսում առածներն էլ ջերմեռանդ պաշտպան են նախապաշարմունքների»⁴:

Նույնիսկ խորհրդային շրջանում ազգային տոնի կամ ծեսի հիմնական կրողը՝ կինն էր (հատկապես՝ տարեց կինը), որը ավանդաբար դեռևս պահպանում էր ներընտանեկան տոնածիսական միջոցառումների գլխավոր կազմակերպչի կարգավիճակը:

Չնայած դարաբաղիների ավանդական տոնածիսական համալիրում հիմնականում տարածված էին Հայ Առաքելական եկեղեցու կողմից հատուկ կանոնարկված քրիստոնեական տոները, սակայն կենցաղում նախընտրությունը տրվում էր առավել հնագույն՝ բնապաշտական հենքեր ունեցող ժողովրդական խաղային և զվարճալի բնույթի արարողություններին⁵:

XX դ. սկզբներին, դարաբաղիների կենցաղում ավանդական տոների կտրուկ անկումը գլխավորապես պայմանավորված էր խորհրդային համակարգի հակակրոնական ուղղվածությամբ⁶: Հայոց էթնիկ ինքնությունը արտացոլող էթնոմշակութային այդ կարևոր բաղադրիչի անկման գործընթացն առավել խորացավ, քանի որ նորաստեղծ քաղաքական համակարգը բոլոր պայմանները ստեղծել էր՝ այլէթնիկ և այլակրոն ընդգծված բնութագիր ունեցող ադրբեջանական պետական կառույցների կողմից բացահայտ ու քողարկված հակահայկական քաղաքականություն իրականացնելու համար: Դրա փաստացի վկայությունն էր՝ ադրբեջանական ազգային-կրոնական տոների ու ծեսերի նկատմամբ որոշակի հանդուրժողական քաղաքականությունը:

Արդյունքը եղավ այն, որ արդեն XX դ. վերջերին, տեղաբնիկ հայ էթնոսի շրջանում ազգային-ավանդական տոներն ամբողջությամբ տեղի տվեցին խորհրդային ապազգային տոնածիսական միջոցառումներին: Դա մեծ չափով պայմանավորված էր սերունդների աթեիստական դաստիա-

¹ Ամարասը, Ննգիի գյուղի Ս. Լուսավորիչը, Սարիբեկը և Սարուշենի Ավետարանը, մասնավորապես՝ Վարդավառյան գլխավոր ուխտավայրեր էին (տե՛ս՝ Ե. Լալայան, Վարանդա, էջ 348)

² Ս. Բարայեյան., նշվ. աշխ., մաս II, էջ 30-33

³ Անդ, էջ 169-170

*** Ժողովուրդը շատ խոր հավատ ուներ Նախիջևանիկի Սուրբ Նահատակի գործության նկատմամբ: Այդ իսկ պատճառով ուխտի էին գալիս նույնիսկ հեռավոր բնակավայրերից (մեծ մասամբ՝ ոտքով և ոտաբոբիկ), որտեղ մատաղի ծեսերը և փառլանների երայթները համատարած բնույթ ունեին: Պարկեսա-Պերք ուխտավայր այցելության գլխավոր նպատակը՝ այդ սրբի գործությամբ զավակ ունենալու հավատն էր

⁴ Լեո, Ուղեգրություններ, Հուշեր, հ. 8, Երևան, 1985, էջ 16

⁵ «Ինչպես հայկական մյուս մարզերում, այնպես էլ Լեոնային Ղարաբաղում հեթանոսական տոների ժառանգորդ քրիստոնեական տոները սերտորեն ձուլվել են հենց հեթանոսական ծեսերի հետ: Ժողովրդի գիտակցության մեջ վերջիններս հաճախ շատ ավելի ցայտուն ու ընդգծված են հանդես գալիս, քան եկեղեցական քրիստոնեական բարեպաշտության այս կամ այն կողմերը: Բոլորովին պատահական չէ, որ քրիստոնեության խորհրդանիշ խաչն ու սրբապատկերը մասնավոր տներում չէին դրվում: Ոչ մի տեղ դրանք չէին գտնի, բացի սուրբ օջախներից, այն էլ՝ շատ հազվադեպ: Այստեղ ոչ այնքան եկեղեցին էր ներխուժում համաժողովրդական անձնական կյանքի մեջ, որքան ավելի շատ՝ վերջինս եկեղեցու մեջ: Նույնիսկ գոհակենդանու մորթելը միշտ չէ, որ պահանջում էր հոգևորականի ներկայությունը» (տե՛ս՝ Սո. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 67)

⁶ «Ռևոլյուցիայից հետո, Սովետական շրջանում փակվում էին բոլոր եկեղեցիները, որոնք օգտագործում էին որպես պահեստներ: Եկեղեցիներից խաչերը հանում էին: Գրոնական զգացմունքները միայն ծերերի մոտ էր մնացել, որը քիչ-քիչ վերանում էր: Առանձին գյուղերում որոշ անձանց մոտ դեռևս պահպանվում էին սրբերին հավատալու և մատաղ մորթելու սովորությունները» (տե՛ս՝ Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., մաս I, տետր I, էջ 8-9)



րակությանը ստեղծված պայմաններում՝ սոցիալ-մասնագիտական առաջընթացի և խորհրդային պետական-քաղաքական կառույցներին ինտեգրվելու օբյեկտիվ իրողությամբ:

Պատմությունը ցույց տվեց, որ ադրբեջանական պետական կամ կիսապետական ենթակայության ոչ մի կառույց (լինի դա՝ խանական, ցարական, խորհրդային, մուսավաթական և այլն), օբյեկտիվորեն չի կարող ապահովել իր պատմական բնօրրանում բնակվող էթնոսի գոյապահպանումը, առավել ևս՝ ներդաշնակ զարգացումը: Դա հիմնականում պայմանավորված է՝ հազարամյա ավանդույթներ ունեցող հայ էթնոսի նկատմամբ ադրբեջանական պետական և ոչ պետական կառույցների մերժողական, անհանդուրժողական դիրքորոշմամբ, անկախ դրանց՝ քողարկված և բացահայտ դրսևորումներին¹:

Ղարաբաղցիների ֆիզիկական գոյատևումը, ազգային մշակութային և այդ համատեքստում՝ ավանդական տոնածիսական արժեքների պաշտպանվածությունը և ժառանգորդությունը օբյեկտիվորեն հնարավոր է միայն հայկական անկախ պետական կառույցի պայմաններում: Հակառակ դեպքում՝ կլինեն պարբերաբար կրկնվող բռնի տեղահանումներ, ֆիզիկական և մշակութային ջարդեր, որի ակնհայտ դրսևորումներից է արդեն իսկ հայաթափված հայկական բնակավայրերում ազգային տոնածիսական սրբավայրերի ու մասունքների ավերումները:

¹ Հայոց ավանդական տոնածիսական միջավայրը ձևավորող ազգային մշակութային արժեքների ոչնչացման քաղաքականությունը պարբերաբար շարունակվում էր նույնիսկ խորհրդային վերջին շրջանում: Միայն Գանձակի գավառում, 1980-ական թթ. սկզբներին Ադրբեջանի սովետական և կուսակցական կառույցների կողմից իրականացված այդ քաղաքականությունը բավական է՝ ամբողջական պատկերացում կազմելու նշված երևույթի մասշտաբների վերաբերյալ: Ն. Ղազարյանի փաստացի վկայությամբ՝ «Գեղաբեկի շրջանի Փոլաթյու գյուղի հանդում էր գտնվում 5-րդ դարի հուշարձան՝ «Վիշապ» սյունը, որը 1983 թ. տարվել է Բաքու: Բարում գյուղի Երեք Հրեշտակապետաց վանքում էր գտնվում «Մահմանաբար», որը վերաբերում էր Արցախյին և Ուտիքին ու դարձյալ տարվել է Բաքու: Մակայն Բաքվի պետական պատմության թանգարանում այս պատմական արժեքները չեն պաշտպանվում: Միայն վերջին շրջանում պայթեցվել և ավերվել է Սվրեցիք գյուղի եկեղեցին, Խաչբուլաղ գյուղի եկեղեցին, Դասան (Հոռումաշեն) վանքը և տասնյակ այլ վանքեր, եկեղեցիներ, հուշարձաններ» (տե՛ս՝ Ն. Ղազարյան, նշվ. աշխ., Երևան, 1984 թ., 2/124, թղթ. 1, էջ 1-2)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ԼՂՀ-ում ներկայիս սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նշանակության հիմնահարցերի թվում առանձնահատուկ հրատապություն ու նշանակություն ունեն տարաբնակեցման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծումը: ԼՂՀ-ում տարաբնակեցման և ժողովրդագրական հիմնահարցերի համալիր և խոր հետազոտություններ դեռևս չեն իրականացվել, չեն գնահատվել բնակավայրերի զարգացման նախադրյալներն ու պայմանները, չեն բացահայտվել տարբեր մեծության և գործառույթներ իրականացնող բնակավայրերի առանձնահատկությունները, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների բնույթն ու զարգացման միտումները: ԼՂՀ տարաբնակեցման համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները բացահայտելու համար մեծ նշանակություն ունի Լեռնային Ղարաբաղի բնակչության թվաքանակի փոփոխությունների ուսումնասիրությունը և հայ բնակչության թվաքանակի դանդաղ աճի, իսկ երբեմն էլ՝ նվազման պատճառների վերլուծությունը: Նման ուսումնասիրությունները հնարավորություն կտան մասնագետներին և պետական մարմիններին մշակել և իրականացնել ԼՂՀ տարաբնակեցման քաղաքականության՝ գիտականորեն հիմնավորված հիմնական սկզբունքները և ուղղությունները:

Պատմական Հայաստանի Արցախ-Ղարաբաղի տարածքը հնագույն ժամանակներից բնակեցված է եղել հայերով: Այդ մասին են վկայում այստեղ հայտնաբերված բազմաթիվ սեպագիր արձանագրությունները և ճարտարապետական հուշարձանները: Գրավոր աղբյուրներում Լեռնային Ղարաբաղը (Արցախ) հիշատակվել է Սարդուրի 2-րդի (763-734թթ.) գրառումներում, երբ Վանի թագավորությանն է միացել Ուրտեխե-Արցախի երկրամասը: Այն հիշատակվում է նաև Ստրաբոնի կողմից («Օրիսիստենե»)՝ որպես Հայաստանի մարզ [1]: Հին հունական և հռոմեական գրավոր աղբյուրներում նշվում է այն մասին, որ Արցախի, Ուտիքի և Մեծ Հայքի արևելյան շրջանների բնակիչները եղել են հայեր:

Մինչև 12-րդ դարը Արցախի տարածքում հիմնական բնակիչները եղել են հայերը: Արաբների, սելջուկ-թյուրքերի, թաթար-մոնղոլների տիրապետության սկզբնական ժամանակաշրջանում էապես չի փոխվել Արցախ-Ղարաբաղի բնակչության էթնիկ պատկերը: Սակայն ժամանակի ընթացքում աստիճանաբար սկսեցին Արցախ թափանցել քոչվոր թյուրքալեզու անասնապահների ցեղեր: Այնուամենայնիվ, դեռևս 1740թ. ցարական փաստաթղթերում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի հայերի թիվը կազմում է մինչև 100 հազար տուն, իսկ 1798թ. Արցախ-Ղարաբաղում եղել է 110 հազար հայկական ընտանիք [2, 3]:

Ռուս-պարսկական պատերազմի արդյունքում 18-րդ դարի վերջից մինչև 19-րդ դարի սկիզբը Արցախի տարածքը 33 տարվա ընթացքում 6 անգամ հայտնվել է պատերազմական իրավիճակում, ինչը բացասաբար է ազդել բնակչության աճի վրա: Ղարաբաղի խանության ստեղծումով ուժեղացել է թյուրքական ցեղերի ներթափանցումը Ղարաբաղ և, ընդհակառակը, հայերի արտագաղթն այնտեղից: Իբրահիմ խանի քաղաքականությունը բերել է հայերի զանգվածային արտահոսքի [4]: Հետագայում շուրջ 11000 հայկական ընտանիք տեղափոխվել է Հս. Կովկաս [5]: 19-րդ դարի սկզբին, Ղարաբաղի խանության ժամանակաշրջանում, Կովկասում գլխավոր հրամանատարության գրասենյակի ղեկավար Ս.Մ.Բրոննսկին նշում է, որ «Ներկայումս այն հարուստ



երկրամասից, որտեղ եղել է շուրջ 60 հազար տուն բնակիչ, հազիվ 5 հազ. տուն է մնացել» [6]: Հարձակումների հետևանքով բնակչության մեծ մասը հարթավայրային մասերից տեղաշարժվել է նախալեռնային ու լեռնային դժվարամատչելի վայրերն ու անտառները: Այստեղ էլ դարաբաղ-ցիները նորից հիմնել են բնակավայրեր, կառուցել ամրոցներ ու եկեղեցիներ:

1823թ. Ղարաբաղի լեռնային մասի բնակչությունը կազմել են հայերը՝ 84,6% կամ 30850 մարդ, և թաթարները՝ 14,7% կամ 5370 մարդ [7]:

Չնայած 1833թ. բնակչության ընդհանուր թիվը 1823թ. համեմատությամբ պակասել է 28,5%-ով, սակայն հայերը դարձյալ գերակշռող են եղել՝ 84%: Միակ քաղաքում՝ Շուշիում, նրանք կազմել են բնակչության 54%-ը: Ղարաբաղը ցարական Ռուսաստանին միանալուց հետո սկսվել է հայ բնակչության ներհոսքը հատկապես նրա լեռնային հատված, որը շարունակվել է մինչև կայսրության անկումը: 1868թ. կազմավորվել է Ելիզավետպոլի նահանգը, Ղարաբաղի պրովինցիան բաժանվել է 3 գավառի՝ Ջաբրայիլի, Ջևանշիրի և Շուշիի: 1875թ. հաշվառումների համաձայն, Ղարաբաղի լեռնային մասում ապրել է 91,3 հազ. մարդ, որից հայեր՝ 78,8 հազար կամ 84,7%, թյուրքալեզու էթնիկ խմբեր՝ 14,5 հազ. կամ 15,3%: Շուշիում ապրել է 24,5 հազ. մարդ, որից հայերը կազմել են 55%: 1897թ. մարդահամարի տվյալներով՝ Ղարաբաղի լեռնային մասում ապրում էր 128,6 հազ. մարդ, որից 106,4 հազարը կամ 82,7%-ը կազմել են հայերը, իսկ 20,4 հազ. կամ 15,9%-ը՝ թաթար, ինչպես նաև 1,5 հազ. ռուս և 300 այլ էթնիկ խմբեր¹:

20-րդ դարի սկզբին Ղարաբաղի հայերի բացարձակ թվաքանակը կայուն էր մնում, հարաբերականը կտրուկ նվազում էր, իսկ մահմեդականների (թաթարներ և քրդեր) թիվն աճում էր: Դա բացատրվում է Ղարաբաղից հայ բնակչության տեղաշարժով դեպի մեծ քաղաքներ, հատկապես՝ Բաքու: Այստեղ 20-րդ դարի սկզբին ապրում էր 30 հազ. դարաբաղցի հայ²: Այն տարածքում, որտեղ հետագայում կազմավորվել է ԼՂԻՄ-ը, 20-րդ դարասկզբին հայ բնակչությունը կազմում էր ամբողջ բնակչության 94%-ը [8]: 1913թ. ԼՂՀ ներկայիս սահմաններում ապրել է շուրջ 372 հազ. մարդ (Շուշիում՝ 42 հազ.), իսկ 1914թ. նախկին ԼՂԻՄ վարչական սահմաններում՝ 167,1 հազ. մարդ, որի 81%-ը կազմել են հայերը, իսկ 17,8%-ը՝ թյուրքալեզու էթնիկ խմբերը կամ թաթարները³: Վերջիններիս միայն խորհրդային կարգերի օրոք անցկացված 1-ին մարդահամարից (1926թ.) հետո սկսեցին անվանել ադրբեջանցիներ:

1918-20թթ. Ադրբեջանի ագրեսիայից, ինչպես նաև թյուրքական ինտերվենցիայից հետո Ղարաբաղի բնակչության թիվը կտրուկ նվազել է՝ 1921թ. մինչև 131,5 հազ. (94,4% հայեր), 1923թ. ԼՂԻՄ հռչակման տարում՝ 127,8 հազ.⁴: Խորհրդային Միության տարիներին ԼՂԻՄ-ում հայ և ադրբեջանցի բնակչության թվաքանակը հավասարապես չի աճել: Այսպես, եթե 1923թ. հայերի տեսակարար կշիռը ԼՂԻՄ ամբողջ բնակչության մեջ կազմել է 94,4%, ապա 1989թ.՝ 76,9%: 1926 և 1989թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում ԼՂԻՄ-ում հայերի թիվն ավելացել է 33,8 հազարով (աճը կազմել է 130,3%), իսկ ադրբեջանցիներինը՝ 28,1 հազարով (323%): Ընդ որում, հայերի թիվը 1926-39թթ. աճել է 21,1 հազարով, իսկ 1939-79թթ. նվազել է 9,7 հազարով, հետո նորից մինչև 1989թ. ավելացել 22,4 հազարով: Ադրբեջանցիների թվաքանակը 1926 և 1989թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում անընդհատ աճել է: Մշտապես տատանվել է նաև ԼՂԻՄ ընդհանուր բնակչության թիվը: Այսպես, եթե 1926-39թթ. Լեռնային Ղարաբաղի բնակչության թիվը 125,3 հազարից ավելացել և դարձել է 150,8 հազ., ապա 1939-59թթ.

¹ http://www.litera-ru.ru/html/materials/2003_0608_Per1897.html

² http://www.bakuland.com/?page=history&logik=history_supnew

³ <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>


⁴ Նույն տեղում



նվազել է և կազմել 130,4 հազ.: 1970թ. գրեթե հասել է 1939թ. մակարդակին՝ 150,3 հազ. [9]: Հետո բնակչության թիվն ավելացել է և 1990թ. հասել ԽՍՀՄ գոյության ընթացքում ԼՂԻՄ բնակչության առավելագույն թվին՝ 195,2 հազ. [10]: Դա հիմնականում պայմանավորված էր Բաքվից և Ադրբեյջանի այլ շրջաններից հայերի բռնագաղթով ու Լեռնային Ղարաբաղում բնակեցմամբ: Հետագա տարիներին ԼՂՀ բնակչությունը մինչև 1990-ականների կեսերը նվազել է, իսկ հետո շատ դանդաղ սկսել է աճել և 2008թ. դարձել է 138,8 հազ.¹ (Նկ. 1): Դա պայմանավորված էր պատերազմական իրավիճակով և բնակչության մեծ արտագաղթով: Խորհրդային տարիներին բնակչության թվաքանակի այսպիսի տատանումները պայմանավորված են եղել ադրբեյջանական իշխանությունների վարած հայատյաց քաղաքականությամբ, որի արդյունքում հայ բնակչության թիվը ոչ միայն չէր ավելանում, այլև նվազում էր: Միտումնավոր կերպով կրճատվում էին ԼՂԻՄ-ում կատարվող շինարարական աշխատանքների համար հատկացվող ֆինանսավորումները, 44 բնակավայրում փակվել է 52 արդյունաբերական ձեռնարկություն: Միայն 1940-60թթ. ԼՂԻՄ-ում ամբողջությամբ դատարկվել է 47 գյուղ² (մինչև 1980թ.՝ ընդհանուր առմամբ՝ 85 կամ ԼՂԻՄ գյուղերի 30%-ը)³:

Նկար 1

Լեռնային Ղարաբաղի բնակչության թվաքանակի շարժընթացը 1823-2008թթ.
Բնակչության թվաքանակի շարժընթացը (1823-2008 թթ.)



Փոխարենը ստեղծվում էին գյուղեր, որոնք բնակեցվում էին բացառապես ադրբեյջանցիներով: Այս ամենի արդյունքում կտրուկ փոխվել է մարզի ժողովրդագրական պատկերը: 1989թ. մարդահամարի արդյունքում պարզվեց, որ Շուշիում այլևս ոչ մի հայ չկա: Հաղթության շրջանում 1913թ. 37138 հայից 1989թ. մնացել էր 11600 հայ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարզի բնակչության 35%-ը կամ 45000 մարդ զորակոչվել է բանակ, որը 4-5 անգամ ավելի էր, քան ադրբեյջանական հարևան շրջաններինը: Ռազմաճակատում զոհվել է 22 հազար արցախցի: Պատերազմից հետո, 1949թ. հունիսի 14-ի գիշերը, ադրբեյջանական իշխանությունները մարզից հազարավոր հայ ընտանիքներ արտորել են Ռուսաստանի Ալթայի երկրամաս⁴:

Բնակչության և՛ թվաքանակի, և՛ ազգային կազմի զգալի փոփոխություններ են տեղի ունեցել Լեռնային Ղարաբաղի երբեմնի մայրաքաղաք Շուշիում: 19-րդ դարի ընթացքում Շուշին դարձել է խոշոր կենտրոն, որը մեծությամբ 5-րդն է եղել Անդրկովկասում: Քաղաքի բնակչությունն ավելացել է նախևառաջ հայերի հաշվին, որոնք 19-րդ դարի կեսերին մեծամասնություն էին կազմում: 1851թ. Շուշիի բնակչությունը եղել է 12724 մարդ, որից 6357-ը՝ հայ, 1883թ.՝ 25656 (13282 տղամարդ, 12374 կին), որից 56,5%-ը՝ հայ, 43,2%-ը՝ թաթարներ, 0,3%-ը՝ ռուս, հրեա: 1890-ականներին

¹ <http://www.utro.ru/articles/2006/07/04/562296.shtml>
² <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
³ <http://www.utro.ru/articles/2006/07/04/562296.shtml>
⁴ <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>



բնակչության թիվը կազմել է 34 հազ., 1916թ.՝ 43 հազ., 1920թ.՝ 60 հազ., որից 47 հազարը՝ հայ¹: 1918-20թթ. հայ-ադրբեջանական ընդհարումների և Շուշիի կոտորածների արդյունքում քաղաքի բնակչությունը հասավ 9 հազ., ապա 1920-ականների վերջերին՝ 5 հազ. ու այլևս չբարձրացավ 17 հազարից՝ 1989թ.²:

Ներկայիս մայրաքաղաք Ստեփանակերտը 1847թ. ունեցել է 80 տուն հայ և 52 տուն ռուս բնակիչ [11]: 1900թ. Ստեփանակերտի բնակչությունը կազմել է 3 հազ., [12], 1939թ.՝ 10 հազ., 1959թ.՝ 19,7 հազ., 1970թ.՝ 30,3 հազ., 1975թ.՝ 33 հազ., 1979թ.՝ 38,9 հազ., 1989թ.՝ 57 հազ. (ըստ մարդահամարի տվյալների): 2008թ. հունվարի 1-ի դրությամբ մայրաքաղաքն ունեցել է 50984 բնակիչ [13]:

Բնակչության թվաքանակի հաճախակի փոփոխությունները, ռազմական գործողությունները, ռազմաքաղաքական անկայուն իրավիճակը, տնտեսական ու սոցիալական բարդ պայմաններն իրենց հետքն են թողել բնակչության ժողովրդագրական ցուցանիշների վրա: ԼՂՀ ներկայիս ժողովրդագրական պատկերը ձևավորվել է երկարատև գործընթացի արդյունքում:

Ժողովրդագրական իրավիճակն անմիջական ազդեցություն է ունեցել անդրկովկասյան երկրների ազգային հիմնախնդիրների սրության և զարգացման բնույթի վրա:

Աղյուսակ 1

Բնակչության խտությունը նախկին ԽՍՀՄ մի շարք հանրապետություններում 1987թ. [14]

Հանրապետությունը	Միջին խտությունը, մարդ/կմ ²	Ըստ գյուղատնտեսական հողահանդակների, մարդ/կմ ²
Հայաստանի ԽՍՀ	115	262
Ադրբեջանի ԽՍՀ	79	166
Վրաստանի ԽՍՀ	76	165
Ուկրաինայի ԽՍՀ	85	122
Մոլդովայի ԽՍՀ	124	161

Հայաստանում և Ադրբեջանում ժողովրդագրական պայթյունն առավելագույն բարձրության է հասել նախորդ դարի 60-ականների 1-ին կեսին, երբ բնակչությունն աճում էր տարեկան ավելի քան 3%-ով: Բնակչության արագ աճի պայմաններում մեծանում էր բնակչության խտությունը (*Աղյուսակ 1*): Լեռնային երկրներում բնակչության ընդհանուր խտությունը չի արտացոլում տվյալ տարածքի իրական պատկերը: Առավել ճշգրիտ պատկերացում են տալիս այն ցուցանիշները, որոնք հաշվարկվում են հողօգտագործման տարածքների, իսկ առավել ճշգրիտ՝ գյուղատնտեսական հողահանդակների հաշվով:

Համեմատության համար նշենք, որ ԼՂՀ-ում 01.01.2008թ. դրությամբ բնակչության միջին խտությունը կազմել է 11,9 մարդ/կմ², իսկ ըստ գյուղատնտեսական հողահանդակների՝ 30,2:

Աղյուսակ 2

ԼՂԻՄ, ՀԽՍՀ և Ադր. ԽՍՀ բնակչության աճի տեմպերը [14]

Թվական	ԼՂԻՄ բնակչությունը, հազ. մարդ	Աճի տեմպերը, %		
		ԼՂԻՄ	Հայաստանի ԽՍՀ	Ադրբեջանի ԽՍՀ
1926	125			
1939	151	121	146	131

¹ <http://www.nkr.am/rus/history/shushi.htm>

² http://www.nkr.am/rus/mid/bull/text1_00.htm; <http://www.thewordbook.com/?suche=Shusha>

1959	131	87	138	115
1970	150	115	141	138
1979	161	107	122	118
1987	180	112	112	113

ԼՂԻՄ բնակչությունն ավելի դանդաղ է աճել, քան Հայաստանի ԽՍՀ-ում և Ադրբեջանի ԽՍՀ-ում, ինչը վկայում է, որ այստեղից մշտապես եղել է բնակչության հոսք (Աղյուսակ 2): Եթե համեմատենք բնակչության աճը 1959թ. նկատմամբ, ապա Ադրբեջանում այն կազմում է 184% (1987թ.), ՀԽՍՀ-ում՝ 194%, ԼՂԻՄ-ում՝ միայն 137% [14]:

Աղյուսակ 3

Երիտասարդ և տարեց բնակչության տեսակարար կշիռը, %, 1979թ. [14]

	Տարիքը				Հետաշխատանքային տարիքի
	15-29	այդ թվում			
		15-19	20-24	25-29	
Ամբողջ բնակչությունը					
ԼՂԻՄ	26,8	12,2	8,8	5,8	14,6
Ադրբեջանի ԽՍՀ	30,5	13,5	10,3	6,7	9,0
Հայաստանի ԽՍՀ	31,4	12,6	10,9	7,9	9,3
Քաղաքային բնակչությունը					
ԼՂԻՄ	31,6	13,5	10,6	7,5	10,2
Ադրբեջանի ԽՍՀ	32,6	12,9	11,7	8,0	9,4
Հայաստանի ԽՍՀ	32,0	1,6	11,4	9,0	8,9
Գյուղական բնակչությունը					
ԼՂԻՄ	23,2	11,2	7,4	4,6	18,0
Ադրբեջանի ԽՍՀ	23,0	14,1	8,7	5,2	8,5
Հայաստանի ԽՍՀ	30,4	14,5	10,1	5,8	10,1

Քանի որ ԼՂԻՄ-ում բնական աճի ցուցանիշները ցածր չեն եղել, քան Հայաստանի ԽՍՀ-ում և Ադրբեջանի ԽՍՀ-ում, ապա կարելի է մոտավորապես գնահատել բնակչության կորուստները: Բնակչության ակտիվ հեռացման մասին են վկայում նաև ԼՂԻՄ տարիքային կառուցվածքի առանձնահատկությունները (Աղյուսակ 3): 15-29 տարեկանների բաժինը ամբողջ բնակչության մեջ ԼՂԻՄ-ում զգալիորեն ցածր է եղել, քան ՀԽՍՀ-ում և Ադր. ԽՍՀ-ում, հատկապես գյուղական բնակավայրերում: Սա բացատրվում է նրանով, որ միգրանտների ավելի քան 3/4-ը այս տարիքի բնակիչներն են: Միաժամանակ թոշակառուների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ աճել է 1,5 անգամ, իսկ գյուղական բնակչության մեջ՝ 2 անգամ:

Աղյուսակ 4

ԼՂՀ բնակչության սեռային կազմը [13, 16, 17, 19]

Տարեթիվը	Բնակչության թիվը հունվարի 1-ի դրությամբ, հազ.մարդ	այդ թվում			
		տղամարդիկ		կանայք	
		հազ. մարդ	%	հազ. մարդ	%
1989*	189,1	92,1	48,7	97,0	51,3
2000#	133,3	64,0	48,0	69,3	52,0
2001#	134,4	64,1	47,7	70,3	52,3
2002#	135,7	66,0	48,6	69,7	51,4
2003#	136,6	65,2	47,7	71,4	52,3
2004#	137,0	65,3	47,7	71,7	52,3

2005**	137,7	66,6	48,4	71,1	51,6
2006#	137,7	66,5	48,3	71,2	51,7
2007#	137,7	66,5	48,3	71,2	51,7
2008#	138,8	66,8	48,1	72,0	51,9

ԾԱՆ. * - մարդահամարի տվյալներով

** - 18.10.2005թ. մարդահամարի տվյալներով

- գնահատմամբ


Բնակչության թվաքանակի փոփոխություններն իրենց անդրադարձն են ունեցել ԼՂՀ բնակչության սեռային կազմի վրա (*Աղյուսակ 4*): Ըստ շրջանների բնակչության սեռային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 01.01.2008թ. դրությամբ բոլոր շրջաններում, բացի Շահումյանից և Քաշաթաղից, գերակշռում են կանայք, ընդ որում՝ կանայք ամենաբարձր տեսակարար կշիռն ունեն Շուշիի շրջանում (55,2%), իսկ Հադրութի շրջանում գրեթե հավասար ցուցանիշ ունեն (կանայք՝ 50,5%, տղամարդիկ՝ 49,5%) (2006թ. եղել են հավասար՝ 50%): Շահումյանի շրջանում կանայք կազմում են ընդհանուր բնակչության 47,1%-ը, իսկ Քաշաթաղում ամենացածրն է՝ 46,5% (*Աղյուսակ 5*):

Պատճառներից հիմնականներն են. Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում կանանց բարեկեցիկ բնակչության համար անհրաժեշտ շատ պայմաններ բացակայում են (աշխատանք, տարրական կենցաղային ու հիգիենիկ պայմաններ և այլն), այստեղ հիմնականում միայնակ բնակվում են տղամարդիկ, որոնց ընտանիքները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում կամ ԼՂՀ այլ շրջաններում:

Հայ բնակչության արտահոսք է եղել Ադրբեջանից, ԼՂԻՄ-ից, ինչպես նաև Վրաստանից: 1926-89թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում հայերի թիվն Ադրբեջանում և Վրաստանում նույնիսկ նվազել է, իսկ ԼՂԻՄ-ում գործնականում չի աճել: Դա նշանակում է, որ այստեղից հայերի միգրացիան կատարվել է իրենց բնական աճի չափով, մոտավորապես տարրական 2-3%: Ադրբեջանցիների թիվը նույն ժամանակահատվածում զգալիորեն աճել է ԼՂԻՄ-ում:

ԼՂՀ սեռատարիքային բուրգը, 2005թ. [15]

ԼՂՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎՆ ԸՍՏ 2005 Ք. ՍԱՐԴԱՅԱՍԱՐԻ - 137737 մարդ



ԼՂՀ բնակչության սեռային կառուցվածքն ըստ շրջանների 2008թ. հունվարի 1-ի դրությամբ [13]

Հ/հ	Շրջանները	Բնակչության թվաքանակը			Տեսակարար կշիռը %-ով	
		Ընդամենը	այդ թվում		տղամարդ	կին
			տղամարդ	կին		
1	Ստեփանակերտ	50984	23672	27312	46,4	53,6
2	Ասկերանի	17393	8356	9037	48,0	52,0
3	Հաղրուքի	12240	6053	6187	49,5	50,5
4	Մարտակերտի	19042	9347	9695	49,1	50,9
5	Մարտունու	23228	11299	11929	48,6	51,4
6	Շահումյանի	2789	1475	1314	52,9	47,1
7	Շուշիի	4607	2063	2544	44,8	55,2
8	Քաշաթաղի	8551	4575	3976	53,5	46,5
	ԸՆԴԱՄԵՆԸ	138834	66840	71994	48,1	51,9

Ներգաղթի և համեմատաբար ավելի բարձր բնական աճի շնորհիվ ԼՂՀ-ում աղբբեջանցիների թիվն ավելի քան կրկնապատկվել է, այն դեպքում, երբ հայերի թիվն աճել է 12%-ով: Արդյունքում ստացվել է, որ Ղարաբաղում արագորեն փոխվել է ազգային կազմը հոգուտ աղբբեջանցիների:


ԼՂԻՄ ազգային կազմը, % [14]

	1959թ.		1970թ.		1979թ.	
	հազ. մարդ	%	հազ. մարդ	%	հազ. մարդ	%
Ամբողջ բնակչությունը	130,4	100,0	150,3	100,0	162,3	100,0
այդ թվում՝ հայեր	110,1	84,4	121,1	80,6	123,1	75,9
աղբբեջանցիներ	18,0	13,8	27,2	18,1	37,3	23,0
ռուսներ	1,8	1,4	1,3	0,86	1,3	0,78
այլ ազգեր	0,5	0,4	0,7	0,44	0,3	0,32

Պատկերը փոխվել է 1988-ից հետո, երբ աղբբեջանցիները հեռացել են ԼՂԻՄ-ից, և ներկայումս բնակչության 99,7%-ը կազմում են հայերը: Ռազմական գործողությունների, ռազմաքաղաքական անկայուն իրավիճակի, տնտեսական ու սոցիալական բարդ պայմանների արդյունքում վատթարացել է բնակչության սոցիալական դրությունը, առկա է գործազրկությունը, խորացել է աղքատությունը, ինտենսիվացել է արտագաղթը: Այս ամենի արդյունքում 90-ական թվականների առաջին կեսին տեղի է ունեցել բնակչության թվի կտրուկ նվազում (Նկ. 1), ի հայտ են եկել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, որոնց լուծումը հրատապ է դարձրել հանրապետության բնակչության և տարաբնակեցման համակարգի աշխարհագրական ուսումնասիրությունները:

Նկար 3

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության շարժընթացը 1823-2005թթ. [15]



Չնայած պատերազմին հաջորդած առաջին իսկ տարիներից ԼՂՀ-ում սկսվեցին և այսօր էլ շարունակվում են լայնածավալ շինարարական աշխատանքները, վերականգնվում են կրթական, մշակութային և այլ հիմնարկներ, վերաբնակեցվում են նոր բնակավայրեր, սակայն շատ հարցեր դեռևս իրենց լուծումը չեն գտել: Եվ դա առաջին հերթին վերաբերում է ժողովրդագրական իրավիճակի կարգավորմանը:

Բնակչության ժողովրդագրական իրավիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից է ծնելիությունը, որի ազդակներից են՝ ամուսնությունը, ամուսնալուծությունը, երիտասարդ ընտանիքների արտագաղթը, գործազրկությունը, սոցիալական ծանր պայմանները, նյութական ապահովվածությունը և այլն: 2005թ. մարդահամարի տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ամուսնացած չէ 25-39 տարեկան տղամարդկանց 24,04%-ը (քաղաքներում՝ 24,73%, գյուղերում՝ 23,35%), իսկ 15 տարեկանից բարձր բնակչության կազմում երբեք



ամուսնացած չի եղել ԼՂՀ բնակչության 25,5%-ը, որը բավական բարձր ցուցանիշ է: Այն առավել բարձր է քաղաքներում, որտեղ երբեք ամուսնացած չի եղել 15 տարեկանից բարձր բնակչության 28,9%-ը, իսկ գյուղերում այն կազմում է 21,7% [16]: Սրանից կարելի է եզրակացնել, որ գյուղերում համեմատաբար ավելի հեշտ է սոցիալական հարցերի կարգավորումը՝ շնորհիվ գյուղատնտեսական աշխատանքների: Ամուսնությունների գործակիցը 2000-2006թթ. տատանվել է 4,7-6%-ի սահմաններում, իսկ ամուսնա-լուծություններինը՝ 0,6-1% [17] (*Աղյուսակ 7*):

Աղյուսակ 7

Ամուսնությունների և ամուսնալուծությունների ընդհանուր գործակիցները [17]

Տարեթվերը	1000 բնակչի հաշվով, %	
	ամուսնություն	ամուսնալուծություն
2000	5,7	0,7
2001	5,2	0,8
2002	4,7	0,7
2003	4,9	0,7
2004	5,8	0,6
2005	5,5	1,0
2006	6,0	0,9
2007	3,8	0,9

Ինչպես երևում է աղյուսակից, ամուսնալուծությունների գործակիցներն ունեն ավելի փոքր տատանումներ, քան ամուսնություններինը:

Աղյուսակ 8

Բնակչության բնական շարժի ցուցանիշները 1985-2007թթ. [16, 17, 18, 19]

Տարեթիվը	1000 բնակչի հաշվով, %		
	Ծնվածները	Մահացածները	Բնական աճը
1985	24,0	7,8	16,2
1990	17,3	7,1	10,2
1991	21,6	12,2	9,4
1992	11,6	11,2	0,4
1993	10,6	16,6	- 6,0
1994	14,2	15,2	- 1,0
1995	14,2	9,5	4,7
1996	15,2	10,2	5,0
2000	16,6	8,8	7,8
2001	17,0	7,9	9,1
2002	16,0	9,1	6,9
2003	15,0	9,0	6,0
2004	15,3	9,5	5,8
2005	14,6	9,2	5,4
2006	15,3	9,0	6,3
2007	15,4	8,8	6,6


Բնակչության թվաքանակի շարժընթացի վրա հիմնական ազդեցությունը թողնում են ծնելիության և մահացության ցուցանիշները: Ինչպես երևում է *Նկ. 4-ից* և *Աղյուսակ 8-ից*, 1985-ից հետո ծնելիությունը և բնական աճը զգալիորեն նվազել են, վերջինս նույնիսկ ունեցել է բացասական արժեք: 90-ական թվականների երկրորդ կեսից ծնելիությունը համեմատաբար կայունացել է:



Այսպես, 1995-2007թթ. ընթացքում այն տատանվել է 14,2-17,0%-ի սահմաններում, մահացության ցուցանիշները 7,9-10,2%: Բնական աճը կազմել է 4,7-9,1%: Ծնելիության ու բնական աճի անկումը և մահացության ավելացումը 90-ականների 1-ին կեսին պայմանավորված էր նախ և առաջ պատերազմով: Եվ եթե հետպատերազմյան ժամանակաշրջանում որոշակիորեն բարձրացել է ծնելիության մակարդակը՝ 14,2%-ից հասնելով 15,6% ցուցանիշին, ապա մահացության ցուցանիշը շատ քիչ է նվազել՝ 9,5%-ից իջնելով 8,9%-ի:


Նկար 4

Բնակչության բնական շարժի ցուցանիշները 1960-2007թթ.



Թեև բնական աճը 4,7%-ից հասել է 6,7%-ի, [16, 17, 18, 19], այնուամենայնիվ, այն շատ ցածր է, եթե հաշվի առնենք, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի բնակչության թվաքանակի արագ աճը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար: Ծնելիության և բնական աճի ամենաբարձր ու մահացության ամենացածր մակարդակը 1992-ից ի վեր դիտվել է 2001թ.՝ համապատասխանաբար 17%, 7,9%, 9,1%: 2001-ից հետո ծնելիությունն ավելի շատ է նվազել, քան մահացությունը: Արդյունքում զգալիորեն նվազել է բնակչության բնական աճը: Մահացության բարձր մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով. մի կողմից՝ բնակչության տարիքային կառուցվածքում տարեցների բաժնի մեծացմամբ, մյուս կողմից՝ բնակչության սոցիալական և կենցաղային պայմանների վատացմամբ:

ԼՂՀ բնակավայրերի բնակչության փոփոխությունները 1989-2008թթ.



Ժողովրդագրական իրավիճակը սրված է ԼՂՀ գրեթե բոլոր շրջաններում: Ամենուրեք դիտվում է ծնելիության նվազում, սակայն կապված մահացության ցուցանիշների տատանումների հետ՝ բնական աճը վերջին տարիների ընթացքում չի ունեցել կայուն աճ կամ նվազում, թեև բոլոր շրջաններում էլ ընդհանուր առմամբ նվազել է: Առավել անմխիթար է վիճակը Ասկերանի (վերջին 5 տարիների ընթացքում բնական աճը տատանվել է - 0,2% - 3,3%-ի սահմաններում), Մարտունու (2,6%-4,9%), Մարտակերտի (3,5%-6,3%) և Հադրուրի (2,0%-5,1%) շրջաններում, ինչը պայմանավորված է նախ և առաջ պատերազմի ժամանակ ավելի շատ երիտասարդ տարիքի բնակչության զոհվելու կամ պատերազմից հետո նրանց շրջանից հեռանալու հետևանքով տարիքավորների տեսակարար կշռի մեծ լինելով: Ծնելիության ամենաբարձր գործակիցներ ունեն Շահում-



յանի (10,8%-18,8%) և Քաշաթաղի (12,4%-16,5%) շրջանները: Այստեղ առավելապես երիտասարդ վերաբնակիչներ են ապրում, իսկ կանանց մեծ մասը աշխատանք չունի: Այս ամենը հանգեցրել է նրան, որ ծնելիության մակարդակը երբեմն անցել է նաև 20%-ի սահմանը (Շահումյանի շրջանում 2001թ.՝ 21,6%, 2002 և 2005թթ.՝ 20,4%, Քաշաթաղի շրջանում 2001թ.՝ 20,3%): Մահացության մակարդակը նույնպես ամենացածրն է այս երկու շրջանում՝ տատանվելով 1,9-3,4%-ի սահմաններում Քաշաթաղի շրջանում և 1,9-3,4%՝ Շահումյանի շրջանում:

ԼՂՀ բնակչության թվաքանակի փոփոխություններն իրենց արտացոլումն են գտել բնակավայրերի բնակչության թվերի փոփոխությունների մեջ՝ 2008թ. 1989թ. համեմատ (Նկ. 5): Վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկին ԼՂԽ տարածքում գտնվող 121 բնակավայրերի (70,8%) բնակչությունը նվազել է կամ չի ավելացել և միայն 50-ում (29,2%) է ավելացել: Ըստ շրջանների պատկերը հետևյալն է. Մարտակերտի շրջանում ամբողջ բնակավայրերի 84,4%-ում (38 բնակավայր) 2008թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվն ավելի քիչ է եղել, քան 1989-ին, Մարտունու և Շուշիի շրջաններում՝ 75,0-ական %-ում (համապատասխանաբար 27 և 6), Հաղարծրի շրջանում՝ 63,2%-ում (24), Ասկերանի շրջանում՝ 58%-ում (25): Բնակչության թիվը նվազել է նաև Ստեփանակերտում: Բնակչության թվաքանակը հիմնականում ավելացել է երկրի արևմտյան գյուղերում, իսկ արևելքում, առաջնային գծում գտնվող գյուղերից միայն 2-ում է այն ավելացել (Աշան, Մպիտակաշեն):

Պատճառները տարաբնույթ ու բազմազան են, որոնցից, թերևս, գլխավորներն են պատերազմի ընթացքում զոհվածների թվաքանակը, ինտենսիվ արտագաղթը, ցածր ծնելիությունը և բարձր մահացությունը: Ներկայումս էլ բնակչության բնական շարժի ցածր ցուցանիշների արդյունքում բնակչությունը շատ դանդաղ է ավելանում, և դժվար է կանխատեսել, թե բնակավայրերում բնակչության թիվը երբ կհասնի նախապատերազմյան ժամանակաշրջանի մակարդակին: Ազատագրված և նոր կազմավորված շրջաններում (Շահումյան, Քաշաթաղ) վերաբնակեցված բոլոր բնակավայրերում վստահորեն կարելի է ասել, որ ներկայումս ապրում են ավելի քիչ թվով բնակիչներ, քան եղել է 1989թ. գրեթե նույն տեղերում գոյություն ունեցած աղբյուրներից, որտեղ միասին վերցրած ապրել է ավելի քան 100 հազար մարդ՝ ներկայիս 8,5 հազարի փոխարեն: Պատահական չէ, որ այսօր Քաշաթաղի շրջանում գերակշռում են շատ մանր, մանր ու փոքր գյուղերը (Նկ. 6), որոնք ունեն մինչև 300 բնակիչ (Քաշաթաղի շրջանում ամենամեծ գյուղը Ծաղկաբերդն է 238 բնակչով, իսկ Շահումյանի շրջանում՝ Նոր Վերին շենը՝ 224 բնակչով): Ականաբերդ գյուղը, որն ունի 523 բնակիչ, թեև վարչականորեն մտնում է Շահումյանի շրջանի կազմի մեջ, սակայն փաստացի տեղակայված է Մարտակերտի շրջանում: Ընդհանուր առմամբ, ամբողջ ԼՂՀ-ում մինչև 500 բնակիչ ունեն 286 գյուղերից 244-ը (կամ գյուղերի 85,3%-ը)՝ 30149 ընդհանուր բնակչությամբ (ամբողջ գյուղական բնակչության 44,9%-ը) և միայն 42 գյուղ ունեն 501 և ավելի (14-ը՝ 1000 և ավելի) բնակիչ՝ 37036 ընդհանուր բնակչությամբ [13]:

Ակնհայտ է, որ բնակչության ժողովրդագրական ցուցանիշներն ազդում են տարաբնակեցման գործընթացների և ձևերի վրա, մասնավորապես, կախված բնակչության տարիքից, սեռից, զբաղվածության տեսակից, փոխվում է բնակչության կենսագործունեության բնույթը, նրա կազմակերպումը տարածության և ժամանակի մեջ: Բնակչության բնական և մեխանիկական շարժերը հանդիսանում են տարաբնակեցման կարևորագույն գործոնները, որոնք պայմանավորում են տարաբնակեցման փոփոխության միտումները [20]:

Ժողովրդագրական իրավիճակը ԼՂՀ-ում այսօր պայմանավորել են բազմաթիվ սոցիալական և տնտեսական հիմնախնդիրներ, որոնց լուծման հիմնական ուղին այստեղ տնտեսության զարգացումն է, արտոնությունների ավելացումը, աշխատատեղերի ստեղծումը, կրթական, բժշկական




և այլ օբյեկտների ցանցի ընդլայնումը: Մրանք կնպաստեն, որպեսզի թուլանա սոցիալական լարվածությունը և բնակիչները չլքեն իրենց բնակավայրերն ու արտագաղթեն, բարձրանան ծնելիության ու բնական աճի ցուցանիշները: Արդյունքում՝ ժողովրդագրական իրավիճակը ԼՂՀ-ում մի փոքր կկարգավորվի, որը, բացի զուտ աշխարհագրականից, ունի նաև կարևոր ռազմավարական նշանակություն:

Սպրիլ, 2009թ.

Նկար 6

ԼՂՀ բնակավայրերն ըստ մարդաշատության և բնակչության խտությունն ըստ վարչական շրջանների 01.01.2008թ. դրությամբ



Աղբյուրներ և գրականություն

1. *Страбон*, «География», 11.14.4; «Нагорный Карабах. Историческая справка» АН Арм. ССР, Ереван, 1988.
2. АВПР, ф. СРА. 1736 г., д. 1, лл. 106-117, 144-165 об. <http://ru.wikipedia.org/wiki/>
3. Полный свод законов Российской империи. Том 24, стр. 76; <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
4. *Шнирельман В.А.*, «Войны памяти». Часть I, гл. 13; <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
5. «Живописная Россия». Под редакцией вице-председателя Императорского русского географического общества П.П. Семенова, Санкт-Петербург, 1883; <http://ru.wikipedia.org/wiki/>
6. *Броневский С.М.*, Исторические выписки о сношениях России с Персией, Грузией и вообще с горскими народами, в Кавказе обитающими, со времен Ивана Васильевича донныне. Эпоха III;



<http://www.Vostlit.info/Textsrus9/Bronevskiy/text32.html>-<http://ru.wikipedia.org/wiki/>

7. «Описание Карабахской губернии», Тифлис, 1866г., стр. 260; <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
8. *De Waal, Thomas*. Black garden: *Armenia and Azerbaijan through Peace and War*. New York: New York University Press, 2003. p. 130. ISBN 0-8147-1945-7
9. «Нагорный Карабах. Историческая справка» АН Арм. ССР, Ереван, 1988.
10. «Վիճակագրական ժողովածու 1985-1996», Ստեփանակերտ, 1997թ.:
11. *Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ.*, Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարան, Երևան, 1986թ., 2-րդ հրատ., Երևան, 1988:
12. *Цитович Г.А.*, Храмы армии и флота. Пятигорск, 1913, 520+40+XIV с. Кавказский военный округ.
13. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության թվաքանակը 2008թ. հունվարի 1-ի դրությամբ» վիճակագրական տեղեկագիր, ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2008:
14. *Зайончковская Ж.А.*, «Демографическая ситуация и проблемы развития Нагорного Карабаха» // Проблемы горного хозяйства и расселения, Институт географии АН СССР, 1990.
15. ՀՀ Ազգային ատլաս, հատոր Ա, Երևան, 2007:
16. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդահամարի արդյունքները», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2006:
17. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2000-2006», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2007:
18. «Վիճակագրական ժողովածու 1985-1996», Ստեփանակերտ, 1997:
19. «Լեռնային Ղարաբաղը թվերով 2007», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2007:
20. *Մանասյան Մ.Գ.*, ՀՀ տարաբնակեցման համակարգը, Ե., ԵՊՀ հրատ., 2005:

ԱՐՅԱԽՅԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԵԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թռուցիկ դիտարկումներից անգամ նկատվում է, որ գորգագործական բազմաթիվ կենտրոններում արմատացած գորգերի մի շարք տիպեր ակնհայտորեն նմանվում կամ կրկնում են Արցախյան գորգերին: Դրանք այնքան շատ են ու տարբերակներով հարուստ, որ չեն կարող համարվել պատահականության արդյունք: Արցախյան գորգերի ավանդույթները նկատվում են հայոց մշակութային տարածքում գտնվող գորգագործական կենտրոնների մեծ մասում՝ սակայն դրանց արտահայտությունների քանակով ու կարևորությամբ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Շիրվանի, Դերբենտի, Ղարադաղի, Ուրմիա լճի ավազանի և Փոքր Ասիայի գորգագործական կենտրոնները: Ընդ որում, դրանցում բավականին ակնհայտ նմանություններ ենք հայտնաբերում ոչ միայն գորգերի գեղագարդման համակարգերում, այլ նաև գորգ գործելու տեխնոլոգիական հմտությունների ու գունային երանգների ասպարեզում:

Նկատի ունենալով սույն հաղորդման սահմանափակ հնարավորությունները, այստեղ մենք կանդրադառնանք միայն Հյուսիսարևելյան Անդրկովկասի գորգագործական կենտրոններին: Պատմական սկզբնաղբյուրներում եղած գրավոր վկայություններից հայտնի է, որ այս տարածաշրջանի ժողովրդագրական պատկերում բավականին ազդեցիկ տեղ ունեւ հայ հանրույթը: Հայոց թվաքանակը այդ տարածաշրջանում այնքան զգալի էր և ազդեցիկ, որ այդտեղ ձևավորվում է առանձին թագավորություն¹: Այս հարցերն ուսումնասիրած վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը հաստատում է, որ այդ տարածքներում XI-XIII դդ. իսկապես եղել է հայոց թագավորություն²:

Այդ ամենը հաստատում են նաև Մակար Արքեպիսկոպոս Բարխուտարեանցի 19-րդ դ. վերջին արած դիտարկումները: Նա նշում է, որ Խաչմասի մերձակայքում գտնվող երկու հին գերեզմանոցներում գյուղացիների օգնությամբ հողից հանել ու մաքրել են բազմաթիվ տապանաքարեր, որոնց արձանագրություններից պարզվել է, որ հայերն այդտեղ ներկա են առնվազն 573-1890թթ: Այդպիսի մացառուտներով ծածկված հանգստարանում Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալյանցը 1840-ականների վերջին տեսել է Աղվանից վերջին թագավոր՝ Սևադայի որդի Սենեքերիմի տապանաքարը³, բայց Մակար Բարխուտարեանցի այնտեղ գտնվելու ժամանակ այն արդեն անհայտացած էր⁴: Մակար Բարխուտարեանցի հավաքած նյութերը փաստում են որ Դերբենտ-Մախաչկալա տարածաշրջաններում մինչ XIX դ. վերջերը պահպանվել էին հայոց ներկայությունը մատնանշող բազմաթիվ ավանդույթներ ու տեղանուններ և որ այդ տարածաշրջաններում ժամանակին գոյություն են ունեցել հայաբնակ բազմաթիվ բնակավայրեր:

Չնայած տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակների պարբերաբար կրկնվող կտրուկ շրջադարձերին, Անդրկովկասի հյուսիսարևելյան տարածքներում գոյատևում էին հայկական կիսանկախ իշխանություններ, այդ թվում՝ մասնավորապես Կուտկաշենի մելիքու-

¹ Մատթեոս Ուռնայեցի, *Ժամանակագրություն: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյան, Եր., 1981, էջ 151-152, Абу-Исхак ал-Истахри. Книга путей и царства. Перевод и комментарий Н. А. Караулова - СМОМПК вып. II, Тифлис, 1901, էջ 97.107, Ս. Բարխուդարյան, *Դերբենտի հայ-աղվանական թագավորությունը. Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1969, նո. 3, էջ 139-141**

² Ս. Բարխուդարյան, *նշվ. աշխ., էջ 125-147*

³ Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանց, *Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան: Մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 420 / հետագայում՝ Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանց/*

⁴ Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ., էջ 76-77*



թյունը¹: Արտեմ Արարատսկին ականատեսի աչքով հիշատակում է XVIII դ. վերջին այդ տարածքներում՝ Մուշկյուրի հովտում տեղաբաշխված հայկական տասնյակ ծաղկուն գյուղերի մասին²:

XIX դարի վերջերին, դեռևս թարմ պատմական դեպքերի հետ կապված վավերագրերի ու հուշերի հիման վրա արված ուսումնասիրությունները թույլ են տալիս պատկերացում կազմել այդ տարածաշրջանի հայոց նկարագրի, դրանց ու արցախահայերի կապերի, ինչպես նաև իսլամ ընդունած հայերի քանակի մասին: Մասնավորապես, միայն XVIII դարի առաջին քառորդում, թուրք-պարսկական պատերազմներին ու լեզգիների իրար հաջորդող ասպատակությունների ու դրանց հետևած սովի հետևանքով Շաքի-Շիրվան տարածաշրջանում իսլամ են ընդունում ավելի քան տասն հազար հայեր³: 1725 թվականի փետրվարի 5-ին վրաց Վախթանգ VI թագավորին ուղղված մի նամակում հաղորդվում է, որ լեզգիների կողմից ամբողջովին թալանվել ու թուրքացվել են Շաքիի, Շամախու, Ղարասուի, Մուշկյուրի ու հարակից տարածաշրջանների հայաբնակ գյուղերը: Դրանցից գերծ չի մնացել նաև Արցախը և «այս վերագրեալ երկրներեն թէ եսիր, թէ շորեղեն, թէ բրինձ, թէ ցորեն բոլորը տարան Դաղստան»⁴: Այստեղ խոսքը վերաբերում է 1711-12 թվականներին կատարված լեզգիների արշավանքին, որը հսկայական ավերածություններ պատճառեց տարածաշրջանին, այդ թվում Բարգուշատից Ջրաբերդ ու Գանձակ ընկած տարածքներին:

Այսպես թե այնպես, այդօրինակ հաճախակի կրկնվող իրադարձությունների հետևանքով Անդրկովկասի հյուսիսարևելյան հայահոծ տարածաշրջաններում տեղի է ունեցել հայ բնակչության արտահոսքի, դավանափոխության կարծես անընդմեջ գործընթաց: Ղազար քահանա Հովսեփյանը իր հավաքած նյութերի հիման վրա պարզել է, որ միայն 1750-ական թթ. Շաքիի տարածաշրջանում բռնի դավանափոխ է արվել շուրջ 15000 ծուխ հայ, որի արդյունքում թուրքացվել է 29 հայկական գյուղ⁵: Շամախու ու Շաքիի տարածաշրջաններին հսկայական վնաս է հասցնում Նադիր Շահի արշավանքը՝ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ գերեվարվում ու տարվում են Պարսկաստան⁶:

Սակայն դրան զուգահեռ, հետևել են արցախահայոց տեղաշարժման նոր ալիքներ: Մասնավորապես, միայն 1790-ական թթ. Արցախից այդտեղ են վերաբնակվել շուրջ 12000 ծուխ հայ⁷: Նման պարբերաբար կրկնվող տեղաշարժերով փաստորեն կրկին բնակեցվել ու հայ բնակիչներով համալրվել են հայաթափման եզրին կանգնած բազմաթիվ բնակավայրեր ու այդ բոլոր դեպքերում էլ հոսքը հիմնականում կատարվել էր Արցախի գյուղերից: Այս իմաստով հատկանշական է Շաքիի տարածաշրջանում գտնվող Սոգութլու գյուղի օրինակը, որի մասին Եսայի Հասան Ջալալյանը գրում է. «Եւ ոմն Բարսեղ անուն քահանայ, որ էր բնիկ Ղարաբաղու երկրեն Խաչինու, և ի յազգէ մելիքաց էր՝ որ ընդ գնալոյ ժողովրդեանն սոքա ևս ազգաւ գնացեալ էին և զՍոքութլու գեղն նորոգ շինեալ և բնակեալ»⁸: Անդրկովկասի հյուսիս արևելյան տարածաշրջաններում արցախյան ավանդույթների առկայության վերաբերյալ կան նաև պատմամշակութային մի շարք կարևոր

¹ В. Левиатов, *Очерки из истории Азербайджана в XVIII веке*, Баку, 1948, էջ 71-72

² Жизнь Артемия Арагатского, Издание подготовил К. Н. Григорян при участии Р.Р. Орбели, М., 1981, էջ 128-130

³ Եսայի Հասան Ջալալյան, *Պատմություն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելեց յաշխարհին Ադուանց*, Շուշի, 1830, էջ 28 /հետաժողովրդական հրատարակչություն/, *ինչպես նաև՝* Левиатов Н., նշվ. աշխ., էջ 92

⁴ Армяно-русское отношение в XVIII веке. Сборник документов, т. 2, часть 2., под редакцией Ашота Иоанисяна, Ер. 1967, стр. 230-233

⁵ Ղազար քահանա Հովսեփյան, *Անկարկներ ուտիացի եվ մահմեդական հայերի մասին*, Թիֆլիզ, 1904, էջ 64-65

⁶ Սակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 56

⁷ Բեկնազարեանց Սարգիս, *«Գաղտնիք Ղարաբաղի»։ Առաջաբան և գրաբարից աշխարհաբարի թարգմանությունը Մակար վարդապետ Բարխուտարեանցի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 241-242, հետաժողովրդական հրատարակչություն՝ Գաղտնիք Ղարաբաղի, Մակար Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 97, 104*

⁸ *Նույնը*, էջ 33



դրսևորումներ, որոնք արտահայտված են լեզվաբարբառային, տարազի ու բնակարանային համալիրներում:

Մասնավորապես, Եսայի կաթողիկոսն իր ժամանակին Շիրվանի մասին գրել էր «և երկիրն էր բարելի և շեն և մարդաշատ, թե հայ ազգոք, որ ի Ղարաբաղի երկրեն ժողովուրդք յուլվք անցեալ էին յերկիրն այս ավելի քան տեղականսն. և թէ այլ ազգոք որ բնիկ ի յերկրեն են»¹: Մակար Բարխուտարեանցը, ընդհանրացնելով իր հավաքած տեղեկությունները, նշում է որ «Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ և Ճառի և սոցա բոլոր գաւառների /բացի Կապադակից/ հայերեն ընդհանուր տիրող բարբառն է Արցախի այժմեան գործածական լեզուն, քանզի ինչպես գիտենք, կանխաւ, բնակչաց ամենամեծ մասն գաղթած և տեղափոխված են Արցախից: Սպահանից, Խոյից և Թեհրանից երկիրս գաղթողներն ևս պահպանուած են իւրեանց նախկին հայրենեաց գավառական հայերեն բարբառը»²: Տեղում արմատացած արցախյան մշակութային համալիրների վերաբերյալ XIX դ. սկզբներին շուշեցի ուղեգիր Տեր Բաղդասար Գասպարյանը գրել է. «Հայք խոսին որպես դարաբաղցիք և զգեստիւ հայոց հնոց կարճօրեն և տեսելամբ գեղեցիք»³: Նույնը ուղեգիրը գրել է նաև Շաքիի մասին⁴: Տեր Բաղդասար Գասպարյանը, հավանաբար նկատի ունենալով այդ տարածաշրջանների հայ բնակչության տվար լինելու հանգամանքը, Շիրվանից մինչև Դերբենտ համարել է Հայաստան⁵:

Այդ դեպքերից շուրջ հարյուր տարի անց Մակար Արքեպիսկոպոս Բարխուտարեանցը տեղում դեռևս մնացած հայերից ու մահմեդականություն ընդունած հայերից հավաքած տեղեկություններից պարզել է, որ Խաչմաչում՝ երբեմնի Սուշկյուրի խոշորագույն բնակավայրերից մեկում, իշխողները ավանդաբար եղել են հայերը: Նա հիշատակում է տեղացիների մոտ մեծ հարգանքի արժանացած Հովսեփ բեկ Ջավադբեկյանի ու նրա նախնիների մասին ու ավելացնում, որ տեղի հայերն արդեն խոսում էին տաճկերեն⁶:

Մակար Բարխուտարեանցը հայոց երբեմնի ներկայությունը վկայակոչող ավանդույթներ, լեզենդներ ու տեղանունների մասին տվյալներ է մատնանշում նաև Շաքիի ու դրանից հյուսիս գտնվող գավառների՝ մասնավորապես Ճառի վերաբերյալ⁷: Դրանք հստակորեն ցույց են տալիս, որ Շաքի-Ջաքաթալա-Բելոկան տարածաշրջանում մեծաքանակ էին հատկապես Արցախի Ջրաբերդ, Վարանդա ու Խաչեն գավառներից այդտեղ տեղափոխված վերաբնակիչները⁸: Ակնհայտ է, որ այս իրավիճակում խնդրո առարկա տարածաշրջանի մշակութային նկարագրում որոշակիորեն պետք է ընդգծվեր հայոց բնորոշ մշակութային համակարգն ու այդ թվում՝ գորգագործական մշակույթը:

Շիրվանի գորգագործական կենտրոններում արցախյան ավանդույթների ներկայության առումով մենք կարևորում ենք նաև Ելիզավետապոլի գավառի կազմում եղած Արեշի գավառը: Մինչ XX դարի սկզբները ամբողջովին հայաբնակ էին այդ գավառի գյուղերը՝ Քանդակը, Հավարիկը, Մամաթավան, Խանավաղը, Մագուրդուն, Խալդանն ու Արեշը, որոնք հայտնի էին որպես գորգագործական կենտրոններ⁹: Ու միանգամայն տրամաբանական է, երբ Մ. Բարխուտա-

¹ Եսայի Հասան Ջալալյան, էջ 32-33

² Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 149-150

³ Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, *Օտղկաքաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Հ.Քյուրտյան, Բանբեր Մատենդարանի 9, Եր., 1969, էջ 293*

⁴ Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, *նույն տեղում*

⁵ Նույնը, էջ 292-293

⁶ Մ. Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 75-76

⁷ Նույնը, էջ 134-140

⁸ Նույնը, էջ 112-123

⁹ Նույնը, էջ 141-143, Ա. Լուսենց, *Արեշի բարբառը, Եր., 1982, էջ 5-7*



րեանցը նկարագրելով Շամախու ու մերձակա գավառների բնակչության գործունեության ոլորտներ, նշում է, որ նրանք բոլորը՝ այդ թվում նաև հայերը, վարում էին բազմաբնույթ տնտեսածներ, որոնց արտադրանքը վաճառահանվում էր մոտակա շուկաներում, մասնավորապես Ադղաշում: Այդօրինակ ապրանքների թվում մեծ տեղ է գրավել ոստայնանկության հումքն ու արտադրանքը՝ գորգերն ու կարպետները, անկողնապարկերն ու խուրջիները, բուրդն ու մանվածքը, ներկանյութերը և այլն¹:

Ընդհանրապես, այդ տարածաշրջաններ վերաբնակված արցախցիների ունեցած դերի ու նշանակության մասին պատկերացում կազմելու համար տիպական օրինակ կարող է ծառայել արցախյան գորգագործության նշանավոր կենտրոն Վարանդա գավառի Ճարտար գյուղը: Մակար Բարխուտարեանցի ներկայացրած տվյալներից պարզել ենք, որ այդտեղից XVII-XVIII դդ. արտագաղթածները բնակություն էին հաստատել Շամախու մերձակայքի Արփաուտ, Ղարա-Քարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերում²: Նշենք, որ Մակար Բարխուտարեանցը իր ուսումնասիրած տարածաշրջանների՝ ներկայիս Ադրբեջանի Ղուբայի, Կուսարի, Ջաքաթալայի, Բելոկանի, Շաքիի, Շամախու, Գյոլչայի, Եվլախի շրջանների բնակավայրերի էթնիկական կազմի ու դրանց ծագումնաբանական մասին խոսելուց, որոշ դեպքերում մատնանշել է հայերի նախկին բնակության միայն գավառների անվանումները՝ հիմնականում Ջրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վարանդա, Դիզակ³, իսկ ավելի շատ՝ ներկայացրել է կոնկրետ գյուղերի անվանումներ՝ ընդհանուր թվով երեսուներեք գյուղ: Ընդ որում, դրանցից քսանհինգը Վարանդայի ու Դիզակի գյուղերն են՝ Ավետարանոցը, Սոսը, Հադորտին, Մուշկապատը, Աշանը, Գիշին, Դոնավարզը, Օովատեղը, Մամնան, Քերթը, Ղավախանը, Թաղավարդը, Հերիերը, Շոշը, Ննգին, Հացին ու վերն արդեն նշված Ճարտարը /բոլորը՝ Վարանդա/, Հադրութը, Տոդը, Տումին, Թաղերը, Հարարը, Շեխերը, Դրախտիկը, Ծամձորը /բոլորը՝ Դիզակ/: Ջրաբերդի ու Խաչենի գյուղերից հիշատակվում են Խնածախը, Բալուջան, Դաշբուլաղը, Խանձքը, Վանքը, Նախիջևանիկը, Առաջաձորը, Խնձրիստանը⁴:

Վերոհիշյալ Արփաուտ, Ղարա-Քարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերի հետ միասին, Մակար Բարխուտարեանցը տեղեկությունների համաձայն Վարանդայի ու Դիզակի նշված գյուղերից տեղափոխվածները հաստատվել են Գիրկ, Ագայի շեն, Ղալաքյա, Խանի շեն, Փախրաքյուշ, Մեյսարի, Աղբուլաղ, Բուզվանդ, Քովուջ, Դայմա դաղ, Ավանաշեն, Ռուշան, Վանքաշեն գյուղերը⁵: Հարկ ենք համարում, ասել, որ Արցախի մեր հիշատակած բոլոր բնակավայրերի մեծ մասը գորգագործական ավանդույթներով հայտնի գյուղեր են:

Բայց այդ ամենը մշակութային ներգործության միայն ակնհայտ գործոններ են: Կարծում ենք, որ հիշատակված տարածաշրջանի գորգագործական կենտրոններում արմատացած գորգերի ու կարպետների տիպերի ու դրանց գեղագարդման համակարգում, կատարման տեխնիկատեխնոլոգիական չափանիշներում արցախյան ավանդույթների արմատավորման, ու մանավանդ, հետագա զարգացումների հարցում, առանձնահատուկ է իսլամ ընդունած և ազգային լեզուն կորցրած հայերի դերը: Հայտնի է, որ XVII-XX դդ. խնդրո առարկա տարածաշրջաններում պարբերաբար եղել են զանգվածային կրոնափոխության դեպքեր, այդ թվում 1918-20 թթ., երբ

¹ Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 144

² Նույնը, էջ 97, 104, 107: *Խնդրո առարկա հարցերի մասին տես նաև՝ Քաջբերունի, Բազմամիլիոն, ժառանգություն Վավերագրեր-2/ կազմողներ Ա. Ղազիյան, Ա. Քալանթարյան/, Եր., 2001, էջ 76*

³ Մ. Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 89-134

⁴ Նույնը, էջ 89-110

⁵ Նույն տեղում



Շամախու, Շաքիի ու Գյոքչայի գավառների 52 գյուղից մասնակիորեն փրկվեցին միայն տասը՝ Միրզաբեկյուն, Խոշկաշենը, Նիժը, Ճալեթը, Թոսիկը, Վարդաշենը, Մեծ Սոգութլուն, Փոքր Սոգութլուն, Գիրկը, Չոռլուն¹: Դրանց շնորհիվ շատ ավելի դյուրին են դառնում էթնամշակութային այլ միջավայրում հայոց մշակութային ավանդույթների տեղայնացման, էթնիկական այլ հանրույթների կողմից դրա յուրացման գործընթացները: Դավանափոխության հետ միասին, թեև աստիճանաբար տեղի է ունենում նաև մայրենի լեզվի կորուստ, բայց այնուամենայնիվ, դա չի ենթադրում տնտեսամշակութային գործունեության համակարգի փոփոխություն, ուստի այն ամենն, ինչ ունենում է դավանափոխ հանրույթը, մեխանիկորեն դառնում է օտար հանրույթի մշակութային սեփականություն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բռնի դավանափոխության ակիքները սկիզբ են առել առնվազն XIV-XV դարերից, պետք է ենթադրել, որ արդեն XVI-XVII դարերում դավանափոխ հայերի սերունդները դիտվում էին որպես մահմեդական ցեղեր՝ լեզվի, թաթար, պարսիկ և այլն, որոնք շարունակում էին պահպանել ու զարգացնել իրենց նախնիներին բնորոշ զբաղմունքներն ու սովորույթները²:

Պատմամշակութային այսօրինակ գործընթացները, ինչպես նկատում ենք, զգալիորեն բարդացնում են ծագումնաբանական հետազոտությունների իրականացումն, ու միաժամանակ, հնարավորություն են տալիս ցանկության դեպքում յուրացնել իրականում այլ էթնիկական հանրույթների ստեղծած մշակութային ժառանգությունը: Բարեբախտաբար, 1920-30-ական թթ. հրատարակված տեղեկատվական ու տնտեսագիտական բնույթի ուսումնասիրություններում նշվել են այդ տարածաշրջանների հայոց գորգագործական մշակույթի նկարագրին վերաբերող կոնկրետ տվյալներ: Մասնավորապես Մ. Իսաևը՝ Կովկասում գորգագործության զարգացման ասպարեզում այդ հայտնի մասնագետը, գրում է, որ մինչև 1920-ական թվականների սկիզբը զանգվածային գորգագործության կենտրոններ էին Կարամարյանի ենթաշրջանի հայկական գյուղերը՝ Կիրկը, Ռուշանը, Ուշտալը, Սուլթանքենդը, և որ մեր համար հատկապես կարևոր է, շեշտում է, որ նրանց արտադրանքը որակով ու տեխնիկատեխնոլոգիական առումներով նույնն է, ինչ որ արցախյանը³:

Անդրադառնալով վերոհիշյալ տարածաշրջանների գորգագործական կենտրոններում տարածում գտած արցախյան ծագումով գորգերի խմբերին ու առանձին տիպերին, պետք է նշել, որ դրանք աչքի են ընկնում բազմազանությամբ և կոնկրետ ուղղվածությամբ:

Դերբենտի գորգագործական կենտրոններում խոսքն առաջին հերթին վերաբերում է «Ջրաբերդ» հորինվածքի տարբերակներով գեղազարդված գորգերին /այդ թվում՝ այսպես կոչված «Զեյխուր» տիպին/, «Գետաշեն», «Որոտան» և «Ամարաս» տիպի գորգերին: Շիրվանի ու Շաքիի տարածաշրջանների գորգագործական կենտրոնների դեպքում այդ ցանկը զգալիորեն մեծ է ու հիշատակվածների հետ միասին ներառում է նաև «Ճարտար», «Հաղպատ», «Ջրաբերդ», «Ուտիք», «Ոսկանապատ», «Բանանց», «Փյունիկ», «Սիսական», «Գանձակ» և մի քանի այլ տիպեր: Ինչպես Դերբենտի, այնպես էլ Շիրվանի գորգագործական կենտրոններում, անշուշտ, առկա են նաև տեղական առանձնահատկություններ, որոնք մեծամասամբ վերաբերում են գորգ գործելու տեխնոլոգիաներին: Շիրվանի գորգագործական կենտրոններում, օրինակ, գործել են նաև բարձր խտությամբ և բամբակյա միջնաթելով գորգեր, իսկ Դերբենտի գորգագործական կենտրոններում տարածում ունեթ մեկ միջնաթելով գործելու ավանդույթը:

¹ Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов/ под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1982, стр. 538-539

² Մ. Բարխուտարեանց, *նշված աշխ.*, էջ 22

³ М. Исаев, *Ковровое производство Закавказья*, Тифлис, 1932, стр. 121

ՀԱՐԹԱԿԱՐՈՎ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց ասեղնագործական մշակույթի համակարգում ասեղնագործելու առավել տարածված եղանակներից մեկը հարթակար եղանակն է, որի հիմնական առանձնահատկությունը ասեղնագործվող մակերեսը տվյալ նախշին համապատասխան գույնի թելերով ծածկելն էր: Թելերի տեսակների ու ասեղնագործվող առարկայի, դրա գործածական նշանակության և այլ հանգամանքներից կախված, ասեղնագործելու այդ եղանակում կարող են դրսևորվել որոշակի առանձնահատկություններ: Հայոց մեջ լայնորեն տարածված կիրառական-գեղագարդման արվեստի այս ոլորտը ավանդական էր նաև Արցախում: Ասեղնագործ զարդանախշերով հարդարվում էր նաև ավանդական տարազը, մասնավորապես վերնախավի տոնական տարազը: Այս առումով հանրահայտ են Շուշիի հայուհիների վերնագգեստն ու գոտին, որոնք բնորոշվում էին հարթակարով արված ոսկեթել ու մետաքսաթել ճոխ ասեղնագործություններով¹:

Արցախի գործվածքի վերաբերյալ մեզ հայտնի գրավոր վաղագույն վկայությունը Մովսես Կաղանկատվացունն է: 680 թվականին կատարված Աղվանից Տիվանշիր իշխանի սպանության առիթով պատմիչը հիշատակել է Արցախի լեռնային բնակավայրերից մեկում, դավադիրների տնից բռնագրավված «մետաքսահյուս ու կերպաս դիպակների ու գունագեղ կարպետների» մասին²: Ավելի ուշ ասեղնագործելու մասին առավել որոշակի տեղեկություններ է հաղորդում Կիրակոս Գանձակեցին, պատմելով, որ Խաչենի իշխաններից մեկի՝ Վախթանգ Հաթերքեցու կին **Արգուխաթունը** իր աղջիկների հետ միասին 1191-1214 թթ. **Գետիկի, Հաղբատի, Մակարավանքի և Դադիվանքի** խորանների համար պատրաստել են գորգագործական տեխնիկայով և ասեղնակարով արված վարագույրներ ու զանազան ծածկոցներ³: Այդ ամենը տեսած պատմիչը դրանք ներկայացնում է իբրև մեծ վարպետությամբ արված ու հարուստ գեղագարդմամբ բնորոշվող գործեր: Հայտնի է, որ, ասեղնագործելը, եւ ընդհանրապես, ուստայնանկությամբ զբաղվելը հատուկ է եղել վերնախավին պատկանող կանանց ու աղջիկներին, այնպես որ Վախթանգ իշխանի գերդաստանը այդ առումով եզակի չէր⁴: Համենայնդեպս, ԺԹ դարի վերջերին գրի առած ազգագրական տվյալները Երվանդ Լալայանին հնարավորություն են տվել գրելու, որ մելիքների կանայք ու աղջիկները քիչ էին զբաղվում տան գործերով, նրանք **«միայն մետաքսից թեշիկով թել էին մանում, ասեղնագործում, քսակ ու այլ ձեռագործներ շինում»**⁵:

ԺԹ դ. երկրորդ կեսին հավաքված ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ այլ զբաղմունքների թվում Արցախում կանանց ու աղջիկների համար համատարած զբաղմունք էր նաև ասեղնագործությունը: Այդ ժամանակաշրջանում դրա ուսուցումը իրականացվում էր հատուկ

¹ Տե՛ս Н. Авакян, *Народная одежда армян Арцаха в XIX-начале XX в.* - «Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX -XX вв» М., 1971, էջ 215

² Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, *Պատմություն Աղվանից աշխարհի*, թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Վարդգ Առաքելյանի, Եր., 1969, էջ 175: Ի դեպ, ձգտելով գորգագործական մշակույթից զերծ պահել հայերին ու Հայաստանը, Լ. Քերիմովը, հիշատակելով Կաղանկատվացու այս տեղեկությունը, չի նշել Արցախ տեղանունը և գրել է. «Աղբեջանի հյուսիսային մասերում պատրաստում էին մետաքսե գործվածք և գույնզգույն գորգեր» տես՝ Լ. Керимов, *Азербайджанский ковер*, հ. 2, 1983, էջ 12-13

³ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն հայոց*, աշխատասիրությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, 215 - 216

⁴ Այս կապակցությամբ ենթադրում ենք, որ գորգարվեստը ուսումնասիրողների շրջանին քաջ հայտնի «Մինա Խանում» կոչված զարդանախշ-վարդակի անվանումն էլ կապված է ԺԳ դարում ապրած Սյունյաց նշանավոր իշխան Տարսայիճ Օրբելյանի (իշխել է 1273-1290 թթ.) տիկնոջ՝ Խաչենի իշխան Հասան Չալալի դուստր Մինայի անվան հետ

⁵ Եր. Լալայան, *Երկեր*, հտ. 2, Եր., 1988, էջ 249



այդ նպատակով հրատարակված Եղիսաբեթ Պատկանյանի, Խ. Թախտաջյանի, շուշեցի հայտնի ասեղնագործուհի Մարգարիտ Ալեքսանյանի ուսումնական ձեռնարկներով: Ընդ որում, դա իրականացվում էր ոչ միայն Շուշիում, այլ նաև Արցախի խոշոր բնակավայրերում եղած տեղական դպրոցներում: Մասնավորապես հայտնի է, օրինակ, որ 1880-ական թթ. ասեղնագործությունը ուսուցվում էր Արցախի Ջրաբերդ գավառի Կարաչինար գյուղի դպրոցում¹: Անշուշտ, մասնագիտական նրբությունների առումով այն ավելի զարգացած էր Արցախի կենտրոն Շուշիում, ուր ԺԹ դարի վերջին ու հաջորդ դարի սկզբին հայտնի ասեղնագործուհիների համբավ ունեին Ջարուհի Մախմուրյանը, Ոսկի Թունիբեկյանը, նշանավոր ոսկերիչ ու մանրանկարիչ Գրիգոր Բաղամյանցի քույր Շուշանիկը:

Շուշանիկի 1906թ. հարթակարով արված աշխատանքներից մեկը՝ արծվի պատկերով պատի զարդը, պահվում է Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանում²:

Ի դարի 70-90-ական թթ. Արցախում իրականացված ազգագրական դաշտային հետազոտությունները ցույց են տվել, որ հարթակար ու կտրտովի եղանակով արված ու ժամանակակից մտահղացումներով զեղազարդված ասեղնագործ պատի զարդերը դեռևս լայն տեղ ունեին բնակարանի ներքնատեսքի հարդարանքում: Միաժամանակ, կարևոր է նկատի ունենալ, որ ինչպես գորգագործական մշակույթի, բարբառային ու տարագային համալիրների դեպքում է, այս պարագային ևս արցախյան ավանդույթները համահունչ են Ջանգեզուրի, Տավուշի, Գողթան գավառի ու Լոռվա ավանդույթներին:

Չնայած Արցախի ասեղնագործական մշակույթին այս կամ այն չափով անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ, մասնավորապես Մ.Ղազարյանն իր «Արցախի գանձերը» աշխատության մեջ, այնուամենայնիվ, դրա ամբողջական պատմամշակութային բնութագիրը դեռևս արված չէ:

Սույն հաղորդմամբ, մենք փորձում ենք փոքր-ինչ լրացնել պակասն ու մասնագիտական շրջաններին ներկայացնել ուշ միջնադարի արցախյան ասեղնագործական մշակույթին վերաբերող ու հարթակար եղանակով արված մի աշխատանք:

Այն ունի բնորոշակ նվիրատվական թվակիր հիշատակարան՝ «Յիշատակ է թագս ի Մելիք Բեգլարի կողակից Մարիամեայ ի դուռն Հոռեկա վանքի. ՌՄԽԴ»³: Մ. Ղազարյանը վերը հիշատակված աշխատության մեջ ներկայացրել է այս թագը, սակայն հիշատակարանի վերջում թյուրիմացաբար տեղ են գտել «ի վայելումն Գեւորգ արքեպիսկոպոսի» բառերը⁴: 1795 (ԴՄԽԳ) թվականին ասեղնագործված այս նվիրատվության հեղինակ Մարիամը Մելիք Շահնազար 2-րդի՝ Վարանդայի ազդեցիկ մելիքի դուստրն էր⁵: Իսկ Մելիք Բեգլարը Գյուլիստանի Մելիք Աբովի ավագ որդին էր, Մելիք Բեգլար 2-րդը, որը հոր մահից հետո, 1775 թվականին ժառանգել էր այդ գավառի մելիքական իշխանությունը: Մելիք Բեգլար 2-րդը շատ կարճ ժամանակ է վարել իշխանությունը՝ 1781 թվականին, երիտասարդ տարիքում նա զոհվել է լեզգիների դեմ մղված մարտերից մեկում⁶:

Ավանդություններից հայտնի է, որ Մելիք Բեգլար 2-րդը հավատարիմ չի եղել իր կնոջն ու արժանացած է եղել նրա ցասումին: Մելիք Շահնազարի աղջիկը ամուսնու ծառաներից մեկի

¹ Տե՛ս և Կ. Կադրամանյան. *Книга очага: земля зовет*, 2, Եր., 2004, էջ 238

² *Այս ամենի մասին տես՝ Մ.Ղազարյան, Արցախի արվեստի գանձերը, Անթիլիաս, 1993, էջ 85 - 93, նկ 158*

³ Մ.Ղազարյան, *Արցախի արվեստի գանձերը, էջ 90*

⁴ *Արցախի արվեստի գանձերը, Անթիլիաս, 1993, էջ 89-90*

⁵ Եր. Լալայան, *Գանձակի գավառ (Նյութեր ապագա ուսումնասիրության համար).*- *Երկեր հինգ հատորով, հատ. 2, Եր., 1988, էջ 223, Դա ֆֆի, Խամսայի մելիքություններ, Երկերի ժողովածու, հատ. 9, Եր., 1987, էջ 470 - 472*

⁶ Տե՛ս և Ա. Կառնիսյան, *Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия, Եր., 1990, էջ 59*



ձեռքով սպանել էր տվել նրա սիրուհուն, իսկ դրա հաջորդ օրն էլ գավառի սահմաններում լեզգիների դեմ տեղի ունեցած ճակատամարտում դավադրաբար՝ նույն ծառայի արձակած գնդակով սպանվել է երիտասարդ, բայց արդեն մեծահամբավ Մելիք Բեգլար 2-րդը¹: Ըստ էության, Մարիամը ամուսնու եղերական մահվանից 14 տարի անց, իրեն համակած մեղքի զգացումից թողություն ստանալու համար էր կատարել այդ երևելի նվիրատվությունը: Նրա մասին մեզ ավելին հայտնի չէ, սակայն հայտնի է, որ Արցախի մելիքությունների արտաքին կապերն ու հարաբերություններն այդ ժամանակներում հատկապես սահմանափակ էին՝ տարածաշրջանն անընդհատ ենթարկվում էր լեզգիների հարձակումներին, իսկ մյուս կողմից առկա էին Շուշիի խանի դավադրությունները: Այդպիսի իրավիճակը թույլ է տալիս եզրակացնել, որ խնդրո առարկա թագր ստեղծվել է հենց Մելիք Բեգլարյանների Թալիշ գյուղում, որի մերձակայքում էլ գտնվում է Հոռեկավանքը: Ասեղնագործությունը բնորոշվում է բարձր ու նրբաճաշակ մակարդակով, գեղագարդման ավանդական սկզբունքների իմացությամբ ու կատարման վարպետությամբ: Այն գործնականորեն փաստում է վերնախավի կանանց շրջանում գործվածքով, մասնավորապես ասեղնակարով զբաղվելու ավանդույթը, որն ինչպես ասվեց, կար Արցախում մինչ այդ, ու որի շարունակման մասին ԺԹ դարի վերջերին նշել էր Երվանդ Լալայանը: Թագի գեղագարդման համակարգն աչքի է ընկնում հարստությամբ ու բովանդակային հագեցվածությամբ: Թագի մի կողմում ասեղնագործված է խաչը, մյուսին՝ Աստվածամայրը Մանուկ Հիսուսի հետ: Երկու պատկերն էլ ամփոփված են ճյուղատարած, ճոխ ծաղկանախշերով լրացված կենաց ծառի կենտրոնում՝ հատուկ ձևավորված ձվաձև շրջանակում: Գեղագարդումը կատարված է բրդե բարակ մանված թելերով, մետաքսաթելով ու նաև ոսկեթելով: Խաչի ու եզրագոտու ներքին եզրի հարդարման համար օգտագործված են նաև մարգարիտներ: Գունային երանգները մեղմ ու ներդաշնակ են, գեղագարդման մանրամասներն էլ՝ այս պարագայում վարդակներով գեղագարդված գոտին, միանգամայն համահունչ են հիմնական հորինվածքներին, ընդ որում, եզրագոտու վարդերը հարդարված են գունավոր ապակե ակերով: Հիշատակարանը ասեղնագործված է ոսկեթելով, թագի ստորին մասում հատուկ այդ նպատակով առանձնացված շրջանակում:

Մանրամասնությունների մեջ չխորանալով, հարկ ենք համարում հատուկ շեշտել խոշոր վարդակները, ձվաձև շրջանակի բեկբեկուն տերևանախշ երիզն ու ընձյուղները, որոնք բնորոշ են արցախ-այունիքյան ասեղնագործական մշակույթին ու մասնավորապես ԺԹ-Ի դարերի կտրտովի ասեղնագործությամբ արված պատի զարդերին: Ուշագրավ են նաև կենաց ծառի զագաթին պատկերված գույգ կակաչները: Այդ նախշը հանդիպում է նաև ԺԵ-ԺԸ դդ. վերաբերող այսպես կոչված «օտտոմանյան» ասեղնագործությունների գեղագարդման համակարգում և նույնիսկ համարվում է նրանց բնորոշիչներից մեկը: Ինքնին սա բավականին նշանակալից երևույթ է, ու մեր կարծիքով, ինչպես որ արցախ-այունիքյան գորգագործական մշակույթի ցայտուն արտահայտությունների առկայության դեպքում է, դա նույնպես առնչվում է ԺԵ-ԺԵ դարերում տեղի ունեցած տեղաշարժերին, որոնց ընթացքում Փոքր Ասիայի արևմտյան մասերում հաստատվեցին Արևելյան Հայաստանից տեղափոխված հազարավոր հայ ընտանիքներ:

Այդ առումով, ըստ երևույթին, հատկապես զգալի էին ԺԶ-ԺԷ դդ. թուրք-պարսկական երկարամյա պատերազմների ընթացքում իրականացված բռնի տեղահանումները²: Վերաբնակիչների մի ստվար մասն էլ այդտեղ էր հաստատվել Պարսկաստանից՝ Շահ Աբաս I-ինի կազմակերպած բռնագաղթվածների թվից: Շատ ուշագրավ է, որ այդ իրադարձություններին ականատես

¹ Այս մասին տես՝ Եր. Լալայան, *նշվ. աշխ.*, էջ 223 - 224

² Տե՛ս՝ Ա. Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, Եր., 1964, էջ 248 - 260



սկզբնաղբյուրն այդ ամենի մասին տալիս է նաև իր բացատրությունը, ըստ որի դա պայմանավորված էր «արհեստավորների կարիքով, քանի որ իրենք ոչ մի մասնագիտության չեն տիրապետում ու իրենց հսկայական տիրույթներում ոչ մի բան իրենց ստեղծածը չի: Թուրքերը կոպիտ են ու անտաշ, ու հետևաբար, հեռու հոգևոր կյանքից»¹: Կոնկրետ Արցախից, Սյունիքից ու Ղարադաղից Փոքր Ասիայի ծայր արևմտյան տարածքներ՝ Դենիզլի, Այդն, Յոդեմիշ, Մանիսա, Սպարտա տեղափոխվածների մասին տեղեկացնում է Հակոբ Քոսյանը²:

Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը նշում է, որ ինքը 1878-1879 թվականներին Նիկոմեդիայի, Չմիուռնիայի և մերձակա բնակավայրերի հին գերեզմանոցների տապանաքարերին բազմիցս տեսել ու գրի է առել ննջեցյալների ծննդավայրերին վերաբերող սյունիք-արցախյան տեղանուններ՝ Մեդրի, Ղափան, Կալեր, Կճողուտ, Հաղորտի, Հացի, Հաղրութ և այլն: Ուշագրավ է հատկապես այն, որ դեռևս ԺԹ դարի վերջերին Չմիուռնիայի Դենիզլի գյուղի տարեց պառավներն իրար հետ խոսում էին Ղարաբաղի բարբառով³: Այս ամենին հավելենք, որ ժամանակին Հրաչյա Աճառյանը պարզել էր, որ Բուրդուրի ու Սպարտայի հայերի խոսակցական լեզուն համապատասխանում է Ղարաբաղի բարբառին, որ այդ տարածքների հայաբնակ վայրերում պահպանվել էր անկորուստ⁴:

Ասվածի վկայությունն են Արևելյան Հայաստանի՝ Արցախի, Սյունիքի, Լոռվա, Վասպուրականի գորգագործական կենտրոններին վերաբերող այն բազմաթիվ ավանդույթները, որոնք առկա են փոքրասիական գորգագործական կենտրոններում: Դրա ցայտուն արտահայտություններից մեկը փոքրասիական գորգերի **Լադիկ** տիպն է, որի նախատիպերից մեկը կարող ենք համարել Ադվանից Ներսես Կաթողիկոսի հետ առնչվող 1731թ. գործված գորգը, որը պահվում է Երուսաղեմի սուրբ Հակոբ եկեղեցու թանգարանում: Այն ունի հայատառ, թվակիր արձանագրություն, որում ասվում է՝ «**յիշեցեք մաքրափայլ յաղօթս ձեր Ներսես մեղապարտ կաթողիկոս Աղուանից է պատճառ սմին (արված) լոյս ընկալ Չարեքու սբ անապատին ՌՃԶ թվին**»⁵: Ինչպես նկատել են ուսումնասիրողները, մենաստաններում և կուսանոցներում ասեղնագործությամբ ու գորգագործությամբ զբաղվելը եղել է ընդունված երևույթ⁶, և այս գորգն էլ փաստորեն դրա վկայություններից մեկն է: Ըստ էության, այդ հաստատություններում, ինչպես որ իշխանական տներին ու վանական խոշոր համալիրներին կից եղած գործատուն-արհեստանոցներում էր, կային նաև ասեղնագործությունների ու գորգերի համար հատուկ գծանկարներ կազմող մասնագետներ և պատրաստում էին ինչպես սեփական կարիքների, այնպես էլ վաճառքի համար նախատեսված գործվածքներ⁷:

Այս գորգի կենտրոնական դաշտի ծայրերում, մեկ լայնակի շարքով պատկերված են կենաց ծառի տեսքով խոշոր բուսանախշեր, որոնց զագաթներն ավարտվում են մեզ ծանոթ **կակաչ** նախշով: Հոռեկա վանքի հարևանությամբ գտնվող Չարեքա անապատում, Մարիամի ասեղնագործած թագից 64 տարի առաջ ստեղծված այս գորգի գեղազարդման համակարգում կարևորված

¹ Տե՛ս Ն. Չուլպյան, *Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, XIII-XVIII: Գիրք Ա., Քաղաքական պատմություն, Եր., 1990, էջ 110*

² Տե՛ս Յակոբ Վ. -Քոսեան, *Հայք ի Չմիուռնիա եւ ի շրջակայս, հատ. Ա, Բ, Վիեննա, 1899, էջ 9, 13, 14, 25- 27, 31- 32, 66- 67, 79-80, 94 - 96, 141, 152-153 եւ այլն*

³ *Գաղտնիք Ղարաբաղի, հեղինակություն Այրեւսի Բեկնագարեանց, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 242:*

⁴ Տե՛ս Ն. Աճառյան, *Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911, էջ 61, նույնը՝ Հայոց լեզվի պատմություն, հ.2, Եր., 1952, էջ 332*

⁵ Տե՛ս Ն. Քուրդյան, *Գորգը հայոց մոտ, Վենետիկ, 1947, էջ 68*, Ս. Դավթյան, *Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Եր., 1981, էջ 128-129*

⁶ Ս.Դավթյան, *անդ, էջ 77- 78*

⁷ *Բոսնիայի կուսանոցներում, օրինակ, լայն տարածում ունեւ վաճառքի համար ժանյակներ գործելը, տես՝ “Энциклопедия мирового искусства. Антиквариат, самая полная история антиквариата”. Генеральный редактор Хуон Меллалью, Москва, 2003, էջ 187*



կակաչ նախշն, անշուշտ, մատնանշում է արցախյան ասեղնագործությունների մեջ դրա հնամենի ավանդույթներ ունենալու փաստը: Ընդհանրապես, թագի ասեղնագործ վարդակներն ու ճոխ բուսանախշերը բնորոշ էին տարածաշրջանի մշակութային կենտրոններին:

Այս առումով մենք կարևորում ենք ևս մեկ պատմամշակութային արժեք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գանձատանը պահվող 1771 թվականին Ագուլիսում ստեղծված մետաքսե վարագույրը: Այն ներկայացնում է Աստվածամոր թագադրման տեսարան. կենտրոնում Աստվածամայրն է՝ Հիսուսի հետ միասին, իսկ նրա աջ ու ահյակ կողմերում՝ Գրիգոր Լուսավորիչը եւ Հովհաննես Մկրտիչը: Վերին մասում երկու հրեշտակ սավառնելով բերում են թագը: Վարագույրի անկյուններում, իրենց խորհրդանշաններով հանդերձ պատկերված են գահավորակներին բազմած չորս ավետարանիչները: Այդ ամենը երիզված է բուսածաղկային նախշերով արված չորս զոտիով, որոնք աչքի են ընկնում գեղազարդման մանրամասների ճոխությամբ: Դա վերաբերում է հատկապես կենտրոնական լայն գոտուն: Այն ալիքաձև կապույտ գծանախշով բաժանված է երկու մասի ու գեղազարդված է ճյուղատարած ծաղկանախշ հորինվածքներով, ընդ որում, դրանք պարունակում են վեց թերթանի վարդակներ ու բացված վարդեր, որոնք նման են թագին ասեղնագործված վարդակներին: Աստվածամոր աջ և ահյակ կողմերի ձվաձև շրջանակներում ասեղնագործված է հայատառ ընդարձակ հիշատակարան՝ «Յիշատակ է Ագուլեցի Միմիոնի կողակից Անթառամին եւ Ոսկանի կողակից Հռիփսիմէին, որդոյն Մեհրապին, քեռն Գայիեանին կողակցոյն Եղեսաբեթին, որդոյն Գրիգորին, դստերն Հերիքնազին ... Եւրին Պետրոսին ի Դոն Գողթնեաց ՄԲ Թովմայի Առաքելոյն թուին հայոց ՌՄԻ»¹: Ընդհանուր առմամբ, այս երկու ասեղնագործությունների գեղազարդման մանրամասներում առկա են ոճական ու տեխնոլոգիական միևնույն հատկանիշները, իսկ վարագույրի Ագուլիսում կատարված լինելն էլ կարևոր է մի քանի առումներով: Նախ, հայտնի են Արցախ-Սյունիք ու Գողթան գավառ տարածաշրջանների պատմամշակութային համալիրների սերտ աղերսները, իսկ այնուհետև այն, որ ագուլեցիների մի ստվար զանգված արդեն այդ ժամանակներից ի վեր հաստատվել էր Արցախում ու արևելյան Այսրկովկասի մի շարք վայրերում՝ մասնավորապես Զաքաթալայում²:

ԺԸ դարին վերաբերող հարթակար ասեղնագործության այս երկու նմուշները մեզ հնարավորություն են տալիս որոշակի պարզաբանումներ կատարել ԺԷ-ԺԸ դարերին վերաբերող ու նույն տեխնոլոգիայով արված պատի զարդերի մի յուրահատուկ խմբի ծագումնաբանական հարցերի ասպարեզում: Խոսքը վերաբերում է «կովկասյան ասեղնագործություն» ընդհանրացված անունով տարբերակված պատի ասեղնագործ զարդերի մի խմբի, որը բնորոշվում է արցախ-սյունիքյան վիշապագորգերի **Գուհար** ենթախմբին պատկանող գորգերի գեղազարդման համակարգերի մանրամասներով, ու մասնագետների մի մասի կարծիքով էլ դրանք կատարվել են Արցախում:

Կովկասյան վիշապագորգերի ծագումնաբանության վերաբերյալ մեր տեսակետները հայտնի են՝ դրանց ծագման ու տարածման ամենահավանական կենտրոնները մենք համարում ենք Արցախի ու Սյունիքի գորգագործական կենտրոնները³: Ասվածը վերաբերում է նաև **Գուհար**

¹ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Նոր Վեհարան, գույքահամար՝ թիվ 63: Կատարող: Հայ եկեղեցու գանձերը: Ցուցահանդես «Մոսկվայի Կրեմլ» պետական թանգարանում, հուլիս - օգոստոս, 1997, էջ 124

² Տե՛ս՝ Պ. Չոբանյան, **Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին**, Ս. Էջմիածին, 2006, էջ 57-58

³ Այս մասին տե՛ս՝ Ա. Պողոսեան, **Վիշապագորգերի ծագումնաբանության ու տարածման արևելների հարցի շուրջ**.- «Հանդես ամսօրեայ», Վիեննա - Երևան, 2004, թիվ 1-12, էջ 367-415, Հայաստանում գորգագործության ծագման հարցի շուրջ, ՊԲՀ, 2001, թ. 2, էջ 236-250, Հայոց գորգագործական մշակույթը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին. - Հայոց ազգային մշակույթի ատլաս, երկրորդ հատոր, էջ 171-172, Եր., 2009; Carpets-Armenian Folk Art. Culture Identitu /co-authors: Edited by Levon and Nensi Sweezi, Bloomington and Indianapolis, 2001, էջ 150-165 և այլն



ենթախմբի գորգերին՝ մասնավորապես, 1700 թվականին գործված Գուհար գորգը մեր կարծիքով ստեղծվել է Վարանդա-Սիսական գավառների գորգագործական կենտրոններում¹:

Հայատառ արձանագրությամբ ու ծագումնաբանության հետ կապված հստակ տվյալներ ունեցող վերոհիշյալ երկու ասեղնագործությունները առարկայորեն վկայում են առ այն, որ ուշ միջնադարում Արցախ-Սյունիքի մշակութային կենտրոններում գոյություն ունեին հարթակար ասեղնագործության զարգացած ավանդույթներ:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, ակնհայտ է դառնում, որ հարթակարով արված ու տարածաշրջանին բնորոշ վիշապագորգերի գեղագարդման համակարգի մանրամասներով գեղագարդված պատի զարդերն էլ ստեղծվել են այդ նույն տարածաշրջանում:

Հարթակար ասեղնակարով արված ու գորգերին բնորոշ գեղագարդման համակարգով ասեղնագործված պատի զարդերի տարածման արեալները ներառում են նաև հյուսիս արևելյան Այսրկովկասում՝ Շիրվանի, Շաքիի, Ղուբայի, Դերբենտի տարածաշրջանները: Դրանց գեղագարդման համակարգում, ի շարս վերն ասված գուհարյան հորինվածքի տարբերակների ու այդ ենթախմբին բնորոշ զարդանախշերի, լայն տեղ են գրավում ընդհանրապես գորգերին բնորոշ զարդանախշերը: Ընդ որում, այս դեպքում նույնպես չափազանց ակնառու են արցախ-սյունիքյան ավանդույթները:

Ինչպես փոքրասիական մշակութային կենտրոնների առումով էր, այստեղ ևս առկա է պատմամշակութային փոխշփումների գործոնը: Այս դեպքում, սակայն, հարկ է նկատի ունենալ, որ այսրկովկասյան վերոհիշյալ տարածաշրջաններն ընդհանրապես գտնվել են Արցախի ու Սյունիքի պատմաագագրական ազդեցության ոլորտում: Չնայած տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակների պարբերաբար կրկնվող կտրուկ շրջադարձերին, այդ տարածքներում նույնիսկ ԺԷ դարում գոյատևում էին հայկական կիսանկախ իշխանություններ, այդ թվում, օրինակ, Կուտկաշենի մելիքությունը²:

Եսայի Կաթողիկոսը 1720-25 թթ. Շիրվանի մասին գրել էր՝ «երկիրն էր մարդաշատ, թե հայ ազգօք, որ ի Ղարաբաղի երկրեն ժողովուրդք յուրվք անցեալ էին յերկիրն այս աւելի քան տեղականսն եւ թէ այլ ազգօք որ բնիկ ի յերկրեն են»³:

ԺԹ դարի սկզբներին էլ շուշեցի ուղեգիր Տեր Բաղդասար Գասպարյանը Շիրվանի ու Շաքիի տարածաշրջանների հայերի մասին գրել է. «հայք խօսին բառով որպէս ղարաբաղցիք»⁴: Մակար Բարխուտարեանցը, ընդհանրացնելով իր հավաքած տեղեկությունները, նշում է որ «Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ եւ ճառի եւ սոցա բոլոր գաւառների (բացի Կապադակից) հայերեն ընդհանուր տիրող բարբառն է Արցախի այժմեան գործածական լեզուն, քանզի ինչպէս գիտենք, կանխաւ, բնակչաց ամենամեծ մասն գաղթած եւ տեղափոխուած են Արցախից»: Բարխուտարեանցի հավաքած տեղեկություններից պարզվում է, որ միայն Վարանդայի ճարտար գյուղից ԺԷ-ԺԸ դարերի արտագաղթածներով վերաբնակեցվել են Նադիր շահի արշավանքների պատճառով դատարկված Շամախու մերձակայքի Արփաուտ, Ղարա-Քարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերը⁵:

¹ Տե՛ս Ա. Պողոսյան, *Վիշապագորգերի ծագումնաբանության ու տարածման արեալների հարցի շուրջ*, էջ 383-384
² Տե՛ս Լևուատ, *Очерки из истории Азербайджана в XVIII веке*, Баку, 1948, էջ 72
³ Եսայի Հասան Ջալալյան, *Պատմություն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելեց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839*, էջ 32 – 33
⁴ Տեր Բաղդասար Գասպարյան, *Շուշեցի Մաղկաքաղ աշխարհագրյց: Տպագրության պատրաստեց՝ Շ. Քյուրսյան. - Բանբեր Մատենադարանի 9, Եր., 1969*, էջ 293
⁵ Ա. Պողոսյան, *Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների տարածման արեալների մասին. - Միջազգային գիտաժողովի նյութեր, սյրակ 1, Ստեփանակերտ, 2009*, էջ 256-259: Մակար Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 97, 104, 107: Կուրճեվան, Քեշխուրդ եւ Քյալբանդ գյուղերում նախկին ճարտարգիներ բնակվելու մասին մեզ տեղեկացրեց Շամախի քաղաքի մերձակայքում գտնվող Հնդար գյուղից ճարտար հարս եկած յոթանասունհինգամյա Սահակյան Ռոզան



Ամփոփելով, կարելի է ասել, որ արցախյան մշակութային ավանդույթների գոյությունը վերոհիշյալ տարածաշրջաններում միանգամայն բնական էր ու պայմանավորված էր ինչպես պատմամշակութային սերտ աղերսների առկայությամբ, այնպես էլ արդեն իսկ պարբերաբար այդտեղ հաստատված արցախցի վերաբնակիչների սովոր գանգվածների մշակութային գործունեությամբ:

Այսպիսով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններում պահվող վերոհիշյալ ասեղնագործությունները, վկայելով Արցախի հարթակար ասեղնագործության հարուստ ավանդույթների մասին, միաժամանակ հնարավորություն են տալիս մեզ որոշակիորեն լրացնելու հայոց գործվածքի պատմության մասին եղած պատկերացումներն ու հիմնավորել դրա առանձին ոլորտների ծագումնաբանության հետ կապված լուծումները:

«ՋՐԱԲԵՐՂ» ԽՄԲԻ ԳՈՐԳԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց ավանդական գորգերի կազմում մեծապես հետաքրքիր է դասական վիշապագորգերի գեղազարդման համակարգին անմիջականորեն առնչվող գորգերի մի խումբ, որ մասնագետների շրջանում հայտնի է «Չարաբերդ», «Չալաբերդ», «Արծվագորգ», «Աղլեր-Ղազախ» և այլ անվանումներով: Ընդ որում, առաջին երկու անվանումներով այն հայտնի է նաև Արցախի ու Սյունիքի գորգագործների շրջանում: Այս խմբին պատկանող գորգերի հիմնական բնորոշիչը խաչաձև առանցքով խոշոր ու բարդ հորինվածք է, որի յուրաքանչյուր գագաթին պատկերվում են ոճավորված գույգ թռչնազուլուխներ¹: Այդ ամենը լրացված են ճառագայթանման հավելվածներով, որն էլ նկատի ունենալով, մենք այդ հորինվածքը տարբերակում ենք «Ճառագայթագարդ հորինվածք» անվանումով: Դրա մի բնորոշիչն էլ կենտրոնում՝ շեղանկյուն մի զարդաշրջանակում ամփոփված քառաթերթ վարդակն է, որը հայոց զարդարվեստի կարեւոր տարրերից է ու հայտնի է նաև «զարդ աշխարհի» անվանումով²:

Թեև մասնագիտական գրականության մեջ տարբեր առիթներով անդրադառնում են խնդրո առարկա գորգերի հետ կապված տարաբնույթ հարցերին, այդուհանդերձ, մեր կարծիքով դեռևս չկա դրանց ծագումնաբանական ու տիպաբանման լիակատար պատկերը ներկայացնող ուսումնասիրություն: Ուստի, նկատի ունենալով այդ բացը, այս հոդվածում մենք կփորձենք ներկայացնել ծագումնաբանական հարցերին վերաբերող մեր դիտարկումներն ու նաև տիպաբանության խնդրում մեր ունեցած մոտեցումները: Այդ նպատակով հիմնականում օգտագործել ենք մեր ունեցած դաշտային ազգագրական նյութերը, ԺԶ-ԺԹ դդ. վերաբերող պատմաազգագրական տեղեկությունները, Հայաստանի ու արտերկրի թանգարաններում պահվող գորգերն ու բնականաբար, հրապարակի վրա եղած ուսումնասիրություններում և ինտերնետային կայքերում տեղ գտած խնդրո առարկային վերաբերող տվյալները:

Տիպաբանական հարցեր: «Ջրաբերդ» խմբի գորգերի պարագային ելակետային է բնորոշիչ տարրը՝ «Ճառագայթագարդ հորինվածքը», որը մեր դիտարկումների համաձայն, ունի շուրջ մեկ տասնյակ տարբերակ: Այդ բարդ հորինվածքի տարբերակները դասական տեսքով բնորոշ են ԺԶ-ԺԷ դարերին վերաբերող հայոց գորգերի մի շարք տիպերի՝ այդ թվում նաև դասական վիշապագորգերի գեղազարդման համակարգերին: Ընդ որում՝ դասական վիշապագորգերի գեղազարդման համակարգում կան տարբերակներ, որոնք նմանվում են բազմաթերթ վարդակների: Հատկանշական է, որ այդ բոլոր դեպքերում դրանք տվյալ գորգերի գեղազարդման առանցքային տարրերից են: Այդ հորինվածքի տարբերակներն իրար հետ համեմատելով համոզվում ենք, որ գոյություն են ունեցել դրանցից յուրաքանչյուրով բնորոշվող գորգերի առանձին տիպեր, որոնց գեղազարդման ավանդույթները պահպանվել են ԺԹ-Ի դդ. վերաբերող գորգերի գեղազարդման համակարգերում:

«Ջրաբերդ» խմբում ընդգրկված գորգերը եղած տվյալների համաձայն վերաբերում են ԺԶ-Ի դարերին: Նկատի ունենալով դրանց գեղազարդման համակարգերում կատարված փոփոխու-

¹ Այդ հանգամանքը առիթ է տվել մի շարք ուսումնասիրողների խնդրո առարկա գորգերն անվանել «Արծվագորգ» կամ «Աղլեր Ղազախ»
² 1601 թ. Կարնո գավառի Դրովանջ գյուղում արտագրված ու Մատենադարանում պահվող թիվ 7634 ձեռագիր Ավետարանում պատկերված այդ տարբերակներից մեկի տակ գրված է «սա է զարդ աշխարհի». տե՛ս Աս. Մեացակեյա. Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 176, նկ. 42



թյունները, նպատակահարմար ենք գտնում վաղ շրջանին՝ ԺԶ-ԺԸ դդ. վերաբերողներն առանձնացնել առանձին ենթախմբում ու տարբերակել «Դասական Ջրաբերդ» անվանումով: Դրանք այն գորգերն են, որոնք հիմնականում բնորոշվում են «ճառագայթազարդ» հորինվածքով եւ ոճավորված վիշապապատկերներով: Այս ենթախմբին ենք դասում նաեւ ԺԹ-Ի դդ. վերաբերող տիպերից մեկին՝ որը նույնպես նշված հորինվածքներով է ու մեր կողմից տարբերակված է «Ջրաբերդ-վիշապագորգ» անվանումով¹:

«Դասական Ջրաբերդ» ենթախմբում ներառված են գորգերի երկու տիպ:

1. «Գուհարյան Ջրաբերդ»: Այս տիպին պատկանող գորգերի գեղագարդման համակարգում, բացի հիմնական հորինվածքից, առանցքային նշանակություն ունեն նաև վիշապի երկուական ոճավորումներից կազմված քնարաձև հորինվածքները: Դրա դասական նմուշը 1700 թվականին գործված հայտնի «Գուհար» գորգն է, որի անունով էլ տարբերակել ենք այս տիպը, իսկ քնարաձև հորինվածքը կոչել ենք «Գուհարյան վիշապապատկեր»: Այս տիպն իր հերթին ունի մի շարք տարբերակներ, որոնք բնորոշվում են այդ երկու հիմնական հորինվածքների ու դրանց լրացնող մանրամասների մատուցման ձևերով: Տիպիկ ու հարուստ նմուշ է Ժոզեֆ Մակմիլանի հավաքածուում պահվող և բազմիցս հրատարակված գորգը²: Այս տիպին պատկանող գորգերի մեծ հավաքածու է պահվում Ստամբուլի իսլամական արվեստի թանգարանում³: Մեր նախորդ ուսումնասիրություններում բավականին հանգամանորեն անդրադարձել ենք դասական վիշապագորգերի, այդ թվում, նաև «Գուհար» գորգի ծագումնաբանական հարցերին ու եզրակացրել, որ դրանց ծագման հիմնական տարածաշրջանները Արցախն ու Սյունիքն են⁴:

2. «Ձկնավոր Ջրաբերդ»: Այս գորգերի գեղագարդման համակարգն աչքի է ընկնում տարբերի բազմազանությամբ ու գորգադաշտի հագեցվածությամբ: Այստեղ հավասարապես կարևորված են «Ջրաբերդ» հորինվածքը, բազմաթերթ տարատեսակ վարդակներն ու ձկնակերպ խոշոր ոճավորումները: Այս տիպին պատկանող ու ԺԸ դարով թվագրվող մի ուշագրավ նմուշ պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում: Դրա գեղագարդման համակարգն աչքի է ընկնում մի յուրահատկությամբ՝ «ճառագայթազարդ» հորինվածքները պատկերված են ոչ միայն գորգադաշտի կենտրոնում, այլ նաև անկյուններում: Ընդհանուր առմամբ, այն իր գծային ձևերով համահունչ է խնդրո առարկա հորինվածքի դասական ձևին՝ շրջանաձև է ու բազմաթերթ, և յուրաքանչյուր կողմին դարձյալ երեքական ելուստ-ճառագայթներ են, սակայն այս դեպքում ունեն ընդգծված բուսական տեսք՝ մասնավորապես պարունակում են մեկական եռատերև «կենաց ծառ» նախշ: Այս գորգի գեղագարդման համակարգի մի յուրահատկությունն էլ այն է, որ հիմնական հորինվածքի հանդիպակաց գագաթներին կան աղեղնաձև բարդ նախշեր, որոնք նմանվում են ձկնապատկերների: Այս հանգամանքը հիմք ընդունելով՝ գեղագարդման այսպիսի համակարգով բնորոշվող գորգերը առաջարկում ենք տարբերակել «Ձկնավոր Ջրաբերդ» անվանումով: ԺԶ-ԺԸ դարերին վերաբերող հայկական վիշապագորգերի թվում կան այս տիպին պատկանող

¹Ա. Պողոսյան, *Հայոց գորգագործական մշակույթը ԺԹ դ. վերջին և Ի դ. սկզբին. «Հայոց ազգային մշակույթի ատլաս»,* երկրորդ հատոր, Եր., 2009, էջ 171-172, նույնը՝ «Արցախի գորգագործական մշակույթը (XIX - XX դդ.)». «Լեռնային Ղարաբաղի հանրապետության ատլաս», Եր., 2009, էջ 86

²Տե՛ս օրինակ՝ V. Ganzorn, *Le Tapis Cretien Oriental, Benedikt Taschen Verlag, Koln, էջ 351, պատկեր 91/հետայսու՝* V. Ganzorn/, տես նաև՝ http://www.turkotek.com/mini_salon_00010/ms_10_16.htm

³Տե՛ս Serare Yetkin, *Early Caucasian Carpets in Turkey, Vols 1. 2. London, 1978: Աղբյուրների ուսումնասիրողներն այս և վարդակավոր գորգերը շրջանառում են «Նախիջևան» անունով, թվագրում են ԺԴ-ԺԶ դդ. ու վերագրում են Նախիջևանին ու Բարդախին, այնուհետև նաև Շուշիին՝ այս մասին տե՛ս Լ. Керимов, *Азербайджанские ковры, Баку, 1983, т. 3, էջ 195-196**

⁴Տե՛ս Ա. Պողոսյան, *Վիշապագորգերի ծագումնաբանության և տարածման արեալների հարցի շուրջ.* «Հանդես Ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2004, թ. 1-12, էջ 367-415 (հետայսու՝ Ա. Պողոսյան, *Վիշապագորգերի ծագումնաբանության ...*), նույնը՝ Վերստին վիշապագորգերի մասին. «Նոր Ազգագրական հանդես», Ա. «Գիտական աշխատություններ», Եր., 2005, էջ 106-119



նմուշներ, ընդ որում, ձուկ-վիշապապատկերներն այդ գորգերի գեղագարդման համակարգում տեղադրված են գորգադաշտի վերին ու ներքին մասերում¹:

Քանի որ այս տիպին բնորոշ խոշոր վարդակներն ու գույգ թռչնագլուխներից կազմված պատկերներն առկա են ԺԹ դ. թվագրվող Ուրմիա լճի ավազան- Համադան գորգագործական կենտրոններին բնորոշ այսպես կոչված «Բուսանախշ» կամ «Աֆշան», մեր կողմից «Աղբակ» անվանակոչված գորգերի գեղագարդման համակարգում, ենթադրում ենք, որ դրա ծագման հիմնական տարածաշրջանների թվում առաջին հերթին պետք է ընդունել հենց հյուսիսարևմտյան Պարսկաստանի ու արևելյան Վասպուրականի գորգագործական կենտրոնները: Կարծում ենք, որ այս ձկնակերպ ոճավորումների հետագա ավանդույթների արտահայտությունն է Վայքի, Սիսականի, Գողթան գավառի ու հարակից Ղարադաղի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի մի տիպ, ուր դրանք ներկայացված են դիմահայաց գույգերի տեսքով:

Դասական գորգերի գեղագարդման համակարգերի հետագա զարգացումների հիման վրա ստեղծված ԺԹ-Ի դարերին վերաբերող «Ճառագայթագարդ» հորինվածքով բնորոշվող խմբին պատկանող գորգերի գեղագարդման համակարգում չկան վիշապի քնարածե ոճավորումներ: Նկատի ունենալով այդ հանգամանքը, դրանք ընդգրկել ենք առանձին ենթախմբում ու տարբերակել «Ուշ Ջրաբերդ գորգեր» անվանումով: Այդպիսով, մենք քննության առարկա գորգերի խմբում տարբերակում ենք երկու հիմնական ենթախումբ, որոնցից առաջինում ներառված են վիշապագորգերը, իսկ երկրորդում միայն «Ճառագայթագարդ» հորինվածքի տարբերակներով բնորոշվողները: Կարևորելով այն, որ երկրորդ ենթախմբի գորգերի բնորոշիչը հիմնական հորինվածքի այս կամ այն գորգագործական կենտրոնին վերաբերող տարբերակներն են, հարմար ենք գտնում տիպերի անվանումներում ներկայացնել խմբի անվանումն ու տվյալ գորգագործական կենտրոնի տեղանունը:

Ի դեպ, միայն «Ճառագայթագարդ» հորինվածքով գորգերը որոշ ուսումնասիրողներ նույնպես համարում են վիշապագորգ²:

1. «Ջրաբերդ»: Այս տիպը բնորոշվում է մեկ կամ մի քանի «Ճառագայթագարդ» դասական հորինվածքով: Սրանց գործելու հիմնական տարածաշրջանները համարվում են Արցախն ու Սյունիքը³: Այդպիսիք գործում էին նաև Գեղարքունիքում, Լոռիում, մասամբ նաև հյուսիսարևելյան Այսրկովկասում, Ղարադաղում, Համադան-Չարմահալ գորգագործական կենտրոններում: Այդ բոլոր կենտրոններում էլ այն ունեցել է գեղագարդարման մանրամասներ, ու հյուսիսարևելյան Այսրկովկասում այն հայտնի է երկու տարբերակներով՝

ա. Միայն մեկ հորինվածքով ու կենաց ծառերով գեղագարդված⁴: Սրանց գեղագարդման համակարգում նկատելի տեղ են գրավում խոշոր բուսանախշերը:

բ. Հիմնական հորինվածքի երկրաչափականացված տարբերակով գեղագարդված: Դրանք լինում են մեկ կամ մի քանիսն, և ճառագայթներին բացակայում են բուսանախշ հավելվածները⁵:

Մեր ունեցած տվյալների համաձայն, Համադան-Լիլահան-Չարմահալ գորգագործական կենտրոններին բնորոշ էին այս տիպի ուղեգորգային տարբերակներն ու, բացի այդ, հիմնական հորինվածքներն այստեղ նույնպես պարզ ու երկրաչափականացված էին: Ուշագրավ է, որ այդպի-

¹Տե՛ս օրինակ՝ V. Ganzhorn, էջ 343-344, պատկեր 473, 474

²Տե՛ս օրինակ՝ Gregorian T. Arthur, *Georgian Rugs from Georgian Collection*, Copyright, 1987, էջ 100, նկ. 49

³Տե՛ս Ա. Պողոսյան, **Վիշապագորգերի ծագումնաբանության ...**, էջ 381-382

⁴Այս տարբերակին պատկանող գորգերը սակավաթիվ էին, սակայն 1990-ական թթ. դրանք կրկնօրինակում ու սահմանափակ խմբաքանակներով գործում են մի շարք երկրներում՝ այդ թվում նաև Դաղստանում

⁵Տե՛ս Մ. Казарян, *Армянские ковры*, М., 1987, նկ. 110



վիք գործել են նաև Զանգեզուրի՝ մասնավորապես Միսականի գորգագործական կենտրոններում, որոնցում բավականաչափ զգալի էր Պարսկաստանի վերոհիշյալ հայաշատ տարածքներից եկած վերաբնակիչների պատմամշակութային ազդեցությունը տեղական ավանդույթների վրա:

2. «Ջրաբերդ-Վարանդա»: Բնորոշվում է դասական հորինվածքի մի տարբերակով, որն ունի բացված թելերով թիթեռի տեսք ու կենտրոնում «գարդ աշխարհի» քառաթերթ վարդակ: Դրանք գորգադաշտում պատկերվում են մեկ երկայնակի շարքով: Բացի հիմնական հորինվածքից, գորգադաշտի գեղագարդման համակարգը լրացվում է մանր բուսանախշերով ու կենդանակերպ ոճավորումներով: Այս տիպի տասնյակ կատարյալ նմուշներ վերաբերում են Արցախի Վարանդա գավառի գորգագործական կենտրոններին ու հատկապես Բերդաշեն գյուղին: Այս տիպի գորգեր գործել են նաև Լոռվա, Տավուշի, Գարդմանի, Սողքի, Գողթնի և Այսրկովկասի հյուսիսարևելյան ու Վասպուրականի արևելյան գորգագործական կենտրոններում:

Գունային արտակարգ ներդաշնակ երանգներով ու գեղագարդման համակարգը լրացնող նախշերի, զարդերի ու պատկերների հարստությամբ հայոց գորգագործական մշակույթի ուշագրավ նմուշներ են այս տիպին պատկանող գորգերի՝ Վարանդայում՝ մասնավորապես Բերդաշեն, Թաղավարդ, Գիշի, Աշան, Հացի գյուղերում գործվածները: Դա մեզ հնարավորություն է տալիս արձանագրել, որ այս տիպի գորգերի ձևավորման օրրանը հենց այդ գավառի գորգագործական կենտրոններն են:

Ըստ էության «Ջրաբերդ-Վարանդա» տիպի գորգերի գեղագարդման համակարգին են առնչվում «Ձեյխուր» կամ «Գյոլլու-չիչի» անուններով տարբերակված գորգերը, որոնք վերագրվում են Այսրկովկասի հյուսիսարևելյան գորգագործական կենտրոններին: Առանձնապես չվիճարկելով այդ պարագան, մենք ուղղակի տեղեկացնում ենք, որ ըստ մեր ունեցած դաշտային ազգագրական նյութերի, այդպիսիք գործել են նաև Լոռվա, Տավուշի ու Արցախի գորգագործական կենտրոններում: Ընդ որում, Արցախում՝ մասնավորապես Վարանդայի Թաղավարդ գյուղից հայտնի են նաև դրա «սումախ» կարպետային տարբերակները: «Ձեյխուր» գորգերի հիմնական հորինվածքում կարելի է նկատել «Ճառագայթագարդ» հորինվածքին բնորոշ խաչաձև առանցքն ու «Ջրաբերդ-Վարանդա» տիպին էլ բնորոշ ճառագայթատիպ հավելվածի բուսականացված տարբերակը: Բացի այդ՝ հորինվածքի կենտրոնում կա «գարդ աշխարհի» քառաթերթ վարդակը: Ընդհանուր առմամբ, այս տիպի գեղագարդման համակարգը բնորոշվում է բուսանախշ մանրամասների առատությամբ: Ամեն պարագայի, այստեղ կա լրացուցիչ հիմնավորումների անհրաժեշտություն, ու բացի այդ, մենք չենք բացառում, որ այդ տիպը ԺԹ դարի վերջերում արված այն գորգանկարներից կարող է լինել, որոնք կատարվեցին մասնագետ նկարիչների կողմից ու տրամադրվեցին Կովկասյան տնայնագործական միության արտելներին ու անհատ տնայնագործներին:

3. «Ջրաբերդ-Դիզակ»: Բնորոշվում է խմբի «Ճառագայթագարդ» հորինվածքի բազմատարր ու զծայնացված տարբերակով: Այս դեպքում տասներկու ճառագայթների փոխարեն ներկայացված են նույնքան ոճավորված թռչնազուլիսներ: Այս հորինվածքի կենտրոնում լինում է երկայնաձիգ ութանիստ գարդ: Դրա ուղղաձիգ գագաթներին մեկական խոյեղջուր պատկեր է, իսկ վերջինիս երկու կողմերին՝ մեկական թռչնակերպ ոճավորում: Երիզվում է նույնատիպ՝ հորիզոնական ուղղվածությամբ պատկերներով: Գեղագարդման համակարգի բաղադրամասերից է նաև «Կենաց ծառ» զարդանախշը, որը սովորաբար պատկերվում է հիմնական հորինվածքի եզրերին: Այս տիպի գորգերը հատկապես բնորոշ են Արցախի Դիզակ գավառի գորգագործական կենտրոններին: Այն տարածված էր նաև Զանգեզուրի գորգագործական կենտրոններում՝ հատկապես Տեղ,



Կոռնիձոր, Խնձորեսկ գյուղերում, Գողթան գավառում, Երնջակում, Շարուրում: Արթուր Գրիգորյանի հավաքածուի հրատարակիչներն այս տիպի հայատառ երկու նմուշ, վերագրելով հանդերձ «Աղլեր-Ղազախ» խմբին, ըստ երեւույթին որոշակի մասնավոր տեղեկությունների հիման վրա տարբերակել են «Շամախու զարդանախաշ» անվանումով¹: Մի շարք ուսումնասիրողներ էլ այս տիպի գորգերը դասելով հանդերձ արցախյան գորգերի շարքը՝ մասնավորապես Դիզակ-Բարգուշատ գավառների, այդուհանդերձ դրանք տարբերակել են «Թալիշ» անվանումով ու չեն դասել «Ջրաբերդ» խմբի մեջ²: Մասնագիտական շրջաններում այս տիպի գորգերը տարբերակում են նաև «Լենքորան» ու «Թոշնաբուն» անուններով³: Այս առումով, անշուշտ, շատ ավելի իրավացի են հայատառ արձանագրություններով գորգերի կատալոգի հրատարակիչները, որոնք դրանց ուղղակի անվանել են «Ջրաբերդ»⁴:

«Ջրաբերդ» խմբի գորգերի տարածման արեալների մասին: Մեր նախորդ հետազոտություններում տարբեր առիթներով անդրադառնալով այս խմբին պատկանող գորգերի ծագումնաբանական հարցերին՝ ներկայացրել ենք Արցախի ու Սյունիքի պատմաազգագրական մարզերի գորգագործական կենտրոններին դրանց բնորոշ լինելու և այդ կենտրոններում էլ ծագած լինելու տեսակետ⁵: Դա առաջին հերթին հիմնավորվում է այն հանգամանքով, որ հենց այդ տարածաշրջաններին են բնորոշ վիշապագորգերի բոլոր ուշ տիպերի ու տարբերակների ավանդույթները: Դա վերաբերում է նաև «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերին:

Սակայն հայտնի է նաև, որ դրանց առանձին տիպեր ու տարբերակներ տարածված են գորգագործական այլ կենտրոններում եւս՝ մասնավորապես Այսրկովկասի հյուսիսարևելյան, Իրանի հյուսիսարևմտյան ու Փոքր Ասիայի արևմտյան տարածաշրջանների գորգագործական կենտրոններում:

ա. Հյուսիսարևելյան Անդրկովկաս: Այս տարածաշրջանում հատկապես նկատելի են արցախ-սյունիքյան գորգագործական ավանդույթների ազդեցության արդյունքները: Բացի խնդրո առարկա խմբին պատկանող «Ջրաբերդ» տիպից, այստեղ լայնորեն հայտնի են նաև Արցախի գորգագործական կենտրոններին բնորոշ բազմաթիվ տիպերի գորգեր: Հատկապես շատ են երկրաչափական խոշոր զարդերով ու ոճավորված հորինվածքներով բնորոշվող տիպերին պատկանող գորգերը:

Մեր նախորդ ուսումնասիրություններում հանգամանորեն անդրադարձել ենք հայոց գորգագործական մշակույթի ավանդույթների արեալային տարածման հարցերին, այդ թվում նաև Հարավային Դաղստանի ու հյուսիսարևելյան Այսրկովկասի գորգագործական կենտրոններում դրանց ունեցած առանցքային նշանակությանն ու այդ ամենը բացատրել ենք տարածաշրջանում հայոց շուրջ մեկուկես հազարամյակ տևած մշակութային ակտիվ գործունեությամբ⁶:

Խնդրո առարկա հարցի հետ կապված կա մի ուշագրավ նմուշ: Տարբեր հրապարակումներից հայտնի է Արցախին վերագրվող «Ջրաբերդ» տիպի մի գորգ, որն ունի «1850 Ամի Տեր Միքայել Սհարբեկով» հայատառ ու թվակիր գրություն: Արտերկրի մասնավոր հավաքածուներից մեկում պահվող այս գորգի ծագումնաբանության պարզաբանման գործում ուշագրավ տվյալներ ենք գտնում նշանավոր գյուղագիր Քաջբերունու ուղեգրություններում, որոնք արվել են 1885-1916

¹ T. Gregorian, J. Gregorian, *Armenian Rugs from Gregorian Collection*, Copyright, 1987, էջ 122, նկ. 63, 64
² Տե՛ս Մ. Կերիմով, *նշվ. աշխ.*, էջ 231, պատկեր 176
³ «Թոշնաբուն» հասկացության մասին տե՛ս Վ. Թաթիկյան, *Արցախի տոհմագորգերը, 122-123-րդ լուսանկարներին կից բացատրությունները*
⁴ "Rites of Passage in inscribed Armenian Rugs", Edited by L. M. Ejlund, San Francisco, 2002, էջ 48, նկ. 13
⁵ Տե՛ս Ա. Պողոսյան, *անդ*
⁶ Ա. Պողոսյան, *Հայաստանում գորգագործության ծագման հարցի շուրջ*. ՊԲՀ, 2001, թ. 2, էջ 236-250. Ա. Պողոսյան, *անդ*, էջ 367-415



թվականներին: Դրանցում արձանագրված են հյուսիսարևելյան Այսրկովկասի հայաբնակ գյուղերի տեղագրությանն ու հայոց նիստուկացին վերաբերող չափազանց արժեքավոր տեղեկություններ: Դրանց թվում կա նաև Շամախուն մերձակա Քերքենց գյուղի նկարագիրը: Քաջբերունին շեշտելով, որ այն ամբողջովին հայաբնակ է, նշում է, որ կանայք շատ աշխատասեր են, կատարում են բազմատեսակ աշխատանքներ ու նաև «տներում կարպետներ են գործում»¹: Անդրադառնալով գյուղի ուշագրավ կառույցներին, հաղորդում է խմելու ջրի երկու աղբյուրի մասին, որոնք 1871 և 1874 թվականներին կառուցել են քերքենջաբնակ Գրիգոր և Մարտիրոս Սահարբեկյանները²: Հարկ է նշել, որ Սահարբեկյան ազգանունը մեզ հայտնի է միայն վերը նշված 1850 թվականին վերաբերող գորգին գործված եւ Քաջբերունու տեսած աղբյուրներին փորագրված գրություններից: Նկատի ունենալով այս հանգամանքն ու, նաև այն, որ այդ երկու թվականներն իրարից շատ հեռու չեն, կարծում ենք, որ վերոհիշյալ «Ջրաբերդ» գորգի արձանագրության մեջ հիշատակված Միքայել Տեր-Սահարբեկովն էլ Քաջբերունու հիշատակած Սահարբեկյանների ազգակիցն է ու այդ գորգը գործել են Քերքենց գյուղում: Ընդ որում, նախկին քերքենջաբնակ, Մասիսի շրջանի Սիս գյուղում վերաբնակված 80-ամյա Վոլոդիա Պողոսյանը 2010թ. հուլիսին ներկայացնելով իր ծննդավայրին բնորոշ նիստուկացն ու զբաղմունքները, պատմել է, որ գորգագործությունն ու կարպետագործությունը Քերքենջում, ինչպես նաև նրան հարևան Չարխուն, Սաղիան, Մադրասա հայկական գյուղերում զարգացած էր նաև 1950- 60-ական թվականներին³:

Այդուհանդերձ, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային հետագա զարգացումների արդյունքում հայոց մի զգալի մասը ԺԸ դ. վերջին և ԺԹ դ. սկզբին տեղափոխվեց հյուսիսային Կովկաս, մի մասն էլ ստիպված դարձան մահմեդական կրոնի հետևորդներ⁴: Մասնավորապես Մուշկյուրի հովտի հայերը, Դերբենտի հայերի հետ միասին Վալերիան Չուբովի ձախողված արշավանքից հետո տեղափոխվում են Ղզլար ու մերձակայք⁵:

ԺԹ դարի վերջերին, դեռևս թարմ պատմական դեպքերի հետ կապված վավերագրերի ու հուշերի հիման վրա արված ուսումնասիրությունները թույլ են տվել պարզել, որ այդ տարածաշրջաններում բնակված հայերի ճնշող մեծամասնությունը եղել են Արցախից տարբեր ժամանակաշրջաններում այդտեղ տեղափոխված հայերը⁶:

Շիրվանի գորգագործական կենտրոններում արցախյան ավանդույթների առկայության առումով մենք կարևորում ենք նաև Ելիզավետպոլի գավառի կազմում եղած Արեշի գավառը: Մինչ Ի դարի սկզբները ամբողջովին հայաբնակ էին այդ գավառի գյուղերը՝ Քանդակը, Հավարիկը, Մամաթավան, Խանավադը, Մագուրդուն, Խալդանն ու Արեշը, որոնք հայտնի էին որպես գորգագործական կենտրոններ⁷:

Այսրկովկասի հյուսիսարևելյան տարածաշրջաններում արցախյան ավանդույթների առկայության վերաբերյալ կան նաև պատմամշակութային մի շարք կարևոր դրսևորումներ, որոնք արտահայտված են լեզվաբարբառային, տարազի ու բնակարանային համալիրներում:

Մասնավորապես, Մակար Բարխուտարեանցը, 1880-ական թթ. ընդհանրացնելով իր հավաքած տեղեկությունները՝ նշել է, որ «Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ եւ ճառի եւ սոցա բոլոր գաւառների (բացի Կապադակից) հայերեն ընդհանուր տիրող բարբառն է Արցախի

¹ Քաջբերունի, էջ 60-61

² Տե՛ս նաև

³ Հեղինակի անձնական արխիվ

⁴ Տե՛ս Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 146-147

⁵ Տե՛ս «Жизнь Артемия Арагатского», Издание подготовил К. Н. Григорян при участии П. Р. Орбели, М., 1981, էջ 128-129

⁶ Տե՛ս Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 89-134

⁷ Տե՛ս Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 141-143. Ա. Լուսենց, *Արեշի բարբառը*, Եր., 1982, էջ 5-7



այժմեան գործածական լեզուն, քանզի ինչպէս գիտենք, կանխաւ, բնակչաց ամենամեծ մասն գաղթած եւ տեղափոխուած են Արցախից...»¹:

Արցախյան ավանդույթների, այդ թվում նաև «Ջրաբերդ» գորգերի հյուսիսարևելյան Անդրկովկասում տարածում ստանալու և արմատավորվելու հարցում, անտարակույս հսկայական նշանակություն պետք է ունեցած լինեն նաև իսլամ ընդունած՝ կրոնափոխ եղած հայերը: Մասնավորապես, միայն ԺԸ դարի առաջին քառորդում, թուրք-պարսկական պատերազմների ու լեզգիների իրար հաջորդող ասպատակությունների ու դրանց հետևանքով Շաքի-Շիրվան տարածաշրջանում իսլամ են ընդունել ավելի քան տասը հազար հայեր²:

Այսպես թե այնպես, այդօրինակ հաճախակի կրկնվող իրադարձությունների հետևանքով Այսրկովկասի հյուսիսարևելյան հայահոծ տարածաշրջաններում տեղի է ունեցել հայ բնակչության արտահոսքի ու դավանափոխության կարծես անընդմեջ գործընթաց: Ղազար քահանա պարզել է, որ միայն 1750-ական թթ. Շաքիի տարածաշրջանում բռնի դավանափոխ է արվել շուրջ 15000 ծովա հայ, որի արդյունքում թուրքացվել է 29 հայկական գյուղ³:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բռնի դավանափոխության ալիքները սկիզբ են առել առնվազն ԺԴ-ԺԵ դարերից, պետք է ենթադրել, որ արդեն ԺԶ-ԺԷ դարերում դավանափոխ հայերի սերունդները դիտվում էին որպես մահմեդական ցեղեր՝ լեզգի, թաթար, պարսիկ և այլն, որոնք սակայն, այս կամ այն չափով, շարունակել են պահպանել ու զարգացնել իրենց նախնիներին բնորոշ զբաղմունքներն ու սովորույթները⁴:

Հյուսիսարևմտյան Պարսկաստան: Նկատի ունենալով պատմաագագրական գուգահեռ հատկանիշներ ունենալու հանգամանքը, այստեղ ներառում ենք Համադանի, Ուրմիա լճի ավազանի, պատմական Վասպուրականի արևելյան գավառների ու Ղարադաղի հայոց գորգագործական կենտրոնները: Այստեղ «Ջրաբերդ» խմբի գորգերի ավանդույթների մասին եղած տեղեկությունները վկայում են դրանց ուշ նմուշների առկայությունը:

Վերոհիշյալ գորգագործական կենտրոններում, ըստ էության, առավել հայտնի են «Ջրաբերդ» տիպի գորգերի ուշ տարբերակները, համենայնդեպս, այդպիսիք բավականին մեծ քանակությամբ պահպանվել էին 1940-60-ական թվականներին Հայաստան տեղափոխված պարսկահայերի ընտանիքներում:

Ենթադրում ենք, որ այդ առումով հատկապես պետք է առանձնանային Արաքսի աջ ափին՝ Դիզակի ու Մեղրիի դիմացը գտնված հայաբնակ գյուղերը: Այդ տարածաշրջանը պատմական Հայաստանի Վասպուրականի երբեմնի Պարսպատունիք գավառն էր: Հետագայում պարսիկներն այն անվանեցին Սիա-կուհ (Սև սար), որ թուրքերն իրենց հերթին կոչեցին Ղարադաղ⁵: Հայտնի է, որ Ժ դարից սկսած, Պարսպատունիքի բնակչությունը եկեղեցական հարկը տվել էր Տաթևի վանքին, համարվել Տաթևի վանքին պատկանող Սյունյաց 14 գավառներից մեկը, այնպես, որ բնական էր դրանց տնտեսամշակութային համալիրների նույնությունը⁶:

1515 թվականին կազմված Սեֆյան Իրանի սահմանները նշող «Թագքիրաթ-ալ-մուլուքում» Պարսպատունիքի հետ միասին Սիա-կուհ են անվանված նաև պատմական Հայաստանի Դրունք

¹ Տե՛ս անդ, էջ 149-150

² Տե՛ս Եսայի Հասան Ջալալյան, *Պատմություն կամ յիշատակ ինչ ինչ անցյցի դիպելոց յաշխարհին Ազրուանից, Շուշի, 1839, էջ 29* (հետայսու՝ Եսայի Հասան Ջալալյան), *ինչպես նաև՝* Н. Левиатов, *Очерки из истории Азербайджана в XVIII веке, Б., 1948, էջ 92*

³ Տե՛ս Ղազար քահանայ Ցովսեփեան, *Ակնարկներ ուտիացի եւ մահմեդական հայերի մասին, Թիֆլիզ, 1904, էջ 64-65*

⁴ Տե՛ս Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 22

⁵ Տես անդ

⁶ Տե՛ս Ն. Հովսեփյան, *Ղարադաղի հայերը, հատոր 1, «Ազգագրություն», Եր., 2009, էջ 13*. Ս.Ղարագյոցյան, *Ղարադաղ. «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 12, Եր., 2010, էջ 149-150*



(այժմ Ահար), Կատիջք (այժմ՝ Ուզունդուլ), Քոշաթաղ (այժմ՝ Աշկամբար) գավառները: Այդ նոր բաժանումներով Պարսպատունիքը վերանվանվեց Ղարադաղի Աբասպար մահալ, իսկ Դրունք, Կատիջք, Քոշաթաղ գավառներն էլ՝ Ահարի մահալ: Կենտրոն հաստատվեց Ահար քաղաքը¹: Հենց այդ թվականին կազմված ցուցակներից հայտնի է, որ նշված տարածքում սելջուկ-մոնղոլական ու դրանց հաջորդած թուրքմենական ցեղերի ավերիչ ներթափանցումների ու ապա թուրք-պարսկական պատերազմների պայմաններում դեռևս պահպանվել էին 44 հայաբնակ գյուղ²: Ի դարի սկզբներին դրանց թիվը նվազել էր ու մնացել էր 29 գյուղ³:

Վերոհիշյալ տեղեկությունները հաղորդող Ահարի գավառի Խանագեահ գյուղի բնակիչ Հարություն Հովսեփյանի 1930-40-ական թթ. դիտարկումներով, Ղարադաղի տարածքն իր աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով, կենդանական աշխարհով ու բարբառով համընկնում է Սյունիքին և Արցախին: Մասնավորապես Արցախի գյուղերի հետ Ղարադաղի հայերը մշտական բարեկամական կապեր ունեին՝ աղջիկ էին հարս տալիս ու բերում և այլն⁴: Ղարադաղում էլ, ի շարս այլ արհեստների, տարածված էր գորգագործությունը, ընդ որում, ավելի շատ գործում էին 2-3 մ երկարության ու 1 մ լայնության ուղեգորգեր՝ մի հանգամանք, որը նույնպես բնորոշ էր Արցախի ու Սյունիքի գորգագործական կենտրոններին⁵:

Ցավոք, մեզ հայտնի չեն այս տարածաշրջանին վերաբերող գորգերի փաստագրված նմուշներ, սակայն լեզվաբարբառային, տարազի, ուտեստի ու մշակութային այլ ոլորտներում եղած ակնհայտ նույնությունները թույլ են տալիս համոզվածությամբ եզրակացնել, որ այդտեղի գորգագործական կենտրոններին ևս պետք է բնորոշ լինեին արցախ-սյունիքյան գորգագործական ավանդույթները: Այլ խոսքով, ի դեմս Պարսպատունիքի կամ Ղարադաղի, մենք գործ ունենք արցախ-սյունիքյան գորգագործական ավանդույթների ոլորտում գտնված մի կենտրոնի, որի դերը հատկապես կարևոր ու նշանակալից պետք է լիներ նախքան ԺԶ-ԺԷ դարերը՝ երբ դեռ տարածաշրջանի գավառներում իշխում էին նաև կիսանկախ հայ մելիքները⁶:

Փոքր Ասիայի գորգագործական կենտրոններ: Փոքր Ասիայի արևմտյան տարածաշրջանների գորգագործական կենտրոններում նույնպես նկատվում են «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերի ավանդույթներ: Այս դեպքում ևս կան բավականաչափ սկզբնաղբյուրներ, որոնք հնարավորություն են տալիս մեզ դրանց առկայությունը բացատրել նաև արցախ-սյունիքյան ավանդույթների ներգործությամբ:

Այդ առումով, ըստ երևույթին, հատկապես նշանակալից էին ԺԶ-ԺԷ դդ. թուրք-պարսկական երկարամյա պատերազմներն ու դրանց ընթացքում իրականացված բռնի տեղահանումները: Վերաբնակիչների մի ստվար զանգված էլ այդտեղ էր հաստատվել Պարսկաստանից՝ Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթերի հետևանքով: Արցախից, ինչպես բազմիցս նշվում է սկզբնաղբյուրներում, հատկապես լայնածավալ էր արտագաղթը 1795-97 թվականներին, երբ Աղա Մահմադ շահի արշավանքի պատճառով եղած ավերածություններին ու կողոպուտներին գումարվեցին սովն ու համաճարակը: Մարդիկ մահանում էին մինչ այդ չտեսնված հիվանդություններից, անասելի չարչարանքներից հետո, որի պատճառով էլ «սկսաւ յաշխարհն փախչիլ հանդեպ

¹ Տե՛ս նաև Հովսեփյան, *նշվ. աշխ.*, էջ 13-14

² Տե՛ս նաև, էջ 141-143

³ Տե՛ս նաև, էջ 145

⁴ Տե՛ս նաև, էջ 13, 152

⁵ Տե՛ս նաև, էջ 250

⁶ Տե՛ս նաև, էջ 367



երեսաց իւրոց ի յԵրեւան, ի Գանձակ, ի Նախիջեւան, ի Խոյ, ի Վան, ի Պայազիտ եւ յայլ տեղիս»՝ այսպէս է ականատեսը ներկայացնում 1797 թվականի Արցախի նկարագիրը¹:

Այդ նույն դէպքերի մասին ավելի մանրամասնորեն հիշատակում է Ապրես Բեկնագարյանը. «Ղարաբաղում սաստիկ սով ձգեցին Աղա Մամատ խանի արշաւանքները, արտորէից հրդեհելը, չորքոտանիների Պարսկաստան տեղափոխելն ու Հերակլի, Ջուբովի, Իբրահիմ ճըռ խանի արշաւանքներ: Իսկ երկարատեւ երաշտութիւնն էլ ժանտախտ բերաւ: Մեծ եւ փոքր Սիւնեաց երեք հարիւր տասը եւ հինգ հազար բազմամարդ տուն հայ բնակիչներից եւ ոչ կէսն մնացած է: Կիւլիստանի, Ստորին Խաչէնի, Վարանդու եւ Դիզակի ժողովրդոց ամենամեծ մասը գաղթեցին, իսկ Վերին Խաչէնը, Ջառիստը, Ղափանն ու Մեղրին ամբողջապէս դատարկուած են բնակիչներից, յորոց շատերը մեռան եւ շատերը գաղթեցին: ...Ահա հաշիւ որքան կարելի եղաւ մեզ ձեռք բերել: 20105 ընտանիք գոհ եղան սովին եւ ժանտախտին, 26500 տուն գաղթեց Տաճկաստան, 15000 տուն՝ Պարսկաստան, 18000՝ Լոռի Բոլնիս մելիքին մօտ, 15000՝ Ղազախի եւ Շամշադնի կողմերը, 13000՝ Վրաստանի այլ եւ այլ կողմեր, 12000՝ Շամախու վիճակը, 12000՝ Նուխու վիճակը, 10000 տուն՝ Կախէթի կողմերը, 2250 տուն՝ ճառի կողմերը, 2090՝ Արարատեան նահանգ, 1050՝ Յունաստանի չգիտեմ որ կղզիները, 6000՝ Ռուսաստան, 5000՝ Հնդկաստան, 3000՝ Լեհաստան եւ Հունգարիոյ կողմերը»²:

Արցախից, Սյունիքից ու Ղարաբաղից տեղափոխված հայերի բնակության վայրերից շատերը հետագայում հայտնի են դառնում որպէս փոքրասիական գորգագործության հանրահայտ կենտրոններ: Մասնավորապէս այդպիսին են Դենիզլին, Այդնը, Յոդեմիշը, Բուրդուրը, Նիգդեն, Մանիսան, Սպարտան, որոնցում հաստատված Արցախից ու Սյունիքից տեղափոխված հայերի մասին տեղեկացնում է Հակոբ Քոսյանը³:

Այդ նույնը հիշատակում է նաև «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հեղինակը, ըստ այդմ՝ նա 1878-1879 թվականներին Նիկոմեդիայի և Ջմիռնիայի շրջանների քաղաքների և գյուղերի հին գերեզմանոցների տապանաքարերին բազմիցս տեսել ու գրի է առել ննջեցյալների ծննդավայրերին վերաբերող սյունիք-արցախյան տեղանուններ՝ Մեղրի, Ղափան, Կալեր, Կճողուտ, Հաղորտի, Հացի, Հաղորտ և այլն: Ուշագրավ է հատկապէս այն հանգամանքը, որ դեռևս ԺԹ դ. վերջերին Ջմիռնիայի Դենիզլի գյուղի տարեցներն իրար հետ խոսում էին Ղարաբաղի բարբառով⁴: Այս ամենին հավելենք, որ ժամանակին Հրաչյա Աճառյանը պարզել էր, որ Բուրդուրի ու Սպարտայի հայերի խոսակցական լեզուն համապատասխանում է Ղարաբաղի բարբառին, և որ այն այդ տարածքների հայաբնակ վայրերում պահպանվել էր անկորուստ⁵: Բացի նշվածներից, Ղարաբաղի բարբառով են խոսել նաև Դենիզլիի, Էոդեմիշի, Ջոնգուլղաղի, Անթալիայի, Գասաբայի, Նազիլիի, Քըրք Աղաջի, Դովրեկի, Դուզեի և մի շարք այլ՝ ընդհանուր թվով տասնհինգ բնակավայրերի հայերը⁶:

Այսպիսով, ակնհայտ է, որ ժամանակին այդ տարածքներում հաստատվել էին արեւելահայաստանյան՝ մասնավորապէս արցախ-սյունիքյան ծագում ունեցող հայերը, որոնք, ինչպէս վկայում

¹«Հայկական աղբյուրները Աղա Մահմադ խանի անդրկովկասյան արշաւանքների մասին (1795-1797)», աշխատասիրությամբ՝ Ռ. Տիտանյանի, Եր., 1981, էջ 103

²«Գաղտնիք Ղարաբաղի», հեղինակութիւն Ապրեսի Բեկնագարեանց, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 241-243

³Յակոբ Քոսեան, Հայքի Ջմիռնիա եւ ի շրջակայս, հատոր ա, բ, Վիեննա, 1899, էջ 9, 13, 14, 25- 27, 31- 32, 66- 67, 79-80, 94-96, 141, 152-153 եւ այլն

⁴Տե՛ս «Գաղտնիք Ղարաբաղի», էջ 242

⁵Տե՛ս Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր Նախիջեւան, 1911, էջ 61, նույնը՝ Հայոց լեզվի պատմություն, հ.2, Եր., 1952, էջ 332

⁶Տե՛ս Ն. Մկրտչյան, Բուրդուրի բարբառի ձևաբանությունը. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, թ. 1, էջ 49, նույնը՝ Բուրդուրի բարբառը, Եր., 1971, էջ 7



են լեզվաբարբառային հետազոտությունները, պահպանել էին իրենց բնորոշ պատմաազգագրական հատկանիշներն ու այդ թվում, անկասկած՝ նաև գորգագործական մշակույթի ավանդույթները: Ասվածի վկայությունն են Արևելյան Հայաստանի՝ Արցախի, Սյունիքի, Լոռվա, Վասպուրականի գորգագործական կենտրոններին վերաբերող այն բազմաթիվ ավանդույթները, որոնք արտահայտված են փոքրասիական գորգագործական կենտրոններին բնորոշ «Պերգամա», «Գիրլանդա», «Մելաս», «Մադրի» ու մի շարք այլ տիպերի գորգերի գեղազարդման համակարգերում:

Այդ ամենից գատ, հայտնի է, որ Փոքր Ասիայի մի շարք գորգագործական կենտրոններում, մասնավորապես Գյորդեսում, Բերգամայում ու Դեմիրչիում գործել են «Ջրաբերդ-վիշապագորգ» տիպի գորգեր: ԺԹ դարի կեսերով թվագրված նման մի գորգ հրապարակել է Մուրեյ Էյլանդն ու այն ներկայացրել որպես այդ կենտրոններին բնորոշ ու «կովկասյան վիշապագորգերի» ավանդույթների ներկայությունը վկայող նմուշ (նկ. 11)¹: Ներկայացվող գորգի գեղազարդման համակարգում բնականաբար տեղ են գտել նոր լուծումներ, որոշ չափով բուսական վարդակի տեսք է ստացել «ճաճանչագարդ» հորինվածքը, և ընդհանրապես, ավելի շատ են բուսական մանրամասները: Այդ ամենով հանդերձ, ակնհայտ է, որ հիմնական հորինվածքների պատկերագրման ու մատուցման սկզբունքները մնացել են անփոփոխ, ու դա վերը բերված փաստարկների հետ միասին հիմք է տալիս մեզ եզրակացնելու, որ այդ գորգը որպես ԺԶ-ԺԸ դարերում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերի պատմամշակութային արձագանք, հանդիսանում է արցախ-սյունիքյան «Ջրաբերդ» խմբի «Ջրաբերդ-վիշապագորգ» ենթախմբի տեղական գորգագործական մշակույթի առանձնահատկություններով լրացված մի նմուշ:

Այսպիսով, արցախ-սյունիքյան գորգագործական կենտրոններին բնորոշ «Ջրաբերդ» խմբի գորգերի պատմաազգագրական այս համառոտ բնութագիրը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու դրանց հարուստ ու բազմաբովանդակ նկարագրի, տարածաշրջանի գորգագործական մշակույթի ավանդույթների ու գորգագործական այլ կենտրոններում ունեցած արտահայտությունների մասին:

¹ L. E. Murray, *Oriental Rugs*, New York, 1976, color plate 18

ՇՈՒՇԻՆ՝ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ

(ԺԹ. դարի վերջ-Ի. դարի առաջին քառորդ)

ԺԹ. դարի վերջին ու հատկապես Ի. դարի սկզբներին շուկայական հարաբերությունների զարգացումը Արցախում առանձնապես լուրջ ծավալ ու ընդգրկում չունեց: Մասնավորապես, ի տարբերություն Ղուբայի ու Շամախիի տարածաշրջաններում Կովկասյան տնայնագործական կոմիտեի ջանքերով ծավալված գորգերի զանգվածային արտադրության, Արցախում շարունակվում էր դրա տնայնագործական բնույթը¹: Այդ առումով, թերևս, առանձնակի էր Շուշին, որտեղ զարգացում էին ապրում հատկապես շուկայական ուղղվածության տնտեսաձևերն ու մասնավորաբար գորգագործությունը:

Շուշիի՝ առևտրի կենտրոն լինելու հանգամանքն ինքնին պետք է որոշակի ներգործություն ունենար ինչպես գորգագործության զարգացման, այնպես էլ արտադրվող գորգերի գեղագործման առանձնահատկությունների ձևավորման վրա: Հայտնի է, որ ԺԹ. դարի երկրորդ կեսից սկսած՝ արևմտաեվրոպական ու ամերիկյան շուկաներում արևելյան գորգերի հանդեպ աճած պահանջարկի պայմաններում հատկապես ավելացել են այդ պահանջներին համապատասխանող գորգերի արտադրության քանակները: Այդպիսի իրավիճակը միանգամայն նպաստավոր էր գորգերի կենտրոնացված արտադրություն կազմակերպելու համար: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տնայնագործների աշխատանքին ու նրանց արտադրանքի որակին հետևելը կապված է որոշակի բարդությունների հետ, այս ոլորտով հետաքրքրվողների համար առավել ձեռնտուն դրանք մի տեղում հավաքելն էր:

Շուշին նույնպես միանգամայն հարմար էր ապրանքային գորգագործության ծավալման համար. այն Անդրկովկասի տնտեսական ու մշակութային հանրահայտ կենտրոններից մեկն էր, տեղի հայերն աչքի էին ընկնում գորգագործական ավանդույթներով, ու բացի այդ ամենը՝ գոյություն ունեւ մի հիմնական գործոն ևս, քաղաքի բնակչության շրջանում հանձին մահմեդական բնակչության՝ առկա էր ազատ աշխատուժ: Այս նկարագրի մասին ավելի հանգամանալից պատկերացում են տալիս խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող մարդահամարների տվյալները: Ըստ այդմ՝ մինչ 1991թ. սահմաններն ընդգրկած Արցախում 1823 թվականի տվյալներով հայերը կազմում էին գյուղական բնակչության **97.5**, իսկ քաղաքային բնակչության **41** տոկոսը: 1914 թվականի մարդահամարի տվյալների համաձայն՝ նշված տարածքում հայերը գյուղական բնակչության մոտ **91** տոկոսն էին, իսկ քաղաքային բնակչության՝ **52.3** տոկոսը²: Ահա քաղաքի բնակչության մոտ կեսը կազմող, բայց աշխատանք չունեցող մահմեդական բնակչության աշխատունակ մասն էլ կարող էր ներգրավվել ապրանքային գորգագործության ոլորտում: Իրավիճակը միանգամայն այլ էր քաղաքի հայ բնակչության շրջանում: Նրանց մեծագույն մասը՝ ի տարբերություն մահմեդականների, Արցախի գյուղերից այդտեղ տեղափոխվածներն են, որոնք շարունակում էին կապված մնալ գյուղերում մնացած իրենց ազգականների հետ ու նաև մասնակցել բերքահավաքի և այլ աշխատանքների: Բացի այդ՝ քաղաքի արհեստավորության բացարձակ մեծամասնությունը հայերն էին: Այս առումով բավական է բերել ոսկերիչների ու զինագործների օրինակը՝ 1842-1917 թթ. ազգությամբ հայ էին այդտեղ աշխատած 171 ոսկերիչներից 149-ը ու 25

¹ Տե՛ս Եր. Լալայան, *հ 2, Վարանդա, Երևան. 1988, էջ 84, 110, 112, 134, 135*

² Այս մասին տե՛ս Ն.Սարգսյան, *Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության աճի տեմպերը 19-րդ դ. սկզբից մինչև 1914թ. «Հայ մշակույթի հետազոտման հարցեր», Արցախ: Գիտական նստաշրջան, զեկնուցումների հիմնադրույթներ, Երևան, 1992, էջ 33-34*



զինագործներից՝ 23-ը¹: Եր. Լալայանի հավաքած տվյալների համաձայն, 1895 թվականին քաղաքում աշխատում էին շուրջ 440 հայ արհեստավոր, որոնք ունեին նաև 120 բանվոր, ընդ որում, այստեղ բացակայում են ոսկերիչները, գորգագործները և մի շարք այլ արհեստների ներկայացուցիչներ²: Այսինքն՝ Շուշիի հայերը գործագուրկ չէին ու ի վիճակի էին հոգալ իրենց անհրաժեշտ կարիքները:

ԺԹ դարի վերջին Շուշիի գորգագործության մասին պատկերացում կազմելու համար կարևոր սկզբնաղբյուր հանդիսացող և, իմիջիայլոց, տեղի քաղաքային դպրոցի ուսուցիչ Յ. Ջեդգենիձեի տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տված դիտարկումներում շեշտադրված են հենց այդ առանձնահատկությունները: Այդ հեղինակը նշում է, որ հայերից քչերն էին այնտեղ զբաղվել գորգագործությամբ, մինչդեռ թաթարների ընտանիքներում այն համատարած էր: Ջեդգենիձեն այս երևույթն է շարս այլ պատճառների, բացատրել է նրանով, որ աղբյուրներից ընտանիքներում տղամարդիկ տնտեսական գործերով զբաղվելու սովորույթ չունեին, ուստի կանայք ստիպված էին զանգվածաբար զբաղվել գորգագործությամբ և դրանից առաջացած եկամտով էլ հոգալ իրենց ընտանիքների կարիքները³: Ասել է թե, այդ ժամանակաշրջանում Շուշիում ապրանքային գորգագործությամբ հիմնականում զբաղվում էին տեղի մահմեդական աղջիկներն ու կանայք, ու դա անմիջականորեն կապված էր կենցաղավարման նրանց ներընտանեկան առանձնահատկությունների հետ: Հայոց մեջ էլ հայտնի է ապրանքային գորգագործությամբ զբաղվելու ավանդույթը՝ սակայն առաջին հերթին այն դեպքերում, երբ տղամարդկանց բացակայության պայմաններում ընտանիքի հոգսերը հոգում էին կանայք ու աղջիկները⁴: Ամեն դեպքում՝ այստեղ գորգագործությամբ զբաղվելը կամ չզբաղվելը մենք չենք կապում տվյալ հանրույթի համար դրա ավանդական լինել- չլինելու հետ՝ տվյալ պարագաներում այն ընդամենը արտադրանքի շուկայական պահանջարկ վայելող ու ըստ այդմ էլ կենսական խնդիրների լուծման համար հարմար զբաղումն էր: Այստեղ ավելի կարևոր են Ջեդգենիձեի արած պարզաբանումները, որոնցից պարզվում է, որ Շուշիում հայերը իրականում իրենց կարիքների համար զբաղվում էին գորգագործությամբ, և դեռ ավելին՝ նրանց գործած գորգերն ու կարպետները շատ ավելի որակով էին «թաթարների» գործածներից, քանի որ վերջիններս գործում էին միայն վաճառքի համար և ուշադրություն չէին դարձնում տեխնոլոգիական պահանջներին⁵:

Շուշիում հայերի՝ գորգագործությամբ զբաղվելու ու ընդհանրապես այդ քաղաքում ուստայնակության բոլոր ոլորտների զարգացած լինելու մասին կան նաև այլ վկայություններ: Հայթաթարական ընդհարումներից հետո, տասնյակ շուշեցի հայուհիներ զրկվելով ամուսիններից, ստիպված էին անձամբ հոգալ իրենց ընտանիքների ամենօրյա հոգսերը: Նրանց օժանդակելու համար 1906թ. հուլիսի 12-ին այստեղ բարեգործական միջոցներով բացվում է գորգագործական ֆաբրիկա⁶: Կան տեղեկություններ, որ 1906-1907 թթ. այդտեղ աշխատում էին հարյուր քսան գորգագործուհիներ, որոնց պատրաստած գորգերի մեծ մասը արտահանվում էր Եվրոպա⁷:

Բարեգործական նպատակներով բացված վերոհիշյալ ֆաբրիկայի մասին ուշագրավ տեղեկություններ է պարունակում դրա ներկայացուցիչ՝ 1909թ. ապրիլի 4-ին Թիֆլիսում կայացած տնայ-

¹ Տե՛ս Ե. Աստապուրյան, *История оружейного и серебряного производства на Кавказе в XIX — начале XXв., Дагестан и Закавказье, часть I, М., 1977, шп. IX, էջ 150*

² Տե՛ս Եր. Լալայան, *անդ*, էջ 84-85

³ Տե՛ս Ե. Յեդգենիձե, *Город Шуша, Производство ковров и паласов, - СМОМПК вып. XI, Тифлис, 1891, էջ 3- 6, 32*

⁴ *Այս ատումով տե՛ս օրինակ՝ «Ակն և ակնցիք», նախաձեռնեց և հավաքեց Առաքել Քեչեան, աշխատասիրեց, դասավորեց և խմբագրեց Մկրտիչ Պարսամեան, Փարիզ, 1952, էջ 411*

⁵ Ե. Յեդգենիձե, *ևզվ. աշխ.*, էջ 30-31

⁶ «Տնայնագործական համագումար», *Թիֆլիս*, 1909, էջ 119

⁷ <http://www.mecenat-and-world.ru/aragast/7-aragast/shahnazarov.htm>



նագործների համագումարում ներկայացրած զեկուցումը: Ըստ այդմ, պարզվում է որ այդտեղ սկզբնական շրջանում գործում էին միայն գորգեր ու նմանատիպ գործվածքեղեն՝ ուղեգորգեր /«ուղիկ»/, խուրջին, կարպետ, բարձի երես և այլն: 1907թ. սկզբներից այդտեղ բացվում է ջուլիականոց, և սկսում են գործել նաև սրբբիչներ, սփռոցներ, վարագույրներ, գոգնոցներ, անձեռոցիկներ և այլն, որոնց համար օգտագործվում էր տեղական քաթանից /կտավ/ և բրդի մանվածքից գործված կտորեղենը: 1908 թվականից սկսվում է մետաքսե գործվածքի արտադրությունը՝ վերակի երեսներ, գոտիներ, ջեջիմներ և այլն, ընդ որում, այս դեպքում հրավիրվում է թուրք վարպետ¹: Ջեկուցման մեջ շեշտված է նաև, որ անհամեմատ շահավետ է տեղական բրդի ու մետաքսի հումքի օգտագործումը²: Այստեղ մեծ ուշադրություն էր դարձվում բնական ներկանյութերի օգտագործմանն, ու այդ նպատակով ստեղծվել էր նաև ներկատուն: Ամբողջ Վարանդայում այս գործընթացների հաջող ծավալման համար ստեղծվել էր նաև ուսումնական կենտրոն, որտեղ գորգի վարպետ դառնալու համար պահանջվում էր երկու տարվա ուսուցում ու գործնական աշխատանքի փորձ: Ջեկուցողը, ներկայացնելով ֆաբրիկայում արտադրված գորգերի առանձնահատկությունները, նշում է նաև, որ դրանց համար գործածվում էր ավանդական եղանակով՝ ձեռքով զգած և մանած թել, որի պատճառով արտադրանքի արժեքը համեմատաբար բարձր էր: Հատկանշական է նաև այն, որ այստեղ գործվող գորգերը ընդօրինակվում էին հին գորգերից, որոնք խիստ ընտրությամբ ձեռք էին բերում մասնավորներից³: Ասել է թե, Շուշիի այս արհեստանոց ֆաբրիկայում կարևորել են Արցախի գորգագործական մշակույթի ավանդույթներն ու աշխատել են պահպանել դրանք: Դրա հետ միասին, ըստ երևույթին, շուկայում արտադրանքի իրացման խնդիրների լուծման նպատակով այդտեղ փորձել են գործել նաև պարսկական գորգեր⁴: Այս ամենը վկայում են, որ շուշեցի հայուհիները տիրապետում էին գորգագործությանն ու ընդհանրապես ուստայնականության բոլոր ոլորտներին և հարկ եղած դեպքում դրանք դարձնում էին իրենց հիմնական զբաղմունքը:

Նկատի ունենալով վերն ասվածները, մասնավորապես այն, որ այստեղ առաջին հերթին կատարվում էին արտերկրի շուկաների առաջադրած պահանջներն ու բացի այդ, այստեղ բնակվում էին գորգագործական տարբեր կենտրոններից եկած բնակիչներ, տրամաբանական է թվում, որ Շուշիում գործված գորգերը պետք է որ առանձնանային տիպերի ու դրանց տեխնոլոգիական հատկանիշների բազմազանությամբ: Ընդ որում, տիպերի բազմազանության հարցում կարևորում են մի շարք հանգամանքներ, նախ այն, որ ինչպես հաղորդում է Երվանդ Լալայանը. «Վարանդայի գյուղերից Շուշի էին արտահանվում գորգեր ու կարպետներ, որոնք տնայնագործներից գնում էին գորգ հավաքողները»⁵: Այնուհետև, կարևոր են մի շարք այլ հանգամանքներ. բացի արցախյան ու նաև զանգեզուրյան և Գողթան գավառին բնորոշ գորգագործական ավանդույթներից, այստեղ տեղի ունեցած մշակութային գործընթացներում իրենց որոշակի տեղն են ունեցել նաև հյուսիս-արևելյան Պարսկաստանի գորգագործական կենտրոնների ու դաշտային Արցախում և Շուշիում հաստատված իրանական ու թուրքական տարրերի՝ այս ոլորտում ունեցած ավանդույթները: Այս ամենին, անշուշտ, նպաստում էին նաև Շուշիի՝ գորգի առևտրի կենտրոն լինելու հանգամանքն ու վերը ներկայացված ֆաբրիկայի գործունեությունը: Այսպիսով, Շուշիի գորգագործական մշակույթի մի յուրահատուկ խառնարան էր, որտեղ իրար են հանդիպել վերը նշված գորգագործական կենտրոնների ավանդույթները:

¹ Այս ամենի մասին տես՝ «Տնայնագործական համագումար», էջ 119

² Անդ, էջ 120

³ Անդ, էջ 120-121

⁴ «Տնայնագործական համագումար», էջ 119

⁵ Եր. Լալայան, հ 2, անդ, էջ 87



Անշուշտ, Շուշին նաև ինքնին գորգերի սպառման շուկա էր: Ի տարբերություն գյուղական բնակավայրերի, որտեղ գորգ գործածում էին ունևորները և այն էլ՝ որոշակի արարողությունների ժամանակ, քաղաքային կենցաղում ԺԹ. դարի երկրորդ կեսից ձեռագործ գորգը սկսում է լայն տեղ գրավել նաև միջին խավի շրջանում և, որպես փոռց կամ պատի զարդ, գործածվել բնակարանի ներքնատեսքում: Այս առումով կարևոր նշանակություն ունեին քաղաքի առևտրական ու մշակութային կապերը Ռուսաստանի ու մանավանդ Արևմտյան Եվրոպայի մշակութային կենտրոնների հետ, որտեղ սովորող շուշեցիները քաղաք էին բերում կենցաղավարման նոր ձևեր ու պահանջներ:

Շուշիին բնորոշ գորգերի մասին: Շուշիի գորգագործական մշակույթի ծագումնաբանական հարցերին համառոտակի անդրադառնալուց հետո փորձենք ներկայացնել դրանց գեղագարդման առանձնահատկություններն ու տարածման արեալները:

Արցախում ու մերձակա գորգագործական կենտրոններում գորգերի գեղագարդման ասպարեզում լայնորեն գործածվում էին բուսածաղկային, երկրաչափական ու կենդանակերպ նախշեր, զարդեր, պատկերներ ու դրանցով կազմված հորինվածքներ: Շուշիում արդեն ԺԹ. դարի կեսերից բավականին կարևորված էին ուղեգորգերը: Դրանք նեղ ու երկար գորգերն են և հայտնի էին **«յան»** անվանումով, որոնք տնայնագործության կազմակերպիչները տարբերակում էին **«ուղիկ»** անվանումով: Այդ գորգերն աչքի են ընկնում գեղագարդման հիմնական հորինվածքների բազմազանությամբ և ըստ այդմ՝ հայտնի են նշանախշով, կենաց ծառով, շեղանկյունագարդով, աստղագարդով, գունաշերտային գեղագարդով, բազմանիստով, ծաղկանախշով, վարդակով, խաչագարդով և գեղագարդման այլ տարրերով տարբերակվող ուղեգորգեր: Առավել լայն տարածում ունեին բուսածաղկային հորինվածքների տարբերակներով, բազմանիստով և շեղանկյունագարդով գեղագարդվածները, որոնց թվումն են մեր տիպաբանությամբ **«Աղբակ», «Ճարտար», «Նշանախշ», «Վարանդա»** ու մի շարք այլ տիպեր:

Քաղաքի գորգագործների շրջանում լայն տարածում ունեւ բազմաթերթ վարդակով ու դրա տարբերակներով բնորոշվող գորգի մի տիպ, որը լայն տարածում ունեւ հատկապես պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի արևելյան գավառների գորգագործական կենտրոններում՝ մասնավորապես Աղբակ գավառում ու ընդհանրապես Ուրմիա լճի ավազանում: Ընդ որում՝ հենց այդ հանգամանքի բերումով է, որ բազմաթիվ տարբերակների տեսքով հայտնի այդ տիպը մենք տարբերակել ենք **«Աղբակ»** անունով: Շուշիում լայն տարածում ստացած այդ տարբերակներից մեկի հիմնական հորինվածքը մասնագիտական շրջաններում հայտնի է **«Մինա խանում»** անունով: Այդ անվանման մասին կան տարատեսակ մեկնաբանումներ². մենք մեր հերթին ենթադրում ենք, որ իրականում այստեղ առկա է Խաչենի Հասան Ջալալ իշխանի դստեր՝ **Մինա խանումի** կերպարը, որն ամուսնացած էր Սյունյաց իշխան Տարսայիճ Օրբեյանի հետ³: Այս տիկնոջ մասին հայտնի է, որ նա բարեգործուհի էր, կատարել էր բազմաթիվ նվիրատվություններ ու իր ծախսով կառուցել շենքեր: Նա Հաթերքի իշխանուհու նման սերում էր այն գերդաստանից, որտեղ կանայք ու աղջիկները վաղ հասակից, տոհմական ավանդույթների համաձայն, սովորում էին կանանց ու աղջիկներին անհրաժեշտ հմտություններ, այդ թվում գորգագործություն: Ըստ էության, Մինա խանումը գործել էր իր իսկ մտահղացումներով ստեղծված գորգեր, որոնց գեղագարդման հիմնական տարրերից մեկն հանդիսացել էր բազմաթերթ վարդակը, որ հետագայում ստացել է **«Մինա**

¹ Sté u Rites of Passage in inscribed Armenian Rugs, Edited by Ejlant L. Murray, San Francisco, 2002, նկ. 79

² Sté u Heinrich Jacobi, How to Know Oriented Carpets and Rugs, London, 1974, 15 225-227

³ Sté u Բ. Ուլուբաբյան, **Խաչենի իշխանությունը X-XVI դարերում**, Երևան, 1978, էջ 98



խանում» անունը: Այդ հորինվածքով բնորոշվող գորգերն, ի թիվս վերն ասված տարածաշրջանների, լայն տարածում ունեին նաև Արցախում և Սյունիքում: Այս տիպին պատկանող մի այլ տարբերակ բնորոշվում է հիմնական հորինվածքի ներկայացման ձևով՝ այն լինում է վանդակում կամ առանց դրան՝ լրացված նաև ճյուղատարած ծաղկանախշով, ինչպես նաև ոճավորված թռչնազուլաներով: Ամեն դեպքում, այստեղ էական է այն, որ այս հորինվածքը ԺՁ.-ԺԷ. դարերով թվագրվող դասական **վիշապագորգերի** ու **«Ջրաբերդ»** գորգերի գեղագարդման հիմնական տարրերից մեկն է: Հավելենք, որ այն մասնագիտական շրջաններում տարբերակված է «Ավշան» անվանումով¹:

Շուշիի գորգագործների շրջանում լայն տարածում ունեին սղոցատիպ եզրերով շեղանկյունատիպ խոշոր հորինվածքով գեղագարդված ու մեր կողմից «ճարտար» անվանակոչված տիպին պատկանող ուղեգորգերը: Այս տիպին բնորոշ է գեղագարդման մանրամասների հարստությունն ու գունային երանգների արտակարգ ներդաշնակությունը: Սա արցախյան ավանդական գորգերից է. դրա մեզ հայտնի վաղ նմուշը պատկերված է 1693 թվականին վերաբերող մի տապանաքարի վրա², իսկ այդ անունով տարբերակելու հիմնավորումը Վարանդայի գորգագործական խոշորագույն կենտրոններից մեկում՝ ճարտարում առավել հայտնի լինելու հանգամանքն է³:

Շուշիում ու մերձակա գորգագործական կենտրոններում տարածում ստացած և գեղագարդման հնամենի ավանդույթներ կրող գորգերի տիպերի շարքում առանձնանում են բուսածաղկային բարդ հորինվածքներով ու ձևակերպ ոճավորումներով բնորոշվողները, որոնք հայտնի են **«Բարգուշատ»**, **«Հորաղիզ»** և **«Բերդաձոր»** անվանումներով: Մեր հետազոտությունները հնարավորություն են տալիս ենթադրել, որ դրանք առավելապես տարածված էին Արցախի ու Սյունիքի մերձարաքսյան գորգագործական կենտրոններում, Արաքսպարում ու Գողթան գավառում, իսկ արդեն ԺԹ դարի սկզբներից՝ նաև Շուշիում:

Շուշիում լայն տարածում ստացած գորգերի մի տիպ էլ բազմաթերթ վարդակներով ու ոճավորված գույգ թռչնապատկերներից կազմված հորինվածքներով բնորոշվող գորգերն են, որոնք մեր տիպաբանության համակարգում տարբերակված են «Ամարաս» անվանումով: Շուշիի գորգագործների շրջանում լայն տարածում ունեցած այս տիպը նույնպես աչքի է ընկնում տարբերակների բազմազանությամբ: Դրանք առանձնանում են հիմնական հորինվածքի լուծումներով, թռչնապատկերների ոճավորված կամ երկրաչափականացված լինել-չլինելով, ու բացի այդ՝ բուսածաղկային բնույթի այլ հորինվածքների առկայությամբ:

Ինչպես վերն ասվեց, այստեղ շատ հարգի էին պատկերային՝ թեմատիկ տեսարաններով գորգերը: Ընդ որում, պատկերային գորգեր գործելու հարցում անհրաժեշտ էին տեխնոլոգիական անհամեմատ ավելի շատ իմացություններ, քան դրանք պահանջում էին սովորական զարդանախշային գորգերը: Շուշիի գորգագործների վարպետության այդպիսի բարձր հատկանիշները հենց հնարավորություն են տալիս ստեղծելու աստվածաշնչային թեմաներ ու կենցաղային տեսարաններ ներկայացնող գորգերի բազմաթիվ նմուշներ:⁴ Ինչպես պատմական Հայաստանի մի շարք այլ քաղաքներում, այստեղ ևս հայտնի էին **«Մայր Հայաստան»** տիպի գորգերը: Շուշիում, որն այդ ժամանակ հայոց ազգային-ազատագրական մտքի ու շարժման կենտրոններից մեկն էր, բնական էր այդօրինակ թեմաներով մշակութային արժեքների պահանջարկը:

¹ *Այս մասին տես նաև՝* Լ. Керимов, *Азербайджанский ковер*, т.3, Б., 1983, էջ 247-248

² Տե՛ս Ս. Մկրտչյան, *Историко-архитектурные памятники Нагорного Карабаха* /А, Ереван., 1989, էջ 163, նկ. 216-217

³ *Այս մասին տես՝* Ս. Պողոսյան, *Արցախի գորգագործական մշակույթը /պատմագագարական ուսումնասիրություն/*, անտիպ, էջ 83

⁴ Լ. Керимов, *Азербайджанский ковер*, т.1, Б., 1961, էջ 50



Ներկայացված գորգերի տիպերը, բնականաբար չեն կազմում Շուշիի գորգագործների շրջանում տարածում ունեցած գորգերի ողջ տեսականին ու քաղաքի գորգագործության ամբողջական պատկերը: Անշուշտ, այդտեղ գործում էին նաև Արցախի գորգագործական կենտրոններում տարածում ունեցած ավանդական գորգատիպերը՝ մասնավորապես «Ջրաբերդ», «Խնձորեսկ», «Գուհար», «Մասյացոտն» ու մի շարք այլ տիպերի գորգեր, նշանախշով ու դրա բազմաթիվ տարբերակներով գեղազարդված գորգեր ու ընդհանրապես մերձակա գորգագործական կենտրոններին՝ այդ թվում հատկապես Իրանի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգեր: Ըստ էության, այս ամենը կապված էին Շուշի քաղաքի՝ առևտրական լայն կապեր ունենալու հետ: Ամեն դեպքում, վերոշարադրյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Շուշիի գորգագործական մշակույթն, իր յուրահատկություններով հանդերձ, արցախյան գորգագործական մշակույթի մի մասն էր: Հարկ է նշել, որ այս առումով յուրովի են աղբրեջանցի մասնագետների մոտեցումները: Մասնավորապես հայտնի է, որ Լ. Քերիմովն ընդունելով գորգերի «Ղարաբաղյան խումբ» հասկացությունը, դրանում ներառում էր երբեմնի «Բարդալի, Աղդամի, Ջաբրաիլի, Քյալբազարի շրջանները», դրանց միացնելով նաև Շուշին, սակայն վերջինս անջատելով Արցախի մյուս տարածաշրջաններից՝ Վարանդայից, Դիզակից, Խաչենից, Ջրաբերդից¹:

Խոսելով Շուշիի գորգագործական մշակույթի հետագա զարգացումների մասին՝ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ 1920թ. մարտյան դեպքերից հետո Շուշին հայաթափվում է: Շուշին գորգագործության և ընդհանրապես արհեստագործությունների կենտրոն էր մինչ այդ իրադարձությունը: Ու թեև ըստ Ջեդգինիձեի դիտարկումների՝ գորգագործությունն ու կենցաղում գորգեր օգտագործելու ավանդույթը կար նաև Շուշվա մահմեդական բնակչության վերնախավի շրջանում, հայաթափվելուց հետո այն երկար ժամանակով դադարում է ոչ միայն գորգագործական մշակույթի, այլև ընդհանրապես շատ կամ քիչ նշանակալից դեր ունեցող բնակավայր լինելուց: Մի քաղաք, որը ոսկերչության, զինագործության, ընդհանրապես մետաղագործության, արևելյան նվագարանների պատրաստման ու այլ արհեստների կենտրոն էր, 1920 թվականից հետո հայտնի է մնում միայն որպես առողջարանային բնակավայր²: Ասել է թե, քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքում առանցքային էր հայոց նշանակությունն ու ներկայությունը:

Մեր ժամանակներում, երբ հրատապ ու արդիական է Արցախի ու մասնավորապես Շուշի քաղաքի տնտեսական ու մշակութային զարգացման անհրաժեշտությունը, առաջնային ենք համարում պատմամշակութային ավանդույթների վերականգնման հարցը, որի լուծմանն ուղղված գործընթացներն արդեն սկզբնավորված են Արցախում: Մանավանդ, պետք է կարևորվի այն հանգամանքը, որ այդ ավանդույթների վերականգնումով հնարավոր կլինի ստեղծել մի քանի հազար աշխատատեղ:

Կարծում ենք, որ Արցախում՝ այդ թվում նաև Շուշիում, գորգագործության ավանդական ու զարգացման բարձր մակարդակում եղած լինելու հանգամանքն ու մանավանդ՝ այդ ավանդույթների պահպանման ու հետագա զարգացման խնդիրը անհրաժեշտ ու միանգամայն հիմնավորված են դարձնում նաև Շուշիում Արցախի գորգագործական մշակույթին նվիրված թանգարանի հիմնադրման գաղափարը:

Թանգարանի հիմնական խնդիրների թվում պետք է դիտվեն՝

¹ Л. Керимов, *Азербайджанский ковер*, т.2, Б., 1983, էջ 19. D. Tsitsishvili, L.Kerimov, N. Stepanian und T. Grigoliya, *Kaukasische teppishe, Leningrad, 1984, էջ 20. Այս մասին տես նաև՝* Տիգրանուհի Մկրտչյան, *Շուշվա գորգերի տեղը Արցախի գորգարվեստում. «Հայ մշակույթի հետազոտման հարցեր, Արցախ»:* Գիտական նստաշրջան, գեղուցումների հիմնադրույթներ, Երևան, 1992, էջ 27-28

² Տե՛ս В. Худадов, *Закавказье /Историко-экономический очерк, /М. -Л., 1926, էջ 140*



- Արցախի ու նաև հարակից գորգագործական կենտրոններին վերաբերող գորգի ու նմանատիպ առարկաների հավաքածուի ստեղծումը,
- Արցախյան գորգերի ու դրանց արեալային ազդեցությունների հիմնավորված ցուցադրության կազմակերպումը,
- Գիտական ու գիտահանրամատչելի ուսումնասիրությունների, կատալոգների ու բուկլետների միջոցով արցախյան գորգերի պատմամշակութային նշանակության ու հայոց գորգագործական մշակույթի համակարգում նրա տեղի բացահայտումը,
- Քաղաքի գիտամշակութային կյանքի, զբոսաշրջության համար նպաստավոր միջավայրի ձևավորման ու հետագա զարգացման գործին օժանդակումը:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 1710-1720-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1710-1720-ական թթ. Արևելյան Հայաստանում, մասնավորապես Արցախում (Ղարաբաղում) և Սյունիքում (Ղափանում) տիրող ժողովրդագրական իրավիճակի մասին կան հստակ տեղեկություններ: Պատմական ժողովրդագրության քննությունը հնարավորություն է ընձեռում այլ հարցերի հետ մեկտեղ ճշտելու և վերստուգելու հայկական զինված ուժերի քանակը մեզ հետաքրքրող ժամանակահատվածում:

Նախ, ներկայացնենք առկա տեղեկությունները: Ռուսաստանում հայ ազատագրական շարժման ներկայացուցիչ Մինաս վարդապետ Տիգրանյանը, ավարտելով Պետրոս Մեծի հրամանով իր գաղտնի առաքելությունը¹ Հայաստանի պարսկական տիրապետության տակ գտնվող շրջաններ, 1717 թ. մարտի 14-ին բանավոր զեկուցել էր. «Այդ պատրիարքի (իմա՛ Եսայի Հասան-Ջալալյանի) [հոգևոր] իշխանության տակ, Գանձասար վանքի շուրջը, կա 900 գյուղ, ու դրանք մեծ՝ 100, 200, 300, 400 և ավելի տներ ունեցող գյուղեր են: Գանձասարից մինչև Էջմիածնի վանքը, որտեղ ապրում է մյուս պատրիարքը (իմա՛ Աստվածատուր Ա. Համադանցին – Ա. Ա.), բեռնված ձիերով 5 օրվա ճանապարհ է: Վերջինս ավելի շատ գյուղեր ունի իր իշխանության տակ, քան Եսայի պատրիարքը, բայց թե որքան՝ այդ մասին ճշգրիտ չգիտե...»

Այդ երկու վերը հիշված պատրիարքների իշխանության տակ կլինի 200.000 [տուն] ժողովուրդ, դրանք էլ՝ վաճառականներ և գյուղացիություն»²:

1724թ. նոյեմբերի 5-ին Ղարաբաղի հայկական գորքի պատվիրակները Սանկտ-Պետերբուրգում՝ արտաքին գործերի կոլեգիայում հաղորդում էին ավելի հստակ տվյալներ.

«Նորին կայսերական մեծության պաշտպանության տակ մտնելու ցանկություն ունեցող հայ ժողովրդի (և՛ զինվորականների, և՛ այլոց) թիվը միայն Ղարաբաղի նահանգում կլինի ընդհանուր առմամբ 100.000 տուն՝ չհաշված հայկական մյուս նահանգը, որը կոչվում է Կապան և գտնվում է Ղարաբաղի նահանգի և Երևանի միջև՝ դրանցից ձիով 3 օրվա ճանապարհի հեռավորության վրա: Եվ այդ Կապանի նահանգի հայերն իրենց հետ միաբան են և նույնպես ցանկանում են մտնել նորին կայսերական մեծության պաշտպանության տակ: Իսկ այդ Կապանի նահանգում հայ ժողովրդի թիվն ավելի մեծ է, քան Ղարաբաղում, ու մեծ մասը վաճառականություն է»³:

Փոքր-ինչ ավելի ուշ, 1725 թ. հուլիսի 25-ին կայսրուհի Եկատերինա Ա-ին հղված ուղերձում Ղարաբաղի կաթողիկոսներն ու մելիքները նշում էին, որ իրենց ամենավոքոր գյուղերն ունեն 30-ից մինչև 50, իսկ ամենախոշորները՝ մինչև 600 տուն⁴: Վերլուծենք այս տվյալները:

1. Ղարաբաղի աշխարհագրական ընդգրկումը XVIII դարում: Հաշվելով 1710-1720-ական թթ. Ղարաբաղի բնակչության թիվը, պետք է հիշել, որ XVIII դ. Ղարաբաղը ներառում էր մի շարք տարածքներ, որոնք 1923թ. նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ)

¹ Տե՛ս *Армяно-русские отношения в первой трети XVIII века [Сборник документов, т. II, ч. I, под ред. Ашота Иоаннисяна, Е., 1964 (այսուհետև՝ Աշոտա Иоаннисяна, АРО, I), док. 147]*

² АРО, т. I, док. 154, с. 370. 1721 թ. Իրանի շահի մոտ առաքված օսմանյան պատվիրակ Դերի-Մուհամմեդ էֆենդին, վերադառնալով Կ. Պոլիս, նույն բանն էր հաղորդում սուլթանին, որ Պարսկաստանի «ամեն մի գյուղ ունի 300, 500 և 1000 տուն (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանությունը, ներածությունը, ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի, հ. Ա, Ե., 1961, էջ 125)

³ АРО, т. II, ч. II, под ред. Ашота Иоаннисяна, Е., 1967 (այսուհետև՝ АРО, II), док. 291, с. 205

⁴ АРО, II, док. 315, с. 249



սահմաններից դիտավորյալ դուրս էին թողնվել: Այդ բնիկ հայկական շրջանները ձգվում էին ԼՂԻՄ-ի ողջ պարագծով՝ բնական աշխարհագրական սահմանների երկայնքով: Հյուսիսում և հյուսիս-արևմուտքում դա Գյուլիստանն էր, Գետաշենը, Գետաբեկն ու Քարահատը, արևմուտքում՝ Քարվաճառը, իսկ հարավում՝ մինչև Արաքս՝ Դիզակի մեծիքության ծայրամասային հատվածները:

1722թ. մինչև 1730-ական թթ. Ղարաբաղի տարածքը՝ դաշնակից Սյունյաց իշխանապետության հետ միասին, վերահսկում էին հայկական զինված ուժերը և, ըստ այդմ էլ, արտաքին ուժերի կողմից ստացել էր Հայկական սղնախներ և Հայկական գորք նոր պետականակիր անվանումներ¹:

2. Հայ ընտանիքի (տան) շնչերի քանակը: Եթե որպես XVIII դ. սկզբում հայկական «տան» շնչերի նվազագույն քանակ ընդունենք 5-ը, ապա, Սանկտ-Պետերբուրգում 1724թ. նոյեմբերի 5-ին արված վերոհիշյալ հայտարարության համաձայն, Ղարաբաղի բնակչության ընդհանուր թիվը կազմել է 500,000 մարդ²: Միաժամանակ, պետք է նկատել, որ XVII-XVIII դդ. ավանդական հայկական ընտանիքը՝ «տունը», բաղկացած էր 10, 20, իսկ երբեմն էլ 30-40 շնչից³:

Այդուամենայնիվ, դարաբաղի հայերը, մատնանշելով իրենց 100,000 տունը, մեր կարծիքով, հաշվարկի հիմքում դնում էին ոչ թե հայ ավանդական տունը՝ 10 և ավելի անդամներով, այլ միայն նրա սկզբնային բջիջը՝ առանձին ընտանիքը:

3. Շրջակա հայության հոսքը Ղարաբաղ: Ըստ ամենայնի, 1724թ. Ղարաբաղի 100,000 հիշատակվող տների մեջ պետք է մտցնել նաև Գանձակի բնակչության հայկական մասը՝ այդ քաղաքը շրջապատող հայկական գյուղերի հետ միասին: Բանն այն է, որ 1723թ. հոկտեմբերին Գանձակի վրա օսմանյան բանակի ձախողված գրոհի⁴ ժամանակ ու դրանից անմիջապես հետո բնակչության մեծամասնությունը՝ և՛ հայերը, և՛ մահմեդականները դուրս եկան քաղաքից: 1723թ. դեկտեմբերի 20-ին Շամախիից գրած նամակում Ալեքսանդր քահանան ընդգծում էր, որ այդ պահի դրությամբ Գանձակի գրեթե բոլոր հայերն արդեն անցել էին Ղարաբաղ. «ԿՌ (60.000) մարդով եկին Գանջու վերա: ԺԲ (12) փաշայ ին, թոփ, դունբարայ [=ռուբը] շատ ունին, քաղաքի մինչև ի կտարն առին, մեր Հայոց ազգն ողճ ապրանքըն թալանեցին՝ որն կոտերեցին, որն կերի դանում: Որ փող ուներ՝ գնաց իւր երէխեքըն առին: Կ (60) տուն քշեցին տարան Հոռմաս տուն, մնացեալն փախըստական, մերկ, պոպիկ գնացին Հայոց սղնա[խ]նն»⁵ (ընդգծումը՝ Ա. Ա.):

Համաձայն 1725թ. օգոստոսի 8-ին գրված ֆրանսիական մի փաստաթղթի, Գանձակի պարիսպներից դուրս գտնվող արվարձանը բնակեցված էր բացառապես հայերով՝ faubourg des Armeniens⁶: Գանձակի այս faubourg-ը 1723թ. նոյեմբերի 26-ին Բաքու ժամանած հայ քահանա

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Aivazian A. M., *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal* (Yerevan: Center for Policy Analysis, American University of Armenia, 1997), p. 17-18

² Միայն սույն հայտարարության հիման վրա՝ դեռևս 1990 թ. Պ. Մուրադյանը ևս նկատում էր, որ 1720- ական թթ. Ղարաբաղի հայերի թիվը եղել է 100,000 ընտանիք և 500,000 մարդ (Мурадян П., *История - память поколений: проблемы истории Нагорного Карабаха*, Е., 1990, с. 112)

³ Համապատասխան տվյալները տե՛ս Սահակյան Լ., *Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի Օսմանյան աշխարհագիր մատյաններում*, Ե., 2007, էջ 60-63: Petrus Bedik. *Cebil Sutun, Viennae, 1678, p. 379: Ջարարիա Սարկաուզ. Պատմագրություն, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 132: Կարապետյան Մ. Ս., Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ. (Պատմա-բանասիրական հանդես, 1986, N 2, էջ 103, ծնթ. 33), Էփրիկյան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 386: Гакстаузен Август. *Закавказский край, СПб., 1856, т. 1, с. 190: Վրաց հեղինակների համաձայն, XVII-XVIII դդ. Վրաստանում նմանատիպ իրավիճակ էր՝ «Անկ ծուլին ուներ 10-20, իսկ երբեմն էլ 30 շունչ» [տե՛ս Բրեգաձե Հ. Ա., *К вопросу об этническом составе населения Грузии в XVII веке (Кавказский этнографический сборник, т. VI, М., 1976, с. 245, прим. 55)]***

⁴ Այս ճակատամարտում օսմանցիների դեմ կռվել էին պարսկական, կախեթցի վրացիների, Գանձակի շիա և հայկական միացյալ ուժերը. այս մասին մանրամասն տե՛ս Այվազյան Մ. Ս., *Բրադարություններն Այսրկովկասում 1723 թվականին և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք (Պատմա-բանասիրական հանդես, 1990, N 4, էջ 71-73. հմմտ. АРО, II, с. LXXVI-LXXV)*

⁵ АРО, II, *документы* 195, 196, с. 53, 54

⁶ Табагуа И., *Материалы для истории Грузии первой четверти XVIII века*, Тбилиси, 1982, с. 304



Անտոն Առաքելովի հարցաքննության գրառման մեջ անվանված է “армянскими слободами за городом”¹: Հենց այս արվարձանն է Ալեքսանդր քահանայի նամակի վերոբերյալ հատվածում անվանված «քաղաքի կեսը»՝ **“того города взяли половину”**: Բայց և այնպես, միջնադարյան քաղաքի այն մասը, որն ընկած էր պարիսպներից դուրս, պատմականորեն մի քանի անգամ ավելի մեծ բնակչություն ուներ, քան պարսպապատ հատվածի ներսում: Օրինակ, XVII դ. կեսերին ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն ընդգծում էր, որ Երևանի faubourg-ում 20 անգամ ավելի շատ մարդ էր ապրում, քան պարիսպների ներսում²: Իսկ Գանձակի մասին 1699թ. սեպտեմբերի 22-ին Իսրայել Օրու հաղորդած տեղեկությունների համաձայն, «ամենուր այդ քաղաքի շուրջ ապրում են [հայ] քրիստոնյաներ» (“...tout autour de laditte ville, se (=ce) sont des chrestien”): Գանձակում հայ բնակչության հոծ թվի մասին է վկայում նաև այդ քաղաքից և նրա անմիջական շրջակայքից 15,000 հայ զինվոր հավաքագրելու Օրիի մտադրությունը³:

Այս առումով հատկանշական է, որ երբ թուրքական բանակը Գանձակի վրա անհաջող գրոհելուց հետո նահանջում էր Թիֆլիս, Ղարաբաղում տեղակայված հայկական զորաբանակի հրամանատարությունը չի վարանում սուրհանդակներ ուղարկել թուրքերի մոտ՝ Գանձակից վերցված հայ զերիներին անհապաղ ազատելու պահանջով: Նկատի առնելով, մի կողմից, սեփական զորքերի վատ դրությունը գանձակյան ձախողումից հետո, մյուս կողմից՝ այն սպառնալիքը, որ ներկայացնում էին Ղարաբաղի հայերի ընտիր և լավ զինված զորքերը, թուրքերի գլխավոր հրամանատար Իբրահիմ փաշան անմիջապես բավարարում է նրանց պահանջը⁴: Այսպիսով, գանձակեցի հայերի՝ վերը մեջբերված փաստաթղթում հիշատակվող գերյալ 60 ընտանիքը նույնպես հայտնվեց Արցախում: Գանձակից, ինչպես նաև մերձակա շրջաններից հայերի զանգվածային ներհոսքը Ղարաբաղ՝ հայկական զորքերի պաշտպանության տակ, հաստատվում է ավելի ուշ եղած տեղեկությունների համաձայն ևս: Այսպես, 1726 թ. հունվարի 26-ին ռուսական հրամանատարության կողմից իբրև լրտես ուղարկված շամախեցի Սիմոն Բալապյանը (“1726 г. Января 26 дня посланной [русским командованием] из Баки шпионом армянин шамахинской житель Семен Баласин”), ի միջի այլոց, զեկուցում էր նաև Գանձակի ժողովրդագրական իրավիճակի մասին. «Այժմ Գանձակում ապրում են գանձակեցի մահմեդականների 5 կամ 6 ընտանիք և հայերի 50 ընտանիք: Իսկ մյուս մահմեդականները գաղթել են Արդեբիլ և տարբեր քաղաքներ, իսկ հայերը՝ Սըղնախներ⁵ (իմա՝ Ղարաբաղ – Ա. Ա.)»:

Այսպիսով, սկսած 1723թ. նոյեմբերից՝ Արցախն ապաստան էր դարձել տասնյակ հազարավոր հայ գաղթականների համար:

4. Ղարաբաղի բնակիչների և զինվորների թվային հարաբերակցությունը 1720-ական թթ.: 1720-ական թթ. Ղարաբաղն ու Ղափանը միասին մարտի դաշտ էին հանում մինչև 60,000 զինվոր (որից 40 հազարը՝ Ղարաբաղը)⁶: Մեկ տասնամյակ շարունակ օսմանյան ավելի խոշոր կանոնավոր բանակներին արդյունավետ դիմադրություն ցույց տված այս երկու ծայրաստիճան ռազմակա-նացված հայկական իշխանապետություններում⁷ խաղաղ բնակիչների և զինվորների՝ 10-ը 1-ի (5

¹ Հմմտ. АРО, II, док. 194, с. 51

² Les Six Voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse, et aux Indes, Paris, т. 1, 1679, p. 38. Հմմտ. Կարապետյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 95-102

³ Эзов Г., *Сношения Петра Великого с армянским народом. Документы*, СПб., 1898, док. 9, с. 33, 36

⁴ Հմմտ. АРО, II, док. 194, с. 51

⁵ Архив внешней политики России, фонд СРП (Сношения России с Персией), 1726, оп. 1, док. 4, л. 211а- 212а. Հմմտ. Пайчадзе Г.Г., *Русско-грузинские политические отношения в первой половине XVIII в.*, Тбилиси, 1970, с. 79. Պարսափյան Վ. Ա., *Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-բեկի ապստամբությանը*, Ե., 1962, էջ 67, АРО, II, док. 358-359, 366, с. 299, 302, 307

⁶ Aivazian A., *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal*, p. 7-9, 60-63.

⁷ Նույն տեղում, էջ 6-20



արուններից մեկը) հարաբերակցությունը միանգամայն արդարացված է թվում: Նման հարաբերակցությունը նույնպես հուշում է, որ Ղարաբաղի բնակչությունը խնդրո առարկա տասնամյակներում կազմում էր մոտավորապես կես միլիոն մարդ:

5. Ղարաբաղի բնակչության թիվը՝ ըստ գյուղերում եղած տների միջին թվաքանականի: Եթե 315-ը վերցնենք որպես 1725թ. Ղարաբաղի գյուղերում եղած տների ամենափոքր և ամենամեծ թվերի՝ 30-ի և 600-ի¹ միջին թվաքանական և այն բազմապատկենք 900-ով (սա Ղարաբաղի գյուղերի քանակն է 1717թ., ըստ Մինաս Տիգրանյանի վերոբերյալ հաղորդման), ապա կստանանք 283,500 տուն կամ 1,417,500 շունչ ամբողջ Ղարաբաղում՝ մեկ ընտանիքում 5 շունչ հաշվարկով:

Եթե 250-ը վերցնենք որպես միջին թվաքանական 100 և 400-ի միջև (այսինքն, ըստ Մինաս Տիգրանյանի՝ 1717 թ. Ղարաբաղի գյուղերում եղած տների ամենափոքր և ամենամեծ թվերի միջև) ու այն դարձյալ բազմապատկենք 900-ով, ապա կստանանք 225,000 տուն կամ 1,125,000 շունչ ամբողջ Ղարաբաղում՝ մեկ ընտանիքում 5 շունչ հաշվարկով: Անկասկած, այս երկու հաշվարկում էլ պատմական իրականությունը ներկայանում է բավական ուռճացված տեսքով: Սակայն այս թվերը վկայում են, որ վերը կատարված գնահատումները, ըստ որոնց, 1710-1720-ական թթ. Ղարաբաղի բնակչությունը կազմել է 500,000 մարդ, միանգամայն արժանահավատ են:

6. Հետադարձ հաշվարկ: 1710-1720-ական թթ. Արևելյան Հայաստանում ու մասնավորապես Ղարաբաղում ժողովրդագրական իրավիճակի մասին վերոհիշյալ գնահատականները հաստատվում են նաև կողմնակիորեն՝ ավելի ուշ տեղեկությունների հիման վրա հետադարձ հաշվարկ կատարելու միջոցով: Այսպես՝ հայ ազատագրական շարժման լավատեղյակ գործիչ Հովսեփ Էմինը 1792թ. հայտարարում էր, որ «ի ժամանակի Պետրոս արքային (իմա՝ XVIII դ. առաջին քառորդում – Ա. Ա.) հայք տասնապատիկ առաւելս էին, քան զայժմս (իմա՝ 1790-ական թթ. – Ա. Ա.), եւ մէլիքեանքն Ղարաբաղու բաւական շատացեալս էին զօրօք և բովանդակ Նախիջևան և Երևան լի էր հարուստ վաճառականօք»²:

Իսկապես, 1720-ական թթ. և հետագայում հայերն ահռելի մարդկային կորուստներ էին կրել: Պատահական չէ, որ լեհ ճիզվիտ Ջ. Կրուշինսկին, պատմելով 1724թ. Երևանի գրավման մասին, գրում էր. «Քաղաքի գրավման ժամանակ սպանված 30000 հայերից բացի, բավական շատ էին նաև գերեվարվածները, որոնք քշում էին նախիրների պես: Այս պատերազմների ընթացքում հայերի թիվն այնքան նվազեց, որ 1725թ. վերջին անգամ կեսը չէին այն քանակության, որ մինչև աֆղանների գալն ունեին Պարսկաստանում»³: Իսկ կարմելիտ քարոզիչ Լինդերը, որը 1732թ. եկել էր Իրան և ընդարձակ նյութեր էր հավաքել իրեն անմիջականորեն նախորդած շրջանի մասին, իր «Երկրորդ ճանապարհորդություն» (“Secondo Viaggio”) աշխատության մեջ, 1722-1725 թթ. Իրանում հայերի մարդկային կորուստները հաշվում էր «200000 սպանված և ստրկության քշված»⁴:

Ժողովրդագրական տասնապատիկ անկման գնահատականը, որ Էմինն, ամենայն հավանականությամբ, լսած պետք է լիներ հայ հոգևորական գործիչներից, որոնք էլ միայն կարող էին ունենալ հայության ժողովրդագրության մասին փոքրիշատե հավաստի տեղեկություններ, ստուգվում է ռուսաց ցար Պավել Ա-ի 1797 թ. արձակած մի հրամանագրով, որտեղ Ղարաբաղի

¹ 1725 թ. հուլիսի 25-ին Եկատերինա Ա-ին վերը հիշատակված ուղերձը տե՛ս APO, II, док. 315, с. 249
² Մեջբերված է Հովսեփ Էմինի՝ 1792 թ. հունվարի 1-ի նամակից [տե՛ս Գրիգորյան Վ., Հովսեփ Էմինի և Հովսեփ Արղությանի անտիպ նամակները (Պատմա-բանասիրական հանդես, 1990, N 4, էջ 193)]
³ Krusinski T., *The History of the Late Revolutions of Persia*. vol. 2, London, 1740, p. 178. Հմնտ. Արքայազն Երևանցի, Պատմություն պատերազմացն 1721-1736 թուի. Յառաջարան, բնագիր, խմբագիր օրինակ և ծանոթագրություններ, պատրաստեց Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1977, էջ 31-35
⁴ “The Armenian race in Persia was so diminished from the time of the arrival of the Afghans, i.e. in 1722 up to 1725 that 200,000 may be reckoned as having been killed and taken away as slaves” (A Cronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII Centuries. Vol. I, London, 1939, p. 579)



հայ բնակչության թիվը նշվում է 11,000 ընտանիք¹: Այսինքն՝ գրանցվում է բնակչության թվի գրեթե ճիշտ տասնապատիկ անկում՝ 100,000 ընտանիքից մինչև 11,000 ընտանիք²:

XVIII դ. երկրորդ կեսի Ղարաբաղի ժողովրդագրության վերաբերյալ ունենք ևս երկու ուշագրավ տեղեկություն: 1804թ. դեկտեմբերի 30-ին իշխան Տիգրանովի զեկուցագրում նշվում է, որ Իբրահիմ խանի (1763-1806) իշխանության տակ կար ղարաբաղցի հայերի 60,000 տուն³:

Այս 60,000 հայ ընտանիքների մասին տեղեկությունը, ըստ ամենայնի, վերաբերում է 1760-1770-ական թթ. դրությանը, որովհետև 1783 թ. Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը Ղարաբաղում հաշվում էր արդեն ընդամենը 30,000 հայ ընտանիք⁴: Այս թվերը նույնպես հաստատում են այն հնարավորությունը, որ 1710-1720-ական թթ. Ղարաբաղում կար 100,000 հայ ընտանիք, քանի որ օսմանյան ներխուժումը և այն ուղեկցած բնակչության զանգվածային ոչնչացումը, ինչպես նաև դրանից ոչ շատ անց Իրանում սկիզբ առած ավերիչ ներքին խժոժությունները բերեցին Արևելյան Հայաստանում հայկական բնակչության թվի աղետալի կրճատման:

7. Միսլ և թյուր տեղեկություններ: Վերոշարադրյալի հիման վրա պետք է անստույգ համարել Մինաս վրդ. Տիգրանյանի՝ 1717թ. մարտի 14-ին տված այն գնահատականը, ըստ որի՝ Արևելյան Հայաստանում Էջմիածնի և Գանձասարի «պատրիարքների իշխանության տակ գտնվող հայ ժողովրդի թիվը կարող է լինել մոտ 200,000, դրանք էլ՝ վաճառականներ և գյուղացիություն» [Народа армянского под владением вышепомянутых двух патриархов счислением может быть тысяч с двести, и то купечество и крестьянство]: Ամենայն հավանականությամբ, Մինաս վարդապետը խոսել է ոչ թե 200,000 հայերի, այլ 200,000 հայ տների մասին, որը լիովին կհամապատասխաներ ղարաբաղցիների 1724 և 1725 թթ. հաղորդածին, ինչպես նաև չէր հակասի իր իսկ հայտնած 900 գյուղի և դրանց չափսերի մասին տեղեկությանը: Հավանաբար, սխալը թափանցել է նրա՝ բանավոր հայերեն զեկույցի՝ ռուսերենով թարգմանաբար գրառված տեքստի մեջ՝ թարգմանչի անուշադրության պատճառով:

Ամենայն հավանականությամբ, դարձյալ թարգմանչի սխալն է արևելահայերին միայն գյուղացիության և վաճառականության դասերի մեջ ներառելը, քանզի հայերն ապրում էին Այսրկովկասի բոլոր հիմնական քաղաքներում, իսկ Երևանում, Թիֆլիսում և Գանձակում կազմում էին մեծամասնություն, որոնց մեջ մեծ էր նաև արհեստավորության թիվը, և այս հարցում Մինաս Տիգրանյանը սխալվել չէր կարող: Բացի այդ, Վրաստանում, Արցախում, Սյունիքում, Շամախիում և պարսկական ծառայության մեջ զգալի թիվ էր կազմում նաև հայ զինվորակա- նությունը:

Թյուրիմացություն պետք է համարել նաև 1724 թ. նոյեմբերի 5-ի Ղարաբաղի պատվիրակների հաղորդումը, թե Ղափան նահանգում ավելի շատ հայ կար, քան Ղարաբաղում: Հնարավոր է, սակայն, որ Ղափան ասելով՝ նրանք նկատի են ունեցել ոչ թե Դավիթ-բեկի ստեղծած հայոց

¹ Мурадян П., История – память поколений, с. 112 (СХнбХЦ / «Полное собрание законов Российской империи» գրքից՝ տ. 24, с. 761)

² Հետաքրքիր է, որ անձանթ լինելով Հովսեփ Էմինի սույն նամակին՝ XVIII-XIX դդ. մի շարք ռուսական արխիվային վավերագրեր համեմատելու միջոցով, Պ. Մուրադյանը եկել է Էմինի արած նույն եզրակացությանը, այն է՝ 1724 թ. հաջորդած «հարյուր տարվա ընթացքում հայերի թիվը պակասել էր գրեթե տասն անգամ» (նույն տեղում, էջ 112-113)

³ «Իբրահիմ խանն իր իշխանության տակ ուներ միայն ղարաբաղցի հայերի 60.000 տուն, որոնք կառավարում էին հինգ ամենաազնվական մելիքները, որոնք, ըստ իս, սգիտությունից առաջնորդվելով, իրենց համարում են հին Հայաստանի թագավորներից սերված: Իսկ այժմ ոչ ավել, քան 4.000 տուն կա, մնացածները Շամախիի և Շեքիի խաների [իշխանության] տակ են, ինչպես նաև Վրաստանում են»: St. u Kavkaz i Zakavkazye vo vremena upravleniya knyazya P. D. Tsiyanova (Акты, собранные Кавказской археографической комиссией, т. 2, Тифлис, 1868, с. 623), հմմտ. Мурадян П., История – память поколений, с. 11

⁴ Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.). Сборник документов, т. IV, под ред. Нерсисяна М. Г., Е., 1990, док. 128, с. 209



իշխանապետության տարածքը, այլ Ղափանն ավելի լայն առումով՝ որպես Սյունյաց ամբողջ աշխարհ¹, ներառյալ Գեղարքունիքը, Ագուլիսն ու Երնջակի գավառը:

Ի մի բերելով՝ կարելի է վստահորեն եզրակացնել, որ 1710-1720-ական թթ. Արցախի (Ղարաբաղի) բնակչության թիվը կազմել է մոտավորապես 500,000 մարդ²: Պատկերացում տալու համար, թե այդ կես միլիոն հայն ինչպիսի հարաբերական մեծություն էր տարածաշրջանում, բավական է մատնանշենք, որ 1720-ական թթ. Եվրոպացի մի ճանապարհորդ լեզգիներին «մեծաթիվ ժողովուրդ էր» համարում, որովհետև նրանց թիվը կազմում էր... 30,000 ընտանիք³:

¹ Այվազյան Ա., *1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից* (Սկզբնաղբյուրների համադրման փորձ) (Պատմա-բանասիրական հանդես, 1990, N 2, էջ 128-129)

² Եվրոպական հայտնի մի աղբյուրի համաձայն, XVII դ. սկզբում Գանձակ կամ Ղարաբաղ նահանգի բնակչությունը կազմում էր 250,000 մարդ (տե՛ս Don Juan of Persia, A Shiah Catholic 1560-1604. Transl. and ed. by G. Le Strange, London 1926, p. 41-2. Cf. Tadhkirat Al-Muluk. A Manual of Safavid Administration (circa 1137/1725). Translated and explained by Minorsky V. London: W. Heffer & Sons, 1943, p. 44, 166): Այս փաստը նա հուշում է, որ 1639 թվականից ի վեր խոշոր պատերազմներից զերծ մնացած Ղարաբաղի բնակչությունը կարող էր լուրջ աճ արձանագրել

³ Ксаверие Главани, *Описание Черкессии 1729 г.*, Тифлис, 1893, с. 15 [Этот многочисленный народ (в нем считают более тридцати тысяч семейств) занимает оконечность Кавказа, соприкасаясь с одной стороны с Персией, с другой – с Грузией]

**ԱՐՅԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ
ԸՍՏ 1897Թ. ՀԱՄԱՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ**

Հանրահայտ է, որ ազգագրական գիտության մեջ մեծ է վիճակագրական աղբյուրների, հատկապես՝ բնակչության մարդահամարների նշանակությունը: Շնորհիվ մարդահամարների, հետազոտողները հնարավորինս ճշգրիտ տեղեկություններ են ստանում ամենազանազան հարցերի վերաբերյալ: Ռուսական կայսրությունում գիտականորեն կազմակերպված առաջին մարդահամարն անցկացվել է 1897 հունվարի 28-ին (նոր տոմարով՝ փետրվարի 9-ին): Մարդահամարն իրականացվել է «Ռուսական կայսրության առաջին համընդհանուր մարդահամարի մասին կանոնադրություն» կոչվող փաստաթղթի համաձայն¹: Այդ փաստաթղթով հաստատվել էր մարդահամար անցկացնելու ծրագիրն ու նպատակը՝ պարզել բնակչության քանակը, ցեղագրական, տարիքային, կրոնական կազմը, տեղաբաշխումը: Ելիզավետպոլի նահանգի (որի տարածքը հիմնականում համընկնում էր ուշ միջնադարում «Ղարաբաղ» անվանված երկրամասի տարածքի հետ) վերաբերյալ վիճակագրական նյութերը հրապարակվեցին 1904թ. նոյեմբերին, սենսատոր Տրոյնիցկու խմբագրությամբ²: Մինչ այդ եղած մարդահամարների տվյալների հետ համեմատած, առաջին համառուսաստանյան մարդահամարի տվյալները ավելի հավաստի են, քանի որ անճշտությունների թիվը չի անցնում 1-2 տոկոսը, ինչը ժողովրդագրական թույլատրելիության սահմաններում է: Ալեքսանդր II ցարը, 1867թ. դեկտեմբերի 9-ին ստորագրել էր մի կանոնադրություն, որը գործողության մեջ էր դրվել 1868թ. հունվարի 1-ից³: Ըստ այդ կանոնադրության, նախկին Ղարաբաղի պրովինցիայի և հարակից որոշ տարածքների հաշվին կազմավորվեց Ելիզավետպոլի նահանգը: Սկզբնական շրջանում այն բաժանվեց 5, իսկ 1873թ.՝ 8 գավառների (Ջևանշիրի, Շուշիի, Ջեբրաիլի, Ջանգեզուրի, Ելիզավետպոլի, Արեշի, Նուխիի, Ղազախի): Պատմական Արցախ աշխարհի տարածքը հիմնականում մասնատված էր Շուշիի, Ջևանշիրի, Ջեբրաիլի, Ելիզավետպոլի, մասամբ՝ Ջանգեզուրի գավառների միջև: Ելիզավետպոլի նահանգի ընդհանուր տարածքը 38.782 քառակուսի վերստ (քառ. կմ) էր: Ելիզավետպոլի նահանգի բնակչության ընդհանուր թիվը, 1897թ.վականի մարդահամարի տվյալների համաձայն, կազմում էր 878.415 մարդ: Այդ 878.415 մարդն, ըստ գավառների, տեղաբախված էր հետևյալ կերպով.

- 1.Ելիզավետպոլի գավառ..... 162.778 մարդ
- 2.Արեշի գավառ..... 67.277 մարդ
- 3.Ջեբրաիլի գավառ..... 66.360 մարդ
- 4.Ջեվանշիրի գավառ..... 72.719 նարդ
- 5.Ջանգեզուրի գավառ..... 137.871 մարդ
- 6.Ղազախի գավառ..... 112.074 մարդ
- 7.Նուխիի գավառ..... 129.555 մարդ

¹ Положение о первой всеобщей переписи населения Российской империи, СПб, 1895

² Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г., Елисаветпольская губерния, кн. 63, СПб, 1904

³ Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862-6 декабря 1872 гг., Тифлис, 1873, ст. 49-50



8.Շուշիի գավառ..... 139.771 մարդ¹:

Տվյալները վկայում են, որ բնակչության թվաքանակով առաջին տեղերում էին Ելիզավետպոլի, Շուշիի և Ջանգեզուրի գավառներն, իսկ վերջին տեղը գրավում էր Ջեբրախիլի գավառը: 1867թ. բնակչության թվով ամենամեծը եղել է Շուշիի գավառը, իսկ 30 տարի անց այն թվով երկրորդն էր: Շուշիի գավառի բնակչության դանդաղ աճը և թվի նվազումը կապված էր հիմնականում շարունակական արտագաղթով, որը մեծ չափերի էր հասել 19-րդ դարի վերջին: Տարեկան մոտ 16,5 հազ. մարդ կամ չափահաս տղամարդկանց մեկ երրորդը աշխատանք որոնելու նպատակով հեռանում էր հայրենիքից²: Ինչպես ողջ Կովկասն, այդպես էլ Ելիզավետպոլի նահանգը բազմազգ էր: 1897 թվականի մարդահամարը ցույց տվեց, որ կովկասյան թաթարները (ներկայիս ադրբեջանական թուրքերը ցեղային այդ անվանումով էին հաշվառվել) կազմում են ամբողջ նահանգի ազգաբնակչության կեսից ավելին՝ 60 տոկոսը, հայերը՝ 33,26 տոկոսը, ռուսները՝ 1,8 տոկոսը, լեզգիները՝ 2,57 տոկոսը, գերմանացիները՝ 0,36 տոկոսը, քրդերը՝ 0,35 տոկոսը, թաթերը՝ 0,20 տոկոսը³: Այս տվյալները վկայում է, որ երբեմնի «Հայոց Արևելից Կողմանց» (Արցախու Ուխտիք) ընդարձակ տարածքում, որն զգալիորեն ավելին էր, քան է ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը, բնիկները՝ հայերը, կազմում էին բնակչության միայն մեկ երրորդը: Դա թուրքական «հայտնության» շուրջ ութ դարերի արգասիքն էր, որն ընդամենը քսան տարի անց, չարաբաստիկ դեր էր խաղալու Հայաստանի Հանրապետության սահմանների ձևավորման հարցում: Մարդահամարի տվյալների համաձայն, նահանգի ազգաբնակչությունն ազգային առումով տեղաբախշված էր հետևյալ կերպ՝ Կուր ու Արաքս գետերին հարող հարթավայրերում ապրում էին թաթարները, որոնք, լինելով վաչկատուններ, օգտվում էին նախալեռնային ու լեռնային շրջանների արոտավայրերից և իրականում արտոնյալ վիճակում էին հայտնվել: Հայերը նախալեռնային ու լեռնային շրջանների բացարձակ մեծամասնությունն էին կազմում: 1886-1897թթ. ընթացքում հայ բնակչության թիվը նահանգում 35,4 տոկոսից իջել էր 33,2 տոկոսի: Նույն ժամանակահատվածում նահանգում թաթարների թիվը 448 հազարից հասել էր 552 հազարի⁴: Թաթարական բնակչության թվի աճը պայմանավորված էր ոչ միայն բնական աճի բարձր տեմպերով, այլ նաև ներգաղթով: 1880-ական թվականներից սկսած միայն Պարսկաստանի տարածքից Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներ եկածների թիվը տարեկան կազմում էր 30-35 հազար մարդ⁵: Ցավոք սրտի, մարդահամարի տվյալները կովկասյան թաթարների մեջ է ներառել մահմեդականացված հայերին՝ այրումներին, Նուխիի գավառի 7 հազար թրքախոս հայերին⁶: Նահանգի լեռնային գավառներում հայերը կազմում էին բնակչության 70 տոկոսը, թաթարները՝ 23 տոկոսը, մնացածները (ռուսներ, հույներ, քրդեր)՝ 7 տոկոսը: Բնակչության այսպիսի տեղաբաշխվածության առանձնահատկություններին ուշադրություն են դարձրել 19-րդ դարի մի շարք ռուս հեղինակներ: Այդ հեղինակներից Ե.Նաումենկոն գրում է. «Եթե մենք գծով առանձնացնենք չայկական Գանձակի լեռնային համակարգը մերձկուրյան դաշտավայրից, ապա այդ գիծը կառանձնացնեն հայերին ու թաթարներին: Վերջիններս զբաղեցնում են մերձկուրյան դաշտավայրը, իսկ հայերը բնակեցնում էին ողջ նախալեռնային հատվածը մոտ 30 վերստ լայնությամբ»⁷: Լեռնային Ղարաբաղի տարածքում, որը պատմական Արցախի հիմնական մասն է

¹ Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г., Елисаветпольская губерния, кн. 63, ст. 6-7
² С. Заварян, *Экономические условия Карабаха и голод 1906-1907гг.* СПб, 1907, ст. 50
³ Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г., Елисаветпольская губерния, кн. 63, 65-75
⁴ Բ. Իշխանյան, *Վիճակագրական ուսումնասիրություններ Անդրկովկասյան ժողովուրդների*, մաս I, Բաքու, 1919, էջ 79
⁵ История Азербайджана, т. 2, Баку, 1960, ст. 253,261
⁶ Բ. Իշխանյան, *Վիճակագրական ուսումնասիրություններ Անդրկովկասյան ժողովուրդների*, մաս I, էջ 114
⁷ Е.Науменко, *Елисаветпольская губерния, Военно-статистическое описание, Тифлис, 1903, часть I, ст. 280*



կազմում, հայերի բացարձակ գերակշռությունն անմիջապես է աչքի զարնում. նրանց թիվը հասնում է 171,6 հազարի, այն դեպքում, երբ թաթարները՝ 30,8 հազար, ռուսները՝ 6,7 հազ և այլն: Շուշի քաղաքի բնակչության 55,8 տոկոսը նույնպես հայեր էին:¹ Այսպիսով, Արցախյան մերօրյա շարժման սկզբից 90 տարի առաջ, Արցախի հիմնական մասում, առանձնապես ոչ հատուկ հայասիրությամբ տառապող ռուսական պետության պաշտոնական մարդահամարի տվյալերով, հայերը կազմում էին ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը, ինչը թույլ տվեց հայության այս հատվածին տոկալու հարյուրամյա ցնցումներին ու արհավիրքներին: Հայկական երկրորդ պետությունը վիճակագրական այդ իրողության ու դրա շնորհիվ գոյատևած ոգու արգասիքն է:

¹ *Исторический архив России, Фонд 1290, опись.11, дело 636, 638, 639, 645*

ԲՈՒՆԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Վերջին շրջանում մամուլում, գիտական հանդեսներում և առանձին մենագրություններով զանազան նյութեր են հրապարակվում Արևմտյան Հայաստանում և ընդհանրապես Թուրքական Հանրապետության տարածքում այժմ ապրող և իրենց ազգային ինքնությունը կորցրած, մահմեդականություն ընդունած և, հետևաբար, թուրքացած ու քրդացած հայերի մասին:

Սակայն միայն Արևմտյան Հայաստանում և նախկին Օսմանյան կայսրության տարածքներում չէ որ հայության այս կամ այն հատվածը ենթարկվել է բռնի մահմեդականացման և դրա արդյունքում՝ ինքնության կորստի: Համանման երևույթներ տեղի են ունեցել նաև Արևելյան Հայաստանում:

Ղարաբաղի խանության կազմավորումից հետո, տարածաշրջանի էթնոքաղաքական իրավիճակը խիստ բարդացավ. վաչկատուն ցեղերի անընդհատ արշավանքները մի կողմից, մելիքների ու Ղարաբաղի խաների հակամարտությունը մյուս կողմից, հայ ժողովրդին դրեցին աղետալի կացության մեջ: Այս առնչությամբ ահա թե ինչ է գրել Հաքստհաուզենը. «Սկսած XVIIIդ. այս գեղեցիկ երկիրը կրում է խոր անկման հետքեր և չի կարող արագ վերականգնվել, մասնավորապես բազմաթիվ էթնոգավանական հանրությունների առկայության պատճառով: Գերի տարված հայերի փոխարեն այստեղ են բերվել ծույլ թաթարներ և թուրքեր, որոնք աստիճանաբար ավելանալով թվային գերկշռություն են ստանում տեղաբնիկների նկատմամբ»¹:

Բացի Ղարաբաղի հայաթափումից և թուրքաքրդալեզու էթնիկ տարրերի ներթափանցումից, այդ շրջանում տեղի է ունենում հայության համար մեկ այլ աղետալի երևույթ՝ հայ բնակչության մի մասի մահմեդականացում: Բռնի մահմեդականացված հայության հիմնական հատվածն ապրում էր գլխավորապես Հյուսիսային Արցախում, մասնավորապես՝ Գարդմանքում: Դրանք այրումներն են, որոնց ոմանք համարում են աղբբեջանցիների ազգագրական խմբերից մեկը²: Այրումներն, ըստ XIX դարի տվյալների, պահպանվել էին հիմնականում Գարդմանքում (ներկայիս Գետաբեկի, Դաշբեսանի, Թովուզի և ուրիշ շրջաններում, ինչպես նաև՝ ԼՂՀ Շահումյանի, Քարվաճառի շրջաններում), այսինքն՝ Ալիարակ (Գյոյ-գյոյ) լճից մինչև Աղստև գետն ընկած տարածքում: Գանձակ գավառի լեռնակողմն, այնտեղ բնակվող այրումների շնորհիվ, մինչև XIX դարի սկզբները կոչվում էր «Այրումլու», բայց ռուսական տիրապետության օրոք այդ անվանման տակ հասկացվող տարածքն առավել սահմանափակվեց և սկսեց վերաբերել միայն առանձին գյուղական հասարակությունների:

Այրումների մասին գրավոր աղբյուրները բավական սակավաթիվ են: Նրանց վերաբերյալ հայ իրականության մեջ առաջին տեղեկությունները հաղորդել է Ե. Լալայանն, ըստ որի. «Թուրքեր են համարվում նաև թափառական այրումները, որոնք իրենց Ռումից (Բյուզանդիա) գաղթած են համարում և իրենց կոչումն էլ մահմեդականներ են, շիա աղանդին պատկանող, խոսում են Ատրպատականի բարբառով, մի առանձին արտասանությամբ և ոչնչով չեն զանազանվում

¹ Гакстгаузен А., *Закавказский край*, СПб, 1857, ч.1, с. 208-213

² *Народы мира, историко-этнографический справочник*, под ред. Ю. Бромлея. Москва, 1988. с. 42



թուրքերից: Մրանք բնակվում են Ամիրվալ Աջի, Բիրգյոզ, Այքենդ, Դաստաֆուր, Դամջալի, Գյունեյ, Դամի, Զազա-Դարասի, Ղարաբուլախ եւ Ղազախ Էլչիլախ հասարակությունների մեջ»¹:

Հայ ուսումնասիրողներից Հ. Վարդանյանը նշում է, որ. «Այրումների հետ մոտ ծանոթանալուց, ինչպես ասում են, նրանց ազգն ու տակը քրքրելուց յետոյ մարդը ակամայ համոզվում է, որ այդ խեղճ ու կրակ մահմեդականները ոչ այլ ոք են, եթե ոչ մեր Գարդմանաց Ձորի անպարտելի քաջերի սերունդը: Մինչեւ այժմ այրումների մեջ մնացել են մի քանի հայկական խօսքեր, օրինակ՝ հանդ, հավալիք (ավելուկ), հախչիս (աղջիկ) եւ այլն... այրում ոչ թե կը նշանակե՛ «հայ-յոյն», և այդ խօսքը ուղղակի «հայրում» խօսքի աղավաղումն է: Նրանք բռնի կերպով են մահմեդական դարձել, որի պատճառով նրանք իրենց անուանում են «գլիջ մուսուլմանի», այսինքն սրի ուլժով մահմեդական դարձածներ: Այրումները այն կրոնական մուլեոանդությունը չունեն, ինչ-որ ուրիշ տեղի մահմեդականները: Դեպի կրոնը և կրոնական ծեսերը շատ անտարբեր են: Նույնիսկ ամբողջ գավառամասում աղօթատուն չունեն»²: Այրումներին բնիկ է համարում նաև ադրբեջանցի հետազոտող Ա. Ալեքպերովը: Ալեքպերովը նույնպես գտնում է, որ «այրում» էթնիկական անվանումը ծագել է «հայ» և «հույն» անվանումներից, և դա կապված է այն իրողության հետ, որ 451-ի Քաղկեդոնի ժողովից հետո հայերի որոշ մասն սկսեց ընդունել քաղկեդոնականություն, և նրանց «հայ-հռոմներ» անվանեցին, այսինքն՝ հունադավան հայեր³: Ըստ Կոբիչևի, 591թ. Հայաստանի երկրորդ բաժանումից հետո նրա մեծ մասն անցավ Բյուզանդական կայսրությանը, որի հետևանքով Բյուզանդական կայսրությանն անցած գավառների բնակչությանն սկսեցին կոչել «հայ-հռոմներ», այսինքն՝ բյուզանդահայատակ հայեր⁴:

Իսկ այն հարցին, թե Գարդմանքում ե՞րբ է քաղկեդոնականությունը տարածվել: Ըստ Ս. Կարապետյանի, դա կարող էր տեղի ունեցած լինել բյուզանդասեր Եզր կաթողիկոսի օրոք՝ VII դարում կամ էլ Վրաստանի հզորացման շրջանում՝ XII դարում⁵: Մեր կարծիքն այն է, որ դա կարող էր տեղի ունեցած լինել նաև բյուզանդական Հերակլ կայսեր ժամանակներում, որը 622-623 թվականներին արշավել էր դեպի այդ երկրամասեր: Մեբեոսի պատմածի համաձայն՝ Հերակլին դիմագրավելու նպատակով պարսկական զորքը մտավ Գարդմանք, որը գրավել էր կայսրը, և բանակ դրեց մյուս Տիգրանակերտում:

Կա նաև մյուս հարցը. ե՞րբ են այրումներն ընդունել մահմեդականություն: Ըստ Ս. Կարապետյանի, այդ տեղի է ունեցել XV-XVI դարերում, ինչը քիչ հավանական է, կամ էլ՝ 1720-ական թվականներին, ինչը տեղի է ունեցել նաև Շաքիի, Կապադակի, Դասանի, Շամախիի, Մուսկուրի և այլ բնակավայրերի հայերի մի զգալի մասի հետ՝ 1720-1750-ական թվականներին⁶: Ըստ Ալեքպերովի՝ բռնի մահմեդականացումը կատարվել է 18-րդ դարի սկզբներին՝ Արցախի ազգային-ազատագրական պայքարի անկումից հետո, երբ այս տարածաշրջան ներխուժած թուրքերը, տեղի թյուրքալեզու տարրերն անհանդուրժողական վերաբերմունք էին դրսևորում հայերի նկատմամբ: Հատկապես անհուսալի էր Սևանա լճից հյուսիս ապրող հայերի վիճակը: Մահմեդականություն ընդունելով, նրանք փրկվում էին ֆիզիկական ոչնչացումից⁷:

Բռնի մահմեդականացման դեպքեր են տեղի ունեցել ոչ միայն Հյուսիսային Արցախում: Ղարաբաղի մյուս շրջանները ևս զերծ չեն մնացել այդ չարիքից, մանավանդ Իբրահիմ խանի

¹ Լալայան Ե., *Երկեր*, հ. 2, 1988, էջ 329

² Վարդանյան, «Մի քանի խոսք այրումների մասին», «Մշակ», 1914, հ. 154, էջ 2-3

³ Алекперов А., *Исследования по археологии и этнографии Азербайджана*, Баку, 1960, с. 87

⁴ Кобычев В., *Айрумы* (к вопросу происхождения этнонима), Советская этнография, 1962, N 3, с.148

⁵ Կարապետյան Ս., *Հյուսիսային Արցախ*, Երևան, 2004, էջ 17

⁶ Նույն տեղում, էջ 18

⁷ Алекперов А., *Исследования по археологии и этнографии Азербайджана*, с. 88



Ժամանակ: Բաֆֆին համոզված էր. «Եթե այսօր հանդիպում ենք Ղարաբաղում ամբողջ գյուղերի հայ-մահմեդական բնակիչներով, եթե տեսնում ենք հայոց գյուղերում թուրք ընտանիքներ, որոնք խոստովանում են, թե իրանց նախնիքը հայեր են եղել,- այդ բոլորը Իբրահիմ խանի ժամանակների պտուղներն են»¹: Իբրահիմ խանի վարած այս քաղաքականությունից չկարողացան խուսափել անգամ Ղարաբաղի մելիքական տները: Դիզակի մելիք Եսայի Մելիք Եզանյանի որդի Բախտամ բեկին և նրա որդիներին՝ Ասլանին ու Վահանին, Իբրահիմ խանը բռնի կրոնափոխ է անում, սակայն չբավարարվելով այդքանով, սպանել է տալիս նախ Բախտամ բեկին, այնուհետև նրա որդի Մելիք Ասլանին: Վահանի մասին տեղեկություններ չեն պահպանվել²:

Բաֆֆին գրում է. «Տող բերդում, Մելիք-Ավան խանի պալատում բնակվում է մի Ֆարհադ բեկ անունով թուրք ազնվական, որը պարծանքով հիշում է, թե ինքը Մելիք Ավանյանների նշանավոր տոհմի զավակներից է: Եվ իրավ, նա Բախտամ-բեկի թոռը և Մելիք-Ասլանի որդին է: Իսկ Մելիք-Ավանյանների քրիստոնյա մնացած ժառանգները այժմ թշվառ աղքատության մեջ բնակվում են նոյն Տող բերդում, թեև ազնվականներ են համարվում»³: Մելիք Ասլանի անունով այս տոհմի մահմեդականացած ժառանգներն հետագայում սկսել են կոչվել Մելիք-Ասլանովներ: Այդ տոհմի մասին Լեոն գրել է .«Այդ մահմեդականացած հայերն այժմ Տող գյուղի բեկերն են և կրում են Մելիք-Ասլանով և Մելիք-Եզանով հայկական ազգանունները: Բայց կրոնը մոռացնել է տվել հայ մելիքների այդ հեռավոր ժառանգներին ազգային ամեն մի պարտավորություն: Թեև նրանք շատ լավ գիտեն, որ հայեր են, բայց մահմեդական կրոնին պատկանող, այնուամենայնիվ այնքան ենթարկված են ամբոխային հասկացության, որ կրոնն են համարում ազգության նշան, ուստի և ձուլվում են թաթար մահմեդականների հետ՝ հաճախ իրենց ազգակից հայերին դեմ գնալու համար: 1905-1906թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ այդ Մելիք-Ասլանովներից մեկը, որ պրիստավի պաշտոն էր կատարում Զանգեզուրի գավառում, անորակելի զազանություններ կատարեց հայերի նկատմամբ: Բարձրագույն ուսումն էլ չի կարողանում ազգության մասին ուղիղ գաղափար տալ Տողի երբեմնի հավատարացների այժմյան սերնդին: Նույն Մելիք-Ասլանովներից մեկը, կրթությամբ ինժեներ, մինիստր էր 1918 թ. Ադրբեջանի մուսաֆաթական կառավարության մեջ, երբ Բաքվում, այդ կառավարության կարգադրությամբ, կոտորեցին մոտ 30 հազար հայեր»⁴:

1886 թվականի տվյալների համաձայն՝ Տողում բնակվող 273 գերդաստաններից 33-ը կազմում էին մահմեդական հայերը⁵: Ավելի ուշ՝ Խորհրդային Ադրբեջանի վարած գաղութային քաղաքականության հետևանքով, Տողում մահմեդականների թիվն ավելացնելու նպատակով, Ադրբեջանի Կոմկոուսի Կենտկոմի հրահանգով 1943-1953 թվականներին Ադրբեջանի Իմիշլիի շրջանի Թալլբիսանլու դշլաղի թուրքերին տեղափոխում են Տող⁶: Արցախյան շարժման նախօրյակին արդեն Տողի 1412 բնակից 811-ը կազմում էին թուրքերը⁷: Ըստ ականատեսների վկայության՝ Մելիք-Եզանովներն ավելի վատթար վերաբերմունք ունեին հայերի նկատմամբ, քան եկվոր թուրքերը...

¹ Բաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. 10, Երևան, 1964 թ, էջ 245

² Բաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. 10, էջ 281

³ Նույն տեղում, էջ 281

⁴ Լեոն, *Հայոց պատմություն*, հ. 3, Երևան, 1946, էջ 857-858

⁵ *Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков. 1886 г., Тифлис, 1893, с. 516*

⁶ Մկրտչյան Շ., *Արցախում եւ ուրիշ պատերազմ տեսա*, Երևան, 1996, էջ 47

⁷ Նույն տեղում, էջ 49



Ս. Ջալալյանցը, նկարագրելով Շուշիի մոտ գտնվող Ղայբալիշեն գյուղը, նշում է, որ գյուղից երեք գերդաստան Իբրահիմ խանի բռնությունների հետևանքով ընդունել են մահմեդականություն, սակայն գաղտնի կերպով դավանում էին քրիստոնեություն¹:

Հակարի գետի ձախափնյա վտակներից մեկի վերին հոսանքում՝ Քաշաթաղի շրջանի Մեղի գյուղից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, գտնվում էին Ճամբերախաչ, Քյոհնաքենդ, Ղշլաղ, Խումարթա, Էյրիկ և Ալիփանահլի գյուղատեղերը, որոնց հետագայում սկսեցին կոչել *Մուսուլմանլար* հավաքական անվանումով: Ի տարբերություն շրջակա քուրդ բնակչության, XIX դարում այդ գյուղերի բնակիչները թուրքալեզու էին: Խումարթա գյուղի հարևանությամբ, մեկ կիլոմետրի վրա, դեռ պահպանվում է սալատապաններով մի փոքրիկ հայկական գերեզմանատուն²:

Շուշիի շրջանի Մուսուլմանլարին (այժմ՝ Քիրսավան) մերձակա հայկական գյուղերի բնակիչների տեղեկությունների համաձայն, Մուսուլմանլարում բնակվողները մահմեդականացած հայեր էին: Շուշի քաղաքի թյուրքերն ու թյուրքական գյուղերի բնակիչները նրանց անվանում էին «Էրմանիդան դյումուզ մուսուլմանլար», թուրքերենով՝ «հայից սերված մահմեդականներ»: Թե երբ են նրանք մահմեդական դարձել, հայտնի չէ, և կան զանազան կարծիքներ դրա վերաբերյալ: Ոմանք գտնում են, որ սրանք հավատափոխ են եղել Իբրահիմ խանի կառավարման տարիներին, ուրիշների կարծիքով՝ նույն դարի վերջին Աղա-Մահմադ խանի արշավանքների ժամանակ: Մուսուլմանլարցիներն արտաքինով խիստ տարբերվում էին իրենց շրջապատող թուրքերից ու քրդերից: Նրանք շատ վախվորած ու զգուշանալով էին խոսում իրենց ծագման շուրջ³:

1840-50-ական թթ. բազմաթիվ հավատափոխ եղած հայեր դիմում են Ամենայն Հայոց կաթողիկոսին և Հոգևոր սինոդին՝ նորից իրենց նախնիների դավանանքին վերադառնալու խնդրանքով: 1849թ. մահմեդականներ Հյուսեին Բահման բեկը և Ջաֆար Մամեդ օղլուն դիմում են Վեհափառ հայրապետին՝ նորից հայ առաքելական եկեղեցու դավանանքին վերադառնալու կապակցությամբ նշելով, որ իրեն հոր հետ միասին բռնի հավատափոխ են եղել Իբրահիմ խանի ժամանակներում⁴: 1852թ. Հայոց հոգևոր սինոդին նմանատիպ խնդրանքով է դիմում Դիզակի Թաղասեռ գյուղի բնակիչ Հյուսեին բեկ Բհմանբեկ օղլին: Արցախի թեմի առաջնորդին գրած խնդրագրում նա նշում է, որ իր նախնիները հայեր են եղել և բռնությամբ թուրքացվել են Իբրահիմ խանի օրոք⁵:

Թուրքալեզու զավթիչները, հաստատվելով հայկական միջավայրում, փոփոխության են ենթարկել ոչ միայն բնակչության էթնիկական կազմը, այլև խեղաթյուրել պատմամշակութային արժեքներն ու էթնիկական տարբերությունները, ինչը վերջին հաշվով հանգեցրել է ազգային յուրահատկությունների կորստի և բնիկ հայության մի մասի ձուլման: Ձուլված այդ հայությունն օտարի կողքին հավելյալ չարիք է դարձել հարազատ ժողովրդի անխաթար մնացած մեծամասնության գլխին, տկարացրել հայության ուժը: «Հայոց Արևելից կողմանքը» նույնպես չի խուսափել այդ աղետաբեր գործընթացներից:

¹Ջալալեանց Ս., *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, հ.Բ, Տիփլիս, 1858, էջ 342

²Կարապետյան Ս., *Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում*, Երևան, 1999, էջ 179

³Տվյալներն հավաքված են մեր կողմից Շուշի քաղաքում և շրջանի գյուղերում

⁴ ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, գ. 2449

⁵ ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, գ. 2958

ՇՈՒՇԻԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ

(19-րդ դար)

Շուշիի մասին շատերն են գրել՝ հայ, ռուս, թուրք և այլազգի: Նրանք բոլորն էլ Շուշին գնահատել են նախ և առաջ որպես մշակութային կենտրոն: Մինչդեռ այն եղել է նաև վարչական, տնտեսական և առևտրական կենտրոն:

Շուշին իր առանձնահատկություններով տարբերվել է Անդրկովկասի մյուս քաղաքներից. նախ՝ որպես վաղ միջնադարի բերդ-ամրոց, ապա՝ նոր ժամանակաշրջանում՝ գաղթականներով բնակեցված քաղաք՝ իր սովորություններով և առանձնահատկություններով:

Շուշին 18-րդ դարի երկրորդ կեսին վեր է ածվել խոշոր բնակավայրի, որին 1845 թվականին տրվել է քաղաքի կոչում: Այն իր աշխարհագրական դիրքով և բնական պայմաններով յուրահատուկ տեղ է բռնում Անդրկովկասում: Մեսրոպ Թաղիադյանը, 1822 թ. Հայոց Եփրեմ կաթողիկոսի հետ լինելով Շուշիում, այն անվանել է «անառիկն ամրոց», որտեղ կար 500 հայ ընտանիք և եկեղեցիներ: Այստեղի «Բնակչիք... ընդ այր և ընդ կին առույզ են և աշխույժք», իսկ «...Կուսանք նոցա, որ զծայրագոյն պատկեր ամոթխածութեան ի զեմս կրեն, գեղեցիկք են յոյժ և ախոր-ժատեսիլք»:¹

Շուշիի բերդաքաղաքի մասին Սարգիս վարդապետ Ջալալյանցը, որը 19-րդ դարի 60-70-ական թվականներին եղել է Արցախի թեմի առաջնորդ, 40-ական թվականների սկզբին գրած իր «Ճանապարհորդութիւն Ի Մեծն Հայաստան» գրքում նշել է. «Հայազգի բնակիչ ք'ի սմա են ելթն հարիւր գերդաստանի, որք ունին զերկուս եկեղեցիս վայելչաշէնս Ագուլիսեցոց և Ղազանչեցոց առձայնեալ, յայսմ ամրոցի է արքեպիսկոպոսանիստ աթոռ Արցախու...»:² Իսկ Լեոն իր «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրոցի 1838–1913» ուսումնասիրության մեջ նշում է, որ 19-րդ դարի առաջին քառորդում «Շուշուայ-Ղալան» արմատապետ փոփոխության պայմանների մեջ էր, որտեղ վերացվել էին մելիքությունը և կաթողիկոսությունը, որոնք «տեղական ինքնամփոփման գլխավոր գործոններն էին»:³

Հայտնի է, որ Շուշիի առաջին բնակիչները հանդիսացել են Վարանդայի Շոշ գյուղից այնտեղ տեղափոխվածները: Հետո գաղթականներ են եկել Գողթանի Շահկերտից (Ղազանչի), Ագուլիսից և Մեղրիից: 1840 թ. տվյալներով Ագուլեցոց եկեղեցին ուներ 447 ծուխ՝ 2478 շնչով, Ղազանչեցոց եկեղեցին՝ 367 ծուխ՝ 3494 շնչով, Մեղրեցոց եկեղեցին՝ 102 ծուխ՝ 458 շնչով: Գաղթականները, 18-րդ դարի կեսերին գալով Շուշի, բերեցին իրենց տեղական բարքերը և հատուկ բարբառը: Հետագա ժամանակաշրջանում նրանց փոխադարձ շփումների հետևանքով միավորվեցին նրանց բարքերը, և բարբառը, անկասկած, ենթարկվեց Ղարաբաղի հայության խիստ ազդեցությանը: Ահա, նշել է Լեոն, այդպես առաջ եկավ ղարաբաղյան բարբառի մի ճյուղ՝ «քաղաքացիացած ճյուղ»:⁴

1805թ. մայիսի 14-ին Քուրակչայում կնքված պայմանագրով Ղարաբաղի երկրամասը միացվել է Ռուսաստանին, իսկ 1822թ. խանության վերացումից հետո Շուշին խանության կենտրոն լինելուց դարձավ գավառային կենտրոն: Այստեղ ռուսական տիրապետության ժամանակ առաջին գավառապետը հանդիսացել է փոխգնդապետ Միխայիլ Պետրովիչ Կոլյուբյակինը, որի օգնա-

¹ Թաղիադյան Մ., *Ուղեգրություններ, հողվածներ, նամակներ, վավերագրեր*, Եր., 1975, էջ 157–158

² *Ճանապարհորդութիւն Ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ Սարգիս վարդապետի Ջալալեանց*, Մասն Ա, Տիֆլիս, 1842, էջ 181

³ Լեո, *Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրոցի 1838–1913*, Թիֆլիս, 1914, էջ 59

⁴ *Նույն տեղում*, էջ 65



կանն էր Պետր Պետրովիչը: Գավառի վարչության կազմում կային միայն երկու հայ: Շուշիի քաղաքապետն էր Յակով Անդրենիչ Տիմոֆեևը: Մնացած պաշտոնյաները ռուսներ էին:¹ Այդ կարգը շարունակվել է մինչև 1917 թվականը:

Արխիվային և հրապարակված նյութերում տվյալներ կան, որ Շուշին, 18-19-րդ դարերում լինելով արցախահայության ազգային-ազատագրական պայքարի կենտրոն, մեծագույն դեր է խաղացել երկրամասի ուժերի կենտրոնացման և հակառակորդին բազմիցս պարտության մատնելու գործում: Ահա թե ինչու ռուս ռազմական պատմաբաններ Պոտտոն, Դուբրովինը և ուրիշներ բարձր են գնահատել Շուշիի պաշտպանական դերը մանավանդ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ: Շուշին իր գեղեցկությամբ, առողջարան լինելու իրողությամբ ոգևորել է շատ բանաստեղծների, երաժիշտների, գրողների, նկարիչների:

1830-ական թվականների սկզբից սկսած Արցախի թեմի աթոռանիստ դարձած Շուշին ոչ միայն հանդես էր գալիս որպես գավառի վարչական, այլև տնտեսական և մշակույթի կենտրոն, որն աչքի էր ընկնում իր կառույցներով, եկեղեցիներով, տպարանով, ուսումնական հաստատություններով, արդյունաբերական ձեռնարկություններով, արհեստանոցներով: 19-րդ դարի 30-ական թվականների վերջին ռուս հեղինակը գրել է, թե Հայաստանի անցյալի իշխանական և մելիքական կենտրոն Շուշիում 1838 թ. բացվել է ուսումնական հաստատություն՝ ի դեմս հոգևոր ուսումնարանի:² Երբ դարի 20-ական թվականներին Վալերի Մադաթովը Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի ռազմական հրամանատարն էր, նա մեծ ջանքեր էր գործադրում կարգավորելու Շուշի տանող ճանապարհներն ու ամրոցի փողոցները: Շուշեցիները շատ էին սիրում իրենց բերդ-ամրոցը և ոչինչ չէին խնայում նրա պաշտպանության համար: Մի փաստաթղթում ասված է, որ 1826 թ. բերդի պաշարման ժամանակ նրա հայ բնակիչները իրենց բոլոր անասունները նվիրել են պաշտպաններին՝ կերակրելու նպատակով, որի համար պարետ Ռեուտը երախտապարտ էր:³ Շուշեցին այդ քայլին էր դիմել ամենից առաջ հայրենասիրությունից դրդված:⁴ Չնայած Շուշիում շուկայական հարաբերությունները դանդաղ էին զարգանում, այն հանդիսանում էր առևտրի կենտրոն, որտեղ վաճառվում էին միս, կաթնեղեն, մրգեղեն, խմիչքներ, մետաքս, արհեստագործական ապրանքներ, տարբեր զարդեր: Շուշիի առևտրականները վաղուց էին դուրս եկել երկրամասի սահմաններից և երևում էին Ռուսաստանի, Եվրոպայի ու Ասիայի շուկաներում: Արդեն դարի 50-ական թվականներին քաղաքում երևացել են հարյուրավոր կրպակներ: Այստեղ առևտուրը հիմնականում զարգանում էր դրամով և ապրանքափոխանակությամբ: Ըստ էության՝ գավառում հողատիրության պահպանումը խոչընդոտում էր արդյունաբերության, առևտրի, շուկայական հարաբերությունների արագ զարգացումը: Հողը՝ որպես արտադրամիջոց, երկրամասի բնակչության գոյության գլխավոր պայմանն էր: Հողը ապրելամիջոց էր նաև Շուշիի բնակչության մի մասի համար: Պետական խորհրդական Պ.Մոզիլսկու և գնդապետ Պ. Երմոլով 2-րդի կողմից 1823թ. Ղարաբաղում անցկացված վիճակագրության ներածականում նշված է, որ բերդում եղած բոլոր հողերը օգտագործվում էին նրա բնակիչների կողմից:

Ըստ վիճակագրության՝ Շուշի բերդ-ամրոցը բաժանվում էր երեք թաղամասի՝ Թավրիզյան, Ղազանչի և Ագուլիս: Աշխատանք գտնելու համար ամեն օր շրջակա գյուղերից, Պարսկաստանից կամ այլ տեղերից Շուշի էին գալիս հարյուրավոր մարդիկ: Պարզապես ամեն օր Շուշիում կարելի

¹ Кавказский календарь на 1846 г., Тифлис, 1845, стр. 54

² Сборник актов относящихся к обозрению истории армянского народа, ч. III, Москва, 1938, с. 6

³ Акты собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. VI, ч. I, Тифлис, 1874, документ 1327, стр. 868

⁴ Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XV -начале XIX вв., Ленинград, 1949, стр. 318



էր գտնել բանվորական ազատ ուժ: Կապիտան Զուբարյովը, որը պետական ծառայող էր, 30-ական թվականների սկզբին իր մի զեկուցագրում հաղորդել է, որ Շուշիում բոլոր ծանր աշխատանքները հիմնականում կատարում են հայ բանվորները:¹

1822թ. Շուշիում հաստատվելով՝ Բազելի բողոքական միսիոներները 1827 թվականին բացեցին տպարան, որտեղ գրքեր էին տպագրվում տարբեր լեզուներով: Նրանք բացեցին նաև ուսումնարան, որտեղ սովորող աշակերտների թիվը հասնում էր 130-ի:² Շուշիում գործում էր նաև կուսանոց, որը բացել էր Հռիփսիմե Բահաթրյանցը 1814 թվականին իր սեփական ծախսերով: Այն գործել է մինչև 1917 թվականը:

1823թ. հիմնադրվել է «Շուշի ամրոցի և նրա շրջանի քաղաքային դատարանը», որը գործել է մինչև 1840 թվականը և վերանվանվել է Շուշիի գավառային դատարան: Դատարանը գործել է մինչև 1868 թվականը: Հետո գավառային դատարանը վերանվանվել է *Շուշիի հաշտարար* դատարան և գործել մինչև 1917 թվականը:

19-րդ դարի 40-ական թվականներին Ղարաբաղի գավառային ղեկավարությունը ենթարկվում էր Կասպիական մարզի ղեկավարությանը: Այդ ժամանակ Ղարաբաղի գավառապետը եղել է հեծելազորային փոխգնդապետ, իշխան Ստենբոկը, իսկ Շուշիի քաղաքապետը՝ Յա. Տիմոֆեևիչը:

1805 թվականից Շուշիում սկսել է գործել փոստատուն, իսկ 1876 թվականին հիմնվել է հեռագրատուն: 1866 թվականից քաղաքում սկսել է գործել զինվորական մաս:

Շուշեցիները միշտ էլ հոգացող են եղել: Մեսրոպ Թաղիադյանը, նկարագրելով հայտնի վաճառական Մարկոս Թառույանցի մահը, նշում է, որ նա, զգալով, որ իր մահը մոտ է, հրամայում է մոտ բերել պարտք ունեցողների մուրհակները, նաև Եփրեմ կաթողիկոսին տված 4000 ոսկու մուրհակը, դրանք վերադարձնում է պարտապաններին, ապա հրամայում է իր մոտ բերված երկու պարկ ոսկին բաժանել աղքատներին:³

Դարի երկրորդ կեսին Շուշիում առաջընթաց էին ապրում շուկայական հարաբերությունները: Այստեղ վճռական տեղ ունեին մետաքսագործությունը, կտավագործությունը, գորգագործությունը, կաշեգործությունը և արհեստագործության այլ ճյուղեր: 1830-ական թվականներին քաղաքում կար 42 մետաքսագործարան: 1829 թ. այնտեղ արտադրվել է 7200 կտոր մետաքսե գործվածք: Գործում էին նաև 132 ոստաններ, որոնց վրա աշխատում էին 324 ջուլիակ և բանվոր: Քաղաքում կտավագործների թիվը հասնում էր 28-ի, որոնք բանեցնում էին 80 ոստան և տարեկան տալիս էին 8 հազար կտոր արտադրություն: Կաշեգործարանների թիվը հասնում էր 19-ի, որտեղ աշխատում էր 40 բանվոր և տարեկան մշակում էին մինչև 5 հազար կաշի:⁴

Շուշիի բնակչությունը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին բավականին նվազել է: 1830-ի կեսերին այն ուներ 5079 արական սեռի բնակիչ: Այդ ժամանակ ամրոցի 1098 ընտանիքից 762-ը հայկական էր: Քաղաքի բնակիչներից կտորեղեն էին վաճառում 94 հոգի, բանջարեղեն, ուտելիք, զանազան մանրուքներ՝ 44, դեղեր և ներկեր՝ 30, բուրդ ծեծողներ՝ 6-ը, արծաթագործներ՝ 12-ը, դարբին՝ 25-ը, պղնձագործ՝ 6-ը, անագող՝ 3-ը, թամբագործ՝ 15-ը, բրդագործ՝ 24-ը, դերձակ՝ 30-ը, կոշկակար՝ 44-ը, ձեռագործով զբաղվողներ՝ 4-ը, հյուսն՝ 4-ը, համետագործ՝ 10-ը, թաղիագործ՝ 2-ը, դայթան պատրաստող՝ 2-ը և այլն: Այդ ժամանակ Շուշիի առևտրականների թիվը հասնում էր 417-ի:⁵ Ընդհանրապես՝ 19-րդ դարի 30-ական թվականներին Շուշիի

¹ АКАК, т. VII, 1878, Тифлис, док. 411, стр. 462

² Նույն տեղում, Յ. VI, փ. I, ՊՏՄ. 225, стр. 173

³ Թաղիադյան Մ., նշվ. աշխ., էջ 159

⁴ Обзорение Российских владений, СПб, 1835, стр. 311–313

⁵ Նույն տեղում, էջ 308–309



առևտուրը, արհեստը և արդյունաբերությունը նպատակ ունեին բավարարելու տեղական պահանջները: Այստեղ արհեստավորը գործում էր պատվերով, իսկ առևտրականը գիտեր, թե որ ապրանքից ինչ քանակի պահանջ կար, և նույնիսկ ովքեր են պահանջողները:

19-րդ դարի 20-ական թվականներից, ինչպես նշել է Լեոն, Նոր Ղարաբաղ էր ստեղծվում: Քաղաքում զարգանում էր «ազդեցիկ, հրամայող դասակարգը–բուրժուազիան»:¹ Այստեղ ազնվականներից, հոգևորականներից և ոչ արտոնյալ դասակարգերից առաջանում էր հասարակական մի նոր շերտ, նոր դասակարգ: Դա պետական ծառայողներն էին, պաշտոնավարող չինովնիկները, որոնք ունեին սեփական շահեր և կապված էին վաճառական դասակարգին:² 1840–1870-ական թվականներին Շուշիում արմատավորվում են նաև հոգևորականները, հետզհետե ավելանում են բանվորների և արհեստավորների թիվը, բացվում են նոր արհեստանոցներ, արդյունաբերական ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ, վեր են բարձրանում նոր կառույցներ, երևում են սալհատակած փողոցներ: Այստեղ գործում էին բազմաթիվ համաքարություններ, որոնք ունեին իրենց կազմն ու կառուցվածքը: Այստեղ արհեստն անվանվում էր «ոսկե ապարանջան»՝ համոզված լինելով, որ «արհեստավորը ոչ մի ժամանակ քաղցած չի մնա»: «Նոր դար» թերթը նշել է, որ Շուշիում լավ արհեստավորը գնահատվում է, նա անգործ չի մնում, իսկ եթե պատվերը լավ չի կատարում, ապա նա տեղ չի ունենում:³ Սակայն դարի երկրորդ կեսից սկսած շուկայական մրցության պայմաններում Շուշիի արհեստավորների մի մասը դուրս է մղվում:

19-րդ դարի կեսերից սկսած Շուշին արագորեն տարածվում էր: Շուշեցի արհեստավորների և ձեռնարկությունների արտադրանքը արտահանվում էր աշխարհի շատ շուկաներ, որ սպառվում էր հեշտությամբ, մանավանդ ոսկերչական գործերը և մետաքսը, իսկ գորգը՝ առավելապես: Այդ ժամանակներից սկսած Շուշիի կյանքն աշխուժանում էր և գրավիչ տեսք ընդունում: Ըստ «Կովկասյան տարեցույցի» տվյալների՝ 1855 թ. Շուշին ունեցել է չինովնիկներ՝ տղամարդ՝ 28, կին՝ 8, 45 հայ հոգևորական, 4173 տղամարդ, 3553 բնակչուհի: Դրանցից առևտրով էին զբաղվում 713 մարդ, արհեստավորներ էին 2031 հոգի. որից 1318-ը՝ կին: Տարեցույցը նաև հաղորդել է, որ քաղաքում ռուսներն ունեն 6 տուն, հայերը՝ 1715, շիա-թուրքերը՝ 1319: Քաղաքում կար քրիստոնեական 5 եկեղեցի, 2 մեջիդ, 16 ֆաբրիկա, մեկ վանք, 7 հրապարակ, 6 կամուրջ, 4 փողոց, 970 ջրհոր:⁴

Շուշին Անդրկովկասում մշակույթի կենտրոն էր: 1864թ. փետրվարի 17-ին շուշեցի Մարիամ Հախումյանցը Շուշիի կանանց անունից դիմում է բարձր Սրբազանությանը և իրավունք խնդրում Շուշիի օրիորդների համար բացել սուրբ Մարիամի անունով ուսումնարան և «առաջարկել Ղարաբաղու հոգևոր դպրոցի տեսչին ընդունել ուսումնարանի ուսումնական մասի կառավարությունը»:⁵ 1859թ. Շուշիի համար կարևոր իրադարձություն էր նաև այն, որ այդ նույն թվականին ամբողջովին վերանորոգվեց Ղարաբաղի ազգային հոգևոր դպրոցը: 1860 թվականին Պետերբուրգից Շուշի է հրավիրվում Պետրոս Շանշյանը, ով հանձնառում է հոգևոր ուսումնարանի տեսչի պաշտոնը: Շանշյանը հոգևոր ուսումնարանին տալիս է նոր շունչ և հոգի, վերացնում է ֆիզիկական պատիժը և բոլոր այն արարքները, որոնք վարկաբեկում էին ուսուցչի հեղինակությունը:

Ինչպես Անդրկովկասի մյուս քաղաքները, այնպես էլ Շուշին ուներ իր եկամուտների աղբյուրը: Դրանք վարձակալությամբ տրված կառույցներն էին, աղբյուրները, անշարժ կալքից տոկոսային վճարները, արդյունաբերական ձեռնարկություններից, առևտրականներից, մաքսային եկամուտ-

¹ Լեո, նշվ. աշխ., էջ 73

² Նույն տեղում

³ «Նոր դար», թ. 70, 04.05.1885

⁴ Кавказский календарь на 1856, Тифлис, 1855, стр. 360–361

⁵ «Մեղու Հայաստանի», թիվ, 19, 04.04.1864



ներից երկու տոկոսի չափով ստացվող օգուտը, ակցիզային վճարներից ստացվող 20 տոկոս վճարը, մուրհակներից ստացվող 20 տոկոս վճարը, տուգանքներից, աճուրդներից և համանման աղբյուրներից եկամուտները:¹ Քաղաքի եկամտի աճը հիմնականում կախված է լինում բնակչության թվից: Արդեն 1870թ. Շուշին ուներ 20297 բնակիչ: Եթե քաղաքը 1862 թ. ունեցել է 16433 ո. մուտք և 11755 ո. ելք, ապա 1872-ին ունեցել է 29972 ո. մուտք և 29395 ո. ելք:

Սկսած 19-րդ դարի 60-70-ական թվականներից՝ Շուշիի տնտեսության զարգացման հետ աշխուժանում էր նաև հասարակական կյանքը: Երվանդ Լալայանը նշել է, որ Շուշին բաժանված էր հայ և թուրք թաղամասերի. դա խանգարում էր քաղաքի ընդհանուր կյանքին: Հայկական թաղի կենտրոնում էր գտնվում «Թոփխանա» կոչված հրապարակը, որը մոտավորապես կազմում էր 250 քառակուսի մետր տարածություն: Դարի 80-ական թվականներին քաղաքն ուներ չորս եկեղեցի և մեկ կուսանոց-մենաստան: Հոյակապ էր մանավանդ Ղազանչեցոց Մբ. Ամենափրկիչ եկեղեցին, որի շինարարությունը շարունակվել է 20 տարի: Եկեղեցու երկարությունը կազմում է 35, լայնությունը՝ 23, իսկ բարձրությունը՝ մոտ 35 մետր: Այն կառուցվել է 1868–1887 թվականներին խաչաձև հատակագծով, բյուզանդական ոճով:²

1872թ. կոնսիստորիան տեղափոխվել է նորակառույց, եռահարկ շենք, որի երկու հարկը կառուցվել էր մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանի միջոցներով, իսկ երրորդ հարկը՝ 1865–1876 թթ. Արցախի թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանի միջոցներով:³

Շուշիում դեռ վաղուց սուր էր ջրի հարցը: Քաղաքի բնակիչները հիմնականում օգտվում էին ջրհորներից և շատ թե քիչ նվազ աղբյուրներից: Ջրհորներից ջուր վերցնելու համար երբեմն ամբողջ գիշեր հերթ էին կանգնում կամ էլ գնում էին քաղաքից 6 կմ հեռավորության վրա գտնվող աղբյուրից ջուր բերում:

Շուշին, լինելով գավառական քաղաք, ուներ քաղաքագլուխ, դումա, հաշտարար դատարան, փոստ, հեռագրատուն: Այստեղ էր գտնվում նաև Ղարաբաղի հայոց կոնսիստորիան, որը բացվել է 1830 թվականին Բաղդասար մետրոպոլիտի օրոք: Քաղաքն ուներ տպարան: Երկրորդ՝ Ա. Մահտեսի Հակոբյանի տպարանը, կառուցվել է 1877 թվականին, որը մինչև 90-ական թվականների վերջը տպագրել է 93 անուն գիրք:⁴

Շուշիում վաղուց ի վեր գոյություն ուներ մի սովորույթ. հասարակության որոշումով քաղաքից արտաքսվում էին վտանգավոր և վատ վարք ունեցող մարդիկ: 1862 թ. Շուշից մի նամակ է ուղարկվել Էջմիածին, որի հեղինակները մեղադրում էին ոմն եպիսկոպոս Վարդանին և պահանջում նրան ետ կանչել Էջմիածին: Նա վիրավորել էր Համբարձում Հախումյանին և քաղաքի այլ անվանի ու պատվավոր մարդկանց: Ըստ էության՝ Վարդան եպիսկոպոսը Շուշիի համար խիստ վտանգավոր անձնավորություն էր, զբաղվում էր կաշառակերությամբ, կեղծիքներ հորինելով, բամբասանքներ տարածելով և խաբեբայությամբ: Նա նույնիսկ հափշտակել էր կոնսիստորիայի փողերը: «Ով որ նրա ձեռքն է ընկնում, քերթում է», –ասված է նամակում:⁵

Քաղաքից վտանգավոր մարդկանց արտաքսումը հաճախակի դարձավ 70–80-ական թվականներին: Նման հարց քննարկելու համար քաղաքի բնակչությունից ընտրված ներկայացուցիչները հավաքվում էին ժողովի, որին ներկա էին լինում գավառապետը, այլ պաշտոնյաներ և քաղաքային պատգամավորը: Այս վերջինն ընտրվում էր քաղաքի բնակչության կողմից և պարտավոր էր

¹Դավիթ Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1801–1870 թթ.)*, հատոր I, Բաքու, 1916, էջ181–182

²Լալայան Ե., *Երկեր*, հ. 2, Երևան, 1988, էջ 16

³«Մշակ», թիվ 39, 05.10.1872

⁴Լալայան Ե., *նշվ. աշխ.*, էջ 94

⁵Մատենադարան, *Արխիվ Ալեքսանդր Երիցյանի*, թղթ. 150, վավ. 175



պաշտպանել նրանց շահերը: Նման մի ժողով տեղի ունեցավ 1884 թ. դեկտեմբերի 16-ին, որն ընդունեց հասարակական վճիռ, այսինքն՝ արձանագրություն կազմվեց հինգ բողոքական ընտանիքների քաղաքից արտաքսելու մասին, որոնք իրենց բարքով ընդունելի չէին քաղաքի քրիստոնյա բնակիչների համար: Որոշման տակ ստորագրել էին 1571 քաղաքացի:¹ 1885 թ. ապրիլի 24-ին, ըստ ընդունված կարգի, քաղաքի հասարակական ժողովը ընտրում է երեք հոգու, որոնք պետք է քաղաքից վտարվողների վերաբերյալ կազմված արձանագրությունն ու ընդունած որոշումը հասարակության անունից հանձնեին քաղաքապետին:

Ժամանակի մամուլը հաճախ էր անդրադառնում Շուշիի ներքին կյանքին: 1883 թ. «Մշակում» տպագրված մի նամակում ասված է, որ քաղաքում ետ է մնում «ընկերական կյանքի գաղափարը»: Հեղինակը բողոքում է, որ այստեղ աղջիկներին կրթություն տալը համարվում է շռայլություն, քաղաքը չունի «հիվանդանոց, աղքատանոց, աշխատանոց»: Սակայն գովեստով է խոսում թեմի առաջնորդ Սարգիս Ջալալյանցի մասին, որը «ոչ միայն կենդանացրել էր քաղաքի արու մանկանց ուսումը, այլև իգական սեռի դաստիարակության համար կանգնեցրել է մի շքեղ շենք», որտեղ դասավանդելու համար ուսուցիչներ պետք է բերվեին Եվրոպայից:² Շուշիում երկրորդ օրհորդաց ուսումնարանը բացվել է 1876 թվականին, որն ուներ 60–70 սովորող:³ Շուշեցի մեկ ուրիշ հեղինակ նույն թերթում բողոքում է, որ իրենց քաղաքում տարվա մեջ 2–3 անգամ հազիվ թատրոնի երես են տեսնում, քաղաքի երկու տպարաններում մկներն են խաղում: Քաղաքն ունի մի կուսանոց, 5 թե 6 եկեղեցի, մի սեմինարիա, երկու օրհորդաց և մի քաղաքային ուսումնարան, որտեղ մոտավորապես ուսանում են 700 աշակերտ-աշակերտուհի, մի ընդհանուր գրադարան, մի ակումբ, մի ուսումնական ընկերություն: Քաղաքի հրապարակը ակումբի տեղ է ծառայում: Քաղաքում կա մեկ հյուրանոց: Այստեղ ժողովրդի համար մտածողները միայն ուսուցիչներն են:⁴ Իմիջիայլոց հեղինակը մոռացել է, որ Շուշիում առաջին հասարակական գրադարան-ընթերցարանը բացվել է 1859 թվականին, որը գործել է չորս-հինգ տարի և ունեցել է մեծ հեղինակություն:⁵

Շուշիում երիտասարդներից բաղկացած մի խումբը հանգանակություն էր կատարում չքավորների օգտին: Երբ 1880 թվականին սովը լայն ծավալ ընդունեց, երիտասարդների այդ խմբի գործն ավելի մեծացավ: Այդ օրերին քաղաքի հարուստներից 16 հոգի 500-ական ռուբլի տրամադրեցին սովյալների համար հացահատիկ գնելու: Ժամանակի մամուլը հաղորդել է, որ թանկացումների դեմ անգիջում պայքարում են շուշեցի պարոններ Գրիգոր Հաղլաթյանցը, Մինաս Խանեյանցը և Սահակ Թադևոսյանցը:

Դարի 70–80-ական թվականներին պանդխտության մեկնողների թիվը տարեցտարի ավելանում էր: Այնուամենայնիվ՝ 1886 թ. Շուշին ունեցել է 5779 ծուխ՝ 26806 բնակչով, որից 15786-ը՝ արական, 11020-ը՝ իգական:⁶ Քաղաքի բնակչության 58,59 տոկոսը տղամարդիկ էին, 41,11-ը՝ կանայք: 11 տարի հետո՝ 1897 թ., մարդահամարի տվյալներով Շուշին ունեցել է 25656 բնակիչ, որից 13283-ը՝ տղամարդ, 12374-ը՝ կին:⁷ Մտացվում է, որ 11 տարում Շուշիի բնակչությունը պակասել է 1150-ով: Եթե 1885 թ. քաղաքի եկամուտը կազմել է 29512 ռ., ծախսը՝ 25316 ռ., ապա տասը տարի հետո՝ 1895-ին, եկամուտը հասել էր 39296 ռ. 87 կ., ծախսը՝ 33956 ռ. 90 կ., դրամազուլիսը՝

¹ Նույն տեղում, թղթ. 149, վավ. 159 և 160

² «Մշակ», թիվ 1, 14.01.1878:

³ Նույն տեղում, թիվ 116, 28.07.1879

⁴ Նույն տեղում, թիվ 57, 08.04.1878

⁵ Նույն տեղում, թիվ 198, 14.11.1879

⁶ *Этнографические карты губерний областей Закавказского края. Кавказ. Издание кавказского статистического комитета, Тифлис, 1886, стр. V*

⁷ *Сборник статистических сведений Закавказского края, Тифлис, часть I, Тифлис, 1902, стр. 20-21*



33887 ու 44 կ.:¹ 1896-ին քաղաքի եկամուտը կազմել է 32132, 1897-ին՝ 164538, իսկ 1898-ին՝ 61896 ռուբլի: Այդ նույն թվականներին քաղաքի 1000 բնակչին ընկնող գումարը համապատասխանաբար կազմել է 1252, 613 և 2412 ռուբլի:² Բերված տվյալներից երևում է, որ Շուշիի համար բարենպաստ տարի է հանդիսացել 1898 թվականը:

Շուշիի տարածքը նեղ է և մեծ քաղաք դառնալու համար հնարավորություն չի ունեցել: Ասենք նաև, որ հենց սկզբից քաղաքը նախագծով չի կառուցվել: Այն կառուցվել է արաբական ոճով, նեղ և ոչ ուղիղ փողոցներով: Շուշին ունեցել է խառն բնակչություն՝ հայեր, թուրքեր, քրդեր, պարսիկներ, ռուսներ և այլն: 1890-ական թվականների սկզբի մի տվյալի համաձայն՝ քաղաքի 32850 բնակչից 19501-ը եղել է հայ, 12083-ը՝ թուրք, մնացածը՝ այլազգիներ:³ Քաղաքի արևելյան կողմում ապրում էին թուրքերը, արևմտյանում՝ հայերը: Քաղաքը բաժանված էր 35 թաղի, որոնցից 18-ը՝ հայկական, 17-ը՝ թուրքական:⁴ Տվյալներ կան, որ դարի միայն վերջին տասնամյակում Շուշիից գաղթել են 6000-ից ավելի հայեր: Այդ ժամանակ Բաքվում բնակվող ավելի քան 15 հազար դարաբաղյալներից 10 հազարը շուշեցիներ էին:⁵

Շուշիում 1881-ին բացվել էր ռեալական ուսումնարան, ապա գրադարան-ընթերցարան: Այդ առթիվ «Մշակը» գրել է, որ գրադարանի բացումը 16 հազար բնակչություն ունեցող քաղաքի համար հանդիսանում է գեղեցիկ շտեմարան:⁶

«Մեղու Հայաստանի» թերթը գրել է, որ հայկական և թուրքական թաղամասերն իրարից շատ են տարբերվում: Հայոց թաղամասը թե՛ տների շինությամբ և թե՛ մաքրությամբ շատ բարձր էր թուրքական թաղամասից: Հայկական թաղամասի նոր փողոցները, հրապարակները և բնակչության ապրելապայմանները ավելի եվրոպական են, իսկ թրքական թաղամասինը՝ պարսկական: Թուրքերի կեղտոտության պատճառով, շարունակում է թերթը, քաղաքը չի հաշվվում մաքուր քաղաքների շարքում: Թուրքերի թաղամասի բնակարանները կեղտոտ են, մութ և խոնավ: Այնտեղ մեկ փոքրիկ սենյակում ապրում են 10-12 հոգի:⁷ Վեց տարի հետո այդ նույն թերթը, կրկին անդրադառնալով թուրքական թաղին, գրել է, թե թուրքերի «տեղաշարժերի վերայ երկու տարույ կեղտ կարելի է նշմարել... նրանք միջատներից ազատվելու համար շապիկները թափ են տալիս վառված թոնիրում. ինչ գարշահոտութիւններ ասէք, որ նեղացկամ չլինեին անցնողին... աղբ, կերակրի մնացորդ...»:⁸ Այս ամենը, անշուշտ, ազդում էր քաղաքի հեղինակության վրա:

Քաղաքի կյանքը փոքր-ինչ փոխելու համար Շուշիի գավառապետ Դուբրովսկին հրամայում է կիրակի օրերը խանութները չբացել և միայն թարմ մթերքներ վաճառել:⁹ Շուշին 90-ական թվականներին ուներ 600-ից ավելին խանութ, որոնք ամեն շաբաթ աղքատներին բաժանում էին 20-ական կոպեկ: Ստացվում է, որ բոլոր խանութները տարեկան աղքատներին բաժանում էին մինչև 6000 ռուբլի: Քաղաքի բնակիչները կողմնակից էին այդ գումարը ժողովել և ավելի խելացի ծախսել:¹⁰

Շուշիում գործում էր հասարակության կողմից ընտրված մի հանձնաժողով՝ Իվան Քալանթարյանի նախագահությամբ, որը հասարակական հիմունքներով պետք է զբաղվեր խմելու ջրի,

¹ Լալայան Ե., *նշվ. աշխ.*, էջ 88

² *Сборник статистических сведений ...*, стр. 184–185

³ *Մատենադարան, Գաթողիկոսական դիվան*, ֆ. 1, թղթ. 240, վավ. 191: *Մեր կարծիքով այդ թվերը չափազանցեցված են*

⁴ *Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)*, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 52

⁵ «Նոր դար», թիվ 166, 27.09.1897

⁶ «Մշակ», թիվ 45, 15.03.1883

⁷ «Մեղու Հայաստանի», թիվ 27, 12.04.1880

⁸ *Նույն տեղում*, թիվ 84, 04.06.1886

⁹ *Նույն տեղում*, թիվ 3, 09.01.1890

¹⁰ «Նոր դար», թիվ 176, 07.11.1892:



քաղաքի մաքրության, փողոցները սալահատակելու, վտանգավոր ձեռնարկությունները քաղաքից դուրս բերելու, հիվանդանոցը և փողոցները լուսավորելու, թոնրատների բարեկարգման, գյուղերից եկողների անասունները տեղավորելու, հրշեջ խումբ ստեղծելու, ռեալական ուսումնարանի համար շենք կառուցելու, հասարակական այգիները կարգի բերելու և այլ հարցերով:¹

Շուշիում խմելու ջրի խնդիրը հրատապ էր: Դարի երկրորդ կեսին արդյունաբերության զարգացման և բնակչության թվի ավելացման պայմաններում ջրի հարցը քաղաքի համար դառնում էր ավելի կենսական: Եղած աղբյուրները գտնվում էին ներքին մասում, որտեղ բնակվում էին թուրքերը: Հայկական թաղամասում աղբյուրներ չկային, շատ թե քիչ օգտվում էին ջրհորներից: Քաղաք ջուր բերելու համար պահանջվում էր 25–30 հազար ռուբլու ծախս: Վաճառական Դավիթ Ադամյանը խոստացել էր այդ ծախսը հոգալ: Սակայն դրան խանգարեց նրա մահը: Դեռևս 1883 թ. քաղաքի հայերը որոշել էին մի քանի վերստ հեռավորության վրա գտնվող աղբյուրներից մեկի ջուրը բերել քաղաք: Դրա համար սկսվել էր հանգանակություն: Հավաքված գումարը լրացվել էր նվիրատվություններով: Քաղաքի բնակիչները կողմնակից էին, որ բերվող ջուրը լինի քաղաքի իշխանությունների վերահսկողության տակ:² Ահա այդ ժամանակ է, որ հայտնի բարերար Թադևոս Թամիրյանը որոշում է իր միջոցներով 15 վերստ հեռավորության վրա գտնվող աղբյուրի ջուրը բերել քաղաք, որն իրագործվեց 1893 թվականին: Ջուրը քաղաք հասնելու օրը թուրքերը մզկիթներում հոգեհանգիստ են կազմակերպել: Իսկ երբ 1899թ. Թամիրյանը մահանում է, թաղման պատարագին, որը տեղի է ունեցել Ղազանչեցոց եկեղեցում, ներկա էին քաղաքի հայ և թուրք հասարակության ներկայացուցիչները: Շուշիի հասարակությունը իր վերջին հրաժեշտը տալով նրան, ասել է՝ «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:³

Շուշի քաղաքը երկար ժամանակ հարմարավետ բաղնիք չի ունեցել: Եվ ահա 1900 թվականին սկսեց գործել ժամանակի պահանջների համապատասխան բաղնիք, որը կառուցվել է եվրոպական ձևով շնորհիվ պարոն Մ. Ա. Նանյանցի: «Մշակը» գրել է, որ դա ուրախալի երևույթ էր Շուշիի բնակչության համար:⁴

Սկսած 1860 թվականից՝ քաղաքի հասարակական կյանքում գոյություն ուներ մի երևույթ. քաղաքի հասարակական ժողովում ընտրվում էր պատգամավոր (դեպուտատ): Այն ընտրվում էր ունևոր դասից և առաջին հերթին կատարում էր աղաների կամքը: 1887 թվականին քաղաքի բնակչությունը որոշեց այս անգամ պատգամավոր ընտրել ոչ թե ունևորներից, այլ որևէ մտավորականի, որը պետք է պաշտպաներ հասարակության շահերը: Հասարակությունից առաջադրված ընտրողներին հանձնարարվում է պաշտպանել Համբարձում Առաքելյանի թեկնածությունը: Սակայն բնակչության առաջարկությունը չի պաշտպանվում քաղաքապետի կողմից: Նրա ճնշմամբ պատգամավոր է ընտրվում Գրիգոր բեկ Դանիելբեկյանը: Չնայած Համբարձում Առաքելյանը չէր ընտրվել պատգամավոր, սակայն նա համարվում էր հասարակության թեկնածու: Ըստ կարգի՝ գավառապետը պետք է պատգամավոր հաստատեր այդ երկուսից մեկին:⁵ Պատգամավորը աշխատում էր հասարակական հիմունքներով և բավականին անելիքներ ուներ քաղաքի կյանքում: Նա լսում էր բնակչության բողոքները, օժանդակում հիմնարկ-ձեռնարկություններին, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը և կատարում նման զանազան աշխատանքներ: 1891թ. պատգամավոր է ընտրվում Ջ. Իշխանյանը: Այս անգամ որոշվեց պատգամա-

¹ Նույն տեղում, թիվ 176, 07.11.1892

² «Մշակ», թիվ 37, 05.04.1890

³ «Նոր դար», թիվ 224, 18.12.1899

⁴ «Մշակ», թիվ 172, 14.03.1900

⁵ Նույն տեղում, թիվ 7, 22.01.1887



վորին վարձատրել տարեկան 1000 ռուբլի քաղաքի գանձարանից և նրա նկատմամբ մեծացնել պահանջները:¹ Պատգամավորի հաջորդ ընտրությունը տեղի ունեցավ 1894 թվականին, աշխատավարձի չափը դարձավ 2000 ռ.: Ընտրվեցին երկու պատգամավոր՝ Ջ. Իշխանյանը և Բ. Թյունիբեկյանը: Իշխանյանը համաձայնում է աշխատել ձրի, իսկ Թյունիբեկյանը՝ վճարով: Այդ ընտրությունը պատգամավորական վերջին ընտրությունն էր, որովհետև քաղաքին ինքնավարություն տրվելուց հետո ավարտվում է պատգամավորի գործունեությունը:

Շուշիի պատմության մեջ կարևոր երևույթ էր քաղաքի ինքնավարության հարցը: Շուշին, Անդրկովկասում բնակչության թվի տեսակետից լինելով երրորդ քաղաքը, վաղուց պետք էր ինքնավարության իրավունք ունենար: Սակայն ցարական միապետության կամակոր քաղաքականության հետևանքով տարիներ շարունակ այդ հարցը չէր լուծվում, այդ այն դեպքում, երբ Շուշիից շատ քիչ բնակչություն ունեցող մի շարք քաղաքներ վաղուց ինքնավարություն էին ստացել: Օրինակ՝ Ախալքալաքը Շուշիի բնակչության կեսի չափ բնակչություն չունեի, սակայն վաղուց ինքնավար էր:

Քաղաքի բնակչությունն արթնանում էր խոր քնից և փորձում վեր ելնել՝ իր իրավունքները պաշտպանելու: Օրինակ՝ 1887թ. պատգամավորի վերընտրության ժամանակ նշմարվեց բնակչության հուզում՝ իր իրավունքները պաշտպանելու համար: Քաղաքին ինքնավարություն տալու վերաբերյալ ժողովրդական պահանջը ասես մոտենում էր հանգուցալուծմանը: Ժամանակի մամուլը, հրապարակելով այդ կապակցությամբ բնակիչների գրած նամակ-բողոքները, բազմիցս շեշտել է, որ քաղաքին ինքնավարություն տալու հարցը կարևորներից կարևորն է, որովհետև ինքնավարությունը քաղաքի կյանքում կհանդիսանա հեղաշրջում, արմատական փոփոխություն քաղաքի կյանքի բոլոր բնագավառներում՝ դպրոց, վարկ, առողջապահություն, քաղաքաշինություն, կենցաղ, կարգ ու կանոնի հսկում, պայքար գողերի և ավազակների դեմ, ազգային հարաբերություններ և հազար ու մի հարցեր:²

Ի վերջո՝ 1892թ. հուլիսի 11-ին հաստատված կանոնադրությամբ Շուշի և Գանձակ քաղաքներին տրվում է ինքնավարության իրավունք: Սակայն այն ձգձգվեց մինչև 1896 թվականը: Ըստ կանոնադրության՝ քաղաքային դուման պետք է բաղկացած լինի 40 պատգամավորից, 8 թեկնածուից, քաղաքագլխից և տեղակալից: Թուրքերը, ըստ կանոնադրության, կարող էին ընտրել 8 պատգամավոր, սակայն նրանք պահանջում էին պատգամավորական տեղերի կեսը, որը հակասում էր կանոնադրությանը:³ Այդ ժամանակ քաղաքի 35552 մարդուց 20673-ը հայ էին, 12879-ը՝ թուրք: Հայերը պահանջում էին պատգամավորներ ընտրել այդ թվերի համեմատ: Բացի այդ, քաղաքի պետական և քաղաքային բոլոր հարկերի 2/3-ը վճարում էին հայերը: Ըստ էության՝ թուրք վաճառականների պահանջը միանգամայն անարդարացի էր: Դա նկատի ուներ մամուլը, երբ գրեց. «Ամօթ, հազար ամօթ թուրք ամբոխին, որ քաղաքային ինքնավարություն ստանալու րօպէին էլ այդքան ֆանատիկոս են և խաւար»:⁴ Ընտրությունները նշանակված էր 1896 թ. մարտի 10-ին: Մինչ ընտրությունների օրը հայ և թուրք կողմերի միջև տեղի ունեցած մի քանի հանդիպումները դրական հետևանք չունեցան. թուրքերը չէին հրաժարվում իրենց պահանջից: Առանց թուրքերի կամքը հարցնելու՝ ի վերջո որոշվեց պատգամավորների 1/5 մասն ընտրել մահմեդականներ: Քվեարկությանը մասնակցել են 204 քրիստոնյա և 130 մահմեդական ներկայացուցիչներ: Պատգամավորների 87 թեկնածուից ընտրվում են 39-ը՝ 34 քրիստոնյա և 5 մահմեդական: Այդ նշանա-

¹ Նույն տեղում, թիվ 5, 15.01.1891

² «Кавказ», N 115, 02.05.1893

³ Նույն տեղում, N 1, 01.01.1896

⁴ «Մշակ», թիվ 26, 02.03.1896



կում է, որ լրացուցիչ ընտրություններ պետք է տեղի ունենար մեկ պատգամավոր և 8 թեկնածու ընտրելու համար: Մահմեդականները դժգոհ էին ընտրությունների արդյունքից: Շուշիի գավառապետ իշխան Ափխաձեն պահանջում է, որ հայ պատգամավորներից մի քանիսը հրաժարվեն և իրենց տեղերը զիջեն մահմեդականներին: Դա էլ պատճառ հանդիսացավ, որ 1897թ. սեպտեմբերին Շուշի ժամանեց նահանգապետը, պաշտոնից ազատեց գավառապետին, առաջին և երկրորդ մասերի ոստիկանապետերին և այլ պաշտոնյաների:¹

Շուշիի առաջին քաղաքագլուխ է ընտրվում Իվան Քալանթարյանը, օգնական՝ Ջավադ բեկ Իշխանյանը: Իվան Քալանթարյանը վեց ամիս անց հրաժարվում է պաշտոնից: Նոր քաղաքագլուխ է ընտրվում պաշտոնաթող զինվորական Կ. Դանիելյանը: Նա եռանդով մղվում է աշխատանքի, չնայած քաղաքի ֆինանսական միջոցները խիստ սուղ էին, այնուամենայնիվ 1500 ռ. է հատկացնում փողոցները սալահատակելու համար, զբաղվում է Թամիլյանի բերած ջրի բաշխման, քաղաքի շուկայի և դեղատան հարցերով: Նախաձեռնում է հայկական թաղամասում բաղնիք կառուցելու գործը: Ամենակարևորը՝ նույն թվականի օգոստոսին Շուշի պետք է ժամաներ Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը: Կազմակերպվում է նրան պատշաճ մակարդակով ընդունելու գործը: Հայոց կաթողիկոսը, ավելի քան տասը օր լինելով Շուշիում, Ամարասում, Գանձասարում և այլուր, վայելում է արցախահայության ջերմ սերն ու հարգանքը: Նա Արցախից հեռանում է խորին գոհունակությամբ:

Այսպիսով, ինչպես երևում է շարադրվածից, Շուշիի կյանքը 19-րդ դարում եղել է եռուն, հետաքրքիր և դրական երանգներով շաղախված:

¹ «Մուրճ», 1896, թիվ 2, էջ 331

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՇՈՒՇԻՈՒՄ 1813-1917ԹԹ.

19-րդ դարի սկզբին անդրկովկասյան և, մասնավորապես, հայ ժողովրդի կյանքում տեղ գտած իրադարձությունները իրենց հերթին զգալի փոփոխություններ գրանցեցին նաև ժողովրդագրական գործընթացներում: Այս ամենից անմասն չմնաց նաև Արցախը, որը 1813թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով միացվեց Ռուսական կայսրությանը: Իրեն միացված տարածքներում ցարիզմը սկսեց իր վարչաքաղաքական ու տնտեսական կյանքին համապատասխան փոփոխություններ իրականացնել: Այդ նպատակով նա սկսեց տեղեկություններ հավաքագրել իրեն ենթակա տարածքների վերաբերյալ՝ համապատասխան կամերալ ցուցակագրումներ, հաշվառումներ կատարելու միջոցով:

1822թ. Ղարաբաղի խանությունը վերակազմավորվեց Ղարաբաղի պրովինցիայի: 1823թ. ցարական կառավարությունը Մոզիլսկու և Երմոլովի ղեկավարությամբ Ղարաբաղում բնակչության հաշվառում անցկացրեց, որի արդյունքներն ամփոփվեցին «Ղարաբաղի պրովինցիայի նկարագրության» մեջ: Այն ներկայացնում էր վիճակագրական տվյալներ բնակչության էթնոկրոնական կազմի մասին, համաձայն որոնց՝ Շուշիում ապրում էր 8290 մարդ, ընդ որում, հայերը կազմում էին 41% (3350 մարդ), թաթարները՝ 56% (4670), քրդերը՝ 3% (270)¹: Թաթարների մեծ թվական տվյալներն առիթ են հանդիսացել ադրբեջանական հեղինակների համար հերթական անգամ կասկածի տակ դնելու անցյալ ժամանակներում և հետագայում, մասնավորապես, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Շուշիի հայկական քաղաք լինելու հանգամանքը: Հարկ է նշել, որ 19-րդ դարի սկզբի պատկերը հետևանք էր դեռևս նախորդ դարի իրադարձությունների: Փանահի ժամանակներից սկսվել էր այլացեղ և այլակրոն էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ, մասնավորապես Շուշի: Այդ կերպ թուրք խաներն իրենց համար հենարան էին ստեղծում: Թուրք ազգաբնակչության ներգաղթը Շուշի շարունակվեց նաև Իբրահիմ խանի օրոք: Միաժամանակ սկիզբ էր առել հայության մեծ արտագաղթ Արցախից, որը մեծ չափերի էր հասել հատկապես Խամսայի մելիքությունների կործանումից հետո: Ինչպես Լեոն է նշում. «Մելիքների անհաջողություններն ու պարտությունները, միացած սովի և ժանտախտի հետ, քանդել և ավերել էին Ղարաբաղի մեծագույն մասը, փախցնելով հայ ժողովրդի խոշոր հատվածները զանազան ուղղություններով»²: Հօգուտ թուրքերի 1820-ական թթ. Շուշիի էթնիկ պատկերն ամբողջացավ 1823թ. Մեհտի Ղուլի խանի՝ քաղաքում հաստատվելով: Վերջինս իր հետ տեղափոխեց նաև 3000 մահմեդական՝ հիմնականում թուրքական ընտանիքներ, որոք գլխավորապես հաստատվեցին Շուշիում:

Ըստ 1832-1833թթ. իրականացված բնակչության հաշվառման, որը փաստորեն դարձավ Ղարաբաղում անցկացված բնակչության առաջին մարդահամարը, Շուշիում ավելացել էր հայերի տեսակարար կշիռը, կազմելով 52,8%, թուրքերինը նվազել՝ հասնելով 47,1%-ի: Ընդհանուր հաշվով քաղաքում ապրում էր 7304 մարդ³: Այն համարվում էր Անդրկովկասի խոշորագույն քաղաքներից մեկը, իսկ բնակչության թվով 5-րդը՝ Թիֆլիսից, Նուխիից, Երևանից ու Շամախուց հետո⁴:

¹ Описание Карабахской провинции, составленное в 1823г. Действительном статским советником Могилевским и полковником Ермоловым II, Тифлис, 1866

² Լեոն, **Երկերի ժողովածու**, 10 հատորով, հ. 4, Ժամանակակից պատմություն (XIX դ. արաջին կես), Երևան, 1984, էջ 28

³ ՀԱՍ, ֆ. 93, ց. 1, գ. 51-52

⁴ Саркисян Г., **Население Нагорного Карабаха за 100 лет** (этнодемографическое исследование), стр. 65, http://www.armeniaculture.am/images/menus/1324/Hamlet_Sargsyan.pdf



Շուշիի հայ բնակչության աճը պայմանավորված էր համեմատաբար խաղաղ զարգացման պայմանների ստեղծմամբ, որի հետևանքով էլ այն վերածվեց առաջավոր տնտեսական, մշակութային կենտրոնի: Արիեստների ու առևտրի զարգացումը մեծ թափ ստացավ, Շուշին դարձավ ապրանքաշրջանառության տարանցիկ կենտրոն: Պատահական չէ ժամանակաշրջանի գերմանական թերթը այն բնութագրել որպես «Կովկասյան Ջիբրալթար»: Աստիճանաբար ձևավորվեց առևտրական կապիտալը: Այս զարգացումների կրողը հայությունն էր:

Հաջորդ տասնամյակի թվական տեղեկությունները Շուշիի բնակչության վերաբերյալ հայտնի են դառնում եկեղեցական ծխական մատյաններից: 1841թ. Շուշիում ապրում էր 5453 հայ: 1854թ. դրությամբ քաղաքն ուներ 15194 բնակիչ, որի 51,1%-ը հայեր էին, 48,6%՝ թուրքեր, 0,3%՝ ռուսներ¹: Գերազանցելով Երևանին՝ բնակչության թվով տարածաշրջանում այն 4-րդն էր: 1860թ. քաղաքի բնակչությունը հասավ 17484 մարդու, որի 54,53%-ը հայեր էին, 45,47%-ը՝ թուրքեր, որոնք բնակվում էին համապատասխանաբար հայկական և թուրքական թաղամասերում: Պատմաբան Վ.Բալայանն իրավացիորեն անհավանական է համարում այլ ազգությունների բացակայությունը, պայմանավորելով այդ փաստը նրանց վերաբերյալ տվյալները հայերի և թուրքերի ընտանեկան կազմերում ընդգրկելու հնարավոր հանգամանքով²: 1873թ. Շուշիում անցկացված մարդահամարի տվյալների համաձայն՝ բնակչությունը հասնում էր 24552 մարդու, որից 13504 հայ (55%), 10804 թուրք (44%), 244՝ ռուս (1%): Ընդհանուր Շուշիի գավառում բնակչությունը հասել էր 80913-ի, որից 43502-ը հայեր էին, 37351-ը՝ թաթարներ³:

1886թ. քաղաքի ընտանեկան ցուցակների տվյալների հաշվառման արդյունքներով՝ այստեղ ապրում էր 26806 մարդ, որի 56,7%-ը՝ հայեր էին, 43,2%-ը՝ թուրք-թաթարներ, 0,07%-ը՝ ռուս, 2 հրեա: Բնակչության թվաքանակով Շուշին արդեն երրորդն էր՝ Բաքվից ու Թիֆլիսից հետո⁴: Ընդհանուր Արցախի բնակչության 84,8%-ը հայեր էին⁵: 1891թ. ժամանակի մամուլի տեղեկություններով Շուշի քաղաքում հայերի տեսակարար կշիռը կազմում էր 60%⁶:

1897թ. Համառուսական առաջին մարդահամարի արդյունքներով, Շուշիում՝ ինչպես քաղաքում, այնպես էլ գավառում, հայերը մեծամասնություն էին կազմում: Այսպես, քաղաքի 25881 բնակչից հայ ազգաբնակչությունը կազմում էր 55,7%-ը, թուրքերը՝ 41,6%, 1,5%-ը ռուսներ էին⁷: Ապրում էին նաև լեհեր, մոլդովացիներ, վրացիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ, որոնք փոքր տոկոս էին կազմում ընդհանուր բնակչության մեջ: Գրեթե նույն տեսակարար կշիռն ունեին հայերը նաև Շուշիի գավառում՝ 53,2%⁸: Բնակչության նվազումը պայմանավորված էր որոշակի գործոններով. 19-րդ դարի վերջին Շուշին աստիճանաբար կորցնում էր զարգացած տնտեսական և առևտրական կենտրոնի դերը, նավթարդյունաբերության զարգացման շնորհիվ Բաքուն դառնում է զարգացող արդյունաբերական կենտրոն՝ դեպի իրեն ձգելով բնակչության հոծ զանգվածների: Շուշիից տեղի էր ունենում ոչ միայն բնակչության, այլ նաև կապիտալի մեծ արտահոսք:

1904թ. դրությամբ էթնիկ պատկերը հետևյալն էր՝ 54,2% հայեր, 43,8% թուրքեր, 1,8% ռուսներ, 0,2% այլազգիներ հարաբերակցությամբ: 1906թ. հայերի թիվը պակասեց 5184-ով՝ հասնելով 12798-

¹Բալայան Վ., *Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում*, Երևան, 2017, էջ 340

²Բալայան Վ., *Եզվ. աշխ.*, էջ 341

³ *Статистические таблицы о народонаселении Кавказского края, сборник сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880, стр. XIII-XXV*

⁴ *Տորոլորդների տերիտորիական բաժանումները Անդրկովկասում*, «Գործ», հմ. 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, Բաքու, 1917, էջ 244

⁵ Саркисян Г., *Եզվ. աշխ.*, էջ 69

⁶ *Անդրկովկասի քաղաքների հայ ազգաբնակչությունը*, «Արձագանք», N2, մարտ, Թիֆլիս, 1891, էջ 18

⁷ Բալայան Վ., *Եզվ. աշխ.*, էջ 342

⁸ Ասոյան Լ., *Հայերի տեղաբաշխումը և աճը Անդրկովկասում ըստ 1897թ. մարդահամարի տվյալների*, էջ 101, http://raber.asi-oa.am/37/1/10_Asojan_L.A..pdf



ի¹: Այս հանգամանքը գլխավորապես հետևանք էր հայ-թաթարական ընդհարումների, որի զոհ դարձան հարյուրավոր հայեր:

1914թ. տվյալներով՝ Շուշին ունեցել է ընդամենը 42568 շունչ, որից հայեր՝ 22416 (52,3%), թուրքեր՝ 18865, ռուսներ՝ 1188, այլազգիներ՝ 99²: 1916թ. դրությամբ Շուշիի բնակչության 53,33%-ը կազմում էին հայերը³: Հետագա տարիներին հայ բնակչությունը մեծ կորուստներ ունեցավ՝ թուրքական բռնությունների հետևանքով:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ նշված ժամանակաշրջանում տեղի ունեցող բնակչության տեղաշարժերը, մասնավորապես էթնիկ բնույթի, պայմանավորված էին ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով և զարգացումներով: Քննարկվող ժամանակաշրջանում արցախահայությունը ուժերի գերլարումով պահպանում էր Շուշի քաղաքի հայկական դիմագիծը:

¹Բալայան Վ., *նշվ. աշխ.*, էջ 345

²Կիսիբեկյան Ա., *Շուշեր*, հ.1, Երևան, 2011, էջ 291

³Ալեքսանյան Հ., *Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916-1926թթ.*, Երևան, 2007, էջ 116



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՄԵԾՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Իսկ Հայրապետն այնուհետև ի ձի հեծեալ առանձին, եկանք հասանք ի Շուշի, ուր խանն և ամենայն բազմություն հեծելոց և հետևակացն ընդ յառաջ ելին նորա, և տարեալ հանգուցին զնա ի տունն Հայրումեանց կոչեցեալ՝ որ ունէր սենեակս կրկին, մի՝ վասն Հայրապետին և սպասաւորաց նորա, իսկ միւս՝ վասն Անտոն եպիսկոպոսի և գրագրացն առ հասարակ, ի միւս բակին բնակէր տեղապահ, և այլք աստ և անդ:

Շուշի անառիկն համարեալ ամբոց՝ կղզի իմն էր գոգջիր ամբարձեալ ի վերայ քարալերին, որոյ յարևելից կողմանէ պարապատէր գետն ընդ որ մեք եկաք, իսկ յարևմտից գետքն բխեալ յարևմտեան լեռանց, և եկեալ համբուրէին գերեարս ի հիւսիսոյ ստորոտս նորա: Բնութիւն յամենայն կողմանց ահագին քարապարսպօք պատեաց զայն, բաց ի հիւսիսակողման մասնէն, ուր ելից զթերին բնութեան արուեստն՝ հզօր պատնիշօք ընդ դուռնն՝ որ հանէր յԱւետարանոցն զիւղ: Բնակիչք նորա Հայք և Թուրք: Հայքն հաշուէին լինել 500 տունք, և ունէին եկեղեցիս երիս: զԱգուլեցոց, զՂարաբաղցոց և զՂազանչոց, այլ զքարակերտ և զմեծ եկեղեցին ի նորոյ շինէին յայնժամ երկոքին եղբարքն Թառումեանք՝ Զոհրաբ և Մարկոս: Շուշի զամենայն կերպարանս բերէր յինքեան զմիջնաբերդի, շրջակայ լերինք յերից կողմանց նորա երևէին բերել զձև արտաքին պարսպաց բերդին. գետորայք յորդեալք զնովաւ գործ խրամոց կատարէին ջրալեաց, և ինքնին ի կեղորնի ամբարձեալ, արդարև անառիկ լինէր, եթէ ի մերձակայ լեռանց անտի չհասանէին առ նա զնդակք թնդանօթոց:

Հիւսիսակողման քառաժայռն է առաւել բարձր, և ահաւորագոյն ևս ձոր նորա: Պատմէին, թէ «Ահմէդ խան, հայր Մէհդի խանին ցասուցեալ երբեմն ի վերայ քեռ եղբարց Թառումեանց, հրամայեաց գահավեժ առնել զնա ի ժայռից աստի ի խորախորս ձորոյն, այլ առ անհնարին բարձրութեան միջոցին, ասեն, հողմոց ի ներքս մտեալ երկայն և յոյժ ծաւալ հանդերձիցն մեղմեցին զուժգնութիւն ծանրանաց նորա, և հեզիկ ի վայր բերեալ՝ կենդանւոյն իջուցին զնա ի ձորամիջին: Զոր հրաշից ի սակի եղեալ բռնաւորին, հրամայեաց այնուհետև ազատ շնչել նմա զօդ հասարակաց»:

Օդ տեղոյս կարի խոնար և երկիր կաւուտ, ուստի և յանձրևային եղանակս կարի տղմուտ: Յաւուր միում ի գնալ իմում յեկեղեցի քաղաքիս, գտի զպառաւ ուն կրկտել ի մէջ տղմոց զպայտիկ կօշկացն իւրոց, զոր ի բաց կորգեալ էր ցեխն: Բնակիչք նորա ընդ այր և ընդ կին առոյգ են և աշխոյժք: Ձև զգեստուց նոցա կոնչեցեալ Ղարաբաղի՝ խառնուրդ իմն է Վրացի և Պարսիկ ձևոց: Կանայքն նոցա ունին և զգոզնոց յառաջոյ իւրեանց ի պահպանութիւն զգեստուցն ի կեղտոյ: Պառաւունք զգենուն և զմխաշապիկ ի վերայ ամենայն զգեստուց իւրեանց զի մի՛ մխտտեցեն զնոսա: Կուսանք նոցա, որ զծայրագոյն պատկեր ամօթխածութեան ի դէմս կրեն, գեղեցիկք են յոյժ և ախորժատեսիլք: Ո՛չ սքօղեն զգլուխս իւրեանց, այլ զուտակ ի մորթոյ գառանց Ղալմուղաց դնեն ի գլուխս՝ զօրէն պատանեաց, ձիւնեփայլ փողքն ընդ կարմրութեան այտուցն զուգակշռեալ, յօրինեն զնոսա խնձորս ճերմակ ու կարմիր. իսկ զիսկք հոպոպեացն շուրջ զուսովքն ի թիկանց ցներբանս նոցին ծաւալեալ՝ հաւասարեն զնոսա (եթէ չգերագանցեցեն) գեղեցկուհեացն Վրաց. սովին և եթ տարբերութեամբ, զի սոցա՝ իշխէ ամօթ, իսկ նոցա՝ աշխոյժ:

Գինի Շուշուոյ՝ սոխի ջո՛ւր: Այլ Պարտաւայն, Աւետարանոցին, Շաքոյն, Շամախոյ, և Գանձակայն՝ ազնիւք յոյժ, որովք լի է քաղաքն: Պտուղք համեմատ օգոյն, այլ հունն, զկեռն, մորն, և մոշն, մամուխն, մասուր, կաղիին, շագանակն, տանձ և սալորք անտառաց նորա պարարտ են և



համեղք յոյժ: Շերամ առատ է աստ՝ որպէս յամենայն Սիւնիս. մի ի գերագոյն բերոց նորա է ձին՝ Դիլիբոզ անուանեալ, որ երկրորդ դասի յամենայն ուրեք՝ նժուգին Արաբացոց, և հաւասար Թորգոմեան օդապարկաց, ուստի և մեծագնի վաճառի յոյժ: Կանայք երկրիս առհասարակ արուեստաւորք են, և գործեն պէսպէս ձեռակերտս մետաքսիս, իսկ արք նոցա առհասարակ վաճառականք և երկրագործք:

Երկոքին տունք էին Հայոց՝ որոց ընդարձակութիւն վաճառաց, բազմութիւնք գործավարաց, և պատիւք ի մէջ Ռուսաց՝ մեծանային յոյժ յոյժ: Տունն Հախումեանց՝ ամենահարուստ, որ և ի գանձարանի կայսերութեանն Ռուսաց ունէր մինչև միլիոնս ռուբլեաց, և ի քաղաքացն Պարսից մինչև ի քաղաքս Սիբերիոյ և Եւրոպայ՝ ձգէր առնտուր: Բայց ի վերայ այսորիկ ամենայնի՝ տակաւին ճիշդս կարողայր գնոսա ազոն և ուշտս, զի առ անբաւ գանձուցն յոլովութեան զարարս մեծագործութեան յանձինս ո՛չ բերէին, տինա՛ւ և ի դուզնաքեայ ողորմութենէ կարօտեալ և տառապեալ համազգւոյն զինքեանս ի բաց որոշէին: Բայց ես ո՛չ համարձակիմ մակագրել ի բարաւորի տան սոցա զանուն անողորմ, վասն զի՝ թերևս ո՛չ զհամբաւի հարկանի գնոցանէ այն ի ցոյցս մարդկան արարեալ ողորմութիւն, որով այլք ոսկւով գնեն զպարծանս ի մարդկանէ՝ քան թէ վարձս յԱստուծոյ. սակայն և այնպէս, գեղեցիկ իմն մոլութեամբ մոլեալ ընդարձակէին յոյժ ձեռն տալ աչալըջաց մերագանց, գործավարս կարգելով գնոսա ի վերայ վաճառաց իւրեանց ի տեղիս, և ջանալով հարստացուցանել գնոսա, և ի տունս հաստատունս կազդուրել, զորս և Չրադս իւրեանց անուանէին, այսինքն է՝ ճրագունս փայլեցուցանել յարտաքս գանուն և գերախտիս իւրեանց: Սէր բազում ճրագս ունէլոյ բնիկ իմն էր քաղաքիս, վասնորոյ և այր զարամբք ելանէր ճոխացուցանել զհամազգիս իւր՝ զի ի պարծանաց սակի էր յոյժ ի տեղուջն համբաւեալ գործն:

Երկրորդ տունն էր Զոհրապայ և Մարկոսի Թառումեանց՝ յամենայնի վերագոյն: Վասն զի՝ սոքա ընդ իւրեամբք ունէլով զամենայն արտունութիւնս զծովուն Կասպից, թէ զձկնորսական իրաւունս, և թէ զնաւագնացութեան տեղեհարկս, բազմագունից պէտս ունէին գործավարաց յայն պաշտօն: Ո՛ւր մնայ, զի և վաճառականութեանցն առնտուր ո՛չ ինչ նուազ քան զՀախումեանցն՝ ձգէր ի հեռաւոր ծագս աշխարհաց: Ճրագունք տան Թառումեանց գոլ մի մի շահապք շահաստանի, այնքան զարդարեալք և պաճուճեալք՝ թէ զգեստու, թէ տամբ, թէ հարստութեամբ, մինչ յառաջին տեսութեան իմում, համարել գնոսա տեարս տերանցն իւրեանց Զոհրապայ և Մարկոսի: Առօրեական բաշխոյք ողորմութեանց տան այսմիկ առաւելոյր քան զորովիս 500, թո՛ղ զմեծամեծ հասարակաց սեղանս, զոր տային ի տան անդ իւրեանց: Եկեղեցին կառուցեալ համակ ի սպիտակ վիմաց գեղեցկագոյն քան զբազումս ի հոչակաւոր եկեղեցեաց աշխարհին՝ յայտնի արձան էր մեծագործութեան սոցուն:

Թառումեանք բնիկք էին աւանին Շահկերտոյ, այլ ի վերջին աւերս նորա եկին բնակեցան յԵրևան: Իսկ բղեաշիս նորա՝ որ զամենայն ինչս հպատակաց տերութեան յիւր սեպհական ի ստացուած համարէր, և չարաչարս տանջէր գնոսա՝ տուժել ինքեան զգոյս իւրեանց (կենդանի էր յայնժամ և Բաբա եղբայր սոցա կրտսեր, որ յետոյ մեռաւ ի Դարբանդ): Բաբա առեալ զամենայն զուդ՝ փախչի յաշխարհ Փայտակարան, և զբաւէ, զերեսս ծովուն Կասպից ի Ռուսաց դրանէն, որով սակաւ առ սակաւ հարստացեալ անդանօր՝ կոչէ և գեղբարս իւր, և հիմն դնէ այնորիկ հարստութեան, յոր վայելէին այսօր եղբայրք իւր և ազգն:

Ընդ հարուստ ժամանակս կացի ինքնին՝ անձանօթ ի քաղաքի այսմիկ. այն ինչ աստիճանակից եղբարք իմ ներդաշնակ տաղասացութեամբք իւրեանց՝ զոր ինչայէր ինձ բնութիւն, հանրածանօթ հանդիսացան ի քաղաքին, և շահեցան ոսկիս բազումս՝ պարզի մասամբ, այն ինչ թուղթ և թանաք յառանձին սենեկի՝ չշահէր ինչ ամենին:



Ողորմութեամբն Աստուծոյ վերստին աստ պատահէր Պօղոս վարդապետ Ղարաբաղցի՝ նախկին վարդապետ իմ, և Յովսէփ վարդապետ՝ իմաստասէր վերաձայնեալ, ուսուցիչ ուսուցչի իմոյ, գորս հրաւիրեալ էին երևելի գերդաստանք քաղաքիս՝ ի դաստիարակութիւն ուստերաց և դստերաց իւրեանց: Յորս կարի երևելի հանդիսանային Յովհաննէս և Կարապետ Մարկոսեան Թառումեանց, Աղա Բաբա Հախումեանց, Մնացական Ջալալեանց և այլք, ուստի և ես սպրդեցայ ի նոսա՝ ուսանիլ գնորոց և գպայծառ տրամաբանութիւն հօր Յովսէփայ վարդապետի:

Ուսանէի, այո՛, բայց այն զի միշտ գուրկ և թափուր ի մխիթարութեանց, և ո՛չ որօէս կրօնակից եղբարք իմ,- յուսահատութեամբ ծալեցի զգիրք և զրիչ, և նստայ ծոյլ ի սենեկին: Եկն վարդապետն աստուածային, զոր իբրև տեսի՝ զեղան արտասուք և լուռ միայն կացի: Բազմեցաւ առնթեր երանելին, և ընդ հարուստ վայրկեանս ո՛չ խոսեցաւ ամեննին, մինչև բացի նմա զառիթ տառապանաց իմոց: Սկսաւ նա զառաջին թողուլ զամենայն, և յիմ կոյս յենուլ, որպէս թէ արդար ոք համարելով զիս յանիրաւի արարս իմ: Բայց իբրև եգիտ զիս կակղացեալ առ սակաւիկ մի՝ մեղմով իմն ասաց ցիս. «Որդեա՛կ իմ, գիտե՛ս արքանոյ արժէ նծոյզն օղապարիկ»: «Հինգ հարիւր կամ հազար ոսկի», ասացի ցնա: «Եւ գիտե՛ս,- ասէ,- զի ի գնել և վաճառել նծույզին պարտի գոլ յետկար վաւերական և կնքել մատանեաւ դատաւորի քաղաքին ի հաստատութիւն իսկութեան սերի նորա»: «Դիցուք թէ»: «Ի հարկէ՛, դու ո՛չ գնեցեր զայն, և ո՛չ վաճառեցեր. բայց լուա՛ր երբէք թէ գնեաց ոք զայն վասն առօրին զբօսանաց իւրոց, կամ կրելոյ զբեռինս ազօնից ի ջրաղաց անդր»: «Ոչ բնաւ, զի ափսո՛ս է երիվար այնքան ազնիւ ի հասարակ գրաստու կարգի վարել»: «Արդա՛ր ես, որդեա՛կ, որքան արժէք իցեն օղապարիկ երիվարին, քառապատիկ այնքան և ծախքն լինին և այս ամենայն վասն մի միայն աւուր վտանգի կենաց հեծանողին»: «Ա՛խ մի այդպիսի ձի, Հա՛յր սուրբ, և յայնժամ տեսանէիր թէ մինչև ու՛ր փախուցեալ հեռանայի»: «Յայդ իսկ եկեալ է իմ», - պատասխանեաց երանելին, և ինձ թուեցաւ թէ արդարև ունէր նա զնծոյց այդպիսի: «Յայդ իսկ եկեալ է իմ», կրկնեաց. «Օղապարիկ նծոյց քոյ է *ուսումն*, որ որքան և մեծագին և բազմահոգ իցէ քեզ այժմ, տակաւին օր մի ապրեցուցանէ զհեծեալն, և փրկէ ի վտանգէ զկեանս նորա: - Մի՛ նախանձիր ձայնի եղբարց քոց, նոցա ձայն հազիւ հասանէ ի տանէ ի տուն, ուսի՛ր, և համբաւ քո հարցէ յաշխարհէ յաշխարհ»: Ջայսպիսիս խօսեցաւ նա, բայց յանկարծ շարժին աշխուժանաց ի գտանել ինձ զնծոյզն խոստացեալ՝ գրեթէ առ ո՛չ ինչ գրեաց ինձ զխրատ և զվարդապետութիւն նորա:

Թողեալ զիս յայս մտածութիւն՝ չոքաւ ի տուն իւր, զի արտաքոյ խմբի մերոյ բնակէր: Եւ ի վաղիւ առաւօտուն եկեալ առ իս՝ ասաց. «Մի պատմութիւն գիտեմ, Մեսրո՛վբ. - Թագաւոր գորդի իւր յուսումն գրոց առաքեաց ի վանս ուրեք, և յետ կատարելապէս ուսանելոյն՝ հան զնա ի կրթութիւն աշխարհական իրողութեանց: Գիրք կարդալն մի ինչ է, իսկ աշխարհ կարդալն՝ միւս: Համբակն ի հանդէս եմուտ, և ըստ նախապէս տնօրէնութեան հօր իւրոյ՝ շուրջ պատեցին զնովաւ աղքատ հպարտ ազատորդիք: Պատահեցաւ, ասի, յաւուր միում, զի թագաւորացուն մեր զամենեսին ի բաղանիս հրաւիրեաց. և յելանել իւրում անտի՝ չունէր ինչ ի վճար վարձուն»: Բաղանէպանն անձանօթ նմա և ընկերաց միանգամայն՝ պահանջէր զվարձ վաստակոցն, և նա ասէր. «Չունիմ արծաթ կամ ոսկի, այլ գիտութիւն բազում.ա՛ն քեզ ճատ մի ի ներքող քոց մեծարանաց»: «Ճատ ինձ ոճատ ո՛չ շինէ,- ասաց ցնա բաղանէպանն, - լուացա՛ր, լումայ ցնձա՛»:

Ջայրացեալ պատանւոյն գրաւէ առ նմա զվերարկուն իշխանական, և գայ տրտում և տարակոյս ի տուն իւր, տժգոհելով զերախտեաց ծնողին և զվարժապետին, իբր թէ ընդունայն կորուսին զժամանակ իւր: Իրազեկ եղեալ հօր նորա՝ տայ նմա զակն ինչ պատուական, և ասէ զնել զկանաչի ի պարտիզաց քաղաքին: Պարտիզպանն ո՛չ զյարգ ականն ճանաչէ, և ո՛չ կանաչիս քաղէ նմա: Ամօթալից դառնայ պատանին, և վերստին տրտունջ բառնայ զծնողէն: Ի վաղիւ անդր առաքէ զնա



նովին ակամբ հանդերձ առ ակնավաճառ արքունեացն, որ ի զարմացումն համբակին՝ տայ նմա զմեծ գումար գանձուց փոխանակ ականն՝ և գնէ զայն: Ուրախ դառնայ պատանին և պարծի ընդ յաջողուած իւր, և հայր նորա մեկնէ նմա զիմաստ մտաց իւրոց, թէ «ակն պատուական ուսումնդ քո է, զոր պարտիս յարածամ ի գործ դնել, և առաջի այնոցիկ՝ որոց գիտիցեն զյարգ նորա: Ապա թէ ո՛չ՝ որպէս բաղնէպանին ճառ, նոյնպէս և պարտիզպանին գոհար՝ միօրինակ անարգքն են»: «Դու միայն ուսանել ջանա՛, - ասաց, - և ոչ բնաւ փռոցիմանիս»: Իրաւ որ այնպէս եղև, զի յաւուր միում, իբրև սեղանն զուարճանայր, և Ջոհրայ առ ամենայն աւաչին տաղից հնչեցուցանէր զքսակ ոսկւոյ՝ յառաջ կոչեալ և զիս ինքն ասաց. «Խօխա՛, մոյն տաղ ասա՛»: «Ձայն չունիմ», - պատասխանի ետու նմա լալագնեալ աջօք: Դարձուցեալ նորա զբան իւր առ Հայրապետն սուրբ՝ ասաց. «Ատա՛ լիս յեախարհ շօռ օնեմ, հա՛յր սուրբ, ին՞ ղ քերելաս էս խօխէս բա՛»: Պատասխանեաց նա, թէ անպիտան գոք չունէր ընդ իւր, այլ զգալի իմն թուացողութեամբ: Եւ ի վաղուի առաւօտուն կոչեալ զիս զառաջեալ, ասաց. «Գնա՛, գրեա՛ զքարոզ մի ի վերայ դատաւորի կիւրակէին, և բե՛ր այսր»: «Աւուրք քառասնորդական պահոցն էին, և էս յօժարակամ յանձն առեալ՝ օգնականութեամբ Աստուածաշունչ Սուրբ Գրոց միայն՝ յօրինեցի զայն: Յայ՛սմ իսկ երեկոյի, - ասէ, - պարտիս ասել զայդ ի բեմին եկեղեցոյ, այլ չվախիս»: Օտար իմն էր այս հրաման ի հասարակ սովորութենէ Ազգիս մերոյ, այլ զի հրաման Հայրապետի էր, պարտ էր ինձ հնազանդել: Յերեկոյեան ժամուն տարան զիս յաւանդատուն եկեղեցոյն, զգեցուցին շապիկ պայծառ յոյժ, զուրար զուսովք իմովք արկին, և քօղ զլանջօք իմովք ձգեալ, զԱւետարանն սուրբ ի զիկս եղին: Յաւարտել աղօթիցն առեալ ածին զիս առաջեալ աթոռոյ Հայրապետին, զորոյ զաջն համբուրեցի, առ ի նշան թողութեան նորա: Այս նորաձև երևոյթ իմ, հարկիւ մղէր զնորասիրութիւն ժողովրդեանն տեսանել թէ յի՞նչ էլք իրացն վճարիցին: Ելի ի սեղան անդր, և սկսայ քարոզել: Ձկնի ժամուն հրաւիրեցայ ի տուն Թառումեանց, ուր յետ յարգանաց և պատուական ընծայից նոցա՝ որ առաւելոյր յոյժ քան զտարեկան շահ ձայնից եղբարց իմոց՝ հարց ցիս Ջոհրայ, եթէ ուստի՞ իցեմ էս, կամ որո՞յ որդի: Պատասխանեցի՝ Երևանցի Թաղիդեանց Դաւթի որդի: «Արդարև Թաղիդեանց Դաւթի որդի՞ իցես դու», - կրկնեաց Ջոհրայ զարմանօք. և յետ զայո՛ն լսելոյ, այսաւ պատմել թէ՛ «յաւուրս հալածանաց Մահմադ իսան սարդարին Երևանայ, այն ինչ աշխարհ ամենայն յերկիւղէ բռնաւորին թշնամիք ինձ երևեցուցանէին զանձինս, երես թեքեցի ի տուն Դաւթի Թաղիդեանց. և Աննա մայր նորա զաւուրս երիս բովանդակ յարկեղ իւրում գաղեալ պահեաց զիս, մինչև դադարեցան խնդրակքն անձին իմոյ, և ապա տուեալ ինձ և զծախս ճանապարհի՝ արձակեաց ի բաց՝ զանխուլ ի մարդկանէ: Բարերարութիւն ո՛չ կորնչի երբեք: Ե՛կ օն սիրելիդ իմ», - ասաց, և կալեալ համբուրեաց զիս: Այնուհետև եղէ էս իբրև մի յորդոց նոցա, և սաստկացաւ սնափառութիւն իմ անդր քան զարժանն:

Ամօթ է ինձ զանցելոց խօսել, ուր հասակ՝ աստիճան և բաղտ՝ թև ի թև տուեալ, առարկայ առնէին զիս ո՛չ միայն ինամոց և գթութեան մեծաւորաց իմոց, այլ և յատուկ իմն սիրոյ և իսանդադատանաց սիրուն հայուհեաց տեղոյն: Միրապատում առասպելաց գտեղի ունէին անցք հրաշալւոյն, - եթէ սոսկ անցք կոչել արժան իցէ զանանցանելին ի մտաց իմոց՝ զառաջին հանդիպումն, զգրաւորական համապատասխանութիւն, զանմեղ կաթոզնութիւն, զաղի արտասուս, ընդ ուխտ և երդմունս սիրոյ, զոր փոխադարձ հաւանութեամբ իրար տուաք և առաք: Փոքր մի ևս, և ահա՛ փոխեր բովանդակ վիճակ կենաց իմոց յայլ իմն եղանակ՝ եթէ չէր հարկին բռնացեալ ի վերայ մեր, և բաժանեալ մինչ ի սպար:

Կալ և կապ՝ որպէս և էին, կացին հանգամանք Հայրապետիս մերոյ ընդ ձմեռն ողջոյն: Վասն զի, որպէս և գրեցաքն, արգելեալ էր տէրութիւն Ռուսաց առնել նորա ինչ յիւրում սահմանի: Առ այս գրեան բազում արար նա առ Ներսէս արքեպիսկոպոս Հայոց Վրաստանի, ջանալ հորդել զճանա-



պարհ, այլ ի դերն ելանել և ամենայն ջանից նորա, գրեաց մի անգամ և երկիցս ինքնին դիմել գալ ի Շուշի, զի խորհեացեն թէ զի՞նչ առնել արժան իցէ վասն ազատութեան Աթոռոյն Հայաստանեայց ի ծանր՝ լծոյ անտի պարտուց և հարկապահանջութեանց: Գիր ի գիր առաւելեալ երթայր և գայր հանապազօր, այլ գալուստ նորա ո՛չ ժամանէր զվախճան ամսեան Փետրվարի 1822: Անճարացեալ Հայրապետին գրեաց զհրաժարական իւր առ Աղէքսանդր Առաջին՝ կայսրն Ռուսաց, ի 15 նմիս ամսոյ և ընտրեաց զԱնտոն եպիսկոպոս Մուղնեցի, և զՅովհաննէս վարդապետ Ղրիմեցի, գնալ ի Տփղիս, և յորդորել զարհին Ներսէս ի հնազանդութիւն հրաւիրանաց Հայրապետին: Ի պատրաստիլ նոցա յերթալ, Առաքել սարկաւազ Անտոնի եպիսկոպոսի՝ որոյ գրեթէ յատուկ էր ոգի տրտնջանաց և տժգոհութեան, սկսաւ յայտնի դժկամակ լինել ամենայն ակնարկութեանց եպիսկոպոսի իւրում: Այր անհամբեր Անտոն եպիսկոպոս՝ հրամայեաց նմա դադարել և կալ որպէս և կամէր, և զիս ինքն փոխանակ առեալ նորա՝ էլ ի Շուշուոյ, և եկեալ ի Խնածախ գիւղ Հայոց՝ ի ներքոյ լերանցն Գանձասարայ՝ ագաւ անդ գայն գիշեր:

Ընդ ճանապարհ լեռնային և անտառախիտ՝ թրթնջակ և ողին ուտելով՝ զի գարուն էր, հասաք ի Ծիրանաքար, զոր հասարակօրէն Մէլիք Վանույ գիւղ ասէին, ի գաւառին Խաչենոյ, և իջաք ի տան նորուն իսկ մէլիք Վանույ, առն բարեպաշտի և երկիւղածի յԱստուծէյ, բայց և հօգօրին ի պատերազմի: Լոկ անուն սորա դողացուցանէր զշրջակայ ազգս, մինչև անգամ և զլեռնականս Կովկասու: Երկիր նորա առատ էր հացիւ և մեղերբ. երիվարք նորա ընտիրք, և բնակիչք ամենայն Հայք հօգօրք և տիրասէրք յո՛յժ: Աստի էր մեծանուն հայ աստղն Ալավերտի, կոյր երկոքումբք աչօք, այլ լուսաւոր յոյժ երևակայութեամբն, որ ի հանդիսի ուրեք Թուրքաց ի վէճ մտեալ ընդ մեծի հայ քերթողին Քէշիշ օղլի կոչեցելոյ, և ըղձիւ յաղթանակ կանգնելոյ ի վերայ անպարտելի ախոյեանին՝ յետին ամբարշտութեամբ զկողմն էառ զդէնի նոցա, որով ի հարկէ՛ ըստ քմաց բազմականին գեր ի վերոյ հանդիսացաւ Որդոյն երիցու, որ ըստ արժանի անուանակոչութեան իւրում նուագեաց զԵհովահ ի փառս աքանչելոյն: Այս գիւղ ընդ մէջ անկանի Գանձասարայ և Գետկայ վանից, ունի աւերակ ամրոցի մեծի ի գլուխ հիւսիսակողման լերին, բերէ երիվարս ազնիւս և ցորեան առատ:

Անցաք ընդ Թարթառ գետ ի Դիգա, գիւղ մեծ մէլիք Յովսէփայ մէլիք Փրիդոնեան մէլիք Բեկլարեանց, որոյ մի եղբայրն Շամիր անուն թարգման էր դեսպանութեան Ռուսաց ի Պարս, և յետոյ տեղակալ կայսրութեան և հազարապետ եղեալ՝ պսակեցաւ պէսպէս կայսերական նշանօք. և միւսն՝ Դաւիթ, որ ընդ Վրթանիսի եպիսկոպոսի նուիրակին Էջմիածնի գնացեալ ի Հնդիկս՝ քաղցրութեամբ հազագին ազգի ազգի կատարելութեամբ մսացն, որպէս և ազնուութեամբ արեան՝ մեծանուն հանդիսացաւ, և ամուսնացեալ ընդ այրուոյ ուրումն հարստի՝ առանձնացեալ բնակեցաւ ի Դաքա: Իսկ Թալին և Թալիշ եղբարք նորա՝ դեռ մանկունք էին հասակաւ: Այս գիւղ իբրև չորիւք հրասախօք յարևմտից անկանի գետոյն Թարթառայ, որ բուն ընթանալով ընդ գառ ի վայր դաշտին Խաչենոյ՝ անկանի ի Կուր: Դիգա է դրիւք դաշտային, օղ նորա ջերմ, բերէ զամենայն ազգս արմտեաց, և զորիզ և զբամբակ, ուստի և լի է մոծակօք:

Ի գեղջէ աստի Դիգափայտ անուն կոչի և մեծի հարաւակողման լերինն՝ որ երկայնեալ յԱրձախայ միագօտի ընթանայ յարևելից յարևմուտս՝ և միանայ ընդ Արմաղ լերին, ի ծոցս և ի ծորակս իւր ունելով հովասուն գիւղօրէս Հայոց: Երևելին յէ Գուլստան, իբրև ինն մղոնօք ի վերուստ Դիգայ, ուրանօր յամի տեառն 1813 փակեցաւ դաշն խաղաղութեան ի մէջ Ռուսաց և Պարսից: Գաւառն բովանդակ կալուած էր անխախտ ժառանգութեան Մէլիք Յովսէփայ Փրիդոնեան և եղբարք, որ կարէր հանել ըստ հարկին՝ ձիաւորս հինգ հազար ի պատերազմ, ողջ Հայս՝ արիս և քաջամարտիկս:



Դիզայ անկանի ի հիւսիսոյ Դիզափայրի՝ ի տափարակ դաշտավայրի, գմիջով անցանելով գետակին՝ որ խոխոջուն գայ իջանէ ի Գուլստանայ: Թարթառ յարևելից անցանէ, և Կուր գետ ի հիւսիսոյ, որոց ամենահամ և պատուական ձկունք հանապագորդեան զարդք են սեղանոյ մեծամեծաց և փոքրկանց: Այս ընտիր և գետառատ դաշտավայր մացառացեալ մոշայիւք և այլ և այլ խառնութեոյ բուսականօք՝ ո՛չ յայլ պէտս մշակեր՝ քան թէ յարօտ հօտից և հօրանաց նոցա: Տոնիր նորա՝ մի միայն, բայց և գորիզ՝ ցորեան և զայլ արմտիս բերէ: Աշխարհ շերամոց լինէր, և արուեստարան մեծ լեղակի և շաքարի՝ եթէ միտ եղեալ էր բնակչաց:

Տուն Մէլիք Յովսէփայ անկանէր ի միջավայր քառառոջ ճանապարհին, ընդ որ երթնելս առնէին կարաւանք ի Տփղեաց յԱրցախ, և ի Հայոց յԱղուանս: Անմարթ էր ումէք անցանել առանց սեղանոյ հիւրասէր տան այսմիկ, առօրին երկու եզինք և չորս կամ հինգ ոչխարք զենուին անդ՝ ի կերակուր անցաւորաց, բաց ի ձկանց և յորսոց անտի՝ զորս յաջողակք ի ժողովրդոցն անդադար կրէին ի ներքս:

Աստ կացաք զաւուրս երիս, և աստ ուրեմն ծանուցայ արժանապատիւ տիկնոջ Փրիդոնի Բեկլարեանց, որ թէպէտն անկարօտ յամենայնի՝ և չորեքին ծառացեալ պայծառացեալ որդիք իւր շուրջ զիւրեալ՝ տակաւին առաջին տիրացու զիս տեսանելով ի տարազ վանականութեան՝ կոչեաց առ ինքն, և ընդ առաջին տեսն՝ «որքա՛ն նման է որդւոյ իմոյ, ա՛հ, Դաւիթ՝ Դաւիթ, որդեա՛կ», - ասաց, և արտասուեաց: Անծանօք մայրենի խանդադատանաց նորա՝ և որդւոյն իսկ գլխովին, ասացի. «Նանի՛, իմ անուն Դաւիթ չէ, այլ Մեսրովբ՝ Դաւթի՛ որդի»: Որք շուրջն կային՝ զծաղու հարան, ժպտաց և տիկինն ծանրամետս և խնդրեաց յԱնտօնէ եպիսկոպոսէ թողուլ զիս անդր՝ ցվերադարձ իւր ի Տփղեաց: Բայց արհիւն՝ որ յիս միայնակ ունէր զտիրացու, զգրագիր զսպասաւոր, զձիապան, և զբեռնաբարձ անվարձ, հարկի՛ւ ո՛չ զիջանէր ի պաղատանս նորա:

Աստի ելաք ի Գանջայ, որ ի հնումն Գանձակ, երբեմն Հայոց՝ և երբեմն Աղուանից. կարդացեալ շահաստան. սակս ստեպ փոփոխելոյ դարձադարձ իշխանութեանն ի նմա: Պուղան յամի Տեառն 1088 էառ զայս քաղաք, որ եկաց ի ձեռս նոցա ց1200: Կործանեցաւ յերկրաշարժէ ի 1140, և յաւուրս Էլիսաւէտ կայսերուհւոյ՝ առին Ռուսք, և անուն կարդացին նմա Էլիսաւէտուպօլ: Ոչ ուրէք այնքան դժնեայ գտան Պարսիկք առ Հայս՝ ի քան ի քաղաքի այսմիկ, որ կառուցեալ է ի վերայ Բերբէ՛ր գետոյ, բուն քաղաքն Քիլիսաքեանդ կոչեցեալ՝ յարևելից անկանի գետոյս. ունի եկեղեցի մի, պարապատեալ պարտիզօք և գեղեցիկ մենարանօք, ուր նստէր յաջորդ քաղաքիս: Իսկ նոր թաղն Նորաշէն անուանեալ՝ յարևմտից անկանի գետոյն, որոյ բնակիչք են ըստ մեծի մասին գաղթեալքն ի Գեղամայ և ի Կոտայից. ունին եկեղեցի և սոքա, վաճառանոց պատշաճեալ ինքեան, և բերդ ի հիւսիսոյ յարևմտից կողմանէ՝ բայց խարխուլ: Շրջապատք բերդիս են աւերակք հնոյ իրիք քաղաքի, լի խորախոր գբօք և խորոփեօք, զորս փորեցին: Ռուսք և այլք ի խնդիր գանձուցն գաղելոց ի նոսա: Օդ քաղաքիս ջերմ է յոյժ և վնասակար արանց, այլ օգտակար կանանց նոցա, զի արք ի հասարակի խօսելով՝ վտիտք են և անգեղեայք, իսկ կանայք ընդ հակառակն՝ առոյգ են գեղեցիկք, որք և երկրորդ դասին գեղուհեացն Վրաստանի առ քերթոդս աշխարհին:

«Գուռջիստան գիւզելի,

Գանջայ մարալի»,

որ է ասել՝

Վրաստանեաց աչագեղն,

Եւ Գանձակայ գովեմ գեղն:

Առատ է Գանձակ ի բերս, այլ նուռն ընտիր, և տորոնն մի միայն: Ձկունք Կուրայ և Բերբերայ հանապագորդեան կերակուր բնակչաց նորա: Ի բազմաթիւ հաւուց վայրենեաց նորա անուանի է



Դուրաջ՝ որ է թռչուն ըստ մեծութեան կաքաւու, սրաթռիչ. գոյն փետրոց նորա խայտաբղետ ի հրագոյն, դեղնագոյն և գորշ, ձայն նորա համեղ, որ նստեալ յոստս ծառոց ողորմագին կարկաչէ որ լսողաց ասել թուի.

*Հա՛յ մանի՛ թութտիլար,
Շի՛շ, քարաբ՛ էթտիլար.*

որ է ասել՝

*Վա՛յ վա՛յ, զի՛ս ո՛րսացին,
Խո՛րովու՛ շա՛մփրե՛ցին,*

վասն զի բաց ի խորովածոյ, որ համեղագոյնն է, յոչ ինչ այլ հանդերձի միս սորա: Խաշածն անպիտան է:

Գտի աստ զՄարգարիտ հորաքոյր իմ, կին հսկայիրան, որ ամուսնացեալ ընդ Ալաւերտոյ ուրումն Առնջեցոյ՝ ի Կոտայից Այրարատեան նահանգին՝ ընդ գաղթականս աշխարհին եկեալ բնակեր ի Նորաշէն Գանձակայ: Մա երեքտասաներորդ ծնունդ ի մի միայն դուստր հանույ իմոյ՝ ապրէր տակաւին ի տալ ինձ զանուանս և զարարս երկոտասանեսին եղբարց իւրոց: Ելաց յոյժ ընդ առաջին տեսն, և համբուրիք սրբովք ընկալաւ ընդ յարկաւ իւրով: Ծերունի այր նորա ճշմարիտ պատկեր հեզութեան և բարեպաշտութեան ունէր միայն դստրիկ, ամեննին գեղեցիկ՝ Մարիամ անուն, նորոգ խօսեցեալ առն, որ ընդ ծնողաց միահաղոյն, և ընդ վաղեմի ծանօթից նախնեաց իմոց, մաքուր ընտանութեամբ և ճշմարիտ բարեկամութեամբ մխիթարեցին զիս անդր քան զոր ինձ գրել հնարին:

Աստ կացեալ զաւուրս ինչ, խորհրդով Խաչատրոյ վարդապետի Քարծն կոչեցելոյ (որ յետոյ արքեպիսկոպոս և նուիրակ Սրբոյ Էջմիածնի ի Հնդիկս), գրեաց Անտոն եպիսկոպոս թուղթ աղաչանաց առ Ներսէս արքեպիսկոպոս, և ինքն ելեալ անտի՝ խաղաց գնաց ի Շամքոր: Որ ի հնումն քաղաք շինեալ ի Շարիթայ որդոյ Ջաբուխայ, իսկ այժմ գետ ինչ Հայոց՝ յարևմտից կողմանէ գետոյն: Ի մէջ աւերակացն կառուցեալ, յորոց միջի ամպածայր տնկի աշտարակ իմն, իբր 189 կանգնոց բարձրութեամբ՝ զոր Վիրք Անդում երկրի անուանեն: Ընդ ոլորտապտոյտ սանդուղս նորա ի ներքուստ ի վեր ելեալ՝ յանդիման աչաց տեսի զԿուր գետ ի հիւսիսոյ, զԳանձակ յարևելից՝ 8 փարսախօք տարակաց ի նմանէ, զՇամշաղին՝ ի հարաւոյ, և զամենայն Տաշրատափն մինչև ի կամուրջն Սողանալուայ:

Աստ նստէր Գեորգ ուն յազգէս Հայոց, պաշտօնատար սուրհարանի թղթատարութեան տէրութիւն Ռուսաց, առ որում և մէք գիշերօթս արարաք:

Յարուցեալ ընդ առաւօտն՝ փոխեցաք զընթացս մեր դէպ ի հարաւ յարևմտից, փոխանակ ուղիղ ընդ արևմուտս ընթանալոյ, և եկաք ի Շամշաղին, որ այն ինքն է Շամշողդէ նախնեաց՝ ի Տաշիրն գաւառի, որ ի հարաւոյ ունի զԳեղամ գաւառ Միւնեաց, ի հիւսիսոյ զՇամքոր, յարևելից զԱրցախ և զՈւտիս, իսկ յարևմտից զղաշտն Գագայ, որ այժմ Ղազախ ասի: Շամշուղէ՝ երեքնետ կոչի ի լեզուն Վրաց. ի հնումն կոչէր Օրբէթ. անառիկ ամրոց շինեալ ի Քարթլոսէ եղբորէն Հայկայ նախահօր Ազգի մերում, ի վերայ Արմազ լերին: Այժմ նստէր անդ Գրիգոր անթեմ եպիսկոպոս ի նմին գեղջէ, որ ի սակս կերակրելոյ զգօրս Ռուսաց, և վասն պէսպէս օգնականութեանցն մատուցելոց նոցա յառման Գանձակայ և այլոց՝ ասպետացեալ շքով ի կայսերէ նոցա, թոշակաւն որ յարքունուստ՝ շատանայր: Կացաք առ սմա զաւուրս հնգետասան ակնկալեալ զալստեան անձին, կամ պատասխանույ գրութեան Ներսիսի: Այլ ո՛չ զայս գտեալ և ո՛չ զայն՝ ելաք և ընդ ճանապարհ Սողանալուայ և եկաք ի Տիֆլիս, քաղաք կառուցեալ ի ձորամիջի, ընդ որ Կուր գետ անցանէ ի հիւսիսոյ ընդ հարաւ: Յարևմտից է լեռն Օմինդայ, իսկ յարևելից՝ Հալուաբարու լերինք: Ունի բերդս երկու, մի



ի Հալուաբար վիմաշէն և գեղեցիկ, յորում է եկեղեցին Վարդանուշայ՝ դասեր մեծին Վարդանայ մերոյ, որ վասն գողտրութեանն՝ կոչեցաւ Շուշան, և բանտն: Իսկ միւսն է ի Տափիթաղ՝ մերձ ի ջերմուկս նորա: Եկեղեցիք ազգիս մերոյ՝ 13, յորոց ի մին՝ վանք անուանեալ՝ ի վերայ գետոյն, նստեր Ներսէս առաջնորդ: Եկեղեցիք Վրաց և Ռուսաց ուրն, և պապականացն՝ մի: Տափիթաղ յարևմտից կամ Կուր գետոյ, ուր են ապարանք կուսակալին, դատարանք Ռուսաց, վաճառանոցն, և բազմութիւն տանց Հայոց, զի և անունն հայերէն ցուցանէ զբնակչաց զինչութիւն: 1200 տունք Հայոց են աստ, իսկ Վրացն՝ 400: Մերձ առ վանքն մեր կառոյց Ներսէս արքեպիսկոպոս զՆերսիսեանն անուանեալ ուսումնարան՝ քառալեզու դպրութեանց, և ծաղկեցոյց ի նմա զուսումնականութիւնն յոյժ յոյժ: Յառաջ քան Ներսէս, Հայք առհասարակ խօսեին վրացերէն, և չէր՝ որ զիտէր զլեզու Ազգին, իսկ յետ գնալոյ նորա անդր, և ծաղկեցուցանելոյ զուսումն Ազգին՝ նաև Վիրք ուսան խօսել հայերէն: Հալուաբար յարևելից կայ Կուր գետոյ, ունի իւր բերդ և վաճառանոց ի բարձրաւանդակին. տունք Հայոց են անդ 175, ըստ մեծի մասին գաղթականք յԱյրարատեան նահանգէ: Արտաքոյ սորա է գերեզմանատուն Հայոց, և ի նմա եկեղեցի քարաշէն:

Ի ներքոյ Հալուաբարայ առ եզերք Կուրայ՝ է Կուկիա, որոյ բնակիչք են Վիրք և Գերմանացիք, որք և ունին գեկեղեցի գեղեցիկ:

Ռուսք յաւէտ նենգութեամբ և ուխտագանցութեամբք առին զայս քաղաք՝ ապաստանեալն ի պաշտպանութիւն իւրեանց, քան զինու զօրութեամբ իւրեանց: Ուստի և հետ զհետ ջանացան անհետ առնել զազգատոհմ նախնի իշխանութեան նորա: Կալան զամենայն արքայազունս Վրաց, և առեալ տարան զնոսա ի խորին Ռուսաստան, ուր հոգեմաշ կորեան նոքա: Աղէքսանդրոս որդի Հերակլեայ փախուցեալ անկաւ ի Պարս, ամուսնացաւ ընդ դասեր Մէլիք Սահակայ Հայկազունոյ յԵրևան, և ծնաւ ի նմանէ զորդի մի՝ զոր յետ առնլոյ Ռուսաց զԵրևան, անագորոյն խժութեամբ կորգեալ ի գրկաց անտի մօրն՝ տարան յԵւրոպա Ռուսիոյ: Իսկ Աղէքսանդրոս հայր նորա երթեալ յԱտրպատականս, և յարքայէն Պարսից ընկալեալ զԽոսրովա՝ աւան մեծ ի Սաղամաս, բնակի անդանօր՝ ապրեալ եկամտօք գեղջն: Բարձին մինչ ի սպառ և զկաթողիկոսութիւն Վրաց, և այժմ հովուէ գեկեղեցի նոցա էքսարիս առաքեալ ի սինհոդոսէն Ռուսաց:

Պատուականագոյնք են ջերմուկք քաղաքի, երկոքին ևս ստացուածք Հայոց. յորոց մին երևելի և հոյակապ բաղանիք, խմբեալ յամենայն աւուր յամենայն բազմութենէ՝ մանաւանդ ի գեղուհեաց քաղաքաին, առ ի մեծագոյն օգուտ դիմացն գեղեցկութեան՝ անուանի Մէլիքէնց համամ, զի պատկանի տան Մինիշկարեանց, որ և գմէլիքութեան քաղաքիս զպատիւ ունին ի հնուստ հետէ:

Ի վերջին ժամանակս նուագութեան թագաւորութեանն Վրաստանի՝ փոխանակ զեզի ազգասիրութեան բորբոքելոյ ի միջի իւրեանց, որով և յոտին կանգնելոյ զկործանեալ տէրութիւնն, սկսան իշխանք նոցա՝ որպէս նաև ի մերոցն իսկ ոմանք, գնոց գնել ի թագաւորէ իւրեանց զգիւղօրէս աշխարհին բնակչօք նոցա, և հետ զհետէ խանգարելով զօրէնս և զիրաւունս քրիստոնէաբար առի և տրոյ, վատթարեցան վարել զնոսա առ հասարակ ի գերութիւն ստրկութեան հաճոյից իւրեանց: Այս ազգ գերեաց գնելոց համարիմ զամենայն գիւղօրէս Վրաց, և որ առաւել ցաւելին է, նաև ոմանք ի հայաբնակացն, որոց տեարքն՝ պարնիք անուանին, և տիրուհիք՝ աղջիկ պարոնք: Պարոնք կամ աղջիկ պարոնք իրաւունս համարին ունել զանձինս, զընտանիս, զորդիս և զըստացուածս զիւղականաց իւրեանց՝ իբրև սեպհական ժառանգութիւնս անձանց: Հանեն զհարսն ի ծոցոյ փեսային, և վաճառեն ում և կամիցինն: Նոյնպէս զորդիս ի ծնողաց հատանեն: Գերին՝ զոր ինքեանք ճուրտ անուանեն, ո՛չ կարէ քահանայ կամ վանական լինել, եթէ ո՛չ նախ ազատեսցի դրամովք: Եթէ պարոն նք սիրիցէ զկոյս նք, կամ աղջիկ պարոնն, զպատանի նք ի ճուրտից անտի, չիք ինչ որ խափան արկանէ սիրոյն: Եթէ նք զնոյն ցանկութիւն ցանկացեալ, և կամիցի գնել կամ վարձել՝ կարէ,



Եթէ յղփացեալ իցեն կողմանքն, զի չիք ամօթ ազնուականաց աշխարհին՝ կաւատանալ դրամնց: Իսկ տէրութիւն Ռուսաց, որ առաւել անմտադիր քան զոսա, և ստրկութեան ազգի իւրեանց ջատագով, ի հարկէ՝ փոյթ անգամ չառնու այսօխի անկարգութեան, ուստի և երկիրն հեծէ անողորմ, փառս մատուցանելով յաւէտ տէրութեան Պարսից՝ քան քրիստոնէիցս այսոցիկ գերչաց:

Օդ տեղոյն լեռնային է, ուստի մաքուր և առողջարար: Բնակիչք նորա Հայք և Վիրք առ այլազգիս միահաղոյն Գուռչիս անուանեալ, հոչակաւոր են ի գեղկութիւնս մարմնոց իւրեանց. իրանք նոցա նոճօրէն աչեալք, հերքն թուխ, աչկունքն արեգակունք, մորթք սպիտակուկարմիր, միջկունքն բարակ, և լեզուք անուշախօսք՝ յօրինեն զոսա ցանկալիս ամենայն ազգաց, մանաւանդ Պարսից և Օսմանեան մեծամեծաց, ուստի և ի վտանգի կան միշտ կեանք նոցա, թէ յառաջ քան՝ և թէ զկնի տէրութեան Ռուսաց: Վասն զի Լէզկիք, որք առ ոչինչ գրեն զամենայն երկիրդ՝ յափշտակեալ ամի ամի աղջկունս և պատանիս ի նոցանէ՝ կայտառս, տանին վաճառեն մեծագնի ի Թէհրան, ի Կոստանդնուպօլիս և ի շրջակայս նոցա: Գողտրկանք են յոյժ, և նազաբնոյթք կանայք նոցա, որք թէպէտև ճարտարք յուսմունս գրոց և ի պէսպէս արուեստս կանացի ձեռակերտաց, սակայն և այնպէս՝ անձնասէրք են յոյժ, և գեղոյ իւրեանց անխնայ խնամատարք: Գրեա՛ թէ յամենայն աւուր ի ջերմուկսն լուանին, որ ի սակս խառնուրդս ինչ ունելոյ հանքային բաղադրութեանց՝ մեծապէս օգտէ փափկութեան մարմնոյ և պայծառութեան դիմաց: Վարշամակ ի գլուխ դնեն և ճակատանոց ասղարուր, զոր աստ կօտ կամ քամբարա կապեն բասպնդաւ. քօղ ի վերուստ ծաւալ ցծունկ արկանելով՝ երեսանին բաց: Պատմութեան՝ փորանկեալ, և գօտի խնձորակապ զմիջովքն՝ ծայրակախ:

Մնապարծք են յոյժ, և զարարս դուզնաքեայս իւրեանց գովութեամբ յօդս ամբառնան, զո՛րօրինակ պատահեցաւ ի 1795 յաւուրս արշաւանաց Քերիմ խանին՝ Գօգուր ուրումն Շաշեանց ասել ցմի ի զօրաց նորա՝ նա՛ դուր, նա՛ դուր, այսնինքն՝ ի՞նչ է, ի՞նչ է, զոր ցայսվայր գովութեամբ հրատարակեն ի լուր ամենայն մարդկան, յասելն. «Բարաքալլա՛, Շաշունց Գօգի, քրտին ասից՝ նա՛ դուր, նա՛ դուր»:

Բայց առաւել քան զառաւելն զարդասէրք են առհասարակ կանայք և մանկտի նոցա, միանգամայն, և տուեալ զանձինս արբեցութեան և խրախճանաց: Իցէ՛ որ ի նոցանէ ի վերջին կէտ տնանկութեան կամ աղքատութեան, տակաւին ջանայ որով և հնարին ինքեան՝ ունիլ պատրաստի զսար մի ազնիւ զգեստուց, որով պճնին յաւուրս կիրակէից կամ արքունի պրագնիկաց, որ այնինքն է՝ տօնից և տարեգլխոց յաղթութեանց նոցա. յերամակս յերամակս բաժանին, և առեալ ինքեանց զինի, գաւաթ, թմբուկս, և զորս միանգամ գտանեն ազգս ազգս նուագարանաց՝ ելանեն ի զբօսանս դաշտաց, ուտեն և ըմպեն, խաղան և խնդան, անզգայ յամենայն հոգոց: Ո՛չ տեսի ես քաղաք ուրախ քան զայս: Այնքան զուարճաբանք են բնակիչք սորա մինչ ի խնձիղ հեղձուցանել զունկնդիրս բանից իւրեանց: Փոխանակ ի կիր առնելոյ զերգս շարանակացն աստուածայնոց ի մարմնաւոր խրախճանս՝ յօրինեալ են առ այն պէսպէս նուագս ծաղրալիս, յորոց մին առ տիկ զինւոյն այսպէս սկսանի.

*Ուլ էիր և տիկ դարձար,
Տկահան չարչարվիցար.
Հալվարբի դարի դուսին.
Տուինք մշակի ուսին:
Ո՛վ ո՛վ սուրբ տկճուր,
Լուլէդ բաց մեզ ուղորմիա:*



Երդմունք նոցա հասարակօրէն անմեղագոյնք են քան զայլ ամենայն նահանգաց և զաւառացն Հայաստանի. զի են՝ «Քու դէղին ումր», «Ապրի քոյ մայր», «Իս ապրիմ» և այլ այսպիսիք:

Տփղիս քաղաք չունի բերս բաւական բնակչաց իւրոց, այգեստանք նորա բերեն խաղող ազնիւ, և միրգս ազգի ազգիս, այլ ի Կախէթայ օր ըստ օրէ մտանեն այսր մերձ հարիւրաւոր սայլք զինոյ՝ բարձեալք ի տիկս գոմշոց: Ի Սալիանայ՝ նոյնչափ թուով սայլք ձկանց, որոց ծախք մեծ են յոյժ ի քաղաքի այսմիկ: Մատակարարէ և Կուր գետ զանազան տեսակս համեղ ձկանց: Առակաւ ասի, թէ Գալիանոս բժշկի մտեալ երբեմն և ի Տփղիս, և տեսեալ զանբաւ առատութիւն ձկանցն՝ ասաց. «Այս տեղի է շայեկան արուեստի իմում»: Բայց իբրև ետես և զմեծ եկամուտ զինոյ՝ ասաց, թէ՝ «Սոքա ինքնին գոին զդեղ իւրեանց», և մեկնեցաւ: Չիք ժողովուրդ ի համօրէն Հայաստան այնքան ձկնկեր և զինախում, որքան սոքա են: Շիրակուան մատուցանէ զհիւր ցորեան, Երևան՝ զաղ, բրինձ, բամբակ, և չորապտուղս ամենատեսակս, իսկ Ռուսաստան՝ շաքար մաքուր և զամենայն ձեռակերտ վաճառս իւր: Արուեստն սկսանէր ծաղկել աստ, այլ դեռ տղայ գոլով ի խանձարրի կայր, և ես հազիւ թէ կարացի տեսանել զերեսս նորա:

Սովորութիւն իմն կայր ի քաղաքի այսմիկ վնասակար յոյժ, զոր վերացոյց տեր Ներսէս. զի յաւուրս կիրակէից Յինանց ժողովեալ պատանեաց թաղից թաղից քաղաքին՝ մարտնչէին ընդ միմեանս, փայտեայ սուսերօք, մահակօք, պարսատեօք և այլ սոցին նման գործեօք՝ ուստի թո՛ղ թէ կէս քաղաքին միականի՝ պնջատ և գոնջատ լինէր, այլ և մահունք ևս ի տեղուջն պատահէին: Այժմ փոխանակ այսր՝ արշաւարան հաստատեցաւ, և պատանիք մեր ո՛չ սակաւ հմտութիւնս ցուցանէին յայնմիկ:

Ներսէս արքեպիսկոպոս սիրէր յոյժ զԱնտօն եպիսկոպոս, ուստի և մտերմաբար վարէր ընդ նմա, այն ինչ այլք ամենայն զողանի հարկանէին ի նմանէ: Անդ յառաջին տեսութեան նորա յառաջ մատոյց և զիս ինքն ի համբոյր աջոյն սրբոյ: «Ով է սա», - եհարց ցնա, և Անտօն եպիսկոպոս պատասխանեաց. «Ծառայ և որդի տէրութեան Ձերոյ՝ Մեսրոպ, Գրագրին հաւատացեալ»: Տէր Ներսէս ընդ անուն Գրագրին քստմնեցաւ, զի ո՛չ սիրէր զնա, բայց յաւելուլ Անտօնի հօր զինէն բանս բարին՝ կոչեաց զիս վերստին, և ասէ. «Հա՛, Մեսրո՛ վր, լուեալ է իմ զքէն, այլ տարաբաղտ գտար մինչ ցարդ, զի ամենայն աշակերտակիցք քո արժանացան շնորհաց մերոց, իսկ դու ո՛չ»: Պատասխանի արարի. «Կեցցէ՛ միշտ տէրութիւն Ձեր, և ես վաշխի հանդերձ առից զիմն»: «Դեռ նոյն ես՝ Մեսրո՛ վր, որ ինչպէս և տեսի զքեզ, և ո՛չ փոխեցար ի բնութեան քում: Միրեմ զանմեղ համարձակախօսութիւն քո զաայդ, և յաւետ զվաշխելդ. ջանա՛ դու»: Կրկին դիմեցի ի համբոյր աջոյ նորա՝ և մեկնեցայ ի խուց մեր:

Անագան ուրեմն պատրաստեցաւ Ներսէս արքեպիսկոպոս ծանր կարաւանաւ, յորում էին Տէր Ստեփաննոս Վիճօ՝ այր ծերունի և զուարթախօս, Տէր Յարութիւն Ալամդարեան, Տէր Եսայի, Յովակիմ Կարապետեան՝ եղբորորդի իւր, Սսպետ, և Գեորգ քեռորդի, Գաբրիէլ, երկուտասան կայսիկ ձիաւորօք և ստորին ծառայիւք: Ինքն ընդ արհույն Անտօնի ել ի կառս քառաձիգ երիվարաց, և մեք ի ձի աշտանակեալ՝ ելաք ընդ նմա մինչև ի Շուշի, արքայավայել իմն մեծափառութեամբ զուղին ի դարձ հատանելով:

Այլ զճանապարհայն անխոհեմ ինչ արարի ես, որով ի մի հարուած յերկիր ի վայր տապալեցի մինչ ի սպառ՝ ո՛չ եթէ զշահ, այլ և զմայր գումար շնորհաց ազգային Բարերարին: Իբրև հասաք ի Շամբոր, և վաստակաբէկ կարաւանն ի քուն քաղցրութեան լինէր, եմուտ յիս զիկասն անանդորրութեան: Խորհելով նորօրինակ պաշտօն ինչ հարկանել օրինակի խոնարհութեան և հեզութեան Քրիստոսի հետևողին, յիս յանկուցի նախ զմիտս Գեորգայ սուրհարանապետի՝ պատրաստել ինձ ձիս երկու, և ապա գնացեալ առ տասնապետ կայսիկ ձիաւորացն՝ ասացի ընկերել ինձ զմի յիւրոցն



ի Գանձակ, զի կարի ստիպար հասանել պարտ էր ինձ անդր: Ժամն անագանեալ էր, և արհիք մեր ննջեալ էին, վասն որոյ ո՛չ համարձակեցաւ տասնապետն ստուգել զիսկութիւն քանին, ուստի և քան զիս յիմարաբար՝ զիջաւ յիմար ինդրանաց իմոց: Ելաք զմիով ժամով զիշերոյն ընդ ճանապարհ՝ միանգամ և եթ զնացեալ, և կէս քուն՝ կէս արթուն՝ յառաջ վարեցեալ, հազար և մի տուայտանօք հազիւ հասաք ի քաղաքն ընդ լուսանալ առաւօտուն: Գնամ կամ առաջի Խաչատուր վարդապետի, և զանագան երեսանի շինելով՝ ծանր և լուրջ բարբառիմ: «Դեռ անհո՞գ կաս, հա՛յր, այնինչ յերեկ զօրն բոլոր և սերկեան զիշերս բովանդակ ի ձի աշտանակեալ գամ»: «Բարի գաս,- ասաց նա,- բայց ընդէ՞ր»: «Ընդէ՞ր. Ներսէս առաջնորդ գայ,- ասացի,- և ես յառաջագոյն առաքեցայ աւետիս տալ քաղաքիս, և քեզ՝ զի թափօրիւ ելջիք ընդ յառաջ նորա»:

Փորձանք այն եղև, զի և սա հաւատացեալ ինձ՝ գրեաց առ Ռուս քաղաքապետ Գանձակայ, և հրամայեաց հնչեցուցանել զգանգակսն: Եւ ահա ամենայն բազմութիւն քաղաքին, զինուորութիւն բերդին, և ուխտ եկեղեցւոյն ի թափօր բոլորեցան, և ելին բազում մղոնօք ընդ յառաջ նորա: Մեծագոյն տարաբաղտութիւն այն էր, զի և արհին Ներսէս ի մտի եղեալ էր բոլորովին լռելեայն մտանել ի քաղաքս այս, և ընդ տեսանել բազմութեան առաջաւորաց վշտացաւ յոյժ յոյժ: Յանդիմանեաց զԽաչատուր վարդապետ, և նա զինն արկ զվնասն արքունի: Իսկ ես՝ որ խոնջեալ ի վաստակեալ յոյժ, այլ դեռ ևս իբրև բարւոյ իմն ակնկալ՝ փոխեցի զձին, և ելի անձին վայելել զվարձն յիմարաց: Բարեացապարտ արհին Անտօն՝ որ հեծեալ յերիվար գայր, նշմարեալ զիս ի հեռուստ՝ արշաւեաց առ իս, և ասէ. «Փախի՛ր, Մեսրոպ, փախի՛ր, յաւիտեա՛ն կորեար: Ջի հոգևոր տէր բարկացեալ է յոյժ ընդ արարս քո»: Ո՛չ կարեմ ճիշդ ստորագրել աստանօր, թէ ո՞րպէս փախուցեալ՝ թողի զձին ի կամս իւր, և թաքուցեալ ղօղեցայ ընդ մացառովք թզենեաց Նորաշինին: Երկեայ գնալ ի տուն հօրաքեռ իմոյ, զի մի՛ անդր գտցեն զիս խնդրակք, և զօր մի և զիշեր բովանդակ ահահար և դողահար մնացի, մինչև անագան ուրեմն քաղցն նեղեաց զիս, և ասացի ի միտս իմ. «Եթէ իմ խառնեալ ինէ զքաղաքս, ո՛չ երբէք պատեհ տայ վեհին զինէն խորհելոյ, ընդէ՞ր ապա սովամահ կորնչիցիմ: Բայց և այնպէս՝ դեռ ևս վանդապետ է նա, և ո՛վ զիտէ՛ և խիստ ոմն: Կա՛ց ու կաս», - ասացի, և խորհելով զանփառասէր բնութենէ նորա՝ ննջեցայ: Ջերկուս տիւս անսուաղ կացի ի փախստի և ի թաքստի իմում, և յաւուրն երրորդի՝ այնինչ բարեացապարտ Անտօն եպիսկոպոս նախաճաշէր ընդ նմա՝ յանկարծ յանդիման ելի, և ասացի. «Մեղա՛յ, այլ ևս ո՛չ արարից այնպէս»: Գթութեամբ բազմով ընկալաւ զիս՝ և ասաց. «Ի մէջ Պարսից և պարսկաշունչ փառասիրաց ելով, մանո՛ւկ դու, խաբիս և զիս զոք ի նոցանէ համարել, այլ փառք վանականաց խոնարհութիւն է»: «Բարի է», - ասելով ի միտս իմ, գլուխ իջուցի նմա՝ և մեկնեցայ յուտել:

Իբրև հասաք ի մերձակայս Շուշուոյ, խորհելով թէ մի՛ գուցէ խելագարիցիմ վերստին զխելագարութիւն Գանձակայ՝ կամովին մղոնաւ միով հետևակս կարաւանին գնացի, և իբրև հասի անդր՝ դեռ նոր զորունս ասպնջականացն բաղխէին ի մուտ, և սկսայ մոմոալ ի քիմս իմ, թէ՛ «Եւ այդ քեզ բաւական է»:

Էջ ի տան Թառումեանց, յորժամ մեծանուն բարեկարգիչ նորա՝ Մարկոս, ի վերջին կէտ կենացն խոնարհեալ հեծէր ի պատճառս ընդերկար և ցաւազին հիւանդութեան ոտնուռուցի: Վերջինք իշխանիս այտրիկ՝ բարի, առ ի խրատ զկնեաց արդարև պատմեալք: Վասն զի ի ծանրանալ հիւանդութեան նորա՝ թեթևանայր ոգին սրբատուն ի վերելս երկնից: Կոչէր կացուցանէր առ և մահճօք իւրովք զարս գրագէտս, թախանձէր ի նոցանէ ընթեռնուլ ի լուր զԱւետարան փրկութեան իւրոյ: Ստեպ գաչս ի վեր ամբարձեալ՝ աղաղակէր. «Տէ՛ր Յիսուս». ստեպ աղօթս առնէր, ստեպ և զանձն յանձն առնոյր ի կամս Արարչի նորա: Իբրև յայտնի եղեն նմա հաճոյքն Աստուծոյ ի բառնալ զնա յերկրէն կենդանեաց, հրամայեաց իւրոցն անել զառաջեաւ զմուրհակ պարտուց Էջմիածնի՝



իբրև 4000 ոսուց, կրկնապատիկ քան զայն՝ և մուրհականի այլևայլ մարդկան, և զուտ ոսկիս կրկին պարկոք մեծամեծօք: Ամբարձ զոտն ուռուցեալ, և եղ ի վերայ նոցա, և ասէ. «Անպիտան զիրոյ, ապաքինեա՛ց եթէ կարող ինչ իցես, դու չաստուա՛ծ մոլորութեան աշխարհի. ո՛չ, ո՛չ. այս ամենայն արտաքոյ է մտացածին զօրութեան քոյ, և Աստուծոյ իմոյ օրհնեալ եղիցին կամք՝ և ի հարկանելն և ի բժշկելն զիս»: Ապա առեալ ղնէ իւրով ձեռօք զմուրհակ Էջմիածնի ի սկտեղ, և հրամայէ տանել նուիրել Հայրապետին. այնպէս առնէ և ընդ մուհակացն միահողոյն բերելոց, և երկուս պարկս ոսկուցն հրամայէ ողորմութիւն բաժանել աղքատաց: Զարհուրի Զոհրապ ողբայր նորա՝ յարարս նորա, այլ յանդիմանի ի նմանէ քաղցրութեամբ խրատուց նորա: Եւ այսպէս Յիսուս Քրիստոսի աւանդեալ զինքն և գտուն իւր՝ շնչէ զվերջին զիւր շունչ:

Չև եր տեսեալ իմ հանդէս յուղարկաւորութեան փառաւորագոյն քան զիշխանիս այսորիկ: Ծայրագոյն Կաթողիկոսն Հայոց՝ գրեթէ ամենայն մայրաքաղաքացի արքեպիսկոպոսօք, եպիսկոպոսօք, առաջնորդօք, վարդապետօք, քահանայիւք, սարկաւազօք, դպրօք և ամենայն ուխտիւք եկեղեցոյն՝ ի միոյ կողմանէ, իշխանք Աղուանից և բովանդակ զինուորութիւնք Ռուսաց սևազգեացք, սևադօշք, սևանշանք, սևաձիք, շրջուն զինու, և զարդու իւրեանց՝ ի միւսոյ կողմանէ: Ամբոխ հասարակութեան յամենայն ազգաց զիրերօք խոնեալք, այլ ո՛չ առանց կարգի. և ո՞ւրդեօք ստորագրել կարէ յայսքան ամաց հետէ զարարս և զարտասուս ընտանեաց և ճրագաց նորա: Թուէր իմն թէ Արտաշէս մեռանէր՝ Մեծն Արշակունի, և միայն հաւատն անարատ զդէմ ունէր համօրինակ հետևանացն: Ես Աստուծոյ խնամոց տամ զօրհաս նորա ի ժամանակին, ուր ամենայն ազգային մխիթարութիւնք ներկայ գտան անդ, ապա թէ ո՛չ՝ ո՞ զիտէ թէ զի՞նչ ինչ զհետ գային կսկծանաց և կրից սիրելեաց և սիրողաց նորա:

Հոգեսէր որքան և էին բնակիչք աշխարհին, և հոգևոր Տեառն իւրեանց սրտի մտօք մեծարուք, տակաւին քառապատիկ աւելի պատիւ եղին Մեծին Ներսիսի: Մի՛ զի համբաւ ազգասիրութեան նորա և մեծամեծ գործոցն՝ մղէր զամենայն ազգ իւր յայցելութիւն և յօրհնութիւնն ի նմանէ, և երկրորդ՝ զի պսակեալ էր ի կայսերէ, և բարեկամ Երմալովի կուսակալին յայսկոյս Կովկասու եղեալ նահանգաց: Թո՛ղ զհոգևորականս ամենայն քաղաքաց և գաւառաց աշխարհին, և մարմնաւոր իշխանք նոցա և զօրութիւնք խոնարհեցան առաջի նորա, մինչև իշխան Մատաթով՝ Հայ, և Մէհդի խան՝ փոխ կուսակալ Աղուանից ևս:

Մարտիրոս արքեպիսկոպոս Միւնեաց եկն դարձեալ ի Շուշի՝ երևելեօք հանդերձ: Մեծ էր սէր և մտերմութիւն նորա ընդ տեսռն Ներսիսի. և յաւուր միում այնինչ ի տան Թառումեանց յառաջ մատեայ ի համբոյր աջոյ նորա՝ ակն յանդիման արհուոյն Հայոց Վրաստանեայց, կարի՛ պժգանօք իմն ասաց նա ցՄարտիրոս հոգևոր տէր Միւնեաց. «Էրու՛մ ժողովեաց կուտեաց հոգևոր տէր մեր զայսքան անպիտան որեար, յորոց և ո՛չ մին երևի գոլ օգտակար մեզ»: Զարմանօք իմն դարձոյց առ նա Մարտիրոս արքեպիսկոպոս. «Տեսանե՞ս զմանուկդ զայդ», - մատամբացի ցուցանելով նմա զիս: Յցուեցան իսկոյն թաւ յօնքն, և իրոխտ յիս ականել սկսաւ, որպէս թէ զմտաւ ածելով զանկատարութիւն իմ ի Գանձակ, և ընդ տեսուչն ի վեր հծծեաց՝ «Ը՛հ»: «Ը՛հ ի՞նչ, տէր. փորձեցե՞ր զդա երբէք. քննեա՛ և տե՛ս թէ քանի՞ պիտանի լինի դա տէրութեան քում»: Հազիւ իմն պարզեալ զխոժոռութիւն հայեցուածոցն կոչեաց զիս առ ինքն՝ և առանց անոյշ ինչ յառաջաբանի կամ առարկութեան յանձնեաց ինձ զկոնդակն գոր գրէր, և ասաց. «Գնա՛ գրեա՛, տեսից»:

Թէպէտ հազար անգամ աւելի հաճութեամբ ընդունէի զհրաւեր նախաճաշուն, և բիւր անգամ ախորժանօք ուտէի քան զծղծամ և զկացկամ ճաշակումն իւր, սակայն և այնպէս՝ առի, նստայ յանդիման, զաչս յաւետ ի սեղանն կրթելով՝ քան ի թղթին՝ օրինակեցի և մատուցի իսկոյն, զի մի՛ գուցէ անմասն էլից ի սեղանոյն. Ընկալաւ՝ ետէ՛ս, և փառք բարերար շնորհացն Աստուծոյ, զի հաւանեցա՛ւ ևս:



Ներսիսի՝ հաւան գործն մեծ իմն համարէր Ազգ մեր, և մարգարէութիւնս բազումս մարգարէանայր ինձ, ուստի և ես քանի կարացի՝ ջանացայ, և շահեցայ միայն գնախանձ եղբարց և գնախանս Յովսէփայ վարդապետի Կատկայանեան, որ յետոյ՝ կոչեցաւ «Վեհապետեան»:

Սա որդի էր Մատթէոսի Տէր Մարութեան՝ Կարբեցոյ, որ ի Չորագիւղ Երևանայ. հայր նորա՝ կատկայան, այսինքն այգեպան, գրեթէ բովանդակ տամբ իւրով՝ կէայր ի ներքոյ շնորհաց տան հօր իմոյ: Թէպէտ գուրկ էր ի գիտութենէ գրոց՝ այլ հմուտ գոլով ամենայն հնարից և հայթայթանաց՝ վերացաւ ի ստորին սպասաւորութենէ ի գանձապետութիւն Աթոռոյն, և իրօք յինքն կորգեաց զամենայն իշխանութիւն, մինչև տեղապահին զանուն և եթ թողուլ:

Սա՝ յաւէտ ի սակս գծութեան իրիք եղելոյ ընդ մէջ իւր և գրագիր Յովհաննու եպիսկոպոսի (թէպէտև հազար անգամ խռովեալք և հաշտեալք ընդ միմեանս)՝ տակաւին ընդ ակամբ հայէր առ իս, և որքան կարէր՝ ի կարևորացն ստեպ գրկեր զիս: Այլ թո՛ղ բարիք առն միայն յիշեսցին, չարեաց օրինակ շատ կան:

Իսկ Հայրապետն ամենայն Հայոց և Տէր Ներսէս եպիսկոպոս, յետ կալոյ անդ զամիսս ինչ, և բազմիցս խորհելոյ և խօսելոյ ընդ իշխանս աշխարհին՝ ի վերայ անկեալ վիճակի Աթոռոյն Հայաստանեայց, ելին ի Շուշոյ յամի Տեառն 1822, և գնացին ի Գանձասար, որ էր ի ժամանակին մայրաքաղաքական աթոռ առաջնորդին Աղուանից: Սարգիս արքեպիսկոպոս, երբեմն կաթողիկոս անունեալ, իսկ այժմ մայրաքաղաքացի՝ սիրով ընկալաւ զնոսս, և պահեաց զաւուրս հնգետասան: Հայրապետն իւրովք հանդարձ էջ ի վանսն, իսկ Ներսէս արքեպիսկոպոս իւրովք հանդերձ՝ վրան եհար ի ձորաբաշին արտաքոյ վանացն:

Իբրև պատրաստէր կարաւան մեր, և կաթողիկոսն բազմութեամբ այրուծիոյ ընդ ամրոցն ի վայր իջանէր, Ներսէս արքեպիսկոպոս և ես տակաւին գրէաք: Ժամ պատեհ առեալ գանձապետին՝ առնու զերիվար իմ, և տայ այլում: Իբրև ելաք, արհին Հայոց Վրաստանեայց պատրաստ եգիտ զերիվար իւր՝ և հեծաւ, իսկ ես մնացի անձի: Միանգամ և երկիցս զմտաւ ածի չհետևել կարաւանին, բայց յետոյ ընդ տիղմն հետևակ ընթացեալ՝ հասի. իբրև ետես զիս արհին մեծ, այսր անդր հայեցեալ՝ կոչեաց զեղբօրորդի իւր զՅովակիմ ասպետ, հրամայեաց իջանել յերիվարէն, հեծուցանել զիս յայն, և ինքեան հետի գնալ: Չայն տեսեալ գանձապետին՝ գալարեցան աղիքն. Մատոյց առաջի նորա զմի յետակաց հայրապետին՝ այլ նա ո՛չ հեծաւ՝ վասնորոյ բազում աղաչանօք հաճեցոյց զիս ինքն հեծանել ի նա, և տալ Յովակիմայ զձի իւր: Երիվարս ոսկեսար՝ ընծայ էր Սարգիս արքեպիսկոպոսի Աղուանից առ ծայրագոյն Հայրապետ ամենայն Հայոց. Քուռակ երեքամեան հրաշէկ նարնջի գունով գեղապատշաճ, բարձրահասակ, և անարատ գլխովին: Աշխոյժք՝ սերին և սննդեանն համեմատ: Ես միայն համարձակեցայ հեծանել ի նա, բայց և ի հեծանելս իմում, ո՛չ պակաս քան զԴատաքէն Արծրունի յօղապարկին Տիրանայ՝ երջանիկ գանձն համարեցայ քան զամենայն հեծեալս սրբագումար կարաւանին: Չո՛րս յառաջուստ՝ խածանէր, զորս ի յետուստ՝ քացէր, ի սանձելս՝ ոստնոյր և յարշաւանսն՝ զկայ առնուլ ո՛չ գիտէր վասնորոյ հրամայեցայ մեկուսի վարել, և ես զայդ իսկ կամէի՝ զի և ի ձիավարժութեան փորձ հանդիսացայց: Ուր և հասանէի՝ զգոյշ լինէի աւետաւոր չլինել զգալստենէ կարաւանին սրբոյ, բայց և այնպէս զառաջին աւետչեայ ի մեղր և մաճում, կամ ի սեր և կոզի՝ սիրով ընդունէի, և յազ ապրէի՝ այնինչ դանդաղք եղբարց իմոց սովալլուկ ձգտային ի վերայ ձիոց: Համեմատութեամբ նոցա՝ ես աշխարհ տեսեալ ոք էի, և հանգամանաց բնութեան և բարուց բնակչացն ծանօթ: Առանձնաշնորհութի՛ւնք արդարև, որ եթէ խորհրդով և հանձարով ի գործ եղեալ՝ շահէին ինձ զճշմարիտ մեծութիւնս: Բայց աւա՛ղ. որ միշտ յումպետս և ի խաղս տղայականս վարեցի:

Աստանօր հրամանաւ Ներսիսի շրջեցայ ի մերձակայ վանորայս և օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչաքարս, և ի վեմս



ապառաժից. սկսեալ ի Գանձասարայ մինչև ի Հաղբատ և ի Սանահին, գորս և մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցա՝ որք յետոյ կորեան:

Աստի եկաք ի Ծառաքար, կամ լաւ ևս՝ Ծիրանաքար՝ կալուած Մէլիք Վանոյ, կացաք անդ զաւուրս ութն, զորոյ և զընծայս պատարագացն ընկալեալ՝ երիվարս գեղեցիկս և զոսկիս՝ ընդ Եղիշէ առաքեալն, և ընդ Գետավանքն, որ ի հնումն Գետկայ վանք (զորոյ զտեղին բազմօք շփոթէ Ստորագիր Հայաստանին), եկաք ի Գիւլստան, կալուած իշխանութեան Մէլիք Յովսէփայ տեառն Դիզայ: Աստի դարձեալ գրեան արարին հարք մեր առ դուռն կայսրութեան Ռուսաց, վասն թոյլ տալոյ ինքեանց, զի ժողովեցեն զկամաւոր նուէրս Ազգին՝ յազատութիւն պարտուց հասարակաց Աթոռոյ սրբութեան նոցա: Կացին ամսօրեայ ժամանակաւ, և զի ձմեռն ի վերայ հասանէր, յուղի անկեալ եկին ի վանս Հաղբատայ, զի ի Տփղիս մտանել ո՛չ ներեցան:

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ ԵՎ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔ

Սյունյաց ընդարձակ և բազմաբնակ աշխարհի հին ճոխություններն անցած են իրենց ճոխ տերերուն և դարերուն հետ: Ազգային պատմությանց և Հայաստանի հնախոսությանց տեղյակ եղողները գիտեն արդեն թե նախնի Հայաստանի թագավորությանց նախարարությանց կարգին, միանգամայն և հասարակության մեջ փառքն ու վայելչությունը, քաջությունն և հաղթությունը առավել և մեծ էր այս մասին. Սյունյաց նախարարները շատ անգամ թագավորի մը պես առանձին և ինքնակամ պատերազմներ ու հաղթանակներ արած են եղեր իրենց մերձավոր և սահմանակից զանազան օտարազգաց հետ. առանձին պատիվ, ավագ իշխանություն, մեծամեծ իրավունք գահերիցության կարգ ու աստիճան ունեցեր են:

Իրենց բնակության և իշխանության սկիզբն է Միսակ հայկազուն, Գեղամ նահապետի որդին. որո անունով և այն աշխարհը կոչվեր է և կկոչվի ցայժմ Սյունիք և բնակիչներն Սյունեցիք:

Սյունյաց աշխարհը, ինչպես որ կերևի, այնպես նշանավոր և երևելի քաղաքներ չէ ունեցեր, սակայն յուր ամեն գավառներուն մեջ, գրեթե և ամեն մեկ գյուղի մեջ մեկ մեկ բերդ կամ դոյակ ունեցեր է շինված, և նոցա գեղերն պակաս չէին քաղաքի մը մեծութենեն ու վայելչութենեն:

Լեռնոտ է ընդհանրապես Սյունյաց աշխարհը, և այն լեռանց վերա մացառներուն մեջ կերպ կերպ գագաններ կան:

Սարերու թիկանց վերա, ձորերու մեջ, դալարախիտ վայրեր, ջրերու ափերը այսպիսի տեղեր շինված են նոցա գեղերն. զվարճալի է իրենց թե վաստակը և թե կյանքը: Այո և ես սիրեցի այնպիսի տեղվանքն: Բայց ափսո՛ւ շատ դեղեր տեսա, շատ տեղեր անցա, որ թափուր դարձեր էին՝ ավերակ:

Սրբության վայրեր, վանքեր, տաճարներ շատ կան այն կողմերը. գեղեցիկ բլուրներու վերա շինված են ամենը. բայց ավա՛ղ շատերուն հիմունքը միայն կերևան. քանիսը ինչպես այրի մնացած են ամայի, ա՛հ, Որոտնավանքը ես տեսա, որո կամարներն ու որմերն տակավին ողջ էր, բայց շատուց ինքը մնացած էր անտեր, ուստի և ավեր. ինչպես ծերունի մի կուլար ողորմելի, որ ինկած լիներ անխնամ յուր գավակներից մեջ վայրի անապատին. բայց յուր գավակներն ևս արդեն չկային կենդանի: Գեղեցիկ դիրք մի ուներ. ձորի շրթանց վերա բարձրավանդակ շինված էր. տակեն Որոտան գետը որոտալով կանցներ և կարծես նորա աչաց արտասուքը յուր ջրերի մեջ խառնած ու առած կտաներ. վանքին ստորոտը նույն գետին եզերքը ահագին գեղ մի, և այն էր Որոտան գեղ, ուստի էր սուրբն Հովհաննես Որոտնեցին. բայց ի՞նչ տեսանք այլ, միայն ավերակ. մեծամեծ տներու ու շենքերու ավերակ. ա՛հ, այն սուրբ տաճարը ինչպես ժամանակին անմահ արձանը նույն գեղի միջակետ գագաթը բաց բարձր ու ահեղ դրությամբ կերևա. յուր վերա նայողը կամ կզարհուրի կամ կուլա:

Տաթևու վանքը, Ամարաս, Գանձասար, սոքա ամեն մեկն մեկ մեկ բարձր ու մեծամեծ աթոռներ են. ուր կնստեին Սյունյաց ինքնագլուխ եպիսկոպոսներն կամ Մետրոպոլիտները. ու Աղվանից կաթողիկոսներն. և սոցա շենքն ու մեծությունն տեսողաց աչքին կվկայե այն նախկին վեհությունն փառավորությունն և բազմաց բնակությունը, քննող կամ հետաքրքիր մտաց կուտա և այն լույսն, ճանաչել նախնյաց մեծահավատ և մեծագործ հոգին ու զարմանալի ճարտարապետական արվեստն:

Այս ամեն վանքերը իրենց սեպհական և ճոխ ճոխ թեմեր, հողեր և ուրիշ կալվածքներ ունեցեր են. միայն Տաթևու վանից կասվի թե երկու հարյուրեն ավելի գեղ ունեցեր է բոլորովին յուր



սեպհական: Բայց այժմ շատ և շատ նվազ ու պակաս են: Խոթա վանք, որո սեպհական հողին տարածությունը երկու օր հազիվ կշրջագայվի կասեին. այս ժամանակ մի անվարդապետ և անմիաբան էր, հետևաբար և անպաշտպան մնալով գրեթե սեպհականաձ կլինին այն տեղի բնակիչ քրդերն. սակայն Շուշի քաղաքին հասարակությունը և իշխանքն քանի դարուց հետե ազգասիրաբար կտքնին կրկին այս ազգային անգին ավանդը ի կորստենե ազատել, և կարծեմ հաջողության հետ էին. շնորհիվ արդար և ողորմած տերության Ռուսաց:

Այնպիսի հարստահարություններով այսպես կորուսեր են մեր Հայաստանի շատ վանքերն:

Բնակչաց կամ ժողովրդյան վերա ձգենք մեր աչքը և կտեսնանք բնական արիություն ու սրտի քաջություն ունին ընդհանրապես խառն թե Հայ և թե Պարսիկ, ձի հեծնելու և զենք գործածելու զարմանալի հաջողականություն ունին. միով բանիվ, մահվանե չվախցող ու մահը իրենց ոտքին հետ ման ածող մարդիկ են:

Սյունյաց Հայ ժողովուրդը ազատասիրության հոգի և նահատակության արյունը յուր անձին մեջ կկրե. պարզություն է թե ուտելու թե հագնելու և թե խոսելու մեջ. չափազանց ջերմեռանդ և երկյուղած են առ Աստվածայինս և առ հոգևորս. բայց դյուրավ կգայթակղին և իսկույն կխլեն այն անձը կամ այն հոգևորականը, որ զիրենք կգայթակղեցուցանե. նոցա մեջ գնացող կամ մնացողը:

Ակամա զմարդն կբարվոքեն. բայց և բարվույն՝ ինչպես Քրիստոսին ովսաննա կանեն:

Ուսումն չունին, սակայն զգայուն են և կ'հասկնան. միայն քարոզողն է պակաս. իրենց միամտության հետ ունին և վեհ սիրտ. բնականաբար բարձրապարանոց և ծանրագլուխ են. թե և զերության օրեր շատ քաշեր են, բայց իրենց գլուխը միշտ սեզ պահեր են: Պարսկին կատաղի և անբարիշտ բնության ժամանակը դարձյալ Սյունիք կ'վայելեր ու կ'վարեր իշխանություն, փառք, մեծություն, և այս Մելիքություն էր: Այս աշխարհեն էր այն երևելի հաղթող և քաջ գորապետն Ռուսաց Մատաթով: Այս աշխարհի Հայն էր, որ իբր հարյուր երեսուն տարի հառաջ փոքրիկ խումբ մը կազմած և իբրև թագավոր կկոչվեր Հայրենի ազատության վերա:

Հիշեցեք Դավիթ Սյունեցին:

Մելիքությունը, զոր հիշեցինք, էր մի կերպ ազնվապետական կառավարություն, կամ նախարարական դրություն:

Սյունյաց աշխարհը, որ է Ղարապաղ, հինգ Մելիքություն ուներ. բաժանյալ հինգ գավառներու վերա. որք էին, Ջրաբերդ, Գյուլստան, Վարանդ, Խաչեն և Դուռաղ. սոքա տիրապետություն կամ ինքնագլուխ կառավարություն էին. վաթսուն կամ յոթանասուն տարի հառաջ կենդանի էին և իշխան տակավին գորքեր ունեին և կոիվ կանեին. Մելիք Մեջլում, Մելիք Ապով, Մելիք Շահնագար, Մելիք Ալլահվերտի, և Մելիք Բախտամ. որոց օրովը տիրացավ բռնացավ Իպրահիմ խան չարագործ պարսիկն, և վերջապես իշխեց ողջ Ղարապաղին, տիրեց և Շուշվա բերդին. որ այն ժամանակներն նոր էր շինված եղեր Հայ Մելիքներեն: Այլ թե ի՞նչ սկզբունքով եղեր և ի՞նչ վախճանով անցեր է այս Մելիքությունն Ղարապաղից ճիշտ չեմ գիտեր, միայն գիտեմ, որ Ռուսաց տիրանալեն հետե Մելիքություն չկա Ղարապաղի մեջ. բայց նոցա ժառանգներն այժմ ունին պատիվ Ազնվականության տերության առաջ. և կարծեմ կա մնացած իրենց ձեռքը սեպհական միայն քանի մի գյուղեր:

Շուշվա բերդը, որ և այժմ Շուշի քաղաք է գլխավոր տեղի կառավարության ողջ Ղարապաղին. աստ կնստին քաղաքապետ և ազգապետ իշխանք, դատավորք, զորք և ամենայն պետք:

Բնակիչքն ընդհանրապես Պարսիկ են և Հայ. տեղվույս հայերեն գաղթական բերված են Աքուլիսեն, Մեղրիեն, և Ղազանչի ըսված քաղաքեն կամ ավանեն:



Կան նաև մեկ մասն, որ այս կողմեն այն կողմեն կամ բուն Ղարապաղու վիճակեն եկած և բնակած են:

Տեղվույս հայ ժողովուրդը կաշխատի առավելապես վաճառականությամբ, զարմանալի ճարտարություն ու հաջողականություն ունին այս մասին մեջ. և իրենց վաճառականությունը դուրսի և հեռավոր քաղաքներուն մեջն է, իրենց զավակներն փոքր հասակով կկրթեն առուստուրի և հաշվեպահության մեջ. տասն հինգ տարեկանեն վեր պատանիք կամ երիտասարդներ խիստ քիչ տեսա ես. ամենքն էլ գնացած էին դուրսերն վաճառել և գնել. ափսո՞ս որ ուսմունքից կմնային անգետ, իսկ այժմ ուրախ սրտով և ուրախ հուսով պիտի գրեմ նոցա մեջ ծնած և ոգևորված ուսումնասիրության եռանդն և գործը, ազգասիրության հոգիք և արդյունավոր փորձ:

Բայց ուզելով որ նախ տեղեկություն մի տալ Շուշի քաղաքի դրության և շինությանց վերա, կ'քաղենք համառոտությամբ նույն տեղի բնակիչ արգո Պ. Իսրայել Մամիկոնյանցի ստորագրությունից, որո գրվածի ամբողջությունը, թե և հետաքրքրական և արժանավոր, բայց երկար լինելով թողումք մյուս մասերն:

«Մեր Շուշի քաղաքը գտնվում է բարձրադիրտակ բլրո մը վերա, որո վերայի շրջապատքն են միապաղաղ որձաքար վիմոք ի վեր սեպացյալ ժայռեր: Սորա մակերևույթը անհավասար և խոր խոռոչ դիրք ունի. որ հեռավոր՝ թիկունքներից և կամ մյուս կողմից նկատելու ժամանակը չէ երևում քաղաքի դրությունը. արևելյան կողմից միայն երևում են գեղեցիկ ապարաններ, որ բնակչաց տներն են. հարավային և հյուսիսային կողմերում մեծ ձորեր կան, որոց միջով անցնում են Քիրսա և Խալի Փալուի լեռանց ջրերի գետերը:

Մեր քաղաքը այսպես բնական ամուր և անառիկ լինելուն համար Հայոց նախնի ծերերից անվանվում էր բերդ, Տաճիկներից՝ Շուշի դալա, իսկ Ռուսներից՝ Կրեբոստ:

Բնակիչներն չնայելով խորո ու խոռոչ դրության քաղաքիս, շիներ են ամենայն տեղ թե ձորամեջ թե գառիվայր, և թե թումբերի վերա միահարկ, երկհարկ և եռահարկ տներ, կրաշաղախ ու կոփածո քարերով, որ ջրին միջից կ'հանեն, և կ'կառուցեն զայն իբր լեռնական ծանրությունով, բայց այս՝ ունի ապագա երկյուղ անակնկալ դիպվածո երկրաշարժության:

«Քաղաքիս միջում չկան գնայուն ջրեր, այլ կան շատ ջրհորներ, հորոց ոմանք լինում են քաղցր և բարեհամ, ոմանք աղի և դառն, որք շինությանց պիտոյից համար են գործածում. ուստի և ըմպելի ջուր գնում են ամենօրյա ջրավաճառներից գնով արծաթո. և այլ մեծատուններ միայն և որք ունին կարողություն: Իսկ աղքատներն ըմպում են հորերի ջրերից և շատ առողջ են ապրում: Եղանակը ցրտային է, և հաճախ ձյուն ու անձրև կտեղա. բայց ամառը շատ զվարճալի է:

«Քաղաքը բաժանվում է երկու մասն, առաջին մասին մեջ, այն է ներքին կողմում, բնակում են տաճիկներն, իբր ձորագաղտակի մեջ. իսկ երկրորդ մասում բնակում են հայերն, որք և բաժանում են չորս դաս կամ թաղ: Առաջինն է Աքուլյաց թաղ մոտ տաճկաց. որո մեջ կա խաչապսակ երեք զմբեթավոր մայր եկեղեցին սուրբ Աստվածանի անունով. կառուցված մեծաքանակ ծախքերով հայոց գերագնիվ իշխան հանգուցյալ Զոհրապ աղայից: Երկրորդն է Ղազանչեցվոց թաղ, որ մականվամբ կոչվում է Հանգիստների Խուրթ. որո մեջն է ամենափրկչի եկեղեցին միագմբեթ, ու ունի զանգակատուն նոր և գեղեցիկ, բարձրադիրտակ, խաչապսակ շինված սրբատաշ քարերով: Երրորդն է Մեղրեցվոց թաղն, որո տեղն զառ ի վայր ինկած է. որ և կոչվում է Կյավուր դալա, այս մասնում կա սագաշեն եկեղեցի սուրբ Աստվածածնի, զոր կառուցված է հանգուցյալ մահտեսի աղա Բաբայն Հախումյանց, հոչակավոր և մեծահիշատակ այրն:

«Իսկ չորրորդն է այն վերնաբնակիչների թաղն, որ քանի տարի հառաջ տաճկաց հետ խառն կբնակեին և կոչվում է Ներքին թաղեցիք, այս մասին մեջ կա նորաշեն խաչաձև եկեղեցին սուրբ



Հովհաննեսի անունով. այս եկեղեցին կառույց Պ. Հովհաննես Հովնանյանց ի հիշատակ յուր հարազատ եղբոր վառամեռիկ Մկրտչին:

Ի մեջ Մեղրեցվոց և Ներքին թաղեցվոց կա մի մենաստան կուսանաց՝ հանուն սուրբ Աստվածածնի. ունի սա յուր շրջապատն հող և պարտեզ. և յուրյան սեպհական երկհարկ սենյակներ. գորս կառուցած է յուր ծախքով բազմաշխատ մայրապետն Հռիփսիմե կույս Բահաթուրյանց. ուր բաց հինքենե բնակում են նաև հինգ կուսանք:

«Քաղաքիս շուկան կամ հասարակաց առևտուրի տեղ ինչնում է տաճկաց մասնում. կա և մասնավոր շուկա մի Հայոց թաղերումը. որոց գլուխը կա հրապարակ մի, գոր անվանում են *Թոք խանա*:

Մեր ժողովրդյան արանց կամ կանանց մեջ տակավին տեղի չէ գտեր նորաձևությունն Փարիզի զգեստներ. և թե կան էլ հատ հատ, ամտով են ցույց տալի մանավանդ կնիկներ. վասն զի իրենք շատ ամոթխած են և համեստ թե հագուստով և թե վարմունքով:

«Կայսերական ուսումնարան կա. ուր ուսում են զանազան ուսմունք և լեզուներ Հայ և Տաճիկ խառն: Պարծանք կհիշեմ իմ հայրենակցաց գործած հառաջադիմությունն և պայծառությունն նյութական կենաց հետ նաև բարոյական կյանքի մեջ. այսօր Շուշի քաղաքը երկու մեծամեծ պարծանքներ ունի. Գրատուն և Հոգևոր ուսումնարան Ազգային, որոց օգուտը մեծ պետք է լինի իմ հայրենյաց լուսավորության մասին ապագայում բայց և արդեն իսկ...»:

Բավական թող լինի այսչափ տեղեկություն Շուշվա քաղաքին վերա. մեք ինչպես խոստացանք, քանի մի խոսք էլ անենք այն տեղի ազգայնոց Ազգասեր և ուսումնասեր մասին վերա. որով ուրախ լինին մեր ընթերցողք, իմանալով որ ժամանակին ձեռքը այն տեղն էլ հասեր է, լուսավորության փափաքը նոցա սրտի մեջն էլ ծներ է. և ահա կշարժին և հառաջ կուզան:

Մեք անձամբ պատիվ ունեցանք Շուշվա քաղաքը երեք ամիս մնալու. և էնտեղի Ազգայնոց մեծարանքը և սերը վայելելու. նոցա խորհրդական և հրապարակական արյուններն մեր աչքն և ուշը գրաված են. գրեթե ամեն օր խորհուրդ էր, ամեն օր հոգացողություն էր միայն ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ. քանիցս ճառեր կարդացվեցան. քանիցս աստեախոսություններ եղան. և ամեն խոսքի մեջ ամեն շունչի մեջ այս էր միայն. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ. ո՞ն կ'հիշեմ և կ'սիրեմ ես այն օրը, որ ուսումնարանի հոգաբարձության հաշիվը ներկայացուցվեց հասարակության առաջ. փինաչին ոսկերչին հետ խառն էր կայնած. գեղացին իշխանին կուշտ կողտեր և կտեղեկանայր թե՛ յուր տված արդյունքն ինչ տեղ ծախս է եղեր. և ի՞նչ շահ ունեցեր է. արդարև զարմացան և ամեն բերան կօրհներ այս ժամանակը. կօրհներ Վեհափառ սրբազան Մատթեոս կաթողիկոսին կյանքը. կօրհներ և նվիրական ջանքն. կօրհներին և ուրախ էին հուսալով որ փութով կտեսնան իրենց որդիքը լուսավոր և իմաստուն մարդիկ: ... Ազգային լուսավորության և հառաջադիմության մասին շատ առատ և զվարթ տուրքեր կ'նվիրեն. Վերոհիշյալ հոգևոր ուսումնարանին ընդարձակության և նոր բարեկարգության համար հաստատուն և մեծ դրամագլուխ կկազմեին. և շատերն կային նվիրատվաց կարգին վեց հազար, ութ հազար, տասն հազար և մինչև քսան հազար մանեթ խոստացողներ, այսպիսի ընկերական նվիրատվությամբ սահմանած և հաստատած են այն հասարակաց գրատունը. ուր կստանան հայերեն ամեն լրագիրներ և ամսագիրներ. նմանապես և Ռուսաց քաղաքական օրագիրներ. հայերեն զանգան գրքեր, նոր հեղինակություններ, այլ կժողովին կ'կարդան և ունկնդրություն ու խորհրդածություն կանեն ժամանակին վերա, ազգաց և ազգիս վերա:

Ի՞նչ գեղեցիկ միջոց է ժողովուրդ կրթելու և լուսավորելու համար. կ'ցանկամք որ ուրիշ քաղաքներ էլ այսպիսի տեղ մի ունենան. ուր լուսավորության հետ և միություն կունենան. և



միությանը ազգօգուտ բարիք. կցանկամք, որ Շուշի քաղաքն էլ ավելի հառաջադեմ և հարատև լինի յուր սկզբմանց մեջ հորինակ և ի նախանձ այլոց:

Այստեղ կնքել կուզեմ մեր ստորագրությունը Ղարապաղու և Ղարապաղցի ազգայնոց մասին. նվիրելով մեր սրտին ուրախության հետ նաև երախտագետ հարգանաց հավաստիքը: Այո Վասպուրական Արծուին հանդերձ յուր ճետերով սիրելով և սիրվելով Ղարապաղու ազգայիններեն, և վայելելով նոցա քաղցր ընդունելությունը, կ'հարգե և կ'պահե անմահ ի սրտի նոցա հիշատակ արժանի. ոչ վասն զի զինքը կ'սիրեն. այլ վասն զի ճշմարիտ Հայ և անկեղծ ազգասեր են:

ՈՒՒՏԱՎՈՐԻ ՀԻՇՍԱԿԱՐԱՆԸ

Ա

ՄԻՆՉԵՎ ԹԱՂԼԱՐ

Այս 1884 թվի Վարդավառի տոներին իմ բարեկամներից մեկը հրավիրել էր ինձ գնալ իր հետ միասին Դիզափայտ, որ բավականին նշանավոր և հայտնի ուխտավայր է:

Ոչ այնքան կրոնական ջերմ զգացմունքները հարկադրեցին ինձ ընդունել այդ հրավերը, որքան ուրիշ հանգամանքներ, որոնց միշտ հպատակված է լինում մարդ, մանավանդ ամառը, քաղաքների մեջ: Երկարատև անշարժությունից հետո տեսնել կրկին անգամ Ղարաբաղի գեղեցիկ տեսարանները, հարուստ ու վայրենի բնությունը, մտնել գյուղական պարզ նահապետական կյանքի մեջ, այս ամենը այնքան հրապուրում էր ինձ, որ ես շտապեցի մի քանի օրով առաջ, այն է հուլիսի 12-ին, դուրս գնալ Շուշիից:

Նախ հարկավոր էր գնալ Թաղլար գյուղը, որ բավականին հեռու է Շուշիից և գտնվում է պատմական Տող բերդի մոտ: Ճանապարհը, որքան ներում է երկրի լեռնային բնավորությունը, շատ տեղերում բավականին հարմար է ինչպես սայլերի, նույնպես և ձիաների համար: Բայց շատ տեղ էլ նա իսկապես անտանելի է դառնում՝ անցնելով խոր վիհերի, մացառապատ ձորերի և կիրճերի միջով: Երթնեկությունը այդ ճանապարհով բավականին կենդանի է, որովհետև նրա չորս կողմում գտնվում են բազմամարդ հայ գյուղեր, որոնք ապրում են առատության մեջ: Ջրի կողմից նույնպես առատություն են վայելում շրջակայքը. հաճախ պատահում են գեղեցիկ աղբյուրներ, գետակներ: Միակ անհարմարությունը, որպես հայտնեցի, բնական արգելքներ են, որոնք անտանելի են կացուցանում ճանապարհը շատ տեղերում: Ինչ տեսակ ճանապարհ կարողացել է շինել մարդու ոտը դարերի ընթացքում, նույնը անփոփոխ մնում է մինչև այսօր՝ հուսահատություն պատճառելով անփորձ ուղևորին: Այդ տեսակ դրությունը ճնշում է երկրի տնտեսությունը. երթնեկության անհարմարությունը դրել է այդ կողմերի գյուղացիներին միմյանցից անջատված դրության մեջ, որ բացասում է հանգիստ և արագ հաղորդակցության կարելիությունը և նրա հետ կապված օգուտները: Բնության հարստությունը ապշեցնում է մարդուն, բայց պակաս հակասական ապշություն չէ պատճառում և գյուղացիների համեմատական աղքատությունը: Եթե գյուղացին ապրում է կուշտ փորով, դա դեռ նշան չէ նրա տնտեսական բարելավության: Իր բերքերը նա արտահանում է ուրիշ տեղեր խիստ աննշան քանակությամբ, իսկ բոլոր ստացած բարիքը շռայլաբար վատնում է տեղը, իր տանը՝ սահմանափակելով իր հողագործական գործունեությունը միայն տեղային պահանջներով: Մրա պատճառը, մեր կարծիքով, հաղորդակցության ճանապարհի վատությունը պետք է համարել: Եվ այս միտքը անփոփոխ մնաց իմ մեջ մինչև նույն իսկ Թաղլարը:

Խոսելով ճանապարհի մասին, անկարելի է լռության տալ մի տեղ, ուր ճանապարհը իսկապես անտանելի է:

Իրիկնապահին մենք իջանք հանգստանալու մի անտառապատ սարի ստորոտի մոտ: Ճանապարհը գնում է ծակի միջով, որ կոչվում է Խորհատ: Բայց ի՞նչ ճանապարհ. մի նեղ, ոլորուն շավիղ, որ պտույտ է գալիս մի ահագին խորխորատի եզերքով: Ամբողջ լեռնային լանջը և խորխորատը ծածկված են հսկայական ծառերով, որոնք անտեսանելի են կացուցանում ուղևորից



երկինքը: Խորհրդավոր լուսությունը, մթությունը ճնշող, ծանր տպավորություն են գործում մարդու վրա: Այդ ճանապարհն ունի ոչ ավելի քան երեք քառորդ վերստ, բայց այդ տարածությունը անցնելու համար հարկավոր է մի ժամ: Ձիու զգույշ և հանդարտ ընթացքի ժամանակ դուք դողում եք, կարծում եք, թե ձեր և վտանգի մեջ միայն մի մագ կա: Եվ իրավ, բավական է մի անզգույշ քայլ, մի թեթև սայթաքում, և մարդ խորխորատի մեջ կլինի, որտեղից ծառերի սոսափյունի հետ լսվում է լեռնային առվակի խուլ հոսանքը: Անասունները շատ տանջվում են այդ ճանապարհին. մինչև անգամ լեռնային քարոտ ուղիների սիրասուն որդին՝ ջորին, նա էլ շուտ-շուտ սայթաքում էր և մինչև սարի գլուխը գնալը ծածկվում էր քրտինքով, որ, առատությամբ թափվելով հողի վրա, կազմում էր թաց շերտեր: Սարսափելի ծմակը քիչ-քիչ ոչնչանում է գյուղացիների կացինների տակ. մի քանի տարուց հետո գուցե կվերանա նրանից մշտական մթությունը. բայց մի թե դրանով կանհետանան ճանապարհի մյուս անհարմարությունները, որոնք առանց ծմակի էլ անտանելի են: Եվ դեռ պետք է աչքի առաջ ունենալ, որ այդ ճանապարհը ամենահարմարն ու ամենակարճն է *Տիգրակի* և *Վարանդայի* մեջ:

Առաջներում Խորհատը ավազակների բույն է եղած. օրը կեսօրին այստեղ սպասելիս և կողոպտելիս են եղել մարդկանց: Իսկ այժմ ոչ միայն ցերեկով, այլև գիշերը ապահով անցուդարձ են անում այդ ճանապարհով: Առհասարակ ես նկատեցի, որ ամեն տեղ տիրում է անդորրություն, և երկյուղ ավազակներից բոլորովին չկա: Գյուղացիք շնորհակալ էին Շուշիի գավառապետ պ. Գանգիելիից, ասում էին, որ այդպիսի վարչական անձ վաղուց տեսած չեն:

Անցնելով Խորհատի միջով, մենք բարձրացանք մի լեռնային շղթայի գլուխ: Այդտեղից բացվում է շատ ախորժելի տեսարան: Առանձնակի սարերը և լեռնային շղթաները, պատած խիստ հարուստ բուսականությամբ, երևան են գալիս, կարծես, մի գեղեցիկ պանորամի մեջ: Ինձ դեմառդեմ բարձրացած էր Տոդա սարը, որի սուր գագաթը մինչև երկինք հասած է երևում: Այդ սարը տեսնելուն պես իմ մեջ զարթնեցին նրա անվան հետ կապված պատմական անցքերի հիշողությունները:

Մինչ այդ հիշողությունները պտույտ էին գալիս իմ հիացած հոգու մեջ, իմ ետևից հասան մի քանի հետևակ գյուղացիներ. նրանք բոլորը կանգնեցին իմ ձիու մոտ և, երեսները դարձնելով դեպի հարավ-արևմուտք, սկսեցին ջերմեռանդությամբ խաչակնքել: Երբ ես զարմանքով դարձա դեպի այդ կողմը, մեկն ասաց ինձ.

-Սուրբ Դիզափայտն է. իմ երեսս նրա ոտի տակը:

Ես նայում եմ: Հեռու հորիզոնի վրա, երեկոյան կիսամթությամբ պատած մի սար է դա, որ իր բարձրությամբ գերազանց էր մյուս բոլոր այդ կողմի սարերից. և ահա այդ սարի գլուխը պիտի գնայինք մենք՝ հոչակավոր նահատակների տանջանաց վայրը համբուրելու համար: Ես խոսակցություն սկսեցի գյուղացիների հետ Դիզափայտի մասին: Ոչ ոք որոշ հասկացողություն չունեի. միայն գիտեին այսքանը, որ նա մի շատ գորավոր սուրբ է, որ ամեն տարի Վարդավառին լույս է գալիս նրա վրա, որ շատ ցավեր է բժշկում նա:

- Աստված ուխտող կատարի, պարոն, կգնաս, շատ լավ բաներ կտեսնես և միշտ մեր սուրբին ուխտավոր կլինես:

Այս խոսքերով գյուղացիները հեռացան, և ես շարունակեցի ճանապարհս: Արդեն մուրն էր, երբ հասա Թաղլար:

Թաղլարը մի բավականին մեծ գյուղ է (500 տուն): Հետևելով Ղարաբաղի մեջ բացառություն չսիրող ընդհանրության օրինակին, Թաղլարը տեղավորված է լեռնային գառիվայրի վրա, որ աստիճանաբար իջնում է դեպի Ղուրուչայ անունով գետը, որ քերում է Տոդա սարի ժայռոտ



ստորոտները: Նայելով գյուղի արտաքին տեսքին, բնակիչների կեցությանը, կարելի է ասել, որ Թաղլարը առհասարակ հարուստ գյուղ է: Այստեղ այնքան շատ չեն գետնափոր խրճիթները, որոնցից կազմված են լինում առհասարակ հայ գյուղերը, այլ պատահում են լավ շինած նոր ձևի տներ: Բնակիչների մասնագիտությունը ածխագործությունն է: Ձմեռը այդ արհեստով պարապում են համարյա ամենքը, և Շուշիում ծախվող ածուխի բավական մեծ բաժինը ընկնում է թաղլարեցուց վրա: Ածխագործության արհեստին շատ նպաստավոր է փայտի առատությունը գյուղի շրջակայքում, որ իսկապես զարմանալի է: Ամառը գյուղացիք պարապում են դաշտային աշխատություններով: Գյուղի շրջակայքում կան շատ թթենու այգիներ. օղեհանությունը տարեց-տարի ավելի շատանում է: Անասնապահության ճյուղում թաղլարեցիք հայտնի ջորեպաններ են. համարյա ամեն տուն ունի մի քանի ջորի: Մյուս տնային կենդանիներ քիչ կան:

Այս գյուղում կա հայոց հոգևոր ծխական դպրոց, որի ուսուցիչ պ. Հովնաթյանից մոտ իջա ես: Արձակուրդների պատճառով աշակերտներ չկային, բայց ուսուցչի պատմության նայած, նույնպես և քննելով գյուղացիների վարմունքը, պետք է ասած, որ կրթական գործը այստեղ դեռ խանձարուրքի մեջ է գտնվում: Ժողովրդի հարաբերությունները դեպի ուսումնարանը կարող էին բավական առատ նյութ տալ որևէ ծաղրաբանական թերթի...

Պառկելով քնելու, ես անհամբեր սպասում էի հետևյալ օրի բացվելուն, երբ կարողություն կունենամ տեսնել Տոդ բերդի երբեմնյան հզոր իշխանության ավերակները, տեսնել Գտիչ անունով հայտնի վանքը: Մի այսպիսի բուռն ցանկություն սկսել էր զարգանալ իմ մեջ այն ժամանակից, երբ հայտնի էր դարձել ինձ Ղարաբաղի նոր պատմությունը՝ շնորհիվ պ. Բաբայանի աշխատանաց: Ինձ շատ անգամ էր պատահել առաջներում անցնել Տոդ գյուղի միջով, շատ անգամ էի տեսել նրա բերդը, հին պալատը, նույնպես նրա գլխին բարձրացած ամեհի սարը, բայց ուշադրություն չէի դարձրած դրանց վրա այն հասկանալի պատճառով, որ չէի իմանում, թե ի՞նչ երևելի պատմական անցքերի վկա եղած է այստեղի ամեն մի քար, ամեն մի ժայռ: Բայց երբ մեր բազմաշխատ հեղինակի մեզ համար մեծ գին ունեցող «Խամսայի Մելիքությունները» անունով աշխատությունը բացեց մեր առաջ անցյալի մթին վարագույրը՝ ցույց տալով նրա ետևում առյուծասիրտ հերոսներ, մինչև այսօր մնացած կենդանի վկաներ մեր հոյակապ պապերի գործունեության՝ այս ամենից հետո Տոդա սարը խիստ հետաքրքրելի էր դարձել ինձ համար:

Բ ԳՏԻՉ

Վերջապես բացվեցավ տաք օրը. հուլիսյան արեգակը կանգնեց պարզ երկնականարի վրա՝ տարածելով ամեն տեղ սաստիկ ջերմություն:

Սարը բարձրանալու պայմանները շատ անհրապույր էին: Մեր դժբախտությունից գյուղում չկարողացանք գտնել անասուններ, որոնց վրա կարելի լիներ ելնել գոնե մինչև Գտիչ վանքը: Դաշտային աշխատանքների ամենատաք ժամանակն էր, և գյուղացիներից ոչ մեկը չէր համաձայնում ձի տալ մեզ: Իմ բարեկամը հորդորում էր հետաձգել գնացքը մի ուրիշ ժամանակի, նկարագրելով այն բոլոր դժվարությունները, որ անբաժան են այդ սարսափելի տոթի ժամանակ սարը ոտով բարձրանալուց: Բայց ես անխախտ էի իմ վճռում և, արհամարհելով ամեն մի դժվարություն, համոզեցրի գնալ: Մենք գտանք և մի ուրիշ ընկեր, որ սիրով համաձայնեց գնալ մեզ հետ: Բոլորս էլ կարծում էինք, թե շատ շուտ կհասնենք վանքին, որ այնքան մոտ է երևում ներքևից:

Ուղիղ ժամը 11-ն էր, երբ սկսեցինք բարձրանալ դեպի Գտիչը: Արեգակը երկնականարի միջից անտանելի կերպով այրում էր. անշարժ օդը ինդոլում էր իր ջերմությամբ: Հողը, կարծես, շիկացած



երկաթ էր դառել և այրում էր մեր ոտները: Այսպես էր այն ժամը, երբ մենք սկսեցինք բարձրանալ Ղուրուչայ գետի խոր ձորից: Մեր առաջ ճանապարհ կամ լեռնային շավիղ բոլորովին չկար. պետք էր անցնել մի քանի դեռ չհնձած արտերի միջով, որոնցից վերև, ինչպես ասում էին գյուղացիք, պիտի գտնեինք մի շավիղ, որ տանում է ուղիղ դեպի վանքը: Ճանապարհ ընկանք: Չորս կողմում ամեն տեղ կարծես կրակ էր այրվում. սարսափելի, համարյա ուղղաձիգ գառիվերը, ծածկված չորացած խոտաբույսերով, ամեն մի քայլում հարկադրում էր սայթաքել և հետուհետ գնալ: Բայց մենք դեպի առաջ էինք մղվում՝ բռնելով ամեն մի պատահած թփից, ամեն մի խոտից: Բոլորովին անսովոր լինելով երկար ոտով գնալու, այն էլ այդպիսի մի ճանապարհով, ես ստիպված էի շուտ-շուտ կանգնեցնել ընկերներիս, պատահած շվաքում նստել ու հանգստանալ: Համարյա բոլորովին շնչասպառ, ուժաթափ ընկնում էի ես խոտերի վրա և անվրդով վայելում էի հանգստության մի քանի քաղցր րոպեներ: Օրհնյա՛ լ հանգիստ. այնքան գերում էր նա մեզ ամեն անգամ, որ մեր շուրջը թփերի մեջ գալարվող սև օձերն անգամ չէին կարողանում որևէ երկյուղ ազդել մեզ վրա: Այսպիսի մի ճանապարհորդությունն այդ հրացայտ ճառագայթների տակ, այդ սուսկալի գառիվերով, հետիոտն, ես առնվազն անխելքություն կհամարեի գուցե մյուս ժամանակներում, բայց ոչ երբեք այդ տանջանքներով լի րոպեներում, որովհետև գիտեի, որ յուրաքանչյուր դժվար արած քայլի հետ, յուրաքանչյուր շարվածքի հետ ավելի և ավելի մոտենում էի ցանկացած նպատակիս: Իսկ նպատակը, որ երկար մեծացել ու հասունացել էր իմ մեջ, ուժ էր տալիս իմ անգոր անդամներին, հոգուս մեջ ներշնչում էր մի անհայտ զգացմունք, որ ավելի սաստիկ վառում էր սաստիկ ցանկությանս բոցը:

Մի ժամից հետո մենք դուրս եկանք արտերի միջից և ընկանք մացառների և փշոտ թփերի մեջ: Հուլիսյան տապը հասնում էր կատաղության. ոչ մի ամենաթեթև քամի, ոչ մի փոքրիկ ամպ, որ ծածկեր մի քանի րոպե անողոք արեգակը՝ ոչինչ չկա. իսկ այստեղ մինչև այժմ եղած դժվարությունների վրա ավելացավ և այն, որ գառիվերը ավելի ուղղաձիգ է դառնում, և թփերն ու մացառները անխնա ծակոտում են մեզ ամեն կողմից: Դառն րոպեներ էին անցնում մեր գլխով... Բայց մենք էլի առաջ էինք գնում՝ շուտ-շուտ հանգստանալով թփերի տակ:

Վերջապես մենք հասանք գառիվերի գլուխը, որ կազմում է մի լեռնային բարձրավանդակ, որը մի թեք տափարակով միանում է իսկական սարի հետ: Այդ տեղից երևաց վանքի գմբեթը: Մենք ազատ շունչ քաշեցինք և անհոգությամբ ընկանք խոտերի վրա. նոր վեր կացած լեռնային մեղմ քամին քիչ մի կազդուրեց մեզ: Մենք վեր կացանք և քիչ ժամանակից հետո վանքի մոտ էինք:

Գտիչը մի փոքրիկ վանք է, ունի նույնպես փոքրիկ գմբեթ: Նա կառուցված է սրբատաշ դեղնագույն քարերից: Տեղի դիրքը բավական գեղեցիկ է. Ամառային սաստիկ տապը, որ կիզում էր մեզ ներքևում, այստեղ մեղմանում է և չի խաշում մարդուն:

Բակը մտանք: Մեզ դիմավորեց վանահայր Առաքել վարդապետ Կոստանոյանցը, մի առողջ և հաստ կազմվածքի տեր մարդ, որի վաթսուն և ավելի տարիքը կարողացել էին գոյացնել միայն մի քանի ալիքներ նրա խիտ մազերի մեջ. այնքան գեղեցիկ և բարեբեր են այս լեռնային մաքուր օդը ու հովասուն անտառապատ շրջակայքը: Վանահայրը շատ ուրախացավ, որ իր երկարամյա առանձնակյաց միանման մենակությունը այդ օրը մեր ներկայությամբ մի քիչ այլազունվեց: Նա ասում էր, որ այս վանքում նստած է 28 տարի: Որքա՛ն համբերություն:

Մի քանի համառոտ խոսակցություններից հետո մենք շտապեցինք մտնել վանքը: Նախագավիթը, մի կիսախարխուլ ու խոնավ շինվածք, վկայում է, որ վանքի հետ մի տեղ չի շինվել, այլ ավելի հետո: Այդտեղ կան մի քանի եպիսկոպոսների գերեզմաններ, որոնց արձանագրությունները մեզ չհաջողվեց կարդալ: Վանքի մեջը տանող երկու կողմին կան հիանալի կերպով



քանդակագործած խաչեր. երևում էր, որ այստեղից է սկսվում հին հայկական ճարտարապետությունը: Վանքի կտուրը կանգնած է երկու սյուների վրա, որոնք շինված են սրբատաշ, խնամքով կռկած քարերից: Առհասարակ ներքին և արտաքին կողմից վանքի ճարտարապետությունը կրում է Բագրատունյաց ոճի կնիքը:

Հյուսիսային պատի վրա կա մի երկար արձանագրություն, որից երևում է, որ վանքը շինել են երկու եպիսկոպոսներ Ամարասա միաբանությունից՝ Տեր Սարգիս և Տեր Վրթանես եղբայրները: Շինությունը սկսվել է ըստ հայ տոմարի ՌՂ-690 (փրկչական 1241) թվականին, վերջացել է 695թ.: «Ուրեմն այս վանքը վեցուկես դարի ընթացքում դեմ է տվել իր ճակատը ժամանակի և բնության արհավիրքների դեմ», - մտածում է տեսնողը, և այս մեկը լցնում է նրա սիրտը մի տեսակ ընկճված խոնարհության զգացմունքով այդ պատկանելի հնության առջև: Այս զգացմունքը այնքան սաստիկ էր իմ մեջ, որ չէի համարձակվում մի քանի ազատ քայլեր անել և դրանով վրդովել դարավոր լռությունը: Հարգել և բոլոր սրտով պետք է հարգել այս հնությունը, որ վեց հարյուր հիսուն տարի շարունակ ապրում է և մինչև այժմ չի կորցրել իր անդամների ուժը, ճկունությունը:

Հետո արձանագրությունը հիշատակում է իր ժամանակի քաղաքական սուկալի անցքերի մասին: Նա ասում է, որ վանքը շինվել է շատ դժվար և դառն ժամանակ, երբ Նետողաց¹ ազգը, ավերակ դարձնելով այս երկիրը, կործանեց աթոռը (Ամարաս): Եվ ուխտից մեր հիշած երկու եպիսկոպոսները քաշվելով այս անմատչելի տեղերը, հավաքել են մի տեղ Ամարասա միաբանության փշրանքները: Խեղճ նախնիք: Ձեզանից մնացած ամեն ինչը խոսում է միայն արտասուքի և արյան մասին: Բռնավորի ուժը, սուրն ու հուրը հարկադրել են ձեզ փախչել սարերի քարանձավները՝ թողնելով ձեր գոյության մասին այնքան շատ տխուր հիշատակարաններ: Մինչև անգամ այս խուլ ու առանձնացած անկյունում, բնության այս ահռելի ամբողջությունների մեջ էլ լսվում են ձեր լացի ձայնը, ձեր աղետալից կյանքի փոթորկալից հոսանքը, որ մարմնացել են այս պատի վրա փարված՝ կիսով չափ եղծված տողերի մեջ:

Նայելով չորս մշտալուռ պատերին, նայելով այդ արձանագրությանը, ես հոգով սլանում էի մի քանի դար դեպի ետ և որպես թե տեսնում եմ վանքի միաբանությունը սրտաբեկ, դողահար շրջում է այս նվիրական սրբավայրում և երկյուղածությամբ ծնկաչոք աղոթքներ է առաքում դեպի երկինք՝ աղաչելով դադարեցնել արյունը, երկրի ավերումը...

Գտիչ վանքը հին ժամանակներում մեծ դեր խաղացած պիտի լինի այս կողմերի պատմության մեջ: Դրա մասին վկայում է նույնիսկ վանքի երբեմնյան ահագին հարստությունը: Մեր հիշած արձանագրությունից իմանում ենք, որ վանքը իր հիմնարկության սկզբից ունեցել է իբրև սեփականություն մի ահագին գավառ, որի սահմանները եթե այժմ փորձելու լինենք որոշել, պիտի երևան գա մեր առաջ համարյա ամբողջ Տիգրակը և Սյունիքի մի մեծ մասը: Իսկ միաբանությունը, երևի, բազմաթիվ է եղած, քանի որ պատահում են եպիսկոպոսների գերեզմաններ: Բայց թե ինչո՞ւմ է եղել այդ դերը, ի՞նչ է եղել վանքի ժողովրդյան հետ ունեցած հարաբերությանց պատմությունը, այդ մասին մի տառ անգամ վկա չկա, այդ ամենը մնում է ավերիչ ժամանակի գաղտնիք: Ահագին կալվածներից մնացել են այժմ մի փոքրիկ անտառ և մի քանի վարելահողեր սարի ուղղաձիգ գառիվայրերի վրա, իսկ միաբանությունը կազմված է միայն մի կուսակրոն հոգևորականից՝ Առաքել վարդապետից: Այս վարդապետը լավ համարում ունի շրջակայքում. նա հայտնի է իբրև հմուտ հայկաբան: Մենք խնդրեցինք նրանից ցույց տալ իր աշխատությունները: Նա բերեց մի հին քողով կապած փաթեթ: Կարդացինք: Դա էր Տիգրակի մելիքների պատմության սևագիրը, մի մեծահատոր աշխատություն, որի մաքուր արտագրությունը գտնվում է պ.Բաֆֆիի

¹Ճինաց



մոտ: Գրվածքի գրաբար ոճը թեթև, դյուրըմբռնելի է: Ինչպես հավատացնում էր հայր սուրբը, այդ աշխատությունը նա գրել է տասննութ տարվա ընթացքում՝ հավաքելով ճշգրիտ տեղեկություններ ժողովրդի ավանդություններից և այլ զանազան աղբյուրներից: Աշխատությունը իսկապես գնահատելի է. գոնե հայր սուրբը իր պատմությամբ ազատել է վերջնական անհայտությունից Տողա մելիքների զանազան երևելի գործերը: Հայր սուրբը շատ ցանկություն էր հայտնում տեսնել իր աշխատությունը ամբողջապես տպագրված: Մեր կարծիքով վատ չէր լինի այդ բանը, եթե Առաքել վարդապետի պատմությունը ամբողջապես չի ամփոփված «Խամսայի Մելիքությունների» մեջ: Հայր սուրբը ցույց տվեց և իր մի ուրիշ աշխատությունը, որը նա անվանում էր «Պատմություն եկեղեցական անցից»: Այդ պատմությունը, իսկապես ասած, արժանավորություն չունի: Նրա մեջ հայր սուրբը նկարագրում է տեղային զանազան սուրբերի վարքը, և նկարագրության աղբյուրները շատ տեղերում են իր՝ հայր սուրբի, ծումապահությունների և աղոթքների շնորհիվ տեսած երազները... Բայց առհասարակ հ.Կոստանդյանցը բավական հնասեր և գրասեր մարդ է և միշտ արտահայտում է գովելի ցանկություն ուսումնասիրել հնությունները, կազմելով զանազան տեղերի պատմություններ:

Գ

ՄԵՌՅԱԼ ԱՎԱՆ

Արեգակն արդեն թեքվում էր դեպի արևմուտք, իսկ մեր առջևում դեռ կար մի երկար ճանապարհ ևս, որ տանում էր Տողա սարի գագաթը: Այնտեղ, ինչպես պատմել էին ինձ գյուղացիք, կա մի հին եկեղեցի, նույնպես և ավերակներ: Ես վճռել էի տեսնել և այդ տեղը: Թեև ընկերներս, մինչև անգամ վանահայրը, խորհուրդ չէին տալիս գնալ՝ բերելով ինչ-ինչ պատճառներ, բայց ես հոժար էի ամեն բանի, միայն թե կարողանայի տեսնել, թե այդտեղ, այդ մինչև ամպերը բարձրացած սարի գագաթին, ինչ ավերակներ կան:

Առաքել վարդապետը տվեց ինձ մի երկաթե սրածայր գավազան և մի հսկայատիպ հրացանակիր ուղեցույց: Ես և երկու ընկերներս ճանապարհ ընկանք: Մի քանի քայլից հետո մենք մտանք վանքապատկան համարյա կուսական անտառը, որ միավորվում է սարի գագաթը պատող խիտ անտառի հետ մի բավական լայն կիրճով, որ բաժանում է սարի ամենաբարձր ժայռոտ գագաթը հյուսիսային մյուս ժայռերից: Այդ կիրճով էլ գնում է ճանապարհը: Ներքևից նայելով՝ կարծում ես, թե մի որևիցե տասն րոպեում կարելի է հասնել գագաթին, այնքան մոտ է երևում նա: Բայց իսկապես հայտնվեց, որ ամենաքիչը մի ժամ պետք է գնալ մեծ դժվարություններով: Շուտով սկսվեց այն ուղղաձիգ զառիվայրը, որով ընկած էր մի լեռնային հազիվ նշմարելի շավիղ: Այդ շավիղով արած մի քանի քայլերը իսկույն ցույց տվին, որ գետի ձորից մինչև վանքը տանող ճանապարհի նեղությունները դեռ ոչինչ են... Այնտեղ կարելի էր գոնե մի կերպ ամրացնել մի ոտը՝ մյուսը առաջ տանելու համար. իսկ այստեղ այդ էլ կարելի չէր...

Տերևախիտ ծմակի մեջ տիրում էր թանձր ստվեր, որ տեղ-տեղ տեղի էր տալիս արևի ուղղահայաց սլաքանման ճառագայթներից գոյացած փայլուն շերտերին: Չնայած ստվերին, ծմակի մեջ օդը խեղդող և անշարժ էր. Մաստիկ տապը ճանապարհի խոչընդոտներից ավելի էր նեղացնում մեզ: Բռնելով ծառի ճյուղերից, խրելով գավազանը գետնի մեջ, ես քայլ առ քայլ ընթանում էի դեպի բարձր, միևնույն ժամանակ քրտինքը հորդ անձրևի պես ծլլում էր դեմքից: Մենք քայլեր էինք համրում և, խրախուսվելով նրանից, որ հետզհետե բարձրանում ենք, թափում էինք մեր ճիգը շարժվելու համար: Հասնելով այս կերպ պատի պես ուղղաձիգ ճանապարհի համարյա կեսին, ես փշրվածի պես ընկա մի մեծ քարի վրա: Բոլոր երակներս քիչ էր մնում պատռվեին հուզված-



տաքացած արյան ուժգին զարկերից. բոլոր անդամներս հանգստություն էին պահանջում, և ես բոլորովին ուժ չունեի դիմադրել նրանց: Իսկույն մոտեցավ ուղեցույցը, տվեց ջրով լիքը «փարջը», որ վանքից վերցրել էր իր հետ. ես լվացի երեսս ու գլուխս, որից մի քիչ զովանալով, կարողացա նայել դեպի ներքև և ծանր զգացմունքով դիտել այն սարսափելի զառիվայրը, որ իսպառ ուժաթափ էր արել ինձ: Նայում եմ ներքև, ահա ծառերի միջից երևում է սպիտակ գլխարկ. դա իմ ընկերն էր, որ բավական ետ էր մնացել. նա դժվարությամբ մագլցում է դեպի ինձ, երբեմն կանգնում է, նայում ինձ վրա... Վերջապես նա էլ հասավ ինձ մոտ և նույն փարջի օգնությամբ զովացավ: Մենք վեր կացանք: Սարսափելի զառիվերը դեռ շարունակվում էր. ճանապարհը լիքն էր քարերի անհամար մանր կտորներով, և այս մեկը ավելի ևս դժվարացնում էր ընթացքը: Իմ մյուս ընկերը բավական առաջ էր գնացել, և մենք զարմանում էինք նրա ոտների վրա: Ուրիշ զգացմունքներ խոսքերով արտահայտել միմյանց մենք չէինք կարողանում, որովհետև սաստիկ հոգնածությունը արգելում էր խոսել: Այո՛, այդ քարոտ ճանապարհը, որով կարող էին գնալ միայն վայրենի այծերն ու կատուները, հուսահատեցնելու չափ տանջում էր մեզ: Եթե միայն այս ճանապարհով է եղել առաջվա հաղորդակցությունը սարի գլխի հետ, պետք է ուրեմն միայն զարմանալ այն ժամանակվա մարդկանց համբերության և ջղերի ուժի վրա:

Ուղեցույցը պատմում էր, որ դեռ նոր ժամանակներում այս բարձրաբերձ ժայռերի ստորոտում, անտառի մեջ, գտնվել են զանազան մանր տնային իրեր, եկեղեցական անոթներ, հրացանի ձիպոտներ, մետաղյա անոթներ, նույնպես և ոսկի ու դրամ:

Բայց ահա մոտ է զառիվերի վերջը. մենք հավաքում ենք վերջին ուժերս, ավելի արագությամբ բանեցնում ենք ոտներնիս և ահա մենք էլ սարի գլխին ենք: Տեսարանը իսկապես ահարկու էր և խիստ ճնշող: Երևակայեցեք մի մեծ թանձրախիտ անտառ, ուր ծառերը հասնում են մեծ բարձրության. անտառի մեջ տիրում է խորին կախարդական լռություն. և նրա մշտական թանձր ստվերի մեջ դուք տեսնում եք ավերակների մի ամբողջ քաղաք, այսինքն՝ լուռ մամռապատ պատերի մի լաբիրինթոս: Այդպես էր և այդ ավերակների տեսքը. նրանք ճմլեցին իմ հոգին, որ դեռ չէր կարողացել ազատվել մինչև այդտեղ անցած տարածության դժվարությունների ներգործությունից:

Անցանք շրջապարիսպից: «Մի՞ թե այսքան անառիկ բնական բերդի համար դեռ հարկավոր է եղել պարիսպ,- մտածում է մարդ,- և որքան մեծ է եղել այդ ժամանակների ահն ու սարսափը»: Մտանք մեռյալ քաղաքը կամ ավանը, գնում ենք կիսավեր պատերի վրայով. քարերը համարյա բոլորովին մամուռ են դարձել, և տների տեղերը ներկայացնում են մեծ-մեծ փոսեր, որոնց մեջ բուսած են զանազան հասակի և տեսակի ծառեր: Այո՛, մարդկային կյանքի սպառվելուց հետո, այս անշունչ ավերակների կուրծքի վրա դեռ պտույտ է գալիս բուսական կյանքը իր բոլոր մանրամասնություններով. մեծ ծառերը զլորվում են, ընկնում-փտում են, իսկ նրանց տակից դուրս են գալիս թարմ ու ճկուն ճյուղեր, ծիլեր... Բնությունը միայն կյանք է սիրում, նրան է զարգացնում, իսկ ամեն մի մեռյալ բան անխղճորեն ոտնահարում է, ոչնչացնում է, սպառնում է:

Եվ ես քայլում էի այս մահվան քաղաքի, այս կործանման վիճակի մեջ՝ անդադար երգելով քթիս տակ հայտնի երգից.

*Նայեցավ տխուր աւերակաց,
Մեր հարց լքեալ անշուք շիրմաց:*

- Ահա և եկեղեցին,- ասաց ուղեցույցը, երբ մենք գոռով ճանապարհ էինք բանում մացառների և միմյանց հետ հյուսած ծառերի միջով:

Ես կանգնած էի եկեղեցու մոտ, որ կառուցված է սարի ամենաբարձր գագաթը կազմող ամենի ժայռի ծայրին: Մի հայացք այստեղից դեպի ցած, սարի ստորոտը՝ աչքեր է մթացնում:



Եկեղեցին մի հասարակ շինություն է, առանց գմբեթի: Ներս մտանք: Ներսի կողմը բոլորովին մերկ է. ոչ սյուն կա, ոչ մեծ լուսամուտներ. մերկ բեմը գետնից հազիվ կես արշին բարձրություն ունի. գերեզմանային խոնավությունը իսկույն զարկում է մարդու դեմքին: Եվ այս «անշուք ու լքյալ» ավերակը մի ժամանակ թնդում էր երգեցիկ խմբի և այս մեռյալ քաղաքի բարեպաշտ ժողովրդի սաղմոսերգություններից... Իսկ ա՛յժմ: Իսկ այժմ գերեզմանական լռությունը չի խանգարում ոչ մի սոսափյուն, ոչ մի շշուռ, և սա վախենալով ճնշում է մարդու սիրտը: Ես և երկու ընկերներս դուրս գնացինք այդ տխուր և փառագուրկ սրբավայրից: Ավերակների մեջ մենք երկար որոնում էինք մի որևիցե գերեզման, մի արձանագրություն, բայց ոչինչ չգտանք: Միայն եկեղեցու մոտ գտնվող մի գերեզմանաքարի վրա կարողացանք կարդալ չորս տառեր՝ «Պետի» և այլևս ոչինչ: Ավերակները, ինչպես ցույց տվեց ուղեցույցը, ընկած են բավական երկար՝ դեպի արևելք և հարավ. նայած ցույց տված տեղին, պետք է ասել, որ այդ ավանը (գուցե և քաղաքը) բավական մեծ է եղել: Տներից շատերը ունեն կիսաբոլորակ ձև, իսկ մի քանիսները ձվաձև են: Ջուր չտեսանք բոլորովին այդ կողմերում:

Իհարկե, երկար և մանրամասն հետազոտությունները գուցե կարողանային ուրիշ ուշադրության արժանի բաներ հանել, բայց ցավելով պիտի ասեմ, որ ժամանակի սուղ լինելու պատճառով երկար այստեղ մնալ չկարողացանք: Վերջին հրաժարական հայացքը զցելով անտառի խորքում գտնվող լուռ ավերակներին, մենք սկսեցինք իջնել սարի գլխից:

Ես մտածում էի. ի՞նչ տեղ է եղել սա, ի՞նչ անուն ունեն այս ավերակները, ո՞ր ժամանակի մնացորդն են ներկայացնում: Եվ իրավ, սրանք մի-մի հանելուկներ են, որ թողել է պատմությունը: Այդ կողմերին քաջ ծանոթ Առաքել վարդապետն էլ չկարողացավ որևէ պատասխան տալ այդ հարցերին: Նա ասում էր, թե հավանական է, որ ավերակները մնացել են ամենահին ժամանակներից: Նա համաձայն չէր այն մտքին, թե գուցե Տոդա մելիքների ժամանակից են մնացած:

Ենթադրել կարելի է, թե սաստիկ տագնապի ժամանակ այս ավերակները բնակիչների և գորքերի ապաստանարան են դարձած, բայց բերդի հիմնարկությունը մելիքներին վերագրելը, Առաքել վարդապետի ասությամբ, բոլորովին սխալ է: Եվ իրավ, մի՞թե չի կարելի ենթադրել և այն, որ սարի գլխի շինությունները սկսվել են Գտիչ վանքի հետ մի ժամանակ, երբ վանքի հիմնադիրները հավաքել են իրանց քայքայված վիճակը Տոդա դժվարամատչելի բարձրությունների վրա: Չի՞ կարելի ենթադրել, որ մի ժամանակ վանքի հոգևոր իշխանությունը, միացած բերդի մարմնավոր իշխանության հետ, ընդդիմադրում էր Նետողաց թշնամի ազգին: Ինչևիցե, բայց ոչինչ հաստատ և որոշ բան չկա Տոդա սարի գլուխը պսակող ավերակների մասին, և դա շատ ցավալի է: Առաքել վարդապետը սարի հյուսիսային կողմից, վանքի հանդեպ, ցույց տվեց մեզ մի մեծ ճեղքվածք և ասաց, որ դա մի գաղտնի ճանապարհ է, որ սարի միջով գնալով, դուրս է բերում ավերակների մեջ: Որքա՛ն աշխատանք է վատնվել այդ բանի վրա: Երևակայեցե՛ք. սպիտակ կարծր քարի ահագին միապաղաղ ժայռ, որ կազմում է սարի վերին մասը, ծակված է և բավական հեռու տարած: Եթե մեր նախնիքներին թողնեին հանգիստ նստել իրենց երկրում, գուցե այժմ մենք ականատես կլինեինք ավելի փառահեղ և գեղեցիկ պատմական հիշատակարանների, քան զանազան պատերազմական ամրությունների, կիսավեր պարիսպներ լեռների քարանձավներում և անմատչելի բարձրությունների վրա: Բայց խեղճ հայի ձեռքը ե՞րբ է բաժանվել իր մարմնի վրա լայն բացված վերքերից. նա միայն աշխատել է կանգնեցնել նրանից ծորող արյունը, և այդ է եղել նրա զբաղմունքը:

Պ. Րաֆֆին ոչինչ չի խոսում ավերակների մասին, մինչև անգամ չի այցելել նրանց: Հայտնի է, որ մելիքների ժամանակակից անցքերը պտույտ են եկել սարի մյուս կողմին, համարյա ստորոտի



մոտ, Տոդ բերդում, որ այժմ էլ կա, բայց այդ բարձր և անմատչելի տեղը կանգնած ավերակներն էլ խո որևէ անցքի վկա եղած են...

Նստած Գտիչի արևելյան կողմին, պատերից թափված քարերի վրա, մենք երկար խոսակցում էինք Առաքել վարդապետի հետ զանազան անցքերի մասին: Գալով վանքի ներկա դրությանը, հայր սուրբը զանգատվում էր, որ իր և վանքի վրա հոգևոր իշխանությունը ուշադրություն չի դարձնում: Վանքը քիչ-քիչ քայքայվում է դրսից. արևելյան և հարավային կողմից բավական քարեր են թափվել: Ի՞նչ կլինի, եթե մի քանի տարուց հետո այս վանքն էլ դառնա մի անխոս ավերակ, չղջիկների և բուերի տխուր բնակարան... Գոնե մեր պերճասեր շուշեցիք քիչ մի հոգային պահպանել իրենց պապերի թողած այս գեղեցիկ շինությունը...

Արեգակը վաղուց մայր էր մտել, մենք սկսեցինք իջնել ցած, դեպի Թաղլար: Այդ տեղերից ես տանում էի ինձ հետ խիստ տխուր հիշողություններ, որոնք չթողեցին ինձ մինչև անգամ անկողնում...

Ես համարյա մոռացել էի, որ մյուս օրը, շաբաթ վաղ առավոտյան, պիտի ուղևորվենք դեպի Դիզափայտ:

Դ

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 14-ի գիշերվա ժամը երեքից շատ կանուխ բարեկամս զարթնեցրեց ինձ:

«Դեռ շատ է վաղ», - ասացի ես, բայց հայտնվեցավ, որ ամբողջ գյուղը մեզանից շատ առաջ է ոտքի կանգնել, խառն աղմուկը ցույց էր տալիս, որ բոլորը պատրաստվում են ուխտ գնալ առավոտյան հով ժամին, որպեսզի ազատվեն օրվա խեղդող տապից: Մենք ևս սկսեցինք պատրաստվել և կես ժամից հետո արդեն ճանապարհին էինք:

Արեգակը դեռ բոլորովին չկար. օդը թարմ էր և զովարար: Բավական տարիներից հետո էր, երբ ինձ վիճակվեցավ կրկին լուսացնել ամառային գիշերը բացօթյա, գյուղական հարուստ և չքնաղ բնության մեջ: Եվ բնության կարճատև քնից զարթնելու պատկերը խիստ կենդանանում էր և հրապուրիչ դառնում հեռվից լսվող խաղաղ ու մեղմ խոսակցությունների ձայներից. դրանք ուխտավորներն էին, որոնց, սակայն, մենք չէինք տեսնում: Ասպանդակելով ձիաները, մենք շուտով հասանք մի խառնիճաղանջ ամբոխի՝ բաղկացած ամեն տեսակի և հասակի մարդկանցից, որը հետևակ, որը ձիու վրա, որը ջորու վրա: Ջերմեռանդ հայուհիները համարյա բոլորը ոտով էին գնում, շատերը՝ բոբիկ: Դա էլ մի նախնական սովորություն է, որ պահվել է միայն գեղեցիկ սեռի՝ մեջ. նրա կարծիքով, սուրբը ավելի ընդունում է ոտաբոբիկ գնալը և միշտ կատարում է այսպես գնացողների ուխտը: Եվ այսպես, այդ ամբոխը, ձգված ճանապարհի երկարությամբ, կազմում էր շարժվող մարդկանց մի երկար գիծ, որի գնացքի կարգը հաճախ խանգարվում էր ուխտավորների հետ մնալով կամ առաջ ընկնելով: Դրանք բոլորը թաղլարեցիք էին. գյուղի մեծ այստեղ էր... Խոսակցությունները, մինը մյուսի անկեղծ, մինը մյուսից ավելի տոգորված նահապետական պարզ սովորություններով, անընդհատ շարունակվում էին մարդկանց այս երկար շարքի մեջ: Ահա մի ձիու վրա նստած են մի առույգ ծերուկ ու նրա կինը. դեռ բավական չէ դա, ծերուկի առաջ

¹ Չայ կինը ընտանեկան կյանքի մեջ ներկայացնում է ինչպես մի առանձին մարմին, որ պահպանում է նախնական սովորությունները ամենայն սրբությամբ. նա միշտ հարազատ է մնացել հայության լեզվին և բոլորովին պահպանել է հայ կնոջ պատմական առանձնահատկությունները՝ չենթարկվելով ոչ մի տեսակ արտաքին ազդեցության: Այդ խոստովանում են և տղամարդիկ: «Եթե մեր ժամանակ մնացել է սիրտ, հոգի, բարեպաշտություն, դա միայն կանանց մեջ է», - ասում են նրանք: Մեզ հաստատապես հայտնի է, որ ուսման ազդեցությունն անգամ չի կարողացել առայժմ խլել հայ կնոջից նրա պապական սովորությունները. ուսում առածներն էլ ջերմեռանդ պաշտպան են նախապաշարմունքների



տեղավորվել է նրա չափահաս տղան. ուժեղ ձին բավական դիմացկունությամբ տանում է այս համարյա մի ամբողջ ընտանիքը:

- Պարոն, դու է՛լ ես գնում մեր սուրբը,- դառնում է դեպի ինձ ծերուկը:

- Ինչպես չէ, ես էլ եմ ուխտ գնում,- պատասխանում եմ ես:

- Աստված լսող լինի: Մեր սուրբ Դիզափայտի պես գորավոր խաչ իսկի չկա: Կյանքումս մի Վարդավառ չեմ անցկացրել առանց նրա սուրբ գործությանը ուխտ գնալու:

Եվ ծերուկը խիստ ջերմեռանդ կերպով խաչակնքեց երեսը:

- Երևի շա՛տ մարդ կլնի այնտեղ,- հարցնում եմ ես:

- Ինչպե՛ս չէ, ամեն տեղից գալիս են. և ամենի ուխտն էլ կատարում է:

Այդ ժամանակ արևի առաջին շողերը ողջունեցին մեզ: Մենք անցնում էինք մի լեռնային բարձրության մոտով, որի ախորժատես գառիվայրը ծածկված էր սաղարթախիտ ծառերով. Տեսարանը շատ գեղեցիկ էր, և ես անհագ նայում էի դեպի այդ կողմը: Ծերուկը դեռ ինձ հետ էր գնում:

- Դու է՛լ գիտես, որ այնտեղ է գտնվում Օխտը-դռնին,- հարցրեց նա՝ խաչակնքելով երեսը:

- Ոչ, չգիտեմ: Ի՞նչ է դա:

- Սուրբ է, պարոն, շատ գորավոր սուրբ. աչքացավի բժիշկ է: Ճշմարիտ է, մի սրբի մոտով մյուս սուրբ գնալը լավ չէ, բայց մենք մեղավոր ենք, անում ենք: Եվ սուրբ Դիզափայտը ախր սրանից գորավոր է:

- Վնաս չունի,- ասացի ես,- Օխտը-դռնին ուխտ կգնանք Դիզափայտից վերադառնալիս: Կարծեմ չի բարկանա...

Մենք առաջ ենք ընկնում: Շուտով հասնում ենք մի ուրիշ խմբի. այստեղ էլ ուրիշ տեսակ խոսակցություններ են, բայց դրանց մեջ էլ անփոփոխ է նահապետական անկեղծ պարզությունը՝ խառն կրոնական ջերմ զգացմունքի հետ: Գտնվելով այսպիսի շրջանում, մարդ մոռանում է իրական ներկան և փոխվում է երևակայական անցյալը, ուր հայի կյանքը տեսնում ես մի շրջանակի մեջ, որ հյուսված է ավանդություններով սրբագործված սովորություններից...

Երևակայությունը ավելի բանաստեղծական փայլ է ստանում բնության վայրենի և գեղեցիկ տեսարանների առջև: Ճանապարհն անդադար անցնում է խիտ ծմակների միջով, խոր ծործորների եզերքով, և ամեն տեղ գեղեցիկ բնությունը շլացնում է իր զարմանալի հարստությամբ: Պատահում է, օրինակ, ամբողջ մի լեռնային շղթա ծածկված ծառերով. կարծում ես, որ եթե այնտեղ ասեղ գցես, գետինը չի ընկնի: Բայց ահա դրան մի ներհակ տեսարան. կանգնած է բոլորովին լերկ ու ծառագուրկ սար: Տպավորությունները փոխվում են ամեն մի քայլում, և դու միայն ափսոսում ես, որ բանաստեղծ չես, որ չես կարող երգել բնության այս ահավոր և մեծաաքանջ զարդերը:

Ճանապարհին հաճախ պատահում էին թափառական թուրքեր: Նրանք իջնում էին սարերից դեպի ցած, այրված հովիտները: Նրանց շարժական տները, կայքերը թափառում են իրենց հետ միասին մի քանի հատ եզների վրա, որոնք մի քանի հատ ուրիշ տեսակ կենդանիների և մի քանի շների հետ կազմում են նրանց ամբողջ հարստությունը: Որքա՛ն խեղճ են նրանք: Կիսամերկ, ոտաբոբիկ, պատած ողորմելի ցնցոտիներով, որոնց տակից երևում է նրանց մարմնի պղնձագույն մորթը, ջերմ անապատների և հովասուն լեռների այդ հարազատ զավակները կոխ են տալիս իրենց ոտներով ահագին տարածություններ՝ հպատակվելով ամեն մի դեպքում բնության քմահաճություններին: Երջանիկ են նրանք իրանց անշուք կեցության, նեղությունների ու վշտերի մեջ: Նրանց անդամները այնպես պինդ են, որպես այդ ապառաժները, որոնց ոտնահարում են նրանք. բայց ավելի պինդ է նրանց հոգեկան ուժը, անձնապաշտպանության քաջ զգացմունքը: Հանդարտ ժամանակը նա մարդկության մի հասարակ անդամն է, իսկ վտանգի մեջ՝ մի կատաղի գազան...



Եվ այս հանգամանքի շնորհիվ նա մնում է իր վայրենի կեցության մեջ, հեռու առաջադիմությունից: Գալիս է ամառը, թափառականը հովասուն լեռների հարուստ կանաչների և սովերախիտ անտառների մի անբաժան մասն է. գալիս է ձմեռը՝ նա թողնում է իր սարը և, որջեր փորելով անապատի խորքերում, ապրում է այնտեղ: Ահա նրանց կյանքը: Իսկ ո՞րտեղից էին գալիս նրանք: Շուտով հայտնվեցին և այդ տեղերը: Դրանք սարեր էին՝ և այնքան բարձր, որ նրանց վրա բացի գեղեցիկ կանաչ խոտից ոչինչ չի բսնում: Այդպիսի սարեր մի քանիսը կային, սարերի մի խումբ, որի մեջ հպարտությամբ իր գլուխը տարել է մինչև երկինք Դիզափայտը:

Հրաշալի է բնությունը: Այստեղ նա դեռ իր թարմ կանացի երիտասարդական հասակում էր գտնվում և, ինչպես մի նազելի օրիորդ, փռում էր իր շուրջը անուշահոտություն, քնքշություն և մի տեսակ գերբնական փայփայող մեղմություն, որ բարերար ազդեցություն էր գործում մեր անդամների վրա: Մենք անցնում ենք մի քանի այդ տեսակ փափուկ թավշյա խոտով ծածկված բարձր բլուրների և սարերի մոտով: Այնքան ախորժատես են նրանք, որ ստիպված կանգնում ես և երկար, երկար նայում: Բայց ավելի գերում է տեսությունը Դիզափայտը: Այդ հսկան, որի բարձրության հետ չի կարողանում մրցել ոչ մի սար Տիզակում, այստեղից՝ մոտիկից, կանգնում է տեսնողի առաջ իր ճնշող վսեմության և մեծության մեջ: Նա ոտից գլուխ հագած է զարմանալի կանաչ զգեստ. մի թուփ, մի ծառ չկա նրա վրա: Միայն վերևում նա ունի սպիտակ պսակ. դա ահագին ժայռեր են, որ կազմում են նրա գագաթը, որ այնքան բարձր է գնացել: Որպես՞ ս պետք է բարձրանալ մինչև այնտեղ. այս հարցը հարկադրում է մտածել ամեն մեկին: Մինչև անգամ լեռնաբնակ գյուղացին, որ ծնվում ու մեծանում է սարսափելի դարափոսների, զառիվայրերի վրա, անանցանելի կիրճերի մեջ, մինչև անգամ նա էլ մի կերպ ծանրությամբ է նայում դեպի վեր:

Բարձրանալը իսկապես սկսվում է մի աղբյուրի մոտից, որ հոսում է մի կանաչագարդ ձորից. նրա անունն է Քոշի աղբյուր: Աղբրի մոտ հավաքվել էր մի ահագին ամբոխ, երբ մենք մոտեցանք նրան: Ջուրն այնքան ցուրտ է, որ միանգամից կես բաժակ խմել անկարելի է: Եվ այս է՞րբ: Հուլիսյան խեղդող տոթերի ժամանակ, երբ ամեն ինչ այրված, խորովված է լինում արեգակի տակ: Ջուրը, երևի, գալիս է շատ բարձրից և միշտ սառը հողի տակ ընդունում է այդքան ցրտություն: Բայց հենց որ մի քանի բույս մնում է օդի մեջ, իսկույն կորցնում է ցրտությունը և այն ժամանակ շատ անհամ է լինում:

Այստեղ բոլորն էլ հանգստանում են, պատրաստվում են բարձրանալ դեպի գագաթը:

Ե

ԴԻԶԱՓՈՒՅՏԻ ՎՐԱ

Ճանապարհը Քոշի աղբյուրից մինչև գագաթը նոր է շինվել. նա ահագին պտույտներ է գործում սարի բոլորովին ուղղաձիգ լանջերով. բայց չնայած դրան, ճանապարհին էլի շատ զառիվեր է և դժվարելանելի: Մինչև սարի գագաթը օձապտույտ ճանապարհի վրա երևում էր գնացողների օձապտույտ երկայն շարքը. շարժվում էին կրիայի դանդաղ կոտությամբ. Այլապես էլ անկարելի է: Ձիերը մեծ դժվարությամբ էին կարողանում դեպի վերև մի քանի քայլ անել: Գնալով քիչ տեղ, նրանք կանգնում էին. և այսպես պետք էր մնալ տասը կամ տասնհինգ բույս, մինչև կենդանին մի քիչ կհանգստանար, ուժ կառներ. և հետո նույն դանդաղ կոտությամբ շարժում էր ոտները և կրկին կանգնում: Ճանապարհը այժմ էլ, իր նորոգված դրության մեջ, վտանգավոր է. միշտ երկյուղը պատած է լինում մարդուն. մի թեթև ծուռ շարժվածք, մի սայթաքումն բավական է, որ ձիավորը ձիու հետ թռչե սոսկալի խորխորատների մեջ: Պատմում էին, որ ճանապարհի անմշակ



Ժամանակը տարի չէր անցնում առանց փորձանքների. տարի չէր անցնում, որ մի քանի անասուններ չգորվեին դեպի ցած, հասնելով գառիվայրերի վերջին՝ մսի և ոսկորների մի զանգվածի ձևով:

Նայելով շուրջը, դեպի ներքև, մարդ զարմանում է, թե ինչպես այն հին ժամանակները ապաստան են գտել այս բարձրության գլխին նահատակները և ինչպես են սպանել նրանց հալածողները: Եվ Դիզափայտի Հայսմավուրքից հայտի պատմությունը¹ իր բոլոր մանրամասնություններով շուտ էր գալիս իմ մտքի մեջ նույն ժամանակ, երբ իմ ձեռքն անջանքներով առաջ էր տանում ինձ:

Որքան բարձրանում էինք դեպի վեր, այնքան օդի ցրտությունը զգալի էր դառնում: Կարծես այս տեղերում դեռ նոր է սկսվել ապրիլ ամիսը: Թարմ նորահաս խոտի մեջ որքա՜ն դեղին խոշոր ծաղիկներ կան, որոնք, պատելով գառիվայրերը, միացնելով իրենց դեղին գույնը ընդհանուր կանաչ գույնի հետ, արեգակի մեղմ, թույլ ճառագայթների տակ ներկայացնում են այնպիսի տեսարան, որին արժե նայել: Եվ օդի լռությունը վրդովվում է ուխտավորների ձայնից միայն. ուրեմն մարդությունից թափուր ժամանակը որքան ահավոր պիտի լինեն այս մշտալուր բարձրությունները, որոնց վրա չի ապրում ոչ մի կենդանի՝ ձայն արձակելու ընդունակություն ունեցող արարած: Մարդու սիրտը ճնշված է լինում բնության վսեմության տակ. նա անդադար բաբախում է, արտահայտելով մի կատաղի հուսահատություն. ախր ե՞րբ պիտի վերջանա այս ճանապարհը, ե՞րբ պիտի հասնել գագաթին: Միննույն ժամանակ ձիու քայլերը սովորեցնում են մարդուն ստոիկյան համբերություն: Ահա վերևից լսվում է դղրոյուն, նրա հետ և զգուշացնող ձայներ: Նայում ես, և հոգիդ սառչում է: Ահագին քարը ամենայն արագությամբ գլորվում է վերևից, անցնում է ճանապարհի միջով և սլանում է դեպի ցած... Քանի՞ մարդկանց կյանք այդ բույսերի կախված էր մի մազից. սարսափելի է մտածել այդ մասին: Այնուամենայնիվ անցնում է սարսափի առաջին բույսերը, և ամբոխը խելագարվածի պես դեպի առաջ է մղվում:

Բայց ահա վերջապես մոտ է գագաթը: Մեր ձիաները վերջնականապես կանգնում են: Մենք իջնում ենք և միացյալ տարածությունը քայլ առ քայլ գնում ենք ոտով: Վերջապես գնացինք հասանք այն տեղը, ուր սովորաբար իջնում է ուխտավորների մեծ մասը: Դա գագաթի մի համեմատաբար ցած բաժինն է: Այստեղից մինչև ամենից բարձր գագաթը հասնելու համար պետք է գնալ մի ոլոր-մոլոր ճանապարհով՝ լցված քարերի անհամար մանր կտորներով:

Ես մոռացա ասել, որ Դիզափայտի սարը ներկայացնում է մի բավական երկար և առանձնակի կերպով դասավորված բարձրություն: Մինչև ժայռերը սարը չունի բաժանմունքներ, կամ կողմնակի ճյուղեր: Իսկ այնտեղ, մերկ քարե մասը բաժանվում է մի քանի գագաթների, որոնք կազմված են ահագին միապաղաղ ժայռերից, այս պատճառով էլ գագաթներն ունեն շատ քիչ լայնություն: Ամենից բարձր գագաթի վրա գտնվում է ուխտատեղին, կամ, ինչպես ասում են գյուղացիք, «տաճարը»: Մենք բարձրացանք մինչև այդտեղ: Մի աղքատիկ փոքրիկ շինվածք է դա, որ ունի եկեղեցու նմանություն: Նրա դռան մոտ և շուրջը ասեղ զցելու տեղ չկար: Մարդկանց մեծ

¹ Ահա այդ պատմությունը համառոտորեն. Հոնաց թագավորի առջապահ զորքերը հարձակվելով Արցախի վրա, ասպատակում են շատ տեղեր: Այդ զորքի գլխավորը գերի է առնում Մեսրոպ վարդապետի (Հայոց տառեր հնարողի) աշակերտներից շատերին, որոնք մնացել էին Արցախում նրա մեռնելուց հետո: Գերիների թվում լինում է և մի մեծագույն կին՝ Թագուհի անունով: Ձորապետը, հավանելով նրա գեղեցկությունը, հրամայում է պահել իրան կնացնելու համար: Թագուհին չի համաձայնում կոտորածի գործարարի կինը դառնալ. վերջինս բարկանում է և, կտոր-կտոր անելով նրան, հրամայում է ցրել դաշտի երեսին: Գիշերը Թագուհու մարմնի կտորների և արյան կաթիլների վրա ցուլանում են լույսեր, և այդ բանը զարմացնում է անօրեններին: Հարցնում են այդտեղ եղած գերի հայ քահանաներից, որոնք քարոզում են նրանց քրիստոնեությունը: Ձորապետը իր երկու որդոց և զորականների հետ ընդունում է քրիստոնեություն և բոլորը մկրտվում են զատիկ տոներին: Թագուհու մարմնի կտորները հավաքում են մի բլրի վրա, որ կոչվում է Աստղաբլուր: Հոնաց թագավորը հրամայում է հավատափոխ զորապետին և նրան հետևողներին կոտորել: Ձորապետի Մովսես և Երանոս որդիքը զորականների հետ հալածական են դառնում, մինչև որ թագավորի զորքերը հասնում են սարի գլխին և կտոր-կտոր անելով, փայտի պես դիզում են ու այրում: Մարը դրանից ընդունում է Դիզափայտ անուն: Ուրիշ աղբյուրներից իմանում ենք, որ Դիզափայտից է ընդունել իր անունը և այն գավառը, որ կոչվում է Տիգակ



բազմությունը խիտառատ սեղմված էր այդտեղ, և ամեն մեկը աշխատում էր շուտով ներս մտնել: Մինչև մտնելու մի հնար գտնելը ես ականատես եղա մի բանի, որի մասին լռել չի կարելի: Մի թրքուհի զգուշությամբ դուրս էր տալիս մի մեծ քարի տակից սև հող: Երբ հարցրի, թե ինչ է անում նա, ասացին, որ դա գուշակություն է, թե ինչ տեսակ զավակ պիտի ծնե նա: Եթե զարի դուրս գա սև հողի հետ, պիտի աղջիկ ծնե, իսկ եթե ցորյան՝ տղա: Այս սնապաշտությունը հիմնված է այն ավանդության վրա, որ այդտեղ նահատակված սրբերը այրված են եղել կռապաշտ թագավորի հրամանով ցորենի և գարու դեզերի մեջ, այդ ժամանակից է մնացել քարի տակ ցորենն ու գարին, որով այժմ սնապաշտ կանայք գուշակում են իրենց բախտը: Բհարկե, մի քանի հարյուր տարվա՝ ընթացքում ոչ մի տեսակ ցորյան կամ գարի չի կարող մնալ, բայց այդտեղի միակ բնակիչը՝ մուղղուսին, ամեն Վարդավառի խառնում է գարի և ցորեն հողի հետ: Եվ խավարը այնքան թանձր է, որ այսքանը հասկանալ չի լինում, այլ ընդունվում է իբրև երկնքի պատգամ: Ես չկարողացա իմանալ, թե հետաքրքիր թրքուհին ինչ տեսակ զավակ պիտի ծնե, որովհետև քանի որ նա զգուշությամբ կատարում էր իր գործը, ամբոխի մի հորձանք հրեց մեզ դեպի շինության մուտքը:

Ներս մտանք: Փոքրիկ շինությունը հազիվ կարող է քսան մարդ տեղավորել իր մեջ, բայց դրա երկու չափ կային այնտեղ: «Տաճարի» պատերը, չնայած որ նոր են շինվել, բոլորովին սևացած էին, թանձր ծուխը լցել էր նրա ներսը: Առաջ գնացինք: Ահա այն հռչակավոր տեղը, որին երկրպագելու համար այսքան նեղություններով գալ հանձն առած էր այդ բազմաթիվ ամբոխը: Դա բոլորովին մի մերկ բեմ էր, որ գետնից մի արշիներից ավել բարձրություն չունի. նրա վար ոչինչ զարդ չկա: Բայց նա ամբողջապես ծածկված է վառված մոմերի անթիվ քանակությամբ. այդ թանձր ծուխն էլ նրանցից էր բարձրացած: Բեմի առաջ շերմաջերմ աղոթքներ էին կարդում հայուհիները. նրանց հետ կային և բավական թրքուհիներ: Մահմեդականը քրիստոնեից ետ չի մնալ այդ նվիրական տեղի պաշտելում:

Մենք էլ ամենայն խոնարհությամբ մոտեցանք բեմին, համբուրեցինք և մի-մի գույգ չվառած մոմ դրինք այնտեղ ու ետ կանգնեցինք:

Գանձանակի² վրա հսկում էր մեզ ծանոթ տեր Մեսրոպ քահանան, որ հատուկ դրա համար եկած էր Հաղորթ գյուղից: Նա իմիջիայլոց պատմեց, որ հայտնի չէ, թե որտեղ են գտնվում նահատակների գերեզմանները, իսկ «տաճարը» մի քանի տարի սրանից առաջ շինել է մի բարեպաշտ տիկին: Ուրեմն պետք է ենթադրել, որ նահատակների նշխարների տեղը հին ժամանակներից մինչև այսօր պահում են այդ ժայռի գլխին ժողովրդի ավանդությունները միայն: Ուրիշ մի հիշատակ կամ վկա չկա դրան վերստուգելու համար:

Ուխտավորների թիվը հետզհետե շատանում էր. մարդկային արտաշնչություններով լցված օդը խեղդում էր. մենք շտապեցինք դուրս գնալ: Բարձրացանք «տաճարի» դռանը կանգնած ժայռի գլուխը. դա ամենաբարձր կետն է ամբողջ այս սարի գլխին: Եվ այդ բոլորին, կարծես, դյուրական զավագանի շարժմամբ հորիզոնը ահռելի չափերով լայնացավ մեր առաջին՝ բաց անելով մի անհասկանալի լայնատարած տեսարան, որի մեջ ընկած էին Գանձակի նահանգի հարավային զանազան մասերը: Հեռու, դեպի հարավ, դեղնած ու այրված դաշտավայրերով հոսում էր «մայր Արաքսը»... Անհամար փոքրումեծ սարերը, կտրելով զանազան ուղղությամբ հովիտները, միացնելով իրանց տեսքերը միմյանց հետ, կազմում են գեղեցիկ տեսարաններ: Լեռնային քամին այնքան սուր և ներս թափանցող էր, որ հարկադրված էի հագնել ձմեռային հաստ վերարկու:

¹ Հայսմավուրքի պատմության նայած՝ սուրբերը նահատակվել են 5-րդ դարում

² Գանձակը հասնում է Շուշիի հոգևոր դպրանոցին: Ցանկայի կլիներ իմանալ, թե որքան է հավաքվում



Երկար եւ չէի կարողանում դարձնել այքերս այդ գեղեցիկ տեսարաններից, թէն ընկերներս թախանձում էին իջնել մի քիչ ցած և ճաշել: Ես այդ ժամանակ մասամբ հասկանում էի այն պատճառը, թէ ինչու մարդիկ այնքան սիրում են լինել լեռնային բարձրությունների գլխին՝ ենթարկվելով վտանգների: Իրավ, մի վսեմ և վերին աստիճանի բանաստեղծական բան է ներկայացնում այն շրջանը, որի մեջ ընկնում եք դուք, լինելով բարձր սարերի գլխին: Ամեն ինչը ներշնչում է ձեր մեջ մի ազդեցություն, որ ավելի խոնարհեցնում է ձեր միտքն ու հոգին երկրի ստեղծողի առջև: Հովիտների և ձորերի մեջ ձեր սահմանափակված հայացքը, միտքը այստեղ ավելի և ավելի լայնանում է. դուք բոլորովին մտավորապես հափշտակվում եք զանազան տեսակ զգացմունքների տակ, չեք իմանում ինչին ավելի երկար մտիկ տալ, ո՛ր բանը ավելի շատ զննել: Ժամանակը անցնում է սարսափելի արագությամբ, և դուք միայն ավստում եք, որ միջոց չեք ունենա ավելի երկար և հանգիստ կերպով ամեն բանը տեսնելու և դիտելու համար: Նայում եք դեպի մի կողմ՝ մի տեսակ տպավորություն են գործում լեռնային գոտիներն ու անդունդները. այդտեղ բնությունն է միայն գործում մտքի վրա: Նայում եք դեպի մյուս կողմ՝ այդտեղ բոլորովին տարբեր բան. մի տեղ երևում է Տոդա սարի այն գագաթը, ուր ցրված է մեռյալ բերդը. մյուս տեղ երևում է «ալևոր Արաքսը», և դրանք զարթնեցնում են ձեր մեջ հազար ու մի մտքեր անցյալի մասին, մտքեր, որոնց բուռն ծնունդ պետք է համարել, որովհետև մեր այժմյան խաղաղ ու հանգիստ կյանքում մենք չէինք կարող հասկացողություն կազմել տխուր անցյալի մասին, եթե չլինեինք նրա վկաների մոտ: Այդ վկաները այժմ էլ հաստատում են, որ հայ ժողովրդի վրա հասել է մի մեծ զթություն հյուսիսի վեհ արծվի թևերի տակ. դադարել են քաղաքական թշվառությունները, մարդիկ հանգիստ և անդորրություն են վայելում, բայց ավստս, որ մինչև այդ ժամանակ հասնելը հայերից մնացել է մի բուռը միայն. մեծամասնությունը «զթություն» գոչելով էլ անհետացել է աշխարհի երեսից:

Այնքան զբաղված էր իմ հոգին այդպիսի հիշողություններով, որ ընկերներիս դեպի ինձ ուղղված շատ հարցեր մնում էին առանց պատասխանի իմ կողմից: Այո՛, միայն հոգին է, որ գործում է այդպիսի դեպքերում. մնացած զգայարանները ճնշված, հափշտակված էին, կարծես մեկը խլել էր դրանք ինձանից:

Այնտեղ, ուր մենք կանգնած ենք, ամենի միապաղաղ ժայռի մի սալ է. նրա մակերևույթը ճորճոտած է, մեծ-մեծ քարեր դուրս թռած են այնտեղ. երևի մի ահագին ուժ է քանդել այս քարյա պինդ մասսան: Այդ ուժը կայծակն է եղել: Որքա՛ն սուկալի պիտի լինի կայծակը այս բարձրությունների վրա: Դա սովորականից դուրս մի երևույթ է և հենց այդ իսկ պատճառով այժմ ժողովրդի մեջ առասպելի ձև է ընդունել: Որպես մեզ հետո պատմեցին, ժողովրդի մեջ խոսում են, որ «խաչի դուլերից» մեկը երազ է տեսել, որի մեջ «ադան» հայտնել է, թե աստված ուզում էր ջրհեղեղով բնաջինջ անել աշխարհը, բայց նա (սուրբը) միջնորդել է՝ զթաց լինել դեպի մարդիկ: Այն ժամանակ աստված ասել է, որ երկրին հասնելիք պատիժը կտա իրան՝ Դիզափայտին: Երբ սա ընդունել է այդ, կայծակի սարսափելի հարվածը փշրել-ակոսել է ժայռի գագաթը: Այդ անցքը պատահել է այս տարի: Մի քանի տարուց հետո նրա մասին ստեղծված այս առասպելը կդառնա ավանդություն և իբրև մի սուրբ ճշմարտություն, կանցնի որդոց որդի:

Երբ մենք ճաշում էինք ներքի բարձրության վրա, ժամը մեկն էր. և այս միջոցին դեռ չէր դադարել ուխտավորների գալը. սարի գլխից երևում էր բազմություն, որ անդադար շարժվում էր դեպի վեր. նորանոր խմբեր գալիս էին և տեղավորվում ժայռերի տակ, փոքրիկ արհեստական հրապարակների վրա, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական տերը, որ շինել է նրան և միշտ իջնում է այնտեղ:



Իրիկնապահին արդեն լավ ցուրտ էր: Տաք ձմեռային վերակուն էլ չէր կարողանում ընդդիմադրել ցուրտ քամուն, և ես հարկադրված էի խնդրել ընկերներիս ման գալ. կարծում էի, թե արագ շարժվածքը զանիվայր քարքարոտ նեղ ուղիով կարող է մի քիչ տաքացնել մեր անդամները, որոնք սկսել էին սառչել: Ուղևորվեցինք կրկին դեպի «տաճարը»: Մխաված չեմ լինի, եթե ասեմ, որ ուխտավորների թիվը առավոտվանից երկու անգամ շատացել էր: Անցնել դժվար էր. յուրաքանչյուր քարի վրա, յուրաքանչյուր մի շատ կամ քիչ հարմար տեղ թափված էին մարդիկ. սպիտակ քարերը կատարելապես սևացած էին բազմությունից: Բոլորն էլ ուրախանում էին: Ամեն մեկը մոռացել էր իր վիշտը, դառնությունը և քաղցր-քաղցր խոսելով կամ պարելով զուռնայի ականջներ խլացնող ձայնի տակ, օդը լցնում էր ուրախ աղաղակներով:

Ժողովրդի մեջ տիրում է մի համոզմունք՝ սրբի տակ ուրախ լինել, քեֆ անել, և ամեն մեկը աշխատում է իրագործել այդ համոզմունքը լայն չափերով: Ունևորի համար այդ բանը մեծ դժվարությունն չի պահանջում. պետք է միայն ցանկալ: Խոսենք աղքատների մասին:

Բազմաթիվ դեպքերի ականատես եղած եմ, երբ աղքատը տոն օրերին սրբից չընկնելու համար գրավ է դնում իր վերջին անհրաժեշտ բաները, փող է առնում և իր սրտի բաղձանքը կատարում: Սուրբ գնալու համար առնվազը պիտի մսխե նա յոթ ռուբլի, եթե ունի պինդ ոտեր՝ ձիու կամ այլ անասունի օգնությամբ չապավինելու համար: Նա էլ պիտի մի լավ քեֆ անի սրբի տակ, հասկանալով քեֆը աղքատի լեզվով. ընտանիքը այդ օրերը մի քիչ լավ է անցկացնում: Բայց որքան թանկ է նստում այդ ուրախությունը, որքան վատ է լինում հետևանքը: Աղքատը վերադառնում է տուն, սկսվում է առժամանակ ընդհատված դառն աշխատանքը մի կտոր հացի համար, ոչինչ էտ զցել չի կարողանում: Գրավ դրած կաթսան մտնում է վաշխառուի խոհանոցը իբրև անժխտելի սեփականություն, իսկ ժամանակով հսկայական հասակ առած տոկոսը ճմլում է իւեղձի շլինքը: Այսպես աննկատելի անցնում է տարին, և ահա նորից պետք է մտածել սուրբ գնալու մասին: Կրկնվում է նույն պատմությունը՝ ավելացնելով աղքատի պարտքի վրա մի քանի ռուբլի պարտք ևս՝ իր հրեշավոր տոկոսներով. իւեղձը տալիս է, տալիս և շատ անգամ էլ պարտական մեռնում: Իսկ նրանից հետո պարտական են մնում նրա ժառանգները, որոնք կարեցածի չափ շարունակում են հատուցել «հոգու սուրբ պարտքը»: Այսպիսի դեպքեր մի քանիսը տեսած եմ: Եթե միշտ այսպիսի հետևանք չի ունենում պարտքով ուխտագնացությունը, գոնե նա միշտ ծանր լծի պես ընկնում է աղքատի վրա՝ ավելի դառնացնելով նրա դրությունը, ավելի դժվարացնելով հացի խնդիրը: Փորձիր հասկացնել, որ նրա ջերմ կրոնական զգացմունքը այս սրբի վերաբերմամբ ընդունված կլինի նահատակների և աստծո առջև և այն ժամանակ, երբ նա իր բնակության տեղը մի տաք աղոթք կանե և երկու մոմ կվառե, նա չի հասկանա, նա կասե ու կասե, որ անպատճառ պիտի լինի այստեղ, մասնակցե անձամբ այս ուրախություններին, համբուրե իր սեփական բերանով սրբի գերեզմանը:

«Տաճարի» դռների մոտ այս անգամ էլ հավաքված էր ահագին ամբոխ. մարդիկ հրում էին, սեղմում էին միմյանց... Մենք կարողացանք մտնել ամբոխի մեջ ոչ առանց դժվարության. գյուղացիք առհասարակ հարգանքով են վերաբերվում դեպի քաղաքացիք և ճանապարհ էին տալիս մեզ: Այստեղ եղանք մի տեսարանի, որ ավելի քան զայրացրեց մեզ: Երկու կանայք ուշաթափ ընկած էին դռների մոտ. դրանք էին «սուրբի դուլերը»՝ նվաղած կանայք, որոնց հետ, սոգետ ամբոխի համոզմամբ, այդ բոլորին խոսում էր սուրբը: Նրանք փետում էին իրենց մազերը, ձեռները խփում էին քարերին և կցկտուր ձայնով պատգամներ էին խոսում նրանց մոտ հավաքված մարդկանց: Ընկերներիցս մեկը մի կոշտ խոսք ասաց նրանցից մեկի վերաբերմամբ. նա սթափվեցավ և կոպիտ բանակրիվ սկսեց նրա հետ: Իսկ մյուսը դեռ խոսում էր: Նա ասում էր. «Աղան հրամայում



է ինձ դոնէդուոն ողորմություն հավաքել, ասում է՝ աչքդ պիտի հանեն. պիտի յոթը շեն ման գաս, ողորմություն հավաքես»: Հետո իր դեմքի վրա գործում էր ծամածռություններ, կարծես ծանր էր նրա համար այդ պատիժը և աղաչում է ազատել իրան պատժից: Եվ հետո, կարծես լաց լինելով, ասում էր. «Ասում է՝ չէ՛, հավաքիր... ողորմություն հավաքիր»: Եվ նա կկատարի այդ... Նրան լսում է մի մեծ ամբոխ, որ էգուց պիտի պատմի բոլոր գյուղերում այդ պատգամախոսությունը: Եվ էգուց, երբ գյուղերի մեջ կհայտնվի մուրացկանի պարկը շալակած կինը, յուրաքանչյուր ոք կշտապի առատորեն տուրք տալ՝ կատարելով սրբի կամքը...

Վտանգավոր է այդպիսի դեպքերում մի բան խոսելը. և իմ ընկերը, որի խոսքից սթափվել էր մի նվաղած, անախորժությունների ենթակա պիտի լիներ ամբոխի կողմից, եթե մի քանիսները չաշխատեին հանգստացնել հուզված մտքերը: Այդ կնոջ դեմքին ես չկարողացա նայել, այնքան լիրբ և անամոթ էր նրա արտահայտությունը: Ինձ պատմեցին, որ այդ կինը Թաղլարի մեջ հայտնի «չոփչին» է:

Երկու խոսք «չոփչի» մասին:

Փոքրիկ մանուկները, երբ միրգ են ուտում, ինչպես ասում են, շատ անգամ կորիզները մնում են նրանց կոկորդներում, որից և հիվանդանում են: Այդ ցավը բժշկելու համար պատրաստ է «չոփչին», որ համարյա միշտ կնիկ է լինում: Դնելով հիվանդ մանուկը ծնկների վրա, չոփչին բերանը դնում է նրա քթածակերին և որքան ուժում կա փչում է. այդ ժամանակ բերանից որպես թե դուրս է թռչում կոկորդի մեջ մնացած կորիզը, կամ «չոփի»: Չոփչիությունը սովորելու կարելի արհեստ չէ. նրան բաժանում են սրբերը իրանց սիրելիներին. և որի արհեստը «տվովի» (սրբից տված) չէ՛ այնպիսին կլիենտներ չի ունենում: Չոփչիները նույնպես կեղեքում են հասարակ դասը. նրանք բոլորն էլ հարուստ են լինում: Ամեն տարի չոփչիները պարտավորված պիտի ուշաթափ լինեն սրբերի տակ, իհարկե, իրանց վարկը ամուր պահելու համար: Կախարդության ձև ստացած բժշկության այս իր տեսակի առանձին ճյուղը խիստ անխախտ հիմունքների վրա է գտնվում, և նրա շահավետությանը առայժմ ոչինչ վտանգ չի սպառնում:

Միևնույն ժամանակ, երբ ուշաթափ կինը կարդում էր իր պատգամախոսությունը, «տաճարի» մեջ դրսից երևում էր և մի ուրիշ տեսարան. մի քանի կանայք, ընդունելով մուղղուսուց փոքրիկ քարեր, դնում էին իրանց վզերին և չոքեչոք պտույտ էին գալիս տաճարի միջով, պատերի տակով: Դրանք չբեր կանայք էին. այդ քարերը պիտի լուծեին նրանց ամուլությունը:

Հեռանալով այդ տեսարաններից, ես կրկին բարձրացա ժայռի գլուխը և լուռ մտախոհության մեջ անձնատուր եղա բնության տեսարանների դիտողությանը: Իմ հետ նստածներից մեկը ցույց տվեց մեր առաջին մի սար, որ գտնվում է Տումի կոչված գյուղից վերև. այդ սարի գլխին, նրա ասությանը, գտնվում են հին ավերակներ, նույնպես և «Գակի» թագավորի գերեզմանը: Հարցուփորձից հայտնվեց, որ դա ճիշտ է, և ամենքն ասում էին, որ «Գակի» թագավորի գերեզմանը այնտեղ է: Որքան և մեծ էր իմ ցանկությունը տեսնել և այդ տեղը, այնուամենայնիվ, ստիպված էի հեռանալ այդ մտքից, որովհետև բոլորովին միջոց չկար այնտեղ հասնելու. Գիշերը վրա էր հասել, իսկ էգուց առավոտյան, լուսաբացին, այս բոլոր մարդիկ պիտի թողնեն այս տեղերը և ցած իջնեն: Այնպես էլ մնացի առանց որևէ տեղեկության այդ Գագիկի մասին: Հետևյալ օրը, տեսնելով հ.Կոստանյանցի հետ, խոսեցի այս մասին. նա ասաց, որ իրան էլ հայտնի են այդ գերեզմանն ու ավերակները, ավելացրեց և այն, որ դիտավորություն ունի գնալ այնտեղ և հավաքել բոլոր կարելի եղած տեղեկությունները:

Արեգակը մայր մտնելու վրա քամին Դիզափայտի վրա ավելի սաստկացավ: Օդն այնքան ցուրտ էր, որ հարկադրված էինք բոլորովին փաթաթվել վերարկուների և վերմակների մեջ. բայց այդ էլ



չօգնեց: Քամին այնքան սուր և թափանցող էր, որ բավական էր նրա մի դիպչելը մարմնի մի բաց տեղին, և ամբողջ մարմինը դողում էր... Քարե մեծ ժայռերն էլ չէին կարողանում պաշտպանել մեզ ցրտից, քամին ամեն տեղ հասնում էր: Մի քիչ փափուկ ապրած մարդու համար ցուրտը համարյա անտանելի էր. գուցե անտանելի էր և գյուղացի ուխտավորների համար, սակայն նրանք ցույց չէին տալիս ոչ մի նշան, որով կարելի լիներ իմանալ ցրտի ներգործության չափը: Ընդհակառակը, նրանք շարունակում էին իրանց ուրախությունները: Քամու շվվոցների, մոնչունների տակ մարդիկ դեռ պարում էին, թեպետ և գուռնայի ձայնը քամին տանում էր շատ հեռու, այնպես որ մոտիկում կանգնածին էլ լսելի չէր լինում: Ես միայն նախանձվում էի նրանց վրա, աշխատելով ավելի պինդ ծածկվել շորերի տակ: Շուտով վրա հասավ մթությունը: Հարավային կապույտ երկինքը քողարկվեց սև վարագույրի տակ, որ ծածկեց մեր աչքերից ամեն ինչը: Խավարն էլ արգելք չկարողացավ լինել մարդկանց ուրախություններին. դեռ շարունակվում էին աղաղակները: Կծկվելով մի տեղ, մեր շրջանի բոլոր ընկերներս ծածկվեցինք մի վերմակի տակ և պառկեցինք: Բայց ի՛նչ պառկել... Հինգ հոգի թափված էինք միմյանց վրա, այնպես որ ազատ շարժողությունը անհնարին էր. պետք էր ընկնել անշարժ և այնքան համբերություն ունենալ, որ եթե մի անդամն ընդարմանար անգամ, դարձյալ կարելի չէր շարժվել: Այնուամենայնիվ մենք ակամա տանում էինք այդ տանջանքը, որովհետև գեթ դրանով քիչ տաքանում էինք: Եվ այսպիսի դրության մեջ պետք էր քնեինք: Բայց չնայած սաստիկ հոգնածությանը, որ պահանջում էր հանգիստ և քուն, ես չկարողացա աչս գոցել համարյա մինչև լուսաբաց: Կեսգիշերից մոտ մրրիկը ավելի կատաղեց և, ընդհարվելով մեծ ժայռերին, ահռելի ձայներ էր արձակում: Այդ ժամանակ էլ լռեցին բոլոր մարդկային ձայները: Մի՞ թե ամենքն էլ քնել են մի այնպիսի սոսկալի ժամանակ: Առավոտից մոտ մի թեթև նինջ տիրում է մեզ: Բայց քամու մի ուժգին հարձակումը կրկին զարթնացնում է ինձ: Առավոտ է, և ես շտապում եմ կանգնել, որպեսզի փութով թողնեմ այդ անհյուրասեր բարձրությունները: Ներքևում, հովիտների վրա, դեռ տիրում էր խավարը, իսկ այստեղից արդեն կարելի է տեսնել արեգակի ծագելը: Շիկացած երկաթե գնդակի նման արդեն լողում է նա դեպի բարձր, դեռ չկարողանալով արձակել ճառագայթները մեզ վրա: Ընկերներս զարթնում են, ամեն մեկն աշխատում է անշարժությունից փայտացած անդամները շփելով ու ծոմռելով կրկին կենդանության հրավիրել: Բայց ցուրտը դեռ շարունակվում էր: Ուխտավորների խմբերն արդեն ոտքի վրա են և շտապում են դեպի վեր, դեպի «տաճարը»՝ վերջին անգամ ուխտ անելու համար: Մենք իջնում ենք դեպի ցած, իհարկե, ոտով, գնում ենք ուղղաթեք գառիվայրերով համարյա վազեվազ և այդ բնական շարժումը մի քիչ տաքացնում է մեր արյունը: Քամին մեզ թողեց սարի ստորոտում. այդտեղ օդը տաք էր, հարկավորություն չկար փաթաթվել ձմեռային վերակուի մեջ: Շուտով մենք Քոշի աղբյուրի մոտ էինք, լվացվեցանք ձյունի պես սառը ջրով, հեծանք ձիաները ու ճանապարհ ընկանք:

Մոռացա հիշել, որ Դիզափայտի սարը միայն մի աղբյուր չի տալիս. Քոշի աղբյուրից քիչ դեպի արևմուտք մի ուրիշ ձորի մեջ հոսում է և մի այլ աղբյուր, որ կոչվում է Արջի աղբյուր: Դրա հետ կապված է մի ավանդություն, որի մասին խոսել ավելորդ չէր լինի:

Ասում են, որ հին ժամանակները մի արջ, դուրս գալով Տումի գյուղի ծմակներից, սկսում է բարձարանալ դեպի Դիզափայտ: Հասնելով այն տեղին, ուր այժմ գտնվում է աղբյուրը, արջը սաստիկ ծարավում է, այնպես որ ուժաթափ ընկնում է, սկսում է լիզել գետինը ու աղետալի կերպով բռնաչել դեպի երկինք:

Երկինքը խուլ չի մնում արջի վերաբերմամբ: Իսկույն գետնից բխում է այդ աղբյուրը, արջը խմում է զովարար հեղուկը և շարունակում է իր գնացքը դեպի վերև: Այդտեղ ճակատագիրը խիստ



անգուրք է դառնում դեպի արջը: Հասնելով ժայռային մասի ստորոտին, նա կայծակնահար է լինում, տեղնուտեղը սասկում: Մինչև այսօր էլ ցույց են տալիս նրա տեղը. դա մի փոքրիկ քարախառն հողակույտ է՝ «տաճարից» ցած:

Տեսնելով այդ հրաշքով ստեղծված աղբյուրը, ես հիշում եմ Գտիչի վանահայր Առաքել վարդապետի մի ուրիշ պատմությունը այնտեղ գտնվող մի քաղցրահամ աղբրի մասին: Հայր սուրբն ասում էր, որ երբ ինքը նոր վանահայրի պաշտոնով եկել էր Գտիչ, բոլորովին ջուր չկար նրա մոտիկ շրջակայքում. ջուրը բերում էին շատ ներքևից: Մի անգամ երագում երևում է վանքի հիմնադիրը՝ Վրթանես եպիսկոպոսը և հայտնում է, որ այնինչ տեղը ջուր կա: Մյուս օրը վանահայրը իր մարդկանց հետ գնում է ցույց տված տեղը և հենց որ դիպչում է մատով գետնին, օ՝ սքանչելացս, իսկույն բխում է աղբյուրը, որ մինչ այժմ էլ գոյություն ունի: Ուրեմն իզուր են ասում, թե մեր ժամանակները հրաշքներ չեն լինում... Եվ վանահայր վարդապետը պատմում էր այդ անկեղծորեն՝ համոզված լինելով, որ մենք մազի չափ կասկած չունենք նրա երազի մասին:

Զ

ԶԿՌԱՏՍՈՓ: ՕԽՏԸ-ԴՌՆԻ

Քոչի աղբրի մոտից ուխտավորները բաժանվում են. յուրաքանչյուր գյուղի ժողովուրդ ուղևորվում է դեպի իր կողմը, տանելով իր հետ բազմաթիվ ոչխարներ, որ գնել էին վերևում, սրբի մոտ: Դեռ երեկ ես տեսել էի այնտեղ մեծ-մեծ հոտեր, որոնք իմ աչքի առջև հավվեցին, վերջացան: Ես արդեն գիտեի, թե ուր են տանում ոչխարները, ինչու չմորթեցին սրբի մոտ, սարի գլխին: Պատճառը շատ հասկանալի էր: Ամբողջ սարի վրա ոչ մի կաթիլ ջուր կա, ոչ՝ մի կտոր փայտ: Բացի դրանից, ինչպե՞ս շարժվել այնտեղ:

Ուխտավորների մեջ սովորություն է դարձել մատաղները տանել Դիզափայտից քիչ կամ շատ հեռու և նշանակված տեղերը մորթոտել: Թաղլարեցոց ընտրած տեղն է Զկռատափ անունով մի անտառապատ տեղ, ուր կա և ջուր: Երբ մենք մոտեցանք այդ տեղին, ծառերից կախված էին մաշկած ոչխարներ, իսկ նրանց մոտ այրվում էին խարույկները: Ստիպված էինք շնորհակալությամբ մերժել շատերի հյուրասիրությունը և մնալ մեր այն խմբի մեջ, որի հետ գնացել էինք Դիզափայտ: Այդ խումբը բավական սովոր էր: Շուտով ամեն տեղ «սուփրա բացին»: Մարդիկ նստած էին դալար խոտերի մեջ, կազմելով մեծ շրջաններ: Ահագին շամփուրներով խորոված միսը կուտում էին մեջտեղ, և ամեն մեկը վայելում էր առատությամբ... Բերվում էին և շամփուրներ, որոնց վրա բացառապես խորոված էին ոչխարի դմակներ: Որքա՞ն մեծ գմայլմամբ ուտում էին գյուղացիք ճարպի մեծ կտորները, միջոցներում չմոռանալով ողորմաթասեր ու կենացներ դարդակել մեծ տկերից, որոնց կառավարելը հանձնված է լինում սովորաբար երիտասարդներին: Ամեն տեղ ուրախություն էր տիրում, կարծես, այստեղ կատարվում էր մի մեծ խնջույք: Իսկ երբ բոլոր պաշարները կերած ու խմած էին, ամենքը շտապեցին համետել իրենց գրաստները ու ճանապարհ ընկնել:

Իմ բարեկամը հիշեցրեց երեկվա խոստումս՝ ուխտ գնալ Օխտը-դռնին, որ այդտեղից շատ հեռու չէր:

Մենք դուրս եկանք մեծ ճանապարհից և նախ արտերի միջով, ապա հսկայական ծառերի տակով գնալով հասանք մի բլրի, ուր և տեսանք Օխտը-դռնին: Դա մի շատ հին շինություն է՝ վերևիցը բաց: Սողալով ներս մտանք մի փոքրիկ ծակով, որ դռան տեղ է ծառայում: Շինության ներսը ներկայացնում է յոթն կանոնավոր կիսաբոլորակ խորանաձև բաժանմունքներ, որոնք բաժանվում են միմյանցից պատերի պոննաձև հավելվածներով: Յոթ բաժանմունքներից էլ ստացել է իր անունը այդ ուխտատեղին (Յոթն դռնանի): Յոթ բաժանմունքներում այրվում էին բազմաթիվ



մումեր: (Այդտեղ ուխտ գնացողը անպատճառ պիտի ունենա յոթ մում): Պատերը բոլորովին սևացած էին ծխից. մի տառ անգամ չկարողացա գտնել նրանց վրա: Այդ կողմերի ավերակների և կանգուն եկեղեցիների այժմյան կենդանի բնակիչը և հարևանը՝ Առաքել վարդապետը, ասում էր, որ այնտեղ թաղված են յոթ խոտաճարակները, որոնց տոնում է մեր եկեղեցին: Թե որքան ստույգ է այդ, չգիտեմ:

Այս ուխտատեղին գտնվում է մի անսովոր գեղեցիկ տեղ: Նա շրջապատված է անտառով, որ այնքան գեղեցիկ է, որ չես հավատում, թե դա մի արհեստական ծառաստան չէ, այլ քմահաճ բնության մի սիրուն զարդ: Այդտեղ միշտ շվաք է, միշտ զով քամին երջանկություն է պատճառում ուղևորին, երբ նա նստում է այդտեղ քիչ մի հանգստանալու համար: Հեռու շրջակայքը ներկայացնում են խիստ հրապուրիչ տեսարաններ, ամեն տեղ բուսականությունը շլացնելու չափ հարուստ ու փարթամ է: Բնության ոչ մի զարդ, ոչ մի երևույթ չի զլանում հաղորդել այդ չքնաղ անկյունին այնքան վսեմ և հափշտակող պոեզիա, որի ազդեցությունից չի կարող ազատ մնալ սիրտը, ինչ տեսակ կազմվածք և ունենա նա:

Մեծ ափսոսանքով էի հեռանում ես Օխտը-դռնից և հեռանում էի որպես թե մի պատկերից, որին որքան շատ ես նայում, այնքան էլ շատ գերում է նա քո սիրտն ու հոգին: Որքան և փափագելի էր ինձ մնալ այդտեղ գոնե մի շաբաթ, ապրել այդ բնության մեջ, ծծել այդ մաքուր ու գեղեցիկ օդը: Բայց ժամ էր հրաժեշտ տալ և այդ տեղին: Դրանով վերջանում էր մեր ուխտագնացությունը...

Բազմազան տպավորությունների մի ամբողջ բեռն ընկած էր իմ հոգու վրա. ես ամբողջապես հափշտակված էի մտածողությունների մեջ, այնպես որ թոզոտ ու տաք ճանապարհը ինձ համար աննկատելի կերպով անցավ: Իրիկնապահին մենք Թաղարի մոտ էինք. մի քիչ շրջեցինք այգիների մեջ և հետո մտանք գյուղը:

Բոլորովին ջարդվածի պես ես ընկա անկողնու մեջ: Այդ բոլոր անցկացրածից հետո ինձ հարկավոր էր հանգստություն և հանգստություն...

Երկու օրից հետո, հուլիսի 17-ին, ես արդեն Շուշիումն էի:

ՀԱՎԵԼՎԱԾ¹

Շուշիի գավառում, Տիգրակի և Վարանդայի սահմանների վրա, դեպի Թաղար և Տող տանող ճանապարհից վերև գտնվում է Վերին Թաղավարդ հայաբնակ գյուղը: Նա տեղավորված է մի բավական մեծ և բարձր լեռնային բարձրության վրա, որ պատած է ծմակներով:

Այդ գյուղից դեպի հարավ-արևմուտ, 1½ վերստ հեռավորությամբ գտնվում է մի առանձնակի դասավորված անտառապատ մեծ բլուր: Ճանապարհը դեպի այդ բլուրը բավական հարմար է. ուղևորը աստիճանաբար բարձրանում է ձիով անընդհատ ծմակի միջով:

Վեց թե յոթ ամիս սրանից առաջ այդ բլրի գլխին, հսկայական ծառերի մեջ, երևում էր մի խաչքար, որ Թաղավարդ գյուղի հայերի ուխտատեղին էր. նա կոչվում է Բարևաճառ: Այդտեղ ուխտ գնացողն ունի և այժմ կատարում է մի սրբազան պարտականություն, որ ավանդաբար մնացել է ժողովրդի մեջ ամենահին ժամանակներից. տարած զոհերից ինչ և մնա ավելորդ՝ պետք

¹ Մեր այս գրքույկը բոլորովին պատրաստ էր մամուլի տակ մտնելու, երբ ստացանք մի քանի տեղեկություններ ևս, որոնք ունեն մոտիկ կապ մեր հիշատակարանի հետ. ուստիև հարմար դատեցինք ավելացնել այդ տեղեկությունները առանձին հոդվածով: Փույթ չէ, եթե մեր աշխատությունը դրանով զրկվում է կանոնավոր դասավորությունից. մենք առաջարկում ենք հում նյութ, որից հետաքրքիր բանասերը կարող կլինի մշակել շատ թե քիչ ուղիղ եզրակացություններ Արցախի և Աղվանից երկրի հին պատմական ժամանակներից: Միննույն ժամանակ շատ զոհ կլինեինք, եթե մեր այս գրքույկը կարողանար ցույց տալ մեր գիտնականներին, թե մեր երկրում էլ կան շատ ուսումնասիրելու բաներ: Կանգնեն տարիներ, և ավերիչ ժամանակի ամեն ինչ ոչնչացնող ժանիքներից ազատված և մինչև մեր օրերը պահված հնությունների մնացորդները բոլորովին կանհետանան և, տանելով իրանց հետ հավիտենականության անդունդների մեջ շատ հետաքրքիր բաներ



է թողնել այնտեղ, իսկ ետ տանել մի քան անկարելի է, և այդպես չանողները խստիվ պատժվում են: Պատմում են, որ մոտիկ անցյալներում թաղավարդեցի մի քանի գյուղականներ, մոռանալով նախնական սովորությունը, գոհ տարած ոչխարների ավելորդ մնացած դմակները ետ են տարել տուն. չի անցել և մի քանի օր՝ կարկուտը ոչնչացրել է նրանց արտերի մեծ մասը. այնինչ մյուս գյուղացիների արտերը անվնաս են մնացել: Սա է Բարևածառի մի առանձնահատկությունը:

Մոտավորապես յոթ ամիս սրանից առաջ մի թաղավարդեցի հայ կամենում է այդ խաչքարի վրա մատուռ կանգնացնել իր սեփական միջոցներով: Գյուղացիք քանդում են մատուռի համար հիմք, բայց փորած տեղից երևում են գետի տակ ծածկված շինության պատերը: Փորողները զգուշությամբ շարունակում են գործը. հետզհետե երևան է գալիս մի եկեղեցի. այստեղ աշխատանքները ընդհատվում են, թեև արտաքին նշաններից երևում է, որ դեռ էլ շինություններ պիտի լինեն գետնի տակ: Հայտնվում է, որ ուխտատեղի դառած խաչքարը գետնի տակ ծածկված եկեղեցու վերին քարերից մեկն է եղել:

Եկեղեցին ներկայացնում է բազմադարյան մի շինություն՝ կառուցած ամենանուրբ ճաշակով և գեղեցիկ ճարտարապետության կանոններով. նա գլուխ չունի, բայց սեղանի և խորանների տեղերը բավական լավ են պահվել: Ահագին ծառերի արմատները խրված են պատերի մեջ. բուսականության կյանք տվող ուժը դարերի ընթացքում ճմլել է անշունչ եկեղեցու ավերակները, ուստիև շատ քարեր ճաքճքած ու կոտրատված են:

Եկեղեցու շինության տարին դեռ չի հայտնվել. բայց նրա հնության մասին խոսում են երկու արձանագրություններ, որոնք գտնվում են երկու խաչքարի վրա: Դնում ենք այստեղ նրանց ճիշտ օրինակները.

«Մուրբ Պետրոս. կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց: Արդ, որք երկրպագանէք սուրբ Նշանիս զիս աղօթս... ջիք և Աստուած զձեզ յիշեսցէ. թուին Ն.Խ.Ձ.Էր»:

«Մուրբ Պօղոս: Յամս Աստուածապատիւ և հոգևոր Տեառն Յովհաննիսի Ամարասայ եպիսկոպոսի և պետութեան Տեառն Գագիկայ Աղուանից իծխանաց իշխանի ես հայր Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս եղբօր որդի Կոկոնայ...»:

Թվականը միևնույնն է:

Ուրեմն մոտ ինն հարյուր տարվա հնություններ են դրանք: Այժմ, կարծում ենք, հասկանալի է, թե ինչ «Գագիկ» թագավորի գերեզման է գտնվում մեր հիշատակարանում հիշած Տումի գյուղի սարի գագաթի վրա և այս արձանագրությունը ավելի մեծ նշանակություն է տալիս այն գերեզմանին, որովհետև, եթե ընդունել, թե նույն Գագիկն է այս արձանագրության մեջ հիշվածը, նա ինն հարյուր տարվա մի հնություն պիտի լինի:

Այստեղ մեր առաջ երևան է գալիս մեր հին պատմությունը ուսումնասիրելու մի միջոց. դա ժողովրդի մեջ կենդանի մնացած ավանդություններն են: Ինն հարյուր տարի անցնում է մի երկրի վրայով, ինն հարյուր տեսակ փոփոխվում է ազգերի վիճակը, բայց երկրի բնիկների մեջ չի մեռնում մի անուն, բերանացի գրուցաբանությունների մեջ կենդանի է պահվում ժողովրդական հերոսը, նրա գերեզմանի տեղը: Դա է եղել հայկական ժողովրդի մի ամենահին հատկությունը, որ կա մինչև այսօր: Մտեք գյուղական հասարակ դասի մեջ, խոսացրեք, և դուք կտեսնեք, որ հայը շատ անգամ ներկայի համար այնքան հասկացողություն չունի, որքան հին պատմական կյանքի մասին. հայրենիքի մեջ կատարված անցքերը մտել են նրա ավանդությունների մեջ, ուր իսկականությունը թեև աղճատված է, բայց գլխավոր դեպքերը, փաստերը անհամեմատ պարզ և ճիշտ են մնացել: Մի թե՛ զանազան առասպելներից և բերանացի ավանդություններից ու երգերից չէր հավաքում պատմության փշրանքները հինգերորդ դարու մեր ուսումնական մեծն



Խորենացին: Ցավալի ներհակություն: Տասնչորս դար մեզանից առաջ հասկանում էին ժողովրդական բանաստեղծությանց նշանակությունը, իսկ մեր օրերում թեթևամտությամբ են վերաբերում դեպի ավանդույթները, ժողովրդի կենդանի ձայնը:

Մեր հիշած Բարևաձառի հետ նույնպես շատ ավանդություններ կան կապված, որոնցից կհիշենք մի քանիսները: Թաղավարդի ծերունիքը (իսկ այդ գյուղում հարյուրից ավել տարիներ տեսածներ շատ կան), ի թիվս որոց կհիշեմ Գրիգոր քահանա Դաղյանցին, ասում են, որ Բարևաձառը մի ժամանակ եղել է Աղվանից կաթողիկոսության ամառանոցը: Այդ բանը շատ հավանական է երևում, երբ աչքի առաջ ենք առնում այն, որ Ամարասը (Աղվանից կաթողիկոսանիստ հոշակավոր վանքը) գտնվում է այդտեղից ոչ այնքան հեռու մի դաշտավայրի վրա, ուր ամառը սարսափելի տաք է լինում. գյուղացիք շոգի սաստկությունը ցույց տալու համար ասում են. «Ամարասա դաշտից էլ անցավ»: Եվ ահա ուղիղ այդ դաշտավայրի առաջ բարձրացած է այն լեռնային գոտին, որի մասն է կազմում բլուրը, ուր գտնվում է Բարևաձառը: Բացի դրանից, մի թե վերև հիշած արձանագրությունը կողմնակի կերպով չի ակնարկում այդ ենթադրության վրա: Հետո ավանդությունը ասում է, որ Բարևաձառի եկեղեցին կործանվել է Լանկ-Թամուրի սոսկալի արշավանքի ժամանակ: Անգութ է եղել այդ արշավանքը և Ամարասա հոյակապ վանքի համար. նա էլ կործանվել է բարբարոսների ձեռքով: Ժողովուրդը այսօր էլ պատմում է, թե Լանկ-Թամուրը իր գորքերը շարել է Ամարասից մինչև Արաքսը. վանքի մոտ կանգնած զինվորները մի-մի վերցրել են նրա քարերը և, ձեռքից ձեռք տալով՝ թափել են Արաքսի մեջ: Կիսավեր դրության մեջ հոշակավոր հնությունը մնացել էր մինչև վերջին ժամանակները. վաթսուներկու թվականներին նորոգվել է նաև Ս.Լուսավորչի թոռան՝ Գրիգորիսի գերեզմանը. գտնվել է ավերակների տակից:

Բայց ինչպե՞ս է եղել, ու Բարևաձառի եկեղեցին անհետացել է գետնի մեջ: Ուրիշ մի բանով չենք կարող հասկանալ այդ, եթե չենթադրենք, որ խիտ ծմակի բուսականությունը ծածկել է եկեղեցին և դարերի ընթացքում հայտնի բնական և երկրաբանական օրենքներով փտելով դարձել է հող, որով և ծածկվել է եկեղեցին՝ թողնելով ապագայի համար իբրև նշան և ուղեցույց խաչաքարը, որ ժողովրդի ուխտավայրն է դարձել:

Ինչ վերաբերում է Բարևաձառ անվան, այժմյան ծերերը պատմում են հետևյալը. մի ժամանակ այդտեղ բնակվում էր մի սուրբ և խստակյաց եպիսկոպոս. ամեն ժամանակ, երբ նա երկար ծոմապահություններից և ճգնություններից հետո պատարագ էր մատուցանում սուրբ սեղանի վրա, ողջունի ժամանակ ծմակի բույր ծառերը ողջունվում էին միմյանց հետ՝ երեք անգամ կպցնելով միմյանց իրանց գլուխները: Մի անգամ հեռու տեղից գալիս է մի ջերմեռանդ հայ՝ այդ հրաշքը տեսնելու համար: Նա խոստանում է եպիսկոպոսին նվիրել վանքին իր հետ բերած մի ջորեբեռն ոսկին, եթե միայն արժանանա տեսնել հրաշքը: Եպիսկոպոսը խոստանում է, բայց պատարագի ժամանակ նրա մեջ ծագում է երկմտություն, թե արդյոք ոսկու հետ ջորին է՞լ պետք է նվիրվի, թե ոչ. այդ երկմտությունը այն հետևանքն է ունենում, որ ողջունի ժամանակ ծառերը չեն համբուրվում միմյանց հետ: Երբ ուխտավորը իմանում է եպիսկոպոսից պատճառը, շտապում է հայտնել, թե ջորին էլ է տալիս և բացի դրանից խոստանում է ետ դառնալուց շատ ուրիշ թանկագին պարզներ էլ դրկել: Հետևյալ օրը եպիսկոպոսը կրկին սեղան է ելնում. հրաշքը այս անգամ կատարվում է. հարուստ հայը գոհությամբ գնում է իր երկիրը և դրկում է խոստացած նվերները: Այս ավանդությունը թեև մի առանձին հետաքրքրություն չի ներկայացնում իբրև մի զուտ պատմական փաստ, բայց վկայում է, որ Բարևաձառը հայտնի է եղել և հեռու տեղերում և ունեցել է մեծ հարստություններ, որոնցից հրապուրված բարբարոսները կործանել են նրան:



Ահա այն ամենը, ինչ այժմ հայտնի է Բարևածառի մասին: Գուցե հետագայում հայտնվեն էլ ուրիշ արձանագրություններ և շինություններ, երբ սկսեն փորել եկեղեցու շրջակայքը. գյուղացիք մտադիր են շուտով սկսել փորել, եթե արգելք չլինի մեր հոգևոր կառավարության կողմից:

Բարևածառի և Թաղավարդի մեջ գտնվում է մի ուրիշ բլրակ՝ ծածկված աղքատիկ բուսականությամբ. այդտեղ կան պղնձե հանքեր: Այդ բլուրից բխում է մի փոքրիկ գետակ, որ անվանվում է Կարմիր ջուր. յուրաքանչյուր գյուղացի գիտե, որ այդ ջուրը վատառողջ է, որովհետև ունի իր մեջ հանքային բաղադրություններ, ուստի նրանից ոչ խմում են և ոչ անասուններին են տալիս: Նա հոսելով անցնում է դեպի Տող տանող ճանապարհի միջով, մի մեծ խոր ձորով, որ կոչվում է Չուրաթանին-կապ: Երկրի այդ բնական առատ հարստությունը մինչև այժմ մնում է անմշակ. թեև անցյալներում մի շուշեցի հայ մեծ գումար է վատնել պղնձե հանքերը մշակելու համար, բայց գործը չի կարողացել վախճանին հասցնել. մնացել են մինչև այժմ խոր ականները և մի քանի գործիքներ... Հայը միշտ այդպես է եղել. ջերմեռանդությամբ սկսել է մի գործ, իսկ կեսում թողել անկատար: Եվ առհասարակ հայը իբրև տնտեսագետ, իբրև երկիր մշակող, նրա հարստությունները արտահանող, շատ անկարող է. նա, ինչպես համոզված է բոլոր աշխարհը, առևտրի մարդ է, անքրտինք և անարյուն աշխատանքի երկրպագու է: Ընդունենք թե այդպես է, բայց մի թե պիտի բավականանանք միայն այդպիսի միտք ունենալով. մի թե չպիտի ուզենանք իմանալ պատճառները, թե ինչու այսօր հայը ապրելու միջոց է ընտրել առևտրականությունը, այն էլ այն տեսակ առևտրականությունը, որի սխառեման, որի նպատակները, հետևանքները ոչ մեկի համար հավանելի չեն թվում: Այդ պատճառները հեշտությամբ կարող ենք հասկանալ, եթե ուշի մտոք հետևենք հայ ազգի կրած կյանքին, նրան երկար դարերի ընթացքում շրջապատած քաղաքական հանգամանքներին: Սակայն պատճառներն իմանալով դեռ ոչինչ բան արած չենք լինի ընդհանուր ատելության առարկա դառած մի պարապմունքի դեմ: Այժմ, երբ ամեն հանգամանքներ նպաստավոր են ժամանակակից պահանջների համեմատ առևտրականություն հաստատելու, այժմ, երբ բոլոր աշխարհը կյանքի ապահովության աղբյուրը անխոնջ որոնում է ծմակների, ձորերի, սարերի մեջ, այո, այժմ մենք պետք է միայն հարցնենք. մի թե չկա մեկը, որ կարողանա առաջնորդել բազմությունը դեպի իր երկրի կողմերը, ցույց տա նրան մշակելու, հերկելու, պահելու, եղանակը: Թող այդ հարցին պատասխանե մեր ուսյալ դասը. դա նրան է միայն վերաբերում: Մինչև այժմ հայ ուսումնականները չեն կարողացել որևէ բարոյական կապ հիմնել իրանց և ժողովրդի մեջ, չեն ունեցել հեղինակելու, ինիցիատոր լինելու միջոց, այլ միշտ աշխատել են պահել իրանց ժողովրդից բարձր, մեր ինտելիգենցիային հատուկ պճնամոլությամբ և հպարտ արհեստակրատիկական վեհանձնությամբ: Վերջացնելով հողվածս, պարտք եմ համարում հայտնել շնորհակալությունս շուշիաբնակ պ. Հովսեփ Մելիք-Շահնազարյանցին, որից ստացել եմ հիշյալ երկու արձանագրությունները և մասամբ՝ տեղեկություններ Բարևածառի մասին:



ՈՒՂԵԳՆԱՑԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Դէպքը կամ բախտը ինձ առիթ տուեց ամառս Թիֆլիսի անմաքուր օդից ազատուիլ: Յանկարծ ճանապարհորդ եղայ: Այն էլ մի այնպիսի աշխարհ, որոյ տեսութեանը շատ էի փափագում: Դա Շուշուայ գաւառն է՝ պատմական Սիւնեաց պատուական աշխարհը.

«Ուր սև-սև ամպերն են դարձել ի փախ,
Եւ ճերմակ-ճերմակ ամպերն են անվախ»¹:

Յունիսի 7-ին երկաթուղու գիշերուայ գնացքով մեկնեցայ Թիֆլիսից: Հետս ազգակցիս ընտանիքն է, որոց Շուշի եմ տանելու: Շոգեկառքերը ուղևորներով լիքն են, առաւելապէս պարսիկներ: Ես գնում եմ երրորդ կարգի տոմսակով: Իմ նստած կառքում պարսիկ չը կայ, այլ բոլորն էլ հայեր են, մասամբ և ռուսներ: Հայերը վաճառականներ են: Կան և մի քանի գանձակեցի և նուխեցի կանայք, որոնք իրանց գաւակներին (գիմնագիստ և կադէտ) հայրենիք են տանում:

Շոգեկառքի մի անկիւնում կուչ եկած նստած է Ներսիսեան դպրանոցի մի աշակերտ: Ես նրան ճանաչում եմ և հրաւիրում եմ մօտս: Մենք սկսում ենք խօսել մինչև ժամը մէկը: Մեր խօսակցութեան նիւթը շատ թարմ է, հետաքրքիր: Բայց ես զանց եմ առնում առաջ բերել այստեղ: Այսքանս միայն կասեմ, որ, ինչպէս երևեցաւ, նախընթաց օրը յիշեալ դպրանոցում ցաւալի դէպքեր են պատահել: Դրանք, ասենք, դպրանոցի համար նոր բաներ չեն, բայց... էլ բայցը ո՞րն է. չէ՞ որ մեր բոլոր գործերը դէպքերով են սկսվում և վերջանում:

Դուրսը մութն է, ոչինչ չէ երևում: Շոգեկառքի լուսաւորութիւնը շատ նուազ է: Լուսադէմին Գանձակից շոգեկառքը մտաւ, ի թիւս այլոց, և մի հայ պարոն՝ Աղղաշի բժիշկը՝ պ. Աղասերեանը: Ծանոթացանք և մինչև Եվլախ իջևանը խօսում ենք, ի միջի այլոց, վերջին օրերումս Կ. Պօլսում պատահած դէպքերի վրայ: Եվլախում ես վեր եկայ: Ժամը առաւօտեան 7-ն է: Գնում են ֆուրգօն վարձելու, բայց ստրջանօք յետ դառնում: Ֆուրգօնչիկները դրականաբար յայտնում են, որ երրորդ օրը մեզ Շուշի կը հասցնեն: Ուրիշներն էլ ասում են, թէ ընտանիքով լաւ չէ ֆուրգօնով գնալ: Բոլոր ճանապարհին աւազակաց խմբեր են թափառում, որոնք ամէնից շատ ֆուրգօնների վրայ են յարձակվում, թէև ճանապարհի վրայ պահնակ ձիաւորներ կան կանգնած, բայց դա լոկ ձև է, լաւ է փոստայով գնալ և մի չափառ² էլ վերցնել մեզ հետ: Գնում ենք փոստատուն. տառանդազ չը կայ, այլ լոկ տրօյկաներ: Ուղեթուղթ (պատառօժնայեա) ինձ տալիս են ժամը 10-ին: Իսկ չափառ՝ ամեննին, որովհետև ուղեթուղթս մասնաւոր է: Ինքս ինձ բախտին յանձնեցի և ճանապարհ ընկայ: Ճանապարհ ասելով չը կարծէք, թէ խճուղի է, ո՛չ, այլ գիւղական, սովորական և միանգամայն անխնամ թողած ճանապարհ՝ բլրկացած և նեղլիկ առունների վրայ ձգած կամուրջներով, հազարաւոր պտոյտներով և առատ փոշիով: Պակաս չեն աղմկոտ ու ճահճոտ տեղեր ևս, ուր գորտերը իրանց համերգն են սարքել: Հազիւ 10 վերստ առաջ ենք գնացել, և ահա կառապանս քթի տակով ինչ-որ աւազակներին յիշոց է տալիս: Բանից դուրս է գալիս, որ նոյն տեղումն անցեալ տարի աւազակները մի ռուս մայորի վրայ են յարձակուել, 3000ռ. և շորերը տարել և կօզակին էլ սպանել: Ինքը՝ մայորը, շապկանց հազիւհազ ազատուել է: Կառապանի պատմութիւնը երկիւղ ազդեց մեզ: Մեր բախտից երկու-երեք վերստից յետոյ հնձուրներ սկսան երևիլ: Դաշտի հեռաւոր կետերում՝

¹ Ալիշան
² Թիկնապահ գինվոր (ծանոթ. խմբ.)



թփերի մեջ, թափառում են և պահնակ ձիաւորներ: Փոքր-ինչ միամտվում են և սկսում չորս կողմս դիտել:

Մեր անցկացած դաշտը խիստ ընդարձակ է: Նա Ջիւանշիր գաւառի մի մասն է կազմում: Բացի ցորենից և գարուց՝ ուրիշ բան չեն սերմանում այդտեղ: Իսկ հացահատիկներն էլ հնձում են մանգաղով, որովհետև գերանդիով հնձելիս հատիկները թափվում, ցրվում են: Գերանդին գործածում են միմիայն խոտ հնձելու համար: Դաշտի մակերևոյթը լիքն է թփերով, որոնց մեջ շատ կան վայրի նոռնիք:

Եվլախից մինչև Շուշի (ընդամենը 104 վերստ) դաշտի հողը երեք անգամ փոխվում է: Սկզբում նա կաւոտ է, յետոյ՝ սև և յետոյ՝ կրոտ: Միւնեաց լեռներից բխող Թարթառ, Խաչէն, Կարկառ գետերը (Կուրի աջակողմեան վտակներ) գրեթէ ողջ դաշտը ոռոգում են՝ շնորհիւ այն բազմաթիւ առուների, որոնք գիւղացիք են շինել: Առուակների եզերքներում բուսականութիւնը համեմատաբար հարուստ է: Վայրի վարդենիք, նոռնիք, ուռնիք, բարդի և եղէգներ շուտ-շուտ են հանդիպում ձեր աչքին: Շրջակայ գիւղերը հօ ամբողջապէս թաղուած են ծառերի մեջ: Այդ ծառերիցը արդիւնաւոր և շատ է մանաւանդ թթենին, որոյ պտուղը տակառներով տանում են մի քանի գիւղերում եղած ցքիի (օղի) գործարանները:

Հասանք առաջին իջևանը՝ Ղարամանլու: Սա մի ծառաշատ, ճանճաշատ և, ասում էին, աւազակաշատ գիւղ է: Կէսօր է, և արևը սաստիկ նեղում է մեզ, մանաւանդ երեխաներին: Հովանոցների օգնութիւնը շատ չնչին է: Իջևանում ձի չը կայ, չափառ՝ նոյնպէս: Ձիանք խոստացան միմիայն 6 ½ ժամին տալ, բայց տուին 5 ժամ առաջ: Ստառօստան մի գործնական ռուս էր: Բայց մեզ մի երկիւղ էլ ինքը տուեց՝ յայտնելով, որ Թարթառը վարարուել է, և մեզ պետք է գոմշի բարձր սայլով անցնել: Ա՛ն քեզ տրաքոց: Բայց ինչ կարող ենք անել: Ճամփայ ընկանք: Հետզհետէ անցուդարձ անողներ են պատահում, բայց բոլորն էլ զինաւորուած հրացանով և դաշոյնով: Տէ՛ր աստուած, ի՛նչ բարբառոս աշխարհ ենք մտել: Ո՞վ զիտէ, աւազակները թերևս 10-12 հոգի լինեն, բայց ողջ գաւառի վրայ սարսափ են ձգել: Սարսափն այնքան մեծ է, որ փոստայի օրերն էլ դիտմամբ փոխել են: Ինչնիցէ:

Արտուտիկը, ծիտը, ծիծեռնիկը, գեղունիկը օդում ճախրում և խայտում են: Թփերի և կանաչների վրայ թռչկոտում են սպիտակ և գորշ թիթեռնիկներ: Տեղ-տեղ առուների եզերքներում կրիաներն էլ են երևում: Եւ ահա ինքը՝ Թարթառը՝ իւր մօտ 70-80 սաժէն տաշտով: Սակայն, օ՛հ ուրախութիւն, գետի ջուրն այնքան իջել է, որ կարելի է և տրօյկով անցնել: Եւ մենք անցանք: Գետի ձախ ափին՝ փոքր-ինչ հեռու, Տէրտեր (Թարթառ) իջևանն է, ուր նոյնպէս ձի չը կայ: Չորս կառքի սպասող ճանապարհորդներ կան: Մեզ խոստացան ճամփու դնել յետ դարձող կառքով միայն 2 ժամ յետոյ: Ասած է. անճարը կերել է բանջարը: Համաձայնուեցայ, մանաւանդ, որ իջևանում գիշերելու տեղ կայ: Ընդամենը մի սենեակ՝ այն ևս բեռնուած ուրիշներից: Շատ խնդրեցի, ինչ գնով էլ որ լինի, մեզ մի չափառ տալ, բայց կարելի չեղաւ, նախ ուղեթուղթս մասնաւոր է, և երկրորդ՝ չափառները 6 վերստի վրա են կենում՝ վտանգալից տեղում՝ ճիշտ մեր գնալիք ճանապարհի վրայ: Արդէն մթնանում է. ժամը 7-ն անց է: Բոլոր յոյսս բախտի և մասամբ ամիթ և վիսսօնի ատրճանակս վրայ դրած՝ կառք նստանք: Ուղին աստիճանաբար բարձրանում է և շարունակ իջնում, ելնում զառիվայր և զառիվեր: Անցուդարձող՝ աստուած տայ: Միայն մի ֆուրգօն տեսանք, միջին ութը մարդ՝ բոլորի էլ ձեռքները՝ հրացան: Բարեբախտաբար, դաշտը չոր ու ցամաք է, ո՛չ ծառ կայ, ո՛չ թուփ և մացառ: Ուրեմն եթէ աւազակները գան, կարելի է տեսնել և պաշտպանուել: Այսպէս ասում են ուղեկից կինարմատին, բայց ինքս էլ ասածիս չեմ հաւատում:

Հասանք վտանգալից վայրը: Չափառները նստած են, ձիերն արածում են: Ո՛չ բարև, ո՛չ աստծու բարին, կողքերովն անցկացանք: Ես վճռած եմ այլևս յոյս չը դնել այլոց վրայ:



Մութը շատանում է: Ձիանքը դադրած գուռով չեն կարող շուտ գնալ:

- Մի ե՛րգ ասա, ա՛յ տղա,- ասում եմ ես կառապանին,- և իմ Ջալատը սկսում է.

«Գարաբաղդա թալան վար,

Եարի եօղա գալան վար»:

- Ֆո՛ւ, սատանան քեզ տանի, անիծա՛ծ, կրակի վրայ ձեթ է ածում: Լո՛ր, շուտ վե՛րջ տուր այդ մելամաղձիկ և չարագուշակ երգին: Արշա՛կ, Փառանձե՛մ, դուք մի ե՛րգ ասացեք:

Եւ մանուկները սկսեցին.

«Հերիք, որդեա՛կք, այսքան տարուայ տառապանք,

Հերի՛ք որչափ դաժան քրդին ձեռքն ընկանք...»:

Այս պրծանք, մանուկները սկսեցին երկրորդ, երրորդ, չորրորդ երգը, Գամառ-Քաթիպային և Թաղիադեանցին տակնուվրայ արինք: Եւ այսպէս՝ մանուկների պոռպոռալի ազդեցութեա՛ն, թե՛ քախտի շնորհիվ ժամը մօտ 10-ին հասանք կէս իջևանը, ուր և գիշերեցինք՝ հազար անգամ անիծելով անցած իջևաններիս ծառայողներին, որոնց ամէն մէկը մի-մի տեսակ երկիւղ էր տալիս մեզ: Դուրս էր գալիս ուրեմն, որ աւագակներից ամէնից շատ երկիւղ կրողները իջևանների ծառայողներն իրանք են: Դրանք մի լուից տասը ուղտ են շինում. սատանան գիտէ, թէ ի՞նչ նպատակաւ: Մախլաս¹:

Վաղ առաւօտուն իջևանից դուրս եկայ արդէն չափառով: Այս նշանակում է «ընթրիքից յետոյ խարգալ», բայց, ինչ արած, երբ ինձ թախանձում են ուղեկիցներս: Երկու ժամից յետոյ Շահբուլաղ իջևանումն ենք արդէն՝ մեր ետքը թողնելով բազմաթիւ սայլեր, որոնց անիւները փոխարինած է երկանաքարերով (ջրաղացի քարեր): Երկանաքարերը բերում են Շուշուց մօտակայ ջրաղացների համար: Բայց երկանաքարեայ անի՛ւ, ես այս առաջին անգամն եմ տեսնում: Մեր ետքն մնաց նմանապէս և Խաչէնի գետը, որոյ հունը բաւական մեծ է, և ինչպէս երևում է, շատ վարարուել գիտէ: Շահբուլաղը թիրքաբնակ գիւղ է նոյնպէս, ծառաշատ: Իջևանի կողքին մի քարաշէն, ընդարձակ շէնք կայ, ուր այժմ չափառներն են կենում: Շէնքը բերդ է, և, ասում են, Շահ-Աբասի ժամանակից մնացած: Բերդից ներքն՝ ձորաբերանում, մի մզկիթ² կայ նոյն ժամանակների: Մզկիթը լերան (անունը Հովուի լեռ) ստորոտումն է շինած, իսկ գագաթում մի վանք է երևում: Վանքն աւերակ է, և նրա մօտ մի քարացած կնոջ արձան կայ իբր, հաւաստիացնում են ինձ: Կարող է պատահել: Հնախօսները թող բարձրանան և ստուգեն: Իսկ ես կը շարունակեմ իմ ճանապարհը դէպի Խօջալի՝ վերջին իջևանը: Ճանապարհը միշտ բարձրանում է և փոքր-ինչ կոկիկ ձև ստանում: Մինչև անգամ նոր և լայն ճանապարհ բաց անելու էլ են ձեռնարկել: Կարկառի հովտի բերանում՝ երկու իսկ կողմից, քարաշէն բերդի պարիսպ ու աշտարակների մնացուածներ կան³: Դրանք էլ Փէննէի խանի շինած են իբր: Չը գիտեմ, ստուգելու էլ առայժմ առիթ չունիմ:

Կարկառի ջուրը միւս գետերի ջրոց համեմատութեամբ շատ մաքուր է և սառնորակ: Պատճառը, անշուշտ, այն է, որ մենք նրա ակունքին մօտ ենք: Արդէն Արցախի լեռների ստորոտովն է անցնում մեր ճանապարհը:

Խօջալիի իջևանից մեզ իսկոյն ճանապարհի ձգեցին, թէև, ըստ սովորութեան, այդտեղ էլ պատմեցին, թէ ինչպէս մի քանի ժամանակ առաջ վեց վերստի վրայ (դէպի Շուշի) աւագակները յարձակուել են ճանապարհորդների վերայ, ինչպէս ճանապարհորդներից մինը՝ մի հայ

¹ Ինչնիցե (ծանոթ.՝ խմբ.)
² Իր տասնվեցերորդ նամակում հեղինակը նշում է, թէ սույն կառույցը ոչ թէ մզկիթ էր, այլ բաղնիք (տե՛ս սույն աշխատությունը, էջ 38, ծանոթ.՝ խմբ.)
³ Խոսքը, անշուշտ, Ասկերանի ամրոցի մասին է (ծանոթ. խմբ.)



տղամարդ, թփերի մէջ թաք կենալով, խփում, սպանում է աւագակապետին, որ իւր արհեստին մէջ շատ մեծ անուն և համբաւ է ունեցել այս կողմերում: Վերջապէս նահանգապետը յիշեալ հային լաւ վարձատրել է և այլն, և այլն:

Խօջալիից սկսեալ՝ մեր ճանապարհը շարունակ բարձրանում է, թէև փոսերն էլ պակաս չեն: Շուշին արդէն բազմել է լեռան գագաթին և լանջերին: Ուղին շատ վատ է, քարքարոտ: Քոչող թարաքամաների երկոտանի և չորքոտանի ընտանիքներին յաճախ ենք հանդիպում: Մի մասն արդէն տեղաւորուել է Կարկառի հովտում: Երեք ժամից յետոյ հազիւ Շուշուայ պատուանդանը կազմող լեռան ստորոտն հասանք: Մի ժամումն էլ լեռը և իւր քարքարուտ կապաններն անցանք, և ահա ես արդէն Շուշիումն եմ՝ մօտ 6000 ոտնաչափ բարձրութեան վերայ, որտեղից գրում եմ այս առաջին նամակս¹:

Երևակայեցէք մի նեղկակ, գոգաւոր հովիտ, չորս կողմը լեռներ, մէջտեղում մի այլ լեռ, որոյ գլխին 5-6 հազար տներ՝ լո՛խն (բոլորն) էլ քարաշէն և միայարկ, կրկնայարկ և եռայարկ, մի քանիսն էլ քառայարկ: Մի հատիկ էլ հինգ յարկանի շինութիւն կայ, և այն էլ իջնանատուն: Տների ամենամեծ մասը՝ դստիկոններով, պատշգամբներով և ցանցաձև վանդակապատ լուսամուտներով է: Կտուրները՝ թեք, մեծագոյն մասը՝ աններկ և դիմացկուն փայտից, փոքրագոյնը՝ երկաթեայ թիթեղից: Կան, որ ծածկուած են խառն՝ երկու իսկ նիւթից: Տները՝ քար, փողոցները՝ քար, շրջապատ պարիսպը՝ քար, չորս կողմը՝ քար, մի նոր տեսակ Ձէյթուն կամ Սասուն է:

Գրեթէ ամէն տուն իւր պարտէզն ունի, ուր ամէնից շատ երևում են շլորենի, տանձենի և ինձորենի: Անպտուղ ծառերը՝ ուռենի և բարդի, որին տեղացիք սխալմամբ անուանում են սօսի: Ծաղիկներ չեմ տեսնում՝ բացի սովորական անհոտ և անհամ վարդից և գրավարդից: Զրավա՛րդ, ճշմարիտ որ գուր, կեղծ, վայրի վարդ: Պարտէզները՝ երբեմն պարսպապատ-քարապատ, երբեմն՝ տախտակապատ և երբեմն էլ ցանկապատ-փշապատ՝ յաճախակի պատած, փաթաթած եղինջով-կճանով և մեծ ու սուր ասեղներով, փշերով: Զարմա՛ցք, երկիրն այսքան քարքարուտ, բայց, միևնոյն ժամանակ, այսքան բուստ ու ծառուտ:

Երկու յասարակաց պարտէզ կայ՝ մինը հայոց, միւսը թիւրքաց համար: Առաջինը նոր են շինել, դեռ ծառ չը կայ: Իսկ երկրորդումը՝ միմիայն մի ճեմելիք: Սրա մէջ արձակ-համարձակ շրջում և զբօսում են և՛ մարդիկ, և՛ կենդանիք՝ ձի, գառ և ոչխար: Եւ զբօսելիք՝ այդ անքաղաքավար կենդանիք, թե՛ խոտն են արածում, թե՛ մատաղ տունկերը կրծոտում և թե՛ կարիքի ժամանակ թրքում, կտտորում, ապականում:

Երկու աղբիւր՝ բազմաթիւ ծորակներով, մինը՝ լաւագոյնը՝ թիւրքաց (պարսկաց), միւսը՝ հայոց բաժնում: Աղբիւրներից ջուր են կրում և՛ էշերը, և՛ պատանիք, և՛ կնանիք: Առաջինքը՝ թմբկաձև տակառներով, իսկ երկրորդքը՝ պղնձեայ զիւգում ու կժերով: Երեք մզկիթ, վեց եկեղեցի, որոնցից մինը՝ ռուսի, իսկ հինգը՝ հայոց:

Ահաւասիկ այս է Շուշին, որ քաղաքի բարձրադիր կետերիցը, քարափներիցը ես նկատեցի:

Այժմ մտնենք քաղաք այս անանուն, ծուռ ու մուռ, նեղիկ, ցից-ցից, դարիվեր և դարիվայր փողոցներով: Վա՛յ ինձ նման կոծիծ-մագօլ ունեցողներին: Վա՛յ կառքերին, որ, սակայն, չը կան ամեննին: Բնակիչները կա՛մ հայ են, կա՛մ պարսիկ, մի քանի տնւոր էլ՝ ծառայող ոսներ: Իրանք, ընդհանրապէս, քարակազմ են, կայտռունք թե՛ մեծերը և թե՛ մանկունք, մանաւանդ՝ հայկազունք: Քալուածքները՝ սեգ, շարժուածքները՝ բոխ, խօսուածքները՝ տոզ: Կերած հացերի տեսակներն են լաւաշ և պոօշ: Տղամարդիկ հազնում են չուխայ, արխալուղ և շալվար, մէջքները՝ կա՛մ բաց, կա՛մ

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի առաջին նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 46-ում (16 յունիսի, էջ 1-3)



քամար: Գլխներին երբեմն կոնաձև, երբեմն գլանաձև փափախ կայ: Նորերն են միայն, որ գործ են ածում ռուսական շաբկայ: Իսկ շապօ, շլեափ ամեննին չը կայ, աստուած տայ: Ոտնամաններից կօշիկը հագուագիտ է և նորերի յատուկ: Ժողովրդի երկու իսկ սեռի սովորական կօշիկն է չմօշկ-քօշ՝ շինած փայտից, կաշիից և երկաթից, որով շուշեցիք օրնի բուն քաղաքի քարքարուտներն են դոփում և տրոփում:

Գեղեցիկ սեռի զգեստները յար և նման են Գողթնացուց և Ջուղայեցուց զգեստներին: Գլխներին՝ սպիտակ (թրքուհեացը՝ սև կամ կապուտակ) չադրա, որ անձրևի ժամանակ հովանոցի նման պարզում են: Չադրայի ներքև՝ չարդատ արծաթեայ՝ չանգալով խառանաձև փաթաթած վզին: Ճակատներին՝ ճլատանոց՝ շար ի շար ոսկի կամ արծաթ, քունքերիցն այտերն ի վար՝ չնապատ-ծնօտապատ և գիւզիւ կամ գնտակ: Թևքերի լայն թեգանիքը՝ զարմայ և կոճակ, լոխը կա՛մ ոսկի, կա՛մ արծաթ: Այս է ահա հինաուրց շուշեցի և գաւառացի հայ կնոջ բոլոր զարդ ու զարդարանք: Քինթ ու բերանները ծածկած քնթկալով՝ գոյնը միշտ և հանապազ սպիտակ: Իրանի (մարմնի) վրա՝ թիկնոցամեջքում՝ նեղլիկ գօտի արծաթեայ կամ բեհեզեայ, մեջքիցը ցած՝ ծնկակալ-վարտիք, իսկ ոտներին՝ բրդեայ գուլպէք: Եւ այդ ամէնը՝ խատուտիկ ու նախշունիկ, թէև գերիշխող գոյնն է կարմրիկ:

Կան և կնանիք, որ, ինչպէս թիֆլիսցիք, կապա ու դահրա և կովտա ու չիքիլա են գործածում: Կան, որ եւրօպացի կնոջ հանգի պճնվում և սեթնեթվում են: Սրանք են ահա, որ իրանց նոր սերնդի տեղ են դնում:

Կանանց կերպարանքը առհասարակ սիրուն է: Թշնեքիցը մանաւանդ կաթ և արին է կաթում: Գրավիչ է նոյնպէս իրանց աչքերը, որ եզան խոշոր աչքերի նմանութիւն է բերում: Սակայն կանանց ընդհանուր կազմուածքում եւ ներդաշնակ գեղեցկութիւն չեմ տեսնում:

Արձակ-համարձակ ման են գալիս փողոցներում և միմեանց հետ փնթփնթում ու քնթքնթում: Իսկ երբ տուն են դառնում, աշխատասէր են և տոկուն: Տանը սանդիքքով բուրդ են զգում, ճախարակով և իլիկով թել մանում, վիլիանով (կաժ) մետաքս փաթաթում, կապացու, վարտիկցու և վերարկուացու (դըլջի) պատրաստում, բարձի երես, սփռոց և փռոց ասեղնագործում, քեարգահ բանում, կապերտ, խուրջին և թամբի պարկ ու պայուսակ շինում: Ոմանք էլ ընտիր գործ ու թաղիք են գործում և վաճառահանում: Եւ այդ բոլոր առարկաների շինողն էլ իրանք, ներկրողն էլ: Ապրի՛ք, զօրանա՛ք, ո՛վ շուշեցի կանայք: Ներկուածքները՝ պայծառ, մաքուր ու դիմացկուն, որ այլ և այլ հողերից և արմատ ու տերևներից էլի իրանք են պատրաստում:

Գորգ և թաղիք գործելում առաւել շատ ու յաջողակ են թրքուհիք: Իսկ հայկուհիներից դրանցմով պարապում են գլխաւորապէս քաղաք գաղթող գիւղացիք:

Այր մարդկանց՝ թէ՛ հայկազանց և թէ՛ պարսկաց մեծագոյն մասը պարապում է արհեստներով, մնացեալը առևտուրով, որ այժմ ընկած է: Ուստի, այլոց նման, շուշեցին էլ, անգործ նստած, բախտի բերման և կամ դէպքի կսպասէ: Ի՞՞՞՞ր: Եթէ չի լինի գիւղացուց յաճախ երթնեկութիւնը, մեր շուշեցին ոտքով-գլխով կորած է: Եւ պարապութիւնիցը հարկադրված՝ հաւաքուելու է միշտ հրապարակներում բամբասելու, գրաբանելու: Հայերի գլխաւոր հրապարակը ժողովարանն է՝ թոփխանայ: Մի այլ հրապարակ էլ պարսկաց թաղում կայ: Երկու իսկ հրապարակներումը միշտ լիքն են և՛ մարդիկ, և՛ կենդանիք՝ եզ, էջ, գումէշ, ձի ու ջորի:

Տեսայ պ. Սարգիս Ներսիսեանի մետաքսեայ գործարանը Շուշուայ մէջ, ըստ թույն, այժմ եզականը: Պպ. Աւշարեանցի և Մնացականեանցի գործարաններն արդէն փակուած են:

Պարոն Ներսիսեանի գործարանը հիմնուած է 1870 թուականից ի վեր և մինչ օրս գործում է, թէև վերջին տարիներումս վաստակից գուրկ է և կը տուժէ: Պատճառն այն է, որ Արցախի մետաքսը



այլևս արտասահման չէ գնում, որովհետև սրանը՝ տեղականը, թե՛ լաւն է և թե՛ էժան է նստում, թող որ Չինաստանը իւր մետաքսով այժմ ողջ Եւրոպան է ողողում: Այսպիսով՝ մեր երկրի մետաքսին վաճառահանման միակ հրապարակ այժմ Մօսկուան է մնում, այն էւս 40% վճարով: Ապրանքը, կա՛մ Մօսկուայում, կա՛մ Շուշիում երկար ժամանակ մնալով, փչանում է և իւր յարգը կորցնում: Անցեալ և այս տարուայ կոկոններն ու թելերն էս տեսայ: Մէջերքում զգալի տարբերութիւն կայ: Չարիքի առաջն առնելու համար պարոն Ներսիսեանը մտադիր է մետաքսից տեղնուտեղը ճոթ պատրաստել, առաւելապէս ֆայա և պուրսայ: Թո՛ղ պարոնին յաջողութիւն տայ աստուած: Բայց յաջողութեան համար հաստատուն և զիտակցական գրաւական արդեօք կա՞յ: Չեմ կարծում: Այսպէս թէ այնպէս, պ. Ներսիսեանի գործարանը այժմ կարգին բանում է: Բանուորները գրեթէ բոլորն էլ կնանիք են և մանկտիք՝ թուով 24 հոգիք, ռոճիկ՝ օրէնը 30 և 20 կօպէկ:

Գաւառումս մինչ օրս բանում են պայ. Ահարոնեանցի, Ճգնաւորեանի, Զոհրաբեանի, Թամիրեանի և Օհանեանի գործարանները թէև դարձեալ առանց էական վաստակի, մանաւանդ թե՛ վնասով, թե՛ աւելի պակաս, քան պ. Ներսիսեան: Պատճառն այն է, որ վերջինս ջրի և փայտի համար օրական 8 ռ. ծախս է անում, մինչդեռ զիւղերում միննոյն ծախսը համեմատաբար պակաս է լինում: Արցախի մետաքսեայ բոլոր գործարաններում բանուորների թիւր 2,300 հոգու է հասնում:

Քաղաքի և գաւառի այժմեան գլխաւոր արտադրութիւնքն են, բացի մետաքսիցը, օղի, որ թթից են քաշում, գինի, որ շատ էժան է ծախվում, բուրդ, ցորեն և մասամբ ծխախոտ ու բամբակ:

Հռովմէական առածն ասում էր. «Մարդկանց ճանաչելու համար հարկաւոր է հետերը փթերով աղ ուտել»: Ես շուշեցուց հետ կէս մսխալ էլ չեմ կերել: Ուրեմն և նրանց նիստուկացին, բնոյթ ու սովորութիւնների մասին իմ կողմից մի բան չեմ կարող գրել: Բայց, ինչ որ շատերից և այն մի քանի աղբիւրներից լսեցի, այն էլ այս է ահա:

Հների նիստուկացը, կենցաղավարութիւնը չափաւոր է, համեստ, նահապետական-պատուական: Նոր սերունդն է միայն անչափաւոր և անպիտան, որ ողջ գիշերը, երբեմն և ցերեկները չէ դուրս գալիս հիւրանոցներից և կլուբից, չէ հեռանում նրանց թագ ու պակ կամարում խաղասեղաններից, մի ախտ, որ անբաժան է ամէն մի գաւառական քաղաքից:

Ընդհանրապէս շուտ են պսակվում, 16 տարին անցկացրած աղջիկը դժբախտ է համարվում: Սրանք էլ պսակուելուց յետոյ զոկերի նման տարիներով դրսերումն են լինում, այսինքն՝ լոկ տղամարդիկ: Հների մասին մեր լրագրութիւնում գրուեցաւ, թէ քաղաքականապէս ամուսնանում են: Դա հասարակեալ սովորութիւն չէ, այլ ցաւալի բացառութիւն, այն էլ յատկապէս գիւղերում: Իսկ քաղաքում այդպիսի անձը դատապարտելի է հասարակաց աչքում և անէծքի բուն: Այդ բացառութեանը գիւղերում մասնակից են քահանայք ոմանք՝ քրիստոնէական կրօնի այդ նոր տեսակ մոլլայք: Սակայն մերձաւոր և հեռաւոր հոգևոր իշխանութիւններն աշխատում են խափանել և առաջն առնել այդ պարսկական սովորութեան: Այդ դէպքում հոգ. Իշխանութեանը մարմնաւոր իշխանութիւնն էւս երբեմն աջակից է և օգնական:

Շատ լավ կանէր մարմնաւոր իշխանութիւնը, եթէ որ ուշք դարձնէր և թուով 4 հիւրանոցների վերայ, ուր տգեղ տեսարանները և թղթախաղը, ասում են, անպակաս են:

Մարմնաւոր իշխանութեան պարտքն է նմանապէս շուտափոյթ հոգ տանել և արմատախիլ առնել վիճակից սիֆիլիսը, որով վարակուած են Շուշաքէնդ, Դզդալա, Աշան, Հադրութ, Թաղասէր, Առաքէլ, Որդնաշատ, Թաղոտ, Նորշէն և Հացիկ գիւղերը: Դիցուք թէ Արցախը իւր դիրքով Զէյթունի նմանութիւն ունի, բայց ցանկալի չէ, որ արցախցին էլ զէյթունցուց նման ախտաջինջ լինի¹:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 2-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 49-ում (27 յունիսի, էջ 2-3)



Շուշեցի հայք գաղթական են շրջականերից և Գողթն գաւառի Ագուլիս, Մեղրի և Ղազանչի գիւղերից: Միմեանց հետ անհաշտ են, կռուասէր, հայհոյասէր և անժամասէր: Նոր-նոր սկսել են հարկադրել միմեանց գէթ կիրակէ և տօն օրերին յաճախել եկեղեցին: Դրա համար շուշեցիք մի միջոցի են դիմել, որ իմ աչքում արուեստական, ուրեմն և անտնական է թվում: Քահանայ շատ ունին, բայց իրանց կոչման համապատասխանող շատ քչերն են: Թէ՛ առաջինքը և թէ՛ վերջինքն աղքատ են և տնանկ: Տարեկան եկամուտներն առ առաւելն՝ 250-300 մանէթ: Ունին մի նշանաւոր քահանայ, որ լսածներից նայելով՝ պէտք է որ մեր սովորական ազատամտութեան վիժմունք լինի:

Չը նայելով Շուշուայ հայ հոգևորականութեան այս անկեալ վիճակին, այնուամենայնիւ, կան ժողովրդական խմբեր, որոնք ուզում են նոր-նոր քահանաներ: Եւ դրա համար խնդրամատոյց են եղել: Մերժել, բոլորովին մերժել:

Եկեղեցիքը քարաշէն են, փառաւոր միայն դրսից, իսկ ներսից՝ անշուք և անզարդ: Մեղաններն առանց խաչկալի են, պատկերներից մի քանիսն էլ՝ օտարոտի: Եկեղեցական անօթ և զարդ բաւականին ունին պահարաններում: Հապա ինչի՞ եկեղեցիքը չեն զարդարում:

Ագուլեցուց կամ Մայր եկեղեցու դրան շէմքին հետևեալ տողերը կարդացի.

Ջայս պատուիրեն ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս:

Յայտնի է, որ քրիստոնէական կրօնի հոգին հէնց այդ պատուիրանումն է կայանում: Բայց շուշեցիք և իրանք քահանայք միշտ տեսնում և կարդում են այդ տողերը, այնուամենայնիւ, միմեանց չեն սիրում: Հապա էլ ի՞նչ քրիստոնէութիւն:

Ունին ռեալական դպրոց՝ 300 աշակերտներով, մեծ մասը՝ հայք, իսկ թիւրք՝ մի քանի տասնեակ:

Երկու հատ քաղաքական դպրոց, մինը՝ արական՝ մօտ 300 աշակերտներով, միւսը՝ իգական՝ 30 թէ 40 աշակերտուհիներով:

Մի քանի հատ էլ մասնաւոր դպրոցներ:

Հայոց վիճակային դպրոցն ունի 4 դասարան (3 հատ էլ պատրաստական), 287 աշակերտ, 11 վարժապետ, 9000 եկամուտ (մօտ 4000-ը՝ թոշակադրամ) և ծախք՝ նոյնքան: Աշակերտաց մի մասը՝ գիւղացիք, իսկ ուսուցիչք, բացի տեսչից, շուշեցիք: Խումբը կազմուած է առաւելապէս ընթացաւարտ ճեմարանականներից և Ներսիսեան դպրանոցի սաներից: Միմեանց հետ համերաշխ են. աշխատասէր. յատկութիւններ, որ մեր դպրոցների համար միշտ և հանապազ պէտք է նախապատիւ համարել:

Դպրանոցն աւելի և աւելի կենտրոնացնելու ու վերակազմելու համար ջերմ ձգտում և փափագ կայ: Այդ մասին սրբազան Սագինեանց և հոգաբարձուք աշխատում են, բայց գուցէ շուտ չը յաջողին: Հոգ չէ, ուշ լինի, նուշ լինի: Ամէն կատարելութիւն և յաջողութիւն մէկ գլուխ ձեռք չի բերուիլ: Միայն աշխատելու է դպրանոցի այժմեան խաղաղ վիճակը չը խանգարել, համերաշխ գործակցութիւնը ձեռքից չը փախցնել, մնացեալը իւր կարգին կը լինի հետզհետէ: «Ոյժը ուժի մէջ չէ, այլ ոյժը սիրո մէջ է», -ասում է իմաստուն առածը:

Քաղաքի տարեկան արդիւնքը հասնում է 50,000 ռուբլիի: Նոյնքան էլ ծախք կը լինի: Ծախուց մէջ ամենախոշորը դպրոցներին տրուած նպաստն է. ըւալականին՝ 10,000, իսկ քաղաքական-օրիորդականին՝ 1,000 ռուբլի: Ընդամենը ուրեմն տարեկան 11,000 ռ., որոյ 2/3 մասը վճարում են հայք, իսկ 1/3 մասը՝ պարսիկք: Արդեանց ամենամեծ աղբիւրքը տնահարկն է, 14 առ 100 %: Քաղաքի դրամագլուխը՝ 12,000 ռուբլի: Պարտքը՝ 20,000 ռուբլի: Պարտքը գոյացել է և շատանում է զաւառական ոստիկանարանի պահպանութեամբ (6000 ռ.), որ ամբողջապէս քաղաքն է հոգում, իհարկէ, զրկանք կրում: Մինչդեռ ոստիկանարանի գլխաւոր ոյժերը գաւառն է իւլում:



Այս գրկողութիւնը և անյարմարութիւնը յատուկ է կովկասեան և անդրկովկասեան բոլոր քաղաքներին: Թէպէտև միննոյն ժամանակ մեր բոլոր ոստիկանարանաց նիւթական դրութիւնը միշտ խեղճ է, աննախանձելի: Այդպէս է իսկապէս և Շուշին: Զարմանալի բան. պետական ոչ մի հիմնարկութեան վերայ այնքան բազմաթիւ և բազմատեսակ դժուարին, կնճռոտ պարտականութիւնք դրած չեն, որքան ոստիկանարանաց վերայ, բայց միննոյն ժամանակ ոչ մի հիմնարկութեան նիւթական միջոցները նոյնքան սուղ և մուրացիկ չեն, ինչպէս դարձեալ ոստիկանարանաց միջոցները:

Շուշուայ ոստիկանարանը մի քանի առանձին արտօնութիւններ է վայելում պարտագանցներին, յանցաւորներին բանտարգելում և տուգանելում: Քաղաքը խնդրում է ինքնավարութիւն: Խնդրոյ կատարումը և յաջողութիւնը ինձ կասկածելի է թվում¹:

Թոփխանայում և թիրքաց հրապարակում մինչև կէսօր գիւղերից եկած բարին, կենսական մթերքը լիքն է, առատ և էժան: Հացը, միսը, իւղը, պանիրը՝ համեղ ու պատուական: Ձկունք և թռչունք էլ շատ կան: Վերջիններիցս լորը, կաքաւը և մոշահաւը զեղում և վիստում են մօտակայ արտ ու քարափներում: Մոշահաւ (մոշ-մոր, մրահաւ) ասածը սարեկի ցեղիցն է և նրա տեսակ: Կտուցն է միայն կարմրորակ: Երգում է շատ, բայց տխուր եղանակ: Ես շատ անգամ լսեցի Արցախի այդ թռչունի երգը: «Մեռնող ուսանողի երգն է» դա.

«Ազնի՛ւ ընկեր, մեռանում եմ,

Բայց հանգիստ եմ ես հոգով»:

Հետևեալ ցուցակը, վասն 1884 ամի, կոնսիստօրիայի գործերիցը քաղեցի.

<i>Թիւ</i>	<i>վանուց</i>	<i>եկեղեց.</i>	<i>քահանայից</i>
Շուշի	1	4	24
<i>Ծխականաց</i>		<i>արակ.</i>	<i>իզական</i>
		5985	4964 ²
բնակչութիւն		58,255	45833

Վիճակ

2 քաղաք, 8 վանք, 208 եկեղեցի, 220 քին., 216 գիւղօրայք

ընդամենը՝ 9 վանք, 211 եկեղեցի, 244 քին.

Բնակչութիւն 64,240 ար., 50,769 իգ.

<i>Թիւ</i>	<i>ծնելոց,</i>	<i>պսակելոց,</i>	<i>մեռելոց</i>
Շուշի			
	333 ար., 300 իգ.	165	324
Վիճակ			
	2338 ար., 1821 իգ.	829	1209

Ընդամենը

4792

994

1533

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 3-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 50-ում (30 յունիսի, էջ 3-4)

² Շուշուայ հայ ժողովրդի այս թիւը անհամապատասխան է ոստիկանարանի ցոյց տուած թոյն: Որպէսզի սրբադրամ (տուն գլուխ 20 կ. ի տարին) չը ժողովեն և քահանայից թիւը չը շատացնեն, քահանայք դիտմամբ իրանց ծխերի թիւը քիչ են ցոյց տալիս կոնսիստօրիային: Այսպէս ասացին ոմանք, ոմանք էլ, թէ Շուշուայ մէջ շատ կան մօտակայ գիւղերից վերաբնակվողներ: Դրանք իսկապէս ծուխ չեն: Չը գիտեն՝ ճշմարիտը ո՞րն է:



Ղրամագրուխ եկեղեցաց

Շուշի՝ 14,107 ուրբի 59 կօպէկ.

Վիճակ՝ 17,539 ուրբի 14 կօպէկ.

Տարեկան արդիւնք եկեղեցաց

Շուշի՝ 3094 ուրբի 96 կօպէկ.

Վիճակ՝ 3444 ուրբի 7 կօպէկ.

Տարեկան ծախք եկեղեցաց

Շուշի՝ 2559 ուրբի 33 կօպէկ.

Վիճակ՝ 2813 ուրբի 3 կօպէկ.

Ընդամենը

31,646 ուրբի 73 կօպէկ ղրամագրուխ.

6539 ուրբի 3 կօպէկ արդիւնք.

5372 ուրբի 36 կօպէկ ծախք.

Այցելեցի մի քանի տներ: Ուրեմն և մի քանի խօսք էլ նրանց արդուգարդի մասին: Տների յատակ և պատերի վերին մասերը երբեմն պարսկաձև ներկած, երբեմն մերկ, բաց են: Պատերը՝ յաճախ գաճաճ, երբեմն պաստառած: Յատակը՝ յաճախակի աններկ, բայց երբեմն ներկած և երբեմն շքեղապէս պարկետած: Կահ-կարասիքը՝ և՛ երօպականը և՛ պարսկականը, ի միասին, թէև բաւականին ներդաշնակ կերպով: Տների մաքրութիւնը օրինակելի է, թէև բնակչացը՝ ոչ այնքան գովելի: Կանայք բաղանիք շատ ուշ-ուշ են գնում: Սրանք սովորաբար տներումն են լուացվում: Թիրքաց փողոցները և հրապարակը համեմատաբար անմաքուր են, քան հայերինը:

Փողոցները նեղ են, տները՝ խիտ, ներքնայարկերը և միջնայարկերի լոյսն է սակաւ, գուցէն խոնար: Մի տան մէջ խօսելիս հանդիպակացում կարող են լսել: Հանդիպակաց տներից կարող են և միմեանց տեսնել: Ջահիլ և սիրահար մարդկանց համար այսպիսով մի քանի կենդանութիւններ ունին Շուշուայ տները:

Գրեթէ իւրաքանչիւր տան պատից մի-մի թառ է կախած: Ածում և երգում են պարսկերէն: Նորերը երգում են և՛ հայերէն: Իրանց սիրելի բանաստեղծն Գամառ-Քաթիպան է: Արժէ՛ և պէտք է՛:

Տների սանդուղները՝ փայտից, թէև շուշեցին երկիւղ չունի հրդեհից:

Փողոցների լապտերները քիչ են, լուսով աղօտ և կարծեօք չեն վառվում մինչև առաւօտ: Բայց ես, օգուտ քաղելով բլղուրդ գիշերից, ման եմ գալիս և դիտում: Գիշերուայ ժամը 9-ին կամ 10-ին տներումը լոյս չէ երևում: Մարդիկ քնած են կա՛մ սենեակներում, կա՛մ երբեմն պատշգամբ ու պարտէզներում, մանաւանդ թիրքերը: Երջանիկ են, որովհետև երկիւղ չունին ո՛չ մոծակից և ո՛չ ճանճ ու կարիճից: Բայց մի՞թէ տներումը շոգ է, որ մարդիկ դուրսն են քնանում: Ես մըսում եմ: Այսպէս թէ այնպէս շուշեցի հին սերունդը ժամը 9-ին, 10-ին հանգիստ ու խաղաղ ննջած է, որպէսզի առաւօտեան ժամը 4-ին նորից զարթնի ու գործէ:

- Խաղաղութի՛ւն ձեզ և անո՛յշ քուն, ո՛վ շուշեցիք: Օրհնեալ լինիք դուք և ձեր ընտանիք: Իսկ դուք, փուչ և դատարկ ու իմաստակ նոր սերունդ, որ մինչև ի լոյս հիւրանոցներում և կլուբում կը թառիք ու կը թափառիք, լա՛ւ իմացէք, որ ձեր այդ կեանքով դուք կորած էք և յաւիտեան կը կորչիք:



Թշուա՛րք, այս կլուբներից, այդ կեանք մաշող, դրամ և պատիւ վատնող հիմնարկութիւններից հեռացէ՛ք, շո՛ւտ յետ փախէ՛ք:

Այսօր՝ յունիս 16-ին, կուսանոցում երկու սարկաւագուհի պէտք է ձեռնադրուին: Գնացի հանդիսին ներկայ լինելու: Ձեռնադրողը սրբազան Սագինեանցն է, որ, ինչպէս ինձ յայտնի է, շատ նախանձախնդիր է եկեղեցական հանդիսից և արարողութեանց ճիշտ, անթերի և հանդիսաւոր կատարմանը: Այս անգամ ևս նոյնն եղաւ: Ձեռնադրութեան ժամանակ սրբազանը մի քարոզ էլ խօսեցաւ, ուր ս. Ստեփանոս նախավկայի կեանքն ու գործունէութիւնը ընծայացուների անցեալ և մանաւանդ ապագայ գործունէութեան օրինակ բերելով՝ հասկացրեց կուսանքներին իրանց և իրանց հին ընկերուհիների կեանքի նշանաբանը և գործունէութեան եղանակը: Սագինեանց սրբազանը քարոզում է ժողովրդական մատչելի ձևով և օրինակով: Այդ է պատճառը, որ մի այլ քաղաքում, ուր սրբ. Սագինեանցը յաջորդ էր մի ժամանակ, տեղական ժողովուրդը մեծաւ սիրով յաճախում էր նրա քարոզներին: Շուշեցիք, ինչպէս ես տեսայ, և ուրիշները ևս վկայեցին, նոյնպէս յաճախում և լսում են սրբազանի քարոզները:

Կենդանի խօսքը, քարոզը ամէնուրեք սիրելի է և յարգելի: Բայց սա սիրելի և յարգելի է մանաւանդ հայ ժողովրդեան: Պէտք է ուրեմն օգուտ քաղել այդ հանգամանքից:

Ձեռնադրութիւնը վերջացաւ: Պատարագը շարունակվում է: Ժամաւորների թիւը շատ-շատ է: Եղանակը տաք է, օդը՝ ճնշիչ: Եկեղեցուց դուրս եկայ կուսանոցի շինութիւնը և պարտեզները դիտելու: Եւ ահա տեսա՞ծա: Եկեղեցին թէն փոքրիկ, բայց բաւական գեղեցիկ է: Փառաւոր էր մանաւանդ զանգակատունը: Եկեղեցույ արևմտեան կողմում կուսանոց անպաճոյճ բնարաններն են, իսկ միւս կողմերում՝ կից ընդ կից երեք մեծ պարտեզներ՝ պտղատու ծառերով, բանջարանոցներով, ծաղկանոցով և խոտանոցով: Իսկոյն երևում է խնամք և գեղեցիկ սեռի գեղեցիկ ճաշակ գոնեա քաղաքի միւս պարտեզների նկատմամբ: Ափսոս, որ կուսանոցի պարտեզներում ևս այս տարի թրթուրը մեծ քանակութեամբ բոյն է դրել և աճել ու բազմացել:

Կոյսերի թիւը 4 է: Երկուս էլ մշտաբնակ աղօթող կանայք, թող ասենք, անպաշտօն կուսանք: Կուսանոցի ապրուստի, հագուստ և կապուստի գլխաւոր եկամուտը տալիս են վերոյիշեալ պարտեզների բերքերը և կուսանոց իրանց ձեռագործները: Կուսանոցը հիմնել և կարգաւորել է առաջին մայրապետ Հռիփսիմէ Բահաթուրեանց 1814 թուականին: Վախճանել է 1865-ին ի հասակի 75 ամաց: Հանգուցելոյ մարմինն ամփոփուած է եկեղցույ գաւթում: Շիրմի կրկին արձանագրութիւններից մէկում տապանագիրը հանգուցելոյն անուանում է կոյսերի «կրօնապետ» հարկաւ պարգամտութեամբ:

Կուսանոցի վարչութիւնը պարտեզներից մէկում ճաշ է սարքել: Հրաւիրուած են սրբ. Առաջնորդը, մի քանի քահանայք, դպրոցաց հոգաբարձուք և ոմանք ժողովրդականներից: Տողերիս գրողին, իբրև օտարականի, պատիւ էին արել հրաւիրել նոյնպէս: Ճաշում ենք, զուարճանում և խօսում: Ես շատ ուրախանում եմ, որ դպրանոցի հոգաբարձուք այնքան մօտիկ և մտերիմ են իրանց սրբազան նախագահին և փոխադարձաբար: Թէ՛ գործերում և թէ՛ զուարճանալում նրանք անբաժան են միմեանցից և համերաշխ: Այդ ես նկատեցի և երեկ երեկոյ՝ մի այլ տան մէջ եղած հրաւիրում:

Խօսքը հայոց հանգստարանի մասին է: Հաստատում են, որ Արցախի մելիքների զաւակաց և թոռաց գերեզմանները մշտապէս ապականվում են կրօնամոլ հարևաններիցն և ճանապարհորդներից: Գերեզմանների քարերը կոտորվում և կողոպտվում են նոյնպէս: Հոգաբարձու պ. Խաչատուր Բահաթուրեանցը, որ քաղաքական բժիշկն է միննոյն ժամանակ, առաջարկում է Շուշիում արդէն վերացրած քէլէխի և մեռեալների առթիւ եղած մի քանի այլ աննպատակ ծախսերի փոխարէն կամաւոր նուէր հաւաքել ժողովրդից և հայոց հանգստարանը (քաղաքի հիւսիս-



արևելեան կողմում՝ պարսպից դուրս) պարսպով պատել: Հոգևորական դասը սիրով ընդունում է բժշկի առաջարկը և գործը սկսելուն և իրովսանն յաջողեցնելուն խոստումներ անում:

Կատարեալ յաջողութիւն եմ ցանկանում:

Մեզ հետ ճաշում է մի վարդապետ՝ Մակար Բարխուդարեանց: Հայ սուրբն սրբ. Անդրեաս առաջնորդի օրիցն ի վեր ռեալական դպրոցում հայ լեզուի և կրօնի ուսուցիչ է շաբաթական 24 դասով և 600 ռ. ռոճկով, որով և ապրում է առանց որևէ այլ պաշտօն ունենալու:

Առաջին անգամ հետը ծանօթանալիս հայր սուրբն ինձանից շնորհակալ է լինում իւր գրքերի մասին «Մեղում» մի տարի առաջ գրած մատենախօսական յօդուածների համար:

Ո՛չ գրածս եմ յիշում, ո՛չ քննած ու գոված գրքերս, ոչ էլ նմանապէս նրանց հեղինակին ճանաչում: Այսքանս միայն գիտեմ, որ վարդապետ հեղինակներից ինձ յայտնի և սիրելի է Գարեգին վարդ. Սրուանձտեանցը: Բայց դուրս է գալիս, որ Մակար վարդապետն է նոյն ինքն «Ուստայ Գեորգ Բարխուդարեանց», «Աննա և Միրզա», «Արազը տարին կտարի» և «Պըլը Պուղի» գրքերի հեղինակը: Ապրե՛ն, շատ երկար ապրե՛ն այս տեսակ վարդապետները: Մակայն շուշեցի Մակար վարդ. Բարխուդարեանցը ռուսահայ գրականութեան համար է և մի կատարեալ նոր Սրուանձտեանց ոչ թէ մինակ վերոյիշեալ գրքերի պատճառաւ, այլ և (և գլխաւորապէս) մի այլ գրաւոր, անտիպ, պատմական գիտի պատճառաւ, որ մօտ 35 տպագրական թերթ կը լինի, որ ես անյագաբար, ծայրէ ի ծայր կարդացի:

Այդ աշխատութեան անունն է «Գաղտնիք Ղարաբաղի»: Ահա ձեզ մի քանի խօսք այդ գործոյ մասին, որը մի նշանաւոր, անգին պատմական գիտ է: Սկսենք նախ հեղինակից, տեղեկութիւնքը քաղելով նոյն իսկ գրքիցը, նրա զանազան հատուածներից¹:

Գրքի հեղինակն է Ապրես Բէկնազարեանց՝ խնածախցի (Շուշուայ կշտին մի գիւղ է) Աբրահամ Բէկնազարեանցի որդին: Այդ մարդը Արցախի մելիքների մէջ թէ՛ իւր զինուորական քաջութիւններով և թէ՛ մանաւանդ քաղաքագիտական հանճարով առաջնակարգ դեր է խաղացել Արցախի մելիքների գործոց, ևս և երկրին տիրապետող ազգաց դիւանագիտական և դիւանական շրջաններում: Աբրահամ Բէկնազարեանցն իւր ուսումը ստացել է Գանձասարի Ներսէս կաթողիկոսից: Ադա Մահմատ խանի զօրքերը (1795-ին) երբ գալիս են և Արցախը շրջապատում, Աբրահամն ինքն է եղել ղեկավար և մղիչ Ծակքար կոչուած տեղում պարսից դէմ մղուած պատերազմին, ուր հայ քաջերը յաղթող են հանդիսանում: Այդ ժամանակ պարսից զօրավարն եղել է հայազգի Մելիք-Հայկազեանց գնդապետը: Երկուստեք կայացած պայմանի զօրութեամբ Աբրահամ Բէկնազարեանը Մելիք-Մէջլիւմ Մելիք-Ադամեանի (Զրաբերդի հայ մելիքն է) և Ադա Մահմատ խանի հետ գնում

¹ «Ղարաբաղի գաղտնիքը» թէև պ. Բաճիքի «Նամասայի մելիքութիւնները» գրքից մէկ տարով առաջ է լոյս ընկել, բայց պ. Բաճիքին նրան չէ տեսել: Այս երևում է պարոնի օգուտ քաղած ձեռագիր պատմութիւնների ցանկից (տե՛ս վերջաբանը «Նամասայի մելիքութեանց») և «Գաղտնիքի» բովանդակութիւնից: Պ. Բաճիքին իւր աշխատութիւնում տեղ-տեղ յիշում է, որ ադա Մահմատ խանի կամ Աբաս Միրզի բանակում եղել են մի երկու խորհրդաւոր հայ մարդիկ: Դոքա «Ղարաբաղի գաղտնիքի» պատմիչների լրտեսներն են, որոնք երբեմն ահագին ծառայութիւն են մատուցել ռուս բանակին
«Նամասայի մելիքութեանց» մթին և անորոշ տեղերը «Ղարաբաղի գաղտնիքը» այժմ պարզում է: Շատ անգամ նրան հերքում, ստում է: Պ. Բաճիքի կամ աւելի ճիշտն ասելով նրա օգուտ քաղած պատմիչների առաջ բերած հիմունքներն ու պատճառաբանութիւնքը՝ կերպարանափոխում է և իսկական հիմքերն առաջ բերում: «Գաղտնիքում» ամբողջապէս դուրս են բերած այն ամէն նամակները, որոնք պ. Բաճիքին, ռուսաց ակտերից և ուրիշ աղբիւրներից առնելով, թարգմանաբար միայն մասամբ գրել է իւր գրքի մէջ:
Դարձեալ «Նամասայի մելիքութեանց» 346-356 երեսների ծանօթութեան մէջ յիշուած նշանաւոր պարսկահայերի մեծագոյն մասն Աբրահամ Բէկնազարեանցի պրօտէժէներն են: Այդ ցուցակում Աբրահամի անունը չը կայ: Նոյն ծանօթութիւնում որպէս Մահմէդ շահի կնքապահ դարաբաղդի Ալլավերդի բէկը է նոյն ինքն մեր Ապրես Բէկնազարեանցը: Նրան այս անունը տուել է (ինչպէս երևում է «Գաղտնիքից») Ֆաթալի շահն այն օրը, երբ նրա հօրը (Աբրահամ Բէկնազարեանցին) ներքինապետ կարգելով՝ անուանում է Իբրահիմ աղա, իսկ որդոյն (Ապրեսին)՝ Ալլավերդի բէկ, և այլն, և այլն:
Մենք այդ ծանօթութեամբ ոչ թէ պ. Բաճիքի գովելի աշխատութեան արժէքը վայր ձգել ենք կամենում, քաւ լիցի, այլ հասկացնել ընթերցողին «Ղարաբաղի գաղտնիքի» ահագին արժէքը հայ հարազատ պատմութեան համար (Ծանոթ. խմբ.): Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 4-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 51-ում (4 յուլիսի, էջ 2-3)



է նախ Թիֆլիս և ապա Պարսկաստան առանց Մելիք-Մէջլիմին: Բէկնազարեանցը իւր հետ տանում է նաև իւր Ապրէս որդւոյն, որ երկոտասան ամեայ գոլով, Ծակքարի պատերազմին ներկայ էր, և որ իւր սկզբնական ուսումը ստացել է ինսաճախցի Աբրահամ քահանայի մօտ: Իսկ այդ քահանայի ուսումնարանի առաջին դասագիրքը եղել է «Եղիշէն», որ Ապրէսը գրեթէ անգիր իմանալիս է եղել:

Պարսկաստանում Բէկնազարեանց Աբրահամը կարգվում է զօրավար և առաջին խորհրդական Ադա Մահմատ խանին: Եւ իսկոյն ձեռք է զարնում որդւոյն (Ապրէսին) կրթութեանը: Մի քանի տարիների ընթացքում Ապրէսը շատ լաւ սովորում է պարսկերէնը, ևս և ֆրանսերէնը Թէհրանում բանտարկուած մի ճիզուհտից: Եւ ապա կարգվում է քարտուղար պետական խորհրդարանի:

Ադա Մահմատ խանի, Ֆաթալի շահի և սրա գահաժառանգ որդի Աբաս Միրզայի ժամանակներում թէ՛ Պարսկաստանի մէջ և թէ՛ արտաքոյ նրա կատարուած տերութենական ամենատեսակ գործոց, պատերազմաց և ներքին ու միջազգային յարաբերութեանց, մանաւանդ գաղտնի գործոց մէջ, այսպիսով, առաջնակարգ դեր են խաղացել հայր ու որդի Բէկնազարեանք: Նրանց գլխից ու գրչի տակից են ելել ամենատեսակ գաղտնի թղթերն ու հրահանգներ: Ստացուած պատասխանները նոյնպէս իրանք են պահել և իրանք գործադրել տուած:

Եւ որովհետև այդ ժամանակներում և այդ գրագրութեանց մէջ գլխաւոր և անընդհատ տեղ են բռնել Արցախի մելիքներն ու Ադուանից և Գանձասարի կաթողիկոսները, որոց հետ Բէկնազարեանցը գաղտնի և անընդհատ գրագրութիւն է ունեցել, վասն որոյ Աբրահամը որոշում է շահերի արքունիքում և իւր մօտ եղած հայ մելիքութեանց վերաբերեալ այդ ամենատեսակ փաստաթղթերից կազմել հայ ազգի հարիւր (1730-1830) տարուայ պատմութիւնը, ուր մտնում են Անդրկովկասի և Դաղստանի բոլոր խաների և բէկերի, ևս և պարսից արքունիքի՝ Պետերբուրգում ունեցած լրտեսների գրագրութեանց ընդօրինակութիւնը: Եւ ահա ծագումն «Գաղտնիք Ղարաբաղի» ձեռագիր մատենին, որ ես Մակար հայր սուրբի մօտ գտնելու և կարդալու ամենամեծ բախտաւորութիւնն ունեցայ:

«Ղարաբաղի գաղտնիքը» գրել է Ապրէս Բէկնազարեանց, բայց միշտ հօր անմիջական թելադրութեան և հսկողութեան ներքոյ և հանապազ ծածուկ շահերի արքունիքից և առհասարակ պարսիկներից և որևիցէ մարդուց: Բոլոր պատերազմներին և ամէն տեղ հայր և որդի Բէկնազարեանք ի պաշտօնէ ներկայ և ականատես են եղել և արածները, տեսածները նոյնութեամբ արձանագրել՝ կցելով յետոյ գրաւոր փաստաթղթերը:

Եթէ պատահել է, որ մի տեղում կամ մի գործքի ժամանակ հայր և որդի միմեանցից բաժան են եղել, թէև շատ քիչ անգամ, այդպիսի դէպքերումն էլ Աբրահամ Բէկնազարեանցը «Ղարաբաղի գաղտնիքին» վերաբերեալ նիւթերը նամակներով հաղորդել է որդւոյն՝ պատուիրելով նոյնութեամբ արտագրել: Եւ Ապրէսը նոյնութեամբ հօր պատուերը կատարել է: Յետոյ միմեանց մօտ գալիս՝ միասին կարդացել և վաւերացրել են:

Գրքի առաջին մասը գլխաւորապէս հօր պատմածը և որդւոյն գրածն է, այսինքն այն մասը, որից Ապրէսը, մանուկ գոլով, տեղեկութիւն չէր կարող ունենալ: Իսկ միւս և ամենամեծ մասը բաղկացած է նամակներից, պայմանաթղթերից, խնդրագրերից, բողոքագրերից, գաղտնի հրահանգներից և այլն: Այդ ամէն թղթերը երբեմն ամբողջովին արտագրած է «Գաղտնիքի» մէջ և երբեմն նրանց բովանդակութիւնը համառօտեցրած, բայց հանապազ տարբերութեամբ, ամսաթուրով, ժամանակագրութիւնը օրինակելի: Գլխների բաժանմունքը (ընդամենը ԿԱ) կանոնաւոր: Գրուածքը՝ յիշատակարանի ձևով՝ ամ ըստ ամէ:



Աբրահամ Բեկնազարեանցը, ի խոր ծերութեան հասած, 1828 թուին մեռնում է և արքայավայել հանդիսով, որին ներկայ էր և ինքը՝ Աբաս Միրզան, թաղվում է (հոկտեմբերի 10-ին) Թարիզի Հայոց եկեղեցումը՝ «կից Մելիք-Աբովեան մելիք Առքստամ (Ռոստոմ) բեկի գերեզմանին»:

Մեռնելուց առաջ ծերունու արած քանի նշանաւոր կարգադրութեան մասին ես ընթերցողին տեղեկութիւն կուտամ յետոյ, երբ «Գաղտնիքի» բովանդակութիւնը կը դնեմ նրա առաջ: Այստեղ կասեմ միայն այս, որ Աբրահամ Բեկնազարեանցը մեծամեծ արտօնութիւններ է ձեռք բերել պարսկահայերի համար և նրանց շատերին բախտաւորեցրել: Կեանքի վերջին օրերում մի նամակ է գրել Բաղդասար մետրօպօլիտին (ի պատասխան նրա նամակին), որոյ մէջ ցոյց է տալիս, թէ որ ձորում և որ վանքում ինչ տեսակ ձեռագիր-մատեաններ են թաղուած, որոց մի մասը մետրօպօլիտը գտել է:

Կտակել է Ապրէս որդւոյն վերադառնալ հայրենիքը՝ Խնածախ, օրհնել տալ իւր մօր, եղբարց հանգստարանները, տեսնել, համբուրել հայրենի տունը և «Բեկնազարեանց ծառը», յետոյ Խնածախում ամուսնանալ կենդանի ու կանգուն պահելու համար իրանց տոհմի անունն ու յիշատակը: Եւ յետոյ... մահուան մօտեցած օրերումը տպագրել տալ «Ղարաբաղի գաղտնիքը»:

Այս կտակի հետ հայր Աբրահամը յանձնում է իւր որդւոյն նրա համար տնտեսած տասնհինգ հազար թումանը: Իւր քրիստոնէական կրօնական պարտականութիւնքը կատարում և հոգին աւանդում է՝ վերջին անգամ մրմնջալով. «Զգուշացի՛ր, որ քո ձեռագիր պատմութեան գլխին փորձանք չը գայ. ա՛ն և պինդ ու զգոյշ պահի՛ր այս ամենաձածուկ ու վտանգաւոր նամակները»:

Աբաս Միրզան ոչնչով չէ համաձայնում Ապրէս Բեկնազարեանցին թոյլատրել իւր հայրենիքը վերադառնալու, ուր նրա կեանքին մահ է սպառնալիս եղել ի ձեռն Արցախի ճրո (կեղծ) խաների և ճրո բեկերի: Վերջիվերջոյ որոշվում է, որ Աբրահամի որդին Երուսաղէմ գնայ: Եւ Ապրէսը գնում է Թարիզից՝ մեկնելով 1838 ամի աշնանը: Նա, Երուսաղէմում իրան վարդապետ կեղծելով, մնում է ինն տարի: Յետոյ Երուսաղէմի այն ժամանակուայ պատրիարք «Մշո գաւառի Կոփ գիւղացի Զաքարիա Տէր-Գրիգորեանցի» հրամանն ու օրհնութիւնը առնելով, դուրս է գալիս Երուսաղէմից: Շրջագայելով Յոպպէ, Պերութ, Թարսիս, Կիլիկիա, Զէյթուն, Մարաշ, Հռոմկլա, Միս, Երզնկա, Մանեայ այրը, Մեծն Ներսիսի վանքը, Կեսարիա, Նիկոմիդիա, Արմաշու վանքը, Կ. Պօլիս, Տրապիզոն, Կարին, ս. Կարապետ, Մուշ, Վան, Նարեկ, Վարագ, Աղթամար, Կտուց, Լիմ, ս. Ստեփանոս վանքերը, Էջմիածին և նրա շրջակայ վանքերը, Սևան, Գեղարդ, Խորվիրապ, Հին Նախիջևան, Ապրակունիս, Տաթև և Շուշի և ամբողջ Արցախը: Եւ այդ ամէն տեղերը քննում, գննում և միշտ յուսաբեկ սրտով ու լալագին աչքերով հեռանում է իւրաքանչիւրիցը՝ իրանից անբաժան ունենալով «Ղարաբաղի գաղտնիքը»:

Ապրէս Բեկնազարեանցի շրջագայութեան ժամանակը տևում է երեսունինն ամբողջ տարի: Շրջագայելիս նա միշտ ծպտելիս և կեղծելիս է եղել: Վերջիվերջոյ բոլոր աշխարհից և մարդկանցից յոյսը և հաւատը կտրած՝ առանձնանում է (դարձեալ ծպտած) հայրենի Խնածախ գիւղը և մէն-մինակ ապրում մինչև 1881 թուականը: Այդ տարուայ յունիս ամսին զգալով մահուան օրերը՝ Ապրէս Բեկնազարեանցը գալիս է Շուշի և թաքուն Մակար վարդապետ Բարխուդարեանցին սենեակը մտնելով՝ «Ղարաբաղի գաղտնիքը» նրան է յանձնում ու նրա տպագրութիւնը խնդրելով՝ թողնում իսկոյն ու անյայտանում:

Թէ ինչի՞ Բեկնազարեանցը իւր գիրքը վարդապետին է յանձնում, այլ ոչ եպիսկոպոսին կամ մին ուրիշին, պատճառն այն է, որ վերջինս նոյնպէս խնածախցի է: Ապրէս Բեկնազարեանցն այդ բանն իմացել է Բարխուդարեանցի «Աննա և Միրզա» (տպած Զմիւռնիայում) վիպասանութիւնը Կ. Պօլսում կարդալով: Ուստի և կամեցել է իւր գաղտնիքը իւր համագիւղացուն յանձնել, որ և յանձնել է:



Իմ հարցմանս, թե ո՞ր է և կենդանի՞ է արդեօք Ապրէս Բէկնագարեանը, Սակար հայր սուրբը պատասխանեց, որ ստոյգ տեղեկութիւն չունի: Միայն իւր հետազօտութիւններից այսքանս միայն ի յայտ է եկել, որ խնածախցի քահանա, ինչպէս քահանան ինքն է ասել, թաղել է երէք տարի առաջ մի օտար և անծանօթ հայ մարդու, որոյ անունն ու կերպարանքը լաւ չէ յիշում:

Ուրիշ և հաւաստի տեղեկութիւն, սիրելի հա՛յ ընթերցող, չը կայ «Ղարաբաղի գաղտնիքի» հեղինակին և այդ ամենահետաքրքիր ձեռագրի ժիր և արթուն հրեշտակ-պահապանի մասին:

Եթե դրամական միջոցներս ներեցին, ես ինքս մտադիր եմ Խնածախ և նրա շրջակայքը պտոյտ անել և խորհրդաւոր հայ մարդու կեանքի վերջին տարիների մասին տեղեկութիւնք հաւաքել: Երանի՛ թէ յաջողեմ:

Հետեւեալ նամակաւս կուղարկեմ խմբագրութեան «Ղարաբաղի գաղտնիքի» բովանդակութիւնը¹:

Յունիս 19: Այսօր ճաշում եմ պ. Բաբա Բեգլարեանցի տանը: Ասում են, որ այդ ընտանիքը հարստութեան կողմից Շուշուայ մէջ առաջինն է: Ես այդ տեսնում եմ պարոնի պալատանման տնից և սրա շքեղ արդուզարդից և կահ-կարասիքից: Բայց ինձ գրաւողը և ուրախացնողը ո՛չ Բեգլարեանցի հարստութիւնն է, ո՛չ նրա տունը կամ ճոխ ճաշը, այլ այն նահապետական-պատուական յարաբերութիւնը, որ ես տեսնում եմ այդ ընտանեաց մէջ: Պ. Բաբան Բեգլարեանց գերդաստանի նահապետ-պատրիարքն է: Նա մի եղբայր ևս ունի ամուսնացած՝ մի քանի գավակաց հայր: Ունի և ամուսնացեալ որդի: Դրանք ամէնքը՝ թե՛ մեծ և թե՛ փոքր, շրջապատել են ծերունուն և ամէն կերպ աշխատում են պատուել, մխիթարել, ուրախացնել նրան, կատարել նրա հրամանները: Քէֆս գալիս է, երբ տեսնում եմ, որ մեզ հետ սեղանակից են, տան նահապետի շուրջ նստած, գերդաստանի բոլոր անդամները: Իսկ երկու պատանիքը ծառայում են սեղանին: Բայց թե՛ ճաշողների և թե՛ ծառայողների քաղաքավարութիւնը, փոխադարձ յարգանքը, հլութիւնը, ամենայն լռութեամբ ու պատշաճականութեամբ հիւրերին և տան նահապետին խօսակցութեանց հետևելը, լսելը և այդ ամէնը ոչ թէ կեղծօք, այլ պարզ սովորութեամբ, ունակութեամբ, ի սրտէ, այո՛, այս ամէնը ինձ շատ ուրախացնում է: Եւ ես ինքս ինձ ասում եմ. «Ահա մի հայ մարդ, ահա մի ընտանիք, որ նոր ժամանակին հետևելով, նրա բարիքը ունենալով և վայելելով հանդերձ, միևնոյն ժամանակ գիտէ և պահպանում է հնի, հին ժամանակի լաւ և ընտիր յատկութիւնքն ու սովորութիւնքն ևս»:

Պ. Բաբա Բեգլարեանը, իւր եղբայրը, ամուսնացեալ որդին, ինչպէս ասում են, աշխարհք տեսած մարդիկ են: Նրանք իրանց առևտրական գործերի պատճառաւ մինչ օրս էլ ճանապարհորդում են Եւրօպա և Ռուսաստան: Եւ ուրեմն այդ մարդիկը և դրանց նմանները, որոնց թիւը բարեբախտաբար, Շուշիում, ասում են, շատ է, անհամեմատ աւելի լուսաւորված են, քան մեր այժմեան բազմաթիւ quasi-լուսաւորեալները, բայց ահա տեսէք, թէ յիշեալ ընտանիքը և իւր նմանները, ինչպէս պինդ կերպով պահպանում են իրանց պապենական ընտիր սովորութիւնքը, չափաւորութիւնը և փոխադարձ սէրն ու յարգանքը ևս: Ես հաւատացած եմ, որ մեր հայ վաճառականներից միմիայն այսպիսիքը կարող կը լինին իրանց օջախը տոկուն ու կանգուն պահել, որով թե՛ իրանց և թե՛ հետևաբար իրանց հասարակութեան և ազգին պիտանացու լինել: Իսկ լպստած, յանդուգն, դատարկ գլխով և գրպանով անհատներից և ընտանիքներից (ով և որտեղ ուզում են լինին) ո՛չ հարստութիւնը շահ ունի, ո՛չ ազգը: Մտքներդ բերէք թեկուզ Թիֆլիս, թեկուզ նոյն ինքն Շուշուայ մի քանի հարուստ հայ օջախները:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 5-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 52-ում (7 յուլիսի, էջ 2-3)



Դրանք և դրանց որդիքը մի ժամանակ՝ դեռ երեկ, մեկել օր, հարիւր հազարներ և միլիոններ էին շաղ տալիս: Բացի գլուխներիցը և սրտերիցը՝ ոչնչով չէին զանազանվում եւրօպացիներից, բայց այսօր չը կան, չքացել են դրանք, մնացածներն էլ՝ օրական հացի կարօտ, անտէր ու անտուն, թշուառ և երերուն:

Պատճառն ի՞նչն է: Ոչ այլ ինչ, եթէ ոչ իրանց կեղծ-լուսաւորութիւնը, իրանց կապկային բնաւորութիւնը, անչափաւորութիւնը, շոայլութիւնը և պապենական ընտիր-ընտիր վարք ու բարքի և սովորութեանց ոտնահարումը: Նրանք չը կարողացան, անընդունակ գտնուեցան նորութեան հարազատ բարիքները ձեռք բերել և միևնոյն ժամանակ չը կարողացան գէթ հնութեան բարիքները պահպանել: Կամ թէ՛ հնութեան և թէ՛ նորութեան բարիքները միախառնել, ներդաշնակաւորել: Եզովպոսի շան նման իրանց բերնի թիքան բաց թողին և ստուերի ետքնիցը ընկան, ուստի և իրանք էլ կորան, իրանց բերնի թիքան էլ: Տխուր, յուսահատեցուցիչ մտածողութիւնք:

Բացի սրբազան առաջնորդից և վիճակային դպրանոցի տեսչից՝ սեղանակից են նաև մի քանի պատուաւոր հայ վաճառականք: Դրանց հետ ես խօսում եմ իրանց մասնագիտութեանը վերաբերեալ հարցերի վերայ: Ուզում եմ լսել, սովորել դրանցից: Եւ շնորհակալութիւն, բաւականին բաներ լսեցի և սովորեցի: Լսածներիցս մինը ուզում եմ ընթերցողին էլ հաղորդել:

Վաճառականներից մինը, որ մինչ օրս էլ Թէհրանում վաճառապետ է (թաջիրբաշի), ինձ հաղորդում է, թէ ինչ դիւրին, գործնական, յարմար և ձեռնտու եղանակով Թէհրանում նստող եւրօպացի հիւպատոսները ստանում են իրանց ռոճիկները և դիւանական ծախքերը իրանք տէրութիւններից՝ ամսէ ամիս փոխանակագրութեամբ: Նոյն բանի համար մեր տէրութիւնը որքան է թերևս կուրսերի մէջ տուժում: Մինչդեռ Թէհրանում կան շատ և վստահելի, թէկուզ լոկ ռուսահպատակ վաճառականներ, որոնք միշտ պատրաստ են ամսէ ամիս փախանակագրութեամբ նախ Թէհրանում վճարել հիւպատոսին հարկաւորեալ գումարը և ապա ստանալ Պետերբուրգում կամ ուր էլ որ լինի: Թէհրանի վաճառականաց այս առաջարկութիւնը, չը նայած իւր երկու իսկ կողմանց համար եղած օգտակարութեանը, միշտ մերժուել է և մերժուում է¹:

Ճաշից յետոյ տանուտիրոջ որդւոյն՝ պ. Գաբրիէլ Բեզլարեանցի սիրալիր ուղեկցութեամբ գնացի, այսպէս անուանեալ, Բեօխի աղբիւրը տեսնելու: Աղբիւրը քաղաքի հարաւարմտեան կողմն է՝ մօտ երեք վերստ նրանից հեռու:

Պարսպի մեծ, կամարակապ դռնից դուրս գալով՝ մեր աչաց հանդէպ բացուեցաւ մի շքեղ և վայրենի տեսարան:

Լեռները կոյտ առ կոյտ կցուած են միմեանց և գրեթէ գագաթներիցը մինչև ստորոտ ծածկուած կաղնիի, զկեռի, շլորենիի, հոծ վարդենիի խիտ, բայց կարճահասակ անտառներով: Ծառերի վրայ վիստում են կարմրալանջը և մոշահաւը: Սոխակի երգը չը լսողին համար կարմրալանջը կարող է նրան փոխարինել: Եւ թերևս այդ է պատճառը, որ շուշեցիք կարմրալանջին բիւբիւլ են անուանում: Ճշմարիտ է, այդ թռչունն էլ շատ լաւ է երգում, բայց նա սոխակ չէ դարձեալ: Իսկ մոշահաւ՝ ր... , օ՛հ, այդ թռչնակի երգ ու եղանակիցն չեմ ախորժում:

Մենք պէտք է բարձրից ցած իջնենք շարունակ: Բեօխի աղբիւրը (բեօխը պուկ ծառն է, որից առնուած է աղբիւրի անունը) լերանց խոխոմներումն է: Պարսպից մի քանի քայլ անցած՝ տեսայ հայոց մի նոր հանգստարան, նրանից ցած՝ մի աղբիւր, որից ժողովուրդը խմելու ջուր է կրում աւանակներով: Շատ լաւ է, բայց չէ՞ որ այդ աղբիւրի ջուրը հոսում է գերեզմանների տակից: Չէ՞ որ

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 6-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 53-ում (11 յուլիսի, էջ 1-2)



դիակներին նեխած և փտած մասերը լուծվում են դրա մէջ: Արդեօ՞ք ես սխալվում եմ: Արդեօ՞ք Շուշուայ այդ ջրառատ քեահրեզի ստորերկրեայ ջուրը հետագօտուած է:

Լուրջ ուշադրութիւն պէտք է դարձրած այսպիսի հանգամանքներում: Ապա թէ ոչ ողջ թաղը անզգայաբար կարող է եթէ ոչ թունաւորվիլ, գէթ այլ և այլ հիւանդութեանց ենթարկուիլ¹: Չը մոռանաք, որ այդ թաղի օդը եւս համեմատաբար կեղտոտ է, անմաքուր: Պարսպից ներս՝ դէպի ձախ տարածուած ողջ այդ թաղը եւս ուրիշ անգամ ման եմ եկել և զարմացմամբ տեսել, որ այդ թաղի տների առաջը և կողքերին եղած փոսերը, քարափի անձաւները մարդկանց կղկղանքով լիքն են: Դրանից բերթար են և՛ թրքական ընդարձակ թաղի մի քանի փողոցները ևս, ուր առանց քիթը թաշկինակով ծածկելու կարող չէք անցնիլ:

Բաւականին ներքն գնալով՝ հանդիպում ենք Շոշուան աղբիւրին, որոյ ջուրը, ճշմարիտ որ շոշուայով դուրս է գալիս ծորակներից: Ես այդ ջրից չը խմեցի, բայց լսեցի, որ լաւ ջուր է: Շոշուանի հանդէպ կան քեարփիջխանէքը, ու հայք աղիւս են պատրաստում կաւախառն հողից և 1000-ից 8-10 մանէթով ծախում: Աղիւսը շուշեցիք գործ են դնում միմիայն վառարաններ և միջնորմներ շինելու համար: Փոքր-ինչ վերև տեսած էինք և Գեանջուցենց աղբիւրը: Դրա ջուրն այժմ ուզում են քաղաք փոխադրել: Վերջապէս ահա ձեզ և Բեօխենց աղբիւրը:

Չորս կողմի լեռներ ու ծառեր, իրանց թնաւոր երգիչներով: Ջուրը՝ սառն, պատուական: Միտս եկաւ հ. Սրուանձտեանցի նկարագրած մի աղբիւրը՝ «Եւ ջուր մի ևս խմենք, դարձեալ ումպ մը ընենք, բայց միշտ ծարաւ ենք»: Աղբիւրի վրայ մի ընդարձակ քարեայ ծածկոյթ է շինած: Միջին՝ վառարան՝ խորոված պատրաստելու համար: Արժէ՛: Թէ՛ աղբիւրի ջուրը, թէ՛ տեղոյ դիրքը և գեղեցկութիւնք ու հրապոյրներն արժեն, որ մարդ այդտեղ նստի երբեմն և քէ՛ֆ անէ: Բայց, ի սեր աստուծոյ, այդ ժամանակ հեռացրէ՛ք անտառից ձեր այդ չարագուշակ մոշահաւիին:

Աղբիւրը՝ իւր քարաշէն ծածկոյթով.

յիշատակ է Աստուածատրոյ Դաւթեան Ճգնաւորեանց. 1871:

Այսպէս փորագրած է մի քարի վրայ: Տէ՛ր, լուսաւորէ հոգին: Բայց երևում է, որ հանգուցեալ Ճգնաւորեանցը Ճգնաւորի կեանք վարելիս չի եղել, այլ շատ սիրելիս է եղել յիշեալ ծմակում և աղբիւրի կշտին քէֆէ՛ր անել: Քէֆն էլ պէտք է, բայց ամէն բանի մէջ ծայրայեղութիւնը լաւ չէ առհասարակ:

Աղբիւրից ցածր բանջարանոցներ են երևում, որոց մէջ լաւ լոբի ու պատուական վարունգ են ցանում: Ես որովհետև շատ կուշտ եմ, ախորժակ չունիմ, ուստի Բեօխենց աղբիւրը և իւր բանջարանոցի վարունգները թողնում եմ այլոց, իսկ ինքս ուղեկցիս հետ ձի աշտանակում և քշում, գնում տուն²:

Շարունակ երկու օր Շուշուայ թիւրքաց թաղում շրջելով ես պարզ կերպով նկատում եմ, որ տեղոյս թիւրքերի տնտեսական վիճակն աւելի լաւ է, քան հայերինը: Դրա պատճառը նախ և առաջ այն է, որ Շուշուայ թիւրք ազգաբնակչութիւնն ընդհանուր առմամբ, իհարկէ, միանգամայն ազատ է այլ և այլ նորամոյժ և տնտեսական կանոնները քայքայող սովորութիւններից, սովորութիւններ, որոնց այնքան սիրահար են հայերը: Երկրորդ՝ գրեթէ ամէն թիւրք գերդաստանի գեղեցիկ սեռը, օրն ի բուն, պարապած է գորգագործութեամբ: Համեմատելով այդ և հայ կանանց ձեռագործների տեսակը, ժամանակամիջոցը, քանակութիւնը, որակութիւնը և արժէքը՝ ես տեսնում եմ, որ

¹ Քաղաքի հարաւային կողմը՝ գիւղացիներից բնակուած թաղում, կան, այսպէս անուանեալ, Բեխենց հորեր՝ թուով կարծես 12: Այդ հորերի ջուրը ևս լաւ ջուր չէ

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 7-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 54-ում (14 յուլիսի, էջ 2)



Թիւրք կնոջ գործունէութիւնն աւելի շահաւետ է: Երրորդ՝ հայերի ձեռքում եղած դրամական ոյժն անզգալի կերպովն թիւրքաց ձեռքն է անցնում: Այ տեսէ՛ք, թիւրքերի նախկին տներն աւելի անշուք են եղել, քան այժմեանները: Նրանց տներն առաջ ամբողջապէս լերան արևելեան լանջերումն են սփռուած եղել, իսկ այժմ դրանք կամաց-կամաց բարձրանում և բռնում են նաև լերան արևմտեան լանջերն եւս: Ինձ թվում է, որ շատ ժամանակ չանցած՝ շուշեցի հայք ստիպուած պէտք է լինին կա՛մ քաղաքի յետ ընկած անկիւններումը սեղմուիլ, կուչ գալ, կա՛մ թողնել իրանց բնակավայրը և գաղթել: Եւ արդէն 100 հայ ընտանիք իշխանութիւնից գրաւորապէս խնդրել է, որ իրանց թոյլտուութիւն լինի քաշուիլ դէպի Թարթառի դաշտը և այնտեղ նոր կօլօնիա սարքել: Այդ հարցի առթիւ ես կը խօսեմ յետոյ, առայժմ այսքանս միայն կասեմ, որ այդ ամէնը «սկիզբն է երկանց»:

Մտայ մզկիթների մէջ. տեսայ աղօթաւորներին, լսեցի մօլլայի աղօթասացութիւնը և քարոզը, երկունք էլ օրինակելի են, ինչպէս այդ կողմից միշտ կարող է պարծել մահմէդական ազգը թէ՛ աստուծոյ և թէ՛ մարդկանց առաջ: Մզկիթներից մէկի շինութիւնը դեռ ամբողջացած չէ: Բայց երկու իսկ մզկիթներն եւս թէ՛ դրսից և թէ՛ ներսից փառաշէն են, սրբատաշ քարերով եւ քարեայ միաձոյլ սիւներով կերտած: Մզկիթները յիշատակ են Գեօհար (Գօհար) աղայի: Մա ողջ Արցախին յայտնի Իբրահիմ խանի դուստրն է եղել: Աղա տիտղոսը պատուի համար տրուած է իրան, թէպէտև ինքը իգական սեռին է պատկանում: Մզկիթների անշարժ կալուածներն են մէկ քարվանսարայ, մէկ պարտէզ և երկու գիւղօրայք, որոց տարեկան արդիւնքը հասնում է ընդամենն 4000 ռուբլի: Նոր շինուող մզկիթի արձանագրութիւններից կամ յիշատակարաններից մէկումն ասած է (ինչպէս թարգմանեցին ինձ), որ յիշեալ կալուածոց տարեկան արդեանց և ծախուց հաշիւը ստուգելու և վաւերացնելու համար պէտք է միշտ յանձնաժողով նշանակուի: Անդամոց 20-ը Շուշուայ թիւրքերիցը լինին, իսկ 20-ը՝ հայերից: Ահա ձեզ մի խելօք և հեռատես բարեգործ կին. «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Տեսայ այսպէս անուանեալ «Խանի», ևս և նորոգ հանգուցեալ Շահգաղայ Բէհմէն Միրզայի տանու պարտէզները: Գեղեցիկ են և ճաշակով: Ծառներիցն առաւել ինձ դուր եկան վարդենիները, որոց բուները, ի շնորհս իրանց չորս կողմից դէմ տուած ձողերի կամ նեցուկների, ուղղահայեաց դիրքով բարձրացել և մինչև միւս ծառների գագաթներին են հասել, դեռ մի փոքր էլ այն կողմն է անցել...: Չը նայելով, որ հիւանդ էր և անկողնում պառկած, Գազի Միրզա Հասանը բարեհաճեց ընդունել ինձ: Այս մարդը, ինչպէս յայտնի է, անդրկովկասեան բոլոր շիիներին շէյխ-իւլ-իսլամ է նշանակուած և Թիֆլիս տեղափոխուելու համար սպասում է թագաւոր կայսեր հաստատութեանը: Գազի Միրզա Հասանը տակաւին ջահել տղամարդ է: Բաւականին լաւ է խօսում ռուբլէն: Եւ խօսելիս ընտիր և առողջ մտքեր շատ է յայտնում: Նրա նիստուկացն իմ աչքին թուաց շատ պարզ ու հասարակ, որ, իհարկէ, շատ և շատ գովելի է և Միրզա Հասանի համար պատուաբեր: Ապագա շէյխ-իւլ-իսլամը միմիայն մի կին ունի: Մինչ ցարդ նա պարսկերէնի և մահմէդական կրօնի ուսուցիչ է եղել տեղույս ռէալական դպրոցում՝ ստանալով 600 ռուբլի ռոճիկ ի տարին:

Թիւրքաց թաղում մի անյայտ նահատակի գերեզման կայ, որ տափարակեայ ցանկով պատած է և կողպած: Բանալին մի հարևան թիւրք տան մէջ է պահվում: Գերեզմանը հաւասարապէս յարգի է թէ՛ մահմէդականներին և թէ՛ քրիստոնէաներին: Ասացին, որ Մեծի պահոց աւագ շաբթու չորեք-շաբթի օրերումը երկու իսկ ազգաբնակչութիւնից, մանաւանդ իգական սեռից, մեծ բազմութիւն է հաւաքվում գերեզմանի շուրջ և ուխտ ու երկրպագութիւն անում: Նահատակի գերեզմանը կոչվում է «Քամու խաչ»:

Թիւրք և հայ կանանց բազմութիւնով գրեթէ միշտ լիքը տեսայ Շուշուայ մօլլա բիւերի (գիտուն մօլլայի) տունն ու գաւիթը: Մօլլա բիւերը, ինչպէս և, հայ դերձիկ Գաբրիէլը, թուղթ ու գիր անողներ



են և, ինչպէս ինձ հաւատացրին, շուշեցի երկիւղած կին-արմատներից մեծ փող կը ջնդեն, կը հաւաքեն: Ասած է. «աշխարհը դմակ, մարդը դանակ, ինչքան կուզիս կտրի՛ր ու վայելի՛ր»:

Վերոյիշեալ անմահկանացու մահկանացուներից բոլորովին այլ ուղղութիւն և նպատակ ունի Հաջի-Ղուլին, որին պատմութեան վերաբերութեամբ տուած հարցմանցս պատասխաններիցը ես ենթադրում եմ, որ հարիւրից անց պէտք լինի, թէպէտև դեռ ժիր է և ամենայն խստութեամբ իւր օրոջն¹ է պահում: Եւ ինչպէ՛ս էլ լաւ հայերէն է խօսում այդ հինաւուրց ծերունին: Հաջի-Ղուլից հարուստ մարդ է, ունի շատ որդիք, պալատանման տուն և ճոխ արդուզարդ: Այդ մարդը հոգու վարձքի և խաթրի համար ճիշտաբար բժշկում է գորտնուկը և շան կծածը: Գիտե՞ք ոնց: Գորտնուկ ունեցող մարդուն և երեխային նա բռնում է իւր դողդոջուն ձեռքերում և իւր աղօթքը մրմնջում: Յետոյ գորտնուկի ճիւղի վրայ քեառթեր անում և տալիս հիւանդին, որ մի տեղ պահէ: Ճիւղի չորանալուն պէս չորանում և անհետանում է գորտնուկը:

Շան կծած հիւանդի վրայ նույնպէս նախ աղօթում է Հաջի-Ղուլին և յետոյ մի փառաւոր ապտակ տալով հիւանդի երեսին՝ տուն ճամփում: Եւ, օ՛հ հրաշք, հիւանդս կատարեալ բժշկութիւն է ստանում:

Գուցէ Հաջի-Ղուլիի այս հրաշագործութեանց ընթերցողը չէ հաւատում: Իրաւունք ունի: Խոստովանանք մնայ, ես էլ չեմ հաւատում, թէն փորձը աչքերովս տեսայ: Քանի որ տասնեակաւոր մարդիկ, Հաջի-Ղուլիի բժշկածներից և սրանց ազգականներից պնդելով պնդում էին, որ այդ մարդու բժշկականութիւնը ոչինչ կասկած չէ վերցնում, ուստի այդ հարցը ես թողնում եմ գիտնականներին և բժիշկներին հետազօտելու և լուծելու: Ինչ որ ինձ է վերաբերում, ես հաւատում եմ, որ ամէն տեղ և ժամանակ ժողովրդական մօլլա բիւլերները, դերձիկ Գաբրիէլները և Հաջի-Ղուլիները, չը նայած իրանց մոլորութեանցը և մոլորեցուցմանցը, այնուամենայնիւ, իրանց մէջ և իրանց հետ ունին մի ո՛յժ, գիտութիւ՛ն թէ՛ հաւատ և գորութիւն, որոցմով այս և այն բանը յաջողեցնում են: Եթէ գիտութիւնը բացատրած չը լինէր, ո՛վ կը կարծէր, որ բիշօպիդը մի բնական երևոյթ է: Մի՞ թէ քիչ են այն երևոյթները, որոց առաջ գիտութիւնը այսօր կատարեալ համր է տակաւին:

Չը մոռանամ յիշել թիրքաց մէդրէսէն: Սա մի մեծկակ սենեակ է, ուր 100-ից աւելի մանուկներ ծալապատիկ, միմեանց կողքին նստած են և գլուխները տարուբերելով կարդում են, խօսում, ծիծաղում, լաց լինում, մէկզմէկ բոթում: Մանկավարժ մօլլան էլ, ծալապատիկ նստած պատուհանի միջին, սպասում է, որ իւր աշակերտները դասերը պատրաստեն և գան իրան հաշիւ տան: Կեցցէ՛ մանկավարժութիւն:

Թիրքաց թաղում շրջելիս ես առաջին տեսայ, որ թիրք կանայք աւելի ազատ են, քան հայ կանայք, մինչև անգամ Թիֆլիսի պարսկուհիք: Թիրք կնանիք իրանց երեսը ոչ մի շորեղէններով չեն կապոտում: Եւ ամենայն ազատութեամբ խօսում են ձեզ հետ ինչքան կամենաք և ինչ նիւթի վրայ որ կամենաք: Այդ անում են թէ՛ պառաւները և թէ՛ նորատի կանայք: Օրիորդներն են միմիայն, որ կա՛մ խրտնում, երեսները շուռ են տալիս և կա՛մ ձեզ հետ խօսելիս երեսները ծածկում են:

Ինձ ասացին, որ թիրք կնանիք այդպէս վարվում են քրիստոնէից հետ նրանց մարդատեղ չը դնելով: Շատ հնարաւոր է: Կարելի է դրա համար կայ մի այլ պատճառ, որ ես ինքս եմ ենթադրում և տեսածներիցս գուշակում. բայց ահա և այր մարդիկ, որոց հետ ես ուստում եմ, որոց ձեռքով ջուր եմ խմում, որոց ձեռքերն եմ բռնում: Ոչ մի դէպքում և ոչ մի առիթում ես չը տեսայ այն խիստ խտրականութիւնը, որ յատուկ է բնիկ պարսկին և Պարսկաստանի խորքերի բնակիչներին ընդդէմ քրիստոնէից: Ես մի կողմ մնամ: Խիստ շատերը Շուշուայ հայերից հաւատացնելով հաւատացնում

¹ Օրոջ, օրուց-ծումապահությունն Տրամազանի ժամանակ (ծանոթ. խմբ.)



էին ինձ, որ իրանց հարսանիքներին հրաւեր և կերուխումներին շատ անգամ մասնակից են լինում տեղւոյն պարսիկները: Եւ փոխադարձաբար:

Շատ սիրուն, շատ գեղեցիկ, որովհետև «զի բարի և զի վայելուչ, զի բնակին եղբարք և ի միասին»¹:

Հռոմում լինել և Պապին չը տեսնել, սա կարելի չէ: Կարելի չէ նոյնպէս Շուշիում գտնուիլ և Հադամ ապօրը² չը տեսնել: Ողջ Արցախը գիտէ, ճանաչում և յարգում է այդ պատկառելի ծերունուն, որ չնայելով իւր 80-ի մօտ տարիքին, այնուամենայնիւ, ժիր է, առողջ, ծիծաղերես, զուարճախօս, կատակախօս և առակախօս: Հադամ ապօր տունը գտնվում է հայ և թիւրք թաղերի մի անջրպետում և է կրկնայարկ՝ գետեղուած մի ընդարձակ ծառայից և ծաղկալից պարտիզի միջին: Առաջին անգամ գաւիթը մտնելիս ինձ դիմաւորեց կայտառ ծերունին՝ հագին ունենալով հոգևորականի վերարկու: Այստեղ ես լսեցի, որ Հադամ ապեր ասած մարդը չորս աստիճան ունեցող դպիր է եղել տակաւին Բաղդասար մետրօպօլիտի օրով: Նա շատ ժամանակ չէ, որ ծերութեան պատճառաւ դադարել է եկեղեցւոյն սպասաւորելուց:

Մենք պարտիզի մէջ նստանք: Տէ՛ր աստուած, որքան գեղեցիկ է այս պարտէզը, որքան ջանք ու խնամք է թափած ծերունին նրա վրայ: Հապա այս ծաղկանոցը. մի կատարեալ եւրօպական արանժերէա է: Ահա ձեզ մեխակ, ահա զամբազ, ահա ամսական, սպիտակ ու կարմիր վարդեր, ահա շուշան, ընտանի մանիշակ, մեկուն (խաշխաշ), ալեանդր, յասմիկ, սրինգ, նունուֆար, կակաչ և այլն: Մի խօսքով ասացի ես ծերունուն. «... և եղ տէր աստուած զԱդամ ի դրախտին փափկութեան՝ գործել զնա և պահել»:

«Երբեմն էի լոյս և այժմ եմ խաւար», - նոյնպէս կոմպլիմենտով պատասխանեց ինձ ծերունին: Երկու ժամի չափ ես Հադամ ապօր պարտիզումը և տանը մնացի: Եւ այդ երկու ժամումը լսածներիցս այն եզրակացութեանը եկայ, որ Հադամ ապերը մի կենդանի առակագիրք է: Բայց յայդմանէ՛ նա բաւականին տեղեակ է Արցախի պատմութեան, մանաւանդ ինչ որ Գանձասարի, Ամարասի, Երից Մանկանց և Արցախի միւս վանքերի աթոռակալների կեանքին ու գործերին է վերաբերում: Այդ ամէնը Հադամ ապերը լսել է Բաղդասար մետրօպօլիտից, որոյ մօտ նա տնտես և սպասաւոր է եղել: Ծերունու Մկրտիչ որդւոյն և Լևոն թոռանը վրայ պարտք դրի, որ նրա ասած առակները գրի առնեն: Խոստացան կատարել: Ես հաւատացած եմ, որ երբ մի այդպիսի հաւաքածու լոյս ընկաւ, նրա տպագրելը շատ հեշտ է: Հադամ ապօր առակները ըստ մեծի մասին Պըլը Պուղու, հայ մելիքների, Աղուանից կաթողիկոսների և մի քանի թիւրք խաների առակներիցն են, որոց և ոչ մինը հրատարակուած են ցարդ: Առակները իրանց զուարճալիութեան, սրամտութեան և խելացիութեան կողմից միշտ և հանապազ արժանի են տպագրութեան: Արցախի ժողովրդեան, նրա վրայ հոգեպէս և մարմնաւորապէս իշխողների պատմութեանը վրայ յիշեալ առակները մեծ լոյս են ձգում:

Հադամ-ապօր սուրճը վայելելուց և նրա ձեռք կրկին ու կրկին սեղմելուց յետոյ՝ ես դուրս եկայ Շուշուայ երկրային դրախտից՝ Հադամ-ապօր պարտէզ ու ծաղկանոցից:

Այցելեցի պ. Սամուէլ Գիւլգաղեանին: Սա «Մեղուի» թղթակիցն էր Թաւրիզում: Այժմ հայոց լեզուի ուսուցիչ է Շուշուայ հոգևոր դպրոցում: Պարոնի մօտ երեք ձեռագիր ինքնուրոյն աշխատութիւն տեսայ և թերթեցի: Թերթեցի, հաւանեցի և նորից, ծայրէ ի ծայր, կարդացի ձեռագրաց երկուքը: Երրորդը դեռ կարդացած չեմ, թէև բովանդակութեան մասին, թերթածիցս մի

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 8-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 56-ում (21 յուլիսի, էջ 1-2)

² Ղարաբաղում ա տառով սկսուած բառերը, կարծեմ, միշտ հ հնչիւն են ստանում, օրինակ, Ադամ-Հադամ, անդաստան-հանդաստան և այլն



թեթև գաղափար ունին: Պ. Գիւլգաղեանի հեղինակութիւնքը սոքա են: Առաջինք՝ «Հայելի», որ մի հաւաքածու է 200 հատ ժողովրդական, թարգմանական (պարսկերէնից) և ինքնորոյն առակների և առածների: Բովանդակութիւնքը՝ իմաստալից, բարոյական, լեզուն՝ ճոխ, ոտանաւոր-բանաստեղծական: Երկրորդ՝ «Հաւ և Որձակ» (աքաղաղ): Սա ժողովրդական աւանդութեան վրայ հիմնուած մի գեղեցիկ պօեմ է, դարձեալ ոտանաւոր: Լեզուն՝ պարզ, գողտրիկ, զարմանալի ճկուն ու սահուն, իսկ բովանդակութիւնը հաւերի և աքաղաղի ընտանեկան կեանքն է ներկայացնում. այդ ընտանիքի թառիլը երեկոյին, որձակի կանչը կէսգիշերին և լուսադէմին, ժողովրդական աւանդութիւնք և կարծիք այդ ժամերի մասին, աշխարհիս չորքոտանի կենդանեաց և սողնոց ու զեռնոց գործողութիւնքը յիշեալ ժամերուն, գիշերուայ երևոյթները, բոյսերի ազդեցութիւնը մարդկանց վրայ ըստ ժողովրդական աւանդութեանց, գեղեցիկ նկարագիր ընտանի կենդանեաց, մանաւանդ գոմէշի, էշի և գամփոի շինականին մատուցած ծառայութեանցը, նկարագիր շինականի դաշտային պարապմանց, ուր իսպառ գետինը նմանեցրած է մի հիւանդի, իսկ գիւղացին մի բարեխիղճ բժշկի, որ կեանք ու կենդանութիւն է տալիս հողին: Հաւերի ձու հանելը, թուխս նստելը, ճտեր հանելը, խնամել և մեծացնելը: Նրանց պահպանութեան համար կատուի և գիշատիչ թռչնոց դէմ մղած պատերազմը և այլն, և այլն: Կարճ ասած՝ պ. Գիւլգաղեանի պօեմը մի այնպիսի գողտրիկ բանաստեղծութիւն է, որոյ նմանը մեր գրականութիւնում դեռևս չը կայ¹: Պարոնի «Հաւ և որձակը» մի մօտաւոր նմանութիւն ունի Շիլլերի «Զանգակի» հետ, թէև սա նրա կրկնապատիկ մեծութիւնն ունի: Պ. Գիւլգաղեանը նոյնպէս իւր (ժողովրդային) բանաստեղծութեան ամէն հատուածի հետ կցում է մարդկանց, ազգի, մանաւանդ շինականի կեանքը, նրա զանազան դասական գործողութիւնները և արարքը:

Աստուած իմ, որքա՛ն հարուստ է ժողովրդի բանաստեղծական աւինը, նրա զննողական ոյժը, նրա գիտութիւնը: Ընդ նմին որքա՛ն շնորհք է այդ ամէնը, այսքա՛ն գեղեցիկ և ճշգրիտ կերպով դուրս բերող բանաստեղծ հայ ուսուցիչը՝ Գիւլգաղեանը, որ, ինչպէս ինձ ասաց, Շիլլերի «Զանգակը» տեսած չէ, այլ իւր պօեմը դուրս է բերել ժողովրդի բերնիցը առնելով և իւր կողմից լոկ կոկելով և կարգ ու կանոնի տակ ձգելով: Սա է, ահաւասիկ, ճշմարիտ բանաստեղծութիւնը:

Ես խորհուրդ տուի պ. Գիւլգաղեանին, որ իւր պօեմը մաքուր գրէ և անյապաղ ուղարկէ Թիֆլիս՝ «Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեանը»: Ես ինձ թոյլ եմ տալիս յուսալ, որ յիշեալ ընկերութիւնը յիշեալ պօեմը կը հաւանի և իւր հաշուով տպագրելով զայն՝ կը խրախուսէ հեղինակին:

Պ. Գիւլգաղեանի երրորդ հեղինակութիւնն է «Ոսկի աղունակ կամ Շամիրամ և Արայ Գեղեցիկ», որ մի գուսանական բանաստեղծութիւն է և «Հաւ ու որձակ» պօեմի կրկնապատիկ մեծութիւնն ունի և նրանից անհամեմատ բարձր գրուածք է: Բայց նրա մասին ես իմ կարծիքը կը յայտնեմ, երբ գրուածքը ամբողջապէս կարդամ, վերջացնեմ:

Խօսքս Շուշիում կարդացած ձեռագիր աշխատութեանց վերայ գալով՝ հարկաւոր եմ համարում յայտնել նաև, որ Մակար վ. Բարխուդարեանցն ևս ունի մի հետաքրքիր աշխատութիւն Արցախի հայ ժողովրդեան նախապաշարմանց վրայ, որոյ մէջ մանրամասնաբար դուրս է բերած, թէ ինչ բաներ են և ժողովրդի ձեռքով ինչպէս են կատարվում հետևեալ նախապաշարմունքները. 1) գրբաց, 2) կապար հալող, 3) մոմ թափող, 4) ջինդար դիւահալած, 5) թըլըսիմ, 6) ձեռնաչափութիւն,

¹ Պ. Գիւլգաղեանը հայոց նախնի գրականութեանը և լեզուին լաւ ծանօթ է: Եւ, անշուշտ, դա է պատճառը, որ աշխարհաբար լեզուն այնքան ճոխ է, փարթամ և ճկուն: Պ. Գիւլգաղեանը հմուտ է նաև պարսկերէնին և ֆրանսերէնին: Սօս 25 տարի է, որ նա Պարսկաստանում և Անդրկովկասի գաւառական քաղաքներում ուսուցչութիւն է անում հայ դպրոցաց մէջ: Եւ ուրեմն իւր ժամանակի մեծ մասը պատահ (նա մեծ գերդաստանի տէր է) հաց ճարելու գործին է նուիրած, սակայն անկեան քարը գետնի վրայ չի մնալ: Եւ մնալու չէ



7) գարի ձգել, 8) քաջք և քաջքի հարսանիք, 9) լուսնի և արեգակյան խաւարումն, 10) պոչաւոր աստղ, 11) փալջի, 12) դիւահարի պատմութիւն, 13) մարդագայլ, 14) դուլեապանի, 15) քեալթառ քօսի, 16) փոխուած երեխայ, 17) հալ տանիլ, 18) աչքով տալ և աղօթքով բժշկել, 19) կանչող հաւ, 20) ականջով խօսել, 21) ջոջք անել, 22) քաջքերի ծանրութիւն, 23) փոնգալ, 24) հիւր գալու նշաններ, 25) ծնունդ լուսնի, 26) մահագոյժ բու, 27) հիմնադրամ, 28) առուները ցանել, 29) կարմիր եզն (երկրաշարժ), 30) հալածել. ուտիք և պահք, 31) կոլինջ: Գիրքը մի ընտիր յառաջաբան ևս ունի: Արժէ և պէտք է, որ այս աշխատութիւնը ևս տպագրութեամբ ի լոյս ընծայուի: Եւ ես խորհուրդ տուի նոյնպէս և՛ Մակար հայր սուրբին այդ մասին դիմել «Հայերէն գրքերի հրատարակութեանը»՝ ներկայացնելով սրան իւր աշխատութիւնը:

Մակար հայր սուրբի գրադարանում ես գտայ մի հին և հետաքրքիր գիրք ևս, որոյ անունն է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ. շարադրեցեալ սակս սթափելոյ երիտասարդաց և մանկանցն Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղքացեալ թմրութենէ քնոյ ծուլութեան»: Տպուած է Մադրասայում (ի Հնդկիս) յամին 1772: Գիրքը մի բանաստեղծական գրուածք է, հեղինակը՝ անյայտ, բայց գրուածքի ոգուց երևում է, որ նա «Որոգայթ փառաց» գրքի հեղինակի աշխատութեամբն է յօրինուել և նրա տպարանումը տպուել:

Մակար վարդապետը ինձ տուեց նաև մի ձեռագիր աշխատութիւն, որ է իւր ճանապարհորդութիւնը Նիկոմիդիոյ վիճակումը: Հայր սուրբը իւր ճանապարհորդութիւնը արել է գեր. Մելիքսեդէկ եպիսկոպոսի՝ Զմիւռնիոյ առաջնորդի յանձնարարութեամբ այն թուականներում, երբ հանգուցեալ Ներսէս պատրիարքի յանձնարարութեամբ Սրուանձտեանց Գարեգին և Վահան Պարտիզակցի հարք ուղևորվում էին Տաճկահայաստանի միւս մասերը տեղեկագրելու: Յիշեալ թուականներում Մակար վարդապետը Զմիւռնիայումն է և գեր. Մուրադեանցի փոխանորդ կամ օգնական է համարուել: Հայր սուրբը մի քանի տարի ս. Երուսաղէմի ս. Յակոբեանց վանքի միաբան է եղել ս. Մուրադեանցի հետ միասին: Այս ձեռագիր աշխատութիւնը այստեղ կարդալու ժամանակ չունիմ ես, ուստիև հետս Թիֆլիս կը բերեմ, որպէսզի, եթէ հարկաւոր դատուեցաւ, մաս առ մաս հրատարակուի «Մեղուի» միջոցաւ¹:

Յունիս 29-ին Շուշուց մեկնեցայ 19-րդ դարու հայ պատմիչ Ապրէս Աբրահամեան Բէկնազարեանցին կա՛մ գերեզմանը, կա՛մ թերևս կենդանի անձը որոնելու և գտնելու: Ինձ հետ ուղեկից են Մակար վարդապետ Բարխուդարեանց և վիճակային դպրանոցի ուսուցիչ պ. Գրիգոր Թառումեանցը: Որոշել ենք մեր ճանապարհորդութիւնը ոտքով անել: Ուղեկիցներս, մանաւանդ հայր Բարխուդարեանցն իւր բոլոր պերճախօսութիւնքը ի գործ է դնում մեզ համոզելու, որ ոտքով գնալը ոչ միայն յոգնեցուցիչ է ամենիս համար, այլ և վտանգաւոր, թէ այդ բանը մասնաւորապէս իւր կոչման և պաշտօնին անյարմար է: Իւր ոտքերից մինը, որ մի քանի տարի առաջ Զմիւռնիայից վերադարձած ժամանակ կոտրել է Աղսթափում և երկու ամիս այդտեղ անկողնի գերի է արել իրան, թէ հէնց այդ ոտքը իրան չէ ներում հետիոտն ճանապարհորդել, այն էլ Արցախի նման լեռնուտ ու քարքարուտ երկրում, մանաւանդ որ մեր երթուղին ճիշտ յայտնի չէ, և չը գիտենք, թէ ուր և որ գիւղը պէտք է գնանք: Վերջապէս ինքը՝ հայր սուրբը, պատրաստ է ամենայն սիրով մեզ համար ձիանք վարձել, մեր ճանապարհորդական բոլոր ծախքը իւր սեպհականութիւնից հոգալ, միայն թէ մենք յե՛տ կանգնեինք մեր անտեղի որոշումից: Բայց ես և պ. Թառումեանցը չը զիջանք և դրականապէս պահանջեցինք մեր որոշման անփոփոխ կատարումը: Ինչո՞ւ՞ համար երօպացիք,

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 9-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 57-ում (24 յուլիսի, էջ 2-3)



մանաւանդ անգլիացիք, երբեմն անում են այդպիսի բաներ, իսկ մենք կարող չը պիտի լինենք: Վերջապէս, ասացինք մենք հայր սուրբին, 19-րդ դարու ծերունի հայ պատմիչն իւր կամաւոր աղքատութեամբ քանի տարի է ահա և թերևս մինչև իսկ այսօր թափառում է Արցախի գիւղերում, մենք՝ երիտասարդ մարդիկս և ակամայ աղքատներս, ինչի՞ չը պէտք է մի քանի օր անհանգիստ լինենք նրան հետքերը գտնելու համար: Վերջին մտքի հետ հայր սուրբս համաձայնեց և իւր տանից վերցրած թէյ-շաքարը անթի (զօլթուխ) տակը դնելով՝ տանից դուրս եկաւ:

Ժամը երեկոյան հինգն է: Պլէտներս ուսերս առանք և հայդա, դէպի Դաշուշէն (Քարաշէն) գիւղը, որոյ մօտ գտնուած ուխտատեղին գնացող ուխտաւորք խումբ-խումբ արդէն ճանապարհ են ընկել Շուշուց և մօտակայ գիւղերից: Այդ մենք գիտէինք և դիտմամբ հէնց այդ օրերը ընտրեցինք, որովհետև նախ՝ ուխտաւորների երթնելութիւնը մեզ ապահովեցնում էր ճանապարհի վտանգներից, և երկրորդ՝ այդ և հետևեալ տօն օրերում մենք առիթ կունենայինք այլ և այլ գիւղերի բնակչաց հետ տեսնուիլ ու նրանցից տեղեկութիւնք քաղել մեր որոնած մարդու մասին: Բայց թէ այդ ուխտագնացները ի՞նչ կարծիք կը տանեն մեր մասին, դա բնաւ մեր հոգսը չէ: Շուշուայ պատուանդանը կազմող լերան արևելեան կողքովն վար իջանք ոչ փոստայի ճանապարհովը, այլ ուղիղ գծով՝ գիւղական նեղիկ արահետ ճանապարհով: Թփերի և մացառների մէջ ծլվող թռչնոց երեկոյեան դայլայլիկը մեզ գրաւում է: Իսկ քարափների մէջ թաք կացած կաքավների կղկղալը միանգամայն հրապուրում է մեզ: Միտս եկավ քսան տարի առաջ երգածս Ղափանցի Պետրոս վարդապետի երգը կաքաւոց մասին.

«Փութա՛ւ առ մեզ նախշո՛ւմ կաքաւ,
 Սարերն ամէն կանանչացան
 Զարդ զգեցեալ պայծառացան.
 Յարդ լեռներէդ ի վայր կուգաս,
 Յաւուրս գարնան պարեալ ցնծաս,
 Նախշուն ձագերովդ շուրջ կուգաս.
 Շաղկղա, կղկղա, միշտ կը կանչես,
 Կը հառաչես, ո՞ւմ կը կանչես» և այլն:

Մենք ձայն ձայնի տուած երգեցինք: Հէնց այն է, երգը վերջացրած էինք, ես կամեցայ ծխել, ֆո՛ւ, սատանա տանի, ծխախոտի տուփերիցս չորսը ուսիս ձգած վերարկուիս գրպանիցը ճանապարհիին վեր է ընկել: Մնացել է միմիայն երկու տուփ՝ 50 գլանակ, որ ինձ համար շատ քիչ է: Յուսալով, որ Դաշուշէնում կը գտնեմ և կը գնեմ, միամիտ սրտով շարունակեցի ճանապարհս՝ միանգամայն խոստովանելով, որ եւրօպացի ճանապարհորդը ինձ նման անզգոյշ և անհոգ կերպով չէ վարվում իւր կենսական մթերքի հետ, իսկ թէ ծխախոտը այժմեան մարդկանց կենսական մթերքներից մինն է, դա ոչ ոք չէ ուրանում:

Շօշի գետակի¹ մօտ հանգստացանք, ոտքներս լուացինք, ջինջ և սառը ջրիցը կուշտ խմեցինք և սկսանք հանդիպակաց սարն ի վեր բարձրանալ կոմաններով: Մի ձորակում պատահեցանք պարտէզների, որոց հասուն թփերիցը կամեցանք ճաշակել: Պարտիզում գործողները բոլորն էլ կանայք են և մանկունք: Շնորհակալութիւն, իսկոյն թոյլ տուին մեզ պարտէզ մտնել: Մի նորատի հարս՝ Մէհրի անունով, թռաւ, տղամարդու պէս ծառն ելաւ և առատ թուփ թափեց: Այստեղ ես

¹ Կարկառ գետը երկու վտակներից է կազմվում: Մինը, որ գալիս է Շուշիի հարաւարևելեան կողմից, իւր անունը ստանում է այն գիւղերից, որոց կշտիցը կամ միջիցը անց է կենում: Այսպէս այդ գետակը կոչվում է Քարհնտակի (գիւղ) գետ, Շօշիի (դարձեալ գիւղ) գետ և այլն: Միւս վտակը, որ Դիզափայտու շղթայից բխելով՝ քաղաքի արևմտահիւսիսային կողմովն է անցնում, կոչվում է Կարկառ: Այս գետակները Շուշուայ հիւսիսարևելեան անկիւնում այսպէս անուանեալ Մազէ կամրջի մօտ միանում են և կազմում բուն Կարկառ գետը



պէտք է նկատեն, որ Արցախում թուրք թափում են մի յատուկ ձողով, որ կոչվում է թակ կամ թօխմախ: Թուրք վայելելուց յետոյ ես մի ռուբլի տուի, բայց ո՛չ հարսը և ո՛չ մայրը չը կամեցան վերցնել՝ յայտնելով, որ չարժէ մի աման թօի համար փող վճարել: Ես յայտնեցի, որ փողը տալիս եմ ոչ իբր թօի գին, այլ իբրև նուէր իմ կողմից այն երկու սիրուն և կայտառ մանկիկներին, որոց հազիւհազ կարողացանք (Արցախի, մանաւանդ գիւղերի մանկունքը առհասարակ սաստիկ ամաչկոտ են և վայրենի) մեզ հետ նստացնել և թուրք ուտացնել:

Ստիպմամբ ռուբլանոցը մանուկներից մինին տուի, և մենք դուրս եկանք պարտէզից: Շատ հաւանական է, որ իմ վարմունքը տիկիներին, անհաճոյ թուէր, իմ առատ նուէրը գուցէ նրանց կողմից սխալ մեկնուէր, բայց ես էլ ախր մտածում էի, թէ խեղճ գեղջկուհիք ի՞նչ պարտական են ամէն մի ճանապարհորդի ձրի թուրք ուտացնել: Այսպէս թէ այնպէս մի քանի ժամ յետոյ բանից դուրս եկաւ, որ իմ մի ռուբլին մեզ ազատեց նոյն գիշերը դուրսը՝ բաց օդի տակ մնալուց և մրսելուց ու հիվանդանալուց¹:

Ժամը 7 1/2-ին Դաշուշէն գիւղը հասնելով՝ մենք հարցրինք քահանային: Ասացին, որ ուխտատեղին է գնացել՝ հանդերձ ընտանեօք: Գիւղի բնակչաց մեծ մասն ևս այնտեղ էր: Գիւղը աչքից անցկացրինք և յետոյ քայլերս դէպի ուխտատեղին ուղղեցինք:

Դաշուշէն գիւղը ընդամենը 30 տուն ունի, բոլորն էլ հայք են: Գիւղը զետեղուած է լէրան գոգաձև գագաթում: Ունի մի անշուք և փոքրիկ եկեղեցի, որոյ արձանագրութիւնն է.

Յիշատակ է Թաղէնու Առաքելեանի ի թուին 1843:

Դաշուշէնում, ինչպէս յետոյ և միւս գիւղերում մենք պատահեցանք մի խումբ դարադաղցի հայերի: Դրանք գալիս են այս կողմերը քաղաքում մշակութիւն անելու, իսկ գիւղերում՝ արտեր հնձելու: Տարէնը իւրաքանչիւր ոք աշխատում է 50-60 ռուբլի և անցնում գնում իւր հայրենիքը կրկին: Ղարադաղցի հնձուր պարսիկների ևս մենք պատահեցանք վերջերում: Հայ հնձուրները շատ ուրախացած էին, որ պարսից օգոստափառ շահն ամբողջ Ղարադաղը, ի տրիտուր անցեալներում Սահմուդ խանի հասցրած վնասներին, երեք տարի ժամանակաւ ազատել է ամէն տեսակ արքունական հարկերից:

Ճշմարիտ արքայավայել շնորհ և ողորմութիւն շահի կողմից դէպի իւր հաւատարիմ և խեղճ հպատակները:

Դաշուշէնի կողքին գտնուած ուխտատեղին կոչվում է Սարիբէկ կամ, ինչպէս մի հինաւորց պառաւ ինձ ասաց, Սրաբէկ (սրով, թրով բեկեա՞լ արդեօք): Մի անձածկ չորս պատի մէջ դրած է մի խաչաքար կամ գերեզմանաքար, առանց որևէ արձանագրութեան: Ժողովուրդը որոշեալ օրերում և, ասում էին, երբեմն և սովորական կիւրակիներում գալիս է և այդտեղ մոմ վառելով ու խունկ ծխելով՝ կատարում է իւր ուխտը և վերադառնում: Մենք էլ համբուրեցինք յիշեալ խաչաքարը առանց աջահամբոյր ձգելու քահանայի տուփի մէջ: Պատճառը յետոյ կասեն: Սարիբէկում կան մի քանի գերեզմաններ՝ հանդերձ արձանագրութեամբք, մի մատրաձև գերեզմանատուն և մի կարգ հիւրասենեակներ: Ուխտաւորների թիւր բաւականին շատ է, որոնք զետեղուել են թէ՛ սենեակներում և թէ՛ քարափներում: Ոմանք արդէն սկսել են թառ ածողների շուրջը բոլորել: Աձում և երգում են պարսկերէն: Սարիբէկում և նոյնիսկ նահատակի գերեզմանի շուրջ, կան մի քանի հինաւորց թեղի և բոշնի ծառեր՝ սաղարթախիտ տերևներով: Ամէն մի ուխտաւոր իւր մատաղցուն ունի, այն է գառ և ոչխար, երբեմն և աքաղաղ: Դրանք մորթուելու են էգուց առաւօտեան: Մատաղցունների մորթիների արդիւնքը Շուշուայ հոգևոր դպրոցին է յատկացրած և տուած է կապալով տարին 65

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 10-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 58-ում (28 յուլիսի, էջ 3-4)



մանէթի: Շա՛տ է, թէ քիչ այդքան կապալադրամը, չը գիտեմ, միայն մի քանի ուխտաւորք և ոմանք Դաշուշէնի գիւղացիներից ինձ ասացին, որ Սարիբէկում մորթոտած ոչխար և գառ մատաղացուների թիւը 800-ից պակաս չէ լինում իւրաքանչիւր տարի:

Հիմի ես ձեզ ասեմ, թէ ինչի մենք աջահամբոյր չը տուինք քահանային:

Առաջին անգամ այդ մարդուն տեսնելիս մենք խնդրեցինք, որ մի գիշեր մեզ իւր տանը պատսպարէ: Մերժեց՝ յայտնելով, որ ինքը և իւր ընտանիքը ողջ գիշերը սրբի կշտիցը չեն կարող հեռանալ: Խնդրեցինք, որ վարձով կա՛մ իւր տան մէջ, կա՛մ իւր ծխականներից մինի տան մէջ գոնեա մեզ մի կերպով տեղաւորէ մինչև ի լոյս: Դարձեալ մերժեց և այն բաւականին կոպիտ կերպով: Ես շատ վշտացա, որ հայ քահանան զլանում է իւր օգնութիւնը ոչ միայն հայ աշխարհական ճանապարհորդին, այլ նաև հայ վարդապետին և մեր փողով չէ ուզում մեզ համար մի անկիւն ճարել գիշերելու, մինչդեռ մենք նորանից ո՛չ կերակուր ենք ուզում, ո՛չ անկողին, այլ չոր սենեակի համար 2 ռուբլի վարձ ենք խոստանում: Մտքումս դնելով ճնշում գործել անքաղաքավար քահանայի վրա՝ ասացի, որ թեմակալ առաջնորդի կշտիցն եմ գալիս և նրա քարտուղարն եմ:

- Ով ուզում ես եղիր,-կոպտաբար պատասխանեց քահանան:

- Պաստա՛,- համառօտ և ազդու ասացի ես ուղեկիցներիս, և մենք ճամփայ ընկանք դէպի Դաշուշէնի գիւղացւոց օգնութեանը դիմելու: Սարիբէկում գիշերելու ո՛չ յարմարութիւն կար մեզ և ո՛չ պատեհութիւն: Դժբախտաբար, գիւղացւոց մեծագոյն մասը ևս, ինչպէս ասացի, Սարիբէկումն էր: Գիւղումը մնացած էին կա՛մ ծերերը, կա՛մ մանուկները: Հարցրինք քեօխվային: Ասացին, որ նա էլ զբաղուած է իւր բազմաթիւ հիւրերին տեղաւորելու և կերակրելու հոգսով: Քեօխվայի հիւրերը քաղաքից եկող պրիստաւը և 20 հոգի ձիաւոր չափառներն են եղել: Դրանք եկել են Սարիբէկի ուխտաւորներին պահպանելու համար: Շատ լաւ, բայց հապա մենք ho դրսումը մնալու չէ՞նք: Լուր բերին, որ քեօխվան պատրաստ է մեզ ևս հիւրընկալել, եթէ իւր բազմաթիւ հիւրերի ներկայութիւնը մեզ ձանձրոյթ և նեղութիւն չի պատճառիլ:

Չը գիտեմ ինչ պատճառով և ինչ խելքով մենք չը կամեցանք առանց մեզ էլ հիւրերով ծանրաբեռնուած քեօխվային նորանոր ծանրութիւն պատճառել, ուստի շնորհակալութեամբ հրաժարուեցանք նրա առաջարկութիւնը ընդունելուց: Այսպիսով, մենք մնացինք դուրսը և մի գերանի վրայ նստած՝ աշխատում էինք մեր անձը գիւղի կատաղի գամփոների յարձակմունքներից և մոթմոթոցներից պաշտպանել:

Այսպէս, ուրեմն մեր երօպացու ձևով ճանապարհորդութիւնը չէ յաջողում: Յանկարծ ներքևից գիւղ է վերադառնում այն ընտանիքը, որոյ պարտիզում մենք թուր կերանք: Պառաւը մեզ ողջունեց և լսելով, որ մենք պատսպարուելու տեղ չունինք, հարսին իսկոյն հրամայեց աճապարել, որ իրանց տան սենեակը մեզ համար պատրաստի: Իսկ ինքը՝ բարի պառաւը, սկսեց մեզ դէպի տուն առաջնորդել: Կէս ճանապարհի վերայ մեզ դիմաւորեց հարսի մարդը սիրալիւր ընդունելութեամբ: Փոքր-ինչ յետոյ մեզ դիմաւորեց նրա միւս, դարձեալ ամուսնացած եղբայրը ևս: Եւ մենք առօրփառօր մտանք եղբարք Ալէքսան և Կարապետ Օհանջանեանցների աղքատիկ, անծեփ և հողէ յատակով սենեակը, որ աւելել և մի քանի կապերտ ու գորգով ծածկել էին: Ջուր եփ բերին, մենք ամէնքս թէյ խմեցինք: Ստիպմամբ մեզ համար ընթրիք պատրաստեցին, որ բաղկացած էր մաճնից և թթից: Մինչև ժամը 12-ը տանուտերերի հետ խօսեցանք իրանց գիւղի դրութեան և իրանց վիճակի մասին, որ, ինչպէս երևեցաւ, շատ և շատ աննախանձելի պէտք է լինի: Մեր խօսակցութիւնից, ի միջի այլոց, երևեցաւ, որ մեր բարի տանուտերը մեր որոնած աղքատին տեսել է իրանց գիւղում հաց մուրալիս և մի քանի գիշեր Սարիբէկի սենեակներում մէն-մինակ գիշերելիս: Այդ խորհրդաւոր աղքատի մասին մանրամասն տեղեկութիւն մեզ կարող է հաղորդել Մազե կամրջի



գլխին եղող մկիտան Արզումանը, որոյ մօտ ծերունի աղքատն ամբողջ շաբաթներ է անցկացրել: Աղքատն իրան կոչում էր Ալեքսիանոս: Եւ երբ իրան ո՛վ լինելն էին հարցնում, դժկամակ կերպով այս լակոնական պատասխանն էր տալիս. «Բէան (բան) չունի՞ս»:

-Է՛րիկա, գտանք,-ասացինք մենք և մեր բարի տանուտեարց խնդրեցինք, որ գնան հանգստանան: Նրանք գնացին, մեզ համար անկողին բերին, թէն մենք հրաժարուում էինք: Բայց որպէսզի չնչին պատճառաւ չը վիրաւորէինք ազնիւ գեղջկականներին, վերջիվերջոյ յանձն առանք հանգստանալ մեզ առաջարկած անկողիններում: Թէ այս տեսակ աղքատ գիւղականաց անկողինը որ աստիճան մաքուր է լինում, դա ամէն ոք հասկանում է: Աւելացրէք դրա վրայ և այն, որ սենեակ ներս մտած բոպէիցը սկսեալ՝ անթիւ և սովալլուկ լուերն արդէն սկսել էին իրանց արշավասոյր ջիրիթը մեր մարմնոյ վրայ, և դուք կը հասկանաք, թէ ինչ պատճառաւ մեր արտևանունքները մինչև ի լոյս մէկգմէկու չը մօտեցան: Այդ սևերես կենդանիքը մինչև ի լոյս տոտիկնկիբուրուզ մեզ խաղցրին: Մենեակից դուրս գնալ կամ օդափոխութեան համար սենեակի միակ պատուհանը բաց անել մենք անյարմար համարեցինք, որովհետև տանու մարդիկ և բոլոր ընտանիքը, մինչև անգամ օրորոցի մանուկը, դուրսը՝ դրան առաջին էին պառկած գետնատարած: Մեզ չէինք ներում նմանապէս բարձր խօսել կամ ծիծաղել, միգուցէ տանուտէրերին անհանգստութիւն կամ վիրաւորանք պատճառէինք: Ես զօռ էի տալիս ծխախոտին, իսկ Մակար վարդապետը՝ հայ աշուղի յօրինած ներբողին առ լու.

«Մինը չի՛, երկուսը չի՛, հարիւր հազարով է գալի.
 Լէկզի չի՛, պարսիկ չի՛, յայտնի գող ի գող գալի.
 Այս քեաֆիր լուի ձեռից լէկզի հանգի պար եմ գալի.
 Հանգստութիւն չը կայ, մինչև ի լոյս քուն չի գալի» և այլն:

Վերջապէ՛ս արշալոյսը բացուեցաւ: Պ. Թառումեանցը գանգատում է իւր գլխացաւից, իսկ ես գանգատվում եմ, որ մօտս գլանակ չը մնաց՝ բացի երկուսից: Անտանելին այն է, որ ո՛չ գիւղում և ո՛չ Սարիբէկում ծախու ծխախոտ չէ ճարվում: Ձեռաց լուացուեցանք, թէ խմեցինք և դէպի Արզուման մկիտանը ճամփու ընկանք: Մակար վարդապետի թախանձանացը զիջանելով՝ ես պարտաւորված էի իմ ծոցից այլևս մի դէնիշկա չը մսխել, ոչ էլ նմանապէս պ. Թառումեանցը, վասն որոյ տանուտիրոջ մանուկներին ընծայի պատրուակաւ հայր սուրբը իւր գրպանիցը վճարեց տանուտիրոջ երկու ռուբլի: Կրտսեր եղբայրը եկաւ՝ Արզումանի մկիտանի կարճ ճանապարհը մեզ ցոյց տալու: Տոյց տուեց և յետ դարձաւ: Այժմ մենք մինակ ենք գնում, լեռն ի վայր իջնում:

Ճանապարհը նե՛ղ, քարքարո՛ւտ, մացառո՛ւտ, գալարո՛ւն է: Սուր-սուր քարերը ոտքներն են ծակծկում, իսկ մասրի և մորենիի (մոշ) փշերը՝ շորերս: Իջանք լեռան ստորոտը՝ մի ձորի մէջ, որտեղից ընթանում է Շօշի գետը: Ջուրը մեծ չէ, բայց առանց շորերը հանելու անցնելն ևս անկարելի միանգամայն: Բայց քնահատ մարմնով լեռնային սառը ջրի մէջ մտնելը ևս, համաձայնեցէ՛ք, որ խելք չէ: Նստանք գետափը և դէպքի կամ բախտի բերմունքի ենք սպասում: Բախտներս բանեց: Փոքր-ինչ յետոյ հանդիպակաց կողմից Խաչէնի գիւղացիք՝ այր մարդիկ, կին-արմատներ և ծծկեր երեխաներ, ձիերի և ջորիների վրայ երկուսով-երեքով միասին հեծած, գալիս են գետն անցնելու: Դրանք էլ Սարիբէկ ուխտի են գնում: Հայր սուրբիս դրութիւնը բաւականին փափուկ էր: Կանանց ներկայութիւնը (դրանցից ոմանք ոտնամանները հանեցին, ծնկակալները վեր քաշեցին և գետը մտան) ստիպեց նրան հունից հեռանալ և նէմեհրամ պահել՝ երեսը շուռ տալ դէպի յետ, մինչև այդ դօշախ կնանիք գետը կանցնէին: Երբ ուխտատուները բոլորն էլ գետն անցան-պրծան, մենք վեր առանք մի քոստ ձի և Շօշ գետն անցանք նոյնպէս գայլ, գառ ու խոտ առակի մեկնաբանութեան համեմատ: Առաջարկեցինք ձիու վարձ, բայց գիւղացին չընդունեց:



Հասանք Շօշու և Կարկառ գետերի խառնարանը՝ Մազե կամուրջը: Նրանից մի քանի տասնեակ սաժեն բարձր գտնվում է և Արզումանի մկիտանը: Ահա և ինքը՝ մեծապատիւ Արզումանը: Բայց ի՞նչ մկիտան է, որ, բացի օղիից, վարունգ ու աղից, ուրիշ բան չը կայ: Իսկ ինձ հարկաւոր է ծխախոտ: Իմ քամբախտութիւնից երկու օրից ի վեր մկիտանի ծխախոտը հատել է, իսկ Շուշի գնացող ծառան տակաւին չէ վերադարձել: Անիծա՛ծ: Ի՞նչ դժար բան է երկու օրումը 14 վերստ ճանապարհը անել: Երևի անպիտանը Շուշիում լօղրութիւն է անում: Ինչնիցէ: Կոյրին ի՞նչ հոգան է, թէ մումը թանկ է:

Արզումանը մեզ յայտնեց, որ Ալեքսիանոս աղքատը մի քանի տարի առաջ իւր մկիտանում հիւանդացաւ, պ. Աթաբեկեանցի մօտակայ ջրաղացի մարագումը մեռաւ և այսինչ բլրի կողքին, թաղուեցաւ գիտութեամբ և թոյլտուութեամբ Շուշուայ ոստիկանարանին: Յետոյ երևեցաւ, որ Ալեքսիանոսը շուշեցի էր. ազգականները յայտնուեցան և ուզում էին դիակը Շուշի փոխադրել, բայց ոստիկանարանը թոյլ չը տուեց:

Գնացինք Աթաբեկեանցի ջրաղացը՝ մարագը գտնելու: Մեր բախտից հեռուից մեզ տեսաւ և իւր ծանօթ հայր սուրբին բարևեց ինքը՝ ջրաղացի տէրը՝ դօկտոր Մովսէս բէկ Աթաբեկեանցը: Ծանօթացանք: Պ. Աթաբեկեանցի կայծով թէր վայելեցինք, մեզ առաջարկած ծխախոտը և սիգարները ընդունեցինք, ճաշին իւր մօտ մնալու և իւր սեպհական ձին մեր իրաւասութեան տակ ընդունելու սիրալիր առաջարկութիւնիցը շնորհակալ մտօք հրաժարուեցանք և ճամփայ ընկանք դէպի Խանքէնդ գիւղը: Դօկտորը մեզ միանգամայն ապահովացրեց, որ իւր մարագում մեռնողը չէր կարող մեր որոնած անձը լինել: Այս ստուգուեցաւ նաև Արզումանի նոր ցուցմունքներից, որ նա արաւ պ. Աթաբեկեանցին մեր ներկայութեամբ: Եւ այսպէս, Դաշուշէնում մեր ստացած ուրախալի լուրը անհիմն դուրս եկաւ: Չը մոռանամ յիշել, որ պ. Աթաբեկեանցի կրկին ջրաղացները կարգին բանում են՝ պատրաստելով շրջակայ գիւղօրէից համար ալիւր և Խանքէնդի զօրաց համար ձաւար: Ջրաղացի կողքին գտնվում է և մի կրահանք: Պ. Աթաբեկեանցի ջրաղացներից փոքր-ինչ բարձր գտնվում է պ. Հախումեանցի ջրաղացը¹:

Ժամը 9 ½-ին պ. Աթաբեկեանցի կալուածքիցը հեռացանք և ժամը 10 ½-ին հասանք Խանքէնդ: Մա մի ընդարձակ և հայաբնակ գիւղ է՝ սարահարթի վերայ շինած: Փողոցները՝ լայն, կանոնաւոր, կողքերին՝ ծառեր տնկած: Տները՝ տախտակաշէն, դրսից կրով ծեփած, բազմաթիւ պատուհաններով: Ջօրաց շտաբի շինութիւնքը ընդարձակ տեղ են բռնում գիւղի ամբողջ արևմտեան կողմում: Իւրաքանչիւր և մեծ զօրանոցների գաւիթները զարդարած են ծառերով, որոց մէջ ամենից շատ կայ ակացիա: Ջրօսայգու պաշտօն կատարող մի լայն ճեմելիք էլ կայ՝ կողքերին խիտ առ խիտ ծառեր: Քար չը կայ փողոցներում, այլ փափուկ սևախառն հող: Բաւականին շատ կրպակներ կան: Ջօրաց մեծագոյն մասը թէև ճամբար է քաշուել, բայց սպաների կանայք և ռուս աղախնայք յաճախ են պատահում: Ջօրաց ներկայութիւնը առևտրական տեսակէտով խանքէնդցիներին կէանք է տալիս: Թէպէտև պակաս չեն այն կրպակները, որոց մէջ արտացոլում է «никому в кредит» ստուարաթուղթը:

Հայք մի փոքր եկեղեցի ունին, որ ես տեսնելու աղիթ չունեցայ: Քահանան մօտակայ ուխտատէղիներից մէկումն է եղել: Հիւրանոց չը կայ, այլ միմիայն մկիտաններ:

Հանգստանալու և ճաշելու համար, իհարկէ, մեզ անկարելի էր մկիտան մտնել: Խնդրեցինք մեզ մի սենեակ տալ և փողոցում մեզ համար լիւլա-քաբաբ, որ այս կողմերում Թիֆլիսի պարսիկներիցը լաւ և մաքուր են պատրաստում, ապսպրել: Քառորդ ժամից յետոյ դուքեանի

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 11-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 59-ում (1 օգոստոսի, էջ 2-3)



տիրոջ սեպհական և մաքուր ու պայծառ սենեակը արդէն պատրաստ էր մեզ համար: Մեր որոնած անձի համար հարց ու փորձեր արինք, մի քանի մարդիկ հրաւիրեցինք, շատ սուտ ու դորդ բաներ լսեցինք, հաւաստիացանք, որ ժողովականք վախենում են մեզ իրանց տեսածը և լսածը պատմելու և այլն, և այլն: Վերջապէս ձեռք բերինք մի 75-ամեայ դողդոջուն ծերունի՝ Յակոբ Շահումեանց անունով, որ այս կողմերումս յայտնի է փողորատչի Յակոբ անունով: Այս պատուական և ուշիմ ծերունին ժողովականաց ոմանց սուտակասպաս խօսքերը իրանց երեսովը տուեց և յայտնեց, որ ինքը 6-7 տարի առաջ Խանքէնդում յաճախ պատահելիս է եղել մի աղքատ ծերունու, որ շատ ամաչկոտ և քաղաքավար է եղել, միշտ խորշել է իրան (Շահումեանցի) հետ տեսակցելուց և խօսակցելուց: Կենդանի՞ է, թէ՞ վախճանած այժմ յիշեալ աղքատը, պ. Շահումեանցը ոչինչ չը գիտէ: Միայն լսել է, որ 5-6 տարի առաջ Կարկաժան գիւղի քարափներում մի անտէր, աղքատ ծերունի է մեռել և ոստիկանարանի թոյլտուութեամբ Կարկաժանի հանգստարանում թաղուել: Բայց թէ մեռնողը իւր իսկ տեսած աղքատն է, թէ ոչ, ծերունի Շահումեանցը չը գիտէ: Ժողովականները բացուեցան և գրեթէ միաբերան վկայեցին, որ Շահումեանցի յիշած աղքատին իրանք էլ են տեսել, երբեմն նրան կերակրել: Մինը ևս դուրս եկաւ և յայտնեց, որ ինքը յիշեալ աղքատին երկու գիշեր իւր մօտ հիւրընկալել է, բայց անունը չէ հարցրել: Կարկաժանում մեռնողը և թաղուողը միննոյն աղքատն էր, բայց թէ նրա մեռնիլը ոչ թէ 5-6 տարի է, ինչպէս Շահումեանցն էր ասում, այլ ուղիղ երեք տարի՝ խաղողի ամիսներում (այսինքն՝ աշնանը):

Մեր մէջ նորից հուսոյ նշոյլ ծագեց: Ժողոցը ցրեցինք, ծերունի Շահումեանցի առաջարկութիւնը՝ իւր տանը ճաշելու նկատմամբ բացասեցինք շնորհակալութեամբ և քաշուեցանք մեզ համար պատրաստած սենեակը: Ճաշը դեռ պատրաստ չէր: Ես ընկողմանեայ փափուկ և մաքուր բարձի վերայ, ինչպէս Հովնան մարգարէն ի խելս նաւու և՞ ... երկու ժամից յետոյ հագիւեալ վեր կացայ ընկերներիս բոթոց ու բրթոցների ազդեցութեամբ: Մաքուր սեղանը սարքած, վրան մի քանի տեսակ նախաճաշցու ուտելիքներ դրած, օղիի և գինու շշերը դարստած, թարմ և տեսակ-տեսակ կանանչ, պատուական լաւաշ հաց. այս ամէնը ընկերներիս հետ ինձ են սպասում: Նախաճաշից յետոյ բերին տանու պատրաստած պատուական խորոված և համեղ դօլմայ:

Այսպիսով մեր ճաշը փառաւոր եղաւ: Եւ բանից դուրս եկաւ, որ մենք ճաշում ենք ոչ թէ մեր հաշուով, այլ եղբարք Առաքել և Իսրայել Մելքումեանցների առատաձեռն հիւրընկալութեամբ: Մե՛ծ շնորհակալութիւն:

Ճաշից յետոյ եկաւ մեզ տեսնելու վիճակի գործակալը՝ արժանապատիւ Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցը: Սա վկայեց, որ ճիշտ մեր որոնած անձին ինքը իւր ձեռքով է թաղել Կարկաժանում, բայց ոչ թէ 5-6 տարի առաջ, այլ ուղիղ երեք տարի առաջ աշնանային ամիսներից մէկում: Ափսոս միայն, որ չափաբերական մատենում հայր գործակալը հանգուցելոյ մասին ոչինչ յիշատակութիւն արած չէ: Ինքը հանգուցելոյն կենդանութեան ժամանակ մի անգամ տեսել է Կարկաժանում, բայց ով լինելը չէ հարցրել: Ուրեմն, ասինք մեզ, Կարկաժանում թաղուողը պէտք է, որ մեր հայ պատմիչը լինի: Մահուան և թաղման ժամանակի նկատմամբ Շահումեանցի և քահանայի և միւսների ասածների մէջ եղած զգալի տարբերութիւնը մենք վերագրեցինք Շահումեանցի ծերութեանը: Բայց, ինչպէս յետոյ կը տեսնենք, 75-ամեայ ծերունի Յակոբ Շահումեանցն աւելի սրամիտ է եղել, քան բազմաթիւ ջահել մարդիկ:

Գործակալ հօրը մեզ հետ վերցնելով՝ հետիոտս, մենք շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Խնածախ, որ Խանքէնդից 4 վերստ հեռի է գտնվում:

Խանքէնդի կշտին եղած արևածաղկի, լոբիի, վարունգի և կաղամբի մեծամեծ բանջարանոցների կողքերովն անց կենալով՝ մենք ընկանք Արցախին միշտ յատուկ ծուռումուռ և դարիվեր ու



դարիդուս ճանապարհը: Մեր չորս կողմը լիքն է թփերով և կարճիկ ծառերով: Ահա դրանց անունները՝ լնատերևի (լայնատեր, թղկի), կուզենի, հացի, քլորդի, զկթի, սգնի, քլինձորի (վայրի խնձորենի), քլտանձի, կաղնի, տկոդի, մորի, հունի: Դրանց մեջ կա՛մ թռչուններն են ճռուղում, կա՛մ ձպուռների բանակը ճոճում անդադրում:

Ետևե ետքն անցանք Դրագետ և Վարարակնաջուր գետակները և ժամը 2-ին հասանք Խնածախ՝ 19-րդ դարու հայ պատմիչի ծննդավայրը, բայց, ափսոս, ոչ հանգստավայրը, ծնարանը, այլ ոչ քնարանը:

Խնածախի նկարագիրը ես ինքս չեմ ուզում անել, այլ աւելի լաւ եմ համարում, որ այդ նկարագիրը անէ ինքը խնածախցի վիպասանը: Ահա Մակար վարդապետ Բարխուդարեանցի գողտրիկ և ճշգրիտ նկարագրութիւնը. «Մինեաց աշխարհին Շուշի կոչուած բերդաքաղաքի հիւսիսային կողմն՝ երեք ժամ հեռաւորութեամբ փոքրիկ բլրակի վերայ, վաթսուն տունէ բաղկացեալ հայ բնակիչներով գիւղ մի կայ Խնածախ անուամբ: Սոյն գիւղի արևելեան և հարաւային կողմերն տարածուած են գեղեցիկ դաշտեր և ձորեր, աղբիւրներ և առուակներ, տեղ-տեղ փոքրիկ բլրակներ, թուփ-թուփ անտառակներ և միայնակ բուսած պտղատու և անպտուղ ծառեր, որք գիւղին տակէն սկսեալ հետզհետէ զառիվայր իջանելով՝ զուարճալի տեսարան կը ձևացնեն: Հիւսիսային կողմանէ շէնին մօտէն կը բարձրանան երկու սարեր, որոց միոյն անունն Էլեաս է, իսկ միւսինը Ծակքար¹: Այս երկու լեռանց մեջէն կանցնի Խնածախէն Պալլուճայ և բոլոր Խաչէնու գաւառն երթալու ճանապարհն: Իսկ արևմտեան կողմանէ գիւղին վերին ծայրէն սկսեալ՝ զառիվեր կը բարձրանան ուրիշ մեծ սարեր, որք զարդարուած են կաղնի, թելի, հացի, վայրի տանձի, խնձորի, ընկուզի, զգեարի և ուրիշ շատ տեսակ ծառերով, քաղցրահամ աղբիւրներով և ջրվեժներով, որք օձապտոյտ ձորոց մեջէն դէպի արևելք սահելով, գետակունքներ կը կազմուին, որոց մեջ կը լողան քանի մի տեսակ համբաւաւոր ձկունք², որով կը դառնան շատ ջրադացներ, կը ջրուին այգիներ, պարտէզներ և ցանքեր:

Վերոյիշեալ լեռանց մեջ կը գտնուին եղջերու, եղնիկ, վայրենի այծ, խոզ, փասիան, կաքաւ, լորամարգի և ուրիշ որսալու շատ կենդանիք:

Խնածախ գիւղը, բացի հեռաւոր աղբիւրներէ, ունի նաև երկու պատուական աղբիւրներ, որոց մինն Ծակքարին ստորոտէն կը բղխի և Մեծ աղբիւր կանուանի, իսկ միւսն՝ Էլեասին³ ստորոտէն և Փոքր աղբիւր կը կոչուի: Այս աղբիւրներն ապառաժ քարէ կը բղխին, պարզ և արծաթափայլ են, բայց Փոքրին ջուրն աւելի թեթև և առողջարար լինելուն համար համարեա թէ հիւանդանոցներէն շատերն Փոքրի ջուրէն կը խմեն շուտ առողջանալու յուսով⁴:

Խնածախի ընտանի կենդանիքն են գոմէշ, եզ, կով, այծ, ոչխար, խոզ, ձի և էշ, իսկ բերքերն են ցորեն, գարի, գարնանի (գարնանը միայն աճող մանրիկ ցորեան է), հաճար, կորեկ, կտուահատ, սորեկ, բակլայ, լուբիայ, խաշխաշ, տանձ, խնձոր, կեռաս, դամոն, սալոր և թուր:

Ինչպէս Արցախի միւս գիւղօրէից տուներն, նոյնպէս Խնածախ գիւղի տներն մեծ մասամբ գետնափոր են և ստորերկրեայ ...»⁵:

¹ Այս քարայրը Բէկնազարեանց պատմիչը լաւ նկարագրել է իւր պատմութեան մէջ
² Կարմրախայտ, կողակ, երկայնաքիթ
³ Էլեասը հեղինակի պապի անունն է: Ինչպէս ընթերցողը մեր քաղած բովանդակութիւնից տեսաւ, խնածախցի Քեանդիսուդայ Բարխուդարեանցը նշանաւոր դեր է խաղացել իւր ժամանակում: Այդ և Սպրէս Բէկնազարեանցի պատմութեան մէջ յիշուած խնածախցի միւս քաջերի գերեզմանները ես մի առ մի տեսայ
⁴ Փոքր աղբիւրն աւելի մօտ է գիւղին և գուցէ հենց այդ պատճառաւ նրա ջուրն աւելի գործնական է
⁵ «Միրզա և Աննա», էր. 13-14



Ապրէս Բէկնագարեանց պատմիչի մասին Խնածախում իմ հաւաքած տեղեկութիւնքը, մանաւանդ 90-ամեայ գառամեալ Գիքի Սափարեանց Չովբուռնէն¹ կոչուած անձից հաւաքածներս ինձ հաւաստիացրին, որ պատմիչը մի քանի տարի առաջ եղել է Խնածախում և հին մարդկանց անուններ է հարցրել: Բայց թէ այժմ ո՞ւր է, Խնածախում ոչ ոք չը գիտէր: Կարկաժանում թաղող աղքատի մասին խնածախցիք լսել են, բայց նրան տեսած չեն: Ուստի և չը գիտեն, թէ այդ մեռնողը իրանց գիւղում մանեկոյ և հարցասէր աղքատն է, թէ՞ գուցէ այլ ոք:

Որոշեցինք հետևեալ օրը գնալ Կարկաժան: Բայց նախքան մեկնելը պէտք էր թունդ ընթրել և թունդ ննջել: Ամենայն առատութեամբ և ամենայն հանգստութեամբ մենք այդ երկու իսկ պարտականութիւնքը կատարեցինք: Աւելորդ է ասելը, որ մենք իջևանած էինք մեզ ուղեկից հայր սուրբի հայրենական տանը՝ նրա եղբարց մօտ:

Ընթրիքի ժամանակ մեզ հետ սեղանակցողք ոմանք սկսեցին մի երգ երգել «Միրզա և Աննա»-ից: Ահա այդ գեղեցիկ երգի առաջին տունը.

«Միշտ մանեկի Շաքի, Շիրուանի, Շամախի,
Գիշեր, ցերեկ քաղքից քաղաք չորս տարի.
Ամէն ցաւոց ի՞նչ է դեղ, հարցրի,
Ողջ բժիշկներ ինձ ասացին, պատճառ գինի:
Դէ՛հ, մատռու՛կ, լի անապակ, ա՛ճ գինի,
Խմենք կենաց մեր բաժակներ հայ ազգիս»:

Երզը շարունակում էին: Ես անթարթ դիտում էի հանդիպակաց լերան գագաթի վրայ բարձր ի գլուխ պարծեցող Ծակքարը, ուր մի բուռ խնածախցի և պալլուճցի հայ քաջեր 1795-ին պարսկական մի գունդ կոտորեցին, ուր թաք էր կացած «Ղարաբաղի գաղտնիքի» տակաւին երկոտասնամեայ հեղինակը: Նայեցայ գիւղի վերայ, որ մի քանի վէպերի հեղինակ է մեզ տուել:

Յանկարծ միտս թռաւ, գնաց դէպի Արարատեան աշխարհը, որոյ Քանաքեռը մեզ Խաչատուր Աբովեան է պարգևել, Աշտարակը Պերճ Պոռշեանց է ընծայել: Միտս եկաւ նաև Հեր և Զարևանդի Փայաջիկ գիւղը, որ մեզ մի Բաֆֆի է շնորհել: Յիշեցի արցախցի գաղթականներով բնակեցրած Խաչէնը, որից մենք Ղազարոս Աղայեանց ենք ստացել: Սեղանից վեր կացայ և գնացի ննջելու²:

Առաւօտեան 9 ժամին, արդէն ձիերով ճամփայ ընկանք դէպի Կարկաժան՝ լերան գագաթի վրայ տարածուած մի ծառագարդ գիւղ: Գիւղի արևելեան կողմում տեսայ այն ընդարձակ սարահարթը, ուր Աղա Մահմատ խանը, ըստ Բէկնագարեանց պատմիչի, կատարում էր իւր եղեռնագործութեանց ամենաանխիղճը՝ եզօիտ-խարմանին: Այսինքն՝ յիշեալ խանգագանը յիշեալ սարահարթի վերայ պանկեցրել էր տալիս հարիւրաւոր ձեռքերը և ոտքերը պրկած մարդիկ և իւր ձիաւոր զօրաց ջուրին հրամայում էր ջիրիթ խաղալ մարդկանց մարմնոյ վրայ: Իսկ ինքը՝ Աղա Մահմատ խանը, Շուշուայ բարձր քարափիցը թամաշայ էր անում այդ արիւնոռուշտ հանդիսին:

Կարկաժանում³ մենք հազար ու մի դժուարութիւններից յետոյ ձեռք բերինք գիւղի ծերերը՝ մի երկու պառաւ կնանիք, և երկարատև հարց ու փորձերից յետոյ հաւաստիաբար ենթադրեցինք, որ այդ գիւղումը յամին 1881 աշնանային ամսում մեռնողը և թաղողը պէտք է որ մեր որոնած Ապրէս Բէկնագարեանցը լինի:

Թոխի անունով պառաւը յայտնեց, որ հանգուցեալը մեռնելուց մի քանի ժամ առաջ իրանից մածուն է խնդրել և կերել, ասելով՝ որ ինքը Ապրիս (Ապրէս) Աբրահամեան է: Դիակը լուացող

¹ Բէկնագարեանցի պատմութեան մէջ յիշուած Կեծակ Վանու եղբորորդին է
² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 12-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 60-ում (4 օգոստոսի, էջ 1-3)
³ Այստեղ է գտնվում պ. Դանիէլ Ահարոնեանցի մետաքսեայ ընդարձակ և յարմարագոյն գործարանը



Վարդի տիկինն էլ նկարագրեց հանգուցելոյ կերպարանքը, հասակը՝ յայտնելով, որ նրա ցնցոտիների միջից Իսրայել բէկը (Շուշուայ պրիստաւը) մի ռուբլի թուղթ փող, 4 կօպէկ սև փող և մի քանի վեգ-կօճի է հանել և իւր արձանագրութեան մէջ անցկացրել: Ուն Առքստամ Մարտիրոսեան անունով յայտնեց, որ հանգուցեալը մի գիշեր իւր տանն է գիշերել: Մափարի Յարութիւնեանը՝ 85-ամեայ ծերունին էլ յայտնեց, որ հանգուցեալը, մի օր իւր տան դրան մի անկիւնում կուչ եկած, խաղող էր ուտում: Դրա վրայ Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցը աւելացրեց, որ այդ բանն ինքն էլ է տեսել և աղքատի առաջարկութիւնը՝ իրան հետ խաղող ուտելու, բացասել է: Մի այլ ծերունի յայտնեց, որ հանգուցեալը իրան Գեաբի (Գաբրիէլ) էր անուանում: Կարող է պատահել, որովհետև Ապրէս Բէկնագարեանցը իւր գրքի վերջերումը գրում է, որ ինքը շուտ-շուտ փոխում է իւր անունը:

Գնացիք, տեսանք աղքատի մեռած տեղը: Ճիշտ և անպատճառ Շուշի տանող ճանապարհի վերայ՝ այսպէս անուանեալ Սէյրանենց բաղի տակը մի քարափի միջին ճանապարհից մի երկու սաժէն հեռի և բարձր: Մեզ հետ եղողները պատմեցին, որ հանգուցեալը պառկած էր երեսը դէպի արևելք ուղղած: Շուշիից Կարկաժան վերադարձող վերոանուանեալ Առքստամ Մարտիրոսեանը տեսել է հանգուցելոյն քարափի մէջ պառկած, բայց կարծելով, որ քնած է, թողել է և գնացել գիւղ: Հետևեալ օրը հանգուցելոյն տեսել են ուրիշ մարդիկ, ձայն են հանել, բայց պատասխան չեն ստացել: Ճանապարհից քարափն ի վեր քարի կտորտանք են նետել, բայց ննջողը դարձեալ չէ վեր կացել: Վերջապէս մօտն են գնացել և ննջողին վախճանած են գտել: Նոյն օրը ոստիկանութեանը իմաց են տուել և հանգուցելոյն գիւղ տանելով և լուանալով՝ ամփոփել են ի ձեռն Յովհաննէս քահանայի Տէր-Գրիգորեանց, ի հող տապանի:

Այսբան ակներև ապացուցութեան վերայ այլևս չը տարակուսելով՝ մենք բարձրացանք մի լեռնաչափ բլրի վերայ, ուր է կարկաժենցուց հանգստարանը, և այնտեղ՝ հանգստարանի մէկուսացեալ կողմում, գտանք մեր որոնած մարդու գերեզմանը, որին հովանաւորում են մի քանի քլորդի կոչուած թփենիք:

Մեռելոցի երկուշաբթի օրն էր: Հոգևորականք հանդիսաւոր կերպով «Հոգւոց» ասացին: Եւ երբ Մակար վարդապետը արտասանեց «Տէ՛ր աստուած, հանգո՛ւ զհոգի կամաւոր աղքատացեալ և բազմաշխատ Ապրէս Բէկնագարեանց ծառայի քո՛», ես չը կարողացայ զսպել արտասուքներս:

Գերեզմանի մեծութիւնը և դիրքը չափեցինք, որպէսզի կարելի լինի Շուշիից մի ժամանակաւոր շիրմաքար ուղարկել: Ապա բլրից ցած իջնելով՝ հեճանք մեր ձիերը և լեռների լէնջերովն՝ անցնելով՝ կէսօրին ժամանեցինք Շուշի:

Պրօֆեսօր Մորդովցովը երկար ժամանակ չարչարուելուց զկնի հիւանդութեան պատճառաւ Մասիսի կողքում մի քիւրդի վրանի մէջ մնաց և իւր ընկերներին ցօրհեղեղեան լերան գագաթը ճամփեց: Լաւ միտս է, որ ռուս գիտնականի գրքի վերջին երեսը հետևեալ վշտալից վերնագիրն է կրում. «Արարատի գագաթի վերայ, միայն է թէ ոչ ինքս»:

Հայ թերթի աշխատակից՝ երեք օր ման եկայ և կարծեցի, որ 19-րդ դարու հայ պատմիչ գերեզմանը գտայ, օրհնեցի և օրհնել տուի, բայց այժմ բանից դուրս է գալիս, որ ես մոլորուած եմ եղել:

Շուշուայ ոստիկանարանի ծառայող Իսրայել բէկ Շահնագարեանի արձանագրութիւնը վկայում է, որ Կարկաժանի հայոց հանգստարանում թաղող անանուն աղքատը, արդարև, իւր գրպա-

¹ Լէնջ-լանջ: Արցախի բարբառով բառերի է և է հնչիւնները երբեմն ա են փոխվում և երբեմն ա հնչիւնը է և է հնչիւնի է փոխվում: Օրինակ, լանջ-լէնջ, խօսել-խօսալ: Արցախի բարբառը զարմանալի ոյժ և զօրութիւն ունի իւր մէջ: Գրաբար ամենաընտիր բառեր ու դարձուածներ կան այս բարբառի մէջ: Կարելի է ասել, որ Արցախի բարբառն ընդհանրապէս նոյնն է, ինչ որ Չէյթունի և Գողթան բարբառները



նում մի ռուբլի փող և 6 կոպեկ սև փող է ունեցել, բայց նա մեռել է սեպտեմբերի 7-ին յամին 1878, մի տարեթիւ, որ միանգամայն հերքում է ցարդ լսածներս և նոյնիսկ Մակար վարդապետի վկայութիւնը, որին Ապրէս Բէկնազարեանցը իւր ձեռագիրը յանձնել է Շուշիում յամին 1881 մայիսի 5-ին:

Վերջապէս ոստիկանարանի գրագրութիւնք վկայում են, որ յիշեալ հանգուցելոյ ազգականքը լոյս են ընկել և 1 ռուբլի 6 կոպեկը ոստիկանարանից ստացել: Ղարաբուլաղ գիւղի բնակիչ ոմն Գեափի Ղազարոսեանն է: Միւս կողմից Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցն ինձ ցոյց է տալիս իւր վաւերացեալ վկայագրերը, որոնցից ես տեսնում եմ, որ նա քահանայ է ձեռնադրուեալ յամին 1878 և այդ ժամանակից երեք տարի յետոյ է թաղել Կարկաժանի անանուն աղքատին:

Հիմի արի ու բան հասկացի: Թէպէտև պրիստաւի արձանագրութեան ճշմարիտ լինելը ես միանգամայն ընդունում եմ: Այսպէս թէ այնպէս Ապրէս Բէկնազարեանցի գերեզմանատեղում և թերևս տակաւին կենդանի անձով ես դեռ չեմ դադարել հետաքրքրուելուց և հետախուզելուց:

Նախորդ նամակներիցս մէկում գրած էի, որ Արցախի գիւղերում իբրև բացառութիւն, տեղ-տեղ մարդիկ քաղաքականապէս էլ են ամուսնանում: Օրերումս յաջողեցայ ձեռք բերել այդ տեսակ ամուսնութիւնը յաստատող փաստաթուղթ, որ ուղարկում եմ ի հրատարակութիւն և ի խորհրդածութիւն: Իմ կողմից միայն այսքանս կասեմ, որ ինչպէս կը տեսնեք, այս ամուսնութիւնը առաջացել է ամուսնացողի կնոջ անծին լինելուց, մի պատճառ, որով, ըստ զօրութեան, թէ՛ եկեղեցական և թէ՛ քաղաքական օրինաց կարելի է և պէտք է ամուսնութիւնը լուծել, այսինքն՝ չարիքը արմատից կտրել, որպէսզի նրանից նորանոր չարիք չը ծնին:

Ահա իմ գտած փաստաթղթի պատճէնը, իսկականը ինձ մօտ եմ պահում:

Ի Հաղորդ

Ի 1876 ամի 30 օգոստոսի.

Ձեռագագիր 350 ռուբլիի.

Ի ներքոյ ստորագրողս, որ եմ Առաքել գեղջ բնակիչ Ալէքսան Յակոբեանս Յախիեանց, պարտաւորուեցի այսու ձեռագագրովս քեզ՝ հաղորդեցի իմ երկրորդ ամուսին Կուլբահար Բարիեան Գասպարեանցիդ, երեք հարիւր յիսուն ռուբլի արծաթ դրամ նրա համար, որ ես՝ Յակոբեանս, սրանից առաջ պսակուած եմ Շուշուայ քաղաքումս Ջաւահիր Պետրոսեանի հետ: Իմ առաջին ամուսնիցն զաւակածնութիւն չը լինելու պատճառով ընդունեցի ինձ կին երկրորդ քեզ՝ 18-ամեայ անարատ կոյս Կուլբահար Գասպարեանցիդ և պարտաւորեցի այսու ձեռագրովս, ինչպէս ընդունած եմ ինձ մօտ, միևնոյն պարտաւոր եմ պահպանել ամենակերպ մինչև իմ մահս: Եւ թէ ես՝ Յակոբեանս, քեզ՝ Գասպարեանցիդ կամ քեզանից ծնուած զաւակներին սկսեմ չի պահպանել, յայնժամ պարտաւորում եմ քեզ չը պահպանելոյ աւագումս (փոխարէն) երեք հարիւր յիսուն ռուբլի հատուցանել քեզ՝ Կուլբահար Գասպարեանցիդ, վասն որոյ ստորագրեմ իսկական ձեռամբ իմով:

Ալէքսան Յակոբեան Հախիեանց

Վկայ եմ՝ տիրացու Ազարեա Բ. Աւետիսեանց.

Վկայ եմ՝ 2 գիւղի Կեանջում Ապալով.

Վկայ եմ՝ Բաղդասար Տէր-Բաղդասարեանց¹:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 13-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 61-ում (8 օգոստոսի, էջ 2)



Օգուտ քաղելով Շուշիում վայելածս մի քանի օր ազատութիւնից՝ ես կարողացի պ. Գիւլզադեանի «Ոսկի աղունակ» գուսանական բանաստեղծութեան մի քանի հատուածները: Եւ այժմ, որքան ինքս եմ հասկանում, կարող եմ վկայել, որ եթէ այդ գրուածքը տպագրուի, մի շատ պատուաւոր տեղ պիտի բռնէ հայ նոր գրականութեան մէջ: Համարձակ կասեմ, որ պ. Գիւլզադեանը մի շնորհալի բանաստեղծ է: Պարոնը կարող է մեզ համար մի Ֆերդուսի լինել: Եւ, ինչպէս պարսիկ, նոյնպէս և հայ Ֆերդուսին զարմանալի ճոխ երևակայութեան և մայրենի լեզուի հմտութեան տէր են: Պ. Գիւլզադեանը ինձ խոստացաւ իւր «Ոսկի աղունակ»-ը ևս շուտով մաքուրի վերածել և առաջարկել ի տպագրութեան: Արժէ, և որքան շուտ, այնքան լաւ:

Պ. Յակոբ Ճազարբէկեանցը հետևեալ ժողովրդական-մանկական խաղերը հաւաքեց ինձ համար:

I

Ջղացին գլխին օխտը գիւլ,
 Օխտը գիւլին մին բիւբիւլ,
 Հասան-հասան դռնը բե՛ց (դուռը բաց).
 Փիւրի հասան դռնը բեց:
 Մի հաւ ունիմ կրկչոց,
 Մին ձու կածի լոխ դեղնոց,
 Պապը կօտի (կուտի), գնայ հոնձ (հունձ).
 Կը բերի չալ-չալ կլոնձ.
 Արշակը տական կծի, տազ կանի,
 Ես գլխուն կծիմ, նազ անիմ:

II

Ա՛յ հաքեարի, հաքեարի,
 Սընտըր մանի շաքեարի.
 Փետի փետի մարդիկը,
 Ըրկաթի կնանիքը.
 Ջառ մանիշակ ըղջկերք,
 Աղբի կուտուր պառաւնի:

III

Իմ կովը սարին ծնի,
 Լոք տայ չափարին ծնի:

IV

Պապար անի իմ ըրախան,
 Օրախ ապրի իմ ըրախան.
 Հա՛, շատ ապրի իմ ըրախան.
 Յաւ չի քաշի իմ ըրախան.
 Վարդիկուտուր իմ ըրախան.
 Շըքեարի ձոր իմ ըրախան.
 Մոթալի եղ իմ ըրախան:



V

Մոթալ-մոթալ,
Դին աթար,
Դամուր դաթար,
Էյրան, դուլի,
Ջէյրան դուլի,
Նա հար ասի,
Նա մար ասի,
Լակուտ քցի,
Էս դուս քցի:

VI

Լուսինը նոր թագաւոր,
Կանանչ-կարմուր գուտկաւոր,
Նստած տեղիս բարաքեաթ,
Կանգնած տեղիս դուաթ:

VII

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Անմահական մարգարիտ,
Ա՛ռ դրախտին բանալին:
Տա՛ր դրախտին դռնը բե՛ց,
Քաղի՛ անթառամ ծաղիկ,
Բե՛ր, դի՛ր գլխատակիդ.
Քոն իլ (քնի՛ր), քոնդ անուշ,
Ե՛ր կաց արագդ բարի,
Ինչ որ խնդրես, Տէրը կատարի:

Այս խաղերը արտագրելիս միտս եկաւ յանկարծ և իմ մանկական խաղերից հետևեալը.
Հատիկ-հատիկ հաւլատիկ,
Ջաղցին ջուրը փշատիկ,
Կուտ ուտիմ, կուտման ուտիմ,
Աւագ դրան տակը պաշիկ անեմ:

Արցախում հետևեալ անձինք ժողովրդական յայտնի բանաստեղծներ են եղել. 1) Աբրահամ (Իբրահիմ)՝ Աւետարանոց գիւղից, 2) Ղուկենց Ղուկաս. 3) Վարդան ապեր՝ լաւ հէքիաթաբան. 4) Խաչէն ապեր՝ կատակախօս և երգիծաբան: Սօքա արդէն մեռած են: Գրուածքներ մինը միայն՝ Ղուկասը ունի. 5) Բանաստեղծ Յարութին՝ Կուսապատ գիւղից: Ունի շատ գրուածքներ, բոլորն էլ հայերէն: Նա դեռ կենդանի է և Շուշիումն է կենում: Հաւաստիացրին, որ 9 տարի ահա տանից դուրս չի եկել: Ապրում է ցամաք հացով: Սաստիկ մարդատեաց է: Բացի դուրգար Բարխուդարից՝ ոչ ոքին չէ ընդունում, ոչ ոքի հետ չէ խօսում: Աղքատ ժողովրդեան մանուկներին ձրիաբար կարդացնում է: Գնացի, գտայ Շուշուայ այդ նոր Դիոգինէսին: Երկու ժամ սենեակի շուրջը ման եկի, ամէն հնար ի գործ դրի, սակայն Յարութին բանաստեղծի երեսը տեսնել չը կարողացայ:



Պատուհանից տեսայ նրա աշակերտները, որոնք ծալապատիկ նստած էին և գերեզմանային լուծաբար կարդում էին: Դրանց թիւը 16-ից անելի էր: Երբ ես խնդրում, յորդորում էի մանուկներին կողպած դուռը բաց անել, մանուկները աչքի տակով իրանց ուսուցչին էին նայում, որ անկիւնումը թաք էր կացած իմ տեսողութիւնից և գրքերին էր նայում: Միտս եկան Յունաստանի բակեաց դպրոցականները: Բայց Շուշուայ բանաստեղծը մի կատարեալ հանելուկ է, արժանի ուսումնասիրութեան, բայց նրան տեսնելու հնար չը կայ: Մակար վարդապետը հինգ անգամ փորձել է տեսնելու, բայց չէ յաջողել: Շատ շուշեցիք կարծում էին, որ իրանց մարդատեաց բանաստեղծը վաղուրեմն մեռած-պրծած է: Բայց նա դեռ կենդանի է: Գնացի 2 անգամ դուրգար Բարխուդարի տունը, չը գտայ: Դիմեցի նրա փեսայ պ. Աստուածատրին: Խոստացաւ գէթ մինչև Գաձասարից վերադառնալիս աներոջ միջոցաւ, եթէ հնար է, կա՛մ ինձ բանաստեղծ Յարութիւնի հետ ծանոթացնել և կա՛մ նրա բանաստեղծութեանց հաւաքածուն մի քանի թուղի ժամանակաւ ինձ համար ձեռք բերել:

Բանաստեղծ Յարութիւնի գրուածքներից մի քանիսը հատուկտոր կերպիւ շուշեցիք (ի թիւս դոցա և պ. Կոստանդ Մելիք-Շահնազարեան՝ «Նոր-Դարի» Մոնպելիէի թղթակիցը, որ այժմ այստեղ է և իմ հին բարեկամը) անգիր գիտեն: Ինձ մօտ մի քանի անգամ ասացին: Բոլորի միջիցն էլ դառը մաղձ է թափվում դէպի այս կամ այն մարդը: Մաստիկ և կծու սաստիրայ են Յարութիւնի այդ լսածս բանաստեղծութիւնք: Լեզուն՝ լաւ, մաքուր, կանոնաւոր և յանգաւոր: Եթէ Գանձասարից վերադառնալիցս յետոյ Յարութիւնին կամ իւր հաւքածուն չը կարողացայ տեսնել, լսածս հատուկտորները կը հաւաքեմ: Ում որ հարցուցի (խիստ շատերին թէ՛ հարևաններից և թէ՛ ուրիշներիցը), ամէնքն էլ միաբան վկայեցին, որ բանաստեղծ Յարութիւնը մաքուր և առաքինի մարդ է: Նա մանուկներին սիրում և կարդալ-գրել է սովորեցնում՝ իբր մի սուրբ և վսեմ պարտականութիւն: Յարութիւնի հին և այժմեան աշակերտներից մի քանիսի հետ ես առանձնապէս խօսեցայ: Ոչ ոքի վկայութիւնը և խոսակցութիւնը իմ մէջ ոչինչ կասկած չը յարուցին իրանց վարժապետի մասին:

Շուշեցի պ. Համբարձում Երեմեանցն¹ ինձ յայտնեց, որ 1873-ին ինքը Խօթայ անտառի մէջ հետևեալ տեղերում հետևեալ հանքերն է գտել. 1) Դուտիսի գետակի վերայ Դօթուրլի հասարակութեան Մելեղեր գիւղի տակ՝ Բաշտուպէլ կոչուած տեղում՝ մի պղնձեայ հանք, 2) Շէքերամ անունով գիւղի կշտին՝ Զէյկլիկ կամ Ղարաթօփրակ տեղի վրայ՝ մի այլ պղնձեայ հանք, 3) Ղազղան գետակի կշտին մի այլ պղնձեայ հանք, 4) Զարդուլի գիւղի կշտին՝ մին ուրիշը: Այս հանքերի գոյութիւնը պարոնը իմաց է արել իշխանութեանը և սրա թոյլտվութեամբ սկսել է մշակել հանքերից առաջինը: Մակայն վերջերումս մարմնաւոր և հոգևոր իշխանութեանց մէջ երկրի սեպհականութեան առթիւ վէճ բացուած գոլով պ. Երեմեանցին հրամայուած է առժամ դադարեցնել իւր գործունէութիւնը²:

¹ Այս պարոնը, 1850թ. սկսեալ մինչ օրս իւր բոլոր գործունէութիւնը հանքերի բովանդակութեան մէջ անցկացրած գոլով, արդէն դարձել է մի գործնական հանքաբան և բովագործ: Այս կողմերը եկող ամէն մի հանքաբան, լինի նա մասնաւոր անձն կամ պաշտօնական, առանց պ. Երեմեանցի չի ճանապարհորդիլ և նրա գործնական հմտութիւնիցը մեծապէս շահվում է: Ռուսաստանի այն ամէն ինժեներներին, որոնք եկել են այս կողմերը, պ. Երեմեանցը ճանաչում է և փոխադարձաբար օգտուել է նրանց գիտութիւնից: Նա ինձ յայտնեց, որ բոլոր ինժեներների վկայութեամբ փոքրկովկասեան լեռների հանքային խառերի գլխաւոր տարրը պղինձն է, մինչդեռ մեծկովկասեան շղթայի գլխաւոր տարրն արծաթն է: Պ. Երեմեանցի ասութեամբ մի այլ հայ պարոն այս կողմերում նախի հանք է գտել, բայց իշխանութիւնից և մասնաւոր անձինքներից օգնութեան յոյս չունենալով՝ սկսել է իւր փոքրիկ միջոցներովն անել սկզբնական հետազոտութիւնքը

² Ես տեսայ յիշեալ հանքի կտորը (հանքը 12 առ 100% պղինձ է արտադրում): Պ. Երեմեանցի ասութեամբ պղնձեայ հանքեր կան նաև 1) Ղափանում՝ Հալիձորի տակին. սեպհականութիւն Մելիք-Փարսադանեանցի ժառանգներին. 2) Ղաթա գիւղիմօտ. սեպհականութիւն պ. Աղէքսանդր Մելիք-Ազարեանցի և Կ. Մուրաֆեանցի, 3) Կաւարտ գիւղի մօտ. սեպհականութիւն Սուրճնով ոմն պարսկի: Այս երեք հանքերն ևս բանում են, միայն պ. Մելիք-Ազարեանցի և Մուրաֆեանցի հանքը ջրով լցուած լինելու պատճառաւ առայժմ չէ գործում: Բայց Անդրկովկասի այն այս բոլոր պղնձեայ հանքերի գործունէութիւնն ու արդիւնքը ոչինչ են Միմմենսի գործարանի գործունէութեան հետ: Յայտնի է, որ Միմմենսի գործարանը Գետաբէլ գիւղում է՝ Գանձակի մօտ



Միևնոյն պարոնը ինձ յայտնեց, որ Զարդուլի կոչուած գիւղի կշտին՝ Դուտիի գետակի վրայ, հանքային լաւ և առատ ջրեր կան, տեղացիք այդ ջրերին կոչում են դօթուրսու: Թարթառ գետի ակունքների մօտ կան նոյնպէս հանքային տաք ջրեր, որոնցից մեծապէս շահում է շրջակայ ազգաբնակչութիւնը: Աղդուզաղ կոչված սարի գլխին և Բազարդուզ կոչված տեղոյն վրայ նոյնպէս քարածուխ և սաթի (եանթար) փոքրիկ կտորտանք կան մեծ քանակութեամբ: Քարածուխի կտորները ես ինքս տեսայ: Դեռ կատարելապէս քարացած չեն:

Կամեցայ Շուշիի սակաւաթիւ հայ բողոքականաց ժողովարանը մտնել, թոյլ չը տուին՝ ասելով, որ ոչ բողոքականներին արգելուած է ժողովարան մուտք գործելը: Կամեցայ ինձ ծանոթ պ. Աբրահամ Ամիրխանեանցից, որ Շուշիումն էր և իմ գնացած ժամանակ աղօթարանումը, թոյլտուութիւն ստանալ: Նոյնպէս թոյլ չը տուին: Թոյլ չը տուողը, ինչպէս յետոյ իմացայ, պ. մահտեսի Աւագ Միրզաջան Յակոբեանցի երիտասարդ որդին է: Ինքը՝ Միրզաջան Յակոբեանց, Շուշուայ հայ առևտրականաց գլխաւորն է, որոյ տան մէջն է ժողովարանը՝ կից սեպհական տպարանին և գրախանութին: Այս Միրզաջան Յակոբեանցի մասին մի պաշտօնական թղթի մէջ կարդացի, որ սրանից մի քանի տարի առաջ շուշեցի մի թիւրքի տանից տախտակներ և ներկեր է գողացած: Դորա համար դատարանի վճռով 1 ½ տարի ժամանակաւ արեստանդների րօտան է աքսորուած: Միևնոյն անձը Հաղբուք գիւղի գործարանից մետաքսներ գողացած լինելուն համար իբր այժմ ոստիկանարանի ձեռքով քննութեան տակ է: Այս մասին էլ ես մի գործ կարդացի: Շատ բան էլ բերանացի լսեցի: Չը գիտեմ՝ ո՛ր աստիճան ճշմարիտ են: Ինչ որ ինձ է վերաբերում, ես շատ լաւ գիտեմ, որ անդրկովկասեան հայ աւետարանականք մեծաւ մասամբ մաքուր և ազնիւ մարդիկ չեն և փողի համար միմիայն հաւատափոխ են եղել: Այդպէս են և՛ Եւրօպայի բողոքական-քարոզչական ընկերութեան որսացած մարդիկը, ինչպէս այդ հաստատվում է Մակ Կօանի և Ալֆօնս Դօդէի գրքերից, որոց առթիւ ես իւր ժամանակին մի քանի խօսք եմ ասել «Մեղուի» ընթերցողներին: Բայց ես ոչ մի տեղ չեմ տեսել և չեմ կարդացել, որ բողոքականաց կամ որևէ աղանդաւորաց կամ ազգաց աղօթատների կամ ժողովարանների մուտքն այլոց համար փակած, կողպած լինի:

Այցելեցի մեծ տիկին Մարգարիտ Ումբրիբէյեան Յովհանեանցին՝ ընդ առն Ալեքսանդրեանց, որ այժմ վախճանեալ: Տիկինը իւր ձեռքով գրած մի աւետարան ունի՝ բաղկացած 27 մեծաղիւր երեսներից: Այդ ինքնաձեռագիր աւետարանի թէ՛ բազմաթիւ մեծ և փոքր պատկերները, թէ՛ զանազան ծաղրանկարները, թէ՛ գիրն այնքա՛ն գեղեցիկ են, որ եւրօպական յայտնի թանգարաններին անգամ պատիւ կը բերեն: Ես բաւականին ձեռագիր մատեաններ տեսած եմ, բայց տիկին Մարգարտի հոյակապ աշխատութեան հետ միմիայն ս. Էջմիածնի թանգարանում տեսածս մի ձեռագիր աստուածաշունչը կարող է մրցել: Վերջնոյս մագաղաթեայ պատկերներն աւելի շքեղ են: Բայց տիկին Մարգարտի գործոյն մանաւանդ գիրը սքանչելի է: Այսպիսի մաքուր գործ յառաջացնելու համար մանաւանդ այժմեան ժամանակ հարկաւոր է այդ գործոյ սիրահարը լինել: Իսկ որևէ գործոյ սիրահար լինել, նշանակում է տաղանդ լինել: Տիկին Մարգարիտ իւր աշխատութեան նկատմամբ մի կատարեալ տաղանդ է: Զարմանալին այն է, որ այդ բնածին տաղանդն այդ աստիճան կատարելութեան հասած է ինքնակրթութեամբ: Տիկին Մարգարտը ոչ մի ուսումնարանում չի եղել: Նա իւր սկզբնական ուսումը ստացել է մի շուշեցի հինաւորց պառաւ «վարպետի»՝ վարժապետուհու մօտ: Բայց այժմ գեղեցիկ կերպով կարդում և հասկանում է գրաբար լեզուն: Տիկնոջ գրադարանը ես աչքից անցկացրի, այնտեղ գրեթէ ամբողջովին կան մեր հին գրականութեան ներկայացուցիչները:



Աւետարանը գրուած է 1867-1872 տարիներին ընթացքում և ունի մի փառահեղ արծաթեայ-
նակեզօծ կազմ՝ 400 ռ. արժողութեամբ: Կազմը շինած է Մօսկուայում յայտնի Խլէբնիկովի գործա-
րանում:

Ձեռագրի առաջին երեսներում կան, բացի հայերէնից, նաև ֆրանսերէն և ռուսերէն լեզուներով
աւետարանի ծաղկանկար խորագրերը, որոնք նոյնպէս ինքը՝ տիկին Մարգարիտն է գրել: Իսկ
վերջին երեսումը նկարած է ս. Էջմիածինը, տակին մի ընդարձակ յիշատակարան, որից երևում է,
որ այդպիսի թանկագին բաները ս. Էջմիածնում իբր թէ վտանգվում և կորչում են, գայթակղուած
է: Ես և ինձ հետ եղող ծերունագարդ Սիմէօն քահանայ Տէր-Իսրայէլեանցը և Համագասպ քահ. Տէր-
Աւետիքեանցը միանգամայն ապահովացրինք ազնուամիտ տիկնոջը, որ այդպիսի առարկաները
հէնց միայն ս. Էջմիածնի թանգարանումը կարող են անվտանգ և ապահով մնալ և հեղինակի
անունն ու յիշատակն անմոռաց պահել: Տիկինը խոստացաւ իւր աշխատութիւնը ուղարկել ս.
Էջմիածին, հէնց որ նորընտիր հայրապետը գահակալէ:

Տիկին Մարգարիտն ունի նաև նկարած Դրախտը, որ նոյնպէս գեղեցիկ աշխատութիւն է: Նա
ուրի նոյնպէս «Հայկական գեղագրութեան օրինակներ»՝ պրօպիա: Դրանցից մինը նա ուղարկել է
Վենետիկ՝ փորագրելու: Պահանջել են 1800 ռ.վարձ, տիկինը չէր կարողացել վճարել: Բայց ի
խրախուսութիւն տիկնոջ գեղեցիկ գործոյն՝ Վենետիկոյ հարք նուիրել են նրան 24 օրինակ
«Բազմավէպ» և չորս հատոր աստվածաբանութիւն: Իւր գեղագրութեանց մի այլ օրինակը տիկին
Մարգարիտն ընծայել է Ջալալեան հանգուցեալ սրբազանին: Նոյն օրինակը, ասաց տիկինը, այժմ
պ. Նիկողայոս Տէր-Յակոբեանցի մօտ է: Գեղագրութեան երրորդ օրինակը տիկինը ընծայել է ս.
Էջմիածնին: Եւ առ այդ ստացել է օրհնութեան և քաջալերութեան կոնդակ հանգուցեալ Մատթէոս
կաթողիկոսից՝ գրեալ ի 22-ն հոկտ. 1859: Հայրապետի հէնց այդ կոնդակից քաջալերուած՝
շնորհալի տիկինը ձեռնամուխ է եղել և հինգ տարուայ ընթացքում վերջացրել վերոյիշեալ ինքնա-
ձեռագիր աւետարանը:

Տիկին Մարգարիտն այժմ թէև 47 տարեկան է, բայց բաւականին վատառողջ: Վնասուած են
մանաւանդ աչքերը (կարճատեսութիւն): Նիւթականապէս նա ապահովեալ է: Իբրև անգաւակ՝
իրան որդեգրել է շուշեցի մի աղքատ ընտանիքի ուստրն ու դուստրը, որոց և լաւ կերպով կրթում
ու դաստիարակում է: Տեսայ և այդ մանկիկներին: Շնորհալի երեխայք են¹:

Շուշուայ մէջ, ում տանը որ պատահեցայ, անխտիր ամէնքի մօտ էլ մի ալեգարդ քահանայի
պատկերը տեսայ: Ամէն ոք էլ այդ հանգուցեալ քահանայի անունովն ու գործերովը յափշտակուած
և ոգևորուած են: Նրան կոչում են վարժապետ տէր Գրիգոր: Լսածներիս նայելով՝ հանգուցեալ
քահանայն մեծ երախտիք է ունեցել շուշեցուց վերայ և իւր բարեգործութիւններով ու առաքինի
անձով մեծ յիշատակ և անուն թողել: Բարեկամներիս մէկին յանձնարարեցի, որ վարժապետ տէր
Գրիգորի համառօտ կենսագրութիւնը գրելով՝ կա՛մ ինքը ուղարկէ մեր թղթերից մինին և կա՛մ
յանձնէ ինձ «Ուղեգնացական ակնարկներ»-իս մէջ գետեղելու համար:

Վերջացնում եմ այսօրուայ նամակս մի տխուր լուր հաղորդելով: Յուլիսի 21-ին՝ եկեղեցական
հանդիսաւոր պատարագից (պատարագիչը և դամբանախօսը սրբազան Սագինեանցն էր) յետոյ,
ի ներկայութեան ամենախտուն բազմութեան, կատարուեցաւ Համբարձում աղա Հախումեանցի
կնոջ յուղարկաւորութիւնը Մեղրեցոց եկեղեցոյ գաւթում: Եկեղեցին շինուած է Հախումեանցների
ծախքով: Հանգուցեալը Ջումշուտ բէկի դուստր էր: Նրա ծերունի մայրը՝ Ջումշուտ բէկի այրին,
տակաւին կենդանի է: Գալով Համբարձում աղա Հախումեանցին՝ ո՞վ չէ իմանում, որ նա երկար

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 14-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու
Հայաստանի» երկօրյա պարբերականի N 62-ում (11 օգոստոսի, էջ 1-3)



տարիներ Շուշուայ մէջ առաջին և ժիր ու խիզախ գործիչն էր: Պ. Հախումեանցի այսօրուայ նիւթական վիճակը շատ աննախանձելի է (ասում են մասամբ իւր անհեռատեսութեամբ), բայց նրա բարոյական արժանիքը և ազդեցութիւնը դեռ շատ կենդանի և մեծ են Արցախի հայոց վերայ:

Նախորդ նամակաւս յիշած էի, թէ որքա՛ն դժուարութիւն կրելից յետոյ չը կարողացայ բանաստեղծ Յարութիւնին տեսնել: Այժմ յայտնում եմ, որ երեկ՝ իրիկնապահին, այդ այսպէս ասած անատիկ բերդը՝ բանաստեղծ Յարութիւնը, առնուեցաւ: Եւ առնողներն էին ինձ հետ նաև Մակար վարդապետը, Համագասպ քահանան և Արիստակէս անունով մի երիտասարդ՝ Յարութիւնի դրկիցներից: Ես և Արիստակէսը բռնի միջոցներ գործ դրինք և ներս մտնելով սենեակ՝ տեսանք վերջապէս այդ տարօրինակ մարդուն: Ահա նրա բնակարանի համառօտ նկարագիրը: Մի մեծկակ քառակուսի սենեակ՝ երեք պատուհաններով և երկու պահարաններով, մի պատի մէջ՝ մի բուխար: Մենեակը բաւականին մաքուր էր: Երբ մենք, գրոհ տալով, ներս մտանք յանկարծակի, բանաստեղծ Յարութիւնը, ինչպէս մի կատարեալ մումիա, պատն ի վեր կանգնած էր: Երեսը՝ կատարեալ պղինձ, ոտքերը և բազուկները՝ մի-մի կատարեալ և չոր ցախաւել, միրուքը՝ սև, խիտ, ճակատը՝ լայն, կերպարանքը՝ գրավիչ, սիրուն, հասակը՝ միջակ, տարիքը՝ հազիւ քառասունից անց: Առաջին անգամ մեզ տեսնելիս Յարութիւնի աչքերը արտասուքով լեցուեցան, բայց նա իրան զսպում էր: Նրա դառնադառն, սպանիչ և հեզնալից ակնարկը ոտքերս կասուցին, խիղճս ինձ խայթեց, և ես յուզուած սրտով ձեռքս դէպի 9 տարուայ մարդատեացը ուղղեցի մի քանի փաղաքշական խօսքերով, որոց Յարութիւնը չը պատասխանեց: Վարդապետին և քահանային ներս կանչեցինք: Յարութիւնը տեղից ժած եկաւ, նրանց աջն առաւ և հրաւիրեց նստել: Մենք բոլորս ծալապատիկ նստեցինք յատակի վերայ: Ինքը՝ Յարութիւնը չոքեց իւր մի կտոր փալասի վերայ՝ աշխատելով իւր ցնցոտի զգեստի կտորներով մեր տեսութիւնից պահել մարմնոյ մերկ մասերը՝ կուրծքը, սրունքները և արմունկները: Մեր հարիրաւոր հրացմունքներին նա հազիւ էր պատասխանում, երբեմն և աշխատում մեզ հեռացնել: Պարզ երևում էր, որ մեր ներկայութիւնը և հարցմունքները Յարութիւնին խիստ անհաճոյ էին:

Առաջարկեցինք զգեստ, կերակուր ամէն օրուայ համար, փող, Յարութիւնը միանգամայն մերժեց՝ յայտնելով դրականաբար, որ իւր ապաշխարութեան օրերը տակաւին լրացած չեն, ուստի չէ կարող կեանքի եղանակը փոխել: Ընդ նմին, պաղատագին և արտասուագին խնդրեց մեզ, որ այդ մասին այլևս իրան ոչ մի առարկայ չանենք: Ինքը գոհ է այն ցամաք հացովը, որ ամենայն օր աշակերտներից մէկի կամ միւսի ձեռքովը բերել է տալիս փողոցից: Ապրուստի և տան վարձի փող ունի: Իւր կարողաւոր աշակերտները նրան ամսական 20 կօպ. են վճարում: Նա կարիքի համար փողոց դուրս է գնում միմիայն երկու օրը մի անգամ՝ գիշերները: Աշակերտների դասագիրքը Աղայեանցի «Մայրենի լեզուն» է: Իւր բանաստեղծութիւնքը խիստ շատ են, և բոլորն էլ՝ հայերէն: Մինչև իւր ապաշխարութեան օրերի լրանալն նա ոչ երբեք կը համաձայնի ումնիցէ ցոյց տալ այդ բանաստեղծութիւնքը, որոնք գրում է «յօգուտ և ի փրկութիւն բովանդակ աշխարհի»: Բոլոր ժամանակ մեր խօսակիցը իրան շատ լուրջ պահեց: Եւ խօսում էր շատ կանոնաւոր, պարզ և մաքուր հայերէն: Եւ եթէ չը լինէին նրա վերջին խօսքերը, այն հոգեզմայլ ժպիտն սեպհական բանաստեղծութեանց անունը յիշելու և յիշեցնելու ժամանակ, ես դժուարանում էի բանաստեղծ Յարութիւնի մէջ հոգեկան հիւանդութիւն տեսնել: Այսպէս կարծեցի թերևս, որ գուցէ սխալվում եմ:

Մեր հետագայ խօսակցութիւնից երևեցաւ, որ Յարութիւնի այժմեան կեանքի եղանակն արդէն 20-րդ տարին է, որ տեսում է, 9 տարի՝ Շուշիում, մնացեալը՝ Կուսապատ գիւղում, որ նրա ծննդավայրն է: Կուսապատում Յարութիւնը ո՛չ ծնող և ո՛չ քոյր կամ եղբայր ունի: Ունի միմիայն



հեռաւոր ազգականներ, որոնք նրան թերևս մեռած էին համարում: Այսպէս կարծում էին և շատ շուշեցիներ:

Մեր մէկուկէս ժամուայ խօսակցութիւնքը ոչ մի հետևանքի մեզ չը հասցրին Յարութիւնին նիւթապէս օգնելու կամ բանաստեղծութիւնքը տեսնելու նկատմամբ: Մեր առաջին ամենաանդրդուելի կերպով կուչ եկած, նստած էր Շուշուայ Դիոզիները, որ Աթենքի Դիոզիներսի նման կարծես միշտ այս էր ասում. «Ես ձեզանցի ոչինչ չեմ խնդրում, միայն արևից դէ՛ն գնացէք, հեռացէ՛ք իմ սենեակից»:

Հեռացանք: Տէր Համագասպն առանձնապէս կէս ժամ խոստովանեցրեց բանաստեղծ Յարութիւնին: Այդ խոստովանութեան հետևանքն ի՞նչ էր, իհարկէ, ո՛չ ինքս տէր Համագասպից հարցրի, ո՛չ նա ինձ ասաւ: Միայն յայտնեց, որ Յարութիւնի ասութեամբ նրա ապաշխարանաց օրերը կը լրանան ներկայ տարւոյս վերջը, և նա այդ ժամանակ դուրս կը գայ իւր սենեակից, իւր բանաստեղծութիւնքը կը յանձնէ կա՛մ Մակար վարդապետին և կա՛մ Թիֆլիս՝ ինձ կուղարկէ: Յարութիւնը այս ևս խնդրած է, որ ես իւր բանաստեղծութեանց հատուածները (որոնք ես լսած և իրան յայտնած էի) չը հաւաքեմ և չը հրատարակեմ:

Շատ բարի, թող այդպէս լինի:

Ինձ յայտնեցին, որ Շուշուայ ոստիկանարանը մի քանի անգամ կամեցել է Յարութիւնին դուրս հանել իւր սենեակից: Բայց չէ յաջողուել: Մի երկու անգամ բռնութեամբ նրա մօտ մտել են ոստիկանք, բայց Յարութիւնին պահարանում թաք կացած տեսնելով և նրա աղէխարշ լաց ու թացից խղճահարուելով՝ թողել և հեռացել են:

Շատ էլ լաւ են արել, որովհետև, եթէ այդ մարդը վնաս է տալիս, դա միմիայն իւր անձին է: Ուրիշներին և ոչ ոքին նա չէ վնասում: Յարութիւնն ինձ ասաւ, որ աշակերտներին իւր կշտից հեռացնելու դէմ ոչինչ չունի, թէ նա ինքը վարժապետութիւնից ձեռք կը քաշէ, երբ ապաշխարութեան օրերն լրանան:

Ինչպէս նախորդ նամակումս էլ յիշած էի, բանաստեղծ Յարութիւն այդ ճիշտ Տուրգենևի «Живья мозги» պատկերի նոր տեսակ հերոսից ոչինչ վնաս չը կայ մանուկների համար¹:

Նախորդ նամակներիցս մէկում յայտնելով, որ Շուշուայ հայերից 100 տնուր Ջիւանշիրի կողմերը գաղթել են ուզում, խոստացած էի խօսել այդ մասին: Այժմ ահա կատարում եմ խոստումս, որովհետև հարցի հետ մօտոյ ծանոթ եմ: Յիշեալ հայերից 10 հոգի օրերումս պատրաստվում են գնալ և իրանց ապագայ բնակատեղւոյն հետ ծանոթանալ: Ինքս էլ ցանկանում էի Ջրաբերդը և իւր շրջակայ վանքերը տեսնել: Մենք միացանք, և ես նախքան Ջրաբերդ գնալս, յիշեալ պարոնների հետ գնացի իրանց նոր բնակատեղին ևս տեսնելու: Յիշեալ գաղթականութիւնը ինձ շատ էր հետաքրքրում: Շատ անգամ ինքս ինձ ասում էի՝ արդեօք ի՞նչն է պատճառը, որ բնակիչք հովասուն լերանց ուզում են լինել բնակիչք խորշակահար դաշտաց: Գաղթականութիւնն ընդհանրապէս և շուշեցիների համար մասնաւորապէս ունի այսինչ և այնինչ ընդհանրական և մասնական վնասները, վատ հետևանքները: Մակայն բանից դուրս է գալիս, որ այդ 100 տնուրները տնտեսական գորեղ հանգամանքներից հարկադրուած են թողել Շուշին և Ջիւանշիրի մի անկիւնում որոնել իրանց և իրանց որդւոց ապագայ բարօրութիւնը: Որո՞նք են այդ հանգամանքները, աւելորդ է այդ մասին խօսել: Շուշուայ դրութեան հետ ծանոթ եղողն ինքը հեշտութեամբ կարող է մեկնաբանել:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 15-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 63-ում (15 օգոստոսի, էջ 2-3)



Անստոյութիւն կը լինէր կարծելը և խօսելը ու գրելը, որ երբ մի քանի հարիւր մարդիկ ուզում են թողնել իրանց ծննդավայրը, դա առանց էական պատճառի է կամ լոկ «թեթևսօյլկութիւն» (ինչպէս գրուած է եղել մի հայ թերթում): Ընդհակառակը, գաղթել ցանկացողների մէջ կան շատ խելօք, փորձառու անուան և դրից տէր անձինք, որոնք երկար-բարակ չափելից և ձևելից յետոյ եկած են գաղթելու որոշմանը և ուզում են ի գլուխ բերել, եթէ որ, հարկաւ, իշխանութիւնը նրանց խնդիրը հարգելով՝ խնդրուած երկիրը կը տայ իրանց: Ինքս, նայելով հարցի և երկրի ծանօթութեանս, նմանապէս այն եզրակացութեան եկայ, որ յիշեալ գաղթականութիւնը թէ՛ մասնական և թէ՛ ընդհանրական տեսակէտներով կարող է օգտաւետ լինել, եթէ միայն յաջողի: Տեսնենք, թէ ի՞նչ տեսակ երկիր են ընտրել 100 տնուր շուշեցի հայք և այդ երկրից ի՞նչ օգուտներ կարող են տուն տանել իրանք և իրանց որդիքը և Ջիւանշիրի շրջակայ ազգաբնակչութիւնը:

Մեր խումբը Շուշուց դուրս եկաւ յուլիսի 6-ին ֆուրգօնով: Ինչպէս միւս, նմանապէս Շուշուայ գաւառում պարապում են մի քանի տնուր մոլոկաններ Ղարաբուլաղ գիւղից, մի քանի թիւրք տնուորներ Ղարդաբազար գիւղից և Մէլիբէկլու գիւղի 150 տնուր թիւրք բնակիչները: Վերջին գիւղը մեր գնացած ճանապարհի աջ կողմում է գտնվում և, ասում են, շատ հարուստ գիւղ է, նրա բնակչուհեաց զարդերը շատ ճոխ են, միննոյն ժամանակ յիշեալ պարսկուհիք ողջ գաւառում յայտնի են իրանց գեղեցկութեամբ: Հաւատում եմ, որ մի հասարակութեան, մի համայնքի տնտեսական ապահովութիւնը ոչ միայն գեղեցկութեան, այլ դրանից առաւել բարձր բարեմասնութեանց և յառաջադիմութեանց սկզբնապատճառն է, եթէ միայն այդ հասարակութիւնը կարող է իւր տնտեսական ապահովութիւնը գործադրել ինչպէս հարկն է:

Մէլիբէկլու գիւղից փոքր-ինչ ցածր մենք հանդիպում ենք մի ընդարձակ և աւերակ շինութեան: Դա Ջաֆար Ղուլի խանի պալատն էր մի ժամանակ: Պալատի առաջից հոսում է Կարկառը, որ դեռ սակաւաջուր է, ուստիև գորտերը միջին կոկոռում են: Ասում են, որ Ջաֆար Ղուլի խանի հրամանաւ շրջակայ գիւղերից ամեն գիշեր 3 մարդ մինչև ի լոյս հսկում էր գորտերի վրայ, որպէսզի դրանք իրանց անախորժ կոկոռոցներով խանի քունը չը խանգարեն: Խեղճ գիւղացիք: Ասիական բռնութիւնն ու կամայականութիւնը ի՞նչ խաղեր չէ խաղացել ձեր գլխին: Սակայն ահա Ջաֆար Ղուլին ի չիք է դարձել, նրա պալատը՝ հիմնայատակ եղել, իսկ գիւղացին դեռ կայ ու կը մնայ՝ ի խրատ և ի զգուշութիւն ժողովրդին գրաստ և անասուն համարող ամեն մի դեսպոտի համար:

Ջաֆար Ղուլիի աւերակ պալատից յետոյ մենք մտնում ենք այսպէս անուանեալ Խանի բաղը՝ մի ընդարձակ իջևան, որ Մէհդի Ղուլի խանի դստեր՝ Խուրշուդ խանումի բազմաթիւ կալուածներից մինն է և նրան տարեկան 1500 ռ. կալապադրամ է տալիս: Միննոյն տիկնոջ սեպհականութիւնն է նմանապէս Խանի բաղից ներքև գտնուած այս դաշտակը, ուր սեխի և ձմերուկի սոնավաճառ է լինում յուլիսից սկսեալ մինչև հոկտեմբեր: Միբոց վաճառողները Ջիւանշիրի և ուրիշ ցածր երկրների բնակիչ թիւրքերն են, որոնք այդտեղ ևեթ սաղացնում են իրանց ապրանքը Շուշուայ մրգավաճառների և ճանապարհում անցուղարձ անողների վրայ: Թեղիի մեծամեծ ծառների տակ դիզուած են սեխի և մեղրապօպի (ձմերուկ) սայլերը: Գներն առայժմ թանկ են: Թէ՛ ձմերուկի և թէ՛ սեխի հատը 8-10 կօպ. արժէ: Օգոստոսից սկսեալ՝ դրանց գինը կիջնի մինչև երկու և մէկ կօպէկի: Սեխի տեսակաց մէջ ամենալաւն է սնելվազ կոչվածը, որ իբր թէ Երևանի յայտնի դուրմայից (սեխի տեսակ) համեղ է: Տօնավաճառի դաշտակից Խուրշուդ խանումը տարեկան 300 ռուբլի արդիւնք ունի: Այդ տեղը կոչվելիս է եղել Վարդանի բաղ: Վաղ ժամանակ պարսիկները մի բուռ հող անգամ չունէին Արցախում: Բայց այն վաղ էր, որ էլը կաղ էր: Մի ջիւանշիրցի աւագակ՝ Փաննահ խանը, վաղ ժամանակ աւելի խելօք և աւելի գործուն գտնուեցաւ, քան Խամսայի հինգ հայ մելիքները: Փաննահը աւագակութիւնից խանութեան բարձրացաւ և երկփեղկեց ու



պառակտեց Խամսայի մելիքութիւնը: Փաննահի որդին՝ Իբրահիմ խանը, յիշեալ երկրին և նրան տիրապետողներին տակնուվրայ արաւ, որոնք, խոտ կերած ձկների նման գծուեցան ու ջրի երես ելնելով, վերջիվերջոյ բանն այնտեղ հասցրին, որ մի Մեհդի Ղուլի խան՝ Իբրահիմ խանի որդին, կեղծ վկայականներով ողջ Արցախը փայ ու բաժին արաւ իւր ջորեպանների և սայլապանների մէջ: Եւ այդ գովուած Խամսայի հայ մելիքները ստիպուած եղան միմեանց այսուկէ միսիթարել, թէ «բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին»: Բայց ես դառնամ իմ յիշատակարանին:

Խղրլու թիրքաբնակ գիւղում, որ 300 տուն բնակիչ ունի, մենք իջանք հանգստանալու: Այդտեղ մի հայ եկեղեցոյ աւերակներ կան, որ ես չը կամեցայ տեսնել, մանաւանդ որ աւերակներում ոչ մի արձանագրութիւն չը կայ: Ճաշից յետոյ ես յաջողեցայ մի քանի տեղեկութիւնք հաւաքել Ղտրօղլի և Քերիմ կոչուած աւագակապետների մասին, որոնց ոհմակն այսօր սարսափի մէջ է պահում Ջիւանշիրն ու Բօրչալուն: Բանից դուրս է գալիս, յիշեալ աւագակապետներին կալանաւորելու չէ յաջողում իշխանութիւնը յատկապէս այն պատճառաւ, որ Ջիւանշիրի և Բօրչալուի գրեթէ թիրք համայն ազգաբնակչութիւնը ծածկաբար, պաշտպան և ապաստարան տուողների թվում կան և թիրք պաշտօնական անձինք, մանաւանդ գիւղաւագներից և դատաւորներից:

Մի քանի շաբաթ առաջ Բօրչալուի գաւառապետը 200 կօզակներով և իւզբաշիներով մի թաւանտառում շրջապատում է Քերիմ աւագակապետին, որ ծառի տակին քնած է եղել երկու ընկերներովը: Գաւառապետը հեռուից նշան է դնում աւագակապետին հրացանահար անելու, բայց իւզբաշիներից մինը բարձրաձայն բղաւում է.

- Կնեա՛գ, դա Քերիմը չէ, մի՛ խփեք:

Այդ ձայնի վրայ Քերիմը զարթնում է և ձիանքն ու զենքերը թողած անտառի մէջ՝ անյայտանում է իսկոյն: Գաւառապետի հարց ու փորձերից ի յայտ կուգայ, որ Քերիմ աւագակապետը նախընթաց երեկոյին վերոյիշեալ գրասիրտ իւզբաշու տանն է եղել իջնանելիս: Երբ տեղական ազգաբնակչութիւնը և իւր ներկայացուցիչներն իրանք են պատսպարում աւագակապետին ու ասպատակութիւնը, իշխանութիւնը, բնականաբար, անգոր է ձեռաց որսալու և կալանաւորելու Ղտրօղլիներին և Քերիմներին:

Չը մոռանամ յիշել, որ Քերիմ աւագակապետը 23 տարեկան մի տղամարդ է և դեռ մի քանի ամիս առաջ չափառ է եղել: Ուրեմն քաջութեան և սրտոտութեան հետ այդ աւագակապետն ունի նաև լաւ ծանօթութիւն երկու իսկ գաւառների ծակ ու ճեղերին հետ:

Մուրթ նոր էր կոխում, երբ մենք հասանք Շահբուլաղ իջնանը: Փոստայի կայարանում իջնանել, իհարկէ, կարելի չէր մեզ, ֆուրգօնների համար յատկացեալ խանի մէջ՝ նոյնպէս, վասնզի տեղ չը կար, և ուրիշ պարսիկ ճանապարհորդներով լիքն էր այդ լուռ ու կեղտոտ խանը: Ուստի մենք մեզ համար ննջարան ընտրեցինք բաց երկնքի տակ Շահբուլաղի ակունքը և նրան շրջապատող մացառուտները:

Այստեղ ես իմ ընթերցողին պետք է նկատեմ, որ մեր խմբի բոլոր անդամներն էլ ոտքից ցլուխ զինուաւորված էին: Մենք մեզ միանգամայն ապահոված էինք ամէն մի սովորական և անսովոր աւագակների յարձակմունքներից: Ընդ նմին մեր զենքերը թէ՛ ընտիր էին և թէ՛ բազմատեսակ: Միայն թնդանօթն էր պակաս: Եթէ հնար ունենայինք, այդ զենքից ևս կը վերցնէինք: Գալով նրան, թէ զիշերը բաց օդի տակ անցկացնելն առողջութեան համար վտանգաւոր չէ՞, պատասխանում են՝ նայած ով ինչ տեսակ կեանքի է վարժուել: Մեզանից ոչ ոք փափկասուն չէր: Ամէնից փափկասունը, դժբախտաբար, ես էի, ուստի ընկերներս ինձ պատիւ արին անձածկ ֆուրգօնը ինձ անկողնակալ յատկացնելով: Հետևեալ և միւս օրերը շարունակ՝ մինչև օր, ես ինքս էլ սովորեցայ



արդէն գետնի և խոտի վրայ ննջելու: Դա գեղեցիկ բան է: Ամէն մի քաղաքացու էլ խորհուրդ կը տամ փորձել:

Ընթրիքից յետոյ մեր ընկերներից երկուքը գիշերապահ նշանակուեցան: Միւսներս ննջեցինք: Քամին շշնկում է, մոծակները և ճանճերը տոգում են ու սուսիկ-փուսիկ մեզ կծոտում: Շահբուլաղի ականց ջրերը խոխոջում են, մեր ննջարանից փոքր-ինչ ստորն կազմուած ճահիճներում գորտերը կռկռում, մացառների մէջ զանազան գեռունները մինչև ի լոյս ձրիաբար նուազում են մեզ համար, ուիրշ էլ ի՞նչ եք ուզում: Առաւօտեան ժամը 4-ն էր, որ կարմիր արևի ճառագայթները մեզ զարթացրին: Աչքս շուտ տուի դէպի աղօթարանը¹, և, աստուած իմ, որքան փառաւոր է լինում արևի բացուիլը Ջիւանշիրի հեռաւոր հորիզոնի տակ:

Մինչև թէյ խմելը և մեր պարկերի ու անկողինների հաւաքելն ու կապոտելը ես այժից անցկացրի Շահբուլաղի հնութիւնքը: Առաջին նամակումս ես գրել էի, թէ այդ հնութիւններից մինը մզկիթ է (ասած էին ինձ): Բայց դա սխալ է: Մզկիթ անուանած հին շինութիւնը բաղնիս է: Դրան վկայ են աղբիւրները և նոյնիսկ շինութեան ձևը: Բերդի համար ասած էի դարձեալ այլով խօսքերով, որ Շահ-Աբասի շինած է: Սա նոյնպէս սխալ է: Շահբուլաղին տեղացիք մինչև այսօր անուանում են նաև Թառնագիրտ: Ջալալեան (տե՛ս Ճանապարհ. ի Մեծն Հայաստան, հատ. Բ, էջ 344) այդ բառը համարում է Տիգրանակերտ բառի աղաւաղածը և պատմիչներից մի քանի վկայութիւններ առաջ բերելով՝ կարծում է, որ դա Տիգրան Առաջինի շինած է՝ ի բնակութիւն իւր Տիգրանուհի քրոջ: Երևի Ջալալեանից առնելով՝ պ. Բաֆֆին («Խամսայի Մելիքութիւնները») նոյնպէս Թառնագիրտը Տիգրանակերտ է անուանում: Իմ կողմից ես այդ կարծիքը վաղվաղուց եմ համարում և տրամադիր եմ աւելի դէպի հետևեալ ժողովրդական ասանդութիւնը, որ Թառնագիրտին անուանում է Թառնագիրտ և հարակցում, որ Վաչագան Աղուանից թագաւորը իւր վերջին տարիներում եկաւ Շահբուլաղ: Այնտեղ լերան գագաթին մի վանք շինեց, ուր և ճգնում էր կամ որպէս հաւ՝ թառում էր՝ Թառնագիրտ:

Այդ վանքը մինչև հիմայ կայ և մի փոքրիկ մատուռ է²: Վրան միայն Մ տառը կայ, ուրիշ ոչինչ: Այսպէս թէ այնպէս՝ Թառնագիրտ կամ Տիգրանակերտ աներակների վրայ առաջին անգամ Փաննահ խանը մի բերդ շինեց, որ հայ մելիքները քանդեցին: Յետոյ այդ բերդը պարսից ձեռքով վերստին նորոգուեցաւ: Նրանում մի քանի անգամ պատերազմներ եղան: Այսօր չափառների բնակարան է: Շահբուլաղի երրորդ հնութիւնն է (բաղնիսին կից) մի այլ քայքայուած և կիսով չափ գետնի մէջ թաղուած շինութիւն, որոյ ճակատի ընդարձակ արձանագրութիւնը (ի լեզու պարսկաց) շատ բան կարող էր պարզել: Ափսո՛ս, ո՛չ ես և ոչ ոք մեր ընկերներից կամ շահբուլաղցիներից չը կարողացանք յիշեալ արձանագրութիւնը կարդալ: Տեղւոյն վերջին՝ Շահբուլաղ անունը նշանակում է Շահի աղբիւր, որ թուով երեք են և ժայռերից բղխում են սառնորակ և կաթնահամ: Աղբիւր մէջ փոքրիկ ձկները գեղում և խայտում էին³:

Շահբուլաղից սկսեալ՝ մեր ճանապարհը մտնում է քօլանիների աշխարհը: Քօլանի մի թիւրք տարր է, որ Ջիւանշիրում նոյն է անում, ինչ որ աւագակ և թափառական քիւրդերը Տաճկահայաստանում: Կերպարանքները դաժան են, աչքերը՝ արեան ծարաւի, ուսերին՝ հրացան,

¹ Ողջ Արցախի հայերը արևելեան կողմին անուանում են աղօթարան: Դա շատ հին և իմաստայից բառ է, որ շատ տեղերում հայ ժողովուրդը գործածում է: Ես ժողովրդից առնելով՝ հայ բանաստեղծն էլ երգում է՝ «Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթելու»

² Ես ժամանակ չունեցայ այդ մատուռը տեսնելու: Նրա մասին տուած այս տեղեկութիւնը ինձ հաղորդած էր Մակար վ. Բարխուդարեանցը: Բայց պ. Նիկողայոս Տէր-Աւետիքեանցն էլ («Քնար խօսնակի» հեղինակը) ինձ յայտնեց, որ յիշեալ մատուռը մի գեղեցիկ շինութիւն է և ի արձանագրութիւններով, որոնք մի ժամանակ պ. Գ. Խոջամիրեանցն արտագրել է իրր: Արդեօք տպուած են այդ արձանագրութիւնք: Ես գոնեա չեմ յիշում: Յիշեալ մատուռին ժողովուրդը անուանում է Լևոնաբերդ: Թարթառի հովտում ես մի առու տեսայ, որ նոյնպէս կոչվում է Լևոնարիս

³ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 16-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 64-ում (18 օգոստոսի, էջ 2-3)



մէջքներին՝ դաշոյն: Դրանք ընդարձակ դաշտի մէջ թափառում և կողոպտում են շրջակայ գիւղականաց, մեծաւ մասամբ հայոց ապրանքը, գողանում տաւարները, մինչև անգամ հաւ ու ձտերը, կրակում և այրում դաշտի հունձերը: Իրանց բնակարանները գայլերի և աղուէսների բնակարաններից շատ չեն զանազանվում, չորս կամ հինգ տունը մի գիւղ է համարվում միմեանցից մի քանի հարիւր սաժէն միմիայն հեռու: Մի գիւղը երեք կամ չորս արտ հազիւ է սերմանում: Աւելի սերմանելու ինչ հարկ կայ, երբ պակասը հայերի աշխատութեամբ լցուցանվում է: Ամառը քաշվում են լեռներն իրանց ոչխարանց հոտերի և ձիերի երամակների հետ և կողոպտում լեռնաբնակ հայերի սեպհականութիւնքը, իսկ տարուայ միւս եղանակներումը իջնում են իրանց որջերը¹ և կողոպտում դաշտաբնակների սեպհականութիւնքը:

Ճշմարիտ է, դարաբաղցի հայք քաջ են, զէնքեր ունին և գործածել իմանում են, բայց քօլանիները ճակատ առ ճակատ կռուողներ չեն: Նրանք շատ լաւ գիտեն, որ հայի ոչխարները և տավարները դրսումն են կամ փարախում: Գիշերը գալիս են ծածուկ և քշում, տանում: Տեսնում են, որ խոտի կամ հացահատիկների դէզը դաշտումն է կամ կալում: Գալիս են և դարձեալ տանում, այրում: Վաստակաբէկ գիւղացիք ho չեն կարող ամենայն գիշեր, հրացան ի ձեռին, հսկել իրանց պահպանութեան վրայ: Ես իմ ճանապարհորդութեանս այնպիսի և այնքան բաներ լսեցի քօլանիների վրայ, որ մազերս բիզ-բիզ էին կանգնում: Չը բաւականանալով գիւղացիների արած հափշտակութիւններով՝ քօլանիները երբեմն յարձակվում են և վանքերի վրայ, սպանում վանահայրերին (ս. Եղիշէ առաքեալի վանահօրը) և վանքը թալանում: Մտնում են ուրիշ վանք և հաւաքունից հաւերը տանում, իսկ ծառներից պտուղները քաղում: Այսպէս վարուել էին նրանք Երից Մանկանց վանքի հետ իմ այնտեղ գնալից մի օր առաջ: Պատահում է, որ գիւղացիք երբեմն իրանց պարտիզների պտուղները խակ-խակ են քաղում քօլանիների երկիւղից: Այդ տարրն է, որ անցեալներում սպանեց Վիլմանին և կողոպտեց նրա ձիաբուծարանը: Վերջին եղեռնագործութեան պատճառաւ իշխանութիւնը յանցաւորներին նոյնիսկ ձիաբուծարանի առաջ կախել տուեց: Այդ բանից սարսափած՝ քօլանիներն այժմ բաւականին զգաստացած են, բայց դա ժամանակաւոր է: Լեռնաբնակ և մանաւանդ դաշտաբնակ գիւղացւոց ուրախութեանը չափ չը կար, երբ լսում էին, որ հարիւր տնուր շուշեցիք ուզում են Ջիւանշիր տեղափոխուել: Նրանք կատարելապէս հաւատում էին, որ այդ ներքին գայթակղութիւնը իրանց կագատէ իրանց ռիւերիմ և գող հարևանների աւարատութիւններից և արիւնայեղութիւններից: Այդ կարծիքի հետ ես ինքս էլ համամիտ եմ: Եւ հէնց այդ տեսակէտով էլ շատ օգտակար եմ համարում շուշեցիների տեղափոխութիւնը, մանաւանդ որ դրանց ընտրած տեղը ջիւանշիրցւոց բնակութեան կենտրոնին կամ սրտին մէջն է՝ մի ընդարձակ և ամայի դաշտ, որոյ չորս կողմը քօլանիների որջերն են: Ի վերջոյ այս ևս պետք է ասած, որ դեռ նախկին փոխարքայի ժամանակից հրամայուած է քօլանիներին Ռուսիոյ սահմաններիցը վտարել, բայց դա չէ յաջողվել և կարծեմ չը պիտի էլ յաջողուի, որովհետև իսկապէս դժուար գործ է մի ամբողջ համայնք բռնութեամբ հեռացնել իւր ծնավայրից ու բնակավայրից: Բայց այդ համայնքին զսպել, նրա վայրենիութեանը վերջ դնել, կարելի է և պետք է: Այդ դէպքում ահաւասիկ հարիւր տուն քաղաքացիք ինքնաբերաբար իրանց բազմադիմի զոհաբերութեամբ կամենում են աջակից լինել իշխանութեանը:

Շահբուլաղից յետոյ մեզ հանդիպող գիւղերն են (քօլանիները չը հաշուելով իհարկէ) Մախսուղլու, Քեանգառլու, երկուքն էլ թիւրքաբնակ և ընդարձակ, ամբողջովին թաղուած պարտէզների մէջ: Նոյնիսկ մեր ճանապարհն ընթանում է ուռենեաց և նոնենեաց մէջ: Քեանգառլու

¹ Քօլանիների հանգստարանը, որ Թարթառի հովտումն է՝ Մատաղիսի հանդէպ, տներիցն աւելի խնամքով է շինուած: Շիրիմները մեծ-մեծ են և արձանագրութիւններով



գիւղից յետոյ վերջանում է պատմական Վարանդը և սկսում Խաչէն գաւառը՝ սահման ունենալով համանուն մեծ գետը, որ այժմ սակաւաջուր է: Խաչէն գետից անցնելով՝ մենք մտնում ենք Բոյահմաղլու գիւղը, որ լաւ խաղող ունի, յետոյ Ղարափիրում գիւղը, որ իւր կշտին ունեցած կրկին սրբավայրերի պատճառաւ այս կողմերում նշանաւոր ուխտատեղի է պարսկաց համար: Ասացին, որ այդտեղ ուխտի գալիս են նաև Թիֆլիսի պարսիկները: Ուխտատեղիքը քառակուսի, փառաւոր շինութիւնք են: Մինի ճակատին արձանագրութիւն կայ: Շինութիւնքը քարից են շինած, իսկ այս կողմերի քարերը քարացած կիր են՝ սաստիկ սպիտակ և թեթև: Քարերը հանում են գիւղերին կից եղած Խաչէնի լեռանց լանջերից, որոյ վրայովն անցնում ենք և մենք: Չը մոռանամ յիշել, որ այս կողմերում յաճախ պատահում ենք կապարի, որոյ մեծաքանակ առատութիւնը գտնվում է Մուղանի դաշտում և Կուրի հովտում:

Ղարափիրումից յետոյ գալիս է Մարտակերտ հայաբնակ գիւղը՝ հանդիպակաց և կրեայ գոյգ լեռների լանջերի վերայ շինած: Ունի 120 տուն, որ գաղթել են այստեղ մօտակա Կուսապատ գիւղից (400 տուն), մի եկեղեցի, որ օծել են անցեալ տարի, բայց այժմ քանդուած է: Գիւղն ունի ընդարձակ և սև վարելահողեր Ջիւանշիրի դաշտումը: Կթան և լծկան կենդանիքը բազմաթիւ են և ընտիր: Գիւղի արևմտեան կողմի նեղ ձորակում սփռուած են թթենու պարտէզները: Մարտակերտի մկներն իրանց խոշորութեամբ կարող են մրցել Թիֆլիսի և Քուբայիսի մկների հետ:

Մարտակերտում մենք իջևանեցանք մի պարտիզի մէջ, ուր անցուցինք և գիշերը: Իմ բոլոր ջանքն էր մօտակայ լեռան քարափներից կաքաներ որսալ, որ իզուր անցաւ: Գիւղին մօտ լինելով՝ այս կողմի կաքաները զգոյշ են և էլ լաւ թոչում են: Ես միայն մի մեծկակ կրիայ բռնեցի լեռան գագաթում, թէև այն էլ ուտելու չարժանացայ: Ընկերներս զգվում էին այդ կենդանուց, ուստիև չեփեցինք: Մեր կերակրի կաթսան այդ (ընկերներիս կարծիքով) զազիր կենդանիով չուզեցինք կեղտոտել¹:

Հետևեալ օրը՝ երկու ժամից յետոյ, մենք արդէն վրան ենք զարկել այն ամայի և անջրդի դաշտի վրայ, որ շուշեցի 100 տնւոր հայք իրենց ապագայ բնակութեան տեղն են ընտրել: Դաշտի մի կողմում, որ բաւականին բարձրադիր է և ընկնում Թարթառի հովտի աջ գլխում, տարածուած է մի սարահարթ, որոյ վրայ Շուշուայ գաղթողներն ուզում են իրանց բնակարանները հաստատել, իսկ շրջապատ դաշտավայրերում՝ վարուցանք անել և այգիներ ու պարտէզներ տնկել: Շուշեցուց ընտրած դաշտը, որ մօտ 6000 օրավար տարածութիւն է լինում, ունի պատուական և տակաւին կոյս սևահող, որոյ վրայ ամենայն առատութեամբ աճում է մետաքսանման խոտը: Երկիրը կարող է արտադրել լաւ բամբակ (փորձն արդէն արել են Մոխրաթաղ գիւղի բնակիչները), բազմատեսակ պտղատու ծառեր, խաղող և այլն, բայց այդ և դրանց նման ուրիշ բարիքներ երկրից ստանալու համար հարկաւոր է դրամական ահագին զոհողութիւն: Ողջ դաշտի մէջ մի կաթիլ ջուր անգամ չը կայ: Ջուր պէտք է հանել Թարթառի հեռաւոր և ծմակների մէջ թաղուած կէտերից: Դրա համար հարկաւոր է, ինչպէս չափուելուց երևեցաւ, 31 վերստ տեղ Թարթառի հոսանքով վեր բարձրանալ, կտրատել հինաւորց ծառեր, կտրատել ժայռեր, առու և ճանապարհ բաց անել: Հէնց մէնակ այդ ձեռնարկութիւնը շուշեցիներից մօտ 100 հազար ռուբլի է պահանջում: Նրանք յանձն են առնում թէ՛ այդ և թէ՛ ուրիշ ամէն տեսակ զոհողութիւն, միայն թէ տէրութիւնը բարեհաճէր դաշտը իրանց տալ: Մի շաբաթ այդ մարդկանց հետ խօսակցական գոլով, տեսնելով նրանց նկարած մակարդակը, ես տեսնում եմ, որ այդ մարդիկը հաստատապէս մտքներումը դրած են Ջիւանշիրում

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 17-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 65-ում (22 օգոստոսի, էջ 3)



Երօպական ձևով մի կօլօնիա հիմնել: Իրանց մէջ պիտի լինին Երօպայում կրթուած այգեգործ և անասնապահ ընկերներ:

Տոկոսին և յաջողութիւն ցանկալով իմ ընկերներին և թոյլ տալով, որ իրանք ջրի ճանապարհը չափելով զբաղուին, ես արժ. Համագասպ քահանայ Տէր-Աւետիքեանցի հետ, որ գաղթողներից մինն է, իջայ Թարթառի հովիտը՝ յայցելութիւն այնտեղ եղած հայ գիւղերին՝ Ներքին Չայլու (28 տուն), Վերին Չայլու, Մարաղա (1828-ին Պարսկաստանից գաղթածներ են) և Մատաղիս: Դրանցից Մարաղան (80 տուն) հովտի մէջ չէ, այլ նրա աջակողմեան գագաթի դաշտումը (Զիւանշիր): Ես միայն Վերին Չայլուն ու Մատաղիսը տեսայ: Առաջինն ունի 34, իսկ երկրորդը 13 տուն՝ ամբողջապէս պարտէզների մէջ թաղուած, որոց մէջ կան խնձորենի, տանձենի, ծիրանի, թթենի, փշատի, նոնենի, սերկևիլի, ընկուզենի, շլորենի և թզենի: Իսկ հացահատիկներն են ցորեն, գարի և բրինձ:

Ուշադրութեան արժանի է, որ ողջ Արցախում, առաւել ևս Խաչէնում այս տարի թուրք յումպէտս (իգուր) կորչում է արցիզի բարձրանալու պատճառաւ: Թրփց բնակիչները այժմ բէքմազ (դօշաբ) են շինում միայն, որովհետև արաղի դոյլի համար փոխանակ առաջուան 25 կօպէկի այժմ սահմանուած 77 կօպ. վճարելն ամեննին ձեռնտու չէ գիւղացոց:

Թարթառի հովտում ես տեսայ ինձ անյայտ հետևեալ խոտերը և ծաղիկները. մեռն-ծաղիկ, դեղնապտուկ, կածուկ (սա մի խոտ է, որ կենդանիք ուտում են) և հորդի-պլոր, որով իւրը դեղին են ներկում: Գալով Թարթառ գետին՝ ես պէտք է ասեմ, որ այդ գետը թէ՛ իւր նեղ հովտում (Մատաղիս գիւղից սկսեալ) և թէ՛ Զիւանշիրի դաշտում 94 առունների է բաժանված: Մինչև Չայլու հասնելը, որ կղզիաձև բարձրանում է հովտի մէջտեղը, մենք 14 առուններից անցանք: Թարթառի հովտի վերին մասերումը առունների բաժանուած է նաև Եղիշէ առաքեալի գետակը, որոյ դաշտը Թարթառի դաշտից բարձր է:

Թարթառի կամուրջները շատ են, բայց փայտեայ, մի քանի գերաններից բաղկացած: Համեմատաբար տանելի է և քարաշէն Պառաւի կամուրջը: Մի պառաւի շինած է, որ իբր թէ վերանորոգութեան համար կամրջի մէջ փող էլ է թողած: Այդ փողը հանելու համար գիւղացիք բաւականին քանդել և կիսով չափ փչացրել են այդ կամուրջը:

Թարթառից մեծ-մեծ սև ձկներ են դուրս գալիս: Մենք շատ անգամ որսացինք և վայելեցինք: Գետը և այն օգուտն ունի, որ իւր հոսանքով փայտերի մեծ և փոքր կտորտանք է բերում: Այդ պատրաստի նիւթով գիւղացիք տաքացնում են իրանց բնակարանները:

Իրիկնապահին վերադառնալով մեր ընկերների մօտ՝ մենք գիշերեցինք դաշտի միջին: Հետևեալ գիշերն անցուցինք Մատաղիս գիւղի կալերից մինում: Իսկ միւս առաւօտը մեր խումբը երկու մասի բաժանուեցաւ: Մի մասը գնաց առուի ճանապարհի չափելը շարունակելու, իսկ միւսը՝ ս. Եղիշէ առաքեալի վանքը տեսնելու: Վերջին խմբումն էի ես և Համագասպ քահանան:

Մատաղիսից մինչև ս. Եղիշէ առաքեալ մի ձիով մի ժամուայ ճանապարհ է: Բայց այդ ճանապարհի հազիւ կէսը կարելի է ոտքով գնալ և այն էլ մեծ զգուշութեամբ: Մենք արդէն Արցախու լեռանց ազխազխների և խոխոմների միջովն ենք ընթանում, մէկ լեռնից դէպի միւսն անցնում՝ անդադար ելնելով լեռների կողերի և գագաթների վերայ և իջնելով մինչև ստորոտները: Թաւ անտառի մէջ արևի ճառագայթները հազիւ են թափանցում: Քարքարուտները ոտներիս հոգին են հանում: Մի քանի զուգահեռական շղթաներ անցնելով՝ մենք հանդիպում ենք Եղիշէ առաքեալի գետակին, որ լեռանց ստորոտովն է հոսում առանց շառաչման: Գետակի ջուրը շատ մաքուր է, ափսո՛ս, որ մօտը գնալու բնաւ թոյլ չեն տալիս հինաւուրց և վիթխարի ծառները: Դրանցից ես անդադար տեսնում էի կաղնի, տկողնի, հաճարկի, բեխի, ըլնենի, ճղանի, ճապկի,



գիհի, հունի, տանձենի, թխկի, թեղի, լընըտերևի, կըռըզնենի, շլորի, հաւ-կուտկուտի, կատուա-յոռի, սըրըթեղի, տըղանի (մանր խնձորենի), գկոի, քլատանձի (քարջինի), ընկուզենի, որթ կամ գորա, թթենի, սերկևիլի, նոնենի, փողնի, դամբուլի, թգենի, հացի, սգնի, կեչի, դողկուզոսի, գեառմասրի, անուններ, որոց մեծագոյն մասը ժողովրդական բառեր են: Իսկ մայրի ամեննին չը կայ Արցախի անտառներում: Այդ է պատճառը, որ յիշեալ անտառներում 4 օր անցկացնելով՝ ես չէի զգում այն անուշահոտ բուրմունքը, որով այնքան անուանի են Բորժոմի, առաւել ևս Քութայիսի ու Աբասթուանի և Ջօբարէթի անտառները: Արցախի անտառներում, բացի սովորական մանր գազաններից, կան նաև արջ, գայլ, աղուէս, վագր կամ փելէնկ, քրէծ (քարայծ) և կիստար:

Գիւղացիք մեծ քանակութեամբ որսում և վաճառահանում են այդ կենդանեաց մորթերը:

Ս. Եղիշէ առաքեալը բազմած է մի բարձր լերան եռանկլինաձև և սեպաձև ժայռի վրայ և ունի փառաւոր և ահաւոր տեսարան: Վանքը պարսպապատ է: Մէջտեղում՝ մի փոքրիկ եկեղեցի, որ, բացի սեղանի ետքնի պատից, ողջ կեցած է: Սիրուն է մանաւանդ իւր գմբէթը: Եկեղեցոյ կողքերին՝ երկու իսկ կողմից կան 7 մատուռներ: Դրանցից մինը միայն տապալուած է, մնացեալները դեռ կանգուն են: Դրանց շուրջ կան հիւրասենեակներ, տնտեսատուն, մարագ և ախոռներ: Եւս և կրկնայարկ առաջնորդարանը՝ շինած ՌԻԲ (1573) թուին, որոյ առաստաղն ամբողջովին փուլ է եկած: Գաւթի մէջ թաղուած կան գինու մեծամեծ կարասներ: Վանքն ամայի է: Տեսայ գետնից հանած երկու զանգակներ, որոց մինը.

Յիշատակ է զանգակս Ղազարի որդի Գրիգորի և թոռն...:

Զանգակները լեզուակներ չունին: Նրանք այլևս ձայն չեն հանում: Պարսպի դռները երկուսն են՝ արևելեան և արևմտեան կողմերից: Թէ՛ եկեղեցոյ, թէ՛ մատուռների և թէ՛ գաւթի մէջ բազմաթիւ գերեզմաններ կան գետնատարած՝ հանդերձ արձանագրութիւններով: Արձանագրութիւնք շատ կան նմանապէս եկեղեցոյ և մատուռների ճակատներին: Մեր ժամանակը և միջոցները չէին ներում այդ բոլոր արձանագրութիւնքը ընդօրիանկել: Ուստի մի քանիսը միայն ընդօրինակեցինք, որ սորա են¹:

Եկեղեցոյ սեղանի փուլ եկած պատի վրակ դեռ կարդացվում են հետևեալ կարմրատառ բառերը.

Ես Ղավիթ և իմ ամուսին միաբանեցաք սուրբ ուխտիս և ետուք զիսչն Գ (3) պատարագ... (պատը քանդուած է) Հասան, Սմբատ, Վահան, Տային... ի հոգւոյն... և միաբանքս Գ (3) պատարագ... կանգնեցի... որդի Միսիթար մայրն յայսմ ամի սպանեցաւ... և տուաք զմեր նոր Շամլնի իւր սահմանէն և ամբար... Ատամին գրնայիրն Նանայ:

Եկեղեցոյ ժամատան մէջ շատ գերեզմաններ կան, որոնցից մինը արձանագիրն է.

Այս է տապան Մելիքսեդեկ եպիսկոպոսին, որ էր առաջնորդ ուխտիս, որ անմեղ սպանեցին օսմանք ՌՃՂԵ (1175):

Մի այլ շիրմի վերայ.

Այս է հանգիստ տէր Վարդան քաջի:

Մատուռներից մինում կայ Վաչագան թագաւորի շիրմն առանց որևէ արձանագրութեան: Մատաղեցի մեր ուղեցոյց Սիմէօն Սահակեան որսորդը հաւաստիացնում էր, որ արձա-

¹ Համագասպ քահանայ Տէր-Աւետիքեանցը զարմանալի արագութեամբ և յաջողութեամբ է կարողում արձանագրութիւնքը: Այնպէս որ իմ «Ուղեգնացական ակնարկներ»-ումս դուրս եկած այս միւս արձանագրութիւնքը ես պարտական եմ յիշեալ հօրը: Խորհուրդ կը տամ հայ ճանապարհորդներին Միւնիքում ճանապարհորդելիս, եթէ միայն հետաքրքրվում են հնութեանց արձանագրութիւններով, իրանց հետ անպատճառ վեր առնել Տէր-Աւետիքեանց քահանային, որ միևնոյն ժամանակ մի պատուական ընկեր է



նագրութիւն կար, բայց շիրմի քարը շուտ են տուել: Եւ, ճշմարիտ որ, քարը շուտ տուած է: Միննոյն այդ մատուռի դրան հանդէպ կայ Մելիք Հաղամի գերեզմանը: Շիրմի վրայի մարմարիոնեայ արձանագրութեան քարը 13 տարի առաջ չարդախլուեցի մի ցնօրեալ մարդ՝ Ջաւատի որդի Մկրտիչը, հանել, տարել է, և հիմայ մարմարիոնեայ յիշատակարանի փոսն է միայն մնում: Միմեօն Սահակեանի վերջին վկայութիւնը հաստատեցին յետոյ Տօնաշէն գիւղացիք ևս՝ յարակցելով, որ գիծ Մկրտիչը յիշեալ մարմարիոնը կոտրատել և գրուանքանոցներից և ոչ իսկ մինը ձեռք բերել:

Մելիք-Հաղամի պատուանդանի վրայ գրուած է.

Այս է տապան մօրս Ախտանի կողակից Վարդիսայթունին թոռ Մխիթարին:

Իմաստից երևում է, որ այդ գերեզմանը Մելիք Հաղամի մօր գերեզմանը պէտք է որ լինի, բայց արձանագրութիւնը փորագրած է նոյնիսկ Մելիքի շիրմի պատուանդանի վրայ:

Գաւթի մէջ եղած բազմաթիւ գերեզմանների արձանագրութիւններից մինն է հետևեալը.

Այս է հանգիստ Եսայի որդի Բալուբէկին, որ է եղպայր Ատիպէկին Եաղշիպէկին պապուն և իւր որդի անուն Գաբրիէլին, թէ իմանաք վաղճանն եղև Ռ (1000) և իւր կողակից Զիլփին:

Այս գերեզմանաքարի (որ կարծեօք մի քանի մեռելների վրայ է ձգուած) քանդակագործուած են 4 տղամարդիկ, որոնցից մինը իւր ձեռին բռնած ունի փարջ, միւսը՝ գաւաթ, երրորդը՝ չոնկուր¹, չորրորդը՝ թուր:

Գերեզմանաքարի միւս երեսին քանդակուած են 5 տղամարդիկ, որոնցից 2-ը՝ ձիերի վերայ նստած և ձեռքների հրացաններով նշան բռնած, մեջքներիցն էլ թուր կախ արած: Մեջտեղում եղած մարդը զինու ամաններ է բռնած, իսկ մնացեալ երկուքը նոյնպէս զինաւորված են, թէև հետիոտն են իրանք:

Արտասուախառն համբոյրներով Համագասպ քահանան «Հոգւոց» ասաւ ս. Եղիշէ առաքելոյ մէջ գտնուած գետնատարած շիրիմների, ես էլ տիրացութիւն արի. և ապա մեր խումբը սկսեց լեռնից ցածր իջնել հանդիպակաց շրթանների խոխոմների մէջ անցնելու համար: Քառորդ ժամից յետոյ մենք արդէն հասած ենք Մազէ կամուրջի մօտ: Կամուրջը ոչ այլ ինչ է, եթէ ոչ երեք երերուն գերան՝ փայտի կտորներով ծածկուտած: Նրա տակով՝ մօտ 200 ոտնաչափ ցածրութեամբ, հանդիպակաց, ցից-ցից ժայռերի մէջտեղովն ահագին շառաչմամբ արշաւում է Եղիշէ առաքելոյ գետակը՝ յորձան տալով իւր տակից: Ահիւ և տազնապով անցանք մենք այդ գետակից և անցուցինք մեր ձիանքը: Ի դէպ, Արցախի ձիանքը զարմանալի խելօք և ընդունակ են իրանց երկրի ծակների մէջ ճանապարհորդելու: Եւ ես համոզուած եմ, որ հէնց Արցախի ձիանքներով կէթ կարելի է ճանապարհորդել Արցախի նման քարքարուտ և անտառուտ երկրում:

Մազէ կամրջի այն կողմը մեր ճանապարհը սոսկալի է: Վիթխարի լեռների արահետ կողերովը պիտի բարձրանանք: Թաւ անտառի փշոտ ծառների միջովը մեզ ճանապարհ պիտի հարթենք: Շորերս անդադար պատռովում է: Գլխներս ստիպուած ենք շարունակ թեքել և միննոյն ժամանակ թէ՛ արահետ շաւիղը ձեռքից չը փախցնել և թէ՛ մեր ձախ կողմում՝ մի ափ հեռաւորութեամբ մեզանից հեռու գտնվող անդունդի մէջ չը գլորուիլ: Այդ բաւական չէ, մենք անդադար ստիպուած ենք հեղեղներից առաջացած խրամատների մէջ ընկնել և ելնել, ջղակոտոր և արմատախիլ եղած մեծ-մեծ ծառների վրայից երբեմն թռչել, երբեմն ցայթօքել և երբեմն սողոսկել: Շունչս կտրվում է, քրտինքս աղբիւրի նման ելեր, պատել է մազերիցս սկսեալ մինչև եղունգներիս ծայրերը, ծնկներումս այլևս հարաքաթ չը կայ, նրանք անդադար ծալվում են և ամէն անգամ, երբ ես

¹ Արևելյան լարավոր նվագարան (ձանթ. խմբ.)



սայթքում ընկնում եմ՝ բազուկներս դեպի ծառների ճղերը տարածելով, իմ խելօք ձին, որ ետքնիցն է գալիս սանձարձակ, իսկոյն կեթ կանգ է առնում: Մեր խոնջեալ անդամոց դադար տալու հրաման չէ տալիս մեր ուղեցոյցը, վասնզի մենք շատուոր ենք, ընթանում ենք միմեանց ետքնից սաստիկ նեղ և անդնդի գլխին եղած շավիղներով: Մինիս անտեղի շարժմունքը կարող է քարաւանի կանոնաւոր ընթացքը խանգարել, կարող է մեզ փորձանքի մէջ ձգել ճիշտ այնպէս, ինչպէս գառիվեր բարձրացող անիւր կարող է չը կանգնել, կա՛մ պէտք է շարունակ առաջ գնայ, կա՛մ յետ-յետ գլորուի: Անճարացեալ և շնչասպառ մենք էլ գնում, բարձրանում ենք: Այսպիսով մեր քարաւանը չորս լերան վրան բարձրացաւ և իջաւ (հապա քանի՞ լեռան վրայ էլ մինչ ս. Եղիշէ վանքը ժամանակներս էինք բարձրացել և ցածրացել), մինչև որ վերջապէս հասանք լեռներից ամենաբարձրի դուրան գագաթը, որտեղ, սակայն, ահագին ծառները լոյսին չեն թողնում ներս թափանցել:

Մեր քրտախարշ մարմինը չսառեցնելու համար իսկոյն ձիանքներին հեծանք և 15 րոպէից զկնի մենք արդէն Դաստակերտ գիւղումն ենք¹:

Դաստակերտի իսկական անունն է Դաստագիւղ՝ Վաչագան թագաւորի համանուն աղջկայ անունով, որոյ ամարանցն է եղել այդ գիւղը: Դեռ մինչև 1881 թիւր իւր շրջակայ սահմաններով սեպհականութիւն էր ս. Եղիշէ առաքելոյ վանքին: Բայց այժմ արքունական է համարվում որոշմամբ պ. Անտառապետի, որին գիւղացիք վճարում են տարեկան 40 ռ. արքունի գանձարանին հասցնելու համար: Աւերակների և գերեզմանների շատութիւնը նույնպէս և հինաւորց եկեղեցին, որի կրկնակի արձանագրութիւններից երեւում է, որ շինուած է ազգային ՉԻԵ (1276) թուականին իւր քանդակագործ սիրուն-սիրուն խաչերով՝ իւրաքանչիւրը «մի խաչս բարեխօս» արձանագրութեամբ, վկայ են, որ Դաստակերտը ժամանակին մեծ գիւղ է եղել: Բայց այժմ միմիայն չորս տուն բնակիչ ունի: Բնակիչները, մանաւանդ գեղեցիկ սեռը, վերջին աստիճանի առոյգ են, կայտառ, միմի կատարեալ արջի քթթթներ: Մեզ տեսնելիս մի տան առաջ խաղ անող մանուկները վախեցան և լալով վազ տուին դեպի իրանց տները: Մեր բոլոր փաղաքշանքը իզուր անցան: Խե՛ղճ մանուկներ, ով գիտէ, իրանց օրումը քաղաքացի շորերով մարդիկ տեսած չէին: Իրանց տների շուրջը միշտ ման եկող գագաններիցը դրանք չեն վախենում այնքան, որքան քաղաքացի մարդիկներից:

Իրաւունք ունին, որովհետև բնակութեան այդ ազատ ու համարձակ որդւոցը վնասողը ոչ այնքան անտառի գագաններն են, որքան քաղաքի ջէնտլմենները:

Նախաճաշ արինք, հանգստացանք, տների արդուզարդը տեսանք, խեղճ բաներ: Մի տան մէջ մի տպեալ շարական, ժամագիրք, սաղմոս և Եղիշէ (Թէոդոսիոյ տիպ) գտանք: Մի այլ տան մէջ գոյնզգոյն թելերով նշխած մի ձու տեսանք, որ, ըստ սովորութեան, տան հարսնացուն էր ուղարկել, որ ինքը սկետրանց տանը նազար-աչք չառնէ²: Մանուկներին սպիտակ փողեր բաշխեցինք, տէնդ ունեցողներին քինա մասնատրեցինք, ինչպէս այդ անում էինք մենք գրեթէ ամէն մի գիւղում և ապա ճամփայ ընկանք դեպի Տոնաշէն գիւղը:

Այժմ մենք լեռներից ցածր ենք իջնում, բայց ճանապարհը տանելի է (կռմաններ). ուստի ձիերից վեր չենք գալիս: Դրա փոխարէն մեր շորերը փառաւորապէս պատառոտում և ճղճում են դարձեալ ծառերի ճղները: Եւ ես, երբ գլուխս ցածրացնում եմ, որ ճղները նրան չը փաթաթուին, երեսս չը ճղոտին, կուրծքս դիպչում է ձիու թամբի գլխին (ղաշ) և ծակոտվում: Այսպէս և փոխադարձաբար: Ճարից կտրած՝ ձիուց վեր եմ գալիս և դարձեալ զօռ տալիս ոտքերիս: Խե՛ղճ իմ ոտքեր, չորս օր

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 18-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 66-ում (25 օգոստոսի, էջ 1-3)

² Արցախի գիւղացիք (ինչպէս և ուրիշ երկրի հայք) իրանց պարտեզների ցանկերի վերայ կենդանեաց գանգ են տնկում, որ բերքերը նազար չառնեն: Այդ գանգին Արցախում անուանում են կարկած



շարունակ ինչէ՞ր չը քաշեցիք դուք իմ ձեռին Արցախի անտառներումը: Եթէ այդ անտառների լեռները, որոնց վերայ չորս օր մեր խումբը ելաւ և իջաւ, միմիանց վերայ դարստտեխիք, չորս Մեծ Մասիս կը ձևանար: Ուրեմն մենք երկու անգամ Մեծ Մասիսի գագաթը բարձրացած կը լինէինք:

Հասանք Տօնաշէն՝ լեռան լանջի վերայ կանգնած: Բնակիչք 17 տուն են: Ունին մի հինաւուրց եկեղեցի, ամենախեղճ վիճակումն է: Գիւղացիք այժմ այդտեղ աղօթում են: Ունին մի ծերունի քահանայ, որ միևնոյն ժամանակ հովուում է նաև Դաստակերտ և Մատաղիս գիւղերը: Կնանիք գործում են շալ, մաֆրաշ և թէ՛ իրանց պիտոյից համար գործածում և թէ՛ վաճառահանում: Ինչպէս բոլոր Արցախի գիւղերում, նոյնպէս և Տօնաշէնում կնանիք գորգ գործել էլ են իմանում:

Մութը շատոնց կոխել էր, երբ մենք հետիոտն իջանք Թարթառի եզերքը և գտանք այնտեղ մեր միւս ընկերներին, որ պատսպարուած էին ջրաղացների մինի դրան ծածկոյթի տակ: Թէպէտ Տօնաշէնից մենք վերցրել էինք բոլորիս համար էլ անկողին, կերակուր, քանի որ մեր ֆուրգօնը և շորերն ու կերակուրները Մատաղիս գիւղում էինք թողել, սակայն ես գոնեա անլի ջաղաց-բաղարջն աւելի ախորժակով էի ուտում, քան գիւղի բողբոջները, և գիշերով Թարթառից ձեռաց որսուած ձկներն աւելի սիրով, քան մեզ հետ վերցրած վտիտ ճտերի մսերը:

Առաւօտուն արթնանալիս բերանս սաստիկ դառն էր: Մաջալ չունէի: Ըստ օրինակի ընկերներու՝ ես էլ իմ գուլպէքը լուացի: Ամէն կերպ աշխատեցի քրտնել, բայց հնար չը կայ: Մի կասկած ևս աւելացաւ: Տօնաշէնում մենք տիֆով պառկած գտած էինք մի երիտասարդ տղամարդու: Խե՛ղճ, լեզուն արդէն թանձրացել էր: Տաքութեան մէջ էրվում էր: Մենք նրա մօտ գնացինք, խորհուրդ և իրատ տուինք ազգակցացը, թէ ինչպէս պահեն, որտեղ պառկացնեն: Հիւանդի ձեռը բռնեցինք, բազկերակը շօշափեցինք, յուսադրեցինք, մօրը և կնոջը մխիթարեցինք, ծերունի հօրը ստիպեցինք, որ շուտով գնայ և Ջանեաթաղ գիւղից գաւառական բժշկին բերէ: Ահաւասիկ հէնց այդ ժամանակն էլ (մտածում էի ես) տիֆը փոխարկուեցաւ ինձ վերայ, մանաւանդ որ մարմինս հիւանդանալու շատ տրամադրած էին օրուայ մէջ արած դառնագին ուղեգնացութիւնքս:

Դրութիւնս թէ՛ վատ էր և թէ՛ յիմար, թէպէտև ընկերներիցս ծածկում էի, միգուցէ նրանց գործին արգելք դառնամ:

Այդ պատուական մարդիկը 10 օր ինձ իբրև մտերիմ հիւր իրանց հացովն ու ջրովը ման ածեցին, իրանք շատ անգամ անհանգստացան, որպէսզի ես հանգիստ լինիմ, իրանց բերանի լաւ պատառը միշտ ինձ էին ուտացնում, իրանց բարձերն իմ գլխիս տակ դնում, ինձ նստացնում, իրանք հերթով թէ՛ կերակուր պատրաստում, թէ՛ սեղան սարքում, հաւաքում, աման-չաման լուանում, հրացանն ուսին՝ ողջ գիշերը ննջողներիս վրայ հսկում և այլն, և այլն, այժմ ես ի՞նչ խղճով կարող էի պահանջել, որ այդ պատուական ընկերներս, իրանց բան ու գործը թողած, ինձ համար բժիշկ գտնեն և բերեն, ինձ մի կերպով Շուշի կամ Գանձակ հասցնեն:

«Ո՛չ, սա կարելի չէ», - ասացի ինքս ինձ և վճռեցի Ջրաբերդը և նրա շրջակայքը չը տեսած՝ դուրս չը գալ Արցախի ազխազխներից:

Մեր իրաւասութեան տակ թէև հինգ ձի ունէինք՝ գիշերանց Տօնաշէնում բերուած, բայց ես ձի չը վեր առայ և միմիայն քրտնելու համար որոշեցի ոտքով բարձրանալ մինչև Չարդախլու գիւղը: Ինձ հետ ընկերացաւ տէր Համազասպը, որ իմ խաթրու համար նոյնպէս յանձն առաւ հետիոտն ընթա-նալ: Մնացեալ ընկերներս երեք խմբերի բաժանուեցան, և իւրաքանչիւր խումբ իւր գործին գնաց: Տէր Համազասպը և ես վեր առինք մեր զենքերը, մեր միակ պլէտը և վերարկուն և ջաղացպանից իմանալով, որ մինչև Չարդախլու հազիւ ¼ ժամուայն ճանապարհ է, անցանք Թարթառը մի այլ Մազէ կամրջից և հայդա, դէպ սարերն ու ծմակներն ի վեր դարձեալ: Բայց... ի՞նչ քառորդ ժամ, ի՞նչ կէս ժամ, ի՞նչ մի ժամ: Երեք և կէս ամբողջ ժամից յետոյ հազիւ լեռներից ամենաբարձրի



գագաթը հասանք՝ ճանապարհին ընդամենը 40 րոպե միայն հանգստանալով: Բայց Չարդախլուն դեռ չէ երևում: Մեր վրայից քրտնքի առուններ են հոսում, լեզուներս տապակում և պապակում են: Մեր կանգ առած տեղը ճանապարհը ճիղաւորվում է: Չը գիտենք որ ճանապարհը բռնել:

Փաթաթուեցանք պլետիս մեջ, վերարկուովս էլ գլխներս փաթաթեցինք, ճամփորդի ենք սպասում, որ մեզ ճանապարհ ցոյց տայ: Քօլանիներն էլ մեզանից հեռի չեն: Բայց այդ կողմից երկիւղ չունինք: Մեր զենքերը կազմ և պատրաստ են: Մեզ հետ ունինք 16 անգամ արձակուող հրացան ևս: Յանկարծ մի ծառի տակ մի նստած գիւղացու ենք տեսնում՝ մեզանից մօտ 150 սաժէն հեռու: Մօտը գնացինք: Մարգեար ապերը չարդախլուեցի էր և իւր կորեկը հնձելուց յօգնած՝ ծառի շուքումը հանգստանում էր: Ջուր ունէր: Խմեցինք: Միտս եկաւ Փրկչի խօսքը. «Որն արբուսցէ բաժակ մի ջուր ցուրտ, ոչ կորուսցէ զվարձս իւր»: Մարգեար ապօր մեզ մատակարարած ջուրը մենք, պատշաճապէս վարձատրելով, իսկոյն ճամփայ ընկանք, որպէսզի բերաններովս խմած ջուրը կաշներիս ծակոտիներովն դուրս բերենք անյապաղ: Եւ բերինք, մինչև որ Չարդախլու կը հասնէինք: Այստեղ չը մօռանամ յիշել, որ Մարգեար ապօր մօտ ես առաջին անգամ տեսայ փայտեայ մատնոցներ, որ այս կողմերում զիւղացիք հունձ անելիս իրանց մատներն են հագցնում, որպէսզի մատները երկայնանան, և մանգաղը լաւ բռնէ: Առաջին անգամը տեսանք նաև մի կաղնի ծմակի միջին, որոյ ճիւղը հունի էր և արդէն պտղաբերած:

Չարդախլուն 40 տնից է բաղկացած: Ունին մի խեղճ, հողաշէն եկեղեցի, մի ամենապատուական ծեր քահանայ, որոյ 73 տարեկան մայրը զարմանալի առոյգութիւն և ժրութիւն ունի: Մայրն ամէն կերպ աշխատում է մեզ սիրաշահիլ: Նա մեզ զովացուցիչ կերակուրներ է տալիս, իմ շապիկներն է չորացնում: Եւ երբէք էլ չէ համաձայնում մեզ հետ նստել, այլ ոտքի վրայ կանգնած՝ սպասաւորում է սեղանին: Մեզ հետ սեղանակից է նաև քահանայի եղբայրը: Իսկ քահանան գիւղումը չէ: Տանուտէրերը մեր ով լինելը չը գիտեն, մենք էլ չենք յայտնում մեզ: Ի վերայ այս ամենայնի՝ մարդիկ մեզ հիւրասիրում են առանց որևէ նիւթական ակնկալութեան:

Ճաշից յետոյ ձիանք պահանջեցինք, որ գնանք մօտակայ «Քղքատեղը» տեսնելու: Ձի չը կայ: Ջորի պահանջեցինք, չը կայ դարձեալ: Էջ պահանջեցինք, չը կայ նոյնպէս:

- Պէտք է ուրեմն նորից մենք մեր ոտքերին ապաւինենք,-ասացինք և քահանայի եղբոր ուղեկցութեամբ ճամփայ ընկանք:

Չարդախլուից մինչև «Քղքատեղ» ոչ աւելի է, քան չորս վերստ: «Քղքատեղը» մի ընդարձակ աւերակ է՝ սարերի լանջերի վերայ տարածուած: Չորս-հինգ հարիւր քարուկրեայ տների աւերակներ կան: Դրանց մեջ ամենից նշանաւորն է այն ընդարձակ շինութիւնը, որին տեղացիք Վահրամի սարայ են կոչում: Ճշմարիտ, որ դա մի սարայ կամ պալատ է: Բաղկացած է մի մեծ և քառակուսի գաւթից, որոյ հիւսիսային կողմում 8 սենեակներ կան, գաւթի միւս կողմերումը՝ 4-ական սենեակներ: Դրանցից մինի մեջ մի լաւ բուխար կա, որոյ ճակատի կամարը միապաղաղ, սրբատաշ քար է: Ամբողջ շինութեան մասերի միմիայն պատերն են մնացել: Գաւթի և սենեակների մեջ շրջելու համար մենք ստիպուած էինք, թփերն ու փշոտ խոտերը կտրատելով, մեզ համար ճանապարհ բաց անել: Խեղճ իմ ձեռքեր, քանի-քանիցս դուք ծակոտուեցիք և խոցոտուեցիք: Իսկ սերթուքս այնքան բզկտուել է, որ ամաչում եմ Շուշի մտնել:

Պալատանման շինութեան տակ մի ջրանցք կայ, որ հիմայ ցամաք է և որ տարածվում է շինութեան ամբողջ լայնութեամբ: Մուտքը սենեակներից մէկումն է սկսվում, իսկ ելքը, այսպէս անուանեալ, ճողոպուրի (ընկուզենի) ձորումը վերջանում: Պէտք է մտնենք, բայց օձերը վժվժում և ֆշֆշում են: Ճրագ ենք վառում, քարեր ենք ձգում, անպիտանները, թէև ծակերն են մտնում, բայց գլխները էլի երևում են ծակերից: Երկար վարանումից յետոյ վճռեցինք մտնել: Միմեանց ետևքից



թանք, վար իջանք, մի ահագին աղմուկ հանեցինք, մի-երկու աման լուցկի փչացնելով՝ արուեստահուր շինեցինք մուտքի մօտ և «ճրագըք լուցեալք և լապտերք վառեալք» մի ձեռքներիս, միւս ձեռքներս մահակ բռնած, ոտքներովս էլ անդադար դռններով և տրոփելով՝ սկսեցինք մեր հանդիսաւոր ընթացքը ձորն ի վայր: Գլխներս անդադար կամարածն առաստաղին դիպչելուն ցաւ չենք զգում: Մեր բոլոր ուշքն առայժմ օձերի վրայ է, որ ծակերի մէջ գալարուած՝ մեզ թամաշայ են անում և, անշուշտ, պատկառում՝ առանց զգալու, որ մենք իրանցից աւելի ենք վախենում:

Մեր բախտից ջրանցքն այնքան երկար չէր: Հազիւ 30 սաժէն է: Վեց բոպէում մենք միջիցը դուրս ելանք, և մագ մնաց, որ լպրծուն քարերն ու աւազներն իրանց հետ մեզ էլ ձորը տանէին, եթէ մեր առաջնորդը (պ. Բեգլար Տէր-Գրիգորեանց) իւր մահակը մեր կողքերին նեցուկ չը տար հեռուից:

Բիր շնորհակալութիւն, ինչպէս ասում են, էջի նահատակ պիտի լինէինք:

Վահրամի սարայի դիրքը և նրա ստորերկրեայ ջրանցքն ինձ յիշեցրին ստորերկրեայ Անին, որ ես մտայ 1879 թուականին, նոյնպէս և Պահլաւունեաց պալատը Ծաղկաձորի գլխին: Զարմանալի, արդարև, հնութիւն¹:

Ջրանցքից դուրս գալով և ձորի միջի պարտէզներից մէկում պատուական թուրք վայելելով՝ մենք գնացինք Վահրամ իշխանի ձիթանքը տեսնելու, որոյ քարի հաստութիւնը $\frac{3}{4}$ սաժէն է, տրամագիծը՝ 1 սաժէն: Այնուհետև տեսանք չորս բուրգեր, մի քարոքանդ եղած եկեղեցի, բազմաթիւ խաչաքարեր, մահապարտից բանտը, կախարանը, հորեր, բլրակների տակ եղած կատակոմբեր: Տեղացիք կոհուլ են անուանում, որոց մէջ մտնելու այլևս սիրտ չարինք: Տեսանք մի քարաշէն լայն խողովակ, որոյ միջով անտառից կտրած գերանները լերան գագաթից ցածր գլորելիս են եղել: Տեսանք բաղնիսը: Լսեցինք, որ չարդախուեցիք «Քղքատեղոյ» աւերակներից անդադար գտնում են պղինձ, ափսէ, խնոցի, օղի քաշելու գործիքներ, զինու գաւաթներ, փարչեր, կաւեայ այլ և այլ ամաններ, մատանի, օղ, վզից կախ տալու խաչեր և պղնձեայ դրամ: Վերջիններիցս մի օրինակ ինձ ընծայեց տանուտիրոջ որդին՝ պ. Բաղիշ Տէր-Գրիգորեանցը, որ Գօրուայ ուսուցչական սեմինարիայի աշակերտ է²: Իսկ միւս իրեղէնները մեզ չը ցոյց տուին, անշուշտ, երկիւղ կրելով, որ մենք ձեռքներիցը կը խլենք Շուշուայ ոստիկանարանին իմաց կուտանք:

Մենք դեռ մեր հետազօտութիւնները չէինք վերջացրած, երբ գիւղից մեզ մօտ եկան վերոյիշեալ պ. Բաղիշ Տէր-Գրիգորեանցը, որ Թիֆլիսի Ալէքսանդրեան ուսուցչական սեմինարի ուսանող է: Ծանօթացանք, պ. Բեգլարին՝ գիւղ, իւր գործին ճամփելով, յիշեալ երիտասարդների հետ սկսանք բարձրանալ «Քղքատեղի», այսպէս անուանեալ «մայրաքաղաքը» (թէ՞ Վայրամ կամ Վահրամ քաղաքը արդեօք): Սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի սարահարթի վրայ տարածուած ընդարձակ հանգստարան, ուր կայ և մի մատուռ, որոյ ճակատի արձանագրութիւնն ասում է.

Թիւ 2Թ (1260) էր, կաման աստուծոյ ես Խուռուեմզին կանգնեցի զեկեղեցիս եղբօր իմոյ Վահրամ Շահի յիշատակ մեզ և ծնողաց մերոց, ի յիշխանութեան Ուսուփ խանին և յամիրութեան Փախրատինին և առաջնորդութեան տէր Սուքիասին, յաղօթս:

Սատրան մէջ, որ այժմ ուխտատեղի է, կան գեղեցիկ քանդակեալ խաչեր: Դրանց մինի վրայ փորած է ՈՂԹ (1250) թիւը:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 19-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 67-ում (29 օգոստոսի, էջ 1-3)

² Այդ դրամը, որ քիւֆի գրերով է փորագրուած և շատ պարզ ու անեղծ է, չկարողացան կարդալ ողջ Շուշուայ ողջ մահմէդական ուսումնական կաճառը՝ սէյիդ ու մոլլաները: Իմ բարեկամ Գագի-Հասան Թայիրովը, ասիտս, որ Շուշիում չէ այս օրերս: Թերևս նա կարողանար կարդայ: Յետոյ նրան էլ ցոյց կտամ



Մթնշաղին Չարդախլու վերադառնալով և քահանային ամենաքաղցր և առատ հիւրասիրութիւնը վայելելով՝ մենք, ինչպէս ասում են, մեռելի նման վեր ընկանք ննջելու: Մեզ համար պատրաստուած անկողինները մաքուր էին, փափուկ, պատուական, ինչպէս լաւ քաղաքացու տեղաշորեր: Մեր 10 օրեայ դժնդակ ճանապարհորդութեան ժամանակ տէր Համագասարը և ես մի անգամ միայն շորերս հանած հանգիստ քուն եղանք գիշերը: Եւ այդ անգամը Չարդախլուի քահանայի տանն էր:

Առաւօտուն տանուտէր տէր Յովհաննէս քահանան, որ կէսգիշերին էր տուն հասել հեռաւոր Մարաղայ գիւղից, ինձ ցոյց տուեց մի քանի հին ու մին թղթեր և եկեղեցոյ մի ձեռագիր աւետարան: Աւետարանի յիշատակարանից ես տեղեկացայ, որ «Թվականիս Հայոց, որ էր ՋՂԸ ամի որում եղև մահ տարածամ և շատ տուն աւերեցաւ և շատ ապրանք. անտէր մնաց գէտով (փարախ) ոչխար, շատ գութան խափանեցաւ. քանի հայր առանց որդի մնաց. մայր առանց դստեր ու առանց եղբոր. անթիւ տղայք մեռան. հէնց որ կալոց ժամանակին տղայ չը կայր, որ զկամսն քշէր»:

Իսկ հին թղթերից ես արտագրեցի միմիայն Մելիք Հաղամի հետևեալ հրամանագիրը. «Մելիք-Հաղամէս մալումլիեցի ձեզ Մաղավուզեցոց¹ մեծ և փոքր ջամիաթն, թէ որ իմանաք Մելքումն ձեզ քեովիս շինեցի. պիտի որ յիսապի (իրաւացի) խօսկան (խօսքիցն) դուրս չի կեաք (գաք): Դարձեալ ջամիաթ, թէ ետ (յետ) նորա եկիք, թէ Մելքումը մեզ հաջաթ (հարկաւոր) չէ՝ դապուլս չի, զի դուք էք հաւանել շինել (ընտրել), թվին ՌՄԻԸ փետրուար ամսուան ԺԷ էր»: Կնիք, որոյ մէջ փորագրած է. «Քրիստոսի ծառայ Հաղամ-մելիք»:

Հետևեալ օրը՝ յուլիսի 12-ին՝ հագիւ 10 ժամին մենք կարողացանք Չարդախլուից ճանապարհ ընկնել դէպի Մելիք-Իսրայէլեանների ամրոցը՝ Ջրաբերդը: Այս անգամ մեզ առաջնորդում է ինքը՝ Չարդախլուի քահանան՝ արժանապատիւ հայր Յովհաննէս Տէր-Գրիգորեանը: Ջրաբերդն ընկնում է Թարթառի ձախ ափին, ուրեմն մենք նորից պէտք է լեռներից ցածր գանք շարունակ: Ճանապարհը եռանկիւնաձև է և լեռանց լանջերումն է դարձեալ: Եւ դարձեալ անտառապատ: Մենք մէկ իջնում ենք, մէկ բարձրանում և դարձեալ իջնում, և ահա ինքը՝ Ջրաբերդը: Նայում եմ ժամացոյցիս, ճիշտ 11 ¼ է: Մենք շարունակ ձիերի վերայ էինք նստած: Մեր անցկացած ճանապարհը, սովորականին համեմատ, շատ նեղ է: Մեր աջ կողմից՝ խոր անդնդի միջով, արշաւաստյր և ահեղագոչ Թարթառն է ընթանում:

Անտառի ծառերը փոքր են, ս. Եղիշէ առաքեալի անտառի համեմատութեամբ գաճաճներ են: Ծառների մէջ ամէնից շատ ես տեսնում եմ թեղի, ծոխնձորի և զանազան թփեր:

Ջրաբերդի հանդէպ Թարթառի վերայ ձգուած դարձեալ Մազէ կամրջից տակաւին չանցած՝ ես տեսնում եմ բերդից մինչև գետեզրը իջնող երեք «ջրագողերն»՝ ջրի ճանապարհները, ևս և բերդի ձիթհանքը գետի աջ ափին: Այնուհետև կամուրջն անցնելով՝ մենք հանդիպում ենք Թրդի գետին, որ Թարթառի ձախակողմեան վտակն է: Դրա վերայ շինուած են Ջրաբերդի ջրաղացները, որ այժմ քայքայուած են: Այսպիսով, Թարթառը և Թրդին երեք կողմից Ջրաբերդի լեռնակը պատելով, նրան եռանկիւնի ձև են տալիս: Բերդի մեծկակ դուռը ջրաղացների դէմ ու դէմն է, բայց բոլորովին պատած-պաշարած մացառներով, թփերով, փշերով: Այս ամէնի միջովն մեզ ճանապարհ բաց անելու համար հարկաւոր է աշխատիլ, քրտնիլ:

Բայց շոգն անտանելի է: Ջերմաչափ չունիմ, բայց եղանակը ճիշտ Թիֆլիսի կէտօրուայ յուլիսեան շոգերն է յիշեցնում ինձ: Դրանց վերայ աւելացրէք և այն, որ Ջրաբերդ կոչուածը սեպաձև ժայռ է՝ ցից-ցից կողերով: Նրա վերայ մենք պէտք է մագլցելով բարձրանանք՝ հրացաններն էլ կազմ ու պատրաստ ունենալով, որովհետև Չարդախլուում մեզ հաւատացրին, թէ Ջրաբերդի գագաթին

¹ Մաղավուզն է նոյն ինքը Չարդախլուն: Այժմեան չարդախլուեցիք գաղթական են Ջանգեզուրի Մաղավուզ գիւղից



երբեմն վագրեր և արջեր են պատահում, այդ պատճառաւ նրա վերայ յայտնի որսորդներն են բարձրանում միայն և այն շատ սակաւ: Մեր բախտից մեր առաջնորդ հայր Յովհաննէս Տէր-Գրիգորեանցը, չը նայած իւր սպիտակ, պատկառելի ալիքներին, նոյնպէս քաջ որսորդ է: Նորին արժանապատուութիւնը մեզ յորդորում է և քաջալերում պատահական ոչ մի բանից երկիւղ չը կրել: Նա խոստանում է մէն-մինակ մեր անձը պաշտպանել:

- Հապա այս օձերը, այս խլուրդ ու մողէսները, տէ՛ր հայր, որ ժայտերի վերայ պար են գալիս, սրանցից է՛լ երկիւղ չը կայ,-հարցնում եմ ես տէր Յովհաննէս հօրից:

Նա ինձ պատասխանում է հեզնելով.

- Ուրեմն մենք ամէն մի ճանճ ու մլուկի՞ց էլ պետք է երկիւղ կրենք, մի՞թէ օձերի և մողէսների համարել պիտի մտածենք:

Ես, ինչպէս ասում են, ձայնս փորս եմ քաշում, լռում:

Այսպիսով, Ջրաբերդի վրայ բարձրանալու երկրորդական արգելափոխները վերացած էին, բայց գլխաւորը՝ արևի կիզիչ զօրութիւնը՝ դեռ ոչ: Որոշեցինք նախ Երից Մանկանց վանքը գնալ, որը գտնվում է Ջրաբերդի ետևքը՝ արևմտեան կողմից, նրանից մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ և դարձաւ մի քանի շաբթ լեռնային ազխազխներ և կոյտեր անցնելուց յետոյ, տեսնել և ապա ի վերադարձին բարձրանալ Ջրաբերդի գագաթը: Ասած և կատարած: Կրկին և կրկին Թրդի¹ մաքուր և սառնորակ ջրի վրայ ընկանք, խմեցինք, լուացուեցանք, հովացանք ու զովացանք և նորից ճամփայ ընկանք: Բայց ճամփայ եմ ասում, է՛հ, լոխ քար, ժայռ, լերկ ապառաժ և միշտ ցից-ցից, պտուտակաւոր, գառիվեր, գառիվայր: Խեղճ ձիանքը մինչև անգամ մեր ետքնում տնքտնքում ու քրտնում էին: Մենք հո բոլորովին բանից պրծանք: Իմ հոգին գոնեա քաղվում էր: Եթէ ընկերներս չը լինէին, ես լաց կը լինէի: Հետերս վերցրած ջրի շիշը երկու ումպով մէնակ ես ինքս դատարկեցի: Արեգակի շեշտակի ճառագայթները գլուխս կատարելապէս ծակում են, շունչս շարունակ կտրվում է: Եւ ես իւրաքանչիւր 5 րոպէի վերայ 2 րոպէ դադար եմ առնում: Ի՛նչ կը լինէր, եթէ բարի աստուած այսքան ծառներից գէթ մի քանիսը այս ժայտերի վերայ տնկէր: 35 րոպէից յետոյ մենք մտնում ենք թաւ անտառի մէջ: Ճանապարհն այնքան լաւ է, որ գէթ գառիվերներում կարելի է ձի նստել: Իսկ գառիվայրները կրկին պետք է ոտքով իջնել: Իսկ թէ այդ գառիվայրների և գառիվերների թիւը որքա՞ն է, էլ մի՛ հարցնէք: Իմ միակ մխիթարութիւնս այն է, որ որքան անտառի խորերն ենք մտնում, այնքան ծառերը հաստանում, բարձրանում են և իրանց ստուերներով մեր անձը պատսպարում արեգակից: Պակաս չեն և ջինջ ու ցուրտ աղբիւրները, որոնց ամէնի ջրիցն էլ ես խմում եմ շարունակ և միշտ ձեռքիս շիշը լեցնում, պատրաստում:

Հասանք Երից Մանկունք: Վանքը շինած է լեռներից մինի դուրան լանջի վերայ: Չորս կողմի լեռներն իրանից բարձր են: Եկեղեցին փառաւոր է, կամարակապ, պայծառ, միջին՝ չորս հոյակապ սիւներ: Ափսո՛ս, որ մի պատը ճեղքուել է, և կտուրը կաթում է: Եկեղեցույ կողքին՝ տներ, սենեակներ, դպրոցական մի լաւ և պիւնդ շինութիւն կամարակապ: Անպարիսպ գաւթի մէջ բաւականին թուով կան տանձենի, որթ, խնձորենի, թզենի, ընկուզենի, դեղձի, թթենի (սպիտակ և խառ տեսակները), կեռասի, շագանակի, տկողի և սերկկի, բոլորն էլ արուեստականաբար տնկած, աճեցրած և ուռճացրած: Ջուրն առատ, մաքուր և պատուական է: Այդ ծառների տակ կոկոռում են մի քանի թխսահաւեր՝ իրանց բազմաթիւ ճտերով:

¹ Թրդին բոխում է Մռաւ կամ Մռով լեռան ստորոտում եղած Գարագեօլ կոչված լճից: Ինչպէս Թրդին, նոյնպէս և Թարթառը մեծ շառաչմամբ են ընթանում: Նրանց մէջ լիքն են լեռներից զորում մեծ և փոքր ժայտեր: Ջրաբերդի արևելեան կողմի Մազէ կամրջի հանդէպ հենց մի նոր գորումած ահագին ժայռ կայ ճանապարհի վերայ: Գալով Մռաւին՝ դա մի չորս գագաթանի լեռ է, որ երկու իսկ կողմերից բազուկներ է արձակում: Մռաւը այս կողմի գիւղօրէից ամառնային արօտատեղին է: Տասնչորս գիւղերի չորքոտանիքը ողջ ամառը Մռաւի գագաթ ու լանջերում են արածում:



Վանքը վանահայր չունի: Նրան պահպանում և կառավարում են երկու պառուսած աղջկերք (մինը՝ մի աչքով կոյր): Աղջկերանցից մինը կուսապատցի է և կոչվում է Մարթա Տէր-Պետրոսեան, իսկ միւսը՝ մատաղիսցի՝ Խաթուն Սարգսեան: Ունին երկու սպասաւոր Մարադա գիւղից, երկուքն էլ հիւանդոտ, ցաւագար մարդիկ, որ հազիւ կարող են (մանաւանդ մինը) ոտքի կանգնել: Աղջկերքը վանքը կապալով են վերցրել Շուշուայ դպրանոցի հոգաբարձութիւնիցը և տարին 30 ռ. են վճարում:

Ուխտաւորներից հավաքուած նուէրներն էլ հազիւ այդ գումարին է հասնում: Հետևաբար Երից Մանկանց վանքի պահապան-կառավարիչներն իրանց աշխատանքով և կալոցի ու այգեկութի ժամանակ մուրալով են ապրում, միևնոյն ժամանակ կերակրում և խնամում են վերոյիշեալ երկու տառապեալ և անտէրունչ աղքատներին, որոնցից մինը կոչվում է Սահակ Սաղիեան, միւսը՝ Բեգլար Աւագեան, երկուքն էլ մարադեցի: Թէ՛ Երից Մանկանց և թէ՛ տեսածս միւս վանօրէից շարժական և անշարժ կալուածոց պահպանութեան և կառավարութեան մասին ես իմ կարծիքս ու նկատողութիւնքը պատիւ և վստահութիւն ունեցայ առանձնապէս յայտնել Արցախու սրբազան առաջնորդին: Ուրեմն աւելորդ է այդ առթիւ այստեղ խօսելս, մանաւանդ որ ցանկալի բարեկարգութիւնք և հսկողութիւնք վանօրէից մէջ մտցնելը սրբազան առաջնորդի իրաւասութիւնից, դժբախտաբար, դուրս է: Սրբազանն ինձանից աւելի էր վշտանում, երբ լսում էր իմ պատմութիւնը: Արցախի վանօրէից և կալուածոց մասին ես մտադիր եմ առանձին և ընդարձակ յօդուած պատրաստել «Մեղուի» համար: Դեռ պէտք է այցելեմ Ամարասայ, Գանձասարի և Խօթայ վանքերին ևս: Մինչև այն ժամանակ, անշուշտ, ընդհանուր հայրապետի հաստատութիւնը տեղի կունենայ, և հայրապետը միայն կարող է այժմեան կարգ ու ձևերն բարեփոխելու տնօրէնութիւնն անել:

Ես վստահութիւն ունեցայ նոյնպէս խնդրել սրբազան առաջնորդից, որ բարեհաճի կարգադրել իւր վիճակի բոլոր եկեղեցաց և վանօրէից ու նշանաւոր շիրիմների արձանագրութիւնքը հաւաքել և տպագրել տալ, ըստ օրինակի հանգուցեալ Ջալալեանին, որոյ գրքում շատ վանքերի և աւերակների արձանագրութիւնքը չը կան: Ես հաշուած եմ, որ այդ գործը 200 մանէթ ծախսով գլուխ կը բերեն տեղացի քահանայք: Բաւական է, որ թէկուզ Համագասպ քահանայ Տէր-Աւետիքեանցի նման մինը յանձնաժողովի պարագլուխ կանգնի:

Սրբազան Սագինեանցը յօժարութեամբ պատրաստակամութիւն յայտնեց այս գործը սկսելու: Տեսնենք¹:

Երից Մանկանց վանքի աջակողմեան, որ, ըստ եկեղեցական կանոնաց, ընդունուած է ձախակողմեան անուանել, խորանի մէջ մի փառաւոր, քանդակագործ շիրիմ կայ՝ այսպիսի արձանագրութեամբ.

Այս է տապան սրբոց երից մանկանց:

Տեսայ և մի արծաթեայ աջ՝ նուէր Կուսապատի հասարակութեան (1872-ին), որոյ միջի մասը նոյն այդ երից մանկանց մասն է եղել: Թէ այդ երեք մանկունքը ովքեր են, ես չը գիտեմ: Ոչ ոք էլ չը կարողացաւ ինձ մի բան հասկացնել: Ի՞նչ ասել կուզի, որ այդ մանկունքը կամ նրանց նշխարքը Բաբելոնի հնոցում այրուող Սեդրակ, Միսաք և Աբեթնակով մանկունքը չեն կարող լինել: Հապա ովքե՞ր, ո՞ր սուրբ կամ ընտրեալ ու գուցէ նահատակեալներն են դոքա:

Ինձ միայն այսքանս յայտնի է, որ Երից Մանկանց վանքը, հայ մելիքների օրով Գանձասարի հակաթոռ կաթողիկոսարանն էր: Այստեղ նստում էին Սիմեօն, Ներսէս, Եփրեմ և Իսրայել կաթողիկոսունք:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 20-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 68-ում (1 սեպտեմբերի, էջ 1-3)



Ահաւասիկ վանքի արձանագրութիւններից գլխաւորները:

Եկեղեցւոյ ճակատին.

Ի ՌՃԽԹ (1700) ի սմի (սմին) ժամանակս Շահ-Սուլէյմանի մեծի արքային Պարսից ես Սիմէօն շնորհին աստուծոյ կաթողիկոս Աղուանից շինեցի զեկեղեցիս ընդ հարագատ եղբարք իմով Բզնատիոսի վարդապետի, որ եմք որդիք Մարգսի քահանայի Մեծ-Շէնեցւոյ, յաղօթս յիշեցէք որդիք նորա Օնի (թէ՛ նոր Սիոնի) և մտատանելն և յելանելն դրանս տէրունի, ամէն:

Բեմի ճակատի արձանագիրը.

Կերտեցաւ այս յարկ նուիրանաց՝ տուն այլ և տաճար փառաց նորոյ ուխտի պատարագաց, գոր տէր Յիսուս մեզ աւանդեաց, շինեցաւ յերկուց հարագատաց Սիմէօն կաթողիկոսի և Բզնատիոսի րաբունեաց, և այլ յոգունց աշխատողաց գրեցելոց ի դպրութիւն կենաց, ի թուականիս Հայոց ազգի հազար հարիւր և չորս տասնի (1691) ավարտեցաւ սոյն եկեղեցի ի փառս անճառ տեառն Յիսուսի. որք աղօթէք և երկրպագէա յուղիղ մտօք յոյս նկատէք, աղերսանօք զտէրն յիշեցէք և յանցանաց մերոց մարմնաւորաց Մարգսի քահանայի և մօր մերում և այլ աշխատողաց ի սմա, ամէն:

Մի հին գերեզմանաքարի վրայի (գաւթում) արձանագրութիւնը.

Այս է հանգիստ Մաքու Էմին, թ. Ռ (1551՝):

Այս գերեզմանաքարի մի կողմում քանդակուած են խաչեր, իսկ միւս երեսում՝ մի մարդ, որ գութան է վարում: Գութանը լծուած չորս գոմէշներն աւելի էշերի նմանութիւն ունին, եթէ ուշիուշով լաւ չը դիտէք: Գութանի հանդէպ քանդակուած է մի մեծ և բազմաճիւղ ու տերևաշատ ծառ:

Մի այլ և աւելի փառաւոր գերեզմանաքար ևս տեսայ գաւթում: Քարի մի կողմումը քանդակուած են երեք ձիաւոր և երեք հետիոտն տղամարդիկ, որոնք ձեռքներին բռնած են զինու գաւաթներ: Քարի միւս կողմումը քանդակուած են վեց տղամարդիկ՝ հետիոտն, ձեռքներին սրուակներ ու գաւաթներ բռնած: Տապանագիրն է.

Այս է տապան Բայինդուրի՝ որդի Մարգիս Բւզրաշին, մայր սորա Ղուշի թութի:

Մի այլ գերեզմանաքարի վերայ.

Այս է տապան աշխատասէր Եսայի վարդապետին Կուսապատցի 1865:

Մի այլ գերեզմանաքարի վերայ.

Ի 1865 թ. ի սմին տապանի ամփոփեալ դնի, դասատու մանկանց կուսակրօն հոգի, Ներսէս վարդապետ ծառայ Սիօնի, ձրի շնորհատու պարծանք հայ ազգի Շուշու քաղաքացի Արցախ նահանգի:

Ահա այն տեղեկութիւնքը այս վարդապետի մասին ես հաւաքեցի: Ներսէս վարդապետը շուշեցի է, ազգանունը՝ Միրզա-Աւագեան: Նա եղել է վանահայր Ամարասի և սոյն այս Երից Մանկանց վանքերին: Երկու իսկ վանքերումը դպրոցներ է ունեցել տիրացուաց և գիւղական մանկանց համար:

Ներսէս վարդապետի սաներն են այսօրուայ Արցախու գոված հոգևորականաց շատերն: Կան և վաճառականք և արհեստաւորք: Ներսէս վարդապետը վախճանել է երիտասարդ հասակում զինեմուլութիւնից:



Սա, իհարկե, վատ բան է: Բայց ո՞վ կարող է պնդել, թե բարեյիշատակ հանգուցեալին այդ ախտին գերի անողը նոյն ինքը կեանքը չէր: Այո, մեր կեանքը երբեմն ինքն է արտադրում գինեմուլներ և գինեղներ:

Եկեղեցոյ հարաւային պատի վերին ծայրումը փորագրած է ծաղկազարդ փակագիծ տառերով.
Ներսէս կաթողիկոս:

Հիւսիսային պատի ծայրումը՝ նոյն ձևով.
Իսրայէլ կաթողիկոս:

Արևելեան պատումը.
Միսէօն կաթողիկոս:

Արևմտեանում բան չը տեսայ: Եկեղեցոյ չորս պատերի վերայ էլ քանդակագործ, մեծ և հոյակապ խաչեր կան¹:

Արձանագրութիւնքը ընդօրինակելու համար մենք ստիպուած էինք ժամը մինչև 5-ը Երից Մանկանց վանքումը մնալ, այնուհետև յետ դառնալ, Ջրաբերդը բարձրանալ և մինչև Մարտակերտ հասնիլ: Կարելի չէր: Ուստի գիշերը վանքում մնացինք² և հետևեալ օրը՝ ժամը հազիւ 9-ին, կարողացանք դուրս գալ այնտեղից:

Ուշանալներուս պատճառն այն էր, որ մեր ձիերը գիշերը փախած էին: Երեք ժամ անտառի մէջ որոնելից յետոյ վերջապէս գտանք հեծանք և հասանք Ջրաբերդ:

Ձիերը բերդի տակ կապուտելով՝ մենք սկսեցինք հետիոտն վերելակել:

Ո՛, այդ վերելակելը... ինչնիցէ: Արկածախնդրութիւնն էլ իւր քաղցրութիւններն ունի դարձեալ:

Ամէն անգամ, երբ ես որևէ և ինչնէ աղբի կտոր եմ տեսնում, իսկոյն բղաւում եմ մեր առաջից մագլցելով բարձրացող Յովհաննէս հօրը.

- Ա՛ տէր, սա ի՞նչ կենդանու աղբ է:

- Լապստրակի:

- Սա՞:

- Չաղգալի:

- Սա՞:

- Աղուէսի:

- Սա՞:

- Գայլի:

- Սա՞:

- Արջի:

- Ո՞նց թէ արջի, ա՛ տէր:

- Արջի, արջի, վախի՛լ մի, ես էս ա քրզնա (քեզ) հետ ըմ:

- Ա՛ տէր, փէլէնկի (վագրի) հետքեր տեսնո՞ւմ ես:

- Քիշի՛, արի՛, է՛հ, քեզ ասում եմ, վախի՛լ մի:

Կէս ժամից յետոյ մենք արդէն Ջրաբերդի գագաթումն ենք: Ստուգելու համար թէ մեզ հարևան գագաններ ունի՞նք արդեօք և որքա՞ն ու ի՞նչ տեսակ, մենք հարկաւոր համարեցինք նախապէս

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 21-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 69-ում (5 սեպտեմբերի, էջ 1)

² Երից Մանկանց վանքում մենք խմելու ըլլալու ենք (լորենի) ծառի ծաղիկներից պատրաստած թէյ, որ թէև ո՛չ համ ունի և ո՛չ հոտ, լաւ գոյն ունի: Սգնի ծառի ծաղիկն էլ այս կողմերում գործածում են իբրև թէյ



հրացանների ճարձատիւններով մի անդաստան կազմել Ջրաբերդի չորս կողմը: Մօտակա լեռները խուլ և երկարատև արձագանք տուին: Հեռաւոր անտառների մէջ յանկարծական խշխշոց ու բառաչոց ենք լսում: Երկչոտ կիստար ու նապաստակներ են դոքա: Կոնչիւն ու շղղկուն են հասնում մեր ականջին: Դրանք էլ կաքաւ և ագռաւներ են: Իսկ մեր շուրջը լուռ է, հանդարտ: Մելիք Հաղամի ամրոցի վերայ, նրա շուրջը ոչ մի կենդանութեան հետք չէ երևում...: Յածրից մենք միայն Թարթառի շառաչիւնն ենք լսում, որ իւր հոսանքով երերացնում և գլորում ու քշում, տանում է Ջրաբերդի սեպածև ժայռի կտորները և այսպիսով օրըստօրէ և ժամ առ ժամ քանդում, քայքայում է Մելիք-Իսրայէլեանների անառիկ մարտկոցը: Բայց լաւ է, մենք սկսենք ման գալ:

Յից առ ցից կանգնած վիթխարի ժայռեր, կրկնակի պարիսպ՝ թէն ոչ ամէն տեղ, մի ընդարձակ տուն՝ տխուր մնացուած, բեկորներ, տան հանդէպ մի պարտէզ, ուր աճել են թուփ, շլոր, մոշ և անթիւ թուփ ու մացառ. ահա ձեզ Ջրաբերդի գագաթը: Ուրիշ ոչինչ, միանգամայն ոչինչ: Շրջակա լեռների մէջ Ջրաբերդի լեռնակն ամէնից ցածրն է: Ուրեմն և ամէն տեղից ու ամէն կողմից կարելի է հարուածել Մելիք-Իսրայէլեանների ամրոցը թէկուզ լոկ ատրճանակներով:

- Բաբէ՛, ա՛յս է եղել ուրեմն հոչակաւոր Ջրաբերդի հոչակաւոր մելիքների վերջին ապաւենը, և նեցուկը: Եւ այդտե՛ղ ուրեմն, մինակ իրանք՝ մելիքնե՛րն էին ապաւինում ու ապաստանում իրանց, միմիայն իրանց ընտանիքով՝ թողնելով ժողովուրդը դաշտերի և լեռների երեսին անտէր, անտէրունչ պարսիկների և զանազան բարբարոսների ձեռին:

Հետներս վեր առած խառ թթի դատարկ կողովիկը՝ գլխիվայր ես կախ եմ տալիս Մելիք-Իսրայէլեանների պալատի պատերից մինի վերայ բուսած ծառից...: Եւ իմ աչքերը դէպի Երից Մանկանց վանքն եմ ուղղում: Գմբէթի վերայ արևի շաղքում դեռ ցոլում է Քրիստոսական խաչը: Յանկարծ միտս եկաւ Շարականի մի տունը, որ մենք խմբովին երգեցինք. «Խաչն կենարար, որ եղև մեզ փրկութիւն, սովաւ ամենեքեան զքեզ բարբերանեմք»:

Ջրաբերդից պարզ նկատվում են Թրդի գետի աջ ափում եղած լեռան լանջի վրայի այսպէս անուանեալ Անապատ կոչուած գիւղաքաղաքի ակերակները՝ բոլորն էլ գետնատարած: Միայն եկեղեցին է, որ կանգուն է դարձեալ: Ասացին, որ այդ տաճարի վերայ ևս արձանագրութիւնք կան, բայց Թրդին անցնելու մենք ոչինչ հնար չունինք:

Ուրեմն լաւն այն է, որ Ջրաբերդից էլ իջնենք և գնանք վաղօրոք, մեր ընկերները գտնենք: Միմեանցից հեռու, բաժան մնալը լաւ չէ...

Երեք ժամ անտառների և լեռների մէջ շարունակ վերելակելով և ցածրանալով՝ վերջապէս մենք հասանք Մեծշէն գիւղը, ուր մեզ սեպհական վրանում մի լաւ ճաշով և առատ գինիով պատուեց աստիճանաւոր պ. Արսէն Տէր-Իսրայէլեանը:

Մինչ պ. Արսէնի հրամանաւ մեր իրաւասութեան տակ դրուած չափառը կը պատրաստուէր, ես Մեծշէնն աչքից անցկացրի, և ահա մի քանի խօսք և այդ գիւղի մասին, որ, ինչպէս Երից Մանկանց եկեղեցւոյ արձանագրութիւնիցը տեսանք, Աղուանից Միմեօն կաթուղիկոսի հայրենիքն է:

Այս գիւղը այժմ ունի 50 տուն բնակիչ, մի եկեղեցի և երկու քահանայ: Բայց վաղ նա մի քաղաք էր և ուներ 900 տուն բնակիչ, 2 եկեղեցի և 5 հանգստարան:

Մի ժամից յետոյ ես կանգնած եմ Մելիք Հաղամի պալատի ընդարձակ գաւթումը՝ Ինն մասանց վանքից ոչ աւելի, քան մի քանի տասնեակ սաժէն հեռաւորութեամբ: Պալատը բաղկացած է 12 մեծ և փոքր սենեակներից՝ բոլորն էլ կանգուն, իւրաքանչիւր սենեակի մէջ՝ մի մի բուխար և բուխարի ձևով շինած կենդանեաց մտուրներ մի քանի սենեակներում-ախոռներում: Մելիք Հաղամի պալատի երկայնութիւնը 64, իսկ լայնութիւնը 53 արշին է: Կամարակապ, մեծ դուռը գեղեցիկ է: Սրահի սիւներից մի քանիսը քանդած է: Պալատի անկիւններում կան չորս աշտարակներ,



պալատի հանդէպի հին շինութեանց գետնատարած կոյտեր: Արձանագրութիւնք միմիայն Մելիք Հաղամի բնակարանի ճակատներին կան և են թուով երեք: Ահա այդ արձանագրութիւնքը.

ա) Որ և ողորմութեամբն Ամենագօրին աստուծոյ բազմաց ժամանեցոյց եղաք... շինեալ գտունս իսկ բարերարին աստուծոյ տուաւ ինձ զկարողութիւն և զգօրութիւն սուրբ Հոգւոյն ծանուցեալ Մելիք-Իսրայէլի որդի ես Մելիք-Հաղամս շինեցի գեղեցիկ կամարօք գեղեցիկ անարատ տուն և սարայս և բազմահանճար զարդիւնաւորութեամբ առնայիններով (՞) բարեցանկ և վայելեցե՛ հանդերձելութեամբ, թիւ ՌՄԻ (1771):

բ) Կարողութեամբն աստուծոյ ես Ներսէսի որդի և Պետրոս իւզբաշի վերակացու լեալ աշտարակիս:

գ) Մենք հարմատոյ (յարմատոյ յ) Հայրն Աբրահամ կեանք նորա հիանալի, նա ոչ շինեաց տուն և տեղի բնակութեան միշտ վրանօք շրջէր յերկիրն ի խառան այլ անուսումն կեանք մեր կարճացեալ թիւ ամաց համայն բոլոր երևելոյ ենք մեր միւս անգամ տեսիք ի մեր յիմարութեանց սորա ժառանգաց չենք... ալանաց... Հման աստուած Աբրահամու ես և...:

Ինն Մասանց վանքը նոյնպէս մի փառաւոր և պայծառ շինութիւն է: Գաւիթը պարիսպ չունի: Նրանում կան մի կարգ սենեակներ և բաւականին գերեզմաններ: Այս վանքումն էլ չը կան վանահայր, այլ պահապան գիւղացիք: Եկեղեցւոյ արձանագրութիւնքը սոքա են.

Շինեցաւ սուրբ ուխտս Ինն մասանց տրք ժողովրդոց ի ժամանակս Յովսէփ վարդապետի Փինաչեանց:

... Կառոյց ինն մասանց եկեղեցիս Քրիստոսի հաւատացելոց:

Այս նորակերտ եկեղեցւոյ հարաւային կողմն է հին եկեղեցւոյ կոյտերը: Հին ժամանակ այստեղ էր Մոխրաթաղ գիւղը, որ 700 տուն բնակիչ ուներ: Այժմեան Մոխրաթաղ գիւղը հնի արևելեան կողմն է և մի ժամաւ հեռի է նրանից: Ինն մասանց եկեղեցւոյ արևելեան կողմում 24 շիրիմներ կան Մելիք-Իսրայէլեանների հին և նոր սերնդոց:

Ինն մասունքից մենք անցանք Մոխրաթաղ գիւղը, որ ունի 50 տուն բնակիչ: Հին և միակ եկեղեցին իւր հաշուով վերանորոգել է շուշեցի պ. Մեսրոբ Թառումեանցը: Մոխրաթաղում մեզ հիւրասիրեց Նիկոլայ բէկ Փիրումեանց երիտասարդ պարոնը, որ Մելիք Հաղամի ծոռն է, այսինքն՝ թոռան որդին և իբրև մելիքի ժառանգ՝ բաւականին կալուածներ ունի: Նրա թղթերի մէջ պատմութեան վերաբերեալ ոչ մի թուղթ ես չը գտայ: Մոխրաթաղում ես, ցաւօք սրտի, ներկայ եղայ մի քննութեան և կարգադրութեան, որ արաւ տէր Համագասպ հայրը ապօրինի կանայք պահողի նկատմամբ: Այդ մարդը օրինաւոր կերպով պսակուել է մի օրիորդի հետ: Մի քանի ժամանակից յետոյ արդէն թիրքական սովորութեամբ իրան կին է ընտրել մի այլ օրիորդի: Յետոյ դրան ճամփել է, և մի այլ օրիորդ է բերել, յետոյ մին ուրիշը, մինչև վեցը: Յետոյ, երբ այդ յաճախակի փոփոխութիւնից ձանձրացել է, որոշել է երկու կնոջով բաւականանալ: Դրանցից մինը իւր առաջին՝ օրինաւոր կինն է, իսկ երկրորդը՝ ապօրինի և ոչ այլ ոք է, եթէ ոչ իւր հարազատ զոքանջի հարազատ քոյրը:

Գիշերուայ ժամը 12-ին մենք հասանք Մարտակերտ, գտանք մեր ընկերներին: Հետևեալ օրը՝ դարձեալ կէսգիշերին, հասանք Շուշի: Մի քանի օր հանգստանալուց յետոյ ես ճամփայ կելնեմ դէպի Խաչէն, ապա Վարանդ ու Դիզակ:

Աւելորդ չեմ համարում «Ուղեգնացական ակնարկներ»-իս հետ կցել այս անգամ և հետևեալները.



Չայլու գիղի բնակիչք հետևեալ ներբողն ունին լուի համար շինած.

Խարս (հարս) քո սիրուն և զընգզընգան,

Ես քո սիրուն կը զընգզընգամ.

Աման լուեր, մադաթ լուեր,

Ցերեկ կերթան սներն (սիւներն) ի վեր,

Գիշեր կը գան ջղերս ի վեր:

Տէր Համագասայից հետևեալ ժողովրդական երկու արագախօսութիւնքը լսեցի.

Թան, թան,

Պապս ուտի, երթայ գութան:

Խաւիժ, խաւիժ, խաւաւիժ,

Պապն ուտի, ընկնի ոտից:

Սոյն այս քահանան, ժամանակաւ Արցախի վանքերից և գիղերից հաւաքած է ունեցել այլ և այլ ձեռագիր տետրակներ և մատեաններ, որոնք ուղարկել է Էջմիածնի գրադարանին: Նոյն վեհափառութիւնը հանգուցեալ Գեորգ Դ. կոնդակաւ՝ յ3-ն Հոկտեմբերի 1880 ամի, 429, օրհնել և գոհունակութիւն է յայտնել Համագասայ քահանային: Ափսոս, որ ո՛չ քահանան է յիշում իւր յԷջմիածին ուղարկած 14 կտոր ձեռագրերի անուանքը, ո՛չ հայրապետի օրհնութեան կոնդակումն է յիշուած: Տէր Համագասայի մօտ ես տեսայ մի թղթեայ Խորենացի և Եղիշէ՝ միասին կազմեալ: Ձեռագիրը թուական չունի:

Վերոյիշեալ պ. Ջալալ Տէր-Գրիգորեանցն իմ խնդրանօք կազմեց Ջրաբերդում գտնուած հետևեալ աւերակների ցուցակը: Աւերակները բոլորն էլ սփռուած են Թարթառի երկու ափերումը: 1) Ծոս, 2) Խուտրաշէն, 3) Սըռէնշէն, 4) Սրաշէն, 5) Սթնաձոր, 6) Ըկանայ, 7) Լեօվա (Լեոնայ), 8) Խըլզնաշէն, 9) Ղառուքէնդ, 10) Օրան-Մեծշէն, 11) Ծարաւաջուր, 12) Ջուխտակ շինատեղ, 13) Եղցաթումբ, 14) Բակլիկ շինատեղ, 15) Բըլախանայ, 16) Թըրթոր, 17) Մէջիդ, 18) Կաթողիկոսար:

Երից Մանկանց վանքի մի բարձրադիր կետից երբ ես չորս կողմս էի դիտում, արևմտա-հարաւային կողմում՝ մի բարձր լեռան գագաթին, աչքիս շինութեան նման մի բան երևեցաւ: Հարցրի արժ. Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցին: Պատասխանեց.

- Մասիսի աւերակներն են: Տեղեկութիւն ունի՞ք, ա՛ տէր:

- Տեսած եմ մանուկ ժամանակս, ուստի ոչինչ տեղեկութիւն չունիմ,-պատասխանեց ինձ քահանան:

Ջրաբերդի հայ գիղացիներին հետևեալ գեղեցիկ սովորութիւնքը յատուկ են:

Գիղական համայնքը՝ թէ՛ արք և թէ՛ կանայք, դաշտային և առտնին գործքերում աննախան-ձաբար և փոխադարձաբար օգնում են միմեանց: Այդ սովորութիւնը յատուկ է և Շիրակի ու Ջաւախէթի հայ գիղերում: Այդ կողմից ամենից օրինակելին է Խոտըրջուր կոչուած հայ կաթօլիկ գիղը: Համայնական սկզբունքի վերայ հիմնուած այդ գեղեցիկ սովորութիւնը, որ Արցախում մրջի է կոչվում, նկատելի է և քաղաքների արհեստաւորների մէջ:

Ջրաբերդի գիղացիք շատ չափաւոր կեանք են վարում: Ծխախոտ ծխելը և գինի կամ օղի խմելը նրանց մէջ ախտ դարձած չէ (իմ խօսքը տեսածս գիղերի նկատմամբ է): 40 տարեկանից վար մարդիկ առհասարակ ծխախոտի համը չը գիտեն: Նշնող աղջկայ գլխագինը Ջրաբերդում շատ չնչին է, ընդամենը 40 ռուբլի: Այդ գլխագինը կոչվում է յըղի (ուղի, ուղեգին): Աղջկերքը նշնում են շատ վաղ, երբեմն 9 տարեկանը:



Հացի սեղանի սփռոցները կապտագոյն են, սպիտակ բծերով: Այդ սփռոցների վերայ միշտ գրած, պասամայած է լինում կա՛մ ամբողջ Տերունական աղօթքը, կա՛մ, որ աւելի յաճախ է պատահում, «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» բառերը, կա՛մ «Եղիցի սեղանս այս օրհնեալ անուամբ Հօր և որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

Ջրաբերդի եկեղեցաց և եկեղեցականաց մասին ես կը խօսեմ յետոյ, երբ Խաչէնը, Դիզակը և Վարանդը ևս տեսնեմ, պրծնեմ:

Վերջ ամենայնի. իմ ման եկած բոլոր գիւղերում և վանքերում Ապրէս Բէկնազարեանցի մասին արած ամէն տեսակ հետախուզութիւնքս ապարդիւն անցան: Ոչ ոք ո՛չ տեսած և ո՛չ լսած է այդ կամաւոր աղքատին: Շուշուայ ոստիկանարանի գործերիցը ես տեսնում եմ, որ յընթացս 3-4 տարուայ յիշեալ գաւառում 15 աղքատ և անյայտ մարդիկ են մեռել և թաղուել այլ և այլ տեղերում: Բայց յետոյ դրանց տէրերը գտնուել են: Հետևաբար Ապրէս Բէկնազարեանցը կա՛մ ուրիշ գաւառ կամ աշխարհ է անցել, կա՛մ անյայտութեամբ մեռել է և մինչ օրս անյայտութեան մէջ փռշի դարձել:

Տեսնենք ինչ հետևանքի կարող կը լինիմ ես հասնել առաջիկայ ճանապարհորդութեանս ժամանակ¹:

Մինչ օրս Արցախում արած ճանապարհորդութեանս ժամանակ բախտս միշտ հաշտ աչքով է նայում վրաս: Ուղեկիցներ միշտ անպակաս են լինում: Նրանք իմ բախտից այնպիսի անձինք են լինում, որոնցից ես միշտ շահվում եմ բարոյապէս, երբեմն նաև նիւթապէս, այսինքն՝ փողս գլխած ժամանակ նրանցից փոխ եմ առնում, շատ անգամ էլ նրանց հաշուով կերակրում:

Բախտն ինձ առաւել օգնեց դէպի Խաչէն և Վարանդ ճանապարհորդած ժամանակս մանաւանդ: Արցախի թեմական առաջնորդ Աբրահամ Սագինեանցը պատրաստվում էր յուլիսի վերջերին այցելել Գանձասար և Ամարաս վանքերին: Նորին Սրբազնութիւնը բարեհաճեց ինձ ևս իւրեան հետ վեր առնել և իւր ձեռքից եկած օրհնութիւններով միանգամայն պարտաւորեց ինձ: Հրապարակական շնորհակալութիւն նորին բարձր սրբազնութեան:

Շուշուց մենք դուրս եկանք յուլիսի 27-ին ձիերով: Մինչև Գանձասար մեր գնացած բոլոր ճանապարհի շրջակայքում գտնուած հայ գիւղական համայնքների հոգևոր և մարմնաւոր ներկայացուցիչները, ձիաւորների յատուկ խմբերով շարունակ և փոխ առ փոխ, դիմաւորում և ուղեկցում են իրանց սրբազան առաջնորդին, որ իւր հերթում պատշաճաւոր ընդունելութեամբ շահում է նրանց և օրհնութեամբ վերադարձնում իրանց տեղերը: Վեց ժամ յետոյ մենք արդէն վեր ենք եկել հանգստանալու շուշեցի Խօյլու Օսեփանց պարտիզումը: Այս պարտիզին կից տարածուած են մի քանի տասնեակ պարտեզներ, սեփականութիւն այլ և այլ քաղաքացի անձանց: Պարտեզները բեռնաւորված են ըստ մեծի մասամբ, թթենիներով: Ուրեմն այստեղ օղի են քաշում: Եւ քաշողն էլ վերոյիշեալ Խօյլու Օսեփանցն է, որոյ գործարանը ցարդ Արցախում տեսածս օղիի գործարաններիցն ամենից մեծն է:

Մինչև նախաճաշի պատրաստուիլը դաշտի և շրջապատ լեռնակների այլ և այլ կէտերում հեռադիտակս ինձ ցոյց է տալիս հետևեալ հայաբնակ գիւղերը. 1) Նորագիւղ, որ ունի 36 տուն: Գիւղի կողքին մի խումբ ծառերի շուրջում կանգնած է մի ուխտատեղի, անունը՝ Սարիխաչ, 2) Դաշբուլաղ՝ 60 տուն, 3) Դահրա՝ 64 տուն, 4) Մէիթիշէն՝ 22 տուն, 5) Պտրեցիք՝ 47 տուն, 6) Խանձք՝ 23 տուն:

Նախաճաշից յետոյ մենք անմիջապէս ճամփայ ընկանք, չը նայած որ ամպերը հետզհետէ կուտակվում և ուռչում են: Մի ամսից աւելի անձրևի երես չը տեսնող շինականաց ուրախութեանը

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 22-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 70-ում (8 սեպտեմբերի, էջ 1-3)



չափ չը կայ: Չը գիտեն՝ ինչպես շնորհակալ լինին իրանց հայր սուրբից՝ առաջնորդից, որոյ ոտքը «ուղուրլու»¹ է եղել իրանց համար: Թող այդպես լինի: Քառորդ ժամից յետոյ սկսում է յորդ անձրև տեղալ: Պատասպարուելու տեղ չը կայ: Եթե լինի էլ, անյարմար և անտեղի է պատասպարուիլը: Գիւղացիք դրանով գայթակղվում են: Որպէսզի նրանք չը գայթակղին, չը վիատին, մենք պէտք է թրջուինք: Եւ թրջվում ենք ամենափառաւոր կերպով: Հովանոցները, կարելի է ասել, լոկ ձևի համար ենք պարզած: Իրանք՝ գիւղացիք, ջիւրիք են խաղում, ատրճանակներ պարպում, իսկ ծերունի եպիսկոպոսը և տողերիս գրողը ցրտից դողում ենք:

Ղշաղ անունով մի գիւղի (48 տուն) մօտ հասանք: Չանգակները տալիս են: Ես իմ ձիու սանձը դէպի շէն ոլորեցի՝ կարծելով, թէ գոնեա այդպիսով կը հրապուրեմ սրբ. առաջնորդին և իւր ժողովրդին: Բայց նրանք չը հրապուրուեցան: Եւ յորդ անձրևի տակ քշում են իրանց ձիանքը: Յետ դարձանք:

Մթնշաղին հազիւհազ հասանք Սէյդիշէն գիւղը, ուր որոշուած էր գիշերել: Մեզ իւր մաքուր և պատուական սենեակների մէջ հիւրասիրեց Նէնեսի Սարումեանց՝ տեղւոյն նախկին քահանայի այրին:

Թէ ինչպէս ես իմ շորերս փոխեցի, ինչպէս երկու բաժակ թէյ խմեցի, չը գիտեմ, միայն գիւղ հասած բոպէից սկսեալ մինչև կէսգիշեր՝ տէնդը և նրան յարակից ջերմութիւնը հոգիս քաղեցին: Եթէ չէր լինի բարի տանտիկնոջ մայրական խնամքը, դժուար թէ հետս վեր առած դեղօրայքը կարողանային միւս առաւօտը ինձ ոտքի կանգնացնել: Չարմացայ, երբ առաւօտեան սրբ. Սագինեանցն ինձ պատմեց, որ ինքը միանգամայն առողջ է և գիշերը շատ հանգիստ կերպով է ննջել: Երանի՛ այդ տեսակ կազմուածքի տէր անձանց, երանի՛ այդ կողմից հին սերնդի մարդկանց: Իսկ մենք՝ նոր սերնդի մարդիկս, հէնց իմանաս թողեայ կազմուածք ունինք: Ափսո՛ս և ամօ՛թ մեզ:

Սէյդիշէնից հեռի չեն Խնձրիստան գիւղը՝ 45 տուն բնակչօք, Մարդարաշէն՝ 20 տուն բնակչօք, երկուքն էլ հայաբնակ դարձեալ: Սէյդիշէնը 25 տուն է: Ունի մի փոքրիկ և խղճուկ եկեղեցի, ուր առաւօտեան՝ կիւրակէ, տեղական քահանան պատարագ մատոյց:

Սէյդիշէնի յիշածս քահանան, որ Խնձրիստան գիւղն էլ է հովուում միևնոյն ժամանակ, Անդրէաս եպիսկոպոսի ձեռնադրածն է: Ասացին, որ Սարումեանց Անդրէաս վախճանեալ քահանայի՝ մեր իջևանած տանտիրոջ ուսում առած որդիքներից մինը, որ այժմ Բագու է, կամեցել է հօր տեղեակ քահանայ դառնալ իւր հայրենի գիւղի ժողովրդականաց վերայ, բայց հանգուցեալ առաջնորդը, այժմեան քահանային նախապատվութիւն տալով, ուսում առած երիտասարդի խնդիրը մերժել է: Ի դէպ, եկեղեցւոյն կից գտնվում է յիշեալ Անդրէաս քահանայի գերեզմանը այսպիսի արձանագրութեամբ.

Հանգիստ Անդրէաս քահանայի Սարումեանց 69 ամաց. ամս քառասուն տանն աստուծոյ եղև հովիւ սրբակրօն: Նա ոչ երբէք դէմ Բարձրելոյ գործեաց անզգոն: Յիշեա՛ անցորդ ի քո մրմունջս Անդրէասայ զհոգին՝ զտէր Սարումեան հանգչիլ ի բարձունս մաղթեա՛ զմայր Յիսուսին:

Հանգուցելոյ մի այլ և մեծ արժանիքն ևս այն է եղել, որ իւր Մովսէս, Ներսէս, Դանիէլ, Միքայէլ և Սարգիս որդւոցը լաւ կրթութիւն և ուսում է տուել: Հիմի դրանք բոլորն էլ Բագուայ և Դարբանդի մէջ լաւ-լաւ պաշտօններ են վարում: Այդպէս ասաց ինձ նրանց մայրը՝ յարակցելով, որ իւր որդիքը մտադիր են վերանորոգել և զարդարել իրանց գիւղի եկեղեցին:

Դա անհրաժեշտ է, և Անդրէաս քահանայի որդւոց վերայ սրբազան պարտականութիւն կայ ոչ միայն եկեղեցին վերանորոգել, այլ նաև իրանց հայրենակիցների թշուառ մանկանց մատու-

¹ Ուղուր նշանակում է բարի հաջողություն բերող (ծանոթ. խմբ.)



րականի մասին ևս, իրանց կարողութեան չափ, հոգ տանել: Հինաւորց մարդը՝ իրանց հայրը, իւր պարտքը ճշտութեամբ և սրբութեամբ և աւելի քան որքան սպասելի էր, կատարել, պրծել է:

Այժմ որդիքն էլ պարտական են իրանց հերթում իրանց պարտքը կատարել ոչ միայն դէպի իրանց զաւակները, այլ նաև դէպի հայրենակիցների զաւակները, դէպի ազգի զաւակները:

Սարումեանցների մայրը գարնանը գալիս է Սէյդիշէն իրանց տափերը և պարտէզը կառուարելու և տղամարդու պէս կառուարում է: Իսկ ձմեռը տիկինը գնում է Բագու՝ որդւոց մօտ: Տիկին Նէնեսին իւր 64 ձիգ տարիներով, իւր զարմանալի ժրութեամբ, աչքաբացութեամբ և խելօք լեզուանիութեամբ ինձ յիշեցրեց այն ազի և նանի կոչուած տանտիկին-մայրերին, որոց ես Արցախում խիստ յաճախ եմ հանդիպում, որոնք իրանց օջախների հիմքը, նեցուկներն են կատարեալ:

Սէյդիշէնում մի առակախօս մարդ է եղել՝ Մնացական Թամամեանց: Որոնեցի և չը գտայ: Շէնումը չէր: Երկու քահանայ ինձ խոստացան Մնացականի «պընկլները» ժողովել և Շուշի ուղարկել: Համանման խոստումն ինձ արաւ նաև Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցը Վարանդի ժողովրդեան առածները և առակները ժողովելու նկատմամբ¹:

Սէյդիշէնից սկսեալ՝ մենք մտնում ենք Արցախու լեռանց ազխազխների մէջ: Մեր ճանապարհը այդ լեռների լանջերովն ու նրանց մէջ եղած ձորերովն է ընթանում փոփոխակի: Յեխձոր կոչուած ձորի գլխից հեռադիտակով ես տեսնում եմ Պտկէսի ս. Գէորգայ վանքը, որ այժմ ամայի է: Վանահօրը մի քանի ժամանակ առաջ քօլանիները սպանել են: Վանքը շինած է լեռան գագաթին: Ես նրան կայցելեմ վերադարձիս: Յեխձորի ներքևից ընթանում է Խաչէնագետը, որ բաղկացած է երկու վտակներից, բուն՝ Խաչէնից և Քօլատակի գետից: Տեղւոյն դիրքը և դաշտի նշանները պարզ ցոյց են տալիս, որ Խաչէնագետն ահեղ կերպով վարարուելիս մեծամեծ վնասներ է հասցնում շրջակայքին:

Գետի ձախ ափում տարածուած են Գանձասարու վանքապատկան 18 հատ ջրաղացներ: Իսկ աջ ափին կայ մի երկարաձիգ, հին պարսպի փլատակը: Այդ պարսպը պէտք է որ շինուած լինի Կաչաղակաբերդի մուտքը պահպանելու համար: Կաչաղակաբերդը՝ իւր ամպածրար գագաթով, Քօլատակի գետի աջ ափին է: Շուշուայ բարձրութիւններից ես քանի՛-քանի՛ ցս անգամ հեռադիտակով տեսել եմ Ջալալեան մելիքների այդ գոռ ամրոցը, որ շինած է այս կողմի լեռներից ամենաբարձրի վրայ (յետ Մռալի, որ ծովի մակերևոյթից 10,000 ոտնաչափ բարձր է): Այժմ Խաչէնագետի ափից ես տեսնում եմ, որ զարմանալի քերծուտ ու ժայռուտ է Կաչաղակաբերդի մանաւանդ այն մասը, ուր ամրոցն է շինուած: Ինձ ասում են, որ նրա վերայ բարձրանալու համար թէև երեք ճանապարհ կայ, բայց նրանք երեքն էլ ամենադժուարին են և մինչև անգամ անհնարին:

«Անհնարին բան չը կայ աշխարհումս», - ասում եմ ինքս ինձ և պատրաստվում Մելիք-Ջալալեանների ամրոցի ինչ-որ բան լինելն ևս տեսնել և հասկանալ: Պ. Բաֆֆին, առանց այդ բերդի վերայ բարձրացած լինելու, նրան անուանում է հրաշալի: Տեսնենք, թէ ինչո՞ւմն է այդ հրաշալիութիւնը: Թերևս դիրքո՞ւմ, բարձրութիւնո՞ւմ: Վերջապէս տեսնենք:

Խաչէնագետն ընթանում է ներքև, իսկ մենք՝ վերև: Մեր աջ կողմում, իսկ գետի ձախ կողմում՝ մի փոքրիկ լեռնաշղթայի ստորոտում, հետզհետէ երևում են Առաջաձոր (133 տուն), Ծմակահող (30 տուն) և Գանձասար կամ Վանք (123 տուն) գիւղերը: Դրանցից միմիայն Գանձասար գիւղը վանքապատկան է: Բաղկացած է երկու առանձին և բաժան թաղերից՝ Հունահող և Գումակալ:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 23-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 71-ում (12 սեպտեմբերի, էջ 1-2)



Խաչնագետի աջ ափի լեռնային գագաթներից ամենաբարձրը և ամենախոժոռոն է Նատարի դալան, որոյ երեք հատ, ցից առ ցից եղջիրները կոչվում են Կեռաքար:

Գանձասար գիւղի արևելահարաւային կողմում ձգուած ծառախիտ լեռնակը բարձրանալով՝ վերջապէս մենք հասնում ենք հոչակաւոր Գանձասար վանքը, որոյ մասին եղած պատմական տեղեկութիւնքը ի բաց թողնելով՝ ես իմ ընթերցողին կը ներկայացնեմ նրա արտաքին նկարագիրը:

Խաչնագետի ձախ ափին՝ շրջապատ լերանց ազխագիւներում բացուած մի նեղկակ հովտի արևմտեան ծայրում՝ առանձնակ և երկարաձիգ լեռնակի գագաթում բարձրացած, կանգնած է Գանձասարի վանքը՝ 650 տարուայ մի պատկառելի և գեղեցկակերտ շինութիւն: Վանքի շրջապատ և բարձր պարիսպը, 1854-ին վերանորոգված է, այնուամենայնիւ, այժմ կիսով չափ փուլ է եկած: Պարսպի շուրջ՝ ներքին կողմից զանազան շինութիւններ կան, որոց մասին յետոյ կը խօսեմ: Այդ շինութեանց առաջ՝ չորս կողմից կան բազմաթիւ թթենիք և մի քանի հատ խնձորենիք: Մէջտեղում բարձր ի գլուխ կանգնած է վանքը՝ յանուն սուրբ Յովհաննու Մկրտչի: Վանքը, ինչպէս Հին Հայաստանի ամէն մի եկեղեցիքը, բաղկացած է ժամատնից և տաճարից: Դոքա իրանց ճարտարապետութեամբ թէ՛ դրսից և թէ՛ ներսից յար և նման են Անույ Մայր կամ Կաթողիկէ եկեղեցոյն կամ առհասարակ 11-13-րդ դարու Հին Հայաստանի եկեղեցական շինութեանցը. միևնոյն հոյակապ կամարները, կրկնայարկ և ծածուկ պահարանները թէ՛ սեղանի և թէ՛ եկեղեցոյ միջից, միևնոյն օդային սանդուղները, միևնոյն հրաշալի քանդակ ու քիվերը և դրսի կողմից միևնոյն խորշերը, քանդակագործ խաչեր, աստիճաններ, խոյակներ և մեկնակ կամ ջուխտակ սիւնակներն ու կամարները: Ժամատան առաստաղի քանդակները, մանաւանդ Անույ Առաքելոյ եկեղեցոյ միևնոյն հրաշակերտ քանդակներն են: Անույ Կաթողիկէի համեմատ Գանձասարի տաճարի մէջ մի քանի զանազանութիւնք կան, դա այն է, որ նախ՝ վերջինս աւելի փոքր է, և երկրորդ՝ Գանձասարի տաճարը իւր եօթը հատ միմեանց վերայ հանգցրած սիւներով (սեանսիւն) Անույ Կաթողիկէից վսեմ է: Անույ Կաթողիկէի գմբէթը և պատերի մի մասը փուլ են եկած, մինչդեռ Գանձասարի վանքը, թէև տեղ-տեղ խախտուած և ճեղքուած, իւր բոլոր մասերով ամբողջապէս դեռ մնում է: Գանձասարի մի այլ առաւելութիւնը կազմում են եկեղեցոյ դռների գլխին և գմբէթի շուրջը քանդակուած բազմաթիւ խաչերը, խաչվառները, արծիւ ու բազէները, առիւծ և ցուլերը, եզան և օձի գլխները, քարակոփ շղթաները՝ ծայրերիցը կախ արած քարաշէն խաչերով, աղանիք, մարդիկ (մելիքներ), որոնք երբեմն իրանց գլխների, երբեմն ուսերի և բազուկների վերայ բռնում են քարակոփ փոքրիկ եկեղեցիները:

Այդ ամէն քանդակագործ պատկերներն իրանց վերին աստիճանի նրբութեամբ, պարզութեամբ և պայծառութեամբ իրանց նմանը չունին Անույ աւերակաց մէջ:

Ժամատան շէնքի առաջ թաղուած են Խաչնի մեծ իշխան Ջալալ Դօլին՝ եկեղեցոյ շինողը, Գանձասարի կաթողիկոսունք և Բաղդասար մետրօպօլիտը: Նրանցից ցածր կայ մի 60-ամեայ ռուս կնոջ (Սօֆի Լըվովա) շիրիմը:

Ահաւասիկ դրանց ամէնի արձանագրութիւնքը.

ա) *Այս է հանգիստ մեծին Ջալալին. յաղօթս յիշեցէք, թվ. ՊԶ (1431):*

բ) *Այս է տապան Երեմեայ կաթողիկոսին Աղուանից, որ է յազգէն Ջալալ Դաւլին (Դօլին), ՌՃԽԹ (1700):*

գ) *Այս է տապան Եսայի կաթողիկոսին Աղուանից, որ է յազգէն Ջալալ Դօլին, ՌՃՀԷ թուին (1728):*

դ) *Յովհաննէս կաթողիկոս (թիւր եղծուած է):*

ե) *Այս է տապան Գրիգորի կաթողիկոսի, ՌԲՃ թուին (1751):*



զ) Այս է տապան Յովհաննէս Աղուանից կաթողիկոսին, որ է յազգէն Ջալալ Դաւլին, թվ. ՌՄԼԵ-ին (1786):

է) Այս է տապան Սարգսի Աղուանից կաթողիկոսին, որ է յազգէն Ջալալ Դաւլին, թվ. ՌՄՀԷ-ին (1828):

ը) Այս է հանգիստ Դաւիթ կաթողիկոսին, որ է որդի մելիք... (եղծուած է):

Բոլորովին եղծուած են նաև երկու այլ կաթողիկոսների շիրմաց արձանագրութիւնքը:

թ) Այս է տապան մետրապօլտին

Բաղդասարայ մեծ արհին

Կայսերապսակ հովուապետի

Տանս Աղուանից Հայոց ազգին

Յազգէն Ջալալ մեծ իշխանին

Տեսոն Արցախայ աշխարհին, թվ. ՌՅ (1851)-1854 Գ (3 յուլիսի)¹:

Իսկ եկեղեցւոյ գաւթումը թաղուած են շատ արեղաներ և նշանաւոր ծխականներ: Ահա մի արեղայի տապանագիրը.

Յովսէփ գիտնական վարժապետ վարդապետ Տէր Աւագեան Արցախոյ: Ո՛վ պերճ տապան, որպէս կարես հանդուրժես, մեծ վարժապետն ի քեզ իրես զետեղես. զհին աւուրց երախտաւորն անփոփես. զանխոս մանկունս ի սուրբ հօրէն, որբ թողես: Եկա՛յք, ընկերք ոգունք մուգայք սիրասունք, զհօր զմահ յորդ արտասուոք ողբասցոյք: Եթէ Յիսուս զիրն զՂազարոս արտասուեց..., թուին 1843²:

Նախորդ նամակներիցս մեկում արտագրելով Երից Մանկանց վանքում թաղուած Ներսէս վարդապետ Միրզա-Աւագեանի դամբանագիրը՝ ասել էի, որ այդ վարդապետն Արցախի հայոց վերայ մեծ երախտիք ունի՝ կրթելով և ուսում տալով նրանց զաւակների Ամարաս և Երից Մանկանց վանքերում: Գանձասարում լսեցի, որ նոյն Ներսէս վարդապետը մի ժամանակ ուսումնարան է ունեցել և այստեղ: Տեսայ նաև նորա ուսումնարանը, որ այժմ վանքի ախոռատուն է դարձած: Այս վարդապետից հին, հռչակաւոր և միևնոյն դպրոցական ասպարիզում աւելի արդիւնաւոր գործիչ է եղել և սոյն այս Յովսէփ Տէր-Աւագեան գիտնական, վարժապետ վարդապետը: Երկուքին էլ յիշատակը օրհնեալ լինի: Սրա աշակերտն է եղել, ի թիւս այլոց բազմաց, նաև տէր Գրիգոր վարդապետ քահանան, որոյ պատկերն այսօր գրեթէ ամէն շուշեցի, իբրև զարդ, պահում է իւր գրասեղանի վերայ:

Գանձասարի եկեղեցւոյ դրսի պատերը մեծ և փոքր արձանագրութիւնք ունին, որոց մեծ մասը ցարդ վերծանելիք են: Դրանցից այս է երևում, թէ այս և այն անձը այս կամ այն նուէրն է տուել եկեղեցւոյն, այս և այն շարժական կամ անշարժ կայքը կտակել նրան: Իսկ եկեղեցւոյ շինութեան ընդարձակ արձանագիրը տաճարի ներքին կողմից հիւսիսային պատի վերայ է փորագրած: Եկեղեցին շինած է Ջալալ Դօլին 1216-1238 թուականներում: Այդ արձանագիրը շատ տեղ եղծուած է այժմ:

¹ Այս տապանագիրը դուրս բերած չեն ո՛չ Շահխաթունեանը և ո՛չ Ջալալեանը: Պ. Ըաֆֆին ընդօրինակել է միմիայն Բաղդասար մետրոպօլիտի արձանագիրը: Ես աւելորդ չը համարեցի բոլորն էլ ընդօրինակել

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 24-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 72-ում (15 սեպտեմբերի, էջ 2)



Երկու ընդարձակ արձանագրութիւնք կան նաև ժամատան արևելեան պատի վերայ, դրան աջ և ձախ կողմերում¹:

Չը մոռանամ յիշել նաև, որ եկեղեցւոյ գմբէթի մի կողմը 1854-ին² նորոգուած է, և նորոգողներն են ուստայ Մելքոն և ուստայ Կարապետ, որոց անունը խոշոր և կարմիր տառերով գրուած է գմբէթի վերայ:

Գանձասարի վանուց գաւթում կան Աղուանից կաթողիկոսարանը, երկու փոքրիկ և սիրունիկ սենեակներ, ուր դրուած են Աբգար և Վաղարշակ թագաւորների ձիթանկար պատկերները, 8 հատ խաւար խցեր, մի այլ մեծ սենեակ, որոյ լուսամուտները բաց են, կտուրը՝ փչացած, մի այլ մեծ սենեակ, որ մի ժամանակ ուսումնարան էր, իսկ այժմ՝ ախոռատուն:

Գաւթի հարաւային պատում շինած է գաւթի աւագ դուռը՝ հոյակապ և կամարակապ, մարիտանական ճաշակով: Դրան կամարի տակ այժմ խոտ է դարստուած: Այդ դրան աջ կողմում՝ պարսպից դուրս, կայ վանքի հնձա՞նը արդեօք, թէ՞ մառանը: Դա էլ այժմ յարդանոց է: Բացի կաթողիկոսարանի մի սենեակից, ուր սրբ. Սագինեանցը զետեղուեց, Գանձասարում բնակութեան համար ոչ մի այլ սենեակ չը կայ: Ուստի սրբազան առաջնորդի մարդիկն ևս ինձ նման ստիպուած էին բաց երկնքի տակ ննջել, իսկ անձրևային եղանակներումը այլ և այլ չուլ ու փալասներից ու ցախ ու ցուքերից մեզ համար խուղ ու վրան կազմել: Անձրևի էլ յաճախակի էինք հանդիպում: Ողջ վանքում նստելու մի աթոռ չկայ, ո՛չ ճաշելու սեղան, ո՛չ ննջելու մահճակալ: Ամէն բան ինքներս էինք շինում մի կերպով: Դրա վերայ աւելացրէք նախ վերջին աստիճանի անմաքրութիւնը, ևս և բազմաթիւ մոծակները (որոնք թէ՛ ցերեկը և թէ՛ մանաւանդ գիշերները անդադար կծոտում և խայթում են մեզ), և դուք այն ժամանակ մի գաղափար կը կազմէք, թէ մենք ի՞նչ հալի ենք եղել 7-8 օր Գանձասարում: Բարեբախտաբար, ես շուտ-շուտ հեռանում էի վանքից դէպի գիւղերն ու շրջակայ աւերակները: Թէ ինչի՞ց է յառաջանում այդ պատուական տեղի և օդի մէջ այդ անպիտան մոծակը, ես չը գիտեմ: Միայն հաւանական է, որ նա գոյանում է կա՛մ վանքի շրջակայ բոյսերից և կա՛մ վերջին ծայր անմաքրութիւնից և կեղտոտութիւնից, որով լիքն է վանքի գաւիթը թէ՛ դրսից և թէ՛ ներսից: Գանձասար գիւղում, որ վանքից հազիւ երկու վերստ հեռու կը լինի և աւելի ցածր է, մոծակ ամեննին չը կայ:

Վանքի այժմեան վանահայրն է Շիրակի մի ժամանակուայ հերոս Ստեփան վարդապետ Շիրակունին: Նա ստանում է տարեկան 120 ռ. ռոճիկ: Ունի երկու ծառայ և մի նորատի տնտեսուհի... Վարդապետն ինձ ասաւ, որ ստացած ռոճկով հազիւ ծառաներին և տնտեսին բաւականութիւն է տալիս: Վանքն ուրիշ եկամուտ չունի: Ուրիշները դրան հակառակն էին պնդում: Այդ ամէնը ես թողնում եմ ստուգել, ում արժանի է: Իմ կողմից այսքանը միայն կասեմ, որ կոնսիստօրիայից Շիրակունուն տրուած ժապաւինեալ մատենում ոչ մի տող գրուած չէր, ո՛չ մուտք և ո՛չ ծախք: Վանքը ջուր էլ չունի: Եւ մօտակայ աղբիւրից ջուր բերելու համար, ինչպէս չափեց և հաշուեց Շուշուց բերուած վարպետը, հարկաւոր է առնուազն վեց հարիւր ռուբլի: Բայց եթէ այս հոչակաւոր վանքն այսպիսի թշուառ դրութեան մէջ պիտի մնայ, էլ ի՞նչ հարկ կայ նորից փող մսխել և ջուր բերել: Ինչպէս հաղորդած էի խմբագրութեանդ, վանքի աղբիւրի ծախսն իւր վերայ է ստանձնել բազուաբնակ պ. Ղազարոս Մալենցեանը:

Սրբազան Սագինեանցի անընդմիջական հսկողութեամբ եկեղեցւոյ և՛ ներսը, և՛ փառաւոր ու շքեղ սեղանի անօթները, և՛ աշտանակները բաւականին մաքրուեցան, պատերի խոտն ու ու

¹ Գանձասարի եկեղեցւոյն թէ՛ ներսի և թէ՛ դրսի պատերի վերայ փորագրուած բոլոր արձանագրութիւնքը մեծ բարեխղճութեամբ դուրս է բերած Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեան (տե՛ս Ստորագրութիւն կայթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ. Հատոր Բ, էր. 371-377, Էջմիածին, 1842)

² Ուստայ Մելքոնի թողած հիշատակագրության թվականն է 1851 թ. (ծանոթ.՝ խմբ.)



մամուռները քաղուեցան: Կարգադրուեցաւ գեթ շաղախով ծածկել առժամանակ կտուրի այն տեղերը, որոնցից անձրևի ժամանակ ծորած ու կաթած ջրի կաթիլները հետզհետէ փչացնում են տաճարի շքեղ սիւները և պատերի մեծ մասը: Այնպէս որ յորդ անձրևի ժամանակ Գանձասարի վանքում սագերն ու բաղերը կարող են համարձակ լող տալ:

Շուշուց երկաթեայ թելեր բերուեցաւ պատուհանների ցանցեր շինելու համար: Այդպիսով առաջն առնուեցաւ այն ապականութեան, որոյ մէջ թաղուած է Գանձասարի տաճարը, որոյ բեմը, գրքակալները, շարական ու ժամագրքերը ծեփուած էին թոչնոց ծրտերով: Եւ այդ ամէնը տեսնելու համար վանահայրը շատ աչքաբաց է իւր անձի և իւր օգտի համար և առաւել քան անհամեմատ և յանդուգն:

Նա ինձ քանի-քանիցս թախանձեց, որ լրագրի միջոցաւ ռեկլամ անեմ իւր մասին, որպէսզի հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը նրան կա՛մ իւր հայրենիքը՝ Շիրակ ուղարկէ, կա՛մ Ատրպատականի առաջնորդ նշանակէ: Երբ ես ասացի, որ նա վարդապետ գլով կարող չէ հաստատուն առաջնորդի պաշտօն վարել, Շիրակունին յայտնեց, որ ինքը «բարեհաճ» է և եպիսկոպոս դառնալ: Եւ դրա համար արդէն մտածած է...¹:

Գանձասարայ վանքն ունի 23 հատ արծաթեայ, երբեմն ոսկեգօծ, ականակոտ խաչեր, ս. մասանց աջեր և սկիհներ, 48 հատ թագ, շուրջառ, զգեստ, բուրվառ, կանթեղ և մեռնի տուփ, 173 կտոր պղնձեղէն ամաններ, 22 կտոր երկաթեղէնք, 28 կտոր շորեղէնք (մեծ մասը հնտտի ու ցնցոտի), 2 էջ, 1 հորթ, 1 փեթակ, 42 կտոր խեցեղէնք և 48 կտոր գրեանք, որոց մի մասը ձեռագրեր են: Ահա այդ ձեռագրերի ցուցակը, որ ես կազմեցի օգնականութեամբ սրբազան Սագինեանցին.

ա) Գիրք եպիսկոպոս ձեռնադրութեան (թղթեայ).

բ) Գիրք եպիսկոպոս ձեռնադրութեան և Միւռօն օրհնութեան, թղթեայ: Դրա մէջ յիշուած են ս. միւռօնի նիւթերի (ծաղկանց) անուններն ու քանակութիւնը.

գ) Նարեկ, թղթեայ. սկզբից և վերջից պակաս.

դ) Դիոնիսիոս գիրք, մագաղաթեայ.

ե) Աւետարան, թղթեայ.

զ) Գործք Առաքելոց, մագաղաթեայ և ընտիր գրուած: Վերջերից պակաս.

է) Յովհաննու Ոսկերերանի մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, մագաղաթեայ.

ը) Աղօթագիրք, մագաղաթեայ. ՌՃԼԹ (1690) թուին գրուած: Բովանդակութիւնը մի հաւաքածոյ է Նարեկից, Մաղմոսից և ուրիշ այլ և այլ կրօնական գրքերից.

թ) Սրբոյ Հօրն մերոյ տեառն Ներսիսի արքեպիսկոպոսի Տարսօնոյ մեկնութիւն ԺԲ (երկոտասան) մարգարէից, մագաղաթեայ.

ժ) Գանձարան (այսինքն՝ տաղարան կամ երգարան), ՌՃԷ (1658), մագաղաթեայ.

ժա) Յօհան Որոտնեցի՝ մեկնութիւն Աւետարանին ըստ Մատթէոսի, մագաղաթեայ.

ժբ) Նոր Կտակարան, մագաղաթեայ, որ «նորոգեցաւ մասամբ Ազարիա երիցու Ռ-երորդի, Ճ-երորդի. Ժ-երորդի. Գ-երորդի, այսինքն՝ ՌՃԺԳ (1664) թուականին.

ժգ) Նոր կտակարան, յամի հազար հարիւր երորդի եօթանասուներորդի (1170) ի թագաւորութեան Լևոնի, մագաղաթեայ.

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 25-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 73-ում (19 սեպտեմբերի, էջ 2-3)



ժդ) Քարոզգիրք, թղթեայ: Սրա յիշատակարանից երևում է, որ յամին 1822՝ յուլիս ամսումը, Եփրեմ կաթողիկոսը, հանդերձ «մեծամեծ եպիսկոպոսոք և բազմահոյլ միաբանութեամբք», եկել է Գանձասար և 7 օր մնալով՝ մեկնել է Թիֆլիս:

ժե) Բառարան, ՌՃԺԴ (1665) «ի Հայրապետութեան տեսան Յակոբայ Սրբազան կաթողիկոսի և ի թագաւորութեան պարսից Շահաբասայ», մագաղաթեայ:

ժզ) Ներածութիւն Կորփիւրի, մագաղաթեայ:

ժէ) Գիրք քահանայ ձեռնադրութեան, մագաղաթեայ:

ժը) Քարոզգիրք, թղթեայ:

ժթ) Սարգիս Շնորհալի, Ճառընտիրք, թղթեայ, վերջերից պակաս է:

ի) Գիրք առաքինութեանց և մոլութեանց, ՌՄԾ (1801), մագաղաթեայ:

իա) Աւետարան, ՌՃԱ (1652), թղթեայ:

իբ) Աւետարան, ՌԻ (1571), թղթեայ:

իգ) Աւետարան, ՌՃԶ (1667), թղթեայ:

իդ) Աւետարան, թղթեայ:

իե) Ցանկ աստուածաշնչոյ, թղթեայ:

իզ) Կանոնագիրք, մագաղաթեայ: Այս գրքի կողքին Բաղդասար մետրօպօլիտի ձեռքով յամին 1831 մարտի 21-ին գրած է. «ի Քուրակ գետոյն մինչև ի Դիզակ եօթանասուն և եօթն եկեղեցիք են, բայց տասննեօթն ամայի է: Այլ և հարիւր յիսուն Հայոց գիւղք թէ՛ մեծ և թէ՛ փոքր՝ չորս հազար տունք, սակաւ աւելի պակաս. ութսուն քահանայք»:

իէ) Աւետարան, մագաղաթեայ, փոքրադիր:

իը) Աւետարան, մագաղաթեայ և փոքրադիր:

իթ) Աւետարան, մագաղաթեայ և փոքրադիր, գեղեցիկ տառերով և պատկերներով. «եղև յաւարտ սուրբ աւետարանիս ի յերկիրս Գեանջու. ի գեօղն Քարհատ, ի թագաւորութեան Շահաբասու Փոքրու» ՌՃԴ (1655):

յ) Աւետարան մագաղաթեայ և փոքրադիր, միևնոյն գեղեցիկ նկարն ու գրութիւնը, ՌՃԷ (1658).

լա) Գիրք պիտոյից, ՌՃԶԳ (1724), մագաղաթեայ:

Գանձասարի վանքի դէմուդէմն են, հարաւարնելեան կողմից՝ Խաչէնագետի աջ ափում, Թարխանայ բերդը՝ քառակողմ և ժայռուտ մի լեռ, որոյ գագաթին կան, որպէս ասացին, ջրահորեր, կարասներ, տան և պարսպի աւերակներ: Թարխանայի հանդէպ՝ վանքի հարաւարնմտեան կողմից՝ Խաչէնագետի ձախ ափումը կանգնած է մի այլ սուր, կոնաձև և ժայռուտ ու բարձր գագաթ: Դա էլ Խոխանայ բերդն է: Խաչէնի բերդերից ես վճռել եմ միմիայն Կաչաղակաբերդի վերայ բարձրանալ, ուստի Թարխանայի և Խոխանայի մասին իմ կողմից ոչինչ չունիմ ասելիք:

Խոխանայ բերդի արնելեան ստորոտը՝ Խաչէնագետի ձախ ափումը, կայ այսպէս անուանեալ Պառաւաձոր, ուր, ըստ ասութեան որսկանաց (ինձ առաջնորդողները միշտ որսկաններն էին լինում, որովհետև դրանք միայն գիտեն Արցախու լեռների մէջ եղած աւերակաց տեղերը և հէնց դրանք միայն կարող են անսխալ առաջնորդել և որևէ ճանապարհորդի), կայ և մի կիսականգուն եկեղեցի՝ հանդերձ արձանագրութեամբ¹: Այդ եկեղեցին տեսնելու առիթը ես չունեցայ:

Դրա փոխարեն ես տեսայ, այսպէս անուանեալ Ջալալ իշխանի «Դարպասները»: Դորա գտնվում են Խաչէնագետի աջ ափին՝ Թարխանայ ամրոցի ճիշտ հիւսիսարնելեան ստորոտը:

¹ Այդ եկեղեցոյ արձանագրութիւնը Շահխաթունեանն արդէն դուրս է բերած իւր գրքում (եր. 379): Եկեղեցին շինուած է 1181 ազգային թուականին



«Դարպաս» կոչուած շինութիւնքը միմեանցից հազիւ 200 սաժէն հեռաւորութիւն ունին և են թուով երեք, երեքն էլ քարուքանդ եղած: Տակաւին կանգուն են միմիայն պատերի, պարսպների և կամարների մի քանի մասերը: Ուշիուշով քննելով դրանց ձևը և համեմատելով Արցախի եկեղեցական շինութեանց հետ, չը գտնելով ոչինչ արձանագրութիւն և ոչ էլ պատմական որևէ հաստատ տեղեկութիւն, գիտենալով, որ Խամսայի մելիքներն իրանց բնակութեան տեղ ընտրում էին լեռների ոչ թէ ստորոտները, այլ նրանց կատարները, ես հակամէտ եմ կարծելու, որ «դարպաս» կոչուած շինութիւնքն աչ այլ ինչ են, եթէ ոչ երեք հատ փոքրիկ և պարսպապատ եկեղեցիք կամ մատուռներ: Իսկ թէ ի՞նչ պատճառաւ մեր նախնիք երեք եկեղեցի կամ մատուռ հենց միմեանց կշտին կը շինէին, դա զարմացք չէ և ոչ էլ նոր բան: Արցախի վանօրէից, եկեղեցաց մեծ մասը բաղկացած է միմեանց կշտին եղած մի քանի հատ վանքերից և եկեղեցիներից: Այդպէս է ս. Եղիշէ առաքելի վանքը¹:

Այդպէս են և Յակոբայ վանքը, Հաւապտուկը, որոյ մասին իսկոյն կը խօսէմ: Իսկ եթէ ընդունենք, որ «դարպաս» կոչուած շինութիւնքը սոսկ մատուռներ են, այն ժամանակ այլևս ոչինչ կասկած չի մնում, որ «դարպասներն» մարդկանց բնակարան չեն եղել, այլ յաւիտենական քնարան-գերեզման:

Մի պարագայ ևս: «Դարպասների» չորս կողմը և շրջակայքը լիքն են քանդակագործ, գետնատարած խաչերով, որոց մինի վերայ ես կարողացայ միմիայն հետևեալ բառերն կարդալ:

Թուին ՉՕԲ (1303), ես... որդի...:

Այս խաչաքարը բարձրացնելով՝ ես նրան պահել տուի, այսպէս անուանեալ «Դարպասի աղբիւրի» ականցի մօտ: Ինքը՝ այդ աղբիւրը, շատ ջինջ է և սաստիկ սառն: Այնպէս որ խմելիս մարդու ատամները կարծես փշրվում են: Հարկաւոր եմ համարում յայտնել, որ «Դարպասներին», Հաւապտուկին և ս. Յակոբայ վանքին հենց միննոյն այդ օրն այցելելիս ինձ ուղեկցում էր Արցախու թեմի վանական կալուածոց կառավարիչ պր. Աղէքսանդր Յովհաննիսեանցը, որ սիրայօժար կերպով ինձ հետ բաժանում էր ոչ միայն ճանապարհների ամենատեսակ նեղութիւնքը, այլև մեծապէս օգնում էր ինձ արձանագրութիւնքը կարդալում²:

Թարխանայի ճիշտ հիւսիսային կողմը՝ Դարպասներից բաւականին բարձր, կայ մի լեռ, որոյ գագաթը սահմանագլուխ է Գանձասարի վանքի և կալուածատէր Ջալալեանների կալուածոց: Լեռը, ինչպէս Արցախի բոլոր լեռները, ստորոտիցը սկսեալ մինչև գագաթ ծածկուած է թաւ և խիտ անտառով, ուր հինաւուրց ահագին ծառեր խիստ շատ կան: Աւասիկ հենց այդ լեռան կատարն է, որ շրջակայ բնակիչներից կոչվում է Հաւապտուկ: Բառ, որ Արցախի լեզուով կը նշանակէ հաւի կատար: Հաւապտուկը բաղկացած է երկու կանգուն եկեղեցիներից, որոց շրջակայքը մի ահագին գերեզմանոց է: Գերեզմանների քարերը կիսից աւելի թաղուած են գետնի մէջ: Հետևաբար նրանց վրայի արձանագրութիւնքն անվերձանելի են միանգամայն: Իսկ վերձանելի մասերիցը ոչինչ իմաստ չէ դուրս գալիս: Մեր բախտից եկեղեցւոյ պատերի քարերից մինի վրայ կար մի անեղծ արձանագրութիւն.

Ես Յօհան առաջնորդ սուրբ ուխտիս շինեցի զեկեղեցիքս և կարգեցի Բ (2) ար պատարագ... տէր Գրիգորի... ի տարւոջն, կատարիչք գրոյս արհնին յաստուածոյ, ամէն:

¹ Այդ վանքի, որ շինուած է յամին 1244 յանուն ս. Եղիշէ առաքելոյն (առաջին աշակերտի ս. Թադէոսի 70 թուականին Աղուանքում նահատակուած), եկեղեցաց մինի նորոգման և ժամատան շինութեան (յամին 1317) արձանագրութիւնքը Շահխաթունեանը դուրս է բերած իւր «Ստորագրութիւնում» (եր. 379)

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 26-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 74-ում (22 սեպտեմբերի, էջ 2-3)



Եկեղեցւոյ դրան՝ կիսից աւելին գետնի մէջ թաղուած ճակատի վրայ գտանք հետնեալ արձանագրութիւնը.

Թուին ՌՅԲ՝ էր, յիշխանութեան Հասանայ՝ որդւոյն Վախտանկայ և ամուսնս (յ) նորա Գրիգորին և Գէորգ եղբարորդի (եղբորորդի) և այլ միաբանքս շինեցաք զեկեղեցիքս ի փրկութիւն հոգւոց մերոց և յի...տակ (յիշատա՛կ)... դաց (ծնողա՛ց) մերոց... որք կարդայք... (անվերծանելի)»²:

Փորելով և փորփրելով գետնաթաւալ քարերը՝ գտանք և մի քանի այլ քարեր, որոց վրայ կարդացնինք.

ա) *Ես Կամսարական գնեցի զխաչս... Գրիգորի որդի...*

բ) *Յանուն աստուծոյ ես՝ Աթանաս, որ զԳօզին երկիրն գնեցի ի Հայոց պտտ... հայր... միաբանքս տվին ի տարումն Դ (4) արբ պատարագ Նոր կիրակէին... որ հոգայ եկեղեցւոյս ... հանէ ՅԺԸ (318) հայրապետացն նգոված է... մեռելոք...*

Հաւապտուկի լերան արևելահարաւային կողերովն ուստոստմամբ, սայթաքմամբ, ընկնելով և ելնելով՝ վերջապէս մենք իջանք նրա ստորոտը: Անցանք ուրիշ լեռնակներ և ձորեր, Գառնաքար (8 տուն) գիւղը և ուր ուրեմն սկսեցինք դէպի սուրբ Յակոբայ վանքը բարձրանալ՝ նորանոր լեռների լանջերն ու կատարները քերելով: Հաւապտուկից մինչև ս. Յակոբ երեք ժամուայ ճանապարհ է:

Յակոբայ վանքը, ինչպէս Արցախու վանօրէից մեծագոյն մասը, շինուած է մի բարձր լերան դուրան գագաթին: Նա բաղկացած է կրկին և մթին պարսպապատ եկեղեցիներից, որոնք դեռ կանգուն են, թէև շատ խարխուլ կերպով: Եկեղեցիներից մինը, փոխանակ ժամատան, ունի միջակ տարածութեամբ մի սրահ: Պարիսպն ունի երկու հանդիպակաց դռներ՝ արևելեան և արևմտեան կողմերից: Վերջի դուռը փառաւոր, կամարակապ և մաւրիտանական ճաշակով շինուած է: Այս վանքի եկեղեցեաց շինութիւնքը շատ հասարակ են և մեծաւ մասամբ անտաշ քարերից կերտած: Քանդակագործ խաչերն էլ այնքան գեղեցիկ չեն: Վանքն ունի մառանաստուն, ախոռ, նկուղներ և երկու կոկիկ ու մաքուր սենեակներ վերնայարկում: Եկեղեցիքը միանգամայն զուրկ են որևէ զարդից ու անօթից: Սեղանի տակ ունի մի ստորերկրեայ մռայլ մատուռ: Ինչպէս երևում է շիրիմների տապանագրերիցը, գաւթումը թաղուած են Վարդան և Մելիքսեդէկ անունով արեղայք, իսկ սրահումը մի կաթողիկոս, որոյ տապանագիրն է.

Այս է հանգիստ տէր Յովհաննէս կաթողիկոսի Աղուանից, թվ. ԶԺԹ (1470):

Կայ և մի այլ կաթողիկոսի շիրիմ, բայց տապանագիրը բոլորովին և ամբողջապէս մաշուած է:

Եկեղեցւոյ արձանագրութիւնքն այժմ խիստ դժուար վերծանելի են: Մենք շտապում էինք, ուստիև արտագրելու ժամանակ չը կար³:

Յակոբայ վանքի վանահայրն է մի հինաւորց ծերունի և այրի քահանայ տէր Գասպար Տէր-Գասպարեանցը: Մա ոչինչ ռոճիկ չունի, այլ միմիայն վանական մի ջրաղացի, որ հեռաւոր Քօլատակ գետի վերայ է շինած, եկամուտը՝ տարին մի քանի տոպրակ ալիւր:

Ի շնորհիւ իւր հեռաւորութեան, առանձնակի դիրքին, մի առանձին համբաւ չունենալուն՝ Յակոբայ վանքը չունի և՛ այցելողներ, և՛ ուխտաւորներ: Ուրեմն այդ կողմից նա եկամուտ չունի:

¹ Մխալ է, պետք է լինի ՌՅԲ (1233) (ծանոթ. խմբ.)

² Հաւապտուկի եկեղեցւոյ արձանագրութիւններից միմիայն այս մինն ընդօրինակել է սրբ. Շահխաթունեանը (տե՛ս էր. 378), այն ևս կիսատ, մանաւանդ վերջերումը

(Շանթ. խմբ.) Հարկ է նշել, որ Շահխաթունեանից հետո Հայկունին երկրորդն էր, ով փորձել էր վերծանել սույն արձանագրութիւնը: Ավելի ուշ վիմագրին անդրադարձել են նաև Լեոն (Հինգ օր. Ճանապարհի մտքեր ու տպաւորութիւններ, «Մուրճ», 1889, էջ 233), Մակար եպիս. Բարխուդարյանցը (Արցախ, Բագու, 1895, էջ 182), Գ. Հովսէփյանը (I, էջ 29), Հ. Օրբելին (Գանձասարայ և Հաւոցպտկոյ արձանագրութիւնք, ժողովեաց եւ ի լոյս ածելոյ պատրաստեաց Յովսէփ Օրբելի, Պետրոգրադ, 1919, էջ 37)

³ Այդ արձանագրութիւններից միմիայն մինը՝ եկեղեցաց մինի վերստին նորոգմանը յամին 1212, Շահխաթունեանն ընդօրինակել է (էր. 278)



Սակայն, չը նայելով այդ ամենին, թե՛ ծերունի վանահայրը լաւ է ապրում և թե՛ այցելուներին լաւ հիւրասիրում: Պատճառը. նա մշակել է լաւ այգի և բանջարանոց, պահում է հաւեր և ճտեր, իւր ձեռքով քամում է խաղողից գինի: Եւ ին՛ դճ ծերունի, այդ ամէնը յառաջացնելու և ոռոգելու համար ստիպուած է շաբթինը մի քանի անգամ վանքի թշուառ աղբիւրի ճանապարհները դրստել, մաքրել, կոկել:

Մենք ծերունու հետ զննեցինք այդ աղբիւրի ճանապարհները և հաշուեցինք, որ երեսուն ռուբլիով կարելի է այնքան կոկել, որ ջուրը մի քանի տարի անարգել կերպով հոսէ վանքի գաւիթը և այնտեղից այգին ու բանջարանոցները: Գանձասար վերադառնալիս այդ բանը ես յայտնեցի սրբ. Սագինեանցին: Նա խոստացաւ պատուիրել Շուշուայ դպրանոցի հոգաբարձութեանը, որոյ իրաւասութեան տակն են գտնվում Արցախի բոլոր վանօրէից կառավարութիւնը, որ սա անպատճառ հոգայ ս. Յակոբայ վանքի աղբիւրի գէթ յիշեալ չնչին ծախքը:

Դա ամենակարևորն է նախ ծերունի և անոռճիկ վանահօր աշխատանքը թեթևացնելու, այգու և բանջարանոցների ապագան ապահովելու համար: Չե՞ որ այդ այգին ու բանջարանոցը վանահայրը իւր հետ գերեզման տանելու չէ, այլ վանքին է թողնելու¹:

Աղբիւրն այժմեան նման անխնամ թողնելով՝ մի օր վերջապէս ջուրը կը կորչի, և նորից գտնելու համար աւելի մեծ ծախք կը պահանջէ: Դրա կենդանի օրինակն այսօր մենք տեսնում ենք Գանձասարի աղբիւրի նկատմամբ, որոյ նորոգութեան համար, ինչպէս յիշել եմ արդէն, հարկաւոր է վեց հարիւր ռուբլի գումար, որովհետև նախկին ճանապարհն ի շնորհս Շիրակունու նման ծոյլ վանահարց, բոլորովին փչացել է: Մինչդեռ Շիրակունու նման մարդիկ, միանգամայն անարժանութեամբ, վանահայր դառնալով Գանձասարի նման մեծահոշակ վանքումը, գիշեր և ցերեկ զբաղված են նրանով, որ այն պատուական և պատմական շինութիւնքը միանգամայն բարձիթողի առնեն, նրան ամենատեսակ ապականութեամբ և զազրութեամբ լեցնեն, բարձրագոյն հոգևոր իշխանութեան կողմից իրանց տրուած ժապաւիտեալ մատենումը մի կօպէկ անգամ մուտք չը գրելով՝ որպէսզի... մի օր եպիսկոսպոս և առաջնորդ դառնան...²:

Ս. Յակոբայ վանքի հանդէպ՝ հազիւ նրանից 5 վերստ հեռի, կանգնած է Կաչաղակաբերդը, որին տեղացիք Մաղսաղան դալա են կոչում: Վանքում պատահող մի քօլատակից պարոն ինձ հաւատացնում է, որ Մաղսաղանի վերայ բարձրանալու թէև դժուարին և ուղղաձիգ, սակայն ամենակարճ ճանապարհը Քօլատակի ճանապարհն է Խնձրիստանի համեմատութեամբ: Եւ քօլատակցի Ջաքենց Աբրահամ որսկանը միայն կարող է ինձ առաջնորդել դէպի Մելիք-Ջալալեանների ամրոցը:

Ուրախութիւնիցս սիրտս թրթռում է: Ուզում եմ հէնց այժմ ճամփայ ընկնել դէպի Քօլատակ գիւղը, գտնել որսկան Աբրահամին և բարձրանալ Կաչաղակաբերդ, սակայն օրը շատ տարածամ է... Ես սաստիկ յոգնած եմ, ձիս քրտինքի մէջ խաշվում է: Յակոբայ վանքում գիշերել կարող չեմ, որովհետև հետևեալ առաւօտը պէտք է Խօթայ վանք գնանք, դրա համար հարկաւոր կարգադրութիւնք արած-պրծած ենք արդէն: Այս գիշեր պէտք է որ Շուշուց անպատճառ Գանձասար հասնի իմ բարեկամ Համագասպ քահանայ Տէր-Աւետիքեանցը, և մենք պ. Աղէքսանդր Յովհաննիսեանցի հետ երեքով միասին Խօթայ վանքն ենք գնալու:

Վճռեցինք յետ դառնալ: Գիշերուայ ժամը 11-ին հասանք կրկին Գանձասար և մտանք մեր ցախձածուկ վրանի տակ՝ միանգամայն անձնատուր լինելով անգութ մոծակներին: Այստեղ ես

¹ Ս. Յակոբայ վանքի յիշեալ այգին, հիւրասենեակները, աղբիւրները և վանք տանող ճանապարհն առաջին անգամ տնկել և հարթել է այդ վանքի նախկին վանահայրերից մինը՝ Աբրահամ վարդապետ Քամալեանցը

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 27-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 75-ում (26 սեպտեմբերի, էջ 1- 2)



տեսայ, որ սրբ. Սագինեանցն իրան համար միրչաքտան էր շինել տուած և այդպիսով իւր մարմինը մոծակների և բռռերի ջիրիթից ազատած: Կամեցայ մի այդպիսի անկողին ևս ինձ համար պատրաստել: Հարցրի մեծապատիւ գրպանիցս, նա ինձ իրաւունք չը տուեց: Հնազանդեցի և առանց շորերս հանելու վեր ընկայ հանգստանալու:

Թող աստուած հանգստութիւն համարէ:

Հետևեալ առաւօտը՝ ժամը 10-ին, մենք ճանապարհ ընկանք դէպի Խօթայ վանք: Եղանակը պարզ չէ, բայց մենք մեր ճանապարհորդութիւնը չենք կարող յետաձգել: Այս անգամ մեզ առաջնորդում է մի յայտնի որսկան և կտրիճ տղամարդ՝ Աղաջանը: Մեր ճանապարհը, ինչպէս միշտ, ընթանում է ծառաշատ լեռների երբեմն ստորոտովը, երբեմն կատարներովը և ամենից յաճախ լանջերովը: Մինչև հիմա ման եկած ճանապարհներիցս ամենից վատն է սա: Ընդ նմին քաշաթուխայ կոչուած մշուշը հետզհետէ մեզ պաշարում է: Բացի նեղ արահետից՝ ոչինչ չենք տեսնում: Երևում է, որ նախորդ գիշերն առատ անձրև է եկել այս կողմի ծմակներում: Յէխը թարմ է, և մեր ձիանքը անդադար քնթահարում և սլկվում են: Իջնում ենք ձիերից և ոտով գնում, յոգնում և էլի ձի հեծնում: Սկսեցին որոտմունք, փայլատակմունք, անձրև, որ շոռալով թափվում է երկնքից: Բարեբախտաբար, անտառը խիտ է, ծառերը՝ սաղարթալից, անձրևը շատ չէ ներգործում մեզ վերայ:

Հենց որ խմահատի (ցանքսի համար ծմակներում բաց արած տեղերը կոչվում են խմահատ կամ խամահատ) մեջ ենք ընկնում, հովանոցներս ենք պարզում, իսկ երբ նորից անտառը մտնում, հովանոցներս ծալում: Ճղների խտութիւնից հազիւհազ գլխներս ենք կարողանում պահպանել, էլ հովանոց ո՞նց պարզենք: Մինչև ժամը 4-ը Վաղահաս (30 տուն) գիւղը ժամանելներս հոգիներս դուրս եկաւ: Վեր եկանք Վերդի ապօր տանը: Սա հարիւրին մօտիկ, երկու աչքով կոյր մի ծերունի է՝ զարմանալի շատախօս, զուարճախօս և առակախօս: Ծերունու լեզուն շատ բաց արին մանաւանդ մեր օղին, զինին ու նախաճաշը: Գրեթէ ողջ գիշերը մեզ քնանալ չը թողին մի կողմից Վերդի ապօր առակները, միւս կողմից ախոռանման խրճթի լուերը և մեր շուրջը կապոտած կովերի, հորթերի և ձիերի մշմշոց ու փռնչոցները և աղիքների մաքրագարդութիւնքն...:

Անձրևը կտրելուց անմիջապէս յետոյ մենք գնացիք Վաղահասի հնութիւնքը տեսնելու: Կիսաքանդ եկեղեցի, եպիսկոպոսարան, գրատուն, մատուռներ, մի ընդարձակ հանգստարան, բազմաթիւ և գեղեցիկ խաչարձաններ՝ ահա Վաղահասի հնութիւնքը: Արձանագրութեանց քարերի մեծ մասը պոկած, հանած է, մի մասն էլ՝ թակած-փչացրած: Եւ այդ ամէնը, ասում էին մեզ, արել են իբր Ջալալեան ազգատոհմի վաղուցուայ ներկայացուցիչք, որպէսզի իրանք ձեռք բերեն վանական կալուածքներ¹: Վաղահասի մնացեալ արձանագրութեանց մեծ մասը դուրս է բերած Ջալալեանի գրքում (մասն Բ., էր. 232-233) թէև տեղ-տեղ սխալ, աւելացուցմամբ և պակասեցուցմամբ, ինչպէս այդ միշտ անելիս են եղել սրբազան ճանապարհորդը կամ իւր ուղեկից շինական տգէտ քահանայք: Սրբազան Ջալալեանի աչքից վրիպած է միայն եպիսկոպոսարանի արձանագրութիւնը, որ է հետևեալը.

Յառաջնորդութեան տեսոն Գրիգորի... էտու շինել զփանա... խուցս և կազմել զգրատունն... եղբարք (թերևս միաբան եղբարք) էտուն Բ. աւուր պատարագ ի տարւոջն... պատարագիչն էր մինն Սերոբայ. մին Սևադայ... յանցանաց...:

¹ Ջալալեան Սարգիս եպիսկոպոսի ճանապարհորդութիւնումը ասած է, թէ այդ քարերը պոկած և թակած են տաճիկները: Կարող է պատահել: Բայց Վաղահաս գիւղն այսօր սեպհականութիւն է Ջալալեան ազգատոհմին, այլ ոչ թէ թիրբերին



Կան և մի քանի այլ համառոտ արձանագրությունքը, որոնք Ջալալեանի գրքում չը կան նոյնպէս, բայց դոքա աննշան բաներ են, այսինքն՝ այսինչ որը այս կամ այն խաչն է «կանգնել» և տարին մի երկու «ժամ» ստացել:

Վաղահասի եկեղեցին և եպիսկոպոսարանը շինած են չորեքտասաներորդ դարու սկզբներում: Վաղահասի եկեղեցին և իւր շուրջ գտնուած, արդէն գետնի տակ թաղուած բազմաթիւ տները մինչ օրս կոչվում են «Մայրամ քաղաք»¹:

Մարիամայ քաղաք արդեօ՞ք, թե՞ մայրաքաղաք²:

Վաղ առաւօտուն մենք ճամփայ ընկանք դէպի Խօթայ վանքը: Բացի Աղաջանից՝ մեզ առաջնորդում է նաև Վաղահասի Դանիէլ անունով յայտնի որսորդը: Կէս ժամ չանցած՝ մենք արդէն Թարթառի ափի վրայ ենք կանգնած: Գարնանային մեծամեծ հեղեղները ճանապարհը փչացրել, անհետացրել են: Ջանազան պտոյտներ արինք, մի քանի անգամ գետը մտանք, ելանք այլ և այլ տեղերից, մինչև ծնկներս բաւականին թրջուեցինք, գետամոյն լինելուց էլ բաւականին երկիւղ կրեցինք և վերջապէս ուղիղ ճամփա գտանք: Լեռնէ՛ր, լեռնակարկառնէ՛ր, միշտ զառիվայր ու զառիվերներ: Բարեբախտաբար, խիտ անտառի սաղարթալից տերևները թե՛ մեզ և թե՛ մեր ձիերին պատսպարում են արևի տաքութիւնից, որ հետզհետէ սաստկանում է: Թարթառը երբեմն հեռանում է մեր տեսութիւնից և երբեմն մօտենում: Երբեմն էլ մենք նրա միջովն ենք ընթանում: Քօլանիների խրճիթներ յաճախ ենք պատահում, որոնք ցրուած են Թարթառի գրեթէ ամբողջ երկայնութեամբը: Եւ որքա՛ն հարուստ բուսականութիւն ունին այդ անպիտանների բնակութեան տեղերը: Փոքր-ինչ առաջ գնալով՝ մենք հանդիպում ենք Թարթառի ձախ ափին Չափար անունով հին գիւղի աւերակներին, որոց մէջ մի ժամանակ 500 տուն հայ ընտանիք էր կենում, և ցարդ մնում է մի կիսակործան եկեղեցի: Գիւղն այժմ Ուշաջղ է կոչվում և ունի միայն 4 տուն բնակիչ՝ քօլանիներ:

Ուշաջղից 2 ժամ բարձր՝ Թարթառի աջ ափին, հեռադիտակով մենք տեսնում ենք Խաթրայ վանքը: Սորան տեսել, նկարագրել և արձանագրութիւնքը դուրս են բերել Յ. Շահխաթունեանը (եր. 362-364) և Ս. Ջալալեանը (եր. 229-231):

Փոքր-ինչ էլ առաջ գնալով՝ գետի ձախ ափին մենք հանդիպում ենք մի այլ և մեծ աւերակ տեղի, որ կոչվում է «Շէհեր-երի» քաղաքատեղի: Վերջապէս հինգուկէս ժամ յետոյ մեր հանդէպ կանգնած է Լաչին-ղայեա ամրոցը, որ մի թամբաձև և վիթխարի ժայռ է Թարթառի աջ ափին:

Լաչին-ղայեա նշանակում է բազէների ժայռ: Մենք, արդարև, շատ բազէներ ենք տեսնում ժայռի զագաթն ի վեր ճախրելիս³:

Լաչին-ղայեայից սկսեալ մինչև Խօթայ վանքը ճանապարհը մի ժամ է: Բայց սա ճանապարհ չէ, այլ կատարեալ դժոխք ու տարտարոս: Ես նրան չեմ ուզում նկարագրել, որպէսզի նորից իմ մէջ չը զարթին այն տազնապալից բոպէները, որ մենք անցուցինք յիշեալ ճանապարհը հատանելիս, ու մեր ամէն մի քայլափոխը մեր կեանքին մահ էր սպառնում: Թէ ինչպէս եղաւ, որ մենք պրծանք, դա միայն աստուծուն է գիտելի: Ճանապարհի դժոխային լինելը բաւականին չէր կարծես, միննոյն

¹ Վաղահասի կշտին է Ականայ բերդը, որ «սեպհական կայան էր իշխանին Ջալալայ, պարսպեալ ամուր և որձատաշ վիմօք, գոր, ըստ յարմարութեան սենեկաց, առաւել պատշաճ է կոչել զսա պալատ արքունի, քան պարիսպ. գոյ ի սմա ընդարձակ ախոռ բազմաթիւ սենեկօք, այժմ աւերակ. հայեցուածք սօրա անկանի ի բերդն խոխանայ, յարնէլս կոյս և ի գետն Թարթառ» (Ջալալեան, եր. 233)

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 28-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 77-ում (3 հոկտեմբերի, էջ 3)

³ «Լաչին-ղայեան յարնէլս հարաւոյ Մռաւայ լերին, պատեալ սուկալի ձորովք և վախիւք, շրջապատն միապաղաղ քար ի վեր բարձրացեալ, ունենալով ի կատարին մեծանիստ տեղի և տափարակ: Ի միոյ կողմանէ դժուարագնալի ուղի, ընդ որ ելաք և մեք մեծաւ դժուարութեամբ: Չառաջեաւ ամրոցիս անցանէ յոխորտաձայն յորձանօք գետն Թարթառ, ի հնումն Դրսուեալ: Ի սմին խորաձորի Ներսէհ Փիլիպպեան անգթօրէն սպան զՎարագ Տրդատ և գորդի նորին և զՍտեփաննոս եղբօրորդի և Վարագ Տրդատայ ազգական իւրոյ» (Ջալալեան, եր. 222)



Ժամանակ հենց այդ ճանապարհի վերայ յորդ անձրև ևս մեզ պաշարեց: Այդ էլ բաւական չէր, մենք ստիպուած էինք արջերի երկիւղից, ինչպէս ասում են, շնորդ տալ, որոց կոտորած տանձենիների և ծիրանիների աշխարհովն է անցնում մեր դժոխուղին:

Ուրեմն հասանք Խօթայ վանք¹:

Մեզ ասած էին, որ Խօթայ վանքն ունի պահապան՝ մի լեհացի կին իւր մեծահասակ, կտրիճ որդիքներով: Այնտեղ կան նաև սենեակներ, կայ կերակուր մեզ և մեր ձիաներին համար: Բայց այդ ամէնը երևակայութիւն է եղել: Բանից դուրս եկավ, որ լեհացի կինը շատ ժամանակից ի վեր թրքացել է և մի թիւրքի հետ պսակուելով՝ մի գիւղ հարս է գնացել: Նոյնն արել են և տիկնոջ որդիքը: Այսպիսով, Խօթայ վանքը մնացել է իսպառ ամայի, թափուր և լքեալ: «Թողեալ լիցի տունդ ձեզ աւերակ», իսկոյն յիշեցի ես Սուրբ գրքի դատաւճիռը, և մենք երեքով միասին արտասուեցինք: Մա այն վանքն է, որ 1500 հազար դեսեստին կալուածքի տէր է համարվում: Բայց յանուն արդարութեան ես պետք է ասեմ, որ Խօթայ վանքն այսպէս բարձիթողի առնելումը մեղաւոր չէ ո՛չ հոգևոր իշխանութիւնը և ո՛չ էլ Շուշուայ հոգևոր դպրանոցի հոգաբարձութիւնը, ո՛չ նախնիքները և ո՛չ այժմեանները:

Պատճառը հետևեալն է. նախ՝ Խօթայ վանքը մի այնպիսի ձորումն է գտնվում, որոյ թէկուզ լոկ տեսքը, դիրքը, ևս և շրջապատ խոժոռ լեռներն ու քերծերը մարդուս սրտմշուկ են անում: Երկրորդ՝ վանքի հանդէպ հոսող Թարթառը իւր ահեղագոչ մռունչներով կարծես միշտ սարսափ է ազդում: Երրորդ՝ վանքը միանգամայն հեռի է մշտաբնակ գիւղերից և, ընդհակառակը, նրա չորս կողմի վերանց մէջ սողում և սողոսկում են քօլանիները և այրմները, մի ցեղ, որ առաջիններից պակաս դաժան ու աւազակաբարոյ չէ: Քանի՛-քանի՛ անգամ նրանք կողոպտել են այդ պատուական մենաստանը: Չորրորդ՝ յիշեալ երկուտանի գազաններից՝ քօլանիներից և այրմներից, ոչ նուազ վտանգաւոր են վանահարց համար նաև չորքոտանի գազանները՝ արջեր, գայլեր, նաև վագրեր, որոնք քաղցած ժամանակ միշտ կարող են գրոհ տալ վանքի անասնոց և թռչնոց վերայ: Հինգերորդ՝ վանքի շուրջը ցանքսի յարմար մի բուռ հող անգամ չը կայ, մի ջրաղաց անգամ չը կայ ալիւր աղալու: Իսկ այդ յարմարութեանց առաջն առնելու համար առայժմ փող էլ չը կայ: Ուրեմն ինչո՞վ ապրի վանահայրը:

Այսպէս լինելով՝ ես կարծում եմ, որ Խօթայ վանքը և նրա կալուածքը պահպանելու միակ հնարքն այն է, որ այդտեղ մի գիւղ շինուի, մի ներքին գաղթականութիւն լինի: Դրա համար հոգևոր իշխանութիւնը կարող էր մեծամեծ զիջողութիւններ անել գաղթել ցանկացողներին: Կարող էր նրանց իրաւունք տալ անտառը կտրատել և ցանքսի տեղեր բանալ, որքան որ իրանց հարկաւոր է: Կարող էր գէթ տասը տարի ժամանակաւ գաղթականներին ազատ կացուցանել որևէ հարկից և այլն, և այլն: Եւ այն ժամանակ, ես հաւատացած եմ, գաղթողներ կը լինէին շրջակայ հայ գիւղերից: Ի վերադարձին մենք այս միտքը մի քանի գիւղերում արծարծեցինք:

Գաղթելու ցանկութիւն արտայայտողներ շատերը դուրս եկան:

Հողի պակասութիւնն Արցախի, ինչպէս նաև Անդրկովկասի գրեթէ ամէն մի անկիւնի շինացւոյն ևս այն դրութեան է հասցրել առհասարակ, որ որքան և իցէ ձեռնատու զիջողութիւն ճանճի նման նրանց դէպի Խօթայ վանքի շուրջը կը քշէր:

Երբէք չը պետք է մոռանալ, որ Խօթայ, ինչպէս և բոլոր վանքերի պահպանութեան և պայծառութեան հետ ամենասերտ և անխզելի կապ ունի նրա ահագին կալուածոց պահպանութիւնն ու

¹ Մինչև Խօթայ վանքը անտառը թէև սաստիկ խիտ է, բայց ծառները այնքան նշանաւոր չեն: Ս. Եղիշէ առաքեալի և Երից Մանկանց անտառի ծառներն այս կողմի ծառներից ևս անհամեմատ լաւ են և բազմատեսակ, բայց Խօթայ վանքի անտառը մի առաւելութիւն ունի: Նրանում խիստ շատ են ընկուզենիք, որոնք, սակայն, մեծ քանակութեամբ կտրուած և վաճառահանուած են արդէն: Անտառի մէջ մենք յաճախ հոպոպ թռչունին էինք հանդիպում



պայծառութիւնը ևս: Եթէ այսօր յիշեալ կալուածքի մի մասի դէմ արքունիքն է վէճ բացել, միւսի դէմ՝ խանի աղջիկը, երրորդ մասի ծմակներից գեղարքունեցիք տարէնն աւելի քան հազար գերան են կտրում գողութեամբ և մինչև Նոր Բայազետի ու Երևանի հրապարակների վերայ վաճառահանում, այդ ամէնը նրանից է, որ Խօթայ վանքը իւր կալուածքով տէր չունի, մի անտառապահ անգամ չունի: Ճշմարիտ է, Արցախի վանական կալուածքները կառավարիչներ ունեցել են և այժմ էլ ունին, որ է իմ ուղեկից պ. Աղէքսանդր Յովհաննիսեանցը: Բայց այդ կառավարիչները դպրանոցի հոգաբարձութեան հետ միշտ փոխվում են անդադար, և նրանց ռոճիկն ու միւս միջոցներն այնքան չնչին են, որոցմով կառավարչական գործն ամէն կողմից և ինքնըստինքեան անհարին է լինում: Սակայն ես խոստացած եմ առանձնապէս խօսել Արցախի վանական կալուածոց մասին: Ուրախ եմ, որ այժմ ես այդ կալուածքը բաւականին լաւ եմ ճանաչում:

Խօթայ վանքի իսկական անունը Դադի վանք է՝ յանուն Թադէոս առաքելոյ Դադի աշակերտին, ինչպէս այդ երևում է արձանագրութիւններիցը: Իսկ թէ ինչի՞ ժողովուրդն այդ վանքին Խօթայ վանք է անվանում, ես չը գիտեմ: Բայց կարծում եմ, որ դա առաջացել է շփոթութիւնից մի այլ վանքի՝ Մշահանի հետ, որ գտնվում է Խօթ գիւղի մօտ՝ Թարթառի աջ ափին, մինչդեռ Դադի վանքը գետի ձախ ափին է շինած (տե՛ս Ճանապարհ. Ջալալեանի, եր. 228)¹:

Դադի վանքը բաղկացած է 4 եկեղեցիներից, բազմաթիւ սենեակներից, խցերից, ախոռ և մարագներից ու շրջապատ պարսպից, բոլորն էլ կիստով չափ և աւելի քայքայեալ: Եկեղեցիներից ամէնից լաւ մնացածը և ամէնից հոյակապը, որ, անշուշտ, վերանորոգված պէտք է լինի, շինուած է յանուն ս. Դադի և Գանձասարի եկեղեցւոյն ճարտարապետութիւնն ունի, թէև սա անսիւն է: Եկեղեցիս ժամատուն չունի, այլ մի ընդարձակ և փառաւոր սինագարդ սրահ, որոյ մէջ մտնողը կզմայլի եկեղեցւոյ դրան քանդակների գեղեցկութեամբն ու նրբութեամբը: Այցելուի զմայլմունքը կը տասապատկի, երբ կը տեսնի զանգակատան մէջ պատն ի վեր կանգնեցրած մի զոյգ ահագին խաչաքարերը, որոնք քանդակագործութեան կատարելատիպ կարելի է համարել: Սրբազան Ջալալեանը ահա ինչ է ասում այս խաչաքարերի մասին. «Թէպէտ քանդակագործութիւն շիրմի Տուտէ որդւոյ եղելոյ ի հանգստարան վանացն Սանահնի գերագանց էր քան զամենայն քանդակագործութիւնս ի շրջակայ վանորայս և ի գերեզմանատունս, սակայն առ սօրօք համարի այն խամաշէն և անարուեստ» (եր. 223):

Շուշիում ինձ հաւաստիացրին, որ երկու անգլիացի ճանապարհորդք մի քանի տարի առաջ 10,000 մանէթով կամեցել են գնել յիշեալ խաչաքարերը, բայց հոգևոր իշխանութիւնը չէ համաձայնել, երևի նրա համար, որ մի օր յիշեալ խաչաքարերը ևս միւս պատմական և պատուական յիշատակարանաց նման վեր ընկնին, փշրուին և կործանին: Մենք, իհարկէ, ոչինչ չէինք ասել խաչաքարերի չը վաճառելու համար, եթէ որ վանքի վրայ հոգ տարուէր և պահպանուէր: Իսկ եթէ նա այս աստիճան անխնամ, անտէր պիտի մնար, աւելի լաւ էր, անգլիացիների առաջարկած գումարը ստացվէր, և դրանով վանքը վերանորոգվէր: Միևնոյն ժամանակ հայկական քանդակագործութիւնը մի պարծանք ևս ունենար Լօնդրայի թանգարանումը:

Դադի վանուց եկեղեցիքը զանազան տարիներումն են շինուած: Նրանց վայրի այժմեան արձանագրութեանց թիւը հասնում է տասնվեցերորդ դարու վերջերը: Վանուցս հին և նոր

¹ Շահխաթունեանն այդ վանքին անուանում է, ժողովրդի բերանից արնելով, Խօթայ վանք: Եւ ոչինչ բացատրութիւն չէ տալիս: Մենք մեզ ներում ենք այդ առթիւ մի կարծիք ևս յայտնել: Արցախում խութ բառը շատ սովորական է և նշանակում է լեռ, թումբ, բարձրութիւն: Որովհետև Խօթայ այս վանքը շինուած է բարձր լեռների ստորոտում, բոլոր ճանապարհը դժնակ լեռների միջովն է գնում, ուստի Խօթայ վանք ասելով՝ ժողովրդը լեռնամիջի վանք չէ՞ ուզում հասկանալ արդեօք: Բայց այս ևս կայ, որ Արցախի բոլոր վանօրայքը խութերի գագաթներին կամ լանջերին և ստորոտներին են շինուած



արձանագրութիւնքը մենք թողնում ենք ընթերցողին կարդալ Շահխաթունեանի «Ստորագրութիւնում» (եր. 356-362) և Ջալալեանի «Ճանապարհորդութիւնում» (եր. 222-228):

Միևնոյն ժամանակ յարակցում ենք, որ Ջալալեանը, ըստ իւր յատուկ սովորութեան, այստեղ ևս արձանագրութեանց միջոց ոչ միայն ամբողջ տողեր է բաց թողնում երբեմն, այլ նաև պարզ ու դիրավերձանելի բառերը փոփոխում, աղաւաղում:

Այսպէս, Ջալալեանը արձանագրութեանց մինի այս բառերը՝ «սպասք եկեղցոյս յոսկո (յոսկոյ) և յարծաթոյ» փոխում է այսպէս՝ «սպասաւորք եկեղեցոյս»¹:

Մենք մտադիր էինք գիշերը վանքում մնալ և այսպիսով առիթ ունենալ գտնել և փորել այն ձորն ու գուրը, որոյ մէջ, ըստ ասութեան Ապրէս Բէկնազարեանց պատմչին, պէտք է որ պահուած լինէին այլ և այլ ձեռագիր մատեանք, որոց մի մասը միայն գտնուած է Բաղդասար մետրօպօլիտի օրով: Բայց վանքի ամայութիւնը և դրան յարակից անյարմարութիւնքը թէ՛ մեզ, թէ՛ մեր ձիւներէի համար մեզ ստիպեցին շուտ հեռանալ: Բայց ո՞ր, ո՞ր կողմը: Ետ դառնալ կարող չենք: Մօտակայ տեղերում ոչ մի գիւղ չը կայ: Եղածներն էլ աւազակաբարոյ քօլանիների աքան-ցաքան խրճիթներն են, որոց մէջ, ի վերայ այս ամենայնի, բնակութիւն չը կայ: Քօլանիները բոլորն էլ լեռներն (եայլախ) են քաշուել: Պ. Յովհաննիսեանցի խորհրդով վճռեցինք, որ մենք ևս բարձրանանք քօլանիների եայլախը՝ Ղալայչի կոչուած լեռան գագաթը: Այդ տեղը վանքի սեպհականութիւնն է, որպէս և նրա վրայ եղող քօլանիք վանքի հողի վերայ բնակւող ժողովուրդ են:

Ժամը 6-ին՝ յետ ճաշու, թողինք Դաղի վանքը իւր ծիրանիների, թթենիների և շլորենիների առատ անտառներով, վերջին համբոյր մի ևս առիթ նրա սրբութեանց, տեսանք վանքի արևելա հիւսիսային կողմում՝ ծմակի մէջ եղած գոյգ մատուռները և սկսեցինք հետիոտս դէպի Ղալայչի բարձրանալ: Մի ժամ ոտքով, մէկուկէս ժամ էլ ձիով ընթանալով՝ վերջապէս մենք հասանք լեռան գագաթը: Ղալայչիի դուրան գագաթը թարմ կանանչով ծածկուած է, որ ամենայն առատութեամբ վայելում են ձիերի, կովերի, հորթերի, ոչխարի և այծերի երամակներն ու հօտերը: Լեռնագագաթին կան նոյնպէս երկու աղբիւրներ՝ մինը կենդանեաց, միւրը՝ մարդկանց յատկացրած:

Բազմաթիւ գամփոնների սուկալի հաչոցներն ու արշաւանքը քօլանիներին իմաց տուին մեր գալուստը: Մինչև օգնութեան հասնիլը մենք մեծամեծ նեղութիւններ կրեցինք մեր անձն այդ գագանների ձեռքից պաշտպանելու համար: Բանից դուրս եկաւ, որ քօլանիներն այդ եկու օրը հարսանիք ունի, ուստիև շրաջակայ գաւառների քօլանիքն ևս հրաւիրուած էին Ղալայչի: Այսպիսով, մի անգամով տեսանք Թարթառի բոլոր քօլանիներին: Տեսանք և ներկայ եղանք նաև նրանց հարսանեկան հանդիսին: Հետևաբար թող աւելորդ չը համարուի մի քանի խօսք ասել և այդ մասին:

Քօլանիք իրանց ջահիլներին պսակում են 8-12 տարեկան հասակում: Գլխագին տալիս են 10-100 ռուբլի: Հարսանեկան հանդեսները տևում են մի ամբողջ շաբաթ: Առագաստի երեկոյին, երբ ըստ բանաստեղծի՝

«Ե՛ւ գօտու և՛ քողի հետ

Վերանում է ցնորքք սիրուն» (Շիլլերի խօսքերը), հարսի և փեսայի վրանից հրացան են արձակում՝ ի լուր ժողովրդեան: Հետևեալ առաւօտը սաւանը կամ մի կարմիր շոր բերում են՝ ի ցոյց հարսի մօրը:

Պսակուելուց մինչև մի ամիս փեսան իրաւունք չունի աներանց աչքին երևալ, ապա թէ ոչ իսկոյն կսպանեն նրան: Այդ պատճառաւ փեսան գիշերները միայն վրանում է լինում, իսկ ցերեկները նա

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 29-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 78-ում (6 հոկտեմբերի, էջ 1-3)



փախչում է դեպի անտառները կամ այնպիսի տեղեր, ուր աներանց տնից ոչ ոք կարող չէ նրան տեսնել:

Որպես ասիացի ժողովուրդ՝ քոլանիների կանայք հանդեսների ժամանակ առանձին են նստում: Քոլանիները, ինչպես և պարսիկ կանայք, իրենց դունչը չեն փաթաթում: Իրանք ևս, Արցախի հայկուհիներից աւելի ազատ են պահում իրանց օտարականների առաջ: Մրանց նման քոլանի կանայք ևս դաժան, դանգոտ են: Գեղեցիկներ չը կան իրանց մէջ: Թէ՛ գեղեցկութեան և թէ՛ կազմուածքի կողմից առհասարակ թրքուհիք քոլանի կանանց համեմատութեամբ մի-մի հերոսուհիներ են:

Ողջ Արցախում եղող ցեղը բաղկացած է 1500 տնից¹, որ բաժանուած են չորս համայնքի վերայ: Իրանք քաջ են, գող և սաստիկ զինասէր: Մեր զէնքերի հետ ծանոթանալու համար թշուռականները բաւականին պատրօններ փչացրին մեզանից, մանաւանդ երիտասարդները: Իրանք էլ երբեմն ընտիր հրացաններ և ատրճանակներ են պահում: Իսկ հասարակ հրացան և դաշոյն իւրաքանչիւր քոլանի ունի:

Ապրուստը լինում է անսանապահութեամբ և աւարառութեամբ, որը նրանք անում են, ինչպես նախորդ նամակներիցս մինում նկարագրած եմ, հայերից:

Քոլանիքն իմ աչքում անարգ երևացին ոչ միայն նրա համար, որ սաստիկ գող են, այլ որ անազնի գող են (եթէ միայն գողութեան ազնիւն էլ կայ): Նրանք գողութիւն անում են խաբէութեամբ, խարդախութեամբ, շողոքորթութեամբ: Երբ մեր վրանատէրը մի կողմից մեզ սիրաշահում էր, միւսն էր գողանում, թոցնում: Այդպէս չեն մինչև անգամ Արաբիայի բեղուիները, որոնք իրանց հիւրին կողոպտում են, երբ սա արդէն տան շէմից ոտքը դուրս է դրել:

Քոլանիներից տարբեր են այրմները, որ նոյնպէս շիա դաւանութեանն են պատկանում: Այրմները ևս քոլանիների նման զինասէր են, քաջ և ճիշտ նրանց վարած կեանքն են վարում: Միայն թուով սակաւ են, հազիւ 150 տուն կը լինին: Բնակվում են Ռմբոստեան (Ռումբասար) սարի ստորոտներում՝ Լև-դալասի (Լևոնաբերդ) կոչված աւերակների շուրջ:

Թէ՛ քոլանիները և թէ՛ այրմները թէև հայերին կողոպտում են, բայց մի առանձին յարգանք են տածում դեպի նրանց վանօրայքը: Վանահայրերին թալանում, երբեմն նաև սպանանում են, բայց վանքերին «ղորբան» (մատաղ) անում: Այս բանը մենք ինքեանքս փորձով տեսանք: Այդ էր ահաւասիկ պատճառը, որ Դադի վանքի պահպանութիւնը մենք ժամանակաւորապէս յանձնեցինք Մէշէդի Մերդէն օղլու քոլանիին, որ բոլոր քոլանիների մէջ ամենաազդեցիկ անձն էր:

Հայկական վանքերին քոլանիք անվանում են «օջախ», որ մահմեդականների համար առհասարակ մի շատ խորհրդաւոր և սրբազան բառ է²:

Մենք գիշերեցինք վերոյիշեալ Մէշէդի Մերդէն օղլիի աւագ որդւոյն վրանումը: Մեզ եղած հիւրասիրութիւնն օրինակելի էր: Օրինակելի մաքրութիւն և ճոխութիւն ունէին մեր տանուտիրոջ մեզ առաջարկած անկողինքը՝ բոլորն էլ բեհեզէայ: Թէպէտ եղանակը շատ ցուրտ էր, մեր հանդէպ կանգնած Մոաւ լերան վերայ ձիւնում էր, նոյնիսկ Ղալաչի լերան վերայ մինչև կէսգիշեր կարկտախառն անձրև էր տեղում, վրանի եղէգնեայ պատերից քամին անդադար վսվնգում էր, բայց մենք չը մրսեցինք, որովհետև վրանի մէջ առատ կենդանական ջերմութիւն կար, որտեղ պառկած էինք տէր Համազասպ քահանայն, պ. Յովհաննիսեանցը, տողերիս գրողը, մեր երկու ուղեցոյցները, տանուտէրը, նրա կինը, չորս հոգի՝ տղայ և աղջիկ զաւակները, չորս հատ մատակի

¹ Այս թիւը պատշաճաւոր դիւանատանից ես առիթ չունեցայ ստուգելու և դնում եմ այստեղ՝ ըստ ցուցման իրանց քոլանիների

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 30-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 79-ում (10 հոկտեմբերի, էջ 2-3)



ձագեր, երկու հորթուկներ և 8 հատ հաւ: Իսկ վրանի շուրջը դրսի կողմից հանգստանում էին մեր ձիերը և տանուտիրջ գումէշ ու մատակները, կովերը, այժ ու ոչխարները: Թէ՛ այսքան մարդկանց և թէ՛ այսքան կենդանեաց միակ գիշերապահներն էին 4 հատ հագին գամփոներ: Կէսգիշերը փոքր-ինչ անցած՝ գամփոները մի ահագին աղմուկ սարքեցին, բայց մինչև նրանց օգնութեան հասնիլը, գայլերը մեր վրանի կշտից մի խոյ տարել և պատառոտել էին:

Այդ երևոյթը, պատմեցին մեզ, լեռներում խիստ յաճախ է պատահում: Այդ դէպքում հարևան շները միշտ չեն կարող օգնել իրանց ընկերներին գայլերի դէմ մղուած պատերազմներումը: Դրա պատճառն այն է, որ քօլանիների, ինչպէս ձմերային խրճիթները, նոյնպէս և ամառնային վրանները միմեանցից շատ հեռի են լինում: Դրա պատճառն այն է, որ, միմեանցից մօտ լինելով, շները միմեանց չը զգոգեն, մի հանգամանք, որոյ համար մարդիկ էլ յաճախ կովում են միմեանց հետ, երբեմն նաև վիրաւորում և սպանանում միմեանց:

Իսկ թէ ինչի՞ քօլանիների ձմերային խրճիթները ևս միմեանցից այնքան հեռի են, պատճառը կարծեօք այն է, որ մեկի արած գողութիւնը միւսը ևս չը տեսնի և աւարին մասնակից չը լինի¹:

Գալով քօլանիների վրաններին, ես պէտք է ասեմ, դրանք կիսաբոլորակ ձև ունին: Պատերը եղեգնեայ են, մի արշին բարձրութեամբ, սիւն չը կայ. առաստաղի պաշտօն վարում են մատաղատունկ ծառերի ճղները, ամբողջ ծածկոյթը՝ թաղիքեայ. դուռը՝ կապերտից: Այսպէս են և Արցախի բոլոր ժողովրդեան վրանները՝ թէ՛ հայոց և թէ՛ այլազգեաց:

Ամառը եայլախ բարձրացող հայերից իրանց քաջութեան կողմից այս կողմերում շատ հոշակուած են հաթերքցիք: Դոցա եայլախը Աղտապան լեռան վերայ է: Հետեւեալ օրը մենք այցելութիւն գործեցինք և դրանց վրանները, որ շինուած են միմեանց մօտ: Ինչպէս միւս հայերի, դրանց ամառային բնակարաններն ևս անմաքուր են և կեղտոտ, ինչպէս և իրանց գիւղերի տները:

Ղալաչի լեռան գագաթից մենք տեսանք Խօթայ վանքի կալուածոց բոլոր սահմանները և վիճելի ու անվիճելի տեղերը:

Տեսանք նոյնպէս Քէշիշէնդ կոչուած գիւղի պատմական աւերակները, որոց վերայ, ասացին, որ շատ արձանագրութիւնք կան: Լսեցինք, որ Խօթայ վանքից բարձր՝ ճիշտ Թարթառի ափին, կայ մի այլ պատմական վանք՝ Բալավանք անունով: Նրանից աւելի բարձր՝ Գեղարքունիքի սահմանումը, գտնվում են նաև Ջոդ կոչուած պատմական աւերակները: Նմանապէս Քեալպաճառ գիւղի կշտին ընդարձակ աւերակներ են եղել: Աւերա՛կ, ամէն կողմ և ամէն տեղ աւերակ...

Մենք այդ ամէնը տեսնելու առիթ չունեցանք, ուստի բաւականացանք բանաստեղծի ձայնովը գէթ մեր ողջոյնն ուղարկել նրանց.

«Ողջո՛յն տուէք մեր հայրենեաց
Կիսակործան տաճարներուն,
Ողջո՛յն տուէք աւերակաց
Արարատեան գաւառներուն»:

Ղալաչի սարից ցածր գալով, ինչպէս ասացի, մենք այցելեցինք և ուրիշ մի քանի եայլախներ և ապա 5 ժամ ընթանալով՝ իջանք նորից Թարթառ գետի հովիտը: Գետն անցանք և Յարութիւնագումեր գիւղի (15 տուն) մէջ դադար տուինք մեր խոնջեալ անդամոց: Յարութիւնագումեր գիւղի մօտն է և Հոռեթաղ գիւղը՝ 5 տուն բնակչօք: Սակայն ընդարձակ աւերակներիցը պարզ երևում է, որ գիւղս ժամանակաւ գիղաքաղաք է եղել: Կիսաքանդ եկեղեցին ցարդ մնում է:

¹ Ուշադրութեան արժանի է, որ Տաճկահայաստանի աւագակ քրդերի խրճիթները ևս քօլանիների խրճիթների նման հեռի են միմեանցից



Մթնաշաղիւն Յարութիւնագումերից դուրս գալով՝ մենք կրկին անձրևի բռնուեցանք ծմակի միջին և կրկին թրջուեցանք փառաւորապէս: Չը նայած այդ անյաջող պայմանին և մութ գիշերին՝ մենք այցելեցինք Գանձասարին պատկանեալ քարահանքին, որ գտնվում է յիշեալ գիւղից փոքր-ինչ բարձր: Քարահանքը թուով երկու է և մեծ քանակութեամբ արտադրում է երկանաքարեր: Ողջ Արցախում սա միակ քարահանքն է, որից յիշեալ քարերն են դուրս գալիս և բաւականութիւն տալիս ոչ միայն Արցախի ջրաղացներին, այլ նաև Կովկասին և նոյնիսկ հեռաւոր Պարսկաստանին: Քարահանքը տրուած է կապալով, տարին 300 ռուբլով: Կապալառուն 2 տարուայ կապալադրամը վճարած չէ, որովհետև ինքը Բաթումումն է, բայց նրա մարդիկն անդադար վաճառում են երկանաքարերը և փողը իրանց պարոնին հասցնում:

Չը մոռանամ յիշել, որ Ղալայչի լերան ստորոտում մենք տեսանք տախտակեայ պնակներ և զանազան ամանեղէններ շինող մի գործարան, որոյ նահապետական ձևի մեքենաները ջրով են շուռ գալիս: Գործարանի տէրը մի այրմ է: Պատրաստած ամանները բաւակնին կոկիկ բաներ են: Արցախին տախտակեայ ամաններ մատակարարողն այս գործարանն է:

Գիշերը Գանձասար գիւղում անցկացնելով՝ հետևեալ օրը մենք գնացինք վանքը:

Բայց մինչև վանք բարձրանալներս ես տեսայ Վախթանգ բէկ Ջալալեանին, որ ինձ ցոյց տուեց Բաղդասար մտերօպօլիտի ձեռքով գրուած մի պատմութիւն մէկուկէս թերթի վերայ: Պատմութեան մէջ նոր բան չը կար: Ես այդ ձեռագրից արտագրեցի միայն հետևեալ ցուցակը, թէ Աղուանից երկրում ով և երբ կաթողիկոս է եղել և որ թուում: Ահա այդ ցուցակը.

- 1) Յովհաննէս, որդի Ջալալի, ՊՂ (1441).
- 2) Շմաւօն, որդի Ջալալի, ՋԼ (1481).
- 3) Սարգիս, որդի Չատր մելիքի, ՌԳ (1554).
- 4) Գրիգոր, որդի Մէլրաբէկի, ՌԻԳ (1574).
- 5) Դաւիթ, որդի Բաղդասար բէկի, ՌԻԳ (1574). նոյն թուին վախճանել է.
- 6) Յովհաննէս, որդի Մէլրաբէկի, ՌԻԴ (1575).
- 7) Յովհաննէս, Գեանջայ եկեղեցին շինող, ՌՁԲ (1633).
- 8) Գրիգոր, եղբորորդի Յովհաննէսի, ՌՃԺԲ (1663).
- 9) Երեմիա, որդի պարոն Բաղդասարի, ՌՃԽԴ (1695).
- 10) Եսայի, որդի Վիլիճան իշխանի, ՌՃԾ (1701).
- 11) Յովհաննէս, որդի Մելիքբէկ իշխանի, ՌՃԾԵ (1706).
- 12) Սարգիս, որդի Մելիքբէկ իշխանի, ՌՄԽԶ (1797)¹:

Գանձասար գիւղում Գրիգոր քահանայ Լալայեանցը խոստացաւ հաւաքել և Թիֆլիս ինձ հասցնել Խաչէնի ժողովրդական առածներ, առակներ և հանելուկներ: Ահա մի քանի հանելուկներ, որ նոյն քահանայից լսեցի:

- 1) Փայտէ գուշ
Քարէ բրդուշ (ճ). (կամն):
- 2) Հողէ լուս
Մսէ գիւլլա. (մուկ):

¹ Շահխաթունեանը իւր գրքի «Շարակարգութիւն կաթողիկոսացն Աղուանից» (եր. 333-349) դուրս է բերել նմանապէս այս կաթողիկոսաց անուանքը, բայց Շահխաթունեանի և Բաղդասար մտերօպօլիտի ցոյց տուած տարբերութիւն ունին միմեանցից: Այդ ես թողնում եմ հետազօտել պատմագէտներին, միայն ինքս աւելորդ չը համարեցի զետեղել իմ «Ակնարկներում» և մտերօպօլիտի սոյն այս թերթի ցուցակն



3) Արջը գնաց վրնգվրնգալի,
Ճուտերը յետնէն վսվսալի. (ոստայն):

Լսեցի, որ Եդիա վրադապետ Ջալալեանը, որ այժմ Էջմիածնումն է, մի հարուստ հաւաքածոյ ունի Արցախի ժողովրդական բառերի և ոճ ու դարձուածքների:

Օգոստոսի 6-ին ես և Տէր Համազասպը Գանձասարից դուրս եկանք Կաչաղակաբերդը¹ բարձրանալու համար:

Հասնելով Քօլատակ գիւղը (25 տուն) և մեզ հետ վեր առնելով Ջաքենց Աբրահամ որսկանին՝ սկսեցինք բարձրանալ լեռն ի վեր: Մենք բարձրանում ենք թէն դժուարին, բայց կարճ, ուղիղ գծերով: Ճանապարհին պատահած թփերն ու փշերը յաճախ կտրատում ենք մեզ հետ վեր առած գործիքներով: Ձիանքը մեզ հետ են, բայց մենք հազիւհազ հեծնում ենք նրանց վերայ: Այսպիսով, չորսուկէս ժամ շարունակ բարձրացանք երբեմն ձիով և երբեմն հետիոտն: Բայց այնուհետև այլևս ոչինչ հնար չը կայ ոչ միայն ձի հեծնելու, այլ մինչև անգամ ձիանքը մեր ետքնի քաշ տալու: Լերան գագաթը՝ իսկական Կաչաղակաբերդը, մի բոլորակ է և պորփիրեայ ուղղաձիգ ժայռ է:

Մեր ուղեցոյցն ասում է, որ մենք պարտաւոր ենք անցնել ժայռի հիւսիսային կողմը, որտեղից միայն հնարաւոր է նրա գագաթը բարձրանալ: Այդպէս էլ արին: Ձիաներս կապոտեցինք կոճղերի վերայ, փորերս կշտացրինք, զովացուցիչ խմիչք և մրգեղէնք կապոտեցինք մեր շալակը, եռանկիւնաձև գաւազաններով պատսպարեցինք մեր բազուկները և սկսեցինք մեր արկածալից բարձրանալը լեռն ի վեր: Բարձրացանք ճիշտ մէկուկէս ժամումը՝ կէս ժամը հանգստութեանը զոհելով: Կրած նեղութեանցս մասին ոչինչ չեմ ուզում գրել, այլ կանցնեմ ուղղակի Մելիք-Ջալալեանների ամբոցի նկարագրութեանը: Կաչաղակաբերդն ունի ամէն կողմից կիսափուլ պարիսպ, մի քանի փոքր և քառակուսի տների քարուքանդ հիմքեր, մի ջրի աւազան, որոյ կէսն անձրևի ջրով լեցուած է, մի քանի շլորենիք և ահա բոլորը: Սակայն Կաչաղակաբերդի տեսքը հիանալի է:

Բերդի արևելեան կողմում բաւականին հեռի և նրանից ցածր, շղթայաձև ձգվում են մի շարք քերծեր, որոնք վերջանում են Հաչաղայա՝ զոյգ ժայռեր կոչված երկփեղկանի կօնուսներով: Հիւսիսային կողմում՝ ձեր ոտքի տակ, երևում է ոչ միայն Շուշին, այլ ամբողջ Վարանդը, Դիզակի մի մասը, իսկ հեռու-հեռու՝ հորիզոնի տակ՝ Ղարադաղի լեռներն Արաքսի աջ ափին:

Հարաւային կողմից երևում է Գանձասարի կաթողիկէն: Արևմուտքում՝ մի կոյտ լեռներից ամէնից բարձրի վերայ, կանգնած է Պոկէսի ս. Գեորգայ վանքը, որին, ափսո՛ս, ես չը պիտի կարողանամ ի մօտոյ տեսնել, որովհետև մեր ուղեգնացական նախկին պլանը փոխուեցաւ: Մենք Վարանդ պէտք է գնանք ուրիշ ճանապարհով: Կաչաղակաբերդի և Հաչաղայայի մէջտեղ եղած անդնդի մէջ՝ խիտ ծառերի ստուերներում, երևում է Անապատ վանքի կանգուն եկեղեցին, որ, ասում է մեր ուղեցոյցը, շատ հոյակապ պէտք է լինի և լի արձանագրութեամբ: Բայց այդ վանքը տեսնելու համար մենակ պէտք է Կաչաղակաբերդի մինչև ստորոտը իջնենք և Քօլատակի գետն անցնելով՝ ուրիշ ճանապարհով նորից դէպի այդ վանքը բարձրանանք՝ նորանոր անդունդների և ծմակների միջովը մեզ ճանապարհ հարթելով: Սակայն հալ ու հարաքաթ չը կայ ո՛չ մեր և ո՛չ մեր ձիաների վերայ: Թողնենք Անապատը, մեր սովորութեան համեմատ հրացանների ճարձատիւններով ողջունեցինք ու հրաժեշտ տուինք Մելիք-Ջալալեանների ամբոցին ու ցածր իջանք: Մի ժամից յետոյ մենք արդէն լերան ստորոտումն ենք, և Գեղէնի զօրաց նման Քօլատակի գետի ջինջ

¹ Աղուանից երկրի պատմութեանը վերաբերեալ ձեռագիր և ցարդ տպած գրքերումն այս բերդը կոչվում է նաև Հաւքախաղաց



և ցրտագին ջրի վերայ ընկած՝ խմում ենք, հա խմում, բժշկականութեան և բժիշկների վերայ էլ լաւ ծաղրում: Գետի մէջ լողացող փոքրիկ կարմրախայտերի թիւն անչափ է:

Գանձասար մենք հասանք նոյն օրը՝ գիշերուայ ժամը իննուկիսին: Ես մի անգամ ևս պինդ սեղմեցի իմ բարեկամ Համագասպ քահանայի ձեռքը, որ իւր խիզախ բնաւորութեամբ և եղբայրական մտերմութեամբ ինձ զօրավիզ, ընկեր և պաշտպան հանդիսացաւ Արցախում, մանաւանդ նրա դժուարին տեղերում արածս գրեթէ բոլոր ճանապարհորդութեանս ժամանակ¹:

Երկու օր Գանձասարում մնալից յետոյ սրբազան Սագինեանցի հետ ճանապարհ ընկայ դէպի Առջաձոր² գիւղը՝ շինուած մի անդնդախորի ձորի փեշերքին: Ձորի ժայռերումը քարայրներն են երևում, որոնք, ըստ վկայութեան բնակչաց՝ 134 տուն, պատերազմների ժամանակ մարդկանց ապաստարաններ են: Ասում են, թէ այդ քարայրներից 4-ն այնքան մեծ են, որ նրանց մէջ կարելի է ձիով ման գալ: Ափսո՛ս, որ նրանց մէջ մտնելու այժմ ոչինչ հնար չը կայ: Ճանապարհը բոլորովին փչացած է:

Առջաձորի բնակչաց մէջ 60 հոգի Շահեշանեան ազգանուն կրողներ կան: Բնակչաց մէջ 12 տնւորը թիւրք են, որոնք թիրքերէնից լաւ հայերէն են իմանում և միշտ այդ լեզուով խօսում: Առջաձորում երիցուհի Խորիշան Տէր-Պետրոսեան այրու մօտ ես գտայ 16 կտոր հայ մելիքաց նամականիք, թղթեր, որոց բովանդակութիւնը՝ բոլորովին մասնական:

Տեսայ նաև 48 հատ թիրքերէն ֆէրմաններ և զանազան թղթեր, 20 հատ կաթողիկոսական կոնդակներ՝ գրուած Աղուանից Յովաննէս, Իսրայէլ, Ներսէս և Եսայի կաթողիկոսների և Գանձասարի աթոռակալ Կիրակոս վարդապետի կողմից: Այդ կոնդակներն իրանց բովանդակութեամբ կարող են պատմութեան փոքր-ինչ պիտանացու լինել: Ափսո՛ս, որ ես ժամանակ չունէի նրանց պատճէնը վեր առնել: Իսկ բնագիրը տիկինը չը կամեցաւ ինձ տալ: Բարեբախտաբար, տիրացու Կարապետ Տէր-Սահակեանը յանձն առաւ յիշեալ կոնդակների պատճէնները ինձ ուղարկել:

Առջաձորի եկեղեցումը, որ շինուած է ՌՃԺԷ թուականում (1668 թ.), ես տեսայ այն աստուածաշունչը, որոյ մասին հանգուցեալ Ջալալեանը իւր ճանապարհորդութիւնում (եր. 141-244) ընդարձակ տեղեկութիւն է տալիս:

Հանգուցեալ սրբազանը չէ յիշում յիշեալ ձեռագրի թուականը, որ է ՌԿԶ (1616), բայց այս թիւը աստուածաշնչի նորոգման և վերջին ստացողի թիւն է: Առաջնոյն թուականը չը կայ: Առջաձորում գիշերելով՝ հետևեալ օրը մենք գնացինք Սյաթներ կամ Աղմախու գիւղը՝ 8 տուն բնակչօք, ապա վանքապատկան Կեչան գիւղը՝ 9 տուն բնակչօք: Գիւղիս արևմտեան կողմի լեռանց վերայ բարձրանում է մի այլ կանգուն եկեղեցի, որ, ըստ սովորութեան, գիւղացիներից կոչվում է Անապատ: Կեչանի մրգերից կարմրաթուշ խնձորը նշանաւոր է: Տեղացիք նրանց կոչում են խշխշան, վասն զի շարժելիս կորիզները խշխշում են:

Կեչանում³ երկու ժամ հանգստանալով՝ մենք ճանապարհ ընկանք դէպի Ջանեաթաղ, ուր հասանք գիշերուայ ժամը 11-ին:

Ճանապարհին մեզ հանդիպեցան Ղազանչի (25 տուն), Ալի-Աղալու կամ Ղարխին (27 տուն)՝ Ալիփէնջա ուխտատեղիով և Քօլանի (18 տուն) գիւղերը, որոնցից միայն առաջին երկուքը հայաբնակ են: Նախքան Ջանեաթաղ գիւղը մտնելը մենք տեսանք արքունական ձիերի այն

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 31-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 80-ում (13 հոկտեմբերի, էջ 3-4)

² Գիւղիս այժմեան անունն է Առջաձոր, որպէս թէ (ասում է Ջալալեանը, եր. 240) առաջին ձոր՝ ըստ կարծեաց հասարակաց, բայց որպէս երևի ի հին գրուածոց է Առջաձոր՝ առեալ զանունն ի դրութենէ տեղւոյն, վասնզի յարձանագիրս ի նմին գեղջ Առջաձոր անունն է

³ Կեչանը կոչվում է նաև Բալլուղայա, այսինքն՝ մեղրոտ ժայր



գործարանը, որոյ կառավարիչ Վիլմանին քօլանիք անցեալներում սպանեցին: Գործարանի այժմեան կառավարիչը մի գնդապետ է՝ ազգաւ թիւրք: Գործարանումը միայն 20 ձի կայ, այն էլ ուզում են վերջացնել: Սպանեալ Վիլմանի ազնուութեան և մեծահոգութեան մասին շրջակայ հայ գիւղացիք մեծ գովութեամբ և երախտագիտութեամբ էին խօսում: Վիլմանի գերեզմանը հէնց գործարանի կշտին՝ մի թումբի վերայ է գտնվում:

Ջանեաթաղ գիւղի (50 տուն) բնակիչք Ղարադաղիցն են գաղթել թելադրութեամբ Մադաթովին: Գիւղիս եկեղեցումը մի քարացած գրքի կտոր գտնուեցաւ, որ սրբ. Սագինեանցը պէտք է ս. Էջմիածնի թանգարանին ուղարկէ:

Ջանեաթաղի եկեղեցւոյ, որը շինուած է ՌԾԸ ազգային թուականին (1608թ.), աւագանը մի տարօրինակ ձև ունի: Նա մի առանձին կամարակապ շինութիւն է, ուր կատարուած խորհուրդը ժողովրդականք կարող չեն տեսնել: Աւագանը տեսանելի է միմիայն դասը կանգնողներին¹:

Հետեալ օրը ես պ. Յովհաննիսեանցի ուղեկցութեամբ անցայ Գիւլեաթաղ գիւղը (40 տուն)՝ Մելիք-Ալլահվերդեանների պալատը տեսնելու և տեսայ: Դա մի քառակուսի և այժմ կիսաքանդ շինութիւն է՝ 16 արշին լայնութեամբ և 25 արշին երկայնութեամբ, միջին մի մեծկակ գաւիթ, երկու հատ հանդիպակաց և կամարակապ, փոքրիկ սենեակներ: Կամարակապ մեծ դրան ճակատի քանդակները բուսականին գեղեցիկ բաներ են: Պալատի չորս անկիւններում էլ կան բրգեր: Մելիք-Ալլահվերդեանի պալատը ճարտարապետութեան կողմից յար և նման է Մելիք-Իսրայէլեանների պալատին Ինն մասանց մօտ: Պալատի մէջ այժմ կենում է Մելիք-Ալլահվերդեանների ժառանգը՝ Միրզաբէկ Բալաբէգեան Մելիք-Ալլահվերդեանց, որ այժմ Վիլմանի գործարանումն է ծառայում ամսական 12 ռ. ռոճկաւ:

Միրզաբէկը տանը չէր: Նրա կինը ինձ ցոյց տուեց շատ թղթեր, բոլորն էլ նոր բաներ են և ուրեմն մելիքների պատմութեան համար ոչինչ նշանակութիւն չունին²:

Գիւլեաթաղից մենք անցանք Կուսապատ գիւղը (285 տուն), որոյ կշտին եղող պղնձեայ հանքը յոյներն են բանեցնում: Կուսապատը ունի ամենաընդարձակ այգիներ: Նա ամբողջ Խաչէնի և Ջրաբերդի գիւղերից ամէնից մեծն է և հարուստը: Այգիներից մինի մէջ մենք տեսանք այսպէս անուանեալ մելիք Ադամի մահլան, որ մի կամարակապ սենեակ է և, ինչպէս երևում է, մոտերքի մի այլ պալատի մասն է կազմում:

Կուսապատից մենք անցանք Մոխրաթաղ գիւղը, ուր ուրիշ ճանապարհով ժամանեց և ինքը՝ սրբ. Սագինեանցը տեղական նորակառոյց եկեղեցին օծելու համար: Մեծ հանդիսով օծեց կիրակէ օրը:

Օգոստոսի 12-ին Մոխրաթաղից դուրս գալով՝ մենք անցանք Մարտակերտ գիւղը և ապա Ջիւանշիրի դաշտի միջով մեր ընթացքը դէպի Վարանդ ուղղեցինք: Ճանապարհին՝ մեր աջ կողմից, երևում է Քառագլուխ գիւղը՝ 54 տուն բնակչօք³:

Այս գիւղը «շինեալ է ի կար բերդին Չալաղանայ, կառուցելոյ ի Չալաղան Հայկազնէ գօրացելոյ ի վեշտասան դարուն: Յերկուց կողմանց են խորածորք անհնարին բարձրութեամբ՝ ուրանոր եկաց և՝ ինքն Չալաիշխան և զբագումս ի լեռնականաց արգելին զհամարձակ մուտս իւրեանց այս երկիր: Արդէն կան դեռ ևս հիմունք տան նորա և բերդին» (Ջալալեան, եր. 344):

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 32-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 81-ում (17 հոկտեմբերի, էջ 3)

² Երբ ես յիշատակարանումս պալատի չափերն էի նշանակում, տիկին Բալաբէգեանը խնդրեց ինձ, որ իւր չորս աղջկանց անուններն ևս նշանակեմ և լրագրում հրատարակեմ: Տիկինը յոյս ուներ, որ այդպիսով իւր ազնուագարմ դասերը համար շուտ և լաւ մուշտարիք լուս կընկնին

³ Քար բառով անանցուած գիւղերի անուններ շատ կան Արցախում. Քարագլուխ, Քարինտակ, Քարակոփ, Քարահերձ, Քարաշէն



Քարազլիսից յետոյ գալիս են հետևեալ գիւղերը՝ Խրամորթ (32 տուն), Ղիջբաղ (34 տուն) և Խնապաստ (45 տուն)՝ կշտին Նահատակ անուամբ մի ուխտատեղի ունենալով: Ղարլու թիւրք գիւղի բարձրում Կարկառ գետը անցնելով՝ երեկոյեան ժամը հինգուկիսին մենք ոտքերս դրինք մելիք Շահնազարի պատմական երկրի՝ Վարանդի վերայ:

Եթէ Շուշի քաղաքի բարձրադր կէտերից մինի վերայ կանգնելով՝ դէպի արևելք նայենք, միջակ բարձրութեամբ լեռների մի երկայն շղթայ կը տեսնենք մեր հանդէպ¹:

Այդ լեռները Կարկառ գետի աջակողմեան ափի ընթացքով բարձրանում են դէպի վեր՝ դէպի հարաւ: Բարձրանալիս լեռները երբեմն օձաձև գալարվում են, երբեմն ուղիղ գծով ընթանում, երբեմն գետից բոլորովին հեռանում և երբեմն մինչև նրա շառաչող կոհակները հասնում ու նրանց հետ համբուրվում: Եթէ Շուշիի բարձրութիւններից անցնենք և կանգնենք յիշեալ շղթայի այս կամ այն գագաթի վերայ, մեր հանդէպ մի այլ շղթայ կը տեսնենք, որ առաջնոյն զուգահեռականն է կազմում, և որոյ արևելեան կողմն ընկնում է Ուտեական և Գարդմանական (այժմ՝ Զիւանջիրի) ծովածաւալ դաշտը: Յիշածս լեռանց երկրորդ շղթան միատեակ ուղղութիւն և բարձրութիւն չունի նոյնպէս: Նա գնում է երբեմն դէպի աջ և երբեմն դէպի ձախ: Ինչպէս առաջին շղթայի, նոյնպէս և վերջինի գագաթները տեղ-տեղ ընդհարվում, բաժանվում են միմեանցից և մին-մէնակ կանգ առնում. կարծես միմեանցից խռոված լինին: Երբեմն էլ մօտենում ձեռք ձեռքի են տալիս և մեծ ու փոքր բոլորակ շղթաներ կազմելով՝ իրանց ստորոտներն ու կողերը միմեանց սեղմում, հէնց իմանաս *կոշոյ պար* կամ *խալլի* խաղալ են ուզում: Յետոյ երկար պարելուց կարծես ձանձրացած ու հոգնած՝ յիշեալ լեռները այս և այն կողմից դէպի այս ու այն կողմը այս ու այն բազուկներ են արձակում, հէնց իմանաս պարողներից այս և այն ոքը պարից դուրս է եկել և իւր գլուխն ու կուրծքը քամուն, բաց ու ազատ օդին դէմ տուել, ինչ է թէ փոքր-ինչ հովանայ ու զովանայ²:

Երկու իսկ զուգահեռականների գագաթների մէջ կան այնպիսիք, որոց կողերը կանոնաւոր են և թէպէտ ուռուցիկ, բայց սիւրունիկ, իսկ իրանց «պտուկը»՝ կատարը, տափարակ է և դուրան: Իրանց շրջագգեստը կանախ խոտն է և ծաղկունք զանազան, որոց մէջ այլ և այլ չորքոտանիք, օրնիբուն կարածեն ու կորոճան, մեղուք և թիթռունք կը բզզան ու կը խայտան: Կան այնպիսի գագաթներ էլ, որոնք իրանց ձևով ոտքից ցլուխ տգեղ են, անճոռնի և մերկ ու տկլոր: Այդ մերկութեան մէջ աւելի աչքի են ընկնում իրանց մարմնոյ խոց ու պալարները, ժայռերն ու քերծերը, բոլորն էլ ժանգոտ, ժահոտ, մահահոտ:

Այդ տեսակ գագաթների բնակիչներն ու այցելուներն ոչ այլ ոք են, եթէ ոչ բուեր, այլ և այլ գիշատիչ թևաւորներ:

Զուգահեռականների և նրանց կիսաբոլոր ու բոլոր գօտիների մէջտեղերում բացուած հովիտներ և ձոր ու ձորակներն ամբողջապէս ծածկուած են ցորնի, գարու և կորեկի հերկերով ու արտերով: Այժմ, որ օգոստոսի կէսն է, արտերի միմիայն չոր ծղօտներն են մնացել, որովհետև այդ ծղօտներին հարկաւորութիւն չունի հայ շինականը, ուստի կրակ է տուել նրանց և այրում է: Այրում է, որպէսզի նախ աշնանային հերկուածքը դիւրացնէ, գութնին փաթաթող ամէն խութ ու բութը հատանէ, դէն ձգէ, ապա հողը չորացնէ, պարարտացնէ և անձրևների կաթիլները շուտ ու լաւ ձծելուն հողին ընդունակ անէ:

Գալով երկրի կազմութեանը՝ ես պետք է ասեմ, որ լեռներից ամենամեծ մասի արգաւանդը բաղկացած է թէթև և տախտակաձև կրաքարից և շերտաքարից³: Վերջնոյն գոյնը զանազան է՝

¹ Շղթայի հիւսիսային ծայրի գագաթը իւր ստորոտում եղած մի արեւել կէտեցւոյ անունով կոչվում է Պրօխորուն

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 33-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 82-ում (20 հոկտեմբերի, էջ 2-3)

³ Շերտաքարին տեղացիք կարասաքար են անուանում և երբեմն նրանով ծածկում նաև իրանց տների առաստաղն ու յատակը



կարմիր, կապոյտ, կանաչ և սպիտակ: Եւ քանակութեամբ նա ամենից առատ է, տեղ-տեղ սև, սպիտակ էլ կայ¹:

Աւասիկ հէնց այդ շերտաքարն է, որով շինուած են երկրի բնակչաց ամենատեսակ շինուածք ու կերտուածքներ, որոնք, ի շնորհս քարի յատկութեան, ցրտից շուտ-շուտ ճաքում են: Հողը՝ գորշ, մի քանի տեղերում սպիտակ-կրախառն գոյն ունի և կաւախառն է: Նա պարարտ է և թէկուզ առանց անձրևի, աճեցնում է ամէն տեսակ բոյսեր ու պտուղներ՝ տալով 8, 10 և 15 առ հարիւր: Պարարտութիւնից ոչ նուազ դիմացկունութիւն էլ ունի այս հողը: Այդ է պատճառը, որ շինականը 10 տարուայ մէջ հազիւ 2 անգամ նրան դադար և հանգիստ է տալիս: Կան այնպիսի տեղեր՝ Սպիտակշէնի լեռներից սկսեալ մինչև Վանէսի կամ Հաղորութի լեռները, ուր հողի թէ՛ պարարտութիւնը և թէ՛ դիմացկունութիւնը գերազոյն է:

Ողջ երկիրը միանգամայն գուրկ է անտառից, որ, սակայն, մի ժամանակ խիստ խիտ է եղել և առատ: Բայց տգիտութիւնը իւր վանդալական ձեռքերով անտառի ծառոց միմիայն կոճղերն ու արմատներն է թողել այժմ: Տեղ-տեղ հիմայ էլ ձեր աչքին հանդիպում են թփեր ու մացառներ, բայց միշտ և հանապազ կացիւնը գլխին և կրակի բոցերը չորս դին²: Հետևաբար չը պետք է զարմանալ, որ այդ երկրի բնակիչք, հիմիկուանից սկսեալ, իրենցն շինութեան փայտերը բերում են հեռաւոր Խաչէնի և Ջրաբերդի անտառներից:

Անտառները յումպետս փչացնող գիւղացիք, բարեբախտաբար, մեծ խնամք են տանում պարտէզներում և այգիներում ծառեր աճեցնելում և բազմացնելում: Եւ երկրի բրեթէ բոլոր գիւղերը, դրանց մերձաւոր և հեռաւոր շրջակայքն ամբողջովին թաղուած են յոգնառատ և պատուական ծառների մէջ՝ թթի, խաղողի, տանձի, խնձորի, ծիրանի, թզի, նոսն և այլն: Բանջարեղինաց հօ ո՛չ թիւ կայ և ո՛չ տեսակ:

Երկրի արտածութեան գլխաւոր առարկան թութն է, թթենու օղին և շերամը: Աքցիզի նոր օրէնսդրութիւնը օղի քաշելը իսպառ դադարեցրած է ոչ միայն թթից, այլ նաև ծիրանից, մոշից, հունից, տանձից ու դամբուլից: Դրա փոխարէն գինեգործութիւնը բաւականին լաւ և առատ է ինչպէս ողջ Արցախում, նմանապէս և նրա՝ մեր այս նկարագրած մասում, ուր գինու ամենից լաւը պատրաստում են Ղզղալա անունով գիւղում³:

Ինչպէս ողջ Արցախի, այնպէս և մեր նկարագրած մասի գիւղերը շինուած են անպատճառ կա՛մ լեռների ստորոտներում, կա՛մ նրանց կողերում և երբեմն գագաթներում, որովհետև այդպիսի տեղերը սովորաբար բաւական չեն շինականի ապրանքներն իրանց մէջ զետեղելու, ուստի բոլոր գիւղերն էլ իրանց հանդէպ կամ իրանց կշտերին եղած դաշտերի և ձոր ու հովիտների մի-մի մասն ընտրել են իրանց գիւմատեղ (գոմատեղ) և կալատեղ: Վերջինքս իրանց հերթում, մի-մի գիւղ են կազմում: Շինացի գերդաստանի մի մասը ողջ տարին այդ գոմերի և կալերի անպաճոյճ խրճիթ ու խողերում է անցկացնում իւր օրերը: Գոմերը և կալերը գիւղերից հեռու են լինում 4-ից սկսեալ մինչև 15 վերստ և միշտ և հանապազ շինացւոց արտերին⁴ և խոտնոց ու ձմերոցների մօտիկ:

Երկրի ընտանեկան չորքոտանիքը նոյնն են, ինչ որ Արցախի միւս մասերում՝ լաւ գոմէշ, էշ կիսէշ (ջորի), կով այծ, ոչխար, ձի, որոյ լաւ տեսակը՝ Արցախի նժոյգը՝ թիւրք խաներն ու բէկերն

¹ Կղարծի գիւղի մօտ
² Արտերի ծոտներն այրելիս գիւղացիք այրում են և թփերը: Յետոյ նրանց չօրուկները հաւաքում են և վառելիքի տեղ գործածում
³ Գալով Արցախի խաղողի տեսակների, ահա դրանց գլխատրների տեղական անունները. 1. Կընընչէնի (կանաչէնի), 2. Միպտրկէնի, 3. Ըծէնի (այծէնի), որ լինում է և՛ սև, և՛ սպիտակ, 4. Չընչէնի (չամչնի), 5. Վարանդէնի (Վարանդ գաւառի խաղող), որ սև է, գինին ողջ Արցախի գինիների պսակն է, 6. Սընտողն, 7. Լըկէնի (որ սև է և շատ հիւթալից), 8. Դըչըլէնի (սև գոյնով), 9. Չաղալի: Վերջին տեսակը չաղալ կենդանուն շատ է սիրելի, ուստի և նրա անունովն է կոչվում, 10. Շիրենի՝ սև, որից շըրա են պատրաստում, 11. Թուխենի՝ մեծամեծ հատիկներով, 12. Շըլթիսենի (շիւ և թուխ բառերի ածանցումը՝ գոյնից առնելով), 13. Ըղտակն (ուղտակն ձևից առած անուն), 14. Գեաղալ, այսինքն ծառաների, գեաղաների խաղող, 15. Թոչնասիրտ (ձևից առած անուն) և Կըմբընի, որ կիսակարմիր գոյն ունի
⁴ Արտեր գտնվում են (թէև սակաւաթիւ) երբեմն լեռների այնպիսի գաղիվայրներում, ուր չորքոտանիք կարող չեն բարձրանալ: Ուստի այդ տեսակ արտերը շինականը ինքն իւր ձեռքով է հերկում, այսինքն բահով և փետտով փորում



են պահում մեծաւ մասամբ, խօզ, որ երամովին շրջում են ողջ Արցախի ծմակներում և մանաւանդ հնձած արտերում: Ընտանի թռչուններից ամենից լաւ են սագը և բաղը, իսկ վայրի թռչուններից ամենից շատ աչքի են ընկնում ընտելացրած բազէն, որով արցախցի որսորդները և բէկերը Եւրօպայի միջնադարեան բարօնների նման շատ են սիրում որսորդութիւն անել¹:

Գալով լորամարզին, ծիծեռնակին, կաչաղակին, անծեղին, կիսագորշ ագռաւին և կաքաւին՝ դրանցմով զեղում և վիստում են ողջ Արցախի արտերը, տները և պարտէզ ու քարափները²:

Նկարագրածս այս երկիրը, սիրելի՛ ընթերցող, Վարանդն է՝ Խամսայի պատմական մելիքութեանց մինը, որ սկսվում է Կարկառի աջակողմեան ափին՝ իւր մէջ առնելով և Շուշի քաղաքը և վերջանում Ղուռուչայ գետի ձախակողմեան ափի մօտ Տօղ լեռան ճիշտ ստորոտը:

Ես այդ երկիրը, կարելի է ասել, ծայրէ ի ծայր ման եկայ: Երկրի տափարակ դիրքը, ճանապարհների համեմատական լաւութիւնքը մեծապէս նպաստում էին ինձ:

Այժմ յիշենք Վարանդի այն շէները³, որոց մէջ ես եղայ, երբեմն գիշերեցի, երբեմն մի քանի ժամ միայն մնացի, երբեմն մէջերով անց կացայ և հարևանցօրէն զննեցի և երբեմն էլ միմիայն հեռուից նկատեցի: Բաց անենք կրկին մեր յիշատակարանը⁴:

Վարանդում առաջինը մեզ հանդիպող գիւղն է Չխուր-Սէլլելու (20 տուն), ապա Ղուրտեր (22 տուն) և Շէնլու (50 տուն): Երեք գիւղերն էլ թիրքաբնակ են և ունին ճոխ և ընտիր այգիներ: Մէկուկէս ժամից մենք հասնում ենք արդէն հայաբնակ գիւղերը. Նախիջլանիկ (122 տուն), որ սեպհականութիւնն է 12 հայ բէկերի⁵:

Գիւղիս հիւսիսային կողմի գագաթումը մի սիրուն և նոր մատուռ կայ՝ Նահատակ անունով ուխտատեղի: Մատուռը շինել է մի երագատես գիւղացի: Այդ կարգի երագատեսների թիւը բաւականին շատ է Արցախում: Ես հիմունքներ ունիմ վկայելու, որ այդ երագատես պարոնները մատուռներ շինում են, որպէսզի նրանց եկամուտները (ուխտաւորներից) իրանց օգտին գործածեն: Եւ գործածում էլ են: Այդ տեսակ մատուռների վանահայրները (որոշուած օրերին) երագատեսներն իրանք են կամ իրանց ժառանգները: Ջալալեանի ասութեամբ՝ Նախիջլանիկի նորակառոյց եկեղեցոյ հիման տակ թաղուած են այն ժամանակուայ քահանային ձեռքով բազմահատոր ձեռագիր մատեանք:

«Մին ի վերոգրեալ մատենից,- շարունակում է հանգուցեալ սրբազան ճանապարհորդը,- մնացեալ էր պատահամբ անթաղ, զոր ընկալայ առ իս, յորում էին զանազան ճառք նախնեաց և մեկնութիւն Ղուկասու աւետարանչին յօրինեալ ի Մատթէոս վարդապետէ Տաթևացոյ» (եր. 340):

Գիշերը Նախիջլանիկում անցկացնելով՝ հետևեալ օրը մենք անցանք հետևեալ գիւղերը՝ Փիրջամալ (95 տուն), Վարագարուն (92 տուն), որոյ մաքուր, զարդարուն եկեղեցին և դպրոցական կրկնայարկ շինութիւնն արդիւնք են Յովսէփ Մկրտչեան, Ջիւանշիր Իսրայէլեան, Թէոս

¹ Բազէներով որսորդութիւն են անում Արցախի նաև պատանիները: Ես միշտ դրանց խորհուրդ էի տալիս հրազենքը միշտ նախապատիւ համարել բազէից: Թող արցախցի հայ մանուկը հէնց մանկութիւնից ծանօթանայ և սիրէ գէնքը

² Արցախում մի տեսակ ուրուր կայ, որ տեղական լեզուով կոչվում է չրթանագեող, այսինքն՝ չորթանի գող, որովհետև այդ թռչունը չորթան շատ է սիրում: Ներկարար կոչում են արցախցիք մի կանաչ և աղաւնաչափ թռչունի, որոյ անունը և տեսակը ես չը գիտեմ: Кречеть (ֆրանսերէն՝ Le Gerfaut) բազէի մի տեսակն է, և որոյ հայերէն անունը ես նոյնպէս չը գիտեմ: Սրա կատուանման սլաւոցը դու միշտ լսում էս ծմակներից անց կենայիս

³ Գիւղ բառի տեղ Արցախում գործածական է միշտ շէն բառը, թէպէտև, ինչպէս յայտնի է մեր լեզուի մէջ, գիւղ և շէն նոյնիմաստ բառեր չեն: Բայց յայդմանէ՝ շէն ընդհանուր անունը մի մասնաւոր, անշունչ կամ շնչաւոր առարկայի, երբեմն և անկան անուան հետ անանցելով, Արցախում յորջորջում են գիւղերը՝ Սարգաւշէն, Սխտորաւշէն, Սպիտակաւշէն, Քարաւշէն և այլն

⁴ Այստեղ ավարտվում է «Ուղեկնացական ակնարկներ»-ի 34-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 83-ում (24 հոկտեմբերի, էջ 2- 3)

⁵ Արցախում այսօր բէկերն առհասարակ նոյն վիճակն ունին, ինչ որ Վրաստանում կնեագները: Երկուքն էլ՝ քաղցած, տկլոր և մերկ ու բոբիկ: Նախիջլանիկի բէկերն այդ կարգի բէկերից չեն սակայն: Նրանց կրկնայարկ տները գէթ փառաւոր շինութիւնք են



Ղուկասեան, Ջումշուտ Հայրապետեան, Մկրտիչ Տէր-Յովհաննիսեան, Բաբա Չերքեզեան և Ջաւատ Բասիանեան պարոնայց եռանդուն գործունէութեանը և զոհաբերութեանը:

Այդ պարոնները վարազարունցի են և այժմ, բացի վերջինից, վերաբնակուել են Բագու: Բայց, ինչպէս տեսանք, նրանք հայրենիքից անձամբ հեռանալիս սրտով և գլխով նրա մէջ են բնակվում: Ապրի՛ն, կեցցե՛ն: Թող բագուաբնակ միւս արցախցիք, որոց թիւը, ինչպէս ես ստուգեցի, խիստ շատ է և Արցախի գրեթէ իւրաքանչիւր գիւղը Բագուում իւր ներկայացուցիչն ունի, այս պարոններից օրինակ առնեն:

Վարազարունում՝ մի մասնաւոր անձի տան մէջ, մի մագաղաթեայ գրչագիր աւետարան կայ, որ գրուած է ՋԺԹ (1470) թուականին:

Վարազարունից Ջալալեանը գտել է «զգրչեայ մատեան մի, յորում գրեալ կային բանահիւսութիւնք Յովհաննէս վարդապետ Թուլկարանցոյ՝ ըստ մեծի մասին ոտանաւոր չափմամբ, յորոց վախճանի գրէ ԽԵՌ Յովհաննէս Թուլկարանցի» (եր. 340):

Վարազարունից ճամփայ ելնելով՝ մենք մեր աջ կողմում տեսնում ենք Միրշուլու (40 տուն), Դահրազ (42 տուն) գիւղերը: Անցնում ենք Աւղալ (150 տուն) և Գիլափլու (255 տուն) թիւրքաբնակ և պարտիզաշատ գիւղերից և ապա մտնում Հացի (45 տուն) գիւղը: Սորա հիւսիսային կողմը մի քանի կիսականգուն եկեղեցիք կան, որոց մասին Ջալալեանը ասում է. «Ոչ հեռի ի շէնէս յայսմանէ գոյ աւերակ մեծի գիւղաքաղաքի, յորում են գեղեցկաքանդակ մահարձանք պատուելի իշխանաց և բազմախորան աւերակ եկեղեցի, կառուցեալ ի կոփածոյ քարանց (Վարանդին յատուկ սպիտակ շերտաքարն է): Թէպէտ շինողն անյայտ, բայց դրութիւն տեղոյն ցուցանէ, թէ էր ի հնումն բնակարան իշխանաց» (եր. 440):

Հետեւեալ օրը ես այդ աւերակները մանրամասնաբար տեսայ՝ ինձ ուղեկից ունենալով տեր Համազասպ և Նորշէնի փակեալ հայ դպրոցի ուսուցիչ պ. Միքայէլ Տէր-Յովհաննիսեանցը, որ «Մեղուի» թղթակիցն է այս կողմերում: Ահա մեր տեսածը: Աւերակները բաղկացած են երկու եկեղեցուց և չորս մատուռներից: Դոքա միմեանցից հեռու են ոչ պակաս 20-100 սաժէնից: Մատուռներից մինի ճակատին քանդակուած են երկու հանդիպակաց քնարահաւեր և հետեւեալ արձանագրութիւնքը.

զԽաչէնցի վարդապետ սրբոյ եկեղեցւոյ յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս:

Երկրորդ մատրան ճակատին արձանագրած է.

ԹՎ. 2ԺԹ (1270) շինեցաւ... ի կաթողիկոսութեան տեսոն Ստեփաննոսի և յեպիսկոպոսութեան տէր Ներսիսի... միաբան եղբարցս... զայդ տեղաց... վարդա... ծնողաց մերոց և ազգականաց...:

Մնացեալ երկու հանդիպակաց մատուռների ճակատներում ևս երկար արձանագրութիւնք կան: Բայց քարերից երկուքը ընկած, անհետացած են, մնացեալ քարերն էլ՝ մաշուած: Այնպէս որ այժմ վերձանելի բառերից ոչինչ իմաստ չէ դուրս գալիս: Այս մատուռների մէջ սքանչելի քանդակագործ խաչեր կան: Մատուռներից մինի պատուանդանի վերայ գրած է.

Ես խաչէնցի վարդապետ... սուրբ նշանս... որդի Վահրամայ, որ կարդայք յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս:

Եկեղեցիներից մինը կրկին խորաններ ունի: Նրա մէջ մի քանի շիրիմներ կան՝ եղծուած տապանագրերով: Դրանցից մինի վերայ մի հսկայամարմին մարդու պատկերն է փորագրուած, թէն բաւականին տգէղ կերպով: Վեր ընկած խաչաքարի վերայ գրած է.

Թիւ 2ԺԹ (1270), ի տէրութեան տէր Ստեփաննոսի, ես Միսիթար որդի... կանգնեցի զխաչս:



Երկրորդ եկեղեցույ ճակատը զարդարուած է անթիւ խաչարձաններով, գեղեցիկ քիվերով և մի գոյգ քնարահաւերով: Արձանագիրն ընդարձակ է, բայց դարձեալ մեծ մասամբ եղծուած: Ահա ինչ որ մենք կարողացանք կարդալ.

... շինեցաք զեկեղեցիս բազում աշխատութեամբ յեպիսկոպոսութեան տէր Յովհաննիսի և տէր Ներսիսի... հայրապետաց... հոգւոց... ազգաց և ծնողաց մերոց, որք կարդայք յիշեցէք աշխատողք եկեղեցւոյս¹:

Պատերից մինի վերայ փորագրած է.

զՇահէն վարդապետ եկեղեցւոյս յիշեցէք ի Տէր:

Այս սրբազան աւերակներին տեղացիք անվանում են՝ Աւագ սուրբ Նշան և հաւատացնում, որ յիշեալ մասունքը յիշեալ եկեղեցումն պահուելիս է եղել, յետոյ փոխադրված է Կդարծի գիւղը, ուր և մնում է ցարդ:

Հացի գիւղից մենք անցանք գիշերելու Նորշէն (112 տուն): Բնակիչներից 200 անձինք Ղազինեան ազգանունն են կրում: Այս գիւղում պ.Միք. Տէր-Յովհաննիսեանցը, ինձ մի չորացրած ծաղկանց փունջ ընծայելով, պատմեց, որ դա յափրուկ է²:

Գիւղացիք գարնանը ժողովում են այդ ծաղիկը, գնդաձև փունջ կազմում և ամառն ու աշունքը փեթակների առաջից կախ տալիս: Մեղուները թափվում են դրանց վերայ և նրանց միջի հիւթը ծծելով՝ կշտանում:

Պ. Տէր-Յովհաննիսեանցի մօտ ես տեսայ նրա ձեռագիր աշխատութիւնքը՝ ա) Բառարան Ուտէական բարբառի, ուր կան նաև ուտէացոց լեզուի բազմաթիւ ոճեր ու դարձուածներ (ևս, բ) Վարանդեցոց առակների, առածների և հանելուկների մի հաւաքածոյ, որ պարոնը ուղարկած է պ. Տիգրան Նաւասարդեանցին ի հրատարակութիւն:

Նորշէնի հարաւարեւելեան կողմում՝ մի լերան գագաթին, կայ մի ծառապատ ուխտատեղի, որ կոչվում է Ստեփանոց (Ստեփանոս) կամ Ծծախաչ: Ասում են, թէ այդ ուխտատեղին կանանց հիւանդ ստիճքներն առողջացնում է: Գիւղի արեւելեան կողմում կայ մի այլ ուխտատեղի՝ Նահատակ:

Չը մոռանամ յիշել, որ Հացի և Նորշէն գիւղերում ինքս էլ տեսայ (մանաւանդ կանանց երեսներին) սիֆիլիսի նշաններ, որոյ մասին նախկին նամակներիցս մինում արդէն գրած եմ: Հարց ու փորձերիցս երևեցաւ, որ յիշեալ ախտի տարածման առաջն առնելու թէև միջոցներ գործ դնում է մարմնաւոր իշխանութիւնը, բայց այդ միջոցները շատ չնչին են և երբէք լաւ հետևանքի չեն հասցնում³:

Հացի գիւղում, ուր հետևեալ օրը ես գնացած էի աւերակները զննելու, պ. Թաւատ Ղազինեանցը մեզ համադամ ճաշով պատուեց: Նոյն պարոնի մօտ ես տեսայ 50 հատ արծաթ պարսկաց դրամներ: Դրամները, որոց մէջ կային և դռաններ, գտնվել են Նորշէնի հարաւային լեռների ստորոտներից: Այդ տեղերում՝ Նաշտավին կոչուած ձորում, մի ստորերկրեայ կամարակապ և գեղեցիկ տուն կայ, նրա չորս կողմը՝ գինամբարներ: Գինամբարը Արցախում գետնի մէջ փորուած հոր է, որի չորս կողմը աւազով և կրով ծեփում, «վազում» են: Ամէն մի գինամբար 100 դոյլ գինի է զետեղում իւր մէջ:

¹ Եթէ արձանագրութեանս մէջ յիշուած Յովհաննէս և Ներսէս եպիսկոպոսները Աղուանից նոյնանուն կաթողիկոսներ են (ինչպէս ես կարծում եմ), այն ժամանակ դժար չէ եկեղեցւոյս շինութեան տարեթիւն ևս մօտաւորապէս իմանալ

² Բայց դա յափրուկ չէ, այլ յսնկածաղիկ

³ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 35-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 84-ում (27 հոկտեմբերի, էջ 1-2)



Նորշենից հետևեալ օրը մենք անցանք Ղզղալա գիւղը (76 տուն)՝ ճանապարհին տեսնելով երկու նոր ուխտատեղիք՝ Ականատես նահատակ անուններով: Ուխտատեղիքը, ինչպէս միշտ, լերանց կատարներում են և ծառապատ:

Ղզղալայի հիւսիսային կողմում մէն-մինակ կանգնած է, իբրև սահման կամ կոթող Արցախի լերանց և Ուտեական դաշտի մէջ, մի բարձրկէկ և քերծուտ լեռ, որ է իսկական Ղզղալան՝ Աղջկալ բերդը: Տեղական քեօխվան՝ մի հաստափոր և հաստագլուխ պարոն, որ 14 տարի շարունակ նոյն պաշտօնն է վարում, և՛ երդմամբ և՛ ամէն միջոցներով ուզում էր ինձ հաւատացնել, իբր թէ ոչինչ հնար չը կայ յիշեալ լերան գագաթը բարձրանալ: Նրա վերայ միմիայն թռչունները կարող են ելնել: Այնտեղ այնքան և այնպիսի օձեր կան, որոնց տեսութիւնը միայն երկիւղ և երբեմն մահ է պատճառում: Վերջապէս պ. Շ. Շ. Շուշեցին մի անգամ փորձեց բարձրանալ այդ գագաթը, բայց հազիւ նրա կէտը բարձրացած՝ ուշաթափուեց: Այնպէս որ հազիւհազ կարողացան նրան յետ դարձնել իրանց ձեռքերի վերայ: Այդ ուղեկիցների գլխաւորն ինքը՝ Գասպար քեօխվան էր:

Այսպէս, ահա, բարբանջում էր շենի քեօխվան, և խեղճ շենացիք հաւատում էին նրա ասածներին: Իմ բոլոր ջանքերը համոզել դրանց, թէ քեօխվի խօսքերը ցնորքներ են, թէ համանման երկւիղ մեզ տալիս էին մարդիկ, երբ մենք Ջրաբերդի և Կաչաղակաբերդի վերայ էինք բարձրանում, գիւղացիներին բնաւ չազդեցին: Այսպիսով մի երկչոտ ու նանրահաւատ մարդը շարունակում էր յիմարացնել հարիւրաւոր նանրահաւատներին:

Հենց այդ նանրահաւատութիւնը խորտակելու և ժողովրդին հասկացնելու համար, որ պետք չէ իրանց քեօխվաների ամէն մի յիմար խօսքը լսել, հաւատալ և կատարել, ինչպէս նրանք միշտ սովոր են անել, վճռեցի, թէն ժամանակս չէր ներում Ղզղալայի վերայ ևս բարձրանալ: Այդպիսի դէպքերում իմ մշտապատրաստ ընկերս՝ տէր Համագասպը, այս անգամ ևս չը բաժանուեցաւ ինձանից: Մեզ հետ ընկերացաւ նաև քահանայի նախկին դասընկերը՝ ղզղալացի Սարգիս Քինքենանց պապուն տղան:

Թռանք ձիերի վերայ, քեօխվայ Գասպարի հետ դաշինք կապեցինք, որ ոնց էլ լինի, մինչև լերան գագաթը մենք, անշուշտ, ձիերով պիտի բարձրացանք և այնտեղից քեօխվայի հաստ փորն ի վեր մի-մի հրացան պիտի պարպենք:

Գիւղի բազմաթիւ և ընտիր այգիների միջովն անցկացանք, մեզ հետ ուղեկցող Սարգսի այգումը գինու մի նոր կարաս բացինք, նախաճաշեցինք և լաւ կոնծեցինք և հայդա, դէպի Աղջկալ բերդը:

Բերդի երկու կողմանքը, արդարև, անելանելի են, բայց նրա հիւսիսային և արևմտեան լայնանիստ գառիվերներով բարձրանալը շատ և շատ դիւրին է: Թէպէտև կան տեղեր, ուր պէտք է լպրծուն ժայռերի վերայ ընթանան ձիանքը, ուրեմն և վտանգաւոր: Բայց մենք մեր խոստմունքը ճշտութեամբ կատարեցինք և մինչև լերան ամենաբարձր կէտը քրտնախարշ ձիերով ելանք: Այդ կէտի վերայ հենց այն էր, որ մեր հրացանները ճարճատել սկսան, և ահա Գասպար քեօխվան փախած էր մեր նշան դրած տեղից:

Բերդի վերայ կան պարսպների և մի քանի տների աւերակներ, մի ջրի մեծ աւազան, ուր ջուր գալիս է եղել հարաւային կողմի բարձր լեռներից ստորերկրեայ խողովակների միջոցաւ (խողովակների հետքերը մենք տեսանք): Օձ՝ և ոչ մի հատ: Բայց դրա փոխարէն լերան սեպաձև գագաթը (մասամբ և կողերը) ամբողջապէս ծածկուած են խխունջներով, որոճներով, ծիտրոնով և վայրի թզենիով: Պատմեցին, թէ այդ բերդի ստորոտներից մի ժամանակ մեծ քանակութեամբ պղնձեայ եռանկիւնի դրամներ են գտնուել թիւրքաց տառերով: Մենք այդ դրամներից չը տեսանք¹:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 36-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 85-ում (31 հոկտեմբերի, էջ 1-2)



Օգոստոսի 15-ին Ղզղալայից մենք անցանք Աշան գիւղը (90 տուն), որ հնումը Առժան էր կոչվում: Վաչագան թագաւորին այս գիւղում օթագայեցաւ, երբ էլած էր ի խնդիր նշխարաց ս. Գրիգորիսի: Ժողովուրդն աւանդութեամբ մինչ օրս ցոյց է տալիս Ադունանից թագաւորի իջևանը:

Աշանում մի մարդու տան մէջ մի Կարմիր աւետարան կայ, որ ոչ ոքին չեն ցոյց տալիս: Տէր Համագասպը պատմեց, որ աւետարանը 200 տարուայ գրչագիր է:

Աշանից յետոյ գալիս է Էմիշչան (35 տուն) և Սպիտակշէն (50 տուն): Այս երկու շէները միմեանցից բաժանուած են մի բարձր լեռնով, որոյ գագաթին է Ջարգեամար անունով մի ուխտատեղի: Բարձրացանք և այդ լեռան գագաթը: Ուխտատեղի ասածը մի հինաւորց եկեղեցի է, որոյ բեմն և պատերը ցարդ կենում են: Եկեղեցւոյ շուրջը սփռուած են հին և նոր բազմաթիւ շիրիմներ: Ժողովրդի կարծիքով Ջարգեամար խլացած ականջներ բժշկելու զօրութիւն ունի: Յիշեալ լեռան գագաթից մի հրապուրիչ տեսարան է բացվում դէպի արևելք՝ Վարանդի գուգահեռականները. իրանց մէջ բացուած, լայն և երկայն հովտով, հազարաւոր արտերով, հովտի մէջ սփռուած ծառաշատ շէներով խիստ գրաւում են ճանապարհորդին: Ահա այդ շէներից մի քանիսի անունները, որոնք հեռադիտակով տեսանելի էին մեզ՝ Կղարծի (127 տուն)՝ իւր Մաթեքսար ուխտատեղիով, Պառաւայթումբ (40 տուն), Ղարադաղլու (70 տուն) և Աշրաքլու (20 տուն): Վերջին 2 գիւղերը թիրքաբնակ են:

Սպիտակշէնում նախաճաշելով՝ մենք իջանք հովիտը և սրբազան Սագինեանցին, որ ուրիշ, հարթ ճանապարհով էր գալիս, դիմաւորելով մտանք Գիշի գիւղը (120 տուն)՝ գիշերելու: Այս գիւղս էլ ունի իւր ուխտատեղիքը, մինը՝ Ոսկի խաչ, որ դարձեալ աւերակ եկեղեցի է և մի պատուական աղբերակն ունի, իսկ երկրորդը՝ Պապա Ջամալ՝ նոյնպէս մի լաւ և յորդ աղբիւրով: Գիւղիս արևմտեան կողմում լեռներից մինի գագաթին, մի պարսպապատ կիսաքանդ ամրոց կայ, որոյ տակից բոխած ջուրն ամրոցի անունով կոչվում Քեամալի աղբիւր: Գիշիի մէջ տեղացի պ. Խաչատուր Քամալեանը մետաքսի մի մեծ գործարան ունի, որ 8 ամսից ի վեր դադարել է գործելուց:

Ջալալեանի ասութեամբ՝ Գիշի գիւղը «գառաջեան ունի զփոքրիկ լիճ ջրոյ, որ յամենանց եղանակս տարւոյ մնայ և միևնոյն դրութեամբ, ուստի և վասն մեծութեան գաւաթի և առատութեան զինոյ ասի յառակս յաշխարհին Արցախու թէ՛ «գինին և գաւաթն քոյ է լիճ Գիշոյ» (եր. 339):

Մենք այդ լիճը իսպառ ցամաքած գտանք:

Գիշիից գկնի՝ ճանապարհին մեզ պատահող գիւղերն են՝ Խնուշինակ (60 տուն) և Հարաւային և Հիւսիսային ճարտարներ (երկուքի մէջ 370 տուն): Դրանցից մինը հնումը կոչվում էր Արագունոյ ճարտար, միւսը՝ Ծմակի ճարտար: Երկու գիւղերի, որոց հեռաւորութիւնը հազիվ քառորդ ժամ է տևում, մէջտեղը բարձրանում է մի անհեթեթ, գոյգ եղջիրանի լեռ, որոյ մասին Ջալալեանը գրում է. «Բարձրաբերձ և ամուր ամրոց միապաղաղ քար ի վեր սեպացեալ, ունելով ի չորից կողմանց զսոսկալի խորութիւն և ի միոյ կողմանէ զգծուարագնալի ճանապարհ, ընդ որով հազիւ կարացի ելանել ի վեր, ուր ի ձեռն քանի մի զինուորաց կարէ բերդն այն մնալ անկասկած և ապահով յերկիւղէ թշնամեաց: Ի միջնավայր տեղուջ գոյ աւագան կամ ջրշէղջ, նշմարանք հիմանցն դեռ ևս երևին, և փոքր-ինչ խոնարհ, քան զբերդն գոյ աղբիւր բարեհամ, որ ի հարկաւորեալ դէպս լնուն ի նոյն աւագան ի պէտս ամրացելոցն ի նմին: Ի պարեխի վիմիս միապաղաղ բարձրացելոյ գոն այրք և փապարք, յորս պահպանին կայք և կարասիք շրջակայ բնակչաց ի ժամանակս երկիւղի: Պատմեն ծերունիք, թէ ի վերայ բերդիս յարձակեցան բազումք յարքայից պարսից՝ այն է Աղա



Մահմատ շահն, Ֆաթալի շահն, և արքայորդի Աբաս Միրզայն, բայց ոչինչ կարացին ոտնանել, ուստի դարձան կոր ի գլուխ և ամօթապարտ» (եր. 338):

Ճարտարներից շատ հեռի մենք տեսնում ենք Վեսալու թիրքաբնակ գիւղը՝ 44 տուն բնակչօք: Եւ ապա ժամանում ենք Ամարաս կամ ս. Գրիգորիսի վանքը, ուր, ինչպէս յայտնի է, Գանձասարի հակաթոռ կաթողիկոսներ նստան ընդ հովանաւորութեամբ մելիք Շահնագարի¹:

Ամարասի կամ ս. Գրիգորիսի վանքն ընկնում է մի երկարաձիգ և նեղ հովտի մէջ: Նա ամէն կողմից պատած-պաշարած է ճոխ պարտեզներով և այգիներով: Շրջակայ գիւղերը և գոմերը բաւականին հեռի են նրանից: Վանքի մասին եղած պատմական տեղեկութեանց հետ ծանօթանալ ցանկացողներին մենք հրաւիրում են ուրիշ տեղ²: Գալով վանքի ներկային՝ ահա նա:

Ս. Գրիգորիսը բաղկացած է մի ընդարձակ, քարաշէն, ամրոցաձև և ցարդ կանգուն պարսպից (մելիք Շահնագարի շինածը 18-րդ դարու վերջերում), որ իւր չորս անկիւններում չորս աշտարակներ ունի: Երկայնութիւնը 130, իսկ լայնութիւնը 120 սաժէն է: Պարսպին կից՝ ներքին կողմից գտնվում են 33 հաստ կամարակապ և հոյակապ սենեակներ, որոնցից 9-ը դահլիճ են, իսկ երկուքը՝ մեծ-մեծ ախոռներ: Սենեակներից երեքը կրկնայարկ են:

Դա է, ահա, Ամարասայ կաթողիկոսարանը:

Սենեակների մէջ շարիշար կանգնած են թթենիք, մի հաստ էլ սօսի: Իսկ դրանց ամէնի մէջտեղում՝ ինքը եկեղեցին՝ կոփածոյ, ընտիր և սրբատաշ քարերից շինած, միակ, փոքրիկ և սիրունիկ գմբէթով: Եկեղեցին ի հիմանց վերանորոգուած է 1858-ին՝ ջանիւք Գեորգ արքեպիսկոպոսի Վեհապետեանց և նուիրատուութեամբ շուշեցուց և շրջաբնակ հայոց: Եկեղեցին, նոր շինուածք գոլով, ժամատուն չունի, այլ սոսկ տաճար: Արևելեան և արևմտեան պատերի վերայ՝ երկու հաստ մեծ և պարզ քանդակագործ խաչեր: Ափսո՛ս, որ շինութիւնը ցարդ ոչ մի արձանագրութիւն չունի: Վերանորոգելիս նրան բաւականին փոքրացրել են: Հին եկեղեցույ պատերը և կաթողիկոսաց շիրիմները բոլորովին գետնի տակ են մնացած, թէև փորփորելիս հետքերը երևում են: Եկեղեցին կանգնած է քառակուսի սիւների վերայ: Լուսամուտների թիւը՝ ութը, որոնցից երկուքը՝ արևելեան և արևմտեան, իսկ վեցը՝ հիւսիսային և հարաւային պատերի վերայ: Լուսամուտները խոշոր են, փառաւոր: Հոյակապ և բարձր բեմի ու սեղանի կշտին՝ զոյգ խորաններ՝ մի-մի լուսամուտներով: Եկեղեցույ շինութիւնը, պայծառութիւնը՝ ջահեր, սրբապատկերներ, օրինակելի են: Աջակողմեան դասի, ըստ եկեղեցական կանոնի, պատին կից հանգչում է ս. Գրիգորիսի շիրիմը, որ նոր է դրած: Իսկ սրբոյն նշխարքը նոյն այդ պատի տակն են գտնվում: Բեմի ձախ կողմից 17 շրջապտոյտ աստիճաններով դուր իջնում էք եկեղեցույ վիրապը, որ կոփածոյ քարով է շինած, և ուր հանգչելիս են եղել ս. Գրիգորիսի նշխարքը:

Ամարասի վանքը բնակութեան ամէն յարմարութիւն ունի: Ամէն բան իւր տեղն է և մաքուր, վայելուչ և կանոնաւոր: Վանահայրը 70 ամեայ դպիր Հայրապետ Տէր-Աւետիքեանցն է, որ 60 ո. ռոճիկ է ստանում, թէև նշանակուած օրիցը դեռ ոչինչ չէ ստացել: Ծերունին ինքը վանքի ծառաների հետ շինել է սենեակների հարկաւորեալ մահճակալները և աթոռ ու գրասեղանները:

¹ «Խամսայի մելիքութեանց» յեղինակը՝ պ. Բաֆֆին, և նրանցի առաջ «Գաղտնիք Ղարաբաղի» հեղինակը՝ Ապրէս Բէկնագարեանց, մելիք Շահնագարին մի երկրորդ Վասակ են դուրս բերել: Միննոյն կարծիքը յաճախ արտայայտում է իւր առակների մէջ և Պըլը-Պուղին: Միննոյն կարծիքը մինչև օրս մելիք Շահնագարի մասին ունի և Արցախի ժողովուրդը: Մենք այդ կարծիքի հետ համաձայն չենք: Այժմ սպասում ենք Դիզակի և Գիւլիստանի հետ ես ծանօթանալու, որ ապա մեր կարծիքն առաջ բերենք: Այն ժամանակ ահա մենք կը խօսենք պ. Բաֆֆիի «Խամսայի Մելիքութեանց» մասին

(Ծանոթ. խմբ.) Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 37-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 86-ում (3 նոյեմբերի, էջ 1-2)

² ա) Փաստոս Բիզանդացի, բ) Ստեփաննոս Օրբելեան, գ) Ջալալեան, դ) Մուրադեան (եկեղեցական պատմութիւնը) և ե) Պատմութիւն կենաց, նշխարաց և եկեղեցույ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, Մօսկվա, 1859, որ է հեղինակութիւն Բ. Բահաթրեանի



Վանքի գաւթումը կայ մի ջրհոր, իսկ դրսում մի յորդառատ և պատուական աղբիւր, որ յամին 1868 շինել և նուիրել է վանքին շուշեցի Ստեփանոս և իւր որդի Խոսրով Ղժրիկեանց:

Վանքն ունի 14 կտոր արծաթեղէն անօթներ և սրբոց մասեր, 144 կտոր զգեստեղէնք, 115 հատ գրեանց, որոնցից միայն երկուքը գրչագիր թղթեայ աւետարաններ են, գրքերի թուումը կայ երկհատոր Հայկազեան բառարանը), 146 կտոր պղնձեղէնք, 21 կտոր երկաթեղէնք, 45 կտոր փայտեայ կահ-կարասիք, 33 կտոր հանդերձեղէնք և անկողին, 76 կտոր զանազան իրեղէնք, 12 հատ կենդանիք: Այդ ամէնը յականէ-յանուանէ, հանդերձ նուիրատուաց անուններով, դուրս են բերած ժապաւինեալ մատենումը: Դրամական արդեանց ժապաւինեալ մատենը ևս կանոնաւորապէս է պահում ծերունի վանահայրը, որ դեռ զարմանալի ժիր է և շարունակ աշխատում է՝ ի կանոնաւորութիւն և ի պայծառութիւն վանքին և սեպհականութեան: Ամէն առաւօտ և երեկոյ նա ժամ է ասում, թէպէտ ևս ժամաւորները յաճախ վանքի լոյ ծառաներն ու մի շուշեցի ցաւագար ապաշխարող պառաւ է:

Հոգեկան առանձին հաճութեամբ խոստովանում էմ, որ ս. Գրիգորիսի վանքը ողջ Արցախում միակ մինաստանն է, որ յիշեցնում է Հին Հայաստանի վանքերն իրենց սրբութեամբ, մաքրութեամբ և ամէն բանի մէջ խիստ կանոնապահութեամբ: Ձեզ մի օրինակ յիշեմ: Ամարաս գնալիս ես, ի շնորհս շաբաթական պահոց, ստամոքսի հիւանդութիւն ունէի: Վանք մենք հասանք ուրբաթ երեկոյեան: Խանգարուած ստամոքսս փոքր-ինչ կազդուրելու համար ես վանահօրից առանձնապէս խնդրեցի, որ ինձ համար հաւով ապուր պատրաստել տայ: Ամենայն լրջութեամբ և դրականութեամբ նա յայտարարեց, որ ինքը երբէք, և ումնիցէ չի թոյլ տալ վանքի մէջ պաս ուտել:

Այս երեկոյեան մեր ընթրիքը կը լինի միմիայն պասուայ, հետևեալ շաբաթ օրը՝ իբրև նաւակատիք, ես նոյնպէս իրաւունք չունեմ վանքումը մսեղէն ուտելու կամ մսաջուր խմելու: Եթէ եկեղեցական այս կանոններն իմ հաշուին չեն գալ, ես կարող եմ իմ գլխի ճարը ուրիշ տեղ գտնել:

«Համառօտ և ազդու», - ասացի ես մտքումս և կարծես հիւանդ լինելս մոռանալով՝ շնորհակալ եղայ ծերունի վանահօրը իւր կարգապահ բնաւորութեան համար: Այդ բոպէին իմ աչքում աւելի աստելի թուացին այն քահանաները, որոնք ճանապարհին պատրաստակամութիւն էին յայտնում իրանց ձեռքով, շէնացիներից և եպիսկոպոսներից ծածուկ, ինձ համար ուտեաց կերակուր պատրաստել:

Գիտեմ, որ այս տողերը շատերի մէջ ծիծաղ պետք է զարթեցնէ: Սակայն այս տողերը գրողին, այսպէս ասած, հաւատոյ հանգանակն է, որ մեր ազգի և ազգայնոց ամենամեծ դժբախտութիւնը (այդ ամէն տեղ և ամէն բանի մէջ) ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր անկարգապահութիւնը, մեր անկերպաբանութիւնը: Ինչ ասել կուզի, որ պաս ուտելը եկեղեցոյ սահմանած եօթն մահացու մեղքերից չէ: Եւ Քրիստոսը ինքն է ասել. «ինչ մտանէ ի բերանը, այն ոչ պղծէ զմարդն, այլ որ ինչ ի բերանոյ անտի էլանէ, նա պղծէ զմարդն»: Բայց Քրիստոսը ասել է և այս. «ի փոքուն անհաւատարիմ է, և ի բազմին անհաւատարիմ է»: Եւ աստուած իմ, որքա՛ն և քանի՛-քանի՛ տեսակ անհաւատարմութիւնք տեսայ ես Արցախի եկեղեցականաց վերայ:

Բայց այդ մասին յետոյ, առանձին, ինչպէս խոստացել էմ: Առայժմ մեր յիշատակարանը ձեռքից չը թողնենք:¹

Օգոստոսի 18-ին ս. Աստուածածնի Վերափոխման տօնի առթիւ Ամարաս ժամանող հայ ուխտաւորների հանդէսները տեսնելից զկնի գնացի մօտակայ (7 վերստ) Սօս (94 տուն) գիւղը, բայց, դժբախտաբար, չը կարողացայ տեսնել ս. Լուսաւորիչ անուանեալ ուխտատեղին, որ լերան

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 38-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 88-ում (10 նոյեմբերի, էջ 3)



գագաթի վերայ է: Ջալալեանի վկայութեամբ՝ յիշեալ ուխտատեղին է մի «սագաշէն եկեղեցի կառուցեալ ի թուին Հայոց ՌՃԽԴ ի Յովհաննէս քահանայէ յանուն Եղիշայ կուխն» (եր. 337, ուր դուրս է բերած յիշեալ եկեղեցոյ արձանագրութիւնքը):

Սօսի հանդիպակաց լեռների լանջերում՝ միմեանցից հագիւ 2-3 վերստ հեռաւորութեամբ, կան հետևեալ գիւղերը՝ Հիրիեր (60 տուն), Ծովատեղ (65 տուն), Խրխան (45 տուն) և ապա ցածր՝ Մամնայ (30 տուն), Մէշէղիշէն, որ ունի 70 տուն:

Հիրիերը Ադուանից կաթողիկոսների ամառանոցն է: Նրա մէջ և նրա շուրջ կան մի քանի հին եկեղեցիք և Կապոյտ բերդը: Այդ ամենի մասին, հանդերձ արձանագրութեանց ընդօրինակութեամբ, սրբազան Ջալալեանը մանրամասնաբար խօսում է (եր. 138-144 և 317-319): Նա խօսում է նմանապէս և Ծովատեղի մասին և սրա տաճարաց արձանագրութիւնքն ևս ընդօրինակում (եր. 332-339):

Խրխան գիւղի հանդէպ՝ դէպի հիւսիս, գիւղացիք ինձ ցոյց տուին Բրէտէս գիւղատեղի ակերակները, ուր ցարդ երևում է մի կիսաքանդ եկեղեցի: Ասացին, թէ Բրէտէսում 800 տուն բնակիչ է եղել մի ժամանակ:

Այդ թուի ճշմարտութիւնը ես չեմ երաշխաւորում, բայց միանգամայն հաւատում եմ, որ պատմական ժամանակներում Արցախի հայոց թիւը առհասարակ ահագին է եղել: Ապացոյց այն հարիւրաւոր գիւղերի և շէնքերի ընդարձակ ակերակները, որոց ողջ Արցախում ձեր գրեթէ ամէն մի քայլափոխում հանդիպում էք: Ո՞վ գիտէ, դեռ որքա՛ն ակերակներն էլ հողի հետ են հաւասարուել, նրա տակովը մնացել: Եթէ ընթերցողը յիշում է, Ապրէս Բէկնազարեանցի պատմութեան մի գլխումը Արցախից գաղթող հայերի մեծամեծ թուանշաններ էր յառաջ բերած: Սկզբում ես դժուարանում էի այդ թուերին հաւատ ընծայել: Մակար վարդապետի դրած ծանօթութիւնքն էլ յիշեալ թուանշանների տակ ինձ այնքան համոզեցուցիչ չերևացին: Թուանշանների գումարը, որքան յիշում եմ, միլիօնի էր հասնում: Բայց, երբ ես ինքս ման եկայ և տեսայ այնքան ակերակներ, կամայ-ակամայ հաշտուեցայ պատմչի առաջ բերած թուերի հետ, մանաւանդ որ չը պէտք է վերագրել լոկ Արցախին կամ Փոքր Սիւնիքին, որ մի փոքր երկիր է, այլ նաև Մեծ Սիւնիքին՝ Ջանգեզուր, Ղափան, Մեղրի և այլն: Գուցէ յիշեալ թուերի մէջն է առել պատմիչը և՛ Շամախույ, և՛ նրա շրջականերից գաղթող հայերի թիւը ևս: Բայց հէնց Արցախի բնակչաց թւոյն մեծաքանակութեանը ևս կենդանի վկայ են այդ երկրի այժմեան ակերակները և այն բազմաթիւ գիւղերն ու գիւղաքաղաքները, որոնք ցարդ կան, թէև բնակչաց թուի հինգերորդ մասը հագիւ է մնացել:

Այսպէս, ընթերցողը թերևս յիշելիս կը լինի իմ «Ակնարկներ»-ում ակերակաց այն ցուցակը, որ ես ստացել էի պ. Ջալալ Տեր-Գրիգորեանցից: Ընթերցողը կը յիշէ նաև Թրդի գետի աջ ափում տեսածս Անապատ գիւղաքաղաքի ակերակը, Վաղահասի կշտի «Մայրաքաղաքը», Խօթայ վանքի ճանապարհին տեսածս «Շէհեր-երին», Քէշիշքէնդի ակերակները և այլն: Հապա ուրիշ որքա՛ն ակերակներ կան, որոնք ես առիթ չունեցայ տեսնելու: Դարձեալ ընթերցողը թերևս յիշելիս կը լինի Արցախի այժմեան գիւղերից Մեծշէնը, որ երբեմն 900 տուն բնակիչ ուներ, Մոխրաթաղը, որ 700 տուն էր, Ուշաջողը, որ 500 տուն ուներ, Հոռաթաղը, որ 400 տուն ուներ և այլն:

Դարձեալ Արցախի այժմեան ուխտատեղիներից մի քանիսը՝ հինաւորց և քանդուած եկեղեցիք, ինչպէս երևում է նրանց դիրքից և շրջակայ ակերակների բեկորներից, ոչ այլ ինչ են, եթէ ոչ գիւղերի կամ գիւղաքաղաքների եկեղեցիք՝ բոլորովին տարբեր հինաւորց մենաստաններից: Այդ ամենն իմ կասկածը Բէկնազարեանց պատմչի առաջ բերած թուանշանների մասին փարատեցին:



Սօսից Ամարաս դառնալով՝ ես ծանօթացայ մի թիւրք բէկի հետ՝ Ալիբէկ Նէշէդբէկ օղլի՝ Դիվանալիլար գիւղից: Այս պարոնը ոչ միայն ազատ կերպով հայավար էր խօսում, այլ նաև հայավար կարդում ու գրում էր: Ես այդ փորձեցի: Երևեցաւ, որ Ալիբէկը Ներսէս վարդապետ Միրզա-Աւագեանի թիւրք աշակերտներից մինն է եղել:

Իսկ Ներսէս վարդապետի ով լինելն ընթերցողին արդէն յայտնի է Երից Մանկանց վանքի նկարագրութիւնիցս:

Ամարասի վանքից ես պատրաստուած էի անցնել Դիզակ և այդ գաւառի մէջ ևս մի պտոյտ անել, ապա Գանձակի գաւառում՝ Գիւլիստանի միջով անցնել-գնալ Թիֆլիս: Բայց Շուշուց ստացած մի նամակ ստիպեց ինձ թողնել այդ մտադրութիւնը: Որոշուեցաւ գէթ Գոչի վանքին այցելութիւն գործել և միննոյն օրը յետ դառնալով Ամարաս՝ գնալ, հասնել Շուշի:

Օգոստոսի 19-ին ես և տէր Համագասպը ճամփայ ընկանք ուրեմն դէպի Գոչի վանքը, որ Դիզակի և Վարանդի սահմանագլուխ կարելի է համարել: Ամարասից մինչև Գոչայ վանք ընդամենը երեք ժամուայ ճանապարհ է:

Ահա այն գիղերը, որոց միջովը մենք անցկացանք, իսկ միւսները հետուից տեսանք. 1. Մավաս, 2. Բիլբիլիկ, 3. Սխտորաշէն, 4. Սարգասշէն, 5. Վերին Թաղավարդ, 6. Ներքին Թաղավարդ, 7. Շէխեր, 8. Դրախտիկ՝ կշտին Նարեկայ վանքը, 9. Ղաջար (թիւրքաբնակ), 10. Ղզղշլախ (բնակիչք՝ մոլոկաններ են), 11. Մալաքեաթին (թիւրքաբնակ):

Այս բոլորը Վարանդի գիւղեր են, որոնցից Մավասի մասին խօսում է Ջալալեանը (եր. 334-336): Ղզղշլաղ գիւղի մօտ՝ մի բլրի վերայ, կանգնած է Յակոբիկ ուխտատեղին, որոյ նկարագրութիւնն արել է նոյն սրբագան ճանապարհորդը (եր. 316):

Այնուհետև Ղուռուչայ կոչուած գետն անցնելով¹՝ մենք մտնում ենք Դիզակ: Ղուռուչայի վերայ մի հատ երեք կամարանի, քարեայ կամուրջ է ձգած, բայց գետի ջուրն այժմ այնքան նուազել է, որ նրա միջովն էլ կարելի է անցկենալ:

Ղուռուչայի աջ ափից սկսվում է Տօղ լեռը՝ իւր լանջին ունենալով համանուն՝ Տօղ գիւղը, որ 210 տուն բնակիչ ունի: Հին և փառաշէն եկեղեցւոյ գաւթում թաղուած են Մելիք-Աւանեան մելիք Եգանը և իւր սերնդի ներկայացուցիչք: Տապանագրերն անեղծ են: Յիշուալ մելիքի պալատն այժմ բոլորովին կերպարանափոխուած է և մաս առ մաս բնակարան է դարձել նրա՝ հայ և թրքացած ժառանգներին:

Տօղ գիւղի շուրջ կան հետևեալ գիւղերը. 1. Ջրակոյս, 2. Ողեր, 3. Մամտաձոր, 4. Ագոխ (100 տուն), 5. Ծակուռի (20 տուն), 6. Հագագու և 7. Թաղլար (500 տուն):

Թաղլար գիւղի մօտ մենք տեսանք մի ընդարձակ մետաքսեայ գործարան, որ ցարդ բանում է: Գործարանը սեպհականութիւն է շուշեցի պ. Աղաջան Մուսլունեանցին: Թաղլարի արտաձութեան գլխաւոր նիւթն ածուխն է:

Հագագու գիւղում տէր Համագասպը տեսել է 900 տարուայ մի ձեռագիր աւետարան՝ ամբողջապէս երկաթագիր:

Տօղ լեռան արևելեան և հիւսիսային լանջերի վերայ պտոյտներ անելով՝ մենք հասանք վերջապէս Գոչայ վանքը: Ճանապարհը շատ լաւ է: Եթէ փոքր-ինչ լայն լինի, կարելի է մինչև անգամ կառքով բարձրանալ վանքը²:

¹ Մինչև Ղուռուչայն անցնելը մենք անցած էինք նաև Քեօնդայն գետը Վարանդում: Գետիս ձախ ափին մենք տեսանք խոշանդամ կոչուած անբակ շինութիւնը, որոյ նկարագրութիւնը տե՛ս Ջալալեանի գրքի 342 երեսումը

² Պ. Ա. Բաբախանեանը (տե՛ս «Ուխտատրի յիշատակարանը» գրքոյկը, Շուշի 1885), չը գիտեմ ինչի, այս ճանապարհի նկարագրութեան մէջ չափազանց ծայրայեղութիւններ է անում



Տող լերան հանդեպ՝ արևմտեան կողմում, կանգնած է Դիզափայտի շղթան՝ իւր մի քանի խրոխտ գագաթներով: Շղթայի արևելեան ստորոտում կան Մոխրենիս (100 տուն) և Տումի (104 տուն) գիւղերը:

Տումի գիւղի մօտ կան Գակի կոչուած մի պալատի աւերակներ: Պ. Բաբախանեանի վերոյիշեալ գրքոյկից (տե՛ս յաւելուածը, եր. 1-7) երևում է, որ վերջին ժամանակներումս Թաղավարդ գիւղի մօտ պատահամբ մի ստորերկրեայ եկեղեցի է գտնուել, որ իւր արձանագրութեանցը նայելով՝ մօտ 900 տարուայ շինութիւն է: Արձանագրութեանց մէջ ի միջի այլոց յիշվում է և Գագկայ անուն... և «ի պետութեան Տեառն Գագիկայ Աղուանից իշխանաց իշխանի» և այլն:

Շատ հաւանական է ուրեմն, որ Տումի գիւղի Գակի կոչուած աւերակները սոյն այս Գագկայ պալատի բեկորներն են:

Դառնանք Գոչայ վանքին¹:

Գոչի կոչուած վանքը մի փոքի և անշուք շինութիւն է, բաղկացած ժամատնից և տաճարից: Եկեղեցւոյ հիւսիսային կողմում և նրան կից կայ մի հին եկեղեցւոյ մնացուածը:

Ըստ Ջալալեանի ահա դա է «Գոչի կամ Թիլանաւան» կոչուած եկեղեցին:

Այժմեան եկեղեցւոյ հիմնադիրքն են Սարգիս և Վարդան² վարդապետները յամին ՈՂԵ (1246 թ.), որոց, ինչպէս նաև մի քանի եպիսկոպոսաց շիրիմները ժամատան մէջն են:

Մենաստանի արձանագրութեանց մասին Ջալալեանը գրում է. «Ես ի դիւանատանէ սրբազան Բաղդասար արքեպիսկոպոսի հանեալ զարձանագրութիւնս սորին (մենաստանին) գրեցի յիմում առաջին ճանապարհորդութեան, իսկ այժմ, որպէս զնկարագրութիւնս սորին, նոյնպէս և զմնացեալ արձանագրութիւն Դաղի վանուց յիւրում տեղուոջ» (եր. 257-258):

Իմ ձեռքի տակ եղած Ջալալեանի աշխատութեան միմիայն երկրորդ հատորումը դուրս է բերած մենաստանիս արձանագրութիւններից միմիայն երեքը: Եւ որովհետև մնացեալները, ինչպէս ասում է ինքը՝ սրբազան ճանապարհորդը, արդէն դուրս է բերած իւր աշխատութեան առաջին հատորում, ուստի ես զանց եմ առնում իմ կարդացածներն արտագրել յիշատակարանումս: Այսքանս միայն կասեմ, որ տաճարի հիւսիսային պատի վերայ եղած ընդարձակ արձանագրութիւնում յիշուած տեղերից, գիւղերից և սահմաններից մեծագոյն մասը մինչ օրս նոյն անուններովն է յիշվում այս կողմերում:

Մենաստանիս ժամատան մէջ չորս հատ գեղուաքանդակ խաչեր կան, որոնք արուեստի կողմից Խօթայ վանքի խաչաքարերից շատ ստոր չեն:

Գոչի վանքի արևելեան կողմում կանգնած է Տող լերան ամենաբարձր և ժայռուտ գագաթը՝ Տող բերդը, որոյ վերայ եղած աւերակների նկարագրութիւնն արդէն արել է պ. Բաբախանեանը իւր «Ուխտաւոր յիշատակարանի» մէջ, որ և ուղարկում ենք մենք մեր ընթերցողին:

Գոչի վանուց 28 տարուայ վանահայրն է Առաքել վարդապետ Կոստանեանցը, որ, ինչպէս երևում է, մի գրասէր մարդ է:

Իւր գրաւոր աշխատութիւններից հայր սուրբը ինձ երկու կտոր ցոյց տուեց: Թերթեցի: Առանձին ուշադրութեան արժանի մի բան չը գտայ: Հայր սուրբն ասաց, որ հայ մելիքների պատմութեանը վերաբերեալ մի ինքնորոյն նոր աշխատութիւն ունի, բայց այժմ ուղարկել է Ջիբրայել՝ իւր աշակերտներից մէկին արտագրելու համար: Խոստացաւ այդ աշխատութիւնն ուղարկել ինձ, եթէ որ ես էլ իւր մի խնդիրը ի գուլիս հանեմ:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 39-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 89-ում (14 նոյեմբերի, էջ 1-2)

² Միայլ է, պետք է լինի Վրթանես (ծանոթ. խմբ.)



Իսկ նրա խնդիրը հետևեալն է:

1881-ին պ. Բաֆֆին, Տոլ գիւղը¹ գալով, Կոստանեանց վարդապետին լուր ուղարկել, որ իւր մօտ եղած ձեռագիրները հետը վերցրած՝ վանքից գայ իւր մօտ: Վարդապետը եկել է և պ. Բաֆֆին յանձնել իւր երկհատոր ձեռագիր աշխատութիւնը՝ ստանալով առ այդ պ. Բաֆֆիից ստորագրութիւն: Ստորագրութեան մէջ թէն ժամանակ որոշուած չէ, թէ Բաֆֆին ե՞րբ պէտք է վերդարձնէ Կոստանեանցի աշխատութիւնը, սակայն, ըստ ասութեան վերջնոյս, այս ժամանակը վեց ամսուայ համար է եղել:

Մինչդէռ ահա 4 տարին անցնում է, և դեռ Բաֆֆին իւր գրաւոր խոստումը կատարած չէ: Առ այդ Գուչի վանահայրը շատ վշտացած էր «Խամսայի մեկիքութեանց» հեղինակից, որ, ինչպէս երևում է իւր գրքի վերջին երեսներից, Կոստանեանցի աշխատութիւնից քչից-շատից օգտուել է:

Բաֆֆիի ստորագրութիւնը Կոստանեանցը մակագրելով ինձ յանձնեց, որ իւր աշխատութիւնքը ստանալով իրան ճամփեմ:

Ուստի, ընդ սմին, ուղարկում եմ խմբագրութեանց պ. Բաֆֆիի ստորագրութիւնը: Յանձնեցէ՛ք իրան և Կոստանեանցի աշխատութիւնը յետս ստանալով՝ ուղարկեցէ՛ք կա՛մ ինձ (մինչև ամսոյս վերջը ես Շուշիում կը մնամ), կա՛մ Համագասպ քահանայ Տէր-Աւետիքեանցին: Նա կը հասցնէ ըստ պատկանելոյն²:

Նոյն օրը՝ իրիկնապահին, Գուչայ վանքից մենք կրկին վերադարձանք Ամարաս, ուր յետ մի քանի ժամուայ հանգստութեան, գիշերուայ ժամը 2-ին ես մի գիւղացի մանկան առաջնորդութեամբ ճամփայ ընկայ դէպի Շուշի: Արշալոյսը բացուելիս ուղեկիցս ինձ անուանեց այն գիւղերը, որոնք մեր ճանապարհի երկու կողմերումն են ընկնում, և ոմանք անտեսանելի էին մեզ:

Ահա այդ գիւղերը. 1) Սարուշէն՝ 65 տուն, 2) Փիրումաշէն՝ 5 տուն, 3) Խաչմաչ՝ 80 տուն, 4) Դոնավարգ՝ 300 տուն, 5) Շուշիքէնդ՝ 350 տուն, 6) Արկաթլու՝ 40 տուն, 7) Հունոտ՝ 15 տուն, 8) Աւետարանոց՝ 250 տուն, 9) Սղնախ՝ 50 տուն, 10) Քարինտակ՝ 100 տուն, 11) Ղարաբուլաղ՝ 60 տուն. 12) Ջաղացներ կամ Լիւլագաս՝ 50 տուն³:

Հասնելով Շուշի՝ ես տեսայ, որ «Գաղտնիք Ղարաբաղի» պատմութեան մասին զանազան տարածայնութիւնք են ծագել ոմանց մէջ: Բնական է, որ այդ տարածայնութիւնքը պիտի հետաքրքրէին ինձ: Եւ ես աշխատեցայ հետամուտ լինել ճշմարտութեանը: Տարածայնութիւններից ամենահիմնաւորը իմ աչքում վերաբերում էր պատմութեան բնագրի կորստեանը: Այդ բանը ես արդէն գիտէի: Մակար վարդապետը յիշեալ աշխատութիւնը հէնց ինձ յանձնած օրին ասել էր և իւր յառաջաբանութեան մէջ ևս գրել էր, որ բնագիրը կորած է: Այդ բանը պատահել է վարդապետի հին բնակարանից նոր բնակարան փոխադրուած ժամանակ: Յիշեալ ձեռագրի յետ կորել են նաև վարդապետի մի քանի գրքերն ու տետրակները ևս: Այդ կորստեան մասին իւր ժամանակին վարդապետը Շուշիում մունետիկ է ման ածել տուել, բայց ապարդիւն: Դրուստը ասած՝ սկզբում ես դժուարանում էի ամէնին հաւատ ընծայել՝ ինքս ինձ մի քանի ենթադրություններ անելով: Ես կարծում էի, որ «Գաղտնիքի» բնագիրը կա՛մ կորած չէ, կա՛մ մի օր

¹ «Խամսայի մեկիքութեանց» մէջ պ. Բաֆֆին ասում է, որ ինքը «Տոլ բերդում է եղել»: Դա սխալ է, որովհետև Տոլ բերդը համանուն լեռան բարձր գագաթին է: Պ. Բաֆֆին առաջնորդող արժ. Գարեգին քահանան ևս ինձ ասաւ, որ իրանք Տոլ գիւղից դէնը չեն անցկացել: Նոյն բանն ասում է և պ. Առաքել Բարախանեանը իւր «Ուխտաւորի յիշատակարանը» գրքոյկի մէջ: Հաւանական է ուրեմն, որ պ. Բաֆֆին կարծել է, թէ Տոլ գիւղն է նոյն ինքը՝ Տոլ բերդը

² Խմբ. Խնդրում ենք պ. Բաֆֆիից ուղարկել խմբագրութեանս հայր Կոստանեանցի աշխատութիւնը և ստանալ մեզանից իւր ձեռագրիքը

³ Այս գիւղերի բնակչաց թուերն ինձ հաղորդեց Արցախի վիճակային կոնսիստորիայի ծառայողներից միինը



պիտի գտնուի: Այդ էր ահա պատճառը, որ ձեռագրի կորստեան մասին իմ «Ակնարկներ»-ում ոչինչ յիշատակութիւն չէի արել ցարդ:

Այժմ, երբ իմ ճանապարհորդութիւնը վերջացած է, երբ, դժբախտաբար, ինձ անհնարին եղաւ պատմչի հետքերը գտնել, երբ իմ բոլոր ենթադրութիւնքը և հետախուզութիւնքը պատմութեան բնագիրը ձեռք բերելու մասին միանգամայն խորտակուեցան, անօգուտ անցան, երբ միւս կողմից զանազան տարաձայնութիւնք եմ լսում, որոնցից բնագրի կորստեան վերաբերեալը, ինչպէս ասացի, ինձ արդար և իրաւացի է թուում, այժմ, ասում եմ ես, կրկին դիմում եմ Մակար վարդապետին և պահանջելով պահանջում. «Տո՛ւր զհաշիւ տնտեսութեան քոյ»:

Համաձայնեցէ՛ք, ընթերցո՛ղ, որ Մակար վարդապետը չէ, ո՛վ ուզում է լինի, կատարեալը հանցաւոր է, եթէ այնքան տարի և այնքան խնամքով և զգուշութեամբ պահուած և վերջը իրան ամանաթ պահ տուած մի աւանդի հետ այդ աստիճան անհոգութեամբ է վերաբերվում և կորսնցնում: Բայց Մակար վարդապետը սարսափելի երդումներով ինձ հաւատացնում է, որ կորուստը կորուստ է:

Ի՞նչ է մնում ինձ անել, եթէ ոչ հաւատալ, մի մարդու, այն ևս կրօնաւորի խոսքերին և երդումներին: Եւ ես, մեծ ցաւ ի սիրտ, հաւատում եմ:

Բան կորսնցնելը, արդարև, սովորական և անմեղ երևոյթ է, բայց «Գաղտնիքի» բնագրի կորուստը մի կատարեալ անբախտութիւն է: Եւ թո՛ղ Մակար վարդապետն ինքն այդ մասին հաշիւ տայ իւր խղճի և աստուծոյ առաջ:

Այսպէս, տարաձայնութիւններից մինը և էականն ու հիմնաւորը մնաց և ցարդ մնում է անփարատելի: Միւս տարաձայնութիւնքը ես ստուգեցի և անհիմն գտայ: Ահա այդ տարաձայնութիւնքը:

Դիրք և կշիռ ունեցող մի անձն ինձ հաւատացնում է, որ «Գաղտնիք Ղարաբաղին» Մակար վարդապետի հեղինակութիւնն է: Յիշեալ անձը 1880 թուականին իւր իսկ աչքերով տեսել է վարդապետին «Գաղտնիքը» շարադրելիս: Ես, թէև խորին կերպով համոզուած էի և հիմայ էլ համոզուած եմ, որ Մակար վարդապետի ուժից և ձեռնահասութիւնից միանգամայն բարձր է «Ղարաբաղի գաղտնիքի» նման մի գրուածք շարադրել և յօրինել, այնուամենայնիւ, հետամուտ եղայ ստուգել վերոյիշեալ անձից իմ լսածը:

Դժբախտաբար, այդ անձը թէ՛ իմ բարեկամն է համարվում և թէ՛ Մակար վարդապետի և ինդրում, աղաչում է, որ ինձ հաղորդածը ես կողմնակի միջոցներով ստուգեմ՝ առանց վարդապետին իւր անունը յայտնելու: Ինչպէս ընթերցողը տեսնում է, իմ դրութիւնը բաւականին յիմար դրութիւն է: Մարդիկ, իբր ականատես, ինձ իրողութիւն և ճշմարտութիւն են հաղորդում, բայց միևնոյն ժամանակ չեն ուզում, որ ես իրանց և Մակար վարդապետին ճակատ առ ճակատ խօսեցնել տամ: Ի՞նչ արած: Դիմում եմ կողմնակի միջոցներին: Վարդապետի մօտ տեսնում եմ և սեպիական աչքերովս կարդում նախ՝ Չմիտնիոյ առաջնորդ գեր. Մելիքսեդեկ եպիսկոպոսի մի յանձնարարական գրութիւնը, երկրորդ՝ Պօլսոյ ազգային մի հիմնարկութեան (անունը միտս չէ) շնորհակալութեան թուղթն առ Մակար վարդապետ, որոնցից երևում է, որ 1880 թուականին վարդապետը տակաւին Տաճկաստանումն էր: Բացի դրանից՝ Մակար վարդապետը մի առ մի ինձ պատմում է, թէ ինքը Կ. Պօլսից երբ է դուրս եկել, երբ Աղսաթափա հասել, այնտեղ ոտը կոտրել, մի քանի ժամանակ հիւանդ մնացել, յետոյ անցել-գնացել Էջմիածին, որքան ժամանակ է այնտեղ մնացել, երբ է փոխադրուել Շուշի:



Այս ամենից յետոյ, ինքնըստինքեան, սուտ է դուրս գալիս ուրեմն ինձ հաղորդող անձի խօսքերը, թէ նա տեսել է 1880-ին Մակար վարդապետին «Գաղտնիքը» շարադրելիս:¹

Մի ուրիշ անձն ինձ ասաւ, որ ինքը Մակար վարդապետի խնդրանօք և նրա համար շատ և շատ գրաւոր տեղեկութիւնք է գտել և թարգմանել մի ժամանակ Շուշուայ գաւառական վարչութեան արխիւից: Ես այժմ կարծում եմ, որ «Գաղտնիքը» Մակար վարդապետն ինքն է շարադրել՝ հենց վերոյիշեալ փաստաթղթերից օգուտ քաղելով: Այս բանը ես ուղղակի Մակար վարդապետին յայտնեցի: Նա պարոնի ասածի ճշմարիտ լինելը վկայելով՝ ինձ ցոյց տուեց, թէ ինչպէս իւր ստացած փաստաթղթերի թարգմանութիւնքը, նոյնպէս և նոյն ինքնորոյն, առանձին աշխատութիւնը նոյն տեղեկութեանց վերայ են հիմնեալ: Տեղեկութիւնքը վերաբերում են Ղափանի, Զանգեզուրի, Հալիձորի անցքերին, որոց մասին «Ղարաբաղի գաղտնիքի» մէջ ոչ իսկ յիշատակութիւն է լինում: Դրանցից Մակար վարդապետ Բարխուդարեանցը մի ինքնորոյն պատմական վէպ է գրում՝ ըստ օրինակի պ. Բաֆֆիի «Ղաւիթ Բէկին»: Վէպը տակաւին կիսատ է: Եւ ես խորհուրդ տուի և կուտամ հայր Բարխուդարեանցին աշխատիլ գրուածքը հանձնել:

Մի քանի այլ անձինք ևս ինձ ասում էին, որ իրանք Մակար վարդապետին շատ անգամ տեսել են այս և այն թիւրք ծեր մօլլայի և խանի մօտ յաճախ երթնելէլիս և նրանցից զանազան տեղեկութիւնք և բանաւոր ասանդութիւնք հաւաքելիս:

Այս ևս ճշմարիտ դուրս եկաւ: Յիշեալ տեղեկութիւնքը վարդապետը հաւաքել է իւր պատմական վէպի համար: Զանց եմ առնում յիշատակել և այն տարածայնութիւնք, որոնք Շուշի հասել էին Թիֆլիսից, և որոց մէջ ոչ միայն Մակար վարդապետը խաբեբայ և խարդախ անձն էր հռչակվում, այլ նաև տողերիս գրողն էլ մեղադրվում էր իբրև վարդապետից կաշառուած մի անձն: Ես իմ կողմից ներում եմ այդ պարոններին: Բայց սրտանց ցաւում եմ, որ դրանք ևս իրանց կողմից չեն խղճահարվում ժողովրդի առաջ՝ ի տարապարտուց անուանարկել մի խեղճ վեղարաւորի, որ Արցախի այսօրուայ հոգևոր իշխանաւորներից միանգամայն արհամարհուած, անտես է արած և իւր հոգեկան միակ մխիթարութիւնը գտնում է գրաւոր օգտակար և անձանձիր պարապմանց մէջ²:

«Գաղտնիք Ղարաբաղի» պատմութեան մասին Մակար վարդապետն իւր ժամանակին այլ և այլ անձանց է դիմել և խորհուրդ ու օգնութիւն հայցել: Այդ մարդկանցից առաջինն է Բաֆֆին, որ վարդապետի երկու իսկ նամակներն անպատասխանի է թողել միանգամայն: Սա եթէ սև նախանձ չէ, անպատճառ մեծ անքաղաքավարութիւն է պ. Բաֆֆիի և ումնիցէ կողմից: Երբ այդ բանը Շուշիում՝ սրբ. Սագինեանցի տանը և նրա ներկայութեամբ ես յայտնեցի «Աղբիւր»-ի խմբագիր պ. Տիգրան Նազարեանցին, նա ինձ ասաց, որ Բաֆֆին իբր թէ վարդապետի նամակներին պատասխանել է՝ առաջարկելով «Ղարաբաղի գաղտնիքը» իրան (Բաֆֆին) ուղարկել, որ եթէ նրա մէջ օգտակար տեղեկութիւնք գտաւ, ժամանակին օգուտ կը քաղէ: Բայց Մակար վարդապետը Բաֆֆիից նոյնիսկ այս տեսակ պատասխան ստանալն ևս ժխտեց:

Ապա թէ ոչ, ո՛վ գիտէ, Մակար վարդապետ թերևս սխալուէր և իւր ձեռագիրն ուղարկէր «Խամսայի մելիքութիւններ»-ի հեղինակին, նա էլ այդ ձեռագիրը ևս պահէր այնպէս իւր մօտ, ըստ իւր տգեղ սովորութեան, ինչպէս չորս տարուց ի վեր պահում է ահա Գոշայ վանքի վանահայր Կոստանեանց վարդապետի ձեռագիրը, թէպէտև վեց ամիս ժամանակաւ է վերցրել նրանից:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 40-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարկվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 90-ում (17 նոյեմբերի, էջ 1)

² Մակար վարդապետ Բարխուդարեանցն իւր ապրուստը հայթայթում է Շուշուայ րէալական դպրոցում կրօն և հայ լեզու ուսուցանելով: Այդ պաշտօնը նրան հանձնել է հանգուցեալ Սևորեաս արքեպիսկոպոսը: Այժմ շատերը կան, որոնք այք են տնկել վարդապետի և այդ պաշտօնին: Ի պատիւ Շուշուայ հոգևոր դպրանոցի հոգաբարձութեանը՝ պէտք է ասած, որ նա այս տարի հայր Բարխուդարեանցին կրօնուսույց նշանակեց և իւր դպրանոցում



«Գաղտնիքի» գոյությունը Մակար վարդապետը յայտնել է և սրբազան Արիստակես եպիսկոպոս Սեդրակեանցին՝ խնդրելով, որ սա յիշեալ պատմութիւնը «Նոր-Դար»-ի մէջ տպել տայ և իւր՝ վարդապետի համար վարձատրութիւն պահանջէ պ. Սպանդարեանցից: Պ. Սպանդարեանցը, իհարկէ իրաւունքով, կամեցել է նախ ձեռագիրը տեսնել և ապա տպագրութեան և վարձատրութեան մասին իւր որոշումնքը յայտնել:

Մինչև «Նոր-Դարի» խմբագրի այս պատասխանը ստանալը Մակար վարդապետը պատասխաններ է ստացել նաև Բագուից՝ աղա Առաքել Ծատուրեանցից, Մօսկուայից՝ Յակով աւագ քահանայ Սուրենեանցից և պրօֆեսօր Քերովբէ Պատկանեանցից: Պ. Ծատուրեանցը բանաւոր կերպով, այլ ոչ գրաւոր, ինչպէս «Նոր-Դար»-ի մէջ գրած էր բժիշկ Արամեանցը, ապապրել է վարդապետին, որ ինքն ուրախութեամբ յանձն է առնում տպագրել «Գաղտնիք Ղարաբաղին», եթէ որ հասկացող անձինք նրա արժանաւորութիւնը վկայեցին. մի առաջարկութիւն, որ, իհարկէ, նոյնպէս իրաւացի է: Սուրենեանց քահանայն և նրա միջոցաւ պրօֆեսօր Պատկանեանցը պահանջել են Մակար վարդապետից, որ սա «Գաղտնիքը» շուտով իրանց ուղարկէ: Տպագրութեան ծախսը մայրաքաղաքներում, անշուշտ, կը հոգացուի:

Մակար վարդապետը իսկոյն ևեթ ուղարկում է «Գաղտնիքի» առաջին մասը միայն: Պրօֆ. Պատկանեանցը, իբրև գրաքննիչ, ձեռագրի տպուելու իրաւունքը տալիս է և յանձնարարում Սուրենեանց քահանային՝ պահանջել և երկրորդ մասը: Այդ ժամանակ Սուրենեանցը վախճանվում է Մօսկուայում: Մի քանի ժամանակից յետոյ հանգուցեալ քահանայի որդին՝ բժշկապետ Սուրեն Սուրենեանցը, նամակ է գրում Մակար վարդապետին և յայտնում, որ ամբողջ գրքի տպագրութեան ծախքը հօր տեղակ ինքը պատրաստ է յոգալ, խնդրում է շտապել ուղարկել և նրա մնացեալ՝ երկրորդ մասը: Բայց Մակար վարդապետը չէ կամենում երկրորդ մասն ուղարկել: Ահաւասիկ հէնց այս օրերումն էր, որ ես Շուշի գտնուեցայ, վերոյիշեալ գրագրութիւնքը կարդացի, կարդացի «Գաղտնիքը» և նրա բովանդակութիւնն ամենահամառօտ կերպով սեղմեցի իմ «Ակնարկներ»-ում: Մի քանի ժամանակ յետոյ, համաձայն վարդապետի պահանջման, Մօսկուայից յետս ստացուեց «Գաղտնիքի» և՛ առաջին մասը, որոյ վերայ ես ինքս կարդացի գրաքննիչի թոյլտուութիւնը տպագրութեան համար: Այժմ հաւատացնում եմ թէ՛ Մակար վարդապետին և թէ՛ ումնիցէ, որ յիշեալ ձեռագրի երկրորդ մասն ևս Ռուսաստանում տպուելու ոչ մի էական արգելքի չէ կարող հանդիպել, որովհետև Երմօլով, Տիցիանով, Մադաթով և այլք, որոց այնքան խստութեամբ դատապարտում է «Գաղտնիքի» հեղինակը, պատմութեան սեպհականութիւն են: Եւ նրանց լաւ ու վատ գործունեութեանց լոյս աշխարհի հանելուց ո՛չ օրէնքը կը խպնի, ո՛չ պետական պատիւը: Առանց «Գաղտնիքի» էլ վերոյիշեալ անձնաց գործունեութիւնը քից-շատից արդէն լոյս աշխարհի ելած է «Ակտերի» և նոյնիսկ մեր գրականութեան մէջ: «Գաղտնիքը» այդ մարդկանց գործունեութիւնը առաւել պարզում ու լուսաբանում է միայն: Մինչդէռ նրանում մեր ներքին նորագոյն պատմութեանը վերաբերեալ բազմաթիւ կէտերը խիստ հետաքրքրական, հրահանգիչ, նոր և թարմ են: Հետևաբար տողերիս գրողը իւր կողմից դառնում է ամէն մի հայ ձեռնհաս անձանց և մանաւանդ «Թիֆլիսի հայ գրք. հրատ. ընկերութեանը», որ յիշեալ պատմութիւնը Մակար վարդապետից ձեռք բերելու և հրատարակելու հոգ տանի¹:

¹ Թող ինձ ներէ պ. Բաբախանեան, որ իւր վերջին («Արձագանք» N 19) նամակը, իբրև մի անբովանդակ կամ լաւ է ասել մի ցուցամուղ դատարկաբանութիւն, անպատասխան եմ թողնում: Չարժէ, որովհետև մեզ քաջ յայտնի են այն մարդիկ, որոնք մեր մէջ մի տող բան չեն ուզում գրել առանց Բելինսկիների, Վոյտերների, Շէքսպիրների և Գրիբոյէտովների անունները քաջշելու: Թէպէտև այդ մարդիկը իրանք ևս շատ լաւ գիտեն, որ այդ հեղինակներից և ոչ մէկին իրանք չեն ճանաչում: Այդ մարդկանցից մէկն էլ աւասիկ և պ. Բաբախանեանն է, որին ես վաղուց եմ ճանաչում և չեմ զարմանում, երբ այդ պարոնը քննադատութեան մասին երբեմն իմ յայտնած մտքերը (տե՛ս «Կայծերի» մատենախօսութիւնը) այժմ ինձ է ուղղում, ինձանից ստացած ապրանքը ինձ է ուզում ծախել՝ առանց գէթ



Պ. Նիկողայոս Տէր-Աւետիքեանցի առաջնորդութեամբ այցելեցի պ. Վահան Տէր-Գրիգորեան Դաղեանին¹, որոյ մօտ բաւականին գրչագիր մատեաններ կան: Ահա դրանց համառօտ ցուցակը.

1. Տօնացոյց, թղթեայ, բաղկացած է երեք մասերից՝ Տօնացոյց, Աշխարհագրական գիտելիքներ Ս. Գրքի մէջ յիշուած տեղերի վերաբերութեամբ և Տաղարան: Տաղերի թիւը՝ երեք:

ա) «Տաղ ի Գրիգորիսէ Աղթամարցոյ ասացեալ», բովանդակութիւն սոխակն է և վարդը, ընդամենը 64 տուն:

բ) «Ողբ Կոստանդնուպօլսոյ, թուական հայոց 972 (1523)». ընդամենը 36 տուն, հեղինակը Առաքել Բաղիշեցին է:

գ) «Յաղէքսանդրէ գրոյն Խաչատուր վարդապետի Կեչառացոյ ասացեալ», ընդամենը 22 տուն, ամենի մի տունը՝ 5 և աւելի տողերից բաղկացեալ:

2. Աւետարան, թղթեայ և առանց յիշատակարանի:

3. «Սանդուղք աստուածային ելից», միջագիր և մագաղաթեայ աշխատութիւն, թուականը ՉՀԸ (1329), «յանապատս Փոս վերակոչեալ, յաշխարհիս Կիլիկեցոյ, ի թագաւորութեան Հայոց չորրորդ Լևոնի աստուածակարգ արքայի, որդոյ Աւշնի թագաւորի»:

4. «Սիմեօնի վարդապետի Ջուղայեցոյ արարեալ Քերականութիւն ըստ լեզուի մերում Հայկազեանց», մագաղաթեայ: Գրքին կցած է նաև «Ստորագրութիւնք Արիստոտելի», ձեռագիրը թուական չունի:

5. «Մեկնութիւն սաղմոսաց Գրիգորի Տաթևացոյ», թղթեայ, հայկական ՊԿԳ (1414) թուականին՝ գրուած Տարբերունի գաւառում:

6. Մաշտոց, մագաղաթեայ, գրուել է Արցախի Գետածոր գիւղում՝ ՌԺ (1561) թուին:

մտածելու, որ յիշեալ մտքերը «Գաղտնիքի» (չը տպուած գրքի) առթիւ գրուած իւր՝ թող ասենք «քննադատութեան» հետ ոչ երբեք կարող են յարմարուիլ ու հաշտուիլ: Բայց պ. Բաբախանեանի երկրորդ նամակի մէջ մի պարբերութիւն կայ, որ կարելի չէ անուշաղիթ թողնել «Մենք կարող էինք, ասում է պ. Բաբախանեան, -մեր իմացած մասնաւոր տեղեկութիւններն էլ առաջ բերել մեր յօդուածում. մենք ցոյց կը տայինք շատ և շատ հետաքրքիր բաներ, որոց մասին պ. Հայկունին մինչև այժմ չէ մտածել անգամ: Այս հետաքրքիր բաները կը մնան մեզ մօտ հարկաւոր օրուայ համար»:

Յայտնելով մեր ցար, որ «Արձագանքի» Շուշուայ աշխատակիցը իւր ունեցած «մասնաւոր տեղեկութիւնները» և «շատ ու շատ հետաքրքիր բաները» իզուր տեղը մինչև օրս թաքցրել է ընթերցող հասարակութիւնից և «քննադատութիւններ» է գրել երկի գրած լինելու համար, ես ահա յայտնում եմ, որ «Ղարաբաղի գաղտնիքի» մասին իմ գիտեցածս ու իմացածս ահա այս է, ինչ որ վերևում գրուած է: Եթէ «Արձագանքի» աշխատակիցը կարող է այս ամէնը հերքել, ջրել, էթէ պարտնը կարող է ապացուցանել «Գաղտնիքի» կեղծութիւնը և Մակար վարդապետի խաբէբայութիւնը, այն ժամանակ նրանից առաջին շնորհակալ լինողը ես կը լինեմ: Բայց մի անհրաժեշտ պայման, թող պ. Բաբախանեանը փաստերով և միմիայն փաստերով խօսի, իսկ իւր «քննադատական հայեացքներն» իրան համար պահէ: Դրանց արժէքը մենք արդէն պ. Բաբախանեանի առաջին նամակում տեսանք և կուշտ ծիծաղեցինք

Այլ առակ լուարարք: Անցեալներում Թիֆլիսի մէջ ի ներկայութեան Համագասպ քահանայ Տէր-Աւետիքեանցի, պ. պ. Ս. Հախումեանցի և Յ. Տէր-Մովսիսեանցի Նիկողայոս Տէր-Աւետիքեանցը («Աղբիւր»-ի աշխատակից) ինձ ասում էր, որ իբր թէ ինքը Բաֆֆին, իրան ասել է, թէ իւր մօտ Մակար վարդապետի մի նամակն ունի: Դրա մէջ վարդապետը իբր գրած է եղել Բաֆֆինին, որ «Գաղտնիք Ղարաբաղին» վարդապետի հեղինակութիւնն է, և այդ աշխատութիւնը անելիս վարդապետն օգուտ է քաղել այս ու այս աղբիւրներից Եթէ, յիշուի, պ. Բաֆֆին ունի այդպիսի նամակ, հապա էլ ո՞ր օրուայ համար է պահել: Թող հարապարակ հանէ: Եւ ահա Բարխուդարեանց վարդապետի խաբէբայութիւնն ինքընտրեան կը յայտնուի, և այն ժամանակ, ինչպէս պ. Բաբախանեան, նոյնպէս և ամենայն ոք, բաց աչքով կը տեսնեն, որ Մակար վարդապետի առաջին քարկոծողը ես ինքս կը լինեմ: Սպասում ենք, ուրեմն թէ՛ պ. Բաբախանեանի «մասնաւոր տեղեկութեանցը» և «շատ ու շատ հետաքրքիր բաներին» և թէ՛ Բաֆֆինի մօտ եղած նամակին

Նոյն պ. Նիկողայոս Տէր-Աւետիքեանցը նոյն անձանց մօտ ինձ ասաւ, թէ պ. Գալուստ Շիրմագանեանը ասել է, որ Ապրէս Բէկնագարեանցը իբր թէ վախճանած է Թարիզում դեռ 1836-ին: Հետևաբար նա չէր կարող մինչև 1881 թիւն Արցախում լինել: Գիտնալով, որ պ. Շիրմագանեանը պարսից պատմութեան և պարսկաստանցի հայ գործիչների անցելոյն հետ լաւ ծանօթ է, ես ցանկացայ տեսնել պարտնին և հետը անձամբ խօսել: Բայց, դժբախտաբար, չը կարողացայ ցարդ տեսնել: Ուստի ահա հրապարակաւ խնդրում եմ պ. Շիրմագանեանից յայտնել հրապարակաւ իւր գիտեցածը Ապրէս Բէկնագարեանցի և, էթէ ուզում է, նաև «Գաղտնիք Ղարաբաղի» մասին

Տողբիս գրողը ոչինչ բանով Մակար վարդապետի հետ կապուած չէ: Եւ նա նոյնպէս և գուցէ աւելի, կարօտ է հարցի պարզուելուն: Թող ուրեմն հրապարակ գայ նա, ով ինչ ասելիք ունի: Քունջուպուճախների խօսք ու գրոյցները և պատուական բամբասանքները ոչ հարց են պարզում և ոչ խօսողների պատիւ բերում:

(Ծանոթ. խմբ.) Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 41-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 93-ում (28 նոյեմբերի, էջ 1-2)

¹ Խոսքը Խաչիկ վարդապետ Դադայանի մասին է (ծանոթ. խմբ.)



7. Մաշտոց, թղթեայ, ՌՃԺԷ (1668) թուին, գրուած «յերկիրս Հագարեան ի գեօղն, որ կոչի Հարար»:

8. Մաշտոց, թղթեայ, ՌՇ (1621) թուականաւ:

9. «Սահմանք իմաստասիրաց Դաւթի Անյաղթի», թղթեայ, գրքի մէջ կայ նաև «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ», կայ նոյնպէս «Յովհաննիսի ըաբունոյ ի ինդրոյ ուսումնասէր և բարեպաշտ իշխանին... ասացեալ յաղագս երկնի և զարդուք նորին»:

10. Մաշտոց, թղթեայ, անթուական:

11. Վեց մասերից բաղկացած մի գիրք, մագաղաթեայ, անունը և թիւն անյայտ, բովանդակութիւնը՝ կրօնական և քաղաքական, նամականիք և ճառեր:

12. Ժողովածու, թղթեայ և կիսով չափ մաշուած:

13. «Սամուէլ քահանայի հաւաքմունք ի հնոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայ. ծայրաքաղ (ծաղկաքա՞ղ) արարեալ»: Յիշատակարանից երևում է, որ գրուած է ԶԿԴ (1315) թուականում Արճիշոյ Ուտընձոր մենաստանում:

14. Մօտ 400 մեծադիր թերթերից բաղկացած մի գիրք, թղթեայ և անթուական, որոյ մէջ կան երգեր, գանձեր, տաղեր, մեծաւ մասամբ կրօնական բովանդակութեամբ: Հեղինակներից ոմանք կարծեօք ցարդ անյայտ են:

15. Գանձարան, անթուական և թղթեայ, մօտ 500 թերթերից բաղկացած: Երգերի բովանդակութիւնը՝ կրօնային:

16. «Տեսիլ սրբոյն Գրիգորի վասն Հոգւոյն և Մարմնոյն», թղթեայ և անթուական:

17. Ժողովածու այլ և այլ ճառերի և քարոզների, անթիւ և թղթեայ:

18. «Մեկնութիւն չորից աւետարանչաց Տաթևացւոյ», թղթեայ և անթուական:

19. «Հարանց վարք», թղթեայ, «յԱսքանագեանս մեծ տոմարի, հայոց մեծաց թուականի, երբեակ քառիցս հարիւրի եօթանց տասանց և միակի» (1271թ.) գրուած է «ի մեծ քաղաքս արքունի, որ Տրապէզ սա յորջորջի»:

20. Մաղմոս, ընտիր մագաղաթ և ձեռագիր, ավստ՝ ս, որ թուական չունի:

21. Քարոզգիրք, թղթեայ, անթուական:

22. Քերականութիւն, թղթեայ, մեծադիր, մօտ 300 թերթ, հեղինակը և թուականն անյայտ:

23. «Յովհաննու պիտակ աշակերտի Գրիգորի եռամեծի արարեալ զշարադրութիւն կարգաց չորեքտասան աստիճան վարդապետաց և լուսաւոր բանից», թղթեայ և անթուական:

24. Քարոզգիրք, մաշուած, հեղինակը և թիւն անյայտ:

25-26. Երկու անկազմ և անթիւ գրեանք՝ ճառեր և խրատներ:

27. «Հարցմունք և լուծմունք սրբոյն Գրիգորի Տաթևացւոց», մեծադիր, թղթեայ, թուականը՝ ՊԽԶ (1397 թ.):

28. «Գիրք հարցման, զոր արարեալ է երջանկապատիւ և երիցս երանեալ ս. հայրն մեր Գրիգոր կոչեցեալն Տաթևացի. այլ և ասացուածք մեծ վարժապետին Յովհաննու Որոտնեցւոյ ի բանից մարգարէիցն», ի թուականիս հայկական ազգիս, մի հազար և հարիւր տասն և մի թոյս (1111-ին=1662 թ.), թղթեայ խոշոր դիրքով, քառածաւալ: Լուսանցքներից մէկի վերայ եղած ծանօթութիւնից երևում է, որ այս գիրքը հեղինակի մետասաներորդ աշխատութիւնն է: Գրուած է Երնջակի վանքում ոմն Եսայի Կարճաւանցոյ հրամանաւ:

29. «Մեկնութիւն գործոց առաքելոց Յովհաննու Ոսկեբերանի», թղթեայ, թուականի՝ «Խոսրովային թոյ Հայկազանցս հինգ հարիւր երրորդի քառասներորդ երրորդի (1094 թ.), մեծադիր, ունի մի ընդարձակ յիշատակարան Պահլաւունի ս. Գրիգորի համանուն որդւոյ կողմից



գրած: Յիշատակարանի վերջումը ասած է. «Ընդ օրինակեցան գիրքս այս ըստ Կեսարացոց օրինակաց, որ կան յարկեղս գրոց սրբոյն Պամփիլէայ իւրովք ձեռովք գրեալ»: Միննոյն այս բառերը եւ գրուած տեսայ նան Առջաձորի եկեղեցում եղող աստուածաշնչի յիշատակարանի վերջումը»:

30. «Գիրք առաքինութեան և մոլութեանց», մեծադիր, անթուական: Սոյն այս գրքի մի այլ օրինակը եւ տեսայ նան Գանձասարի վանքում և կարծեմ նախկին ցուցակներումս յիշել եմ:

Բացի այս գրքերից, որոց մեծագոյն մասը Երից Մանկանց վանքի սեպհականութիւնք են եղել մի ժամանակ, պ. Դադեանի մօտ եւ տեսայ նան մի քանի երկաթագիր, նօտրգիր և մետրոպագիր թերթեր, Վշտալի Եփրեմ կաթողիկոսի 4 կոնդակներ՝ գրուած 1824-1830 թուականների ընթացքում: Տեսայ նոյնպէս Ստեփան արքեպիսկոպոս Ենօքեանի մի նամակը՝ գրած յամին 1828 յունիսի առ ոմն ազնուական իշխան Աղաբէկ, որոյ մօտ Ենօքեան արքեպիսկոպոսը պարծենում է, որ ինքը Պարսկաստանից 10.000 տուն հայ է գաղթեցրել:

Վրեջապէս պարոնի մօտ կան նմանապէս Աղուանից կաթողիկոսաց երկու կոնդակները¹:

Իբրև մի փոքրիկ նմուշ՝ զետեղում եմ «Ակնարկներ»-ում պ. Մամուէլ Գիւլզադեանի «Ոսկի աղունակ» գուսանական վիպասանութեան (որոյ մասին նախորդ նամակներիցս մինում մի երկու խօսք ասել եմ) նախերգանքը և դրանով վերջ տալիս «Ուղեգնացական ակնարկներ»-իս: Ինքս էլ յետ երկու աւուր կը թողնեմ Արցախը՝ ուղղակի Թիֆլիս գնալու համար, իսկ Գիւլիստանի հետ ծանօթանալս, դժբախտաբար, մնաց մի այլ պատեհ ժամանակի:

Գալով Արցախի վանական կալուածոց և եկեղեցականութեան մասին խոստացածս յօդուածոց՝ կաշխատեմ Թիֆլիսում պատրաստել և առանձին յանձնել խմբագրութեանդ²:

Ահա «Ոսկի Աղունակ»-ի նախերգանքը.

«Ողջույն ձեզի, Տիարք և Տիկնայք,
Բոլոր Հայոց ճանապարհի,
Աստուած ձեզի տայ երկար կեանք,
Ձեր որդիքը ողջ պահի:

Ես երգիչ եմ և վիպասան,
Ծառայ եմ ձեր ամենքին,
Հրաման տուէք, պատմեմ մի բան
Կամ ձեզ մի լաւ երգ երգեմ:

Փող չեմ ուզիլ վարձիւմ երգին
Գողթում ունիւմ ես այգի,
Նա բերում է բաւականին
Ինձի ապրուստ և զինի:

Ես չեմ սիրում ոսկու ձայնը,
Ոչ իւր երես շէկ-դէղնած,
Ոչ արծաթի դահեկանը՝
Մեռելի պէս գոյն թռած:

Ես սիրում եմ բամբոխ ձայնը,
Կարմիր գինին մեր Գողթնեաց,
Հայոց աշխրի երգն ու պարը,

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 42-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 94-ում (28 նոյեմբերի, էջ 1-2)

² Այդ յօդուածները կը տպուին առաջիկայ 1886 թուականի «Մեղուի» համարներում

Ցուցք ու զրոյց, վեպք Նախնեաց:

Դուք չէք տեսել, տեա՛րք և տիկնա՛յք,

Մեր գինաւէտ այգեստանք,

Եւ չէք խմել անուշահամ

Հրեղէն գինուց մեր Գողթան:

Մեր գինին էլ Արամագոյայ

Գինայ ակնի ջուր անմահ,

Ազատն ի վեր՝ Սասեաց Քաջաց

Հրեղէն այգուց Գողթն եկած:

Որից կտրեց, գաղտ Քաջերից,

Տնկեց Նոյը Արկուռի,

Խմեց գինուց, զուարթ ապրեց

Դեռ էլ երկար շատ տարի:

Եւ այդ հրեղէն գինու ոգուով

Երգիչ դառան հինք Գողթնեաց,

Արամագոյնեան բամբռի լարով

Երգել պատմել գործք նախնեաց:

Այն գործերը ամենահին,

Որ վիպասան-երգիչներ

Իրենց լանջեր գիրք շինեցին

Չայնագրեցին վրան անգիր.

Այն երգերը, որ Հայ-նախնեաց

Կեանքից իրենց կեանք առին,

Երգիչների սրտի խորքից

Հայի հոգուով բղխեցին:

Եւ երկնքում ստեղծեցին

Մեծն Արմագո, Քաջ Վահագ,

Մէկին տուին երկին, երկիր,

Միւսին՝ կորով ոյժ անյաղթ:

Մէկի ուսման ճարտարութեան,

Տիր դպիրը կամ գրող,

Ու գրածը ճակտին մարդկան

Կարդացողը՝ սև կրող:

Միւսին՝ երկնից որոտ, փայլակ,

Քաղել թաթառ, վիշապներ,

Եւ ողջ երկրի ծովն ու ցամաք,

Քաղել գազան, վիշապներ:

Ու երազընդհանն երազգաւոր,

Եւ առլեզն ու դիք սպիտակ.

Մին՝ ողջացնող քաջ վիրաւոր,

Միւս՝ կորած քաջի գտակ:



Եւ տատ ու մայր զգաստութեան
Հայոց աշխրհին տուող կեանք
Նանէական-Անհատական
Հնարքի-խնամքի դիք-տիկնայք:

Եւ երկրումս ծնեցրին
Նոցա համհարզ դիւցաունք,
Եւ հոմանիշ սոցա ձիրքին
Հայոց տիկնայքը՝ փափկասունք:

Եւ վառեցին սիրտ Սահակի
Բագրատունի ասպետի՝
Տալ Մովսէսի Խորենացուն
Գրել Հայոց Պատմութիւն:

Այդ երգք տուին՝ ամենահին
Հայոց լեզուի նշխարներ
Թարգմանչաց, նոյն ոճովն անգին,
Հայացնել յոյն գրքերը:
Բայց հէնց այդ իսկ խլեց կտրեց
Այն երգք Հայի բերանից.
Եւ նոցա տեղ տուեց Հային
Խորթ փառքի երգքն օտարի:

Եւ վերցրեց Հայ աշխրհից
Գողթան վերջին էլ երգչին,
Որին տեսաւ աչք Սահակի,
Լսեց և ունկ Խորենի:
Եւ հրեղէն Գողթան գինին
Լուաց նորա էլ մարմին.
Որթի տերևք պատանեցին,
Ճիւղերը նաժ հիւսեցին;

Բարձին նորան և իւր բամբիռ
Ուսոց վրան՝ սիրողներ,
Տարան այգին և յանձնեցին
Հովանաւոր որթենոյն:
Նորա վերայ ողկոյզ կթեց
Իւր ստինքը քաղցր արիւն,
Ողորմաթասն հոգին տարեց
Անմահ դրախտի գինետուն:

Եւ որթը նրան արտասուալից
Եւ իւր բամբիռն համբուրեց,
Արտասուաթոր ուռքը շիրիմն
Բազկատարած գրկեցին:
Որ տեսնողքը անգիր կարդան
Այս է տապան հանգստեան,
Գողթան վերջին վիպասանի



Եւ իւր անմահ բամբոյի:
Նորա հետ և երգք հայկական
Գուսանական, վիպական՝
Երկու-երեք հազար տարուան՝
Ամէնքն իջան գերեզման:
 Գերեզմանից դուրս մնաց միայն
 Փառք Մովսէսի Խորենայ
 Չորս-հինգ նշխարք այդ հնութեան,
 Որից մէկը ձեզ ահա՛:
Դա մի ուլունք է, երգն ասում,
Կապած կնոջ մի վզում,
Որ ողջ աշխրի է կախարդում
Ու վերջը ծովն է ընկնում:
 Եւ մի քար է Նիոբէ անուն,
 Դարձեալ նոյն երգն է ասում,
 Դա առաջին մարդն է աշխարհում,
 Որ քարանում է Վանում:
Կինը Շամրամն է, երգն ասում,
Աշխրիս են մեծ թագուհին.
Որի նմանն ոչ մի դարում
Չեկաւ, չի էլ գայ ոչ մին:
 Նա ծնունում է բախտի աշխրում,
 Մայրը նորան դէն ձգում,
 Բայց աղանիք մի անտառում
 Կերակրում են ու պահում:
Նա մեծանում է ոնց թոշուն,
Գնում իւր բախտն որոնում,
Գտնում ձգում վիզը մի ուլունք,
Աշխրիս են մեծ թիրախում:
 Նա տիրում է աշխրիս կէսին
 Ու ինչ կայ, չը կայ իւր մէջին,
 Ողջ փառք ու գանձ և հեշտութիւն
 Տալիս նորան իւր ուլունք:
Բայց էլի նա չէ կշտանում
Կարօտում է մի հային,
Աշխարիս նորան է խոստանում,
Թէ նա սիրտ տայ իւր սէրին:
 Իսկը Հայր ունէր իւր Հայ լաւ կին,
Եւ սիրում էր իւր հողն ու ջուր,
 Միրտը նորա դէմ քարանում,
 Մերժում նորա սէր, տրիտուր:
Նա չէ թողնում հողն ու կնկան,



Չոհում նոցա կեանքն իւր,
Ծովն է ընկնում և Շամիրամ
Յուռութ ուլունք վզին իւր:
 Եւ աղանի դառնում, թռչում,
 Գնում երկինք իւր հոգին,
 Մեր Հայոց Հայկ-աստեղատունն
 Դարձեալ պտրել այն Հային:
Իսկ մարմինը քար է դառնում,
Որպէս արձան՝ յիշեցնում
Արայի սերն ու բնութին
Քարից ամուր հաստատուն:
 Իսկ Շամիրամն փայլուն ուլունք
 Թոյլ բեկանուտ իւր դէմում,
 Ընկած լողում և ընկղմում
 Իրեն սիրոյ խոր ծովում:
Այդ Հայը Արան է գեղեցիկ,
Ողջ աշխարհի օրինակ,
Որին և դիք ավստսացին,
Լիզում էին տալ իւր կեանք:
 Որի պէս սեր չունին մարդիկ,
 Բայց միայն անմեղ աղանիք,
 Եւ հէնց այդ իսկ ձեզ, տեա՛րք, տիկնա՛յք,
 Երգում, պատմում եմ հիմակ:
Եւ հէնց դորա համար իմ երգ
Կոչում «Ոսկի աղունակ»,
Լսե՛ք, տեսե՛ք այդ աղունիկ
Թանկ արժէ, քան ոսկու հանք:
 Փող չեմ ուզում, ասի արդէն,
 Իմ պատմելու այդ երգին,
 Իմ աշխոյժը միայն Գողթի
 Գինին կարող է վառի:
Նա է զարկում և իմ սրտի
Բամբռի լարերը ջղալի,
Երգում, պատմում ահա ձեզի
Այս երգն Հայոց աշխարհի»¹:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի վերջին՝ 43-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարկվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 95-ում (5 դեկտեմբերի, էջ 1-2)

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՈՎ

ԳԼՈՒԽ 3

Ճանապարհորդություն դեպի Ղարաբաղ – Թարթառ գյուղը - Շահբուլաղի կայարանը - Կարկառի դաշտավայրը - Սրբիկ լեռներում

Մեր ճանապարհորդությունը նավով ավարտվեց Ջեվաթում: Կուրը, այնտեղ, որտեղ նա միանում է սրընթաց Արաքսին, քիչ նավարկելի է ծառերի ու արմատների կույտերի, ինչպես նաև հորձանուտի պատճառով: Կուրը և Արաքսը նմանվում են իրարից բաժանված գույգ եղբայրների: Չնայած այն բանին, որ գրեթե նույն երկարությունն ունեն և ջուր են ստանում նույնաչափ ավազաններից, նրանք մնում են իրարից անկախ մինչև Ջեվաթ: Հնում՝ նույնիսկ Ստրաբոնի ժամանակներում, նրանց գետաբերանները նույնպես բաժանված էին իրարից: Արաքսի ընթացքը 13 անգամ ավելի արագ է, քան Կուրինը: Նրա ջրերը ավելի պղտոր ու անհանգիստ են և որոշ տեղերում նույնիսկ ողողում են վերջինիս ջրերը: Այստեղ ձկնորսությունը այնքան էլ արդյունավետ չէ, և միայն մայիսի 15-ից է թափ առնում կարթով ձկնորսությունը: Մի քանի օրից Նորաշենից բոլոր բանվորները կգան Ջեվաթ. ազնակազմը բաղկացած կլինի շուրջ 350 հոգուց:

Այս պահին որսում են հսկա լոքոներ. մայիսին որսում են օրական 15-20 հազար ձուկ: Ասում են, որ ամբողջ աշխարհում երևի չկա որևէ այլ հոսող ջուր, որտեղ ոչնչացնում են ավելի շատ ձուկ, քան Կուր գետում: Անհանգստությունը, որը տիրում է գետի ողջ հոսանքի վրա մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը, երբ ջրերը դեռ ցածր են, մի յուրահատուկ ուժգնություն է ստանում Ջեվաթում: Ձկնորսարանը, որտեղ մենք իջանք, գտնվում է Կուրի ձախ ափին՝ հենց Արաքսի գետաբերանի դիմաց: Մի լաստ միացնում է երկու ափերը, իսկ Ջեվաթ գյուղը բարձրանում է դիմացի ափին:

Մայիսի 4-ին, երբ անձրևը դադարեց, մենք նավակով անցանք գետը, որպեսզի զբոսնենք Ջեվաթում: Բայց հազիվ էինք նավից իջել, երբ ես մինչև ծնկներս ընկղմվեցի անավոր ցեխի մեջ: Հաշտարար դատավորի տան առջև խմբվել էին մի խումբ բողոքողներ: Համարյա թե բոլորը ձիով էին: Տասից ինը մատակներ էին՝ իրենց քուռակներով: Հասնելով նահանգապետի տուն, ումից ամուսինս ցանկանում էր տարբեր տեղեկություններ իմանալ նրան իմաց տվեցին, որ վերջինս տեղում չէ, և մենք ստիպված հետ դարձանք: Որպես նահանգի կետրոն՝ Ջեվաթը ունի վարչական շինություններ, գրասենյակներ, բանտ և այլն: Բնակչությունը կազմված է ավելի քան 500 շնչից, որոնց մի մասը ռուս գաղթականներ են, այսպես կոչված խոխուլներ (ռուս հնածիսականներ): Մնացած բնակիչները եկել են Սալյանից և Շամախուց: Ջեվաթում կա ռուսական մի եկեղեցի, բայց քահանա չկա: Մեծ տոներին, այսինքն՝ տարին երկու-երեք անգամ՝ “Божий промысел” եկեղեցու քահանան գալիս է հաստատելու և օրհնելու ամուսնությունները: Մնացած ժամանակ եկեղեցին փակ է, և բանալին գտնվում է բնակիչներից մեկի ձեռքին: Վերջինիս այն տրամադրում է նրանց, ովքեր ցանկանում են աղոթք անել Աստծո տանը:

Արաքսի գետաբերանում երևում են բարդու հաստակոճղերի մեջ փորված մեծ ու թեթև նավակներ, որոնք ունեն 50-60սմ լայնություն և 4-5մ երկարություն: Թաթերը (թաթարները-*ծնթ. խմբ.*) դրանք օգտագործում են երկու հոգով ձկնորսության ժամանակ:

Բայց արդեն ժամն էր հրաժեշտ տալու Կուրի անհյուրնկալ ափերին:



Տենդի նուպաները մեզ հանգիստ ու դադար չեն տալիս, և մենք՝ ես ու ամուսինս, շտապեցինք շնչելու ավելի թարմ օդ, խմելու մի քիչ մաքուր ջուր, քայլելու ավելի կենսարար հողի վրա: Մենք պետք է հասնեինք մեր ճամպուրկներին, որոնք մնացել էին Եվլախի կայարանում: Մեզ հյուրնկալողները մեզ տեղավորեցին իրենց կառքերից մեկում՝ լծված իրենց լավագույն ձիերին, որոնք անհամբեր դուրսում էին ու ծառս լինում մինչ մենք հրաժեշտ կտայինք: Հազիվ էինք տեղավորվել կառքում, երբ այն անհետացավ փոշու ամպի մեջ: Այդ արագ ընթացքի ժամանակ մեր աչքերի դիմաց անցան թաթերի Ռաեմլի և Ջանգանահ գյուղերը: Երևում էին մի տարի առաջ Կուրից հեղեղված գյուղերի բազմաթիվ ավերակները:

Վերջապես հասանք Սադիիրի կայարան, որտեղ նստեցինք դեպի Եվլախ մեկնող գնացքը: Մինչև գնացքի շարժվելը՝ մենք շրջեցինք կայարանի մոտ, որտեղ ոչ մի բան չկար, նույնիսկ խմելու ջուր: Մեր ուշադրությունը գրավեցին մեզանից մի քանի հարյուր մետրի վրա գտնվող ճահճի մեծ եղեգնուտները, որոնք կարծես բնակեցված էին: Եվ իրականում, երբ առաջ շարժվեցինք, օրորվող եղեգների արանքից տեսանք հարյուրավոր կանանց ու երեխաների, որոնք եկել էին ջուր տանելու ճահճից. միակ տեղը, որտեղ այդ խեղճ մարդիկ կարող էին ջուր վերցնել:

Տեսարանը շատ գեղեցիկ էր և անսպասելի, որովհետև այս կանայք, որ բնակվում էին այդտեղից մի հարյուր մետրի վրա՝ վրաններում, գնչուներ էին: Նրանք ամբողջովին կարմիր էին հագած՝ պղնձե սափորները ուսերին, պատրաստ փախչելու: Նրանք նույնպես մեզ տեսան՝ աչքի ծայրերով նայելով մեզ: Մի քանի տղամարդիկ, որ, պպզած ջրի մոտ, կարծես թե լվացվում էին, մեր ետևից թշնամանքով նայեցին: Այս քոչվոր գնչուները, որոնք գողերի ու խաբեբաների համբավ ունեին, վստահություն չէին ներշնչում: Նրանք կանանց նշան արեցին հեռանալու, բայց իմ ներկայությունից ոգևորված, վերջիններս չշարժվեցին և մնացին իրենց տեղերում՝ կքված ծանր կժերի տակ: Ես առաջ շարժվեցի, որպեսզի տեսնեմ նրանցից մեկին, ով շտապ լցնում էր իր կուժը՝ մի կլոր երկաթե թասով, որը հետո դրեց գլխին: Կարմիր ցնցոտիները հազիվ էին ծածկում նրանց ամրակազմ, պիրկ մարմինները, ամուր ու անզուգական իրանները՝ կորացած իրենց բեռի տակ: Նրանց մաշկը արևահար էր, մազերը՝ սև, իսկ աչքերը՝ շողացող:

Անցնելով՝ ես շոյեցի մի աղջնակի մազերը, և իմ ժեստը իսկույն նկատեցին մյուսները. այդ վայրենաբարո կանայք իսկույն ինձ շրջապատեցին՝ ցուցադրելով իրենց սիրալիր վերաբերմունքը: Նրանցից մեկը բռնեց ձեռքս, մյուսը քաշեց մազերս, փոքրիկները հավեցին փիսիկների նման: Մենք ողջունեցինք իրար. «*Ալլահը պահի*» - մենք իրար դիմեցինք սիրալիր ձևով, «*Յախշի խանում*», և այսպես մենք ծանոթացանք: Նրանք ցույց տվեցին իրենց վրանները և ինձ այնտեղ հրավիրեցին: Պետք էր արդյոք խուսափել առիթից՝ ճանաչելու նոր ավանդույթներ, երբ ճանապարհորդում ես հենց դրա համար: Գնացքի ճանապարհվելուն մնացել էր մի քանի բույլ:

Օհանեսը, ով ուղեկցում էր մեզ, մտայլ շարժվեց մեր հետևից, մենք արագ քայլեցինք դեպի բնակատեղին, իսկ տղամարդիկ թշնամանքով մեզ էին նայում: Ջահել ու ծեր, խեղճ կանայք շարժվեցին մեզ համաքայլ՝ երկաթե թասերը գլխներին, գնզագացնելով մեր կրծքերն ու կարմիր շապիկները զարդարող մետաղադրամները, և, չնայած իրենց ծանր բեռին, նրանց մոտ շնչասպառության նշույլ ամենևին չկար: Վրանների մոտ մեզ ոռնոցով դիմավորեցին երկու մեծ շներ, որոնց քշեցին փայտով ու քարերով: Վախից մի պահ փշաքաղվեցի. մենք կարող էինք չհասնել մեր բեռներին Եվլախում:

Օհանեսը, որ այս ամենը խելահեղություն էր համարում, կանչեց դրախտի բոլոր սրբերին և մեզ հորդորեց, ինչքան հնարավոր է, արագ հեռանալ:



Շուրջ բոլորը թրիք էր ու աղբօղը լցված էր զարշահոտությամբ, էլ չեմ ասում սաստկած քուռակների ու ոչխարների դիակները, որոնց վրա սավառնում էին անգղերը՝ պատրաստ հոշոտելու դրանք: Պատանիները մոտեցան, բռնեցին ձեռքս և այն քնքշորեն դրեցին իրենց ձակատներին՝ ի նշան ողջույնի. նրանք ամեննին չէին քաշվում և աշխուժորեն բլբլում էին:

Արագ աչքի անցկացնելով խղճուկ բնակատեղին՝ մենք արագ վերադարձանք կայարան, որտեղ նստեցինք գնացք և շուտով մեկնեցինք Եվլախ:

Մեր ամբողջ ճամփորդական պահուստը այնտեղ էր, բայց ամենաբաղձալին մեր մահճակալներն էին: Դրանց շնորհիվ ես այլևս չեմ զգա հատակին փոշած անկողինների անհարմարությունը և ստիպված չեմ լինի շաբաթներ շարունակ շորերով քնելու ռուսական կայարաններում, ինչպես նաև հայկական տներում՝ անկողնային պարագաների բացակայության կամ ծայրահեղ քչության պատճառով: Մահճակալը, ինչպես այն հասկանում են Ֆրանսիայում, անձանոթ է տեղի բնակչությանը, որը բավականին ասիական է այս առումով: Կողակարերով սպիտակ սավանների բերկրանքը և փափուկ ներքնակներ ունենալը նրանք չեն ճաշակել: Որոշ մեծահարուստ հայերի տներում շատ հաճախ դա առավելություն է: Բաքվից հետո ես այլևս ոչ մի անգամ չեմ քնել մահճակալի վրա, և հասկանալի է, թե ինչու ես դրա կարիքը զգում եմ: Մեր դեղամիջոցները, մեր գուգարանի բոլոր պարագաները այնտեղ էին: Հիմա մենք կճանապարհորդենք ինչպես իսկական փափկակյացներ: Այս կայարանում մի հիասքանչ գիշեր անցկացնելուց հետո, մենք հավաքեցինք մեր բեռները և Ֆրանսիա ուղարկեցինք մեր առաջին ձեռքբերված իրերն ու պատմական հավաքածուները, Կուրի և Արաքսի ձկների մի գեղեցիկ տեսականի:

Հիմա իմ հայացքը ուղղված է դեպի Ղարաբաղի բարձրավանդակը, որտեղ մենք պետք է շրջագայենք՝ սկսելով մեր ճանապարհորդությունը Շուշի քաղաքից: Այս առիթով մենք վարձակալել ենք ֆայտոն և փոխադրող ձիեր մեր մանր-մունր իրերի համար՝ վրանների, տարբեր մթերքների, թամբերի, նկարահանող սարքերի մի մեծ ուղեբեռ, որ ուղարկել էինք ֆուրգոնով մեզ-նից առաջ:

Ֆայտոնը, որ հիանալի տեղաշարժման միջոց է, կհասնի մինչև Շուշի, իսկ ինչ վերաբերում է փոխադրող ձիերին, դրանք կհասնեն մինչև փոստակայան: Մինչև Օհանեսը դանդաղ բեռնում էր իրերը, ես կայարանի կանացի սրահում ինձ կարգի բերեցի: Այդ ժամանանակ Թիֆլիսից եկող գնացքով ժամանեցին մի բեկ կամ գուցե թաթար խան և ամբողջովին դիմաձածկված երկու կին, որոնք ներխուժեցին սենյակ: Իմ ներկայությունը նրանց հաճելի չէր, քանզի սպայի հագուստով բեկը դեմքը ծամածոցեց, որից ի դեպ ես ինձ այնքան էլ վատ չզգացի: Կանայք՝ բեկի կինը և նրա աղախինը, հանեցին իրենց դեմքի ծածկոցները և չնայած տեղեր կային, պպգեցին հատակին: Ես մտադիր չէի նրանց նեղություն պատճառել, բայց և պատրաստ չէի ինքս նեղվել նրանց թշնամական կեցվածքից: Սպան գոռոզ տեսքով ռուսերեն հարցրեց, թե ուր ենք ուղևորվում, ինչ ենք անում և այլ հարցեր, որոնց ես պատասխանում էի չհասկանալով, որից նա ծայրաստիճան չարացավ: Վերջացնելով իմ հարդարանքը՝ ես անտարբեր անցա երկու տիկնոջ առջևով և լքեցի սենյակը:

Եղանակը հիանալի էր, կապույտ, և ջինջ երկնքում անգամ ամպի ծվեն չկար. մի կողմից երևում էին Դաղստանի լեռները՝ ծածկված ձերմակ ձյունով, որ շողշողում էր ծագող արևի շողերի տակ: Դա մի հիասքանչ տեսարան էր, նույնքան արժանի հիացմունքի, ինչքան մեր գեղեցիկ Ալպերը: Մյուս կողմից իրենց գեղեցկությամբ ու ձերմակությամբ վեհանում էին Ղարաբաղի լեռները: Մենք



ուղևորվում ենք հենց այնտեղ (ըստ հայկական ժողովրդական ասացվածքի՝ մարդը գնում է լեռան մոտ, քանզի լեռը չի գալիս նրա մոտ): Այս մտքից ես հրճվում էի և շտապեցի ճանապարհ ընկնել:

Նախաճաշը ավարտելով՝ մենք նստեցինք ֆայտոն՝ լծված չորս բավականին պճնված ձիերով: Կառքը շարժվեց, և ձիերը ընթացան՝ զնգզնգացնելով իրենց զանգակները: Տապը ուժեղացավ: Ճանապարհները շատ վատ էին. շարժվում էինք շատ դանդաղ: Մի հեծյալ սպա մեր կողքից քառարշավ ընթացավ: Տեղ-տեղ լճակներ կային, որտեղ փնչացնելով լողում էին հսկա եզներ, որոնց միայն պոզերը և սև դնչերն էին երևում: Տիղմի մեջ նրանք փորել էին փոսեր և վայելում էին նրա զովությունը: Մենք հասանք դարաբաղյան տափաստան, որը Մուղանի դաշտավայրից բաժանվում է Արաքս գետով: Ամենուր օձեր ու ցամաքային կրիաներ էին: Գետինը ծածկված էր վայրի սամիթով, և նրա դեղին ծաղիկների սուր հոտը լցվել էր օդը:

Հասանք Կարամանլի գյուղը, որն ուներ փոստակայարան, գեղեցիկ պարտեզներ և բազմատեսակ բուսականություն՝ կաղնիներ, բոխիներ, ուռենիներ, թթենիներ, բարդիներ և այլն: Ծաղկած սզնենու բուրմունքը լցվել էր օդը, ամենուր ջուր էր հոսում, հողատարածքները խնամքով շրջապատված էին փշե թփերի ցանկապատներով: Բազմաթիվ գետակներից հետո մեր կառքը անցավ Թարթառ գետը՝ ձախ կողմում թողնելով երեք մեծ հողաթմբեր՝ երեք գերեզմաններ: Երեկոյան դեմ մտանք Թարթառ գյուղը, որը գտնվում էր գետից մոտ 500 մետր հեռավորության վրա: Մենք տեղավորվեցինք կայարանում, որտեղ ոչինչ չկար: Ես անմիջապես գնացի շուկա՝ ընթրիքի համար գնումներ կատարելու: Ավաղ, սա դեռ վերջը չէր. պետք էր դեռ ճաշ եփել: Հենց այս պահից էլ մենք հասկացանք մեր թարգմանչի արժեքավորությունը: Մի հսկա պարոն, որը ոչ կարդալ գիտեր, ոչ գրել և, որին չնայած վճարում էինք 5 ռուբլի, չէր կամենում նույնիսկ արտակարգ դեպքերում ճաշ եփել: Մենք ունեինք արտոնաթուղթ, որը ներկայացնում էինք փոստի վարիչին, և մեզ ծառայություններ էին մատուցում, իսկ մնացածի համար մուծում էինք տեղում: Եվ պարոն Օհանեսը այն պահում էր զրպանում և, երբ կայարանում ոչ-ոք չէր լինում, մենք հոգնած ու սառած սպասում էինք մեր ընթրիքին: Երբ միայն կայարանապետի քթի տակ էինք խոթում պաշտոնական արտոնաթուղթը, նա դուրս էր գալիս թմբից, ներողություն խնդրում և հրամայում մեզ համար կրակ վառել: Դժվարությամբ վաստակված ճաշից հետո, մեր անկողիները բացում են փայտե մահճակալների վրա, և մենք խոր քուն ենք մտնում:

Մայիսի 7-Գարնանային հրաշագեղ առավոտ է բացվում, մենք դուրս ենք գալիս նկարչական ապարատներով, մինչ բեռները կբարձեին: Այսօր Թարթառում շուկայի օր է, և գյուղը մի տեսակ աշխույժ է: Բոլոր կողմերից ժամանում են ձիավորներ, բեռնակիր անասուններ՝ էշեր, ձիեր, ջորիներ, ցուլեր և այլն: Ճոճացող անիվներով շարժվում են հիանալի եզներով լծված սայլերը՝ բեռնված ապրանքներով, կանանցով և երեխաներով: Այսօր ձիերի օրն է, և նրանք մեծ թիվ են կազմում. նրանց մեջ կային դարաբաղյան տեսակի մի քանի ձիեր: Մի հիանալի զբոսանք կատարելուց հետո, երբ վերադառնում էինք կայարան, տեսանք գյուղի ծայրին տեղակայված մի քանի խղճուկ վրաններ: Դրանք պատկանում էին թաթերին, որոնք բարձրանում էին լեռներ և այստեղ կանգ էին առել: Նրանք եկել են Չանգեզուրից: Մի քանի ծեր կին գորգ էին գործում՝ պպգած գետնին դրված սովորական դազգահների առջև: Ի դեպ, Թարթառի հիմնական բնակչությունը թաթեր են: Մերկ երեխանները և կիսաբաց կրծքերով կանայք կանգնած են ճյուղերից և ցեխից շինված հյուղակների առջև: Նրանք հազիվ են զսպում գազազած շներին, մինչև մենք մի քանի նկարահանում կանենք:



Յոթ անց կեսին մեր արագընթաց կառքը շարժվեց դեպի Շուշի: Թարթառից հետո մինչև սարահարթ հասնելը ճանապարհը միշտ վեր է բարձրանում՝ բաժանված խոր ձորակներով և ոռոգման ջրանցքերով: Արոտավայրերը ծածկված են անասունների մեծաթիվ հոտերով:

Աջ կողմում՝ մի 18 կմ հեռավորության վրա, սկսվում են դարաբաղյան լեռները: Մեծ թվով ձիավորներ մերթ հայտնվում են, մերթ՝ անհետանում: Մենք կլանում ենք թարմ ու մաքուր օդը. այս գեղեցիկ բնության գրկում քեզ այնքան երջանիկ էս զգում, որ ապրում ես: Բուսական աշխարհը շատ հետաքրքիր է, բացի վայրի սամիթից և օշինդրից կան նաև բազմատեսակ դաշտային ծաղիկներ, հիասքանչ կակաչների գորգերին հաջորդում են հսկայական տատասկափշերը: Ճամփին վազվզում են մի խումբ մոխրագույն ագռավներ, երևում են նաև դիակների վրա պտտվող հսկա անզոներ:

Շատ հաճախ, այս ընդարձակ սարահարթում տեսնում ենք մշակված հողեր, բանվորների ջոկատներ՝ մի քանի ոստիկանների հսկողությամբ, որ ուղարկել էր նահանգապետը, որպեսզի ոչնչացնեն այս կողմերը լցված մորեխներին: Հարյուրավոր տղամարդիկ եղեգնից պատրաստված ավելներով առաջ են շարժվում՝ որսալով միջատներին, որ ծածկել էին հողը հազարներով: Որոշ հեռավորության վրա փոսեր են փորված, որտեղ լցնում են մորեխներին և իսկույն ծածկում հողով: Ռուսական կառավարությունը մեծ ջանքեր է թափում, որպեսզի հաղթահարի գյուղատնտեսական այդ աղետը: Բայց պետք էր տեսնել, թե ինչ անտարբերությամբ ու անփութությամբ էին բանվորներից շատերը կատարում իրենց գործը: Շուտով հասանք մի լայն գետափ, որտեղ ցուլերի ու եզների մի մեծ հոտ եկավ՝ ծարավը հագեցնելու: Մյուս ամփին՝ սարահարթի բլրակին, մի հարյուր ձի էին արածում: Այս ամենը մի հիասքանչ տպավորություն էր թողնում. դա մի հրաշագեղ տեսարան էր այս վայրի ու անմարդաբնակ բնության գրկում, որտեղ լսվում էին միայն անասունների բառաչն ու ձիերի խրխնջոցը:

Գույուջայի կայարանից մի հարյուր մետրի վրա վեր էր բարձրանում միայնակ մի ծառ, որի ճյուղերին կապկպված էին բազմագույն լաթերի կտորներ, իսկ ծառի տակ մի կույտ քարեր էին թափված: Սա սարահարթի մատուռն է: Անցորդները այստեղ կանգ են առնում՝ կապելու իրենց շորերից մի ծվեն կամ էլ կույտի վրա մի քար նետելու: Սա առաջին պաշտպանմունքի ծառն է, որ մենք հանդիպել ենք: Ստամոքսի երկար ցավերից հասկացանք, որ, բացի բնության վայելքից, պետք է նաև սնվել: Այս կլանող միտքը մեզ հետապնդում էր այն պահից, երբ ոտք դրեցինք Շահ-Բուլաղ: Այստեղ բոլորս մտանք խղճուկ կայարանը և մեր արտահայտիչ ժեստերով միացանք Օհանեսի գրույցին: Ի վերջո մեզ համար բերեցին լավաշ (տեղի հաց)՝ վրան մի մեծ կտոր պանիր: Աղքատիկ, շատ աղքատիկ ճաշ՝ երեք սոված մարդու համար:

Այս կայարանը իր անունը ստացել է մի հիասքանչ և վարար աղբյուրից, որը սկիզբ է առնում անտառածածկ ձորակից և գտնվում է ավերակների վերածված մի գեղեցիկ շինության մոտ, որն ուներ շատ նրբաճաշակ ճարտարապետություն և որի առջև վեր էր խոյանում մի եռակամար կիսաշրջանաձև սյունասարահ: Այս շենքի մոտ՝ ուխտի լաթերով ծածկված մոշի թփերի տակ, երևում էր մի հին՝ անկասկած ինչ-որ սրբի գերեզման: Դա Ղարաբաղի կառավարիչ Փանահ խանի Շահ-Բուլաղի ամառանոցն է: Բայց ինչի էր ծառայում այս տաղավարը: Արդյոք դա մզկիթ էր, թե տուն: Ներսը կամարածածկ էր ու առանց լույսի. կիսով չափ ծածկված թավ կանաչապատ այս ավերակը կախարդող տպավորություն էր թողնում: Այստեղից մի քիչ հեռու վեր էր խոյանում մի հին ամրոց: Այն կառուցվել է 18-րդ դարում Նադիր Շահի կողմից: Ես լվացվեցի աղբյուրի ջրով, որը հոսում էր կավճե բլուրից՝ ծնունդ տալով մի վճիտ աղբյուրի, որի քարքարոտ մահճում վխտում էին բազմաթիվ ձկներ:



Շահ-Բուլաղի շրջակայքի ավերակները թույլ են տալիս հավաստել, որ այս տեղը հնում շատ կարևորություն է ունեցել Հայաստանի պատմության մեջ՝ չնայած, դժբախտաբար, այդքան խառնաշփոթ ու խճճված տեղադրությամբ:

Մասրենիներ, անկեզ մորենիներ, դեղին ծաղիկներով վայրի սամիթ, գեղեցիկ թզենիներ, նոնենիներ և այլ տեսակի թփեր գորգի նման ծածկել են ձորակը, որտեղից հոսում է աղբյուրը, հիասքանչ բուսականության մեջ ճովողում են ճեղագոավները: Անցնելով ողջ կայարանը՝ մենք կառք նստեցինք և կամաց-կամաց մտանք գեղեցիկ և անմշակ Կարկառի դաշտավայր: Ճանապարհը անցնում է լքված պարսկական մի մեծ գերեզմանոցի մոտով: Այստեղ գտնվում է նաև մի ավերված քարվանսարա:

Շուշիին մոտենալուն զուգընթաց Կարկառի դաշտավայրը նեղանում է: Այստեղ-այնտեղ հողի կրծքից պոկված կրաքարե բլուրներ են ցրված: Ճամփին քոչվորականների ընտանիքներ կան՝ անասուններ, կանայք, երեխաներ, վրաններ. բոլորը գնում են լեռներ: Կանայք ձիով են: Շատ հաճախ նրանք տանում են ձեռներին կամ մեջքին կապած երեխաներ: Գեղեցիկ և երիտասարդ մի ձիավորի թամբին մի հիվանդ մտրուկ կամ էլ գուցե հորթ կար: Մա՛ր բազմագույն շորեր հագած այս մարդիկ, մի կատարյալ ու հիասքանչ տեսարան էր կյանքին ու գույներին սիրահարված նկարչի կտավի համար: Տղամարդիկ շների հետ միասին ուղղորդում են անասունների հոտի ընթացքը: Այստեղ-այնտեղ որոշ խմբեր հոգնած ծվարել են գիշերելու համար. խմբված մեծ խայրուկի շուրջ՝ նրանք պատրաստվում են երեկոյան ճաշին:

Երևում է մի ուրիշ քարվանսարա, և մենք անցնում ենք Խոջալուի ձիաբուծարանի առջևով: Ճանապարհը՝ մերթ լավ, մերթ վատ, անդադար կտրտվում է գետի բազմաթիվ վտակներով: Անցնում ենք մի գետակ, որպեսզի մտնենք Կարկառի հունը. մեր հիասքանչ ձիերը տանում են մեզ՝ սլանալով համաքայլ: Գետի ջրերը բարձր չեն, բայց անձրևի ժամանակ այն՝ երևի ահավոր է: Շուտով երևում են Ասկերանի երկու ամրոցների ավերակները՝ տեղադրված մեկը գետի աջ, մյուսը՝ ձախ ափին: Աշտարակներով մեծ պատը, որի հետքերը դեռ մնում են, մի ժամանակ երևի փակում էր անցումը. այն վերաբերում է պարսկական ժամանակաշրջանին: Սկսած այդ ավերակներից՝ դաշտավայրը ծածկված է միայն ծիրանաքարերով ու սև շերտաքարերով: Էշերի, անասունների հոտեր, եզներով սայլեր, թաթ ձիավորներ, մի անվերջանալի ու հանդիսավոր թափոր, որն այնքան էլ չի տարբերվում բիրիակյան ժամանակների հովիվների թափորներից: Վերջապես կեսօրվա ժամը չորսին մտանք Խան-Բարեի կեղտոտ ու տիղմով ծածկված քարվանսարան, որտեղ թողեցինք ձիերը և կառքը, իսկ մենք գնացինք ինչ-որ բան ուտելու: Մեր ուղեբեռը մնացել էր ետևում՝ Շահ-Բուլաղում, որտեղ երևի նոր ձիեր չկային: Բայց կայարանի պետը, տեսնելով մեր արտոնաթերթիկը, խոսք սովեց, որ երկու ժամից տրոյկյան կժամանի Խան-Բարե, իսկ մենք, մեր սովորության հակառակ, որոշեցինք առաջ շարժվել:

Մի քանի թաթար և հայ առևտրականներ, տեղավորված կիսավեր քարվանսարայի շուրջը, գետնին փռեցին մի հին գորգ և մեզ մատուցեցին թեթև ընթրիք՝ ոչխարի խորոված: Դրա հետ միասին մատուցեցին զովեշի համեղ պանիր, գյուղացիների կողմից շատ սիրված կանաչեղեն՝ մաղադանոս, պրաս, թարխուն, սամիթ և այլն: Որպեսզի ավարտենք այս հիասքանչ կերուխումը, բերեցին մի հին ինքնատեռ, որի մեջ եռացող ջուրը թշշում էր:

Մենք վաղուց պատրաստ էինք առաջ շարժվելու, բայց մեր ուղեբեռը դեռ տեղ չէր հասել:

Ժամը յոթն էր. գիշերն ընկավ: Մինչև Շուշի բարձրանալը մեզ մնում էր մի քանի վերստ անցնել լեռներով: Մենք անհանգիստ էինք ուղեբեռի ուշացման պատճառով, քանի որ երկու կայարաններից ոչ մեկում ձիերի սպասող ուղևորներ չկային: Ժամը յոթ անց կեսին լավեցին



կառքերի զանգակների ձայներ: Դա մեր կառքն էր: Վերջապես կարող ենք մեկնել: Ավաղ, այն կարող էր մերը լինել, բայց զբաղեցված էր մի կրտսեր պաշտոնյայի կողմից, ով առանց ամոթի ու խղճի խայթի, տիրացել էր մեր ձիերին, չնայած մենք առաջինն էինք ժամանել, ինչպես նաև ունեինք առավելություն, որ մեզ տալիս էր մեր արտոնաթուղթը: Որպեսզի խուսափի մեր դժգոհությունից, մեզ մոտենալու պահին, կառապանը այնքան ուժեղ մտրակեց ձիերին, որ նրանք քամու նման սլացան մեր կողքով:

Մենք կատաղած էինք: Գիշեր էր. եղանակը հանկարծակի վատացավ: Վերջապես ժամանեց ուղեբեռը, փոստակառապանը մեզ բացատրեց, որ ձիերը տրամադրել են մեզնից հետո ժամանած կրտսեր պաշտոնյային:

Հազիվ մի քանի ժամ էր անցել, որ մենք ճանապարհվել էինք, երբ լրիվ մթնեց, ու հորդ անձրև սկսվեց: Ճանապարհը չէր երևում: Ոչ ֆայտոնը և ոչ էլ ձիակառքը լապտեր չունեին: Կառապանները սարսափած կանգ առան: Ով կպատկերացներ, որ մրրիկը այդքան երկար կտևեր: Այնքան մութ էր, որ միմյանց ճանաչում էինք միայն ձայնից: Ճանապարհն անցնում էր անդունդի երկայնքով, և ցանկացած տեղաշարժ մեզ կարող էր տանել դեպի իրական մահ: Փոստակառապանները հուսահատված են: *«Թող Աստված պահպանի մեզ»* - դողում էին այս խեղճ մարդիկ: Կարկառի դաշտավայրի տեսապատկերը, որ կարելի էր տեսնել կայծակի լույսի տակ, անսովոր էր, առավել ևս, որ բազմաթիվ ընտանիքներ, որոնք բարձրանում էին լեռները, կանգ էին առել հանգիստ առնելու, և նրանց ճամբարների լույսերը վառվում էին դաշտավայրի խորքում: Ես հիշեցի, որ մեր ճամպրուկներից մեկում կա մագաղաթյա գրպանի լապտեր և մի մոմ: Ամուսինս տեղատարափ անձրևի տակ, մթնի մեջ խարխափելով, փնտրեց և շատ ուրախացավ, երբ հայտնաբերեց այդ առարկաները, քանզի պետք է ասել, որ մենք իրականում չունեինք ճամբարման պիտույքներ՝ ճամպրուկներ, որտեղ կարելի էր գտնել մեծ լապտերներ, մոմեր և այն, ինչ անհրաժեշտ էր: Եվ ահա այս մի փոքրիկ լապտերի և մի կտոր մոմի օգնությամբ մենք պետք է շարժվեինք ևս մեկ ու կես վերստ, որպեսզի հասնեինք չափարների փոստակայան, որը գտնվում է ճանապարհից մի որոշ հեռավորության վրա: Մա այն պահն էր, որ ուղեկցող անձնակազմը չէր կարող մեզ օգտակար լինել. պետք էր սեփական ուժերով իրավիճակից դուրս գալ: Կամաց-կամաց լույսը բացվելու հետ հանգստություն եկավ նաև մեր հոգիներին: Փոստակառապաններից մեկը վերցրեց փոքրիկ լուսարձակը և քայլեց առջևից՝ ստուգելով տեղանքը, իսկ երկու կառապանները ձիերի թոկերից բռնած հետևեցին նրան: Քամին հանգրեց լապտերը: Լուսարձակը վառեցին, նորից սկսեցինք շարժվել մինչև այն պահը, երբ քամին հանգրեց նաև մոմը: Եվ այսպես շարունակ յուրաքանչյուր հարյուր կամ երկու հարյուր մետրի վրա լսվում էր փոստակառապանների կանչը. *«Յավաշ, յավաշ»*՝ խառնված ամպրոպի ձայնին: Առաջացել էր մի աննկարագրելի աղմուկ-աղաղակ: Վերջապես երևացին չափարցիների (պահակներ-*ծնթ. խւրթ.*) տների լույսերը:

Ժամանակն էր, որ հասնեինք, քանզի մագաղաթյա լապտերը, որ ստիպված էինք շարունակ տոսնձելու, արդեն պատռվել էր և այլևս պիտանի չէր: Մենք հույսներս դրել էինք չափարցիների վրա՝ բայց առանց նրանց հետ հաշիվ նստելու:

Կանչեր, ճիչեր, շվվոցներ, ատրճանակի կրակոցներ՝ ոչինչ նրանց վրա չէր ազդում: Նրանք մնացին անտարբեր, և, քանի որ մթության մեջ դժվար էր գտնել միջոց՝ հասնելու մինչև նրանց անիծված խարխուլ տները, պետք էր սպասել, որ նախախնամությունը մեզ ուղարկեր մի այլ օգնություն: Շուտով ժամանեց եզներով լծված մի կառախումբ, որի մոտենալը ոչ ոք չէր լսել: Պետք էր կանգառի տեղ գտնել, բայց դա հեշտ չէր: Այդ մարդիկ մեզ ասացին, որ ճիշտ ենք գնում: Եղանակը բացվեց, շարունակեցինք շարժվել առաջ, մեր բոլոր նեղություններից հետո պարզ



երկնքում երևացին լուսինը և աստղերը: Բայց մեր առջև ծառացավ ևս մի խոչընդոտ: Հասնելով Շուշի տանող բարձրունքի կատարին՝ տեսանք, որ ճանապարհը խցանված էր մի կառքով, որի անիվը դուրս էր եկել: Որպեսզի շարունակենք ճանապարհը, պետք էր այն կողքի քաշել: Բոլորս իջանք կառքից: Չիակառապանը ներսում խոր քնով էր անցել: Բղավեցինք նրա ականջի տակ, ուժեղ թափահարեցինք, որ արթնանա: Ապարդյուն: Դեռ անձրևում էր, մեր կառապանը առաջարկեց վեր բարձրացնել կառքի ծածկը, որպեսզի թափվող անձրևի կաթիլներից կառապանը արթնանա: Չլսված խենթություն չէր արդյոք դա: Տղամարդիկ ստիպված էին բարձրացնելու կառքը կառապանի հետ միասին և դնել կողքի, որպեսզի մեր ֆայտոնը, որը գտնվում էր անդունդի եզրին, կարողանար առաջ շարժվել: Այս բոլոր տառապանքներից հետո, որտեղ միախառնվել էին վտանգն ու զավեշտանքը, վերջապես հասանք Շուշի, և մեր Խաչի ճամփան ավարտվեց քաղաք տանող գառիվայր, սալապատված ճանապարհի վրա, որտեղ մենք մեծ դժվարությամբ հասանք այն տունը, որտեղ մեզ պետք է հանգրվան տային: Աստված իմ, մենք տեղ ենք հասել: Մեր սենյակը բավականին ընդարձակ էր ու հարմարավետ: Արագ կրակ վառեցինք և թեյ խմեցինք: Երկու ժամ անց, երբ լավեց աքլորների կանչը, մենք տաքացած ու կազդուրված քնով անցանք:

Օհանեսը դեռ շարունակում էր Աստծուն աղոթել մեր փրկության համար: Խեղճ մարդը չէր հավատում, որ փրկվել ենք, և անհամբեր սպասում էր լույսը ծագելուն, որպեսզի կնոջը գրի, թե ինչպես ենք խուսափել վտանգից, և այդ անմոռաց գիշերվա սարսափելի հիշողությունների մասին:

ԳԼՈՒԽ 4

Ժամանում Շուշի-Ղարաբաղ - Շուշի քաղաքը, բնակիչները, տարազը - Փայտ և ջուր կրող ավանակները - Հայկական եկեղեցին - Մեհեմետը և գորգավաճառը - Բժիշկ Աթաբեկովը - Մեր քարավանի կազմավորումը - Այց իշխան Ռզա Գուլի Միրզային - Հյուրընկալություն գիմնազիայում - Էքսկուրսիա դեպի Խալիֆալի ձորը - Գանձերի ձորը - Աջաբացին - Մորելիաների ոչնչացումը - Շուշիի տնտեսությունը և առևտուրը

Շուշին մի բնական անատիկ բերդաքաղաք է: Այն վեր է հառնում լեռների գրկում գտնվող 1100 մետր բարձրությամբ պինդ, ամուր կրաքարե բարձրավանդակի վրա: Բոլոր կողմերից շրջապատված է անմատչելի բարձր պարիսպներով՝ բացի երկու տեղերից, որոնք պաշտպանված են երկու դարպասներով. մեկը՝ դեպի Երևան, մյուսը՝ Ելիզավետպոլ: Ներկայումս այն Ելիզավետպոլ նահանգի ամենամեծ քաղաքն է և նահանգի կենտրոնից գտնվում է 120կմ հեռավորության վրա՝ հարավ-արևելքում: Մի ժամանակ այն Ղարաբաղի խանության մայրաքաղաքն էր: Ղարաբաղը, թուրքերեն՝ «սև պարտեզ», պարսկերեն՝ Արբան կամ Արհան, արաբերեն՝ Ռան, Ռանի, վրացերեն՝ զենդերի գրքերում՝ Աերիանո, հնում հայտնի էր Արցախ անունով՝ հայկական Սյունիք կամ Միսական գավառում: Արշակունիների անկումից հետո Աղվանները այն միացրեցին իրենց թագավորությանը: Բայց հայկական թագավորների ազդեցությունը այնքան էլ չէր զգացվում Ղարաբաղում, որն իր դիրքով բաց էր պարսկական, Կասպից ծովի և Կովկասի բոլոր ժողովուրդների համար: Միայն պարսիկները գերակայություն ունեին այս երկրի վրա: Սակայն մինչև Նադիր-Շահի գալը թուրքերն այն գրավեցին, սակայն այդ նվաճումը այնքան էլ երկար չտևեց, քանի որ Նադիր-Շահը շուտով գրավեց Ղարաբաղը և ստիպեց նվաճողների մի մասին վերադառնալ Խորասան, որտեղից որ նրանք եկել էին: Բայց վերջիններս,



որոնց սխալմամբ անվանում էին թաթարներ, սիրեցին այս երկիրը և լքեցին այն ավոսանքով՝ հույս ունենալով, որ առիթ կունենան հետ վերադառնալու: Այդ առիթը երևան եկավ, երբ մահացավ Նադիր-Շահը: Նրանք հայտնվեցին Խորասանի թուրքմեն հրամանատար՝ Ջիվանշիրների ցեղից Փանահ խանի գլխավորությամբ: Վերջինս շտապեց իր բացարձակ իշխանությունը տարածել ողջ Ղարաբաղի վրա: Նա հիմնադրեց իր արքունիքը սկզբում Բայաթում, Բերդայի մոտ, հետո տեղափոխվեց Շահ-Բուլաղ: Դառնալով Ղարաբաղի տերը՝ Փանահ-խանը իր նստավայրը տեղափոխեց ներկայիս Շուշի քաղաքը, որ այդ ժամանակ միայն ամբողջ էր: Այն անվանվեց Փանաբաղ մինչև այն պահը, երբ հարևան հայկական Շուշիքենդ գյուղաքաղաքի բնակիչները եկան՝ հաստատվելու այստեղ՝ կոչելով այն Շուշա կամ Շուշի: Փանահ խանը մահացավ 1790թ.: Նրա որդի Իբրահիմը նրան հաջորդեց 1791թ. և պաշարվեց Շուշիում Պարսկաստանի շահի՝ ներքինի Աղա Մուհամեդ-խանի կողմից: Վերջինիս հարձակումները անարդյունք էին, բայց նա ավերեց երկիրը: Երկու անգամ նա նորից եկավ՝ 1795թ. և 1796թ.վականներին, բայց այս անգամ նրա գլխավորությամբ Խոյի, Երևանի և Նախիջևանի խաների մեծաթիվ զորքերը մտան այս դրախտ երկիրը՝ թալանելով այն հիմնովին: Նրա հրամանները կատարվեցին, երկիրը տրվեց հրի ու սրի, շատ գերիներ վաճառվեցին թուրքերին:

Ղարաբաղը դարձավ սովի և այլ փորձությունների գոհր: Բնակիչները ստիպված էին սնվել խոտերով, շատերը գոհվեցին:

Ներքինի Աղա Մուհամեդը ևս մի անգամ վերադարձավ բազմահազարանոց զորքով և երրորդ անգամ պաշարեց քաղաքը: Իբրահիմը փախավ, քաղաքը գրավեցին, 25 օր այն թալանվում էր, և շահը կարողացավ հագեցնել իր վրեժի ծարավը:

Բայց այդքան հանցագործությունները չէին կարող մնալ անպատիժ, և նա ևս սպանվեց իր ծառաներից մեկի կողմից:

1804թ. ռուսները գրավեցին Գյանջայի խանությունը, որը գտնվում էր պարսկական տիրապետության տակ: Իբրահիմը շատ թույլ էր, որպեսզի դիմակայեր կայսերական հզորությանը: 1805թ. գեներալ Յիցիանովը ճամբար խփեց Կուրա չայի ափին, և Իբրահիմը աղաչեց ընդունել Ղարաբաղը ռուսական հովանու ներքո՝ միննույն ժամանակ հրաժարվելով պարսկական գերիշխանությունից: 1800թ. (1806թ. – *ծնթ. խմբ.*) մայիսի 14-ին ստորագրված պայմանագրի համաձայն՝ Շուշի քաղաքը անցավ ռուսական տիրապետության տակ: Մի քանի տարի անց Իբրահիմը և իր որդի Մեհտի Կուլի-խանը փորձեցին ապստամբել, ռուսները նրանց զինաթափեցին և վերջնականապես գրավեցին երկիրը 1822թ-ին:

1826թ. Աբաս-Միրզան ներխուժեց՝ առանց պատերազմ հայտարարելու, և պաշարեց Շուշի քաղաքը: Կայագորը, որը կազմված էր մի քանի հարյուր մարդկանցից, գնդապետ Ռեուտի գլխավորությամբ 45 օր քաջաբար դիմադրեց պաշարմանը և մեծաթիվ զոհերով հետ մղեց հարձակումը:

Մայիսի 8 - Հորդ անձրև էր տեղում, երբ մենք դուրս եկանք՝ տեսնելու մարդկանց, շրջելու քաղաքում: Հենց Շուշիում մենք պետք է կազմավորեինք մեր քարավանը և նաև հույս ունեինք՝ այստեղ մնալ մի քանի օր:

Տների տանիքները՝ ծակծկված տախտակներով ու ներկված թիթեղով, բարձր դիրքի ու ձյան պատճառով թեքված էին, ինչպես մեզ մոտ լեռներում: Նրանք բոլորը հիմնակառույց էին: Ամենից շատ զարմացրեց երկաթե նրբագեղ վանդակաճաղերի շքեղությունը, որոնց նախշերը ծածկում



էին փայտե պատուհանները և գեղեցիկ պատշգամբները: Երբեմն դրանք զարդարված էին պարսկական ոճի գույներով:

Շուշիի բնակիչների մի մասը կազմում են թաթարները, որոնք բնակվում են քաղաքի ներքին մասում, մինչդեռ հայերը ռուսական փոքրաթիվ գաղութի հետ միասին գրավել են քաղաքի վերևի մասը: Հնարավոր չէ ճշգրիտ ձևով պատկերացնել քաղաքի ամբողջական պատկերը, քանզի այն կառուցված է չորս բլուրների լանջերին: Շնորհիվ տանիքների թեքվածության և քարաշեն տների՝ այն ավելի շատ եվրոպական տեսք ունի, քան ապիական:

Ողջ Կովկասում Շուշին հայտնի է իր կլիմայի խստությամբ: Ձմեռը տևում է վեց ամիս, ձյունը տեղում է մեկ մետր հաստությամբ, և փողոցներում շրջում են սահնակներով: Երբեմն ձյուն է տեղում նույնիսկ մայիսին: Շուշիում երբեք շատ տաք չի եղել: Այստեղ հասունանում է բալ, դամբուլ, խնձոր և տանձ:

Ձառիվայր, վատ սալահատակված, անձրևաջրերով լվացված փողոցները նմանվում են հեղեղի հունների: Քաղաքի շրջակայքում պինդ քարեր կան, բայց դրանց փոխադրումը շատ դժվար է: Ահա թե ինչու փողոցների բարվոք սալապատումը շատ թանկ է: Նույնն է նաև ջեռուցման փայտի հարցում, որի տեղափոխումը ավանակներով ավելի բազմաձախս է: Մենք ստիպված էինք աննպատակ քայլել քարքարոտ փողոցներով, որպեսզի հասնենք մեծ շուկա:

Ես քայլում էի մեծ դժվարությամբ և ինքս ինձ հարց էի տալիս, թե ինչ հրաշքով են թաթար կանայք քողածածկ կարողանում քայլել այս քարքարոտ փողոցներում իրենց սանդալներով, որոնք ծածկում են միայն ոտքերի թաթերի ծայրերը և հազիվ են հասնում մինչև ներբանը: Ումանք դա անում են մի տեսակ դյուրին կերպով, այդ մասին կարելի է դատել նրանց երկար, վառ գույնզգույն, վեր քաշած գուլպաների վրայից ոտների կոճերին պինդ կապած կարմիր, վարդագույն, դեղին կաշիմիրե լայն անդրավարտիքներից և արծաթյա ճակատագարդերի ձայնից, որոնք զնգզնգում էին քայլելու ժամանակ: Ես հույս ունեի, որ ամենաչընկճվողները, բարյացկամություն ցուցաբերելով իմ հանդեպ, մի փոքր հետ կքաշեն իրենց ծածկաշորը, և այդ իսկ պատճառով ամուսնուցս և ուղեկցողներից մի քիչ հետ ընկա, սակայն, դժբախտաբար, այդ տմարդի էակները, ամբողջովին քողածածկ, մնացին իրենց վայրենի խորհրդավորության մեջ, և միայն նրանց աչքերի փայլից հասկացա, որ ես նրանց ուշադրության կենտրոնում էի:

Բայց ամենատպալորիչը հայերի հագուստն է՝ ինքնատիպ ու միննույն ժամանակ զարմանալի: Տարվա այս եղանակին նրանք դեռ կրում են ձմեռային հագուստ ոչ այնքան դուրեկան անդրավարտիքի վրայից, գոտկատեղին ամուր փաթաթված կաշեմիրե կամ մետաքսյա լայն գոտիով, կանաչ, դեղին կամ կապույտ մետաքսյա կիսաշրջագգեստ: Նրանք պճնված են կզաքիսի մորթով եզրակարված, երբեմն էլ մորթե աստառով երկար նոսն գույնի կամ դարչնագույն թավշյա մուշտակներով: Դա հարմարավետ է և տաք, բայց ոչ վայելչագեղ: Հատկապես ուշագրավ է գլխաշորը: Բացի մեծաթիվ շալերից՝ նրանք կրում են ապարոշ՝ զարդարված արծաթե դրամներով, որոնք կախված էին ճակատներից: Այդ ամենը ծածկված է վզին փաթաթված շորով: Դեմքի ստորին մասը մինչև քիթը ծածկված է հաստ սպիտակ կտորով. այդ մշտական սեղմումից դեմքի ստորին մկանները սկսում են ապաճել: Փողոց դուրս գալու ժամանակ նրանք գլխներին և ուսերին գցում են մի մեծ սպիտակ ծածկոց, որը ամրացվում է ինքնատիպ ճարմանդներով: Այս հագուստը շատ հաճախ կրում են մեծահարուստ կանայք: Նոր սերունդը նախընտրում է շարտել այդ ծանր ու անշուք շորերը, որպեսզի հետևի թիֆլիսյան նրբագեղ նորաձևությանը: Ինչ վերաբերում է Շուշիի մեծահարուստ տղամարդկանց, նրանք կրում են մորթյա բարձր կոնաձև փափախ, որը տարբերվում է երիտասարդների ավելի նրբագեղ ու ցածր գլխարկներից:



Քաղաքի ուշագրավ պատկերներից են փայտ ու ցախ կրող փոքր ավանակների բազմաթիվ քարավանները, որոնք անվերջ շրջում են քաղաքում: Ակերով կառքերը չեն շահագործվում փողոցների գառիթափության ու ահավոր սալաքարերի պատճառով, և բոլոր փոխադրումները կատարվում են ավանակներով, ջորիներով և ձիերով: Երբեմն ավանակները այնքան են բեռնված, որ նրանց նիհար մարմինները ամբողջովին անհետանում են դեռ տերևներով ծածկված հսկա ցախակույտերի տակ: Եվ նրանք իսկապես զավեշտական են. այս ավանակները, որ մանրաքայլ անցնում են փողոցներով՝ մի կողմից շփոթված, մի կողմից էլ ծեծված, նման են իսկական քայլող թփերի: Շուշիում ջեռուցումը կատարվում է միմիայն փայտով: Ջուրը վաճառում և կրում են տուն փոքրիկ զվարճալի ավանակներով՝ բեռնված տափակ դեղինման տակառներով: Մեկ տակառիկը արժե 10 կոպեկ և պարունակում է 50 լիտր ջուր: Մեծ ընտանիքներում այս տեսակ ծախսը միակ նախընտրելին է:

Ամբողջ քաղաքը մատակարարվում է երեք-չորս աղբյուրից: Միայն թաթարներն են խմում ջրհորների ջրից, այդ պատճառով էլ համաճարակը մոլեգնում է միայն նրանց թաղամասերում:

Անցնելով գլխավոր հրապարակը՝ ես տեսա մի տղայի, որը վաճառում էր թոկլին կապված մի սիրունիկ շնիկ: Ես Օհանեսին խնդրեցի գնել այն ինձ համար, և նրան հաջողվեց այն գնել չափազանց բարձր գնով՝ 25 կոպեկ (մոտավորապես 75 սանտիմ): Մի քանի րոպե անց նրան տարանք հյուրանոց: Երևում էր, որ դեղին շնիկը հիանալի պահապան կդառնա, քանզի այն սերում էր հսկա գամփոներից՝ ավելի կատաղի, քան գայլերը:

Գլխավոր հրապարակի մոտ կառուցված է Անիի բյուզանդական ոճի հայկական գեղաշեն մի եկեղեցի: Ներսում հատակը ծածկված է գեղեցիկ գորգերով, կան մի քանի սրբերի նկարներ, մասունքներ, հին ավետարաններ, որոնք հավատացյալները եկեղեցի մտնելիս ու դուրս գալիս համբուրում էին: Հայկական եկեղեցիներում տղամարդիկ և կանայք ունեն առանձին տեղեր: Ժամատունը եկեղեցուց առանձին է և վեր է բարձրանում եկեղեցու կողքին:

Պատարագից հետո դուրս եկած կանայք մեծ հետաքրքրություն են առաջացնում: Ոմանք կրում են հին, անշուք զգեստներ, մինչդեռ ջահել կանայք և աղջիկները հագնված են նրբագեղ եվրոպական ոճով, բացի գլխաշորից՝ բաղկացած մի փոքրիկ քարերով կամ ասեղնագործ նախշերով զարդարված թավշե թագաձև գլխազարդից: Այն դրված է ճակատին՝ ծածկված թեթև ասեղնագործ քողով: Շատերը գլխազարդերի վրայից կրում են կզակի տակ կապված նրբերանգ, առանց պշրանքի գլխներին փաթաթած ասեղնագործ գլխաշոր: Դրանք գոնե չեն ձևափոխում դեմքի ստորին մասը:

Այս հայուհիների մեծ մասը շատ գեղեցիկ է ու շլացուցիչ, և զուրկ լինելով վրացուհիների սառնությունից՝ նրանք շատ ավելի կենսուրախ են, նրանց փայլուն աչքերն ու կիսաժպիտ շրթունքերը հրապուրում են իրենց նուրբ թովչանքով: Նրանց երկար ծամերը և մեծ, դարչնագույն, նշաձև աչքերը ամենագեղեցիկն են աշխարհում: Ի տարբերություն Թիֆլիսի՝ այստեղ կին ծառաներ չկան: Դա շատ տարօրինակ է, առավել ևս ֆրանսուհու համար, ով սովոր է տեսնել երիտասարդ մայրերի, որոնց ուղեկցում են լացող երեխաներին ձեռքերին օրորող դայակների:

Մենք նոր էինք հյուրանոցից դուրս եկել, երբ մի թաթար ոտնակոխ հետևեց մեզ: Նա պարոն Շանտրին հայտնեց, որ նրան պետք է ցույց տա Շուշիի բոլոր գորգերն ու գեղեցիկ մանր-մունր իրերը, որ կարող էինք գնել էժան գներով: Մենք ստիպված էինք զիջելու այս կոպիտ մարդու հարցերի տարափին, որի անունը Մեհեմետ էր: Նա մեզ տարավ փողոցների մի անվերջանալի լաբիրինթոսով՝ մեկը մյուսից նեղ, և վերջապես կանգ առավ պարսկական մի գեղեցիկ տան առջև, որտեղ ապրում էր հին գորգերի մի վաճառական: Տանտերը՝ խորամանկ ու ճարպիկ դեմքով մի



Թաթար, մեզ շատ սիրալիր կերպով ուղեկցեց վանդակաճաղերով ծածկված պատուհաններով մի փոքրիկ սրահ՝ ցածր ներկված առաստաղներով, որտեղ կային միայն գորգեր, բարձիկներ և պարսկական հայելիներ: Սպասարահը լցված էր կանանցով և բլբլացող երեխաներով, բայց այս հաճոյախոս առևտրականի միակ նպատակը մեզ գորգեր վաճառելն էր, և այդ իսկ պատճառով մենք իջանք մի գեղեցիկ նկուղային կամարածածկ սրահ, որը լուսավորվում էր մի փոքրիկ անցքից՝ հնարավորություն տալով հիանալ գորգերի և կտորների հիասքանչ գույներով ու մետաքսյա նրբերանգներով: Որոշները շատ գեղեցիկ էին, բայց՝ շատ թանկ: Մենք աշխատում էինք նայել անտարբեր, քանզի վաճառականը, Մեհմետի կողքին կանգնած, սևեռուն, քննող հայացքով նայում էր մեզ: Կողքի դնելով մի քանի գորգ՝ վերադարձանք փոքրիկ սրահ, որպեսզի քննարկենք գները: Մի ջահել ծառա սկուտեղի վրա ապակյա բաժակներով թեյ բերեց: Քննարկումը ընթանում էր դանդաղ, բայց հանգիստ մթնոլորտում: Վաճառականի կողմից առաջարկված գորգի գինը սկսեց կամաց-կամաց նվազել հիսուն ռուբլուց մինչև երեսուն: Մի քանի զգացմունքային շարժումներից հետո՝ ձեռքերը դեպի երկինք, ձեռքը սրտին, աղերսանքներ և ահա քսան: Բայց ինչքան ժամանակ, ինչ համբերություն...

Վերջապես հասանք հյուրանոց, որն այնքան էլ նման չէր հյուրանոցի: Սա մի տուն էր, ոչ հեռու մեծ հրապարակից, որի տերը մի իսելացի հայ էր: Նա մի քանի ննջասենյակ էր հատկացրել ճանապարհորդներին, նաև կերակրում էր, և մենք, չնայած մեր բազմաթիվ ճամփորդական իրերին, մեզ այնտեղ վատ չէինք զգում:

Ժամը 9-ին սկսվում է պարետային ժամը: Քաղաքը գրեթե չի լուսավորվում, գիշերային անցորդները ձեռքներին տանում են լուսարձակներ, և եկող-գնացող այս լույսերը մթնոլորտի մեջ մի արտասովոր ուրվապատկեր են ստեղծում:

Կրտսեր ծառաները, մեծ լուսարձակները ձեռքներին առջևից գնալով, ուղեկցում են իրենց տիրուհիներին, ովքեր գնում են երեկոյան այցի:

Մայիսի 9- Մեր գալու օրից մենք տաքանում ենք մի մեծ վառարանով: Այստեղ չկան Կուրի ափի հեղձուցիչ տապերը: Այս գիշեր հատկապես ցուրտ էր: Մենք դողում էինք վերմակների տակ: Բայց առավոտյան արևի վառ շողերը լցվեցին սենյակի բոլոր յոթ պատուհաններից:

Մեր առաջին հանդիպումը կառավարչի հետ էր: Բայց նա բացակայում էր, և մեզ ընդունեց մի թաթար պրիստավ, որ շատ պերճախոս էր, բայց ոչ գործնական: Հայտնելով նրան մեր բողոքը նախորդ գիշերվա չափարացիների մասին՝ նա պատասխանեց՝ *Նիշեգո* (ոչինչ): Ինչքան եմ ես զզվում այդ բառից: Մեզ բախտ վիճակվեց ծանոթանալ հիանալի բժիշկ Աթաբեկովի հետ, ով շատ մեծ հաճույքով մեզ տվեց արժեքավոր տեղեկություններ քաղաքի սանիտարական վիճակի մասին:

Շուշիում համաճարակները շատ հաճախակի են լինում: Ծաղիկը, որ մոլեգնում է թաթարների մեջ, նրանք համարում են Աստծո պատիժ և ոչ մի գնով չեն ցանկանում պաշտպանվել դրանից: Երբ ինչ-որ մեկը հիվանդանում է ծաղիկով, մայրերը տանում են իրենց երեխաներին հիվանդի տուն, որպեսզի նրանք վարակվեն այդ սարսափելի հիվանդությամբ: Այս մահաբեր սնահավատությամբ է բացատրվում մարդկանց այն հսկա քանակը, ովքեր այլանդակվել կամ կուրացել են ծաղկախտի հետևանքով: Բայց վերջերս Աթաբեկովը, ով ազգությամբ հայ է, ունեցավ մի երիտասարդ թաթար գործընկեր: Գուցե նրա օգնությամբ կանխարգելիչ պատվաստումը կմտցվի նրա հայրենակիցների շրջանում՝ ի շահ նրանց բարօրության ու առողջության:

Մայիսի 10 - Մի բարեսիրտ հայ վաճառականի՝ պարոն Թամիրյանցի միջնորդությամբ մեր քարավանի կազմավորման անվերջ բանակցությունները ավարտվեցին: Վերջապես



պայմանավորվեցինք բեռնակիր անասունների հարցում: Գորիսի հայերը դրանք կտան մեզ: Մնում է թամբավոր ձիերի և խոհարարի խնդիրը: Երեկվա վազող ջրերը չորացել են տաք եղանակից: Մենք բարձրանում և իջնում ենք քարքարոտ փոսերով ծածկված փողոցներով՝ փնտրելով մի տեղ, որտեղից կարելի է տեսնել քաղաքի ամբողջական պատկերը: Բայց դա անհնար է. այն այնքան է տարածված, որ կարող ես գոհանալ միայն մի առանձին տեսարանով:

Շուշիում յուրաքանչյուր տուն ունի պարտեզ՝ դժբախտաբար շրջապատված պատերով, և հնարավոր չէ ներս նայել: Այս պահին այս անթիվ պարտեզների մրգատու ծառերի ծաղիկների ու նրանց ճերմակ ու վարդագույն ճյուղերի մեջ ճովողում են թռչունները:

Ճամփին մի հայուհի մեզ թույլատրեց նկարելու իրեն, և մենք ներս մտանք նրա բնակարանը, որը շատ հաճելի տեսք ուներ: Նա տանը մենակ էր երեխայի ու պատկառելի, կույր հարյուրամյա ծերուկի հետ: Մինչև ամուսինս նրա դիմանկարն էր անում, ես մի կերպ փորձում էի հանգստացնել ողբացող ծերուկին, որը կարծում էր, թե մենք գողեր ենք:

Մայիսի 11- Բժիշկ Աթաբեկովը շատ էր ցանկանում մեզ ծանոթացնել իր լավ բարեկամ պարսից իշխան Ռզա Կուլիի հետ: Նա մեզ տարավ քաղաքի վերին թաղամասի մի գեղատեսիլ ամառանոց, որտեղ նա ապրում էր իր ընտանիքի հետ միասին: Մենք նրան գտանք պարտեզի կենտրոնում գտնվող տաղավարում, որտեղ նա սիրում էր աշխատել: Մենք շփոթված էինք նրա չափազանց սիրալիր ընդունելությունից: Իշխան Ռզա Կուլի Միրզան վաթսուներեկ մոտ բարձրահասակ մարդ էր և կրում էր ռուսական գեներալի ռազմական հագուստ: Նա սահուն խոսում էր ֆրանսերեն և իսկական ազնվական էր: Նրա հայրը՝ Բեհմեն Միրզան՝ շահ Նասր-Էդդինի եղբայրը, Թավրիզի կառավարիչն էր: Նրա համակարգված և խոհուն գործունեության շնորհիվ Ատրպատականի մարզը ծաղկում ապրեց: Բայց նրա հաջողությունները առաջացրեցին վարչապետներից մեկը նախանձը, և նա շահին համոզեց եղբորը հեռացնել պաշտոնից՝ ասելով, թե նա ժողովրդի համակրանքն է վայելում և կարող է մի օր իրեն հռչակել Պարսկաստանի շահ: Երկու եղբայրները անկեղծ սիրում էին իրար, և շահը համոզեց Բեհմեն Միրզային մնալ իր պաշտոնում, եթե միայն վարչապետը համաձայնի: Բայց վերջինս սև դավեր էր նյութում, և Բեհմեն Միրզան, իմանալով դրա մասին, շտապ հավաքեց իր ամբողջ հարստությունը և ընտանիքի հետ փախավ ռուսական տարածք: Իշխանը մեզ ներկայացրեց իր որդիներին՝ Ֆեթ Ալի Միրզային և Ազբեր Միրզային. երկուսն էլ ռուսական բանակի սպաներ էին: Հետո նա մեզ ուղեկցեց եվրոպական ոճի իր ամառանոցը, որտեղ մեզ սուրճ հյուրասիրեցին: Նրա անսահման պարզությունը, սիրալիր ու ազատ վարվելաձևը նրան շատ հաճելի անձնավորություն էին դարձնում: Մեծ գումարների շնորհիվ նա ուսման էր տվել իր բոլոր երեխաներին՝ տղաներին ու աղջիկներին: Նրանք ուսանել էին օտար լեզուներ, ֆիզիկական և բնական գիտություններ, գրականություն, երաժշտություն և այլն: Առ այսօր նրա տանը ապրում է ֆրանսացի մի ուսուցիչ, որի ծերությունը անցնում է այս ընտանիքի բարի հոգածության ներքո:

Մենք իշխանի տնից հեռացանք ուրախ, որ ծանոթացել ենք նրա հետ, և գնացինք գիմնազիա, որտեղ մեր պատվին հյուրընկալություն էր կազմակերպված: Տնօրեն պարոն Տարասովը մեզ առաջարկեց շատ հաճելի երաժշտական ծրագիր: Համերգը տեղի ունեցավ ընդունարանի՝ մեծ ցուցափեղկերով կահավորված ընդարձակ սրահում՝ լցված ֆիզիկական և բնագիտական հավաքածուներով: Այդ երաժշտությունը գրվել էր հազիվ մի վեց ամիս առաջ, բայց արդյունքները շատ զարմացուցիչ էին: Դա մեծ պատիվ է բերում և ուսուցիչներին, և հայ ու թաթար երեխաների արտիստական խառնվածքին: Ծրագրերը բազմազան էին: Հերթով լսեցինք ռուսաց ազգային



օրհներգը, արագ ու աշխույժ քայլքով, ջութակի, կոնտրաբասի, ֆլեյտայի երաժշտական կատարումներ և այլն:

Համերգն ավարտվեց եռաձայն երգչախմբի կատարումով՝ երաժշտական գործիքների նվագակցությամբ: Այնուհետև մի քանի երիտասարդներ պարեցին դասական լեզգի նկար: Ֆրանսերենը դասավանդում էր մեր մի համաերկրացի, և գրեթե բոլոր աշակերտները վարժ խոսում էին ֆրանսերեն: Ի դեպ նրանք մեծ հակում ունեին լեզուների հանդեպ և ուսումնասիրում էին դրանք՝ ըստ նախընտրության:

Այս հիասքանչ համերգից հետո գիմնազիայի տնօրենը և նրա տիկինը մեզ ճաշի հրավիրեցին: Այս առիթով հավաքվել էին բոլոր ուսուցիչները և քաղաքի անվանի մարդիկ: Բոլորը խոսում էին ֆրանսերեն, ոմանք նույնիսկ մեզ նման սահուն:

Մայիսի 12- Մենք մեկնեցինք էքսկուրսիայի բժիշկ Աթաբեկովի ջրաղացներից մեկը, որը գտնվում է Շուշիի մոտ, որտեղ նա մեզ հրավիրել է անցկացնելու մի ամբողջ օր: Մեզ հետ էին իշխանը և նրա որդիները, ոմանք մեկնեցին ձիերով, մյուսները՝ կառքով: Ջրաղացը գտնվում է Շուշիից յոթ կիլոմետրի վրա՝ Խալիֆալի գեղատեսիլ ձորակում, Խանքենդի գյուղից ոչ հեռու, որտեղ կար մետաքսի ֆաբրիկա և հետևագործից ու հրետագործից բաղկացած մի գորագունդ: Հիանալի ճաշի ավարտից հետո, որի ժամանակ հնչեցին կենացներ առ մեր առողջության և մեր ճանապարհորդության, մենք շրջեցինք աջ ու ձախ: Ջրաղացի կողքին վեր էին խոյանում հիասքանչ չինարիներ: Նրանց խիտ ստվերի տակով գնացինք մինչև Աղա-Քորպասի կամուջը, որը անցնում է Խալիֆալի ձորակը: Գետը այստեղ շատ նեղ է և սեղմված է բարձր քերծերի միջև:

Օրը արագ անցավ շնորհիվ պարոն և տիկին Աթաբեկովների, և պետք է մտածեինք հետդարձի մասին: Մնացած հյուրերն արդեն մեկնել էին, երբ մենք իշխանի և նրա որդիների հետ, բժշկի որդու ուղեկցությամբ ճանապարհ ընկանք: Գնում էինք նույն ճանապարհով, որով ժամանել էինք Շուշի այն երեկո հորդառատ անձրևի, ամպրոպի ու կայծակի տակ, և ես նորից զգացի այս կտրուկ ոլորապտույտների վտանգը: Այս քարափնյա ճանապարհը ամբողջ երկայնքով եզրավորված է անդունդով:

Մայիսի 15- Երեկվա՝ ձիով ճանապարհորդությունից հետո ես հոգնած էի և ստիպված էի մի քիչ հանգիստ առնելու: Օգտվելով առիթից՝ ես իմ գրառումները կարգի բերեցի, մինչդեռ ամուսինս գնաց ձիով զբոսնելու իշխանի հետ. վերջինս ցանկանում էր ցույց տալ Շուշիի մոտակա վայրերը: Քաղաքի հարավ-արևելյան թաղամասը ավարտվում է մի տեղ, որը կոչվում է Ջիդեր-Դուզի և, որը դառել է թաթարների կողմից շատ սիրված ժամանցի՝ նիզակներով մրցավազքի վայր:

Թաթարների Գուրթառ թաղամասում է գտնվում բանաստեղծ և աստվածաբան մուլլա Փանահի գերեզմանը: Այս գերեզմանն ավերված է, այն գտնվում է Ջավաթ Դարասի կամ Գանձերի ձորի վերևում, որտեղով 1826-ին Ռիզա Կուլի Միրզայի պապ Աբբաս Միրզայի գլխավորությամբ պարսիկները եկան և ոմբակոծեցին քաղաքը Թոփխանայի բարձունքներից: Այս ձորը կոչվել է գանձերի ձոր, որովհետև, ինչպես ասում են, իբրև այդ ձորի քարանձավներում նախկին խաները թաքցրել են իրենց հարստությունները:

Այսօր էլ այդ քարանձավների առջև կան փոքր շինություններ: Ձորի մյուս կողմում գտնվում է հին հայկական Շուշիքենդ գյուղը, որը դիմակայել է պարսիկների հարձակումներին, որտեղ հայերը քաջաբար կռվել են :

Նույն այդ Գուրթառի թաղամասի ծայրում գտնվում է աջարացու մի հին գերեզման , որը սրբավայր է և հայերի, և թաթարների համար: Հայերը գալիս են այստեղ՝ աղոթելու Զատիկից



առաջ չորեքշաբթի օրը, որպեզի իրականան իրենց ցանկությունները: «Աջարացին» մի հասարակ քար է,որի վրա դնում են գետաքարեր և մոմեր:

Շուշիում պաշտամունքի շատ վայրեր կան: Դրանցից մեկը հատուկ թաթարների համար է՝ մի փոքրիկ ճաղապատ կառույց, որտեղ որպես մատաղ՝ բերում են օրհնված ջուր: Լաթի կտորներ էին կապված և ճաղածողերին և այդտեղ գտնվող երկու ծառերին՝ մի բարդու և մի շագանակենու:

Այս պահին քաղաքը տազնապի մեջ է: Կառավարությունը օրական մոտավորապես 1500 մարդ է հավաքագրում, որոնք պետք է մասնակցեն մորելիներից ցորենի արտերի փրկմանը: Բոլոր բնակիչները՝ հարուստ ու աղքատ, պետք է մասնակցեն և, հասկանալի է, հարուստները իհարկե վճարում են իրենց փոխարինողներին: Ոստիկանատան առջև խմբվել են հավաքագրվածները: Այս գործի պաշտոնակատարը կանգնած է մի փոքրիկ հարթակի վրա՝ ցուցակը ձեռքին, և կանչում է այն մարդկանց, որոնց գնալու հերթը արդեն մոտեցել է: Անհնագանդներին կարգի են բերում կուրբաշի կամ ճիպոտի ուժեղ հարվածներով:

Անդամագրվածների մեկնումը շատ տպավորիչ էր: Նրանցից յուրաքանչյուրը ունի շորերով և ուտելիքով լցված խուրջին: Ոմանք ունեն բահեր, ավելներ և քուլունգներ: Նրանք մեկնում են ծանր բեռնված ֆուրգոններով՝ գոռալով, բղավելով, մուլուցքի մեջ գտնվող խելագարների նման քշում են իրենց սրաշավ ձիերը, որոնք թռչում են մտրակների հարվածների տակ: Եվ ոլորաններին այս շարժամիջոցների բախումներից է, որ առաջ են գալիս սարսափելի դժբախտ պատահարներ:

Մինչև ամուսինս զբոսնում էր իշխան Ռզա Կուլի Միրզայի հետ, ես Շուշիի մի նկարչի աղքատիկ լաբորատորիայում երևակեցի մի քանի լուսանմուշներ: Ես հանգիստ աշխատում էի, երբ հանկարծ լսեցի Օհանեսի ձայնը:

- Տիկին, պարոն Շանտրը դեռ չի վերադարձել:
- Հետո:
- Տասնհինգ թաթարներ սպասում են տանը,որ կշռվեն:
- Թող սպասեն:
- Տիկին, մզկիթում արդեն աղոթքի ժամ է:
- Ասացեք, թող գան երեկոյան:
- Այսօր երեկոյան նրանք ճաշում են (Ռամագանի ժամանակն է):
- Այդ դեպքում՝ վաղը:
- Վաղը ուրբաթ է, տիկին:

Ինչպես կարելի է ուժով պահել մուսուլմաններին, ում կրոնական պարտքը կանչում է մզկիթ: Ես Օհանեսին պատվիրեցի նրանց ասել, որ գան վաղը չէ մյուս օրը՝ առավոտյան, չնայած ուրբաթ է: Նրանք համաձայնում են և արագ հեռանում մոլլայի ձայնի ուղղությամբ:

Մայիսի 14- Խիտ մառախուղ է, տասը քայլի վրա ոչինչ չի երևում, և կարծես թե մինչև կեսօր եղանակը չի փոխվի, մառախուղը ավելի է թանձրանում: Ճաշից հետո գնում ենք շուկա՝ գնումներ կատարելու, որպեսզի լրացնենք մեր ճանապարհորդական պահուստը: Օհանեսը ինձ հատուկ պատվիրում է գնել մի մեծ տիկ գինու և մի փոքրն էլ օղու համար: Նաև պետք է գնեինք խորովածի շամփուրներ:

Այս երկրում ամեն ինչ ուտում են խորոված, այլ կերպ ասած՝ մսի կտորները խորովում են այրվող ածուխների վրա՝ գառ, տավար, հավ, ձուկ: Ես չեմ խոսում հորթի մասին. այստեղ այն գրեթե չեն մորթում :

Մեր ճամփորդական պաշարը լրացնելու համար պետք էր նաև գնել պղնձե կուժ՝ ջուր տեղափոխելու համար, տարբեր տեսակի խոհանոցային պարագաներ, որոնք անհրաժեշտ են



Լևոնին, ով համատեղությամբ պետք է մեզ համար ճաշ եփեր և կերակրեր կենդանիներին, որոնց նա մեզ տրամադրել էր բարձր գներով: Մեծ շուկան շատ լավ է մատակարարված: Տեսնելով, թե ինչ եռուզեռ է տիրում շուկայում, զգացվում է, որ Շուշին կարևոր քաղաք է:

Հիմա թաթարների Ռամազանն է, և նրանց խանութների մեծ մասը այս օրերին փակ են:

Շուշիում քրիստոնյաները և մահմեդականները՝ մեծ ու փոքր, լավ վաճառականներ են: Քաղաքը գլխավորապես առևտրական կենտրոն է: Աղքատ թաթարները, ովքեր չեն ցանկանում լինել բեռնակիր, մեկնում են Բաքու կամ այլ արդյունաբերական քաղաքներ, որտեղ նրանք դառնում են վարձու բանվոր:

Բացի շուկայի մի քանի փոքր արհեստանոցներից, մի քանի մանածագործարաններից, գլխաշորերի ֆաբրիկայից, հանրահայտ գորգերից, որ կանայք գործում են իրենց սներում, այլ արտադրություն չկա:

Այսպես կոչված դարաբաղյան գորգը հայտնի է իր հաստությամբ և բրդի բարձրությամբ: Այն ունի վառ գույներ և մեծ նախշեր:

Հին գորգերը շատ գեղեցիկ են, և նրանց հիմնական առավելությունը տաք ու ամուր լինելն է: Այն գործում են նաև պարսկական նմուշներով, որոնց հետ երբեմն կարելի է շփոթել:

Տարածաշրջանում դեռ գործում են հարթ կտորներ, այսպես կոչված՝ «փալասներ», որ հիշեցնում են Գարամանիներին, և «կարնի» կոչվող մի ուրիշը, որի գույներն ու «սվատիսկանման» նախշերը շատ յուրահատուկ են և նման չեն ոչ մի ուրիշ գործվածքի: Դրանք արտադրվում են Ջեբրայիլի շրջանում:

Շուկայի մեր թափառումների ողջ ընթացքում մեզ ուղեկցում էր Մեհմետը, որի օգնությամբ ես մտա մի թաթարի տուն՝ նրա կնոջը տեսնելու: Վերջինս՝ ջահել ու սիրուն, շատ նուրբ կին էր: Նրա հիասքանչ սև ունքերը միացած էին քթի վերևում: Մենք իրար ներկայացանք ժեստերով. ափսոս, որ չէինք կարողանում միմյանց փոխանցել մեր մտքերը: Նա, ինչպես նաև երկու երեխաները, որոնց ինձ ներկայացրեց հպարտությամբ, հագել էին պարսկական զգեստներ: Սակայն կինը այդքան էլ առողջ տեսք չուներ: Նրա չոված աչքերը ավելի էին ակնառու դարձնում նրա սրված այտերի մարմարյա դալկությունը և կուսական անարատությունը: Նրա ամուսինը հնավաճառ էր: Նա կրում էր կապույտ փափախ, և նրա փոքրիկ դարչնագույն գլուխը նման էր մոլեռանդի գլխի: Նա իր կրպակում գեղեցիկ մանր-մունր իրեր ուներ, բայց գները մեզ փախուստի մատնեցին:

Ռամազանի պատճառով փողոցները սովորականից ավելի մարդաշատ են: Փողոցները լի են վաճառականներով, որոնք մեծերին և փոքրերին վաճառում են սպիտակ, վարդագույն բարակ քողերով տուղտի խմորեղեն: Այն միաժամանակ այնքան քաղցր է և աղի, որ սիրտդ խառնում է:

Թաթարները աղոթքների ընդմիջումների ժամանակ զբոսնում են և պատվիրում են ճոխ ճաշատեսակներ՝ կեսգիշերից հետո ուտելու համար:

Մենք հանդիպեցինք շատ թաթար վաճառականների, որոնց տեսել էինք Թիֆլիսում, և որոնք եկել էին Շուշի՝ տունը ընտանիքի հետ միասին անցկացնելու: Նրանք մեզ հետ են ճանապարհի անցել: Մեր երկու հավատարիմ ուղեկիցներն են ստարշինան՝ մի բարձրահասակ ու գեղեցիկ տղամարդ՝ երեխայի կենսախինդ դեմքով, և փոքրիկ, ճարպիկ, խորամանկ Մեհմետը: Երկուսն էլ հագնված են թաթարների նման՝ լայն տաբատ, լայն անթև բաճկոն սպիտակ վերնաշապիկի վրայից: Նրանք կրում են մեծ փափախներ, իսկ ոտքերին՝ կարճ սանդալներ, որ թողնում են դրան դիմաց տուն մտնելուց առաջ, որտեղ գորգերի պատճառով քայլում են միայն ոտաբոբիկ: Նրանց դեմքերի արտահայտիչ խաղը ընդգծվում է շինծու ու վայելուչ ժեստերով:



Այն, ինչ յուրահատուկ է այս մարդկանց, այն է, որ գրույցի թեժ պահին նրանք լռում են, որպեսզի քթները մաքրեն մատներով: Եվ դա այն դեպքում, երբ նրանք միայն սրբվում են իրենց գրպաններում պահվող մեծ թաշկինակներով: Մեհմետը, որը փորձում էր մեծապատիվ մարդու տպավորություն թողնել, ինձ թվում է, չափազանց շատ հինա է օգտագործում և կարծես թե ամբողջովին թաթախված է դրա մեջ: Այս առավոտ ես շատ զարմացա, երբ, ժամանելով հյուրանոց, նա ինձ դիմեց գրեթե վարժ ֆրանսերենով. «*Բարև, տիկին: Ինչպես եք...*»: Օհ, այս թաթարները շատ մեծ ընդունակություն ունեն լեզուների հանդեպ: Հայտնի է, որ Շուշիի մահմեդական բնակչությունը մեծ համբավ ունի ողջ Անդրկովկասում իր մուլեռանդությամբ, միաժամանակ նաև շատ զարմացնում է նրանց՝ քրիստոնյաների հանդեպ ունեցած համակրանքը իրենց կրոնական տոների ժամանակ: Բայց մեր զարմանքը ավելի է մեծանում, երբ, առանց թույլտվություն խնդրելու, մեր ուղեկցորդները մեզ հրավիրում են՝ այցելելու Գոհար Աղա մզկիթը: Վստահ կարելի է ասել, որ մենք շահել ենք այս բարի մարդկանց վստահությունը: Խորապես շոյված այդ վերաբերմունքից՝ մենք բարձրացանք շքամուտք և, քաղաքավարությունից դրդված, ձևացրինք, թե սանդալներ ենք փնտրում (մահմեդականները շատ զգայուն են այդ «ոչինչների» հանդեպ): «*Նիչեգո*», - ժպտալով ասում են նրանք, և մենք ներս ենք մտնում: Վերևի սրահներում մեծ թվով կանայք կան: Նրանք, մեզ տեսնելով, կարծես թե զարմացած էին, քանի որ առաջ կախվեցին, որպեսզի իրենց քողերի տակից ավելի լավ տեսնեն: Տղամարդիկ, ծնկաչոք նստած իրենց գորգերի վրա, թվում էր, թե ոչ թե աղոթք էին անում, այլ գրուցում էին. Ռամազանը այնքան երկար է տևում: Անցնելով նրանց մոտով՝ ես նկատեցի միայն մի քանի քիչ խրախուսող դեմքեր: Բոլորը կրում էին վերքերի սպիներ, որ նրանք իրենց հասցնում էին այս արյունոտ տոների առիթով՝ ի պատիվ Հյուսեյնի և Ալիի, որոնց խորապես պատվում էին Շուշիում:

Սզկիթը իրենից ոչ մի առանձնակի բան չէր ներկայացնում: Սպիտակ և մերկ պատերին երևում էին աղոտ գրվածքներ, մի քանի տաշած քարեր և ուրիշ ոչինչ: Դուրս գալով մզկիթից՝ մենք շրջում էինք քաղաքի մահմեդական թաղամասում, և երևում էր, որ մեր ուղեկցորդը շատ հպարտ էր սի-գաճեմել օտարերկրացիներիս հետ:

Շուշիում կա տասնութ թաթարական թաղամաս և յուրաքանչյուրը ունի մզկիթ, բայց դրանցից միայն երկուսն են կարևոր՝ Ջաֆար-Կուլի Խանի և Գոհար Աղայի: Մնացածները նշանակալից չեն:

Ցերեկվա արևի տակ փողոցներում շողում էին մոլլաների և սեյիդների սպիտակ հագուստների ու կապույտ-կանաչ գլխափաթոցների վառ գույները: Երբ նայում ես այս շիիթ քահանաներին՝ հպարտ և կոպիտ դեմքերով, մեծագույն արժանապատվությամբ փաթաթված իրենց սպիտակ թիկնոցների մեջ, հաստ կաշմիրե բարձր չալմաները գլխներին, զգում ես, թե ինչ ուժ կա այս թաթարական ցեղի մեջ, և հասկանում ես ռուսական կառավարության զգուշավորությունը նրանց հանդեպ:

Որոշ մեծանուն ընտանիքների զավակներ, ավարտելով իրենց կրթությունը Պետերբուրգում, դարձել են ռուսական բանակի փայլուն սպաներ: Հասարակ մարդիկ արդեն չեն ծառայում կայսրության բանակում, որը գոհանում է միայն բարձրացնելով հարկերը և ձեռք բերելով մեծահարուստների հովանավորությունը՝ նրանց շնորհելով ստարշինայի տիտղոս: Բայց հիմա, երբ այս հանրաճանաչ, ուսյալ մահմեդականները որոշել են իրենց զավակներին ուղարկել՝ ուսում ստանալու ռուսական գիմնազիայում, պետք է սպասել նոր սերնդի գաղափարների և բարքերի մեծ փոփոխություն:

Թաթարների հետ մեր բարիդրացիական հարաբերությունները զգալիորեն հեշտացրին մարդաբանական չափումները: Ստարշինան իր հետ բերեց մի քսան մարդու, որոնց ինքն էր



ընտրել՝ ամենամարակազմ և առողջ, որոնք հնարավորություն կընձեռնենին հստակ գաղափար կազմելու այդ ցեղի մասին:

Փոխադարձ հաճոյախոսություններից հետո, պարոն Շանտրը նրանց չափեց և ուզածին չափ լուսանկարեց, հետո եկան ուրիշները, բայց ժամանակի թերության պատճառով ստիպված էինք նրանց հետ ուղարկել, ինչից վերջիններս շատ նեղացան: Մակայն ես ստիպված էի հրաժարվել չափումներ անել Շուշիի թաթար կանանց մոտ: Ես նրանց շատ էի հանդիպել իմ այցերի ժամանակ, բայց նրանք հրաժարվում էին, որ ես չափեմ նրանց գլուխները: Անկասկած դա վայրենության և անհերքելի սնոտիապաշտության վկայություն է, բայց այս քաղաքում հայուհիները, բացառությամբ մի քանիսի, նույնպես տրամադրված չեն մեր չափումների հանդեպ: Նրանք նույնիսկ ավելի ծիծաղելի, համառ ու սահմանափակ են՝ չնայած իրենց ամուսինների համաձայնությանը, ի տարբերություն թաթարների, ովքեր իրենց կանանց խորհուրդ չեն տալիս:

Ինչքան շրջում էի քաղաքում, այնքան ավելի էի համոզվում, որ Շուշիում չկա ճարտարապետական արժեք ներկայացնող որևէ շինություն: Միակ հետաքրքիր վայրը ցայտաղբյուրն էր և նրա շուրջը իշխող մարդկային աշխուժությունը: Մահմեդական կանայք՝ փաթաթված իրենց փարաջանների մեջ, գալիս էին լցնելու իրենց պղնձե մեծ կժերը: Անհաշվելի թվով փոքրիկ ջրկիր ավանակները, տակառիկներով բարձված, գալիս էին այստեղ՝ նորից վերցնելու իրենց բեռը: Վերջապես հայուհիները՝ իրենց կարմիր շրջագգեստներով և մշտապես փաթաթված բերաններով, հեծյալները, որ բերել էին՝ ջրելու իրենց ձիերին և հագեցնելու իրենց ծարավը, աղբյուրի հետ միասին կազմում էին մի յուրօրինակ և գեղարվեստական կտավ: Այս տեսարանը գուցե և նման չէր արևելյան մեծ քաղաքների խայտաբղետությանը և վառ երանգներին, բայց այն ավելի անձնական էր, ավելի դասական. դա արևելքն էր՝ իր ձյուններով և մառախուղներով, դա ինչ-որ մի անսպասելի բան էր:

Մայիսի 16 - Արագացնելով մեր մեկնման պատրաստությունները՝ ամուսինս շարունակեց իր մարդաչափական աշխատանքները, իսկ առևտրականները մեր սենյակում շարունակում էին ցուցադրել իրենց խանութների և հետնասենյակների ապրանքները:

Հազիվ էինք աչքներս բացել, երբ Մեհմետը, որից պրծում չկար, հանդարտ թակեց դուռը: Բազմաթիվ բեռնակիրներ բերել էին գորգեր և տարբեր իրեր՝ սափորներ, պղնձե թասեր, ձեռագործ ապրանքներ, Շիրազի արկղեր և այլն: Նրանից պրծնելու համար պետք էր նրան ատամներ ցույց տալ:

Մենք շարունակում ենք մեր անվերջանալի բանակցությունները քարավանի մարդկանց հետ, որոնք գտնում են, որ բեռները շատ ծանր են վատ ճանապարհների համար: Նրանք շարունակում են տրտնջալ և գանգատվել, թե ինչ է մեզ սպասվում առջևում:

Մի քանի սիրալիր մեծահարուստների միջնորդությամբ մեր պատրաստությունները վերջապես ավարտվեցին: Մամուլը մեզ տրամադրեց հեղինակավոր «Մշակ» թերթի ձայնը, որը կոչ արեց տեղի հայերին մեզ մատուցել բոլոր հնարավոր ծառայությունները:

Այս նրբանկատ ուշադրությունը և ռուսական կառավարության բարձր հովանավորությունը պարզապես հարթեցրեցին այս ճանապարհորդությունների որոշակի դժվարություններ, և մենք խորապես երախտապարտ ենք նրանց:

Ափսոս, որ արևը այլևս չէր շողում: Կարելի էր այնքան գեղեցիկ նկարներ անել Շուշիում: Ֆոտոխցիկը ձեռքիդ՝ այս գունագեղ ու մարդաշատ Մայդանում ինչքան յուրօրինակ ու անսպասելի տեսարաններ կան բացահայտելու:



Մի վերջին անգամ մենք գնացինք՝ հրաժեշտ տալու, և մեր վրանների համար հաստ թաղիք գնեցինք:

Խոր գիշեր էր, երբ վերադաձանք մի ծառայի ուղեկցությամբ, որը, լապտերը ձեռքին, լուսավորում էր խարխուլ, ջրափոսերով ծածկված ճանապարհը, և մեծ երջանկություն է, եթե չջարդես ոտքերդ: Ինձ պատմել են, որ մի ծեր գնդապետ տնից դուրս գալու ժամանակ միշտ հրաժեշտ էր տալիս կնոջը՝ վախենալով, որ մի օր իր զբոսանքների ժամանակ կսպանվի այս քարուքանդ ճանապարհներին:

Եվ պետք է ասել, թե ինչպես էին դարաբաղյան ձիերը սլանում վեր ու վար: Ինչ խիզախ կենդանիներ են: Ճշմարիտ է, որ դեռ հին ժամանակներից ձին հայտնի է որպես Հայաստանի ամենահայտնի ապրանքը: Ըստ Եզեկիելի՝ այս երկիրը Տիրի շուկաները ապահովում էր իր ձիերով և հեծյալներով, և հենց նրանք են ասորիներին հաղթանակ բերել: Իրականում, արաբական ձիուց հետո, հենց հայկական ձին է ամենահայտնին: Չնայած նա չունի արաբական ձիու ոչ հասակը, ոչ էլ նրբագեղությունը, բայց հավաստի է, որ դժվար ու անանցանելի վայրերում ոչ մի մրցակից չի կարող հավասարվել նրան իր համառությամբ ու դիմացկունությամբ :

ԳԼՈՒԽ 5

Մեր քարավանը - Լիսագորսկի ձորը - Ընդունելություն պարսկական իշխանի տանը - Հանքային աղբյուրը - Մենք մտնում ենք Զանգեզուր - Աքառլու չայի անցումը - Զաբուխի թշվառ կայարանը - Տեղ գյուղի եկեղեցին և գերեզմանանոցը - Բնակչության տեսակը և թշվառությունը - Տեսական վատ եղանակը

Մայիսի 17 - Առավոտյան յոթի մոտ՝ անվերջ բանավեճերից և դադարներից հետո, քարավանը շարժվեց: Այն բաղկացած էր վեց բեռնակիր և չորս թամբակիր ձիերից: Մեր քարավանի աճնակագմը կազմված էր տասը հայերից, թարգմանիչ Օհանեսից և խոհարար Լևոնից: Մեզ ուղեկցում էին նաև երկու թաթար հեծյալներ: Մեկնման պահին ներկա էին նաև շուկայի երկու միջնորդ վաճառականներ՝ Մեհեմետ Ալիի գլխավորությամբ: Նրանք կաշուն ճանձերի նման պտտվում էին մեր շուրջը, մի խոսք էին ասում կամ առարկում, ստուգում էին ձիերի թամբակալները և բեռների կապը ...: Ամուսինս նրանցից յուրաքանչյուրին տվեց մի կողմնացույց: Նրանք հեռացան միայն այն բանից հետո, երբ բազմիցս հրաժեշտ տվեցին մեզ՝ ձեռքները դնելով ճակատներին և կրծքներին: Այդ ընթացքում Օհանեսը բարձերով աստառապատեց իր թաթարական թամբը, որը բաղկացած էր երկու կոր տախտակներից: Այս զգուշավոր գործողությունները ավարտելով՝ մենք շարժվեցինք և Շուշիից դուրս եկանք Երևան տանող լեռնացքով, որը բացվում էր դեպի Զարասլուի գեղեցիկ հովիտը, որն ամռանը բնակեցվում էր քոչվոր թաթարների կողմից: Երևանի ճանապարհը բավականին բարվոք էր. մխրճված լեռների մեջ՝ այն անցնում էր անդունդի եզրով: Ամենուր առվակներ էին վազում:

Պետք է կանգառ առնեինք Լիսագորսկում, որտեղ Ռիզա Կուլի Միրզան ուներ ամառանոց: Նա մեզ խոստացել էր, որ այնտեղ կանցկացնենք մի ամբողջ օր ու գիշեր, և այդ պատճառով վաղ առավոտյան նա մեկնել էր Շուշիից իր ծառայի հետ: Մի վճիտ աղբյուրի մոտ կարճ դադարից հետո մենք ուրախ շարունակեցինք մեր ճանապարհը: Գարնանային բուսականությունը ամենուրեք զարթոնք էր ապրում՝ դեղին հիրիկներ, գլիհների կոճղերի տակ թաքնված հիասքանչ շուշաններ, որտեղից մենք հավաքեցինք նաև վայրի սոխ: Վերջապես կեսօրին երևաց արքայազնի



ամառանոցը: Նա մեզ դիմավորեց և ինձ նվիրեց իր իսկ ձեռքով հավաքած դաշտային ծաղիկների մի գեղեցիկ փունջ:

Լիսագորսկը գտնվում է 1760մ բարձրության վրա՝ մի ձորակի մեջ, որտեղով հոսում է Թուր սուն (Թթու ջուրը - *ծնթ. խմբ.*): Նրա վրա վեր է բարձրանում մի մերկ սար՝ Քաչալ սարը (ռուսերեն՝ Լիսագորսկ), որտեղից էլ նա ստացել է իր անունը: Կիրճի երկրաբանական կառուցվածքը պատկանում է օձաքարերին :

Ճաշից հետո արքայազնը մեզ տարավ մի հիասքանչ գրոսանքի Թթու ջրի երկայնքով. մենք այն անցանք՝ գետի հունի մեջ լցված քարերի վրա թռչելով, և հասանք Լիսագորսկի աղբյուրը: Այնտեղից հանքային ջուր էր հոսում, որ նման է Մեն-Կալմիե աղբյուրի ջրերին: Այն հայտնաբերվել է 7 տարի առաջ Սարատովցի բժիշկ Լոսնի կողմից, որը վերջերս է մահացել: Այս աղբյուրի ջուրը լրջորեն չի հետազոտվել: Այն հոսում է մի ժայռից, որի վրա աճում են ոստոտ արոսենիներ: Ջուրը շատ համեղ է ու հիանալի: Ափոս, որ այսպիսի բնական հարստությունները չեն շահագործվում:

Այս բանաստեղծական և կուսական բնության մեջ աճում են, ցավոք սրտի, շատ կտրվող հսկա կաղնիներ: Ժամանակին այստեղ որսում էին քարայծեր, սակայն անտառահատման պատճառով նրբագեղ էակները փախել են այս վայրերից: Թավշե կանաչ մարգագետինները ծածկված են անմոռուկներով, ոսկե կոկոններով, մանուշակագույն գինարբուկներով:

Լիսագորսկը Շուշիի հարուստ բնակիչների ամառանոցների վայրն է, որը նրանց գրավում է իր մաքուր օդով ու ջինջ աղբյուրներով: Այստեղի հանգիստ ու առողջարար վայրերում չկան ոչ խաղատներ, ոչ էլ հյուրանոցներ: Կա միայն մի շինություն. դա իշխանի ամառանոցն է: Տաք ամառներին նա ընտանիքի հետ միասին թողնում է իր ամառանոցը և բնակվում է մեծ պարսկական վրաններում:

Հայերն այստեղ տրվում են աղմկոտ զվարճանքների, իսկ մահմեդականները իրենց ասիական պարերով ու երաժշտությամբ առանձնանում են իրենց վրաններում: Լիսագորսկում կա չափարցիների մի պահակակետ, որը բաղկացած է վեց տղամարդուց և մեկ ենթասպայից: 12կմ-ի վրա գտնվում է Կալա-Դարասի (Բերդաձոր - *ծնթ. խմբ.*) գյուղը: Գյուղի ծայրին կա աջարացու մի գերեզման, որտեղ ամառը մարդիկ գալիս են ուխտի:

Արևը մայր մտնելուց անմիջապես հետո թանձր մառախուղը իջավ դաշտավայրի վրա: Ամառանոցում մենք իշխանի հետ զրուցում ենք տարբեր բաների շուրջ, և նա մեզ տալիս է հետաքրքիր տեղեկություններ տեղի բնակիչների մասին: Նա պատմում է, որ ժամանակին այս վայրերում քիչ մարդիկ կային, և քոչվորները թալանում ու սպանում էին ճանապարհորդներին: Նույնիսկ հիմա էլ պետք է շատ զգուշ լինել, քանզի մարդու կյանքը այստեղ ոչինչ չարժե:

Այդ ընթացքում մառախուղը ցրվեց, երկինքը պարզվեց և աստղերը փայլեցին: Պատշգամբում նստած՝ մենք վայելում ենք բնության անդորրը, որն այնքան է տարբերվում մեր եվրոպական քաղաքների տանջահար ու արհեստական կյանքից:

18 մայիսի- Հիասքանչ երեկոյից հետո ես առավոտյան արթնացա ծաղիկների բույրից և թռչունների երգից: Վճիտ օդի մեջ պարզորոշ գծապատկերվում էր Քաչալ սարը: Կեսօրին մենք դուրս եկանք Լիսագորսկից: Իշխանը մեզ ուղեկցեց մինչև Շուշիի գավառի և Գորիսի, ինչպես նաև Զանգեզուրի և Ղարաբաղի սահմանը: Այստեղ մենք ավտոսանքով բաժանվեցինք մեր սիրելի իշխանից, որի մասին մեզ հետ տանում էինք միայն լավ հիշողություններ:

Մեր քարավանը շարժվեց դեպի Աբդուլլահ (Բերձոր - *ծնթ. խմբ.*) տանող նոր ճանապարհով: Այստեղից մենք իջանք դեպի հաճարենիների գեղատեսիլ անտառը: Մենք ձիավարում էինք, ուրախ ու կայտառ արշավում էինք և երջանիկ էինք, որ ականատես ենք այս կուսական լեռների



գարնանային զարթոնքին: Արդուլլահի կայարանում (1250մ) երևացին դրախտանոճիներ: Այստեղ բուսականությունը ավելի փարթամ է: Լիսագորսկում ծառերը դեռ նոր էին բողբոջել, իսկ այստեղ արդեն ծաղիկների մեջ են: Արդուլլահից մենք շարժվեցինք 15կմ-ի վրա գտնվող Ջաբուխ գյուղը: Տղամարդիկ և չափարացիները մեզ խորհուրդ չեն տալիս շարունակել ճանապարհը, քանի որ պետք էր անցնել այս պահին վարարած Ակառլու չայը (Հակարի գետը – *ծնթ. խմբ.*), և նրանք վախենում էին բեռնած ձիերի համար: Սակայն առաջ շարժվեցինք և որոշեցինք հանգրվանել գետի ափին, եթե այն անանցանելի լինի: Ամենուրեք հրաբխային ժայռեր էին, և երկրաբանական ցնցումների հետքեր կային: Յոթ կիլոմետրից հետո հասանք փոթորկված գետին: Չափարացիներից մեկը մտավ գետը, որպեզի խորությունը պարզի, և տղամարդիկ համարձակվեցին, ձիերի թոկերից բռնած, մտնել ջուրը, իսկ մենք հետևեցինք նրանց: Մա առաջին անգամն էր, որ ես ձիով անցնում էի փոթորկված գետը: Ես փակեցի աչքերս, որպեսզի գլխապտույտ չունենամ: Առանց արգելքի բոլորս դուրս եկանք մյուս ափ: Վերջում չափարացիները, արագ քշելով, դուրս բերեցին մի բռնակիր ձի, որը մնացել էր գետում: Մեր Շուշիետ շունը, որին Լևոնը տանում էր թամբի առջևում դրած, առանց վախենալու նետվեց ջրի մեջ: Հոսանքը քշեց այդ անվեհեր գազանին, բայց նա արագ դուրս թռավ ցամաք: Վեց կիլոմետրից հետո հասանք թաթարական Ջաբուխ գյուղը: Արևը արդեն մայր էր մտել: Մարդիկ և անասունները այնքան էին հոգնել, որ մենք որոշեցինք գիշերել փոստի խարխուլ շենքում, որի դռները նույնիսկ չէին փակվում: Երեկոյան ժամը 7-ին ջերմաստիճանը հասավ 22 աստիճանի: Այս կայարանը այնքան ողորմելի վիճակում էր, որ այն արժանի է հիշատակման: Պետը Գորիսում էր, կայարանը գտնվում էր մի խեղճ ու ամեն ինչից զրկված ծառայի հսկողության տակ: Կացին չունենալու պատճառով նա ստիպված էր քարով շարդել փայտը: Մեծ ջանքերի շնորհիվ մենք կարողացանք հայթայթել մի կտոր չոր լավաշ, մի քանի ձու և մի հին ինքնաեռ: Կարելի էր պատկերացնել, թե ինչ էր սպասվում խեղճ ճանապարհորդներին, որոնք ստիպված են լինում գիշերել այս խուլ վայրում:

19 մայիսի- Այս խեղճ Ջաբուխ գյուղը բաղկացած էր լեռան մեջ փորված թշվառ հյուղակներից: Միայն տանիքներից բարձրացող ծխից կարելի էր կռահել, որ այստեղ մարդիկ են բնակվում, և մենք շատ զարմացանք, երբ հանկարծ մեր ոտքերի տակից դուրս եկան մի տղամարդ ու մի կին: Ջարմանքը երկուստեք էր:

Գյուղը բարձրանում է Ջաբուխ չայի աջ ափին, որը հիմա շատ փոթորկված էր: Գետի ափին գեղեցիկ ու սովորախիտ ծառերի՝ թթենիների, չինարիների տակ ցնցոտիներ հագած թաթար կանայք ջուր էին վերցնում: Նրանք զարմացած ինձ նայեցին, կարծես թե տպավորված էին իմ լայն սաղավարտից: Ես միայնակ զբոսնեցի, և չնայած մտրակը ձեռքիս էր, ստիպված էի հետ գնալ, երբ դեմս դուրս եկան սպիտակ ու սուր ժանիքներով հսկա գամփռներ:

Ժամը ութին շարժվեցինք դեպի Տեղ գյուղը: Անցանք գետը: Անվերջ վեր բարձրանալով, 1200 մետր անցնելով՝ հասանք մի քանի գերեզմանաթմբերով եզրավորված սարահարթի, որի վրա սավառնում էին բազմաթիվ անգղներ: Հենց այստեղ էր գտնվում հայկական Տեղ գյուղը, ուր մենք ժամանեցինք վաղ առավոտյան: Օհանեսը վարպետորեն ձիարշավում էր, երբ հանկարծ ձիու հետ միասին գլորվեցին դեպի ցած: Նրան վեր բարձրացրին. բարեբախտաբար նա ոչ վերք էր ստացել, ոչ էլ կոտրվածք :

Անցնելով գյուղը՝ մենք մի հարմար տեղ գտանք և վրան խփեցինք: Հանգիստ առնելուց ու ճաշելուց հետո ես առաջին անգամ զգացի քոչվորական կյանքի հաճույքը:

Ամենից առաջ մենք տպավորված ենք Տեղ գյուղի հայկական համեստ ու անշուք եկեղեցու տեսքով, որի շատ հին քարերը հիմնականում տաշած գերեզմանաքարեր են: Այս



ճարտարապետական կերտվածքները, երբեմն կոպիտ, երբեմն նուրբ, երբեմն էլ շատ պարզ, արթնացնում են հեթանոսական գաղափարներ, չնայած դրանք պատկանում են քրիստոնեության ժամանակաշրջանին: Առաջինների վրա կարելի է տեսնել մարդկանց, կենդանիների, ձիերի և ոչխարների պատկերներ, շատ հաճախ՝ վարդաքանդակներ, գինարբության տեսարաններ, իսկ երկրորդների վրա՝ բազմաթիվ խաչեր, գրառումներ:

Եկեղեցու ներսում ամբողջովին մուրթ է և խոնավ: Նավը փոքր է, բայց բարձր ու կամարածածկ: Սևացած պատերի քարերը ներսից և դրսից ծածկված են հին գրություններով:

Այս եկեղեցին կոչվում է Սուրբ Գևորգ: Այն շրջակա բնակչության խոր երկրպագության վայրն է: Մարդիկ այստեղ են գալիս նույնիսկ շատ հեռուներից, որպեսզի աղոթեն իրենց հիվանդների առողջության համար կամ էլ գառ մատաղ անեն, եթե վերջիններս առողջացել են: Մոտավորապես երկու հարյուր ընտանիքներ ամեն տարի գալիս են ուխտի Սուրբ Գևորգ եկեղեցի: Քահանան օրհնում է գառը կամ խոյը, այնուհետև զոհ են մատուցում եկեղեցու նախասրահում, կտրատում են միսը: Քահանային տալիս են գլուխը, ազդրամիսը, կաշին և մի քիչ փող: Այսպիսով տարեկան կազմում է գրեթե 200 ռուբլի:

Տեղը պատմության մեջ հայտնի է 10-րդ դարի վերջից: Սյունիքի առաջին թագավոր Սմբատը այն նվիրել է իր կնոջը՝ Շահանդուխտին, վերջինս էլ 998 թվականին այն նվիրել է Տաթևի եկեղեցուն ու եպիսկոպոսությանը: Թագուհու հրամանով բարեկարգվել է քաղաքը, կառուցվել են շենքեր, որոնց շարքում նաև այս եկեղեցին, որի պատերի վրա գրառված է նվիրատվության գործարքը: Տեղ գյուղը գտնվում է մի մեծ սարահարթի ոլորանում, որտեղով հոսում է մի գետակ: Տները՝ հողաշեն, հարթ տանիքներով, փորված են բլրի լանջերին և նմանվում են քարանձավանբակների կացարանների: Դրանք մոտավորապես 450 են: Ստարշինայի ուղեկցությամբ, տեսախցիկներով զինված, հետևելով կտուրներին, մենք շրջում ենք: Բնակչությունը, որ ամբողջությամբ հայկական է, անսովոր անմարդամոտ է, ոչ հյուրասեր: Կանայք, վառ գունավոր հագուստներով, խմբված այստեղ-այնտեղ, մի գունագեղ պատկեր են ստեղծում:

Մեր անակնկալ ժամանումը մեզ հնարավորություն է տալիս՝ ականատես լինելու բակերի ներսում կատարվող հիասքանչ տեսարաններին: Այս կողմում մի կին չոքած արագ-արագ մաղում է ցորենը, որը հենց նոր են ծեծել: Այնտեղ մի ուրիշը իր ավագ դստեր հետ գորգ է գործում, մինչդեռ փոքրերը՝ ոտաբոբիկ ու մերկ, վազվզում են հավերի, խոզերի, հորթերի միջև: Բայց շուտով մեր ներկայությունը բացահայտվում է: Հազիվ ենք մեր նկարչական խցիկները ուղղում դեպի այս տեղական գունագեղությամբ լի անսպասելի տեսարանները, երբ հրապարակը դատարկվում է: Բոլորը արագ հեռանում են, նույնիսկ ծլկում են մանչուկները:

Մենք գնում ենք դեպի աղբյուրը՝ հուսալով, որ ավելի հաջողակ կլինենք: Այստեղ մենք հանդիպում ենք մի քանի գեղեցիկ հայուհիների: Ես ապշած եմ նրանցից մեկի գեղեցկությամբ, որը հազիվ կլիներ 16 տարեկան: Թվում էր, որ նա շտապում է: Նա արագ լցնում է կուծը: Անկասկած նա գյուղի գեղեցկուհին է: Ես դա հասկանում եմ հայ տղամարդկանց հիացած հայացքներից: Ես հանում եմ տեսախցիկս և որոշում եմ նկարել: Երբ նա, կուծը նրբագեղ ուսին, բարձրանում է աղբյուրից, տղամարդիկ աղաչում են նրան կանգ առնել: Բայց նա ճարպկորեն դուրս է պրծնում նրանց ձեռքից՝ գնալով իր տուն, որտեղ նրան սպասում է միակ որդին: Այսպիսի կանայք հայերի մեջ շատ են հանդիպում, որոնց նրբագեղությունն ու գեղեցկությունը միախառնված են առնական, անվեհեր բնավորության հետ:



Տեղ ոչ ծառ կա, ոչ էլ բուսականություն: Դաշտերը գտնվում են գյուղից որոշ հեռավորության վրա: Ճանապարհները լցված են աղբով, երևում են քարե ջրաղացներ, որոնք շատ նման են հոռմեական ջրաղացներին: Գազագած շները մոտենում են մեզ, և մենք ստիպված ենք շարունակ թափահարել մեր մտրակները, որպեսզի նրանք հեռանան:

Բնակատեղից մի քանի մետրի վրա գտնվում է մի մեծ գերեզմանոց: Գերեզմանաքարերի վրա փորագրված են այլաբանական պատկերներ և հանգուցյալի մասնագիտական առարկաներ. գեղեցիկ մկրատը խոսում է դերձակի մասին, մուրճը՝ դարբնի, կովերը, ոչխարները՝ հովվի և այլն:

Այս հին ավանդույթը շարունակվում է նույնիսկ մեր օրերում, խաչերի և գրառումների հետ միասին դեռ կարելի է հանդիպել այլաբանական քանդակների:

Երբ վերադառանք մեր վրանը, մեզ շրջապատեցին մի խումբ կանայք և երեխաներ: Մենք առիթը բաց չթողեցինք և շատ տեսարաններ նկարեցինք: Կանայք Օհանեսին հարցրեցին մեր նկարահանումների պատճառը, և նա ասաց, որ իբր մեր երկրում կանայք քիչ են, և ստիպված ենք այս նկարները ցույց տալ չամուսնացած տղամարդկանց: Այս բացատրությունը նրանց մոտ առաջացրեց մի անզուսպ քրքիջ:

Պարոն Շանտը ստարշինային ասաց, որ հույսը լրիվությամբ դնում է նրա հյուրասիրության վրա, և որ երեկոյան պահակի կարիք չունենք: Այս հայտարարությունը մեծ տպավորություն գործեց բոլորի վրա, և նրանք խոնարհվելով մեզ բարի գիշեր մաղթեցին: Բայց ամենաերջանիկը պահակն էր, որը ,փաթաթված իր մորթյա մուշտակի մեջ, քնել էր մեր վրանի առջև:

Օղի ջերմաստիճանը հասավ 25 աստիճանի: Բարոմետրը խիստ տատանվում էր: Մրրիկ էր սպասվում: Մենք ամրացրեցինք վրանների ձողերը: Շատ տեղին շրջահայացություն: Հազիվ էինք պառկել, երբ հեռվում լսեցինք ամպրոպի ձայնը: Նա մոտենում է մեր լեռանը, արձագանքում բազմաթիվ զարկերով, շուտով անձրևի ծանր կաթիլները թմբակահարում են մեր վրանի տանիքը, և որոտն ու կայծակը իրար հաջողում են մինչև առավոտ: Ամբողջ գիշեր ես աչք չփակեցի. այսպես անցավ իմ առաջին գիշերը վրանում...

Վերջապես լույսը բացվում է: Ֆեբուսը բարկացած որոտում է թանձր ամպի հետևում: Ուրախանալու բան չկա: Ամենուր անձրև է՝ լեռներում և վրանի տակ: Խոնավությունը ծծվում է մինչև ոսկորներդ: Դրսում հնարավոր չէ ճաշ եփել: Լևոնը իր կաթսաները տանում է կողքի հարևան խրճիթը, ես նույնպես շտապում եմ այնտեղ՝ մի քիչ տաքանալու:

Սա գոմ հիշեցնող մի շինություն է, որը լուսավորվում է տանիքի կլոր անցքից, որտեղից էլ նաև անձրև է լցվում: Հատակը, պատերը հողից են, տանիքը՝ ցեխախառն ճյուղերից ծեփված: Մի անկյունում մեծ կափարիչով ծածկված մի կավապատ փոս կա: Դա հացի փուռ է: Մենյակի կենտրոնում կրակ է վառված, որի ծուխը դուրս է գալիս տանիքի անցքից, որը ծառայում է՝ որպես ծխնելույզ և միևնույն ժամանակ՝ պատուհան: Կողքին ախոռն է: Ընտանիքը գիշերում է այստեղ, որպեսզի վառելիքը խնայի: Ողջ ընտանիքն ապրում է ներսում: Երեխաները ծնվում, մեծանում են այս մութ ու խոնավ, ամեն տեսակ հարմարավետությունից զուրկ քարանձավում: Գիշերը նրանք քնում են մաշված ներքնակների վրա՝ փաթաթված վերմակների մեջ: Ամեն առավոտ այս տեղաշարժերը հավաքում են, չորացնում արևի տակ և դասավորում սենյակի խորքում: Դրան կարելի է ավելացնել նաև աղբատիկ սնունդը:

Տղամարդիկ պահում են իրենց անասունների հոտերը, ցորեն են ցանում, կանայք զբաղվում են տան գործերով, իսկ երկար ու ցրտաշունչ ձմեռները գործում են իրենց օգտագործման համար անհրաժեշտ հաստ գործվածքներ:



Մինչև 16 եզ լծված գութաններով մարդիկ հերկում են լանջերին սփռված հողերը: Չնայած ցորենը առատ է, բայց լավաշը անտանելի է, մեր ստամոքսները չեն կարողանում այն մարսել: Փոխարենը կաթնամթերքը շատ համեղ է:

Եղանակը սկսում է բացվել: Անձրևը դադարում է, թանձր մառախուղը ցրվում է: Երեխանները դուրս են թափվում, բայց մեզ նկատելով՝ թռչնակների նման թաքնվում են:

Հողը այնքան է խոնավացել անձրևից, որ կարճ զբոսանքից հետո, ես մտա հարևան տունը: Ես նստեցի գետնին, օջախի մոտ: Կանայք, հիացած իմ երկարաճիթ կոշիկներով, շտապեցին հանել դրանք, որպեսզի չորացնեն: Կրակի շուրջ կկգած՝ մենք փորձում ենք ժեստերով խոսել:

Այս բուռն դիմախաղի մեջ ընկղմված էի, երբ հանկարծ ինչ-որ մեկը բռնեց ծամս: Հարվածը այնքան ուժեղ էր ու անսպասելի, որ ես երեսնիվայր ընկա գետնին՝ կես ծիծաղելով, կես լացելով, չհասկանալով, թե ինչ է նշանակում այս սարսափելի կատակը: Ես մի քանի վայրկյան մնացի այս վիճակում, երբ կանայք ձեռքն ընկած իրերով հարձակվեցին ինձ վրա ընկած ագրեսորի վրա: Ես վեր թռա և հայտնվեցի տանտիրոջ շան առջև՝ թշնամի, որից ես չէի վախեցել, բայց որն ինձ վրա դավաճանի նման հարձակվել էր թիկունքից: Օհ՛, այս գայլխեղդ շները օտարերկրացիների համար ամենասահարկու գազաններն են:

Ես իմ հարևանուհիներից խնդրեցի մի որոշ չափումներ կատարել նրանց մոտ: Ես չեմ կարող նկարագրել նրանց զարմանքը, վախն ու համառ դիմադրությունը այսպիսի առաջարկի համար:

Տղամարդիկ որոնց ամուսինս արդեն չափել էր, ավելի խելամիտ են: Նրանք միանում են իմ թախանձանքին՝ իրենց կանանց ու աղջիկներին համոզելու համար: Վերջապես մի քանիսը զիջում են: Բոլոր տղամարդիկ հեռանում են, ես չափումներս ստիպված եմ կատարել փակ դռների հետևում:

Կանանցից մեկը, նստած սենյակի կենտրոնում, սկսում է հանել գլուխն ու բերանը փաթաթած գլխաշորը: Առաջինին հետևում են մյուսները և այսպես մինչև տասը կամ տասներկուսը: Ամեն մի շալը ընկնելուց լավում են նոր տնքոցներ: Գլխաշորերը և մազերը ահավոր կեղտոտ են:

Հասկանալի է, որ նման կերպով չես կարող հաճախ սանրվել: Նրանցից մեկը ներողություն է խնդրում իր մազերի վիճակի համար՝ ասելով, որ մի տարի առաջ կորցրել է իր որդուն, սուգ է պահում և այդ ժամանակից ի վեր չի սանրվել...

Հերթը հասավ փայլուն աչքերով, արծվաքիթ, նուրբ, կանոնավոր դիմագծերով մի ծեր կնոջ, որը ժամանակին երևի շատ գեղեցիկ է եղել: Նա շատ թթված տեսք ուներ և, երևում էր, որ դժգոհ էր իմ գործողություններից: Երբ գործս ավարտեցի, նա հայտարարեց, որ կյանքում շատ բաներ է տեսել, բայց այսպիսին՝ երբեք: Նա գայրացած սկսեց գուլպա գործել, և չգիտեմ, թե ինչ խոսքեր ասաց, բայց մնացած կանայք անմիջապես փախան: Այստեղից էս գնացի գերեզմանոց, որտեղ մենք փորձեցինք դրոշմապատել որոշ ակնառու փորագրված դրվագներ: Բայց բոլոր թղթերը թրջվեցին անձրևի տակ ու շարքից դուրս եկան:

Այս գերեզմանոցը Տեղի զբոսահրապարակն է: Այստեղ երեխաները, թեթև հագնված, զվարճանում են: Էջերը արածում են խոտերի արանքում բուսած տատասկափուշը, վարազանման խոզերը իրենց գոճիներով, մեծ դմակավոր ոչխարները, այծերը, հավերը նույնպես հավաքվում են այստեղ: Սա մի համընդհանուր վայր է, որտեղ բոլորն էլ ունեն իրենց տեղը կենդանության օրոք և մահից հետո:

Մինչ մենք ստիպված էինք հանգիստ առնել, Օհանեսը պառկած էր:

Ձիուց ընկնելուց հետո նա դեռ չէր ապաքինվել, և մենք անհանգիստ էինք, թե ինչպես նա կդիմանա ավելի ու ավելի հոգնեցնող ճանապարհորդությանը:



Քահանան եկավ մեր բնակատեղին, նա մնացած մարդկանց նման ևս բողոքեց, որ ծանրաբեռնված են հարկերի տակ, և որ արդեն երկու տարի է՝ երաշտ է, բերք չկա, դպրոց չունեն, միայն մի քանի մեծահարուստ մարդիկ են կարողանում իրենց երեխաներին ուղարկել հարևան շրջանների գիմնազիաներ: Այստեղի հայերը շատ լավ են գիտակցում կրթության անհրաժեշտությունը և ջանում են իրենց երեխաներին ուսման տալ, եթե նույնիսկ բողոքում են իրենց լքված ու անկայուն վիճակից, որի մեջ ընկել են մեկուսացման պատճառով:

Եվ վերջապես, փառք Աստծո, մույժ երկնքում մի հիասքանչ ծիածան կապեց, և մենք քնով անցանք՝ հավատալով, որ վաղը լավ եղանակ կբացվի:

**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ**

1. Աբրահամյան Ե., *Մեծ Թաղեր, Ստեփանակերտ, 2009, 348 էջ + 17 ներդիր*

(Հարուստ փաստական նյութի հիմքի վրա ներկայացվում է Հաղորթի շրջանի Մեծ Թաղեր գյուղի պատմությունը, պատմական անցյալը, աղավաղված անուններն ու տեղանունները, պատմական հուշարձանները, ուխտատեղիները, հին ու նոր կամուրջները, սահմանները, կլիման, ջրային ռեսուրսները, լողավազանները, ջրվեժները, աղբյուրները, բուսական և կենդանական աշխարհը, օգտակար հանածոները, բնակչությունը, գյուղացիների զբաղմունքը, փոստը, կրթամշակութային օջախները, ջրաղացը, տարբեր սովորություններ, մեծթաղերցիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյամարտին, արհեստները, կրի, փայտածուխի, դավի, կղմինդրի, օճառի, ածիկի, կտավատի ձեթի պատրաստման եղանակները, տեղեկություններ մեծթաղերցի նշանավոր գիտնականների, ռազմական գործիչների, աշուղների, արհեստավորների մասին, բազմաթիվ լուսանկարներ, գծանկարներ ևն: Ուսումնասիրությունը հրատարակվել է նաև ռուսերենով /Абраамян Е., *Мед. Тагёр, Степанакерт, 2010*/):

2. Աբրահամյան Ժ., *Դահրավ. հայրենի հիշատակներ, Ասկերան, 2005, 60 էջ*

(Հեղինակը առանձին բաժիններով և ենթաբաժիններով համառոտ տեղեկություններ է հաղորդում հայրենի՝ Ասկերանի շրջանի Դահրավ գյուղի անվան ծագումնաբանության, սրբատեղիների, հանդամասերի, այլ տեղանունների, նշանավոր մարդկանց, գյուղական խորհրդի ու կոլտնտեսության նախագահների, դպրոցի տնօրենների, ուսուցիչների, Հայրենական մեծ և Արցախյան պատերազմներում զոհված դահրավցիների մասին ևն: Գրքում ընդգրկված են նաև մի շարք լուսանկարներ):

3. Աբրահամյան Հ., *Շուշիի համայնապատկերը (19-րդ դար), «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Ստեփանակերտ, 2013, էջ 4-15*

(Տպագիր և արխիվային նյութերի հիմքի վրա ներկայացվում է Շուշի քաղաքի 19-րդ դարի վիճակը: Հեղինակն առանձին պարբերություններով համառոտ անդրադառնում է բերդաքաղաքի բնակչության թվին և էթնիկ կազմին, վարչական, առևտրական, դատական համակարգերին, կրթամշակութային օջախներին, արհեստներին, հասարակական ու ներքին կյանքին, ջրամատակարարմանը ևն):

4. Աբրահամյան Հ., *Քերթ (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2010, 176 էջ*

(Արխիվային վավերագրերի, մատենագիտական աղբյուրների և այլ նյութերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Մարտունու շրջանի Քերթ գյուղի պատմությունը, մշակութային կյանքը, Արցախյան գոյապայքարում քերթեցիների մասնակցությունը, տեղանունների բացատրություններ, հուշեր, լուսանկարներ ևն: Առանձին ենթաբաժնում՝ «Կենցաղ և սովորություններ» (էջ 84-92), նկարագրվում են գյուղի կենցաղի հետ կապված որոշ երևույթներ, սովորություններ, բարքեր, ավանդական ուտեստներ ևն):

5. Աթայան Ա., *Լ. Հարությունյանի «Նշխարները»՝ նաև ազգագրություն, «ԱրՊՀ հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2012, N3, էջ 179-192*

(Քննության են առնվում Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» ժողովածուի հինգ հատորներում բանահյուսականի հետ ներկայացված ազգագրական նյութերը: Առավել ուշադրություն է դարձվում ավանդություններին, տեղանունների մեկնաբանություններին, աղբյուրների, պարերի, նվագների, կենցաղային իրերի, բուսական ու կենդանական



աշխարհի, ուտեստի, սովորությունների, տարբեր ծեսերի, ժողովրդական բժշկության ձևերի և նկարագրություններին):

6. Ալեքսանյան Հ., **Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916-1926թթ.**, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 115-124

(Հիմք ընդունելով Ցարական Ռուսաստանի վիճակագրական, բրիտանական արխիվների, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի, ԽՍՀՄ 1923թ., Ադրբեջանական ԽՍՀ 1926թ. մարդահամարների տվյալները՝ հեղինակը ներկայացնում է Շուշիի և Ղարաբաղի, ինչպես նաև Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության՝ 1916-1926թթ. թվակազմը, տարածքի էթնիկ այլ խմբերի, հատկապես թուրքերի հետ հարաբերակցությունը՝ անդրադառնալով նաև քաղաքաբնակների ու գյուղաբնակների, արական և իգական սեռերի, մայրենի լեզվին տիրապետողների, գրագետների թվաքանակին, Ադրբեջանական ԽՍՀ 1939թ. տվյալներին: Ըստ ուսումնասիրության՝ ընդամենը 10 տարում՝ 1916-1926թթ., փոփոխվել է պատմական Արցախի թե՛ բնակչության էթնիկ կազմի տեսակարար կշիռը, թե՛ երկրամասի սահմանները, և 1916թ համեմատությամբ Ղարաբաղի հայության թվաքանակը նվազել է 80000-ով, որին զուգընթաց հայաթափվել են Շուշին, Գանձակը և հայկական բազմաթիվ այլ բնակավայրեր):

7. Ալիշան Ղ., **Արցախ, Երևան, 1993, 124 էջ**

(Ներկայացվում է Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից մեկի՝ Արցախի պատմաաշխարհագրական նկարագրությունը: Հեղինակը հանգամանորեն քննում է նահանգի տասներեք գավառները՝ Կողթ, Բերձոր, Վայկունիք, Միսական ոստան, Մեծկունիք, Մեծիրանք, Փառնես, Մյուս Հաբանդ, Պարզկանք, Մուխանք, Հարժլանք, Պիանք, Քոտակ՝ անդրադառնալով նրանց բնակավայրերին, լեռներին, դաշտերին, գետերին, բերդերին, եկեղեցիներին ևն: Աշխատությունն առաջին անգամ տպագրվել է գրաբար բնագրով «Բազմավեպ» հանդեսի 1988-1989թթ. համարներում):

8. Աղաջանյան Մ., **Հաթերք. պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Ստեփանակերտ, 2012, 688 էջ**

(Ներկայացվում են Մարտակերտի շրջանի պատմական Հաթերք գյուղի տարբեր ժամանակաշրջանների պատմությունը, ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը, նրա տնտեսությունը, կրթական, մշակութային և առողջապահական օջախները, հաթերքցիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյամարտին, խոսվածքը, գյուղական համայնքի գործունեությունը, տեղեկություններ հաթերքցի նշանավոր գիտնականների և այլ գործիչների մասին, գրական հայերենով ու տեղական խոսվածքով (տառադարձության խախտումներով) գրառված մի շարք ավանդություններ, հանելուկներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ, օրհնանքներ, անեծքներ, աղոթքներ, ծաղր ու հեզնանքներ, երգիծական զրույցներ, ասույթներ, զվարճախոսություններ, առանձին մարդկանց սրախոսություններ, տարբեր բնագավառներում գործունեություն ծավալած հաթերքցիների անվանացանկեր, լուսանկարներ ևն: Առանձին բաժիններով և ենթաբաժիններով քննության են առնվում նաև գյուղացիների նիստն ու կացը՝ տներն ու նրանց կահավորանքը, ուտեստը, բնակչության արտաքինը, սանրվածքը, տարազը ևն (էջ 510-525), ընտանիքը, ամուսնությունը և ընտանեկան սովորությունները՝ բաժանք, խնամախոսություն, նշանդրեք, հարսանիք, կնունք, մկրտություն, փոխօգնություն ևն (էջ 525-544), մահվան հետ կապված ծեսերը, արարողություններն ու սովորույթները՝ թաղում, հոգեհաց, ինքնահող, յոթ, քառասունք, տարելից ևն (էջ 544-551), հավատալիքներն ու պաշտամունքը՝ ուխտավայրեր, մատաղ, մոզական հնարներ, սատանաներ և քաշկեր, երդում, հին հավատալիքներ, եկեղեցական ու սրբոց տոներ ևն (էջ 551-562):



9. Աղասարյան Գ., *Խնձրիստան գյուղի պատմությունը, Ստեփանակերտ, 2002, 176 էջ*

(Հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է հայրենի՝ Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղի տարբեր ժամանակաշրջանների պատմությունը, նիստն ու կացը, գյուղացիների զբաղմունքը, 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի կեսերը գործած մետաքսագործական ֆաբրիկաները, կոլտնտեսությունը, դպրոցի գործունեությունը, բնակիչների մասնակցությունը Առաջին համաշխարհային, Հայրենական մեծ և Արցախյան պատերազմներին, տարեց մարդկանց ցուցակը ևն: «*Գյուղի ազգերի տոհմաճառերը*» բաժնում (էջ 59-145) տրվում են գյուղի բոլոր տոհմերի համառոտ պատմություններն ու տոհմաճառերը):

10. Աղայան Ա., *Քոլատակ. համառոտ պատմություններ գյուղի և նրա մարդկանց մասին, Ստեփանակերտ, 2013, 64 էջ*

(Հեղինակն առանձին բաժիններով համառոտ ներկայացնում է հայրենի՝ Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի աշխարհագրական դիրքն ու պատմությունը, դպրոցը, աղբյուրները, դեռահասների և պատանիների որոշ խաղատեսակներ, որոշ ծեսեր (նշանդրեք, հարսանիք, թաղում), ուտեստներ, բնական տեսարժան վայրեր, պատմամշակութային հուշարձաններ, քոլատակյի անվանի մտավորականների կենսագրություններ ևն: Ժողովածուի մեջ ընդգրկված են նաև տարաբնույթ տասնյակ լուսանկարներ):

11. Ամիրբեկյան Ա., *Բուսածաղկային հորինվածքները Լոռու և Արցախ-Սյունիքի գորգագործական կենտրոններում, «Հայոց գորգագործական մշակույթը. հանրապետական երկրորդ գիտաժողով. զեկուցումների ժողովածու. Երևան, 25 նոյեմբերի, 2016», Երևան, 2016, էջ 7-11*

(Ներկայացվում են բուսածաղկային հորինվածքով գորգերի առանձնահատկությունները Արցախ-Սյունիքի և Լոռու գորգագործական կենտրոններում: Ըստ հեղինակի՝ դրանք վերաբերում են 19-րդ դարից մինչև 20-րդ դարի 40-ական թվականներն ընկած ժամանակահատվածին, և կարելի է բաժանել մի քանի խմբի՝ եվրոպական ազդեցությամբ գորգեր, կենդանական, թռչնային և բուսական պատկերներով հարդարված գորգեր, տեղական մշակույթին բնորոշ փնջային հորինվածքներ):

12. Ամիրջանյան Թ., Արզումանյան Վ., *Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն, Ստեփանակերտ, 1994, 112 էջ*

(Հեղինակները առանձին բաժիններով ներկայացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը, կլիման, ներքին ջրերը, հողային ծածկույթը, բուսական ծածկույթը, կենդանական աշխարհը, լանդշաֆտային գոտիները, համառոտ պատմությունը, բնակչությունը, տնտեսության ընդհանուր բնութագիրը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը և տնտեսական կապերը, ժողովրդական կրթությունը, մշակույթը, առողջապահությունը և սպորտը, տուրիզմը, քաղաքներն ու ավանները, գյուղերի բնակչությունն՝ ըստ 1989թ. մարդահամարի տվյալների, տարաբնույթ աղյուսակներ, լուսանկարներ ևն):

13. Ամիրջանյան Ա., *Դիզակ, Երևան, 2006, 232 էջ*

(Հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Արցախի պատմական Դիզակ գավառի բնաշխարհը, տարբեր ժամանակաշրջանների պատմությունը, պատմական և բնական հուշարձանները, մեղիքությունը, դիզակյիների զբաղմունքը (հողագործություն, այգեգործություն, անասնապահություն, մեղվաբուծություն, որսորդություն, արհեստներ, առևտուր, գործարանային արդյունաբերություն), բանահյուսական նմուշներ (ավանդություններ, առած-ասացվածքներ, անեծքներ, երգեր), հարկերի, բնակարանների, տնային պայմանների, հագուստի, գյուղերի մասին տեղեկություններ ևն):



14. Այվազյան Ա., *Ժողովրդագրական իրավիճակը Ղարաբաղում 1710-1720-ական թվականներին*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2010, N1-2, էջ 59-67

(Աղբյուրագիտական հիմքի վրա քննվում են Ղարաբաղում 1710-1720-ական թվականների ժողովրդագիտական իրավիճակի հետ կապված մի շարք հարցեր՝ Ղարաբաղի աշխարհագրական ընդգրկումը 18-րդ դարում, հայ ընտանիքի (տան) շնչերի քանակը, շրջակա հայության հոսքը Ղարաբաղ, բնակիչների և զինվորների թվային հարաբերակցությունը 1720-ական թվականներին, բնակչության թիվը՝ ըստ գյուղերում եղած տների միջին թվաքանականի, հետադարձ հաշվարկ, սխալ և թյուր տեղեկություններ: Արդյունքում հեղինակը հանգում է այն եզրակացության, որ 1710-1720-ական թվականներին Արցախի (Ղարաբաղի) բնակչության թիվը կազմել է մոտավորապես 500 000 մարդ):

15. Առաքելյան Ա., *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզում, Ստեփանակերտ, 1939, 206 էջ*

(Հեղինակն առանձին գլուխներով ու բաժիններով ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխարհագրական դիրքն ու կլիման, գյուղատնտեսության հիմնական ճյուղերը, շերամապահության և մետաքսագործության վիճակը մինչև խորհրդայնացումն ու դրանից հետո, զարգացման հեռանկարները, շերամի հունդը և նրա զարգացման հեռանկարները, որդերի զարգացման անհրաժեշտ պայմանները, հարսնյակը, բոժոժը, թիթեռը, որդերի կերակրման առանձնահատկությունները, հիվանդությունները, վնասատուներն ու նրանց դեմ պայքարելու միջոցները, նն: Աշխատության մեջ ընդգրկված են նաև որոշ աղյուսակներ, գծագրեր, նկարներ):

16. Առաքելյան Մ., *Ասք Ղարաբաղի և Ննգի գյուղի մասին. ազգագրական պատմություն (16-րդ դարի սկզբներից մինչև 20-րդ դարի վերջերը)*, 576 էջ+16 էջ ներդիր

(Տպագրման վայրն ու տարեթիվը նշված չեն: Բաղկացած է երեք մասից, որոնցում ներկայացվում են Արցախի ու Մարտունու շրջանի Ննգի գյուղի պատմության կարևոր դեպքերը 16-րդ դարից մինչև 20-րդ դարի վերջերը, գյուղի պատմաաշխարհագրական տվյալները, կլիման, ջրերը, կենդանական ու բուսական աշխարհը, կազմավորումն ու անվանակոչումը, երկրաբանական կառուցվածքն ու բնաշխարհը, կոլտնտեսությունը, բնակչության կենցաղն ու կենցաղային հարաբերությունները, սոցիալ-տնտեսական հարաբերություններն ու սերնդաշարունակումը, զբաղմունքը, մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները, մասնակցությունը սոցիալ-քաղաքական շարժումներին, Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյամարտին, տոհմաձառերը, ժողովրդագրական տեղաշարժերը, տեղեկություններ նշանավոր ննգեցիների մասին, ավանդապատումներ ու մանրապատումներ նն: Գրքում ընդգրկված են նաև մի շարք լուսանկարներ):

17. Առստամյան Ա., *Ժողովրդագրական իրավիճակը և վերաբնակեցման քաղաքականությունը ԼՂՀ-ում (1991-2002թթ.)*, «ԱրՊՀ հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2010, էջ 94-101

(Քննության է առնվում Արցախի ժողովրդագրական իրավիճակը 1991-2002 թվականներին, վեր են լուծվում նախապատերազմյան և պատերազմական շրջանում բնակչության նվազման պատճառները՝ Ադրբեջանի վարած հակահայկական քաղաքականություն, Արցախյան պատերազմ ու դրա հետևանքով ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կացություն, արտագաղթ: Ներկայացվում են նաև հետպատերազմյան շրջանում ԼՂՀ իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը այդ իրավիճակի բարելավման ուղղությամբ):

18. Ասատրյան Ա., *Հայոց ազգագրության թանգարանի դասական վիշապագորգը. The classical dragon rug of the museum of Armenian ethnography*, «Հայկական հանգույց. գորգարվեստի



ավանդույթները. միջազգային գիտաժողով, Երևան, 20-22 նոյեմբերի, 2013. *Զեկուցումներ», Երևան, 2016, էջ 49-51*

(Նկարագրվում է (հայերենով և անգլերենով) ՀԱԹ-ի գորգերի հավաքածուում պահվող դասական մի վիշապագորգ, անդրադարձ է կատարվում նրա նվիրատուին, պահպանության վիճակին, գույներին, զարդահորինվածքներին: Ըստ հեղինակի ենթադրության՝ այն գործվել է 17-18-րդ դարերում Արցախում, սակայն կարող է գործված լինել նաև Արևմտյան Հայաստանի գորգագործական կենտրոններից մեկում կամ Փոքր Ասիայի հայաբնակ որևէ վայրում):

19. Ասոյան Լ., *Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչությունը XIX դ. վերջին (ըստ 1897թ. մարդահամարի տվյալների)*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2008, N1, էջ 241-246

(Քննության են առնվում Ելիզավետպոլի նահանգի բնակչության տեղաբաշխվածության և այլ հարցեր՝ ըստ Ռուսական կայսրությունում 1897թ. անցկացված համընդհանուր մարդահամարի տվյալների: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաև նահանգի կազմում գտնվող Շուշիի գավառին, որի բնակչությունը մարդահամարի տվյալներով կազմում էր 138771 մարդ, որից 73953-ը կամ 53,2 տոկոսը՝ հայ: Մյուս գավառների տվյալներին զուգընթաց ներկայացվում են Շուշիի գավառի բնակչության տվյալներն՝ ըստ խտության, գյուղաբնակների ու քաղաքաբնակների, արական և իգական սեռերի հարաբերակցության, գրագիտության աստիճանի, զբաղվածության նն):

20. Ավագիմյան Ն., *Ժողովրդագրական իրավիճակը Շուշիում 1813-1917թթ.*, «Գիտական Արցախ», Երևան, 2018, N1, էջ 81-84

(Տարբեր աղբյուրներից քաղած տվյալների հիման վրա հեղինակը ներկայացնում է Ռուսական կայսրության կազմում գտնվելու ժամանակաշրջանում Շուշիում ընթացող էթնիկ տեղաշարժերը: Տեղեկություններ են հաղորդվում 1833, 1841, 1854, 1860, 1873, 1886, 1891, 1897, 1904, 1914, 1916 թվականներին բնակչության թվի և էթնիկ կազմի մասին):

21. Ավագյան Ն., *Հայկական ժողովրդական տարազը (XIXդ. - XX դ. սկիզբ)*, Երևան, 1983, 110 էջ

(Կազմված է առաջաբանից և հինգ գլուխներից: Առաջաբանում հեղինակն անդրադառնում է հարցի ուսումնասիրության աղբյուրներին, նպատակին, կառուցվածքին, ժամանակի ընթացքում հայկական տարազի կրած փոփոխություններին նն: Առաջին գլխում քննության են առնվում հայ ազգագրական տարբեր շրջանների գործվածքներն ու նրանց զարդարվեստը, երկրորդ գլխում՝ կանացի զգեստները, երրորդ գլխում՝ տղամարդկանց զգեստները, չորրորդ գլխում՝ կանանց և տղամարդկանց գլխի հարդարանքը, հիզերորդ գլխում՝ գուլպաները և ոտնամանները: Տարազի տարբեր ձևերը քննելիս առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվում նաև Մյունխեն-Արցախի համապատասխան տարազներին: Աշխատության վերջում տրվում են ազգագրական բառերի բառարան ու ծանոթագրություններ):

22. Ավանեսյան Լ., *Արցախյան գորգ թաղման ծեսի պատկերով*, «Հայ ազգաբանության և հնագիտության ինդիքներ II. երիտասարդ գիտնականների հանրապետական X գիտաժողովի նյութեր. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ», Երևան, 2003, էջ 112-120

(Հեղինակը նկարագրում է Արցախի Ասկերանի շրջանում 20-րդ դարի սկզբներին գործված՝ թաղման ծեսի պատկերով «Աւետիքեանց» գորգը: Հանգամանորեն անդրադարձ է կատարվում գորգի հիմնադաշտի պատկերին, զարդանախշերին ու դրանց խորհրդանշական իմաստներին: Հոդվածում ընդգրկված են նաև համապատասխան գծանկարներ):



23. Ավանեսյան Լ., **Գորգագործությունը խորհրդային և հետխորհրդային Հայաստանի շրջաններում և Արցախում (ըստ 2008թ. դաշտային նյութերի)**, «Հայոց գորգագործական մշակույթը. հանրապետական առաջին գիտաժողով. նյութերի ժողովածու. Երևան, 18-19 նոյեմբերի, 2011», Երևան, 2011, էջ 17-24

(Հեղինակը 2008թ. ՀՀ տարբեր վայրերում և Արցախի Ստեփանակերտ, Մարտակերտ քաղաքներում ու Պտրեցեք, Վանք, Մեծ Թաղեր, Տոդ, Տումի, Հաղրութ, Շոշ, Խնածախ, Բերդաշեն գյուղերում հավաքած դաշտային նյութի հիման վրա ներկայացնում է խորհրդային ու հետխորհրդային ժամանակաշրջանների գորգագործության վիճակը, առանձնահատկությունները, ավանդույթները, տեղեկություններ հաղորդում գորգագործների, նրանց տարիքային խմբերի մասին ևն):

24. Ավանեսով Հ., **Արցախում մետաքսագործության ձևավորման հարցի շուրջ**, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ. միջազգային գիտաժողովի նյութեր, 2011թ. նոյեմբերի 21-23», Երևան, 2012, էջ 336-338

(Կարևորելով Հայաստանի տնտեսական-մշակութային կյանքում մետաքսագործության ունեցած դերը՝ հեղինակը համառոտ անդրադառնում է Արցախում, հատկապես Շուշիում այդ ուղղության զարգացմանը, տեղեկություններ հայտնում մետաքսագործարանների, դրանց թողարկած ու արտահանած արտադրանքի ևն մասին):

25. Ավետիսյան Ա., **Սոցիալական սկզբի հետ կապված տոնածիսական հացկերույթն Արցախում**, «Հայ մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ: Գիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ», Երևան, 1992, էջ 7-8

(Տոնածիսական հացկերույթի համակարգում առանձնացնելով երկու ուղղվածություն՝ (ա օրացուցային տոների հետ կապված հացկերույթներ, բ) ծնունդ-կնունքի, հարսանիքի, թաղման, ձոնման ծեսերի, մատաղի (նաև հյուրասիրության) հետ կապված հացկերույթներ), և նման տարբերակման հիմքում դնելով բնական տարածություն և սոցիալական տարածություն, բնական մարմին և սոցիալական մարմին երկակի հակադրությունները՝ հեղինակը արցախահայության օրինակով քննարկում է տոնածիսական հացկերույթի սոցիալական սկզբի հետ առնչվող մասը, որը վերաբերում է ծնունդ-կնունքին, հարսանիքին, թաղմանը և մատաղին):

26. Ավետիսյան Ն., **Հաղորտի, Ստեփանակերտ, 2009, 216 էջ+32 էջ ներդիր**

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Մարտունու շրջանի Հաղորտի գյուղի տեղանունները, տոհմաձառերն ու տոհմաճյուղերը, գյուղացիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյամարտին, ակնարկներ նշանավոր հաղորտցիների մասին, մանրապատումներ, զվարճախոսություններ ևն՝ անդրադառնալով նաև բնակիչների նիստ ու կացին: Գրքում ընդգրկված են տարաբնույթ տասնյակ լուսանկարներ):

27. **Արցախ. Artsakh. Arpax** (Լուսանկարները՝ Ա. Մուրադյան, Դ. Հակոբյան), Երևան, 2016, 140 էջ

(Գունավոր պատկերագիրք: Ընդգրկում է Արցախի պատմաճարտարապետական տարբեր հուշարձանների, բնակավայրերի, կիրճերի, ջրվեժների, քարանձավների, աղբյուրների, ինչպես նաև ազգագրական բնույթի որոշ լուսանկարներ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն մեկնաբանություններով):

28. **Արցախի ժողովրդագիտությունը. ազգագրություն (աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Մարգարյանի)**, հ. 1, Ստեփանակերտ, 2019, 736 էջ, հ. 2, Ստեփանակերտ, 2019, 754 էջ, հ. 3, Ստեփանակերտ, 2020, 726 էջ, հ. 4, Ստեփանակերտ, 2020, 768 էջ



(Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ հրատարակվող մատենաշար, որը պետք է ընդգրկի Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանը և բարբառին, վերաբերող և առնչվող տպագիր ու ձեռագիր նյութերը՝ սկսած 19-րդ դարի կեսերից առ այսօր: Առայժմ տպագրվել է չորս հատոր: Առաջին հատորում ընդգրկված են նախախորհրդային, երկրորդ հատորում՝ խորհրդային, երրորդ հատորում՝ հետխորհրդային շրջանում հրատարակված ուսումնասիրությունները, չորրորդ հատորում՝ 19-րդ դարի կեսերից առ այսօր հրատարակված հոդվածները, գիտական զեկուցումները և այլ ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են Արցախի ազգագրությանը: Առաջին հատորի ընդարձակ ներածականում ներկայացվում է Արցախի ազգագրության ուսումնասիրության պատմությունը):

29. Բաբայան Ա., *Հնի շնչով, նորացված ոճով*, «Ազատ Արցախ», *Ստեփանակերտ, 31 հուլիսի, 2007, էջ 7*

(Ներկայացվում է գորգատիպ հյուսվածքով գուլպայի՝ *շաթալի* առանձնահատկությունները, գույների բազմազանությունը, նախշերի տեսակները: Հեղինակը կարևոր է համարում, որ նման գուլպաներ գործելու՝ նախնիներից մեզ հասած յուրօրինակ արվեստը փոխանցվի դարեդար):

30. Բաբայան Ժ., *Արցախի խոհանոց*, *Երևան, 2007, 240 էջ*

(Ներկայացվում են Արցախում և հայ ազգագրական այլ շրջաններում տարածված զանազան կերակրատեսակների՝ թթուների, մրգահյութերի, մուրաբաների, չրերի, թխվածքների, այլ ուտեստների պատրաստման բաղադրատոմսերը: Առանձին բաժնում տրվում են հայոց ազգային-եկեղեցական մի շարք տոների ու ծիսակատարությունների նկարագրությունները: Ժողովածուի վերջում կցված են տարբեր կերակրատեսակների և այլ ուտեստների գունավոր լուսանկարներ):

31. Բազեյան Կ., *Շուշիի ասեղնագործական դպրոցը*, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», *Երևան, 2007, էջ 244-251*

(Համառոտ անդրադառնալով Արցախում ասեղնագործական արվեստի պատմությանը՝ հեղինակը ներկայացնում է դրա զարգացումն ու լայն տարածումը հատկապես 19-րդ դարի վերջերին՝ կապված Շուշիի՝ որպես քաղաքի ձևավորման հետ: Առանձնակի ուշադրություն է դարձվում բնագավառի զարգացմանն ու տարածմանը նպաստող գործոններին, ինչպես նաև տարածված կրատեսակներին ու զարդանախշերին):

32. Բալայան Գ., *Աշան գյուղը և աշանցիները*, *Ստեփանակերտ, 1999, 48 էջ*

(Հեղինակը առանձին բաժիններով համառոտ ներկայացնում է հայրենի՝ Մարտունու շրջանի Աշան գյուղի անվան ստուգաբանությունները, բնաաշխարհագրական տվյալներ, պատմական հուշարձանները, աղբյուրները, բուսական ու կենդանական աշխարհը, արհեստները, դպրոցը, աշանցիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյամարտին, գյուղի վերաբնակեցման պատմությունը, տեղեկություններ երկարակյաց աշանցիների մասին, գյուղացիների հետ կապված զրույցներ, տարբեր լուսանկարներ ևն):

33. Բալայան Գ., *Աշան գյուղի ու մարդկանց մասին*, *Ստեփանակերտ, 2006, 80 էջ*

(Առանձին բաժիններով համառոտ ներկայացվում են Մարտունու շրջանի Աշան գյուղի կոլտնտեսության տարբեր ճյուղերը (հացագործություն, խաղողագործություն, պտղաբուծություն, թթաբուծություն, անասնապահություն, մեղվաբուծություն, ծխախոտի մշակություն, շինարարություն ևն): Անդրադարձ է կատարվում այդ ճյուղերում աշխատող աշանցիներին, նրանց սոցիալ-տնտեսական վիճակին, նրանց հետ կապված զրույցներին, ինչպես նաև Արցախյան գոյամարտին աշանցիների մասնակցությանը ևն: Գրքում ընդգրկված են մի շարք լուսանկարներ):



34. Բալայան Մ., *Արցախահայ գորգարվեստի յուրացման քաղաքականությունը Ադրբեջանում, «ԱրՊՀ հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2011, էջ 162-169*

(Անդրադառնալով արցախյան գորգարվեստի հնությունն ապացուցող փաստերին, գորգերի նախշատեսակներին, դրանց արտահայտած գաղափարներին ու թուրք մշակութաբանների կողմից այդ արվեստին թուրքական ծագում վերագրելու տեսակետներին՝ հեղինակը հիմնավորում է, որ նման տեսակետները հիմնադուրկ և հակագիտական են ու ակնհայտորեն ծառայեցվում են եկվոր վաչկատուն թուրքական ցեղերի մշակույթի ուռճացմանը և պատմական Հայաստանի տեղական ազգային մշակույթի յուրացմանը, ինչն էլ հետապնդում է զուտ քաղաքական նպատակներ):

35. Բալայան Մ., *Արցախի գորգագործական մշակույթի ուսումնասիրման հարցի շուրջ. On research issues of Artsax rug weaving culture, «Հայկական հանգույց. գորգարվեստի ավանդույթները. միջազգային գիտաժողով, Երևան, 20-22 նոյեմբերի, 2013. Զեկուցումներ», Երևան, 2016, էջ 82-89*

(Հեղինակը ներկայացնում է (հայերենով և անգլերենով) Արցախի գորգագործության համառոտ պատմությունը, որոշ առանձնահատկություններ: Առանձնակի ուշադրություն է դարձվում արցախյան գորգերի թալանին ու թուրք մշակութաբանների կողմից արցախյան գորգագործական մշակույթի պատմությունը աղավաղելուն և այն որպես ադրբեջանական մատուցելուն: Միաժամանակ արժևորելով հայ և օտարազգի գիտնականների դերը արցախյան գորգերի ուսումնասիրության բնագավառում՝ հեղինակը հարցի լուծումը համարում է տակավին ոչ ամբողջական՝ ընդգծելով նոր ուսումնասիրությունների կարևորությունը):

36. Բալայան Մ., *Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գորգերի ու կարպետների հավաքածուի նոր ձեռքբերումների մասին, «Հայոց գորգագործական մշակույթը. հանրապետական երկրորդ գիտաժողով. զեկուցումների ժողովածու. Երևան, 25 նոյեմբերի, 2016», Երևան, 2016, էջ 11-19*

(Հոդվածի սկզբում անդրադառնալով Արցախի և հատկապես Շուշիի գորգագործական մշակույթի համառոտ պատմությանը, իրացման ու արտահանման ծավալներին՝ հեղինակը ներկայացնում է 2015-2016թթ. առանձին անհատներից ձեռք բերված գորգերն ու կարպետները, նկարագրում դրանք, տեղեկություններ հայտնում դրանց վիճակի, տիպերի և առանձնահատկությունների մասին):

37. Բալայան Մ., *Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուն (գորգեր, կարպետներ, անկողնապարկեր, խուրջիներ), Երևան, 2012, 128 էջ*

(Ներկայացվում է Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գորգերի, կարպետների, անկողնապարկերի, խուրջիների հավաքածուն՝ լուսանկարներով և տեղի, ժամանակի, չափերի մասին հայերեն, ռուսերեն, անգլերեն տեղեկություններով ու մեկնաբանություններով: Առաջաբանում տրվում են Արցախի գորգագործության համառոտ պատմությունն ու որոշ առանձնահատկություններ):

38. Բալայան Մ., *Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ձեռագործ գորգերը, «Հայոց գորգագործական մշակույթը. հանրապետական առաջին գիտաժողով. նյութերի ժողովածու. Երևան, 18-19 նոյեմբերի, 2011», Երևան, 2011, էջ 36-39*

(Համառոտ անդրադառնալով արցախյան գորգագործական մշակույթի պատմությանն ու առանձնահատկություններին՝ հեղինակը տեղեկություններ է հաղորդում Արցախի պատմաերկրագիտական թանգարանում պահվող ձեռագործ գորգերի թվի, տիպերի, թվագրությունների, ինչպես նաև կարպետների, անկողնապարկերի, խուրջիների, այլ գործվածքների, թանգարանի ազգագրության բաժնում պահվող գորգագործական դազգահի ու գործիքների վերաբերյալ):



Առանձին անդրադարձ է կատարվում գորգերի ու կարպետների՝ տարբեր ցուցահանդեսներում կազմակերպված ցուցադրությանը):

39. Բալայան Վ., *Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Երևան, 2020, 752 էջ*

(Արխիվային նյութերի, պարբերական մամուլում տեղ գտած հրապարակումների, տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական, ազգագրական, բնագիտական աշխատությունների, հոդվածների և այլ ուսումնասիրությունների ու նյութերի հիման վրա հեղինակը ներկայացնում է Արցախի Հանրապետության մայրաքաղաքի և Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Քարվաճառի, Շուշիի, Քաշաթաղի շրջանների՝ 2020թ. դրությամբ գործող բոլոր բնակավայրերի պատմությունը՝ անդրադառնալով նաև բնակիչների ժողովրդագրությանը, կենցաղին և ազգագրական այլ հարցերի):

40. Բալայան Վ., *Գիշի. պատմական անցյալն ու ներկան, Երևան, 1997, 80 էջ + 8 էջ ներդիր*

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Մարտունու շրջանի Գիշի գյուղի աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, պատմությունը, պատմամշակութային ժառանգությունը, կոլտնտեսային շարժումը, գյուղացիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, ժողովրդական կրթության և կուլտուր-լուսավորական աշխատանքների դրվածքը, տեղեկություններ նշանավոր գիշեցիների մասին, տարբեր լուսանկարներ ևն: Առանձին ենթաբաժիններով համառոտ ներկայացվում են նաև գյուղի տնտեսական կյանքը և սովորությունները, հավատը, ընտանեկան կյանքը, բարքերը):

41. Բալայան Վ., *Մետաքսագործությունը Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2000, N1, էջ 88-92*

(Տպագիր և ԼՂՀ պետական արխիվում ու պատմաերկրագիտական թանգարանում պահվող արխիվային նյութերի հիման վրա հեղինակը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղում մետաքսագործության զարգացման փուլերը, դրանց առանձնահատկությունները, տեսակարար կշիռը Ռուսական կայսրության և ԽՍՀՄ տարածքում, նրա տեղն ու դերը Արցախի ժողովրդական տնտեսության մեջ: Անդրադարձ է կատարվում նաև Մետաքսի մեծ ճանապարհի հետ Արցախի ունեցած առնչության ու դրա վերականգնման և մետաքսագործության հետագա զարգացման անհրաժեշտության հարցերին):

42. Բալայան Վ., *Սոցիալ-տնտեսական իրավիճակը Արցախում 19-րդ դարում, «ԱրՊՀ հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2011. էջ 94-104*

(Անդրադառնալով Այսրկովկասը Ռուսաստանին միացվելուց հետո ցարիզմի վարած քաղաքականությանը, այն է՝ տարածաշրջանը, այդ թվում Արցախը դարձնել իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների յուրացման շուկան՝ հեղինակը քննության է առնում Արցախի 19-րդ դարի սոցիալ-տնտեսական վիճակը: Առանձին ենթաբաժիններով ներկայացվում են երկրագործության, անասնապահության, զինեգործության, օղեգործության, շերամապահության ու մետաքսագործության, արհեստագործության, առևտրի զարգացման գործընթացներն այդ ժամանակաշրջանում, ինչը արդյունք էր նաև ցարական կառավարության իրականացրած մի շարք միջոցառումների):

43. Բաղդասարյան Ա., *Արցախի ժողովրդական նվագարանային երաժշտության հարցեր, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006 թ.», Երևան, 2007, էջ 282-293*

(Նվագարանային երաժշտությունը համարելով արցախահայության ավանդական երաժշտական մշակույթի առավել բնորոշ ու առաջատար բնագավառներից՝ հեղինակն անդրադառնում է



Արցախի և հատկապես Շուշիի ժողովրդական երաժիշտներին, նվագարանների տեսականու բազմազանությանը, հարցի ուսումնասիրության պատմությանը, տեղի ավանդական նվագարանային երաժշտության կերտվածքային (երաժշտական նյութի շարադրման) կառուցվածքներին՝ արցախյան նվագների ձայնագրված ու նոտագրված նմուշների վերլուծության արդյունքում կատարելով մի շարք եզրակացություններ):

44. Բաղդասարյան Ա., **Հայրենի եզերք: Պատմական ակնարկ**, Ստեփանակերտ, 2004, 248 էջ

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Հաղորթի շրջանի Ազոխ գյուղի աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, բուսական և կենդանական աշխարհը, բնական ռեսուրսները, բնակչության նիստն ու կացը, խոսվածքը, որոշ սովորություններ, կոլտնտեսության ձևավորումն ու գործունեությունը, ազոխցիների մասնակցությունը Առաջին, Երկրորդ աշխարհամարտերին և Արցախյան գոյապայքարին, գյուղի դպրոցը, բուժկետը, Ազոխի քարանձավը, տեղեկություններ նշանավոր ազոխցիների մասին են: Աշխատության մեջ ընդգրկված են նաև մի շարք լուսանկարներ):

45. Բաղդասարյան Ն., **Ցարական Ռուսաստանի հարկային քաղաքականությունը Ղարաբաղում 19-րդ դարի 20-50-ական թթ.**, «Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին», Պրակ I, Ստեփանակերտ, 2009, էջ 232-233

(Քննության է առնվում 1822թ. Ղարաբաղում խանական վարչակարգի տապալումից հետո Ցարական Ռուսաստանի վարած հարկային քաղաքականությունը: Ըստ հեղինակի՝ այս բնագավառում որոշակի քայլեր կատարվում են 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո, իսկ 1840-ական թվականներին նոր հարկային համակարգի ստեղծման ուղղությամբ սկսած աշխատանքներն ավարտվում են միայն 1858թ., երբ ցարական կառավարության կողմից հաստատվում է Ղարաբաղի համար սահմանված նոր, առավել ծանր հարկաչափը):

46. Բաղդասարյան Ն., **Առևտրական կյանքը Ղարաբաղում 19-րդ դարի 30-60-ական թթ.**, «Ժողովրդավարության կայացումը հետխորհրդային շրջանում. հիմնախնդիրներն ու հեռանկարները. միջազգային գիտաժողովի նյութեր, մայիսի 21-22, 2010թ., Ստեփանակերտ, Մեքրոպ Մաշտոց համալսարան», Երևան, 2010, էջ 204-206

(Ներկայացվում է Ղարաբաղի առևտրական կյանքը 19-րդ դարի 30-60-ական թվականներին, տեղեկություններ են հաղորդվում ամենօրյա ու կիրակնօրյա շուկաների գործունեության մասին: Առանձնակի անդրադարձ է կատարվում Շուշիի վաճառականների առևտրական գործունեությանը):

47. Բաղդասարյան Ն., **Առևտրական կյանքի առանձնահատկությունները Ղարաբաղում ռուսական տիրապետության հաստատման առաջին երեսնամյակին**, «Մեքրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2015, էջ 52-59

(Ներկայացվում են Ղարաբաղի առևտրական կյանքի առանձնահատկությունները ռուսական տիրապետության հաստատման առաջին երեսնամյակում: Հեղինակն անդրադառնում է այն հանգամանքին, որ 1805-1822 թթ. Ղարաբաղում խանական վարչակարգը շարունակում էր պահպանվել, ինչը խանգարում էր և՛ արտաքին, և՛ ներքին առևտրի զարգացմանը, և միայն 1922թ.՝ ռուսական վարչակարգի մուտքից հետո, ցարիզմի վարած տնտեսական քաղաքականությունն ուղղված էր առևտրական կյանքի աշխուժացմանը, որի նպատակն էր առավելագույն շահույթի ապահովումը):

48. Բաղդասարյան Ն., **Արհեստագործության զարգացումը Ղարաբաղում (1810-1860թթ.)**, «Մեքրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2012, N2, էջ 42-53



(Պատմագիտական և աղբյուրագիտական հիմքի վրա ներկայացվում է Ղարաբաղի արհեստագործության վիճակը նշված ժամանակաշրջանում, առանձնացվում են երեք տասնյակից ավելի արհեստներ: Ըստ հեղինակի՝ առևտրական կենտրոններից կտրվածությունը, հաղորդակցության ուղիների բացակայությունը, տնտեսական կյանքի պարփակվածությունը ստիպում էին բնակչությանը հիմնականում զբաղվել տնայնագործական արհեստագործությամբ՝ հատկապես շերամապահությամբ, մետաքսագործությամբ և գորգագործությամբ: Նշվում է նաև, որ 19-րդ դարի առաջին կեսին արհեստագործական և տնայնագործական արտադրությունն իր տեղը զիջում է արդյունաբերական մասնագիտացված գործունեության սկզբնական ձևին, որի առանձնահատկությունն, ի տարբերություն արհեստագործության, ոչ թե պատվերով աշխատանքն էր, այլ ազատ շուկայի):

49. Բաղդասարյան Ն., **Ղարաբաղի ռուս վերաբնակները 19-րդ դարի 30-40-ական թթ. (Ռուսաստանի ժողովրդագրական քաղաքականությունը)**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2012, N1, էջ 50-53

(Ներկայացվում են նշված ժամանակաշրջանում Ցարական Ռուսաստանի վերաբնակեցման քաղաքականության դրսևորումները Ղարաբաղում, նշվում են վերաբնակեցման նպատակները, տեղեկություններ են հաղորդվում 1830, 1832, 1834, 1836, 1846 թվականներին Ղարաբաղի տարբեր բնակավայրերում վերաբնակեցված ռուս աղանդավորների (դուխաբորներ, իկոնոբորներ, մուլկաններ, սկոպեցներ) մասին: Անդրադարձ է կատարվում նաև նրանց տեղափոխումներին, որ հիմնականում պայմանավորված էր անբարենպաստ կլիմայական պայմաններով, ցածր բերքատվությամբ ևն):

50. Բաղդասարյան Ն., Հովհաննիսյան Լ., **Ժողովրդագրական տեղաշարժերը Լեռնային Ղարաբաղում Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի կնքումից հետո. Հայրենադարձություն, պարսկահայերի ներգաղթ, աղբրեջանական շահարկումներ**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2014, էջ 30-39

(Քննության են առնվում 1813թ. Գյուլիստանի և 1928թ. Թուրքմենչայի պայմանագրերից հետո Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերի, մասնավորապես հայրենադարձության ու պարսկահայերի ներգաղթի հարցերը: Անդրադարձ է կատարվում Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանից Ղարաբաղ գաղթած հայերի բնակության վայրերին, հատկանշվում է, որ տեղաբնակների կողքին նոր բնակչության հաստատումը բարբառային և ազգագրական առումով նկատելի փոփոխություններ չեն առաջացրել: Հնդվածը տպագրվել է նաև ռուսերենով /Багдасарян Н., Ованисян Л., **Демографические передвижения в Нагорном Карабахе после заключения Гюлистанского и Туркменчайского договоров: возвращение на родину, миграция армян Персии**, «Сборник научных статей. Центр системных региональных исследований и прогнозирования ИППК ЮФУ и ИСПИ РАН. Университет Месроп Маштоц. Южнороссийское обозрение», Вып. 77, Москва-Ростов-на Дону, 2013, с. 122-135):

51. Բաղդասարյան Ն., **Դասային հարաբերությունները Ղարաբաղում ռուսական տիրապետության հաստատման առաջին երեսնամյակին (19-րդ դարի 10-40-ական թթ.)**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2014, էջ 143-148

(Քննության են առնվում 1813թ. Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց մինչև 1822թ. Ղարաբաղի խանության վերացումն ընկած շրջանի դասային հարաբերությունները, դրանց ձևավորման վրա մելիքական շրջանի, խանական ու ռուսական տիրապետությունների թողած հետևանքները: Ներկայացվում են հողատիրության ձևերը և ավատատիրական սանդուղքի դասերն՝ իրենց անվանումներով, գործառույթներով, արտոնություններով):



52. Բաղդասարյան Ն., **Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867թթ.**, Երևան, 2015, 256 էջ

(Ներածության մեջ ներկայացվում են աշխատության նպատակներն ու հարցի ուսումնասիրության պատմությունը: Բուն աշխատության մեջ արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական գրականության, ժամանակի պարբերական մամուլի նյութերի հիմքի վրա հեղինակն առանձին բաժիններով՝ «Գյուլիստանի պայմանագրի քաղաքական հետևանքները» (21-63), «Արցախահայությունը 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմում» (64-91), «Ղարաբաղը՝ ռուսական կայսրության վարչաքաղաքական բարեփոխումների նախագծերում և որոշումներում» (92-114), «Գյուղատնտեսությունը, արհեստները և առևտուրը», (115-160), «Ցարական Ռուսաստանի հարկային քաղաքականությունը Ղարաբաղում» (161-179), «Ղասալին հարաբերությունները» (180-189), «Ղարաբաղի ռուս վերաբնակները (Ռուսաստանի ժողովրդագրական քաղաքականության դրսևորումը)» (190-194), «Հակավատատիրական և հակացարական ելույթները Ղարաբաղում» (195-214), քննության է առնում Ղարաբաղի վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացության պատմությունը 1813-1867 թթ.: Աշխատությունն ունի նաև վերջաբան, ամփոփում, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ):

53. Բաղդասարյան Ն., **Մետաքսագործության զարգացումը Ղարաբաղում 1810-1860-ական թթ.**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Ստեփանակերտ, 2011, N1, էջ 20-25

(Ներկայացվում է 1813թ. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո մինչև 1860-ական թվականները Ղարաբաղում մետաքսագործության զարգացման պատկերը, տեղեկություններ են տրվում մետաքսի մշակման և իրացման եղանակների, առկա մետաքսագործական ու մետաքսակարժական արհեստանոցների մասին: Ըստ հեղինակի՝ այս ճյուղի զարգացումը պայմանավորված էր ներքին և արտաքին բարենպաստ գործոններով: Որպես ներքին գործոն է դիտվում Ղարաբաղի բնակչության զբաղվածությունն այս բնագավառում՝ ուղղված սեփական կարիքների բավարարմանը, իսկ որպես արտաքին գործոն՝ Ցարական Ռուսաստանի գործադրած ջանքերը եկամտաբեր այս ճյուղի զարգացման համար):

54. Բաղդասարյան Ն., **Շուշիի դերը Անդրկովկասի առևտրական կապիտալի ձևավորման և զարգացման գործում 19-րդ դարի 30-60-ական թթ.**, «Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն. ԼՂՀ և ՀՀ հոշակման 20-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր. Ստեփանակերտ, 4 նոյեմբերի, 2011թ., Մեսրոպ Մաշտոց համալսարան», Երևան, 2011, էջ 245-253

(Ներկայացվում են նշված ժամանակաշրջանում Շուշիի առևտրական կյանքը, դրան նպաստող ու խանգարող երևույթները, առանձնակի անդրադարձ է կատարվում քաղաք ներմուծվող և արտահանվող ապրանքատեսակներին ու դրանցից գանձվող տուրքերին: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ Շուշիի առևտրականները արտահանում էին Ղարաբաղում արտադրվող ապրանքների շատ քիչ մասը՝ առավելապես հանդես գալով միջնորդի դերում՝ Անդրկովկասի և Եվրոպայի հետ տարվող առևտրում):

55. Բաղդասարյան Ն., **Ցարական Ռուսաստանի հարկային քաղաքականությունը Ղարաբաղում 19-րդ դարի առաջին քառորդին**, «ԱրՊՀ Հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2011, էջ 104-116

(Ներկայացվում են նշված ժամանակաշրջանում Ցարական Ռուսաստանի վարած հարկային քաղաքականությունը Ղարաբաղում և գավառի եկամուտների ընդհանուր պատկերը: Ըստ ուսումնասիրության՝ հատկապես 1813-1822թթ. խանական գանձարանի եկամուտների մեծ բաժինը գոյանում էր մաքսային համակարգից՝ ռահդարից, իսկ երկրորդ աղբյուրը կապալային համակարգն էր, որից ստացված եկամուտները խանության անուղղակի հարկերն էին: Միաժամանակ նշվում է, որ չնայած հարկային համակարգի անհրաժեշտությունն արտահայտ-



ված էր իր ամբողջ սրությամբ, այս ուղղությամբ որոշակի քայլեր կատարվում են 1826-1828թթ.՝ ռուս-պարսկական պատերազմից հետո միայն):

56. Բաղրամյան Ֆ., *Գանձասարի շուքի ներքո. Վանք (Պատմական ուրվագծեր. էրեկ և այսօր)*, Ստեփանակերտ, 2018, 96 էջ

(Հեղինակը ներկայացնում է Մարտակերտի շրջանի Վանք գյուղի պատմությունը, աշխարհագրական դիրքն ու բնական սահմանները, նրա տարածքում գտնվող նշանավոր Գանձասար եկեղեցին, պատմաճարտարապետական մյուս հուշարձանները, հողատարածքները, գետերը, աղբյուրները, կենդանական աշխարհը, դպրոցը, հիմնարկ-ձեռնարկությունները, գյուղացիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան ազատամարտին, տեղեկություններ անվանի վանքեցիների մասին, բնակիչների հետ կապված զվարճախոսություններ, մականուններ, տարաբնույթ լուսանկարներ ևն):

57. Բարխուդարյան Մ., *Արցախ, Երևան, 1996, 300 էջ*

(Ներկայացվում են հեղինակի՝ Արցախում կատարած շրջագայությունների ընթացքում գրառած նյութերը, որտեղ առանձին բաժիններով և ենթաբաժիններով նկարագրվում են Արցախ նահանգի սահմանները, լեռները, դաշտերը, դաշտակները, հովիտները, գետերն ու գետակները, մեծ աղբյուրները, հանքային սառն ու տաք ջրերը, լճակները, անտառները, բուսական ու կենդանական աշխարհը, հանքերը, գավառները, նրանց կազմում գտնվող բնակավայրերը, պատմաճարտարապետական հուշարձանները՝ վանքերը, եկեղեցիները, մատուռները, ապարանքները, սրբավայրերը, քարայրերը, բերդերը, հին բնակատեղիները ևն: Առանձնակի անդրադարձ է կատարվում յուրաքանչյուր բնակավայրի աշխարհագրական դիրքին, բնակչության (արական և իգական) ու ծխերի թվին, կյանքի միջին տևողությանը, հողատեսակներին, ստացվող բերքերին, եկեղեցիներում պահվող գրչագրերին ևն: Վերջում տրվում են ծանոթություններ, հատուկ անունների, ավերակ բնակատեղիների, բերդերի, վանքերի ու մատուռների, քարայրերի ցանկեր, ինչպես նաև առանձին գավառների ու քաղաքների բնակչության, ծնունդների, պսակների, ննջեցյալների, եկեղեցիների, քահանաների մասին տեղեկատվական ամփոփագիր: Աշխատությունն առաջին անգամ տպագրվել է Բաքվում 1895թ.):

58. Բարսե Ս., *Լեռնային Ղարաբաղ (երկրագիտական համառոտ ձեռնարկ)*, Բաքու, 1963, 84 էջ

(Հեղինակն առանձին բաժիններով և ենթաբաժիններով ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը (աշխարհագրական դիրքն ու սահմանները, մակերևույթը, գետերը, հողակլիմայական գոտիները, օդերևութաբանական տվյալներ, հողերի տիպերը, բուսականությունը, անտառները, վայրի կենդանիներն ու թռչունները), ժողովրդական տնտեսությունը՝ արդյունաբերություն (մետաքսարդյունաբերություն, գինեգործություն, տեղական արդյունաբերություն, կոշիկի արտադրություն, փայտամշակություն, գորգագործություն, յուղագործություն և պանրագործություն), գյուղատնտեսություն (գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում, գյուղատնտեսական ճյուղերի տեղաբաշխում, բուսաբուծություն, անասնաբուծություն), բնակչությունը (Ղարաբաղի բարբառը, ղարաբաղցու աշխատասիրությունն ու հայրենասիրությունը, բնակչության նիստն ու կացը և որոշ սովորություններ, մշակույթը, առողջապահությունը, հաղորդակցության ճանապարհները, Ստեփանակերտ քաղաքը, հնություններն ու մշակութային հուշարձանները): Աշխատության մեջ ընդգրկված են նաև որոշ քարտեզներ, գծագրեր, լուսանկարներ):

59. Բոդյան Վ., *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Երևան, 1972, 528 էջ

(Մենագրությունը նվիրված է Հայաստանում ու նրա ազգագրական տարբեր շրջաններում նախնադարից մինչև 20-րդ դարն ընդգրկող ժամանակաշրջանի բրիչային և արորագութանային



երկրագործության ուսումնասիրությանը: Ներածության մեջ (էջ Ե-ԺԶ) տեղեկություններ են տրվում երկրագործության զարգացման պատմության և աշխատության սկզբնաղբյուրների մասին: Բուն աշխատությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասի՝ «*Բրիչային երկրագործություն*» (էջ 1-146), երեք գլուխներում ներկայացվում են բուսահավաքչության պատմությունը, բրիչային հողագործության արտադրամիջոցների զարգացումը և արտադրամիջոցների դասակարգումն ըստ աշխատանքանակների, բանջարաբուծությունն ու այգեգործությունը Հայաստանում և բրիչային հողագործության ավանդները դրանց մեջ: Երկրորդ մասի՝ «*Արորային երկրագործության պատմությունը Հայաստանում*» (էջ 147-501), տասը գլուխներում համապատասխանաբար քննության են առնվում վարող գործիքների զարգացման ընթացքն ու գործիքների դասակարգումն ըստ կառուցվածքային և տարածքային հատկանիշների, հայկական վարող գործիքների կառուցվածքաբանական և ծագումնաբանական հարցերը, շարացան համակարգը Վանա լճի ավազանում, հարթիչների զարգացումը Հայաստանում, լծերը և լծասարքերը, աշխատանքանակները և աշխատանքի կոոպերատիվ ձևերը, ցանքերի խնամքը, բերքահավաքի արտադրամիջոցները և աշխատանքի եղանակները, կալսելու գործիքների զարգացումը և կալսման ձևերը, երկրագործական պաշտամունքի տարեշրջանը: Հավելվածում (էջ 502-506) տեղեկություններ են տրվում հայկական մի քանի շրջաններում բրիչների պատրաստման եղանակների մասին: Աշխատության մեջ հեղինակը հաճախ այս կամ այն հարցը քննելիս հայ ազգագրական տարբեր շրջաններին զուգահեռ առանձին անդրադարձ է կատարում նաև Արցախին):

60. Բեգլարյան Հ., *Արցախ-Նամե, գիրք չորրորդ, Ստեփանակերտ, 2005, 648 էջ*

(Հեղինակային հոդվածների, էսսեների, ակնարկների ժողովածու: «*Տողեր Պըլը-Պուղու դիվանից*» բաժնում (էջ 547-642) ընդգրկված են հեղինակի՝ գրական հայերենով և Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած և մշակած՝ արցախցի նշանավոր առակախոսի անվան հետ կապված զվարճախոսություններ, ինչպես նաև արցախյան հանելուկներ, խաղիկներ, ավանդություններ, հավատալիքներ, գուշակումներ, նախապաշարմունքներ, ակնարկներ Պըլը-Պուղու ու բանահավաքներ Գարեգին Սրվանձտյանցի և Մակար Բարխուդարյանի մասին):

61. Բեգլարյան Հ., *Արցախ-Նամե, գիրք հինգերորդ, Ստեփանակերտ, 2007, 640 էջ*

(Հեղինակի՝ տարբեր տարիների՝ գրական հայերենով և Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած և մշակած բանահյուսական (առավել՝ երգիծական) նյութերի ժողովածու: Առանձին բաժիններով ներկայացվում են հարյուրավոր զվարճախոսություններ, խաղիկներ, երգեր, ուտեստների ու ժողովրդական բժշկության մասին ակնարկներ, հավատալիքներ, գուշակումներ, նախապաշարմունքներ, հանելուկներ, անեծքներ, ասացվածքներ, դարձվածներ, բարբառային բառերի բառարան):

62. Բեգլարյան Մ., *Ղարաբաղի մեր Քարահունջը, Ստեփանակերտ, 2004, 208 էջ*

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Մարտունու շրջանի Քարահունջ գյուղի պատմությունը, նիստն ու կացը, կրթությունը, մշակույթը, առողջապահությունը, գյուղի կոլտնտեսության ստեղծումն ու նրա հետագա ճակատագիրը, քարահունջիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան ազատամարտին, հիշողություններ, մանրապատումներ ևն: առանձին ենթաբաժիններով հանգամանորեն նկարագրվում են գյուղի տոհմերը, սովորությունները, սոցիալական և ընտանեկան կյանքը, հավատքը, բարքերը, նախապաշարումները ևն):

63. Գալստյան Ա., *Հաղթանակ, Ստեփանակերտ, 2000, 252 էջ*

(Ներկայացվում են Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղի տարբեր ժամանակաշրջանների պատմությունը, ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը, նրա տնտեսությունը, գյուղացիների



մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյամարտին, ակնարկներ հարևան Սարդարաշեն, Ռև, Ղշլաղ գյուղերի մասին, հուշեր են: Առանձին ենթաբաժիններով հեղինակն անդրադառնում է նաև գյուղի հայտնի տոհմերին ու տեղանուններին, նորագյուղիների սովորություններին, մականուններին, գյուղում տարածված խաղատեսակներին ու զվարճախոսություններին):

64. Գասպարյան Լ., **Հյուսվածքագործությունը Սյունիք-Արցախի տարազում**, «Ազգ և ժառանգություն» համահայկական երիտասարդական գիտաժողով. *Ստեփանակերտ, 26-30 սեպտեմբերի, 2006թ.*», *Ստեփանակերտ, 2006, էջ 169-171*

(Հավաստելով, որ հայկական տարազը ձևավորվել է լեռնաշխարհի աշխարհագրական դիրքին, կլիմայական պայմաններին, ժողովրդի տնտեսական վիճակին ու ճաշակին համապատասխան՝ հեղինակը անդրադառնում է Սյունիք-Արցախ պատմաագագրական շրջանի հյուսվածքաբանությանը: Առանձին ենթաբաժնով ներկայացվում է գուլպայագործության բնագավառը՝ գուլպաների տեսակները, գործելու եղանակներն ու հաջորդական քայլերը, գույների ընտրությունն ու նախշատեսակները են):

65. Գրիգորյան Գ., **Մոխրաթաղ**, *Ստեփանակերտ, 2004, 80 էջ*

(Բաղկացած է երկու մասից: Առաջին մասում առանձին ենթաբաժիններով ներկայացվում են Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի պատմությունը, «Ինը մաս» եկեղեցին, և «Հենգ շեն» բնակատեղին, նոր Մոխրաթաղն ու նրա հիմնադրման դրդապատճառները, գյուղի ղեկավար մարմինները, կրթությունն ու մշակույթը, գյուղացիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան շարժմանը: Երկրորդ մասում հանգանանորեն նկարագրվում են գյուղի տոհմերն ու նրանց ծագումնաբանությունը):

66. Գրիգորյան Ժ., **Ուլուբաբ**, *Ստեփանակերտ, 2011, 116 էջ*

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Ասկերանի շրջանի Ուլուբաբ գյուղի (ներկայումս անմարդաբնակ) պատմությունը, հին բնակատեղիները, տեղանունները՝ անտառները, ժայռերը, քարանձավները, այգիները, աղբյուրները, նշանավոր ծառերը, զետերը, եկեղեցիները, սարերը, տարաբնույթ լուսանկարներ՝ անդրադառնալով նաև գյուղի նիստ ու կացին):

67. Գրիգորյան Ֆ., **Հայկական ազգային տարազ**, *Երևան, 2011, 256 էջ*

(Եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագիրք: Առաջաբանում տրվում են հայկական տարազի պատմության ու կառուցվածքային առանձնահատկությունների ընդհանրական բնութագրերը: Բուն ժողովածուն ընդգրկում է 18-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարասկզբի հայ ազգագրական տարբեր շրջանների տղամարդկանց, կանանց, երեխաների, ինչպես նաև՝ հոգևորականների ու ֆիդայիների ազգային տարազի՝ հեղինակի պատկերագրումները: Արցախը ներկայացնող շարքում (NN46-53) ներկայացված են «Շուշեցի կինը», «Տատիկը թոռնիկի հետ», «Մայր ու աղջիկը տեղական տարազով», «Կինն ամենօրյա զգեստով», «Կինը տարազի լրիվ համալիրով», «Կինն ավանդական տարազով», «Կնոջ ավանդական տարազ», «Գանձակեցի նորահարսը» նկարները: Ժողովածուին կցված են նաև նկարների ցանկ ու տերմինաբանական բառարան):

68. Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., **Շուշին 1992-2002թթ. հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազգագրական ակնարկ)**, *Երևան, 2004, 96 էջ*

(Դաշտային ազգագրական, վիճակագրական նյութերի և մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում հեղինակները ներկայացնում են Շուշի քաղաքի վերաբնակեցման գործընթացները: Առանձին գլուխներով և բաժիններով՝ «Շուշին հակասությունների քաղաք», «Պատմության հակադիր մեկնարանությունները», «Քաղաքը սահմանով և առանց սահմանի»,



«Շուշին ընդդեմ հայերի», «Ժողովրդագրական նկարագիրը (1992-2002)», «Բնակչության ներթնիկ խմբերը», «Տարաբնակեցման փուլերը», «Ընտանիքների կազմը», «Մեռատարիքային կազմը», «Կենսապահովման եղանակները», «Բնակեցման ելակետային պայմանները», «Բնակեցումը», «Բնակարանները», «Տնտեսությունը և զբաղմունքները», «Հասարակական-մշակութային գործոնները», «Վերաբնակության ավանդական գործոնները», «Բռնագաղթը վերաբնակության հասարակական-մշակութային գործոն», «Բնակավայրի իրավունքը», «Առաջին ներհամայնական կապերը», «Հայկականության վերականգնման սկիզբը», «Ապագայի ծրագրերի ընդգրկումը», «Փողոցների վերանվանումը», «Հուշարձանները», «Հայկական գերեզմանոցները», քննության են առնվում Շուշիի պատմական անցյալն ու դրան վերաբերող տեսակետները, 1992-2002թթ. քաղաք վերադարձող հայ բնակչության ժողովրդագրական ցուցանիշները, կենսապահովման պայմանները, հասարակական-մշակութային գործոնները, հայկականության վերականգնման առանձնահատկությունները: Ոսումնասիրությունն ունի նաև ներածական մաս, ռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներ, գրականության ցանկ):

69. Դաբալյան Ա., **Շուշիի հասարակական կյանքն ըստ «Կովկասյան տարեգրքի»**, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 330-334

(Ներկայացվում են 1849 թվականից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը Թիֆլիսում Կովկասի փոխարքայի գրասենյակի կողմից հրատարակված «Кавказский календарь» բազմահատոր տարեգրքի տարբեր համարներում Շուշի քաղաքին վերաբերող նյութերը, որոնք, ըստ հեղինակի, արդի հետազոտողին հնարավորություն են տալիս վերականգնելու ռուսական կայսրության կազմում Շուշիի զարգացման հիմնական փուլերը: Առանձնակի անդրադարձ է կատարվում քաղաքի բնակչության, առևտրի, տնտեսական կյանքի առանձնահատկությունների, կրթամշակութային հաստատությունների, հարյուրավոր շուշեցիների մասին տեղեկություններ պարունակող նյութերին):

70. Թադևոսյան Ա., **Արցախյան մի գորգի իմաստաբանական քննության փորձ**, «Հայ մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ: Գիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ», Երևան, 1992, էջ 9-10

(Շեշտելով գորգի՝ կենցաղային և գեղագիտական արժեքից բացի նաև ծիսական-արքայական իմաստ ունենալը՝ հեղինակը ներկայացնում է ՀՊԹ-ում պահվող արցախյան 19-րդ դարի մի գորգ: Քննության են առնվում վերջինիս կառուցվածքի և հորինվածքի հիմնական տարրերը (վիշապանախշեր, տիեզերական ծառ, տիեզերական սյուն, տիեզերական հավասարակշռություն և կարգ, երկվորյակներ խորհրդանշող նախշեր, սև-սպիտակ գունային հակադրամիասնություն, երիզներ են):

71. Թադևոսյան Ա., **Դարբինը հայոց ծիսակարգում (Պատմաազգագրական ուսումնասիրություն)**, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, հ.23, էջ 99-184

(Պատմաազգագրական հարուստ նյութի հիմքի վրա հեղինակը ներկայացնում է հայ ժողովրդական դարբնոցային մշակույթի ծիսական բնագավառի ուսումնասիրությունը՝ առանձին գլուխներով քննության առնելով դարբնի տեղն ու դերը համայնքի տարածաժամանակային կառուցվածքում, համայնքի ծիսական կյանքում, խորհրդանշանային ենթատեքստը դարբնոցային մշակույթում: Հայ ազգագրական այլ շրջանների թվում անդրադարձ է կատարվում նաև Արցախին):

72. Թադևոսյան Ա., **Դարբնի ծիսական կերպարի իմաստաբանությունը արցախցիների հավատալիքների համատեքստում (XIX-XX դդ.)**, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն.



անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. *Զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 321-324*

(Ներկայացվում է Արցախի մի շարք գյուղերում մինչև 20-րդ դարի սկիզբը պահպանված՝ Նավասարդի տոնակատարությունների հետ կապված մի ավանդույթ՝ որպես չարխափան միջոց դարբինների կողմից զնդանին հարվածներ հասցնելու երևույթը, ինչպես նաև հղի կանանց համար «*ուրբաթարուր*» մատանիներ պատրաստելու արարողությունը: Այն համեմատելով հայ ազգագրական այլ շրջանների ու համահայկական տարածում ունեցող Արտավազդի շղթայման նմանատիպ ծեսերի հետ՝ հեղինակը հավաստում է, որ արցախյան ժողովրդական հավատալիքները մասն են կազմում համահայկական հավատալիքների):

73. Թադևոսյան Հ., *Հին ու նոր Ավետարանոց, Ստեփանակերտ, 2006, 142 էջ*

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Ասկերանի շրջանի պատմական Ավետարանոց (Չանախչի) գյուղի համառոտ պատմությունը, սահմանները, աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, անտառները, բուսական աշխարհը, լեռները, գետերը, աղբյուրները, եկեղեցիները, դպրոցը, հիվանդանոցը, մետաքսակարժական ֆաբրիկան, տեղեկություններ անվանի ավետարանոցցիների մասին, բնակչության կենցաղը տարբեր ժամանակաշրջաններում, մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյապայքարին ևն: Աշխատության մեջ ընդգրկված են նաև թեմային առնչվող տասնյակ լուսանկարներ):

74. Թաթևիկյան Վ., *Արցախի դերը հայկական գորգագործության ավանդույթների պահպանման ու զարգացման գործընթացներում, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006 թ., Ստեփանակերտ», Երևան, 2006, էջ 207-208*

(Կարևորելով Արցախի դերը հայկական գորգագործության ավանդույթների պահպանման ու զարգացման գործընթացներում՝ հեղինակը ներկայացնում է արցախյան գորգերի յուրահատկությունները և հավաստում, որ Արցախն ընդհուպ մինչև 20-րդ դարի կեսերը պահպանել է տոհմիկ հայկական գորգագործությանը բնորոշ տիպերը, որոնք կապված են առհասարակ գորգագործության՝ իբրև ոստայնագործության առանձին ճյուղի առաջացման վաղագույն շրջանի հետ):

75. Թաթևիկյան Վ., *Արցախի հատուկ խորհրդիմաստ արտահայտող ուղեգորգերը, «1978-1979թթ. ազգագրական և բանահյուսական դաշտային հետազոտությունների արդյունքները: զեկուցումների թեզիսներ. մայիսի 5 -7, 1980», Երևան, 1980, էջ 13-14*

(Հավաստելով, որ արցախյան ուղեգորգերը, որպես բնակչության կենցաղի անքակտելի մաս, ունեցել են վաղնջագույն արմատներ, հեղինակը համառոտ ներկայացնում է դրանց կառուցվածքը, հորինվածքը, զարդագոտիները, զարդանախշերի տեսակները, հնագույն հավատալիքների ևն հետ կապված խորհրդիմաստները: Ըստ հեղինակի՝ բոլոր այդ հանգամանքներն ուղեգորգերը դարձնում են գորգարվեստի և առհասարակ ժողովրդական արվեստի ուսումնասիրության համար խիստ շահեկան և ուրույն մի ճյուղ՝ կարևոր դարձնելով դրանց բոլոր տարբերակների վավերագրումն ու հավաքումը):

76. Թաթևիկյան Վ., *Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, 208 էջ*

(Պատկերագիրք: Առաջաբանում հեղինակը անդրադառնում է հայ, մասնավորապես արցախյան գորգարվեստի պատմությանն ու առանձնահատկություններին, գորգերի տեսակներին, դրանց ծագման, առնչությունների, նախշատեսակների, խորհրդանշանների և այլ հարցերի: Բուն ժողովածուում ներկայացվում են հեղինակի տասնամյակների ընթացքում Արցախի տարբեր բնակավայրերում, ինչպես նաև հարևան շրջաններում կատարած ուսումնասիրությունների ընթացքում լուսանկարված գորգերի զանազան տեսակների (վիշապագորգ, վարսանդագորգ,



արծվագորգ, անցումային տիպի գորգ, արևագորգ, խնձորեակ, թռչնաբուն, հարսանեկան, ցլագորգ, արծվենշան, խայլի, խաչ խորան, գուհար, արև-ծիլ, փեթակ, Դիզակ, աստղ-հավք, թագ-գորգ, պատկերագորգ ևն) ու որոշ կարպետների (թելթող, խոյակարպետ, ցլակարպետ, մեղու, կրկենի ևն) գունավոր լուսանկարները՝ համապատասխան մեկնաբանություններով: Ժողովածուի վերջում տրվում են ռուսերենով և անգլերենով ամփոփումներ ու լուսանկարների ցանկեր: Ժողովածուին կցված է նաև օգտագործված գրականության ցանկ):

77. Թադիադյան Մ., *Ճանապարհորդություն ի Հայս, Կալկաթայ, 1847, 382 էջ*

(Հեղինակը ներկայացնում է 1819, 1821-1823 թվականներին հայկական տարբեր նահանգներում, այդ թվում՝ Արցախում կատարած իր շրջագայություններից ստացած տպավորությունները՝ անդրադառնալով տարբեր բնակավայրերի, վանքերի, հուշարձանների, գետերի, լեռների նկարագրությանը, Շուշի քաղաքի առևտրական տներին, արցախահայության տնտեսական զբաղմունքին, հաղորդում ազգագրական բնույթի այլ տեղեկություններ: Ուղեգրությունը ընդգրկված է նաև Մ. Թադիադյանի «Ուղեգրություններ, հողվածներ, նամակներ, վավերագրեր» գրքում /*Երևան, 1975, էջ 23-264*):

78. Թեմուրձյան Վ., *Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1955, 234 էջ + 43 ներդիր*

(Հեղինակը առանձին գլուխներով ներկայացնում է հայկական գորգագործության պատմությունը, տնայնագործական գորգագործությունը Հայաստանում և հարևան երկրների հայաբնակ վայրերում, գորգագործության վերածնունդը Սովետական Հայաստանում, բազմաթիվ լուսանկարներ: Հայկական պատմաազգագրական տարբեր շրջանների թվում անդրադարձ է կատարվում նաև Արցախի գորգագործական մշակույթին):

79. Լալայան Ե., *Գանձակի գաւառ. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1899, Ե գիրք, էջ 213-360, 1900, Զ գիրք, էջ 231-382, 1901, VII- VIII գիրք, էջ 255-270*

(Առանձին բաժիններով և ենթաբաժիններով ներկայացվում են Լեռնային Ղարաբաղին հարակից Գանձակի գավառի (որն ընդգրկվում է պատմական Արցախի տարածքում) սահմանները, համառոտ պատմությունը, մելիքությունները, տեղագրությունը, կլիման, բուսական ու կենդանական աշխարհը, Գանձակ քաղաքը, հայկական նշանավոր գյուղերը, նշանավոր վանքերն ու բերդերը, ազգաբնակչությունը, բնակարանը, զգեստը և զարդը, ընտանեկան բարքն ու կյանքը, հավատքը, նշանավոր տոները, վիճակի երգերը, գերմանական գաղութները, դուխաբորների ու մալականների գյուղերը, տեղում ապրող մալականների ազգագրական նկարագիրը: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև ազգագրական բնույթի որոշ լուսանկարներ և գավառի քարտեզը: Ժողովածուն Ա. Նազինյանի խմբագրությամբ վերահրատարակվել է հետագայում՝ ընդգրկվելով Ե. Լալայանի հինգհատորյակում /«*Երկեր*», *հատոր 2, Երևան, 1988*):

80. Լալայան Ե., *Զանգեզուր. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1898, Դ գիրք, N2, էջ 7-116*

(Հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Արցախին հարակից Զանգեզուրի գավառի Զանգեզուրի ոստիկանական շրջանի սահմանները, տեղագրությունը, մելիքությունները, նշանավոր բնակավայրերը, վանքերը, բերդերը, լեռները, գետերը, բուսական ու կենդանական աշխարհը, հանքերը, ազգաբնակչությունը, բնակարանը, զգեստը և զարդը, ընտանեկան կյանքն ու բարքը, տարածված հիվանդություններն ու դրանց բուժման ժողովրդական միջոցները, նշանավոր տոները, ժողովրդական ու վիճակի երգերը ևն: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև ազգագրական բնույթի լուսանկարներ):



81. Լալայան Ե., *Միսիան. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար*, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1898, Գ զիւրք, N1, էջ 105-207

(Առանձին բաժիններով ներկայացնում են Արցախին հարակից Զանգեզուրի գավառի Միսիանի ոստիկանական շրջանի սահմանները, տեղագրությունը, Սյունյաց մետրոպոլիտությունը, մելիքությունը, նշանավոր գյուղերը, վանքերը, բերդերը, լեռները, գետերը, ազգաբնակչությունը, բնակարանը, զգեստը և զարդը, ամուսնության, ծննդի, մահվան ու թաղման հետ կապված սովորություններն ու ծեսերը, ընտանեկան հարաբերությունները, հիվանդությունն ու բժշկությունը, նշանավոր տոները, ժողովրդական երգերը, որոշ ավանդություններ են: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև ազգագրական բնույթի լուսանկարներ):

82. Լալայան Ե., *Վարանդա. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար*, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1897, Բ զիւրք, էջ 5-244, *Վարանդա. Նշանաւոր տօներ*, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1898, Գ զիւրք, էջ 338-349

(Հիմնականում իր, ինչպէս նաև իր հանձնարարությամբ այլ մտավորականների (Լ. Աթաբեկյան, Ղ. Տեր-Ղազարյան, Վ. Յ., Բ. Ա., Յ. Տեր-Հովհաննիսյան)՝ պատմական Վարանդա գավառի բնակավայրերից հավաքած ու տպագիր նյութերի ուսումնասիրության արդյունքում հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է գավառի ազգագրական նկարագիրը: Ուսումնասիրությունը սկսվում է «Մի երկու խոսք Վարանդայի պատմական անցեալի մասին» (էջ 5-8) բաժնով, որտեղ տրվում է գավառի համառոտ պատմությունը, առանձին անդրադարձ է կատարվում Ամարաս վանքին: «Վարանդայի տեղագրութիւնը» բաժնում (էջ 9-53) առանձին ենթաբաժիններով ներկայացվում են գավառի սահմանները, լեռները, դաշտերը, գետերը, լճերը, աղբյուրները, քարայրերը, կլիման, բուսական ու կենդանական աշխարհը, հանքերը, Շուշի քաղաքը և նշանավոր գյուղերը, նշանավոր վանքերը: «Ստատիստիկական տեղեկութիւններ (Շուշու ամբողջ գաւառի մասին)» բաժնում (էջ 54-76) վիճակագրական տեղեկություններ են հաղորդվում Շուշի քաղաքի և ամբողջ գավառի մասին: Առանձին աղյուսակներով ու համապատասխան վերլուծություններով ներկայացվում են 1886 և 1895թթ. բնակչության թիվն ու խտությունը, բնակչությունն ըստ ազգությունների, դավանությունների, բնակության տեղի (քաղաքում ու գավառում), բնակչության շարժը՝ ամուսնությունները, ծնունդները, մահացությունը, հայ բնակչության աճը: «Տնտեսական դրութիւն» բաժինը (էջ 77-101) նվիրված է բնակչության տնտեսական զբաղմունքի՝ երկրագործության, այգեգործության, անասնապահության, շերամապահության, մեղվաբուծության, ձկնորսության, որսորդության, արհեստների, գործարանային արտադրության, առևտրի քննությանը: «Լուսավորութիւն» բաժնում (էջ 102-112) հեղինակն անդրադառնում է դպրոցներին, գրադարաններին, պարբերական հրատարակություններին, թատրոնին, տպարաններին, ոճրագործությանը, փոստին՝ քննության արդյունքները ներկայացնելով առանձին աղյուսակներով: «Ընտանեկան բարք» (էջ 113-186) խորագրի տակ առանձին բաժիններով՝ «Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ», «Տղաբերք և կնունք», «Ընտանեկան կեանք», «Հիվանդութիւն և բժշկութիւն», «Մահ, թաղումն և մեռելոց», «Հոգու և հանդերձեալ կեանքի մասին», հանգամանորեն քննության են առնվում ընտանեկան բարքերն ու ծեսերը: «Հավատք» բաժնում (էջ 187-244) հեղինակը քննության է առնում լեռների, քարերի, կրակի, ջրի, ծառերի, կենդանիների, լուսատուների պաշտամունքի ձևերը, անդրադառնում նաև քաջքերին և սատանաներին, կախարդությանն ու սնոտիապաշտությանը: Աշխատության երկրորդ մասը՝ «Նշանաւոր տօներ», նվիրված է 19-րդ դարի վերջերին Վարանդայում տարածված տոների ու դրանց հետ կապված գանազան ծեսերի, կերակրատեսակների, խաղատեսակների և այլ հանգամանքների նկարագրությանը: Կարևոր նշանակություն ունեն նաև ուսումնասիրության մեջ ընդգրկված ազգագրական բնույթի լուսանկարներն ու բանահյուսական նյութերը: Ժողովածուն Ա. Նազինյանի խմբագրությամբ վերահրատարակվել է հետագայում՝ ընդգրկվելով Ե. Լալայանի հինգհատորյակում /«Երկեր», հատոր 2, Երևան, 1988/):



83. Լեո, *Ուխտավորի հիշատակարանը*, «Երկերի ժողովածու», ութերորդ հատոր, Երևան, 1985, էջ 7-31

(Հեղինակը ներկայացնում է 1884թ. հուլիսի 12-17-ը Շուշի քաղաքից դեպի Դիզակի գավառի (այժմ՝ Հաղարյուծի շրջան) Դիզակայտ լեռը կատարած ճանապարհորդությունը: Առանձին բաժիններով նկարագրվում են այդ ճանապարհին գտնվող Մեծ Թաղլար գյուղը, Գտիչ վանքն ու նրա մերձակայքում գտնվող հին բնակատեղին, նշանավոր ուխտավայր հանդիսացող Դիզակայտ լեռն ու նրա կատարին գտնվող Կատարո վանքը, Զկռատափ վայրը, Օխտը դռնի եկեղեցին ևն: Անդրադարձ է կատարվում նաև տեղի բնակչության կենցաղին, նրանց մեջ տարածված որոշ սովորությունների ու հավատալիքների: Աշխատանքն առաջին անգամ հրատարակվել է առանձին գրքով /Բաբախանյան Ա., *Ուխտավորի հիշատակարանը*, Շուշի, 1885/):

84. Լեո, *Իմ հիշատակարանը*, «Երկերի ժողովածու», ութերորդ հատոր, Երևան, 1985, էջ 32-178

(Ճանապարհորդական նոթեր: Բաղկացած է չորս մասից: Առաջին մասում՝ «Սյունիքից մի անկյուն», հեղինակը ներկայացնում է իր ճամփորդությունը Շուշի քաղաքից դեպը Սյունիք՝ նկարագրելով այդ ճանապարհին գտնվող Թթու ջուր հանքային աղբյուրը, Պեխի աղբյուրը, Ղարաղշաղ գյուղն ու նրա մերձակայքում գտնվող Պարոն պիժ ուխտավայրը, Աբդալար իջևանատունը, Հաքարու գետը, Զաբուղ գետն ու նրա ափին գտնվող համանուն թրքաբնակ գյուղը, Տեղ, Քարաշեն, Գորիս գյուղերը, Ուչ թափալար լեռնադաշտը, Որոտնա ձորը, Սատանի կամուրջը, Տաթևի վանքը, Հալիձոր և Ծնհեր գյուղերը, երկրորդ մասում՝ «Թարթար և Մռավ», նկարագրում է Մարտակերտի շրջանում իր կատարած ճամփորդությունը՝ Թարթար և Թրղի գետերը, Մոռվ լեռը, Մարտակերտ, Մոխրաթաղ, Մեծ շեն, Եղակեր, Տոնին շեն, Մադաղիս, Մարաղա գյուղերը, Ինն մաս, Երից մանկանց, Հարթապտուկ, Եղիշե Առաքյալի վանքերը, Զրաբերդ և Չալաղան Յուզբաշու բերդերը, Մելիք Հաթամի ապարանքի ավերակները, երրորդ մասում՝ «Շահբուլաղ», Տիգրանակերտի տարածքում գտնվող Շահբուլաղ աղբյուրը, չորրորդ մասում՝ «Ճանապարհի մտքեր ու տպավորություններ», Խաչենի Փրջամալ, Վարազաբուն, Սեյդիշեն, Ուլուբաբ, Ռև, Ղշլաղ, Բալլուջա, Խնածախ գյուղերը, Գանձասարի, Հավապտուկ, Սուրբ Հակոբա, Սուրբ Գևորգ վանքերը, Դարպասներ բնակատեղին, Կաչաղակաբերդը, Ցեխ ձոր վայրը, Խաչենագետը, Քոլատակի գետը ևն: Հեղինակը հաճախ անդրադառնում է նաև տեղի բնակչության նիստ ու կացին, սովորություններին, բարբառին: Աշխատանքն առաջին անգամ հրատարակվել է առանձին գրքով /Բաբախանյան Ա., *Իմ հիշատակարանը*, Շուշի, 1890/):

85. *Լեոնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները Մ. Մ. Գրիգորյան-Սպանդարյանի)*, Երևան, 1971, 478 էջ

(Ժողովածուն ընդգրկում է բանասեր-բանահավաք Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի՝ 1920-60-ական թվականներին Լեոնային Ղարաբաղի տասնյակ բնակավայրերից Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) գրառած բանահյուսական բազմաժանր նյութեր: Ժողովածուին կցված են «Ծանոթագրություններ» (էջ 437-454), որտեղ տրվում են նյութերի գրառման, հարակից այլ հանգամանքների ու բանասացների մասին տեղեկություններ, ինչպես նաև՝ ջանգյուլումի երգերի հետ կապված համբարձման ծիսական տոնակատարության նկարագրությունը):

86. *Լեոնային Ղարաբաղի Հանրապետության աստլաս*, Երևան, 2009, 96 էջ

(Հիմք ընդունելով 2007-2008թթ. երկու հատորով տպագրված «Հայաստանի ազգային աստլասի» ստեղծման սկզբունքներն ու փորձը՝ հեղինակները սույն աստլասի շուրջ 70 քարտեզների, տեքստերի ու գծապատկերների միջոցով համակողմանի տեղեկություններ են հաղորդում ԼՂՀ տարբեր բնագավառների վերաբերյալ: Ազգագրական տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն հանրապետության աշխարհագրական դիրքին, հողերին, բուսականությանը, կենդանական աշխարհին, բնության հուշարձաններին, բնակչության թվին, էթնիկ տեղաշար-



ժերին, ժողովրդագրական փոփոխություններին, տարարնակեցմանը, տնտեսության տարբեր ճյուղերին, 19-20-րդ դարերի երկրագործական և անասնապահական, տնայնագործական և արհեստագործական, գորգագործական մշակույթին, ուտեստներին և ըմպելիքին, տարազին, պատմամշակութային հուշարձաններին և նվիրված բաժինները՝ համապատասխան տեքստերով, քարտեզներով, լուսանկարներով ու մեկնաբանություններով: Ատլասը հրատարակվել է նաև ռուսերեն */Атлас Нагорно-Карабахской республики, Ереван, 2019, 96 с./* և անգլերեն */Atlas of the Nagorno-Karabagh republik, Erewan, 2009, 96 p./* լեզուներով):

87. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Нагорно-Карабахская республика. Nagorno-Karabakh republik. 15, Երևան, 2006, 96 էջ

(Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-րդ տարեդարձին նվիրված եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագիրք: Համառոտ ներկայացվում են ԼՂՀ աշխարհագրական բնութագիրը, պատմությունը, արտաքին քաղաքականությունը, պաշտպանության բանակը, տնտեսությունը, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի համակարգերը, տեղեկություններ նշանավոր արցախցիների մասին, պատմամշակութային հուշարձանները, բարձրագույն պարզկները ևն: Ընդգրկված են նաև բազմաթիվ, այդ թվում՝ ազգագրական բնույթի որոշ լուսանկարներ):

88. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մարդահամարի արդյունքները (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ցուցանիշները), Ստեփանակերտ, 2006, 326 էջ

(Առաջին մասում ընդհանուր տեղեկություններ են տրվում ԼՂՀ 2005թ. մարդահամարի մասին: 2-րդ մասում առանձին բաժիններով և աղյուսակներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ներկայացվում են բնակչության բաշխումն ըստ վարչատարածքային բաժանման, մշտական բնակչության ժողովրդագրական բնութագրերը, կրթական մակարդակը, տնտեսական բնութագրերը, ազգային կազմը, տեղաշարժերը, տնային տնտեսությունների քանակն ու կազմը, բնակչության պայմանները):

89. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի մարդահամարի արդյունքները (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ցուցանիշները), Ստեփանակերտ, 2016, 290 էջ

(Առաջին մասում ընդհանուր տեղեկություններ են տրվում ԼՂՀ 2005թ. առաջին մարդահամարի ու 2015թ. մարդահամարի կազմակերպման և անցկացման մասին: 2-րդ մասում առանձին բաժիններով և աղյուսակներով ներկայացվում են բնակչության թվաքանակն ըստ վարչատարածքային բաշխվածության, մշտական բնակչության ամուսնական կարգավիճակն ու կանանց ծնելիությունը, կրթական մակարդակը, տնտեսական բնութագրերը, ազգային կազմը, լեզուներին տիրապետելը և կրոնական դավանանքը, տեղաշարժը, տնային տնտեսությունների քանակն ու կազմը, բնակարանային պայմանները):

90. Լիսիցյան Ս., Չանգեզուրի հայերը, Երևան, 1969, 339 էջ + 133 ներդիր

(Մենագրությունը նվիրված է նախախորհրդային Չանգեզուրի հայ բնակչության հասարակական և մասնավոր կենցաղի ուսումնասիրությանը: Ներածական մասում ներկայացվում է վարչական բաժանումը, ֆիզիկաաշխարհագրական բնութագրությունը, եղած մատենագիտական աղբյուրները, ընդհանուր քարտեզը, անվան ստուգաբանությունը: Բուն աշխատության մեջ առանձին բաժիններով հանգամանորեն քննվում և նկարագրվում են բնակչության, բնակավայրերի և շենքերի, զգեստի, զբաղմունքների, հացահատիկային հումքի վերամշակման, անասնապահության հումքի վերամշակման, մետաղագործության, ամանների, կերակրատեսակների, փոխադրության միջոցների, ընտանեկան կյանքի, համայնական կյանքի, հավատալիքների հետ կապված բազմաթիվ հարցեր՝ հաճախ համեմատաբար անդրադառնալով նաև հարևան Արցախի համանման երևույթներին և վերհանելով ընդհանրություններն ու տարբերությունները: Աշխատանքը



տությանը կցված են անձնանունների, աշխարհագրական անունների և ազգագրական տերմինների ցանկեր, Զանգեզուրի քարտեզը, Մելիք-Փարսադանյանների տոհմաճառը, բազմաթիվ լուսանկարների տախտակներ):

91. Լիսիցյան Ստ., *Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, էջ 9-84

(Աշխատությունը սկսվում է «Հեղինակի կողմից» նախաբանով (էջ 9-10), որտեղ տեղեկություններ են հաղորդվում ուսումնասիրության ստեղծման հանգամանքների ու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարբեր գյուղերում 1924թ. ամռանը կազմակերպված գիտարշավի ընթացքի մասին: Առաջաբանին հետևում է «Աշխարհագրական ակնարկ» բաժինը (էջ 11-15)՝ առանձին ենթաբաժիններով ներկայացնելով մարզի սահմանները, ռելիեֆը, գետերը, անտառները, բաժանումն՝ ըստ շրջանների: Բուն ժողովածուն կազմված է հինգ գլուխներից: Առաջին գլխում՝ «Բնակչությունը» (էջ 16-26), հանգամանորեն քննության են առնվում բնակչության էթնիկ կազմն ու սոցիալական խմբավորումները, հատկապես ռուսական գերիշխանության ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում դասային հարաբերությունների արմատական փոփոխությունները: Երկրորդ՝ «Քաղաքը և գյուղը» գլխում (էջ 27-37) հեղինակը կարևոր տեղեկություններ է տալիս Շուշի և Ստեփանակերտ քաղաքների, գյուղերի, տների, նրանց կահավորման, ամանեղենի, ուտեստի, ազարակների, արցախցիների արտաքին տեսքի, սանրվածքի, հագուստի ևն մասին: Ընտանեկան ու հասարակական հարաբերությունների, բարքերի ու ծեսերի քննությանն է նվիրված երրորդ՝ «Ընտանիքը» գլուխը (էջ 38-52), որտեղ ներկայացվում են ընտանիքի հոր մահից հետո և նույնիսկ նրա կենդանության օրոք ունեցվածքի բաժանման ձևերը, ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, նրանցից յուրաքանչյուրի տեղն ու դիրքը ընտանիքում, հեղափոխությունից հետո նոր կարգերի հաստատման արդյունքում առաջացած ընտանեկան հարաբերությունների փոփոխությունները, հարևանների փոխհարաբերությունները, փոխօգնության ձևերը, հարսանիքի, կնունքի, մահվան, թաղման, հոգեհացի և դրանց հետ կապված տարբեր ծեսերի նկարագրությունները: Չորրորդ՝ «Հավատալիքները» գլխում (էջ 53-74) առանձին բաժիններով ու ենթաբաժիններով ներկայացվում են սրբացված լեռնազագագաթները, պուրակները, աղբյուրները, նահատակները, օջախները, կենդանիների գերեզմանները, նրանց հետ կապված ավանդությունները, հասարակական ու մասնավոր մատաղները, մոզական հնարները, ժամանակին տարածված տոները ևն: Հինգերորդ՝ «Լեզուն և արվեստը» գլխում (էջ 67-73) տրվում է Ղարաբաղի բարբառի, երեծշտության ու պարերի համառոտ նկարագրությունը: Որպես վերջաբան՝ ներկայացվում են 1920-ական թվականների կեսերից մինչև 1930-ական թվականների կեսերը երկրամասի հայերի կյանքում, կենցաղում, պատկերացումներում տեղի ունեցած մեծ փոփոխությունները: Աշխատության մեջ ընդգրկված են նաև հեղինակի անձնական արխիվից, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու Հայաստանի պատմության պետական թանգարանի ֆոնդերից ընտրված համապատասխան չափագրություններ, զարդանկարներ, լուսանկարներ, որոնց ընտրությունը, ինչպես նաև աշխատության հրատարակման հետ կապված գիտատեխնիկական աշխատանքները կատարել է Ս. Լիսիցյանի թոռնուհին՝ ազգագրագետ Լ. Վարդանյանը, որի խմբագրությամբ է լույս տեսել նաև աշխատության ռուսերեն հրատարակությունը /Лисициан С., *Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк, Ереван, 1992*/: Վերջինիս կցված են նաև խմբագրի կողմից կազմված ազգագրական տերմինների բառարան և աշխարհագրական անունների, պատմական հուշարձանների ու սրբավայրերի ցանկեր):

92. Խաչատրյան Ժ., *Խաղաղավի (դիվանհարության) «բուժումը» պարով*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1980, N10, էջ 89-96

(Նկարագրվում է հայ իրականության մեջ, հատկապես Զանգեզուրում և Ղարաբաղում մինչև 20-րդ դարի կեսերը հայտնի *խաղաղավ* հիվանդությունը, որը համարվել է դիվանհարություն և ընդունվել ու գիտակցվել որպես ոգեպաշտություն՝ անիմիստական հասկացողությունների



մնացորդներ, ավելի ուշ՝ վերապրուկներ: Հիմք ընդունելով հայ մատենագիտական և այլ աղբյուրների տվյալներն ու դրանք համեմատելով ուրիշ ժողովուրդների մոտ տարածված համապատասխան երևույթի նկարագրությունների հետ՝ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է հիվանդության պատճառներն ու նրա՝ պարի միջոցով բուժելու գործընթացը):

93. Խաչատրյան Ս., *Արցախյան գորգերի վերածնունդը «Ղարաբաղ Կարպետ» ընկերության ձեռնարկություններում. Renaissance of Artsax rugs in the enterprises of «Karabakh Carpet» company, «Հայկական հանգույց. գորգարվեստի ավանդույթները. միջազգային գիտաժողով, Երևան, 20-22 նոյեմբերի, 2013. զեկուցումներ», Երևան, 2016, էջ 188-194*

(Հեղինակը մանրամասներ է հաղորդում (հայերենով և անգլերենով) Արցախի Հանրապետությունում հիմնադրված «Ղարաբաղ կարպետ» ընկերության գործունեության մասին, որը գորգագործական ֆաբրիկաներ ունի Ստեփանակերտ ու Շուշի քաղաքներում և նպատակ է հետապնդում վերարտադրել արցախյան հին գորգերը: Ներկայացվում են նաև ընկերության թողարկած որոշ գորգերի լուսանկարներ):

94. Խառատրյան-Առաքելյան Հ., *Հայ ժողովրդական տոները (երկրորդ, լրամշակված հրատարակություն), Երևան, 2005, 360 էջ*

(Պատմաագագրական ու բանահյուսական հարուստ նյութի հիմքի վրա հեղինակն առանձին բաժիններով հանգամանորեն քննում է հայ ազգագրական տարբեր շրջաններում, այդ թվում՝ Արցախում *Ամանոր, Ծնունդ, Ջրօրհներ, Տյառնընդառաջ, Սուրբ Սարգիս, Բարեկենդան, Մեծ պաս, Ծաղկագարդ, Ջատիկ, Կանաչ կիրակի, Համբարձում, Վարդավառ, Խաղողօրհներ, Սուրբ խաչ, Նավասարդ* տոների դրսևորումները, սրբերի տեղը հայ ժողովրդական տոնակատարություններում ու նրանց կերպարների ժողովրդական ընկալումները, ներկայացնում Վարդավառի տոնակատարության մոտավոր սցենարը: Վերջում տրվում են անձնանունների, աստվածների ու սրբերի անունների, տեղանունների, տոնանունների, տոների հետ կապ ունեցող տերմինների, հասկացությունների, էթնանունների, ցեղանունների, օգտագործված գրականության ցանկեր: Աշխատության մեջ ընդգրկված են նաև համապատասխան տոների հետ կապված տասնյակ պատկերներ, որոնց մեծ մասի հեղինակն է նկարչուհի, արվեստագետ Լուսիկ Ագուլեցի Մամվելյանը: Հեղինակը նշված հարցերին անդրադարձել է նաև իր մեկ այլ աշխատության մեջ /*Տոնը և տոնահանդեսի մշակույթը Հայաստանում, Երևան, 2009, 356 էջ*:/

95. Խառատրյան Ջ., *Ամուսնական հնագույն ավանդույթների արտացոլումը դարաբաղյան բարբառում, «Հայ մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ: Գիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ», Երևան, 1992, էջ 11-13*

(Հավաստելով, որ ամուսնահարսանեկան ավանդույթը բնորոշող հնամենի շատ տարրեր հաճախ հնարավոր է բացահայտել լեզվական, հատկապես բարբառային նյութերի շնորհիվ՝ հեղինակը քննության է առնում Ղարաբաղի բարբառում գործածվող այդ բնույթի որոշ բառեր: Ըստ եզրահանգման՝ հայկական ծեսի մեջ հնագույն հնդեվրոպական լեզվամշակութային ավանդույթների բացահայտումը հնարավոր է դառնում բացառապես դարաբաղյան բարբառում հայտնի տերմինների ներառումով, ինչը ևս մեկ անգամ վկայում է արցախյան պատմամշակութային հանրույթի՝ որպես հայ էթնիկ մշակույթի հնագույն շերտեր կրողի և անաղարտ պահպանողի մասին):

96. Խելմյան Է., *Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները), «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 335-351*

(Ընդգծելով Շուշի քաղաքի ուրույն դերը համընդհանուր համահայկական առաջադիմական շարժման մեջ և նկարագրելով քաղաքի կրթական և մշակութային կյանքը՝ հեղինակը հանգա-



մանորեն ներկայացնում է 19-րդ դարի 60-ական թվականներից մինչև 20-րդ դարի 60-ական թվականներն այնտեղ իրականացված ժողովրդագիտական նյութերի գրառման գործընթացը: Առանձին ենթաբաժիններով քննության են առնվում Բահաթյան եղբայրների, Մ. Բարխուդարյանի, Խ. Դադյանի, Ա. Դադյանի, Կ. Մելիք-Շահնազարյանի, Ե. Լալայանի, Մ. Գրիգորյան-Սպանդարյանի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրական-բանահյուսական գիտարշավի մասնակիցների (Դ. Վարդումյանի գլխավորությամբ), Ս. Վարդանյանի կողմից Շուշի քաղաքից և հարակից գյուղերից հավաքված բանահյուսական, ազգագրական, մասամբ նաև բարբառային նյութերը, որոնց մի մասը տպագրվել է առանձին ժողովածուներով, մի մասը՝ համահավաք ժողովածուներում և տարբեր հանդեսներում, իսկ մի մասն էլ առ այսօր ձեռագիր վիճակում պահվում է տարբեր արխիվներում):

97. Խուրշուդյան Ժ., *Արցախ-Միջին Ասիա-Շուլավեր՝ համադրական ակնարկ*, «Հանրապետական գիտական նստաշրջան. 1986-1988թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները. զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 5-7, 1990», *Երևան, 1990, էջ 30-31*

(Սկսած 18-րդ դարից՝ Արցախից գաղթած և Միջին Ասիայի որոշ բնակավայրերում ու Վրաստանի Շուլավերում բնակություն հաստատած հայերի հետնորդներից և Արցախի Մարտակերտի շրջանի տարբեր գյուղերի բնակիչներից գրառած բանահյուսական-ազգագրական նյութերի համադրությամբ վեր են հանվում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Ըստ հեղինակի՝ թե՛ Միջին Ասիայում, թե՛ Շուլավերում ակունք-Արցախից ավանդականորեն պահպանվել է հիմնականում թաղման ծեսը, հատկապես՝ ծեսի ժամանակ տրվող կորկոտ-հարիսան, հեքիաթային որոշ մոտիվներ, դարձվածներ, ոճեր, մանկական խաղերգեր, օրորոցայիններ, մեռելոցի ձևը (մայիսի 2-ին) ևն):

98. Կարապետյան Է., *Օճիւրը հայոց մեջ*, *Երևան, 1978, 120 էջ + 8 ներդիր*

(Իրավական փաստաթղթերի, հնագիտական, վիմագրական, ազգագրական նյութերի հիման վրա, ինչպես նաև այլ ժողովուրդների վերաբերյալ եղած համանման նյութերի համադրությամբ հեղինակը ներկայացնում է հայերի մեջ սոցիալ-տնտեսական տարբեր պայմաններում օժիտի հիմնական կազմը, նրա ծագման ու հետագա զարգացման հարցերը: Ազգագրական այլ շրջաններին զուգընթաց անդրադարձ է կատարվում նաև Արցախում այդ երևույթների դրսևորմանը: Ներդիրներում ընդգրկված են համապատասխան լուսանկարներ):

99. Կարապետյան Ս., *Արցախի կամուրջները, Мосты Арцаха, The bridges of Artsakh*, *Երևան, 2009, 144 էջ*

(Երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հեղինակը նկարագրում է պատմական Արցախի կամուրջները՝ անդրադառնալով նրանց տեղադրությանը, պատմությանը, չափագրություններին, ճարտարապետական կառուցվածքին: Կից ներկայացվում են կամուրջների լուսանկարները: Վերջում տրվում են համառոտ տվյալների աղյուսակ, օգտագործված գրականության ցանկ, տեղեկություններ չափագրությունների և լուսանկարների հեղինակների մասին):

100. Կարապետյան Ս., *Գետաշեն*, *Երևան, 1992, 42 էջ+38 էջ ներդիր*

(Տպագիր ու ձեռագիր աղբյուրների, վիմագիր արձանագրությունների և պատմական հուշարձանների համալիր ուսումնասիրությամբ հեղինակը ներկայացնում է Հյուսիսային Արցախի Գետաշեն գյուղի պատմությունը, տարբեր տարիների բնակչության թվի մասին տեղեկություններ, տարածքի պատմաճարտարապետական հուշարձանները, տապանաքարերը, տասնյակ լուսանկարներ ևն):

101. Կարապետյան Ս., *Հյուսիսային Արցախ*, *Երևան, 2004, 584 էջ+32 էջ ներդիր*



(Տպագիր, արխիվային և իր ճանապարհորդությունների ընթացքում գրառած հարուստ նյութի հիմքի վրա հեղինակը ներկայացնում է պատմական Հայաստանի հյուսիսարևելյան հատվածը կազմող Հյուսիսային Արցախի աշխարհագրական միջավայրը, պատմական ժամանակագրությունը, կաթողիկոսական նստավայրը, բնակչության թիվը և էթնիկ կազմը, առևտրական կյանքը, Գանձակի, Գետաբեկի, Դաշկեսանի, Թռուզի, Խանլարի, Կասում-Իսմայիլովի (Գյորանի), Ղազախի, Շամխորի շրջանների գրեթե բոլոր բնակավայրերի և Արծվաշեն գյուղի տեղադրությունը, պատմությունը, բնակչության թիվը, պատմաճարտարապետական հուշարձանները, հուշեր, բազմաթիվ լուսանկարներ են: Վերջում տրվում են օգտագործված աղբյուրների, անձնանունների, տեղանունների, գունավոր լուսանկարների, բաժանորդների ցանկեր: Ուսումնասիրությունը հրատարակվել է նաև ռուսերենով /*Карпетян С., Северный Арцах, Ереван, 2018, 640с. Ն*):

102. Կիսիբեկյան Ա., **Հուշեր**, *h.1, Երևան, 2011, 519 էջ, h.2, Երևան, 2011, 606 էջ*

(Հեղինակը ներկայացնում է 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին կեսին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած քաղաքական, հասարակական, ռազմական իրադարձությունները, որոնց ակնատեսն ու մասնակիցն է եղել նաև ինքը, կարևոր տեղեկություններ հաղորդում մի շարք գյուղերի ու Շուշի քաղաքի պատմության, թեմական դպրոցի, նշանավոր մանկավարժների, ժողովրդագիտության, բնակիչների նիստ ու կացի, Բաքվում, Խանլարի ու Կասում-Իսմայիլովի շրջաններում, աքսորավայրում, Տաշքենդում, Երևանում իր ապրած տարիների մասին: Ազգագրական տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն առաջին հատորի «*Հայրենի տունը*» (էջ 15-78) ու «*Հայրենի գյուղը*» (էջ 79-109) բաժինները, որտեղ հեղինակը առանձին ենթաբաժիններով հանգամանորեն նկարագրում է իր հայրական տունը, նահապետական ընտանիքը, տնտեսությունը, սովորությունները, հայրենի՝ Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղը, նրա նշանավոր վայրերը, բնակիչների զբաղմունքը, որոշակի սվյալներ հաղորդում հարևան Մավաս ու Բլբլաք գյուղերի մասին են):

103. Հակոբյան Հ., **Արցախի միջնադարյան արվեստը**, *Երևան, 1991, 96 էջ*

(Հեղինակը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով համառոտ ներկայացնում է Արցախի միջնադարյան հարուստ մշակույթը՝ ճարտարապետությունը, որմնանկարչությունը, մանրանկարչությունը, դեկորատիվ-կիրառական արվեստը: Գրքում ընդգրկված են նաև համապատասխան բնագավառների տասնյակ լուսանկարներ՝ անհրաժեշտ մեկնաբանություններով):

104. Հակոբյան Մ., **Էթնոքաղաքական իշխանությունը Լեռնային Արցախում**, «*Հանրապետական գիտական նստաշրջան. 1986-1988թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները. զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 5-7, 1990*», *Երևան, 1990, էջ 33-35*

(Կարևոր համարելով Լեռնային Արցախի 18-19-րդ դարերի էթնոքաղաքական իշխանության հետ առնչվող հարցերի պատմաազգագրական լուսաբանումն ու հաշվի առնելով և ի մի բերելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են էթնիկ միջավայրը, տարբեր տնտեսամշակութային տիպերի առկայությունը, դավանանքային տարբերակումը՝ հեղինակը Լեռնային Արցախի էթնոքաղաքական կառուցվածքում նշված ժամանակաշրջանի համար պատմականորեն առանձնացնում է երեք շրջան՝ հայկական, հայ-մահմեդական, հայ-մահմեդական-ռուսական):

105. Հակոբյան Ն., Բաբայան Ֆ., Ժամկոչյան Ա., **Արարողական սպասքի եզակի նմուշներ Արցախի տարածքից**, «*Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006 թ.*», *Երևան, 2007, էջ 360-372*

(Քննության են առնվում ՀՊԹ մետաղադարանում պահվող միջնադարյան երեք բուրանոթները, որոնք ծագում են Արցախի վանքերից: Հանգամանորեն անդրադարձ է կատարվում դրանց



կառուցվածքին, գեղարվեստական հարդարանքին, հարուստ պատկերազրույթյանը, պատրաստման տեխնիկական հնարներին, այլ վայրերից ծագող նմանատիպ առարկաների հետ ունեցած առնչություններին: Ներկայացվում են նաև լուսանկարները: Արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ դրանք ունեն հայկական ծագում, վերաբերում են 10-13-րդ դարերին և պատրաստվել են Անիում ու Տաթևում):

106. Հակոբյան Փ., *Դրմբոն գյուղի պատմությունը, Ստեփանակերտ, 1999, 216 էջ*

(Ներկայացվում են Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի պատմությունը, նրա տնտեսությունը, գյուղական սովետը, ուսումը և մշակույթը, Հայրենական մեծ պատերազմում զոհվածների ցուցակը, գյուղացիների մասնակցությունը Արցախյան գոյամարտին, ասույթներ, բանաստեղծություններ, քառյակներ, երգիծական պատումներ ևն: Առանձին ենթաբաժիններում հեղինակը նկարագրում է գյուղի բնական պայմաններն ու աշխարհագրական դիրքը, անցյալը, նիստն ու կացը, սովորությունները, հնությունները, ինքնուս վարպետներին, տեղանունները, ավանդական խաղատեսակները, տոհմաձառերը, գյուղից դուրս բնակվողների տեղագրությունները):

107. *Հայ ժողովրդական խաղեր* (աշխատասիրությամբ Վ. Բոդյանի), *հ. I, Երևան, 1963, 298 էջ+13 էջ ներդիր, հ. II, Երևան, 1980, 240 էջ+ 4 էջ ներդիր, հ. III, Երևան, 1983, 264 էջ*

(Տպագիր ու ձեռագիր և անձամբ գրառած նյութերի հիմքի վրա հեղինակը ներկայացնում է հայ ազգագրական տարբեր շրջաններում, այդ թվում Արցախում տարածված ժողովրդական խաղատեսակները: Առաջին հատորում ընդգրկված են հասարակական երևույթներ արտացոլող խաղատեսակները՝ ժողովրդական տոների կատարվող ծիսական-դրամատիկական խաղերը, լարախաղերը, արտադրական ու ընտանեկան կենցաղը ներկայացնող խաղաձևերը, երկրորդ հատորում՝ ռազմամրցակցական խաղերը, ուժային վարժությունները, մենամարտերի ձևերը, գնդակախաղերը, ցատկախաղերը, ձիախաղերը ևն, երրորդ հատորում՝ մարմնակրթական, մտավարժական, սեղանային, զվարճալի և խառը խաղերը: Ներածական մասերը նվիրված են համապատասխան խաղերի գաղափարական էության բացահայտմանը: Բոլոր հատորները ընդգրկում են խաղերի տասնյակ լուսանկարներ ու նկարներ: Ժողովածուներն ունեն օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկեր, տեղանունների համառոտագրություններ, բացատրական բառարաններ: Երրորդ հատորի վերջում տրվում են նաև երեք հատորներում ընդգրկված խաղերի ու նկարների այբբենական ցանկեր):

108. *Հայկական տարագ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (ուսումնասիրությունը և նկարները Առաքել Պատրիկի. երկրորդ հրատարակություն), Երևան, 1983, 200 էջ*

(Եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) նկարազարդ ալբոմ: Առաջաբանում տրվում են հայկական տարագի համառոտ պատմությունը՝ ըստ զարգացման շրջանների, ինչպես նաև մատենագիտական տեղեկություններ: Բուն ժողովածուն կազմված է 91 տախտակներից, որտեղ ներկայացվում են հայկական և առանձին ազգագրական շրջանների տարագաձևերը՝ հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը՝ հեղինակի նկարազարդումներով ու համապատասխան մեկնաբանություններով: NN 30, 31, 32, 33, 66, 71, 73, 74, 76 տախտակներում ընդգրկված են Արցախի տարագի տարբեր ձևեր: Տիտղոսաթերթին պատկերված է հայ ժողովրդի տարագային քարտեզը: Պատկերազարդը առաջին անգամ հրատարակվել է Երևանում 1967թվականին):

109. Հայկունի (Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց), *Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010, 104 էջ*

(Ներկայացվում են հեղինակի՝ 1885թ. հունիսի 7-ից մինչև օգոստոսի վերջը Արցախի Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա և Դիզակ գավառներում կատարած ճամփորդության ընթացքում գրառած նյութերը, որոնք ընդգրկում են պատմական, վիճագրական, ազգագրական, բանահյուսական,



վիճակագրական, կրթական, տնտեսական կացությանը վերաբերող կարևոր տեղեկություններ: Առանձնակի ուշադրություն է դարձվում բնակավայրերի ու պատմաճարտարապետական հուշարձանների նկարագրությանը: Բնագրին կցված են հեղինակի այցելած վայրերին առնչվող լուսանկարներ և անցած երթուղին լուսաբանող քարտեզ: Վերջում տրվում են անձնանունների և տեղանունների ցանկեր: Ակնարկաշարն առաջին անգամ տպագրվել է Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» պարբերականի 1885թ. հունիսի 16-ից դեկտեմբերի 5-ը լույս տեսած 46-95-րդ համարներում):

110. Հայրապետյան Թ., **Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ**, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2004, N3, էջ 217-227

(Հավաստելով, որ վաղնջական մշակույթի ընդերքում ձևավորված՝ բնության անշունչ առարկաների, մարդկանց ու կենդանիների փոխադարձ կերպարանափոխման և ոգեղենացման հավատալիքները կենցաղավարում էին ընդհուպ մինչև 20-րդ դարի սկզբները, հեղինակը հանգամանորեն քննության է առնում անձրևաբեր և անձրևախափան երկհակադիր ծեսերի ու մասնավորապես *Նուրիինի* (*Ճուլիի*) բանահյուսական և ազգագրական արմատները: Առանձին ենթաբաժնում անդրադարձ է կատարվում *Գողիի* և *Ճուլիի* մասին արցախցիների հավատալիքների ու դրանց հետ կապված տեղում գրառված ծիսական երգերին):

111. Հայրապետյան Թ., **Խաչենագետի ներքնահովտի վերաբնակ հայության ենթակերնիկ շերտերը. վերամշակութայնացման հարցեր**, «Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջավայրում. հետազոտական փորձ, խնդիրներ և հեռանկարներ. գիտաժողովի նյութերի ժողովածու», Երևան, 2014, էջ 44-51

(Հեղինակը ԼՂՀ Խաչենագետի ներքնահովտի վերաբնակեցված գյուղերում (Նոր Մարաղա, Նոր Մեյսուլան, Նոր Կարմիրավան, Նոր Այգեստան, Նոր Հայկաջուր, Հովտաշեն) 2010-2013թթ. հավաքած նյութերի հիմքի վրա ներկայացնում է վերաբնակների կենսընթացում տեղի ունեցող ազգամշակութային երևույթները, ժողովրդագիտական առանձնահատկությունները, բանահյուսական մշակույթում ընթացող փոփոխությունները՝ հավաստելով, որ Խաչենագետի ներքնահովտի վերաբնակությունը ոչ թե պայմանավորված է ժողովրդագրական գործընթացների բնական աճով, այլ պարտադիր տեղաշարժերով թելադրված բազմաշերտ հասարակական-մշակութային իրողություն է: Ընդգծվում է նաև Տիգրանակերտի պեղումների զգայական նշանակությունը վերաբնակների կյանքում):

112. Հայրապետյան Թ., **Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) ժողովրդագիտական գործունեությունը**, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006 թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 342-347

(Քննության է առնվում 19-րդ դարի վերջի-20-րդ դարի առաջին կեսի շուշեցի նշանավոր գյուղատնտես, բանահավաք, երգիծաբան Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի ժողովրդագիտական գործունեությունը: Ներկայացվում են նրա՝ հիմնականում Արցախից գրառած և տարբեր արխիվների ֆոնդերում պահվող բանահյուսական և ազգագրական (մի մասը՝ տպագիր) տարաբնույթ նյութերը, Ղարաբաղի բարբառի բացատրական բառացանկերը: Ուշադրություն է դարձվում նաև հեղինակի «Չուռնա-Տմբլա» ֆելիետոնների ժողովածուին):

113. Հայրապետյան Թ., **Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան). կյանքն ու գործը**, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 2007, հ. 24, էջ 7-119

(Ներկայացվում է 19-20-րդ դարերի շուշեցի մշակույթի նշանավոր գործիչ Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքն ու գործը, առանձնակի ուշադրություն է դարձվում նրա ժողովրդագիտա-



կան գործունեությանն ու Ղարաբաղի բարբառով գրած ստեղծագործություններին: Ուսումնասիրության վերջում հակիրճ տեղեկություններ են տրվում Ղարաբաղի բարբառի որոշ առանձնահատկությունների մասին, ներկայացվում է նաև Կ. Մելիք-Շահնազարյանի «Չուլունա-Տմբլա» ֆելիետոնների երկհատոր ժողովածուում գործածված մի շարք բարբառային բառերի բացատրական բառարանը (էջ 101-103):

114. Հայրապետյան Մ., *Բերդաձոր (պատմություն, տոհմաբանություն)*, Երևան, 2011, 256 էջ + 32 էջ ներդիր

(Հեղինակն առանձին մասերով և ենթաբաժիններով ներկայացնում է իր հայրենի՝ Շուշիի շրջանի Բերդաձոր (Մեծ շեն), ինչպես նաև համանուն վարչական տարածքի մյուս գյուղերի (Կանաչ թալա, Եղցահող, Խերխան, Քյոհնա շեն (Հին շեն), Թևանի տուն, Ղրմանահող, Չոբան գյուն) համառոտ պատմությունը, աշխարհագրական դիրքը, կլիման, գյուղի համայնքի կառավարման կարգը, քաղաքական իրադրությունը 1917-1918 թվականներին և գյուղի ավերումը, Բերդաձորի նշանավոր տոհմերն ու մարդկանց, դրվագներ իր մանկության տարիներից, զվարճալի փոքրիկ պատմություններ, իրական դեպքեր Բերդաձորցիների կյանքից ևն: Ներդիրներում ընդգրկված են տասնյակ լուսանկարներ):

115. Հարությունյան Ա., *Հին Շուշիի արհեստները*, «Շուշի-2017» տարեգիրք, Ստեփանակերտ, 2017, էջ 32-36

(Տարբեր աղբյուրներից քաղած տվյալների հիման վրա հեղինակը առանձին ենթաբաժիններով համառոտ ներկայացնում է Շուշի քաղաքի հասարակական ու տնտեսական կյանքը մինչև 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները: Առանձնակի անդրադարձ է կատարվում նշված ժամանակաշրջաններում քաղաքում տարածված արհեստներին՝ կաշեգործություն, գլխարկագործություն, դերձակություն, ոսկերչություն, մետաքսագործություն, աղյուսագործություն ևն, առևտրին, ներմուծված և արտահանված ապրանքներին ևն):

116. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության*, Երևան, 1991, 400 էջ

(Բանահյուսական բազմաժանր ժողովածու: Առանձին բաժիններում ընդգրկված են հեղինակի կողմից տասնյակ տարիների ընթացքում Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) և գրական հայերենով գրառված հեքիաթներ, զրույցներ, առակներ, ավանդություններ, ավանդությամբ մեզ հասած տեղեկություններ, զվարճախոսություններ, հանգախաղեր, տաղիկներ ու խաղիկներ, հանելուկներ, շուտասելուկներ, ինչպես նաև բազմաթիվ ասացվածքներ, պատկերավոր արտահայտություններ, մահանալու իմաստ բովանդակող արտահայտություններ, խրատներ, սպառնալիքներ, երդումներ, ցանկություններ, ծիսական արտահայտություններ, անեծքներ, օրհնանքներ ու բարեմաղթություններ, ազգագրական տարաբնույթ նյութեր՝ սուգ, սովորություններ, ժողովրդական խաղեր, կենացներ, բույսերի ու կենդանիների անուններ, ուտեստների անուններ ու բաղադրատոմսեր, մանկական բառաշարք, արցախյան հին անձնանուններ, անձնանունների համառոտագրություններ ու հնչյունադարձումներ ևն: Առանձին բաժիններով ներկայացվում են նաև Ղարաբաղի բարբառում գործածվող դարձվածների ու բառերի բացատրական բառարաններ և նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ):

117. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության*, երկրորդ գիրք, Ստեփանակերտ, 2004, 424 էջ

(Գրական հայերենով և Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված բանահյուսական բազմաժանր ժողովածու: Առանց ժանրային տարբերակման՝ ընդգրկված են հեքիաթներ, զրույցներ, առակներ, ավանդություններ, տաղիկներ ու խաղիկներ: Առանձին բաժնում՝ «Սովորություններ» (էջ 142-359), ներկայացվում են զանազան սովորություններ ու



ազգագրական տարաբնույթ այլ նյութեր: Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ և Ղարաբաղի բարբառում գործածվող բառերի ու դարձվածների բացատրական բառարան:

118. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, երրորդ գիրք, Ստեփանակերտ, 2007, 412 էջ*

(Գրական հայերենով և Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված բանահյուսական բազմաժանր ժողովածու: Առանձին բաժիններում առանց ժանրային տարբերակման ընդգրկված են ժողովրդական չափածո ստեղծագործություններ, հատկապես՝ խաղիկներ, ավանդությամբ մեզ հասած տեղեկություններ, զվարճախոսություններ, զվարճալի պատմություններ, սրամտություններ, բազմաթիվ առածներ, ասացվածքներ, իմաստախոսություններ, խորհուրդներ, ինչպես նաև ազգագրական տարաբնույթ նյութեր: Վերջում տրվում են Ղարաբաղի բարբառում գործածվող բառերի ու դարձվածների բացատրական բառարան և նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ:

119. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, չորրորդ գիրք, Ստեփանակերտ, 2009, 384 էջ*

(Գրական հայերենով և Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված բանահյուսական և այլ նյութերի ժողովածու: Ընդգրկում է զանազան պատմություններ, տարբեր բույսերի մասին տեղեկություններ, զրույցներ, հանելուկներ, անեծքներ, սպառնալիքներ, օրհնանքներ, մաղթանքներ, երդումներ, խրատներ, բանահյուսական և ազգագրական տարաբնույթ այլ նյութեր: Ներկայացվում են նաև Արցախի ու հարակից շրջանների մի շարք տեղանունների ու մանրատեղանունների նկարագրություններ, նրանց հետ կապված ավանդություններ, անդրադարձ է կատարվում դրանցից որոշների ծագումնաբանությանը: Առանձին բաժիններով տրվում են Ղարաբաղի բարբառում գործածական դարձվածների բացատրական և բառերի ու տարբեր արտահայտությունների բացատրական, ստուգաբանական, ազգագրական բառարաններ:

120. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, հինգերորդ գիրք, Ստեփանակերտ, 2011, 404 էջ*

(Գրական հայերենով և Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված բանահյուսական բազմաժանր ժողովածու: Առանձին բաժիններում առանց ժանրային տարբերակման ընդգրկված են զրույցներ, սաղիկներ, հեղինակային մտորումներ, տարաբնույթ պատմություններ ու մանրապատումներ, բանաստեղծություններ, ասացվածքներ, իմաստալից խոսքեր, խրատներ ևն: Վերջում տրվում է բարբառում գործածվող բառերի ու դարձվածների բացատրական բառարան, անդրադարձ է կատարվում դրանցից որոշների ծագումնաբանությանը: Առանձին բաժնում՝ «*Զրույցներ, տաղեր, սովորություններ*», ներկայացվում են նաև մի շարք հին սովորություններ և ազգագրական բնույթի այլ նյութեր: Ժողովածուին կցված են կենցաղային որոշ առարկաների լուսանկարներ):

121. Հարությունյան Հ., *Շուշիի հայ երգարվեստի և երաժշտության անհայտ էջերից, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2012, N1, էջ 63-71*

(Հեղինակը տպագիր տարբեր աղբյուրների ու Շուշիի հայկական գերեզմանատան որոշ շիրմաքարերի արձանագրությունների ուսումնասիրության արդյունքում ներկայացնում է 19-20-րդ դարերի Արցախի, հատկապես Շուշիի մի քանի աշուղների ու երաժիշտների կյանքի ու գործունեության համառոտ պատմությունը: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև որոշ լուսանկարներ):



122. Հարությունյան Մ., *Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին*, Ստեփանակերտ, 2010, 160 էջ + 8 էջ ներդիր

(Արխիվային նյութերի, տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական գրականության, պարբերական մամուլում հրատարակված նյութերի հիման վրա հեղինակը ներկայացնում է Արցախի մշակութային կյանքը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: Աշխատության առաջին գլխում առանձին բաժնով քննության է առնվում նշված ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, հասարակական և քաղաքական կյանքը: Ներդիրներում ընդգրկված են կրթամշակութային օջախների, եկեղեցիների, 20-րդ դարի սկզբին Շուշիում տպագրված թերթերի ու գրքերի, գորգերի ու կարպետների նմուշների լուսանկարներ):

123. Հարությունյան Շ., *Առաջաձոր*, Երևան, 2014, 464 էջ+84 էջ ներդիր

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղի պատմությունը, անվան ծագումնաբանության վարկածները, բնական պայմանները, տնտեսությունը, կրթամշակութային և առողջապահական համակարգը, տեղեկություններ հայտնի առաջաձորցիների և գյուղի դպրոցի շրջանավարտների մասին, գյուղի տոհմերը, բնակիչների մասնակցությունը Հայրենական մեծ և Արցախյան պատերազմներին, հուշեր, ինչպես նաև գյուղում տարածված անձնանունները, մականունները, տոհմական ազգանունները, ազգակցության աստիճանները, բուսական ու կենդանական աշխարհը, տարբեր սովորություններ, հավատալիքներ, ճաշատեսակներ ևն: Աշխատության մեջ ընդգրկված են տասնյակ լուսանկարներ):

124. Հոբոսյան Ս., *Հայոց ձիթհանության մշակույթը (XIXդ.–XXդ. առաջին կես)* (Պատմա-ազգագրական ուսումնասիրություն), «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, հ.23, էջ 5-98

(Տպագիր, արխիվային և իր հավաքած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրության արդյունքում հողինակը քննության է առնում հայ ազգագրական տարբեր շրջանների, այդ թվում՝ Արցախի 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին կեսի ձիթհանության մշակույթը՝ առանձին գլուխներով հանգամանորեն անդրադառնալով ձիթատու բույսերի տեսակներին ու մշակման եղանակներին, ձեթի ստացման եղանակներին, ձիթատու բույսերի և ձեթի օգտագործման եղանակներին: Աշխատության վերջում ներկայացվում են բառարան, բանասացների ցուցակ, տարբեր ձիթհանների հատակագծեր ու լուսանկարներ):

125. Հովհաննիսյան Լ., *Արցախի բնակչությունն ըստ 1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալների*, «ԱրՊՀ հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2010, էջ 60-63

(Կարևորելով վիճակագրական աղբյուրների, հատկապես բնակչության մարդահամարների նշանակությունը ազգագրական գիտության մեջ՝ հեղինակը քննության է առնում 1897թ. Ռուսական կայսրությունում գիտականորեն կազմակերպված առաջին համընդհանուր մարդահամարի՝ Ելիզավետպոլի նահանգի, այդ թվում՝ Շուշիի, Ջեբրայիլի, Ջևանշիրի գավառների տվյալները: Արդյունքում հիմնավորվում է, որ Արցախյան շարժումից 90 տարի առաջ Արցախի հիմնական մասում հայերը կազմում էին ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը):

126. Հովհաննիսյան Լ., *Արցախի էթնիկ կազմը և էթնիկ տեղաշարժերը*, «Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակին նվիրված «Գիտության և մշակույթի հիմնահարցերն Արցախում» հանրապետական գիտաժողովի նյութեր (17-18 նոյեմբերի, 2000թ.)», Ստեփանակերտ, 2000, էջ 39

(Համառոտ ներկայացնելով Արցախի (18-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի սկզբները) էթնիկ կազմի և տեղաշարժերի մասին փաստացի տվյալները՝ հեղինակը հիմնավորում է, որ, չնայած արտագաղթին դեպի Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններ ու Ռուսաստան, նշված ժամանակաշրջանում Արցախի հիմնական բնակչությունը կազմում էին հայերը):



127. Հովհաննիսյան Լ., *Բռնի մահմեդականացված հայության բեկորները Ղարաբաղում*, «ԱրՊՀ հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2011, էջ 187-192

(Ներկայացվում է տարբեր ժամանակներում ու հատկապես Իբրահիմ խանի տիրապետության շրջանում Ղարաբաղի որոշ բնակավայրերում (Շահումյանի և Քարվաճառի շրջաններում, Հադրութի շրջանի Տող գյուղում, Շուշիի շրջանի Մուսուլմանլար գյուղում ևն) հայ բնակչության մի մասի բռնի մահմեդականացման գործընթացը: Արդյունքում հեղինակը եզրահանգում է, որ, հաստատվելով հայկական միջավայրում, թուրքալեզու զավթիչները ոչ միայն փոփոխության են ենթարկել բնակչության էթնիկական կազմը, այլև խեղաթյուրել են պատմամշակութային ու էթնիկական տարբերությունները, ինչը հանգեցրել է ազգային յուրահատկությունների կորստի և բնիկ հայության մի մասի ձուլման):

128. Հովսեփյան Հ., *Ղարաղաղի հայերը I Ազգագրություն*, Երևան, 2009, 502 էջ

(Հեղինակը առանձին բաժիններով և ենթաբաժիններով ներկայացնում է հայրենի՝ Պարսկաստանի Ղարաղաղի գավառի համառոտ պատմությունը, աշխարհագրական բնութագիրը, բնակչության էթնիկ կազմը, հայաբնակ գյուղերը, նրանց գաղթերը, տնտեսությունը, բնակչության զբաղմունքը, հագուստը և զարդեղենը, սննդի համակարգը, տոները, խաղատեսակները, հավատալիքները ևն՝ որոշ դեպքերում համեմատաբար անդրադառնալով նաև հարևան Արցախի համանման երևույթներին և վերհանելով ընդհանրություններն ու տարբերությունները:

129. Ղազարյան Խ., *Տումի: Պատմաաշխարհագրական ակնարկներ*, Երևան, 2003, 212 էջ

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Հադրութի շրջանի Տումի գյուղի պատմության, աշխարհագրական դիրքի, բնակչության, տնտեսության, բուսական և կենդանական աշխարհի, մշակույթի, կրթօջախների, Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան զոյամարտում նրա բնակիչների մասնակցության, նշանավոր տումեցիների ևն մասին ակնարկներ ու տեղեկություններ: Առանձին ենթաբաժիններում ընդգրկված են նաև գյուղի բնակիչներից գրական հայերենով ու տեղական խոսվածքով (տառադարձության խախտումներով) գրառված մի շարք ավանդություններ և ավանդագրույցներ, օրհնանքներ, անեծքներ, պիտակներ, պատկերավոր արտահայտություններ):

130. Ղազիյան Ա., *Արցախ*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», հ.15, Երևան, 1983, 192 էջ

(Բանահյուսական բազմաժանր ժողովածու: «Ներածություն» բաժնում ներկայացվում են Արցախի բանահյուսության գրառման և հրատարակման համառոտ պատմությունը, ժողովածուի կառուցվածքը, նրանում ընդգրկված նյութերի ժանրային և իմաստային առանձնահատկությունները, կենցաղավարման աստիճանները ևն: Բուն ժողովածուի առանձին բաժիններում ընդգրկված են հիմնականում հեղինակի և Բ. Ղազիյանի (նյութերի մեծ մասը) կողմից 1966, 1970-1978 թթ. ընթացքում ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի 25 բնակավայրերից Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված հեքիաթներ, զրույցներ, առակներ, զվարճախոսություններ, ավանդություններ, երգեր, խաղերգեր, մականուններ (մարդկանց և գյուղերի), առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ, երդումներ, սպառնալիքներ: Առանձին բաժիններով ներկայացվում են նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ և Ղարաբաղի բարբառում գործածվող բարբառային բառերի բացատրական բառարան):

131. Ղազիյան Ա., *Խաչիկ Ծ. Վարդապետ Դադեանի ժողովրդագիտական-բանահաւաքչական գործունեությունը*, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1999, N 1-12, էջ 387-402

(Հոդվածի սկզբում ներկայացնելով 19-րդ դարի վերջի-20-րդ դարի սկզբի հայ նշանավոր ժողովրդագետ, բանասեր, հնագետ Խաչիկ Դադեանի (ծննդով՝ Արցախի Մարտունու շրջանի



Վերին Թաղավարդ գյուղից) համառոտ կենսագրությունը՝ հեղինակն այնուհետև քննում է նրա ժողովրդագիտական-բանահավաքչական գործունեությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Արցախի տարբեր բնակավայրերից գրառած բանահյուսական և ազգագրական նյութերին՝ հեքիաթներ, ավանդություններ, զվարճախոսություններ, աշխատանքային, սգո, օրորոցային, հարսանեկան, ջրօրհնյաց և տարաբնույթ այլ երգեր, հանելուկներ, կենաց-բարեմաղթություններ, շուտասելուկներ, վիպական մանր ժանրերի ստեղծագործություններ, հավատալիքներ, սովորություններ, ծեսեր, տեղեկություններ երկրագործական աշխատանքների, արհեստների, բնակելի տան, տարազի, կախարդության, գուշակության, ժողովրդական բժշկության, բնակչության կազմի և թվի, սրբավայրերի վերաբերյալ ևն, որոնց մեծ մասը ձեռագիր վիճակում պահվում է ՀՀ Ազգային արխիվի՝ Խ. Դադյանի ֆոնդում (*թիվ 319*): Հոդվածագիրը նույնը ներկայացրել է նաև Խաչիկ Օ. Վարդապետ Դատյանի «*Հողվածների ժողովածու*» /*Ս. Էջմիածին, 2007*/ գրքի՝ իր գրած առաջաբանում):

132. Ղազիյան Ա., *Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)*, 12, ՀՄՄՀ ԳԱ *հրատարակչություն, Երևան, 1981, 142 էջ, 66 նկար*, «*Լրաբեր հասարակական գիտությունների*», *Երևան, 1982, N1, էջ 98-100*

(Արժևորվում են մատենաշարի նշված հատորում տեղ գտած Ս. Լիսիցյանի «*Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)*» և Լ. Վարդանյանի «*Տղամարդկանց տարիքային խմբերի ավանդույթները հայերի մեջ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ)*» աշխատությունները, առանձին-առանձին անդրադարձ է կատարվում նրանցում քննված հարցերին: Հեղինակը նշում է նաև Ս. Լիսիցյանի ուսումնասիրության մեջ տեղ գտած որոշ բացթողումներ և անճշտություններ):

133. Ղահրամանյան Կ., *Օջախի գիրք. նշխարներ*, *Երևան, 2002, 278 էջ*

(Ներկայացվում են Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի համառոտ պատմությունը, տեղանուններ, ճանապարհների, պատմաճարտարապետական հուշարձանների, բնակիչների զբաղմունքների նկարագրություններ, վիմագրական նյութեր, զվարճախոսություններ, խաղիկներ, չափածո տարաբնույթ ստեղծագործություններ, օրհնանքներ, դարձվածներ, ոճեր, առած-ասացվածքներ ևն: Առանձին բաժիններում՝ «*Մեր ազգանունները*» (էջ 115-133), «*Ժողովրդական բժշկություն*» (էջ 134-136), «*Ավանդույթներ, սովորույթներ*» (էջ 137-160), «*Բերքահավաք՝ կյոռ տարին*» (էջ 161-162), «*Ժողովրդական խոհանոց*» (էջ 163-174), «*Մրցումներ, խաղեր*» (էջ 175-181), հեղինակն ընդգրկել է համապատասխան ազգագրական նյութեր և մի շարք լուսանկարներ):

134. Ղահրամանյան Հ., *Տեղեկատու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական բնութագրերի*, *Երևան, 2015, 396 էջ*

(Ժողովածուի առաջին մասը նվիրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմության, աշխարհագրական դիրքի, տնտեսության, օգտակար հանածոների, շինարարության, կրթության, մշակույթի, զբոսաշրջության, սպորտի, կլիմայի, ջրային ռեսուրսների, բուսական ու կենդանական աշխարհի նկարագրությանը: Այնուհետև հեղինակն առանձին բաժիններով և ենթաբաժիններով ներկայացնում է մայրաքաղաք Ստեփանակերտի, Ասկերանի, Հաղրութի, Մարտակերտի, Մարտունու, Շահումյանի, Շուշիի, Քաջաթաղի շրջանների ու նրանց կազմում ընդգրկված բնակավայրերի սոցիալ-տնտեսական բնութագրերը):

135. Ղուլյան (Ղուլունց) Ս., *Բանաձոր*, *Երևան, 2013, 320 էջ*

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Հաղրութի շրջանի Բանաձոր (Բանագուր) գյուղի պատմությունը, աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, սահմանները, անվան ծագումը, սրբավայրերը, քահրիզները, այգիները, դպրոցը, գերեզմանոցը, գյուղացիների զբաղմունքը, մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյապայքարին, գյուղի խոսվածքը, բանահյուսական որոշ նյութեր, տեղեկություններ հարևան գյուղերի մասին,



բազմաթիվ լուսանկարներ (այդ թվում՝ ազգագրական բնույթի) ևն: Առանձին բաժիններով քննության են առնվում գյուղի տոհմանունները և ազգանունները (էջ 25-32), տարածված արհեստները (էջ 75-81), տարազը (էջ 82-88), որսորդությունը (էջ 89-90), կերակրատեսակները (էջ 90-92), տարբեր ավանդույթներ ու սովորություններ (էջ 93-99), բնակարանի, թոնրի և կառուցման յուրահատկությունները (էջ 99-103), խաղատեսակները (էջ 104-107), գորգ գործելու տեսակները և գույներ ստանալու եղանակները (էջ 114-116), հեքիմությունը և բժշկությունը (էջ 118-125): Ուսումնասիրությունը հրատարակվել է նաև ռուսերենով /Гулян (Гулунц) С., *Банадзор, Степанакерт, 2010, 374с./*:

136. *Ճանաչիր քո երկիրը. Արցախի այրում-կատաղոց, Երևան, 2015, 32 էջ*

(Առաջաբանում տեղեկություններ են տրվում Արցախի պատմության և պատմամշակութային հուշարձանների մասին: Բուն ժողովածուում ներկայացվում են Հայաստանի պատմության թանգարանում պահպանվող՝ Արցախի մշակութային տարբեր գանձերի (արձանիկներ, զարդեր, սափորներ, խաչքարեր, կանացի ավանդական տարազի նմուշներ, գորգեր ևն) լուսանկարներ՝ համապատասխան մեկնաբանություններով: Համառոտ նկարագրվում են նաև նշանավոր որոշ վանքեր (Գանձասար, Դաղիվանք, Ծիծեռնավանք, Գտչավանք):

137. Մաղալյան Ա., *Ջրաբերդ գավառի վերջին տիրակալ Աթաբեկյանների տոհմաձառը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2004, N3-4, էջ 83-87*

(Պատմագիտական տարբեր աղբյուրների ուսումնասիրության արդյունքում ներկայացվում է Ջրաբերդ գավառի տիրակալներ Մելիք-Իսրայելյաններից սերած Աթաբեկյանների (նույն գավառի Կուսապատ գյուղից) տոհմաձառը՝ սկսած 18-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դարի կեսերը: Հեղինակը անդրադառնում է նաև տոհմի անդամների տեղաշարժերին և հետագա տարածմանը՝ Կուսապատ գյուղից մինչև Բաքու, Թիֆլիս, Երևան, Էջմիածին, Ռուսաստան, Պարսկաստան, Եվրոպա):

138. Մանուկյան Մ., *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները, քաղաքները, գյուղերը. պատմամշակութային, ֆիզիկաաշխարհագրական, վարչատնտեսական նկարագրեր, Երևան, 2016, 566 էջ*

(Առաջաբանում ներկայացվում են աշխատության ստեղծման հանգամանքները, տեղեկություններ են տրվում Արցախի պատմության և աշխարհագրական դիրքի մասին: Բուն աշխատության մեջ հեղինակն առանձին բաժիններով ու ենթաբաժիններով ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտի, Ասկերանի, Հաղրուծի, Մարտակերտի, Մարտունու, Շահումյանի, Շուշու, Քաշաթաղի վարչական շրջանների ու նրանց քաղաքային և գյուղական համայնքների նկարագրերը՝ անդրադառնալով դրանց ֆիզիկաաշխարհագրական բնութագրությանը, պատմությանը, կլիմային, բնակիչների զբաղմունքին, հողատարածքներին, անասնազվաքանակին, պատմամշակութային հուշարձաններին, կրթամշակութային օջախներին ևն):

139. Մարգարյան Հ., *Արցախի ոսկերչական արվեստը XIX-XX դարի սկզբին, «Հայ մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ: Գիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ», Երևան, 1992, էջ 19-20*

(Ներկայացվում է նշված ժամանակաշրջանում Արցախի տարբեր բնակավայրերում և հատկապես Շուշի քաղաքում ոսկերչության վիճակը: Հեղինակն անդրադառնում է Շուշեցի ոսկերիչների գործունեությանը, վիճակագրական տվյալներ հաղորդում նրանց թվի և էթնիկ կազմի մասին):



140. Մարգարյան Ն., *Խոսքային դիմելաձևերի կենցաղավարումը Արցախում*, «Հայ մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ: Գիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ», Երևան, 1992, էջ 21

(Ազգագրական և բանահյուսական նյութերի համեմատական վերլուծության արդյունքում հեղինակը ներկայացնում է Արցախում կենցաղավարող խոսքային դիմելաձևերի ընտրության (կիրառման) դեպքում հաշվի առնվող (գործող) որոշ պայմաններ, նրանց կապը նախնական որևէ ծեսի հետ, էթնիկ հոգեբանության և էթնիկ լեզվի (Ղարաբաղի բարբառի) ազդեցությունը դրանց ձևավորման վրա են):

141. Մարկոսյան Ս., *Արցախի ժողովրդական երաժիշտներ*, Երևան, 2004, 256 էջ

(Գեղարվեստական ոճով առանձին ենթաբաժիններով ներկայացվում են Արցախի՝ 19-21-րդ դարերի ճանաչում ստացած շուրջ 60 ժողովրդական երաժիշտների (գուռնահարներ, թառահարներ, քամանչահարներ, դիոլահարներ, երգիչներ, դուդուկահարներ, շվիահարներ) ու նվագարանագործների կենսագրությունն ու գործունեությունը: Որոշ դեպքերում նկարագրվում են նաև ժողովրդակենցաղային տարբեր սովորություններ, արարողություններ, տեղեկություններ են հաղորդվում տվյալ ժամանակաշրջանի երաժշտական արվեստի ավանդույթների ու սովորությունների, տեղի ունեցած իրադարձությունների մասին են):

142. Մելիք-Բախչյան Ստ., *Հայոց պաշտամունքային վայրեր*, Երևան, 2009, 432 էջ+8 էջ ներդիր

(Այբբենական կարգով ներկայացվում են հայ ազգագրական տարբեր շրջանների, այդ թվում՝ Արցախի պաշտամունքային վայրերը՝ վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, ուխտատեղիներ են, տեղեկություններ են տրվում նրանց գտնվելու վայրի, ստեղծման, կառուցվածքի, գործունեության, անվան տարբերակների մասին: Ներդիրներում պաշտամունքային այլ վայրերի հետ ընդգրկված են նաև Դադիվանքի, Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու ու Գանձասարի լուսանկարները):

143. Մելիք-Շահնագարեան Կ., *Բուրդ գգելը և գորգ գործելը Ղարաբաղում*, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1928, թիվ 9-10, էջ 475-478

(Ներկայացվում են Ղարաբաղի գյուղերում և Շուշի քաղաքում բուրդ գգելու, թել մանելու ու ներկելու, գորգ և կարպետ գործելու գործընթացները՝ համապատասխան փուլերով, և տարբեր աշխատանքների համար կազմակերպվող փոխօգնության ձևը, որը կոչվում էր *միջի*: Հեղինակը նկարագրում է նաև տնայնագործական այդ աշխատանքների ժամանակ գործածվող գործիքները, սարքավորումներն ու նրանց առանձին մասերը):

144. Մելիք-Շահնագարեան Կ., *Նիւթեր Ղարաբաղի հայ ազգագրութեան համար*, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1931, թիվ 3-5, էջ 246-252, 1932, թիվ 5-6, էջ 331-337

(Ներկայացվում են մի շարք հիվանդությունների (աչքացավ, ականջացավ, ատամնացավ, գլխացավ, արյունահոսություն, հագ, փորացավ, թունավորվածություն, ուռուցք, ռևմատիզմ, ջերմ ու տենդ, մազաթափություն, կոտրվածք, բերանի տհաճ հոտ, միզակապություն, անքնություն, այրվածք, թարախակալում, ցրտահարություն, մկնատամ, մատնաշունչ, կտրվածք, քոս, ծննդկանի ցավեր են) դեմ կիրառվող ժողովրդական բժշկության միջոցներն ու բաղադրատոմսերը: Անդրադարձ է կատարվում նաև ոջիլների, լվերի դեմ պայքարելու, օձերից պաշտպանվելու, ձիու վերքերը բուժելու, արհեստական վիժում կատարելու ժողովրդական միջոցներին):

145. Մելքումյան Ս., *Արցախ-Ղարաբաղ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (Պատմատնտեսաաշխարհագրական ուսումնասիրություն)*, Երևան, 2010, 415 էջ

(Աշխատության մեջ քննության են առնվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսաաշխարհագրական հիմնահարցերը: Հեղինակն առանձին բաժիններով ու



ենթաբաժիններով ներկայացնում է երկրամասի մակերևույթը, կլիման, հողերը, կենդանական ու բուսական աշխարհը, ջրային ռեսուրսները, հանքային ռեսուրսները, համառոտ պատմությունը, վարչական կառուցվածքն ու քաղաքները, բնակչության շարժը, էթնիկ կազմը, նշանավոր գործիչներին, սովորությունները, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտն ու տնտեսական կապերը, կրթությունը, մշակույթը, առողջապահությունը, վարչական շրջանների ու գյուղական բնակավայրերի բնութագիրը, սոցիալ-տնտեսական զարգացման և անկախության ամրապնդման հիմնահարցերը և ուղիները):

146. Մելքունյան Ս., *Ճարտար, Երևան, 2003, 144 էջ + 26 ներդիր*

(Հեղինակը առանձին բաժիններով ներկայացնում է հայրենի՝ Մարտունու շրջանի Ճարտար գյուղի (ներկայումս՝ քաղաք) աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, պատմական անցյալը, կրթական, մշակութային, առողջապահական օջախները, գյուղի կոլտնտեսությունը, բնակչությունը, Արցախյան գոյապայքարում նրանց ունեցած դերը, նշանավոր ճարտարգիներին, տարաբնույթ լուսանկարներ՝ անդրադառնալով նաև գյուղի նիստ ու կացին, սովորույթներին: Առանձին բաժին է նվիրված գյուղի նշանավոր տոհմերի (ազգությունների) նկարագրությանը: Գիրքը լրացված ու վերամշակված ձևով (218 էջ) վերահրատարակվել է Երևանում 2012 թվականին):

147. Մինասյան Ս., *Չափար (Հակառակաբերդ), Ստեփանակերտ, 2010, 320 էջ + 48 էջ ներդիր*

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Մարտակերտի շրջանի Չափար գյուղի հակիրճ պատմությունը, պատմամշակութային հուշարձանները, տեղանունների և անձնանունների ստուգաբանություններ, գյուղացիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյամարտին, գյուղի տարբեր կառույցների ղեկավարներին, տեղեկություններ նշանավոր չափարցիների մասին, տեղի խոսվածքում գործածվող բառեր ու դարձվածներ, զվարճախոսություններ ևն: Առանձին բաժիններով են ներկայացվում գյուղի տոհմերն ու նրանց կազմը 20-րդ դարում, սովորություններն ու ծեսերը: Գրքում ընդգրկված են նաև տասնյակ լուսանկարներ):

148. Մկրտչյան Շ., *Այնուամենայնիվ պետք է ասվի ճշմարտությունը, իսկ ճշմարտությունը հետևյալն է, «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 4 օգոստոսի, 2005, էջ 5-6*

(Գրախոսություն Վ. Թաթևյանի «Արցախի տոհմագորգերը» պատկերագրքի մասին: Հոդվածագիրը խիստ քննադատում է պատկերագիրքը՝ առանց նշելու արժանիքները: Որպես լուրջ թերություններ են նշվում Արցախի գորգարվեստի հետ հարևանցիորեն կապված կամ բոլորովին չկապված մեծ թվով գորգերի լուսանկարների արտատպումը, որոշ լուսանկարների բացատրագրերի բացակայությունը, առաջաբանում Արցախի գորգարվեստի ակունքների վերաբերյալ պատմական ակնարկի բացակայությունը, գորգերի ոչ գիտական դասակարգումը, անհաջող լուսանկարների առկայությունը, տեղանունների ու քարտեզների աղավաղումները ևն):

149. Մկրտչյան Շ., *Արցախ, Երևան, 1991, 112 էջ*

(Համառոտ ներկայացվում են Արցախի աշխարհագրական դիրքը, բնակչիմայական պայմանները, պատմական ու մշակութային զարգացման ճանապարհը, երկրամասի հին ու նոր իրադարձությունները, Արցախյան ազատագրական պայքարի սկզբնավորման ժամանակագրությունը ևն: Գրքում ընդգրկված են նաև պատմաճարտարապետական որոշ հուշարձանների լուսանկարներ):

150. Մկրտչյան Շ., *Արցախի գանձերը. Сокровища Арцаха, Երևան, 2000, 272 էջ*

(Պատկերագիրք (հայերեն և ռուսերեն): Առաջաբանում հեղինակը ներկայացնում է Արցախի համառոտ պատմությունը և տեղեկություններ դարավոր մշակույթի մասին: Բուն պատկերա-



գրքում ընդգրկված են երկրամասի եկեղեցիների, վանքերի, ազգագրական և կենցաղային առարկաների, խաչքարերի, պեղածո տարբեր նյութերի, բնակավայրերի, աղբյուրների, հին գերեզմանաքարերի, մահարձանների, տապանաքարերի, գերեզմանատների, որմնանկարների, գետերի, բերդերի, լեռների, կամուրջների, պարիսպների, գորգերի, կարպետների, արծաթե զոտիների, դաշույնների, ձեռագիր մատյանների ևն հարյուրավոր լուսանկարներ՝ համապատասխան բացատրագրերով):

151. Մկրտչյան Շ., Դավթյան Շ, **Շուշի. ողբերգական ճակատագրի քաղաքը, Shoushy. The city of tragic fate, Երևան, 2008, 242 էջ**

(Հայերենով և անգլերենով ներկայացվում են Շուշի քաղաքի հիմնադրման, պաշտպանության, կրթամշակութային, տնտեսական, քաղաքական պատմությունը, պատմաճարտարապետական հուշարձանները, 1920թ. ողբերգությունը, տարաբնույթ տեղեկություններ: Պատկերագրքում ընդգրկված են նաև քաղաքի 1853թ. հատակագիծը, թեմային առնչվող հուշարձանների, շենքերի, ավերակների, թերթերի, բացիկների, ազդագրերի, խաչքարերի ևն հարյուրավոր լուսանկարներ: Պատկերագիրքը հրատարակվել է նաև ռուսերենով *Мкртчян Ш. Давтян Ш., Шуши. Город трагической судьбы, Ереван, 1997*):

152. Մկրտչյան Շ., **Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները (երկրորդ վերամշակված և լրացված հրատարակություն), Երևան, 1985, 356 էջ**

(Հեղինակն առանձին բաժիններով ու ենթաբաժիններով ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտի, Հաղրուբի, Մարտունու, Ասկերանի, Շուշիի շրջանների բազմաթիվ գյուղերի, գյուղատեղիների, վանքերի, եկեղեցիների, բերդերի, սրբավայրերի, աղբյուրների, կամուրջների, պատմաճարտարապետական այլ հուշարձանների նկարագրություններն ու տասնյակ լուսանկարներ: Աղբյուրագիտական, վիմագրական և այլ նյութերի քննությամբ տրվում են հուշարձանների արժանիքները, դրանցից յուրաքանչյուրի հետ կապված այն կարևորն ու մնայունը, որ միաժամանակ արտացոլում է երկրամասի պատմությունը):

153. Մկրտչյան Ս., **Տոներ. հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Երևան, 2010, 192 էջ**

(Ավանդական-ազգագրական և արդի էթնոսոցիոլոգիական տեսանկյուններով ներկայացվում է հայոց տոնական համակարգը՝ ժողովրդական ծեսերի, սովորույթների ու հավատալիքների ամբողջական համալիրով: «Նախաբանում» անդրադարձ է կատարվում տոների ձևավորմանն ու զարգացմանը, գործառությանն նշանակությանը, հարցի ուսումնասիրության պատմությանը: «Տոները հայոց ավանդական կենցաղում (XIX դ. - XX դ. սկիզբ)» բաժնում հեղինակը առանձին ենթաբաժիններով քննության է առնում *Նոր տարի, Քրիստոսի ծնունդ և մկրտություն (Ջրօրհներ), Սուրբ Սարգիս, Տեառնընդառաջ-Տրրնդեզ, Բարեկենդան, Մեծ պաս, Ծաղկազարդ, Չատիկ, Համբարձում, Վարդավառ, Ս. Աստվածածնի վերափոխում-Խաղողօրհներ, Խաչվերաց, Նավասարդ* տոների դրսևորումները հայ ազգագրական տարբեր շրջաններում, այդ թվում՝ Արցախում: Աշխատության մեջ ներկայացվում են նաև հայոց տոնական համակարգի փոփոխությունները 20-րդ դարում ու 21-րդ դարի սկզբին, սոցիոլոգիական աղյուսակներ ու գծապատկերներ, հայկական հանրապետությունների պետական տոների ցանկերը, ամփոփում, սկզբնաղբյուրների և գրականության ցանկ, մի շարք լուսանկարներ: Հեղինակը թեմային անդրադարձել էր նաև իր «Տոները հայոց արդի կենցաղում (Էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն) աշխատության մեջ /«Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 2007, հ.22, էջ 129-238՝ առանձին գլուխներով ներկայացնելով հայոց տոնական համակարգի փոփոխությունները և պատմական առանձնահատկությունները 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի վերջը, տոների տարածվածության սոցիալական ոլորտները, կենցաղավարման հիմնական գործոնները):



154. Մկրտչյան Ս., ***Տոները դարաբաղցիների ավանդական կենցաղում***, «*Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. Ձեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ*», Երևան, 2007, էջ 395-401

(Տպագիր և ձեռագիր աղբյուրների ուսումնասիրության արդյունքում ներկայացվում են մինչև 20-րդ դարի սկզբները դարաբաղցիների ավանդական կենցաղում առավել տարածված տոները, որոնց կտրուկ անկումը այդ դարասկզբին հիմնականում պայմանավորված է խորհրդային համակարգի հակակրոնական ուղղվածությամբ: Առանձնակի ուշադրություն է դարձվում այդ տոների ժամկետային և արարողակարգային ինքնուրույն դիմագծին, դրանց նվիրված ուխտագնացություններին, կատարվող ծեսերին, խաղերին, մասնակիցների սոցիալական խավերին ևն):

155. Մկրտչյան Ս., ***Շուշվա գորգերի տեղը Արցախի գորգարվեստում***, «*Հայ մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ: Գիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ*», Երևան, 1992, էջ 27-28

(Հայաստանի ազգագրության պետական թանգարանի՝ Շուշի քաղաքից ծագող գորգերի հավաքածուն բաժանելով երեք խմբի (*1.Արցախյան խումբ, 2.Պարսկահայքին բնորոշ խումբ 3.Եվրոպական խումբ*)՝ հեղինակն այդ բազմազանությունը և խայտաբղետությունը համարում է քաղաքի՝ որպես Անդրկովկասի առևտրաարհեստագործական նշանավոր կենտրոնի ունեցած դերով: Ըստ եզրահանգման՝ անհիմն է Շուշիի գորգագործության առանձնացումը և առավել ևս դրա՝ իբրև առանձին կենտրոնի դիտարկումը, քանի որ հարցի մանրամասն քննարկումը բացահայտում է արցախյան ավանդական գորգարվեստի գերակշռող դիրքը Շուշիի գորգագործության համակարգում, ինչպես նաև այդ համակարգում շուկայական արտադրության հետ կապված որոշակի առանձնահատկությունների ի հայտ գալը):

156. Յուզբաշյան Հ., ***Ես ապրել եմ Շուշիում***, Երևան, 2017, 136 էջ

(Ռուսերեն ձեռագրից կատարված հայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ Լ. Հովհաննիսյան) ներկայացվում են հեղինակի հուշերը հայրենի Շուշի քաղաքի (հիմնականում՝ 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների) և իր ընտանիքի ու գերդաստանի մասին: Հուշերում հաճախ անդրադարձ է կատարվում շուշեցիների նիստ ու կացին, ընտանեկան հարաբերություններին, ավանդական տոներին ու սովորություններին: Գրքում ընդգրկված են նաև մի շարք լուսանկարներ):

157. Նանագուլյան Ս., Ավագյան Ք., Պետրոսյան Զ., ***Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում լայնորեն տարածված ուտելի բույսերն ու սնկերը***, «*ԱրՊՀ գիտական տեղեկագիր*», Ստեփանակերտ, 2005, N2, էջ 53-59

(Հավաստելով, որ ԼՂՀ աշխարհագրական դիրքը, ռելիեֆը, կլիման նպաստել են նրա տարածքում կենսաբանական բազմազանության ձևավորմանը, որի արդյունքում հանդիպում են շուրջ 2000 տեսակի բարձրակարգ բույսեր ու 100 տեսակի մակրոսկոպիկ սնկեր՝ հեղինակները ներկայացնում են բնակչության սննդակարգում թարմ ու մշակված վիճակում օգտագործվող շուրջ 100 տեսակի վայրի ու մշակովի բարձրակարգ բույսերն ու 9 տեսակի սնկերը: Տրվում է նաև դրանց կարգաբանությունը՝ ըստ ընտանիքների, օգտագործման ձևերը, անվանումները (լատիներենով, գրական հայերենով, Ղարաբաղի բարբառով), նշվում գույքագրման ու պահպանության անհրաժեշտությունը):

158. Ներսիսյան Ա., ***Ուտեստն իբրև արցախահայերի սոցիոնորմատիվ մշակույթի առանձնահատկությունների արտահայտման միջոց***, «*Հայ մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ: Գիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ*», Երևան, 1992, էջ 29-30



(Ընդգծելով, որ ուտեստը, կենսական անհրաժեշտություն լինելով, նաև միջնորդավորում է մարդկանց միջև եղած սոցիալական կապերը, տնտեսական, հասարակական-ընտանեկան, սեռատարիքային և այլ բնույթի հարաբերությունները և ընդգծում տվյալ հանրությանը բնորոշ վարքի ավանդական ձևերն ու նորմերը՝ հեղինակը փորձում է դիտարկել արցախահայերի ուտեստը՝ որպես սոցիալական գործառույթ կատարող կենցաղամշակութային առանձնահատուկ տարր):

159. Շագոյան Գ., **«Յոթ օր, յոթ գիշեր»**. *հայոց հարսանիքի համայնապատկեր*, Երևան, 2011, 616 էջ + 32 էջ գունավոր ներդիր

(Տարբեր աղբյուրների և դաշտային ազգագրական հարուստ նյութերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը քննության է առնում հայկական ամուսնական ծեսի հետ կապված ողջ գործընթացը՝ առանձին բաժիններով ու ենթաբաժիններով նկարագրելով ամուսնացողների տարիքը, աղջիկտեսը, խնամախոսությունը, խոսքկապը, նշանդրեքը, հարսնատեսն ու փեսատեսը, հղե կտրելը, բուն հարսանիքը և դրանից հետո կատարվող ծեսերը: Առավել մանրամասն է ներկայացվում ավանդական հարսանիքը՝ 19-րդ դարի վերջի-20-րդ դարի սկզբի ծիսակարգը, ներկայացվում են ծեսի փոփոխությունների հիմնական միտումներն ու վերջին զարգացումները: Հայկական պատմաազգագրական տարբեր շրջանների թվում հեղինակը հաճախ անդրադառնում է արցախյան հարսանիքների առանձնահատկություններին ու համահայկական ընդհանրություններին: Աշխատության մեջ ընդգրկված են նաև բազմաթիվ լուսանկարներ):

160. **Շուշի. Шыш. Shushi**, Երևան, 2007, 40 էջ

(Եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գիրք-ալբոմ: Առանձին բաժիններով համառոտ ներկայացվում են Շուշի քաղաքի պատմությունը, աշխարհագրական դիրքն ու բնական պայմանները, արհեստագործությունը, կրթությունը, մշակույթը, հուշարձանները, պարբերական մամուլը: Պատմական փաստերի վրա հիմնված նյութը ուղեկցվում է համապատասխան բնագավառներն արտացոլող տասնյակ լուսանկարներով):

161. **Շուշի քաղաք**, «Հայկական աշխարհ», Շուշի, 1874, N1-2, էջ 34-39

(Ներկայացվում է Շուշի քաղաքի համառոտ պատմությունը, նրա աշխարհագրական դիրքը, կլիման, բնակչության թիվն ու էթնիկ կազմը: Համառոտ տեղեկություններ են հաղորդվում նաև քաղաքի առևտրական կյանքի, թաղամասերի, փողոցների, եկեղեցիների, հոգևոր դպրոցի, մասնավոր ուսումնարանների, մերձակայքում գտնվող «Թթու ջուր» հանքային աղբյուրի ևն մասին):

162. Պետրոսյան Ա., **Լեռնի (Առաքել Բաբախանյանի) «Ուխտավորի հիշատակարանը» որպես Արցախի ազգագրական ուսումնասիրության սկզբնաղբյուր**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Ստեփանակերտ, 2011, N1, էջ 50-60

(Հիշատակարանները, ճամփորդական նոթերը, ուղեգրական վկայությունները համարելով ազգագրական գիտության կարևոր սկզբնաղբյուրներ՝ հեղինակը ներկայացնում է Լեռնի «Ուխտավորի հիշատակարանում» տեղ գտած ազգագրական նյութերը՝ ավանդություններ, հավատալիքներ, ուխտատեղիների, աղբյուրների, խաչի դուլերի, սուրբի դուլերի, չոփչի կանանց գործառույթների ևն նկարագրություններ, որոնք ըստ հեղինակի՝ հնարավորություն են տալիս հասկանալու 19-րդ դարի երկրորդ կեսին արցախահայության մեջ պահպանված, սերնդից սերունդ փոխանցված ավանդական կենցաղն ու մշակույթը:

163. Պետրոսյան Լ., **Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ. հետիոտն և գրաստային փոխադրամիջոցներ (պատմաազգագրական ուսումնասիրություն)**, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1974, հ.6, էջ 91-160 + 32 էջ ներդիր



(Պատմաագագրական տպագիր, արխիվային և իր հավաքած դաշտային ազգագրական նյութերի հիմքի վրա հեղինակը քննության է առնում հայ ժողովրդական հետիոտն ու գրաստային փոխադրամիջոցները հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարը: Առանձին գլուխներով ու բաժիններով ներկայացվում են հաղորդակցության ուղիները, փոխադրամիջոցները (ձիագրաստ, էշագրաստ, ջորեգրաստ, գրաստային այլ փոխադրամիջոցներ), փոխադրության հարմարանքներն ու եղանակները: Ազգագրական տարբեր շրջանների շարքում անդրադարձ է կատարվում նաև Արցախին: Ուսումնասիրության մեջ ու հատկապես ներդիրներում ընդգրկված են համապատասխան գծանկարներ և լուսանկարներ, որոնց հեղինակն է Գ. Ժամկոչյանը: Ուսումնասիրության երկրորդ մասը՝ «*Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղերսները*», հրատարակվել է 2007թ. /«*Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ*», Երևան, 2007, հ.22, էջ 239-258 + 4 էջ ներդիր/):

164. Պետրոսյան Հ., **Քարաբլուրի նորագյուտ սրբարանը և «Սուրբ օջախների» պաշտամունքն Արցախում**, «*Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը*», Երևան, 2001, էջ 347-356

(Համառոտ նկարագրելով 1996թ. Ասկերանի շրջանի Լուսաձոր գյուղի մոտակայքում գտնվող Քարաբլուր բնակատեղիում կատարված պեղումների արդյունքում հայտնաբերված սրբարանը՝ հեղինակը մասնագիտական գրականության և իր կողմից հավաքված դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրությամբ հանգամանորեն քննության է առնում ընդհուպ մինչև 20-րդ դարի վերջերը Արցախում լայն տարածում ու կենցաղավարում ունեցող «Սուրբ օջախների» պաշտամունքը: Առանձին ենթաբաժիններով ներկայացվում են անվանաբանությունը, գործառույթները, կառուցվածքը, տեսակները, տարբերությունները սովորական կրակարաններից, թոնիրներից, մատուռներից, դրանց հետ կապված ծիսակատարություններն ու արարողությունները նև: Ըստ հեղինակի եզրակացության՝ «Սուրբ օջախի» պաշտամունքը գուտ արցախյան երևույթ է):

165. Պետրոսյան Վ., **Ներքին շեն. վավերագրված կարոտ**, *Մոսկվա*, 2008, 412 էջ

(Հեղինակն առանձին բաժիններով և ենթաբաժիններով ներկայացնում է Հյուսիսային Արցախի՝ 1992թ. հունիսի 13-ին ադրբեջանցիների կողմից բռնի հայաթափված Ներքին Շեն (Շահումյան ավան) բնակավայրի պատմությունը տարբեր շրջաններում, մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և արցախյան գոյամարտին, տեղանունները, բնակիչների հետ կապված զվարճախոսություններ, մականուններ, տարաբնույթ ցանկեր, լուսանկարներ: «*Տեղեկություններ Ներքին շենի ազգերի մասին*» բաժնում հանգամանորեն ներկայացվում են գյուղի գերդաստաններն ու դրանցից որոշների տոհմաձառերը):

166. Պիկիչյան Հ., **Ավանդական հարսանեկան ծեսի երաժշտական կերտվածքը Դաշտային Ղարաբաղում**, «*Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. գեկուցումների հիմնադրություններ. հունիսի 21-24, 2006 թ.*», *Ստեփանակերտ*», Երևան, 2006, էջ 177-178

(Հիմք ընդունելով 1985թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմակերպած գիտարշավի ընթացքում Շահումյանի, Քարհատի (Դաշքեսան), Խանլարի շրջանների հայկական բնակավայրերում իր գրանցած էթնոերաժշտագիտական նյութերը՝ հեղինակը Լեռնային Արցախի և Հայաստանի այլ մարզերի երաժշտական ավանդույթի համատեքստում դիտարկում է Դաշտային Արցախի ավանդական հարսանեկան ծեսի երաժշտությունը՝ կատարելով մի շարք եզրահանգումներ և հավաստելով, որ Դաշտային Արցախի հարսանեկան ծեսի երաժշտական կերտվածքը համահայկական հարսանիքի երաժշտական ավանդույթի աներկբա բաղադրիչներից է՝ հայոց հեթանոսական ավանդույթներից դեպի քրիստոնեական-եկեղեցական և ժողովրդական մշակութային աշխարհայացք ձգվող տարաբնույթ փոխակերպումներով):



167. Պլուզեան Ա., *Արցախի նահանգի Ջրաբերդ գաւառը*, «Արարատ», Վաղարշապատ, 1871, թիւ Ը, էջ 440-443

(Համառոտ տեղեկություններ են հաղորդվում Արցախի Ջրաբերդ գավառի սահմանների, աշխարհագրական դիրքի, կենդանական աշխարհի, մշակվող բույսերի, գետերի, որոշ գյուղերի, բնակչության թվի ու զբաղմունքների, Երից Մանկանց վանքի, ավերված բնակատեղիների, Ջրաբերդ ամրոցի և մասին):

168. Պողոսյան Ա., *Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների տարածման արեալների մասին*, «Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին», *Ստեփանակերտ*, 2009, պրակ 1, էջ 256-258

(Հավաստելով, որ գորգագործական բազմաթիվ կենտրոններում արմատացած գորգերի մի շարք տիպեր ակնհայտորեն նմանվում կամ կրկնում են Արցախյան գորգերին՝ հեղինակը անդրադառնում է հյուսիսարևելյան Անդրկովկասի, հատկապես՝ Շիրվանի, Շաքիի ու Դերբենդի տարածաշրջանների գորգագործության ձևավորման մեջ Արցախի ունեցած դերին: Ըստ հեղինակի՝ Դերբենդի գորգագործական կենտրոններում խոսքն առաջին հերթին վերաբերում է «Ջրաբերդ», «Ամարաս», «Գետաշեն», «Որոտան», իսկ Շաքիի ու Շիրվանի դեպքում՝ նաև «Ճարտար», «Հաղպատ», «Ուտիք», «Ոսկանապատ», «Բանանց», «Փյունիկ», «Միսական», «Գանձակ» և այլ տիպերի գորգերին: Հեղինակը թեմային անդրադարձել է նաև իր «Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթները հյուսիսարևելյան Այսրկովկասում» /Գավառի պետական համալսարան. Գիտական հոդվածների ժողովածու, 14, Երևան, 2012, էջ 240-250/, «Հայոց գորգագործական մշակույթի ավանդույթները հյուսիսարևելյան Այսրկովկասում. Traditions of Armenian rug weaving culture in Northeastern Stranscaucasus» /«Հայկական հանգույց. Գորգարվեստի ավանդույթները. Միջազգային գիտաժողով, Երևան, 20-22 նոյեմբերի, 2013. Զեկուցումներ», Երևան, 2016, էջ 297-314/ հոդվածներում):

169. Պողոսյան Ա., *Արցախի գործագործության ավանդույթների տարածման արեալների ու Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին*, «Բանբեր հայագիտության», 2015, N 2-3, էջ 78-104

(Պատմական Հայաստանի գորգագործական կենտրոնների թվում արցախյան գորգագործական մշակույթի մեծ կարևորությունը շեշտելով՝ հեղինակը տարբեր սկզբնաղբյուրների և իր՝ 1979-1989թթ. հավաքած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրության արդյունքում առանձին բաժիններով հանգամանորեն անդրադառնում է այդ մշակույթի ծագումնաբանական ու հետագա զարգացումների հարցերին, արցախյան գորգերի տիպերին ու նրանց գեղագարդումներին, Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոններում արցախյան գորգագործական ավանդույթների տարածմանը ևն: Ըստ հեղինակի եզրահանգումների՝ արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթները արցախահայոց տեղաշարժերի պատճառով արմատավորվել են նաև Կովկասի հարավարևելյան տարածաշրջաններում ու հիմք հանդիսացել գորգագործական նոր կենտրոնների առաջացման համար՝ միաժամանակ 16-18-րդ դարերի ընթացքում դավանափոխ եղած տասնյակ հազարավոր հայերի միջոցով մտնելով նաև մահմեդական ցեղերի միջավայր: Ուսումնասիրությանը կցված են նաև մատենագիտական ցանկ, տարբեր տիպի գորգերի լուսանկարներ, ռուսերեն և անգլերեն ամփոփումներ):

170. Պողոսյան Ա., *Հարթակարով ասեղնագործական մշակույթի ավանդույթների մասին*, «Էջմիածին», *նոյեմբեր-դեկտեմբեր*, 2011, Է, էջ 53-60

(Համառոտ անդրադառնալով հայոց ասեղնագործական մշակույթի համակարգում ասեղնագործելու առավել տարածված հարթակար եղանակին՝ հեղինակը ներկայացնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններում պահվող՝ ուշ միջնադարի արցախյան ասեղնագործական մշակույթին վերաբերող ու հարթակար եղանակով արված գեղագարդ մի թագի ու Ագու-



լիսում ստեղծված մետաքսե վարագույրի պատմությունները, նրանց գեղազարդման առանձնահատկությունները, նախշատեսակները, աղբյուրները վիշապագորգերի գեղազարդման համակարգի հետ են: Ըստ հեղինակի՝ նշված ստեղծագործությունները վկայում են այն մասին, որ ուշ միջնադարում Արցախ-Սյունիքի մշակութային կենտրոններում գոյություն ունեին հարթակար ասեղնագործության զարգացած ավանդույթներ, որոնք տարածվել են նաև հյուսիսարևելյան Այսրկովկասում):

171. Պողոսյան Ա., **Շուշին գորգագործական մշակույթի կենտրոն (ԺԹ դարի վերջ - Ի դարի առաջին քառորդ)**, «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական հանդես, 2014, Բ, էջ 42-49

(Հավաստելով, որ 19-րդ դարի վերջին ու հատկապես 20-րդ դարի սկզբին Շուշիում, ի տարբերություն Արցախի մյուս բնակավայրերի, զարգացում էին ապրում հատկապես շուկայական ուղղվածության տնտեսաձևերն ու մասնավորաբար գորգագործությունը, և անդրադառնալով Շուշիի գորգագործական մշակույթի ծագումնաբանական ու դրսևորման հարցերին՝ հեղինակը ներկայացնում է գորգերի տեսակները, դրանց գեղազարդման առանձնահատկություններն ու տարածման արեալները, ինչպես նաև «Պատկերային», «Աղբակ», «Ճարտար», «Ամարաս» տիպի գորգերի լուսանկարներ):

172. Պողոսյան Ա., **«Ջրաբերդ» խմբի գորգերի ծագումնաբանական հարցերի մասին**, «Էջմիածին», փետրվար, 2008, ԺԲ, էջ 38-49

(Քննության են առնվում հայոց ավանդական գորգերի կազմում առանձնակի հետաքրքրություն ներկայացնող դասական վիշապագորգերի գեղազարդման համակարգին անմիջականորեն առնչվող «Ջրաբերդ» խմբի գորգերը, որոնց գործելու հիմնական տարածաշրջանները համարվում են Արցախն ու Սյունիքը: Առանձին ենթաբաժիններով հեղինակը հանգամանորեն ներկայացնում է դրանց հետ կապված տիպաբանական տարբեր հարցեր, հարուստ և բազմաբովանդակ նկարագիրը, տարածաշրջանի գորգագործական մշակույթի ավանդույթները, տարածման արեալներն ու գորգագործական այլ կենտրոններում ունեցած արտահայտությունները են):

173. Պողոսյան Ա., **Արցախի ավանդական տարազը և նրա էվոյուցիան**, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», Երևան, 1988, N5-6, էջ 37-43

(Հավաստելով, որ Արցախի հայերի տարազը կազմում է հայկական բազմախումբ տարազի անբաժանելի մասը և ներկայանում է համահայկական բնութագիր ունեցող բազմաթիվ ընդհանրական գծերով՝ հեղինակը ներկայացնում է 19-րդ դարի վերջերին Արցախում կենցաղավարող տարազի երկու համալիր՝ «հայավարի» ու «քաղքավարի», տարբերակները: Անդրադարձ է կատարվում կանանց ու տղամարդկանց, տարեցների ու երիտասարդների տարազի առանձին մասերին՝ շապիկ, վարտիք, արխալուղ, չուխա, այծենակաճ, գլխարկ, գոտի, գլխի հարդարանք, գոգնոց, գուլպա, սոնապան, ոսոնաման են, դրանց կառուցվածքին, գունային երանգներին, հայ ազգագրական այլ շրջանների հետ ունեցած ընդհանրություններին և առանձնահատկություններին):

174. Պողոսյան Ա., Ստեփանյան Ա., **Սյունիք-Արցախի ավանդական տարազախումբը հայոց տարազի համակարգում**, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006 թ.», Երևան, 2007, էջ 417-424

(Հրապարակի վրա եղած և 1993թ. Արցախում անձամբ հավաքած փաստացի նյութի ուսումնասիրության արդյունքում առանձին ենթաբաժիններով ներկայացվում են երկրամասի կանանց ու տղամարդկանց տարազի տեսակները, դրանց բաղկացուցիչ մասերը, առանձնահատկությունները, ժամանակի ընթացքում կրած փոփոխությունները, ընդհանրությունները հարևան և հայ ազգագրական այլ շրջանների տարազի հետ: Վերջում հեղինակները ցանկություն են



հայտնում, որ հայկական թանգարաններն ու գեղարվեստական սրահները, սերտ կապեր հաստատելով Արցախի ժողովրդական վարպետների հետ, կազմակերպեն արցախյան ավանդականի օրինակով պատրաստած մշակութային արժեքների, այդ թվում և տարազի առանձին մասունքների պատվիրման ու ցուցահանդես-վաճառքի հետ կապված աշխատանքները):

175. Սամվելյան Է., *Կարոտի կանչ*, Երևան, 2004, 240 էջ

(Հեղինակը ներկայացնում է հայրենի՝ Ասկերանի շրջանի պատմական Դահրավ գյուղի պատմությունը, աշխարհագրական դիրքը, սրբատեղիները, տեղանունները, կենդանական և բուսական աշխարհը, իր տոհմի և ընտանիքի պատմությունը, դրվագներ իր կյանքից՝ հաճախ անդրադառնալով գյուղի նիստ ու կացին, բնակիչների առօրյային, հարաբերություններին նն: Հավելվածներում տրվում են գյուղի տոհմերի ճյուղերը, բնակիչների ցուցակն՝ ըստ տոհմերի, յոթաքանչյուր տոհմի տղամարդկանց ու կանանց թիվը):

176. Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, *Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան (գրաբարից աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ս. Գրիգորյանի)*, Երևան, 2016, 696 էջ

(Հեղինակը Արևելյան Հայաստանի տարբեր գավառներ կատարած իր շրջագայությունների ընթացքում գրառած նյութերի հիման վրա նկարագրում է համապատասխան տեղանքը, բնակավայրերը, սրբավայրերը, հնությունները, լեռները, եկեղեցիների, վանքերի, բերդերի, պալատների պատերին ու պարիսպներին պահպանված արձանագրությունները, ձեռագրերի հիշատակարաններ, փաստաթղթեր նն: Գրքի առաջին և երկրորդ մասերում առանձին ենթաբաժիններով ներկայացվում են նաև Արցախի մի շարք բնակավայրեր (Շուշի, Մոխրաթաղ, Ասկերան, Հաթերք, Ավետարանոց, Առջաձոր, Տող, Վաղահաս, Ծակուռի, Թաղլար, Բլեթանց, Հերհեր, Ծովատեղ, Սոս, Կալեր, Գիշի, Խնուշինակ, Ճարտար, Ննգի, Հացի, Դահրավ, Քարազուլիս), եկեղեցիներ ու վանքեր (Հոռիկ, Ջրվշտիկ, Եղիշե Առաքյալ անապատ, Ղևոնդ անապատ, Գանձասար, Պոկեսի Բերք, Ամարաս, Դաղի վանք, Խաթրա վանք), լեռներ (Դիզափայտ, Աստղաբլուր, Մոավ, Տողի լեռ), գետեր (Ղուռու չայ, Թարթառ) նն: Գիրքը առաջին անգամ հրատարակվել է երկու հատորով՝ գրաբար /Ջալալեանց Ս., *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տիփսիս, 1842, մասն Բ, Տիփսիս, 1858*):

177. Սարգսյան Ա. (Աղելա), *Արցախի ժանյակները*, «Ազատ Արցախ», *Ստեփանակերտ, 31 հուլիսի, 2007, էջ 7*

(Հեղինակը ներկայացնում է արցախյան ասեղնագործ ու հելունագործ ժանյակների առանձնահատկությունները, անդրադառնում դրանց թելերի, նախշերի, ձևերի ընտրությանը, ճարտարապետական կառույցների զարդանախշերի, առանձին զարդաքանդակների, խաչքարերի զարդանկարների հետ ունեցած աղերսներին, տարբեր ժամանակներում ժանեկագործությամբ զբաղված արցախցի վարպետներին: Հոդվածը տպագրվել է նաև ռուսերենով /*Кружева Арцаха, «Азат Арцах», Степанакерт, 26 января, 2002, сс. 6, 8*):

178. Սարգսյան Ա. (Աղելա), *Արցախի գուլպաները*, «Ազատ Արցախ», *Ստեփանակերտ, 25 օգոստոսի, 2001, էջ*

(Ներկայացվում են արցախյան գուլպաների տեսակները, դրանց նախշերի ու գործելու յուրահատկությունները, գուլպայագործության մեջ հմտացած որոշ վարպետների անունները: Անդրադարձ է կատարվում նաև գոտիներին ու տրեխներին: Հոդվածը տպագրվել է նաև ռուսերենով /*Арцахские гулпа, «Азат Арцах», Степанакерт, 8 сентября, 2001, с. 6, 7*):

179. Սարգսյան Ա. (Աղելա), *Արցախի 20-րդ դարի ժանյակներ*, «Ազատ Արցախ», *Ստեփանակերտ, 10 ապրիլի, 2004, էջ 7*



(Հեղինակը ներկայացնում է իր կազմած *«Արցախի ժանյակներ»* պատկերագիրքը: Անդրադառնալով նշանավոր Արզու Խաթունի և Վախթանգ Տանգիկի կնոջ՝ իշխանուհի Խորիշահի ասեղնագործական ու ժանեկագործական արվեստին՝ Ս. Սարգսյանն այն համոզմունքն է հայտնում, որ պատմական Արցախում այդ արհեստները զարգացած են եղել դեռևս 12-րդ դարում: Հոդվածը տպագրվել է նաև ռուսերենով */Кружева Арцаха 20 века, «Азат Арцах», Степанакерт, 24 апреля, 2004, с. 8/*:

180. Սարգսյան Ա. (Ադելա), *Արցախի ժանյակներ, Ստեփանակերտ, 1 գիրք, 2006, 224 էջ*

(Գերազանցապես Արցախում կատարված ձեռագործ աշխատանքների պատկերագիրք (հայերեն և ռուսերեն): Նախաբանում համառոտ ներկայացվում է արցախյան ձեռագործության պատմությունը, առանձին ենթաբաժիններում տեղեկություններ են տրվում ժանեկագործության, ասեղնագործության, հելունագործության, վերադիր կարի, գուլպաների, գոտիների ևն մասին: Բուն ժողովածուում ընդգրկված են տարիների ընթացքում հեղինակի հավաքած՝ 1900-2000 թթ. հայ շնորհալի ձեռագործների աշխատանքների լուսանկարները (230 նմուշ): Վերջում հակիրճ տվյալներ են հաղորդվում համապատասխան ժանեկագործ վարպետների մասին):

181. Սարգսյան Ա., *Արցախի ազգագրության ուսումնասիրությունն անկախության տարիներին, «Արցախի պետական համալսարան. գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)», Ստեփանակերտ, 2016, պրակ I, էջ 255-260*

(Համառոտ անդրադառնալով 19-րդ դարի կեսերից մինչև 1980-ական թվականների վերջերը Արցախի ազգագրության վերաբերյալ եղած ուսումնասիրություններին՝ հեղինակը հոդվածում այնուհետև քննության է առնում այդ բնագավառում անկախության տարիներին ստեղծված տպագիր աշխատությունները, գիտական հոդվածներն ու զեկուցումները, տարաբնույթ ժողովածուները, որոնք լիովին կամ մասնակիորեն առնչվում են խնդրո առարկա հարցին: Առավել ուշադրություն է դարձվում այն աշխատանքներին, որտեղ ներկայացվում է Արցախի ազգագրության կամ նրա որևէ բնագավառի ամբողջական ուսումնասիրությունը):

182. Սարգսյան Ա., *Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը «Ազգագրական հանդեսի» էջերում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2017, էջ 59-66*

(Արժևորելով Ե. Լալայանի՝ 1896թ. Շուշիում հիմնադրած *«Ազգագրական հանդեսի»* դերը հայ ժողովրդագիտության ուսումնասիրման գործում՝ հեղինակը քննության է առնում հանդեսի հատորներում տպագրված՝ Արցախի ազգագրությանը, բանահյուսությանը, բարբառին վերաբերող ուսումնասիրություններն ու նյութերը: Առանձին ենթաբաժիններով ըստ բաժինների ներկայացվում են հանդեսի *Բ* և *Գ* գրքերում Ե. Լալայանի խմբագրությամբ հրատարակված *«Վարանդա»* ուսումնասիրությունը և XVII, XVIII, XIX գրքերում հրատարակված Ա. Դադյանի *«Վարանդայի բանառը գրականությունից»* ժողովածուն, որտեղ ներկայացված են Արամ Դադյանի՝ 1903 թ. և նրա եղբոր՝ նշանավոր ժողովրդագետ Խաչիկ Դադյանի՝ 1885-1889թթ. Վարանդայի, մասամբ նաև Դիզակի և Խաչենի գյուղերից գրառած ժողովրդական վիճակի երգեր՝ ջանգլուումներ):

183. Սարգսյան Ա., *Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը Ստեփան Լիսիցյանի ուսումնասիրություններում, «ԱրՊՀ հայագիտական ուսումնասիրություններ», Ստեփանակերտ, 2016, էջ 67-86*

(Հեղինակն արժևորում է Ս. Լիսիցյանի ազգագրական ժառանգությունը՝ այն համարելով անփոխարինելի հիմք Արցախի ժողովրդագիտության ուսումնասիրության համար: Ըստ առանձին գլուխների ու բաժինների՝ վեր են լուծվում նշանավոր ազգագրագետի *«Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)»* աշխատությունը, նրանում քննված ազգագրական, բանահյուսական, բարբառագիտական հարցերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաև Ս.



Լիսիցյանի «К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам)» ու «Չանգեզուրի հայերը» ուսումնասիրություններին և «О книге В. А. Петрова «Этноботаника Нагорного Карабаха» գրախոսությանը):

184. Սարգսյան Ա., **Արցախի ժողովրդագիտությունը «СМОМПК (Сборник материалов для описания местностей и племен Кавказа)» հանդեսի էջերում**, «Գիտական ընթերցումներ. հոդվածների ժողովածու. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2017, էջ 86-90

(Ներկայացվում են 1881թ. Կովկասյան ուսումնական օկրուգի կողմից Թիֆլիսում հիմնադրված «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» հանդեսի տարբեր պրակներում ուսերենով տպագրված՝ Արցախին վերաբերող Ն. Գրիգորովի «Село Саров, Елисаветпольской губернии, Джеванширского уезда», Ի. Դավիդիևի «Село Гадрут, Елисаветпольской губернии, Джебраильского уезда», Ս. Պողոսովի «Тамерлан по рассказам джеванширских армян», Գ. Իգրայելովի «Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисаветпольской губернии», «Описание минерального источника Истису (теплый ключ)», Յ. Ջեդզենիձեի, Ս. Զախարևիևի, Ա. Տեր-Եղիազարովի, Բ. Իբրահիմբեկովի, Ն. Պողոսովի, Գ. Իգրայելովի, Ի Դավիդիևի «Промысловья занятия в некоторых населенных пунктах Закавказья», Գ. Իգրայելովի «Село Касапет, Елисаветпольской губернии, Джеванширского уезда», Ա. Միրզոնի «Предание о Див-Архе», Ա. Կալաշնի «Вардавар (сел. Чайкенд, Елисаветпольской губернии)», Ե. Մելիք-Շահնազարովի «Из древностей селения Ченахчи (Елисаветпольской губернии, Шушинского уезда)», Օ. Ջեյրանովի «Селение Чайкенд, Елисаветпольского уезда, той же губернии», Գ. Օսիպովի «Селение Даш-Алты, Шушинского уезда, Елисаветпольской губернии» ևն ժողովրդագիտական նյութերը, անդրադարձ է կատարվում դրանցում քննված թեմաներին:

185. Սարգսյան Ա., Սարգսյան Լ., **Արցախի ազգագրությունը Երվանդ Լալայանի «Վարանդա» ուսումնասիրության մեջ**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2018, էջ 347-352

(Հեղինակները քննության են առնում «Ազգագրական հանդեսի» Բ և Գ գրքերում հրատարակված Ե. Լալայանի «Վարանդա» ժողովածուն, որտեղ ներկայացված է Արցախի Վարանդա գավառի ազգագրությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաև ժողովածուի տարբեր բաժիններում ազգագրականի հետ միասին ընդգրկված բանահյուսական նյութերին):

186. Սարգսյան Հ., **Լեռնային Ղարաբաղի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացը XIX դարում**, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողով. զեկուցումների ժողովածու. հունիսի 21-24, 2006 թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 455-464

(Համառոտ անդրադառնալով պատմական Արցախ աշխարհի բնակչության ժողովրդագրական իրավիճակին և հիմք ընդունելով 19-րդ դարի մարդահամարների ու կամերիալ ցուցակների տվյալները՝ հեղինակը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի բնակչության տվյալ ժամանակաշրջանի էթնոժողովրդագրական նկարագիրը՝ առանձնացնելով երեք փուլ՝ 19-րդ դարի սկզբից մինչև 1830թ., 1830-1850թթ., 1850 թվականից մինչև 1900թ: Արդյունքում պարզվում է, որ 1823թ. Ղարաբաղի տարածքում անցկացված պաշտոնական առաջին հաշվառումներից մինչև 1897թ. համառոտաստանյան առաջին մարդահամարն ընկած 74 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի բնակչությունն աճել է 3,5 անգամ, ընդ որում եթե հայ բնակչության թիվն աճել է 3,4 անգամ, ապա թյուրքալեզու էթնիկ խմբերինը՝ 3,8, իսկ փոքրաթիվ էթնիկ խմբերինը՝ 6 անգամ):

187. Սարգսյան Հ., **Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության աճի տեմպերը 19-րդ դ. սկզբից մինչև 1914թ.**, «Հայ մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ: Գիտական նստաշրջան. Ջեկուցումների հիմնադրույթներ», Երևան, 1992, էջ 33-34



(Հիմք ընդունելով խնդրո առարկա ժամանակաշրջանի վերաբերյալ եղած վիճակագրական տվյալները՝ ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության աճի տեմպերը 19-րդ դարի սկզբից մինչև Ղարաբաղի խանության միացումը Ռուսաստանին: Ըստ ուսումնասիրության ամփոփման՝ սկսած 1830-ական թվականներից մինչև 1914թ. Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը աճել է 113,3 հազարով կամ ավելի քան 6 անգամ, իսկ տարեկան միջին աճը կազմել է 1,6 հազար մարդ: Աճի նման բարձր տեմպերը հեղինակը կապում է ոչ միայն բնական աճի, այլև տեխնիկական տեղաշարժերի հետ):

188. Սարգսյան Մ., *Դիզակի աղբյուրները և դրանց կառույցների ճարտարապետությունը*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1986, N11, էջ 59-64

(Ընդգծելով աղբյուրների նկատմամբ արցախցիների հատուկ վերաբերմունքը և վերջինիս արտացոլումը նրանց ճարտարապետության մեջ, ինչի արդյունքում աղբյուրները հաճախ հանդես են գալիս որպես գյուղի հատակագծային լուծման տիրապետող առանցք՝ որոշ բնակավայրերում դառնալով հասարակական կենտրոն՝ հեղինակը հանգամանորեն նկարագրում է պատմական Դիզակ գավառի Տոդ, Կեմրակուչ, Տյաք գյուղերի աղբյուրները: Անդրադարձ է կատարվում դրանց հատակագծերին, ճարտարապետական հորինվածքին, առջևում տեղադրված ջրամբարներին ևն):

189. Սարգսյան Ս., Առաքելյան Յու., *Պատարա*, Երևան, 2006, 24 էջ + 20 էջ ներդիր

(Ներկայացվում են Ասկերանի շրջանի Պատարա գյուղի և համանուն գետահովտի աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, կլիման, կենդանական ու բուսական աշխարհը, տեղամասերը, պատմաճարտարապետական հուշարձանները, բնության, եկեղեցիների, խաչքարերի, սրբավայրերի, գերեզմանոցների, բերդերի ևն լուսանկարներ: Վերջում տրվում է գետահովտի պատմամշակութային հուշարձանների ցանկը (200 միավոր):

190. Սարգսյան Ս., *Արցախի բնակավայրերը*, Երևան, 2018, 232 էջ + 48 էջ ներդիր

(Առանձին բաժիններով և ենթաբաժիններով ներկայացվում են Արցախի Հանրապետության Հաղորոթի, Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի, Շուշու, Քաշաթաղի, Շահումյանի շրջանների բնակավայրերի անունների, ինչպես նաև «Կաս», «Արցախ», «Ղարաբաղ», «Ուտիք» տեղանունների ստուգանանությունները, որոշակի տեղեկություններ հաղորդվում այդ բնակավայրերի մասին: Ներդիրներն ընդգրկում են բոլոր շրջանների բնակավայրերի քարտեզներն ու տասնյակ բնակավայրերի և որոշ հուշարձանների լուսանկարներ: Վերջում տրվում են ամփոփում (ռուսերեն լեզվով) ու մատենագիտական ցանկ):

191. Սարգսյան Ս., *Խնապատ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*, Երևան, 2006, 304 էջ + 44 ներդիր

(Մատենագիտական աղբյուրների, արխիվային վավերագրերի, վիմագիր արձանագրությունների, պատմական հուշարձանների, իր գրառած դաշտային նյութերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը ներկայացնում է Ասկերանի շրջանի Խնապատ գյուղի աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, պատմությունը, մանրատեղանունները, պատմական հուշարձանները, բնակիչների մասնակցությունը հայրենական մեծ պատերազմին և Արցախյան գոյամարտին, տեղեկություններ դպրոցի, վաստակաշատ մանկավարժների և անվանի շրջանավարտների մասին, տարբեր, այդ թվում՝ ազգագրական բնույթի որոշ առարկաների լուսանկարներ ևն):

192. Սարգսյան Ս., *Թալիշ*, Երևան, 2007, 176 էջ

(Հեղինակը ներկայացնում է Արցախյան հերոսամարտի ընթացքում զոհված համազյուղացիների՝ թալիշցիների սխրանքը՝ համապատասխան լուսանկարներով: Առաջին մասում՝ «Համառոտ ակնարկ Թալիշի մասին», տեղեկություններ են տրվում գյուղի պատմության, պատմա-



ճարտարապետական հուշարձանների, տնտեսական կյանքի մասին են: Գրքի որոշ հատվածներ հրատարակվել են նաև «Արցախապատում» մատենաշարում /Գիրք 4, Ստեփանակերտ, 2015, էջ 145-167 + 28 էջ ներդիր/:

193. Սեյրան Գ., **Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները**, Թիֆլիս, 1928, 80 էջ

(Տարբեր աղբյուրներից հավաքած նյութերի հիմքի վրա հեղինակը առանձին բաժիններով ու ենթաբաժիններով ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի տվյալ ժամանակաշրջանի համառոտ պատմությունը, վարչական բաժանումը, տարածքը և ազգաբնակչությունը, հողաշինարարությունը, հողօգտագործությունը՝ ցանքաստեղերի տարածությունը և բերքը (ցորեն, գարի, կորեկ, հաճար, կարտոֆիլ, լոբի, բամբակ ծխախոտ են), ազարակային հողամասերը (մրգի, խաղողի, թթենու այգիներ, օղու արտադրություն), կենդանաբուծությունը՝ խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծում, խոզաբուծություն, ձիաբուծություն, ջրբուծություն, էշաբուծություն, մեղվաբուծություն, շերամապահությունը և մետաքսի թելի արտադրությունը, արոտատեղիները, անտառները, տարածված ծառատեսակներն ու փայտամշակությունը, տնայնագործությունը՝ թելագործություն, գորգագործություն, շալագործություն, դարբնագործություն, բրուտագործություն են, լեռնային հարստությունները, հանքային աղբյուրները: Դրանց զուհրնթաց տրվում են նաև համապատասխան բնագավառների զարգացման հեռանկարները):

194. Ստեփանյան Ա., **Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսային, գունային և նշանային համակարգեր)**, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 2007, հ.22, էջ 5-86 + 40 էջ ներդիր

(Պատմաազգագրական տպագիր ու ձեռագիր նյութերի հիմքի վրա հեղինակն առանձին գլուխներով ներկայացնում է հայ ազգագրական տարբեր շրջանների, այդ թվում՝ Արցախի ժողովրդական տարազի զարդանախշման ծիսագործական նշանակությունը, տարազային զարդանախշերի գունային համակարգը և զարդանախշման միջոցները, զարդանախշային ձևերը և դրանց խորհրդիմաստը: Հեղինակի եզրահանգման համաձայն՝ տարազային զարդանախշերն ըստ տեղային առանձնահատկությունների հիմնականում խմբավորվում են՝ Տուրուբերան-Վասպուրականում՝ երկրաչափականի, Բարձր Հայքում և Փոքր Հայքում՝ բուսականի գերակշռությամբ, իսկ Արցախում, Սյունիքում, Այրարատում, Գեղարքունիքում, Գուգարքում տարազային զարդանախշը դիտվում է իբրև եզակի երևույթ: Ուսումնասիրության ներդիրներում ընդգրկված են թեմային առնչվող քարտեզներ ու նկարներ):

195. Սրուանձտեանց Գ., **Տեսարանք հայրենի աշխարհաց. Միւնեաց աշխարհ եւ Շուշի քաղաք**, «Արծուի Վասպուրական», Վան, 1862-1863, թիւ 4, էջ 87-108:

(Հեղինակը ներկայացնում է Սյունյաց աշխարհն ու Շուշի քաղաքը: Անդրադարձ է կատարվում աշխարհագրական դիրքին, կառուցվածքին, բնակչության կազմին, բնակիչների նիստ ու կացին և այլ հարցերի):

196. Սուջյան Ս., **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակը**, «21-րդ դար», Երևան, 2009, թիվ 3, էջ 49-66

(Պատմական և վիճակագրական տվյալների հիման վրա հեղինակը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերի փոփոխությունները՝ սկսած 18-րդ դարի սկզբից: Առանձնակի անդրադարձ է կատարվում բնակչության կազմին, խտությանը, թվաքանակի շարժընթացին 1823-1988թթ., աճի տեմպերին 1926-1987թթ., երիտասարդ ու տարեց բնակիչների տեսակարար կշռին 1979թ., սեռային կազմին 1987-2008թթ., ԼՂԻՄ ազգային կազմին 1959թ., 1970թ., 1979թ., հայ բնակչության շարժընթացին 1823-2005թթ., ամուսնությունների և ամուսնալուծությունների ընդհանուր գործակիցներին 2000-2007թթ., բնակչության բնական շարժի ցուցանիշներին 1985-2007թթ., բնակավայրերի բնակչության փոփոխություններին 1989-2008թթ.):



նն: Հոդվածը հրատարակվել է նաև ռուսերեն լեզվով /Суджян С., *Демографическая ситуация в Нагорно-Карабахской республике, «21-ый век», Ереван, 2010, , N1, с. 42-58/):*

197. Սևյան Վ., **Շուշի**, *Երևան, 1991, 130 էջ*

(Հեղինակը պատմական տվյալներ է ներկայացնում 18-րդ դարի հայ-ռուսական կապերի, ռուսական կողմնորոշման հարցերի, Արցախի ազգային-ազատագրական հերոսական պայքարի և մասնավորապես Շուշիի մասին: Անդրադարձ է կատարվում նաև Շուշիի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքին):

198. Վանյան Գ., **Կոճողոտ գյուղի պատմությունը**, *Ստեփանակերտ, 2009, 216 էջ+168 էջ ներդիր*

(Հեղինակը ներկայացնում է իր հայրենի՝ Մարտակերտի շրջանի Կոճողոտ գյուղի պատմությունը, աշխարհագրական դիրքը, բնակչության զբաղմունքը, ավանդությունները, տեղեկություններ նշանավոր կոճողոտցիների մասին, Հայրենական մեծ պատերազմից հետո բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը, գյուղի հեռանկարային զարգացման հարցերը, իր կյանքի հետ կապված տարբեր դրվագներ, հուշեր նն: Ներդիրներում ընդգրկված են բազմաթիվ լուսանկարներ, փաստաթղթեր, հեղինակի տպագրած հոդվածներ: Գիրքը հրատարակվել է նաև ռուսերենով /Ванян Г., *История села Кочогот, Степанакерт, 2009/):*

199. Վարդանյան Ս., **Արтур Мкртчян. Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX- начало XX в.)**, *Ереван, издательство «Гитутюн» НАН РА., 2010, 168 с., Արթուր Մկրտչյան. Լեռնային Ղարաբաղի հայերի հասարակական կենցաղը (XIXդ. երկրորդ կես- XXդ. սկիզբ)*, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 168 էջ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2010, N2, էջ 266-267*

(Համառոտ անդրադառնալով ազգագրագետ, ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Ս. Մկրտչյանի գիտամշակութային գործունեությանը՝ հեղինակը ներկայացնում է նրա՝ հետմահու հրատարակված *Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX- начало XX в.)* ուսումնասիրությունը՝ վեր հանելով ըստ առանձին գլուխների քննված հարցերը):

200. Վարդանյան Ս., **Պաշտամունքային տարրերը «Ալեյույայի» արցախյան տարբերակներում**, *«Պատմաբանասիրական հանդես», 2002, N2, էջ 148-156*

(Անդրադառնալով Քրիստոսի ծնունդն ավետող ծիսական երգերի՝ «Ալեյույաների» ժանրային և իմաստային առանձնահատկություններին ու կատարման հանգամանքներին՝ հեղինակը ներկայացնում է Հաղորդի շրջանից Խաչիկ Դադյանի գրառած ու 1895թ. «Արարատ» հանդեսում տպագրած և իր կողմից 1967թ. նույն շրջանի Տուսի գյուղից գրառված նմանատիպ երգերի համեմատական վերլուծությունը: Արդյունքում վեր են հանվում շուրջ 80 տարվա տարբերությամբ գրառված այդ տարբերակների սյուժետային ու գաղափարական մոտիվները, ինչպես նաև ծավալային ու բովանդակային փոփոխությունները, որոնք պայմանավորված են մի շարք առարկայական համագամանքներով: Ըստ հեղինակի՝ Խ. Դադյանի գրառումներին կից ծանոթագրություններից պարզվում է, որ այդ երգերը երգվել են բուն տոնածիսական արարողություններին զուգընթաց, և տոնի խորհրդավորությունն առանձնակի լիցք է հաղորդել մարդկանց, նպաստել ստեղծագործական գործընթացների վերելքին, մինչդեռ 1967թ. բնագիրը հաղորդելիս բանասացը չէր հիշում տոնի հետ կապված արարողությունները, այսինքն երգը կտրվել է բուն ծեսից՝ ժամանակի ընթացքում գոյատևելով մեխանիկական վերարտադրմամբ):

201. Վարդանյան Ս., Սարգսյան Ս., **Լեռնային Ղարաբաղի էթնոմշակութային ուսումնասիրությունները 1920-ական թթ.**, *«Էջմիածին», Ս. Էջմիածին, նոյեմբեր, 2008, էջ 88-109*

(Հոդվածում ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի (նաև Զանգեզուրի) էթնոմշակութային հարցերի վերաբերյալ 1920-ական թվականներին կատարված ուսումնասիրությունները, այդ



գործում կարևորվում Կովկասի և Մերձավոր Արևելքի ուսումնասիրության Անդրկովկասի կենտրոնի «Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի», «Ռուսական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժնի», «Կովկասի վայրերի և ցեղերի նկարագրության նյութերի ժողովածուի», «Ազգագրական հանդեսի» և այլ կառույցների, ժողովածուների, պարբերականների դերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում Ե. Լալայանի, Ստ. Լիսիցյանի, Գ. Չուրսինի, Գ. Քոչարյանի և այլոց գործունեությանը):

202. Վարդույան Դ., *Արցախ. տնտեսամշակութային բնութագրման փորձ*, «Հայ մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ: Գիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ», Երևան, 1992, էջ 38-41

(Հավաստելով, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայերին բնութագրական են արևելահայությանը, հատկապես նրա լեռնային շրջաններին (Զանգեզուր, Լոռի, Տավուշ) հատուկ տնտեսական զբաղմունքների, հասարակական կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի բոլոր բաղադրամասերը՝ ներկայացվում են երկրամասի երկրագործության, անասնապահության, բնակարանային տիպի, բնակավայրերի տեղադրման ևն առանձնահատկությունները: Ըստ հեղինակի ամփոփման, չնայած Արցախի հայոց ազգագրությանը վերաբերող համեմատաբար հարուստ գրականությանը, կենսական անհրաժեշտություն կա այն նորովի մեկնաբանելու և ճշմարտացիորեն ներկայացնելու խորհրդային ժամանակաշրջանում արցախահայության մշակութակենցաղային համակարգում կատարված վերափոխումներն ու խեղաթյուրումները):

203. Վարդուտ գավառի բառ ու բանը (կազմող՝ Կիմ Ղահրամանյան), Երևան, 2011, 278 էջ

(Առաջաբանում տեղեկություններ են տրվում պատմական Վարդուտ գավառի՝ Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանի բնակիչների, 1990-ական թվականների սկզբի նրանց բռնագաղթի, բանահյուսական մշակույթի մասին: Բուն ժողովածուում առանձին ենթաբաժիններով ներկայացվում են շրջանի տարբեր գյուղերից բռնագաղթված ու զանազան վայրերում վերաբնակված բնակիչներից գրական հայերենով ու Ղարաբաղի բարբառի տեղական խոսվածքներով (տառադարձության խախտումներով) հեղինակի գրառած բանահյուսական նյութերը, ինչպես նաև մանկական խաղեր, տեղանուններ, տոհմանուններ, մականուններ):

204. Տեր-Գասպարյան Ռ., *Շուշի քաղաքը*, Երևան, 1993, 128 էջ

(Հեղինակը տարբեր աղբյուրների, հավաստի փաստերի ուսումնասիրությամբ և ակնատեսի աչքերով ներկայացնում է հայրենի՝ պատմական Շուշի քաղաքի աշխարհագրական դիրքը, ջրամատակարարման համակարգը, համառոտ պատմությունը, բնակչության թիվն ու ազգային կազմը 18-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի կեսերը, մշակույթը՝ տպագրական գործը, կրթությունը, թատերական գործը, գրադարանները, պարբերական մամուլը ևն: Առանձին ենթաբաժիններով հազամանորեն քննության են առնվում քաղաքի հասարակական և տնտեսական կյանքը մինչև Ղարաբաղի խանության կենտրոն դառնալը, Ղարաբաղի խանության կենտրոն դառնալուց հետո, 19-րդ դարի առաջին կեսին, 19-րդ դարի երկրորդ կեսին, 20-րդ դարի առաջին երկու տասնամյակում):

205. Տեր-Գասպարյան Ռ., *Շուշու բնակչությունը 18-րդ դարից մինչև մեր օրերը*, «Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, 1963, N9, էջ 67-76

(Հիմք ընդունելով հին նշանավոր ճանապարհորդների գրառումները, Շուշիում ըստ ընտանիքների կազմած կամերալ ցուցակները, 1897 թվականի համառոտական ու 1921, 1926, 1959 թվականների համամիութենական մարդահամարների, «Кавказский календарь» պաշտոնական օրացույցի տվյալները, առանձին ուսումնասիրություններում հանդիպած թվերը՝ հեղինակը ներկայացնում է Արցախի Շուշի քաղաքի բնակչության թիվն ու ազգային կազմը 18-րդ դարի վերջերից մինչև 1959 թվականը՝ լուրջ ուշադրություն դարձնելով նաև տարբեր աղբյուրների



տվյալների անհամապատասխանություններին և անճշտություններին: Ըստ բերված փաստացի հիմնավորումների՝ Շուշու բնակչությունը 18-րդ դարի վերջերին հասնում էր մի քանի հազարի, որը մինչև 20-րդ դարի սկզբները հետզհետե աճել է (աստիճանաբար գերակշռում էր նաև հայ բնակչության թիվը)՝ անցնելով 30 հազարից, իսկ այնուհետև խիստ նվազել՝ 1959 թվականին հասնելով 6,1 հազարի: Հանգամանորեն քննվում են նաև բնակչության աճման և նվազման հիմնական պատճառները):

206. Բաֆֆի, *Երկու ամիս Ադուանից և Մինեաց աշխարհներում*, «Լուսնայ», Թիֆլիս, 1896, Գիրք Ա., էջ 60-109, Գիրք Բ., էջ 193-228

(Անավարտ ուղեգրություն: Չնայած վերնագրին՝ հեղինակը ներկայացնում է միայն Ղազախում, Շամշադինում, Շամքորում, Գանձակում, Ելենդորֆում, Հաջիշենում, Սյուլուկ գյուղում, Գետաշենում, Ղարաբուլաղում, Թողամ գյուղում, Էրքեջում, Ղարաչինարում, Աղջակալայում, Գյուլխատանում, Թալիշում, Մատաղիսում, Դաստակիրում, Մաղավուզում, Մեծ Շենում, Մոխրաթաղում, Կուսապատում, Մարտակերտում, Գյուլաթաղում, Ջանյաթաղում, Մեհմանայում 1881թ. ամռանը կատարած իր ճամփորդությունների արդյունքները՝ անդրադառնալով նաև տեղի պատմամշակութային հուշարձանների և բնակիչների նիստ ու կացի նկարագրությանը: Ուղեգրությունը հրատարակվել է նաև հետագայում՝ հեղինակի՝ տարբեր տարիների լույս տեսած հատորաշարերում /«Երկերի ժողովածու», հ. 8, Երևան, 1963, էջ 548-605, «Երկերի ժողովածու», հ. 9, Երևան, 1987, էջ 230-285/):

207. Քոչարյան Վ., *Սարգսաշեն, Ստեփանակերտ, 2015, 196 էջ+16 էջ ներդիր*

(Հեղինակը ներկայացվում է Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղի աշխարհագրական դիրքը, բնաշխարհը, տեղամասերը, պատմական հուշարձանները, կլիման, պատմությունը, տնտեսությունը, սարգսաշենցիների մասնակցությունը Առաջին համաշխարհային, Հայրենական մեծ պատերազմներին ու Արցախյան գոյամարտին, գյուղի հիմնական տոհմերի համառոտ նկարագիրն ու տոհմաճառերը, ժողովրդական զրույցներ ու զվարճախոսություններ ևն: Գրքում ընդգրկված են նաև բազմաթիվ այդ թվում՝ ազգագրական բնույթի տասնյակ լուսանկարներ):

208. Օդաբաշյան Ա., *Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1978, հ. 9, էջ 7-72

(Աշխատությունը նվիրված է հայ հոգևոր մշակույթի բնագավառներից մեկի՝ Ամանորի տոնակատարությունների ու սովորությունների ուսումնասիրությանը: Հիմնականում ազգագրական գրավոր աղբյուրների և իր հավաքած դաշտային ազգագրական նյութերի հիմքի վրա հեղինակն առանձին բաժիններով հանգամանորեն ներկայացնում է հայ իրականությունում Ամանորի տոնակատարության ժամանակը, տոնախմբությունների վերապրուկները, Բարեկենդանն՝ իբրև Ամանորի տոն, քրիստոնեական տարեմուտը, Ամանորի ծիսական երգաշարը: Ազգագրական տարբեր շրջանների թվում անդրադարձ է կատարվում նաև Արցախում դրանց դրսևորումներին):

209. Օհանյան Ն., *Թալիշ*, «Արցախապատում», Գիրք 4, Ստեփանակերտ, 2015, էջ 3-144 + 12 էջ ներդիր

(Հեղինակը համառոտ ներկայացնում է հայրենի՝ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի աշխարհագրական դիրքը, սահմանները, Խամսայի մելիքների ծագումը, տեղեկություններ որոշ մելիքների մասին, գյուղի տնտեսությունը, բնակչության զբաղմունքը, նիստն ու կացը, մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին, գյուղացիների հետ կապված զվարճախոսություններ ևն: Ներդիրներում ընդգրկված են ներկայացված թեմաներին առնչվող լուսանկարներ):



210. Абелов Н., *Экономический быт государственных крестьян Елисаветпольского уезда, «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», Тифлис, 1887, т. VII, с. 1-141*

(Հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Ելիզավետպոլի նահանգի մակերևույթը, լեռների և դաշտավայրերի կառուցվածքը, հանքային հարստությունները, լճերը, գետերը, բնակչությունը, հողային բավարարվածությունը, հողերի սեփականության ձևերն ու օգտագործման եղանակները, ռուսական, հայկական ու մուսուլմանական հողային կարգերը, ռոտգման միջոցները, աղբյուրները, հասարակության վերաբերմունքը ամառանոցների, արոտավայրերի, մասնավոր սեփականության հողերի նկատմամբ, գյուղացիների բարեկեցության աղբյուրները՝ հացագործություն, բանջարաբուծություն, այգեգործություն, մետաքսագործություն, մեղվաբուծություն, անասնապահություն, այլ եկամուտները, հարկերը, տուրքերը ևն: Ուսումնասիրության վերջում տեղադրված են տեղեկագրեր, որոնցում տեղեկություններ են տրվում հետազոտված գյուղերի, գյուղերում հողի քանակի մասին ևն:

211. Авакян Н., *Народная одежда армян Арцаха в XIX – начале XX в., «Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX – XX вв.. Материалы к «Кавказскому историко-этнографическому атласу», Вып. I., Москва, 1971, с. 209-223*

(Ուսումնասիրության սկզբում համառոտ անդրադառնալով 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Արցախում տարածված որոշ արհեստների (բրդագործություն, մետաքսագործություն, տնայնագործություն, արծաթագործություն, թելերի ներկում ևն)՝ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է նշված ժամանակաշրջանի արցախյան ժողովրդական տարազը: Առանձին պարբերություններով նկարագրվում են կանանց և տղամարդկանց հագուստները, դրանց տեսակները (հայավարի, քաղքավարի, խըլըղ, երեքփեշանի, վերնաշապիկ, տրկըհալավ, վարտիք, արխալուղ, չուխա, քուրք, տրկըլեչակ, ճրկըտանոց, քեթկալ, քորոց, գուլպա, կոշիկ (չմոշկ, տրեխ), գլխարկ ևն), առանձնահատկությունները հայ ազգագրական այլ շրջանների համեմատությամբ, պատրաստման նյութերը (բուրդ, բամբակ, մետաքս, բյազ, սասին, թավիշ, մորթի, կաշի, արծաթ ևն) և եղանակները, թելերի տեսակներն ու գույները: Ուշադրություն է դարձվում նաև աղջիկների, երիտասարդների, երեխաների հագուստների յուրահատկություններին: Հոդվածում ընդգրկված են համապատասխան գծանկարներ ու լուսանկարներ):

212. Аванесян Л., *Связь изображений армянских ковров с погребальным обрядом, «АниВ», Минск, 2013, N3(42), с. 12-23*

(Հայկական գորգերի առանձնահատկություններից համարելով դրանց պատկերների և զարդանախշերի կապը պաշտամունքների, ժողովրդական հավատալիքների և ծեսերի հետ՝ հեղինակը նկարագրում է Արցախում և Սյունիքում 19-20-րդ դարերում գործված չորս գորգ, որոնց պատկերները իմաստային նշանակությամբ կապված են հուղարկավորության ծեսի հետ: Հանգամանորեն քննության են առնվում դրանց պատկերները, զարդանախշերն ու խորհրդանշական իմաստները: Ըստ հեղինակի ամփոփման՝ այդ գորգերի պատկերների իմաստային վերլուծությունը վկայում է դրանց հնացած և ավանդական բնույթի մասին, բացահայտում հնագույն հնդեվրոպական խորհրդանիշների հետ սերտ կապը: Հոդվածում ընդգրկված են նաև համապատասխան նկարներ):

213. Аванесян Л., *Раннеземледельческие обряды в современном Арцахе, «Պատմարանասիրական հանդես», Երևան, 2008, N3, էջ 209-218*

(Հիմք ընդունելով 2005թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին Արցախի Ծաղկաշատ, Հացի և Ճարտար գյուղերում իր կողմից գրառված դաշտային և մասնագիտական գրականության մեջ եղած նյութերը՝ հեղինակը ներկայացնում է հողի բարեբերությունն ապահովելու և հիվանդություններ բուժելու նպատակով իրականացվող ծեսերը (Զի-գի քար, կաթնապուրի զոհաբե-



րություն, մալանչ), որոնք Արցախում ավանդաբար կատարվում են բնության վրա ներգործելու հմայության միջոցով: Ըստ հեղինակի եզրահանգման՝ քննարկվող ծեսերը հաստատում են, որ դեռևս մ.թ.ա. 4-5-րդ հազարամյակների վաղ երկրագործական մշակույթից եկող սովորույթներն ու հավատալիքները, կապված շրջապատող աշխարհի մասին հնագույն գանազան պատկերացումների և հատկապես տիեզերածնության առասպելի հետ, հարատևել են մինչև մեր օրերը):

214. Авдеев М., *Мильско-Карабахская степь: Кочевое и оседлое хозяйство. Территория-население-экономика (Обследование 1926-28 гг.)* Баку, 1929, 269 с.

(Հիմնվելով իր ղեկավարած գիտական արշավախմբի կողմից հավաքած դաշտային հարուստ նյութի վրա՝ հեղինակը նկարագրում է Միլ-Ղարաբաղյան տափաստանի ամառային ու ձմեռային արոտավայրերը: Առանձին բաժիններով և ենթաբաժիններով հանգամանորեն ներկայացվում են քոչվոր անասնաբուծական տնտեսությունը (Սայանի գավառի տափաստան, Աղդամի գավառի տափաստան (մինչև Կարկար գետի աջ ու ձախ ափեր), տափաստան մինչև Քյոնդալան գետը) ու նստակյաց բնակչության տնտեսությունը (մերձարաքսյան շերտ, մերձկուրյան շերտ, Աղդամի գավառ): Առանձնակի (նաև աղյուսակների ձևով) անդրադարձ է կատարվում համապատասխան գյուղերի (որոնց մի մասը նախկինում ընդգրկված էին Շուշիի և Ջևանշիրի գավառներում) անասնաբուծական տնտեսություններին, խոշոր եղջերավոր, մանր եղջերավոր ու բեռնակիր անասունների գլխաքանակին, անասնաբուծության առանձնահատկություններին, ստացվող եկամուտներին ևն: Հավելվածում տրվում են Ադրբեջանաան ԽՍՀ արոտավայրերի ու քոչվորականության հետազոտման համար կազմված հարցաթերթ-ձևաթղթեր: Ուսումնասիրության մեջ տեղադրված են նաև որոշ լուսանկարներ):

215. Ахвердов А., Долуханов А., *Очерк растительности летних пастбищ Карабахского хребта, «Труды по геоботаническому обследованию пастбищ С. С. Р. Азербайджана», Серия В. Летние пастбища, Выпуск 3-й, Баку, 1930, 94 с.*

(Հեղինակները ներկայացնում են 1929թ. հուլիս-օգոստոս ամիսներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, ինչպես նաև Քուրդիստանում կատարած իրենց շրջազայությունների արդյունքները՝ նվիրված Ղարաբաղի լեռնաշղթայի ամառային արոտավայրերի բուսականության ուսումնասիրությանը: Առանձին գլուխներով տրվում են տարածքի բնապատմական բնութագիրը, բուսականության ընդհանուր բնութագիրը, բուսատեսակների նկարագրությունը (ենթալայան մարգագետիններ, ենթալայան տափաստան, ալայան բուսականություն, լեռնային քսերոֆիլ բուսականություն, ժայռային բուսականություն, անտառային գոտու վերին շերտերի բուսականություն, արոտավայրերի ընդհանուր վիճակը), տարածքից հավաքած բույսերի ցանկը: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև քարտեզ, լուսանկարներ և աղյուսակներ):

216. Арутюнян М., *Декоративно-прикладное искусство в Арцахе во второй половине XVII века и в начале XVIII века, «Интернаука», Москва, 2017, N4, Часть 1, с. 20-23*

(Համառոտ ներկայացվում է Արցախում դեկորատիվ-կիրառական արվեստի վիճակը 17-րդ դարի կեսին և 18-րդ դարի սկզբին: Առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվում գորգագործությանը, ասեղնագործությանն ու ժանեկագործությանը, արծաթագործությանը, ոսկերչությանը և փայտափորագրությանը):

217. Асцатрян В., *Искусство древнего ковроделия Арцаха-Карабаха. Ancient rug weaving art of Artsakh-Karabakh, «Հայկական հանգույց. գորգարվեստի ավանդույթները. միջազգային գիտա-ժողով, Երևան, 20-22 նոյեմբերի, 2013. գեկուցումներ», Երևան, 2016, էջ 34-37*

(Հեղինակը ներկայացնում է (ռուսերենով և անգլերենով) արցախյան գորգերի յուրահատկությունները՝ անդրադառնալով նրանց հորինվածքներին, գույներին, նախշատեսակներին, արտահանումներին, պարսկական ու թուրքմենական գորգերից ունեցած տարբերություններին:



Առանձին անդրադարձ է կատարվում աղբրեջանցիների կողմից ավանդական այդ գորգերը յուրացնելուն և դրանք որպես աղբրեջանական մատուցելուն):

218. *Бабаян Е., О женской одежде Карабаха, «История и философия», N 7, Баку, 1966, с. 85-91*

(Չնայած ընդհանուր վերնագրին՝ հեղինակը հոդվածում հիմնականում քննության է առել Ղարաբաղի Եվլախի, Բարդայի, Միրբաշիրի, Մարտակերտի և Աղդամի շրջանների աղբրեջանցի (թաթար) կանանց հագուստը, դրանց տեսակներն ու առանձնահատկությունները՝ ազգագրական այլ շրջանների համեմատությամբ, պատրաստման նյութերը, եղանակները ևն: Առանձին դեպքերում միայն անդրադարձ է կատարվում հայ կանանց հագուստին: Հոդվածում ընդգրկված են նաև լուսանկարներ):

219. Багдасарян А., *Религиоведческие исследования в советском кавказоведении (на примере Армении и Нагорного Карабаха)*, «Вестник московского университета», серия 8. История, Москва, 2015, N4, с. 61-73

(Հեղինակը, որպես օրինակ հիմնականում հիմք ընդունելով Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին նվիրված աշխատանքները, քննության է առնում խորհրդային կովկասագիտության մեջ կրոնի ուսումնասիրության հիմնական մոտեցումներն ու առանցքային հասկացությունները, որոնցով առաջնորդվում էին հետազոտողները: Ներկայացվում են արդիական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են եկեղեցու և կրոնի տեղն ու դերը Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի ու հայկական սփյուռքի սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքում, հեթանոսական, կրոնական նոր շարժումների ու սեկտանների տարածումը ևն: Լեռնային Ղարաբաղին նվիրված համապատասխան աշխատանքներից առանձնակի ուշադրություն է դարձվում Ս. Լիսիցյանի «Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк» և Ի. Պետրուշևսկու «О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха» ուսումնասիրություններին):

220. Баратов Б., *Разоренный рай: Путешествие в Карабах*, Москва, 1998, 184 с.

(Պատկերագիրքը ներկայացնում է հեղինակի՝ 1996թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կատարած շրջագայությունների ընթացքում գրառած նյութերը: Առանձին բաժիններով նկարագրվում են Շուշի քաղաքը և նրա պատմամշակութային կյանքը, Ասկերանի շրջանի Դահրավ, Մարտակերտի շրջանի Գետավան, Շահումյանի շրջանի Ծար, Հադրութի շրջանի Առաքյուլ, Տոլ գյուղերը, Մարտակերտ քաղաքը, Քաշաթաղի շրջանը, Թարթառի և Արաքսի հովիտները, Դաղիվանքը, Եղիշե առաքյալի վանքը, Հոռեկա վանքը, Երից մանկաց վանքը, Գանձասարը, Կոշիկ անապատը, Ամարասի վանքը, Օիծեռնավանքը, Խուղափերինի կամուրջը, Ղարդաբազարի իջևանատունը, Հացի գյուղի Անահիտ աղբյուրը, արցախյան գորգեր ևն, որոնք ուղեկցվում են հեղինակի բարձրարժեք լուսանկարներով):

221. Баратов Б., *L'ange d'Artsakh les monuments d'architecture arménienne du Haut-Karabakh. Ангел Арцаха. Памятники армянского искусства Нагорного Карабаха*, Москва, 1992, 218 էջ

(Հեղինակը ֆրանսերենով և ռուսերենով ներկայացնում է Արցախի համառոտ պատմությունն ու տարբեր շրջաններում կատարած իր շրջագայությունների ընթացքում գրառած նյութերը՝ անդրադառնալով բնական ու պատմաճարտարապետական հուշարձաններին՝ վանքերին, եկեղեցիներին, կամուրջներին, խաչքարերին, աղբյուրներին, գետերին, բնակավայրերին, պեղումներով հայտնաբերված առարկաներին, հին ձեռագրերին, խաչքարերին, գորգերին, ազգային տարազին ևն: Բոլոր նյութերին զուգահեռ ներկայացվում են համապատասխան լուսանկարներ):

222. Бахши Ким, *Духовные сокровища Арцаха*, Москва, 2013, 320 с.

(Հեղինակը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իր կատարած շրջագայությունների ընթացքում գրառած նյութերը, որտեղ նկարագրվում են տարբեր բնակա-



վայրեր, նրանց տարածքում գտնվող պատմաճարտարապետական հուշարձաններ՝ եկեղեցիներ, վանքեր, սրբավայրեր, մատուռներ, խաչքարեր, բերդեր, ինչպես նաև Արցախում ստեղծված ու Երևանի Մատենադարանում և այլ թանգարաններում պահվող ձեռագրեր, հանդիպումներ արցախցի և Արցախի հետ կապված մտավորականների, բարերարների հետ նև: Աշխատության մեջ ընդգրկված են նշված նյութերին վերաբերող բազմաթիվ լուսանկարներ: Աշխատությունը տպագրվել է նաև հայերեն թարգմանությամբ */Արցախի հոգևոր գանձերը (թարգմանիչ՝ Ջ. Ղազարյան, Երևան, 2015):*

223. Валесян Л., Мурадян Ю., *О некоторых итогах и проблемах экономического развития Нагорного Карабаха, «Լրաբեր հասարակական գիտությունների» Երևան, 1989, N5, էջ 3-18*

(Համառոտ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ֆիզիկաաշխարհագրական բնութագրին ու պատմությանը՝ հեղինակները ներկայացնում են բնառեսուրսային, ժողովրդագրական և տնտեսական իրավիճակը: Ըստ հեղինակների՝ չնայած բավարար պոտենցիալին, Ադրբեջանի վարած քաղաքականության հետևանքով մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն ընթացել է շատ ավելի դանդաղ, քան Ադրբեջանական ԽՍՀ-ում, Նախիջևանի ԻԽՍՀ-ում և Հայկական ՍՍՀ-ում: Արդյունքում 1923-1987թթ. ընթացքում ԼՂԻՄ բնակչությունն աճել է ընդամենը 13,9 տոկոսով՝ տասնապատիկ քիչ, քան Ադրբեջանական ԽՍՀ-ում, օբյեկտիվորեն խթանվել է հայերի արտագաղթը և ադրբեջանցի բնակչության աճը: Հոդվածը հրատարակվել է նաև «Правда о Нагорном Карабахе (материалы и доклады)» ժողովածուում */Երևան, 1989, էջ 24-39):*

224. Варданян Л., *Традиции мужских возрастных групп у армян в конце XIX-начале XX вв. (Историко-этнографическое исследование), «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, հ. 12, էջ 85-142*

(Տպագիր, արխիվային և իր հավաքած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը քննության է առնում հայ ազգագրական տարբեր շրջաններում, այդ թվում՝ Արցախում 19-րդ դարի վերջի-20-րդ դարի սկզբի տղամարդկանց տարիքային խմբերի ավանդույթները: Առանձին գլուխներով հանգամանորեն ներկայացվում են երեխաների և ամուրի երիտասարդների, հասուն տղամարդկանց, ծերունիների տարիքային խմբերի ավանդույթները, ինչպես նաև նվիրական ծեսերի վերապրուկները: Ըստ հեղինակի ամփոփման՝ տղամարդկանց տարիքային խմբերը վերապրուկային վիճակում ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերն ու 20-րդ դարի սկզբները գոյատևել են Վասպուրականում, Արցախում, Շատախում, Ջավախքում, Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախում և այլուր):

225. Варданян Л., *Из истории этнографического изучения Нагорного Карабаха (конец XIX - начало XX вв.), «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. Ջեկուցումների ժողովածու. հունիսի 21-24, 2006 թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 488-495*

(Հեղինակը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի՝ 19-րդ դարի վերջերի-20-րդ դարի սկզբների ազգագրության ուսումնասիրության պատմությունը: Առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվում 19-րդ դարի վերջերից Թիֆլիսում հրատարակված «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» հանդեսի տարբեր համարներում ընդգրկված՝ Արցախին վերաբերող նյութերին, Ե. Լալայանի՝ «Ազգագրական հանդեսում» հրատարակված «Վարանդա» ժողովածուին, Ս. Լիսիցյանի «Լեռնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ)» և «К изучению армянских крестьянских жилищ («Карабахский карадам»), Բ. Պետրուշևսկու «О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха» ուսումնասիրություններին):



226. Вартапетов А., *Очерк жилищ и строительных кадров Нагорного Карабаха (Материалы поездки в Карабах летом 1933 г.)*, «Труды Азербайджанского филиала АН СССР. Историческая серия», т. 25, Баку, 1946, с.99-119

(Հենվելով 1933թ. ամռանը ՄՍՀՄ գիտությունների ակադեմիայի Ադրբեջանի մասնաճյուղի նյութական մշակույթի պատմության բաժանմունքի կողմից կազմակերպված գիտարշավի շրջանակներում Լեոնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզի Ստեփանակերտ, Խնածախ, Դաշբուլաղ, Սեյդիշեն, Առաջաձոր, Վանք, Սրխավենդ, Կուսապատ, Մարտակերտ, Մարտունի, Գյունե Ճարտար, Թաղավարդ, Թաղլար, Տող, Հաղրուխ և այլ բնակավայրերում կատարած ուսումնասիրություններն ու գրառած նյութերը՝ հեղինակը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի մարզի կացարաններն ու շինարարական կադրերը: Առանձին բաժիններով և ենթաբաժիններով նկարագրվում են կացարանների տեսակները (դարադամ, քարե տներ (օջախ), բաղդադի, ժամանակակից կացարան), դրանց կառուցվածքն ու կառուցման առանձնահատկությունները, ըստ շրջանների (Ստեփանակերտի, Մարտունու, Դիզակի) և դրանցում ընդգրկված մի շարք բնակավայրերի՝ տեղեկություններ են հաղորդվում շինարարական կադրերի (քարագործներ, քարհատներ, հյուսներ) քանակի, նրանց սոցիալական վիճակի, գաղթի պատճառների նման: Ուսումնասիրության համաձայն՝ քարագործ վարպետները առավելեպես շատ են Մարտունու և Դիզակի շրջաններում, ովքեր աշխատում են նաև հարևան հայկական և ադրբեջանական շրջանների բնակավայրերում: Վերջում հեղինակը հանգում է այն եզրահանգման, որ Ղարաբաղը գնահատվում է իր վարպետ քարագործներով, և այդ ուժը հնարավոր է և անհրաժեշտ է կազմակերպել ադրբեջանական կոլտնտեսային գյուղի արագ կառուցման համար):

227. (Верецагин В.) *Путешествие по Закавказью в 1864-1865 гг. Василия Верецагина*, «Всемирный путешественник», т. 7. Санкт Петербург, 1870, с. 209-305

(Ռուս նշանավոր նկարիչ Վասիլի Վերեշչագինը ներկայացնում է 1863-1865 թվականներին Կովկասում, այդ թվում՝ Ղարաբաղում կատարած իր շրջագայությունների տպավորություններն ու հիշողությունները, անդրադառնում տեղում ապրող հայերի, թաթարների, դուխաբորների, մալականների նման ու կացին: Առանձին մանրամասնությամբ է ներկայացվում Շուշի քաղաքի շիա մահմեդականների կողմից իրականացվող՝ իմամ Հուսեյնի հիշատակին նվիրված կրոնական տոնակատարությունը, որի ընթացքում մասնակից տղամարդիկ շղթաներով ու դաշույններով խոշտանգում են իրենց մարմինները, ինչը երբեմն հասցնում է մահվան: Գրքում ընդգրկված են նաև հեղինակի՝ Շուշիում նկարած գրաֆիկական որոշ նկարներ: Գիրքը վերահրատարակվել է 1883 թվականին («Очерки, наброски, воспоминания В. В. Верецагина. С рисунками», Санкт Петербург, 1883, 154 с.

228. Гакстгаузен А., *Закавказский край. Заметки о семейной и общественной жизни и отношениях народов, обитающих между Черным и Каспийским морями*, Санкт Петербург, 1857, Часть I, 248с., Часть II, 215с.

(Հեղինակը ներկայացնում է Անդրկովկասում կատարած իր շրջագայությունների տպավորություններն ու հիշողությունները: Երկրորդ մասի 13-րդ գլխում առանձին ենթաբաժնով՝ «Заметки об Карабахской провинции. Татарский хан Джафар-Кули хан» (էջ 147-153), անդրադարձ է կատարվում Ղարաբաղի խանության պատմությանը, գյուղական համայնքներին, բնակչության զբաղմունքին, հարկատեսակներին):

229. Григоров Н., *Село Саров Елисаветской губернии Джебаширского уезда*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. шестой, Тифлис, 1888, отд. I, с.123-132

(Առաջին երկու հատվածներում անդրադառնալով Սարով գյուղի ընդհանուր բնութագրին, անվան ծագումնաբանությանը, աշխարհագրական դիրքին, բնակելի տների կառուցվածքին, եղանակին, ռոռգման համակարգին, հիմնական զբաղմունքին՝ հեղինակը հաջորդ բաժիններում



առավել հանգամանորեն ներկայացնում է բնակիչների կենսակերպը, սովորություններն ու կրոնական ծիսակատարությունները՝ ընդգծելով հյուրասիրությունը, առատաձեռնությունը, կրոնասիրությունը, աղքատության պատճառները, թաթարների հետ շփումները, առողջապահական վիճակը նև: Առանձնակի նկարագրվում է Համբարձման տոնը, որի ժամանակ երիտասարդ աղջիկները երգում էին վիճակի երգեր, պահում Վարդավառի պասը):

230. Григорян К., *Аспекты иерархии идентичности карабахских армян, проживающих в Краснодарском крае; азг.* «Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. զեկուցումների հիմնադրույթներ. հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», *Երևան, 2006, էջ 162-164*

(Ներկայացվում են Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասում բնակվող արցախահայերի նույնականության տարբեր ոլորտները, կարևորվում է նրանց ձգտումը՝ պահպանելու Ղարաբաղի բարբառը, ավանդական մշակույթը, ընտանեկան-բարեկամական հարաբերությունները: Ըստ հեղինակի՝ արցախահայերի ինքնանույնականացման ամենակայուն դրսևորումներից է ազգը՝ հայրական ծագումը, որն ընդգծում է խմբի պատմական, ժառանգական, կարգավիճակային, իսկ անցյալում՝ այս կամ այն ընտանեկան-բարեկամական խմբին պատկանելիությունը):

231. Гриневецкий Б., *Предварительный отчет о путешествии по Армении и Карабаху в 1903 году, «Записки Кавказского отдела Императорского Русского географического общества», Тифлис, 1904, № 3, с.355-398*

(Հեղինակը ներկայացնում է 1903թ. հունիս-օգոստոս ամիսներին Հայաստանում և Ղարաբաղում բուսաբանական նպատակով իր կատարած շրջագայությունների արդյունքները: Առանձին բաժիններով և պարբերություններով տրվում են տարածաշրջանի տարբեր վայրերի ֆիզիկա-աշխարհագրական ու տարածված բուսատեսակների նկարագրերը: Ներածական մասում տեղեկություններ են հաղորդվում շրջագայության երթուղիների և թեմային առնչվող գրականության մասին: Աշխատության մեջ ընդգրկված են նաև որոշ լուսանկարներ):

232. Давидбеков И., *Село Гадрут, Елисаветпольской губернии, Джебраильского уезда, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. шестой, Тифлис, 1888. отд. I, с.153-192*

(Բաղկացած է վեց մասից: Առաջին բաժնում ներկայացվում է գյուղի անվան ստուգաբանությունը, տեղագրությունը, տարածքի հնագիտական հուշարձանները, ավանդություններ, երկրորդ բաժնում՝ գյուղի կառուցվածքը, աղբյուրները, եղանակը, բուսական և կենդանական աշխարհը, երրորդ բաժնում՝ Հաղորթի ու հարակից գյուղերի բնակչության թիվը, հողային բաժանումները, տուրքերը, ոռոգման համակարգը, զբաղմունքը (այգեգործություն, գինեգործություն, երկրագործություն, բանջարաբուծություն, անասնապահություն, մետաքսագործություն, արհեստներ), չորրորդ բաժնում՝ տեղեկություններ բնակավայրի ուսումնական հաստատությունների, կառավարական ու հասարակական կառույցների, ռուսական զինվորական շտաբի մասին: Հինգերորդ բաժնում հեղինակը նկարագրում է բնակավայրի բնակելի կացարանը (*ղարաղալ*), տեղեկություններ հաղորդում բնակիչների սննդակարգի, ճաշատեսակների, հագուստի, լեզվի ու հավատի մասին: Առավել ծավալուն է վեցերորդ բաժինը, որտեղ առանձին ենթաբաժիններով նկարագրվում են հարսանիքը, ծնունդն ու կնունքը, մահը և թաղումը, ժողովրդական տոներն ու դրանց հետ կապված ծիսակատարությունները):

233. Деконский А. Г. *Экономический быт государственных крестьян Шушинского и Джебраильского уезда Елисаветпольской губернии, «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», Тифлис, 1886, т. IV, с. 1-157*



(Ուսումնասիրության մեջ հեղինակն առանձին բաժիններով հանգամանորեն անդրադառնում է Ելիզավետպոլի նահանգի Շուշիի ու Ջեբրայիլի գավառների աշխարհագրական դիրքին ու սահմաններին, բնակչության թվին ու էթնիկ կազմին, հողային բավարարվածությանը, հանրային հողատարածքների մակերեսներին, ոռոգման միջոցներին, հողերի սեփականության ձևերին ու օգտագործման եղանակներին, վերափոխման մեթոդներին, վարելահողերին, արոտավայրերի տեսակներին և հասարակության վերաբերմունքին դրանց նկատմամբ, անտառահատմանը և անտառային նյութերի թողարկմանը, գյուղացիների բարեկեցության աղբյուրներին, երկրագործությանը (ցանքաշրջանառություն, հացահատիկի տեսակներ, ցանքսի ժամանակ, հացահատիկի մաքրում, սերմերի քանակ), այգեգործությանը, մետաքսագործությանը, անասնաբուծությանը, խոզաբուծությանը, մյուս եկամուտներին և այլ հարցերի: Կարևոր նշանակություն ունեն նաև ուսումնասիրության վերջում տեղադրված տեղեկագրերը, որոնցում արտացոլված են տեղեկություններ հետազոտված գյուղերի, գյուղերում հողի քանակի և ըստ ծխերի ու շնչերի տեղաբաշխման չափի, հարկերի ու տուրքերի, ըստ ծխերի ու շնչերի հողի տասնորդականի համար նախատեսված հարկերի չափի մասին ևն):

234. Джейранов Ф., *Селение Чайкенд Елисаветпольского уезда той же губернии*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», Тифлис, 1898, вып. двадцатьпятый, отд. II, с.59-100

(Հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Հյուսիսային Արցախի Գետաշեն գյուղի (ներկայումս հայաթափված և բռնակցված Ադրբեջանին) համառոտ պատմությունը, տեղադրությունը, բնակարանը, եղանակն ու տարածված հիվանդությունները, այգիները, բանջարանոցներն ու անտառները, կենդանական աշխարհն ու որսորդությունը, բնակչության կազմն ու զբաղմունքը, պետական տուրքերն ու գյուղական ծախսերը, խաղողագործությունն ու գինեգործությունը, մեղվաբուծությունը, շերամապահությունը, յուղի ստացումը, օճառագործությունը, հագուստն ու սննդակարգը, ժողովրդական խաղատեսակները (*կրրպըտլախտե, ջրզըլախտե, փանդի, չիլինգի, պոզի-պոզի, վեքի, հոթի, չրխկըլդանե*), տեսարժան վայրերը, վանքերն ու սրբավայրերը (*Գոգ-գել, Չրադա ծոր, Նահատակ, Եղնասար, Ավագ Սուրբ նշան ևն*), հավատալիքներն ու նախապաշարումները, տոները (*Մեծ պահք, Ծառագարդար, Վարդավառ, Նավասարդ, Սուրբ Սարգիս (Խաշի)*):

235. Долженко В., *К истории образования русских поселений Закавказья (1830-1840-е гг.)*, «*Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006 թ.*», Երևան, 2007, էջ 313-320

(Ներկայացվում է 1830-1840-ական թվականներին ռուս աղանդավորների (Դոնի կազակներ, մոլդկաններ, դուխաբորներ, սուբոտնիկներ ևն)՝ Անդրկովկասում բնակեցման գործընթացը, որն իրականացվել է երկու ձևով՝ ստիպողաբար ու կամավոր: Առանձնակի քննության են առնվում նաև նրանց՝ Ղարաբաղի գավառի տարբեր բնակավայրերում բնակեցման հարցերը):

236. Заварян С., *Экономическая условия Карабаха и голод 1906-1907 гг.*, С-Петербург, 1907, 87 с.

(Հեղինակը ներկայացնում է Բաքվում գործող Հայկական կուլտուրական միության ագրարային մասնաճյուղի առաջարկությամբ 1906թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արցախում, մասնավորապես՝ Շուշիում, Խաչենում և Վարանդայում կատարած իր շրջագայությունների ժամանակ տեղի բնակավայրերից, պատկան մարմիններից, ինչպես նաև պարբերական մամուլից հավաքած տեղեկատվությունը՝ որոշակի դասակարգումներով և վերլուծություններով: Առանձին բաժիններով համառոտակի բնութագրվում են Արցախի տեղագրական առանձնահատկությունները, բնական պայմանները, կրթության և մշակույթի վիճակը և առանձնահատկությունները, հողատիրության պայմանները, ցանքատարածությունների ու բերքատվության չափերը, գյուղացիների տնտեսական վիճակն ու գյուղի շերտավորումը, կողմնակի եկամուտները, արդ-



յունաբերությունը, տարագնացությունը, վաշխառությունը, սնտեսական կյանքի այլ կողմերը: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև նշված բնագավառների մասին տեղեկություններ պարունակող ցանկեր):

237. Зелиский С., *Материалы по народной медицине у армян Ахалкалакского уезда Тифлисской губернии и Шушинского и Зангезурского уездов Елисаветпольской губернии*. «Известия Кавказского отдела Императорского Русского географического общества», Тифлис, 1898, т. XII, вып. 1-й, с. 31-64

(Ներածական մասում հեղինակն անդրադառնում է հարցի ուսումնասիրության պատմությանը, ինչպես նաև ռուսերենով գրված հայերեն բառերի տառադարձությանը: Առաջին մասում ներկայացվում է Անդրկովկասում ապրող ժողովուրդների կենսամակարդակը, առողջապահության և սանիտարահիգիենիկ վիճակը, հիվանդությունների մասին բնակիչների պատկերացումներն ու հավատալիքները: Երկրորդ մասում համառոտ տեղեկություններ են տրվում ժողովրդական հեքիմների և նրանց գործունեության մասին: Երրորդ մասում առանձին բաժիններով ներկայացվում են Ախալքալաքի, Շուշիի և Զանգեզուրի գավառներում տարածված հիվանդությունները (*տենդ, գլխացավ, թունավորում, ոսկրաբեկ, փորացավ, մկանցավ, աչքացավ, խլություն, փորկապություն, ատամնացավ, հազ, արյունահոսություն, հարբուխ, այրվածք, այտուց, միզարգելություն, հողացավ, օձի խայթոց, թքախտ, քու, ականջացավ ևն*) ու նրանց բուժման ժողովրդական միջոցները: Ուսումնասիրության վերջում տեղադրված է հիվանդությունների ու նրանց բուժման միջոցների մեջ մտնող նյութերի բառարան (ռուսերեն, հայերեն, լատիներեն):

238. Израелов Г., *Домашнее воспитание армян Джебаширского уезда Елисаветпольской губернии*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. седьмой, Тифлис, 1889, отд. II, с.73-76

(Հեղինակը քննության է առնում Ջևանշիրի գավառում երեխաների դաստիարակության որոշ խնդիրներ, առանձնակի անդրադարձ է կատարվում երեխաների ու նրանց ծնողների փոխհարաբերություններին):

239. Израелов Г., *Село Касапет Джебаширского уезда Елисаветпольской губернии*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XIII, Тифлис, 1892, отд. I, с.42-58

(Բաղկացած է վեց բաժնից: Առաջին բաժնում ներկայացվում է գյուղի անվան ստուգաբանությունը, համառոտ պատմությունը, տեղադրությունն ու արտաքին տեսքը, երկրորդ բաժնում՝ ռոռգման համակարգը, եղանակը, երրորդ բաժնում՝ գյուղի ու հարակից տարածքներում գտնվող հնագիտական հուշարձանները, չորրորդ բաժնում՝ հանքային աղբյուրներն ու հանքավայրերը, հինգերորդ բաժնում՝ բնակիչների սովորույթները, սովորություններն ու նախապաշարմունքները, բնավորության գծերը, առողջապահական վիճակը, հարևան թաթարներից կրած ազդեցությունները: Վեցերորդ բաժնում նկարագրվում են գյուղացիների հիմնական զբաղմունքները (անասնապահություն, հողագործություն, այգեգործություն, գինեգործություն): Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև բանահյուսական որոշ նյութեր):

240. Израелов Г., *Описание минерального источника Истису (теплый ключ), Елисаветпольской губернии, Джебаширского уезда*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. седьмой, Тифлис, 1889, отд. II, с.84-85

(Հեղինակը նկարագրում է Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի գավառում (ներկայումս՝ Քարվաճառի շրջանում) գտնվող Իստի-սու հանքային աղբյուրը՝ շեշտելով նրա բուժիչ նշանակությունը):



241. *Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Азербайджанская ССР, Москва, 1963, 160с.*

(Ժողովածուում ներկայացվում են 1959թ. անցկացված համամիութենական մարդահամարի տվյալները Ադրբեջանական ՍՍՀ բնակչության թվաքանակի, տեղաբաշխման և կազմի վերաբերյալ՝ ըստ սեռի, տարիքի, ազգության, մայրենի լեզվի, կրթության, ընտանեկան կարգավիճակի, հասարակական խմբերի, ապրուստի միջոցների, ժողովրդական տնտեսության ճյուղերի, զբաղվածության: Մի շարք ցուցիչներ համադրվում են 1926 և 1939 թվականների մարդահամարների, ինչպես նաև նախահեղափոխական շրջանի տվյալների հետ: Կարևորագույն ընդհանուր արդյունքները տրվում են ոչ միայն ըստ հանրապետության, այլև ըստ նրա ենթակայության շրջանների, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի):

242. *Итоги Всесоюзной переписи населения 1970 года по Азербайджанской ССР (Для служебного пользования), том I, Баку, 1972, 500 с., том II, Баку, 1973, 288 с.*

(Ժողովածուում ներկայացվում են 1970թ. անցկացված համամիութենական մարդահամարի տվյալները Ադրբեջանական ՍՍՀ, այդ թվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի, ինչպես նաև Ստեփանակերտ քաղաքի. Հադրութի, Մարտունու, Մարտակերտի, Ստեփանակերտի ու Շուշու շրջանների վերաբերյալ՝ ըստ բնակչության թվի, մշտական բնակչության տեղաբաշխման, հասարակական խմբերի (բանվորներ, ծառայողներ, կոլտնտեսականներ), կրթական մակարդակի, ընտանիքների կազմի, ժողովրդական տնտեսության ճյուղերի, բնակչության տեղաշարժերի, զբաղվածության, թոշակառուների նախկին զբաղվածության, գրագիտության աստիճանի, ազգության և լեզվի, աշխատունակության տարիքի ևն վերաբերյալ: Մարդահամարի տվյալները համադրվում են 1959թ. մարդահամարի տվյալների հետ):

243. *Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Нагорно-Карабахской Автономной Области, Степанакерт, 1981, 83 с.*

(Ժողովածուն ընդգրկում է 1979թ. անցկացված համամիութենական մարդահամարի տվյալները Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերաբերյալ: Առանձին աղյուսակներով ներկայացվում են մարզի փաստացի և մշտական բնակչության թվաքանակն ըստ քաղաքային և գյուղական խորհուրդների, սեռերի, տարիքային խմբավորումների, խտության, կրթության մակարդակի, զբաղվածության, գերակշռող ազգությունների, մայրենի և երկրորդ լեզվի, հասարակական խմբերի, ապրուստի միջոցների, աշխատունակության, կյանքի տևողության, ընտանիքի կազմի ևն):

244. *Итоги Всесоюзной переписи населения 1989г.. Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской Автономной Области, Москва, 1989, 22 стр.*

(Աղյուսակներով ներկայացվում են 1989թ. անցկացված համամիութենական մարդահամարի տվյալները Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերաբերյալ: Մարզի յուրաքանչյուր շրջանի (Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Շուշիի) բոլոր գյուղխորհուրդների և դրանցում ընդգրկված բնակավայրերի անունների դիմաց առանձին սյունակներում նշվում են վարչատնտեսական նշանակությունը, թվային գերակշռություն կազմող ազգության անվանումը, փաստացի ու մշտական բնակչության (ըստ արական և իգական սեռերի) թվակազմը):

245. Калашев А., *Вардавар (сел. Чайкенд, Елисаветпольской губернии, Шушинского уезда), вып. восемнадцатый, Тифлис, 1894, отд. второй, с.1-36*

(Նկարագրվում է Հյուսիսային Արցախի Գետաշեն գյուղում (ներկայումս հայաթափված և բռնակցված Ադրբեջանին) տոնվող Վարդավառի տոնը, որից հետո ներկայացվում է հեղինակի



գրառած՝ այդ տոնի ժամանակ երգվող 122 ջանգուլում՝ հայերենով (որոշները՝ թաթարերենով)՝ ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ):

246. *Карапетян М., Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (По сельскохозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, 1991, 21 с.*

(Հեղինակը քննության է առնում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության էթնիկական կառուցվածքն ըստ Ադրբեջանի 1921թ. գյուղատնտեսական հաշվառման: Անդրադարձ է կատարվում ԼՂԻՄ և Ադրբեջանի Ղուբայի, Աղդամի, Ջեբրայիլի, Գյանջայի, Շամխորի, Բարվի, Քուրդիստանի գավառների բնակչության խտությանը, միջին ընտանիքների կազմին, գրագիտությանը, էթնիկ կազմին: Առանձին աղյուսակով ներկայացվում են ԼՂԻՄ Խաչենի, Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդի և Շուշիի շրջանների ենթաշրջանների ու գյուղերի հայ և ադրբեջանցի ընտանիքների, բնակիչների (արական և իգական) քանակի մասին տվյալները: Արդյունքում պարզ է դառնում, որ 1921թ. ԼՂԻՄ-ի բնակչությունը կազմել է 129243 մարդ, որից 122426-ը՝ հայ, 6560-ը՝ ադրբեջանցի, մյուսները՝ հույն, ռուս, քուրդ, մինչդեռ Շուշի քաղաքի 9233 բնակիչներից 8894-ը ադրբեջանցի էին, 289-ը՝ հայ, 40-ը այլ ազգերի ներկայացուցիչներ, այն դեպքում, երբ նույն քաղաքում 1914թ. ապրում էր 42130 բնակիչ, որից 22004-ը՝ հայ):

247. *Кочарян Г., Нагорный Карабах, Баку, 1925, 68 с.*

(1924թ. ամռանը կազմակերպված գիտարշավի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի բնակավայրերից հավաքած նյութերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը առանձին բաժիններով ու ենթաբաժիններով ներկայացնում է երկրամասի աշխարհագրական բնութագիրը, վարչական բաժանումը, բնակչության թիվն ու կազմը, ժողովրդական կրթությունը, գյուղատնտեսությունը (հողագործություն, անասնապահություն), առևտուրը, արդյունաբերությունը, հարկատեսակները ևն: Վերջում տրվում են ամփոփում, ծանոթագրություններ, մարզի գյուղերի ցանկն՝ ըստ շրջանների և ենթաշրջանների, բնակիչների թիվն՝ ըստ սեռատարիքային խմբերի, անասունների քանակն՝ ըստ տեսակների, հողերի մակերեսներն՝ ըստ օգտագործման ձևերի, գույքանների, ֆուրգոնների, սայլերի քանակը, տեղեկություններ Ստեփանակերտ քաղաքի մասին ևն: Հեղինակը հաճախ իր գրառած տվյալները համեմատում է Ադրբեջանի կենտրոնական վիճակագրական վարչության 1921թ. կատարած՝ Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսական հաշվառման տվյալների հետ՝ վեր հանելով վերջինիս անճշտությունները):

248. *Краткая статистическая сведения о Елисаветпольской губернии за 1894 год, «Записки Кавказского отдела Императорского Русского географического общества», книжка XVIII, Тифлис, 1896, с. 423-439*

(Ներկայացնում են Ելիզավետպոլի նահանգի, այդ թվում՝ Ջեբրայիլի, Ջևանշիրի և Շուշիի գավառների տնտեսության վերաբերյալ 1894թ. վիճակագրական տվյալները: Առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվում երկրագործությանը, բանջարաբուծությանը, ծխախոտագործությանը, բամբակագործությանը, գինեգործությանը, օղեգործությանը, անասնապահությանը, մետաքսագործությանը, հանքագործությանը, առևտրին, բնակչության կազմին ու շարժին ևն):

249. *Лисициан С., К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам), «Известия Кавказского историко-археологического института», Тифлис, 1925, т. III. с. 97-108*

(Անդրադառնալով մասնագիտական գրականության մեջ հայկական գյուղական կացարանների մասին եղած տեղեկություններին՝ հեղինակը 1920-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի ծայրամասային որոշ գյուղերում գրառած նյութերի հիմքի վրա ներկայացնում է արցախյան ավանդական տան՝ դարադամի նկարագրությունը՝ ձևը, կառուցվածքը, կահավորումը, հատակագիծը, նրա առջևի մասում կառուցված պատշգամբը ևն: Համառոտ անդրադարձ է



կատարվում նաև նոր տիպի տներին, որոնք տվյալ ժամանակաշրջանում արդեն գրեթե ամենուր փոխարինել էին հին կացարաններին: Ըստ հեղինակի եզրահանգման՝ միայն դարաբաղյան դարադամի ուսումնասիրությունը հիմք է տալիս ասելու, որ դրանց ու ժամատների հատակագծերը անմիջական կապ ունեն իրար հետ):

250. Лисициан С., *О книге В. А. Петрова «Этноботаника Нагорного Карабаха», Изд. АЗФАН, Баку, 1940 г., «Տեղեկագիր ՍՍՌՄ ԳՍ հայկական ֆիլիալի», Երևան, 1942, N1-2, էջ 187-190*

(Գրախոսություն: Թվարկելով Վ. Պետրովի ուսումնասիրության արժանիքները և այն ընդգրկած նյութով ու ու այդ նյութի ուսումնասիրության համար կիրառված մեթոդներով համարելով Ղարաբաղի գիտական պատմության համար կարևոր՝ հեղինակը ներկայացնում է նաև նրանում տեղ գտած որոշ թերություններ ու բացթողումներ):

251. Марутян А., *Интерьер армянского народного жилища (вторая половина XIX – начало XXв.). Материалы к «Кавказскому историко-этнографическому атласу», «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1989, հ. 17, էջ 63-142 + 48 էջ ներդիր*

(Պատմաազգագրական տպագիր, արխիվային և դաշտային հարուստ նյութի հիմքի վրա հեղինակը առանձին գլուխներով ու բաժիններով հանգամանորեն ներկայացնում է հայ ազգագրական տարբեր շրջանների, այդ թվում՝ Արցախի 19-րդ դարի երկրորդ կեսի-20-րդ դարի սկզբի ժողովրդական բնակարանի գործառական-տիպաբանական բնութագրությունը (տիպաբանությունը և կառուցվածքը, ջեռուցման ավանդական միջոցները, լուսավորման ավանդական միջոցները), կահավորումը և կոկիկությունը (նստելու և պառկելու կահույքն ու հարմարանքները, մանկական կահույքը, հյուրասիրության համար նախատեսված կահույքն ու հարմարանքները, ընտանեկան իրերի պահպանման համար նախատեսված կահույքն ու հարմարանքները, ներսույթի դեկորատիվ-կիրառական ու գեղարվեստական-ճարտարապետական առանձնահատկությունները), ներսույթի պարագաները (սննդամթերքի պահպանման համար նախատեսված սպասքը, միջոցները և հարմարանքները, խոհանոցային սպասքը, ճաշասենյակի սպասքը): Ներդիրներում ընդգրկված են համապատասխան հատակագծեր և նկարներ):

252. Марутян А., Саркисян Г., Харатян З., *К этнокультурной характеристике Арцаха, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1989, N6, էջ 3-18*

(Տպագիր, արխիվային ու դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրության արդյունքում հեղինակները ներկայացնում են արցախահայության 19-20-րդ դարերի ընդհանուր էթնոմշակութային բնութագիրը՝ անդրադառնալով էթնիկ կազմին և բնակչության թվին, երկրագործությանը և անասնապահությանը, գյուղատնտեսական մթերքների մշակմանը, տարբեր արհեստներին, ժողովրդական փոխադրամիջոցներին, բնակավայրերի, կացարանների, ընտանիքների կառուցվածքին, հարսանեկան ու թաղման ծեսերին, այլ երևույթների, ինչպես նաև բանահյուսությանն ու բարբառին):

253. Мелик-Шахназаров Е., *Из древностей селения Ченахчи (Елисаветпольской губернии, Шушинского уезда), «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. девятнадцатый, Тифлис, 1894, отд. I, с.78-83*

(Հեղինակը նկարագրում է Շուշու գավառի Չանախչի (ներկայումս՝ Ասկերանի շրջանի Ավետարանոց) գյուղի Կուսանաց անապատ վանքն ու գերեզմանոցը՝ որոշ լուսանկարներով ու չափագրություններով հանդերձ: Կուսանաց անապատի նկարագրության մեջ ներկայացվում են նաև վանքի վերաբերյալ ավանդություններ):

254. Мирзоян Б., *Нагорный Карабах (Размышления над статистикой), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1988, N 7, էջ 43-56*



(Վիճակագրական տվյալների հիմքի վրա ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական վիճակը: Արդյունքում հիմնավորվում է այն փաստը, որ ԼՂԻՄ-ից, ինչպես նաև Ադրբեջանական ԽՍՀ ողջ տարածքից հայ բնակչության արտահոսք է կատարվել, ինչը պայմանավորված է տնտեսական, սոցիալական, մշակութային, հոգևոր բնագավառներում կիրառված քաղաքականության կոպիտ խեղաթյուրումներով, որի արդյունքում մարզի հայ բնակչությունը 1926թ. տվյալներով կազմել է 89,1 տոկոս, իսկ 1979թ.՝ 75,9 տոկոս, 1939-1979թթ. հայերի թիվը պակասել է 7,3 տոկոսով, իսկ ադրբեջանցիներին՝ ավելացել 2,6 անգամ: Հոդվածը հրատարակվել է նաև «*Правда о Нагорном Карабахе (материалы и доклады)*» ժողովածուում /*Երևան, 1989, էջ 10-23*):

255. Мкртумян Ю., *Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX- начало XX в.) (Историко-этнографическое исследование)*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», *Երևան, 1974, հ.6, էջ 5-90*

(Տպագիր, արխիվային և իր հավաքած ազգագրական դաշտային նյութերի ուսումնասիրությամբ ու պատմական տարբեր դարաշրջանների և հարևան ժողովուրդների համապատասխան նյութերի համեմատությամբ հեղինակը քննության է առնում Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի սկզբները տարածված անասնապահության ձևերը: Առանձին գլուխներով ու բաժիններով ներկայացվում են անասնապահության զարգացման բնապատմական պայմանները, նստակյաց ու հեռագնաց ձևերը, անասունների արածեցման գործում համագործակցության ձևերը, հովիվների անհատական և հասարակական վարձակալման ձևերը, անասնապահության ձևերը և բնակչության կենցաղը: Աշխատության մեջ ընդգրկված են թեմային առնչվող աղյուսակներ ու լուսանկարներ: Ազգագրական տարբեր շրջաններին զուգընթաց՝ անդրադարձ է կատարվում նաև Արցախին):

256. Мкртчян А., *Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX- начало XX в.)*, *Ереван, 2010, 168 с.*

(Աշխատության սկզբում աշխատությունը տպագրության պատրաստողներ Լ. Վարդանյանը և Հ. Մարությանը ներկայացնում են հեղինակի՝ ազգագրագետ, ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի ազգագրական, պետական հասարակական գործունեությունը, նրա կյանքի կարճատև ուղին: Աշխատությունը կազմված է ներածությունից և չորս գլուխներից: Առաջին գլխում տրվում են 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին Լեռնային Ղարաբաղի էթնիկական և սոցիալ-տնտեսական կենցաղի ընդհանուր բնութագիրը, ազգաբնակչության էթնիկական կազմը և տարաբնակեցման խնդիրներն ու պատճառները, տնտեսության հիմնական բնագավառները, միջէթնիկական հարաբերությունները: Երկրորդ գլխում հեղինակն անդրադառնում է համայնքի կազմի և կառավարման մարմիններին, փոքր և մեծ ընտանիքներին, հասարակական կենցաղի համակարգում ընտանեկան-ազգակցական խմբերի կարևորությանը, ընտանեկան-դրացիական հարաբերություններին: Երրորդ գլխում քննության են առնվում բնակեցման սահմաններն ու առանձնահատկությունները, պաշտամունքային վայրերն ու կառույցները: Չորրորդ գլուխը նվիրված է սովորույթների ու բարքերի, օրացուցային տոների, հյուրասիրության, միջէթնիկական հարաբերությունների ուսումնասիրությանը: Ուսումնասիրության վերջում տրվում են հայերեն և անգլերեն ամփոփումներ):

257. *Описание Карабахской провинции, составленное в 1823 г. действительным действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-ым*, *Тифлис, 1866*

(Հեղինակները ներկայացնում են 1822-1823թթ. կազմած ցուցակները, որոնցում ընդգրկված են Ղարաբաղի Շուշի քաղաքի ու գյուղերի բնակչության և եկամուտների տվյալները: Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունն ընդգրկում է 34 տեղեկագիր և մեկ ընդհանուր ամփոփող ցուցակ,



ինչպես նաև Ջեբրայիլից Իրան տեղափոխված ընտանիքների թիվը ներկայացնող մեկ լրացուցիչ ցանկ):

258. Осипов Г., *Селение Даш-Алты, Шушинского уезда, Елисаветпольской губернии*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. двадцатьпятый, Тифлис, 1898, отд. II, с.101-136

(Հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Շուշիի շրջանի Քարին տակ գյուղի հիմնադրման համառոտ պատմությունը, եղանակը, տների կառուցվածքը, բնակիչների զբաղմունքը (հատկապես երկրագործությունն ու կրի արտադրությունը), տարազը, հավատքը, ընտանեկան կյանքն ու կրթությունը, հասարակական դատն ու պատժամիջոցները, շրջակայքի քարանձավները, ժողովրդական տոները, ամուսնության և հարսանիքի հետ կապված ծիսակատարությունները, սովորությունները, հավատալիքներն ու նախապաշարմունքները: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև բանահյուսական որոշ նյութեր՝ զվարճապատումներ, ավանդություններ, տարբեր հավատալիքների ու սովորույթների վերաբերյալ չափածո ստեղծագործություններ):

259. *Описание кавказского шелководства, (Джеванширский уезд, с.87-90, Шушинский уезд, с.90-95, Джебраильский уезд, с.96-111)*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. одиннадцатый, Тифлис, 1891, отдел II

(Նշված բաժիններում ներկայացվում են Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի, Շուշիի, Ջեբրայիլի գավառներում տվյալ ժամանակաշրջանի շերամապահության ու մետաքսագործության վիճակը ներկայացնող նկարագրությունները):

260. *Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.: Елисаветпольская губерния*. Санкт Петербург, 1904. кн. 63, 184 с.

(Ներկայացվում են 1897թ. կազմակերպված ռուսական կայսրության առաջին համընդհանուր մարդահամարի շրջանակներում իրականացված Ելիզավետպոլի նահանգում, այդ թվում՝ Ջեբրայիլի, Ջանգեզուրի, Ջևանշիրի, Շուշիի գավառներում անցկացված մարդահամարի տվյալները: Առաջաբանում տրվում է նահանգի թվային տվյալների կարճ վերլուծությունը, որից հետո առանձին բաժիններով և աղյուսակներով՝ փաստացի և մշտական բնակչության, բնակչության՝ ըստ տնտեսությունների, տարիքային խմբերի, սեռի, գրագիտության, ընտանեկան կարգավիճակի և կարողության, օտարերկրյա հպատակության, հավատքի, մայրենի լեզվի, ֆիզիկական թերությունների, զբաղվածության ևն տվյալները):

261. Петров В., *Этноботаника Нагорного Карабаха*, Баку, 1940, 167 էջ

(Հեղինակը ներկայացնում է 1934-1937թթ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կատարած գիտարշավի ընթացքում իր հավաքած նյութերի ուսումնասիրության արդյունքները: Ընդարձակ առաջաբանում (էջ 4-35) հանգամանորեն քննության են առնվում Ղարաբաղցիների տնտեսության մեջ ու կենցաղում տարբեր բույսերի ունեցած կիրառությունն ու դերը, դրանց հետ կապված հավատալիքները ևն: Բուն ժողովածուի մեջ առանձին ենթաբաժիններով նկարագրվում են տասնյակ բույսեր, տրվում են յուրաքանչյուրի լատիներեն, ռուսերեն, ադրբեջաներեն, Ղարաբաղի բարբառով անվանումները, տարածման վայրերը, ունեցած դերը կենցաղում, սննդակարգում, ժողովրդական բժշկության մեջ, լուսանկարը: Ժողովածուին կցված է նաև նշված բույսերի անվանական ցանկ՝ այբբենական դասավորությամբ):

262. Петрушевский И., *О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха*, «Известия АЗГНИИ. Историко-этнографическое и археологическое отделение», том 1, вып. 5, Баку, 1930, 43 с.



(Հեղինակը 1928թ. հուլիս-օգոստոս ամիսներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում և Ջանգեզուրում կատարած իր շրջագայությունների ընթացքում հավաքած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի գյուղացիների մոտ իշխող նախաքրիստոնեական հավատալիքները: Ըստ ուսումնասիրության՝ հետհեղափոխական շրջանում տեղի գյուղացիների մոտ ավելի մեծ է հավատը սրբացված քարերի, ծառերի, լեռների, աղբյուրների, քան եկեղեցիների հանդեպ: Առանձին ենթաբաժիններով նկարագրվում են Դիզակի շրջանի Դիզափայտ, Առաքյուլ գյուղի մերձակայքում գտնվող Քամու խաչ, Օձի օջախ, Աղ օղլան, Շաղախ գյուղի մոտ գտնվող Սուրբ Շաղախ, Ստեփանակերտից 5կմ հեռավորությամբ գտնվող Սուրբ Սարիբեկ և այլ սրբավայրերը, անդրադարձ կատարվում դրանց հետ կապված նախաքրիստոնեական հավատալիքներին: Վերջում հեղինակը հանգում է այն եզրակացության, որ նման հավատալիքները, սակայն, չունեն պատմական ապագա:

263. Погосов М., *Тамерлан по рассказам джеванширских армян*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. седмой, Тифлис, 1889, отд. II, с. 86-89

(Ներկայացվում է տեղացի հայերից հեղինակի գրառած մի ավանդություն Լենկ Թեմուրի մասին, որի համաձայն՝ դաժան զորապետը ծնվել է Արցախի Բալլուջա (ներկայումս՝ Ասկերանի շրջանի Այգեստան) գյուղում՝ ունևոր քահանայի ընտանիքում և մկրտվել Էմիր անունով: Իր ծննդով մոր մահվան պատճառը դառնալու ու խիստ չարաճճի լինելու պատճառով հայրը, ասելով նրան, կտրել է ոտքերի ջիլերը, որտեղից էլ ստացել է *Լենկ* (կաղ) մականունը: Հոր հանդեպ վրեժխնդրությամբ լցված՝ նա տեղափոխվել է Միջին Ասիա ու 20 տարի հետո մեծ զորքով վերադառնալով՝ բնաջնջել հայրենի գյուղն ու հայկական բազմաթիվ այլ բնակավայրեր):

264. *Промысловыя занятия в некоторых населенных пунктах Закавказья* (Зедгенидзе Я., Захарбеков С., Тер-Егиазаров А., *Город Шуша, с.1-79*, Ибрагимбеков Б., *Шушинский уезд: Агдамское общество, с.79-87*, Погосов М., *Шушинский уезд: селение Тут, с. 87-88*, Погосов М., *Шушинский уезд. Селение Мухренес, с.88-89*, Израелов Г., *Джеванширский уезд. Селение Касапет, с.105-113*, Давидбеков И., *Джебраильский уезд. Село Гадрут, с.113-116*, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. одиннадцатый, Тифлис, 1891, отдел I

(Ըստ նշված բաժինների՝ առանձին ենթաբաժիններով ներկայացվում են Շուշի քաղաքում (գորգագործություն, կարպետագործություն, գուլպայագործություն, գլխարկագործություն, մոմագործություն, կոշկակարություն, օճառագործություն, կաշեգործություն, մորթագործություն, թամբագործություն), Աղդամի համայնքում (աղյուսագործություն, օճառագործություն, դերձակություն, երկաթագործություն, գորգագործություն), Տող գյուղում (բրդագործություն), Մոխրենես գյուղում (փայտանյութի հայթաթում), Կուսապատ գյուղում (երկաթագործություն, աստղձագործություն, բրուտագործություն, տակառագործություն, բամբակագործություն, բրդագործություն), Հադրութ գյուղում (մանածագործություն, արծաթագործություն, երկաթագործություն, տակառագործություն, քարագործություն, աղյուսագործություն, կրագործություն, բրուտագործություն) 19-րդ դարի վերջերին տարածված արհեստները, որտեղ հեղինակները հնարավորինս հանգամանորեն անդրադառնում են արտադրության եղանակներին ու միջոցներին, հումքի հայթայթմանը, արտադրանքի իրացմանն ու գներին և այլ հարցերի):

265. *Распределение армянского населения по Закавказью и Кавказу, на основании «Свода статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., изданном Закавказским статистическим комитетом в 1893 г.» и других официальных источников, «Записки Кавказского отдела Императорского Русского географического общества», книжка XVIII, Тифлис, 1896, Приложение, III, с. 41-47*

(Ըստ գավառների ու քաղաքների՝ ներկայացվում են Անդրկովկասում հայերի տեղաբաշխվածության մասին տվյալները: Ելիզավետպոլի նահանգում ընդգրկված են նաև Ջերբայիլի,



Ջևանշիրի, Շուշիի գավառներն ու Շուշի քաղաքը, որոնց դիմաց տրված է բնակչության ընդհանուր թիվը, հայերի թիվը և տոկոսային հարաբերությունը ընդհանուր բնակչության համեմատությամբ):

266. Саркисян А. (Адела), *Арцахские национальные костюмы*, «Азат Арцах», Степанакерт, 24 апреля, 2004, с. 8

(Ներկայացվում են Արցախի ազգային տարազի երկու տեսակները՝ գյուղական և քաղաքային, դրանց բաղկացուցիչ մասերը: Ըստ հեղինակի՝ դրանցից գյուղականը բուն արցախյան ավանդական տարազն է, իսկ քաղաքայինը՝ փոխառված Թիֆլիսի հայ կանանցից):

267. Саркисян Г., *Население Нагорного Карабаха за 100 лет (1823-1923гг.)*, «Հայագիտության հարցեր. Երևանի պետական համալսարան», Երևան, 2016, էջ 59-81

(Համառոտ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի պատմությանը՝ հեղինակը, հիմք ընդունելով 19-րդ դարի մարդահամարների և ընտանեկան ցուցակների տվյալները, ինչպես նաև որոշ ուսումնասիրություններ, հանգամանորեն ներկայացնում է երկրամասի բնակչության էթնիկ կազմի շարժընթացը 1823-1923թթ. ժամանակահատվածում: Հաշվի առնելով, որ Ղարաբաղի տարածքը տվյալ ժամանակաշրջանում բազմիցս ենթարկվել է վարչական փոփոխությունների, ժողովրդագրական զարգացումները դիտարկվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմաններում: Առանձին պարբերություններով անդրադարձ է կատարվում 1823, 1897, 1914, 1921, 1923թթ. բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացին: Արդյունքում պարզ է դառնում, որ 1823թ. համեմատությամբ 1923թ. ամբողջ բնակչությունն ավելացել է շուրջ 4,3 անգամ՝ 36500-ից հասնելով 157800-ի, իսկ հայ բնակչությունը՝ շուրջ 4,8 անգամ՝ 30800-ից հասնելով 149000-ի):

268. Сегаль И., *Елисаветпольская губерния, впечатления и воспоминания*, Тифлис, 1902, 104 с.

(Հեղինակը ներկայացնում է Ելիզավետպոլի նահանգում, այդ թվում՝ Ղարաբաղում և Ջանգեզուրում (էջ 50-104) կատարած իր շրջագայությունների տպավորություններն ու հուշերը: Առանձին բաժիններով նկարագրվում են Ղարաբաղի խանության պատմությունը, Շուշի քաղաքը, Գորիս, Ջեբրայիլ, Հադրութ, Կարաբուլախ, Աղդամ և այլ գյուղերը, անդրադարձ է կատարվում նրանց աշխարհագրական դիրքին ու սահմաններին, կլիմային, սրբավայրերին ու նրանց մասին պատմվող ավանդություններին, լեռներին, գետերին, աղբյուրներին, կամուրջներին, բնակչության թվին և էթնիկ կազմին, ռուս աղանդավորականներին, բնակչության զբաղմունքին ևն):

269. Тер-Саркисянц А., *Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции*, Москва, 2015, 920 էջ

(Բաղկացած է առաջաբանից ու 7 գլուխներից: Առաջաբանում (էջ 12-30) հեղինակը ներկայացնում է իր գերդաստանի պատմությունը, աշխատության կառուցվածքը և աղբյուրները: 1-5-րդ գլուխներում (էջ 31-560) տրվում է Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Աշխատության 6-րդ (էջ 561-690) և 7-րդ (էջ 691-824) գլուխները նվիրված են Արցախի ազգագրության ուսումնասիրությանը: 6-րդ գլխում՝ «Традиционно-бытовая культура армян Нагорного Карабаха» (XIX - начало XXв.), առանձին բաժիններով հանգամանորեն քննության են առնվում 19-20-րդ դարերի Արցախի բնակչության էթնիկ կազմի դինամիկան, հողային և դասային հարաբերությունները, տնտեսական զբաղմունքը, ժողովրդական փոխադրամիջոցները, բնակեցումը և կացարանը, տարազը, ուտեստը, ընտանիքը, ամուսնության, թաղման, մանկածնության հետ կապված ծեսերը, օրացուցային տոները և ծեսերը, 7-րդ գլխում՝ «Этнокультурное развитие армян Нагорного Карабаха во второй половине XX - начале XXIв.»՝ սոցիալ-ժողովրդագրական և մշակութային իրավիճակը 20-րդ դարի երկրորդ կեսին ու 21-րդ դարի սկզբին, կատարված փոփոխությունները: Աշխատությանը կցված են մատենագիտական հարուստ ցանկ (էջ 825-880), համառոտագրությունների ցանկ (էջ 881-882), աշխարհագրական և էթնիկական անունների



ուղեցույց (էջ 883-915): Աշխատությունը ընդգրկում է նաև բազմաթիվ, այդ թվում՝ ազգագրական բնույթի տասնյակ լուսանկարներ):

270. Тер-Саркисянц А., *Тенденция и развития сельской семьи у армян Нагорного Карабаха в постсоветский период*, «*Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով. զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 465-473*

(Հեղինակը Արցախի Հանրապետության Վանք, Հաթերք, Սոս, Գիշի, Ազոխ, Տոդ, Ավետարանոց, Նախիջևանիկ, Փրջամալ, Խնձրիստան գյուղերում 1970-1980-ական ու 2001 թվականներին իր գրառած նյութերի համեմատության արդյունքում ներկայացնում է արցախահայերի սոցիալ-ժողովրդագրական և մշակութային զարգացման միտումները՝ անդրադառնալով նշված ժամանակաշրջանում այդ բնակավայրերի բնակչության թվի փոփոխություններին, դրանց պատճառներին, էթնոմշակութային տարբեր ավանդույթներին, նորամուտ տոներին, ընտանեկան հարաբերություններին, թաղման ու հարսանեկան ծեսերին նև: Ըստ հեղինակի ամփոփման՝ Արցախյան պատերազմը էապես չի ազդել բնակչության էթնոմշակութային ավանդույթների վրա, բացառությամբ այն բանի, որ հետպատերազմյան ծանր շրջանում իջել է բնակչության կենսամակարդակը, որի պատճառով շատ ծեսեր կատարվում են չափավոր ձևով):

271. Тер-Саркисянц А., *Современная семья у армян Нагорного Карабаха*, «*Кавказский этнографический сборник*», VI, Москва, 1976, с. 11-46

(Համառոտ անդրադառնալով հարցի ուսումնասիրության պատմությանը և Լեռնային Ղարաբաղի էթնիկ կազմին՝ հեղինակը 1968, 1969 և 1972 թվականներին Ստեփանակերտի, Մարտակերտի, Մարտունու ու Հադրութի շրջանների 34 գյուղերից իր հավաքած դաշտային ազգագրական և պաշտոնական ու արխիվային հարուստ նյութերի հիմքի վրա ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի հայերի տվյալ ժամանակաշրջանի ընտանիքը: Առանձին ենթաբաժիններով (որոշ դեպքերում՝ նաև աղյուսակներով) անդրադարձ է կատարվում գյուղական ընտանիքների սոցիալական պատկանելությանը (կոլտնտեսականներ, բանվորներ, ծառայողներ), զբաղմունքին, տնտեսության տարբեր ճյուղերից ստացած եկամուտներին, ծախսերին, կազմին ու կառուցվածքին, նրա անդամների փոխհարաբերություններին, ընտանեկան սովորույթներին ու ծեսերին, ընտանիքում կանանց կարգավիճակին ու դերին, երեխաների դաստիարակությանը, հարսանիքի նկարագրությանը, ամուսնություններին և ամուսնալուծություններին, երեխաների ծննդյանը, կնունքին, մահվան ու թաղման հետ կապված ծեսերին, խորհրդային տարիներին տնտեսությունում, կենցաղում, մշակույթում տեղի ունեցած փոփոխություններին նև: Ընդհանուր առմամբ քննությունը կատարված Հայկական ՍՍՀ հայերի ժամանակակից ընտանիքի համեմատությամբ: Հեղինակը նշված հարցերին անդրադարձել է նաև իր այլ հոդվածներում /*Структура современной семьи у армян Нагорного Карабаха*, «*Всесоюзный симпозиум по демографическим проблемам семьи*», ч. II, Ереван, 1975, с. 176-183, *Изучение современной сельской семьи у армян Нагорного Карабаха*, «*Итоги полевых работ института этнографии АН СССР в 1970 г.*», Москва, 1972, с. 93-102/:

272. Тер-Саркисянц А., *Новое и традиционное в современном быту армян Нагорного Карабаха*, «*Полевые исследования института этнографии АН СССР, 1975*», Москва, 1977, с.99-110

(Հեղինակը, հիմք ընդունելով 1974-1975թթ. կազմակերպված գիտարշավի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 18 գյուղերում իր գրառած նյութերը՝ ներկայացնում է գյուղացիների կենցաղում տեղի ունեցած փոփոխությունները նախախորհրդային ժամանակաշրջանի համեմատությամբ: Ըստ ուսումնասիրության՝ էական փոփոխություններ են կատարվել բնակարանաշինության, տան կահավորման, ազգային ավանդական տարազի, սննդի, սպասքի, ընտանիքի կազմի և ընտանեկան հարաբերությունների, խառն (տարբեր ազգերի ներկայա-



ցուցիչների) ամուսնությունների, հարսանեկան, ծննդյան, թաղման ծեսերի, ազգային տոների և այլ համակարգերում: Նշվում է նաև, որ չնայած դրան՝ պահպանվել են ավանդական կենցաղի մի շարք սովորություններ: Հեղինակը նշված հարցերին անդրադարձել է նաև իր մեկ այլ հոդվածում /*Изучение современного и традиционного быта армян Нагорного Карабаха, «Новое в этнографических и антропологических исследованиях. Итоги работ института этнографии АН СССР в 1972 г.»*, Москва, 1974, с. 179-189/:

273. Тер-Саркисянц А., *Динамика уровня образования армян Нагорного Карабаха, «Полевые исследования института этнографии АН СССР, 1976»*, Москва, 1978, с. 99-109

(Հեղինակը 1975թ. կազմակերպված գիտարշավի շրջանակներում Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ, Խնձրիստան, Մարտունու շրջանի Մոս, Թաղավարդ, Գիշի, Ննգի, Հաղրութի շրջանի Տոդ, Էդիշա, Վանք, Թաղասեր գյուղերում իր գրառած նյութերի հիմքի վրա աղյուսակներով ներկայացնում է բնակչության (տղամարդկանց և կանանց) թվային ու տարիքային կազմը (1904թ. և դրանից առաջ, 1905-1914թթ., 1915-1934թթ., 1935թ. և դրանից հետո ծնվածներ)՝ ըստ կրթության մակարդակի (անգրագետ, տարրական, թերի միջնակարգ, ընդհանուր միջնակարգ, միջնակարգ մասնագիտական, բարձրագույնը չավարտած, բարձրագույն կրթությամբ): Արդյունքում կատարվում են եզրահանգումներ, որոնց համաձայն՝ նշված գյուղերում 1904թ և դրանից առաջ ծնվածների մեծ մասը անգրագետ էր, իսկ հետագա սերունդների մեջ աստիճանաբար աճում է կրթության մակարդակը՝ հատկապես 1935թ. և դրանից հետո ծնվածների շրջանում, որտեղ կարևոր դեր են ունեցել ռադիոն, հեռուստատեսությունը, կինոն, տպագրությունը, մշակութային-լուսավորչական և արվեստի հաստատությունները ևն):

274. Тер-Саркисянц А., *Современные этнические процессы у армян Нагорного Карабаха, «Этнические и культурно-бытовые процессы на Кавказе»*, Москва, 1978, с. 62-117

(Հիմք ընդունելով Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ստեփանակերտի, Մարտակերտի, Մարտունու և Շուշու շրջանների 34 գյուղերում իր հավաքած դաշտային ազգագրական նյութերը և վիճակագրական տարբեր ժողովածուների տվյալները՝ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Լեոնային Ղարաբաղի հայության էթնիկական զարգացման հիմնական գործընթացները 1926-1975 թվականներին: Առանձնակի ուշադրություն է դարձվում բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների հարաբերակցությանը, քաղաքային և գյուղական բնակչության (ըստ տղամարդկանց և կանանց) գրագիտության և կրթության մակարդակին, ըստ մայրենի և երկրորդ լեզվի տարբերակմանը, ընտանիքների կառուցվածքին, ամուսնական տարիքին, խառն ամուսնություններին, ընտանեկան սովորույթներին ու ծեսերին ևն: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև նշված ցուցանիշներն ամփոփող աղյուսակներ:

275. Тер-Саркисянц А., *Некоторые тенденции этнокультурного развития армян Нагорного Карабаха, «Լրաբեր հասարակական գիտությունների»*, Երևան, 1988, N8, էջ 14-23

(Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ասկերանի շրջանի Չանախչի, Փրջամալ, Նախիջևանիկ, Խնձրիստան, Հաղրութի շրջանի Ազոխ, Մեծ Թաղլար, Տոդ, Տումի, Մարտունու շրջանի Գիշի, Մոս, Ննգի, Մարտակերտի շրջանի Վանք, Հաթերք, Թալիշ գյուղերում 1974-1975 ու 1987 թվականներին իր հավաքած դաշտային նյութերի համեմատության արդյունքում հեղինակը ներկայացնում է այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած ժողովրդագրական, էթնիկական և ընդհանրապես բնակչության նիստ ու կացի փոփոխությունները: Անդրադարձ է կատարվում բնակչության թվի, տարիքային ու սեռային խմբերի, տարազի, հարսանեկան ու թաղման ծեսերի և այլ բնագավառներում տեղի ունեցած փոփոխություններին: Ըստ ուսումնասիրության՝ մարզի բնակչության կազմում հայերի տեսակարար կշիռն աստիճանաբար նվազել է, ինչը պայմանավորված է նրանց արտահոսքով և աղբրեջանցիների ներհոսքով, ընդ որում արտագաղթում են առավելապես աշխատունակ տարիքի անձինք, որի հետևանքով խախտվում է հայ բնակչության



ժողովրդագրական կառուցվածքը: Մյուս կողմից՝ երկրամասի հայերի համեմատաբար ծանր տնտեսական վիճակը նպաստում է նրանց կենցաղում ու մշակույթում ավանդական տարրերի պահպանմանն առավել, քան Հայկական ՍՍՀ հայերի մեջ):

276. Тер-Саркисянц А., *Сельская семья у армян Нагорного Карабаха. Основные тенденции разжития*, «Семья. Традиции и современность», Москва, 1990, с. 139-169

(Հիմնականում հիմք ընդունելով իր կողմից 1974-1975 և 1987 թվականներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ասկերանի շրջանի Նախիջևանիկ, Փրջամալ, Չանախչի, Խնձրիստան, Հաղբուրի շրջանի Ագոխ, Մեծ Թաղլար, Տոդ, Տումի, Մարտունու շրջանի Գիշի, Սոս, Ննգի, Մարտակերտի շրջանի Վանք, Հաթերք, Թալիշ գյուղերում, ինչպես նաև 1960-70-ական թվականներին մարզի տարբեր բնակավայրերում գրառված ազգագրական նյութերը, տեղական արխիվների ու մասնագիտական գրականության տվյալները՝ հեղինակը քննության է առնում Լեռնային Ղարաբաղի հայկական ընտանիքների զարգացման միտումները տարբեր ժամանակաշրջանների և Հայաստանի Հանրապետության համեմատությամբ: Հանգամանորեն ներկայացվում են (նաև աղյուսակներով) բնակչության էթնիկ կազմը (1921, 1926, 1959, 1970, 1979թթ.), հայ բնակչության թվի նվազման պատճառները, նշված գյուղերի տնտեսություններն՝ ըստ ընտանիքի անդամների թվի և կազմի (միայնակներ, տարեց ամուսիններ), ընտանիքում սերունդների քանակի, մինչև 16 տարեկան երեխաների թվի, նույն ազգի ներկայացուցիչների ու խառն ամուսնությունների: Առանձին ենթաբաժիններով 19-րդ դարի վերջերի ու 20-րդ դարի սկզբների համեմատությամբ նկարագրվում են նաև ընտանեկան հարաբերություններում, հարսանեկան ու թաղման ծեսերում կատարված փոփոխությունները ևն):

277. Тер-Саркисянц А., *Современная политическая и этнокультурная ситуация в Нагорном Карабахе*, «Исследования по прикладной и неотложной этнологии», № 203, Москва, 2008, с. 3-32

(Հոդվածում քննության է առնվում 1991թ. սեպտեմբերի 2-ին ինքնահռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընթացիկ էթնոմշակութային իրավիճակը: Հիմք ընդունելով հանրապետության մի շարք բնակավայրերում տարբեր տարիների ընթացքում կատարած իր ուսումնասիրություններն ու վիճակագրական պաշտոնական տեղեկագրերը՝ հեղինակը ԼՂՀ կազմավորման համառոտ պատմությունը ներկայացնելուց հետո հանգամանորեն անդրադառնում է Արցախի հայերի կյանքում անկախության շարժումից (1988թ., փետրվարի 20) ի վեր կատարված էթնոմշակութային փոփոխություններին: Առանձին պարբերություններով ներկայացվում են նշված ժամանակաշրջանում արցախահայ բնակչության կազմի, տնտեսական գործունեության, նյութական մշակույթի (կացարան, հագուստ, ուտելիք), ընտանիքի կազմի, ամուսնության և թաղման ծեսերի, հոգևոր մշակույթի (տոներ, կրոն, հավատալիքներ) և մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև հանրապետության փաստացի ու մշտական բնակչության, ըստ սեռի ու տարիքային խմբերի, էթնիկ կազմի, ընտանեկան կարգավիճակի, ընտանիքի կազմի, ընտանիքում սերունդների քանակի, երեխաների քանակի ցուցանիշներն ամփոփող աղյուսակներ: Հեղինակը նշված հարցերին անդրադարձել է նաև իր այլ հոդվածներում /*Армяне Нагорного Карабаха: тенденции этнокультурного развития*, «Полевые исследования института этнологии и антропологии РАН, т. I. вып. I. Москва, 1993, с. 70-82, *Тенденции современного этнокультурного развития сельских армян Нагорного Карабаха*, «Нагорно-Карабахской республики 20 лет (к годовщине провозглашения независимости). Доклады к юбилейной сессии 20-22 мая 2011 г., г. Степанакерт», Москва, 2001, с. 122-129, *Динамика этнокультурной ситуации (опыт Нагорного Карабаха)*, «Феномен идентичности в современном гуманитарном знании», Москва, 2011, с. 511-526, *Нагорный Карабах: политическая и этнокультурная ситуация в конце XX- начале XXI в.*, «Caucasica. Труды института политических и социальных исследований Черноморско-Каспийского региона», т. I. Москва, 2011, с. 138-175/):



278. Тер-Саркисянц А., *Этнографическая поездка в Нагорный Карабах*, «Вестник РГНФ», Москва, 2009, № 1, с. 163-171

(Հողվածում ներկայացվում է արցախահայության ժողովրդագրական կառուցվածքում, կենցաղում, տնտեսական գործունեության մեջ, հոգևոր մշակույթում, ընտանիքի կառուցվածքում, ընտանեկան սովորություններում, տարաբնույթ ծեսերում ևն տեղի ունեցած փոփոխությունները անկախության շրջանում՝ 1988 թվականից սկսած: Հեղինակը սուսմասսիքության համար հիմք է ընդունել Արցախի տարբեր բնակավայրերում, հատկապես Ավետարանոց, Վարդաձոր, Նախիջևանիկ, Խնձրիստան, Ազոխ, Տոդ, Գիշի, Սոս, Հաթերք և Վանք գյուղերում իր հավաքած դաշտային ազգագրական նյութերը: Հեղինակը նշված հարցերին անդրադարձել է նաև իր այլ հոդվածներում /*Полевые исследования в Нагорном Карабахе в 2001 г.*, «Полевые исследования института этнологии и антропологии РАН», Москва, 2002, с. 116-137, *Мои впечатления от поездки в Нагорный Карабах*, «Армянский вестник», Москва, 2002, № 1-2. с. 77-91/:

279. Тер-Саркисянц А., *Нагорно-Карабахская республика: Тернистый путь в будущее длиною в двадцать лет*, «Кавказские научные записки», № 2(11), Москва, 2012, с. 75-99

(Համապատասխան գրականության ուսումնասիրության և 2001, 2007, 2011 թվականներին Արցախի Հանրապետությունում իր կատարած հետազոտությունների հիմքի վրա հեղինակը ներկայացնում է հանրապետության սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացումը վերջին 20 տարիներին՝ անկախությունից ի վեր: Առանձին պարբերություններով վեր են հանվում տնտեսության տարբեր ճյուղերում, կրթության և մշակույթի բնագավառներում, բնակչության ու նրա էթնիկ կազմում, տարբեր սովորույթներում և ծեսերում տեղի ունեցած փոփոխությունները: Ուսումնասիրության որոշ արդյունքներ ներկայացվում են նաև աղյուսակներով):

280. Тер-Саркисянц А., *Историко-этнографическое исследование «Армяне Нагорного Карабаха»*, «Вестник РГНФ», Москва, 2013, № 3, с. 41-54

(Հեղինակը նկարագրում է իր «*Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции*» (Москва, 2015, 920 էջ) ուսումնասիրության նախագիծը, որը բաղկացած է Արցախի պատմությանը նվիրված 5 և ազգագրությանը նվիրված 2 գլուխներից: Ըստ առանձին գլուխների ներկայացվում են դրանցում արծարծված հարցերը):

281. Фарамазян Л., *Об особенностях очерка Мариэтты Шагинян «Нагорный Карабах»*, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2014, N1-2, էջ 151-154

(Քննության է առնվում է նշանավոր գրող, հրապարակախոս Մ. Շահինյանի՝ ռուսերենով հրատարակված «*Нагорный Карабах*» ակնարկը: Անդրադարձ է կատարվում ակնարկի առանձին գլուխներում ներկայացված տարբեր, այդ թվում՝ ազգագրական բնույթի հարցերին):

282. Хан-Агов А., *Экономический быт государственных крестьян Джеванширского уезда Елисаветпольской губернии*, «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», Тифлис, 1887, т. VI, ч. 2-ая, с. 335-435

(Ուսումնասիրության մեջ հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի գավառի աշխարհագրական դիրքն ու բնական հարստությունները, բնակչությունն՝ ըստ էթնիկ կազմի, սեռերի, հավատի, բանակավայրերի, գրագիտության ևն, հողատարածքները՝ ըստ բաշխվածության, տեսակների, օգտագործման նպատակների, ռոտզման համակարգը, անտառները, ամառային ու ձմեռային արոտավայրերը, նրանցից գյուղական համայնքների օգտվելու կարգը, բնակչության եկամուտի աղբյուրներն ու զբաղմունքը՝ երկրագործությունը, խաղողագործությունը, շերամապահությունը, անասնապահությունը, արհեստները, հարկերն ու հարկատեսակները ևն: Ուսումնասիրությանը կցված են նաև նշված բնագավառների մասին հանգամանալից տեղեկություններ պարունակող ցանկեր):



283. Харатян З., *Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1989, հ.17, էջ 5-62

(Պատմաազգագրական տպագիր ու ձեռագիր նյութի հիմքի վրա հեղինակն առանձին գլուխներով ու բաժիններով հանգամանորեն ներկայացնում է ժողովրդական հավատալիքները ընտանեկան ծիսակարգում (ամուսնահարսանեկան շրջափուլի պաշտամունքային-գործառական բաղադրիչը, ծննդաբերական շրջափուլի պաշտամունքային-գործառական բաղադրիչը, հուղարկավորման-հիշատակման շրջափուլի պաշտամունքային-գործառական բաղադրիչը), տան և ընտանեկան օջախի հետ կապված ժողովրդական հավատալիքները, ավանդույթների ու ծիսակարգերի՝ տարածում չստացած ամբողջությունը (հիվանդությունների և դժբախտությունների մասին ժողովրդական պատկերացումները, բուժման ծիսակարգային պրակտիկայի հիմնական առանձնահատկությունները): Հայ ազգագրական տարբեր շրջաններին զուգընթաց անդրադարձ է կատարվում նաև Արցախին):

284. Шагинян М., *Нагорный Карабах. Очерк*, Москва-Ленинград, 1927, 41 с.

(Հեղինակը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում 1925թ. կատարած իր շրջագայությունների ընթացքում ստացած տպավորությունները՝ նկարագրելով մարզի տնտեսական կյանքը: Առանձին բաժիններով անդրադարձ է կատարվում մարզի պատմությանը, բնակչության զբաղմունքի որոշ ձևերին (օղեգործություն, շերամապահություն, գորգագործություն, հանքագործություն, անտառագործություն, ձիաբուծություն), նրանց զարգացման հեռանկարներին, աշխարհահռչակ Ղարաբաղի ձիուն, անասունների շրջանում տարածված համաճարակին ու դրանց կանխարգելման միջոցներին, Շուշի քաղաքին և 1920թ. այնտեղ կազմակերպված հայկական կոտորածներին ևն: Ակնարկն առաջին անգամ տպագրվել է Սանկտ-Պետերբուրգում հրատարակվող «Звезда» ամսագրի 1926թ. 6-րդ համարում (էջ 136-156):

285. Шахназарян Н., *В тесных объятиях традиции: патриархат и война*, Санкт-Петербург,, 2011, 276 с.

(Տպագիր, արխիվային և Արցախի տարբեր բնակավայրերում իր հավաքած դաշտային հարուստ նյութի հիմքի վրա հեղինակն առանձին գլուխներով և բաժիններով ներկայացնում է հետխորհրդային Լեռնային Ղարաբաղի բնակչության հետպատերազմյան նեոավանդական հասարակության մարթաբանական վերլուծությունը, նկարագրում հետազոտվող տարածաշրջանում գենդերային հարաբերությունների դիսկուրսիվ դաշտը, նարրատիվները, վարքագիծը, ամուսնացած, ամուրի, այրի, ամուսնալուծված կանանց դերային դրվածքները ևն: Աշխատության մեջ ընդգրկված են նաև աղյուսակներ ու լուսանկարներ):

286. *Этнографические карты губерний и областей Закавказского края, составленная правителем дел Кавказского отдела Императорского русского географического общества Е. Кондратенко по своду статистических данных о населения Закавказья, извлеченных из посемейных списков 1886 года, изданному по распоряжению главноначальствующего Закавказским статистическим комитетом в 1893 г., «Записки Кавказского отделения Императорского Русского географического общества», книжка XVIII, Тифлис, 1896, Приложение, I, с. 1-46*

(Առանձին աղյուսակներով ու սյունակներով Անդրկովկասի նահանգների շարքում ներկայացվում են նաև Ելիզավետպոլի նահանգի, այդ թվում՝ Ջեբրայիլի, Ջևանշիրի, Շուշիի գավառների ու նրանց որոշ բնակավայրերի վերաբերյալ տվյալները՝ ըստ զբաղեցրած տարածքների (քառակուսի վերստերով, դեպատիներով, միլերով, կիլոմետրերով), բնակավայրերի քանակի, բնակչության թվի (ըստ ընտանիքների, արական և իգական սեռերի, խտության, էթնիկ կազմի):

287. Чурсин Г., *Армяне Зангезура. Краткий этнографический очерк*, «Научные записки Закавказского коммунистического университета», I, Тифлис, 1931, с. 221-264



(1924թ. տեղում կատարած իր հետազոտությունների և մասնագիտական գրականության մեջ առկա նյութերի հիմքի վրա հեղինակը ներկայացնում է Ջանգեզուրի հայերի ազգագրական ուսումնասիրությունը: Առանձին բաժիններով քննության են առնվում բնակչության հիմնական զբաղմունքների (հացահատիկի մշակում, անասնապահություն, մեղվապահություն, որսորդություն), բնակարանի, ծննդի, հարսանիքի, թաղման ավանդույթների, հավատալիքների (կրակի, աղբյուրի, ծառերի, կենդանիների պաշտամունք), բնակչության ազգային կազմի (1886թ. ընտանեկան ցուցակների, 1897թ. առաջին համառուսաստանյան մարդահամարի, 1922թ. գյուղատնտեսական մարդահամարի, 1926թ. համամիութենական մարդահամարի տվյալներ) հետ կապված և այլ հարցեր:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 6

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ե. Լալայան

ՎԱՐԱՆԴԱ (ՆՅՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)..... 36

Ս. Լիսիցյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԵՐԸ (*ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ*) 166

Ռ. Տեր-Գասպարյան

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԸ 258

Ա. Կիսիբեկյան

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆԸ..... 320

Կ. Ղահրամանյան

ՕԶԱԽԻ ԳԻՐՔ..... 399

ՀՈՂՎԱԾՆԵՐ

Կ. Մելիք-Շահնազարեանց

ԲՈՒՐԴ ԳԶԵԼԸ ԵՒ ԳՈՐԳ ԳՈՐԾԵԼԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 438

Կ. Մելիք-Շահնազարեան

ՆԻԹԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 440

Ռ. Տեր-Գասպարյան

ՇՈՒՇՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 18-ՐԴ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ 448

Ժ. Խաչատրյան

ԽԱՂԼԱՑԱՎԻ (ԴԻՎԱՀԱՐՈՒԹՅԱՆ) «ԲՈՒԺՈՒՄԸ» ՊԱՐՈՎ 457

Ս. Պողոսյան

ԱՐՑԱԽԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ ԵՎ ՆՐԱ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ 463

Վ. Բալայան

ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ
ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ 469

Վ. Բալայան

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐՑԱԽՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ 474

Հ. Մարգարյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ԵՎ ԷԹՆՈԿ ԿԱԶՄԻ
ՇԱՐԺԸՆԹԱՅԸ XIX ԴԱՐՈՒՄ 481



Ա. Դարադյան
 ՇՈՒՇԻԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ԸՍՏ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԵԳՐՔԻ» 487

Ա. Թադևոսյան
 ԴԱՐԲՆԻ ԾԻՍԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ
 ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (XIX-XX ԴԴ.) 490

Հ. Ալեքսանյան
 ՇՈՒՇԻԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1916-1926 ԹԹ. 493

Կ. Բազեյան
 ՇՈՒՇԻԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ 499

Ս. Մկրտչյան
 ՏՈՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ 503

Ս. Սուջյան
 ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 507

Ա. Պողոսյան
 ԱՐՑԱԽՑԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ
 ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԵԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ 521

Ա. Պողոսյան
 ՀԱՐԹԱԿԱՐՈՎ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ 526

Ա. Պողոսյան
 «ՋՐԱԲԵՐԴ» ԽՍԲԻ ԳՈՐԳԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ 533

Ա. Պողոսյան
 ՇՈՒՇԻՆ՝ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ 543

Ա. Այվազյան
 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ
 1710-1720-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 550

Լ. Հովհաննիսյան
 ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ 1897Թ. ՀԱՄԱՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ
 ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ 556

Լ. Հովհաննիսյան
 ԲՈՆԻ ՄԱՀՄԵՂԱԿԱՆԱՅՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 559

Հ. Մքրահանյան
 ՇՈՒՇԻԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ (19-րդ դար) 563

Ն. Ավագիսյան
 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՇՈՒՇԻՈՒՄ 1813-1917ԹԹ. 573



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Մ.Թադհադյան

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՄԵԾՆ ՀԱՅԱՍՏԱՆ 577

Գ. Սրուանձտեանց

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ ԵՎ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔ 591

Ա. Բաբայանյան

Ուխտագործի ՀԻՇՍՏԱԿԱՐԱՆԸ 596

Հայկունի Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց

ՈՒՂԵԳՆԱՑԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ 618

Տիկին Բ. Շանտր

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՈՎ 721

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ 746

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատասիրության և ընդհանուր խմբագրության բ.գ.թ., դոցենտ,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Ա. Յու. Մարգարյանի

Տեխնիկական

խմբագիր՝ Լիլյա Գրիգորյան

Ծավալը՝ 102.5 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 150

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Բումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Toumanyanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am